ԳՐԻԳՈՐ ՏԱԹԵՎԱՑԻ

# «ԳԻՐՔ ՀԱՐՑՄԱՆՑ»

# ՀԱՄԱԲԱՐԲԱՌ

**Կազմեց՝ բանասիրական գիտությունների թեկնածու Սուսաննա Գրիգորյան**

## ԳԻՐՔ Դ

## Ո - Ֆ

ԵՐԵՎԱՆ
«Տիգրան Մեծ» հրատարակչություն
2013

**Տպագրվում է ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի անվան լեզվագիտության ինստիտուտի գիտական խորհրդի որոշմամբ:**

**Պատասխանատու խմբագիր՝**
**բանասիրական գիտությունների դոկտոր**
**Լ. Շ. Հովհաննիսյան**

**Գրիգորյան, Ս. Մ.**
«Գիրք հարցմանց», Համաբարբառ/Գրիգոր Տաթևացի: Կազմ.՝ Ս. Մ. Գրիգորյան: Խմբ.՝ Լ. Շ. Հովհաննիսյան, - Եր.: «Տիգրան Մեծ» հրատարակչություն, 2013.
Հ. Դ. - 1100 էջ:

*Բնագրային համաբարբառը գրեթե փոխարինում է բնագրին: Գրիգոր Տաթևացու նշանավոր «Գիրք հարցմանց»-ը հրատարակվել է 1729 թվականին, Կ. Պոլսում: Նրա բնագրային համաբարբառը կարող է դառնալ սեղանի գիրք՝ թե հոգևորական գործչի, թե բանասերի, թե հայագիտությամբ և միջնադարով զբաղվող յուրաքանչյուր մասնագետի համար:*

© Սուսաննա Գրիգորյան, 2013

# Ո

**Ո՞ կմ Ո՛ +** Իսկ թէ ոչ կամաւ. *ո՛* է որ զնա բռնադատեաց. զի բնութիւնն ողջախո՛հ է. և յայտնէ զայս կուսութեամբ կեալն բազմաց: - 36. Զի թէ ի ժամանակի, *ո՞* էր այն որ պարունակէր զժամանակս: - 37. Արդ քանզի աստուած առանց պատճառի է աստուած. և թէ ոչ՝ *ո՞* է պատճառ աստուածանալոյն: - 41. Չորրորդ՝ զի լինի առ ինքն հակառակութիւն, թէ *ո՞* է երէց և կրտսեր առ ինքն: - 254. *Ո* ոք և հանցէ՝ ուտելի՛ է: - 366. Եւ զի պատառեաց զկրկնոցն. և եհարց՝ *ո՞յր* որդի է դաւիթ: - 412. Երրորդն Սամէգար. որդի անաթայ. որ մաճիւն *ո* այր եսպան՝ ամս **դ**. և Դեբովրա ամս **ե** ընդ այլազգեացն: - 420. Վասն է՞ր եհարց թէ՝ *ո՞յր* որդի է դաւիթ. զի կապարճակիր և ծանօ՛թ էր սաւուղի: - 427. *Ո՜* հա՛յրդ ես որոց ի վեր քան զերկինս. այսինքն հոգւոց սրբոց կատարելոցն որ ի վերեն քան զդասս հրեշտակաց մեծ քրիստոսի որպէս քահանայք առ քահանայապետ, և անդամք առ գլուխն. և որդիք առ հայր: - 688. Եւ արդ, *Ո՜* հաւատ մեծ պաշտելի լոյս իմ և տիպ. և գանձ անկողոպուտ. կացցես առ իս. յարգանդէ մօր իմոյ խուսափեալս ի ծոց քո: - 771

***Ո՞ ՈՔ +*** *Ո՞ ոք* է ընդ մէջ որդւոյ և հօր շաղկապ՝ զի հրաւիրեսցէ զնա յորդէգրութիւն հօր. և զի ո՛չ ոք: - 39. Երկրորդ ըստ հասարակութեան. զի հասարակաբար *ո՞ ոք* որ հաղորդի բնութեանս՝ հաղորդի և սկզբնականին: - 568

**ՈԳԵՀԱՆԳԻՍՏ** (տեքստում՝ **ՈԳԷՀԱՆԳԻՍՏ) +** Ագապս մատաղաց. և *ոգէհանգիստ:* - 362. Իսկ վասն ագապս առնելոյ որ է՛ *ոգէհանգիստ*. և վասն քահանայաթաղին որ է՛ **ժը** աւետարան...: - 658

**ՈԳԵՇԱՀ** (տեքստում՝ **ՈԳԷՇԱՀ) +** Այլ զպիտանիս եկեղեցւոյ և վարդապետաց *ոգէշահ* խնդիր հաւատոյ միա՛յն հոգ տարեալ: - 772

**ՈԳԵՍԷՐ +** Եւ այս՝ ի խնայելո՛յ ի նոսա. զի մարդասէ՛ր է և *ոգեսէր* աստուած: - 303

**ՈԳԵՎԱՐ** (տեքստում՝ **ՈԳԷՎԱՐ) +** Եւ վասն մահու և *ոգէվարի* թէ զի՞նչ լինելոց է: - 660. Զի՞նչ է ոմանք յերկար *ոգէվարին*, և ոմանք յանկարծակի մեռանին: - 668. Յերկար *ոգէվարք* լինի յերից պատճառաց: - 668

**ՈԳԻ +** Այսինքն տնկական. և զգայական. և բանական. և զի յանկատարէն ելանեմք ի կատարեալն. վասն որոյ նախ ստեղծաւ տնկականն *ոգի*, և ապա՛ զգայականն....: - 231. Եօթներորդ՝ զի ո՛չ կարէին ընտրել և խոտել զչարն և զբարին, և զսուրբն և զանսուրբն ի մարդկանէ, թէ գործ սորին է այս կամ այն. այլ անմեղութեամբ յարակցեին պղծոյն, և զխեղդ *ոգւոց* նորա ընդունէին: - 238. Զի ասեն եթէ՝ *ոգի* արուին է՛ փոյթ և քաչասիրտ. իսկ կին՝ ողորմած և երկչոտ: - 246. Վասն *ոգւոյն* մարդոյ զանազա՛ն են կարծիք արտաքին իմաստնոց և վարդապետաց եկեղեցւոյ: - 252. Երրորդ՝ ևս յայտնի. զի ընդ նիւթոյ կազմութեանն համանգամա՛յն է և երևումն *ոգւոյ*...: - 255. Ապա ուրեմն գործ նախախնամութեան է զիւրաքանչիւր *ոգի* յառաջ ածել. և նախատպին պատկերակից առնել: - 258. Դարձեալ մարմինն է ի **գ** տարերց. և ունի երիս տեսակս *ոգւոց:* - 263. Ուստի յայտ է զի բարձր գոչեաց և եհան *զոգի*...: - 316. Ի կենդանիս. որպէս ոչխար և այլն յաղագս մաքրութեան *ոգւոց:* - 357. Քսանևը, մի և նոյն ծնօտն *զոգիս* մերկանայր այլազգեացն, և զսամփսոնին արկանէր ի մարմինն: - 423. Կրկին *ոգի* քո եղիցի: - 445. Եւ ըստ միաւորութեան հոգւոյն ի տարերս, *Յոգւոյ* և ի հրոյ բարկութիւնն: - 560. *Յոգւոյ* և յօդոյ ամբարտաւանութիւնն: - 560. *Յոգւոյ* և ի ջրոյ փառասիրութիւնն: - 560. *Յոգւոյ* և ի հողոյ ծանծրութիւնն: - 560. Որ է՛ հաւատ՝ յոյս՝ սէր. և սոքա երեքեան հեղո՛ւմն են յաստուածային շնորհացն ի բանական *ոգիս*. որով ուղղիմք յերկնային կեանս: - 577. Իսկ հեզութիւնն նոյն է ընդ մաստութիւնն. զի ասեն թէ՝ մաստութիւն է որ ո՛չ զգայ զդառնութիւն ինչ *ոգոյ:* - 584. Զի ջուր հակառակ է հրոյ. և զի՞նչ է մեղք, եթէ ոչ հուր. որպէս *յոգւոջ* բարկութիւն. և ի մարմնի ցանկութիւն...: - 591. Եւ համագումար *յոգիս* անդրանկաց կատարելոց: - 647. Չորրորդ՝ Վասն *ոգւոյ*. և կարգ կատարելոյ. և պատանաց, և այլն: - 660. ...զի չարութեամբ կեցեալ *ոգին*՝ չարութեամբ և մեռանի: - 669. Եւ դարձեալ յարութիւն է հոգւոյ ելեալ և ազատեալ ի մարմնոյ և մտեալ առ աստուած, որ է *յոգիս* արդարոց կատարելոց: - 710. ...որպէս ծաղկեալ գաւազանն ահարօնի նշանակէր զխրատ իմաստութեանն. որով զարդարեալ տայ զպտուղ լուսաւոր նիւթոյ կերակուր *ոգւոյ:* - 768. Միանգամայն և իղձք փրկական և հրաման հարկի ժամանեալ էհաս առ ներգևեալս *ոգի* և թաւազարթ թզենի: - 773

***ՅՈԳԻՈՑ ՀԱՆԵԼ +*** Եւ դառնացեալ *յոգոց հանէ*, և այսր և անդր զերեսն շրջէ և թաքչիլ ո՛չ կարէ: - 669

**ՈԳՈՐԻՄ +** Նոյնպէս յերեք տեղւոջ *ոգորի*. յերկրի՝ զի հանցէ յերկնից. և յօդ՝ զի արգելցէ. և ի յարութեանն՝ զի ընկեսցէ ի հուրն: - 394

**ՈՁԻԱ** - Վասն է՞ր մեռաւ *ոզիա:* - 431. Երրորդ՝ զի ո՛չ էր քահանայ. վասն որոյ յետոյ ասէր դաւիթ ցքահանայսն, դո՛ւք ղեւտացիքդ սրբեցէք և բարձէք զտապանակն. զի մի՛ լիցուք որպէս *զոզիա:* - 431. Ա՛րդ՝ սկիզբն գերութեանն իէլի յաւուրս *ոզիայ* արքայի յուդայ: - 446. Ազարիա որ և *ոզիա* ամս **ծբ**: - 452

**ՈՁՆԻ +** Իններորդ՝ փուշ. որպէս *ոզնոց:* - 216. Կամ մազ. որպէս *ոզնին:* - 216

**ՈԼՈՄՊԻԱԴ +** Օր, ամիս, և տարի և շաբաթ, և ժամք, վերադիր, և բոլէք, *ոլոմպիադ*, և այլն: -154. *Ոլոմպիաթն* չորրորդ ամ է. զոր հայք նահանջ ասեն. և Ընդիքտիոնն **ժե** ամ է. որով հոռոմք վարին: - 191. Արդ սկսեալ առ դարեհիւ ի **կե** *ոլոմպիադին* դադարեցին ի **ծձզ** *ոլոմպիադին* առ հիւրկանոսիւ քահանայապետիւ, որ գերեցաւ ի պարթևաց: - 449

**ՈԼՈՐՏՔ +** Ո՞րպէս է մի կաթուղիկէ եկեղեցի ընդ *ոլորտս* տիեզերաց: - 532. Եւ ընդ *ոլորտս* հնչեցաւ առաքելոցն քարոզութեամբ: - 645

**ՈԽ +** Որպէս յա՛յտ է ի տրտմիլն. զի խորհուրդն մշակ եղեալ յետոյ ի *յոխս* և ի քէնս և ի նախանձս յաւելու: - 564. Իսկ ընդ դէմ այսմ, դիւական տրտմութիւնն ի մարմինն է և վասն մարմնոյն. և զարտասուս ցամաքեցնէ. և տրտմի և ամբոխի. և հետևի նմա *ոխ* և ատելութիւն...: - 584. Նա՛խ՝ զի զտրտմութեան դևն զձանձրութեան զկարճմտութեան զտրտմտութիւն և *զոխն* հանէ՛ ի հոգւոյն: - 584

**ՈՂԲ +** Անգէ: Զաքարիա: Մաղաքիա: Երեմիա: Բարուք: *Ողբք:* Դանիէլ: Եզեկիէլ: - 450. ...և արտադրէ՛ հառաչումն ձայնից և *ողբ* աղէողորմ: - 670. Վասն եօթներորդին ասէ *յողբն* «իշխան գաւառաց եղև հարկատու»: -751

**ՈՂԲԱՄ +** Եւ զկուրծսն բախելն, որ բնաւորեալ է կանանց յապաշաւելն զկուրծսն բախել և *ողբալ:* - 628

**ՈՂԴԻԿԻՆ** - Յետ որոյ քեղկի քահանայ որ էր հայր երեմիայի՝ եգիտ զերկրորդ օրէնքն և մատոյց առ ովսիա. և գնաց առ *ողդիկին* մարգարէ հարցանել....: - 447

**ՈՂԿՈՅԶ +** Յիսուննը, **բժ**ան լրտեսքն. որ բերին *ողկոյզ*՝ նուռն՝ և թուզ: - 284. Եւ **գ** պտուղն, *ողկոյզ*. նուռն. և թուզ: - 381. Ուռն՝ կոյսն յարմատոյն և յեսսեայ. և *Ողկոյզն* տէր մեր ծնեալ ի նմանէ զուարճալի կերակուր մեզ: - 381. Դարձեալ՝ ուռն և լծակն՝ խաչն. և *Ողկոյզն* անապական ճմլեալ ի վերայ խաչին հնձանի. և եղև ուրախարար գինի տրտմեցելոցս մեռօք: - 381. Եւ լծակն որով *ողկոյզն* բերաւ: - 494. Երրորդ հնձան է իւրաքանչիւր սիրտ և անձինք արդարոց. որ հաստատեալ է հաւատով յորթն ճշմարիտ և պտղաբերէ՛ *զողկոյզ* բարեաց. և չարչարանօք ճմլէ՛ յինքեան զուրախարարն գինի հրեշտակաց և մարդկան. և այսոքիկ բարեա՛ցն են հնձան: - 749. Իններորդ՝ կոչի հնձան և խաչն փրկական. յորում *ողկոյզն* անապական ճմլեցաւ և ետ մեզ ուրախարար գինի զանապական արիւնն իւր. - 749

**ՈՂՆ +** Երրորդ՝ վասն հասարակ յարութեանն. զորմէ լուաւ սատանայ և բեկաւ *ողն* նորա: - 409

**ՈՂՆԱՇԱՐ +** Եւ *ողնաշարն* լիսեռնաձև **ժը** ոսկր: - 243

**ՈՂՈԳՈՄԵԱՆ +** Իսկ զվարդավառին և զփոխմանն տօն՝ ի նորո՛յս է աւանդեալ. որպէս *ողոգոմեանն*, և քառասնօրեայ գալստեանն: - 373. Եւ որպէս ի տաղաւարքն կողերս՝ տերև՝ և ոստ մատուցանէին. զնոյն և քրիստոսի մատուցին յաւուրն *ողոգոմեան* ի գալուստ նորին յերուսաղէմ: - 374. Երեսունգ, դաւիթ մարգարէ՛ է մարգարէանային. և որդի դաւթի *յողոգոմեանն* աղաղակէին: - 437. Այլ և զընծայիլն ի տաճարն. յորում երգէին մանկունքն՝ ո՛վսաննայ. որպէս *յողոգոմեանն:* - 638. Յայր ի յորդանան բնութեամբ որդի իւր դաւանեաց. և մանկունքն ի քառասնօրէին և *յողոգոմին:* - 638

**ՈՂՈՂԵՄ +** Յինգերորդ՝ զի անծերանալի՛ է երկիր. ըստ որում շարժմամբ թօթափի երկիր ի ներքին պատահմանց. և հեղեղօք *ողողի* և սրբի յարտաքին պատահմանց: - 181. Երկրորդ՝ *ողողելոյ* զհանդերձն, է՛ ջուր խոստովանութեանն և թողութեան մեղաց: - 384. Յինգերորդ՝ զի մի՛ ընդ դառնալն ի վայր՝ *ողողեսցէ* զներքին կողմ եզերաց գետոյն: - 414. Երրորդ՝ օրինակն. զի ամենայն անսուրբ ջրով լուացեալ սրբիւր. և *ողողեալ* զհանդերձս այնպէս մտանէր ի բանակն. և յաւազանն խոստովանութեան ջրովն: - 488. Նախ այն է՝ որ հրամայէր մովսէս պղծոցն լուանալ զմարմինն և *ողողել* զհանդերձն և արտաքոյ կալ մինչև յերեկոյ: - 653

**ՈՂՈՐԿ +** Յնգետասաներորդ, **ե** *ողորկ* քար էարկ ի մախաղն. **ե** զգայութիւնք անբիծ և անարատ մարմնոյն: - 436

**ՈՂՈՐՄ +** Բազում *ողորմ* առ բազմապարտ դարձեալսն ի մեղաց. որպէս պարտապանն բիւր քանքարոյ: - 351. Որ և ձեզ յիշողացդ և մեզ յուսողացս առհասարակ ողորմեսցի բարերար և բազում *ողորմ* մարդասէրն աստուած և տէրն մեր յիսուս քրիստոս ամէն: - 773. Այլ և աստ ապաշաւելն ոչ ինչ օգտեալ. որպէս և անդ ո՛չ լսողաց բերանով հաշեալք. որ և ո՛չ գոյր անդրէն դառնալ. և ո՛չ կարի յօժարացն շահավաճառ եղեալ. ո՛չ գիտ և ո՛չ *ողորմ*. հանգոյն յիմարացն օրիորդաց: - 789

**ՈՂՈՐՄԱԾ +** Են և ասին, որպէս աստուած. արարիչ. *ողորմած*. բազմագութ: - 55. Դարձեալ յարանունաբար, յաստուածութենէն աստուած. ի հայրութենէն հայր. արդար. *ողորմած*. և այլն: - 172. Զի ասեն եթէ՝ ոգի արուին է՛ փոյթ և քաջասիրտ. իսկ կին՝ *ողորմած* և երկչոտ: - 246. Յնգետասաներորդ՝ այլ և *ողորմած* և գթա՛ծ է տէր....: - 272. *Ողորմած* առ զղջացեալս: - 351. Եւ թէպէտ աստուած արդար է և *ողորմած*, սակայն յատկագոյն ասի *ողորմած* քան արդար: - 459. Իսկ ծիթենին զպարարտութիւն օծման ջերմեռանդ և *ողորմած* սրտին: - 519. Խորհրդովն *ողորմածք:* - 583. Նոյնպէս և հինգերորդն, բարի՛ է աստուած և *ողորմած* տեսողացն զաստուած հնգիւք զօրութեամբ հոգւոյ: - 629. Ութերորդ՝ որպէս *ողորմած* նոյնպէս և արդա՛ր է տէր: - 663. «Զի որ ողորմի աղքատին, փոխ տայ աստուծոյ». և ինքն վճարէ՛ որ *ողորմա՛ծն* է: - 664

**ՈՂՈՐՄԱԾՈՒԹԻՒՆ +** Ա՛րդ՝ **թ** երանութիւնք փրկչին զոր քարոզեաց ի լերինն, **ը** են ըստ էութեանն. այլ **է** են ըստ աստիճանաց. այսինքն Աղքատութիւն հոգւոյ. Սուգ. Յեզութիւն. Քաղց արդարութեան. *Ողորմածութիւն*. Սրբութիւն սրտի. և Խաղաղութիւն: - 583. Քանզի Աղքատութիւն հոգւոյն արտաքսէ՛ զհպարտութիւնն: ...*Ողորմածութիւնն* զագահութիւն: - 583

**ՈՂՈՐՄԵԱՅ** (շարականի տեսակ) - Իսկ չորրորդ ժամն՝ ցերեկին երրորդ ժամուն առաջին *ողորմեայն* է ի դէմ հոգւոյն սրբոյ. որ յերրորդ ժամու էջ յառաքեալսն: - 622. Յինգերորդ՝ ժամն՝ միջին *ողորմեայն* է և պատարագն: - 622. *Որդորմեայն* ի դէմս հօր որ առաքեաց զորդին ի խաչ. և պատարագն ի դէմս որդւոյ որ խաչեցաւ վասն մեր: - 622. Վեցերորդ ժամն է վերջին *ողորմեայն*. իններորդ ժամու աղօթն. յորում քրիստոս աւանդեաց զհոգին ի ձեռս հօր: - 622. Զոր այժմոյս **գ** *ողորմեայն* և պատարագն ի միասին կատարի: - 622. **Իսկ *ողորմեայն* է՛ որպէս հարցն վասն յանցանացն ադամայ:** - 628. Նոյնպէս և *ողորմեայն* ի դէմս եւայի: - 628. Անբիծքն վասն մեղաց պատարա՛գ է. նոյնպէս և յիսներորդ *ողորմեայն* վասն մեղաց է ալէլու ո՛չ ասի: - 630. Դարձեալ՝ առաջին *ողորմեայն* է՛ առ հոգին սուրբ. վասն այն ասեմք օրհնեալ հոգիդ սուրբ աստուած ճշմարիտ զառաջինն: - 633. Այլ գիտելի՛ է, թէ սաղմոսն շարականաց որ **բժ**ան տուն է՝ զփառքն և զայժմն ի միասին երգեմք. որպէս զօրհնութիւնն, հարցն, *ողորմեայն*, տէր յերկնիցն: - 636. Նախ որպէս ձայնիւ եղանակաւ նման միմեանց. որպէս *զողորմեայքն* առ նոյն. և զտէր յերկնիցն առ նոյն: - 642. Այլ և **թ** *տէր ողորմեայն* ի պատարագն. և **թ** երեքսրբեանն, ի խորհուրդ **թ** դասուց վերնական յերիս երրեակս որոշեալ: - 645

**ՈՂՈՐՄԵԼԻ +** ...զի յերկինս ո՛չ կարօտանան ողորմութեան. զի անդ ո՛չ գոյ *ողորմելի:* - 459. Իսկ չորրորդն, *ողորմելիքս* չորեքնիւթեայ բնութեամբ յուսասցուք ի տէր և երկիր պագցուք նմա. և այնու հաստատեսցին սիրտք մեր ի տէր: - 629. Ութերորդ՝ ահագին տեսիլն դիւաց և վիշապաց. զոր ի կայծի կայծել հրոյն տեսանեն. և *ողորմելի* աղաղակ լալ ականացն և ոտնհար լինողացն: - 752

**ՈՂՈՐՄԻՄ +** Չորրորդ՝ զի չարչարանօքն իւրովք փորձեցէ՛ զհնազանդութիւնս մեր. այսինքն զկսկիծ և զծանրութիւն չարչարանաց մերոց. որպէս թէ ունիցի գիտել իւրովք զմերս և *ողորմիլ* մեզ: - 43. Եւ մեռեալ ի խաչին զանձն միայն ասէք. որպէս երգէք յերեք սրբեանն ձեր, քրիստոս որ խաչեցար *ողորմե՛ա* մեզ: - 89. Այլ և ի լիթանիայս ձեր ասի՝ քրիստոս անօրդ աստուածութեան՝ *ողորմեա՛:* - 89. Եւ փառաբանութիւն է նոցա, *ողորմեա՛* տէր քո արարածոց: - 144. Կամ *չողորմել* կսկծողաց. իբր պղնձի մարմին զգեցողաց: - 376. Երրորդ, զի *ողորմեցաւ* աստուած անբանին զի մի՛ հարկանիցէ անողորմ...: - 388. Նա՛խ՝ զի մի՛ մարդիկ յանդիմանեսցեն չարք և անողորմք. այլ աստուած յանդիմանեաց և *ողորմեցաւ:* - 432. Զուրն նուազեաց և կերակուրն արգելաւ, զի *ողորմեսցի* իսրայէլի: - 443. Եւ անդրադարձեալ. երբեմն ողորմութիւն կոչի որդին. զի *ողորմեցաւ* մեզ: - 457-458. *Ողորմեսցի* քեզ մարդասէրն աստուած...: - 602. Վասն է՞ր սարկաւագն զամենայն քարոզի վերջքն յաղօթից ձեւ փոխէ ասելով՝ կեցո՛ և *ողորմեա՛:* - 625-626. Ապա ի բացեայ կացեալ և զձեռս համբարձեալ ասէ, Սուրբ աստուած Սուրբ և հզօր Սուրբ և անմահ որ խաչեցար վասն մեր *ողորմեա՛* մեզ: - 631. Որ կամաւ խաչեցար վասն մեր, նոյն սիրովն *ողորմեա՛* մեզ: - 632. Երկրորդ, զի յայսպէս ասել սուրբ աստուած սուրբ և հզօր սուրբ և անմահ քրիստոս որ խաչեցար վասն մեր *ողորմեա՛* մեզ: - 633. Իսկ կշռողականն է զոյգ արդարութեամբ կշռել. որպէս յորժամ *ողորմելով* միոյն՝ պատժէ՛ զընդդիմակն նորին. որպէս փրկեցաւ իսրայէլ և պատժեցաւ եգիպտոս. և յազատիլ բնութեան մարդոյս՝ պատժեցաւ սատանայ: - 747. Որ և ձեզ յիշողացդ և մեզ յուսողացս առհասարակ *ողորմեսցի* բարերար և բազում ողորմ մարդասէրն աստուած և տէրն մեր յիսուս քրիստոս ամէն: - 773. Եւ այն զի՞նչ իցէ, զի սա միշտ մի և նոյնպէս մնայ. իսկ նա՛ աստանօր *ողորմի* զղջացելոցն, և ո՛չ ոչ նոյնպիսոյն. իսկ անդանօր ո՛չ զղջացելոց *ողորմի* մարդկան մեղաւորաց և ոչ անզղջից անմարմնոց շեղելոց: - 778

**ՈՂՈՐՄՈՒԹԻՒՆ +** Դարձեալ, թէ է հարկ, վասն է՞ր աղօթք և պատարագք և *ողորմութիւնք* և այլն՝ դարձուցանեն զմերձեալ չարիսն, և փոխեն ի բարիս: - 11. Եւ բարի փոխանակ չարի, որ է անբաւ գթութեանն և *ողորմութեանն* աստուծոյ: - 18. Երրորդ՝ զի կամեցաւ աստուած ո՛չ միայն *ողորմութեամբ*՝ այլև ըստ արդարութեան...: - 25. Եւ զի եդեր զկամքն միջոց, ի բա՛ց պարսպեցար *յողորմութեանց* նորին առ իւր արարածքս. զի եդեր ա՛յլ իմն զկամիլն և զկամքն: - 36. Եւ տէր մեր հաւասար *ողորմութեամբ* և արդարութեամբ. զի որքան տեսանեն *ողորմութեամբ*՝ ձգտին առ շնորհին արդարութեան: - 127. Զի առնելն է հաճոյական գործ առանց կասկածանաց. որպէս բարի առնել բարեաց, որ է՛ արդարութեանն աստուծոյ. և չար առնել չարեաց, որև այս է՛ խրատ ուղղութեան. այլ բարի առնել չարեաց, այս *ողորմութեան* է և գրութեան. այսոքիկ առնելոյն են տեսակք: - 158. Եւ այսպէս են մարմնաւոր բարիք. որպէս ոսկի և այլ ինչ. որ ի ձեռն *ողորմութեան* պատճառէ՛ զիանդերձեալ բարիսն: - 160. Կիրք՝ *ողորմութիւնն:* - 250. Եւ վասն *ողորմութեան* և գթութեան ի **ռ** ազգս: - 284. Ըստ այնմ թէ «հաճեցաւ տէր ընդ երկիւղածս իւր, և ընդ այնոսիք որք յուսան *ողորմութիւն* նորա. որպէս դաւիթ կրտսեր էր և հաճեցաւ տէր. այլ եղբարքն մեծամեծք խոտանք եղեն»: - 310. Աստ զանազանութիւն է գթութեան և *ողորմութեանն* աստուծոյ: - 350. Նա՛խ՝ ի դէմքն. զի գթութիւնն անմե՛ղ կացելոցն է. և *ողորմութիւնն* դարձելոց ի մեղաց: - 350. Դարձեալ՝ գութն բնական և ներքին սէրն է. և *ողորմութիւնն* երկրորդ և արտաքին...: - 350-351. Դարձեալ՝ գութն բովանդակ և կատարեալ սէրն է. և *ողորմութիւնն* մասնաւոր. զի *ողորմութիւն* ի գթո՛յն յառաջի և սփռի ի մեզ: - 351. Երրորդ, այն առանց գթութեան հատուցանէր պատիժս պարտուց. իսկ տեառն մերոյ շնորհիւ և *ողորմութեամբ*...: - 354. Սա՛ փոխեալ ի նորս նշանակէ՛ զմարմնաւոր նուէրքս. որպէս պահք աղօթք, *ողորմութիւն:* - 357. Այսինքն զամենայն յաջողուածս հոգևոր և մարմնաւոր, և զմասն անմահութեան կենաց յուսոյն, ո՛չ վասն մեր արժանաւորութեան համարել. այլ բարութեան և *ողորմութեանն* աստուծոյ: - 360. Ա՛յս է՝ հանապազ աղօթք, պահք, *ողորմութիւն*, և այլն: - 363. Երկրորդ՝ զի *ողորմութիւն* և մարդասիրութիւն ուսցին. տալ զբաժին աղքատաց և տնանկաց: - 371. Նախ է՝ որ ո՛չ գլուխն խնդրի և ո՛չ շահ. որպէս *ողորմութիւն:* - 375. Զի պահքն և աղօթքն խո՛յ է աստուծոյ. և *ողորմութիւնն* տուգանք. և ամենայն ապաշխարութիւն սոքօք կատարի: - 384. Որ է՛ պահք, աղօթք, *ողորմութիւն:* - 392. ...եկեղեցի սուրբ՝ պատարագաւ և աղօթիւք և *ողորմութեամբ* հատուցանէ՛ զպարտս նոցա և ազատին: - 392. Զի պարգևօք և *ողորմութեամբ* աստուած մարդացաւ և փրկեաց զմեզ: - 402. Նա՛խ՝ զի և հեթանոսք վայելեսցեն *յողորմութեանցն:* - 402. Եւ ի սոցանէ *ողորմութեան* և արդարութեան գործ. որ է՛ օրհնութիւն և անէծք ի մի պատուիրանն աստուծոյ տրամակայեալ: - 403. Երկրորդ՝ զներքինս օրհնեմք, և աստուծոյ բարութեանցն կցորդեմք. *ողորմութեան*, պարգևաց, կամ այլ ինչ շնորհաց. և այսու եղանակաւ օրհնեմք զքահանայս. զժողովուրդս. զմեռեալս և զկենդանիս: - 406. Եւ երկոքին սոքա առ մեզ եկեալ, յորժամ չարաց բարի առնէ, *ողորմութիւն* է: - 408. Եւ *ողորմութիւնն* ի մէջ արդարութեանն առաւելու ժտիւ խնդրողաց: - 424. Այլ յայնմ հետէ *ողորմութիւնն* աստուծոյ արգել զայլ աւուրսն: 435. Դաւիթ արար *զողորմութիւն* կաղացն և կուրացն յեբեսացոց. և տէր մեր բժշկեաց զկաղս և զկոյրս որ «որդի դաւթի» աղաղակէին: - 438. Եւ շնորհք նոր օրինացս հայի *յողորմութիւնն* աստուծոյ և ի փառս վերինն եէմի որպէս ասացաւ ի վերոյ: - 439. Երկրորդ, Ի գործոյ *ողորմութեան* և արդարութեանն աստուծոյ: - 454. Բարերար և բնութեամբ բարի է աստուած. ուստի ի բարերարութեանց նորա յառաջե՛ն առ մեզ գործ *ողորմութեան* և գործ արդարութեան...: - 457. Եւ է՛ *ողորմութիւն* նորա ծրի շնորհօք և պարգևօք. իսկ արդարութիւնն տուրք փոխարէնք և հատուցումն: - 457. Այսպէս և նիւսացին գրիգոր՝ գործ ստեղծման և գործ նախախնամութեան բաժանէ ի սեռէ՛ *ողորմութեան* և արդարութեանն աստուծոյ: - 457. Եւ գիտելի է, զի բազմաեղանակ տեսանի գործ *ողորմութեան* և արդարութեանն աստուծոյ: - 457. *Ողորմութիւնն* յառաջանայ ի կամացն. և արդարութիւնն յիմաստութեանցն: - 457. Եւ *ողորմութիւն* և շնորհք հոգին սուրբ...: - 457. Եւ անդրադարձեալ. երբեմն *ողորմութիւն* կոչի որդին. զի ողորմեցաւ մեզ: - 457-458. Չորրորդ՝ *ողորմութիւնն* աստուծոյ է աստ ի կեանս. և արդարութիւնն ի հանդերձեալն: - 458. Հինգերորդ՝ *ողորմութիւնն* երևի ի մարդեղութիւն բանին. և արդարութիւնն ի մահ նորին: - 458. *Ողորմութիւնն* դիտէ առ հաւատս և առ յոյսս: - 458. Եօթներորդ՝ *ողորմութիւն* է ի նոր օրէնս...: - 458. Ութերորդ՝ *ողորմութիւն* է ի թողութիւն մեղաց. և արդարութիւն ի ներումն պատժոց: - 458. Իններորդ՝ *ողորմութիւն* է առ բնութիւն մարդոյս. և արդարութիւն է առ իւրաքանչիւր անձինս: - 458. Տասներորդ՝ արդարութիւն է ի մեռանիլն մեր. և *ողորմութիւնն* առհասարակ յարութեանն: - 458. Եւ այսպէս բազումս տեսանի ըստ մասին գործ *ողորմութեան* և արդարութեանն աստուծոյ: - 458. Ոմանք ասեն թէ՝

*ողորմութիւնն* աստուծոյ է՛ յերկինս առ հրեշտակս. և արդարութիւնն յերկրի առ մարդիկս: - 458. Այլ և ազգ մարդկան *ողորմութեան* արժանացան մարդեղութեամբն աստուծոյ: - 458. Այլ որ ստուգիւ տեսութիւն է բանս, յերկինս ասել *զողորմութիւն*, զառաւել մեծութիւնն նշանակէ: - 458. Նա՛խ՝ զի գործ *ողորմութեանն* է ի սկիզբն աշխարհի՝ և ի մէջն. և ի կատարումն յարութեամբ մարդկան որպէս ցուցաւ ի վերոյ: - 458. Երկրորդ՝ զի *ողորմութիւն* է բացարձակ և պարզապես բարի. իսկ արդարութիւնն է խառնել բարի...: - 458. Յաղագս այսորիկ նւազ և փոքր լսի գործ արդարութեան քան զգործ *ողորմութեան:* - 458. Նոյնպէս և *ողորմութիւնն* աստուծոյ գ կերպիւ առեալ լինի: - 459. Նա՛խ՝ ասի *ողորմութիւն*, իբր թէ որոշիչ թշուառութեան սրտին: - 459. ...զի յերկինս ո՛չ կարօտանան *ողորմութեան*. զի անդ ո՛չ գոյ ողորմելի: - 459. Իսկ *ողորմութիւն* բարեխառնէ զխստութիւնն: - 459. Եւ այսպիսի *ողորմութիւնս* է ի յերկինս և ի դժոխս: - 459. Երրորդ ասի *ողորմութիւն*, իբր թէ զարմանալի իմն քաղցրութեամբ ոռոգել զսիրտս: - 459. Եւ այսպէս *ողորմութիւնս* է՛ առաւել յերկինս: - 459. Եւ գիտելի՛ է, զի յամենայն գործս աստուծոյ գտանի արդարութիւն և *ողորմութիւն:* - 459. Այլ արդարութիւնն երբեմն ծածկեալ՝ և *ողորմութիւնն* յայտնի, որպէս յարդարացուցանել զամբարիշտն, և յառաջին գալուստն քրիստոսի: - 459. Երբեմն արդարութիւնն յայտնի՝ և *ողորմութիւնն* ծածկեալ. որպէս պատիժն մանկանց առանց մկրտութեան մեռելոց, և յերկրորդ գալուստն քրիստոսի: - 459. ...զի զնոսա փառաւորէ ի վեր քան զարժանն. և զսոսա պատժէ սակաւ քան զարժանն. այսոքիկ *ողորմութեանն* են: - 459. ...իսկ ի կատարել զգործ *ողորմութեանն*՝ ո՛չ ինչ պահանջի, եթէ ոչ կամքն նորա, որպէս երևեցաւ ի մարդեղութիւն բանին աստուծոյ ի սրբոյ կուսէն մարիամայ: - 459. Վասն անողորմին տանջի *ողորմութիւնն:* - 491. Նոճն զբարձրութիւն խոկմանն. և Ձիթենին զկակղութիւն *ողորմութեանն:* - 495. Տասներորդ՝ առաջին գալուստն քրիստոսի *ողորմութեան* էր և շնորհաց. և երկրորդն արդարութեան և հատուցման: - 507. Նոյնպէս և հոգի մարդոյ զկնի մահու ո՛չ կարէ արդարանալ ըստ ինքեան. բայց թէ ի ձեռս այլոց վճարի պարտ նոցա և հասանին *ողորմութեան:* - 508. Իսկ հոգիքն ի դժոխս յորժամ տեսին զքրիստոս, այն էր ժամանակ փրկութեան նոցա և ընդունելոյ *զողորմութիւն*. յաղագս որոյ հաւատովք արդարացան նոքա միայն ի նոյն ժամն: - 508. Յայսմիկ յայտ արար թէ ի յարութեան անդ ո՛չ դառնայ ոք յոք. ո՛չ հայր յորդիս՝ և ո՛չ որդիք առ հարս իւրեանց. այլ դառնան ամենեքեան յայս. զի արժանի լիցին *ողորմութեամբ* ելանել առ հայր: - 517. Երրորդ՝ վասն ննջեցելոց ի յանբանից զենուլ և տալ *ողորմութիւն* աղքատաց: - 553. Ութերորդ, ո՛չ ասաց՝ թէ խնդրեսցէ ապաշխարութեամբ՝ արգելից զգութ և *զողորմութիւն*. այլ թէ՝ «ո՛չ թողցի». որով յա՛յտ է թէ առանց զղջման և տանջանաց ո՛չ թողցի: - 566. Ա՛րդ՝ ի թողուլն երկու են. այսինքն *ողորմութիւն* և արդարութիւն. ընդ դէմ առաջնոյն է՛ յուսահատութիւնն. և ընդ դէմ երկրորդին յանդըգնութիւնն: - 567. Յուսովն ակն ունիմք ինքեան *ողորմութեանն* որ խոստացեալ է. զի գթած և ճշմարիտ է: - 571. Որոյ գործն այս է, զիւրաքանչիւր ուրուք յետ տալ զոր իւրեանն է: ...Փոքերն զուղղութիւն և *զողորմութիւն:* - 579. *Ողորմութիւն* է որով երկրաւորքս շահին երկնաւորօքն: - 584. Եւ դարձեալ՝ *ողորմութիւն* է կամաւոր ցաւակցութիւն յաղագս այլոյ թշուառութեանց: - 584. Իսկ գործ *ողորմութեան* են չորեքտասան. այսինքն եօթն մարմնաւոր և եօթն հոգևոր: - 584. Իսկ գործ հոգևոր *ողորմութեան* են այսոքիկ: - 585. Եւ վերջինս այս վասն այն ասի գործ *ողորմութեան*, զի կակուղ և խոնարհ պատասխանին խորտակէ՛ զբարկութիւն ընկերին և շահի՛ զնա: - 585. ...զի թէպէտ *ողորմութիւնն* առաւել նմանեցուցանէ զմարդն աստուծոյ ըստ արտաքին գործոյն...: - 585. Եւ յետոյ դնէ ապաշխարանք թէ զինչ կերպիւ պատեհ է. պահք. թէ աղօթք. թէ *ողորմութիւն*. պատարագ. և այլ զինչ զոր կարօղ իցէ. - 602. Վեցերորդ, ի սմա՛ կրկին դրունք ի հարաւ և յարևմուտս. որ նշանակէ՛ զդուռն *ողորմութեան* և զդուռն արդարութեան աստուծոյ, հարաւոյն և արևմտիցն: - 614. Զի *ողորմութիւնն* ի կողմանէ յորժամ անտես առնէ զմեղս՝ դուռն է հարաւոյն: - 614. Երկրորդ վասն ընկերին. որ է՛ *ողորմութիւն* և առաքինութիւն: - 620. Այլ և արտասուքն բռնադատէ՛ զաստուած *յողորմութիւն*. որպէս բազում որդիք մօրն: - 620. ...միայն արտասուօք խնդրեմք յաստուծոյ *զողորմութիւն*. ի հարկէ գթայ և տայ: - 620. Իսկ երկրորդն, որ երկինք պատմեն զփառս աստուծոյ, զայնմ որ դատէ՛ զհակառակն մեր. զի յերկինս է *ողորմութիւն* նորա: - 629. Զոր նայեսցեն երկինք և երկիր զանչափ *ողորմութիւնն* և արդարութիւնն առ մեզ: - 629. Իսկ վասն *ողորմութեան* ասացաւ ի վերոյ լ գլուխն յառաջին համարն: - 654. Երրորդ, աղքատսիրութիւն է և *ողորմութիւն:* - 657. Զի մի՛ միայն *ողորմութեամբ*՝ այլ և արդարութեամբ վայելեսցուք: - 663. Եւ ոչ մի ինչ ունի յոյս փրկութեան. ո՛չ օգնական. ո՛չ բարեխօս. ո՛չ *ողորմութիւն*. և ո՛չ այլ ինչ այնպիսի որ արաժանաւորացն է: - 669. զի անցեալ է ժամանակն *ողորմութեան*, և դատաւորն առ դուրս հասեալ՝ դնել ի տանջանս դժոխոց. որպէս

աստ զմարմինն ի գերեզմանի: - 671. Իսկ պաշտօնք և *ողորմութիւնք* և պատարագք լինին նոցա առիթ պսակաց: - 675. *Ողորմութիւն* է ննջեցելոցն. և ո՛չ թէ գին աւետարանին շնորհացն: - 684. ...որ գթով *ողորմութեամբ* դիւրապէս քաւեսցին և *ողորմութեան* արժանասցին: - 688. Այս է խորանն առ երկնիւ ուր ժողովին արդարք և մեղաւորք հոգիք հաւատացելոց. որք դատաստանաւն կատարին, ակնունելով *ողորմութեանն* աստուծոյ: - 688. Տասնգ, *ողորմութեամբ* աստուծոյ զերծանի ոք ի մեղաց. և արժանաւորի արքայութեան: - 700. Ո՛րդ՝ *ողորմութիւնն* աստուծոյ է՛ այսմ աշխարհի որ քան կենդանի եմք. - 700. ...իսկ մեռեալ և անդ գնացեալ արդարութիւնն է յայտնի և ոչ *ողորմութիւնն*...: - 700. Եւ զի ո՛չ գոյ *ողորմութիւն* անդ՝ յա՛յտ է ի յիմար կուսանացն. և ո՛չ զերծումն ի տանջանաց...: - 700. ...և Ակն պատուական՝ գործք մարմնոյն. պահք, աղօթք, *ողորմութիւն*, և այլն: - 702. Եւ այսպէս կարճեսցին աւուրքն այնոքիկ *ողորմութեամբքն* աստուծոյ: - 709. Երրորդ, յարմարի տեղիքն այն՝ դատաստանին աստուծոյ որ անդ լինելոց է. այսինքն գործ *ողորմութեան* և գործ արդարութեան...: - 738. ...զի անդ արդարութիւնն ծածկէ՛ *զողորմութիւն*. որպէս աստ *ողորմութիւնն* ծածկէ զարդարութիւնն: - 738. Քանզի լեառն ձիթենեաց նշանակէ՛ *զողորմութիւնն* որ մե՛րձ է ի ձորն այն: - 738. Հաւատացեալ արդարք. որք ըստ օրինաց հնոյն կամ նորոյս գործեցին զարդարութիւն. կամ որք սխալեցին և ապաշխարեցին զմեղս զղջմամբ խոստովանութեամբ պահօք աղօթիւք *ողորմութեամբ* և այլովք: - 739. Եւ պա՛րտ է գիտել զի ի միոյ սեռէ բարութեանցն աստուծոյ՝ յառաջե՛ն առ մեզ *ողորմութիւն* և արդարութիւն...: - 745. Արդ բարի գործս մեր հայի առ գործ *ողորմութեանն*, և չար գործս առ գործ արդարութեանն աստուծոյ: - 745. Եւ որպէս մեք յարաժամ միտեմք ի գործ բարութեան կամ չարութեան. և գործ նորա միտէ՛ *յողորմութեան* կամ արդարութեան հատուցմնն: - 745. ...զի մարդոյ ի բարի գործս հակեալ՝ հարստահարի՛ արդարութիւնն *յողորմութենէն*. և թէ ի չարն հետևիմք՝ *ողորմութիւնն* յարդարութենէն: - 745. Այսպէս ի միտելն ի բարին՝ յաղթահարեաց *ողորմութիւնն:* - 745. Առասանքն երեքկղի՝ յերրորդութեանն դիմաց արդարութեան և *ողորմութեան* զօրութիւնք առ մեզ խոնարհեալ. ունելով զյիշատակ բարեացն և չարեացն մերոց: - 745. Եւ նոյնն գոլ *ողորմութեան* և արդարութեանն գործոց ունել հաւասարութիւն: - 746. ...զի երբեմն ծածկէ՛ *ողորմութիւնն* զարդարութիւն. և երբեմն արդարութիւնն *զողորմութիւն*. և երբեմն հաւասար երկուքն յայտնի և կամ ծածուկ. - 746. Եւ կշիռ *ողորմութեանն* ըստ ինքեան մարմնաւորի և հոգևորի...: - 746. Իսկ անդ հաւասարի կշիռն ըստ յուսոյ, և միտէ՛ *ողորմութիւնն* ըստ սիրոյ: - 746. Այսպէս հաւասարի և միտէ՛ կշիռ *ողորմութեանն* ըստ ինքեան առ նոյնս և առ այլս: - 746. *Ողորմութիւն* տեառն է եռակի: - 747. Նախ ցուցանէ զմեղս անհաւատիցն լցեալ զտաճար ներողութեանն աստուծոյ. զի լցեալ և յաղթահարի *ողորմութիւնն* յարդարութենէն: - 749. Զի ըստ առաջնոյն ամբարիշտքն կորուսին զաստուած և զամենայն բարի շնորհս և զփառս. և ոչ ունին յոյս *ողորմութեանն* աստուծոյ...: - 751. Յառաջնումն *ողորմութիւն* գտանեմք: - 755. Զի թերևս վասն ձեր սիրալիր մաղթանացդ՝ գտայց *ողորմութիւն* յամէնողորմ փրկչէն մերմէ: - 773. Ապա ուրեմն *ողորմութեամբ* և արդարութեամբ ազատեցաւ նախահայրն յաւիտեան. իսկ այլքն առ ժամանակ մի *ողորմութեամբ* վասն նորա որպէս ասացաւ: - 778. Թէ ասիցէ ոք, թէ աստուած *յողորմութենէ* կամացն փոխի յայնժամ յանողորմութեան յաթոռ: - 778. Զի որպէս կարողութիւնն աստուծոյ երևի ի ստեղծանելն և *ողորմութիւնն* ի բարերարելն, այսպէս և արդարութիւնն ի հատուցանելն: - 778. ...նոյնպէս *ողորմութեան* և արդարութեան է միշտ բարերարելն և պատժելն ըստ նախասահման գիտութեան նորին նախքան զլինիլն էիցս ըստ առաքելոյ: - 779. Այսպէս և յամենայն գործս աստուծոյ գտանի արդարութիւն և *ողորմութիւն* որպէս ասեն ոմանք. այլ երբեմն արդարութիւնն ծածկեալ և *ողորմութիւնն* յայտնի. որպէս յարդարացուցանելն ամբարշտին՝ և յառաջին գալուստն քրիստոսի: - 779. Երբեմն *ողորմութիւնն* ծածկեալ և արդարութիւնն յայտնի. որպէս ի պատիժ մանկանց առանց մկրտութեան մեռելոց. և յերկրորդ գալուստն: - 779. Զի զնոսա փառաւորէ՛ ի վեր քան զարժանն, և զնոսա դատապարտէ՛ սակաւ քան զարժանն. և է՛ այս *ողորմութիւն:* - 779. Այլ ո՛չ թէ *ողորմութիւնն* աստուծոյ հետևի ժամանակի, այլ քաղցրութեան կամացն: - 780. Այլ մեք հետևելով ժամանակի՝ գտցուք *զողորմութիւն* ի քաղցրութեան կամաց: - 780

**ՈՂՈՔԱԿԱՆ +** Նաև պատճառին. թէ խրատական է. թէ աւաղական. թէ սպառնական. թէ *ողոքական*. թէ ըղձական. և այլ այսպիսիք: - 643

**ՈՂՋ +** Չորրորդ՝ զի ասելն «ուրախ լեր» ի յայլ թարգմանս է «*ողջ*». ցուցանէ զողջութիւն և զանմեղութիւն կուսին: - 464

***ՈՂՋ ԼԻՆԻՄ +*** *Ողջ լեր:* - 95. *Ողջ լեր* ի տէր ի պարծանս մեր: - 558. *Ո՛ղջ լեր* Ամէն: - 789

**ՈՂՋԱԽՈՀ +** Մետասաներորդ՝ ասեն թէ որպէս ի կենդանիս ուղտն խոհեմ՝ և տատրակն *ողջախոհ* է, և ա՛յլ կենդանիք են ապուշք և բղջախոհք: - 19. Այսպէս ի բնական ստեղծումն հոգւոյն՝ ոմն խոհեմ և ոմն անզգամ. ցանկասէր՝ և *ողջախոհ*. բարեբարոյ՝ և չարաբարոյ լինին: - 19. Իսկ թէ ոչ կամաւ. ո՛ է որ զնա բռնադատեաց. զի բնութիւնն *ողջախո՛հ* է ...: - 36. Է և այլ իմն աննմանութիւն հոգւոյ ըստ իմացմանն. առաւել և նւազ. ուշիմ և ապուշ. չկամ և կամեցօղ. հեզ և յանդուգն. ցանկացօղ և *ողջախոհ*...: - 237. Նոյնպէս և ի բանական որակութիւնս հոգւոյն՝ նման և աննման, հաւասար և անհաւասար բացատրեաց. այսինքն խոհեմ և տգէտ. հեզ և բարկացօղ. *ողջախոհ* և ցանկասէր. և այլ զանազան բարս բնական՝ մարդոյն: - 252. Երրորդ՝ մինն կուսութեամբ, և միւսն *ողջախոհ* ամուսնութեամբ. զի ցուցցէ թէ ի կուսից և յամուսնացելոց մտցեն յարքայութիւնն երկնից: - 289. Վեցերորդ՝ ո՛չ յաղթեաց պոռնիկ կինն *ողջախոհին* յովսեփայ: - 313. Հացն՝ *ողջախոհքն* մարմնով հոգւով և մտօք: - 346. Տատրակ՝ *ողջախոհքն* են. և Աղաւնի՝ միամիտքն և աններնգքն: - 358. Տատրակ, զի *ողջախոհ* և անմեղ էր...: - 361. Աիեակն *ողջախոհ* և սուրբ ունել կեանս յանձին: - 493. Դարձեալ կոչին ծառայականք, զի և ի խառնուածոյ մարմնոյն գոյանան. որք ո՛չ հետևին միմեանց. զի որ ի խառնուածոյն *ողջախո՛հ* է, նա ո՛չ խոհեմ կամ արդար կամ արի կարէ գոլ: - 581. Եւ այսպիսիքս կոչին ծառայականք. զի ի հարկէ խառնուածոյ մարմնոյն լինին *ողջախոհ* կամ արի և այլն: - 581. Այլ և ի յանբան կենդանիս բնաւորեցաւ գոլ. որպէս ուղտ խոհեմ. և առիւծ արի. տատրակ *ողջախոհ*. և արագիլ արդար: - 581. Դարձեալ կոչին յանձնառականք. որ ի պատուիրելոյ ումեք գոյ *ողջախոհ*. այլ զպատճառն ո՛չ գիտէ. նաև ո՛չ հետևին միմեանց: - 582. Եւ գիտեն զպատճառն թէ վասն է՞ր է *ողջախոհ*...: - 582. Իսկ պսակն է՛ ի խորհուրդ ողջախոհութեան. զի ողջախոհ ամուսնութեամբ զսպեսցէ առ ինքն *զբղջախոհ* ցանկութիւնն. և արգելցի ի շնութենէ և ի պոռնկութենէ. վասն որոյ **է** են խորհուրդք եկեղեցւոյ: - 587. Եւ գերեզմանց գործ ցանկութեանն է տանել *ողջախոհ* կուսութեան. և զայս ունին կուսանքն: - 712

**ՈՂՋԱԽՈՀՈՒԹԻՒՆ +** Դարձեալ՝ թէ ի հարկէ է՝ ապա բարձեա՛լ են ամենայն սկզբունք բարոյական առաքինութեանց. այսինքն խոհեմութեան. արիութեան. *ողջախոհութեան*. և արդարութեան. զի սոքա ստացեալ լինին առ ոմանս՝ և ո՛չ ի հարկէ: - 11. Ասելի՛ է թէ՝ երիցունք աշխարհի՝ հալալ ամուսնութեամբ և *ողջախոհութեամբ* են ուխտեալ քահանայագործել: - 167. Եւ կարմիրն, Նա՛խ՝ *զողջախոհութիւնն* կուսին: - 383. Երրորդ՝ զի յովսէփ վկայ լիցի *ողջախոհութեան* կուսին: - 461. Երկրորդ՝ զի հրեշտակք ի հարկէ բնութեան ունին զկուսութիւնն. իսկ աստուածածինն զայն պահեաց մաքրութեամբ մարմնով զկուսութիւն *ողջախոհութեան:* - 463. Եւ կարգաւ վասն Արդարութեան. և Խոհեմութեան. Արիութեան. և *Ողջախոհութեան:* - 526. Արիութիւն: *Ողջախոհութիւն*. և Արդարութիւն: - 571. Այլ գիտելի է, զի առաքինութեամբքն ուղղի հոգին ի զօրութիւնս իւր. քանզի խոհեմութիւնն ուղղէ զբանականն. արիութիւնն զցասմնականն. *ողջախոհութիւնն* զցանկականն. իսկ արդարութիւնն ուղղէ՛ զամենայն զօրութիւնս: - 578. Եւ *ողջախոհութիւնն* ո՛չ սանձահարէ զանպատեհ շարժմունս: - 579. Զի՞նչ է *ողջախոհութիւնն* և զի՞նչ գործ նորա և մասունք: - 581. *Ողջախոհութիւն* է հաստատութիւն հոգւոյ. որով արգելու զցանկութիւն զգայական և զհեշտութիւն մարմնական: - 581. Այլ մասունք *ողջախոհութեան* են երեք. այսինքն ժուժկալութիւն. անոխակալութիւն. և համեստութիւն: - 581. Իսկ տեսակ *ողջախոհութեան* են **գ**. այսինքն զգաստութիւն. ժուժկալութիւն. և համեստութիւն: - 581. Այս քան վասն *ողջախոհութեան:* - 581. Իսկ պսակն է՛ ի խորհուրդ *ողջախոհութեան*. զի ողջախոհ ամուսնութեամբ զսպեսցէ առ ինքն զբղջախոհ ցանկութիւնն. և արգելցի ի շնութենէ և ի պոռնկութենէ. վասն որոյ է են խորհուրդք եկեղեցւոյ: - 587. Ութերորդ, **գ** պսակ տայ աստուած արդարոցն. մին զկուսութեան. և մի *զողջախոհութեան*. և միւս զապաշխարութեան: - 675

**ՈՂՋԱԿԷԶ +** Եւ զի **գ** պատարագս ունիմք. և թէ զի՞նչ էր կրկին *ողջակէզն:* - 284. Փորձեաց աստուած զաբրահամ ասելով, ա՛ռ զորդիդ քո սիրելի և բե՛ր մատո՛ ինձ *ողջակէզ:* - 304. Ի սոցանէ ափով չափ դնէր քահանայն ի սեղան *ողջակիզացն* ի հոտ անուշից տեառն: - 357-358. Եւ է՛ առաջին պատարագ՝ *ողջակէզն:* - 358. Այլ ի կողմ հիւսիսոյ *զողջակէզս* և զվասն մեղացն: - 360. Այս է *ողջակիզաց* և այլ պատարագաց խորհուրդն: - 360. Եւ միայն *յողջակէզ*. ի խաչ սեղանոյն ի հոտ անուշից հօր և հոգւոյն սրբոյ: - 361. Նա՛ է *ողջակէզ* և փրկութիւն և գոհութիւն, և վասն մեղաց և յանցանաց. և յամենայն նւիրաց կատարումն և գլուխ նա՛ է: - 362. Զի՞նչ նշանակէ կրկին *ողջակէզն* ի նորս. որպէս զուարակն և երկու խոյն կատարման: - 362. Կրկին էր *ողջակէզն*. մին որ արտաքոյ այրէին: - 362. Դարձեալ՝ կրկին է *ողջակէզն*. մին վասն մեղաց որ է՛ կամաւոր. և միւսն յանցանաց որ է՛ ակամայն: - 362. Դարձեալ՝ կրկին *ողջակէզն*. մին վասն մեղաց. և միւսն վասն սրբութեան: - 362. Եւ

*ողջակէզ* սրբութեան է՝ յետ ապաշխարութեան զբարիս գործել. և զբովանդակ զհոգի և զմարմին մեր նուիրել աստուծոյ: - 362. Դարձեալ՝ կրկին *ողջակէզն*, մին այն է որ մատուցանեմք զպատարագն քրիստոսի մարմնոյ և արեան: - 362. Հինգերորդ՝ կրկին *ողջակէզն.* մին պատարագն է ամենայն աւուր. և միւսն տօն չարչարաց խաչի և մահու յամենայն ամի՛ զոր նոյն խորհրդով կատարէ՛ եկեղեցի: - 363. Երրորդ, երկրորդ սեղան է սիրտ քահանային. որպէս սեղանն *զողջակէզն* մաքրէ՛, նոյնպէս իշխանութիւն քահանային: - 363. Առաջին, *ողջակիզաց* մեծն. յոր զհասարակացն տօնէին: - 364. Երկրորդ՝ փոքր *ողջակիզացն*. յոր մասնաւոր պատարագացն էր: - 364. Նա՛խ՝ գառն հանապազորդ. և նուէրք յերեսաց սեղանն և *յողջակիզաց:* - 372. Եւ նա՛ ծնաւ զեզն պարարակ. որ *ողջակէզ* եղև արտաքոյ քաղաքին ի դէմս տաճարին: - 383. Սեղան *ողջակիզացն*, և սեղան սրբութեանցն և սեղան խնկոցն. ամենայն քառակուսի նշանա՛կ են քառաթև խաչին յիսուսի: - 494. Երկրորդ՝ *ողջակէզ* եղև ի վերայ խաչին: - 657. Երրորդ, որպէս *ողջակէզ* նորին, և մեզ պա՛րտ է զանազան փորձանաց և նեղութեան զանձինս մատուցանել սիրովն աստուծոյ: - 658

**ՈՂՋԱԿԻԶԵՄ +** Եւ յօշելն զանդամս **բժ**ան մասն ընդ ցեղիցն. և զոտս և զփորն լուանալն. և *ողջակիզել* ի վերայ պղնձի սեղանոյն: - 358. *Ողջակիզիլն* ի հոտ անուշից. ի հաճոյս աստուծոյ հրով սիրոյն աստուծոյ: - 360. Եւ մինչ ընթացաւ ի կալն ուռնայի և գնեաց զեզինսն և *ողջակիզեաց*, եհաս ի **զ** ժամն. որ յառաջն դադարեալ էր սուրն: - 435. Երկրորդ, ի հուր խորովեալ *ողջակիզեմք:* - 657

**ՈՂՋԱՆԱՄ +** Երրորդ՝ ժողովուրդն չարախայտ եղև յեգիպտոս. մինչև արկաւ ի ծոց խնամոցն աստուծոյ և *ողջացաւ:* - 332. Հինգերորդ՝ բորոտիլն զմահն եգիպտացւոց նշանակէր. և *ողջանալն* զկենդանանալն որդւոցն իսրայէլի որ ի մահ գրաւեալ էին: - 332. Նաև պաղատիտս թզոյ եդաւ ի վերայ վիրացն եզեկիայի և *ողջացաւ:* - 665

**ՈՂՋԱՑՈՒՑԱՆԵՄ +** Դարձեալ՝ աղն նշանակէ՛ զբանն աստուած. որ զանհամութիւնս մեր համեմեաց, և զնեխեալ վէրքն ապականութեան մերոյ *ողջացոյց:* - 356. Իսկ Աղ կոչեցաւ. զի զանհամութիւնս մեր համեմեաց, և զվէրս *ողջացոյց:* - 361. Որպէս եսաւ անդրանիկն իսահակայ՝ կցողական դեղօք *ողջացոյց* զմարմին իւր և արար անթլփատ. զի ցրեսցէ զուխտն աստուծոյ: - 486

**ՈՂՋՈՅՆ +** Յաղօթս ծոյլ, և *զողջոյնն* թւով համարեն: - 34. Շնորհն երբեմն ի տեղի *ողջունի* դնի...: - 139. Դարձեալ և ի յառակս անառակին որ դարձաւ առ հայրն՝ և *ողջմամբ* ընկալաւ և զգեցոյց զնա և զարդարեաց մատանի ի ձեռս՝ և կօշիկ յոտս. այլ ո՛չ ետ թոյլ նմա պատարագել...: - 167. Հինգերորդ, Վասն աւետեաց հրեշտակին և *ողջունին:* - 454. Եւ թէ ո՞րքան է *ողջոյնն:* - 454. Զի ի խորհուրդ մկրտութեանն ի յառնուլ ջուր, հոգին սուրբ և զօրութիւն բարձրելոյն և *ողջոյն* հօրն ի ձեռն հրեշտակին որ հերքէր զմեղս ըստ մկրտութեան: - 462. Զի՞նչ է *ողջոյնն* որ ասէ «Ուրա՛խ լեր բերկրեալդ տէր ընդ քեզ»: - 463. *Ողջոյնս* այս՝ է հանդերձ բերողիւն և առաքողիւն և կուսիւն ցուցանէ զ**ժ** գերազանցութիւն պատուոյ կուսին: - 463-464. Ո՞րքան է *ողջոյնն:* - 464. *Ողջոյնն* ըստ աշխարհի տրամատի ի **ե**: - 464. Իսկ *ողջոյնս* այս ունի համազուգիլ ընդ ամենայնսն: - 464. Դարձեալ *ողջոյնս* այս՝ ունի նշանակութիւն գերազանցութեան կուսին. բնութեան, շնորհաց, և փառաց: - 464. Ա՛րդ՝ սրբուհի կոյսն ի *ողջոյն* հրեշտակապետին երիս իրս արար: - 465. Սա՛ առնու զխաղաղութեան *ողջոյնն* և տայ ժողովրդեանն: - 606. Հինգերորդ, Քահանայաթաղ. և օծման նոցա. և *ողջունին*. **ժ ժ** թւով: - 660. Ութերորդ՝ զողջութիւնն նշանակէ *ողջոյնն* բոլոր հոգւոյն և մարմնոյն որ է անբիծ և անարատ: - 673

***ՈՂՋՈՅՆ ՏԱԼ +*** Երրորդ՝ յորժամ *ետ ողջոյն* եղիսաբեթի: - 465. *Ողջոյն տուր* փողոցն: - 639. Երկրորդ՝ զվերջին *ողջոյնն տամք*, զի ի հեռու ճանապարհ գնայ: - 673. ...վասն այն նա՛ մեզ *ողջոյն տայ* բոլոր եկեղեցւոյս: - 673

**ՈՂՋՈՅՆԱՌԱՔՆ** - Նա՛խ՝ զի աստուած էր *ողջոյնառաքն*. որ խօսէր զկոյսն ի հարսնութիւն կուսութեան, կուսաբեր լինիլ պտղովն: - 464

**ՈՂՋՈՅՆԸՆԿԱԼ** - Երրորդ՝ զի կոյս էր *ողջոյնընկալն* և գերազանց քան զամենայն կոյս որպէս ցուցաւ: - 464

**ՈՂՋՈՒԹԻՒՆ +** Եւ ի յէութեան է. որպէս հիւանդութիւն ի *յողջութեան*, և ապականութիւն ի մարմնի: - 22. Եւ է չար՝ որ խա՛ռն է ընդ բարւոյ. և ի յէութեան գոյանայ. որպէս հիւանդութիւնն ի *յողջութեան*. ապականությիւնն ի մարմնի: - 22. Զի ի նըւազիլ *ողջութեան*՝ հիւանդութիւնն երևի. և ի նըւազիլ մարմնոյ՝ ապականութիւնն պատահի: - 22. Չորրորդ՝ զի ասելն «ուրախ լեր» ի յայլ թարգմանս է «ողջ». ցուցանէ *զողջութիւն* և զանմեղութիւն կուսին: - 464. Քանզի պարունակէ *զողջութիւնն* ընդ ասելն «ողջոյն»: - 464. Երրորդ ըստ կենդանեաց *յողջութիւն* և ի հիւանդութիւն: - 663. Եւ ըստ բոլոր անձինն

*ողջութիւն* և հիւանդութիւն: - 664. Այլ վասն *ողջութեան* և հիւանդութեան՝ մեծութեան և աղքատութեան՝ այժմ ասասցի: - 664. Ութերորդ՝ *զողջութիւնն* նշանակէ ողջոյնն բոլոր հոգւոյն և մարմնոյն որ է անբիծ և անարատ: - 673

**ՈՂՋՈՒՆԱԲԵՐ +** Երկրորդ՝ զի հրեշտակ էր *ողջունաբերն*. կոյսն և անապական բնութեամբ: - 464

**ՈՂՋՈՒՆԵՄ +** Օծցեն սուրբ իւղովն և *ողջունեն* և տանին ի հանգիստն: - 671. ...և *ողջունեն* առ հասարակ և պատեալ դնեն զմարմինն ի տան պատուականի: - 672. Զի՞նչ է *ողջունելն* առ հասարակ: - 673. ...և մեք զնա *ողջունեմք:* - 673. ...նոյնպէս և մեք *ողջունիւս* զհոգին և զշնորհքն նորա ընդունիմք ի մեզ: - 673. Տասներորդ՝ զի այսպէս *ողջունի* և հոգին անդ որպէս մարմինն աստ. նախ յաստուածպետութենէն, և ապա ի համակարգ հոգւոց սրբոց: - 673. Նախ՝ որպէս անդանօր *ողջունեն* զխաղաղութեան և շինութեան գոլ. յեղակարծ ժամու հասանիլ բարկութեան: - 788-789

**ՈՄՆ +** Չորրորդ, զի ո՛չ լինի ի դիպուածոց ինչ. որպէս սղից *ոմանց* պատահին բարեբախտութիւն, կամ վատաբախտութիւն. ա՛րդ՝ թէ է՛ ամենայն ի հարկէ, ո՛չ լինին վերոյ ասացեալքս: - 8. Դարձեալ՝ թէ ի հարկէ է՝ ապա բարձեա՛լ են ամենայն սկզբունք բարոյական առաքինութեանց. այսինքն խոհեմութեան. արիութեան. ողջախոհութեան. և արդարութեան. զի սոքա ստացեալ լինին առ *ոմանս*՝ և ո՛չ ի հարկէ: - 11. Դարձեալ թէ ի հարկէ՛ է՝ ո՛չ հետևի գով և պարսաւ *ոմանց*. զի սոքա կամաւորա՛ցն են և ո՛չ ակամայիցն: - 11. Դարձեալ, թէ է՛ հարկ՝ անիրաւք են և ինքեանք աստեղքն. զի *ոմանց* բարիս գրեն, և *ոմանց* չարիս. *զոմանս* մեծատունս և *զոմանս* աղքատս...: - 12. Զորօրինակ **բ** թշնամիք *ոմանք* ի յարկս թագաւորին ո՛չ իշխեն վնասել իրերաց, մինչև թագաւորն հրամայեսցէ: - 12. Դարձեալ ասեն, եթէ ոչ է հարկ՝ ընդէ՛ր ոմն քաղաք կործանի և *ոմանք* ո՛չ. և ոմն նաւ հեղձանի, և *ոմանք* ի կռիւս անկանին: - 12-13. Իսկ *ոմանք* յաւելուն յևս ամբարշտութիւն. իբր փախչելով ի ծախոյն՝ խոտորին յաջ կողմն: - 13. Դարձեալ ասեմք թէ՝ աստուած ո՛չ է պատճառ. ստեղծուածոցս ի հարկէ. այլ ըստ կամաց որով առնէ. զի *ոմանք* դիպին ի հարկէ, և *ոմանք* ո՛չ ի հարկէ: - 15. Նախ՝ թէպէտ աստուած տեսանէ զամենայն նախատեսութեամբ և ո՛չ ինչէ արտաքոյ տեսութեանն աստուծոյ, սակայն տեսանէ *զոմանս* ի հարկէ՝ և *զոմանս* ի ներընդունակութիւնէ լինիլ: - 15. Երրորդ՝ ասեն թէ կամքն աստուծոյ ո՛չ է ընդունայն. և ո՛չ ոք կայ ընդդէմ կամացն աստուծոյ. վասն որոյ զորինչ կամի՝ այնպէս առնէ. *զոմն* չար և *զոմն* բարի: - 16. Չորրորդ ասեն՝ թէ չարն ո՛չ է յաստուծոյ, ապա երևի թէ այլ *ոմն* է չարի սկիզբն, և այլ *ոմն* բարւոյ. և լինի բ սկիզբն բարի և չար ըստ մանիքոսի: - 16. Դարձեալ ասեմք թէ՝ որպէս մեք ունիմք կրկին ճանաչումն իրաց, այսինքն զի *զոմն* ճանաչեմք ի յատուկ տեսակն իւր. և *զոմն* այլով տեսակաւ: - 17. Այսպէս ի բնական ստեղծումն հոգւոյն՝ *ոմն* խոհեմ և *ոմն* անզգամ. ցանկասէր՝ և ողջախոհ. բարեբարոյ՝ և չարաբարոյ լինին: - 19. Դարձեալ, ասեմք եթէ՝ առնէ՛ աստուած *զոմն* խոհեմ և *զոմն* տգէտ, զի նա՛ ի նմանէ՛ ուսցի: - 19. Երկոտասաներորդ՝ ասեն թէ աստուած առնէ *զոմն* աղքատ և *զոմն* մեծատուն տէր՝ և ծառայ. իշխան՝ և իշխեցեալ: - 19. Այսպէս առնէ *զոմն* արդար և *զոմն* մեղաւոր. չար՝ և բարի: - 19. Ապա ուրեմն և *զոմն* չար և *զոմն* բարի ստեղծանէ: - 19. Նախ՝ եթէ աղքատութիւն և մեծութիւն տիրելն և ծառայելն, է՛ յաստուծոյ. սակայն *ոմանց* կամելով՝ և *ոմանց* ներելով և թոյլ տալով...: - 19. Այսպէս և զարդարս և զմեղաւորս. զչարս և զբարիս. *զոմանս* կամելով առնէ բարիս, և *զոմանս* թոյլ տալով առնէ չար. ապա ուրեմն ո՛չ են ի կամացն աստուծոյ չարութիւնք և ո՛չ մեղքն: - 19. Ըստ որում *ոմն* ի բնախօս արանց նկատմամբ առաջնորդականին՝ վարաթևեաց ի սկիզբն առաջին՝ թէ է՛ *ոմն* որ շարժէ՛ զերկնային մարմին: - 26. Այլ *ոմանք* ասեն թէ՝ նախ ասացեալ բանքս՝ ո՛չ լինին զառաջին գալստենէն քրիստոսի ասացեալ, այլ զերկրորդէն: - 27. Վեցերորդ՝ է՛ պատրուակ մեղացն. զի *ոմանք* չար գործով ի բաց մերժեն յինքեանց զլոյս արեգականն արդարութեան...: - 32. Երկրորդ՝ նեռն հայհոյէ զքրիստոս զինքն կոչելով. նմանապէս և հերձուածօղք *ոմանք* հայհոյեն զմարդեղութիւնն Քրիստոսի: - 34. *Ոմանք* սոսկ մարդ ասելով բաժանեն զաստուածութիւնն **բ** բնութիւն, **բ** կամք, և բաժանեալ գործ, և այլն: - 35. Որ է տարակուսանք այս, եթէ գոյր *ոմն* մեծ քան զհայր՝ զի բռնադատեաց զնա՛: - 36. Այսպէս և զանհնազանդութիւնս մեր. զոր *ոմանք* ուրացութեամբ և կէսք ախտիւ՝ իւրն վերագրէ գլուխ գոլով անհնազանդ անդամոցն: - 42. Եւ որպէս ո՛չ *ոմն* նուազ զօրութեամբ ընդ առաւելն մրցի. այլ ընդ համացեղսն: - 44. *Ոմանք* որպէս սադուկեցիք ո՛չ գոլ իմանան: - 51. Եւ թէ յորդւոյ՝ երևեցաւ ասեն և թոռն *ոմն* մեզ աստուած: - 52. Պատասխանեմք նախ, որպէս ասէ ոսկէբերանն թէ՝ նորածնեալքն աւազանաւն՝ ըստ չափու շնորհացն արժանաւորեին իմաստութեան, թարգմանութեան, և այլն. այսպէս և *ոմն* շնորհս ընդունէր աղօթելոյ կարգաւորապէս...: - 59. Պատասխանեմք եթէ՝ հոգի աստուծոյ *ոմանք* զօդս ասեն. որոյ բնական տեղի իւր է՛ ի վերայ ջուրց: - 60. Այլ ի հարկէ **բ** գոլ

խոստովանին. *զոմն* բնութեամբ՝ և *զոմն* շնորհիւ: - 66. Իննևժերորդ՝ թէպէտ մարդիկ *ոմանք* կոչին տէր վասն ունելոյ իշխանութիւն ինչ, այլ տէր միայն աստուած է ...: - 74. Այլ զորօրինակ՝ *ոմն* անհատ ունի զհասարակ զբնութիւնն լիով յիւրում առանձնութեանն: - 74. *Ոմանք* զբոլորն բաժանեալ ասեն աստուած և մարդ. որպէս նեստորականքն: - 77. Եւ *ոմանք* մասամբ և բաժանեալ. որպէս քաղկեդոնիկքն ասեն: - 77. Զի՞նչ է ասելն աստուածաբանին, այլ և այլ ընդ նմին Երրորդութեանն ունի. քանզի՝ անդ այլ *ոմն* է և այլ. զի մի՛ զդէմսն խառնակիցեմք: - 80. Նախ այսպէս, ասէ թէ բաժանմունք որ յԵրրորդութիւնն է, ո՛չ է հնար միաւորութեան. զի ա՛յլ *ոմն* է և ա՛յլ: - 80. *Ոմանք*՝ որպէս նեստոր. և սամոստացին պօղոս. և դիոթորոս: - 82. Եւ *ոմանք* որպէս քաղկեդոնիկքն՝ մի անձն համբաւեն, և յերկու բնութիւնս բաժանեն զմի քրիստոսն. և **բ** կամք. և **բ** գործք...: - 82. Եւ թէպէտ և *ոմանք* նմանապէս մեզ ասեն մի բնութիւն՝ բայց շփոթեալ: - 83. Այսպէս և մի անձն է քրիստոս և մի անհատ. զի թէ բաժանես զնա՛ յաստուած և ի մարդ, ո՛չ մնայ բոլորն ի նոյն. այլ մասն ինչ և մասն. կամ *ոմն* և *ոմն:* - 87. Իսկ աստ բնութիւնք **բ** միայն. կամ **գ** ըստ *ոմանց:* - 88. Իսկ աստ **բ** բնութիւն ի մի թիւ անձին որպէս համբաւեն *ոմանք:* - 88. Այլ աստուածութիւնն և մարդկութիւնն ո՛չ նման միմեանց. և ո՛չ բոլորին կոչին ըստ *ոմանց:* - 88. Երկրորդ՝ զի ո՛չ մասամբ ինչ ըստ *ոմանց* ապօղինարի և այլոց. այլ յերկուց կատարեալ բնութեանց է միաւորութիւն փրկչին: - 88. Այլ և ո՛չ որպէս պատահումն ի յէութիւն. զի բանն աստուած ո՛չ է անանձն և ազդումն ինչ որպէս մեր բանս ըստ *ոմանց*. որպէս մարկեղոս և փոտինոս դանդաչեն: - 88. Իսկ թէ զմարդկային բնութիւնն պաշտէք, եղէք կռապարիշտք. և նո՛ր և եղական *ոմն* աստուած մուծանէք յԵրրորդութեանն կարգ: - 90. *Ոմանց* գոյութիւն միայն. և այլոց կեանք. և բան. և իմացումն. որպէս տիպ կնքեալ ի մոմի: - 106. Ա՛րդ՝ զի հայր պատճա՛ռ է որդւոյ ծննդեան՝ և հոգւոյ բղխման, վասն որոյ հայր նախադասի. իսկ ընդ նմա որդի. ո՛չ որպէս *ոմանք* կարծեն որդի պատճառ է հոգւոյ բղխման...: - 109. *Ոմանք* զայս ընդ նիւթն շարադասեն: - 111. *Ոմանք* ասացին զսկզբնապետագոյն տարերքն. ուստի եղեն ամենայն մարմնական էութիւնք: - 112. Եւ ի սէր աստուածային շարժեալք՝ *ոմանք* յիմաստասիրութիւն. այլք ի ճգնութիւնս. ի կուսութիւն. և ի զանազան առաքինութիւնս: - 126. Իննևժերորդ՝ *զոմանս* ըստ ինքեան՝ և զայլս միջնորդով լուսաւորէ: - 127. Զի *ոմանց* տացի և յաւելցի. և *յոմանց* բարձցի և պակասեսցի ըստ չափու ունակութեան ընդունողաց: - 127. Զայս *ոմանք* ի վերայ սուրբ Երրորդութեանն մեկնեն այսպէս. սիրօղ է հայր. սիրելի որդի. և սէր հոգին սուրբ: - 128. *Ոմանք* մերձ են էութեամբ արարչին. և *ոմանք* հեռի...: - 131. Իսկ թէ *ոմանք* զո՛ւ ասեն **ժ** դասք և զմինն անկեալ, ո՛չ պարզապէս, այլ կրկին է իմացումն: - 134. Ութերորդ՝ *ոմանք* քահանայապետե՛ն, *ոմանք* քահանայապետին, և միջինքն քահանայապետին և քահանայապետեն: - 134. Այլ *ոմանք* զսերոբէն ասեն վերին: - 135. Թէպէտ և զայս կարգ փոխեն *ոմանք* և զզօրութիւնն և զպետութիւնն աւանդեն որ մեզ ո՛չ է հետևելի. այլ սրբոյն դիոնիսեայ որպէս ասացաք: - 135. Երկրորդ՝ փառքն և պատիւն. զի *ոմանք* են ի գերագոյն փառսն քան *զոմանս:* - 137. Երրորդ՝ տեսութեամբն և իմացմամբն աստուծոյ. զի *ոմանց* առաւել է և *ոմանց* նուազ: - 137. Չորրորդ՝ յատուկ է նոցա կարգն. զի *ոմանք* բարձրագոյնք են քան *զոմանս:* - 138. Հինգերորդ՝ զի *ոմանք* իշխան են և *ոմանք* իշխին: - 138. Ութերորդ՝ խնամարկութեամբ. զի *ոմանք* ազգի և թագաւորութեան, և *ոմանք* անհատի և առանձնականի լինին պահապան: - 138. Իններորդ՝ *ոմանք* մեծամեծ իրողութեանց են միջնորդք ուղղութեան, և այլք նուաստից սպասաւորական: - 138. Եւ *ոմանք* ասեն թէ՝ ընդ պատիւ մարդոյն նախանձեցաւ և ի խորհուրդ եմուտ թէ սորա կատարումն ի՞նչ լինի, և ո՛չ կարաց հասու լինիլ: - 147. ...զի ի սկիզբն ստեղծման աշխարհի ընդ բաժանիլ ի մէջ լուսոյն և խաւարին՝ յայնժամ միայն ծագեցին յառաջին օրն յանկարծակի և անկան յերկնից. թէպէտ *ոմանք* յերկրորդ օրն ասեն: - 148. Եւ դարձեալ, ամպ զերկինս նշանակէ. զի *ոմանք* օդեղէն ասեն զերկինս: - 148. Զի *ոմանք* ասեն թէ ի միջին դասուցն անկան **գ** մասն...: - 150. Իսկ *ոմանք* ասեն զտեղի նորա ի հաստատութեան երկնից. և զի ո՛չ ետուն զփառս աստուծոյ անկան...: - 150. Ո՛չ են յաւերժահասունք որպէս *ոմանք* կարծեն թէ յերկուց տարերց այսինքն ի հրոյ և յօդոյ են բանական կենդանիք...: - 150. Դարձեալ՝ *ոմանք* են յերկնից և յերկինս. որպէս հրեշտակէ սուրբք: - 151. Եւ *ոմանք* ո՛չ յերկնից բայց յերկինս. որպէս ի մարդկանք սուրբք: - 151. Եւ *ոմանք* են յերկնից բայց ո՛չ յերկինս. որպէս դևք: - 151. Այսինքն զի *ոմանք* փախչին յանապատ և թաքչին: - 152. Եւ *ոմանք* նահատակին՝ և զերծանին: - 152. Իսկ *զոմանս* կորուսանէ և պատրէ՛. որ է՛ երրորդ մասն կորուսելոցն: - 152. Հինգերորդ՝ թոյլ տալով լինին *ոմանք* ի փառս այլոց...: - 158. Վեցերորդ՝ թողեալ լինին *ոմանք* չարչարեալ առ ի նախանձ այլոց...: - 158. **Եօթներորդ՝ թոյլ տուեալ լինի և *ոմանց* անկանիլ ի մեղս ինչ. զի ի հպարտութենէն զոր ունէր վասն առաքինութեան՝ խոնարհեսցի և անկցի առաջի տեառն**

**խոստովանութեամբ. և ընկալցի զթողութիւն. որ նախ համասե՛ռ էր սատանայի**: - 159. Որպէս թոյնք իժից, զի են ինքեանք բնութեամբ չար և պատճառե՛ն զչար. բայց պատահեցաւ *ոմանց*՝ դեղ լինիլ: - 160. Եւ ըստ ա՛յսմ կերպի է փորձութիւնն բարի. զի բնութեամբ չար է. և պատճառէ՛ զչար մեղքն. բայց պատահեցաւ *ոմանց* զի յաղթեցին փորձութեանց և ընտրիք երևեցան: - 160. Ասեն *ոմանք* թէ փորձութիւնն երեք է. այսինքն ի մարդկանէ՛, ի սատանայէ՛, և յաստուծոյ: - 160. Ապա յա՛յտ է զանազանութիւն սոցա, զի *ոմն* զօրութիւն հարկաւոր է և ներգործութեամբ և անփոփոխ և միշտ. որպէս հրոյ ջեռուցանել, և արեգական լուսաւորել: - 168. Զի էակքս ամենայն՝ *ոմանք* բանաւորք են և ո՛չ միշտ ներգործականք. որպէս մարդս: - 173. Եւ *ոմանք* միշտ ներգործեն և ո՛չ են բանաւոր. որպէս հուրն: - 173. Իսկ ենթադրութիւն է զանազանելին և ո՛չ զանազանեալն բացորոշ յատկութեամբ. որպէս *ոմն* մարդ: - 174. Իննևժերորդ՝ *զոմանս* խաւարէ՛ և զայլս լուսաւորէ՛: - 186. *Ոմանց* որակ գունոց տայ. որպէս խնծորոյ. և *զոմանց* բառնա՛յ. որպէս զմարդոյ: - 186-187. Եւ *ոմանք* զստւեր երկրի ասեն: - 187. Նա՛խ՝ զի *յոմանս* առաւել է լոյսն. որպէս յարեգակն. և *յոմանս* նուազ. որպէս ի լուսին և յայլ աստեղս: - 188. Ասեմք եթէ յա՛յտ է ապա որ անօթ լուսաւորացն տարրական է. թէ *ոմն* պարզ է և *ոմն* թանձր: - 188. *Ոմանք* ասեն որպէս արիստոտէլ, թէ ամենայն աստեղքն բևեռեալ են յերկինս և ընդ նմա՛ շրջին: - 189. Եւ ա՛յս է կատարումն մասանց լուսնին. զոր *ոմանք* կատարումն լուսնի ասեն: - 192. Այլ ևս *ոմանք*՝ ի գոյից ասեն զժամանակն, և կէսք յանգոյից: - 198. Բայց ասեն *ոմանք* թէ՝ յաւուրս մանասէի՝ Նումաս պումիլոս **բ** ամիս յաւել ի տարին հռոմոց. զի յառաջ քան զնա՝ **ժ** էր. և յաւել ի նոսա զյունվար և զփետրվար: - 201. Եւ *ոմանք* ասեն՝ ի տարրական հրոյն բաժանի կիզումն. և լոյսն միա՛յն իջանէ ...: - 203. *Ոմանք* ասեն թէ՝ զանազան և գարշ կենդանիք են ի ծովն, և ի նոցանէ դառնանայ: - 208. Նախ՝ ասեն *ոմանք* թէ՝ որքան բարձր է ի վերայ երկրի հողն, նոյնքան ծո՛ծո՛ր է ի ներքին կողմն. վասն որոյ ջուրք ծովուն դիւրաւ ելանեն: - 209. *Ոմանք* ի ջրո՛յ ասեն զկանաչն. և յորժամ պակասի ջուրն՝ չորանան և սպիտակին: - 212. *Ոմանք* ասեն թէ յօդոյն է. զի օդն կապոյտ է՝ խառնի ընդ ջրոյն և լինի կանաչ: - 212. Վասն որոյ ի հրոյն *ոմն* սևանայ. որպէս խաղող. և կէսք կարմրին և դեղնին. որպէս բոյսք՝ և տերևք չորացեալ ի հրոյ: - 213. են *ոմանք* որ թև ունին և թեփ: - 215. Եւ են *ոմանք* որ զթև հաւատոյ և զթեփ բարեաց գործոց ունին. և պիտանիք են աստուծոյ: - 215. *Ոմանք* պարզաթևք են. որպէս ճանճք: - 215. Եւ *ոմանք* պատենաթևք որպէս մարախք: - 215. Եւ *ոմանք* մաշկաթևք. որպէս ջղջիկանք: - 215-216. Եւ *ոմանք* թևահերձք. որպէս ա՛յլ թռչունք: - 216. *Ոմանք* զէն ունին զատամունսն. որպէս շուք և վարազք: - 216. *Ոմանք* զդառնութիւնն. այլք զհոտն վատ. և կէսք զվնասս մահու. և այլք այլ ինչ: - 217. *Ոմանք* աննիւթ և իմանալի, այլաբանութիւն և օրինակ ասացին. և ոչ էութեամբ ենթակայացեալ: - 221. Եւ *ոմանք* միայն զգալի և ապականացու և ծորելի որպէս երկիրս այս. և զայսոսիկ ո՛չ ընդունիմք մեք ճշմարտութեան հետևօղքս: - 221. Այլ *ոմանք* իմանալի և զգալի. և մարմին նիւթական: - 221. *Ոմանք* ի դրախտն ևս ասեն թէ տիւ և գիշեր լինի. կամ գարուն և աշուն. զոր մեզ չէ ընդունելի: - 222. Դարձեալ ասեն *ոմանք*, նախ քան զուտելն ի պտղոյն՝ գիտէր ադամ զբարին փորձիւ, և զչարն գիտութեամբ...: - 223. *Ոմանք* թուզ ասեն. թէ ի նոյն ժամն որ կերաւ և մերկացաւ՝ և կարեաց ի տերևոյ նորա. և վկայ բերեն թէ՝ վասն այն անէծ զթզենին յէմ: - 224. *Ոմանք* կամին ցուցանել ապականացու զոլ զդրախտն և շաղաշարումն արուի և իգի. և առաւել ցանկութիւն և ծնունդ զաւակաց: - 225. *Ոմանք* **իբ** ասեն ըստ նշանագրացն եբրայեցւոց. և այլք **իդ** ըստ ժամուց աւուրցն: - 226. Չինգերորդ՝ զորօրինակ մեծատուն *ոմն* զոք ի ճաշ կոչիցէ, նախ պատրաստէ՛ զամենայն պէտս կերակրոց և ըմպելեաց. և ապա՛ մեծարէ՛ զկոչնականսն: - 230. Վեցերորդ՝ որք վասն որոց եղեն. զի ի գոյիցն *ոմանք* են վասն ինքեանց. իսկ այլ վասն այլոց և *ոմանք* ինքեանց և այլոց: - 230. Դարձեալ *ոմանք* ասեն զմին ծեռքն երեք անդամ. այս է՝ մինչ ի խաղալիկն մին. և մինչ յարմունկն **բ**. և մինչ ի կուռն երեք: - 241. *Ոմանք* ասեն, **ժէ** գլխաւոր ջլօքն որ կապին սոքա՝ լինին **յկե** զօդուածք: - 243-244. Եւ *ոմանք* ասեն՝ թէ սեաւ մաղձն առնէ տրտմութիւն և սրտմտութիւն. և խարտէշն զբարկութիւն և զմախանք. արիւնն արի և վայրաբեր. և պաղդամն ծոյլ և քնափ: - 245. Եւ ի սոցանէ *ոմանք* են բանականք, և *ոմանք* անբանականք: - 248. Դարձեալ հոգին ունի զօրութիւնս *ոմանս* անխառն ընդ մարմնոյն. որպէս բանն՝ կամքն՝ և սոյնպիսիք: - 249. Եւ *զոմանս* ունի խառնեալս ընդ մարմնոյ. որպէս է բնական զօրութիւն կենդանականն և շնչականն որպէս ասացաւ ի վերոյ: - 249. Դարձեալ հոգին ունի զօրութիւնս *ոմանս* հաւասարակ ընդ անասնոց. որպէս զգայականութիւնն: - 249. Իսկ *զոմանս* ունի ո՛չ հաւասարակ ընդ անասնոց. որպէս բանն. իմացումն. և կամքն. և սոյնպիսիք: - 249. Դարձեալ զօրութիւնք հոգւոյն. *ոմանք* են հնազանդ բանին. և *ոմանք* են անհնազանդ: - 249. *Ոմն* յամրախօս. և *ոմն* ցոփ և շուտափոյթ: - 251. Զի *ոմանք* ասեն զհոգին յառաջ

գոյանալ քան զմարմինն: - 252. Եւ *ոմանք* զմարմինն քան զհոգի: - 252. Եւ դարձեալ՝ եթէ տամք զփչումն՝ բանական հոգւոյն ըստ *ոմանց*, և այսու յետո՛յ իմանալ զհոգին քան զմարմինն մեղանչումն է ճշմարտութեան ըստ **ե** եղանակի: - 253. Ասեմք եթէ՝ ի կողմանէ նիւթո՛յ կարելի է ասել. զի *զոմն* ունի, և *զոմն* ընդունի...: - 254. Պատասխանեմք եթէ՝ *ոմանք* յարմատս ունին զսերմն. *ոմանք* ի ծայրքն. կէսք ի տերևն. այլք ի կեղևն...: - 256. *Ոմն* նախախնամութեամբ. որպէս տնկականն և զգայականն. և *ոմն* ստեղծմամբ. որպէս բանականն: - 258. *Ոմանք* ըստ ազգի և տեսակի իւրեանց հով և ջերմ՝ չոր և գէջ գոլով, փութով կամ յապաղելով բուսանին: - 261. *Ոմանց* ժամանակն ցուրտ և ջերմ: - 261. Եւ թէ վասն է՞ր ասիցէ ոք՝ *ոմն* յետ **զ** աւուր՝ և *ոմն* ի ի և *ոմն* ի **խ**: - 261. Այսպէս և կենդանիք *ոմանք* երից ամաց յղանան և ծնանին: - 262. Այս է պատճառն. զի *ոմանք* յապաղեն. և *ոմանք* փութով տան զպտուղն որպէս ասացաք: - 263. Այլ և զգայականին յաւելեալ շնչականն և շարժականն և ցասմնականն ընդ ցանկականին՝ լինի **թ**. վասն որոյ *ոմանք* յինն ամիսս ծնանին կամ ի **ժ**: - 263. Վասն որոյ *ոմանք* յ**բժ**ան ամիսս ծնանին որպէս ձի: - 263. ...*ոմանք* ի տարին և կէսն ծնանին որպէս ուղտ: - 263. Եւ այսպէս է ըստ *ոմանց* վեցեկի շարժմունք հասակի մարդոյս որպէս ասացաւ. այսինքն Երեխայ: - 265. Թէպէտ *ոմանք* փոխեն զայս կարգ, ո՛չ ընդ դէմ բանիցս կարգի. այսպէս ասելով: - 265. Նախ ասեն *ոմանք*, եթէ ուղեղ գլխոյ անբանիցն ընդ խելապատակին ունի չորութիւն և հովութիւն. և ջիլքն ի նմանէ յառաջեալ յանդամս մարմնոյն՝ փութապէս պնդէ՛ և տայ շարժիլ: - 266. Այլ *ոմանք* ասեն թէ՝ հանճարն ցասմանն է արիութիւն. և գիտելն ցանկութեանն...: - 270. Ի սոցանէ *ոմանք* ըստ հոգւոյն միա՛յն են. և *ոմանք* ըստ հոգւոյն և մարմնոյն: - 272. *Ոմանք* ասեն եթէ պատկեր աստուծոյ հօր՝ է՛ որդի, և նման հոգին սուրբ: - 273. Նա՛խ՝ ասի մահու մեռանիլ, իբր թէ է՛ *ոմն* անձնաւոր մահ որ է՛ բանսարկուն. և նովաւ մեռանիցիս սաէ: - 277. Ութերորդ՝ մաշկեղէն հանդերձն. ո՛չ ըստ *ոմանց* թէ մորթ մարմնոյս, զի ունէր զայս ի ստեղծմանէն: - 280. *Ոմանք* զպիսակն ասեն: - 287. *Ոմանք* ասեն թէ՝ **ռ** ամ եկաց ադամ ի դրախտին: - 290. *Ոմանք* ի վերայ մարդոյս մեկնեն զտապանն և յիրաւի. զի տապանն ունէր զբոլոր աշխարհս. և մարդն մասն է աշխարհի. պա՛րտ է զի մասն նմանեսցի բոլորին: - 293. *Ոմանք* ձեղուն ասեն յապակէ՛ շինեալ: - 294. *Ոմանք* ասեն թէ խեղդեցաւ ի ջուրն. և ընդ բերանն յղացեալ էր զուգակիցն: - 294. Զոր *ոմանք* **լ** ստադիոն ասեն զբարձրութիւնն և զլայնութիւնն շուրջանակի **խդռ** քայլք. այսինքն **խդ** մղոն ձգեալ ասի: - 297. Եւ ո՛չ որպէս ասեն *ոմանք* թէ ի լեզուս ադամայ: - 298. Իսկ *ոմանք* զարաբացիս և զմակեդոնացիս՝ յեբրայեցիս համարին՝ և կէսք ոչ: - 299. *Ոմանք* ասեն թէ՝ բարեկամքն իւր որ էին յազգէն եսաւայ ելիփազ. սովփար. և բաղդատ. որք եկին մխիթարել զնա ի վշտացն...: - 320. Եւ *ոմանք* եզրի, և կէսք երեմիայի ասեն: - 320. Ո՛չ կարեն դևք զտարերքս փոփոխել. և ո՛չ հուր և ո՛չ շանթս և ո՛չ այլ ինչ ի տարերացս առնել որպէս կարծեն *ոմանք*: - 321. Եւ *ոմանք* **ե** ասեն. **ա**, արտաքին ինչքն. **բ**, զաւակաց մահն. **գ**, մարմնոյն հարուածքն. **դ**, կնոջն կագն. **ե**, բարեկամաց հակառակիլն: - 322. Այլ *ոմանք* ասեն ի ձեռն հրեշտակաց ի միում աւուր ժողովեցան. որպէս ի ձեռն դիւաց ցրուեցան: - 326. *Ոմանք* **է** ամ ասեն. ըստ որում ի վեցից վշտաց փրկեսցէ, և յեօթներորդին ո՛չ փորձեսցի չար: - 326. Եւ *ոմանք* **լը** ասեն ըստ անդամալուծին զոր բժշկեաց քրիստոս: - 326. Եւ այլք *ոմանք* **մխը** ամ յետ փորձանացն ասեն: - 327. *Ոմանք* զսիոն ասեն, և այլք զեդոմ, և այլք զարաբիա. որ և անդ ասեն և այլք զգերեզման նորա լինիլ: - 327. *Ոմանք* ասեն՝ թո՛ւփ է անթառամ անուշահոտ և անպտուղ: - 330. *Ոմանք* ասեն թէ՝ միշտ միջնորդութեամբ հրեշտակաց երևի աստուած...: - 330. Եւ անուն փարաւոնի որ ընկղմեցաւ՝ փեսիոս. և *ոմանք* կանաքարիս կոչեն: - 337. Չորրորդ՝ և բովանդակն **ե** կանգուն, ցուցանէ թէ ո՛չ են նոքա ի չորից տարերց. այլ **ե**երորդ էութիւն են. որպէս ասեն *ոմանք*. անմարմին անփոփոխ և անմահ. որ ո՛չ է տարրականացս: - 344. Զի բարերարե՛ն և պատուհասե՛ն. *զոմանս* պահելով ի խաղաղութեան: - 345. Սուտակ՝ որ է՛ լիգրոնն. զոր ո՛չ գիտէ ոք զուստն. նման է կապուտակ աւազոյ. *ոմանք* ասեն յամազունից բերաւ ի կանանց աշխարհէն: - 348. Ա՛յս է պատճառ խորտակելոյ տախտակին. և ո՛չ որպէս ասեն *ոմանք* թէ գիրն ջնջեալ էր: - 350. *Ոմանք* ասեն՝ գործ մեղաց մնաց նոյն. այլ գործ սրբութեանն փոխեցաւ ի հոգևորն: - 369. *Ոմանք* ասեն թէ՝ **ռ** ամն յաւիտեան կոչի: - 369. Չորրորդ՝ ամսամուտն նոցա. զոր ի նորանալ լուսնին տօնէին. իսկ մեզ տօն կուսին մարիամու որ լուսաւորութիւն լսի ըստ *ոմանց*: - 372-373. Այլ ըստ *ոմանց*՝ տօն քաւութեան որթագործութեանն, նշանակէ ի մեզ զտօն մեծ քառասնորդացն պահոց: - 373. *Ոմանք* ասեն է ըստ **h** ամացն: - 378. *Ոմանք* ասեն թէ՝ դադան քրէական մեղանչեաց. վասն այն դառն տանջեցաւ: - 381. Չորրորդ, կրկին հարկանելն, զի *ոմանց* տայ և *ոմանց* արգելու. այսինքն սրբոց և անսրբոց: - 386. Չորրորդ, զի գիտասցուք թէ ո՛չ միայն բարեաւ, այլ և չարաւ *ոմամբ* բարի առնէ աստուած: - 387. Եւ է *ոմանց* ուխտից

զանցումն անմեղադրելի է: - 389. Այլ *ոմանք* մնացեալք ի մարմնի, և բազումք ժամանեալք յօթևանս վերին: - 391. Այլ *ոմանք*՝ **ճ**աւոր զերկին, և վաթսնաւոր զդրախտն, և երեսնաւոր զերկիրս ասեն նշանակեալ **բ** ցեղիցն յայնկոյս յորդանանու, և **թ** ցեղիցն յերկիրն քանանացւոց: - 391. Իսկ զ**խ** իջևանքն *ոմանք* խորհուրդ առնուն յետ ելիցն ի մարմնոյ հոգւոյն՝ **խ** աւուրբ հասեալ յօթևանս: - 391. Այլ *ոմանք* **է** օր ասեն յամել ի **է** գօտիս. վասն որոյ **է** օրէք առնեն: - 391. Եւ *ոմանք* ի նոյն ժամն ասեն հասանիլ յիւրաքանչիւր օթևանս: - 391. ...վասն որոյ յայսմանէ ասեն *ոմանք* թէ՝ **գ** ամ կամ **խ** օր յամեաց ադամ ի դրախտին...: - 397. Իսկ *ոմանք* զքրիստոսէ՛ ասեն բնութեամբ և շնորհօք որդի. որպէս նեստորք և քաղկեդոնիկք անիծեալք. զի այսպէս լինին **բ** որդիք և **բ** անձինք: - 402. Եօթներորդ՝ *ոմանք* մարմին մովսէսի զօրէնսն ասեն...: - 410. *Ոմանք* ասեն միայն զլուսաւորս արգելեալ և զկամարն շրջեալ մինչ հասեալ ի նոյն կէտն: - 416. Քսանև**զ**՝ նա՛ սպան զթագաւորս և զիսկայսն քանանու. և *զոմանս* եթող ի փորձ ընտրելոց: - 419. Եւ տէր մեր յաղթեաց իշխանին դիւաց. և եհատ զնորայն բռնութիւն աջոյ. և *զոմանս* եթող ձախիւ թիւրելոյ և զընտիրս որոշելոյ: - 419. Եւ տարածումն ի խաչին՝ *զոմանս* կանգնէր, և զայլսն գլորէր: - 423. Յինգերորդ՝ *ոմանք* չարք ո՛չ հնազանդէին նմա... և այժմ *ոմանք* ո՛չ հնազանդին անհաւատք: - 426. Ցուցանէ թէ տարաժամ մահն ընտրութեամբ և կամօքն աստուծոյ լինի, և ո՛չ պատահմամբ որպէս ասեն *ոմանք:* - 435. *Ոմանք* ասեն թէ՝ զի դիովքն իւր անէծ գողիաթ, ա՛յն կատարեցաւ: - 439. *Ոմանք* ասեն եթէ արիւն բազում եհեղ դաւիթ: - 439. Եւ *ոմանք* **գռ** գիրք ասեն որպէս առակն և ժողովօղն. և **եռ** օրհնութիւնս որպէս երգ երգոցն. որպէս դաւթի **ճծ** սաղմոսն: - 441. *Ոմանք* ասեն թէ ի տաճարէն յերեսաց սեղանոյն ընդ առաւօտն և յերեկոյն բերէին ագռաւքն: - 443. Շարժումն *ոմանք* զյափշտակելն ասեն. և այլք հողմոյ և երկրի. և կէսք զհնչումն հրեշտակաց: - 445. Եւ զայս թիւ *ոմանք* առնուն ի գերութենէն մանասէի՝ և աւելի՛ է: - 447. Եւ *ոմանք* յառաջին գերութենէն յովակիմայ՝ և պակա՛ս է: - 447. Եւ յետ հիւրկանեայ ո՛չ ևս ի քահանայից ազգէն կացին օծեալքն առաջնորդք. այլ աննշանք *ոմանք* ամսօրեայք և տարևորք: - 449. Իսկ այլ *ոմանք* թուեն զեօթներորդն դանիէլի ի դարեհի որդւոյ արշուրեայ առաջին ամէն. յորում զտեսիլն ետես մարգարէն. մինչև ի ծնունդն քրիստոսի ամք **նծգ**: - 449. Որք կոչեցան թագաւորք յուդայ. և *ոմանք* ի սոցանէ բարիք: - 452. *Ոմանք* ասեն թէ՝ ողորմութիւնն աստուծոյ է՛ յերկինս առ հրեշտակս. և արդարութիւնն յերկրի առ մարդիկս: - 458. Զի ի ցեղէն նաթանայ որդւոյ դաւթի այրն *ոմն* անուն ղևի՝ ծնաւ երկուս որդիս. զմելքի և զպանթեր: - 460. Եւ *ոմանք* այսպէս թուեն: - 467. *Ոմանք* եռակի ասեն. այսինքն աստուածային և մարդկային և շնորհօք: - 471. Եւ *ոմանք* ըստ չորրորդ եղանակի ասեն. երեքն յառաջագոյն եղեալ, և չորրորդ ծնունդն փրկչին: - 471. Տասներորդ՝ ասի *ոմանց* թէ ի ժամ ծննդեանն քրիստոսի արգելման ամենայն ծնունդք մինչև ծնաւ բարձօղն երկանց ամենայն ծննդոց...: - 472. Եւ *ոմանք* յաւելուն այլ ևս զամօթ՝ զտրտմութիւն՝ և զցաւս մարմնական. որ և սոքա ընդ նոսա են: - 474. Եւ տե՛ս, զի բնութեամբ միաւորեցաւ՝ իմանի քրիստոս. յայտ է զի յորոշելն ըստ *ոմանց*՝ ո՛չ ևս մնայ քրիստոս: - 474. Զի հերձուածօղք *ոմանք* օծեալ ասեն զքրիստոս յառաջ քան զյղացումն: - 475. Իսկ *ոմանք* յետ ծննդեանն ի կուսէն ասեն օծեալ զքրիստոս ի մկրտութեանն...: - 475. Զի են որ միաւորեալքն էութիւնք են և շաղկապն պատահումն. որպէս երկուք *ոմանք* անջատեալք ի միմեանց՝ պատահմամբ սիրոյ շաղկապին: - 476. Յետ այսորիկ երկրորդ միաւորութիւն սովորեցաք կոչել թէպէտ և ո՛չ իսկապէս՝ և զանհամանիւթից *ոմանց*...: - 476. Նոյնպէս և յորոշելն ըստ *ոմանց* զաստուածն և զմարդ՝ ո՛չ է քրիստոս. այլ մարդ սոսկ կամ մերկ աստուած: - 477. Եւ յա՛յսմանէ յա՛յտ է, զի սուրբքն զծնունդն և զյայտնութիւնն ի միասին տօնէին. և յետոյ բաժանեցին *ոմանք* վասն բեթլէհէմի և յորդանանու: - 482. *Ոմանք* ասեն թէ՝ յովսէփ թլփատեաց: - 486. Եւ զայս հրոյ իմանի որ առ գալստեամբն քրիստոսի *ոմանց* մաքրութիւն ներելեացն լինիլ և առաւել պայծառանալ. որք ոսկի և արծաթ և ականս պատուականս շինեցին: - 488. Զոր օրինակ՝ զմահապարտ *ոմն* թագաւորն հրամայէ՛ դահճին ի բանտ դնել. դարձեալ զնոյն թագաւորն աղերսեն և նա հրամայէ՛ արձակել ի բանտէն: - 492. *Ոմանք* **դ** ասեն. և անւանս թուեն, Ատուր, Թատուր, Գատուր, Սատնատուր: - 495. *Ոմանք* ասեն թէ աւանդիլ հոգւոյն քրիստոսի, աւազակն եմուտ յերկրաւոր դրախտն ուստի ել ադամ. և չէ՛ հաւանելի. զի անդ մարմնովն եմուտ յետ յարութեանն: - 495. Եւ *ոմանք* ասեն թէ՝ յերկնաւոր դրախտն եմուտ հոգւովն մինչ ի կիրակէ մէջ գիշերին. և ի նոյն ժամն էջ ի դժոխս և ազատեալ զհոգիսն յարեաւ ի գերեզմանէն: - 495. Ասեն *ոմանք* թէ աջակողմեան աւազակն ի հեթանոսա՛ց էր. և ձախոյն ի հրէից: - 495. Այլ հերձուածօղք *ոմանք* որք են դասք երկաբնակաց՝ ապականացո՛ւ ասեն զանապական մարմինն կենարարին: - 498. Զորօրինակ՝ մի *ոմն* ծառ հատանէ, և այլ *ոմն* զհատեալն դարձեալ հերձու և բաժանէ՛ և տայ յայրումն: - 498. *Ոմանք* **դ** ասեն. և այլք՝

բազումք. զի ի գերեզմանի ասեն տանջիլ. և յօդս. և ի ծովս. և ի վէմս: - 504. *Ոմանք* ասեն թէ ի չորրորդ դժոխքն էջ ուր էին արդարոց հոգիքն արտաքոյ ասացեալ երիցս, և զնա միայն աւերեաց...: - 505. Եւ դարձեալ՝ դարձցին մեղաւորք անդրէն ի դժոխս թէ ի նոյն տեղի ըստ *ոմանց*, կամ յայլ տեղի տանջանաց ընդ գործոց հատուցման: - 508. Որպէս յօրինակէն տեսանի. որ թէպէտ առ հասարակ ելին յեգիպտոսէ յանապատն, այլ *ոմանք* մտին յերկիրն պարգևաց: - 508. Կամ որպէս ասեն *ոմանք* թէ երկու յաւազոյ և մի ի սերմանէ՛ գոյանան մարմինք ձկանցն: - 510. Եւ *ոմանք* ասեն թէ՝ երկու են մագդաղենացիքն. մինն գնաց և ի ճանապարհին ետես զտէրն. և միւսն եկաց և ի պարտիզին ետես: - 515. *Ոմանք* **խ** ժամս ասեն. և այլք աւելի և պակաս: - 515. Նա՛խ՝ *ոմանք* ասեն թէ մարդկօրէն կամէր իմանալ զնա և հարցանել վասն խաչին և դժոխոց և յարութեանն. իսկ այս կատարեալ մտաց պէտք էին և շա՛տ ժամու: - 517. Չորրորդ ասեն *ոմանք* թէ՝ դեռ չէր մկրտեալ մարիամ. և ոչ մկրտելոցն անհպելի՛ է. թէպէտ և իւրք իցեն: - 517. Վեցերորդ, *ոմանք* ասեն թէ պարգևս խնդրէր հոգևորական...: - 517. Այսպէս և առեալք զհոգին սուրբ բղխեն. *ոմանց* ի մահ և *ոմանց* ի կեանս. որպէս առ տաբիթայն և առ սափիրային: - 523. Նոյնպէս մի է տէր մեր յիսուս քրիստոս և ո՛չ երկու ըստ բաժանողաց *ոմանց:* - 532. Այլև՝ *ոմանք* ասեն և ո՛չ առնեն. չա՛ր է: - 537. Եւ *ոմանք* առնեն և ո՛չ ասեն. բարի՛ է: - 537. *Ոմանք* ասեն և առնեն. բարեգո՛յն է: - 537. *Ոմանք* ո՛չ ասեն և ո՛չ առնեն. չարագո՛յն է: - 537. Որպէս դիմոփիլոս կիսասարկաւագ զքահանայ *ոմն* արտաքսեաց յեկեղեցւոյ. զոր յանդիմանէ՛ սուրբն դիոնէսիոս յութերորդ թուղթն իւր: - 539. Եւ գիտելի է, թէ քահանայ *ոմն* զժողովուրդ իւր կապիցէ, ա՛յլ քահանայ ո՛չ կարէ արձակել: - 541. Իսկ համակարգ քահանայք կամ եպիսկոպոսք զնոյն *ոմն* ընդէ՞ր ոչ կապեն կամ արձակեն: - 541. Այլ որ **ճծ** ամաւ յառաջ եկին ի հայք՝ ասորիք արք քաջաբանք...: - 545. ...և տրտմեցան *ոմանք* յազգէ նոցա: - 548. Եւ ա՛յս է պատճառն որ *ոմանք* յեօթանասնիցն ասեն. զի եօթանասունն աշակերտացն գլուխ և վարդապետ էր. որպէս պետրոս երկոտասանիցն. և առաջինքն ամենայն ուրեք յետնոցն անուամբ կոչեին. այս է ստոյգ պատճառն: - 549. Եւ *ոմն* մարդ արդար է. և *ոմն* մարդ ո՛չ է արդար: - 550. Երկրորդ՝ *ոմանց* խոստովանութիւն ո՛չ առնել: - 553. Հինգերորդ՝ *ոմանց* թլփատութիւն ունել: - 553. Երրորդ՝ առ քահանայս զգուշութիւն օրինօք ունել. թէպէտ և *ոմանք* կաղան առ այս: - 554. Չորրորդ՝ յարդեան ժամանակիս այսմաւուրօք տօնել *ոմանց*. և այսօքիկ առ յոյնս: - 554. Բայց *ոմանք* բերանաբաց եղեալ հակառակին՝ զծնունդն և որ ըստ նորին ամենեցուն առ հասարակ միաբանեալ բաց ի հայոց: - 554. Եւ այսօքիկ թէպէտ և *ոմանց* ո՛չ թուեցին որպէս փոքր կարծեցեալք. սակայն աւանդութիւն և ո՛չ հաւատ: - 554. *Ոմանք* զյանցանս մտաց կատարեալ մեղս դնեն...: - 555. Եւ *ոմանք* ոչ ինչ համարին զյանցանս մտաց. և ո՛չ դնեն ի կարգս մեղաց. օրինակ տալով իբր զդատարկ սեղան ոչ ինչ կերակրել. և իբր զպտուղ ծառոց տեսութեամբ միայն վայելել: - 555. Ապա ուրեմն կատարեալ մեղք է մտաց մեղքն. զի *զոմանս* առաւել պատժէ, և *զոմանս* սակաւ: - 556. Եւ *ոմանք* ասեն թէ յեօթանց անտի հինգն մարմնականք են և երկուքն հոգեկանք: - 559. Եւ *ոմանք* զեկուսն միա՛յն ասեն մարմնական. որ է՛ որկորստութիւն և բղջախոհութիւն. և այլքն ամենայն հոգեկան: - 559. *Ոմանք* բազում եղանակս ասեն. այսինքն Պատճառաւ մեծ. որպէս մեղք արուսեկին: - 565. Երրորդ, ըստ քանակին այսպէս. զի *ոմն* մի գործեաց զպոռնկութիւն, և *ոմն* **ռ**: - 565. Դարձեալ զանազանին. զի գործ մեղացն է յայլմէ՛ առ մեզ՝ կամ ի մէնջ առ այլս. այսինքն ի պատրանաց բանսարկուին և ի չարաց *ոմանց* առ մեզ. և ի մէնջ առ ընկերակիցս մեր: - 569. Եւ զայս փոխեն *ոմանք* այսպէս. զսէրն առ բարութիւնն. զյոյսն ի բարձրութիւնն. և զհաւատն առ ճշմարտութիւնն: - 578. Հինգերորդ՝ զի համապատիւ ծնանիմք ամենեքեան. ո՛չ *ոմն* պատուով կամ անպատիւ. իշխան կամ իշխեցեալ...: - 590. Այլ գիտելի է, զի *ոմանք* հետևօղք չար աղանդոյն քաղկեդոնի մոլորեալք ի ճշմարտութենէն՝ ջուր խառնեն յանապական բաժակ արեանն քրիստոսի: - 594. Ապա վասն է՞ր *ոմանք* ջուր խառնեն և խմոր: - 596. Եւ թէ հրէա *ոմն* ետես զի հում միս արիւնաթաթախ տայր ժողովրդեանն. և զղջացաւ անկաւ յոտս սրբոյն և մկրտեցաւ: - 599. *Ոմանք* ասեն թէ ի հասարակ ընթրիսն յորժամ բազմեցան՝ ի հասարակ սեղանոյն թացեալ զպատառն ետ յուդայի. - 599. *Ոմանք* ասեն թէ ի ջուր եթաց և լուաց յօրհնութենէն. և այս ո՛չ է ընդունելի կարծիս: - 599. Ասեմք առ այս, եթէ բանն սողոմոնի ո՛չ թէ զրկէ՛ *զոմանս* յարեանն հաղորդութենէ...: - 600. ...աստուծոյ մնայ պատիժն զոր պահօք և աղօթիւք վճարէ որպէս ասեն *ոմանք:* - 602. Իսկ *ոմանք* այսպէս ասեն: - 606. *Ոմանք* ասեն եթէ՝ մովսէս զդատաւորսն ի **դ** բաժանեաց ամենայն ժողովրդեանն. որ էր **ժ**ապետ. յիսնապետ. **ճ**ապետ. և **ռ**ապետ: - 609. Եւ նոյնպէս **դ** անգամ յերեկոյն. ի լոյս զըւարթն, և յուղղեցին, և յերեքսրբեանն. կամ յարձակմանն խնկարկեն *ոմանք:* - 618. ...*ոմն* երթայ ի սապատն և հաց առնու...: - 620. ...և *ոմն* լեզուն պարզեալ խնդրէ ի մօրէն...: - 620. Եւ այս գիտելի է, թէ *ոմանք*

հանապազ յետ ամենայն կարգեալ աղօթից առանձնակի աղօթեն: - 623. Իսկ *ոմանք* ևս կատարեալք ամենայնիւ՝ յերեք ժամանակս աղօթեն առանձնակի. մի ի մէջ գիշերի յառաջ քան զհասարակաց ժամն. և մի յայգն. և մի ի ցերեկն: - 623. Նա՛խ՝ զի յերի՛ց եմք գոյացեալ ի մարմնոյ, ի հոգւոյ, և ի մտաց, որպէս ասեն *ոմանք*. վասն որոյ **գ** առանձնական աղօթս մատուցանեմք: - 623. Նմանապէս և յեկեղեցի՝ *ոմանք* սաղմոսե՛ն. և սարկաւագն ի տիպ հրեշտակին տայ զօրհնեայն ի քահանայն որ է՛ տիպ քրիստոսի...: - 625. Այլ և *ոմանք* ի հանդերձեալն ո՛չ ունին պատասխանի առաջի ահաւոր բեմին քրիստոսի: - 628. Չորրորդն պարտապան գոհութեան վասն էից փոփոխման. և *ոմանց* ամօթ պատկառանաց: - 630. Հինգերորդն հրոյ կիզումն և բարձումն ամբարշտաց. և *ոմանց* բժշկութեան ցօղ ի տեառնէ ցօղեալ: - 630. Զայս ամենայն *ոմանք* անանիայի տան. և *ոմանք* խորենացւոյն: - 637. ...և *յոմանց* լուաք թէ զուրբ յակոբին այլ: - 637. Այլ *ոմանք* վեցթևեան ասեն: - 638. Եւ *ոմանք* ասեն **ը** ձայն վասն ութ ձայնաւոր գրոց. և **ժ** ձայն ըստ **ժ** առոգանութեանցն: - 640. Ասեն եթէ՝ սեփաննոս *ոմն* երաժիշտ զամենայն ձայնս գոյից բաժանեաց **իզ**...: - 640. Եւ թէոփիլեանք *ոմանք* կոչեցեալք, արարին զերկու ստեղունս ասացեալ. և այսպէս աւարտեցաւ **ժ** ձայնքն: - 640. Եւ *ոմանք* առանց գործեաց երգէին: - 641. Նա՛խ՝ որպէս ասեն *ոմանք*՝ Բուրվառն նշանակէ զմարդկութիւնն քրիստոսի. և Հուրն զաստուածութիւնն. Ծխումն զբուրումն հոգւոյն սրբոյ: - 645. Որ և այժմ *ոմանք* յազգէ ասորւոց և յունաց՝ զշաբաթ և զկիրակէ միա՛յն լուծանեն ձկամբ: - 651. Եւ *ոմանք* երեքկին օրհնեն. ի սկիզբն. ի մէջն, և յետ կերակրոյն: - 655. Եւ *ոմանք* ըստ իւրաքանչիւր պատառոյ զմահն ի միտ ածեն և զդատաստանն...: - 655. Վասն է՞ր *ոմանք* մեծատունք են և *ոմանք* աղքատք: - 664. Նա՛խ՝ *զոմանս* աղքատ առնէ աստուած, զի զարքայութիւնն մեծատանց վաճառեսցեն: - 664. Զի՞նչ է *ոմանք* յերկար ոգէվարին, և *ոմանք* յանկարծակի մեռանին: - 668. ...որպէս ասեն *ոմանք*. վասն սոցա երեք հանգստեան տամք և աւետարան ընթեռնումք: - 675. Եւ ո՛չ որպէս շաղակրատեն *ոմանք* մտացածին բանիւ. թէ երեք օրն՝ կամ յեօթն՝ կամ յամիսն՝ և կամ ի տարին ելանեն ի քաւարանէն: - 683-684. Ասեն *ոմանք* թէ՝ սրբոց հոգիքն յարաժամ երևին յորժամ կամին և որոց կամին: - 685. Այլ և *ոմանք* ի մէնջ որպէս վարդապետն վարդան և այլք ասեն գոլ ի միում տեղւոջ զամենայն հոգիս...: - 686. *Ոմն* լի՛ է անմահութեամբ և խնդրութեամբ. և *ոմն* լի դառնութեամբ և յուսահատութեամբ. որպէս ասացաւ ի վերոյ: - 687. Եւ այլք *ոմանք* վեցերորդ կարծիս ստացեալ ասեն զբուն կատարեալ բարեաց հոգիսն ժողովեալ ի հրեշտակացն դասս...: - 687. Զի յորժամ *ոմանք* քաւին և մտցեն յարքայութիւնն, և *ոմանք* ի տանջանս յաւիտենից, ա՛յս է հատուցումն: - 698. *Ոմանք* խոտ. որ է ծուխ մարմնական հեշտութեանց: - 702. Իսկ զհազար ամն, *ոմանք* ասեն զերեք ամն և զկէս ի մկրտութենէն մինչ ի համբարձումն: - 706. Եւ *ոմանք* յետ զ**ռ** ամին զեօթներորդն որ վախճանն է՝ յարութիւն ասեն միայն սրբոցն և կապիլ սատանայի: - 706. ...այսինքն զի *ոմանք* փախչելով յանապատս զերծանին, և *ոմանք* արեամբ վկայեալք ապրին: - 706. Անդ ի քունն ձայն լսէ թէ՝ կին դու յղասցիս մեծ *ոմն:* - 706. Ասեն *ոմանք* թէ **ժ** ցեղքն իսրայէլի որ փակեցան ի մէջ լերանցն կասբից...: - 708. *Ոմանք* հերձուածօղք որպէս որոգինէս, առաջին յարութիւն ասաց զհազարամեայ արքայութիւնն...: - 710. Եւ թէ որո՞ց *ոմանց* լիցի ոսկեղէն պսակն, - 712. Պատասխանեն վարդապետք եթէ երից *ոմանց*. այսինքն կուսանաց. և մարտիրոսաց. և վարդապետաց: - 712. Երկրորդ, ըստ *ոմանց* **գ** է գոչումն փողոյն...: - 713. Չորրորդ, ըստ *ոմանց* **դ** է գոչումն փողոյն...: - 713. *Ոմանք* ի վարել և ի նաւել և յայլ ինչ գործս: - 714. *Ոմանք* ասեն թէ՝ յարութիւն ո՛չ այլ ինչ է՝ քան թէ վերստին կենդանանալ: - 716. Եւ *ոմանք* ասեն՝ հոգոյ և մարմնոյ վերստին նորոգիլ: - 716. Այլ *ոմանք* ասեն թէ յարութիւն է այնմ որ անկաւ՝ վերստին յառնել ի կենդանութիւն յաւիտենական անմահ: - 716. Գիտելի է, զի *ոմանք* ասեն թէ կերակուրս զոր ինչ ուտեմք ո՛չ յառնէ ի մարդն. - 718. Գիտելի՛ է, զի *ոմանք* հերձուածօղք մոլորեցան վասն յարութեան մեռելոց և ասացին թէ մարմինն ո՛չ բաղկանայ ի չորից տարերց. այլ լինի պարզ: - 720. *Ոմանք* ասացին թէ ի յարութեանն մարմինք մարդկան ի հոգի փոխին: - 720. Եւ դարձեալ *ոմանք* ասացին թէ՝ ի յարութեանն մարմինք մարդկան օդային լինին կամ հողմային. զի երբեմն ի գրոց հողմ և օդ հոգի կոչի: - 720. Եւ այլք *ոմանք* ասացին թէ՝ մարմինք մարդկան ո՛չ լինին երկրային, այլ երկնային...: - 720. Եւ դարձեալ *ոմանք* հերձուածօղք ասացին թէ՝ այս մարմինս ո՛չ յառնէ և ո՛չ այս մարդ որ մեռանի. այլ փոխանակ նորա նոր մարդ յառնէ: - 720. Վեցերորդ, *ոմանք* ատոքք և կէսք ազազունք և այլք անպտուղք. այսպէս և մարմինք ընտրելոցն և ոչ նոյնպիսեացն ըստ չափու զանազանին: - 721. Եօթներորդ, *ոմանք* ջրարբիք և *ոմանք* անջրդիք... - 721. Տասներորդ, գործք մարդոյ անցաւոր է որպէս ինքն. իսկ հատուցմունքն աստուծոյ մշտնջենաւոր որպէս նոյն ինքն. վասն որոյ յարուցանէ անմահ, զի հատուսցէ *ոմանց* զփառս և *ոմանց* զտանջանս

անմահ մարմնով: - 724. *Ոմանք* ասեն թէ՝ ամենեքեան արու յառնեն. և այլք թէ արու և էգ: - 725. Այլ համահասակ քանակաւ ո՛չ. զի աստ *ոմն* մեծ լինի և *ոմն* փոքր ի ջերմութենէն որ անհաւասա՛ր է ի նոսա. նոյնպէս և անդ: - 726. Իսկ զի նիւթ խաչին մնայ ըստ *ոմանց*՝ այս ո՛չ է ըստ բնութեան կարգի, այլ սքանչելեաց հարկի որպէս ցուցանի յառաջիկայդ: - 727. Եւ ըստ *ոմանց* կարծեաց զի տեղիք լիցին երեսնաւոր արդարոցն. որպէս ցուցանելոց եմք յառաջիկայդ: - 727. *Ոմանք* այսպէս կարծեն թէ՝ հաստատութիւնդ բարձցի ի միջոյ մինչ վերին երկինքն երևի: - 729. Այն է ծալիլ և գալարիլ օդոյդ երկնի. և ո՛չ թէ հաստատութիւնն վերին էութեամբ ի բաց բառնի ըստ *ոմանց:* - 729. ...վասն որոյ հուր գայ առաջի քրիստոսի. զի *զոմանս* տանջէ այրելովն, և *զոմանս* պսակէ՛ լուսովն...: - 731. *Ոմանք* յաւուր ուրբաթու ասեն յորում խաչեցաւ քրիստոս. և այլք ի կիրակէն: - 732. *Ոմանք* ասեն թէ լոյս երևի ի ձև խաչին: - 732. Եւ *ոմանք* թէ՝ խաչն լուսաւորեալ ճառագայթէ որպէս բևեռք և գեղարդն: - 732. Եւ ա՛յս է տարաձայնութիւն սոցա. զի *ոմանք* ապականացու ասեն զխաչն տէրունական առարկելով կրկին կերպիւ: - 732. *Ոմանք* ո՛չ դատին այլ դատապարտին որպէս բուն չարքն և յայտնի մեղաւորքն...: - 738-739. *Ոմանք* դատին և դատապարտին. որպէս միջակք որք ունին հաւատ և ո՛չ գործք. որպէս չար հաւատացեալք. և որք ունին գործք և ո՛չ հաւատ. զի աստ հատուցաւ նոցա: - 739. *Ոմանք* ո՛չ դատին և ո՛չ դատապարտին. որպէս բուն արդարքն և կատարեալքն...: - 739. *Ոմանք* դատին այլ ո՛չ դատապարտին. որպէս միջակ արդարքն. որք ունին ներելի և մասնաւոր մեղս: - 739. Նոյնպէս և ի միոյ ձայնէն *ոմանք* զօրհնութիւնս և այլք զանէծսն լսեն: - 739. ...*ոմանք* ժամ մի ասեն. որքան եկաց ընդ ադամայ ի քննութիւն հարցմանց յետ յանցանաց նորին: - 747. Այլ ըստ զանազանութեան չափոյն, *ոմանք* **ժ** են ասացեալ թուով ըստ հարուածոցն եգիպտոսի: - 751. և *Ոմանք* ըստ քաղաքական օրինացն **ը** ասեն գոլ պատիժ: - 751. Այսպէս ասեն *ոմանք:* - 752. Իսկ այլք *ոմանք* յատկապէս **թ** ասեն զտանջանք դժոխոցն: - 752. *Ոմանք* որդն զխիղճ մտացն ասեն որպէս ցուցաւ ի վերոյ: - 753. Այլ և են *ոմանք* որ ասեն զերկիրս մաքրեալ երեսնաւոր. և զդրախտն վաթսունաւոր. և զվերինն երուսաղէմ հարիւրաւոր: - 758. *Ոմանց* հուր և ծծումբ: - 760. *Ոմանց* խաւար միայն: - 760. Որպէս և *ոմն* ի Պետաց մերային ազգաց՝ զհաւատն դրուատեաց ասելով, Յաւատ ի հօրէ սկսեալ յորդի և ի հոգի վերաբերի: - 769. Ի խնդրոյ *ումեմն* բանասիրի Ատոմի ուղղափառի: - 772. Կամ զինչ անհնարին սաստ, եթէ ոք խոտեսցէ զսուրբ հոգւոյն խօսեցեալս ի գիրս սուրբս. ընտրելով *զոմն* յարուցեալ ի մեռելոց...: - 775. Այսպէս և յամենայն գործս աստուծոյ գտանի արդարութիւն և ողորմութիւն որպէս ասեն *ոմանք*...: - 79. *Ոմանք* ասեն պակասութիւն զքաղց և զծարաւ՝ զերկիւղ և զայլն. որք են պակասականք բնութեան զորս կրեաց քրիստոս...: - 781. Եւ *ոմանք* յորոց սրբազան առաջնորդն մեր, պակասութիւն ասաց գոլ զորս յետոյ կրեցին անդամք նորա...: - 781. Եւ զանազան տեսութիւնք վարդապետաց չեն ընդ դէմ միմեանց. այլ զորօրինակ *ոմն* զական պատւականութիւն, և այլ *ոմն* զբնութեան, և կէսք զասդողութեան, և *ոմանք* զորակացն գեղեցկութեանց, պատմեն զմի և զնոյն ական իր: - 781-782. Այսպէս և ենթադատութիւնք սուրբ գրոց *ոմն* այսպէս և *ոմն* այն: - 782. Կրկին է շնորհքն. *ոմն* հասարակ և *ոմն* յատուկ: - 783. Նորս խորհրդոյ շնորհք *ոմանք* են անիբաց դնելիք. զի են կնիք ի հոգին անփոփոխ գոլով ընդ նմա...: - 783. Եւ յարամնայութիւն կնքոյն պատճառէ՛ *ոմանց* գերագոյն պատիւս. և *ոմանց* խստագոյն պատիժս. ըստ բազում գանից առակի ասիցն: - 783. Այլ վարկանին *ոմանք* զթիւ կազմութեան աւուրց պակաս գոլոյ նախնւոյն մարդոյ...: - 85. ...ոչ ինչ վայրապար կազմեն զտեսակ գոյացական և զտեսակ պատահական. խնդրելով *ոմն* պարզ նիւթ. և *ոմն* տեսակացեալ: - 786. Տարորոշումն խառնեալ տարերց. և լաւին և վատթարին. *զոմանս* պահել և *զոմանս* վտարել: - 786. Եւ երկրորդն է լուսաւոր զօրութեամբ թափանցանց. գոլով ջրեղէն կամ պլօրեայ ըստ *ոմանց:* - 787. Թէ ասելն *ումեմն* ի սրբոցն, թէ աշխարհի սիւնք դողային: - 788. Այլ և *ոմանք* ասեն և է գոլ սեանց ընդ շինեալ տունն ի սողոմոնէ. կանգնեալ սիւնս է մարմնապէս. թէպէտ ա՛յլ է իմացումն հոգէպէս: - 788. *Ոմանք* ի գերութիւն վարեալք արք և կանայք. և կէսք առաթուր դիաթաւալ սրախողխող գալարեալ. առհասարակ քահանայք և աշխարհականք գէշ անկեալ դիակամբ անթաղ ընկեցեալք: - 788. *Ոմանք* հրով կիսայրեաց տոչորեալք. և այլք ի սովոյ գազանաբեկ վտանգեալք: - 788

**ՈՆՑ** - Ութևժերորդ՝ Մարդն *ո՞նց* ճանաչի: - 228. Մարդն *ո՞նց* ճանաչի: - 250

**Ո՛Չ +** Զի *ո՛չ* այլ ինչ է բախտն, եթէ ոչ զօրութիւն աստեղաց...: - 7-8. Որպէս արեգակն զի *ո՛չ* այրէ որ է հեռաւոր պատճառ...: - 8. Զոր օրինակ՝ յորժամ ասեմք՝ լինի անձրև կամ *ո՛չ*, ի հարկէ մինն ի նոցանէ լինի: - 8. Իսկ երկրաւորք մերթ այսպէս և մերթ այնպէս. լինին և *ո՛չ* լինին. որպէս մարդ, ձի, ծառ, և այլն: - 8. Այլ և սոքա *ո՛չ* զանազանին ի միմեանց...: - 8. Երկրորդ, այլ և *ո՛չ* է բնութեան բերք և արուեստից,

եթէ ամենայն են ի հարկէ. զի զանազան բնութիւնք և արւեստք զանազանապէս ներգործեն: - 8. Երրորդ, զի թէ է՛ ամենայն ի հարկէ, ո՛չ լինի անձնիշխան կամաց գործք. որ հաւասար է յերկոսինն. այսինքն յառնել և յո՛չ առնել: - 8. Չորրորդ, զի ո՛չ լինի ի դիպուածոց ինչ. որպէս սղից ոմանց պատահին բարեբախտութիւն, կամ վատաբախտութիւն. ա՛րդ՝ թէ է՛ ամենայն ի հարկէ, ո՛չ լինին վերոյ ասացեալքս: - 8. Եւ զի ո՛չ կարեն ոչ գոլ, անկա՛ր է սոցա ոչ գոլ: - 8. Եւ որ անկա՛ր է ո՛չ գոլ, ի հարկէ՛ գո՛յ, և է՛: - 8. Որպէս յորժամ ասեմք, վաղիւն լինի արև, կամ ո՛չ լինի. լինի անձրև, կամ ո՛չ լինի. ի հարկէ մինն ճշմարիտ է ի սոցանէ: - 8. Նախ՝ եթէ լինէր բանս մեր ի հարկէ ճշմարիտ, նա ո՛չ մինն միայն, այլև ամենայն բան զինչ ասէաք՝ ճշմարիտ լինէր. որպէս շինել քաղաք, կամ ո՛չ շինել. տնկել այգի, կամ ո՛չ տնկել: - 8. Ա՛րդ՝ թէ ամենայն ո՛չ լինի ճշմարիտ, նաև մի բանն ո՛չ լինի ճշմարիտ: - 8. Եւ ստուերն՝ մարմնոյ. և ո՛չ մարմինն՝ ստուերին: - 9. Ապա ուրեմն յա՛յտ է՝ զի բանն զիրն ո՛չ կարէ ճշմարտել. այլ իրն զբանն ճշմարտէ. յորժամ գոյ կամ ո՛չ գոյ. որպէս ասէ ի հարկէ՛ գոլ զէակն յորժամ է՛. և ո՛չ գոլ յորժամ ո՛չ է: - 9. Իսկ ի վերայ փոփոխականացս ո՛չ նմանապէս. զի յանցեալ ժամանակս և ի ներկայս բացորոշակի մինն ճշմարիտ է և մինն ստէ՛. որպէս ասեմք՝ երէկ անձրև էր, կամ ո՛չ էր. այսօր անձրև է, կամ ո՛չ է: - 9. Ապա և բանս մեր ո՛չ է հարկիւ. այլ հանդիպելով: - 9. Զբացբարձականսն ի վերայ աստուծոյ՝ որպէս անճառ և անսահման՝ ո՛չ ըստ պակասութեան կոչեմք, այլ ըստ գերազանցութեան: - 24. Իսկ չարն անսահման է ըստ ինքեան, և ո՛չ է սահմանիչ այլոց: - 24. Ո՛չ է ըստ չարափառացն ասել ուղղակի՝ թէ նախանձու կամ վասն փառաց որպէս ասեն, զի անգիտութեամբն պատուեսցի. ընդունա՛յն է կարծիքս այս...: - 24. Զորօրինակ ո՛չ է անզգուշագոյն յառել ի բոլորակս արեգական ...ըստ այսմ խնայեաց աստուած ի յազինս մարդկային, զի մի՛ կրիցեմք զկիրս զանկելոյ արուսեկին. որ ո՛չ կարացեալ տանիլ մեծութեան փառացն՝ զրկեցաւ և ի չափաւորէն: - 24. Երրորդ՝ զի կամեցաւ աստուած ո՛չ միայն ողորմութեամբ՝ այլև ըստ արդարութեան...: - 25. Եթէ ոք գիր ո՛չ գիտէ, և ո՛չ զվակյութիւն ընդունի սուրբ գրոց, որպէս ցուցանեմք նմա թէ է՛ աստուած: - 25. Եւ թէ ո՛չ՝ ի կարգէ իրացն իմասցին մտօք: - 25. Եւ թէ ոչ՝ տեսցեն աչօք յերկինս և յերկիր: - 25. Նախ ի պատճառէ, զի ամենայն պատճառելեաց խնդրի պատճառս. և այնպէս պատճառի միւս պատճառ. և այսպէս բացաքայլութեամբ յանհունս ո՛չ է գիտութիւն: - 25. Ա՛րդ՝ եթէ միակս այս շարադրի բազմաց, ո՛չ մնաց մին. իսկ եթէ ոչ շարադրի, ո՛չ գոն բազումք. այլ մի և մի. և այս որպէս այս: - 25-26. Զի ո՛չ նա այսմ և ո՛չ սա այնմ կարէ միակ գոլ...: - 26. Կուրացեալ հրէայքն առարկեն ընդդէմ մեր թէ՝ դեռևս ոչ է եկեալ մէսիայն: - 27. Ա՛րդ՝ բազում աւուրք անցին յետ մէսիային ծերոյ, այսինքն աւելի՛ քան զհազար և չորս հարիւր ամ. ապա և ո՛չ էր նա մէսիայն: - 27. Որոց պատասխանեն վարդապետք եկեղեցւոյ. և ես զնոցայն առեալ ասացից՝ թէ յաւուրս յետինս՝ ոչ զկատարած աշխարհի կոչէ...: - 27. Եւ զի ո՛չ ընկալան զարեգակն արդարութեան զքրիստոս, անկան ի լուսոյ ի խաւարն: - 27. Առ որս ասեմք եթէ՝ բանս այս «ամենայն» ո՛չ այնպէս նեղագոյն առեալ լինի ի սուրբ գիրս՝ որպէս առ փիլիսոփայսն: - 27. Եւ այսպէս առ քրիստոս ոչ ամենայն ազգ, այլ բազումք յամենայն ազգաց եկին: - 27. Այլ ոմանք ասեն թէ՝ նախ ասացեալ բանքս՝ ո՛չ լինին զառաջին գալստենէն քրիստոսի ասացեալ, այլ զերկրորդէն: - 27. Քանզի հրէայքն ի ժամանակս քրիստոսի ո՛չ լինէին նեղեալք յումեքէ: - 28. Եւ թէ ասիցեն հրէայքն, ո՛չ ամենայն հրէայքն ժողովեալ են ըստ խոստմանն: - 28. Նախ՝ ոչ ի հօրէ և ո՛չ ի մօրէ. որպէս ադամ: - 29. Երկրորդ՝ ի հօրէ՛ և ո՛չ ի մօրէ. որպէս եւա: - 29. Առաջին Որ ասեն, կամաւ ծնաւ, թէ յոչ կամայ: - 29. Երկրորդ՝ Զէ՞ն ծնաւ, թէ զոչ էն: - 29. Երրորդ՝ Ծնաւ և դադարեցաւ, թէ ոչ: - 29. Չորրորդ՝ Անծի՞ն է հայր, թէ ոչ: - 29. Երեքտասաներորդ՝ Ո՛չ կարեմ յանձնէ. և պատասխանիք նոցա ժ գլխով: - 29. Վեշտասաներորդ՝ Ո՛չ զկամս իմ, այլ զառաքչին: - 29. Աստ գտցես, Ո՛չ են և ասին: - 30. Են և ո՛չ ասին: - 30. Ո՛չ են և ոչ ասին: - 30. Հինգերորդ՝ Հայր և Հոգի ո՛չ մարմնացեալ. թէպէտ մի բնութիւն է երրորդութեանն: - 30. ...որոց դատաստանն ի բնէ ո՛չ դատարկանայ. և կորուստն ո՛չ նիրհեսցէ: - 31. Առաջին է՛ անգիտանալ զտկարութիւն և զփոքրկութիւն մարդկային մտաց. կարծեն թէ՝ ամենայնի պարունակօ՛ղ է, և ո՛չ ունի սահման: - 31. Վասն այնորիկ ո՛չ երևի ճշմարիտ նոցա, զոր ո՛չ ըմբռնէ միտք. և ո՛չ այլ իրիք հաւատան, բայց միայն զայն՝ զոր իմանան: - 31. Արդ՝ զորօրինակ զգալի աչք մեր ո՛չ կարէ ըմբռնել զքանակութիւն արեգականն և այլ լուսաւորացն. այլ մտօք իմանամք զմեծութիւն նոցա: - 31. Նոյնպէս զիմանալի խորհուրդս և զգիտութիւնս զոր տկարանայ միտք, կարողանայ հաւատքն տեսանել. այլ ո՛չ ունի հաւատ՝ քան զտեսութիւն մտացն: - 31. ...զի բնութեամբ է մարդոյ ո՛չ տեսանել զյետոյս իւր. և ո՛չ առանց աչաց հայելոյ: - 31. Նոյնպէս ո՛չ կարէ իմանալ յորժամ ի սուրբ գրոց և ի սքանչելեաց և ի բանից սուրբ վարդապետաց՝ դարձուցանէ զմիտքն. որպէս ասէ առակն՝ պակասամիտն ոչ ընդունի զբանս

խոհեմութեանց. բայց միայն զայն՝ որ շրջին ի միտս նորա: - 31. Եւ զոր ինչ տեսանէ աչք արծըւին՝ *ո՛չ* կարէ տեսանել աչք մարդոյ. այնպէս բթամիտն *ո՛չ* իմանայ, զոր իմանայ նրբահայեացն և ուսեալն յաստուծոյ...: - 31. Չորրորդ՝ է՛ հեռաւորութիւն հաւատալեացն. զի որք *ո՛չ* կրթին ի գործ իմացման, բայց միայն ի զգայութեանց՝ հեռի՛ են ի հաւատալեացն որպէս երկիր յերկնէ: - 31. Եւ այնպիսիքն տրամաբանել *ո՛չ* կարեն վասն հոգևորին. որպէս ի ծնէ կոյրն վասն գունոց, քանզի ասեն վարդապետք՝ աստուած լոյս է *ո՛չ* մարմնոց, այլ մտաց. զոր թէ ոք *ո՛չ* տեսանէ՝ կո՛յր է: - 32. Հինգերորդ՝ է՛ *ո՛չ* խնդրել զօգնութիւնն աստուծոյ ի հաւատալն. զի հաւատն *ո՛չ* է բնական. զի ըստ այսմ միապէս լինէր ամենեցուն. այլ ի բարութէն աստուծոյ ծրի պարգևքէ: - 32. Քանզի որպէս արեգակն *ո՛չ* տեսանի՝ եթէ ո՛չ լուսովն իւրով. այսպէս իմանալին աստուած *ո՛չ* տեսանի, եթէ ո՛չ լուսով շնորհաց հաւատոյն իւրոյ: - 32. **Զի որպէս գիջակնութիւնն չտայ թոյլ տեսանել յստակ, այսպէս երկիւղն յետս քարշէ զբազումս *ո՛չ* հաւատալ ի քրիստոս** որպէս ասէ յօհաննէս. «զայս ասացին ծնօղքն կուրին՝ զի երկնչէին ի հրէիցն խոստովան լինիլ զքրիստոս»: - 32. Նաև սէր աշխարհիս և փառաց՝ *ո՛չ* ետ թոյլ հաւատալ...: - 32. Այլ և ատելութիւնն դարձուցանէ զմիտս բազմաց ի հաւատոցն. որպէս ատելութիւն և նախանձ փարիսեցւոցն՝ *ո՛չ* տային թոյլ հաւատալ ի քրիստոս...: - 32. Իններորդ՝ զի նոցա բանականն է մոլորեալ. և *ո՛չ* ցասումն և ցանկութիւնն. յորոց վերայ բանն բռնադատէ խղճիւն, և ստիպէ զնոսա յուղղութիւն. այլ ինքն կառավարն խոհեմութիւնն մոլորեալ *ո՛չ* ուղղի: - 32. Եւ որպէս աչք *ո՛չ* տեսանէ զպակասութիւնն իւր, նոյնպէս բանականն *ո՛չ* տեսանէ զմոլորութիւնն իւր: - 32. Վասն այն հերձուածօղքն *ո՛չ* դառնան, զի *ո՛չ* կարեն ճանաչել զստութիւնն իւրեանց: - 32. Վասն զի խղճմտութեամբ յանցաւորին ճանապարհն *ո՛չ* է թիւր...: - 33. Վասն այն հերձուածօղն *ո՛չ* կարէ ուղղիլ: - 33. Վասն որոյ *ո՛չ* հաւանին ուղղութեան վարդապետաց: - 33. Իսկ պաշտօն կռոցն *ո՛չ* ունի զերկիւղն աստուծոյ: - 33. ...զի նա *ո՛չ* ունէր, և սա՛ ուրացաւ և դարձաւ անդրէն: - 33. Երրորդ՝ հրէայքն *ո՛չ* խոստովանին երեք անձինք և մի բնութիւն: - 34. Զհեղձուցեալսն *ո՛չ* խտրեն. և զազիր կերակրօք զեխին: - 34. ...ամենայնն ուրական միայն և *ո՛չ* ճշմարտութեամբ. և բոլոր դիտումն նոցա է՛ պատրել զմարդիկ և հանել ի հաւատոց. և լնուլ զորովայնս. և զկանայս շեղջակուտեալս մեղօք յինքեանս գրաւել: - 35. Հայր կամա՞ւ ծնաւ զորդի թէ *յոչ* կամայ: - 36. Եւ ասեն՝ թէ այդպէս է, ապա ուրեմն և *ո՛չ* կամաւ է որդի: - 36. Առ որս ասելի է թէ՝ *ո՛չ* կամաւ, և *ո՛չ* *յոչ* կամայ. զի պատկեր և նկարագիր էութեանն հօր է որդի, ըստ առաքելոյ: - 36. Եւ *ո՛չ* լինի ի մէջ մի և նոյն էութեանն կամք և *ոչ* կամութիւն: - 36. Ապա ուրեմն բնութեամբ և էութեամբ է որդի. և *ոչ* թէ կամաւ կամ *ոչ* կամայ: - 36. Զի թէ կամաւ, կամա՛ցն ես որդի և *ոչ* հօր. թէ այդպէս է, բարձեր զպատճառն քո զհայր. բարձար և դու ի տեսակաց մարդկան: - 36. Իսկ թէ *ոչ* կամաւ. ո՛ է որ զնա բռնադատեաց. զի բնութիւնն ողջախո՛հ է. և յայտնէ զայս կուսութեամբ կեալն բազմաց: - 36. Դարձեալ՝ հայր աստուած կամա՞ւ արար զամենայն եղեալքս, թէ *ոչ* կամայ: - 36. Զի թէ *ոչ* կամաւ, բռնադատեցաւ յայլ իմն հզօրէ՛. և հաներ յաստուածութենէն: - 36. Զի բռնադատեալն *ոչ* լինի աստուած. իսկ թէ կամաւ, կամացն եղեր արարած և *ո՛չ* աստուծոյ: - 36. Դարձեալ՝ հայր աստուած կամա՛ւ է թէ *յոչ* կամայ: - 36. Իսկ թէ *յոչ* կամայ, այլ ուրեմն բռնադատութեամբ քարշեցաւ յաստուածութիւն. և բարձեր զանսկզբնութիւն նորա: - 36. Եւ զի հարկեցաւ բռնութեամբ՝ *ոչ* է աստուած: - 36. Երկրորդ հարցումն չարափառաց, զէ՛ն ծնաւ, թէ *զոչ* էն: - 36. Զի թէ ասեն էր յառաջ քան զծնունդն որդի. իսկ էութիւնն հօր հայրութիւն է. և թէ *ոչ* էր որդւոյ հայր՝ բառնի յէութենէն իւրմէ, իսկ թէ *ոչ* էր և յետոյ ծնաւ՝ ո՞ւմ արդեօք իցէր հայր. զի *ո՛չ* էր որդի: - 36-37. Ասելովն ծնունդ ի հօրէ, ցուցանէ *ոչ* լինիլ յառաջ քան զհայր: - 37. Եւ ի սկզբանն ասելով, *ո՛չ* յետոյ քան զհայր գոլ: - 37. Եւ *ոչ* յետոյ ըստ կարծեացն արիոսի: - 37. Բայց հարցմունքս այս կարէ՛ ասիլ ի վերայ մեր. զի ասիմք՝ յէից եղեալ և *յոչ* էից: - 37. Եւ *յոչ* էից՝ զի սակաւ հիւթն այն՝ *ո՛չ* կայր միս և ոսկր և ջիլ. կամ մորթ: - 37. Եւ *յոչ* էից, զի տարերքն այնք *յոչ* էից եղեն: - 37. Իսկ թէ յո՛չ ումեքէ, կարգեցեր զնա ընդ *յոչ* էից գոյացելոց: - 37. Դարձեալ, ժամանակն ի ժամանակի՞ եղև, և այժմ է՞ ի ժամանակի է *յոչ* ժամանակի: - 37. Եւ թէ *յոչ* ժամանակի, և զի՞նչ էր նոյն ինքն ժամանակն որ գոյացաւ ի սկիզբն լինելութեանն: - 37. Դարձեալ թէ՝ յորժամ եղեր՝ մե՞րձ էիր դու քեզ, և այժմ հո՞ւպ ես քեզ, թէ *ոչ:* - 37. Թէ *ոչ*՝ Զի թէ մերձ էիր դու քեզ որպէս ոք առ ոք, բաժանեցար ընդ երկու. և զիա՞րդ մի իցես: - 37. Իսկ թէ *ոչ* յայնժամն մերձ՝ և *ո՛չ* այժմ հուպ քեզ, *ոչ* ես իսկ և *ո՛չ* կաս: - 37. Զի թէ պատասխանեմք թէ *ո՛չ* է հարկ թէ սկսեալն ամենայն իրօք և դադարեսցի. որպէս հրեշտակք և հոգիք մարդկան. զի են սկսեալք և *ո՛չ* դադարին. է՛ այս պատասխանի, այլ *ո՛չ* բաւական: - 37. Զի և յօհան դամասկացին ասէ հարկ գոլ ամենայն սկսզման ունել դադարումն. այլ զի հրեշտակք և հոգիք *ոչ* դադարին, այս կամա՛ցն աստուծոյ է պահպանութիւն,

և ոչ բնութեան նոցա. զի յո՛չ էից եղեալքն՝ կարեն յոչ էութիւն փոխիլ: - 37. Այլ մեր պատասխանին առ այս՝ է՛ այս ինչ, թէ միշտ ծնունդ է ի հօրէ ըստ բնութեանն որդի. այլ անձամբ կատարեալ. որպէս լոյս ի հրոյն միշտ ծնանի և ոչ է անկատար՝ յօրինակ որդւոյ: - 37. Դարձեալ առարկեն, եթէ աստուած է հայր՝ և անծին է բնութեամբ, և որդի ծնեալ է, ապա ուրեմն ո՛չ է որդի աստուած...: - 38. Առարկութիւնս այս յայտնապէս զորդի կամ զհայր ի բա՛ց մերժէ յաստուածութենէն. ճարտա՛ր իմա, ո՛չ ասէ զհօրէ ոչ գոլ աստուած. այլ զանծնելութենէն: - 38. Պատասխանեմք թէ՝ անծնելութիւնն և կամ ծնելութիւնն ո՛չ ասի միայն աստուածութիւն. զի աստուածութիւնն հաւասա՛ր է Երրորդութեանն: - 38. Իսկ այսոքիկ առանձնաւորութիւնք են հօր և որդւոյ. և ո՛չ են բնութիւնք անծնելութիւնն և ծնելութիւնն. այլ ի մի և ի նոյն բնութեանն: - 38. Ապա թէ ոչ՝ հա՛րկ է քեզ ասել ըստ բազում անուանցն և բազում բնութիւնս գոլ աստուծոյ: - 38. Եւ զի ո՛չ է անծնելութիւնն բնութիւն աստուծոյ՝ որպէս ասել թէ աստուած: - 38. Առաջին՝ զի թէ աստուած էր անծնելութիւնն, պա՛րտ էր ունել և անծնելութեանն ստեղծուած ինչ. և զի ոչ ունի, և ո՛չ ոք ասէ ի հեթանոսացն այսպիսի բան. այլ ամենքն խոստովանին թէ աստուած է աստուած. և ո՛չ անծնելութիւն աստուած: - 38. Ապա ուրեմն ո՛չ է անծնելութիւնն և ծնելութիւնն որիշ որիշ բնութիւն. այլ ի նոյն ի մի բնութեանն աստուծոյ: - 38. Դարձեալ՝ զի յիմարութիւն և իմաստութիւն են ի նոյն և ի մի բնութիւն մարդոյն, և ո՛չ ասին հակառակ միմեանց. այլ միապէս ունի յիմարն զիմաստնոյն բնութիւն և զսահման: - 38. Այսպէս անծնելութիւն և ծնելութիւն ո՛չ են հակառակ միմեանց բնութիւնք այլ ի մի և ի նոյն բնութիւնն: - 38. Դարձեալ զի և ադամ անծին՝ ո՛չ է միայն մարդկութիւն, այլ և ծնեալն ի նմանէ ասի մարդ: - 38. Այսպէս և ո՛չ միայն հայր աստուած, այլ և ծնեալն ի նմանէ աստուած: - 38. Պատասխանեմք թէ՝ կարի՛ յիմարութիւն է հարցումնդ. և զի գոյ հայր ըստ քում բանիդ ծնօղ որդւոյ. ապա ուրեմն ո՛չ կարէ ոչ լինիլ և ծնանիլ: - 38. Դարձեալ՝ ո՛չ կարէ ծնանիլ որդի զհայր՝ թէպէտ ունի զհօր բնութիւնն. որպէս դու ծնեալ ի հօրէն քո՝ ո՛չ կարես ծնանիլ զհայր քո և լինիլ հայր հօրն քում. թէպէտ ունիս յամենայնի զբնութիւն հօր քոյ: - 38. Թէ բնութեանն է, ապա ասեն որդի ո՛չ ունի զնոյն բնութիւնն. զի բնութիւնն մի է աստուծոյ: - 39. Պատասխանեմք՝ թէ հայր ո՛չ բնութեանն է անուն՝ և ո՛չ արարչութեանն. այլ առանձնաւորութեանն. զի այնու յատկանայ յորդւոյ և ի հոգւոյ: - 39. Եւ զի ո՛չ է հնար որպէս ասացի, ապա ուրեմն ո՛չ է մեծ հայր քան զորդի. զի ի միմեանց տանին, և ի միմեանց լնուն: - 39. **Դարձեալ ո՛չ ասի անպատճառ պատճառն քան զպատճառելին մեծ**. զի և որդի նոյն պատճառի հօր փառաց և մեծութեանն է հաղորդ: - 39. Իսկ միաւորութեանն իմանալ՝ ոչ է ինչ մեծ. այլ է հաւասար որպէս առօղն՝ նոյնպէս և առեալն զոյգ աստուած և մարդ: - 39. Դարձեալ քննեսցուք ըստ մեզ. զի ո՛չ են հակառակ առաքելոյն բանն և աւետարանին ...իսկ ըստ այնմ որ է՛ անճառ և նախքան զյաւիտեանս ծնունդ ի հօրէ՛, հաւասա՛ր է հօր և ոչ փոքր: - 40. Զի ո՛չ էր հայր մեծ քան զնա՝ ի յոր երդնոյր. զի որք երդնուն՝ ի մեծագոյնսն քան զինքեանս երդնուն. ապա ուրեմն հաւասա՛րէ որդի հօր և ո՛չ փոքր որպէս ասէ առաքեալն: - 40. Եւ գիտեմք հաւաստի թէ որդի էր. զի հրեշտա՛կ անուանէ զնա գիրն. և զի հայր երբէք հրեշտակ ո՛չ կոչեցաւ՝ այլ որդի...: - 40. Այլ նա ընդ ամենայն է քրիստոս զօրութեամբ և էութեամբ թափանցեալ է. և ո՛չ է տեղի թափուր ի նմանէ ...: - 40. Երկրորդ և ոչ վասն յետին յանցանացն կռապաշտութեան եպերեմք զիմաստութիւն նորա և ո՛չ ընդունիմք. թէպէտ և հնա՛ր է պատճառել թէ այնքան իմաստութիւնն, զնա ո՛չ պահեաց հաճոյ մնալ աստուծոյ: - 40. Իսկ անտօն և ո՛չ գիր գիտէր՝ ո՛չ թէ այնքան իմաստութիւն, որպէս հաճոյ եղև աստուծոյ. մեք յի՞նչ հաւատամք և ընդունիմք զայն իմաստութիւն: - 40. Այլ ո՛չ զայս պատասխանեմք: - 41. Արդ քանզի աստուած առանց պատճառի է աստուած. և թէ ոչ՝ ո՞ է պատճառ աստուածանալոյն: - 41. Իսկ ի ստեղծումն է ընդդէմ այսմ. քանզի ստեղծօղն ո՛չ այլայլի, այլ ստեղծուածն: - 41. Առ որս ասեմք՝ թէ որդի ո՛չ ասի անդրանիկ վասն գոլոյն ի կարգէ ստեղծուածոց, զի ո՛չ ոք ստեղծուած՝ էառ զբնութիւն աստուծոյ որպէս որդին: - 41. Դարձեալ անդրանիկ է ըստ շնորհաց հոգւոյն զոր ընկալաւ ո՛չ վասն կարօտութեան՝ զի լիապէս ունէր այլ զի գլուխ էր մեր՝ ընկալաւ՝ զի յանդամս իւր սփռեսցէ: - 41. Պատասխանեմք, ո՛վ յանդուգն մեկնիչ դու ...ո՞չ լուար ի հրեշտակէն, «թագաւորութեան նորա վախճան մի՛ լիցի»: - 41-42. Այլ զայս երկբայիս յաղագս ոչ գիտելոյ քոյ թէ «մինչդ» ամենուրէք ո՛չ որոշէ ընդդէմ հանդերձելոյն. զի թէպէտ նշանակէ՛ զկէտն ուր մինչն է եղեալ, այլ զոր ա՛նդր է քան զնա՝ ո՛չ ուրանայ: - 42. Յորմէ յա՛յտ է թէ և ի կատարածին ո՛չ հեռանայ: - 42. Այժմ արարչութեամբ ամէնի տիրէ՛ կամողաց և ոչ կամողաց. զի աստուած է: - 42. Եւ տնտեսութեամբն ո՛չ. բայց միայն հնազանդելոցն: - 42. Այլ որ եղև փոխանակ հնոյն նոր անդամ. և նզովք կոչեցաւ վասն իմ և մեղք այն որ ո՛չ արար զմեղս, և ելոյծ զանէծս և եբարձ զմեղս: - 42. Իսկ «աստուած աստուած իմ ընդէ՞ր թողեր զիս», ո՛չ թէ յինքենէ՛ թողաւ և կամ ի հօրէ. որպէս թէ երկեաւ ի

չարչարանացն. վասն զի կամաւ եկն և *ո՛չ* հարկիւ: - 42. Մեզ ճշմարտապէս ստեղծօղ՝ որպէս և նմա *ո՛չ* բանին՝ այլ երևելոյն: - 43-44. *Ո՛չ* կարելն բազմանշանա՛կ է: - 44. Նախ՝ *ոչ* կարել վասն նուազութեան զօրութեան ժամանակի և դիմի. որպէս *ո՛չ* կարէ մանուկ կռուիլ՝ և կորիւն տեսանել: - 44. Եւ որպէս *ո՛չ* ոմն նուազ զօրութեամբ ընդ առաւելն մրցի. այլ ընդ համացեղսն: - 44. Որպէս յովաբ *ո՛չ* ընդ դաւթի՝ այլ ընդ աբիսողո՛մ մարտեաւ: - 44. Երրորդ՝ ըստ *ո՛չ* պատշաճի. որպէս *ո՛չ* կարեն պահել որդիք առագաստի մինչ ընդ նոսա իցէ փեսայն որ է քրիստոս: - 44. Զի թէ մարմնապէս տեսանես. ուրախութեան էր ժամանակն գալստեան և *ո՛չ* սգոյ որ է պահք և ապաշխարանքն: - 44. Եւ թէ բան իմանաս՝ և *ոչ* պահքն պատշաճ էր սրբեցելոցն բանիւն. ըստ այնմ՝ «դուք սուրբ էք վասն բանին զոր խօսեցայ ընդ ձեզ». զի պահքն *զոչ* սուրբն սրբէ. իսկ նոքա զի սուրբք էին *ոչ* պատշաճ պահքն. վասն այն *ո՛չ* կարէին: - 44. Չորրորդ՝ վասն *ոչ* ախորժողաց՝ իբր *ոչ* կարաց անդ նշանս առնել վասն անհաւատութեանց նոցա: - 44. Եւ *ո՛չ* կարողանայ մինն առանց միւսոյն զի լծակիցք են: - 44. Թուի թէ և այս *յոչ* պատշաճէն ասի զի վնասեալք էին հաւատովք՝ *ո՛չ* էր պատշաճ անել նոցա նշանս: - 44. Ապա առ ըստ *ոչ* ախորժանացն թէ աշխարհք որք են աշխարհասէրքն՝ *ո՛չ* կարեն ատել զաշխարհասէրսն: - 44. Այսոքիկ մեզ անկա՛ր են և անհնարինք. բայց *ոչ* յաստուծոյ. այլ հնարաւորք և կարելիք են նմա: - 44. Բայց ա՛յս է անկարութիւն աստուծոյ. չարանալ և *ոչ* էանալ: - 44. Եւ այս ո՛չ թէ *ոչ* կարութիւն է նմա, այլ վասն առաւել կարողութեանն է: - 44. Զի միշտ է է, *ո՛չ ոչ* էանայ. և միշտ բարի և լոյս է, *ո՛չ* չարանայ և խաւարի: - 44. Եւ այս *ոչ* էութիւն և չարութիւն՝ առ մեզ կարէ՛ երևիլ, զի մասա՛մբ ունիմք զկարողութիւն և *ո՛չ* կատարեալ: - 44. Իմա՛, **որպէս բրուտն կարէ՛ գործել անօթ ինչ, այլ *ո՛չ* երկինք,** և երբեմն ի բարւոյ և երբեմն ի չար և ապականեալ. այլ ըստ այսմ *ո՛չ* լինի աստուած: - 44. Է՛ և անկարութիւն առ մեզ՝ *ոչ* էին գոյ լինիլ. և չորսին չորեքտասան: - 44. Այսպէս իմացիր և *զոչ* կարելն որդոյ առնել յանձնէ՛. այսպէս օտար ինչ ի հօրէ: - 44. Եւ թէ լինէր՝ գոյր և ի բնութենէ օտար. հետևէր ապա *ոչ* գոլ որդի հօր. թէ *ոչ* էր ի նոյն բնութենէն. ապա և *ոչ* հայր. զի հայր որդւո՛վն է հայր: - 44. Նմին իրի թէ *ոչ* հայր և *ոչ* որդի զի որդի հօրն է որդի՝ ըստ այսմ ապա *ո՛չ* էանայ աստուածութիւնն որ անկար է, որպէս ասացաք: - 45. Ապա ուրեմն *ոչ* առնէ յանձնէ և որդի, զի անհնար է բառնիլ աստուածութեանն: - 45. Ա՛յս է *ոչ* կարելն որդւոյ: - 45. Բայց և այս բան՝ հանգոյն առաջնո՛յն է իմանալ. որք միտս ունին և *ո՛չ* նուազին: - 45. Երկրորդ՝ *ո՛չ* կարեմ ոչ ինչ. այսինքն անօգուտ ինչ: - 45. Երրորդ՝ *ո՛չ* կարեմ ոչ ինչ. այսինքն մեղք և չար: - 45. Չորրորդ՝ այսու առաւել զմիակամութիւն ցուցանէ. զի մի՛ է կամք իւր և հօրն. վասն այն *ո՛չ* կարէ առանց հօր. զի *ո՛չ* է որդւոյ այլ կամք զի զոր ինչ կամեսցի բաց ի հօրէ արասցէ: - 45. Հինգերորդ՝ զի զօրութիւն՝ կարողութիւն՝ ուստի առնելն է՝ և աստուածութիւն՝ տէրութիւն՝ իշխանութիւն և այլք այսպիսիք՝ *ո՛չ* են առանձին անձնաւորութեանց. այլ հասարա՛կ են. և *ո՛չ* մին առաւել քան զմի. վասն այն *ո՛չ* կարէ որդի առնել ինչ յանձնէ իւրմէ թարց հօր որպէս ասացաք: - 45. Տե՛ս՝ զի ի մի բնութիւն օտարութիւն *ո՛չ* ասի. վասն այն է աստուծոյ կամքն մի և ներգործութիւնքն մի. զի բնութիւնն մի է: - 45. **Տարակուսելի է առ այս, զի թէ հա՛րկ է որոց բնութիւնքն մի գոլ՝ նոցա և կամքն և ներգործութիւնն մի լինիլ. ընդէ՞ր ապա զի մարդկային բնութիւնս մի է և նոյն հօրն և որդւոյն՝ և *ո՛չ* է կամքն և գործքն մի:** - 45. Այլ աստուծոյն *ո՛չ* ըստ այսմ տեսանի: - 45. Եւ պատաճառն է այս. զի թէպէտ մի է բնութիւն ծնողաց և ծնիցելոց, բայց *ոչ* ունին զմի կամս. զի հատեալ բաժանեցաւ որդին ի հօրէն: - 45. Իսկ բանն աստուած է՛ ծնեալ ի հօրէ՝ այլ *ո՛չ* բաժանեալ. որպէս *ո՛չ* բաժանի բան՝ ի մտաց. թէպէտ ի բազում լսելիք մտանէ. և թէ ի վերայ քարտիսի մարմին զգենու: - 45. Եւ որպէս լոյս *ո՛չ* բաժանի ի հրոյ, այսպէս և *ոչ* զատի բանն ի հօրէ: - 45. Այս *ո՛չ* որպէս չարափառքն ասեն՝ թէ որպէս նկարիչ իմաստուն ձևացնէ՛ պատկեր, և ապա *ոչ* ուսեալն՝ զնոյն օրինակէ՛: - 45. Ո՛չ թէ նոր իմն տեսակ և կամ նոր աշխարհ. այլ զեղելոցս նախախնամութիւնն. և ի նոյնութիւն կալն հայր կամի և որդի կատարէ՛. *ոչ* ծառայաբար և անուսումնապէս. այլ տիրաբար և հանճարով: - 46. Թուի թէ նուազ է քան զհայր. զի *ոչ* ունէր և տաւ: - 46. Ասեմք զայս ըստ մարդկութեանն. զի *ո՛չ* ունէր բնութիւնս մեր. այլ յորժամ միացաւ ընդ բանին և եղև որպէս առօղն և առեալն իշխան և տէր ամենեցուն: - 46. Եւ թէ և ըստ աստուածութեանն իմանաս՝ *ո՛չ* է անտեղի: - 46. Այլ որպէս բանին սեպհական է և բնութեամբ և *ո՛չ* ստացմամբ, այսպէս իմացիր և մարմնոյն...: - 46. Ո՛չ ցուցանէ այս **ք** կամք հակառակ միմեանց. զի առողին է բանս և *ո՛չ* առեցելոյն. այսինքն բանին՝ և *ո՛չ* մարդկութեանն: - 46. Այլ այս առաւել զմիակամութիւնն ընդ հօր և որդւոյ ցուցանէ. զի ասէ՝ *ո՛չ* իմ կամք այլ որիշ զի առնեմ, այլ զա՛յդ կամքդ առնեմ զի հասարա՛կ է: - 46. Զի *ոչս* այս բացբարձակա՛ն է. որպէս թէ *ո՛չ* չափով տայ աստուած զհոգին որդւոյ. այսինքն է՝ զի *ոչ* տայ և *ո՛չ* չափէ: - 46. Ո՛չ թէ բացասութիւնքս այսոքիկ զլինիլն ցուցանէ, այլ թէ *ո՛չ* էր ամէնիւ: - 46. Այսպէս և այժմ

ասէ՝ «*ո՛չ* զկամս իմ արարից». որպէս թէ *ո՛չ* է իմ այլ կամք զի արարից. այլ նոյն հօր կամքն է և իմ կամք: - 46. Ապա ուրեմն ասեն չարափառքն թէ հայր միա՛յն է ճշմարիտ աստուած. և *ո՛չ* որդի և հոգի: - 47. Այլ ա՛յս է լուծումն, զի յորժամ լսես թէ մի է աստուած, զընդ աստուած ասելոյն՝ զերրորդութիւնն իմացիր. զի *ո՛չ* է առանձին, այլ հասարա՛կ է աստուածութիւնն: - 47. Ասեմք եթէ՝ օրինականն որպէս զմարդո՛յ բարութիւն կարծէր ունել քրիստոսի՝ այլ *ո՛չ* գերագոյն...: - 47. Այլ ա՛յս է հոգւոյն բարեխօսելն, զի յորժամ կամք յաղօթս՝ *ո՛չ* գիտեմք զպատշաճն խնդրել. ապա հոգին անմռունչ տայ մեզ իմաստ զպատշաճն աղօթել: - 48. Առակի են նման, որպէս թէ ոք որ նախ զպարիսպ քաղաքին ինչ իցէ գիտենայ, և զպարսպէն ասէ *ո՛չ* գիտեմ: - 48. Դարձեալ թէ այսու *ոչ*, Ասեմք թէ՝ որպէս զայլ բարձրագոյնսն հօր ետ, որպէս թէ «հայր իմ մեծ է քան զիս». և թէ՝ «*ո՛չ* իմ կամք, այլ առաքչին»: - 48. Այսոքիկ իբր առնչակա՛ն են և *ո՛չ* առանձին բնութեանն: - 49. Երրորդ՝ զի միածին է. զի զայլ ոք *ո՛չ* ծնանի: - 49. Եօթներորդ՝ զի թէ և լռեալ է բանն և *ոչ* արտաբերեալ, բա՛ն է մտացն: - 49. Էառ փրկիչն զամենայն, զի փրկեսցէ զամենայն. բաց ի մեղաց. զի մեղքն եկամուտ է և *ո՛չ* է ի բնութենէս. զի բնութիւնս անմեղ ստեղծաւ յաստուծոյ: - 50. **Որք և *ո՛չ* զգիրս գիտէին, վասն ճգնութեանցն աստուածուսոյցք եղեն**: - 50. Իսկ որք բառնան զաստուածութիւնն ի միոյն՝ և *ո՛չ* երկոցունց տան զաստուածութիւնն, իմա՛, ըստ առաքելոյն զօրութիւն և իմաստութիւն է հօր որդի. և բան՝ ըստ աւետարանին յոհաննու: - 51. Տե՛ս՝ զի առանց որդւոյ անբան և տկա՛ր է հայր. *ո՛չ* կարէ լինիլ աստուած. ապա և *ո՛չ* հոգի: - 51. Նոյնպէս և առանց հոգւոյ անկենդան և անսուրբն՝ *ո՛չ* է աստուած. ապա և *ո՛չ* որդի: - 51. Դարձեալ՝ որք *ո՛չ* ասեն աստուած զհոգին, առաջին հերձուած՝ զի զհայր բառնան: - 51. Ոմանք որպէս սադուկեցիք *ո՛չ* գոլ իմանան: - 51. Նա և *ո՛չ* զյարութիւն, և *ո՛չ* զհրեշտակ: - 51. Իսկ այլք արարած վասն *ո՛չ* յայտնելոյ ի գիրս աստուած զհոգին: - 51. Եւ այլք *ո՛չ* հաշտեն և *ո՛չ* անպատւեն. զի զկարգն յաւիտենին *ո՛չ* ստեն որպէս ասացաք: - 51. Այլ մեր բանս *ո՛չ* է ընդ այլսն ամենայն, այլ որք զօրութիւն և արարած ասեն գոլ զհոգին: - 51. Իսկ յորժամ զյայլումն լսեն՝ արձակին ի վերայ մեր ասելով, եթէ յայլո՛ւմ է՝ պատահումն է ի հայր որպէս զօրութիւնս առ մեզ. իսկ եթէ զօրացեալ է՝ և ընդ զօրանալն դադարեսցէ ամենայնիւ. շարժումն եղիցի և *ոչ* շարժօղ: - 52. Պատասխանեմք թէ՝ *ո՛չ* է զօրացեալ՝ այլ զօրացուցանօղ...: - 52. Ամենայնիւ այսոքիկ շարժողի՛ են և *ո՛չ* շարժութեան. ապա ուրեմն հոգին *ո՛չ* է զօրութիւն: - 52. Ապա ասեն՝ թէ գոյացութիւն է և *ո՛չ* յայլում՝ այսինքն ի հայր, օտա՛ր է ի բնութենէն. արարա՛ծ է և *ո՛չ* աստուած: - 52. Առորս ասելի է թէ՝ *ո՛չ* է այլ էութիւն ի մէջ արարչին և արարածոյն. այլ հա՛րկ է զի լիցի աստուած՝ կամ արարած: - 52. Եւ *ո՛չ* այս կարէ լինիլ ի յերկուցն հատումն. այսինքն զի լիցի յաստուծոյ և արարածէն՝ և լինիլ մի էութիւն. որպէս *ո՛չ* է էութիւն եղջերուաքաղն որ յեղջերէ՛ և ի քաղէ ստեղծանի. ապա ուրեմն *ո՛չ* լինի էութիւն յարարչէն և յարարածէն: - 52. Եւ թէ արարած է՝ զիա՞րդ հաւատամք և կատարիմք. այսինքն յորժամ խնդրեմք և առնումք. զի *ո՛չ* տան մեզ զհայցւածքն որք են արարածք. որպէս անւամբ միայն աստւածք հեթանոսացն: - 52. Եւ թէ այդպէս է, ապա ուրեմն հոգին *ո՛չ* է արարած: - 52. Եւ զի *ո՛չ* է արարած՝ ո՛չ այլ ինչ է՝ քան թէ աստուած որպէս ասացաք: - 52. Եւ զի աստուած է՝ *ո՛չ* կարէ ասիլ ստեղծւած կամ արարած կամ պաշտօնեայ կամ ծառայ: - 52. Եւ թէ յերկուցն՝ *ո՛չ* է կարօղ հայր ծնանիլ և կարօտանայ որդւոյ օգնութեանն. և լիցի անկատար որդի: - 52. Բայց *ո՛չ* ծնեալ ասեմք՝ և *ո՛չ* անծին. այլ արտաքս առաքեալ ի հօրէ...: - 52. Դարձեալ հարցանեն, թէ հաւասար է հոգի որդւոյ, զի՞նչ արգելու *ո՛չ* լինիլ որդի. ապա թէ ո՛չ՝ նւա՛զ է քան զորդի: - 53. Պատասխանեմք թէ *ո՛չ* է նըւազ հոգին. զի *ո՛չ* է անկատար աստուածութիւնն. և *ո՛չ* նըւազութիւնն առնէ հոգւոյն *ո՛չ* լինիլ որդի, այլ դէմքն և առանձնաւորութիւնքն: - 53. Ապա՛ թէ *ո՛չ*՝ անկարօտ է ամենայնիւ որդի՝ զիա՞րդ *ո՛չ* լինիցի հայր: - 53. Կամ ևս՝ զի և հայր է ամենակատար՝ ընդէ՞ր *ո՛չ* լինիցի որդի, զի է՛ ի նոյն բնութենէն: - 53. Ասեն դարձեալ, օրինակ տուք զի լիցի ի նոյն բնութենէն մինն ծնունդ՝ և միւսն *ո՛չ* ծնունդ. և ապա՛ հաւատամք աստուած զհոգին: - 53. Պատասխանեմք թէ ցո՛յց մեզ սոյնպէս աստուած երեք անձինք ի մի բնութիւն. և ես ցուցանեմ զմինն ծնունդ և զմիւսն *ո՛չ* ծնունդ: - 53. Եւ ապա՛ զադամ, զի ունի զսէթ ծնունդ՝ և զեւա *ո՛չ* ծնունդ. այլ հատումն ի նոյն բնութենէ. և ընդ միով սահմանաւ գոլ ծնողին և հատմանն և ծնիցելոյն: - 53. Պատասխանեմք թէ՝ *ո՛չ* ասէ պարզաբար ամենայն, այլ կարգէ՛ զհետն թէ՝ ամենայն որ ինչ եղև. թէ եղեալ ցուցանես զհոգին, և ես հաւատամ թէ ի ձեռն որդւո՛յ է եղեալ: - 53. Իսկ արիոսի՝ զի նա միայն զհա՛յր ասէր աստուած. զայս ասեմք թէ, *ո՛չ* են մեզ երեք աստուածք՝ այլ մի աստուած և երեք անձինք. և երկուքն ի մի և ի նոյն էութենէն յառաջ եկեալ. կամօք մի և զօրութեամբ մի: - 54. Պատասխանեմք թէ՝ *ո՛չ* են հեթանոսաց աստուածքն մի, այլ բազումք և միմեանց հակառակք կամօք պաշտմանն և զոհիւք խնդրոյն: - 54. Իսկ աստուած *ո՛չ* այսպէս. այլ

որպէս մի է բնութեամբ՝ և կամօք և զօրութեամբ մի: - 54. Դարձեալ հարցանեն թէ՝ զիա՞րդ ասէք երեք և մի բնութիւն. զի **գ** միոյ բնութեանն *ո՛չ* հաղորդի. այլ մինն հաղորդի միոյ բնութեանն, և երկուքն երկուքին. և երեքն երեքին. զի որքան է թիւն, այնքան բնութեան թըւակից լինի: - 54. Եւ այլ անուն՝ այլոյ բնութեան *ո՛չ* թըւակցի. որպէս *ո՛չ* մի երկուին և կամ՝ երկուքն երեքին: - 54. Ապա ուրեմն զի դուք **գ** ասէք՝ հայր և որդի և հոգի, ըստ թըւոյն և երեք բնութեան հաղորդին և *ո՛չ* միոյն: - 54. Պատասխանեմք թէ՝ ամենայն թիւ *ո՛չ* բնութեան է յայտնիչ՝ այլ քանիութեան ներքոյ արկելոյ թըւին: - 54. Եւ իմաստասէրքն զհոմանունսն որ *ո՛չ* էր ի նոյն տեսակէ կամ ի բնութենէ՝ թւակցէին: - 54. Եղև ապա նոյն իրն բնութիւն և *ո՛չ* բնութիւն որ անկա՛ր է: - 55. Ապա ուրեմն և հայր և որդի և հոգի թէպէտ թըւով **գ** են, այլ *ոչ* **գ** բնութիւնք: - 55. Վասն հոգւոյն են ի գիրս սուրբս՝ զի *ո՛չ* են և ասին ի յէքս. որպէս եղջերուաքաղն, յարալէզն, յուշկապարիկն: - 55. Են և *ո՛չ* ասին ի յէքս. որք յանկոխ լերինս և ի խորս ծովուց անտեսք ի մարդկանէ: - 55. Եւ *ո՛չ* ասի ի գիրս սուրբս ըստ այդմ բառի, բայց այլ կերպիւ ցուցանէ զայդ. այսինքն զի ասէ, «Ես եմ ալֆա և օմեգա». յայսմանէ իմանամք զանսկիզբն և զանվախճանն: - 55. Երրորդ վանկն, *ոչ* են և *ո՛չ* ասին ի յէքս, *ոչ* եղեալքն *ո՛չ* ասին. և *ո՛չ* գունտն քառանկիւնի. կամ մարդս պարզ: - 55. Իսկ ի յաստուած՝ զի *ո՛չ* է չար. և *ո՛չ* տգէտ. և *ո՛չ* անկար, և *ո՛չ* ասի: - 55. Այս են որ *ո՛չ* է և ասի. է՛ և *ո՛չ* ասի. *ո՛չ* է և *ո՛չ* ասի. է՛ և ասի որպէս ցուցաք: - 55. Արդ՝ Նա՛խ՝ բան աստուծոյ՝ և հոգի աստուծոյ՝ *ո՛չ* պատշաճի արարածոյ. այլ միայն աստուծոյ: - 55. Երրորդ՝ իմաստութեամբ արար ըզհոգին և զբանն և *ո՛չ* անիմաստութեամբ: - 55. Ա՛րդ՝ իմաստութիւնն այն որ արար զբանն և զհոգին, նա՛ է բան աստուծոյ. և հոգի աստուծոյ. և *ո՛չ* արարած: - 55. Չորրորդ՝ կարողութեամբ արար զբանն և զհոգին և *ո՛չ* տկարութեամբ: - 56. Ա՛րդ՝ կարողութիւնն այն է բան և հոգի աստուծոյ. և *ո՛չ* եղեալք ի նմանէ: - 56. Ութերորդ՝ թէ արարա՛ծ է բանն աստուծոյ և հոգին, ապա կրկին է և *ո՛չ* մէկին. զի բանն արարած՝ և արարչի բան. և հոգին արարած՝ և արարչի հոգի: - 56. Իններորդ՝ թէ արարիչ է աստուած՝ և բան իւր և հոգին արարած, ապա և ինքն *ո՛չ* է պարզ և մէկին՝ այլ բաղադրեալ և ի բազմաց գոյացեալ: - 56. Տասներորդ՝ թէ բանն աստուծոյ և հոգին արարա՛ծ են և այլ բնութիւն, յայնժամ *ո՛չ* լինի մի աստուած. այլ բազում և զանազան աստուած...: - 56. Եւ թէ ասիցէ հակառակօղն, եթէ՝ վերոգրեալ գործառնութիւնքս համարին հոգւոյն սրբոյ *ո՛չ* որպէս աստուծոյ, այլ որպէս պաշտօնէի: - 59. Նախ՝ ասէ մակեդոն եթէ աղօթել և բարեխօսել *ո՛չ* յարմարի աստուծոյ. զի եթէ զքրիստոսէ՛ ասի՝ վասն մարդկութեանն է: - 59. Նոյնպէս և առաքումն հոգւոյն *ո՛չ* նըւազութիւն ցուցանէ, այլ զհամակամութիւն ընդ հօր և ընդ որդւոյ: - 60. Իսկ շարժմունքս այս *ո՛չ* ցուցանեն զաստուած ստեղծուած: - 60. Ապա ուրեմն և *ո՛չ* զհոգին սուրբ: - 60. Չորրորդ ասեն, տրտմութիւնն կիրք է և *ո՛չ* լինի յաստուած: - 60. Իսկ թէ *ո՛չ* ունի զբնութիւնն հօր աստուծոյ՝ *ո՛չ* ուրեմն է աստուած: - 60. Պատասխանեմք եթէ՝ թէպէտ հոգին ունի զբնութիւնն ի հօրէ՝ սակայն *ո՛չ* ծննդեամբ որպէս որդի, այլ բղխմամբ. որպէս շունչն և բանն ունին զէութիւնն հոգւոյն այլ և այլ կերպիւ. և որպէս ադամ յառաջ էած յինքենէ զսէթ և զևա. զմինն ծնունդ և զմիւսն *ո՛չ* ծնունդ. և ունին երեքեանն զմի և զնոյն բնութիւն մարդոյ: - 60. Զի՝ զինչն ետ հայր որդւոյ, և *ո՛չ* զառինչն: - 61. Վեցերորդին պատասխանեմք, թէ ասիցես որդին անկենդան է յորմէ հոգին *ո՛չ* բղխէ. ապա՛ և ըստ քեզ հոգին անբան է զի զբանն *ո՛չ* ծնանի: - 61-62. Երկրորդ՝ զի խօսքն միայն ի բանէն ձևանայ և *ո՛չ* ի մտացն: - 62. Ապա ուրեմն այսպէս կարծելն՝ զհոգին միայն յորդւոյ ցուցանէ՛ և *ո՛չ* ի հօրէ որ է անհնարին հերձուած: - 62. Զի թէ կարօղ, ապա *ո՛չ* է կցորդ որդի: - 62. Իսկ թէ անզօրգ, որ կատարեալն բղխէ՝ նա՛ է բղխօղ. և *ո՛չ* անկատարն: - 63. Զի թէ կարգաւոր, երբեմն մինն՝ և յետոյ միւսն. որ յառաջին բղխօղ է՝ նա՛ է բղխօղ. և *ո՛չ* վերջինն: - 63. Դարձեալ՝ հարցանեմ, զբղխեա՞լն ի հօրէ բղխէ որդի, թէ *զոչ* բղխեալն: - 63. Իսկ եթէ զոչ բղխեալն բղխէ, ահա ի հօրէ *ո՛չ* ասէք զբղխումն, այլ միայն յորդոյ. որ է սուտ: - 63. Դարձեալ՝ հարցանեմ, զի թէ մինն բոլոր բղխումն է հոգւոյն և *ո՛չ* մասն. զի թէ զմինն զայն հայր բղխէ, ապա ուրեմն *ո՛չ* բղխէ որդի. իսկ թէ զմինն զայն որդի բղխէ, բըղխեալն հոգի թո՛ռն լինի հօր, և *ո՛չ* բըղխումն նմին: - 63. Իսկ թէ այլ բղխէ հայր՝ և ա՛յլ որդի, կրկնապատիկ է հոգին և *ո՛չ* մի: - 63. Ա՛րդ՝ *ո՛չ* ելանէ ի հայր. զի *ո՛չ* ունի հայր իր ինչ ի յորդոյ: - 63. Եւ *ո՛չ* ի միւս անձն. զի չկա՛յ միւս անձն: - 63. Ապա ուրեմն *ո՛չ* ելանէ յորդւոյ: - 63. Ա՛րդ՝ որպէս արտաշնչումն *ո՛չ* ելանէ ի բանէ, և *ո՛չ* հոգի ի յորդւոյ: - 63. Ա՛րդ՝ կամքն *ո՛չ* է յիմացմանէ. և *ո՛չ* հոգի յորդւոյ: - 64. Ա՛րդ՝ տեսանեմք զջերմութիւնն զի *ո՛չ* բղխէ ի լուսոյ, այլ միայն ի հրոյ: - 64. Նոյնպէս հոգին սուրբ *ոչ* բղխէ յորդւոյ, այլ միայն ի հօրէ: - 64. Ա՛րդ՝ հոտն *ո՛չ* է ի գունոյն. այլ միայն ի մարմնոյն: - 64. Նոյնպէս և հոգի *ո՛չ* է յորդւոյ՝ այլ միայն ի հօրէ: - 64. Ա՛րդ՝ եթէ ելանէ ի հօրէ և յորդւոյ, լինի իբրև եզր և **գ**. և *ո՛չ* իբրև զմիջին: - 64. Ապա ուրեմն *ո՛չ* ելանէ ի հօրէ և յորդւոյ. այլ ի հօրէ յորդի: - 64. Ա՛րդ՝ **բ**

լոյսն ի միոյ ելանեն և *ո՛չ* մի ի միւսոյն: - 64. Եւ անդ ասի ի հաւատամքն եթէ՝ հոգին սուրբ որ ի հօրէ. և *ո՛չ* յիշի որդի: - 64. Վեցերորդ վկայ ի ժողովոյն քաղկեդոնի զոր նոքա ընդունին և *ո՛չ* մեք. այսպէս է գրեալ թէ՝ որ ոք զհոգին ի հօրէ և յորդւոյ բղխումն ասիցէ՝ նզովեալ լիցի: - 64. Ա՛րդ՝ զհոգին սուրբ ի յորդւոյ *ո՛չ* ասեմք. սակայն զնա հոգի որդւոյ անուանեմք: - 65. Զի որպէս այժմ կարեմք ասել ճշմարտապէս թէ հոգին սուրբ ելանէ ի հօրէ. և վասն ապառնւոյն կարեմք ասել թէ հոգին սուրբ *ո՛չ* ելանէ յորդւոյ. մինչ այլ ո՛չ ևս ելանէ. և *ո՛չ* այնպէս էառ զգոյացութիւն և զճշմարտութիւն իւր՝ զի ո՛չ ևս երբեք առցէ: - 65. Ապա ուրեմն որդի և հոգին սուրբ ի հօրէ ելանեն իբր **բ** շառաւիղ. և ըստ այսմ *ո՛չ* ելանէ մի ի միւսոյն: - 65. Երկրորդ՝ զի թէ նա՛ շնորհիւ ունի զորդիութիւնն և *ո՛չ* էապէս, ապա ուրեմն մասամբ և ըստ կարգի ունի՝ և *ո՛չ* զլրումն աստուածութեանն. զի շնորհն է մասնաւո՛ր պարգև: - 66. Երրորդ՝ զի *ո՛չ* մի որդի և տէր յիսուս քրիստոս խոստովանին որպէս ասեն առաքեալքն և հարքն սուրբք: - 66. Պարտաւորեցան ըստ մարդապաշտութեամբ *ո՛չ* միայն երկրաւորքս՝ այլ և երկնայինքն: - 67. Տասներորդ՝ զի թէ նա վասն բնակութեանն երկրպագելի է և աստուած, *ո՛չ* միայն եղիցի նա՛ աստուած, այլև ամենայն երկնաւորք և երկրաւորքս. որք բնակեալ ունին զաստուած և կոչին անուամբ աստուածք: - 67. Ապա *ոչ* եղիցի նա որպէս զաստուած ի տաճարս իւր. այլ որպէս տաճար ի տաճար: - 67. Երկոտասաներորդ՝ զի թէ վասն բնակութեան նորա՝ է մարմին նորա ուտելի որպէս ինքն ասաց՝ «մարմին իմ ճշմարիտ կերակուր է». կերօղքն եղիցին գազանք մարդակերք. և *ո՛չ* մարմնոյ և արեան որդւոյն աստուծոյ: - 67. Ապա *ո՛չ* եղև աստուծով, այլ մարդով. զոր սո՛ւտ առնէ մարգարէն զփրկութիւն մարդոյ: - 67. Եօթնև**ժ**երորդ՝ զի թէ ծնեալն ըստ մարմնոյ՝ է առանձնապէս մարդ ապա ուրեմն ծնօղ նորին *ո՛չ* է աստուածածին, այլ՝ մարդածին: - 68. Իննև**ժ**երորդ՝ զի թէ առանձնապէս մարդ է, ապա հետևի բաժանեալ բնութիւն և **բ** կամք և կրկին ներգործութիւն. յայնժամ *ո՛չ* լինի բանն մարդ եղեալ. այլ մարդն բնակութեամբ ի փառս բանին բարձրացեալ: - 68. Իսկ եթէ զանդրանիկն առանձին, ահա՛ զկուսածինն որդի՝ *ո՛չ* ասէք աստուած՝ ըստ նեստորի: - 68. Եւ թէ մերկ բանին, հետևիս գոյութեան սկիզբն ի մօրէն գոլ և *ո՛չ* յաստուծոյ հօրէ: - 68. Շնորհօ՞ք ասեմք այժմ հոգի քրիստոսի և *ո՞չ* բնութեամբ: - 69. Զի *ո՛չ* էապէս՝ այլ արտաքո՛ւստ և եկամուտ ունի զաստուածն անուն: - 70. ...*ո՛չ* եթէ հայր դատէ զոք, այլ զամենայն դատաստան ետ որդւոյ իւրում: - 70-71. Այլ թերևս ասիցէ ոք եթէ՝ վերոյ ասացեալ գործառնութիւնքս պատշաճին քրիստոսի վասն բնութեան բանին, և *ո՛չ* վասն մարմնոյն: - 72. Արդ բանն առանց մարմնոյն քրիստոս *ո՛չ* է. ապա ուրեմն յա՛յտ է զի միացեալ մարմնովն է՛ հաւասար և ի կերպարանս աստուծոյ տէր մեր յիսուս քրիստոս: - 72. Երկոտասաներորդ՝ այն որ սկիզբն յաշխարհի ունի՝ և *ո՛չ* է յառաջ քան զլինիլն իւր յաշխարհի՝ *ո՛չ* ասի գալ յաշխարհս: - 73. Ապա ուրեմն և մարմինն այն յատուկ է մարմին բանին աստուծոյ. և այս *ո՛չ* կարէ լինիլ՝ եթէ *ո՛չ* լիցի միաւորեալ ընդ նմին: - 73. Ապա ուրեմն և *ո՛չ* էր յարութիւն և ո՛չ կենաց տըւօղ, եթէ *ո՛չ* էր միաւորեալ ընդ կեանքն յաւիտենական: - 74. Եթէ մի է առհասարակ բնութիւն երրորդութեանն և *ո՛չ* բաժանեալ, ո՞րպէս իմանամք զբանն միայն մարմնացեալ. և *ո՛չ* զհայր և զհոգի: - 74. Հարցումնս այս է՛ *ո՛չ* գիտողաց զհասարակութեանն բան և զառանձնութեանն: - 74. Ա՛րդ՝ ըննդէմ քումդ խոհեմութեան ո՛րպէս իմանաս ի միում հասարակ բնութեան զբանն ծնեալ և զհոգին բղխեալ. իսկ հայր *ոչ* ծնեալ կամ բղխեալ. և անդրադարձեալ ևս: - 74. Ա՛րդ՝ դու առանձնութեամբ քո որ ունիս զհասարակ բնութիւնդ՝ ծնար այսօր ի մօրէ՛ կամ մեռար յաշխարհէ՛ և *ո՛չ* հասարակ մարդկութիւնս: - 74. Նոյնպէս իմա՛ և զաստուածն բան. ունելով զնոյն բնութիւն յառանձնութեան իւրում. և միայն միացեալ ի մարմնի և *ո՛չ* հայր և հոգի...: - 74. Եւ այն զի ո՛չ ինչ ունի մինն նըւազ քան զերկուքն, և *ո՛չ* երկուքն առաւել քան զմին, բաց յառանձնութեանցն: - 74. Ա՛րդ՝ զանազան զգայութեամբ զանազանապէս զգամք, և *ո՛չ* ամենայնիւ զմինն՝ կամ միովն զամենայն: - 75. Զի աչք զգայ զգոյնն ընդ ծեւոյն. և *ո՛չ* զհամն և զհոտն: - 75. Իսկ ըռընկունքն ըզհոտն. և զայլսն *ո՛չ:* - 75. Սակայն բա՛նն մարմին եղև. և *ո՛չ* հայր և հոգի: - 75. Ուստի *ո՛չ* ասի քրիստոս սոսկ մարդն, կամ մերկ աստուածն. այլ որպէս ցուցաւ յերկուց միաւորութիւնն: - 75. *Ո՛չ* փոխարկապէս, այլ փոխատրապէս. այսինքն զի ի միաւորութեանն եկաց մնաց որ ինչ էրն, և եղև որ ինչ *ո՛չն* էր: - 75. Ուրեմն և ծնեալ ի մօրէ միայն զմարդկութիւնն՝ և *ո՛չ* զաստուածային էութիւնն: - 75-76. Ուրեմն նա ինքն հաւատարիմ մնայ, ուրանալ զանձն իւր *ո՛չ* կարէ: - 76. Առաջնոյն ասեմք. թէպէտ բանն աստուած բնութեամբ միաւորեսցի ընդ մարդկութեանն, *ո՛չ* կրէ շփոթումն և կամ խառնակումն ինչ: - 76. Զի անմարմին է՝ և միաւորի ընդ մարմնոյ. որպէս հոգի և մարմին բնութեամբ միաւորին և *ո՛չ* շփոթին: - 76. Առ երկրորդն ասեմք՝ թէ *ո՛չ* բաժանումն բնութեան առնէ զանչարչարութիւն բանին, այլ աներութիւն բնութեանն: - 76. Զի անե՛ղ է՝ յաղագս որոյ *ո՛չ* կրէ յեղումն ինչ և փոփոխումն կրից: - 76. *Ո՛չ* յեղմամբ

կամ շփոթմամբ. այլ անշփոթ միաւորութեամբ զբանն մարմին եղեալ և միաւորեալ զբնութիւնս մեր կատարելապէս ընդ իւրում աստուածութեանն: - 76. Եւ այս *ո՛չ* մասամբ կամ բաժանմամբ. այլ բոլորիւ և միութեամբ: - 77. Երկրորդ՝ ասել զնոյն աստուածն մարդ. զնոյն մարդն աստուած. *ո՛չ* փոխարկապէս, այլ փոխատրապէս: - 77. Որպէս ասեմք զաստուածածին կոյսն մայր և կոյս. *ո՛չ* **բ** բնութիւն կամ **բ** անձն. որ է մասամբ և բաժանմամբ. այլ զմի և զնոյն. ունելով զայս և զայն յատկութիւն: - 77. Դարձեալ՝ որպէս բացբարձութեամբն ասի հայր աստուած՝ անսկիզբն և անվախճան. ունելով զայս և զայն ի պարզ միութեան իւրում. և *ո՛չ* է **բ** անձն կամ **բ** բնութիւն: - 77. Այսպէս և ծնեցեալն որդի միաւորեալ մարմնովն է և ասի աստուած և մարդ. ի բաղադրեալ միաւորութեանն. և *ո՛չ* ասի **բ** անձն կամ **բ** բնութիւն: - 77. Դարձեալ՝ ըստ նոյն սարասի՝ բանն աստուած ունի ծնունդ ի հօրէ նախ քան զյաւիտեանս. և ունի ծնունդ ի մօրէ ի յետին ժամանակիս. և *ո՛չ* ասի երկածին. այլ՝ միշտ միածին. այսպէս նոյն բանն ունի զբնութիւն աստուծոյ ի հօրէ. ունի և զբնութիւն մարդոյ ի մօրէ՛. և *ո՛չ* ասի **բ** բնութիւն. այլ մի բնութիւն վասն միաւորութեանն: - 77. Եւ *ո՛չ* է և *ո՛չ* ասի **բ** որդի կամ **բ** դէմ և այլն. այլ մի որդի և մի անհատ յատկութեամբ_իւրով. և մի դէմ. և մի անձն. և մի կերպ. և այլն: - 77-78. Այսպէս էր ի հօրէ բնութեամբ՝ և եղև ի մօրէ բնութեամբ. և *ո՛չ* ասի երկաւոր բնութիւն և երկաբուն. այլ միաւոր և միաբուն. մի որդի. և մի բնութիւն. միատեսակ աստուած մարդացեալ: - 78. Որպէս արարիչն արարածոց եղև մարդ, և *ո՛չ* ասի արարած. այլ և *ո՛չ* արարիչ և արարած: - 78. Այլ և *ոչ* ասի անկատար և փոքր վասն աճման հասակին: - 78. Եւ *ո՛չ* ասի ժամանակեայ վասն մարմնոյն. այլ մշտնջենաւոր և յաւիտենական մարմնով: - 78. *Ո՛չ* ասի հողեղէն և երկրեղէն վասն հողեղէն մարմնոյն...: - 78. Եւ *ո՛չ* ասի շնչաւոր վասն շնչաւոր մարմնոյն. այլ ամենևին հոգևոր: - 78. Եւ *ո՛չ* ասի ծառայ վասն ծառայական մարմնոյն. այլ միշտ տէր և ազատ: - 78. Եւ *ո՛չ* ասի անիծեալ վասն անիծից մարմնոյն. այլ ամենևին օրհնութիւն մարմնովն: - 78. Եւ *ո՛չ* ասի մեղաւոր վասն առնլոյ զմեղաւոր մարմինս. այլ միշտ անմեղ մարմնով իւրով: - 78. Եւ *ո՛չ* ասի տգէտ և տկար վասն մարմնոյն. այլ ամենագէտ և ամենազօր մարմնովն: - 78. Եւ *ո՛չ* ասի ապականացու վասն առնլոյ յապականացուացս մարմին. այլ միշտ անապական մարմնովն: - 78. Եւ *ո՛չ* ասի մահկանացու վասն մարմնոյն. այլ միշտ անմահ և կենդանարար մարմնովն: - 78. Եւ *ո՛չ* ասի պարագրելի վասն մարմնոյն. այլ անպարագրելի մարմնովն: - 78. Եւ որպէս այս *ո՛չ* ասի, նոյնպէս և *ո՛չ* է հնար երկատելով ասել զքրիստոս անեղ և եղական: - 78. *Ո՛չ* ասի պարզ և սոսկ մարդ. վասն մարդկային կերպին: - 79. Այլ և *ո՛չ* ասի աստուած և մարդ որոշմամբ. այլ աստուած մարդացեալ և մարմնացեալ: - 79. Իսկ թէ *ո՛չ*, այլ պարզաբար աստուածածին խոստովանիս ընդ մեզ, ապա՛ և զծնեալն ի նմանէ խոստովանեա՛ աստուած մարմնացեալ և մարդացեալ: - 79. Այլ *ո՛չ* ասի մարդ աստուածացեալ և անմարմնացեալ. զի այս փոխարկութեան է: - 79. Ասի դարձեալ՝ աստուած մարմնազգեաց. այլ *ո՛չ* ասի աստուած մարդազգեաց. կամ մարդ աստուածազգեաց. զի այս որոշմա՛ն է: - 79. Ասի դարձեալ՝ աստուած մարմին եղեալ. և մարդ եղեալ. և մարմին առեալ. այլ *ո՛չ* ասի մարդ առեալ: - 79. Եւ *ո՛չ* ասի մարդով ծնեալ. և մարդով երևեալ. կամ մարդով շրջեալ. և այլն: - 79. Այլ *ո՛չ* ասի մարդով չարչարեալ. և մարդով մեռեալ. կամ յարուցեալ. կամ համբարձեալ: - 79. Այլ և այլ վարդապետութիւնք ընդ դէմ այլ և այլ հերձուածո՛ց են, և *ո՛չ* ընդ դէմ միմեանց: - 79. Վասն որոյ ասէ սուրբն կիւրեղ եթէ՝ *ո՛չ* մարդն աստուածացաւ, այլ աստուած բանն էջ յարգանդ կուսին և առեալ հոգի և մարմին ի նմանէ՝ աստուածն մարդ եղև...: - 79. *Ո՛չ* որպէս ապօղինար կարծեաց. այլ աստուած կատարեալ և մարդ կատարեալ. հոգով և մարմնով: - 80. Ըստ որում մերձ դնէ, քանզի մարմին և հոգի. այսինքն թէ *ո՛չ* կարէ մարդն առանց հոգւոյն գոյանալ: - 80. Եւ հաստատեալ այսու եթէ՝ հոգին և մարմինն է միաւորեալ ընդ բանին աստուծոյ, կարգէ՛ և զայն. բայց որդիք ասէ ո՛չ բ. և *ո՛չ* աստուածք. զայս վասն դիմաց միաւորութեանն ասէ: - 80. Նախ այսպէս, ասէ թէ բաժանմունք որ յԵրրորդութիւնն է, *ո՛չ* է հնար միաւորութեան. զի ա՛յլ ոմն է և ա՛յլ: - 80. Իսկ բաժանմունքն յորոց փրկիչն՝ ընդդէմ է այնմ. զի բնութեամբ է միաւորեալ. որ *ո՛չ* է հնար շփոթելոյ: - 80. Դարձեալ՝ զի ասէ թէ, ա՛յս միաւորութիւնս որ ի քրիստոս է, *ո՛չ* է իբրև զայն որ յԵրրորդութիւնն է. զի անդ միութիւն է, բայց բաժանումն անձանց: - 80. Իսկ աստ թէպէտ միութիւն է, բայց *ոչ* է բաժանումն անձանց. այլ ըստ միութեան բնութեանն մի՛ է անձն: - 80. Այլ նոքա *ո՛չ* խոստովանին զաստուած մարդացեալ. այլ՝ կամ ի նախագոյացեալ անձն բնակեալ ասեն զաստուածայինն բնութիւն, և կամ շնորհօք որդիացեալ որպէս նեստորի թըւի: - 81. Իսկ որք յերկուցն մի եղեալ բնութիւն ասեն, որպէս յաստուծոյն և ի մարդոյն եղեալ մի բնութիւն *ո՛չ* աստուծոյ և *ո՛չ* մարդոյ: - 81. Որք ասեն զսկիզբն բանին ի կուսէն առեալ. և *ո՛չ* նախ քան զյաւիտեանս ի հօրէ ծնեալ: - 82. Այլ և մի բնութիւն ասեն՝ որք միայն սոսկ մարդ խոստովանին զքրիստոս, և *ո՛չ* աստուած

մարդացեալ: - 82. Եւ սոքա էութեամբ և բնութեամբ *ո՛չ* խոստովանին զմիութիւնն. այլ՝ անձամբ միայն: - 82. Իսկ երրորդ դասքն, որք յերկուց ասեն եղալ մի բնութիւն, *ո՛չ* աստուծոյ և *ոչ* մարդոյ: - 82. Իսկ յորժամ կամեցաւ արարիչն մարդ լինիլ, բանն աստուած իւրով կատարելութեամբն անձամբ և էութեամբ՝ *ո՛չ* մասամբ, այլ լրիւ միացաւ անճառապէս ի մարմնի: - 82-83. *Ո՛չ* զմասն ինչ առեալ զմարդոյ. այլ զբոլոր բնութիւնն ժողովեալ անհատ մարդկութեամբն. զհոգի բանական՝ և զմիտս՝ և զմարմինս մեր՝ միաւորեաց ընդ իւրում աստուածութեանն անչփոթ և անորոշ միութեամբ: - 83. Զի ո՛չ երբեք՝ *ոչ* բանիւ՝ *ո՛չ* իմացմամբ՝ և *ո՛չ* իրօք բաժանումն ունելով: - 83. *Ո՛չ* ի դէմն. և *ո՛չ* ի բնութիւնն. և *ո՛չ* ի կամքն. և *ո՛չ* ի գործս: - 83. Զի միաւորեալն *ո՛չ* բաժանի. վասն զի միութիւնն եբա՛րձ զերկուութիւնն: - 83. Մեք *ո՛չ* պատրիմք. և *ո՛չ* հաւանիմք նոցա: - 83. *Ոչ* մոլորիմք մեք ի հոմանուն ձայնս նոցա: - 83. Արդ՝ մեք *ո՛չ* մտացածին բանիւ ինչ իշխեմք յաւելո՛ւլ կամ պակասեցուցանել: - 84. *Ո՛չ* է մարդն **բ** բնութիւն. այլ՝ մի՛ բնութիւն և մի անձն: - 84. *Ո՛չ* ուրացմամբ, և *ո՛չ* կորուսմամբ. այլ՝ միաւորութեամբ մի բնութիւն: - 84. Ապա ընդէ՞ր *ո՛չ* ասէք մի անձն և **բ** բնութիւն: - 84. Զի միաւորեալն *ո՛չ* երկատի. զի **բ** բնութիւն ասել կամ իմանալ՝ երկատութիւն և բաժանումն է քրիստոսի: - 84. Ապա ընդէ՞ր *ո՛չ* ասէք անձամբ միացեալ: - 84. Զի անձն առանց բնութեան՝ կոչումն միա՛յն է *ո՛չ* էութիւն: - 84. Երրորդ՝ զի թէ միայն անձամբ միանայ և *ո՛չ* բնութեամբ, ապա քրիստոս անձամբ և կոչմամբ միա՛յն է որդի աստուծոյ և *ո՛չ* բնութեամբ: - 84-85. Եւ չորրորդ՝ զի ամենայն իր բնութեամբ իւրով միանայ և *ո՛չ* արտաքոյ բնութեան. որպէս հուր ընդ երկաթ՝ և հոգի ընդ մարմին միաւորի: - 85. Թէպէտ բնութեամբ միաւորին՝ տարբերութիւնն *ո՛չ* բառնի...: - 85. *Ո՛չ* ասեմք մի ներգործութիւն որպէս թէ չկայ բարձրագոյն և նուաստագոյն: - 85. Ծանիր և զայս. զի՝ մի բնութիւն ասեմք քրիստոսի՝ վասն կատարմանն և *ո՛չ* սկզբանն. և մի գործ ասեմք վասն սկզբանն և *ո՛չ* վասն կատարման գործոյն: - 85. Իսկ մի գոլ ներգործութիւնք և կիրք. որպէս քնարն՝ և որ շարժէ զքնարն՝ մի ներգործութիւն կատարեն և *ո՛չ* երկուս: - 86. Եւ որպէս որ շարժէ զգրիչն՝ և գրիչն՝ մի ներգործութիւն կատարեն և *ո՛չ* երկուս: - 86. Եւ որպէս ձայնն և բանն՝ մի ներգործութիւն կատարեն և *ո՛չ* երկուս: - 86. Եւ որպէս հոգին և մարմինն մի ներգործութիւն կատարեն և *ո՛չ* երկուս: - 86. Իսկ թէ անիր, ապա միայն անուա՛մբ է մի և *ո՛չ* իրօք. որպէս հոմանուն ձայն՝ անուամբ հաղորդեալ և բնութեամբ այլև այլ: - 86. Անձն այն էութիւն և գոյացութի՞ւն է թէ *ոչ:* - 86. Էութիւն է և գոյացութիւն, և զիա՞րդ *ո՛չ:* - 86. Ապա և բաժանակա՛ն է ընդ մարդկային բնութեանն՝ և *ո՛չ* է միաւորեալ ընդ օտար տարբերեալ բնութիւն. և եղեր նեստորեան. **բ** անձն և **բ** բնութիւն յատուկ ասելով քրիստոսի: - 86. Իսկ անհատ ասի՝ զի *ո՛չ* քակտի և *ո՛չ* հատանի որպէս բոլորն ի մասունս. զի թէ բաժանես զնա որպէս ի հոգի և ի մարմին, կամ յոտս և ի ձեռս և ի գլուխս, *ո՛չ* մնայ բոլորն: - 86-87. Այսպէս և մի անձն է քրիստոս և մի անհատ. զի թէ բաժանես զնա՛ յաստուած և ի մարդ, *ո՛չ* մնայ բոլորն ի նոյն. այլ մասն ինչ և մասն. կամ ոմն և ոմն: - 87. Ա՛րդ՝ յատուկ անուամբ զմիութիւն խոստովանին. և *ո՛չ* իսկական բնութեամբ: - 87. Եւ պարտէ գիտել, զի որպէս սեռ ի տեսակս *ո՛չ* կարէ բաժանիլ: - 87. Նախ՝ զի յընդդիմաբաժանեալ տեսակս սեռի՝ ո՛չ գոյ առաջին և վերջին. որպէս բաժանի կենդանին ի բանականն և յանբանն. և *ո՛չ* է ասել թէ՝ բանականն յառաջ է քան զանբանն. այլ զոյգ և համայնք են: - 87. Երկրորդ՝ զի յընդդիմաբաժանեալ տեսակս՝ *ո՛չ* ունի պէտս մինն միւսոյն առ ի բաղկանալ: - 87. Այլ մարդկութիւնն քրիստոսի *ո՛չ* կարէ կայանալ առանց աստուածային էութեանն: - 87. Երրորդ՝ զի յընդդիմաբաժանեալ տեսակս՝ ո՛չ ուրեք մինն ի միւսումն տեսանի. և *ո՛չ* անբանն ի բանականումն: - 87. Այլ արդ՝ մարդկային բնութիւնն յաստուածութեանն տեսանի, և աստուածային ի մարդկութեանն, եթէ ի միութիւն բնութեանն, և եթէ ի միութիւն անձինն. զի *ո՛չ* սոսկ մարդ է քրիստոս և *ո՛չ* մերկ աստուած. այլ աստուած մարդացեալ: - 87-88. Այլ և *ո՛չ* որպէս տեսակ յանհատս: - 88. Ապա ուրեմն *ո՛չ* բաժանի մին քրիստոս որպէս տեսակ յանհատս: - 88. Այլ և *ոչ* որպէս բոլոր ի մասունս: - 88. *Ոչ* նմանամասնաբար. զի նոքա բոլորին՝ և միմեանց հոմանունաբար ասին. որպէս փայտ ի բազում փայտս: - 88. Այլ աստուածութիւնն և մարդկութիւնն *ո՛չ* նման միմեանց. և *ո՛չ* բոլորին կոչին ըստ ոմանց: - 88. Եւ *ո՛չ* աննմանամասնաբար. որպէս պետրոս՝ յոտս և ի ձեռս և ի գլուխս. զի նոքա *ո՛չ* միմեանց և *ո՛չ* բոլորին հոմանունաբար ասին: - 88. Երկրորդ՝ զի *ո՛չ* մասամբ ինչ ըստ ոմանց ապօղինարի և այլոց. այլ յերկուց կատարեալ բնութեանց է միաւորութիւն փրկչին: - 88. Ապա ուրեմն *ո՛չ* բաժանի որպէս բոլոր ի մասունս: - 88. Այլ և *ոչ* որպէս հոմանուն ձայն: - 88. Նախ՝ զի հոմանուն ձայնն միայն անուանն և *ո՛չ* իրի հաղորդի: - 88. Այլ և *ո՛չ* որպէս էութիւն ի պատահումն. զի մարդկութիւնն քրիստոսի է ի սեռէ գոյացութեան, և *ո՛չ* ի սեռէ պատահման: - 88. Այլ և *ո՛չ* որպէս պատահումն ի յէութիւն. զի բանն աստուած *ո՛չ* է անանձն և ազդումն ինչ որպէս մեր բանս ըստ ոմանց. որպէս

մարկեղոս և փոտինոս դանդաչեն: - 88. Այլ և *ո՛չ* է որպէս պատահումն ի պատահումն. և այս յա՛յտ է յասացելոցդ: - 88. Ահա տե՛ս յայտնապէս. զի որք բաժանեն զմի քրիստոսն յերկուս բնութիւնս, *ո՛չ* պահեն զմիաւորութիւնն անբաժանելի: - 88. Զի *զոչ* առեալն ասեն մի ի քրիստոս` և *ո՛չ* զառեալն. այսինքն զանձն` որ *ո՛չ* է առեալ` մի ասեն. իսկ զառեալ բնութիւնն որոշեալ պահեն և յերկուս քակտեն: - 88. Բե՛ր յարմարեսցուք այժմ զերիս եղանակս սոցա` միաւորութեան փրկչին ուղղակի իմն տեսութեամբ. որ *ո՛չ* ախորժելի է այլոց: - 89. Նախ` որպէս սեռ ի տեսակս բոլորապէս տեսանի և *ո՛չ* մասամբ...: - 89. Նոյնպէս բանն աստուած և հոգի և մարմինն միաւորեալ է բոլոր մի քրիստոս. և ի պակասիլ միոյն` *ո՛չ* մնայ քրիստոս: - 89. Իսկ որպէս հոմանուն ձայն, զի հաւասարապէս հաղորդի որոց կոչինն. որպէս խոյ երկնային և երկրային և ջրային. զի *ո՛չ* առաւել և *ո՛չ* նըւազ կոչին. այլ հաւասարապէս: - 89. Նոյնպէս և քրիստոսն անուն` և տէր` և աստուած` և այլն` զո՛յգ և հաւասա՛ր է մարդկութեան իւրոյ և աստուածութեանն. և *ո՛չ* առաւել և նըւազ. կամ տկար և հզօր. կամ անգէտ և ամենագէտ. և որ ինչ այսմ նման: - 89. Այսպէս և նեստոր մի ասէր զքրիստոս *ո՛չ* ըստ իրին միութեան, այլ ըստ անւանն համաձայնութեան. որպէս հոմանուն ձայն մի ունելով զկոչմունս, և զանազան բնութիւնս ի ներքոյ մի անուանն: - 90. Ա՛յս է միտքն` մի՛ է և *ո՛չ* բ աստուած և մարդ. և նոյն է և *ո՛չ* այլ և այլ աստուած և մարդ: - 91. Ապա ուրեմն յայտնապէս նոքա ուրանան զայս, և ասեն թէ` ձեռքն քրիստոսի *ոչ* է աստուած. և գլուխն քրիստոսի *ո՛չ* է աստուած. և այլն. զի մի բազմաստուածք լիցին: - 91. Ասեն զայս թէ` և *ո՛չ* մարդ չէ. այսինքն ձեռքն և ոտքն քրիստոսի. թող թէ աստուած: - 91. Յորժամ ձեռն քրիստոսի *ոչ* է աստուած, ապա ուրեմն և բոլոր մարմինն *ո՛չ* է աստուած. զի բոլորն ի մասանցն բաղկանայ: - 91. Դարձեալ` որպէս ձեռն և ոտն մարդոյ *ո՛չ* է մարդ, նոյնպէս և ձեռն քրիստոսի *ո՛չ* է քրիստոս. և ոտն և այլ մասունքն *ո՛չ* են քրիստոս. ապա և բոլոր մարմինն *ո՛չ* է քրիստոս. և հոգին *ո՛չ* է քրիստոս. ապա թէ սոքա չեն քրիստոս, և բանն ըստ ինքեան *ո՛չ* է քրիստոս: - 91. Ասեն այսպէս` եթէ ձեռն մարդոյ է` զի և ոտն մարդոյ` և այլ մասունքն մարդոյ է. զի աստուծոյ մասն *ո՛չ* ասի: - 91. Երևի ապա զի աստուծոյ *ո՛չ* ասեն զմասունքն, այսինքն զձեռն և զոտն. ապա ըստ նոցա և մարմինն չէ աստուծոյ մարմին. և արիւնն չէ աստուծոյ. և հոգին չէ աստուծոյ. այլ ամենեքեան սոքա մարդո՛յ են: - 91. Ասեն զայս թէ` քրիստոսի է մարմին. և քրիստոսի է արիւն. և քրիստոսի հոգի. այլ աստուծոյ *ո՛չ* ասեն: - 91. Ապա ուրեմն երևեցաւ` զի թէ մասունքն քրիստոսի ասին և աստուծոյ *ո՛չ* ասին, յա՛յտ է թէ զքրիստոս *ո՛չ* խոստովանին աստուած: - 91. Ապա ըստ այսմ հետևի` զի մարիամ մայր քրիստոսի լինի և *ո՛չ* աստուծոյ. զի լաւ է քրիստոսածին և մարդածին կոչիլ` քան թէ աստուածածին: - 91. Ելե՛ր ի բանէդ և դժուարինս խօսիս. և զոր հարցի` *ո՛չ* ընկալայ զպատասխանին: - 92. Զի թէ ասեմք եթէ ոչ է աստուած, յայնժամ բաժանեալ յաստուածութենէն` *ո՛չ* լինի աստուծոյ ձեռն. և *ո՛չ* աստուծոյ մարմին. կամ արիւն. զի մասն բաժանեալ ի բոլորէն *ո՛չ* է բոլորին մասն. և *ո՛չ* կոչի. որպէս ձեռն հատեալ յանդամոցն` *ո՛չ* կոչի մասն բոլորին: - 92. Ասեմք նախ եթէ` *ո՛չ* է աննման. զի մի իրն լինի բոլոր և լինի մասն` առ այլ և այլս: - 92. Երրորդ` զի *ո՛չ* է նման առ մեզ և առ նա մասն և բոլորն. զի թէպէտ մասունք մարդոյ` *ո՛չ* ունին զկոչմունս բոլորին, սակայն մասունք մարմնոյն քրիստոսի` կոչին և ունին զբոլորին էութիւն: - 92. Իսկ թէ և որոշակի ասես ուղղափառ մտօք, և *ո՛չ* այն է զարտուղի. յորժամ ասես աստուծոյ մարմին և աստուծոյ արիւն. զի որ ինչ է՛ ի յաստուած` աստուած է և *ո՛չ* օտար յաստուծոյ: - 92-93. Իսկ թէ ասես միայնաբար աստուած է մարմինն` և աստուած է հոգին. այսու *ո՛չ* լինիս բազմաստուած. զի մի՛ է աստուածութիւնն ի սոսա միաւորեալ էութեամբ և գոյացութեամբ: - 93. Եւ դարձեալ որպէս ասեմք զմարմինն և զարիւնն և զհոգին և զբանն քրիստոս` և *ո՛չ* է բազում քրիստոս: - 93. Նոյնպէս ասելն զնոսա աստուած`*ո՛չ* է բազում աստուած: - 93. Դարձեալ` որպէս ասելն զհայր աստուած, և որդի աստուած, և հոգի աստուած, *ո՛չ* է բազմաստուած. այլ մի աստուած: - 93. Նոյնպէս և ասելն թէ` մարմինն քրիստոսի աստուած է. և արիւնն աստուած է. և հոգին աստուած է. *ո՛չ* է բազմաստուած. այլ մի աստուած: - 93. Սակայն աշակերտացն է ուղղութեան` *ո՛չ* յանձնէ խօսիլ. այլ նախնեացն սրբոց հետևիլ և նոքօք ուղղել: - 93. Եւ *ո՛չ* այս միայն: - 93. Զի *ո՛չ* ասեմք մարմին զմարմնացեալն, այլ զբանն մարմին եղեալ: - 94. Եւ զայս եթէ բաժանմամբ, *ո՛չ* է առանձնապէս բանն քրիստոս. զի ո՛չ գոյ մեծագոյն օծանօղ նմա. որ և *ո՛չ* առանց մարմնոյ փրկեաց: - 94. Նա՛և *ո՛չ* մարմինն որիշ յօծողէն կոչեսցի օծեալ: - 94. Եւ դարձեալ` եթէ շնորհօք որդի և օծեալ, և *ո՛չ* աւելի նա քան զմեզ. զի և մեք չեմք ծառայ, այլ` որդի: - 94. Մարդեղութիւնն քրիստոսի` տեսանէ՞ զաստուածութիւնն թէ *ո՛չ:* - 95. Զի թէ գոյացութիւն` և միաւորեալ է ընդ գոյացութիւն բանին, զիա՞րդ *ո՛չ* գիտէ զաստուածութիւն իւր: - 95. Իսկ թէ միայն անուն առանց էութեան. ապա անւամբ խոստովանիս աստուած զքրիստոս և *ո՛չ* գոյացութեամբ. և

հաւասարե՛ս զնա մովսէսի. որ անուամբ աստուած կոչեցաւ և ո՛չ էութեամբ: - 95. Ա՛րդ՝ եթէ բաժանեցեր զքրիստոս՝ բաժանեցար ի հաւատոցդ. և ո՛չ լինիս քրիստոնեայ: - 95. Այլ արդ՝ որ հարցնես թէ՝ մարդն քրիստոս տեսանէ՞ զաստուած թէ ո՛չ. համաձայնիս հրէիցն...: - 95. Վասն զի իմաստունք մաքառին ընդ դէմ հաւատոց. և քննութեամբ մտաց ո՛չ կարեն հասանիլ. և զրկին ի փրկութենէ իւրեանց: - 96. Ա՛րդ՝ քրիստոսն որ է օծեալ աստուածութեամբն, և նա աստուծոյ իմաստութիւն է. և ո՛չ ճանաչէ՛ զաստուած. տգիտութեամբ կորուսանէր զնա և որոյ է՛ իմաստութիւն: - 96. Ա՛րդ՝ ի մարդկանէ ո՛չ ոք ետես զաստուած, և որդի կուսին ո՛չ ետես որպէս դուդ ասես. սո՛ւտ է ապա և պատմութիւնն զոր ինչ ուսոյց մեզ. զի ո՛չ է տեսեալ և պատմէ. ահա անդունդք հայհոյութեան. զոր ի կարգիս լռե՛մ: - 96. Զի՞նչ իցէ տըւեալ, յորժամ զկատարեալ գիտութիւնն ո՛չ ետ: - 96. Եւ թէ ասես բանին ետ և ո՛չ մարմնոյն: - 96. Եւ կամ բանն զմարդկութիւնն իւր զրկեաց ի գիտութենէն և ո՛չ ետ: - 96. Ա՛րդ՝ եթէ զհայր ո՛չ ոք ի յօտարաց ճանաչէ՝ և ո՛չ որդի ճանաչէ ըստ քեզ, եղիցի և որդին օտար ի հօրէ: - 96. Եւ դարձեալ՝ որպէս դուդ կարծես և ինքն որդին մարդոյ զինքն ո՛չ ճանաչէ. և հրէայքն զորդի ո՛չ ճանաչէին ասելով, «ո՛վ է այն որդին մարդոյ»: - 96. Ապա և որդին մարդոյ եղիցի ըստ կարգին հրէից և ո՛չ առաւել: - 96. Ա՛րդ՝ եթէ յայտնեաց զինքն աշակերտաց իւրոց. և մարդկութեան իւրոյ ո՛չ յայտնեաց, եղիցի ինքն տգէտ քան զաշակերտսն իւր. և կամ ոչ ինչ յայտնեաց զոր ինքն ո՛չ գիտաց: - 96-97. Ա՛րդ՝ եթէ հայր առաւել գիտէ և որդի նըւազ, այս լինի կամ հօրն նոյնպէս նըւազ գիտել որպէս որդի. և կամ որդի՝ ո՛չ ճշմարիտ ասել: - 97. Արդ՝ եթէ ինքն ճշմարտութեամբ ո՛չ գիտէ, մեզ որպէս ցուցանէ. և թէ ինքն մոլորեալ է՝ զմեզ ո՞րպէս տանի առ հայր: - 97. Ա՛րդ՝ եթէ գիտէ զհայր, գիտէ՛ և զինքն. և թէ զինքն ո՛չ գիտէ, զիա՛րդ զհայրն գիտասցէ: - 98. Եւ թէ զհայր ո՛չ գիտէ, զիա՞րդ զբան նորա պահէ առ ինքեան: - 98. Ո՞րպէս զամենայն գիտէ՝ որ զինքն ո՛չ գիտէ ըստ քեզ: - 98. Իսկ թէ զամենայն ճանաչէ՝ և զսէրն պետրոսի, ապա ո՛չ է պակաս գիտութիւն նորա: - 98. Արդ՝ եթէ բոլոր աստուածութիւնն ի քրիստոս էացեալ է մարմնապէս, և ծածկէ զգիտութիւնն ի նմանէ, այս լինի կամ ոչ աստուած մարմնացեալ և մարդացեալ կամ զէութիւնն տըւեալ և ի գիտութենէն զրկեալ որ է սուտ: - 98. Իսկ թէ աստուծոյ բան է և անանց, ո՛չ ուրեմն է տգէտ կամ նըւազ գիտութեամբ: - 98. Ա՛րդ՝ տգէտն ո՛չ ունի զբոլոր զամենայն իմաստութիւն և զգիտութիւնն գանձեալ: - 98. Եւ թերևս ասիցէ երկաբնակն թէ՝ սոքա ամենեքեան անձինն վերաբերին քրիստոսի և ո՛չ մարդկութեանն: - 98. Եւ արդ՝ տգէտն զտգիտութիւն ո՛չ կարէ բառնալ. և ո՛չ մեղաւորն զմեղս. և ո՛չ ապականացուն զապականութիւն. և ո՛չ սոսկ մարդ զմարդ կարէ փրկել. զի սո՛ւտ է փրկութիւն մարդոյ: - 99. Ապա ուրեմն բարձօղն տգիտութեանց ո՛չ ունէր տգիտութիւն. և բարձօղն մեղաց և ապականութեանց՝ ո՛չ մեղք և ո՛չ ապականութիւն: - 99. Ա՛րդ՝ եթէ՝ ի յարութեանն հասարակ արդարք տեսանեն զաստուած դէմ յանդիման որպէս և է, և քրիստոս ո՛չ կարէ տեսանել, փո՛քր լինի գիտութեամբ քան զմարդ որ է սուտ: - 99. Արդ՝ եթէ առաքեալքն որ բնակարանք են հոգւոյն՝ ճանաչեն զհոգին աստուած, և մարդկութիւնն քրիստոսի ո՛չ ճանաչէ, փոքր քան զբնակարանքն եղիցի քրիստոս: - 99. Ա՛րդ՝ եթէ հրեշտակք տեսանեն զբանն աստուած՝ և առնուն գիտութիւն ի նմանէ, և մարդն քրիստոս ո՛չ տեսանէ որպէս ասես նեստո՛րդ, ապա քրիստոս փո՛քր է գիտութեամբ քան զհրեշտակս: - 99. Ա՛րդ՝ եթէ ճանաչելն զաստուած հայր և զյիսուս քրիստոս կեանք է յաւիտենից, և մարդն քրիստոս ճշմարտութեամբ ո՛չ կարէ ճանաչել որպէս դուդ ասես: - 99. Արդ՝ որպէս օդ լուսաւորեալ՝ ո՛չ ունի մասն խաւարի, Նո՛յնպէս հոգին քրիստոսի միաւորեալ ի բանն աստուած՝ ո՛չ ունի մասն տգիտութեան: - 100. Եւ դարձեալ՝ քննութեամբ մտաց ո՛չ լինի հասեալ անհասանելին. այլ հաւատով լինի իմացեալ. և յուսով ըմբռնեալ. և սիրով միաւորեալ: - 101. Վասն էի. և ոչ էի. և նախագոյի. և էր. և է. և եղիցի: - 101. Իսկ չափաւորութիւնն զանչափութիւնն ո՛չ կարէ չափել: - 103. Եւ է դարձեալ անգիտութիւն՝ յորժամ զմիտս տարածեմք յամենայն եղեալս և զնա ոչ գտանեմք, ժողովեմք ի միհնն որ արտաքոյ է սոցա. և այնպէս անգիտութեամբ ճանաչի աստուած: - 103. Դարձեալ՝ ա՛յն է հասարակն՝ որ մի՛ է երիցն. և երկուքն ո՛չ աւելի. և միհնն ո՛չ ունի պակաս: - 104. Զի հայր ո՛չ է որդի և ո՛չ հոգի: - 105. Յոգի յանպատճառէն և ո՛չ պատճառ: - 105. Վասն զի հայր ո՛չ ունի հայր. այլ ունի որդի և հոգի: - 105. Որդի ո՛չ ունի որդի. այլ ունի հայր և հոգի. զի հոգի քրիստոսի ասեմք: - 105. Յոգին ո՛չ ունի որդի և ո՛չ հոգի. այլ պատճառ զհայր: - 105. Եւ դարձեալ՝ առաքօղ և ո՛չ առաքեալ. առաքեալ և առաքօղ. առաքեալ և ո՛չ առաքօղ. և այլք սոյնպիսիք աստ յարմարին: - 105. Ո՛չ թիւ ասեմ. ապա թէ ո՛չ, մի հայր. մի որդի. մի հոգի: - 105. Ո՛չ ասեմ ժամանակ. զի արարիչ է ժամանակաց և յաւիտեանց. և որպէս ո՛չ ի ժամանակի սկսեալ, և ո՛չ ի ժամանակի դադարի: - 105. Եւ յատուկ՝ զի միհնն ծնօղ է և բղխօղ. և միհնն ծնեալ և ո՛չ բղխեալ. և միհնն բղխեալ և ո՛չ ծնեալ: - 106. Եւ յատուկ՝ զի որոշեալ և բաժանեալ է յարարածոց. և ո՛չ

մի է ըստ սոսա. *ո՛չ* մասն է արարածոց և *ո՛չ* բոլոր: - 106. Նախ՝ զի բանն աստուած էառ զմարդկայինս բնութիւն և միաւորեաց ընդ աստուածութեան իւրում. *ո՛չ* մասն առեալ՝ կամ ըստ մասին միաւորեալ...: - 106-107. Նախ՝ զի **գ** թիւն **գ** է և *ո՛չ* մի: - 107. Զի *ո՛չ* է որպէս պետրոս՝ և պօղոս՝ և յօհաննէս՝ երեք մարդ և մի բնութիւն. այլ մի է անհատութեամբ. ունելով երիս յատկութիւնս դիմաց: - 107. Ուստի յա՛յտ է յորժամ ասեմք Երրորդութիւն աստուած. Երրորդութիւն անեղ. այլ *ո՛չ* ասեմք **գ** աստուած. կամ **գ** անեղ. այլ մի աստուած և մի անեղ: - 107. Երկրորդ՝ Երրորդութիւնն ցուցանէ զհամագոյութիւն երիցն. զի *ո՛չ* է առաջին և վերջին ի նոսա. այլ՝ զո՛յգ և համանգամայն: - 107-108. Իսկ ի յԵրրորդութիւնն *ո՛չ* է քանակ և չափ, և *ո՛չ* պատահումն, և *ո՛չ* գիտելի եղական մտաց: - 108. Իսկ ի սուրբ Երրորդութիւնն՝ միոն պակաս չունի քան զերկուքն. և *ո՛չ* երկուքն աւելի քան զմինն. զի հայր ունի զամենայն լիութիւն որդւոյ և հոգւոյ: - 108. Իսկ ի սուրբ Երրորդութիւնն հայր կատարեալ. որդի կատարեալ. հոգի կատարեալ. և կատարեալն *ո՛չ* յաւելու և *ո՛չ* նուազի: - 108. Իսկ սուրբ Երրորդութիւնն անփոփոխելի է. զի հայր ծնաւ զորդի և բղխեաց զհոգին. և *ո՛չ* փոխեցաւ ի գոյոյն հայր: - 108. Հինգերորդ՝ զի **գ** թիւն բաժանին ի միմեանց. զի յորժամ բաժանես զմի թիւն՝ *ո՛չ* է երկուքն ընդ նմա: - 108. *Ո՛չ* ասեմք. զի աստուածութիւնն հասարակ է բնութեանն. իսկ Երրորդութիւնն հասարակ է անձանցն: - 108. Եւ զի անձամբ յատկացեալք են և բնութեամբ մի. վասն այն Երրորդութիւն *ո՛չ* ասի միոյ անձին. այլ աստուած կամ աստուածութիւն ըստ միութեան բնութեանն: - 108. Ընդէ՞ր մայր *ո՛չ* կոչի յիգական սեռէ: - 109. Ընդէ՞ր դուստր *ո՛չ* անուանի: - 109. Հոգին սուրբ ընդէ՞ր *ո՛չ* կոչի որդի: - 109. Քանզի *ո՛չ* է ծնունդ, այլ բղխումն. որպէս շունչ և կեանք ի հոգւոյս մեր: - 109. Համագոյ և միասնական սուրբ Երրորդութեանն *ո՛չ* է առաջին և վերջին. *ո՛չ* մեծ և փոքր. և *ո՛չ* երէց և կրտսեր: - 109. Ա՛րդ՝ զի հայր պատճա՛ռ է որդւոյ ծննդեան՝ և հոգւոյ բղխման, վասն որոյ հայր նախադասի. իսկ ընդ նմա որդի. *ո՛չ* որպէս ոմանք կարծեն որդի պատճառ է հոգւոյ բղխման...: - 109. Զի մինն հասարակ է. և միակն մասնաւոր և առանձնակի. զի ամենայն միակ՝ մի է. այլ ամենայն մի միակ *ո՛չ* է. որպէս յորժամ ասեմք՝ մի հօտ. մի շեղջ. մի լիտր. այսպիսիքս մի են. այլ միակ *ո՛չ* են: - 109. Նախ՝ զի *ո՛չ* է բազում, այլ մի: - 109. Երկրորդ՝ զի պա՛րզ է և *ո՛չ* բաղադրեալ: - 109. Երրորդ՝ մի է, այսինքն բոլոր և *ո՛չ* մասն և անկատար: - 109. Չորրորդ՝ մի է և միակ. զի *ո՛չ* բաժանի. և *ո՛չ* քակտի: - 109. Հինգերորդ՝ մի կոչի. որպէս միակն սկիզբն է քւոց և *ո՛չ* թիւ. և աստուած սկիզբն է արարածոց և *ո՛չ* արարած: - 109. Նախ՝ զի թիւն պատահումն է. որ ի աստուած *ո՛չ* է: - 110. Երկրորդ՝ թիւն քանակ է. և աստուած *ո՛չ* չափի: - 110. Երրորդ՝ թիւն ընդ գիտութեամբ մեր է. իսկ աստուած ընդ գիտութեամբ մեր *ո՛չ* պարունակի որպէս ասացաք. ապա ուրեմն ի վեր է քան զմի և զմիակ: - 110. Զի է՛ մի՝ որ սկիզբն է թւոյ. և այսպէս մի *ո՛չ* ասի աստուծոյ. զի այս քանա՛կ է. և պատահումն ո՛չ գոյ յաստուած: - 110. Եւ է մի՝ որ անդրադարձի էի. և այսպէս ասի մի աստուած իբր թէ է՛. զի պատահումն *ո՛չ* ցուցանէ: - 110. Գիտելի՛ է, զի *ո՛չ* էն բազմաեղանա՛կ ասի: - 111. Նախ՝ պարզ ոչ էն. որ է ոչ ուրեք և ոչ երբեք. որ ո՛չէր և ո՛չէ և *ո՛չ* լինի. որպէս ոչ ինչն: - 111. Երրորդ՝ ասի ոչէ՝ նիւթն անորակ. որ *ո՛չ* ունի ձև և *ո՛չ* ունի տեսակ և *ո՛չ* որակ: - 111. Այլ *ո՛չ* ուղղակի. զի նիւթն ամենևին անտեսա՛կ է: - 111. Հինգերորդ՝ ոչէ ասին նիւթականքն որ ի լինելութեան և յապականութեան են. զի երբեմն ո՛չ էին, և յետոյ *ո՛չ* լինելոց են: - 111. Նախ՝ զի միշտ է. և *ո՛չ* երբեմն է և երբեմն *ո՛չ* է: - 111. Իսկ տարերքն ո՛չեն պարզ. և *ո՛չ* երկրպագելի. և *ո՛չ* անապական. և *ո՛չ* անփոփոխ: - 112. Դարձեալ՝ յարացոյցն *ո՛չ* քանձրանայ որպէս տարերք. և *ո՛չ* որպէս նիւթ և տեսակ կերպանայ. և ո՛չ թէ յարացոյցն արար զմեզ: - 112. Ա՛րդ՝ ո՛չէ ի յաստուած անձնաւոր էութիւն. որպէս Երրորդական անձինքն. և *ո՛չ* բաժանեալ ի նմանէ. որպէս հրեշտակաց դասքն. և *ո՛չ* որպէս սոսկ մտածութիւն ի տեսութիւնն աստուծոյ: - 112. Զի առ աստուած՝ ո՛չէ սոսկ տեսութիւն արտաքոյ. այլ յինքն տեսանելով զյարացոյցն. և զմեզ ի յարացոյցն մեր իբր լինիլ մեզ նախ ի յաստուած, և ապա ի յէութեան մերում. և *ո՛չ* որպէս փոփոխումն ինչ ի բարի կամացն: - 112. Երրորդ՝ զի գերիվերո՛յ է ժամանակաց և *ո՛չ* ի ներքոյ: - 114. Իսկ հոգի *ո՛չ* է արարիչ ժամանակաց. և *ո՛չ* յառաջ քան զժամանակս. զի ի մէջ ժամանակի՛ է: - 114. Այլ՝ անժամանակ է. զի *ո՛չ* է ընդ ժամանակաւ. այլ՝ ընդ յաւիտենիւ. և ժամանակն ի յաւիտեանն պարագրի: - 114. Զի աստուած պարագրէ զյաւիտեանն. որպէս յաւիտեանն զժամանակն. և ասի աստուած մշտնջենաւոր. զի *ո՛չ* ունի վախճան: - 114. Նմանապէս և յաւիտենական. զի *ո՛չ* ունի սկիզբն և *ո՛չ* վախճան: - 114. Իսկ հոգի մեր՝ և հրեշտակք՝ ասին յաւիտենականք. զի *ո՛չ* են ընդ ժամանակաւ. այլ ընդ յաւիտենիւ: - 114. Ասին և մշտնջենաւորք. զի ունին սկիզբն, այլ *ո՛չ* վախճան: - 114. Ա՛րդ՝ երեքն *ո՛չ* յարմարին աստուծոյ. զի *ո՛չ* հնանայ և *ո՛չ* ծերանայ. և ամք նորա *ո՛չ* պակասին...: - 114. Եւ *ո՛չ* փոփոխի կամ այլայլի...: - 114. Երկրորդ՝ ծերն նշանակէ զանսկիզբն գոլն. և մանուկն զանվախճանն. զնոյն միմեամբք՝ և *ո՛չ* այլ և այլ:

- 115. Նախ՝ որ *ոչ* սկիզբն ունի և *ո՛չ* կատարած: - 115. Երկրորդ՝ որ *ո՛չ* սկիզբն ունի, այլ կատարած: - 115. Երրորդ՝ որ սկիզբն ունի, այլ *ո՛չ* կատարած: - 115. **Յաւիտենանս Յաւիտենից. որ է՛ սկզբնական և յարաձգական. զի նա պարունակէ զերեք յաւիտեանն. որ *ո՛չ* սկիզբն ունի և *ո՛չ* կատարած:** - 116. Եւ գիտելի է՝ զի աստուած կոչի յաւիտեան անսկիզբն և անվախճան. և է՛ պատճառ պարունակողացն յաւիտենին. որ *ո՛չ* սկիզբն ունի և *ո՛չ* կատարած: - 116. **Այլ զայս ստեղծեալ յաւիտեանս ասեմք *ոչ* սկիզբն ունիլ և *ո՛չ* կատարած. զի պարունակող է ա՛յլ յաւիտենից որք ունին սկիզբն կամ կատարած. այլ ինքն պարունակի յանստեղծ յաւիտենէն որ է՛ աստուած**: - 116. Նախ՝ զի յաւիտեանն *ո՛չ* ունի սկիզբն և *ո՛չ* վախճան: - 116. Եւ միշտն ունի սկիզբն, այլ *ո՛չ* վախճան: - 116. Երրորդ՝ յաւիտեանն *ո՛չ* ունի մասն. այլ բոլորն համանգամայն և կատարեալ. այսպէս և միշտն: - 116. Յաւիտենական է՝ որ *ո՛չ* սկիզբն ունի, և *ո՛չ* կատարած. որպէս աստուած: - 116. Եւ մշտնջենաւոր՝ որ ունի սկիզբն՝ և *ո՛չ* կատարած. որպէս հրեշտակք. և հոգի մարդոյ: - 116. Իսկ հրեշտակք *ո՛չ* են կենդանարար այլոց. այլ միայն կենդանի: - 117. Ո՞րպէս աստուած զանցեալն և զապագայն համանգամայն տեսանէ ներկայաբար. իսկ մեք *ո՛չ:* - 117. Միտք մեր **ք** պակասութիւն ունի. այսինքն զմոռացումն և զտգիտութիւն. զի զանցեալն մոռանայ. և զապագայն *ո՛չ* գիտէ: - 117. Իսկ պակասութիւնքս այս *ո՛չ* են ի յաստուած: - 117. Իմաստութիւնն աստուծոյ անեղ է. վասն որոյ զանեղսն որ *ո՛չ* են եղեալ՝ չափէ՛: - 118. Զի ուր բնութիւն *ո՛չ* հասանի, անդ և միտք մեր *ո՛չ* կարեն հասանիլ: - 118. Ո՞րպէս տեսանէ աստուած զէքս. զի զգայութիւն *ո՛չ* ունի. որպէս մեք ներքին զգայութեամբ զիմանալիս՝ և արտաքին զգայութեամբ զերևելիս տեսանեմք: - 118. Անմիտն և անզգայն զոր ասեմք աստուծոյ, *ո՛չ* ըստ պակասութեան, այլ ըստ գերազանցութեան է դնելի: - 118. Զի աստուած *ո՛չ* արտաքոյ ինքեան ունի զտեսութիւն...: - 118-119. Եւ գերամբարձ, զի ի բա՛րձր կոյս տեսանեն և ամբառնան և *ոչ* ի խոնարհ: - 119. Իսկ հրեշտակք *ո՛չ* յինքենէ՛, այլ յաստուծոյ սկսեալ և անվախճան. զի առանց մոռացութեան ունին: - 120. Եւ զի յետ մահու և յարութեան *ո՛չ* գոն այսօրիկ պատճառք՝ անմոռանալի մնայ իմացումն: - 120. Նոյն պարզ և աստուածային բանն է ճշմարտութիւնն. որ *ո՛չ* ունի ինչ ստուերիւն և հակառակ իւր: - 121. Իսկ ճշմարտութիւնն *ո՛չ* փոփոխի. որպէս լոյս հաւատոյն: - 121. Զի *ո՛չ* մարմին է. և *ո՛չ* հոգի. և *ո՛չ* միտ. և ո՛չ այլ ինչ զոր մեք գիտեմք կամ իմանամք: - 122. Նախ՝ զի խորհրդով և հաւատով տեսանի և *ո՛չ* քննութեամբ մտաց: - 123. Երկրորդ՝ զի խորհրդով և ծածո՛ւկ է. և *ո՛չ* առակաւ և նշանակաւ. որպէս այլ աստուածաբանութիւնքն որպէս ասացաւ ի վերոյ: - 123. Է՛ և *ո՛չ* ասի: - 123. Ո՛չէ և *ո՛չ* ասի: - 123. Իսկ բացբարձականքն ի խորհրդական աստուածաբանութեանն է. նախ որ է՛ և *ո՛չ* ասի. որպէս անսկիզբն և անվախճան. *ո՛չ* բան և *ո՛չ* միտ. ո՛չէ և այլն: - 123. Եւ այս *ո՛չ* ըստ պակասութեան, այլ ըստ գերազանցութեան: - 123. Երկրորդն՝ ո՛չէ և *ո՛չ* ասի. որպէս այլայլութիւն. և ապականութիւն. չար. ո՛չէ և *ո՛չ* ասի: - 123. Որպէս յորժամ ասեմք բառնալով՝ ո՛չէ, *ո՛չ* բան, *ո՛չ* միտ, *ո՛չ* որդիութիւն, *ո՛չ* հայրութիւն. և այլն: - 124. Նախ՝ զի նոյն ուրացական մասնիկն այն՝ այսինքն *ո՛չն* ներգործէ՛ զուրացումն և զբառնալն: - 124. *Ո՛չ* են մի բացբարձականքն և ուրացականքն: - 124. Նախ՝ զի ուրացականն ըստ պակասութեան է. որ ասէ ո՛չէ աստուած քրիստոս. այսինքն պակա՛ս է և ո՛չէ աստուած. և ո՛չէ հայր. և *ո՛չ* որդի: - 124. Իսկ բացբարձականն ըստ գերազանցութեան է. զի գերազա՛նց բան է՝ և գերագունա՛կ միտ. և գերագոյն և առաւել հայր՝ և որդի. և *ո՛չ* ըստ մեր կարգիս որպէս մեր բանս է և միտք: - 124. Իսկ բացբարձականքն՝ *ո՛չ* զէութիւն կամ զփառս աստուծոյ բառնայ, այլ զոր յետ էութեանն աստուծոյ է և ի նմանէ ստեղծեալ՝ և զխոնարհութիւնսն բառնայ: - 124. Պատասխանեմ առաջնոյն, թէպէտ մի և նոյն ուրացական մասնիկն որ է *ո՛չն* գործէ՛ զուրացումն և զբառնալն, այլ ուրացումն և բառնալն *ո՛չ* է նոյն. զի բազում պատահի որ գործին նոյն է որպէս ձեռն. այլ գործելն *ո՛չ* է նոյն. որպէս կտրելն և կարելն: - 124. Այսպէս և *ոչն*. որպէս անդ՝ ուր ասէ արիստոտէլ՝ «*ո՛չ* մարդ» որ է անորոշելի անուն. և «*ո՛չ* նստի» որ է՛ բացասութիւն. և ա՛յլ է անորիշ անունն. և այլ բացասութիւն ստորասութեան: - 124. Եւ յորժամ ասեմք ո՛չէ չար. ո՛չէ խաւար. ո՛չէ մեղք. ահա այս խոստովանութիւն է և *ո՛չ* դրություն: - 124. Նախ՝ զի դեղին լոյսն ծնանայ ընդ երթս կամ ընդ լուսանցս մտեալ, իսկ սպիտակն *ոչ:* - 125. Նոյնպէս և բանն մարմին եղև. և հոգին *ո՛չ:* - 125. Երրորդ՝ դեղին լոյսն ստուեր ունի՝ և սպիտակն *ո՛չ:* - 125. Զի որպէս ո՛չէ սկիզբն աստուածութեան նորա, և *ո՛չ* վախճան մարդկութեան նորա: - 126. **Իսկ նախանձն աստուծոյ պարզապէս միայն ունի սիրել և զայլս և *ո՛չ* ատել. զի նախանձն աստուծոյ՝ սիրոյ առաւելութիւնն է. որպէս բոցն հրոյ**: - 128. Դարձեալ՝ ինքնանախա՛նձ է. զի *ո՛չ* յայլմէ շարժի ի սէր որպէս մեք. այլ յինքենէ՛ շարժի ի սիրել և ի սիրիլ: - 128. Ի յաստուածութիւնն՝ սոքա առաջին և վերջին *ո՛չ* ասին. զի համանգամայն զօրութիւնք են ի յաստուածութիւնն: - 128. Հինգերորդ՝ անսկիզբն աստուածութեամբն.

և անվախճան մարդկութեամբն. զի որպէս ո՛չ է սկիզբն աստուածութեանն, և ո՛չ վախճան մարդկութեաննն: - 129. Ծանիր զայս, զի աստուած է միայն իմացական և ո՛չ իմանալի...: - 130. Իսկ՝ հոգի մարդոյ միայն իմանալի և ո՛չ իմացական. զի իմանան զվերինսն՝ իմանալի՛ են: - 130. Եւ յետ սորա անմիտ զգայականն է. վասն որոյ ո՛չ է իմացական այլոյ: - 130. Վասն է՞ր զանազանապէս տայ աստուած զպարգևս և ո՛չ հաւասար...: - 130. Զի՞նչ է պատճառ՝ որ արտաբերեալ բանս մեր միաւորեալ է ընդ ձայնի. և բացակայքն զձայնն լսեն՝ և զբանն ո՛չ: - 131. Ա՛րդ՝ ասեմք նախ եթէ՝ ձայնն ծածկո՛յթ է բանին. յաղագս որոյ հեռաւորքն զծածկո՛յթն տեսանեն, և զծածկեալն ո՛չ: - 131. Երրորդ՝ բացակացեալն ընդ աղօտ լսէ ո՛չ զձայն բերանոյն, այլ զձայն բախման օդոյն. որպէս արձագանչումն յինքն նկարէ զձայնն և ո՛չ զբանն: - 131. Նմանապէս և նըւազ ձայնն այն՝ փոխո՛ւմն է առաջին ձայնին. վասն այն լսէ զձայնն՝ և ո՛չ զբանն: - 131. Ասեմք թէ՝ երևմունք նոցա ո՛չ են առ աչօք. որպէս նմանագործք ի յաչս ցուցանեն: - 133. Նախ՝ զի նոցայն՝ էութիւն ո՛չ է. այլ առ աչօք ուրուական ցուցմունք. որպէս ի միտս ցնորք: - 133. Եօթներորդ՝ այն երևեալ և ո՛չ կայացեալ. և աստ երևեալ և կայացեալ...: - 133. Իսկ հրեշտակք փոխեն զսոսա և զիմացականն վասն բարւոյ. զոր դևք ո՛չ կարեն փոխել: - 133. Իսկ աստուած կարէ՛ փոխել և զկամքն՝ որ է՛ ախորժակ ի չարէն առ բարին. զոր հրեշտակք ո՛չ կարեն փոխել. այլ միայն զարթուցանեն զախորժակն և օգնեն: - 133. Իսկ թէ ոմանք զո՛լ ասեն ժ դասք և զմինն անկեալ, ո՛չ պարզապէս, այլ կրկին է իմացումն: - 134. Թէպէտ և զայս կարգ փոխեն ոմանք և զզօրութիւնն և զպետութիւնն աւանդեն որ մեզ ո՛չ է հետևելի...: - 135. Ապա յա՛յտ է զի ա՛յլ է կարգ շնորհականին, և այլ է կարգ բնականին. զի բնականք ներքինք զվերնոցն բոլորապէս ունին և կոչին. այլ ո՛չ անդրադարձեալ. որպէս անհատն զտեսակն և զսեռն բոլորապէս ունի և կոչի. զի պետրոս մարդ է և կենդանի և կոչի. այլ կենդանին մարդ՝ կամ մարդն պետրոս ո՛չ է և ո՛չ ասի: - 136. Իսկ քահանայն կամ սարկաւագն ո՛չ ունի զվերնոցն և ո՛չ կոչի: - 136. Դարձեալ՝ աստուածք կոչին ո՛չ փաղանունաբար, այլ հոմանունութեամբ. այսինքն անւամբ միայն, այլ ո՛չ բնութեամբ: - 137. Երկրորդ՝ զի աստուած միշտ տայ և ո՛չ առնու: - 138. Իսկ մարդս ո՛չ բնութեամբ, այլ յետոյ ստացմամբ և ունակութեամբ: - 138. Իսկ հրեշտակաց և մարդկան, Նախ՝ զի մարդիկ միջնորդութեամբ հրեշտակաց առնուն, և ո՛չ անդրադարձեալ. թէ և մարդացեալ բանիւն: - 138. Այլ արդ՝ շնորհքն ըստ իւրում ինքնութեան է՛ անեղ՝ յանեղ է էն յառաջեալ, և նախախնամաբար եղելոցս հաղորդի, և յիւրմէ էութենէն ո՛չ փոփոխի: - 140. Երկրորդ՝ հոգին միաւորի ընդ մարմնոյն. և հրեշտակն ո՛չ: - 140. Վասն որոյ ասէ ռք հազարաց և բիւրք բիւրուց, ո՛չ զորքանն նշանակէ, այլ զանբաւն: - 141. Զի թիւ մեր նիւթեղէն և տկա՛ր և չափաւո՛ր է. վասն որոյ զանբաւութիւն նոցա ո՛չ կարէ չափել. ուստի յայտ է՝ զի և ո՛չ զթիւ մեր կարեմք գիտել: - 141. Եւ ըստ որում մի է սկիզբն և կատարումն և թափանցումն. վասն որոյ միով և ինքեամբ գիտէ զբազումս. և ո՛չ որպէս մեք բազմօք զբազումս: - 142. Իսկ ուղիղ՝ զի իջանեն առ երկրորդսն նախախնամապէս ո՛չ ի նոյնէ ի նոյն, այլ ի միոյ ի միւսն: - 142. Եւ կարօտի սա ք իրաց. այսինքն զի զգայութիւնն առո՛ղջ իցէ, և զգալի առաջի եղեալ իրն յստա՛կ. ապա թափանցէ՛ յինքն ի սցանէ՛ պա՛րզ տեսութիւն. ապա թե ո՛չ՝ ո՛չ կարէ միտքն յստակապէս տեսանել սորօք: - 143. Իսկ հրեշտակք զի ո՛չ ունին զգայարանք՝ ո՛չ կարօտին գրոց և բանից: - 143. Իսկ միջինն որ է՛ բնականն՝ ո՛չ գովելի և ո՛չ պարսաւելի: - 143. Դարձեալ՝ դևք ընդ աստուծոյ. զի դիտաւորութիւն ո՛չ կարէ թագչիլ յաստուծոյ: - 144-145. Դարձեալ առնէ հրեշտակն առաջի միւս հրեշտակին զոր նախ ո՛չ իմանայր: - 145. Որպէս ո՛չ արտաքերի հնչումն ձայնական գործեաց և ո՛չ փոփոխէ զօդն որ ի մէջն: -145. Նոյնպէս յերեւումն հրեշտակաց զոր մինն տեսանէ՝ այլ մերձակայքն ո՛չ տեսանեն. որպէս յա՛յտ է ի պատանեակն եղիսէի: - 145. Իսկ այլք ասեն թէ՝ հրեշտակն ո՛չ երևի ձևացեալ մարմնովն և ո՛չ խօսի ընդ մարդոյն...: - 145. Սակայն զչար խորհուրդն ո՛չ կարէ ածել ի ներքս որ միայն հաւանութեամբն է չար: - 145. Զամենայն հրեշտակս բարի արար աստուած, այլ ո՛չ ծայրագոյն բարիս. այլ միջակս...: - 146. Քանզի դևք ո՛չ են ի վերին մասն օդոյն, զի մի խնդասցեն լուսովն. և ո՛չ ի ստորին մասն, զի մի՛ առաւել վնասեսցեն զմարդիկ: - 146. Եւ գործոյն որ ունին կրթել զմարդիկ՝ յարմարի օդն որ է՛ մերձ առ մեզ փորձելոյ զմեզ. այլ ո՛չ ի լոյս. զի մի ուրախասցին: - 146. Կանխագէտ եղև՞ անկման իւրոյ՝ թէ ո՛չ: - 147. Ո՛չ մի ժամանակս կատարեալ. քանզի «ի ճշմարտութեան ո՛չ եկաց» ասէ տէրն. այլ վաղվաղակի իբրև ստեղծաւ՝ անկաւ և ո՛չ յամեաց. և ո՛չ ի յաւիտենական քաղցրութենէն ճաշակեաց. վասն որոյ ո՛չ երանեցաւ և ո՛չ մնաց ի բարութեան: - 147. Եւ թէպէտ լոյս կերպարանի այժմ, բայց չտեսնու զլոյս իւր. որպէս և ո՛չ մեր զմեր հոգւոյս: - 147. Եւ այլք թէ՝ լռեաց և ո՛չ ետ փառս աստուծոյ: - 147. Եւ ոմանք ասեն թէ՝ ընդ պատիւ մարդոյն նախանձեցաւ և ի խորհուրդ եմուտ թէ սորա կատարումն ի՞նչ լինի, և ո՛չ կարաց հասու լինիլ:

- 147. Ընդէ՞ր այլ հրեշտակք *ո՛չ* ստեղծ փոխանակ նոցա: - 149. Այլ հրեշտակ *ո՛չ* էր պարտ ստեղծանել փոխանակ նոցա: - 149. Ընդէ՞ր քրիստոս *ո՛չ* փրկեաց զնոսա որպէս փրկեաց զմարդիկ: - 149. Ամենայն հրեշտակք զուգապէս ստեղծան յաստուծոյ. և *ո՛չ* մի ի միոյ. որպէս մարդ ի մարդոյ ծնանի: - 149. Դարձեալ՝ և *ո՛չ* զնա միայն փրկէր զի մեռանիլ *ո՛չ* կարէր: - 149. Վասն է՞ր *ո՛չ* ստեղծ զնոսա այնպէս զի մի՛ կարիցեն մեղանչել: - 149. Զի թէ այնպիսիք էին որ *ո՛չ* կարէին մեղանչել՝ իբր կապեալք լինէին և բռնադատեալք, և վարձս *ո՛չ* առնուին: - 149. Բարի ինչ *ո՛չ* կամին և *ո՛չ* ամենևին կարեն: - 149. Իսկ առ չարն յո՛յժ ազդողակա՛նք են. այլ *ո՛չ* այնքան որչափ և կամին. այլ որքան իբր ի հրեշտակաց թոյլ տացի: - 149. Այլ այս *ո՛չ* է հասարակ թէ **ժ** դաս էր հրեշտակաց և մինն անկաւ: - 150. Իսկ ոմանք ասեն զտեղի նորա ի հաստատութեան երկնից. և զի *ո՛չ* ետուն զփառս աստուծոյ անկան...: - 150. *Ո՛չ* են յաւերժահասունք որպէս ոմանք կարծեն թէ յերկուց տարերց այսինքն ի հրոյ և յօդոյ...: - 150. Յինգերորդ՝ զի հոգևոր բնութիւնն միանգամ միայն է շրջելի. վասն զի բոլորովին շրջէ զինքն՝ զոր *ո՛չ* առնէ մարդն. զի մարմինն միշտ մարտնչի ընդ հոգին...: - 151. Եւ ոմանք *ո՛չ* յերկնից բայց յերկինս. որպէս ի մարդկանք սուրբք: - 151. Եւ ոմանք են յերկնից բայց *ո՛չ* յերկինս. որպէս դևք: - 151. Երրորդ՝ ըստ դամասկացւոյն՝ հրեշտակն *ո՛չ* է ընդունակ ապաշխարութեան. նմին իրի և *ո՛չ* թողութեան: - 151. ...մինչ *ո՛չ* էին կործանեալ՝ **դ** կարգ էին իւրաքանչիւր դասուցն. որպէս յա՛յտ է ի չորեքկերպեան կենդանեացն: - 152. Եւ այս վասն այնորիկ՝ զի չարախօսէ՛ր զմարդիկ եթէ ինքնայօժար կամօք և բնութեամբ մեղան և *ո՛չ* ի պատրանաց իմոց. որպէս չարախօսէր զյոբայ եթէ՝ «միթէ ձրի՞ պաշտէ յոբ զտէր»: - 153. Երրորդ՝ անկումն նոցա է՛ր ակնկալութիւն տանջանցն. և զայս մինչ ի քրիստոս *ո՛չ* գիտացին զպատրաստեալ տանջանս իւրեանց...: - 153. Աշխարհ *ո՛չ* լինի ոչէ. և *ո՛չ* ապականեալն կոյս. և վասն թողութեան. յորս նախագաղափար տեսութիւնն աստուծոյ: - 154. Աշխարհ զօրութեամբ *ո՛չ* ասի: - 154. *Ո՛չ* է պատահումն ի յաստուած: - 154. Դարձեալ եթէ պատահումն *ո՛չ* է ի յաստուած: - 154. Թէ բնական զգեստ և զէն ունին կենդանիք, և մարդս *ոչ*. և ճանճք և այլքն: - 155. Թէ ծնունդ *ո՛չ* լինի ի դրախտին: - 155. Ութերորդ՝ գործ բնութեան *ո՛չ* առաւելու և *ո՛չ* նուազէ. իսկ կամացն առաւելու և նուազէ՛: - 156. Եօթներորդ՝ մարդ կարօ՛տ է ժամանակի. իսկ աստուած *ո՛չ* է կարօտ ժամանակի. և այլ և զյաւիտեանս արար: - 156. Երեքտասաներորդ՝ մարդ զինչ որ կամի *ո՛չ* կարէ. իսկ աստուած զոր ինչ և կամի և կարէ՛: - 157. Չորեքտասաներորդ՝ մարդն *ո՛չ* կարէ արարչագործ լինիլ. իսկ աստուած արարչագործ է՛: - 157. Հնգետասաներորդ՝ զի մարդ յետ ստեղծանելոյն *ո՛չ* է ընդ ստեղծուածս իւր...: - 157. Իսկ *ոչ* էիցն *ո՛չ* արարչութիւն է և *ո՛չ* խնամակալութիւն: - 157. Յինգերորդ՝ թոյլ տալով լինին ոմանք ի փառս այլոց. որպէս ի ծնէ կուրին...: - 158. Տասներորդ՝ զանկեղծ սէրն նշանակէ զոր ունին առ քրիստոս, փոխանակ չարչարանաց նորա չարչարանս կրել. և ի սիրոյ նորա *ոչ* մեկնիլ...: - 159. Դարձեալ այսպէս մեկնեն եթէ՝ փորձութիւնն ըստ ինքեան *ո՛չ* է բարի. այլ պատահմամբ լինի բարի. յորժամ համբերութիւնն մերձ դնի և յաղթիցէ. իսկ յորժամ համբերութիւն *ոչ* լիցի, ըստ ինքեան չար և վատ է փորձութիւնն. վասն այն տէրն արգելուլ հրամայէ: - 160. Երկրորդ՝ որ ինքն *ո՛չ* է բարի, այլ պատճառէ՛ զա՛յլ բարի. որպէս դառն դեղն զառողջութիւնն: - 160. Չորրորդ՝ որ ինքն *ո՛չ* է բարի, և *ո՛չ* պատճառէ զբարի. բայց թէ պատահմամբ: - 160. Վասն այսորիկ *ո՛չ* է պարտ խնդրել զփորձութիւնն և *ո՛չ* զարգելումն. այլ զյաղթութիւնն: - 160. Զորօրինակ՝ որպէս տղայ որ տեսանիցէ ցից ի յորմում, երթայ ի մօտ. թէ ամո՛ւր է՝ թողու. վասն զի *ո՛չ* կարէ հանել. և երթայ առ միւսն. թէ շարժի՝ ի մօտ կենայ մինչև հանէ՛: - 160-161. Նոյնպէս և սատանայ աներևոյթ մօտ՝ ի մարդն երթալ. թէ ամուր է հաւատն և կամքն՝ *ո՛չ* կենայ անդ, յուսահատի և թողու: - 161. Յինգերորդ՝ զանազանութիւն՝ զի սատանայ ի փորձելն *ո՛չ* գիտէ զառաջիկայն թէ յաղթէ և թէ յաղթի. և եթէ էր տեղեակ՝ *ո՛չ* մրցէր ընդ կատարելոցն որք յաղթահարեն զնա...: - 161. Իսկ թէ կամիս ուսանիլ թէ զի՞նչ է նիւթ պսակին. որ ինչ առ աստուածութեան իւրում մեծութիւն գտանի, զա՛յն պատրաստեաց սիրելեաց իւրոց. զոր *ո՛չ* կարեմ զմտաւ ածել. կամ վայրապար լսելեօք լսել: - 161. Առ այնոսիկ որք ասեն՝ անկա՛ր է աստուծոյ առնել զաշխարհս ոչ ինչ. մինչ զի *ո՛չ* երևիլ սկիզբն լինելութեան սորա: - 162. Որպէս այսոքիկ որ փոփոխականք են. որ կարեն գոլ և *ո՛չ* գոլ. և երբեմն հանդերձ զօրութեամբ: - 162. Զի ի հարկէ՛ էակ է, որ զգոլն միայն ունի. իսկ զչգոլն *ո՛չ* ունի. ապա ուրեմն անփոփո՛խ է էութեամբ: - 162. Եւ միշտ ներգործութեամբ է. զի *ո՛չ* կարօտի սկզբան և կատարածի զօրութեամբ գոլ. ապա ուրեմն անսկիզբն է և անվախճան: - 162. Եւ իսկապէս ներգործութեամբ, զի զօրութեամբ որ է՛ անկատար իր ինչ ի յաստուած *ո՛չ* է. այլ ամենայն ներգործութեամբ...: - 162. Յաղագս որոյ աշխարհ գոյացեալ. երբեմն մշտնջենաւոր գոյութեամբ, անգոյանալ երբէք *ո՛չ* կարէ: - 162. Դարձեալ՝ կամքն աստուծոյ անփոփոխ

է. զի *ո՛չ* տարակուսի և *ո՛չ* զղջանայ...: - 162. Վասն որոյ կամեցաւ և արար ի գոյութիւն. այժմ *ո՛չ* կամի և *ո՛չ* փոխէ յանգոյութիւն: - 162-163. Եւ զոր կամի՝ զնոյն և առնէ և կարէ. և զոր *ո՛չ* կամի՝ *ո՛չ* առնէ և ո՛չ կարէ: - 163. Եւ թէ ոք ասիցէ, եթէ աստուած զոր *ոչ* կամի՝ *ո՛չ* կարէ, որպէս զչար զի *ո՛չ* կամի և *ո՛չ* կարէ. նոյնպէս զմեղս և զայլսն. ապա երևի անկարութիւն ի յաստուած գոլ: - 163. Ասեմք առ այս Նախ՝ եթէ կամքն և կարն ի մեզ անհաւասա՛րք են. վասն այն զոր ինչ կամիմք՝ *ո՛չ* կարեմք. և զոր կարեմք՝ զա՛յն կամիմք: - 163. Ապա յա՛յտ է զի զչարն և զմեղս *ո՛չ* կամի, վասն այն *ո՛չ* կարէ: - 163. Դարձեալ ասեմք, ամենակար և ամենազօ՛ր է աստուած. և որ ամենայնի կարօղ է և հզօր, *ո՛չ* է անկար: - 163. Իսկ այն որ *ո՛չ* կարէ զչար, առաւել կարողութեանն է ցոյցք, և *ո՛չ* եթէ անկարութեան: - 163. Ջորօրինակ՝ արեգակն *ո՛չ* կարէ լինիլ խաւար, զի առաւե՛լ է լոյս: - 163. Նմանապէս և աստուած *ո՛չ* կարէ զչար, զի առաւել կարէ զբարին: - 163. Եւ *ո՛չ* կարէ *ոչ* էանալ, զի առաւել է. և այլն ամենայն: - 163. Նոյնպէս վասն առաւել բարի կամացն *ո՛չ* կամի և *ո՛չ* կարէ առնել զաշխարհս *ո՛չ* է: - 163. Իսկ որ ասէ, մինչ զի *ո՛չ* երևիլ սկիզբն լինելութեան սորա: - 163. Երրորդ զանազանութիւն՝ զի թէ շինի տաճարն և թէ *ոչ*՝ առաջին սկիզբն որ ի միտքն մնայ՝ նոյն *ո՛չ* առաւելու և *ո՛չ* նուազէ: - 163. Չորրորդ՝ և որպէս որք մերձն են զառաջին սկիզբն *ո՛չ* տեսանեն որ ի միտս շինողին: - 164. Նոյնպէս և հրեշտակք *ո՛չ* տեսանեն զնախագաղափար տեսութիւնն որ լինելո՛ց էր յետոյ: - 164. Երրորդ՝ զի շինօղն որ ինչ պատահի գործոյն *ո՛չ* գիտէ: - 164. Տասներորդ՝ զի տեսութիւն մեր զէ՛սն տեսանէ. և *զոչ* էսն *ո՛չ* տեսանէ: - 164. Այլ տեսութիւնն աստուծոյ *զոչ* էսն տեսանէ և նախընտրէ...: - 164. Արդ այս չափ համեմատութիւն է ի նախկին սկիզբն. նախագաղափար տեսութեանն աստուծոյ. և *ո՛չ* յերկրորդ սկիզբն ի գործ արարչութեան: - 164. Եւ որովհետև գիտացեալ եղև այս, ապա յա՛յտ է թէ անկա՛ր է *ոչ* երևիլ սկիզբն լինելութեան աշխարհի...: - 164-165. Այլ և *ո՛չ* ըստ այնմ որ է՛ սկիզբն գոյացութեան աշխարհի...: - 165. Դարձեալ՝ կարելին և անկարելին են այլագիծք և այլասեռք. և *ոչ* կարեն լինիլ մի և նոյն. զի այլասե՛ռ հակակայք են: - 165. Վասն որոյ անկարելին *ո՛չ* հակադարձի առ կարելին: - 165. Այլ արդ՝ կուսութիւնն է ի կարելոյն որ ունի զգօլն և զչգօլն. իսկ ապականութիւնն է յանկարելւոյն. որ ունի զմինն և *ո՛չ* կարէ հակադարձիլ առ միւսն: - 165. Եւ զի այս այսպէս է, յորում պոռնիկն է՝ անկա՛ր է լինիլ *ոչ* պոռնկեալ. և ապականեալն կոյս: - 165. Յաղագս այսորիկ կանոնեցին սուրբ հարքն վասն այնպիսեացն *ո՛չ* կատարել դարձեալ զկարգ քահանայութեան: - 165. Եւ գործ պոռնկութեանն է ունակութեանն պակասութիւն. վասն որոյ *ո՛չ* հակադարձին: - 165. Եւ եթէ ոք ասիցէ, եթէ պոռնիկն դարձեալ ի կարգ քահանայութեան *ոչ* մտանէ, ապա չեղև իսկապէս թողութիւն: - 165. Նա՛խ՝ եթէ թողութիւնն է ի զղջումն. և կարգն է ի յանձն ապականեալ. ապա ուրեմն իրաւի թէպէտ զթողութիւն ընկալաւ զղջմամբն, սակայն ի կարգն *ո՛չ* մտանէ ապականեալ և շրջեալ անձամբ և բնութեամբ, զորօրինակ բեկեալ և կցեալ անօթ՝ *ո՛չ* թւի ի կարգ անարատիցն: - 166. Եւ այս *ո՛չ* պատճառի ի տկարութենէ շնորհացն որ միշտ նոյնպէս է նախ և յետոյ. այլ ի տկարութենէ անձինն շրջելոյ: - 166. Ջորօրինակ լոյսն որ միևնոյն է, այլ պայծառ՝ և բժոտեալ ակն *ոչ* միապէս տեսանէ: - 166. Դարձեալ ասեմք թէ *ո՛չ* միապէս է մեղքն...: - 166. Իսկ ապաշխարութիւնն կրկին. զի կնիք *ո՛չ* է. և վերջին է սրբութիւն: - 166. Եւ յայտնի եղեալ որպիսութիւն սոցա ի միտ առ. զի անհաւատն այժմ եկեալ ի հաւատս կարէ՛ լինիլ և քահանայ. իսկ չար հաւատացեալն *ո՛չ* կարէ լինիլ քահանայ: - 166. Ջորօրինակ խեցեղէն անօթ խորտակեալ՝ եթէ կա՛ւ է շինի դարձեալ անօթ. և թրծեալն *ո՛չ* շինի: - 166. Նոյնպէս և քահանայն պոռնկեալ՝ *ո՛չ* լինի քահանայ: - 166. Եւ թէ ոք ասիցէ, ընդէ՞ր այլ մեղուցեալն զղջացեալ մտանէ ի կարգ, որպէս հպարտն և ագահն և պոռնիկն *ո՞չ:* - 166. Ապա *ո՛չ* է նմանապէս ամենայն մեղաց զղջումն և ապաշխարութիւն: - 166. Դարձեալ ասեմք թէ՝ ամենայն մեղաց անչա՛փն մեղք է. իսկ չափաւորն *ո՛չ* է ի մեղանս. որպէս չափաւոր ագահութիւնն. և չափաւոր բարկութիւնն. և այլն: - 166. Ապա ուրեմն *ո՛չ* է նմանապէս ամենայն մեղաց թողութիւն. որպէս և *ո՛չ* է նման գործն: - 167. Ուստի յա՛յտ է զի էրէցն երկրորդ ամուսնութեամբն *ո՛չ* կարէ քահանայագործել. յիրաւի և ապա պոռնկեալն էրէց կամ աբեղայ՝ *ո՛չ* կարէ քահանայագործել. զի ուխտազա՛նց է: - 167. Եւ թէ ոք ասիցէ, երևի ապա թէ քահանայագործութիւն պոռնկին *ո՛չ* լինի կատարեալ. վասն այն արգիլեալ է ի գործոյն: - 167. Ասեմք առ այս եթէ՝ *ո՛չ* վասն ասացեալ պատճառիցդ արգելի քահանայն ի գործոյն: - 167. Նախ՝ զի գործն իշխանութեան է որ *ո՛չ* է խափանեալ: - 167. Արդ եթէ *ոչ* է կատարեալ պատարագն, վասն է՞ր դատապարտէ *զոչ* արժանիսն: - 167. Այլ տեսցուք զայս և յօրինակս ճշմարտութեան. զի ադամ յետ միոյ յանցանացն *ո՛չ* մատոյց պատարագ զամենայն աւուրս կենաց իւրոց. այլ որդւո՛ցն հրամայէր մատուցանել: - 167. Դարձեալ և ի յառակս անառակին որ դարձաւ առ հայրն՝ և ողջմամբ ընկալաւ և զգեցոյց զնա և զարդարեաց մատանի ի ձեռս՝ և կօշիկ յոտս. այլ *ո՛չ* ետ

թոյլ նմա պատարագել...: - 167. Յասցանէ յայտնի է զի զղջացեալ այնպիսին կարէ՛ հաղորդիլ ի ձեռն այլոց. այլ *ո՛չ* ինքն պատարագել: - 167. Աղաչեմ զոր յիշեցաւ ի վերոյ բացայայտել, եթէ ի նախատեսութիւնն աստուծոյ աշխարի զօրութեամբ *ո՛չ* ասի: - 167. Իսկ միւս զօրութիւնն որ կարելի է՝ և ներընդունի զգոլն և զչգոլն՝ և երբեմն՝ ասի ի վերայ փոփոխական բնութեանց. որպէս հանդերձն կարէ՛ պատառիլ և *ո՛չ* պատառիլ. և ջուրն կարէ՛ ցրտացուցանել և *ո՛չ* ցրտացուցանել: - 168. Եւ զայսպիսի զօրութիւնս ո՛չ երբէք ասեմք ի վերայ աստուծոյ. զի մշտնջենաւոր էութիւն է. և *ոչ* ընդունի զգոլն և զչգոլն: - 168. Եւ ուսեալք զայս, ընկա՛լ և այժմ զլուծումն խնդրոյն. եթէ լինելութիւն աշխարհի ի նախագաղափար տեսութիւնն աստուծոյ *ո՛չ* է զօրութեամբ՝ այլ ներգործութեամբ վասն բազում պատճառի: - 168. Նախ՝ զի պարզ ներգործութիւն է աստուած. զի եթէ գոյ ինչ զօրութեամբ նախատեսութիւնն աստուծոյ՝ ապա բաղադրեա՛լ է և *ոչ* պարզ ներգործութիւն: - 168. Ապա ուրեմն նախատեսութիւնն աստուծոյ *ո՛չ* է զօրութեամբ. այլ ներգործութեամբ: - 168. Երկրորդ՝ զի միշտ ներգործութիւն է աստուած. ապա թէ գոյ ինչ զօրութեամբ, *ո՛չ* լինի միշտ ներգործութիւն. այլ երբեմն: - 168. Այլ արդ՝ եթէ գոյ զօրութեամբ ինչ ի նա՛ *ո՛չ* է ի հարկէ էակ. այլ կարելի՛ էակ: - 168. Այլ արդ՝ լինելութիւն աշխարհի առ ինքն ըստ ինքեան ասի զօրութեամբ և ներգործութեամբ. զի ի զօրութենէ եկն ի ներգործութիւն. զի թէ *ոչ* գոյր զօրութեամբ նախ՝ *ո՛չ* լինէր յետոյ ներգործութեամբ: - 169. Խնդրեմ և զայս որ ասացաւ ի վերոյ թէ պատահումն *ո՛չ* է յաստուած: - 169. Նախ՝ զի պատահմունքն են յէութենէ իրին երևեալ. այլ արարածք *ոչ* յէութենէ, այլ ի կամաց արարչին յոչնչէ ներգործեալ են: - 169. Երկրորդ՝ պատահմունքն բաժանեալ ի գոյացութեանց *ո՛չ* կարեն ըստ ինքեան կեալ: - 169. Եւ բաժանումն ասեմ *ո՛չ* ըստ նախախնամութեան, այլ ըստ գոյացութեան: - 169. Երրորդ՝ զի արարածք՝ են ի գոյացական սեռէ, և *ո՛չ* ի պատահական. զիարդ լինին պատահումն ի յարարիչն: - 169. Այլ արարիչն առանց արարածոց *ո՛չ* է անկերպ և անզարդ. զի արարածք ոչ ինչ յաւելուած են արարչին: - 170. Թէպէտ արարածք յետոյ եղեն, այլ *ոչ* են պատահումն արարչին: - 170. Երկրորդ՝ թէպէտ յետոյ եղեն արարածք, *ո՛չ* են պատահումն. որպէս և բանն էր յառաջ, և յետոյ եղև մարմին. այլ մարմինն բանին *ո՛չ* է պատահումն. և որդի հօրն *ո՛չ* է պատահումն թէպէտ յետոյ ծնանի զի առ ինչ է հօրն: - 170. Գոյացութիւն և պատահումն անմեկնելի որոշմունք են. վասն է՞ր ի յաստուած միայն գոյացութիւն է և *ո՛չ* պատահումն: - 170. Ի սեռս էականութեան գոյացութիւն նախապատիւ է քան զպատահումն. և զի նախապատիւ է աստուած ամենայն գոյից, վասն որոյ գոյացութիւն է և *ո՛չ* պատահումն: - 170. Գոյացութիւն է ինքն ինքեամբ էացեալ և *ոչ* կարօտեալ յայլս հաստողի: - 170. Եւ զի յայտ եղև այս, ծանուցի և այն, թէ վասն է՞ր աստուած միայն գոյացութիւն է և *ո՛չ* պատահումն: - 170. Նախ՝ զի աստուած միա՛յն է ինքն ինքեամբ. և *ո՛չ* յայլմէ հաստատեալ. ըստ որում ասէր առ մովսէս՝ «ե՛ս եմ որ էն»: - 170. Եօթներորդ՝ զի պատահումն աւելո՛րդ է գոյացութեան. զի գոլովն *ո՛չ* գոյացուցանէ. և այլն: - 170. Իսկ ի յաստուած աւելորդ ինչ *ո՛չ* է: - 170. Իսկ ի յաստուած պատահումն *ո՛չ* է. զի *ո՛չ* է ինքն ինքեան այլ՝ և այլայլակ: - 170. Տասներորդ՝ պատահումն է առաւել և նըւազ. իսկ գոյացութիւն *ո՛չ* է առաւել և նուազ: - 171. Եւ զի յաստուած ո՛չ գոյ առաւել և նուազ. վասն որոյ միայն գոյացութիւն է և *ո՛չ* ունի պատահումն: - 171. Իսկ անեղ և պարզ էութեանն պատշաճի միայն նմանապէս համեմատութեամբ. զի Է կոչի աստուած, ըստ այնմ «ես եմ որ էն». և *ո՛չ* ըստ այնմ որ բաժանի ի գոյացութիւն և ի պատահումն...: - 171. Այլ կոչի է, ըստ այնմ որ միշտ է՛, *ո՛չ* ունելով սկիզբն և *ո՛չ* վախճան. այլ ինքն է ամենեցուն սկիզբն և վախճան...: - 171. Իսկ Գոյացութիւն կոչի աստուած, *ո՛չ* ըստ որում ներհակ պատահմանց է ընդունական որպէս մեք. այլ ըստ որում բաժանի ընդդէմ պատահմանց. որ է՛ միայն պարզ գոյացութիւն որպէս ասացուք: - 171. *Ո՛չ* ըստ տարաչափութեան քանակի ասեմք. այլ ըստ ամենազօր կարողութեան և անչափ անհասութեան ասեմք զնա մեծ: - 171. Եւ *ո՛չ* թիւ պատահական կամ բան տարալուծական. այլ մի երրեակ. և երրեակ մի. ըստ որում սկիզբն է թուոց՝ և *ո՛չ* թիւ. և բաժանեալ յա՛յլ էակաց: - 171. Իսկ Առինչ կոչի, *ո՛չ* որպէս առ մեզ առինչք են մակագոյեղքն. այլ գոյացական, կամ բաղդատական. որպէս ծնօղ. ծնեալ. բղխօղ. բղխեալ. կամ արարիչ և տէր արարածոց և ծառայից: - 172. Իսկ Ուր *ոչ* ասեմք տեղի աստուծոյ. զի տեղի որ է՛ բովանդակութիւն, եռաբա՛ր ասի: - 172. Այլ և *ո՛չ* տեղի պատահական. որպէս աստ և անդ. զի ոչէ ի տեղոջ իմիք պարունակեալ. և *ո՛չ* բացեայ ի տեղւոջէ իմիք զատեալ. զի նա՛ է ամենցուն տեղի: - 172. Իսկ Երբ *ո՛չ* ասի աստուծոյ. զի անժամանա՛կ է և *ո՛չ* ունի փոփոխումն. այլ ասի յաւիտենական. ըստ որում բոլորն համանգամա՛յն է և կատարեալ. զի *ոչ* կարօտի սկզբան և վախճանի. որպէս ժամանակն. և ո՛չ միայն սկզբան որպէս մշտնջենաւորն. այլ անսկիզբն է և անվախճան. վասն որոյ կոչի յաւիտենական: - 172.

Իսկ Կալ` ո՛չ զկալն կամ զնստիլն մարմնապէս. այլ զհաստատիլն անշարժ էութեամբ. զի ո՛չ շարժի. ո՛չ բնութեամբ, ո՛չ կամաւ, և ո՛չ տեղեաւ: - 172. Բնութեամբ ոչ շարժի, զի անփոփոխելի է: - 172. Եւ ո՛չ կամաւ, զի անզղջանալի՛ է: - 172. Այլ և ո՛չ տեղեաւ, զի անբովանդակելի՛ է: - 172. Նախ զայս ասեմք թէ ամենայն ինչ հնարաւոր է աստուծոյ. զի կարէ՛ առնել զոր միտք մարդկան տեսանէ. և կարէ՛ զոր ո՛չ տեսանէ: - 173. Իսկ բանք փիլիսոփայիցն ո՛չ են ընդդէմ եկեղեցւոյ. այլ համաձայնին միմեանց: - 173. Նախ` զի ասեմք եթէ աշխարհ յառաջ քան զլինիլն իւր գոյր ի նախագաղափար տեսութիւնն աստուծոյ. ապա ուրեմն ո՛չ է յոչ ուրեքէ յոչ երբեքէ: - 173. Երկրորդ` ասեմք թէ կրկին է ոչ էակն. այսինքն ոչ ինչն: - 173. Մին է` զի միշտ ոչ ինչ է. զի ոչ զօրութեամբ և ո՛չ ներգործութեամբ ունի զգոլն. և յայս ոչ էակէս ոչ ինչ լինի: - 173. Եւ դարձեալ է՛ ոչ էակ` որ թէպէտ ներգործութեամբ ո՛չ է, սակայն զօրութեամբ ունի զգոլն. և յայսպիսի յոչնչէ եղեն արարածք ամենայն. ապա ուրեմն յայտնի է հարցումնդ: - 173. Զի երբեմն էր որ ոչ էին. և այժմ են, և յետոյ ապականին: - 173. Եւ այսպիսի էակքս կրկին ունին զօրութիւն. լինելոյ և ո՛չ լինելոյ. գոլոյ և ո՛չ գոլոյ. և այլն: - 173. Այսինքն կամօք է` զի գիտութիւնն և կամքն առաջնորդէ՛ գործոյն և հնարաւոր է՛ առնել զայս` և առնել զայն, զոր և կամեսցի. որպէս մարդ զի տէր է գործոյ իւրոյ` առնելոյ և ոչ առնելոյ: - 173. Զի էակքս ամենայն` ոմանք բանաւորք են և ո՛չ միշտ ներգործականք. որպէս մարդս: - 173. Եւ ոմանք միշտ ներգործեն և ո՛չ են բանաւոր. որպէս հուրն: - 173. Ասեմք առ այս Նախ` եթէ ո՛չ ամենայն գործ բնութեան հետևի, այլ և կամաց. որպէս մարդոյ. զի մի է կամք ի քրիստոս, մի է և ներգործութիւնն: - 174. Եւ ո՛չ ուրեք երբեք միտք ուղղափառաց բաժանմամբ տեսանէ. ո՛չ զբնութիւնս և ո՛չ զկամս և ո՛չ ներգործութիւնս որ յառաջն հարցափորձեցաք սակաւիկ: - 174. Էութիւն և բնութիւն մի են որպէս մարդկութիւն. այլ էութիւնն երբեմն նշանակէ զանձն որ ա՛ստ է և այժմ. իսկ բնութիւնն ո՛չ: - 174. Իսկ ենթադրութիւն է զանազանելին և ո՛չ զանազանեալն բացորոշ յատկութեամբ. որպէս ոմն մարդ: - 174. Իսկ անմարմնոյն ո՛չ է տեղի մարմնական. որպէս աստուծոյ կամ հրեշտակաց. կամ հոգւոց. զի անպարագրելի են: - 174. Այլ և ո՛չ տեղի պատահական. թէպէտ ի նշան պատւոյ ասին յերկինս. այլ ոչ իբր ի մարմնական տեղւոջ: - 174. Եւ գիտելի է` զզանազանութիւն սոցա. զի հոգին է ի մարմինն կալմամբ և սահմանեալ. այլ ո՛չ պարագրեալ. իսկ հրեշտակն ո՛չ կալմամբ ի մարմին և ոչ պարագրեալ. այլ սահմանեալ: - 174. Իսկ աստուած արտաքոյ է սոցա. զի ո՛չ է սահմանեալ և ո՛չ պարագրեալ և ո՛չ կալեալ յիմեքէ. ո՛չ իմացմամբ և ո՛չ տեղեաւ կամ մարմնով: - 174. Նախ` զի ո՛չ ունի քանակ, որակ, ձև, և այլքն, որ նիւթո՛յ են յատկականք: - 175. Այլ թէպէտ աննիւթ է աստուած` ո՛չ է անկարգ զնիւթականքս յառաջ ածել ըստ այսմ օրինակի. զի նիւթն որ է՛ գոյացութիւն մարմնական` ունի որակութիւնս իմն մարմնական. որպէս քանակ. որակ. և այլքն: - 175. Եւ մարմնով ո՛չ բաժանին սոքա...: - 175. Նախ` զի սոքա անմարմինք են ըստ ինքեան. այսինքն քանակ, որակ, և այլքն. և յանմարմին էութիւնս ո՛չ տեսանին. որպէս ի հրեշտակս կամ ի հոգիս. զի նոքա ո՛չ ունին ձև. որակ. քանակ. և զայլսն: - 175. Երկրորդ` զի իր մարմնական են և ի մարմնի էանան սոքա` և ո՛չ են մարմին. այլ անմարմին էութիւն որպէս ասացաք: - 175. Չորրորդ` զի իւրաքանչիւր սոքա առանձին սահման ունին և բնութիւն. և ո՛չ միաբանին ընդ միմեանս և ո՛չ ընդ մարմնի. այսինքն քանակն որակն. և ծանրութիւնն. և այլքն: - 175. Զի քանակն որակ ո՛չ է և ոչ ասի. և ո՛չ ծանրութիւն. և ո՛չ կարծրութիւնն մարմին: - 175-176. Հինգերորդ` զի առանձին բնութեամբ սոքա ի մի էութիւն ժողովեալ խառնին. և մի բնութիւն նիւթոյ կատարեն. և ի բնութիւնս իւրեանց ո՛չ շփոթին և այլայլին: - 176. Որպէս հոգի և մարմին բնութեամբ միաւորին ի մի բնութիւն և ի մի դէմ և ո՛չ շփոթին: - 176. Այսպէս իմա՛ ինձ և զբանին մարդեղութիւն յայլևայլ բնութեանց միաւորեալ ի մի էութիւն և ի մի դէմ անձնաւորեալ և ո՛չ շփոթեալ բնութեանցն յատկութիւն: - 176. Ապա ընդէ՞ր սոքա` գոյացութիւն, որակ, քանակ, և այլքն, եղական գոլով ո՛չ շփոթին ի մի բնութիւն խառնեալ: - 176. Եւ ո՛չ ասեմք զպետրոսն այլ և այլ բնութիւն ըստ այլևայլութեան սոցա որ ի պետրոսն: - 176. Երկրորդ` զի առաջին և սկիզբն է թուոց. որպէս միակն թիւ բազմանայ և խառնի յայլս, այսինքն` ի **ժ**. ի **ճ**. ի **ռ**. և ի բիւրն. և ի միութենէն իւրմէ ո՛չ որոշի: - 178. Նոյնպէս և այբն խառնի ի թաւ և ի լերկ, ի սուղ և յերկար, և միաբանի ընդ նոսա, և ի մի բնութենէ իւրմէ ո՛չ որոշի կամ այլայլի: - 178. Նա՛խ` զի իմաստութեամբն զնոսա կարեմք գտանել. և նոքօք զիմաստութիւնն ո՛չ: - 178. Ընդէ՞ր մի աշխարհ ստեղծ, և ո՛չ **բ**, կամ այլևս: - 179. Ասեմք Նախ` եթէ ո՛չ մի է. այլ **բ**. այսինքն ներկայս, և հանդերձեալ աշխարհն: - 179. Եւ այլապէս ո՛չ կարէր լինիլ. զի ամենայն ինչ ի սմա՛ կատարեալ գոյ. և ոչինչ է պակաս ի սմանէ: - 179. Ապա ուրեմն հա՛րկ է մի գոլ աշխարհի և ո՛չ բազում: - 179. Աշխարհս ընդէ՞ր ոչ ունի զգայարանք. այսինքն տեսանելիք. լսելիք. և այլն: - 179. Արդ ամենայն ինչ որ զգալի է` ի ներքս ի սմա՛ է. ձա՛յն. գո՛յն. հո՛տ. հա՛մ. ծա՛նր և թեթև. և ո՛չ ինչ է

արտաքոյ սորա. յաղագս որոյ և *ո՛չ* զգայարանաց կարօտի: - 179. Ասէ զայս, զի բնութեամբ անբովանդակելի է. և *ոչ* տեղեաւ ըմբռնի. մինչ զի ինքն զամենայն տեղիս պարունակէ. յորում կեամք և շարժիմք և եմք: - 180. Զի ըստ իմաստ նոյն է՛ աստուած ամենայն ուրէք և ո՛չ ուրէք. *ոչ* ի տեղւոջ իմիք՝ և *ո՛չ* բացեայ ի տեղւոջէ իմիք. այլ վերոյ սորա, և ներքոյ սորա. ի մէջ սորա, և արտաքոյ սորա: - 180. Ապա թէ ոչ, *ո՛չ* մարմին է աստուծոյ և *ո՛չ* ոտք: - 180. Ուր և երբ այսինքն տեղի և ժամանակ գո՞յ աշխարհիս թէ *ոչ:* - 180. Աշխարհս *ո՛չ* է անուր և աներբ որպէս զաստուած: - 180. Այլ և *ո՛չ* ունի տեղի մարմնական. և *ոչ* ի ժամանակի երեքմասնեան. այսինքն յանցեալն՝ ի ներկայս՝ կամ յապառնին: - 180. Արդ սկիզբն ժամանակի *ո՛չ* է ժամանակ. վասն այն *ո՛չ* ցուցանի թէ ե՞րբ եղև: - 180. Այլ և *ո՛չ* աներբ. զի ի սկիզբն ժամանակի եղև: - 180. Եւ զի *ո՛չ* է ի տեղւոջ աստի յայտ է, զի տեղին է վերին և ներքին և միջին. և արտաքոյ աշխարհիս *ո՛չ* երևին սոքա: - 180. Զի առանց հողոյ շօշափումն *ո՛չ* լինի. և *ո՛չ* առանց ջրոյ կալումն և մածումն. և *ո՛չ* առանց օդոյ շարժումն. և *ո՛չ* առանց հրոյ երևումն: - 180. Այսպէս ամենայն տարերք *ո՛չ* ծերանան և *ոչ* թուլանան: - 181. Առաջին պատճառ, զի երկինքն է պարզ մարմին. զի *ո՛չ* է ի չորից տարերց. այլ **ե**երորդ էութիւն է: - 182. Նախ զի *ո՛չ* կարէ յաւելուլ ի նմա և *ո՛չ* պակասիլ: - 182. Երկրորդ՝ զի *ո՛չ* երևի ի նմա սկիզբն և *ո՛չ* կատարած: - 182. Հինգերորդ՝ թէ երկինքն *ո՛չ* էր բոլորակ՝ այլ քառանկիւնի կամ եռանկիւնի...: - 183. Վեցերորդ՝ զի թէ երկինքն *ո՛չ* էր բոլորակ, յայնժամ արեգակն և այլ աստեղք յորժամ գային ի մէջ երկնից, մեծագոյն երևէին. քանզի ի միջին կիտէն երկնից առ մեզ է ուղղական գիծ. իսկ յարևելից առ մեզ է՛ խոտորնակի գիծ. և ուղղական գիծն կա՛րճ է քան զխոտորնակ գիծն: - 183. Իններորդ՝ զի մշտակա՛յ է ի պարունակութիւնս իւր. այսինքն զի *ո՛չ* ունի այլայլումն և փոփոխումն ըստ անարգ շարժութեան երկրի: - 184. Տասներորդ՝ միշտ տայ և *ո՛չ* առնու: - 184. Եւ զայս գիտել պարտ է. զի մեծն ներսէս զհաստատութիւնն՝ արփի ասէ և եթեր կոչէ. զոր արտաքինքն **ե**երորդ տարր ասացին որ *ո՛չ* երևի մեզ: - 184. Նոյնպէս յորժամ ասեմք թէ արեգակն խաւարեցաւ, *ո՛չ* ի բնական լուսոյն՝ այլ ի զմեզ լուսաւորելոյն: - 186. Եւ զի *ո՛չ* հանապազ խաւարին. զի *ո՛չ* միշտ ընդ նոյն շաւիղս ընթանան. թէպէտ հանդիպին ընդ նոյն կենդանակերպն: - 187. Զի՞նչ է որ ասէ սուրբն բարսեղ, գնան հրեղէնք ընդ ջուրս և *ո՛չ* շիջանին: - 188. Եւ զի *ո՛չ* շիջանին հրամանաւ արարչին. ի միջի գոլով երկուց ներհակացն օդեղէնն երկին. որպէս ստորին տարերքս հուր և ջուր միջնորդ օդիւն կապակցեալ: - 188. Դարձեալ՝ հրեշտակք հրեղէնք գոլով՝ ընդ ջրեղէն կամարն գնալով *ո՛չ* շիջանին: - 188. Այլ եերորդ էութիւնն է պարզ և հաւասար. առաւել և նուազ *ո՛չ* ընդունի: - 188. Եւ թէ ասեն՝ յանօթո՛յն է որ մինն առաւել լոյս տայ և մինն նուազ, և *ո՛չ* ի լուսոյն. որպէս յստա՛կ ապիկի առաւել լուսաւորէ: - 188. Իսկ եբրայեցիքն *ո՛չ* այսպէս, այլ՝ առաջին օր արարչութեան է՛ նոցա աւելեացն **ա**: - 191. Եւ դարձեալ՝ յորժամ վերադիրն լինի **լ**. և **է** երեակն է ի միասին ի միում ամի. ասի այն կատարումն լուսնի. այսինքն մասանց թուոյն, և *ո՛չ* իրին: - 192. Այսպէս և կատարումն մասանց լուսնին ի տումարս մեր է և *ո՛չ* ի յեներակայն նորին: - 192. Չորրորդ՝ զի օր զնա *ո՛չ* երկրորդէ: - 193. Երկրորդ՝ բնական օրն հաւասարաչա՛փ է. զի *ո՛չ* առաւելու և *ո՛չ* նուազէ: - 194. Վասն է՞ր յամառն և ի ձմեռն *ոչ* բուսանին սերմանիք: - 197. Իսկ ամառն նորին նման. զի հունձք է և կատարած գործոց բարեաց. և *ո՛չ* ժամանակ սերմանելոյ կամ բուսանելոյ: - 198. Եւ յա՛յտ է յայսմանէ՝ զի ժամանակն առ մե՛զ է և *ո՛չ* յերկինս: - 198. Վասն զի առաջին շարժումնն զայլս չափէ՛, և զինքն *ո՛չ* չափէ: - 198. Եւ ի յերկրի լինի ամառն և ձմեռն և *ո՛չ* ի յերկինս: - 198. Է՛ որ ինքնաչա՛փ է. որպէս գիծն ի կանգունն՝ ըստ ինքեան չափէ՛ զկանգունն ի յորում է. և ըստ պատահման չափէ՛ զկտաւն ի յորում *ո՛չ* է: - 198. Այլ ժամանակն է առաջին շարժումն երկնից, սակայն *ո՛չ* չափէ զնա. այլ չափէ՛ զտարրականս և զներգործութիւնս մեր յորում *ո՛չ* է: - 198. Եւ յանգոյից, զի անցեալն ապականեալ է, և ապագայն *ո՛չ* է ի միջի, և ներկայն անզգայաբար անցանէ: - 198. ...զի և **բ** պահք *ո՛չ* կարեն համանգամայն գոլ: - 199. Քանզի ժամանակ ըստ ինքեան *ո՛չ* ճանաչի. այլ միայն մարդկային ներգործութեամբ: - 199. Արագ. ի յունել ձեան զլերինս և զբլուրս, արա՛նց է ասեն այս ճանապարհ և *ո՛չ* կանանց: - 200-201. Արի մարդոց է աւուրքս և *ո՛չ* թուլից և վատաց: - 201. Եւ ի գիրս սուրբս՝ մարգարէից այլոց ազգաց անուանք *ո՛չ* յիշին բաց ի հայոցս: - 201. Բայց սոքա և յոյնք իւրեանց ամսամտօք *ո՛չ* վարին. այլ ծառայաբար զհետ երթան այլոց: - 201. Եւ զորօրինակ՝ լիտր մի ցորեան, կամ այլ ինչ. յորժամ ձեռօքդ բաժանես և ցրուես զհատսն, *ո՛չ* մնայ կշիռն: - 202. Իսկ ծանրութիւն երկաթոյն բնական է. վասն որոյ *ո՛չ* կորնչի: - 202. Նոյնպէս և ջուր թէպէտ ջերմանայ, *ո՛չ* թեթևանայ: - 202. *Ո՛չ* է աստղ. այլ գոլորշի վառեալ ի տարրական հրոյն յորժամ մերձի ի նա՛: - 203. Եւ տևէ՛ որքան է նիւթ գոլորշոյն. և լուսեղէն բա՛շս արձակէ առ ի ցուցանել թէ *ո՛չ* է ի բնական աստեղաց: - 203. Սա՛ *ոչ* դառնայ ի անպ կամ ի անձրև. այլ մղի ի վայր կոյս

և մնայ մերձ երկրի: - 204. Վասն այն մասնկունքն նորա *ո՛չ* խստանան. այլ անգայտացեալ ի վա՛յր բերի և կոչի ծիւն: - 205. Եօթներորդ՝ զի լինի ամպ որ *ո՛չ* որոտայ և *ո՛չ* կայծ է վասն սաստիկ խստութեանն: - 206. Երկրորդ՝ զի ամպն այն *ո՛չ* ունի խոնաւութիւն ինչ: - 206. Չորրորդ՝ ցոյցք է ամենահրաշ խնամոց արարչին. որ զհոսանուտ ջուրս ներքին՝ ի մէջ լերանց ի վե՛ր հանէ ի պէտս կենդանեաց որ ա՛նդ են. այլ և յոռոգումն ուր գետք *ոչ* ելանեն: - 209. Իսկ ի դաշտս *ո՛չ* է հողմ. վասն որոյ առաւել շողէ: - 211. Եւ են որ զմէջն ունեն և *ո՛չ* զկեղևն. որպէս նուռն: - 213. Եւ են որ *ո՛չ* մէջն ունի և *ո՛չ* կեղևն. որպէս գղթորն: - 213. Եւ թէ ոք ասիցէ՝ զշունչն *ո՛չ* ունին ջրայինքն: - 215. Եւ են որ թև ունին և *ո՛չ* թեփ: - 215. Եւ են որ թեփ ունին և *ո՛չ* թև: - 215. Եւ են որ *ո՛չ* թեփ ունին և *ո՛չ* թև: - 215. Եւ են որ թև հաւատոյ ունին, և *ո՛չ* գործք. որպէս չար հաւատացեալքն: - 215. Եւ են որք գործս ունին և *ոչ* հաւատս. որպէս կեղծաւորքն. նմանապէս և սոքա անպիտանք են աստուծոյ: - 215. Եւ են որ *ո՛չ* ունին հաւատս և *ո՛չ* գործք. որպէս անօրէնք և չարք. և յայտնի անպիտանք են: - 215. Վասն է՞ր է՝ զի ջրայինքն և սողունքն ձայն *ո՛չ* ունին: - 216. Իսկ ձկունք զի *ո՛չ* ունին զօդ՝ ամենևին են անձայնք: - 216. Եւ *ո՛չ* այս միայն, այլ և բոյսք և տունկք ունին բնութեամբ զէնս պահապան իւրեանց: - 217. Վասն է՞ր է զի մարդս *ո՛չ* ունի զբնութեամբ զէնս. կամ զծածկոյթ: - 217. Երրորդ՝ զի թէ ունէր ի բնութենէ զէնս կամ զգեստս. *ո՛չ* կարօտէր այլոց կենդանեաց. այլ և *ո՛չ* խնամէր զնոսա: - 217. Իսկ մարդոյս հնարք և իմաստութիւնն բանականութեամբ է. վասն այն բազում է ի նոսա հնարք. և առաւել և նուազ, և *ո՛չ* հաւասարք: - 218. Արդ՝ եթէ ադամ *ոչ* էր կոչեալ՝ այլ կրտսեր թոռունքն, նախատինք էր նախահօրն: - 219-220. Ա՛րդ՝ դրախտն *ո՛չ* զգայութեամբ և *ո՛չ* երևակայութեամբ՝ այլ իմացմամբ տեսանի. վասն որոյ երրորդ երկին կոչի: - 221. Ոմանք աննիւթ և իմանալի, այլաբանութիւն և օրինակ ասացին. և *ոչ* էութեամբ ենթակայացեալ: - 221. Եւ ոմանք միայն զգալի և ապականացու և ծորելի որպէս երկիրս այս. և զայսոսիկ *ո՛չ* ընդունիմք մեք ճշմարտութեան հետևօղքս: - 221. Նա՛խ՝ եթէ իմանալի է մեզ. զոր *ո՛չ* կարեմք այժմ զգալապէս տեսանել: - 222. Երրորդ՝ զի իմանալեա՛ցն է տունկ. այսինքն բանականաց. հրեշտակաց կամ մարդկան. և *ո՛չ* զգալի կենդանեաց: - 222. յա՛յտ է զի գիշեր *ո՛չ* լինի անդ. և *ո՛չ* եղանակք փոփոխին: - 222. Զի *ո՛չ* անձրև և *ոչ* ձիւն և *ոչ* հողմ է անդ: - 222. Զի ի վերին մասն օդոյն է մերձեցեալ՝ որ է առաւել բարեսուն. և ամպոց և հողմոց շարժմունք ի միջին մասն օդոյս ծնանին. և ի դրախտն *ո՛չ* հասանեն: - 222. Ա՛րդ՝ եթէ մարդն անապական էր՝ յապականացու տեղւոջ *ո՛չ* բնակէր. ապա թէ *ոչ* ի տեղւոջէն եղև ապականացու և *ո՛չ* ի գործոյն: - 223. Եւ այլք ասեն թէ՝ պատճա՛ռ էր բարւոյ և չարի՝ *ո՛չ* ըստ ինքեան, այլ օրինօքն: - 223. Զի թէ հնազանդեալ էր օրինացն, լինէր բարւոյ պատճառ. և *ո՛չ* հնազանդեալ՝ եղև չարի պատճառ: - 223. Եւ է՛ միւս բարի խառնակն և պատրուակեալն. որպէս է աշխարհական բարին. զի գունով և երևելեաւ բարի է, այլ ի ներքոյ ծածկեալ չա՛ր է. յայսմանէ հրաժարէ՛ զմեզ *ոչ* մերձենալ: - 224. Եւ զոր գիրք սուրբ *ո՛չ* է յայտնեալ, զիա՞րդ իշխէ մարդ խօսիլ: - 224. Այլ ա՛յս է ճշմարիտն. որ մինն ծառ էր կենաց՝ և մինն գիտութեան. և ի դրախտին այլ *ո՛չ* գոյր նման նմա. թո՛ղ թէ յերկիրս. ո՞րպէս ասեմք թէ այս է՝ կամ այն: - 224. Ա՛րդ՝ եթէ մնայ հինն ընդ նորոյն հանապազ. նա՛ ծանրանայ. և *ո՛չ* կարէ զայն քան ամաց բազմութիւն պտղոցն կրել, և այսպէս լինին ամենայն ծառքն կոտորեալ և ապականեալ...: - 224. Եւ որպէս ալիւրն ի սափորն և իւղն ի սրուակն կերակրելի՛ էր, և *ոչ* նուազէր առ եղիայիւ: - 224. Եւ որպէս հուր ճրագին զիւղն կերակրի, և ինքն *ո՛չ* առաւելու: - 224-225. Վերջին հուրն ի կատարածի զդրախտն փոփոխէ՞ թէ *ոչ:* - 225. Նախ՝ ասեմք թէ *ո՛չ:* - 225. Զի որպէս ջրհեղեղն *ո՛չ* եմուտ ի դրախտն զի *ո՛չ* էր ապականեալ մեղօք: - 225. Եւ զի *ո՛չ* է ապականացու դրախտն՝ և *ոչ* փոփոխի: - 225. Զի երկի՛ր անիծաւ և ապականեցաւ, և *ո՛չ* դրախտն: - 225. Ի դրախտին լինէ՞ր մարմնական ծնունդ որպէս այժմ ի յերկրի, թէ *ոչ:* - 225. յերկի՛ր ետ հրաման աճելոյ և *ոչ* ի դրախտին: - 225. Երկրորդ՝ զի դրախտն է տեղիք անապական. և *ո՛չ* լինէր ի մարդոյն ծորումն ինչ աղտեղութեան. և *ոչ* որպէս տնկոցն: - 225. Արդ եթէ ծորումն *ոչ* լինէր՝ և *ո՛չ* ապականութիւն մարմնական, և *ո՛չ* ծնունդ ախտական: - 225. Ա՛րդ՝ պսակ օրհնութեան դնի յեկեղեցին, և մանկարարութիւն *ո՛չ:* - 225. Նոյնպէս և ի դրախտն եղև պսակ օրհնութեան, և մանկարարութիւն *ո՛չ:* - 225. Սննդեան. աճելոյ. խնամելոյ. և այլոցն. և այսոքիկ *ո՛չ* են ի դրախտին. և *ոչ* զգեստ մարմնական: - 225. Հինգերորդ՝ նախ քան զյանցանելն՝ էին ադամ և կինն մերկ և *ո՛չ* ամաչէին. վասն զի *ո՛չ* ունէին ցանկութիւն հեշտութեան: - 225. Իսկ եթէ ոք հարցանէ, ապա վասն է՞ր ստեղծան ծննդական անդամքն յորժամ *ո՛չ* ծնանէին ի դրախտին: - 226. Ասեմք թէ՝ կանխագէ՛տ է աստուած. և նախ ծանեաւ զի *ո՛չ* կարէին աճիլ անմեղութեամբ ի դրախտին որպէս զհրեշտակս...: - 226. Եւ թէ ասեն, հրեշտակք յանէից գոյացան և *ո՛չ* ի միմեանց. իսկ մարդկան ազգ պա՛րտ էր ի միո՛յն ծնանիլ: - 226. Եւ թէ՝ *յո՛չ* են նմանք երեսք երեսաց: - 227. Քսանեդ՝ Այլ կենդանիք յորժամ ծնանին ի մօրէ

կանգնին, և մարդս ոչ: - 228. Երեսունևե՝ Զի ոչ ամաչէին: - 228. Վարդապետք ասեն թէ ոչ ամենայն առաջին պատուական է, և ոչ ամենայն յետին անարգ: - 230. Եւ մարդն ինքակա՛լ է և ոչ է այլ ումեք: - 230. Ութերորդ՝ ոչ արար նախ զմարդն, զի մի՛ արարչակից գիտասցէ զինքն ոչ գոյիցն, և անկցի հպարտութեամբ...: - 231. Եօթներորդ՝ վասն զգայութեանցն, որ ամենեքին յառաջ հեղուն յուղեղէն, և ազատապէս տեսանեն և իմանան. զի թէ գլուխն և ուղիղն ի վա՛յր էր քարշեալ և կորացեալ՝ ոչ կարէր ուղղակի զգալ և իմանալ. որպէս այլ կենդանիք: - 233. Զի թէ կորագլուխ էր մարդն, և երկոքին ձեռքն ի յերկիր հաստատեալ, ոչ կարէր գործել: - 233. Եւ պիտոյանայր լեզու երկայն և շրթունք ստուար, զի ժողովեսցէ զկերակուր. և յայնժամ ոչ կարէր սպասաւորել բանի որպէս ա՛յժմ: - 233. Եւ բնականն, Նա՛խ՝ զի նմանիմք երկրի որ յերեսն ունի զգեղեցկութիւն բուսոց, և ի թիկունս ոչ: - 234. Երրորդ՝ զի զդէմս ունիցիմք միշտ ի յերկինս. և զթիկունս յերկիր. և հանապազ ի բարին յառաջեմք ոտիւք և ձեռօք և ոչ դառնամք ի չարն: - 234. Այլ և ունի յատուկ պատուականութիւն և ունկն՝ զոր ոչ ունի ակն: - 235. Երրորդ՝ զի ամենայն իր յէից և յոչ էից են գոյացեալ. յէից՝ ըստ նախածանօթ տեսչութեան գաղափարին. և յոչ էից՝ ըստ ինքեան ի ժամանակի հաստատեալք: - 236. Վասն որոյ գտանի յամենայն իրս նման և աննման ըստ որում յէից և յոչ էից են հաստատեալք: - 237. Եւ այս դէմքս անփոփո՛խ է ի հոգւոյն ի կեանս և ի մահ. ոչ աճէ և ոչ նուազի: - 237. Ասեմք թէ՝ նոյն է պատասխանին. զի պատահումն առ մե՛զ հանդիպի. այլ առ աստուած ոչ ինչ է պատահմամբ. այլ ամենայն ինչ գիտութեամբ. զի ոչ տերև մի ի ծառոյ անկանի առանց գիտութեանն աստուծոյ: - 237. Այժմ տեսցուք թէ զի՞նչ է շահն աննման պատկերաց. զի բազում վնաս էր լինելոց թէ անհատք ոչ էին որոշեալ դիմօք: - 238. Երկրորդ՝ զի ոչ հարազատ որդին սեպհականէր զժառանգութիւնս հօր. այլ օտարն ի մեծութիւն հասանէր, և իւրն չքաւորութեամբ տառապէր: - 238. Երրորդ՝ զի ոչ գիտէին զանդրանիկն ժամանակաւ, և ոչ զկրտսերն...: - 238. Չորրորդ՝ զի ոչ ճանաչէր այր զկին իւր, և ոչ կին զայր իւր. և լինէր անօրէն խառնակումն. որպէս յուդայ զնու իւր զթամար ոչ ճանաչեաց. և ոչ ղովտ զդստերսն իւր: - 238. Կամ զպարտս յոչ պարտականէն խնդրէին. որպէս ա՛յժմ անիրաւք զայլ ոք այլոյ գրաւ առնուն: - 238. Վեցերորդ՝ զի ոչ պատուաւորքն մեծարեին, և ոչ անարգք անպատուեին. այլ ընդդիմակն սոցա. զի ոչ կարէին ճանաչել զտէրն և զծառայն. զազատն և զանազատն: - 238. Եօթներորդ՝ զի ոչ կարէին ընտրել և խոտել զչարն և զբարին, և զսուրբն և զանսուրբն ի մարդկանէ...: - 238. Ութերորդ՝ զի ոչ երևէր բարեկամն և թշնամին. սիրելին և ատելին. և լինէին բազում սպանութիւնք և աւերք. զի ոչ զգուշանային միմեանց: - 238. Եւ սուտ առաքեալք զճշմարտիցն կերպանային. և այն զի ոչ ունէին զնոյն տիպ. իսկ թէ ունիցին զնոյն տիպ՝ ո՞րչափ ևս: - 238. ...արագիլ արդար՝ կերակրէ զիւր ծնօղսն միայն. և տատրակ մենացեալ ի զուգակցէն, ոչ զուգի ընդ ա՛յլ տատրակի: - 238-239. Իսկ յորժամ առողջանայ մարդն և արիւնն յստակի, արիւնն միս լինի, և մազն ոչ աճէ: - 240. Եւ ուր ջերմութիւնն շատ է, մազն ոչ սպիտակի. որպէս արտևանունքն աչացն և յայլ տեղիս: - 240. Վասն է՞ր երիկամունքն ճարպով պատեալ է, և սիրտն և լեարդն ոչ: - 241. Սոքա ոչ պահեն զճարպն որ մասն է օդոյ պարարտացեալ: - 242. Ասեմք եթէ երանքն. զի թէ հատանեն զերանսն, մարդն լինի որպէս կին. և մորուս ոչ բուսանի: - 245. Վասն է՞ր թաթարին մորուս ոչ բուսանի: - 245. Հնդկացւոցն մորուս ոչ բուսանի վասն սաստիկ ջերմոյն: - 245. Եւ հիւսիսայնոցն ոչ բուսանի վասն խիստ ցրտոյն. և միջերկրայքս վասն բարեխառնութեանն մորուս ունին: - 245. Իսկ զի կէսք քարց և անմորուք լինին, զի ջլապինտ է մորթ երեսացն որպէս զքաթ ձեռաց. վասն որոյ մազ ոչ բուսանի: - 245. Ասեմք թէ ոչ են ճշմարիտ վասն **Ե** պատճառի: - 246. Նա՛խ՝ զի այնպիսի նշանք ոչ դնեն հարկ ի մարդն. այլ ցուցանեն զձկտումն բնութեանն ի յայնպիսի իրս: - 246. Երկրորդ՝ զի ոչ նոյնպէս աւելի և նուազ. այլ երբեմն՝ և հաւասար ամենայն մարդկան: - 246. Չորրորդ՝ զի բազմաց լինի նշան պատահական և ոչ բնական: - 246. Վասն որոյ ոչ է պարտ ենթադատել զմարդ վատն այսպիսի նշանաց երևման: - 246. Սակայն և ոչ է պարտ զանց առնել զիմաստս փիլիսոփայիցն: - 246. Իսկ որ հաւասար ի ճակատէն իջանէ ոչ բարձր և ոչ ցած, արիութեան և խոհեմութեան է նշան: - 247. Կարճ կլափն՝ նախանձո՛տ է և ոչ հեզ. զի նման է օձի: - 247. Հերն շէկ և ստուար, ոչ է խելամուտ: - 248. Իսկ հերն կիսասև և ոչ յոյժ բարակ՝ զբարեբարոյն և զբարի կազմուածն ցուցանէ: - 248. Ի յայսոսիկ հոգին ոչ առնու ի կիր զմարմինն. այլ զկիր առնօղն մարմնոյն զտրամախոհութիւն: - 249. Իսկ զոմանս ունի ոչ հաւասարակ ընդ անասնոց. որպէս բանն. իմացումն. և կամքն. և սոյնպիսիք: - 249. Զի թէպէտ ըստ ներգործութեանն բաժանին երբեմն ի բաժանելի մարմնոյն՝ զի առանց մարմնոյն ոչ կարեն ներգործել սոքօք...: - 249. Հոգին պատկե՛ր է աստուծոյ. և աստուածապաշտ մարդոյ՝ զաստուած քննել ոչ մարթի թէ ուստի՞ է. կամ ո՞ւր

է կամ ո՞րչափ է. և կամ թէ ո՞րպէս է. կամ թէ մինչ ի յուր է: - 251. Նմանապէս և *ո՛չ* զհոգի մարդոյն: - 251. Վասն որոյ զխրատ և զուսումն *ո՛չ* լսեն մեծամեծք: - 251. **Այլ մեծն Ներսէս այսմ *ո՛չ* է հաւան**: - 251. Իսկ տրամադրութիւնք հոգւոյն՝ խառնւածոյ մարմնոյն *ո՛չ* հետևին: - 251-252. Այլ ա՛րդ ի յանբանսն *ո՛չ* է առաքինութիւն որով սրբի ի մեղաց...: - 252. Այլ արդ՝ ի տունկն *ո՛չ* կարէ սրբիլ. այլ անկանի յանշունչն, որ ներքո՛յ է տնկոյն, և նման նորա զի մարմին է: - 252. Եւ թէ ասեն՝ եթէ մեք ի տնկոյն ասեմք դարձեալ ի մարդն փոխիլ և *ո՛չ* յանշունչն: - 252. Պատասխանեմք առ այս եթէ՝ փչումն *ո՛չ* զբանական հոգին ասեն սուրբ հարքն ...և զհոգին *ո՛չ* նշանակեաց թէ ուստի՞ է. զի յանէից է ստեղծումն նորա: - 253. Երկրորդ՝ զի մի գոյութիւն է մարդն բաղադրեալ ի հոգւոյ և ի մարմնոյ. *ոչ* է պարտ **բ** լինիլ սկիզբն. այլ մի էութեանն մի է սկիզբն: - 253-254. Այսպէս և ի կազմուած իւրաքանչիւր մարդոյ *ո՛չ* է մարմին յառաջ քան զհոգի որպէս ցուցանելոց եմք: - 254. Իսկ վարդապետք ուղղաձևութեան՝ յանդիմանեալ զերկոսին կողմանց ստախօսութիւն, *ո՛չ* զհոգի յառաջ քան զմարմին ասեն ստեղծեալ, և *ո՛չ* զմարմին քան զհոգի: - 254. Այլ ի միասին համանգամայն ստեղծեալ. *ո՛չ* ժամանակաւ յառաջ և յետոյ, և *ո՛չ* բնութեամբ. այլ մի է սկիզբն միոյ գոյութեան մարդոյն: - 254. Պատասխանեմք և ասեմք թէ, *ո՛չ* է հոգին յետոյ. *ո՛չ* ժամանակաւ և *ո՛չ* բնութեամբ. այլ դասիւ և կարգաւ: - 254. Եւ այս *ո՛չ* ժամանակաւ յետոյ ըստ երից պատճառաց: - 254. ...սոքա *ո՛չ* որոշին ի բոլորէն. զի մի են էութեամբ ի մարդն թէպէտ ա՛յլ են ներգործութեամբ: - 254. Զի զօրութիւն ունի այս նիւթ՝ ընդունել զբանականն. զոր նիւթ անասնոցն *ո՛չ* կարէ ընդունել: - 254-255. Այլ ի կողմանէ հոգւոյն՝ զօրութեամբ *ո՛չ* է ի սերմն այն ըստ ինքնութեան բոլորին. այլ ըստ ինքնութեան մասին. որ է տնկականն և զգայականն: - 255. Եւ մանաւանդ զի բնութիւնն յանկարծակի *ո՛չ* կարէ ներգործել. այլ սակաւ սակաւ հետևելով յանկատարէն ելանէ ի կատարեալն: - 255. Եւ կամ որպէս պատկերագործք մինչ զոտն և զձեռն նկարեն՝ *ո՛չ* երևի պատկեր մարդոյ. այլ ոտից և ձեռաց: - 255. Չորրորդ՝ զի *ո՛չ* է այն մեռելութիւն միայն՝ որ բանականն կամ շունչն պակասի. այլ և որ տնկականն պակասի. որպէս քար. ա՛յն է իսկապէս մեռեալ: - 256. Այլ այժմ տնկականն գո՛յ ի նմա թէպէտ *ո՛չ* շունչն և *ոչ* բանն: - 256. Հինգերորդ՝ զի ունակութիւնն նա՛խ է քան զպակասութիւնն. զի ուր *ո՛չ* է ունակութիւն, և *ո՛չ* է անդ պակասութիւն: - 256. Ապա ուրեմն հիւթն այն, նախ ունի զկեալն որ է՛ ունակութիւն. և *ո՛չ* զպակասն որ է մեռելութիւն: - 256. Թէ ժամանակն ցուրտ է կամ ջերմ. և երկիրն գէջ կամ չոր. և սերմն հոտեալ կամ աղանձեալ. և սերմանօղ *ո՛չ* լինի կամ *ոչ* սերմանէ. վասն որոյ *ո՛չ* բուսանի: - 256. Երրորդ՝ զի զկենդանութիւն ունի և *ո՛չ* երևի: - 256. Հինգերորդ՝ զի նիւթն հատանի, և զօրութիւնն *ո՛չ*: - 256. Նիւթ մարմնոյն է ի ծնողացն. այլ հոգին *ո՛չ* է ի ծնցաղն. այլ ի հրամանէն աստուծոյ գոյանայ և երևի: - 257. Այլ և հատումն ամենևին *ո՛չ* ասի հոգւոյն. *ո՛չ* տնկականի և *ո՛չ* զգայականի և *ո՛չ* բանականի: - 257. Այլ հատումն նիւթո՛յն է և *ո՛չ* հոգւոյն վասն **գ** պատճառաց: - 257. Նա՛խ՝ զի անմարմին է հոգին. վասն որոյ *ո՛չ* հատանի. *ո՛չ* տընկականն. *ո՛չ* զգայականն. և *ո՛չ* բանականն: - 257. Ապա ուրեմն հոգին *ո՛չ* հատանի և *ո՛չ* գոյանայ ի հոգւոյ որպէս մարմին ի մարմնոյ: - 257. Որպէս ճիւղ հատեալ ի ծառէ և տընկեալ յերկրի, ճիւղն է հատեալ ի ծառէն, այլ կենդանութիւնն *ո՛չ*...: - 257. Իսկ բանականս մարդ *ո՛չ* ամենևին նախախնամութեամբ է. զի հոգին *ո՛չ* ի ծնողաց, այլ ի շնորհացն աստուծոյ պարգևի: - 257. Եւ *ո՛չ* ամենևին ստեղծմամբ. զի մարմինն նախախնամութեամբ փոխանորդի: - 257. Դարձեալ՝ *ո՛չ* հեռի է ի նախախնամութեանց, և *ո՛չ* հեռի ի ստեղծմանց. այլ է՛ ի մէջն: - 257. Եւ դարձեալ՝ նոյն ինքն բանական հոգին *ո՛չ* նոր ստեղծումն է և *ո՛չ* հին: - 257. *Ո՛չ* է հին, զի ըստ իւրաքանչիւր մարմնոյ համանգամայն ստեղծանի հոգին: - 257. Եւ *ոչ* նոր, զի մի և նոյն ի սկզբանէ հրամանն արարչադիր առանց տկարութեան ներգործէ մինչ ի կատարած. և ըստ իւրաքանչիւր հոգւոյ՝ նոր հրաման ստեղծանելոյ *ո՛չ* արժակի: - 257. Եւ թէ այդպէս է, ուրեմն ի հրամանն աստուծոյ *ո՛չ* է նոր. այլ ի գոյացութիւն իւր նո՛ր է: - 258. Նախախնամութեամբ՝ *ո՛չ* որպէս փտելով կամ ծնանելով զմարմին ի մարմնոց. այլ յառաջ բերէ զպատկերն իւր որպէս ինքն գիտէ: - 258. Զի թէպէտ մի իրէ նախախնամութիւնն աստուծոյ առ արարածս, այլ զամենայնս *ո՛չ* միապէս պահէ և նախախնամէ: - 258. Ասեմք առ այս թէ՝ *ո՛չ* են **գ** հոգիք ի մարդն. այլ **գ** զօրութիւնք են հոգւոյ: - 259. Այլ ի մարդն *ո՛չ* է պարտ ասել **գ** հոգի. այլ մի հոգի և **գ** զօրութիւն: - 259. Նոյնպէս և ի զգայականս *ո՛չ* է պարտ ասել **բ** հոգի. այլ **բ** զօրութիւն: - 259. Իսկ զտնկականն ի տունկն *ո՛չ* է պարտ ասել զօրութիւն. այլ հոգի է տնկական: - 259. Երկրորդ՝ զի թէ այլ և այլ էր հոգի, ի յայլ հոգւոյ տեղիս *ո՛չ* բնակէր այլ հոգի որպէս յայլո՛յ կաղապար. և ա՛յլ դրօշած ի յա՛յլ կնիք. այլ մի է. վասն այն որ յետոյ երևի, յառաջնոյն խառնուածն կարէ՛ բնակիլ: - 259. Եւ զորօրինակ՝ ի զգայականն գոյ տնկականն, այլ մի է հոգի զգայականին և *ո՛չ* **բ**: - 259. Այսպէս և սոքա գոն ի մարդն, այլ մի է հոգի մարդոյ և *ո՛չ* երեք: - 259. Եւ

յայնժամ զգայականն և տնկականն *ո՛չ* ունին զներգործութիւն իւրեանց ի կազմողական զօրութենէն. այլ ի նոյն ինքն ի հոգոյն: - 260. Ասեմք առ այս, եթէ և յետ մահուան *ո՛չ* բաժանին սոքա ի հոգւոյն ըստ էութեան. զի մի է էութիւն սոցա. այլ ըստ ներգործութեան. զի *ո՛չ* է մարմին՝ *ո՛չ* կարէ ներգործել: - 260. Եւ այսպէս *ո՛չ* է բաժանեալ ի հոգւոյն, այլ ի մարմնոյն: - 260. Ասեմք առ այս, թէ մի է հոգի հաւաստեաւ. և *ո՛չ* է ինքն ինքեան առաջին և վերջին. զի մի էութեան՝ առաջին և վերջին *ո՛չ* է. այլ ըստ ներգործութեան. զի ըստ առաջին և վերջին զօրութեանն՝ առաջին և վերջին ներգործէ: - 260. Ասեմք առ այս թէ, օն ի բա՛ց տար ի մտաց քոց զհեթանոսական կարծիս. զի *ո՛չ* է հոգի յառաջ քան զմարմին. և *ո՛չ* մարմին նախ քան զհոգի որպէս ի սկիզբն ասացաք: - 260. Որպէս լերինք ցուրտ գոլով՝ զպտուղս *ո՛չ* հասուցանեն որպէս ի դաշտի: - 261. Նմանապէս ծառք և տունկք՝ որ յետ երից ամաց կամ չորից ցուցանեն զպտուղս՝ յայսմ թըւոյ *ո՛չ* ելանեն արտաքս: - 263. Եւ թէպէտ զնանիր խոտոյ ասեն ի նոյն ժամն բուսանիլ և կատարիլ և խամրիլ, ի նոյն թուոյս *ոչ* ելանէ ժամուք կամ մասամբք: - 263. Եւ յաւելեալ զկազմողականն՝ յութն ամիսս ծնանի և *ո՛չ* ապրի զի անկատա՛ր է: - 263. Դարձեալ **թ** թիւն պակա՛ս է ի **ժ**երրորդէն...: - 264. Եւ ութն ամիսն երևակին է *ո՛չ* ապրի: - 264. Կարծե՛մ որպէս ասացեալ եղև այս. բայց *ո՛չ* լիապէս: - 264. Իսկ մարդոյն խորհուրդն ըստ չորից տարերց և երից զօրութեանց տնկականին եօթեամբ կատարի. թիւ շնորհալի և մշտակոյս ըստ աթենայ. զի *ոչ* ծնեալ լինի և *ո՛չ* զայլս ծնանի: - 264. Թէպէտ ոմանք փոխեն զայս կարգ, *ո՛չ* ընդ դէմ բանիցս կարգի. այսպէս ասելով: - 265. Ապա ուրեմն յա՛յտ է՝ զի տղայութիւնն *ո՛չ* կարէ զնմանն ծնանիլ. այլ մանկութիւնն որպէս ասացաւ: - 266. Խնդրեմ և զայս ուսանիլ թէ ընդէ՞ր է՝ զի մարդս կատարեալ կենդանի է քան զանասունս. և յորժամ ծնանին նոքա ահա՛ ի նոյն ժամն կանգնին յոտից վերայ և գնան, և այլն. իսկ մարդն *ոչ:* - 266. Իսկ մարդոյն ուղեղն գէճ է և հով. զի նկարեսցէ յինքն զիմացումն մտացն. և ջիլքն յառաջեալ ի նման վասն գիճութեան *ո՛չ* կարէ պնդել զանդամսն. վասն որոյ *ո՛չ* կանգնի և *ոչ* գնայ: - 266. Իսկ անասնոցն *ո՛չ* է դաստիարակ արտաքուստ. վասն որոյ բնութիւնն խնամէ զնոսա ի ներքուստ: - 267. Ասեմք թէ *ո՛չ* լինի վասն **բ** պատճառի: - 267. Նա՛խ՝ զի բանականի և անբանի սերմ *ո՛չ* խառնին ի միմեանս: - 267. Նոյնպէս և յառիւծոյ և յիշոյ *ո՛չ* լինի ծնունդ. զի մինն մսակեր է և միւսն ընտակեր: - 267. Այսպէս և զամենայն հակառակ տեսակս իմասցիս *ոչ* խառնիլ սերմանք նոցա: - 267. Այլ թէ լինին մարդակերպ կենդանիք, վայրիք են և գազանք. և *ո՛չ* ի խառնուածոյ մարդոյ: - 267. Իսկ թէ մարդ լինի շանադէմք, և այն *ո՛չ* է ի խառնուածոյ շանց, այլ նշան է հայրենեաց, կամ սպի անձանց: - 267. Իսկ նշանակէ նախ զժամանակն. զի անցեալն և հանդերձեալն *ո՛չ* է ի միջի այլ ներկայն: - 267. Նոյնպէս և յղանալն հանդերձեալ է, և վախճանեալ անցեալն, որ *ո՛չ* երևին. այլ միայն ծնեալն երևի որ է՛ ներկայ: - 267-268. Այլ սկիզբն և վախճան *ո՛չ* տեսանի մեզ. բայց միայն եղեալ արարածքս: - 268. Իսկ զի բանական միտքն *ո՛չ* տեսանէ զերազն, այլ անբան մասն, որ է՛ տնկականն ի մեզ...: - 268. Երրորդ՝ կարծիք է, զի ի ներկայս *ո՛չ* է. և ուղիղ խորհուրդ, զի յապագայն լինելո՛ց է: - 270. Ա՛րդ՝ աստուածային գեղեցկութիւնն *ո՛չ* այսու երանգօք զարդարի զի զմեզ ի նմանն իւր կազմեսցէ: - 271. Ութերորդ՝ **գ** անձինք կատարեալք. և թէ մինն պակասիցէ՝ *ո՛չ* է կատարեալ աստուած...: - 271. Զանազանի պատկեր և նմանութիւն, որպէս մարդն և կենդանին. զի ամենայն մարդ ասի կենդանի. այլ *ո՛չ* ամենայն կենդանի մարդ: - 272. Նոյնպէս և ամենայն պատկեր ի հարկէ՛ ասի նմանութիւն. այլ *ո՛չ* ամենայն նմանութիւն է պատկեր: - 272. Զի *ո՛չ* է ըստ նմանութեան պատկեր. այլ ըստ նոյնութեան բնութեանն: - 272. Զոր օրինակ *ո՛չ* ասի մարդ մարդոյ նման գոլ ըստ մարդկութեան. վասն զի նոյնութիւն է և *ոչ* նմանութիւն...: - 272. Իսկ մարդն ասի պատկեր աստուծոյ ըստ նմանութեանն. վասն զի *ո՛չ* ունի զնոյն էութիւն. այլ զնմանութիւնն աստուծոյ: - 273. Իսկ դրամն և տախտակն ուր գրեալ է պատկեր թագաւորին՝ միայն նման է թագաւորին ըստ ձևոյն. այլ *ո՛չ* ըստ բնութեանն: - 273. Եւ դարձեալ՝ որպէս ձու հաւի և ձու քարեայ՝ նման ասին միմեանց, այլ *ո՛չ* պատկեր. զի *ո՛չ* են ի միմեանց ելեալ. և *ո՛չ* զնոյն էութիւն ունին: - 273. Եւ այս ևս *ո՛չ* է ընդունելի...: - 273. Եւ այլք ասեն թէ՝ մարդն *ո՛չ* է պատկեր աստուծոյ. այլ պատկեր պատկերի...: - 273. Զի թէ *ո՛չ* էր ասացեալ ընդ պատկերին զնմանն լինիլ, ամենայն ոք պատճառէր, և զմարդն պաշտելով անկանէր ի կռապաշտութիւն...: - 274. Նա՛խ՝ զի խոստովանեալ է յամենեցունց որ *ո՛չ* է հաստելի. այսինքն *ո՛չ* ստեղծեալ: - 274. Եւ զի *ո՛չ* է ստեղծեալ, և *ո՛չ* է յեղեալ ի չգոյէ ի գոյ. ապա ուրեմն անեղ է: - 274. Եւ զի եղեալ է, ապա *ո՛չ* է անեղ: - 274. Եւ զի *ո՛չ* է անեղ՝ յեղեալ է ի յոչնչէ յէութիւն: - 274. Զի անասունք զայս *ո՛չ* գիտեն. այլ միայն զհեշտալին ընտրեն: - 274. Դարձեալ՝ մարդո՛յս է խօսիլ և բանաւորիլ. զի այլ կենդանեացն նմանութեամբ է և *ո՛չ* իսկապէս: - 275. Դարձեալ՝ մարդո՛յն է թողութիւն մեղաց վասն մարմնոյն՝ զոր *ոչ* ունին հրեշտակք: - 275. Դարձեալ՝ մարդո՛յն է յարութիւն կենաց. և

դատաստանի վասն հոգւոյն՝ զոր *ո՛չ* ունին այլ կենդանիք: - 275. Դարձեալ՝ մա՛րդն է ի պատկեր աստուծոյ եղեալ առաւել քան զհրեշտակս **գ** կերպիւ, ներքոյ և արտաքոյ. զորս *ո՛չ* ունին հրեշտակք: - 275. Վասն է՞ր զկինն ի կողէն ստեղծ և *ո՛չ* ի հողոյ: - 276. Նա՛խ՝ զի մի՛ համեմատ առն կարծիցէ զինքն. այլ որպէս *ոչ* համահասակ և *ոչ* համահող լիցի: - 276. Հինգերորդ՝ զի կողնէ աման և տեղի երիկամանց. յորմէ շարժի ցանկութիւնն. զի թէպէտ *ո՛չ* շարժէ զնա. այլ ազդումն ինչ ունի զնմանէ: - 276. Վեցերորդ՝ *ո՛չ* առնու ի գլխոյն և *ո՛չ* յոտիցն. այլ ի միջացն. զի խրատէ՛ զմարդիկ *ո՛չ* հաւասար գլխոյն պատուել զկինն, և *ո՛չ* անարգել իբրև զոտք. այլ միջակ պատուով չափաւորել զնա: - 276. Նա՛խ՝ զի *ո՛չ* ունի զառնողական զօրութիւնն. որպէս և յամենայն կենդանիս էգն: - 276. Նախ՝ առ ի նշանակել զանձնիշխանութիւն մարդոյն. իբր թէ ունի կարողութիւն պահել և *ո՛չ* պահել: - 277. Չորրորդ՝ ի ցուցանել զարդար վճիռ հատուցմանն. պահողացն՝ զվայելս դրախտին և զանմահ կեանս. և *ոչ* պահողացն՝ զարտաքսիլն և զմահու մեռանիլն: - 277. Է՛ և ներքին և վերին վայր. մարմին և անմարմին. և այլք սոյնպիսիք տարբերութիւնք են բնութեան և *ո՛չ* թշնամիք: - 278. Զի նախ քան զմեղանչելն ի դրախտին՝ մարդն կարէ՛ր մեղանչել, և կարէր *ոչ* մեղանչել. կարէր մեռանիլ, և կարէր *ոչ* մեռանիլ: - 278. Իսկ յետ մեղացն յաշխարհիս այս՝ կարէ՛ մեղանչել, և *ո՛չ* կարէ ոչ մեղանչել: - 278. Կարէ՛ մեռանիլ, և *ո՛չ* կարէ *ոչ* մեռանիլ: - 278. Իսկ յետ մահուն ի հանդերձեալն. *ո՛չ* կարէ մեղանչել, և անկա՛ր է մեղանչել: - 278. *Ո՛չ* կարէ մեռանիլ. և անկա՛ր է մեռանիլ. և այլն նմանապէս: - 278. Վասն է՞ր *ոչ* ամաչէին ադամ և կինն: - 278. Նախ՝ վասն պարզամտութեանն. զի որպէս տղայք *ո՛չ* ամաչեն անծածուկ ունելով զմասունս. նոյնպէս և նոքա: - 278. Չորրորդ՝ զի ընդ ծառս դրախտին և յանթառամ ծաղիկս և ի բազմապատիկ պտուղսն պշուցեալ էին, *ո՛չ* զերկնչիլն գիտէին և *ո՛չ* զամաչելն: - 278. Հինգերորդ՝ զի մտօք յաստուածային խոկումն էին վերացեալ, և զգայարանօք ընդ գործս հրաշիցն. և *ոչ* էին պարապեալ քննութեան անձին...: - 278. Ի խօսակցութենէն, զի մինչ ի յորդանան այլ *ո՛չ* ասի հօր աստուծոյ խօսիլ ընդ մարդկան: - 279. Ի քահանայութենէն, զի *ո՛չ* իշխեաց պատարագ մատուցանել ի կեանս իւր: - 279. Վեցերորդ՝ զի *ո՛չ* զղջացաւ մեղա՛յ ասելով: - 279. Ութերորդ՝ մաշկեղէն հանդերձն. *ո՛չ* ըստ ոմանց թէ մորթ մարմնոյս, զի ունէր զայս ի ստեղծմանէն: - 280. Իններորդ՝ խորհրդակից ունել *ո՛չ* զթունարկու օձն. այսինքն զարկածք չարին. այլ զպատուիրանս աստուծոյ որ ի գիրս սուրբս: - 281. Նոքա գառն դնէին, և մեք *ո՛չ:* - 284. Եւ զի աւելորդ ծորումն *ո՛չ* էր ի քրիստոս: - 285. Վաթսունև**ե**, Վասն ուխտաւորաց որ միս չուտէին և *ո՛չ* գինի: - 285. Վաթսունև**թ**, Մովսէս ետես զերկիրն և *ո՛չ* եմուտ: - 285. Եօթանասունևմի, *Ո՛չ* հացիւ կեցցէ մարդ: - 285. Իսկ կայեն զի *ո՛չ* այսպիսի կամօք մատոյց՝ անարգեցաւ եօթնիցս ընդդիմակօքն: - 287. Զի *ո՛չ* հաճեցաւ ի նա և *ո՛չ* ի զոհս նորա. և տրտմեցան երեսք նորա և այլն: - 287. Զանէծքն *ո՛չ* յինքենէ ասաց զի մի՛ սատակեսցի. այլ յերկիր ետ որ է՛ զէն մահու և չարչարիչ՝ և գերեզման յետոյ: - 287. Երրորդ՝ յուսացաւ կոչել զանուն տեառն աստուծոյ ի յօգնութիւն. զոր մարդիկ յուսահատեալ էին եթէ վասն մեղաց մերոց եթող զմեզ աստուած ի ձեռաց. և նա ի յօգնութիւն կոչեաց զանուն տեառն աստուծոյ. այսինքն զի տէր է՝ *ո՛չ* գարշի ի ծառայից իւրոց. և զի աստուած է՝ էա՛ծ զմեզ աստ *ոչ* ի կորուսանել, այլ ի կեցուցանել: - 289. Ի դրախտն, զի թանձր մարմնով *ո՛չ* բնակին յիմանալեացն կայանս. և յօդս կախիլ անպատշա՛ճ էր: - 289. Եթէ ադամ ի դրախտին *ո՛չ* կարէր մնալ անմահ: - 289. Եւ թէ՝ ի յարութեանն *ո՛չ* յառնեն մեռեալք: - 289. Երրորդ՝ զի *ո՛չ* հայէր ի վեր. երկաթի կապիճս եդեալ ի գլուխն: - 290. Չորրորդ՝ զի պտուղ *ո՛չ* եկեր. որով նա ուտելովն զրկեցաւ կենաց. և այսպիսիքս յերկինս հանեն զմարդն: - 290. Վասն է՞ր նահապետքն ի **ռ** ամն *ո՛չ* հասին. այլ **թճ**, աւելի և կամ պակաս ապրեցան: - 290. Եւ յորժամ կորոյս զդրախտին կեանքն, այլ *ոչ* հասին ի նոյն: - 290. Եւ այլք ասեն ընդդէմ այսմ, եթէ յետ **ռ** ամին ի դրախտէն փոխիլոց էին յարքայութիւնն թէ պահէին զպատուիրանն. և յորժամ ելին ի դրախտէն՝ ի նոյն թիւն *ո՛չ* հասին: - 290. Եւ այս երկոքեանս սո՛ւտ են. և *ո՛չ* են ընդունելի մեզ: - 290. Զի վասն առաջնոյն ասեն վարդապետք, եթէ ադամ *ո՛չ* եկաց ի դրախտին **ռ** ամ, կամ աւելի և կամ պակաս, այլ մի օր. մանաւանդ **է** ժամ: - 290. Այլ ադամ յերեկո՛յն ել ի դրախտէն. և *ո՛չ* կատարեաց զօրն բոլոր. վասն այն նախնիքն *ո՛չ* կատարեն զհազար ամն բոլոր: - 290. Երրորդ՝ **թ** դաս հրեշտակաց է յերկինս. և **ժ**երորդն մարդն կատարումն թուոյ նոցա. վասն այն ի կեանս այս *ո՛չ* հասանեն ի **ռ** թիւն կատարեալ. զի աստ *ո՛չ* լինի կատարումն դասուցն այլ ի հանդերձեալն: - 291. Վասն այն նահապետքն զհարիւրն պատկե՛ն որ է՛ ժամանակեան. և ի հազարն *ո՛չ* հասանին որ մշտնջենաւորն է: - 291. Իսկ վարդապետք ասեն թէ՝ չեմք նման առաջնոցն *ո՛չ* ամօք և *ո՛չ* վաստակօք: - 291. Իսկ այժմ ամենայն ոք ի գրեալսն ուսանի զպատուիրանս աստուծոյ և *ո՛չ* ի հարց իւրեանց: - 291. Այլ մեղքն նուազէ՛ զկեանքն և *ո՛չ* տայ հասանիլ ի կէտ կոչմանն: - 291.

Ընդէ՞ր *ոչ* գիտէ մարդ զկատարած. կենաց իւրոց և զկատարած աշխարհի: - 292. Ասեմք թէ *ո՛չ* էր պատշաճ մեզ գիտել զօր մահուն, և *ո՛չ* զվախճան աշխարհի...: - 292. Նա՛խ՝ եթէ գիտէ՞ր մարդ զօր մահուն, *ո՛չ* շինէր և *ո՛չ* տնկէր և *ոչ* ծնանէր զաւակ. և լինէր պատճառ աւերման: - 292. Երկրորդ՝ զի մարդիկք բազում ամս յանձախէին ի մեղս յուսով վերջին ապաշխարութեանն. և յետոյ սովորեալ ի մեղս *ո՛չ* կարէին դառնալ, ամենքին կորնչէին: - 292. Նոյն պատճառ է և *ո՛չ* գիտելոյ զկատարած կենցաղոյս: - 292. Դարձեալ՝ գիտութիւն կատարածի խափանէ՛ զվարձս հաւատոյ. զի վարձքն ի հաւա՛տն է և *ո՛չ* ի գիտութիւնն. վասն այն հաւատով ակն ունիմք կատարածի և *ո՛չ* գիտութեամբ: - 292. Դարձեալ՝ բնականապէս ըմբռնէ գիտութիւնն զայն զոր ներգործէ բնութիւնն. իսկ գործն աստուածային՝ գիտութեամբ *ո՛չ* ըմբռնի. այլ հաւատո՛վք իմանի: - 292. Ի սմա՛ ժողովեալ գազանաբարոյ և հանդարտ մարդկան *ո՛չ* մեղանչելով միմեանց: - 294. **Կերակուր կերի՞ն ի տապանին, թէ *ոչ:* - 294. *Ո՛չ* կերին. զի թէպէտ ժողովեաց, սակայն *ո՛չ* կերին. այլ շնորհօքն աստուծոյ կացին որպէս մանուկն յարգանդի մօրն ապրի:** - 294. **Կամ որպէս ասեն թէ՝ ներսէս անուն արուեստաւոր տապանին՝ շինեաց իւր տուն ի վերոյ կողմանէ. և զի *ո՛չ* էր հրամանաւն աստուծոյ՝ սատակեցաւ նա՛ անդ, և զնորա գէշն ուտէր ագռաւն:** - 294. Նախ՝ զի արիւնն և շունչն կենդանութիւնն է որ է աստուծոյ բաժին. վասն այն արիւնն *ո՛չ* է ուտելի: - 295. Չորրորդ՝ ի յարութեանն խնդրի ամենայն արիւն մարդոյ և ժողովի. վասն այն այժմ *ո՛չ* է ուտելի: - 295. **Հինգերորդ՝ արեամբն ազգակից են մարդ և անասուն. վասն որոյ *ո՛չ* է պարտ մարդոյ զհարազատն իւր ուտել**: - 295. Ութերորդ՝ հուրն և օդն առաւել է յարիւնն զի առնօղք են. և յայտ է ի խառնումն միութեանց. զի հուրն մածուցանէ՛, և ջուրն և հողն մածնուն, և օդն սնուցանէ. վասն այն զարարօղն և զսնուցանօղն *ո՛չ* ուտեմք: - 295. Եւ միապէս է մեր և կենդանեաց. վասն որոյ *ո՛չ* է պարտ զսկիզբն գոյացութեան մերոյ ուտել: - 295. Նա՛խ՝ է՛ աննշանն զորս որոշէ՛ օրէնքն. որ *ո՛չ* ունի կճղակս և որոճ և այլն՝ անսուրբ է: - 295. Երրորդ՝ զպնդագոյնն, որպէս ոսկր կամ եղջիւր՝ *ո՛չ* ուտեմք: - 296. Ընդէ՞ր կնոջ զենեալն *ոչ* ուտի: - 296. Այլազգւոյ զենեալն վասն է՞ր *ոչ* ուտի: - 296. Նոյնդ է պատճառն որպէս կնոջ զենեալն *ո՛չ* ուտի: - 296. Եւ դարձեալ՝ այլազգին զհոգին իւր սպանեալ է մեղօք. և մեռելոյ զենեալն *ո՛չ* ուտի. որպէս ի քարէ անկեալն կամ ի կարկատէ՛ հարեալն *ո՛չ* ուտի: - 296. Վասն է՞ր քահանայի զենեալն *ո՛չ* ուտի: - 296. Նա՛խ՝ զի քահանայն արեան բարեխօս է, և *ո՛չ* արիւնահեղ: - 296. Ձձուկն ընդէ՞ր *ոչ* զենումք: - 296. Զենուլ ձկանն այն է՝ որ ի ջրոյն հանեն. զի զշունչ ջրոյ ունի և *ո՛չ* զշունչ օդոյ: - 296. Եւ խնդրեցին զդրախտն թէ ա՛նդ զերծանիմք և *ո՛չ* գտին. զի ծովք և շամանդաղ պատեալ էին: - 296. Եւ խնդրեցին զտապանն և զնա *ոչ* գտին. զի *ո՛չ* է հրաման տայ որ մարդն զարգանդ մօր իւրոյ տեսցէ: - 296. Եւ զի մի՛ մարդիկ ի պատճառս նորա մեղս գործեսցեն. վասն որոյ *ո՛չ* կարէին տեսանել զտապանն: - 296. Իսկ խառնակել՝ *ո՛չ* զշփոթելն ասէ որ անլո՛ւր էին միմեանց լեզուին: - 297. Զորս հրեշտակս կոչէ *ո՛չ* վասն առաքինութեան, այլ զի պատգամաբերք և թարգմանք եղեն աստուծոյ իմաստութեանն առ մեզ ի ձեռն լեզուաց գիտութեանն: - 297. Նմանապէս և զայս սահման լեզուի ո՛չ ոք կարէ փոփոխել. *ո՛չ* բռնաւոր և *ո՛չ* իշխան. բայց միայն աստուած որ եդ զսա: - 298. Եւ *ո՛չ* որպէս ասեն ոմանք թէ ի լեզուս ադամայ: - 298. Ասեմք եթէ՝ քաղդէացին որ է՛ արապն. զի մնաց առ եբեր և *ո՛չ* խառնակեցաւ: - 298. Եւ ի հողմոյն յայնմանէ հոտ անուշութեան դրախտին բուրեաց ի նոսա. և տեսիլ իմանալի տեսին, և լուր իմանալի լուան. և յայնմանէ մոռացան զառաջինն. և որպէս ի քնոյ զարթուցեալք *ո՛չ* լսէին զլեզուս միմեանց: - 298. Իսկ ոմանք զարաբացիս և զմակեդոնացիս՝ յեբրայեցիս *համարին* և կէսք *ոչ:* - 299. **Իսկ վիրք և աղւանք *ո՛չ* կատարեալ գրով. այլ առեալ ի հայոց. որպէս ասորին և խմայէլացին յեբրայեցւոցն:** - 299. Համեղական հայն որ կարօ՛ղ է զամենայն լեզուս յինքն ամփոփել և բոլոր խօսիլ. և այլքն *ո՛չ*՝ որպէս ասացաւ ի վերոյ: - 299. *Ո՛չ* երկանուն է և ո՛չ այլ ինչ. այլ իրինոս ասէ՛ զպատճառն և դժուա՛ր է հասկանալոյ: - 300. Նոյ օրհնեաց զսեմ, և սեմայ որդի *ո՛չ* գոյր նման իւր որ օրհնէր զնա: - 300. Նախ՝ զի մելքիսեդեկ ունէր պատարագ հաց և գինի. և աբրահամ *ո՛չ* ունէր: - 300. Իսկ աբրահամ *ո՛չ:* - 301. Եօթներորդ՝ մելքիսեդեկ ինքնին մատոյց զպատարագն քաղցելոց և ծարաւելոց. որպէս և քրիստոս *ո՛չ* միջնորդօք հրեշտակաց կամ մարդկան...: - 301. Ութերորդ՝ որպէս և աբրահամ ճաշակեաց զպատարագն մելքիսեդեկի և *ո՛չ* հաղորդեցաւ ընչիցն սոդոմայ: - 301. Նոյնպէս և որք հաղորդին մարմնոյն քրիստոսի, *ո՛չ* մերձենան ի զանազան ախտս մարմնական անթլփատութեան և զոհից դիւական: - 301. Երրորդ՝ զի մելքիսեդեկ քահանայ *ո՛չ* ըստ մարմնական ինչ օծմամբ իւղոյ որպէս այլոցն, այլ շնորհօք հոգւոյն անընդմիջաբար: - 301. Եւ քրիստոսն օծեալ *ո՛չ* ըստ իւղոյ ինչ երևութապէս օծման, այլ միանալով ընդ բանին աստուծոյ՝ ասի օծեալ: - 301. Իններորդ՝ զի զայս *ո՛չ* ի ձեռս ծառայից, այլ ինքնին ընդ առաջել աբրահամու և ետ:

- 302. Եւ տէրն *ո՛չ* ի ձեռս հրեշտակաց սերոբէից և քերովբէից, և *ո՛չ* միջնորդութեամբ մարդկան ընտրելոց նահապետաց մարգարէից առաքելոց կամ մարտիրոսաց: - 302. Երկրորդ՝ զի տեսցեն զբարի օրինակն, և *յո՛չ* օգտիլն՝ առաւել ևս տանջեսցին: - 302. Երկրորդ՝ զի թէ *ո՛չ* օգտեսցին չարքն, առաւել պատժեսցին: - 302. Չորրորդ՝ վասն անհաւատութեան եղև քար. զի *ո՛չ* հաւատաց հրեշտակացն: - 303. Չորրորդ՝ *ո՛չ* առնուլն յընչիցն սողոմայ յաւարէ՛ անտի: - 304. Հինգերորդ՝ որ ասացաւ լինիլ զաւակաց նորա իբրև զաստեղս՝ և *ո՛չ* երկնտեաց: - 304. Եւ զի *ո՛չ* ասաց սառայի զիրն. զի մի՛ մայրական աղետիւ խափա՛ն լիցի գործոյն: - 304. Իսկ հօրն ամենևին *ո՛չ* պղտորեցան խորհուրդք. և *ո՛չ* տրտմեցան սիրտք. և *ո՛չ* տխրեցան դէմք: - 304. Երրորդ՝ ծնաւ իսահակ *ո՛չ* բնականապէս ըստ բնութեան կարգի. զի անցեալ էին զաւուրբք. այլ էր աստուծոյ պարգև: - 304. Զի *ո՛չ* յառնէ կամ ի սերմանէ այլ կուսական ծնունդ: - 305. Եւ տէրն վերջին ի լրումն օրինին ի նոյն քանիսն եղեալ հրամանին. զի *ո՛չ* ելոյծ զօրէնսն, այլ էլից: - 305. Զայս և այլ սոյնպիսիս բազմօրինակ ստուերագրութեամբ առ ճշմարտութիւն իրին. իսկութեամբ *ո՛չ* գոլ անհնարին երկասիրացդ ի սոյն դեգերմամբ զոր ի պարապ ժամու քննութեան: - 306. Նոյն և որ հատանի ի ստենէ. և աւազան կրկին *ո՛չ* է: - 308. **Ա՛րդ՝ դաւանութեամբն գերազա՛նց եմք մարդկան հեթանոսաց. և մկրտութեամբն՝ հրէից. և ծննդեամբն ի հոգւոյն՝ հրեշտակաց. զի նոքա *ո՛չ* ունին ծնանիլ ի հոգւոյն. և *ո՛չ* եղբայր լինի քրիստոսի:** - 309. Եւ թէպէտ ելաց՝ *ո՛չ* եգիտ դարձեալ. զի *ո՛չ* էր բոլոր սրտիւ և ջերմ սիրով: - 309. Եօթներորդ՝ նշանակէ թէ բնական և անփոփոխ *ո՛չ* է անդրանկութիւնն. այլ ստացական և փոփոխական: - 310. Զի որք կամին՝ լինին անդրանիկ գործովք իւրեանց. և որք *ոչ* կամին՝ փոխին և լինին անարգ և վերջին: - 310. Իններորդ՝ ցուցանէ թէ *ո՛չ* է այն անդրանիկն որ նախածին լինի և մարմնովն քաջ. զի *ո՛չ* հաճի տէր ընդ իրանս առն հսկայի. այլ անդրանիկ է այն՝ որ զհաճոյսն աստուծոյ կատարէ: - 310. Իսկ թէ վասն է՞ր *ոչ* ասաց զանունն նմա: - 311. Ասեմք թէ յակոբ *ո՛չ* զներգործութեան անունն հարցանէր աստուծոյ, զի գիտէր որ աստուած էր և ինքն իէլ կոչեցաւ որ է աստուածատես. այլ անուամբ զբնութիւնն և զգոյացութիւնն աստուծոյ կամէր ուսանիլ: - 311. Ա՛րդ՝ ամենայն անուն ի յայլմէ՛ դնի. և ինքն ինքեան անուն *ոչ* դնէ: - 311. Իսկ ինքն զինքն *ո՛չ* անուամբ ճանաչէ, այլ իրօք: - 312. Յաղագս որոյ որպէս մարդ ինքն ինքեան անուն *ո՛չ* դնէ. նոյնպէս և աստուած ինքն ինքեան անուն *ոչ* դնէ: - 312. Ապա յա՛յտ է՝ զի աստուած ինքն ինքեան նախկին և վերջին՝ հաւասար կամ անհաւասար *ո՛չ* ասի. վասն այն իւր անուն *ո՛չ* դնէ: - 312. Իսկ յայլմէ *ո՛չ* դնի աստուծոյ անուն. *ո՛չ* բնութեան. և *ո՛չ* անձնական. զի ո՛չ ոք է նախ քան զնա, և *ո՛չ* հաւասար նմա: - 312. Ասեմք եթէ՝ է ասելն *ո՛չ* զբնութիւն նշանակէ, այլ զանսկիզբն և զանվախճան գոլն: - 312. Եւ ընդ դէմ է մշտնջենաւորին որ ունի սկիզբն և *ո՛չ* վախճան: - 312. Եւ ընդ դէմ է յարածգականին որ ունի վախճան և *ո՛չ* սկիզբն: - 312. Զա՛յս նշանակէ է ասելն և *ո՛չ* բնութիւն կամ գոյացութիւն: - 312. Երրորդ՝ կոտորեալ մանկունքն բեթլեհէմի *ո՛չ* էին ի զաւակացն ռաքէլի որպէս ցուցաւ ի վերոյ: - 312. Վասն նոցա լայր անմխիթար սգով, զի *ո՛չ* եղև մայր նահատակացն: - 312. Վեցերորդ՝ *ո՛չ* յաղթեաց պոռնիկ կինն ողջախոհին յովսեփայ: - 313. Եւ դժոխք *ո՛չ* յաղթեաց տեառն մերոյ. այլ զերծաւ ի նմանէ բոլոր հաւատացելովքն: - 313. Վեշտասաներորդ՝ եղբարքն յովսեփու *ո՛չ* լցան հացիւ մինչև եկին առ յովսէփ: - 314. Եօթներորդ՝ *ո՛չ* ի մուտն և *ոչ* ի յելն՝ զկանայս նոցա *ո՛չ* թուէ. այլ զծնունդքն և զարսն: - 315. Զի ի զալստեան տեառն կնատքն և թոյլքն *ո՛չ* թուին. այլ արիագոյնքն անխտիր. զի ի քրիստոս յիսուս արու և էգ *ո՛չ* է. *ո՛չ* ի մկրտութեանն և *ո՛չ* ի յարութեանն: - 315. Եւ տէր մեր *ո՛չ* երկնչի յումեքէ: - 315. Սիրտ զանմահ աստուածութիւնն ասէ որ *ո՛չ* ննջէ և *ոչ* ի քուն երթայ պահապանն իսրայէլի: - 316. Ուքևմ, չո՛րս են որք հզօրք են և պերճ շրջին ասէ սողոմոն. այսինքն աքաղաղ, և նոխազ, և թագաւոր հրապարակախօս, և առիւծ՝ որ *ո՛չ* դարձուցանէ թիկունս յանասնոց: - 316. Դարձեալ՝ առիւծաբար ել ի յորդանանէ. որպէս ասէ երեմիա «իբր ախոյեան ել ընդդէմ փորձողին ի յանապատ և յաղթեաց նմա». ա՛յս է *ո՛չ* դարձուցանել թիկունս յանասնոց: - 316. Իննևմ, *ո՛չ* յառնէ առիւծն ի տեղւոջէն մինչև հնազանդէ՛ զքշնամիս իւր: - 316. Ա՛րդ՝ *ո՛չ* ասէ թէ ի ներքոյ քոյ. զի զտսա կոխեալ էր քրիստոս: - 316. *Ո՛չ* արար մեղս, և զդժոխս աւերեաց: - 317. Նախ՝ կոչի մարմինն զգեստ՝ գոյացական՝ անփոփոխ և անքակ միութեամբն. զի բաժանմամբ մարմնոյն և բանին *ո՛չ* է քրիստոս. որպէս ի բաժանիլ հոգւոյ և մարմնոյ *ո՛չ* է մարդ: - 318. Այսպէս կոչի և զգեստ մարմնոյն. զի արտաքին զգեստն որպէս ծիրանին թագաւորի ա՛յլ է ի զգեցողէն և պատահական նմա և փոփոխական. այսպէս զգեստ *ո՛չ* ասի մարմին նորա. այլ եկեղեցի սուրբ որպէս ասացաւ: - 319. Եւ երկրորդ՝ զի լրիւ աստուածութիւն բանին է՛ բովանդակեալ ի մարմնի և *ո՛չ* մասամբ...: - 319. Այլ արտաքին տաճար որպէս բնակարան և որիշ ի նմանէ՝ *ո՛չ* է և *ո՛չ* ասի: - 319. Է՛ և այլ իմն պայծառ տեսութիւն այսմ բանի.

զի զգեստ և տաճար կոչի մարմինն ստուգապէս *ո՛չ* աստուածութեանն քրիստոսի՝ որ *ո՛չ* բաժանեցաւ ի մարմնոյն *ոչ* ի մահ և *ո՛չ* ի գերեզմանն: - 319. Եւ այլք ասեն թէ մովսէս գրեաց ի յանդիմանութիւն որդւոցն յակոբայ. որք առին զօրէնս և *ո՛չ* պահեցին. և զաստուծոյ զամենայն երախտիսն մոռացան: - 320. *Ո՛չ* կարեն դեք զտարերքս փոփոխել. և *ո՛չ* հուր և *ո՛չ* շանթս և ո՛չ այլ ինչ ի տարերացս առնել որպէս կարծեն ոմանք: - 321. Որդիքն յոբայ որք մեռան արդա՞րք էին թէ *ոչ:* - 322. Երևի թէ *ո՛չ*. զի յուտել և ըմպել մեռան որ է մեղք: - 322. Այն է, որ բովանդակ մարմինն այնպէս խոցոտեալ էր կեղով՝ և լուծեալ ի շարաւ և ի թարախ. որ *ո՛չ* կարէր յոտին կալ կամ սողալ ուրեք. և *ո՛չ* ըմբռնիւր յայլմէ: - 322-323. Երրորդ՝ զի զազգաւն զազգակիցն մխիթարէր և *ո՛չ* խնդրէր բժիշկ. զի մի՛ ի մարդկանէ լիցի օգնութիւն նմա: - 323. Ասեմ՝ թէ պահօք և աղօթիւք հեռանայ ի մարմնոյ մարդոյն և *ո՛չ* լըլկէ: - 324. Իսկ ի հոգւոյ մարդոյն **բ** իր հեռացուցանեն զդևսն. այսինքն **խոնարհութեամբ և ճշմարտութեամբ**. վասն զի զերկուքս զայս *ո՛չ* ունի սատանայ. և ամենևին փախչի և ատէ՛ զխոնարհութիւն և զճշմարտութիւն: - 324. Վասն երկրորդին հակառակէր ընդ նոսա, զի մի՛ սուտ լիցի վկայութիւն աստուծոյ ի վերայ նորա. զի և մեք ուսցուք՝ վասն վկայութեանն աստուծոյ այնչափ նախատինս յանձն առնուլ և *ո՛չ* ուրանալ. որպէս վկայից դասքն նահատակեցան: - 324. Երկրորդ՝ զի թէ *ո՛չ* օգտին՝ ափիբերան լիցին ի հանդերձեալն: - 324. Այսինքն նոքա կամէին որ զնոսա արդարս ասէր յոբ՝ և զինքն յանցաւոր՝ և *ո՛չ* ասաց...: - 324. Չորրորդ՝ կեղծաւորութիւն է և խաբէութիւն գովելն զչարն և զանիրաւն. վասն այն *ո՛չ* ասաց բարեկամացն բարիս՝ զի չարք էին: - 325. Չորրորդ՝ զի ի ստեղծանելն զմարդն աստուած *ո՛չ* վկայեաց թէ բարի է որպէս ա՛յլ ամենայն ստեղծուածոցն: - 325. Արդ զոր ադամայ *ո՛չ* վկայեաց, խօսեցաւ ընդ յակոբ և վկայեաց արդար և անարատ գոլ: - 325-326. Վեցերորդ՝ խօսեցաւ աստուած՝ և զամենայն անճառելի գիտութիւնս վասն արարածոց ուսոյց նմա. զոր *ոչ* գիտէին մարդիկ զլինելութիւն երկնի և երկրի և ծովու և կենդանեաց: - 326. Ոմանք **է** ամ ասեն. ըստ որում ի վեցից վշտաց փրկեսցէ, և յեօթներորդին *ո՛չ* փորձեսցի չար: - 326. Ութերորդ՝ յոբ *ո՛չ* անիծանէր, այլ աղօթիւքն զբարեկամսն փրկէր. և տէր մեր ի վերայ խաչողացն աղօթէր: - 327. Եւ զի *ո՛չ* նկարեցաւ ի պատկեր կռոց և *ո՛չ* պաշտեցաւ մորենին. վասն այն տէր երևեցաւ ի նմա: - 330. Նա՛խ՝ մորենին է՛ նշանակ ժողովրդեանն իսրայէլի յեգիպտոս, որ վառեալ տանջիւր և *ո՛չ* սպառիւր. այլ առաւելոյր օրհնութեամբն աստուծոյ: - 331. Դարձեալ՝ մորենին էր կոյսն մարիամ, որ զիմանալի հուր աստուածութեանն յինքեան կրելով *ո՛չ* կիզաւ...: - 331. Զի որ ի լեառն սուրբ առ աստուած մերձենայ, *ո՛չ* է պարտ յանկողինս կնոջ հեշտանալ...: - 331. Այս է թէ՝ եթէ *ո՛չ* ունիցին ժոյժ ընդ դէմ ցանկութեան, զգեցցին զօրինաւորն: - 331. Երկրորդ՝ ընդ դէմ չէիցն է որք միայն անուանին, այլ էութեամբ *ո՛չ* են աստուածք. այլ նիւթ են եղական: - 332. Նա՛խ ցուցանէ՛ թէ՝ ձեռքդ այդ գրեսցէ օրէնս որով սրբին պահօղք, և պղծին *ո՛չ* պահօղք: - 332. Վեցերորդ՝ ձեռն հօր է՛ միածին որդին որ եղ ի ծոցոյ հօր և էառ զօձաձև բնութիւնս մեր. և դարձեալ եղ առ հայր, ի նոյն բնութենէն *ո՛չ* կացեալ ի բաց: - 333. Վասն է՞ր տկար զեռնօք տանջեաց զեգիպտոս, և *ո՛չ* առիւծ կամ արջ կամ այլ ինչ հրաշունչ կենդանեօք: - 333. Երկրորդ՝ ցոյցք է տկարութեան եգիպտացւոցն. որ *ո՛չ* կարացին ընդ դէմ կալ տկար զեռնոցն: - 333. Չորրորդ՝ շանաճանճն. զի շնաբարոյք էին և մոլէին յառնականայս շնութեամբ. զի շանց է *ոչ* զուգակցիլ որպէս զայլ կենդանիս...: - 334. Եօթներորդ՝ կարկուտն հրախառն. զի **բ** հակառակն միաբանեալ ջուր և հուր ի կորուստ ամբարշտացն և *ո՛չ* ապականէին զմիմեանս: - 334. Այլ և նստեալն *ո՛չ* կարէր կանգնիլ. և հուր և լոյս ճրագի *ո՛չ* կարէր ներգործել ի թանձրութենէն: - 334. Զի որպէս ստւերն *ո՛չ* է մարդ, այլ նմանութիւն մարդոյ: - 335. Եւ թէ ճշմարիտ էր ընդէ՞ր նո՛ր ինչ *ոչ* առնէին: - 335. Երկրորդ՝ զի գաւազանն մովսէսի մի վիշապ եղեալ կլանէր զբազում վիշապս նոցա որ և հե՛տն միանգամայն *ո՛չ* երևէր. ընդէ՞ր ապա և նոցայն *ո՛չ* եկուլ զմովսէսին. քանզի սո՛ւտ էր: - 335. Երրորդ՝ կեղն և խաղաւարտն եղև և ի կախարդսն և զայլ հարւածսն կրեցին. և *ո՛չ* կարէին ի մովսէս և յահարոն դարձուցանել զնոյնս: - 335. Չորրորդ յա՛յտ է, զի ինքեանք խոստովանեցան թէ մատն աստուծոյ է այս. և *ո՛չ* կարացին այնպէս առնել: - 335. Իսկ դևքն փոխեն զերևակայութիւնն և զզգայարանս, այլ *ո՛չ* զմիտս: - 336. Իսկ հրեշտակք կարե՛ն փոխել զմիտս և շրջել ի բարին. նաև զերևակայութիւնս և զզգայարանս, այլ *ո՛չ* զկամս: - 336. Զառաջիկայն և զմիտս մարդկան ո՛չ ոք գիտէ. *ո՛չ* հրեշտակք և *ո՛չ* դևք և *ո՛չ* մարդիկք. բայց միայն աստուած որ քննէ զսիրտս և զերիկամունս: - 336. Նախ՝ թոյլ տա՛լն է աստուծոյ. որ անձնիշխան կամօք ամրանայ մարդ ի չարն, և աստուած ներէ՛ և *ո՛չ* երկիւղիւ խրատէ զնա: - 336. Որպէս սովորութիւն է մարդոյ որ վատացն ասէ, ե՛ս արարի զայդ բանդ որ զքեզ ի քո կամդ թողի և *ո՛չ* խրատեցի: - 336. Երրորդ, զի թէ յեգիպտոս դարձցին՝ *ո՛չ* իշխեսցեն. զի ի գողօ՛նս էր այն նոցա: - 336. *Ո՛չ* է արդարութիւն.

այլ նա՛ ընդ զրկողացն դատի, և դու ընդ գողոցն: - 337. Եւ այն նոցա մեղք *ո՛չ* եղև վասն բ պատճառի: - 337. Նա՛խ՝ զի հրամանաւն աստուծոյ էր. որպէս պոռնկութիւնն ովսէի և սպանութիւնն փենեհէսի *ո՛չ* էր մեղք: - 337. Իսկ ըստ Նսեբեայ, **վպք** ա՛մ է. զկայնան **ճի** ամ ի ներս առեալ, որ է՛ որդի արփաքսաթայ՝ և հայր սաղայի. զոր յիշէ աւետարանն, և *ո՛չ* յիշէ մովսէս: - 337. Նա՛խ՝ զի *ո՛չ* էր աշխատեալ ի կաւ գործոյն, *ո՛չ* է առ յընչիցն եգիպտոսի: - 338. Երկրորդ, բոլո՛ր իր է. *ո՛չ* սկիզբն է և *ո՛չ* կատարած: - 338. Չորրորդ՝ զի գիտացեն թէ գոյնք և համք զանազան կերակրոց և պտղոց *ո՛չ* իւրովի պատրաստին, այլ ի շնորհացն աստուծոյ: - 339. Երկրորդ՝ զմանանայն որ շատ ժողովեաց՝ *ո՛չ* յաւելաւ. և նւազն *ո՛չ* պակասեաց: - 339. Եւ **ե** միշտ՝ և առ *ո՛չ* միշտ. զի կերպն փոխեցաւ առ նորս: - 340. Նա՛խ՝ զի օրէնքն կանոն և սահմա՛ն է առնելեաց և *ոչ* առնելեաց: - 340. Ասեմք եթէ՝ *ո՛չ* է պարտ: - 341. Եւ յայտ է զի յետ մկրտութեանն պա՛րտ է հաղորդել, և նոքա *ո՛չ* առնեն որպէս ցուցաւ: - 341. **Եօթներորդ՝ զի նոր իմն չնաշխարհիկ կազմեաց. նոր ժողովրդեանն և նոր օրինացն, իցէ և նո՛ր տաճար հռչակեալ ընդ ծով և ընդ ցամաք. որպէս պսակ և փառք արդարոցն է՛ զոր ակն *ո՛չ* ետես և ունկն *ո՛չ* լուաւ. նոյնպէս և սա՛ ի զգալիսս անհաս ի մտաց մարդկան:** - 342. Նա՛խ՝ զի ամենայն իր որ ընտի՛ր է՝ չա՛փ ունի և սահման. և *ո՛չ* շփոթումն. վասն այն կանգնաւ չափէ զնոսա: - 344. Որպէս հոգի մեր սկիզբն ունին, այլ *ո՛չ* վախճան: - 344. Չորրորդ՝ և բովանդակն **ե** կանգուն, ցուցանէ թէ *ո՛չ* են նոքա ի չորից տարերց. այլ **ե**երորդ էութիւն են. որպէս ասեն ոմանք. անմարմին անփոփոխ և անմահ. որ *ո՛չ* է տարրականացս: - 344. Իսկ վկայութիւնն որ է՛ տախտակքն օրինաց. զի վկայե՛ն պահողացն բարիս. և *ոչ* պահողացն պատիժս: - 345. Երեմիա և աշակերտն՝ տարան ի գիշերի զտապանակն և որ առ նմայն էին՝ ի լեառն սինա. և անդ կնքեցին ի վիմին անուամբն աստուծոյ ասելով, ո՛չ ոք բացցէ զսա՞ թէ *ոչ* մովսէս որ եբերն. և ո՛չ ոք բացցէ՝ թէ *ոչ* ահարոն: - 345. Եւ ի են *ո՛չ* ժամանեալ, պակաս գոլով մարմնոցն: - 346. Ծաղիկ զմռնեաց. նմանէ պոյտն ծաղկի. և Կինամոն. արմա՛տ է խոտոյ ի տմորիս հայոց. և Խնկեղէգն. որ յարմատս *ո՛չ* ամենայն եղեգան լինի. և Յիրիկ. խէ՛ժ է ծառոց: - 349. Երկրորդ՝ զի կորուսեալք էին հոգւով, *ո՛չ* պահեաց զօրէնս նոցա: - 349. Ա՛յս է պատճառ խորտակելոյ տախտակին. և *ո՛չ* որպէս ասեն ոմանք թէ գիրն ջնջեալ էր: - 350. Չորրորդ՝ յօրինակ դրախտին ադամայ՝ որ ծրի տուաւ և *ո՛չ* պահեաց. վասն այն որդւոց նորա գործով և աշխատութեամբ պարգևէ: - 350. Իսկ մովսէս *ո՛չ* բնութեամբ՝ այլ անուամբ և գործով. զի բարի առնէր և պատուհասէր: - 350. Իսկ կուռքն միայն անուամբ. *ո՛չ* բնութեամբ և *ո՛չ* գործով: - 350. Նոքա *ո՛չ* հաւասար մովսէսի ներեն զքրիստոս աստուած. զի մովսէս աստուած կոչեցաւ. և զնա մարդ խոստովանին սոսկ: - 350. Նա՛խ ցուցնէ զառատութիւն պարգևացն աստուծոյ, որ *ո՛չ* զուգակշիռ գործոցն հատուցանէ, այլ բազմապատիկ և հազարաւոր: - 351. Այսինքն մինչև **գ** ազգն ներեմ. կամ **գ** դարս. և ի չորրորդն *ո՛չ* դառնամ ի վրէժ խնդրելոյ. այլ հատուցանեմ զմեղս հարց յորդիս: - 351. Այլ զներգործական մեղս անձին հօր՝ *ո՛չ* հատուցանէ անձն որդւոյ. ապա թէ ոչ՝ չար ծնողաց *ո՛չ* լինէր բարի զաւակ: - 351. Երբ զերեք հասակի մեղսն ներէ աստուած՝ և թէ ի չորրորդն *ո՛չ* զղջանայ, յայնժամ պատուհասէ՛: - 351. Յինգերորդ՝ խնայեաց ի նա՛ տէր *ո՛չ* ցուցանել զերեսս իւր. այն կոչեաց զնա՛ տէր և արար զաչս նորա տէր և պատժօղ: - 352. Եօթներորդ՝ զի որ աշակերտի մովսէսի՝ զլոյս ընդունի. և որ *ո՛չ* աշակերտի՝ ի խաւար մնացէ որպէս քանանացիքն: - 352. Իններորդ՝ ի յօրինակ արդարոցն լուսոյն. որ *ո՛չ* կարօտին արտաքին լուսոյ, սոյնպէս և մովսէս *ո՛չ* կարօտէր. զի ո՛չ բնական էր լոյսն. զի աչք բնական տեսութիւն ունի, այլ ո՛չ թէ լոյս: - 352. Տասներորդ՝ զի որ զայնպիսի լոյսն յինքն ընկալաւ, զամօթ առականացն ադամայ *ո՛չ* ստացաւ: - 352. Դարձեալ՝ տէրն այլոց տայ զլոյսն. և մովսէս *ո՛չ* կարէ: - 352. Երրորդ՝ զձայնն միայն լսեցին և զտեսիլն *ո՛չ* տեսին. և մեք լուաք և տեսաք և շօշափեցաք զբանն կենաց: - 353. Յինգերորդ, նոքա մատուցանէին պատարագ նախ վասն իւրեանց, և ապա՛ վասն ժողովրդեանն անգիտութեան. իսկ տէրն մեր *ո՛չ* արար մեղս ըստ մարգարէին...: - 354. Իններորդ, նոքա ծառայաբար մատուցանէին. ուստի յա՛յտ է զի *ո՛չ* կարէին նստիլ ի սրբութիւնսն կամ ի քաւութիւնսն...: - 354. Մետասաներորդ, նոքա *ո՛չ* իշխէին ճաշակել զպատարագս իւրեանց...: - 355. Յնգետասաներորդ, նոցայն քահանայապետ մովսէս և ահարոն *ո՛չ* կարացին մտանել յերկիրն պարգևաց. իսկ քահանայապետն մեր էանց ընդ երկինս երկնից...: - 355. Վասն է՞ր մեղր *ո՛չ* ելանէր ի սեղանն: - 355. Երկրորդ՝ զի աղ *ո՛չ* տանի: - 356. Երրորդ՝ մեղրն *ո՛չ* է վաստակ. ի մեր աշխատանա՛ց է նուիրելի աստուծոյ: - 356. Իսկ այն որ զմեղրովն պտուղն նուիրէին քահանայից, բայց ի սեղանն *ոչ:* - 356. **Երկրորդ՝ օրինաւոր ամուսնութիւնն պատուական է վասն որդեծնութեան. այլ *ո՛չ* է նա՛ առաքինութիւն. որպէս կուսութիւն՝ պահք՝ և աղօթք**: - 356. Իսկ զի խմոր *ո՛չ* խառնէին: - 356. Երկրորդ, զիպարտացեալ փառքն նշանակէ. զոր *ո՛չ* է պարտ խառնել ի բարիս: - 356. Վեցերորդ, խմորունն *ո՛չ* է

կենդանի հաց. այլ թոյլ: - 356. Յին պատարագն վասն է՞ր աղիւ կատարէր և նորս *ոչ:* - 356. Ա՛րդ՝ ի ճշմարտութիւնն *ո՛չ* է օրինակ. վասն որոյ ո՛չ խառնի աղ: - 356. Ա՛րդ՝ ի ճշմարտութիւնն ո՛չ է օրինակ. վասն որոյ *ո՛չ* խառնի աղ: - 356. Նախ՝ մանանայն, ուր *ո՛չ* խառնիւր աղ...: - 356. Ա՛րդ՝ մանանայն նշանակէ՛ զփրկական խորհուրդն ուր *ո՛չ* է աղ: - 356. Վասն է՞ր յերեսաց սեղանն հաց և գինի և գառն դնէին. և մեք զգառն *ո՛չ* դնեմք: - 357. Գառն օրինա՛կ էր քրիստոսի. զի կոչեցաւ գառն աստուծոյ. ա՛յլ զգալի գառն *ո՛չ* եղև: - 357. Նաշիհ և իւղ զանգեալ և *ո՛չ* եփեալ, նշանա՛կ է նոցա՝ որ ի փորձութիւնս մտեալ և փութով ելեալ ի ձեռն աղօթից...: - 357. Իսկ որ վասն մեղաց նաշիհ իւղ և խունկ *ոչ* դնէին. զի տրտմութիւն և խաւար է մեղքն, և գարշ հոտ գայ ի խղճմտանացն մինչև ապաշխարեսցէ: - 357. Իններորդ, պատարագ ուխտի. որ *ո՛չ* վասն երախտեաց ինչ, այլ իւր կամաւ ուխտեալ. որ յերկրորդ օրն ևս ուտէին զմիսն: - 359. Նա՛խ՝ բերել ի դուռն խորանին և տաճարին. և *ո՛չ* ի բազում մեհեանս. զի ցուցցէ զմիոն աստուած՝ և յանուն նորա ընծայել: - 359. Եւ առաջին տեառն սպանանել. որ զծածուկս տեսանէ և *ո՛չ* կեղծիւք ինչ: - 360. Եւ այն՝ զի զամենայն ճարպ և զամենայն արիւն *ո՛չ* ուտէին յամենայն տեղիս բնակութեան իւրեանց: - 360. Այսինքն զամենայն յաջողուածս հոգևոր և մարմնաւոր, և զմասն անմահութեան կենաց յուսոյն, *ո՛չ* վասն մեր արժանաւորութեան համարել. այլ բարութեան և ողորմութեանն աստուծոյ: - 360. Կենդանեաց զենմունքն զի յանունն աստուծոյ էր՝ սրբէր զմարդ. վասն է՞ր ապա *ոչ* սրբեին կռապաշտքն. զի և նոքա յաստուծոյ անունն զոհէին և խնկէին: - 361. Եւ *ո՛չ* յօշէին զթռչունքն. զի անբաժանելի՛ է յինքեան աստուածութիւնն և մարդկութիւնն. այլ և զբազումս հաղորդութեամբն իւրով մի՛ արար անբաժանելի: - 361. Եւ միւսն, որ զմարմին մեր պատարագեմք միշտ. սիրտ սուրբ և հոգի խոնարհ ունելով. զոր աստուած *ո՛չ* արհամարհէ: - 363. Յասք և իրաւունք քահանայից մե՞ղք է թէ *ոչ:* - 363. Յորժամ զգործ քահանայի ունիցին՝ *ո՛չ* է մեղք. այլ սրբութիւն: - 363. Երկրորդ, զի ի նուիրացն աստուծոյ առնուն զբաժին քահանայքն և *ո՛չ* ի մարդոյ. և ամենայն ոք աստուծոյ տայ և *ո՛չ* մարդոյ: - 363. Այլ որ ուղիղն է, մովսէս յամենայն ժամ մտանէր ի սուրբն սրբոց. և ահարոն մի՛ անգամ ի տարւոջն. և քահանայքն *ո՛չ* մտանէին: - 364. Եւ զգեստ քահանայութեանն *ո՛չ* այրեցաւ յօրինակ այժմոյս որ հոգւով դատապարտին և մարմինն մնայ: - 364. Զի էգն, և չէ զոտքն, և անկատարն, և անհաւատն, և արիւնահեղն, և կարգաւոր, սոքա վեցեքեան *ո՛չ* կարեն զենուլ զի պիղծ է զենն նոցա: - 365. Երկրորդ՝ զենլին. զի լիցի կենդանի. զի մեռեալն՝ և անկենդանն որպէս քար՝ *ո՛չ* զենի: - 365. Եւ լիցի սուրբ ըստ նշանակութեան օրինացն. զի անսուրբն և պիղծն *ո՛չ* է զենլի: - 365. Չորրորդ՝ զէնն. զի լիցի սուր երկաթոյ և ո՛չ այլ ինչ գործի. զի թէ լիցի երկաթ և *ոչ* սուր, և թէ սուր և *ոչ* երկաթ, *ո՛չ* է պիտոյ: - 365. Յինգերորդ՝ մասն. որ է՛ գլխոյն հատումն ուր ամենայն զգայութիւնքն են. և թէ այլ ինչ մասն հատցի՝ կամ գլուխն ջախջախեսցի՝ *ո՛չ* է ուտելի: - 365. Ապա թէ պակա՛ս է ի սոցանէ՝ պիղծ է և խոտան և *ո՛չ* է ուտելի զենեալն: - 365. Առաջին՝ զենօղն լիցի արու և *ո՛չ* էգ: - 365. Եւ չէ զոտքն, զի չունի արիւն սերման, *ո՛չ* հեղցէ զարիւն կենդանւոյ: - 365. Նա՛խ՝ զի *ո՛չ* ունի կատարեալ զօրութիւն սերման: - 365. Նոյնպէս և արիւնահեղն արիւնապա՛րտ է մարդոյ, *ո՛չ* հեղու զարիւն անասնոյ: - 366. Իսկ քահանայքն ի նորս *ո՛չ* հեղուն զարիւն: - 366. Երկրորդ՝ զի անարիւն է զենումն նոցա և *ո՛չ* ըստ հնոյ քահանայիցն: - 366. Ապա յա՛յտ է զի և *ո՛չ* այլ կարգաւորք զենցեն կենդանիս. որք են սարկաւագունք և այլք. զի անարիւն զենմանն կարգեալ են սպասաւորք: - 366. Նա՛խ՝ զի իցէ կենդանի յորմէ ելցէ արիւն. իսկ մեռեալն կամ անշունչ քար *ո՛չ* ունի արիւն: - 366. Կամ ջրայինն որ *ո՛չ* ունի զարիւն շնչոյ, այլ զարիւն ջրոյ, *ո՛չ* զենի. զի զենումն նոցա հանումն ի ջրոյն է: - 366. Երկրորդ՝ զի իցէ կենդանին սուրբ. զի անսուրբն *ո՛չ* զենանի և *ո՛չ* է ուտելի: - 366. Զի թէ նախ բնական ջերմութիւնն պակասի, այս լինի բնական մահ. *ո՛չ* է ուտելի: - 366. Եւ թէ շունչն քաղի, է՛ հեղձական մահ. *ո՛չ* է ուտելի: - 366. Զի թէ լինիցի քարեայ սուր, որպէս գայլախազ, որով սպանաւ աբէլ. *ո՛չ* է պիտանի: - 366. Նաև *ո՛չ* փայտ և *ո՛չ* արծաթ: - 366. Եւ թէ լիցի երկաթ և *ո՛չ* սուր, և *ո՛չ* է պիտանի. որպէս բոլոր երկաթն թէ հարցէ զկենդանին և սպանցէ, *ո՛չ* է ուտելի, զի թէպէտ զարիւնն հանէ, այլ *ո՛չ* համանգամայն զշունչն և զջերմութիւնն: - 366. Ապա յա՛յտ է թէ՝ որ անկանի ընդ քար կամ ի վիհ և մեռցի, *ո՛չ* է ուտելի: - 366. Իսկ թէ այլ ինչ անդամն հատցի և մեռցի կենդանին, *ո՛չ* է ուտելի. *ո՛չ* հատեալ անդամն և *ո՛չ* բոլորն: - 366. Եւ թէ գլուխն ջախջախի, *ո՛չ* է ուտելի. զի *ո՛չ* հատաւ պարանոցն. ի հեղձուցելո՛ց կարգի է: - 366. Նա՛խ՝ բնականն. որ է բարի իմացուածն և խորհուրդ որ *ո՛չ* արդիւնանայ: - 368. Երկրորդ՝ սերմն բանին պատուիրանացն որ *ո՛չ* կենդանանայ: - 368-369. Որ նշանակէ՛ սերմն զգործն. որ քանի ի մեզ է՝ *ո՛չ* է պիղծ. և յորժամ գործի՝ պղծէ՛: - 369. Եւ լինի տեռատես, յորժամ մանուկ *ո՛չ* լինի յարգանդին և ի ստինսն զի սնո՛ւնդ է մանկանն: - 369. Եօթներորդ՝ սապատողն. կուզն. կամ ելուստ ի թիկունքն. որ *ո՛չ* կրէ զբեռն քահանայութեան

հպարտութեամբ: - 370. Ա՛րդ՝ որ առանձինն է՝ մարմնոյն արատն *ոչ* խտրի. այլ հոգւոյն: - 370. Եւ որ հասարակն, և սմա՛ մարմնոյն և հոգւոյն *ո՛չ* խտրի. զի եղբայր յեղբօրէ օգնեալ՝ զմիմեանց բառնան զտկարութիւն: - 370. Ցուցանէ թէ՝ մինչ ի մեղս իցեն քահանայքն՝ *ո՛չ* զիասն կերիցեն և *ո՛չ* ի սուրբ խորհուրդն մերձեսցին: - 370. Եւ *ո՛չ* սրբին մինչև զղջասցին և խոստովանեսցին զմեղսն: - 370. Երրորդ՝ լեզւատն որ է՛ անձայնն. որք *ո՛չ* ունին զխոստովանութիւն: - 371. Ի նոր պատարագս այսպիսի մարմնոյ ընտրութիւն *ո՛չ* է: - 371. Զի՞նչ է որ զարիւն անասնոյ հրամայէ՛ ծածկել և *ո՛չ* ուտել: - 371. Երկրորդ՝ ցուցանէ թէ բանական հոգիս մեր *ո՛չ* կորնչի: - 371. Նա՛խ՝ զի խստասի՛րտք էին և անողորմք. և *ո՛չ* տային հանգչիլ ծառայիցն և անասնոցն: - 371. Եւ թէ ոք ասիցէ, ընդէ՞ր ծննդեան և յարութեան **ը** օրէք առնեմք և հոգւոյ գալստեան *ո՛չ:* - 373. Զի՞նչ է որ հրամայէ՛ զարծաթ ի վարձու *ո՛չ* տալ: - 375. Նա՛խ ասեն թէ՝ արծաթն նիւթ վաճառո՛յ է. և այնու շահի. և *ո՛չ* տոկոսեօք: - 375. Երկրորդ՝ զի արծաթն անծին է. վասն որոյ *ո՛չ* է շահ: - 375. Նախ է՝ որ *ո՛չ* գլուխն խնդրի և *ո՛չ* շահ. որպէս ողորմութիւն: - 375. Երկրորդ՝ որ գլուխն խնդրի և *ո՛չ* շահ. որպէս փոխն: - 375. Ա՛րդ՝ վասն այն *ո՛չ* խնդրի շահ արծաթոյ, զի փո՛խ է տուեալ: - 375. Կամ *ո՛չ* լսել աղաղակի մերոյ. իբր երկաթի երկինք ընդ մէջ գոլով: - 376. Երրորդ՝ չտալ երկրի զբոյս. և *ո՛չ* ծառոց պտուղ: - 376. Զի կենդուրածինքն լցին զարևելս. և իմայէլացիքն զիարաւ. եսաւացիք զհիւսիս և զարևմուտս. և սոքա *ո՛չ* անկան ընդ թուով: - 377. Զծերս վասն է՞ր *ո՛չ* թուէ: - 377. Դարձեալ՝ ծեր և կին և տղայք *ո՛չ* թուին. զի պակասեա՛լ են յարիութեանց: - 377. Եւ պակասն ի գիտութեանց բանին, և կնատքն և բղջախոհքն *ո՛չ* կարգին զինուորք աստուծոյ: - 377. Նա՛խ՝ զի *ո՛չ* առնու ի համար թլւոց: - 377. Եօթներորդ՝ զի միտքն զախտն շարժէ ի չարն. և *ո՛չ* ախտն զմիտքն. որպէս ասի, խորհուրդք ծերոց զքարինս պատառեն: - 377. Փորձանքն է՝ որպէս թէ զայս առնես՝ լսեմք. և թէ *ոչ* առնես՝ *ո՛չ* լսեմք. և Չարաչարն՝ հայհոյութեամբ տրտունջն է: - 381. Իսկ դադան կենդանի էջ ի դժոխս՝ *ո՛չ* սրբեցաւ. և ախտիւք իւր անսուրբ ընկղմեցաւ: - 382. Իսկ դադան ամենևին անզեղջ մնաց. թէպէտ գնաց մովսէս ի խորան նոցա՝ *ո՛չ* զղջացան: - 382. Եւ թէպէտ զարհուրելի բանս յերկարեաց ի խրատս, *ո՛չ* լուան. վասն որոյ *ո՛չ* սրբեցան: - 382. Չորրորդ՝ զդեղձան հերն և անարատ մարմնով և անբիծ հոգով, որ *ո՛չ* ունէր զլուծ մեղաց: - 383. *Ո՛չ* զսկզբնականն, զի յարգանդէ՛ սրբեցաւ: - 383. Եւ *ո՛չ* զներելին, զի հոգւովն մաքրեցաւ: - 383. Եւ *ո՛չ* զմահացուն, զի կո՛յս էր անապական: - 383. Չորրորդ՝ որպէս *ո՛չ* ունէր զաւելորդ ցանկութեանն, նոյնպէս և *ո՛չ* զկերակրոյ: - 383. Իսկ տէրն ի մարդեղութեան զակամայն *ո՛չ* կրեաց. զի հեռի է յաստուծոյ ակամայն: - 383. Եւ զանգոսնելիսն *ո՛չ* կրեաց. զի տեսա՛կ է մեղաց. և տէրն *ո՛չ* արար մեղս: - 383. Իսկ աւելորդ ծորումն թէպէտ անանգոսնելի է, այլ ակամա՛յ է. և զակամայն *ո՛չ* կրեաց: - 383. Զի՞նչ էր յերրորդ օրն սրբիլ. և յեօթն սրբիլ. և թէ յերրորդն *ոչ* սրբեսցի, և մի՛ յեօթն սրբեսցի: - 384. Չորրորդ, նախքան զօրէնս և յօրէնն և զկնի օրինացն թէ *ոչ* արդարանամք. և *ո՛չ* **յէ** դարուն ոք արդարանայ: - 384. Հինգերորդ՝ թէ յերեք հասակս մեր *ոչ* արդարանամք. և *ո՛չ* **յէ** հասակին արդարանամք յորում լուծեալ ծանրանայ մարմինն: - 384. Զի գողացեալ մեղքն միայն խոստովանելով *ոչ* քաւի. այլ հատուցանել պարտ է զգողօնքն. կամ ի տէրն, կամ յազգականս նորա. կամ ի քահանայն. զի միջնո՛րդ է մեռելոց և կենդանեաց: - 384. Եւ թէ *ոչ* էր զղջացեալ, միոյն **դ** և **ե** էր տուգանք գողին: - 384. Երկրորդ՝ որ անզեղջ մնայ և *ո՛չ* խոստովանի, անթողելի՛ է: - 385. Երրորդ՝ ներելի մեղքն և փոքր՝ թէ *ո՛չ* ապաշխարի, լինի մահու չափ և անթողլի: - 385. Իններորդ, զի ցուցցի թէ բարկացողաց *ո՛չ* երևի աստուած. որպէս և *ո՛չ* եղիայի: - 386. Տասներորդ, բարկութեամբն արգելաւ յերկրէն աւետեաց. զի ցուցցի թէ արդա՛ր է աստուած. և ա՛կն ումեք *ո՛չ* առնու: - 386. Նա՛խ՝ զի օձին հող ետ աստուած կերակուր և *ո՛չ* տրտնջեաց: - 386. Զայն ցուցանէ թէ յուղղութիւնս մեր երևի աստուած. այլ ի խոտորիլն *ո՛չ:* - 387. Նա՛խ՝ զի բարկացեալ՝ զէշն կամէր սպանանել սրով. թէ գոյր ի ձեռին ընդէ՞ր բանիւ *ոչ* սատակէր: - 388. Եւ դարձեալ՝ ոչ ինչ շնորհ ունէր բան նորա. զի այնքան օրհնեաց զժողովուրդն, ընդէ՞ր *ոչ* դարձաւ մահն և սատակումն: - 388. Ապա յա՛յտ է զի անօրհնին *ո՛չ* անէծքն ունի զօրութիւն. և *ո՛չ* օրհնութիւնն շնորհք: - 388. *Ո՛չ* ասէ գնալ որ կամաւորն է. այլ երթալ, որ ակամայ քարշիլն է: - 389. Եւ դարձեալ՝ ուխտելն է բարիս առնել. և սահմանն չար *ո՛չ* առնել: - 389. Եւ որպէս ովսէէ *ո՛չ* է պոռնիկ՝ և *ո՛չ* սամուէլ մարդասպան զի հրամանաւ աստուծոյ էր: - 389. Նոյնպէս և ամենայն ոք հրամանաւ առաջնորդին թէ պահեսցէ զուխտն բարի է. և թէ զանցուսցէ *ո՛չ* դատապարտի: - 389. Եւ քացախ *ո՛չ* ուտել, զի ապականութիւն է: - 389. Եւ *ո՛չ* զկորիզն, զի ի բաց ընկենլի՛ է: - 389. Եւ *ո՛չ* զխաղող, զի զբօսա՛նք է: - 389. Եւ *ո՛չ* զչամիչն, զի արևակէ՛զ է և պակաս ի զօրութենէ: - 390. Եւ այսպիսիքս ամէն *ո՛չ* են յարմար ուխտականի: - 390. Եւ ի յանապատն միս ուտելոյ հրաման *ո՛չ* ունէին. որպէս և *ո՛չ* ի դրախտին: - 390. Եւ ի գլուխն սուր *ո՛չ* ելցէ որպէս սամփսոնին: - 390. Գլուխն նշանա՛կ է

մտաց. զոր չէ պարտ յաւելուլ՝ և *ո՛չ* պակասել. որպէս մուրճ *ո՛չ* գործէր ի սեղանն զի մի՛ պղծեսցի: - 390. Եւ հերքն յառաջ եկեալ՝ անզգա՛յ է. *ո՛չ* հեշտանայ և *ո՛չ* ցաւի: - 390. Նոյնպէս և կրօնաւորն *ո՛չ* ցաւի և տրտմի և *ո՛չ* հեշտանայ ընդ աշխարհի: - 390. Եւ ուխտաւորն ի տուն սգոյ *ո՛չ* երթայ. այն է որ ի մեղքն այլ *ո՛չ* դառնայ. և *ո՛չ* ընդ մեղսասէր գործակիցս: - 390. Այն է որ թէ ի մասանց հոգւոյն և մարմնոյն այսինքն բանիւ՝ ցասմամբ՝ և ցանկութեամբ, կամ աչօք կամ լսելեօք կամ այլ ինչ գործով մեղանչէ դարձեալ, ուխտն *ո՛չ* եղև ամբողջ. դարձեալ նո՛ր պարտ է ապաշխարել: - 390. Ի յաւարէ պա՞րտ է յեկեղեցիս մատուցանել կամ մատաղել, թէ *ո՛չ*: - 390. Ի գողունից կամ յաւազակաց *ո՛չ* է պարտ զի պիղծ է: - 390. Այլ այս *ո՛չ* է հասարակաց ընդունելի կարծիք: - 391. Նա՛խ՝ զի *ո՛չ* տանջիւր ակամայ սպանօղն: - 392. Եւ երկրորդ՝ զի *ո՛չ* ինքեամբ՝ այլ ի ձեռն քահանայիցն մահուն ազատիւր: - 392. Զի՞նչ է որ ընդ ղովտայ որդիսն և եսաւայ *ո՛չ* հրամայեաց կռուիլ. այլ ընդ ամուր հարցւոցն: - 393. Զի՞նչ է որ մովսէս ետես զերկիրն և *ո՛չ* եմուտ: - 394. Եւ աստուած անաշխատ գործէ՛ և *ո՛չ* վաստակի: - 395. Եւ դարձեալ՝ հոգւովդ և բոլոր մարմնով և բոլոր մտօք սիրեա և *ո՛չ* մասամբ: - 396. Իսկ ճշմարիտն աստուած զայս *ո՛չ* խնդրէ. այլ երկիւղ խնդրէ ի տղայոց որով խորշին ի չարէ. և սէր ի սրտէ փոխանակ անասնոց. և խաղաղութիւն առ ընկերս և օտարս...: - 396. Երկրորդ՝ զի **խ** ամ յանապատին հաց *ո՛չ* ետ նոցա. այլ մանանայ և զայլսն. զի բանիւն աստուծոյ կերակրեցան հոգւով. և *ո՛չ* մարմնական հացիւ: - 397. Երրորդ՝ զայն ցուցանէ որ կեանք դրախտին դարձաւ առ նոսա յանապատին անկարօտ ամենայնի. զի զգեստն *ո՛չ* մաշէր. այլ աճէ՛ր ընդ տղայոցն. և ոտն բոկ՝ և *ո՛չ* կոշկոճէր...: - 397. Չորրորդ՝ հաց ի յերկնից իջեալ մանանայն կենարար. և բանն աստուծոյ նոյն ինքն տէրն մեր. որպէս ասաց առ փորձիչն թէ՝ ինև կերակրին ամենայն սուրբք և *ո՛չ* հացիւ: - 397. Իններորդ՝ մանուկն յարգանդի *ո՛չ* հացիւ կեայ. այլ հրամանաւն աստուծոյ կերակրի ընդ պորտն զինն ամիս...: - 397. Տասներորդ՝ ի յարութեանն *ո՛չ* է մարմնական կերակուր և ըմպելի. այլ բանն աստուծոյ է կերակուր. որպէս այժմ հրեշտակաց յերկինս: - 397. Նա՛խ՝ գիտելի է, զի աչք մարմնոյն զինքն *ո՛չ* տեսանէ, այլ զայլքն: - 397. **Եւ որպէս ննջեցեալն քնով՝ *ո՛չ* տեսանէ զինքն. և որպէս յաւելի կերակրոյ խնուն զգայարանքն. նոյնպէս ագահութիւն և փարթամութիւն և հպարտութիւն մոռանալ տայ զինքն. վասն այն ասեն թէ՝ ինքեանց գիտակքն իմաստունք են**: - 397-398. Ակնառութիւն *ո՛չ* է աստուծոյ. զնախնիքն սիրեաց աստուած, զի արժանիք էին...: - 398. Իսկ երկիրն նոր օրինացս *ո՛չ* բնական իմաստութեամբ հեթանոսաց ոռոգի, այլ շնորհօքն աստուծոյ և հաւատով դալարի: - 398. Նախ՝ զի ասէ՝ «յեղբարց ձերոց». այսինքն *ո՛չ* յօտարաց, այլ յազգէ նոցա յուդայէ՛, և ի ղևեայ եղբարց: - 399. Զոր ա՛յլ մարգարէ *ո՛չ* արար. որպէս գրեալ է **ի ի** համարն ի վերոյ: - 399. Երրորդ՝ զի ասէ՝ զպատգամն աստուծոյ ունի և *ո՛չ* զօտար աստուծոյ. և քրիստոս ասէր, «զոր լուայ ի հօրէ՝ պատմեմ ձեզ». և յանուն հօր եկն. և զհայր ետ փառաւորել միայն ճշմարիտ աստուած: - 399. Հինգերորդ՝ զի նոքա խնդրէին երևիլ մարմնով. զի *ո՛չ* կարէին տանել աստուածային հրոյն ի լերինն: - 399. Եւ զի զայս ամենայն վկայութիւնս նշանի տեսին աչօք և լսեցին ականջօք և *ո՛չ* հաւատացին...: - 400. Այլ տե՛ս յայտնապէս, զի զայսպիսի նշան վկայութեան *ո՛չ* ունէին յուդաս և դևդաս. և *ո՛չ* նեռն ունելոց է դերաքրիստոսն. վասն որոյ *ո՛չ* են մարգարէ, այլ մոլորեցուցիչք և չարք: - 400. Եւ հայր աստուած որ *ո՛չ* կատարի կամք նորա ի մեզ...: - 400. Եւ անէծքս այս *ո՛չ* հասին ի նա վասն երից: - 400. Երկրորդ՝ զի անպա՛րտ էր անիծից՝ և վասն մեր եղև. որպէս անպարտական ոք *ո՛չ* անիծանի: - 400. Եւ այլք այսպէս մեկնեն թէ՝ ամենայն անիծեալ կախեալ կայցէ զփայտէ. այլ *ո՛չ* ամենայն կախեալ զփայտէ՝ անիծեալ է. որպէս խոյն ի սաբեկայ կախեալ *ո՛չ* է անիծեալ: - 400. Եւ օձն պղնձի *ո՛չ* է անիծեալ: - 400. Նոյնպէս և տէր մեր *ո՛չ* է անիծեալ: - 400. Այլ՝ արձակեալ կինն *ո՛չ* դառնայր յառաջին այրն վերստին. թէպէտ մեռանէր վերջին մարդն: - 400. Իսկ նորս *ո՛չ* այսպէս. այլ հրամայէ՛ քրիստոս թէ՝ «զոր աստուած զուգեաց և միացոյց՝ մարդ մի՛ մեկնեսցէ»: - 401. Փակեաց թէ ամենևին *ո՛չ* բաժանի օրհնեալ պսակն մինչ ի մահ: - 401. Զի որպէս քահանային օծումն ի հոգւոյն *ո՛չ* բաժանի յաւիտեան, և պսակի օրհնութիւնն որ ի մարմինն է՝ *ո՛չ* բաժանի մինչ ի մահ ի մարմնոյն: - 401. Իսկ որ զարձակեալն առնուին, և յառաջին բաժանեալն *ո՛չ* տային, վասն երկիւղի առն և կնոջ էր, զի մի՛ լիցին պատճառ բաժանման: - 401. Իսկ խորհուրդն, ի յօրէնքն նոցա է զի փոփոխական էր օրէնքն նոցա. և որ փոխիւր, այլ *ո՛չ* դառնայր յօրէնս նոցա: - 401. Այլ որ մարդն առնոյր բազում կանայս՝ և կինն *ո՛չ*, ա՛յս է պատճառն: - 401. Եւ մին այր կարէ՛ ի բազում կանանց ծնանիլ զաւակ. այլ մին կնոջ ի բազում արանց *ո՛չ* բազմանայ ծնունդ: - 401. Երկրորդ՝ բարոյական. զի մին կնոջ ի բազում արանց *ո՛չ* երևի հարազատ զաւակն. իսկ մի այր ի բազում կանանց կարէ՛ ծնանիլ հարազատ մանկունս և սիրել զնոսա: - 401. Երրորդ՝ օրինական. զի որպէս մին գլխոյ բազում անդամ կարէ՛ լինիլ. այլ *ո՛չ* անդրադարձեալ: - 401.

Նշանակէր զյարութեան խորհուրդն յոր նոքա *ո՛չ* հաւատային...: - 402. Եւ բնութեամբ աստուած՝ մարմնովն. և *ո՛չ* օտար և շնորհօք: - 402. Վասն հեթանոսաց գրէ զօրէնս և *ո՛չ* հրէից զի առեալ էին: - 402. Իններորդ՝ և զերծցին յընդունայն վաստակոց կռոցն որ *ոչ* օգտէին. զի ունայնութիւն լսի գեբաղն: - 402. Եւ այս պատւիրանս՝ տայ պահողացն օրհնութիւնս. և *ոչ* պահողացն անէծս: - 403. Մեք *ո՛չ* կատարեմք զօրէնս մովսէսի, զի՞նչ լինիմք: - 403. Թէպէտ *ո՛չ* կատարեմք զօրէնսն՝ *ո՛չ* եմք ընդ անիծիւք նորա վասն երից: - 403. Նա՛խ՝ զի զօրինակն *ո՛չ* ունիմք. այլ զճշմարտութիւն օրինացն ունիմք: - 403. Երկրորդ՝ որպէս զօրհնութիւն նորա մարմնական *ո՛չ* ունիմք. նոյնպէս և *ո՛չ* զանէծսն: - 403. Այլ այս անէծքս յայտնապէս ի վերայ հրէիցն է. որք *ո՛չ* կատարեն զօրէնս, և *ո՛չ* ունին զմկրտութիւնն քրիստոսի: - 403. Ասա՛ նմա թէ՝ այն հասարակաց հեթանոսա՛ց է. զի աճին մարմնով և ընչիւք. իսկ մերս *ո՛չ* է հասարակաց. այլ արժանաւորաց և ընտրելոց: - 403. Այլ ի կուսանս հանգչի. որք հրեշտակաց նմանք եղեն կուսութեամբ. վասն այն ասեն աստուած բնակեալ է յերկինս ուր կուսանք են հրեշտակք. և *ո՛չ* յերկրի ուր ամուսնացեալք են: - 404. Եւ յորժամ է զօրութեամբք հոգւոյ յաղթիցեն նոցա, փախիցեն յէ զգայարանաց մարդոյն եօթնեկի մահացու մեղօք. զայս կատարելո՛ցն է իմանալ. և *ո՛չ* մեզ տկարացս: - 404. Նա՛խ՝ զի ի խղճմտանք մարդոյն կախեալ է կեանքն արժանի մահու. և տեսանէ՛ միշտ և *ո՛չ* հաւատայ և դադարէ ի մեղաց: - 404. Երկրորդ՝ հրէայքն ի գերութեան կախեցին զկտակարանքն ի յուռեաց, և *ո՛չ* հաւատային կենաց...: - 405. Եւ թէ մովսէսի *ոչ* հաւատայք որ փառաւո՛րն է ի մէջ ձեր, ինձ զիա՞րդ հաւատայք որ թշնամի կարծէք: - 405. Չորրորդ՝ այժմ տեսանեն աչօք զեկեղեցի սուրբ որ զկախեալ ի նոցանէ՝ աստուած հաւատայ զնոյն մեռեալ և կենդանի, և *ո՛չ* հաւատան: - 405. Զի հանապազ քօղ երեսացն մովսէսի առագա՛ստ է ի վերայ սրտից նոցա. և *ոչ* իմանան զտեսութիւն բանին. վասն որոյ *ո՛չ* հաւատան: - 405. Այսինքն՝ զոր ծածկեալ է մեզ՝ բարի կամ չար *ո՛չ* կարեմք ասել: - 405. Դարձեալ՝ զաստուածայինս ամենայն՝ *ո՛չ* կարեմ քննել. այլ զոր ինչ յայտնէ՝ պատմեմ ձեզ: - 405. Նա՛խ՝ շնորհակալութիւն է և գոհութիւն երախտեացն աստուծոյ տրիտուր. *ո՛չ* իբր կարօտի, այլ անկարօտի որպէս աստուծոյ: - 406. Երրորդ՝ յայտնել թարգմանի. իբր թէ յայտնի՛ է աստուած և *ո՛չ* ծածուկ կամ թաքուն: - 406. Եւ օրհնութիւն, զի յօրհնել բերանոյ նորա՝ յառաջ եկն առ որ բերան ի բերան խօսեցաւ աստուած դէմ յանդիման և *ո՛չ* առակօք: - 407. Երկրորդ՝ զի միայն մովսէս կոչեցաւ աստուած. և *ո՛չ* անուամբ միայն, այլ և գործով իշխէր ի վերայ տարերաց ի վեր և ի խոնարհ. վասն այն աւագ օրհնութիւն կոչի: - 407. Եւ յա՛յտ է յայսմանէ, զի հուր բորբոքեալ է ի բարկութենէ. *ո՛չ* յէութենէ և *ո՛չ* ի կամաց իմ, այլ ի բարկութենէ: - 408. Իսկ բարեաց չար առնել՝ անիրաւութիւն է. որ ո՛չ գոյ բնաւ առ աստուած. *ո՛չ* ի կեանս յայս և *ո՛չ* ի հանդերձելումն: - 408. Եւ զի բարկութիւն *ո՛չ* է ի յաստուած, ա՛յսպէս ասեն վարդապետք սուրբք: - 408. Նա՛խ եթէ՝ բնութեամբ բարի է աստուած և *ո՛չ* ունի բարկութիւն. զի ծառ բարի պտուղ չար *ո՛չ* առնէ. այլ մեք գործովք մեր զայրացուցանեմք զնա և արկանեմք ի բարի կամս նորա բարկութիւն: - 408. Երրորդ՝ յա՛յտ է յայսմանէ. զի նոյն ինքն բարկութիւնն *ո՛չ* եկեալ ի գործ՝ չէ՛ չար...: - 408. Չորրորդ յա՛յտ է, զի թէպէտ սրտմտի՝ *ո՛չ* յինքենէ. այլ մե՛ք հարկանե՛մք զնա ի գործն, անդարձ լինելով մեր: - 408. Ուստի յա՛յտ է, զի յորժամ ի սպառնալն դառնամք ի մեղաց, *ո՛չ* սրտմտի նա: - 408. Երկրորդ՝ ի խրատ մեղաւորաց. զի յորժամ գիտենան թէ *ո՛չ* յաջողի ճանապարհ մեղաւորի, արգելուն ի մեղաց: - 408. Եւ սպառնալիքն աստուծոյ և մարդկան *ո՛չ* են նման. զի մարդոյս դատարկ բան է...: - 408. Նա՛խ՝ զի *ո՛չ* ամենևին անէծ. այլ և մասն մի օրհնութիւն էր: - 409. Իսկ շմաւոն *ո՛չ* էր ապաշխարեալ, վասն որոյ *ո՛չ* օրհնեաց: - 409. Չորրորդ, մահ՝ այսինքն սատանայ որ յաղթեաց ադամայ. իսկ մարմնոյն մովսէսի *ո՛չ* կարաց յաղթել հրեշտակային օգնականութեամբն. որպէս ասի յառաջիկայդ: - 409. Վեցերորդ ըստ մտաց, զի մովսէս ջրածին լսի. զի որք *ո՛չ* ծնանին աւազանաւ, ընդ մահու իշխանութեամբ են: - 409. Երկրորդ՝ զհոգին մովսէսի *ո՛չ* կարէր յափշտակել սատանայ, փոխանակ հոգւոյն զմարմինն ջանայր յափշտակել. և վիճէր ընդ հրեշտակին թէ իմ է...: - 410. Իններորդ՝ ի ժամ այլակերպութեան տեառն ի բերել հրեշտակապետին զմովսէս, ասէ սատանայ ցհրեշտակն, ստեաց աստուած զմովսէս մուծանել յերկիրն ուր երդուաւ *ո՛չ* մտանել նմա: - 410. Վասն է՞ր *ո՛չ* գիտեն զգերեզմանն մովսէսի: - 411. Վասն է՞ր *ո՛չ* թարշամեցան ծնօտքն մովսէսի: - 411. Երկրորդ՝ զի աստուած էր կոչեցեալ, *ո՛չ* էր պարտ պակասիլ զգայութեանցն: - 411. **Զոր յիշէ աւետարանն ղուկասու, և մնացորդացն գիրք. և *ո՛չ* յիշէ մովսէս. զի զսկիզբն կռապաշտութեան ի նմանէ՛ ասեն լինիլ:** - 411. Որ ի կաւոյ աչք ստեղծ. և մեռեալս յարոյց. և զանշունչ նկանակս աճեցոյց. զոր *ոչ* արար մովսէս: - 411. Եւ *ո՛չ* կոտորեաց զամենայն թագաւորսն: - 412. Եւ ղևեայ ցեղին բաժին *ո՛չ* ետ: - 412. Եւ դևք *ո՛չ* գիտեն զառաջիկայն: - 412. Եւ *ո՛չ* ետ պատասխանի սիմէի որ նախատէրն զնա՛: - 413. Եւ *ո՛չ* գիտաց

զաբիսակ: - 413. Քսաներորդ, Ո՛չ հրամայեցաւ դաւթի շինել զտաճարն. ի Յազարս գտի այր մի. և ի կանանց ո՛չ մի: - 413. Ո՛չ պակասեաց ալիւրն և իւղն: - 413. Նոյն և եղիսէոս. այլ ո՛չ յետս դարձաւ: - 414. Նուազիլ` ո՛չ ասեմ զամենևին պակասիլն. զի առ ջրհորաւն մեծի անյայտ եղև վէմն. և յելսն յորդանանու մանանայն ո՛չ գտաւ: - 415. Վասն է՞ր գայլախազիւ թլփատեաց և ո՛չ երկաթով: - 415. Չորրորդ` պատկեր կռոց ո՛չ ձևացաւ անգծելի գոլով յերկաթոյ: - 415. Աքար զարմեան և սաւուղ կիսեան և յուդա սիմոնեան մեղայ ասելով ո՛չ արդարացան: - 415. Նա՛խ` զի ոչ կամայ էր և բռնութեամբ: - 415. Եւ զի թերութեամբ էր և ո՛չ յուսով թողութեան: - 415. Նաև զընտանիսի աքարայ պատժեաց. զի և նոքա ո՛չ խոստովանեցան զգողօնքն: - 415. Վասն է՞ր ոչ կոտորեաց զամենայն թշնամիսն: - 416. Երկրորդ` զի ո՛չ էին բաւական բնակութեան երկրին: - 416. Վասն է՞ր ոչ ետ ղևեայ ցեղին բաժին: - 417. Եւ այն զի քամեալ լցաւ կուրն և ո՛չ երկիր. զի մնացին և կատարեցան բանք մարգարէիցն ամենայն և ո՛չ եղծան. իսկ յետոյ հոգի տեառն ելից զտիեզերս մարգարէութեամբ և շնորհօքն քրիստոսի: - 421. Այլ ո՛չ այսպէս. զի ե՞րբ եկաց և մնաց ընդ արև, կամ յառաջ քան զլուսին սողոմոն. այլ տէրն նորա: - 421. Եւ զի հեղի ո՛չ խրատէր զնոսա սաստիւ և տանջանօք...: - 425. Երրորդ` զխիստ բարկութիւնն նշանակէ որ յիւր սրբութիւնն ո՛չ խնայէ վասն մեղաց մարդկան: - 425. Չորրորդ` ցուցանէ թէ որ ի սրբութիւնն իւր ո՛չ խնայէ, և ո՛չ ի ձեզ յանցաւորքդ թէ ոչ դառնայք: - 425. Երկրորդ` անցեալ ընդ լերամբ և ո՛չ գտեալ. մինչև առ տեսանօղն եկեալ. և տէր մեր էանց զլերինս հրեշտակաց և եկն ի մարգարէս. և նոքա աւետեցին զգիւտն գ օրեայ կորստեան իշոյն...: - 426. ...այսինքն բնական և բանական և գրաւոր օրինօք ո՛չ գտեալ. այլ ի ձեռն աւետարանին: - 426. Յինգերորդ` ոմանք չարք ո՛չ հնազանդէին նմա...: - 426. Երրորդ` ի նախատինս զօրաց իւրոց. զի հովիւ մանուկն և որդի յեսսեայ սպան զգողիաթ. և նոքա իշխանք և մեծամեծք ո՛չ կարացին: - 427. Վիուկք և դևք ո՛չ զառաջիկայն գիտեն և ո՛չ մեռեալս յարուցանեն: - 428. Այլ որպէս յարուցեալն նմանութիւն է և ո՛չ իսկութիւն, նոյնպէս և խօսքն սուտ է և ո՛չ ճշմարիտ: - 428. Եւ դևք ո՛չ միայն զապագայն ոչ գիտեն, այլ և զներկայ խորհուրդն ո՛չ ճանաչեն. նաև զանցեալ ճշմարիտն և զբարին ի միտ ո՛չ ունին: - 428. Եւ նա՛խ` զի ո՛չ ճանաչեաց վհուկն զսաւուղ աստի՛ յայտ է, զի գովեաց զնա՛ և պարսաւեաց...: - 428. Եւ թէ զդէմքն ո՛չ ծանեաւ, զիա՞րդ զխորհուրդն ճանաչէր: - 428. Երրորդ` զի զօրհասն իւր ո՛չ գիտէր. ապա և ո՛չ զայլոցն կարէր գիտել...: - 428. Յինգերորդ` զի որպէս զկանխագէտ ոչ ասաց սաւուղայ թէ դու ո՞վ ես որ զիս փրկես ի սաւուղայ: - 428. Վեցերորդ` զի եհարց ի սաւուղ թէ «զո՞ խնդրես». և թէ զառաջիկայն գիտէր, զներկայ միտքն ընդէ՛ր ո՛չ գիտաց: - 428. Եօթներորդ` զի թէ ճշմարտապէս սամուէլ յառնէր, ո՛չ կամէր կինն. զի կորուսիչ էր նոցա. այլ գիտէր որ նմանութիւնն էր սամուէլի: - 428. Ա՛րդ` թէ զխաբէութիւնն ո՛չ ճանաչէր, զիա՞րդ զճշմարիտ խորհուրդն գիտէր: - 428. Մետասաներորդ` ընդէ՞ր ոչ ծանեաւ թէ սամուէլ է...: - 428. Զի թէ ինքն ձևացոյց մարմին և շունչ և յարոյց զնա, զիա՛րդ ոչ ճանաչէր: - 428. Զի թէ գիտէր զստոյգ մահն սաւուղայ` ո՛չ կաշառէր զնա: - 428. Ապա ուրեմն յա՛յտ է սոքօք երկոտասան գլխով թէ վհուկն ո՛չ գիտէր զառաջիկայն: - 428. Նա՛խ` զի ո՛չ ետես զնա. այլ միայն կինն. ապա յա՛յտ է զի սուտ նմանութիւնն էր: - 429. Երրորդ` զի երկիր եպագ նմա զոր ո՛չ տեսանէր: - 429. Ա՛րդ` թէ աստուած ծածկեաց և սամուէլ յայտնէր հակառակ աստուծոյ, ահա՛ զի բարկացուցանէր զնա. ապա յա՛յտ է զի սո՛ւտ է և ո՛չ սամուէլ: - 429. Ա՛րդ` թէ ճշմարիտ յարոյց կինն զսամուէլ. սաւուղ ո՛չ երկնչէր ի մահու. զի և զնա՛ յարուցանէր. և թէ երկեաւ, ապա սուտ էր կենդանութիւն մեռելոյն: - 429. Վեցերորդ` զի թէ հաւատացեալ էր սաւուղ ո՛չ երթայր ի պատերազմ. այլ խոյս տայր և փախչէր: - 429. Որ և ո՛չ յաղթութիւն, այլ մահ խոստացաւ նմա: - 429. Ապա յա՛յտ է զի ի մէջ կարծեաց էր նա. զի թէ սուտ համարէր զվհուկն, ո՛չ երկնչէր ի մահու. և թէ ճշմարիտ` ո՛չ երթայր ի պատերազմ: - 429. Նա՛խ` եթէ ճշմարիտ յարեաւ սամուէլ, ընդէ՞ր ոչ եհար զվհուկն և սատակեաց. և ընդէ՞ր ոչ յանդիմանեաց զսաւուղ եկեալ առ վհուկն: - 429. Երկրորդ` ընդէ՞ր ոչ երևեցաւ սաւուղայ. այլ միայն կնոջն որպէս ասացաւ ի վերոյ: - 429. Երրորդ` ընդէ՞ր ինքն ո՛չ ասաց թէ ե՛ս եմ սամուէլ. այլ նոքա նմանեցուցին: - 429. Վեցերորդ` ընդէ՞ր ոչ քաջալերեաց զնա ասելով, եթէ մեռանիս` վհուկդ յարուցանէ՛ զքեզ որպէս զիս: - 429. Եօթներորդ` ընդէ՞ր ոչ եկեր ընդ նոսա և ոչ նստաւ և ոչ շօշափեցաւ: - 429. Նախ այսպէս. զի եհարց թէ ընդէ՞ր հաներ զիս. այլ ո՛չ էր հարցեալ թէ գիտէր զխորհուրդն: - 430. Երկրորդ` զի սուտ խօսեցաւ աստ. զի թէ սամուէլ էր` ո՛չ ուսանէր ի սաւուղայ. և դևն յերկրէ ո՛չ ելանէ: - 430. Երրորդ` զի նոր բան ինչ ո՛չ պատմեաց. այլ զոր ինչ ուսաւ ի սաւուղայ` երկրորդեաց նմա: - 430. Ապա յա՛յտ է զի զապագայն ո՛չ ասաց: - 430. Չորրորդ` զի թէ սամուէլ էր որ ասաց թէ` տէր հեռացաւ ի քէն, և այս ո՛չ է մարգարէութիւն. զի կրկնեաց զիւր բանն. և թէ ո՛չ էր սամուէլ, այլ զանունն ընկալաւ և ինքն դև էր, սուտ խօսեցաւ ապա: - 430. Թէ հրամայական էր և վճիռ եհատ,

ապա աստուած էր և *ո՛չ* մարգարէ. սուտ ասաց զգոլն սամուէլ: - 430. Իսկ թէ մարգարէութիւն էր և զլինելոցն ասէր, ապա *ո՛չ* էր աստուած. սուտ կոչեցաւ անունն ի վերայ: - 430. Իսկ թէ այլ ինչ էր՝ և բարբառն և տեսիլն սամուէլի, սուտ է և *ո՛չ* ճշմարիտ: - 430. Արդ եթէ սամուէլ յարեաւ և մեռաւ և կամ կինն, նա՛ ճշմարիտ եղիցի բանն. ապա թէ կինն *ոչ* մեռաւ և սաւուղ մեռաւ, սուտ խօսեցաւ: - 430. Եօթներորդ՝ զի ասաց «առ վաղիւն անկանիցիք ի պատերազմին». և *ոչ* յերկրորդ և *ո՛չ* յերրորդ օրն՝ *ո՛չ* եղև պատերազմ. ապա ուրեմն սուտ խօսեցաւ: - 430. Ապա յայսմ ամենայն է յա՛յտ է՝ զի ոչ ինչ գիտեն զառաջիկայն դևք. և *ո՛չ* իմանան զներկայական խորհուրդս. և *ո՛չ* յառնեն մեռեալք. այլ սուտ կերպարանին: - 430. Սակայն հանդերձեալն և սիրտ մարդոյն՝ միայն աստուծոյ է գիտելի և *ոչ* այլ ումեք որպէս ասացաւ ի սկիզբն գրոցս: - 430. Կամ զի օրէնքն գրեալ էր՝ կուրի և կաղի մի՛ դնել գայթակղութիւն, աստին նախատելով թէ՝ որպէս *ո՛չ* կարես կոխել զդոսա, նոյնպէս *ո՛չ* կարես առնուլ զամուրն յեբուսայ: - 431. Երրորդ՝ զի *ո՛չ* էր քահանայ. վասն որոյ յետոյ ասէր դաւիթ ցքահանայսն, դո՛ւք ղևտացիքդ սրբեցէք և բարձէք զտապանակն. զի մի՛ լիցուք որպէս զոզիա: - 431. Հինգերորդ՝ զի ցուցանէ թէ՝ որ ի սիրելին իւր դաւիթ *ոչ* խնայեաց, նոյնպէս և զամենայն մեղաւորս յանդիմանէ՛: - 432. Յորժամ մեղայ ասաց՝ վասն է՞ր *ոչ* եբարձ զպատիժն. զի ահա՛ խայտառակեցան կանայք նորա: - 432. Զի գա՛յ զղջումն և խոստովանութիւն՝ որ զմեղքն բառնայ և զպատիժն ընդ նմին. որպէս հատեալ տունկ՝ չորանան ճիւղքն. որ բոլորով սրտիւ զղջայ և խոստովանի և այլ *ո՛չ* գործէ: - 432. Եւ է՛ որ խոստովանի. և *ոչ* մեղքն միայն թողուի. որք թերի են սրտիւ. և զմեղս թերի խոստովանին. և ի միտս եդեալ են դարձեալ գործել. այսպիսեաց *ոչ* մեղքն թողուի և *ոչ* պատիժն. զի որպէս զշուն դառնայ ի փսխած իւր: - 432. Սակայն բարի՛ է քան զայն որ ամենևին *ո՛չ* խոստովանի: - 432. Ասեմ թէ *ոչ*, զի կատարեալ խոստովանութիւնն թողու զմեղս, բառնայ զպատիժն, և ջնջէ՛ զյիշատակ մեղացն. մինչ զի *ո՛չ* երևի ի դատաստանին աստուծոյ: - 432. Եւ ա՛յս է պատճառն. զի ի դատաստան քահանային քննեալ՝ այլ *ո՛չ* քննի ի դատաստանին քրիստոսի...: - 433. և Դարձեալ՝ նոյն ինքն քրիստոսի է իշխանութիւնն որ աստ լուծանէ ի ձեռն քահանային. և իշխանութիւն նորա *ո՛չ* տկարանայ երբէք. որպէս զհաց և զգինին կատարէ և զայլ խորհուրդս. նոյնպէս և աստ: - 433. Երկրորդ՝ վասն տկարութեան օրինացն. զի ի հինն *ո՛չ* կարէր բառնալ զմեղս առանց մարմնական փոխարինաց և յիշատակութեանց: - 433. Սոյնպէս և շնորհք ապաշխարութեան նորոյս առաւե՛լ է քան զհնոյն. զի առանց գործոց հատուցման *ո՛չ* կարէին արդարանալ...: - 433. Եւ թէ ասիցեն՝ զխոստովանեալ մեղս այլ *ո՞չ* յիշեմք: - 433. Վեցերորդ՝ զի *ո՛չ* կարէր թագաւորել: - 433. Եօթներորդ՝ զի *ո՛չ* կարէր շինել զտաճարն սուրբ: - 433. Դաւիթ ընդէ՞ր *ոչ* ետ պատասխանի անարգանացն սիմէի: - 433. Չորրորդ՝ ի տիպն քրիստոսի որ ասէր ծարաւի եմ և *ո՛չ* էարբ: - 434. Ուստի յա՛յտ է, զի ցեղն իսրայէլի **ըճռ** էին. և ցեղն յուդայ **եճռ**. և ցեղն քահանայից և բենիամենի *ո՛չ* անկաւ ի թիւ: - 434. ...ուստի յա՛յտ է զի դաւիթ *ո՛չ* էր յանցաւոր *ո՛չ* պատժեցաւ: - 435. Ցուցանէ թէ տարաժամ մահն ընտրութեամբ և կամօքն աստուծոյ լինի, և *ո՛չ* պատահմամբ որպէս ասեն ոմանք: - 435. Քսանև**ը**, ձգեաց սաւուղ զգեղարդն դաւթի, եհար զորմն և ապրեցաւ դաւիթ. և որդիքն սաւուղայ հարկանել ետուն զկողս տեառն և *ո՛չ* վնասեցին աստուածութեան նորա: - 436. Քառասուներորդ, սաւուղ բազում անգամ խնդրէր զդաւիթ և *ո՛չ* կարէր ըմբռնել. և որդիքն սաւուղայ զտէրն. զի *ո՛չ* էր հասեալ ժամ նորա: - 437. Այլ և դաւիթ եգիտ զսաւուղ և զզօրսն նորա ի քուն և *ո՛չ* վնասեաց. այլ զզէնն էառ. և տէրն *ո՛չ* կամի զմահ որք ննջեն ի մեղս. այլ զպատճառ մեղացն հանէ: - 437. Վասն է՞ր *ոչ* գիտաց զաբիսակ: - 439. Նա՛խ՝ զի ինքն *ո՛չ* սպանցէ: - 439. Երկրորդ՝ զի ի նոյն օրն *ո՛չ* մեռցի: - 439. Երրորդ՝ զի աբեսեանքն *ո՛չ* սպանցեն: - 439. Չորրորդ՝ զի առանց այլ մեղաց *ո՛չ* մեռցի. և ճշմարիտ պահեաց: - 439. Զի անդ որ գործէր զմեղս՝ և որ վրէժ *ոչ* խնդրէր՝ միապէս էր յանցանք: - 439. Այլ որ հրամայեցաւ սիմէի *ոչ* ելանել յերուսաղէմէ. և յորժամ ել մեռաւ: - 439. Վասն է՞ր հրամայեցաւ դաւթի *ո՛չ* շինել զտաճարն: - 439. Ասեմք եթէ՝ մովսէս արիւն եհեղ. և յեսու բազում. և սամուէլ. և *ո՛չ* մեղանչեցին: - 439. Եւ ի յանցանս ուրիայի *ո՛չ* էր անկեալ: - 439. Զայս ցուցանէ թէ՝ որ քան ի խռովութեան եմք ընդ թշնամւոյն և յանձինս մեր՝ *ո՛չ* լինիմք տաճար աստուծոյ: - 440. Ասեն թէ՝ **ռ** կին էր սողոմոնի. **է ճ** տիկնայք, և **գ ճ** հարճք. և նոցա **ռ** պահապան. իսկ ի փորձելն խաբեաց զհազար կանայսն. և ի յարանցն մին *ո՛չ* խաբեցաւ. այս առասպե՛լ է: - 440. Այլ զսէրն աստուծոյ և զսէր ընկերին *ոչ:* - 440. Եւ սոքա են հարճք որ կարեն ի բաց հանիլ ի ժառանգութենէ. զի սէրն է կապ և լար շարոցին որ *ո՛չ* թողու ցրուիլ: - 440. Եօթներորդ՝ զի նա՛ *ո՛չ* արար փրկութիւն հոգւոց. և քրիստոս ամենայն աշխարհի: - 442. Եւ ընդ նոյն ճանապարհն *ոչ* դառնալ, զանդառնալի պատուհասն: - 442. Եւ հաց *ոչ* ուտել և ջուր *ոչ* ըմպել. զի անընդունելի՛ էր մարմին և արիւն զոհիցն: - 442-443. Դարձեալ հաց *ոչ*

ուտել՝ զբարկութիւնն նշանակէ: - 443. *Ո՛չ* էր պարտ պարզամտութեամբ խաբիլ. պարտ էր հարցանել զնա թէ մարգարէ՞ է թէ *ոչ:* - 443. Յօրինակ ամենայն մարդոյ. զի պա՛րտ է ստուգել զամենայն բան. և *ո՛չ* դիւրապատիր լինիլ և թողուլ զհրամանն աստուծոյ: - 443. Ծեր մարգարէն որ դարձոյց զնա, արեան տէ՞ր է թէ *ոչ:* - 443. *Ո՛չ:* - 443. Երկրորդ՝ զի սուրբ գիրն *ո՛չ* պարտաւորէ զնա իբրև զմահապարտ: - 443. Ա՛յս է՝ իբր թէ աստ *ո՛չ* է գրեալ բոլորն՝ ա՛նդ է գրեալ որ է մնացորդացն յուդայի թագաւորացն: - 443. Այլ և *ո՛չ* անդ է գրեալ բոլորն, այլ ի թագաւորութեանցն որ չէ թարգմանեալ ի մերս. այլ միայն **բ** մնացորդացն զոր եզր գրեաց: - 443. Այլ սուրբն եփրեմ ասէ *ոչ:* - 443. Եւ որ *ո՛չ* եթող զոք մերձ. զի ո՛չ ոք լինի գործակից յարութեան մերոյ. որպէս և *ո՛չ* ստեղծմանն: - 444. Զի՞նչ է որ *ո՛չ* պակասեաց ալիւրն և իւղն: - 444. *Ո՛չ* ասէ թէ յաւելցի. այլ թէ *ո՛չ* պակասի: - 444. Երկրորդ՝ նշանակէր զնմանանայն որ նոյնպէս *ոչ* յաւելոյր և *ոչ* նուազէր: - 444. Չորրորդ՝ ի տիպ մարմնոյն փրկական. զի *ոչ* յաւելու ի բազում պատարագելն. և *ոչ* նւազէ ի ճաշակելն: - 444. Հինգերորդ՝ **է**եկի շնորհօք բազմապատկեալ ի հոգւոյն. *ոչ* առաւելու արգելեալ. և *ոչ* նուազէ բաշխեալ: - 444. Սոքա ըստ իրին *ո՛չ* առաւելուն և *ո՛չ* նւազին. թէպէտ հաղորդեալքն առաւելուն և նւազին ըստ ունակութեան: - 444. Նա՛խ՝ զի ուսուցէ, եթէ մի անգամն *ո՛չ* լսի՝ պա՛րտ է անձանձիր աղօթել. որպէս այրին որ ժտելովն էառ: - 444. Եւ շուրջ զնովաւ հրեշտակք ամենայն *ոչ* հաւանեցան...: - 444. Ցուպն եղիսէի օրինակ էր խաչին. վասն է՞ր *ոչ* յարոյց զմեռեալն: - 445. Երկրորդ՝ զի *ո՛չ* հաւատաց սոմնացին նմա: - 445. Նոյնպէս և ամենայն խաչի զօրութիւնն քրիստոս է. ի ձեռս արժանաւոր և կատարեալ հաւատոց առնէ սքանչելիս. իսկ *ոչ* նոյնպիսեացն ծածկէ զզօրութիւնն: - 445. Եւ եղև գերութիւնն բաբիլացւոց **h** ամ ի վերայ յուդայ և *ո՛չ* ի վերայ իսրայէլի որպէս ասէր երեմիա: - 447. ...և նա՛ վկայեաց վասն գերութեան ժողովրդեանն. այլ վասն բարեպաշտութեան ովսիա *ո՛չ* գնաց գերի: - 447. Նա՛խ՝ նշանակեն առաջինքն զմարգարէքն և զարդարսն. որք *ո՛չ* կարացին զկործանեալ բնութիւնս շինել արդարութեամբ...: - 448-449. Եւ յետ այնորիկ սպանցի օծեալն. և իրաւունք *ո՛չ* իցեն ի նմա. և քաղաք և սրբութիւն ապականեսցի: - 449. Եւ յայնմ ժամանակի ասէ՝ սպանցի օծեալն, յորում քահանայքն և իրաւունք *ո՛չ* իցեն. այսինքն թագաւոր և դատաւոր: - 449. ...իսկ եբրայեցիք զամենայն շաբաթսն *ո՛չ* թուէին ի համարն. վասն որոյ նուազի՛ նոցայն: - 451. Իսամարիայ **ժ** ազգին տիրէ՛ րոբովամ որդին նաբատայ. որք կոչեցան թագաւորք իսրայէլի չարք և *ո՛չ* բարիք: - 452. Զչորքս զայս՝ Զոքզիա և Զգոդողիա մայրն, և Զյովաս և Զամեսիա *ո՛չ* գրէ յազգահամարսն աւետարանիչն վասն լինելոյ դուստր և թոռունք եզաբելի: - 452. Իննև**ժ**, Թէ *ո՛չ* լինէր ծեր՝ **ե** կերպիւ: - 454. Եւ զի *ո՛չ* ետ մերձենալ մարիամու: - 455. Վասն է՞ր հօր *ո՛չ* տօնեմք որպէս քրիստոսի և հոգւոյն: - 455. Եւ մեծն ի ծնունդս որովայնի՝ խրաց մի կօշկաց նորին լուծելոյ *ոչ* բաւէր: - 456. ...իմացեալ լինի ըստ չորրորդ եղանակին անփոփոխ ճշմարտութիւնն. իսկ այն *ո՛չ* պատշաճի: - 457. Այլ *ո՛չ* յարմարի բանս. զի և յերկինս տեսանի գործ արդարութեան առ հրեշտակս եղեալ. որք հպարտացեալ կործանեցան: - 458. ...զի յերկինս *ո՛չ* կարօտանան ողորմութեան. զի անդ ո՛չ գոյ ողորմելի: - 459. Զի *ո՛չ* էր օրէն զկանայս յազգահամարն թուել: - 460. Այլ և օրէն էր նոցա, որ իւրաքանչիւր ոք յազգէ իւրմէ առնոյր իւր կին և *ո՛չ* յօտարէ: - 460. Այլ *ո՛չ* էր արդար թէ յանցանէր զօրինօքն աստուծոյ: - 460. Այլ և քահանայքն *ո՛չ* յանցանէին զօրինօքն և յօտար ազգէ տային նմա կին: - 460. Մարիամ անուանեցաւ ի բեթլէհէմ և ծնաւ զսողոմի զմանկաբարձն յիսուսի. *ո՛չ* որ մայր եղև որդւոցն զեբեթեայ. զի այն. սողովմէ դուստր է յովսեփայ աստուածահօրն...: - 460. Զի թէպէտ փակեալ էր օրէնքն խառնիլ երկուց ցեղիցն ընդ միմեանս, սակայն Չորրորդ՝ զի մի՛ վատահամբաւ լիցի ընդ ծնանիլն իբր *ոչ* ունելով այր: - 461. Ութերորդ՝ զի մի՛ հրէայքն համարելով զքրիստոս *ո՛չ* ունելով օրինաւոր ծնունդ՝ երևեսցին յիրաւի ի հալածելն զնա: - 461. Տասներորդ՝ որպէս ի դրախտին մերկ էին ադամ և եւա և *ո՛չ* ամաչէին զի անմեղք էին: - 461. Սակայն ըստ ներգործութեան մեծագոյն է սրբութիւն մկրտութեանն ...այլ և պատրաստէ՛ զմարդն առ ի խորհուրդս ամենայն. զոր *ո՛չ* ներգործեն ա՛յլ երկոքին եզական շնորհքն: - 462. Նա՛ ևս գերազանցեալ քան զհրեշտակս այսու, զի նոքա ի գոյացական վարձս *ո՛չ* աճիլ կարեն և *ո՛չ* նուազիլ. իսկ երանուհի կոյսն կարէր յառաջանալ յարդիւնս և *ո՛չ* նուազիլ: - 463. Վասն է՞ր հրեշտակապետն գաբրիէլ աւետեաց կուսին, և *ո՛չ* մարդ ոք: - 463. Չորրորդ՝ զի անկասկած լիցի ամենևին և անկարծ ի չարեաց զատուցեալ սուրբ կոյսն. ի ձեռն հրեշտակին աւետարանել զյղութիւնն. և *ո՛չ* ի ձեռն մարդոյ: - 463. Իններորդ՝ զի *ո՛չ* մարգարէիւ յայտնեաց կուսին. որ էր աղօտ գիտութիւն համեմատեալ ընդ հրեշտակին: - 464. Այլ և ծանիր, զի յընտրողութիւնն *ոչ* էր վաղվաղուկ որպէս եւա: - 465. Եւ ի հարցանելն *ո՛չ* էր երկբայ որպէս զաքարիա: - 465. Եւ *ո՛չ* ի հաւանելն յամր որպէս սառա: - 465. Վեցերորդ, մայր մարդոյ ասի կինն որ ծնաւ զմանուկ.

թէպէտ հոգին *ո՛չ* է ի մօրէն. այլ վասն միաւորեալ մարմնոյն մարդածին կոչի: - 466. Այլ արդ՝ քրիստոս *ո՛չ* է որդի աբրահամու և *ո՛չ* ի հարցն՝ թէ *ոչ* է որդի կուսին. ապա ուրեմն ըստ մարմնոյ աստուած է քրիստոս, և աստուածածին է ծնօղն. և մայր ըստ մարմնոյն քրիստոսի: - 466. Վասն է՞ր *ոչ* յառաջ և *ո՛չ* յետոյ մարդացաւ: - 467. եթէ զոր օրինակ բժիշկք՝ *ո՛չ* ի սկիզբն ցաւոց և *ո՛չ* ամենևին անագան տան զդեղ հիւանդին. զի անօգուտ է և վնասիչ. այլ ի դիպօղ ժամու յորում առողջասցի: - 467. Նա՛խ՝ զի *ո՛չ* խնդրէին, ըստ որում *ո՛չ* ցանկանային: - 467. Երկրորդ՝ զի *ո՛չ* հաւատային. ըստ որում *ո՛չ* գիտէին: - 467. Երկրորդ՝ զի այն քան բազմութիւնք հաւատացելոց կորնչելո՛ց էին, որ *ո՛չ* վայելէր ամէնիմաստ գիտութեանն աստուծոյ: - 467. Այլ յորժամ նկուն եղեն օրէնք ամենայն, և *ո՛չ* կարեցին փրկել. յետոյ եկն և երևեցաւ նոյն ինքն օրէնսդիրն և փրկեաց զմեզ: - 467. Վասն է՞ր բա՛նն մարմին եղև. և *ո՛չ* հայր կամ որդի: - 468. Չորրորդ՝ միտք և հոգին *ո՛չ* երևին. և բանն երևի և ի դուրս գայ. և մարդիկք տեսանեն և գրեն. վասն այն բանն մարմնացաւ, և *ո՛չ* հայր կամ հոգին: - 468. Այլ և ցուցանի թէ զայլ ամենայն բարութիւնս *ո՛չ* խնայէ մեզ զոր ինչ և խնդրեմք ի նմանէ: - 468. Ասեմք եթէ յետ յղացման բանին յարգանդի կուսին օրինօք և *ոչ* օրինօք բնութեան...: - 469. Նա՛խ՝ զի *ո՛չ* լինէր այն որդի ըստ բնութեան ծնողին. որպէս և *ո՛չ* եւա ադամայ. վասն որոյ յարգանդէ ծննդեամբ եղև որդի կուսին: - 469. Որ *ո՛չ* ըստ բնութեան կարգի, այլ ըստ անբաւազօր կարողութեանն աստուծոյ միայնոյ: - 469. Կուսանք՝ զի *ո՛չ* ծնան: - 469. Զի կուսութեամբ ծնաւ և զցաւս *ո՛չ* զգաց: - 469. Զի որպէս զիայելին *ո՛չ* բեկանէ շառաւիղ արեգականն: - 469. Նոյնպէս և զամբողջութիւն կուսին՝ մուտ և ել աստուածն բան *ո՛չ* խախտեաց: - 469. Եւ այս *ո՛չ* զհետ իրերաց. այլ համանգամայն յանկարծօրէն ի վայրկեան ժամու զօրութեամբ հոգւոյն սրբոյ. որոյ յանկարծօրէն է ներգործելն աստուծոյ: - 470. Զի յղացումն տեառն *ո՛չ* եղև ի սերմանէ առն: - 470. Նա՛խ՝ զի կազմեսցի զօրութեամբ բարձրելոյն ի հոգւոյն սրբոյ և *ո՛չ* նպաստութեամբ մարդոյ: - 470. Այլ և *ո՛չ* կանանցական սերմն եղև նիւթ մարմնոյն քրիստոսի: - 470. Նա՛խ՝ զի *ո՛չ* վայելէր մաքրութեան կուսին: - 470. Այլ և *ո՛չ* ի մսոյ կամ յոսկերաց որպէս եւա ի կողէն: - 470. Նա՛խ՝ զի այն *ո՛չ* ունէր ծնունդ: - 470. Երկրորդ՝ զի ներգործութեամբ մասն՝ *ո՛չ* լինի զօրութեամբ բոլոր. վասն որոյ *ոչ* է նիւթ ծննդեան: - 470. Նա՛խ՝ զի *ո՛չ* ապականիւր կուսականն ամբողջութիւն: - 470. Երկրորդ՝ զի զօրութեամբ ունի և *ոչ* է ներգործական մասն: - 470. Առաջին ծնունդն *ո՛չ* յառնէ և *ո՛չ* ի կնօջէ. որպէս ադամայն: - 471. Եւ զի հոգին է ևս ի հօրէ, սակայն բղխումն է և *ո՛չ* ծնունդ որպէս ցուցաւ ի վերոյ: - 472. Եօթներորդ՝ նա՛ միա՛յն է միշտ և անդադար ծնունդ. զի *ո՛չ* սակաւ ի ժամանակի, և *ո՛չ* ի ժամանակի դադարի. այլ որպէս լոյս ի հրոյ միշտ և անհատապէս ծնանի: - 472. Ութերորդ՝ նա՛ միա՛յն է ծնունդ ի հօրէ և *ո՛չ* երբէք հայրանայ. զի *ո՛չ* ունի յինքենէ ծնունդ որպէս նա՛ ի հօրէ: - 472. Այլ և անդրանիկ ծնաւ ի մօրէ առաջին ծնունդ. թէպէտ *ո՛չ* ունի եղբար ի կուսէն, անդրանկութիւն իւր *ո՛չ* խափանի: - 472. Երկրորդ՝ անդրանիկ է սրբութեամբ. որ *ո՛չ* արար մեղս. և արդարացոյց զմեզ: - 473. Եւ աստ գիտելի՛ է, զի գ ինչ միայն յատուկ է մարդացելոյն քրիստոսի. և *ո՛չ* այլ ումեք պատշաճի մարդկայինս ազգի: - 473. ...իսկ մեք *ո՛չ* ի գործոց, այլ ի հաւատոցն քրիստոսի ընկալաք զսկզբնական արդարութիւնն և զներգործութիւն մարմնոյ և զսրբութիւն մտաց: - 473. Իսկ մկրտութիւն նորա *ո՛չ* որդեգրութեան էր որպէս մերս...: - 474. Այլ և *ո՛չ* յառաջ քան զյղանալն օծաւ...: - 475. Յետ այսորիկ երկրորդ միաւորութիւն սովորեցաք կոչել թէպէտ և *ո՛չ* իսկապէս՝ և զանհամանիւթից ոմանց. և կամ զհամանիւթից մարմնոց յարադրութիւն. որոց ընդ մէջ է մակերևութիւն միայն: - 476. Չորրորդ՝ միաւորութիւն ասեմք զոլ և զզանգումն որ ի նա է՛ և ի չորո՛յ բնաւորեցաւ լինիլ. յորում *ո՛չ* ամբողջ պահի բան որակութեանն: - 476. Նոյնպէս և յորոշելն ըստ ոմանց զաստուածն և զմարդ՝ *ո՛չ* է քրիստոս. այլ մարդ սոսկ կամ մերկ աստուած: - 477. Հինգերորդ՝ որպէս մարմինն զգայական միաւորեալ ընդ բանական հոգոյ՝ *ո՛չ* է և *ոչ* ասի զգայական. այլ բանական մարդ: - 477. Այսպէս և մարդկութիւնն միաւորեալ ընդ բանին՝ *ո՛չ* ունի տգիտութիւն ինչ մարդկային. այլ գիտէ զամենայն աստուածաբար: - 477. Տասներորդ՝ զի ի ծնունդն միաւորութեան մերոյ *ո՛չ* ասի մարմին ծնեալ. այլ թէ մարդ ծնաւ յաշխարհ: - 478. Ասեմք եթէ՝ ապացոյցն *ո՛չ* ամենայն իրօք է նման. ապա թէ ոչ՝ լինէր նոյնն...: - 478. Զի որպէս ո՛չ գոյ սկիզբն աստուածութեան նորա, այսպէս և *ոչ* կատարումն մարդկութեան և աստուածութեան նորա: - 478. Իսկ աստուածայինն անեղ էութիւն ամենևին պարզ և մաքուր առաւել քան զիմացականն բնութիւն եղական իմն գոյութեամբ. թէ և *ո՛չ* են միաւորական մարմնոյ: - 479. Իններորդ՝ զի ի հոգի՝ ի նմանամասունս և յաննմանամասունս այլ և ա՛յլ գործէ. ըստ որում ակն տեսանէ և *ո՛չ* լսէ. բերանն ճաշակէ՛ և *ո՛չ* հոտոտէ: - 479. Տասներորդ՝ զի թէ և միաւորի հոգի և մարմին՝ այլ *ո՛չ* հոգին մարմին և *ո՛չ* մարմինն հոգի ասի: - 479. Վասն է՞ր *ոչ* կատարեալ հասակաւ ծնաւ քրիստոս

որպէս զաղամ: - 479. Եթէ *ոչ* էր խաչեալ քրիստոս՝ լինէ՞ր ծեր մարմնով: - 479. Ասեմք թէ *ո՛չ*՝ վասն **ե** պատճառի: - 479. Երկրորդ՝ զի ծերն *ո՛չ* է կատարեալ հասակ, այլ դարձումն ի նուազութիւն: - 479. Իսկ ի քրիստոս ոչ ինչ է անկատարութիւն. ապա և *ո՛չ* ծերութիւն մարմնոյ: - 480. Երրորդ՝ զի քրիստոս զչափ հասակի զաղամայն ունէր, որ նախ քան զյանցանս և ադա՛մ *ոչ* ունէր հիւանդութիւն և *ո՛չ* ծերութեան փոփոխումն: - 480. Եւ տեառն մերոյ *ո՛չ* էր լինելոյ. ոչ հիւանդութիւն և *ո՛չ* ծերութեան փոփոխումն: - 480. Ա՛րդ՝ տէր մեր *ո՛չ* արար մեղս, և *ո՛չ* էառ զդատապարտութիւն մեղացն: - 480. Ա՛րդ՝ եթէ նահապետքն ամենայն որ **թճ** ամ կամ աւելի և պակաս ապրէին՝ *ո՛չ* ալևորէին, ապա և *ո՛չ* տէր մեր յիսուս քրիստոս: - 480. Չորրորդ՝ որպէս արու բռնացա՛ւ տէր ի քակել զօրէնս բնութեան. և խզեաց զկապ կուսանաց և զմայրական. այսինքն զի որ մա՛յր է՝ կոյս *ո՛չ* է. և որ կոյս է՝ մայր *ո՛չ* է: - 480. Յաղագս որոյ ծնաւ արու և *ո՛չ* էգ: - 480. Հինգերորդ՝ քրիստոս լինելոց էր քահանայ և թագաւոր յաւիտենական. և էգն *ո՛չ* կարէր օծանիլ քահանայ և թագաւոր. *ո՛չ* յօրինակն և *ո՛չ* ի ճշմարտութիւնս: - 480. Վեցերորդ՝ ի յանմարմին բնութիւնն *ո՛չ* կոչէր իգական. այլ արական որդի. իսկ թէ ի մարդեղութիւնն լինէր իգական, փոփոխումն էր դիմացն և սերիցն: - 480. Եօթներորդ՝ գիրք սուրբք մարդեղութիւն ասեն բանին. այլ մարդն կոչումն յատուկ արական է և *ո՛չ* իգական թէ և հասարակաց կոչի: - 480. Ա՛րդ՝ փեսայ և գլուխ և ժառանգ արուն է և *ո՛չ* էգն. վասն այն արու ծնաւ քրիստոս: - 480. Եւ երբ *ոչ* պահեաց, գրեցաւ գիր մեղաց և դատապարտութեան: - 481. Հարցումն թէ և *ո՛չ* կարի անազան: - 482. Քանզի *ո՛չ* կարէին ի միում աւուր յերկոսեան ուխտսն կատարել զտօնսն հեռի գոլով ի միմեանց. երուսաղէմացիքն այսր աղագաւ փոխեցին. և փոքր փոքր աճմամբ ընկալան և ա՛յլ եկեղեցիք զնոյն: - 482. Երրորդ՝ զի *ո՛չ* ասաց հրեշտակապետն զաքարիայի թէ ահա՛ եղիսաբեթ յղասցի և ծնեցի քեզ որդի զներկայն ցուցանելով...: - 483. Չորրորդ՝ զի որ յամսեանն զերորդի հրեշտակապետն եկն առ կոյսն, ի յղութենէն եղիսաբեթի ասաց գոլ **զ** ամիս, և *ո՛չ* յաւետեացն: - 483. Ըստ ձեզ ապա և *ո՛չ* ժողովրդեանն նմանեցաւ: - 484. Այլ *ո՛չ* կատարէր զ**գ** աւուրն ի միասին: - 484. Ութերորդ՝ զի թէ հաւատան աւետարանին և *ոչ* ստեն **լ** ամաց գալ քրիստոսի ի մկրտութիւն, ի հարկէ՛ պա՛րտին կատարել և զմկրտութիւնն ի նոյն ի տօնի ծննդեանն իւրեանց ի դեկտեմբերի **իե** որ իցեն ամենևիմբ սուտ: - 484. Իններորդ՝ զի և նոքա իսկ որ զայս ասեն՝ առնեն յունվարի **զ** ճրագալոյց ընդ մեզ. և ճրագալոյցն *ո՛չ* է մկրտութեան, այլ ծննդեան ի մէջ գիշերի: - 484. ...զի զքառասնօրեայ գալուստն ի տաճարն՝ ըստ ծննդեանն տօնեսցեն և *ո՛չ* ըստ յայտնութեանն. որ է՛ յունվարի վեցն. զոր մեք տօնեմք **խ** օր թուեալ մինչև ի **ժդ**ն փետրվարի: - 485. Քրիստոս վասն մեր սպասաւոր եղաւ թլփատութեան. և *ո՛չ* վասն պիտոյից նորա: - 485. Զի *ո՛չ* սկզբնական և *ո՛չ* ներգործական մեղս ինչ ունէր: - 485. Այլ և *ո՛չ* օրէնս դնէր որպէս մկրտութիւնն ի մեզ: - 485. Նա՛խ՝ զի որ բանն մարդ եղև՝ *ո՛չ* գարշի յեդեալ օրինացն իւրոց զի վասն մարդկան եդ: - 485. Երկրորդ՝ զի ցուցցէ զճշմարիտ մարդեղութիւն իւր և *ո՛չ* կարծեսցի առ աչօք. որպէս զրկեալքն ի շնորհաց նորա ասացին: - 485. *Ո՛չ* հատանելով զի անպատշա՛ճ էր բաժանիլ ի մարմնոյ կամ յարենէ նորա: - 486. Այլ ճեղքելով որպէս օրէնն էր անդրանկացն ճեղքել և *ո՛չ* հատանել: - 486. Մկրտութիւնն քրիստոսի *ո՛չ* վասն կարօտութեան էր. զի ամենամաքուր և սուրբ է բնութեամբ և սրբիչ ամենայնի: - 486. Նախ ասէ «եկն յիսուս». այսինքն տըւօղն փրկութեան և *ոչ* կարօտն փրկութեան: - 486-487. իսկ քրիստոս *ո՛չ* ունէր զմեղս. վայն այն վաղվաղակի ել ի ջրոյն. և նշանակէ ի մեզ զշնորհաց հեղումն. որ մկրտեալն ազատի ի մեղաց և իսկոյն ելանէ յառաքինութիւնս: - 487. Զի *ո՛չ* ասաց թէ որ ի դմա՛ է կամ դոքա ըստ բաժանողաց. այլ թէ դա՛. որ մի անձն բնութեամբ միացեալ նշանակէ: - 487. Ութերորդ ի կատարածի. այն որ *ո՛չ* ի փրկութիւն, այլ ամենայն չարութեան ջնջումն առնելով տանջանօք որ է հուրն անշիջանելի: - 488. Երկրորդ՝ ի ներգործութիւնն. զի մկրտութիւնն քրիստոսի արդարացուցանէ և զդուռն երկնից բանայ. և յովհաննուն *ո՛չ:* - 488. Եւ ի ձայնէն վէմք պատառեալ և երկիր շարժեալ, տեղի ետուն իջանել ի նոսա՛. և քարացեալ սիրտ նոցա *ո՛չ* շարժեցաւ: - 490. Եւ վարագոյրն պատառեցաւ. զի յանարգանս փեսային պատառեաց հարսն զքօղն. և կողն աղբիւրացաւ. և նոքա *ո՛չ* արտասուեցին: - 490. Նա՛խ՝ զի երևելի էր և *ո՛չ* անարգ ոք. որ և սակաւ ինչ յառաջ փառօք եմուտ ի քաղաքն: - 490. Եւ այլք ասեն՝ դրախտ զտեսութիւն աստուածութեանն կոչէ. զոր յետ աւանդելոյ հոգւոյն ետես աւազակն. և այս ուղիղ է. զի *ո՛չ* ասաց թէ՝ իցեմք, այլ թէ՝ իցես: - 495. Դարձեալ՝ մահն ադամայ զմահ եմոյծ ի բնութիւնս. և մահն քրիստոսի ելոյծ զմահ և եբարձ. և մահ մեր *ո՛չ* մուծանէ և *ո՛չ* լուծանէ: - 496. Իսկ մահն *ո՛չ* է պարզաբար չար. այլ շարամանեալ ընդ բարւոյ անուամբ և իրօք: - 496. Իսկ տէր մեր ի մարդեղութեան իւրում յայսցանէ եկամուտ կրից միայն զմահն կրեաց. իսկ զմեղս և զապականութիւնս *ո՛չ* կրեաց: - 496. Երկրորդ՝ զմահ կրեաց. զի ինքն եդ զմահն պատիժ ի վերայ մեր. իսկ զմեղքն և

զապականութիւն՝ բանսարկուն և ադամ արկին ի բնութիւնս. վասն որոյ զոր ինքն *ոչ* եդ՝ *ո՛չ* կրեաց մարմնով իւրով: - 496. Ասեմք եթէ՝ *ո՛չ* ասաց զայս հրաման տալով. այլ պատմողաբար: - 496. Ուստի յա՛յտ է զի *ո՛չ* ասաց ի հող դարձիր. այլ թէ՝ «դարձցիս»: - 496-497. Ապա ուրեմն օտա՛ր արկածք էր ապականութիւնն, վասն այն *ո՛չ* կրեաց ի սուրբ մարմին իւր անապական: - 497. Զի թէ կրեալ էր զմեղս և զապականութիւն, *ո՛չ* կարէր ազատել զմեզ. ինքն ի ներքոյ անկեալ կրից և ապականութեանց: - 497. Ասեմք թէ՝ *ո՛չ* զհարկաւորն, այլ զկամաւոր մահն կրեաց որպէս ցուցաւ ի վերոյ: - 497. Դարձեալ՝ ասեմք եթէ մահն *ո՛չ* է մեղք և *ո՛չ* ապականութիւն. այլ լուծիչ մեղաց և ապականութեան: - 497. Վասն որոյ նա՛խ ցուցանել պա՛րտ է թէ *ո՛չ* նոյն է մահ և ապականութիւն: - 498. Եւ կարելի՛ է ասել զմարմին կենարարին չարչարելի և մահկանացու, այլ *ո՛չ* կարելի ասել ապականացու: - 498. Նախ որպէս ասացաւ՝ ապականութիւնն ծունդ է մեղաց՝ և մեղքն չա՛ր է. և մեղք *ո՛չ* կրեաց սուրբ մարմինն քրիստոսի. ապա ուրեմն անապակա՛ն է: - 498. Երկրորդ՝ ապականութիւն և մեղք *ո՛չ* է գործ արարչի. այլ մեղանչականին ադամայ և արկածք բանսարկուին. վասն որոյ տէրն զարկուածս բանսարկւին *ո՛չ* հպեցոյց ի մարմինն իւր. ապա ուրեմն անապակա՛ն է մարմինն տն: - 498-499. Չորրորդ՝ ապականութիւնն *ո՛չ* բնութիւն է և *ո՛չ* մասն բնութեան: - 499. Այլ բանն աստուած զբնութիւնս մարդկային էառ և միաւորեաց զմասունս նորին և *ո՛չ* զապականութիւն զի *ո՛չ* է բնութիւն. ապա ուրեմն անապակա՛ն է: - 499. Հինգերորդ՝ ապականութիւն մեր մարմնոցս է՛ ի սերմանէ հօր ի ձեռն կնոջ խառնեալ. իսկ մարմին բանին *ո՛չ* է ի սերմանէ հօր և մօր...: - 499. Վեցերորդ՝ զմարիամ մայր փրկչին կոյս և անապական խոստովանին հարք ուղղափառութեան. և զայս *ո՛չ* ըստ գոյացութեան բնութեան, այլ զի ծնաւ զբանն աստուած անապական մարմնով: - 499. Այլ ա՛րդ՝ յառաջ քան զխաչն *ո՛չ* ապականացու, և *ո՛չ* ի խաչին, և *ո՛չ* ի գերեզմանի որպէս մեք խոստովանիմք: - 500. Ասեմք առ այս՝ եթէ *ո՛չ* են նման մահկանացու և ապականացու ասելն...: - 500. Եւ զապականութիւնն *ո՛չ* կրեաց. *ո՛չ* կամաւ և *ո՛չ* ի հարկէ: - 500. Դարձեալ ասեն, եթէ *ոչ* է ապականացու, ապա անկատար է մարմինն: - 500. Դարձեալ ասեն նոքա, մեր մարմինս ապականացո՛ւ է. իսկ թէ անապական մարմին էառ քրիստոս, *ո՛չ* արար փրկութիւն մեզ. այլ առաջին բնութեանն ադամայ որ էր անապական ի դրախտին: - 500. Դարձեալ ասեմք, թէ *ո՛չ* զառաջին բնութիւն ադամայ էառ, այլ զապականացուս մեր ի զանգւածոյն ադամայ: - 500. Դարձեալ ասեն հակառակքն, եթէ անապական է մարմինն, ապա *ո՛չ* է տարրական. այլ ի յերկնից բերեալ. կամ ինքն ի բնութիւնն իւր թանձրացեալ. որպէս ասէ եւտիքէս: - 500-501. Այլ *ո՛չ* ասեմք զբանն ի բնութիւնն իւր սառուցեալ, կամ զմարմինն ի յերկնից բերեալ: - 501. Ասեմք թէ՝ աճումն մարնոյն *ո՛չ* է ապականութեան ցոյցք, այլ հակառակ նմին: - 501. Ապա ուրեմն աճումն *ո՛չ* է ապականութիւն: - 501. Դարձեալ ասեմք, փոփոխումն և աճումն հասակին *ո՛չ* եթէ ապականութեան էր ցոյցք. այլ զի զճշմարիտ մարդեղութիւնն հաստատեսցէ ընտել սովորութեամբ մեր որ ի տղայութենէ զարգանամք: - 501. Ապա թէ ոչ՝ նա՛ որ զադամ երեսնամեայ ստեղծ, կարէ՛ր և նոյն հասակաւն ծնանիլ. այլ այն *ո՛չ* լինէր ըստ սովորութեան մեր որպէս ցուցաւ ի վերոյ: - 501. Ասեմք եթէ, կերակրիլն *ո՛չ* է մասն ապականութեան. ուստի յա՛յտ է զի ադամ նախ քան զյանցանելն ի դրախտին կերակրիւր և *ո՛չ* էր ապականացու. այլ անապական: - 501. Եւ ակամայքն հարկաւորք են և ծառայականք. և առ աստուած ակամայ կիրք *ո՛չ* տեսանի: - 501. Եւ տէրն ի մարդեղութեանն զկամաւո՛րն կրեաց յինքեան և *ո՛չ* զակամայն. զի *ո՛չ* էր ի ներքոյ հարկի և ծառայութեան բնութեան որպէս մեք. այլ տէր և ազատ յամենայն կրից: - 501. Իսկ տէր մեր զի էր աստուած մարդացեալ՝ *ո՛չ* ունէր ակամայ կիրք. այլ զկամաւորն: - 502. Զի ըստ որում աստուած՝ *ո՛չ* կրէր ակամայ. և ըստ որում մարդ ճշմարիտ և մարմին բանին՝ կրէր զկամաւորն: - 502. Զի ապականացու զապականացու մաքրել *ո՛չ* կարէ. այլ անապական մարմնովն եղև մաքրիչ տէրն մեր ապականութեան մերում: - 502. Նա՛խ՝ զի բանական մարդ կամաւորօ՛քն է մարդ, և *ո՛չ* ակամայիւքն. որպէս կատարեալ էր մարմինն ադամայ նախ քան զմեղանչելն: - 502. Եւ դարձեալ զի ակամայքն ի մարդոյս բնութիւն յետամտականք են և անասնականք, և *ո՛չ* բնական բանականիս բնութեան: - 502. Եւ տէրն ի մարդեղութեան իւրում ընկալաւ զոր ինչ բնականն էր մարդոյս բնութեան. և *ոչ* զեկամուտ անասնականն: - 502. Ասեմք մեք, թէ արտածորումն մարմնոյ *ո՛չ* ունէր մարդն ադամ նախ քան զմեղանչելն ի դրախտին. որպէս նոյ ի տապանին. և մանուկն իննամսեայ յարգանդին: - 502. Նոյնպէս և *ո՛չ* տէր մեր: - 502. Իսկ տէր մեր ի մարդեղութեան իւրում՝ զակամայն *ո՛չ* կրեաց. զի հա՛րկ է և ծառայական: - 502. Եւ *ո՛չ* զանգոսնելիսն կրեաց զի տեսա՛կ է մեղաց. ուրեմն ապա կրեաց զկամաւորն և զանանգոսնելիսն: - 502. Իսկ աւելորդ ծորումն թէպէտ անանգոսնելի՛ է, սակայն ակամայ է. և զակամայն *ո՛չ* կրեաց քրիստոս: - 502. Ապա ապականութիւնն փրկեաց զմեզ. զնա կարդալի է փրկիչ.

այսինքն և զապականութիւնն և *ո՛չ* զքրիստոս: - 503. ...և մեզօք ծանրացեալ էջ ի ներքին կէտս դժոխոցն, և այլ *ո՛չ* կարէր բարձրանալ. մինչ ի վերին կիտէն բանն աստուած էջ ի ներքին կէտն. և ապաել ադամ ի վերին կէտն երկնից: - 503. Ասացեր թէ դժոխքն աւերեալ է յաւիտեան. այժմ այլ դժոխք *ո՞չ* է: - 504. Եւ որք **դ** ասեն՝ զներքին դժոխքն մահու չափ մեղաւորացն ասեն. և զքաւարանն ներելի մեղաւորաց. և զլիմպոսն արդարոց. և զդժոխս *ոչ* մկրտելոցն: - 504. Այլ զայսոսիկ *ո՛չ* ընդունին ուղղափառ վարդապետք: - 504. Վասն է՞ր ասի դժոխք բազմաւորական. և *ոչ* դժոխ միաւորական: - 505. Իմաստունք զտեղին յերկուս բաժանեն. ի վերին և ի ներքին. զի սոքա են հակակայք և առինչք միմեանց. իսկ միջին տեղի *ո՛չ* է...: - 505. Իսկ միջին դժոխք որ կոչի բանտ դժոխոց՝ է՛ միջակ մեղաւորաց. որք ունին հաւատ և *ո՛չ* գործք. որպէս չար հաւատացեալք. կամ գործք և *ո՛չ* հաւատ. որպէս թերահաւատք և անհաւատք: - 505. Իսկ վերջին դժոխք որ կոչի անջրդի գուբ, նոցա՛ է որք *ո՛չ* ունին չար և *ո՛չ* բարի. որպէս մանկունք անմկրտեալք. *ո՛չ* տանջին զի չեն մեղանչեալ. և *ո՛չ* հանգչին զի չեն արդարացեալ. այլ վասն սկզբնականին մնան յանջրդի գուբն խաւարին: - 505. Նախ ասեն թէ ի չորրորդ դժոխքն գնաց որ է՛ վերին և *ո՛չ* ներքին: - 505-506. Առ առաջինն ասեմք, թէ քրիստոս *ո՛չ* ի վերին՝ այլ ի ներքին դժոխքն էջ: - 506. Հինգերորդ՝ ադամ առաջին յանցաւորն էր ի ներքին դժոխս. զի ա՛յն է մահու մեռանիլն. այլ արդ եթէ քրիստոս *ո՛չ* գնաց ի ներքին դժոխքն, *ո՛չ* ազատեաց զադամ: - 506. Ա՛րդ՝ եթէ քրիստոս ի ներքին դժոխքն *ոչ* էջ, *ո՛չ* է կապեալ հզօրն որպէս աւետարանն ասէ. և *ոչ* զդրունսն խորտակեալ. և *ո՛չ* զգերիսն աւար առեալ որպէս դաւիթ ասէ: - 506. Նախ ասեմք եթէ՝ առաջին դժոխք հոգւոցն *ո՛չ* էր վասն ներգործական մեղացն հասարակ. այլ վասն պարտուցն ադամայ: - 506. Այլ ա՛րդ՝ եթէ դժոխքն այն *ոչ* է աւերեալ. ապա քրիստոս ի յառաջին պարտուցն *ո՛չ* է ազատեալ զմեզ: - 506. Ապա մասնաւո՛ր եղև փրկութիւնն և *ո՛չ* բոլորից մարդկան: - 506. Երկրորդ՝ եթէ սկզբնաչարն սատանայ է ամենայն մեղաց պատճառ և *ո՛չ* տանջի մինչ ի կատարած. նաև *ո՛չ* մարդիկ: - 507. ...այլ արդարքն *ո՛չ* ունէին զկապանս մեղաց և *ոչ* զխաւար նախնական, այլ մեղաւորքն: - 507. Ա՛յլ արդ՝ աւարն առ հասարա՛կ է և *ո՛չ* մասնաւոր: - 507. Եւ թէ ոք ասիցէ՝ ի յերկրի որք հաւատացին փրկեցան, և անհաւատքն *ո՛չ* նոյնպէս և ի դժոխս: - 507. Այլ արդ՝ մեռեալքն *ո՛չ* են ի դէմ յանդիման տեսութեան. վասն որոյ պիտո՛յ էր նոցա հաւատ: - 507. Ասեմք թէ՝ *ո՛չ* կարեն վասն երկու պատճառի: - 508. Երկրորդ՝ զի փոխեալ է որպիսութիւն մարդոյն. զի *ո՛չ* կարէ մեռանիլ. նոյնպէս և *ո՛չ* կարէ արդարանալ ըստ ինքեան. նաև *ո՛չ* մեղանչել: - 508. Եւ որպէս դևք զկնի անկման իւրեանց *ոչ* կարեն արդարանալ ըստ ինքեան. զի անկումն նոցա մա՛հ է նոցա: - 508. Նոյնպէս և հոգի մարդոյ զկնի մահու *ո՛չ* կարէ արդարանալ ըստ ինքեան. բայց թէ ի ձեռս այլոց վճարի պարտ նոցա և հասանին ողորմութեան: - 508. Որք հաւատացին՝ յաւիտենից փրկեցան. և որք *ո՛չ*՝ ժամանակեայ. վասն իջման որդւոյն աստուծոյ ի դժոխս: - 508. Յերեկոյի շաբաթոյն *ո՛չ* վասն այն լուծանեմք թէ յարութիւնն քրիստոսի ի շաբաթի աւուրն է. *ո՜չ*. քա՛ւ և մի՛ լիցի: - 508. Եւ որ ոք *ո՛չ* խոստովանի զքրիստոս աստուած, զտօն նորա ըստ հասարակ մարտիրոսացն առնէ ի մէջ գիշերոյն ի վեր: - 509. Զոր *ո՛չ* կարեն զայս ուրանալ ազգն ժխտողաց: - 509. Վեցերորդ վկայ նոյն ինքեանք ազգն Ֆռանկաց. որ յամենայն շաբաթ օր վիճիլ ասեն. և միս *ո՛չ* ուտեն ի խորհուրդ նաւակատեաց մեծի շաբաթուս: - 509. Վասն է՞ր ի նաւակատիսս ձուկն ուտի և միսն *ոչ:* - 509. Եւ խորհուրդ նաւատակեաց ի դրախտին աւանդեցաւ յամենայն պտղոյ ուտել և ի միոյն *ոչ:* - 510. Այսպէս և մեզ աւանդեցաւ յամենայն կերակրոց ուտել և զմիս *ոչ:* - 510. Եւ որպէս ադամ յամենէն *ո՛չ* եկեր, այլ ի միոյն եկեր և դատապարտեցաւ: - 510. Զի ձու և կաթն ի կենդանւո՛յ են, այլ ինքեանք *ո՛չ* են կենդանիք: - 510. Իսկ ձուկն կենդանի՛ է կատարեալ զգայարանօք և շարժմամբ. այլ զտուր և առ շնչոյ *ո՛չ* ունի. վասն այն պակա՛ս է: - 510. Զի ձուկն կենդանի է և *յոչ* կենդանւոյ. և ձուն *ոչ* կենդանի է և ի կենդանւոյ: - 510. Ասեմք թէ՝ ի վերնատունն զհինն կատարեաց մինչ զմարմինն բաշխեաց և նոր օրէնս եդ. և մեք հնոյն *ո՛չ* եմք պարտական: - 510. Եւ դարձեալ՝ ի քառասունս իւր *ո՛չ* եկեր ձուկն. և մեք զքրիստոսի քառասունսն պահեմք և *ո՛չ* զհրէիցն: - 510. Նա՛խ՝ զի յետ յարութեանն *ո՛չ* էր պահք. այլ զատիկ մինչ փեսայն ընդ նոսա էր որպէս ինքն հրամայեաց: - 511. Ապա յա՛յտ է զի *ո՛չ* ի չորեքշաբաթի եկեր զձուկն. այլ ի յանցեալ կիրակէն: - 511. Դարձեալ ասեն հակառակքն, թէ կատարեալ կենդանի է ձուկն, ընդէ՞ր *ոչ* զենումք: - 511. Ասեմք, զի *ո՛չ* ունին շունչ օդոյ այլ շունչ ջրոյ. և հանեալ ի ջրոյն պակասի շունչն. որպէս ասացաւ ի վերոյ ի **ժը** գլուխն ի **զ** համարն: - 511. Այլ մեռեալն և գազանաբեկն *ո՛չ:* - 511. Իսկ կենդանիք զենեալ յառնէ միայն կերակրելիք են. այլ ի կնոջէ *ո՛չ:* - 511. Հինգերորդ ասեն, զձուկն *ո՛չ* զենումք վասն այն ի պահոց ուտեմք: - 511. Ասեմք թէ՝ և զձու հաւի և զկաթն *ո՛չ* զենումք, կե՛ր և զայն ի պահոց. զի համատեսա՛կք են: - 511. Վեցերորդ ասեն ձուկն արիւն *ո՛չ* ունի: - 511. Ասեմք եթէ՝

մողեզն և կոկորդիլոսն որ քարթոշ ասեն, և յերկրի ազգի ազգի զեռունք արիւն *ո՛չ* ունին: - 511. Եվ դարձեալ՝ զձու և զկաթն վասն այն *ո՛չ* ուտես զի արիւն ունին. և դարձեալ դու ասես թէ արիւն *ո՛չ* ունին: - 511. Նա՛խ՝ զի աւետարանն յայտնապէս *ո՛չ* ասէ զժամ յարութեանն. որպէս զխաչին և զթաղմանն: - 512. Երկրորդ՝ զի վարդապետք եկեղեցւոյ *ո՛չ* համաձայնին յարութեան ժամուն: - 512. Երեքտասաներորդ՝ ամաղեկացիք գերեցին զկողմն հրէաստանի և զայլազգիս. և դաւիթ զհետ մտեալ յետ **գ** աւուր և հարեալ ի գիշերի և ի վաղիւն մինչ յերեկոյ. և դարձուցեալ զերկոսին կանայս իւր. և *ո՛չ* մնաց գերի և *ո՛չ* մի. և յաւարէ աստի բաշխեաց ամենայն սիրելեաց իւրոց: - 514. ...և *ո՛չ* մի հոգի եթող ի դժոխս. այլ զամենայն ազատեաց յարուցեալ ի մեռելոց. և բաշխեաց պարգևս որդւոց մարդկան: - 514. Ապա թէ ի լոյս կիրակէին էր յարութիւնն, պա՛րտ էր յառաւօտին առնել պատարագ և *ո՛չ* յերեկոյին: - 514. Զի՞նչ է վարշամակն ծալեալ և կտաւն *ո՛չ:* - 517. Իսկ պատանքն *ո՛չ* ծալեալ. զի խորհուրդ տրնօրէնութեանն *ո՛չ* ամենևիմբ յայտնի է և *ո՛չ* անյայտ. որպէս կտաւն բազո՛ւմ ունէր փոթուածս: - 517. Եւ սոքա ամենայն ստուգե՛ն զյարութիւն նորա թէ *ո՛չ* է գողացեալ. զի գողն ո՛չ ծալէր զվարշամակն և զկտաւն զըմռեալ: - 517. Եւ սոքա ամենայն ստուգե՛ն զյարութիւն նորա թէ ո՛չ է գողացեալ. զի գողն *ո՛չ* ծալէր զվարշամակն և զկտաւն զըմռեալ: - 517. Վասն է՞ր *ոչ* ետ թոյլ մերձենալ մարիամու. և այն զի ի ճանապարհին կալան զոտս նորա և համբուրեցին ա՛յլ կանայք: - 517. Երրորդ վասն այն արգել, զի ցուցանէ թէ յոյժ պատուեցաւ մարմինն այն և *ո՛չ* է համարձակելի որպէս յառաջն մաքսաւորք և պոռնիկք մերձենային: - 517. Չորրորդ ասեն ոմանք թէ՝ դեռ չէր մկրտեալ մարիամ. և *ոչ* մկրտելոցն անիպելի՛ է. թէպէտ և իւրք իցեն: - 517. Եօթներորդ, կամ թէ եգիտ ի նա երկեւան ինչ թերութեան վասն յարութեանն. իբր զի ասէ յայսմ գիշերի մերձեցայք յոտս իմ և *ո՛չ* հաւատացեր. վասն այն կրկին անգամ *ո՛չ* հրամայէ մերձենալ: - 517. Յայսմիկ յայտ արար թէ ի յարութեան անդ *ո՛չ* դառնայ ոք յոք. *ո՛չ* հայր յորդիս՝ և *ո՛չ* որդիք առ հարս իւրեանց. այլ դառնան ամենեքեան յայս. զի արժանի լիցին ողորմութեամբ ելանել առ հայր: - 517. Տասներորդ, զի ցուցցէ թէ թշնամեաց նորա *ո՛չ* է իշխանութիւն բուռն հարկանել զնմանէ...: - 518. Վասն այն *ո՛չ* ետ մարիամու մերձենալ. այլ պահեաց զնա բազկին այնմիկ որ նստոյց զնա ընդ աջմէ իւրմէ: - 518. Երեքտասաներորդ, զի մարիամ *ո՛չ* խոնարհութեամբ կամէր մերձենալ յոտս նորա որպէս այլ կանայքն. այլ յերե՛սն դիմեաց նա հպարտութեամբ առ ի համբուրել զնա. իսկ տէրն կամեցաւ ուսուցանել նմա զխոնարհութիւն՝ արգել զնա: - 518. Յնգետասաներորդ, զի բաւական համարեցաւ ի պատիւ կանանց զայն՝ զի յառաջագոյն մերձեցաւ ի նոսա ծննդեամբ. իսկ յետ յարութեանն կամի՛ զի ա՛րք նախ մերձեսցին ի նա մինչ դեռ *ո՛չ* է ելեալ նա առ հայր: - 518. Իսկ զտեղի համբարձմանն քրիստոսի միտք *ո՛չ* կարէ ցուցանել...: - 519. Զի արտաքս հանելով ցուցցէ *ո՛չ* ունել քաղաք որ աստէն մնալոց իցէ: - 519. Երկրորդ՝ զի ամպն կալաւ զնա յաչաց նոցա. նշանակի թէ ի մահկանացու մարմինս *ո՛չ* կարեմք տեսանել ի բարձունս զքրիստոս: - 520. Վասն է՞ր յորժամ յարեաւ իսկոյն *ո՛չ* համբարձաւ այլ յետ **խ** աւուր: - 520. Երկրորդ՝ զի տացէ օրինակ համբերութեան մերոյ, զի սպասեսցուք վարձուն ի հանդերձեալն. և *ո՛չ* իսկոյն վաղափոյթ լինիլ առնուլ այժմու կենօք...: - 520. ...զի և մշակն յետ սերմանելոյն իսկոյն *ո՛չ* հնձէ. այլ համբերէ մինչ ի հասումն պտղոյն: - 520. Վասն է՞ր նախ քան զխաչն և զհամբարձումն *ոչ* պարգևեցաւ հոգին սուրբ երևելի նշանօք: - 521. Երրորդ՝ զի պա՛րտ էր քրիստոսի հովուել զպարզամիտ աշակերտսն որպէս հաւ զձագս, և_մայր զմանկունսն. և թէ ի սկզբանէ զհոգին ընկալեալ էին՝ *ո՛չ* էր պիտոյ հովուել զնոսա: - 521. Չորրորդ՝ զի աշակերտքն զտկարութիւնս իւրեանց փորձիւ ճանաչեսցեն և գիտասցեն թէ *ոչ* վասն իւրեանց արժանաւորութեանն ընտրեցան...: - 521. ...զի ուսցին բառնալ զտկարութեան այլոց. որպէս քրիստոս զնոցայն եբարձ. իսկ թէ նախ զհոգին առեալ էին՝ *ո՛չ* կարէին բառնալ զայլոց տկարութիւնն: - 521. Յինգերորդ՝ զի գիտասցեն թէ քրիստոսիւ պարգևեցաւ. թէ յառաջագոյն էին ընկալեալ, պարզապէս յաստուծոյ կարծէին զտուչութիւն հոգւոյն և *ո՛չ* ի քրիստոսէ: - 521. Դարձեալ կարէ ասիլ Ութերորդ պատճառս, առ ի ցուցանել թէ հոգին *ո՛չ* ումեք առատապէս պարգևի, եթէ ոչ յիսուս ի սիրտ նորա յատկապէս փառաւորեսցի: - 522. Եւ բազումք զհոգին *ո՛չ* կարեն ընդունել...: - 522. Յինգերորդ՝ որ քան ծծեն *ո՛չ* պակասի օդն: - 523. Եօթներորդ՝ մեռեալ մարմին *ո՛չ* առնու և տայ զօդ: - 523. Որ և այժմ յոյնք և ասորիք պենտակոստ կոչեն որ թարգմանի **ե** երորդ և *ո՛չ* **է** երորդ: - 524. Երրորդ՝ զի անդ *ո՛չ* կարէր արդարանալ զի հիւանդ էր սիրտն, ետ նոր օրէնս ի սիրտս մեր որ կարո՛ղ է արդարացուցնել զժողովուրդս և զհեթանոսս: - 524. Նա՛խ՝ մաքրութիւն ի մահու չափ մեղաց. զի այլ *ո՛չ* ևս տիրեցին նոցա յետ հոգւոյն իջման: - 524. Յօր աստուծոյ վասն է՞ր *ոչ* տօնեմք որպէս քրիստոսի և հոգւոյն սրբոյ: - 525. Դարձեալ՝ զի հայր մարմնով *ո՛չ* երևեցաւ որպէս բանն մարմնացեալ. կամ որպէս հոգին սուրբ

աղաւնակերպ և հրաձև: - 525. Եւ թէ *ոչ* կրկնի: - 526. Եւ վասն միաւորութեան. և քացեալ պատառացն. և թէ *ոչ* տան ժողովրդեանն յօրինեալ մարմնոյն քրիստոսի: - 526. Եւ վասն է՞ր ի հին օրէնս յիւրեանց ազգէն առնուին և ի նորս *ոչ*: - 526. Երեսունսք, Ոչխար *ոչ* մտանէ յեկեղեցին. և մեռեալ *ոչ* թաղեմք յեկեղեցին: - 527. Եւ պահոցն *ոչ* տօնեմք: - 527. Յիսունգ, Վկայութիւն պահոցն մեծի. և շաբաթու. և չորեքշաբաթին. և զի յինանցն *ոչ* պահեմք: - 527. Եկեղեցի սուրբ նոր ժողովուրդ կոչեցաւ աստուծոյ. զի հաւատով արդարացաք և եղաք ժողովուրդք և *ոչ* ըստ հնոյն օրինօք: - 528. Նախ այն է՝ որ զորդի ընդ հօր և սուրբ հոգւոյն փառաւորեմք և օրհնեմք զ անձինք ի միում բնութեան. և *ոչ* որպէս հինքն հրէական օրհնութիւնս. որք *ոչ* օրհնէին զորդի և զհոգի: - 528. Սակայն մի և նոյն բանն բազմանայ ի բազումս. որպէս ի հրեշտակս և ի մարդիկ. ի հին և ի նոր օրէնս. այլ ի միութենէն *ոչ* բաժանի: - 529. Ասեմք առ այս, եթէ *ոչ* է արտաքոյ ուղիղ տեսութեան եթէ մի է առ հօր և բազում է առ մեզ: - 529. Եւ մի և նոյն բանն է ներտրամադրեալն ի սրտի. զի ըստ բան գոլոյն *ոչ* զանազանի...: - 529. Եւ դարձեալ զոր օրինակ, բան թագաւորին մի է, այլ ի բազում լեզուս և ի բազում լսելիս և ի բազում թուղթս որակացեալ և բազմացեալ, յիւրում միութենէն *ոչ* է քակտեալ: - 529. Ասեմք առ այս, եթէ անմարմին իր անկատար *ոչ* լինի...: - 529. Զի յատուկ է անմարմնոյ, որպէս ի բազումս բազմանայ և ի միութենէն *ոչ* բաժանի, այսպէս ի մասունս մասնաւորի և ի բոլորէն *ոչ* քակտի: - 529-530. Զոր օրինակ, բան մարդոյ յիւրաքանչիւր մասնաւոր լսելիս բաժանի, և բոլոր և կատարեալ է և *ոչ* մասն: - 530. Այսպէս և բանն աստուծոյ բոլոր և կատարեալ է յիւրաքանչիւր աւետարանս և *ոչ* մասնաւոր: - 530. Եւ դարձեալ զոր օրինակ, գիր մատանւոյն մի և նոյն կատարեալն է տպացեալ յամենայն մոմս կնքեալ և *ոչ* աւելի և *ոչ* նուազ: - 530. Այսպէս մի և նոյն բանն է յիւրաքանչիւր աւետարանս ձևացեալ, և ընդ աջմէ հօր նստեալ. և *ոչ* աւելի և *ոչ* նուազ: - 530. Ասեմք առ այս թէ՝ մի և նոյն անձնաւոր բանն աստուծոյ է յաւետարանս խօսեցեալ. այլ *ոչ* է բազում անձն և գոյութիւն բանին: - 530. Զոր օրինակ, մի՛ է արեգակն անձամբ և գոյութեամբ, և ի բազում լուսանցս և ի հայելւոջ երևեալ նոյն մի անձամբ և գոյութեամբ և *ոչ* բազում: - 530. Դարձեալ զորօրինակ, մարմինն քրիստոսի մի և նոյն էր ի խաչին բևեռեալ, և մի և նոյն մարմինն է ի բազում նշխարս միաւորեալ և *ոչ* բազմացեալ. զի նոյն է գոյացութիւն հացին և գոյացութիւն մարմնոյն քրիստոսի: - 530. Պատասխանեմք թէ՝ նման է այնմ որ ասեն թէ՝ բան աստուած է պատկեր հօր, և մարդն ի պատկեր բանին. ապա մարդն *ոչ* է պատկեր աստուծոյ, այլ պատկեր պատկերի: - 530. ...ապա ուրեմն *ոչ* է անյարմար եթէ հայր նոյն բանիւն վկայեսցէ ի վերայ որդւոյ. զի որդի և հայր նշանակէ զյատկութիւն անձանցն: - 530-531. Ո՛րդ՝ *ոչ* է անյարմար եթէ հայր անբաժանելի բանիւն վկայեսցէ բանին որ էր ի մարմնի: - 531. Նոյնպէս մի է տէր մեր յիսուս քրիստոս և *ոչ* երկու ըստ բաժանողաց ոմանց: - 532. **Մի կոչի եկեղեցի՝ *ոչ* տեղեաւ մի. այլ միով հաւատով և յուսով կոչմանն. և միոյ մօր և մի որովայնի ծնունդ աւազանին. և մի կերակուր որ է տեսութիւն աստուածային գրոց. և մի մարմին և արիւն փրկական. և մի գլուխ և պսակ և զգեստ ունիմք զքրիստոս**: - 533. ...այլ և մարգարէքն տալ զհոգին այլում *ոչ* կարէին...: - 535. Նա՛խ՝ զի յայտնեսցէ զծածուկն և զհեռաւոր իրն ժամանակաց. զի թէ զմերձաւոր և զյայտնին ասէ՝ *ոչ* է մարգարէ: - 536. Երկրորդ՝ զի թէ ճանաչիցէ զհեռաւորն միջնորդութեամբ բարի հոգւոյն. զի թէ յայտնէ միջնորդութեամբ չար հոգւոյն՝ *ոչ* է մարգարէ. այլ ստոգն ծանօթութիւն...: - 536. ...վասն այն *ոչ* կոչին ճշմարիտ մարգարէ պարզաբար. այլ բաղադրեալ. որպէս մարգարէ բահաղու. կամ մարգարէ բարձանց կամ անտառին: - 536. Զորօրինակ՝ մեռեալ մարդ *ոչ* ասի պարզաբար մարդ, նոյնպէս և այս. որպէս ցուցաւ ի թագաւորութեանցն **իզ** գլուխն. **ժբ** համարն: - 536. Երրորդ՝ երևակայութեամբ. որպէս եղիսէին ի տեսանել զզօրս հրեշտակացն, և մանկանն *ոչ* տեսանել: - 536. Եւ որոց պարգևի մասնաւոր այս շնորհ, թէ և *ոչ* բոլորապէս ըստ նոցայն: - 537. Երկրորդ՝ գիտէ որ *ոչ* գիտէ. և խոստովանի թէ *ոչ* գիտեմ: - 537. Երրորդ՝ *ոչ* գիտէ. և անգիտանայ թէ *ոչ* գիտէ և խօսի անգիտաբար: - 537. Երրորդ՝ ո՛չ գիտէ. և անգիտանայ թէ *ոչ* գիտէ և խօսի անգիտաբար: - 537. Սա յիմա՛ր է *ոչ* գիտէ զտկարութիւն իւր որպէս չար հիւանդ. զարթո՛ զսա: - 537. Չորրորդ՝ որ *ոչ* գիտէ. և գիտէ որ *ոչ* գիտէ, բայց սնափառ հպարտութեամբն լըլկի և յանդըգնի խօսիլ զոր *ոչ* գիտէ: - 537. Այլև՝ ոմանք ասեն և *ոչ* առնեն. չա՛ր է: - 537. Եւ ոմանք առնեն և *ոչ* ասեն. բարի՛ է: - 537. Ոմանք *ոչ* ասեն և *ոչ* առնեն. չարագո՛յն է: - 537. Նոյնպէս՝ որք լսեն և *ոչ* առնեն, չա՛ր է: - 537. Եւ որք *ոչ* լսեն և առնեն, բարի՛ է: - 537. Եւ որք *ոչ* լսեն և *ոչ* առնեն, չարագոյն է: - 537. Այսպէս՝ գիտել և *ոչ* ասել՝ չա՛ր է: - 537. *Ոչ* գիտել և ասել չարագո՛յն է: - 537. *Ոչ* գիտել և *ոչ* ասել միջակն է: - 537. Նա՛խ՝ զի մարմնաւորին հնազանդիմք *յոչ* կամաց. բռնութեամբ և ի հարկէ: - 538. Զի տեղիք զիշխանութիւն նորա և զսուր *ոչ* արգելուն: - 538. *Ոչ* ամրոց, *ոչ* պարիսպ կամ զօրք կամ այլ ինչ: - 538. Երրորդ՝ մարմնաւորն իշխէն

միայն ի մարմին և ի կեանս. այլ յետ մահու *ո՛չ:* - 538. Զի թէպէտ մեռանին թէ իշխանն և թէ իշխեցեալն, իշխանութիւնն *ո՛չ* խափանի: - 538. Երրորդ՝ որպէս որք ելեալ ի սահմանէն՝ *ո՛չ* են ի նոյն տեսակն: - 538. Այլ գիտելի է, զի քահանայն զինուո՛ր է. *ոչ* զոր ինքն կամի և ախորժէ զայնս կապէ և արձակէ. այլ զոր հաճո՛յ է զօրավարին քրիստոսի: - 539. Եւ թէ ոք ասիցէ, ապա թէ զամենայն ոք առ հասարակ կապէ կամ արձակէ, այսինքն օրհնէ կամ անիծանէ, *ո՞չ* կատարի: - 539. Ասեմք թէ *ո՛չ:* - 539. Նա՛խ՝ թէ անկարգաբար կապէ. որպէս քահանայ զեպիսկոպոս կամ զկաթողիկոսս. կամ սարկաւագ զքահանայ. այս *ո՛չ* կատարի: - 539. Երրորդ՝ վասն ախտի. այսինքն փառաց կամ մախանաց. կամ ագահութեան ընչից. կամ այլ ինչ այսպիսեացս. *ո՛չ* կատարին կապանքն: - 539. Զի թէպէտ քահանայն և բանքն նոյն է, այլ *ո՛չ* դիտաւորութիւնն: - 539. Ասեմք առ այս թէ՝ անկատար մնայ ըստ այնմ որ ի յանիծելն *ո՛չ* կատարի. այլ ըստ որում դառնայ ի յանիծօղն կատարի: - 539. Նոյնպէս և արձակելն այսինքն օրհնելն *ո՛չ* կատարի. թէ այնպէս անկարգաբար իցէ: - 539. Եւ թէ ոք ասիցէ, թէ վասն ուխտի կամ ագահութեան զանարժանս ձեռնադրեն՝ *ո՞չ* կատարի: - 540. Ասեմք առ այս, թէ ձեռնադրեալն իցէ անարժան՝ *ո՛չ* առնու շնորհս. այլ դատապարտի ինքն և ձեռնադրօղն. զի սրբութիւն՝ շանց ետ: - 540. Իսկ թէ ձեռնադրօղն իցէ անարժան, միայն ինքն *ոչ* օգտի. այլ դատապարտի. իսկ շնորհն կատարի՛ ի յընդունօղն: - 540. Զորօրինակ, արեգական լոյսն տկար աչաց վնասիչ է և *ո՛չ* օգուտ. և ջուր չորացեալ տնկոյ: - 540. Եւ բաց յայսցանէ և արտաքոյ սոցա, *ո՛չ* օրհնին և *ո՛չ* անիծանին. *ո՛չ* կապին և *ո՛չ* արձակին: - 540. Եւ տե՛ս, զի սիմէի որքան յամեաց ի քաղաքն ըստ հրամանի սողոմոնի *ո՛չ* մեռաւ զերիս ամս: - 540. Եւ գիտելի է, թէ քահանայ ոմն զժողովուրդ իւր կապիցէ, ա՛յլ քահանայ *ո՛չ* կարէ արձակել: - 541. Եւ թէ եպիսկոպոս զիւր քահանայն կապէ, ա՛յլ եպիսկոպոս *ո՛չ* կարէ արձակել: - 541. Նոյնպէս և աթոռակալքն որ ի չորս աթոռս, ա՛յլ զայլոյ վիճակեալ *ո՛չ* կարէ կապել և *ո՛չ* արձակել. նոյնպէս և ի նոյն աթոռն, վերջինն զառաջ նոյն *ո՛չ* կարէ փոխել կանոնս և զկարգ: - 541. Իսկ ի համակարգսն վերջինն զառաջ նոյն ընդէ՞ր *ոչ* փոխէ զկանոնսն: - 541. Ասեմք առ այս, եթէ համակարգ և համիշխանք են վերջինն ընդ առաջնոյն ի կարգել և ի յուղղել. այլ *ո՛չ* ի թիւրել և ի քակել. զի առաջնոյն աւանդապա՛հ է վերջինն նո՛յն մտօք և նո՛յն կամօք: - 541. Յաղագս որոյ *ո՛չ* կարեմք զառաջնոյն հայրապետաց կարգ կամ զկանոնս զպահք կամ զայլ ինչ թիւրել և փոխել: - 541. Որպէս որք յեփեսոս՝ զնիկիականն ուղղութիւն *ո՛չ* քակեցին. այլ ի նոյն տեսակ նոր կանոնս կարգեցին ի հաւատս ուղիղ: - 541. Վասն որոյ զայս **գ** ժողովքս տիեզերական և միմեանց համաձայն ընդունիմք. այլ զքաղկեդոնին *ո՛չ* ընդունիմք. զի ընդ դէմ է առաջնոցն և կաքտումն դաւանութեան տօնից կարգաց և կանոնաց ամենայնիւ: - 541. Եւ թէ ոք ասիցէ, այս առաջնոյն. զի վերջինն կարէ՛ ուղղել. այլ *ո՛չ* կարէ թիւրել: - 541. Իսկ համակարգ քահանայք կամ եպիսկոպոսք զնոյն ոմն ընդէ՞ր *ոչ* կապեն կամ արձակեն: - 541. Եւ զոր նա՛ կապէ, այլքն *ո՛չ* արձակեն. որպէս որ կապեաց զհոգիս ի մարմնի՝ նա՛ արձակեսցէ: - 542. Երկրորդն է ժողովն թէոդուպօլսի, որ այժմ կոչի կարնոյ քաղաք. *ո՛չ* այն զոր յետոյ հերակլ քաղկեդոնիկ ժողովեաց և խաբեաց զեզր կաթուղիկոսն հայոց: - 544. Եւ յա՛յտ է յայսմանէ, որ կաթողիկոսն *ո՛չ* կարէ կաթողիկոս ձեռնադրել. այլ եպիսկոպոս առնէ: - 546. Ասեմք թէ՝ պետրոս գլուխ է առաքելոցն՝ *ո՛չ* որպէս եպիսկոպոսն քահանայից. կամ կաթողիկոսն եպիսկոպոսաց: - 546. Ասեմք առ այս, թէ որպէս ի մէջ սերովբէից և քերովբէից և աթոռոց *ո՛չ* ասի վերնագոյն և նուաստագոյն, զի համակա՛րգ են և շուրջ զավ: - 547. Եւ որպէս ի մէջ աւետարանչացն *ո՛չ* է մեծ և փոքր: - 547. Նոյնպէս, ի մէջ առաքելոցն *ո՛չ* է մեծ և փոքր իշխանութեամբ: - 547. Առ երրորդն ասեմք թէ՝ երիցս հարցումն սիրոյն և արածելն զոչխարսն՝ վասն երից ուրացութեանցն էր բժշկութիւն. զի ո՛ր մասն որ խոցի՝ նորին է բժշկական դեղն դնելի՝ և *ո՛չ* առողջից: - 547. Եւ թէ ոք ասիցէ, երևի ապա թէ *ո՛չ* է պարտ հնազանդիլ առաքելոյն պետրոսի և աթոռոյ նորա: - 547. Այլ զչար և զաստուածուրաց ժողովն քաղկեդոնի որ ի ձեռն մարկիանոսի և անիծելոյն պօղքերի՝ *ո՛չ* ընդունիմք. և զընդունօղսն նզովեմք: - 547. Եւ **զճ** ամ աւելի՝ բազում ազգ Ֆռանկաց *ո՛չ* հնազանդեցան չար ժողովոյն քաղկեդոնի: - 547. ...թէ զերկու քորս **բ** եղբարցն տալ. կամ զսանին քոյրն միւս եղբօրն. որպէս քո սուտ պետրոսին կանոն է, և *ո՛չ* ճշմարիտ պետրոսին. և զայլն լռեմ իբրև զամօթալի: - 548. Եւ թէ ոք ասիցէ, կարի՛ բարկացար. *ո՛չ* զայս ասեմ հնազանդիլ. այլ որպէս լուսաւորիչն գնաց ի հռօմ և հնազանդեցաւ: - 548. Ասեմք առ այս՝ թէ լուսաւորիչն գնաց ի հռօմ *ո՛չ* վասն ձեռնադրութեան, այլ վասն սիրոյ և միաբանութեան երկուց ազգաց և ուղղափառ թագաւորացն տրդատայ և կոստանդիանոսի: - 548. Ասեմք թէ՝ սուրբն գրիգոր ի կեսարիայ ձեռնադրեցաւ *ո՛չ* յայլմէ առաքելոյ, այլ ի սրբոյն թադէոսէ՛. որոյ էր վիճակս հայոց: - 548. Եւ վասն այն այլազգ *ո՛չ* հաւատան. զի յառաջն չկայր մինչ ի նա՛. և առաւել վասն այն անուանեցաւ

լուսաւորիչ: - 549. Զի՞նչ պատասխանեմք որք բամբասեն զազգս հայոց ո՛չ միաբանիլ այլոց: - 550. Նա՛խ՝ թէ ո՛չ ամենայն ուրէք է ընդհանրականքն ճշմարտիք. և ո՛չ ամենայն ուրեք առանձնականքն սուտք: - 550. Ահա՛ սոքա ընդհանրականք են և ո՛չ են ճշմարիտ. այլ սուտ: - 550. Եւ ոմն մարդ արդար է. և ոմն մարդ ո՛չ է արդար: - 550. Եւ յորժամ ասիցէ զբարին ոչ չար գոլ, ճշմարիտ է և այս. այլ ըստ պատահման է որպէս ցուցաւ: - 550. Իսկ յազգէս հայոց ո՛չ ոք իշխեաց խօսիլ հերձուած և զայլոցն ո՛չ ընկալան: - 551. Դարձեալ՝ յայտնապէս ասել ո՛չ է հարկ՝ է ամենայն բազում պատուական է քան զմին. զի ահա՛ գոյացութիւնն մի է և պատահումն բազում. և արեգակն մի է և աստեղք բազում. և գլուխն մի է և անդամք բազում: - 551. **Եւ զայս վասն է՞ր յերկարել ինձ. զի ցուցանիցի թէ ո՛չ է պարտ միոյն ճշմարտի բազում ստոց հետևիլ**: - 551. **Ասեմք առ այս թէ՝ ո՛չ է հարկաւոր այս ամենայն ուրէք. զի գո՛յ և տարաձայնութիւն բարի՝ քան զհամաձայնութիւն ընդ հերձուածօղս. և լաւ է բաժանումն ի չար ժողովոց՝ քան զմիաբանութիւն**: - 551. **Դարձեալ, զորօրինակ բազումք ընթանան ի մի ճանապարհ, և ամենեքեան թողեալ զնոյն՝ ընդ այլս գնասցեն, և մինն մնասցէ ի նոյնն. ո՛չ ասեմք թէ մինն բաժանեցաւ ի ճանապարհէն, այլ՝ այլքն:** - 551. Ապա յա՛յտ է թէ ո՛չ ազգս հայոց եթող և բաժանեցաւ, այլ նոքա թողին զուղիղն և բաժանեցան: - 551. Ա՛րդ՝ բե՛ր ածցուք զվկայս առ դատաւոր միտս, և դատեսցուք ուղղութեամբ, այլ ո՛չ զրպարտութեամբ: - 552. Ապա ուրեմն յա՛յտ է յայսցանէ՝ թէ առ մինն իցէ ճշմարիտ հաւատ և օրէնք՝ նա՛ է ճշմարիտ և ո՛չ այլքն. թէպէտ բաժանեալ լիցի ի նոցանէ: - 552. Եւ յայսոսիկ միաբանութիւնս որ ըստ կանոնի՝ յաւէտ միաբանութիւն զայս է իմանալ՝ որ ըստ բոլորին օրինադրութեանց սահմանաց կամ ըստ գլխաւորագունիցն լինիցի. և ո՛չ մասամբ միով միաբանեալք և բազմօք զանազանեալք. մանաւանդ թէ հակառակեալք և ընդդիմացեալք: - 552. Եւ այն որ ի գլխաւորագոյնս ո՛չ ասի միաբանութիւն, և զիա՞րդ միաբանութիւն ասիցէ ոք զայս: - 552. Այսինքն է, զազգս քրիստոնէից տեսանեմք զի ո՛չ ըստ անուանն և զմիութիւն կանոնական սահմանի ունել: - 553. Նա՛խ՝ ի բաժակէն ո՛չ տալ ժողովրդեանն: - 553. Չորրորդ՝ և յերկոսեան ծրագալոյցս ո՛չ առնել պատարագ: - 553. Իններորդ՝ կին ո՛չ առնուլ քահանայից. և զմորուսն ածիլել. և զգլորեալն կանգնել անխտիր: - 553. Զչորեքշաբաթս ո՛չ պահել: - 553. Զպիղծ կենդանիս ո՛չ խաբել. և զհեղձուցեալսն ուտել. և այլ բազում ինչ: - 553. Երրորդ՝ զբոլոր հաց պատարագին ո՛չ հանել ի սեղանն. այլ մասն ինչ: - 553. Երկրորդ՝ ոմանց խոստովանութիւն ո՛չ առնել: - 553. Եւ այսպէս բազում ունելով իւրաքանչիւր ոք սահմանս առանձին, միայն հայք նախատեալ լինին որպէս ո՛չ ունել միաբանութիւն ընդ այլս ի քրիստոնէից. այլ առանձին միայնաբար ընթանալ. և այսու որպէս հակառակ եպերեալ: - 553. Բայց պարտ է այնոցիկ որք ո՛չ գիտեն՝ և կամ թէ կամաւ տգիտանան՝ ցուցանել զմիաբանութիւն ազգիս հայոց առ այլ քրիստոնեայսն. զի գիտացեալ յամօթ լիցին յաղթեալք ի ճշմարտութենէն: - 553. Հինգերորդ՝ այսմաւուրօք ո՛չ տօնել ըստ յունաց. այլ այլո՛վ օրինակաւ տօնել: - 554. Երկրորդ՝ ի յաղուհացսն ո՛չ ունել հրաման պատարագ մատուցանել բաց ի շաբաթէ՛ և ի կիրակիէէ՛: - 554. Եւ այսոքիկ աւանդութիւնք և ո՛չ հաւատ: - 554. Եւ եզով միաբանութիւն. մասամբ և ո՛չ յոգնագոյնս: - 554. Որպէս ահա՛ յերկոսեան ծրագալոյցսն այսինքն ի ծննդեանն և ի յարութեանն միաբանին հայք և յոյնք և ասորիք. իսկ լատինք ո՛չ: - 554. Վասն զի սոքա պատարագ մատուցանեն ի նախատօնակ ծննդեանն և յարութեանն. և լատինք ո՛չ: - 554. Եւ ի հաց պատարագին զբոլորն մատուցանեն և ո՛չ մասն ինչ, լատինք և հայք և ասորիք. իսկ յոյնք ո՛չ: - 554. Եւ յառնուլ զաստիճան սարկաւագութեան ո՛չ տան հրաման կին առնուլ հայք և լատինք և յոյնք. բայց ասորիք ո՛չ: - 554. Եւ այսոքիկ թէպէտ և ոմանց ո՛չ թուեսցին որպէս փոքր կարծեցեալք. սակայն աւանդութիւն և ո՛չ հաւատ: - 554. Որպէս և տօն ծննդեանն զոր միաբան ասեն տօնել այլոց քրիստոնէից բաց ի հայոց. և զի և այն աւանդութիւն է և տօնախմբութիւն և ո՛չ հաւատ: - 554. Եւ ո՛չ բարկանայ առ այս քրիստոս յայլ և այլ ժամու տօնել: - 554. Որպէս և ո՛չ բարկանայ վասն պայծառակերպութեանն իւրաքանչիւր ոք յայլում ժամու տօնել: - 554. Եւ ո՛չ միաբանին յայս տօնախմբութիւն ամենայն հաւատացելոց ժողովուրդք: - 554. Իսկ մեղք է յօրինաց կատարումն ո՛չ հասանիլ: - 555. Եւ ոմանք ոչ ինչ համարին զյանցանս մտաց. և ո՛չ դնեն ի կարգս մեղաց...: - 555. Ա՛րդ՝ ի սոցանէ ո՞րք իցէ ճշմարիտ. և կամ հակառակք են միմեանց թէ ոչ, լուծանել աղաչեմ: - 555. Պատասխանեմ և ասեմ եթէ ո՛չ են միմեանց հակառակ. այլ երկոքեանն ճշմարիտք են որպէս ցուցանեմք յետոյ: - 556. Եւ սոքա մտօք և ո՛չ մարմնով կատարին. որպէս յայտ է ի բանսարկուն սատանայ որ յանցեաւ հպարտութեամբ և նախանձով: - 556. Տե՛ս զի ո՛չ բանիւ և ո՛չ գործով էր, այլ միայն ի միտս ունէին և յանդիմանեցան ի տեառնէ: - 557. Իսկ թէ կառավարն թիւրի, կառքն ո՛չ կարէ ուղղել. այլ երկոքինն գահավիժին: - 557. Դարձեալ ևս յայտնի. որ խորհրդովն է պղծեալ՝ ո՛չ կարծէ

զինքն մեղանչական գոլ. այլ ի գործ մարմնոյն իմանայ զչարիս իւր զղջա՛յ և ապաշխարէ: - 558. Ի վայր շարժումն է տրտմութիւն և ծանծրութիւն. որ է՛ ծուլութիւն. զի մինն ծանրանայ և *ո՛չ* գործէ զբարիս. և միւսն տրտմի և պակասի: - 560. ...այսինքն զի կամ ցանկանայ *ոչ* ցանկացեալ, կամ հրաժարի *յոչ* հրաժարելեաց: - 560-561. Այս ըստ առաջին մասին որ ցանկայ *ոչ* ցանկալեաց: - 561. Իսկ երկրորդ անկարգութիւն կամաց է՛ որ հրաժարի *յոչ* հրաժարելեաց: - 561. Իսկ փառասիրութիւն և հպարտութիւն *ո՛չ* են այսց կարգաց. այլ յորժամ զվեցեքին սոքա յաղթէ, ապա՛ փառասիրի և հպարտանայ: - 561. Երկրորդ՝ զի այլ ամենայն մեղք մարմնական է և գիտեմք թէ մեղք է. իսկ հպարտութիւնն անմարմին է և անօսր. և *ո՛չ* կարեմք գիտել զմեղանչումն: - 562. Եօթներորդ՝ զի որ հպարտքն են *ոչ* ունին հանգիստ մտաց և մարմնոյ. քանզի որ քան մարդ խոնարհէ՝ այն քան հանգիստ է: - 562. Իսկ ամբարտաւանն *ո՛չ* իմանայ զմեղսն զոր գործէ հպարտութեամբ. այլ գիտէ ևս թէ առաքինութիւն է: - 562. Յայնժամ լոյս իմացականին կորեաւ և շիջաւ ի սատանայէ՛. և լոյս շնորհացն *ո՛չ* ներգործեաց ի նա. և ի նոյն սերտեալ հաստատեցաւ անզղջապէս. վասն որոյ մեծ են մեղք սատանայի և թողութեան *ո՛չ* հանդիպի: - 563. Վասն բանին և անձնիշխան կամացն. զի անձնիշխան կամք անասնոց *ո՛չ* է. այլ բանականին: - 563. Վասն որոյ թէպէտ գործն նոյն է, այլ բանն և կամքն *ո՛չ* է նոյն: - 563. Խրոխտալ պարտ էր առ չարսն և *ո՛չ* հնազանդիլ. այժմ անհնազանդիմք օրինացն աստուծոյ և ամբարհաւաճիմք առ ընկերս: - 564. Իսկ մահն՝ որ տգիտութեամբ մեղանչէ. թէպէտ *ո՛չ* գիտէ՝ հոգին մահանայ: - 564. Զի՞նչ է մեղքն ընդ դէմ հոգւոյն սրբոյ որ *ո՛չ* թողցի: - 566. Հինգերորդ՝ նման սատանային լինին որք ուրանան զպատճառն գոյութեան հոգոց իւրեանց. յիրաւի ապա որպէս սատանայ *ո՛չ* ունի թողութիւն ի կեանս յայս և *ո՛չ* ի հանդերձեալն և գործ ունէի նմին: - 566. Եւ զի *ո՛չ* թողու զմեղս՝ անհաշտ լինի. վասն այն մեղքն անջինջ և անթողլի մնայ: - 566. Ութերորդ, *ո՛չ* ասաց՝ թէ խնդրեսցէ ապաշխարութեամբ՝ արգելից զգութ և զողորմութիւն. այլ թէ՝ «*ո՛չ* թողցի». որով յա՛յտ է թէ առանց զղջման և տանջանաց *ո՛չ* թողցի: - 566. Իններորդ՝ որ *ո՛չ* խոստովանի կամ թերի և անկատար լինի: - 566. Յիրաւի որք *ո՛չ* հաւատան թողութեան խոստովանութեան, *ո՛չ* թողցի նոցա աստ կամ անդ: - 566. Տասներորդ՝ վասն հոգեմարտին մակեդոնի որ հայհոյէր զհոգին սուրբ նուազ ասելով քան զհայր և զորդի, *ո՛չ* թողցի նմա: - 566. Նաև ի յայն որում թողեալ լինի՝ **բ** ինչ պահանջի. այսինքն ցաւ վասն գործելոցն, և մտադիրութիւն վասն *ոչ* գործելոցն...: - 567. Ա՛րդ՝ թէպէտ հոգին *ո՛չ* լինի սերեալ ի հօրէն որպէս մարմինն, սակայն սկզբնական մեղքն անցանէ ի հոգւոյն յադամայ ի հոգիս զհետ եկելոցն միջնորդութեամբ մարմնոյն ցանկութեամբ ծնելոյն: - 567. Նա՛խ ըստ միութեան. զի մի է մեղքն սկզբնական և *ո՛չ* բաժանի. որպէս մահացուն է. և ներելին **գ**: - 567. Զի մահացուն *ո՛չ* էր ի յերեմիայ և ի յովհաննէս որք սրբեցան յորովայնէ. թէպէտ ո՛չ զերծանեին ի ներելւոյն: - 568. Զի մահացուն ո՛չ էր ի յերեմիայ և ի յովհաննէս որք սրբեցան յորովայնէ. թէպէտ *ո՛չ* զերծանեին ի ներելւոյն: - 568. Այլ կոյսն մարիամ աստուածածին՝ էր ազատ ի մահացուէն և ի ներելւոյն. բայց *ո՛չ* ի սկզբնականէն. զոր հոգւովն սրբով մաքրեցաւ: - 568. Որոյ պատճառ է, զի *ո՛չ* ի սերմանէ՝ այլ ի մաքուր արենէ կուսին էառ մարմին: - 568. Եւ զի *ո՛չ* է որպէս մահացուն մեծ կամ փոքր. որպէս շնութիւն մեծ է քան զպոռնկութիւն. և մարդասպանութիւն քան զգողութիւն: - 568. Իսկ անձնականն *ո՛չ*. զի ներգործութեամբ է ստացեալ զայնոսիկ: - 568. Եւ զուրն է դնել զոր *ո՛չ* ունի: - 568. Զի սատանայ այլ մեղք *ո՛չ* գործեաց, քան թէ խորհեցաւ զյատուկ բարձրանալն իւր...: - 569. Զգուշանալ պարտ է ի բարկութենէ. և առաւել ի ժամ դատաստանին. զի մարդ բարկացեալ *ո՛չ* ճանաչէ զճշմարտութիւնն: - 570. Ծուլութիւն է հեղգութիւն հոգւոյ *ոչ* սկսիլ ի բարին. կամ տաղտկանալ ի սկսեալ բարւոյ և *ո՛չ* կատարել: - 570. զի զկերակուրն ի հարկաւոր ժամանակին պարտ է ուտել. այսինքն որ քաղցեալ լինի. այլ *ո՛չ* յամենայն ժամ որ յագեալ լինի: - 570. Այս ազգ գործ՝ խոզնիցն է յատուկ և *ո՛չ* մարդկան: - 570. Ա՛յս է քաղցն որ կշտումն *ո՛չ* ունի: - 570. Դարձեալ՝ հաւատովն հաւատամք՝ որ միայն իւր բարութեամբն զմեզ ստեղծեաց և վերստին փրկեաց և *ո՛չ* ի հարկէ: - 571. Որ անհնազանդ է բանին, որպէս տնկականն. հալելն և աճիլն և այլն. և սոքա *ոչ* կարեն լինիլ ենթակայ առաքինութեանց: - 572. Իսկ երկրորդ սեռն հնազանդ բանին՝ ցասումն և ցանկութիւնն. և սոքա *ո՛չ* կարեն լինիլ ենթակայ իմանալի առաքինութեանց: - 572. Երկրորդ՝ զի մի բոլոր և *ոչ* մասն: - 573. Ստուգութիւն աստ *ոչ* զապացուցականն ասէ. այլ զստուգութիւն կարծեացն: - 573. Զի յուսալ յիր ինչ առանց արդեանց *ո՛չ* է յոյս. այլ յանդգնութիւն: - 573. Այլ համաձայնին. զի երկոքեանն հաւատն և յոյսն՝ են *յոչ* երևելիսն: - 574. Արդ յորժամ ասեմք կրկին զսէրն, այսինքն աստուծոյ և ընկերին. կրկինս այս *ո՛չ* է ըստ ունակութեանցն. այլ ըստ ներգործութեանցն: - 575. Կամ այլ ազգ. սէրն է սկիզբն գործոց բարեաց, զի շարժէ՛ առ այն. որպէս ասեն վարդապետք՝ սէրն գործէ՛ մեծամեծս թէ է՛. և թէ դադարէ ի

գործելոյն` ո՛չ է սէր: - 575. Վեշտասաներորդ` զպարգևս տուեալ ի նմանէ ո՛չ օտարացուցանէ: - 576. Նախ` յորժամ սիրեմ զիս վասն իմ. սէրս այս ո՛չ է բարի: - 576. Չորրորդ` յորժամ սիրեմ զիս վասն աստուծոյ. և այս ևս է լաւագոյն. զի ո՛չ խնդրէ մարդ զիւրն, այլ զաստուծոյն միայն: - 576. Նա՛խ` զոր ինչ սիրեմք գիտեմք. այլ թէ սիրիմք ո՛չ գիտեմք: - 576. Անձին թշնամւոյն պա՛րտ է բարի առնել. իսկ թշնամւոյն եկեղեցւոյ` ո՛չ առնել բարի և ո՛չ չար: - 577. Այս ո՛չ եթէ բաժանմամբ. այլ նկատմամբ ի յատկութիւնս անձանց. ըստ որում սկիզբն է հայր. և փրկութիւն է որդին. և ջերմութիւն հոգին: - 577. Եւ երկրորդ` զի մնացէ ի վերին գաւառն ըստ էութեանն և ըստ գործոյն. իսկ այլ առաքինութիւնքն թէպէտ մնան ըստ էութեանն, այլ ո՛չ ըստ գործոյն: - 579. Զի խոհեմութիւնն ո՛չ զգուշանայ ի դարանակալութեանց: - 579. Եւ արիութիւնն ո՛չ լինի ձեռնամուխ ի զարհուրելիս: - 579. Եւ ողջախոհութիւնն ո՛չ սանձահարէ զանպատեհ շարժմունս: - 579. Եւ գո՛րծ է սորա` որ ինքն նենգութիւն ո՛չ առնէ մարդոյ, և ո՛չ յայլ մարդոյ խաբի: - 579. Խորագիտութեամբ պահէ զինքն յայլ մարդոյ. և միամտութեամբն այլոց վնաս ո՛չ առնէ: - 579. Խոհեմ մարդն ո՛չ պարտի վաղվաղել ի գործ զինչ և է՛. այլ պա՛րտ է նա՛խ խորհիլ որ ո՛չ խաբի: - 579-580. Որոյ գործն այս է. ոչ ի նեղութիւնն խորտակիլ և ո՛չ ի հեշտութիւնն կակղանալ: - 580. Զի սոքօք մարդկան հոգիք կարգաւորին և ո՛չ այլ կենդանեաց: - 581. Դարձեալ կոչին ծառայականք, զի և ի խառնուածոյ մարմնոյն գոյանան. որք ո՛չ հետևին միմեանց. զի որ ի խառնուածոյն ողջախո՛հ է, նա ո՛չ խոհեմ կամ արդար կամ արի կարէ գոլ: - 581. Դարձեալ կոչին անբանք. զի ո՛չ գիտեն զպատճառն: - 581. Դարձեալ կոչին յանձնառականք. որ ի պատուիրելոյ ումեք գոյ ողջախոհ. այլ զպատճառն ո՛չ գիտէ. նաև ո՛չ հետևին միմեանց: - 582. Խրա՛տ է լոյս հոգւոյ առ ի յունել զհոգին. որ յերկրայինս և ի մարդկայինս ո՛չ շաղախի: - 582. Եւ այս տուեալ լինի յաստուծոյ ընդ դէմ երկիւղին որով նմանին քրիստոսի. զի ո՛չ երկնչէր ի բնական մահուանէն...: - 582. Սուգն զնախանձն. զի որ սգայ վասն մեղաց այլոց, ո՛չ նախանձի ընդ նոսա: - 583. Սրբութիւն սրտին զորկրամոլութիւնն. զի սրբութիւն սրտին ո՛չ ծառայէ որովայնին ըստ օրինակի անբան անասնոց: - 583. Եւ աղքատք են հոգւով` որք ո՛չ խնդրեն զհեշտախտութիւնս: - 583. Յեզ է որ ո՛չ կրէ և ոչ քարշի: - 584. Իսկ հեզութիւնն նոյն է ընդ մաստութիւնն. զի ասեն թէ` մաստութիւն է որ ո՛չ զգայ զդառնութիւն ինչ ոգոյ: - 584. Զի արդարութեամբն անընդմիջաբար միաւորիմք ընդ աստուծոյ. որ ո՛չ լինի այլ առաքինութեամբք: - 584. Ա՛րդ` առեալ լինի աստ սրբութիւն սրտին ո՛չ վասն առաքինութեան, այլ վասն որպիսութեան իմն մաքրեալ հոգւոյն: - 585. Զի ի վերոյ խաղաղութեան ո՛չ է այլ առաքինութիւն. զի խաղաղութիւնն է վախճան և կատարումն ամենայն առաքինութեանց: - 586. Եւ յերկինս ասելովն, Նախ ցուցանէ թէ` ո՛չ են երկրաւոր ինչ: - 586. Եօթներորդ, յերկինս ասելով` ցուցանէ յետ աստեա՛ցս զվարձն և ո՛չ ի մարմնի: - 586. Զոր և անյարմար շարաբանութեամբ զկո՛ւն ցուցանեն մկրտել և ո՛չ զնուիրեալն: - 588. Եւ երկրորդ անպատշաճութիւն, զի յասելն թէ` ես կու մկրտեմ. երևի թէ նուիրեալն ո՛չ իւր կամաւն է եկեալ ի մկրտութիւն, այլ բռնութեամբ և ի հարկէ՛ կու մկրտեմ: - 588. Որ և ըստ այսմ կերպիս ո՛չ լինի տուեալ շնորհք հոգոյն ի մկրտողէն առ մկրտեալն...: - 588. Ապա ուրեմն ո՛չ վայելէ ասել թէ ե՛ս կու մկրտեմ: - 588. Եւ յայնմ ձևական բանիցն ո՛չ է պարտ ի բաց թողուլ. և ո՛չ այլ բան ի ներս խառնել: - 588. Եւ ո՛չ զկարգն փոխել. որպէս թէ յառաջ զհոգւոյ անունն ասել և ապա զորդւոյ և ապա՛ զհօր: - 588. Իսկ զէութիւն բանին որ է՛ յանուն Յօր և Որդւոյ և Յոգւոյն սրբոյ` ասելն մի՛անգամ պարտ է ասել և ո՛չ կրկնել տգիտաբար: - 588. Դարձեալ գիտելի է, զի աստ ասեն հերձուածօղ ազգն Ֆռանկաց թէ` թէպէտ մկրտութիւնն գործ քահանայի է, բայց ի հարկաւոր ժամանակն թէ քահանայ ո՛չ լինի ամենայն ոք որ գիտէ զձև մկրտութեան` կարէ մկրտել: - 588. Եւ թէ այր մարդ ոչ լինի և տղայն մերձ ի մեռանիլ լինի, կինն կարէ՛ մկրտել թէ գիտէ զձև բանին զոր քրիստոս ուսոյց «յանուն Յօր և Որդւոյ և Յոգւոյն սրբոյ». ցանէ՛ զջուրն և ասէ` մկրտեալ լինի: - 588-589. Նա՛խ` զի այսպիսի չար աղանդս ո՛չ գտանի յայլ եկեղեցիս քրիստոնէից: - 589. Երկրորդ, զի այս խորհրդոյ նշանակ ի սկզբան արարածոց աստուած ադամայ ետ և ո՛չ կնոջն. յորժամ էած զկենդանիսն առ ադամ զի անուանս դիցէ նոցա: - 589. Երրորդ, զի թէ կայր հնար որ ի ձեռն կնոջն տուեալ լինէր շնորհք, աստուածածին կոյսն մարիամ ընդէ՛ր ոչ եղև մերձ մկրտութեան որդւոյն իւրոյ ի յորդանան: - 589. Չորրորդ, զի թէ ի ձեռն փիլիպպոսի առաքելոյ որ էր մի յեօթանց անտի սարկաւագացն ո՛չ եղև իջեալ հոգին ի վերայ ներքինւոյն մինչև յափշտակեցաւ յազովտոս...: - 589. Յինգերորդ, զի թէ գո՛յր հնար կնոջ վասն հարկին առնել զգործ քահանայի, ընդէ՛ր ոչ կարաց նունի կոյսն մկրտել զոք ի վրաց յորժամ դարձոյց յաստուածգիտութիւն...: - 589. ...ընդէ՞ր ոչ մկրտեաց զոք ի հաւատացելոցն. մինչև գնաց ի կեսարիա ձեռնադրեցաւ. և ապա եկեալ զհազարս հազարաց և զբիւրս մկրտեաց ի գետն: - 589. Եօթներորդ, զի մկրտելն է գործ քահանայի. և

քահանայութիւնն է սպասաւորութիւն աստուծոյ. իսկ զայս սպասաւորութիւն աստուծոյ և *ո՛չ* կռապաշտքն ունէին սովորութիւն սնոտի կռոցն ի ձեռն կանանցն մատուցանել զպատարագն...: - 589. Ութերորդ, զի թէ զզենումն կենդանեաց *ո՛չ* ունին հրաման զենուլ ազգ կանանց որ է՛ խտրութիւն մարմնաւոր սրբութեանց. զիա՞րդ պատշաճի տալ հրաման կանանց ազգի մերձենալ ի կարգ հոգևոր սրբութեան: - 589. Իններորդ, զի մկրտութիւնն է գործ քահանայութեան. և քահանայութիւնն է ազատ և *ո՛չ* ընդ ումեք հարկի ներքոյ. իսկ կինն ծառայ և ոտք է առն. վասն այսր հարկի *ո՛չ* է պարտ ծառային առնել զգործ տեառն...: - 589. ...որպէս և գրեալ է ի գիրս նիկիական կանոնացն եթէ զծառայս ի ժառանգութիւն եկեղեցւոյ կարգել *ո՛չ* հրամայեմք...: - 589. ...բայց թէ ազատեալ լիցի տն կամօք. որպէս նեսիմոնս այն. իսկ թէ զայր որ ընդ ծառայութեամբ է՝ *ո՛չ* հրամայեցին հայրապետքն սուրբք գալ ի յաստիճան եկեղեցւոյ...: - 589. Զմի անգամ մկրտեալն պա՞րտ է կրկին անգամ մկրտել թէ *ոչ:* - 590. Ասեմք թէ *ո՛չ* է պարտ կրկին մկրտել զմկրտեալն վասն դ պատճառի: - 590. Երկրորդ՝ զի մկրտութիւնն է ընդ դէմ սկզբնական մեղաց. և սկզբնական մեղքն մի է և *ո՛չ* կրկին: - 590. Չորրորդ՝ զի մկրտութիւնն է անքակտելի կնիք ի հոգին. որպէս կարգն և դրոշմն. վասն որոյ *ո՛չ* կրկնին որք յանուն սուրբ Երրորդութեանն մկրտեցան: - 590. Եւ այնք որ *ո՛չ* խոստովանին զմիասնական սուրբ Երրորդութիւնն, մկրտելի է զմկրտեալն ի նոցանէ ի փառս ամենասուրբ Երրորդութեանն: - 590. Եւ գիտելի է, զի ի ծնունդ սուրբ աւազանին երևի ե զարմանալի գործ որ *ո՛չ* է ի մարմնաւոր ծնունդս: - 590. Երրորդ՝ զի միշտ անդրանիկ ծնանի և *ո՛չ* կրտսեր. զի պատկեր քրիստոսի ստանամք որ է՛ անդրանիկ հօր: - 590. Չորրորդ՝ զի միշտ որդի ծնանիմք աստուծոյ և *ո՛չ* դուստր և էգ. զի ի քրիստոս յիսուս արու և էգ *ո՛չ* է ասէ առաքեալն. և զայս ցուցանէ աւազանն ի յաջ կողմն եկեղեցւոյն: - 590. Հինգերորդ՝ զի համապատիւ ծնանիմք ամենեքեան. *ո՛չ* ոմն պատուով կամ անպատիւ. իշխան կամ իշխեցեալ. - 590. Զաւակս այլազգեաց մկրտելի՞ է թէ *ոչ:* - 591. Այլ կնքահայր *ո՛չ* է պարտ առնել զայլազգին. զի *ո՛չ* ունի զհաւատն սուրբ, և *ո՛չ* է հրաժարեալ ի սատանայէ. վասն որոյ *ո՛չ* կարէ լեզու լինիլ տղային կամ երաշխաւոր...: - 591. ...զի նա որ *ոչ* ունի զհաւատ, այլոց *ո՛չ* կարէ միջնորդել: - 591. Կին մարդ կարէ՞ կնքահայր լինիլ թէ *ոչ:* - 591. *Ո՛չ* կարէ. զի կնքահայր ասեմք և *ո՛չ* կնքամայր. զի կնքամայր եկեղեցին է նորածնելոցն: - 591. Որոյ պատճառէ, զի կին երաշխաւոր և վկայ *ո՛չ* կարէ լինիլ, վասն որոյ և *ո՛չ* կնքահայր կարէ լինիլ: - 591. Եւ դարձեալ՝ կանանց ազգ *ո՛չ* կարէ քահանայագործել. և *ո՛չ* կնքահայր լինիլ: - 591. Եւ *ոչ* այս միայն այլ և ի ժամ մկրտութեանն *ո՛չ* է պարտ մնալ կնոջ յեկեղեցւոջն: - 591. Զի և տիրամայր կոյսն *ո՛չ* էր ի ժամ մկրտութեանն ընդ քրիստոսի ի յորդանան որպէս ասացաւ ի վերոյ: - 591. Տղայն իւր կամաւն *ո՛չ* գործէ. վասն է՞ր է պարտական մեղացն ադամայ: - 591. Մեղքն ադամայ այն է որ զարդարութիւն կորոյս. և մեղօք և ցանկութեամբ ծնաւ զորդին. և այն մեղքն սկզբնական կոչի. և *ո՛չ* թողցի եթէ ոչ ի մահն քրիստոսի մկրտեսցի: - 591. *Ո՛չ* ումեք մեղք յայլմէ խնդրի. այլ ամենայն մարդ վասն իւր մեղացն պատժի: - 591. Արդ փոքրիկ տղայն *ո՛չ* վասն այն տանջի թէ ադամ եթող զայն. այլ զի ինքն զարդարութիւնն զայն *ո՛չ* ունի վասն այն տանջի: - 591. Ապա ուրեմն յիրաւի՝ զի բնական արդարութիւն ի տղայն *ո՛չ* գտանի, յարդարութենէն աստուծոյ արդարապէս մերժի և ընդ անիրաւսն տանջի: - 591. ...և առանց ցանկութեան մեղաց ո՛չ ոք կարէ ծնանիլ. բայց միայն տէր մեր որ առանց ցանկութեան ի կուսական արգանդէ ծնաւ՝ *ո՛չ* ունէր զմեղս սկզբնական: - 592. *Ո՛չ* է օգուտ. զի չև ևս ծնաւ երկրորդ ադամ. զի նախ պա՛րտ էր ըստ մարմնոյ ծնանիլ. և ապա ըստ հոգւոյ վերստին ծնունդ: - 592-593. Զի տանջանք հրոյն ներգործական մեղա՛ցն է և *ո՛չ* սկզբնականին պատիժ: - 593. Վտանգ զո՞յ ինչ զաւակաց թէ *ոչ* արդար ամուսնութեամբ այլ ի պոռնկութենէ ծնանին: - 593. Ոչ ինչ ամենևին՝ թէ ընկալցին զմկրտութիւնն. որպէս և *ոչ* ցորենոյն է վտանգ թէ գողունի իցէ և սերմանի ի ձեռն գողի: - 593. Որպէս *ո՛չ* եղև վնաս յովսիայ որով հայրն թիւրէր: - 593. և այնուհետև *ո՛չ* վասն այլոց, այլ վասն ինքեանց մեղացն պատժին իւրաքանչիւրքն: - 593. Եւ թէ ոք ասիցէ, զդրոշմն *ո՛չ* ունիք. զի եպիսկոպոսն տայ որպէս ազգն Ֆռանկաց: - 594. Այլ և մարգարէն մովսէս դնէր յերեսաց սեղանն գառ մի խորովեալ. և հաց և գինի և չորրորդ մասն դորակի հանապազորդ. և ջուր *ո՛չ* դնէր: - 595. Ապա ուրեմն և ի ճշմարտութիւնն *ո՛չ* է պիտոյ ջուր: - 595. Դարձեալ՝ մելքիսեդեկ հաց և գինի մատոյց պատարագ աբրահամու և *ո՛չ* ջուր. որ նշանակէր զճշմարիտ պատարագն քրիստոսի. ապա ուրեմն *ո՛չ* է պարտ խառնել ջուր: - 595. Սոքա զխորհուրդ պատարագին ասացին և ջուր *ո՛չ* յիշեն: - 595. Նա՛խ՝ զի ջուրն և արիւնն որիշ բղխեաց և *ո՛չ* խառնեալ. ապա յա՛յտ է թէ որիշ է խորհուրդ ջրոյն և որիշ արեանն: - 595. Եւ թէ ասիցեն հակառակքն մեր, *ո՛չ* ապականի գինին զի սակաւ է ջուրն: - 595. Ապա ուրեմն թէպէտ և սակաւ խառնի ջուրն, բնութիւնք գինւոյն և ջրոյն ապականեցան. զի *ո՛չ* անապակ գինի է և *ո՛չ* պարզ

ջուր: - 595-596. Եւ թէ ոք ասիցէ, առանց ջրոյ գինի *ո՛չ* ըմպեն յերուսաղէմ: - 596. Ասեմք առ այս, թէ յառաջ խառնումն ջրոյն *ո՛չ* է ըստ խորհրդոյն. որպէս և *ո՛չ* առ մեզ, թէ վաճառօղն խառնեսցէ ջուր. այլ քրիստոս *ո՛չ* խառնեաց: - 596. Ասեմք թէ՝ եկեղեցին սիրով և հաւատով է միացեալ ընդ հաղորդութիւնն քրիստոսի և *ո՛չ* ջրով: - 596. Ասեմք թէ՝ յատկութիւն պատահմունք են. այլ խորհուրդն ի յէութիւնն է կացուցեալ որ մի է, և *ո՛չ* ի պատահմունքն որ բազումք են: - 596. Ասեմք թէ՝ խառնումն *ո՛չ* զջրոյ և գինւոյ ասէ, այլ խառնել զայն ասէ որ արկանի գինին ի խառնարանն: - 596. Այլ և առաքեալքն և հետևօղք նոցա հարքն սուրբք՝ *ո՛չ* գիտէին զխառնարանն. և դու ուսար և խառնես ջուր և ընդ անիծիւք նոցա մնաս որպէս ցուցաւ ի վերոյ: - 596. Ասեմք թէ **դ**. զի թէ մինն պակաս լինի, խորհուրդն *ո՛չ* կատարի: - 597. Մի նշխարն է խորհրդաւոր և *ո՛չ* բազումն: - 597. Ասեմք թէ՝ կարողութիւնն է ի դիտաւորութիւն. և դիտաւորութիւնն է ի կոպարն որ է մին հացն. որ ասաց «այս է մարմին իմ». ապա ուրեմն *ո՛չ* կարէ զբազում հացս օրհնել: - 597. Եւ այսպէս պարտ է կամ զօրհնեալն դարձեալ օրհնել որ է սուտ. կամ ամենայն հացն *ո՛չ* է օրհնեալ այլ մինն: - 597. Վասն որոյ ճաշակեմք զմարմինն և զարիւնն աստուծոյ և *ո՛չ* մարդոյ. և ճաշակելով լինիմք աստուած ըստ կարողութեան և ո՛չ թէ լինիմք մարդ: - 598. Նա՛խ՝ զի արիւնն հեղուկ նիւթ է. կամ *ո՛չ* է տալի որպէս այլ ազգք, և զրկել զժողովուրդն ի փրկական արենէն: - 598. Իսկ որք *ոչ* միաւորեն, բաժան և որիշ նշանակեն զբանն ի մարմնոյ իւրմէ. որպէս երկաբնակքն քաղկեդոնիկք: - 598. ...վասն զի աղբիւր արեանն բաժանեալ ի մարմնոյն՝ դարձեալ միաւորեցաւ առ ինքն և ժողովեցաւ ի մարմինն իւր և *ո՛չ* ցրուեցաւ ա՛յլ արտաքոյ: - 598. Ա՛րդ՝ միաւորել զսուրբ խորհուրդն *ո՛չ* է նորագիւտ ինչ եկամուտ մեզ ինքեանց: - 598. Ոմանք ասեն թէ ի ջուր եթաց և լուաց յօրհնութենէն. և այս *ո՛չ* է ընդունելի կարծիս: - 599. ...այլ *ո՛չ* յօրհնեալ հացէն և ի գինւոյն. այլ էառ ի սեղանոյն հաց և եթաց ի ջուր ինչ կամ ի սոսկ գինի՝ և ետ: - 599. Եւ այս է ճշմարիտն. քանզի յօրհնեալ հացէն որ բաշխեաց և ետ առաքելոցն, այլ *ո՛չ* մնաց: - 599. Նոյնպէս և զօրհնեալ բաժակն առին առաքեալքն և բաժանեցին և յայնմանէ *ո՛չ* մնաց: - 599. Ապա յա՛յտ է զի *ո՛չ* ի մարմնոյ և *ո՛չ* յարենէն էր թացեալ պատառն. այլ ի այլ ինչ կերակրոյ ի սեղանոյն առեալ թացեալ և տուեալ. զի ցուցցէ զմատնիչն: - 599. ...զի յայտնապէս զարիւնն *ո՛չ* տայք, և ծածկապէս զմարմինն. զի յօրհնեալ մարմնոյն *ո՛չ* տայք. այլ սոսկ հաց որ ի բեմն: - 599. Թէ օրհնեալ է՝ ընդէ՞ր օրհնէք և թէ *ոչ* էր օրհնեալ՝ ընդէ՞ր տայք ժողովրդեանն իբր օրհնեալ մարմին և մոլորեցնէք զնոսա: - 600. Եւ եղիցի թէ այս օրհնեալ է. զարիւնն ընդէ՞ր *ոչ* տայք: - 600. Նա՛խ՝ եթէ *ո՛չ* զմարմինն տան ժողովրդեանն. այլ սոսկ հաց և գինի. զի մարմին քրիստոսի այն մինն է որ օրհնեցաւ որպէս ցուցաւ ի վերոյ: - 600. ...որ *ո՛չ* ուտէ զմարմին իմ և *ո՛չ* ըմպէ զարիւն իմ, *ո՛չ* ունի կեանս: - 600. ...զի սոսկ հաց տաս և *ո՛չ* զօրհնեալն: - 600. ...ահա՛ ևս յայտնի զմանկունս *ո՛չ* հաղորդեն մինչև լիցի **բժ**ան ամեայ...: - 600. Դարձեալ ապաշխարութիւն է վասն անցեալ չարեացն լալ. և լալովն վերստին այլ *ո՛չ* առնել: - 601. Զի շնորհքն աստուծոյ *ո՛չ* է մասն մասն. այլ բոլոր և կատարեալ: - 601. ...վասն անցեալ մեղացն ցաւի. և խոստանայ այլ *ո՛չ* մեղանչել զանցեալ մեղքն: - 602. Դարձեալ՝ խոստովանութիւնն սրբէ՛ զմեղս որ *ո՛չ* տանջի...: - 602. ...այլք սոքա ընդ ապաշխարութեան պատժոց են և *ոչ* հաղորդին...: - 602. ...զի խոստովանեալ մեղքն բարձուի, այլ պատիժն *ո՛չ:* - 603. Եւ է՛ խոստովանութիւն որ զարմատ մեղացն քակէ՛ ի սրտէն և զղջացեալ ի մեղաց, հաստա՛տ է ի կամս և ի միտս այլ *ո՛չ* մեղանչել...: - 603. Որք իցեն ի մեծամեծ մեղս մահու չափ, օգո՞ւտ է խոստովանութիւնն նոցա թէ *ոչ:* - 603. Արդ ըստ այնմ որ է՛ հնարք՝ *ո՛չ* է օգուտ որ քան է մարդ ի մեղս: - 603. Զխոստովանեալ մեղքն պա՞րտ է կրկնել թէ *ոչ:* - 603. Ասեն վարդապետք թէ՝ զմի անգամ խոստովանեալն բարի հաւատով և կատարեալ զղջմամբ՝ *ո՛չ* է պարտ կրկնել. եթէ ոչ վասն չորից պատճառաց: - 603. Երկրորդ՝ թէ տգէտ լիցի քահանայն և *ո՛չ* կարէր ընտրել զծանրութիւն մեղացն և զանազանել: - 603. ...զի առանց խոստովանութեան մեղքն *ո՛չ* թողուի: - 603. Եւ թէ ոք ասիցէ՝ օծումն խորհո՛ւրդ է. ընդէ՞ր մեք *ո՛չ* ունիմք: - 604. Եւ թէ ընդէ՞ր *ո՛չ* յայտնապէս որպէս այլազգաց: - 604. Վասն որոյ հայրապետք եկեղեցւոյ լա՛ւ համարեցան զվայելչականն բառնալ որ *ո՛չ* ի լինիլն յաւելուած առնէ...: - 604. ...և *ո՛չ* ի բառնիլն ապականէ զկարգ եկեղեցւոյ. որ է վերջին օծումն...: - 604. Դարձեալ՝ օծումն հիւանդաց *ո՛չ* սրբէ զմահու չափ մեղս. այլ զներելիս: - 604. Եւ թէ ոք ասիցէ, զառաջին օծումն որ նախ քան զմկրտելն՝ *ո՛չ* ունիմք: - 605. ...նախ վասն ա՛յս խորհրդոյս է. և երկրորդ՝ զի մկրտութիւնս մեր *ո՛չ* ի ջուրն յովաննու, այլ ի մահն քրիստոսի է: - 605. Եւ վասն այն զանազան իւղ *ո՛չ* ունիմք, բայց միայն զմեռոնն սուրբ...: - 605. Ապա թէ ոչ՝ ժա՛մ է քեզ ասել թէ ամենայն կարգ թաղման մարմնոյն՝ *ո՛չ* է օգուտ հոգւոյ ննջեցելոցն: - 605. Ապա և *ո՛չ* աղօթք և պաշտօն քահանայից կամ տուրք կամ պատարագք է օգուտ հոգւոյն ըստ քեզ որ է բնաւ սուտ և չար հերձուած: - 605. ...և գո՛րծ է նոցա,

հրամանաւ քահանային աւետարան կարդալ, քարոզել, և բառնալ քշոց և բուրբառ. և նստիլ ամենևին *ո՛չ:* - 608. Առաջինն է արտաքս հանել յեկեղեցւոյ *զոչ* մկրտեալն և զախտացեալս մեղօք. և զայս առնէ դռնապանն: - 608. Վասն է՞ր մինչ ի չորրորդ կարգն փոքրիկ ջահընկալութեանն կարեն ամուսնանալ, և յայնմ հետէ *ոչ:* - 609. Վասն այն մինչ յայս ամուսնանալ կարեն. և ի հինգն ելեալ վերագոյն դասուց՝ *ո՛չ* ամուսնանան: - 609. Զի բռնութեամբ և առանց հաւանելոյ միմեանց՝ այսինքն փեսային և հարսին՝ *ո՛չ* հաստատի պսակն: - 610. Այլ *ո՛չ* է պարտ բաժանել զպսակն զայն որ օրինօք լինի պսակեալ...: - 610. ...վասն որոյ *ո՛չ* է պարտ բաժանել զօրինաւոր պսակն որքան կենդանի իցեն: - 611. Եւ որպէս ի մէջ արենազգացն *ո՛չ* լինի խնամութիւն մինչև ի չորրորդ ծնունդն: - 611. Նոյնպէս և ի մէջ խնամոցն *ո՛չ* լինի այլ խնամութիւն մինչ ի **դ** ազգն: - 611. ...եթէ ի հոգեւոր ազգն *ո՛չ* լինի խնամութիւն մինչ ի **գ** ծնունդն այսպէս: - 611. Իսկ որդէգիրն որ բանիւ և կամօք լինի, *ո՛չ* լինին խնամիք մինչ ի կրկին ծնունդն...: - 612. Իսկ օրինաց ազգն որ են խնամիքն, և բնականն որ են մարմնականքն, *ո՛չ* լինին խնամիք մինչ ի **դ** ծնունդն: - 612. Այլ որպէս ի հինն *ո՛չ* առնէին ընդ հեթանոսացն խնամութիւն որք չէին թլփատեալք: - 612. Նոյնպէս և մեք *ո՛չ* առնեմք խնամութիւն ընդ այլազգիս որք *ո՛չ* են մկրտեալք: - 612. Մա՞րթ է աւելի քան զմին կին առնուլ՝ թէ *ոչ:* - 612. Մին կին է միոյ առն օրինադրեալ և *ո՛չ* աւելի, յաղագս բազում պատճառի: - 612. Վեցերորդ, զի և առաջին ծնօղքն և հարք թէպէտ աւելի կին առնուին վասն զաւակաց, այլ հարսանիսն կրկնեալ *ո՛չ* ընթերցեալ լինի: - 612. Եօթներորդ, զի և քրիստոս *ո՛չ* ընդ բազում, այլ ընդ մի Կաթուղիկէ եկեղեցի միաւորի: - 612. ...և *ո՛չ* է աստուածային հրաման, այլ առաքելական ներումն ի դեղ անժուժկալութեան. զի մի՛ ի պոռնկութեան անդունդս կործանեսցին: - 613. Վեցերորդ օրինեմք, զի բաժանեսցի յայլ աշխարհական տանց որք *ո՛չ* ունին զօծումն սրբութեան: - 615. Ասեմք նախ եթէ՝ *ո՛չ* երկոտասան. այլ մի օր կատարէին: - 616. Վասն է՞ր ոչխար յեկեղեցին *ո՛չ* մտանէ: - 617. Նա՛խ՝ զի եկեղեցին է ի խորհուրդ դրախտին. ուր անասուն *ո՛չ* մտանէր. նոյնպէս և յեկեղեցի *ո՛չ* մտանէ: - 617. Եւ եկեղեցի է լեառն անմատոյց. վասն որոյ անասունք և անարժանք *ո՛չ* մտանեն: - 617. Այլ և *ո՛չ* գազան հերձուածօղ: - 617. Վեցերորդ՝ զի եկեղեցին փարա՛խ է բանաւոր հօտից. և *ո՛չ* անբանից: - 617. Նոյն պատճառաւ զմեռեալս յեկեղեցին *ո՛չ* թաղեմք: - 617. Երկրորդ, զի և ի տաճարն հին՝ *ո՛չ* թաղեցին զսուրբս. այլ ի գերեզմանատունս. նոյնպէս և առաւել սրբութեամբ պահելի է զնոր տաճարս: - 617. Երրորդ՝ զի մարմինք սրբոց ի գաւիթս պահին և *ո՛չ* յեկեղեցի. յօրինակ հոգւոց նոցա որք են ի պահեստ հոգւոյն ի տեղւոջ լուսոյ և հանգստեան: - 617. ...և միւսն երախայ և *ո՛չ* ունի լեզու, միայն լայ. և մայրն գթայ ի յարտասուքն և տայ կերակուր: - 620. Իսկ մեք *ո՛չ* ոտք և *ո՛չ* լեզու ունիմք. այլ տիաս և տգէտ...: - 620. Նա՛խ՝ թէ *ո՛չ* գիտէ զկերպ աղօթիցն, կամ ծունր կրկնել, կամ զձեռն տարածել. և սոյնպիսիք *ո՛չ* մեղք են և ո՛չ արդարութիւն: - 620. Իսկ մտօքն, յորժամ աղօթէ և միտքն *ո՛չ* է ի ներս. *ո՛չ* մեղք է և *ո՛չ* արդարութիւն: - 620. Յորժամ *յոչ* կամայ՝ *ո՛չ* վարձք և *ո՛չ* մեղք: - 620. Եւ յորժամ *ո՛չ* առնէ բնաւ՝ մահու չափ մեղանչէ: - 620. Այլ որք *ո՛չ* ժամանեն՝ պա՛րտ է յամենայն աւուր կրկին անգամ աղօթել. այսինքն յայգն և յերեկոյն: - 623. *Ո՛չ* զամենայն, այլ զիւրաքանչիւր ժամու առաջին աղօթիցն եպիսկոպոսն ասէ զխաղաղութիւնն, և զայլն քահանայն որ աղօթէ՛: - 625. ...վասն որոյ մեզ լեզու լինի և ի դէմս մեր գոհանայ զաստուծոյ ըստ իւրաքանչիւր ժամու. այսինքն յառաւօտն, ի հասարակ օրն, և յերեկոյն. զի գոհացումն է և *ո՛չ* աղօթք: - 626. Զի ի կիրակէ և ի տէրունական տօնս *ո՛չ* կարօտիմք բարեխօսի. այլ երգս սրովբէականս նուագեմք: - 627. Իսկ թագաւորքն առաջին և վերջին. զի կիրակին է թագաւորելն աստուծոյ. այժմ առաջին, և զկնի վերջին. կամ աստ կամողացն միայն, և անդ կամողաց և *ո՛չ* կամողաց: - 627-628. Իսկ ի պահս *ո՛չ* խունկ և *ո՛չ* օրհնութիւն. զի ընդ ապաշխարութեամբ եմք, *ո՛չ* իշխեմք գոհանալ և *ո՛չ* ունիմք անուշահոտ վարս: - 628. Այլ և ոմանք ի հանդերձեալն *ո՛չ* ունին պատասխանի առաջի ահաւոր բեմին քրիստոսի: - 628. Իսկ մեծացուսցէն ի կիրակէի, զբնաւ տնօրէնութիւնն պատմէ. զի թէ *ոչ* էր ծնեալ՝ և *ո՛չ* էր խաչեալ. և *ո՛չ* յարուցեալ. և *ո՛չ* զմեզ փրկեալ: - 628. Նոյնպէս և երկրորդն որ ասէ *ոչ* նախանձիլ ընդ չարս որ են անզգամք. և զի ո՛չ գոյր նոցա աստ փոխարէն մեղաց. վասն այն հրովն յաւիտենից այրեսցէ զնոսա: - 629. Նոյնպէս և որ անիծից փոխէ՝ զալէլուն որ օրհնութիւն է *ո՛չ* խառնեմք: - 630. Եւ ի վերջին գուբղայսն *ո՛չ* ասեմք որ ա՛յլ մարգարէից է. և ալէլուն միայն սաղմոսին է: - 630. Անբիծքն վասն մեղաց պատարա՛գ է. նոյնպէս և յիսներորդ ողորմեայն վասն մեղաց է ալէլու *ո՛չ* ասի: - 630. Եւ այս է մեկնութիւնն. թէպէտ հրէայքն որպէս յանցաւոր մարդ սպանին՝ սուրբ աստուած և *ո՛չ* սոսկ մարդ: - 632. Զի խաչն պսակ և փառք է քրիստոսի և պարծանք քրիստոնէից և *ո՛չ* նախատինք...: - 632. Նա՛խ՝ զի զհայր աստուած ասեն և *ո՛չ* հզօր և *ո՛չ* անմահ: - 633. Եւ զորդի հզօր. և *ո՛չ* աստուած և *ո՛չ* անմահ: - 633. Եւ զհոգին անմահ և *ո՛չ*

աստուած և *ո՛չ* հզօր: - 633. Վասն է՞ր ի պատարագի ժամն *ո՛չ* ասեմք զփառաւորեալն: - 634. Նա՛խ՝ զի պատարագն է՛ խաչելութեան ժամն. և յայնժամ *ո՛չ* ասաց յովսէփ: - 634. Երկրորդ՝ զի պատարագն է դէմ յանդիման լինի քրիստոսի. և *ո՛չ* եմք կարօտ բարեխօսի: - 634. Իսկ յառաւօտն և յերեկոյն պատարագ *ո՛չ* մատչի. վասն այն ամենայն աղօթից և պաշտմանց կատարումն և աւարտ զխաչէն ճառեմք. - 634. Բայց կին մարդոյ *ո՛չ* է պարտ բանալ զգլուխն, այլ առաւել ծածկել յեկեղեցւոջ: - 635. Իսկ որ այժմ աբեղայք *ո՛չ* բանան զգլուխս յամենայն աղօթս, այս է պատճառն, - 635. Վասն է՞ր երբեմն զփառքն և զայժմն ի միասին երգեմք. և երբեմն *ո՛չ:* - 636. նոցա փառ կամ կցորդ գոյ զկնի. և որք որիշ են՝ նոցա կցորդ *ո՛չ* ասի: - 636. Խաւարեցոյց կնքեալ, այսինքն վկայեաց եցոյց թէ *ոչ* են աստուածք: - 639. Յինգերորդ, յաղագս ջերմ սիրոյն առ աստուած՝ *ո՛չ* բաւական համարեցաւ միայն լեզուաւ երգել աստուծոյ...: - 641. Իսկ հասարակ սրբոցն նախատօնակ *ո՛չ* է այսօր: - 647. Եւ ա՛յս է խորհուրդն. զի որ քան են սուրբք ի յերկրի կենդանի, *ո՛չ* տօնեմք նոցա մինչ ի հանդէս նահատակութեան են...: - 647. Պահք օրն վասն է՞ր *ո՛չ* տօնեմք: - 650. Դարձեալ՝ որ քան եմք ի պահքն՝ ընդ ապաշխարութեամբ եմք և *ո՛չ* եմք արժանի տօնել սրբոց. - 650. Ամենայն պահք աստուծոյ է և *ո՛չ* մարդոյ. - 650. Վասն է՞ր յաղուհացս հանգստեան *ո՛չ* ասեմք: - 650. ...*ո՛չ* կարեմք այլոց բարեխօսել... - 650. Նոյնդ է պատճառն որ պատարագ *ո՛չ* մատուցանեմք. զի անարժա՛ն եմք: - 651. Եւ յեկեղեցիս *ո՛չ* մտանեմք: - 651. Եւ զայս դնեն պատճառ թէ՝ ի ժամանակս ինչ՝ զօրք հեծելոց նոցա *ո՛չ* հասին ի բարեկենդանն...: - 651. Եւ թէ ոք ասիցէ, **խ** օր է պահոց. զի **խ** օր պահեաց քրիստոս. և կիրակէն *ո՛չ* է **ի** համարս: - 651. Եւ այսպէս բազում են խորհուրդ քառասնորդացն. և ըստ խորհրդոցն պահքն *ո՛չ* լուծանի: - 651-652. Եւ թէ կիրակէն *ո՛չ* է պահք որպէս զերկու աւուրքն լուծանեն, նոյնպէս և զկիրակէն լոյծ: - 652. Եւ թէ ազատ ոք է և *ո՛չ* կարէ ապաշխարել...: - 652. Եւ որ ոք *ո՛չ* պահէ որպէս ազգն Ֆռանկաց, ընդ անիծիւք է յառաքելական և հայրապետական կանոնաց: - 652. Զի *ո՛չ* եկեր և *ո՛չ* էարբ զքառասուն տիւ և ըզխ գիշեր: - 652. Յինանցն ընդէ՞ր *ոչ* պահեմք. *ո՛չ* ուրբաթ և *ո՛չ* **դ** շաբաթի: - 654. ...և յինունքն յարութեան խորհուրդ. զի *ո՛չ* է սուրգ և *ո՛չ* տրտմութիւն և *ո՛չ* ցաւք: - 654. ...*ո՛չ* պահեմք սուգ մինչ վերասցի և ապա՛ պահեմք. որպէս աւետարանն ասէ: - 654. Զի՞նչ է յորժամ գինի ըմպեմք, օրհնեմք և շնորհակալեմք միմեանց. և յայլ կերակուրս և ըմպելիս *ո՛չ* առնեմք նոյնպէս: - 655. Եւ զայս ա՛յլ ազգք *ո՛չ* ունին. այլ ի մէնջ են սովորեալ: - 656. Այլ մեք զբաժակ օրհնութեան ճաշակեմք զչափաւորն. և *ո՛չ* զանչափն որ է մեղաց՝ և արբեցութիւն: - 656. Եւ դարձեալ՝ ի յարքայութիւնն երկնից այսպէս ըստ իւրաքանչիւր չափու և արժանեաց կարգաւորապէս պարգևէ աստուած զիմաստութիւնն. և *ո՛չ* անկարգ. կամ զրկելով. կամ աչաղելով: - 656. ...զի պատարագ աստուծոյ սիրտ սուրբ և հոգի խոնարհ զոր աստուած *ո՛չ* արհամարհէ: - 658. Որպէս լեզուն մտաց՝ և ձեռքն սրտին է գործի. նոյնպէս ունկն կամա՛ց է. հնազանդութեան և կամ *ոչ:* - 658. Չորեքտասաներորդ, թէ *ո՛չ* է քաւարան հրոյ, **ժե** թուով: - 660. Քսանևէ, Թէ ո՞ր մարմինք մնան ի կատարածի և ո՞րք *ոչ:* - 661. Եւ հայր *ո՛չ* դատէ, այլ միա՛յն որդին: - 661. ...*ո՛չ* էր յարմար թէ ապականացուն յանապական տեղիս բնակեսցի. մինչև սա ևս յանապականութիւն վերափոխեսցի: - 662. Երկրորդ՝ այն տեղի անմարմնո՛ց է *ոչ* կարէր մարդս մարմնով անդ բնակիլ...: - 662. Զի նախ է մարմին քան զհոգի. *ոչ* ժամանակաւ և պատւով. այլ նիւթով և զօրութեամբ: - 662. Եւ անդ զի յաւիտեան է և *ո՛չ* ժամանակ: - 662. Եւ զի ո՛չ գոյ ժամանակ, վասն որոյ և *ո՛չ* ծնունդ: - 662. Ապա և *ո՛չ* լրումն թուոյն. զի միակն յառաջ է քան զբազումն: - 662. Իններորդ՝ առաւել ամենահնար գթութեան է ցոյցք. զի եղական բնութիւնս *ո՛չ* կարէր անմեղ մնալ. զի անեղն է անմեղ: - 663. Ա՛րդ՝ թէ յերկինս էաք մեղանչեալ՝ *ո՛չ* կարէաք բշժկիլ որպէս դևքն: - 663. Եւ գիտելի է, զի հրեշտակք *ո՛չ* ունին զայսպիսի փոփոխմունս. զի *ո՛չ* են տարրականք, և *ո՛չ* ընդ ժամանակաւ: - 663. Այլ ըստ իմացման առաւելուն ի գիտութիւն. և այն *ո՛չ* է նոցա փոփոխումն, այլ աճումն իմաստութեամբ: - 663. Այսպէս և ի յարութեանն սուրբք զայսպիսի փոփոխմունս *ո՛չ* ունին...: - 663. ...և զայն սակաւ բարին վճարէ՛ աստ, որ ի դատաստանին ակն բարւոյ այլ *ո՛չ* ունիցին...: - 664. ...նոյնպէս և մարդն թէ համբերօղ է թէ *ոչ:* - 664. Պա՞րտ է բժշկական դեղով վարիլ հիւանդաց, թէ *ոչ:* - 665. Եւ բժշկութիւնն՝ *ո՛չ* ի դեղն, այլ յաստուած յուսալ պարտ է. որ դեղով և առանց դեղոյ կարօ՛ղ է բժշկել: - 665. Որպէս մշակն յորժամ սերմանէ, *ո՛չ* ի գործն՝ այլ յաստուած ապաւինի: - 665. ...յայնժամ լինի բժշկութիւն հոգւոյ և մարմնոյ յաստուծոյ և *ո՛չ* ի դեղոց: - 665. Եւ թէպէտ մարդ *ո՛չ* գիտէ զօր մահուն իւրոյ, այլ երիս իրս տւեալ է աստուած ի զգուշութիւն մեզ և կարապետ մահուն: - 665. Եւ վասն յերկարութեան կենաց, և վասն *ո՛չ* գիտելոյ զօր մահուն և զկատարածի, ասացեալ է ի վերն առ նախապետսն ի **դ** համարն: - 665. Իսկ լի աւուրբ ասէ և *ոչ* ամօք կամ ամսօք...: - 666. Եւ չորրորդ որպիսութիւն, զի աստ հոգին կարէ՛ մեղանչել՝

կարէ՛ և *ոչ* մեղանչել: - 667. Իսկ յետ մահու կարէ՛ *ոչ* մեղանչել: - 667. Եւ յետ յարութեան *ո՛չ* կարէ մեղանչել զի անկա՛ր է մեղանչել: - 667. Նոյնպէս և մեղաւոր հոգին աստ կարէ՛ արդարանալ և կարէ *ոչ* արդարանալ: - 667. Եւ յետ մահուն կարէ *ոչ* արդարանալ: - 667. Եւ յետ յարութեանն *ո՛չ* կարէ արդարանալ զի անկատա՛ր է...: - 667. Եւ զի *ո՛չ* գիտեմք զսուա՛ պա՛րտ է զգուշութեամբ լինիլ: - 668. Ի վախճան մերձեցեալքն տեսանե՞ն զանտի կենացն ինչ՝ թէ *ոչ:* - 668. Եւ դառնացեալ յոգոց հանէ, և այսր և անդր զերեսն շրջէ և թաքչիլ *ո՛չ* կարէ: - 669. Եւ ոչ մի ինչ ունի յոյս փրկութեան. *ո՛չ* օգնական. *ո՛չ* բարեխօս. *ո՛չ* ողորմութիւն. և ո՛չ այլ ինչ այնպիսի որ արաժանաւորացն է: - 669. Զի զգալի լոյս *ո՛չ* լուսաւորէ զնոսա...: - 669. ...և զիմանալի լոյս շնորհաց *ոչ* ունին: - 669. Եւ որպէս արդարքն դեռևս *ոչ* են ընկալեալ զկատարեալ փառս իւրեանց...: - 669. ...նոյնպէս և մեղաւորք *ո՛չ* են առեալ զկատարեալ տանջանս իւրեանց: - 669-670. Վասն որոյ *ո՛չ* ուտեմք...: - 670. Եւ կոչի պատանք, զի պատեալ և կապեալ է զամենայն զգայարանսն. և ոչ ինչ կարէ գործել. *ո՛չ* չար և *ո՛չ* բարի: - 671. Երրորդ՝ զի կամօք և ուրախութեամբ ուղարկեմք ի քրիստոս և *ո՛չ* ակամայ կամ տրտմութեամբ: - 673. Արժանաւոր է թէ անարժան՝ պա՞րտ է կատարել զկարգն թէ *ոչ:* - 674. ...զի նոքա *ո՛չ* չար են գործեալ և *ո՛չ* բարի. *ո՛չ* տանջին և *ո՛չ* պսակին...: - 675. ...և յետ յարութեանն *ո՛չ* կարեմք մեռանիլ և յառնել...: - 675. ...զի յայսցանէ *ո՛չ* արտաքսեսցէ զնա: - 675. ...վասն որոյ որպէս ի մկրտութիւնն ուղիղ մկրտիմք գլուխ ի վեր և *ոչ* ի վայր որպէս արիոսեանք: - 676. Վասն է՞ր ի հող թաղեմք և *ո՛չ* յայլ տարերս: - 677. Ութերորդ, զի որակ երկրի խաւար է և սեաւ. և *ո՛չ* է պայծառ որպէս այլքն...: - 678. Վտանգ ինչ է՞ արդարոյ՝ թէ ի յօրհնեալ գերեզմանս *ո՛չ* թաղի: - 678. Ասեմք թէ *ո՛չ*. այլ առաւել վտա՛նգ է նոցա. զի ի բազում անգամ ի ձեռս դիւաց արտաքս ընկեցեալ լինին մարմինք նոցա: - 678. Իսկ թէ յեկեղեցիս *ո՛չ* թաղեմք՝ ասացաւ ի վերոյ **լե** գլուխն **լթ** համարն: - 678. Եւ զի պահէ՛ *ո՛չ* ուտիլ ի գազանէ, և *ո՛չ* ցրուիլ ի ջրոյ. և *ո՛չ* հոսիլ ի հողմոյ, և յայլոցն պահէ: - 678. Նա՛խ՝ զի ի սմանէ ելանեմք, և ի նմանէ *ո՛չ:* - 679. ...այսպէս և քար տապանիս մեր լիցի. նշանակէ՛ զանապական յարութիւնն. որ վիմածին լինիմք և առանց ապականութեան որպէս քրիստոս. և *ո՛չ* հողածին ապականացու որպէս զառաջին ադամն: - 679. Եւ ամենայն ինչ որ աշխարհի է՝ յայսմանէ արտաքս *ո՛չ* է. եթէ ժամանակն եթէ կեանքն և եթէ փոփոխումն մեր: - 681. Եւ **գ** փոփոխումն ունիմք. զի նախ *յոչ* **է է** ի յէութիւն գամք...: - 681. ...և յետոյ յէութենէ *յոչ* էութիւն փոփոխիմք մարմնով: - 681. ...իսկ հրեշտակք զմինն ունին. զի *յոչ* է է՛ եղեն. և զերկուքն չունին...: - 681. ...իսկ դևք զերկուքն ունին. զի *յոչ* էից եղէն. և փոխեցան ի բարւոյն ի չար. այլ զմինն չունին...: - 681. Իսկ անարժանքն որ ունէին զսիրտն յեգիպտոս, սատակեցան յանապատին և *ո՛չ* մտին յերկիրն պարգևաց: - 682. Այլ յորժամ սիրտն կապեալ է ի մեղս աշխարհի և *ոչ* կարաց ապաշխարութեամբ քաւել, *ո՛չ* մտանէ յարքայութիւնն երկնից: - 683. Եւ թէ ոք ասիցէ, թէ տուրք աղօթք և պատարագ, *ո՞չ* է օգուտ նոցա: - 683. ...և *ո՛չ* կարացին բովանդակ ապաշխարել...: - 683. Իսկ թէ անզեղջ կամօք և առանց խոստովանութեան ի մեղս մեռան, *ո՛չ* է օգուտ նոցա. թէպէտ մկրտեալ իցեն և հաւատացեալ...: - 683. Եւ *ո՛չ* որպէս շաղակրատեն ոմանք մտացածին բանիւ. թէ երեք օրն՝ կամ յեօթն՝ կամ յամիսն՝ և կամ ի տարին ելանեն ի քաւարանէն: - 683-684. Զի աւուրքս այս առ մե՛զ չափին և *ո՛չ* առ նոսա...: - 684. ...և մե՛ք քաւեմք զմեղս նոցա և *ո՛չ* նոքա: - 684. Եւ թէպէտ ամենայն մեղաւոր զղջանայ յետ մահու, այլ *ո՛չ* կարէ ապաշխարել: - 684. Զի **բ**շաբաթին մեռելո՛ց է և *ո՛չ* գերեզմանօրհնէք: - 684. Այլ թէ ասեն՝ հաղորդադրամ, կամ խոստովանադրամ, խո՛րթ է. յագահութեանց երիցանց սահմանեալ և *ո՛չ* ըստ կանոնաց որպէս այլքն: - 684. Եւ դարձեալ, զի ի **խ** օր պահոցն մինչ ի յարութիւնն ղազարու այլ հանգստեան *ո՛չ* տօնեմք: - 684. Յոգիք ելեալ ի մարմնոց՝ ի զգայութեա՞ն են և ի միտս, թէ *ոչ:* - 685. Յոգիքն ճանաչե՞ն զիմիմեանս, թէ *ոչ:* - 685. Գիտե՞ն նոքա զոր ինչ աստ գործեմք, թէ *ոչ:* - 685. Յոգիքն աղօթե՞ն վասն սիրելեաց իւրեանց, թէ *ոչ:* - 685. Իսկ մեղաւորքն *ոչ*. զի չարակամք են և նախանձուք: - 685. ...զայն աղերսեն նմա. սակայն ըստ հաճոյութեան կամացն աստուծոյ խնդրեն և *ո՛չ* զհակառակն: - 685. Այլ մեղաւորքն *ո՛չ* երևին ամենևիմբ: - 685. Այլ չար հոգիքն *ոչ* կարեն գալ առ մեզ մինչ ի դատաստանի օրն...: - 686. Իսկ թէ զի՞նչ է պատճառ *ոչ* երևելոյն...: - 686. Արդարքն ունի՞ն լիակատար ուրախութիւն, թէ *ոչ:* - 686. *Ո՛չ*. զի ըստ այնմ որ զերծան ի չարեաց, միայն ի հոգիս իւրեանց ունին զուրախութիւնն: - 686. որք ունին զհին օրէնս և *ո՛չ* զնորս. այլ ի ներքոյ մնացեալ սկզբնական մեղաց՝ նոքա ի տանջանս ընթանան: - 678. Երկրորդ՝ ի հաւատն եղեն ապաստան. որոյ վարձքն հետևի. և *ո՛չ* ի քննութիւն մտաց...: - 687. Երրորդն ի տգիտա՛ց է ասացեալ. զի կայանք մարմնաւոր՝ անմարմին հոգւոց *ո՛չ* է պիտոյ: - 687. Իսկ հոգիք հաւատացելոց որք *ոչ* գնացին այսպէս զհետ նորա, այլ ընկալան ի ներգործութեանցն սատանայի և ի կրից աշխարհի...: -

688. ...*ոչ* թողու արդար իրաւունքն աստուծոյ ելանել յերկինս. այլ կան և մնան իներքոյ. ակնունելով հանդերձեալ դատաստանին...: - 688. ...և սոքա *ո՛չ* գան ի դատաստան. այլ ի դատել զհրեշտակս և զմարդիկ ըստ առաքելոյ: - 688. Անդ ժողովին և հոգիք չարաց և ամբարշտաց ի ձեռն հրեշտակաց չարաց. *ո՛չ* ըստ բնութեան...: - 688. Ապա թէ ոչ՝ *ո՛չ* կարէ մեղաւոր հոգին ելանել յերկինս. ուստի և հրեշտակք վասն մեղաց անկան. և մարդն ի դրախտէն: - 689. Նոյնպէս և հոգիք արդարոց *ո՛չ* մնան ուրեք ընդ ներքոյ դատապարտեալ տարերաց...: - 689. ...որպէս փախեաւ կինն որ ծնաւ զմանուկն արու ի տեսիլն. և *ո՛չ* կարաց հրեղէն վիշապն հասանիլ: - 689. Յոգիք արդարոց կամ մեղաւորաց ունի՞ն այժմ զփառս կամ զտանջանս թէ *ոչ:* - 689. Նախ ասեմ, եթէ հանդերձ սպիտակ և պսակք և աթոռք և այլն ամենայն զոր ետես ի տեսիլն՝ *ո՛չ* ներկային. այլ հանդերձելոյն էր տեսութիւն որ ինչ լինելոց է ի կատարածի...: - 690. Դարձեալ ասեմք, թէպէտ զներկայն ետես, սպիտակ հանդերձն *ո՛չ* ցուցանէ զփառս հատուցման. այլ զփառս և զհանգիստ գործոց: - 690. Զի հոգիք սրբոցն *ո՛չ* են առանց մխիթարութեան. այլ հանգչին և ուրախանան ի գործս իւրեանց և յուսով փառացն հատուցման...: - 690. *Ոչ* մկրտեալքն կամ չարքն *ո՞չ* ունին տանջանս վասն սկզբնական կամ ներգործական մեղաց: - 690. Որք *ո՛չ* թլփատեցան ի հինն և *ոչ* մկրտեցան ի նորս, կամ չարք ի մարդկանէ, ունին զդատապարտութիւնն զոր զրկելոց են ի դատաստանին զանազան տանջանս և *ո՛չ* այժմ: - 690. Ապա ուրեմն երկոքինն *ո՛չ* կրեն այժմ զտանջանս, այլ ի հանդերձեալն: - 690. Երրորդ, աներևոյթ են մեղօք և *ո՛չ* ունին զպայծառութիւն բարեաց. որպէս այն որ *ո՛չ* ունէր զհանդերձ հարսանեաց: - 691. Այլ սակայն զհատուցումն գործոց և զտանջանս յաւիտենական *ո՛չ* են առեալ այժմ...: - 691. Արդ չև է եկեալ դատաւորն. և *ոչ* է եղեալ դատաստան. նա և *ո՛չ* հատուցումն. *ո՛չ* բարեաց և *ո՛չ* չարաց որպէս ասացաւ ի վերոյ: - 691. ...բայց վարձ հատուցման *ո՛չ* կարէ ընդունիլ առանց մարմնոյն. զի ո՛չ միայն հոգւոյն է վաստակն, այլ և մարմնոյն: - 691. Նոյնպէս և հոգին պատճառէ՛ զմարմինն՝ թէ յորմէ հետէ բաժանեցայ ի նմանէ՝ *ո՛չ* մեղանչեցի: - 691. Ապա ուրեմն մի է օր դատաստանին և *ո՛չ* հանապազ: - 692. Ուստի յա՛յտ է զի մինչև յօր դատաստին *ո՛չ* առնուն: - 692. Ապա ուրեմն մինչ ի դատաստան ընտրեալքն *ո՛չ* ունին կեանս, և ո՛չ մեղաւորքն տանջանս: - 693. Ապա ուրեմն մինչ ի դատաստան ընտրեալքն ո՛չ ունին կեանս, և *ո՛չ* մեղաւորքն տանջանս: - 693. Այս է ի միւսանգամ գալուստն. որք զարծաթ բանին շահեցան, տալ զփառս և զմուտն ուրախութեան. և որք *ո՛չ*՝ նոյնպէս զտանջանս: - 693. Ապա ուրեմն մինչ ի վերջին օրն *ո՛չ* է բաժանումն արդարոց և մեղաւորաց: - 693. Եւ մինչ այս *ոչ* կատարի, *ո՛չ* առնուն արդարք զփառս, և *ո՛չ* մեղաւորք զտանջանս: - 693. Զի *ո՛չ* վայելէ անկատարից զվախճանական կատարումն առնուլ. եթէ ոչ նախ իւր յատուկ կատարելութեամբն կատարեսցի...: - 693-694. ...իսկ հոգին բաժանեալ ի մարմնոյն տակաւին *ո՛չ* է կատարեալ իւր յատուկ կատարելութեամբն: - 694. Ապա ուրեմն հոգին *ո՛չ* կարէ առնուլ զկատարեալ վարձս կամ զտանջանս: - 694. Քանն**ե**, ամենայն ներգործութիւնք կամ ենթակայից են, և կամ անձանց. իսկ հոգին բաժանեալ ի մարմնոյն՝ *ո՛չ* է անձն և *ո՛չ* ենթակայ: - 694. Ապա հոգին առանց մարմնոյ *ո՛չ* ունի ներգործութեամբ ինչ վարձ կամ պսակ: - 694. Քանն**զ**, *ո՛չ* է արդարութիւն աստուծոյ թէ այժմ հատուցանի. զի մարմին և հոգին ի միասին գործեցին զչար և զբարի: - 694. Եւ թէ մասն մարդոյն որ է հոգին՝ տանջի այժմ վասն մեղաց և մարմինն հանգչի, այս *ո՛չ* է ուղիղ, նոյնպէս և զփառսն: - 694. Նաև *ո՛չ* դատաստան. զի ո՞ւմ լիցի դատաստան. զի ամենեցուն վճարեալ է: - 694. Նմանապէս հետևի զի մարմինն *ո՛չ* կրեսցէ տանջանս. զի *ո՛չ* յառնէ ըստ նոցա կարծեացն: - 694. Քանն**ը**, տանջանք և փառք այնմ կենաց յա՛յտ է զի *ո՛չ* է ժամանակեայ, այլ յաւիտենական: - 694. ...և աղաղակէին բարձր ձայնիւ՝ մինչ յե՞րբ տէր սուրբ և ճշմարիտ *ո՛չ* դատես և առնուս զվրէժ արեան մերոյ: - 694. Արդ եթէ սիրելիքն աստուծոյ որք զարիւնս իւրեանց հեղին վասն քրիստոսի՝ *ոչ* առնուն զվարձս իւրեանց, նմանապէս և ամենայն ազգ մարդկան: - 694. Ասեմք եթէ՝ մտանելն առ աստուած այն է՝ որ հեռանայ ի չարութեանց և լինի ի բարութեան և *ո՛չ* փոփոխի ի չար, աստուծոյ պահելովն... - 695. Զի *ո՛չ* կարեմք հոգւով երանի լինիլ եթէ ոչ մարմնով երանելի լիցուք: - 695. Իսկ զբնակութիւն փառացն այլ ուր պատրաստ ասէ և *ոչ* տուեալ: - 695. Զի թէպէտ անդ *ո՛չ* է փառք, այլ և *ո՛չ* տանջանք և չարչարանք գոյ. վասն այսորիկ առ աստուած ասէ որք են ի պահեստ հոգւոցն: - 695. Ասեմք եթէ՝ անդրանիկ և կատարեալ *ո՛չ* վասն պսակացն ասէ որ դեռ առնելո՛յ են: - 695. Ասեմք առ այս, եթէ *ո՛չ* է պահել որպէս այժմ ի մարմնի. և *ո՛չ* առնուն որպէս ի կատարածի...: - 695. Ասեմք ըստ նիւսացւոյն գրիգորի, թէ յոյս նոցա *ո՛չ* է տանջանք, այլ վայելչութիւն է նոցա...: - 695. Ասեմք եթէ՝ այսմ պատասխանի ասացաւ յառաջագոյն. զի *ո՛չ* ուղղակի իմանան վասն առակին...: - 696. ...իսկ միտքն տայ պատասխանի՝ դրունքս փակեալ են. այսինքն զգայարանքս խցեալ են և մեղաց մանկունքս ընդ

ինև *ո՛չ* տան թոյլ... - 697. Յայտ ուրեմն է թէ *ո՛չ* է առակս վասն հատուցման արդարոց: - 697. Զի այս *ո՛չ* է ի կարգէ դատաստանին. այլ ի սքանչելեաց միածնին. որպէս արեգական խաւարիլն, և գերեզմանաց բանիլն, և այլն: - 697. Առ երկրորդն ասեմք թէ՝ ի տեսիլն *ո՛չ* զհատուցումն ասէ, այլ զյայտնութիւն գիտութեանն...: - 697. Ասեմք, թէ *ո՛չ* գիտես զի՞նչ է, ե՛րթ առ առաքեալն և ուսուսցէ քեզ...: - 697. Ընդհանուր ամենայն վարդապետք ուղղափառաց համաձայնեալ աստուածեղէն գրոց՝ *ո՛չ* ասեն քաւարան հրոյ: - 698. Եւ վասն դ պատճառի *ո՛չ* ասեմք քաւարան հրոյ: - 698. Եւ վասն զի մի օր է հատուցումն և *ոչ* յամենայն օր ասացաւ ի վերոյ: - 698. ...զի վասն անտի քաւարանին աստ *ո՛չ* պահեն և *ո՛չ* աղօթեն. և անդ ի դժոխս մատնին: - 698. ...իսկ որ յանմերձ ունիցին ակն, յումեքէ *ոչ* երկնչին: - 698. Եւ անիրաւք որ *ո՛չ* խոստովանին զմեղս, նոքա *ո՛չ* զերծանին ի ձեռաց. այսինքն պատժոցն աստուծոյ...: - 699. Ապա ուրեմն խոստովանութեամբ քաւին մեղքն և *ո՛չ* հրով: - 699. ...իսկ հոգին միայն *ո՛չ* կարէ քաւել զանչափ մեղս: - 699. Եւ *ո՛չ* է ի դէպ թէ հոգին ըստ ինքեան վճարէ զպարտս մարմնոյն. ապա *ո՛չ* է անդ քաւարան: - 699. Վեցերորդ, զի մահն սկիզբն է անփոփոխ կենացն. զի *ո՛չ* կարէ փոխիլ ի մեղաց յարդարութիւն...: - 699. ...որպէս և հրեշտակք յետ անկմանն *ո՛չ* կարացին փոխիլ յարդարութիւն: - 699. Նոյնպէս և հոգին յետ բաժանման մարմնոյն *ո՛չ* կարէ քաւել: - 699. Ա՛րդ՝ եթէ մեռեալք *ո՛չ* խոստովանին և *ո՛չ* օրհնեն. ապա և *ո՛չ* ապաշխարեն և *ո՛չ* քաւեն ըստ ինքեան զմեղս: - 699. ...այսինքն *ո՛չ* դառնայ յայժմու վարս աշխարհի և *ո՛չ* ապաշխարել կարէ ասէ մեկնիչն: - 699. Այլ հոգի դատարկ ի քաւարանին աչս *ո՛չ* ունի զի լացցէ որով յարատ հայեցաւ. և *ո՛չ* մարմին զի պահեսցէ և աղօթեսցէ. այլ և *ո՛չ* զղջումն. զի հոգին ինքն ըստ ինքեան *ո՛չ* կարէ զղջալ: - 699. ...և յա՛յտ է զի մեռելութիւնն բնութեանս է պատիժ և *ո՛չ* մարմնոյն: - 699. ...կամ *ո՛չ* է արժան միաւորիլ ընդ մարմնոյն...: - 699. ...զի նա քաւեալ է և սա *ոչ*. մինչև մարմինն ևս տանջեսցի և քաւեսցի. որ է՛ անպատշաճ երկոքինն: - 699. Տասներորդ, որք գտանին կենդանի յաւուրն դատաստանին, *ո՛չ* երթիցեն ի քաւարանն...: - 700. ...իսկ յետ մահու *ո՛չ* է քաւարան հրոյ: - 700. Ա՛րդ՝ ի քաւարանն *ոչ* է ժամանակ. զի ժամանակն յարեգակնէ՛ և ի լուսնէ՛ լինի...: - 700. Զի թէ յաւիտենից է, տանջանք է և *ո՛չ* քաւարան: - 700. Ապա ուրեմն ո՛չ գոյ քաւարան. և *ո՛չ* հուր ժամանակեայ տանջիչ: - 700. ...իսկ մեռեալ և անդ գնացեալ արդարութիւնն է յայտնի և *ոչ* ողորմութիւնն...: - 700. Եւ զի ո՛չ գոյ ողորմութիւն անդ՝ յա՛յտ է ի յիմար կուսանացն. և *ո՛չ* զերծումն ի տանջանաց...: - 700. ...*ո՛չ* կարեն աստի այդր գալ, և *ո՛չ* այտի աստ: - 700. Հնգետասաներորդ, զի թէ գոյ քաւարան այժմ հոգւոյ՝ ապա *ո՛չ* է բոլոր դատաստան ի կատարածի...: - 700. Իսկ թէ բոլոր և բոլորից դատաստանն է ի կատարածի. ապա ուրեմն այժմ *ո՛չ* է քննութիւն մասնաւոր հոգւոյ: - 700. Այլ թէ ոչ գոյ դատաստան, նաև *ոչ* յարութիւն մարմնոյ. և *ոչ* հատուցումն գործոյ. ապա և *ո՛չ* գալուստն քրիստոսի որպէս ասէ սուրբն կիւրեղ: - 700. ...ապա ի յարութեանն *ո՛չ* է բոլոր մարդոյն հատուցումն. այլ մարմնոյն միայն որպէս ցուցաւ: - 700. Նա՛խ՝ վասն հեշտ ցանկութեան իւրեանց զոր *ոչ* կամին ելանել անտի, - 701. ...և որ ոք ի պատիժն աստ *ոչ* ժամանէ կրել, անդ կրէ յետ մահու ի հուրն և քաւի: - 701. Դարձեալ ասեմք, եթէ զպատիժ մեռելոյն զոր նա *ո՛չ* կարէ քաւել...: - 701....և որ ոք աստ կամաւ *ո՛չ* պատժի, աստուած պատժէ զնա ի հուրն և քաւի: - 701. Դարձեալ ասեմք եթէ՝ խոստովանողին պատիժ ամօթն է զոր կրէ առաջի քահանային. և *ո՛չ* կրէ զամօթն յաւիտենից: - 701. Ա՛րդ՝ որք կրեն զամօթն առաջի քահանային, *ո՛չ* կրկնի ի վերայ նոցա պատիժ: - 701. Զի զամենայն ոք միանգամ սպանանեն և *ո՛չ* **բ**: - 701. Դարձեալ ասեմք, եթէ ի հուրն համատարած ամենայնքն անցանելոց եմք ի կատարածի. այլ *ո՛չ* ի հուր քաւարանի. զի ո՛չ գոյ քաւարան: - 701. ...ուստի յայտ է զի քաւարանն ջուր *ո՛չ* է: - 701. Եւ որ քարոզէ՛ առանց հաւատոյ՝ *ոչ* խօսի զբանն հաւատարիմ որ ըստ աստուծոյ: - 702. Զի այրի շինուածն որ *ո՛չ* է յարմար այնպիսի հիման հաւատոյ: - 702. Ասեմք թէ՝ *ոչ:* - 702. Նա՛խ՝ զի աստ յայժմու կեանս շնորհքն է, իսկ անդ փառքն. որպէս աստ մեղքն է և անդ պատիժն. այլ *ո՛չ* քաւարան: - 702. Երկրորդ, նոքա զարդարս *ո՛չ* ասեն անցանել ընդ հուրն. այլ ոսկեբերանն ամենեցուն անցանել և պայծառանալ ասէ: - 702. Եւ յետ սակաւուց ի նոյն գլուխն ասէ, թէ *ո՛չ* զգայապէս լինի տեսիլ հրեշտակի...: - 703. Զի *ո՛չ* ասէ թէ ի գալ հոգւոյս, այլ՝ ի գալս իմում. որ է հոգի և մարմին: - 703. Դարձեալ՝ թէպէտ վասն հոգւոյն ասեմք որպէս այս, և տեսիլ անտօնին, և այլոց, այն *ո՛չ* է բերքաթուր. այլ պատերազմ դիւաց. որպէս աստ մարմնով, նոյնպէս և յետ մահու առ հոգիսն...: - 703. Այլ *ո՛չ* թողու աւանդօղ հրեշտակն...: - 703. ...և ապա կորնչին դևք. և այս *ո՛չ* է բերքաթուր: - 704. Ճանապարհ կեանս այս. և ոսոխ մարմինն. և դատաւոր միտքն. դահիճ խիղճ մտացն որ չարչարէ՛ զհոգին և *ոչ* ազատէ մինչև զամենայն պարտսն վճարեսցէ ապաշխարութեամբ: - 704. Իսկ մինչևն՝ անդ *ո՛չ* է կոպար ժամանակի. այլ յաւիտենի: - 704. Զի *ո՛չ* յառաջ և *ո՛չ* յետոյ գիտաց զնա: - 704. ...և յետ

այնորիկ *ո՞չ* նստի ընդ աջմէ հօր որդի: - 704. Այսպէս և աստ մինչև՝ զօր մինչ առ ինքն նշանակէ, և զհանդերձեալն *ոչ* լքանէ: - 704. Ասեմք առ այս թէ *ոչ*. վասն **բ** պատճառի: - 704. Նախ՝ որպէս *ոչ* է անդ գործ մեղաց, նոյնպէս և *ոչ* թողութիւն: - 704. Երկրորդ, որպէս մարմինն *ոչ* փոխի ի բարւոյ ի չար, կամ ի հակառակն. նոյնպէս և *ոչ* հոգին...: - 704. Ասեմք առ այս նախ՝ եթէ անդ մեղաց թողութիւն *ոչ* է զոր աստ *ոչ* թողութիւն: - 704. ...զի թէ ոք աստ զպատիժ մեղաց *ոչ* կարասցէ վճարել, անդ վճարեսցէ և թողցի: - 704. Եւ այսպէս ասացեալքս թերի՛ են և *ոչ* ընդունելի եկեղեցւոյ: - 706. Եւ լինիցի յանդուգն. զի *ոչ* համարի պատժիլ ի յաստուծոյ...: - 707. Եւ կարճել *ոչ* զժամ աւուրցն ասէ, այլ զթիւ: - 709. Եւ յետ այնորիկ *ոչ* առ ժամայն գայցէ տէր ի դատաստան. այլ տացի խաղաղութիւն աւուրս **խե**. առ ի հանգիստ սրբոցն և ի յապաշխարութիւն թիւրելոցն: - 709. Ցուցանեն այսոքիկ զկատարեալ և զառաւել հանգիստ սրբոցն այժմ յուսով և յետ մահու հոգւով թագաւորեալ ընդ քրիստոսի. և ապա յետ յարութեանն հոգւով և մարմնով *ոչ* **ռ** ամօք. այլ անվախճան կենօք...: - 710. Իսկ **իդ** թիւն *ոչ* եթէ սահման և կէտ է. այլ սովորութիւն է գրոց փոքր թւով զբազումսն ցուցանել: - 711. Եւ որպէս **բժան** բիւր հրեշտակացն, և եօթանասնից եօթն թողուլն, և ամլոյն եօթն ծնանիլն *ոչ* է վճիռ, նոյնպէս և **իդ** երիցանցն: - 711. ...ի գարունն ո՛չ թէ դժնիկն խլեալ բուսանի, այլ տնկեալ վարդենին. եթէ արմատն *ոչ* մնայ դժնկին: - 714. Եւ զորօրինակ զկնի մկրտութեանն սկզբնական մեղքն *ոչ* երևի. նոյնպէս զկնի ապաշխարութեան ներգործական մեղքն ծածկի և կորնչի...: - 714. Գո՞յ յարութիւն մարդկան թէ *ոչ:* - 714. ...ապա պիտոյ է և ա՛յլ կեանս զի հատուսցի բարեացն բարի և չարացն չար. և այս *ոչ* լինի եթէ ոչ իցէ յարութիւն: - 715. ...այլ արդ եթէ հոգին առանց մարմնոյ պսակի կամ պատժի՝ *ոչ* է արդար դատաստան...: - 715. Նախ՝ զի *ոչ* է ի չորից տարերց ժողովեալ որ քակտելով մահանայ: - 715. ...և այս *ոչ* լինի եթէ ոչ է յարութիւն մարմնոյ: - 715. ...և այս ո՛չ լինի եթէ *ոչ* է յարութիւն մարմնոյ: - 715. ...իսկ թէ մարդս *ոչ* յառնէ, աշխարհ անկատար մնայ. զի բոլորն մասամբն է կատարեալ: - 715. Եւ աստուած *ոչ* է մեռելոց այլ կենդանեաց. որոց հոգիքն ի ձեռս նորա կենդանի են. և մարմինքն ի ձեռս նորա կենդանի լինելո՛ց են: - 715. ...և *ոչ* էր պարտ մասին փոփոխիլ առանց բոլորին... - 717. ...զի հաւատն վարձք *ոչ* ունի թէ վկայութեամբ հաստատի: - 717. Այլ արդ՝ թէ օրըստօրէ յառնէր իւրաքանչիւր ոք, հաւատ յարութեանն խափանէր. զի հաւատն *ոչ* երևելեացն է: - 717. Վեցերորդ, զի յարութիւնն է գործ սքանչելեացն աստուծոյ և *ոչ* բնութեան. զի բութիւնն հունաւորեալ է զօրութեամբ յերկար ժամանակս գործէ: - 717. Առաքեալն պօղոս *ոչ* զայն ասէ թէ յապաղելով լինի յարութիւնն, այլ զկարգն ցուցանէ *ոչ* ժամանել ննջեցելոցն: - 717. Դարձեալ՝ կենդանիքն *ոչ* ժամանեն ննջեցելոցն, այսինքն նոցա որ մեռեալ են և ի հող փտեալ և փոշիացեալ... - 717. ...այլ մեռանին և իսկոյն լինի յարութիւն նոցա. յորում *ոչ* մարմինքն ի յերկիր անկանին և *ոչ* լուծանին: - 717. Եւ թէ վասն է՞ր *ոչ* գիտեմք զկատարած աշխարհի և զկենաց մեր, գրեալ է ի վեր անդ առ նահապետսն ի **ժը** գլուխն ի **դ** համարն: - 718. Կերակուրս զոր ուտեմք՝ յառնէ՞ ի մարդն թէ *ոչ:* - 718. Գիտելի է, զի ոմանք ասեն թէ կերակուրս զոր ինչ ուտեմք *ոչ* յառնէ ի մարդն... - 718. Ասեմք առ այս թէ՝ են նիւթ ի մարդն որ յառնեն և են որ *ոչ:* - 718. ...և նիւթ կերակրոյն՝ այն մասն որ փոխեցաւ ի գոյացութիւն մեր՝ յառնէ՛. զի մարմին եղև մարդոյն այլ աւելորդքն *ոչ* յառնեն: - 718. Եւ տէրն վասն կերակրոյն *ոչ* ասաց թէ ի մարմին մարդոյն ո՛չ հաւասարի. այլ զայն թէ՝ դառնութիւն և ծանրութիւնն արտաքս ելանէ... - 718. Եւ տէրն վասն կերակրոյն ո՛չ ասաց թէ ի մարմին մարդոյն *ոչ* հաւասարի. այլ զայն թէ՝ դառնութիւն և ծանրութիւնն արտաքս ելանէ, - 718. Ապա ուրեմն կենդանեաց մարմինն *ոչ* յառնէ ի մեզ ըստ բոլոր նիւթոյն, այլ ըստ չափոյ զօրութեանն որ փոխեցաւ ի մեզ և եղև մարմին մարդոյ, ա՛յն մարմինն յառնէ: - 718. Մարմին մարդոյն զոր եկեր ծուկն՝ *ոչ* յառնէ ի ծնեալ մարդն այլ ի կերեալն: - 718. Այսպէս և թէ ոք զմարդոյ մարմին ուտէ և ծնանի ա՛յլ մարդ, մարմին մարդոյն *ոչ* յառնէ ի ծնեալ մարդն և *ոչ* ի ծնօղն որ եկեր, այլ ի կերեա՛լն մարդ: - 718-719. Նոյնպէս և նիւթն սկզբնական *ոչ* յառնէ ի ծնօղս որ աւելորդ արտահոսումն է նոցա. այլ յառնէ ի ծնեալ մարմինն որոյ հիմն է շինուածոյն: - 719. Նմանապէս և կողն որ առաւ յադամայ և շինեցաւ կին, *ոչ* յառնէ ի յադամ, այլ ի յեւա. որոյ հիմն կազմութեան եղև փոխանակ սերման: - 719. Այսպէս և հողն ուստի շինեցաւ ադամ, *ոչ* մնայ ի տարերս. այլ յառնէ ի յադամ որ սկիզբն եղև գոյութեան նմա: - 719. Որ արարն *յոչ* էից, գիտէ անխառնապէս որոշել զիւրաքանչիւր փոշիս արդարոց և մեղաւորաց. զի հատուսցէ իւրաքանչիւր ըստ գործոց: - 719. Եւ նշանս այս անքակտելի՛ է ի հոգւոյն և ի մարմնոյն խառնեալ. և յորժամ բաժանի հոգին՝ սա *ոչ* բաժանի ի հոգւոյն և *ոչ* լուծանի ընդ մարմնոյն: - 719. Նմանապէս և մարմին մարդոյ առ հասարակ մեռանին և ի հող լուծանին և յայլ տարերս. և յորժամ յառնեն՝ *ոչ* ունին ի հասարակ տարրէ ընդ ինքեանս...: - 719-720. Գիտելի՛ է, զի ոմանք հերձուածօղք

մոլորեցան վասն յարութեան մեռելոց և ասացին թէ մարմինն *ո՛չ* բաղկանայ ի չորից տարերց. այլ լինի պարզ: - 720. Այլ բանն պօղոսի *ո՛չ* է այսպէս թէ մարմինն էութեամբ հոգի լինի. այլ նման հոգւոյ. զի անմահ լինի որպէս հոգի և անկարօտ կերակրոյ: - 720. Եւ այլք ոմանք ասացին թէ՝ մարմինք մարդկան *ո՛չ* լինին երկրային, այլ երկնային...: - 720. Եւ դարձեալ ոմանք հերձուածօղք ասացին թէ՝ այս մարմինս *ո՛չ* յառնէ և *ո՛չ* այս մարդ որ մեռանի. այլ փոխանակ նորա նոր մարդ յառնէ: - 720. ...նմանապէս և մերկ մարմին մեռելոյ *ո՛չ* յառնէ մերկ, այլ փառօք. որպէս ցուցանի յառաջիկայդ: - 720. Վեցերորդ, ոմանք ասացին ատոքք և կէսք ազազունք և այլք անպտուղք. այսպէս և մարմինք ընտրելոցն և *ոչ* նոյնպիսեացն ըստ չափու զանազանին: - 721. Դարձեալ որպէս հատն մերկ սերմանի և մերկ *ո՛չ* բուսանի. այլ զարդարեալ խոտով և տերևով եօթն թուով: - 721. Նոյնպէս և մարմինք մարդկան մերկ թաղին՝ այլ մերկ *ո՛չ* յառնեն. բայց գեղեցիկ յոյժ և պատուական զգեստով զարդարեալ: - 721. ...և այս բառնի ի հոգւոյն և լինի ամրութիւն և հաստատութիւն. զի զաստուած հաստատապէս ըմբռնեմք և բնաւ *ո՛չ* բաժանիմք ի նմանէ և *ոչ* մոռանամք: - 722. Երրորդ պակասութիւն տրտմութիւնն է ի հոգին. զի բազում ինչ խնդրէ և *ո՛չ* կարէ առնուլ. և բազում ինչ *ոչ* խնդրէ և լինի նմա...: - 722. ...իսկ այս ամենայն բառնի ի մարմնոյն և դնի անմահութիւն անապականութիւն և անչարչարութիւն. զի բնաւ *ո՛չ* չարչարի...: - 722. Չորրորդ պակասութիւն է՝ զի այժմ է՛ մարմին մեր թանձր և կոպիտ. այլ յայնժամ բառնի այս ի մարմնոյ և լինի անօսր և թափանցիկ. զոր *ոչ* պարիսպ կամ բանտ ըմբռնել կարիցէ: - 722. Զպայծառութիւնն՝ ի թաբօր լեառն. և Զանչարչարութիւնն ի յօրհնելն զմարմինն իւր և տալ աշակերտացն ի վերնատունն՝ անչարչարելի էր մարմինն քրիստոսի ներգործութեամբ և *ո՛չ* զօրութեամբ: - 723. Մեղաւորաց մարմինքն *ո՞չ* ունին զզարդս զայսոսիկ: - 723. Ասեմք թէ *ոչ*...: - 723. Բայց եօթն զարդքն զոր ունին սուրբքն որք են հարսունք քրիստոսի՝ *ո՛չ* ունին անսուրբքն որք են հարսունք սատանայի: - 723. Եւ երևի որպէս բլուր մեծամարմինք նոցա յաչս իւրեանց. սև և աղտեղի և չարչարելի. զի կրեն անչափ չարչարանս և ցանկան մահու և *ո՛չ* մեռանին... - 723. Եւ յայնժամ *ո՛չ* լինի մեղք. վասն որոյ և *ո՛չ* մահ...: - 724. Ամենայն մարդ յառնէ՞ ի մեռելոց թէ *ոչ:* - 724. *Ո՛չ* յարիցեն ամբարիշտք ի յարութիւնս հոգևորս. այսինքն ի մեղաց ի շնորհքն. այլ յառնեն մարմնով: - 724. Դարձեալ՝ *ո՛չ* յարիցեն ի դատաստան, այսինքն *ո՛չ* կանգնեսցին ի դատաստանի զի մեղօք կործանեալք են: - 724-725. Դարձեալ՝ *ո՛չ* գան ի դատաստան, զի մասն բարւոյ *ո՛չ* ունին որով քննիցին. այլ դատապարտին որպէս ցուցանի յառաջիկայդ: - 725. Ամե՞նայն անդամօք յառնեն թէ *ոչ:* - 725. Եւ սոքա ուղղին ի յարութեանն. զի գո՛րծ է կարօղ զօրութեանն աստուծոյ և *ո՛չ* տկար բնութեան: - 725. Եւ թէ ոք ասիցէ՝ բազում անդամք են ի մեզ լցեալ աղտեղի ապաւառով՝ և նոքա *ո՞չ* յառնեն: - 725. Եւ թէ ոք ասիցէ, բազում անդամք են կենդանականք, որպէս սիրտն լեարդն թոքն և այլքն որք ի յարութեանն *ո՛չ* են պէտք. զի *ո՛չ* է հարկ կենդանութիւն մարդկան: - 725. Ասեմք, թէպէտ այնպիսի անդամքն *ո՛չ* են պիտոյ ի յարութեանն, սակայն յառնեն վասն կատարելութեան և գեղեցկութեան... - 725. ...որպէս ստինքն զի *ո՛չ* է պէտք կաթին, այլ առնէ վասն կատարելութեան և գեղեցկութեան մարդոյն: - 725. Նա՛խ՝ զի արու և էգ անդ *ո՛չ* ճանաչին մասին անդամօք, այլ յատուկ դիմօք և բարի գործովք և փառօք և անուամբ զանազանին. որպէս դասք կուսանացն ի հայրապետացն: - 725. Երկրորդ՝ զի թէ արական մասն երևի՝ ոչ ինչ նախապատուի կամ էգն անարգի. զի մասունք անդամոց անդ *ո՛չ* է զազրալի: - 726. **Սակայն իւրաքանչիւր ոք անսխալ անդամօք իւրովք յառնէ. այլ *ո՛չ* երևի թէ սա այր է և նա կին. այն ծեր և այն տղայ. զի որպէս հրեշտակք են յերկինս:** - 726. Այլ և որպէս նախաստեղծքն ի դրախտին *ո՛չ* ամաչէին...: - 726. Իսկ մանկութիւնն թերի է զի *ո՛չ* եհաս ի կատարումն. և ծերութիւնն պակասութիւն ունի զի անցեալ է զկատարելութեամբն: - 726. Այլ համահասակ քանակաւ *ո՛չ*. զի աստ ոմն մեծ լինի և ոմն փոքր ի ջերմութենէն որ անհաւասա՛ր է ի նոսա. նոյնպէս և անդ: - 726. Իսկ զի նիւթ խաչին մնայ ըստ ոմանց՝ այս *ո՛չ* է ըստ բնութեան կարգի, այլ սքանչելեաց հարկի որպէս ցուցանի յառաջիկայդ: - 727. Զի վերին մարմինք երկինք և լուսաւորք ամենևին անապակա՛ն են. իսկ **դ** տարերք թէպէտ ըստ մասին ապականին, այլ ըստ բոլորին *ո՛չ*... - 727. Նա՛խ՝ զի ամենևին ապականացո՛ւք են. և մասն ինչ *ո՛չ* ունին անապականութեան: - 727. ...իսկ մարդիկ ի յարութեանն *ո՛չ* են կարօտ կերակրոյ զի անմա՛հ են. վասն այնորիկ նոքա *ո՛չ* յառնեն: - 727. Եւ **դ** տարերքդ իւրաքանչիւր դադարին ի տեղի իւրեանց և բնաւ *ո՛չ* փոփոխին: - 727. Հինգերորդ հալեալ մոմ *ո՛չ* ունի զառաջին կերպն այլ զգոյացութիւնն. նոյնպէս և գոյացութիւնն երկրի *ո՛չ* կորնչի. այլ պատահմունքն այլայլին. զի *ո՛չ* ճանաչի թէ այս այն է: - 728. Թօթափիլ կամ խաւարիլ լուսաւորաց *ո՛չ* է իմանալ թէ ի կամարէ՛ երկնից անկանին կամ զգոյացական տեսակն փոխեն: - 728. **Նաև վկայէ՛ մարգարէն «եղիցի երկիր նոր և երկին նոր». ապա յա՛յտ է զի *ո՛չ***

**ապականին և խաւարին**...: - 728. Եւ դարձեալ՝ ուր գիշեր *ոչ* է՝ *ոչ* են պիտոյ անդ լուսին և աստեղք: - 728. Թէպէտ *ո՛չ* ունին բանք և *ոչ* խօսք, այլ ընդ ամենայն երկիր ել բարբառ վկայութեան նոցա. զի ամենայն տեղիք և ամենայն ժամանակք մարդկան առ նոսա է՛ յայտնի: - 729. Երկրորդ՝ զի թէ մարդոյ մարմին որ է՛ բանական և կենդանի՝ ապականի մահուամբ. ապա ուրեմն և խաչն ևս ապականի զի *ո՛չ* կենդանի է և *ո՛չ* բանական: - 732. Նախ դիմակայութեամբ եթէ՝ *ո՛չ* է ըստ օրինի բնութեան անապական մնալ նմա, այլ սքանչելիք աստուածային: - 733. Զոր օրինակ *ո՛չ* էր բնութեանս անսերմ յղանալ և կուսութեամբ ծնանիլ, զոր բանն աստուած սքանչելապէս ներգործեաց: - 733. Այսպէս և այս *ո՛չ* է ըստ բնութեան կարգի. զի նոյն բանն աստուած ի սա՛ է միաւորեալ անբաժանապէս: - 733. Իսկ խաչին կենդանութիւնն քրիստոս է, և *ո՛չ* քակտի ի նմանէ. - 733. Արդ՝ եթէ ապականացո՛ւ էր սա, *ո՛չ* երկնչէին ի սմանէ դևք. որպէս և *ո՛չ* յանասնոց և յանշնչից. ապա ուրեմն անապական է խաչն: - 734. Եւ այս ո՛չ թէ լոյս միայն է. զի զլոյսն *ո՛չ* ետ մեզ նշան. այլ զխաչն փայտեղէն յորոյ վերայ զձեռն իւր տարածեաց միածին բանն: - 734. Վասն է՞ր հայր *ո՛չ* դատէ, այլ զամենայն դատաստան ետ որդւոյ ասէ: - 735. ...ընդ որում անպատշա՛ճ էր լինիլ խօսակից և զուստն *ո՛չ* գիտել. այլ պատշա՛ճ էր որդւոյ վասն մարմնով երևելոյն: - 735. Նա՛խ՝ զի տեղիք դատաստանին *ո՛չ* է յերկինս ուր մեղաւորք *ո՛չ* կարեն ելանել: - 737. Եւ *ոչ* ի դժոխս ուր արդարք *ոչ* իջանեն: - 737. Այլ և որք ի մի խնամս վայելեցին յաստուծոյ. յարև և յանձրև. և ի մի տեղիք բնակեցան և մի պիտոյիւք շատացան. և նոքա զտուօղն *ո՛չ* ճանաչեցին: - 738. Եւ դատաստան հատուցման ամենեցուն է, այլ դատաստան քննութեանն *ո՛չ*. զի ի չորս բաժանին ամենայն դատեցեալք: - 738. **Ոմանք *ո՛չ* դատին այլ դատապարտին որպէս բուն չարքն և յայտնի մեղաւորքն...: - 738-739. Ոմանք դատին և դատապարտին. որպէս միջակք որք ունին հաւատ և *ո՛չ* գործք. որպէս չար հաւատացեալք. և որք ունին գործք և *ո՛չ* հաւատ. զի աստ հատուցաւ նոցա: - 739. Ոմանք *ո՛չ* դատին և *ո՛չ* դատապարտին. որպէս բուն արդարքն և կատարեալքն...: - 739. և Ոմանք դատին այլ *ո՛չ* դատապարտին. որպէս միջակ արդարքն. որք ունին ներելի և մասնաւոր մեղս: - 739.** Զի անարժանքն զաստուածութիւնն քրիստոսի *ո՛չ* տեսանեն վասն կրկին պատճառի: - 740. Երկրորդ՝ զի *ո՛չ* ունին զլոյս շնորհացն որովք տեսանի աստուած. զի որք աստ *ո՛չ* տեսին հաւատով, և անդ *ո՛չ* տեսանեն իմացմամբ: - 740. Երկրորդ՝ տեսանեն և կսկծին. զի *ո՛չ* հաւատացին ի խաչեալն վասն մեր: - 741. Զփառս արդարոցն տեսանե՞ն մեղաւորքն թէ *ոչ:* - 741. Մինչև յօր դատաստանին տեսանեն մեղաւորք փառս արդարոց ընդհանրապէս՝ այլ *ո՛չ* մասնաւորաբար. զի տեսանիցեն զնոսա ի մեծ փառս՝ այլ *ո՛չ* ի յորպիսիս: - 741. Իսկ յայսպիսի տեսութենէս *ո՛չ* ուրախանան, այլ տրտմին...: - 741. Եւ իւրաքանչիւր ոք զգործս իւր ընթեռնու յայտնապէս և *ո՛չ* կարէ ուրանալ և մոռանալ: - 741. Իսկ դատաւորն նստեալ յաթոռ արդարութեան արդարապէս հատուցանէ ըստ գործոց. ըստ որում յիմար կուսիցն փակեցաւ դուռն և *ո՛չ* առին զխնդիրն: - 742. Երրորդ, յատեան դատաստանի **դ** խնդրին վկայք. զի մինն կարէ՛ ոք խաբել և սուտ վկայել. այլ զերկու և զերեքն *ո՛չ:* - 742. Այլ չար փոխանակ բարեաց ո՛չ երբէք հատուցանէ. *ոչ* ի կեանս յայս և *ո՛չ* ի հանդերձեալն. զի *ո՛չ* է անիրաւ. այլ արդար յամենայնի և ճշմարիտ: - 744. Այլ և աստ երբեմն հաւասարին արժանեաց և *ոչ* արժանեաց. որպէս ծագել զարև: - 746. Այլ որ ուղիղն է տեսութիւն, յետ յարութեան փոխի ժամանակն ի յաւիտեան. և այլ *ո՛չ* գտանի մասն և րոպէ և ժամ...: - 747. Երրորդ՝ կամ գործիք տանջանացն նուազին. իսկ անդ հուրն է յաւիտենական որ *ոչ* պակասի: - 750. Անդ տիւ և գիշեր ժամանակի և մասանց սորին *ո՛չ* է ...: - 750. Որպիսութեան կրիցն չափ *ո՛չ* է անտի տանջանացն. զի բոլոր աստի նեղութիւնս համեմատեալ այնմ՝ է՛ որպէս կաթիլ մի ի ծովէ և կայծ մի ի հնոցէ: - 751. *Ո՛չ* նոյնն մարմնապէս, այլ նմանն հոգէպէս. ծարաւումն, խաւարն, հրախառն կարկուտն, ժահահոտն, և այլն ըստ կարգի: -751. Զի ըստ առաջնոյն ամբարիշտքն կորուսին զաստուած և զամենայն բարի շնորհս և զփառս. և *ոչ* ունին յոյս ողորմութեանն աստուծոյ...: - 751. Զի այնպէս ծանակեալ լիցի մարմին մեղաւորին, մինչ զի հոգին գարշեսցի առնուլ զնա. և որպէս ուրուկ և որդնալից այնպէս *ո՛չ* կամեսցի ունել զնա: - 751. Բարձումն յուսոյ և ամենայն փրկութեան Նաև գոլն իսկ որում տենչան ամենայն ստեղծուածք՝ է՛ նոցա պատիժ. վասն զի խնդրեսցեն զմահ և *ո՛չ* գտանիցեն: - 751. Առաջին՝ հուր վառեալ. այնպէս, որ թէ բոլորովին ծովք ի վերայ հեղցին՝ *ո՛չ* շիջանիցի: - 752. Այլ և այրի և *ո՛չ* տայ լոյս: - 752. Վասն հինգերորդին, որք աստէն զխրատս ընդունել *ո՛չ* կամեցան և ընդ մարդկան տանջիլ *ո՛չ* արժանացան...: - 752. Վասն վեցերորդին, որք զխաւար մեղաց աստէն սիրեցին և առ լոյսն քրիստոս գալ *ո՛չ* կամեցան. վասն այնորիկ ահագին խաւարաւ անդ նսեմանան: - 752. Վասն եօթներորդին, որք զմեղս խոստովան լինիլ *ո՛չ* կամեցան զորս առնել *ո՛չ* էր պարտ...: - 752-753. Չորրորդ յորժամ անկանի՝ յայլս *ո՛չ* մտանէ: - 753. *Ո՛չ* լինի. զի որդունքն այնք *ո՛չ*

են զգայական կենդանիք. այլ հրեղէն տանջանք են զգայական մասինն: - 753. Եւ որպէս որդս այս *ո՛չ* ունի զգայարանք, նոյնպէս և հրեղէն որդունքն: - 753. Տեսանե՞ն արդարքն զմեղաւորս յայնպիսի տանջանս թէ *ոչ*: - 754. *Ո՞չ* ցաւին արդարքն ի տեսանելն զնոսա յայնպիսի տանջանս: - 754. Ո՛չ բնաւ, թէպէտ հայր տեսանէ զորդի կամ մայր զդուստր. և կամ զեղբայր և զայլս. ո՛չ միայն *ո՛չ* ցաւին, այլ ա՛յնպէս լինի հեշտալի, որպէս տեսանեմք զծկունս որ խաղան ի վտակս: - 754. *Ո՞չ* խնդրեն յաստուծոյ վասն նոցա: - 754. Մինչ ի յօրն դատաստանի աղօթեն արդարք վասն մեղաւորաց. այլ յետ այնորիկ վասն դատապարտելոցն *ո՛չ* խնդրեն ինչ. զի ընդ դէմ աստուծոյ գոլ իմանան վասն նոցա զխնդիրն: - 754. Այսպէս և քրիստոս քան զամենայն սուրբս զպարգևս ունի առատագոյնս. որում հոգին *ո՛չ* տուաւ չափով: - 755. Իսկ Երկրորդն արքայութիւն, նշանակի յազատն սառա. որ *ո՛չ* ուժգնութեամբ մարմնոյն, այլ միայն շնորհօքն աստուծոյ ծնաւ: - 756. Եւ քանզի մովսէս որ ջրային կամ ի ջրոյ հանեալ թարգմանի. թէպէտ երբեմն զօրէնս և երբեմն զտէրն նշանակէ. այլ աստ *ոչ* զօրէնս, այլ զտէրն գուշակէ՛. որ ի ջուրց մարդկայինս բնութեան ընկալեալ եղև: - 756. Իսկ Չորրորդն արքայութիւն՝ է՛ յաւիտենականն գաւառ. յորմէ ի ձեռն մեղաց առաջնոյ մարդոյն՝ տարեալք պանդխտիմք յայսմ տառապանաց գբի և ի տիղմ կաւոյ. անարգաբար դեգերեալք ի հովիտս արտասուաց. յանապատի կալով և *ո՛չ* ի ճանապարհի... - 756. Այլ զայս *ո՛չ* իմանան հասարակ կարծիք. զի արքայութիւնն երկնից մի է. այլ փառք և պսակքն են զանազանք առաւել և նուազ: - 758. Ընդէ՞ր *ոչ* ասեմք երեսնաւոր արքայութիւն զերկիր՝ և այլն: - 758. Իսկ չար՝ թէպէտ լինի ներգործութեամբ անձնիշխան կամօք, այլ բնութեամբ չար *ո՛չ* է ըստ ինքեան. զի *ո՛չ* է էութիւն այլ պակասութիւն բարւոյ. որպէս ցուցաւ ի վերոյ ի **Ե** համարն: - 758. Ասեմք առ այս, եթէ առաջին կեանքն դրախտին *ո՛չ* զայն իմանան վարդապետք զոր ունէրն ադամ...: - 758. Այլ պարզաբար զնոյն ինքն կեանք դրախտին ի յարութեանն *ո՛չ* է իմանալ: - 758. Այլ քանզի վարդապետաց մերոց և մեծաց է ասացեալ բանքն՝ *ո՛չ* ընդդիմանամք: - 759. Եւ զի *ո՛չ* է հասարակ կարծիք՝ *ո՛չ* հաստատեմք: - 759. Իբր *ո՛չ* այսպէս զոր երևի տեսանելոց եմք ասէ: - 759. Վասն է՞ր լոյս արեգականն *ո՛չ* լուսաւորէ զսուրբս: - 760. Նախ վասն անկարօտութեան. զի սուրբքն իմանալի լոյս ունին զքրիստոս. և *ո՛չ* են կարօտ զգալի լուսոյ: - 760. Երկրորդ վասն տեղւոյն. զի վերինն էմ է՛ ի բարձունս քան զարեգակն. վասն որոյ *ո՛չ* լուսաւորէ զնոսա: - 760. Զի *ո՛չ* զգալի գիշեր և *ո՛չ* իմանալի. մեղաց կամ անհաւատութեան կամ տգիտութեան գտանի անդ: - 761. Զոր ակն *ո՛չ* ետես, և ունկն *ո՛չ* լուաւ, և ի սիրտ մարդոյ *ո՛չ* անկաւ, զա՛յն է պատրաստեալ աստուած սիրելեաց իւրոց: - 761. Յաճոյ լինէր քեզ թէ լինէիր գեղեցիկ որպէս զաբիսողոմ. որում *ո՛չ* գոյր արատ ի մարմնի: - 761. Եւ թէ լինէիր կամօք փարթամ որպէս սողոմոն. որում *ո՛չ* անխայեաց զոր ինչ ցանկացաւ ի սրտի: - 761. Կամ առողջ որպէս զմովսէս. որում *ո՛չ* վատեցին աչքն և *ո՛չ* շարժեցաւ ատամն: - 761. Դարձեալ և այսոքիւք, թէ լինէիր իմաստուն որպէս զսողոմոն. որում *ո՛չ* գտաւ հանգոյն նման ի վերայ երկրի: - 761. Կամ լինէիր անհոգ որպէս ենովք և եղիա որ այնպէս անհո՛գ են, որք *ոչ* ի մահու և ո՛չ յայլ ինչ պատահմանէ երկնչին: - 762. Նախ ի տեսանելն զերեսս աստուածային որ է անճառելի ցնծութիւն. որպէս ասեն վարդապետք, այն է ճշմարիտ և միայն ուրախութիւն, և *ո՛չ* յաղագս ստեղծուածոյ, այլ ի ստեղծողին լինի. զոր իբրև ստանայցես, ո՛չ ոք բարձցէ ի քէն: - 762. Եւ այնպիսի քաղցր է տեսութիւնն աստուծոյ, մինչ զի չարքն թէ կարէին՝ յօժարէին ի դժոխս կալ և զաստուած տեսանել. քան արտաքոյ տանջանաց լինիլ և զաստուած *ո՛չ* տեսանել: - 763. Վասն մեծի սիրոյն՝ ժառանգութիւնն այն ամենեցուն մի է իւրաքանչիւր ումեք բոլորն և *ո՛չ* մասնաւորն: - 764. Երրորդ այնու՝ զի մեղքն որ յոյժ վտանգեաց զմարդիկ, եղիցի փակեալ ի դժոխս զկնի աւուրն դատաստանի. զի եղիցի ի դժոխս իբր ի տեղւոջ իւրում. զի *ո՛չ* կարասցէ մնալ. *ո՛չ* յերկինս և *ո՛չ* յերկրի. այլ իջանէ ի դժոխս ներքինս: - 764. *Ո՛չ* է իշխանութիւն ի վերայ երկրի որ համեմատեսցի նմա որ եղև. զի ո՛չ յումեքէ երկնչիցի: - 765. Ո՛չ է իշխանութիւն ի վերայ երկրի *որ* համեմատեսցի նմա *որ* եղև. զի *ո՛չ* յումեքէ երկնչիցի: - 765. Ճշմարիտ պապիւ՝ որ *ո՛չ* ումէք անխայեսցի արժանաւորի: - 765. և Երկոտասան պտուղ, զի *ո՛չ* խափանէ զնոսա ձմեռն մեղաց: - 765. Իններորդ՝ վասն պտղոյն յամրութեան. զի ասեն թէ *ո՛չ* կարէ պտղաբերել մինչ ի հարիւր ամն: - 766. Քանզի մարմինս *ո՛չ* ըմբռնեսցի կամ իւրն ծանրութեամբ կամ այլ մարմնոյ ընդդիմահարութեամբ: - 766. *Ո՛չ* ի յամիսս անցաւոր. և *ո՛չ* ի յամն մշտնջենաւոր. զի աստ մարմնապէս և անդ հոգէպէս: - 768. Որ պորփիւր օրինակէ՛ զմատանին աստուծոյ. թէ մի է և ի վերայ բազմաց բերի և ի բազումս և *ո՛չ* ի բազմաց է: - 769. *Ոչ* ունիմք վեհագոյն քան զհաւատն. տիպ աստուծոյ ճշմարտի դրոշմեալ ի մեզ ի բնէ. մեր հրահանգ և զարդ: - 769. *Ո՛չ* շփոթեալ բանն և *ո՛չ* ծախեալ մարմինն: - 770. *Ո՛չ* բանն որպէս հալածու կաղապարեալ. և կամ մարմինն որպէս բոց ի հրոյ և ծուխ անօսր լուծեալ յօդդ: - 770. *Ոչ* բաժանեալ կամ հատեալ ի

հօրէ և ի հոգւոյն. որպէս *ո՛չ* ջերմութիւն ի հրոյ կամ ի լուսոյ. կամ նկարագիր յէութենէ: - 770. Ղամպարք ի միում տան. և ուրուք շարժեցելոյ՝ ի նոցանէ լոյսն *ո՛չ* շարժի և *ոչ* բաժանի և *ո՛չ* հատանի թէ անջրպետ *ոչ* կայցէ ի միջի. և անդ *ո՛չ* է միջոց: - 770. Եւ *ոչ* օրինակս կարէ յայտնել զոր ինչ էն: - 770. Եւ թէ ի ներքուստ շաղախմունք ապականութեան, ի վերայ հաւատոյն յեցցես և *ո՛չ* անկցիս: - 770. Եւ թէ յառաջուստ զգայութեանց, զհաւատն ընդ դէմ դիցես և *ո՛չ* սխալիս: - 770. Եւ թէ յաջոյ յաջուածոց խենեշութիւն մեղկէ, վերնոյն հեշտալեաց հաւատա՛ և *ո՛չ* խաբիս: - 770. Թէ ի բերան պատերազմի յել անմահին և ի մուտ մահկանացուին. դիցես պահապան բերանոյդ. լար կարմիր շրթանցդ. այսինքն հաւատով սիրով զօրացեալ. և *ո՛չ* բաժանիլ ի քնասիրութիւն և յարծաթսիրութիւն. յառաքինասիրութիւն. և յախտասիրութիւն. յընկերսիրութիւն և յարատսիրութիւն: - 770-771. Որում *ոչ* համարիմ զանձն թէ հասո՛ւ իցեմ: - 771. Որ և *ոչ* ժամանեաց ի կատար բանիս վերոյ ասացեալ խնդրողն: - 772. Իսկ լուծումն հարցմանցս այսոցիկ, *ո՛չ* ամենևին օտարածայն աւելորդս խուզեալ. և *ո՛չ* գեղջուկ իմն աշխարհական խօսից յարմարեալ: - 772. Բովանդակեալ *ոչ* զամենայն որ ամենեցունց է գիտելի. այլ զբանս բազումս որ բազմա՛ց է պիտանի և խնդրելի: - 772. *Ո՛չ* իբր կարօտի բազմաց բաշխողի. կամ փորձողի փորձոյ սիրալի: - 773. Այլ ի պատճառս տալ իմաստից. որով *ո՛չ* յագեսցի ակն ի տեսոյ. ի գլուխ գոլոյ իմաստնոյ. մանաւանդ և ի շահ օգտի բանասէր մտաց միեղէն եղբարց: - 773. Իսկ է՛ իր ինչ ի բոլոր տեսակս մարդկային բնաւորեալ, և *ո՛չ* է բնութեամբ. որպէս այս: - 773. Առ այս ասեմք, թէպէտ է՛ ամենայն իր բնութեամբ նա՛ և հասարակ. որպէս և սևութիւն ագռաւու. այլ *ո՛չ* անդրադարձեալ. զի է՛ ինչ բնութեամբ, այլ *ո՛չ* հասարակ. որպէս կնտութիւն մարդոյ: - 774. Այսպէս յընդդիմակէն տե՛ս և զայս. զի թէպէտ հասարակա՛ց է մարդոյ դժկամակ գոլ խրատու, այլ *ո՛չ* է բնութեամբ իր: - 774. Որք տեսչութեամբն աստուծոյ՝ ի մեռելոցն զառհաւատաչեայն ընկալան յարութեան, թէ զիա՞րդ *ոչ* ունէին ի մտի զանտի կենացն ծանօթութիւն. պատմել մեզ խնդրի: - 774. Տեսանելի՛ է թէ՝ զի՞նչ արդեօք իցէ *ոչ* ունելն ի մտի որ է՛ մոռանալ. այսինքն զանցեալն *ո՛չ* յիշել. և զհանդերձեալն *ոչ* տեսանել. իսկ զներկայն *ո՛չ* գիտել: - 774. Իսկ հրեշտակական կենաց է հրաշափառապէս գիտել և *ո՛չ* մոռանալ միշտ...: - 774. Ապա բնաւորապէս ընդ դէմ գոյ երից որպիսութեանց սա՛ մեզ չորրորդ գոլով. *ոչ* ունել ինչ ի մտի. մոռանալով միշտ. *ո՛չ* գիտել և *ո՛չ* յիշել ինչ զանտի կենաց: - 775. Յիրաւի ապա ըստ այսմ օրինակի՝ որք ի մշտնջենաւորէն փոխանցին առ երազ սնոտեաց, *ոչ* ունիցին ինչ ի մտի. թէ և անդրադարձեալ աստի անդ մնասցէ յիշատակութիւն որպէս ասացաւ: - 775. Ուստի ասացաւ թէ մահու մեռցիս. *ոչ* սոսկ. այլ զկրկնակի նշանակելով մահ. այսինքն զմեռանիլն մարմնով և զպատժիլն հոգւով: - 776. Եւ յիրաւի այս. զի այն ոք որ առնէ զոր ինչ *ոչ* է պարտ, յիրաւապէս կրեսցէ զոր ինչ պա՛րտն է. զի մեղքն է առնել, իսկ պատիժն է՛ կրել: - 776. Երկրորդ, զի դժոխքն այն պատիժ բնութեանս էր և *ո՛չ* առանձին գործոց. զի հաստատեաց օր մի յորում դատելո՛ց է զամենայն ըստ պօղոսի: - 776. Երրորդ, զի թէ սատանայ որ գտա՛կն է ամենայն չարեաց՝ դեռևս *ո՛չ* տանջի յաւիտենից...: - 776. Զի մեղքն ադամայ թէպէտ սկզբնապէս առհասարակ բնութիւնս տարածեցաւ. այլ *ո՛չ* առաւել քան զայլոցն եղև. այսինքն որդւոցն նորա...: - 777. Այսպէս սատանայ է մեղադրելի իբր պատճառ և գտակ չարեաց մարդկայինս բնութեան և *ո՛չ* ադամ: - 777. Եւ *ո՛չ* այս միայն, այլ և մեղքն ադամայ նուազ ևս քան զծննդոց նորա ըստ այսմ օրինակի: - 777. ...իսկ Օրինակաւ, զի նմա *ո՛չ* գոյր օրինակ յանցաւորաց. իսկ նոքա տեսին զնա պատժեալ: - 777. ...իսկ Պարագայիւ, զի նա ակամայ և տգիտութեամբ. ուստի *ո՛չ* ունելով զգիտութիւն բարւոյ և չարի: - 777. Եւ թէ այս *ո՛չ* է գրեալ, նա՛ և *ո՛չ* այն եթէ մեղանչեաց ուրէք զամենայն կեանս իւր բաց ի միոյն. և *ո՛չ* մեղանչելն կրկին՝ ապաշխարութիւն է առաջնոյն: - 778. Իսկ ի հանդերձելումն ապա զիա՞րդ թէ բազում անգամ զղջասցին *ո՛չ* գտանեն թողութիւն ասէ գիրն: - 778. Եւ այն զի՞նչ իցէ, զի սա միշտ մի և նոյնպէս մնայ. իսկ նա՛ աստանօր ողորմի զղջացելոցն, և *ո՛չ* *ոչ* նոյնպիսոյն. իսկ անդանօր *ո՛չ* զղջացելոց ողորմի մարդկան մեղաւորաց և *ոչ* անզղջից անմարմնոց շեղելոց: - 778. Եւ այսոքիկ որք երևին ընդ դէմ միմեանց, կամ առ այլս կամ երբեմն, *ո՛չ* փոփոխումն ինչ ցուցանեն անփոփոխելոյն. առ մեզ փոփոխելոց ըստ արժանոյն գութ կամ հատուցումն. թէ աստ՝ թէ ի հանդերձեալն: - 779. Իսկ աստուած *ո՛չ* փոխեաց զխորհուրդն իւր որ էր յաւիտենական. այլ վճիռն որ հայէր ի պատիժ արժանեաց նոցա: - 779. Եւ *ո՛չ* է տարադէպ ցոյցք ականն արփիաւորի, զի ի միջօրեայ ժամու փոփոխումն մարմնոյ և ական արծակէ՛ ստուեր կամ լոյս. այլ ինքն միշտ լոյս գոլով *ո՛չ* փոփոխի: - 779. Իսկ իւրաքանչիւրոց հատուցումն՝ այսինքն բարեացն բարիս և չարացն չարիս, է՛ այս գործ արդարութեան. և այսոքիկ առ մե՛զ փոփոխմունք. և *ո՛չ* անեղ բնութեանն: - 779. Եւ յայսմանէ բացայայտի այս, զի աստուած միշտ

անփոփոխ է. իսկ ժամանակն միշտ փոփոխական է. իսկ մեք երբեմն փոփոխական և երբեմն *ո՛չ:* - 779. Իսկ այլ բազում ժամք ի դատարկութեան՝ *ո՛չ* է հաճոյ նմա: - 779-780. Երկրորդ, ապաշխարութեան ժամանակն ընդունելի է. իսկ որ քան մարդ է ի մեղս՝ *ո՛չ* է հաճոյ աստուծոյ: - 780. Եւ զի ժամանա՛կ է լինելոյ և ժամանակ քակելոյ, յայլում ժամու և *ո՛չ* ի նոյնն սերմանի և հնձի: - 780. Այլ թէ յետ մահու *ո՛չ* հանդիպի թողութեան, որպէս և *ո՛չ* դևք: - 780. Այլ զանազանի. զի դևք ամենևին *ո՛չ* ունին զղջումն և *ո՛չ* կարեն. վասն որոյ *ո՛չ* հանդիպին թողութեան. իսկ մեղաւորն ունի զղջումն այլ *ո՛չ* կարէ վարձաւորիլ: - 780. Նախ՝ զի *ո՛չ* է բոլոր մարդ. այլ կիսամասնեայ: - 780. Երկրորդ՝ զի *ո՛չ* ունին զգործս զղջման: - 780. Իսկ դժոխայինքն թէ և զղջան կամ խոստովանին, արտաքոյ սոցա՛ է. վասն որոյ *ո՛չ* հանդիպին թողութեան...: - 780. Այլ *ո՛չ* զամենայն պակասականքն կրեաց քրիստոս. որ է՛ հիւանդութիւն մարմնոյ և ապականութիւն. կամ մեղք հոգւոյ և տգիտութիւն: - 781. Եւ այլևս յարմար տեղւոյս այսպէս իմանի. զի սուրբ հարքն առաջինք պակաս ունէին զչարչարանս. վասն որոյ *ո՛չ* կարէին փրկիլ. իսկ քրիստոս եղեալ ըստ մարմնոյ որդի նոցա, զպակասութիւն հարցն չարչարանաց յիւրումն մարմնի էլից: - 781. Թերևս հետևելով *ո՛չ* ինքեան, այլ ուղղակին խորհրդոց հաւանականք գոն: - 782. Եւ յայտ ի դիւա՛ցն է. որ *ո՛չ* կորուսին զանմահութիւն և զանձնիշխանութիւն և զայլս: - 782. Ապա զի՞նչ է այն՝ որ զշնորհս աւազանին ոչ ուրացութիւն և ո՛չ այլ ինչ նոյնպիսի մերկացուցանել կարէ: - 782. Եւ յայտ յուրացողացն է. զի ի դարձին վերստին *ո՛չ* մկրտեմք: - 782. Նմանապէս և *ո՛չ* զքահանայութիւն կարէ քակել ի յանարժանէն: - 782. Ամենայն իր բնութեան՝ գոյացակա՛ն է նորին. և ամենայն պարգևք այսինքն շնորհք պատահական է ի զարդ նմին. յաղագս որոյ *ո՛չ* բառնին գոյացականքն. որպէս անմահութիւն դիւի և բան մարդոյ: - 782. Դարձեալ, գոյականքն *ո՛չ* ունին շաղկապ գոլոյ. այլ շնորհականքն զանմեղութիւն: - 782. Իսկ առ լուծումն խնդրոյս թէ վասն է՞ր արդեօք առ նորս շնորհ՝ որպէս աւազանին և կարգին *ո՛չ* բառնի ընդ բառնիլ շաղկապին. իսկ առ հնովն բարձաւ. որպէս յա՛յտ է ի վերոյ ասիցդ ադամայ և յայլոցն: - 782. Ասեմք նա՛խ՝ եթէ ամենայն շնորհ զինչ և իցէ տուեալ բնութեան, *ո՛չ* քակտի ի նմանէ. թէպէտ ծածկի երբեմն վասն մեղաց: - 782. Դարձեալ, ամենայն շնորհք առ ո ոք և իցէ՝ բառնի վասն մեղաց. *ո՛չ* ըստ ունակութեան՝ այլ ըստ ներգործութեան կամ նշանակութեան: - 782. Զորօրինակ, ժանգ հայելւոյ *ո՛չ* զընդունակութիւնն բառնայ, այլ զտեսութիւնն. և յետ սրբելոյն, նոյն ծածկեալն երևի ի նմա: - 782. Որպէս ծառ մերկացեալ ի պտղոյ՝ այլ *ո՛չ* ըստ ունակութեանց. և նովին ունակութեամբ վերստին պտղաբերի ինքն: - 782-783. Իսկ շնորհք նորոյս ի ձեռն քրիստոսի տուեալ՝ *ո՛չ* է փոփոխական. զի վերստին նորոգման է շնորհք և անապականութեան: - 783. Եւ այլքն *ո՛չ* են կնիք. այլ զարդ պակասութեանց նորին. վասն որոյ և փոփոխականք են: - 783. Իսկ որք զմի քանքար հաւատոյ կամ զմկրտութեանն շնորհի ի բաց կորուսանեն, *ո՛չ* զկնիքն խորհրդապէս, այլ զարժանն վարձու իրողապէս: - 783. Ա՛րդ՝ եթէ ի կատարածի ի հարկէ սքանչելեացն հաւատալ վարձատրելի՞ է թէ *ո՛չ:* - 783. Եթէ վարձատրելի է ասիցէ ոք, ապա զիա՞րդ որք ի հարկէ հաւատացին *ո՛չ* վարձատրեցան. որպէս դևքն ի հալածիլ. և որդիքն սկեւեայ. և սիմոն կախարդն. և այլք նման սոցին: - 783. Իսկ եթէ *ո՛չ* են վարձատրելի, ապա զիա՞րդ վասն նոցա անհնազանդութեանն անհնազանդ կոչի և ինքն որդի հօր: - 784. Գիտելի՛ է, զի դևք *ո՛չ* ունին հաւատս իսկապէս. և յա՛յտ է ի բազմաց: - 784. Երկրորդ, զի անկումն դիւաց մահ է նոցա. և յետ մահու *ո՛չ* է հաւատ. ուրեմն և *ո՛չ* ի դևս: - 784. Երրորդ, զի հաւատն է լուսաւորութիւն մտաց հեղեալ յաստուծոյ ի ճանաչել զհոգևոր բարիսն. իսկ դևք *ո՛չ* ունին զլոյս մտաց և *ո՛չ* զհեղումն շնորհաց. վասն որոյ *ո՛չ* ճանաչեն զհոգևոր բարիս: - 784. Չորրորդ, հաւատն է՛ աստուածային առաքինութիւն. իսկ դևք զի են խստացեալ ի չար՝ *ո՛չ* ունին զղջումն որ է բարոյական. ապա և ոչ հաւատ որ է վերնագոյն և բարի կամաց խոկումն առ աստուած: - 784. Չորրորդ, հաւատն է՛ աստուածային առաքինութիւն. իսկ դևք զի են խստացեալ ի չար՝ ո՛չ ունին զղջումն որ է բարոյական. ապա և *ո՛չ* հաւատ որ է վերնագոյն և բարի կամաց խոկումն առ աստուած: - 784. Իսկ դևք *ո՛չ* տեսանեն զաստուած և են թշուառելիք: - 784. Եօթներորդ, հաւատովք արդարանայ ոք. ըստ այնմ «հաւատաց աբրահամ յաստուած և համարեցաւ նմա յարդարութիւն». այլ դևն *ո՛չ* կարէ արդարանալ: - 784. Տասներորդ, հաւատն է աստիճանք հաւատոյն. այլ դևն *ո՛չ* հաւատայ նոցա: - 784. Յա՛յտ ուրեմն է յասացելոցս, զի դևք *ո՛չ* ունին հաւատս վարձաւոր. այլ ունին գիտութիւն նրբահայեաց որով սարսին յառաջ քան զտանջանս: - 784. Երկրորդ հմտութեամբ ժամանակին. որով իմանան զներկայս և զապառնիս և յառաջեն քան զգործս. որով աղաչէին, «գիտեմք զքեզ». *ո՛չ* հաւատոյն գիտութեամբ. այլ հմտութեամբ տանջանաց...: - 784. Եւ *ո՛չ* այս միայն, այլ և ի կոչմանն զօրութենէ առ որդւովքն սկևեայ հալածեին նոքա: - 784. Զի մեծ է յառաջարկութեան եզրակացութիւն. և *ո՛չ* բայիւք, այլ՝ մակբայիւք է

փրկութիւն: - 785. Արդ ծունր կենդանեաց վարձաւո՛ր է. և մեռելոցն *ո՛չ:* - 785. Իսկ զի և արուի թէպէտ *ո՛չ* նոյն պիտոյիւք. սակայն ո՛չ ընդ վայր կազմեցաւ. ի լրումն **բժ**ան դրանց անդամոց. ի ներքս մուծանելոյ և արտաքս հոսելոյ զպակաս և զաւելորդս ինչ. անվնաս կելով կենդանւոյն: - 786. Իսկ զի և արուի թէպէտ ո՛չ նոյն պիտոյիւք. սակայն *ո՛չ* ընդ վայր կազմեցաւ...: - 786. Զի թէ *ոչ* գոյր ըստինք առն, ապա և *ո՛չ* կնոջն առեալ ի նմանէ: - 786. Եւ զանազանեալքն ի գիրս անդամոց, զանազանին և *ո՛չ* նմանին գոյացական տեսակօք: - 786. Զոր և բիբն անւանեալ պահապան, զառաջինն *ո՛չ* զգուշացեալ, լինի դարձեալ ծեռնտու, զաւելորդսն արտաքս մերժելով. որ անուանի արտասուք. այսինքն արտաքսեալ: - 787. Ընդ այսմ և որ ի ձէնջ արկեալ եղև. թէ վասն է՞ր է զի երկու բացասութիւն լինի մի ստորասութիւն. իսկ բ ստորասութիւն *ո՛չ* կազմէ մի բացասութիւն: - 787. Իբր ասութիւն է այլ *ո՛չ* հաւանութիւն: - 787. Եւ ևս. բացասութիւն ինքն ինքեան քակտիչ բացատրի կրկնելովն. իսկ ստորասութիւն *ո՛չ:* - 787. Դարձեալ՝ զորօրինակ **բ** անկատարք լինին մի կատարեալ. իսկ կատարեալն թէ և կրկնեսցի՝ *ո՛չ* է անկատար. այսպէս և ասացեալքդ: - 787. Յորժամ պարուկաւ այսինքն հացմամբ ասի. որպէս ասելն, *ո՞չ* քեզ ասացի զայդ. ահա՛ եղև ստորասութիւն. իբր թէ՝ ասացի՛: - 787. *Ո՛չ* ըստ բաւական բանի առեալ զլուծումն. այլ ըստ կարի տկարութեան արտայայտումն. մանաւանդ հարկեալ ի սիրոյ քումդ եղբայրական խնդրոյ: - 788. Այլ ինչ *ո՛չ* օգնել ի գերութիւն վարելոց. որպէս և յայնմ աւուր ի կորուստ մատնելոց: - 789. Այլ և աստ ապաշաւելն ոչ ինչ օգտեալ. որպէս և անդ *ո՛չ* լսողաց բերանով հաշեալք. որ և *ո՛չ* գոյր անդրէն դառնալ. և *ո՛չ* կարի յօժարացն շահավաճառ եղեալ. *ո՛չ* գիւտ և *ո՛չ* ողորմ. հանգոյն յիմարացն օրիորդաց: - 789. Զի ունօղքն բարեկեցիկ կենօք, և *ոչ* նոյնպիսիքն սովամահ տուայտեալք: - 789. Եւ զայս *ո՛չ* շաբաթու և աւուրց սպառեալ. այլ ամսոց երից սորին յերկարեալ. և գործելոց վրէժ *ո՛չ* կշիռ հատուցեալ: - 789

**ՈՉ ԱՅԼ ԻՆՉ** - Եւ զի ո՛չ է արարած՝ *ո՛չ այլ ինչ* է՝ քան թէ աստուած որպէս ասացաք: - 52. ...հեղումն *ո՛չ այլ ինչ* է, բայց թէ առաքումն: - 60. Զի ո՛չ մարմին է. և ո՛չ հոգի. և ո՛չ միտ. և *ո՛չ այլ ինչ* զոր մեք գիտեմք կամ իմանամք: - 122. Չորրորդ՝ զի թէ պատւական նիւթով երևէին որպէս արեգակն՝ հուր՝ ոսկի՝ և ակն. գիտէաք թէ զնոյն բնութիւն ունին, և *ո՛չ այլ ինչ* գերիվերոյ: - 132. Ո՛չ երկանուն է և *ո՛չ այլ ինչ*. այլ իրինոս ասէ՛ զպատճառն և դժուա՛ր է հասկանալոյ: - 300. Կինն ղովտայ վասն է՞ր յաղ և *ոչ յայլ ինչ* նիւթ փոխեցաւ: - 303. Ո՛չ կարեն դւք զտարերքս փոփոխել. և ո՛չ հուր և ո՛չ շանթս և *ո՛չ այլ ինչ* ի տարերացս առնել որպէս կարծեն ոմանք: - 321. Երրորդ՝ զի մարմնոյն յիշեցուցէ զնոյն ունել բնութիւն, և *ո՛չ այլ ինչ* աւելի: - 323. Չորրորդ՝ զէնն. զի լիցի սուր երկաթոյ և *ո՛չ այլ ինչ* գործի. զի թէ լիցի երկաթ և ոչ սուր, և թէ սուր և ոչ երկաթ, ո՛չ է պիտոյ: - 365. Այլ զքրիստոս ո՛չ պատարագեն. և *ո՛չ այլ ինչ* ի խորհրդոց եօթանց կատարեն: - 370. Երկրորդ՝ զի միայն ժամու և աղօթից էր պիտանի խորանն այն, և *ո՛չ այլ ինչ* իրաց: - 379. Յետ որոյ ծնեալ ի նոյն կուսական արգանդէ և *ո՛չ յայլ ինչ* մասնէ: - 469. Այլ և ո՛չ յառաջ քան զյղանալն օծաւ. զի սրբիլ և առաքիլ և իջանել յերկնից *ո՛չ այլ ինչ* է, եթէ ոչ մարմին լինիլ և մարմնով երևիլ բանին: - 475. Եւ յետ այսորիկ *ո՛չ այլ ինչ* մնայ. այլ վերացումն հոգւոյն յերկինս: - 519. Եւ ոչ մի ինչ ունի յոյս փրկութեան. ո՛չ օգնական. ո՛չ բարեխօս. ո՛չ ողորմութիւն. և *ո՛չ այլ ինչ* այնպիսի որ արաժանաւորացն է: - 669. Ոմանք ասեն թէ՝ յարութիւն *ո՛չ այլ ինչ* է՝ քան թէ վերստին կենդանանալ: - 716. Վասն է՞ր մազաղաթ ասէ և *ո՛չ այլ ինչ:* - 729. Կամ լինէիր անհոգ որպէս ենովք և եղիա որ այնպէս անհո՛գ են, որք ոչ ի մահու և *ո՛չ յայլ ինչ* պատահմանէ երկնչին: - 762. Ապա զի՞նչ է այն՝ որ զշնորհս աւազանին ոչ ուրացութիւն և *ո՛չ այլ ինչ* նոյնպիսի մերկացուցանել կարէ: - 782. *Ոչ այլ ինչ* գոլով սիւն աշխարհի զգալապէս, բայց միայն բազմութիւն լերանց և քարանց: - 788

**Ո՞Չ ԱՊԱՔԷՆ +** *Ո՞չ ապաքէն* ասեմք զքրիստոս՝ աստուած և որդի աստուծոյ. զի աստուածն ուղղական է՝ և որդի աստուծոյ հոլովական: - 92. *Ո՞չ ապաքէն* ի վեր ասեմք զմարդն անուն կենդանի մարդոյն՝ քան թէ գրեցելոյն: - 95. ...*ո՞չ ապաքէն* բնութիւն են սոքա այլևայլ. և ժողովեալ գոյացուցանեն զմի անհատն պետրոս անշփոթ միութեամբ: - 176. *Ո՞չ ապաքէն* առաքեալքն եդին զչորսս զայս. խորշիլ յարենէ և ի զոհից ի հեղձուցելոյ և ի պոռնկութենէ: - 552. *Ո՞չ ապաքէն* մովսէս ի հինն որոշեաց զսուրբս և անսուրբս...: - 552

**ՈՉ ԲՆԱՒ +** Ասեմք թէ *ո՛չ բնաւ:* - 257. Իսկ առ աստուած ներգործութեամբ. զօրութեամբ և սոսկ մտածմունք *ո՛չ բնաւ:* - 164. *Ոչ բնաւ:* - 169. *Ո՛չ բնաւ*, թէպէտ հայր տեսանէ զորդի կամ մայր զդուստր. և կամ զեղբայր և զայլս. ո՛չ միայն ո՛չ ցաւին, այլ ա՛յնպէս լինի հեշտալի, որպէս տեսանեմք զձկունս որ խաղան ի վտակս: - 754

**ՈՉ ԳՈՅ +** Ապա ուրեմն յա՛յտ է՝ զի բանն զիրն ո՛չ կարէ ճշմարտել. այլ իրն զբանն ճշմարտէ. յորժամ գոյ կամ *ո՛չ գոյ.* որպէս ասէ ի հարկէ՛ գոլ զէակն յորժամ է՛. և ո՛չ գոլ յորժամ ո՛չ է: - 9. Զի եթէ զոյգ և հաւասար, *ո՛չ գոյ* առ նոսա կատարեալ բղխօղ. զի երկոքինն ի մի բղխողի տեղի են: - 63. Նախ՝ զի յընդդիմաբաժանեալ տեսակս սեռի՝ *ո՛չ գոյ* առաջին և վերջին. որպէս բաժանի կենդանին ի բանականն և յանբանն. և ո՛չ է ասել թէ՝ բանականն յառաջ է քան զանբանն. այլ զոյգ և համայնք են: - 87. Երկրորդ՝ ի հոմանունսն *ո՛չ գոյ* առաջին և վերջին: - 88. Եւ զայս եթէ բաժանմամբ, ո՛չ է առանձնապէս բանն քրիստոս. զի *ո՛չ գոյ* մեծագոյն օծանօղ նմա. որ և ո՛չ առանց մարմնոյ փրկեաց: - 94. Զի է՛ մի՝ որ սկիզբն է թըւոյ. և այսպէս մի ո՛չ ասի աստուծոյ. զի այս քանա՛կ է. և պատահումն *ո՛չ գոյ* յաստուած: - 110. Երկրորդ՝ ոչէ ասի գերագոյն էն և գոյն. որպէս ի յէիցս ո՛չէ և *ո՛չ գոյ*. այլ գերագոյն է և գերագոյն ոչէ: - 111. Իսկ չար առնել բարեացն՝ է գործ անիրաւութեան, և *ո՛չ գոյ* յաստուած: - 158. Իսկ նախախնամութիւնն առ աստուած գոյացական է և միշտ. զի պատահումն *ո՛չ գոյ* յաստուած: - 164. Ապա ուրեմն յա՛յտ է ի բաժանման է թէ ի յաստուած *ո՛չ գոյ* իր ինչ զօրութեամբ. այլ բովանդակն ներգործութեամբ որպէս ցուցաւ: - 169. Եւ զի յաստուած *ո՛չ գոյ* առաւել և նուազ. վասն որոյ միայն գոյացութիւն է և ո՛չ ունի պատահումն: - 171. Յորժամ պատահումն *ոչ գոյ* յաստուած որպէս ասացեր, զԺ ստորոգութիւնս որպէս ուղղեսցուք առ նա: - 171. Եւ գոյացութիւն ասեմ, որով տարորոշի ընդդէմ *ոչ գոյին*. և որակութեամբ բացորոշի յանմարմին էութեանց. ուստի բաղկանայ մարմին գոյացութեամբ և որակութեամբ: - 175. Զի թէ *ոչ գոյ*, ապա անուր և անե՛րբ է աշխարհս. և լինի յաւէտակից աստուծոյ: - 180. Իսկ կէսն, զի կիսկատար և պակա՛ս են քան զաստուած այնու, զի եղակա՛նք են և *յոչ գոյից* գոյացեալք որպէս ասացաք: - 344. Ապաւառն *ո՛չ գոյ* ի ճշմարտութիւնն որպէս յօրինակն: - 383. Իսկ բարեաց չար առնել՝ անիրաւութիւն է. որ *ո՛չ գոյ* բնաւ առ աստուած. ո՛չ ի կեանս յայս և ո՛չ ի հանդերձելումն: - 408. Եւ քրիստոսի վախճան *ո՛չ գոյ* ասէ հրեշտակն: - 441. ...զի յերկինս ո՛չ կարօտանան ողորմութեան. զի անդ *ո՛չ գոյ* ողորմելի: - 459. Երրորդ՝ որպէս բաժանեալ ի միմեանց՝ *ո՛չ գոյ* մարդ. այլ մեռեալ մարմին կամ մերկ հոգի: - 477. Զի որպէս *ո՛չ գոյ* սկիզբն աստուածութեան նորա, այսպէս և ոչ կատարումն մարդկութեան և աստուածութեան նորա: - 478. Չորեքտասաներորդ, զի ցուցցէ թէ յայսմ հետէ արքն միա՛յն ունին իշխանութիւն մերձենալ առ ի պատարագել. և *ո՛չ գոյ* համարձակութիւն կանանց յայս գործ: - 518. Ութերորդ՝ զի ամենայն տեսակք ախտիցն ի՛ր մի երևեցուցանեն մեզ. որպէս գողութիւն զինչս, և պոռնկութիւն զհեշտութիւն. իսկ հպարտութեանն *ո՛չ գոյ* ամենևին ակնկալութիւն: - 562. **Եւ յայսցանէ յայտէ, զի յետ յարութեանն ի վերինն գաւառ *ոչ գոյ* յոյս. զի է՛ անդ երանութիւն, որ է ստացումն ամենայն բարեաց. բոլորն համանգամայն և կատարեալ. և ոչ ինչ է ապառնի յոր յուսացեալ լինի**: - 574. ...քան թէ բառնալ զխոստովանութիւնն որ հարկաւոր է. առանց որոյ *ո՛չ գոյ* ներգործական մեղացն թողութիւն գտանել: - 604. Եւ զի *ո՛չ գոյ* ժամանակ, վասն որոյ և ո՛չ ծնունդ: - 662. Քսանևէ, զի թէ ամենայն ոք առնու այժմ զվարձս կամ զտանջանս, ապա *ո՛չ գոյ* յարութիւն...: - 694. Ապա ուրեմն *ո՛չ գոյ* քաւարան հրոյ: - 699. ...իսկ անդ *ո՛չ գոյ* այս ամենայն...: - 700. ...ապա ուրեմն դժոխքն է անտի պատիժ որ է յաւիտենական և անզերծանելի. և *ո՛չ գոյ* քաւարան: - 700. Ապա ուրեմն *ո՛չ գոյ* քաւարան. և ո՛չ հուր ժամանակեայ տանջիչ: - 700. ...ապա ուրեմն *ո՛չ գոյ* հնար զերծանելոյ անտի: - 700. Եւ զի *ո՛չ գոյ* ողորմութիւն անդ՝ յա՛յտ է ի յիմար կուսանացն. և ո՛չ զերծումն ի տանջանաց... - 700. Եւ զի *ո՛չ գոյ* հնար՝ ասաց աբրահամ առ մեծատունն...: - 700. Ապա ուրեմն *ո՛չ գոյ* քաւարան հրոյ: - 700. Այլ և թէ գոյ քաւարան՝ *ո՛չ գոյ* դատաստան...: - 700. Այլ թէ *ոչ գոյ* դատաստան, նաև ոչ յարութիւն մարմնոյ. և ոչ հատուցումն գործոյ. ապա և ո՛չ գալուստն քրիստոսի որպէս ասէ սուրբն կիւրեղ: - 700. Դարձեալ ասեմք, եթէ ի հուրն համատարած ամենայնքն անցանելոց եմք ի կատարածի. այլ ո՛չ ի հուր քաւարանի. զի *ո՛չ գոյ* քաւարան: - 701. Տեսէք եղբարք զսրբոց վարդապետաց բանսն զի *ո՛չ գոյ* անդ քաւարան հրոյ: - 703. Ա՛րդ՝ որպէս հրեշտակք ի *յոչ գոյից* գոյացան և են անապականք և անմահք ի կամքն աստուծոյ: - 733. Նա՛խ՝ զի ի վերին գաւառս ուստի էին դևք՝ *ո՛չ գոյ* հաւատ. այլ դէմ յանդիման տեսութիւն: - 784. Վեցերորդ, հաւատովն փրկի ոք. ըստ այնմ «հաւատք քո կեցուցին զքեզ». այլ արդ դիւաց *ո՛չ գոյ* փրկութիւն: - 784

**ՈՉԳՈՅՈՒԹԻՒՆ** - Զի ապականութիւնն տանի *յոչգոյութիւն*. իսկ մահն առաջնորդէ՛ ի կեանս: - 497. Զի աճումն զգգայութիւնն զարգացուցանէ. իսկ ապականութիւնն ընդ դէմ նմին զգոյն ի նուազութիւն և *յոչգոյութիւն* փոփոխէ: - 501

**ՈՉ ԵՐԲԷՔ +** Նախ՝ պարզ ոչ էն. որ է ոչ ուրեք և *ոչ երբեք*. որ ո՛չէր և ո՛չէ և ո՛չ լինի. որպէս ոչ ինչն: - 111. Չորրորդ՝ ասի անեղ՝ որպէս ոչ ուրեք և *ո՛չ երբեքն*. այսինքն է ոչինչն. սա կարօ՛տ է ամենևին

սկզբան և կատարման: - 113. *Ո՛չ երբեք:* - 147. Եւ զայսպիսի զօրութիւնս *ո՛չ երբէք* ասեմք ի վերայ աստուծոյ...: - 168. Զի՞նչ է որ ասեն փիլիսոփայք թէ յոչ ուրեքէն *յոչ երբեքէն* ոչինչ լինի: - 173. Նախ՝ զի ասեմք եթէ աշխարհ յառաջ քան զլինիլն իւր գոյր ի նախագաղափար տեսութիւնն աստուծոյ. ապա ուրեմն ո՛չ է յոչ ուրեքէ *յոչ երբեքէ:* - 173. Ապա ուրեմն *ո՛չ երբէք* մեծագոյն երևի աստղ՝ յորժամ է ի միջին կէտն՝ քան յորժամ է յարևելս կամ յարևմուտս: - 183. Իսկ այլք ասեն թէ՝ վասն առաւել բարձրութեանն՝ լոյս արեգականն *ո՛չ երբէք* հեռանայ ի նմանէ ...: - 222. Զի տնկական հոգին յօժարի՛ գոլ. և զգայականն բարեպէս գոլ. և բանականն ևս բարեպէս գոլ. զի *ո՛չ երբէք* հանգչի, մինչև միաւորեսցի ընդ ևս բարեգունին: - 249. Եւ առաւօ՛տ է օր դատաստանին. զի միշտ առաւօ՛տ է և *ո՛չ երբէք* փոխէ զնա երեկոյ: - 692. **Այլ չար փոխանակ բարեաց *ո՛չ երբէք* հատուցանէ. ոչ ի կեանս յայս և ո՛չ ի հանդերձեալն. զի ո՛չ է անիրաւ. այլ արդար յամենայնի և ճշմարիտ**: - 744. Չորրորդ՝ կամ տանջօղն դադարի. իսկ անդ հրամանն աստուծոյ է տանջօղ որ *ո՛չ երբէք* դադարի: - 750. Այլ զկնի դատաստանին՝ բարիքն թէպէտ տեսցեն զչարսն ի տանջանս, բայց չարքն *ո՛չ երբէք* այնուհետև տեսցեն զբարիսն որպէս ցուցաւ: - 754. Եւ երկոտասան պտուղ յերկոտասան ամիսս, զի *ո՛չ երբէք* նուազի անմահական պտուղն փայտին կենաց: - 768. Զի *ո՛չ երբէք* անկար և անգութ և անիրաւ ասել զնա ցուցանի բնաւ ուրէք...: - 778

**ՈՉ ԵՒՍ +** Զի որպէս այժմ կարեմք ասել ճշմարտապէս թէ հոգին սուրբ ելանէ ի հօրէ. և վասն ապառնւոյն կարեմք ասել թէ հոգին սուրբ ո՛չ ելանէ յորդւոյ. մինչ այլ *ո՛չ ևս* ելանէ. և ո՛չ այնպէս էառ զգոյացութիւն և զճշմարտութիւն իւր՝ զի *ո՛չ ևս* երբէք առցէ: - 65. Չորրորդ՝ զի գործ արարչութեանն մի՛ անգամ է և *ո՛չ ևս*...: - 158. Նա՛խ՝ ի տեսութենէն, զի *ո՛չ ևս* յաւել տեսանել զերեսս աստուծոյ: - 279. Իսկ մարգարէութիւնն լռեաց, զի *ո՛չ ևս* երևի բան մի յիշատակ շնորհաց նորա: - 279. Վեցերորդ՝ *ո՛չ ևս* համարձակութեամբ կալ առաջի աստուծոյ: - 280. Տե՛ս, զի յայտնապէս ցուցանէ սուրբն, զի թէ պահպանութեամբ կացեալ էին ի դրախտին, *ո՛չ ևս* ամուսնութեամբ լինէր աճումն: - 280. Եւ եերորդ՝ *ո՛չ ևս* թզենեաւ՝ այսինքն դառն վարուք ստուերանալ. զի տերև թզենւոյն դա՛ռն է և փշոտ ըստ մեղացն առակի: - 281. Եւ անդանօր լինի անմահ և անապական ծնունդ և որդիք յարութեան. զի մեռանիլ *ո՛չ ևս* կարեն աստ. վասն զի յանմահ զօրութենէն աստուծոյ ծնանիմք, և յանապական տարրեղէն նիւթոց. վասն որոյ անմահ և անապական կայանան: - 308. Նաև *ո՛չ ևս* գային զի տկարացեալ էր յախտիցն արուեստ նոցա: - 323. Եւ յետ հիւրկանեայ *ո՛չ ևս* ի քահանայից ազգէն կացին օծեալքն առաջնորդք. այլ աննշանք ոմանք ամսօրեայք և տարևորք: - 449. Եւ տե՛ս, զի բնութեամբ միաւորեցաւ՝ իմանի քրիստոս. յայտ է զի յորոշելն ըստ ոմանց՝ *ո՛չ ևս* մնայ քրիստոս: - 474. Երկրորդ՝ է՛ յարութիւն զի յառնէ ոք միանգամ և այլ *ո՛չ ևս* մեռանի. և յարութիւնս այս կատարեալ է: - 716. Երրորդ՝ ժամանակ կենցաղոյս մինչև ի մահ, է՛ ընդունելութեան աստուծոյ. ըստ որում բազմեալ է յաթոռ շնորհաց ըստ առաքելոյ. իսկ յետ այնորիկ *ո՛չ ևս*. զի փոխի յաթոռ դատաստանաց ըստ աւետարանին: - 780

**ՈՉԷ +** Նախ՝ պարզ *ոչ էն*. որ է ոչ ուրեք և ոչ երբեք. որ *ո՛չէր* և *ո՛չէ* և ո՛չ լինի. որպէս ոչ ինչն: - 111. Երկրորդ՝ *ոչէ* ասի գերագոյն էն և գոյն. որպէս ի յէիցս *ո՛չէ* և ո՛չ գոյ. այլ գերագոյն է և գերագոյն *ոչէ:* - 111. Երրորդ՝ ասի *ոչէ*՝ նիւթն անորակ. որ ո՛չ ունի ձև և ո՛չ ունի տեսակ և ո՛չ որակ: - 111. Չորրորդ՝ ասին *ոչէ*՝ և ընդդիմատեսակքն. որպէս անմարմին. անկենդան. և անշունչ: - 111. Հինգերորդ՝ *ոչէ* ասին նիւթականքն որ ի լինելութեան և յապականութեան են. զի երբեմն *ո՛չ էին*, և յետոյ ո՛չ լինելոց են: - 111. Վեցերորդ՝ *ոչէ* ասին և բացարձակքն որ ի հանդերձեալն. զի դեռևս ո՛չ են. այլ՝ լինելոց են միշտ: - 111. Եօթներորդ՝ *ոչէ* ասի չարն. զի պակասութիւն է բարւոյ և արտաքոյ բնութեան: - 111. Եւ գիտելի է, զի որքան եղանակաւ ասի *ոչ էն*, նոյնքանաբար և էն. զի ընդ դէմ միմեա՛նց են: - 111. Եւ այս *ո՛չէ* ուղիղ: - 112. Իսկ տարերքն *ո՛չեն* պարզ. և ո՛չ երկրպագելի. և ո՛չ անապական. և ո՛չ անփոփոխ: - 112. Ա՛րդ՝ *ո՛չէ* ի յաստուած անձնաւոր էութիւն. որպէս Երրորդական անձինքն. և ո՛չ բաժանեալ ի նմանէ. որպէս հրեշտակաց դասքն. և ո՛չ որպէս սոսկ մտածութիւն ի տեսութիւնն աստուծոյ: - 112. Զի առ աստուած՝ *ո՛չէ* սոսկ տեսութիւն արտաքոյ. այլ յինքն տեսանելով զյարացոյցն. և զմեզ ի յարացոյցն մեր իբր լինիլ մեզ նախ ի յաստուած, և ապա ի յէութեան մերում. և ո՛չ որպէս փոփոխումն ինչ ի բարի կամացն: - 112. Ո՞րպէս անեղ է աստուած, և անեղ ասեմք *զոչէսն:* - 113. Երկրորդ՝ ասի անեղ այն՝ որ *ո՛չէ* եղեալ ի կատարումն. զի ունի սկիզբն՝ և կարօ՛տ է կատարման: - 113. Նոյնպէս որք ուրանան և ասեն, *ո՛չէ* աստուած քրիստոս. *ո՛չէ* հայր. *ո՛չէ* որդի: - 124. Երրորդ ասի անեղ այն՝ որ ի յումե՛ք է, և ի յումեք *ո՛չէ*. որպէս հրեշտակք յաւիտենի եղեալ, և ի ժամանակի անեղ. սա կարօտ և անկարօտ երկոցունց. այսինքն սկզբան և կատարման: - 113. Թէպէտ առ մեզ տեսանի անսկիզբն յառաջին կողմն, և անվախճանն ի վերջինն. այլ ի նա *ո՛չէ* առաջին և վերջին. զի պա՛րզ և միեղէ՛ն է: - 115. Դարձեալ՝ միտք

մեր այժմ ի ներքոյ ժամանակի՛ է. և բ մասն ժամանակին *ո՛չէ*. այսինքն անցեալն կորուսեալ է, և ապագայն *ո՛չէ* է: - 117. Վասն է՞ր է զի աստուած զանգործս և *զոչէսն* տեսանէ. իսկ մեք զեղեալն և զգործեալն: - 118. Իսկ անեղն ի **բ** դէմս որոշի. որպէս անեղ էն աստուած. և անեղ՝ որ դեռևս *ո՛չէ* եղեալ և գոյացեալ: - 118. Եւ ինքն միայն գիտէ *զո՛չէսն:* - 118. *Ո՛չէ* և ասի: - 123. *Ո՛չէ* և ո՛չ ասի: - 123. Երկրորդ՝ *ո՛չէ* և ասի. որպէս մարմին. ձեռն. և ոտն: - 123. Կամ ննջել և զարթնուլ. որ *ո՛չէ* ի յաստուած. այլ դնելով ի վերոյ ըստ ներգործութեանն տարացուցի: - 123. Իսկ բացբարձականքն ի խորհրդական աստուածաբանութեանն է. նախ որ է՛ և ո՛չ ասի. որպէս անսկիզբն և անվախճան. ո՛չ բան և ո՛չ միտ. *ո՛չէ* և այլն: - 123. Երկրորդն՝ *ո՛չէ* և ո՛չ ասի. որպէս այլայլութիւն. և ապականութիւն. չար. *ո՛չէ* և ո՛չ ասի: - 123. Որպէս յորժամ ասեմք բառնալով՝ *ո՛չէ*, ո՛չ բան, ո՛չ միտ, ո՛չ որդիութիւն, ո՛չ հայրութիւն. և այլն: - 124. Նախ՝ զի ուրացականն ըստ պակասութեան է. որ ասէ *ո՛չէ* աստուած քրիստոս. այսինքն պակա՛ս է և *ո՛չէ* աստուած. և *ո՛չէ* հայր. և ո՛չ որդի: - 124. Երկրորդին պատասխանեմք եթէ՝ *ո՛չէ* նոյն դրութիւն և խոստովանութիւն. որպէս յորժամ ասեմք դնելով թէ՝ չա՛ր է. խաւա՛ր է. և մե՛ղք է. ահա այս ուրացութիւն է և պակասութիւն: - 124. Եւ յորժամ ասեմք *ո՛չէ* չար. *ո՛չէ* խաւար. *ո՛չէ* մեղք. ահա այս խոստովանութիւն է և ո՛չ դրություն: - 124. Զի որպէս *ո՛չէ* սկիզբն աստուածութեան նորա, և ո՛չ վախճան մարդկութեան նորա: - 126. Նոյնպէս նախանձիլն. զի *ո՛չէ* և ասի: - 128. Երկայնութիւն՝ որ *ո՛չէ* լայն և ընդարձակ. այլ միայն երկայն. զի երկարագծի զօրութեամբ ի բոլորս: - 129. Աշխարհ ո՛չ լինի *ոչէ*. և ո՛չ ապականեալն կոյս. և վասն թողութեան. յորս նախագաղափար տեսութիւնն աստուծոյ: - 154. Առաջին՝ զի արարչութիւն է *յոչէից* ստեղծանել. իսկ նախախնամութիւն է զեղեալն ի նոյնութեան պահել: - 157. Այլ և ո՛չ տեղի պատահական. որպէս աստ և անդ. զի *ոչէ* ի տեղոջ իմիք պարունակեալ. և ո՛չ բացեայ ի տեղւոջէ իմիք զատեալ. զի նա՛ է ամենցուն տեղի: - 172. Այս է զստեղծիչն որ արար *յոչէից:* - 656. Յա՛յտ է զի ի բառնիլ *ոչէին* էութիւն հաստատի բացասութեամբ կրկին. իսկ ստորասութեամբ նոյն մնայ: - 787

**ՈՉԷՈՒԹԻՒՆ +** Զի է՛ բացասութիւն բացբարձօղ ամենայնի ուր և դիպեսցի. որպէս զէութիւն այսպէս *զոչէութիւն:* - 787

**ՈՉ ԹԷ** - Իսկ զի ասէ՝ «առաքեցայ» *ո՛չ թէ* տեղւոջէ ի տեղի. որպէս մեք բովանդակեալքս ի մի տեղի. զի առաքիմք շարժմամբ ի միւսն: - 40. Իսկ անտօն և ո՛չ գիր գիտէր՝ *ո՛չ թէ* այնքան իմաստութիւն, որպէս հաճոյ եղև աստուծոյ. մեք յի՞նչ հաւատամք և ընդունիմք զայն իմաստութիւն: - 40. Իսկ հնազանդիլն որդւոյ հօր, *ո՛չ թէ* այժմ անհնազանդ է վասն հակառակութեան. զի այս աւազակա՛ցն է. և անհնա՛ր է ասել զմի և զնոյն էութիւնն ինքն իւրեան հնազանդ և անհնազանդ ըստ այնմ որ բան է. այսինքն զպարզ աստուածութիւնն: - 42. Եւ այս *ո՛չ թէ* ոչ կարութիւն է նմա, այլ վասն առաւել կարողութեանն է: - 44. *Ո՛չ թէ* նոր իմն տեսակ և կամ նոր աշխարհ. այլ զեղելոցս նախախնամութիւնն. և ի նոյնութիւն կալն հայր կամի և որդի կատարէ՛. ոչ ծառայաբար և անուսումնապէս. այլ տիրաբար և հանճարով: - 46. *Ո՛չ թէ* բացասութիւնքս այսորիկ զլինիլն ցուցանէ, այլ թէ ո՛չ էր ամէնիւ: - 46. *Ոչ թէ* նըւաստ է քան զհայր, կամ ծառայաբար ծունր կրկնելով բարեխօսէ՛: - 48. *Ոչ թէ* անգիտանայ՝ քաւ լիցի. զի զամենայն որ լինելոցն էր ի կատարածին՝ ասաց. զիա՞րդ զժամն անգիտանայ: - 48. Այս *ո՛չ թէ* ունիլ զկիրս նշանակէ յաստուած, այլ զպատիժ վասն գործոյ յանցաւորացն: - 60. Ասեմք եթէ՝ տէր ապաւէն եղև ասէ մարգարէն. *ո՛չ թէ* փոփոխեցաւ ի տէրութենէն յապաւինութիւն, այլ եկաց մնաց տէր, և եղև ապաւէն: - 72. Դարձեալ՝ յարացոյցն ո՛չ թանձրանայ որպէս տարերք. և ո՛չ որպէս նիւթ և տեսակ կերպանայ. և *ո՛չ թէ* յարացոյցն արար զմեզ: - 112. Երկրորդ՝ վասն հպարտութեան մարդոյն. զի յորժամ խայթեսցեն զնա՝ ծանիցէ զտկարութիւն իւր. որ և զփարաւօն *ո՛չ թէ* առիւծք կամ առջք հարին, այլ ճանճք և մժղուկք տանջեցին: - 217. Այլ *ո՛չ թէ* հոգի ունէր բանական. այլ զօրութիւն իմացական: - 222. *Ո՛չ թէ* քան զտարրական հուրն ի վե՛ր է անցեալ. այլ զի լուսինն և արեգակն միշտ ի հարաւոյ կողմանէ ի ստորոտէ լերինն ելանեն...: - 222. Եւ զանչարչարութիւնն ի վերնատունն. յորժամ զմարմինն իւր ուտել ետ աշակերտացն՝ անչարչարելի էր ներգործութեամբ և *ոչ թէ* զօրութեամբ: - 282. *Ո՛չ թէ* փորձիւ գիտէ աստուած զմարդ: - 304. Այլ թէ վերջինքս կոչեմք նմա անուն աստուած՝ արարիչ՝ և այլն. ներգործութեանն է ցոյցք և *ո՛չ թէ* գոյացութեան կամ բնութեանն է յայտնութիւն: - 312. Որ էնն *ո՛չ թէ* զէութիւնն աստուծոյ յայտնէ: - 331. *Ո՛չ թէ* զմեղս հարց յորդւոցն խնդրէ. այլ մեղաց հարցն ներէ երկայնամիտ լինելով մինչև յորդոց յորդիս զի դարձցին ի մեղաց: - 351. Այլ *ո՛չ թէ* զհարց մեղքն որդիք վճարեն: - 351. Իններորդ՝ ի յօրինակ արդարոցն լուսոյն. որ ո՛չ կարօտին արտաքին լուսոյ, սոյնպէս և մովսէս ո՛չ կարօտէր. զի ո՛չ բնական էր լոյսն. զի աչք բնական տեսութիւն ունին, այլ *ո՛չ թէ* լոյս: - 352. Վեցերորդ՝ զի մեղքն թողեալ է զմարդն. և *ո՛չ թէ* մարդ զմեղքն: - 377. Հինգերորդ՝ նոյն ինքն մարմինն

սուրբ *ո՛չ թէ* հացիւ միայն կայր որպէս հասարակ մարդ. այլ բանիւն կենդանի ի նմա՛ միացեալ: - 397. Իսկ աստուածաբանն ասէ, ուր պիտոյ էր՝ յամենայն լեզուս խօսիլ կարէին. զի լիցի շնորհքն խօսողաց և *ո՛չ թէ* լսողաց: - 525. *Ո՛չ թէ* յայնժամ ետ, այլ յայնժամ խոստացաւ և յետո՛յ ետ. որպէս խոստացաւ նստուցանել յերկոտասան աթոռ և յետոյ ետ. նոյնպէս և զայն: - 547. Վասն որոյ ճաշակեմք զմարմինն և զարիւնն աստուծոյ և ո՛չ մարդոյ. և ճաշակելով լինիմք աստուած ըստ կարողութեան և *ո՛չ թէ* լինիմք մարդ: - 598. Մեք այսպէս լուաք ի սուրբ գրոց թէ՝ անարժան ուտելն առնէ յուդա. և *ո՛չ թէ* միաւորութեամբ զմարմին և զարիւնն ճաշակել: - 598. Ասեմք առ այս, եթէ բանն սողոմոնի *ո՛չ թէ* զրկէ՛ զոմանս յարեանն հաղորդութենէ ...: - 600. Որ և հարցանէր որդւոցն զեբեթեայ թէ՝ կարօ՞ղ էք ըմպել զբաժակն. այլ *ո՛չ թէ* միայն նոցա ետ և յայլ առաքելոցն արգել: - 600. ...ի գարունն *ո՛չ թէ* դժնիկն խլեալ բուսանի, այլ տնկեալ վարդենին. եթէ արմատն ոչ մնայ դժնկին: - 714. ...և մարմինն մեռեալ առաւել նոյն ինքն յառնէ. այլ *ո՛չ թէ* նմանն մեզ ըստ ազգի մերում. - 720. Այն է ծալիլ և գալարիլ օդոյդ երկնի. և *ո՛չ թէ* հաստատութիւնն վերին էութեամբ ի բաց բառնի ըստ ոմանց: - 729. Եւ այս *ո՛չ թէ* լոյս միայն է. զի զլոյսն ո՛չ ետ մեզ նշան. այլ զխաչն փայտեղէն յորոյ վերայ զձեռն իւր տարածեաց միածին բանն: - 734. Նմին նման և մեք յուսասցուք արժանաւորիլ տեսութեանն քրիստոսի. զի թէ և ի դժոխս իջեմք՝ ա՛յն է արքայութիւն մեր. և *ո՛չ թէ* յերկրի կամ յայլում տեղւոջ ըստ սրբոյն ոսկէբերանի: - 759. *Ո՛չ թէ* որիշ դաս անկաւ այլ իմն թուով՝ արտաքոյ քան զինն դասս: - 760. Այլ *ո՛չ թէ* ողորմութիւնն աստուծոյ հետևի ժամանակի, այլ քաղցրութեան կամացն: - 780

**ՈՉԻՆՉ +** Նոքա որք զբախտ և զճակատագիր և զիրամանն համբաւեն, *ո՛չինչ* ասեն ի կամաց մեր գործիլ...: - 7. Նա՛խ, զի ըստ սոցա *ոչինչ* է զանազանութիւն մշտնջենաւորացն և փոփոխականացն. որք են երկնայինք և երկրաւորք...: - 8. Դարձեալ, թէ ամենայն ինչ ի հարկէ՛ է մարդոյ և անասնոյ, ապա *ոչինչ* զանազանի բանականն և անբանն...: - 11. Ա՛րդ՝ թէպէտ չարն ո՛չ է յաստուծոյ, այսու ո՛չ լինին երկու աստուածք. կամ **բ** սկիզբն. զի չարն ո՛չընչութիւն է. և *ո՛չընչին* սկիզբն ո՛չ է աստուած. զի աստուած սկիզբն էութեանցէ: - 16. Դարձեալ, անձնիշխան կամքն է՛ յաստուծոյ. և է՛ *յոչընչէ* եղեալ. այլ ա՛րդ՝ անձնիշխան կամքն ըստ այնմ՝ որ յաստուծոյ է եղեալ՝ ո՛չ է պատճառ չարի. այլ ըստ այնմ որ *յոչընչէ*՝ և ցանկայ *ոչընչի*. այսինքն չարի. վասն այսորիկ մեղքն և չարն ո՛չ են յաստուծոյ. այլ *յոչընչէ*՝ որ է՛ սկիզբն նոցա: - 16. Դարձեալ ասեմք թէ՝ ո՛չ է բարի առանց աստուծոյ կամացն. և ո՛չ չար առանց թոյլ տալոյ նորա. ա՛յն է որ ասէ՝ տերև ո՛չ անկանի, և մազ մի ի գլխոյ. զի *ո՛չինչ* կարեմք առնել առանց կամաց՝ կամ առանց գիտութեան՝ կամ առանց թոյլ տալոյն աստուծոյ: - 18. Վեցերորդ՝ եթէ է ամբոխումն ինչ ի մէջ նոցա, *ոչինչ* էին մեկուսի ի մէնջ. այլ դժուարաձեռն որպէս զմեզ և հակառակ: - 21. Չարն ո՛չ է է, և ո՛չ գոյ. որո՞վ զանազանի ի պարզ ոչ է էն. որէ՛ ամենևիմբ *ոչինչ:* - 23. Յաւասար են ի *յոչինչ* գոլն չարն որ ներհականայ բարւոյ, և *ոչինչն* որ ներհականայ էի: - 23. Իսկ չարն ի յէութեան երևեալ՝ փոխի դարձեալ *յոչինչ* և յոչ գոյ: - 23. Չորրորդ՝ *ոչինչ* արգելէ զիոգին լինիլ որդի, թէ է՛ ի նոյն բնութենէ: - 30. Դարձեալ՝ մի բնութիւն ասաց միւս եւտիքէս. *ոչինչ* առեալ մարմին ի կուսէն. այլ իբր ընդ խողովակ անցեալ իբր ի դարիճակի. միայն զձևն ի նմանէ ձևագրեալ: - 81-82. Չորրորդ՝ ասի անեղ՝ որպէս ոչ ուրեք և ո՛չ երբեքն. այսինքն է *ոչինչն*. սա կարօ՛տ է ամենևին սկզբան և կատարման: - 113. Զի անեղ է՛ գոլով՝ տարորոշի յանեղ *ոչընչէն*. և միշտ գոյ՝ ի հրեշտակաց. և ինքնակատարն՝ յայնցանէ որ կարօ՛տ են սկսման և կատարման: - 113. Նախ՝ զի պատահմունքն են յէութենէ իրին երևեալ. այլ արարածք ոչ յէութենէ, այլ ի կամաց արարչին *յոչնչէ* ներգործեալ են: - 169. Եւ ա՛յլ է ստեղծանելն ի *յոչնչէ*. և այլ է խնամել զստեղծեալ իրն որպէս ասացաք: - 172. Զի՞նչ է որ ասեն փիլիսոփայք թէ յոչ ուրեքէն յոչ երբեքէն *ոչինչ* լինի: - 173. Իսկ մեք ասեմք *յոչնչէ* ստեղծեալ աստուծոյ զարարածս: - 173. Եւ դարձեալ է՛ ոչ էակ՝ որ թէպէտ ներգործութեամբ ո՛չ է, սակայն զօրութեամբ ունի զգոլն. և յայսպիսի *յոչնչէ* եղեն արարածք ամենայն. ապա ուրեմն յայտնի է հարցումնդ: - 173. Զի աննիւթ և պա՛րզ էութիւն է աստուած. և յառաջ էած *յոչընչէ* զաննիւթ էութիւնքս. այսինքն զգոյացութիւն, զքանակ, զորակ, և զայլսն. և իւրով զօրութեամբն ի միասին ժողովեալ կազմեաց մարմնական նիւթ: - 175. Արդ եթէ լինէր որպէս այս, աւելո՛րդ լինէր. և աւելորդ *ոչինչ* է ի գործս աստուծոյ: - 179. Եւ այլապէս ո՛չ կարէր լինիլ. զի ամենայն ինչ ի սմա՛ կատարեալ գոյ. և *ոչինչ* է պակաս ի սմանէ: - 179. Ասեմք առ այս. զի թէպէտ ա՛յլ է գործ ստեղծման և ա՛յլ նախախնամութեան. զի սեղծանելն է առնել իր ինչ ի *յոչընչէ*. և նախախնամելն՝ զեղեալն փոխանորդութեամբ ի նոյն տեսակն պահել: - 257. Եւ զի ո՛չ է անեղ՝ յեղեալ է ի *յոչնչէ* յէութիւն: - 274. Եւ ապա զի *յոչնչէ* եղեալն կարէ՛ նմա և ի նոյն փոխիլ եթէ կամքն աստուծոյ թոյլ տացէ: - 274. Երրորդ՝ ժողովին և գոհանան զաստուծոյ՝ որ *յոչնչէ*՛ գոյացոյց զմարդն, և յարգանդէ՛ խաւարին ի լոյս

եբեր. և ետ մեզ ինչս մարմնական: - 321. Մոխրով, այսինքն *ոչընչով:* - 383. Երրորդ, դիւական. որպէս կռոց սուտ մարգարէքն. սեդեկիայն և այլոց բազմաց. որ այժմ երևին ի պատասխանիս կախարդաց. նաև հաւկռիչք և գարէդիւքք. որք են բնաւ սուտք և *ոչինչք:* - 536. Իսկ թէ երկոքին ևս իցեն անարժանք, շնորհն *ոչինչ* է օգուտ. այլ դատապարտութիւն լինի երկոցունցն: - 540. Ո՞չ ապաքէն մովսէս ի հինն որոշեաց զսուրբս և անսուրբս. մանաւանդ թէ յաւուրս նոյի գոյր ընտրութիւնս. այսպէս ցուցաւ և մեզ պահելի իբր զբնական օրէնս. այլ սոցա *ոչինչ* է պիղծ ի կենդանեաց: - 552. *Ո՛չինչ* բնաւ. քանզի յորմէ հետէ քրիստոս ի գերեզմանն եդաւ ամենայն հողք օրհնեցան...: - 678. Այսպէս և ի մարմին մարդոյ *ոչինչ* խառնի ի հասարակ տարերաց ի յորս լուծաւ. այլ ինքն միայն գոյացութիւն մարմնոյն խառնեսցի ընդ հոգւոյն: - 719

***ՈՉ ԻՆՉ +*** Չորրորդ՝ դարձեալ թէ լինէին երկու սկիզբն և հակառակ, մարտնչէին ընդ միմեանս՝ և ընդ սկսեալս իւրեանց. և *ոչ ինչ* մնայր ի խաղաղութեան: - 21. Երկրորդ, ասեմք եթէ՝ չարն կրկին իմանի. է՛ որ ինքնաչա՛ր է. որ պարզ և ամենևիմբ չարն է. և արտաքոյ բարւոյ և էութեան է. որ ո՛չ ուրեք է. և ո՛չ երբեք. և ո՛չ էր. և ո՛չ է. և ո՛չ լինիլ կարող է. որ է *ո՛չ ինչ:* - 22. Հինգերորդ՝ *ոչ ինչն* ի յենթակայս եղեալ՝ ո՛չ ներհականայ էի. թէպէտ ըստ ինքեան ներհա՛կ է. և չարն ի յենթակայն երևեալ՝ ներհականայ և կորուսանէ՛ զբարին. թէպէտ ըստ ինքեան *ոչ ինչ* է և ոչ գոյ: - 23. Այլ *ո՛չ ինչ* յայսցանէ տեսանեմք: - 27. Թէպէտ մեկնեն և այլ ազգ, թէ որ զմարդկայինս բնութիւն հաւասարեցոյց փառաց իւրոց և հաղորդ արար աստուածութեանն, *ոչ ինչ* զրկումն համարեցաւ. զի բնութիւնն մի է: - 39-40. Երկրորդ՝ ո՛չ կարեմ *ոչ ինչ*. այսինքն անօգուտ ինչ: - 45. Երրորդ՝ ո՛չ կարեմ *ոչ ինչ*. այսինքն մեղք և չար: - 45. Այլ որպէս բանին սեպհական է և բնութեամբ և ո՛չ ստացմամբ, այսպէս իմացիր և մարմնոյն վասն անճառ միաւորութեան բանին զի իւր է մարմինն. վասն այն *ոչ ինչ* բանին է՝ ասի մարմնոյն: - 46. Եւ թէ և նա՛ է բնակարան, ապա *ո՛չ ինչ* ունի քան զմեզ առաւել: - 66. Եւ այն զի *ո՛չ ինչ* ունի մինն նուազ քան զերկուքն, և ո՛չ երկուքն առաւել քան զմին, բաց յառանձնութեանցն: - 74. *Ո՛չ ինչ* ունիմ ասել առ այս. այլ՝ զուղիղ պատասխանին խնդրեմ: - 92. Ասաց թէ՝ որ ի կերպարանս աստուծոյ էր բանն, այսինքն էակից հօր, *ո՛չ ինչ* զրկումն համարեցաւ ի ներգոյական փառաց զլինիլն հաւասար մեզ: - 93. Ա՛րդ՝ եթէ յայտնեաց զինքն աշակերտաց իւրոց. և մարդկութեան իւրոյ ո՛չ յայտնեաց, եղիցի ինքն տգէտ քան զաշակերտսն իւր. և կամ *ոչ ինչ* յայտնեաց զոր ինքն ո՛չ գիտաց: - 96-97. Ա՛րդ՝ եթէ զբոլորն ցուցանել նշան է սիրոյ հօր, ապա թէ *ո՛չ ինչ* ցուցանէ ատէ՛ զորդի: - 97. Յասացելոցս *ո՛չ ինչ* է վայելչական աստուծոյ. բայց միայն ըստ պատճառին: - 109. Նախ՝ պարզ ոչ էն. որ է ոչ ուրեք և ոչ երբեք. որ ո՛չէր և ո՛չէ և ո՛չ լինի. որպէս *ոչ ինչն:* - 111. Ութերորդ՝ անդ երևումն և *ո՛չ ինչ* նշանակ: - 133. Իններորդ՝ անդ երևումն, և *ո՛չ ինչ* յաւելումն: - 133. Տասներորդ՝ գործ բութեան *ո՛չ ինչ* ունի մեղք...: - 156. Առ այնոսիկ որք ասեն՝ անկա՛ր է աստուծոյ առնել զաշխարհս *ոչ ինչ*. մինչ զի ո՛չ երևիլ սկիզբն լինելութեան սորա: - 162. Իսկ աստուած տեսանէ զներքոյսն ի ներքուստ, և զարտաքոյսն ի ներքուստ. զի զամենայն առ ինքն և յինքն տեսանէ. և *ոչ ինչ* է արտաքոյ ինքեան: - 164. Զայս և տէրն աղիւ օրինակեաց. յորժամ անհամի՝ *ո՛չ ինչ* է պիտանի հրամայէ: - 166. Այլ արարիչն առանց արարածոց ո՛չ է անկերպ և անզարդ. զի արարածք *ոչ ինչ* յաւելուած են արարչին: - 170. Այլ ի յաստուած *ոչ ինչ* է յետոյ...: - 170. Երկրորդ՝ ասեմք թէ կրկին է ոչ էակն. այսինքն *ոչ ինչն:* - 173. Մին է՝ զի միշտ *ոչ ինչ* է. զի ոչ զօրութեամբ և ո՛չ ներգործութեամբ ունի զգոլն. և յայս ոչ էակէս *ոչ ինչ* լինի: - 173. Իսկ իմաստութեան *ոչ ինչ* է ներհակ: - 178. Արդ ամենայն ինչ որ զգալի է՝ ի ներքս ի սմա՛ է. ձա՛յն. գո՛յն. հո՛տ. հա՛մ. ծա՛նր և թեթև. և *ո՛չ ինչ* է արտաքոյ սորա. յաղագս որոյ և ո՛չ զգայարանաց կարօտի: - 179. Եւ քան զժամանակն *ո՛չ է ինչ* պատուական. *ոչ ինչ* հասարակ. *ոչ ինչ* անցական և հոսական. *ոչ ինչ* անմնացական. *ոչ ինչ* այլայլական և փոփոխական: - 198-199. Դարձեալ՝ *ոչ ինչ* պատուական քան զժամանակ. զի զինչ և իցէ յաշխարհի՝ երկու մասունքն կարե՛ն համանգամայն գոլ ի միասին բաց ի ժամանակէ ...: - 199. Դարձեալ՝ քան զժամանակն *ոչ ինչ* անցաւոր և հասական...: - 199. Դարձեալ՝ քան զժամանակ *ոչ ինչ* անկայուն և անյայտ: - 199. Դարձեալ քան զժամանակն *ոչ ինչ* այլայլի. քանզի մերթ ցուրտ է և մերթ ջերմն. ամպ և պարզ: - 199. Դարձեալ՝ քան զժամանակ *ոչ ինչ* հասարակ...: - 199. Ասեմք թէ՝ նոյն է պատասխանին. զի պատահումն առ մե՛զ հանդիպի. այլ առ աստուած *ոչ ինչ* է պատահմամբ...: - 237. Երրորդ՝ զի հատեալն մասնաւորի. այլ ընդ ծնանիլ զաւակին՝ *ոչ ինչ* պակասի ի ծնօղն. բան, կամ շունչ, կամ կենդանութիւն. այլ բոլորն է ի ծնօղն և բոլորն ի ծնեալն: - 257. Որպէս ասէ աստուածաբանն թէ՝ *ոչ ինչ* էր ծածկոյթ ի մէջ նոցա և աստուծոյ...: - 282. **Դարձեալ՝ պիտանի է ի ստուգաբանութիւնս բանի. զի թէ ոք զամենայն լեզուս գիտիցէ, *ոչ ինչ* բառի կարօտանայ**: - 297. Բնութեամբ ամենայն ինչ սուրբ

է. և պիղծ *ոչ ինչ* է յարարածս աստուծոյ: - 364. Երրորդ՝ զի մարմինն աճէր և *ո՛չ ինչ* յաւելոյր ի կերակրոյն: - 383. Երրորդ՝ զի ցուցցէ թէ *ոչ ինչ* զօրութիւն ունի բան նորա: - 388. Եւ յա՛յտ է, զի *ոչ ինչ* զօրութիւն ունէր բան նորա: - 388. Եւ դարձեալ՝ *ոչ ինչ* շնորհ ունէր բան նորա. զի այնքան օրհնեաց զժողովուրդն, ընդէ՞ր ոչ դարձաւ մահն և սատակումն: - 388. Ապա յայսմ ամենայն է յա՛յտ է՝ զի *ոչ ինչ* գիտեն զառաջիկայն դևք...: - 430. Ապա թէ ոչ՝ ի միում աւուրն **եճ** և **կռ** կամէր կոտորել այսու համարով. և *ոչ ինչ* մնայր ի ժողովրդենէն: - 435. Եւ տե՛ս, զի *ոչ ինչ* էր հրէիցն ի տաճարին: - 440. Եւ տէր մեր զամենայն առակս խօսէր ընդ ժողովրդեանն. և առանց առակի և *ո՛չ ինչ:* - 441. ...իսկ ի կատարել զգործ ողորմութեանն՝ *ո՛չ ինչ* պահանջի, եթէ ոչ կամքն նորա, որպէս երևեցաւ ի մարդեղութիւն բանին աստուծոյ ի սրբոյ կուսէն մարիամայ: - 459. Երկրորդ՝ զի *ո՛չ ինչ* անդամ զազրելի է ի մարդն...: - 469. Երրորդ՝ զի *ո՛չ ինչ* յորոց ստեղծ աստուած գարշի բնակիլ. մանաւանդ յարգանդի զարդարեալ կուսութեամբ. զի զոր ստեղծ ձեռօք, բնակէ՛ ի տան ձեռագործի իւրոյ: - 469. Առաջին միաւորութիւն ստոյգ և ճշմարիտ՝ հոմանիւք մասնաւորաբար որոշեցելոց. որոց *ոչ ինչ* տարանիւք ընդ մէջ երևի...: - 476. Իսկ ի քրիստոս *ոչ ինչ* է անկատարութիւն. ապա և ո՛չ ծերութիւն մարմնոյ: - 480. Ասեմք եթէ՝ *ոչ ինչ* գոյր նոցա արգելք հաւատոյ յորժամ լոյս ծագեաց քրիստոս ի դժոխս: - 508. Թէպէտ այսօր վասն պատրանաց մարդկան և փոխելոյ զտօնս՝ *ոչ ինչ* ունեն զնաւակատեաց որ է ծունկն. զոր միշտ զքառասնորդ պահքս պղծեալ են ձկամբ և արբեցութեամբ: - 509. Նմանապէս և առ այս ասեմք, թէ *ո՛չ ինչ* է զանազանութիւն. զի յորժամ աւետարանն բանն քրիստոսի է ճշմարիտ, և քրիստոս աստուած է ճշմարիտ. ապա ուրեմն աւետարանն բանն աստուծոյ է ճշմարիտ: - 530. Ասեմք թէ՝ *ոչ ինչ* է այս նախատինք մեզ. զի հեթանոսք յետոյ հաւատացին և լաւագոյնք են քան զիրէայս. և վերջին մշակքն ընդ առաջինսն առին զվարձս. և որք նախանձեցան կորեան: - 549. Եւ ոմանք *ոչ ինչ* համարին զյանցանս մտաց. և ո՛չ դնեն ի կարգս մեղաց. օրինակ տալով իբր զդատարկ սեղան *ոչ ինչ* կերակրել. և իբր զպտուղ ծառոց տեսութեամբ միայն վայելել: - 555. Հինգերորդ՝ զի յամենայն մեղս գտանի հպարտութիւն. զի որպէս առանց սիրոյ այլ առաքինութիւնք *ոչ ինչ* են, նոյնպէս առ հպարտութեան ամենայն մոլութիւնք *ոչ ինչ* են: - 562. ...*ոչ ինչ* է ապառնի յոր յուսացեալ լինի: - 574. Եւ աղքատք հոգւով են ըստ մարմնոյ աղքատքն. որք *ոչ ինչ* ունին և զամենայն ինչ ունին: - 583. *Ոչ ինչ* ամենևին՝ թէ ընկալցին զմկրտութիւնն. որպէս և ոչ ցորենոյն է վտանգ թէ գողունի իցէ և սերմանի ի ձեռն գողի: - 593. Եւ դարձեալ՝ նոյ և ամենայն կենդանիքն ի տապանն կացին զբոլոր մի ամ և *ոչ ինչ* կերին. որպէս մանուկն յարգանդի: - 652. Հինգերորդ, քրիստոնէից մարմինք սրբութեամբ տաճա՛ր են աստուծոյ, յոր պիղծ *ոչ ինչ* մտանէ: - 654. ...լալ և կրճել ատամանցն. փոշիմանիլ, տխրիլ, և *ոչ ինչ* օգտիլ...: - 671. Եւ կոչի պատանք, զի պատեալ և կապեալ է զամենայն զգայարանսն. և *ոչ ինչ* կարէ գործել. ո՛չ չար և ո՛չ բարի: - 671. Այլ և ամենայն աշխարհ տաճա՛ր է աստուծոյ. թէ ի դաշտի թէ յագարակի թէ ի տղմի. կամ ի ջուր սուզի, կամ ի գազանաց գիշատի, կամ ի ձկանց կլցի, արդարութեան *ոչ ինչ* վնասէ: - 678. Եւ փարաւոն ընկղմեալ զօրօքն. զի *ոչ ինչ* կարեն վնասել չար դևքն՝ քրիստոնէից հոգւոց: - 682. Իսկ չարացն *ոչ ինչ* գիտեն. այլ զոր հրեշտակք կամ դևք նոցա պատմեն: - 685. Նաև մշակ ասելն, զի հոգին առանց մարմնոյն *ո՛չ ինչ* է աշխատեալ. վասն որոյ և զվարձն հոգւոյն և մարմնոյն տայ: - 696. Չորրորդ, զի *ոչ ինչ* համարին զաստուածային իշխանութիւնն որ յեկեղեցի եդեալ... - 698. Նմանապէս և մարմին մարդոյ առ հասարակ մեռանին և ի հող լուծանին և յայլ տարերս. և յորժամ յառնեն՝ ո՛չ ունին ի հասարակ տարրէ ընդ ինքեանս. և այս մարմին ի յայն մարմնոյ *ոչ ինչ* ունի խառնումն: - 719-720. Երկրորդ՝ զի թէ արական մասն երևի՝ *ոչ ինչ* նախապատուի կամ էգն անարգի. զի մասունք անդամոց անդ ո՛չ է զազրալի: - 726. Որպէս ասեն վարդապետք, այնքան եղիցի երջանկութիւն, ուր *ոչ ինչ* եղիցի չար, և *ոչ ինչ* ծածկեսցի բարի: - 765. *Ոչ ինչ* պղերգութիւն լռեցուսցէ: - 765. *Ոչ ինչ* կարօտութիւն աշխա՛տ արասցէ: - 765. Զի *ոչ ինչ* է արտաքս որում բաղձան. *ոչ ինչ* ի ներքս յորմէ տաղտկանան: - 767. Այլ ներկայական *ոչ ինչ* է առ նոսա. զի զյետոյսն մոռացեալ են: - 774. Եւ այս ո՛չ միայն փութանցիկ գոլոյ վասն, կամ ներհակաբար հատուցման որպէս սովորութիւն է. այլ զի *ո՛չ ինչ* կարեն տանիլ ընդ ինքեանս. բայց միայն նշխարհս ինչ յիշատակութեան ուրուական տեսլեան: - 775. Զի արարիչն և բնութիւնն և արուեստն *ոչ ինչ* ձրի և վայրապար ստեղծանեն ըստ իմաստասիրին: - 785. ...*ոչ ինչ* վայրապար կազմեն զտեսակ գոյացական և զտեսակ պատահական. խնդրելով ոմն պարզ նիւթ. և ոմն տեսակացեալ: - 786. *Ոչ ինչ* ընդհատ բերելով ի մեզ զօրինակ մեծի սաստկասարսուռն ատենի: - 788. Այլ և աստ ապաշաւելն *ոչ ինչ* օգտեալ. որպէս և անդ ո՛չ լսողաց բերանով հաշեալք. որ և ո՛չ գոյր անդրէն դառնալ. և ո՛չ կարի յօժարացն շահավաճառ եղեալ. ո՛չ գիտ և ո՛չ ողորմ. հանգոյն յիմարացն

օրհորդաց: - 789

**ՈՉԽԱՐ +** Երրորդ՝ զի առաջի ոչխարացն երթայ: - 49. Եւ ի միոյ աստուծոյ եղեն **ժ** դասք հրեշտակաց ընդ մարդկան. և հարիւր գունդքն ըստ *ոչխարաց* առակին. և ռ կենդանեաց տեսակքն որ յերկրի. և բիւր անկենդան բուսոց. և անթիւ գոյեղէնք: - 109. Երկրորդ՝ զի ժերորդ է մարդս կարգեալ ի թիւ նոցա ըստ հարիւրերորդ մոլորեալ *ոչխարին*, և կորուսեալ ժերորդ դրամին: - 134. Եւ է՛ էակ որ երբեմն զօրութեամբ է. որպէս այնոքիկ որ ի լինելութեան և յապականութեան են որք միշտ փոփոխին. որպէս մարդ և *ոչխար* և ծառ: - 173. Վեցերորդ՝ ասր. որպէս *ոչխարաց:* - 216. Այլ այժմ վասն զգեստուց պահեմք *զոչխարս*...: - 217. Չորրորդ՝ յա՛յտ է ի հնազանդեցելոցն որք կան այժմ ընդ ձեռամբ մադկան. որպէս *ոչխար*, պախրէ՛, և այլն: - 220. Զայնն նման *ոչխարաց* և այծից՝ յիմարի՛ է: - 247. Երկրորդ՝ զի խոնարհ և հնազանդ էր յամենայնի. ուստի մնաց եղբօրն պատարագի. որ իւրն **գ** ամսով յառա՛ջ էր հասեալ քան զեղբօրն. այսինքն ծնունդ *ոչխարացն* քան զպտուղ երկրին...: - 286. Եւ էր մեծութիւն նորա մարմնական, Խաշինք էռ *ոչխարաց:* - 321. Այլ ա՛յս է ճշմարիտն, զի ամենայն բարեկամքն որ ժողովեցան յետոյ և մխիթարեցին զնա՛, իւրաքանչիւրքն բերին մէն մի որոջ *ոչխարի* և **դ** դրամ ոսկի անգիր ընծայեցին նմա ի սատար խրախութեանն...: - 326. Է՛ և երրորդ պատճառ. զխոզն ուտէին յեգիպտոս, և զարջառ և *զոչխար* պաշտէին. վասն որոյ հրամայեաց զաստուածս նոցա զենուլ զի չեն աստուածք. և ի խոզենւոյն հրաժարիլ ամենևին: - 355. Ի կենդանիս. որպէս *ոչխար* և այլն յաղագս մաքրութեան ոգւոց: - 357. *Ոչխար* զգօն և հեզ. ունելով պտուղ ասր և կաթն և ծնունդ: - 358. Հինգերորդ, վասն մեղաց պատարագ, ի մեռելոտի կամ ի պիղծ ինչ մերձեցեալ. *ոչխարով* և թռչնով և նաշիով առանց իւղոյ և խնկոյ քաւէին: - 358. Երկոտասաներորդ, *ոչխար* տարևոր մեծի զատկին յելսն եգիպտոսի, խորովեալ հրով. և բաղարջ ընդ եղեգի կերեալ: - 359. *Ոչխար* տարեկան. և պատարագելի. և զգօն և հեզ. և պտղատու զկաթն և ասր և ծնունդ: - 361. Եւ զհարիւրորդ մոլորեալ *ոչխարն* խնդրեալ տեառն մերոյ յիսուս քրիստոսի: - 376. Է՛ և ա՛յլ իմն տեսութիւն բանիս. զի կամի՛ զպաշտօնս մեր որոշել ի կռոց զոհիցն. զի սուտանուն դիքն խնդրէին ուստերս և դստերս և արջառս և *ոչխարս* զոհել և սպանումն օտարաց: - 396. Զի հին ժողովուրդն զանասունս մատուցանէր պատարագ *ոչխար* և արջառ և այլն: - 396. Նոյնպէս և սրբոյն ամենայն ինչ սուրբ է. որպէս *ոչխարին* մազն և միսն և այլն: - 416. Երկոտասաներորդ, եթող *զոչխարսն* ի տուարածսն. և տէրն զիննսուն և զինն յանապատին: - 436. Երեսունևք, *Ոչխար* ո՛չ մտանէ յեկեղեցին. և մեռեալ ո՛չ թաղեմք յեկեղեցին: - 527. Առ երրորդն ասեմք թէ՝ երիցս հարցումն սիրոյն և արածելն *զոչխարսն* վասն երից ուրացութեանցն էր բժշկութիւն. զի ո՛ր մասն որ խոցի՝ նորին է բժշկական դեղն դնելի՝ և ո՛չ առողջից: - 547. ...և որկրամոլութեամբ մնան բազմամարմինք. և ատելութեամբ զերծանի *ոչխարն* ի գայլէ. և խորխտումն մեծարգոյ առնէ զձին. և այլն նմանապէս: - 563. Վասն է՞ր *ոչխար* յեկեղեցին ո՛չ մտանէ: - 617. Չորրորդ՝ յօրինակ քրիստոսի որ խարազանաւ եհան ի տաճարէն *զոչխարս* և զարջառս. նոյնպէս և մեք արտաքսեմք: - 617. Եօթներորդ՝ զի լի՛րբ է *ոչխարն*. և լիրբն արտաքսելի՛ է յեկեղեցւոյ. որպէս յուդա լրբութեամբ ել արտաքս: - 617. Եւ **ճ** տէրոդորմեայն, ըստ թւոյ **ճ** *ոչխարացն* միոյն մոլորելոյ: - 621. Եւ դարձեալ ի ճառս անառակին և կորուսեալ դրամին և մոլորեալ միոյ *ոչխարին* և անկելոյն ի ձեռս աւազակին, զնոյնս ուսուցանեն մեզ հարքն հոգելիցք արտայայտել: - 775

**ՈՉԽԱՐԱՆՈՑ** - Հինգերորդ զգուշանամք, զի մի՛ *ոչխարանոց* լիցի եկեղեցի և գոմ: - 617

**ՈՉ ՄԻ** - *Ո՛չ մի* ժամանակս կատարեալ. քանզի «ի ճշմարտութեան ո՛չ եկաց» ասէ տէրն...: - 147. Այլ և ա՛յլ են հարցմունքդ և *ո՛չ մի:* - 162. Նմանապէս և պատասխանին այլ և այլ և *ո՛չ մի:* - 162. Զի թէ գոյր պատահումն ի յաստուած, լինէր բազում և *ո՛չ մի*. իսկ աստուած մի է և ո՛չ բազում...: - 170. Ասեմք եթէ՝ ամենայն արարածք համանգամայն գոյացան յարարչէն. և *ո՛չ մի* զկնի միոյ...: - 253. Քսաներորդ, Ո՛չ հրամայեցաւ դաւթի շինել զտաճարն. ի Հազարս գտի այր մի. և ի կանանց *ո՛չ մի:* - 413. Զի՞նչ է ի հազարս գտի այր մի. ի կանանց և *ո՛չ մի:* - 440. Այլ զայն ասէ՝ թէ յամենայն ազգս արանց գտաւ այր մի քրիստոս, ազատ ի պարտուց սկզբնականին. և ի կանանց և *ո՛չ մի:* - 440. Այլ և արդ կարելի՛ է զի մինն բազմաց հակառակեսցի և յաղթեսցէ. որպէս ազգս հայոց զայլս ամենայն որ բազո՛ւմ են և *ո՛չ մի:* - 550. Եւ *ոչ մի* ինչ ունի յոյս փրկութեան. ո՛չ օգնական. ո՛չ բարեխօս. ո՛չ ողորմութիւն. և ո՛չ այլ ինչ այնպիսի որ արաժանաւորացն է: - 669. Զորօրինակ, քարոզեցաւ նինուէի կործանումն. և նախագուշակ եղև եզեկիայի մահ. և *ո՛չ մի* ի սոցանէ կատարեցաւ: - 779

**ՈՉ ՄԻԱՅՆ** - Ուստի որդի *ո՛չ միայն* ասի անդրանիկ՝ այլ և միածին: - 41. Նաև մարդիկ *ո՛չ միայն* զի ի բազմաց են գոյացեալ...: - 54. Չորեքտասաներորդ՝ ասէ պօղոս յեփեսացւոցն թէ՝ հայր կացոյց

զքրիստոս յերկնաւորս ի վերայ ամենայն իշխանութեանց. և պետութեանց. և զօրութեանց. և ամենայն անուանելոց. *ո՛չ միայն* յաշխարհիս այլ և ի հանդերձելումն: - 97. Ա՛րդ՝ դատէ որդի *ո՛չ միայն* ըստ աստուածութեան իւրում. այլ և ըստ մարդկութեանն: - 100. Եւ ապա ասեմք անհասանելի անքննելի անճառելի. *ո՛չ միայն* մեզ, այլ և ամենայն եղական իմացմանց անիմանալի է և անյայտ: - 122. Չորեքտասաներորդ՝ զի գիտասցէ սատանայ զտկարութիւն իւր՝ թէ *ո՛չ միայն* յաստուծոյ, այլ և ի մարդկանէ յաղթի...: - 59. Իսկ Երբ ո՛չ ասի աստուծոյ. զի անժամանա՛կ է և ո՛չ ունի փոփոխումն. այլ ասի յաւիտենական. ըստ որում բոլորն համանգամա՛յն է և կատարեալ. զի ոչ կարօտի սկզբան և վախճանի. որպէս ժամանակն. և *ո՛չ միայն* սկզբան որպէս մշտնջենաւորն. այլ անսկիզբն է և անվախճան. վասն որոյ կոչի յաւիտենական: - 172. Եւ *ո՛չ միայն* այս. այլ և դ բնութիւն է չորից տարերաց մարմնոյն. ջերմ և ցուրտ. չոր և գէճ: - 176. Տասներորդ՝ անպն *ո՛չ միայն* զգօղ անձրևէ, այլ և ձիւն և կարկուտ և հրայրեցութիւն. որպէս ասացաւ ի վերոյ: - 206. Եւ թէ զտեսութիւնս զայս կարծես էութիւն հոգւոյ ըստ որում է հոգի, ապա *ո՛չ միայն* ետես զհոգի, այլ և զմարմին՝ և զիւրաքանչիւրոց ընտրութիւն, և զհամար հերաց և զթիւն աստեղաց. և սոքա յետո՛յ են գոյացեալ ըստ կամաց տեսողին: - 260. Եւ այս չէ՛ ընդունելի. զի մարդն երրորդութեանն է պատկեր եղեալ որպէս ցուցաւ. և *ո՛չ միայն* որդւոյ և հոգւոյն սրբոյ: - 273. Տասներորդ՝ զի մելքիսեդեկ *ո՛չ միայն* պատարագաւն, այլ և անուամբ և տեղեաւ ևս օրինակ էր քրիստոսի: - 301. Եւ *ո՛չ միայն* այս, այլ զեօթն օր անխմոր բաղարջ ուտէին ամենայն ժողովուրդն. և Աբրահամ և ղովտ բաղա՛րջ յօրինեցին զխորհուրդ փրկական մարմնոյ տեառն որ ի վերնատունն բաղարջով աւանդեաց: - 356. *Ո՛չ միայն* զի յանունն աստուծոյ, այլ զի օրինա՛կ էին նորոյս պատարագի. և խորհրդովն քրիստոսի սրբեցան: - 361. Նա՛խ՝ ցուցանէ թէ քրիստոս է առաջին և վերջին. այսինքն սկիզբն և կատարումն եկեղեցւոյ. *ո՛չ միայն* աստուածութեամբն, այլ և մարդկութեամբն: - 385. Չորրորդ, զի գիտասցուք թէ *ո՛չ միայն* բարեաւ, այլ և չարաւ ոմամբ բարի առնէ աստուած: - 387. Նա՛խ՝ վասն ժողովրդեանն ասէ, թէ *ոչ միայն* հացիւ կեայ մարդ. որպէս ասաց ադամայ ուտել զհաց քրտամբք: - 397. Վեցերորդ՝ *ո՛չ միայն* հաց է հաղորդութիւնն. այլ հոգւովն սրբով օրհնեալ և միաւորեալ ի բանն աստուած, որով անմահ կենդանութիւն տայ ճաշակողացն: - 397. *Ո՛չ միայն* հրէի կամ հեթանոսի, այլ որք նուիրեն նմա զհաւատս ամբողջ սրբութեամբ՝ արժանի լինին շնորհացն նորա: - 398. Վասն է՞ր *ո՛չ միայն* բաժանեցաւ գետն, այլ և յետս դարձաւ: - 414. Երրորդ, զի *ո՛չ միայն* մերձաւորք, այլ և հեռաւորք մինչ ի յակն տեսցեն զքանչելիսն: - 414. Երրորդ՝ ի յեղծանիլ պատկերին աստուծոյ որ վասն փառացն աստուծոյ ստեղծաւ, ընդ նմին եղծան և ապականեցան այլ արարածք որ վասն փառաց մարդոյն ստեղծան. որ *ո՛չ միայն* անասունք, այլ և հող և ջուր և օդ երկրին կորուսանեն զպտղածնութիւն. որպէս սոդոմայեցոցն: - 416. Ութերորդ՝ նա՛ ուսովք էր բարձր քան զամենայն մարդ. և տէր մեր *ո՛չ միայն* աստուածութեամբն որ գլուխ է, այլ և չարչարանօք իւր՝ գերագոյն և բարձրագոյն ցուցաւ. զի փրկեաց զամենայն: - 427. Եւ դևք *ո՛չ միայն* զապագայն ոչ գիտեն, այլ և զներկայ խորհուրդն ո՛չ ճանաչեն. նաև զանցեալ ճշմարիտն և զբարին ի միտ ո՛չ ունին: - 428. Երրորդ՝ զի նորոգումն որ լինելոց էր ծննդեամբ կուսին՝ *ո՛չ միայն* մարդկան էր, այլ և հրեշտակաց. պարտ էր հրեշտակին սպասաւորել կուսին: - 463. Եւ *ո՛չ միայն* ճանապարհորդ, այլ և ըմբռնօղ միշտ և յաւիտեան: - 470. Զի իցէ ինքն սկիզբն և կատարումն *ո՛չ միայն* ըստ աստուածութեանն, այլ և ըստ մարդկութեանն: - 485. Եւ քրիստոս *ո՛չ միայն* օրինակաւն, այլ և հոգևորաւն թլփատեցաւ: - 486. Զի *ո՛չ միայն* համարի մեծ և փառաւոր զաստուածություն նորա, այլ և զաղքատութիւնն և զանարգանս և զմահն. և յայնժամ արժանասցի առատապէս ընդունել զհոգին սուրբ: - 522. Այլ անիրաւ կապելն արձակեսցի. և կապօղն պատժեսցի. *ոչ միայն* ի համակարգից, այլ և ի ներքնոց: - 542. Սոքա ի յանբանսն *ո՛չ միայն* գո՛րծ են, այլ և պահպանօղ նոցա: - 563. Վասն այն ասի արդարութիւնն ուղղութիւն կամաց. զի *ո՛չ միայն* է առանձնական զօրութիւն կամ առաքինութիւն. այլ և հասարակ և պարունակիչ ուղղութեան հոգւոյն: - 579. Իսկ թէ մարմնական խնդրես զխառնումն ջրոյ և պնդիս ի հակառակն, ասեմք քեզ թէ *ո՛չ միայն* ջրոյ, այլ և կաթին և մեղեր և գինւոյ ասէ խառնումն ի խառնարանն... - 596. *Ո՛չ միայն* զգլուխս բանամք, այլ և զձեռս համբառնամք ի վեր. որպէս և յովսէփ ասաց: - 635. Եւ *ո՛չ միայն* լուծանեն զսկիզբն մեծի պահոցն, այլ և զամենայն չորեքշաբաթս որ յառաքելո՛ցն է կանոնեալ, լուծանեն ի բոլոր տարին, և լինին ընդ անիծիւք նոցին: - 652. *Ո՛չ միայն* մարմնով, այլ և հոգւով. թէ չունի զմասն բարութեան: - 670. ...բայց վարձ հատուցման ո՛չ կարէ ընդունիլ առանց մարմնոյն. զի *ո՛չ միայն* հոգւոյն է վաստակն, այլ և մարմնոյն: - 691. Եւ դարձեալ՝ *ո՛չ միայն* մարդոյս մարմինն, այլ և անշնչից և շնչաւորաց զոր ինչ ունեմք յառնէ՛ ասեն որ է՛ անպատշաճ:

- 718. Եւ *ո՛չ միայն* խաչն, այլ և ամենայն գործիք չարչարանացն. այսինքն բևեռքն գեղարդն և այլք. որք բերին առաջի դատաւորին...: - 732. Ա՛րդ՝ ի վերայ երից սոցա բազմեալ է տէր մեր յիսուս քրիստոս *ո՛չ միայն* յերկրի, այլ և յերկինս...: - 736. Նոյնպէս և հատուցի առաւել և նուազ և հաւասար. *ո՛չ միայն* ըստ սեռի գործոց, այլ և ըստ տեսակի և քանակի և որակութեանց նմին: - 746. Ո՛չ քնաւ, թէպէտ հայր տեսանէ զորդի կամ մայր զդուստր. և կամ զեղբայր և զայլս. *ո՛չ միայն* ո՛չ ցաւին, այլ ա՛յնպէս լինի հեշտալի, որպէս տեսանեմք զձկունս որ խաղան ի վտակս: - 754. Եւ այս *ո՛չ միայն* փութանցիկ գոլոյ վասն, կամ ներհակաբար հատուցման որպէս սովորութիւն է ...: - 775. Իսկ յանցանել նորա՝ կորոյս զամենայն. *ո՛չ միայն* զխոստացեալն, այլ և զպարգևեալն...: - 776. Նա՛խ՝ աղօթիցն ժամ. *ո՛չ միայն* յերեկոյս և ի վաղորդեան՝ ի հասարակն կամ է անգամ աւուր ըստ մարգարէին: - 779. ...զի *ո՛չ միայն* էառ զբնութիւնս. այլ և զնոսա որ շուրջ զբնութեամբն. զի ծանիցի կատարելութիւն առաքինութեանն, և ճշմարտապէս մարդ գոլ: - 781. Արդ որպէս յամենայն ժամանակս սոքօք գան ի հաւատս ուղղութեան և է՛ վարձատրելի. այսպէս և ի վերջին ժամանակս որք յետ նեռինն՝ *ո՛չ միայն* ի հարկէ սքանչելեաց, այլ և ի լրոյ քարոզչաց երկուցն վկայից իջելոց սրբոց: - 785. Առ այսոքիւք, թէ արտասուքն որ յաչացն հեղու, ընդէ՞ր աղի գոլով, *Ո՛չ միայն* զվասն էրն խնդրեմ. այլ և զորպէսն դառնալ նմա աղի ընդ երակս աչաց: - 786. Ասացեալն նմանապէս և աստ կատարեալ. *ո՛չ միայն* յանդի հեռաստան, կամ աղալ յերկան: - 789

**ՈՉՆՉԱՆԱՄ +** Իսկ չարն ըստ ենթակային էանայ և երևի, և ըստ ինքեան *ոչընչանայ* և ապականի. զի ո՛չ է է. և ո՛չ գոյ: - 23

**ՈՉՆՉՈՒԹԻՒՆ +** Ա՛րդ՝ թէպէտ չարն ո՛չ է յաստուծոյ, այսու ո՛չ լինին երկու աստուածք. կամ **բ** սկիզբն. զի չարն *ոչընչութիւն* է. և ո՛չընչին սկիզբն ո՛չ է աստուած. զի աստուած սկիզբն էութեցէ: - 16. Իսկ չարն *ոչընչութիւն* է. և ո՛չ ունի առաջք և վերջք. վասն որոյ անչափ է չարն և անպատճառ, որպէս ի վերոյ ցուցաւ: - 23

**ՈՉ ՈՔ +** Մետասաներորդ՝ եթէ զբարին ոչ կամի, ապա բարի *ո՛չ ոք* կարէ լինիլ յեղելոցս. ո՛չ մարդ և ո՛չ հրեշտակք. զի կամացն աստուծոյ *ո՛չ ոք* հակառակի: - 14. Իսկ թէ չար է և առնէ զչար, *ո՛չ ոք* է ի յեակս բարի: - 14. Երրորդ՝ ասեն թէ կամքն աստուծոյ ո՛չ է ընդդունայն. և *ո՛չ ոք* կայ ընդդէմ կամացն աստուծոյ...: - 16. Նախ եթէ կամացն աստուծոյ *ոչ ոք* է ընդդէմ. և որպէս կամի այնպէս առնէ. այլ չար ո՛չ կամի և ո՛չ առնէ: - 16. Եւ միւսն է յաւիտենական նախասահմանումն աստուծոյ. յորմէ *ո՛չ ոք* կարէ ջնջիլ: - 18. Դարձեալ ասեմք թէ՝ ըստ ինքեան սոքա ոչ են չար. այլ բարի. որպէս տգէտն ի մեղաց. և բարկութիւնն ընդդէմ չարեաց. և ցանկացօղն բարեաց. զի ըստ բնութեան գործելով *ոչ ոք* մեղանչէ ասէ փիլիսոփայն: - 19. Եթէ ո՛չ իշխեն, *ո՛չ ոք* ի նոցանէ է աստուած. և եթէ իշխեն, որ ոք և իշխէ միայն՝ նա՛ է աստուած: - 21. Եւ եթէ կայանան ըստ ինքեանց, *ո՛չ ոքն* է չար. զի կայանալն ըստ ինքեան բարի՛ է: - 21. Յա՛րց և դու զնոսա, թէ հայր յումեքէ՛ է, թէ *յոչ ումեքէ* է եղեալ: - 37. Իսկ թէ *յո՛չ ումեքէ*, կարգեցեր զնա ընդ յոչ էից գոյացելոց: - 37. Առաջին՝ զի թէ աստուած էր անծնելութիւնն, պա՛րտ էր ունել և անծնելութեանն ստեղծուած ինչ. և զի ոչ ունի, և *ո՛չ ոք* ասէ ի հեթանոսացն այսպիսի բան. այլ ամենքն խոստովանին թէ աստուած է աստուած. և ո՛չ անծնելութիւն աստուած: - 38. Ո՞ ոք է ընդ մէջ որդւոյ և հօր շաղկապ՝ զի հրաւիրեսցէ զնա յորդէգրութիւն հօր. և զի *ո՛չ ոք*: - 39. Առ որս ասեմք՝ թէ որդի ո՛չ ասի անդրանիկ վասն գոլոյն ի կարգէ ստեղծուածոց, զի *ո՛չ ոք* ստեղծուած՝ էառ զբնութիւն աստուծոյ որպէս որդին: - 41. Վասն այն *տեառն* ընկրկեաց զօրհնականն թէ միայն ծայրագոյն բարի է՛ աստուած. և ի մարդկանէ *ո՛չ ոք* ունի զայս: - 47. Որ ցուցանէ թէ՝ ամենևին ժամն այն *ո՛չ ումեք* է հասանելի յեղելոցս, այլ առաջին անեղ բնութեանն աստուծոյ: - 48. Նախ այսպէս. *ո՛չ ումեք* սրբի տաճար, բայց միայն աստուծոյ. որպէս ասէ սաղմոսն, «տէր ի տաճար սուրբ իւրում»: - 57. Որ ցուցանէ թէ՝ ամենևին ժամն այն *ո՛չ ումեք* է հասանելի յեղելոցս, այլ առաջին անեղ բնութեանն աստուծոյ: - 48. Նախ այսպէս. *ո՛չ ումեք* սրբի տաճար, բայց միայն աստուծոյ...: - 57. Ութևտասներորդ՝ *ո՛չ ոք* իմանալի ստեղծուած և մասնաւոր՝ կարէ հաղորդիլ բազմաց: - 59. Իսկ թէ անկար, և յառաջ եկեալքն ի նմանէ անկար. և *ո՛չ ոք* ի նոցանէ աստուած: - 62. Իսկ եթէ անկարգ բղխեն, և բղխեալն ի նոցանէ անկարգ. և այսպէս *ո՛չ ոքն* աստուած: - 63. Եւ կամ թէ *զո՛չ ոքն* ասիցէք, ահա նո՛ր աղանդ չարափառութեան և խափանումն տրնօրէնութեան մեծի խորհրդոյն: - 68. Ա՛րդ՝ ի մարդկանէ *ո՛չ ոք* ետես զաստուած, և որդի կուսին ո՛չ ետես որպէս դուդ ասես. սո՛ւտ է ապա և պատմութիւնն զոր ինչ ուսոյց մեզ. զի ո՛չ է տեսեալ և պատմէ. ահա անդունդք հայհոյութեան. զոր ի կարգիս լռե՛մ: - 96. Ա՛րդ՝ եթէ զհայր *ո՛չ ոք* ի յօտարաց ճանաչէ՝ և ո՛չ որդի ճանաչէ ըստ քեզ, եղիցի և որդին օտար ի հօրէ: - 96. Նախ՝ զի ասեն վարդապետք թէ *ո՛չ ումեք*

խրատու մեղանչեաց, և *ո՛չ ումեք* օգնութեամբ նորոգեսցի: - 150. Տասներորդ՝ գործ բութեան ո՛չ ինչ ունի մեղք. զի ըստ բնութեան գործելով *ոչ որ* մեղանչէ ասէ փիլիսոփայն. իսկ կամացն գործ՝ մեղանչական է. վասն որոյ կամաւորին գով և պարսաւ հետևի: - 156. Իսկ միւս զօրութիւնն որ է փոփոխական՝ ի գոլն և ի չգոլն կարէ՛. և անկար առ *ո՛չ որ* է: - 168. Երկրորդ՝ առաջին ստեղն է հայր. *ոչ յումեքէ*. միջինն որդի ծնունդ ի հօրէ. վերջինն հոգի բղխումն ի հօրէ և ելումն յորդւոյ. զի որդւովն երևի. և հարթ հաւասար աստուածութեամբ և արարչութեամբ: - 178. Վասն այն պա՛րտ է զժամանակ կենցաղոյս ի բարին ծախել. զի զառաջին ժամանակն *ո՛չ որ* կարէ վերստին ստանալ: - 199. Զի և ներկայ ժամանակս որ յայտնի երևի, այսպէս աներայտ և անկայուն է. զի *ո՛չ որ* կարէ զվայրկեան ժամանակի մի ստուգել...: - 199. Նախ՝ զի *ոչ որ* ճանաչէր զհայր կամ զեղբայր իւր. այլ ես զքեզ հայր գիտէի, և դու զայլ ոմն եղբայր. և լինէր մեծ շփոթումն: - 238. Ամենայն մարդոյ թիւ կենաց չափեալ է առ աստուած. և *ո՛չ որ* կարէ սահմանն անցանել...: - 291. Երրորդ՝ զի թէ և դառնային մերձ ի մահ, ամենայնքն ընդ ապաշխարութեամբ մեռանէին. և *ո՛չ որ* արդարութեան պսակին արժանաւորէր: - 292. Երկրորդ՝ զի *ո՛չ որ* կարէ ելանել և տեսանել: - 294-295. Նմանապէս և զայս սահման լեզուի *ո՛չ որ* կարէ փոփոխել. ո՛չ բռնաւոր և ո՛չ իշխան. բայց միայն աստուած որ եդ զսա: - 298. Եւ մինչ զգիրն յառաջ կալան թէ այսո՛ւ փորձիմք, այլ *ո՛չ որ* գիտաց կարդալ՝ բաց յեբրայեցւոցն. վասն այն ասի եբեր, թէ զառաջին լեզուն նա՛ եբեր: - 299. Զի տղայ մանուկ երթեալ *ո՛չ որ* գիտէր զնա. և *ո՛չ* նա *զոր* ճանաչէր զի քանանացի՛ էր և աննման վարուց նոցա: - 300. Ութերորդ՝ զի էառ իսահակ զհարսն և ուրախացաւ ի տան մօրն իւրում սառայի. որ զվեց ամ փրկեալ գոյր և *ո՛չ որ* մտեալ: - 305. Իսկ յայլմէ ո՛չ դնի աստուծոյ անուն. ո՛չ բնութեան. և ո՛չ անձնական. զի *ո՛չ որ* է նախ քան զնա, և ո՛չ հաւասար նմա: - 312. Երրորդ՝ ի քանան *ո՛չ* մնաց *որ* ի նոցանէ, և *ո՛չ որ* ի յելսն յեգիպտոսէ: - 314. Վեշտասաներորդ՝ զառիւծ ննջեալ *ոչ որ* իշխէ զարթուցանել. զի իւր կամաւ ննջէ և յառնէ: - 316. Զառաջիկայն և զմիտս մարդկան *ո՛չ որ* գիտէ. ո՛չ հրեշտակք և ո՛չ դևք և ո՛չ մարդիկք. բայց միայն աստուած որ քննէ զսիրտս և զերիկամունս: - 336. Երեմիա և աշակերտն՝ տարան ի գիշերի զտապանակն և որ առ նմայն էին՝ ի լեառն սինա. և անդ կնքեցին ի վիմին անուամբն աստուծոյ ասելով, *ո՛չ որ* բացցէ զսա՞ թէ ոչ մովսէս որ եբերն. և *ո՛չ որ* բացցէ՝ թէ ոչ ահարօն: - 345. Սուտակ՝ որ է՛ լիգրոնն. զոր *ո՛չ* գիտէ *որ* զուստն. նման է կապուտակ աւազոյ. ոմանք ասեն յամազունից բերաւ ի կանանց աշխարհէն: - 348. Երես զիսկութիւն աստուածութեանն նշանակէ. զոր աստի կենօքս *ո՛չ որ* կարէ տեսանել...: - 350. Երրորդ՝ զօրաւոր հարուածքն եգիպտոսի, որ *ո՛չ որ* կարէր հասանիլ և բռնել զպատիժն. որպէս ոք հարկանէ և դարձեալ բարձրացուցանէ զձեռն: - 395. Եւ որ ո՛չ եթող զոք մերձ. զի *ո՛չ որ* լինի գործակից յարութեան մերոյ. որպէս և ո՛չ ստեղծմանն: - 444. Նա՛խ՝ անպատշա՛ճ էր թէ հայր էր մարմնացեալ. զի հայր անսկիզբն է. և յայնժամ *ո՛չ որ* լինէր առանց սկզբան: - 468. Յասիցելոցս *ո՛չ որն* յարմարի միաւորութեան փրկչին. բայց միայն երրորդն առաջնոյն. այսինքն էութիւն առ էութիւն անշփոթ խառնումն. որպէս հոգւոյ և մարմնոյ. զոր և յառաջիկայդ ցուցցի: - 476. Երրորդ առ այսոքիւք՝ միաւորութիւն անուանեմք և զխառնուածս երկուց նայից ըստ զանազան որակութեանց. յորում *ո՛չ որ* ի խառնեցելոցն զիւր ծայրագոյն որակութիւնն սեռաբար կարօղ է պահել. այլ շփոթեալ անկանի ի ծայրագոյն որակութենէն. որպէս զջուրց և զգինեացն խառնուած, և զմեղերաց: - 476. Իններորդ՝ յայնժամ *ո՛չ որ* լինէր արանց միջնորդ և բարեխօս: - 480. Դարձեալ կարէ ասիլ Ութերորդ պատճառս, առ ի ցուցանել թէ հոգին *ո՛չ ումեք* առատապէս պարգևի, եթէ ոչ յիսուս ի սիրտ նորա յատկապէս փառաւորեսցի: - 522. Եւ *ո՛չ որ* գնաց առ պետրոս ի հռօմ. և *ո՛չ* պետրոս յայլ վիճակս ձեռնադրեաց *զոր:* - 546. Որպէս ասելն, ամենայն մարդ է արդար. *ո՛չ որ* մարդ է արդար: - 550. Իսկ յազգէս հայոց *ո՛չ որ* իշխեաց խօսիլ հերձուած և զայլոցն ո՛չ ընկալան: - 551. Ապա ուրեմն յա՛յտ է լուծումն տարակուսանացդ ըստ կարգի. և *ոչ որն* ի նոցանէ հակառակ գոն միմեանց որպէս ասացաւ: - 558. Զի կա՛մքն հրամայէ զգործ հաւատոյն. զի *ո՛չ որ* հաւատայ, եթէ ոչ կամեցօղն: - 572. ...և առանց ցանկութեան մեղաց *ո՛չ որ* կարէ ծնանիլ. բայց միայն տէր մեր որ առանց ցանկութեան ի կուսական արգանդէ ծնաւ՝ ո՛չ ունէր զմեղս սկզբնական: - 592. ...զի թէ յայտնի կերպարանօք լինէր միս և արիւն, *ո՛չ որ* իշխէր մերձենալ: - 597. Յաւատն է՛ զի *ո՛չ որ* ի յերկուցն պղծեսցի օտար անկողնով. որպէս այն որ թողու զհաւատն և ուրանայ բանիւ: - 610. Եւ թէ յայսմանէ նս փոխէր, լինէր *ո՛չ որն* անփոփոխ: - 662. Եւ անմեղութեան, որ *ո՛չ որ* է առանց մեղաց. բայց նա՛ միայն որ ծնաւ առանց մեղաց: - 666. Եւ *ո՛չ որն* է առեալ արդեամբ զգործոց հատուցումն մինչ ի գալուստն դատաւորին որպէս ասէ աւետարանն: - 689. Առ առաջինն ասեմք թէ՝ որպէս *ո՛չ որ* ընդ քրիստոսի ի խաչ ելեալ է՝ բայց միայն աւազակն...: - 697. ...այսպէս և *ո՛չ որ* առեալ զպատիւ, բայց

միայն աւազակն: - 697. Նստցի ի տաճարին զոր շինեսցեն նմա հրէայքն. և ասասցէ թէ, յառաջ քան զիս *ո՛չ ոք* է ճշմարիտ քրիստոնեայ. այլ նեռինք են ամենայնքն: - 707. Իսկ թէ ո՞րքան է միջոցն ի մէջ խե աւուրցն՝ *ո՛չ ոք* գիտէ: - 709. Յինգերորդ՝ զի *ո՛չ ոք* ապականացու զայլ ոք ամբողջ կարէ պահել որպէս յայտ է ի նիւթական իրս ամենայն: - 733. Իններորդ, փա՛ռք է զդատաստանն առնել. զի նմա տըւաւ իշխանութիւն ասէ դանիէլ. և հայր *ո՛չ զոք* դատէ. այլ զամենայն ետ որդւոյ որպէս ցուցաւ: - 737. Նախ ի տեսանելն զերեսս աստուածային որ է անճառելի ցնծութիւն. որպէս ասեն վարդապետք, այն է ճշմարիտ և միայն ուրախութիւն, և ո՛չ յաղագս ստեղծուածոյ, այլ ի ստեղծողին լինի. զոր իբրև ստանայցես, *ո՛չ ոք* բարձցէ ի քէն: - 762. Անդ եղիցի ճշմարիտ փառք, ուր *ո՛չ ոք* գովեսցէ մոլորութեամբ. և *ո՛չ* գովեսցի *ոք* սուտակասպասութեամբ: - 765. Ո՛չ է իշխանութիւն ի վերայ երկրի որ համեմատեսցի նմա որ եղև. զի *ո՛չ յումեքէ* երկնչիցի: - 765. Ճշմարիտ պապիւ՝ որ *ո՛չ ումէք* անխայեսցի արժանաւորի: - 765. Եւ դարձեալ, ո՞վ քեզ ասաց զայդ. իբր թէ՝ *ո՛չ ոք:* - 787

**ՈՉՔՈՐ** - Աւազակն որ յաջմէն խաչեցաւ՝ դէմաս էր անունն. և որ յահեկէն՝ կոստաս: ...Որ եթուք՝ *ոչքոր:* - 495

**ՈՌՈԳԵՄ +** Քսանգ՝ զերկիր *ոռոգէ:* - 207. Նոյնպէս և տունկք դրախտին ըմպեն զջուր գետոյն որ *ոռոգանէ՛* զդրախտն: - 225. Երկրորդ՝ յերկրէ՛. զոր արեամբ *ոռոգեաց:* - 287. Այլ եէմ լեառն է և դաշտ, յանձրևոյ *ոռոգի*. իբր թէ խնամօքն աստուծոյ լինի անձրև աւելի և նուազ, ի ժամու և տարաժամու ըստ արժանեացն ձերոց: - 398. Իսկ երկիրն նոր օրինացս ո՛չ բնական իմաստութեամբ հեթանոսաց *ոռոգի*, այլ շնորհօքն աստուծոյ և հաւատով դալարի: - 398. Նոյն և երկիրն վերինն եէմի յանեզրական ծովէ՝ յամպոյ հոգւոյն և շնորհացն իմաստութեան *ոռոգի*. վերին և ներքին դասք հրեշտակաց՝ և մարդկան: - 398-399. Երրորդ ասի ողորմութիւն, իբր թէ զարմանալի իմն քաղցրութեամբ *ոռոգել* զսիրտս: - 459. Դարձեալ՝ որպէս զսերմանիս թաղեալ յերկրի՝ դարձեալ ջրով *ոռոգանեմք*... - 680. այսօր հոգևոր ջրով դարձեալ *ոռոգանեմք*, զի բուսցի ի գարնանաշարժ յարութեանն: - 680. Այլ և արդեամբք սրբոց *ոռոգեցաւ*, լիցի որպէս զդրախտ աստուծոյ անուշահոտ ծաղկօք և մանուշակօք և մարդօք զարդարեալ և գեղեցկացեալ: - 759. *Ոռոգեալ* ի բղխմանէ կենարար գետոյն. որ հեղու ի նոսա անսպառապէս: - 767. Ի բղխմանէ կողահոս աղբերացն *ոռոգեալ* և զօրացեալ: - 768

**ՈՌՈԳՈՒՄՆ +** Չորրորդ՝ ցոյցք է ամենահրաշ խնամոց արարչին. որ զհոսանուտ ջուրս ներքին՝ ի մէջ լերանց ի վե՛ր հանէ ի պէտս կենդանեաց որ ա՛նդ են. այլ և *յոռոգումն* ուր գետք ոչ ելանեն: - 209

**ՈՍԿԵԱԿ +** Ակատ. զակատն չգտաք իրք ասացեալ նմա. *զոսկե՛կն* է դրել. և ասէ ոսկէգոյն զնա. և գտանի ի քաղդէացիս: - 348

**ՈՍԿԵԲԵՐԱՆ կմ ՈՍԿԷԲԵՐԱՆ +** Պատասխանեմք նախ, որպէս ասէ *ոսկէբերանն* թէ՝ նորածնեալքն աւազանաւն՝ ըստ չափու շնորհացն արժանաւորեին իմաստութեան, թարգմանութեան, և այլն. այսպէս և ոմն շնորհս ընդունէր աղօթելոյ կարգաւորապէս. զի ի նմանէ ուսանէին և այլքն աղօթել: - 59. Չորրորդ՝ զի ասէ *ոսկեբերանն* «անկեղծ սիրոյ կապանք է առատութիւն նեղութեանն». զի կեղծաւոր և անկեղծ սէրն առ աստուած փորձութեամբն երևի: - 162. Տասներորդ՝ ամենայն սուրբ վարդապետք ուղղափառաց որպէս եփրեմ՝ *ոսկէբերանն* կիւրեղ՝ աթանաս՝ և այլք, անապական գրեն և խոստովանին զմարմինն սուրբ: - 499. Յնգետասաներորդ՝ ի մէջ գիշերի՛ է յարութիւնն. որպէս ասէ *ոսկէբերանն* ի յարութեան ճառին, և սուրբն նիւսացին, և բարսեղ կեսարացին, և գրիգոր սկևռացին, և այլք... - 514. Եւ *ոսկէբերանն* սահմանէ՝ «հաւատն է սրբազան կրօնից հիմն»: - 571. Դարձեալ ասեմք, թէ սուրբն *ոսկեբերան* ըստ չորից հակառակի՛ և ստէ՛ զնոսա: - 702. Նա՛խ՝ զի նոքա ժամանակեայ հուր ասեն և տանջանք հոգւոց. իսկ *ոսկեբերանն* մի հուր և տանջանք յաւիտենից: - 702. Երկրորդ, նոքա զարդարս ո՛չ ասեն անցանել ընդ հուրն. այլ *ոսկեբերանն* ամենեցուն անցանել և պայծառանալ ասէ: - 702. ...և *ոսկեբերանն* զմահացուն լինիլ ասէ փայտ խոտ և եղէգն. և նիւթ յաւիտենից այրելոյն: - 702. Չորրորդ, սոքա իւրաքանչիւր հոգւոցն ասեն ընդ բաժանիլն. և *ոսկեբերանն* ի վերջին օրն համընթաց այրեցումն: - 703. Ասեմք նախ՝ եթէ սուրբն *ոսկեբերան* մեկնէ զբանս զայս աստի դատաւորաց և հատուցմանց այսպէս: - 704. Նմին նման և մեք յուսասցուք արժանաւորիլ տեսութեանն քրիստոսի. զի թէ և ի դժոխս իցեմք՝ ա՛յն է արքայութիւն մեր. և ո՛չ թէ յերկրի կամ յայլում տեղւոջ ըստ սրբոյն *ոսկէբերանի:* - 759. Որպէս ասէ *ոսկէբերանն,* «ես առաւել ծայրագոյն կսկիծ քան զգեհեանն համարիմ զմերժիլն ի տեսութենէն աստուծոյ»: - 763

**ՈՍԿԵԳՈՅՆ (**տեքստում՝ ՈՍԿԷԳՈՅՆ**) +** Ակատ. զակատն չգտաք իրք ասացեալ նմա. զոսկե՛կն է դրել. և ասէ *ոսկէգոյն* զնա. և գտանի ի քաղդէացիս: - 348

**ՈՍԿԵԶԱՐԴԵՄ +** Եւ անապական վարուք *ոսկէզարդեալ* ունի յինքեան զերկուս կտակս: - 345

**ՈՍԿԵՂԷՆ +** Ապա զի՞նչ էր արկանելիքն սպիտակ, և պսակն *ոսկեղէն* որպէս ասէ տեսիլն: - 690. Եւ *ոսկեղէն* պսակն զթագաւորելն ընդ քրիստոսի որպէս ցուցաւ: - 712. Եւ թէ որո՞ց ոմանց լիցի *ոսկեղէն* պսակն...: - 712. Վասն որոյ երից սոցա պատշաճի թագն *ոսկեղէն:* - 712

**ՈՍԿԵՊԱՏ +** Այլ թէ հարցանեն զորքանութիւն սիւնիցն. **ծ** սիւն ի մէջ խորանին. և **թ** սիւն վարագուրացն. և մի թափանց ի մէջն յարևելից յարևմուտս. որ լինի **կ**. և **ձ** սփռիչ. և **խ** նիգք. և ամենայնն *ոսկեպատ*. որ բովանդակն լինի **ճձ** ի ներքս: - 343. Եւ արտաքոյ *ոսկեպատ*, զի արտաքին գործովք սրբեցան: - 346

**ՈՍԿԵՏԵՍԱԿ +** Չորրորդ՝ պղինձն *ոսկէտեսակ*. և տեառն մարմինն աստուածատեսակ փառօք և ներգործութեամբ: - 386

**ՈՍԿԻ +** Թէպէտ բնութեամբ միաւորին՝ տարբերութիւնն ո՛չ բառնի. զի տարբերութեանցն մնալ՝ խափանումն ո՛չ առնէ միաւորութեանն. որպէս հոգւոյ և մարմնոյ. *ոսկւոյ* և հրոյ. և ծանի՛ր՝ զի կրկին է տարբերութիւն. բաղկացական և բաժանական: - 85. Չորրորդ՝ զի թէ պատւական նիւթով երևէին որպէս արեգակն՝ հուր՝ *ոսկի*՝ և ակն. գիտէաք թէ զնոյն բնութիւն ունին, և ո՛չ այլ ինչ գերիվերոյ: - 132. Եւ այսպէս են մարմնաւոր բարիք. որպէս *ոսկի* և այլ ինչ. որ ի ձեռն ողորմութեան պատճառէ՛ զիանդերձեալ բարիսն: - 160. Վեցերորդ՝ զի պատւական ակն և մարգարիտ և ազնիւ *ոսկի* ի ծովս գտանի: - 207. Եւ որպէս *ոսկին* յերկրէ՛ է և անապական. և քարինք կարծրացեալ ի հրոյ և անապական մնան: - 225. Կարգաւոր էր նախ պատրաստել զարքունիս որ է երկինք և երկիր. և զգահոյս որ է՛ դրախտն. և զսպասաւորքն որ են կենդանիքն. և զմեծութիւնս տնկոց և բուսոց. մանաւանդ *ոսկւոյ* և արծաթոյ և ականց ի սիրտ երկրի գանձել. և ապա՛ թագաւորին բնակիլ: - 230. Ինն**ժ**, յովսէփ ստացաւ *ոսկի* և զարծաթ և զերկիրն եգիպտացւոց՝ փարաւոնի...: - 314. Այլ ա՛յս է ճշմարիտն, զի ամենայն բարեկամքն որ ժողովեցան յետոյ և մխիթարեցին զնա՛, իւրաքանչիւրքն բերին մէն մի որոջ ոչխարի և **դ** դրամ *ոսկի* անգիր ընծայեցին նմա ի սատար խրախութեանն...: - 326. Երկրորդ՝ լա՛ւ համարեցաւ զերկնաւոր գանձն՝ քան *զոսկի* և քան զարծաթ կորստական: - 338. Իսկ *ոսկին*, զի անապակա՛ն է բնութիւնն աստուծոյ: - 340. Դարձեալ՝ *ոսկի* սափորն է՛ անապական կոյսն. և մանանայն բանն աստուած հոգւով և մարմնով միացեալ յարգանդի աստուածածին կուսին: - 340. Եւ այլքն պղինձ արծաթապատ. որպէս սիմքուֆտ, և կամ *ոսկի:* - 343. Ամենայն նիւթ *ոսկւոյն* **իթ** տաղանդ. և արծաթոյն **ճ** տաղանդ. և պղնձոյն **հ** տաղանդ: - 343. Եւ *զոսկին* ետուն յապաշխարութիւն, որք ետուն *զոսկի* որթոյն: - 344. Եւ ճարտարապետք խորանին՝ բեսելիէլ *ոսկւոյ* և արծաթոյ: - 344. Իսկ պատելն *ոսկի* ներքոյ և արտաքոյ, զի աստուածատեսա՛կք են և մաքուր: - 344. Ներքոյ և արտաքոյ *ոսկին*՝ հոգւոյն և մարմնոյն մաքրութիւնն: - 345. *Ոսկւով*, հոգի և մարմին միաւորեալ աստուածութեամբն: - 345. Երկրորդ ի *յոսկւոյ*, և նոքա անապակա՛ն են բնութեամբ: - 346. Աշտանակ *ոսկի*, անապական զօրութիւնն աստուծոյ որ խնամէր զնոսա և բարձեալ կրէր: - 346. Խոյրն, վարշամակն. և Միթրն և թիթեղն *ոսկի*, պատկերք սրբոցն նկարեալ. և երկոքին Բազպանն, փոխանակ անդրավարտեաց: - 348. Իսկ հնոյն խորհուրդ, **դ** որակ նիւթոցն՝ **դ** տարերացն. և *ոսկին* անապական՝ երկնից: - 348. Բաց յայսցանէ **բճծբ** գլուխ *ոսկի* տուփ խնկով: - 359. Երկրորդ՝ երկուքն ևս ահարոնի. զի բուրվառն *ոսկի* զմաքուր քահանայութիւնն ցուցանէ. և գաւազանն զիշխանութիւնն: - 382. Այլ և *ոսկին* ի յաւարացն թագաւորին է բաժին. և արծաթն թագուհւոյն և կամ իշխանացն: - 390. Երրորդ, վասն վերջնոցն լաւութեան ընտրեցան և խոտանքն. որպէս զհող զքար և զխեցցէ մորթն պատւեմք վասն *ոսկւոյ* և արծաթոյ և մարգարտին: - 398. Եւ նիւթն *ոսկի* և արծաթ և պղինձ և երկաթ. այլ և խունկն և պատւական ակունքն ի հեթանոսա՛ց էր: - 440. Քսանն**դ**, եբեր բազում պատարագս. *ոսկի* և ակն և խունկ: - 441. *Ոսկի* անբիծ հաւատն. և ակն վարք պատւական. և խունկ աղօթից: - 441. Եւ զայս հրոյ իմանի որ առ գալստեամբն քրիստոսի ոմանց մաքրութիւն ներելեացն լինիլ և առաւել պայծառանալ. որք *ոսկի* և արծաթ և ականս պատուականս շինեցին: - 488. Զոր օրինակ հուրն հալէ *զոսկին* և բոցն ջնջէ ի նմանէ զժանկն: - 497. Ութերորդ՝ մանանայն յանապատի էր օրինակ անապական մարմնոյ փրկչին. և է՛ անապական մինչև ցայսօր ի մէջ *ոսկի* սափորին. ապա ուրեմն ճշմարիտ մարմինն քրիստոսի էր անապական ի կուսական արգանդէ աստուածածին կուսին: - 499. Այլ միաւորեալ ընդ ինքեան բաժանեաց զմեղս ի հոգւոյն և զապականութիւն ի մարմնոյն. որպէս հուր ընդ *ոսկւոյ* միաւորեալ բաժանէ զժանկն ի նմանէ: - 500. Զի՞նչ է հիմն որ եդեալ է յիսուս քրիստոս, և շինուածն *ոսկի* արծաթ և այլն: - 531. Չորրորդ և ուղիղ, որպէս ասէ տեսիլն հրեշտակք առնուին զխունկս որ է՛ աղօթք սրբոցն, և

նուիրէին ի սեղանն *ոսկի* որ է՛ քրիստոս. և ի նմանէ բուրէր ծուխն առ հայր: - 625. Նշանակէ՛ զպատկերն *ոսկի* **կ** կանգուն երկայն և **զ** լայն: - 637. *Ոսկի* է հաւատն ի մեզ: - 645. ...որպէս հրովն փորձի *ոսկին* թէ լաւ է թէ վատ...: - 664. *Ոսկի* է խոկումն հաւատոյն: - 702. Դարձեալ՝ *ոսկի* է հաւատն և դաւանութիւնն անապական. և Արծաթ՝ անաղտ մաքրութիւնն ի մեղաց. և Պատւական ակունք՝ զանազան առաքինութիւնք: - 702. *Ոսկի*՝ ճշմարիտ և արդար բանքն...: - 702. Դարձեալ, *Ոսկի* է հաւատն սուրբ. և Արծաթ յոյսն պայծառ: - 702. Եւ ի յայս հուրս անցեալք՝ որ զգեցեալ են *ոսկի*՝ արծաթ՝ և ականս, առաւե՛լ պայծառանան: - 702. Զի՞նչ է բուրվառն *ոսկի* և քնարն ի ձեռս նոցա: - 713. Բուրվառն *ոսկի* և խունկն՝ այսինքն զի զաղօթս երկրաւորաց սուրբքն և հրեշտակք մատուցանեն քրիստոսի: - 713. Կամ *ոսկի*՝ արծաթ՝ ականս. զի արդարքն առաւել պայծառանան և ապա՛ բազմին ի սեղան հօրն երկնաւորի պաշտելովն ի քրիստոսէ: - 721

**ՈՍԿՐ +** Զպահս լուծեալ ի միս ձկան, և նաւակատեաց զմիս առանց *ոսկր* ուտեն: - 34. Եւ յոչ էից՝ զի սակաւ հիւթն այն՝ ո՛չ կայր միս և *ոսկր* և ջիլ. կամ մորթ: - 37. Նմանապէս մարմին և արիւն և *ոսկր* և այլն աստուծոյ ասել՝ զաստուած ցուցանէ: - 93. Դարձեալ՝ ա՛յլ է բնութիւն մարմնոյն. ա՛յլ *ոսկերացն*. և ա՛յլ է ջիլն և երակն և մորթն և մազն և իւրաքանչիւր մաղձքն. ըստ այսմ ապա ասա՛ և բազում բնութիւնս քրիստոսի: - 176. Եօթներորդ՝ զի *ոսկերքն* է քարուտն: - 215. Յինգերորդ՝ տարր հողոյն է ի մեզ *ոսկերքն* և բոլոր մարմինն: - 232. Վեցերորդ՝ այլ և *ոսկերքն* նման են քարանց: - 232. Նախ՝ մազն ի վերոյ. և մորթն. և միսն. վերին *ոսկրն*. և ներքին պինտ *ոսկրն*. խելապատակ մաշկն. և ուղեղն: - 239. Որ է՛ մազն. և մորթն. և միսն. և արիւնն. և ջիլն. և *ոսկրն*. և ուղեղն ի մէջն: - 240. Զի ուղեղն ի մէջն սնուցանէ *զոսկրն*. և ջիլն կապէ՛ առ միմեանս զի մի քակտեսցին *ոսկերքն*. և արիւնն կերակո՛ւր է նոցա: - 240. *Ոսկերքն* ի ներքոյ սիւն է մարմնոյն, և մորթն ծածկո՛յթ է մսոյն և այլոցն: - 240. Քանի՞ են զօդուածք և *ոսկերք* մարդոյն: - 243. Ասեն բժիշկք թէ, **բճխը** *ոսկր* է մարդոյն. ջլօք պնտեալ և կապեալ ի մի մարմին. և է՛ այսպէս: - 243. Նա՛խ գլուխ մարդոյն **դ** *ոսկր* է: - 243. Ներքին կզակն և վերին. և **բ** քնատեղն մին *ոսկր*. և գագաթն: - 243. Եւ ատամունքն **լբ** *ոսկր*. որ լինի բովանդակն **լզ** *ոսկր:* - 243. Շլնիքն **ե** *ոսկր* լիսեռնաձև: - 243. Եւ ողնաշարն լիսեռնաձև **ժը** *ոսկր:* - 243. Աջ կողքն **թ** *ոսկր:* - 243. Դարձեալ, **ը** *ոսկր* է ի թիկանցն մինչ ի խաղալիքն այսպէս: - 243. Բէճն **բ** *ոսկր:* - 243. Ծղինն **բ** *ոսկր:* - 243. Բազուկն **բ** *ոսկր:* - 243. Արմունկն **ա** *ոսկր:* - 243. Խաղալիկն **ա** *ոսկր*. եղև **ը**: - 243. Եւ թաթք ձեռացն **լբ** *ոսկր*. որ լինի բովանդակ ձեռքն ի թիկանցն **խ** *ոսկր:* - 243. Դարձեալ, **ը** *ոսկր* մինչ ի թաթ ոտիցն այսպէս: - 243. Ճռանն **բ** *ոսկր:* - 243. Անդամանն **բ** *ոսկր:* - 243. Ծնկանն երկու *ոսկր:* - 243. Սրունքն **բ** *ոսկր*. և Թաթք ոտիցն **լդ** *ոսկր:* - 243. Որ լինի բովանդակ *ոսկր* ոտիցն **խբ**: - 243. Եւ ուբն *ոսկր* կուրծքն. որ լինի **բճխը** *ոսկր:* - 243. Բայց կին մարդոյն **դ** *ոսկր* աւելի՛ է քան զառն. այսինքն է ծննդական անդամոցն: - 243. Եւ դարձեալ թիւ *ոսկերացն* **մխը**. և **բժ**ան անդամքն, և **ե** զգայարանքն յօդեալ առ միմեանս, լինին **յկե** զօդուածք: - 244. Եւ է՛ բնութիւն *ոսկերաց* ցուրտ և չոր. զի խոնաւն և լոյծն ի ցամաք և ի ցուրտ մածնու և լինի *ոսկր*. որպէս ջերմն և խոնաւն լինի միս: - 244. Եւ նոյն ջիլն կապէ՛ և շարապնդէ՛ զամենայն յօդուածս *ոսկերացն:* - 244. Իսկ կցկցեալ. զի յօդեալ և կցեալ են *ոսկերք* մարդոյն առ իրեարս. և ի ներքոյ միս՝ և արտաքոյ մորթն է պատեալ: - 293. Երրորդ՝ զպնդագոյնն, որպէս *ոսկր* կամ եղջիւր՝ ո՛չ ուտեմք: - 296. Եւ մեք նորա կոչիմք զգեստ, զի ընտանի անդամք և *ոսկերք* եմք մարմնոյ նորա: - 318. Չորրորդ՝ և մի՛ այլազգիքն ցրւեսցեն *զոսկերսն:* - 411. Իսկ ի մահուն որ յարոյց զմեռեալն յորժամ մերձեցաւ ի *յոսկերսն* եղիսէի, ի տիպ մահուն քրիստոսի որ մահուամբն մեզ կեանք և յարութիւն շնորհեաց: - 446. Այլ և ո՛չ ի մսոյ կամ *յոսկերաց* որպէս եւա ի կողէն: - 470. Այլ և *ոսկր* միս ջիլ և մորթ՝ մի անդամ շարադրեն: - 476. Այսպէս և մարդս եկեղեցի՝ *յոսկերաց* և յերակաց և ի մսոյ: - 613. Այլ և մարմին և *ոսկր* և ջիլք և այլն քակտին և ի հող լուծանին: - 667. Եւ լուասցէ զբազմաշարաւ զազրացեալ *ոսկերս*՝ մեղօք մեռելոյս: - 773. Զի որպէս սիւն տան, և *ոսկերք* մարմնոյ, և բրգունք աշտարակի: - 788

**ՈՍՈԽ +** Երրորդ՝ ի քանանացիս. յետ յարութեանն ընդ *ոսոխացն* դիւաց: - 394. Ութերորդ՝ աստ յեկեղեցւոյ ամօթ. և անդ ի սրբոց հօգւոց. և յարութեանն առաջի աստուծոյ և հրեշտակաց *ոսոխ* լինելով: - 394. Եւ տէրն *զոսոխն* մեր սատանայ իբր զառիւծ պատառօղ՝ տարածմամբ ձեռաց ի խաչին սատակեաց: - 422. Երեսունևվեց, Վկայքն և *ոսոխքն:* - 661. Ճանապարհ կեանս այս. և *ոսոխ* մարմինն. և դատաւոր միտքն. դահիճ խիղճ մտացն որ չարչարէ՛ զհոգին և ոչ ազատէ մինչև զամենայն պարտսն վճարեսցէ ապաշխարութեամբ: - 704. Յինգերորդ, զի ճշմարիտն և սուտն ի մէջ երկուցն երևին. այսինքն դատաւորին և *ոսոխացն:* - 742. Եւ դատաւոր քրիստոս. և *ոսոխք* դիւակա՛նն գունդք: - 743. Նմանապէս և չարեացն վկայ՝ *ոսոխն* մեր սատանայ և գործակիցքն. և խիղճ մտացս որով տանջիմք

միշտ: - 743. Դիտելի՛ է, զի ի ճանապարհի աստի կենաց երկու են *ոտնք*. այսինքն դատախազք: - 743

**ՈՏՆ +** Մարերի. որպէս թուլանան մայրիք տերևօք և *ոտովք*. և լինին մայր թռչնոց և գազանաց: - 201. Եւ որպէս ի տաղաւարքն կողերս՝ տերև՝ և *ոտ* մատուցանէին. զնոյն և քրիստոսի մատուցին յաւուրն ողոգոմեան ի գալուստ նորին յերուսաղէմ: - 374. Զտարւոյն *ոտն* ջարդեն ի վերայ բնոյն. և որ աճէ՛ զայն քաղեն և հիւսեն. Պտղակորոյս որպէս ծիթենի: - 638. Այսմ փայտի *ո՛տ* են գ կարգ յեկեղեցի աստուծոյ. այսինքն ամուսնացելոց, ժուժկալողաց, և կուսանաց: - 755. Կամ փայտիս այսորիկ *ոտք* կարեն ասիլ միաւորեալ բնութիւնքն քրիստոսի. այսինքն աստուածութիւննն և հոգին և մարմինն: - 755. Կամ թէ *ոտք* փայտիս այսորիկ ասին եօթանքս այսորիկ. այսինքն՝ քրիստոսի ծնունդն, մկրտութիւնն, չարչարանքն, ի դժոխս իջումն, յարութիւն, յերկինս համբարձումն, և հոգւոյն սրբոյ պարգևումն: - 755. Յորս իբրև *յոտս* թռչունք երկնից՝ այսինքն սուրբքն հանգուցեալ են և բունի՛ն: - 755

**ՈՏԱՅՆԱՆԿՈՒԹԻՒՆ +** Եւ ճարտարապետք խորանին՝ բեսելիէլ ոսկւոյ և արծաթոյ: Եւ ուրիաս փայտի: ...եւ եղիաբ *ոտայնանկութեան:* - 344

**ՈՏԱՔԱՆՑ +** *Ոտաքանց* եղէ ես որպէս զարմաւենի: - 638

**Ո՞Վ +** Զի թէ ասեն էր յառաջ քան զծնունդն որդի. իսկ էութիւնն հօր հայրութիւն է. և թէ ոչ էր որդւոյ հայր՝ բառնի յէութենէն իւրմէ, իսկ թէ ոչ էր և յետոյ ծնաւ՝ *ո՞ւմ* արդեօք իցէր հայր. զի ո՛չ էր որդի: - 36-37. *Ով* արիանոսք՝ զի թէ որպէս զմեզ զորդի շնորհօք ասէք և արարած, մեք զի եմք շնորհօք որդիք՝ ունիմք ընդ մեզ և ընդ հայր շաղկապ. իբր թէ զլար զհոգին սուրբ: - 39. Պատասխանեմք, *ո՛վ* յանդուգն մեկնիչ դու...: - 41-42. Ասեմք մարմնասիրեացն եթէ՝ մարմնակա՛ն կարծէք զծնունդն ըստ մեզ *ո՛վ* ծիծաղելիք: - 52. *Ո՛վ* երկաբնակք, զքրիստոս աստուած մարդացեա՞լ խոստովանիք, թէ մարդ աստուածացեալ: - 68. Արդ՝ *ո՛վ* բաժանօղք, ո՞ր բնութիւն է ի քրիստոս երկրպագելի: - 68. *Ո՛վ* երկաբնակ՝ դու զո՞ր բնութիւն ի քրիստոս ասես մի տէր. զաստուծոյն՝ թէ զմարդոյն: - 68. ...հարցանեմ զքեզ *ո՛վ* բաժանօղդ, ի քրիստոս զո՞րն բնութեամբ ասես որդի աստուծոյ: - 69. *Ո՛վ* բաժանօղդ՝ որոյ որդւոյ ասես սրբիլ հոգւովն սրբով: - 69. Ասա՛ *ո՛վ* բաժանօղդ, ո՛ր բնութիւն ասէ զայս ի քրիստոս: - 69. Իսկ թէ զմարդն ասես նստեալ, ահա՛ զբանն զրկեցեր յաթոռակցութենէ հօր՝ *ո՛վ* սիրօղդ առանձնութեան: - 70. Ասա՛ ինձ *ո՛վ* բաժանօղդ՝ ո՛ր դիմաց գոլ ասացեալ զայս: - 70. Ասա՛ *ո՛վ* երկաբնակ, որո՞յ իմանաս զասելս: - 70. Եւ այժմ առ քեզ խօսեսցուք ըստ վկայութեան կարգիս *ո՛վ* նեստորական երկաբնակ և մարդադաւան որոշօղ քրիստոսի, և որոշեալ ի շնորհաց նորին: - 98. Ապա թէ կամիս զորոշումն բնութեանց ի ներքս բերել *ո՛վ* երկաբնակ, մի՛ ասեր բ բնութիւն. այլ գ. այսինքն զմարմնոյ և զհոգւոյ և զբանին բնութիւն: - 176. *Ո՞վ* մեծի աղետիս և վշտալից տարակուսի. զի այսպիսիքս զմի միաւորութիւն տեառն ուրանան...: - 176. Երկրորդ՝ զի իշխան և զորաւո՛ր է մարդն. պիտո՛յ է զի լինիցի զօր և իշխեցեալ. և ապա՛ իշխանն և զօրաւորն. ապա թէ ո՛չ՝ *ո՞ւմ* լիցի իշխան և զօրավար: - 230. Առաջին պատճառ, զի ընդ ինքեան մարդկայինս բնութիւն այլայլո՛տ է և ցաւօք. և յորժամ աստուած ևս բազմացուցանէ, *ո՞վ* կարէ զաղէտն պատմել: - 292. *Ո՞վ* գրեաց զգիրն յոբայ: - 320. Հինգերորդ՝ զի որպէս զկանխագէտ ոչ ասաց սաւուղայ թէ դու *ո՞վ* ես որ զիս փրկես ի սաւուղայ: - 428. Եւ *ո՞վ* թլփատեաց զյիսուս: - 454. Եւ *ո՞վ* կարիցէ մտախոհ լինիլ: - 470. *Ո՞վ* թլփատեաց զյիսուս: - 486. զՇարականն *ո՞վ* է ասացեալ. Եւ սակաւ լուծումն նոցին: - 527. Արդ՝ ե՛կ ես և դու փորձեսցուք թէ *ով* զդաւանութիւն առաքելոյն ունի և զկանոնքն՝ նա՛ է հնազանդ նմա: - 548. Այլ դու *ո՛վ* այրդ աստուծոյ մաքրամիտ և ճգնազգեաց միայնաւոր սուրբ հայրդ սահակ, թէ և զիջանես եղբայրական սիրով խնդրել բանս ի մէնջ. սակայն կարօղ ես և զթերին լնուլ և զյաւելորդն կշռել. և զմեզ օգտեցուցանել ի ներգոյէ՛ քոյին պայծառամիտ սրբութեան սրտի: - 558. Իսկ թէ աստուծոյ՝ առ *ո՞վ* աղաչեն. ապա ուրեմն անհաշտ մնայ: - 566. *Ո՞վ* է կարգեալ զսաղմոսս: - 631. Զսուրբն աստուածն *ո՞վ* է ասացեալ: - 631. Զփառաւորեալն *ո՞վ* է ասացեալ: - 633. Զշարականս *ո՞վ* է ասացեալ: - 637. և հարցանէին՝ զի՞նչ և *ո՞վ* է սա: - 638. Զօրհնութիւն կարգաւորութեանցս այսոցիկ *ո՞վ* է արարեալ...: - 658. ...և *ո՞վ* է բերեալ յազգս հայոց: - 658. Նաև ո՛չ դատաստան. զի *ո՞ւմ* լիցի դատաստան. զի ամենեցուն վճարեալ է: - 694. Իսկ յատուկն է, որպէս զղջացելոց. ըստ այնմ «ողորմեցայց *ում* ողորմեցայց» և այլն: - 747. Գիր քոյոյ վսեմամիտ խոհեմութեանդ *ո՛վ* արփիածին հարազատ, և վերնոյն սիօնի նազելի զաւակ Գէորգէոս Րաբունեայ պետ: - 773. Եւ դարձեալ, *ո՞վ* քեզ ասաց զայդ. իբր թէ՝ ո՛չ ոք: - 787

**ՈՎԲԷԹ** - Հռուք՝ որ ծնաւ *զովբէթ* ի բոյոսայ: - 300. Բոյոս ամաց **ծը**՝ ծնանի *զովբէթ*. առեալ բոյոսս իւր կին զհռութ մովաբացի: - 452. *Ովբէթ* ամաց **ճա**՝ ծնաւ զյեսսէ: - 452

**ՈՎԳ** - Եւ զե թագաւորսն մադիամու՝ և զսեհոն՝ և *զովգ*՝ յայնկոյս յորդանանու: - 414

**ՈՎԿԻԱՆՈՍ +** Եւ դարձեալ՝ ա՛յժմ է եղանակ նաւելոյ ի վերայ *ովկիանու:* - 200

**ՈՎՍԱՆՆԱՅ +** Զի՞նչ է ի **ե** օր ծննդեանն *Ովսաննայ* ի բարձունս: - 638. Այլ և զընծայիլն ի տաճարն. յորում երգէին մանկունքն՝ *ո՛վսաննայ*. որպէս յողոգոմեանն: - 638. Զի՞նչ է յայլ լեզուաց *Ովսաննայ*. Պռօսխումէ. և այլն: - 644. *Ովսաննայ*՝ ի յեբրայեցւոցն ի մերս՝ փրկութիւն լսի...: - 644

**ՈՎՍԻԱ** - Նոյնպէս և արդարութիւնն երբեմն յերկարէ՛ զկեանս որպէս առ եզեկիա. և երբեմն կարճէ՛ որպէս առ *ովսիայ:* - 292. Նա՛խ՝ զի հրամանաւն աստուծոյ էր. որպէս պոռնկութիւնն *ովսէի* և սպանութիւնն փենեհէսի ո՛չ էր մեղք: - 337. Նմանապէս եզեկիա և *ովսիա* և զօրաբաբէլ: - 337. Եւ որպէս *ովսէէ* ո՛չ է պոռնիկ՝ և ո՛չ սամուէլ մարդասպան զի հրամանաւ աստուծոյ էր: - 389. Գիշերի սատակեցան զօրքն ռափսակայ. և վասն *յովսիայ* զի հարաւ և մեռաւ: - 413. Վասն է՞ր հարաւ *ովսիայ* յորժամ խոստացաւ խաղաղութեամբ ննջել: - 446. Տևեցին զամս **մծ**. մինչ *յովսէէ* որդի ելայ. որ գերի վարեցաւ յասորեստան. և բարձաւ թագաւորութիւնն իսրայէլի: - 446. ...և երեք ամ պաշարեալ էառ զնա. և գերի վարեաց զթագաւորն *ովսէէ* որդի ելայ. և զ**ժ** ցեղն բովանդակ տարաւ յասորեստան: - 447. Որ եղև յերեքտասան ամի թագաւորութեանն *ովսէի* բարեպաշտ արքայի յուդայ: - 447. Յետ որոյ քեղկի քահանայ որ էր հայր երեմիայի՝ եգիտ զերկրորդ օրէնքն և մատոյց առ *ովսիա.* և գնաց առ ողդիկին մարգարէ հարցանել...: - 447. ...և նա՛ վկայեաց վասն գերութեան ժողովրդեանն. այլ վասն բարեպաշտութեան *ովսիա* ո՛չ գնաց գերի: - 447. Արդ յերեքտասան ամէ՛ *ովսիա* մինչև ցմետասան ամն սեդեկիայ որ վերջին գերեցաւ՝ լինի **խ** ամ. և նաբուգոդոնոսորայն **ի** ամ. և որդւոց և թոռանց նորին **ծ** ամ. որ կատարի **հ** ամ մինչև յառաջին ամն կիւրոսի որ արձակեաց զգերիսն: - 447. Որոց առաջինն *Ովսէ* է: - 450

**ՈՎՐԷԲՆ** - Սա՛ սպան *զովրէբն*, զզէբն, զզեբէէ, զսաղմանա, և զայլսն: - 420

**ՈՏՆ +** ...հետքն՝ ընթացից *ոտիցն* հետևին. և ո՛չ *ոտքն* հետոցն: - 8-9. Ութևտասներորդ՝ Զի մասունքն քրիստոսի աստուած է, *ոտք* և ձեռք և գլուխն: - 30. Իսկ անհատ ասի՝ զի ո՛չ քակտի և ո՛չ հատանի որպէս բոլորն ի մասունս. զի թէ բաժանես զնա որպէս ի հոգի և ի մարմին, կամ *յոտս* և ի ձեռս և ի գլուխս, ո՛չ մնայ բոլորն: - 86-87. Եւ ո՛չ աննմանամասնաբար. որպէս պետրոս՝ *յոտս* և ի ձեռս և ի գլուխս. զի նոքա ո՛չ միմեանց և ո՛չ բոլորին հոմանունաբար ասին: - 88. Զի՞նչ պատասխանեմք երկաբնակացն որք հարցանեն զմեզ, թէ մասունքն քրիստոսի աստուած է՝ այսինքն *ոտքն* և ձեռքն և գլուխն ապա բազմաստուածք էք: - 91. Ասեն զայս թէ՝ և ո՛չ մարդ չէ. այսինքն ձեռքն և *ոտքն* քրիստոսի. թող թէ աստուած: - 91. Այլ զորօրինակ՝ մարդոյ ձեռն և *ոտն* մարդ չէ, այլ՝ մարդոյ ձեռն, և մարդոյ *ոտն*. նոյնպէս և զքրիստոս է՛ ասեն: - 91. Դարձեալ՝ որպէս ձեռն և *ոտն* մարդոյ ո՛չ է մարդ, նոյնպէս և ձեռն քրիստոսի ո՛չ է քրիստոս. և *ոտն* և այլ մասունքն ո՛չ են քրիստոս. ապա և բոլոր մարմինն ո՛չ է քրիստոս. և հոգին ո՛չ է քրիստոս. ապա թէ սոքա չեն քրիստոս, և բանն ըստ ինքեան ո՛չ է քրիստոս: - 91. Ասեն այսպէս՝ եթէ ձեռն մարդոյ է՝ զի և *ոտն* մարդոյ՝ և այլ մասունքն մարդոյ է. զի աստուծոյ մասն ո՛չ ասի: - 91. Երևի ապա զի աստուծոյ ո՛չ ասեն զմասունսն, այսինքն զձեռն և *զոտն*. ապա ըստ նոցա և մարմինն չէ աստուծոյ մարմին. և արիւնն չէ աստուծոյ. և հոգին չէ աստուծոյ. այլ ամենեքեան սոքա մարդո՛յ են: - 91. *Ոտք* է մարմինն: - 102. Երկրորդ՝ ո՛չէ և ասի. որպէս մարմին. ձեռն. և *ոտն:* - 123. Վասն է՞ր մարմինն *ոտք* կոչի քրիստոսի: - 130. Նախ՝ աստուածաբանն գրիգոր՝ *զոտքն* մարմնով տընօրէնութեանն ասէ նշանակ. զի մարմնով եկեալ զփրկութիւն մեր արար. և մարմնով համբարձաւ առ հայր: - 130. Երկրորդ՝ զի *ոտք* վերջին է մասն. և ի վերջին ժամանակս երևեցաւ մարմնով քրիստոս: - 130. Երրորդ՝ կրկին *ոտքն* զհոգի և զմարմին նշանակէ: - 130. Հինգերորդ՝ *ոտքն* են հաւատացեալք և առաքեալք նորին. և գլուխ է քրիստոս. զի անդամք և մարմին եմք նմա ըստ առաքելոյ: - 130. **Դարձեալ և ի յառակս անառակին որ դարձաւ առ հայրն՝ և ողջմամբ ընկալաւ և զգեցոյց զնա և զարդարեաց մատանի ի ձեռս՝ և կօշիկ *յոտս*. այլ ո՛չ ետ թոյլ նմա պատարագել. այլ հրամայէ՛ այլոցն**...: - 167. Երրորդ՝ առանց *ոտից* ընթանայ. առանց թևոց թռչի. առանց լեզուի խօսի. առանց ձեռաց գործէ: - 177. Ապա թէ ոչ, ո՛չ մարմին է աստուծոյ և ո՛չ *ոտք:* - 180. Հրոտից, ըստ դրութեան է. զի հո՛ւր է *ոտիցն* որ այրէ՛ ներքուստ ի վեր ջերմութիւն արեգականն: - 201. Առաջին է որ *ոտիւք* կոխի: - 210. Զի մարդն ունի զգլուխն ի վեր որպէս երկինքն. և *զոտքն* ի վայր որպէս երկիրս. վասն որոյ ամենայն ծորմունք բնականապէս զառիվա՛յր հոսին. իսկ ծառն ծռեալ ունի զգլուխն ի վայր, և *զոտսն* ի վեր. կամ թէ ծռեա՛լ ունի *զոտս* և զստեղունս յայս կոյս և յայն կոյս: - 214. Տասներորդ՝ զի **դ** *ոտքն* է նման չորից տարերաց: - 215. Եւ թռչնոյն **բ** թև և **բ** *ոտն* է. և մարդոյն ձեռք և *ոտք:* - 215. Եւ սողունք կոչին, կամ զի սողալով գնան. կամ սղացեալ են

*ոտիւք*. կամ զի սո՛ւղ են ծայնիւ: - 216. Զի թէ մարդն ունէր զբնութեամբ զէնս, որպէս թէ եղջիւր ի գլուխն. և սուր զատամունսն. ճիրանունք ի ձեռս. և սմբակ կամ կճղակ *ոտիւք*. և զայլսն, Նախ՝ զի գազանադէմ և դժւարատես լինէր ամենեցուն: - 217. Եւ զի թև և *ոտր* եղև չարին, թևք և *ոտր* իւր կտրեցան: - 219. Եւ զի զմարդն ընկէց յերկնից ի յերկիր, ընդ գարշապար *ոտից* նորա անկանի: - 219. Այսպէս մարմին մարդոյ որ քան է երկայնութեամբ ի գագաթէ՛ գլխոյն մինչև ի ներբանս *ոտիցն*, նոյն քան է լայնութիւն ի մէջ երկուց երկայն մատիցն ձեռաց: - 232. Վեցերորդ՝ զի բաժանեսցի մարդն ի կենդանեաց և ի տնկոց. զի տունկք զիակառակն ունին զարմատն որ է՛ գլուխ՝ ի յերկիր, և *զոտն* ի յերկինս: - 233. Գլխոյն հերն որպէս արմատ. և ջիլք և ոտք՝ որպէս *ոստր* ըստ ծնոյ աշխարհի: - 233. Գլուխն որպէս երկինք ի վերոյ. և *ոտքն* որպէս երկիր ի ներքոյ. զի ծանրութիւնք և ծորմունք ամենայն ի վայր հոսեսցին: - 233. Եւ որպէս սակաւ մասն *ոտիցն* ի յերկի՛ր է հպեալ և կոխէ, նոյնպէս և մեզ սակաւ պէտս մարմնոյ. այսինքն զգեստուց և կերակրոց ի յերկրէ ստանամք...: - 233. Երրորդ՝ զի զդէմս ունիցիմք միշտ ի յերկինս. և զթիկունս յերկիր. և հանապազ ի բարին յառաջեմք *ոտիւք* և ձեռօք և ո՛չ դառնամք ի չարն: - 234. Զայս ցուցանէ դէմք ի նմին կողմն, և *զոտս* յառաջ փոխել և զձեռս: - 234. **ժբ**՝ թաթք *ոտիցն:* - 241. Եւ զ ևս **բ** *ոտիցն* լինին **բժ**ան անդամք: - 241. Եւ գլխաւո՛ր անդամք են սոքա. զի թէ յայլ անդամքն՝ այսինքն աչքն՝ ականջն՝ ձեռքն՝ և *ոտքն* կամ այլն վնասի, մարդն ապրի: - 241. Դարձեալ, **ը** ոսկր մինչ ի թաթ *ոտիցն* այսպէս: - 243. Սրունքն **բ** ոսկր. և Թաթք *ոտիցն* **լդ** ոսկր: - 243. Որ լինի բովանդակ ոսկր *ոտիցն* **խբ**: - 243. Նոյնչափ միւս *ոտքն*. որ լինի **զ** քառասուն: - 243. Եւ նա՛ տայ խաղալ և շարժիլ *ոտից* և ձեռաց և այլ մասանց անդամոցն: - 244. Եւ բաց յայսցանէ՝ ի յուղեղէն **բ** **բ** երակ գայ յիւրաքանչիւր զգայարանս. **բ** յաչքն. **բ** յականջն. **բ** ի քիթն. **ա** ի բերանն. մին ի լեզուն. **բ** ի ձեռքն. **բ** ի *յոտքն*. որ լինի **ժբ**: - 244. Զի բարկացօղ են դառնայ մաղձ *ոտքն:* - 245. *Ոտր* ստուար և կարճ, յոյժ տկարի է: - 247. *Ոտր* կարի իմն երկայն՝ նենգաւո՛ր է: - 247. *Ոտր* բարակ և կարճ, չարաբարո՛յ է: - 247. Բնութիւնն *ոտր:* - 250. Յաչաց նայիլն. ի ձեռաց շարժիլն. և *յոտից* գնալն երևի: - 250. Եւ կամ ի շարժութեանց մասանց *ոտից* և ձեռաց և այլն: - 250-251. Եւ կամ որպէս պատկերագործք մինչ *զոտն* և զձեռն նկարեն՝ ո՛չ երևի պատկեր մարդոյ. այլ *ոտից* և ձեռաց: - 255. Եւ համանգամայն երևի ասեմ. զոր օրինակ նիւթն այն ունի առ ինքն ծածկեալ զմասունս մարմնոյ. զձեռս և *զոտս*, զմիս և զմազ, որ յետոյ երևին ի նմանէ: - 255. ...յորժամ ծնանին նոքա ահա՛ ի նոյն ժամն կանգնին *յոտից* վերայ և գնան, և այլն. իսկ մարդն ոչ: - 266. Չորրորդ՝ կօշիկն կարմիր. զի արեամբ չափ ի ներքոյ *ոտից* են հնազանդեալք ամենայն: - 271. Եւ փոխանակ կօշկաց՝ զամենայն ինչ հնազանդ արար ի ներքոյ *ոտից* նորա: - 271. Վեցերորդ՝ ո՛չ առնու ի գլխոյն և ո՛չ *յոտիցն*. այլ ի միջացն. զի խրատէ՛ զմարդիկ ո՛չ հաւասար գլխոյն պատուել զկինն, և ո՛չ անարգել իբրև *զոտր*. այլ միջակ պատուով չափաւորել զնա: - 276. Վեշտասաներորդ՝ որպէս կապեցաւ իսահակ *ոտիւք* և ձեռօք ի վերայ սեղանոյն: - 306. Եւ ի կատարածի դիցին թշնամիքն քրիստոսի ի ներքոյ *ոտից* նորա ասացաւ: - 314. Այլ *ոտր* զիւատացեալ անդամս իւր ասէ. զի սոքա՛ վեցեքին թշնամիքս կոխան լինին հաւատացելոց ի կատարածի: - 317. Վեցերորդ՝ հարւածս կրեալ յոբ ի բոլոր մարմինն. և տէր մեր ի ձեռս և *յոտս* և ի կողս. որ և փշով պսակեալ ապտակեալ և գան հարեալ: - 327. Եւ հանել զկօշիկս *յոտից,* այսինքն ի վերջին խորհրդոց յերկրաւորս մերձեցեալ: - 331. Այլ և լւաց ևս *զոտս* նոցա յամենայն փոշետեսակ աղտեղութեանց: - 331. Եւ յօշելն զանդամս **բժ**ան մասն ընդ ցեղիցն. և *զոտս* և զփորն լուանալն. և ողջակիզել ի վերայ պղնձի սեղանոյն: - 358. Գլուխ՝ զմիտքն նշանակէ. և *Ոտր*՝ զվարքն: - 360. Նոյնպէս և *ոտքն* ըստ չորից տարերց ընթացից: - 367. Տասներորդ՝ զմին *ոտն* ի գերեզմանէ դրեալ ծերութեամբն և պակասութեամբ: - 378. Երրորդ՝ զայն ցուցանէ որ կեանք դրախտին դարձաւ առ նոսա յանապատին անկարօտ ամենայնի. զի զգեստն ո՛չ մաշէր. այլ աճէ՛ր ընդ տղայոցն. և *ոտն* բոկ՝ և ոչ՛ կոշկոճէր...: - 397. Եւ գլուխն և ձեռն և *ոտն* հատեալ: - 425. Երկրորդ՝ զի ժողովուրդն *ոտիւք* գայր, և զձեռս տարածէր, և զգլուխսն խոնարհեալ երկիր պագանէին. վասն որոյ հատան այնպիսի մասունքն: - 426. Երրորդ՝ զի *ոտր* և ձեռք կապեալ բազումք զզաւակս զոհէին նմա. նոյնպէս և նորայն հատան: - 426. Ուստի և վեհագոյն իմացութեանց էից սերովբէն զքօղեալ զերեսս և *զոտս* մարդեղութեան խորհրդոյն պարուրեալ: - 456. Չինգերորդն է բևեռք *ոտիցն* և ձեռացն. առ միշտ յիշատակելոյ զմեզ ի միտս իւր...: - 489. Եւ յերկոսին ձեռացն և *ոտիցն:* - 492. Այլ և աղիւսաձև ակն շափիւղայ ի ներքոյ *ոտից* նորա: - 494. Այսպէս. **բ** *ոտիցն*. **բ** ձեռացն. **ա** ուսոյն վերայ. **ա** խաչին թևին. **ա** պիղատոսի տախտակին. **բ** այն տախտակին որ պատուանդան էր և *ոտքն* ի վերայ բևեռեալ: - 495. Եւ զչորրորդն յոհաննէս պատմէ միա՛յն զմագդաղենացին. և տեսեալ երկու հրեշտակս ի սնարս և *յոտս* նստեալ: - 515. Եւ այս հարցանելի է, զի թէ մագդաղենացին ընդ առաջին կանայսն եկն

զոր մատթէոս պատմէ և համբուրեցին *զոտն* յիսուսի...: - 515. Եօթներորդ, կամ թէ եգիտ ի նա երկեւան ինչ թերութեան վասն յարութեանն. իբր զի ասէ յայսմ գիշերի մերձեցայք *յոտս* իմ և ո՛չ հաւատացեր. վասն այն կրկին անգամ ո՛չ հրամայէ մերձենալ: - 517. Երեքտասաներորդ, զի մարիամ ո՛չ խոնարհութեամբ կամէր մերձենալ *յոտս* նորա որպէս այլ կանայքն...: - 518. *Ոտք*՝ կրօնաւորք և ապաշխարօղք. որք կրեն զճանրութիւնս օրինացն: - 534. Այլ և զձեռս ի հարկանել. յըմբռնել. և *զոտս* ի գնալ. համեստութիւնն ի նոսա ամենայնսն դնէ զեղանակն և զկարգն: - 581. Իններորդ, զի մկրտութիւնն է գործ քահանայութեան. և քահանայութիւնն է ազատ և ո՛չ ընդ ումեք հարկի ներքոյ. իսկ կինն ծառայ և *ոտք* է առն. վասն այսր հարկի ո՛չ է պարտ ծառային առնել զգործ տեառն...: - 589. Եւ թէ հրէա ոմն ետես զի հում միս արիւնաթաթախ տայր ժողովրդեանն. և զղջացաւ անկաւ *յոտս* սրբոյն և մկրտեցաւ: - 599. ...և ապա յետ այնորիկ լուաց *զոտս* աշակերտացն...: - 599. Եւ պա՛րտ է որ ապաշխարանքն լինի առ *ոտս* քահանային: - 601. Վերջին օծումն է խորհուրդ եկեղեցւոյ. որ տուեալ լինի հիւանդաց ի հոգէվարի օրն. յաչքն, յականջն, ի բերանն, ի ձեռքն, ի կուշտն, *յոտից* ներբանքն: - 604. Այլ ի մեծի **ե** շաբաթին օրհնեմք իւղ, զի մի՛ մեռոնն սուրբ ի հասարակաց *ոտս* մերձեսցի: - 605. Զայս գործս արար քրիստոս յորժամ սփածաւ զղենջեակ և լուաց *զոտս* աշակերտացն: - 606. Եւ ի նազերեթացոց ժողովրդանոցին դպիր ցուցաւ ի կարդալն զեսայի մարգարէն՝ *յոտն* և բացաւ գլխով: - 606. Եւ կինն պոռնիկ արտասուօքն թանայր *զոտս* յիսուսի: - 619. Իսկ մեք ո՛չ *ոտք* և ո՛չ լեզու ունիմք. այլ տիաս և տգէտ...: - 620. Տեսանէր ժողովուրդն ուր կայր աստուած, և ընդ *ոտիւքն* իբր զգործած աղիւս շափիւղայ. որ է՛ ակն պատւական. և աղիւսն խաչաձև է: - 639. ...և զբարձս *ոտիցն* և զգլուխն և զերեսս և զկուրծքն հարեալ...: - 670. ...և *ոտքն* ընթացաւ ի ծառն...: - 670. Ա՛րդ՝ եթէ ի հասարակ ժողովրդենէ իցէ ննջեցեալն, հանեն զհին հանդերձն և պատե՛ն սուրբ կտաւովք և զգլուխն փակեղամբ և վարշամակօք, և օդ *յոտս:* - 671. Իսկ կնկուղ ի գլուխ կրօնաւորաց և օդ *յոտս* և գօտի ընդ մէջ. զսպառազինիլն և զարիութեամբ ընթանալն ի պատերազմ: - 671. Օդ կամ կօշիկ *յոտս*, կուռ վառեալ զինու ընդ դէմ օդային թշնամւոյն: - 674. Վասն է՞ր *զոտքն* յառաջ տանիմք մեռելոյն: - 676. Նա՛խ՝ զի յետս դառնամք մահուամբ, այսինքն ի դրախտն և ի մայր մեր, պա՛րտ է զի նախ *ոտքն* ընթասցի: - 676. Յօր անունն ռոմելոս ասեն. զմին ձեռն և *զոտն* երկայն և մինն կարճ. զմի ակն խաժ, և զմիւսն սև: - 706. Յինգերորդ, զի դիցէ զթշնամիս իւր ի ներքոյ *ոտից* իւրոց. այսինքն կորուսցէ զնեռն և զսատանայ և զամենայն գայթակղութիւն մարդկան՝ զմեղս և զմահ...: - 737. *Ոտք* ի վեր ուղղեալք, և ի տանջանս ամենայն ուստէք ձկտեալք: - 753

***ՅՈՏՆ ԿԱԼ +*** Այն է, որ բովանդակ մարմինն այնպէս խոցոտեալ էր կեղով՝ և լուծեալ ի շարաւ և ի թարախ. որ ո՛չ կարէր *յոտին կալ* կամ սողալ ուրեք. և ո՛չ ըմբռնիւր յայլմէ: - 322-323. Վասն է՞ր ոչ ետ թոյլ մերձենալ մարիամու. և այն զի ի ճանապարհին *կալան զոտս* նորա և համբուրեցին ա՛յլ կանայք: - 517. Որպէս ժողովուրդն գնաց մերձ ի լեառնն, և մեզ պա՛րտ է *յոտաց կալ* և յառաջ գնալ և լսել: - 644. Իսկ մատռւակն *յոտն կացեալ*, նշանակէ՛ զճառայն ի գործ սպասու: - 656

**ՈՏՆԱՐԲԵԿ** - Քանի՞ են արատք արգելք քահանայութեան: ...Ութերորդ՝ *ոտնաբեկ.* յընթացս վարուց: - 370

**ՈՏՆԼՈՒԱՑ +** Այլ և զայս օծումնս ունիմք ի *յոտնալուայն:* - 604. Նոյնպէս և *յոտնալուայն* և ի խաչհամբոյրն՝ գանձանա՛կն է քրիստոսի զոր յիշատակեմք: - 684

**ՈՏՆԱԿԱՊԵՄ +** Զարեկագն և զլուսինն *ոտնակապեաց:* - 414

**ՈՏՆԱՁԱՅՆՈՒԹԻՒՆ** - Յինգերորդ՝ գզաթ էր կոյսն մարիամ. և ցօղ բանն աստուծոյ. որ աւետեօք հրեշտակապետին էջ ի վերայ նորա առանց *ոտնաձայնութեան* և ծածուկ: - 421

**ՈՏՆՀԱՐ (ԼԻՆԵԼ) +** Ութերորդ՝ ահագին տեսիլն դիւաց և վիշապաց. զոր ի կայծի կայծել հրոյն տեսանեն. և ողորմելի աղաղակ լալ ականացն և *ոտնհար լինողացն:* - 752

**ՈՐ +** Նոքա *որք* զբախտ և զճակատագիր և զհրամանն համբաւեն, ո՛չ ինչ ասեն ի կամաց մեր գործիլ. այլ զամենայն ի հարկէ՛ ասեն. զի զեղխաբար զկենցաղս վճարեսցեն: - 7. Զի ո՛չ այլ ինչ է բախտն, եթէ ոչ զօրութիւն աստեղաց. *զոր* առեալ յառաջին պատճառէն՝ հա՛րկ առնեն ի վերայ մեր: - 7-8. Որպէս արեգակն զի ո՛չ այրէ որ է հեռաւոր պատճառ. այլ հուրն ի նմանէ առեալ զջերմութիւն ի մերձ գոլով այրէ՛. որպէս յա՛յտ է ի հայելւոջն, որ առեալ զնշոյլս յարեգականէն՝ այրէ՛. ա՛յսպէս և բանս մեր ի հարկէ նոցա լինի՝ *զոր* ստորասեմք կամ բացասեմք: - 8. Ա՛յս է նոցա զրախօսութեանն կարգ, *որք* զհրամանն համբաւեն: - 8. Նախ առհասարակ հանդիպիմք ընդդիմութեանցն, եթէ *որք* զայս ասեն՝ մեղանչեն չորիւք եղանակօք: - 8. Նա՛խ, զի ըստ սոցա ոչինչ է զանազանութիւն մշտնջենաւորացն և փոփոխականացն. *որք* են երկնայինք և երկրաւորք. զի նոքա միա՛յն են ի հարկէ, *որք* միշտ նոյնպէս

ունին. որպէս հրեշտակք անմահք. և լուսաւորք երկնից. և ջերմութիւն հրոյ: - 8. Եւ *որ* անկա՛ր է ո՛չ գոլ, ի հարկէ՛ գո՛յ, և է՛: - 8. Եւ նախ առ նոսա՝ *որք* ասեն զբանս մեր ի հարկէ գոլ կամ ո՛չ գոլ: - 8. Իսկ *որք* զբախտ և զճակատագիր վերագրեն մարդկան, և զամենայն ինչ մեր ի հարկէ ասեն, այսինքն ի զօրուէ աստեղացն - 10. Դարձեալ ասեն թէ՝ բազումք ի մարդկանէ գործեն ի խառնուածոյ մարմնոյն, *որք* հարկաւորին ի շարժմանէ աստեղացն: - 10. Դարձեալ եթէ է՛ հարկ, ապա ո՛չ էր անձնիշխան կամք, այլ արդ՝ եթէ ունիմք կամք և է՛ սկիզբն գործոյն ի մեզ և առ մեզ, ապա ուրեմն ո՛չ է հարկ *որոյ* սկիզբն յայլմէ՛ է: - 11. Դարձեալ, *որոյ* է իր գործեացն՝ նորա՛ է և ներգործութիւնն...: - 11. Դարձեալ թե ի հարկէ՛ է ոչ լինին օգուտ խրատք և սպառնալիք և ուսմունք. *որովք* բազումք յորդորին ի բարիս, և հեռանան ի չարեաց կենցաղոյս: - 11. ...բոյսք *որք* յերկրի են դարմանիչք և բժշկութիւնք մարմնոց...: - 12. Նախ թէ՝ երկնային մարմինքն ո՛չ են ի չորից տարրաց. այլ են հինգերորդ տարր կամ էութիւն ըստ արիստոտէլի. և *որք* են ի պարզ տարրէ միայն ո՛չ հակակային միմեանց: - 12. ...*որք* ի միասին կործանեցան. կամ բազմութիւն զօրացն. կամ *որք* ի նաւին կային...: - 13. Այլ կառավարի երբեք ի կամս նախախնամութեան առաջին պատճառին. որպէս ասէ սուրբն գրիգոր նիւսացին ի գիրս *որ* յաղագս բնութեան մարդոյն: - 13. Ասելով թէ պատճառ ամենայնի՝ բարեաց և չարեաց մերոց ո՛չ մեք եմք, այլ է՛ առաջին պատճառն աստուած. *որք* փախչելով յառաջ ասացեալ բախտէ՛ և ճակատագրէ՛ աստեղացն, փոխանակ նոցա յառաջին պատճառն վերագրեն զիարկն. որպէս զի մի՛ ասիցեն երկու սկիզբն ըստ մանիքոսի: - 13. Եօթներորդ՝ եթէ չարն է յաստուծոյ, ապա սիրէ զչարն. և եթէ սիրէ զչարն, սիրէ և զչարագործս *որք* սիրեցին զչար: - 14. Այլ թէ գործ և կամք կրկին յաստուած, ո՛չ է պարզ մի. այլ բաղադրեալ. *որ* է անտեղի: - 14. Եւ լինէր բարին և չարն ի սեռէ աստուծոյ, *որ* է անհնարին: - 14. Այլ արդ՝ *որ* հակակայութեամբ լինի՝ նա՛խ է զօրութեամբ՝ և ապա՛ ներգործութեամբ լինի: - 14. Դարձեալ ասեմք թէ՝ աստուած ո՛չ է պատճառ. ստեղծուածոցս ի հարկէ. այլ ըստ կամաց *որով* առնէ. զի ոմանք դիպին ի հարկէ, և ոմանք ո՛չ ի հարկէ: - 15. Զորօրինակ՝ արուեստաւոր ոք կազմէ սուր ի պատճառս բարւոյ. այլ *որ* նորգործեաց չար՝ նա եղև չարին պատճառ: - 16. Դարձեալ, անձնիշխան կամքն է՛ յաստուծոյ. և է՛ յոչընչէ եղեալ. այլ ա՛րդ՝ անձնիշխան կամքն ըստ այնմ՝ *որ* յաստուծոյ է եղեալ՝ ո՛չ է պատճառ չարի. այլ ըստ այնմ *որ* յոչընչէ՝ և ցանկայ ոչընչի. այսինքն չարի...: - 16. Ասեմք նախ եթէ՝ չարն ո՛չ է յաստուծոյ որպէս բարին. զի բարին ըստ կամա՛ց է. իսկ չարն թոյլ տալով է. և ա՛յլ է կամացն *որ* յօժարութեամբ է, և այլ է թոյլ տալովն *որ* իբր ի յո՛չ կամացէ: - 17. Ութերորդ ասեն, թէ աստուած ո՛չ կամի զչար, ապա կարեմք առնել ինչ *զոր* ո՛չ կամի աստուած...: - 17. Այլ արդ *որ* սկիզբն և կատարումն է յաստուծոյ, աստուածային է ներգործութիւն. և սքանչելեաց իր: - 17. Իսկ սկիզբն և կատարումն ի մեզ, որպէս նախածանօթ ընտրեալքն յառաջ քան զլինիլն աշխարհի. *որ* այժմ բարի գործովք կատարեցին ըստ նախասահմանելոյն իւրեանց: - 18. Իսկ *որ* սկիզբն ի մէնջ՝ և կատարումն ի խնամոցն աստուծոյ, այսինքն յորժամ սկսանիմք զբարին՝ և նա՛ աւարտէ՛ ի բարին: - 18. Այլ արդ՝ չար գործոցն ո՛չ է յաստուծոյ. որպէս ցուցաւ. այլ չար պատժոցն է արդարութեանն աստուծոյ. *որ* հատուցանէ արդարապէս: - 18. Դարձեալ, չորեքկին են հատուցմունք. բարի՛ փոխանակ բարւոյ, և չար փոխանակ չարի. *որ* է՛ գործ արդարութեան: - 18. Եւ բարի փոխանակ չարի, *որ* է անբաւ գթութեանն և ողորմութեանն աստուծոյ: - 18. Մինն է արդարութեան այժմու կենացս, *որ* է փոփոխական. *յորմէ* կարէ՛ ոք ջնջիլ: - 18. Եւ միւսն է յաւիտենական նախասահմանումն աստուծոյ. *յորմէ* ո՛չ ոք կարէ ջնջիլ: - 18. Արդ՝ ժամանակեայ արդարութիւնն յայտնի է *որ* անձնիշխան կամօք փոփոխի...: - 18. Բայց նախախնամութիւնն աստուծոյ ճանաչէ զփրկեալսն, և տայ զկերպ փրկելոցն *որով* փրկին ընտրեալքն: - 18. *Որ* անձնիշխան կամօք և չար գործովք խոտեսցին չարքն: - 18. Ապա ուրեմն ամենայն ինչ *որ* յաստուծոյ է՝ բարի է, և ո՛չ չար: - 19. Ապա թէ զայս ո՛չ առնէ, անձնիշխան կամօք հետևի չարին և ո՛չ ի բնուէ, *զոր* աստուած բարի է ստեղծեալ: - 19. Ապա ուրեմն չարն ո՛չ է յաստուծոյ այլ ի մէնջ՝ կամ ի նենգութիւնէ թշնամւոյն *որ* պատրէ՛ զմեզ: - 19. Նոյնպէս և աստուած զամենայն մարդոյ փրկութիւն կամի. *որք* անձնիշխան կամօք համակամ լիցին աստուծոյ՝ փրկին. և *որք* հակառակին կամօք՝ ո՛չ փրկին: - 20. Եւ գիտելի է այս, եթէ նախասահմանութիւնն աստուծոյ առնէր հարկ գործոց մարդկան, չարի և բարւոյ, լինէր բազում անպատշաճութիւն *որ* վասն բախտին ասացեալ եղև. զորև աստ կարգեսցուք: - 20. Հինգերորդ՝ զի խափանեալ լինէր անձնիշխանութիւնն մեր. *որ* ունի զինքն առ երկոսեան կողմն: - 20. Ութերորդ՝ ընդ վա՛յր էին ուսմունք և յորդորմունք ի բարիս. *որովք* փախչիմք ի չարէն, և հասանիմք բարւոյն: - 20. Իններորդ՝ աւելորդք էին դժոխք և արքայութիւն. *որք* տեղիք են բարեաց և չարաց: - 20. Այսքան ընդդէմ նոցա՝ *որք* յաստուծոյ ասեն զբարիս. և զչարս: - 20. Իսկ ընդդէմ

մանիքեցւոցն՝ *որք* ասեն **բ** սկիզբն, չար՝ և բարի. այսպէս հանդիպեսցուք և պատասխանեսցուք ի կարճոյ: - 20. Արդ՝ նա՛խէ *որ* բաղկացոյցն՝ քան *զոր* բաղկացաւն: - 20. Ապա ուրեմն ո՛չ է երկեակն սկիզբն *որ* է՛ բաղադրեալ. այլ միակն *որ* է՛ պարզ: - 20. Եթէ ո՛չ իշխեն, ո՛չ ոք ի նոցանէ է աստուած. և եթէ իշխեն, *որ* ոք և իշխէ միայն՝ նա՛ է աստուած: - 21. Եւ ո՛չ են որպէս ստորասութիւնք և բացասութիւնք, *որ* միայն ի բա՛նն են հակակայք. որպէս ճշմարիտ, և սուտ. այլ չար և բարի՝ ի բանս և ի գործս պատահին: - 21. Եւ թէ ոք ասիցէ, այս ներհակա՛ց է *որք* փոխեն զմիմեանս. և ո՛չ ունակութեանց և պակասութեանց: - 21. Եւ է *որ* ո՛չ է է՝ և բարի. որպէս նիւթ անորակ: - 22. Դարձեալ՝ ամենայն ինչ *որ* յէից է՝ սկիզբն ունի և պատճառ. իսկ չարն ո՛չ ունի սկիզբն և ո՛չ պատճառ. վասն որոյ ո՛չ է յէից: - 22. Երկրորդ, ասեմք եթէ՝ չարն կրկին իմանի. է՛ *որ* ինքնաչա՛ր է. *որ* պարզ և ամենևիմբ չարն է. և արտաքոյ բարւոյ և էութեան է. *որ* ո՛չ ուրեք է. և ո՛չ երբեք. և ո՛չ էր. և ո՛չ է. և ո՛չ լինիլ կարող է. *որ* է ո՛չ ինչ: - 22. Այսպէս և բարին՝ է՛ *որ* պարզ և միեղէն բարի է. որպէս աստուած. զի անփոփոխ և միշտ բարի է. զի էութեամբ բարի է. և բարին էութիւն է աստուծոյ: - 22. Եւ է՛ *որ* խառն բարի է. որպէս առ մեզ պատահեալ բարիս *որ* ունակութիւն է. զի ա՛յլ է էութիւն մեր, և ա՛յլ է բարի յէութեան մերում: - 22-23. Եւ բարին մի է և ի միո՛յ պատճառ է *որէ* աստուած. թէպէտ առ մեզ ի բազումս բազմանայ: - 23. Չարն ո՛չ է է, և ո՛չ գոյ. *որո՞վ* զանազանի ի պարզ ոչ է էն. որէ՛ ամենևիմբ ոչինչ: - 23. Յաւասար են ի յոչինչ գոլն չարն *որ* ներհականայ բարւոյ, և ոչինչն *որ* ներհականայ էի: - 23. Աստուած անսահման է և անպատճառ. և չարն ըստ ինքեան անպատճառ և անսահման. *որո՞վ* զանազանին: - 23-24. Այսմ տեսութեանս *որք* արժանաւորին, նոքա երանին և անքակ միանան ի սէր նորին որպէս հրեշտակք: - 24. Ո՛չ է ըստ չարափառացն ասել ուղղակի՝ թէ նախանձու կամ վասն փառաց որպէս ասեն, զի անգիտութեամբն պատուեսցի. ընդունա՛յն է կարծիքս այս. ասել *զոր* չէ՛ արժան անախտ և պարզ բնութեանն աստուծոյ: - 24. *Որ* զամենայն մարդիկ կամի զի կեցցեն: - 24. Զի ամենայն իր *որ* դիւրաւ գտանի՝ դիւրաւ արհամարհի: - 24. Զորօրինակ ո՛չ է անզգուշագոյն յառել ի բոլորակս արեգական՝ զի շրտնու և ի սակաւուն *զոր* ունի. ըստ այսմ խընայեաց աստուած ի յազինս մարդկային, զի մի՛ կրիցեմք ըզկիրս զանկելոյ արուսեկին. *որ* ո՛չ կարացեալ տանիլ մեծութեան փառացն՝ զրկեցաւ և ի չափաւորէն: - 24. Չորրորդ՝ զի *որք* կապեալ եմք ի մարմնի՝ անհնա՛ր է անմարմնապէս տեսանել զնա: - 25. Այս է զի ի լուր պատմութեանց նախնեացն՝ կամ ի կարգէ՛ իրաց՝ կամ ի տեսս զգալեաց՝ ի ծանօթս գամք աստուծոյն ճշմարտի. *յորմէ* հաւատն լուսափայլեսցի: - 25. Արդ՝ պիտո՛յ է անպատճառ պատճառ բոլորից պատճառաւորաց, *որ* նա ինքն է աստուած: - 25. Եւ այս կամ յանբաւս ելեալ, կամ գտեալ զանսկիզբն սկիզբն, *որ* է աստուած: - 25. Զի ո՛չ նա այսմ և ո՛չ սա այնմ կարէ միակ գոլ. վասն որոյ հա՛րկ է գոլ այնպիսի միակ՝ որ և ամենայն բազմութեան և միակաց է՛ միակ. *որ* է աստուած: - 26. Իսկ երրորդ գլուխն *որ* է՛ տեսութեամբ զգալեաց յերկինս և յերկրի: - 26. Ըստ որում ոմն ի բնախօս արանց նկատմամբ առաջնորդականին՝ վարաթևեաց ի սկիզբն առաջին՝ թէ է՛ ոմն *որ* շարժէ՛ զերկնային մարմին: - 26. *Որոց* պատասխանեն վարդապետք եկեղեցւոյ...: - 27. Առ *որս* ասեմք եթէ՝ բանս այս «ամենայն» ո՛չ այնպէս նեղագոյն առեալ լինի ի սուրբ գիրս՝ որպէս առ փիլիսոփայսն: - 27. Ասեմք թէ՝ զբանս զայս ասէ մարգաէն վասն խաղաղութեան *որ* եղև սակաւ մի յառաջ քան զգալուստն քրիստոսի՝ և ի բոլոր ժամանակս քրիստոսի, և յետ նորա **խ** ամ մինչև ապստամբեցին հրէայքն հռոմայեցւոց տէրութեանն: - 27. Ա՛րդ՝ յորժամ ծնաւ քրիստոս՝ այնպէս խաղաղութիւն էր՝ *որ* մին մարդ տիրէր ամենայն աշխարհի: - 27. Ասեմք եթէ՝ գոգ և մագօգն՝ հոգևորապէս իմացեալ լինին ամենայն հալածօղք եկեղեցւոյ. *զորս* սատակեսցէ՛ տէր յիսուս զամենեսեան...: - 28. Եւ այսպէս յա՛յտ է *որ* մեսիայն եկեալ է: - 28. Դարձեալ ի վերայ սաղմոսին *որ* ասէ, «զարթիր փառք իմ». ասէ մեկնիչն և աւանդութիւն հրէիցն թէ՝ խօսի աստ ի վերայ չորից թագաւորացն *որք* հալածեցին զիսրայէլ: - 28. Իններորդ՝ օգոստոս կայսր. *որ* իբրև զերկաթ մանրեսցէ զամենեսին: - 29. Տասներորդ՝ Մեսիայն *որ* է՛ առաջին և վերջին: - 29. Չորրորդն՝ ի մօրէ միայն առանց հօր. *որ* է քրիստոսին: - 29. Այլ և զամս ծննդեանն քրիստոսի՝ և վասն եօթներորդացն դանիէլի՝ գտցես ի չորրորդ թագաւորութեանց վերջքն ի **լ** համարն. *զոր* ընդդէմ հրէից գտցես բան: - 29. Առաջին *Որ* ասեն, կամաւ ծնաւ, թէ յոչ կամայ: - 29. Նախ՝ *որք* աստիճան դնեն Երրորդութեանն. և ի յայլումն ասեն զհոգին. որպէս պատահումն: - 29. Այլ և ընդդէմ նոցա՝ *որք* արարած ասեն զբանն աստուծոյ, և զհոգին: - 30. Երեքտասաներորդ՝ *Որք* զհոգին՝ ի հօրէ՛ և յորդւոյ ասեն ուղն գլխով: - 30. *Որք* զաչս իմաստից յիմանալի ճառագայթիցն խուսափեցին թիւր կամօք, ...*որոց* դատաստանն ի բնէ ո՛չ դատարկանայ. և կորուստն ո՛չ նիրհեսցէ: - 31. *Որք* հերձեալ ըստ ինքեան սարտուցան ի կենաց. և զհերձուած կորստեան ուսուցին բազմաց: - 31. *Զորոց* պատճառս

մլորութեանն **ը** են ասացեալ հետեւօղք ուղղափառութեան: - 31. Վասն այնորիկ ո՛չ երևի ճշմարիտ նոցա, *զոր* ո՛չ ըմբռնէ միտք. և ո՛չ այլ իրիք հաւատան, բայց միայն զայն՝ *զոր* իմանան: - 31. Նոյնպէս զիմանալի խորհուրդս և զգիտութիւնս *զոր* տկարանայ միտք, կարողանայ հաւատքն տեսանել. այլ ո՛չ ունի հաւատ՝ քան զտեսութիւն մտացն: - 31. Երկրորդ՝ է՛ դարձուցանել զիմացումն ի հաւատալեացն, և յայնցանէ *որ* ածեն զմարդն առ հաւատալն...: - 31. Նոյնպէս ո՛չ կարէ իմանալ յորժամ ի սուրբ գրոց և ի սքանչելեաց և ի բանից սուրբ վարդապետաց՝ դարձուցանէ զմիտքն. որպէս ասէ առակն՝ պակասամիտն ոչ ընդունի զբանս խոհեմութեանց. բայց միայն զայն՝ *որ* շրջին ի միտս նորա: - 31. Եւ զոր ինչ տեսանէ աչք արծըւին՝ ո՛չ կարէ տեսանել աչք մարդոյ. այնպէս բթամիտն ո՛չ իմանայ, *զոր* իմանայ նրբահայեացն և ուսեալն յաստուծոյ. *զոր* եդ աստուած ուսուցիչ այլոց. որպէս մարգարէքն, և առաքեալքն, և վարդապետք: - 31. Չորրորդ՝ է՛ հեռաւորութիւն հաւատալեացն. զի *որք* ո՛չ կրթին ի գործ իմացման...: - 31. Եւ այնպիսիքն տրամաբանել ո՛չ կարեն վասն հոգևորին. որպէս ի ծնէ կոյրն վասն գունոց, քանզի ասեն վարդապետք՝ աստուած լոյս է ո՛չ մարմնոց, այլ մտաց. *զոր* թէ ոք ո՛չ տեսանէ՝ կո՛յր է: - 32. Վասն որոյ *որ* հե՛ղգ է ի խնդրել զպարզևս զայս, ո՛չ կարէ հաւատալ: - 32. Ութերորդ՝ է՛ անկարգ ախորժակն. *որ* քարշէ՛ զմիտսն առ ներհակս հաւատոյն...: - 32. Այլ և ատելութիւնն դարձուցանէ զմիտս բազմաց ի հաւատոցն. որպէս ատելութիւն և նախանձ փարիսեցւոցն՝ ո՛չ տային թոյլ հաւատալ ի քրիստոս. թէպէտ տեսանէին զամենայն նշանսն *զորս* առնէր...: - 32. Իններորդ՝ զի նոցա բանականն է մոլորեալ. և ո՛չ ցասումն և ցանկութիւնն. *յորոց* վերայ բանն բռնադատէ խղճիւն, և ստիպէ զնոսա յուղղութիւն. այլ ինքն կառավարն խոհեմութիւնն մոլորեալ ո՛չ ուղղի: - 32. Տասներորդ՝ զի կամակո՛ր են ի չար շաւիղն. *որոց* բժշկութիւնն դժարին է ...: - 32-33. Իսկ *որ* զկամսն է չարացուցեալ, զճանապա՛րհն ունի թիւր. և որքան ընթանայ՝ մոլորի: - 33. Ուստի հեշտութիւն և աւանդութիւն յիրաւի խառնեալ ընդ միմեանս, և հակառակասիրութիւն և ինքնահաճութիւն յառաջ եկեալ, *որով* զինեալ պնդին ընդդէմ ուղղութեան...: - 33. Երկրորդ՝ զի ամենայն մեղք զերկիւղն աստուծոյ սանձ ունի. *որով* և զղջանայ: - 33. Իսկ հերձւածօղ գիտութեամբ ամբարշտին. *որոց* ծա՛նր է պատիժն: - 33. Եւ *զորս* ես աստ պարկեշտութեամբ լռեմ, յընթանրական թղթին յոհաննէս ի նեռն առակէ ասելով. «արդէն իսկ նեռինք եկեալք են. զի ամենայն *որ* ուրանայ թէ յիսուս չէ՛ Քրիստոսն՝ նա իսկ է նեռն»: - 34. Նոյնպէս և հերձւածօղք պղծեն զտաճարն աստուծոյ և զհաւատն սուրբ՝ *որով* քրիստոս ի մեզ բնակի, և մեք ի նա՛: - 35. Վեցերորդ՝ հակառակէ քրիստոսի՝ և քրիստոնէից. և սոքա հակառակին սուրբ եկեղեցւոյ և ուղղափառ հաւատոյ. և *զոր* բանն աստուած առեալ զմարդկայինս բնութիւն միաւորեաց ընդ իւրում աստուածութեանն...: - 35. Եւ այլս բազում բաղդատութիւն գոլով հերձւածողի և նեռինն. և *զորս* տէրն գնեաց՝ սոքա ուրացեալք՝ ածեն ի վերայ անձանց զերագահասն կորուստ: - 35. Եւ *զոր* ասեն՝ ա՛յս է տարակուսանք: - 36. Պատասխանեմք թէ՝ ամենայն հաւանութիւն *որ* է կամք յետ խոկմանցէ և իմաստութեանց. և քրիստոս է աստուծոյ իմաստութիւն ըստ առաքելոյ: - 36. *Որ* է տարակուսանք այս, եթէ գոյր ոմն մեծ քան զհայր՝ զի բռնադատեաց զնա՛: - 36. Առ *որս* ասելի է թէ՝ ո՛չ կամաւ, և ո՛չ յոչ կամայ. զի պատկեր և նկարագիր էութեանն հօր է որդի, ըստ առաքելոյ: - 36. Իսկ թէ ոչ կամաւ. ո՛ է *որ* զնա բռնադատեաց. զի բնութիւնն ողջախո՛հ է. և յայտնէ զայս կուսութեամբ կեալն բազմաց: - 36. Այլ մեզ մի է *որ* շարժիցին և շարժումն...: - 36. Զի թէ կամաւ, կամքն էր ապա յառաջ քան զէութիւնն. *որ* անհնար է և յեղեալքս: - 36. Ի յայս տարակուսանքս՝ *որ* է ստութիւն յերկուց կողմանց, բառնի էութիւն հօր. և լինի արարած որդի: - 36. Զի թէ ի ժամանակի, ո՞ էր այն *որ* պարունակէր զժամանակս: - 37. Եւ թէ յոչ ժամանակի, և զի՞նչ էր նոյն ինքն ժամանակն *որ* գոյացաւ ի սկիզբն լինելութեանն: - 37. Այլ այս չէ բաւական. զի զմի իրն ինքեան մերձ ասէ *որ* անհնա՛ր է: - 37. Չորրորդ՝ զի առաջին դրեր զպակասութիւնն, և ապա՛ զունակութիւնն. *որ* է՛ հակառակ ասացելոցն: - 38. Հինգերորդ՝ զի *որ* եդեր նախկին զպակասութիւնն, բարձեր զէութիւնն հօր և որդւոյ: - 38. *Որ* ետես զիս՝ ետես զհայր իմ: - 39. *Զոր* հայր մեր է ըստ ստեղծմանն և հանդերձելոյ աշխարհին: - 39. Թէպէտ մեկնեն և այլ ազգ, թէ *որ* զմարդկայինս բնութիւն հաւասարեցոյց փառաց իւրոց և հաղորդ արար աստուածութեանն...: - 39-40. ...*որ* զմեր նուաստ և տկար բնութիւնս միացոյց ընդ իւրում աստուածութեանն, և անտեսանելին տեսանիւր՝ և ծառայի կերպիւ շրջէր վասն տնօրէնութեան՝ ասի փոքր յայս միաւորութեանս քան զհայր. իսկ ըստ այնմ *որ* է՛ անճառ և նախքան զյաւիտեանս ծնունդ ի հօրէ՛, հաւասա՛ր է հօր և ոչ փոքր: - 40. Զի ո՛չ էր հայր մեծ քան զնա՝ ի *յոր* երդնոյր. զի *որք* երդնուն՝ ի մեծագոյնսն քան զինքեանս երդնուն. ապա ուրեմն հաւասա՛րէ որդի հօր և ո՛չ փոքր որպէս ասէ առաքեալն: - 40. Եւ գիտեմք հաւաստի թէ որդի էր. զի հրեշտա՛կ անուանէ զնա

գիրն. և զի հայր երբէք հրեշտակ ո՛չ կոչեցաւ՝ այլ որդի ըստ եսայեայ մարգարէի, *որ* «հրեշտակ մեծի խորհրդոյ» կոչէ զորդի. *որ* եղև մեծ խորհրդոյս սպասաւոր. այսինքն փրկութեան մերոյ՝ մարդանալովն իւր: - 40. Այլ զի խոնարհեցաւ ի բարձրութենէ փառացն և ընդ նուաստ բնութեան մերում միաւորեցաւ. ա՛յս է *որ* առաքեալ ասի: - 40. Այլ ասեմք զչորրորդ տեսութիւնս յաղագս մարդեղութեանն. զի *զոր* ասաց «ստեղծեաց՝»...: - 41. Իսկ այլ վարդապետք ասեն թէ՝ բանիւս այսու՝ ցուցանի կերպ աստուածային ծննդեանն. քանզի ի ծնունդն՝ ծնեալն առնու զբնութիւն ծնողին *որ* է՛ կատարելութիւն: - 41. Առ *որս* ասեմք՝ թէ որդի ո՛չ ասի անդրանիկ վասն գոլոյն ի կարգէ ստեղծուածոց, զի ո՛չ ոք ստեղծեալ՝ էառ զբնութիւն աստուծոյ որպէս որդին: - 41. Այլ ասի անդրանիկ՝ զի նա՛ էառ ի հօրէ զայն՝ *որով* ստեղծան ամենայնքն: - 41. Դարձեալ անդրանիկ է ըստ շնորհաց հոգւոյն *զոր* ընկալաւ ո՛չ վասն կարօտութեան՝ զի լիապէս ունէր այլ զի գլուխ էր մեր՝ ընկալաւ՝ զի յանդամս իւր սփռեսցէ: - 41. ...*զոր* ա՛նդր է քան զնա՝ ո՛չ ուրանայ: - 42. *Յորմէ* յա՛յտ է թէ և ի կատարածին ո՛չ հեռանայ: - 42. *Որով* յա՛յտ է թէ յետ ծերութեան մարդկան՝ նոյն ինքն է աստուած. և զայլն նմանապէս իմասցիս: - 42. ...անհնա՛ր է ասել զմի և զնոյն էութիւնն ինքն ինքեան հնազանդ և անհնազանդ ըստ այնմ *որ* բան է. այսինքն զպարզ աստուածութիւնն: - 42. Այլ *որ* եղև փոխանակ հնոյն նոր անդամ. և նզովք կոչեցաւ վասն իմ և մեղք այն *որ* ո՛չ արար զմեղս, և ելոյծ զանէծս և եբարձ զմեղս: - 42. Այսպէս և զանհնազանդութիւնս մեր. *զոր* ոմանք ուրացութեամբ և կէսք ախտիւ՝ իւրն վերագրէ գլուխ գոլով անհնազանդ անդամոցն: - 42. *Որով* ցուցանի կատարեալ սէրն նորա առ մեզ արդեամբք և ճշմարտութեամբ...: - 43. Ութերորդ՝ զի *որ* զփորձ էառ չարչարանացն՝ օգնեսցէ *որք* ի չարչարանս իցեն: - 43. Բայց է և այլ իմն տեսութիւն խորին և գեղեցիկ. զի նա՛ վասն սրբութեան չարչարեցաւ. և *որ* ոք ևս չարչարեսցի վասն սրբութեան՝ մի և նոյն է դիտաւորութիւն երկուցն. յայնժամ օգնեսցէ նմա...: - 43. Մինն *որ* է աստուած՝ իսկապէս մեզ, և նմա ըստ մարմնոյն: - 43. Եւ միւսն *որ* է՛ հայր՝ նմա իսկապէս, և մեզ պիտակապէս: - 43. ...աստուած վասն մարդկութեանն, և հայր փառացն *որ* է բանն աստուած ի բնութենէ հօրն ծնեալ անմարմին. *որ* յետոյ միաւորեցաւ ի մարմին: - 44. Երրորդ՝ ըստ ո՛չ պատշաճի. որպէս ո՛չ կարեն պահել որդիք առագաստի մինչ ընդ նոսա իցէ փեսայն *որ* է քրիստոս: - 44. Զի թէ մարմնապէս տեսանես. ուրախութեան էր ժամանակն գալստեան և ո՛չ սգոյ *որ* է պահք և ապաշխարանքն: - 44. Ապա առ ըստ ոչ ախորժանացն թէ աշխարիք *որք* են աշխարհասէրքն՝ ո՛չ կարեն ատել զաշխարհասէրսն: - 44. Հինգերորդ՝ *որ* բնութեամբ անկարելի է. որպէս ծնեալն կրկին ծնանիլ. և յուղտու ընդ ասեղ անցանել: - 44. Նմին իրի թէ ոչ հայր և ոչ որդի զի որդի հօրն է որդի՝ ըստ այսմ ապա ո՛չ էանայ աստուածութիւնն *որ* անկար է, որպէս ասացաք: - 45. Բայց և այս բան՝ հանգոյն առաջնո՛յն է իմանալ. *որք* միտս ունին և ո՛չ նուազին: - 45. Տարակուսելի է առ այս, զի թէ հա՛րկ է *որոց* բնութիւնքն մի գոլ՝ նոցա և կամքն և ներգործութիւնն մի լինիլ. ընդէ՞ր ապա զի մարդկային բնութիւնս մի է և նոյն հօրն և որդւոյն՝ և ո՛չ է կամքն և գործքն մի: - 45. Եւ թէ արար հայր առանց որդւոյ, անիմա՛ստ արար. զի որդի է իմաստութիւն հօր ըստ առաքելոյ. և կամ այլ իմն իմաստութեամբ *որ* է՛ սուտ ամենևին: - 46. Նախ՝ *որ* այժմ ասաց զհայր միայն ճշմարիտ աստուած, նոյն և զինքն ասաց ճշմարտութիւն: - 47. Այս յայտնի է զի որդի էր *որ* յերկրի մարմին զգեցաւ: - 47. Իսկ մի և ճշմարիտ ասելովն՝ յատկացնէ՛ ի բազում և ի սուտ աստուածոց հեթանոսաց *որ* անուամբ միա՛յն են: - 47. Եւ դարձեալ՝ *զի* այժմ ասէ զհայր ճշմարիտ աստուած, և *զոր* առաքեցեր, «և»-ն շաղկա՛պ է. ցուցանէ՛ շաղկապ գրովն և զիւր աստուածութիւնն ընդ հօր: - 47. Զհոգին զի ասէ՝ «և *զոր* առաքեցեր»: - 47. Զի՞նչ է *որ* առ փորձիչ օրինաւորն ասաց՝ «չիք ոք բարի՝ բայց մի աստուած»: - 47. Դարձեալ՝ փորձիչս այս փառասիրութեամբ յառաջեաց առ քրիստոս. ուստի և ի բանից իւրոց երևի թէ ամենայն պատուիրանացն պահպանօղ եմ. *զոր* տէրն պակաս լինել յանդիմանեաց: - 47. Իսկ յորժամ դառնամք ի մեղաց՝ յորդորէ՛ զմեզ ի ծածուկ իմաստիւքն իւրովք, ժուժկալ լինել ի փորձութիւնս և համբերել տանջանաց *որով* ինքն զփորձ էառ: - 48. Զի մեք *որ* ի նեղութիւնս և ի փորձութիւնս ժուժկալեմք աղաչանօք. իսկ մեր մաղթանքն նմա՛ վերաբերի: - 48. Ոչ թէ անգիտանայ՝ քաւ լիցի. զի զամենայն *որ* լինելոցն էր ի կատարածին՝ ասաց. զիա՞րդ զժամն անգիտանայ: - 48. Առակի են նման, որպէս թէ ոք *որ* նախ զպարիսպ քաղաքին ինչ իցէ գիտենայ, և զպարսպէն ասէ ո՛չ գիտեմ: - 48. Այլ ա՛յս է, Զի ճանաչէ՛ իբրև զաստուած. այլ իբրև զմարդ անգիտնայ. զի բացարձա՛կ է որդւոյն անունն. այսինքն անորոշակի. զի *որոյ* և տացես թէ բանին և թէ մարմնոյն՝ կարէ՛ ասիլ: - 48. *Որ* ցուցանէ թէ՝ ամենևին ժամն այն ո՛չ ումեք է հասանելի յեղելոցս, այլ առաջին անեղ բնութեանն աստուծոյ: - 48. Է՛ և այլ բազում միտք վասն բանին. *զոր* մեք զսակաւն գրեցաք: - 49. Երկրորդ՝ սեղեկ՝ *որ* է արդարութիւն: - 50. Երրորդ՝ զի թագաւոր էր սաղիմայ. *որ* է՛ խաղաղութեան: - 50.

Իսկ մարդ, զի սրբեսցէ ինքեամբ զմեզ՝ եղև ամենայն յաղագս ամենայնի. այսինքն հոգի և միտք և մարմին. զի *յորոց* հասարակաց եղև մահ, լիցի և կեանք: - 50. Վեցերորդ՝ իջումն ի յորդանան. *զոր* քրիստոս գլուխն մեր էառ և ետ ի յանգամքս: - 50. Եօթներորդ՝ նախ քան զխաչն, *որ* ետ զօրութիւն առաքելոցն: - 50. Ութներորդ՝ *զոր* դրօքն փակելօք եմուտ: - 50. Նաև *որք* ի ճգունս նահատակին. որպէս պօղոս՝ անտօն՝ և այլքն: - 50. *Որք* և ո՛չ զգիրս գիտէին, վասն ճգնութեանցն աստուածուսոյցք եղեն: - 50. Իսկ *որք* բառնան զաստուածութիւնն ի միոյն՝ և ո՛չ երկոցունց տան զաստուածութիւնն, իմա՛, ըստ առաքելոյն զօրութիւն և իմաստութիւն է հօր որդի. և բան՝ ըստ աւետարանին յօհաննու: - 51. Դարձեալ՝ *որք* ո՛չ ասեն աստուած զհոգին, առաջին հերձուած՝ զի զհայր բառնան: - 51. Այլ մեր բանս ո՛չ է ընդ այլսն ամենայն, այլ *որք* զօրութիւն և արարած ասեն զոլ զհոգին: - 51. ...որպէս ո՛չ է էութիւն եղջերուաքաղն *որ* յեղջերէ՛ և ի քաղէ ստեղծանի. ապա ուրեմն ո՛չ լինի էութիւն յարարչէն և յարարածէն: - 52. Եւ թէ արարած է՝ զիա՞րդ հաւատամք և կատարիմք. այսինքն յորժամ խնդրեմք և առնումք. զի ո՛չ տան մեզ զհայցուածքն *որք* են արարածք. որպէս անւամբ միայն աստւածք հեթանոսացն: - 52. Դարձեալ՝ ծնունդք *որ* յերկրի՝ վեց եղանակաւ ասին: - 53. Հինգերորդ՝ արմաւ հաւուն՝ *զոր* այլք փիւնիկ ասեն *որ* է յարաբիայ. *որ* ծախէ՛ ինքն զինքն հրով, և դարձեալ կենդանանայ: - 53. Վեցերորդ՝ *որ* փոխին այլք յայլոց բնութենէ վասն առատութեան բնութեանն. որպէս կարպասածին ճճին ունի սա ծնունդ սերմամբ իւր զնմանն. և ունի ելումն զկերպասն: - 53. Պատասխանեմք՝ Նախ՝ առ մակեդոնացիս *որք* զորդի խոստովանին աստուած՝ թէ ասացէ՛ք զպատճառ **բ** աստւածոց ձեր: - 54. Իսկ մովսէս՝ *որ* միոյ բնութեան էին հաղորդք և միոյն անւան քերովբէքն, մի յաջմէ և մի յահեկէ ասէ: - 54. Եւ իմաստասէրքն զհոմանունսն *որ* ո՛չ էր ի նոյն տեսակէ կամ ի բնութենէ՝ թւակցէին: - 54. Եղև ապա նոյն իրն բնութիւն և ո՛չ բնութիւն *որ* անկա՛ր է: - 55. Են և ո՛չ ասին ի յէքս. *որք* յանկոխ լերինս և ի խորս ծովուց անտեսք ի մարդկանէ: - 55. Այսպէս զհոգւոյն թէ յայտնապէս աստուած ասիլ ծածկեցաւ, և այլ իմն բառիւ յայտնեցաւ. *որ* ցուցանէ զնոյն ճշմարտապէս աստուած կատարեալ...: - 55. Այս են *որ* ո՛չ է և ասի. է՛ և ո՛չ ասի. ո՛չ է և ո՛չ ասի. է՛ և ասի որպէս ցուցաք: - 55. Դարձեալ ընդդէմ այնոցիկ *որք* արարած ասեն զբանն աստուծոյ և զհոգին. որպէս արիոս. և մակեդոն. և հրէայք. և այլք: - 55. Ա՛րդ՝ իմաստութիւնն այն *որ* արար զբանն և զհոգին, նա՛ է բան աստուծոյ. և հոգի աստուծոյ. և ո՛չ արարած: - 55. Եօթներորդ՝ թէ արարա՛ծ է բանն և հոգին աստուծոյ և են յէութենէ նորին, ապա և ինքն արարած է *որոյ* է բանն և հոգին: - 56. Մեծ է հայր. մեծ է և որդի. անբովանդակելի է և հոգին սուրբ. ըստ հոգէնըւագին *որ* ասէ, «Մեծ է տէր մեր. և մեծ է զօրութիւն նորա». *որ* է քրիստոս աստուծոյ զօրութիւն: - 56. Խաղաղութիւն է հայր. *որ* դէմ ասէ. «իբրև զգետ զխաղաղութիւն իմ»: - 56. Խաղաղութիւն է և որդի ըստ պօղոսի, «նա՛ է խաղաղութիւն մեր *որ* արար զերկոսեանն մի. և արար խաղաղութիւն արեամբ խաչին իւր»: - 56. Աղբիւր է և որդի. *որ* ասաց, «թողին զիս աղբիւր ջրոյ կենդանւոյ»: - 56-57. Լոյս է և որդի. *որ* ասէ՝ «ե՛՞ս եմ լոյս աշխարհի»: - 57. Կեանք է և որդի *որ* ասաց, «ե՛՞ս եմ յարութիւն և կեանք»: - 57. Բարի՛ է և որդի. որպէս ասէ՝ «ո՞ *որ* միայն բարերա՛րդ ես աստուած իմ յիսուս»: - 57. Երկրորդ՝ պաշտօն *որ* յաստուած վերաբերի՝ միայն աստուծոյ պատշաճի...: - 57. ...*զոր* հոգի կոչէին վասն հոգևորապէս խօսելոյն: - 59. Իսկ այլք՝ հոգի զհրեշտակական հոգին ասեն. *որ* տըւեալ է առ ի պահպանութիւն մեզ. զի նա ուղղէ զմեզ ի բարիս, և զաղօթս մեր մատուցանէ աստուծոյ: - 59. Պատասխանեմք եթէ՝ հոգի աստուծոյ ոմանք զօդս ասեն. *որոյ* բնական տեղի իւր է՛ ի վերայ ջուրց: - 60. Հինգերորդ ասեն, եթէ հոգին սուրբ առնու զբնութիւնն ի հօրէ՝ լինի որդի նորին. զի այն կոչի որդի *որ* ունի զբնութիւնն ի հօրէ ի նոյն տեսակէ: - 60. Եկեսցուք այժմ և տեսցուք զմոլորութիւնս նոցա՝ *որք* ասեն զհոգին սուրբ բղխումն ի հօրէ և յորդւոյ: - 61. Պատասխանեմք, այն *որ* ասի հոգի քրիստոսի, և թէ՝ փչեաց, և թէ՝ առաքեաց, յայն սակս ասացան, զի ծաւալումն հոգւոյն սրբոյ յաղագս մարդկան՝ գալստեամբն քրիստոսի եղև: - 61. Եւ դարձեալ՝ հոգին *որ* ի հօրէ ելանէ և կայանայ յորդի. և ի ձեռն որդւոյ իբր զհայրական բարի ամենայն գոյիցս բաշխի երկնաւորաց և երկրաւորաց. նախ քան զմարմնանալն՝ և ի մարդեղութեանն: - 61. Եւ դարձեալ, զի ամենայն ինչ *որ* հօր է՝ այն որդւոյ է որպէս ասէ տէր. ապա ուրեմն հոգի հօր՝ հոգի է որդւոյ վասն միոյ էութեանն: - 61. Վեցերորդին պատասխանեմք, թէ ասիցես որդին անկենդան է *յորմէ* հոգին ո՛չ բղխէ. ապա՛ և ըստ քեզ հոգին անբան է զի զբանն ո՛չ ծնանի: - 61-62. Նախ՝ զի խօսքն *որ* է արտաբերեալ բանն, նոյն սա՛ է ներտրամադրեալն բան: - 62. Ապա ուրեմն այսպէս կարծելն՝ զհոգին միայն յորդւոյ ցուցանէ՛ և ո՛չ ի հօրէ *որ* է անհնարին հերձուած: - 62. Զի եթէ զբնութիւնն, ահա բաժանեցիք զբնութիւնն ի բղխօղ և ի բղխեալ. որպէս ի ծնօղ և ի ծնեալ. *որ* է մակեդոնի և արիոսի: - 62. Եւ ըստ այսմ լինին մանեայ **բ** աստուածքն. մինն բարւոյ և մինն չարի արարիչ. *որ* է

անաստուածութիւն: - 62. Իսկ եթէ բոլոր, այս լինի կամ **բ** հոգի որպէս ասացաք, կամ աւելորդ գոյ բղխումն որդւոյ *որ* է յոյժ հայհոյութիւն: - 63. Իսկ թէ անզոյգ, *որ* կատարեալն բղխէ՝ նա՛ է բղխօղ. և ո՛չ անկատարն: - 63. Զի թէ կարգաւոր, երբեմն մինն՝ և յետոյ միւսն. *որ* յառաջին բղխօղ է՝ նա՛ է բղխօղ. և ո՛չ վերջինն: - 63. Դարձեալ հարցանեմ, յանսկզբնէ՞ն բղխէ հոգին, թէ ի սկզբնաւորէն. զի *որ* յանսկզբնէն յառաջ գայ, է՛ անեղ և անվախճան. որպէս որդի և հոգի յանսկիզբն հօրէ: - 63. Իսկ թէ յանսկզբնէն և ի սկզբնաւորէն յառաջ գայ հոգին, լինի անեղ և եղական *որ* է մակեդոնեան և ծանր հայհոյութիւն: - 63. Իսկ եթէ զոչ բղխեալն բղխէ, ահա ի հօրէ ո՛չ ասէք զբղխումն, այլ միայն յորդոյ. *որ* է սուտ: - 63. Դարձեալ՝ հոգին ելանէ իբրև զշաղկապ և միաւորիչ. մի իբրև զմէջ *որ* շաղկապէ՛ զերկու եզերն. և միւս իբրև երեք՝ և եզր: - 64. Հինգերորդ՝ զի կանոն ընդհանուր ժողովոցն *որ* եղեն առ նոսա՝ բաւականաբար դաւանութիւն հաւատոյ տըւեալ է: - 64. Եւ անդ ասի ի հաւատամքն եթէ՝ հոգին սուրբ *որ* ի հօրէ. և ո՛չ յիշի որդի: - 64. Նաև ի կանոն երից սուրբ ժողովոցն՝ ընդ բանիւ արգելեալք կան նոքա՝ *որ* ա՛յլ կերպիւ քարոզեն և այլ կերպիւ ուսուցանեն քան *զոր* նոքա ուսուցանեն: - 64. Վեցերորդ վկայ ի ժողովյն քաղկեդոնի *զոր* նոքա ընդունին և ո՛չ մեք. այսպէս է գրեալ թէ՝ *որ* ոք զհոգին ի հօրէ և յորդւոյ բղխումն ասիցէ՝ նզովեալ լիցի: - 64. Եօթներորդ՝ վկայ դամասկացին *որ* ասէ. *որ* և նա ևս քաղկեդոնիկ է. եթէ յայտնապէս զհոգին սուրբ ի հօրէ՛ ասեմք. և զնա հոգի հօր անւանեմք: - 64. Այլ այնպէս ասաց առ ի ցուցանել զանչափ յաւիտենական աստուածութիւնն՝ *որ* ըստ ինքեան պարունակէ զամենայն ժամանակս...: - 65. Այլ զի ամենայն ինչ *զոր* ունի հայր՝ որդւոյ է. և քրիստոս աստուծոյ զօրութիւն և իմաստութիւն: - 65. Դարձեալ՝ հոգին սուրբ ելանէ ի հօրէ և առաքի յորդւոյ. և ինքնիշխան կամօք շնչէ զշնորհս իւր *յորս* կամի և որքան: - 66. *Որք* ուրանան զբնութեամբ միաւորութիւն աստուծոյ մարդացելոյն, այլ միայն բնակութեամբ և շնորհիւ որդէգրութեան ելեալ յաստուածութեանն փառս. որպէս ասեն նեստորականքն: - 66. Իսկ թէ և նա արտաքուստ ունի զորդիութիւն և զայլսն, գոյ կասկած երբեմն ի բաց մերժել *զոր* էառն: - 66. Իսկ թէ և նա շնորհիւ ունի զորդիութիւնն, զիա՛րդ կարէ տալ ումեք *զոր* հազիւն հարստացաւ: - 67. Վեցերորդ՝ զի թէ մեք շնորհիւ՝ որդեգրեալքս կերպանամք առ ճշմարիտ և բնութեամբ որդին, և թէ և նա՛ է ըստ մեզ շնորհիւ, պիտո՛յ է նմա վերնագոյն բնութեամբ որդի մարմնացեալ ի *յոր* կերպասցի և սա՛ ի նմանութիւն նորա շնորհօք որդի: - 67. Տասներորդ՝ զի թէ նա վասն բնակութեանն երկրպագելի է և աստուած, ո՛չ միայն եղիցի նա՛ աստուած, այլև ամենայն երկնաւորք և երկրաւորքս. *որք* բնակեալ ունին զաստուած և կոչին անւամբ աստուածք: - 67. Ապա ուրեմն եղիցին ամենայն բնակարանացն մարմինք կենդանարար *զոր* անհնար է և զմտաւ ածել: - 67. Ապա ո՛չ եղև աստուծով, այլ մարդով. *զոր* սո՛ւտ առնէ մարգարէն զփրկութիւն մարդոյ: - 67. Ա՛րդ եթէ է՛ այլ որդի և եղև աթոռակից հօր, ուրեմն ի բաց էհան զբանն ի նստելոյն ընդ աջմէ հօր *որ* է սեփհական նմա և վայելուչ հօր՝ լինիլ աթոռակից և գահակից: - 67. Նաև աշակերտքն. որպէս պետրոս *որ* դաւանեաց զքրիստոս որդի աստուծոյ: - 68. *Զորս* նզովեալ որոշէ՛ սուրբ եկեղեցի: - 68. Ա՛րդ՝ ո՛վ բաժանօղք, *ո՞ր* բնութիւն է ի քրիստոս երկրպագելի: - 68. Ո՛վ երկաբնակ՝ դու *զո՞ր* բնութիւն ի քրիստոս ասես մի տէր. զաստուծոյն՝ թէ զմարդոյն: - 68. Զի թէ զաստուծոյն միայն՝ անկար ի յարիոսին. զի զբանն առանձին քրիստոս ասացեր. այսինքն օծեալ և սրբեալ ի հօրէ. *յորմէ* իմանի պակաս գոլ քան զհայր: - 68-69. Իսկ թէ զմարդն միայն ասես, զրկեցեր զբանն ի տէրութենէ. և առանձին մարդո՛վ ասես եղեալ զամենայն. *որ* է անհնարին չար: - 69. Իսկ թէ և զերկու բնութիւնն ասես տէր, ընդդէմ խօսիս առաքելոյն *որ* մի ասաց զտէր մեր յիսուս քրիստոս՝ որպէս և զհայր: - 69. Վեցերորդ՝ «դո՛ւ ես քրիստոս որդի աստուծոյ». հարցանեմ զքեզ ո՛վ բաժանօղդ, ի քրիստոս *զո՞րն* բնութեամբ ասես որդի աստուծոյ: - 69. Իսկ եթէ զմարդկութիւնն բնութեամբ որդի ասացեր, ահա *որ* հաներ զբանն յորդիութենէ: - 69. Իսկ թէ զերկուսն, ահա՛ *որ* երկու բնութիւն ասացեր գոլ հօր: - 69. Ո՛վ բաժանօղդ՝ *որոյ* որդւոյ ասես սրբիլ հոգւովն սրբով: - 69. Իսկ թէ *զոր* ի զաւակէն դաւթի առանձին, զիա՞րդ եթէ ինքն շնորհօք է սրբեալ՝ սրբեսցէ տիրաբար զառ ի նա՛յն հաւատացեալս: - 69. Եւ հարցանեմ բաժանօղսդ քրիստոսի եթէ՝ *յո՛ր* բնութիւն մկրտիս. յաստուծոյն թէ ի մարդոյն: - 69. **Հարցանեմ զբաժանօղսդ յերկուս, *զո՞ր* բնութիւն կերակրիս *որով* կենդանանաս:** - 69. Ասա՛ ո՛վ բաժանօղդ, *ո՛ր* բնութիւն ասէ զայս ի քրիստոս: - 69. Ստեաց ուրեմն և հայր՝ կոչելով իւր որդի *զոր* ի զաւակէն Դաւթի: - 69. Եւ զայս դու բաժանօղդ՝ *յո՞ր* դէմս ասես այսպէս ընկալեալ: - 70. Նմանապէս ասա՛ և զայս. զբնութեա՞մբն որդի ասես ընդ աջմէ մեծութեանն նստեալ, թէ *որ* շնորհօքն որդիացեալ ըստ քեզ: - 70. Զի թէ զբնութեամբն ասես, ստեա՛ց ուրեմն առաքեալն և աւետարանն. *որք* զքրիստոս ասեն յարուցեալ և համբարձեալ և նստեալ ընդ աջմէ հօր: - 70. Ասա՛ ինձ ո՛վ բաժանօղդ՝ *ո՛ր* դիմաց գոլ ասացեալ զայս: - 70. Եւ թէ միայն բանին *որ* ի

յերկնից իջեալ, ահա՛ *որ* երկու կամք ընդ դէմ միմեանց խոստովանիս. ծնողին և բանին: - 70. *Յորմէ* և մարտ ի մէջ Երրորդութեանն: - 70. Ասա՛ ո՛վ երկաբնակ, *որո՞յ* իմանաս զասելս: - 70. Եւ ահա՛ չորեքտասան հարցմունքս այս՝ է ընդ դէմ երկաբնակ աղանդոցն. *որք* զմի քրիստոսն յերկուս բաժանեն բնութիւնս: - 70. Ա՛րդ՝ *որով* ամենայն՝ յարմարի բանին. ըստ այնմ ամենայն՝ «ինչ բանիւն եղև». և յիսուս կոչի մարդն: - 72. Երկոտասաներորդ՝ այն *որ* սկիզբն յաշխարհի ունի՝ և ո՛չ է յառաջ քան զլինիլն իւր յաշխարհի՝ ո՛չ ասի գալ յաշխարհս: - 73. ՈւթևԺերորդ՝ ամենայն կիրք մարմնոյ՝ մարդոյն ասին. այնմ *որոյ* է՛ մարմին: - 74. Ա՛րդ՝ դու առանձնութեամբ քո *որ* ունիս զհասարակ բնութիւնդ՝ ծնար այսօր ի մօրէ՛ կամ մեռար յաշխարհէ՛ և ո՛չ հասարակ մարդկութիւնս: - 74. *Յորոյ* փախչելով մեր և յերկուց ծայրիցն, զառ ի մէջն ունելով ուղղապէս ընթացք, ասեմք եթէ քրիստոս ըստ անշփոթ միաւորութեանն՝ աստուածային բնութեամբն մարդ է, և մարդկային բնութեամբն աստուած է: - 75. Եւ *որ* ուրանայ զմիութիւնն՝ ուրանայ և զքրիստոսն գոլ. ապա ուրեմն և զհաւատ քրիստոնէութեանն: - 76. Որև գոն ի յեղեալքս միաւորեալք. որպէս հուր և երկաթ. հոգի և մարմին. *որք* չարչարին անչարչարապէս: - 76. Զի թէ անանձն բնութիւն ասէաք միաւորեալ *որ* էր հասարակ, գո՛յր ինչ նոցա ասել առ այս: - 76. *Զոր* զայսպիսի չարութեան խնդիրս տարագրէ՛ եկեղեցի ուղղափառաց: - 76. Նախ՝ զի սքանչելեօք է. *որոյ* սահմանն անգիտելի է, և ի վեր քան զբնութիւն: - 77. *Զոր* յայսմանէ երևի երեք եղանակ միաւորութեանն զանազանապէս: - 77. Որպէս ասեմք զաստուածածին կոյսն մայր և կոյս. ո՛չ **բ** բնութիւն կամ **բ** անձն. *որ* է մասամբ և բաժանմամբ. այլ զմի և զնոյն. ունելով զայս և զայն յատկութիւն: - 77. Եւ որպէս զայդ ուսար ուղղափառ դաւանութեամբ՝ ի միտ առ *զոր* ասեմս: - 79. Զի մեծն աստուածաբան ընդ դէմ արիոսի պատերազմի. *որ* արարած ասէր զբանն՝ աստուածացեալ յետոյ: - 79. Իսկ սուրբն կիւրեղ ընդ դէմ նեստորի զինէր. *որ* ասէր բնակութեամբ զբանն ի մարմնի. և նախ զմարդն ծնեալ ի կուսէն և շրջեալ ի յերկրի, և յետոյ բնակեալ բանն աստուած յետ մկրտութեանն. և յետ յարութեանն փառաւորեաց զնա և զօրացոյց յարակցութեամբ ընդ ինքեան: - 79. *Յորոց* երկուց աստուածաբանիցս իմանի մեզ սոյնպէս: - 79. Սուրբն կիւրեղ ընդդէմ նեստորի՝ *որ* **բ** բնութիւն բաժանեալ ասէր քրիստոսի՝ ասաց, մի բնութիւն միաւորեալ աստուած մարմնացեալ և մարդացեալ: - 79-80. Իսկ աստուածաբանն ընդդէմ՝ ապօղինարի՝ *որ* միայն մարմին ասաց առանց հոգւոյ առեալ. ասէ, մարմին առանց հոգւոյ անկատա՛ր է մարդ: - 80. Այլ՝ էառ զհոգի և զմարմին. *որ* է կատարեալ բնութիւն մարդոյ. որպէս ասէ բնութիւնք **բ**. այսինքն կատարեալք: - 80. Եւ ապա ի բարձր հանէ վարդապետութիւն զբնութեանցն միաւորութիւն. ասէ՝ այլ և այլ *յորոց* փրկիչն. եթէ ոչ՝ նո՛յն է երևելին և աներևոյթն. անժամանակն և ընդ ժամանակաւն: - 80. Զի սա ընդ դէմ վասն մի բնութեանն ասէ *որ* յԵրրորդութիւնն է և ի անօրէնութիւնն բանին. սոքա զընդդէմն վասն բաժանմանն իմանան: - 80. Նախ այսպէս, ասէ թէ բաժանմունք *որ* յԵրրորդութիւնն է, ո՛չ է հնար միաւորութեան. զի ա՛յլ ոմն է և ա՛յլ: - 80. Իսկ բաժանմունքն *յորոց* փրկիչն՝ ընդդէմ է այնմ. զի բնութեամբ է միաւորեալ. *որ* ո՛չ է հնար շփոթելոյ: - 80. Դարձեալ՝ զի ասէ թէ, ա՛յս միաւորութիւնս *որ* ի քրիստոս է, ո՛չ է իբրև զայն *որ* յԵրրորդութիւնն է. զի անդ միութիւն է, բայց բաժանումն անձանց: - 80. Արդ՝ *որ* պարզապէս մի բնութիւն ասեն բանին և մարմնոյն՝ կատարեալ ամբարշտութիւն է: - 81. Իսկ *որք* յետ միաւորութեանն **բ** ասեն բնութիւնս ի քրիստոս, և բաժանեն զկամս, և զգործս, և զկիրս, թէպէտ և անձն մի համբաւեն: - 81. Իսկ *որք* յերկուցն մի եղեալ բնութիւն ասեն, որպէս յաստուծոյն և ի մարդոյն եղեալ մի բնութիւն ո՛չ աստուծոյ և ո՛չ մարդոյ: - 81. Ասեմք եթէ՝ յորժամ մի ասեմք բնութիւն բանին և մարմնոյն, այս լինի կամ արիոսին. *որ* զբանն արարած ասէ և զմարմինն արարած. և այսպէս մի բնութիւն է արարածոյն ասէ. և զբանն ընդ մարմնոյն չարչարելի և մահկանացու: - 81. Դարձեալ՝ մի բնութիւն ասէ ապօղինար. *որ* զհոգի և զմիտս ուրացաւ. և միայն զմարմին ասէ առեալ, և ի տեղի հոգւոյ զբանն բնակեալ: - 81. Դարձեալ՝ մի բնութիւն ասեն *որք* առ աչօք և նմանութեամբ զճշմարիտ մարդեղութիւնն համբաւեն: - 82. Այլ և մի բնութիւն ասեն՝ *որք* ի յերկնից բերեալ զմարմինն խոստովանին: - 82. *Որք* ասեն զսկիզբն բանին ի կուսէն առեալ. և ո՛չ նախ քան զյաւիտեանս ի հօրէ ծնեալ: - 82. Այլ և նոքա *որք* անանձն և անգո՛յ ասեն զբանն մարմնացեալ. որպէս մեր բանս: - 82. Այլ և մի բնութիւն ասեն՝ *որք* միայն սոսկ մարդ խոստովանին զքրիստոս, և ո՛չ աստուած մարդացեալ: - 82. *Զորս* զայսպիսի խորհօղսն նզովէ՛ եկեղեցի սուրբ: - 82. Իսկ *որք* յետ միաւորութեանն՝ **բ** բնութիւնս խոստովանին, և սոքա են **բ** դասք: - 82. *Որք* **բ** անձն և **բ** բնութիւնս՝ և **բ** կամս՝ և **բ** գործս բաժանեն քրիստոսի. **բ** որդի՝ և **բ** քրիստոս յայտնապէս ասեն. զմինն տէր, և զմինն ծառայ, զմինն բնութեամբ որդի աստուծոյ, և զմիւսն շնորհօք. և այլն: - 82. Իսկ երրորդ դասքն, *որք* յերկուց ասեն եղալ մի բնութիւն, ո՛չ աստուծոյ և ոչ մարդոյ: - 82. Եւ կամ զմի բնութիւնն

ուրացեալ. և կամ առ աչօք ասացեալ. *զորս* նզովէ՛ սուրբ եկեղեցի աստուծոյ: - 82. Այլ հետևիմք հարցն սրբոց, *որք* առանց կարծեաց և խոտորմանց՝ զմիաւորութիւնն քրիստոսի անշա՛րժ պահեն: - 83. *Որք* ուսուցին մեզ զխորհուրդ աստուածպաշտութեան որպէս ցուցաւ: - 84. Ի յերկուց *զո՞րն* ուրանաս և մի ասես բնութիւն: - 84. Սկիզբն յերկուց բնութեանց. և մէջ՝ *որ* է՛ միաւորութիւնն մի բնութիւն. և եզր և կատարումն՝ մի անձն: - 84. Ա՛րդ՝ դուք *որ* **ք** բնութիւնս ասէք քրիստոսի, զբաժանական տարբերութիւնս ասէք. և մեք մի խոստովանիմք զբաղկացականս միաւորութիւն: - 85. Նմանապէս և աստուածաբանն ասէ ի ճառն երկրորդ առ կլօդիանոս՝ «ո՞ւր են այնոքիկ ուրացօղք *որք* յայտնապէս բաժանեն զքիստոսն յերկու կամս և յ**ք** գործս»: - 85. Իսկ զկամքն իմասցիս մի՝ վասն կամելոյն և վասն միաւորելոյն *որ* է սկիզբն և կատարումն: - 85. Իսկ մի գոլ ներգործութիւնք և կիրք. որպէս քնարն՝ և *որ* շարժէ զքնարն՝ մի ներգործութիւն կատարեն և ո՛չ երկուս: - 86. Եւ որպէս *որ* շարժէ զգրիչն՝ և գրիչն՝ մի ներգործութիւն կատարեն և ո՛չ երկուս: - 86. *Որք* միաւորէք անձամբ. և յերկուս բնութիւնս բաժանէք: - 86. Անձն այն *զոր* մի ասես՝ ի՞ր է թէ անիր: - 86. *Յորոց* թէ մի ի սոցանէ գտցի ումեք, որոշեսցէ՝ ի միմեանց: - 87. Արդ՝ տեսցուք թէ ըստ *որո՞յ* եղանակի բաժանէք զմի անձն յերկուս բնութիւնս: - 87. Այլ աստուածային բնութիւնն յառաջ է քան զմարդկայինն. *որք* ստեղծողի և ստեղծածոյ: - 87. Իսկ աստ նման միմեանց՝ և բոլորին կոչի քրիստոս. ըստ որում ասի՝ քրիստոս էջ յերկնից. *որ* է բանն. և քրիստոս եղաւ ի գերեզմանի. *որ* միայն մարմինն է աստուածութեամբն. և քրիստոս էջ ի դժոխս. *որ* միայն հոգին էր աստուածութեամբն: - 88. Ահա տե՛ս յայտնապէս. զի *որք* բաժանեն զմի քրիստոսն յերկուս բնութիւնս, ո՛չ պահեն զմիաւորութիւնն անբաժանելի: - 88. Զի զոչ առեալն ասեն մի ի քրիստոս՝ և ո՛չ զառեալն. այսինքն զանձն՝ *որ* ո՛չ է առեալ՝ մի ասեն. իսկ զառեալ բնութիւնն որոշեալ պահեն և յերկուս քակտեն: - 88. Բե՛ր յարմարեսցուք այժմ զերիս եղանակս սոցա՝ միաւորութեան փրկչին ուղղակի իմն տեսութեամբ. *որ* ո՛չ ախորժելի է այլոց: - 89. Նախ՝ որպէս սեռ ի տեսակս բոլորապէս տեսանի և ո՛չ մասամբ. այս է՝ զի գոյացութիւնն *որ* է սեռ՝ բոլոր է ի մարմինն և յանմարմինն. և կենդանին բոլոր ի բանականն և բոլոր յանբանն: - 89. Իսկ որպէս հոմանուն ձայն, զի հաւասարապէս հաղորդի *որոց* կոչինն. որպէս խոյ երկնային և երկրային և ջրային. զի ո՛չ առաւել և ո՛չ նըւազ կոչին. այլ հաւասարապէս: - 89. Ի յերից սոցա *զո՞րն* ասէք մի քրիստոս. զաստուածային անձն ըստ ինքեա՞ն, եթէ զաստուածային բնութիւնն: - 89. Իսկ եթէ զաստուածային անձն ասէք քրիստոս, *որ* է օծեալ. ահա ընդ օծեալս փոխադրեցիք: - 89. Եւ մեռեալ ի խաչին զանձն միայն ասէք. որպէս երգէք յերեք սրբեանն ձեր, քրիստոս *որ* խաչեցար ողորմե՛ա մեզ: - 89. Եւ *զոր* դուք զայլս զրպարտէիք՝ ի նոյն բանս ձեր ընկղմեցայք: - 90. Եւ կամ թէ՝ մկրտիմք յանուն հօր՝ և որդւոյ **ք** բնութեանցն՝ և հոգւոյն սրբոյ. և *որ* սոցին նման: - 90. Իսկ թէ զմինն, հարցանեմ ձեզ՝ *զո՞րն* պատւէք. և կամ *զո՞րն* անարգէք: - 90. Աhա՛ այս ի կարճոյ բացայայտութիւն ծածկեալ ամբարշտութեանց, *որք* **ք** բնութիւնս սահմանեն ի վերայ միոյն քրիստոսի. թէպէտ անձն մի համբաւեն համաձայն մեզ, սակայն որոշմամբ բնութեանց լինին տարաձայն մեզ և եկեղեցեացն աստուծոյ: - 90. Բոլորովիմբն է ընդ դէմ երկաբնակացն. *որք* մասամբ ասեն աստուած և մարդ զքրիստոս...: - 90. *Որք* զմասունս բաժանեն. և զբոլորն ժողովեն: - 90. Իսկ միանգամայնն՝ դարձեալ ընդ դէմ է նոցա *Որք* զաստուած և զմարդն որոշեն ի միմեանց. եթէ բնութեամբ և եթէ անձամբ: - 91. Այս է միտքն *որ* ասէ՝ համանգամայն աստուած և մարդ. այսինքն բոլորովիմբ և հաւասար և անբաժան աստուած և մարդ: - 91. Նմանապէս *որ* ասէ, մի և նոյն աստուած և մարդ: - 91. Նոյնպէս և այս ընդ դէմ նոցա է՝ *որք* մի ասեն անձն, և յերկուս բնութիւնս բաժանեն: - 91. Զի՞նչ պատասխանեմք երկաբնակացն *որք* հարցանեն զմեզ, թէ մասունքն քրիստոսի աստուած է՝ այսինքն ոտքն և ձեռքն և գլուխն ապա բազմաստուածք էք: - 91. Ելե՛ր ի բանէդ և դժուարինս խօսիս. և *զոր* հարցի՝ ո՛չ ընկալայ զպատասխանին: - 92. Երկրորդ՝ ասեմք եթէ ամենայն մասունք է՛ ի գոյացութենէ բոլորին. և *որ* ունի զնոյն գոյացութիւն, ունի զնոյն կոչումն: - 92. Եւ այն տխեղծ մատանց, տառատիպ գծաց. *որ* անհրաժեշտն է առարկողաց: - 93. Ասաց թէ՝ *որ* ի կերպարանս աստուծոյ էր բանն, այսինքն էակից հօր, ո՛չ ինչ զրկումն համարեցաւ ի ներգոյական փառաց զլինիլն հաւասար մեզ: - 93. Այն *որ* նըւաստացոյց զինքն ի յունայնութիւն մարդկան, եղև ի կերպ ծառայի՝ և գործով և կրիւք և նմանութեամբ մարդկան. և կերպարանօք գտաւ մարդ. զի ի վեր էր քան զմարդ՝ և քան զկերպարան մարդոյ: - 93. Այլ և նոյն կերպարանն հօր՝ խոնարհեցոյց զինքն ի մահ. *որ* կարի վերջինն էր: - 93. Եւ ի մահ խաչի. *որ* անիծիցն էր: - 93-94. Եւ ընդ անօրէնս համարեցաւ. *որ* առաւել նախատանաց էր: - 94. Աստուած հայր. *որ* առաքեաց և նըւաստացոյց: - 94. *Որոց* հանդիպեսցուք այսպէս: - 94. Զիա՞րդ միայն ի դէմս բանին իցէ այն՝ *որ* ի կերպարանս հօր է և հաւասար աստուծոյ: - 94. Իսկ եթէ ի դէմս մարդոյն,

ո՞րպէս ունէր զփառս յաւիտենից այն *որ* այսօր ի կուսէն ծնաւ: - 94. Զի *որ* խոնարհեցաւ բանն ի մարմին՝ նո՛յն բարձրացաւ մարմնով. և *որ* էջն ի ստորինս երկիր, նո՛յն է *որ* ելն ի վերոյ քան զամենայն երկինս. և *որ* ունայնացաւ՝ նո՛յն ելից զամենայն: - 94. Իսկ «շնորհեաց նմա անուն» *որ* է՛ յիսուս քրիստոս: - 94. Եւ զայս եթէ բաժանմամբ, ո՛չ է առանձնապէս բանն քրիստոս. զի ո՛չ գոյ մեծագոյն օծանօղ նմա. *որ* և ո՛չ առանց մարմնոյ փրկեաց: - 94. Իսկ թէ միայն անուն առանց էութեան. ապա անուամբ խոստովանիս աստուած զքրիստոս և ո՛չ գոյացութեամբ. և հաւասարե՛ս զնա մովսէսի. *որ* անուամբ աստուած կոչեցաւ և ո՛չ էութեամբ: - 95. Եւ այսպէս բազում է ի գիրս հարցմանցս վասն միաւորութեան բանին և մարմնոյն ընդ դէմ նեստորի և երկաբնականց. *որ* բաւական լուծումն է բանիս: - 95. Այլ արդ՝ *որ* հարցնես թէ՝ մարդն քրիստոս տեսանէ՞ զաստուած թէ ո՛չ. համաձայնիս հրէիցն. *որք* ասէին՝ «դու մարդ ես՝ և զանձն քո աստուած առնես»: - 95. *Զոր* կամիմ ի կարճոյ վկայութեամբ հաստատել: - 96. Ա՛րդ՝ քրիստոսն *որ* է օծեալ աստուածութեամբն, և նա աստուծոյ իմաստութիւն է. և ո՛չ ճանաչէ՛ զաստուած. տգիտութեամբ կորուսանէր զնա և *որոյ* է՛ իմաստութիւն: - 96. **Ա՛րդ՝ ի մարդկանէ ո՛չ ոք ետես զաստուած, և որդի կուսին ո՛չ ետես որպէս դուդ ասես. սո՛ւտ է ապա և պատմութիւնն զոր ինչ ուսոյց մեզ. զի ո՛չ է տեսեալ և պատմէ. ահա անդունդք հայհոյութեան.** ***զոր*** **ի կարգիս լռե՛մ**: - 96. Ա՛րդ՝ եթէ յայտնեաց զինքն աշակերտաց իւրոց. և մարդկութեան իւրոյ ո՛չ յայտնեաց, եղիցի ինքն տգէտ քան զաշակերտսն իւր. և կամ ոչ ինչ յայտնեաց *զոր* ինքն ո՛չ գիտաց: - 96-97. Այլ *որ* զայլոց սիրտս գիտէ՝ ապա առաւել զիւրն գիտէ: - 97. Մետասաներորդ՝ ասէ ի յօհաննէս, «ե՛ս եմ ճանապարհ և ճշմարտութիւն». այսինքն՝ *որ* տանիմ առ հայր և ճշմարտութեամբ ցուցանեմ ձեզ: - 97. Չնձան զխաչն ասէ՝ *որ* արեամբ ներկեցաւ: - 98. Ո՞րպէս զամենայն գիտէ՝ *որ* զինքն ո՛չ գիտէ ըստ քեզ: - 98. Արդ՝ եթէ բոլոր աստուածութիւնն ի քրիստոս էացեալ է մարմնապէս, և ծածկէ զգիտութիւնն ի նմանէ, այս լինի կամ ոչ աստուած մարմնացեալ և մարդացեալ կամ զէութիւնն տըւեալ և ի գիտութենէն զրկեալ *որ* է սուտ: - 98. ...*որ* մինչև ցայժմ ծածուկ է իր նեստորեան, և այժմ յայտնեցեր զքեզ: - 98. *Որ* ասես սոսկ մարդ գոլ զքրիստոս. և տգէտ և տկար. և ապականացու մարմին. և անկեալ ընդ կարեօք մարդկան: - 98. Քսաներորդ՝ արդ՝ եթէ քրիստոս տգէտ ունէր միտս, և տկար հոգի, և ապականացու մարմին և եկն քրիստոս զի բարձցէ զտկարութիւնս մեր. և լուսաւորեսցէ *որ* նստէաք ի խաւարի. և նա՛ է գառն աստուծոյ *որ* բառնայ զմեղս աշխարհի և զապականութիւն: - 99. Ա՛րդ՝ եթէ՝ ի յարութեանն հասարակ արդարք տեսանեն զաստուած դէմ յանդիման որպէս և է, և քրիստոս ո՛չ կարէ տեսանել, փո՛քր լինի գիտութեամբ քան զմարդ *որ* է սուտ: - 99. Արդ՝ եթէ առաքեալքն *որ* բնակարանք են հոգւոյն՝ ճանաչեն զհոգին աստուած, և մարդկութիւնն քրիստոսի ո՛չ ճանաչէ, փոքր քան զբնակարանքն եղիցի քրիստոս: - 99. Առաւօտի՝ *որ* տեսանեն զբանն աստուած, և առնուն գիտութիւն ի նմանէ: - 99. Եւ երեկոյի՝ *որ* տեսանեն զարարածս: - 99. Այսպէս զի հոգին քրիստոսի ճանաչէ զամենայն բովանդակ կարողութիւնն իւր. և զամենայն *յորս* կարէ: - 100. *Որով* և ընդ Որում Չօր և Չոգւոյն սրբոյ փառք և պատիւ և իշխանութիւն յամենայն գոյից անբաւ յաւիտենիւ ամէն: - 101. *Յո՞ր* դասէ անկան. և իշխանք օդոյ կոչին: - 102. Դարձեալ՝ զգայութեամբ ծանօթանամբ *որ* արտաքոյ քան զմեզ: - 103. Եւ խոհեմութեամբ՝ *որ* ի ներքս ի մեզ: - 103. Եւ վերին խոկմամբ՝ *որ* ի վե՛ր է քան զմեզ՝ ըստ կարողութեան լուսաւորիմք ճառել զանճառէն: - 103. Յայտ ուրեմն է, զի *որ* ի վեր է քան զէութիւն, ի վե՛ր է քան զգիտութիւն: - 103. Եւ է դարձեալ անգիտութիւն՝ յորժամ զմիտս տարածեմք յամենայն եղեալս և զնա ոչ գտանեմք, ժողովեմք ի միոն *որ* արտաքոյ է սոցա. և այնպէս անգիտութեամբ ճանաչի աստուած: - 103. *Զոր* ցուցցուք օրինակաւ զգալի տեսութեամբ: - 104. Այսպէս տեսութիւն մտաց յանմարմինն. *որ* է նման: - 104. Եւ միտք յիմանալին՝ *որ* նմա՛ է ազգակից: - 104. Դարձեալ՝ ա՛յն է հասարակն՝ *որ* մի՛ է երիցն. և երկուքն ո՛չ աւելի. և մինն ո՛չ ունի պակաս: - 104. Նմանապէս և հասարակն թէպէտ բազում է, այլ երկոտասան գլխով նշանակի. նախ Բնութիւն. *որ* նոյն Է էութիւն...: - 105. Այսպէս է միութիւնք և որոշմունք *որ* է հասարակ և յատուկ ի սուրբ Երրորդութիւնն: - 106. Զի՞նչ է բաղդատութիւն *որ* բանն աստուած է էառ զմարդկայինս բնութիւն: - 106. Իսկ Երրորդութիւն, *որ* է՛ **գ** միութիւն. և մի Երրորդութիւն. այսինքն մի **գ**. և **գ** մի: - 107. Եւ որպէս մի է հոգի և բան և կենդանութիւն իւր. *որ* է՛ խօսքն և շունչն: - 107. Երրորդ՝ Երրորդութիւնն ցուցանէ երիցն զմի հասարակ բնութիւն. որպէս ասեմք մարդ և մարդկութիւն. ձի և ձիութիւն. ընդդէմ արիոսի *որ* ասէ՝ երեք թիւն ունի երեք բնութիւն, ասեմք երից անձանցն մի բնութիւն: - 108. Զի նա՛ է աղբիւր և սկիզբն *յորմէ* բղխեն ամենայն: - 108. Դարձեալ՝ *որ* զամենայն ստեղծ՝ հայր կոչի. և *որ* զամենայն պարունակէ՛ զի մի՛ լուծցին՝ որդի. և *որ* շնչելով կենագործէ և զարդարէ զամենայն՝ հոգի սուրբ յորջորջի: - 108. Եւ ի միոյ աստուծոյ եղեն **Ժ** դասք

հրեշտակաց ըՆդ մարդկաՆ. և հարիւր գուՆդքՆ ըստ ոչխարաց առակիՆ. և **ռ** կեՆդաՆեաց տեսակքՆ *որ* յերկրի. և բիւր աՆկեՆդաՆ բուսոց. և աՆթիւ գոյեղէՆք: - 109. ՆմաՆապէս և արարիչՆ աստուած. Ներքոյ և հիմՆ է ամեՆեցուՆ *որ* կրէ զամեՆայՆ բաՆիւ զօրութեաՆ իւրոյ: - 110. Նախ՝ զի թիւՆ պատահումՆ է. *որ* ի աստուած ո՛չ է: - 110. Զի է՛ մի՝ *որ* սկիզբՆ է թըւոյ. և այսպէս մի ո՛չ ասի աստուծոյ. զի այս քաՆա՛կ է. և պատահումՆ ո՛չ գոյ յաստուած: - 110. Եւ է մի՝ *որ* աՆդրադարձի էի. և այսպէս ասի մի աստուած իբր թէ է՛. զի պատահումՆ ո՛չ ցուցաՆէ: - 110. Եւ սահմաՆ միոյՆ է այս. մի է *որ* յիՆքեաՆ աՆբաժաՆելի է, և յայլմէ բաժաՆեալ: - 110. Զի՞Նչ է *որ* ասեՆ վասՆ աստուծոյ թէ՝ է՛ սկիզբՆ և պատճառ: - 110. Երրորդ՝ սկիզբՆ իմաՆալեաց. և պատճառ զգալեաց. *որ* եՆ յաւիտեՆակաՆք և ժամաՆակեայք: - 110. Չորրորդ՝ սկիզբՆ է առաջՆոցՆ. և պատճառ վերջՆոցս. *որք* միջՆորդութեամբ գոյաՆաՆ. որպէս ի տարերաց կամ ի ծՆողաց: - 110. Նախ՝ պարզ ոչ էՆ. *որ* է ոչ ուրեք և ոչ երբեք. *որ* ո՛չէր և ո՛չէ և ո՛չ լիՆի. որպէս ոչ իՆչՆ: - 111. Երրորդ՝ ասի ոչէ՝ Նիւթն աՆորակ. *որ* ո՛չ ուՆի ձև և ո՛չ ուՆի տեսակ և ո՛չ որակ: - 111. ՀիՆգերորդ՝ ոչէ ասիՆ ՆիւթակաՆքՆ *որ* ի լիՆելութեաՆ և յապականութեաՆ եՆ. զի երբեմՆ ո՛չ էիՆ, և յետոյ ո՛չ լիՆելոց եՆ: - 111. Վեցերորդ՝ ոչէ ասիՆ և բացարձակքՆ *որ* ի հաՆդերձեալՆ. զի դեռևս ո՛չ եՆ. այլ՝ լիՆելոց եՆ միշտ: - 111. ’Ի յէից էակՆ. *որ* է Նախագոյ պատճառ ամեՆայՆի: - 111. Եւ ի սկիզբՆէ. *որ* է յարացոյցՆ և Նախագաղափարն: - 111. Եւ յէութիւՆ եղելոցս. *որ* է պատկեր և ՆմաՆութիւՆ յարացուցի: - 111. *Որ* է աՆհատ՝ տեսակ՝ և սեռ: - 111. Եւ գիտելի է, զի յարացուցիս և ՆախասահմաՆութեաՆս՝ արարողակաՆ պատճառ է աստուած. և ՆիւթակաՆ պատճառ իրՆ այՆ *որ* է Նախասահմանի...: - 112. ՅարացոյցՆ մի է և պարզ. ըստ այՆմ *որ* մի է էութիւՆՆ աստուծոյ, և մի տեսութիւՆ, և մի ճշմարտութիւՆ: - 112. Այլ բազո՛ւմ է և զաՆազաՆ ըստ պատկերի և ՆմաՆութեաՆ յարացուցելոցս *որք* եՆ բազումք...: - 112. Այսպէս ի մի և ի Նոյն սկիզբՆ *որ* է՛ յարացոյցՆ՝ զբազում սկսեալքս ըստ յարացուցիՆ: - 112. Նախ ասի աՆեղ՝ *որ* դեռ չէ՛ եղեալ. որպէս այՆ *որ* ի հաՆդերձեալՆ լիՆի. *որ* կարօտ է սկզբաՆ: - 113. Երկրորդ՝ ասի աՆեղ այՆ՝ *որ* ո՛չէ եղեալ ի կատարումՆ. զի ուՆի սկիզբՆ՝ և կարօ՛տ է կատարմաՆ: - 113. Երրորդ ասի աՆեղ այՆ՝ *որ* ի յումե՛ք է ...: - 113. Զի աՆեղ է՛ գոլով՝ տարրորշի յաՆեղ ոչըՆչէՆ. և միշտ գոյ՝ ի հրեշտակաց. և իՆքՆակատարՆ՝ յայՆցաՆէ *որ* կարօ՛տ եՆ սկզմաՆ և կատարմաՆ: - 113. *Ո՛ր* աՆեղՆ զեղակաՆքս յառաջ էած. զի եղակաՆՆ յեղակաՆէ՛ և աՆեղՆ յաՆեղէ՛ կարգաւորի: - 113. Ա՛րդ՝ եղակաՆքս *որ* յետոյ էացաք աՆեղ էաք ի յաՆեղ տեսութիւՆՆ աստուծոյ: - 114. ՀիՆ աւուրց *որ* է ծերՆ՝ չորս յատկութիւՆ ուՆի: - 114. Եւ թէ՝ «յիսուս քրիստոս երէկ և այսօր». *որ* է ժամաՆակ. «Նոյն և յաւիտեաՆ»: - 115. *Որ* Նշանակէ հիՆ աւուրց զծերՆ. և մաՆուկ զաՆծերաՆալիՆ: - 115. Զի *որ* աՆսկիզբՆ է՝ աՆվախճաՆ է. և Նոյն աՆվախճաՆՆ աՆսկիզբՆ է: - 115. Երրորդ՝ այսպէս մեկՆեՆ, եթէ հիՆ աւուրց զՆախՆի ժամաՆակս Նշանակէ. և մաՆուկՆ զՆախՆի թիւՆ. զի միակՆ սկիզբՆ է ամեՆայՆ թըւոց. և *որ* մեծ է միակիՆ՝ սկզբՆապետագո՛յՆ է քաՆ զհեռագոյՆՆ: - 115. Նախ՝ *որ* ոչ սկիզբՆ ուՆի և ո՛չ կատարած: - 115. Երկրորդ՝ *որ* ո՛չ սկիզբՆ ուՆի, այլ կատարած: - 115. Երրորդ՝ *որ* սկիզբՆ ուՆի, այլ ո՛չ կատարած: - 115. Չորրորդ՝ *որ* սկիզբՆ ուՆի և կատարած. և թէպէտ հասարակ սոքա յաւիտեաՆք կոչիՆ, այլ ուՆիՆ յատուկ աՆուՆս: - 115. Եւ վասՆ օրիՆացՆ մովսէսի ասէ օրէՆքՆ, «յաւիտեՆակաՆ լիցի». *որ* Նշանակէ զբազում ժամաՆակս: - 115-116. Ա՛յժմ և միշտ. *որ* է՛ ժամաՆակեայՆ և միշտՆ: - 116. ՅաւիտեաՆս ՅաւիտեՆից. *որ* է՛ սկզբՆակաՆ և յարածգակաՆ. զի Նա պարուՆակէ զերեք յաւիտեաՆՆ. *որ* ո՛չ սկիզբՆ ուՆի և ո՛չ կատարած: - 116. Եւ գիտելի է՝ զի աստուած կոչի յաւիտեաՆ աՆսկիզբՆ և աՆվախճաՆ. և է՛ պատճառ պարուՆակողացՆ յաւիտեՆիՆ. *որ* ո՛չ սկիզբՆ ուՆի և ո՛չ կատարած: - 116. Իսկ հրեշտակք և հոգիք և աշխարհ՝ կոչիՆ յաւիտեՆակաՆք. զի հաղո՛րդ եՆ յաւիտեՆիՆ. այՆմ *որ* սկսեալ է և աՆվախճաՆ: - 116. Ասեմք եթէ՝ մի է յաւիտեաՆ աՆսկիզբՆ և աՆվախճաՆ. *որ* Նոյն իՆքՆ է աստուած. բոլորՆ համաՆգամայՆ և կատարեալ. և Նախ քաՆ զյաւիտեաՆս. և ամեՆայՆ յաւիտեՆից արարիչ: - 116. Այլ զայս ստեղծեալ յաւիտեաՆս ասեմք ոչ սկիզբՆ ուՆիլ և ո՛չ կատարած. զի պարուՆակօղ է ա՛յլ յաւիտեՆից *որք* ուՆիՆ սկիզբՆ կամ կատարած. այլ իՆքՆ պարուՆակի յաՆստեղծ յաւիտեՆէՆ *որ* է՛ աստուած: - 116. *Որ* է յաւիտեՆակաՆ. և մշտՆջեՆաւոր. և ժամաՆակեայ: - 116. ՅաւիտեՆակաՆ է՝ *որ* ո՛չ սկիզբՆ ուՆի, և ո՛չ կատարած. որպէս աստուած: - 116. Եւ մշտՆջեՆաւոր՝ *որ* ուՆի սկիզբՆ՝ և ո՛չ կատարած. որպէս հրեշտակք. և հոգի մարդոյ: - 116. Եւ ժամաՆակեայ՝ *որ* ուՆի սկիզբՆ և կատարած. որպէս զգայակաՆք. և տՆկակաՆք: - 116-117. *Որո՞վ* զաՆազաՆի կեաՆքՆ աստուծոյ. և հրեշտակաց: - 117. *Որո՞վ* զաՆազաՆի և հաւասարի կեաՆք հոգւոց և հրեշտակաց: - 117. *Որո՞վ* զաՆազաՆի և հաւասարի իմաՆալի և զգալի կեաՆք: -117. *Որո՞վ* զաՆազաՆիՆ և հաւասարիՆ զգայակաՆ և տՆկակաՆ կեաՆք: - 117. ԻմաստութիւՆՆ աստուծոյ աՆեղ է. վասՆ որոյ զաՆեղսՆ *որ* ո՛չ եՆ եղեալ՝ չափէ՛: - 118. Իսկ աՆեղՆ ի **բ** դէմս որոշի. որպէս աՆեղ էՆ

աստուած. և անեղ՝ *որ* դեռևս ո՛չէ եղեալ և գոյացեալ: - 118. Անմիտն և անզգայն *զոր* ասեմք աստուծոյ, ո՛չ ըստ պակասութեան, այլ ըստ գերազանցութեան է դնելի: - 118. Դարձեալ՝ տեսանէ աստուած ըստ պատճառի. զի ամենեցուն է պատճառ. և ըստ պարունակութեան, *որ* զամենայն առ ինքն ունի. և ըստ կատարման, *որ* ամենեցուն է վաղճան և կատարումն: - 118. Զի աստուած ո՛չ արտաքոյ ինքեան ունի զտեսութիւնն. այլ ի ներքս միայն. զի զինքն ի յինքն տեսանէ՝ և զայլս ի յինքն. ապա զեղեալքս ի յարացոյցն *որ* է տեսութիւնն աստուծոյ որպէս ասացաք: -118-119. Զի՞նչ է *որ* ամենահայեաց ասի աստուած: - 119. Ամենահայեացն զբոլոր տեսութիւնն ասէ *որ* ընդդէմ է մասնաւոր տեսութեանս մերոյ չորեքկին: - 119. Նախ՝ հայելով ի կերպարանս և ի նմանութիւնս *որ* է՛ կարգաւորութիւն արարածոց...: - 119. Դարձեալ՝ և այսպէս տեսանի աստուած. յորժամ միտք յամենայն եղելոց որոշեսցի. նաև յինքենէ՛ զի եղակա՛ն է. թողեալ զինքն միաւորեսցի յաստուածային ճառագայթն *որ* անքննելի լոյսն է և իմաստութիւնն: - 119. Եւ ա՛յս է նոցա առաւօտու և երեկոյի ճանաչումն, զի զաստուած տեսանելով՝ նոր լինի նոցա ճանաչումն միշտ՝ *որ* է՛ առաւօտու: - 119. Եւ զեղեալքս ի յաստուած տեսանելով նոր լինի գիտութիւն արարածոց՝ *որ* է՛ երեկոյի: - 119. *Որո՞վ* զանազանի և հաւասարի տեսութիւնն աստուծոյ և հրեշտակաց: - 119. Նախ՝ զի իմացումն խոնարհի ի յիմացւածն *որ* առաջի իւր: - 120. *Որո՞վ* զանազանի և հաւասարի տեսութիւն հրեշտակաց և մարդկան: - 120. *Որո՞վ* զանազանի տեսութիւն մտաց և տեսութիւն զգայութեանց: - 120. Երկրորդ՝ միտք զգոյացութիւն իրին տեսանէ *որ* է ի ներքոյ եդեալ. և զգայութիւն զպատահմունքն ի վերայ եկեալ. որպէս որա՛կ քանա՛կ և այլն: - 120. Երրորդ՝ զգայութիւն զմասնաւո՛րն տեսանէ. որպէս այս ինչ մարդ *որ* է անհատ. և միտք զընդհանուրն իմանայ՝ *որ* է բնութիւն. որպէս մարդկութիւն: - 121. Որպէս գործնականն *որ* է բարոյականն՝ սկսեալ է ի բարւոյն աստուծոյ. և կատարի առ բարին: - 121. Այսպէս և տեսականն *որ* է բանականն՝ սկսեալ է ի ճշմարտութենէն *որ* է՛ բանն աստուծոյ, և կատարի առ նոյն ճշմարտութիւնն: - 121. Նոյն պարզ և աստուածային բանն է ճշմարտութիւնն. *որ* ո՛չ ունի ինչ ստութիւն և հակառակ իւր: - 121. *Որո՞վ* հաւասարին և զանազանին բանական քննութիւն և հաւատոյ տեսութիւն: - 121. Առաջինն *որ* է **տպաւորական աստուածաբանութիւն**՝ է՛ ի դէմս սուրբ Երրորդութեանն և մի աստուածութեանն. թէ ո՞րպէս է մի. ո՞րպէս երրեակ. և ծնօղ. և ծնունդ. և բղխումն. և վասն մարդեղութեանն քրիստոսի: - 122. Եւ է սա՛ առաջին. զի *զոր* նա՛խ է քան զյաւիտեանս և զժամանակս՝ աստուածաբանէ՛ և քննէ՛: - 122. Երկրորդն է **պատճառաբանական**. *որ* ի պատճառելեացս՝ այսինքն յարարածոցս զգեղեցիկն տեսեալ, զպատճառն և զարարիչն վերակոչեմք և անւանեմք: - 122. Երրորդն է **նշանական աստուածաբանութիւն**. *որ* ի զգալի կերպարանաց փոխակցիմք յիմանալի տեսութիւնն. թէ զի՞նչ նշանակէ մարդ երևելին. կամ առիւծ. գառն. հուր. լոյս. և այլն: - 122. Զի ո՛չ մարմին է. և ո՛չ հոգի. և ո՛չ միտ. և ո՛չ այլ ինչ *զոր* մեք գիտեմք կամ իմանամք: - 122. Եւ իւրաքանչիւր սոցա երկատի, *որ* լինին չորս ըստ աստուածաբանին գրիգորի այսպէս: - 123. Նախադրութեամբն՝ *որ* է՛ և ասի. որպէս Հա՜յր. Որդի՜. Հոգի՜. լո՜յս. կեա՜նք. և այլն: - 123. Կամ ննջել և զարթնուլ. *որ* ո՛չէ ի յաստուած. այլ դնելով ի վերոյ ըստ ներգործութեանն տարացուցի: - 123. Իսկ բացբարձականքն ի խորհրդական աստուածաբանութեանն է. նախ *որ* է՛ և ո՛չ ասի. որպէս անսկիզբն և անվախճան. ո՛չ բան և ո՛չ միտ. ո՛չէ և այլն: - 123. Ա՛յս է աստուածաբանութիւնն դրութեամբ և բացբարձմամբ. *որ* է՛ ստորասութեամբ և բացասութեամբ. և ճառելի և անճառելի: - 123. Գիտելի է՝ զի առաջին աստուածաբանութիւնն նեղագոյն է և սակաւաբան. *որ* է տպաւորականն: - 123. Եւ երկրորդն *որ* է պատճառաբանականն՝ առաւել է քան զառաջինն. զի յաղագս աստուածային անուա՛նցն է քննութիւն: - 123. Եւ երրորդն *որ* է նշանակաւ, ա՛յլ առաւել և ընդարձակ և բազմաբա՛ն է. վասն զի խառնի ի զգալիսս. *որ* բազո՛ւմ է և բաժանեալ: - 123. Իսկ ի ներքուստ ի վեր՝ ի բազմութենէ առ մինն ընթանայ. որպէս խորհրդական աստուածաբանութիւնն արտաքոյ թողեալ զբազումութիւն էից և ի մինն ընթացեալ, *որ* ամենեւին անբանութիւն է և անիմացութիւն. անճառելի. անիմանալի. և լռութեամբ պատուի յամենայն արարածոց: - 123. *Որո՞վ* զանազանին և հաւասարին բացբարձականքն և ուրացականքն. զի մի և նոյն երևին: - 124. Նոյնպէս *որք* ուրանան և ասեն, ո՛չէ աստուած քրիստոս. ո՛չէ հայր. ո՛չէ որդի: - 124. Նախ՝ զի ուրացականն ըստ պակասութեան է. *որ* ասէ ո՛չէ աստուած քրիստոս. այսինքն պակա՛ս է և ո՛չէ աստուած. և ո՛չէ հայր. և ո՛չ որդի: - 124. Իսկ բացբարձականքն՝ ո՛չ զէութիւն կամ զփառս աստուծոյ բառնայ, այլ *զոր* յետ էութեանն աստուծոյ է և ի նմանէ ստեղծեալ՝ և զխոնարհութիւնսն բառնայ: - 124. Պատասխանեմ առաջնոյն, թէպէտ մի և նոյն ուրացական մասնիկն *որ* է ո՛չն՝ գործէ՛ զուրացումն և զբառնալն, այլ ուրացումն և բառնալն ո՛չ է նոյն. զի բազում պատահի *որ* գործին նոյն է որպէս ձեռն. այլ գործելն ո՛չ է նոյն. որպէս կտրելն և կարելն: - 124. Այսպէս և ոչն.

որպէս անդ՝ ուր ասէ արիստոտէլ՝ «ո՛չ մարդ» *որ* է անորոշելի անուն. և «ո՛չ նստի» *որ* է՛ բացասութիւն. և ա՛յլ է անորիշ անունն. և այլ բացասութիւն ստորասութեան: - 124. Եւ տէրն զիին կտակն *որ* խստութիւն էր և սպանօղ՝ ընդ նորոյս խառնելով. *որ* հոգւով է և կեցուցանօղ: - 126. Ջորօրինակ՝ թափումն ի զգայութեանց թմրիլ՝ կամ ընդարմանալ ասի. այսպէս թափումն ի մտաց՝ զարմանալ ասի. ըստ պօղոսի *որ* յափշտակեցաւ. և ըստ դաւթի *որ* զարմացաւ. կամ ըստ ադամայ *որ* թմրեցաւ: - 127. Այսպէս վասն գերազանց սիրոյն *զոր* ունի աստուած առ էսս՝ զարմանալ ասի. այսինքն արտաքս ելանել՝ թափիլ և հեղուլ ի յէսս. և միաւորիլ անփոխաբուն բնութեամբ: - 127. Իսկ այլն՝ սատանա՛յ է ապստամբ վիշապն *որ* գերեաց զմարդիկ:- 128. Լայնութիւնն է ընդարձակ ճանապարհ աստուծոյ. *որ* է նախախնամութիւն նորա յամենայն էքս: - 129. Երկայնութիւն՝ *որ* ո՛չէ լայն և ընդարձակ. այլ միայն երկայն. զի երկարագծի զօրութեամբ ի բոլորս: - 129. Այլք ասեն թէ՝ է՛ ի յաստուած լայնութիւն սիրոյ, *որով* յետս դարձուցանէ զմեզ ի մոլորութեանց վասն առաւել սիրոյն: - 129. Երկայնութիւն է համբերութիւնն. *որով* տանի զչարսն. և վասն ապաշխարութեան անտես առնէ զմեղս: - 129. Բարձրութիւն իմաստութիւնն է. *որ* գերազա՛նց է քան զամենայն միտս. և ամենայն ինչ մերկապարանո՛ց կայ առաջի նորա: - 129. Խորութիւն *որ* մինչև յերկիր և դժոխս էջ: - 129. Եւ բարձրութիւն *որ* ի յերկինս էհան: - 129. Ջինչ է *որ* ասէ տեսիլն, «Ես եմ ալֆա և օմեգա. *որ* է այբ և քէ»: -129. **Նախ ա՛յս է միտքն՝ *որ* այբն առաջին է և քէն վերջին. այսինքն ես եմ առաջին աստուածութեամբս. և ես եմ վերջին մարդկութեամբս. զի մարդն վերջին է արարածոց:** - 129. Նախ է՛ գործ իմաստութեան աստուծոյ. *որով* զանազանեցին արարածք՝ առաւել և նուազ ընդունելով. և մի՛ խառնափնդոր և անզանազանապէս: - 130. Իսկ առողջ լսելիք և տկար՝ պատճառի ի համակարգս. և ի հաւասարն բնութեամբ. *որք* իմացմամբ և սիրով և ներգործութեամբ առաւել կամ նուազ են. ուստի առաւել կամ նուազ պարգևս ընդունին: - 131. Ջի՞նչ է պատճառ՝ *որ* արտաբերեալ բանս մեր միաւորեալ է ընդ ձայնի. և բացակայքն զձայնն լսեն՝ և զբանն ո՛չ: - 131. Ութերորդ՝ զի խորանն առաջին և երկրորդ և երրորդ՝ վարագո՛յր էր. և ծածկէին զմիմեանս և յայտնէին. այսպէս առաջին խորանն է աստուածայինքն. և երկրորդն հրեշտակացն. և երրորդն մերս՝ վարագուրիւք ծածկեալ՝ *որ* յայտնեն զմիմեանս: - 132. Ջի՞նչ է չորեքկերպեան կենդանիքն *զոր* ետես եզէկիէլ: - 132. Իսկ հրեշտակք փոխեն զոսա և զիմացականն վասն բարւոյ. *զոր* դևք ո՛չ կարեն փոխել: - 133. Իսկ աստուած կարէ՛ փոխել և զկամքն՝ *որ* է՛ ախորժակ ի չարէն առ բարին. *զոր* հրեշտակք ո՛չ կարեն փոխել. այլ միայն զարթուցանեն զախորժակն և օգնեն: - 133. Ջի աստուած առնէ զբորբոքումն ախորժակին. որպէս հուր *որ* վառէ՛ զփայտ: - 133-134. Իսկ հրեշտակն զարթուցանէ զախորժակն՝ որպէս այն *որ* դնէ զփայտ ի հուրն: - 134. Ասեմք եթէ՝ ինն դասք յերիս երրեակս որոշեալ թըւոց. *որոց* Առաջինն է Աթոռք. Քերոբէք. և Սերոբէք: - 134. *Որ* են միջին դասք: - 134. Նախ՝ ըստ սրբոյն դիոնէսիոսի *որ* ինն ասէ գոլ զդասս կարգապետութեան նոցա: - 134. Եւ քերոբէն *որ* է՛ բազում գիտութիւն՝ ի դէմս որդւոյ. զի նա՛ է իմաստութիւն և գիտութիւն հօր ըստ առաքելոյն: - 135. Եւ սերոբէն *որ* է՛ ջեռուցիչ՝ ի դէմս հոգւոյն սրբոյ. զի նա՛ է հուր սիրոյ *զոր* էարկ տէր մեր յերկիր: - 135. Որև այժմ ի յեկեղեցի ի նոյն խորհուրդ՝ սերոբէին պատկեր *որ* է քշոցն՝ ի ձեռն սարկաւագին աւանդի՝ *որ* է՛ մաքրօղն. և երրորդ կարգ յետ քահանային և քահանայապետին: - 135. Երկրորդ՝ զի **սերոբէն բորբոքէ ի սէրն *որ* է անմիջոց կապ. և քերոբէն ի ճանաչումն ճշմարտութեան. և աթոռքն ի յուղղութիւնն. և նոքա են վերակացուք դատաստանի իրաւանց:** - 135. Թէպէտ և զայս կարգ փոխեն ոմանք և զզօրութիւնն և զպետութիւնն աւանդեն *որ* մեզ ո՛չ է հետևելի. այլ սրբոյն դիոնիսեայ որպէս ասացաք: - 135. Եւ զայլ մասնապէս զբացայայտութիւն կոչմանց ամենայն դասուց՝ գտցես յայլուրեք ի բանն գրեալ *որ* ասէ՝ «ո՞ արար զհրեշտակս յոգիս»: -136. Իսկ ընդդէմ այսմ՝ քահանայապետն *որ* վերին է՝ ունի զքահանային և կոչի: - 136. Ա՛յս է պատճառն, զի *որ* առաջին է և վերին՝ ունի զերկրորդն և զներքինն: - 136. Եւ թէ ոք ասիցէ, վասն էր մարդիկք հրեշտակք կոչին. նաև հրեշտակք աստուած՝ *որ* վերնոցն են կոչմունք: - 136. Են և ա՛յլ հասարակութիւն և յատկութիւն նոցա. *որոց* բաւական է այսչափս առ այժմուս: - 138. Քահանապետութիւնն ըստ այնմ *որ* կա՛րգ է՝ մի և նոյն է ի մարդիկ՝ ի հրեշտակս՝ և յաստուածպետութիւնն սուրբ: - 138. Երկրորդ՝ զի առաջինքն առանց տարակուսութեան առնուն զգիտութիւն. և այլքն նախ տարակուսին և ապա առնուն. զի այն *որ* առաջին դասն նախ էառ՝ տարակո՛յս է նոցա՝ մինչև ինքեանք ևս առցեն: - 138. Է՞ *որ* ի ներքուստ, *որ* չարութիւն և ախտ կոչի. և է՛ *որ* արտաքուստ, *որ* կիրք և արատ կոչի: - 139. *Որո՞վ* զանազանի հրեշտակն և հոգի մարդոյ՝ և հաւասարի: - 140. Ջի՞նչ է ռք հազարաց և բիւրք բիւրուցն *զոր* ետես դանիէլ: - 141. Կատարեալ և գերակատար թիւք դոքա են առ մեզ. *որ* ի **դ** գլխաւորին ըստ չորից տարերց: - 141. *Որ* է՛ **ժ, ճ, ռ**, բիւր:

- 141. Եւ դարձեալ, **ճ** տասն՝ հազա՛ր է. և **ճ** հարիւրն՝ **ժ** հազար է. *որ* է՛ բիւր մի. և **ճ** հազարն՝ **ժ** բիւր է. և **ռ** հազարն՝ **ճ** բիւր է. և **ռ** բիւրն՝ **ժճռ** է: - 141. Երկրորդ՝ զի զամենեսեան միահամուռ ունի և պահէ՛. և այսպէս գիտէ *զորս* ունի առ ինքն և պահէ՛: - 141. Իսկ առ հրեշտակս բոլոր շարժումն է ի նոյնէ ի նոյն. որպէս անիւն *զոր* ետես եզեկիէլ. այսինքն ի նոյն աստուծոյ են սկսեալք, և ի նոյն անվախճանապէս մնան: - 142. Իսկ գնդակ *որ* է կողմնաւոր՝ շարժի հոգին, յորժամ բնականապէս լուսափայլի յաստուածային գիտութիւնս տեսութեամբ և մտածութեամբ. և այնպէս հոգէպէս ի յաստուած միաւորի. որպէս աշակերտաց առաքելոց և մարգարէից: - 142. Երկրորդ՝ *որ* ի ձեռն զգայարանաց: - 142. Եւ *որ* ըստ ինքեանէ յերկուս բաժանի: - 142. Է՛ *որ* իմացումն մտացն առ ինքն ժողովի ի յիշողականէ՛...: - 142. Իսկ *որ* զգայարանօքն տեսանէ, այսինքն աչօքն զգոյնն, ականջօքն զձայնն, և այլն. կոչի սա զգայական տեսութիւն: - 142. Ապա յա՛յտ է՝ զի գիրն ներգործակա՛ն է իմացութեանցն *որ* ըստ ինքեանն *զոր* ի վերոյ ասացաք: - 143. Իսկ *որ* գերակատար իմացումն է և ըստ բնականին տեսութիւն՝ անկարօ՛տ է գրոց և սիղոբայից: - 143. Իսկ միջինն *որ* է՛ բնականն՝ ո՛չ գովելի և ո՛չ պարսաւելի: - 143. Իսկ *որ* ի յայլս՝ որոշի յերիս. այսինքն ի վերնագոյնն, որպէս յաստուած՝ ի հրեշտակս և ի սուրբս: - 143. Առաջին՝ գաբրիէլ. *որ* է՛ պատկեր աստուծոյ: - 144. Երրորդ՝ ռաֆայէլ. *որ* է՛ բժշկութիւն: - 144. Չորրորդ՝ անայէլ. *որ* է՛ լրումն աստուծոյ: - 144. Ներքին՝ դասք հրեշտակացն. *որ* են պատգամաւորք և հրամանատարք: - 144. Ութերորդ՝ քերօբէիցն. *որ* են վարսք հրեղէնք: - 144. Դարձեալ առնէ հրեշտակն առաջի միւս հրեշտակին *զոր* նախ ո՛չ իմանայր: - 145. Որպէս ո՛չ արտաբերի հնչումն ձայնական գործեաց և ո՛չ փոփոխէ զօդն *որ* ի մէջն: -145. Նոյնպէս յերեւումն հրեշտակաց *զոր* մինն տեսանէ՝ այլ մերձակայքն ո՛չ տեսանեն. որպէս յա՛յտ է ի պատանեակն եղիսէի: - 145. Սակայն զչար խորհուրդն ո՛չ կարէ ածել ի ներքս *որ* միայն հաւանութեամբն է չար: - 145. Զի հոգին խօսի ընդ աստուծոյ բաղձանօքն *որ* մերկապարանո՛ցն է առաջի նորա: - 145. Նոյնպէս և խօսի հոգին ընդ հրեշտակն մարմնական կերպիւ *զոր* իմանայ հրեշտակն որպէս զայլ զգալիս որքան է ի մարմնի: - 145. Այլ ի մերկանալն ի մարմնոյն՝ կարօտանայ յատուկ իմն զօրութեան *որով* խօսեցի ընդ հրեշտակին: - 145. Զամենայն հրեշտակս բարի արար աստուած, այլ ո՛չ ծայրագոյն բարիս. այլ միջակս. *որ* է ի մէջ անփոփոխ և փոփոխական բարւոյն. այնպէս՝ զի թէ դառնային և սիրէին զայն՝ *որ* ի վեր քան զինքեանս, ելանէին յորպիսութիւն շնորհաց և փառաց. որպէս այժմ են հրեշտակք բարիք: - 146. Ա՛րդ՝ տեղական անկումն դիւին եղև կամ ի դժոխս՝ կամ ի յօդս աղջամղջին *որ* է՛ միջին կայարան օդոյն: - 146. Ա՛րդ՝ բնութեան նոցա պատշաճի բարձրագոյն տեղիք *որ* է երկինքն *յորում* ստեղծան. զի թէ կացեալ էին կատարելոց էին անդ: - 146. Եւ գործոյն *որ* ունին կրթել զմարդիկ՝ յարմարի օդն *որ* է՛ մերձ առ մեզ փորձելոյ զմեզ. այլ ո՛չ ի լոյս. զի մի ուրախասցին: - 146. Այլ մեղացն պատշաճի ստորին տեղիք *որ* է դժոխքն: - 147. Զի ասէ աստուածաբանն՝ «յաստուած մերձենայաք և աստուած լինէաք» այսմ *որ* քրիստոսի գալովս եղև, *զոր* և յեկեղեցւոյ ուսան հրեշտակք ըստ պօղոսի: - 147. Զի ինքնագիտ չարութեամբ նախ ինքն չարացաւ *որ* ասի գտակ. և ապա զայլս չարացոյց *որ* ասի մայր. որպէս սկիզբն և սերմանօղ չարեաց ի յայլս: - 148. Դարձեալ՝ առաւօտ կոչի վախճան աշխարհիս *որ* սկիզբն է աներէկ աւուրն: - 148. Ա՛յս է՝ մեղք հպարտութեանն *որ* է երկրային ախտ, ծանրացոյց և ընկէց յերկիր: - 148. Զլաւագոյն կայս *զոր* աստուած տուեալ էր նմա՝ կամեցաւ ակամայ յաստուծոյ հ՛ւր շորթել. և այլոցն բռնաբար տիրապետել և հրամայել: - 149. Եւ այլք զի՞նչ մեղան *որք* ընդ նմա անկան: - 149. Նախ՝ զի գոյին այնպիսի հրեշտակք *որք* մնացին ի բարին: - 149. Զի թէ այնպիսիք էին *որ* ո՛չ կարէին մեղանչել՝ իբր կապեալք լինէին և բռնադատեալք, և վարձս ո՛չ առնուին: - 149. Եւ զի նախագէ՛տ էր աստուած՝ ընդէ՞ր ստեղծ զնոսա *որ* այնպիսիք եղեն: - 149. Կարե՞ն զամենայն *զոր* կամին: - 149. *Յո՞ր* դասէ անկան: - 150. ...բանական կենդանի և մահկանացու՝ մարդս միա՛յն է *որոյ* յարութիւն և դատաստան գոյ: - 150. Եւ *որք*՝ ի վէմս իշխեն՝ քաջք կոչեցան: - 150. Եւ *որք* ի ջուրս և ի ծնունդս կանանց՝ ա՛լք կոչեցան. զի գէջ ախտիւն զհոգիս կորուսանեն. և ի ծնունդս՝ զմարմինս և զհոգին: - 150. Հինգերորդ՝ զի հոգևոր բնութիւնն միանգամ միայն է շրջելի. վասն զի բոլորովին շրջէ զինքն՝ *զոր* ո՛չ առնէ մարդն...: - 51. Զայսմ վիշապէ՛ ասէ՝ զգլուխ վիշապին փրկիչն ջախջախեաց ի յորդանան. այն է *որ* զամենայն ջուրս ծովուն յակնակապիճս իւր ընդունէր: - 151. Երրորդ՝ վասն գոյացութեան իւրոյ *որ* անկաւ ի հրեղէն դասուցն: - 151. Իսկ **ժ** եղջիւրն է **ժ** պատուիրանին յանցումն, *որով* պատերազմի ընդ մարդկան: - 151. Իսկ յանցումն օրինացն՝ լինի զէն և գործի դիւացն *որով* պատերազմին ընդ մարդոյս: - 151. Եւ **ժ** կատարեալ թիւ է. նշանակէ՛ զկատարեալ զօրութիւնս թշնամւոյն *որով* կռուի ընդ մեզ. *զոր* նշանակեն եղջիւրքն: - 151. Եւ այն *որ* **ժ** է եղջիւրք և **է** գլուխ: - 151. Եւ **ժ** կատարեալ թիւ է. նշանակէ՛ զկատարեալ

զօրութիւնս թշնամւոյն որով կռուի ընդ մեզ. *զոր* նշանակեն եղջիւրքն: - 151. Զի **գ** գլխոյն կրկին է եղջիւր. *որ* է հպարտութիւն՝ նախանձ՝ և բարկութիւն. զի սոքօք յաջ և յահեակ պատերազմի. և առ ընտիրս և առ խոտանս գտանին բազում ուրեք երեքին ախտքս այսորիկ: 151-152. Եօթն խոյրն զդիւական ներգործութիւնսն նշանակէ. *որովք* յաղթէ՛ զմարդ և պսակի: - 152. Զի *զորս* քրտամբք և աշխատութեամբ յաղթէ՝ զնոյն պսակն ի գլուխն իւր դնէ: - 152. Նոյնպէս և առ մեզ՝ *որք* մրցին և ջանան ընդ դէմ բանսարկուին և մեռուցանեն զէ գլուխ նորա՝ նոքա զնոյն պսակն ժուժկալութեամբ և առաքինութեամբ ընդունին ի գլուխս իւրեանց յիւրաքանչիւրոցն *զորս* կոխեն և յաղթահարեն...: - 152. Չորրորդ՝ տուտն նշանակէ զսեռն. *որ* ի վերջին ժամանակս բռնանայ և քարշէ՛ զերրորդ մասն աստեղաց: - 152. Իսկ զոմանս կորուսանէ և պատրէ՛. *որ* է՛ երրորդ մասն կորուսելոցն: - 152. *Զոր* եկեալ տէրն անմեղ և անապական մարմնովն նահանջեաց զմեղս, և զարդարութիւն սփռեաց ի վերայ մարդկան. և դատապարտեաց զսատանայ իբր զդաւաճանօղ մարդկան և կոխան արար ի ներքոյ մարդկան: - 153. *Զոր* ի տեսիլն անտօնի խոստովանէին զբանս զայս մեկնելով ի վերայ ինքեանց. այս վասն առաջնոյն: - 153. Եւ վասն երկրորդին ինքն տէրն ասէ՝ կապեալ զհզօրն և զտուն նորա աւար հարեալ *որ* է՛ դժոխքն...: - 153. Արարչութիւն և նախախնամութիւն. *յորում* և վասն փործութեանց զանազան: - 154. Աշխարհ ո՛չ լինի ոչէ. և ո՛չ ապականեալն կոյս. և վասն թողութեան. *յորս* նախագաղափար տեսութիւնն աստուծոյ: - 154. Պա՛րզ է աստուած. *յորս* և բնութեամբ միաւորութիւն: - 154. *Զո՞ր* ձև ունի երկինք. և քանի՞ է: - 154. *Ո՞ր* է սկիզբն աւուր. և բաժանումն լուսոյ և խաւարի: - 154. Վասն սերմանց *որ* ի չորս եղանակս: - 154. Վասն ժամանակի. և թէ *ո՞ր* մասն է առաջին: - 154. Եւ նախ հարցանեմ, *որո՞վ* զանազանի գործ բնութեան և գործ կամաց: - 156. Երրորդ՝ զի կայ ի մարդս *որ* ի հարկէ՛ առնէ. իսկ աստուած առանց ամենայն հարկի է: - 156. Երեքտասաներորդ՝ մարդ զինչ *որ* կամի ո՛չ կարէ. իսկ աստուած զոր ինչ և կամի և կարէ՛: - 157. Իսկ ի նոյն ինքն՝ առաջին է նախախնամութիւնն առ աստուած, և ապա՛ ստեղծումն. զի վասն նախախնամական բարութեանն կամեցաւ ստեղծանել զեղեալքս. որպէս ասէ սուրբն դիոնէսիոս ի **դ** գլուխն *որ* յաղագս երկնայնոցն քահանայապետութեանց: - 157-158. Զի առնելն է հաճոյական գործ առանց կասկածանաց. որպէս բարի առնել բարեաց, *որ* է՛ արդարութեանն աստուծոյ. և չար առնել չարեաց...: - 158. Բայց թէ թոյլ տըւութեամբ՝ *որ* մեզ երևի չար. և է՛ ծածուկ բարութիւն ի նմա: - 158. Եօթներորդ՝ թոյլ տուեալ լինի և ոմանց անկանիլ ի մեղս ինչ. զի ի հպարտութենէն *զոր* ունէր վասն առաքինութեան՝ խոնարհեսցի և անկցի առաջի տեառն խոստովանութեամբ. և ընկալցի զթողութիւն. *որ* նախ համասե՛ռ էր սատանայի: - 159. Տասներորդ՝ զանկեղծ սէրն նշանակէ *զոր* ունին առ քրիստոս, փոխանակ չարչարանաց նորա չարչարանս կրել. և ի սիրոյ նորա ոչ մեկնիլ...: - 159. Որպէս եղև առ մարիամ բորոտութիւն վասն բանբասելոյն զմովսէս. *որ* աստ սակաւ ինչ տանջեցաւ, զի մի՛ ելցէ յերկնից ժառանգութենէն: - 159. Երեքտասաներորդ՝ զի տկար մարմնով անմարմին և զօրաւոր թշնամոյն յաղթեսցեն. *որով* աստուած իսկապէս փառաւորի. տեսանելով զտկարն յաղթել զօրաւորին...: - 159. Զի՞նչ է *զոր* տէրն հրամայէ աղօթել՝ «մի՛ տար զմեզ ի փործութիւն». և առաքեալն յակոբոս՝ ուրախ լինիլ ասէ՝ «յորժամ ի պէս պէս փործութեան մէջ անկանիցիք»: - 160. Կրկին է փործութիւն. այսինքն ներքին և արտաքին. *որ* է՛ մեղաց և պատժոց: - 160. Արդ ներքին է՝ *որ* ի փափկութեանց և ի հեշտութեանց փործի բնութիւնս մեր և այլայլի ի զանազան տեսակս մեղաց. *զոր* պա՛րտ է հանապազ աստուածային խնամոյն՝ զի մի՛ թողցէ յայսպիսի փործութիւնս զմեզ ընկղմիլ: - 160. Իսկ առաքեալն վասն արտաքին փործութեանցն ասէ. *որ* ի հալածչաց հասանէ ի վերայ մեր. *յորում* ուրախանալ պարտիմք. զի որքան յաճախէ փործութիւնն, ա՛յնքան առաւելու և պսակն: - 160. Նախ է՛ բարի՝ *որ* ինքն վասն իւր խնդրի. որպէս առողջութիւն: - 160. Երկրորդ՝ *որ* ինքն ո՛չ է բարի, այլ պատճառէ՛ զա՛յլ բարի. որպէս դառն դեղն զառողջութիւնն: - 160. Եւ այսպէս խնդրի ապաշխարանքն. *որ* պատճառէ՛ զյաւիտենական կեանքն: - 160. Երրորդ՝ *որ* է՛ ինքն բարի, և պատճառէ՛ զայլ բարի. զորօրինակ՝ որպէս քաղցր դեղն պատճառէ՛ զառողջութիւն: - 160. Եւ այսպէս են մարմնաւոր բարիք. որպէս ոսկի և այլ ինչ. *որ* ի ձեռն ողորմութեան պատճառէ՛ զհանդերձեալ բարիսն: - 160. Չորրորդ՝ *որ* ինքն ո՛չ է բարի, և ո՛չ պատճառէ զբարի. բայց թէ պատահմամբ: - 160. Զորօրինակ՝ որպէս տղայ *որ* տեսանիցէ ցից ի յորմում, երթայ ի մօտ. թէ ամո՛ւր է՝ թողու. վասն զի ո՛չ կարէ հանել. և երթայ առ միւսն. թէ շարժի՝ ի մօտ կենայ մինչև հանէ՛: - 160-161. Հինգերորդ՝ զանազանութիւն՝ զի սատանայ ի փործելն ո՛չ գիտէ զառաջիկայն թէ յաղթէ և թէ յաղթի. և եթէ էր տեղեակ՝ ո՛չ մրցէր ընդ կատարելոցն *որք* յաղթահարեն զնա. որպէս ընդ ստեփաննոսի, անտօնի, և այլոցն, *որք* յաղթեցին սատանայի: - 161. Ի փործութեանց ծանեաք զշահն *որ* ասացաւ ի

վերոյ…: - 161. Իսկ թէ կամիս ուսանիլ թէ զի՞նչ է նիւթ պսակին. որ ինչ առ աստուածութեան իւրում մեծութիւն գտանի, զա՛յն պատրաստեաց սիրելեաց իւրոց. *զոր* ո՛չ կարեմ զմտաւ ածել. կամ վայրապար լսելեօք լսել: - 161. Առ այնոսիկ *որք* ասեն՝ անկա՛ր է աստուծոյ առնել զաշխարհս ոչ ինչ. մինչ զի ո՛չ երևիլ սկիզբն լինելութեան սորա: - 162. Զի յատուկ է առաջին պատճառին *որ* է՛ աստուած՝ ի հարկէ էակ գոլ՝ և միշտ ներգործութեամբ, և իսկապէս ներգործութեամբ. *որովք* տարորոշի յայսցանէ՝ *որ* կարելի՛ են էակ գոլ. և երբեմն ներգործութեամբ և հանդերձ զօրութեամբ: - 162. Որպէս այսոքիկ *որ* փոփոխականք են. *որ* կարեն գոլ և ո՛չ գոլ. և երբեմն հանդերձ զօրութեամբ: - 162. Զի ի հարկէ՛ էակ է, *որ* զգոլն միայն ունի. իսկ զչգոլն ո՛չ ունի. ապա ուրեմն անփոփո՛խ է էութեամբ: - 162. Եւ իսկապէս ներգոր-ծութեամբ, զի զօրութեամբ *որ* է՛ անկատար իր ինչ ի յաստուած ո՛չ է …: - 162. Դարձեալ՝ կամքն աստուծոյ անփոփոխ է. զի ո՛չ տարակուսի և ո՛չ զղջանայ. ապա թէ արար աստուած զաշխարհս ի գոյութիւն՝ այժմ առնէ յանգոյութիւն, երևի փոփոխումն անփոփոխելոյն. կամ զղջումն և երկբայութիւն. *որ* օտա՛ր է արարչականն կամաց: - 162. Եւ թէ ոք ասիցէ, եթէ աստուած *զոր* ոչ կամի՝ ո՛չ կարէ, որպէս զչար զի ո՛չ կամի և ո՛չ կարէ. նոյնպէս զմեղս և զայլսն. ապա երևի անկարութիւն ի յաստուած գոլ: - 163. Ասեմք առ այս Նախ՝ եթէ կամքն և կարն ի մեզ անհաւասա՛րք են. վասն այն զոր ինչ կամիմք՝ ո՛չ կարեմք. և *զոր* կարեմք՝ զա՛յն կամիմք: - 163. Եւ *զոր* կամի՝ զնոյն և առնէ և կարէ. և *զոր* ո՛չ կամի՝ ո՛չ առնէ և ո՛չ կարէ: - 163. Իսկ առ աստուած կամքն և կարն հաւասա՛րք գոն. վասն որոյ հակադարձին ի միմեանս. զի զոր ինչ կամի՝ կարէ՛. և *զոր* կարէ՝ զնոյն և կամի՛: - 163. Դարձեալ ասեմք, ամենակար և ամենազօ՛ր է աստուած. և *որ* ամենայնի կարօղ է և հզօր, ո՛չ է անկար: - 163. Իսկ այն *որ* ո՛չ կարէ զչար, առաւել կարողութեանն է ցոյցք, և ո՛չ եթէ անկարութեան: - 163. Իսկ *որ* ասէ, մինչ զի ո՛չ երևիլ սկիզբն լինելութեան սորա: - 163. Երրորդ զանազանութիւն՝ զի թէ շինի տաճարն և թէ ոչ՝ առաջին սկիզբն *որ* ի միտքն մնայ՝ նոյն ո՛չ առաւելու և ո՛չ նուազէ: - 163. Իսկ հասարակութիւն է Նախ՝ զի երկուց սկզբանցն մի և նո՛յն է պատճառ ներգործական. *որ* է՛ արուեստաւորն: - 163. Չորրորդ՝ և որպէս *որք* մերձն են զառաջին սկիզբն ո՛չ տեսանեն *որ* ի միտս շինողին: - 164. Նոյնպէս և հրեշտակք ո՛չ տեսանեն զնախագաղափար տեսութիւնն *որ* լինելո՛ց էր յետոյ: - 164. Եօթներորդ՝ զի ուսմամբ է նախատեսու-թիւնն *որ* առ մեզ: - 164. Եւ որովհետև գիտացեալ եղև այս, ապա յա՛յտ է թէ անկա՛ր է ոչ երևիլ սկիզբն լինելութեան աշխարհի. ըստ այնմ *որ* էր ի նախագաղափար տեսութիւնն աստուծոյ: - 164-165. Այլ և ո՛չ ըստ այնմ *որ* է՛ սկիզբն գոյացութեան աշխարհի. զի անփոփոխ կամօք կամեցաւ և արար ի գոյութիւն. և անկա՛ր է փոխիլ կամացն անեղին և առնել յանգոյութիւն զեղեալս էութիւն: - 165. Ասելի է թէ՝ կոյսն և ապականեալն են հակակայք ըստ ունակութեան և պակասութեան. որպէս երեսք և կուրութիւն. *որոց* ի լինիլն համահետևին երեքին սոքա. այսինքն ժամանակն, և մասն, և նոյն: - 165. Մասն՝ զի նոյն մասինն *որոյ* էր ունակութիւն՝ նորին եղիցի և պակասութիւն: - 165. Այլ արդ՝ կուսութիւնն է ի կարելոյն *որ* ունի զգոլն և զչգոլն. իսկ ապականութիւնն է յանկարելւոյն. *որ* ունի զմինն և ո՛չ կարէ հակադարձիլ առ միւսն: - 165. Եւ զի այս այսպէս է, *յորում* պոռնիկն է՝ անկա՛ր է լինիլ ոչ պոռնկեալ. և ապականեալն կոյս: - 165. Եւ այս ո՛չ պատճառի ի տկարութենէ շնորհացն *որ* միշտ նոյնպէս է նախ և յետոյ. այլ ի տկարութենէ անձինն շրջելոյ: - 166. Զորօրինակ լոյսն *որ* միևնոյն է, այլ պայծառ՝ և բժոտեալ ակն ոչ միապէս տեսանէ: - 166. Նախ՝ զի գործն իշխանութեան է *որ* ո՛չ է խափանեալ: - 167. Եւ ապա զի ներգործօղն բա՛նն է աստուածային *որ* ո՛չ երբէք արգելի: - 167. Դարձեալ և ի յառակս անառակին *որ* դարձաւ առ հայրն՝ և ողջմամբ ընկալաւ և զգեցոյց զնա և զարդարեաց մատանի ի ձեռս՝ և կօշիկ յոտս…: - 167. Աղաչեմ *զոր* յիշեցաւ ի վերոյ բացայայտել, եթէ ի նախատեսութիւնն աստուծոյ աշխարհի զօրութեամբ ո՛չ ասի: - 167. Արդ՝ է՛ զօրութիւն մի՝ *որ* հանդերձ ներգործութեամբ է. և է՛ զօրութիւն *որ* առանց ներգործութեան է: - 167. Զօրութիւն *որ* ներգործութեամբ է՝ հարկաւո՛ր է. իսկ առանց ներգործութեան զօրութիւն՝ կարելին է *որ* է ներընդունականն: - 167. Դարձեալ այն զօրութիւնն և ներգործութիւնն և հարկաւորն մի է. և հետևին առ միմեանս. զի ամենայն *որ* հարկաւոր է՝ ներգործութեամբ է. և ամենայն ներգործութիւն զօրութեամբ ներգործէ. իսկ միւս զօրութիւնն և կարելին և ներընդունականն *որ* է մարթելի՝ մի է և հետևին առ իրեարս. զի ամենայն *որ* զօրութեամբն է՝ կարելի է և մարթելի: - 168. Իսկ միւս զօրութիւնն *որ* է փոփոխական՝ ի գոլն և ի չգոլն կարէ՛. և անկար առ ո՛չ ոք է: - 168. Իսկ միւս զօրութիւնն *որ* կարելի է՝ և ներընդունի զգոլն և զչգոլն՝ և երբեմն՝ ասի ի վերայ փոփոխական բնութեանց. որպէս հանդերձն կարէ՛ պատառիլ և ո՛չ պատառիլ. և ջուրն կարէ՛ ցրտացուցանել և ո՛չ ցրտացուցանել: - 168. Ապա թէ ոչ՝ մշտնջենաւորն լինի փոփոխական *որ* սուտ է: - 168. Չորրորդ՝ զօրութիւն և ներգործութիւն են հակակա՛յ իրերաց. ապա թէ է զօրութեամբ և

ներգործութեամբ՝ գո՛յ ինքն ինքեան հակակայ *որ* է բնաւ սուտ: - 168. Այլ արդ եթէ է զօրութիւն ի յաստուած լինի փոփոխական և նա *որ* է՛ անտեղի: - 168. Եւ թէ է զօրութիւն ի նա՛, լինի յանկատարութենէ ի կատարելութիւն եկեալ, կամ հակադարձեալ. *որ* է՛ անհնարին հերձուած: - 168. Եօթներորդ՝ ներգործութեամբն պատուական է քան զօրութեամբն. և թէ գոյր զօրութեամբ, լինէր ինքն ինքեան պատուական և անպատիւ *որ* է՛ անյարմար: - 168-169. Եւ թէ գոյր ինչ զօրութեամբ ի նա՛, և նա՛ լինէր ընդ եղելոցս ի ժամանակի *որ* է սուտ: - 169. Եւ թէ գոյր ինչ այսպիսի զօրութիւն ի նա, լինէր վախճանաւոր և նա. և թէ էր վախճանաւոր, և էր սկզբնաւոր՝ *որ* է՛ անպատշաճ: - 169. Է՛ *որ* միշտ ներգործութեամբ. որպէս աստուած. և է՛ *որ* միշտ զօրութեամբ. որպէս նիւթն և ժամանակ. և է՛ *որ* երբեմն զօրութեամբ և երբեմն ներգործութեամբ. որպէս այսոքիկ *որ* ի լինելութեան և յապականութեան են: - 169. Զորօրինակ՝ ներտրամադրեալ բանն է՛ նախ ի խորհուրդն կատարեալ. և յետոյ ժամանակաւ լինի յառաջ բերեալ և գրեալ բան. և նո՛յն բանն էր յառաջ բերելս և գրելս *որ* էր նախ ի խորհուրդն: - 169. Եւ զորօրինակ՝ անորակ նիւթն *որ* է՛ միշտ զօրութեամբ, ամենայն մարմինք *որ* ներգործութեամբ են՝ առ նա զօրութեամբ են: - 169. Խնդրեմ և զայս *որ* ասացաւ ի վերոյ թէ պատահումն ո՛չ է յաստուած: - 169. Ստորոգութիւնս պատշաճի եղական գոյիցս իսկութեամբ. *որ* ի նիւթոյ և ի տեսակէ՝ ի գոյացութեանց և ի պատահմանց են ժողովեալ: - 171. Իսկ անեղ և պարզ էութեանն պատշաճի միայն նմանապէս համեմատութեամբ. զի Է կոչի աստուած, ըստ այնմ «ես եմ որ էն». և ո՛չ ըստ այնմ *որ* բաժանի ի գոյացութիւն և ի պատահումն. որպէս հոմանուն կամ փաղանուն. կամ ի միոջէ և առ մի. որպէս ընդհանուր էակն է՝ բաժանի առ մեզ: - 171. Այլ կոչի է, ըստ այնմ *որ* միշտ է՛, ո՛չ ունելով սկիզբն և ո՛չ վախճան. այլ ինքն է ամենեցուն սկիզբն և վախճան. որպէս ասէր՝ «ես եմ ալֆա և օմեգա»: - 171. Իսկ Գոյացութիւն կոչի աստուած, ո՛չ ըստ որում ներհակ պատահմանց է ընդունական որպէս մեք. այլ ըստ որում բաժանի ընդդէմ պատահմանց. *որ* է՛ միայն պարզ գոյացութիւն որպէս ասացուք: - 171. *Ո՛ր* ըստ որում շարժող զգայութեանցս *որ* առ մեզ՝ կոչին որակք՝ գոյն, և համ, և սոյնպիսիք: - 171. Իսկ Ուր ոչ ասեմք տեղի աստուծոյ. զի տեղի *որ* է՛ բովանդակութիւն, եռաբա՛ր ասի: - 172. Նախ է տեղի մարմնական. *որ* ըստ իւրաքանչիւր մասնկանց մարմնոյն պատահի: - 172. Իսկ Ունիլ ասի, իմաստութիւն և բան ունի և զարարածս. և ունի յատկութիւն *որով* տարորոշի յարարածոց: - 172. Զի՞նչ է *որ* ասեն փիլիսոփայք թէ յոչ ուրեքէն յոչ երբեքէն ոչինչ լինի: - 173. Նախ զայս ասեմք թէ ամենայն ինչ հնարաւոր է աստուծոյ. զի կարէ՛ առնել *զոր* միտք մարդկան տեսանէ. և կարէ՛ *զոր* ո՛չ տեսանէ: - 173. Եւ դարձեալ է՛ ոչ էակ՝ *որ* թէպէտ ներգործութեամբ ո՛չ է, սակայն զօրութեամբ ունի զգոլն. և յայսպիսի յոչնչէ եղեն արարածք ամենայն. ապա ուրեմն յայտնի է հարցումնդ: - 173. Եւ է՛ էակ *որ* երբեմն զօրութեամբ է. որպէս այնոքիկ որ ի լինելութեան և յապականութեան են *որք* միշտ փոփոխին. որպէս մարդ և ոչխար և ծառ: - 173. Զի երբեմն էր *որ* ոչ էին. և այժմ են, և յետոյ ապականին: - 173. Իսկ մշտնջենաւոր էակն միայն մին ունի զօրութիւն *որ* է առինքն ներգործութեամբ. որպէս հրոյ ջեռուցանելն. և արեգական լոյսն. և հրեշտակին անապականութիւնն: - 173. Այսինքն կամօք է՝ զի գիտութիւնն և կամքն առաջնորդէ՛ գործոյն և հնարաւոր է՛ առնել զայս՝ և առնել զայն, *զոր* և կամեսցի. որպէս մարդ զի տէր է գործոյ իւրոյ՝ առնելոյ և ոչ առնելոյ: - 173. Եւ ո՛չ ուրեք երբեք միտք ուղղափառաց բաժանմամբ տեսանէ. ո՛չ զբնութիւնս և ո՛չ զկամս և ո՛չ ներգործութիւնս *որ* յառաջն հարցափորձեցաք սակաւիկ: - 174. Էութիւն և բնութիւն մի են որպէս մարդկութիւն. այլ էութիւնն երբեմն նշանակէ զանձն *որ* ա՛ստ է և այժմ. իսկ բնութիւնն ո՛չ: - 174. Հինգ. այսինքն Քանակն *որ* է չափն. Որակն. *որ* է գոյնն. ձևն. տեղին. զատութիւնն: - 174. Բաղկացական է, *որ* ընդ մարմնոյ մասնկանցն գոյանայ ի ներս և ի դուրս. վերոյ և ներքոյ շուրջանակի. զի իւրաքանչիւր մասունք ի տեղին ունին զդրութիւնն. և կայացեալ ի բոլորն: - 174. Իսկ պատահական տեղի է, *յորում* նստեալ ոք՝ կարէ՛ թողուլ զայն և լինիլ յայլ տեղւոջ. որպէս ի վեր կամ ի վայր: - 174. Ո՞րպէս է զի աստուած պարզ է և աննիւթ, զնիւթականքս յառաջ էած. զի այս է կարգն *որ* նիւթն ի նիւթոյ, և աննիւթն յաննիւթոյ յառաջագայի: - 175. Նախ՝ զի ո՛չ ունի քանակ, որակ, ձև, և այլքն, *որ* նիւթո՛յ են յատկականք: - 175. Երկրորդ՝ զի ի զատ ճողոպրի ի զգայութեանց. այսինքն ի տեսանելեաց, ի շօշափելեաց, և յայլոց, *որ* զնիւթականս զգան: - 175. Այլ թէպէտ աննիւթ է աստուած՝ ո՛չ է անկարգ զնիւթականքս յառաջ ածել ըստ այսմ օրինակի. զի նիւթն *որ* է՛ գոյացութիւն մարմնական՝ ունի որակութիւնս իմն մարմնական. որպէս քանակ. որակ. և այլքն: - 175. Եւ գոյացութիւն ասեմ, *որով* տարորոշի ընդդէմ ոչ գոյին. և որակութեամբ բացորոշի յանմարմին էութեանց. ուստի բաղկանայ մարմին գոյացութեամբ և որակութեամբ: - 175. Եւ ուստի՞ է յայտ ասիցէ ոք. այսինքն զի բանն անմարմին է *որ* բաժանէ զսոսա. զի այս է կարգն *որ* մարմին

զմարմին բաժանէ. և անմարմին զանմանմինն: - 175. Գոյացութիւն *որ* սկիզբն է ամենեցուն և նախասեռ...: - 176. Եւ ո՛չ ասեմք զպետրոսն այլ և այլ բնութիւն ըստ այլևայլութեան սոցա *որ* ի պետրոսն: - 176. Նախ վասն հեռաւորութեանն *որ* մեղօք հեռացաք յաստուծոյ: - 177. Չորրորդ՝ զի գրովն *որ* է մարմին՝ հասանիմք յանմարմին բանն: - 177. Առաջին՝ է գիրն *որ* է գծեալն: - 177. Երկրորդ՝ տառն *որ* է կոչումն գրոյն. որպէս ասեմք այբ: - 177. Եօթներորդ՝ ներքին իմաստքն ամենևին խոր և բարձրագոյն տեսութիւն. *զոր* ըստ ինքեան միայն իմացումն տեսանէ և ի դուրս արտաբերէ՛: - 177. Մեկնաբանութիւն գովութեան այբին *որ* է առաջին գիր արարածոց: - 177. Յինգերորդ՝ կոչեցեալ. *որ* է՛ ա՛յբ: - 177. *Զորոյ* զբացայայտութիւն սորա այսպէս իմասցուք: - 177. Առհասարակ զսոսա ունի այբն ըստ այնմ *որ* է՛ գիր: - 177. Իսկ Յինգերորդ զի կոչի այբ. *որ* թարգմանի հայր: - 178. Յինգերորդ՝ զի և քրիստոս *որ* եղև երկրորդ կտակ և օրէնք մեր, կոչի ծնունդ և արարած: - 179. Բարութիւնն աստուծոյ. զի իցեն՝ *որոց* զբարութիւն իւր հաղորդէ՛: - 179. Աստուած՝ իմանալի աշխարհ. և աշխարհ՝ զգալի. *որ* և մարդս իմանալի և զգալի աշխարհ: - 179. Արդ ամենայն ինչ *որ* զգալի է՝ ի ներքս ի սմա՛ է. ծա՛յն. գո՛յն. հո՛տ. հա՛մ. ծա՛նր և թեթև. և ո՛չ ինչ է արտաքոյ սորա. յաղագս որոյ և ո՛չ զգայարանաց կարօտի: - 179. Մին մարմնական. *որ* ի մէնջ տեսանի: - 180. Եւ միւսն հոգևոր. *յորում* հոգևոր գոյացութիւնք. այսինքն հրեշտակք բնակին: - 180. Երրորդն իմանալի. *յորում* Երրորդութիւնն սուրբ ի նոցանէ դէմ յանդիման նկատի: - 180. Ասէ զայս, զի բնութեամբ անբովանդակելի է. և ոչ տեղեաւ ըմբռնի. մինչ զի ինքն զամենայն տեղիս պարունակէ. *յորում* կեամք և շարժիմք և եմք: - 180. Եւ եթէ գո՛յ՝ ցոյց թէ *յորո՞ւմ* ժամանակի եղև կամ ո՞ւր: - 180. Այլ և է՛ ուրէք. ըստ այնմ *որ* յա՛յլս է հաստատեալ: - 180. Եւ դիրք տարերացդ է այսպէս *Որ* երկիրն ծանր է քան զջուր՝ ի ներքո՛յ է: - 180. Եւ զայլ յերկար քննութիւն տարերաց՝ գտցես ի գիրս նիւսացւոյն *որ* վասն բնութեան մարդոյ: - 181. Եւ բնականն Նախ այսպէս. զի օդն *որ* ի մէջէ մտեալ և փեռեկեալ զներքին և զվերին կիսագունդն, նա՛ է պատճառ շարժութեան երկնից: - 182. Երկինք *զո՞ր* ձև ունի: - 182. Ապա ուրեմն պարզ էութեան երկնից պարտ է ունել զպարզ ձև *որ* է բոլորակն: - 182. Երրորդ՝ զի բոլորակն սո՛ւր է ի շարժումն. և երկինքն սրագո՛յն է ի շարժումն, *որ* ի շրջիլն իւրում շօշափէ՛ զերկիր ի մի կէտ: - 182. Ապա ուրեմն բոլորակ ձևն *որ* կատարեալ է՝ պատշաճի կատարեալ մամնոյ երկնից: - 183. Յինգերորդ՝ թէ երկինքն ո՛չ էր բոլորակ՝ այլ քառանկիւնի կամ եռանկիւնի, յորժամ շարժէին անկիւնքն՝ *յորմէ* տեղւոջէ վերանային՝ մնային առանց տեղւոյ. և տեղի անկեանցն առանց մարմնոյ: - 183. Եւ է երկինք՝ **է** գօտիքն են **է** մոլորակացն. *որ* է Զոհա՛լն. Երևա՛կն. Յրա՛տն. Արեգա՛կն. Լուսնթա՛գն. Փայլածո՛ւն և Լուսինն: - 183. Առաջինն է տարրական հրոյն վերին մասն. *որ* կոչի հրեղէն երկինք. հոմանուն առաջին երկնից: - 183. Երկրորդն՝ ներքին մասն հրոյն. *որ* կոչի օլոմպային երկին. վասն մերձ գոլոյ յօլոմպիոս լեառն: - 183. Երրորդն՝ է վերին մասն օդոյն. և կոչի եթերային երկին. զի մերձ ի տարրեղէն հուրն է. և վառի ի նմանէ. *զոր* թռիչ աստեղաց կոչեմք: - 183. Երրորդ երկին՝ կատարեալ տեսութիւն իմացականին. *որ* դէմ յանդիման տեսանէին զաստուած. որպէս մովսէս և դաւիթ: - 183. Տասն բնական երկինքն. և **ե** յատկական. և **ե** ըստ նմանութեան. *որ* լինին ի երկինք: - 184. Նախ՝ զի մարմին է բարձր. *որ* և ի սահմանս իւր նախադրի: - 184. Երրորդ՝ զի բոլորակ ունի ձևս. *որ* է կատարեալ վեցեկի չափովք: - 184. Տասներորդ՝ և *որ* վեհագոյնն է. զի ապարանք և հանգիստ է միայն աստուծոյ պատշաճեալ: - 184. Իններորդ՝ տա՛յ երկրի *զոր* ունակացեալ է. որպէս զանձրև. զլոյս. զջերմութիւն. և զասդողութիւն: - 184. Եւ զայս գիտել պարտ է. զի մեծն ներսէս զհաստատութիւնն՝ արփի ասէ և եթեր կոչէ. *զոր* արտաքինքն եերորդ տարր ասացին *որ* ո՛չ երևի մեզ: - 184. Եւ այս ևս գիտելի է, զի որպէս հրեղէն երկինն հոմանուն է, այսինքն լուսեղէնն *որ* ի սկզբանէ ստեղծաւ. և բոլորակ հրոյն: - 184. Նմանապէս և հոմանուն է հաստատութիւնն ի ներքոյ ջրոյ. այսինքն **ը**երրորդ կամարն. և օդս առ մեզ *որ* ունի զջուրս ամպով հաստատեալ: - 184. Ութերորդ՝ *որք* խստացեալ են անհաւատութեամբ և թանձրացեալ մեղօք՝ անգործ մնան ի նմանէ: - 185. Յնգետասաներորդ՝ անդադա՛ր է ի ներգործութիւն *յորս* կարգեցաւ: - 186. Զի՞նչ է *որ* ասէ մեծն իգնատիոս վասն արեգական՝ թէ յամենայն օր ի բաց դնէ զլոյսն և զջերմութիւն, և միւս անգամ յարփոյն առնու: - 186. Այլ ըստ ներգործութեան *որ* ի մէնջ պակասի և լուսաւորի՝ զայն ասէ: - 186. *Որ* և զծովս և զաղբերս և զհեր և զղեդս առաւելու ընդ իւր և նւազէ՛: - 187. Մերձ եկեալ ի նոյն կենդանակերպն՝ սակաւ լոյսն առնու ի նմանէ յարևելից կողմանէ. թէպէտ մեզ ի յարևմտիցն երևի. այլ նմա՛ արևելից մասն է *որ* զլոյսն առնու: - 187. Եւ այլք ասացին թէ՝ ունի բնական լոյս՝ և առնու զլոյս յարևէ. և այսպէս խառնի **բ** լոյսն ի նմա՛. և սնուցանէ *զորս* յերկրի: - 187. Նոյնպէս և լուսինն. զի այն *որ* պայծառն է՝ կերպարանք երկրի է. և աղտն՝ ծովուց: - 187. Զի՞նչ է *որ* ի նորիլն եղջերակերպ երևի: - 187. Երրորդ՝ աչք մեր *որ* է՛

լոյս՝ ի վերին մասն գլխոյս. և լուսաւորքն յերկինս. զի մերձաւոր նմանն զնմանն տեսցէ: - 188. Զի՞նչ է *որ* ասէ սուրբն բարսեղ, գնան հրեղէնք ընդ ջուրս և ո՛չ շիջանին: - 188. Այլ վարդապետք եկեղեցւոյ ասեն ըստ պղատոնի եթէ՝ լոյսն խզումն է ի տարրական հրոյ, *որ* յառաջին օրն գոյացաւ: - 188. Եւ թէ ասեն՝ յանօթո՛յն է *որ* մինն առաւել լոյս տայ և մինն նուազ, և ո՛չ ի լուսոյն. որպէս յստա՛կ ապիկի առաւել լուսաւորէ: - 188. Ասեմք եթէ յա՛յտ է ապա *որ* անօթ լուսաւորացն տարրական է. թէ ոմն պարզ է և ոմն թանձր: - 188. Երկրորդ՝ յա՛յտ է զի ունին ջերմութիւն և ցրտութիւն. չորութիւն և գիճութիւն. *որ* յայտնապէս տարրական է որակութիւն: - 188. Եւ է՛ առաջին և վերջին մոլորակացն Երևակն. *զոր* պարսիկք զօհալ կոչեն. ցուրտ է և չոր. **բ** ամ և կէս յամէ ի կենդանակերպն. և յերեսուն ամն վճարէ՛ զամենայն: - 189. Երկրորդ՝ Լուսնթագն. *զոր* մուշթարի կոչեն. ջե՛րմ է և գէճ. մին ամ յամէ՛ ի կենդանակերպն. և ի **ժբ** ամն պատէ՛ զամենայն: - 189. Երրորդ՝ Հրա՛տն. *զոր* մարեխ անւանեն. ջերմ է և չոր. **խ** օր յամէ՛ ի կենդանակերպն. և ի **ժզ** ամիսն պատէ՛ զամենայն: - 189. Չորրորդ Արեգակն. *զոր* շամս կոչեն ջե՛րմ է և լուսաւոր. **լ** օր և **ժ** ժամ և կէս յամէ՛ ի կենդանակերպն. և ի բոլոր տարին վճարէ՛: - 189. Հինգերորդ Լուսաբերն. *որ* է՛ արուսեակն. *զոր* կոչեն զօհրա. ջե՛րմ է և խոնաւ. **յխը** օրն կատարէ՛, զընթացսն. և այլք ասեն թէ ի **զ** ամիսն: - 189. Վեցերորդ Փայլածուն. *զոր* օտարիտ կոչեն. միշտ շրջի ընդ արեգականն. և սակաւ հեռանայ ի նմանէ. զընթացս իւր կատարէ՛ **յլը** աւուրս. **ժ** օր պակաս քան զլուսաբերն. և այլք թէ **գ** ամիս: - 189. Եօթներորդ Լուսինն. *զոր* կամր կոչեն. հո՛վ է և գէճ. **բ** օր և կէս յամէ՛ ի կենդանակերպն. և ի **իթ** օր և կէս պատէ՛ զամենայն: - 189. Ասացեալ մոլորակացս՝ զօր՝ և զամիս՝ և զտարիս՝ *ո՛րն* առնէ: - 190. Իսկ զօր՝ *որ* է տիւ և գիշեր. և զ**դ** եղանակս. և զտարի, արեգա՛կն կատարէ: - 190. Զի յարևելից կիտէ՛ ի նոյն կէտ շրջեալ՝ լինի օր մի. *որ* է **իդ** ժամ. երկու ժամ միոյ կենդանակերպի: - 190. Եւ ի ներքինն անցեալ՝ գիշեր. զի զարշեցո՛յց զերր. *որ* է օդ և երես երկրի: - 190. Ի խոյն և ի ցուլն և յեկաւորն առնէ զգարուն. *որ* է հաւասարակ տիւն և գիշերն **ժբ** ժամ: - 190. Ի խեցգետինն յառիւծն և ի կոյսն՝ առնէ զամառն. *որ* տիւն առաւել է քան զգիշերն **զ** ժամ: - 190. Եւ յայծեղջիւրն ի ջրհոսն և ի ձուկն՝ առնէ զձմեռն. *որ* առաւելու գիշերն քան զտիւ **զ** ժամ. զի լինի գիշերն **ժե** ժամ. և տիւն ինն ժամ. որպէս յամառն տիւն է **ժե** ժամ. և գիշերն **թ** ժամ: - 190. Իսկ շաբաթն *որ* է՛ **է** օր՝ կոչեցաւ յեօթն մոլորակաց: - 190. *Զոր* սուրբ հայրապետք փոխեցին զանուանս նոցա և եդին բոլոր շաբաթուն եօթն աւուրցն: - 190. Յարեգական օրն կոչեցին կիրակէ. *որ* է՛ տէրունական վասն յարութեան տեառն: - 190. *Զոր* յամենայն ամի **ժա** թիւ ի վերայ լուսնոյն դնեմք, զի հաւասարեսցի արեգականն, և կոչեմք վերադիր: - 191. Եւ **ե** օր ևս աւել աւուրքն, *որ* լինի **ժա** օր: - 191. Եւ ա՛յն է *որ* յամենայն ամի յաւելումք ի վերադիրն: - 191. Եւ վասն այն ստեղծաւ մետասանօրեայ, զի յաւուր ուրբաթի *յորում* ադամ ստեղծանիւր, լինէր լուսինն բոլոր և **ժդ**օրեայ: - 191. Եւ ի **ժբ**ն՝ հաւասարակա՛ծ է. *որ* է՛ գարնանամուտն: - 191. Իսկ Գարնանամուտ՝ *որ* է՛ հաւասարակածն՝ է՛ չորրորդ օրն. *յորում* լուսաւորքն կազմեցան: - 191. Զի ըստ հոռոմ համարին այսպէս է. մա՛րտի **ժէ**՝ Առաջին օր արարչութեան է, *յորում* եղև լոյսն: - 191. Եւ ի **ժբ**ն՝ հաւասարակա՛ծ է. *որ* է՛ գարնանամուտն: - 191. *Որ* լինի **ժ** ժամն **ժըռ** ռոպէ: - 191. Ոլոմպիաթն չորրորդ ամ է. *զոր* հայք նահանջ ասեն. և Ընդիքտիոնն **ժե** ամ է. *որով* հոռոմք վարին: - 191. Իսկ իննև**ժ**երեակն է, զի ընթանայ լուսինն ի տարին **յծդ** օր՝ և **ժթ** մասն. *որ* լինի ի **ժթ** ամին՝ **յկա** մասն: - 191. Եւ արա՛ զերեսուն մասն մի ժամ, և զերկոտասան ժամն մի օր. և կոչի այս՝ իննև**ժ**երեկի ամ. *որ* աւելու ի լուսինն մի օր: - 191. Եւ ա՛յս է կատարումն մասանց լուսնին. *զոր* ոմանք կատարումն լուսնի ասեն: - 192. Եւ որպէս լրումն զատկի ունի աւուրս **ժզ**. և այլքն **ժե**. և այս ի տումարս մեր է. և իրն *որ* է՛ լուսինն մի և նոյն: - 192. Երրորդ՝ *որ* զերկնայինսն կատարեալ ստեղծ, ամենակարող զօրութեանն է ցոյցք: - 192. Իսկ *որ* զերկրաւորքս ըստ կարգի, ամենագութ մարդասիրութեանն է երևումն. ո՞րպէս խնամով զպէտս մարդկան յայնքան աւուրս կատարեաց: - 192. Նոյնպէս և նշանակէ՛ զիրեշտակաց բնութիւնն, *որ* նախ ստեղծան անկատար ճանաչմամբ և գիտութեամբ...: - 192. Ութերորդ՝ նշանակէ վեց թիւն *որ* է՛ կատարեալ՝ թէ բոլոր կատարելութիւն աշխարհիս ի յաստուծոյ է ստեղծեալ. երկինք և երկիր՝ և ամենայն ինչ: - 192-193. Իններորդ՝ ի վեց օրն ստեղծեալ աշխարհ. նշանակէ՛ **զզ** դարս. *որով* մնայ աշխարհ: - 193. Զի առաջին օրն ցուցանէ զառաջին դարն՝ *որ* յադամայ մինչև ցնոյ: - 193. Երրորդ՝ զի յորժամ կատարին է աւուրքն՝ դառնամք ի յառաջին օրն *որ* է՛ մի և նոյն: - 193. Հինգերորդ՝ այս մին օրս է *որ* կրկնելով կատարէ՛ զշաբաթ և զամիս և զտարի և զդարս կենցաղոյս, և հասանէ՛ ի վերջին օրն. *որ* է՛ մի օր աներեկ և անփոխանորդ: - 193. Զի՞նչ է յատկութիւն միաշաբաթ աւուրն *որ* է կիրակէն: - 193. Երկրորդ՝ զի ի նմա եղեն երկինք և երկիր. հրեշտակք և լոյսն և ա՛յլ տարերք. *որ* են է գործք արարչութեան: - 193. *Ո՞ր* է սկիզբն աւուր: - 194. Օր բնական այն է՝ *որ* լինի ի կիտէ ի կէտ **իդ** ժամ: - 194. Իսկ աստեղագէտք

զհասարակ օրն. *յորում* արեգակն ի բարձրութիւնս իւր հասանէ: - 194. Իսկ միւսն է ընդ ծագումն լուսոյն. *յորում* զպահք և զուտիք բաժանեն. այսինքն լոյսն և գիշերն: - 194. Ուստի յա՛յտ է՝ զի երեկոյ շաբաթուն *որ* կոչի կիրակմուտ՝ պատուակա՛ն է քան զմիւս գիշերն *որ* զհետագայ կիրակէին: - 194. Եւ ժամանակն, *որ* ի յայս ժամս լինի աստ լոյս, և ի միւս ժամն խաւար: - 194.. Եւ զի **զ** ժամ է. *որ* է կատարեալ թիւ: - 196. Եւ զի ստուեր երկրի է *որ* ընդ մեզ և ընդ արեգակն դնի: - 196. Եւ գիշեր, զի զարշանա՛յ երր, *որ* է օդ: - 196. Վեցերորդ՝ մուտն նիսանայ. *որ* է սկիզբն տարւոյ եբրայեցւոցն. և կազմութիւն մարդոյ ի սկզբանն: - 196. Ութերորդ՝ փրկչին մերոյ և աստուծոյ աւետեաց. *որ* ծնաւ մարմնով վասն մեր: - 196. Տասներորդ՝ այլև օրինակ և յարացոյց նմանատիպ հասարակաց յարութեան և նորոգման տիեզերաց և մարդկային բնութեանս *որ* յապագայն: - 196-197. Եւ գարուն, *որ* է՛ գայ ի յարումն: - 197. Եւ ամառն, *որ* յանօ՛թ առնուն: - 197. Է՛ *որ* ինքնաչա՛փ է. որպէս գիծն ի կանգունն՝ ըստ ինքեան չափէ՛ զկանգունն ի *յորում* է. և ըստ պատահման չափէ՛ զկտաւն ի *յորում* ո՛չ է: - 198. Այլ ժամանակն է առաջին շարժումն երկնից, սակայն ո՛չ չափէ զնա. այլ չափէ՛ զտարրականս և զներգործութիւնս մեր *յորում* ո՛չ է: - 198. Ժամանակին *ո՞ր* մասն է առաջին. անցեա՞լն՝ ներկա՞յն թէ ապառնին: - 198. *Ձորմէ* ասէ յոբ, «ընդ շաւիղս անդարձս գնամք»: - 199. Զի և ներկայ ժամանակս *որ* յայտնի երևի, այսպէս անյայտ և անկայուն է...: - 199. *Յորմէ* ուսեալք՝ յամենայն ամի կատարեմք իւրաքանչիւր ազգ քրիստոնէից: - 200. Ամսոցդ անւանք՝ են *որ* ի նախնեացն անուանէ. և են որ յեղանակացդ. և են *որ* ի դիցն: - 200. Քանզի եբրայեցիք և մակեդոնացիք՝ Զաւելեաց աւուրքն դնեն գլուխ տարւոյ. և ասեն օր առաջին. և **բ**. և **գ**. և **դ**. և **ե**. և վեցն մուտ Նիսան ամսոյ. *որ* թարգմանի կազմութիւն: - 200. Զնոյն յայտնէ և ի մերս. զի ուրբաթ ասի *որ* է՛ կազմութիւն: - 200. Իսկ իար, *որ* է՛ նոյ արդար. Սիւան, սեմ. Թամուզ. թարա. Ապ, աբրահամ: - 200. «Արի՛ ասէ հիւսիս, և ե՛կ հարաւ». *որ* է՛ գարնան ամիս. զի ի **ժբ**ն մտանէ: - 201. Մարգաց. *որ* է՛ ժամանակ աճելոյ զմարդ. *որ* ի դաշտս և ի հովիտս իցեն. յայգեստանս և ի բուրաստանս. յորժամ արեգակն առ շամբն և յետ շանն իցէ. զի ի **ժգ**ն՝ մո՛ւտ է ամռան: - 201. և Հրոտից, ըստ դրութեան է. զի հո՛ւր է ոտիցն *որ* այրէ՛ ներքուստ ի վեր ջերմութիւն արեգականն: - 201. Իսկ աղուանից ամիս Նաւասարդուլ. *որ* է՛ նաւասարդացի. այսինքն ի թոռանց է. յուստերաց կամ ի դստերաց: - 201. Իսկ վրացն Ախալծիլ, *որ* ստուգաբանի Ախացայ. այսինքն թէ մեծ պարոնացի. Սեթալի. *որ* է՛ սոնթեցի: - 201. Դիոս. այսինքն դիոնիս է. *զոր* որթոյ և այլոց այլանդակութեանց արարիչ ասեն: - 201. Վասն որոյ ջերմութեամբ զցրտութիւն լուծանէ *որ* յերկաթն և ի սառն. և չորութեամբ զհիւթն մերժէ *որ* ի ծու հաւի և յայլսն: - 202. Դարձեալ ասեմք թէ՝ զինչ ծանրութիւն *որ* պատահական է՝ ի ցրուիլն նիւթոյն կորնչի ծանրութիւնն: - 202. Նոյնպէս ծանրութիւն փայտին պատահակա՛ն է և եկամուտ. *զորս* կորուսանէ հուրն: - 202. Զ՞ինչ է ծիածանն *որ* կոչի աղեղն: - 203. Եւ զանազան գոյնքն է՛ չորից տարերցն *որք* են յօդդ: - 203. Եւ այն *որ* կրկին լինի, ներքին պայծառն է տիպ յարեգակնէն. և վերին նուազն զտիպ ներքնոյն է ընկալեալ: - 203. Զի՞նչ է բակն *որ* զլուսնիւ և զարեգակամբն: - 203. Մնացեալ ա՛մպ է շուրջ զաստեղօքն. *որ* քարշէ յինքն զսպիտակ լոյս մոլորակացն և լուսաւորի: - 203. Փայլակն լինի ի շիջեալ հրոյն ջրով ամպոյն և հողմով *որ* ի մէջն է, վերստին արծարծի և արտաքս բացափայլէ: - 203. Զի՞նչ է շանթքն *որ* ի մէջ ամպոյն: - 204. Շանթքն լինի ի մէջ գոլորշեացն *որ* ի մէջ ամպոյն. և ջերմութեամբն չորացեալ. քանզի հո՛ւր է քարացեալ: - 204. Եւ վասն առաւել և նըւազ ջերմութեանն, է՛ *որ* ի դուրս պատառիլն շիջանի: - 204. Եւ է՛ *որ* ի մէջ օդոյդ գայ և շիջանի: - 204. Եւ է՛ *որ* յերկիր հասանէ և պատառի: - 204. Եւ վասն առաւել և ազդու զօրութեան և ջերմութեան՝ զգոյացութիւն կենդանեաց և մարդկան առ *որս* դիպի ապականէ՛. և պատահմունքն քանակ և որակ մնան: - 204. Այսպէս յեգիպտոս հուրն *որ* ընդ կարկտին իջանէր, վասն ազդու զօրութեանն՝ զկենդանիսն սպանանէր, և մարմինքն ամբո՛ղջ մնային: - 204. Իսկ հուրս առ մեզ *որ* կապեալ է ի նիւթ՝ տկա՛րն ունի զայրելն. վասն որոյ նախ զքանակն և զորակն ապականէ, և ապա զգոյացութիւն իրին: - 204. Եւ Մէգն՝ այն է, *որ* մնաց յանձրևահոս ամպոց. վասն այնորիկ մէգն նշա՛ն է պարզոյ: - 204. Իսկ Ցօ՛ղ է գիճութիւն ի պարզոյ իջեալ. *զոր* աստեղք ի գիշերի քարշեն ի վեր. և ընդ ծագել առաւօտուն՝ յետ ի յերկիր անկեալ մանրամասն շիթ: - 204. Եւ ի հիւսիսոյ հողմոյն *որ* կոչի ապարքտիաս՝ լինի պաղուցեալ: - 205. Եւ նախ ի չորս դէմս բաժանին ամենայն հողմունք. և իւրաքանչիւրքն դարձեալ յերիս բաժանին. *որ* լինի բովանդակն **բժ**ան: - 205. Այն *որ* յԱրևելից հնչէ, առ հասարակ Եւրոսք կոչին: - 205. Իսկ *որ* ի Հարաւո՛յ հնչէ, հասարակ Նօտոսք կոչին: - 205. Իսկ Հիւսիսայինքն, Վաւռէք կոչին. *որք* են ցուրտ: - 205. Արևելայինքն *որք* կոչին Եւրոսք, բաժանին յերիս: - 205. *Որ* մերձ ի հիւսիս հնչէ, Կիկիաս կոչի. չո՛ր է և ցամաքեցուցիչ: - 205. Եւ *որ* մերձ ի հարաւ հնչէ,

Եւրոս կոչի. գէ՛ճ է. և տաղատարա՛փ բերէ: - 205. Արևմտականք որք կոչին Զեփիւռք, են ևս գ: - 205. Որ մերձ ի հիւսիս է, Արգէստէս կոչի. կազմէ սա զամպս: - 205. Եւ որ մերձ ի հարաւ է, լիփս կոչի. անձրևաբե՛ր է: - 205. Հիւսիսայինք որք կոչին Վոռէսք: - 205. Այն որ մերձ յարևելս է, Վոռէա՛ս կոչի. նեղէ՛ զամպս, և կապէ՛ զանձրևս: - 205. Եւ որ մերձ յարևմուտս է, Թրասկիաս կոչի. առնէ ըզձիւնն: - 205-206. Հարաւայինք որք Նոտոսք կոչին, Այն որ մերձ յարևելս է, Եւրո՛ նոտոս կոչի. հալէ՛ զպաղս: - 206. Եւ որ մերձ յարևմուտս է՝ Լիւա՛ նոտոս. առնէ մառախուղ. մէգ. և վրդովումն յամպս: - 206. Եօթներորդ՝ զի լինի ամպ որ ո՛չ որոտայ և ո՛չ կայծ է վասն սաստիկ խստութեանն: - 206. Ութերորդ՝ ի միջոյ ամպոյն փայլէ որ ծածկեալ էր ի նմա՛: - 207. Եւ կէսք ասեն թէ՝ երկրի բնութիւնն աղտաղտուկ է և շոր՝ որ ծովն ի վերայէ. և որ առ եզերսն են՝ զնոսա լուանան անձրևք և խառնեն ի ծովն: - 208. Այլ որ հաւանելին է՝ կրկին է: - 208. Եւ թէ ծարաւին գետք որ ի ծով մտանեն. և անձրևք հանգուցանեն զնոսա: - 208. Եւ օրինակ տայ զկերակուրն որ ի ստամոքսն եփի. և գոլոշիկքն ի գլուխն ելանէ և պարզ ջուրն ի լեարդն. իսկ մնացեալ թանձրն լինի դառն և աղի: - 208. Եւ զի քարշեն լուսաւորք զգոլորշին յերկրէ՝ յայտ է ի ցօղ առաւօտուն և յեղեամն. որ ի գիշերն ի վեր քարշին. և ընդ ծագել լուսոյն հատանին և յետս յերկիր անկանին. և յաւուրս ծմերան լինի եղեամն. և յամարան ցօղ: - 208. Ջուրք ծովուն աղի են. վասն է՞ր աղբերք և գետք որ առ մեզ բղխեն՝ քաղցր են: - 208. Յօրինակ մարդկան՝ որ մարզին և կրթին, և ապա՛ պիտոյանան աստուծոյ և մարդկան: - 208. Արդ՝ յորժամ աղբիւրք ջրոյ՝ մերձին յերակն հրոյ որ է՛ ծծումբն, ջերմանան խիստ կամ թոյլ. մերձ կամ հեռի անցանելովն: - 208. Երկրորդ՝ զի ամենայն ուրեք հողն ընդ ջրոյն խա՛ռն է. և յա՛յտ է ի ջրհոս. և ջուրն այն որ բարձրացեալ է ընդ հողոյն՝ իջանէ ի խոնարհ և բղխէ աղբիւր: - 209. Չորրորդ՝ ցոյցք է ամենահրաշ խնամոց արարչին. որ զհոսանուտ ջուրս ներքին՝ ի մէջ լերանց ի վե՛ր հանէ ի պէտս կենդանեաց որ ա՛նդ են. այլ և յոռոգումն ուր գետք ոչ ելանեն: - 209. Նա՛խ՝ զի երկու իր է. այսինքն հող և ջուր. որ ընտանի՛ է նմա: - 210. Երկրորդ՝ զի ունի երկիցս բ ծայրք. երկայնք և լայնքն. որ է յարևելից յարևմուտս. և ի հիւսիսոյ ի հարաւ: - 210. Առաջին է որ ոտիւք կոխի: - 210. Երկրորդ՝ որ հոգւով կառավարի: - 210. Երրորդ՝ որով առ ժամանակեայ կեանքս վարի: - 210. Չորրորդ՝ որ յաւիտեան ստացեալ լինի: - 210. Հինգերորդ՝ որ փոխիլ հրամայի: - 210. Վեցերորդ՝ յորում մարդ սատանայ լինի: - 210. Երկիր որ կոխի՝ է՛ նիւթականս այս: - 210. Երկիր որ հոգւով կառավարի, է՛ մարմին մահկանացու: - 210. Երկիր որ առ ժամանակեայ կենցաղավարի, է՛ հոգի բանական: - 210. Երկիր որ յաւիտեան ստացեալ լինի, է՛ գաւառն երկնաւոր: - 210. Երկիր որ փոխիլ հրամայի, է՛ յանցանք դատապարտելի: - 210. Երկիր որով մարդ սատանայ եղանի, է՛ տանջանք դժոխոցն: - 210. Եւ զի սեղան է ամենալիր. յորմէ կերակրիմք ամենայնքն: - 211. Եւ զի ի գոլորշեաց որ ի ներքս է փակեալ՝ թօթափի և շարժի: - 211. Վասն է՞ր ի ստորոտս լերանց առաւել շող լինի քան ի գլուխն որ մե՛րձ է արեգական: - 211. Նա՛խ՝ զի բղխումն ցուցանէ զկատարեալն. որ ամենայն ինչ կատարեալ և լի ստեղծան յարարչէն: - 212. Նշանակեն զնոսա՝ որք ունին զպտուղս բարի գործոց. և զծաղիկն հաւատոյ. և զհոտ գիտութեան՝ ամենայն մարդկան անոյշ: - 212. Նոյնպէս և թագաւորք երկրի և իշխանք՝ որք բարձրացեալ են փառօք և դատա՛րկ յառաքինութեանց, են որպէս հովանաւորք: - 212. Դարձեալ՝ ծաղիկն է հրոյն՝ որ նախ շարժի և երևի: - 212. Եւ պտուղն ջրոյն՝ որ յետոյ հասանի: - 212. Եւ յետ յարութեանն ընդունի զպտուղ. որ է՛ պարգևք խոստմանց անվախճան կենացն: - 213. Զի են որ զկեղևն ունեն և ո՛չ զմէջն. որպէս ծիրան: - 213. Եւ են որ զմէջն ունեն և ո՛չ զկեղևն. որպէս նուռն: - 213. Եւ են որ զերկուսն ևս ունեն. որպէս խաղողն: - 213. Եւ են որ ո՛չ մէջն ունի և ո՛չ կեղևն. որպէս գդթորն: - 213. Երկրորդ՝ որք երկարակեացք են՝ որպէս տունկք, յապաղելով աճին և յա՛մր ծնանին: - 214. Երրորդ՝ զի ինքն երկիրն ունի զթանձրութիւն որ հողոյն է. և զմածումն որ է՛ ջրոյն. և զշարժումն որ է հողմոյն. և զերևիլն որ է հրոյն: - 214-215. Հինգերորդ՝ զի ունին կենդանիքդ դ մաղձ որ են. դ տարերքն: - 215. Սեաւ մաղձն որ է փայծեղն՝ է՛ հողոյն: - 215. Խարտեաշն որ է լեղին՝ է՛ հրոյն: - 215. Կարմիրն որ է արիւնն ի լեարդն՝ է՛ օդոյն: - 215. ...և Սպիտակն որ է մաղասն ի բոլոր մարմին և կամ յերիկամունքն՝ է՛ ջրոյն: - 215. Զի զգայ զջերմութիւն հրոյն. և զցրտութիւն՝ որ է ջրոյն. և զխոնաւութիւն որ է օդոյն. և չորութիւն հողոյն: - 215. Են ոմանք որ թև ունին և թեփ: - 215. Եւ են որ թև ունին և ո՛չ թեփ: - 215. Եւ են որ թեփ ունին և ո՛չ թև: - 215. Եւ են որ ո՛չ թեփ ունին և ո՛չ թև: - 215. **Եւ են ոմանք որ զթև հաւատոյ և զթեփ բարեաց գործոց ունին. և պիտանիք են աստուծոյ**: - 215. **Եւ են որ թև հաւատոյ ունին, և ո՛չ գործք. որպէս չար հաւատացեալքն**: - 215. **Եւ են որք գործս ունին և ոչ հաւատս. որպէս կեղծաւորքն. նմանապէս և սոքա անպիտանք են աստուծոյ**: - 215. **Եւ են որ ո՛չ ունին հաւատս և ո՛չ գործք. որպէս անօրէնք և չարք. և յայտնի անպիտանք են**: - 215. **Նախ՝ օդն. որ էութիւն է ձայնի**: - 216. Երկրորդ՝

ծայնական գործիքն. *որ* են է. որպէս Շրթունք. Ատամունք. Լեզու. Մակալեզու. Բերան. Խռչափող. Թոք: - 216. Եւ սողունք *որք* պակա՛ս են ի ծայնական գործեաց, սո՛ւղ են և ծայնից: - 216. Եւ սողնոց Օձն արքայեկ. *զոր* իժ և քարբ ասեն: - 216. *Ո՞րք* և ո՞յք են բնութեամբ զէնք կենդանեաց: - 216. *Զոր* մարդիկ բանականութեամբ և արուեստիւք ստացան զզէնս զանազանս ի յերկաթոյ ի պատսպարանս ինքեանց: - 216-217. Երկրորդ՝ վասն հպարտութեան մարդոյն. զի յորժամ խայթեսցեն զնա՝ ծանիցէ զտկարութիւն իւր. *որ* և զփարաւոն ո՛չ թէ առիւծք կամ առջք հարին, այլ ճանճք և մժղուկք տանջեցին: - 217. Գազանք և օձք և այլ կենդանիք *որք* վնասակա՛րք են՝ վասն է՞ր ստեղծան: - 217. Վասն բազում պիտոյից *որ* գոյ ի նոսա: - 217. Որպէս թիւրակէքն *որք* լինին յօձից և ի գազանաց: - 217. Զի՞նչ իմաստութիւն օձին *որոյ* պարտ է մեզ նմանիլ: - 218. Երրորդ՝ զհաւատն *որ* է գլուխ՝ պահեսցէ, զի մի՛ մոլորեսցի զհետ հերձուածողաց: - 218. Ութերորդ՝ օրինակ՝ զի գլուխ օձին է չար խորհուրդն *որ* մտանէ ի մեզ. պա՛րտ է սպանանել զնա: - 219. Չորրորդ՝ յա՛յտ է ի հնազանդեցելոցն *որք* կան այժմ ընդ ձեռամբ մարդկան. որպէս ոչխար, պախրէ՛, և այլն: - 220. Հինգերորդ՝ յա՛յտ է ի փախուցելոցն *որ* երկնչին ի մարդկանէ որպէս զապստամբեալ ծառայս: - 220. Վեցերորդ՝ զի անձնիշխա՛ն է մարդն այսինքն իշխէ բանականաւն ցասման և ցանկութեան *որք* են անասնական մասունք: - 220. Իսկ *որք* այժմ ապստամբք եղեն՝ վասն **բ** պատճառի: - 220. Ուստի յա՛յտ է, *որք* վերստին յաղթեն ախտիցն *որք* յինքեանս, այսինքն ցասման և ցանկութեան. յաղթին և հնազանդին նոցա արտաքին գազանք և անասունք: - 220. Որպէս դանիէլ առիւծուցն յաղթեաց. և պօղոս իժին. և բազում ճգնաւորաց *որք* անապատս էին՝ գազանք և անասունք սպասաւորէին նոցա: - 220. Երկրորդ՝ զի ունի զերեք յատկութիւնս երկնից. *որ* է՛ բարձրութիւն. լուսաւորութիւն. և անմահութիւն: - 221. Նա՛խ՝ եթէ իմանալի է մեզ. *զոր* ո՛չ կարեմք այժմ զգալապէս տեսանել: - 222. Վասն զի բնական լուսաւո՛ր է օդս *որ* ի մէջ դրախտին: - 222. Իսկ այլք ասեն թէ՝ վասն առաւել բարձրութեանն՝ լոյս արեգականն ո՛չ երբէք հեռանայ ի նմանէ. թէպէտ ի ներքոյ երկրի անցանէ. որպէս լուսինն թէպէտ ի վերին կամարն լինի, զլոյսն առնու յարևէն *որ* ի ներքին կամարն: - 222. Ոմանք ի դրախտն ևս ասեն թէ տիւ և գիշեր լինի. կամ գարուն և աշուն. *զոր* մեզ չէ ընդունելի: - 222. Զի ի վերին մասն օդոյն է մերձեցեալ՝ *որ* է առաւել բարեսուն. և ամպոց և հողմոց շարժմունք ի միջին մասն օդոյս ծնանին. և ի դրախտն ո՛չ հասանեն: - 222. Երրորդ՝ զի համածայնին ամենեքեան՝ *որ* նախ քան զյանցանելն զմարդն անապական ասեն: - 222. Պտուղն *որ* հատանի և ծասկի և ի մարմին փոխարկի. ո՞րպէս է անապական: - 223. *Որ* է՛ ընտրողութիւն բարւոյ և չարի՝ կատարելոցն իմաստիւք: - 224. Զի՞նչ էր պտուղն *որ* կերաւ ադամ: - 224. Ոմանք թուզ ասեն. թէ ի նոյն ժամն *որ* կերաւ և մերկացաւ՝ և կարեաց ի տերևոյ նորա. և վկայ բերեն թէ՝ վասն այն անէծ զթզենին յէմ: - 224. Եւ *զոր* գիրք սուրբ ո՛չ է յայտնեալ, զիա՞րդ իշխէ մարդ խօսիլ: - 224. Այլ ա՛յս է ճշմարիտն. *որ* միևն ծառ էր կենաց՝ և միևն գիտութեան. և ի դրախտին այլ ո՛չ գոյր նման նմա. թո՛ղ թէ յերկիրս. ո՞րպէս ասեմք թէ այս է՝ կամ այն: - 224. ...իսկ թէ թափի հինն. այս լինի կամ յատակս ծառոցն ծորեալ և ապականեալ. և կամ ամենայն ամբարեալ և ժողովեալ և բարձրացեալ քան զծառս դրախտին *որ* է անպատշաճ: - 224. Ապա ուրեմն համածայնելի է մեզ փիլոնի իմաստնոյ. *որ* անծորելի է ասէ պտուղն և անթափ տերևն: - 224. Նոյնպէս և տունկք դրախտին ըմպեն զջուր գետոյն *որ* ոռոգանէ՛ զդրախտն: - 225. Եւ մարմինն քրիստոսի անապակա՛ն է *զոր* ճաշակեմք: - 225. Ա՛րդ՝ վերջին հրովն *յորում* վառին երկինք և երկիր, ըստ նիւթոյ մասին պարզի. այլ ըստ ապականութեան մնայ անփոփոխ: - 225. *Որ* ընդ դէմ է ըստ գրոց. և ուղղափառ հարց: - 225. Եւ լինի աղանդն այնոցիկ՝ *որք* ասեն մարմնաւոր արքայութիւն, և կերակուր և ամուսնութիւն, և այլ աղճատանք: - 226. *Զորս* զայնպիսի ասացօղքն և ընդունօղքն՝ որոշեալ նզովէ՛ եկեղեցի քրիստոսի աստուծոյ: - 226. Այլ մեզ *զոր* գիրք սուրբք լռեալ են՝ լռութեամբ պատուեսցի. և մի՛ մտացածին բանիւք վտարանդեալ ի գուբ կորստեան անկցուք: - 226. Այլ և տիւ և գիշեր *որք* ընդ լուսոյն եղեն: - 226. *Որովք* լինին իղ արարածք: - 227. Յերիս՝ զտարերս. և յերիս զայնոսիկ *որք* են ի ներքոյ տարերց: - 227. Զձկունս ի թանձրագոյն մասն եթող, և զթռչունս յանօսրագոյն մասն *որ* է օդ՝ վերացոյց: - 227. Քսանէ՝ *Ո՛ր* է հանճար և իմաստութիւն: - 228. Երեսունն**զ**՝ Երկոտասան պարգևն *զոր* կորոյս ադամ: - 228. Երրորդ՝ հողն վերջին է ի տարերս. զի գիտասցէ զշնորհս աստուծոյ՝ *որ* այսպէս առաջին և պատկեր աստուծոյ ստեղծաւ: - 229. Դարձեալ ի հողոյ ստեղծ ի նախատինս սատանայի. զի յամօթ լիցի յորժամ տկարս այս և կաւեղէնս ի փառսն մտանէր *յորմէ* նա՛ *որ* փառաւորն էր անկաւ: - 229. Վասն որոյ պա՛րտ էր լինիլ նոցա նախ *որ* փոքունք և անպատիւք են, զի երևեսցի մեծն և պատուաւորն այսինքն մարդն: - 230. Կարգաւոր էր նախ պատրաստել զարքունիս *որ* է երկինք և երկիր. և զգահոյս *որ* է՛ դրախտն. և զսպասաւորքն *որ*

են կենդանիքն. և զմեծութիւնս տնկոց և բուսոց. մանաւանդ ոսկւոյ և արծաթոյ և ականց ի սիրտ երկրի գանձել. և ապա՛ թագաւորին բնակիլ: - 230. Վեցերորդ՝ *որք* վասն որոց եղեն. զի ի գոյիցն ոմանք են վասն ինքեանց. իսկ այլ վասն այլոց և ոմանք ինքեանց և այլոց: - 230. Եօթներորդ՝ զի **գ** տեսակ հոգոց բացայայտեսցին. *որ* է՛ անկատար՝ և միջակ՝ և կատարեալ: - 231. Այսինքն տնկական. և զգայական. և բանական. և զի յանկատարէն ելանեմք ի կատարեալն. վասն որոյ նախ ստեղծաւ տնկականն ոգի, և ապա՛ զգայականն, և ապա՛ բանականն *որ* է կատարեալ մարդն: - 231. Այսպէս և գլուխն ի մարմինն է՛ վերջին մասն. *որ* է՛ գործիք բանին. և սիրտն ի մէջն. և երիկամունքն վերջին: - 232. Վասն որոյ գլուխն է՛ ի վերոյ. և խռչափողն *որ* ունի զտուր և զառն՝ օդո՛յդ է նման. և ի ներքոյ այլ մարմինք և հիւթ արեան և ջրոյ՝ երկրիս է օրինակ: - 232-233. Վեցերորդ՝ զի բաժանեսցի մարդն ի կենդանեաց և ի տնկոց. զի տունկք զհակառակն ունին զարմատն *որ* է՛ գլուխ՝ ի յերկիր, և զոտն ի յերկինս: - 233. Եօթներորդ՝ վասն զգայութեանցն, *որ* ամենեքին յառաջ հեղուն յուղեղէն, և ազատապէս տեսանեն և իմանան. զի թէ գլուխն և ուղիղն ի վա՛յր էր քարշեալ և կորացեալ՝ ո՛չ կարէր ուղղակի զգալ և իմանալ. որպէս այլ կենդանիք: - 233. Ութերորդ՝ վասն արտաքին զգայութեանցն *որ* են ի գլուխն...: - 233. Եւ բնականն, Նա՛խ՝ զի նմանիմք երկրի *որ* յերեսն ունի զգեղեցկութիւն բուսոց, և ի թիկունս ոչ: - 234. Ի հինգ զգայութիւնսն *ո՞րն* է պատուական: - 235. Երեքն ի սոցանէ գռեհիկք են. *որ* է շօշափելիք. ճաշակելիք. հոտոտելիք. զի խառնելովն ի զգալի իրն ճանաչեն: - 235. Իսկ երկուքն իշխանականք. *որ* է՛ տեսանելիքն և լսելիքն. ի հեռաստանէ՛ զգան: - 235. Նա՛խ՝ զի յառաջ եղեալ նմա՝ լո՛յսն է *որ* է վերին տարր. և լսելեացն օդն: - 235. Այլ և ունի յատուկ պատուականութիւն և ունկն՝ *զոր* ո՛չ ունի ակն: - 235. Եւ ապա թէ՝ *յորմէ՞* սեռէ է օտարութիւնն: - 235. Ըստ այսմ ապացուցի. զի բնութիւնն ի սեռո՛ւմն է և ի տարբերութեան ուստի բաղկանայ. և անձն ի բնութիւնն է *յորմէ* կայանայ...: - 235. Վասն զի անձն է մեզ առաջին հիմն և ի ներքոյ եդեալ. *յորմէ* և առ *որ* ժողովին տեսակն և սեռն և սեռականագոյն սեռք: - 236. Իսկ երկրորդն թէ *յորմէ՞* սեռէ է օտարն և աննմանն՝ գիտելի է, զի դէմն և կերպն ի չորից սեռից գոյանայ. ի գոյէ՝ ի քանակէ՝ յորակէ և ի տեղւոյ: - 236. Որպէս և իմաստունքն ասացին զամենայն երևելիս յարացոյց իմանալեացն. *զոր* գոյ և որակ կոչեն. և զնիւթս պատկեր գոյին. զի որակն և գոյք անմարմին են և աննիւթաբար ի մտածութիւնս երևին: - 236. ...ըստ այնմ *որ* արագիլ արդար՝ կերակրէ զիւր ծնօղսն միայն. և տատրակ մենացեալ ի զուգակցէն, ո՛չ զուգի ընդ ա՛յլ տատրակի: - 238-239. Երկրորդ՝ ցուցմամբ. զի տեսանելն զհաւատն նշանակէ *որ* է հաստատ. և լսելն զուսումն ճարտարութեան: - 239. Եւ տեսանելն մնայ հաստատ, *զոր* ա՛յժմ իմանալ տայ: - 239. Երկրորդ՝ զի զփոշին սրբէ *որ* ի յօդոյս նստի յաչքն. որպէս մեք ձեռօք սրբեմք զերեսս հայելւոյ: - 239. Զի՞նչ է *որ* տղայն զմերձն աղէկ տեսնու. և ծերն զհեռուն: - 239. Երկու լուսերակն *որ* ասացաք՝ ի յղեղէն գայ ի յաչքն դատարակ և անարիւն: - 239. *Որ* է՛ մազն. և մորթն. և միսն. և արիւնն. և ջիլն. և ոսկրն. և ուղեղն ի մէջն: - 240. Իսկ մազն է այրեցած արիւնն. *որ* օդովն ի դուրս փչի. որպէս տունկք յերկրէ: - 240. Եւ *յո՛ր* մասն մարմնոյն գիճութիւն և ջերմութիւն առաւել լինի, անդ մազ բուսանի: - 240. Յորժամ ծերանայ մարդն, և սպիտակ ջուրն *որ* է պալղամն առաւելու, յայնժամ մազն ընդ սպիտակ ջուրն ի դուրս անցանէ և սպիտակի՛: - 240. *Զոր* այսպէս ասելոց եմք յառաջիկայդ վասն չորից եղանակաց տարւոյն և աւուրն բնութեան: - 240. Իսկ **դ** ջուրն *որ* է ի մարդն՝ ըստ չորս տարերացդ է: - 240. *Ո՞ր* է **բժ**ան անդամք մարդոյն: - 241. Որպէս ասեն տօմարագէտք, Խոյն գլուխն *որ* է՛ պարսիկք. և այլն: - 241. Դարձեալ **բժ**ան դրունք է ՚ի մարդն *որ* են այսոքիկ. երկու աչք. **բ** ականջք. **բ** պինչք, բերանն. և պորտն. **բ** ստինք. ջրհեղն. և արտաքնոցն: - 241. Եւ նոյն քան միւս ծեռքն՝ *որ* լինի **զ**: - 241. Երրորդն լեա՛րդն է, աղբիւր արեանն. տա՛ք է և գէճ՝ ունելով զբնութիւն մուշթարոյն, *որ* տանուտէր է նմա: - 241. Հինգերորդն փայծեղն է. *որ* է՛ ախոռ այրեցած արեանն. ցո՛ւրտ է և չոր. և ունի տանուտէր զզոհալն *որ* է երևակն ցուրտ և չոր գոլով: - 241. Վեցերորդն երիկամունքն *որ* է տուն սերման. ջերմ և գէջ. և տանուտէր ունի զզօհրայն. *որ* է լուսաբերն: - 241. Եօթներորդն է՛ լեղին. *որ* է խարտեաշ մաղձն. տա՛ք է և չոր. և տանուտէր ունի զմառեխն *որ* է հրատն: - 241. Նոյնպէս և երկրի է՛ է մասն տիեզերաց. *զոր* է կլեմ կոչեն: - 241. Սոքա ո՛չ պահեն զճարպն *որ* մասն է օդոյ պարարտացեալ: - 242. Եւ միսն զի տաք է՝ հալէ՛ զկերակուրն *որ* ի յինքն ժողովեալ: - 242. Եւ ունի ստամոքն **դ** զօրութիւնս. *որ* է՛ քարշողական. ունական. հալողական. վտարական: - 242. Ունականն է՝ յորժամ ժողովէ զկերակուրն՝ ձկտի և լայնանայ և փակէ՛ զամենայն դրունսն *որ* ի ներքոյ և ի վերոյ և ի կողմանէ, զի մի՛ թափեսցի կերակուրն: - 242. Հալողականն է՝ յորժամ ի ջերմութենէն եփի կերակուրն և հալի որպէս ապուր ի պտկի. և հալի ամենայն կերակուրն մինչև ի **զ** ժամն. և է՛ *որ* պակաս և աւելի. վասն առողջ և տկար մարմնոյն: - 242. Ջուրն *որ* ի բերանն գայ՝ ի լերդէն

ծնանի: - 242. Ի քիթն հոտեալ. *որ* զհոտ մեղացն արտաքսեսցէ: - 243. Յականջն դառն. *որ* զչար բանս մի՛ լուիցէ: - 243. Զի սրտին արիւնն և լեարդն և լեղին *որք* ջերմայինք են՝ ի յաջոյ կողմն են մարդոյն: - 243. Եւ ատամունքն **լբ** ոսկր. *որ* լինի բովանդակն **լզ** ոսկր: - 243. Եւ ձախ կողքն **ը**. *որ* լինին սոքա **խ**: - 243. Եւ թաթք ձեռացն **լբ** ոսկր. *որ* լինի բովանդակ ձեռքն ի թիկանցն **խ** ոսկր: - 243. *Որ* լինի բովանդակ ոսկր ոտիցն **խբ**: - 243. Նոյնչափ միւս ոտքն. *որ* լինի **զ** քառասուն: - 243. Եւ ութն ոսկր կուրծքն. *որ* լինի **բճխը** ոսկր: - 243. Ոմանք ասեն, **ժէ** գլխաւոր ջլօքն *որ* կապին սոքա՝ լինին **յկե** զօդուածք: - 243-244. Կամ զօդուածք ներքին գլխաւոր անդամոցն և արտաքին մարմնոյն, *որ* մորթ և միս և արիւն և այլքն առ միմեանս յօդին՝ լինին նոյնքան: - 244. Նա՛խ՝ խելապատակն սկիզբն է ջլացն. *որ* միայնաբար ընդ ուղուղս պարանոցին անցանէ. և բաժանի ի թիկունս, ի ձեռս, և յա՛յլ մարմինս: - 244. Եւ նա՛ է զգայական. և *յոր* մասն և խառնի՝ առնէ զգացումն: - 244. Զի սիրտն ունի **բ** տուն. ի յաջ կողմն իւր զարիւնն ժողովեալ *որ* առնու ի լերդէն: - 244. Եւ ի ձախ կողմն զօդն ժողովեալ *որ* առնու ի թոքէն: - 244. Եւ յայս կողմս ունի **դ** երակ առանց արեան լի ջերմութեամբ. և բաժանի ամենայն երակ՝ յերեսունբ երակս. *որ* լինի ամէնն **ճիը** երակ: - 244. Իսկ լեարդն է սկիզբն արեան երակացն. *որ* ելանէ ի լերդէն է երակ լի արեամբ: - 244. *Որ* լինի այր մարդոյն՝ **յկզ** երակ բովանդակն: - 244. Եւ բաց յայսցանէ՝ ի յուղեղէն **բ բ** երակ գայ յիւրաքանչիւր զգայարանս. **բ** յաչքն. **բ** յականջն. **բ** ի քիթն. **ա** ի բերանն. մին ի լեզուն. **բ** ի ձեռքն. **բ** ի յոտքն. *որ* լինի **ժբ**: - 244. Եւ **ժէ** գլխաւոր ջիլքն, և մին բուն ջիլն. *որ* լինի բովանդակն **յկզ** ջիլք: - 244. Զի՞նչ է *որ* զայր և զկին բաժանէ: - 245. Նոյնպէս և ի տրտմիլն սևանայ վասն սեաւ մաղձոյն *որ* տայ ի յերեսն: - 245. Ի ժամ յղացմանն՝ եթէ ի ծնողացն՝ եթէ ի ժամանակէն՝ և եթէ յախտից՝ *որ* տարր և յաւելու ի խառնուածն, նոյն որակ գունով ծնանի զաւակն: - 245. Զի *որ* զհուրն առաւել ունի *որ* է շէկն՝ բարկացօ՛ղ է: - 245. Եւ *որ* զօդն աւելի ունի, է՛ թեթևամիտ և սրընթաց և ծիծաղկոտ: - 245. Եւ *որ* զհողն ունի, տրտմակեաց է և ծանրաշարժ և ծոյլ մարմնով: - 245. Երևի ապա թէ ճշմարիտ են պատկերացոյցքն, *որ* զբարս մարդոյն յայտնեն: - 246. *Որ* բազում անգամ բանայ և խփէ՝ երկչոտ է և թոյլ: - 246. Իսկ *որ* հաւասար ի ճակատէն իջանէ ոչ բարձր և ո՛չ ցած, արիութեան և խոհեմութեան է նշան: - 247. Կլափն *որ* չափաւոր է և քառակուսի՝ օգո՛ւտ է: - 247. Եւ *որ* հաւուց նման արտաբերէ, թեթևամիտ է: - 247. Եւ *որոց* ձայն յռնգունսն հնչէ, ստաբանք են և չարախնդացք: - 247. Լանջքն *որ* երկայն է քան զփորն՝ խոհեմ է: - 247. Լանջքն *որ* փորիւն մազածածո՛ւկ է՝ անկրօն է և անկայուն և անգութ: - 247. Բազուկն երկայն *որ* միջին մատն հասանէ ի ծունկն՝ ուժե՛ղ է: - 247. Իսկ *որ* իջանէ ի բարձսն, չարակա՛մ է և չարախնդաց: - 247. *Որ* արագ ընթանայ և զսպէ զինքն՝ և զերեսն կորակնէ՛ և զբոլոր մարմինն կծկէ՛, երկնչո՛տ է և ըռիշտ և աղուեսաբարոյ: - 247. Իսկ ամենայն անդամք *որ* ներհա՛կ են այսմ, զթիւրամիտն ցուցանեն: - 248. Դարձեալ՝ ասէ պղատոն, եթէ մարդն *որ* ունի զնմանութիւն անասնոց ինչ՝ հետևի և բարուց նոցին: - 248. Իսկ ըստ այլոց, զօրութիւնք հոգւոյն բաժանին յերկուս. *որ* է իմացումն և կամքն: - 248. Իմացումն է *որ* ըմբռնէ: - 248. Եւ կամքն է *որ* շարժէ՛: - 248. Եւ է՛ արտաքին զգայութիւնքն **ե**. *որ* է մասնական զգայութիւն. այսինքն է տեսանելիքն. լսելիքն. հոտոտելիքն. ճաշակելիքն. և շօշափելիքն: - 249. Իսկ ներքինն՝ *որ* է հասարակ զգայութիւնն. երևակայութիւնն. կարծիքն. տրամախոհութիւնն. յիշողութիւնն *որ* է միտք. զի ամենայն ինչ ի յիշողականն մտանէ: - 249. Դարձեալ զօրութիւնք հոգւոյն բաժանին երրակի ըստ երից ներգործութեանցն. *որ* է՛ կենդանանալն. զգալն. և բանաւորիլն: - 249. Ստուգութիւնն *որ* է ճարտարախօսութիւնն՝ ի փայծեղն: - 250. Արդ յա՛յտ է թէ *որ* գործ չառնէ հոգևոր կամ մարմնաւոր՝ վա՛տ ասի: - 251. Այլ զայն ինչ հարցումն *որ* զմարդն ի հերձուածոյ ի զատ տանի՝ պա՛րտ է հարցանել. որպէս յառաջիկայդ հարցումն է սակաւ մի: - 251. Եւ ա՛յս է բացադարձութիւն իմացմանն. *զոր* ի բազում տեղիս ասեն վարդապետք: - 251. Զի *որք* զհոգի յառաջ ասեն գոյանալ՝ զայս դնեն պատճառ, եթէ յէակքս իմանալիքն յառաջ ստեղծան քան զզգալիքս. ապա և ի մարդոյն էութիւն հոգին յառաջ է քան զմարմինն: - 252. Եւ *որք* զայս ասեն՝ հետևին մոլորութեանցն պղատոնի մարմնափոփոխութեանցն. *որ* ասէ քաղաք ի յերկինս. և հոգիքն անդ ժողովեալ իբրև զզօր և զդասս: - 252. Եւ *որք* ծուլանան, սողոսկեալ անկանին յերկիր ընդ մարմին մարդոյ շաղապատեալ: - 252. *Զոր* ընդ դերևս հանէ սուրբն գրիգոր նիւսացին ի գիրս կազմութեան այսպէս եթէ, *որք* զհոգին յառաջ ասեն գոյանալ քան զմարմին. և վասն մեղաց եդեալ ի մարմին մարդոյ. *որ* է՛ համանման բանականութեամբ. և է՛ իներքոյ երկնային կենաց՝ զի մարմնաւո՛ր է: - 252. Այլ արդ ի մարմնի առաւել մեղանչէ քան յերկնային կեանս. վասն որոյ անկանի ի զգայական մարմին որպէս ասեն՝ *որ* ներքո՛յ է մարդոյն՝ և համանման ախտիւք զի զգայակա՛ն է: - 252. Այլ ա՛րդ ի յանբանսն ո՛չ է առաքինութիւն *որով* սրբի ի մեղաց...: - 252. Այլ արդ՝ ի

տունկն ո՛չ կարէ սրբիլ. այլ անկանի յանշունչն, *որ* ներքո՛յ է տնկոյն, և նման նորա զի մարմին է: - 252. Կարգաւո՛ր է ապա՝ զի յանշնչոյն փոխեսցի յանէն և յանգոյն. *որ* մերձակայ և ներքո՛յ է անշունչ մարմնոյն: - 252. Եւ այժմ պատասխանեսցուք այնմ *որ* ասեն՝ յարարածքս զիմանալիս յառաջ ստեղծեալ քան զզգալիս: - 253. Իսկ *որ* ի **զ** օրն ասեմք ստեղծեալ զարարածս, այս զկարգ և զդասն նշանակէ մի քան զմի յետոյ. այլ ստեղծումն համանգամայն եղև: - 253. Այս քան առ նոսա, *որք* զհոգի յառաջ ասեն քան զմարմին: - 253. Իսկ *որ* զմարմին յառաջ ասեն քան զհոգի,վկայ ածելով զմովսէս *որ* ասէ եթէ՝ էառ զհողն և շինեաց մարմին. և յետոյ փչեաց ի նա զշունչն կենդանի, *որ* է կենդանարար հոգին: - 253. Պատասխանեմք առ այս եթէ՝ փչումն ո՛չ զբանական հոգին ասեն սուրբ հարքն. զի մարդ ասելով զհոգի և զմարմին նշանակեաց. և զմարմինն զի ի նիւթո՛յ է՝ ի հողոյ ասաց. այսինքն ի **դ** տարերաց *որ* է՛ ի հողն...: - 253. Նախ եթէ վասն մարմնո՛յն եղև հոգի զի շարժեսցէ զնա. ապա անա՛րգ է հոգին քան զմարմին *որ* վասն նորա եղեալն է. և մեծ և պատուական է մարմին քան զհոգի: - 253. Այսպէս և այժմ իւրաքանչիւրքն յառաջ եկեալ համանգամայն գոյութեամբ, լնուն զայն թիւն՝ *որ* նախ էր ի տեսութիւնն աստուծոյ: - 254. Պատասխանեմք եթէ, սերմնական զօրութիւնն *որ* է՛ ի մեզ, նոյն է սկիզբն գոյութեան մարդոյ: - 254. Եւ թէ ոք ասիցէ, զի՞նչ է այս *որ* յետ **խ**, կամ **ձ** աւուր ստեղծանի բանական հոգին: - 254. Զի կազմողական զօրութիւնն *որ* է՛ ի նիւթն՝ ազդումն առեալ յարարչադիր հրամանէն, նախ կազմէ՛ և պատրաստէ՛ զնիւթն առ ի յընդունելոյ զտնկականն. և ապա զզգայականն. յետ *որոյ* զբանականն ի ծագմանէն աստուծոյ: - 254. Երկրորդ՝ զի զօրութեամբ ունի զհոգին յինքեան ծածկեալ. *որ* յետոյ ներգործութեամբ երևի: - 254. Զի զօրութիւն ունի այս նիւթ՝ ընդունել զբանականն. *զոր* նիւթ անասնոցն ո՛չ կարէ ընդունել: - 254-255. Այլ ի կողմանէ հոգւոյն՝ զօրութեամբ ո՛չ է ի սերմն այն ըստ ինքնութեան բոլորին. այլ ըստ ինքնութեան մասին. *որ* է տնկականն և զգայականն: - 255. Եւ այս կազմողական զօրութեանն է *որ* նախ պատրաստէ՛ զնիւթ առ կեանքն...: - 255. ...սոքա համանգամա՛յն են ի հատն այն զօրութեամբ. *որ* յետ ժամանակաւ ըստ դասի երևին: - 255. Եւ համանգամայն երևի ասեմ. զոր օրինակ նիւթն այն ունի առ ինքն ծածկեալ զմասունս մարմնոյ. զձեռս և զոտս, զմիս և զմազ, *որ* յետոյ երևին ի նմանէ: - 255. Չորրորդ՝ զի ո՛չ է այն մեռելութիւն միայն՝ *որ* բանականն կամ շունչն պակասի. այլ և *որ* տնկականն պակասի. որպէս քար. ա՛յն է իսկապէս մեռեալ: - 256. Ապա ուրեմն հիւթն այն, նախ ունի զկեալն *որ* է՛ ունակութիւն. և ո՛չ զպակասն *որ* է մեռելութիւն: - 256. Վեցերորդ՝ զի զգործն կենդանւոյ տեսանեմք ի նա *որ* է՛ ջերմութիւն, շարժութիւն, և ներգործութիւն. *որ* երևի ի կազմելն զհիւթն: - 256. Դարձեալ՝ ջերմ և գէջ չափաւորեալ է ի նիւթն այն. և *որ* արտաքուստ մտանէ՝ անչափութեամբն վնասեսցէ՛ զսերմնական զօրութիւնն ընդ նիւթոյն: - 256. Այլ հատանի նիւթն ունելով առ ինքն զբոլոր կենդանութիւն. և լինի նիւթ ա՛յլ մարմնոյ նովին կենդանութեամբն *զոր* ունի առ ինքն: - 257. Որպէս ճիւղ հատեալ ի ծառէ և տնկեալ յերկրի, ճիւղն է հատեալ ի ծառէն, այլ կենդանութիւնն ո՛չ. ուստի յա՛յտ է զի տնկեալ ճիւղն նոյն կենդանութեամբն բուսանի *զոր* ունի առ ինքն: - 257. Այլ արդ՝ նախախնամութեամբ է տնկականն և զգայականն. *որք* փտելով և զնմանս ծնանելով պահեն զնոյն տեսակն: - 257. Եւ իւրաքանչիւր ոք ծննդեամբ յառաջ եկեալ առնու զնոյն պատկերին շնորհ ի ծագմանէն աստուծոյ. և լնուն զնոյն թիւ որքանութեան *զոր* ետես աստուած նախքան զլինիլն աշխարհի որպէս ասէ առաքեալն: - 258. Զորօրինակ՝ արուեստաւոր ոք կամիցի դրօշել ի քարեայ պատկեր, նախ նկարէ՛ ի միտս իւր զձև պատկերին. և ապա հատանէ զքարն և տաշէ՛ և դրօշմէ՛ զկերպն ըստ այնմ նմանութեանն *որ* էր ի միտս ձևացեալ: - 258. Նմանապէս և արուեստաւորն աստուած նախանկար տեսութեամբն ունի ի միտս իւր նախքան զլինիլն մարդոյն՝ զորպիսիութիւնն. զորքանութիւնն. և զայլն. իսկ արուեստն *որ* է արարչադիր հրամանն, ազդէ՛ ի նիւթն. և զի անկատա՛ր է նիւթն, անկատար տայ և նմա հոգի զտնկականն: - 258. Եւ ի կատարիլ մարմնոյն՝ հեղու ի նա զհոգի բանական ըստ նախատես գաղափարի այնորիկ *որ* էր ի միտս արարչին յառաջ քան զլինիլն աշխարհի: - 258. Եւ ըստ անասնոցն հաւասարութեան նախ գոյանայ անասնականն *որ* է տնկականն և զգայականն. և յետոյ բանականն: - 258. Երկրորդ՝ զի թէ այլ և այլ էր հոգի, ի յայլ հոգւոյ տեղիս ո՛չ բնակէր այլ հոգի որպէս յայլո՛յ կաղապար. և ա՛յլ դրօշած ի յա՛յլ կնիք. այլ մի է. վասն այն *որ* յետոյ երևի, յառաջնոյն խառնուածն կարէ՛ բնակիլ: - 259. Այլ զանազան զօրութիւն ի զանազան ներգործութեանցն երևի. *որ* է՛ աճիլն. զգալն. և խորհիլն: - 259. Զի մի և նոյն հոգին ըստ այնմ *որ* ազդէ՛ ի տնկական ներգործութիւնն *որ* է՛ կերակրական. աճողական. և ծննդական. կոչի տընկական: - 259. Եւ ըստ այնմ *որ* ներգործէ՛ ի զգայարանս, կոչի զգայական: - 259. Եւ որպէս ասէ արիստոտէլ զերեք թիւն՝ *որ* մի ունի զէութիւն իւր. այլ երկուքն և մինն մասունք են նորա: - 259. Եւ նա

հոգին է *որ* զգգայական և զտնկական զօրութիւնն ի գործ ածէ միայն ի մարմինն որքան է ի մարմնի: - 260. Իսկ զերրորդ գործն *որ* է իմանալն և բանաւորիլն, ունի հոգին և յետ անջատելոյն ի մարմնոյն: - 260. Եւ օրինակ այսմ դարձեալ տե՛ս զնշոյլս արեգականն. *որ* նախ երևի՝ և ապա արեգակն: - 260. Այսպէս իմա և զբանական հոգւոյն. *որ* ի մարդն մի է և զանազանապէս ներգործէ: - 260. Եւ թէ ասիցէ ոք, երևի ապա թէ առաջին զօրութիւն հոգւոյն տնկականն է՝ և վերջին բանականն *որ* է՛ յոյժ անպատշաճ: - 260. Իսկ *որ* հասարակն է սոցա և պատշաճաւոր, ունին զնոյն հասարակութիւն բուսոց ի նոյն ժամանակս: - 261. Զի սերմնական զօրութիւնն *որ* է՛ ի նիւթն այն՝ իսկ ընդ խառնիլ սերմանցն յարգանդի, զուգապէս ցուցանէ զտնկականն: - 261. Եւ էգն հոգևորի յետ **ձ** աւուրն՝ որպէս ասացաք զպատճառն վասն տեղւոյն ցրտութեան *որ* է՛ ձախ կողմն արգանդին. *որ* ցուրտ գոլով վասն փայծաղանն՝ յապաղէ՛ զկազմուած նիւթոյն ի կրկնապատիկ ժամանակս **ձ** աւուրց: - 261. Զի վեցն *որ* է՛ կատարեալ թիւ, և նիւթն այն է՛ ի չորից տարերց, և ունի առ ինքն զկազմողական և զտնկական զօրութիւնն *որ* է **զ**: - 262. Զի ամենայն նիւթ սերմնականի է՛ ի չորից տարերց. և ունի զկազմողականն զօրութիւն. *որով* լինի տնկականն: - 262. Իսկ տնկականն ունի երիս զօրութիւնս. այսինքն զկերակրականն *որ* է՛ սննդականն. զաճողականն և զծննդականն: - 262. Նմանապէս և կերակրականն ունի զօրութիւնս **դ**. *որ* է՛ քարշողականն. ունականն. հալողականն. և վտարականն: - 262. Արդ՝ տնկական զօրութիւնն բնականապէս՝ է նիւթն. *որով* կազմի և պատրաստի նիւթն առ տեսակս ազգի իւրեանց: - 262. Վասն որոյ ըստ թուոյ զօրութեան իւրոյ *որ* է՛ սնանիլն աճիլն և ծնանելն, յերեք ամիսս ծնանի զպտուղս. որպէս ցորեան և այլքն: - 262. Ասեմք թէպէտ նիւթն ի չորից տարերց է, այլ տնկականն զօրացեալ քան զնիւթն՝ ըստ իւրոյ մասանցն ծնանի. զի ծնանիլն տնկականին է. այլ և ունի զտարերացն թիւ. զի յամիսս չորս կատարի այն՝ *որ* յառաջ ծնաւ: - 262-263. Նմանապէս ծառք և տունկք՝ *որ* յետ երից ամաց կամ չորից ցուցանեն զպտուղս՝ յայսմ թըւոյ ո՛չ ելանեն արտաքս: - 263. Իսկ *որք* ի **խ** աւուրս ծնանին և կամ **ի ի**, որպէս հաւ. ունին նոքա զխորհուրդ չորից տասանց և չորից հնգից...: - 263. Այլ և յաւելեալ ի վերայ զշարժականն և զշնչականն և զցասմնականն և զցանկականն, ընդ նմին և զկազմողական նիւթն և զտնկականն, *որ* լինի **ժը**. վասն որոյ ոմանք ի տարին և կէսն ծնանին որպէս ուղտ: - 263. Դարձեալ տնկականն ունի **գ** զօրութիւն, և **ա** զնիւթն, և **ե** զգայութիւնս, *որ* լինի **թ**. վասն որոյ **թ** ամսեայ ծնանի: - 263. Դարձեալ ունի զ**ե** զգայութիւնս, և զշարժականն՝ և զշնչականն՝ և զսրտմտականն՝ և զցանկականն, *որ* լինի ինն: - 263. Դարձել **դ** տարր, և տնկականն և զգայականն, և երեք մասունք հոգւոյն բան ցասումն և ցանկութիւն, *որ* լինի **թ**: - 264. Դարձեալ **թ** խառնուա՛ծ է չորից տարերց ըստ կրկին քառից որակաց առաւել և նուազ, և իններորդն հաւասար է *որ* է ի մարդն. վասն որոյ ինն ամսեայ ծնանի: - 264. Դարձեալ **թ** թիւն պակա՛ս է ի **ժ**երորդէն. և մեք պակասեցաք յինն դասուց հրեշտակաց, *որ* նախ հաւասար էաք ի դրախտին. և կարօտացաք մարմնաւոր ծննդեան, նմանելով անասնոց...: - 264. Իսկ հինգ օրեայ անդրանկանն յետոյ լինիլ՝ բերէ՛ զնմանութիւն նախնի մարդոյն. *որ* յետ **ե** աւուր ստեղծաւ: - 264. Իսկ տունկք *որք* են մեծաբոյսք՝ և չորքոտանիք մեծամեծք՝ յերրորդ ամին ծնանին զնմանն. *որ* է թիւ կրկին ամսոյ ընդ երրեակ վեցից: - 264. Եւ այսպէս ի ներքուստ ի վեր կրկնեալ եօթնից *որ* է չորեքտասան, կատարի ցանկական մասամբն և կարէ՛ զնմանն ծնանիլ և կոչի մանուկ: - 264-265. Եւ վասն տնկական և զգայական մասին՝ կազմողական զօրութիւնն այլ ևս աճեցուցեալ զմարմինն **բ** ամ և դադարեալ յերեսներորդին, լինի ժամանեալ ի չափ հասակի կատարմանն քրիստոսի, *յորում* մկրտեցաւ տէրն մեր: - 265. *Որ* յայսմ թուոջ և նախահայրն ադամ ստեղծաւ: - 265. Վասն որոյ յայսմանէ և յառաջ հաստատի մարդ ի հանճարս բանակրութեան և ի տեսութիւն իմացման մինչև ի **խթ** ամն *որ* է եօթնիցս եօթն: - 265. Եւ ի յիսներորդէն մինչև ի **հէ** *որ* է՛ մետասան է, լինի հասակ ծերութեան: - 265. Եւ ի **հը**-էն մինչև ի մահ, և կամ ի **ճժբ** ամն, լինի զառամացեալ. *որ* է եօթնիցս վեշտասան: - 265. Եւ կրկնեալ ի հնգետասանէն մինչև ի **լ**, կատարի երիտասարդական հասակն. *որ* է **գ** տասամբ կատարեալ. ունելով զցանկականն և զցասմնականն և զբանականն լիով առ ինքեան: - 265. Եւ այսպէս միջին հասակս կատարեալ, ձգի մինչև ի **խզ** ամն. *որ* է **դ ժզ**. և վեցն կատարեալ թիւ է. և աստ տիրէ ալիք և սկիզբն լինի ծերութեան մինչև ի **հբ** ամն. *յորում* է ծայրք կենաց ըստ դաւթի, և թիւ երկոտասան վեցից խորհրդաւոր: - 265. Առաւօտ՝ *որ* է՛ տղայութիւնն. այն ինչ ի լոյս մերձեալ: - 265-266. Եւ յերեկոյ՝ ծերութիւնն. *որ* երեկոյացեալ կենաց և ի մահիճ գերեզմանի ժամանեալ: - 266. Ի ծնանիլն նախ խնդրէ միայն կերակուր և աճէ՛. յետ *որոյ* տեսանէ՛ կանգնի՛ և գնայ. յետ *որոյ* խօսի և իմանայ: - 267. Եւ անտի ի չորեքտասանն՝ զծննդականն ցուցանէ. *որ* է՛ կերակրականին դարձեալ: - 267. Եւ մի՛ աստ ընդ դէմ բերցի բանիս թէ՝ ամենայն մեծամեծք գութ

ունին փոքունց. զի և այս նախախնամութեանն է. *որ* եդ ի բնութեանս խնամ տանիլ նոցա...: - 267. Զի՞նչ է *որ* ամենայն ծնունդ թէ տունկք թէ կենդանիք՝ նախ յղանան և ապա ծնանին: - 267. Ըստ բնականին այս է. զի ամենայն իր *որ* լինի՝ յանկատարութենէ ի կատարումն ելանէ, և ի զօրութենէ ի ներգործութիւն որպէս ի վերոյ ասացաւ: - 267. Նոյնպէս և յղանալն հանդերձեալ է, և վախճանեալ անցեալն, *որ* ո՛չ երևին. այլ միայն ծնեալն երևի *որ* է՛ ներկայ: - 267-268. Երկրորդ՝ ցուցանէ զաշխարհ. *որ* էր նախ քան զլինիլն ի նախանկար տեսութիւն արարչին՝ և ապա եղև, յետոյ վախճանի: - 268. Խնդրեմ ուսանիլ թէ զի՞նչ է երազն *որ* տեսանէ մարդ: - 268. Զի է՛ *որ* բնական է, և է՛ *որ* աստուածային, և է՛ *որ* դիւական: - 268. Այն *որ* աստուածայինն է տեսիլ կոչի. որպէս Աբրահամուն. Յակոբայն. Յովսեփայն. և Դանիէլին: - 268. *Որ* ի խորհրդական միտսն վասն օգտի զլինելոցն ցուցանէր: - 268. Երկրորդ՝ *զոր* ախորժակն ունի զկարօտութիւն՝ զա՛յն տեսանէ. որպէս քաղցեալն զկերակուր. և ծարաւն զջուր: - 268. Իսկ զի բանական միտքն ո՛չ տեսանէ զերազն, այլ անբան մասն, *որ* է՛ տնկականն ի մեզ...: - 268. Զիմաստութիւնն հոմանուն է և ի բազում տեսակս որոշի. և բնաւքն ամենայն՝ մտա՛ցն են ներգործութիւն. վասն այն կոչի իմաստութիւն *որ* է իմացութիւն: - 269. Եւ նախ ասի իմաստութիւն նոցա, *որ* զբնութիւն էիցս քննեցին...: - 269. **Երրորդ՝ իմաստութիւն ասի և բանական քննութիւն. *որք* բանիցն տեղեկացեալ ընտրեն զստոյգն ի ստոյն: - 269. Իմաստասէր իմանամք զայնս՝ *որք* ըստ արտաքին փիլիսոփայիցն կրթութեան են վարժեալք. որպէս պղատոն, արիստոտէլ, և այլքն: - 269. Եւ իմաստակ կոչին՝ *որք* միոյ արհեստի են գլուխ. որպէս քերականութեան. ճարտասանութեան. աստղաբաշխութեան. և այլք. որպէս պիհոռնացիք ակադիմեանքն. *որք* հակառակ կոչին**: - 269. Գիտելի՛ է, զի յերից է պատկերին գեղեցկութիւն *որոյ* նմանի ի նախատիպն: - 271. Այլ անճառ երանութիւնն և առաքինութիւնն է աստուծոյ գեղեցկութիւնն *զոր* մեզ պարգևեաց...: - 271. Տասներորդ՝ մի և նոյն միտք է յաստուած *որոյ* զամենայն տեսանէ և զամենայն բարբառ լսէ. նոյնպէս և ի մարդս մի իմացումն է *որ* զանազան զգայարանօք իմանայ: - 271-272. Երեքտասաներորդ՝ ճշմարտի գիտօղ և սիրօղ է աստուած. և միայն մարդս է ի զգալիս *որ* ճշմարիտն գիտէ և սիրէ: - 272. Քանզի, ասէ լուսաւորիչն մեր, թէ ծն մարդոյ երևեցաւ ի ստեղծանելն, *զոր* առնելոց էր զնոյն մարմին յետոյ ժամանակի. և ի նոյն պատկերն արար զմարդն: - 272. *Որո՞վ* զանազանի պատկեր և նմանութիւն: - 272. Զի իր ինչ յաւելու մարդն ի վերայ կենդանւոյն, *որ* է՛ բանականն: - 272. Զի ի վերայ նմանութեան իր ինչ յաւելու պատկերն՝ *որ* է՛ նոյնութիւնն, և ապա՛ է պատկեր. զի պատկերն հոմանուն է: - 272. Եւ է՛ *որ* նոյնութեամբ է պատկեր. և է՛ *որ* նմանութեամբ: - 272. Եւ այս ևս ո՛չ է ընդունելի. զի սոցա պատասխանի տայ սուրբն կիւրեղ ի գիրս պարապմանց թէ՝ *որ* ասաց զպատկերն, իմանամք զնմանութիւնն ի պատկերին որպէս ցուցաւ ի վերոյ. զի ամենայն պատկեր 'ի հարկէ նմա՛ն է: - 273. Բնական պատկեր է, *որով* իմանամք և կարեմք սիրել զաստուած. և այս հասարա՛կ է բարեաց և չարաց: - 273-274. Իսկ պատկեր շնորհաց և փառաց է, կատարելապէս ճանաչել և սիրել զաստուած. և այս է նմանութիւնն *զոր* կատարեալքն ունին աստ և ի վերին գաւառին: - 274. Նա՛խ՝ զի խոստովանեալ է յամենեցունց *որ* ո՛չ է հաստելի. այսինքն ո՛չ ստեղծեալ: - 274. Դարձեալ՝ մարդո՛յն է թողութիւն մեղաց վասն մարմնոյն՝ *զոր* ոչ ունին հրեշտակք: - 275. Դարձեալ՝ մարդո՛յն է յարութիւն կենաց. և դատաստանի վասն հոգւոյն՝ *զոր* ո՛չ ունին այլ կենդանիք: - 275. Դարձեալ՝ մա՛րդն է ի պատկեր աստուծոյ եղեալ առաւել քան զհրեշտակս գ կերպիւ, ներքոյ և արտաքոյ. *զորս* ո՛չ ունին հրեշտակք: - 275. Մարմնոյ՝ *որով* տեսանէ զաշխարհս: - 275. Մտաց՝ *որով* տեսանէ զիմանալիս: - 275. Յաւատոյ և խոկման՝ *որով* տեսանէ զաստուած: - 275. Եւ այլ ամենայն գովութիւն մարդոյն *զոր* դնէ նիւսացին ի գիրս բնութեան, յատկութիւն է մարդոյն: - 275. Յինգերորդ՝ զի կողնէ աման և տեղի երիկամանց. *յորմէ* շարժի ցանկութիւնն...: - 276. Իններորդ՝ զի որպէս կողից երեսն *որ* ի փորն նայի՝ կոկ գոլով և մզղնատեսակ. իսկ մէջն փուչ և մրրախառն. այսպէս սէրն *զոր* ցուցանէ առ այրն, նօսր առ ի ցոյցս՝ և երեսս միայն ունի. իսկ ի սիրտն զմրուր դառնութեան: - 276. Երրորդ՝ կին, իբր թէ կող մի. *որ* է՛ զօրութիւն սիւն: - 276. *Որո՞վ* զանազնին օրէնքն և պատուիրանք և հրամանք: - 277. Դարձեալ՝ ի սուրբ գիրս է՛ ուրեք *որ* զբարերարելն աստուծոյ նշանակէ՛ հրամայել ասէ: - 277. Նա՛խ՝ ասի մահու մեռանիլ, իբր թէ է՛ ոմն անձնաւոր մահ *որ* է՛ բանսարկուն. և նովաւ մեռանիցիս ասէ: - 277. Երրորդ՝ մահու մեռանիլ զհոգւոյ մահն ասէ *որ* մեղօքն մեռանի. զի այն է առաւել մահ և յաւիտեան չար...: - 277. Չորրորդ՝ մահու մեռանիլ այն է, *որ* հոգւով և մարմնով տրտմին. և անմահ չարչարին. որպէս մեղաւորք յայս կեանս և յետ մահու. զի *որ* մեռանի մարմնով՝ զպարտս վճարէ. և *որ* տրտմի հոգւով՝ անմահ մահանայ: - 277. Չորրորդ՝ թշնամիք եղեն հրեշտակք մարդկան. *որք* պահէին սրով զճանապարհ

ծառոյն: - 277. Հինգերորդ՝ թշնամի եղև աստուած, *յորում* արտաքսեաց ի դրախտէն: - 277. Եօթներորդ՝ թշնամի եղև գործն մեր. *որ* նա՛ ի մեղս փոխեաց անցանելով զպատուիրանն: - 277. Եւ այսպէս **ը** դիմօ՛ք է թշնամութիւն մեր ընդ միմեանս. և ամենայնին պատճառ սատանայ եղև, *որ* բնութեանս է թշնամի: - 278. Նաև ըստ երից դրութեանց տեղեացն. *որ* է՛ դրախտն. և աշխարհս այս. և հանդերձեալն: - 278. Երրորդ՝ զի չէին առեալ զպատուէրս *որ* ծնանէր զերկիւղ և զգուշութիւն. *որ* ի պակասումն զգուշութեան ամօ՛թն է: - 278. Երկոտասան պարգև՛ք էին ի դրախտին *զոր* կորոյս ադամ: - 278. Իններորդ՝ սէր և գութ աստուծոյ ի վերայ մարդոյն հնազանդութեամբ պատուիրանին *որ* գայր առ նա՛: - 279. *Ո՞ր* է է շնորհքն ադամայ *զոր* ետ աստուած: - 279. Եօթներորդ՝ զի զաստուած ասաց պատճառ. եթէ կինս *զոր* ետուր՝ սա՛ ետ ինձ ուտել: - 279. *Որո՞ց* է պատժոց ընդունակ եղև: - 279. *Որով* և որդիքս վասն պարտուց հօր՝ արտաքոյ մնացաք: - 280. Եւ *որ* ոք կամեսցի զդարձն, անդրէն ի ձեռն նորին յարմարութեան այսինքն նորին կարգին կարողանայ ելանել ի նոյն: - 280. Ա՛րդ՝ անկման աստիճան առաջին էր հեշտութիւնն. *որ* ունի յինքեան զերեք կարգն: - 280. Իսկ **ժ**երորդ՝ *յորում* ամուսնութիւնն մխիթարութիւն տուաւ մեռելոյն...: - 280. Այլ կամ իբր զիրեշտակս, կամ որպէս ի միոյ լուսոյ բազումք, կամ կուսութեամբ ծնունդ. որպէս սուրբ կոյսն մարիամ աստուածածին սրբութեամբ և կուսութեամբ ծնեալ փոխեաց զկարգ բնութեան ծննդեանս *որ* ի սերմանէ առն և կնոջ. զի սա՛ ծնունդ միայն ի մօրէ՛: - 280. Վեցերորդ՝ զի անկասկած լիցուք ի վատթար երկիւղէ. *յորում* երկիւղազգածք չարչարին ըմբռնեալք ի մեղս: - 281. Ութերորդ՝ զխաբէութիւնս *որ* ճաշակելեօք և տեսանելեօք է՝ ի բաց մերժել, և զամենայն զգայութեանցս ընտրողութիւն: - 281. Իններորդ՝ խորհրդակից ունել ո՛չ զթունարկու օձն. այսինքն զարկածք չարին. այլ զպատուիրանս աստուծոյ *որ* ի գիրս սուրբս: - 281. Տասներորդ՝ առ յատուկ բարին մերձենալ. այսինքն առ ամենևին զուտ բարին *որ* է՛ աստուած. խորհրդով բանիւ և գնացիւք: - 281. Զի՞նչ է մաշկեղէն հանդերձն *զոր* զգեցոյց աստուած ադամայ: - 281. Մաշկն է կենդանական մորթ. *զոր* ստեղծեաց աստուած և զգեցոյց զադամ և զևա: - 281. Իսկ մաշկն *որ* է՛ մորթ մեռելոյ, նշանակէ՛ նախ զսուգ և զտրտմութիւն վասն մեղաց: - 281. Իսկ այն *որ* ինքն զգեցուցանէ, նշանակէ՛ զինքնազգեստ փառս անմահութեան, *զոր* այժմ զգեցոյց քրիստոս շնորհօք, և յետ յարութեանն զգեցուցանէ փառօք: - 281. Ըստ այնմ *որ* իր է՝ մո՛րթ է մաշկեղէն *զոր* զգեցոյց: - 282. Եւ ըստ այնմ *որ* նշանակութիւն է, ցուցանէ զմարմինս մեր փոփոխական. որպէս այն *որ* փչեաց յերեսս մարդոյն շունչ կենդանի: - 282. Ըստ իրին նշանակէր զշնորհաց հոգին, *զոր* ի մարմին եղելոցն վերացոյց. և ի վերնատունն դարձեալ փչեաց: - 282. Իսկ ըստ նշանակութեան ցուցանէր զբանական հոգին. *որով* կենդանացաւ մարդն: - 282. *Որ* յետ յանցանացն փոխեցաւ և եղև թանձր և ծանր և մահկանացու և ընդդիմահար և աղտեղի: - 282. *Զոր* յանմեղութեանն էր մարմինն ադամայ անչարչարելի և երագ և պայծառ և թեթև: - 282. Եւ այսպէս էր միջասահման կեանք նոցա *զոր* ասեն ի մէջ մահու և անմահութեան: - 282. Եւ ունէր առաջադրեալ իւր զերանութիւնն և զթշուառութիւնն. *որ* է՛ անմահութիւն և մահ: - 282. Ասեմք եթէ՝ էառ քրիստոս մարմին ի կուսէն մարիամայ զմերս թանձր և մեղանչական. և միաւորելով ընդ ինքեան՝ եղև առաջին կերպ անմեղութեանն ադամայ *որ* էր ի դրախտին:- 282. Այսպէս ասեմք զմարմինն քրիստոսի ունել զադամայն *որ* էր յանմեղութեանն: - 282. Քսանն**ը**՝ քանի՞ ամ ծառայեցին. և *յորո՞ւմ* աւուր ելին: - 283. Եւ զանազանութիւն մովսէսի *որ* աստուած կոչեցաւ: - 284. Վասն զանազան շաբաթուց. *որ* նշանակէ՛ զհանգիստն մեր: - 284. Ուր էր և տօնք ի հինն *որ* փոխեցաւ ի նորս: - 284. Յիսունն**ը**, **բժ**ան լրտեսքն. *որ* բերին ողկոյզ՝ նուռն՝ և թուզ: - 284. Տապանակն յառաջ գնայր և վէմն զհետ՝ *որ* էր քրիստոս: - 285. Վասն ուխտաւորաց *որ* միս չուտէին և ո՛չ գինի: - 285. Եւ երկիրն *յոր* դուք մտանէք: - 285. Եօթանասունն**ե**, Տալ զօրէնս հեթանոսաց. և օրհնութիւն և անէծք. և բան ընդդէմ հրէիցն *որք* մարմնաւոր ունին զօրհնութիւնս: - 285. Եւ թէ՝ մեծ էր նշանն քրիստոսի *որ* հոգւոցն արար, քան զմովսէսին *որ* մարմնոց: - 285. Զի՞նչ է *որ* ասէ գիր, «Հայեցաւ աստուած ի հաբէլ և ի պատարագս նորա»: - 286. Երկրորդ՝ զի խոնարհ և հնազանդ էր յամենայնի. ուստի մնաց եղբօրն պատարագի. *որ* իւրն **գ** ամսով յառա՛ջ էր հասեալ քան զեղբօրն...: - 286. Վեցերորդ՝ ի սոցանէ երևի և գործ արդարութեան. *որ* ընտիրսն աստուծոյ նուիրէր գիտելով զմեծութիւն նորա և զբոլորիցն տուրսն. և զխոտանն ի՛ւր թողլով: - 286. Եւ սոքա ամենեքեան վասն **է**երորդին են *որ* է՛ սէրն. *զոր* ունէր կատարելապէս առ աստուած: - 286. Իսկ զփոխարէն պարգևսն *զոր* ընկալաւ, Վասն առաջնոյն՝ զի ասէ գիր, «հայեցաւ», այսինքն հաճեցաւ աստուած ի հաբէլ: - 286. Դարձեալ որպէս ասէ առակն՝ «**է** չարիք են ի սիրտ թշնամւոյն» *որ* է սատանայի և մարդոյ: - 287. Եւ սատանային յայտնի են է չար խորհուրդքն *որ* կոչին գլխաւոր մեղք: - 287. Նա՛խ՝ **գ** մասունք հոգւոյն, բան՝ ցասումն՝ և ցանկութիւն. և **դ** տարերաց

խառնուածն *որովք* մեղանչէ մարդ: - 287. Երկրորդ այսպէս. **գ** մասանց աւելին և պակասն լինին **զ** չարիք. և մի գործ մարմնոյն *որ* լինի է նենգութեան խորհուրդ: - 287. Երկրորդ՝ յերկրէ՛. *զոր* արեամբ ոռոգեաց: - 287. Եօթներորդ՝ նշանն *որ* եդաւ չսպանանել զնա: - 287. Այլք զդողդողալն ասեն. *որ* և հաց և ջուր չկարէր ի բերանն տանել: - 287. Այլք եղջիւրս ասեն ունել ի ճակատն *որ* իբր զփող գոչէր թէ՝ գա՛յ ահա կայեն եղբայրասպանն: - 287. Զանէծքն ո՛չ յինքենէ ասաց զի մի՛ սատակեսցի. այլ յերկիր ետ *որ* է՛ զէն մահու և չարչարիչ՝ և գերեզման յետոյ: - 287. Երկրորդ՝ զի զօրութիւնն *որ* քեզ տւաւ յաստուծոյ՝ չարաչար արկեր ի կիր: - 287. **Դարձեալ՝ հոգի *որ* յաստուծոյ հեռանայ՝ ինքն յինքենէ շարժի. անհաստատ յերկրի, անպատսպարան յերկինս**: - 287. Երրորդ՝ զի *որ* նոր չարիս գործեսցէ՝ առաւել պատժեսցի: - 288. Նմանապէս և *որք* նոր իմն բարեաց սկիզբն լինիցին՝ առաւելապէս պարգևաց արժանասցին: - 288. Որպէս ենովս *որ* յուսացաւ կոչել զանուն տեառն աստուծոյ. այսինքն յուսացաւ զհանդերձեալ կեանսն *որ* աներևոյթն էր. և վասն իւրաքանչիւր գործոց գոլ հատուցումն. և կոչեաց զանունն աստուծոյ ի յօգնականութիւն: - 288. Վասն որոյ վկայեցաւ ենովս *որ* է մարդ: - 288. Նմանապէս և մեծն ի մարգարէս աստուածախօսն մովսէս *որ* աստուած կոչեցաւ փարաւոնի. իշխելով տարերցս փոփոխման, *որ* ջրածինն էր՝ եղև վիմածին և կայծակնածին. *որում* լուսաւորեցան երեսք: - 288. Այսպէս և ի նորս սուրբն ստեփաննոս *որ* եղև առաջին մարտիրոս և վկայ քրիստոսի՝ հեղլով զարիւն իւր. տեսանէր բացեալ զերկինս և զյիսուս ընդ աջմէ աստուծոյ: - 288. Երրորդ՝ յուսացաւ կոչել զանուն տեառն աստուծոյ ի յօգնութիւն. *զոր* մարդիկ յուսահատեալ էին եթէ վասն մեղաց մերոց եթող զմեզ աստուած ի ձեռաց...: - 289. Նոյնպէս և վերացուցանելն զկարօղ զօրութիւն յայնմ *որ* վերացոյցն: - 289. Իսկ թէ ոք հարցանէ թէ զի՞նչ էր սոցա առաքինութիւնն *որ* այսպէս պատուեցան: - 289. Չորրորդ՝ զի պտուղ ո՛չ եկեր. *որով* նա ուտելովն զրկեցաւ կենաց. և այսպիսիքս յերկինս հանեն զմարդն: - 290. Զի ասեն թէ՝ այր և երիտասարդն *զոր* սպան ղամեք և էառ զկանայս նոցա...: - 290. Նոյնպէս և անդրանիկ ծնունդքն աշխարհի էին նահապետքն *որ* նախ քան զջուրն, տևէին ի կեանս այս **թճ** կամ աւելի ամ, և ապա ծնանէին ի հանդերձեալ կեանսն մահւամբ ելիւք: - 290. Արդ բիւրն պատշաճի յաւիտենին աստուծոյ, *որ* պարունակէ՛ զմշտնջենաւորն *որ* են հրեշտակք: - 291. Եւ հարիւրն ժամանակեայն է՛ մարդն, *որ* ունի հոգի: - 291. Եւ յետ նորա **ժ** թիւն կենդանեա՛ցն է, *որ* ի չորից են բաղկացեալ. որպէս **ժ** ի **դ** թուոց: - 291. Վասն այն նահապետքն զհարիւրն պատկե՛ն *որ* է՛ ժամանակեան. և ի հազարն ո՛չ հասանին *որ* մշտնջենաւորն է: - 291. Ասեն աստեղագէտք եթէ՝ **է** դարուց կեցաղոյս վերակացուք են **է** աստեղքն *որք* կոչին մոլորակք: - 291. Ա՛րդ՝ առաջին դարն *որ* էր երևակին՝ ընդ երկա՛ր ապրէին մարդիկքն. զի ունի երևակն յերկար ընթանալ զճանապարհն իւր. *որ* ի **լ** ամն վճարէ զկենդանակերպսն: - 291. Իսկ ի վերջին դարս *որ* է՛ լուսնին՝ սակաւակեացք են մարդիկք. զի նա՛ ի **լ** օրն վճարէ զբոլոր ընթացս իւր: - 291. Դարձեալ՝ բնականապէս ըմբռնէ գիտութիւնն զայն *զոր* ներգործէ բնութիւնն. իսկ գործն աստուածային՝ գիտութեամբ ո՛չ ըմբռնի. այլ հաւատո՛վք իմանի: - 292. Քաղելով գործելն այն է, *որ* **ժե** կանգուն հաւասար բարձրացոյց, զի մեծահասակ կենդանիքն հանգիցեն: - 293. Կանգունն գիրկն է մարդոյ. և այլք **ը** թիզ ասեն. *զոր* այժմ Ֆռանկք վարին: - 293. Նախ՝ *որ* անփուտ էր փայտն. և մարմին մարդոյս անփուտ և անապական է. և յա՛յտ է ի յարութիւնն անմահ: - 293. Այլ և եկեղեցի սուրբ շինեալ ի քրիստոսէ հոգևոր տապան մեզ ի մէջ ծովու աշխարհիս՝ *որ* զհոգիս մեր փրկէ ի ջուրց մեղաց: - 293. Դարձեալ՝ տապանն չորեքկուսի՝ է՛ սուրբ խաչն քառակուսի. *որ* ժողովէ՛ յերկրպագութիւն իւր յամենայն ազգաց և լեզուաց: - 294. Եւ **ճ** ամն՝ *որ* առ որդւովն նորին կոստանդեաւ յերկնից լուսափայլեալ ի լեռնէն ձիթենեաց մինչև ի սուրբ գողգոդա: - 294. Իսկ երեսունն, մինչ ի մեծն թէոդոս. *որ* եբարձ զամենայն մեհեանս կռոցն և բարձրացաւ սուրբ խաչն ի գլուխս գմբեթարդ սուրբ եկեղեցեաց: - 294. Բոլոր տարի մի. զի այսպէս ասէ գիրն թէ՝ **ճծ** օր բարձրացաւ ջուրն. և յետոյ **ճծ** օր ցածուցաւ. *որ* լինի **ժ** ամիս: - 294. Եւ **գ** եօթն է *որ* արձակեաց զաղաւնին *որ* լինի **իա**. և **ե** օր աւելեացն *որ* լինի տարի մի: - 294. Եւ երկրորդ ամիս ասէ զեբրայեցւոցն *որ* է իար: - 294. Եւ **է**երորդ ասէ զթիւ ամսոյն նոյի *որ* է՛ թշրին: - 294. Եւ ի միւս տարին ի նոյն քանիս ամսոյն *որ* մտին ի նոյնն ելին ի տապանէն: - 294. *Յո՞ր* աշխարհի է տապանն: - 294. Եւ **բ** գետն ի բանն և ի հոգին սուրբ *որ* բղխեն ի հօրէ. զի հրաւիրակք են մեզ՝ յակն տանելով ուստի բղխեն սոքա: - 295. Նախ՝ զի արիւնն և շունչն կենդանութիւնն է *որ* է աստուծոյ բաժին. վասն այն արիւնն ո՛չ է ուտելի: - 295. Նա՛խ՝ է՛ աննշանն *զորս* որոշէ՛ օրէնքն. *որ* ո՛չ ունի կճղակս և որոճ և այլն՝ անսուրբ է: - 295. Իսկ զչորրորդ մասն *որ* արտաքո՛յ է սոցա՝ ուտեմք: - 296. Երկրորդ՝ զի ի հին օրէնքն քահանայքն զենուին. *զոր* որոշեսցուք ի նոցանէ: - 296. Երրորդ՝ զի զանհարիւն պատարագն մատուցանէ *որ* հոգևորն է և

ճշմարտութիւնն: - 296. Ձենուլ ձկանն այն է՝ *որ* ի ջրոյն հանեն. զի զշունչ ջրոյ ունի և ո՛չ զշունչ օդոյ: - 296. Եւ որպէս **է** է գործիք ձայնին, *որ* է՛ թոքն. խռչափողն. մակալեզուն. բերանն. լեզուն. ատամունքն. և շրթունքն. և սոքա միաբանին ի խօսքն: - 296. Եւ խնդրեցին զտապանն և զնա ոչ գտին. զի ո՛չ է հրաման տայ *որ* մարդն զարգանդ մօր իւրոյ տեսցէ: - 296. *Զոր* ոմանք **լ** ստադիոն ասեն զբարձրութիւնն և զլայնութիւնն շուրջանակի **խդռ** քայլք. այսինքն **խդ** մղոն ձգեալ ասի: - 297. Յայր առ որդի և հոգի սուրբ ասաց, *որովք* արար զմարդն մի ազգ և մի լեզու: - 297. Իսկ խառնակել՝ ո՛չ զշփոթելն ասէ *որ* անլո՛ւր էին միմեանց լեզուին: - 297. Զայն է իմանալ, *որ* ի բաժանել զլեզուս, բան և բառ և անուն խա՛ռն գտանին բազում ազգաց: - 297. Դարձեալ՝ ա՛յն է խառնակիլն, *որ* ի միոյ խոշոր լեզուէ քաղդէացոցն խառնակեցան և եղեն զանազանք: - 297. Պերճական պարսիկն. և համեղ հայոյն. *որ* բոլորապէս կարօ՛ղ է զամենայն լեզու ուղղակի ուսանիլ: - 297. Դարձեալ՝ խառնակիլ լեզուին ա՛յն է *որ* ընդ պատուհասն զբարութիւնն խառնեաց. զի թէպէտ բաժանումն լեզուաց պատուհաս երևի, այլ պիտանի՛ է: - 297. Որպէս այն՝ *որ* կոչեմք զգայութիւն զգալն և զգայարանս: - 297. *Զորս* հրեշտակս կոչէ ո՛չ վասն առաքինութեան, այլ զի պատգամաբերք և թարգմանք եղեն աստուծոյ իմաստութեանն առ մեզ ի ձեռն լեզուաց գիտութեանն: - 297. Եւ սահման կոչէ զլեզուս *որ* բաժանէ՛ ի միմեանց զազգս և զազինս. որպէս *որք* պարսպով և նշանիւ սահման դնեն և զանդս բաժանեն: - 298. Նմանապէս և զայս սահման լեզուի ո՛չ ոք կարէ փոփոխել. ո՛չ բռնաւոր և ո՛չ իշխան. բայց միայն աստուած *որ* եդ զսա: - 298. Եւ թէ *ո՞ր* է ադամայ լեզուն: - 298. Ասեմք եթէ՝ քաղդէացին *որ* է՛ արապն. զի մնաց առ եբեր և ո՛չ խառնակեցաւ: - 298. Դամատրանք, *որ* են բերդացիք: - 299. Իսկ *որ* զդպրութիւն գիտէ և գրով վարի՝ **բժ**ան ազգ է. այսինքն Եբրայեցիք. Քաղդէացիք. Ասորիք. Պարսիկք. Մարք. Յնդիկք. Փիւնիկեցիք: - 299. Յռօմայեցիք *որ* են սպանիացիք: - 299. Յամեղական հայքն *որ* կարօ՛ղ է զամենայն լեզուս յինքն ամփոփել և բոլոր խօսիլ. և այլքն ո՛չ՝ որպէս ասացաւ ի վերոյ: - 299. Եբրայական լեզուաւն կարդային *որ* ունէր դեռ զառաջինն. որպէս ասէ մեր լուսաւորիչն: - 299. Եւ այլք ասեն թէ՝ գետն առ *որով* բնակեալ էր նա՝ փայտ բերէր, անտի անուանեցաւ եբեր: - 299. Իսկ **դ** կանայքն *որք* խառնեցան յօրհնութեան ազգն իսրայէլի... - 300. Թամար՝ *որ* ծնաւ զփարէս ի յուդայէ՛: - 300. Ռահաբ՝ *որ* ծնաւ զբոյոս ի սաղմանա՛յ: - 300. Յռութ՝ *որ* ծնաւ զովբէթ ի բոյոսայ: - 300. Բերսաբէ՝ *որ* ծնաւ զսողոմոն ի դաւթայ: - 300. Զի՞նչ է *որ* եփրեմ ի գիրս կցորդաց ասէ, Մելքիսեդեկ՝ *որ* նա՛ ինքն է սեմ: - 300. Նոյ օրհնեաց զսեմ, և սեմայ որդի ո՛չ գոյր նման իւր *որ* օրհնէր զնա: - 300. Բայց սեմ չէ՛ր կենդանի *որ* օրհնէր զնա՛. և թարայ չէր օրհնօղ: - 300. Նոյնպէս և մելքիսեդեկ թագաւոր էր սաղիմայ. որպէս և անունն յայտնէ. մելքի՝ *որ* է՛ թագաւոր: - 300. Երկրորդ՝ զի աբրահամ յետոյ պատարագեաց կենդանիս. *որ* էր նշանակ ժամանակեայ պատարագին ահարօնի: - 300. Այլ մելքիսեդեկին անխիղճ. *որ* միշտ ուտի անշունչ և անարիւն: - 301. Եւ մելքիսեդեկին յերկրէ ծնեալ և յերկինս սնեալ, *որ* առաւել յարմարի ճշմարտութեանն ի յերկնից իջեալ և ի կուսէ ծնեալ: - 301. Նոյնպէս և *որք* հաղորդին մարմնոյն քրիստոսի, ո՛չ մերձենան ի զանազան ախտս մարմնական անթլփատութեան և զոհից դիւական: - 301. Զի մելքի՝ *որ* է թագաւոր. և սեդեկ՝ արդար. և սաղիմն խաղաղութիւն թարգմանի: - 301. Չորրորդ՝ ըստ անուանակոչութեանն. զի մելքի՝ *որ* է՛ թագաւոր. և թագաւորէր սաղիմայ: - 301-302. Յինգերորդ՝ *որ* ասի սեդեկ. այսինքն արդար: - 302. Այս է *զոր* արարն դարձեալ մարդկայինս ազգի զրկելոցս ի սատանայէ՛: - 302. Վեցերորդ՝ զի սաղիմայ ասէ՝ *որ* է՛ եէմ. և թարգմանի խաղաղութիւն: - 302. Եւ քրիստոս թագաւորն վերնոյն երուսաղէմէ մի՝ զնոյն խաղաղութիւն ետ առաքելոցն *զոր* ի ծննդեանն հրեշտակք երգէին: - 302. Նոյնպէս և տէրն մեր ետ հաւատացելոցն զկենարար մարմինն և արիւնն իւր. *յորոց* խնդրէ զգործս տասնաւոր. այսինքն զկատարեալս. և զկատարումն **ժ** բանեան օրինացն. ի *յորս* է՛ մաքրութիւն **ժ** զգայարանացս որպէս ի վերոյ ասացաւ: - 302. *Ո՞րք* են որդիքն աբրահամու նմանեալ աւազոյ. և *ո՞րք* աստեղաց: - 303. Այլ և *որ* իսահակայ վատթարք և խոտելիք եղեն: - 303. *Որք* հաղորդեցան մարմնոյ նորա, եղեն զաւակք ըստ մարմնոյ՝ ըստ թլփատութեան և այլոց օրինաց նորա: - 303. Եւ *որք* հաղորդեցան հոգւոյ, այսինքն հաւատոյ նորա, եղեն որդիք հաւատոյ նորա. որպէս քրիստոնեայք: - 303. Եւ գիտելի է, զի **ժ** փորձանացն աբրահամու *որք* էին ձոյլարան նորա՝ մի է և այս: - 304. *Որոց* առաջինն է *որ* ասացաւ առ նա, «ել երկրէ և յազգէ քումմէ և ե՛կ յերկիր *զոր* ցուցից քեզ»: - 304. Յինգերորդ՝ *որ* ասացաւ լինիլ զաւակաց նորա իբրև զաստեղս՝ և ոչ երկմտեաց: - 304. *Որոյ* փոխանակ հայր աստուած ետ զորդին իւր վասն գերազանց սիրոյն ի փրկութիւն աշխարհի: - 304. Երկրորդ՝ զի իսահակ աւետեաց է որդի և խնդութեան զաւակ որպէս անունն յայտնէ իսահակ, *որ* է՛ ծաղր: - 304. Ութերորդ՝ զի էառ իսահակ զհարսն և ուրախացաւ ի տան մօրն իւրում սառայի. *որ* զվեց ամ փրկեալ

գոյր և ո՛չ ոք մտեալ: - 305. Եւ տէրն զիարսնացեալ եկեղեցի եմոյծ վերըստին ի դրախտն *որ* զվեց դարիւ արգելեալ էր և փակեալ: - 305. Այլ *զոր* այժմ օժանդա՛կն է բանիս մեր, դիտեսցուք: - 305. Զայս և այլ սոյնպիսիս բազմօրինակ ստուերագրութեամբ առ ճշմարտութիւն իրին. իսկութեամբ ոչ գոլ անհնարին երկասիրացդ ի սոյն դեգերմամբ *զոր* ի պարապ ժամու քննութեան: - 306. Զի է՛ *որ* մատուցօղն մեծ է քան զպատարագն. որպէս հին օրինաց պատարագն. զի անասունք էին: - 306. Եւ է՛ *որ* պատարագն մեծ է քան զմատուցօղն. որպէս նոր օրինացս՝ մարմինն քրիստոսի մեծ է քան զքահանայն: - 306. Եւ է՛ *որ* մատուցօղն մեծ է քան զընդունօղն. որպէս մելքիսեդեկ քան զաբրահամ. և քահանայն մեծ է քան զժողովուրդն *որ* ճաշակէ: - 306. Իսկ չորրորդն է՛ պատարագ տեառն մերոյ քրիստոսի *որ* ի մի դէմ անձնաւորութեան **գ** երես պատարագին բացայայտեցաւ: - 306. Եօթներորդ՝ ցնծութիւն եղև իսահակ ազգին իւրում. ըստ որում կոչեցաւ իսահակ *որ* է՛ ծաղր...: - 307. Եւ ծնեալքս յաւազանէն հաստատիմք անմահ կերակրովք հացիւն *որ* յերկնից իջեալ: - 308. Նոյն և *որ* հատանի ի ստենէ. և աւազան կրկին ո՛չ է: - 308. Երկրորդ՝ հոգեկան. *որ* յաւազանէն ծնանիմք ի հոգւոյն սրբոյ. այսինքն յղացեալք ի բանէն հաւատոյ՝ ծնանիմք յորդիս աստուծոյ: - 308. Զի՞նչ է անդրանկութեան խորհուրդն *զոր* եսաւ վաճառեաց: - 308. Վեցերորդ՝ անդրանիկք են և ընտրեալքն աստուծոյ. *որք* նախքան զլինիլն աշխարհի ընտրեցան. թէպէտ յետոյ ի ժամանակի ըստ հասարակաց գոյացան և կատարեցան: - 309. ...և մեք անդամք ի նա՛ յարեցաք և եղաք անդրանիկք հրեշտակաց *որ* էաք կրտսեր նոցա...: - 309. Նոյնպէս և ծնունդք սուրբ աւազանին *որք* են անդրանիկք և անդամք քրիստոսի եղեալք...: - 309. Իսկ այն *որ* երբեմն անդրանիկն խոտիւր և կրտսերն ընտրիւր, բազում ունի խորհուրդ և նշանակութիւն: - 310. Եւ սոքա *որ* երևինս մեզ կրտսեր և վերջին, փոխեին և լինէին նախկին և առաջին ըստ նախընտրութեանն աստուծոյ: - 310. Չորրորդ՝ նշանակէ՛ զիրէայս *որ* էին անդրանիկ ժողովուրդ խոտեցան. և հեթանոսք կրտսերք ընտրեցան և եղեն անդրանիկ ժորովուրդ աստուծոյ: - 310. Զի *որք* կամին՝ լինին անդրանիկ գործովք իւրեանց. և *որք* ոչ կամին՝ փոխին և լինին անարգ և վերջին: - 310. Եւ *որք* աստ պատւով են, փոխին և լինին անդ անարգ. և անպատիւքն պատւաւորք: - 310. Որպէս նշանակեցաւ յեփրեմն և ի մանասէ. *որք* փոխեցան յաջ և յահեակ: - 310. Իններորդ՝ ցուցանէ թէ ո՛չ է այն անդրանիկն *որ* նախածին լինի և մարմնովն քաջ. զի ո՛չ հաճի տէր ընդ իրանս առն հսկայի. այլ անդրանիկ է այն՝ *որ* զհաճոյսն աստուծոյ կատարէ: - 310. Տասներորդ՝ ևս մեծագոյն խորհուրդ. զի բանն աստուած *որ* անդրանիկ էր հօր...: - 311. Այս քան ըստ խորհրդոյ *որ* անդրանիկքն խոտեին, և կրտսերքն պատւեին: - 311. Գօտին զօրութիւն նշանակէ *որ* էր ի մէջքն. այլ և ի յաղօթս կայր և գօտեաւ պնդեալ էր: - 311. Դարձեալ՝ վարժէ՛ զնա գօտեաւն՝ պատերազմիլ ընդ մեղս և ընդ մեղսասէր մարդիկ *որ* կամին զանմեղն քարշել արտաքոյ օրինացն աստուծոյ: - 311. Իններորդ՝ ի յանդիմանութիւն բնութեան մերոյ. զի մի՛ կարծեսցէ թէ առաքինութեամբն և սիրովն առ աստուած՝ հաւասարիլ կարէ՛ սիրոյն աստուծոյ *որ* առ մեզ. այլ կաղ գտանի: - 311. Ասեմք թէ յակոբ ո՛չ զներգործութեան անունն հարցանէր աստուծոյ, զի գիտէր *որ* աստուած էր և ինքն իսրայէլ կոչեցաւ *որ* է աստուածատես. այլ անուամբ զբնութիւնն և զգոյացութիւնն աստուծոյ կամէր ուսանիլ: - 311. *Որոյ* պատճառէ, զի անուն վասն այլո՛ց է *որ* ճանաչեմք զայլս: - 312. Դարձեալ՝ ամենայն անուն *որ* կոչի՝ կամ նախ քան զինքն լինի *յորմէ* անուանի. որպէս հայրն կոչէ՛ զորդին իւր մարդ: - 312. Զի **գ** են եղանակք անուանց. այսինքն բնութենական *որ* ի նախնւոյն կոչի: - 312. Անձնական՝ *որ* ի հաւասարէն կոչի: - 312. Ներգործական՝ *որ* ի վերջնոցն: - 312. Իսկ էն անսկիզբն և անվախճան է. *յորմէ* երրորդ աստուածաբանութիւն մեզ բացորոշի: - 312. Զի էն՝ անսկիզբն և անվախճան ընդ դէմ է ժամանակին *որ* սկիզբն ունի և վախճան: - 312. Եւ ընդ դէմ է մշտնջենաւորին *որ* ունի սկիզբն և ո՛չ վախճան: - 312. Եւ ընդ դէմ է յարածգականին *որ* ունի վախճան և ո՛չ սկիզբն: - 312. Երկրորդ՝ զի **խ** քաղաք առին ի բենիամենէ՛ յուդայի ցեղքն վասն շնութեան կնոջն պատահելոյ. և կոտորեցին զնոսա առ հասարակ **հեռ** արս. և մնաց վեց հարիւր այր *զոր* յետոյ ըստացան ժառանգութիւն իւրեանց. որպէս յա՛յտ է ի դատաւորաց վերջքն: - 312. Զառաջինն մխիթարեցաւ աստուածածին կուսիւն մարիամաւ. *որ* առանց երկանց և ցաւոց ծնաւ զմիածինն որդի, *որ* եբարձ զարտասուս վշտաց մօրն հռաքէլի: - 312. Զերկրորդն մխիթարեցաւ առաքելաւն պօղոսիւ *որ* էր որդի նմին: - 312. *Որ* յերուսաղէմէ՛ մինչ ի լիւրիկէ *որ* է՛ եզր աշխարհի՝ էլից զաւետարանն. և ստացաւ ժառանգութիւն նմին: - 312-313. Տասներորդ՝ հայրն առաքեաց զյովսէփ առ եղբարսն *որ* էին հովիւք...: - 313. Նոյնպէս և քրիստոս եկն առ եղբարս իւր *որ* էին որդիք դաւթի և աբրահամու և առաջնորդք ժողովրդեանն...: - 313. Եւ տէրն մեր **լ** ամեայ մկրտեցաւ. *զորմէ* հրամայեաց հայր՝ դմա՛ լուարուք ամենայքն: - 313. Յինգև**ժ**երորդ՝ *որք* աստ երկիր պագանեն

քրիստոսի, կենաց հացիւն կերակրին որպէս եղբարքն յովսեփայ: - 314. Իննևժ, յովսէփ ստացաւ ոսկի և զարծաթ և զերկիրն եգիպտացւոց՝ փարաւոնի. այսինքն զզէնս սատանայի. զի փարթամութիւնն մեծ զէն է սատանայի *որովք* գործէ՛ զամենայն պղծութիւնս...: - 314. Նոյնպէս և քրիստոս զզէն և զզօրութիւն սատանայի եբարձ *որ* էր մեղքն և մահ դժոխոցն: - 314. Քսաներորդ, և որպէս յովսէփ եթող զքուրմն և զերկիր նոցա, *զոր* քրիստոս էր բառնալոց զմեծամեծ մեղսն և զկռապաշտութիւնն...: - 314. Նոյնպէս և սրբոցն միտք լուսաւորին յաջոյն քրիստոսի. *զոր* աստ շանմանդաղ տեսանէին զփառս, անդ յայտնապէս տեսցեն: - 314. Նոյնպէս և քրիստոս իմաստութեամբն իւրով կերակրէ՛ զնոսա և զգեցուցանէ որպէս իդ երիցանցն, *որ* տուաւ նոցա արկանելիս սպիտակս. այս է շնորին մաքրութեան *զոր* ընկալան ի քրիստոսէ: - 315. *Յորմէ* վստահացեալ կոչէն զնա նովին անուամբն: - 315. Եւ տէրն մեր *որ* զմարմինն և զարիւնն իւր ետ ամենայն աշխարհի. նախ ինքն եկեր, և ապա ետ առաքելոցն: - 316. Սիրտ զանմահ աստուածութիւնն ասէ *որ* ո՛չ ննջէ և ոչ ի քուն երթայ պահապանն իէլի: - 316. Ութևժ, չո՛րս են *որք* հզօրք են և պերճ շրջին ասէ սողոմոն. այսինքն աքաղաղ, և նոխազ, և թագաւոր հրապարակախօս, և առիւծ՝ *որ* ո՛չ դարձուցանէ թիկունս յանասնոց: - 316. Այսինքն մարդիկք *որ* անբան տրտմութեամբ և անմիտ ցանկութեամբ ի վայր գտան քան զանասունս: - 316. Աղքատ և տնանկ զմարդկային բնութիւնս ասէ. *որ* հարստահարեցաւ և զրկեցաւ ի սատանայէ՛: - 317. *Յորոց* փրկեսցէ զմեզ և զամենայն հաւատացեալս անուան իւրոյ ի յաւիտենական և յանել տանջանաց հրոյն. և մասնաւոր աջակողմեան դասուն և ժառանգ արքայութեանն երկնից կացուսցէ յիսուս քրիստոս տէր մեր. *որ* է օրհնեալ յաւիտեանս Ամէն: - 317. Զի՞նչ է կապն *որ* ասէ՝ «կապեսցես զորթոյ. և զգնդակէ՛»: - 317. Այն է *զոր* հրամայէ՛ տէր՝ «ես եմ որթ և դուք ուռ». այսինքն որթ և հիմն հաւատոյս մեր է՛ քրիստոս: - 317. Եւ գնդակն է քարոզութիւն նոցա *որ* ըմբռնէ զմերձաւորսն: - 317. *Որ* է՛ կապ հաւատոյ և յուսոյ: - 317. Եւ կարելի՛ է ամենայն կապիւս *զոր* ունիմք առ միմեանս՝ փոխիլ առ աստուած և կապիլ ի նա: - 317. Զի զգեստ կոչի արտաքին հանդերձն *որ* ծածկէ զմարմինն: - 318. Եւ զգեստ կոչի մարմինն *որ* ծածկէ զհոգին. ըստ որում մաշկեղէն հանդերձն ադամայ *որ* էր արտաքին զգեստ և նշանակէր զմարմինն: - 318. Է՛ և այլ իմն պայծառ տեսութիւն այսմ բանի. զի զգեստ և տաճար կոչի մարմինն ստուգապէս ո՛չ աստուածութեանն քրիստոսի՝ *որ* ո՛չ բաժանեցաւ ի մարմնոյն ոչ ի մահ և ո՛չ ի գերեզմանն: - 319. Յամբերօղն յոբ *յորո՞ւմ* ժամանակի էր, և կամ *յո՞ր* ազգէ: - 320. Եւ նախ կոչիւր յոբաբ, *որ* է՛ սիրելի աստուծոյ. և կոչեցաւ յոբ, *որ* է՛ հայր. զի հա՛յր եղև համբերութեան: - 320. Ոմանք ասեն թէ՝ բարեկամքն իւր *որ* էին յազգէն եսաւայ ելիփազ. սովփար. և բաղդատ. *որք* եկին մխիթարել զնա ի վշտացն...: - 320. Եւ այլք ասեն թէ մովսէս գրեաց ի յանդիմանութիւն որդւոցն յակոբայ. *որք* առին զօրէնս և ո՛չ պահեցին. և զաստուծոյ զամենայն երախտիսն մոռացան: - 320. Զի ասեն թէ՝ յոբայ հէճուպն ի պարսիկս փախեաւ, և անդ զրոյց ետ *որ* գրեցին իւրեանց գրովն. և սողոմոն բերել ետ և սրբագրեաց: - 320. Այլ *որ* ստոյգն է ասեն թէ՝ մովսէս գրեաց որպէս պատմութիւն, և սողոմոն ստիքսեաց որպէս զիւր բանսն. յետոյ գրեաց և եզրաս հոգւովն աստուծոյ երբ ծախեցան գրեանքն ի հրէից: - 321. *Որ* ի փորձութիւնն սատանայի յաղթօղ երևեալ: - 321. Զի՞նչ է *որ* որդիքն յոբայ պատուէին զօր ծննդեան իւրեանց ի միասին ժողովիլով: - 321. Երկրորդ՝ և արդարք առնեն ընդ դէմ սմին ի յամօթ չարին. *որ* հնարեցաւ ի ձեռն մեղացն՝ մահւամբ բառնալ զմարդկութիւնս. այլ հրամանաւն արարչին ծննդեամբք տևէ՛ և յերկարէ՛ բնութիւնս: - 321. Երրորդ՝ ժողովին և գոհանան զաստուծոյ՝ *որ* յոչնչէ՛ գոյացոյց զմարդն, և յարգանդէ՛ խաւարին ի լոյս եբեր. և ետ մեզ ինչս մարմնական: - 321. Չորրորդ՝ ի խորհուրդ յարութեան մերոյ, *որ* վերստին գոյացուցանէ ի խաւարէ՛ գերեզմանին և ի լոյս հանէ և ուրախութեամբ զարդարէ՛ և փառաւորէ՛: - 321. Վասն որոյ այսօր ժողովեալ փառս և պատիւս տամք աստուծոյն մերոյ *որ* յաւիտեան զփառաւորիչս իւր փառաւորէ՛: - 321-322. Եւ ըստ նմանութեանն քրիստոսի մի զուարակ. *որ* վասն մեղաց մերոց մեռաւ: - 322. Վասն այն յոբ **ժ** պատարագաւ սրբէ՛ր զ**ժ** մասնաւոր մեղսն *որ* գտանին յարբեցութեան. և մին զուարակն ի սրբութիւն վասն ակամայ և խորհրդոյ մեղացն: - 322. *Զոր* աղօթէ՛ մարգարէն «ի գաղտնեաց իմոց սուրբ արա զիս տէր»: - 322. Որդիքն յոբայ *որք* մեռան արդա՞րք էին թէ ոչ: - 322. Երևի թէ ո՛չ. զի յուտել և ըմպել մեռան *որ* է մեղք: - 322. Եւ այսպէս ամենայն սպասաւորք նորա և ծառայքն *որք* սրով և հրով վախճանեցան: - 322. Իսկ այնմ *որ* ասեն թէ յարբեցութեան մեռան, պատասխանեմք եթէ՝ զմեղս յամենայն աւուր արիւն պատարագացն սրբէ՛ր. իսկ զայնմ աւուր՝ արիւնն իւրեանց: - 322. Այն է, *որ* բովանդակ մարմինն այնպէս խոցոտեալ էր կեղով՝ և լուծեալ ի շարաւ և ի թարախ. *որ* ո՛չ կարէր յոտին կալ կամ սողալ ուրեք. և ո՛չ ըմբռնիւր յայլմէ: - 322-323. Երկրորդ՝ զի այնչափ խոնարհեցաւ, *որ* աթոռոյն իւրմէ անկաւ ի հեզութիւն և ի յաղբիւսն: - 323.

Յինգերորդ՝ ընդ դէմ hպարտացելոյն *որ* խորհէր զաթոռ իւր դնել յամպս և անկալ յերկիր. նա՛ խոնարհեցաւ յերկիր և ել յերկինս: - 323. Վեցերորդ՝ ի խորհուրդն ադամայ *որ* անկաւ յերկիր փշաբեր, անկաւ յոբ յերկիր և յաղբիւս: - 323. Նա՛խ՝ զի կաւովն քերէր զկաւն *որ* էր նիւթ մարմնոյն: - 323. Դարձեալ՝ յաղթեաց զսատանայ այնու, զի իմացաւ զչար հնարսն նորա և պատասխանէր զընդ դէմ. որպէս կնոջն և բարեկամացն և *որք* զգուժն բերէին. զի գիտէր ի բանսարկուէն լինիլ: - 323. Եւ թէ *որ* ասիցէ՝ ունէր զայս յոբ. վասն է՞ր մերժեցաւ ի նա: - 324. Ապա ուրեմն բովանդակ երևեցաւ ե զէն *որով* յաղթեմք թշնամոյն: - 324. **Նախ՝ ուղղութիւն ընկերաց. բ գոհութիւն և համբերութիւն. գ՝ իմանալ զչար խորհուրդն սատանայի. դ՝ աղօթք և պահք. ե՝ խոնարհութիւն և ճշմարտութիւն. *որ* գերագոյն է ամենայն զինուց և խպառ կորուսանէ զչար *որ* մայրն է ստութեան և hպարտութեան**: - 324. Այսինքն նոքա կամէին *որ* զնոսա արդարս ասէր յոբ՝ և զինքն յանցաւոր՝ և ո՛չ ասաց. զի թէ զնոսա *որք* անիրաւք էին արդար ասէր՝ մեղանչէր ճշմարտութեանն. և թէ զինքն մեղաւոր ասէր՝ մեղանչէր վկայութեանն աստուծոյ: - 324. Եւ աստ գիտելի՛ է, զի **դ** ազգ վնա՛ս է *որ* զարդարն մեղաւոր ասեն և զմեղաւորն արդար: - 324. Զպատիժն *որ* **է** վայըն՝ միապէս գնէ: - 324. Վեցերորդ՝ զի լիցի և պատկեր քրիստոսի *որ* անմեղութեամբ դատապարտեցաւ, և յառաջին փառսն դարձոյց զնախաստեղծն ծննդօք իւրովք: - 325. Երկրորդ՝ զի լուծցէ զտարակոյսն *որ* վասն դատաստանին աստուծոյ թէ՝ անգիտելի՛ է մարդկան: - 325. Երկրորդ՝ զի գիտէր *որ* եղծանելոց էր մարդն զփառս: - 325. Արդ *զոր* ադամայ ո՛չ վկայեաց, խօսեցաւ ընդ յակոբ և վկայեաց արդար և անարատ գոլ: - 325-326. Վեցերորդ՝ խօսեցաւ աստուած՝ և զամենայն անճառելի գիտութիւնս վասն արարածոց ուսոյց նմա. *զոր* ոչ գիտէին մարդիկ զլինելութիւն երկնի և երկրի և ծովու և կենդանեաց: - 326. Այլ ա՛յս է ճշմարիտն, զի ամենայն բարեկամքն *որ* ժողովեցան յետոյ և մխիթարեցին զնա՛...: - 326. Եւ ոմանք **լը** ասեն ըստ անդամալուծին *զոր* բժշկեաց քրիստոս: - 326. *Որք* է ամ ասեն զփորձանսն՝ սոյնպէս թուեն. զի յետ փորձանացն ասէ գիրն **ճհ** ամ. և յառաջ քան զփորձն **h** ամ. և **ը** ամ փորձանացն և դարձին: - 326-327. *Որ* լինի բովանդակ կեանքն յոբայ **բճխը** ամ: - 327. Եւ *որք* **լը** ասեն զփորձանսն՝ սոյնպէս թուեն. յետ հարուածոցն եկաց յոբ **բ** եօթանասուն. այսինքն **ճխ** ամ: - 327. *Ո՞ր* է օսիդ աշխարհն: - 327. Այլ աշխարհն օսիդ՝ գաւա՛ռ է եսաւայ. զի օսիդն մի է յորդւոցն եսաւայ *յորոյ* անուն կոչեցաւ երկիրն օսիդ: - 327. Եւ է՛ ի մէջ արաբիոյ և եդոմայ. *զոր* այժմ կոչի թիլգուրան. ուր գերեզման նորա՛ է:- 327. Չորրորդ, նա՛ զգառն զատկին եղեն *որով* ազատեցան ի փարաւոնէ: - 328. Եւ քրիստոս զյարկն դաւթի *որ* է՛ եկեղեցի՝ չորիցս առաքինութեամբ եռաբնակ օթևան աստուծոյ կազմեաց: - 328. Ութևժ, մովսէս զօձն բարձրացոյց *որ* զօձահարսն բժշկէր: - 329. Փարաւոնի դստերն մառի կոչէին. *որ* արար զմովսէս իւրն որդէգիր: - 330. Եգիպտոսի իշխանին քսանթիս կոչէին *որ* չարչարիչն էր իսրայէլի...: - 330. ...*զոր* եսպան մովսէս և փախեաւ ի մադիամ...: - 330. Եմրան: Յեկտան: Մադան: Մադիան *յորմէ* մադիանացիք: Եսբոկ: Սովիւէ: - 330. Ուստի բազմացեալ լցին զարևելս ի պալի. *յորմէ* թագաւորք պարսից և հայոց արշակունիք կոչեցեալ: - 330. Դարձեալ՝ մորենին անարգ թուփ՝ նշանակէր զխոնարհութիւնն մովսէսի *յոր* հանգեաւ աստուած...: - 331. Դարձեալ՝ մորենին էր կոյսն մարիամ, *որ* զիմանալի հուր աստուածութեանն յինքեան կրելով ո՛չ կիզաւ...: - 331. Զի՞նչ է *որ* ասէ, «Լո՛յծ զկօշիկս յոտից քոց»: - 331. Զի *որ* ի լեառն սուրբ առ աստուած մերձենայ, ո՛չ է պարտ յանկողինս կնոջ հեշտանալ...: - 331. Դարձեալ՝ ամենայն *որ* ի լեառն աստիճանէ բարձրանայ որպէս զմովսէս և կամ այլ ինչ, պա՛րտ է սրբութեամբ պաշտել: - 331. Իսկ *որ* ասէր ագանել հողաթափս: - 331. Երկրորդ՝ ընդ դէմ չէիցն է *որք* միայն անուանին, այլ էութեամբ ո՛չ են աստուածք. այլ նիւթ են եղական: - 332. Նա՛խ՝ նշանակէ զնոյն ինքն սկզբնաչարն սատանայ. *որ* էր յերկինս գաւազան ուղղութեան և ընկեցեալ եղև օ՛ձ: - 332. Երկրորդ՝ դարձեալ նոյն ինքն սատանա՛յ է օձն. *որ* փոխեցաւ ի բարեկամի ձև. և պատրեաց զնախաստեղծսն: - 332. *Զոր* թէ ընկենու ոք, լինի երկրաքարշ մարդ և մեղաւոր. և մինչ զղջացեալ դարձեալ ըմբռնէ յետոյ, լինի պատճառ կանգնելոյ և փրկութեան: - 332. Ութերորդ՝ խաչն փրկական նախ էր մահու գործիք. *զոր* առեալ ի ձեռն քրիստոս, և եղև կենաց պատճառ: - 332. Զի՞նչ է *որ* բորոտեցաւ ձեռն: - 332. Նա՛խ ցուցանէ՛ թէ՝ ձեռքդ այդ գրեսցէ օրէնս *որով* սրբին պահօղք, և պղծին ո՛չ պահօղք: - 332. Յինգերորդ՝ բորոտիլն զմահն եգիպտացւոց նշանակէր. և ողջանալն զկենդանանալն որդւոցն իսրայէլի *որ* ի մահ գրաւեալ էին: - 332. Վեցերորդ՝ ձեռն հօր է՛ միածին որդին *որ* ել ի ծոցոյ հօր և էառ զօձաձև բնութիւնս մեր. և դարձեալ ել առ հայր, ի նոյն բնութենէն ո՛չ կացեալ ի բաց: - 333. Երկրորդ՝ ցոյցք է տկարութեան եգիպտացւոցն. *որ* ո՛չ կարացին ընդ դէմ կալ տկար զեռնոցն: - 333. Նա՛խ՝ նշանակէ զադամ. *որ* անմեղ և յըստակ ստեղծաւ, և ի մեղանչելն եղև արիւն զազրալի, և մարմին անհոգի: - 333. Երրորդ՝ յօրինակ հեթանոսաց *որք*

զազրացեալ էին մեղօք...: - 333. Չորրորդ՝ յօրինակ նոցա *որք* ի սրբութեանց ի մեղս դառնան և լինին մարմին և արիւն...: - 333. Հինգերորդ՝ նշանակէ թէ զարիւն տղայոցն չէ մոռացեալ աստուած *զոր* հեղձուցին ի գետն. զայն ըմպել տայ նոցա: - 333. Վեցերորդ՝ գետն նշանակէ՛ զբանն աստուած, *որ* հաղորդիլով ի մեզ՝ եղև մարմին և արիւն. և ետ մեզ ըմպելի զարիւն իւր սուրբ. և կերակուր զմարմինն: - 333. Երկրորդ հարուածն է՛ գորտն *զոր* բղխեաց գետն: - 334. Երկրորդ՝ իբր թէ տղայքն *զորս* ի ջուրն հեղձուին՝ կենդանացեալ տանջեն զնոսա: - 334. Երրորդ՝ հարուածն է մունն *որ* է՛ մանր տիզ. կամ մոծակ. կամ մժեխ. ի ցուցանել զի մանրակծո՛ւ էին բարուք և խոցոտիչք բանիւք: - 334. Երկրորդ՝ կարկուտն զհպարտ և զհայհոյիչ բանս նոցա խայտառակէ, և հուրն զբարկութիւն սրտին *զոր* ունէին առ որդիսն իսրայէլի: - 334. Նշանակէր զխաւար աննմտութեան նոցա *որ* առաւել էր քան զամենայն երկրի. զի զամենայն գարշ կենդանիս ի պաշտօն առին: - 334. Երրորդ, զի կորնչելոց էին անդրանիկ ծնունդքն սատանայի. *որ* էր հպարտութիւնն և կռապաշտութիւն. զի խոնարհութեամբ էր գալուստն քրիստոսի և ի մի աստուածպաշտութիւն հրաւիրեաց և կորոյս զպաշտօնն դիւական: - 334. Է՛ *որ* զէութիւնն փոխէ. որպէս մովսէս զգետն յարիւն դարձոյց և զգաւազանն յօձ. և այս կոչի սքանչելիք: - 335. Եւ է՛ *որ* զկերպն և զձևն միա՛յն փոխէ, և կոչի առաչօք. որպէս յանէսն և յամրէսն առնէին կախարդութեամբ դիւական: - 335. Եւ որպէս սատանայ հրեշտակ լուսոյ կերպարանի *որ* չէ իսկ: - 335. Նոյնպէս պաշտօնեայք նորա ցուցանեն ինչ *որ* չէ ճշմարիտ: - 335. Նա՛խ՝ զի կախարդքն զա՛յն առնէին *զոր* մովսէսն առնէր: - 335. Երկրորդ՝ զի գաւազանն մովսէսի մի վիշապ եղեալ կլանէր զբազում վիշապս նոցա *որ* և հե՛տն միանգամայն ո՛չ երևէր. ընդէ՞ր ապա և նոցայն ո՛չ եկուլ զմովսէսին. քանզի սո՛ւտ էր: - 335. Զառաջիկայն և զմիտս մարդկան ո՛չ ոք գիտէ. ո՛չ հրեշտակք և ո՛չ դևք և ո՛չ մարդիկք. բայց միայն աստուած *որ* քննէ զսիրտս և զերիկամունս: - 336. Նախ՝ թոյլ տա՛լն է աստուծոյ. *որ* անձնիշխան կամօք ամրանայ մարդ ի չարն, և աստուած ներէ՛ և ո՛չ երկիւղիւ խրատէ զնա: - 336. Որպէս սովորութիւն է մարդոյ *որ* վատացն ասէ, ե՛ս արարի զայդ բանդ *որ* զքեզ ի քո կամդ թողի և ո՛չ խրատեցի: - 336. Երկրորդ ա՛յն է՝ *որ* յորժամ լինի կամքն մարդոյն չար և խիստ ի ծածուկ, և զայն յայտնէ՛ աստուած. որպէս նաբուգոդոնոսորայ. *որ* ունէր սիրտ գազանի՝ ի կերպարանս գազանաց փոխեցաւ: - 336. Նա՛խ՝ զի իրաւո՛ւնք արար վասն վարձու կաւագործութեանն *որ* էր առ նոսա: - 336. Եւ կաւագործութիւնն խստացաւ ի մովսիսի **իբ** ամէն ի վեր. *որ* լինի **ծթ** ամ խիստ ծառայութիւն նոցա: - 337. *Յորո՞ւմ* աւուր ել ժողովուրդն յեգիպտոսէ, և քանի՞ ամ էր յադամայ: - 337. *Որ* լինի բովանդակն մինչև յելսն եգիպտոսի, **գռոծթ** ամ ըստ եօթանասնիցն: - 337. Իսկ ըստ նսեբեայ, **վպթ** ա՛մ է. զկայնան **ճի** ամ ի ներս առեալ, *որ* է՛ որդի արփաքսաթայ՝ և հայր սաղայի. *զոր* յիշէ աւետարանն, և ո՛չ յիշէ մովսէս: - 337. Իսկ յաւուր **ե** շաբաթոջ երեկունն զգառն զենին և ելին յայգ ուրբաթի. նիսանի **ժե**. *որ* էր առաջին ամիս նոցա. և ի կիրակէ անցին ընդ ծովն *որ* էր նիսանի **ժէ**: - 337. Եւ ի մէջ գիշերին *յորում* ըմբռնեցաւ, էհար զանդրանիկս դիւաց: - 337. *Յորում* աւուր կիրակէին ի մէջ գիշերի ընդ առաւօտս յարեաւ տէր ի գերեզմանէն, ազատելով զհոգիսն ի դժոխոց: - 337. Եւ անուն փարաւոնի *որ* ընկղմեցաւ՝ փեսիոս. և ոմանք կանաքարիս կոչեն: - 337. Խաչանիշ ձգեաց զգաւազանն ի վերայ ծովուն ընդ առաջ ասելով, Այիա՜. *որ* է՝ աստուած առաջի մեր: - 338. Վասն որոյ նախ տուաւ թագաւորութիւնն բենիամենի *որ* էր սաւուղ: - 338. Հրեշտա՛կ էր. *որ* ի տիւն հովանի լինէր ի տապոյ արևուն և ցուցանէր ամենայն աշխարհի զելս ժողովրդեանն: - 338. Նմանապէս և հոգին սուրբ ի գիշեր կենցաղոյս լուսով աւետարանին առաջնորդէ՛ մինչև հասուցանէ յայգն հանդերձեալ աւուր ի ցօղաւոր ամպն *որ* է՛ բանն մարմնացեալ. *որ* է հովանի և հանգիստ ամենայն սրբոց: - 338. Երրորդ՝ զի հաւատ մեռելոյն յանդիմանէր զթերեհաւատ կենդանիսն *որք* սրտիւք յեգիպտոս դառնային: - 338. *Զոր* տեսեալ ժողովրդեանն նոր՝ ասէին ցմիմեանս, զինչ է սա. և կոչեցաւ մանանայ: - 338. Երրորդ, քաղցր է և փափագելի. զի զամենայն ինչ *որ* բարի է ի ստեղծուածս՝ օրինակ տամք ստեղծողին: - 338. Վեցերորդ՝ զի յերկնից իջեալ հացին է օրինակ *որ* է կերակուր իմանալի հրեշտակաց: - 338. Երկրորդ՝ զմանանայն *որ* շատ ժողովեաց՝ ո՛չ յաւելաւ. և նուազն ո՛չ պակասեաց: - 339. Եւ զհաց մարմնոյն քրիստոսի՝ *որք* զբոլոր և *որք* զմասն ճաշակեն՝ միո՛յ կենաց հաղորդին: - 339. Եւ **գ** չափն զհաւատն մեր *որ* ի սուրբ Երրորդութիւնն է նշանակէ՛: - 340. *Որո՞վ* զանազանին կրկին տախտակքն: - 340. Երկրորդ՝ զի մի ոք *որ* կատարէ զօրէնս, պատուակա՛ն է աստուծոյ քան զամենայն աշխարհս. վասն այն ընդ միոնն խօսի: - 340. Երրորդ՝ ժողովումն արմտեաց ի յաշնան. *որ* ի թշրինի **ժ** կարգեցաւ: - 340. Եւ հոգւոյն գալստեանն *որ* էջ յառաքեալսն: - 341. Երրորդ՝ ի գուշակ սուրբ հոգւոյն *որ* այնպէս որոտմամբ և հրեղէն լեզուօք էջ յառաքեալսն: - 341. Զի՞նչ է *որ* զկէս արեան պատարագին խառնեաց ի ջուր և ցանեաց ի ժողովուրդն.

և զկէսն էարկ շուրջ զսեղանովն: - 341. Նշանակէ զժողովուրդն *որք* սրբին աւազանաւն և խառնին ի հաղորդութիւն արեանն քրիստոսի: - 341. Եւ այն *որ* շուրջ զսեղանովն, նշանակէ՛ զքահանայս. *որ* մերձ սեղանոյն *որ* է՛ քրիստոս՝ միշտ սպասաւորե՛ն և պատերազմին արեամբ չափ ընդ ախտս և ընդ դևս: - 341. Նա՛խ՝ զի մովսէս յայտնապէս զկէս արեանն անապական եհեղ զսեղանովն *որ* նշանակէր զանապական խորհուրդ արեանն. և զկէսն խառնեաց ի ջուր որպէս ցուցաւ ի խորհուրդ մկրտութեան և հաղորդութեանն խառնեալ: - 341. Երկրորդ՝ զի նախ ջուրն էր ի խառնարանն և եհե՛ղ զարիւնն ի վերայ *որ* է՛ ցոյց մկրտութեանն: - 341. Երրորդ՝ նախ զխառնեալ ջուրն ցանեաց ի վերայ ժողովրդեանն *որ* էր մկրտութիւնն. և սոքա ճաշակեն զջուրն և զարիւնն: - 341. Եօթներորդ՝ զի նոր իմն չնաշխարհիկ կազմեաց. նոր ժողովրդեանն և նոր օրինացն, իցէ և նո՛ր տաճար հռչակեալ ընդ ծով և ընդ ցամաք. որպէս պսակ և փառք արդարոցն է՛ *զոր* ակն ո՛չ ետես և ունկն ո՛չ լուաւ. նոյնպէս և սա՛ ի զգալիսս անիաս ի մտաց մարդկան: - 342. Ծիրանին ջրոյ. զի կոնքիլոսն *որ* ներկէ՛ զծիրանին՝ ի ջրո՛յ է. և Բեհեզն սպիտակ՝ երկրի. զի վուշն յերկրէ լինի: - 342. Երկրորդ եղանակ՝ **է** գօտիք. և **ը**՝ անմոլարքն. **թ**՝ լուսնոյդ ի վայր. և **ժ** բանն աստուծոյ *որ* վարէ՛ զարարածս: - 343. Երրորդ այսպէս. ի լուսնոյդ ի վայր տարրական հուրն և *որ* ի նմա երեւոյթք լուսոյ. օդն և թռչունք. ջուր և լօղականք. երկիր և բոյսք. մարդ և անասունք: - 343. Տասն ամն մանկութեան է. և ի՝ պատանեակ զինուորութեան. և **իը**՝ երիտասարդութեան *որ* է՛ **դէ**: - 343. Եւ սրբութիւն է՛ երկինքն *յոր* ընթանան լուսաւորք: - 343. Այլ թէ հարցանեն զորքանութիւն սիւնիցն. **ծ** սիւն ի մէջ խորանին. և **թ** սիւն վարագուրացն. և մի թափանց ի մէջն յարևելից յարևմուտս. *որ* լինի **կ**. և **ձ** սփռիչ. և **խ** նիգք. և ամենայնն ոսկեպատ. *որ* բովանդակն լինի **ճձ** ի ներքս: - 343. Զարծաթն է առ ի համարոց գլխոցն կէս երկդրամի *որ* է՛ **ժ** դանկ: - 344. Եւ զպղինձն ի բուրվառացն կորխեանց **մծ** իցն. *յորմէ* արար զնուարտանն ծածկոյթ պղնձի սեղանոյն. նշան յանդգնութեան նոցա: - 344. Եւ զոսկին ետուն յապաշխարութիւն, *որք* ետուն զոսկի որթոյն: - 344. Եւ ի **ժեն** նիսանի անցին ընդ ծովն *որ* է՛ **ե** ամիս. և **է** ամիս ի գործ խորանին: - 344. Նա՛խ՝ զի ամենայն իր *որ* ընտի՛ր է՝ չա՛փ ունի և սահման. և ո՛չ շփոթումն. վասն այն կանգնաւ չափէ զնոսա: - 344. Այսպէս և լայնքն, *որ* աճին իմաստիւք ի յէութիւնս իւրեանց: - 344. Չորրորդ՝ և բովանդակն **ե** կանգուն, ցուցանէ թէ ո՛չ են նոքա ի չորից տարերց. այլ **ե**երորդ էութիւն են. որպէս ասեն ոմանք. անմարմին անփոփոխ և անմահ. *որ* ո՛չ է տարրականացս: - 344. Յինգերորդ, *որ* ասաց զերեք ձևն, երկայն և լայն և բարձր. և ո՛չ զխորն *որ* է՛ թանձրութիւն: - 344. Իսկ չորրորդն *որ* է՛ մարմին, զգալիքս են թանձրացեալ: - 344. Եւ ծնօտ՝ *որ* է՛ զիկն բոլորեալ. զիմանալի կերակուրն նշանակէ նոցա. զի ծնօտն գործի է կերակրոյ: - 344. Իսկ վկայութիւնն *որ* է՛ տախտակքն օրինաց. զի վկայե՛ն պահողացն բարիս. և ոչ պահողացն պատիժս: - 345. Զի աթոռք և քերովբէք շուրջ են զաստուծով. և անընդմիջաբար ուսեալք ի սուրբ Երրորդութենէն, *որ* ուսուցանեն զներքինսն: - 345. Սոքա՛ են ի սրբութիւն սրբոցն *որ* է՛ լուսեղէն երկինքն բնակարան անմարմին զօրացն: - 345. Ի *յորում* **բ** տախտակք են գրեալ. հոգի և մարմին միաւորեալ բանիւն: - 345. Զի եօթանսունքն եռբճ պակաս **բ** թիւ գրեն. և այլք **եռշ** ամ. *որ* է՛ **ե** դար և կէս: - 345. **Ի յա՛յս միտս յորժամ խաչ նկարեմք, զծագ մատին աջոյ մերձ ի բոյթն առնեմք *որ* է՛ ի համարն զերորդ. զկէս զին նշանակելով**: - 345. Ա՛յս խորհուրդ է տապանակին *որ* ի սրբութիւն սրբոցն: - 345. Երեմիա և աշակերտն՝ տարան ի գիշերի զտապանակն և *որ* առ նմայն էին՝ ի լեառն սինա. և անդ կնքեցին ի վիմին անուամբն աստուծոյ ասելով, ո՛չ ոք բացցէ զսա՞ թէ ոչ մովսէս *որ* եբերն. և ո՛չ ոք բացցէ՝ թէ ոչ ահարոն: - 345. Ի խորհուրդ կենսատու հացին *որ* յեկեղեցին: - 346. Նախ նշանա՛կ էր լուսաւորա՛ցդ երկնից *որ* ի հարաւ ընթանան: - 346. Աշտանակ ոսկի, անապական զօրութիւնն աստուծոյ *որ* խնամէր զնոսա և բարձեալ կրէր: - 346. Դարձեալ՝ **է** ճրագն և **է** բերան ճրագացն *որ* լինի չորեքտասան, նշանակէ՛ զչորեքտասան աստիճան հաւատոյն. **է** ի յանմարմին բնութիւն աստուծոյ, և **է** ի տնօրէնութիւն բանին: - 347. Եւ գունդն ջահ՝ տէր մեր, *որ* լուսաւորէ՛ զհաւատացեալս իւր: - 347. Երկրորդ՝ զի բանն աստուած ծնունդ հօր՝ էառ զբնութիւն մարդոյս *որ* վերջին է յարարածս: - 347. Ընդ *որովք* նահապետք, վարդապետք, և թագաւորք: - 347. Ընդ *որովք* զինուորք ճգնաւորք. ընդ նոսին և կուսանք և մարտիրոսք: - 347. Եւ ի նմանէ լուսաւորեալք՝ պայծառացուցանեն վարդապետութեամբքն իւրեանց զերկու ժողովուրդս *որք* ի հրէից և *որք* ի հեթանոսաց օծեցան մկրտութեամբն: - 347. *Զորս* պօղոս՝ յընտանի և ի վայրենի ձիթենիս առակէ՛ ի թուղթն հռօմոց: - 347. Եւ ձիթենիքն՝ կրկին բարութիւնք խաչին. *որ* զարքայութիւնն եբաց և զդժոխս աւերեաց: - 347. Կամ *որ* զմեզ ազատեաց, և զթշնամին կապեաց: - 347. Զերկոտասան ազգն իսրայէլի, *որոց* անուանքն էր գրեալ: - 348. Կարկեհան՝ *որ* կայծ կոչի. հրագո՛յն է. գտանի յափրիկէ. ի գիշերի որպէս հուր վառի: - 348. Սուտակ՝ *որ* է՛ լիգրոնն. *զոր* ո՛չ

գիտէ ոք զուստն. նման է կապուտակ աւազոյ. ոմանք ասեն յամազունից բերաւ ի կանանց աշխարհէն: - 348. Եւ բաց յայսցանէ **բ** ակն յանդիմանութեան *զոր* անդամանդեայ կոչէին...: - 349. Ծաղիկ զըմռնեաց. նմանէ պոյտն ծաղկի. և Կինամոն. արմա՛տ է խոտոյ ի տմորիս հայոց. և Խնկեղէգն. *որ* յարմատս ո՛չ ամենայն եղեգան լինի. և Յիրիկ. խէ՛ժ է ծառոց: - 349. Նա՛խ՝ *զոր* լուան զօրէնս ականջօք, տեսցեն և աչօք զի հաստա՛տ է տեսն քան զլուրն: - 349. Զորօրինակ թագաւոր ոք յորժամ լսէ՛ զգոյժ որդւոյ իւրոյ մեռելոյ, խորտակէ՛ զթագն, և զամենայն ինչ *որ* վասն նորա՛ է: - 349-350. Երրորդ՝ զի անարժանք էին մեռեալքն հոգւով՝ կենդանի բանին աստուծոյ տեսանել ա՛յն աչօքն *որ* տեսին զորթն. և համբուրել շրթամբք: - 350. Չորրորդ՝ ի խորհուրդ հին օրինացն *որ* բարձաւ և նոր օրէնք տւաւ: - 350. Երրորդ՝ ի խորհուրդ նոր օրինացս *որ* հաստատ մնաց: - 350. Չորրորդ՝ յօրինակ դրախտին ադամայ՝ *որ* ծրի տուաւ և ո՛չ պահեաց. վասն այն որդւոց նորա գործով և աշխատութեամբ պարգևէ: - 350. Երես զիսկութիւն աստուածութեանն նշանակէ. *զոր* աստի կենօքս ո՛չ ոք կարէ տեսանել...: - 350. Եւ մարդս *որ* վերջին է՝ սա՛ միա՛յն ծանեաւ զառաջին պատճառն: - 350. Զի՞նչ զանազանի *որ* մովսէս՝ աստուած և տէր կոչեցաւ: - 350. Դարձեալ գիտելի է, *որք* զքրիստոս բաժանեն յերկուս բնութիւնս. և յերկուս գործս սոյնպէս. զմինն աստուած՝ և զմիւսն մարդ. հզօր և տկար. և գործ մարդոյ և գործ աստուծոյ. որպէս աղանդն քաղկեդոնի: - 350. Նա՛խ ցուցանէ զառատութիւն պարգևացն աստուծոյ, *որ* ո՛չ զուգակշիռ գործոցն հատուցանէ, այլ բազմապատիկ և հազարաւոր: - 351. Ասեմք եթէ՝ կրկին է մեղք. բնութեան և անձին. *որ* է սկզբնական և ներգործական: - 351. Նա՛խ՝ զկերպն ադամայ *որ* ի դրախտին՝ երևեցոյց յինքեան. *զոր* ետես մահ և ընկէց զթագն իւր: - 352. Եօթներորդ՝ զի *որ* աշակերտի մովսէսի՝ զլոյս ընդունի. և *որ* ո՛չ աշակերտի՝ ի խաւար մնասցէ որպէս քանանացիքն: - 352. Իններորդ՝ ի յօրինակ արդարոցն լուսոյն. *որ* ո՛չ կարօտին արտաքին լուսոյ...: - 352. Տասներորդ՝ զի *որ* զայնպիսի լոյսն յինքն ընկալաւ, զամօթ առականացն ադամայ ո՛չ ստացաւ: - 352. Մետասաներորդ՝ յօրինակ տեառն *որ* պայծառացաւ ի թաբօր: - 352. Երկոտասաներորդ, լուսաւորեցաւ՝ զի քօղ արկցէ երեսացն. *որ* օրինակէ՛ զհին կտակարանս. *որ* քօ՛ղ է արկեալ և առագաստ մտաց նոցա...: - 352. Առաջին, երեքօրեայ սրբութեամբ յիսներեկի աւուրն ելից յեգիպտոսէ. *որ* ընկալաւ զտասնբանեան օրէնս և պատմեաց ժողովրդեանն: - 352. *Որում* արժանաւորս արասցէ զմեզ և զամենայն հաւատացեալս անուան իւրոյ ամէն: - 353. Չորրորդ, զի նոքա ոչ կարէին լինիլ ախտակից տկարացելոցն. իսկ տէրն *որ* զփորձ էառ՝ կարօ՛ղ է և փորձանաւորացն օգնել...: - 354. Ութերորդ, նոքա մատուցանէին ի ձեռագործ խորանսն *որ* ի մովսիսէ՛ կանգնեցաւ...: - 354. Երկրորդ՝ այն անկատար և աստ կատարեալ. և անդ կատարելագոյն *որ* է գերակատար: - 355. Իսկ այն *որ* զմեղրովն պտուղն նուիրէին քահանայից, բայց ի սեղանն ոչ: - 356. Նախ ցուցանէ զխոհեմութիւն բարուց *որ* ընդունելի է աստուծոյ և մարդոյ. այլ պարզութիւնն է՛ պատարագ: - 356. Նա՛խ՝ զի խմորն զհին չարութիւնն ցուցանէ. *որ* նախ հրաժարիլ պարտէ, և ապա՛ զբարիս գործել: - 356. Երկրորդ, զհպարտացեալ փառքն նշանակէ. *զոր* ո՛չ է պարտ խառնել ի բարիս: - 356. Իններորդ, խմորունն խառնեալ, և անխմորն անխա՛ռն է և պարզ *որ* է սրբութիւն սրտին: - 356. Եւ ո՛չ միայն այս, այլ զեօթն օր անխմոր բաղարջ ուտէին ամենայն ժողովուրդն. և Աբրահամ և ղովտ բաղա՛րջ յօրինեցին զխորհուրդ փրկական մարմնոյ տեառն *որ* ի վերնատունն բաղարջով աւանդեաց: - 356. Ապա ուրեմն սո՛ւտ են ազգն յունաց և ասորւոց *որ* խմոր դնեն ի խորհուրդն: - 356. Դարձեալ՝ աղն նշանակէ՛ զբանն աստուած. *որ* զանհամութիւնս մեր համեմեաց, և զնեխեալ վէրքն ապականութեան մերոյ ողջացոյց: - 356. Այլ *որք* յամառելով յօրինակն՝ ա՛ղ խառնեն ի խորհուրդն, պա՛րտ է նոցա խառնել և ձէթ և մուրկ և խունկ և միս գառին. կամ զանգեալ ի կասկարայս, կամ օծեալ ի տապակի, զի զօրինակն կատարեսցեն. և հեռասցին ի ճշմարտութենէն: - 357. Իսկ իւղն զանգեալ՝ օրհնութիւնն է *որ* միանայ ի խորհուրդն և կատարէ՛ մարմին և արիւն քրիստոսի: - 357. Եւ նախ ասեմք զանկենդանն *որ* կոչի զոհ. *որ* է՛ մասնաւոր նւէրք. որպէս նաշիհ և իւղ և խունկ: - 357. Սոքա նշանակեն զնահատակսն *որք* բազում վշտաց և փորձանաց համբերեցին: - 357. Նաշիհ և իւղ զանգեալ և ո՛չ եփեալ, նշանա՛կ է նոցա՝ *որ* ի փորձութիւնս մտեալ և փութով ելեալ ի ձեռն աղօթից...: - 357. Իսկ երախայրին՝ *որ* է՛ կալոյ և հնձանաց առաջին չափն: - 357. Իսկ *որ* վասն մեղաց նաշիհ իւղ և խունկ ոչ դնէին. զի տրտմութիւն և խաւար է մեղքն, և գարշ հոտ գայ ի խղճմտանացն մինչև ապաշխարեսցէ: - 357. *Որք* պտղաբե՛րք են և ծննդականք բարեաց՝ հեզութեամբ նուիրին աստուծոյ: - 358. Այծն՝ մեղաւորա՛ցն է նշանակ. *որք* դառնան ի մեղաց և նւիրին աստուծոյ: - 358. *Որ* նշանակէ զքրիստոս արտաքոյ դրանն չարչարեալ: - 358. ...զգլուխն **Ե** երորդ մասամբն ի յետ դարձուցանել *որ* է՛ տուգանք **Ե** զգայարանացն *որ* մոռացաւ և ո՛չ զգաց զօրէնս աստուծոյ: - 358. Եօթներորդ՝ զոհ՝ պատարագն *որ* ի նաշիհոյ և յիւղոյ որպէս ասացաւ

ի վերոյ: - 358. *Որ* իսկապէս մեզ վայել է քրիստոս եկեալ և դժոխք աւերեալ և արքայութիւնն բացեալ: - 358-359. Իններորդ, պատարագ ուխտի. *որ* ո՛չ վասն երախտեաց ինչ, այլ իւր կամաւ ուխտեալ. *որ* յերկրորդ օրն նս ուտէին զմիսն: - 359. Մետասաներորդ, բոլորապտուղ. *որ* է հանապազորդ գառն խորովեալ յառաւօտն և յերիկոյն մին հացով և **դ** մասն դորակի գինով: - 359. Եւ այլ **թժ**ան հաց ի վերայ առաջաւոր սեղանոյն **զ զ** հաց *զոր* սրբութեան հաց կոչէին շաբաթէ ի շաբաթ եդեալ: - 359. Կոնք արծաթի *որ* է՛ **բ** ունկի անգանակ: - 359. Եւ այսոքիկ մասնաւոր նուէրք բովանդակք *զոր* հրամայեաց մովսէս: - 359. Նա՛խ՝ ցուցանէ թէ սա՛ անմեղ է՝ վասն իմ մեղացս մեռանի. *զոր* ձեռօք ի սա՛ տամ զմեղս: - 359. Երկրորդ՝ ցուցանէ զանմեղ մահն քրիստոսի վասն մեր մեռեալ. *զոր* մատամբ ցուցանէին խաչօղքն թէ խաչեսցի դա՛: - 359. Եւ առաջին տեառն սպանանել. *որ* զծածուկս տեսանէ և ո՛չ կեղծիւք ինչ: - 360. Դարձեալ՝ հարաւն նշանակէր զիրէայս, և հիւսիս զհեթանոսս. *որ* լինելոց էին պատարագ և ժողովուրդ աստուծոյ...: - 360. Եւ զարիւնն հեղուլ շուրջ զսեղանովն. *որ* է կենդանութեան նշանակ: - 360. Եւ ցանեալ **է** անգամ ի վարագոյրն. *որ* է՛ քաւութիւն **է** զգայարանցս ի **է** զօրութեանց հոգւոյն. **է** խորհրդով եկեղեցւոյ. առ **է** դար կենցաղոյս: - 360. Իսկ փայտն. մարմնոյ ցամաքութիւն և պարկեշտութիւն. *որ* առաւել բորբոքէ զպատարագն: - 360. Փորոտին զծածուկ խորհուրդն. *զոր* լուանալ հրամայէ՛ ջրով. այսինքն խոհականաւն զգարշելի մտածմունս սրբել: - 360. Աջոյ երին. յաջողակ բարի գործն. և Երբուծն դօշն է. *որ* ունի զսիրտն: - 360. *Որ* է՛ **գ** հասակս: - 360. Իսկ հեթանոսք ըստ այնմ *որ* յանուն աստուծոյ նուիրէին՝ ընդունելի՛ էր: - 361. Եւ թէ ոք ասիցէ, *ո՞րն* է խորհուրդն քրիստոսի *որով* սրբիւր խրայէլ ի մեղաց: - 361. Իսկ ի նորս ճշմարտութենէ պատարագ քրիստոս. *որ* միշտ բաշխի յեկեղեցի: - 362. Կրկին էր ողջակէզն. մին *որ* արտաքոյ այրէին: - 362. Ա՛յն է *որ* ի վերնատունն զմարմինն և զարիւնն իւր բաշխեաց յառաքեալսն: - 362. Դարձեալ՝ կրկին է ողջակէզն. մին վասն մեղաց *որ* է՛ կամաւոր. և միւսն յանցանաց *որ* է՛ ակամայն: - 362. Վասն մեղա՛ց է՝ *որ* խոստովանութեամբ արտաքոյ ելեալ ի մեղաց և ապաշխարութեամբ քաւեմք զմեզ ներքին խորհրդով և արտաքին գործով: - 362. Եւ զմորթ մեղաց մերկացեալ ի մէնջ *որ* է՛ հաճոյ աստուծոյ ի հոտ անուշից: - 362. Դարձեալ՝ կրկին ողջակէզն, մին այն է *որ* մատուցանեմք զպատարագն քրիստոսի մարմնոյ և արեան: - 362. Եւ միւսն, *որ* զմարմին մեր պատարագեմք միշտ. սիրտ սուրբ և հոգի խոնարհ ունելով. *զոր* աստուած ո՛չ արհամարհէ: - 363. Հինգերորդ՝ կրկին ողջակէզն. մին պատարագն է ամենայն աւուր. և միւսն տօն չարչարաց խաչի և մահու յամենայն ամի՛ *զոր* նոյն խորհրդով կատարէ՛ եկեղեցի: - 363. Այս նոցա՛ է *որք* սրբութեամբ ունիցին զքահանայութիւնն: - 363. Եւ *որք* անարժա՛ն են գործոյն, դնեն զմեղս ի վերայ մեղաց իւրեանց: - 363. Իսկ մեք **խ** զմովսէսին պահեմք *որ* ի լեառն սինա, և յեսու արտաքոյ միգին: - 363. Զի՞նչ է *որ* յանկիւնս եկեղեցւոյն խունկ վառեմք: - 363. Կամ զի օտար հուր եդին ի բուրվառն *որ* չէր օրէն: - 364. Այլ *որ* ուղիղն է, մովսէս յամենայն ժամ մտանէր ի սուրբն սրբոց. և ահարօն մի՛ անգամ ի տարւոջն. և քահանայքն ո՛չ մտանէին: - 364. Եւ զգեստ քահանայութեանն ո՛չ այրեցաւ յօրինակ այժմնս *որ* հոգւով դատապարտին և մարմինն մնայ: - 364. Բաց ի քաւութենէն *որ* ի սուրբն սրբոց՝ ի ներս և ի դուրս **ժ** էր բովանդակն: - 364. Առաջին, ողջակիզաց մեծն. *յոր* զհասարակացն տօնէին: - 364. Երկրորդ՝ փոքր ողջակիզացն. *յոր* մասնաւոր պատարագացն էր: - 364. Երրորդ՝ *որ* զմիսն ի վերայ յօշէին և ի մեծ սեղանն հանէին: - 364. Չորրորդ՝ *որով* զճարպն ի սեղանն հանէին: - 364. Հինգերորդ՝ *որ* զսափորն և զայլ գործիսն ի վերայ դնէին: - 364. Եւ **ե** երորդն՝ *յորոյ* վերայ խնկաղացն և նուիրանոցն և ճաշակն: - 364. Եւ *զոր* ուտէին և դիւաց զոհէին՝ պիղծ ասաց. որպէս զխո՛զ, զճագա՛ր, և զնապաստակ: - 364. Եւ *որք* զմինն ունին, որպէս գիտութիւն առանց գործոց, և գործս առանց հաւատոց, անսուրբք են: - 364. Նոյնպէս ի ձկունս *որ* թև ունին և թեփ: - 364. Թևն առաքինութիւն է *որով* զերծանի մարդ յորոգայթից սատանայի. և թեփն ծածկոյթ ամօթոյն. սուրբ են: - 364. Եւ լիրբն առանց ամօթոյ *որ* է՛ լերկն և չարն պիղծ է: - 364. Նոյնպէս ի թռչունսն, կռաշուրթն և մսակերն նոքա են, *որ* պատառեն զընկերս՝ պիղծ են: - 365. Զկնակուլքն մեծամեծք են *որք* կլանեն զմանունս: - 365. Ցին, *որ* զայլոց վաստակս ուտէ: - 365. Զայլամն *որ* է՛ ըշտռտուրմուղն, կեղծաւորքն են և անպիտանքն գործոյ. և այլքն նմանապէս: - 365. Նոյնպէս քրիստոնեայն *որ* մեղօք մեռանի՝ և անհաւատն միապէս պիղծ են առաջի աստուծոյ: - 365. Հինգերորդ՝ մասն. *որ* է՛ գլխոյն հատումն ուր ամենայն զգայութիւնքն են. և թէ այլ ինչ մասն հատցի՝ կամ գլուխն ջախջախեսցի՝ ո՛չ է ուտելի: - 365. Ապա յա՛յտ է զի և ո՛չ այլ կարգաւորք զենցեն կենդանիս. *որք* են սարկաւագունք և այլք. զի անարիւն զենմանն կարգեալ են սպասաւորք: - 366. Նա՛խ՝ զի իցէ կենդանի *յորմէ* ելցէ արիւն. իսկ մեռեալն կամ անշունչ քար ո՛չ ունի արիւն: - 366. Կամ ջրայինն *որ* ո՛չ ունի զարիւն շնչոյ, այլ զարիւն ջրոյ, ո՛չ զենի.

զի զենումն նոցա հանումն ի ջրոյն է: - 366. Նա՛խ՝ զարիւնն հանել *որ* է՛ կենդանութիւն և աստուծոյ մասն. և զմնացեալն ուտել *որ* է տարր միայն: - 366. Չորրորդ՝ ընտրելի է զէնն *որ* է՛ գործիք. զի լիցի սուր երկաթոյ. զի երկա՛թն է գործի բաժանման: - 366. Զի թէ լինիցի քարեայ սուր, որպէս գայլախազ, *որով* սպանեալ աբէլ. ո՛չ է պիտանի: - 366. Ապա յա՛յտ է թէ՝ *որ* անկանի ընդ քար կամ ի վիհ և մեռցի, ո՛չ է ուտելի: - 366. Հինգերորդ՝ ընտրելի է մասն *որ* է հատումն գլխոյ. յառաջուստ ուր են շնչերակքն՝ արիւնն և այլքն: - 366. Ապա յա՛յտ է թէ *որ* վասն աստուծոյ լիցի զենումն... - 366. Նա՛խ՝ պարտ է զի լիցի օրհնեալ աղիւ. *որ* է՛ նշանակ իմաստութեան և սրբութեան: - 366. Եւ արտաքոյ՝ կուրծքն քահանայապետին, *որ* է՛ բնակարան սրտին: - 367. Եւ զմորթն *որ* է ծածկոյթ մեղաց՝ ի քահանայսն տայ...: - 367. Իններորդ, բորն **գ** ազգ է. սպին սպիտակ շիտ. և պալար միատարր. և պաղպաջ շիտ աստ և անդ. *որ* է՛ մտաց և հոգւոյ և մարմնոյ մեղքն: - 367. *Որ* է՛ անզեղջ մեղքն այրելիք հրոյն: - 367. *Որ* յետ խոստովանութեան դառնայ ի նոյն մեղս, իբր շուն դառնայ ի փսխած իւր. և սա՛ ևս այրի հրով...: - 367. Եւ ի դարձեալ երևիլն դարձեալ լուանալ, այն է՝ *որ* դարձեալ խոստովանիմք և կրկնեմք զերկն ապաշխարութեան մինչև նկարեսցի ի մեզ քրիստոս: - 367. *Որ* նշանակէ ի մեզ զերեք մասանց թիւրիլն. այսինքն բանից, ցասման, և ցանկութեան հինգ զգայարանօք: - 367. Իսկ թէ ի տունն ի ժողովուրդս նորա. կամ յեկեղեցիս մեղանչեմք. յետ է ժամանակի փոխելոյ՝ *որ* է՛ **է** հասակ մեր. և **է** դար կենցաղոյս...: - 368. ...յայնժամ քակէ՛ զտունն մեր *որ* է՛ հոգի և մարմին. և արտաքոյ քաղաքին յանսուրբ տեղիս ընկենու *որ* է՛ դժոխքն արտաքոյ արքայութեանն, և անսուրբ տեղի մեղաց և մեղաւորաց. և անդ արտաքսէ զմեղաւորսն: - 368. *Յորմէ* ազատեսցէ զմեզ քրիստոս աստուած մեր ամէն: - 368. Եւ միւս հաւն թաթաւեալ յարիւն, հոգին կենդանի. *որ* կարեկից լինի մարմնոյն և զսրբութիւն նորա հանէ՛ յուսով ի դաշտն *որ* է՛ յերկինս: - 368. Հոգին էջ ի դժոխս և ազատեաց *զորս* անդ: - 368. Ջուրն աւազանն *որ* մաքրեաց զմեզ յադամայ մեղացն: - 368. Զի գործնականաւն մեռանիմք ընդդէմ մեղացն. և տեսնականաւն մտօք թռչիմք ի դրախտն *որ* է՛ դաշտ երկնային: - 368. Նա՛խ՝ բնականն. *որ* է բարի իմացուածն և խորհուրդ *որ* ո՛չ արդիւնանայ: - 368. Երկրորդ՝ սերմն բանին պատուիրանացն *որ* ո՛չ կենդանանայ: - 368-369. *Որ* նշանակէ՛ սերմն զգործն. *որ* քանի ի մեզ է՝ ո՛չ է պիղծ. և յորժամ գործի՝ պղծէ՛: - 369. Այն է *որ* յետ տարոյն երևեցաւ պօղոսի: - 369. Եւ մաքրեալ յարենէն, *որք* աւազանաւն մկրտին՝ մաքրին յարենէն...: - 369. *Որ* և զՍաւուղ ազատեաց ի մեղաց. և զայլ խաչօղսն *որք* հաւատացին ի նա՛: - 369. Նա՛խ՝ կաղ. *որ* նշանակէ՛ զկաղալն ի յօրէնս: - 370. Երկրորդ՝ կոյր. *որ* մտօքն են խաւար: - 370. Երրորդ՝ պտղակն ելուստ ի պտղոյն. *որ* բիծ ունի ի միտքն: - 370. Վեցերորդ՝ ականջատ. *որ* անլո՛ւրն է կանոնաց: - 370. Եօթներորդ՝ սապատողն. կուզն. կամ ելուստ ի թիկունքն. *որ* ո՛չ կրէ զբեռն քահանայութեան հպարտութեամբ: - 370. Մետասաներորդ՝ քաղցկեղ. *որ* զայլս փոխէ՛ ի մեղս: - 370. Երկրորդ՝ զի պատարագն *զոր* մատուցանէին անարատք էին. նոյնպէս և սպասաւորքն լիցին: - 370. Նորոց քահանայից *ո՞րն* է խոտելի արատ: - 370. Նա՛խ՝ *որ* զքրիստոս պատարագէ: - 370. Երկրորդ՝ *որ* զինքն: - 370. Այն *որ* զինքն պատարագէ, կամ առանձին կրօնիւք, կամ հասարակ աղօթիւք: - 370. Ա՛րդ՝ *որ* առանձինն է՝ մարմնոյն արատն ոչ խտրի. այլ հոգւոյն: - 370. Եւ *որ* հասարակն, և սմա՛ մարմնոյն և հոգւոյն ո՛չ խտրի. զի եղբայր յեղբօրէ օգնեալ՝ զմիմեանց բառնան զտկարութիւն: - 370. Իսկ *որ* զքրիստոս պատարագէ, խտրութիւն է արատոյ ի հոգի և ի մարմին: - 370. Ապա թէ ոչ՝ պղծեն *յորս* մերձանան: - 370. Նա՛խ՝ կոյրն. իսկ ի մեզ *որ* մտօ՛քն իցէ: - 371. Երրորդ՝ լեզւատն *որ* է՛ անձայնն. *որք* ո՛չ ունին զխոստովանութիւն: - 371. Չորրորդ՝ մարմառոտն. *որ* կաշին պատառեալ և խոց լինի նշանակէ՛ զխոց մեղաց: - 371. Հինգերորդ՝ քոսն. *որ* յայտնին է: - 371. Ութերորդ՝ թաղամսաւորն. *որ* թաղիացեալ է միսն ի կաշին և չքերթուի. *որ* անորի՛շ է ի խառնակ կենաց: - 371. Իններորդ՝ ականջատն. *որ* խուլ է մտօք: - 371. Տասներորդ՝ կրճատն. *որ* է ազատն. անամօ՛թն է: - 371. Երկոտասաներորդ՝ փօշտանկն. *որ* հատեա՛լ է աղիքն և ի դուր թափեալ. նշանակ հոգեկան ցաւոց ի մարմինն երևեալ: - 371. *Որ* մտօքն է՛ մոլի, և մեղօք հիւանդ, չէ՛ ընդունելի: - 371. Զի՞նչ է *որ* զարիւն անասնոյ հրամայէ՛ ծածկել և ո՛չ ուտել: - 371. Չորրորդ՝ զի երկնչիմք և անմեղ պահեմք զհոգիս մեր *որ* ելանելոց է յերկինս: - 371. Ի եօթներորդն ամիսն *որ* է՛ թշրին՝ **ժ** օր քաւութեան տօնէին. զի **է** շաբաթ շաբաթուցն ի նա՛ է. և **է**երորդ ամիսն. այլ և **ժ**երորդ օրն շաբաթ էր: - 371. Դարձեալ շաբաթ շաբաթուց այն էր. *որ* քաւութիւն մեղաց հոգւոցն էր շաբաթ. որպէս դատարկանալն մարմնոյն: - 371. Երրորդ՝ զի հանգիցէ երկիր և տարերք *որ* ի չար գործն մեր չարչարին. այլ և պահպանապետ հրեշտակք նոցա: - 372. Իսկ ի նորս՝ զկէս ընչիցն հրամայեցաւ տալ աղքատաց յաւետարանին. *որ* է՛ հաւասար հոգւոյն և մարմնոյն: - 372. Եօթներորդ՝ ստուերապէս նշանակէր զազատութիւնն *որ* եղև մեզ

ի ձեռն քրիստոսի. *որ* ազատեաց յօրինացն դժւարութեանց, և ի մեղացն, զթողութիւն շնորհելով: - 372. Յինգերորդ՝ յոբելեանն յիսներորդում. *որ* է՛ ամ թողութեան և ազատութեան: - 372. Յինգերորդ՝ հանգիստն կատարեալ հոգւով և մարմնով. *որ* է՛ փողոց հնչմունք. ազատութիւն յապականութեանց. ամ թողութեան և իւրաքանչիւր ուրուք ի ստացուածս իւր դարձումն. *որ* է՛ գործոց հատուցումն: - 372. Երրորդ՝ յիսներեկին տըւչութեան օրինացն. *որ* է՛ հոգւոյ գալուստն: - 372. Չորրորդ՝ քաւութեանն. *որ* է տօն խաչին: - 372. Յինգերորդ՝ տաղաւարահարքն. *որ* է՛ եկեղեցւոյ տօն. վասն այն զխաչին և զեկեղեցւոյն ի միասին տօնեմք: - 372. Այլ և բոլոր ամենայն տօնք հնոյն՝ **ը** տօն էր. *զոր* այժմ մեք ունիմք փոխեալ ի նորս: - 372. *Որ* է՛ ի մեզ յամենայն աւուր պատարագն սուրբ. այլ և առաւօտուն և երեկոյին աղօթքն հանապազորդ: - 372. Չորրորդ՝ ամսամուտն նոցա. *զոր* ի նորանալ լուսնին տօնէին. իսկ մեզ տօն կուսին մարիամու *որ* լուսաւորութիւն լսի ըստ ոմանց: - 372-373. Յինգերորդ՝ պասքայն. *որ* է՛ բաղարջակերք: - 373. Երկու զուարակ, *որ* քրիստոս զենաւ վասն ադամայ և եւայի պարտուցն: - 373. Եօթներորդ՝ տօն տաղաւարահարացն *որ* նշանակէ՛ առ մեզ զտօնելն եկեղեցւոյ, ի բոլոր ամն **ը** օր կատարի: - 373. *Որ* զգործեցեալ մեղս ապաշխարութեամբ քաւեմք. ծնշելով զանձինս մեր պահօք: - 373. Այլ և նշանակէ՛ զօր մեծի ուրբաթուն չարչարանացն քրիստոսի. *որով* քաւեցաք ի մեղաց: - 373. *Զոր* պահեմք և մեծ չարչարանօք ճընշեմք զանձինս: - 373. *Որ* և այս երևի ի հինն ստուերագրեալ թէ ոք խնդրեսցէ: - 373. Զի՞նչ էր *որ* ի տաղաւարահարքն ըստ միոյ միոյ աւուրց մի մի զուարակ պակասէին ի տօնս. և յութերորդ օրն ի մինն յանգէին: - 374. Զայն ցուցանէ *որ* նուազելոց էր հինն և օրինակն՝ ի գալ նորոյն և ճշմարտութեանն քրիստոսի: - 374. Երկրորդ՝ մեղք եօթնից զգայարանացն պակասի. և արդարութիւն *որ* մինն է հաստատի առ զղջացեալս: - 374. Երրորդ՝ զսուրբս *որոց* տօնեմք: - 374. Իսկ նաշիհն՝ ճգնաւորք և կուսանք. *որք* ի յերկանս ճգնութեան ճնշեն զմարմինս իւրեանց: - 374. Դարձեալ՝ այն *որ* մի քան զմի առաւել են չափով դորակին, նշանակէ՛ զհաւատն և զյոյսն և զսէրն առաւել: - 375. Զի՞նչ է *որ* ըստ տօնից մեծութեանն առաւելոյր նաշիհն և իւղն և գինին: - 375. Այլ հոգեպէս՝ նաշիհն է՛ մարմնական նուէրքն. և կամ չարչարանք մարմնոյ *որ* ի տօնս ճգնիմք...: - 375. Կարդացմունք. քարոզք. ներբողեանք և այլք. *որ* ըստ տօնից առաւելուլ պարտ է զնոսա: - 375. Զի՞նչ է *որ* հրամայէ՛ զարծաթ ի վարձու ո՛չ տալ: - 375. Երրորդ՝ արծաթ զբանն նշանակէ. *որոյ* չէ՛ պարտ վասն իրաւանց և քարոզութեան արծաթ առնուլ: - 375. Նախ է՝ *որ* ո՛չ գլուխն խնդրի և ո՛չ շահ. որպէս ողորմութիւն: - 375. Երկրորդ՝ *որ* գլուխն խնդրի և ո՛չ շահ. որպէս փոխն: - 375. Երրորդ՝ *որ* գլուխն և շահ. որպէս ի վաճառս: - 375. Եւ նոյն այս *որ* շահ և գլուխ խնդրի, բաժանի յերեք: - 375. Եւ դարձեալ *զորս* թուէ ի կարգն: - 376. Դարձեալ, տասն են մասունք զգալի արարածոց. այսինքն՝ **է** մոլորական գունդք. և **ը**՝ անմոլարքն. և իններորդ ի լուսոյդ ի վայր. և մարդս **ժ** երորդ ի վերայ նոցա. *որ* է՛ բանական և բաժին աստուծոյ: - 376. *Որում* փառք յաւիտեանս ամէն: - 376. Նա՛խ՝ զի ցուցանէ թէ *յորմէ՞* ազգէ ծագելոց էր արեգակն արդարութեան քրիստոս: - 377. Ի խոստման աւետիսն ծե՛ր էր աբրահամ, և կինն ամուլ. զի մի՛ անյուսասցին ի բնութիւնն նայելով. այլ ի բանն աստուծոյ *որ* ամենազօ՛ր է. վասն այն ասացաւ անթիւ լինիլ զաւակացն. և եղև այնպէս: - 377. Չորրորդ՝ նշան պատկառելի է ծերութիւն. *որ* զհին աւուրցն տպաւորէ՛: - 378. Իններորդ՝ զի մերձեալ տեսանէ զօր մահուն և զթշնամին առաջի աչացն *որով* պատրաստի: - 378. *Որ* է՛ Տղայ. Մանուկ. Պատանեակ. Երիտասարդ. Ալևոր. Ծեր. իսկ երեխայն դեռածինն է: - 378. Պատանեակ ի ամեան. *որ* զ**ժ** պատեաց: - 378. *Որ* է՛ տղայն. կատարեալն. և ծերն: - 378. Զի **ծ** ամն յոբելեան է և ազատութեան. *որ* ազատի մարդ յախտից և յախտաւոր սիրոյ աշխարհի՝ և առ աստուած դառնայ: - 378. Բովանդակ անցեալքն ի հանդէս՝ զ**ճռ** էին. *որ* է՛ **կ** բիւր. և **գռ** և **ոծ**: - 378. Եւ յարևմտից *որ* է՛ ծովակողմն՝ **գ** ազգ: - 378. Մերարեայն ի հիւսիսոյ. և Կահաթուն *որ* է՛ ցեղն քահանայից ի հարաւոյ: - 378-379. Երրորդ՝ զի *յորում* ժամու մտանէր մովսէս աղօթս առնել և խնդրուածս, աստուածախօսութիւնք լինէին ի միջոյ քերովբէիցն *որ* կային անդ: - 379. *Որք* են քահանայապետք, քահանայք, և սարկաւագունք: - 379. Զի *որք* զերեսաց հացն ի սեղանն բառնային՝ սարկաւագունք են: - 379. Եւ *որք* զխնկոցն՝ դպիրք են և ընթերցօղք: - 379. Եւ *որք* զաշտանակն՝ ջահընկա՛լք են: - 379. Եւ *որք* զսուրբն սրբոց՝ քահանայապետք և քահանայք: - 379. *Որ* մինչ ի **ծ** ամն կատարէր զգործն իւր, և անդանօր դադարէ՛ր: - 379. Դարձեալ՝ քաղեբ և յեսու. հին և նոր կտակարանք. *որք* զհանդերձեալն մեզ պատմեն. և զյաղթելն անմարմին թշնամւոյն: - 380. Իսկ այլ տասունքն իմաստասիրաց բանքն. որպէս պղատոնին. արիստոտէլին. պիթագորին և այլք. *որք* միայն զաստեա՛ցս պատմեն մեզ: - 380. Իսկ դադան քրէական մեղանչեաց *որ* է՛ յանցումն ի թագաւոր. *զոր* անհնարին պատուհասին. գոյիւք և ազգօք ջնջին: - 381. Քանի՞ առաւել *որք* յաստուած՝ և ի մովսէս մեղան *որ*

աստուած կոչեցեալ էր և իշխան ժողովրդեանն: - 381. Այլ *որ* զուղիղն ասեն ա՛յս է, կորխ՝ եցոյց զօրինակ զղջման. զի լուաւ խրատուն մովսէսի և մնաց ընտրութեանն աստուծոյ ի դուռն խորանին: - 382. Այլք ասեն վասն դադանեանցն թէ՝ հոգիք նոցա մարմնով ի տանջանս կային. ուր ընկեղմեցան մինչև ցաւարումն դժոխոց. ընդ *որս* և զնոսա ազատեաց քրիստոս իջանելովն ի դժոխս: - 382. Իսկ *որ* ի խորանէն բերին մովսէս և ահարոն զգաւազանն ծաղկեալ. զի ի սիօնէ՛ ելցէ օրէնք. *որ* է՛ յեկեղեցւոյ ամենայն իշխանութիւն: - 382. Երկրորդ՝ զսէրն *որ* առ աստուած: - 383. Չորրորդ՝ զդեղձան հերն և անարատ մարմնով և անբիծ հոգով, *որ* ո՛չ ունէր զլուծ մեղաց: - 383. Եւ նա՛ ծնաւ զեզն պարարակ. *որ* ողջակէզ եղև արտաքոյ քաղաքին ի դէմս տաճարին: - 383. Այլ ապաւառ է՛ մեղքն մեր *զոր* ընկալաւ յինքն և մաքրեաց զմեզ: - 383. Որ և միով հպմամբ ի լանջսն՝ մաքրեցաւ աշակերտն յայսպիսի կրից. քանի՞ առաւել *որ* եբարձ զապականութիւնս ազատ լիցի յայսպիսի կրից: - 383. Նա՛խ՝ զի յորժամ ճշմարիտ սրբութիւնն գայցէ, հաւանեսցին *որ* է՛ արիւնն քրիստոսի...: - 383. Դարձեալ՝ մոխիր և ջուրն՝ նշանակէր զարտասուս և զխոնարհութիւն ապաշխարութեան *որով* սրբիմք: - 383. Առաջին՝ ջուր աւազանին *որ* լուանայր զմարմինն, է՛ ջուր սրբոյ աւազանին մերոյ: - 384. Յինգերորդ՝ թէ յերեք հասակս մեր ոչ արդարանամք. և ո՛չ յէ հասակին արդարանամք *յորում* լուծեալ ծանրանայ մարմինն: - 384. Եւ տե՛ս զշնորհս խոստովանութեան. վասն այն *որ* զղջացաւ և յայտնեաց, ի հնգէն զմին տայ տուգանք: - 384. Եւ հինգ մասն տուգանքն՝ և խոյն՝ ա՛յն է, *որ* **Ե** զգայարանօքս ապաշխարեմք: - 384. Զի՞նչ է *որ* զակամայ մեղուցեալն քաւէր պատարագօք. և զկամաւոր յանցաւորն սատակել տայր ժողովրդեանն: - 385. Ակամայն անգիտութեամբ է. *որ* ներելի՛ է և թողելի՛. իսկ կամաւորն անթողելին և մահու չափն է: - 385. Երկրորդ՝ *որ* անգիտութեամբն է և ակամայն՝ է՛ մեղք ներելի և այն. որպէս մեղք մանկութեան և անգիտութեան: - 385. Նա՛խ՝ *որ* ստոյգ չարութեամբ լինի մեղքն. այսինքն կամաւ և գիտութեամբ և կարողութեամբ, անթողելի՛ է: - 385. Երկրորդ՝ *որ* անզեղջ մնայ և ո՛չ խոստովանի, անթողելի՛ է: - 385. Իսկ քարկոծումն այն է, *որ* անզեղջն ի մեղաց՝ արտաքսի՛ յեկեղեցւոյ և անիծանի: - 385. Երկրորդ՝ զի պահապան է յառաջին և վերջին թշնամեաց *որ* է սատանայ և մեղքն: - 385. Իններորդ՝ նոքա գործովք արդարացան *զոր* նշանակէր օրէնքն. և մեք հաւատով՝ *զոր* նշանակէր վէմն յետոյ: - 385. Երրորդ, հոգին սուրբ *որ* քրիստոսիւ ծաւալեցաւ: - 386. Վեցերորդ, մովսէս նշանակէր զհին օրէնքն *որ* բարկութեամբ բարի առնէր: - 386. Երկրորդ, ըստ փիլոնի, օձն ցանկութեան է օրինակ, *որ* զցանկացօղ ժողովուրդն սատակէր. ի յախտս իւրեանց նմանեցոյց զպատիժն: - 386. Իսկ մովսէս հրամանաւն աստուծոյ արար պղնձի օձ. և բարձրացոյց ի դուռն խորանին. և *որ* հայէր ի նա՝ ապրէր ի թունից օձիցն: - 386. Երկրորդ՝ *որ* հայէր ի յօձն՝ բժշկէր. և *որ* հաւատայ ի խաչեալն՝ բժշկի ի թունից մահաբեր օձին: - 386. Ութերորդ՝ հինգպատ օձին է՛ **Ե** զգայութիւնս մեր. *զոր* էառ տէրն և սրբեաց զմեզ: - 387. *Որ* և տրտմեցաւ տէրն մինչ ի մահ. զի զտրտմութիւնս մեր եբարձ: - 387. Տասներորդ, որպէս ասէ փիլոն՝ նշանակ հեշտ ցանկութեան է օձն. *որ* և զցանկացօղ ժողովուրդն սատակէր. ըստ ախտին իւրեանց նմանեցոյց զպատուհասն: - 387. Թէ եսթանանունդրին. *որ* է՛ դարիճակաւ արարած. այսինքն կաղպարաւ. և պաշտեցին: - 387 Դիւթ է՝ *որ* ձեռօք և նիւթո՛վ գործէ. որպէս գարի, և ալիւր, և աւազ, և ջուր, և քար. և այն *որ* թզով չափէ, և այլն ամենայն: - 388. Յմայն է՝ *որ* զտեսս աչաց կամ զձայն հմայէ ...: - 388. իսկ Կախարդն՝ *որ* անօթ ինչ թաղէ ի հող. կապս, կամ մոմ, կամ երկաթ, և պէս պէս ժժանօք յարմարե՛ն զարուեստն: - 388. Վհուկն ա՛յն է, *որ* ի վհաց և յանդնդոց մեռեալս կերպարանեն. դևք ի կերպս մարդկան երևին. *զոր* դևակոչ ասեն և հազիմաթ. և Նշանագէտ, *որ* ի գերեզմանս ննջէ և նշանաւոր մարդ կերպարանէ. որպէս զսամուէլ սաւուղայ երևեցոյց հարցուկ կինն: - 388. Եւ երազահանն, *որ* ի գիշերի տեսանէ զդևս և մարգարէութիւն պատմէ զի պատրեսցէ: - 388. Ո՛չ ասէ գնալ *որ* կամաւորն է. այլ երթալ, *որ* ակամայ քարշիլն է: - 389. Նա՛խ՝ զաւակաց *որք* ընդ հրամանաւ են ծնողաց: - 389. Վասն որոյ պա՛րտ է ընդ հրամանաւն կալ նոցա՝ *յորմէ* և առ *որ* զկապակցութիւն ունիմք եօթանցն ասացեալ: - 389. Ուխտաւոր է *որ* ապաշխարէ վասն մեղաց: - 389. Նախ գերծու զհերն. և *զոր* ուխտիւն աճէ՝ զայն ի սեղանն հանել ի կատարումն ուխտին: - 389. Ապա յա՛յտ է՝ զի *որ* ընդ ապաշխարութեամբ է և կրօնաւոր, ի գինւոյ ի մրգոյ և ի մսոյ պահեսցէ: - 390. Գլուխն նշանա՛կ է մտաց. *զոր* չէ պարտ յաւելուլ՝ և ո՛չ պակասել. որպէս մուրճ ո՛չ գործէր ի սեղանն զի մի՛ պղծեսցի: - 390. Եւ ուխտաւորն ի տուն սգոյ ո՛չ երթայ. այն է *որ* ի մեղքն այլ ո՛չ դառնայ. և ո՛չ ընդ մեղսասէր գործակիցս: - 390. Այն է *որ* թէ ի մասանց հոգւոյն և մարմնոյն այսինքն բանիւ՝ ցասմամբ՝ և ցանկութեամբ, կամ աչօք կամ լսելեօք կամ այլ ինչ գործով մեղանչէ դարձեալ, ուխտն ո՛չ եղև ամբողջ. դարձեալ նո՛ր պարտ է ապաշխարել: - 390. Այլ ի յաւարէ՛ թագաւորաց *որ* ի յերկրէն թշնամեաց բերեն՝ հալա՛լ է մատուցի՛

նուէրք յեկեղեցին: - 390. Զի՞նչ նշանակէ *որ* **բ** ցեղն և կէսն մնացին յայնկոյս յորդանանու և ժառանգեցին, և այլքն անցին ի քանանացիքն: - 390. Նա՛խ՝ նշանակէ՛ զնահապետսն. **իե** ազգ *որ* բնական օրինօք արդարացան նախ, և ապա՛ գրաւորն բնականաւն զօրացեալ արդարացոյց զնոսա: - 390. **Երկրորդ, հին օրէնքն և մարգարէքն.** ***որ*** **նախ քան զմկրտութիւնս խորհրդով և օրինակօք յառաջապա՛հք եղեն նորոյս**: - 390. Երրորդ՝ հեթանոսաց ազգ. *որ* նախ քան զմկրտիլն բնական բարութեամբ և երկիւղիւ գան յաստուածապաշտութիւն և մկրտին: - 390-391. Եւ կէսն զնոսա, *որք* ունին թերութիւն ինչ ի հաւատս կամ ի վարս ինչ և յուսմունս: - 391. Իսկ ի վերջինն գաւառ՝ կիսովն իմանին կուսանքն ընտրեալք. *որք* լնուն զթերութիւն անկեալ դասուն: - 391. Զի **խ** վասն այն կատարեմք, *որ* առաջինքն զննջեցեալքն **խ** օր լային անմխիթար. որպէս զնահապետն յակոբ լացին **խ** օր: - 391. Իսկ է ի յայն խորհուրդն, զի *որ* ի պիղծ մերձենայր՝ **է** օր արտաքոյ բանակին կալով յերրորդ և յէերորդ օրն սրբէր, և ապա՛ մտանէր. վասն որոյ **գ** օրէք և **է** օրէք կատարեմք: - 391. Զի՞նչ նշանակէ եղիազար քահանայ, և յեսու, և իշխանքն *որք* բաժանեցին զերկիրն: - 391. Եղիազար՝ աստուծոյ զօրութիւն լսի *որ* է՛ քրիստոս և քահանայ և փրկիչ մեր. և իշխանք՝ **բժ**ան առաքեալքն աթոռակիցք քրիստոսի: - 391. Եւ **խբ** այլ ի շրջակայ երկիրն *որ* լինի **խը**: - 392. Եւ այն *որ* քննէին ծերքն՝ խոստովանիլն է. և ապա՛ դնէին ի քաղաքն, ապաշխարութիւնն է: - 392. *Որ* է՛ պահք, աղօթք, ողորմութիւն: - 392. Դարձեալ, եկեղեցի սուրբ՝ է՛ քաղաք ապաստանի. և քահանայապետ ի նմա՛ պատարագն. *յոր* մտեալ աղօթեմք և թողութիւն գտանեմք: - 392. Իսկ յետ մահու ա՛յնոցիկ հոգւոց *որք* զղջան կամ խոստովանին զմեղս, քաղաք ապաստանի է նոցա ի կայանս հոգւոցն տրտմութիւն և ցաւն վասն փոխարինաց մինչ մեռանի քահանայն մեծ. *որ* եկեղեցի սուրբ՝ պատարագաւ և աղօթիւք և ողորմութեամբ հատուցանէ՛ զպարտս նոցա և ազատին: - 392. Եւ *որք* զբերքաթուրն համբաւեն, այս ընդ դէ՛մ է նոցա: - 392. Նա՛խ՝ անդ զիարքն թուեաց *որք* կոտորեցան. և աստ զորդիսն *որք* ժառանգէին զերկիրն: - 392. *Յորում* և զմեզ թուեսցէ ի թիւ սրբոց իւրոց անջինջ դպրութեամբ. և Նմա փառք յաւիտեանս ամէն: - 392. Եւ նշանակէ՛ր այս, զի է՛ թիւ ժամանակեայ և փոփոխական *որ* առ մեզ է: - 392. Եւ է՛ անփոփոխ յաւիտենիցն *որ* առ աստուած ընտրելոցն է թիւ: - 392. Երրորդ՝ զառաջինն հարցն ետ *որ* սատակեցան. զերկրորդն որդւոցն տայ, զի մի՛ լիցին չար և դառնացօղ որպէս հարքն իւրեանց: - 393. Վեցերորդ՝ առաջին օրէնքն է կանոնաց. *որ* կարգաւորէ՛ զհոգի. իսկ երկրորդն դատաստանաց. *որ* կարգաւորէ՛ զմարմին: - 393. Զի՞նչ է *որ* ընդ ղովտայ որդիսն և եսաւայ ո՛չ հրամայեաց կռուիլ. այլ ընդ ամուր հարցւոցն: - 393. Նշանակէ՛ *որ* չէ՛ պարտ կռուիլ մեզ ընդ ամենայն մարդկան. թէ չար թէ բարի. զի ա՛զգ են մեր և որդիք ադամայ: - 393. Այլ ընդ դևս պատերազմիլ միշտ. զի *որոց* դիւաց թէ յաղթէ մարդ, թէ հպարտութեան և թէ պոռնկութեան, զնոցա տեղիքն ժառանգէ յերկինս: - 393. Զի՞նչ է *որ* զերկու թագաւորսն զսեհոն և զովք յայնկոյս յորդանանու կորոյս, և զայլսն ի քանանացիսն: - 393. Նշանակէ՛ զկրկին դևսն *որ* ի խորհուրդս և ի զգայութիւնս պատերազմին: - 393. Այլ **ե** թագաւորք մադիանացիքն էին, և **բ** այսորիկ. *որ* են **է** դևք **է** գլխաւոր մեղաց. *որք* ի կեանս պատերազմին, և յետ մահու ընդ հոգւոցն բազումք: - 393. Երկրորդ՝ յանապատն ամաղէկ և այլքն. յետ մահու *որ* ընդ հոգիս պատերազմին. *որք* են այսք չարութեան ի ներքոյ յերկնից ըստ առաքելոյ: - 393-394. Եւ *որք* պարտին աստ, նոքա և յետ մահու և յարութեանն. *զորս* կորուսցէ փրկիչն մեր յիսուս: - 394. *Յորմէ* փրկեսցէ զմեզ քրիստոս աստուած փրկիչ մեր ամէն: - 394. Զի՞նչ է *որ* մովսէս ետես զերկիրն և ո՛չ եմուտ: - 394. Նա՛խ՝ մովսէս նշանակէ՛ զհին օրէնքն. *որ* մինչ ի մկրտութիւնն եկն և վճարեցաւ: - 394. Երկրորդ՝ նշանակէ՛ զհոգիս սրբոց. *որ* տեսանեն զփառս, այլ ի յարութեանն առնուն: - 394. Զնոյնս նշանակէ **բ** ցեղն յայնկոյս յորդանանու. *որք* այլոցն պատերազմակից եղեն, և ապա՛ ի միասին զժառանգութիւնն առին: - 394. Զի՞նչ է *որ* մովսէս ետես նախ զծովն *որ* յարևմուտս, և զհիւսիս և զհարաւ, և ապա՛ զարևելս: - 394. Երկրորդ՝ նշանակէ զերկրպագութիւնն հրէից. *որ* յամենայն կողմանց շուրջ յէէմ երկրպագէին: - 395. Վեցերորդ՝ նախ զկեանս զայս տեսանեմք *որ* է արևմուտք. և ապա յետ մահու զհանդերձեալն *որ* է՛ արևելք: - 395. Եօթներորդ՝ արևմուտք մեղք և տգիտութիւնն է. *զոր* թողեալ դառնամք առ աստուած ապաշխարութեամբ: - 395. Երրորդ՝ զօրաւոր հարուածքն եգիպտոսի, *որ* ո՛չ ոք կարէր հասանիլ և բռնել զպատիժն...: - 395. Եւ սա՛ բղխէ զկաթն և զմեղր. *որ* է՛ քաղցրութիւն և թողութիւն մեղաց. նոյնպէս և զ**ժ** բանեան օրէնս: - 395. Իսկ սիրտ՝ զհոգին ասէ. *որ* ծածուկ է. և տեղիք խորհրդոց. և մի է. և կենդանութիւն մարմնոյն: - 396. **Իսկ ճշմարիտն աստուած զայս ո՛չ խնդրէ. այլ երկիւղ խնդրէ ի տղայոց** ***որով*** **խորշին ի չարէ. և սէր ի սրտէ փոխանակ անասնոց. և խաղաղութիւն առ ընկերս և օտարս**...: - 396. Վեցերորդ՝ միտք բանիս այս է, *որ* պա՛րտ է կատարեալ սիրով սիրել զաստուած: - 396. Զի *որ* յետոյ սիրէ և

փոխարինօք և մասնաւոր և երբէք, անկատար սէր է և մարմնական: - 396. Աստ զսէրն աստուծոյ ասէ. զսէր ընկերին ո՞ւր ասէ *որ* ասաց փրկիչն, «յայս **բ** պատուիրանս ամենայն օրէնք կախեալ կան»...: - 396. Երրորդ` զայն ցուցանէ *որ* կեանք դրախտին դարձաւ առ նոսա յանապատին անկարօտ ամենայնի. զի զգեստն ո՛չ մաշէր...: - 397. Վեցերորդ` ո՛չ միայն հաց է հաղորդութիւնն. այլ հոգւովն սրբով օրհնեալ և միաւորեալ ի բանն աստուած, *որով* անմահ կենդանութիւն տայ ճաշակողացն: - 397. ...և ապա ստեամբք կերակրէ զնա մայր իւր բանիւն աստուծոյ. *զոր* ասեն յաշխարհի, եթէ զմին դուռն փակէ աստուած, նա զերկուքն բանայ...: - 397. Եւ մի՛ մոռանար զզօրութիւնն աստուծոյ և զերախտիսն *զոր* արա՛ր հասարակ և առանձնակի: - 398. Ո՛չ միայն հրէի կամ հեթանոսի, այլ *որք* նուիրեն նմա զիւաւտս ամբողջ սրբութեամբ` արժանի լինին շնորհացն նորա: - 398. *Որք* առաքինութեամբն են լեառնացեալ և դաշտացեալ աւելի և նուազ: - 398. Եւ տարին անդ` յաւիտեանն է և միշտն. *որ* պարունակէ՛ զժամանակս: - 399. Զի երեսնամեայ յառնեմք. *զոր* և լուսինն նուազի և դարձեալ լուսաւորի: - 399. Իսկ տարի՛ է յաւիտենական փառքն. *որոյ* սկիզբն խնամոցէ՛ նախ քան զլինիլն աշխարհի. և կատարումն անվախճան փառքն: - 399. Աստ **զ** նշան դնէ մարգարէին *որ* ճշմարտապէս զքրիստոս տէր մեր ցուցանէ: - 399. *Զոր* ա՛յլ մարգարէ ո՛չ արար. որպէս գրեալ է **հ հ** համարն ի վերոյ: - 399. Չորրորդ` նշան թէ` *զոր* ասէ և լինի. և տէր մեր զգործս աստուծոյ գործէր առ կաղս և կոյրս և հիւանդս և մեռեալս. *զոր* ասէր բանիւ` կատարէր գործով: - 399. Անառակ որդի *որ* անհնազանդ լինէր ծնողացն, օրէնքն քարկոծել տայր: - 400. Եւ հայրազեղծն *որ* հարկանէր զծնօղ, զանիծից փայտէ կախէին, և ի նոյն օր ի գերեզման իջուցանէին զի մի՛ պղծեսցին: - 400. Եւ փոխանակ մօրն տարերք ամենայն. *որ* հեծեն և յոգոց հանեն վասն ապականութեան մեր ըստ առաքելոյ: - 400. Եւ հայր աստուած *որ* ո՛չ կատարի կամք նորա ի մեզ. յայնժամ ըստ բազում գթութեան իւրոյ առաքեաց զմիածին որդին *որ* փոխանակ մեր կախեցաւ զփայտէն և ազատեաց զմեզ յանծիցն օրինաց...: - 400. Եւ *որ* զկին իւր արձակէ` նա՛ տայ նմա շնալ: - 401. Զի որպէս քահանային օծումն ի հոգւոյն ո՛չ բաժանի յաւիտեան, և պսակի օրհնութիւնն *որ* ի մարմինն է` ո՛չ բաժանի մինչ ի մահ ի մարմնոյն: - 401. Զայն ցուցանէ *որ* պատճառաւ իրիք կամ պոռնկութեամբ կամ այլ ինչ յորժամ բաժանին, առանց ամուսնութեան մնասցեն թէ երկուքն են բաժանմանն պատճառ, մինչև հաշտեսցին: - 401. Եւ թէ մինն է պատճառ` որ և իցէ թէ այրն և թէ կինն, առանց ամուսութեան մնասցէ. և միւսն զուգեսցի այլոյ *որ* չէր պատճառ: - 401. Իսկ *որ* զարձակեալն առնուին, և յառաջին բաժանեալն ո՛չ տային, վասն երկիւղի առն և կնոջ էր, զի մի՛ լիցին պատճառ բաժանման: - 401. Իսկ խորհուրդն, ի յօրէնքն նոցա է զի փոփոխական էր օրէնքն նոցա. և *որ* փոխիւր, այլ ո՛չ դառնայր յօրէնս նոցա: - 401. Եւ *որ* յառաջինն դառնայ. զի ներումն և թողութիւն շնորհէ: - 401. Վասն է՞ր է *որ* մին կին թէ բազում այր առնէ` պոռնիկ է. և թէ այրն բազում կանայս առնէր, չէր պոռնիկ որպէս ի հինն օրէնս: - 401. Պոռնիկն ըստ այսմ *որ* շնացօղ է թէ կին և թէ այր` քարկոծէ՛ր օրէնքն: - 401. Այլ *որ* մարդն առնոյր բազում կանայս` և կինն ո՛չ, ա՛յս է պատճառն: - 401. Երկրորդ` թէ կրտսե՛ր է եղբայրն. որպէս առակն է եղբարց, *որ* առաջինն էառ և մեռաւ. և ապա երկրորդն, և *որ* ի կարգին: - 402. Այլ կենդանի եղբօր, կամ փոքր եղբօր կինն, կամ գոլով զաւակ, անօրէնութիւն էր որպէս հերովդին. առ *որ* ասէր յովհաննէս, «չէ արժան քեզ ունել զկին եղբօր քոյ». զի դուստր նորա էր աղջիկն *որ* կաքաւեաց: - 402. Զի՞նչ էր խորհուրդն *որ* յանուն եղբօրն զաւակ յարուցանէին: - 402. Նշանակէր զյարութեան խորհուրդն *յոր* նոքա ո՛չ հաւատային. աստէն իսկոյն եցոյց յարութեան անուամբն. այսինքն «յարուսցէ՛» ասելովն: - 402. Երկրորդ` նշանակէր կրտսեր եղբայրն զքրիստոս զերկրորդն ադամ. *որով* յառնեն մարդիկ յերկրէ: - 402. Իններորդ` և զեծցին յընդունայն վաստակոց կռոցն *որ* ոչ օգտէին. զի ունայնութիւն լսի գեբաղն: - 402. Տասներորդ` ի գարեզին. *որ* է՛ լեառն թլփատութեան. զի ելեալ ի լեառն հաւատոց` զաւելորդ մեղացն ի բաց ընկեսցեն, և զօրհնութիւնն աստուծոյ առցեն: - 402. Անիծեալն` սատակեալ և սպանեալ ասի. *որ* է մեկնեալ և հեռացեալ ի կենաց աստուծոյ...: - 403. Իսկ օրհնեալն` յայտնեալ և յարեալ յաստուած *որ* է՛ կեանք և երանութիւն: - 403. Եւ ի սոցանէ ողորմութեան և արդարութեան գործ. *որ* է՛ օրհնութիւն և անէծք ի մի պատուիրանն աստուծոյ տրամակայեալ: - 403. Զորօրինակ` ճրագ զտեսօղս լուսաւորէ՛, և զտկարս խաւարէ՛. կամ *որք* ի ճրագ նային տեսանեն լոյս. և *որք* յետս դառնան խաւարին: - 403. Այլ այս անէծքս յայտնապէս ի վերայ հրէիցն է. *որք* ո՛չ կատարեն զօրէնս, և ո՛չ ունին զմկրտութիւնն քրիստոսի: - 403. Օրհնութիւնն աստուծոյ բաժանի յերկուս. *որ* է՛ երկնաւորաց և երկրաւորաց. *որ* է՛ հոգևոր և մարմնաւոր. անցաւոր և անանց: - 403. Ասա՛ թէ` չափաւորն ընդունելի է. այլ անչափն պոռնկութիւն և ագահութիւն. իսկ կուսութիւն և աղքատութիւն *որ* չափ առաւելու` այնչափ գեղեցկանայ: - 404. Երկրորդ` հրէայքն ի գերութեան կախեցին զկտակարանքն ի

յուռեաց, և ո՛չ հաւատային կենաց. *որ* ասէր կտակարանքն պահել զպատուիրանս աստուծոյ և կեալ: - 405. ...*զոր* կախեցին զցայգ և զցերեկ յաւուրն ուրբաթու, և ո՛չ հաւատացին մովսէսի...: - 405. ...այսինքն կեանքն` *որ* ասաց մովսէս «տեսանիցէք կախեալ». զի մովսէս վասն իմ գրեաց զայն: - 405. Եւ թէ մովսէսի ոչ հաւատայք *որ* փառաւո՛րն է ի մէջ ձեր, ինձ զիա՞րդ հաւատայք *որ* թշնամի կարծէք: - 405. Չորրորդ` այժմ տեսանեն աչօք զեկեղեցի սուրբ *որ* զկախեալ ի նոցանէ` աստուած հաւատայ զնոյն մեռեալ և կենդանի, և ո՛չ հաւատան: - 405. Այսինքն` *զոր* ծածկեալ է մեզ` բարի կամ չար ո՛չ կարեմք ասել: - 405. Եւ *զոր* յայտնեաց մեզ, ծանուցաք որդւոցդ մեր: - 405. Դարձեալ` օրէնքս յայտնի էր *զոր* ուսոյց. և աւետարանն ծածկեալ, *զոր* հոգին սուրբ յայտնէ *որ* քննէ զխորս աստուծոյ: - 405. Եւ բանն` *որ* կրէ՛ զամենայն զօրութեամբ իւրով: - 405. Նոյնպէս *որ* պատրաստեաց սիրելեաց զփառս, և զտանջանս չարեաց, անգիտելի՛ է այժմու կենացս: - 406. Երրորդ, ի խնամելոյ զմարդ և զանասունն` ցուցանի թէ նա՛ է արարիչ *որ* խնամէ՛ և դարմանէ՛ զսոսա՛: - 406. Այսպէս և օրհնութիւն մարդկան *որ* գերագոյն է քան զմեզ, շնորհակալութիւն է և գոհութիւն. որպէս սրբոց կամ թագաւորաց և այլն: - 406. Չորրորդ` մարմին կենդանեաց *որ* առաւել պարարտ է քան զամենայն. վասն այն ի մսոյ հատանին պարկեշտք. զի մի՛ առաւել գիրասցին և գազանասցին: - 407. Զի՞նչ է *որ* բնաբանն ի բնագիրն ուրիշ է, և ի սաղմոսն ուրիշ: - 407. **Զի սէն` յունա՛ց է, և շան` ասորի. և մի և նոյն է տեսութիւնն *որ* ասէ, անգոսնեաց, և անգուշնեաց**: - 407. Եւ օրհնութիւն, զի յօրհնել բերանոյ նորա` յառաջ եկն առ *որ* բերան ի բերան խօսեցաւ աստուած դէմ յանդիման և ո՛չ առակօք: - 407. Իսկ բարեաց չար առնել` անիրաւութիւն է. *որ* ո՛չ գոյ բնաւ առ աստուած. ո՛չ ի կեանս յայս և ո՛չ ի հանդերձելումն: - 408. Եւ սպառնալիքն աստուծոյ և մարդկան ո՛չ են նման. զի մարդոյս դատարկ բան է. իսկ սպառնալիքն աստուծոյ` է՛ բան զարհուրական. *յորմէ* լսօղքն զերծանին, և անլուրքն ըմբռնին ի նոյն: - 408. Հինգերորդ` ցուցանէ թէ մարմնաւոր օրինացն վախճան հոգևոր և օրհնութիւնն է *որ* եղև քրիստոսիւ: - 409. Վեցերորդ` ի խորհուրդ քրիստոսի, *որ* օրհնեաց զաշակերտսն և վերացաւ: - 409. *Յորոց* յայսցանէ յա՛յտ է, զի եթէ ապաշխարեալ լինի արգելեալն. կամ վախճանեալ է կապօղն. այլ ոք *որ* գերագոյն է կամ հաւասար կապողին, կարէ՛ արձակել զնա՛: - 409. Երրորդ` վասն հասարակ յարութեանն. *զորմէ* լուաւ սատանայ և բեկաւ ողն նորա: - 409. Նախ այս է միտքն, *որ* զյարութիւնն աստ ասաց: - 409. Երրորդ` օրէնքն *որ* ի ձեռն մովսէսի` էր խափանիչ մեղաց և մահու: - 409. Չորրորդ, մահ` այսինքն սատանայ *որ* յաղթեաց ադամայ. իսկ մարմնոյն մովսէսի ո՛չ կարաց յաղթել հրեշտակային օգնականութեամբն. որպէս ասի յառաջիկայդ: - 409. Հինգերորդ` մովսէս օրինա՛կ էր, և ճշմարտութիւնն քրիստոս. առ *որ* խափանեցաւ մահ, և թագաւորեաց կեանք: - 409. Վեցերորդ ըստ մտաց, զի մովսէս ջրածին լսի. զի *որք* ո՛չ ծնանին աւազանաւ, ընդ մահու իշխանութեամբ են: - 409. *Զոր* յայսմ օրէ և յառաջ` ասեն զամպ հովանին վերացեալ ի նոցանէ: - 410. Վեցերորդ` ի թաղումն մովսէսի միքայէլ սպասաւորեաց. *որում* սատանայ հակառակ կայր ներողութեամբն աստուծոյ: - 410. ...տանիլ զհետ իւրեանց *որ* զչա՛րսն են գործեալ. և յարդարոցն յաղթին հրեշտակին օգնութեամբն. որպէս և անտօն ետես. զի իմացեալ և մեք զգուշասցուք այնմ: - 410. Եօթներորդ` ոմանք մարմին մովսէսի զօրէնսն ասեն. *զոր* ի բերելն հակառակէր սատանայ, խոտան և անարժան գոլ ժողովրդեանն. վասն որոյ միքայէլ վերակացու ժողովրդեանն հալածէր զնա: - 410. Ութերորդ` և ոմանք զմարմինն մովսէսի զժողովուրդն կոչեն յելսն եգիպտոսի. *որ* հակառակէր ազատելոյ զնոսա յեգիպտոսէ՛: - 410. Տասներորդ` ի սկզբանէ հայհոյիչ աստուածամարտ էր սատանայ. և վասն այն զմարդիկ կորուսանէր մեղօք. *որում* զվճիռն և զասստն տէրն ետ, և դատապարտեաց զմեղս ի մարմնի իւրում. և եբարձ մահուամբն զմահ, և *որ* զիշխանութիւն մահուն ունէր: - 410. Երեսուն օրն աւուրք է լուսնին *որ* փոխէ զտխրութիւն և ի լոյս գայ: - 411. Նա՛խ` փոփոխմամբ իւր նշանակէ՛ զփոփոխելի կենցաղս այս. իսկ արեգակն անփոփո՛խ է. *որ* է՛ հանդերձեալն: - 411. Երկրորդ` նշանակէ զմահ և զյարութիւն մեր. *որ* լ ամեայ յառնեմք. որպէս ադամ լ ամեայ ստեղծաւ: - 411. Ա՛րդ նա՛խ` զայն հասակն լ ամեայ *յորմէ* զրկեցաւ մեղօք` լան: - 411. *Որոց* լիցի մեզ ամենեցուն մասնաւորիլ ի փառս արքայութեան երկնից ի քրիստոս յիսուս ի տէր մեր ամէն: - 411. *Զոր* յիշէ աւետարանն ղուկասու, և մնացորդացն գիրք. և ո՛չ յիշէ մովսէս. զի զսկիզբն կռապաշտութեան ի նմանէ՛ ասեն լինիլ: - 411. Մովսէս նշան կատարեաց մեծամեծ. նոյնպէս և ա՛յլ մարգարէք. փրկչին մերոյ *ո՞րն* է առաւել քան զնոցայն: - 411. Մարմնական նշանքն *զոր* կատարէր` չէ՛ր պակաս քան զնոցայն: - 411. *Որ* ի կաւոյ աչք ստեղծ. և մեռեալս յարոյց. և զանշունչ նկանակս աճեցոյց. *զոր* ոչ արար մովսէս: - 411. Այլ այնո՛ւ էր առաւել, զի քրիստոս զհոգիս ազատեաց ի դժոխոց. և աստուած էր և մարդ եղև և խաչեցաւ. *որ* մեծ է քան զամենայնին: - 411. Որ և

մովսէս եկեալ ի թաբօր վկայէր նմա, և աղերսէր ելանել ի խաչ և բանալ զդուռն արքայութեան. *որում* մարգարէքն սպասէին: - 411. *Որ* է՛ Օրհնեալ յաւիտեանս Ամէն: - 412. Եւ ո՛չ ետ պատասխանի սիմէի *որ* նախատէրն զնա՛: - 413. Եւ *ո՞րք* են նմանեալ մարմնով ադամայ: - 413. Եօթնևժ, Սատակումն մահուն. *որ* յերից զմինն խնդրեաց պատուհաս: - 413. Ծեր մարգարէն *որ* դարձոյց: - 413. *Որ* մեզիցէ զորմով: - 413. Քսաննդ, Վասն եղիայի *զոր* ագռաւն կերակրեաց. և գնաց ի հեղեղատն. և նուաղեցաւ ջուրն: - 413. *Որ* առաքեաց լրտեսս ի տիպ առաքելոցն: - 414. Էառ և զերկիրն պարգևաց. *զոր* խոստացաւ աստուած աբրահամու իսահակայ և յակոբայ: - 414. Վեցերորդ՝ մեծ սքանչելիք էր *որ* յետ դարձաւ, քան զցամաքիլն: - 414. Եօթներորդ՝ ի յօրինակ բնութեանս դառնալոյ անդրէն ի տեղիքն մեր ուստի ելաք *որք* են հաւատացեալք: - 414. Նմանապէս և **բժ**ան քարինքն հանեալ ի ցամաք և կանգնեալ սեղան՝ հաւատացեալքն են. *որք* ի ձեռն **բժ**ան առաքելոցն հաւատացին և ելին ի մեղաց. և եղեն սրբութեան սեղան աստուծոյ **բժ**ան անդամօք և **բժ**ան առաքելովք: - 415. Այլ և քարինք բազումք էին ի վեր և ի վայր՝ բաց ի յունաց *յոր* անցանէին. *որ* կրթեալ և սրբեալ էին: - 415. Էառ զքարինսն յօրինակ աշակերտաց կրթութեանն *որ* լինի ապա՛ պիտանի: - 415. Եւ յետ մահուանն մարիամու նուազեաց ջուրն. *յորում* եհար բարկութեամբ զվէմն: - 415. Իսկ յետ մահուան ահարոնի նուազեաց մանանայն. *յորում* տրտնջէին և յօձից սատակեցան: - 415. Տասներորդ՝ և նորս թլփատութիւն սրտի՝ վէմն քրիստոս լինելոց էր. *որ* կարծրացաւ աստուածութեամբն. և էարկ սուր յերկիր և բաժին: - 415. Երրորդ՝ ի յեղծանիլ պատկերին աստուծոյ *որ* վասն փառացն աստուծոյ ստեղծաւ, ընդ նմին եղծան և ապականեցան այլ արարածք *որ* վասն փառաց մարդոյն ստեղծան. *որ* ո՛չ միայն անասունք, այլ և հող և ջուր և օդ երկրին կորուսանեն զպտղածնութիւն. որպէս սոդոմայեցոցն: - 416. Վեցերորդ՝ զի թէ լինի անկարօտ գող և զրկօղ, ընդ տեառն իւրոյ կորուսանէ և զինչսն. որպէս աքարն *որ* ունէր բազում ստացւածս, և գողացաւ ի նզովիցն երիքովի. տեսին ամենայն ժողովուրդն և ցասեան ի վերայ նորա և իրաւունս ետուն սատակմանն: - 416. Երկրորդ՝ զի տեսցեն զտկարութիւն դիցն *որք* զլուսաւորսն պաշտէին: - 416. Երրորդ՝ յօրինակ փրկչին յիսուսի *որ* եղև առ խաչին: - 416. Ութերորդ՝ յօրինակ փրկչին յիսուսի, *որ* զբռնութիւն թշնամւոյն խորտակեաց և զխաբէութիւնն եթող. զի փործեցին ընտրեալքն և խոտեցին վատթարքն: - 417. Երկոտասաներորդ, զի ուսուցէ մեզ զմարդասիրութիւնն և զներելն միմեանց. որպէս աստուած երկայնամիտ եղև առ քանանացիսն *որ* պատժապա՛րտք էին: - 417. Եւ տէր մեր զառաքեալս ընդ ծագս. *որք* համբաւեցին մեզ զյաղթութիւնն սատանայի և դժոխոց: - 417. Երեքտասաներորդ՝ անէ՛ծ յեսու *որ* շինէ զերիքով՝ անդ անդրանիկ և կրտսեր որդւով: - 418. Եւ *որ* շինէ զդժոխս հոգւով և մարմնով. նա՛ և անդրանիկ խորհրդով և մարմնոյ գործով: - 418. *Որոց* ասէ տէր՝ «երթայք յինէն անիծեալք»: - 418. Իննևժ, ապրեցոյց զգաբաւոնացիսն *որք* երկեան և ապաւինեցան ի նա: - 418. Քսանգ՝ յեսու փրկեաց զգաբաւոն ի **ե** թագաւորացն *որք* պաշարէին: - 419. Եւ տէր մեր փրկէ զյուսացեալս իւր, *որք* պաշարին հնգիւք զգայութեամբք յիշխանացն դիւաց: - 419. Եւ տէր մեր նախ կապեաց զհզօրն ի խաչին և զտուն նորա աւերեաց *որ* էր ամրոց դժոխոցն: - 419. Եւ *զոր* պատուիրեաց հայր՝ զնոյն և արար որդի: - 419. *Որ* օրհնեաց զզինուորեալ ռուբէնեանսն և արձակեաց ի տեղիս իւրեանց...: - 419. Եւ զարձանն վկայութեան կանգնեաց ի տիպ հաւատոյն *որ* ի քրիստոս, և վախճանեցաւ: - 419. *Որ* է՛ օրհնեալ յաւիտեանս ամէն: - 419. Զի **նժ** ամք դատաւորացն, և **խ** ամ հեղեայն մինչ ի սաւուղ. *որ* լինի **նծ** ամ: - 420. Երրորդն Սամէգար. որդի անաթայ. *որ* մաճիւն **ո** այր եսպան՝ ամս **դ**. և Դեբովրա ամս **ե** ընդ այլազգեացն: - 420. *Որ* ի ջուր ըմպելն ընտրեաց զզօրսն. և թաքուցեալ սափորօք զվառեալ լապտերսն, և էհար **յ** արամբք **ըզճի** հազարսն: - 420. Սա՛ է *որ* զդուստր իւր աստուծոյ զոհեաց: - 420. Երեքտասաներորդն ի դանա որդի մանովէի Սամփսոն. *որ* կալաւ **յ** աղուէսս, և կապեաց ի նոսա ջահս. և այրեաց զանդաստանս այլազգեացն: - 420. *Զոր* եօթանասունքն ի ասեն. իսկ սամուէլ և սաւուղ ամս **խ**: - 420. Եւ անդ դադարեցան առաջնորդք օծեալք. *յորում* երևեցաւ ճշմարիտ օծեալն քրիստոս: - 421. Նա՛խ՝ նշանակէր զնոյն ինքն գեդէոն. *որ* երևմամբ հրեշտակին դատաւոր եղև իսրայէլի: - 421. Եւ **յ** արքն ընդ նմա ցամաք մնացին յարենէ մադիանացւոցն *որ* կոտորեցան: - 421. ...իսկ ցօղ իմաստութիւնն *որ* տուաւ նմա յաստուծոյ. և թագաւորք արաբայ և սաբայ, ընծայաբերքն նմա: - 421. Հինգերորդ՝ զգաթ էր կոյսն մարիամ. և ցօղ բանն աստուծոյ. *որ* աւետեօք հրեշտակապետին էջ ի վերայ նորա առանց ոտնածայնութեան և ծածուկ: - 421. Վեցերորդ՝ դարձեալ տէր մեր յիսուս քրիստոս *որ* եղև զգեստ հաւատացելոց իւրոց. մկրտեցաւ ի յորդանան. և ձայն հօր վկայեաց. և աղաւնակերպ հոգին էջ ի վերայ նորա: - 421. Եւ տէր մեր ի սպանօղ մարմնոյս *որ* է՛ պատառօղ հոգւոյս, սպանելով զսա՛ գտանէր զքաղցր կեանս տալ որդւոց մարդկան ազգի: - 422.

Մետասաներորդ՝ առաջինն կին մերժեցաւ և երկրորդն մերձեցաւ *որ* կոչիւր դալիլա: - 422. Եւ տէր մեր մերժեաց զիրէայս և ժողովեաց զիեթանոս *որ* էր աղքատ ի բարեաց: - 422. Եւ *որք* գիտեն զտնօրէնութիւն փրկչին, զգեցցին զփրկութիւն նորին. զի նա՛ է հզօրն *յորմէ* ել կերակուր քաղցր: - 422. Քսաներմի, զարմանալեօքն *զոր* արար՝ զանձն իւր ապրեցոյց սամփսոն: - 423. *Որ* է՛ նախ քան զխաչն, և ի խաչին, և ի գերեզմանին հանգուցեալ: - 423. Եւ *որք* ծարաւին նմա՝ լիանան. և հակառակքն ունա՛յն մերժեսցին: - 423. Զի սամփսոն ի ժամ գերծելոյ գլխոյն թմրեալ ի ծունկս թալիլայ խոնարհէր. նոյնպէս և ամենայն մեղք *զոր* գործէ մարդ, և առաւել գէճ ցանկութիւն, անարգէ զմարդ: - 424. Այն *որ* ուսանո՛ց է, որպէս վակաս քահանային. և որպէս մայրն սամուէլի արար: - 425. Եւ այն *որ* վիճա՛կն է՝ ծիրանեգոյն հանդե՛րձ է. *որ* զսեղան հացին և զխնկոցն ծածկէին. և տեսութիւն կամ փրկութիւն թարգմանի: - 425. Նա՛խ՝ երեքժանի մսահանաւ հանել զմիսն *որ* չէր օրէն: - 425. Երրորդ՝ զխիստ բարկութիւնն նշանակէ *որ* յիւր սրբութիւնն ո՛չ խնայէ վասն մեղաց մարդկան: - 425. Չորրորդ՝ ցուցանէ թէ *որ* ի սրբութիւնն իւր ո՛չ խնայէ, և ո՛չ ի ձեզ յանցաւորքդ թէ ոչ դառնայք: - 425. Չորրորդ՝ նշանակ իմանալւոյն դագոնայ, *որ* զգլուխ իւր ամբարձ ընդ դէմ աստուծոյ. և ընդ բռամբ էարկ և կոխեաց զմարդկային ազգ. *զորս* խորտակեաց տէր մեր: - 426. Հինգերորդ՝ զընթացս մեղաց և զգործն *որ* է սկզբնական և ներգործական մեղք, և զգլուխն *որ* է՛ մահ և ապականութիւն, խորտակեաց քրիստոս...: - 426. Զի՞նչ է *որ* զերաստանս ուռոյց, և զմուկն եռացոյց: - 426. Զի՞նչ է *որ* յետ եօթն ամսոյ դարձաւ տապանակն: - 426. Իսկ անդրանկածին երինջքն են մարգարէք և առաքեալք. *որ* զհաւատացեալս անդրանիկ ծնան. նոքա են ամոլք և պատարագք աստուծոյ: - 426. Իսկ սայլն՝ կրկին կտակքն. *որ* միշտ հոլովին առ մեզ: - 426. Նա՛խ՝ որպէս սաւուղ ի խնդիր իշոյ ել և թագաւորութիւն եգիտ. և տէր մեր մարդկան ազգի *որ* հաւասարեաց անբանից, և թագաւորեաց մեզ: - 426. Եօթներորդ՝ կոչի սաւուղ, *որ* է՛ ընտրեալ հայեցումն. և տէր մեր հայեցումն և ակնկալութիւն է ամենայն արարածոց: - 427. Ութերորդ՝ նա՛ ուսովք էր բարձր քան զամենայն մարդ. և տէր մեր ո՛չ միայն աստուածութեամբն *որ* գլուխ է, այլ և չարչարանօք իւր՝ գերագոյն և բարձրագոյն ցուցաւ. զի փրկեաց զամենայն: - 427. Իններորդ՝ յետ է աւուր կորոյս *զնաաս* խռովարար, *որ* բրէր զաջոյ ակն իսրայէլի. և տէր մեր զխռովարար բանսարկուն, *որ* բրէ՛ զակն իմացականին մարդոյ...: - 427. ...երիս զօրութեամբ ի վերայ խաչին. *որ* է՛ ձայնիւն և մարմնովն և հոգւովն *որ* էջ ի դժոխս. կամ գ գոյացութեամբ. այսինքն աստուածութեանն և հոգւոյն և մարմնոյն: - 427. Տասներորդ՝ յետ *որոյ* հնազանդեցան նմա՛ ամենայն իսրայէլ. և տեառն մերոյ զկնի խաչին հաստատեցան ի հաւատս. մանաւանդ յետ է դար կենցաղոյս ամենայն լեզու խոստովան լիցի զտէր յիսուս քրիստոս ի փառս աստուծոյ հօր ամէն: - 427. Երկրորդ՝ զի դաւիթ *որ* հատանէր զլօդկին սաւուղի, նա՛ թագաւորէ՛: - 427. Երրորդ՝ ի տիպ երկնաւոր հացին *որ* բաշխելոց էր քրիստոնէից: - 427. Հինգերորդ՝ զի որպէս զկանխագէտ ոչ ասաց սաւուղայ թէ դու ո՞վ ես *որ* զիս փրկես ի սաւուղայ: - 428. Եօթներորդ՝ զի թէ ճշմարտապէս սամուէլ յառնէր, ո՛չ կամէր կինն. զի կորուսիչ էր նոցա. այլ գիտէր *որ* նմանութիւնն էր սամուէլի: - 428. Երրորդ՝ զի երկիր եպագ նմա *զոր* ո՛չ տեսանէր: - 429. Ապա ուրեմն ի ժամանակիս յայս ընկե՛ր են սաւուղայ *որք* սակաւ մի կարծեօք հաւանին երազոց կամ վիճակաց և ռամտեսաց և այլոցն: - 429. Իսկ *որ* բոլորովին հաւանին՝ վիո՛ւկ են և արտաքսեալ յեկեղեցւոյ: - 429. Բե՛ր տեսցուք և զորպիսութիւն խօսիցն, *որ* թուի թէ ճշմարիտ զապագայն պատմեն դքք: - 430. Չորրորդ՝ զի թէ սամուէլ էր *որ* ասաց թէ՝ տէր հեռացաւ ի քէն, և այս ո՛չ է մարգարէութիւն...: - 430. Հինգերորդ՝ բանն *որ* ասաց սաւուղայ, կամ հրամայական էր, կամ մարգարէութիւն: - 430. Ա՛յն է *որ* կաղք և կոյրք ընդ դէմ դարձան դաւթի և անարգանօք ասէին՝ մի՛ մտցէ դաւիթ ի քաղաքս. *որ* նա՛ ինքն է երեսուղէմ. *որ* եղև տուն տեառն: - 431. Վասն որոյ ասաց դաւիթ, ամենայն *որ* մարտնչի սրով ընդ կաղս և ընդ կոյրս որպէս ասացին յեբուսացիքն, նա՛ ատելի՛ է անձին դաւթի. և խնայեաց ի նոսա և փրկեաց: - 431. Եօթն դաս պարուց էին. *որոց* երեքն բերանով երգէին. այսինքն նուագն և սրինգն և փողքն: - 431. Եւ չորսն ձեռօք. *որ* է տաւիղն, քնարն, թմբուկն, և ծնծղայք: - 431. Եւ ի մեզ է են ձայնական գործիք *որով* սաղմոսե՛մք: - 431. Երրորդ՝ զի *որք* լսեցին զմեղսն դաւթի, տեսցեն և զզղջումն: - 432. Հինգերորդ՝ զի ցուցանէ թէ՝ *որ* ի սիրելին իւր դաւիթ ոչ խնայեաց, նոյնպէս և զամենայն մեղաւորս յանդիմանէ՛: - 432. Վեցերորդ՝ ի յոյս և յօրինակ ամենայն մեղաւորաց. *որք* զղջան և գտանեն զթողութիւն մեղաց: - 432. Զի գա՛յ զղջումն և խոստովանութիւն՝ *որ* զմեղքն բառնայ և զպատիժն ընդ նմին. որպէս հատեալ տունկ՝ չորանան ճիւղքն. *որ* բոլորով սրտիւ զղջայ և խոստովանի և այլ ո՛չ գործէ: - 432. Եւ է՛ *որ* զմեղքն թողու՝ և զպատիժն կրէ. *որք* յայլմէ բռնաբա՛ր խոստովանին և պատահմամբ, և դարձեալ սխալին. այսպիսեաց մեղքն միայն թողլի: - 432. Եւ է՛ *որ* խոստովանի. և ոչ մեղքն միայն

թողուի. *որք* թերի են սրտիւ. և զմեղս թերի խոստովանին. և ի միտս եդեալ են դարձեալ գործել. այսպիսեաց ոչ մեղքն թողուի և ոչ պատիժն. զի որպէս զշուն դառնայ ի փսխած իւր: - 432. Սակայն բարի՛ է քան զայն *որ* ամենևին ո՛չ խոստովանի: - 432. Դարձեալ՝ նոյն ինքն քրիստոսի է իշխանութիւնն *որ* աստ լուծանէ ի ձեռն քահանային. և իշխանութիւն նորա ո՛չ տկարանայ երբէք. որպէս զհաց և զգինին կատարէ և զայլ խորհուրդս. նոյնպէս և աստ: - 433. Չորրորդ՝ *զոր* ծածկեաց նաթան՝ յայտնեաց սիմէի և ելից: - 433. *Ո՞րք* են նմանեալ ադամայ մարմնոյ մասամբք: - 434. Երրորդ՝ ջուր բեթլէհէմի է՛ տէր մեր. *որ* զծարաւս մեր զովացոյց: - 434. Չորրորդ՝ ի տիպն քրիստոսի *որ* ասէր ծարաւի եմ և ո՛չ էարբ: - 434. Նա՛խ՝ թուել հրամայեաց, որպէս այն *որ* թոյլ ետ իսրայէլի մարտնչիլ ընդ բենիամենի, և անկան **լռ** ի դասուց նոցա: - 434. Երրորդ՝ *որք* թուեցան ընդ աբիսողոմայ և սպանանէին զդաւիթ, այս նոցա վրէժն է: - 434. Եւ մինչ ընթացաւ ի կալն ուռնայի և գնեաց զեզինսն և ողջակիզեաց, եհաս ի **զ** ժամն. *որ* յառաջն դադարեալ էր սուրն: - 435. Նա՛խ՝ նշանակէ՛ զսեղան խաչին քրիստոսի. *որ* յերեք ժամուն մինչև ի **զ** ժամն խաչեցաւ, և հաշտեցաւ աստուած: - 435. Գտի զդաւիթ այր ըստ սրտի իմում, *որ* արասցէ զամենայն կամս իմ: - 435. *Որ* օրինակաւ ակնարկէ՛ ի տէր մեր ի մարդացեալ բանն. *որոյ* գործք ձեռացն արդարութիւն և իրաւունք են: - 435. Նա՛խ՝ զի որդի է յեսսեայ. *որ* է՛ պտուղ կղզւոյ. և տէրն մեր եղև պտուղ մարիամու ցամաքեալ ի խոնաւութեանց կենցաղոյս: - 435. Երկրորդ՝ կոչի դաւիթ *որ* է՛ սիրեցեալ և բաւական ձեռօք. և տէր մեր սիրեցեալ ի հօրէ և ի մարդկանէ իբր զորդիս մի եղջերոյ. և նա՛ է բաւական յամենայն գործս և ի պարգևս: - 435. Չորեքտասաներորդ, ցպով և պարսաքարով ել ընդ դէմ գողիաթու. և տէր մեր խաչիւ *որ* վէմ կոչեցաւ, և ի ձայն բարձր աղաղակեաց և արձակեաց զհոգին: - 436. Այլ և դաւիթ եգիտ զսաւուղ և զզօրսն նորա ի քուն և ո՛չ վնասեաց. այլ զզէնն էառ. և տէրն ո՛չ կամի զմահ *որք* ննջեն ի մեղս. այլ զպատճառ մեղացն հանէ: - 437. Դաւիթ եհար զամաղէկ *որ* գերեաց զհրէայս և զայլազգիս. և տէր մեր եհար զգերիչն հրէից և հեթանոսաց: - 437. Քառասուն ամ թագաւորեաց դաւիթ, *որ* է չորիցս **ժ**. և սկիզբն և կատարումն ամենայնի է՛ տէր մեր: - 437. Դարձոյց ի յորդանանու զբերզելի *որ* տասամբն կերակրեաց զդաւիթ. ի տիպ հին օրինացն **ժ** բանեան զոր կատարեց քրիստոս: - 438. Դարձոյց ի յորդանանու զբերզելի որ տասամբն կերակրեաց զդաւիթ. ի տիպ հին օրինացն **ժ** բանեան *զոր* կատարեց քրիստոս: - 438. Այլ և գոհացաւ ի վերջոյ ի վերայ ամենայն յաղթութեանցն. և տէր մեր ի վերայ ամենայն ներգործութեանցն. որ և ամենայն օրհնութիւնքն ի տէրն ակնարկէ. *որ* եղև գլուխ հեթանոսաց. յաղթեաց մահու և բարձրացաւ ի գերեզմանէ: - 438. Զի անդ *որ* գործէր զմեղս՝ և *որ* վրէժ ոչ խնդրէր՝ միապէս էր յանցանք: - 439. Այլ *որ* հրամայեցաւ սիմէի ոչ ելանել յերուսաղէմէ. և յորժամ ել մեռաւ: - 439. Նախ զայն ցուցանէ առ նորս, եթէ ոք յանգիտութեան մեղանչէ՝ թողու աստուած. և *որ* դարձեալ կրկնէ, և զառաջինն պահանջէ ասէ: - 439. Երկրորդ՝ զկանոնս ապաշխարութեան նշանակէ *զոր* խոստովանահայրն կարգէ. զի թէ յանցանէ ոք՝ մեղանչէ՛: - 439. Զի զտեղին յեբուսացւոցն գնեաց դաւիթ. և ճարտարապետն քիրամ տիւրացի էր *որ* շինեաց. և քիրամ արքայ զփայտն առաքեաց: - 440. Եւ ինչ ոչ գոյր ի հրէիցն, բայց միայն սողոմոն. *որոյ* հրամանաւն շինեցաւ ի տիպ հեթանոսաց եկեղեցւոյ *զոր* շինելոց էր տէր մեր: - 440. Իսկ այն *որ* ասէ կ էին թաքուհիք և ութսուն հարճք. և անթիւ հարսնածուք: - 440. Վաթսունն՝ **զ** տասն է. նշան նոցա՝ *որք* զ**ժ** բանեան օրէնսն կատարեն ի **զ** դար կենցաղոյս. այսինքն ի տղայութենէ մինչ ի մահ. նոքա թագուհիք և ժառա՛նգ են արքայութեանն: - 440. Եւ **ծ** հարճք, *որք* զուք օրէնսն կատարեն: - 440. Եւ սոքա են հարճք *որ* կարեն ի բաց հանիլ ի ժառանգութենէ. զի սէրն է կապ և լար շարոցին *որ* ո՛չ թողու ցրւիլ: - 440. Եւ հրաւիրակք են անուանեալ քրիստոնեայք. *որք* չունին զգործս՝ նոքա փութով հանին ի բաց: - 440. **Եւ տէր մեր յերկրի մարդացաւ, և յերկինս թագաւորեաց. իսկ նստիլն ի վերայ ջորոջ, *որ* է խաչն. զի վիրք զխաչն ջուարի կոչեն**: - 441. *Որ* է՛ խաչն և խաչ ելեալն: - 441. Քսանգ, **տիկինն սաբայ *որ* կոչիւր նըսա, ցանկացաւ իմաստութեանն սողոմոնի**: - 441. Եւ տեառն մերոյ ի հեթանոսաց փառք և մեծութիւն. *որ* նստի յանզուգական աթոռ դատողութեան **բժ**ան թագաւորօք դատել զամենայն: - 442. Ծեր մարգարէն *որ* դարձոյց զնա, արեան տէ՞ր է թէ ոչ: - 443. Ա՛յս է՝ իբր թէ աստ ո՛չ է գրեալ բոլորն՝ ա՛նդ է գրեալ *որ* է մնացորդացն յուդայի թագաւորացն: - 443. Այլ և ո՛չ անդ է գրեալ բոլորն, այլ ի թագաւորութեանցն *որ* չէ թարգմանեալ ի մերս. այլ միայն **բ** մնացորդացն *զոր* եզր գրեաց: - 443. *Որ* միզիցէ զորմով: - 443. Զի՞նչ է *որ* ի ձեռաց ագռաւու կերակրեցաւ եղիա. և ուստի՞ էր: - 443. Եւ վասն այն գնաց ի սաբեփթա յայլազգիս. զի և զնոցա նեղութիւնն տեսցէ. *որք* չէին անցեալ զօրհնօքն մովսէսի: - 443-444. Եւ *որ* ո՛չ եթող զոք մերձ. զի ո՛չ ոք լինի գործակից յարութեան մերոյ. որպէս և ո՛չ ստեղծմանն: - 444. Զի՞նչ է *որ* ո՛չ պակասեաց ալիւրն և իւղն: - 444. Երկրորդ՝ նշանակէր զմանանայն *որ* նոյնպէս ոչ յաւելոյր և ոչ

նուազէր: - 444. Դարձեալ՝ զարդարութիւն գործէր զի հաշտեսցի աստուած. վասն որոյ ինքնին սպան զամենայն. այս զուգծ յիսունսն, փոխանակ մարգարէիցն աստուծոյ *զոր* եսպան եզաբէլ: - 444. Նա՛խ՝ զի ուսուսցէ, եթէ մի անգամն ո՛չ լսի՝ պա՛րտ է անձանձիր աղօթել. որպէս այրին *որ* ժտելովն էառ: - 444. Իսկ ի մէջ ծնկաց գլուխն՝ այն է, *որ* զծունկն ի գետինն եդ, և զգլուխն հանդէպ նմին. և յայսկոյս և յայնկոյս զձեռսն խաչանման ի գետինն: - 444. Իսկ նստիլն ի յաթոռ՝ ասէր պատրել զաքայաբ, թոյլ տալն է աստուծոյ *որ* մարդ իւր կամօքն հաւանի չարին և պատժի: - 444. ...ի վիշտս ուրախանալ՝ դիւա՛ցն է *որ* են չար հոգիքն: - 444. Կամ զգործոց և զարդեանցն խնդրէ. *որ* է՛ սքանչելեաց և պատժոցն. որպէս եղիա: - 445. և Երկրորդ՝ զծածուկ խորհուրդն *որ* ի յորդանան: - 445. Զի՞նչ է նոր կուժն և աղն, *որով* բժշկեցան ջուրքն: - 445. Նոր կուժն ի խորհուրդ աստուածածին կուսին. *որ* նո՛ր էր յղացումն և անապական ծնունդ: - 445. Իսկ աղն բանն աստուած խառնեալ ընդ մարդկութիւնս. *որ* բժշկեաց զվէրս մեր: - 445. Արդ եղիսիէէ նշանակէ՛ զբանն աստուած. *որ* փոքրկացաւ և բովանդակեցաւ ի ծոց կուսին ի մարմնի միաւորեալ. և ապա ի խաչն բարձրացեալ կեանս շնորհեաց մարդկան: - 446. Իսկ ի մահուն *որ* յարոյց զմեռեալն յորժամ մերձեցաւ ի յոսկերսն եղիսէի, ի տիպ մահուն քրիստոսի *որ* մահուամբն մեզ կեանք և յարութիւն շնորհեաց: - 446. Նա՛խ՝ զի մի՛ զարհուրեսցի եէմ տեսեալ զսուրն *որ* կոտորեաց զնոսա: - 446. Եւ դարձեալ ի տիպ քրիստոսի *որ* ի գիշերի եհար զսատանայ և ազատեաց զհոգիսն ի դժոխոցն: - 446. Երկրորդ՝ զի իջցէ ի գերեզման և մի՛ տեսցէ զչարիքն *որ* ի ձեռն նաբուգոդոնոսորայ գալո՛ց էր ի վերայ երուսաղէմի. որպէս յայտ է ի պատմութիւնն: - 446. Տևեալ ամս **ն**. մինչ ի սեդեկիա *որ* գերեցաւ ի բաբիլօն. և հրձիգ եղև տաճարն և երուսաղէմ: - 446. Տևեցին զամս **մծ**. մինչ յովսէէ որդի ելայ. *որ* գերի վարեցաւ յասորեստան. և բարձաւ թագաւորութիւնն իսրայէլի: - 446. Եւ ի պահպանութիւն աշխարհին հրէից՝ առաքեաց սաղմանասար յերկրէն ասորւոց պանդուխտս *որ* բնակեցան ի սամարիայ և սամարացիք կոչեցան: - 447. Այլ *որ* ուղիղն է՝ զվճիռ գերոյն **հ** ամ եդ երեմիա: - 447. *Որ* եղև յերեքտասան ամի թագաւորութեանն ովսէի բարեպաշտ արքայի յուդայ: - 447. Յետ *որոյ* քեղկի քահանայ *որ* էր հայր երեմիայի՝ եգիտ զերկրորդ օրէնքն և մատոյց առ ովսիա. և գնաց առ ողդիկին մարգարէ հարցանել...: - 447. Արդ յերեքտասան ամէ՛ ովսիա մինչև ցմետասան ամն սեդեկիայ *որ* վերջին գերեցաւ՝ լինի **խ** ամ. և նաբուգոդոնոսորայն **ի** ամ. և որդւոց և թոռանց նորին **ծ** ամ. *որ* կատարի **հ** ամ մինչև յառաջին ամն կիւրոսի *որ* արձակեաց զգերիսն: - 447. Դարձեալ՝ ի վերջին գերութենէն սեդեկիայ մինչ ի դարեհի **բ** ամն կատարի **հ** ամ. *որ* արձակեաց զզօրաբաբէլ: - 447. Զի ի րոբովամէ՛ *որ* զերինջսն գործեաց՝ վեց եօթանասուն ամ է մինչև զգերութիւնն սակաւ ինչ պակաս. վասն որոյ եօթանասուն ամ շաբաթեցոյց զնոսա ի գերութեան: - 448. Երրորդ՝ որպէս զստնդիայի մանուկն է ամ խրատէ՛ դայեակն. այսպէս ժողովուրդն *որ* ել յերկրէն իւրեանց...: - 448. Եւ յորժամ զղջանամք ի մեղաց՝ նախ խոստովանութեամբ շինեմք զտաճար սրբութեան մերոյ. և ապաշխարութեամբն *որ* է՛ փոխարէնքն՝ կանգնեմք զպարիսպն եօթնիւք զգայութեամբք: - 448. Նա՛խ՝ նշանակեն առաջինքն զմարգարէքն և զարդարսն. *որք* ո՛չ կարացին զկործանեալ բնութիւնս շինել արդարութեամբ...: - 448-449. ...նշանակէ զքրիստոս *որ* եղև երկրորդ ադամ. և ի վեց դարուն կանգնեաց զկործանեալ բնութիւնս...: - 449. ...իսկ երրորդն նէեմի և եզր դպիր՝ կանգնեցին զպարիսպն և զդրունսն. նշանակեն զառաքեալսն զհայրապետսն և զվարդապետսն. *որք* օրինօք պարսպեն զեկեղեցի, և հանապազ ուսուցանեն զդպրութիւն: - 449. *Որք* են ամք **նձգ**: - 449. Եւ աստի թուեալ ի դարեհէ՛ որդւոյ վշտասպեայ, *որ* արձաձեաց զզօրաբաբէլ. և *յորոյ* երկրորդ ամին շինէ զտաճարն: - 449. Արդ սկսեալ առ դարեհիւ ի **կե** ոլոմպիադին՝ դադարեցին ի **ճձզ** ոլոմպիադին առ հիւրկանոսիւ քահանայապետիւ, *որ* գերեցաւ ի պարթևաց: - 449. Եւ հերովդէս այլազգի տիրէր. *յորոյ* **լբ** ամին ծնաւ տէր մեր յիսուս քրիստոս: - 449. Իսկ այլ ոմանք թուեն զեօթներորդն դանիէլի ի դարեհի որդւոյ արշուրեայ առաջին ամէն. *յորում* զտեսիլն ետես մարգարէն. մինչև ի ծնունդն քրիստոսի ամք **նձգ**: - 449. Եւ յայնմ ժամանակի ասէ՝ սպանցի օծեալն, *յորում* քահանայքն և իրաւունք ո՛չ իցեն. այսինքն թագաւոր և դատաւոր: - 449. Եւ տարաձայնութիւն թուոցդ յայնմանէ լինի, *որ* **ձգ** ամաւ յառաջեաց բանն աստուած ի մարդանալն քան զնշանակութիւնս մարգարէիցն: - 449. Որ և յերկրորդ գալուստն նախ դատեսցէ. և ապա թագաւորեսցէ անվախճան. ընդ *որով* քահանայագործութեամբ մաքրէ՛ և լուսաւորէ՛ և կատարեալս առնէ միշտ անզրաւ յաւիտենիւ: - 450. Ո՞ր քան են և *ո՞րք* գիրք սուրբք հին և նոր կտակարանք: - 450. Եւ **դ** գիրք թագաւորութեանց *որ* լինի **ժբ**: - 450. *Որոց* առաջինն պատմէ՛ զսաւուղայ թագաւորելն: - 450. Երկու մնացորդացն: Երկու եզրաս: Նէեմի: Եսթեր: Յուդիդ: Տուբիդ և տուբիա. *որ* լինի **ի** երորդ: - 450. *Որ* է՛ առակս: Ժողովօղ: Երգ երգոց և Իմաստութիւնն: - 450. Սիրաք. և Յոբն. *որ*

լինի **լ**: - 450. *Որոց* առաջինն Ովսէ է: - 450. Սոփոնիա. *որ* լինի **խ**: - 450. *Որ* լինի **ծ**, պակաս մի. սոյնպէս թւեալ: - 450. *Որոց* առաջին Յակոբայ: Երկու պետրոսի: Երեք յոհաննու: - 450. Եւ յուդայի վերջին. *որ* լինի **ժդ**: - 450. Եւ չորեքտասան թուղթք պօղոսի. *որ* լինի **իը**: - 450. *Որոց* առաջինն Հռովմայեցւոց: - 450. Եւ թաղէոսի. *որ* լինի **լ**: - 450. *Որ* է՛ ընթերցուածն յակոբայ: - 450. *Որ* է՛ օրէնք. Մարգարէք. Սրբագիրք: - 451. Օրէնք է մովսիսի **ե** գիրքն *որ* ասացաւ: - 451. *Որոց* առաջինն Յեսու: - 451. *Որոց* առաջինն Յոբ: - 451. *Որ* լինի բովանդակն **իբ**: - 451. Եւ եղև քոյր սորա եղիսաբեթ կին ահարօնի քահանայի. *յորմէ* ծնաւ նաբաթ և աբիուդ. եղիազար և իթամար քահանայք: - 452. Եւ սաղմոն էառ զռահաբ իւր կին *զոր* յերիքովէ՛: - 452. *Զոր* աւետարանիչն ռեքաբ կոչէ: - 452. Իսամարիայ **ժ** ազգին տիրէ՛ րոբովամ որդին նաբատայ. *որք* կոչեցան թագաւորք իսրայէլի չարք և ո՛չ բարիք: - 452. *Որք* կոչեցան թագաւորք յուդայ. և ոմանք ի սոցանէ բարիք: - 452. Ազարիա *որ* և ոզիա ամս **ծբ**: - 452. Քանի՞ են դժոխք *զոր* աւերեաց առհասարակ և ազատեաց զհոգիսն: - 455. *Յորո՞ւմ* ժամու յարեաւ ի մէջ գիշերի ի վկայութեամբ: - 455. *Յորում* աւուր օրէնքն տւաւ, և հոգին սուրբ էջ: - 455. Զի թէ աստուածայինքն ամենայն *որք* շուրջ զաստուծով՝ են անհպելիք. քանի՞ ևս անզննելի իւրն էութեան և եղելութեան աստուածն բանի: - 456. Հաւատարիմ բառս՝ *որ* ի սուրբ գիրս՝ ըստ չորից եղանակաց իմացի: - 457. Եւ գործ արդարութեան ի վախճանի. զի արդարապէս ամենայն *որ* սկսանի կատարի. և *որ* շարժի դադարի: - 458. Զի *որ* մարդացաւ՝ իրաւացի՛ էր մեռանիլ: - 458. Այլ ո՛չ յարմարի բանս. զի և յերկինս տեսանի գործ արդարութեան առ հրեշտակս եղեալ. *որք* հպարտացեալ կործանեցան: - 458. Այլ *որ* ստուգիւ տեսութիւն է բանս, յերկինս ասել զողորմութիւն, զառաւել մեծութիւնն նշանակէ: - 458. Առաջին կերպիւն է՛ հատուցումն բարեաց և պատիժ չարաց՝ *որ* է՛ գործ արդարութեան: - 458. *Յորմէ՞* ցեղէ էր աստուածածին կոյսն: - 459. Այլ և օրէն էր նոցա, *որ* իւրաքանչիւր ոք յազգէ իւրմէ առնոյր իւր կին և ո՛չ յօտարէ: - 460. Եւ յետ մահուանն մատթանայ՝ մելքի ի ցեղէն նաթանայ *որ* որդի էր ղեւայ և եղբայր պանթերայ...: - 460. Եւ ելի մեռաւ անորդի *որ* էր յազգէն նաթանայ: - 460. Իսկ յակոբ *որ* էր յազգէն սողոմոնի՝ առեալ զկին եղբօրն ըստ օրինացն զի յարուսցէ զաւակ եղբօրն. և ծնաւ զյովսէփ: - 460. Եւ այսպէս յովսէփ բնութեամբ որդի էր յակոբայ և ի ցեղէն սողոմոնի. և օրինօք որդի էր ելեայ *որ* ի նաթանայ: - 460. Մարիամ ամուսնացաւ ի բեթլէհէմ և ծնաւ զսողոմի զմանկաբարձն յիսուսի. ո՛չ *որ* մայր եղև որդւոցն զեբեթեայ. զի այն. սողովմէ դուստր է յովսեփայ աստուածահօրն...: - 460. Զի օծեալք սոքա էին քահանայք և թագաւորք. *յորոց* և բազումք մարգարէք եղեն: - 461. Նա՛խ՝ զի կոյսն սուրբ՝ նշանակեսցէ զսուրբ եկեղեցի խօսեցեալ քրիստոսի *որ* նմանապէս է կոյս: - 461. **Երկրորդ՝ զի յովսեփիւ ցուցցի ազգաբանութիւն կուսին *որ* արամբն շարագրի**: - 461. Իններորդ՝ զի մի՛ երևեսցի տէրն հակառակ օրինացն *որ* գովէր զպսակն: - 461. Զի՞նչ է սրբութիւն կուսին *որ* ասէ մարգարէն՝ «սուրբ է տաճար քո սքանչելի արդարութեամբ»: - 462. Նա՛խ՝ սրբութիւն հասարակ. որպէս շնորհք մկրտութեան և խոստովանութեան. զի *որք* անցանեն ընդ նա՛ սրբին: - 462. Չորրորդ՝ հրեշտակական սրբութիւնն. *որ* է երկնային և հաստատագոյն և անդրդուելի սրբութիւն: - 462. *Որո՞վ* զանազանին սոքա: - 462. Առաջին *որ* է հասարակաց սրբութիւն մկրտութեան, մերժէ՛ զմեղս և տայ զշնորհս: - 462. Սակայն արմատ մեղացն *որ* է՛ ցանկութիւնն և դիւրասահութիւնն ի մեղանչելն՝ մնայ. որպէս յա՛յտ է ի մկրտեալսն *որք* կարեն մեղանչել: - 462. Սակայն ըստ ներգործութեան մեծագոյն է սրբութիւն մկրտութեանն. զի տպաւորէ զկնիքն. այլ և բանայ զդուռն արքայութեան. այլ և պատրաստէ՛ զմարդն առ ի խորհուրդս ամենայն. *զոր* ո՛չ ներգործեն ա՛յլ երկոքին եզական շնորհքն: - 462. Իսկ չորրորդ սրբութիւնն լիակատար շնորհաց ի վերին գաւառն *որ* է՛ հրեշտակային՝ գերազանցէ՛ զամենեքումբք: - 462. Երրորդ՝ համակ հանապազորդ ներգործական դարձումն բոլոր մարդոյն առ աստուած. *որով* մարդն աստուածային քաղցրութեամբն զմայլի. որպէս հրեշտակք ի բոլոր սրտէ՝ յամենայն անձնէ և յամենայն զօրութենէ միշտ ներգործաբար դիմեն առ աստուած. և յիւրաքանչիւրսն ճառագայթի՛ ի նմա՛ աստուած: - 462. Զի ի խորհուրդ մկրտութեանն ի յառնուլ ջուր, հոգին սուրբ և զօրութիւն բարձրելոյն և ողջոյն հօրն ի ձեռն հրեշտակին *որ* հերքէր զմեղս ըստ մկրտութեան: - 462. *Զորմէ* ասի յերգս՝ «տէր արար զքեզ. և հաստատեաց զքեզ. և պատրաստեաց զքեզ յարգանդէ գեղեցիկդ ի կանայս»: - 462-463. Այլ և ի վերայ ա՛յնր՝ ունէր և զերրորդն սրբութիւն. *որ* կուսութեան իւրոյ էր յատկական. ջնջումն ի սկզբնական և յարմատոյ մեղաց: - 463. Իսկ զչորրորդ սրբութիւնն *որ* է՛ միաւորութիւն բանականին առ աստուած, և միշտ ներգործապէս դիմել առ աստուած որպէս հրեշտակք. ընկալաւ աստուածածին կոյսն ի յղանալն զորդին աստուծոյ: - 463. Այսպէս գերազա՛նց է քան զամենայն շնորհք հեղեալ ի ստեղծուածս. այս է գերագոյն շնորհք. *որ* պատրաստեաց զկոյսն առ մայրութիւն աստուծոյ: - 463.

Երրորդ՝ զի նորոգումն *որ* լինելոց էր ծննդեամբ կուսին՝ ո՛չ միայն մարդկան էր, այլ և հրեշտակաց. պարտ էր հրեշտակին սպասաւորել կուսին: - 463. Նա՛խ՝ զի աստուած էր ողջոյնառաքն. *որ* խօսէր զկոյսն ի հարսնութիւն կուսութեան, կուսաբեր լինիլ պտղովն: - 464. Եօթներորդ՝ «ուրախ լեր» ընդդէմ տրտմութեանն. *որ* ասացաւ եւայի «տրտմութեամբ ծնցիս որդի»: - 464. Իններորդ՝ զի ո՛չ մարգարէիւ յայտնեաց կուսին. *որ* էր աղօտ գիտութիւն համեմատեալ ընդ հրեշտակին: - 464. Տասներորդ՝ այն քան գերազանցեաց պատիւ կուսին, զի այնմ *որ* մարգարէք գուշակէին զլինելոցն. ի սմա ընդ խօսից հրեշտակին եղև կատարումն: - 464. Մին ի մէջ եւայի և բանսարկուին. *որով* մուծաւ մահ ի ներս: - 465. Եւ միւս ի մէջ մարիամու և հրեշտակին. *յորմէ* եղև կեանք: - 465. *Որ* ցուցանեն զչորեսին առաքինութիւնս նորա: - 465. Այլ և ծանիր. զի է բան յիշէ սուրբ գիրք *զոր* խօսեցաւ աստուածածին կոյսն: - 465. *Զոր* պարտ է մեզ զնոյն առնել: - 466. Ապա ուրեմն կոյսն *որ* ծնաւ զէմմանուէլն՝ մա՛յր է աստուծոյ մարդացելոյ: - 466. Հինգերորդ, որդի կնոջ ասի ոք՝ *որ* լինի մարմին ի նմանէ. թէպէտ հոգին յաստուծոյ է: - 466. Նոյնպէս որդին աստուծոյ որդի է կուսին *որ* էառ մարմին ի նմանէ. թէպէտ աստուածութիւնն ի հօրէ է. ապա ուրեմն աստուածածին է կոյսն: - 466. Վեցերորդ, մայր մարդոյ ասի կինն *որ* ծնաւ զմանուկ. թէպէտ հոգին ո՛չ է ի մօրէն. այլ վասն միաւորեալ մարմնոյն մարդածին կոչի: - 466. ...եթէ զոր օրինակ բժիշկք՝ ո՛չ ի սկիզբն ցաւոց և ո՛չ ամենևին անագան տան զդեղ հիւանդին. զի անօգուտ է և վնասիչ. այլ ի դիպօղ ժամու *յորում* առողջացուցի: - 467. Երկրորդ՝ զի այն քան բազմութիւնք հաւատացելոց կորնչելո՛ց էին, *որ* ո՛չ վայելէր ամէնիմաստ գիտութեանն աստուծոյ: - 467. Այլ ի դիպօղ ժամու *յորում* ցաւն զօրացաւ և կարօտացաք բժշկութեան...: - 467. Հինգերորդն Մովսէսի. իսկ Վեցերորդ դարն՝ *յորում* ծնաւ Փրկիչն մեր Քրիստոս. և փրկեաց և բժշկեաց զմեզ: - 467. Ութերորդ՝ զի լիցի պատճառ փրկութեան *որ* եղև պատճառ գլորման: - 468. Զի մարդն ցանկացաւ գիտութեանն աստուծոյ *որ* է յատուկ որդւոյ՝ և անկաւ. նոյնպէս նովին գիտութեամբն պարտ էր և կանգնիլ: - 468. Այլ և իմաստութեանն հօր պարտ էր նորոգել զխնդրօղ իմաստութեանն *որ* է մարդն: - 468. Այս քան վասն բանին մարդեղութեան, զի բազում են պատճառք ասացեալ վարդապետաց. *զոր* մեք ըզսակաւն եդաք աստ: - 468. Յետ *որոյ* ծնեալ ի նոյն կուսական արգանդէ և ո՛չ յայլ ինչ մասնէ: - 469. Երրորդ՝ զի ո՛չ ինչ *յորոց* ստեղծ աստուած գարշի բնակիլ. մանաւանդ յարգանդի զարդարեալ կուսութեամբ. զի *զոր* ստեղծ ձեռօք, բնակէ՛ ի տան ձեռագործի իւրոյ: - 469. Պարտ ուրեմն էր բանին կենաց ելանել յայնմ անդամոց, *որ* պատերազմի՛ ընդ մահու: - 469. *Որ* է որովայն կեանք և մահն: - 469. *Որ* ո՛չ ըստ բնութեան կարգի, այլ ըստ անբաւազօր կարողութեանն աստուծոյ միայնոյ: - 469. Նա միա՛յն էր մայր և կոյս. *որ* ընդ աստուծոյ ունէր զորդին: - 469. Եւ այս ո՛չ զհետ իրերաց. այլ համանգամայն յանկարծօրէն ի վայրկեան ժամու զօրութեամբ հոգւոյն սրբոյ. *որոյ* յանկարծօրէն է ներգործելն աստուծոյ: - 470. Եւ այն ևս սքանչելիք, *որ* ի փոքրագոյն մարմինն ընկալեալ եղև հոգի բանական, և տեսակաւորեալ որպէս քառասնօրեայ մանուկ յարգանդի: - 470. *Որ* նստի ի քերովբէս՝ ի մսուր դնի: - 470. Յաղագս որոյ պատրաստեաց նիւթ արեան, կազմեալ զօրութեամբ հոգւոյն. *որով* լինիցի ճշմարիտ մայր քրիստոսի: - 470-471. Եւ երեքեան ծնունդ քրիստոս՝ ըստ երից գոյացութեանցն *որ* ի քրիստոս. այսինքն աստուածութիւնն՝ մարմինն՝ և հոգին: - 471. Չորրորդ եղանակն *որ* կատարումն է այլոցն՝ ի կնոջէ առանց առն. որպէս ծնունդն քրիստոսի զօրութեամբ հոգւոյն սրբոյ: - 471. Ո՞րպէս է միածին *որ* այս քան ծնունդ ունի: - 472. Եւ ոմանք յաւելուն այլ ևս զամօթ՝ զտրտմութիւն՝ և զցաւս մարմնական. *որ* և սոքա ընդ նոսա են: - 474. Եւ յիսուս անունն՝ են վեց գիր. *որ* կարեն լինիլ սկիզբն այսպիսի ասութեանց. այսինքն Յարազւարճութիւն տրտմեցելոց: - 474. Իսկ զօծումն բնութեանն միաւորութեան՝ ընկալաւ ի կուսական արգանդին. ուր խառնեալ միաւորեաց զմերս բնութիւն ընդ իւրում աստուածութեանն և ծնաւ քրիստոս *որ* թարգմանի օծեալ: - 475. *Զոր* զայսպիսի խորհօղսն և ասացօղսն նզովէ՛ եկեղեցի ամենայն ուղղափառաց ամէն: - 475. Եւ այնք *որ* էութիւն ընդ էութիւն միաւորին՝ են *որք* շփոթմամբ միաւորին. որպէս ջուր ընդ գինի. և **դ** տարերք: - 475. Եւ են *որք* անշփոթ միաւորին. որպէս հուր և երկաթ. հոգի և մարմին. սեռ ի տեսակս. և տեսակ յանհատս: - 475. Իսկ միաւորութիւնն *որ* է շաղկապաւ, և սա՛ բաժանի յերիս: - 476. Զի են *որ* միաւորեալքն էութիւնք են և շաղկապն պատահումն. որպէս երկուք ոմանք անջատեալք ի միմեանց՝ պատահմամբ սիրոյ շաղկապին: - 476. Եւ են *որ* էութիւնք են և էութեամբ շաղկապին. որպէս երկոքին նիւթք սոսընձով կամ երկաթով: - 476. Յասիցելոցս ո՛չ ոքն յարմարի միաւորութեան փրկչին. բայց միայն երրորդն առաջնոյն. այսինքն էութիւն առ էութիւն անշփոթ խառնումն. որպէս հոգւոյ և մարմնոյ. *զոր* և յառաջիկայդ ցուցցի: - 476. Առաջին միաւորութիւն ստոյգ և ճշմարիտ՝ հոմանիւթ մասնաւորաբար որոշեցելոց. *որոց* ոչ ինչ

տարանիւթ ընդ մէջ երևի. որպէս երկուց ջահից լուցելոց միաւորութիւն լուսոյն: - 476. Յետ այսորիկ երկրորդ միաւորութիւն սովորեցաք կոչել քէպէտ և ո՛չ իսկապէս` և զանհամանիւթից ոմանց. և կամ զիհամանիւթից մարմնոց յարադրութիւն. *որոց* ընդ մէջ է մակերևութիւն միայն: - 476. Երրորդ առ այսոքիւք` միաւորութիւն անուանեմք և զխառնուածս երկուց նայից ըստ զանազան որակութեանց. *յորում* ո՛չ ոք ի խառնեցելոցն զիւր ծայրագոյն որակութիւնն սեռաբար կարող է պահել. այլ շփոթեալ անկանի ի ծայրագոյն որակութենէն. որպէս զջուրց և զգինեացն խառնուած, և զմեղերաց: - 476. Չորրորդ` միաւորութիւն ասեմք գոլ և զզանգուածն *որ* ի նա է՛ և ի չորո՛յ բնաւորեցաւ լինիլ. *յորում* ո՛չ ամբողջ պահի բան որակութեաննն: - 476. Եւ կամ աննիւթ ինչ և անկերպ` ընդ նիւթական կերպարանաց ձևացեալ. *յորում* իւրաքանչիւրոցն էութիւնք անշփոթաբար երևին. որպէս պղինձ գնդացեալ. կամ քուէացեալ: - 476. *Զոր* և մեք առցուք այսպէս: - 477. Որ և զչարչարանքն և զմահն` աստուծոյ մարդացելոյ խոստովանիմք *որով* փրկեցաքն: - 478. Երրորդ` զի քրիստոս զչափ հասակի զադամայն ունէր, *որ* նախ քան զյանցանս և ադա՛մ ոչ ունէր հիւանդութիւն և ո՛չ ծերութեան փոփոխումն: - 480. Ա՛րդ` եթէ նահապետքն ամենայն *որ* **ջճ** ամ կամ աւելի և պակաս ապրէին` ո՛չ ալևորէին, ապա և ո՛չ տէր մեր յիսուս քրիստոս: - 480. Չորրորդ` որպէս արու բռնացա՛ւ տէր ի քակել զօրէնս բնութեան. և խզեաց զկապ կուսանաց և զմայրական. այսինքն զի *որ* մա՛յր է` կոյս ո՛չ է. և *որ* կոյս է` մայր ո՛չ է: - 480. Զի՞նչ է *որ* ի փրկչական պատկերն գիր ի ձեռն և խաչ ի գլուխն նկարեն: - 481. Իսկ *որ* ի գլուխն խաչ նկարեն: - 481. Հինգերորդ` զփշեղէն պսակն *որ* ի խաչին ի գլուխն էր` նշանակէ՛: - 481. Զի՞նչ է ձեռագիրն ադամայ *զոր* պատառեաց քրիստոս: - 481. Եւ այս ևս կրկին է գիր և դպրութիւն. մին անջինջ և յաւիտենից *որ* առ աստուած. և միւսն ժամանակեայ և ջնջելի *որ* առ մեզ. *զոր* մեր գործօք և կամօք գրեմք և ջնջեմք. թէ զչար թէ զբարի: - 481. Երրորդ ձեռագիր քրիստոնէիցս առ աւազանաւն. *որ* հրաժարիմք ի սատանայէ՛ և դաւանիմք զքրիստոս: - 482. Իսկ զգիր քրիստոնէից *զոր* յետ աւազանին մեղանչեմք և գրեմք զյանցանս, զայն պատառէ ապաշխարութիւնն. *որ* է՛ զղջումն սրտի և խոստովանութիւն լեզուի և հատուցումն գործոց մարմնոյ: - 482. Եւ ա՛յն է յայտնութիւնն *որ* հայր վկայեաց ի վերայ որդւոյն, և հոգին սուրբ աղաւնակերպ իջմամբ: - 482. *Զոր* այլք ասեն թէ յետ **լ** ամաց: - 482. *Զոր* ի ժողովն քաղկեդոնի հաստատեցին զսոյն տօն ի **իե**ն դեկտեմբերի. պատճառելով թէ` ի հռօմ դարձի արեգական տօն կատարէին. և փոխեաց զայն պետրոս տօնել արեգականն արդարութեան: - 482. Այլ մեզ այսպէս իմանալի է. զի թշրինի մէկն նուիրեալ օր սուրբ տեառն կոչեսցի ասացաւ. *որ* է՛ սեպտեմբերի **ժը**: - 483. Եւ թշրինի **ժ** միշտ առաջին օր քաւութեան. *յորում* մտանէր քահանայապետն ի սուրբն սրբոց: - 483. Եւ թշրինի **ժե**` սկիզբն տօնի տաղաւարահարաց, *որ* է՛ հոկտեմբերի **բ**. և անտի մինչև ի **իբ**ն թշրինի` և ի հոկտեմբերի **թ** կատարումն տօնին: - 483. Եւ յղութիւնն եղիսաբեթի յաւուր շաբաթու ի լուսանալ **ժե**րորդ ամսոյն *որ* է թշրինի **իզ**: - 483. Ա՛րդ` աստի մինչ ի նիսանի **ժէ**, և յապրիլի **է**` կատարի է ամիս. *յորում* առաքեցաւ գաբրիէլ առ կոյսն մարիամ յաւուր չորեքշաբաթու: - 483. *Որ* կատարի տեառնընդառաջն փետրվարի **ժդ**: - 483. Ա՛րդ` կարգեցին բազմազան վկայութիւնս *զոր* հաստատապէս տօնեմք զծնունդն քրիստոսի ի վեցն յունվարի: - 483. Եւ աւուրք պաշտամանն էր երկոտասան. **ե** օր քաւութեանն վասն որթոյն յանապատին. և **է** օր տաղաւարահարացն ի յիշատակ խորանաւ բնակելոյն յանապատին ամս **խ**. և այլ սքանչելեացն *զոր* գործեցաւ անդ: - 483. Չորրորդ` զի *որ* յամսեանն զերորդի հրեշտակապետն եկն առ կոյսն, ի յղութենէն եղիսաբեթի ասաց գոլ **զ** ամիս, և ո՛չ յաւետեացն: - 483. Ո՞ր քան ևս քահանայապետին *որ* զերկոտասան օր պարտ էր խնկօք պաշտել ի մէջ տաճարին ի ժամ աղօթիցն. քէպէտ ի սուրբն սրբոց միանգամ ի տարւոջն: - 483-484. Անմարթ էր թողուլ զժողովուրդն ի դրան տաճարին և մերձիլ յանկողինս. և ըստ օրինացն գօրեայ սրբութիւն ստանալ. *որ* անհնա՛ր է ամենևին. քէպէտ ասեն` գոյր ա՛յլ քահանայապետ *որ* զկարգ պաշտամանն կատարէր: - 484. *Որ* ստոյգ նոյն ծննդեան օրն իմանի...: - 484. Եւ այս ամենայն ազգաց յա՛յտ է, *որ* ի յունվարի վեցն տօնեն մկրտութեան. ապա ուրեմն նոյն օրն է և ծննդեանն: - 484. Ութերորդ` զի թէ հաւատան աւետարանին և ոչ ստեն լ ամաց գալ քրիստոսի ի մկրտութիւն, ի հարկէ՛ պա՛րտին կատարել և զմկրտութիւնն ի նոյն ի տօնի ծննդեանն իւրեանց ի դեկտեմբերի **իե** *որ* իցեն ամենևիմբ սուտ: - 484. Իններորդ` զի և նոքա իսկ *որ* զայս ասեն` առնեն յունվարի **զ** ճրագալոյց ընդ մեզ. և ճրագալոյցն ո՛չ է մկրտութեան, այլ ծննդեան ի մէջ գիշերի: - 484. Երկոտասաներորդ` յա՛յտ է յանուանէ ամսոյն *որ* կոչի յունվարի. և յունվար ի հռոմն թարգմանի ծննդեան ամիս: - 484. Երեքտասաներորդ` ականատես տնօրէնութեանն եղբայր տեառն յակոբոս *որ* կարգեաց զընթերցուածն, յունվարի վեցն աւանդեաց զտօնն ծննդեանն. և ի նոյն օրն դարձեալ

զմկրտութեանն: - 484. *Զոր* ունի զայս աւանդ այժմ սուրբ և ուղիղ աւանդապահ եկեղեցիս հայաստանեայց ըստ վկայութեանս *որ* եդաւ: - 484. ...զի զքառասնօրեայ գալուստն ի տաճարն՝ ըստ ծննդեանն տօնեսցեն և ո՛չ ըստ յայտնութեանն. *որ* է՛ յունվարի վեցն. *զոր* մեք տօնեմք **խ** օր թուեալ մինչև ի **ժդ**ն փետրվարի: - 485. *Յորում* աւուր նշանք սքանչելեաց եղեն: - 485. Նա՛խ՝ զի *որ* բանն մարդ եղև՝ ո՛չ գարշի յեղեալ օրինացն իւրոց զի վասն մարդկան եդ: - 485. Վեցերորդ՝ զի ցուցցէ զինքն որդի աբրահամու. առ *որ* հրաման թլփատութեանն եղև և խոստումն օրինեալ զաւակին...: - 485. Եւ որպէս զմարմնաւոր թլփատութիւնն աւանդեաց աբրահամու, նոյնպէս զհոգևորն *որ* է՛ թլփատութիւն սրտի...: - 486. Նա՛խ՝ բամբասողօք. *որք* բառնան զքարեկամս և զքարի համբաւս: - 486. Երկրորդ՝ յափշտակողօք. *որք* յափշտակեն զժամանակաւոր բարիս: - 486. Երրորդ՝ հերիտիկոսօք. *որք* բառնան զհոգին: - 486. Չորրորդ՝ բռնաւորօք. *որք* բառնան զմարմինն: - 486. Երկրորդ «ի յորդանան». *որ* ստեղծօղն է տարերաց՝ եդ զինքն ի ներքոյ խոնարհ տարերն ջրոյն: - 487. ...իսկ քրիստոս ո՛չ ունէր զմեղս. վայն այն վաղվաղակի ել ի ջրոյն. և նշանակէ ի մեզ զշնորհաց հեղումն. *որ* մկրտեալն ազատի ի մեղաց և իսկոյն ելանէ յառաքինութիւնս: - 487. Մկրտեալն քրիստոս. *որ* սրբեաց զջուրն և զօրացոյց վերստին ծնանիլ զմեզ: - 487. Նիւքն ջուրն է. *որ* առաւել յարմարի մկրտութեան քան զայլ ամենայն հեղուկ նիւք: - 487. Տեսակն է կոչումն սուրբ Երրորդութեանն *որ* եղև անդ: - 487. Յոգին սուրբ աղաւնակերպ. իսկ Դիտաւորութիւնն հետևիլն ձայնին առ *որ* մկրտի: - 487. Նախ՝ *որ* ասէ «դա՛» նշանակէ զմիաւորութիւն բանին առեցեալ մարմնովն: - 487. Զի ո՛չ ասաց թէ *որ* ի դմա՛ է կամ դոքա ըստ բաժանողաց. այլ թէ դա՛. *որ* մի անձն բնութեամբ միացեալ նշանակէ: - 487. Զի են անուանք *որ* զբնութիւնն նշանակեն որպէս մարդ: - 487. Եւ են *որ* զանձն. որպէս պետրոս: - 487. Եւ են *որք* զանձն և զբնութիւնն նշանակեն. որպէս դա՛, սա՛, նա՛: - 487. Երրորդ *որ* ասէ «որդի» նշանակէ զհաւասարութիւնն ընդ հօր. զի որդին լսի հաւասար հօր: - 487. Չորրորդ *որ* ասէ «իմ». ցուցանէ զքրիստոս գոյակից հօր: - 487. Վեցերորդ *որ* ասէ՝ «հաճեցայ». նշանակէ զմիաւորթիւնն ընդ հօր: - 487-488. Առաջին մկրտութիւն ջրհեղեղն. *որ* եբարձ հատանելով զմեղս յաշխարհէ: - 488. Չորրորդ՝ մկրտութիւնն յովհաննու *որ* մկրտէր ի յապաշխարութիւն. զի կարասցեն ընդունել զհոգւով մկրտութիւնն. վասն այն յառաջէ՛ր և սրբէ՛ր ջրովն: - 488. Յինգերորդ՝ մկրուիթիւն տն այն *որ* ինքն մկրտեցաւ. այլ մկրտիմք և մեք զկատարեալ մկրտութիւն տն ջրով և հոգւով: - 488. Այն է *որ* հրեղէն լեզուաւ սփռեաց յառաքեալսն զշնորհս հոգւոյն սրբոյ: - 488. Վեցերորդ՝ մկրտութիւն *որ* ապաշխարութեան է և արտասուաց և յոյժ տաժանելի: - 488. Ութերորդ ի կատարածի. այն *որ* ո՛չ ի փրկութիւն, այլ ամենայն չարութեան ջնջումն առնելով տանջանօք *որ* է հուրն անշիջանելի: - 488. Եւ զայս հրոյ իմանի *որ* առ գալստեամբն քրիստոսի ոմանց մաքրութիւն ներելեացն լինիլ և առաւել պայծառանալ. *որք* ոսկի և արծաթ և ականս պատուականս շինեցին: - 488. Եւ *որք* խռիւ փայտ՝ խոտ՝ և եղէգն, այրեսցի անշէջ հրով: - 488. Մկրուիթիւնն քրիստոսի և յովհաննու *որո՞վ* համաձայնին և զանազանին: - 488. Այլ զանազանին Նախ ի ձևն. զի մկրտութիւնն յոհաննու տուեալ լինէր յանուն այնմ *որ* գալոցն էր. իսկ քրիստոսին յանուն Երրորդութեանն: - 488. Երրորդ՝ ի վախճանն. զի յովհաննուն ունէր կարգեալ առ մկրտութիւնն քրիստոսի. զի յա՛յն սովորեցուցանէր զժողովուրդն *որ* էր կատարեալ մկրտութիւն: - 488. *Որ* զադամ խաբեաց օ՛ձ էր. այժմ ի յորդանան վիշապ: - 488. *Որ* զապականութիւն և զմահ եբարձ աւերելով զնա և ազատելով զհոգիսն: - 489. Այն է տուտն *որ* զերրորդ մասն աստեղաց ընդ իւր քարշեաց: - 489. Եւ ա՛յն է *որ* ասաց առաքելոցն «կոխել զօձս և զկարիճս»: - 489. *Զոր* մկրտութեամբն իւր քրիստոս սրբեաց զջուրն, և արար սրբութեան նիւք և կենաց: - 489. Եւ ա՛յլ առաքինութեամբք կոխեալ հատանեմք զխայթոցն *որ* է՛ ներգործական մեղքն և մահ հոգւոց և դժոխք: - 489. Զնախանձն՝ տարածումն բազկացն. *որ* նշանակէ՛ զգիրկս արկանելն սիրով: - 489. Զագահութիւնն՝ բազմաբաշխութիւնն. *որ* ետ զմարմին իւր ի կերակուր և զարիւնն իւր ըմպելի...: - 489. Վեցերորդն է մերկացումն մարմնոյն. ի նշան խոստովանութեան մերոյ *որ* պարտ է լինիլ մերկապարանոց: - 489. Երկրորդ՝ զվեց կենդանակերպսն կոխեաց, *որ* էր **եժ**ան աւուր ճանապարհ ի կուսէն ի խոյն ընթացեալ: - 490. Դարձեալ նշանակէ զմահն քրիստոսի. *զոր* արեգակն արդարութեան կամեցաւ ի մարմին իւր թաքչիլ. զի զմեզ լուսաւորեսցէ: - 490. Դարձեալ նշանակէ՛ զխաւարումն այնմ ժամանակի, *յորում* եթէ գուցէ հնար՝ ընտրեալքն մոլորեսցին: - 490. Այլ և գիտելի է, զի ամենայն պատարագ յերեք դէմս որոշի. *որ* է՛ մատուցօղն, և ընդունօղն, և պատարագն: - 491. Զի է՛ *որ* մատուցօղն մեծ է քան զպատարագն. որպէս հին օրինաց պատարագն. զի անասունք էին: - 491. Եւ է՛ *որ* պատարագն մեծ է քան զմատուցօղն. որպէս նոր օրինացս մարմինն քրիստոսի մեծ է քան զքահանայն: - 491. Եւ է՛ *որ*

մատուցօղն մեծ է քան զընդունօղն. որպէս մելքիսեդեկ քան զաբրահամ. և քահանայն մեծ է քան զժողովուրդն *որ* ճաշակէ: - 491. Իսկ չորրորդն է՛ պատարագ տն մերոյ քրիստոսի *որ* ի մի դէմ անձնաւորութեան **գ** երես պատարագին բացայայտեցաւ...: - 491. Զի զայն *որ* փայտիւն յաղթեաց՝ յաղթեսցէ. և զայն *որ* փայտիւն անկաւ՝ փրկեսցէ: - 491. Զի ըստ այնմ *որ* կամաւ մեռաւ՝ դատապարտեաց զմահ: - 492. Զի՞նչ է է բանն *որ* խօսեցաւ ի խաչին: - 492. Նախ անարգեցաւ ի պարտէզն զկնի արեան քրտանցն *յորում* մատնեցաւ ի յուդայէ. և իբրև աւազակ ըմբռնեցաւ և կապեցաւ: - 492. Արդ զապարանքն պիղատոսի իբր զմի տեղի առեալ. թէպէտ կրկնեալ եղև. և խաչելութեանն տեղի լինի **գ**. և գերեզմանն *յորում* հանգեաւ է: - 493. Նախ նշանակէ զպէս պէս զօրութիւնս քրիստոսի. *որ* երբեմն զբարձրագոյնս ներգործէր և երբեմն զնուաստագոյնս երևեցուցանէր յինքեան: - 493. Խորութիւն հաւատոյ. *որ* յոյժ իմաստուն և խոնարհ է: - 493. Հինգերորդ՝ նշանակէ՛ զչորս առաքինութիւնս ի *յորս* պարտի տարածիլ ներքին մարդս մեր...: - 493. Եօթներորդ՝ գլուխն և պատուանդանն նշանակէ՛ միաւորեալ զաստուածութիւնն և զմարդկութիւնն քրիստոսի. *որ* խաչեալն է ի նմա: - 493. Դարձեալ նշանակէ **դ** թև խաչին՝ փրկութիւն գոլ և լոյս հոգւոյ *որք* ի **դ** ծագս տիեզերաց հաւատացեալք են: - 493. Բնականն *որ* ադամայ: - 494. Դարձեալ՝ խաչաձև է **դ** կողմն աշխարհի. *որ* է՛ Արևելք, Արևմուտք, Հիւսիս, և Հարաւ: - 494. Այլ և խաչաձև թռչին օդապարիկ թռչունք. *որ* է տեսական միտք. զթև տարածեալ յերկոսին կողմանս: - 494. Դարձեալ վայելո՛ւչ էր փրկութեան մեր լինիլ ի ձեռն փայտի. *որ* ցուցանէ զփայտն կենաց ի մէջ դրախտին: - 494. Եւ փայտն *որ* քաղցրացոյց զջուրն ի մեռայն. և ի վիմէն ջուր բղխեցոյց: - 494. Այլ և գաւազանն ահարօնի *որ* ծաղկեցաւ: - 494. Եւ ձողն *յորում* օձն պղնձի բարձրացաւ: - 494. Եւ լծակն *որով* ողկոյզն բերաւ: - 494. Այլ և ցիցն ի ձեռին յայելի *զոր* վարսեաց ընդ ծամելիսն սիսարայ: - 494. Այլ և գաւազանն ի ձեռն իրեշտակին. *որ* ընկալաւ զպատարագն գեդէովնի: - 494. Այլ և ցուպն հովուական դաւթի. *զոր* տարաւ ընդ դէմ գողիաթու: - 494. Նաև փայտն *որով* զերկաթն ի յորդանանէ՛ վերածեաց: - 494. Այսպէս. **բ** ոտիցն. **բ** ձեռացն. **ա** ուսոյն վերայ. **ա** խաչին թևին. **ա** պիղատոսի տախտակին. **բ** այն տախտակին *որ* պատուանդան էր և ոտքն ի վերայ բևեռեալ: - 495. *Ո՞ր* է դրախտն *զոր* խոստացաւ աւազակին: - 495. Զի պետրոս քարոզեալ ասէ հոգւոցն *որ* ի բազում ժամս կատարի: - 495. Եւ այլք ասեն՝ դրախտ զտեսութիւն աստուածութեանն կոչէ. *զոր* յետ աւանդելոյ հոգւոյն ետես աւազակն. և այս ուղիղ է. զի ո՛չ ասաց թէ՝ իցեմք, այլ թէ՝ իցես: - 495. Աւազակն *որ* յաջմէն խաչեցաւ՝ դէմաս էր անունն. և *որ* յահեկէն՝ կոստաս: - 495. *Որ* էած ապտակ քրիստոսի՝ մաղքո՛ս էր անունն: - 495. *Որ* եթուք՝ ոչքոր: - 495. *Որ* զլեղին եբեր՝ ռաքոս: - 495. *Որ* խոցեաց՝ ղունկիանոս: - 495. Ներքինոյն *զոր* փիլիպպոս մկրտեաց փոթամո՛ս էր: - 495. *Որո՞վ* զանազանի մահն քրիստոսի և հասարակ ամենայն մարդոյ: - 495. Գիտել պա՛րտ է, զի առ հասարակ մահն, հարկաւոր կիրք է մարդկայինս բնութեան. զի ամենայն *որ* ծնանի՝ մեռանի: - 495. *Որոց* առաջինն է մեղք: - 496. Զի *որ* ասի մահ, նոյն և նինջ կոչի ի սուրբ գիրս...: - 496. Զի *որ* վախճա՛ն է կենաց, նոյն և սկիզբն կենաց. այսինքն վախճան ժամանակին, և սկիզբն մշտնջենաւորին: - 496. Երկրորդ՝ զմահ կրեաց. զի ինքն եդ զմահն պատիժ ի վերայ մեր. իսկ զմեղքն և զապականութիւն՝ բանսարկուն և ադամ արկին ի բնութիւնս. վասն որոյ *զոր* ինքն ոչ եդ՝ ո՛չ կրեաց մարմնով իւրով: - 496. Զոր օրինակ ի բարձր ուստէք քար հոլովեսցի, և *որ* մօտն կացցէ ասէ ցնա՝ երթալ ունիս մինչ ի ներքին վայր տեղիս և ապա դադարիս: - 497. Ա՛րդ՝ *յորոց* ազատէրն զմեզ՝ աւելո՛րդ էր յինքեան կրել: - 497. Նոյնպէս և զկամաւոր մահն *որ* է՛ դեղ և առիթ յաւիտենական կենացն, նախ ինքն ճաշակեաց և ուսոյց հետևողաց իւրոց: - 497. Որպէս այնոքիկ *որք* զօրացան այսու մահուամբ և զորդեգրութեանն ընկալան շնորհ և նահատակեցան, նոքա չարչարակից եղեն քրիստոսի, և փառացն հաղորդակիցք: - 497. Եւ ունի մահն կրկին յատկութիւն *որ* ընդ դէմ է երկուց ծայրիցն. այսինքն զի է՛ վախճան կենաց՝ և է՛ սկիզբն կենաց: - 497. Սկիզբն կենաց՝ ըստ այնմ *որ* վախճա՛ն է կենաց՝ վախճա՛ն է մեղաց: - 497. Եւ ըստ այնմ *որ* սկիզբն է կենաց՝ ընդ դէմ է ապականութեանց: - 497. Եւ պատճառն ասացաւ ի վերոյ, զոր ինչ ինքն եդ զպատիժ՝ նմանեաւն եբարձ. և *զորս* յանձնիշխան կամաց մարդոյն և ի բանսարկուէն արկածք, զայնոսիկ հակառակաւն ելոյծ տէր մեր յիսուս քրիստոս: - 498. *Որում* փառք և զօրութիւն յաւիտեանս ամէն: - 498. Այլ հերձուածօղք ոմանք *որք* են դասք երկաբնակաց՝ ապականացո՛ւ ասեն զանապական մարմինն կենարարին: - 498. Իսկ զի անապական է մարմին կենարարին՝ է՛ ի դաւանութենէ հաւատոյ. *զոր* ունիմք և եմք անփոփոխ: - 498. Եօթներորդ՝ ի տարրական հողոյ ստեղծեաց աստուած ադամայ անապական մարմին և եդ ի դրախտին. *որ* մեղօք յանցեալ՝ եղև ապականացու: - 499. Իններորդ՝ խորհրդական մարմինն սուրբ *զոր* բաշխեաց ի

վերնատունն՝ էր անապական և կենարար...: - 499. ...և յետ մեղացն եղև ապականացու և կատարեալ. և երևի թէ ապականութիւնն առնէ կատարեալ զմարդն *որ* այլայլօ՛ղ է և ապականագործ: - 500. Դարձեալ ասեն նոքա, մեր մարմինս ապականացո՛ւ է. իսկ թէ անապական մարմին էառ քրիստոս, ո՛չ արար փրկութիւն մեզ. այլ առաջին բնութեանն ադամայ *որ* էր անապական ի դրախտին: - 500. Դարձեալ ասեն նոքա, եթէ մարմինն քրիստոսի փոփոխէր աճելովն *որ* տեսա՛կ է ապականութեան: - 501. Դարձեալ ասեմք, փոփոխումն և աճումն հասակին ո՛չ եթէ ապականութեան էր ցոյցք. այլ զի զճշմարիտ մարդեղութիւնն հաստատեսցէ ընտել սովորութեամբ մեր *որ* ի տղայութենէ զարգանամք: - 501. Ապա թէ ոչ՝ նա՛ *որ* զադամ երեսնամեայ ստեղծ, կարէ՛ր և նոյն հասակաւն ծնանիլ. այլ այն ո՛չ լինէր ըստ սովորութեան մեր որպէս ցուցաւ ի վերոյ: - 501. Եւ դարձեալ ասեմք, թէ կերակուրն մասն է ապականութեան, *զոր* յանմարմնութեանն եկեր առ աբրահամ զի՞նչ ասէք: - 501. Աւա՜ղ անբան մտահաճութեան նոցա. *որք* զմիայն տէրն ուրացեալ, ածեն ի վերայ ինքեանց զարագահասն կորուստ: - 503. Նոյնպէս և հոգւոցն *որ* ի դժոխս լոյս ծագեաց հոգւով և քարոզեաց զփրկութիւն: - 503. Որ և անդ ժամանեաց տէրն և կապեաց զհզօրն. և զկարծրացեալ ամրոցն աւերեաց. և կողոպտեաց ի նմանէ զհոգիսն մարդկան *որ* յադամայ հետէ ընդ բռամբ ունէր: - 503. Ո՞ւր էր դժոխքն *որ* աւերեցաւ: - 504. Ուր արկեալ էր սատանայ զաթոռ իւրոյ իշխանութեանն. և անդ արգելեալ բանտէ՛ր զհոգիսն *որ* յադամայ. մինչ ի գնալ անդ անմահ թագաւորին մերոյ և աստուծոյ յիսուսի քրիստոսի: - 504. Դժոխքն այն *յորում* նախ քան զքրիստոս հոգիսն արգելոյր սատանայ՝ աւերեցաւ յաւիտեան: - 504. Եւ *որք* **դ** ասեն՝ զներքին դժոխքն մահու չափ մեղաւորացն ասեն. և զքաւարանն ներելի մեղաւորաց. և զլիմպոսն արդարոց. և զդժոխս ոչ մկրտելոցն: - 504. Երկրորդ՝ վասն բազում մասանցն. *որք* կրեն զտանջանս մարմնոյ մասամբ և զգայութեամբ. և հոգւոյ զօրութեամբ և մտաց իմացմամբ: - 505. Ապա *ո՞ր* է դժոխք ներքին *որ* ասէ մարգարէն «փրկեցեր զանձն իմ ի դժոխոց ներքնոց»: - 505. Ասեմք ներքին դժոխք զհոգւոցն. և միջին զգերեզմանս. և վերին զմեղքն *որ* է՛ ի հոգիս: - 505. Իսկ միջին դժոխք *որ* կոչի բանտ դժոխոց՝ է՛ միջակ մեղաւորաց. *որք* ունին հաւատ և ո՛չ գործք. որպէս չար հաւատացեալք. կամ գործք և ո՛չ հաւատ. որպէս թերահաւատք և անհաւատք: - 505. Իսկ վերջին դժոխք *որ* կոչի անջրդի գուբ, նոցա՛ է *որք* ո՛չ ունին չար և ո՛չ բարի...: - 505. Քրիստոս ի *յո՞ր* դժոխք էջ: - 505. Ա՛րդ՝ նոքա *որք* զայս ասեն՝ երիւք հակառակին սուրբ գրոց: - 505. Նախ ասեն թէ ի չորրորդ դժոխքն գնաց *որ* է՛ վերին և ո՛չ ներքին: - 505-506. Վեցերորդ՝ ամուրն սատանայի է ներքին դժոխքն. ուր են դրունք պղնձիք և նիգք երկաթիք. *որ* է՛ մեղքն մեծամեծք և յուսահատութիւնք. և ա՛յն էր ամրոց նորա: - 506. Իսկ առ երկրորդն *որ* ասեն թէ միայն զլիմպոսն աւերեաց և զայլսն եթող: - 506. Այլ ա՛րդ՝ տէրն մահուամբ զմահ մեռոյց *որ* է՛ դժոխքն այժմ. և յարութեամբն եբարձ զապականութիւն մարմնոյ ի հանդերձեալն. ապա ուրեմն աւերեաց զդժոխս: - 506. Իսկ առ երրորդն *որ* ասեն թէ միայն զարդարսն եհան և զայլսն եթող անդ: - 507. Հինգերորդ՝ որպէս մեղքն զամենեսին մեռոյց, և շնորհքն առաւել զամենեսին կեցոյց *որ* գերազօ՛րն է ի վերայ մեղաց: - 507. Իններորդ՝ յա՛յտ է յօրինակէն. զի եգիպտոս հալոց երկաթի կոչի. նշանակէ՛ զդժոխքն *որ* տանջէր զհոգիսն: - 507. Եւ թէ ոք ասիցէ՝ ի յերկրի *որք* հաւատացին փրկեցան, և անհաւատքն ո՛չ նոյնպէս և ի դժոխս: - 507. Եւ դարձեալ *որ* ուղիղն է, որպէս մարմնով տեսին ի յերկրի, նոյնպէս և հոգւով ի դժոխս պարտ էր հոգւոցն հաւատալ ի հոգին քրիստոսի և ազատիլ: - 507-508. *Որք* հաւատացին՝ յաւիտենից փրկեցան. և *որք* ոչ՝ ժամանակեայ. վասն իջման որդւոյն աստուծոյ ի դժոխս: - 508. Որպէս յօրինակէն տեսանի. *որ* թէպէտ առ հասարակ ելին յեգիպտոսէ յանապատն, այլ ոմանք մտին յերկիրն պարգևաց: - 508. Բնական օրն է մարմնաւոր. *որ* բաժանէ զպահս և զուտիսս: - 508. Իսկ զտէրունական տօնս երեկօրեայ յիննն ժամ է աւուրն սկսանեմք. *որ* է՛ **թ** ժամաւ յառաջ քան զհասարակաց տօնս: - 508-509. Նմանապէս և աստ յայսմ աւուր շաբաթու *որ* ի կիրակէ յարութեան տօնեմք, այժմ յիննն ժամուն ի վեր նախատօնակ առնեմք յարութեանն քրիստոսի. և այս վասն բազում պատճառի: - 509. Չորրորդ վկայ լոյսն զգալի. *որ* յիննն ժամուն ծագէ՛ ի գերեզմանէն ակներև ամենայն մարդկան: - 509. *Զոր* ո՛չ կարեն զայս ուրանալ ազգն ժխտողաց: - 509. Եւ տե՛ս, զի լուսաւորիչն կարգեաց զնաւակատիսս յայսմ աւուր *որ* էր յաւուրս նիկիական ժողովոյն. *զոր* յառաջն ունէին ամենայն ազգ, զնոյն կարգեաց մեզ: - 509. Հինգերորդ վկայ, զի ի բոլոր տարին յերեկոյի շաբաթուն կիրակմուտ անուանեն ամենայն ազգք. նոյնպէս և մեք յամենայն շաբաթս յերեկոյին լոյս զուարթ ասեմք, և սուրբ աստուած *որ* յարեար. ի յայս շաբաթի աւուրս սկիզբն առեալ: - 509. Վեցերորդ վկայ նոյն ինքեանք ազգն Ֆռանկաց. *որ* յամենայն շաբաթ օր վիճիլ ասեն. և միս ո՛չ ուտեն ի խորհուրդ նաւակատեաց մեծի շաբաթուս: - 509. Թէպէտ այսօր վասն պատրանաց մարդկան և փոխելոյ զտօնս՝

ոչ ինչ ուտեն զնաւակատեաց *որ* է ձուկն. *զոր* միշտ զքառասնորդ պահքս պղծեալ են ձկամբ և արբեցութեամբ: - 509. Եւ ա՛յս է խորհուրդն *որ* առանց արեան կատարեմք: - 509. Եւ զի **ե** են զգայարանք մեր *որով* մեղանչեմք, **ե** օր է նաւակատեաց ի բոլոր տարին ի քաւութիւն **ե** զգայութեանցս: - 510. Վասն զի բոլոր մարդն երիւք է կայացեալ. *որ* է հոգի և մարմին, և ի մէջ երկուցն շունչն է խառնեալ: - 510. Զմիս կենդանւոյ, *որ* կատարեալ կենդանի է և ի կենդանւոյ յառաջ եկեալ. այն է կատարեալն *որ* **ե** զգայարանս ունի և շարժի և շունչ ունի. և է՛ այս կերակուր ուտեաց և զատկի: - 510. Եւ *որ* խոտէ և ունդ և պտուղ՝ է՛ կերակուր պահոց. զի անզգայ է և անշարժ տեղւոջէ ի տեղի և անշունչ: - 510. Իսկ նաւակատեաց կերակուր այն է՝ *որ* միջակ է սոցա երկոցունց. այսինքն ի կենդանւոյ և ի տնկոյ. որպէս ձուկն, ձու, և կաթն: - 510. Եւ տե՛ս և ի միտ առ. զի սոքա ի մի կարգի՛ են եղեալ. այսինքն ձուկն և ձու և կաթն. և *որ* ուտէ զմինն՝ կերիցէ և զմիւսն: - 510. Եւ վա՛յ ասեմ որովայնամոլ ազգացն *որք* զամենայն պահքս լուծանեն ի ձուկն անխտիր. *որոց* աստուած որովայնք իւրեանց է և փառք ամօթն ըստ առաքելոյ: - 510. Ապա զի ուտիք էր *յորում* բաժանեաց զձուկն: - 510. **Դարձեալ պատճառե՛ն թէ՝ յետ յարութեանն եկեր ձուկն ընդ աշակերտսն. *յորում* կրակեաղ կայծականց տեսին և ձուկն խորովեալ և հաց. և օրն էր չորեքշաբաթի. և ի ե շաբաթի համբարձաւ:** - 511. Եւ **ե** անգամ ի նոյն օրն *յորում* յարեաւ ի գերեզմանէն. *որ* լինի **ժ** անգամ: - 511. Տնկականք՝ այսինքն բոյսք և պտուղք *յորմէ* և հացին թէ ի մարդոյ և թէ յայլ կենդանեաց՝ կերակրելիք են: - 511. Ասեմք եթէ՝ մողեզն և կոկորդիլոսն *որ* քարթոշ ասեն, և յերկրի ազգի ազգի զեռունք արիւն ո՛չ ունին: - 511. *Յորո՞ւմ* ժամու յարեաւ քրիստոս.և քանի՞ ժամ եկաց մեռեալ: - 512. Իսկ թէ *յորո՞ւմ* ժամու յարեաւ, այսմ զանազա՛ն են կարծիք: - 512. Այլ *որք* ուղղաձնութեան են աշակերտք՝ ի մէջ գիշերի ասեն զժամ յարութեանն քրիստոսի ի գերեզմանէն. *որոց* հետևիմք և մեք և հաստատեմք բազում վկայութեամբ և օրինակաւ: - 512. Նա՛խ՝ զի մատթէոս զերեկոյի շաբաթուն և զլուսանալ միաշաբաթին յիշէ. այսինքն զսկիզբն և զվախճան գիշերին. զի յերկուց մէջն *որ* է՛ հասարակն և մէջ գիշերին՝ նշանակեսցէ զժամ յարութեանն: - 512. Վեցերորդ՝ ի մէջ գիշերի հրեշտակն եհար զեգիպտոս. և մովսէս եհան զորդիսն իսրայէլի. *որ* էր օրինակ աւերման դժոխոցն և ազատութեան հոգւոց: - 512. Եւ *յորում* ժամու ել մովսէս յեգիպտոսէ և եհան զժողովուրդն, ի նոյն ժամն յարեաւ քրիստոս ի մեռելոց և եհան ազատեաց զհոգիսն...: - 512. *Որ* այսպիսի էր պատկեր աւուրն. յաւուր **ե** շաբաթոջ երեկոյին ի չորեքտասան լուսնին զգառն զենին և ելին յայգ ուրբաթի **ժե** ամսեանն. և ի կիրակէ անցին ընդ ծովն *որ* էր նիսանի **ժէ:** - 513. Նոյնպէս ըստ օրինակին արար տէր մեր զատիկն յերեկոյի մեծի **ե** շաբաթին. և ի մէջ գիշերին *յորում* ըմբռնեցաւ՝ եհար զանդրանիկսն դիւաց: - 513. *Յորում* աւուր կիրակէի ի մէջ գիշերի ընդ առաւօտն յարեաւ տէրն ի գերեզմանէն. հանելով զհոգիսն յանապատն երկնից. և խաչանիշ գաւազանաւն ընկղմեցաւ փարաւօն յանդունդս դժոխոց: - 513. Ութերորդ՝ արին սամփսոն *որ* օրինա՛կ էր ամենազօր տեառն մերոյ, էջ ի գազա ի տիպ աշխարհի. և օթեցաւ ի պոռնկատունն յօրինակ դժոխոցն. *յորում* պաշարեցին զքաղաքն այլազգիքն: - 513. *Որ* նշանակէ՛ զյարութիւնն քրիստոսի ի մէջ գիշերի զդրունս դժոխոցն խորտակեալ. և զհոգիսն հանեալ ի լեառն երկնային: - 513. Իններորդ, գեթէօն՝ այն *որ* զցօղն ետես ի վերայ գեղման, զհօր իւրոյ զեզն պարարակ_հրամանաւ հրեշտակին ի մէջ գիշերին պատարագեալ. և զանտառն և զսեղանն բահաղու կործանեալ և զերծեալ ի ձեռաց նոցա. *որ* էր օրինակ փրկչին...: - 513. Տասներորդ՝ յաւուր միում այսահարեալ սաւուղ՝ կամէր նիզակաւն բևեռել զդաւիթ յորմն. *յորմէ* զերծեալ ապրեցաւ և գնաց ի տունն: - 513. *Յորում* ի մէջ գիշերի թողեալ զկտաւսն ի գերեզմանի և յարեաւ ել առ հայր ի յերկինս: - 513. Ա՛րդ՝ ներքին այրն նշանակէ՛ զդժոխս. և արտաքինն զգերեզմանն. և սաւուղն զսատանայ *որ* ըմբռնեալ էր զմարդիկ: - 513. Ամաղէկ նշանակէ զսատանայ *որ* գերեաց զհոգիս մարդկան հրէից և հեթանոսաց...: - 514. Չորեքտասաներորդ՝ այլ և ի գիշերի հրեշտակն տն էհան զզօրսն ռափսակայ. *որ* պաշարեալ էին զէմ և փրկեաց զնոսա...: - 514. ...և զաւարն ժողովեցին ի տիպ խորհրդոյն քրիստոսի. *որ* ի գիշերի եհար զզօրութիւնն սատանայի և յառաւօտուն ցուցեալ զինքն աշակերտաց իւրոց և զյարուցեալսն ընդ իւր: - 514. Քսաներորդ, յա՛յտ է յա՛յսմանէ՝ *որ* նախ քան զքրիստոս՝ էր սկիզբն աւուր ծագումն լուսոյն. իսկ յետ յարութեանն քրիստոսի եղև սկիզբն աւուրն ի մէջ գիշերի. զի այժմ ի խաւարէ՛ ի լոյս ճանապարհորդիմք: - 515. Մատթէոս զառաջինն գրէ *որ* ի մէջ գիշերի եկին. և մի հրեշտակ տեսին. և զվէմն առաջի նոցա թաւալեցոյց և նստաւ ի վերայ նորա: - 515. Եւ այս հարցանելի է, զի թէ մագդաղենացին ընդ առաջին կանայսն եկն *զոր* մատթէոս պատմէ և համբուրեցին զոտն յիսուսի...: - 515. Այս է, զի յորժամ ի մէջ գիշերին հրամայեաց հրեշտակն գնալ և պատմել աշակերտացն, ա՛յլ կանայքն *որ* ընդ նմայն էին՝ գնացին...: - 515. Այս թէ *յորո՞ւմ* ժամու յարեաւ քրիստոս: - 515. Այլ *որ*

ուղղապէս հանդիպիմք՝ ասեմք թէ **լ** ժամ մարմինն եկաց ի գերեզմանի. և հոգին **լգ** ժամ և կէս յամեաց ի դժոխս: - 515. Ա՛րդ՝ շաբաթի գիշերն և տիւն **իդ** ժամ. և **զ** ժամ ի կիրակէէն մինչ ի մէջ գիշերն. *որ* լինի **լ** ժամ. իսկ հոգին **դ** ժամ և կէս նախ իջեալ ի դժոխս *որ* լինի **լգ** ժամ և կէս: - 516. Երկրորդ այսպէս, զի յուրբաթի գիշերն ըմբռնեցին մինչև ցվեց ժամն *որ* խաւար եղև մինչև ցինն ժամն: - 516. Եւ յերեկոյի շաբաթուն *յորում* լուսանայր միաշաբաթին լինի յարութիւնն քրիստոսի ըստ մատթէոսի: - 516. Երրորդ սոյնպէս ասեն, ընդ տիւն և ընդ գիշերն **գ**. *որ* է՛ ուրբաթն, և շաբաթի գիշերն, և շաբաթի օրն. և յերեկօրեայ յարութիւնն: - 516. Չորրորդ սոյնպէս ասեն. ուրբաթն և իւր գիշերն *որ* չարչարեցաւ. և շաբաթն և իւր գիշերն *որ* թաղեցաւ. կիրակէ և իւր գիշերն *որ* յարեաւ. *յորում* ժամու և իցէ: - 516. Հինգերորդ *որ* ուղիղն է. զի **բ** է օր. բնական և արուեստական. և ասացեալքդ ամենայն յարուեստական օրս նկատեն և ի չարչարանս: - 516. Քանի՞ են մարիամք *զոր* յիշէ աւետարանն: - 516. Երկրորդ՝ մագդաղենացին մարիամ *յորմէ* **է** դևքն ելին: - 516-517. Չորրորդ՝ մարիամ յակոբայ և յովսեայ մայրն, *որ* էր կին յովսեփայ կոչեցեալն աստուածահայր: - 517. Հինգերորդ՝ մարիամ կղէոպեանց *որ* կայր առ խաչին: - 517. Վեցերորդ՝ մարիամ քոյրն ղազարու. *որ* էօծ զոտէրն իւղով: - 517. Ծալեալ վարշամակն նշանակէ զաստուածութիւնն *որ* գլուխ է. և կտաւն զմարդկութիւնն: - 517. Նոյնպէս և ծածուկ է աստուածային էութիւնն և անհաս յամենայն եղանակաց. միայն խնամօք երևի *որոց* կամի: - 517. Երկրորդ՝ ասելն «չև ևս ելեալ եմ առ հայր իմ», ցուցանէ թէ՝ *զոր* այժմ խնդրես, հոգին գայ և զայդ ամենայն ծանուցանէ ձեզ: - 517. Հինգերորդ, այլք ասեն թէ հայցեաց ինչ շնորհս քահանայութեան *որ* չէր անկ կանանց: - 517. Իններորդ, ասէ «մի՛ մերձենար», զի մարմինն այն պտուղ էր կանուխ դժոխոցն. և ինքն տէր մեր իբրև քահանայ նոր յամենայն ձեռաց պահէր զգուշութեամբ, զի պահեսցէ զնա ի ձեռինն *որ* կարօ՛ղ է ընդունել զայնպիսի պատարագն: - 517-518. Տասներորդ, զի ցուցցէ թէ թշնամեաց նորա ո՛չ է իշխանութիւն բուռն հարկանել զնմանէ. իսկ բարեկամաց նորա գոյ իշխանութիւն այլով իւիք մերձենալ ի նա. այսինքն սիրով և երկիւղիւ յայնմիկ *զոր* ուտեն զնա: - 518. Վասն այն ո՛չ ետ մարիամու մերձենալ. այլ պահեաց զնա բազկին այնմիկ *որ* նստոյց զնա ընդ աջմէ իւրմէ: - 518. Երկոտասաներորդ, «մի՛ մերձենար», եցոյց թէ՝ *որք* յետ յարութեանն և վերանալոյն յերկինս կամին մերձենալ ի մարմին նորա առաքինութեամբ և սրբութեամբ, զախտս հոգւոց ի բա՛ց ընկեսցեն և մի ունայնապէս մերձեսցին ի նա: - 518. Զի՞նչ է *որ* ասէ «հայր իմ և հայր ձեր, աստուած իմ և աստուած ձեր»: - 518. Իսկ փոխումն՝ աստուածամօրն կուսի. *որ* որդին յատկապէս սպասաւորէ մօրն: - 519. Նա՛խ՝ զի հանգիցէ ի վաստակոցն *զոր* **լգ** ամ վաստակեցաւ ի վերայ երկրի: - 519. Զի զանպարտ արիւնն իւր ցուցանէ հօր. և զխոցուած բևեռացն *զոր* վասն մեր ընկալաւ: - 519. Զի արտաքս հանելով ցուցցէ ո՛չ ունել քաղաք *որ* աստէն մնալոց իցէ: - 519. Ա՛րդ՝ եռակի՛ է համբարձումն քրիստոսի. *որ* է յերկրի, ի վերայ երկրի, ի վերոյ երկնից: - 520. Այլ ասեն վարդապետք եթէ՝ ի համբարձմանն քրիստոսի ընդ իրս տեսանելի է *որք* են պարագայք համբարձմանն: - 520. Հինգերորդ՝ համբարձաւ զուարճութեամբ. *որ* վերաբերի առ նոսա *որք* փրկեցան ի դժոխոցն և ընդ նմա ելին յերկինս. զի բ բանակօք ել յերկինս այսինքն սպասաւոր հրեշտակք և մարդկան փրկելովք: - 520. Վեցերորդ՝ համբարձաւ ձայնիւ փողով ըստ դաւթի. և այս վերաբերի յառաքեալսն. *որ* յանձնեցաւ նոցա երթալ քարոզել ամենայն հեթանոսաց. և փողք եղեն տիեզերաց...: - 520. Ութերորդ՝ ետ պարգևս որդւոց մարդկան. զի «ամենայն պարգևք ի վերուստ են» *յոր* համբարձաւ քրիստոս: - 520. *Որո՞վ* կերպիւ համբարձաւ: - 520. Մինչև ցամպս այնու կերպիւ *որ* նախ քան զչարչարանս: - 520. Եւ կալեալ յամպոյն այնու *որով* ի լերինն այլակերպեցաւ: - 520. Երրորդ՝ վասն մխիթարութեան աշակերտացն. զի **խ** օր մխիթարեսցէ զնոսա փոխանակ **խ** ժամուն *որ* տրտմեցան ի մահն քրիստոսի. որպէս ասացաւ թէ յարութիւնն ի մէջ գիշերի, այլ երևեցաւ ընդ արշալոյսն առաքելոցն...: - 520. Հինգերորդ՝ յետ **խ** աւուր համբարձաւ, զի ցուցցէ թէ *որք* զ**ժ** բանեան օրէնսն չորիւք աւետարանաւն լնուն, կարեն յերկինս ելանել: - 521. Վեցերորդ, զի եկեղեցի *որ* է մարմինն քրիստոսի՝ յետ չարչարանաց նեռինն *որ* հանդերձեալ է կրել, զկնի **խ** աւուր յերկինս համբառնալոց հաւատացեալ լինի: - 521. Իսկ *որ* ասէ՝ «նստաւ ընդ աջմէ հօր», աջովն իմանի հաւասար ի փառս աստուածութեանն հօր: - 521. Իսկ *որ* ասէ սուրբն ստեփաննոս «յիսուս կայ ընդ աջմէ աստուծոյ», կալն նշանակէ իբր պատերազմակից և յօգնականութիւն գալ *որք* նահատակին վասն անուան նորա: - 521. Երրորդ՝ զի զամենայն փորւածս լնու. այսպէս և հոգին էլից զամենայն տունն *յորում* նստէին: - 522. Իսկ հոգին սուրբ երագ էջ յառաքեալսն. *զոր* արեգակն քրիստոս բազում ամօք յերկարեալ մարմնով ել յերկինս: - 522. Եօթներորդ՝ զի սաստիկ է. զի ամենայն ոք ի հարկէ զաչս խփէ *որ* հանապազ տեսանեմք զլոյս: - 522.

Իններորդ՝ ի միջոյ ամպոյն փայլէ *որ* ծածկեալ էր ի նմա: - 523. Ջբերան մտացն ասէ. այսինքն է՛ յօժարութիւն հոգւոյն *որ* առնու զհոգին սուրբ...: - 523. Այսպէս *որք* ընկալան զհոգին նս փափագին նմա: - 523. Ութերորդ՝ *որք* առեալ զօդ դարձեալ արտաքս փչեն ներհակ իմն գործով. այսինքն ջերմացուցանեն և զովացուցանեն. վառեն և շիջուցանեն: - 523. Երրորդ՝ վասն զի օրինա՛կ **է է** աւուրցն ի *յորս* երկիր հիմնեցաւ. նաև **է** դարու կենցաղոյս: - 524. Այլ և հանդերձելոյն զի **է** շաբաթէ ի յարութենէն քրիստոսի. *զորմէ* ասէ պօղոս «զատիկ մեր զենաւ քրիստոս»: - 524. Եւ **է** շաբաթն **ծ** օր է. *որ* է՛ ազատարար թիւ և օրինակ հանդերձելոյն: - 524. Առաջին զատիկ բաղարջակերքն. *որ* է **ե** շաբաթին: - 524. Որ և այժմ յոյնք և ասորիք պենտակոստ կոչեն *որ* թարգմանի **ե** երորդ և ո՛չ **է** երորդ: - 524. Վասն է՞ր *յորում* աւուր տըւան օրէնքն՝ ի նմին աւուր և առաքելոց տուաւ հոգին սուրբ: - 524. Նախ՝ զի ցուցանէ թէ *որ* ետ զօրէնսն՝ նոյն առաքեաց և զհոգին և ի նոյն տիպն որոտ և փայլատակումն հողմ և հուր երևեալ որպէս անդ ի լերինն: - 524. Երկրորդ՝ զի *որ* անդ ի ծածուկ ծանոյց զինքն յանձինս մարգարէից նոյն ինքն աստ զԵրրորդութիւնն յայտնեաց առաքելոցն: - 524. Երրորդ՝ զի անդ ո՛չ կարէր արդարանալ զի հիւանդ էր սիրտն, ետ նոր օրէնս ի սիրտս մեր *որ* կարօ՛ղ է արդարացուցնել զժողովուրդս և զհեթանոսս: - 524. Յինգերորդ՝ զանբաժանելի միացումն ի սէրն քրիստոսի. զի *որ* ի խաչին թողին և փախեան...: - 524-525. Աղաւնին աւետաբեր է շնորհաց. որպէս ի տապանն նոյի եբեր զշիւղ ձիթենւոյն. *որ* ցուցանէ զշնորհս մկրտելոցն: - 525. Իսկ հուրն կրկին ունի յատկութիւն. *որ* է լոյս և սրբիչ հաւատացելոց. պատիժ և այրիչ անհաւատից: - 525. Եւ թէ *ո՞րք* են մասնաւոր անդամք եկեղեցւոյ: - 525. Չորեքտասաներորդ, Թէ *ո՞րն* է առաջին մեղք: - 526. Ութևժ, Անթողլի մեղք *ո՞րն* է: - 526. Եւ թէ զի՞նչ է սահման հաւատոյ. և ի *յո՞ր* մասն է հոգւոյն: - 526. Եւ ընդ դէմ երկաբնակաց *որոց* կանայքն մկրտութիւն առնեն: - 526. Եւ տէր *յորո՞ւմ* տեղւոջ կատարեաց: - 526. Երեսունևզ, *Ո՞րն* է է ազգն *զոր* պորտ կոչեմք: - 526. Բարոյականն՝ նոյի, *որ* ի բարուց վարդապետեալ բնակէր ի յանապատ և պահէր զկուսութիւն **եճ** ամ: - 528. *Զոր* տէրն օրէնք կոչեաց զմարգարէական բանն դաւթի. «ո՞չ յօրէնս ձեր գրեալ է ես ասացի թէ աստուածք իցէք»: - 528. Զի՞նչ է նոր օրհնութիւնն *որ* ասէ դաւիթ «օրհնեցէք զտէր յօրհնութիւն նոր»: - 528. Նախ այն է՝ *որ* զորդի ընդ հօր և սուրբ հոգւոյն փառաւորեմք և օրհնեմք **գ** անձինք ի միում բնութեան. և ո՛չ որպէս հինքն հրէական օրհնութիւնս. *որք* ո՛չ օրհնէին զորդի և զհոգի: - 528. ...իսկ թէ մի է, ո՞րպէս կարասցուք ասել մի և զնոյն բանն աստուծոյ *որ* նախ քան զյաւիտեանս. և այսօր գրեալ ի քարտիսի: - 529. Մի է բանն աստուծոյ անձնաւոր էութիւն և գոյացութիւն. *որ* էր ՚ի ծոց հօր անմարմին. *որով* ամենայնքն ի լինելութիւն եկին: - 529. Եւ այս բազումս *որ* առ մեզ է, ի բազում թուղթս գրեալ մի և նոյն բանն է *որ* նախ քան զյաւիտեանս ի հօրէ ծնեալ: - 529. Ասեմք առ այս, եթէ անմարմին իր անկատար ո՛չ լինի. զի սոյն բան աւետարանիս նոյն կատարեալ բանն է աստուծոյ *որ* ի մարմնի է միացեալ. և նախ քան զյաւիտեանս ծնեալ: - 529. Զի բազմանայ և ի միութեան մնայ. բովանդակի անբովանդակապէս. և բաժանի անբաժանապէս. *որ* է մի և նոյն տեսակաւ և գոյացութեամբ որպէս ցուցաւ: - 530. Պատասխանեմք թէ՝ նման է այնմ *որ* ասեն թէ՝ բան աստուած է պատկեր հօր, և մարդն ի պատկեր բանին. ապա մարդն ո՛չ է պատկեր աստուծոյ, այլ պատկեր պատկերի: - 530. Ասեմք առ այս, թէ յԵրրորդութիւնն սուրբ մի է բանն և իմաստութիւնն և բնութիւն և կեանք և ներգործութիւն և այլն ամենայն. բաց յառանձնութենէն *որ* է ծնօղ ծնեալ և բղխեալ: - 530. Ա՛րդ՝ յորժամ ամենայն ինչ նոյն է սուրբ Երրորդութեանն, *որով* յա՛յտ է՝ թէ հայր խօսի, և թէ որդի, և թէ հոգին սուրբ, մի և նոյն բանիւն խօսին...: - 530-531. Ա՛րդ՝ ո՛չ է անյարմար եթէ հայր անբաժանելի բանիւն վկայեսցէ բանին *որ* էր ի մարմնի: - 531. Զի՞նչ է հիմն *որ* եդեալ է յիսուս քրիստոս, և շինուածն ոսկի արծաթ և այլն: - 531. Այս է. զի հաւատն ունի **գ** յատկութիւն. *որ* է՛ հաւատն. և հաւատալն. և հաւատալին: - 531. Այսպէս հաւատալին է քրիստոս. և հաւատալն դաւանելն. և հաւատն *որ* առ մեզ է: - 532. Զ՞ինչ է *որ* քրիստոս գլուխ կոչի և եկեղեցի անդամք: - 532. Նոյնպէս մի է քրիստոս և մի մարմին նորա. *որ* կոչի մի կաթուղիկէ եկեղեցի. որպէս ի հաւատամքն ասի: - 532. *Որով* զփառս որդէգրութեան և զժառանգութիւն արքայութեան ընկալաք. *որ* է՛ անտրտում ուրախանութիւն: - 532. Մի կոչի եկեղեցի՝ ո՛չ տեղեաւ մի. այլ միով հաւատով և յուսով կոչմանն. և միոյ մօր և մի որովայնի ծնունդ աւազանին. և մի կերակուր *որ* է տեսութիւն աստուածային գրոց. և մի մարմին և արիւն փրկական. և մի գլուխ և պսակ և զգեստ ունիմք զքրիստոս: - 533. Ա՛րդ՝ մի է ամենայն ընդհանուր եկեղեցիք *որ* է բոլոր քրիստոնեայք ըստ հաւատոյն և կոչմանն յուսոյն որպէս սեռիւ: - 533. ...և այլ նմանապէս առ այսոքիւք երրորդ եկեղեցի *որով* կարօ՛ղ են հաւաքել ամենայն տիեզերք երկրի և լինիլ միով հաւատովն մի հաւատացեալք որպէս ասացաւ: - 533. Չորրորդ՝ եկեղեցի է անդրանկացն վերինն սիոնի *որ* է հոգիք

սրբոցն ժողովեալ. *զոր* պողոս եկեղեցի կոչէ զորդիս արդարոց կատարելոցն: - 534. **Իբր զի հոմանուն է եկեղեցի և ունի դ նշանակութիւնս. *որ* է՛ ստորինս. և վերինն եկեղեցի. և շինեալք ի մէնջ. և հաւատն ժողովարան մեր**: - 534. Եւ կին վասն գոլոյն *որում* փեսայ կոչի: - 534. *Ո՞րք* են մասնաւոր անդամք եկեղեցւոյ: - 534. Յոտոտելիք՝ *որք* ընտրեն և որոշեն զբարի և զչար: - 534. Ոտք՝ կրօնաւորք և ապաշխարօղք. *որք* կրեն զծանրութիւնս օրինացն: - 534. Իսկ գրապան՝ վարդապետք և քահանայք պահապանք ժողովրդեանն. *որք* բոլորակի զգեստ կոչեցան քրիստոսի: - 534. Զի՞նչ է *որ* ասէ «*Զորս* եդ աստուած յեկեղեցւոջ ա՛յս են»: - 535. Երրորդ, դիւական. որպէս կռոց սուտ մարգարէքն. սեդեկիայն և այլոց բազմաց. *որ* այժմ երևին ի պատասխանիս կախարդաց. նաև հաւկռիչք և գարէդիւթք. *որք* են բնաւ սուտք և ոչինչք: - 536. Չորրորդ, գռեհիկ. *զոր* սովորութեամբ լուեալ ասեն՝ ձմեռն գայ, և զկնի այնորիկ գարուն ամառն և աշուն: - 536. Իսկ հինգերորդ մարգարէութիւն է հոգևոր և աստուածային գիտութեամբ. *զոր* յայտնութեամբ սուրբ հոգւոյն ուսեալք խօսին առ ի զգուշութիւն մարդկան ի հոգևոր շինուածս: - 536. Նախ բնական խելքն. *որ* ի բարեխառն կազմուածոյ հանդիպի. որպէս էր՝ ակիտոփէլին և քուսեայ բարեկամին դաւթի: - 537. Երկրորդ ի կրթութենէ ուսմանց. *որ* արտաքուստ կրթութեամբ ստանայ. որպէս պղատոնին և այլոցն: - 537. Եւ *որոց* պարգևի մասնաւոր այս շնորհ, թէ և ո՛չ բոլորապէս ըստ նոցայն: - 537. Նախ՝ *որ* գիտէ. և թէպէտ գիտէ, ասէ թէ չեմ բաւական խօսելոյ: - 537. Երկրորդ՝ գիտէ *որ* ո՛չ գիտէ. և խոստովանի թէ ո՛չ գիտեմ: - 537. Չորրորդ՝ *որ* ո՛չ գիտէ. և գիտէ *որ* ոչ գիտէ, բայց սնափառ հպարտութեամբն լըլկի և յանդըգնի խօսիլ *զոր* ո՛չ գիտէ: - 537. Նոյնպէս՝ *որք* լսեն և ո՛չ առնեն, չա՛ր է: - 537. Եւ *որք* ո՛չ լսեն և առնեն, բարի՛ է: - 537. Եւ *որք* լսեն և առնեն, առաւել բարեգոյն է: - 537. Եւ *որք* ո՛չ լսեն և ո՛չ առնեն, չարագոյն է: - 537. Երրորդ՝ որպէս *որք* ելեալ ի սահմանէն՝ ո՛չ են ի նոյն տեսակն: - 538. Այսպէս. *որք* ելեալ ի կանոնէն՝ չեն ի նոյն կարգ քրիստոնէից: - 538. Կրկին իշխանութիւն է *զոր* ունի քահանայն. զի կապելն որոշելն է. սարկաւագին *որ* որոշէ՛ զանմաքուրն յեկեղեցւոյ: - 538. Իսկ արձակելն *որ* է՛ մերձաւորել և հաղորդել՝ է՛ յատուկ քահանային: - 538. Սոքա են **բ** սուրքն բաւական *որ* ասաց պետրոս «են աստ **բ** սուրք»: - 538. Եւ սոքա են սուր երկսայրիք տուեալ ի ձեռս քահանայից զինուորաց քրիստոսի. զի յաջ և յահեակ հարցեն. այսինքն զսատանայ և զչարսն ի մարդկանէ *որք* հակառակին բարեաց: - 538-539. Դարձեալ զհերձուածօղս և զհեթանոսս. *որք* ընդ դէմ հաւատոց և գործոց զինին: - 539. Այլ գիտելի է, զի քահանայն զինուո՛ր է. ոչ *զոր* ինքն կամի և ախորժէ զայնս կապէ և արձակէ. այլ *զոր* հաճո՛յ է զօրավարին քրիստոսի: - 539. *Որ* նշանակէ՛ թէ ի յայտնութենէն աստուծոյ և ի շարժմանէ հոգւոյն սրբոյ պարտ է ներգործել զայդ իշխանութիւն: - 539. Որպէս դիմոփիլոս կիսասարկաւագ զքահանայ ոմն արտաքսեաց յեկեղեցւոյ. *զոր* յանդիմանէ՛ սուրբն դիոնէսիոս յութերորդ թուղթն իւր: - 539. Ասեմք առ այս թէ՝ անկատար մնայ ըստ այնմ *որ* ի յանիծելն ո՛չ կատարի. այլ ըստ որում դառնայ ի յանիծօղն կատարի: - 539. Որպէս թէ զվերնագոյնն կամ զանարժանս կամ վասն ախտի ինչ օրհնել կամ ձեռնադրել. այլ *զոր* հոգին յայտնեսցէ զարժանիսն՝ նմա՛ կատարի: - 539. Վերինն *որ* առ աստուած և առ սուրբս, երբեմն յայտնութիւն լսի. երբեմն գոհութիւն և բարեբանութիւն. երբեմն մաղթանք և աղաչանք: - 539. Իսկ առ ներքինս օրհնելն՝ իշխանութիւն և շնորհաց տալն թարգմանի. *որ* քահանայն կամ եպիսկոպոսն տայ. որպէս ցուցաւ ի վերոյ ի **իգ** գլուխն, **հե** համարն: - 540. Եւ թէ ոք ասիցէ, յայտնեա՛ ապա *զո՞րս* պարտ է կապել կամ արձակել: - 540. Ասեմք, եթէ *որք* ի հաւատս ունին թիւրութիւն. որպէս հերձուածօղք և վնասիչք եկեղեցւոյ. և *որք* ի զազիր վարս պղծեալ են գործովք և վնասեն զինքեանս. և անզեղջք են առ երկոսին. յետ մի անգամ և երկիցս խրատելոյ, որոշեսցին յեկեղեցւոյ և պատժեսցին: - 540. Նոյնպէս և *որք* անբիծ են հաւատովք և սուրբ գործովք. և կամ *որք* զղջացեալ յետս դառնան ի մեղաց և ի հերձուածողաց. նոցա՛ է արձակումն և օրհնութիւնն: - 540. Այլ *որ* այսպէս իրաւամբք կապեսցի՝ հնազանդիլ պարտի կապողին որպէս յաստուծոյ շարժեալ: - 540. Իսկ *որ* անհնազանդ է, աստուծոյ է անհնազանդ: - 540. Դարձեալ՝ կապի մեղքն, և լուծեալ ազատի անձն *որ* կապեալն էր: - 540. Նոյնպէս և աթոռակալքն *որ* ի չորս աթոռս, ա՛յլ զայլոյ վիճակեալ ո՛չ կարէ կապել և ո՛չ արձակել. նոյնպէս և ի նոյն աթոռն, վերջինն զառաջ նոյն ո՛չ կարէ փոխել կանոնս և զկարգ: - 541. Որպէս *որք* յեփեսոս՝ զնիկիականն ուղղութիւն ո՛չ քակեցին. այլ ի նոյն տեսակ նոր կանոնս կարգեցին ի հաւատս ուղիղ: - 541. Եւ սուրբն յոհան օձնեցին զեզր կաթողիկոսին և զայլոցն *որք* թիւրեալք էին զկնի քաղկեդոնի: - 541. Իսկ քահանայք ժողովրդեանն՝ նա կանոնս դնէ՝ *որ* խոստովանահա՛յր է և գիտէ զկարն և զորքանն մեղաց: - 541-542. Եւ *զոր* նա՛ կապէ, այլքն ո՛չ արձակեն. որպէս *որ* կապեաց զհոգիս ի մարմնի՝ նա՛ արձակեսցէ: - 542. Եւ որպէս եղիա *որ* կապեաց զերկինս և փախեաւ ի սիդոն. նոյն նմա հրամայեաց

աստուած բանալ զերկինս. նմանապէս և այս: - 542. *Յորո՞ւմ* ամի եղեն ժողովքն. և ո՞ւր. և վասն է՛ր: - 542. Յոհան անտիոքայ` թղթով միաբանեալ. **բճ** հարք ընդ դէմ նեստորի *որ* **բ** բնութիւն ասէր և **բ** որդի. կրկին կամք և կրկին ներգործութիւն քրիստոսի. և զաստուածածինն մարդածին: - 542. Չորրորդ, առ նոյն թագաւորաւն զկնի **իդ** ամի եղև արժանաւոր ժողովն եփեսոսի ընդ դէմ եւտիգի. *որ* առ աչօք ասէր զտեառն մարդանալն: - 542. Եւ ընդ դէմ փլաբիանոսի *որ* **բ** բնութիւն ասէր: - 542. Եւ էր սիրելի փլաբիանոսի. և լևոնի. և թէոդորիտոսի *զորս* նզովեցին յեփեսոս. և վասն նոցա վրէժխնդրութեանն արարին ժողով **ոլզ** եպիսկոպոսաց. և ընկալան զթուղթն լևոնի. և զնզովեալն յեփեսոս զփլաբիանոս ընկալան...: - 542-543. Եւ յովսէփ փալանացի, և եզնակ կողբացի թարգմանիչք, դարձեալ էին յաթենայ և եկեալ ի կոստանդնուպօլիս. լուան զժողովյն և գնացին ի քաղկեդոն. զի չէր յոյժ հեռի ի ճանապարհէն *որով* գային ի հայս...: - 543. Եւ սուրբն սիմէոն սիւնակեացն այրեաց զթուղթն դաւանութեանն քաղկեդոնի` *զոր* գրեալ էր թագաւորն մարկիանոս աղաչանօք առ նա՛. և նզովեաց զթղտատարն *որ* էր թէոդորիտոս գլուխ ժողովյն: - 543. *Յորում* զորոգինէի գրեալսն խոտեցին. և զսուրբն եւագրիոս միայնակեաց` և զիրաշալի այրն աստուծոյ զդիդիմոս` նզովեցին: - 543. Եւ զպոլոքրոնոս աշակերտաց բազմաց վարդապետ. և ծեր, *որ* զմեռեալս յարուցանէր սքանչելեօք: - 544. Իսկ **է** երորդ ժողովն եղև ի թագաւորութեանն միւս կոստանդեայ. *որոյ* մայրն եռինէ: - 544. Երկրորդն է ժողովն թէոդուպօլսի, *որ* այժմ կոչի կարնոյ քաղաք. ո՛չ այն *զոր* յետոյ հերակլ քաղկեդոնիկ ժողովեաց և խաբեաց զեզր կաթուղիկոսն հայոց: - 544. ...և հաստատեցին զկանոնսն երից սուրբ ժողովյն *որ* ի նիկիայ` ի կոստանդնուպօլիս` և յեփեսոս: - 544. *Որ* կանոնական գլխօք պայծառացոյց զկարգ եկեղեցւոյ և զուղղափառութիւն հաւատոյ. *զոր* **զ** ամաւ յառաջ եղծեալ էր եզրի կաթողիկոսի...: - 545. ...*որ* եզր եղև հաւատոյ ուղղութեան. և հրամանաւ հերակլի հաւանեցաւ ժողովյն քաղկեդոնի. կացեալ **զ** կաթողիկոսք նոյն աղանդովն *որ* են այսոքիկ. Եզր. Մովսէս. Անաստաս. Իսրայէլ. Սահակ. Եղիա: - 545. Այլ *որ* **ճծ** ամաւ յառաջ եկին ի հայք` ասորիք արք քաջաբանք, և կամեցան սերմանել զաղանդն նեստորի. *որք* նզովեալ որոշեցան...: - 545. Այսպէս սրբեաց զեկեղեցի յամենայն աղանդոյ սուրբն յոհան. *որոյ* յիշատակն օրհնութեամբ եղիցի ամէն: - 545. Յորժամ անիծիւք աքսորեցին զներսէս եպիսկոպոս *որ* եղև աղանդովն ներսէսի, և այլայլեաց զկարգ և զուղղափառութիւն հաւատոյ: - 545. *Զոր* յառաջին ամին յորժամ նստաւ կաթողիկոս տէր սիմէոնի, ի ձեռն տէր եղիայի մեծահանդէս ժողովմամբ պայծառացոյց զեկեղեցի կանոնական հաստատութեամբ ի փառս քրիստոսի աստուծոյ մերոյ օրհնելոյն յաւիտեանս ամէն: - 545. *Որ* զգլուխն ընթերցար, զհամակարգն ընդէ՞ր մոռացար: - 546. Առ երրորդն ասեմք թէ` երիցս հարցումն սիրոյն և արածելն զոչխարսն` վասն երից ուրացութեանցն էր բժշկութիւն. զի *ո՛ր* մասն *որ* խոցի` նորին է բժշկական դեղն դնելի` և ո՛չ առողջից: - 547. *Որ* ի նիկիայ յաւուրս մեծին կոստանդիանոսի ընդ դէմ արիոսի ժողովեցան հարքն սուրբ` **յժը**: - 547. Եւ յաւուրս մեծին թէոդոսի **ճծք** *որ* ի կոստանդինուպօլիս ընդ դէմ հոգէմարտին մակեդոնի: - 547. Եւ **բճքն** *որ* յեփեսոս ժողովեցան ընդ դէմ նեստորի չարափառի և մարդադաւանի: - 547. Այլ զչար և զաստուածուրաց ժողովն քաղկեդոնի *որ* ի ձեռն մարկիանոսի և անիծելոյն պօղքերի` ո՛չ ընդունիմք. և զընդունօղսն նզովեմք: - 547. Ա՛րդ` զի՞նչ կամիս *որ* հնազանդիմք պետրոսի. ուրանա՞լ պարտ է զքրիստոս *որ* լինիմք հնազանդ պետրոսի, եթէ եղծանել զպահքն, թէ զամենայն պիղծ կերակուր ուտել...: - 548. Ասեմք թէ` սուրբն գրիգոր ի կեսարիայ ձեռնադրեցաւ ո՛չ յայլմէ առաքելոյ, այլ ի սրբոյն թադէոսէ՛. *որոյ* էր վիճակս հայոց: - 548. Զի առաքեալն թադէոս յորժամ ձեռնադրեաց զադդէ յուռհայ, և ապա՛ ի կեսարիայ եկն և ձեռնադրեաց առաջին եպիսկոպոս զթէոփիլոս. զայն *յորոյ* անունն գրեաց Ղուկաս զաւետարանն և զգործքն առ թէոփիլոս: - 548. Եւ այսպէս ղևոնդիոս ձեռնադրեալ ի նմանէ պատրիարգ. *յորմէ* ձեռնադրեցաւ լուսաւորիչն մեր: - 548. *Զոր* յետոյ մեծն կոստանդիանոս զայս աթոռս յեփեսոսէ՛ ի կոստանդնուպօլիս փոխեաց: - 549. **Ասեմք թէ` ոչ ինչ է այս նախատինք մեզ. զի հեթանոսք յետոյ հաւատացին և լաւագոյնք են քան զիրէայս. և վերջին մշակքն ընդ առաջինսն առին զվարձս. և *որք* նախանձեցան կորեան**: - 549. ...զԹադէոս. և զԲարդուղիմէոս. և զՅուդայ յակոբեան. *որ* կայ ի յորմի. *որ* սեպհական քաղաք է հայոց: - 549. Եւ ա՛յս է պատճառն *որ* ոմանք յեօթանասնիցն ասեն. զի եօթանասուն աշակերտացն գլուխ և վարդապետ էր. որպէս պետրոս երկոտասանիցն. և առաջինքն ամենայն ուրեք յետնոցն անուամբ կոչեին. այս է ստոյգ պատճառն: - 549. **Եւ ի գալն յերկիրս հայոց, ետուն նմա օգնական զիւղն օծման *զոր* քրիստոս օրհնեալ էր. և զգեղարդն. և այլոց ազգաց չկա՛յ այս պարծանքս. զի մեր մեռոնս հանապազ և միշտ զնոյն շնորհ ունի**: - 549. **Այլ թէ գիր չունէր մեր ազգս, տե՛ս զի յաստուծոյ տուաւ մեզ գիր, որպէս մովսէսիւ իսրայէլի. և այլ *ո՞ր* ազգ պարծի**

**այսու**: - 549. Զի՞նչ պատասխանեմք *որք* բամբասեն զազգս հայոց ո՛չ միաբանիլ այլոց: - 550. Իսկ անհատն է առաւել և իսկագոյն և առաջին գոյացութիւն. *որ* է առանձնական և մասնաւոր որպէս զազգս մեր: - 550. Այսպէս ասեմք, զի *որ* ըստ ինքեան է ճշմարիտ և ըստ ինքեան բարի՝ առաւել է. և *որ* ըստ պատահման է ճշմարիտ կամ բարի՝ նուա՛զ է. վասն զի ըստ ինքեանն գոյացութեամբ և հարկաւո՛ր է. այսինքն անփոփոխ և միշտ: - 550. Այլ և արդ կարելի՛ է զի մինն բազմաց հակառակեսցի և յաղթեսցէ. որպէս ազգս հայոց զայլս ամենայն *որ* բազո՛ւմ են և ո՛չ մի: - 550. Դարձեալ՝ *որ* ոք մերձ է ի ճշմարտութիւնն՝ նա՛ առաւե՛լ է ճշմարիտ. որպէս *որք* մերձ են լուսոյն և ջերմութեան՝ առաւել լոյս են և ջերմ: - 550. Եւ *որ* սոցա առաւել մերձ է և անշարժ մնացեալ՝ է ազգս հայոց: - 550. Այլ ա՛րդ՝ յամենայն ազգաց ելին հերձուածօղք *որ* է սուտ. և խառնեցան ընդ ճշմարտութեանն: - 550-551. **Իսկ մերս դաւանութիւն ամենայնիւ նոյնն եկաց մնաց *զոր* ունէր նախ ի սրբոյն գրիգորէ՛ լուսաւորչէ և ի նմանեաց նորա:** - 551. Դարձեալ, բնաւորեալ է մարդոյ՝ զի ամենայն ոք կարծէ զինքն ճշմարիտ և արդար. այլ *որ* ունի զճշմարտութիւնն նա՛ է ճշմարիտ և արդար: - 551. Այլ դատաւոր միտն կացուցեալ երկու վկայ զանբիծ հաւատս և զօրէնս *որ* են հաւատք և գործք. զի առ ո՞ր և իցէ քրիստոս նա՛ է ճշմարիտ: - 551. Զա՛յս ասեմ, զի որ ինչ անօրէնութիւն է ազգիս հայոց, նո՛յն է օրէնք այլազգ քրիստոնէից. և *որ* մեզ երկբայութիւն է՝ նոյն դաւանութիւն է նոցա: - 552. Եւ այլ բազում և զանազան ազգապղծութիւն ընդ հոգևորս և ընդ մարմնաւորս. երկու եղբարց և **բ** քերց. և ընդ քերց հոգևոր մօր. և անխտիր ի բազմանկողինս և այլս բազումս *որ* զազիր է խօսելոյ օրէնքէ նոցա: - 552. Ազգ առ ազգ բաժանեալ լինի գաւառաւ և լեզւաւ և կանոնական սահմանաւ *որ* են աւանդութիւնք և հաւատք եկեղեցւոյ: - 552. **Եւ բաժանումն յաւէտ զքան գաւառաւ և լեզուաւ՝ կանոնական սահմանաւն ասացեալ լինի**. այսպէս և առ միաբանութիւնս է իմանալ. առաւել միաբանութիւն ասել *զորս* կանոնական սահմանադրութեամբ է, քան *որ* գաւառաւ և լեզուաւ: - 552. Եւ յայսոսիկ միաբանութիւնս *որ* ըստ կանոնի՝ յաւէտ միաբանութիւն զայս է իմանալ՝ *որ* ըստ բոլորին օրինադրութեանց սահմանաց կամ ըստ գլխաւորագունիցն լինիցի. և ո՛չ մասամբ միով միաբանեալք և բազմօք զանազանեալք. մանաւանդ թէ հակառակեալք և ընդդիմացեալք: - 552. Եւ այն *որ* ի գլխաւորագոյնս ո՛չ ասի միաբանութիւն, և զիա՞րդ միաբանութիւն ասիցէ ոք զայս: - 552. Հինգերորդ՝ զբուրգաթուրն *զոր* ասեն: - 553. **Բայց պարտ է այնոցիկ *որք* ո՛չ գիտեն՝ և կամ թէ կամաւ տգիտանան՝ ցուցանել զմիաբանութիւն ազգիս հայոց առ այլ քրիստոնեայսն. զի գիտացեալ յամօթ լիցին յաղթեալք ի ճշմարտութենէն**: - 553. Նա՛խ՝ ըստ դրութեան կարգի աղօթիցն *որ* յեկեղեցիս նոցա: - 554. Բայց ոմանք բերանաբաց եղեալ հակառակին՝ զծնունդն և *որ* ըստ նորին ամենեցուն առ հասարակ միաբանեալ բաց ի հայոց: - 554. Որպէս և տօն ծննդեանն *զոր* միաբան ասեն տօնել այլոց քրիստոնէից բաց ի հայոց. և զի և այն աւանդութիւն է և տօնախմբութիւն և ո՛չ հաւատ: - 554. Երկրորդ՝ սրբոյն Գրիգորի *որ* վասն շինութեան եկեղեցւոյ տեսիլն: - 555. Տասներորդ՝ և այսմ կողմանէ՛ շարժին լուսաւորքդ ի յընթացս իւրեանց. *որ* են կարապետ մեծին լուսոյ ծագմանն: - 555. Վասն զի արեգակն արդարության քրիստոս հայրական փառօք և աստուածագումար դասուք և կարապետեալ աստուածային նշանն անտի գալոց է ըստ տեառն «որպէս փայլակն *որ* ելանէ յարևելից՝ այսպէս և գալուստն որդւոյ մարդոյ»: - 555. *Որում* փառք և զօրութիւն ընդ Հօր իւրում և սուրբ Հոգւոյն ամէն: - 555. Նա՛խ՝ զի մեղքն յարմարի մարմնոյն. *որ* մեղկանայ և թուլանայ: - 555. Իսկ յետ օրինացն՝ անօրէնութիւն. որպէս *որք* յանապատի անդ անօրինեցաւ ժողովուրդն: - 555. Ա՛րդ՝ ի սոցանէ *ո՞րք* իցէ ճշմարիտ. և կամ հակառակք են միմեանց թէ ոչ, լուծանել աղաչեմ: - 555. Եւ այս յիրաւի իսկ. զի *որ* հայեցաւ ցանկական մտօք՝ ի կամս իւր գործեաց զմեղս: - 556. Եւ սոքա մտօք և ո՛չ մարմնով կատարին. որպէս յայտ է ի բանսարկուն սատանայ *որ* յանցեաւ հպարտութեամբ և նախանձով: - 556. Ա՛րդ՝ *որք* զնոյն ախտանան մտօք՝ զնոյն մեղանչեն և ընդ նմին պատժին...: - 556. Չորրորդ՝ ի զղջմանէ. զի ամենայն *որ* մեղք է՝ զղջալի է և խոստովանելի...: - 556. Ապա ուրեմն և հայհոյելն մտօք և մախալն և նենգելն կատարեալ չարութիւն է և մեղք. *զոր* մարգարէն ընդ մարդասպանս կարգէ ասելով «զայր արիւնահեղ և զնենգաւոր պիղծ առնես դու տէր»: - 557. Դարձեալ ասեն վարդապետք եթէ՝ խորհրդոցն մեղք՝ *որ* ընտրէ և կամաւ հեշտանայ, առաւել չար է քան զգործոցն ըստ պատահմանն: - 557. Իսկ գործ մարմնոյն միայն մասինն այն է *որում* պատահեցաւ: - 557. Ապա ուրեմն յա՛յտ է թէ՝ առաւել չա՛ր է խորհուրդն արբեալ *որ* շարժէ՛ ի գործն. քան զգործն *որ* շարժէ՛ ի զղջումն: - 558. Դարձեալ ևս յայտնի. *որ* խորհրդովն է պղծեալ՝ ո՛չ կարծէ զինքն մեղանչական գոլ. այլ ի գործ մարմնոյն իմանայ զչարիս իւր զղջա՛յ և ապաշխարէ: - 558. Եւ երկրորդ յանցումնէ՝ *որք* մտօքն հեշտացեալ մեղկանան ընդ տեսութեանն. և հաւանին խոկացեալք ի նոյն: - 558. *Որովք* միշտ երանութեամբ զաստուած տեսցես.

հայելով յօրէնս նորա ի տուէ և ի գիշերի: - 558. Վասն այն այլ վարդապետք կոչեն զայս ախտ՝ ծուլութիւն. զի ծուլութիւնն յերկու իրաց երևի. մին *որ* յետս դառնայ ի հոգևոր բարւոյն և ծանրանայ ի գործելն...: - 559. Եւ միւս՝ *որ* դառնայ ի հեշտալին *որ* է՛ հանգիստ մարմնոյ. ըստ որում կոչի ծուլութիւն: - 559. Եւ դարձեալ՝ *զոր* նոքա նախանձ ասեն՝ սա՛ ամբարհաւա՛ճ ասէ. *որ* է՛ փառասէր: - 559. Եւ ոմանք զեկուսն միա՛յն ասեն մարմնական. *որ* է՛ որկորստութիւն և բղջախոհութիւն. և այլքն ամենայն հոգեկան: - 559. Եւ երեքն խառն ի հոգւոյն և ի մարմնոյն. *որ* է բարկութիւն, ծուլութիւն, և ագահութիւն: - 559. Այս ըստ նոցա *որ* է ասեն զմահու չափ մեղքն: - 559. Եօթներորդ ամբարհաւաճութիւն. *որ* է՛ փառասիրութիւն: - 560. Ի ջրոյ պոռնկութիւն և փառասիրութիւն. *որ* գէճ է և թոյլ. և փառասէրն յայլոյ բանս մեղկի և թուլանայ: - 560. Փառասիրութիւն և հպարտութիւն են հոգւոյ և մտաց. *որ* լինի ը: - 560. Ի վայր շարժումն է տրտմութիւն և ծանծրութիւն. *որ* է՛ ծուլութիւն. զի մինն ծանրանայ և ո՛չ գործէ զբարիս. և միւսն տրտմի և պակասի: - 560. Այս ըստ առաջին մասին *որ* ցանկայ ոչ ցանկալեաց: - 561. Իսկ երկրորդ անկարգութիւն կամաց է՛ *որ* հրաժարի յոչ հրաժարելեաց: - 561. Կամ և թիւրի ցանկութեամբ. և ըստ այսմ է՛ ծուլութիւն. *որ* է՛ տրտմութիւն և ծանծրութիւն: - 561. Զի առաջին մեղք հպարտութիւնն է *որով* սատանայ մեղանչեաց յերկինս և անկաւ. և ապա նախանձն *զոր* ընդ մարդոյն արարին: - 561. ...այն է հպարտութիւն *որ* խոստե՛մք և անարգեմք զճշմարիտ բարին. և ապա խոտորիմք և հետևիմք զհետ փոփոխելոյ բարւոյս. և այսպէս երևի հպարտութիւնն յամենայն մեղս: - 562. Վեցերորդ՝ զի զամենայն բարիսն *որ* ի մեզ են՝ արտաքս հանեն. զորօրինակ եկեալ խաւարն հանէ զլոյսն: - 562. Եօթներորդ՝ զի *որ* հպարտքն են ոչ ունին հանգիստ մտաց և մարմնոյ. քանզի որ քան մարդ խոնարհէ՝ այն քան հանգիստ է: - 562. Իններորդ՝ զի ամենայն ոք *որ* առ պոռնիկն երթայ՝ գիտէ ճշմարտութեամբ թէ վրիպեցաւ ի ճշմարիտ արդարութենէն: - 562. Իսկ ամբարտաւանն ո՛չ իմանայ զմեղսն *զոր* գործէ հպարտութեամբ. այլ գիտէ ևս թէ առաքինութիւն է: - 562. Բայց կրկին է զրկումն լուսոյ. մի՝ *որ* ի ճառագայթէ՛ լուսոյն զակն խփէ և խաւարի. և բ՝ *որ* ընդ դէմ բոլորակի արեգականն հայիցի՝ կորուսանէ զլոյսն և խաւարի: - 562. Ա՛րդ՝ մեղանչելն մարդոյ այնպէս է *որ* զակն խփեաց ի լուսոյն և խաւարեցաւ. սակայն լոյսն ծագէ՛ դեռևս ի վերայ աչացն և սակաւ փայլէ ի ներքս. և յորժամ բանայ վաղվաղակի լոյս տեսանէ: - 562. Իսկ մեղանչելն սատանայի այնպէս է *որ* ընդ դէմ արեգականն հայի և զլոյսն կորուսանէ և խաւարի: - 563. Այսպէս ապա գիտելի է, զի և հրեշտակք վասն այն մեղանչեն *որ* են բանականք և անձնիշխանք: - 563. Նա՛խ՝ զի *որ* կամաւ և գիտութեամբ մեղանչէ, առաւել է քան զակամայն և զտգիտութեան. զի թէպէտ և սոքա մեղք են, այլ պատիժն նուազ. որպէս անասնոյն քան զմարդոյն: - 563. Երկրորդ ի միտ առ, զի *որ* առաւել գիտութեամբ և կամօք մեղանչէ, առաւել պատժի քան զայն *որ* նուազ գիտութիւն ունի և կամք...: - 563. Զի՞նչ է պատճառն *որ* սրտմտութիւն և ցանկութիւն և այլն ի յանբան կենդանիսդ գործ է. իսկ ի մեզ ախտ և մեղք: - 563. Իսկ գործքս այսոքիկ *որ* նոցա պահպանօղք են՝ մեզ կորուստ և մեղք են: - 563. Եւ զայս առնէ միտքն իբրև մշակ. *որ* առեալ զսերմն և բազմաբեղունս աճեցուցանէ...: - 564. Նոյնպէս զցանկութիւնն ի շնութիւն և ի պոռնկութիւն յաւելու հանապազ. *զոր* անասունք յիւրեանց ժամանակին ունին զխառնումն: - 564. Որպէս անպտուղ երկիր կորուսանէ զբարի սերմանս և փուշ բուսուցանէ. նոյնպէս և մեք զբարի սերմանս *որ* եդ ի մեզ աստուած ի չարն փոխարկեմք: - 564. Եւ զցանկութիւնն *զոր* ունիմք առ բարին, փոխեմք և ցանկամք չարեաց: - 564. Զսէրն *որ* առ աստուած պարտ էաք, փոխե՞մք առ երկրաւորս և ի մեղս: - 564. Անարգե՛մք զհոգիս *որ* է՛ պատկեր աստուծոյ. և պատուեմք զմարմինս *որ* պատկեր է անասնոյ: - 564. Իսկ մահն՝ *որ* տգիտութեամբ մեղանչէ. թէպէտ ո՛չ գիտէ՝ հոգին մահանայ: - 564. Իսկ դառն մահն է՛ մահու չափն. *որ* գիտութեամբ մեղանչէ. այս է դառն մահն յաւիտենից: - 564. *Ո՞րն* է գիտութեամբ մեղանչելն: - 564. Այն է *որ* գիտէ ճշմարիտն և առնէ զսուտն. և այս յերեք դէմս որոշի: - 564. Նա՛խ՝ ի գործն և ի պատիժն. յորժամ գիտէ ոք թէ այն գործն մեղք է և գործէ՛. և գիտէ՛ զպատիժ այն մեղացն *որ* ծա՛նր է: - 564. Երկրորդ՝ գործօղն *որ* ունիցի զճշմարտութիւն ինչ կարգի՝ թողու զայն և գործէ՛ զմեղս: - 564. Երրորդ՝ ի յաստուած գիտութիւնն. *որ* եկեալ իցէ ի հաւատս ճշմարիտս. և գիտէ զքրիստոս աստուած ճշմարիտ. թողու և գործէ՛ զմեղս կամ զհաւատն: - 564. Դժուարաթողութեամբ, որպէս մեղքն *որ* ընդ դէմ հոգւոյն սրբոյ: - 565. Այլ ես հաւանիմ *որք* ասեն ժ գոլ զմեծութիւն մեղաց. և այն համեմատի ընդ ժ ստորոգութիւնն: - 565. Այն *որ* փափագանօք անկաւ՝ մեծագոյն է քան զմիւսն: - 565. Այն *որ* բազում գործեաց՝ մեծագոյն պատիժք զմիւսն: - 565. *Որ* ի դիմաց աստուծոյ լինի՝ ասէ աւետարանն «ամենայն մեղք թողցի մարդկան, բայց հոգւոյն սրբոյ հայհոյութիւն մի՛ թողցի»: - 565. Աիա՛ *որ* մեծ է քան զամենայն մեղք: - 565. Չինգերորդ ըստ ուրին. թէ ուր գործեն զմեղքն. կամ ի վանք,

կամ յեկեղեցի *որ* է տուն աստուծոյ. կամ ի գեօղ, կամ ի քաղաք, կամ ի պոռնկատուն: - 565. *Որ* յեկեղեցին գործէ՝ մեծ է քան զայլն: - 565. Վեցերորդ ըստ երբին. այսինքն թէ ե՞րբ գործեն զմեղքն. ի տղայութեա՞ն, թէ ի ծերութեան *որ* մեծ մեղք է. ի սո՞սկ աւուրս, թէ ի տէրունական տօնս. զի *որ* ի տօնս մեղք գործէ, առաւել պատժի քան զմիւսն: - 565. Նոյնպէս և Կալն և Ունելն զամենայն մահու չափ մեղս. թէ գործեալ է և թողեալ. զի *որ* հաստատեալ է մեղքն յինքն, առաւել մեղանչէ: - 565. Նոյնպէս Առնելն կամ Կրել. ընդ դէմ բնութեանն առաւել ծանր է քան *որ* առնէ և կրէ ըստ կարգի բնութեան: - 565. Զի՞նչ է մեղքն ընդ դէմ հոգւոյն սրբոյ *որ* ո՛չ թողցի: - 566. Այլ յատկապէս ըստ երից դիմացն, *որ* տկարութեամբ մեղանչէ՝ է՛ ընդ դէմ հօր. և տգիտութեամբն ընդ դէմ որդւոյ. և չարութեամբն ընդ դէմ հոգւոյն սրբոյ...: - 566. Ա՛րդ՝ մեղքն *որ* ընդ դէմ հոգւոյն սրբոյ՝ մանաւանդ ելանէ ի չար կամաց անձնիշխանականին. և ուղղակի մարտնչի ընդ դէմ շնորհաց հոգւոյն սրբոյ. և յիրաւի անթողլի՛ է: - 566. Նա՛խ առ հրէայսն. *որ* գիտէին զհոգին սուրբ՝ շնորհաց բաշխօղ. ուստի ելից հոգին զբէսէլիէլ ճարտարապետ. և զեօթնարփեան շնորհս թուէ եսայի...: - 566. ...և զրկէին զզօրութիւն հոգւոյն *զորմէ* ասաց քրիստոս, թէ «հոգւովն աստուծոյ հանեմ զդևս». և նոքա դիւաց տային. յիրաւի ոչ թողցի նոցա: - 566. Եւ օրէնս եդ նոցա թէ *որ* զաստուած անարգէ՝ քարկոծեսցի: - 566. Չորրորդ՝ *որք* միայն զորդւոյ ասեն բան՝ սակաւ պատիժն, զի մի է յերրորդութենէն. իսկ *որ* զփառակիցն նս՝ կրկնապատիկ հատուցանի նմա: - 566. Հինգերորդ՝ նման սատանային լինին *որք* ուրանան զպատճառն գոյութեան հոգոց իւրեանց. յիրաւի ապա որպէս սատանայ ո՛չ ունի թողութիւն ի կեանս յայս և ո՛չ ի հանդերձեալն և գործ ունէի նմին: - 566. Ութերորդ, ո՛չ ասաց՝ թէ խնդրեսցէ ապաշխարութեամբ՝ արգելից զգութ և զողորմութիւն. այլ թէ՝ «ո՛չ թողցի». *որով* յա՛յտ է թէ առանց զղջման և տանջանաց ո՛չ թողցի: - 566. Իններորդ՝ *որ* ո՛չ խոստովանի կամ թերի և անկատար լինի: - 566. Յիրաւի *որք* ո՛չ հաւատան թողութեան խոստովանութեան, ո՛չ թողցի նոցա աստ կամ անդ: - 566. Տասներորդ՝ վասն հոգեմարտին մակեդոնի *որ* հայհոյէր զհոգին սուրբ նուազ ասելով քան զհայր և զորդի, ո՛չ թողցի նմա: - 566. Զի երեք են ի թողութիւնն. այսինքն թողօղ. և այն *որում* թողու. և պատրաստութիւն նորին: - 567. Նաև ի յայն *որում* թողեալ լինի՝ **բ** ինչ պահանջի. այսինքն ցաւ վասն գործելոցն, և մտադիւրութիւն վասն ոչ գործելոցն...: - 567. Երկրորդ ըստ հասարակութեան. զի հասարակաբար ո՞ ոք *որ* հաղորդի բնութեանս՝ հաղորդի և սկզբնականին: - 568. Զի մահացուն ո՛չ էր ի յերեմիայ և ի յովհաննէս *որք* սրբեցան յորովայնէ. թէպէտ ո՛չ զերծանեին ի ներելւոյն: - 568. Այլ կոյսն մարիամ աստուածածին՝ էր ազատ ի մահացուէն և ի ներելւոյն. բայց ո՛չ ի սկզբնականէն. *զոր* հոգւովն սրբով մաքրեցաւ: - 568. *Որոյ* պատճառ է, զի ո՛չ ի սերմանէ՝ այլ ի մաքուր արենէ կուսին էառ մարմին: - 568. Յաղագս որոյ այն *որ* ըստ բնութեան է մեղք՝ ըստ բնութեանն և յորդիս անցանէ: - 568. Դարձեալ զանազանին ըստ թուոյ. զի մահացուն յեօթն բաժանի. *որք* են գլխաւորագոյնք: - 568. Զի սուտ է բառնալն *զոր* ունի: - 568. Եւ զուրն է դնել *զոր* ո՛չ ունի: - 568. Եւ պատիժն է ի հանդերձեալն *որ* է ապագայն: - 569. Մեղք է դարձուցանել զերեսս յանփոփոխելի բարւոյն *որ* է՛ առ աստուած. և դառնալ առ փոփոխելի բարին *որ* է արարածքս: - 569. Դարձեալ՝ մեղքն է խօսք և գործք և ցանկութիւն *որ* լինի ընդ դէմ օրինացն աստուծոյ: - 569. Զի թէպէտ անպատեհ է ասել զբարկութիւնն առ աստուած զի անփոփոխելի քաղցրութիւն է. այլ կամքն *որով* մեղաւորքն վասն չար գործոցն տանջեալ լինին՝ բարկութիւն ասի աստուծոյ: - 569. Ամբարտաւանութիւն է *որ* բաղձայ զյատուկ բարձրանալն իւր, և անկարգ և անսահման լինի: - 569. Բարկութիւն է ցասումն հոգւոյ. *որով* ոք ընդ դէմ այլոց յառնէ: - 570. Եւ ա՛յս է մեծագոյն չար աշխարհի. զի չէ աւելի աղքատ քան զայն *որ* ցանկայ աւելի ունել: - 570. Զի նման է ջրգողեալ հիւանդի. *որ* որքան աւելի խմէ, առաւել ծարաւի: - 570. Եւ այսու նախաստեղծքն մահու մեռան. և վասն այս մեղացսէ *որ* մեք ևս մեռանիմք...: - 570. ...զի զկերակուրն ի հարկաւոր ժամանակին պարտ է ուտել. այսինքն *որ* քաղցեալ լինի. այլ ո՛չ յամենայն ժամ *որ* յագեալ լինի: - 570. Ա՛յս է *որ* զմարդն յաստուծոյ հեռացնէ. զի սուրբքն միա՛յն տեսանեն զաստուած: - 570. Ա՛յս է քաղցն *որ* կշտումն ո՛չ ունի: - 570. Այս է ծառն չար *որ* պտուղ չար բերէ. և յետոյ հատանի. և ի հուրն յաւիտենից արկանի: - 570. *Յորմէ* փրկեսցէ քրիստոս աստուած զմեզ և զամենայն հաւատացեալս անուան իւրոյ ամէն: - 570. Եւ այսպիսի ասացեալ տկարութեան մեղաց առողջութիւն է բժշկարան է զօրութիւնք *որ* կոչին առաքինութիւնք. *որ* են այսոքիկ: - 571. Խորագիտութիւն. *որ* է՛ խոհեմութիւն: - 571. Դարձեալ՝ հաւատովն հաւատամք՝ *որ* միայն իւր բարութեամբն զմեզ ստեղծեաց և վերստին փրկեաց և ո՛չ ի հարկէ: - 571. Յուսովն ակն ունիմք ինքեան ողորմութեանն *որ* խոստացեալ է. զի գթած և ճշմարիտ է: - 571. Եւ այլ սահմանք *զոր* դնեն վարդապետք՝ պարունակեալ են ի սահմանն պօղոսի. զի վարդապետաց սահմանն մեկնութիւն և յայտնութիւն է սահմանին պօղոսի: - 571-572.

Յաւատն ի *յո՛ր* մասն է հոգւոյն իբր ի յենթակայ: - 572. *Որ* անհնազանդ է բանին, որպէս տնկականն. հալելն և աճիլն և այլն. և սոքա ոչ կարեն լինիլ ենթակայ առաքինութեանց: - 572. Իսկ երրորդ սեռն *որ* է նոյն ինքն բանն *որ* է՛ ենթակայ աստուածային առաքինութեանց: - 572. Որպէս ժ բան է օրինացն` և ժ բան է հայր մեր *որ* յերկինս: - 572. Նոյնպէս ժ բան է հաւատամքն *որ* է՛ այսպէս: - 572. Երկրորդ վասն առաջին ծննդեանն քրիստոսի *որ* ի հօրէ: - 572. Ութերորդ վասն սուրբ հոգւոյն *որ* է՛ հաւասար հօր և որդւոյ: - 572. Եւ այս է սրբոյն կիւրղի *որ* յերուսաղէմ: - 572. Իսկ աստիճանք հաւատոյն *որք* են յէութենէ հաւատոյն, եթէ նկատեսցի առ այն *որք* արարին զհաւաքումն հաւատոյ, են երկոտասան աստիճանք ըստ թուոյ երկոտասան առաքելոցն: - 572. Իսկ թէ նկատիցեմք առ այն *որք* են իբր արմատս հաւատալեաց, յայնժամ են չորեքտասան աստիճանք: - 572. *Յորոց* եօթն վերաբերին առ աստուածութիւնն. և եօթն ի մարդեղութիւնն քրիստոսի: - 572. Առ աստիճանս այս պարունակի է խորհուրդ եկեղեցւոյ. *որ* է՛ Մկրտութիւնն. Դրոշմն. Պատարագն. Ապաշխարութիւնն. Կարգ քահանայութեանն. Պսակն. և Օծումն: - 573. Զի թողութիւն մեղաց *որ* է՛ կենդանութիւն հոգւոյ` աստուածային զօրութեամբն լինի: - 573. Վեցերորդն` ելեալ ի յերկինս նստաւ ընդ աջմէ հօր. *որ* է հաւասարութիւն հօր: - 573. Եօթներորդն` դատել զկենդանիս և զմեռեալս. *որ* է՛ զբարիս և զչարս: - 573. Այլ և զանազանի յոյսն. զի *որք* են ի ճանապարհ աստի կենաց, յոյս նոցա է՛ հանդերձ ստուգութեամբ կարծեաց որպէս ասացաւ: - 574. Իսկ *որք* ելեալք են ի մարմնոյ, յոյս նոցա է՛ հանդերձ ստուգութեամբ գիտութեան. զի ստուգապէս գիտեն զլինելոց հատուցումն: - 574. Եւ յայսցանէ յայտ է, զի յետ յարութեանն ի վերինն գաւառ ոչ գոյ յոյս. զի է՛ անդ երանութիւն, *որ* է ստացումն ամենայն բարեաց. բոլորն համանգամայն և կատարեալ. և ոչ ինչ է ապառնի *յոր* յուսացեալ լինի: - 574. Երկրորդ զօրացուցանէ. որպէս յա՛յտ է ի մակաբայեցւոցն զկնոջէն *որ* ունէր է որդիս` ածեալ ի սպանումն ի միումն աւուր տեսեալ. և տանէր այնմ` յուսովն *որ* առ աստուած. նոյնպէս և ամենայն դասք մարտիրոսացն յուսով զօրացան: - 574. Երբեմն զնշանակ սիրոյն. ըստ այսմ *որ* ասէ` «մեծագոյն սէր ո՛չ ոք ունիցի». այսինքն մեծ նշան սիրոյ: - 575. Քաննք, *որք* հայհոյեն զսիրելին` խոյս տայ ի նոցանէ: - 576. Եւ այս նոյն է *որ* ասացաւ: - 576. **Եւ այլ վարդապետք ասեն, սիրել պարտ է նախ զայն *որ* ի վերո՛յ է քան զմեզ. այսինքն զաստուած. և ապա՛ զմեզ. յետ *որոյ* զընկերն. և ապա՛ զմարմինս մեր. և ի նոյն աստիճանս զմարմին ընկերին. զի մարմինն երկրորդ է հոգւոյն**: - 576. **Երկրորդ` *զոր* սիրեմք` է՛ յատուկ առաքինութիւն մեր. այլ թէ սիրիմք` է՛ առաքինութիւն այլոց**: - 576. *Ո՞րն* է առաւել, սէր ընկերի՞ն` թէ թշնամւոյն: - 577. *Զո՞ր* թշնամիս պարտ է սիրել: - 577. *Որո՞վ* զանազանի հաւատ յոյս և սէր: - 577. *Որ* է՛ հաւատ` յոյս` սէր. և սոքա երեքեան հեղո՛ւմն են յաստուածային շնորհացն ի բանական ոգիս. *որով* ուղղիմք յերկնային կեանս: - 577. **Երրորդ` հաւատն է որպէս արմատ ծառոյն *որ* է հայր. յոյսն ստեղունքն *որ* է որդի. սէրն հոգին սուրբ *որ* է՛ ծաղիկ և պտուղ ըստ դիոնիսեայ**: - 577. **Չորրորդ` հաւատն է յանցեալն և ի հանդերձեալն որպէս ասացաւ. յոյսն միայն ի հանդերձեալն. և սէրն ի ներկայն *որ* է միշտն**: - 577. Այս վասն համանման գործոց նոցա այսպէս կարգի *որ* են ի նոսա. այլ յոյսն և սէրն են ի կամքն: - 578. Դարձեալ` առաքինութիւն է բարի ունակութիւն մտաց, *որով* ուղիղ կեայ. և ո՛չ ոք չարաչար առնու ի կիր. *որ* աստուած ներգործէ ի մեզ առանց մեզ: - 578. Զի նա պարունակէ՛ զառաքինութիւնս *որ* կարգեն զմարդ առ ընկերն...: - 578. Եւ *որ* կարգեն առ ինքն. որպէս ապաշխարութիւնն և անմեղութիւնն: - 578. Եւ *որ* կարգեն զմարդն առ աստուած. որպէս աստուածապաշտութիւնն և հնազանդութիւնն: - 578-579. *Որոյ* գործն այս է, զիւրաքանչիւր ուրուք յետ տալ *զոր* իւրեանն է: - 579. Վրէժխնդրութիւն է ջատագով լինիլ. *որով* բռնութիւն և անիրաւութիւն և ամենայն վնասակար ի բաց մերժի: - 579. Պահպանութիւն է *որք* արժանաւորին մարդկան պատուոյ իմն և պաշտաման: - 579. Ճշմարտութիւն է *որ* առանց փոփոխման ասին այնք *որ* են, կամ լինին, կամ լինելո՛ց են: - 579. Խոհեմութիւնն է զօրութիւն հոգւոյ, *որով* ընտրութիւն առնէ ի մէջ չարին և բարւոյն: - 579. Եւ գո՛րծ է սորա` *որ* ինքն նենգութիւն ո՛չ առնէ մարդոյ, և ո՛չ յայլ մարդոյ խաբի: - 579. Խոհեմ մարդն ո՛չ պարտի վաղվաղել ի գործ զինչ և է՛. այլ պա՛րտ է նա՛խ խորհիլ *որ* ո՛չ խաբի: - 579-580. Յանճարեղութիւն է նկատել զայնս *որ* են. և Նախատեսութիւն է տեսանել զլինելոցն. այլ Յիշողութիւնն է վերստին յիշել զեղեալսն: - 580. *Որ* է՛ բարոյականն տնտեսականն և քաղաքականն: - 580. Արիութիւն է զօրութիւն իմն *որով* հեշտութեամբ տանի ամենայնի վասն սիրելի իրաց: - 580. *Որոյ* գործն այս է. ոչ ի նեղութիւնն խորտակիլ և ո՛չ ի հեշտութիւնն կակղանալ: - 580. Ապաստանութիւն է *որով* հոգին ի մեծ և ի համեստ իրս ստոյգ յուսովն հաստատի յինքեան: - 580. Ողջախոհութիւն է հաստատութիւն հոգւոյ. *որով* արգելու զցանկութիւն զգայական և զհեշտութիւն մարմնական: - 581. Ա՛րդ` ժուժկալութիւն է *որով*

ամենայն ցանկութիւն ուղղի կառավարութեամբ խրատուն: - 581. Համեստութիւն է *որով* զպարկեշտ ամօթխածութիւնն ստանայ և զնազելի պատկառանս: - 581. Զգաստութիւնն կայանայ առ ճաշակելիսն. ի *յորում* դնէ զկապն և զչափն: - 581. Իսկ ժուժկալութիւնն առ շօշափելիսն ըստ ծննդական զօրութեանն. ի *յորում* դնէ զեղանակն...: - 581. Դարձեալ կոչին ծառայականք, զի և ի խառնուածոյ մարմնոյն գոյանան. *որք* ո՛չ հետևին միմեանց. զի *որ* ի խառնուածոյն ողջախո՛հ է, նա ո՛չ խոհեմ կամ արդար կամ արի կարէ գոլ: - 581. Դարձեալ կոչին յանձնառականք. *որ* ի պատուիրելոյ ումեք գոյ ողջախոհ...: - 582. Իսկ վեցերորդ կոչին մակստացականք. այսինքն ի վեր ստացեալ աշխատութեամբ. *որք* հետևին միմեանց իբրև զչարս շղթայից: - 582. *Որք* են այսոքիկ: - 582. Երրորդ խրատ *որ* է խորհուրդն: - 582. Վեցերորդ գիթութիւն *որ* է՛ աստուածապաշտութիւն: - 582. Իմաստութիւն է *որով* ճանաչեմք զբարութիւնն աստուծոյ. *որ* տուեալ լինի ընդ դէմ յիմարութեան: - 582. Հանճա՛ր է ճանաչել զփրկութեան նշանն. *յորմէ* ասաց տէր «*որ* ունիցի ականջս լսելոյ լուիցէ»: - 582. Եւ այս տուեալ է յաստուծոյ ընդ դէմ նոցա *որ* հաստ և բութ ունին զիմացումն: - 582. Խրա՛տ է լոյս հոգւոյ առ ի յունել զհոգին. *որ* յերկրայինս և ի մարդկայինս ո՛չ շաղախի: - 582. Զօրութիւն է ունել ինչ *որով* տանի չարչարանացն: - 582. Եւ այս տուեալ լինի յաստուծոյ ընդ դէմ երկիւղին *որով* նմանին քրիստոսի. զի ո՛չ երկնչէր ի բնական մահուանէն...: - 582. Գիտութիւն է ճանաչումն այն իրացն *որում* հաւատայն: - 582. Երկիւղ է հոգևորապէս փախուստ ի չարէն. զի մի՛ կորուսանիցէ զայն *զոր* սիրէ: - 582. *Որ* տուեալ լինի մարդոյ ընդ դէմ ամբարտաւանութեան: - 582. Երրորդ՝ ի կառավարել զգործնական և զտեսական կեանս. այսպէս աստուածային և մարդկային առաքինութիւնքն են *որ* ասացաւ: - 583. Ա՛րդ՝ **թ** երանութիւնք փրկչին *զոր* քարոզեաց ի լերինն, **ը** են ըստ էութեանն. այլ **է** են ըստ աստիճանաց. - 583. Սուգն զնախանձն. զի *որ* սգայ վասն մեղաց այլոց, ո՛չ նախանձի ընդ նոսա: - 583. Եւ աղքատք են հոգւով՝ *որք* ո՛չ խնդրեն զհեշտախտութիւնս: - 583. Եւ աղքատք հոգւով են խոնարհքն *որք* երկնչին: - 583. Եւ աղքատք հոգւով են ըստ մարմնոյ աղքատքն. *որք* ոչ ինչ ունին և զամենայն ինչ ունին: - 583. Ըստ այնմ *որ* յետս դարձուցանէ ի սիրեցելոյն է՛ միայն սիրոյն: - 583. Այն *որ* աստուածային տրտմութիւնն է, ունի **դ** յատկութիւնս: - 584. Իսկ *որ* մարմնական խնդութիւնն է և դիւական՝ ընդ դէմ այսմ ամենայնի. և ի վախճանի տրտմութիւն հետևի որպէս ասէ սուրբն եւագրիոս: - 584. Հեզ է *որ* ո՛չ կրէ և ոչ քարշի: - 584. Իսկ հեզութիւնն նոյն է ընդ մաստութիւնն. զի ասեն թէ՝ մաստութիւն է *որ* ո՛չ զգայ զդառնութիւն ինչ ոգոյ: - 584. Զի արդարութեամբն անընդմիջաբար միաւորիմք ընդ աստուծոյ. *որ* ո՛չ լինի այլ առաքինութեամբք: - 584. Զի արդարութիւն *որ* ասէ աստ՝ պարունակէ՛ զհաւատն զյոյսն և զսէրն. *որք* անընդմիջաբար միաւորեն զմեզ ընդ աստուծոյ: - 584. Ողորմութիւն է *որով* երկրաւորքս շահին երկնաւորօքն: - 584. Սրբութիւն սրտին է *որով* պայծառանայ և մաքրի սիրտն առ ի տեսանել զաստուած. և առ ի սիրել յոյժ ջերմ եռանդապէս: - 585. Խաղաղութիւն է ի կայումն առաքինութեան. *յորում* է հեշտութիւն ի յաստուած առանց հասարակութեան մարմնոյ՝ աշխարհի՝ և սատանայի: - 585. Նախ *որ* խաղաղութիւն առնէ այլոց ընդ այլ. որպէս միջնորդք: - 585. Երրորդ ինքն առ ինքն. որպէս առաքինիքն ի մէջ հոգւոյն և մարմնոյն և մտացն առնեն զխաղաղութիւն. և զպատերազմն *որով* ցանկայ մարմինն հակառակ հոգւոյն, հանեն ի միջոյ: - 585. Այս է՝ զմեղքն՝ զկամքն չար՝ և զսատանայ՝ *որ* խռովարարք էին եբարձ ի միջոյ. և արար խաղաղութիւն յերկինս և յերկրի: - 585. *Ո՞րք* են է խորհուրդք եկեղեցւոյ: - 587. Նա՛խ՝ ըստ զանազանութեան մարդկան *որ* են յեկեղեցի: - 587. Առաջին խորհուրդն է՛ մկրտութիւնն *որ* է նոր մտելոցն յեկեղեցի: - 587. Երկրորդն դրոշմն. *որ* է՛ պատերազմողացն ընդ դէմ թշնամոյն սատանայի: - 587. Երրորդն հաղորդութիւնն. *որ* է՛ վերըստին զօրացելոցն ի պատերազմի, և հոգևոր կերակուր: - 587. Չորրորդն ապաշխարութիւնն. *որ* է՛ վերստին կանգնելոցն, *որք* անկանին մեղօք և վերստին կանգնին ապաշխարութեան գործովք: - 587. Հինգերորդ վերջին օծումն. *որ* է՛ ելելոցն ի կենցաղոյս և զերծելոցն ի պատերազմէ՛: - 587. Վեցերորդ կարգն. *որ* է՛ սպասաւորելոցն այսմ խորհրդոց *որք* են յեկեղեցի քահանայք և այլք: - 587. Եօթներորդ պսակն. *որ* է՛ խորհուրդ նոր զինուորս ի ներս մուծանելոյ ի ձեռն մարմնաւոր ծննդեան: - 587. Դարձեալ՝ է են խորհուրդք *որ* պատրաստեն զմեզ ընդունիլ զեօթն առաքինութիւնս: - 587. *Որ* է հաւատն՝ յոյս՝ սէր. խոհեմութիւն և այլն: - 587. Պսակն ընդ դէմ ցանկութեան. *զոր* բարեխառնէ՛ և անմեղադրելի առնէ: - 588. Իսկ զէութիւն բանին *որ* է՛ յանուն Հօր և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ՝ ասելն մի՛անգամ պարտ է ասել և ո՛չ կրկնել տգիտաբար: - 588. Դարձեալ խնդրի *որ* մկրտօղն ունիցի դիտաւորութիւն *որ* այն մտօքն մկրտէ *զոր* բոլոր եկեղեցին: - 588. Այլ թէ *որ* հասակաւ մեծ է, խնդրի յատուկ հաւատ. իսկ թէ տղայ է՝ բաւական է խորհուրդն եկեղեցւոյ: - 588. Դարձեալ գիտելի է, զի աստ ասեն հերձուածօղ ազգն

Ֆռանկաց թէ՝ թէպէտ մկրտութիւնն գործ քահանայի է, բայց ի հարկաւոր ժամանակն թէ քահանայ ո՛չ լինի ամենայն ոք *որ* գիտէ զձև մկրտութեան՝ կարէ մկրտել: - 588. Եւ թէ այր մարդ ոչ լինի և տղայն մերձ ի մեռանիլ լինի, կինն կարէ՛ մկրտել թէ գիտէ զձև բանին *զոր* քրիստոս ուսոյց «յանուն Հօր և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ». ցանէ՛ զջուրն և ասէ՝ մկրտեալ լինի: - 588-589. Երրորդ, զի թէ կայր հնար *որ* ի ձեռն կնոջն տուեալ լինէր շնորհք, աստուածածին կոյսն մարիամ ընդէ՛ր ոչ եղև մերձ մկրտութեան որդւոյն իւրոյ ի յորդանան: - 589. Չորրորդ, զի թէ ի ձեռն փիլիպպոսի առաքելոյ *որ* էր մի յեօթանց անտի սարկաւագացն ո՛չ եղև իջեալ հոգին ի վերայ ներքինւոյն մինչև յափշտակեցաւ յազովտոս - 589. ...զնոյն և ամենայն հեթանոսք առնեն. իսկ թէ ի հեթանոսս այսպիսի պարկեշտութիւն պարտ էր առնել, քանի՞ ևս առաւել յեկեղեցիս պարտ է լինիլ. *որ* է ճշմարիտ կարգաւորութիւն և սրբութեան օրէնք: - 589. Ութերորդ, զի թէ զգենումն կենդանեաց ո՛չ ունին հրաման զենուլ ազգ կանանց *որ* է՛ խտրութիւն մարմնաւոր սրբութեանց. զիա՞րդ պատշաճի տալ հրաման կանանց ազգի մերձենալ ի կարգ հոգևոր սրբութեան: - 589. ...բայց թէ ազատեալ լիցի տեառն կամօք. որպէս նեսիմոնս այն. իսկ թէ զայր *որ* ընդ ծառայութեամբ է՝ ո՛չ հրամայեցին հայրապետքն սուրբք գալ ի յաստիճան եկեղեցւոյ. - 589. Տասներորդ, զի մկրտութիւնն է գործ քահանայի *որ* աղօթիւք կատարի...: - 589-590. ...**իսկ կանանց ազգին պատուիրէ՛ առաքեալն ի ժամ աղօթիցն շուք դնել գլխոյն վասն հրեշտակաց. այսինքն վասն քահանայից *որ* հրեշտակք կոչին ի գրոց**...: - 590. Են և այլ բազում վկայութիւնք ի գրոց սրբոց *որ* զայսպիսի հերձուածս սուտ և ընդունայն երևեցուցանեն: - 590. Բայց գիտելի է, զի գործ մկրտութեանն է սրբել զհոգիս յամենայն մեղաց *զոր* ունիցի...: - 590. Երրորդ՝ զի *որ* մկրտի՝ ի մահն քրիստոսի մկրտի. և քրիստոս միանգամ մեռաւ. և թէ ոք դարձեալ մկրտէ՝ անձանց ի խաչ հանէ զորդին աստուծոյ և դարձեալ խայտառակէ որպէս առաքեալն: - 590. Չորրորդ՝ զի մկրտութիւնն է անքակտելի կնիք ի հոգին. որպէս կարգն և դրոշմն. վասն որոյ ո՛չ կրկնին *որք* յանուն սուրբ Երրորդութեանն մկրտեցան: - 590. Եւ այնք *որ* ո՛չ խոստովանին զմիասնական սուրբ Երրորդութիւնն, մկրտելի է զմկրտեալն ի նոցանէ ի փառս ամենասուրբ Երրորդութեանն: - 590. Եւ գիտելի է, զի ի ծնունդ սուրբ աւազանին երևի **Ե** զարմանալի գործ *որ* ո՛չ է ի մարմնաւոր ծնունդս: - 590. Երրորդ՝ զի միշտ անդրանիկ ծնանի և ո՛չ կրտսեր. զի պատկեր քրիստոսի ստանամք *որ* է՛ անդրանիկ հօր: - 590. Եւ զայս ցուցանէ նոյն ձև բանին *որ* է կոչմունք Երրորդութեանն. և նոյն դաւանութիւն հաւատոյն և այլն: - 590-591. ...զի նա *որ* ոչ ունի զհաւատ, այլոց ո՛չ կարէ միջնորդել: - 591. *Որոյ* պատճառէ, զի կին երաշխաւոր և վկայ ո՛չ կարէ լինիլ, վասն որոյ և ո՛չ կնքահայր կարէ լինիլ: - 591. Սկզբնական մեղն *որ* յադամայ հետէ: - 591. Մեղքն ադամայ այն է *որ* զարդարութիւն կորոյս. և մեղօք և ցանկութեամբ ծնաւ զորդին. և այն մեղքն սկզբնական կոչի. և ո՛չ թողցի եթէ ոչ ի մահն քրիստոսի մկրտեսցի: - 591. Աստուած զարդարութիւն յամենայն մարդոյ խնդրէ *զոր* յառաջն ետ. և ադամ եթող զայն: - 591. ...և առանց ցանկութեան մեղաց ո՛չ ոք կարէ ծնանիլ. բայց միայն տէր մեր *որ* առանց ցանկութեան ի կուսական արգանդէ ծնաւ՝ ո՛չ ունէր զմեղս սկզբնական: - 592. Թէ մեղք հօրն ի մկրտութեանն թողեալ լինի, վասն էր մկրտին *որք* ի նոցանէ ծնանին: - 592. Որպէս ո՛չ եղև վնաս յովսիայ *որոյ* հայրն թիւրէր: - 593. Դրոշմն է հաստատութեան խորհուրդ. *որ* տուեալ լինի առ ի զօրացնել և քաջացնել զմարդն: - 593. *Որ* տուեալ լինի ի մկրտութիւնն հոգի սուրբ *որոյ* մեղքն քաւեալ լինի: - 593. Եւ գիտելի է, զի *որ* ի ճակատն և ի սիրտն և ի թիկնամէջն օծանէ, այն դրո՛շմ է. և *որ* զհինգ զգայութիւնսն օծանէ՝ այն ի խորհուրդ օծմանն է ծածկապէս: - 593. Եւ *որ* զայլ մասունս օծանէ՝ յա՛յնմ խորհրդոյ է՝ *որ* յառաջ քան զմկրտութիւնն օծանեն այլ ազգք քրիստոնէից: - 593. Ասեմք թէ՝ առնեմք ըստ ազգին յունաց. *որ* որպէս քահանայն պատարագէ և մկրտէ, նոյնպէս և դրոշմէ ըստ սրբոյն դիոնիսեայ: - 594. Եւ քահանայապետ ասէ զնա՝ *որ* պատարագէ և մկրտէ և դրոշմէ. զի նա՛ է պետ և աւագ ի կատարմունս խորհրդոյն: - 594. Դարձեալ ասեմք թէ՝ քահանայքն մեր ունին իշխանութիւն դրոշմելոյ *զոր* նոցա եպիսկոպոսն դնէ. ապա ուրեմն իշխանակիցք են քահանայք մեր և եպիսկոպոսք նոցա: - 594. Եւ գիտելի է, զի յետ օծանելոյն զգեցուցանեն զհանդերձս պայծառ. *որ* զլուսաւոր վարս և զպայծառ հաւատս և զանմեղութիւնն նշանակէ: - 594. Եւ խաչն *զոր* եբարձ ի լուծ պարանոցին: - 594. Հաղորդութիւնն է խորհուրդ՝ *յորում* պարունակի քրիստոս ի ներքոյ ձևի հացի և գինւոյ. և յերկոքին մասունքն է բոլոր քրիստոս: - 594. *Որ* էր խորհուրդ անմահ գառինն. և հացն և գինին մարմին և արիւնն սուրբ: - 595. Դարձեալ՝ մելքիսեդեկ հաց և գինի մատոյց պատարագ աբրահամու և ո՛չ ջուր. *որ* նշանակէր զճշմարիտ պատարագն քրիստոսի. ապա ուրեմն ո՛չ է պարտ խառնել ջուր: - 595. *Որք* ասեն՝ պա՛րտ է յամենայն աւուր ջերմ հաց հանել ի սեղանն և անապական բաժակ. զի անապական արեամբն քրիստոսի փրկեցաք: - 595. Եւ *որ* ջուր խառնէ՝ նզովեալ եղիցի

ասեն: - 595. Հինգերորդ վկայութիւն հայրապետացն *որք* զխորհուրդ պատարագին գրեցին: - 595. Եւ թէ ասեն՝ հաղորդութիւնն նշանա՛կ է մահուն քրիստոսի *յորմէ* ել արիւն և ջուր: - 596. Ասեմք թէ՝ արիւնն է՛ ի խորհուրդ հաղորդութեանն. ջուրն ի մկրտութեանն. *որով* մահ տեառն պատմի...: - 596. Ասեմք թէ՝ յատկութիւն պատահմունք են. այլ խորհուրդն ի յէութիւնն է կացուցեալ *որ* մի է, և ո՛չ ի պատահմունքն *որ* բազումք են: - 596. Ասեմք թէ՝ խառնումն ո՛չ զջրոյ և գինւոյ ասէ, այլ խառնել զայն ասէ *որ* արկանի գինին ի խառնարանն: - 596. Դարձեալ՝ խառնումն է աստուծոյ իմաստութեանն ընդ մարդկան. *որ* բանիւն խառնեալ միաւորեցան. որպէս ասէ սուրբն դիոնէսիոս: - 596. Այլ և զայս հարցանեմք ձեզ. *ո՞ր* բան է *որ* զջուրն ի խորհուրդ կատարէ: - 596. ...զի *որք* կամին զմարմինն քրիստոսի ապականացու ասել՝ խմոր և ջուր խառնեն. թէպէտ այլ և այլ պատճառեն: - 596-597. Չորրորդ՝ բանն քրիստոսի *որ* ասէ «ա՛յս է մարմին իմ. և այս է արիւն իմ»: - 597. Զի՞նչ է *որ* յեկեղեցիս մեր մի նշխար օրհնեմք. և ա՛յլ ազգ բազում: - 597. Երկրորդ՝ զի հրամայեաց եզական բանիւ «ա՛յս է մարմին իմ. և ա՛յս է արիւն իմ». *որ* զմին հացն նշանակէ՛: - 597. Չորրորդ՝ ի յօրինակն մի հաց և մի գառն խորովեալ լինէր. *որ* ընդ մասին գինւոյ դնէին յերեսաց սեղանն: - 597. Ասեմք թէ՝ կարողութիւնն է ի դիտաւորութիւն. և դիտաւորութիւնն է ի կոպարն *որ* է մին հացն. *որ* ասաց «այս է մարմին իմ». ապա ուրեմն ո՛չ կարէ զբազում հացս օրհնել: - 597. Եւ այսպէս պարտ է կամ զօրհնեալն դարձեալ օրհնել *որ* է սուտ. կամ ամենայն հացն ո՛չ է օրհնեալ այլ մինն: - 597. Երրորդ՝ զի վարձատրեսցուք հաւատով. այլ հաւատն ի յաներևոյթն է *որ* է՛ գոյացութիւնն...: - 597. Իսկ *որք* ոչ միաւորեն, բաժան և որիշ նշանակեն զբանն ի մարմնոյ իւրմէ. որպէս երկաբնակքն քաղկեդոնիկք: - 598. Իսկ *որք* այլ իմն շաղակրատեն թէ թացեալ պատառնէ՛ յուդայի: - 598. Այլ սուրբն աթանաս *որ* զխորհուրդ պատարագին աւանդեաց՝ այսպէս ուսոյց: - 599. Եւ սուրբ լուսաւորիչն *զոր* ի ժամանակին այնմիկ էր՝ զա՛յն կարգեաց ի մերս եկեղեցի. և ունիմք հաստատապէս: - 599. Եւ զպատառն զայն *զոր* ի ձեռն ունէր քրիստոս՝ ետ ի նա. - 599. Եւ այս է ճշմարիտն. քանզի յօրհնեալ հացէն *որ* բաշխեաց և ետ առաքելոցն, այլ ո՛չ մնաց: - 599. ...զի յայտնապէս զարիւնն ո՛չ տայք, և ծածկապէս զմարմինն. զի յօրհնեալ մարմնոյն ո՛չ տայք. այլ սոսկ հաց *որ* ի բեմն: - 599. Ասեմք թէ՝ ամենայն նշխարքն *որ* ի բեմն և ի խորհրդանոցն օրհնեցաւ այսօր, զնոյնն ի վաղիւն առնոյք և օրհնէք: - 599. Նա՛խ՝ եթէ ո՛չ զմարմինն տան ժողովրդեանն. այլ սոսկ հաց և գինի. զի մարմին քրիստոսի այն մինն է *որ* օրհնեցաւ որպէս ցուցաւ ի վերոյ: - 600. ...*որ* ո՛չ ուտէ զմարմին իմ և ո՛չ ըմպէ զարիւն իմ, ո՛չ ունի կեանս: - 600. *Որ* ուտէ զմարմին իմ և ըմպէ զարիւն իմ, նա յիս բնակեսցէ և ես ի նմա: - 600. ...ապա յորժամ զրկես յարենէն զժողովուրդն, զրկես և ի նոցանէ *որ* կապեալ են ընդ արիւնն. այսինքն մարմինն և հոգին և աստուածութիւնն: - 600. ...զի *որք* արժանի են մարմնոյն, արժանի են և արեանն սրբոյ. - 600. ...*որք* կամաւ յանձն առնուն. զի այս մինչև ի մահ ճգնութիւն է: - 600. Ապաշխարութիւնն է ցաւիլ վասն մեղացն *զոր* գործեաց... - 601. ...և պատժէ զինքն վասն չարին *զոր* արարեալ լինի: - 601. Եւ պա՛րտ է *որ* ապաշխարանքն լինի առ ոտս քահանային: - 601. Եւ գիտո՞ւն էր *որ* կարէր ճանաչել զմահու չափ մեղքն և զներելին: - 601. Եւ գիտելի է, զի մարդ *որ* ի մեղք անկանի և իմանայ զինքն *որ* մեղք գործեաց, և ունի զխոստովանահայրն պատրաստ ուղղափառ և գիտուն, ի յա՛յն պահն պարտի խոստովանիլ: - 601. Զամենայն ճշմարտութեամբ հարցանէ քահանայն. և այնպէս *որ* մի՛ լիցի ի հարցանելն մեղք ուսուցանել ժողովրդեանն: - 601. ...տայ խրատ և զգուշացուցանէ ի մեղացն *որ* այլ չգործէ...: - 602. Եւ յետոյ դնէ ապաշխարանք թէ զինչ կերպիւ պատեհ է. պահք. թէ աղօթք. թէ ողորմութիւն. պատարագ. և այլ զինչ *զոր* կարօղ իցէ ...: - 602. Ասեմք թէ՝ այնպէս է շնորհք խոստովանութեանն *որ* զյաւիտենից պատիժն ժամանակեայ առնէ ...: - 602. ...*որ* սակաւ մի խրատեցաւ ի ձեռն աբիսողոմայ: - 602. ...աստուծոյ մնայ պատիժն *զոր* պահօք և աղօթիւք վճարէ որպէս ասեն ոմանք: - 602. Դարձեալ՝ խոստովանութիւնն սրբէ՛ զմեղս *որ* ո՛չ տանջի...: - 602. Մին է *որ* նախ խոստովանին և յետոյ ապաշխարեն...: - 602. ...որպէս այնք *որք* խոստովանին ի մուտս քառասնորդաց պահոց. որպէս ասէ եսայի: - 602. Եւ երկրորդ խոստովանութիւնն է՝ *որք* նախ ապաշխարեն պահօք և ճգնութեամբ...: - 602-603. ...և այսպիսիքս, որպէս նոքա *որք* մերձ ի զատիկն խոստովանին և սրբութեանց արժանաւորին: - 603. Զի է՛ *որ* խոստովանին զմեղս և արմատն հաստա՛տ է ...: - 603. ...այս է *որ* ի միտ ունի խոստովանիլ և դարձեալ մեղանչել...: - 603. Եւ է՛ խոստովանութիւն *որ* զարմատ մեղացն քակէ՛ ի սրտէն և զղջացեալ ի մեղաց, հաստա՛տ է ի կամս և ի միտս այլ ո՛չ մեղանչել...: - 603. *Որք* իցեն ի մեծամեծ մեղս մահու չափ, օգո՞ւտ է խոստովանութիւնն նոցա թէ ոչ: - 603. Արդ ըստ այնմ *որ* է՛ հնարք՝ ո՛չ է օգուտ որ քան է մարդ ի մեղս: - 603. ...զի պարտ է *զոր* ի մտի ունի՝ զբոլորն միոյ քահանայի խոստովանիլ: - 603. Վերջին օծումն է խորհուրդ եկեղեցւոյ. *որ* տուեալ լինի

հիւանդաց ի հոգէվարի օրն. յաչքն, յականջն, ի բերանն, ի ձեռքն, ի կուշտն, յոտից ներբանքն: - 604. Այս սուրբ օծմամբս և իւր գթութեամբն աստուած թողու քեզ *զոր* մեղանչեցեր տեսլեամբդ. նոյնպէս ասէ և այլ զգայութեանցն: - 604. Կնիքս այս *որ* յանուն յիսուսի լուսաւորեսցէ զաչս քո...: - 604. Եւ գործ ա՛յս խորհրդոյս է՛, *որ* զմնացեալ ներելի մեղքն թողու: - 604. ...*զոր* ասացաք ի վերոյ թէ՝ զդրոշմն և զառաջին օծումն և զվերջին օծումն կատարեմք ի մկրտեալն: - 604. Ասեմք թէ, ի հնարից չարին բարձին մարդիկք զխոստովանութիւնն *որ* հարկաւոր էր, յայն ապաւինեալ թէ՝ ի վերջին օրն օծանիմք ձիթով բալասամինաւ և արդարանամք: - 604. Որպէս ազգն յունաց և վրաց և ասորւոց բարձեալ են զխոստովանութիւնն. *որ* անհնա՛ր է առանց խոստովանելոյ արդարանալ մարդոյ: - 604. Վասն որոյ հայրապետք եկեղեցւոյ լա՛ւ համարեցան զվայելչականն բառնալ *որ* ո՛չ ի լինիլն յաւելուած առնէ ...: - 604. ...և ո՛չ ի բառնիլն ապականէ զկարգ եկեղեցւոյ. *որ* է վերջին օծումն...: - 604. ...քան թէ բառնալ զխոստովանութիւնն *որ* հարկաւոր է. առանց *որոյ* ո՛չ գոյ ներգործական մեղացն թողութիւն գտանել: - 604. ...և տայ զշնորհս սրբութեան առ *որ* մերձենայ: - 605. Եւ որպէս բազում են ներելիքն և անթիւ *որ* ի զգայարանս և ի միտս: - 605. Եւ թէ ոք ասիցէ, զառաջին օծումն *որ* նախ քան զմկրտելն՝ ո՛չ ունիմք: - 605. Ասեմք թէ՝ և զայս ունիմք ծածկապէս. որպէս այն *որ* ի ջուր աւազանին խաչանման մեռոնն խառնի...: - 605. Նոյնպէս և օծումնս այս է՛ վերջին *որ* զփոշետեսակ և զներելի մեղսն սրբէ...: - 605. ...և է՛ առաջին վասն նոր պատերազմին *որ* առաջի կայ: - 605. Իսկ այժմ *որ* բաժա՛ն է՝ բաժանմամբ հասանէ ի նա ամենայն սրբութիւն: - 605. Ապա և ո՛չ աղօթք և պաշտօն քահանայից կամ տուրք կամ պատարագք է օգուտ հոգւոյն ըստ քեզ *որ* է բնաւ սուտ և չար հերձուած: - 605. Կարգն է կարողութիւն *զոր* ետ եպիսկոպոսն այնմ *զոր* ի կարգն ընկալաւ և ի սպասաւորութիւն խորհրդոյ եկեղեցւոյ: - 606. Ձի նորին գործն է *որ* բանայ և փակէ զդուռն եկեղեցոյ: - 606. *Որոց* գործն ա՛յն է, երդմնեցուցանել զդիւահարն՝ և զերեխայն՝ հրաժարիլ ի սատանայէ: - 606. Հինգերորդ՝ Կիսասարկաւագն. *որոյ* գործն է զսկիհն և զմաղզմայն առ սեղանն տանիլ...: - 606. *Որոյ* գործն է սպասաւորել քահանային ի խորհուրդ եկեղեցոյն. զսկիհն պատրաստել, զաւետարանն կարդալ ի բեմն: - 606. *Որոյ* գործ է զխորհուրդ մարմնոյ և արեանն ի վերայ սեղանոյն օրհնել: - 606. Եւ Իններորդ՝ Պապն. *որ* է՛ կաթողիկոս. գերագոյն վերոյ ասացելոցն: - 606. Եւ ի տօն զատկին *որ* արար խարազան չուաննեայ և եհան զվաճառականսն, ցուցաւ սարկաւագի գործ նորա: - 606-607. Եւ յառաջին արտորէիցն պտղոց տալով նոցա ուտել *զոր* քահանայքն ուտէին՝ արար զնոսա Քահանայս: - 607. Իսկ ըստ եկեղեցւոյն յունաց, Առաջին դասք են Պատրիարգունքն. *որ* թարգմանին հայրապետ...: - 607. ...*որք* ունին զաթոռ չորից աւետարանչացն. *որ* փոխանակ չորեքկերպեան կենդանեացն եդան աւետարանիչքն: - 607. Եւ գո՛րծ է նոցա ձեռնադրել զարք եպիսկոպոսունս. *որք* են ըստ իւր վիճակաւն ի չորս բաժինս տիեզերաց: - 607. Երկրորդ՝ Արքեպիսկոպոսք. *որ* թարգմանին եպիսկոպոսապետք...: - 607. Երրորդ՝ Մետրապօլիտք. *որք* են մայրաքաղաքացիք. և ունին սըքեմ զնոյն. բայց եմիփորոն **գ** կրկին: - 607. ...և օրհնել ձէթ կնքոյ վասն յաւելուածոյն. արկանելով յառաքելական ձիթոյն. *զոր* օրհնէ եկեղեցի յաւելուածով: - 607. Չորրորդ՝ Եպիսկոպոսունք. *որք* ասին այցելուք: - 607. Հինգերորդ դասք՝ Քահանայք. *որք* ի քաղաքի լինին, և *որք* ի վանորայս, և ի գեօղս երիցունք: - 608. Ութերորդ՝ Անագանոսք. *որ* են ընթերցօղք: - 608. Իններորդ՝ Փսալտք. *որ* են սաղմոսասացք: - 608. Առաջինն է կաթողիկոսն. *զոր* եպիսկոպոսապետ կոչէ: - 608. Եպիսկոպոսն և քահանայն, զսոսա ի մի կարգ թուէ ի դէմս վերնագոյն դասուց երկնաւորաց. *որք* են Աթոռք. Քերովբէք. և Սերովբէք: - 608. Երրորդն Միայնակեացք. *որք* կոչին կամարարք: - 608. Եւ սուրբ ժողովուրդն՝ և երեխայն *որ* դեռևս մկրտի, զայսոսիկ նուիրեալք կոչէ: - 608. Այսպէս ասէ սուրբն դիոնէսիոս եթէ՝ մաքրելիք են **ե** դասք. *յորոց* վերայ իշխէ սարկաւագն և գործէ՛ զմաքրականն: - 608. Չորրորդն՝ *որք* կիսակատար դարձեալք են ի մեղաց. և զսոսա լուսաւորէ ջահընկալն: - 608. Հինգերորդ՝ *որք* բոլորովիմբ զղջացեալք և թողեալք զմեղս՝ գործեն զբարիս. զնոսա հովուէ՛ դպիրն սաղմոսիւք և ալէլուիւք: - 608. Ոմանք ասեն եթէ՝ մովսէս զդատաւորսն ի **դ** բաժանեաց ամենայն ժողովրդեանն. *որ* էր **ժ**ապետ. յիսնապետ. **ճ**ապետ. և **ռ**ապետ: - 609. Երրորդն ասեն եթէ՝ **բ** ազգն գեթսոնի և **բ** գունդն մերարեայ՝ զչորս փոքրիկ աստիճանս ունէին ի խորանն. զպահպանութիւնն մինչ ի ջահընկալն *որ* զաշտանակն բառնային. և որդիքն կահաթու էին բարձրագոյնք: - 609. Պսակն է խորհուրդ մեծ. *որով* օրհնութիւնն աստուծոյ կատարեալ լինի...: - 609. Եւ այս աճման սկիզբն պսակն է. *որ* միանայ հարսն ընդ փեսային. և լինի ըստ սահմանադրութեանն աստուծոյ ծննդագործութիւն: - 609. *Որով* լինի պսակս այս դաշն և կապ ի մէջ առն և կնոջն. *որով* լինի անքակ միութիւն: - 609. Եւ այս լինի ի ձեռն պսակին *որ* տուեալ լինի ի ձեռն խորհրդոյ: - 609. Ասեմք թէ՝ որպէս ծառն *որ* նախ ծաղկի

և ապա՛ պտղաբերի: - 609. Ձայս ունի խորհուրդ, *որ* հարսն և փեսայն յառաջ քան զպսակն տեսանեն զմիմեանս. և հաւանին սրտիւք և կամօք և ապա՛ պսակին: - 610. Եւ որպէս աստուծոյ բանն կատարէ զհաղորդութիւնն *որ* ասէ «ա՛յս է մարմին իմ և այս է արիւն իմ»: - 610. Նոյնպէս աստուծոյ բանն է *որ* առնէ զերկոսեանն մի՝ զայրն և զկինն: - 610. Յաւատն է՞ զի ո՛չ ոք ի յերկուցն պղծեսցի օտար անկողնով. որպէս այն *որ* թողու զհաւատն և ուրանայ բանիւ...: - 610. Նոյնպէս *որ* օտար անկողնով պղծէ զշաղկապ պսակին, որոշի յօրհնութենէն և պղծի անկողինն սուրբ: - 610. ...զի **բազում արգելմունք գոն պսակին. որպէս ազգակցութիւնն հոգևոր կամ մարմնաւոր. կամ տկարութիւն բնութեանն. կամ պոռնկութիւնն. կամ այսահարութիւնն. կամ ծառայութիւնն. կամ բռնութեամբն. կամ այլ ինչ այսպիսի պատճառ. *որով* բաժանին այրն և կինն**: - 610. Այլ ո՛չ է պարտ բաժանել զպսակն զայն *որ* օրինօք լինի պսակեալ...: - 610. ...և կրկին է մահն *որ* պատասխանի տայ նոցին այսպէս: - 610. *Ո՞րն* է է ազգն *զոր* **է** պորտ կոչեմք: - 611. **Առաջին մեք, և հայրն, և պապն մեր. հօր պապն, և պապու հայրն, և պապուն պապն, և ապպապն. *որ* է՛ է. նմանապէս և ի մօր կողմն**: - 611. Առաջին մեք, և որդին, և թոռն. և թոռին որդին. և թոռին թոռն. և նորա որդին. և թոռնիայն. *որ* է՛ **է**: - 611. Զի հայրն և որդին և թոռն *որ* է՛ **գ**. և թոռին թոռն *որ* է՛ **դ**. *որ* լինի **է**, և եզր արենակցութեան: - 611. Եւ առաջին ծնօղն ուստի յառաջ եկին **դ** ծնունդքն. և **ե** երրորդն *որ* լինի խնամութիւն. լինի այս **զ** ազգ: - 611. **Զի օտար ազգք՝ միջնորդութեամբ փեսային և հարսին *որ* են մի մարմին, լինին և նոքա մի ազգ**: - 611. Զի կնքահայրն և սանամայրն ծնունդ մի. և նոցա զաւակն **բ**. և նոցա թոռն **գ**. և չորսն *որ* է՛ թոռին թոռն՝ լինին խնամիք: - 611. *Որոյ* պատճառէ. զի հոգին եռամասնեա՛յ է. այսինքն բան՝ ցասումն՝ և ցանկութիւն...: - 611. Իսկ որդէգիրն *որ* բանիւ և կամօք լինի, ո՛չ լինին խնամիք մինչ ի կրկին ծնունդն...: - 612. Իսկ օրինաց ազգն *որ* են խնամիքն, և բնականն *որ* են մարմնականքն, ո՛չ լինին խնամիք մինչ ի **դ** ծնունդն: - 612. ...և նոցա որդին *որ* է՛ թոռն հօրն՝ ունի զկէս արեանն. և թոռին որդին զերրորդ մասն. և թոռին թոռն զչորրորդ մասն: - 612. Այլ որպէս ի հինն ո՛չ առնէին ընդ հեթանոսացն խնամութիւն *որք* չէին թլփատեալք: - 612. Նոյնպէս և մեք ո՛չ առնեմք խնամութիւն ընդ այլազգիս *որք* ո՛չ են մկրտեալք: - 612. Իսկ *որ* երրորդ կրկնի, ի պոռնկութեան սակի գրի ի կանոնս սրբոց հարց: - 613. Եւ դարձեալ գործս այս լրումն է աստուածային հրամանին *որ* ասէ «աճեցէք և բազմացարուք»: - 613. Մինն բնակութիւնն, և միւսն բնակեալն. *որ* է՛ ժողովուրդ և ժողովարան: - 613. Երկրորդ, որպէս նա եռայարկեան խորան, *որ* է՛ գաւիթն, և մէջն և բեմն: - 613. ...*որք* հիմունք են եկեղեցւոյ և լոյս ծագօղք: - 614. Վեցերորդ, ի սմա՛ կրկին դրունք ի հարաւ և յարևմուտս. *որ* նշանակէ՛ զդուռն ողորմութեան և զդուռն արդարութեան աստուծոյ, հարաւոյն և արևմտիցն: - 614. Եւ արդարութիւնն դէմ յանդիման *որ* ուղղութեամբ դատէ՝ դուռն է արևմտեան: - 614. Իսկ ի մեզ դուռն մարմնոյս *որ* յերկիր և ի խաւար հայի, արևմտեանն է: - 614. Եւ դուռն մտացն *որ* յերկինս և ի լոյս հայի, հարաւայինն է: - 614. Ութերորդ, սմա անուն կոչի եկեղեցի. այսինքն *զոր* կամիս լիցի. և դուստր սիօնի: - 614. Երկրորդ՝ զի նիւթ սորա է՛ ի քարանց արտաքին և ի փայտից *որ* կոխան է եղեալ անասնոց և անսրբոց...: - 615. Վեցերորդ օրհնեմք, զի բաժանեսցի յայլ աշխարհական տանց *որք* ո՛չ ունին զօծումն սրբութեան: - 615. Եօթներորդ՝ զի աստուած սուրբ է *որ* բնակէ ի տաճարն: - 615. Ութերորդ՝ սրբեմք զեկեղեցիս, զի լիցի սրբութիւն սրբոց. զի *որք* մերձեսցին ի սա՛ սրբեսցին: - 615. Ա՛րդ՝ ջուր և գինին և մեռոնն նշանակեն ի մեզ զջուր սրբութեան աւազանին. և մեռոնն *որով* օծաք և դրոշմեցաք. և ապա ճաշակմամբ մեղսաքաւիչ արեանն կատարեցաք: - 615. Վասն է՞ր հինքն **բժ**ան օր նաւակատիս կատարէին *որ* է՛ նորոգումն խորանի տաճարին: - 616. Երկրորդ, զի է **է** խորհուրդ եկեղեցւոյ. և **է** արփեան է շնորհք հոգւոյն. և մի կատարմունքն ի մեզ, *որ* լինի **ը**: - 616. Երկրորդ ասեմք, և մեք **բժ**ան օր տօնեմք եկեղեցւոյ ի բոլոր ամն. *որ* են այս: - 616. Եւ հին և նոր եկեղեցւոյ *որ* է երկոտասան: - 616. Երրորդ՝ ի բանակիլն խաչաձև բանակեցան երկոտասան ցեղքն, և խորանն ի միջի. *որ* նշանակէ՛ զխորանն եկեղեցւոյ՝ խորհրդով խաչին քարոզեալ ընդ **դ** կողմ աշխարհի: - 616. Վեցերորդ՝ զի նոյն է խորհուրդն *որ* անդ ի վերայ խաչին պատարագեցաւ, և այժմ յեկեղեցի սուրբ ի խաչ սեղանին: - 616. Տասներորդ՝ զի դշխոյն հեղինէ *որ* շինեաց զսուրբ յարութիւնն յերուսաղէմ...: - 617. ...վասն որոյ յանարիւն կենդանւոյ զլոյսն վառեմք. զի կենդանին այն անարիւն է *յորմէ* մոմն գոյանայ: - 617. Երրորդ՝ ի հին տաճարն գառն էր պատարագ. *որ* էր օրինակ գառինն աստուծոյ: - 617. Չորրորդ՝ յօրինակ քրիստոսի *որ* խարազանաւ եհան ի տաճարէն զոչխարս և զարջառս. նոյնպէս և մեք արտաքսեմք: - 617. Երկրորդ՝ եկեղեցի՝ դրախտին է օրինակ. *որ* զմեռեալսն մեղօք արտաքսեաց: - 617. Երրորդ՝ զի մարմինք սրբոց ի գաւիթս պահին և ո՛չ յեկեղեցի. յօրինակ հոգւոց նոցա *որք* են ի պահեստ հոգւոյն ի տեղւոջ լուսոյ և հանգստեան: - 617. Եւ տապանն նշանակէ՛ զեկեղեցի. *որք* ի ծայն

ժամահարին ժողովին և ապրին ի ջուրց հեղեղաց մեղաց: - 618. Դարձեալ՝ ի խորհուրդ գոչման փողոյն այն *որ* ի բարձունս. զի նախ յերկնից գոչէ փողն գաբրիէլի և ժողովէ զհոգիսն...: - 618. ...և ապա՛ ի յերկրէ յարուցանէ զմարմինս. որպէս այն *որ* հրեշտակապետն նստեալ ի վերայ վիմին փողէր զյարութիւնն քրիստոսի: - 618. Վեցերորդ՝ աղօթք է ինչք և պատարագք *որ* յեկեղեցիս ընծայեն...: - 619. ...*որ* պատեալ է ի ներքոյ զսիրտն...: - 619. Վեցերորդ՝ արտասուքն զզղջումն և զուգն նշանակէ՛ *զոր* ունիմք վասն մեղաց: - 619. Իսկ ի լուր տրտմութեան՝ խուճապի մարմինն. և ի դառն մաղձոյն *որ* է՛ լեղին՝ հոսի ի բերան քաղրդին...: - 619-620. Այլ գիտելի է, զի **գ** է արտասուքն հոգևոր. մին վասն մեղաց. *որ* է՛ ապաշխարութիւն: - 620. Երկրորդ վասն ընկերին. *որ* է՛ ողորմութիւն և առաքինութիւն: - 620. Երրորդ վասն արքայութեան. *որ* է՛ երանութիւն...: - 620. Եւ յաչացն ի յերեսն սակաւ. *որ* արտասուքն ելանէ. բայց սակաւ ճանապարհս այս յաղթէ՛ զայն բազում տարւոյ ճանապարհն: - 620. ...*որ* մարդն զինքն յառաջ պատրաստէ՛ և ապա՛ աղօթէ ...: - 620. Պա՛րտ է ամենայն *որ* աղօթէ, զայսոսիկ ի միտ պահել և ապա՛ աղօթել. վասն որոյ ի սկիզբն գրեցի զխրատս: - 620. Քանի՞ են ժամք աղօթից և *ո՞րք:* - 621. Այս է՝ նախ զերրորդ ժամուն. և ապա՛ զվեց ժամուն. և ապա՛ զինն ժամուն. *որ* աւա՛րտ էր նոցա աղօթիցն: - 621. ...*որ* լինի **թ** անգամ աղօթք ըստ **թ** դասուց հրեշտակաց: - 621. *Որ* էր յերկինս երկնից բանն աստուած, ի պայծառ և լուսաւոր դասուց հրեշտակաց օրհնաբանեալ...: - 621. ...եկն ի յերկիր *որ* է՛ արևմուտք և խաւար. եղև որդի մարդոյ: - 621. ...վասն որոյ յայսմ ժամու սկիզբն է աղօթից բոլոր աւուրն. *յորում* ասեմք զտէր եթէ շրթունքն և զայլ սաղմոսսն ի դէմս հօր աստուծոյ: - 621. Եւ այս է միտքն, *որ* մեղօք կապեցաւ: - 621. ...*յորում* բազումս նեղեաց զմեզ թշնամին մեր. գանկատիմք նմա և խնդրեմք զփրկութիւն: - 621. Երկրորդ ժամն է՛ օրհնութիւն երից մանկանցն ի դէմս որդւոյ. *որ* նա՛ էջ ի մէջ հնոցի աշխարհիս. և փրկեաց զմեզ: - 621. Իսկ չորրորդ ժամն՝ ցերեկին երրորդ ժամուն առաջին ողորմեայն է ի դէմ հոգւոյն սրբոյ. *որ* յերրորդ ժամու էջ յառաքեալսն: - 622. Որդորմեայն ի դէմս հօր *որ* առաքեաց զորդին ի խաչ. և պատարագն ի դէմս որդւոյ *որ* խաչեցաւ վասն մեր: - 622. Վեցերորդ ժամն է վերջին ողորմեայն. իններորդ ժամու աղօթն. *յորում* քրիստոս աւանդեաց զհոգին ի ձեռս հօր: - 622. *Զոր* այժմույս **գ** ողորմեայն և պատարագն ի միասին կատարի: - 622. Ութերորդ՝ խաղաղականն է յետ երեկոյին ժամուն առ հոգին սուրբ. *յորում* ժամու հոգին քրիստոսի էջ ի դժոխս և խաղաղացոյց զնոսա: - 622. Իններորդն է հանգստեան ժամն ի դէմս հօր. *որ* ասեմք եկեսցէ և ննջեմք. - 622. ...*որ* է վերջք և աւարտ ամենայն ժամուց բոլոր աւուրն: - 622. Այլ և խաղաղականն *որ* է ի կարդալն՝ է՛ է փոխ. ի պահպանութիւն է զգայարանցս. և ի մաքրութիւն անցեալ գործելեացն: - 622. Առաջին՝ *յորում* ասեմք զեկեսցէն: - 622. Երեկոյ է տղայութիւնն. *յորում* նո՛ր գամք ի խաւար կենցաղոյս: - 622. Մէջ գիշերին է՛ երիտասարդութիւնն. *յորում* առաւել թմրիմք ի մեղս: - 622. Յաւախօսն է ալևորութիւնն. և Առաւօտն ծերն է. *որ* մերձ է ծագման հանդերձելոյ աշխարհին: - 622. ...*որ* է՛ հասարակ զգայութիւն. երևակայութիւն. կարծիք. տրամախոհութիւն. և միտք *որ* է՛ յիշողութիւն: - 622. Այլ թէպէտ առանձնականն կամաւո՛ր է, սակայն ի վերայ վանականաց *որք* են աբեղայք և կրօնաւորք, հարկաւո՛ր է վասն **դ** պատճառի: - 623. Այլ *որք* ո՛չ ժամանեն՝ պա՛րտ է յամենայն աւուր կրկին անգամ աղօթել. այսինքն յայգն և յերեկոյն: - 623. Եւ դարձեալ՝ վասն ելից մեր և մտից. *որ* է՛ մահ և կեանք: - 623. Եւ դարձեալ՝ **գ** է որպիսութիւնք մեր և փոփոխմունք. *որ* է՛ աստի կեանս. և յետ մահուն. և յետ յարութեանն...: - 623. Եւ ա՛յլ խորհուրդ. **գ** առանձնական աղօթքն, և **թ** հասարակն, *որ* լինի ամենայնն երկոտասան անգամ աղօթք: - 623. *Որով* յա՛յտ է՝ զի ի կէս աւուրն *որ* է **ժբ** ժամն՝ աղօթելի՛ է մեզ յամենայն օր. և զկէսն այլ՝ մարմնական հոգոց պարապիլ. գործոյ աշխատութեան՝ ննջելոյ՝ կամ այլ ինչ իրաց: - 623. Ա՛յս է միտքն *որ* ասեմք «օրհնեա՛»: - 624. Նա՛խ որպէս սովորութիւն է մարդկան *որք* զաղերսն ընծայեն ի դրունս մեծամեծացն, և նոքա՛ մատուցանեն թագաւորին: - 624. Չորրորդ և ուղիղ, որպէս ասէ տեսիլն հրեշտակք առնուին զխունկս *որ* է՛ աղօթք սրբոցն, և նուիրէին ի սեղանն ոսկի *որ* է՛ քրիստոս. և ի նմանէ բուրէր ծուխն առ հայր: - 625. Նմանապէս և յեկեղեցի՝ ոմանք սաղմոսե՛ն. և սարկաւագն ի տիպ հրեշտակին տայ զօրհնեայն ի քահանայն *որ* է՛ տիպ քրիստոսի... - 625. Զի՞նչ է *որ* քահանայն աղօթէ՛ և եպիսկոպոս զխաղաղութիւնն տայ: - 625. Ո՛չ զամենայն, այլ զիւրաքանչիւր ժամու առաջին աղօթիցն եպիսկոպոսն ասէ զխաղաղութիւնն, և զայլն քահանայն *որ* աղօթէ՛: - 625. Եւ ա՛յս է պատճառն, զի քահանայն է՛ ի դէմս քրիստոսի, և եպիսկոպոսն հօր աստուծոյ. և խաղաղութիւնն է՛ հոգին սուրբ *որ* ի հօրէ առաքեցաւ...: - 625. Զի՞նչ է *որ* զառաւօտու քարոզն՝ այսինքն զԵրկրպագեմքն, և զՊատարագին գոհութիւնն, և յերեկոյն զՅասեալքս ի ժամն, աղօթից ձևով ասէ սարկաւագն: - 626. Երկրորդ, զի ի գոհութիւնն ամենայն չարք կործանին *որ* հակառակ կան մեզ: - 626.

Զի՞նչ է խորհուրդ կանոն գլխին *որ* ձայնիւ ասեմք: - 626. *Որ* ընդ տիւ և ընդ գիշեր ի խորանին երգէին: - 626. Եւ զվերջին կանոնն ելք աստիճանաց. *որ* է՛ յաստեացս ի հանդերձեալն: - 627. Ի յայս միտս և զեօթն օր շաբաթուն փոխեցին առաքեալքն ի կիրակէ. *որ* **ը** երորդ է ըստ կարգի: - 627. Իսկ *զոր* կանոն գլուխ կոչեմք, ասելով **զ** գուբղայ հանդարտ ի թիւ. և զեօթներորդն ձայնիւ: - 627. Յօրինակ յեսուայ, *որ* տապանակաւն և քահանայիւք և ժողովրդովք զվեց օր շրջեցաւ լռութեամբ...: - 627. ...և յեօթներորդ օրն ի եօթն նուագին բարձրաձայն փողովք հնչեցին քահանայքն. և ժողովուրդն բարձրաձայն աղաղակեաց. *յորմէ* կործանեցաւ եօթնապատեան պարիսպն երիքովի: - 627. Եւ զփոխն առաւել բարձր, *որ* է՛ աղաղակ ժողովրդեանն: - 627. Նա՛խ՝ իբր գոհութիւն և շնորհակալութիւն աստուծոյ *որ* զօրացոյց զմեզ: - 627. ...և օրհնեմք զօրհնիչն մեր *որ* ասէ՝ «եկայք օրհնեալք հօր իմոյ»: - 627. Յետոյ ալէլուն *որ* է՛ հրեշտակացն օրհներգութիւն: - 627. Եւ ապա՛ ընթերցմունք յիշատակ սրբոցն *որք* աստ նահատակեցան և անդ պսակեալք թագաւորե՛ն ընդ քրիստոսի: - 628. ...*որք* լրտեսք եղեն երկրին աւետեաց: - 628. Ապա՛ զկնի երից մանկանցն աղօթից *որով* քաւիմք ի մեղաց. ի փառս տալն ի բարձունսն՝ անուշահոտ բուրմամբ նուիրեմք: - 628. Համբարձումն ձեռաց սրբութեամբ աւետարանին, նշանակ գործոց բարեաց *որով* փառաւորի աստուած: - 628. Եւ զկուրծսն բախելն, *որ* բնաւորեալ է կանանց յապաշաւելն զկուրծսն բախել և ողբալ: - 628. Եւ յետ այսորիկ ի միասին համաձայն երգել զփառս ի բարձունսն աստուծոյ, *որ* փրկեաց զմեզ: - 628. Եւ այն *որ* **բ** ձայնիցն մի է մեսեդին. զի դարն ադամայ և ենովքայ միապէս բնական օրինօքն վարեին: - 629. Եւ *որ* նա՛խ է վերջին տունն ի մեսեդի կամ կցորդ. այն է զի քրիստոսիւ դարձաք յառաջինն և ի բարձրագոյնսն. ուստի ադամաւ խոնարհեցաք...: - 629. Իսկ սաղմոսն՝ մանկացելոցն մկրտութեամբ հրամայէ որդիացելոցն օրհնել զհայրն երկնաւոր. *որում* փառք յաւիտեանս ամէն: - 629. Զի առաջին կանոն երանելեացն, *որք* դառնան ի չարէ և զճանապարհս օրինացն ընթանան...: - 629. Իսկ երկրորդն, *որ* երկինք պատմեն զփառս աստուծոյ, զայնմ *որ* դատէ՛ զհակառակն մեր. զի յերկինս է ողորմութիւն նորա: - 629. *Զոր* նայեսցեն երկինք և երկիր զանչափ ողորմութիւնն և արդարութիւնն առ մեզ: - 629. Նոյնպէս և երկրորդն *որ* ասէ ոչ նախանձիլ ընդ չարս *որ* են անզգամք. և զի ո՛չ գոյր նոցա աստ փոխարէն մեղաց. վասն այն հրովն յաւիտենից այրեսցէ զնոսա: - 629. *Ո՞ր* է առաջին սաղմոսն: - 630. Եբրայեցիքն առաջին դասքն չասէին ալէլու. այլ *զոր* միայն քահանայքն երգէին ալէլուով էր...: - 630. Նոյնպէս և *որ* անիծից փոխէ՝ զալէլուն *որ* օրհնութիւն է ո՛չ խառնեմք: - 630. Եւ ի վերջին գուբղայսն ո՛չ ասեմք *որ* ա՛յլ մարգարէից է. և ալէլուն միայն սաղմոսին է: - 630. Ապա ի բացեայ կացեալ և զձեռս համբարձեալ ասէ, Սուրբ աստուած Սուրբ և հզօր Սուրբ և անմահ *որ* խաչեցար վասն մեր ողորմեա՛ մեզ: - 631. Եւ զսուրբ աստուածն խաչեցար. և այսպէս գրէ՝ եսայի ետես զքրիստոս նստեալ յաթոռ *որ* է խաչն. և երգէին զերեքսրբեանն: - 631. *Զոր* առ հնովքն էր սովորութիւնս այս, և յետոյ նուազեցաւ: - 631. Այլ և ասորիք ասեն ըստ մեզ զսուրբ աստուածն *որ* խաչեցար՝ մինչև ցայսօր: - 632. *Որ* կամաւ խաչեցար վասն մեր, նոյն սիրովն ողորմեա՛ մեզ: - 632. Այսպէս հանապազ յիշատակեմք զերախտիս նորա *որ* վասն մեր խաչեցաւ: - 632. Եւ ըստ **թ** դասուց եկեղեցւոյ *որ* աստուածաբանեն միշտ, զխաչեալն պաշտելով: - 632. Եւ զայն ընդ առաւօտն *յորում* մատնեցաւ ի չարչարանս: - 632. Եւ ի հասարակ օրն *յորում* խաչեցաւ: - 632. Եւ յերեկոյն *յորում* թաղեցաւ: - 632. Զի՞նչ է *որ* ա՛յլ ազգք ի դէմս Երրորդութեանն ասեն. և վկայ ածեն զսերովբէսն **գ** սուրբ և մի տէր ասելովն: - 632. Վասն որոյ *զոր* սերովբէքն երից դիմացն երգէին, աստ աւետարանիչն ի դէմս բանին ասաց: - 633. Իսկ *որք* ի վերայ Երրորդութեանն ասեն՝ երեք վնաս կայ ի բանս նոցա: - 633. Երկրորդ, զի յայսպէս ասել սուրբ աստուած սուրբ և հզօր սուրբ և անմահ քրիստոս *որ* խաչեցար վասն մեր ողորմեա՛ մեզ: - 633. ...և մի դէմ զքրիստոսն *որ* խաչեցաւ. *որ* լինի չորրորդ դէմ և անձն ըստ նոցա: - 633. Իսկ յատուկ, Նա՛խ՝ զերեքսրբեանն ի դէմս որդւոյ. զի նա՛ է առաջնորդ *որով* զհայր տեսանեմք: - 633. Եւ ապա՛ իբր զհայր մեր *որ* յերկինս առ հայր: - 633. Դարձեալ՝ սկիզբն աղօթիցն է՛ առ հայր. և մէջն *որ* է՛ խաղաղութիւնն առ հոգին սուրբ. որպէս ասացաւ ի վերոյ... - 633. Թովմաս առաքեալն ի թաղումն տիրամօրն է ասացեալ. որպէս գրեալ է ի գիրս *որ* կանոնական լրմունք կոչի: - 633. Վասն է՞ր զերեքսրբեանն *որ* է սուրբ աստուածն՝ յառաւօտուն և յերեկոյին ժամն ի վերջքն երգեմք. և ի պատարագին ի սկիզբն: - 634. ...պարտ է զբանիւ պատուականն հիմն դնել. *որ* է՛ երեքսրբեանն...: - 634. ...և զգործով պատւականն աւարտ ի վերայ բերել. *որ* է սուրբ մարմին և արիւնն փրկչական: - 634. Առաջին «*որ* յայտնեցար». աւետեաց, ծննդեան, մկրտութեան, և թլփատութեան, զա՛յս ասա: - 634. Երկրորդ «*որ* եկիր և գալոց ես». քառասնօրեայ գալստեանն, և ծաղկազարդին, և բուն յինանց կիրակմտին զա՛յս ասա: - 634. Երրորդ «*որ* մատնեցար». ի մեծի

ուրբաթի առաւօտին մէն ասի: Չորրորդ «*որ* խաչեցար». յուրբաթի ճաշոյն ասա: Հինգերորդ «*որ* թաղեցար». յուրբաթի երեկոյն, և յառաւօտն շաբաթուն մեծի: Վեցերորդ «*որ* յարեար». ի մեծի շաբաթ երեկոյն, և յամենայն կիրակմտի և ի կիրակէ աւուր: - 634. Եւ *որ*՝ քան զայս աւելի ասեն, որպէս տնօրինեցար. կամ ընծայեցար. կամ քո տէրութեամբդ. կամ *որ* եկիր ի բեթանիա. կամ ի վերնատունն: - 634. Իսկ *որ* ասեն՝ հայր և որդի և սուրբ հոգի. կամ թէ՝ քրիստոս *որ* խաչեցար: - 635. Սոքա քաղկեդոնին են. *որք* բաժանեն զբանն ի մարմնոյն. և զխաչեալն՝ մարդ սոսկ և տկար և մահկանացու խոստովանին: - 635. Այլ *զոր* մեզ ուսուցին՝ եփեսոսին է: - 635. Զի այն *որ* ասէ՝ «փառք ի բարձունս աստուծոյ, և յերկիր խաղաղութիւն, ի մարդիկ հաճութիւն». հրեշտակացն է ասացեալ երգ: - 635. Եւ անդ յաւելին ընդ դէմ հոգէմարտին զայս, «և հոգիդ սուրբ *որ* ի փառս աստուած *որ* ընդ հօր ամէն»: - 635. Իսկ *որ* այժմ աբեղայք ո՛չ բանան զգլուխս յամենայն աղօթս, այս է պատճառն... - 635. Այլ ի պատարագն պարտ է բանալ զգլուխս *որ* պատարագիչն է ամենայն ոք որ և իցէ. թէ քահանայ և թէ եպիսկոպոս և կամ ա՛յլ ոք: - 635.. Եւ *որ* եպիսկոպոսն զմիթրն և զեմիփորոնն և զմատանին *զոր* զգեցեալն էր ի ձեռնադրութեանն՝ հանէ՛ յորժամ պատարագէ...: - 635-636. այն է, *որ* հրամայեաց աստուած ահարոնի զգենուլ զպճղնաւորն և զվակասն և զխոյրն և զայլն, և ելանել առ ժողովուրդն: - 636. Զի՞նչ է *որ* երկու դասք պաշտեն յեկեղեցիս: - 636. Երկու դասք էին երգիչք ի տաճարին *զոր* կարգեաց դաւիթ ընդ տիւ և ընդ գիշեր հանապազորդ պաշտօն **իդ** ժամուց...: - 636. ...*որք* դաս առ դաս երգէին զսաղմոսն դաւթի. նոյնպէս և յեկեղեցի կարգեցաւ: - 636. Կարգաւոր է զի *ո՛ր* դաս *որ* սկսանի զերգն, նոյնն աւարտէ փառօք. թէ այս՝ թէ այն: - 636. Եւ ա՛յս է խորհուրդն, զի *որ* վաստակի յերգս՝ նա՛ տացէ զփառս արժանապէս: - 636. Եւ *որ* ամէն շարականի սկիզբն ի մարգարէից դնեմք, այս է պատճառն, զի զհինն և ըզնորս ի միասին խառնեմք: - 636. Այլ գիտելի՛ է, թէ սաղմոսն շարականաց *որ* **բժ**ան տուն է՝ զփառքն և զայժմն ի միասին երգեմք. որպէս զօրհնութիւնն, հարցն, ողորմեայն, տէր յերկնիցն: - 636. Եւ *որ* սաղմոսն **ը** տուն է՝ կամ ա՛յլ նուազ, զփառքն և զայժմն վերջին տան շարականին տամք: - 636. Դարձեալ այլ իմն պատճառ. *որոց* շարականաց փառքն և այժմն ի միասին է...: - 636. ...նոցա փառ կամ կցորդ գոյ զկնի. և *որք* որիշ են՝ նոցա կցորդ ո՛չ ասի: - 636. Եւ գործատունն կրկին ասի. զի ամենայն արարածք կրկին են. այսինքն իմանալի և զգալի *որք* օրհնեն զարարիչն: - 637. *Որք* զծորանս հոգւոյն արբին և ի ժամանակս ժամանակս երգեցին եղանակաւ զերգս շարականաց՝ այսոքիկ են: - 637. Զխաչին և զեկեղեցոյ, սահակն *որ* գնաց ընդ դէմ տաճկաց: - 637. Եւ *զոր* նախ իմացն, ըզ'ի յանսահման ծովէն, և զթարգմանչաց օրհնութիւնն, և զսուրբ սարգսի օրհնութիւնն, վարդան վարդապետն: - 638. Եւ զղևոնդեանց մանկունքն **ղձ**, սարկաւագ վարդապետն *որ* ի հաղբատ: - 638. Այլ և զընծայիլն ի տաճարն. *յորում* երգէին մանկունքն՝ ո՛վսաննայ. որպէս յողոգոմեանն: - 638. Եւ տեղեակքն ասէին, սա՛ է *որ* ի մորենւոջն և ի ծովուն զսքանչելիսն արար: - 638. Չորեքկերպեան կենդանիքն է՛ խաչն. և տեսեալն ի վերայ նորա՝ գառն *որ* բառնայ զմեղս աշխարհի: - 638. Վասն քրիստոսի ասէ *որ* եղև մեզ զօրութիւն յազգէ դաւթի: - 638. Զտարւոյն ոստն ջարդեն ի վերայ բնոյն. և *որ* աճէ՛ զայն քաղեն և հիւսեն. Պտղակորոյս որպէս ձիթենի: - 638. Եւ քահանայքն հոլոնեալ. *որ* է ժողովեալ և խորհեալ: - 639. Տեսանէր ժողովուրդն ուր կայր աստուած, և ընդ ոտիւքն իբր զգործած աղիւս շափիւղայ. *որ* է՛ ակն պատւական. և աղիւսն խաչաձև է: - 639. *Զորս* ըստ պատկերի քում: - 639. Դարձեալ՝ զմնացորդ դասուն *որ* անկաւ յերկիւղէն կնքեաց և հաստատեաց: - 639. Երրորդ՝ *որ* բանն առաւե՛լ է քան զձայնն. որպէս երգ շարականաց: - 639. Հինգերորդ՝ *որ* հաւասա՛ր է բանն և ձայնն ի լեզուն. որպէս բարբառ խօսից: - 639. Իսկ և **դ** կողմունք նոցա *որ* լինի **ը**: - 639. *Որ* լինի **ժ** ըստ **ժ** մասանց արարածոց: - 639. *Ո՞րք* գտին զձայնս: - 640. ...*որք* են, բառաչել, կառաչել, խխնչել, և այլն նմանապէս: - 640. ...*որ* զամենայն կենդանեաց ձայնս նովաւ երգէին: - 640. Ապա՛ աքիլեւս, զատուցանէ՛ զկողմն երկրորդ ձայնին *որ* կոչի աւագ կողմն: - 640. Եւ զերրորդ ձայնին *որ* կոչի վառ: - 640. Ապա՛ նոմինոս, զատոյց զկողմն չորրորդ ձայնին. *որ* է՛ վերջին: - 640. Բայց արքեղայոս դարձեալ մաքրեաց զամենայն *որ* ուսաւ ի ծովային կենդանեաց: - 640. Զձայնն ո՞րպէս գիտենամք թէ *ո՞ր* դասուն է: - 641. Յորժամ թիւն առաջին լինի *որ* է Ֆարտ...: - 641. Եւ յորժամ թիւն երկրորդ լինի *որ* է՛ ջուխտ...: - 641. Զի մեծ զատկի կիրակէն առաջի ձայն լիցի. *որ* զյարութեանն ունի խորհուրդ: - 641. Դարձեալ՝ ունի զխորհուրդ անկմանն ադամայ *որ* վերջին խօսեցաւ աստուած և եհան ի դրախտէն: - 641. Այլ և ունի զխորհուրդ վերջին աւուրն *որ* կատարա՛ծ է աշխարհի: - 641. Շաբաթ մեծամեծ տօն սրբոց. *որք* են ի հանգիստն երկնից. - 642. Եւ յերեքշաբաթին ըստ կարգի՝ մարգարէիցն և յովհաննու. *որ* միջնո՛րդ է օրինաց և շնորհաց: - 642. Եւ ի **ե** շաբաթին՝ *որ* վկայք են քրիստոսի: - 642. Եւ ծննդեամբն ազատեցաւ

նախամայրն *որ* նախ մեղաւ: - 642. Եւ խաչիւն նախահայրն *որ* զկնի: - 642. Զի՞նչ է *որ* նախ զմարգարէս, և ապա զառաքեալս, և ապա՛ զաւետարանն ընթեռնումք: - 643. Նոյնպէս և աստ փոխանակ որոտմանն, Ո՜րթի բարձրաձայն. *որ* է՛ յառաջ մատիք: - 644. Ընթերցօղ սարկաւագն, *որ* է՛ հրեշտակն միջնորդ...: - 644. ...կամ մովսէս *որ* պատմեաց զօրէնսն աստուծոյ...: - 644. ...*որք* աւետաւորք եղեն գալստեան բանին: - 644. Իսկ սաղմոս տունն է երգ մարդկան. այսինքն է զի հրեշտակք և մարդիկ միաբանեալ օրհնեմք զաստուած փրկիչն մեր *որ* խօսի ընդ մեզ: - 644. Պռօսխումէն՝ յունա՛ց է. *որ* է՛ ի վե՛ր նայեցէք: - 645. Եւ փոխանակ դաղմատին է՛ իւրաքանչիւր լեզու *որ* պատարագէ՛: - 645. Այն է՝ յորժամ դաւիթ զտապանակ ուխտին հանէր յերուսաղէմ, է դաս պարուց *որք* են քահանայից դասք. և սրինկ. և փողք. և քնար. և այլն: - 645. *Որ* է՛ կոյս՝ և մայր՝ և ծնօղ աստուծոյ: - 645. Եւ երկաթ՝ բանն *որ* կոտորէ՛ զախտ ստորադասեալ: - 645. *Զոր* առեալ ի ձեռս միշտ մատուցանեմք աստուծոյ: - 645. Նա՛խ՝ գրակալն նշանակէ՛ զմովսէս. *որ* ընկալեալ զպատգամն աստուծոյ՝ խօսէր առ ժողովուրդն: - 646. ...*որ* է կրկին տախտակն մովսէսի. յանձնառական և հրաժարական օրինօքն միաւորեալ: - 646. Դարձեալ, նշանակէ զժողովուրդն աստուծոյ. *յորոց* ունկն ընթերցեալ լինին միշտ բանք աստուածայինք. հնգիւք զգայութեամբք հոգւոյ և մարմնոյ առ միմեանս յեռեալք: - 646. Դարձեալ՝ ի դատաստանի յորժամ դպրութիւնք բանին, *որք* աստ ի ձախմէ մարմնոյ՝ փոխեսցին յաջմէ. և *որք* յաջմէ՝ յահեկէ՛: - 646. Զի՞նչ է նախատօնակն *որ* յերեկոյն սուրբ զգեստիւ խաչիւ և աւետարանաւ և լոյս վառեալ համաձայն պաշտեմք: - 646. Այս է խորհուրդն. զի երեկոյս նշանակէ՛ զկեանս զայս *որ* տնօրէնութեամբ փրկչին սակաւ ինչ տեսօղ եղաք հաւատով: - 646. Իսկ վաղն *որ* է՛ կատարեալ տօն...: - 646. ...նշանակէ՛ զհանդերձեալն *որ* դէմ յանդիման տեսանելոց եմք զնա: - 646. Իսկ գլխաւորագոյն սրբոցն, որպէս յաւագ տօներն և յայլս, *որ* առնեմք նախատօնակ որպէս ի տօնս տէրունականս: - 647. *Որք* առին զճապատիկն աստ. և զբիւրապատիկն ի հանդերձեալն: - 647. ...*որոց* ցանկացան և ելին յաշխարհէս և ի լոյս են բնակեալ: - 647. Նախ՝ զի ի շաբաթի սկսաւ հանգիստն և երանութիւն սրբոցն. յաւուր *որում* հանգեաւ աստուած ի գործոց: - 647. ...և ի է օրն սկսաւ զիմանալի աշխարհն *որ* սրբոցն է հանգիստ: - 647. ...*զոր* միշտ և յաւիտեան պատրաստէ՛ և կազմէ՛ աստուած: - 647. ...և օրէնս եդ *որ* հանգչէր մարդ ի մարմնական գործոց յաւուրս և ի շաբաթս, յամիսս և ի տարիս...: - 647. ...*որ* նշանակէր զհանգիստ և զվարս սրբոցն: - 647. ...*որք* տեսին զքրիստոս չարչարեալ...: - 648. ...նշանակէ զհանգիստ ապաշխարողաց. *որք* յուրբաթի յանցեաք ընդ ադամայ. ի շաբաթի հանգչիմք ընդ քրիստոսի: - 648. Նոյնպէս և սուրբք *որ* ա՛յժմ են ի հանգիստ՝ ի կիրակէ գալստեանն ի կատարեալ փառս և ի հանգիստ մշտնջենաւոր փոխին. ի հանգչելոյ ի հանգիստ. ի փառաց ի փառս: - 648. Եւ թէ հարցանէ ոք, այժմ ի *յո՞ր* հանգիստ են *որ* փոխին: - 648. Այն է *որ* տուաւ նոցա արկանելիս սպիտակս...: - 648. ...այսինքն զպայծառութիւն գործոցն և զանմեղութիւն հոգւոյն *զոր* ընկալան ի շնորհացն քրիստոսի: - 648. Եւ *որ* յինանցն պահէ մինչ ի համբարձումն, ընդ դէմ է կանոնաց հարցն և աւետարանին *որ* ասէ...: - 649. Առաջին և երկրորդն՝ ծննդեան և մկրտութեանն. *զոր* ի միասին տօնեմք ըստ կանոնաց սուրբ հարցն և տեառն եղբօրն յակոբայ: - 649. Տասներորդ խաչի **դ** տօնն. *զոր* ի սուրբ խաչին է. և երևմանն. և վարագայ խաչին. և խաչգիւտն: - 649. Այսինքն երեքն ի մին շաբաթն. *որ* է՛ Պահոց, Մարտիրոսաց, և Կիրակէն այլածև կարգ. Առաջաւորցն. Աղուհացիցն. և Յինանցն կարգ: - 649. Երկոքին ճրագալոյցքն. *որ* լինի **ը**: - 649. ...*որ* լինի **իզ** շաբաթ պահք ի տարին: - 650. Դարձեալ, **ժ** շաբաթ պահոց այն է՝ *որ* մեծն ներսէս կանոնեաց յամենայն ամսամուտս պահել շաբաթ մի: - 650. *Զոր* այժմ պահեմք **ժ** շաբաթ **ժ** ամսեան: - 650. Նոյնդ է պատճառն *որ* պատարագ ո՛չ մատուցանեմք. զի անարժա՛ն եմք: - 651. Զի յառաջն զոսա լուծանէին *որք* յառաջաւորացն ի վեր պահէին **հ** օր: - 651. Եւ զայս ունին սկիզբն և հիմն պահոց ամենայն ազգ քրիստոնէից *զոր* նոքա լուծանեն: - 651. Զմեծ կարգն՝ է՛ կանոնեալ տն եղբայրն յակոբոս *որ* զընթերցուածն կարգեաց...: - 651. ...*որ* լինի յիսնեակ ըստ առաքելական կանոնին: - 651. Եւ այլ ևս, յորժամ զշաբաթ և զկիրակէ արտաքոյ թուեմք *որ* պատարագ մատչի, **ե** օր առաջաւորն ըստ աղուհացիցն համարեալ՝ լինի **խ** օր: - 651. Եւ ո՛չ միայն լուծանեն զսկիզբն մեծի պահոցն, այլ և զամենայն չորեքշաբաթս *որ* յառաքելո՛ցն է կանոնեալ, լուծանեն ի բոլոր տարին, և լինին ընդ անիծիւք նոցին: - 652. Չորրորդ յայտնի և հաստատուն, *որ* ամենայն ազգ քրիստոնէից պահեն զչորեքշաբաթն և զուրբաթն վասն խաչելութեանն *որ* սո՛ւգ է և պահք: - 652. Եւ օրն *յորում* պղծեցաւ, սրբութեամբ պահեսցէ զնա մինչ ցմահ իւր. և ապա՛ հաղորդեսցի: - 652. Մին զքրիստոսին. *որ* է՛ աղուհացքն: - 653. Եւ մին զմովսիսին. *որ* է՛ վարդավառին: - 653. Եւ մին զեղիային. *որ* է՛ ծննդեանն քառասունքն: - 653. Իններորդ, շաբաթուց շաբաթն *զոր* հրամայեաց պահել: - 653.

...*որովք* լինիմք տաղաւար և բնակարան աստուծոյ: - 653. Իսկ ճշմարտութիւնն ի մեզ, վասն **ե** զգայարանացս սրբութեան. *որով* մեղանչեմք՝ սրբիմք պահօք և ապա՛ սրբոցն ի բարեխօս մեզ: - 653. Նախ այն է՝ *որ* հրամայէր մովսէս պղծոցն լուանալ զմարմինն և ողողել զհանդերձն և արտաքոյ կալ մինչև յերեկոյ: - 653. ...*որ* էր նոցա **բ** շաբաթին և **ե** շաբաթին. և մեզ **դ** շաբաթին և ուրբաթին: - 653. Երրորդ, չորեքշաբաթն ի խորհուրդ խաբէութեան նայի. *յորում* ասաց օձն ուտել ի պտղոյն... - 653. Չորրորդ, ի խորհուրդ կուսին *որում* աւետեաց հրեշտակն զփրկութիւն մեր...: - 653. ...*զոր* նշանակէ **դ** թիւն. և ուրբաթն սուգ և բօթ լսի՝ պահելի՛ է: - 653. ...և վասն ներգործականին զուրբաթն. *որով* սրբասէր լեալ հասցուք առ ճշմարիտն և առ բարին ի ձեռն աստուծոյ: - 654. Երրորդ, աղուհացքն այսմ կենաց խորհուրդ, *որ* եմք ի սուգ վասն մեղաց...: - 654. ...*որք* խնճողե՛ն զորովայնս իւրեանց առանց օրհնութեան: - 654. Հինգերորդ, քրիստոնէից մարմինք սրբութեամբ տաճա՛ր են աստուծոյ, *յոր* պիղծ ոչ ինչ մտանէ: - 654. Վեցերորդ, ընդ կերակուր և ըմպելիս մեր՝ դնն *որ* թշնամի է մեր բազում վնասս խառնէ...: - 654. ...որպէս նոքա *որ* զդեղ մահու խառնեն. վասն որոյ նշանաւ խաչին կնքեմք զնոսա, զի փախիցեն դևքն: - 654. Զի՞նչ է *որ* յետ կերակրոյն դարձեալ կրկին օրհնեմք: - 655. Եւ զայս ուսաք ի քրիստոսէ. *որ* ի վերնատունն յետ ընթրեացն օրհնեցին և ելին ի լեառն ձիթենեաց: - 655. ...և դարձեալ հատանեն ի ձեռս իւրեանց *որ* լինի խաչ: - 655. Նա՛խ՝ զի այսու՝ խաչին քրիստոսի հաղորդեսցուք. և սուրբ հացին *զոր* ի վերնատունն բաժանեաց: - 655. Երրորդ, զի այսպէս հաղորդ լինիմք վերին սեղանոյն *որ* է արքայութիւնն երկնից: - 655. ...*որք* հաղո՛րդ եմք մարմնոյն քրիստոսի և բաժանորդք արքայութեանն երկնից: - 655. *Որ* ի հարսանիսն զջուրն ի գինի փոխեաց և օրհնեաց: - 655. Այս է զստեղծիչն *որ* արար յոչէից: - 656. Նա՛խ՝ զի բաժանիցուք յայնցանէ *որք* զգինի մեղաց ըմպեն. և վասն մեղաց արբենան և շռայլին: - 656. Այլ մեք զբաժակ օրհնութեան ճաշակեմք զչափաւորն. և ո՛չ զանչափն *որ* է մեղաց՝ և արբեցութիւն: - 656. Երկրորդ, զի այսպէս հաղորդիցուք երկնաւոր գինւոյն. *որ* է՛ իմաստութիւնն աստուծոյ...: - 656. Զի՞նչ է *որ* յըմպելն զգինին՝ թափեն յանուն մեռելին: - 656. Հեթանոսաց սովորութիւն էր *որ* զինչս մեռելոյն ընդ նմա՛ դնէին ի գերեզմանն...: - 656. Զայս սովորութեամբ առնեն *զոր* չէ՛ պարտ. զի յուսահատութեան է նշան և հեթանոսաց գործ: - 656. Զի՞նչ է *որ* ի մէճլիսն յանկարծ ժամ մի լռեն: - 656. Նախ՝ զի հաւասարութիւն ունիմք առ միմեանս. այլ և կարգ. *որ* է՛ առաջին միջին և վերջին: - 656. Եւ դարձեալ ճաշքն ցուցանեն յերիս հասակս զբարեգործսն. և ընթրիսն զվերջին հասակին *յորում* ննջեմք ի գերեզմանի: - 656. Զի՞նչ է խորհուրդ բարեկենդանին *որ* յամենայն տեղիս ի վանորայս և յանապատս ներե՛ն սակաւ ինչ ի չափաւոր վայելս: - 657. ...*որ* ամենայնիւ ընդ դէմն փոխի ուտելն և ըմպելն ի ծոմ և ի ծարաւ. ծաղրն ի սուգ. հեշտութիւնն ի տքնութիւն. և ի չարչարանս և այլն: - 657. Դարձեալ՝ մատաղն ստուեր և օրինա՛կ է ճշմարիտ պատարագին քրիստոսի որ գառն աստուծոյ և եզն պարարակ կոչեցաւ...: - 657. Երրորդ, զի օրինակն նմանեսցի ճշմարտութեանն. *որ* պարարա՛կ էր աստուածութեամբն և կատարեալ մարմնով: - 657. ...զի պատարագ աստուծոյ սիրտ սուրբ և հոգի խոնարհ *զոր* աստուած ո՛չ արհամարհէ: - 658. Չորրորդ՝ զի այս՝ է՛ խօսուն և բանաւոր պատարագ և այն անբան զենումն *զոր* խօսեցաւ վասն հնոյն...: - 658. Երանելին մովսէս խորենացի՝ *որ* էր գրիչ սրբոյն սահակայ պարթևի, յետ **ճժ** ամի սրբոյն գրիգորի՝ եղև սկիզբն թարգմանութեան ի հայոց լեզու: - 658. ...*զոր* արարեալ էր սուրբն գրիգոր աստուածաբանն յեօթն ամի հայրապետութեան իւրոյ: - 658. Իսկ խոսրով թարգմանիչ եբեր ի հայս. *որ* գնացեալ էր յերուսաղէմ հրամանաւ սրբոյն սահակայ: - 658. Իսկ վասն ագապս առնելոյ *որ* է՛ ոգէհանգիստ. և վասն քահանայաթաղին *որ* է՛ **ժը** աւետարան...: - 658. ...*զոր* արարեալ է սրբոյն եփրեմի խորին ասորւոյ ի նիկոմիդացոց քաղաքին: - 658-659. Եւ ղազար թարգման եբեր ի հայս՝ ի **ժգ** ամի թարգմանութեան սրբոյն սահակայ առն աստուծոյ *որ* էր նախանձախնդիր կարգաց եկեղեցոյ: - 659. *Որ* **ժ** թիւ էր ի սրբոյն գրիգորէ յետ **ճժա** ամի անցանելոյ...: - 659. **Իսկ վասն տեառնականին և աղօրհնէիցն, սուրբն յոստո՛ս է արարեալ. *որ* չորրորդ եպիսկոպոս էր յերուսաղէմ յառաքելոյն յակոբայ:** - 659. **Իսկ վասն քահանայօրհնէիցն, սուրբն սահա՛կ է արարեալ. յառաջին ամի եպիսկոպոսութեան իւրոյ. ի նաւասարդի ամսեանն *որ* օր մի էր. և յիշատակ սուրբ կարապետին արար զքահանայօրհնէքն:** - 659. Եւ նոյն զքահանայթաղէքն, *որ* ունի է աւետարան. և զաշխարհական թաղումն, ի յայրարատ գաւառի ի վաղարշապատ քաղաքի ի վկայարանս սրբոյն հռիփսիմի. յետ **ճժա** ամի սրբոյն գրիգորի. զի մինչև ցայն հնովն վարեին: - 659. Եւ առաջին կանոնին՝ տէր տուընջան. և *որ* այլ զհետ սոցա աղօթք և փոխք նոցունց: - 659. ...*որ* **ժդ** թիւ էր ի սրբոյն գրիգորէ: - 659. Իսկ աղօթքն *զոր* յովհաննէս ուսոյց աշակերտաց իւրոց այս էր: - 659. Եւ եփրեմի ներբողեա՛նն այլ՝ ցոյց զա՛յս տայ. թէ դահիճն ետես ի

բանտին *որ* այսպէս աղօթէր: - 659. Քսանևէ, Թէ *ո՞ր* մարմինք մնան ի կատարածի և *ո՞րք* ոչ: - 661. Պատասխանեմք այսմ, թէ ամենայն ինչ *զոր* արար և *զոր* առնէ աստուած՝ բարի՛ են և յօգուտ մեզ...: - 662. Երրորդ՝ կրկին է մարդս. *որ* է՛ հոգի և մարմին. և **բ** աշխարհս. այսինքն երկին և երկիր: - 662. Արդ՝ ըստ կարգի՝ սերմանքն յառաջ են քան զարդիւնսն. և նահատակքն քան զպսակն. վասն որոյ *որք* աստ փորձ գտանին, անդ առցեն զպսակն կենաց: - 662-663. Մետասաներորդ, նախ եւ զայս կեանքս *որ* է՛ ցաւալից և բազմաչարչար... - 663. Իսկ *որ* ասեն՝ նախապատիւ է պատուականն քան զանարգն: - 663. *Որ* ամենեքեան լինին է փոփոխմունք կենցաղական...: - 663. Նախ՝ զի թէ բարի է մարդն, ընտրէ՛ աստուած և տայ զմեծութիւնն *որ* կարօտելոց ի գո՛րծ ածէ ...: - 664. ...*որ* ի դատաստանին պատասխանի չունենայ թէ ինձ զի՞նչ տուեր *որ* զքեզ սիրէի: - 664. Չորրորդ, տայ մեծութիւն և նոցա. *որք* բազում չարիս՝ և մի մասն բարեաց ունին...: - 664. ...և զայն սակաւ բարին վճարէ՛ աստ, *որ* ի դատաստանին ակն բարւոյ այլ ո՛չ ունիցին...: - 664. ...որպէս մեծատունն *որ* ընկալաւ զբարիսն ի յայս կեանքս: - 664. Երկրորդ, *որք* կամաւ աղքատանան վասն քրիստոսի: - 664. Չորրորդ, *որոց* աստուած տայ: - 664. Չորրորդ, *որոյ* ամէն գործքն բարի լինի և մին մեղք է գործեալ...: - 664. ...տայ նորա աստուած աղքատութիւն *որ* այնու չարչարի...: - 664. Յիւանդութիւն է անչափակցութիւն տարերց մարմնոյ. *որ* առաւելու և նուազէ՛. ջերմ և ցուրտ, խոնաւ և ցամաք: - 665. Երկրորդ, *որ* անզեղջ են ի մեղս՝ տայ աստուած զհիւանդութիւն ի խրատ ուղղութեան: - 665. Եւ բժշկութիւնն՝ ո՛չ ի դեղն, այլ յաստուած յուսալ պարտ է. *որ* դեղով և առանց դեղոյ կարօ՛ղ է բժշկել: - 665. ...իսկ թէ յայլ երիցն է, նայիլ պարտ է առ ինքն թէ *ո՞ր* յանցանք առաւել զօրացեալ է յինքն, զայն պակասեցուցանել...: - 665. ...և *ո՞ր* արդարութիւն նուազեալ է՝ զայն ուղղել...: - 665. *Ո՞րք* են ճանապարհք: - 665. Նախ ճանապարհ կոչի ծնունդն. *որով* ի կեանս գամք ըստ հասարակութեան ընթացից մարդկան: - 665. ...*որով* տէրն մեր եկն առ մեզ կուսութեամբն մարիամու: - 665. Եւ անմեղութեան, *որ* ո՛չ ոք է առանց մեղաց. բայց նա՛ միայն *որ* ծնաւ առանց մեղաց...: - 666. ...*որով* ընթանամք առ աստուած և աստուած ի մեզ գայ...: - 666. Իններորդ՝ ճանապարհ կոչի և մահն *որով* ի հանդերձեալն ընթանամք...: - 666. Այլ և դուռն՝ *որով* մտանեմք յերկինս...: - 666. Զի՞նչ է չորեքկին բառս *որ* ասեմք, պակասեալ. այւելեալ. լցեալ. և անցեալ զաւուրբք: - 666. ...և հոգին երթայ առ աստուած *որ* ետ զնա ասէ սողոմոն: - 667. ...*զոր* ի յարութեանն աւուր զանփոփոխ սերտութիւնն ստասցի: - 667. Դարձեալ՝ մահն ե՛զր է հանդիսից *որք* են ի պատերազմ կենցաղոյս որ քան են: - 667. ...այլ դատապարտի՛լ հարկաւոր է. որպէս դիւաց մեղանչումն և անկումն. *որ* է մահն և դատապարտումն *որ* է՛ պատիժն: - 667. ...և ապա տանջի ընդ սատանայի ի հուրն յաւիտենական *որ* պատրաստեալ է նոցա: - 667. Զի չորք իրք դժուարին է. *որ* առանց կամաց մեր լինին: - 668. Եւ *զոր* այժմ մղտատեսակ և հեռու տեսանէր...: - 668. ...յայնժամ յայտնի և մերձակայ տեսանէ զամենայն փառս և զպսակ *զոր* ընդունելոց են նոքա ի յարութեանն աւուր...: - 668. Որպէս *որք* ի խաւար բանտից զերծանին և ազատեալք զլոյս տեսանեն. նոյնպէս և հոգին բաժանեալ ի մարմնոյ. և են ի լոյս և յերանութեան հանգիստն: - 669. ...*յորում* կրեսցէ զվճիռս անվճար պատժոյն յաւիտենից տանջանացն: - 669. Եւ ոչ մի ինչ ունի յոյս փրկութեան. ո՛չ օգնական. ո՛չ բարեխօս. ո՛չ ողորմութիւն. և ո՛չ այլ ինչ այնպիսի *որ* արաժանաւորացն է: - 669. ...և զբաժին իւր գիտասցէ *որ* լինելոց է ի կատարածի...: - 669. Այլ երկոքինն ունին ի հոգիս իւրեանց մերձ տեսեալ՝ *զոր* ի յարութեանն առնելո՛ց են կատարեալ անձամբ՝ հոգւով և մարմնով...: - 670. Նա՛խ՝ նշանակէ՛ ի մեզ զջերմեռանդ բորբոք այրեցման սրտին. *որ* ի բա՛ց հանէ զօձիսն և արտասւէ...: - 670. Դարձեալ՝ ցուցանէ՝ իբր թէ սիրելոյն *որ* մեռաւ՝ կցորդիմք և չարչարեմք զմարմինս. մերկանալով, ի սով և ի ծարաւ, ի մութն և ի հող որպէս նա ի գերեզմանի եղև: - 670. Իսկ հող ցանեալ ի գլուխն, գլուխ զմիտքն նշանակէ. *որ* ինքնիշխան եղև յաստուծոյ. և հնազանդեալ խրատու հողակեր օձին՝ մահացաւ...: - 670. ...իբր թէ այսպիսի սղալումն ի ճաշակելոյ պտղոյն եղև. *որ* ձեռօք հատեալ եդ ի բերանն: - 670. ...ապտակեալ. և նախատեալ. և բևեռեալ. և լուսաւորացն խաւարեալ. և այլն. *զոր* մեք ի վերայ մեռելոյն նշանակեմք: - 670-671. Եւ տանին առ աւագ երէցն *զոր* քահանայապետ կոչէ սուրբն դիոնէսիոս...: - 671. Ա՛րդ՝ զգեստին հանելն նախ նշանակէ թէ՝ զկենցաղ աշխարհի մերկացաւ և զգեցաւ զգեստ լուսեղէն *որ* ի դրախտին: - 671. Իսկ զի չորիցն բարձեալ տանին, նշանակէ *որ* **բ** հրեշտակք պահապանք ամբառնան զհոգին...: - 671. ...և նա դնէ յեկեղեցին մերձ առ դուռն *որ* նշանակէ զկայանք հոգւոցն յերկինս ի վերջին տեղւոջ մինչ ի յարութեանն օր: - 672. ...զի քահանայապետն զհայր նշանակէ. և իւղն զքրիստոս. և անուշահոտն զհոգին սուրբ *որ* քրիստոսիւ պարգևեցաւ մեզ: - 672. Վեցերորդ, զբոլոր մարդոյն յարութիւնն և զբոլորին փրկութիւնն և զսրբութիւնն նշանակէ *որ* է՛ հոգին և

մարմինն...: - 672. Տասներորդ, նշանակէ զվերջին օծումն. զի ամենայն կարգ *զոր* մարմնոյն կատարեմք՝ հոգւոյն է և մարմնոյն որպէս ասացաք: - 673. Չորրորդ՝ զսէր և զհաշտութիւն նշանակէ *զոր* ունիմք առ նա...: - 673. Եօթներորդ՝ զի սիրելի և համբուրելի է նշխարքն սուրբ *որ* ի քրիստոս միացաւ և օծաւ, և քրիստոսի եղև բաժին: - 673. Ութերորդ՝ զողջութիւնն նշանակէ ողջոյնն բոլոր հոգւոյն և մարմնոյն *որ* է անբիծ և անարատ: - 673. ...այնմ խորհրդով *որ* ընդ չորս կողմն տիեզերաց աւետարանեցաւ: - 673. Իսկ՝ նախ ի յարևելս, ցուցանէ զմիածինն *որ* իբր յարևելից ի ծոցոյ հօր ծագեցաւ մեզ արեգակն արդարութեան...: - 673. Եւ ապա՛ ի յարևմուտս. զի նստի ընդ արևմուտս *որ* է՛ մարդկային սրբութիւնս. և փառաց աթոռն քահանայութեան աստիճանս...: - 673. Եւ վերջոյ ի հիւսիս. *որ* ցուցանէ զշնորհն *որ* ի հինն սիովնէ հնչեաց յեկեղեցիս հեթանոսաց...: - 674. Իսկ *որ* պատեն զնա քահանայական զգեստիւք: - 674. Իսկ դնել զմարմինն ի տան պատւականի *որ* է՛ գերեզմանն...: - 674. ...*որ* ցուցանէ թէ մարմինն նորա միշտ յեկեղեցւոջէ և յետ մահուն...: - 674. *Ո՞րն* է **գ** հանգիստն. և զի՞նչ խորհուրդն: - 675. Չորրորդ, զի **գ** է ժամանակ *յորում* գործեմք զմեղս. այսինքն անցեալն ներկայն և հանդերձեալն...: - 675. Հինգերորդ, զի **գ** է հասակ մարդոյս. մանկութեան երիտասարդութեան և ծերութեան *յորում* փոփոխիմք վարուք. վասն սոցա **գ** հանգիստ դնեմք: - 675. Զի՞նչ է *որ* առ հասարակ ամենեքեան. այր և կին՝ ծեր և տղայ ընդ մեռելոյն ընթանան ի գերեզմանն: - 675. Չորրորդ, արտասուօք թողութիւն խնդրեմք *զոր* մեղաք նմա ի մարմնաւոր կեանս...: - 676. Եւ այն *որ* ի վերայ վառին նիւթեղէն զգեստէ, զի գայցէ խաչն ի վերայ լուսեղէն ամպոյ. յօդս բարձրացեալ և ցոլացեալ...: - 676. ...*զոր* նշանակէ մանր վարշամակ վառին: - 676. Եւ դարձեալ որպէս *որք* յեզր ծովուն հասեալ զառագաստ նաւին իջուցանեն...: - 676. Եւ յետ այնորիկ յիշեմք զպատիժ հրամանացն աստուծոյ *որ* կատարեցաւ ի վերայ նորա...: - 676. Երկրորդ, փրկչին ակնունելով *որ* գայցէ յարևելից...: - 677. Նա՛խ՝ պատուեմք զմարդն *որ* է՛ պատկեր աստուծոյ...: - 677. ...*որ* այս եղև սկիզբն պարկեշտութեան յորժամ զսիրելի զաւակաց պատկերս արարին և պաշտեցին: - 677. Նա՛խ՝ զի ի սրբոցն *որ* ա՛նդ են թաղեալ՝ օգնութիւնս ընդունին գերեզմանակիցք նոցա: - 678. Երկրորդ, զի սիրելիք նոցա *որք* անդ ժողովին, տօնեն և յիշեն զնոսա աղօթիւք առ աստուած: - 678. Իսկ դամբարան, *որ* է պահարան. զի անտի դարձեալ առցի որպէս և եդաւ: - 678. Դարձեալ՝ հանգիստ է, *զոր* մինչև ցայժմ ժողովէր արդարութեամբ, այժմ կամի վայելել: - 679. ...ուր բելիարն նստի. *զորս* աւերեաց քրիստոս, և շինեն մեղսասէրք: - 679. Դարձեալ, ի տիպ պահապան հրեշտակին *որ* նստէր մի ի սնարից և մի յանոտից տեառն գերեզմանին...: - 679. ...այսպէս և քար տապանիս մեր լիցի. նշանակէ՛ զանապական յարութիւնն. *որ* վիմածին լինիմք և առանց ապականութեան որպէս քրիստոս. և ո՛չ հողածին ապականացու որպէս զառաջին ադամն: - 679. Զի՞նչ է *որ* յերկրորդ օրն դարձեալ գան ի գերեզմանն: - 680. Դարձեալ՝ և կրկին է մահ. *որ* է հոգւոյ և մարմնոյ...: - 680. Դարձեալ՝ ամենայն մեղաց պատիժ գոյ. և ա՛յլ է մեղքն և ա՛յլ է պատիժն *որ* հետևի մեղացն...: - 680. Նա՛խ՝ զի **գ** թիւն խորհրդաւոր է. *որ* ունի սկիզբն և մէջ և կատարումն: - 681. Եւ ամենայն ինչ *որ* աշխարհի է՝ յայսմանէ արտաքս ո՛չ է. եթէ ժամանակն եթէ կեանքն և եթէ փոփոխումն մեր: - 681. Նաև երիւք լինի թողութիւն մեղաց. այսինքն զղջմամբ խոստովանութեամբ և ապաշխարութեամբ. *որ* լինի մտօք բանիւ և գործով: - 681. Եօթներորդ՝ **գ** օրս այս նշանակեցաւ յերիս աւուրսն *որ* նախ քան զլինիլն լուսաւորաց...: - 681. Արդ հայրն աբրահամ նշանակէ՛ զհայր աստուած. և հուր և սուր՝ տանջանարանք *որ* հանդիպին ի ճանապարհ օդոյդ: - 681-682. Այսինքն սուրբն սրբոց *որ* է արքայութիւնն երկնից. ուր աստուածութիւնն է բնակեալ. և քերովբէիւք սպասաւորեալ: - 682. *Որք* են անուշահոտ հոգիք սրբոցն հանդէպ երեսացն քրիստոսի ի տեղւոջ մշտնջենաւոր լուսոյն: - 682. ...ապա յետ յարութեանն ի կատարածի միանգամայն մտանեմք ի սուրբն սրբոց *որ* է արքայութիւնն երկնից: - 682. Տասներորդ՝ **գ** օրս այս նշանակեցաւ *որ* ասէր մովսէս ցփարաւօն՝ արձակեա՛ զիսրայէլ...: - 682. *Զոր* բազում հարուածովք եհան զժողովուրդն...: - 682. Արդ եգիպտոս նշանակէ՛ զաշխարհս *որ* է՛ հալոց չարութեան և տեղի ծառայութեան մեղաց և սատանայի *որ* է՛ փարաւօն: - 682. Իսկ անարժանքն *որ* ունէին զսիրտն յեգիպտոս, սատակեցան յանապատին և ո՛չ մտին յերկիրն պարգևաց: - 682. Այսպէս թէպէտ քրիստոնէից հոգիքն *որ* անարժանք են՝ ի ձեռն հրեշտակին ժամանեն ի կայանս հոգւոցն այսպիսի սքանչելեօք: - 682-683. Ասեմք թէ *որ* ունին զհաւատ սուրբ Երրորդութեանն և անկան ի սխալանս աշխարհի...: - 683. Նա՛խ՝ ի ժամանակս. զի **գ**, և **է**, և ամիսն, և տարին՝ լինի **դ**. և **գ** օրն նախկին, *որ* է՛ եօթն: - 683. Իսկ ամիսն *որ* է՛ **գժ**, տասն զգայութեամբ մեր մտօք և բանիւ և գործով մեղանչեմք: - 683. Իսկ երրորդն ի դէմս Երրորդութեանն և **է** շնորհաց հոգւոյն *զոր* ընկալաք յաւազանին: - 683. Եւ ամիսն **գ** տասամբ բաղկանայ. *զոր* ի հաւատ

սուրբ Երրորդութեանն և Ժ բանեան օրինացն յանցաւոր գտաք: - 683. Դարձեալ, ի կիրակէ յարութեանն քրիստոսի տօնեմք. և յերկուշաբաթին՝ նոցա սրբոցն *որք* ընդ քրիստոսի յարեան և մտին ի քաղաքն սուրբ: - 684. Զգերեզմանս *յորո՞ւմ* աւուր պարտ է օրհնել: - 684. Նոյնպէս և յոտնալուային և ի խաչհամբոյրն՝ գանձանա՛կն է քրիստոսի *զոր* յիշատակեմք: - 684. Այսպէս և ի տընօրինէքն ընծայք խաչին և աւետարանին *որ* ի նոցա տունն մտանէ: - 684. Զի *որք* ընկալան զշնորհսն, պա՛րտին նոքա ընչիւք իւրեանց զեկեղեցւոյն լոյսն վառել զաւուրս ութն: - 684. Այն է *որ* յետ յարութեանն քրիստոս եմուտ ի վերնատունն և օրհնեաց զաշակերտսն: - 684. Եւ զի՞նչ է *որ* ի մեծի բարեկենդանին զք չորեքշաբաթ և զուրբաթն հանգստեան ասեմք: - 684. Ի մարմնոյ բաժանեալ հոգին պայծառանայ տեսութեամբ. որպէս *որք* ի խաւար բանտից ազատին: - 685. Իսկ մեղաւորացն *որ* ի մարմնոյ արձակեալ, առաւել տեսանեն քան զայժմ...: - 685. Յոգիք արդարոցն ճանաչեն զմիմեանս անուամբ և ծննդեամբ և գործով վաստակոցն. *որք* զարդիւնսն միշտ մերձ տեսանեն: - 685. Իսկ չարացն ոչ ինչ գիտեն. այլ *զոր* հրեշտակք կամ դեք նոցա պատմեն: - 685. Դարձեալ աղօթքն՝ չարչարանքն և բարի գործքն է նոցա, *զոր* վասն քրիստոսի կրեցին...: - 685. Ասեն ոմանք թէ՝ սրբոց հոգիքն յարաժամ երևին յորժամ կամին և *որոց* կամին: - 685. Ո՛չ. զի ըստ այնմ *որ* զերծան ի չարեաց, միայն ի հոգիս իւրեանց ունին զուրախութիւնն: - 686. Այլ ըստ պսակացն *որ* մարմնով կատարին՝ և վասն ընկերացն *որ* ժողովին՝ պակաս է նոցա. *զոր* ի կատարածի լինելո՛ց է ի գալուստն քրիստոսի...: - 686. Տեսութիւնն է աստուծոյ. *որք* ըստ բազմազան գործոց իւրեանց տեսանեն. և որպէս ի տան փառաւորին: - 686. ...յորժամ բաժանին օդիքն և այծիք. *որ* է արքայութիւնն երկնից և դժոխքն յաւիտենից: - 686. ...և *որք* միջակք են, և նոքա ի քաւարանին մաքրին և յերկինս ելանեն: - 686. Խորան ասեն աջակողմ և ձախակողմ. այսինքն ի քաղցր հայեցողութիւնն քրիստոսի *որ* է աջ. և ի դառն և ահաւոր *որ* է՛ ձախ: - 686. ...այսինքն է *որ* ի վեր քան զհրամայեալ օրէնսն կատարեցին զգործս. որպէս առաքեալքն, մարգարէքն, մարտիրոսքն, կուսանքն, և այլքն: - 687. Եւ զբուն չարսն ի դժոխս. *որք* են անհաւատք, և չարք, և կռապաշտք...: - 687. ...*որք* ունին զհին օրէնս և ո՛չ զնորս. այլ ի ներքոյ մնացեալ սկզբնական մեղաց՝ նոքա ի տանջանս ընթանան: - 687. Իսկ արդարքն և մեղաւորքն միջակք՝ *որք* առին զօրէնսն և ըստ օրինացն գործեցին զբարիս. կամ սխալեցին...: - 687. Երկրորդ՝ ի հաւատն եղեն ապաստան. *որոյ* վարձքն հետևի. և ո՛չ ի քննութիւն մտաց...: - 687. Եւ *ո՞ր* ի սոցանէ ընտրելի է ճշմարիտն: - 687. Առաջին նման է այնմ *որ* ասեն զհոգին ընդ մարմնոյն ի հող լուծեալ կամ անդ տանջեալ...: - 687. ...որպէս *որք* մահկանացու ասեն զհոգին. և այս խոտելի է ի բաց: - 687. Իսկ երկրորդն՝ *որ* ի բուրգաթուրն ասեն քաւեալ և ելեալ յերկինս...: - 687. ...նման է պղատոնի մարմնափոխութեանցն. *որ* ի բանական մարդոյն ի զգայականն, և անտի ի տունկն ասեն...: - 687. Այլ *որք* ուղիղ դատեցան վարդապետք եկեղեցւոյ ըստ տեսլեանն յոհաննու. որպէս մեծն անդրէաս և համախոհք նմին սուրբն իրինոս, եպիփան, և բասիլիոս: - 687. Նոքա *որ* թողին զամենայն և գնացին զհետ քրիստոսի, *որոց* խոստացաւ զհարիւրապատիկն աստ՝ և զկեանսն յաւիտենից: - 688. Իսկ հոգիք հաւատացելոց *որք* ոչ գնացին այսպէս զհետ նորա, այլ ընկալան ի ներգործութեանցն սատանայի և ի կրից աշխարհի...: - 688. ...*որ* գթով ողորմութեամբ դիւրապէս քաւեսցին և ողորմութեան արժանասցին: - 688. Ո՜ հա՛յրդ ես *որոց* ի վեր քան զերկինս. այսինքն հոգւոց սրբոց կատարելոցն *որ* ի վերեն քան զդասս հրեշտակաց մերձ քրիստոսի որպէս քահանայք առ քահանայապետ, և անդամք առ գլուխն. և որդիք առ հայր: - 688. Իսկ ի ներքոյ երկնից առ երկնիւ է կայանք հոգւոց կիսամասնեայ արդարոց այնոցիկ *որոց* պակա՛ս է արդարութիւն քան զմեղս և կամ առաւել: - 688. Զնոսա ասել գոլ առ Ը երորդ կամարն երկնից. ամբարձեալ յիշխանութենէ սատանայի *որք* ի յօդս և ի տարերս միայն իշխեն: - 688. Այս է խորանն առ երկնիւ ուր ժողովին արդարք և մեղաւորք հոգիք հաւատացելոց. *որք* դատաստանաւն կատարին, ակնունելով ողորմութեանն աստուծոյ: - 688. Իսկ ձախակողմեան խորան՝ է՛ ի յօդս յաներևոյթ տեղիս. ուր ժողովին հոգիք չարաց և մեղաւորաց. *որք* դատաստանաւն դատապարտին: - 688. *Որք* աստ ունին զյաջողակ գործս բարեաց կամ ձախողակ. և նոյնպէս դասին յաջակողմն և ձախակողմն քրիստոսի: - 689. Ապա ո՞րպէս մի կայանք հոգւոցն *որ* ասացաւ յառաջն: - 689. Ի մի ասացին գոլ խորանս ի ներքոյ երկնից զարդարս և զմեղաւորս. *որք* դատաստանաւն որոշին: - 689. Այլ հոգիք սրբոցն ելանեն յերկինս *որ* անապա՛տն է չարաց... - 689. ...որպէս փախեաւ կինն *որ* ծնաւ զմանուկն արու ի տեսիլն. և ո՛չ կարաց հրեղէն վիշապն հասանիլ: - 689. Նախ ասեմ, եթէ հանդերձ սպիտակ և պսակք և աթոռք և այլն ամենայն *զոր* ետես ի տեսիլն՝ ո՛չ ներկային. այլ հանդերձելոյն էր տեսութիւն որ ինչ լինելոց է ի կատարածի...: - 690. ...որպէս ասէ մեկնիչն տեսլեան. եթէ սպիտակ հանդերձն շնորհացն քրիստոսի

մաքրութիւնն է. *որ* սրբութիւն մեղաց մերոց արար քրիստոս. *յոր* ամենայնքն վայելեցաք. զի յորժամ սրբի հոգին, բնական ունի զպայծառութիւնն: - 690. Իսկ արմաւենիքն զյաղթութիւնն նշանակեն. *որք* յաղթեցին ցանկութեանց մարմնոյ և սատանայի: - 690. *Որք* ո՛չ թլփատեցան ի հինն և ոչ մկրտեցան ի նորս, կամ չարք ի մարդկանէ, ունին զդատապարտութիւնն *զոր* զրկելոց են ի դատաստանին զանազան տանջանս և ո՛չ այժմ: - 690. *Որոյ* պատճառ է, զի դատապարտութիւնն ադամայ բարձաւ քրիստոսիւ. և չարաց տանջանքն է՛ ի դատաստանին: - 690. Դժոխքն նշանակէ զդժուարին և զնեղ տեղիս *որ* է՛ խորանն ծախակողմեան. ուր մեղաւորքն կրկին ունին զտանջանս: - 690. Երկրորդ, յանկնկալութենէ հատուցմանն կրեն զտանջանս. *որ* լինելոց է ի կատարածի: - 690. Երկրորդ, աներևոյթ են ի տեսութեանց իւրեանց. զի զրկեալ են ի լուսոյ շնորհաց *որով* երանութիւնքն տեսանին: - 690-691. Երրորդ, աներևոյթ են մեղօք և ո՛չ ունին զպայծառութիւն բարեաց. որպէս այն *որ* ո՛չ ունէր զհանդերձ հարսանեաց: - 691. Երկրորդ, ասէ սուրբն դիոնէսիոս ի ննջեցելոց կատարմանց գլուխն՝ եթէ մաքրելոց հոգին հասեալ ի վախճան՝ յայտնի և մերձակայ տեսանէ զամենայն փառս և զպսակ *զոր* ընդունելո՛ց են նոքա ի յարութեան աւուրն: - 691. Երրորդ, ասէ առաքեալն թադէոս, եթէ հոգի ամենայն մարդոյ *որ* ելանէ ի մարմնոյ, են նոցա օթևանք և բնակութիւն ի հանգստեան...: - 691. Չինգերորդ, ասէ աստուածաբանն գրիգոր՝ եթէ հաւանիմ իմաստնոյն բանի՝ թէ հոգի բարի և աստուածասէր յորժամ ի մարմնոյն արձակի, կայ և մնայ նմա բարին *որ* լինի: - 691. Եւ փոքր ինչ յետոյ մարմնովն *զոր* զգեցցի ժառանգեսցէ զփառսն զայն...: - 691. Ա՛րդ՝ դարձեալ տեսանելն զմիւսանգամ գալուստն նշանակէ. *որով* ուրախ լիցին առանց տրտմութեան: - 692. Այրն ի տարաշխարի գնաց քրիստոսէ. *որ* մարմնով համբարձաւ յերկինս. զի յատուկ տեղի մարմնոյ երկիրս է ...: - 692-693. Սերմն բարի են սուրբք և ընտրեալք *զոր* սերմանեաց աստուած յեկեղեցի: - 693. Քսանևմի, և յառակս տնտեսին *զոր* կացոյց տէր ի վերայ ծառայիցն տալ կերակուր. *զոր* յետոյ տէրն եկեալ գտցէ այնպէս՝ երանի է ծառային այնմիկ. ապա թէ ոչ՝ ընդ մէջ կտրեսցէ: - 693. Նոյնպէս և յառակս *որ* զքանքարն ետ և զմնասն. յետոյ եկն և արար խնդիր: - 693. Այս է ի միւսանգամ գալուստն. *որք* զարծաթ բանին շահեցան, տալ զփառս և զմուտն ուրախութեան. և *որք* ո՛չ՝ նոյնպէս զտանջանս: - 693. Եւ թէ մասն մարդոյն *որ* է հոգին՝ տանջի այժմ վասն մեղաց և մարմինն հանգչի, այս ո՛չ է ուղիղ, նոյնպէս և զփառսն: - 694. Եւ այսմ հետևի աղանդն սադուկեցւոց *որ* ասէին չիք յարութիւն: - 694. Արդ եթէ սիրելիքն աստուծոյ *որք* զարիւնս իւրեանց հեղին վասն քրիստոսի՝ ոչ առնուն զվարձս իւրեանց, նմանապէս և ամենայն ազգ մարդկան: - 694. Երեսուներորդ, յա՛յտ է յորպիսութեանցն չորից *որ* ասացաւ յառաջագոյն եթէ ստ հոգի մարդոյն է ի մէջ բարեաց և չարեաց...: - 694. Նախ ընդ դէմ բերեն զբան մեծատանն և զղազարու. *որ* մինն ի գոգն աբրահամու և միւսն ի տանջանքն էջ: - 695. Պատասխանեմք առ այս որպէս ասէ սուրբն կիւրեղ ի գիրս պարապմանց եթէ առակ օրինակ են սոքա արդարոց և մեղաւորաց *որ* այսպէս լինելոց է ի կատարածի: - 695. Զի թէպէտ անդ ո՛չ է փառք, այլ և ո՛չ տանջանք և չարչարանք գոյ. վասն այսորիկ առ աստուած ասէ *որք* են ի պահեստ հոգւոցն: - 695. Ասեմք եթէ՝ անդրանիկ և կատարեալ ո՛չ վասն պսակացն ասէ *որ* դեռ առնելո՛յ են: - 695. Արդ ըստ կատարեալ գործոցն *զոր* ունին յինքեանս՝ եղեն անդրանիկ երանութեամբ և հանգստեամբ: - 695. Ասեմք ըստ սրբոյն անդրէի մեկնչի՝ եթէ սուրբքն զաշխարհի վախճան խնդրեցին. *որոց* ցուցանէ զպատճառս երկայն մտելոյն...: - 696. Այլ արկանելիք սպիտակ՝ զծաղկեալ նոցա առաքինութեանն երևեցուցանէ զպայծառութիւն յետ ի թանձրութենէ մարմնոյս փոխելոյն. *զոր* զգեցեալ են նախ քան զխոստացեալ զփառսն. - 696. Ասէ մեկնիչն, սպիտակ հանդերձն *զոր* զգեցեալ էին՝ շնորհացն քրիստոսի մաքրութիւնն է. *յորմէ* ամենեքեան վայելեցաք որպէս ասէ առաքեալն...: - 696. Իսկ արմաւենեօքն *զոր* բարձեալ են ի ձեռս՝ զյաղթութիւնն նկարագրեն: - 696. Ա՛րդ՝ եկեալ հրեշտակն խնդրէ ի նմանէ զբարի գործս *որով* նա կերակրի...: - 697. ...իսկ հոգի մարդոյն յանհնարինս մտեալ երթայ առ միտս *որ* է՛ երրորդ բարեկամ և խնդրէ բարիս...: - 697. ...*զոր* վասն յոյժ ժտելոյն՝ յարուցեալ միտքն տացէ զխոստովանութիւն հաւատոյ սուրբ Երրորդութեանն. *զոր* յերիս նկանակս յառակեաց: - 697. ...*որով* իմանան արդարքն թէ այնպիսի փառս պատրաստեալ է նոցա. և յուսով վայելեն մինչև օր դատաստանին: - 697. Նոյնպէս և լուսեղէն պսակքն *որ* իջանէր ի վերայ նոցա՝ յայտնապէս ցուցումն է իմանալի պսակացն: - 697. Ասեմք եթէ՝ ձայնիւն և պսակաւն եցոյց մարդկան և լսեցոյց ի յաչս և ի յականջս թէ զայնպիսի կեանս վիճակեցին նոքա *որք* սուրբք են ի մարդկանէ... - 697. Դարձեալ ասեն, զի՞նչ է փառքն և պսակ արդարոցն, եթէ ոչ տեսութիւնն աստուծոյ *զոր* ունին հոգիքն: - 697. Երկրորդ՝ զի տեսութիւնն հաւատոյն է փոխարէն *զոր* հոգին ընկալաւ. և պսակն գործոյն է *զոր* մարմնով առնու: - 697. Իսկ այս կատարելոցն է *որ* են յերկինս...: - 697. ...իսկ միջակ արդարքն *որ* են

ի կայանս հոգւոցն՝ և զտեսանելն պայծառապէս ընկալցին ի յարութեանն դէմ յանդիման որպէս և էն...: - 697-698. *Ո՞րք* են *որ* ասեն քաւարան հրոյ. և զի՞նչ է պատճառն: - 698. Իսկ *որք* հաստատե՛ն զքաւարան հրոյ՝ չորիւք մեղանչեն ինքեանց: - 698. ...զի *որք* զպատիժ այսմ կենացս ակն ունին առնուլ՝ երկնչին ի չարեաց կամ սակաւ առնեն...: - 698. ...իսկ *որ* յանմերձ ունիցին ակն, յումեքէ ոչ երկնչին: - 698. Երրորդ, զահ դատաստանին *որ* ամենեցուն երկնչիլ տայ ի մեղաց...: - 698. Չորրորդ, զի ոչ ինչ համարին զաստուածային իշխանութիւնն *որ* յեկեղեցի եդեալ...: - 698. ...*զոր* միանգամ կապիցէք յերկրի՝ եղիցի կապեալ յերկինս...: - 698. ...և *զոր* արձակիցէք յերկրի՝ եղիցի արձակեալ յերկինս... - 698. ...ապա սո՛ւտ են *որք* անդ ասեն փրկութիւն և քաւարան: - 698. Եւ մեկնիչն ասէ, աստուածապա՛շտ են *որք* խոստովանին զմեղս. *զոր* գիտէ տէր յայսմ աշխարհի փրկել առանց քաւարանի հրոյ: - 699. Եւ անիրաւք *որ* ո՛չ խոստովանին զմեղս, նոքա ո՛չ զերծանին ի ձեռաց. այսինքն պատժոցն աստուծոյ...: - 699. Ապա ուրեմն *որք* աստ խոստովանութեամբ արձակին ի մեղաց, անդ ազատեալ են ի տանջանաց: - 699. Այլ հոգի դատարկ ի քաւարանին աչս ո՛չ ունի զի լացցէ *որով* յարատ հայեցաւ...: - 699. Իսկ արդ ի յարութեանն հա՛րկ է զի միանգամ տանջեալ հոգին՝ միւս ևս ընդ մարմնոյն տանջեսցի *որ* է՛ անհնար...: - 699. ...զի նա քաւեալ է և սա ոչ. մինչև մարմինն ևս տանջեսցի և քաւեսցի. *որ* է՛ անպատշաճ երկոքինն: - 699. Տասներորդ, *որք* գտանին կենդանի յաւուրն դատաստանին, ո՛չ երթիցեն ի քաւարանն...: - 700. ...ապա ուրեմն դժոխքն է անտի պատիժ *որ* է յաւիտենական և անզերծանելի. և ո՛չ գոյ քաւարան: - 700. Նա՛խ՝ վասն հեշտ ցանկութեան իւրեանց *զոր* ոչ կամին ելանել անտի...: - 701. Նա՛խ եթէ ի խոստովանութիւն մեղացն մնայ պատիժն *զոր* ապաշխարութիւնն քաւէ. որպէս յայտ է ի կանոնս...: - 701. Դարձեալ ասեմք, եթէ զպատիժ մեռելոյն *զոր* նա ո՛չ կարէ քաւել...: - 701. Դարձեալ ասեմք եթէ՝ խոստովանողին պատիժ ամօթն է *զոր* կրէ առաջի քահանային. և ո՛չ կրէ զամօթն յաւիտենից: - 701. Ա՛րդ՝ *որք* կրեն զամօթն առաջի քահանային, ո՛չ կրկնի ի վերայ նոցա պատիժ: - 701. Ասեմք նախ՝ եթէ մարգարէն դաւիթ վասն բոլոր աշխարհի ասէ *որ* ջրով և հրով անցանի. և ապա հանգիստ յաւիտենական լինի...: - 701. Զի *որ* խոկայ առանց հաւատոյ՝ այնպէս է իբր թէ ջանայ ոք տեսանել զարեգակն առանց աչաց: - 702. Եւ *որ* քարոզէ՛ առանց հաւատոյ՝ ոչ խօսի զբանն հաւատարիմ *որ* ըստ աստուծոյ: - 702. Եւ *որ* գործէ զբարիս առանց հաւատոյ, այն է *որ* առնէ շինուած ի վերայ աւազոյ: - 702. Իսկ *որք* շինեն փայտ, այսինքն զբորբոքեալ սէր ժամանակաւորացս: - 702. Ոմանք խոտ. *որ* է ծուխ մարմնական հեշտութեանց: - 702. Զի այրի շինուածն *որ* ո՛չ է յարմար այնպիսի հիման հաւատոյ: - 702. Իսկ այլք զերեք տեսակ մեղացն. այսինքն սկզբնականն *որ* է խոտ. և ներելին եղէգն. և մահացուն փայտ: - 702. Եւ ամենեքեան անցանեն ընդ հուրն *որ* յառաջ ընթանայ գալստեանն քրիստոսի: - 702. Եւ ի յայս հուրս անցեալք՝ *որ* զգեցեալ են ոսկի՝ արծաթ՝ և ականս, առաւե՛լ պայծառանան: - 702. Եւ *որք* ունին զխռիւն և զխոտ, այրելիք են հրոյ: - 702. Երրորդ, նոքա փայտ խոտ և եղէգն զներելիսն ասեն. *որք* անդ ծախին և ազատին...: - 702. Աիա՛ յայտնապէս զփայտ զխոտ և զեղէգն *զոր* նոքա վասն քաւարանին ասեն...: - 703. Զիա՞րդ վախճան ածեն տանջանաց ունայնախոհքն. թէրևս կարծելով թէ ի հուրն մաքրեսցին. *զոր* մի՛ լիցի աշակերտաց ճշմարտութեանն խորհիլ: - 703. ...*որով* դրոշմեալքն յետ արտաքս ելանելոյ ի մարմնոյս, թռչին յանապատն ի մեղաց յերկինս կերակրիլ անդ յուսով մինչև լնու թիւ կատարման աշխարհի: - 703. ...մինչև կատարեսցին հարուածք բարկութեանն աստուծոյ ի վերայ երկրի. *որով* փորձին և արդարք և մեղաւորք... - 703. Զի ո՛չ ասէ թէ ի գալ հոգւոյս, այլ՝ ի գալս իմում. *որ* է հոգի և մարմին: - 703. Ճանապարհ կեանս այս. և ոսոխ մարմինն. և դատաւոր միտքն. դահիճ խիղճ մտացն *որ* չարչարէ՛ զհոգին և ոչ ազատէ մինչև զամենայն պարտսն վճարեսցէ ապաշխարութեամբ: - 704. Նմանապէս այն *որ* ասէ եղբօր իւրում մօրոս, պարտաւոր լիցի աստի դատաստանի և գեհենի խղճի մտացն: - 704. Այսպէս և աստ մինչև՝ *զոր* մինչ առ ինքն նշանակէ, և զհանդերձեալն ո՛չ լքանէ: - 704. Ասեմք առ այս նախ՝ եթէ անդ մեղաց թողութիւն ո՛չ է *զոր* աստ ոչ թողութիւն: - 704. Այլ ամենայն մեղք *որ* աստ թողութիւն՝ և անդ...: - 704. Այն է՝ *որ* յետ աստի կենացս հոգին ի քննութիւն գործոց ժամանէ...: - 705. *Զոր* այժմ ի հեռուստ գիտէ և կարծէ...: - 705. Ա՛յն է *որ* սատանայ խաբէութեամբ և բռնութեամբ զօրացեալ էր և իշխան եղեալ ի վերայ մարդկան. ի կեանս զանազան չարեօք և կռոց պաշտմամբ...: - 705. Զի զգլուխ վիշապին ի ջուրսն յորդանանու ջախջախեաց ըստ յոբայ *որ* է մեղքն...: - 705. և յարութեամբն եբարձ զապականութիւն *որ* է՛ խայթոց նմին: - 706. Եւ մեզ ետ իշխանութիւն կոխել զօձս և զկարիճս *որ* տկարացեալ էր և կապեալ: - 706. Եւ ոմանք յետ զռ ամին զեօթներորդն *որ* վախճանն է՝ յարութիւն ասեն միայն սրբոցն և կապիլ սատանայի: - 706. Երրորդ, ներելով արձակէ զսատանայ *որով*

փործին ընտրեալքն որպէս ցորեան ի շտեմարանս արքայութեան...: - 706. Եւ սատակեալ վիշապին տուտն է նեռն. *որ* ի վերջին ժամանակս քարշէ զերրորդ մասն աստեղաց... - 706. Իսկ *որք* հաւանին նմա՝ կորնչին ի տանջանսն յաւիտենից: - 706. Նստցի ի տաճարին *զոր* շինեսցեն նմա հրէայքն. և ասասցէ թէ, յառաջ քան զիս ո՛չ ոք է ճշմարիտ քրիստոնեայ. այլ նեռինք են ամենայնքն: - 707. ...զի նա՛ է գազանն *որ* ել ի ծովէն և ունէր գլուխս է. այսինքն զամենայն իշխանս: - 707. Եւ եղջիւրս **ժ**. այսինքն զայնոսիկ *որք* մարտնչին ընդ **ժ** բանեան օրինացն: - 707. *Որ* է՝ ուրանամ կամաւ զարարիչն երկնի և երկրի: - 707. Դարձեալ նշանակէ զամենայն ապստամբութիւնս *որ* յառաջին, և միջին, և վերջին ժամանակս լինելոց է: - 707. Վեց հարիւրն զամս նոյի. *որ* էր **ո** ամաց և ջրհեղեղով ջնջեցան ապստամբքն: - 707-708. Իսկ վաթսուննն զբաբելօնի պատկերն **կ** կանգուն երկայն, և **զ** լայն. *յորում* ընդարձակեցաւ կռամոլութիւն: - 708. Ասեն ոմանք թէ **ժ** ցեղքն իսրայէլի *որ* փակեցան ի մէջ լերանցն կասբից...: - 708. ...*որ* ի կատարածի աշխարհի մարտնչին ընդ եկեղեցւոյ: - 708. Զի զօգ նոքա են *որովք* սատանայ գաղտնաբա՛ր հալածէ զհաւատացեալս: - 708. Եւ մագօգ՝ *որովք* յայտնապէ՛ս հալածէ զեկեղեցի: - 708. Նոյն հասակաւն *որով* փոխեցան՝ և գայցեն: - 709. Եւ **բ** աշտանակք *որ* տան լոյս ամենեցուն: - 709. *Որ* է՛ ամիսս **խբ**, և ամք՝ **գ** ամ և կէս: - 709. Զի «ժամանակ» *որ* է՛ ամ մի. «և զժամանակս» *որ* է՛ երկուս ամս. «և կէս ժամանակի» այսինքն կէս ամ: - 709. ...եթէ սուրբք *որ* աստ չարչարեցան, յառնեն յառաջագոյն և փափկանան մարմնով **ռ** ամ. և ապա հասարակ յարութիւնն ամենայն մարդկան: - 710. *Որոյ* ընդ դէմ է աւետարանն *որ* առ սադուկեցիսն հրամայէ տէր...: - 710. *Զոր* վարդապետք եկեղեցւոյ այսպէս իմանան եթէ՝ կրկին է յարութիւն. այսինքն կեանք: - 710. Եւ ընդ դէմ սմա կրկին է անկումն *որ* է՛ մահ. վասն զի կրկին է մարդն. այսինքն հոգի և մարմին: - 710. Նա՛խ՝ յարութիւն է շնորհաց. *որ* զթողութիւնն մեղաց ընկալաք և զհաւատն քրիստոսի: - 710. Եւ դարձեալ յարութիւն է հոգւոյ ելեալ և ազատեալ ի մարմնոյ և մտեալ առ աստուած, *որ* է յոգիս արդարոց կատարելոց: - 710. Եւ երկրորդ յարութիւնն *որ* է մարմնաւոր, և այն ևս կրկին է. նախ յարութիւն կենաց, և ապա յարութիւն փառաց...: - 710. *Յորմէ* փրկեսցէ քրիստոս աստուած առ հասարակ զամենայն հաւատացեալս անուան իւրոյ ամէն: - 710. Զի՞նչ է **իդ** երիցունքն *զոր* ասէ տեսիլն: - 711. Երիցունք նախ նշանակէ՛ զքահանայս *որք* զանձինս իւրեանց մատուցանեն պատարագ աստուծոյ: - 711. Երկրորդ երիցունք են ծերքն. *որք* ծայրացեալք են կատարելութեամբ: - 711. ...*որք* աստիճանաւ վեհագոյնք են քան զհասարակաց արդարս. որպէս աբէլ, և առաքեալքն. և մարգարէքն. և այլք: - 711. Չորրորդ, նշանակէ՛ զթիւ աւուրցն ժամուց *յորում* նոքա վաստակեցին և զարդարեցան: - 711. Հինգերորդ, ըստ համարոյ իդ տառիցն *որովք* իմաստնացան և ի գիտութիւն ճշմարտութեան հասին: - 711-712. Պայծառ հանդերձն *զոր* զգեցեալ են՝ շնորհացն քրիստոսի մաքրութիւնն է *յոր* ամենայնքն վայելեցաք... - 712. Եւ ունի բեհեզն վեց յատկութիւնս *որ* նշանակէ զվայելչութիւն հոգւոց սրբոցն ելեալք ի մարմնոյ: - 712. Չորրորդ զի լուսափա՛յլ է. նշանակէ՛ զբարձրագոյն տեսութիւնն *որով* լուսափայլին իմացմամբ: - 712. Զյաղթութիւն նոցա ցուցանէ. *որք* յաղթեցին ցանկութեանց մարմնոյ աշխարհի և սատանայի: - 712. Եւ թէ *որո՞ց* ոմանց լիցի ոսկեղէն պսակն...: - 712. Վերջին փող է հրեշտակացն *որ* կոչէ՛ ի դատաստան: - 713. Նախ կոչելով զերկինս ի վերուստ *որ* են հոգիքն. և զերկիր *որ* են մարմինք: - 713. Եւ իշխանք են առաքեալք և մարգարէք *որ* փողք են տիեզերաց, նախ զնոսա կոչէ: - 713. Երկրորդ զքահանայս հին և նոր. *որ* գնեն զպատարագս ուխտից ի սեղանն: - 713. Նախ ձայն փողոյ է՛ հրամանն քրիստոսի *որ* հրամայէ՛ զյարութիւնն: - 713. ...*որ* զմեծամեծս աւետարանեն. և միջնո՛րդ են մահու և յարութեան մարդկան: - 713. Առասպել մի՛ համարիր զայն *որ* ասեն թէ ի վիրապն հարկանի: - 713. ...ուր ազգին բունն է և գլուխ՝ ա՛նդ հնչեցուցանէ *որ* ազգին առաջնորդն է: - 713. Դարձեալ՝ *որ* հրոյ է վերակացու, ի վերայ նորին հարկանէ. և *որ* օդոյ և ջրոյ և երկրի, ի վերայ իւրաքանչիւր տարերաց գոչէ՛: -714. Յո՞րժամ և *յորում* աւուր գոչէ փողն: - 714. Ի գարնան եղանակի ի զատկի կիրակէին ի մէջ գիշերի *յորում* ժամու յարեաւ քրիստոս և հրեշտակն թաւալեցոյց զվէմն և գոչէր զյարութիւնն քրիստոսի... - 714. ...և տան ի բաց *զոր* ունին յաւանդի: - 714. Երկրորդ, զի չո՛րք են սկզբունք աշխարհի. երկինք *որ* է՛ երկուք. հուր և օդ. և երկիր *որ* է՛ **բ** իր. հող և ջուր: - 714. Այլ արդ ի կեանս յայս տեսանեմք զբազումս *որ* բարիքն ի նեղութեան են և չարքն ի հանգստեան... - 715. Նա՛խ՝ զի ո՛չ է ի չորից տարերց ժողովեալ *որ* քակտելով մահանայ: - 715. Այս զյարութիւնն ասէ ի ձեռաց գազանաց խնդրելն. զի յառնեն մարմինք *որ* մեռեալ են ի ձեռն գազանաց: - 715. Եւ աստուած ո՛չ է մեռելոց այլ կենդանեաց. *որոց* հոգիքն ի ձեռս նորա կենդանի են. և մարմինքն ի ձեռս նորա կենդանի լինելո՛ց են: - 715. ...այս զմարմնոյն ասէ *որ* ի հող դարձաւ: - 715. Եւ հաւատարիմ վկայ ընդհանուր յարութեանն զգործս եցոյց. *որ* զղազար չորեքօրեայ

ի գերեզմանէն յարոյց: - 716. Այլ ոմանք ասեն թէ յարութիւն է այնմ *որ* անկաւ՝ վերստին յառնել ի կենդանութիւն յաւիտենական անմահ: - 716. Նա՛խ՝ զի կարէ՛ *որ* յառնել միանգամ և դարձեալ մեռանիլ...: - 716. ...որպէս վեց մեռեալքն *որք* յարեան նախքան զքրիստոս. և յարութիւնս այս անկատար է. զի դարձեալ մեռան: - 716. Եւ այսպէս սահմանի եթէ յարութիւն է այնմ *որ* անկաւ մարմնաւոր մահուամբ՝ վերստին յառնել անմահութեամբ ի կեանս յաւիտենականս: - 716. Եւ զորպիսութիւն բարեաց և չարեաց. և զերկայնութիւն ժամանակին *որով* թիւ մարդկան զլրումն առցէ: - 716. Եւ ի նոյն կէտ լրմանն *որ* է՛ վախճան ժամանակի և սկիզբն յաւիտենի՝ լինի վերառութիւն համայնից մարդկան որպէս գրէ առաքեալն կորնթացւոց... - 716. Նա՛խ՝ զի շնորհն աստուածային պատկերին *որ* համանգամայն կամեցաւ զբոլոր բնութիւնս ըստ հրեշտակացն օրինակի մուծանել ի կեանս... - 716. ...ըստ այնմ *որ* արար աստուած զմարդն ի հողոյ: - 717. ...զի կարիցեն հասկանալ. այն *որ* համանգամայն եղեն երկինք և երկիր: - 717. Դարձեալ՝ կենդանիքն ո՛չ ժամանեն ննջեցելոցն, այսինքն նոցա *որ* մեռեալ են և ի հող փտեալ և փոշիացեալ...: - 717. այլ մեռանին և իսկոյն լինի յարութիւն նոցա. *յորում* ո՛չ մարմինքն ի յերկիր անկանին և ո՛չ լուծանին: - 717. Ասեմք առ այս, եթէ մարմին մարդոյ բաժանեալ ի հոգւոյ, և հոգին գնացեալ ի կայանս հոգւոց առ աստուած *որ* ետ զնա՛. և մարմինն ի հող լուծեալ կամ յայլ տարերս...: 718. Կերակուրս *զոր* ուտեմք՝ յառնէ՞ ի մարդն թէ ոչ: - 718. ...այլ սակաւ հիւթն այն *որ* ի սկզբանէ՛ գոյացութեան մերոյ ի ծնողացն է՛ ընկալեալ: - 718. Եւ դարձեալ՝ ո՛չ միայն մարդոյս մարմինն, այլ և անշնչից և շնչաւորաց զոր ինչ ուտեմք յառնէ՛ ասեն *որ* է՛ անպատշաճ: - 718. Ասեմք առ այս թէ՝ են նիւթ ի մարդն *որ* յառնեն և են *որ* ո՛չ: - 718. Այն նիւթն *զոր* ի ծնողացն ունիմք՝ բոլոր առնէ. զի սկիզբն է գոյացութեան մեր...: - 718. ...և նիւթ կերակրոյն՝ այն մասն *որ* փոխեցաւ ի գոյացութիւն մեր՝ յառնէ՛. զի մարմին եղև մարդոյն այլ աւելորդքն ո՛չ յառնեն: - 718. Ապա ուրեմն կենդանեաց մարմինն ոչ յառնէ ի մեզ ըստ բոլոր նիւթոյն, այլ ըստ չափոյ զօրութեանն *որ* փոխեցաւ ի մեզ և եղև մարմին մարդոյ, ա՛յն մարմինն յառնէ: - 718. Թէ զձուկն զայն *որ* եկեր զմարմին մարդոյ՝ ուտէ մարդ, և յայնմ սերմանէ ծնանի զա՛յլ մարդ. ի *յորո՞յ* մարմին յարիցէ: - 718. Մարմին մարդոյն *զոր* եկեր ձուկն՝ ո՛չ յառնէ ի ծնեալ մարդն այլ ի կերեալն: - 718. Այսպէս և թէ ոք զմարդոյ մարմին ուտէ և ծնանի ա՛յլ մարդ, մարմին մարդոյն ո՛չ յառնէ ի ծնեալ մարդն և ո՛չ ի ծնօղն *որ* եկեր, այլ ի կերեա՛լն մարդ: - 718-719. *Որոյ* պատճառ է, զի մարմին կերեալ մարդոյն է իւրն նիւթ գոյացական և սոցա եղև նիւթ պատահական: - 719. Նոյնպէս և նիւթն սկզբնական ո՛չ յառնէ ի ծնօղս *որ* աւելորդ արտահոսումն է նոցա. այլ յառնէ ի ծնեալ մարմինն *որոյ* հիմն է շինուածոյն: - 719. Նմանապէս և կողն *որ* առաւ յադամայ և շինեցաւ կին, ո՛չ յառնէ ի յադամ, այլ ի յևա. *որոյ* հիմն կազմութեան եղև փոխանակ սերման: - 719. Այսպէս և հողն ուստի շինեցաւ ադամ, ո՛չ մնայ ի տարերս. այլ յառնէ ի յադամ *որ* սկիզբն եղև գոյութեան նմա: - 719. *Որ* արարն յոչ էից, գիտէ անխառնապէս որոշել զիւրաքանչիւր փոշիս արդարոց և մեղաւորաց...: - 719. *Որով* անսխալ ճանաչէ իւրաքանչիւր հոգի զիւր մարմինն և միաւորի: - 719. Ասեմք եթէ՝ զորօրինակ սնդիկ լուծեալ և ի հող խառնեալ գնդապէս և փոշիացեալ. յորժամ ի մի վայր ժողովես՝ թողու զփոշիսն ի *յորս* խառնեալ է և պարզ միայն սնդիկն ժողովի: - 719. Այսպէս և ի մարմին մարդոյ ոչինչ խառնի ի հասարակ տարերաց ի *յորս* լուծաւ. այլ ինքն միայն գոյացութիւն մարմնոյն խառնեսցի ընդ հոգւոյն: - 719. Եւ դարձեալ ոմանք հերձուածօղք ասացին թէ՝ այս մարմինս ո՛չ յառնէ և ո՛չ այս մարդ *որ* մեռանի. այլ փոխանակ նորա նոր մարդ յառնէ: - 720. ...և մարմինք մեռեալք *որ* յադամայ հետէ՝ յանկարծակի յական թօթափել ի փող յետին յարիցեն ասէ առաքեալն: - 721. ...այսպէս և ննջեցեալք ամենայն ծեր և տղայ՝ յառնեն ի մի չափ հասակի երեսնամեայ *որ* է կատարեալ հասակ որպէս ցուցանի յառաջիկայդ: - 721. Եթէ փայտ խոտ եղէգն *որ* են մեղաւորքն, զի անդէն մնան: - 721. Չորրորդ պակասութիւն է՝ զի այժմ է՛ մարմին մեր թանձր և կոպիտ. այլ յայնժամ բառնի այս ի մարմնոյ և լինի անօսր և թափանցիկ. *զոր* ոչ պարիսպ կամ բանտ ըմբռնել կարիցէ: - 722. Բայց եօթն զարդքն *զոր* ունին սուրբքն որք են հարսունք քրիստոսի՝ ո՛չ ունին անսուրբքն *որք* են հարսունք սատանայի: - 723. Այլ և նոքա *որ* յարգանդի մօրն մեռանին թէ առին զբանական հոգին: - 724. Այլ արդ՝ երեխայքն *որ* յառաջ քան զմկրտիլն մեռանին, վասն ադամայ մեղացն պատժին: - 724. Եւ *որք* մկրտեալ մեռանին, առնուն վարձ ի խորհրդոյ եկեղեցւոյ և ի չարչարանացն քրիստոսի *յոր* մկրտեցան: - 724. Դարձեալ՝ ո՛չ գան ի դատաստան, զի մասն բարւոյ ո՛չ ունին *որով* քննիցին. այլ դատապարտին որպէս ցուցանի յառաջիկայդ: - 725. *Որոյ* պատճառ է, զի մարդն հոգւով և մարմնո՛վ է կատարեալ: - 725. Զի եթէ մազն *որ* է գեղեցկութիւն մարմնոյն յառնէ ըստ նորին տեառն թէ «ի գլխոյ ձերմէ մազ մի ո՛չ կորիցէ» քանի՞ առաւել ևս անդամք *որ* յէութենէ մարմնոյն

են յարիցեն: - 725. Երկրորդ՝ ուղղեսցին աւելիքն ի չափն. որպէս աւելո՛րդ եղունգաց հերաց և վեցամատնից և այլոցն. *որք* չափաւորին: - 725. Երրորդ՝ ուղղի մոլորութիւնն *որ* է՛ խանգարումն անդամոցն ի միմեանս սխալեալ ըստ բնութեան տկարութեանն: - 725. Ասեմք եթէ՝ անդամքն այնք *որ* աստ լցեալ են ապաւառով, անդ լցցին ղ հիւթովքն լուսաւորեալ լուսով: - 725. Եւ թէ ոք ասիցէ, բազում անդամք են կենդանականք, որպէս սիրտն լեարդն թոքն և այլքն *որք* ի յարութեանն ո՛չ են պէտք. զի ո՛չ է հարկ կենդանութիւն մարդկան: - 725. Գեղեցիկ գոյն որպէս ծնովն հերովն և այլովքն *որ* ասացաւ: - 725. Ո՞րպիսի հասակաւ յառնենն և *յո՞ր* թիւ: - 726. ...և յայս թիւ ստեղծաւ ադամ *որ* է երեսնամեայ: - 726. Այլ համահասակ քանակաւ ո՛չ. զի աստ ոմն մեծ լինի և ոմն փոքր ի ջերմութենէն *որ* անհաւասա՛ր է ի նոսա. նոյնպէս և անդ: - 726. Այլ *որ* առաւել մեծն է և հսկայանդամ, և կարի փոքր և փանաքի, յերեսնամեայ հասակն իւրեանց չափաւորին: - 726. Երրորդ՝ քանակաւ հասակին. զի իւրաքանչիւր ոք յիւրն երեսնամեայ յարիցէ. որպէս հարիւրամեան անցեալ և քառասնօրեայ մեռեալ. *որ* լինելոց էր երեսնամեայ, ի նոյն հասակն յառնեն: - 726. Ի գոյից *ո՞րք* են մնացականք յետ յարութեանն: - 727. Զի՞նչ է պատճառն *որ* գ մարմինք միայն մնան ի կատարածի: - 727. Ասեն վարդապետք՝ եթէ են ինչ *որ* էութեամբ և պատահմամբ անցանեն. որպէս կենդանիք և տունկք և որ ինչ ի չորից տարերաց են գոյացեալք: - 727. Եւ են ինչ *որ* պատահմամբ անցանեն և էութեամբ մնան. որպէս երկնային մարմինք և դ տարերքս և մարդոյս մարմին. սոքա պատահմամբ անցանեն և գոյացութեամբ մնան: - 727. Վասն զի երկին *որ* շարժի՝ յօր դատաստանին դադարի և հաստատի յայն կարգն *յոր* նա՛խ ստեղծան. արեգակն յարնելս և լուսինն յարևմուտս: - 727. Երկրորդ, զի առնեն զվարձս վաստակոցն *զոր* սպասաւորեցին մարդկան: - 727. Երկրորդ՝ երկինք զիրեշտակս ասէ *որ* ի վայր գլորեալ խոնարհին ամենայն դասք. աթոռք կազմեալ, և սպասաւորք շրջապատեալ: - 729. Եւ *յորում* ժամու և գործեն՝ վկայե՛ն տիւ և գիշեր...: - 729. Իսկ ըստ իրին, զի որպէս ամպ զարեգակն արգելու, այսպէս նսեմութիւն օդոյդ զարփին *որ* արգելէ՛ զտեսութիւն մեր: - 729. Զի՞նչ է *որ* ասէ տեսիլն, «գա՛մ ես վաղվաղակի»: - 730. Ո՞ւր է հուրն *որ* գայ ի կատարածի: - 731. Եւ ի կատարածի՝ տարրական հուրն և հրեղէն ծովն և ամենայն հուրք *որ* են յերկրի՝ ժողովեսցին ի միասին... - 731. ...և վառեսցեն զերկինս *որ* է՛ օդն. և զերկիր և զլերինս և զդաշտս և զբոյսս և զկենդանիս. և զժանգս մեղաց որպէս ասէ աստուածաբանն գրիգոր: - 731. ...և ընդ վճռի դատաւորին իսկոյն քարշին ի տանջանս ի հրեղէն ծովն *որ* հուրն է յաւիտենից: - 731. Դարձեալ յուշ առնէ մարդոյ զչարչարանքն քրիստոսի. և խնդրեսցի ի նոցանէ մահն քրիստոսի իբր զգին *որ* տըւեալ է նոցա, և նոքա յափշտակեցին զինքեանս ի նմանէ: - 732. *Յորո՞ւմ* աւուր երևի խաչն: - 732. Ոմանք յաւուր ուրբաթու ասեն *յորում* խաչեցաւ քրիստոս. և այլք ի կիրակէն: - 732. Զի որպէս փայլակն ելանէ յարևելից ի վերայ լուսեղէն ամպոյ, և քառածև լուսովն լնու զչորս կողմ աշխարհի և հաստատի ի գողգոթայ *յորում* խաչեցաւ տէրն: - 732. Յետ *որոյ* փող հարկանի և մեռեալք յառնեն: - 732. Երևի՞ անդ փայտ խաչին *յորում* խաչեցաւ տէրն: - 732. Նա՛խ՝ զի ամենայն *որ* ի չորից տարերց է՝ կրէ՛ զապականութիւն. արդ խաչն փա՛յտ է և ի չորից տարերց. ապա ուրեմն ապականի և նա՛: - 732. Երկրորդ՝ զի թէ մարդոյ մարմին *որ* է՛ բանական և կենդանի՝ ապականի մահուամբ...: - 732. *Որոց* պատասխանեսցուք այսպէս: - 733. Զոր օրինակ ո՛չ էր բնութեանս անսերմ յղանալ և կուսութեամբ ծնանիլ, *զոր* բանն աստուած սքանչելապէս ներգործեաց: - 733. Նմանապէս և խաչն աստուծոյ՝ է՛ ի կամացն աստուծոյ և ի նորին ներգործութենէն *որ* անապական կամի զնա. զի նովաւ արար փրկութիւն ազգի մարդկան: - 733. Ապա ուրեմն ևս առաւել խաչն մնայ անապական զի էութիւն աստուծոյ է ի նմա. այսինքն բանն աստուած մարմնովն *որ* է՛ սևեռեալ ի նմա: - 733. Արդ եթէ խաչն ապականի, ապա և արիւնն *որ* ի նմա: - 733. Ուստի յայտ է թէ՝ զմարմին բանին ապականացու խոստովանին նոքա՝ *որ* զխաչն ապականացու ասեն. և են նեստորականք: - 733. Իսկ *որք* զբանն մարմնով անապական խոստովանի, պա՛րտին և զխաչն աստուածընկալ անապական խոստովանիլ: - 733. Չորրորդ յա՛յտ է յօրինակաց. զի գաւազանն ահարօնի *որ* ծաղկեցաւ՝ օրինա՛կ էր խաչին. և տախտակքն բանին. և ծառն կենաց *որ* ի մէջ դրախտին: - 733. Ա՛րդ՝ սոքա անապականք են յայնմ հետէ և առ յապայ *որ* օրինակք են. ապա ուրեմն և ճշմարտութիւնն անապական է *որ* է խաչն աստուածընկալ: - 733. Արդ նա՛ *որ* զամենայն գերեզման կնքեալ պահէ, զեկեղեցիս օրհնէ՛ և հաստատէ՛ և ամենեցուն զօրաւիգն է ի փորձութիւնս, կարօ՛ղ է անապական լինիլ. զի աստուածային է նշան: - 733. Ա՛րդ՝ յայտնեալ է նա և որոշեալ ի մէջ ամենայն փայտից գոլ արժանի արդարութեան *որով* փրկեցաք ի բանսարկուէն: - 734. Արդ՝ *որոյ* գործն յաւիտենական է, և նոյն ինքն անապական է ասէ փիլիսոփայն. ապա ուրեմն անապական է սուրբ խաչն: - 734. Ութերորդ՝ զի *որ* գործարան է մահու՝ նա՛

է ապականացու: - 734. Արդ *որ* մայրն է կենդանութեան, նա անապական է. այսինքն է սուրբ խաչն: - 734. ...որպէս յա՛յտ է ի սերովբէսն *որ* ի ներքոյ փառաց աթոռոյն, այսինքն է խաչին. թևասքօղեալ զերեքսրբեանն վերածայնէին: - 734. Եւ այս ո՛չ թէ լոյս միայն է. զի զլոյսն ո՛չ ետ մեզ նշան. այլ զխաչն փայտեղէն *յորոյ* վերայ զձեռն իւր տարածեաց միածին բանն: - 734. *Յորո՞ւմ* ժամու լինիցի դատաստանն: - 734. Ի մէջ գիշերի. *յորում* ժամու հրեշտակն զեգիպտոս եհար, և տէրն զդժոխս աւերեաց. յայն ժամու զընտրեալս իւր յաշխարհէ ազատեսցէ: - 734. Որպէս յորժամ կայսր մտեալ ի քաղաք՝ թագ և այլ նշանք առաջի տարցին, *որով* գալուստ նորա ցուցանիցի: - 734. Այսպէս քրիստոս այնու կերպարանաւ *որով* համբարձաւ՝ հանդերձ ամենայն դասուք հրեշտակաց ի դատաստան եկեսցէ: - 734. Երրորդ, զի որդի է՛ նման հօր. իսկ հրեշտակք և մարդիկ չփոթեցին յինքեանս զնմանութիւնն *յոր* ստեղծան...: - 735. ...յիրաւի է ուրեմն *որում* անիրաւութիւնն եղև առնել դատաստան վասն վրիժու. թէպէտ նմա հայր և հոգին սուրբ գործակից լինին: - 735. Ութերորդ, զի *որ* զնա՛ խաչեցին և սպանին, տեսցեն յայնժամ և իմասցեն թէ աստուածասպանք եղեն...: - 735. Գո՞յ անդ աթոռ *յորում* նստցի: - 736. Ա՛յն է աթոռ՝ *զոր* մարգարէքն տեսին: - 736. Եօթներորդ, զի ահագնակերպ երևի ի վերայ մեղաւորաց. մինչ ասիցեն լերանց թէ անկերուք ի վերայ մեր. և բլրոց թէ ծածկեցէք զմեզ յերեսաց բարկութեանն աստուծոյ *որ* նստի յաթոռ. որպէս ասէ տեսիլն: - 737. Այլ ի միջասահման տեղւոջ աշխարհի *որ* է՛ երկիրս: - 737. Ուր ինքն տէրն խաչեցաւ և յարեաւ. և սոքա ամենեքեան ծոր յովսափաթու կոչին, *որ* յերկու ձորի մէջն է յերուսաղէմ: - 737. Երկրորդ, զի դատաստանն պա՛րտի յայտնի լինի. այլ՝ արդ՝ երուսաղէմ է՛ առաւել յայտնի վասն փրկութեանն *որ* անդ կատարեցաւ: - 738. Երրորդ, յարմարի տեղիքն այն՝ դատաստանին աստուծոյ *որ* անդ լինելոց է. այսինքն գործ ողորմութեան և գործ արդարութեան. - 738. Քանզի լեառն ձիթենեաց նշանակէ՛ զողորմութիւնն *որ* մե՛րձ է ի ձորն այն: - 738. Եւ յովսափաթն թարգմանի դատաստան *որ* է՛ արդարութիւն: - 738. Եւ շուրջ զինքեամբ բարի հրեշտակքն *որ* մղեն ի դժոխս: - 738. *Ո՞րք* են դատաւորք: - 738. Այլ և *որք* ի մի խնամս վայելեցին յաստուծոյ. յարև և յանձրև. և ի մի տեղիք բնակեցան և մի պիտոյիւք շատացան. և նոքա զտուօղն ո՛չ ճանաչեցին: - 738. Երրորդ, հաւաստի արդարութեամբ. և այսպէս ամենայն սուրբք և հրեշտակք դատեսցեն զնոսա *որք* ի նոյն շաւիղն յանցաւոր գտան: - 738. Ոմանք դատին և դատապարտին. որպէս միջակք *որք* ունին հաւատ և ո՛չ գործք. որպէս չար հաւատացեալք. և *որք* ունին գործք և ո՛չ հաւատ. զի աստ հատուցաւ նոցա: - 739. Ոմանք դատին այլ ո՛չ դատապարտին. որպէս միջակ արդարքն. *որք* ունին ներելի և մասնաւոր մեղս: - 739. *Ո՞րք* են *որ* առանց դատաստանի կորնչին: - 739. *Որք* արտաքոյ օրինաց մեղանչեցին որպէս կռապաշտք՝ և հրէայքն *որք* յետ խաչելութեանն քրիստոսի...: - 739. *Ո՞րք* են *որ* դատաստանաւ կորնչին: - 739. *Որք* առին զօրէնս և ո՛չ պահեցին. որպէս չար քրիստոնեայք ի նորս և չար հրէայքն ի հինն...: - 739. *Ո՞րք* են *որ* առանց դատաստանի փրկին: - 739. *Որք* ի վեր քան զօրէնս գործեցին. որպէս առաքեալք, մարգարէք, մարտիրոսք, կուսանք, և այլք: - 739. *Ո՞րք* են դատաստանաւ փրկին: - 739. Հաւատացեալ արդարք. *որք* ըստ օրինաց հնոյն կամ նորոյս գործեցին զարդարութիւն. կամ *որք* սխալեցին և ապաշխարեցին զմեղս զղջմամբ խոստովանութեամբ պահօք աղօթիւք ողորմութեամբ և այլովք: - 739. Արդ բանիւ մտաց խօսի ընդ բուն արդարս և ընդ հրեշտակս *որք* դատեանն զայլս: - 739. Եւ բանիւ գործոյ խօսի ընդ բուն չարս և ընդ դևս *որք* առաքին ի տանջանս: - 739. Երրորդ՝ կենդանի են դևք. և մեռեալ՝ մարդիկ. *որս* դատէ՛ աստուած և սուրբք ամենայն: - 740. Երկրորդ՝ զի ո՛չ ունին զլոյս շնորհացն *որովք* տեսանի աստուած. զի *որք* աստ ո՛չ տեսին հաւատով, և անդ ո՛չ տեսանեն իմացմամբ: - 740. Զի՞նչ է *որ* ասէ «օրհնեալք» կամ «անիծեալք». և ո՛չ թէ՝ ես օրհնեմ, կամ անիծանեմ: - 740. Վճիռ *որ* վասն բարեացն է՝ պարունակէ՛ յինքն է մասունս օրհնութեան: - 740. Առաջին՝ կոչումն սիրական *որ* ասէ «եկա՛յք»: - 740. Երկրորդ՝ աստուածային օրհնութիւնն *որ* ասէ «օրհնեալք»: - 740. Երրորդ՝ սէրն հայրական *որ* ասէ «հօր իմոյ»: - 740. Չորրորդ՝ հատուցումն բարեաց *որ* ասէ «ժառանգեցէք»: - 740. Հինգերորդ՝ զմեծութիւն թագաւորութեան *որ* ասէ «զարքայութիւնն»: - 740. Վեցերորդ՝ զնախապատրաստութիւն փառացն *որ* ասէ «*որ* պատրաստեալ է ձեզ»: - 740. Եօթներորդ՝ զյաւիտենակութիւնն *որ* ասէ «ի սկզբանէ աշխարհի»: - 740. Իսկ վճիռն *որ* ընդ դէմ չարեացն, ունի մասնունս **q**: - 740. Առաջին՝ հեռացումն յաստուծոյ *որ* ասէ «երթա՛յք յինէն»: - 740. Երկրորդ՝ զանէծսն *որ* ասէ «անիծեալք»: - 740. Երրորդ՝ զբանտարգել լինիլն. *որ* ցուցանէ նախդիրն: - 740. Չորրորդ՝ զդառնութիւն տանջանացն *որ* ասէ «հուրն»: - 740. Հինգերորդ, զյուսահատութիւն ազատութեանն *որ* ասէ «յաւիտենական»: - 740. Նա՛խ՝ *որ* ի յայնմ ժամու կենդանի լիցին... - 740. Ընտրելոցն երևի այնու կերպիւ *որ* ի թափօր երևեցաւ:

- 740. Ապա առաւել նոքա *որք* չարչարեցին. զի մի՛ այլ և այլ կարծեսցեն: - 741. Ապա յա՛յտ է յասացելոցս թէ՝ քրիստոս երևեսցի արդարոցն քաղցրատես, և մեղաւորացն դառնակերպ. *որ* նշանակեցաւ ի սիւն ամպոյն ի տուէ և ի հուրն ի գիշերի: - 741. Մանաւանդ թէ՝ հոգին սուրբ գրօղ դպիր. և ուղղութիւնն գրիչ գործիք. և *որք* զմելանն առատ տամք և զմագաղաթն, զսուրբ գործս անկեղծաւոր և զբանս աղօթից օրինաւոր, ա՛յնքան առաւել գրիմք ի գիրն կենաց: - 741. *Որք* որպէս գիրք յայնժամ բացեալք եղիցին. քանզի վարդապետութիւնք նոցա և օրինակք՝ ամենեցունց յայտնեսցին. ի *յորս* ամենեքեան իբրև ի գիրս տեսցեն թէ զի՞նչ պարտ էր առնել կամ խոտել ինքեանց: - 742. Իսկ գիրք կենաց է գիրքն քրիստոս. ի *յորում* ամենեքեան իբրև ի գիրս ընթերցցին թէ զինչ ի պատուիրանաց նորա արարին: - 742. Գիր ևս կենաց է տեսութիւնն աստուածային. ի *յորում* ամենեքեան զխիղճս մտաց իւրեանց իբրև զգրեալս տեսցեն: - 742. Երրորդ ի վկայիցն *զոր* կարեմք փոփոխել այժմ: - 742. Եօթներորդ, այլ և **գ** է գործիք բանին. խելքն *որ* ծնանի. սիրտն *որ* խորհի. լեզուն *որ* խօսի: - 742. Իններորդ, զի բնական օրինացն **գ** են վկայք. բանն և գիրն և աւետարանն. *որ* տուաւ նահապետացն և մարգարէիցն և առաքելոցն: - 742-743. Նմանապէս և չարեացն վկայ՝ ոսոխն մեր սատանայ և գործակիցքն. և խիղճ մտացս *որով* տանջիմք միշտ: - 743. Դարձեալ՝ նիւթ հրոյն *որ* աղտ մեղաց, է՛ յաւիտենական. վասն այն յաւիտեան տանջէ զնոսա: - 744. Կշռիք գործիական առ մեզ յայտնի՛ է. *որ* զարդար հաւասարութիւն նշանակէ ի ձեռս մեր: - 744. Իսկ միտումն է՛ առանձնութիւն դիմացն. *որ* է՛ անծին և ծնեալ և բղխեալ: - 746. Երկրորդ, հայի՛ առ ի մի և նոյն բարերար կամացն յառաջ եկեալ գործքն. աստուածային՝ արարչական՝ և արքունական. *որ* է գործ ստեղծման և նախախնամութեան: - 746. Երրորդ, հայի առ նոյն ինքն արդարապէս հատուցումն մանրամասն քննութեամբ բարեացն և չարացն. *որք* առաւել կամ նուազ ունին. կամ հաւասարակ յերկուցն կրից: - 746. Չորրորդ, կշիռն նշանակէ՛ զգործս մարդկան. ըստ կշռոյ օրինացն հաւասարել և հատուցանել. եթէ ըստ բնականին կամ ըստ գրոյն և աւետարանին. *որում* շատ տուաւ առաւել պահանջել: - 747. Այլ *որ* ուղիղն է տեսութիւն, յետ յարութեան փոխի ժամանակն ի յաւիտեան. և այլ ո՛չ գտանի մասն և րոպէ և ժամ...: - 747. Նախ՝ կոչի սիրտ և անձինք մեղաւորաց, ուր ժողովին ամենայն գործք չար *որ* է՛ խաղող դառնութեան. և ունակացեալ պահէ յինքեան. և հեշտութեամբն ճմլէ հանապազ և արբենայ մեղացն գինով: - 748. Այս է հնձան մեծ *որ* զամենայն մեղաւորս ընդունի յինքեան: - 748. Երկրորդ կոչի հնձան արքայութիւնն երկնից. ուր ժողովին պսակք և փառք զանազան հանգստեան սրբոց *զոր* պատրաստեալ է աստուած սիրելեաց իւրոց ըստ առաքելոյ: - 748-749. Երրորդ հնձան է իւրաքանչիւր սիրտ և անձինք արդարոց. *որ* հաստատեալ է հաւատով յորթն ճշմարիտ և պտղաբերէ՛ զողկոյզ բարեաց...: - 749. Իններորդ՝ կոչի հնձան և խաչն փրկական. *յորում* ողկոյզն անապական ճմլեցաւ և ետ մեզ ուրախարար գինի զանապական արիւնն իւր... - 749. Տասներորդ, ասի հնձան և կտակարանքն սուրբ. ուր հին և նոր իմաստութիւն ժողովեցաւ ի խառնարանին գինւոյ. *յորմէ* բաժակէ՛ արբին առաքեալքն ի սուրբ վերնատունն. և արբուցին ամենայն տիեզերաց. *զորմէ* ասէ մարգարէն «բաժակ քո անապակ արբեցոյց զիս»: - 749. Զինչ է *որ* ասէ «ծուխ նոցա ելցէ յաւիտեան»: - 749. Զի ծուխ խնկոցն ի վերայ սեղանոյն, Նախ նշանակէ՛ սեղանն զքրիստոս. և ծուխն զաղօթս սրբոցն. *զոր* արծարծէ՛ հօր ի հոտ անուշից: - 749. Կամ ցուցանէ զչափով տանջանս մեղաւորացն. *որք* չափով աստ տանջին, չափով կրեն զհանդերձեալ պատիժն...: - 749. Երկրորդ՝ զտանջօղ բարկութիւնն *զոր* ածէ՛ ի վերայ մեղաւորաց: - 749. Երրորդ՝ զի նիւթ հրոյն և այրելիքն *որ* է աղտ մեղացն՝ նաև մեղաւորքն՝ են յաւիտենական: - 750. Երրորդ՝ կամ գործիք տանջանացն նուազին. իսկ անդ հուրն է յաւիտենական *որ* ոչ պակասի: - 750. Չորրորդ՝ կամ տանջօղն դադարի. իսկ անդ հրամանն աստուծոյ է տանջօղ *որ* ո՛չ երբէք դադարի: - 750. *Ո՞ր* է ի հանդերձեալն տիւ և գիշեր...: - 750. *Որ* են զանազան տանջանք *զոր* կրեն ամբարիշտքն անդ: - 751. Բարձումն յուսոյ և ամենայն փրկութեան Նաև գոլն իսկ *որում* տենչան ամենայն ստեղծուածք՝ է՛ նոցա պատիժ. վասն զի խնդրեսցեն զմահ և ո՛չ գտանիցեն: - 751. Առաջին՝ հուր վառեալ. այնպէս, *որ* թէ բոլորովին ծովք ի վերայ հեղցին՝ ո՛չ շիջանիցի: - 752. Երկրորդ՝ անտանելի ցուրտ. *յոր* եթէ հրեղէն լեառն անկանէր՝ սառն դառնայր...: - 752. Եօթներորդ՝ ամօթ մեղացն. *որք* անդ ամենայնքն յայտ լիցին և զինքեանս թաքուցանել չկարեն: - 752. Ութերորդ՝ ահագին տեսիլն դիւաց և վիշապաց. *զոր* ի կայծի կայծել հրոյն տեսանեն. և ողորմելի աղաղակ լալ ականացն և ոտնիհար լինողացն: - 752. Իններորդ՝ հրեղէն կապանքն. *որովք* իւրաքանչիւր անդամք կաշկանդին: - 752. Վասն առաջնոյն, *որք* աստ հրով ցանկութեանցն վառեցան, արդարապէս բորբոքին: - 752. Վասն երկրորդին, *որք* ցրտիւ չարութեան աստ կարծրացան, արդարապէս անդ տանջողական ցրտիւ կրճտեն զատամունս իւրեանց: - 752.

Վասն չորրորդին, *որք* աստ ժահահոտ նեխութեամբ պոռնկութեանն քաղցրապէս փափկանային. արդարապէս անդ դառնապէս տանջին: - 752. Վասն հինգերորդին, *որք* աստէն զխրատս ընդունել ո՛չ կամեցան և ընդ մարդկան տանջիլ ո՛չ արժանացան. վասն յանորիկ արդարապէս անդ՝ անդադար հարկանին ուռամբ: - 752. Վասն վեցերորդին, *որք* զխաւար մեղաց աստէն սիրեցին և առ լոյսն քրիստոս գալ ո՛չ կամեցան. վասն այնորիկ ահագին խաւարաւ անդ նսեմանան: - 752. Վասն եօթներորդին, *որք* զմեղս խոստովան լինիլ ո՛չ կամեցան *զորս* առնել ո՛չ էր պարտ. վասն այնորիկ անդանօր ամենեցուն մերկացեալ և բացեալ յաւիտեան յամօթ լինին: - 752-753. Վասն ութերորդին, *որք* աստ ի տեսանելոյ զբարիս և ի լսելոյ խոյս տային...: - 753. Վասն իններորդին, *որք* աստ իւրաքանչիւր մեղօք գոյին շաղախեալք. արդարապէս ունին զիւրաքանչիւր անդամս կապանօք կաշկանդեալս. և ցանկան մեռանիլ և փախիցէ մահ ի նոցանէ: - 753. Նա՛խ՝ զի արտաքո՛յ է այսմ խաւարի *որ* է պակասութիւն լուսոյ. այլ այն խաւարն պակասութիւն է բարեաց: - 753. Զի այսպէս ասեն վարդապետք՝ թէ յորժամ յղանայ ոք ի միտս իւր զխորհուրդ մեղացն, ի սատանայէ՛ սերմն առեալ որպէս կին յառնէ. և ի ծնանիլ մեղացն՝ ծնանին և որդունքն ի հրեղէն ծովն *որ* է՛ ի հարաւ: - 753. Ո՛չ բնաւ, թէպէտ հայր տեսանէ զորդի կամ մայր զդուստր. և կամ զեղբայր և զայլս. ո՛չ միայն ո՛չ ցաւին, այլ ա՛յնպէս լինի հեշտալի, որպէս տեսանեմք զծկունս *որ* խաղան ի վտակս: - 754. Եւ դարձեալ այնպէս միաւորեալք են ընդ աստուծոյ, *որ* դատաստանն աստուծոյ ամենայն իրօք հաճոյ թուի նոցա. վասն այսորիկ այնոքիւք ուրախ լինին: - 754. Եւ վասն այն կոչի եկեղեցի արքայութիւն, զի *որ* ի ներկայիս եկեղեցւոյ արքայութիւն առնէ և գործէ՛, ունի զվախճան մեծի փառաց: - 754. Եւ վասն այն ասի արքայութիւնն աստուծոյ, զի պատուիրանօքն *որ* յաւետարանն կամ յայլ գիրս սուրբս գտանին, պահողացն արքայութեանն մուտ բացեալ լինի. և ներքին մարդս ամրացեալ հաստատի: - 754. Եւ ասի սա նման փայտին կենաց *որ* է՛ ի մէջ դրախտին. այսինքն քրիստոս՝ *որ* է՛ ի մէջ եկեղեցւոյս կարգեալ: - 755. Այսպէս և քրիստոս քան զամենայն սուրբս զպարգևս ունի առատագոյնս. *որում* հոգին ո՛չ տուաւ չափով: - 755. Սա է հատն ցորենոյ *որ* անկեալ յերկիր՝ բազում պտուղս աշխարհի պտղաբերեաց...: - 755. Երեք կարգս այսորքիկ գուշակեին երեքումբք արամբքն *զորս* եզեկիէլ մարգարէացաւ. փրկելոցն Նոյիւ Յոբաւ և Դանիէլիւ: - 755. Նոյիւ՝ *որ* զտապանն կառավարեաց, ամուսնացելոցն: - 755. *Յոբս* իբրև յոստս թռչունք երկնից՝ այսինքն սուրբքն հանգուցեալ են և բունի՛ն: - 755. Իսկ Երկրորդն արքայութիւն, նշանակի յազատն սառա. *որ* ո՛չ ուժգնութեամբ մարմնոյն, այլ միայն շնորհօքն աստուծոյ ծնաւ: - 756. Սա՛ է մայր մեր եկեղեցի *որ* հոգևոր որդիս աստուծոյ օրըստօրէ ծնանի. *որ* հասեալ ժառանգութեանն. ի բաց տանելով զաղախինն և զորդի նորա: - 756. Սա՛ է ձորն այն *յորում* լսելի եղև հնչումն տապարին և ա՛յլ գործեաց: - 756. Իսկ Երրորդն արքայութիւն, գուշակի յաւազանն պղնձի. *զոր* հրամայեաց մովսէս առնել ի հայելեացն կանանց *որ* նստէին առաջի դրան խորանին. *յորում* լւանային որդիքն ահարօնի նախ քան զմտանելն ի սուրբն սրբոց: - 756. *Որք* վասն այնորիկ ասին աւազան, զի զսուրբս բարեպաշտ բանիւք առատաբանս առնեն: - 756. Եւ քանզի մովսէս *որ* ջրային կամ ի ջրոյ հանեալ թարգմանի. թէպէտ երբեմն զօրէնս և երբեմն զտէրն նշանակէ. այլ աստ ոչ զօրէնս, այլ զտէրն գուշակէ՛. *որ* ի ջուրց մարդկայինս բնութեան ընկալեալ եղև: - 756. Կանայք առաջի դրան խորանին նստեալք՝ են հաւատացեալքն. *որք* դրան երկնաւոր պալատին բանիլ ինքեանց ակն կալեալ մնան: - 756. Որդիքն ահարօնի՝ են սուրբքն. *որք* նախ քան զվերափոխիլն ի սենեակ վերին արքային, աստուածայնովքն բանիւք յամենայն հպարտութենէ մեղաց մաքրին: - 756. Այսորքիկ են խնձորք նոր և հին. *որք* հոտով զուարճացուցանեն, և համով զմայլե՛ն: - 756. *Որ* բանիւքս այսոքիւք հարսն ասէ զինքն պահեալ սիրելոյն: - 756. Խնձոր նոր և հին, գիրքն են աստուածայինք. *որք* հինք են յօրէնս և ի մարգարէս. և նորք յաւետարանն և յառաքելական մատեանս: - 756. Սոքա՛ են հոսանք ջուրցն լիութեան. *զորոց* յերգս գտանի սիրելոյ. *որ* ի խորութիւնն հայեցեալ աղաւնւոյն, ի գալստենէ բազային զգուշանայ: - 756. Սա՛ է ջուրն յաղեալ. *որ* զդառնութիւն ջուրցն այնոցիկ *որք* գտանին ի մեռայն՝ քաղցրացոյց: - 756. Իսկ Չորրորդն արքայութիւն՝ է՛ յաւիտենականն գաւառ. *յորմէ* ի ձեռն մեղաց առաջնոյ մարդոյն՝ տարեալք պանդխտիմք յայսմ տառապանաց գբի և ի տիղմ կաւոյ. անարգաբար դեգերեալք ի հովիտս արտասուաց. յանապատի կալով և ո՛չ ի ճանապարհի...: - 756. *Զոր* ընկալեալ զսերմն հրամանաց աստուծոյ, և բուսուցեալ ի մեզ՝ տամք պտուղ **լ, կ,** և **ճ**: - 757. *Որ* է՛ պտուղ առաքինութեան ըստ մարմնոյ և հոգւոյ և մտաց մերոց: - 757. Եօթներորդ, *որ* ի տղայութեանն հասակէ՛ կան յաստուածպաշտութիւն, իբր զխոտս դալարի պտղաբերեն զհարիւրաւորն: - 757. Եւ *որք* ի միջին հասակէն՝ զվաթսունաւորն: - 757. Եւ *որք* ի ծերութեանն գան յուղղութիւն, որպէս զսէզ դալարին, և տան պտուղ զերեսնաւորն: - 757-

758. Իններորդ, և *որք* նախ քան զօրէնս՝ զերեսնաւորն. և *որք* ընդ օրինօքն՝ զկաւորն. և *որք* ընդ շնորհօքս, զհարիւրաւորն տացեն պտուղ: - 758. Այլ և են ոմանք *որ* ասեն զերկիրս մաքրեալ երեսնաւոր. և զդրախտն վաթսունաւոր. և զվերինն երուսաղէմ հարիւրաւոր: - 758. Արդ՝ եթէ արքայութիւնն երկնից մի է, այլ փառքն գ. պա՛րտ է ապա զի լիցի և դժոխքն գ, *որ* է՛ սուտ: - 758. Եւ նոքա *որք* բազում համբաւեն դժոխս, մի ասեն գոլ արքայութիւն. պատճառելով եթէ՝ բարին մի է և չարն բազում: - 758. Ասեմք առ այս, եթէ առաջին կեանքն դրախտին ո՛չ զայն իմանան վարդապետք *զոր* ունէրն ադամ. այլ *զոր* խոստացաւն ադամայ եթէ պահեալ էր զպատուիրանն. *որ* նոյն ինքն է արքայութիւնն երկնից ի տեղի անկելոց հրեշտակացն: - 758. Դարձեալ ասեմք առաջին կեանք մասնաւոր, *զոր* նախ քան զյանցանելն ունէր. անկարօտութիւն. լուսաւորութիւն. անձերանելի հասակ. անմահ կեանք. և այլն *որ* ասացաւ ի վերոյ ժէ գլուխն լզ համարն: - 758. Ապա թէ ո՛չ, լիցի աղանդն կերինթոսի և սադուկեցւոցն. *որք* մարմնաւոր ասէին զարքայութիւնն: - 758-759. Եւ այլ բազում վկայութեամբ կարէ՛ հաստատիլ եթէ մի է արքայութիւնն երկնից *որ* է կեանքն յաւիտենից: - 759. Եւ նմա աւանդել՝ *յորում* ծածկեա՛լ են ամենայն գանձք իմաստութեան. և *որ* քննէ զխորս աստուծոյ: - 759. Իբր ո՛չ այսպէս *զոր* երևի տեսանելոց եմք աստ: - 759. Զի փոխեսցին յայսմ կերպարանաց *զոր* ունին, և այլ իմն նո՛ր զգեցցին...: - 759. Ա՛րդ՝ նորոգեսցի երկիր *որ* ընկալաւ ի ծոց իւր զտէրունական մարմինն: - 759. Նոյնպէս և ջուրն *որ* հպեցաւ ի մարմին փրկչին, և ծնաւ զմարդիկ որդիս աստուծոյ, նորոգեսցի և պայծառասցի քան զամենայն տեսիլս գեղեցկագոյն ականց: - 759. Այսպէս և օդն *յորս* եկաց փրկիչն յետ յարութեանն, փոփոխեսցէ զբնական նսեմութիւնն իւր և պայծառասցի որպէս զեթերն: - 759. Նմանապէս և հուրն *որով* հրեղէն լեզուօք երևեցաւ սրբութեան հոգին, բաժանեսցի այրեցումն և մշտափայլ լուսով փայլեսցի որպէս զարփին և որպէս զարեգակն: - 759-760. *Յորոց* փրկեսցէ զմեզ փրկիչն ամենայնի և առհասարակ զամենայն հաւատացեալս անուան իւրոյ. և կացուսցէ ի տեղւոջ լուսոյ և հանգստեան. Ամէն: - 760. Եւ յետ նոցա ամենայն բազմութեանց ժողովելոց յամենայն ազգաց աստ. *որք* եկին ի բազում վշտաց աշխարհի. այսինքն *որք* զանազան առաքինութեամբ և բազում նեղութեամբ մտին ի հանգիստն: - 760. Երրորդ երկնից արժանաւորն տեսլեամբ, և անօթն ընտրութեան հոգւոյն, *որ* կրէր յինքեան զկրօղն էից առաքեալն պօղոս աստ...: - 761. *Զոր* ակն ո՛չ ետես, և ունկն ո՛չ լուաւ, և ի սիրտ մարդոյ ո՛չ անկաւ, զա՛յն է պատրաստեալ աստուած սիրելեաց իւրոց: - 761. *Որ* է՛ կեանք յաւիտենական: - 761. Եւ թէպէտ գերազանցեալ են այսորիկ փառք քան *որք* այժմ ունին յերկրի. այլ սակայն օրինակաւ սակաւ ինչ բացայայտութիւն առցուք: - 761. Չաճոյ լինէր քեզ թէ լինէիր գեղեցիկ որպէս զաբիսողոմ. *որում* ո՛չ գոյր արատ ի մարմնի: - 761. Կամ թէ արագ որպէս ասայէլ *որ* հասնէր այծեման: - 761. Կամ լինէիր ուժեղ որպէս սամփսոն. *որ* զհազար այր ծնօտիւ իշոյն եսպան: - 761. Կամ լինէիր ազատ որպէս զօգոստոս. *որում* բոլոր աշխարհ ծառայեաց: - 761. Եւ թէ լինէիր կամօք փարթամ որպէս սողոմոն. *որում* ո՛չ անխայեաց զոր ինչ ցանկացաւ ի սրտի: - 761. Կամ առողջ որպէս զմովսէս. *որում* ո՛չ վատեցին աչքն և ո՛չ շարժեցաւ ատամն: - 761. Կամ երկայնակեաց որպէս զմաթուսաղայ. *որ* մերձ ի ռ ամն ժամանեաց: - 761. Դարձեալ և այսոքիւք, թէ լինէիր իմաստուն որպէս զսողոմոն. *որում* ո՛չ գտաւ հանգոյն նման ի վերայ երկրի: - 761. Կամ սիրելութիւն որպէս դաւթի և յովնաթանու. *զոր* սիրեաց որպէս զհոգի իւր: - 761. Կամ միաբանութիւն որպէս առաքելոցն. *որոց* էր սիրտ և անձն մի: - 761. Կամ ունէիր իշխանութիւն որպէս աղէքսանդրու. *որ* զասիա զեւրոպիա և զլիբիա ընդ իշխանութեամբ էարկ: - 761. Կամ լինէիր պատուեալ որպէս զյովսէփ. *որում* երկրպագէին եգիպտացիքն որպէս աստուծոյ: - 761. Կամ լինէիր անհոգ որպէս ենովք և եղիա *որ* այնպէս անհո՛գ են, *որք* ոչ ի մահու և ո՛չ յայլ ինչ պատահմանէ երկնչին: - 762. Կամ լինէիր այնպէս ուրախ որպէս զայն *որ* ի կախաղան ածեալ լինի՝ և յանկարծակի ի ճանապարհին թագաւորութիւն ընկալեալ լինի: - 762. Ա՛րդ՝ սոքա ամենայնքին մասնաւոր և փոփոխական են և հակառակաւ. զի՞նչ իմանաս զանտի երանութիւնն. *որ* բոլորովիմբ է, և անփոփոխ, և առանց հակառակի յաւիտենական: - 762. Եւ այլն ամենայն *որ* լսի ի սուրբ գիրս՝ անդ կատարեսցի: - 762. Նախ ի տեսանելն զերեսս աստուածային *որ* է անճառելի ցնծութիւն. որպէս ասեն վարդապետք, այն է ճշմարիտ և միայն ուրախութիւն, և ո՛չ յաղագս ստեղծուածոյ, այլ ի ստեղծողին լինի. *զոր* իբրև ստանայցես, ո՛չ ոք բարձցէ ի քէն: - 762. *Որում* համեմատեալ այլ ուստէք ամենայն հրճուանք տրտմութիւն է...: - 762. Զի նւազունք են ամենայն փափկութիւնք *որ* լինին յաշխարհի մինչև ցօրն դատաստանի, բաղդատեալ առ այն քաղցրութիւն. որպէս կաթիլ մի ջրոյ առ համեմատութիւն ընդ հանուր ծովու: - 762. Մեծութիւն այսմ ուրախութեան կարէ՛ զմտաւ ածիլ յայնմանէ, *զոր* սովո՛ր են ծնօղք յորժամ որդիք նոցա լինին եպիսկոպոսունք կամ

թագաւորք: - 763. Եւ ըստ իմաստասիրին, յառաջ քան զմարմինն *յորում* է զանազանութիւն լուսոյ՝ է՛ միւսն ի վերոյ *յորում* է միակերպութիւն լուսոյ: - 763. Զի անդ բոլոր մարմինն ընդ այն է՛ երկինն հրեղէն *յորում* է լոյս յաւէտ: - 763. Երկրորդ վասն ազնուական ընկերութեանցն. *յորում* եղիցի երանելի կոյսն. և հրեշտակք և սուրբք և սրբուհիք. և ամենայն թագաւորք և թագուհիք եղիցին: - 763. Նախ եղիցի ուրախութիւն ի մարմնի, բաղդատելով առ այն *որ* եղիցի մերձ ինքեան. այսինքն զի ա՛յլ մարմինք փառաւորեալ առաջի նորա հրճուին: - 764. Երկրորդ բաղդատութեամբ այնորիկ՝ *որ* եղիցի ի ներքոյ ինքեան...: - 764. Երրորդ բաղդատութեամբ այնորիկ՝ *որ* եղիցի ի վերոյ ինքեան. զի առ հոգի իւր կատարեալ կարիցէ ունել հնազանդութիւնս: - 764. Չորրորդ առ այն *որ* եղիցի ընդդէմ ինքեան. զի մի՛ յումեքէ կարիցէ վտանգիլ: - 764. Երրորդ այնու՝ զի մեղքն *որ* յոյժ վտանգեաց զմարդիկ, եղիցի փակեալ ի դժոխս զկնի աւուրն դատաստանի...: - 764. Երկրորդ այնու՝ զի ի նաւաբեկութենէ փրկեալք եղիցին. թէ նաւաբեկեալքն *որ* ի ծովէն ելանեն այնքան ուրախանան, ո՞րչափ ևս առաւել ուրախասցին *որք* զայս քան նաւաբեկութիւնս կրեալք ի վշտագին ծովէ այսմ աշխարհի զերծան: - 764. Երրորդ անդուստ՝ զի իբրև նոքա *որ* այն քան տկարքն էին՝ սակայն յա՛յնպիսի թշնամին այն քան յաղթութիւնս գործեցին ըստ յոբայ: - 765. Ո՛չ է իշխանութիւն ի վերայ երկրի *որ* համեմատեսցի նմա *որ* եղև. զի ո՛չ յումեքէ երկնչիցի: - 765. Ճշմարիտ պապիւ՝ *որ* ո՛չ ումէք անխայեսցի արժանաւորի: - 765. Այսպէս ի վեցից կողմանէ եղիցի ուրախութիւն սրբոցն. *որ* եղև հաւաքեալ ի վարդապետաց սրբոց: - 765. Զի՞նչ է ծառն կենաց և պտուղն երկոտասան *զոր* ասէ տեսիլն: - 765. Երկրորդ՝ ծառ կենաց են բնակիչք վերնոյն սիօնի. տնկեալք յաղբիւրն կենաց *որ* իջանէ յաթոռոյն աստուծոյ ի մէջ նոցա. ունելով զանմահ կեանս յաւիտենից: - 765. Չորրորդն է ազատութիւնն. առ *որ* առնեն մարմնոյ թեթևութիւնն և նրբութիւնն: - 766. Զի ոչ ինչ է արտաքս *որում* բաղձան. ոչ ինչ ի ներքս *յորմէ* տաղտկանան: - 767. Դարձեալ ի վեր յառաջին բանն մեր երթիցուք *որ* էր ծառ կենաց ի մէջ դրախտին: - 767. Ոռոգեալ ի բղխմանէ կենարար գետոյն. *որ* հեղու ի նոսա անսպառապէս: - 767. Այսպէս վասն երկնային և իմանալի տնկոցն *որ* կոչին ծառ կենաց. ունելով յինքեան զկեանս և բաշխելով այլոց ամենեցուն զխնամս: - 767. Այլ և ծաղիկ՝ զպայծառ և զանուշահոտ վարս առաքինութեան. և պտուղ՝ արդիւնքն ըստ գործոց. *յորմէ* փրկութիւն եղև ամենայն աշխարհի և վայելչութիւն արքայութեանն երկնից: - 768. Դարձեալ **բժ**ան պտուղք են **բժ**ան առաքեալքն. *որք* յամս և յամիսս տնօրէնութեանն պտղաբերեցան: - 768. *Որ* փոխանակ մահացու փայտին գիտութեան զյաւիտենից կեանքն մեզ պարգևեաց...: - 768. Ունելով մշտասաղարթ ծաղիկ *որ* է՛ կարմիր երանգն գունոյ, և երկնագոյն հիւթով զարդարեալ: - 768. Դարձեալ, ծառ կենաց և անմահական պտուղ՝ մարմին և արիւնն սուրբ. *յորմէ* ճաշակեալ հանապազ՝ անմահ կենացն վիճակէ զմեզ...: - 768. Դարձեալ, ծառ կենաց է աւետարանն սուրբ տնկեալ ի մէջ եկեղեցւոյ դրախտին. բերելով պտուղ կենաց զիմաստութիւնն երկնաւոր. *որ* կեանս տայ ճաշակողացն զնա. և միշտ շնորհս բժշկութեան և թողութեան մեղաց: - 768. Դարձեալ, ծառ կենա՛ց է աստուածածին կոյսն մարիամ բղխեալ յարմատոյն յեսսեայ. երկնուղէշ զարգացմամբ մշտասաղարթ կուսութեամբ ծաղկեալ և պայծառացեալ հոգւոյն սրբոյ եկաւորրութեամբն. և պտղաբերեալ մեզ անմահ պտուղ զբանն մարմնացեալ. *յորմէ* վայելեալք երկնաւորք և երկրաւորք ի շնորհաց նորին զյաւիտենից կեանսն ժառանգեցաք: - 768. Դարձեալ՝ ծառ կենաց է տունկն իմաստութեան *որ* ի յերկնից առ մարդիկ տնկեալ: - 768. որպէս ծաղկեալ գաւազանն ահարօնի նշանակէր զխրատ իմաստութեանն. *որով* զարդարեալ տայ զպտուղ լուսաւոր նիւթոյ կերակուր ոգւոյ: - 768. Դարձեալ՝ ծառ կենաց և տունկ երկնային՝ է՛ հաւատն կենդանարար. *որոյ* արմատն է հայր, և ստեղունք որդի. ծաղիկ և պտուղ հոգին սուրբ: - 768-769. Իսկ երկոտասան պտուղն իցէ երկոտասան աստիճանք հաւատոյն. *որ* ի սրտի և ի լեզուս առանց խափանման հանապազ դաւանի և արտաբերի: - 769. Նոյնպէս հաւատն լոյս է *որով* տեսանէ: - 769. *Որ* պորփիւր օրինակէ՛ զմատանին աստուծոյ. թէ մի է և ի վերայ բազմաց բերի և ի բազումս և ո՛չ ի բազմաց է: - 769. Մեր գործքն և յաստուծոյ տուեալ բարին հաւատով կնքի. և պակասն յանդիմանի այժմ ի խղճէ մտաց որպէս ի գրոյ. և անդ ի դատաւորէն, *որ* չար ծառայ կոչէ: - 769. Եւ երկու կատարումն. մի զմկրտութիւնն. և մի զյարութիւնն *որում* սպասեալ ակն ունիմք: - 769. *Որով* զամենայն ի խոնարհ թողեալ ի վերոյ անցանեմք անցաւորացս: - 769. Շող յաստուծոյ ծագեալ հաւատ. զերկնից կախեալ լար իմն լուսեղէն. *զորմէ* բուռն հարեալ ձեռն զձեռամբ փոփոխեալ. ի ծովու սքանչելեաց յերկինս և յօդս վերանալ: - 769. Նոյն և կամք և կիրք և ներգործութիւն մարդկային ընդ աստուածայինն միաւորեալ. միջնորդելով հոգւոյ բանականի՝ աստուածութեանն՝ և մարմնոյն. *որ* է՛ ներգործութեամբ միշտ աստուած և փրկիչ բնութեամբ. քրիստոս. նոր ադամ. էմմանուէլ ճշմարտութեամբ: - 770. *Որ* թէ ի

բարձանց լինի պատերազմ անձրև օրէն փործանաց, ի ներքոյ կացցես հաւատոցն և ապրիս: - 770. *Որում* ոչ համարիմ զանձն թէ հասո՛ւ իցեմ: - 771. *Որ* եսդ տէր տէր հաւատարիմ յիսուս, անբաժանելի լեր ի զգայութեանցս. և յամենայն գոյացութեանց աստի իմոցս. ներկեալ խոստովանութեամբ և շնորհօք հոգի մարմին նիարդք իմ և աճառք: - 771. *Որ* միշտ օրհնեալ ես և գովեալ յաւիտեան: - 771. Արդ ահա ա՛յսոքիկ են ծառ կենաց ի յերկինս և յերկրի տնկեալ. փոխանակ ծառոյն կենաց ի դրախտին եդեմայ. *յորմէ* հրաժարեցոյց և պարսպեաց բոցեղէն սրովն զճանապարհ նորին: - 771. *Որով* և ընդ որում հօր միանգամայն և հոգւոյն սրբոյ վայելէ փառք և պատիւ և իշխանութիւն և զօրութիւն. այժմ և միշտ և յաւիտենից յաւիտեանս Ամէն: - 771. *Որում* Գոհացողական Օրհնութիւն. և Բարեբանօղ Փառատրութիւն. Յամենայն գոյեղէն բնութեանց. ի վեհագունից մինչ ի հուսկ յետինս: - 771. *Որ* ի վաղուց հետէ բազումս թախանձէր: - 772. Եւ ապա ի սէր և անձուկ ժտելոյ նորին, ապաստանեալ ի նոյն *որ* զօրացոյց զտկարս, ձեռն ի գործ արկեալ աւարտեցաւ բազում միջոցաւ. և փախստեամբ ի տեղիս. և մեծ ջանիւ փութացեալ: - 772. *Որոյ* յիշատակն օրհնութեամբ եղիցի ամէն: - 772. *Որոց* խնամօք ամրացեալ փրկեսցուք յամենայն փործութեանց ամէն: - 772. Բովանդակեալ ոչ զամենայն *որ* ամենեցունց է գիտելի. այլ զբանս բազումս *որ* բազմա՛ց է պիտանի և խնդրելի: - 772. Եւ է՛ ինչ ի ներգործութեանց հոգւոյն աստուծոյ շնորհաց. *որ* ծածկէ՛ յիմաստնոց և յայտնէ տղայոց յիւրաքանչիւր ժամանակս ըստ կամաց իւրոց: - 772. Եւ պիտանեացն՝ փառս վերընծայել այնմ, *որ* փառաւորեալն է ի պարգևս իւր. իսկ զանպիտանսն ներել մերոյ փոքր ընկալ անօթոյ և դանդաղկոտ փութոյ: - 772-773. Այլ և զերջանիկ գաղափարօղսդ մաղթեմ. *որք* ընդօրինակէք զգիր հարցմանցս այսորիկ, գրել և զսակաւ յիշատակս այսոցիկ: - 773. Վասն բազում վկայութեանցն *որ* առեալ է ի գիրս յայս, զի անտարակոյս լիցի: - 773. Այլ ի պատճառս տալ իմաստից. *որով* ո՛չ յագեսցի ակն ի տեսոյ. ի գլուխ գոլոյ իմաստնոյ. մանաւանդ և ի շահ օգտի բանասէր մտաց միեղէն եղբարց: - 773. *Որոց* առաջինն է այս: - 773. Կանո՛ն է իմաստասիրաց, զի իր *որ* բնութեամբ լինի, բոլոր տեսակին պարտի գոլ: - 773. Եւ մարգարէն երանէ զմարդ *զոր* խրատէ տէր: - 774. *Որք* տեսչութեամբն աստուծոյ՝ ի մեռելոցն զառհաւատաչեայն ընկալան յարութեան, թէ զիա՞րդ ոչ ունէին ի մտի զանտի կենացն ծանօթութիւն. պատմել մեզ խնդրի: - 774. Տեսանելի՛ է թէ՝ զի՞նչ արդեօք իցէ ոչ ունելն ի մտի *որ* է՛ մոռանալ. այսինքն զանցեալն ո՛չ յիշել. և զհանդերձեալն ոչ տեսանել. իսկ զներկայն ո՛չ գիտել: - 774. Եւ տեսանել զհատուցումն *որ* է՛ հանդերձեալն: - 774. Իսկ *որք* տեսչութեամբն աստուծոյ ընկալան զթերակատարն յարութիւն, ի վե՛ր է քան զբնութիւն...: - 775. *Յորոց* յա՛յտ է թէ՝ *որք* աստի կենօքս ի սուգ տրտմութեան անցուցանին զի ուրախութեան հասցեն: - 775. Յիրաւի ապա ըստ այսմ օրինակի՝ *որք* ի մշտնջենաւորէն փոխանցին առ երազ սնոտեաց...: - 775. Խնամք մարդասիրութեանն աստուծոյ *որ* զամենայն յամենայնի տընօրինէ՛, արգել զայս. զի մի՛ ունիցին ինչ ի մտի յարուցեալքն ի մեռելոց. ապա թէ ոչ, *որ* ի սկզբանէ բարէատեացն էր և մարդասպան, բազում և զանազան երևոյթս...: - 775. մարմնով մեռելոցն անթիւ օճիրս ստախօսութեան գործէր. զանտի կենաց զյարութեան յուսոյ և զհատուցմանց ըստ գործոց՝ բառնալով. զերկիւղ դժոխոց և զսէր արքայութեան. և զամենայն ինչ *որ* նմանէ այսմ հոգևոր բարութեան: - 775. Իսկ թէ նա *որ* սկիզբն կորստեան ամենեցուն մեզ եղև և պատճառ ամենայն մեղաւորաց՝ ապրեցաւ շնորհօքն քրիստոսի. - 775. Ընդ *որով* թէ ազատեցա՞ն առհասարակ ընդ նմին: - 776. Եւ յիրաւի այս. զի այն ոք *որ* առնէ զոր ինչ ոչ է պարտ, յիրաւապէս կրեսցէ զոր ինչ պա՛րտն է. զի մեղքն է առնել, իսկ պատիժն է՛ կրել: - 776. Եւ նոյնպէս *որ* դատապարտեաց, մերովս արար մեզ ազատութիւն: - 776. Նա՛խ՝ որպէս ի վերոյ ասացաւ. զի թէ ադամ *որ* սկիզբն և պատճառ էր մեղաւորաց՝ ազատեցաւ. ապա ուրեմն և որդիքն *որ* վասն յանցանաց նորա՝ ազատեսցին: - 776. Երկրորդ, զի դժոխքն այն պատիժ բնութեանս էր և ո՛չ առանձին գործոց. զի հաստատեաց օր մի *յորում* դատելո՛ց է զամենայն ըստ պօղոսի: - 776. Երրորդ, զի թէ սատանայ *որ* գտա՛կն է ամենայն չարեաց՝ դեռևս ո՛չ տանջի յաւիտենից...: - 776. Իններորդ, զի բռնութիւն սատանայի էր կապեալ զնոսա. և տէր մեր կապեաց զնա ընդ խաչափայտին. *որ* նա ինքն էր դրունք դժոխոց. ապա ուրեմն արձակեցան անտի: - 777. *Որով* յա՛յտ է ի գործոյն և ի պատժոյն: - 777. Ապա ուրեմն յիրաւի, զի *որք* առաւել եղեն մեղօք, առաւելասցին և պատժօք: - 777. Առաջինն ադամայ. *որ* է՛ տիրապէս յարմարեալ: - 778. Այլ և պատմութիւնք և մեկնութիւնք սրբոց՝ նորին հոգւոյն են *որք* ուսուցանեն մեզ զնոյնս: - 778. Եթէ յարդեան ժամանակիս հաւատարիմ է, զի *որ* ոք և իցէ յանցաւոր, եթէ զղջասցի և ատեսցէ զմեղս ըստ մարգարէին՝ խոստովանութեամբն առնու զմաքրութիւն և զվարձս ապաշխարութեան: - 778. Եւ այս՝ փոփոխումն յանեղ բնութիւնն երևեցուցանէ *որ* է՛ անդունդ հերձուած:

- 778. Իսկ եթէ ոք զփոփոխումն ի մեզ ասիցէ ըստ օրինակի արեգական. *որ* զչորեսին եղանակս կազմէ՛ և ինքն անյեղ մնայ: - 778. Եւ այսոքիկ *որք* երևին ընդ դէմ միմեանց, կամ առ այլս կամ երբեմն, ո՛չ փոփոխումն ինչ ցուցանեն անփոփոխելոյն...: - 779. Իսկ աստուած ո՛չ փոխեաց զխորհուրդն իւր *որ* էր յաւիտենական. այլ վճիռն *որ* հայէր ի պատիժ արժանեաց նոցա: - 779. Իսկ թէ *որ* ի կեանս յայս զղջասցին ատելով զմեղս և խոստովանին, առցեն զվարձս ապաշխարութեան *որ* է՛ թողութիւն մեղաց. առանց երկբայութեան է այս: - 780. Վեցերորդ՝ զի անցեա՛լ է ժամանակն *յորում* պահանջի զղջումն: - 780. Եւ յայսցանէ երևի չորս ինչ հարկաւոր զղջման. այսինքն է որպիսութիւնն, ժամանակն, *յորմէ,* վասն որոյ: - 780. *Յորմէն*, զի իցէ յօժար կամօք: - 780. Վասն որոյն, *որ* է՛ դիտաւորութիւն թողութեան: - 780. Ոմանք ասեն պակասութիւն զքաղց և զծարաւ՝ զերկիւղ և զայլն. *որք* են պակասականք բնութեան *զորս* կրեաց քրիստոս... - 781. ...զի ո՛չ միայն էառ զբնութիւնս. այլ և զնոսա *որ* շուրջ զբնութեամբն. զի ծանիցի կատարելութիւն առաքինութեանն, և ճշմարտապէս մարդ գոլ: - 781. Այլ ո՛չ զամենայն պակասականքն կրեաց քրիստոս. *որ* է՛ հիւանդութիւն մարմնոյ և ապականութիւն. կամ մեղք հոգւոյ և տգիտութիւն: - 781. Եւ ոմանք *յորոց* սրբազան առաջնորդն մեր, պակասութիւն ասաց գոլ *զորս* յետոյ կրեցին անդամք նորա. այսինքն զհատումն մասանց. այրումն հրոյ. և այլ իմն բազմազան տանջանս. *յորմէ* թուով պակասեաց ի քրիստոս և յաւելաւ անդամս իւր: - 781. Եւ *որոց* պակասն գտանին...: - 781. Դարձեալ ասեմ, թէ անունս այս՝ պակասութիւն, նոյն է *որ* լսի չարչարանք. զի յորժամ կրէ ոք զչարչարանս զայս ինչ կամ զայն, պակասի ի նմանէ այն ինչ կամ այն. այսինքն առողջութիւն, կեանք, և այլն: - 781. Իսկ մեծն ներսէս ասէ, պակասութիւնն այն է, *որ* կիրք չարչարանացն քրիստոսի թուով և տեսակաւ պակա՛ս էր յառաքեալն պօղոս. այսինքն խաչն, բևեռքն, և այլն. և զայն էլից քարոզութեամբն իւր ի մարմինս եկեղեցւոյ: - 781. Զի այսպէս ուսաք ի սրբազան վեհէն մերմէ ըստ սրբոցն աւանդութեանց. թէ ամենայն իր *որ* բնութեան է պարգև, ան՚ի բաց դնելի՛ է ի նմանէ: - 782. Ապա զի՞նչ է այն՝ *որ* զշնորհս աւազանին ոչ ուրացութիւն և ո՛չ այլ ինչ նոյնպիսի մերկացուցանել կարէ: - 782. Եւ թէ *որ* ուտէ անարժանութեամբ, դատաստան անձին իւր ուտէ: - 782. Եւ է՛ շնորհի յատուկ ընտրութեամբն աստուծոյ, *որ* պատճառ է՛ զփառս զանազան ներգործութեամբ...: - 783. Շնորհքն *որ* տւաւ ադամայ, փոփոխական էր ըստ նմա: - 783. Շնորհք *որ* ի հինն զինչ և իցէ փոփոխական գոլով՝ օրինակ նորոյս էր. որպէս քահանայութեան և այլն: - 783. *Որոց* սկիզբն է հաւատն առ մկրտութեամբն. և կատարումն հայի առ գործն...: - 783. Իսկ *որք* զմի քանքար հաւատոյ կամ զմկրտութեանն շնորհի ի բաց կորուսանեն, ո՛չ զկնիքն խորհրդապէս, այլ զարժանն վարձու իրողապէս: - 783. Եթէ վարձատրելի է ասիցէ ոք, ապա զիա՞րդ *որք* ի հարկէ հաւատացին ո՛չ վարձատրեցան...: - 783. Իսկ թէ իցէ հաւատ դիւաց, գո՛յ մտածել տղայական կարծեօք՝ թէ անկումն նոցա եղև հաւատոց պատճառ է *որ* է՛ սուտ: - 784. Չորրորդ, հաւատն է՛ աստուածային առաքինութիւն. իսկ դևք զի են խստացեալ ի չար՝ ո՛չ ունին զղջումն *որ* է բարոյական. ապա և ոչ հաւատ *որ* է վերնագոյն և բարի կամաց խոկումն առ աստուած: - 784. Յա՛յտ ուրեմն է յասացելոցս, զի դևք ո՛չ ունին հաւատս վարձաւոր. այլ ունին գիտութիւն նրբահայեաց *որով* սարսին յառաջ քան զտանջանս: - 784. Երկրորդ իմտութեամբ ժամանակին. *որով* իմանան զներկայս և զապառնիս և յառաջեն քան զգործս. *որով* աղաչէին, «գիտեմք զքեզ». ո՛չ հաւատոյն գիտութեամբ. այլ իմտութեամբ տանջանաց. *որով* սարսեին և ասէին «մի՛ տանջեր զմեզ»: - 784. Արդ որպէս յամենայն ժամանակս սոքօք գան ի հաւատս ուղղութեան և է՛ վարձատրելի. այսպէս և ի վերջին ժամանակս *որք* յետ նեռինն՝ ո՛չ միայն ի հարկէ սքանչելեաց, այլ և ի լրոյ քարոզչաց երկուցն վկայից իջելոց սրբոց: - 785. *Որ* քարոզեսցեն զաւուրս **ռ** երկերիւր **կ** և **գ**: - 785. *Որք* դարձուսցեն զսիրտ հարց յորդիս ըստ մաղաքիայի. այսինքն ուսուցանեն զհաւատն փրկչին *զոր* հարքն ունէին...: - 785. Եւ բազում ուրէք *որք* ընդ արեգակամբս խորհրդածուք էին, ի լուր բանից և ի տես սքանչելեաց ածին յուղղութիւն: - 785. Եւ դարձեալ, ի կատարածի՝ կենդանեաց և մեռելոց է խոստովանիլ *զոր* սանդարամետք կոչէ: - 785. Այլ վարկանին ոմանք զթիւ կազմութեան աւուրց պակաս գոլոյ նախնւոյն մարդոյ. *զորոյ* զտիպ յինքն նկարելով և այժմ անդրանիկն ծնունդ՝ յապաղելով գայ աշխարհ: - 785. *Յորում* թէ վասն է՞ր իննամսեայ ծնանին, կամ յաւուր **խ** շնչաբերին, և որպիսութիւնք նոցա: - 785. Իսկ ստինք յատկապէս գործի՛ է բնութեան ի պէտս սննդեան այնոցիկ ծննդոց զօրէն սերմանեաց երկրի. *յորմէ* հիւթոյ արեանն գոյացելոյ, ընդ ագուգայս երակաց արտագունեալ որակօք կաթն փոխակերպեալ: - 786. Առ այսոքիւք, թէ արտասուքն *որ* յաչացն հեղու, ընդէ՞ր աղի գոլով, Ո՛չ միայն զվասն էրն խնդրեմ. այլ և զորպէսն դառնալ նմա աղի ընդ երակս աչաց: - 786. Թէ զիա՞րդ և *որ* ի ծիծաղելոյն արտասուքն քաղցր. և ի սրտմտութենէն աղի: - 786.

Զլինիլ արտասուաց՝ ուսուցանեն գիրք կազմութեան և *որ* ի բժշկաց, յերիս բաժանմանէ բնաւորեալ կերակրոց: - 786. Զոր և բիբն անւանեալ պահապան, զառաջինն ո՛չ զգուշացեալ, լինի դարձեալ ձեռնտու, զաւելորդսն արտաքս մերժելով. *որ* անուանի արտասուք. այսինքն արտաքսեալ: - 787. Նոյնպէս և երբեմն յուզել ուրախութեանց. ի փեռեկեալ թոքոյ ի կոտորումն շնչոյն, ի թաղանթէ՛ *որ* առ լերդաւն՝ հիւթ ինչ ծաւալի առ նոյն ասացեալ տեղի...: - 787. Ընդ այսմ և *որ* ի ձէնջ արկեալ եղև. թէ վասն է՞ր է զի երկու բացասութիւն լինի մի ստորասութիւն. իսկ **բ** ստորասութիւն ո՛չ կազմէ մի բացասութիւն: - 787. Եւ կատարեալ տեսութիւն բացերևականն բանի յայտնի՛ է աշխատասէր մտաց. *որ* յաղագս մեկնութեան լուծումն գրոց. և գո՛ն առ քեզ: - 787. *Ո՞ր* է մասն զօրութեամբ, և *ո՞ր* մասն ներգործութեամբ: - 787. Զի առաջնոյն ասէ՝ մարմին բարձր լուսաւորեալ ներգործութեամբ *որ* է՛ հրեղէն. այսինքն լուսաւորն երկին: - 787. Իսկ երրորդն մասամբ լուսաւոր և մասամբ թափանցանց. *որ* ասէ զօրութեամբ և ներգործութեամբ: - 788. Զի մասն *որ* առ կէտն արևելից՝ է՛ ներգործութեամբ ի յեւս, և զօրութեամբ ի մուտս: - 788. Զի՞նչ է սիւնքն աշխարհիս *որ* դողային ի յարութեանն քրիստոսի ի մեռելոց: - 788. Թողլով զայլս *որ* յազգս այսմ. առասպելախօսե՛ն արտաքին բանք: - 788. Նոյնպէս և քարինք արձանացեալք հաստատութիւն է երկրի. *զոր* աշխարի կոչեմք ի մասնէ՛: - 788. *Յորում* պաշարեալք ի հինից նետողաց կրկին յարուցեալ խորա՛զմ անուանեալ ազգաց: - 788. Սաստկագին գոչմամբ. և ահագնատեսիլ սուսերամերկ կորովալից նետողաց. *որ* պատեալ պահեալ պաշարէին զմեզ: - 789. Զի *որոց* բազում աւանդեցաւ. առաւել ինչ պահանջեցաւ. և փքացելոց հպարտութեամբ՝ ստորասուզեալ մակբեկութեամբ: - 789. *Յորում* ամի եղև ծռատօն զատկաց ազգի կոչեցեալ յունաց. ի վերոյ ասացեալն աւուր նորոյս տէրունեաց: - 789

***ՈՐ ԵՒ +*** Յնգետասաներորդ՝ թէ չարն է յաստուծոյ՝ և սկիզբն ամենայնի է աստուած, *որև* չարեաց ըստ նոցա, ապա ո՛չ է սկզբնաչար առաջին գտակն չարեաց սատանայ. որպէս նոքայն բարբանջեն: - 14. *Որև* առարկեն Նախ այսպէս, եթէ պատճառն է հարկաւոր. նաև ներգործութիւն նորին: - 15. Զի ո՛չ նա այսմ և ո՛չ սա այնմ կարէ միակ գոլ. վասն որոյ հա՛րկ է գոլ այնպիսի միակ՝ *որ և* ամենայն բազմութեան և միակաց է՛ միակ. որ է աստուած: - 26. *Որև* կատարեցաւ իսկ: - 28. Արդ՝ թէ ինն ամսով յառաջ թագաւորեալ էր թագաւորն չար, ապա ուրեմն ի ժամանակս Օգոստոս կայսեր ծնաւ քրիստոս. *զոր և* վկայէ՛ աւետարանն սուրբ: - 29. *Զոր և* այժմ օրինա՛կ է առ մեզ սարկաւագն...: - 59. Եօթներորդ՝ վկայ դամասկացին որ ասէ. *որ և* նա ևս քաղկեդոնիկ է. եթէ յայտնապէս զհոգին սուրբ ի հօրէ՛ ասեմք. և զնա հոգի հօր անւանեմք: - 64. Եւ զայս եթէ բաժանմամբ, ո՛չ է առանձնապէս բանն քրիստոս. զի ո՛չ գոյ մեծագոյն օծանօղ նմա. *որ և* ո՛չ առանց մարմնոյ փրկեաց: - 94. *Որև* այժմ ի յեկեղեցի ի նոյն խորհուրդ՝ սերօբէին պատկեր որ է քշոցն՝ ի ձեռն սարկաւագին աւանդի՝ որ է՛ մաքրօղն. և երրորդ կարգ յետ քահանային և քահանայապետին: - 135. *Որև* յայլուրեք ի քերօբէս ասի նստել. զի ամենեքեան աստուածակիրք են և հանգիստ կամացն աստուծոյ: - 135. Զի ասէ աստուածաբանն՝ «յաստուած մերձենայաք և աստուած լինէաք» այսմ որ քրիստոսի գալովս եղև, *զոր և* յեկեղեցւոյ ուսան հրեշտակք ըստ պօղոսի: - 147. *Որև* կործանմամբն իւրով չարչարեաց զվերին դասքն սրտմտութեամբ, և զներքին դասքն սասանմամբ, և զհամակամսն ընդ ինքեան քարշեաց: - 148. *Որև* տէրն՝ փայլակն ասէ անկանել յերկնից: - 148. *Որև* մերձ ի կատարածն դարձեալ յառնելոց է ի վերայ մարդկան ի ձեռն նեռինն: - 148. Զի առնելն է հաճոյական գործ առանց կասկածանաց. որպէս բարի առնել բարեաց, որ է՛ արդարութեանն աստուծոյ. և չար առնել չարեաց, *որև* այս է՛ խրատ ուղղութեան. այլ բարի առնել չարեաց, այս ողորմութեան է և գրութեան. այսոքիկ առնելոյն են տեսակք: - 158. Այսինքն կամօք է՝ զի գիտութիւնն և կամքն առաջնորդէ՛ գործոյն և հնարաւոր է՛ առնել զայս՝ և առնել զայն, *զոր և* կամեսցի. որպէս մարդ զի տէր է գործոյ իւրոյ՝ առնելոյ և ոչ առնելոյ: - 173. Աստուած՝ իմանալի աշխարհ. և աշխարհ՝ զգալի. *որ և* մարդս իմանալի և զգալի աշխարհ: - 179. Նախ՝ զի մարմին է բարձր. *որ և* ի սահմանս իւր նախադրի: - 184. *Որ և* զծովս և զաղբերս և զհեր և զղեղս առաւելու ընդ իւր և նուազէ՛: - 187. Երկրորդ՝ վասն հպարտութեան մարդոյն. զի յորժամ խայթեսցեն զնա՝ ծանիցէ զտկարութիւն իւր. *որ և* զփարաւոն ո՛չ թէ առիւծք կամ առջք հարին, այլ ճանճք և մժղուկք տանջեցին: - 217. *Որ և* անդ բաժանի հրատեսակն ի տեսանելիքն. և ծխատեսակն ի մազ գլխոյն: - 242. Եւ այսմ պատճառ անհա՛ս է մտաց մարդկան. միայն անքննին դատաստանին աստուծոյ է տալի. և անհետազօտելի ճանապարհաց նորին. *որև* սակաւիկ մի յառաջ ասացաւ: - 252. *Որև* յաւելեալ իր ինչ զգայական՝ լինի **զ**. վասն որոյ առ հասարակ ի **զ** ամիսս ծնանին. և ա՛յլք ի **զ** շաբաթս. և կէսք ի **զ** օրս: - 263. Այլք զդողդոճալն ասեն. *որ և* հաց և ջուր չկարէր ի բերանն տանել: - 287. Երրորդ՝ զի նա՛խ բանայ զարգանդ

ծնողին և գայ ի կեանս. *որ և* **ե** օր աւելի ստանայ զկեանս յարգանդի: - 310. *Որ և* այն լինի կրկին: - 326. Վեցերորդ՝ հարուածս կրեալ յոբ ի բոլոր մարմինն. և տէր մեր ի ձեռս և յոտս և ի կողս. *որ և* փշով պսակեալ ապտակեալ և գան հարեալ: - 327. Ոմանք զսիօն ասեն, և այլք զեդոմ, և այլք զարաբիա. *որ և* անդ ասեն և այլք զգերեզման նորա լինիլ: - 327. Երկրորդ՝ զի գաւազանն մովսէսի մի վիշապ եղեալ կլանէր զբազում վիշապս նոցա *որ և* հե՛տն միանգամայն ո՛չ երևէր. ընդէ՞ր ապա և նոցայն ո՛չ եկուլ զմովսէսին. քանզի սո՛ւտ էր: - 335. *Որ և* ցուցանէր յետ եօթանասուն ամի զդարձ գերույն, և զնորոգիլն հրէական կարգին: - 346-347. *Որ և* զՍաւուղ ազատեաց ի մեղաց...: - 369. *Որ և* այս երևի ի հինն ստուերագրեալ թէ ոք խնդրեսցէ: - 373. *Որ և* միով հպմամբ ի լանջսն՝ մաքրեցաւ աշակերտն յայսպիսի կրից. քանի՞ առաւել որ եբարձ զապականութիւնս ազատ լիցի յայսպիսի կրից: - 383. *Որ և* տրտմեցաւ տէրն մինչ ի մահ. զի զտրտմութիւնս մեր եբարձ: - 387. Տասներորդ, որպէս ասէ փիլոն՝ նշանակ հեշտ ցանկութեան է օձն. *որ և* զցանկացօղ ժողովուրդն սատակէր. ըստ ախտին իւրեանց նմանեցոյց զպատուհասն: - 387. Զի երեսնամեայ յառնեմք. *զոր* և լուսինն նուազի և դարձեալ լուսաւորի: - 399. Եւ փոխանակ հոգւոյն՝ հրեշտակական օգնութեանն կարօտացաւ ցուցանել զտիրապէս իշխօղն բնութեան. *որ և* կշտամբեաց զբռնութեամբ թագաւորելն նորա: - 410. *Որ և* մովսէս եկեալ ի թաբօր վկայէր նմա, և աղերսէր ելանել ի խաչ և բանալ զդուռն արքայութեան. որում մարգարէքն սպասէին: - 411. Եւ զյիսուս փրկիչն՝ հայր սրբեաց և առաքեաց. *որ և* ի յորդանան վկայեաց «դա՛ է որդի իմ սիրելի, դմա՛ լուարուք»: - 417. *Որ և* ո՛չ յաղթութիւն, այլ մահ խոստացաւ նմա: - 429. *Որ և* դաւիթ տեառն նուիրեաց զջուրն զայն: - 434. Սադովկ և աբիաթար. աննա և կայիափա. *որ և* աղջիկն հետազօտեալ: - 438. Այլ և գոհացաւ ի վերջոյ ի վերայ ամենայն յաղթութեանցն. և տէր մեր ի վերայ ամենայն ներգործութեանցն. *որ և* ամենայն օրհնութիւնքն ի տէրն ակնարկէ ...: - 438. *Որ և* յերկրորդ գալուստն նախ դատեսցէ. և ապա թագաւորեսցէ անվախճան...: - 450. Ազարիա *որ և* ոզիա ամս **ծբ**: - 452. Եղիակիմ *որ և* յովակիմ ամս **ժբ**. ի սորա **ժ** ամին նաբուգոդոնոսոր զիրէաստան հնազանդեաց. և հարկ առեալ յեղիակիմայ գնաց: - 453. Յովակիմ *որ և* յեքոնիա ամիսս **գ**: - 453. Մատթանի *որ և* սեդեկիա ամս **ժա**: - 453. *Որ և* նովաւ զնորայս վասն նորա խօսեսցուք. և ի գովեստ մեծութեան փառաց նորին յանկեսցուք: - 456. Երրորդ՝ շնորհք կուսութեան. *որ և* սա՛ է յատկական եղանակ. որպէս սրբոյ կուսին: - 462. Եւ ոմանք յաւելուն այլ ևս զամօթ՝ զտրտմութիւն՝ և զցաւս մարմնական. *որ և* սոքա ընդ նոսա են: - 474. Յասիցելոցս ո՛չ ոքն յարմարի միաւորութեան փրկչին. բայց միայն երրորդն առաջնոյն. այսինքն էութիւն առ էութիւն անշփոթ խառնումն. որպէս հոգւոյ և մարմնոյ. *զոր և* յառաջիկայդ ցուցցի: - 476. *Զոր և* մեք առցուք այսպէս: - 477. Նոյնպէս ասի այս անուն մարդ չարչարեալ և մեռեալ. *որ և* յատուկ մարմնո՛յ են սոքա: - 478. *Որ և* զչարչարանքն և զմահն՝ աստուծոյ մարդացելոյ խոստովանիմք որով փրկեցաքն: - 478. Եօթներորդ՝ արեամբ և վկայութեամբ. *զոր և* ինքն քրիստոս մկրտեցաւ վասն մեր իբրև յոյժ գովելի և երանելի այս մկրտութիւնս քան զառաջինսն: - 488. Նա՛խ՝ զի երևելի էր և ո՛չ անարգ ոք. *որ և* սակաւ ինչ յառաջ փառօք եմուտ ի քաղաքն: - 490. *Որ և* մարդիկք կրկին թևօք ժամանեն ի փառս յաւիտենական կենացն: - 494. *Որ և* անդ ժամանեաց տէրն և կապեաց զիզօրն. և զկարծրացեալ ամրոցն աւերեաց. և կողոպտեաց ի նմանէ զհոգիսն մարդկան որ յադամայ հետէ ընդ բռամբ ունէր: - 503. *Որ և* զերկոսինս զայսոսիկ խորտակեաց տէր իջմամբն առ նոսա: - 504. *Որ և* պահապանքն շրջապատեալ. *որ և* զհանդերձն պատատեալ յանկողնի, և լերդ այծեաց և մազ ի սնարսն. և ի գիշերի իջեալ ընդ պատուհանն և ելեալ առ սամուէլ զերծաւ ի ձեռաց նոցա: - 513. Եւ շնչաւոր մարդոյ յիմարութիւն է հոգին. *որ և* պատժեաց զանանիա և զսափիրայ: - 523. *Որ և* այժմ յոյնք և ասորիք պենտակոստ կոչեն որ թարգմանի **ե** երորդ և ո՛չ **է** երորդ: - 524. *Որ և* զդատողական աթոռս՝ երկոտասանիցն հաւասար շնորհեաց: - 546. *Որ և* պատուական է վարդապետն քան զաշակերտն. և զօրավարն քան զզօրս. և կառավարն քան զկառն և այլն: - 551. *Որ և* սողոմոն անճողոպրելի քարոզէ ամենայն մարդկային մտաց. եթէ «ո՞ պարծեսցի միտս սուրբ ունել»: - 558. *Որ և* յարազուարճ բարերջանկութեամբ լի և ամենազան քաղցրորակ պտղաւէտութեամբ տնկեսցիս ծառ բարձրաբերձ յընթացս հոգւոյն ի մէջ եկեղեցւոյ տանս թորգոմեան ազգիս հայկազնեան: - 558. *Զոր և* ազգն Ֆռանկաց այլայլելով ասեն, ես կու մկրտեմ զքեզ յանուն Հօր և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ: - 588. *Զոր և* անյարմար շարաբանութեամբ զկո՛ւն ցուցանեն մկրտել և ո՛չ զնուիրեալն: - 588. *Որ և* ըստ այսմ կերպիս ո՛չ լինի տուեալ շնորհք հոգոյն ի մկրտողէն առ մկրտեալն...: - 588. Այլ զայն ասացեալ յառաջն զձև բանիցն. *որ և* արժանաւորապէս տուեալ լինի շնորհք հոգւոյն: - 588. *Որ և* է՛ այս հերձուած մեծ և յանդուգն հայհոյութիւն ընդ դէմ կարգաց եկեղեցւոյ: - 589. *Որ և* շնորհաց նորա և թողութեանն

հաղորդեսցուք: - 592. *Որ և* այսպիսի կարծիքս սո՛ւտ է բազում վկայութեամբ: - 594. *Որ և* հարցանէր որդւոցն զեբեթեայ թէ՝ կարօ՞ղ էք ըմպել զբաժակն. այլ ո՛չ թէ միայն նոցաետ և յայլ առաքելոցն արգել: - 600. *Որ և* զեկեղեցւոյ անունս աստուած կոչեաց յառաջագոյն: - 613. *Որ և* մովսէս նկարեաց զքերովբէսն հովանի ունել ի վերայ քաւութեանն: - 645. *Որ և* զանազան նկարքն՝ զանազան շնորհաց հոգւոյն նշանակք: - 646. ...*որ և* յա՛յտ է ի փակելոյ դրանց եկեղեցւոյ: - 650. *Որ և* այժմ ոմանք յազգէ ասորւոց և յունաց՝ զշաբաթ և զկիրակէ միա՛յն լուծանեն ձկամբ: - 651. *Որ և* զմեզ արժանաւորեսցէ քրիստոս ամէն: - 656. *Որ և* զուստիանէ սրբուհի կոյսն մա՛յր արար կանանց հաւատաւորաց: - 658. Երրորդ, զի խաչաձև դնի մարմինն ի հանգիստն. *որ և* ձեռքն խաչանմա՛ն է ի վերայ սրտին: - 677. ...այսինքն զի ուսուցեն վերջնոցն զհաւատս փրկչին. *յոր և* նոքայն հաւատացին: - 709. *Որ և* յետ այնորիկ սպանցին ի նեռնէն յէմ. և անկեալ լիցին մարմինք նոցա ի հրապարակս զերիս տիւս և զերիս գիշերս: - 709. *Որ և* ա՛յն քան գերազանց է միաւորութիւնն քրիստոսի ընդ եկեղեցի քան զմարմնական հարսանեաց, որպէս լոյս քան զխաւար. և իւղ անոյշ քան զգարշութիւնս: - 757. *Որ և* անբաժանելի և անքակ միութեամբ միաւորին յօդեալք ի գլուխն քրիստոս անզրաւ յաւիտենին: - 757. Ի յայս միտս ի ստորինս եկեղեցի այժմ կրկին են դասք պաշտամանց. *որ և* նոյնպէս է լինելոց ի վերնումն սիօնի յեկեղեցիս անդրանկաց: - 760. *Որ և* ոչ ժամանեաց ի կատար բանիս վերոյ ասացեալ խնդրօղն: - 772. *Զոր և* ես զօրէն մշակաց բազմահաւաք պտղոց. կամ փունջ մի անուշահոտ բազմերանգ ծաղկանց. կամ չնչին թռչնոյ զխորխս մեղու. կամ որպէս զլոմայս այրւոյն տառապեալ գոյիւ: - 772. *Որ և* աղաչեմ զբարեմիտ հանդիպօղսդ՝ եղբայրական սիրով հաւանիլ. զպակասն լնուլ և զաւելիսն կշռել: - 772. *Որ և* ձեզ յիշողացդ և մեզ յուսողացս առհասարակ ողորմեսցի բարերար և բազում ողորմ մարդասէրն աստուած և տէրն մեր յիսուս քրիստոս ամէն: - 773. *Որ և* առանց յապաղելոյ ապաստանեալ մեր՝ յօժանդակութիւն խնդրոյդ: - 773. *Որ և* ամենայն վերոյ գրեալքդ առակք, անառակին, մոլորելոյն, կորուսելոյն և այլն ևս, այսպէս ուղղին. այսինքն նմա՛, վասն նմա՛, որպէս նմա՛: - 778. *Որ և* զայս թիւ խորհրդոյ պահէ՛ յինքեան ամացն շրջագայութիւն: - 785. *Զոր և* բիբն անւանեալ պահապան, զառաջինն ո՛չ զգուշացեալ, լինի դարձեալ ձեռնտու, զաւելորդսն արտաքս մերժելով. որ անուանի արտասուք. այսինքն արտաքսեալ: - 787. *Զոր և* անբաւ բազմութեամբ ասպատակեալ աւերեաց զաշխարհս հայոց, պարսից, վրաց, և զամենայն արևելեայս: - 788. *Որ և* մեր նստելով իբր ի մետաղս կամաւոր դիպահոջ՝ շահապօնս կոչեցեալ ամրոցի: - 788. Այլ և աստ ապաշաւելն ոչ ինչ օգտեալ. որպէս և անդ ո՛չ լսողաց բերանով հաշեալք. *որ և* ո՛չ գոյր անդրէն դառնալ. և ո՛չ կարի յօժարացն շահավաճառ եղեալ. ո՛չ գիտ և ո՛չ ողորմ. հանգոյն յիմարացն օրիորդաց: - 789. *Որ և* խիղճ որդանց անհանգիստ մտաց: - 789

***ՈՐ ԵՒ ԻՑԷ +*** Եւ ի սոցանէ *ո՛ր և իցէ*, արտա՛քս է յեկեղեցւոյ և ի սրբութեանց, օր մի կամ բ կամ աւելի. և սրբի խոստովանութեան ջրովն: - 368. Եւ թէ մինն է պատճառ՝ *որ և իցէ* թէ այրն և թէ կինն, առանց ամուսութեան մնասցէ. և միւսն զուգեսցի այլոյ որ չէր պատճառ: - 401. Այլ դատաւոր միտն կացուցեալ երկու վկայ զանբիծ հաւատս և զօրէնս որ են հաւատք և գործք. զի առ *ո՞ր և իցէ* քրիստոս նա՛ է ճշմարիտ: - 551. Այլ ի պատարագն պարտ է բանալ զգլուխս որ պատարագիչն է ամենայն ոք *որ և իցէ*. թէ քահանայ և թէ եպիսկոպոս և կամ ա՛յլ ոք: - 635

***ՈՐ ԻՆՉ*** + Եւ *զոր ինչ* տեսանէ աչք արծըւին՝ ո՛չ կարէ տեսանել աչք մարդոյ...: - 31. ...ո՛չ է որդւոյ այլ կամք զի *զոր ինչ* կամեսցի բաց ի հօրէ արասցէ: - 45. Ապա այս աղաչանքս *զոր ինչ* առնեմք ի ծագմանէ հոգւոյն սրբոյ, բարեխօսել ասի հոգոյն սրբոյ: - 48. Պատասխանեմք թէ՝ ո՛չ ասէ պարզաբար ամենայն, այլ կարգէ՛ զհետն թէ՝ ամենայն *որ ինչ* եղև. թէ եղեալ ցուցանես զհոգին, և ես հաւատամ թէ ի ձեռն որդւո՛յ է եղեալ: - 53. Զի սովորութիւն է սուրբ գրոց՝ աստուծոյ համարել *զոր ինչ* գո՛րծ է ի մարդիկ: - 59. Այսպէս և հոգւոյն բարեխօսելն է. զի ինքն ծագէ ի սիրտս մեր զբարեխօսն լինիլ յաղօթս. այսինքն զայն խնդրել *որ ինչ* ի փառս աստուծոյ է: - 59. Ո՛չ փոխարկապէս, այլ փոխատրապէս. այսինքն զի ի միաւորութեանն եկաց մնաց *որ ինչ* էրն, և եղև *որ ինչ* ո՛չն էր: - 75. Նոյնպէս և քրիստոսն անուն՝ և տէր՝ և աստուած՝ և այլն՝ զո՛յգ և հաւասա՛ր է մարդկութեան իւրոյ և աստուածութեանն. և ո՛չ առաւել և նըւազ. կամ տկար և հզօր. կամ անգէտ և ամենագէտ. և *որ ինչ* այսմ նման: - 89. Իսկ թէ և որոշակի ասես ուղղափառ մտօք, և ո՛չ այն է զարտուղի. յորժամ ասես աստուծոյ մարմին և աստուծոյ արիւն. զի *որ ինչ* է՛ ի յաստուած՝ աստուած է և ո՛չ օտար յաստուծոյ: - 92-93. Ա՛րդ՝ ի մարդկանէ ո՛չ ոք ետես զաստուած, և որդի կուսին ո՛չ ետես որպէս դուդ ասես. սո՛ւտ է ապա և պատմութիւնն *զոր ինչ* ուսոյց մեզ. զի ո՛չ է տեսեալ և պատմէ. ահա անդունդք հայհոյութեան. զոր ի կարգիս լռե՛մ: - 96. Ա՛րդ՝

եթէ մի անձն խոստովանիս քրիստոսի, և բնութիւն մարդոյն միացեալ ի յանձն բանին, *զոր ինչ* բանին է բնութեամբ, ամենայնն եղիցի և մարմնոյն իւրոյ միաւորութեամբ: - 98. Ա՛յս է *զոր ինչ* է ի յաստուած՝ դնելով կոչեմք զնա: - 123. Եւ այնչափ կուրացեալ է՝ մինչ զի պատերազմի ընդ դէմ աստուծոյ. թէպէտ գիտէ զայն լինիլ ինքեան ի չար, զի *զոր ինչ* չար գործէ անձնիշխան կամօքն, մեղանչէ մահու չափ: - 146. Զի *զոր ինչ* բնութեամբ ունէին դևք՝ եթող ի նոսա աստուած յետ յանցմանն. և *զոր ինչ* երանութեամբ ստանալոց էին՝ զրկեցան: - 147. Երեքտասաներորդ՝ մարդ զինչ որ կամի ո՛չ կարէ. իսկ աստուած *զոր ինչ* և կամի և կարէ՛: - 157. Իսկ թէ կամիս ուսանիլ թէ զի՞նչ է նիւթ պսակին. *որ ինչ* առ աստուածութեան իւրում մեծութիւն գտանի, զա՛յն պատրաստեաց սիրելեաց իւրոց. զոր ո՛չ կարեմ զմտաւ ածել. կամ վայրապար լսելեօք լսել: - 161. Ասեմք առ այս Նախ՝ եթէ կամքն և կարն ի մեզ անհաւասա՛րք են. վասն այն *զոր ինչ* կամիմք՝ ո՛չ կարեմք. և զոր կարեմք՝ զա՛յն կամիմք: - 163. Իսկ առ աստուած կամքն և կարն հաւասա՛րք գոն. վասն որոյ հակադարձին ի միմեանս. զի *զոր ինչ* կամի՝ կարէ՛. և զոր կարէ՝ զնոյն և կամի՛: - 163. Երրորդ՝ զի շինօղն *որ ինչ* պատահի գործոյն ո՛չ գիտէ: - 164. Այսպիսի ժամանակ է յայտնապէս կեանք մեր. զի *զոր ինչ* ժամանակ կենցաղոյս չափէ բնութեամբ՝ ապականէ և փոփոխէ...: - 199. Պատասխանեմք յայտնի տեսութեամբ, թէ *զոր ինչ* այրէ հուր, ծախէ՛ և կորուսանէ զամենայն որակսն. այսինքն զգոյն. զհամ. զհոտ. նոյնպէս և զծանրութիւն: - 202. Չորրորդ՝ զի ցուցցէ անձնիշխան գոլ զմարդն, վասն որոյ հրամայէ՛ նմա զի *զոր ինչ* և կամեսցի՝ անուն դնիցէ: - 219. Նա՛խ՝ զի մնացորդք գործոց և խորհրդոց կերպարանին ի յիշատակարանս հոգոյն *զոր ինչ* գործեաց ի անցելումն, կամ խորհեցաւ վասն հանդերձելոյն: - 268. ...յորժամ տեսցեն պատկերակից աստուծոյ զմարդն բանականութեամբ անմահութեամբ և այլովքն *որ ինչ* է ի հոգիս, իմանայցեն և զզանազանութիւնն աստուծոյ: - 274. Դարձեալ՝ *զոր ինչ* ունիմք՝ յայլմէ՛ ունիմք. և անկատա՛ր ունիմք. և միշտ կարեմք կորուսանել: - 275. Ասեմք եթէ՝ *զոր ինչ* ի յարութեանն աւուր լինելոց է սրբոցն, զսկիզբն անդանօր սերմանեաց ի նախնի մարդն ադամ...: - 282. Չորրորդ՝ զի **բ** արձան կանգնեաց պղնձի և խեցի և արար գիր. և *զոր ինչ* ադամ անունս եդ իրաց, զամենայն գրեաց ի նոսա. զի մի՛ այլայլեսցին ի գնչուտ և ի լեզուատ արանց: - 289. Եւ *զոր ինչ* լինելոց էր ի տարին, ի նոյն կերպարանս փոխեին և ակունքն: - 349. Դարձեալ՝ *զոր ինչ* յեգիպտոս աստուած պաշտէին՝ սուրբ հրամայեաց. որպէս զանասունս: - 364. Սակայն հաճելին մեր՝ ընդունելի է աստուծոյ. զառաւել սէրն նշանակէ. զի *որ ինչ* մեզ անպիտան է, և աստուծոյ անպիտան է: - 371. Դարձեալ՝ զաստուածայինս ամենայն՝ ո՛չ կարեմ քննել. այլ *զոր ինչ* յայտնէ՝ պատմեմ ձեզ: - 405. Դարձեալ՝ և դուք զծածուկն աստուծոյ մի՛ համարձակիք քննել. այլ *զոր ինչ* յայտնէ ձեզ՝ ուսուցէք որդւոց ձերոց: - 405. Քանանը՝ *զոր ինչ* պատուիրեաց մովսէս՝ զնոյն և արար յեսու: - 419. Երրորդ՝ զի նոր բան ինչ ո՛չ պատմեաց. այլ *զոր ինչ* ուսաւ ի սաւուղայ՝ երկրորդեաց նմա: - 430. Այլ ի դատաստանն քննութեան ջնջեալ է *զոր ինչ* մեք ի մտի ունիմք. որպէս ասացաւ ի վերոյ: - 433. Այլ և նշանակէ զպատարագ նորոյս. *զոր ինչ* մատուցանեմք աստուծոյ հաղորդիմք ի նմանէ: - 443. Այլ և ցուցանի թէ զայլ ամենայն բարութիւնս ո՛չ խնայէ մեզ *զոր ինչ* և խնդրեմք ի նմանէ: - 468. Եւ պատճառն ասացաւ ի վերոյ, *զոր ինչ* ինքն եդ զպատիժ՝ նմանեաւն եբարձ. և զորս յանձնիշխան կամաց մարդոյն և ի բանսարկուէն արկածք, զայնոսիկ հակառակաւն ելոյծ տէր մեր յիսուս քրիստոս: - 498. Եւ տէրն ի մարդեղութեան իւրում ընկալաւ *զոր ինչ* բնականն էր մարդոյս բնութեան. և ոչ զեկամուտ անասնականն: - 502. Զա՛յս ասեմ, զի *որ ինչ* անօրէնութիւն է ազգիս հայոց, նո՛յն է օրէնք այլազգ քրիստոնէից. և որ մեզ երկբայութիւն է՝ նոյն դաւանութիւն է նոցա: - 552. Դարձեալ՝ *որ ինչ* նախ քան զօրէնս գործեին՝ մեղք կոչիւր. որպէս ի դարս նոյի. և այլս: - 555. Մետասաներորդ՝ սիրէ՛ *զոր ինչ* նա: - 575. Երկոտասաներորդ՝ ատէ՛ *զոր ինչ* և նա: - 575. Նա՛խ՝ *զոր ինչ* սիրեմք գիտեմք. այլ թէ սիրիմք ո՛չ գիտեմք: - 576. Եւ դարձեալ տամ զքեզ ի խորհուրդ սուրբ եկեղեցոյ. *զոր ինչ* գործեսցես, եղիցի քեզ ի բարեգործութիւն և ի փառս հանդերձեալ կենացն ամէն: - 602. Այլ *զոր ինչ* հասարա՛կ է երից անձնացն, աստուած, և հզօր, և անմահ և այլն ամենայն, կարելի՛ է ասել միոյ անձինն և միոյ դիմաց. աստուած հզօր և այլն: - 633. Երրորդ կոչի կարգ, զի *զոր ինչ* մեք առ մարմին ննջեցելոցն կատարեմք, զնոյն կարգ և հրեշտակք առ հոգիսն կատարեն այժմ և ի յարութեանն աւուր: - 671. Եւ զի կտաւն յերկրէ է և արուեստիւ գործեալ. ցուցանէ թէ *զոր ինչ* գործեաց ոք ի յերկրի, զնոյն զգենու և զարդարի: - 671. Գիտե՞ն նոքա *զոր ինչ* աստ գործեմք, թէ ոչ: - 685. Յոգիք արդարոցն զամենայն գիտեն *զոր ինչ* վասն նոցա գործեմք. և վասն մեր բարեխօսե՛ն և կատարե՛ն զխնդիրս: - 685. Նախ ասեմ, եթէ հանդերձ սպիտակ և պսակք և աթոռք և այլն ամենայն զոր ետես ի տեսիլն՝ ո՛չ ներկային. այլ հանդերձելոյն էր տեսութիւն *որ ինչ* լինելոց է ի

կատարածի...: - 690. Եւ *զոր ինչ* լինի ի կատարածի անդ ցուցանեն: - 703. Գիտելի է, զի ոմանք ասեն թէ կերակուրս *զոր ինչ* ուտեմք ո՛չ յառնէ ի մարդն...: - 718. Եւ դարձեալ՝ ո՛չ միայն մարդոյս մարմինն, այլ և անշնչից և շնչաւորաց *զոր ինչ* ուտեմք յառնէ՛ ասեն որ է՛ անպատշաճ: - 718. Ասեն վարդապետք՝ եթէ են ինչ որ էութեամբ և պատահմամբ անցանեն. որպէս կենդանիք և տունկք և *որ ինչ* ի չորից տարերաց են գոյացեալք: - 727. Բայց *զոր ինչ* մեզ փառաւոր երևի՝ զնոյն և աստուծոյ փառս կոչեմք: - 736. Եւ թէ լինէիր կամօք փարթամ որպէս սողոմոն. որում ո՛չ անխայեաց *զոր ինչ* ցանկացաւ ի սրտի: - 761. և ամենայն *որ ինչ* փափկութիւն գտանիցի՝ աշխատութիւն. մինչ զի բարութիւնն աստուծոյ յանհունս գերազանցէ՛ քան զամենայն ստեղծեալ բարութիւնս: - 762. Եւ ոչ օրինակս կարէ յայտնել *զոր ինչ* էն: - 770. Եւ յիրաւի այս. զի այն ոք որ առնէ *զոր ինչ* ոչ է պարտ, յիրաւապէս կրեսցէ *զոր ինչ* պա՛րտն է. զի մեղքն է առնել, իսկ պատիժն է՛ կրել: - 776. Իսկ *զոր ինչ* շնորհօք լինի ոք ստացեալ, կարէ՛ և մերկանալ. որպէս ադամ զեռակի շնորհն...: - 782. Յաղագս որոյ *որ ինչ* գոյ միոյն յայտնի և ներգործական մասունք, գոն նոքա և միւսոյն բնաւորապէս ծածուկ և զօրութեամբ: - 786

***ՈՐ ՈՔ +*** Արդ՝ *որ որ* կամեսցի ի նոյնն ելանել և առ քրիստոս լինիլ, պատշա՛ճ է ի վերջնագունէն սկիզբն առնել որպէս սանդղօք: - 280. Չորրորդ յայտ է՝ զի նուէրքն աստուծոյ՝ սրբութիւն է. և *որ որ* մերձենայ ի նա՞ սրբի: - 363. Զի *ո՞ր որ* և յանցանէ՝ պատուհասի. եթէ հրեշտակք, և եթէ սուրբք ի մարդկանէ: - 386. Եւ նզովիւք փակեն ասելով, «եթէ ոք յետ անճառ միաւորութեանն ապականացու ասէ զանապական մարմինն սուրբ, նզովեալ լիցի». որպէս յա՛յտ է ի գիրս իւրեանց. և *որ որ* կամեսցի դիւրաւ գտցէ. ապա ուրեմն անապակա՛ն է մարմինն քրիստոսի: - 499. Եւ *որ որ* ո՛չ խոստովանի զքրիստոս աստուած, զտօն նորա ըստ հասարակ մարտիրոսացն առնէ ի մէջ գիշերոյն ի վեր: - 509. Նոյնպէս և *որ որ* յայս օրս պահէ և յամենայն կերակրոց չուտէ, կամ միս ուտէ, ընդ դատապարտութեամբ է: - 510. Դարձեալ՝ *որ որ* մերձ է ի ճշմարտութիւնն՝ նա՛ առաւե՛լ է ճշմարիտ. որպէս որք մերձ են լուսոյն և ջերմութեան՝ առաւել լոյս են և ջերմ: - 550. Եւ կարելի է *որ որ* կամեսցի՝ զայսօսիկ զլուխս ի սէրն աստուծոյ ուղղել: - 576. Եւ *որ որ* ո՛չ պահէ որպէս ազգն Ֆռանկաց, ընդ անիծիւք է յառաքելական և հայրապետական կանոնաց: - 652. ...և *որ որ* ի պատիժն աստ ոչ ժամանէ կրել, անդ կրէ յետ մահու ի հուրն և քաւի: - 701. և *որ որ* աստ կամաւ ո՛չ պատժի, աստուած պատժէ զնա ի հուրն և քաւի: - 701

**ՈՐԱԿ +** Երկրորդ և թէպէտ իցեն տարրականք և ներհակ *որակք*՝ յիմիասին դիպիլն՝ ո՛չ միշտ հակակայիճ իրերաց...: - 12. Այլ արդ՝ եդ աստուած զսոսա բնական որակութիւնս ի մասունս հոգւոյն. եդ և զանձնիշխան կամքն տէր և իշխան իներքս ի հոգին. զի կառավարէ և առաջնորդէ՛ հոգւոյն. զվատ *որակն* ի բարին ուղղել, և զբարին ի նոյնն պահել և առաւելուլ. զի այս է գործ անձնիշխանին: - 19. Ասեմք առ այս եթէ՝ ջերմն ապականէ զցուրտ՝ և ինքն մնայ ի յենթակայն. զի էութիւն է և *որակ:* - 22. Որպէս մի էութիւն է խնձորն. և ունի երեք յատկութիւնս *որակաց*. զհամն, և զհոտն, և զգոյնն ընդ ձևոյն: - 74. Եւ միութիւնն ի *յորակն* առնէ զնմանութիւն: - 104. Երրորդ՝ ասի ոչէ՝ նիւթն անորակ. որ ո՛չ ունի ձև և ո՛չ ունի տեսակ և ո՛չ *որակ:* - 111. Իսկ պատահումն է քանակ՝ *որակ*՝ և այլն: - 111. Երկրորդ՝ միտք զգոյացութիւն իրին տեսանէ որ է ի ներքոյ եդեալ. և զգայութիւն զպատահմունքն ի վերայ եկեալ. որպէս *որա՛կ* քանա՛կ և այլն: - 120. Նախ՝ զի նիւթեղէն միտք՝ միջնորդութեամբ նիւթո՛յ հասանէ յաննիւթն. որպէս տեսեալ զգիր՝ իմանամք զզօրութիւն նորա. և տեսեալ *զորակ* և զքանակ՝ իմանամք զգոյացութիւն իրին: - 131. Իսկ *Որակ* կոչի, որպէս բարի, լոյս, քաղցր, և գեղեցիկ: - 171. Ո՛ր ըստ որում շարժօղ զգայութեանցս որ առ մեզ՝ կոչին *որակք*՝ գոյն, և համ, և սոյնպիսիք: - 171. Քանակաւն և *որակաւն*. զի սոքօք անհատ գոյացութիւնն երևի: - 174. Հինգ. այսինքն Քանակն որ է չափն. *Որակն*. որ է գոյնն. ձևն. տեղին. զատութիւնն: - 174. Նախ՝ զի ո՛չ ունի քանակ, *որակ*, ձև, և այլքն, որ նիւթո՛յ են յատկականք: - 175. Այլ թէպէտ աննիւթ է աստուած՝ ո՛չ է անկարգ զնիւթականքս յառաջ ածել ըստ այսմ օրինակի. զի նիւթն որ է՛ գոյացութիւն մարմնական՝ ունի որակութիւնս իմն մարմնական. որպէս քանակ. *որակ*. և այլքն: - 175. Արդ սոքա ըստ ինքեան անմարմին են. այսինքն գոյացութիւնն. քանակն. *որակն*. և այլքն: - 175. Եւ մարմնով ո՛չ բաժանին սոքա. թէպէտ և մանր փոշի լինին՝ ունին զքանակն *զորակն* և զայլն. զի անմեկնելի որոշմունք են գոյացութիւն և պատահմունքն: - 175. Զի աննիւթ և պա՛րզ էութիւն է աստուած. և յառաջ էած յոչընչէ զաննիւթ էութիւնս. այսինքն զգոյացութիւն, զքանակ, *զորակ*, և զայլսն. և իւրով զօրութեամբն ի միասին ժողովեալ կազմեաց մարմնական նիւթ: - 175. Նախ՝ զի սոքա անմարմինք են ըստ ինքեան. այսինքն քանակ, *որակ*, և այլքն. և յանմարմին էութիւնս ո՛չ տեսանին. որպէս ի հրեշտակս կամ ի հոգիս. զի նոքա ո՛չ ունին ձև. *որակ*. քանակ. և զայլսն: - 175.

Չորրորդ՝ զի իւրաքանչիւր սոքա առանձին սահման ունին և բնութիւն. և ո՛չ միաբանին ընդ միմեանս և ո՛չ ընդ մարմնի. այսինքն քանակն *որակն*. և ծանրութիւնն. և այլքն: - 175. Զի քանակն *որակ* ո՛չ է և ոչ ասի. և ո՛չ ծանրութիւն. և ո՛չ կարծրութիւնն մարմին: - 175-176. Ապա ընդէ՞ր սոքա՝ գոյացութիւն, *որակ*, քանակ, և այլքն, եղական գոլով ո՛չ շփոթին ի մի բնութիւն խառնեալ: - 176. Երկրորդ՝ զի հաւասարութիւն և միաբանութիւն տարերաց անլուծանելի է. ըստ որում ներհակ *որակօք* հաւասարք են հակակայ. և միւսովն միաբանք: - 181. Ոմանց *որակ* գունոց տայ. որպէս խնծորոյ. և զոմանց բառնա՛յ. որպէս զմարդոյ: - 186-187. Զի հուրն կրկին *որակ* ունի. ջերմ և չոր: - 202. Պատասխանեմք յայտնի տեսութեամբ, թէ զոր ինչ այրէ հուր, ծախէ՛ և կորուսանէ զամենայն *որակսն*. այսինքն զգոյն. զհամ. զհոտ. նոյնպէս և զծանրութիւն: - 202. Եւ վասն առաւել և ազդու զօրութեան և ջերմութեան՝ զգոյացութիւն կենդանեաց և մարդկան առ որս դիպի ապականէ՛. և պատահմունքն քանակ և *որակ* մնան: - 204. Իսկ հուրս առ մեզ որ կապեալ է ի նիւթ՝ տկա՛րն ունի զայրելն. վասն որոյ նախ զքանակն և *զորակն* ապականէ, և ապա զգոյացութիւն իրին: - 204. Այլ ես ասեմ թէ՝ բնական *որակ* գունոց **դ** են: - 212. Պտուղքն դրախտին շօշափելիք են և կերակրելիք. հատանի և ծասկի և փոփոխի ըստ պատահական *որակացն*. և անապական մնայ ըստ գոյացութեանն և ներգործութեանն ի կերօղն: - 223. Որպէս հաց մարմնոյն քրիստոսի ըստ գոյացութեան և ներգործութեան անապական է. թէ և փոփոխի ըստ արտաքին *որակացն:* - 223. Ըստ այսմ ապացուցի. զի բնութիւնն ի սեռ՛ւմն է և ի տարբերութեան ուստի բաղկանայ. և անձն ի բութիւնն է յորմէ կայանայ. և դէմքն ի յանձնէ՛. և կերպարանն ի դիմաց. և պատկերն ի կերպարանաց. և տիպն ի պատկերաց. և *որակ* տպաւորեալ ի պատահմանց: - 235. Իսկ երկրորդն թէ յորմէ՞ սեռէ է օտարն և աննմանն՝ գիտելի է, զի դէմն և կերպն ի չորից սեռից գոյանայ. ի գոյէ՝ ի քանակէ՝ *յորակէ* և ի տեղւոյ: - 236. Եւ ձևն ուղիղ և թիւր՝ *որա՛կ* է: - 236. Եւ պակասեալ ի սոցանէ մարմնոյն, ցուցանի կերպարան ի գոյէ ի քանակէ և *յորակէ* և ի տեղւոյ շարակցեալ. որպէս յա՛յտ է ի հայելւոջ: - 236. Եւ նուազեալ ի սմանէ քանակին, լինի նման և աննմանն ցուցեալ. որպէս յա՛յտ է ի տառն գրեալ. զի նման և աննմանն ւրոյն են *որակի:* - 236. Իսկ միայնացեալ *որակ* ի ձևոյն, երևի աննման. զի նմանն ի վերայ որակութեան ասի. որպէս ծանրութիւն: - 236. Ապա ուրեմն յա՛յտ է զի աննմանն և օտարն են ի սեռի որակութեան և յատուկ ձևոյ *որակի:* - 236. Որպէս և իմաստունքն ասացին զամենայն երևելիս յարացոյց իմանալեացն. զոր գոյ և *որակ* կոչեն. և զնիւթս պատկեր գոյին. զի *որակն* և գոյք անմարմին են և աննիւթաբար ի մտածութիւնս երևին: - 236. Ի ժամ յղացմանն՝ եթէ ի ծնողացն՝ եթէ ի ժամանակէն՝ և եթէ յախտից՝ որ տարր և յաւելու ի խառնուածն, նոյն *որակ* գունով ծնանի զաւակն: - 245. Դարձեալ **թ** խառնուա՛ծ է չորից տարերց ըստ կրկին քառից *որակաց* առաւել և նուազ, և իններորդն հաւասար է որ է ի մարդն. վասն որոյ ինն ամսեայ ծնանի: - 264. Դարձեալ՝ պատկերն ի կերպարանն լինի առեալ. և նմանն ի *յորակն* կամ ի քանակն: - 273. Եւ բաց յայսցանէ՝ բնական *որակօք* ներհա՛կք են միմեանց դ տարերքդ որպէս ցուցաւ ի վերոյ: - 278. Եւ այս ևս գիտելի է, զի լեզու կոչի գործիք խօսիցն. և լեզու կոչի *որակ* խօսիցն: - 297. Հինգերորդ, զի զանազան *որակս* փոխեր: - 338. Ուստի յա՛յտ է զի ի մի նիւթ ժողովեաց զամենայն *որակս* համոց: - 339. Գոյացութիւն հացին փոխեալ է ի գոյացութիւն մարմնոյն քրիստոսի և է՛ անապական. իսկ քանակն և *որակն* մնացեալ է դեռևս փոփոխելի. և յայնմանէ փոխարկեպին այլայլմունք ինչ: - 339. Բնական *որակ* տարերացն Սևն է՛ երկրի. և Սպիտակն ջրոյ. Կարմիրն օդոյ. և Դեղինն հրոյ: - 342. Այլ աստ զներգործական *որակն* ասէ տարերաց: - 342. Իսկ հնոյն խորհուրդ, **դ** *որակ* նիւթոցն՝ **դ** տարերացն. և ոսկին անապական՝ երկնից: - 348. Ուստի յա՛յտ է, զի *որակ* ծնողացն խառնի ի բեղմնաւորիլն. ի դաշտանւոյն գօդի. ի հիւանդութենէ, ի շիկութենէ. որպէս ադամ տրտմութեամբ ծնաւ զորդին կայէն. ցաւած ծնողացն ցաւածին որդի: - 439. Զի էութիւն ընդ պատահման միշտ անշփոթ միաւորի. որպէս *որակ* և քանակ ի գոյացութեան. զի անմեկնելի որոշմունք են: - 475. Եւ մի և նոյն բանն է ներտրամադրեալն ի սրտի. զի ըստ բան գոլոյն ո՛չ զանազանի. սակայն ըստ որպիսութեան *որակին*. զի էր անմարմին ի սրտի՝ և այժմ մարմնացաւ ի քարտիսի: - 529. Այլ *որակն* և պատահմունքն ցուցանեն այլ և այլ: - 530. Երկրորդ ըստ *որակին*. որպէս թէ **բ** մարդ գործեն զորովայնամոլութիւն: - 565. Այլ և *որա՛կ* է կամաւն և ակամայն. գիտութեամբն և անգիտութեամբ. կարողութեամբ և տկարութեամբ. և այլն: - 565. Ա՛րդ՝ մեղք սկզբնականին չորիւք զանազանի յայլոցն. այսինքն ի մահացուէն և ի ներելւոյն. ըստ միութեան. ըստ հասարակութեան. ըստ հաւասարութեան. ըստ *որակի* տարբերութեան: - 567. Չորրորդն ըստ տարբերութեան *որակացն:* - 568. Պատահմունք և *որակն* մնան ի հացն և ի գինին. իսկ գոյացութիւնն փոխարկի ի մարմին և արիւնն քրիստոսի վասն **դ** պատճառի: -

597. Ութերորդ, զի *որակ* եկրի խաւար է և սեաւ. և ո՛չ է պայծառ որպէս այլքն...: - 678. Զի՞նչ *որակ* պակասի ի տարերացդ և զինչ մնայ: - 728. Գոյացական *որակքն* մնան և պատահականքն պակասին որպէս ասացաւ: - 728. Իսկ ըստ *որակացն*, կամայի և ակամայի. գիտութեան և անգիտութեան և այլն: - 746. Իսկ ստինք յատկապէս գործի՛ է բնութեան ի պէտս սննդեան այնցիկ ծննդոց զօրէն սերմանեաց երկրի. յորմէ հիւթոյ արեանն գոյացելոյ, ընդ ագուգայս երակաց արտագունեալ *որակօր* կաթն փոխակերպեալ: - 786

**ՈՐԱԿԱՆԱՄ +** է և այլ իմն աննմանութիւն հոգւոյ ըստ իմացմանն. առաւել և նւազ. ուշիմ և ապուշ. չկամ և կամեցօղ. հեզ և յանդուգն. ցանկացօղ և ողջախոհ. ըստ բնական բարոյիցն *որակացեալ*. նման և աննման գոլով իրերաց: - 237. Եւ դարձեալ զոր օրինակ, բան թագաւորին մի է, այլ ի բազում լեզուս և ի բազում լսելիս և ի բազում թուղթս *որակացեալ* և բազմացեալ, յիւրում միութենէն ո՛չ է քակտեալ: - 529

**ՈՐԱԿՈՒԹԻՒՆ +** Նա՛խ՝ եթէ ուշիմ և ապուշ և այլն ըստ կարգի, սոքա եթէ ի մարմնոյն խառնուածոյ պատճառին՝ և եթէ բնական *որակութեամբ* հոգւոյն՝ նման և աննման գոլ, առանց ներգործելոյ ո՛չ չար են և ո՛չ բարի. ո՛չ գով. և ո՛չ պարսաւ հետևի...: - 19. Դարձեալ ասեմք թէ՝ սոքա ո՛չ են բնութիւնք ի հոգին. այլ *որակութիւնք* զանազանք և աննմանութիւնք. որպէս պատկերք երեսացն: - 19. Այլ արդ՝ եդ աստուած զսոսա բնական *որակութիւնս* ի մասունս հոգւոյն. եդ և զանձնիշխան կամքն տէր և իշխան իներքս ի հոգին...: - 19. Եւ ո՛չ որպէս ներհականք. որպէս ջերմ և ցուրտ. սպիտակ և սեաւ. զի սոքա *որակութիւնք* են. իսկ բարին էութիւն է, և չարն ո՛չ է էութիւն: - 21. Նախ զնիւթն զմի բնութիւն նիւթական որպէս մարդ. և զմիւսն բնութիւն աննիւթ որպէս զաստուած. զՋնն՝ զմինն քանակութեամբ և *որակութեամբ* տարբերեալ որպէս մարդոյ. և զմիւսն ի վեր քան զկերպ և զձև որպէս աստուծոյ: - 87. Նախ՝ զբնական *որակութիւն* երկնայնոցն նշանակէ. այսինքն Մարդն զբաննն: - 132. Վասն երկրորդ մի՞ է թէ բազում, ասեմք եթէ՝ ի սկիզբն մի է ըստ էութեան ի միոյ պատճառէ՛ յառաջ եկեալ. և ի բազումս բազմացեալ ըստ *որակութեան*. որպէս է արփեան և ըստ աստիճանաց: - 140. Այլ գոյացական որպիսութիւնն է *որակութիւն*. որպէս ասեմք բանական. անմահ. անմարմին. և այլն: - 172. Եւ յա՛յտ է զի եզական և անհատն մարդ՝ է զանազանեալ իւր յատուկ *որակութեամբն:* - 174. Այլ թէպէտ աննիւթ է աստուած՝ ո՛չ է անկարգ զնիւթականքս յառաջ ածել ըստ այսմ օրինակի. զի նիւթն որ է՛ գոյացութիւն մարմնական՝ ունի *որակութիւնս* իմն մարմնական. որպէս քանակ. որակ. և այլքն: - 175. Եւ գոյացութիւն ասեմ, որով տարրորշի ընդդէմ ոչ գոյին. և *որակութեամբ* բացորոշի յանմարմին էութեանց. ուստի բաղկանայ մարմին գոյացութեամբ և *որակութեամբ:* - 175. Մանաւանդ թէ իւրաքանչիւր տարերք բ ծայրք *որակութեանց* ունին. զմինն գոյացական և զմիւսն պատահական. ըստ այսմ պա՛րտ է ասել քեզ մետասան բնութիւն քրիստոսի: - 176. Եւ իւրաքանչիւր տարերք ունին կրկին *որակութիւնս*. այսինքն գոյացական և պատահական: - 181. Երկրորդ՝ յա՛յտ է զի ունին ջերմութիւն և ցրտութիւն. չորութիւն և գիճութիւն. որ յայտնապէս տարրական է *որակութիւն:* - 188. Եւ զի *որակութեամբ* սեա՛ւ է: - 211. Վասն է՞ր է զի ամենայն անհատք ի մարդկանէ համատիպք են միմեանց. և օտարք իրերաց. զի նմանք են, և աննմանք *որակութեամբ* և ձևով: - 235. Իսկ միայնացեալ որակ ի ձևոյն, երևի աննման. զի նմանն ի վերայ *որակութեան* ասի. որպէս ծանրութիւն: - 236. Ապա ուրեմն յա՛յտ է զի աննմանն և օտարն են ի սեռի *որակութեան* և յատուկ ձևոյ որակի: - 236. Նոյնպէս և ի բանական *որակութիւնս* հոգւոյն՝ նման և աննման, հաւասար և անհաւասար բացատրեաց. այսինքն խոհեմ և տգէտ. հեզ և բարկացօղ. ողջախոհ և ցանկասէր. և այլ զանազան բարս բնական՝ մարդոյն: - 252. Երրորդ առ այսոքիկ՝ միաւորութիւն անուանեմք և զխառնուածս երկուց նայից ըստ զանազան *որակութեանց*. յորում ո՛չ ոք ի խառնեցելոցն զիւր ծայրագոյն *որակութիւնն* սեռաբար կարօղ է պահել. այլ շփոթեալ անկանի ի ծայրագոյն *որակութենէն*. որպէս զջուրց և զգինեացն խառնուած, և զմեղերաց: - 476. Չորրորդ՝ միաւորութիւն ասեմք գոլ և զզանգումն որ ի նա է՛ և ի չորո՛յ բնաւորեցաւ լինիլ. յորում ո՛չ ամբողջ պահի բան *որակութեանն:* - 476. Նա՛խ՝ ըստ չորից տարերց այլ և այլ *որակութեանց* լինին ը խորհուրդ մեղաց: - 560. Նոյնպէս և հատուցի առաւել և նուազ և հաւասար. ո՛չ միայն ըստ սեռի գործոց, այլ և ըստ տեսակի և քանակի և *որակութեանց* նմին: - 746

**ՈՐԴԷԳԻՐ +** Փարաւոնի դստերն մառի կոչէին. որ արար զմովսէս իւրն *որդէգիր:* - 330. որպէս մովսէս եղև *որդէգիր* դստերն փարաւոնի: - 611. Իսկ *որդէգիրն* որ բանիւ և կամօք լինի, ո՛չ լինին խնամիք մինչ ի կրկին ծնունդն. - 612

**ՈՐԴԵԳՐԵԼ +** Եօթնևժերորդ՝ *որդեգրել* զմարդիկ աստուծոյ՝ միայն աստուծոյ է...: - 58. Վեցերորդ՝ զի թէ մեք շնորհիւ՝ *որդեգրեալքս* կերպանամք առ ճշմարիտ և բնութեամբ որդին, և թէ և նա՛ է ըստ մեզ

շնորհիւ, պիտո՛յ է նմա վերնագոյն բնութեամբ որդի մարմնացեալ ի յոր կերպասցի և սա՛ ի նմանութիւն նորա շնորհօք որդի: - 67

**ՈՐԴԵԳՐՈՒԹԻՒՆ +** Ո՞ ոք է ընդ մէջ որդւոյ և հօր շաղկապ՝ զի հրաւիրեսցէ զնա *յորդէգրութիւն* հօր. և զի ո՛չ ոք: - 39. Երրորդ՝ թէ արարած՝ զիա՛րդ կատարէ զմեզ լինիլ աստուածս *յորդեգրութիւն* հօր՝ աւազանաւն: - 51. Որք ուրանան զբնութեամբ միաւորութիւն աստուծոյ մարդացելոյն, այլ միայն բնակութեամբ և շնորհիւ *որդէգրութեան* ելեալ յաստուածութեանն փառս. որպէս ասեն նեստորականքն: - 66. Վեցերորդ՝ դարձուցանել զմարդն *յորդէգրութիւն* աստուծոյ՝ բնական որդւոյն էր պատշաճ. վասն որոյ որդին աստուծոյ որդի մարդոյ եղև զի զմեզ արասցէ որդիս աստուծոյ: - 468. Իններորդ՝ օծումն *որդէգրութեան*. որպէս մկրտութիւնն: - 474. Իսկ մկրտութիւն նորա ո՛չ *որդեգրութեան* էր որպէս մերս. այլ ճշմարիտ որդիութեանն յայտնութիւն ըստ ձայնին հօր «դա՛ է որդի իմ սիրելի»: - 474. Որպէս այնորիկ որք զօրացան այսու մահուամբ և *զորդեգրութեանն* ընկալան շնորհ և նահատակեցան, նոքա չարչարակից եղեն քրիստոսի, և փառացն հաղորդակիցք: - 497. Որով զփառս *որդէգրութեան* և զժառանգութիւն արքայութեան ընկալաք. որ է՛ անտրտում ուրախանութիւն: - 532. Ա՛րդ՝ բնականն է մարմնոյն. և օրինացն խնամութեամբ. և հոգևորն *որդեգրութեամբ*... - 611. Իսկ հոգևոր ազգն է կրկին. նախ աւազանին ծննդեամբ. և երկրորդն *որդեգրութեամբ:* - 611

**ՈՐԴԵԾՆՈՒԹԻՒՆ կմ ՈՐԴԷԾՆՈՒԹԻՒՆ +** Ա՛րդ՝ եթէ առաջին կեանքն էր ամուսնութեամբ և *որդէծնութեամբ* որպէս նոքա շաղակրատեն. ապա և ի վերջին յարութեանն նոյնպէս է՛ լինելոց: - 226. Երկրորդ՝ օրինաւոր ամուսնութիւնն պատուական է վասն *որդեծնութեան*. այլ ո՛չ է նա՛ առաքինութիւն. որպէս կուսութիւն՝ պահք՝ և աղօթք: - 356. Եւ հեշտութիւնն է վասն *որդէծնութեան*, և *որդէծնութիւնն* վասն հեշտութեան, կամ ի պաշտօնն աստուծոյ: - 613. Եւ է՛ *որդէծնութիւնն* բարի, և հեշտութիւնն չար: - 613. Ա՛րդ՝ նահապետքն առնուին բազում կանայս վասն *որդէծնութեան* և լրման մարմնաւոր օրինութեանն: - 613

**ՈՐԴԻ +** Չորեքտասաներորդ՝ Զի հայր գործէ՛, և *որդին* նմին նման: - 29. Յնգետասաներորդ՝ Տալն *որդւոյ* զկեանս, զդատաստանս, և զայլն: - 29. Իննևտասաներորդ՝ Բարեխօսելն *որդւոյ* և հոգւոյ: - 29. Քսաներորդ՝ Անգիտութիւնն *որդւոյ* վասն կատարածի ժամուն: - 29. Այլ և *որդի* և բան անուանի՝ **ժ** գլխով: - 29. Չորրորդ՝ ոչինչ արգելէ զհոգին լինիլ *որդի*, թէ է՛ ի նոյն բնութենէ: - 30. Վեցերորդ ասեն՝ ամենայն ինչ *որդւովն* եղև. ապա և հոգին: - 30. Երեքտասաներորդ՝ Որք զհոգին՝ ի հօրէ՛ և *յորդւոյ* ասեն ութն գլխով: - 30. Երեքտասաներորդ՝ Որք զհոգին՝ ի հօրէ՛ և *յորդւոյ* ասեն ութն գլխով: - 30. Իսկ մեծութիւն կռապաշտութեան այնքան էր՝ մինչ միածին *որդին* պատարագեցաւ մարմնով, և ապա բարձաւ մեղք կռամոլութեանն յաշխարհէ: - 33. Յայր կամա՞ւ ծնաւ *զորդի* թէ յոչ կամայ: - 36. Թէ կամաւ, Ասեն չարափառքն՝ կամա՛ցն է *որդի*՝ և թոռն աստուծոյ: - 36. Ապա ուրեմն *որդի* է յառաջ քան զկամքն: - 36. Եւ ասեն՝ թէ այդպէս է, ապա ուրեմն և ո՛չ կամաւ է *որդի:* - 36. Առ որս ասելի է թէ՝ ո՛չ կամաւ, և ո՛չ յոչ կամայ. զի պատկեր և նկարագիր էութեանն հօր է *որդի*, ըստ առաքելոյ: - 36. Ապա ուրեմն բնութեամբ և էութեամբ է *որդի*. և ոչ թէ կամաւ կամ ոչ կամայ: - 36. Զի թէ կամաւ, կամա՛ցն ես *որդի* և ոչ հօր. թէ այդպէս է, բարձեր զպատճառն քո զհայր. բարձար և դու ի տեսակաց մարդկան: - 36. Ի յայս տարակուսանքս՝ որ է ստութիւն յերկուց կողմանց, բառնի էութիւն հօր. և լինի արարած *որդի:* - 36. Զի թէ ասեն էր յառաջ քան զծնունդն *որդի*. իսկ էութիւնն հօր հայրութիւն է. և թէ ոչ էր *որդւոյ* հայր՝ բառնի յէութենէն իւրմէ, իսկ թէ ոչ էր և յետոյ ծնաւ՝ ո՞ւմ արդեօք իցէր հայր. զի ո՛չ էր *որդի:* - 36-37. Զի ասեմք թէ՝ *որդի* է ծնունդ հօր ի սկզբանն: - 37. Այլ որքան հայրն հայր. նոյնքան և *որդին* ընդ նմա *որդի:* - 37. Երրորդ հարցումն հակառակացն թէ՝ *որդի* ի հօրէ ծնաւ և դադարեցա՞ւ, թէ դեռևս կուծնանի: - 37. Այլ մեր պատասխանին առ այս՝ է՛ այս ինչ, թէ միշտ ծնունդ է ի հօրէ ըստ բնութեանն *որդի*. այլ անձամբ կատարեալ. որպէս լոյս ի հրոյն միշտ ծնանի և ոչ է անկատար՝ յօրինակ *որդւոյ:* - 37. Դարձեալ առարկեն, եթէ աստուած է հայր՝ և անծին է բնութեամբ, և *որդի* ծնեալ է, ապա ուրեմն ո՛չ է որդի աստուած. զի ծնելութիւն և անծնելութիւն հակառա՛կ են միմեանց. որպէս սեաւ սպիտակի կամ լոյս խաւարի: - 38. Առարկութիւնս այս յայտնապէս *զորդի* կամ զհայր ի բա՛ց մերժէ յաստուածութենէն. ճարտա՛ր իմա, ո՛չ ասէ զհօրէ ոչ գոլ աստուած. այլ զանծնելութենէն: - 38. Իսկ այսոքիկ առանձնաւորութիւնք են հօր և *որդւոյ*...: - 38. Յինգերորդ՝ զի որ եդեր նախկին զպակասութիւնն, բարձեր զէութիւնն հօր և *որդւոյ:* - 38. Յինգերորդ առարկեն, թէ իցէ մի և նոյն բնութիւն հօր և *որդւոյ*, և *որդի* ծնեալ ի նոյն բնութենէ, կարէ՛ ասիլ և հօր ծնանիլ ի *յորդւոյ* ի նոյն բնութենէն. զի բնութիւնն մի է: - 38. Պատասխանեմք թէ՝ կարի՛ յիմարութիւն է հարցումնդ. և զի գոյ հայր ըստ քում բանիդ ծնօղ *որդւոյ*.

ապա ուրեմն ո՛չ կարէ ոչ լինիլ և ծնանիլ: - 38. Դարձեալ՝ ո՛չ կարէ ծնանիլ *որդի* զհայր՝ թէպէտ ունի զհօր բնութիւնն...: - 38. Թէ բնութեանն է, ապա ասեն *որդի* ո՛չ ունի զնոյն բնութիւնն. զի բնութիւնն մի է աստուծոյ: - 39. Իսկ թէ արարչութեանն, ասեն թէ և *որդի* արարա՛ծ է: - 39. Պատասխանեմք՝ թէ հայր ո՛չ բնութեանն է անուն՝ և ո՛չ արարչութեանն. այլ առանձնաւորութեանն. զի այնու յատկանայ *յորդւոյ* և ի հոգւոյ: - 39. Ով արիանոսք՝ զի թէ որպէս զմեզ *զորդի* շնորհօք ասէք և արարած, մեք զի եմք շնորհօք *որդիք*՝ ունիմք ընդ մեզ և ընդ հայր շաղկապ. իբր թէ զլար զհոգին սուրբ: - 39. Իսկ դուք զի ուրանայք զհոգին հաւասար գոլ հօր և *որդւոյ*, և կրտսե՛ր ասէք քան *զորդի*: - 39. Ո՞ որ է ընդ մէջ *որդւոյ* և հօր շաղկապ՝ զի հրաւիրեսցէ զնա յորդէգրութիւն հօր. և զի ո՛չ ոք: - 39. Եւ ի միւս բանին թէ՝ «հայր իմ մեծ է քան զիս». զքանն չա՛փ իմացիր՝ թէ մեծ է որչափ ես. որպէս ասէ *որդի*, «ես և հայր իմ մի եմք»: - 39. Եւ թէ հայր մեծ է քան *զորդի*, զիա՞րդ տանի փոքրն զմեծն: - 39. Եւ զի ո՛չ է հնար որպէս ասացի, ապա ուրեմն ո՛չ է մեծ հայր քան *զորդի*. զի ի միմեանց տանին, և ի միմեանց լնուն: - 39. Դարձեալ ո՛չ ասի անպատճառ պատճառն քան զպատճառելին մեծ. զի և *որդի* նոյն պատճառի հօր փառաց և մեծութեանն է հաղորդ: - 39. Դարձեալ քննեսցուք ըստ մեզ. զի ո՛չ են հակառակ առաքելոյն բանն և աւետարանին, թէ հայր մեծ է քան *զորդի*. զի երկոքին նոյն ինքն աստուածութեանն իմանին...: - 40. Զի ո՛չ էր հայր մեծ քան զնա՝ ի յոր երդնոյր. զի որք երդնուն՝ ի մեծագոյնսն քան զինքեանս երդնուն. ապա ուրեմն հաւասա՛րէ *որդի* հօր և ո՛չ փոքր որպէս ասէ առաքեալն: - 40. Եւ գիտեմք հաւաստի թէ *որդի* էր. զի հրեշտա՛կ անուանէ զնա գիրն. և զի հայր երբէք հրեշտակ ո՛չ կոչեցաւ՝ այլ *որդի*...: - 40. Արդ ասի *որդին* ծնեալ և ստեղծեալ. զի ի ստեղծմանէն իմանի անփոփոխութիւն հօրն. և ի ծննդենէն միութիւն բնութեանն հօր և *որդւոյ*: - 41. Առ որս ասեմք՝ թէ *որդի* ո՛չ ասի անդրանիկ վասն գոլոյն ի կարգէ ստեղծուածոց, զի ո՛չ ոք ստեղծուած՝ էառ զբնութիւն աստուծոյ որպէս *որդին*: - 41. Ուստի *որդի* ո՛չ միայն ասի անդրանիկ՝ այլ և միածին: - 41. **Իսկ հնազանդիլն *որդւոյ* հօր, ո՛չ թէ այժմ անհնազանդ է վասն հակառակութեան. զի այս աւազակա՛ցն է. և անհնա՛ր է ասել զմի և զնոյն էութիւնն ինքն ինքեան հնազանդ և անհնազանդ ըստ այնմ որ բան է. այսինքն զպարզ աստուածութիւնն**: - 42. Դարձեալ կերպիւ ինչ ասի հնազանդ *որդի* հօր գործով՝ լրմամբ կամացն: - 42. Եւ հայր *որդւոյ*՝ հաճութեամբ գործոյն: - 42. Եւ այս վասն միութեան բնութեան և կամաց հօր և *որդւոյ*: - 42. Երրորդ՝ ըստ ո՛չ պատշաճի. որպէս ո՛չ կարեն պահել *որդիք* առագաստի մինչ ընդ նոսա իցէ փեսայն որ է քրիստոս: - 44. Այսպէս իմացիր և զոչ կարելն *որդոյ* առնել յանձնէ՛. այսպէս օտար ինչ ի հօրէ: - 44. Եւ թէ լինէր՝ գոյր և ի բնութենէ օտար. հետևէր ապա ոչ գոլ *որդի* հօր. թէ ոչ էր ի նոյն բնութենէն. ապա և ոչ հայր. զի հայր *որդւո՛վն* է հայր: - 44. Նմին իրի թէ ոչ հայր և ոչ *որդի* զի *որդի* հօրն է որդի՝ ըստ այսմ ապա ո՛չ էանայ աստուածութիւնն որ անկար է, որպէս ասացաք: - 45. Ապա ուրեմն ոչ առնէ յանձնէ և *որդի*, զի անհնար է բառնիլ աստուածութեանն: - 45. Ա՛յս է ոչ կարելն *որդւոյ*: - 45. Չորրորդ՝ այսու առաւել զմիակամութիւն ցուցանէ. զի մի՛ է կամք իւր և հօրն. վասն այն ո՛չ կարէ առանց հօր. զի ո՛չ է *որդւոյ* այլ կամք զի զոր ինչ կամեսցի բաց ի հօրէ արասցէ: - 45. ...ո՛չ կարէ *որդի* առնել ինչ յանձնէ իւրմէ թարց հօր որպէս ասացաք: - 45. Տարակուսելի է առ այս, զի թէ հա՛րկ է որոց բնութիւնքն մի գոլ՝ նոցա և կամքն և ներգործութիւնն մի լինիլ. ընդէ՞ր ապա զի մարդկային բնութիւնս մի է և նոյն հօրն և *որդւոյն* և ո՛չ է կամքն և գործքն մի: - 45. Եւ պատաճառն է այս. զի թէպէտ մի է բնութիւն ծնողաց և ծնիցելոց, բայց ոչ ունին զմի կամս. զի հատեալ բաժանեցաւ *որդին* ի հօրէն: - 45. Ասէին՝ առնէր հայր, և ապա *որդին* ի նոյն օրինակէն առնէր: - 45. Եւ զնոյն բանն աստուած մարմնացեալ. և շրջեալ ի վերայ երկրի. զի յայնմ օրինակին արար և *որդի* պիտոյ էր լինիլ և չորս աշխարհք: - 45-46. Եւ թէ արար հայր առանց *որդւոյ*, անիմա՛ստ արար. զի *որդի* է իմաստութիւն հօր ըստ առաքելոյ. և կամ այլ իմն իմաստութեամբ որ է՛ սուտ ամենևին: - 46. Այլ այս է առնելն հօր՝ և նմին նման *որդւոյ*, այսինքն կամիլն հօր՝ և կատարեալն *որդոյ* զնոյն կամս: - 46. Զի մի՛ է կամք *որդւոյ* և հօր: - 46. Ո՛չ թէ նոր իմն տեսակ և կամ նոր աշխարհ. այլ զեղելոցս նախախնամութիւնն. և ի նոյնութիւն կալն հայր կամի և *որդի* կատարէ՛. ոչ ծառայաբար և անուսումնապէս. այլ տիրաբար և հանճարով: - 46. Զի՞նչ է տալն *որդւոյ* զկեանս՝ կամ զդատաստան՝ կամ զիշխանութիւն հեթանոսաց և ամէն մարմնոյ: - 46. Դարձեալ ասէ թէ՝ ետ ինձ հայր, զի մի՛ հակառակ հօր կարծիցեն *զորդի*. որպէս կարծէին հրէայքն լուծանելով զշաբաթսն: - 46. Այլ այս առաւել զմիակամութիւնն ընդ հօր և *որդւոյ* ցուցանէ. զի ասէ՝ ո՛չ իմ կամք այլ որիշ զի առնեմ, այլ զա՛յդ կամքդ առնեմ զի հասարա՛կ է: - 46. Զի ոչս այս բացբարձակա՛ն է. որպէս թէ ո՛չ չափով տայ աստուած զհոգին *որդւոյ*. այսինքն է՝ զի ոչ տայ և ո՛չ չափէ: - 46. Ապա ուրեմն ասեն չարափառքն թէ հայր միա՛յն է ճշմարիտ աստուած. և ո՛չ *որդի* և հոգի: - 47. Եւ թէ զմիայն ճշմարիտն՝ հօր միայն տաս, կորուսեր

ապա *զորդի* ստութեամբ և մահուամբ և խաւարաւ և այլովն: - 47. Եւ զի է՛ *որդի*, ապա ուրեմն և է՛ ճշմարիտ աստուած և թագաւոր թագաւորաց և այլն ըստ առաքելոյն: - 47. Այս յայտնի է զի *որդի* էր որ յերկրի մարմին զգեցաւ: - 47. Ըստ քում բանիդ աստ հօ՛ր տաս զաստուածութիւնն և բառնաս *յորդւոյ*. և ի մարգարէն՝ *որդւոյ* ասես զաստուածութիւնն և բառնաս ի հօրէ, ապա հա՛րկ է քեզ լինիլ անաստուած. զի միովն միւսոյն յաղթութիւն տաս: - 47. Իսկ զի բարեխօսել լսեմք հոգւոյ և *որդւոյ:* - 48. Այսպէս իմա և *զորդւոյ* բարեխօսելն: - 48. Այս է ասէ աստուածաբանն գրիգոր՝ բարեխօսելն *որդւոյ:* - 48. Իսկ զանգիտութիւնն *որդւոյ* վասն ժամուն և աւուրն թէ բերցեն ընդդէմ մեր հակառակօղքն՝ և այնպէս նւազ ասիցեն *զորդի:* - 48. Այլ ա՛յս է, Զի ճանաչէ՛ իբրև զաստուած. այլ իբրև զմարդ անգիտնայ. զի բացարձա՛կ է *որդւոյն* անունն. այսինքն անորոշակի. զի որոյ և տացես թէ բանին և թէ մարմնոյն՝ կարէ՛ ասիլ: - 48. Իսկ զի *Որդի* ասեմք: - 49. Հինգերորդ՝ զի բանն է սահման. և որպէս յայտնիչ է սահմանն սահմանելոյն, այսպէս և *որդի* սահմանէ՛ զէութիւն հօր...: - 49. Տասներորդ՝ զի որպէս բանն թարգման և պատմօղ է մտացն, այսպէս և *որդի* հօր: - 49. Իսկ *որդի* մարդոյ կոչի, զի էր ի յարենէն ի զանգւածոյն ադամայ իբր ի նախահօրէ՛. և ի կուսէն՝ իբր ի մօրէ՛: - 50. Իսկ որք բառնան զաստուածութիւնն ի միոյն՝ և ո՛չ երկոցունց տան զաստուածութիւնն, իմա՛, ըստ առաքելոյն զօրութիւն և իմաստութիւն է հօր *որդի*. և բան՝ ըստ աւետարանին յօհաննու: - 51. Եւ թէ էր երբեմն հայր առանց բանի և իմաստութեան, ի՞ւ խորհէր յետոյ ծնանիլ *զորդի:* - 51. Եւ թէ էր երբեմն հայր առանց զօրութեան, զիա՞րդ զօրանայր ի ծնունդն *որդւոյ:* - 51. Տե՛ս՝ զի առանց *որդւոյ* անբան և տկա՛ր է հայր. ո՛չ կարէ լինիլ աստուած. ապա և ո՛չ հոգի: - 51. Նոյնպէս և առանց հոգւոյ անկենդան և անսուրբն՝ ո՛չ է աստուած. ապա և ո՛չ *որդի:* - 51. Եւ այլք աստուած խոստովանին. որպէս և մերս դաւանութիւն՝ ընդ հօր և ընդ *որդւոյ:* - 51. Եւ թէ ծնեալ՝ ասեն հա՛րկ է զի լիցի ի հօրէ կամ *յորդւոյ*. թէ ի հօրէ է՝ լինին **բ** *որդիք* և եղբարք: - 52. Եւ թէ *յորդւոյ*՝ երևեցաւ ասեն և թոռն ոմն մեզ աստուած: - 52. Եւ թէ յերկուցն՝ ո՛չ է կարօղ հայր ծնանիլ և կարօտանայ *որդւոյ* օգնութեանն. և լիցի անկատար *որդի:* - 52. Եթէ ըստ մեզ կարծէք զծնունդն, պիտոյանայ երկուորիս և գործիս հօր. լիցի և այրութիւն և իգութիւն յաստուած. և լիցին *որդիք* երկորեակք էրէց և կրտսեր: - 52. Դարձեալ հարցանեն, թէ հաւասար է հոգի *որդւոյ*, զի՞նչ արգելու ո՛չ լինիլ *որդի*. ապա թէ ո՛չ՝ նւա՛զ է քան *զորդի:* - 53. Պատասխանեմք թէ ո՛չ է նըւազ հոգին. զի ո՛չ է անկատար աստուածութիւնն. և ո՛չ նըւազութիւնն առնէ հոգւոյն ո՛չ լինիլ *որդի*, այլ դէմքն և առանձնաւորութիւնքն: - 53. Ապա՛ թէ ո՛չ՝ անկարօտ է ամենայնիւ *որդի*՝ զիա՞րդ ո՛չ լինիցի հայր: - 53. Կամ ևս՝ զի և հայր է ամենակատար՝ ընդէ՞ր ո՛չ լինիցի *որդի*, զի է՛ ի նոյն բնութենէն: - 53. Ասեն դարձեալ, աւետարանն յօհաննու ասէ, «ամենայն ինչ *որդովն* եղև». ապա ուրեմն և հոգին եղեալ է ի ձեռն *որդւոյ*. զիա՞րդ է հաւասար *որդւոյ* կամ հօր: - 53. Պատասխանեմք թէ՝ ո՛չ ասէ պարզաբար ամենայն, այլ կարգէ՛ զհետն թէ՝ ամենայն որ ինչ եղև. թէ եղեալ ցուցանես զհոգին, և ես հաւատամ թէ ի ձեռն *որդւո՛յ* է եղեալ: - 53. Ապա թէ ո՛չ՝ ըստ բանիդ և հայր լինի եղեալ ի ձեռն *որդւոյ:* - 53. Պատասխանեմք՝ Նախ՝ առ մակեդոնացիս որք *զորդի* խոստովանին աստուած՝ թէ ասացէ՛ք զպատճառ **բ** աստւածոց ձեր: - 54. Եւ այսքան է միաւորութիւնն, զի որքան մին ինքն առ ինքն ունի զբնութիւնն և զզօրութիւնն և զկամքն, նոյնքան և ունի առ երկուսն. թէ զհայր իմանաս՝ թէ *զորդի*՝ թէ զհոգին: - 54. Ապա ուրեմն զի դուք **գ** ասէք՝ հայր և *որդի* և հոգի, ըստ թըւոյն և երեք բնութեան հաղորդին և ո՛չ միոյն: - 54. Ապա ուրեմն և հայր և *որդի* և հոգի թէպէտ թըւով **գ** են, այլ ոչ **գ** բնութիւնք: - 55. Զի որպէս էր հօր ծանօթութիւնն ի նախահարսն, և *որդոյն* ընդ աղօտ, այլ ի մարմնանալն իւր յայտնեցաւ: - 55. Արարիչ է հայր. արարիչ է և *որդի*. արարիչ է և հոգին սուրբ...: - 56. Զաշխարհս ամենայն ելից հայր. այլ ո՛չ առանց *որդւոյ*...: - 56. Ելից և *որդի*. «զի ամենայն ինչ նովաւ եղև»: - 56. Մեծ է հայր. մեծ է և *որդի*. անբովանդակելի է և հոգին սուրբ...: - 56. Խաղաղութիւն է և *որդի* ...: - 56. Աղբիւր է և *որդի*...: - 56-57. Լոյս է և *որդի*...: - 57. Կեանք է և *որդի*...: - 57. Տէր է և *որդի* ըստ պօղոսի, «մեզ մի՜ է տէր յիսուս քրիստոս»: - 57. Բարի՛ է և *որդի*. որպէս ասէ՝ «ո՜ որ միայն բարերա՛րդ ես աստուած իմ յիսուս»: - 57. Նոյնպէս և առաքումն հոգւոյն ո՛չ նըւազութիւն ցուցանէ, այլ զհամակամութիւն ընդ հօր և ընդ *որդւոյ:* - 60. Դարձեալ՝ շարժումն ո՛չ միայն ասի ի վերայ հոգւոյն սրբոյ, այլ և հօր և *որդւոյ*...: - 60. Հինգերորդ ասեն, եթէ հոգին սուրբ առնու զբնութիւնն ի հօրէ՝ լինի *որդի* նորին. զի այն կոչի *որդի* որ ունի զբնութիւնն ի հօրէ ի նոյն տեսակէ: - 60. Պատասխանեմք եթէ՝ թէպէտ հոգին ունի զբնութիւնն ի հօրէ՝ սակայն ո՛չ ծննդեամբ որպէս *որդի*, այլ բղխմամբ...: - 60. Այսպէս և հոգին սուրբ էառ յաւիտենականապէս զէութիւնն ի հօրէ բղխմամբ, և *որդի* ծննդեամբ: - 60. Ապա ուրեմն հոգին սուրբ է հաւասար աստուած ընդ հօր և ընդ *որդւոյ*. արարչակից և մշտնջենաւորակից և փառակից: - 60. Եկեսցուք այժմ և տեսցուք զմոլորութիւնս նոցա՝ որք ասեն

զհոգին սուրբ բղխումն ի հօրէ և *յորդւոյ:* - 61. Եօթներորդ՝ եթէ մասն աստուծոյ կոչի հոգին սուրբ. և աջ և բազուկ է *որդին*. ապա ուրեմն և ի նմանէ՛ է: - 61. Ութներորդ՝ որպէս խօսքն ի մտացն է և ի բանէն. այսպէս և հոգին ի հօրէ՛ է և *յորդւոյ:* - 61. Եւ դարձեալ՝ հոգին որ ի հօրէ ելանէ և կայանայ *յորդի*. և ի ձեռն *որդւոյ* իբր զհայրական բարի ամենայն գոյիցս բաշխի երկնաւորաց և երկրաւորաց. նախ քան զմարմնանալն՝ և ի մարդեղութեանն: - 61. Եւ դարձեալ, զի ամենայն ինչ որ հօր է՝ այն *որդւոյ* է որպէս ասէ տէր. ապա ուրեմն հոգի հօր՝ հոգի է *որդւոյ* վասն միոյ էութեանն: - 61. Զի՝ զինչն ետ հայր *որդւոյ*, և ո՛չ զառինչն: - 61. Ապա առաքեցաւ *որդի* ի հօրէ և ի հոգւոյն, ի նոցանէ ասի սկսեալ: - 61. Իսկ թէ՝ «իմս» այս՝ զբղխումն *յորդւոյ* ասէ, ապա և այլուր ըստ քեզ զհայր մարմնացեալ կարծես: - 61. Հինգերորդին պատասխանեմք, եթէ փառաւորէ հոգի *զորդի*՝ ասես ի նմանէ սկզբնաւորեալ: - 61. Տե՛ս՝ փառաւորէ՛ և հայր *զորդի* որ սկիզբն է նորա...: - 61. Վեցերորդին պատասխանեմք, թէ ասիցես *որդին* անկենդան է յորմէ հոգին ո՛չ բղխէ. ապա՛ և ըստ քեզ հոգին անբան է զի զբանն ո՛չ ծնանի: - 61. Եւ *որդի* հոգւովն կատարէր զամենայն գործս սքանչելեաց: - 62. Ուղիղ է, զի որպէս խօսքն թարքման է մտաց և բանի, այսպէս և հոգին սուրբ՝ հօր և *որդւոյ*...: - 62. Ապա ուրեմն այսպէս կարծելն՝ զհոգին միայն *յորդւոյ* ցուցանէ՛ և ո՛չ ի հօրէ որ է անհնարին հերձուած: - 62. Եթէ զհոգին ի հօրէ և *յորդւոյ* ասէք, զա՞նձն ասէք բղխեալ, եթէ զբնութիւնն: - 62. Իսկ եթէ զանձն ասացիք բղխեալ, ահա **բ** անձն ասացիք հոգւոյն. մինն ի հօրէ բղխեալ, և մինն ի *յորդւոյ*. և այսպէս լինի երրորդութիւնն չորրորդութիւն: - 62. Զի թէ մի է սկիզբն, սո՛ւտ է նոցա ասելն զհոգին ի հօրէ և *յորդւոյ* բղխեալ: - 62. Զի թէ կարօղ, ապա ո՛չ է կցորդ *որդի:* - 62. Դարձեալ հարցանեմ, հոգին սուրբ մասն ինչ բղխէ ի հօրէ և մասն *յորդւո՞յ*, թէ բոլորն ի հօրէ՝ և բոլորն *յորդւոյ:* - 63. Իսկ եթէ բոլոր, այս լինի կամ **բ** հոգի որպէս ասացաք, կամ աւելորդ գոյ բղխումն *որդւոյ* որ է յոյժ հայհոյութիւն: - 63. Դարձեալ՝ հարցանեմ, հայր և *որդի* զո՛յգ բղխեն զհոգի, թէ անզոյգ: - 63. Դարձեալ հարցանեմ, հայր և *որդի* կարգաւո՛ր բղխեն զհոգի թէ անկարգ: - 63. Դարձեալ հարցանեմ, յանսկզբնէ՞ն բղխէ հոգին, թէ ի սկզբնաւորէն. զի որ յանսկզբնէն յառաջ գայ, է՛ անեղ և անվախճան. որպէս *որդի* և հոգի յանսկիզբն հօրէ: - 63. Իսկ թէ ի սկսելոյն յառաջ գայ, է՛ եղեալ և արարեալ. որպէս արարածք ամենայն *որդւով* և հոգւով եղեն: - 63. Դարձեալ՝ հարցանեմ, զբղխեա՞լն ի հօրէ բղխէ *որդի*, թէ զոչ բղխեալն: - 63. Զի թէ զբղխեալն բղխէ, աւելո՛րդ է *որդւոյ* բղխումն. զի հայր բղխէ զհոգին: - 63. Իսկ եթէ զոչ բղխեալն բղխէ, ահա ի հօրէ ո՛չ ասէք զբղխումն, այլ միայն *յորդոյ*. որ է սուտ: - 63. Դարձեալ՝ հարցանեմ, զի թէ մինն բոլոր բղխումն է հոգւոյն և ո՛չ մասն. զի թէ զմինն զայն հայր բղխէ, ապա ուրեմն ո՛չ բղխէ *որդի*. իսկ թէ զմինն զայն *որդի* բղխէ, բղխեալն հոգի թո՛ռն լինի հօր, և ո՛չ բղխումն նմին: - 63. Դարձեալ հարցանեմ, հայր և *որդի* զնո՞յն բղխեն զհոգին, թէ զայլ: - 63. Իսկ թէ այլ բղխէ հայր՝ և ա՛յլ *որդի*, կրկնապատիկ է հոգին և ո՛չ մի: - 63. Ա՛րդ՝ եթէ հոգին ելանէ *յորդւոյ*, պարտ է զի ելցէ *յորդւոյ* ի հայր. կամ ի միւս անձն: - 63. Ապա ուրեմն ո՛չ ելանէ *յորդւոյ:* - 63. Ա՛րդ՝ որպէս արտաշնչումն ո՛չ ելանէ ի բանէ, և ո՛չ հոգի ի *յորդւոյ:* - 63. Ա՛րդ՝ կամքն ո՛չ է յիմացմանէ. և ո՛չ հոգի *յորդւոյ:* - 64. Նոյնպէս հոգին սուրբ ոչ բղխէ *յորդւոյ*, այլ միայն ի հօրէ: - 64. Նոյնպէս և հոգի ո՛չ է *յորդւոյ*՝ այլ միայն ի հօրէ: - 64. Ա՛րդ՝ եթէ ելանէ ի հօրէ և *յորդւոյ*, լինի իբրև եզր և **գ**. և ո՛չ իբրև զմիջին: - 64. Ապա ուրեմն ո՛չ ելանէ ի հօրէ և *յորդւոյ*. այլ ի հօրէ *յորդի:* - 64. Եւ անդ ասի ի հաւատամքն եթէ՝ հոգին սուրբ որ ի հօրէ. և ո՛չ յիշի *որդի:* - 64. Վեցերորդ վկայ ի ժողովոյն քաղկեդոնի զոր նոքա ընդունին և ո՛չ մեք. այսպէս է գրեալ թէ՝ որ ոք զհոգին ի հօրէ և *յորդւոյ* բղխումն ասիցէ՝ նզովեալ լիցի: - 64. Ա՛րդ՝ զհոգին սուրբ ի *յորդւոյ* ո՛չ ասեմք. սակայն զնա հոգի *որդւոյ* անւանեմք: - 65. Զի որպէս այժմ կարեմք ասել ճշմարտապէս թէ հոգին սուրբ ելանէ ի հօրէ. և վասն ապառնւոյն կարեմք ասել թէ հոգին սուրբ ո՛չ ելանէ *յորդւոյ*...: - 65. Ապա ուրեմն *որդի* և հոգին սուրբ ի հօրէ ելանեն իբր բ շառաւիղ. և ըստ այսմ ո՛չ ելանէ մի ի միւսոյն: - 65. Զի ա՛յլ է բղխումն, և ա՛յլ է առումն. այսպէս՝ զի հոգին բղխումն է ի հօրէ, որպէս *որդին* ծնունդ է ի հօրէ: - 65. Այլ զի ամենայն ինչ զոր ունի հայր՝ *որդւոյ* է. և քրիստոս աստուծոյ զօրութիւն և իմաստութիւն: - 65. Իսկ հոգին առնու յիմաստութեանց և զօրութեանց *որդւոյ* և բաշխէ՛ արարածոց: - 65. Եւ հասանէ իբր յակն առ *որդի*. և *յորդւոյ* առ մեզ հեղու: - 65. Այսպէս ասեմք զհոգին *որդւոյ:* - 65. Դարձեալ՝ հոգին սուրբ ելանէ ի հօրէ և առաքի *յորդւոյ*. և ինքնիշխան կամօք շնչէ_զշնորհս իւր յորս կամի և որքան: - 66. Եւ գիտելի է, զի որպէս բան կոչի *որդին* աստուծոյ, նոյնպէս խօսք կոչի հոգին սուրբ...: - 66. Երկրորդ՝ խօսքն ունի զիմաստ բանին և զմտացն. և հոգին սուրբ զիմաստութիւն հօր և *որդւոյ:* - 66. Նոյնպէս հոգին սուրբ պատմէ և ուսուցանէ զգիտութիւն հօր և *որդւոյ:* - 66. Չորրորդ՝ խօսքն նոյն է բնութեամբ ընդ բանին և մտացն. և հոգին սուրբ նոյն է բնութեամբ ընդ հօր և *որդւոյ:* - 66. Երրորդ՝ զի ո՛չ մի *որդի* և տէր յիսուս քրիստոս խոստովանին որպէս ասեն առաքեալքն և հարքն

սուրբք: - 66. Վեցերորդ՝ զի թէ մեք շնորհիւ՝ որդեգրեալքս կերպանամք առ ճշմարիտ և բնութեամբ *որդին*, և թէ և նա՛ է ըստ մեզ շնորհիւ, պիտո՛յ է նմա վերնագոյն բնութեամբ *որդի* մարմնացեալ ի յոր կերպասցի և սա՛ ի նմանութիւն նորա շնորհօք *որդի:* - 67. Եօթներորդ՝ զի թէ մեք որպէս և եմք ընդ լծով ծառայութեան՝ այսպէս և նա՛, զիա՞րդ յառակսն որ յաւետարանն՝ յետ ծառայիցն՝ *որդի* առաքի...: - 67. **Երկոտասաներորդ՝ զի թէ վասն բնակութեան նորա՝ է մարմին նորա ուտելի որպէս ինքն ասաց՝ «մարմին իմ ճշմարիտ կերակուր է». կերօղքն եղիցին գազանք մարդակերք. և ո՛չ մարմնոյ և արեան *որդւոյն* աստուծոյ**: - 67. Ա՛րդ եթէ է՛ այլ *որդի* և եղև աթոռակից հօր, ուրեմն ի բաց էհան զբանն ի նստելոյն ընդ աջմէ հօր որ է սեփհական նմա և վայելուչ հօր՝ լինիլ աթոռակից և գահակից: - 67. Նաև աշակերտքն. որպէս պետրոս որ դաւանեաց զքրիստոս *որդի* աստուծոյ: - 68. Կոյսն մարիամ զմիածի՞նն *որդի* ծնաւ ըստ ինքեան, և թէ զանդրանիկն որդի առանձին, և թէ զերկուսն: - 68. Կոյսն մարիամ զմիածի՞նն որդի ծնաւ ըստ ինքեան, և թէ զանդրանիկն *որդի* առանձին, և թէ զերկուսն: - 68. Զի թէ զերկուսն, ահա՛ երկու *որդւոյ* մայր ասացիք: - 68. Իսկ եթէ զանդրանիկն առանձին, ահա՛ զկուսածինն *որդի*՝ ո՛չ ասէք աստուած՝ ըստ նեստորի: - 68. Իսկ եթէ զմարդկութիւնն բնութեամբ *որդի* ասացեր, ահա որ հաներ զբանն յորդիութենէ: - 69. Ո՛վ բաժանօղդ՝ որոյ *որդւոյ* ասես սրբիլ հոգւովն սրբով: - 69. Ա՛րդ մկրտիմք հաւատացեալքս որպէս ի հայր և ի հոգին սուրբ՝ այսպէս և *յորդին* մարմնացեալ մի տէր մի քրիստոս: - 69. Ստեաց ուրեմն և հայր՝ կոչելով իւր *որդի* զոր ի զաւակէն Դաւթի: - 69. Նմանապէս ասա՛ և զայս. զբնութեա՞մբն *որդի* ասես ընդ աջմէ մեծութեանն նստեալ, թէ որ շնորհօքն որդիացեալ ըստ քեզ: - 70. ...ո՛չ եթէ հայր դատէ զոք, այլ զամենայն դատաստան ետ *որդւոյ* իւրում: - 70-71. Ապա ուրեմն՝ աստուած է *որդի* կուսին: - 73. Ապա ուրեմն *որդին* մարդոյ որ էն է և յերկինս: - 73. Ապա ուրեմն աստուած և *որդի* աստուծոյ է մարմնացեալն քրիստոս: - 73. Ապա ուրեմն երևեալն մարմնով և խօսեցեալն է *որդի* աստուծոյ և մի ընդ հօր: - 73. Ապա ուրեմն մի՛ է *որդին* աստուծոյ և *որդին* մարմնացեալ և մարդացեալ աստուած: - 73. Ապա ուրեմն մի աստուած է և մի *որդի* հաստիչն ամենայնի և անդրանիկն մեռելոց: - 73. Ապա ուրեմն չարչարեալ և մեռեալ մարդն է *որդի* աստուծոյ: - 74. Եւ երևեալ մարմնովն մի բնութիւն տեսակացեալ և մի անձնաւորութիւն. մի տէր. մի *որդի*. ըստ սուրբ հարցն ուղղափառութեան: - 76. Այսպէս և ծնեցեալն *որդի* միաւորեալ մարմնովն է և ասի աստուած և մարդ. ի բաղադրեալ միաւորութեանն. և ո՛չ ասի **բ** անձն կամ **բ** բնութիւն: - 77. Դարձեալ՝ որպէս էր *որդի* հօր յատկութեամբ իւրով, և եղև *որդի* կուսի յատկութեամբ իւրով: - 77. Եւ ո՛չ է և ո՛չ ասի **բ** *որդի* կամ **բ** դէմ և այլն. այլ մի *որդի* և մի անհատ յատկութեամբ իւրով. և մի դէմ. և մի անձն. և մի կերպ. և այլն: - 77-78. Այսպէս էր ի հօրէ բնութեամբ՝ և եղև ի մօրէ բնութեամբ. և ո՛չ ասի երկաւոր բնութիւն և երկաբուն. այլ միաւոր և միաբուն. մի *որդի*. և մի բնութիւն. միատեսակ աստուած մարդացեալ: - 78. Եւ հաստատեալ այսու եթէ՝ հոգին և մարմինն է միաւորեալ ընդ բանին աստուծոյ, կարգէ՛ և զայն. բայց *որդիք* ասէ ո՛չ **բ**. և ո՛չ աստուածք. զայս վասն դիմաց միաւորութեանն ասէ: - 80. Որք **բ** անձն և **բ** բնութիւնս՝ և **բ** կամս՝ և **բ** գործս բաժանեն քրիստոսի. **բ** *որդի*՝ և **բ** քրիստոս յայտնապէս ասեն. զմինն տէր, և զմինն ծառայ, զմինն բնութեամբ *որդի* աստուծոյ, և զմիւսն շնորհօք. և այլն: - 82. Իսկ անձն առանց բնութեան՝ միայն անուն է սոսկ. որպէս *որդի*՝ կամ քրիստոս՝ կամ յիսուս: - 82. Ա՛րդ՝ սոքա զանունն մի ասեն, և յանունն միաւորեն զբ էութիւնսն. այսինքն զաստուածն և զմարդն. և ասեն մի անձն. մի *որդի*. մի քրիստոս. և այլն: - 82. Զի բանն *որդի* կոչի, և մարդն *որդի* կոչի: - 82. Խոստովանիմք *զորդին* աստուծոյ նախ քան զյաւիտեանս ծնեալ ի հօրէ՛. և յետոյ ի ժամանակի ծնեալ ի մօրէ՛: - 83. Զնոյն զօղ աստուած և *որդի* աստուծոյ ըստ հոգւոյ. իսկ *որդի* մարդոյ ըստ մարմնոյ: - 83. Ո՛չ երկուս բնութիւնս զմին *որդին* ասելի. «զմինն երկրպագելի և զմինն աներկրպագելի. այլ մի է բնութիւն աստուծոյ բանին մարմնացելոյ»: - 83. Երրորդ՝ զի թէ միայն անձամբ միանայ և ո՛չ բնութեամբ, ապա քրիստոս անձամբ և_կոչմամբ միա՛յն է *որդի* աստուծոյ և ո՛չ բնութեամբ: - 84-85. Եւ բնութեամբ է հայր և *որդի* և հոգի մի: - 86. Եւ է՛ ուրեք զի միաւորեն զանունն՝ մի քրիստոս՝ մի տէր՝ մի *որդի*՝ և մի անձն ասելով որպէս քաղկեդոնի թըւի երկաբնակ ժողովոյն: - 87. Եթէ երկուքն, հարկ է ասել ձեզ՝ փառք հօր՝ և *որդւոյ* երկու բնութեանցն՝ և հոգւոյն սրբոյ: - 90. Եւ կամ թէ՝ մկրտիմք յանուն հօր՝ և *որդւոյ* **բ** բնութեանցն՝ և հոգւոյն սրբոյ. և որ սոցին նման: - 90. Ո՞չ ապաքէն ասեմք զքրիստոս՝ աստուած և *որդի* աստուծոյ. զի աստուածն ուղղական է՝ և *որդի* աստուծոյ հոլովական: - 92. Եւ դարձեալ՝ եթէ շնորհօք *որդի* և օծեալ, և ո՛չ աւելի նա քան զմեզ. զի և մեք չեմք ծառայ, այլ՝ *որդի:* - 94. Եւ միածին *որդի* գիտացաք զբանն ծնեալ ի հօրէ. և եղեալ *որդի* կուսին: - 96. Ա՛րդ՝ ի մարդկանէ ո՛չ ոք ետես զաստուած, և *որդի* կուսին ո՛չ ետես որպէս դուդ ասես. սո՛ւտ է ապա և պատմութիւնն զոր ինչ

ուսոյց մեզ. զի ո՛չ է տեսեալ և պատմէ. ահա անդունդք հայհոյութեան. զոր ի կարգիս լռե՛մ: - 96. Ա՛րդ՝ եթէ տգէ՛տ է *որդին* աստուծոյ հօր, և տգէտ *որդւով* խօսեցաւ ընդ մեզ. տգիտութեան եղիցի և օրէնքս նոր քան զհինն: - 96. Ա՛րդ՝ եթէ զհայր ո՛չ ոք ի յօտարաց ճանաչէ՝ և ո՛չ *որդի* ճանաչէ ըստ քեզ, եղիցի և *որդին* օտար ի հօրէ: - 96. Եւ դարձեալ՝ որպէս դուդ կարծես և ինքն *որդին* մարդոյ զինքն ո՛չ ճանաչէ. և հրէայքն *զորդի* ո՛չ ճանաչէին ասելով...: - 96. Ապա և *որդին* մարդոյ եղիցի ըստ կարգին հրէից և ո՛չ առաւել: - 96. Բայց կամեցաւ և յայտնեաց զինքն *որդի* և զհայր՝ ի ձեռն նշանաց աշակերտաց իւրոց. որպէս ի պտղոյն ծառն երևի: - 96. Ա՛րդ՝ եթէ հայր առաւել գիտէ և *որդի* նըւազ, այս լինի կամ հօրն նոյնպէս նըւազ գիտել որպէս *որդի*. և կամ *որդի*՝ ո՛չ ճշմարիտ ասել: - 97. Ա՛րդ՝ եթէ զբոլորն ցուցանել նշան է սիրոյ հօր, ապա թէ ո՛չ ինչ ցուցանէ ատէ՛ *զորդի:* - 97. Ա՛րդ՝ գառն աստուծոյ է՛ *որդին* մարդոյ: - 99. Ա՛րդ՝ դատէ *որդի* ո՛չ միայն ըստ աստուածութեան իւրում. այլ և ըստ մարդկութեանն: - 100. Նա՛խ՝ զի ասեմք հայր և *որդի* և հոգի: - 105. Զի հայր ո՛չ է *որդի* և ո՛չ հոգի: - 105. Նոյնպէս *զորդւոյ* և զհոգւոյ իմացիս: - 105. Երկրորդ՝ ասեմք ծնօղ և բղխօղ հայր, ծնեալ և առեալ *որդի*. բղխումն և առումն հոգի: - 105. Տե՛ս՝ զի հոգին բղխումն է հօր անձամբ. և առումն *յորդւոյ* իմաստութեամբ. որպէս ցուցաւ ի վեց գլուխն ի **ժգ** համարն: - 105. *Որդի* յանպատճառէն և պատճառ: - 105. Վասն զի հայր ո՛չ ունի հայր. այլ ունի *որդի* և հոգի: - 105. *Որդի* ո՛չ ունի *որդի*. այլ ունի հայր և հոգի. զի հոգի քրիստոսի ասեմք: - 105. Յոգին ո՛չ ունի *որդի* և ո՛չ հոգի. այլ պատճառ զհայր: - 105. Չորրորդ՝ կարողութիւնն հօր. իմաստութիւնն *որդւոյ*. բարութիւնն հոգւոյն: - 105. Եւ *որդի* տգէտ վասն մանկութեան: - 105. Յինգերորդ՝ որպէս միա՛կ է հայր. զի սկիզբն է ամենայն թւոց. և երկեակ *որդի*. և երրեակ հոգի ըստ աստուածաբանին: - 105. Ո՛չ թիւ ասեմ. ապա թէ ո՛չ, մի հայր. մի *որդի*. մի հոգի: - 105. Եւ որպէս մշտնջենաւոր *որդի* ի հօրէ սկսեալ և անվախճան. որպէս ժամանակ հոգի ի հօրէ սկսեալ և *յորդի* դադարեալ: - 105. Այսպէս և կոչումն երից անձանցն. հա՛յր. *որդի՛*. հոգի՛: - 105. *Որդի* և բան: - 106. Երկրորդ՝ հասարա՛կ է ի միմեանս գոլ անձանցն. որպէս *որդի* ի հայր. և հայր *յորդւոջ*. և հոգի ի հայր և *յորդի*. և անդրադարձեալ: - 106. Երրորդ՝ հասարա՛կ է ի յԵրրորդութիւնն միութիւնն սուրբ. զի մի է հայր. մի *որդի*. մի հոգի: - 106. Վեցերորդ՝ *որդին* աստուծոյ եղև *որդի* մարդոյ. զի զմեզ արասցէ *որդիս* աստուծոյ: - 107. Եւ զի *որդին* աստուծոյ բնութեամբ *որդի* մարդոյ եղև, մի՛ յերկուանալ թէ լինիցիս և դու շնորհօք *որդի* աստուծոյ: - 107. Նոյնպէս հայր սկիզբն է. և *որդի* և հոգի ի միոյ սկզբնէ: - 107. Երրորդ՝ զի **գ** մի է. այսինքն մի. մի. և մի. նոյնպէս մի հայր. մի *որդի*. մի հոգի: - 107. Իսկ ի սուրբ Երրորդութիւնն՝ մինն պակաս չունի քան զերկուքն. և ո՛չ երկուքն աւելի քան զմինն. զի հայր ունի զամենայն լիութիւն *որդւոյ* և հոգւոյ: - 108. Նոյնպէս և *որդի* և հոգի: - 108. Իսկ ի սուրբ Երրորդութիւնն հայր կատարեալ. *որդի* կատարեալ. հոգի կատարեալ. և կատարեալն ո՛չ յաւելու և ո՛չ նըւազի: - 108. Իսկ սուրբ Երրորդութիւնն անփոփոխելի է. զի հայր ծնաւ *զորդի* և բղխեաց զհոգին. և ո՛չ փոխեցաւ ի գոլոյն հայր: - 108. Նոյնպէս և *որդի* և հոգի: - 108. Իսկ ի սուրբ Երրորդութիւնն անբաժանելի՛ է հայր ի *յորդւոյ* և ի հոգւոյ. *որդի* ի հօրէ և ի հոգւոյ. և հոգի ի հօրէ և *յորդւոյ:* - 108. Ա՛րդ՝ ասեմք զհայր աստուած. և զորդի աստուած. և զհոգի աստուած. ապա կարե՞մք ասել զհայր երրորդութիւն. և *զորդի* երրորդութիւն. և զհոգին սուրբ: - 108. Վասն է՞ր կոչի *որդի:* - 108. Զի որպէս ճառագայթ յարեգակն է՛, և *որդի* ծնեալ ի հօրէ: - 108. Զի յաւիտենական բղխէ ի հօրէ առ *որդի*. և նովաւ առ մեզ գայ. որպէս ջերմութիւն ճառագայթիւ արեգականն: - 108. Դարձեալ՝ որ զամենայն ստեղծ՝ հայր կոչի. և որ զամենայն պարունակէ՛ զի մի՛ լուծցին՝ *որդի*. և որ շնչելով կենագործէ և զարդարէ զամենայն՝ հոգի սուրբ յորջորջի: - 108. Քանզի՝ *որդի* նմանագո՛յն է հօր քան զդուստր: - 109. Յոգին սուրբ ընդէ՞ր ո՛չ կոչի *որդի:* - 109. Վասն է՞ր յորժամ փառս տամք, նախ՝ հօր, ընդ նմին *որդոյ*, և ապա հոգւոյն: - 109. Ա՛րդ՝ զի հայր պատճա՛ռ է *որդւոյ* ծննդեան՝ և հոգւոյ բղխման, վասն որոյ հայր նախադասի. իսկ ընդ նմա *որդի*. ո՛չ որպէս ոմանք կարծեն *որդի* պատճառ է հոգւոյ բղխման, այլ **գ** է ուղիղ տեսութիւնն: - 109. Նախ՝ զի հայր պատճառ է հոգւոյ բղխման՝ և *որդւոյ* առման. զի հոգին սուրբ բղխէ՝ ի հօրէ՝ և առնու *յորդւոյ:* - 109. Երկրորդ՝ զի *որդին* առինչ է ի հայրն. և համանգամայն բնութեամբ: - 109. Երրորդ՝ *որդին* ծնունդ նկատէ ի յէութիւնն, և հոգին ի կեանքն. և նախ է գոլ իրին՝ և ապա կենդանի: - 109. Նախ՝ զի մի անձն հօր բազմացաւ ի յանձն *որդւոյ*. և բազմապատկի ի յանձն հոգւոյն սրբոյ: - 110. Նախ՝ առ համաբունսն՝ հայր սկիզբն է *որդւոյ* և հոգւոյն սրբոյ. և պատճառ այլ ամենայն արարածոց: - 110. Այլ արդ՝ ըստ անեղ էութեանն յառաջ էած զանեղ էութիւնն *որդւոյ* և հոգւոյ. և ըստ անհուն զօրութեանն յառաջ էած զեղականն էութիւն. զի անհուն զօրութիւնն կարօ՛ղ է ամենայն ընդդիմակաց. ըստ որում ամենազօ՛ր է: - 113. Դարձեալ՝ անեղն և անսկիզբն աստուած հայր՝ յինքենէ յառաջ քան զյաւիտեանս ծնաւ և բղխեաց

զանեղակից *որդին* և զսուրբ հոգին: - 114. Ա՛րդ՝ *որդի* և հոգի անեղակից գոլով՝ հաւասար են հօր: - 114. Այլ արդ՝ *որդի* և հոգի ըստ որում ի պատճառէն՝ սկիզբն ունին զհայր. և ըստ որում՝ նախ քան զյաւիտեանս՝ անսկիզբն են ընդ հօր: - 114. Զի հայր անսկիզբն՝ յինքենէ՛ սկսեալ *որդւով* և հոգւով՝ արար սկիզբն սկզբնաւորացս...: - 114. Նախադրութեամբն՝ որ է՛ և ասի. որպէս Հա՜յր. *Որդի՜*. Հոգի՜. լո՜յս. կեա՜նք. և այլն: - 123. Նոյնպէս որք ուրանան և ասեն, ո՛չէ աստուած քրիստոս. ո՛չէ հայր. ո՛չէ *որդի:* - 124. Նախ՝ զի ուրացականն ըստ պակասութեան է. որ ասէ ո՛չէ աստուած քրիստոս. այսինքն պակա՛ս է և ո՛չէ աստուած. և ո՛չէ հայր. և ո՛չ *որդի:* - 124. Իսկ բացբարձականն ըստ գերազանցութեան է. զի գերազա՛նց բան է՝ և գերագունա՛կ միտ. և գերագոյն և առաւել հայր՝ և *որդի*. և ո՛չ ըստ մեր կարգիս որպէս մեր բանս է և միտք: - 124. Եւ *որդւոյ* պատկեր՝ լոյսն դեղին: - 124. Նոյնպէս հայր է սկիզբն *որդւոյ* ծննդեան. և հոգւոյն բղխման: - 124. Եւ *որդի* և հոգի ի հօրէ: - 125. Եւ զհայր *որդի՛* յայտնէ: - 125. Այս է զի հոգին սուրբ *որդւով* պարգևի ամենայն արարածոց յերկինս և երկրի: - 125. Զայս ոմանք ի վերայ սուրբ Երրորդութեանն մեկնեն այսպէս. սիրօղ է հայր. սիրելի *որդի*. և սէր հոգին սուրբ: - 128. Եւ քերոբէն որ է՛ բազում գիտութիւն՝ ի դէմս *որդւոյ*. զի նա՛ է իմաստութիւն և գիտութիւն հօր ըստ առաքելոյն: - 135. Նախ՝ զի տէրութիւնն ակնարկէ՛ առ հայր. և զօրութիւնն առ *որդին*. և իշխանութիւնն առ իշխանակից սուրբ հոգին: - 135. Նախ՝ զի պետութիւնք պատշաճին առ հայր. և հրեշտակապետքն առ *որդի* իբր յերկուց միացեալ. և հրեշտակքն ի դէմս հոգւոյն իբր նախ եկաւորեալք յամենայն ուրեք, և ապա *յորդի* և ի հայր բնակեալ: - 136. Իսկ կողմնաւոր՝ որպէս փոխանցեալքն ի միմեանց. *որդի* ի հօրէ՛. և լօղակք ի ջրոյ: - 142. Եւ ի ներքնագոյնն, որպէս ի հնազանդեալս՝ և *յորդիս:* - 143. Ա՛րդ՝ ներքնագոյն սիրովն խնամէ աստուած զարարածս. և առաջին դասք հրեշտակաց զվերջինսն. և հարք *զորդիս*. և վարդապետք զաշակերտս. և իշխանք զիշխեցեալս. տեարք զծառայս. և այս սիրովս շարունակին ընդ նոսա: - 143. Իսկ վերնագոյն սիրով սիրեն արարածք զարարիչն. և վերջին հրեշտակք զառաջինսն. և *որդիք* զհարս. և նւազք զմեծամեծս. և այս սիրովս միաւորին ընդ նոսա: - 143. Մետասաներորդ՝ որպէս հայրն *զորդին* գան հարու զի զգաստացեալ մի՛ զրկեսցի ի ժառանգութենէ հայրենեացն. այսպէս և աստուած զսուրբս և զսիրելիս իւր խրատէ՛: - 159. Այլ տեսցուք զայս և յօրինակս ճշմարտութեան. զի ադամ յետ միոյ յանցանացն ո՛չ մատոյց պատարագ զամենայն աւուրս կենաց իւրոց. այլ *որդւո՛ցն* հրամայէր մատուցանել: - 167. Երկրորդ՝ թէպէտ յետոյ եղեն արարածք, ո՛չ են պատահումն. որպէս և բանն էր յառաջ, և յետոյ եղև մարմին. այլ մարմինն բանին ո՛չ է պատահումն. և *որդի* հօրն ո՛չ է պատահումն թէպէտ յետոյ ծնանի զի առ ինչ է հօրն: - 170. Այլ ասի տեղի կերպիւ ինչ, զի է՛ հայր ի *յորդի*. և *որդի* ի հայր. և հոգի ի հայր և *յորդի*. և անդրադարձեալ...: - 172. Երկրորդ՝ առաջին ստեղն է հայր. ոչ յումեքէ. միջինն *որդի* ծնունդ ի հօրէ. վերջինն հոգի բղխումն ի հօրէ և ելումն *յորդւոյ*. զի *որդւովն* երևի. և հարթ հաւասար աստուածութեամբ և արարչութեամբ: - 178. Ուսաք յիմաստնոց թէ՝ ի բաժանիլ լեզուաց հբ տանուտերանց, և ի գնալն յիւրաքանչիւր տեղիս ի հեռու կամ ի մօտաւոր աշխարհս. զօրն զայն տարեմուտս կարգեցին. և ուսուցին *որդւոց* իւրեանց պատուեալ զօրն զայն տօրք ընչից: - 200. Իսկ ադամայ կոչելն փա՛ռք է *որդւոցս:* - 220. Զի *որդի* պատկե՛ր է հօր և տիպ և կերպարան: - 237. Երկրորդ՝ զի ոչ հարազատ *որդին* սեպհականէր զժառանգութիւնս հօր. այլ օտարն ի մեծութիւն հասանէր, և իւրն չքաւորութեամբ տառապէր: - 238. Դարձեալ՝ իմաստութիւնն պատշաճի հօր ըստ կարողութեան. և գիտութիւնն *որդոյ* իբր բան. և հանճարն հոգւոյն բղխման: - 270. Զորօրինակ՝ *որդի* թագաւորի պատկե՛ր է թագաւորին. զի բնութենակից է նմա: - 273. Ոմանք ասեն եթէ պատկեր աստուծոյ հօր՝ է՛ *որդի*, և նման հոգին սուրբ: - 273. Այսպէս ասեն թէ՝ մարդն կազմեալ է ի պատկեր *որդւոյ*, և ըստ նմանութեան հոգւոյն սրբոյ: - 273. Եւ այս չէ՛ ընդունելի. զի մարդն երրորդութեանն է պատկեր եղեալ որպէս ցուցաւ. և ո՛չ միայն *որդւոյ* և հոգւոյն սրբոյ: - 273. Եւ այլք ասեն թէ՝ մարդն ո՛չ է պատկեր աստուծոյ. այլ պատկեր պատկերի. զի *որդի* է հօր պատկեր, և մարդն *որդւոյն*. վասն այն ասաց նման և պատկերի: - 273. Եւ զայս սուտ առնէ սուրբն կիւրեղ եթէ՝ *որդի* է ճշմարիտ պատկեր հօր. և մարդն եղեալն է ի պատկեր *որդւոյ:* - 273. Զի որպէս *որդի՛* է ի հօրէ նոյն բնութեամբ. և մարդն ի մարդոյ նոյն բնութեամբ: - 275. Իսկ պատուիրանքն՝ բարեկամի առ բարեկամս քաղցրութեամբ. որպէս հօր առ *որդիս*. և եղբօր առ եղբարս: - 277. Վեցերորդ՝ զի յառաջ քան զիւր վախճանն ետես զմահ կնոջն և *զորդւոյն:* - 279. Որով և *որդիքս* վասն պարտուց հօր՝ արտաքոյ մնացաք: - 280. Գօտէմարտիլն յակոբայ. և անուանն սքանչելի. և հռաքէլ լայր *զորդիս* իւր: - 283. Ուստի և *զորդիսն* նորա՝ *որդիս* աստուծոյ անուանէ գիր: - 288. Եւ ծ ամն՝ որ առ *որդւով* նորին կոստանդեաւ յերկնից լուսափայլեալ ի լեռնէն ծիթենեաց մինչև ի սուրբ գողգոդա: - 294.

Հայր առ *որդի* և հոգի սուրբ ասաց, որովք արար զմարդն մի ազգ և մի լեզու: - 297. Ապա՛ ի թաբօր լերինն ամպ խոնարհեալ և ձեռն կարկառեալ ձեռնադրեաց զնա ասելով, այս մելքիսեդեկ անհայր անմայր չհամարեալ յազգս` նմանեալ *որդւոյն* աստուծոյ: - 300. Նոյ օրհնեաց զսեմ, և սեմայ *որդի* ո՛չ գոյր նման իւր որ օրհնէր զնա: - 300. Աբրահամ *որդի* էր ի տանէն սեմայ` արժանի օրհնութեան: - 300. Ո՞րք են *որդիքն* աբրահամու նմանեալ աւազոյ. և ո՞րք աստեղաց: - 303. Զալէկոծեալսն մեզօք և զծանրացեալսն` աւա՛զ կոչէ. որպէս *զորդիսն* իմնայէլի: - 303. Եւ որք հաղորդեցան հոգւոյ, այսինքն հաւատոյ նորա, եղեն *որդիք* հաւատոյ նորա. որպէս քրիստոնեայք: - 303. Փորձեաց աստուած զաբրահամ ասելով, ա՛ռ *զորդիդ* քո սիրելի և բե՛ր մատո՛ ինձ ողջակէզ: - 304. Այլ ազա՛տ գոլով յայսցանէ` վասն առաւել սիրոյն աստուծոյ տա՛յ *զորդին* իւր ի զենումն: - 304. Որոյ փոխանակ հայր աստուած ետ *զորդին* իւր վասն գերազանց սիրոյն ի փրկութիւն աշխարհի: - 304. Եւ որպէս հայրն աբրահամ նմանեցաւ աստուծոյ հօր, մանաւանդ և *որդին* իսահակ համեստութեամբ ինչ իրօք նմանի *որդւոյ* նորա քրիստոսի: - 304. Նա՛խ` զի որպէս իսահակ է՛ ստուգապէս *որդի* աբրահամու: - 304. Սապէս և քրիստոս ըստ մարմնոյ *որդի* է աբրահամու ըստ մատթէոսի: - 304. Երկրորդ` զի իսահակ աւետեաց է *որդի* և խնդութեան զաւակ որպէս անունն յայտնէ իսահակ, որ է՛ ծաղր: - 304. Տասներորդ` և որպէս իսահակ նախասիրէր զանդրանիկն *որդի*, բայց յետոյ ետ զօրհնութիւնն նորին` *որդւոյն* կրսերոյ: - 305. Այսպէս և սէրն աստուծոյ առաւել ցուցաւ ի ձեռն *որդւոյն:* - 305. Իններորդ` միամա՛յր է *որդի* սառայի. միածին է և *որդի* կուսին. մի ծնանիմք և մեք յաւազանէն: - 307. Նոր ծնանի և աւազանն *զորդիս* մարդկան *որդիս* աստուծոյ: - 307. Հայրն աբրահամ կոչեաց զանուն *որդւոյ* իւր իսահակ: - 307. Հայրն երկնաւոր կոչեաց զիւր *որդին* անդրանիկ: - 307. *Որդի* ծնաւ իսահակ: - 308. *Որդի* և միածինն յիսուս: - 308. *Որդի* ծնանիմք և մեք յաջակողմն յաւազանէ: - 308. Երկրորդ` հոգեկան. որ յաւազանէն ծնանիմք ի հոգւոյն սրբոյ. այսինքն յղացեալք ի բանէն հաւատոյ` ծնանիմք *յորդիս* աստուծոյ: - 308. Եւ անդանօր լինի անմահ և անապական ծնունդ և *որդիք* յարութեան...: - 308. Երկրորդ` անդրանիկ է բանն աստուած ի հօրէ ծնեալ. և կրտսեր ա՛յլ եղեալքս` ի հօրէ՛ գոյացեալ. զի *որդի* ծնո՛ւնդ է հօր և մեք արարածք. և նա՛ ի բնութենէն և մեք ի կամացն: - 309. Տասներորդ` մկտութեամբն լինիմք *որդիք* աստուծոյ և եղբարք քրիստոսի. և գերազանցիմք գ ազգաց. այսինքն հասարակ մարդկան, և իսրայէլացւոցն, և հրեշտակաց երկնից: - 309. Վեցերորդ` զի կաղանալո՛ց էին *որդիք* նորա ի շաւղա՛ցն աստուծոյ: - 311. Դարձեալ` ամենայն անուն որ կոչի` կամ նախ քան զինքն լինի յորմէ անւանի. որպէս հայրն կոչէ՛ *զորդին* իւր մարդ: - 312. Յաղագս երից *որդւոց* է լալ մօրն հռաքէլի: - 312. Նա՛խ` զի ի ծնանիլն բենիամենի` մեռաւ մայրն և *որդի* վշտաց եղև նմա: - 312. Զառաջինն մխիթարեցաւ աստուածածին կուսին մարիամաւ. որ առանց երկանց և ցաւոց ծնաւ զմիածինն *որդի*, որ եբարձ զարտասուս վշտաց մօրն հռաքէլի: - 312. Զերկրորդն մխիթարեցաւ առաքելաւն պօղոսիւ որ էր *որդի* նմին: - 312. Եւ տէր մեր գեղեցիկ տեսլեամբ քան զամենայն *որդիս* մարդկան. զի «եղբօր *որդին* իմ ասէ` կարմիր է և սպիտակ ընտրեալ ի բիւրուց». այսինքն զի աստուած է մարդացեալ: - 313. Նոյնպէս և սատանայ ատէ՛ր զմարդկային բնութիւնս զի ի պատկերն աստուծոյ արարաւ. և հրէայքն ատէին զքրիստոս. զի վկայեաց հայր թէ դա՛ է *որդի* իմ սիրելի: - 313. Նոյնպէս և քրիստոս եկն առ եղբարս իւր որ էին *որդիք* դաւթի և աբրահամու և առաջնորդք ժողովրդեանն. և յուդա վաճառեց զնա. և տէր եղև կենդանեաց և մեռելոց և կերակրիչ. զի ազատեաց զհոգիսն ի սովոյ դժոխոցն: - 313. Նոյնպէս և տէր մեր յետոյ բառնալո՛ց է զչար. գազանն *զորդին* կորստեան և զպաշտօնեայսն նորա ի կատարածի: - 314. Եօթնժ, և ի յառնել առիւծուն սարսին ամենայն կենդանիք *որդիք* ջուրց: - 316. Եւ ի յառնել տեառն մերոյ ի գերեզմանէն` սարսեցին ամենայն թշնամիք նորա *որդիք* անդնդոց: - 316. Հինգերորդ` ի լերինն մասեայ յորժամ ել նոյ ի տապանէն` օրհնեաց աստուած զնա՛ և *զորդիսն* նորա ասէ գիրն. և հայր և սերմ արար մարդկան ազգի: - 319-320. Եւ այլք ասեն թէ մովսէս գրեաց ի յանդիմանութիւն *որդւոցն* յակոբայ. որք առին զօրէնս և ո՛չ պահեցին. և զաստուծոյ զամենայն երախտիսն մոռացան: - 320. Եւ ունէր է *որդիս* և գ դստերս նման բարեպաշտութեան ինքեան: - 321. Եւ հողմ կործանեաց զտունն և սպան *զորդիսն* ի սեղանի: - 321. Զի՞նչ է որ *որդիքն* յոբայ պատուէին զօր ծննդեան իւրեանց ի միասին ժողովիլով: - 321. Վասն է՞ր յոբ յետ խրախութեանն ժ պատարագաւ սրբէր *զորդիսն*. և մի զուարակ վասն մտաց մեղացն մատուցանէր: - 322. *Որդիքն* յոբայ որք մեռան արդա՞րք էին թէ ոչ: - 322. Այլ աշխարհն օսիդ` գաւա՛ռ է եսաւայ. զի օսիդն մի է *յորդւոցն* եսաւայ յորոյ անուն կոչեցաւ երկիրն օսիդ: - 327. Եօթնժ, մովսէս մի անգամ պատարագեաց և ետ ցահարօն և *զորդիսն:* - 329. Քսանևզ, մովսէս *որդի* կոչեցաւ դստերն փարաւոնի և փրկեաց զնա: - 329. և էառ զսեփովրա կին. և

ծնաւ **բ** *որդիս*. զգերսամ և զեղիազար...: - 330. Սեփովրա էր դուստր ռագուէլի քրմի՝ *որդոյ* դեդանայ. *որդւոյ* յեկտանայ. *որդւոյ* աբրահամու ի քետուրայ կնոջէ: - 330. Զի եղեն **զ** *որդիք* աբրահամու ի քետուրայ: - 330. Հինգերորդ՝ բորոտիլն զմահն եգիպտացւոց նշանակէր. և ողջանալն զկենդանանալն *որդւոցն* իսրայէլի որ ի մահ գրաւեալ էին: - 332. Վեցերորդ՝ ձեռն հօր է՛ միածին *որդին* որ ել ի ծոցոյ հօր և էառ զօձաձև բնութիւնս մեր. և դարձեալ ել առ հայր, ի նոյն բնութենէն ո՛չ կացեալ ի բաց: - 333. Երկրորդ՝ կարկուտն զհպարտ և զհայհոյիչ բանս նոցա խայտառակէ, և հուրն զբարկութիւն սրտին զոր ունէին առ *որդիսն* իսրայէլի: - 334. Նոյնպէս և նոքա կախարդութեամբն իւրեանց ի վաստակս *որդւոցն* իսրայէլի: - 334. Նա՛խ զի զանդրանիկ *որդիսն* աստուծոյ տանջեցին և մեռուցին. վասն որոյ անդրանիկք նոցա մահացան...: - 334. Նա՛խ՝ զի օտարք և հիւրք էին *որդիքն* յակոբայ՝ և ատեցին զնոսա: - 335. Բոլորն ամենայն **դճլ** ա՛մ է յաւետեացն աբրահամու մինչև յելսն յեգիպտոսէ՛. այլ զերկու **ճե** ամն հարքն յերկրին քանանու բնակեցան. և զբ **ճիե** ամն *որդիքն* յեգիպտոս կացին...: - 337. Իսկ ըստ Լսեբեայ, **վպթ** ա՛մ է. զկայնան **ճի** ամ ի ներս առեալ, որ է՛ *որդի* արփաքսաթայ՝ և հայր սաղայի. զոր յիշէ աւետարանն, և ո՛չ յիշէ մովսէս: - 337. Եւ պատուէրն է խրատ սիրելեաց և *որդւոց:* - 340. Զորօրինակ թագաւոր ոք յորժամ լսէ՛ զգոյժ *որդւոյ* իւրոյ մեռելոյ, խորտակէ՛ զթագն, և զամենայն ինչ որ վասն նորա՛ է: - 349-350. Չորրորդ՝ յօրինակ դրախտին ադամայ՝ որ ձրի տուաւ և ո՛չ պահեաց. վասն այն *որդւոց* նորա գործով և աշխատութեամբ պարգևէ: - 350. Այսինքն մինչև **գ** ազգն ներեմ. կամ **գ** դարս. և ի չորրորդն ո՛չ դառնամ ի վրէժ խնդրելոյ. այլ հատուցանեմ զմեղս հարց *յորդիս:* - 351. Ո՛չ թէ զմեղս հարց *յորդւոցն* խնդրէ. այլ մեղաց հարցն ներէ երկայնամիտ լինելով մինչև *յորդոց յորդիս* զի դարձցին ի մեղաց: - 351. Ապա թէ *որդիք* և թոռունք չօգտին ի ներելոյն, յայնժամ պատուհասէ՛ և ջնջէ զյիշատակ չար ազգին: - 351. Այլ ո՛չ թէ զհարց մեղքն *որդիք* վճարեն: - 351. Այլ զներգործական մեղս անձին հօր՝ ո՛չ հատուցանէ անձն *որդւոյ*. ապա թէ ոչ՝ չար ծնողաց ո՛չ լինէր բարի զաւակ: - 351. Գառն՝ *որդիք* քրիստոնէի. և Ուլն՝ *որդիք* հեթանոսի յորժամ գան յեկեղեցին սրբին և նւիրին աստուծոյ: - 358. Գառն, զի անմեղ և կերակրելի՛ է և *որդի* աստուծոյ: - 361. Ահարոն և *որդիքն* է օր մնացին ի խորանն. վասն է՞ր մեք **խ**: - 363. Վասն է՞ր այրեցան նաբաթ և աբիուդ *որդիքն* ահարոնի: - 364. Վասն է՞ր աստուած հրամայեաց թւել *զորդիս* աբրահամու: - 377. Զի **գ** էին *որդիք* Ղևեայ. Գեթսոն. Կահաթ. և Մերարի: - 378. Նա՛խ՝ **գ** *որդիքն* ղևեայ գեթսոն, կահաթ, և մերարի, յօրինակ նորոյս **դ** դասուց: - 379. Երրորդ՝ ութն գունդ են ղևեայ **գ** *որդւոցն*, և մովսէս իններորդ: - 379. Անդրանկաց սատակումն եգիպտոսի, նշանակէ՛ զանկումն սատանայի յերկնից. և փոխանակ նոցա ընտրեալ և կոչեալ *որդի* անդրանիկ զհէլ. և զնոսա փոխարկեալ առնու զօծելոց դասս քրիստոնէից ի տեղի նոցա: - 380. Եւ դադան և աբիրոն *որդիք* ռուբենի՝ զիշխանութիւնն խնդրէին զի անդրանիկք էին: - 381. Նա՛խ՝ առ տեղեաւն ցուցանէր յահարոնէ՛ լինիլ քահանայ. *յորդիս* և ի թոռունս յազգէ յազգ: - 382. Երկրորդ՝ զի եօթնիցս եղև արժանի տեսլեան Երրորդութեանն. կրկին անգամ զհայր ի գիշերի. և կրկին *զորդին* ի տիւն. և հոգի աստուծոյ ի վերայ նորա երկիցս անգամ. և մի անգամ զհրեշտակն ետես: - 387. Վեցերորդ՝ շնորհընկալք. որպէս խոստովան *որդիք*. և ժողովուրդք. և քահանայք հայրապետաց: - 389. Զի ասեն եթէ՝ **խ** օր էր պայմանն ադամայ. յետ խ աւուր ուտէր ասեն՝ ի փայտէն գիտութեան և սրբութեամբ *որդիս* ծնանէր. և ապա՛ ուտէր ի կենաց փայտէն և վերափոխեր. և այլ բազում բանս տողե՛ն: - 391. Նա՛խ՝ անդ զհարքն թուեաց որք կոտորեցան. և աստ *զորդիսն* որք ժառանգէին զերկիրն: - 392. Երրորդ՝ զառաջինն հարցն ետ որ սատակեցան. զերկրորդն *որդւոցն* տայ, զի մի՛ լիցին չար և դառնացօղ որպէս հարքն իւրեանց: - 393. Զի՞նչ է որ ընդ դովտայ *որդիսն* և եսաւայ ո՛չ հրամայեաց կռուիլ. այլ ընդ ամուր հարցւոցն: - 393. Նշանակէ՛ որ չէ՛ պարտ կռուիլ մեզ ընդ ամենայն մարդկան. թէ չար թէ բարի. զի ա՛զգ են մեր և *որդիք* ադամայ: - 393. Եւ հայր աստուած որ ո՛չ կատարի կամք նորա ի մեզ. յայնժամ ըստ բազում գթութեան իւրոյ առաքեաց զմիածին *որդին* որ փոխանակ մեր կախեցաւ զփայտէն և ազատեաց զմեզ յանծիցն օրինաց...: - 400. Չորրորդ՝ *որդին* բնութեամբ. և շնորհօք նորածնեալք աւազանաւն *որդիք* աստուծոյ կոչին շնորհօք: - 402. Իսկ ոմանք զքրիստոսէ՛ ասեն բնութեամբ և շնորհօք *որդի*. որպէս նեստորք և քաղկեդոնիկք անիծեալք. զի այսպէս լինին **բ** *որդիք* և **բ** անձինք: - 402. Այլ մեք այսպէս խոստովանիմք զքրիստոս. *որդի* աստուծոյ բնութեամբ. և զնոյն *որդի* մարդոյ բնութեամբ: - 402. Եւ ի վերայ այսր՝ կուսութեամբ ծնաւ մարդն ադամ ի հողոյ. և կուսութեամբ ծնանիմք յաւազանէն *որդիս* աստուծոյ. և կուսութեամբ ծնանիմք ի յարութեանն ի կեանս անմահ: - 404. Եւ զոր յայտնեաց մեզ, ծանուցաք *որդւոցդ* մեր: - 405. Դարձեալ՝ և դուք զճածուկն աստուծոյ մի՛ համարձակիք քննել. այլ զոր ինչ յայտնէ ձեզ՝ ուսուցէք *որդւոց* ձերոց: - 405. Վասն է՞ր կոչի աւագ

օրհնութիւն. զի յակոբ ևս օրհնեաց *զորդիսն*. նոյնպէս և իսահակ. և այլն: - 407. Վասն զի զկայնան *որդի* արփաքսաթայ և հայր սաղայի **ճ** և **ի** ամ ի թիւ առնու: - 411. Ընդ *որդւոցն* երկու: - 412. Ութերորդ՝ Զի՞նչ եփուտն և թերափն. և զի՞նչ մեղք *որդւոցն* հեղեայ: - 412. Եւ զի պատառեաց զկրկնոցն. և եհարց՝ ո՞յր *որդի* է դաւիթ: - 412. Քսանն**ե**, Յարութիւն *որդւոյ* այրւոյն: - 413. Յետ վախճանելոյն Մովսէսի՝ առաջնորդեաց ժողովրդեանն փոխանորդ նորին Յեսու *որդի* նաւեայ. ի ցեղէն եփրեմի: - 414. Վեցերորդ՝ զի *որդիք* նոցա ի նոցանէ ուսցին զպատերազմ: - 417. Երեքտասաներորդ՝ անէ՛ծ յեսու որ շինէ զերիքով՝ անդ անդրանիկ և կրտսեր *որդւով:* - 418. Եւ զոր պատուիրեաց հայր՝ զնոյն և արար *որդի:* - 419. Եւ գիտելի՛ է, զի անցեալ ընդ յորդանան՝ սատակեցին *զորդիսն* ենակիմայ. և ապա՛ ժառանգեցին զերկիրն: - 419. Դարձեալ անցեալ ընդ ապաշխարութիւն և սատակեալ *զորդիսն* բելիարայ, ապա՛ ժառանգեսցեն զարքայութիւնն երկնից ի փառս քրիստոսի աստուծոյ մերոյ: - 419. Եւ դատաւորաց առաջինն Գոդոնիէլ *որդի* կենեզայ եղբայր քաղեբայ յազգէ յուդայ ամս **խ**. և այլազգիքն ամս **ժը**: - 420. Երրորդն Սամէգար. *որդի* անաթայ. որ մաճիւն **ո** այր եսպան՝ ամս **դ**. և Դեբովրա ամս **ե** ընդ այլազգեացն: - 420. Չորրորդն Բարակ. *որդի* ամենեմայ ի կեդեսայ նեփթաղէմի ամս **խ**: - 420. Հինգերորդն Գեդէոն. *որդի* յովասու ի մանասէ է՛ եփրաթացի ամս **խ**: - 420. Սորա *որդիք* **լ** և դստերք **լ**: - 420. Երկոտասաներորդն Աբդոն *որդի* ելեքայ փարաթոնացի ամս **ը**: - 420. Սորա՛ էին **խ** *որդիք*, և **լ** թոռունք: - 420. Երեքտասաներորդն ի դանա *որդի* մանովէի Սամփսոն. որ կալաւ յ աղուէսս, և կապեաց ի նոսա ջահս. և այրեաց զանդաստանս այլազգեացն: - 420. Եւ տէր մեր ի սպանօղ մարմնոյս որ է՛ պատառօղ հոգւոյս, սպանելով զսա՛ գտանէր զքաղցր կեանս տալ *որդւոց* մարդկան ազգի: - 422. Եւ ինքն *որդիէ՛* զօրութիւն հօր. և ծարաւ փրկութեան մարդկան, նովաւ զովացեալ: - 423. Զի՞նչ էր մեղքն *որդոցն* հեղեայ: - 425. Նա՛խ՝ զի անարժան լինին սպասաւորքն. որպէս ոփնի և փենէհէզ *որդիքն* հեղեայ: - 425. Վասն է՞ր եհարց թէ՝ ո՞յր *որդի* է դաւիթ. զի կապարճակիր և ծանօ՛թ էր սաւուղի: - 427. Երրորդ՝ ի նախատինս զօրաց իւրոց. զի հովիւ մանուկն և *որդի* յեսսեայ սպան զգողիաթ. և նոքա իշխանք և մեծամեծք ո՛չ կարացին: - 427. Աբիաթար *որդի* է աքիմէլէքայ. *որդւոյ* աքիտովբայ. *որդւոյ* փենէհէսի. *որդւոյ* հեղեայ: - 427. Զի *որդիքն* և սպարապետն կազմէին զպատերազմն: - 429. Որպէս յետոյ *որդի* նորա զկաղս և զկոյրս բժշկեաց ի տաճարին: - 431. Նա՛խ՝ զի շնութեան էր *որդի:* - 433. Նա՛խ՝ զի *որդի* է յեսսեայ. որ է՛ պտուղ կղզւոյ. և տէրն մեր եղև պտուղ մարիամու ցամաքեալ ի խոնաւութեանց կենցաղոյս: - 435. Երկրորդ՝ կոչի դաւիթ որ է՛ սիրեցեալ և բաւական ձեռօք. և տէր մեր սիրեցեալ ի հօրէ և ի մարդկանէ իբր *զորդիս* մի եղջերոյ. և նա՛ է բաւական յամենայն գործս և ի պարգևս: - 435. Քսանն**դ**, դաւիթ հալածեցաւ ի սաւուղայ. և *որդի* նորա *յորդւոց* նորա: - 436. Քսանն**ե**, այսն չար խեղդէ՛ր զսաւուղ. և նոյն այսն *զորդիսն* սաւուղայ յաւուրս տեառն: - 436. Քսանն**զ**, դաւիթ դիւրէ՛ր սաւուղայ. և *որդի* նորա *որդւոց* նորա: - 436. Քսանն**է**, սաւուղ փոխանակ պատուելոյ խորհէր դաւթի չարիս. և *որդիքն* սաւուղայ *որդւոյն* դաւթի փոխանակ երկրպագելոյ, ասէին «եկա՛յք արկցուք փայտ ի հաց մարմնոյ նորա, և ջնջեսցուք զյիշատակս նորա»: - 436. Քսանն**ը**, ձգեաց սաւուղ զգեղարդն դաւթի, եհար զորմն և ապրեցաւ դաւիթ. և *որդիքն* սաւուղայ հարկանել ետուն ըզկողս տեառն և ո՛չ վնասեցին աստուածութեան նորա: - 436. Երեսունն**գ**, դաւիթ մարգարէ՛ է մարգարէանային. և *որդի* դաւթի յողոգոմեանն աղաղակէին: - 437. Քառասուներորդ, սաւուղ բազում անգամ խնդրէր զդաւիթ և ո՛չ կարէր ըմբռնել. և *որդիքն* սաւուղայ զտէրն. զի ո՛չ էր հասեալ ժամ նորա: - 437. Դաւիթ բարի արար չարին սաււողայ. և *որդի* դաւթի չարչարողացն զնա: - 437. Դաւիթ եթող զիրէաստան և բնակեցաւ յայլազգիս. և *որդի* նորա եթող զիրէայս և հանգեաւ ի հեթանոս: - 437. Դաւիթ դարձոյց զերկու կանայս և զամենայն աւարն. և *որդի* նորա զ**բ** դասս հաւատացելոց և զամենայն հոգիսն ազատեաց: - 437. Այլ և օրհնութիւն բաշխեաց յաւարէն ամենայն ծանօթից. և տէրն առեալ աւար բաշխեաց պարգևս *որդւոց* մարդկան: - 437. Երիցս օծաւ դաւիթ. և *որդի* նորա ի յարգանդի, և ի յորդանան, և ի վերայ խաչին արեամբ: - 437. Դարձեալ հալածեցաւ յաբիսողոմայ. և տէրն *յորդոց* ժողովրդեանն իւրոյ: - 438. Դաւթի **գ** արք անուանիք, և աբեսեա չորրորդ ընդ նոսա. **գ** աւետարանիչքն, և յոհաննէս *որդի* սողոմեայ: - 438. Այլ զի ծերութեան *որդի* էր յեսսեայ, վասն որոյ ի ծերութեանն ցրտացաւ: - 439. Ուստի յա՛յտ է, զի որակ ծնողացն խառնի ի բեղնաւորիլն. ի դաշտանւոյն գօդի. ի հիւանդութենէ, ի շիկութենէ. որպէս ադամ տրտմութեամբ ծնաւ *զորդին* կայէն...: - 439. Այլ ա՛յս է ճշմարիտն. զի պատերազմ և խռովութիւն էր յաւուրս դաւթի մինչ սատակեաց զնոսա. և *որդի* նորա ի խաղաղութեան ժամու շինեաց զտաճարն: - 439-440. Դարձեալ, կամեցաւ աստուած այլով իւիք յարգել զդաւիթ, և այլով *զորդին* իւր յետ նորա: - 440. Եւ այս ի տիպ փրկչին. զի *որդին* միածին շինեսցէ

զտաճար բնութեան մերոյ մարդանալովն իւր: - 440. Երկրորդ՝ աւետեաց դաւթի զսողոմոն *որդի:* - 440. Եւ երիցս հայր վկայեաց *որդւոյ:* - 441. Եւ ծեր և հին աւուրցն հայր ետ զթագաւորութիւն *որդւոյ:* - 441. Ընդ աջմէ նստի և *որդւոյն* մայրն կոյսն աստուածածին: - 441. Եւ ա՛յս է պատճառն, զի յաջ կողմ արգանդի կրէ *զորդին*. վասն որոյ յաջ կողմն նորա նստի: - 441. Իսկ *որդին* աջ և բազուկ է հօր, վասն որոյ աջմէ հօր նստի: - 441. Իններորդ՝ և մարմնական *որդի* էր դաւթի ըստ կարգի հասարակ մարդկան. իսկ քրիստոս ակնկալութեան և աւետեաց և ի վեր քան զկարգ բնութեան աստուած մարդացեալ: - 442. Զի՞նչ նշանակէ յարութիւն *որդւոյ* այրւոյն: - 444. Եւ *որդի* այրոյն ազգս մարդկան: - 444. Առաջին րոբովամ *որդին* նաբատայ. և այլք ընդ նմա թագաւորք **ի**: - 446. Տևեցին զամս **մծ**. մինչ յովսէէ *որդի* ելայ. որ գերի վարեցաւ յասորեստան. և բարձաւ թագաւորութիւնն իսրայէլի: - 446. ...և փակէի արքայի *որդւոյ* ռոմելայ. և գերեաց զնեփթաղիմ և զգալիլեա. և Զգաղայաթ **զ** ցեղիւքն իսրայէլի. և տարաւ յերկիրն ասորեստանեայց: - 447. ...և երեք ամ պաշարեալ էառ զնա. և գերի վարեաց զթագաւորն ովսէէ *որդի* ելայ. և զ**ժ** ցեղն բովանդակ տարաւ յասորեստան: - 447. Արդ յերեքտասան ամէ՛ ովսիա մինչև ցմետասան ամն սեդեկիայ որ վերջին գերեցաւ՝ լինի **խ** ամ. և նաբուգոդոնոսորայն **ի** ամ. և *որդւոց* և թոռանց նորին **ժ** ամ. որ կատարի **հ** ամ մինչև յառաջին ամն կիւրոսի որ արձակեաց զգերիսն: - 447. Եւ աստի թուեալ ի դարեհէ՛ *որդւոյ* վշտասպեայ, որ արձաձեաց զզօրաբաբէլ. և յորոյ երկրորդ ամին շինէ զտաճարն: - 449. Իսկ այլ ոմանք թուեն զեօթներորդն դանիէլի ի դարեհի *որդւոյ* արշուրեայ առաջին ամէն. յորում զտեսիլն ետես մարգարէն. մինչև ի ծնունդն քրիստոսի ամք **նծզ**: - 449. Ամինադաբ ամաց **խե**՝ ծնանի զնայասօն. և էր ասէ ամինադաբ սպարապետ զօրուն յուդայի ի հանել մովսէսի *զորդիսն* իսրայէլի յեգիպտոսէ: - 452. Իսամարիայ **ժ** ազգին տիրէ՛ րոբովամ *որդին* նաբատայ. որք կոչեցան թագաւորք իսրայէլի չարք և ո՛չ բարիք: - 452. Իսկ յերուսաղէմ թագաւորէ՛ ռոբովամ *որդի* Սողոմոնի: - 452. Երկոտասաներորդ, Միածին *որդին* **ժ** թուով: - 454. Եւ անդրադարձեալ. երբեմն ողորմութիւն կոչի *որդին*. զի ողորմեցաւ մեզ: - 457-458. Եւ յովսէփ *որդի* դաւթի որպէս ցուցաւ: - 460. Զի ի ցեղէն նաթանայ *որդւոյ* դաւթի այրն ոմն անուն ղևի՝ ծնաւ երկուս որդիս. զմելքի և զպանթեր: - 460. Զի ի ցեղէն նաթանայ որդւոյ դաւթի այրն ոմն անուն ղևի՝ ծնաւ երկուս *որդիս*. զմելքի և զպանթեր: - 460. Դարձեալ վասն յովսեփայ գիտելի է. զի ի ցեղէն սողոմոնի *որդւոյն* դաւթի՝ մատթան առեալ կին, ծնաւ զյակոբ: - 460. Եւ յետ մահուանն մատթանայ՝ մելքի ի ցեղէն նաթանայ որ *որդի* էր ղևեայ և եղբայր պանթերայ, առեալ զնոյն կին մատթանայ և ծնաւ զելի: - 460. Յակոբ ի ցեղէն սողոմոնի *որդի* մատթանայ. և Ելի ի ցեղէն նաթանայ *որդի* մելքեայ: - 460. Եւ այսպէս յովսէփ բնութեամբ *որդի* էր յակոբայ և ի ցեղէն սողոմոնի. և օրինօք *որդի* էր ելեայ որ ի նաթանայ: - 460. Մարիամ ամուսնացաւ ի բեթլէհէմ և ծնաւ զսողոմի զմանկաբարձն յիսուսի. ո՛չ որ մայր եղև *որդւոցն* զեբեթեայ. զի այն. սողովմէ դուստր է յովսեփայ աստուածահօրն...: - 460. Իսկ յովակիմ արդարն էր ի թագաւորական ցեղէն յուդայի **լը** երորդ ի թոռանց նաթանայ *որդւոյն* դաւթի փառաւոր և մեծատուն յոյժ: - 460-461. Իսկ զչորրորդ սրբութիւնն որ է՛ միաւորութիւն բանականին առ աստուած, և միշտ ներգործապէս դիմել առ աստուած որպէս հրեշտակք. ընկալաւ աստուածածին կոյսն ի յղանալն *զորդին* աստուծոյ: - 463. Եւ թէ ծնեալն ի նմանէ *որդի* է աստուծոյ, ապա և ծնօղն աստուածածին է ճշմարտապէս: - 466. Արդ եթէ *որդին* աստուծոյ եղեալ է կնոջ *որդի*, ապա ուրեմն կոյսն սուրբ մայր է *որդոյն* աստուծոյ և աստուածածին: - 466. Յինգերորդ, *որդի* կնոջ ասի ոք՝ որ լինի մարմին ի նմանէ. թէպէտ հոգին յաստուծոյ է: - 466. Նոյնպէս *որդին* աստուծոյ *որդի* է կուսին որ էառ մարմին ի նմանէ. թէպէտ աստուածութիւնն ի հօրէ է. ապա ուրեմն աստուածածին է կոյսն: - 466. Այլ արդ՝ քրիստոս ո՛չ է *որդի* աբրահամու և ո՛չ ի հարցն՝ թէ ոչ է *որդի* կուսին. ապա ուրեմն ըստ մարմնոյ աստուած է քրիստոս, և աստուածածին է ծնօղն. և մայր ըստ մարմնոյն քրիստոսի: - 466. Վասն է՞ր բա՛նն մարմին եղև. և ո՛չ հայր կամ *որդի:* - 468. Երկրորդ՝ զի թէ հոգին սուրբ էր մարմնացեալ, յայնժամ լինէին **բ** *որդիք:* - 468. Երրորդ՝ զի թէ հայր էր մարմնացեալ, մի և նոյն լինէր հայր և *որդի*: - 468. Նոյնպէս և հոգին սուրբ լինէր *որդի* և հոգի: - 468. Այլ *որդին որդի* եղև և անշփոթ մնացին երրորդութեանն դէմք: - 468. Վեցերորդ՝ դարձուցանել զմարդն յորդէգրութիւն աստուծոյ՝ բնական *որդւոյն* էր պատշաճ. վասն որոյ *որդին* աստուծոյ *որդի* մարդոյ եղև զի զմեզ արասցէ *որդիս* աստուծոյ: - 468. Զի մարդն ցանկացաւ գիտութեանն աստուծոյ որ է յատուկ *որդւոյ*՝ և անկաւ. նոյնպէս նովին գիտութեամբն պարտ էր և կանգնիլ: - 468. Իններորդ՝ վասն հաստատ ժառանգութեան խոստացելոյն. զի մի՛ ասիցէ ոք ցհայր, տէր դու ունիս *որդի* և ժառանգ: - 468. Վասն այն եկն *որդի* և հաստատեաց մեզ զժառանգութիւն իւր...: - 468. Նա՛խ՝ զի ո՛չ լինէր այն *որդի* ըստ բնութեան ծնողին. որպէս և ո՛չ եւա ադամայ. վասն որոյ յարգանդէ ծննդեամբ եղև *որդի* կուսին: - 469.

Նա միա՛յն էր մայր և կոյս. որ ընդ աստուծոյ ունէր *զորդին:* - 469. Եւ զառաջինն կոչի անդրանիկ՝ յորժամ եղև ի բազում եղբարս. լինելով մարդ և *որդի* մարդոյ: - 472. Նա՛խ՝ զի ծեր և հին աւուրց նշանակեցաւ հայր աստուած ի դանիէլէ՛. իսկ *որդին* նորածին և երիտասարդ հասակաւ: - 479. Այլ սրբուհի աստուածածինն մայր է *որդւոյ* և կոյս անապական: - 480. Վեցերորդ՝ ի յանմարմին բնութիւնն ո՛չ կոչէր իգական. այլ արական *որդի*. իսկ թէ ի մարդեղութիւնն լինէր իգական, փոփոխումն էր դիմացն և սերիցն: - 480. Արդ զգիրն ադամայ պարտուց՝ տէրն *որդի* եղև նմա և անմեղ մահուամբն տարածեալ զձեռս ի խաչին պատառեաց ասելով, նա մեղաւ և մեռաւ. ես զինչ մեղայ. դո՛ւ ես պատճառն: - 482. Եւ ա՛յն է յայտնութիւնն որ հայր վկայեաց ի վերայ *որդւոյն*, և հոգին սուրբ աղաւնակերպ իջմամբ: - 482. Երրորդ՝ զի ո՛չ ասաց հրեշտակապետն զաքարիայի թէ ահա՛ եղիսաբեթ յղասցի և ծնեցի քեզ *որդի* զներկայն ցուցանելով...: - 483. Վեցերորդ՝ զի ցուցցէ զինքն *որդի* աբրահամու. առ որ հրաման թլփատութեանն եղև և խոստումն օրհնեալ զաւակին. և այսպէս խոստմանն աստուծոյ կատարումն քրիստոս զինքն ցուցանէր: - 485. *Որդին* մարմնացեալ: - 487. Իսկ ձայնն հօր ի վերայ *որդւոյն*՝ ցուցանէ զգերազանցութիւնն քրիստոսի: - 487. Երրորդ որ ասէ «*որդի*» նշանակէ զհաւասարութիւնն ընդ հօր. զի *որդին* լսի հաւասար հօր: - 487. Եւ դարձեալ՝ հաճութիւնն է հանգուցեալ կամքն. այսինքն հոգւովն սրբով հանգեաւ ի *յորդի* առեցեալ մարմնովն: - 488. Յորժամ հայր մատնեաց *զորդի*, ըստ այնմ «որ յիւր *որդին* ո՛չ խնայեաց. այլ վասն մեր ամենեցուն մատնեաց զնա»: - 491. Այլ և *որդին* «մատնեաց զանձն իւր վասն մեր» ասէ առաքեալն: - 491. Հայր մատնեաց զնա՛ վասն սիրոյ. և *Որդի* մատնեաց զանձն իւր վասն փրկութեան մերոյ. իսկ յուդա մատնեաց վասն ագահութեան: - 491. Եւ վասն մահուան *որդւոյ*՝ հայր աստուած ետ զհոգին սուրբ պարգևս մարդկան: - 492. Եօթներորդ՝ որպէս ասացաք յառաջին պատասխանին՝ *որդիք* մահապարտաց և ապստամբք աստուծոյ մեղաւո՛րքն էին նոցա քարոզեաց և ազատեաց: - 507. Որք հաւատացին՝ յաւիտենից փրկեցան. և որք ոչ՝ ժամանակեայ. վասն իջման *որդւոյն* աստուծոյ ի դժոխս: - 508. Վեցերորդ՝ ի մէջ գիշերի հրեշտակն եհար զեգիպտոս. և մովսէս եհան *զորդիսն* իսրայէլի. որ էր օրինակ աւերման դժոխոցն և ազատութեան հոգւոց: - 512. Այսպէս և *որդիքն* սաւուղայ հարեալ նախանձու բևեռեցին զտէրն և խոցեցին նիզակաւ. և պահէին զգերեզմանն: - 513. ...և ո՛չ մի հոգի եթող ի դժոխս. այլ զամենայն ազատեաց յարուցեալ ի մեռելոց. և բաշխեաց պարգևս *որդւոց* մարդկան: - 514. Յայսմիկ յայտ արար թէ ի յարութեան անդ ո՛չ դառնայ ոք յոք. ո՛չ հայր *յորդիս*՝ և ո՛չ *որդիք* առ հարս իւրեանց. այլ դառնան ամենեքեան յայս. զի արժանի լիցին ողորմութեամբ ելանել առ հայր: - 517. Իսկ փոխումն՝ աստուածամօրն կուսի. որ *որդին* յատկապէս սպասաւորէ մօրն: - 519. Այլ համբարձումն նշանակէ՛ ի միտս համայն բարձր քան զամենայն դասս իմանալեացն. զի նմա՛ երկրպագեն ամենայն երկնայինքն. և անդր քան զտեղի տիրամօրն. զի ի միածին *որդւոյ* իւրմէ խնդրէ զփրկութիւն մարդկան: - 519. Ութերորդ՝ ետ պարգևս *որդւոց* մարդկան. զի «ամենայն պարգևք ի վերուստ են» յոր համբարձաւ քրիստոս: - 520. Սակայն վարդապետք եկեղեցւոյ պատշաճե՛ն զստեղծանելն հօր. իսկ զտրոհելն *որդոյ*. և զզարդարելն հոգւոյն սրբոյ: - 522. Այսպէս պարտ էր յառաջագոյն հօր յայտնի լինիլ և ապա՛ *որդոյ* և հոգւոյն սրբոյ: - 522. Եւ հոգին սուրբ բղխէ ի հօրէ՝ և առնու *յորդւոյ* զիմաստութիւն և բաշխէ՛ յարարածս բոլոր: - 523. Դարձեալ՝ ծննդեամբ աւազանին կոչեցաք նոր *որդիք* աստուծոյ և եղբարք քրիստոսի համահայր և համամայր: - 528. Զի նա բնութեամբ է *որդի* աստուծոյ, և մեք շնորհօք: - 528. Նախ այն է՝ որ *զորդի* ընդ հօր և սուրբ հոգւոյն փառաւորեմք և օրհնեմք **զ** անձինք ի միում բնութեան. և ո՛չ որպէս հինքն հրէական օրհնութիւնս. որք ո՛չ օրհնէին *զորդի* և զհոգի: - 528. Եւ թէ ոք ասիցէ, ո՞րպէս է մի բանն աստուծոյ. զի ահա՛ բանն մարմնացեալ էր. և հայր բանիւ վկայեաց ի վերայ *որդւոյն*. և անյարմար է ինքն ինքեան վկայել: - 530. Ա՛րդ՝ յորժամ ամենայն ինչ նոյն է սուրբ Երրորդութեանն, որով յա՛յտ է՝ թէ հայր խօսի, և թէ *որդի*, և թէ հոգին սուրբ, մի և նոյն բանիւն խօսին. ապա ուրեմն ո՛չ է անյարմար եթէ հայր նոյն բանիւն վկայեսցէ ի վերայ *որդւոյ*. զի *որդի* և հայր նշանակէ զյատկութիւն անձանցն: - 530-531. Ա՛յսպէս հայր վկայէ՛ ի վերայ *որդւոյ:* - 531. «Եւ գլուխ քրիստոսի աստուած հայր». զի սկիզբն է *որդոյ* և էակից նմա: - 532. Չորրորդ՝ եկեղեցի է անդրանկացն վերինն սիոնի որ է հոգիք սրբոցն ժողովեալ. զոր պօղոս եկեղեցի կոչէ *զորդիս* արդարոց կատարելոցն: - 534. Վասն է՞ր երբեմն իգական հարսն և դուստր կոչի եկեղեցի. և երբեմն արական *որդի:* - 534. Իսկ և *որդի* կոչի վասն երից: - 534. Ընդ քրիստոսի միաւորեալ. որպէս փեսայն *որդի* է, և հարսն դուստր կոչի աստուծոյ հօր: - 534. Որպէս և առ մեզ է. զի կին *որդւոյն* դուստր կոչի հօրն վասն մի մարմնոյն: - 534. Նա՛խ՝ մարգարէքն զհայր ծանուցին. ապա՛ առաքեալքն *զորդի*. և ապա՛ վարդապետք զհոգին սուրբ: - 535. Ի դէմս հօր՝ մարգարէքն. ի դէմս *որդւոյ*՝ առաքեալքն. ի դէմս

հոգւոյն՝ քննիչ վարդապետք. զի «հոգին քննէ զամենայն և զխորս աստուծոյ»: - 535. ...և առաքեալքն ծեռն դնելովն միայն՝ տային զհոգին սուրբ. և ի լեզուս խօսէին. և մարգարէանային ընդունօղքն. իսկ վարդապետք սուրբք՝ քարոզութեան նոցին հետևօղք և *որդիք* ծնողացն՝ երրորդ կարգին յետ նոցա: - 535. Յոհան անտիոքայ՝ թղթով միաբանեալ. **բճ** հարք ընդ դէմ նեստորի որ **բ** բնութիւն ասէր և **բ** *որդի*. կրկին կամք և կրկին ներգործութիւն քրիստոսի. և զաստուածածինն մարդածին: - 542. Եւ վէմ դաւանութիւնն էր որ խոստովանեցաւ զքրիստոս *որդի* աստուծոյ կենդանւոյ. և ի վերայ այնմ դաւանութեան շինեցաւ եկեղեցի քրիստոնէից: - 547. Ես խոստովանիմ զքրիստոս ճշմարիտ աստուած և բնութեամբ *որդի* աստուծոյ. և դու բաժանմամբ մա՛րդ դաւանիս և շնորհօ՛ք *որդի* աստուծոյ: - 548. Եւ փոխանորդ իւր նստոյց յաթոռ զսուրբն արիստակէս համանըման նորին առաքինութեամբ, և *որդի* ըստ մարմնոյ. և ապա՛ գնաց ի հռօմ: - 548. Վեցերորդ՝ զհոգին ի հօրէ և *յորդւոյ* բղխումն: - 553. Այլ յատկապէս ըստ երից դիմացն, որ տկարութեամբ մեղանչէ՝ է՛ ընդ դէմ հօր. և տգիտութեամբն ընդ դէմ *որդւոյ*. և չարութեամբն ընդ դէմ հոգւոյն սրբոյ...: - 566. Երրորդ՝ զի չունէին պատճառս հայհոյութեան հոգւոյն որպէս *զորդոյ*. զի տեսանէին մարմին զգեցեալ, ուտել և ըմպել, տքնիլ և ննջել: - 566. Չորրորդ՝ որք միայն *զորդւոյ* ասեն բան՝ սակաւ պատիժն, զի մի է յերրորդութենէն. իսկ որ զփառակիցն նա՝ կրկնապատիկ հատուցանի նմա: - 566. Տասներորդ՝ վասն հոգեմարտին մակեդոնի որ հայհոյէր զհոգին սուրբ նուազ ասելով քան զհայր և *զորդի*, ո՛չ թողցի նմա: - 566. Յաղագս որոյ այն որ ըստ բնութեան է մեղք՝ ըստ բնութեանն և *յորդիս* անցանէ: - 568. Ութերորդ վասն սուրբ հոգւոյն որ է՛ հաւասար հօր և *որդւոյ:* - 572. Երրորդ՝ *զորդին* գոլ աստուած. որ ասէ՝ «ի մի տէր յիսուս քրիստոս»: - 573. Առաջինն հաւատալ *զորդին* աստուծոյ յղացեալ ի հոգւոյն սրբոյ: - 573. Երրորդն՝ *որդին* աստուծոյ վասն մեր չարչարեալ և մեռեալ: - 573. Չորրորդն՝ *որդին* աստուծոյ իջեալ ի դժոխս ըստ հոգւոյն: - 573. Երկրորդ զօրացուցանէ. որպէս յա՛յտ է ի մակաբայեցւոցն զկնոջէն որ ունէր է *որդիս*՝ ածեալ ի սպանումն ի միումն աւուր տեսեալ. և տանէր այնմ՝ յուսովն որ առ աստուած. նոյնպէս և ամենայն դասք մարտիրոսացն յուսով զօրացան: - 574. Եւ այլք ասեն՝ նախ սիրելոյ է աստուած. երկրորդ ծնօղքն. յետոյ *որդիքն*. ապա՛ ընտանիքն. վերջոյ թշնամիքն: - 576. Նա՛խ որպէս ասէ սուրբն եւագրիոս՝ հաւատն ի հայր, յոյսն առ *որդի*, սէրն ի հոգին սուրբ: - 577. Այս ո՛չ եթէ բաժանմամբ. այլ նկատմամբ ի յատկութիւնս անձանց. ըստ որում սկիզբն է հայր. և փրկութիւն է *որդին*. և ջերմութիւն հոգին: - 577. **Երրորդ՝ հաւատն է որպէս արմատ ծառոյն որ է հայր. յոյսն ստեղունքն որ է *որդի*. սէրն հոգին սուրբ որ է՛ ծաղիկ և պտուղ** ըստ դիոնիսեայ: - 577. Ա՛րդ խաղաղարարքն առաւել ասին *որդիք* աստուծոյ քան այլքն... - 585. Սոքա ամենեքեան երանելիք ասին. զի *որդիք* աստուծոյ կոչեսցին: - 585. Զի՞նչ է խաղաղութիւն *որդւոյն* աստուծոյ: - 585. Եւ ո՛չ զկարգն փոխել. որպէս թէ յառաջ զհոգւոյ անունն ասել և ապա *զորդւոյ* և ապա՛ զհօր: - 588. Երրորդ, զի թէ կայր հնար որ ի ծեռն կնոջն տուեալ լինէր շնորհք, աստուածածին կոյսն մարիամ ընդէ՛ր ոչ եղև մերձ մկրտութեան *որդւոյն* իւրոյ ի յորդանան: - 589. Երրորդ՝ զի որ մկրտի՝ ի մահն քրիստոսի մկրտի. և քրիստոս միանգամ մեռաւ. և թէ ոք դարձեալ մկրտէ՝ անձանց ի խաչ հանէ *զորդին* աստուծոյ և դարձեալ խայտառակէ որպէս առաքեալն: - 590. Չորրորդ՝ զի միշտ *որդի* ծնանիմք աստուծոյ և ո՛չ դուստր և էգ. զի ի քրիստոս յիսուս արու և էգ ո՛չ է ասէ առաքեալն. և զայս ցուցանէ աւազանն ի յաջ կողմն եկեղեցւոյն: - 590. Մեղքն ադամայ այն է որ զարդարութիւն կորոյս. և մեզօք և ցանկութեամբ ծնաւ *զորդին*. և այն մեղքն սկզբնական կոչի. և ո՛չ թողցի եթէ ոչ ի մահն քրիստոսի մկրտեսցի: - 591. *Որդի* քրիստոնէին զիա՞րդ լինի մեղաւոր յորժամ սրբեալ է հայրն մկրտութեամբ: - 592. Վտա՞նգ են մեղք ծնողացն *որդոց*. կամ *որդոց* մեղքն ծնողաց: - 593. Եւ *որդին* դարձեալ անիրաւ եղև: - 593. Այլ թէ ծնօղք *որդւոց*՝ կամ *որդիք* ծնողաց մեղացն կամակիցք և համախոհք լինին ի մեղս չա՛րք են ընդ նոսին...: - 593. Եւ վասն այն է գրեալ՝ յերրորդ կամ ի չորրորդ ազգս մեղաց վրէժ խնդրեսցի. յորժամ հայրն և *որդին* և թոռունքն զնոյն մեղս գործեսցեն: - 593. Այսպէս ջրովն մկրտիմք ի քրիստոս և *որդիք* աստուծոյ կոչիմք. և իւղովն ի շնորհք հոգւոյն սրբոյ միաւորիմք: - 593. Որ և հարցանէր *որդւոցն* զեբեթեայ թէ՝ կարօ՞ղ էք ըմպել զբաժակն. այլ ո՛չ թէ միայն նոցա ետ և յայլ առաքելոցն արգել: - 600. Երրորդն ասեն եթէ՝ **բ** ազգն գեթսոնի և **բ** գունդն մերարեայ՝ զչորս փոքրիկ աստիճանս ունէին ի խորանն. զպահպանութիւնն մինչ ի ջահընկալն որ զաշտանակն բառնային. և *որդիքն* կահաթու էին բարձրագոյնք: - 609. Առաջին մեք, և *որդին*, և թոռն. և թոռին *որդին*. և թոռին թոռն. և նորա *որդին*. և թոռնիայն. որ է՛ **է**: - 611. Զի **բ** են հայր և մայր մեր. և **բ** ծնունդ *որդին* և դուստրն. և **բ** եղբայրն և քոյրն. և մեք ի մէջն **է** երորդ: - 611. Զի հայրն և *որդին* և թոռն որ է՛ **գ**. և թոռին թոռն որ է՛ **դ**. որ լինի **է**, և եզր արենակցութեան: - 611. ...և նոցա *որդին* որ է՛ թոռն հօրն՝ ունի զկէս

արեանն. և թոռին *որդին* զերրորդ մասն. և թոռին թոռն զչորրորդ մասն: - 612. Վասն որոյ յօտար ազգէ լինին խնամիք. և յօտարէն հոգևոր *որդիք:* - 612. Այլ և արտասուքն բռնադատէ՛ զաստուած յողորմութիւն. որպէս բազում *որդիք* մօրն, - 620. Նոյնպէս հրեշտակք կատարեալ *որդիք* են յաստուծոյ անընդմիջաբար առնուն: - 620. եկն ի յերկիր որ է՛ արևմուտք և խաւար. եղև *որդի* մարդոյ: - 621. Երկրորդ ժամն է՛ օրհնութիւն երից մանկանցն ի դէմս *որդւոյ*. որ նա՛ էջ ի մէջ հնոցի աշխարհիս. և փրկեաց զմեզ: - 621. Ողորմեայն ի դէմս հօր որ առաքեաց *զորդին* ի խաչ. և պատարագն ի դէմս *որդւոյ* որ խաչեցաւ վասն մեր: - 622. Զի *որդին* մարմնացաւ և նա՛ նուիրէ զբարեգործութիւնս մեր առ հայր: - 625. զի առաջին փոխն է ի դէմս հօր. և միջինն առ *որդի*. և վերջինն առ հոգին սուրբ: - 628. Եւ սուրբն կիւրեղ աղէքսանդրու հայրապետն ի ժողովն եփեսոսի ասաց զմիածին *որդի* ժամամուտն: - 631. Վասն որոյ ի սրբոյն կիւրղէ կարգեալ ասեմք զսուրբ աստուածն ի դէմս *որդւոյ:* - 631. Եւ սուրբն կիւրեղ ասաց ի ժողովն եփեսոսի. զմիածին *որդին* ձայնիւ ընդ դէմ նեստորի: - 632. Իսկ աւետարանիչն յօհաննէս ի դէմս *որդոյն* ասէ: - 633. **Յաղագս որոյ եկեղեցի սուրբ ուսեալ յաւետարանչէն և ի սրբոց հայրապետացն, երգեմք զերեքսրբեանն ի դէմս *որդւոյ:*** - 633. Եւ *զորդի* հզօր. և ո՛չ աստուած և ո՛չ անմահ: - 633. Իսկ յատուկ, Նա՛խ՝ զերեքսրբեանն ի դէմս *որդւոյ*. զի նա՛ է առաջնորդ որով զհայր տեսանեմք: - 633. Երրորդն առ *որդի*. վասն որոյ ասեմք՝ օրհնեալ *որդիդ* սուրբ աստուած ճշմարիտ: - 633. Եւ քրիստոս *որդին*՝ կատարումն առ *որդին:* - 633. Նա՛խ՝ զի առ *որդին* մարմնացեալ՝ և զգուշ մօրն բարեխօս արկանեմք: - 633-634. Դարձեալ մայրն ընդ *որդւոյն* պատուեմք: - 634. Հայր ի յորդանան բնութեամբ *որդի* իւր դաւանեաց. և մանկունքն ի քառասնօրէին և յողոգոմին: - 638. Այսինքն ի հօրէ յառաջ բղխէ հոգին առ *որդի*. և նովաւ բաշխի մեզ: - 639. ...վասն որոյ նախ հրաւիրէ՛ զայլս ի մեծարանս և վկայս *որդւոյ* իւրոյ: - 643. *Որդի* սուրբ՝ ցո՛յց մեզ զերեսս քո: - 659. Եւ հայր ո՛չ դատէ, այլ միա՛յն *որդին:* - 661. Ո՜ հա՛յրդ ես որոց ի վեր քան զերկինս. այսինքն հոգւոց սրբոց կատարելոցն որ ի վերեն քան զդասս հրեշտակաց մերձ քրիստոսի որպէս քահանայք առ քահանայապետ, և անդամք առ գլուխն. և *որդիք* առ հայր: - 688. ...և յետ այնորիկ ո՞չ նստի ընդ աջմէ հօր *որդի:* - 704. վասն որոյ ասի *որդի* սատանայի: - 706. Նաև խոստովանեսցի զինքն զոլ քրիստոս և ճշմարիտ *որդի* աստուծոյ: - 707. Եւ պօղոս՝ մարդ անօրէն և ապստամբ և *որդի* կորստեան ասէ: - 707. Ընդ երևիլ նեռինն և թագաւորելն յէմ, եկեսցեն ենովք և եղիա որպէս ասէ մաղաքիա և դարձուսցեն զսիրտս հարց *յորդիս*...: - 709. Վասն է՞ր հայր ո՛չ դատէ, այլ զամենայն դատաստան ետ *որդւոյ* ասէ: - 735. ...և դանիէլ զհին աւուրցն ետես, և զի *որդւոյ* տուաւ իշխանութիւն դատաստան առնել: - 735. Երրորդ, զի *որդի* է՛ նման հօր. իսկ հրեշտակք և մարդիկ շփոթեցին յինքեանս զնմանութիւնն յոր ստեղծան. - 735. ...ընդ որում անպատշա՛ճ էր լինիլ խօսակից և զուստն ո՛չ գիտել. այլ պատշա՛ճ էր *որդւոյ* վասն մարմնով երևելոյն: - 735. Հինգերորդ, զի *որդին* ծնաւ ի կուսէն և յերկրի շրջեցաւ և քարոզեաց և չարչարանօք փրկեաց և պատճառ եղև ընդհանուր յարութեան բնութեանս մերոյ. - 735. Իններորդ, փա՛ռք է զդատաստանն առնել. զի նմա տըւաւ իշխանութիւն ասէ դանիէլ. և հայր ո՛չ զոք դատէ. այլ զամենայն ետ *որդւոյ* որպէս ցուցաւ: - 737. Եւ պետրոս և *որդիքն* զեբեթեայ յորժամ լուան ի հօրէ «դա՛ է *որդի* իմ սիրելի դմա լւարուք», ապա և նոքա վկայեցին, և խաչեցաւ քրիստոս: - 742. Նախ՝ յառաջ քան զլինիլն աշխարհի՝ *որդի* ի հօրէ՛ և հայր *յորդւո՛յ:* - 748. Երկրորդ՝ ի ստեղծումն յարարչութեան բոլորից՝ ուրախ եղև տէր յարարածս իւր և *յորդիս* մարդկան ըստ սողոմոնի: - 748. Ո՛չ բնաւ, թէպէտ հայր տեսանէ *զորդի* կամ մայր զդուստր. և կամ զեղբայր և զայլս. ո՛չ միայն ո՛չ ցաւին, այլ ա՛յնպէս լինի հեշտալի, որպէս տեսանեմք զձկունս որ խաղան ի վտակս: - 754. Արքայութիւն աստուծոյ կոչի *որդի* վերին արքային: - 754. Յաղագս առաջնոյն ասի՝ «ապաշխարեցէ՛ք զի մերձեալ է արքայութիւնն երկնից». այսինքն *որդին* աստուծոյ: - 754. Սա՛ է մայր մեր եկեղեցի որ հոգևոր *որդիս* աստուծոյ օրըստօրէ ծնանի. որ հասեալ ժառանգութեանն. ի բաց տանելով զաղախինն և *զորդի* նորա: - 756. Իսկ Երրորդն արքայութիւն, գուշակի յաւազանն պղնձի. զոր հրամայեաց մովսէս առնել ի հայելեացն կանանց որ նստէին առաջի դրան խորանին. յորում լւանային *որդիքն* ահարօնի նախ քան զմտանելն ի սուրբն սրբոց: - 756. *Որդիքն* ահարօնի՝ են սուրբքն. որք նախ քան զվերափոխիլն ի սենեակ վերին արքային, աստուածայնովքն բանիւք յամենայն հպարտութենէ մեղաց մաքրին: - 756. Երբեմն գոգ աբրահամու, վասն ընդ հօրն հաւատոյ *որդւոցն* հանգչելոյ: - 757. **Նոյնպէս և ջուրն որ հպեցաւ ի մարմին փրկչին, և ծնաւ զմարդիկ *որդիս* աստուծոյ, նորոգեսցի և պայծառասցի քան զամենայն տեսիլս գեղեցկագոյն ականց**: - 759. Մեծութիւն այսմ ուրախութեան կարէ՛ զմտաւ ածիլ յայնմանէ, զոր սովո՛ր են ծնօղք յորժամ *որդիք* նոցա լինին եպիսկոպոսունք կամ թագաւորք: - 763. Ուստի *որդին* աստուծոյ եկեալ

թագաւորական աթոռովն և ամենայն թագակիցք ընդ նմա: - 763. Դարձեալ՝ ծառ կենաց և տունկ երկնային՝ է՛ հաւատն կենդանարար. որոյ արմատն է հայր, և ստեղունք *որդի*. ծաղիկ և պտուղ հոգին սուրբ: - 768-769. Որպէս և ոմն ի Պետաց մերային ազգաց՝ զհաւատն դրուատեաց ասելով, Յաւատ ի հօրէ սկսեալ *յորդի* և ի հոգի վերաբերի: - 769. Յաւատ ի տնօրէնութենէն *որդւոյ* ի մարդիկ սփռի: - 769. Դարձեալ՝ ի մարդոյ ի հայր և *յորդի* և ի սուրբ հոգին: - 769. Յաւատ ի տնօրէնութիւնն *որդւոյ:* - 769. Իսկ հաւատ ի մարդկութիւն *որդւոյ*, Ի կուսէն երևեալ անհայր ի մօրէ. որպէս անմայր ի հօրէ: - 769. Մի դէմն յերրորդութենէն *որդի* լինի. մի դէմ ի մարդկութենէս ի կուսէ առեալ բնութիւն մարդկութեան, աստուածութիւնն բոլորովին յաղագս անհաս միաւորութեանն ըստ ոսկէբերանին յոհաննու: - 770. Վասն որոյ սպանօղք *որդւոյ*՝ հօր և հոգւոյ թշնամիք են: - 770. Նախ խնդրելի է թէ վասն ի՞նչ պատճառի նախահօրն յանցանաց պատժապարտ եղեն և *որդիքն:* - 776. Եւ յայս անկեալ *որդիս* ծնաւ ապականացու և մահկանացու ի նմանոյն յառաջ եկեալ: - 776. Իսկ թէ ընդ նախահօրն ազատութեան ընդ նմին ազատեցան և *որդիք*, յա՛յտ է ի բազմաց: - 776. Նա՛խ՝ որպէս ի վերոյ ասացաւ. զի թէ ադամ որ սկիզբն և պատճառ էր մեղաւորաց՝ ազատեցաւ. ապա ուրեմն և *որդիքն* որ վասն յանցանաց նորա՝ ազատեսցին: - 776. Զի մեղքն ադամայ թէպէտ սկզբնապէս առհասարակ բնութիւնս տարածեցաւ. այլ ո՛չ առաւել քան զայլոցն եղև. այսինքն *որդւոցն* նորա...: - 777. իսկ Բաղդատութեամբ. որպէս է սկզբնականն առ ներգործականն մեղք. այսպէս ադամայն առ *որդւոցն* նորա: - 777. Եւ այլևս յարմար տեղւոյս այսպէս իմանի. զի սուրբ հարքն առաջինք պակաս ունէին զչարչարանս. վասն որոյ ո՛չ կարէին փրկիլ. իսկ քրիստոս եղեալ ըստ մարմնոյ *որդի* նոցա, զպակասութիւն հարցն չարչարանաց յիւրումն մարմնի էլից: - 781. Զի թէ կորուսեալ էր, այսինքն բարձեալ ամենևին յազգէն ադամայ, ուստի՞ գոյր *որդւոց* նորա. կամ ո՞րպէս առ ջրհեղեղաւն բառնիւր բարձեալն: - 782. Եթէ վարձատրելի է ասիցէ ոք, ապա զիա՞րդ որք ի հարկէ հաւատացին ո՛չ վարձատրեցան. որպէս դևքն ի հալածիլ. և *որդիքն* սկեւեայ. և սիմոն կախարդն. և այլք նման սոցին: - 783. Իսկ եթէ ոչ են վարձատրելի, ապա զիա՞րդ վասն նոցա անհնազանդութեանն անհնազանդ կոչի և ինքն *որդի* հօր: - 784. Եւ ո՛չ այս միայն, այլ և ի կոչմանն զօրութենէ առ *որդւովքն* սկևեայ հալածեին նոքա: - 784. Որք դարձուսցեն զսիրտ հարց *յորդիս* ըստ մաղաքիայի. այսինքն ուսուցանեն զհաւատն փրկչին զոր հարքն ունէին. և է՛ վարձաւորելի և կարի քաջ. և թէ այսպէս և թէ այն՝ քրիստոս քարոզի: - 785

***ՈՐԴԻ ԱՍՏՈՒԱԾ*** - Դարձեալ առարկեն, եթէ աստուած է հայր՝ և անծին է բնութեամբ, և որդի ծնեալ է, ապա ուրեմն ո՛չ է *որդի աստուած*. զի ծնելութիւն և անծնելութիւն հակառա՛կ են միմեանց. որպէս սեաւ սպիտակի կամ լոյս խաւարի: - 38. Զի թէ ասէք հայր աստուած՝ և *որդի աստուած*՝ և հոգի աստուած, բազմաստուած էք որպէս հեթանոսքն: - 54. Դարձեալ՝ որպէս ասելն զհայր աստուած, և *որդի աստուած*, և հոգի աստուած, ո՛չ է բազմաստուած. այլ մի աստուած: - 93. Ա՛րդ՝ ասեմք զհայր աստուած. և *զորդի աստուած*. և զհոգի աստուած. ապա կարե՞մք ասել զհայր երրորդութիւն. և զորդի երրորդութիւն. և զհոգին սուրբ: - 108

**ՈՐԴԻԱԿԱՆ +** Զի այս *որդիական* երկիւղէ, և այն ծառայական: - 538. Եւ գերակատարն *որդիական* սէր վասն բնութեամբ բարւոյն: - 576

**ՈՐԴԻԱՆԱՄ +** Նմանապէս ասա՛ և զայս. զբնութեա՞մբն որդի ասես ընդ աջմէ մեծութեանն նստեալ, թէ որ շնորհօքն *որդիացեալ* ըստ քեզ: - 70. Այլ նոքա ո՛չ խոստովանին զաստուած մարդացեալ. այլ՝ կամ ի նախագոյացեալ անձն բնակեալ ասեն զաստուածայինն բնութիւն, և կամ շնորհօք *որդիացեալ* որպէս նեստորի թըւի: - 81. Իսկ սաղմոսն՝ մանկացելոցն մկրտութեամբ հրամայէ *որդիացելոցն* օրհնել զհայրն երկնաւոր. որում փառք յաւիտեանս ամէն: - 629

**ՈՐԴԻՈՒԹԻՒՆ +** Երկրորդ՝ զի թէ նա՛ շնորհիւ ունի *զորդիութիւնն* և ո՛չ էապէս, ապա ուրեմն մասամբ և ըստ կարգի ունի՝ և ո՛չ զլրումն աստուածութեանն. զի շնորհն է մասնաւո՛ր պարգև: - 66. Իսկ թէ և նա արտաքուստ ունի *զորդիութիւն* և զայլսն, գոյ կասկած երբեմն ի բաց մերժել զոր էառն: - 66. Իսկ թէ և նա շնորհիւ ունի *զորդիութիւնն*, զիա՛րդ կարէ տալ ումեք զոր հազիւն հարստացաւ: - 67. Իսկ եթէ զմարդկութիւնն բնութեամբ որդի ասացեր, ահա որ հաներ զբանն *յորդիութենէ*:.. - 69. Զի թէ ասես զառ ի յաստուծոյ հօրէ բանն, ահա կարգեցեր զնա ընդ եղեալքս կարօտ սրբութեան և շնորհօք *որդիութեան:* - 69. Իբր թէ բանն և մարդն բաժանեալ են էութեամբ և բնութեամբ, իսկ մի են *որդիութեամբ:* - 82. Ապա ուրեմն *յորդիութիւնն* և յանունն խոստովանին միութիւն ի պատրանս պարզամտաց. և զճշմարիտ միութիւնն ուրանան և փախչին: - 82. Եւ այժմ զինեսցուք առ քեզ՝ քոյին բանիւ. որպէս դուդ ասես՝ շնորհօք տըւաւ մարդոյն այն անուն օծութեան և *որդիութեան* և տէրութեան

և իշխանութեան: - 94. Որպէս յորժամ ասեմք բառնալով` ո՛չէ, ո՛չ բան, ո՛չ միտ, ո՛չ *որդիութիւն*, ո՛չ հայրութիւն. և այլն: - 124. Եւ մտօքն յօժարութեամբ սիրել և *յորդիութիւն* նորա ելանել: - 396. Իսկ մկրտութիւն նորա ո՛չ որդեգրութեան էր որպէս մերս. այլ ճշմարիտ *որդիութեանն* յայտնութիւն ըստ ձայնին հօր «դա՛ է որդի իմ սիրելի»: - 474

**ՈՐԴՆ +** Զի ունին ծնունդ ըզնմանն իւրեանց, և ունին զելումն բաց ի ծննդենէն. որպէս ի ձիոյն ձիակապիկն. և յարջառոյն մեղու. և յայլոցն *որդն:* - 53. Եւ խաւարն արտաքին. և *որդն* անքուն: - 661. Չինգերորդ, զի մի՛ ի զազիր հոտոցն և *որդանցն* զարշեսցուք և թողցուք զշէնս աւերակ: - 677. *Որդն* խղճի մտաց: - 751. Երրորդ` *որդունք* անմահք. այսինքն օձք, վիշապք, տեսութեամբ և շաչմամբ ահագին: - 752. Վասն երրորդին, զի նախանձ և ատելութիւն աստէն որպէս *որդունք* խածատեցին զընկերս. արժանապէս *որդունքն* անդ խածատեն զնոսա: - 752. Ոմանք *որդն* զխիղճ մտացն ասեն որպէս ցուցաւ ի վերոյ: - 753. Այլք` ի ներքուստ խիղճ մտացն, և արտաքուստ անքուն *որդունքն* հրեղէնք: - 753. Եւ չորք է յատկութիւն *որդանցն*. զի երևելեօքս աներևոյթն իմանի: - 753. Արդ նախ` զի ի մէնջ է *որդն:* - 753. Նոյնպէս և հրեղէն *որդունքն* ի մէնջ ծնանին: - 753. Ո՛չ լինի. զի *որդունքն* այնք ո՛չ են զգայական կենդանիք. այլ հրեղէն տանջանք են զգայական մասինն: - 753. Եւ որպէս *որդս* այս ո՛չ ունի զգայարանք, նոյնպէս և հրեղէն *որդունքն:* - 753. Զի այսպէս ասեն վարդապետք` թէ յորժամ յղանայ ոք ի միտս իւր զխորհուրդ մեղացն, ի սատանայէ՛ սերմն առեալ որպէս կին յառնէ. և ի ծնանիլ մեղացն` ծնանին և *որդունքն* ի հրեղէն ծովն որ է՛ ի հարաւ: - 753. Որ և խիղճ *որդանց* անհանգիստ մտաց: - 789

**ՈՐԴՆԱԼԻՑ +** Զի այնպէս ծանակեալ լիցի մարմին մեղաւորին, մինչ զի հոգին զարշեսցի առնուլ զնա. և որպէս ուրուկ և *որդնալից* այնպէս ո՛չ կամեսցի ունել զնա: - 751

**ՈՐԹ +** Դիոս. այսինքն դիոնիս է. զոր *որթոյ* և այլոց այլանդակութեանց արարիչ ասեն: - 201. Իւր ձեռօքն ցանէր և *որթ* վաստակէր իւր բաւական: - 300. Այն է զոր հրամայէ՛ տէր` «ես եմ *որթ* և դուք ուռ». այսինքն *որթ* և հիմն հաւատոյս մեր է՛ քրիստոս: - 317. Եւ զոսկին ետուն յապաշխարութիւն, որք ետուն զոսկի *որթոյն:* - 344. Երրորդ` զի անարժանք էին մեռեալքն հոգւով` կենդանի բանին աստուծոյ տեսանել ա՛յն աչօքն որ տեսին *զորթն*. և համբուրել շրթամբք: - 350. Զոր եզեկիա խարտեաց. որպէս մովսէս զգլուխ *որթոյն* և կորոյս: - 387. Երկոտասաներորդ` ընդէ՞ր յետոյ ստեաց և կինն զտեսիլն զի եղեն *զորթն* իւր զդիեցիկ: - 428. Ուռն *զորթն:* - 469. Եւ աւուրք պաշտամանն էր երկոտասան. **Ե** օր քաւութեանն վասն *որթոյն* յանապատին. և **Է** օր տաղաւարահարացն ի յիշատակ խորանաւ բնակելոյն յանապատին ամս **Խ**. և այլ սքանչելեացն զոր գործեցաւ անդ: - 483. Քառասունևհինն, Գրոց կարդալն. և Սաղմոս կցորդ. *Որթի*. և Ալէլուն. և Տէր ողորմեայն: - 527. Նիւք այսմ խորհրդոյս է՛ հաց ցորենոյ, և գինի *որթոյ:* - 594. Երրորդ հինձան է իւրաքանչիւր սիրտ և անձինք արդարոց. որ հաստատեալ է հաւատով *յորթն* ճշմարիտ և պտղաբերէ՛ զողկոյզ բարեաց. և չարչարանօք ճմլէ՛ յինքեան զուրախարարն գինի հրեշտակաց և մարդկան. և այսորիկ բարեա՛ցն են հինձան: - 749. Այսորիկ են երեք բազուկքն անգուցեալք իբրև ուռս *որթոյ*. ուստի ճշմարտութիւնն ասէ յաւետարանին, «ես եմ *որթն* ճշմարիտ, և դուք ուռ»: - 755

**ՈՐԹԱԳՈՐԾՈՒԹԻՒՆ +** Այլ ըստ ոմանց` տօն քաւութեան *որթագործութեանն*, նշանակէ ի մեզ զտօն մեծ քառասնորդացն պահոց: - 373

**ՈՐԹԱՊԱՇՏ -** Եւ տե՛ս, զի և զղևի՛ օրհնեաց. վասն զի ապաշխարեաց ի յարենէ սիկիմացւոց ի յարիւն եղբարցն *որթապաշտից:* - 409

**ՈՐԹԻ (տ. ՕՐԹԻ) +** Զի՞նչ է աւետարանին, *Ո՛րթի*. և մոմ վառեմք. և բուրվառ շարժեմք: - 644. Նոյնպէս և աստ փոխանակ որոտմանն, *Ո՛րթի* բարձրաձայն. որ է՛ յառաջ մատիք: - 644

**ՈՐԻՇ +** Այլ այս առաւել զմիականութիւնն ընդ հօր և որդւոյ ցուցանէ. զի ասէ` ո՛չ իմ կամք այլ *որիշ* զի առնեմ, այլ զա՛յդ կամքդ առնեմ զի հասարա՛կ է: - 46. Նա՛և ո՛չ մարմինն *որիշ* յօծողէն կոչեսցի օծեալ: - 94. Այլ արտաքին տաճար որպէս բնակարան և *որիշ* ի նմանէ` ո՛չ է և ո՛չ ասի: - 319. Մովսէս զգործ աստուծոյ գործ էր. և նորա մարդոյ գործ *որիշ* և կամք: - 350. Տասներորդ, Թէ *որի՛շ* են հայք: - 525. Եւ սոքա *որիշ* են յամենայն ազգաց: - 550. Նա՛խ` զի ջուրն և արիւնն *որիշ* բղխեաց և ո՛չ խառնեալ. ապա յա՛յտ է թէ *որիշ* է խորհուրդ ջրոյն և *որիշ* արեանն: - 595. Իսկ որք ոչ միաւորեն, բաժան և *որիշ* նշանակեն զբանն ի մարմնոյ իւրմէ. որպէս երկաքնակքն քաղկեդոնիկք: - 598. Իսկ թէ նուազ է, որպէս մանկունքն ճաշուն, և համբարձին. *որիշ* ասեմք զփառքն և զայժմն: - 636. Նոցա փառ կամ կցորդ գոյ զկնի. և որք *որիշ* են` նոցա կցորդ ո՛չ ասի: - 636. Ո՛չ թէ *որիշ* դաս անկաւ այլ իմն թուով` արտաքոյ քան

զինն դասս: - 760

***ՈՐԻՇ ՈՐԻՇ +*** Ապա ուրեմն ո՛չ է անծնելութիւնն և ծնելութիւնն *որիշ որիշ* բնութիւն. այլ ի նոյն ի մի բնութեանն աստուծոյ: - 38. Եւ ստեփաննոսս այս՝ արար գործիք **իզ** *որիշ որիշ*. և նորօք երգէր: - 640

**ՈՐԿՈՐ +** Երկրորդ՝ զի նմանեաւն տանջեցան *որկորայք* և չարք: - 426

**ՈՐԿՈՐՍՏԵԼ** - Եւ ցանկութեանն են այլքն. զի ցանկայ ագահել. և *որկորստել*. և պոռնկիլ: - 559

**ՈՐԿՈՐՍՏՈՒԹԻՒՆ +** Իսկ ծուլութիւն՝ ագահութիւն՝ *որկորստութիւն* և բղջախոհութիւն՝ միայն առ մոլիսն գտանին: - 152. Եւ ոմանք զեկուսն միա՛յն ասեն մարմնական. որ է՛ *որկորստութիւն* և բղջախոհութիւն. և այլքն ամենայն հոգեկան: - 559. Իսկ երկուքն պարզ մարմնական. այսինքն *որկորստութիւնն* և բղջախոհութիւնն: - 559. Առաջին *որկորստութիւն:* - 560. Յօդոյ *որկորստութիւն* և հպարտութիւն. զի վերընթա՛ց է և քարշօղ: - 560. *Որկորստութիւնն* օդոյ: - 560. Զի *որկորստութիւն* է ճաշակելեաց. և Պոռնկութիւն շօշափելեաց: - 560. Իսկ յետ և յահեակ *որկորստութիւն* և պոռնկութիւն. զի յետս դարձումն է ի ճշմարիտ բարւոյն, և զհետ ընթերցումն է առ ահեակ և սուտ բարիս: - 560. Եւ թէ ցանկայ ստորև հեշտալեաց, և այս լինի կրկին. թէ հեշտալին այն է ի պահպանութիւն անհատին, լինի *որկորստութիւն*...: - 561. Վասն է՞ր ա՛յլ վարդապետք առաջին մեղք ասեն զհպարտութիւնն. իսկ նազրիոս *զորկորստութիւնն:* - 561. Իսկ եւագրիոս առաջին դնէ *զորկորստութիւն* վասն երից: - 561. Նա՛խ՝ զի առաջին մարդն ի դրախտին *որկորստութեամբ* մեղաւ. և այն առաջին մեղք եղև մարդկայինս բնութեան: - 561. Երկրորդ՝ զի մանկունս հասակաւ նախ *որկորստութիւնն* տիրէ, և ապա՛ յերիտասարդութեանն պոռնկութիւնն զօրանայ: - 561. Երրորդ՝ զի շղթայք մեղաց այսպէս ունին զկարգն. զի նախ *որկորստութեամբ* լնու զորովայնն. և յետ այնորիկ պոռնկութեամբ թափէ՛ զնա. և ապա՛ արծաթ ժողովէ զի լնու զորովայնն և պոռնկի...: - 561

**ՈՐԿՐԱՄՈԼՈՒԹԻՒՆ +** *Զորկրամոլութիւնն* ընպելովն զքացախն և զլեղին: - 489. Բարկութիւնն ցասմանն. իսկ Ծուլութիւնն է հոգւոյն. Ագահութիւնն հրոյն. *Որկրամոլութիւնն* օդոյն. և Բղջախոհութիւնն ջրոյն: - 559. և *որկրամոլութեամբ* մնան բազմամարմինք. և ատելութեամբ զերծանի ոչխարն ի գայլէ. և խրոխտումն մեծարգոյ առնէ զձին. և այլն նմանապէս: - 563. Նոյնպէս և *զորկրամոլութիւնն* յաւելու միտքն հնարելով զանազան կերակուրս և ըմպելիս: - 564. Զի՞նչ է *որկրամոլութիւն:* - 570. *Որկրամոլութիւն* է անսահման բաղձանք ուտելոյ և ըմպելոյ: - 570. Սրբութիւն սրտին *զորկրամոլութիւնն*. զի սրբութիւն սրտին ո՛չ ծառայէ որովայնին ըստ օրինակի անբան անասնոց: - 583

**ՈՐՄ +** Զորօրինակ՝ որպէս տղայ որ տեսանիցէ ցից ի *յորմում*, երթայ ի մօտ. թէ ամո՛ւր է՝ թողու. վասն զի ո՛չ կարէ հանել. և երթայ առ միւսն. թէ շարժի՝ ի մօտ կենայ մինչև հանէ՛: - 160-161. Որպէս տունն ի ժողովիլ փայտից և *որմոց՝* շինի. և ի ցրուիլն սոցա կործնի տունն: - 175. Եւ թ միւս *որմունք* ըստ դասուցն իմանալեացն փառաբանիչք: - 391. Քսանևը, ձգեաց սաւուղ զգեղարդն դաւթի, եհար *զորմն* և ապրեցաւ դաւիթ. և որդիքն սաւուղայ հարկանել ետուն զկողս տեառն և ո՛չ վնասեցին աստուածութեան նորա: - 436. Քսանևթ, հարեալ *որմն* վկայեաց թէ սպանօ՛ղ է դաւթի սաւուղ. և չարչարեալ և մեռեալ մարմինն վկայէ՛ թէ աստուածասպա՛նք են հրէայքն: - 436. Որ միզիցէ *զորմով:* - 443. Տասներորդ՝ յաւուր միում այսահարեալ սաւուղ՝ կամէր նիզակաւն բևեռել զդաւիթ *յորմն*. յորմէ զերծեալ ապրեցաւ և գնաց ի տունն: - 513. Երկրորդ՝ հաւատն է հիմն. յոյսն *որմ*. սէրն շինուածք: - 577. Այլ և այսպէս **բ** *որմունք* լինելոց են ի հանդերձեալն. այսինքն է մին հրեշտակաց և միւսն մարդկան սրբոց յաւիտենից փառաբանիչք: - 636

**ՈՐՈԳԱՅԹ +** Թէն առաքինութիւն է որով զերծանի մարդ *յորոգայթից* սատանայի. և թեփն ծածկոյթ ամօթոյն. սուրբ են: - 364

**ՈՐՈԳԻՆԷՍ** - Եւ հետևի հազարամեայ արքայութիւնն *որոգինի*. նաև փոխիլն ի տանջանաց: - 694. Իսկ *որոգինէս* զհազարամեայ արքայութիւն սրբոցն: - 706. Ոմանք հերձուածօղք որպէս *որոգինէս*, առաջին յարութիւն ասաց զհազարամեայ արքայութիւնն...: - 710

**ՈՐՈՃ +** Նա՛խ՝ է՛ աննշանն զորս որոշէ՛ օրէնքն. որ ո՛չ ունի կճղակս և *որոճ* և այլն՝ անսուրբ է: - 295

**ՈՐՈՃԵՄ +** *Որոճօղն* քննօղ իմաստութեան. և կճղակն ուղիղ վարք հոգւոյ և մարմնոյ. սուրբ են: - 364

**ՈՐՈՄՆ +** Երբեմն ժամանակաց, ուր ուրէք մտանէին հերձուածօղք և սերմանէին *զորոմն* աղանդոց: - 544. Իսկ *որոմն* չարք և անպիտանք: - 693. Եւ յայնժամ *զորոմն* քաղել առ ի յայրել ի հուրն. և զցորեանն ի շտեմարանն ժողովել ի կեանս: - 693. *Որոմն* ընդ ցորենոյ ի տանուտեառն ագարակին: - 756. Զի **բ** *որմունք* լինելոց են յարքայութեանն երկնից: - 760

**ՈՐՈՆԵՄ +** Թէ կրօնաւոր է՝ հարցանէ թէ ծոյլ եղեա՞լ է յաղօթքն. կամ անհնազանդ. թէ բղջախոհ. թէ յատուկ իրք ունօղ. թէ պճնօղ. թէ *որոնօղ* լաւ կերակրոց և ըմպելեաց. թէ քնափ և թէ կռւօղ: - 601. Եւ մաղթե՛մ եղբայրական սիրով, ըստ բնածին բարեբոյս բարուցդ աժխոյժ մտօք ուղղապէս *որոնել*. զթերին լնլով և զաւելորդն կշռել: - 789

**ՈՐՈՇԱԿԻ +** Իսկ թէ և *որոշակի* ասես ուղղափառ մտօք, և ո՛չ այն է զարտուղի. յորժամ ասես աստուծոյ մարմին և աստուծոյ արիւն. զի որ ինչ է՛ ի յաստուած՝ աստուած է և ո՛չ օտար յաստուծոյ: - 92-93

**ՈՐՈՇԵԼԻ** - Գիտելի՛ է, զի հոմ անուն է զօրութիւնն. այսինքն կարութիւնն. և հոմանունն մա՛յր է մոլորութեան. վասն որոյ *որոշելի* է զնոսա: - 167

**ՈՐՈՇԵՄ +** Այլ և այսու *որոշեսցին*. զի յունակութենէ պակասութիւն լինի. այլ ի պակասութենէ ունակութիւն ո՛չ երբեք: - 21. Եօթներորդ՝ է՛ հպարտութիւնն. որ փքացումն է երեսաց մտացն և *որոշէ*՛ յաստուծոյ...: - 32. Վեցերորդ՝ հակառակէ քրիստոսի՝ և քրիստոնէից. և սոքա հակառակին սուրբ եկեղեցւոյ և ուղղափառ հաւատոյ. և զոր բանն աստուած առեալ զմարդկայինս բնութիւն միաւորեաց ընդ իւրում աստուածութեանն՝ սոքա ընդդէմ նմին *որոշեն* զբանն ի մարմնոյն...: - 35. Այլ զայս երկբայիս յաղագս ոչ գիտելոյ քոյ թէ «մինչդ» ամենուրէք ո՛չ *որոշէ* ընդդէմ հանդերձելոյն...: - 42. Զորս նզովեալ *որոշէ*՛ սուրբ եկեղեցի: - 68. Եւ ընդ դէմ նմին արիոս ի ձախ խոտորեալ՝ **գ** անձինք և **գ** բնութիւնս *որոշեաց:* - 80-81. Այսպէս սոքա կոչմամբ և ձայնիւ միաւորեն, և իրօք և բնութեամբ բաժանեն և *որոշեն:* - 82. Յորոց թէ մի ի սոցանէ զտցի ումեք, *որոշեսցէ*՝ ի միմեանց: - 87. Ըստ որոյ կերպի և իցէ, թիւ ի ներքոյ բերէ միոջէն և առ մին. և նոյնէ անձն *որոշեալ* թըւով: - 88. Զի զոչ առեալն ասեն մի ի քրիստոս՝ և ո՛չ զառեալն. այսինքն զանձն՝ որ ո՛չ է առեալ՝ մի ասեն. իսկ զառեալ բնութիւնն *որոշեալ* պահեն և յերկուս քակտեն: - 88. Զի եթէ զմարդկայինն ասէք քրիստոս, ահա՛ առանձնապէս *որոշեցիք* զնա ըստ նեստորի. և սոսկ մարդ ասէք զքրիստոս: - 89. Իսկ թէ զաստուածային անձն և զմարդկային բնութիւնն ասէք մի քրիստոս, ահա յա՛յտ է զի բաժանեցիք յաստուածային բնութենէն զքրիստոս. զի անձն աստուծոյ և զբնութիւն մարդոյ ասէք մի քրիստոս. և զաստուածային բնութիւնն *որոշէք:* - 89. Իսկ միանգամայնն՝ դարձեալ ընդ դէմ է նոցա Որք զաստուած և զմարդն *որոշեն* ի միմեանց. եթէ բնութեամբ և եթէ անձամբ: - 91. Եւ այժմ առ քեզ խօսեսցուք ըստ վկայութեան կարգիս ո՛վ նեստորական երկաբնակ և մարդադաւան *որոշօղ* քրիստոսի, և *որոշեալ* ի շնորհաց նորին: - 98. Ինն դասք են հրեշտակաց. և յերիս երեակս *որոշեալ*. և այլք եօթն ասեն: - 102. Այսպէս ստեղծանել՝ և *որոշել*՝ և զարդարել: - 105. Եւ յատուկ՝ զի *որոշեալ* և բաժանեալ է յարարածոց. և ո՛չ մի է ըստ սոսա. ո՛չ մասն է արարածոց և ո՛չ բոլոր: - 106. Այսպէս է միութեամբ *որոշեալ* և բաժանեալ. և բազմութեամբ միացեալ: - 106. Իսկ անեղն ի **բ** դէմս *որոշի*. որպէս անեղ էն աստուած. և անեղ՝ որ դեռևս ո՛չէ եղեալ և գոյացեալ: - 118. Դարձեալ՝ և այսպէս տեսանի աստուած. յորժամ միտք յամենայն եղելոց *որոշեսցի*...: - 119. Իսկ չորրորդն է խորհրդական աստուածաբանութիւն. յորժամ զամենայն զգալի և զիմանալի էութիւն արտաքոյ թողեալ, ի խորս ընթանամք մտօք և մտանեմք յամպն և ի մէգն ըստ մովսէսի. և ապա տեսանեմք զնա արտաքս *որոշեալ* յամենայն էից: - 122. Վեցերորդ՝ լուսաւորէ զաչս *որոշել* զգոյնսն: - 126. Եւ քրիստոսիւ լուսաւորեալք *որոշեցաք* զբարի և զչար: - 126. Ասեմք եթէ՝ ինն դասք յերիս երրեակս *որոշեալ* թըւոց. որոց Առաջինն է Աթոռք. Քերօբէք. և Սերօբէք: - 134. Իններորդ՝ յերիս *որոշեալ* դասս. որպէս սերօբէք՝ քերօբէք՝ և աթոռք: - 134. Զի գիտեմք զդոսա ինն գոլ դասս ըստ սրբոյն դիոնիսեայ. և երիս երրեակս *որոշեալ* ի դէմս Երրորդութեանն: - 141. Եւ *որոշի* դէմք սիրելութեանն յերկուս. ի յինքն և ի յայլս: - 143. Իսկ որ ի յայլս՝ *որոշի* յերիս. այսինքն ի վերնագոյնն, որպէս յաստուած՝ ի հրեշտակս և ի սուրբս: - 143. Երրորդ՝ ի ժողովիլն սոցա լինի մարմնական էութիւն. և *յորոշելն* կորնչի մարմինն: - 175. Զի ուղղաձնութեան ուսուցիչք ի բաժանմանէ ի միութիւն եկեալ խոստովանին զքրիստոս. և սոքա ի միութենէ ի բաժանումն *որոշեն:* - 176. Երրորդ՝ զի պարփակէ. այսինքն ժողովէ և *որոշէ* զբանն: - 177. Այլ և ժողովէ՛ զբանն և *որոշէ*. այսինքն զհեգ. զբառ. զբան. և զիմաստութիւն: - 178. Երկրորդ՝ զի առաջին և սկիզբն է թուոց. որպէս միակն թիւ բազմանայ և խառնի յայլս, այսինքն՝ ի **ժ**. ի **ճ**. ի **ռ**. և ի բիւրն. և ի միութենէն իւրմէ ո՛չ *որոշի:* - 178. Նոյնպէս և այբն խառնի ի թաւ և ի լերկ, ի սուղ և յերկար, և միաբանի ընդ նոսա, և ի մի բնութենէ իւրմէ ո՛չ *որոշի* կամ այլայլի: - 178. Զի նախախնամութեամբ հաղորդեալ են յարարածս. և իսկական բնութեամբն մեկնեալ և *որոշեալ* և յանհասս գերամբարձեալ: - 178. Հինգերորդ՝ զընտիրս և զխոտանս *որոշէ*՛*:* - 185. Հինգերորդ՝ զբարիս և զչարս *որոշէ*՛*:* - 185. Զորս զայնպիսի ասացօղքն և ընդունօղքն՝ *որոշեալ* նզովէ՛ եկեղեցի քրիստոսի

աստուծոյ: - 226. Այլ զմասունս *որոշեաց* յաւուրս **գ**: - 227. Յերկրորդն՝ զհոգևոր ստեղծուածսն *որոշեաց* ի մարմնաւորէն: - 227. Տասներորդ՝ մէջ և կապ ամենայն գոյիցս մա՛րդն է կազմեալ. զի ամենայն արարածք ի **բ** դէմս *որոշին*. այսինքն մինն յիմանալի և միւսն զգալի. և սոքա եղեն յառաջագոյն: - 231. Այժմ տեսցուք թէ զի՞նչ է շահն աննման պատկերաց. զի բազում վնաս էր լինելոց թէ անհատք ո՛չ էին *որոշեալ* դիմօք: - 238. Նախ՝ զի նիւթն այն ունի առ ինքն բնական զկենդանութիւն տնկականին. և տնկականն մա՛սն է զգայականին. և զգայականն բանականին. և սոքա ո՛չ *որոշին* ի բոլորէն. զի մի են էութեամբ ի մարդն թէպէտ ա՛յլ են ներգործութեամբ: - 254. Զիմաստութիւնն հոմանուն է և ի բազում տեսակս *որոշի*. և բնաւքն ամենայն՝ մտա՛ցն են ներգործութիւն. վասն այն կոչի իմաստութիւն որ է իմացութիւն: - 269. Վեցերորդ՝ վասն *որոշելոյ* զդէմսն: - 281. Վեցերորդ՝ սկայքն անխտիր ուտէին թէ մեռեալ և թէ հեղձուցեալ. վասն որոյ զի *որոշեսցէ* ի նոցանէ՝ ասէ արեամբ շնչոյ մի՛ ուտիցէք: - 295. Նա՛խ՝ է՛ աննշանն զորս *որոշէ՛* օրէնքն. որ ո՛չ ունի կճղակս և որոճ և այլն՝ անսուրբ է: - 295. Երկրորդ՝ զի ի հին օրէնքն քահանայքն զենուին. զոր *որոշեսցուք* ի նոցանէ: - 296. Գիտելի է, զի ամենայն պատարագ յերեք դէմս *որոշի*. այսինքն մատուցօղն, և ընդունօղն և պատարագն: - 306. Այլ գիտելի է, զի **դ** սեռիւք *որոշի* կապ բանականացս. այսինքն հոգեկան և մարմնական և միջակօրէն: - 317. Եւ է՛ տաճար *որոշեալ*. որպէս արտաքին բնակարանք մեր: - 319. Այլ և նաշիհ. զի հաց կենդանարար և հատ ցորենոյ կոչեցեալ. ճնշեալ չարչարանօք և *որոշեալ* ի թեփոյ մեղաց: - 361. Նաշիհն ճգնութիւն մարմնոյս *որոշեալ* յաւելորդաց: - 374. Վեց քաղաքաց հրամայեաց *որոշել* ապաստանի և տալ քահանայից. **գ** յերկիրն քանանու և **գ** յայնկոյս յորդանանու: - 392. Է՛ և ա՛յլ իմն տեսութիւն բանիս. զի կամի՛ զպաշտօնս մեր *որոշել* ի կռոց զոհիցն. զի սուտանուն դիքն խնդրէին ուստերս և դստերս և արջառս և ոչխարս զոհել և սպանումն օտարաց: - 396. Զի թլփատութիւնն դրո՛շմ էր նոցա և *որոշօղ:* - 418. Եւ տէր մեր յաղթեաց իշխանին դիւաց. և եհատ զնորայն բռնութիւն աջոյ. և զոմանս եթող ծախիւ թիւրելոյ և զընտիրս *որոշելոյ:* - 419. Եւ տե՛ս, զի բնութեամբ միաւորեցաւ՝ իմանի քրիստոս. յայտ է զի *յորոշելն* ըստ ոմանց՝ ո՛չ ևս մնայ քրիստոս: - 474. Եւ նեստոր կամէր զմարմինն *որոշել* և սոսկ մարդ դաւանել: - 475. Առաջին միաւորութիւն ստոյգ և ճշմարիտ՝ հոմանիւթ մասնաւորաբար *որոշեցելոց*. որոց ոչ ինչ տարանիւթ ընդ մէջ երևի. որպէս երկուց ջահից լուցելոց միաւորութիւն լուսոյն: - 476. Նոյնպէս և *յորոշելն* ըստ ոմանց զաստուածն և զմարդ՝ ո՛չ է քրիստոս. այլ մարդ սոսկ կամ մերկ աստուած: - 477. Երրորդ՝ զի հոգի միաւորեալ ընդ մարմնոյ՝ է երբէք զի *որոշի* և դարձեալ միանայ: - 478. Այլ և գիտելի է, զի ամենայն պատարագ յերեք դէմս *որոշի*. որ է՛ մատուցօղն, և ընդունօղն, և պատարագն: - 491. Եւ զի ա՛յլ է մահ և ա՛յլ ապականութիւն՝ յա՛յտ է նախ ի գործոյն. զի ինքեամբ մահ ի ներքս մտեալ *որոշէ՛* զհոգի և զմարմին. և ա՛յս է գործ նորա: - 498. Իսկ ապականութիւն այլայլութեամբն ի ներքս մտանէ, և *զորոշեալն* ի միմեանց՝ դարձեալ օգտէ՛ և այլայլէ՛ ...: - 498. Դարձեալ ևս յայտնի. մահն զանձն քակէ՛ և *որոշէ՛*. իսկ ապականութիւն զբնութիւնն ապականէ և այլայլէ՛: - 498. Իսկ առաքեալքն փոխեցին զնաւակատիս մեր առանց արեան զի *որոշեսցուք* ի նոցանէ: - 509. Նմանապէս և զկերակուրս **գ** են *որոշեալ* քրիստոնէից: - 510. Յոտոտելիք՝ որք ընտրեն և *որոշեն* զբարի և զչար: - 534. Կրկին իշխանութիւն է զոր ունի քահանայն. զի կապելն *որոշելն* է. սարկաւագին որ *որոշէ՛* զանմաքուրն յեկեղեցւոյ: - 538. Ասեմք, եթէ որք ի հաւատս ունին թիւրութիւն. որպէս հերձուածօղք և վնասիչք եկեղեցւոյ. և որք ի զազիր վարս պղծեալ են գործովք և վնասեն զինքեանս. և անզեղջք են առ երկոսին. յետ մի անգամ և երկիցս խրատելոյ, *որոշեսցին* յեկեղեցւոյ և պատժեսցին: - 540. Այլ որ **ճճ** ամաւ յառաջ եկին ի հայք՝ ասորիք արք քաջաբանք, և կամեցան սերմանել զաղանդն նեստորի. որք նզովեալ *որոշեցան*...: - 545. Ո՞չ ապաքէն մովսէս ի հինն *որոշեաց* զսուրբս և անսուրբս. մանաւանդ թէ յաւուրս նոյի գոյր ընտրութիւնս. այսպէս ցուցաւ և մեզ պահելի իբր զբնական օրէնս. այլ սոցա ոչինչ է պիղծ ի կենդանեաց: - 552. Այն է որ գիտէ ճշմարիտն և առնէ զսուտն. և այս յերեք դէմս *որոշի:* - 564. Մեղք անունն մի է, և բոլորապէս յերիս տեսակս *որոշի.* այսինքն ի սկզբնականն, և ի մահացուն, և ի ներելին: - 567. Իսկ ներելին թէպէտ *որոշի* յերիս տեսակս ըստ մեծութեան և նւազութեան. այլ մանրամասնաբար յանթիւս ելանէ. որպէս ծիծաղիլ. վայրաբանել. և այլն: - 568. Նոյնպէս որ օտար անկողնով պղծէ զշաղկապ պսակին, *որոշի* յօրհնութենէն և պղծի անկողինն սուրբ: - 610. Երրորդ, որպէս յերկինս յերիս երրեակս *որոշին* դասքն. այսինքն առաջին՝ աթոռոցն. միջին՝ տէրութեանցն. և վերջին՝ հրեշտակացն: - 624. Նոյն սարասիւք այժմ ի ձեռն փրկչին մերոյ յիսուսի՝ տապանակաւ խաչին և աղօթիւք սուրբ եկեղեցւոյս՝ բարձրացեալ պարիսպն չարութեան եօթնից զգայութեանց մեղաց *որոշօղ* ի մէջ մեր և աստուծոյ, կործանեսցի ի սպառ: - 627. Այլ և **թ** տէր

ողորմեայն ի պատարագն. և **բ** երեքսրբեանն, ի խորհուրդ **բ** դասուց վերնական յերիս երրեակս *որոշեալ:* - 645. Չորրորդ, զի մա՛սն է հոգւոյն և հանդերձեալ կենացն. պա՛րտ է զպատականն *որոշել* քան զմարմնոյս: - 657. Իսկ օրհնութիւն աղին, զի *որոշեսցի* ի զոհից կռոց, և ի հասարակ զենմանց...: - 657. ...են հոգիք նոցա ի միում խորանի մինչ դատաստանն ընտրեսցէ զնոսա և *որոշեսցէ.* որպէս ցուցանի յառաջիկայդ: - 687. ...զի զարդարս և զմեղաւորս ի դատաստանին ասեն *որոշիլ:* - 687. Ի մի ասացին զոլ խորանս ի ներքոյ երկնից զարդարս և զմեղաւորս. որք դատաստանաւն *որոշին:* - 689. Որ արարն յոչ էից, զիտէ անխառնապէս *որոշել* զիւրաքանչիւր փոշիս արդարոց և մեղաւորաց. զի հատուսցէ իւրաքանչիւր ըստ գործոց: - 719. Երկրորդ պակասութիւն է թուլութիւն և մոռացումն մտաց. զի աստ զաստուած մոռանամք և *որոշիմք* մեղօք ի նմանէ. - 722. Վասն այն հոգիք մեղաւորաց լինին ի խաւարն անգիտութեան. և ի տրտմութիւն յաւիտենական. և *որոշեալք* յաստուծոյ: - 723. Ա՛րդ՝ յայտնեալ է նա և *որոշեալ* ի մէջ ամենայն փայտից զոլ արմատ արդարութեան որով փրկեցաք ի բանսարկուէն: - 734. Եւ մի՛ վասն անարզանաց եղբօրն *որոշիլ* ի գլխոյն և ի դատաստան մահու մատնիլ: - 735. Դարձեալ որպէս ի վեր անդր ի հրեշտակացն՝ բանն յերիս *որոշեցաւ.* այսինքն է՛ բան մտաց և բան լեզուի և բան գործոյ: - 739. Դարձեալ հինգերորդ, մեղքն *որոշէ* ի յաւիտենական կենացն. վասն այն անկանի ի մահն յաւիտենական: - 744

**ՈՐՈՇԻՉ +** Նա՛խ՝ ասի ողորմութիւն, իբր թէ *որոշիչ* թշուառութեան սրտին: - 459

**ՈՐՈՇՈՒՄՆ +** Այլ և ո՛չ ասի աստուած և մարդ *որոշմամբ.* այլ աստուած մարդացեալ և մարմնացեալ: - 79. Ապա՛ թէ *որոշմամբ* ասես աստուած և մարդ, ասա՛ և զծնօղն կոյս՝ աստուածածին և մարդածին: - 79. Ասի դարձեալ՝ աստուած մարմնազգեաց. այլ ո՛չ ասի աստուած մարդազգեաց. կամ մարդ աստուածազգեաց. զի այս *որոշմա՛ն* է: - 79. Իսկ թէ յայնցանէ փախչիք իբր յայտնապէս *որոշումն* և այլիմն պատճառաւ որպէս զառնենեաւ ծածկէք զզայլենիս ձեր: - 89. Ահա՛ այս ի կարճոյ բացայայտութիւն ծածկեալ ամբարշտութեանց, որք **բ** բնութիւնս սահմանեն ի վերայ միոյն քրիստոսի. թէպէտ անձն մի համբաւեն համաձայն մեզ, սակայն *որոշմամբ* բնութեանց լինին տարաձայն մեզ և եկեղեցեացն աստուծոյ: - 90. Միութիւն և *որոշումն:* - 101. Դարձեալ՝ անճառելի է անհաղորդն և գերազանց *որոշումն* անեղին: - 103. Զի՞նչ է միաւորութիւն և *որոշումն.* այսինքն հասարակ և յատուկ աստուածային: - 104. Իսկ յատկութիւն և *որոշումն* դիմաց՝ սակաւ ինչ է. վասն այն քըւով տեսանի: - 104. Այսքան վասն *որոշման* յատկութեանց: - 105. Այսքան յընդհանուր վարդապետաց վասն միութեան և *որոշման* սրբաբանեալ: - 105. Եւ յատուկ է անշփոթ *որոշումն* ի միմեանց: - 106. Զորօրինակ երեք լոյս լապտերաց միաւորեալ՝ և *որոշմամբ* յատկացեալ: - 106. Այսպէս է միութիւնք և *որոշմունք* որ է հասարակ և յատուկ ի սուրբ Երրորդութիւնն: - 106. Գոյացութիւն և պատահումն անմեկնելի *որոշմունք* են. վասն է՞ր ի յաստուած միայն գոյացութիւն է և ո՛չ պատահումն: - 170. Իններորդ՝ անմեկնելի *որոշմունք* են. և առինչք են արարիչն և արարածք: - 171. Եւ մարմնով ո՛չ բաժանին սոքա. թէպէտ և մանր փոշի լինին՝ ունին զքանակն զորակն և զայլն. զի անմեկնելի *որոշմունք* են գոյացութիւն և պատահմունք: - 175. Ապա թէ կամիս *զորոշումն* բնութեանց ի ներքս բերել ո՛վ երկաբնակ, մի՛ ասեր **բ** բնութիւն. այլ **գ**. այսինքն զմարմնոյ և զհոգւոյ և զբանին բնութիւն: - 176. Նզովքն *որոշումն* ասի. ըստ այնմ, «կամէի նզովս լինիլ վասն ազգին իմոյ»: - 388. Զի էութիւն ընդ պատահման միշտ անշփոթ միաւորի. որպէս որակ և քանակ ի գոյացութեան. զի անմեկնելի *որոշմունք* են: - 475. Եօթներորդ՝ որպէս այլայլական և փոփոխելի մարմինս կայ և մնայ անփոփոխ և անապական միաւորեալ ընդ հոգւոյն մինչև *զորոշումն:* - 477. Եօթներորդ՝ ի պահս և յաղօթս և յայլ աւանդութիւնս բազում ունել *որոշումն:* - 553. Նախ՝ զի մեք զգայարանօք՝ միջնորդութեամբ պատահմանցն հասանիմք ի գոյացութիւնն. զի անմեկնելի *որոշմունք* են ի գոյացութեանց սոքա: - 597. Մահ է *որոշումն* հոգւոյ ի մարմնոյ: - 667. Ասեն վարդապետք, որպէս միաւորութիւն նոցա կեանք է, նոյնպէս և *որոշումն* նոցա մահ: - 667. Այս *որոշումն* է բնութեան մարմնոյն: - 667

**ՈՐՈՋ +** Այլ ա՛յս է ճշմարիտն, զի ամենայն բարեկամքն որ ժողովեցան յետոյ և մխիթարեցին զնա՛, իւրաքանչիւրքն բերին մէն մի *որոջ* ոչխարի և **դ** դրամ ոսկի անգիր ընծայեցին նմա ի սատար խրախութեանն...: - 326. ...և Ալոջ, և *Որոջ.* ունելով զկէս ամն աւելի քան զերեք ամն ի ծննդենէն մինչև ի խաչն: - 361

**ՈՐՈՎԱՅՆ +** ...բոլոր դիտումն նոցա է՛ պատրել զմարդիկ և հանել ի հաւատոց. և լնուլ *զորովայնս.* և զկանայս շեղջակուտեալս մեղօք յինքեանս գրաւել: - 35. Եւ զի նախանձեցաւ ընդ մարդոյն, ի լանջս և *յորովայնս* սողայ: - 219. Վեցն՝ *որովայնն:* - 241. Երկրորդ՝ ի յղութեան մինչ *յորովայնի* լինի՝ մի՛

զենցես աւէ: - 399. Չորրորդ՝ սամփսոն ուխտաւոր *յորովայնէ:* - 422. Եւ մեծն ի ծնունդս *որովայնի*՝ խրաց մի կօշկաց նորին լուծելոյ ոչ բաւէր: - 456. Այսինքն երդումն աբրահամու և դաւթի՝ մարդ լինիլ բանին ի վերայ երկրի ի պտղոյ *յորովայնէ* նորա. և նստել յաթոռ հօր նորա. և ի նմանէ օրհնիլ ամենայն ազգաց: - 457. Նաև ունէր զշնորհս սրբութեան արգանդին. զի *յորովայնէ*՛ սրբեցաւ յարգանդէ: - 462. Որ է *որովայն* կեանք և մահն: - 469. Այլ մեք այսպէս խոստովանիմք. եթէ օծաւ բանն աստուած ի հոգւոյն սրբոյ յորժամ յղացաւ մերովս կերպիւ *յորովայնի*...: - 475. ...ըստ որում որ էջ հոգին սուրբ *յորովայն* անարատ կուսին և մաքրեաց զնա...: - 475. Եւ վա՛յ ասեմ որովայնամոլ ազգացն որք զամենայն պահքս լուծանեն ի ծուկն անխտիր. որոց աստուած *որովայնք* իւրեանց է և փառք ամօթն ըստ առաքելոյ: - 510. Մի կոչի եկեղեցի՝ ո՛չ տեղեաւ մի. այլ միով հաւատով և յուսով կոչմանն. և միոյ մօր և մի *որովայնի* ծնունդ աւազանին...: - 533. Երրորդ՝ զի շղթայք մեղաց այսպէս ունին զկարգն. զի նախ որկորստութեամբ լնու *զորովայնն*. և յետ այնորիկ պոռնկութեամբ թափէ՛ զնա. և ապա՛ արծաթ ժողովէ զի լնու *զորովայնն* և պոռնկի...: - 561. Զի մահացուն ո՛չ էր ի յերեմիայ և ի յովհաննէս որք սրբեցան *յորովայնէ*. թէպէտ ո՛չ զերծանեին ի ներելւոյն: - 568. Սրբութիւն սրտին զորկրամոլութիւնն. զի սրբութիւն սրտին ո՛չ ծառայէ *որովայնին* ըստ օրինակի անբան անասնոց: - 583. Նա՛խ՝ զի ի դառն մաղձոյն հոսի *յորովայնն* ի ներքոյ սրտին և կսկծեցուցանէ զսրտակրանքն...: - 619. ...որք խըճողե՛ն *զորովայնս* իւրեանց առանց օրհնութեան: - 654. Սակայն ի յղութեանն իջանէ չար հոգին ի *յորովայն* մօրն. և նմա զօրութեամբն և ներգործութեամբն ծնանի մանուկն և սնանի և հասանէ յերիտասարդութիւն. - 706. Ի ստամոքս *որովայնի*. և ի լեարդս, և ի յուղեղս գլխոյն: - 786. Իսկ ի ներքուստ, ի լինիլ տրտմութեանց՝ խունճապեալ մարմնոյն հոսի մաղձ դառն ի ստամոքս *որովայնի*. և վերացեալ գոլորշեաց նորա զօրէն շոգոլեաց պուտկի առ խելապատակս գլխոյ. և ծանրացեալ անտի թորի՛ առ բիբն ասացեալական. չոր գոլով և աղէգոյն ի սևատեսա՛կն մաղձոյ: - 787

**ՈՐՈՎԱՅՆԱՄՈԼ +** Սողունք՝ *որովայնամոլքն* են: - 365. Եւ վա՛յ ասեմ *որովայնամոլ* ազգացն որք զամենայն պահքս լուծանեն ի ծուկն անխտիր. որոց աստուած որովայնք իւրեանց է և փառք ամօթն ըստ առաքելոյ: - 510. Եւ այս *որովայնամոլ* ազգին անօրէն օրէնք կարգեցաւ: - 651

**ՈՐՈՎԱՅՆԱՄՈԼՈՒԹԻՒՆ +** Երկրորդ ըստ որակին. որպէս թէ **բ** մարդ գործեն *զորովայնամոլութիւն:* - 565. Մինն կամէր լնուլ զպէտս իւր և անգիտութեամբ անկաւ *յորովայնամոլութիւն*. և մինն յօժարութեամբ և փափագանօք անկաւ: - 565

**ՈՐՈՎՀԵՏԵՒ +** Եւ *որովհետև* ծանեաք զայս, արդ պատասխանեմք առարկութեանցն, եթէ որքան է՛ ի հարկաւոր պատճառ է՛, լինի բացորոշապէս բանն ճշմարիտ...: - 10. Եւ *որովհետև* ծանեաք զայս, պատասխանե՛մք ասելով՝ եթէ կարգաւո՛ր է և յոյժ: - 114. Եւ թէ ոք ասիցէ, *որովհետև* աստուած յաւիտեան է անսկիզբն և անվախճան. նոյնպէս և յարածգականն: - 116. Եւ *որովհետև* գիտացեալ եղև այս, ապա յա՛յտ է թէ անկա՛ր է ոչ երևիլ սկիզբն լինելութեան աշխարհի. ըստ այնմ որ էր ի նախագաղափար տեսութիւնն աստուծոյ: - 164-165. Եւ թէ ոք ասիցէ, *որովհետև* ներգործութիւնքն բնութեանց հետևին, որպէս հուրն միշտ այրէ, և ջուրն ցրտանայ և ջերմանայ. ապա ճշմարիտ երևի բանն դամասկացւոյն՝ եթէ է՛ ի քրիստոս կրկին ներգործութիւն. որպէս և կրկին բնութիւն: - 174. Եւ *որովհետև* ծանեաք զի անմարմին են սոքա, յա՛յտ է զի բաժանումն սոցա քակէ՛ զնիւթն ի մարմնոյ. ապա ուրեմն ի մի վայր ժողովումն՝ ծնանի զնիւթական մարմինն: - 175. *Որով հետև* ի վերայ երկրի և օդոյ է դատաստանն, հաւատալի՛ է և ձայնական խօսից: - 739. Ասեմք թէ՝ յիրաւի, *որովհետև* երևեցաւ տէր մեր ի փրկութիւն ընտրելոց ըստ ամբակումայ, նախահայրն յաւիտեան. իսկ այլք ազատեցան ժամանակեայ: - 777

**ՈՐՈՏ +** Իսկ բանիւ գործոյ խօսի աստուած ընդ դիւին. նա՛և հրեշտակք ընդ սատանայի. որպէս *որոտ* և կայծակունք հրոյ ի վերայ նոցա...: - 145. Կարկուտ և *որոտ* ներգործէ: - 202. Զի՞նչ է *որոտն:* - 203. Իսկ գէջն լինի ամպ. և չորն ի մէջ ամպոյն նեղեալ պատառելով զծալմունս ամպոյն՝ լինի *որոտ* և փայլատակունք ևս: - 204. Եւ զի նախ *որո՛տն* է և ապա փայլակն: - 204. Իսկ ի չորոյն՝ հողմունք և հնչմունք զանազանք. *որոտք* և փայլատակմունք. կայծ. և այլն որպէս ցուցաւ: - 204. Իսկ միջինն է՛ Նօտոսն. առնէ *որոտ*. և փայլակն. և անձրև խիստ: - 206. Չորրորդ՝ յամպոյն *որոտ* և կայծակունք թափին: - 206. Չորրորդ՝ *որոտն* և մրրիկն յամպոյն՝ զսպառնալիս բարեկամացն նշանակէ: - 326. Երկրորդ՝ *որոտն:* - 333. Վասն որոյ ի սոյն ժամանակի առաւելու *որոտ* կայծակ և կարկուտ զգալապէս՝ յիշատակ սքանչելեացն աստուծոյ: - 341. Երրորդ՝ ահագին երևումն, *որոտ*, և փայլակն: - 393. Նախ՝ զի ցուցանէ թէ որ ետ զօրէնսն՝ նոյն առաքեաց և զհոգին և ի նոյն տիպն *որոտ* և փայլատակումն հողմ

և հուր երևեալ որպէս անդ ի լերինն: - 524. Զի ծաղիկն դիւրաւ թափի յամէն փոքր պատճառէ. յանձրևոյ և ի հողմոյ և ի սաստիկ *որոտոյ*. վասն այն պտուղն կորնչի: - 638. Ի խորհուրդ օրինացն. յորժամ էջ տէր ի սինա, փող և *որոտ*, հուր և ծուխ և այլն: - 644

**ՈՐՈՏԱՄ +** Եօթներորդ՝ զի լինի ամպ որ ո՛չ *որոտայ* և ո՛չ կայծ է վասն սաստիկ խստութեանն: - 206. Հինգերորդ՝ նա՛խ *որոտայ* և ապա՛ փայլէ: - 207. Հինգերորդ՝ նախ *որոտայ* և ապա՛ փայլէ. այսպէս և հոգին որոտմամբ էջ...: - 522

**ՈՐՈՏՈՒՄՆ +** Վասն է՞ր այնպէս ահագին երևմամբ և *որոտմամբ* երևեցաւ աստուած ի սինա: - 341. Երրորդ՝ ի գուշակ սուրբ հոգւոյն որ այնպէս *որոտմամբ* և հրեղէն լեզուօք էջ յառաքեալսն: - 341. Հինգերորդ, նոցա ձայնն *որոտմամբ* ահագին. և մեզ բանն հանդարտ և քաղցր: - 354. Արդ մի՛ մերձենար դու յիս անկատար գոլով. որպէս մայր քո եւա ի ծառն գիտութեան. յորժամ առ բնութեամբ իմ հայր՝ և ծեր ըստ շնորհի՝ և աստուած մարմնոյս իմոյ ես ելանիցեմ, *որոտմամբ* իջեալ հոգին զծեզ կատարէ՛. արժանաւորիք յայնժամ առ իս մերձենալ: - 518. Հինգերորդ՝ նախ որոտայ և ապա՛ փայլէ. այսպէս և հոգին *որոտմամբ* էջ...: - 522. «Ղէէոս որ անուանեցաւ թադէոս». յայտ է ի քրիստոսէ զանունն փոխեալ. որպէս զպետրոսին և զորդւոցն *որոտման:* - 549. Նոյնպէս և աստ փոխանակ *որոտմանն*, Ո՞րքի բարձրածայն. որ է՛ յառաջ մատիք: - 644. Վեցերորդ, զի ահագին փառօք գայցէ փողով մեծաւ և անպախաղաց *որոտմամբ* և շարժմամբ և հրով բորբոքելոյ որպէս ի սինայ: - 737

**Ո՛ՐՉԱՓ +** Եւ ծանիր զայս, զի որքան նըւազի ողջութիւնն՝ առաւելու հիւանդութիւնն. և *որչափ* նըւազի մարմին՝ առաւելու ապականութիւն. այլ յամենևին նըւազիլ ողջութեան՝ և հիւանդութիւնն կորընչի: - 22. Եւ ի միւս բանին թէ՝ «հայր իմ մեծ է քան զիս». զքանն չա՛փ իմացիր՝ թէ մեծ է *որչափ* ես. որպէս ասէ որդի, «ես և հայր իմ մի եմք»: - 39. Իսկ առ չարն յո՛յժ ազդողակա՛նք են. այլ ո՛չ այնքան *որչափ* և կամին. այլ որքան իբր ի հրեշտակաց թոյլ տացի: - 149. Հոգին պատկե՛ր է աստուծոյ. և աստուածապաշտ մարդոյ՝ զաստուած քննել ո՛չ մարթի թէ ուստի՞ է. կամ ո՞ւր է կամ *ո՞րչափ* է. և կամ թէ ո՞րպէս է. կամ թէ մինչ ի յուր է: - 251. Եւ բարձրացուցին զժ ամսոյ ճանապարհ ընդ ելն և ընդ էջն. *որչափ* բարձրացաւ ջուրն **ճճ** օր, և **ճճ** օր դարձեալ իջաւ: - 296-297. ...որպէս առաւել է մեղք հրեշտակին քան զմարդոյն. վասն այն մին քահանայի մեղք՝ *որ չափ* բոլոր ժողովրդեանն է. ուստի յա՛յտ է ի պատարագէ հնոյն...: - 563. Տե՛ս զի բազում ասէ զվարձս բամբասանաց *որչափ* նախատիցին: - 586. *Ո՞րչափ* իմաստութիւն ունէր: - 601. *Ո՛րչափ* ուտիք է, նոյնչափ պահք է: - 649. Այնչափ *որչափ* և քրիստոս քարոզեաց: - 709

***Ո՞ՐՉԱՓ ԵՒՍ ԱՌԱՒԵԼ, Ո՞ՐՉԱՓ ԵՒՍ +*** Եւ սուտ առաքեալք զճշմարտիցն կերպանային. և այն զի ո՛չ ունէին զնոյն տիպ. իսկ թէ ունիցին զնոյն տիպ՝ *ո՞րչափ ևս:* - 238. Երկրորդ այնու՝ զի ի նաւաբեկութենէ փրկեալք եղիցին. թէ նաւաբեկեալքն որ ի ծովէն ելանեն այնքան ուրախանան, *ո՞րչափ ևս առաւել* ուրախասցին որք զայս քան նաւաբեկութիւնս կրեալք ի վշտագին ծովէ այսմ աշխարհի զերծան: - 764

**ՈՐՉԱՓՈՒԹԻՒՆ +** Եւ որպէս ըստ հանուր մարդկութիւնս լրիւ էացաւ ի տեսութիւնն աստուծոյ *յորչափութիւնն* և ի թիւն: - 254

**ՈՐՊԷՍ +** *Որպէս* ասեն հերձուածօղք՝ զամենայն ինչ մարդկան ի հարկէ՛ գոլ. այսինքն զգործ. զդիպուած. զմահ. զկեանք. և զամենայն ինչ: - 7. *Որպէս* արեգակն զի ո՛չ այրէ որ է հեռաւոր պատճառ. այլ հուրն ի նմանէ առեալ զջերմութիւն ի մերձ գոլով այրէ՛ ...: - 8. Նա՛խ, զի ըստ սոցա ոչինչ է զանազանութիւն մշտնջենաւորացն և փոփոխականացն. որք են երկնայինք և երկրաւորք. զի նոքա միա՛յն են ի հարկէ, որք միշտ նոյնպէս ունին. *որպէս* հրեշտակք անմահք. և լուսաւորք երկնից. և ջերմութիւն հրոյ: - 8. Իսկ երկրաւորք մերթ այսպէս և մերթ այնպէս. լինին և ո՛չ լինին. *որպէս* մարդ, ձի, ծառ, և այլն: - 8. Այլ և սոքա ո՛չ զանազանին ի միմեանց, *որպէս* բանական և անբան. եթէ է ամենայն ի հարկէ: - 8. Չորրորդ, զի ո՛չ լինի ի դիպուածոց ինչ. *որպէս* սոյից ոմանց պատահին բարեբախտութիւն...: - 8. *Որպէս* յորժամ ասեմք, վաղիւ լինի արև, կամ ո՛չ լինի. լինի անձրև, կամ ո՛չ լինի. ի հարկէ մինն ճշմարիտ է ի սոցանէ: - 8. Նախ՝ եթէ լինէր բանս մեր ի հարկէ ճշմարիտ, նա ո՛չ մինն միայն, այլև ամենայն բան զինչ ասէաք՝ ճշմարիտ լինէր. *որպէս* շինել քաղաք, կամ ո՛չ շինել. տընկել այգի, կամ ո՛չ տնկել: - 8. Ապա ուրեմն յա՛յտ է՝ զի բանն զիրն ո՛չ կարէ ճշմարտել. այլ իրն զբանն ճշմարտէ. յորժամ գոյ կամ ո՛չ գոյ. *որպէս* ասէ ի հարկէ՛ գոլ զէակն յորժամ է՛. և ո՛չ գոլ յորժամ ո՛չ է: - 9. Ապա յա՛յտ է՝ թէ զոր ինչ խորհիմք՝ ի հանդերձեալսն զնոյն առնեմք. և ո՛չ ի հարկէ բանն մեր *որպէս* ցուցաւ: - 9. Զի ի վերայ մշտնջենաւորացն բացորոշակի յերեք ժամանակս՝ այսինքն յանցեալսն ի ներկայսն և յապագայսն՝ մինն ճշմարիտ է և մինն սուտ. *որպէս* հրոյ ջերմութիւնն և արեգական լոյսն: - 9.

Իսկ ի վերայ փոփոխականացս ո՛չ նմանապէս. զի յանցեալ ժամանակս և ի ներկայս բացորոշակի մինն ճշմարիտ է և մինն ստէ՛. _որպէս_ ասեմք՝ երէկ անձրև էր, կամ ո՛չ էր. այսօր անձրև է, կամ ո՛չ է: - 9. Ձորօրինակ՝ իրն ի ներկայս որ է նիւթ ներընդունակ՝ ունի կրկին զօրութիւն. _որպէս_ հանդերձն կարէ՛ պատառիլ, և կարէ՛ ո՛չ պատառիլ...: - 9. Եւ թէ ոք ասիցէ, բազում բանք մեր բացորոշակի լինին ի հանդերձեալն. _որպէս_ թագաւորն յորժամ ասէ շինեսցի քաղաք, և շինի...: - 9. Կամ է ի հարկաւոր պատճառ է. զի անխափան լինիցի. _որպէս_ մարդ մեռանելո՛ց է: - 9. Կամ է՛ ի ներընդունակ պատճառն իւր. որ հաւասար է ի լինիլն և յոչ լինիլն. _որպէս_ ելանել ի զբօսանս, կամ ո՛չ. լինիլ անձրև, կամ ո՛չ: - 10. Եւ որովհետև ծանեաք զայս, արդ պատասխանեմք առարկութեանցն, եթէ որքան է՛ ի հարկաւոր պատճառ է՛, լինի բացորոշապէս բանն ճշմարիտ. _որպէս_ բան թագաւորի. և մարդոյն մեռանիլն. և արև ծագելն. և լինիլն գարուն յետ ձմռան: - 10. Իսկ թէ է ի պատճառն ներընդունական, յայտնի՛ է որ հաւասար ունի զգոլն և զո՛չ գոլն _որպէս_ ասացաւ: - 10. Ամենայն ինչ որ լինի՝ ունի պատճառ. և ամենայն պատճառ ի հարկէ է՛ նախքան զպատճառելին. ապա թէ հարկաւոր պատճառս այս ո՛չ է բանն մեր _որպէս_ ցուցաւ...: - 10. Դարձեալ ասեն, թէ ամենայն ստորնային մարմինք՝ կառավարին վերնային մարմնովք. _որպէս_ յա՛յտ է ի չորս եղանակս տարւոյն...: - 10. Դարձեալ ասեն, թէ բազում ինչ հանդիպի արտաքոյ կամաց մերոց. _որպէս_ չար հիւանդութիւն...: - 11. Դարձեալ՝ ունիմք խորհուրդ, և ընտրեմք զառնելիսն, և խոտեմք զոչ առնելիսն. և բազում անգամ խորհելովն հանդիպիմք բարւոյ, և փախչիմք ի չարէ. և խորհուրդն ի հնարաւորա՛ցն է _որպէս_ ասացաւ և ո՛չ ի հարկաւորացն: - 11. Դարձեալ, թէ ամենայն ինչ ի հարկէ՛ է մարդոյ և անասնոյ, ապա ոչինչ զանազանի բանականն և անբանն. զի բանականն իմացմամբ և կամօք վարի. և անբանն ի բնութենէ՛ հարկի _որպէս_ ասացաք: - 11. _Որպէս_ տուրքն նաբուգոդոնոսորայ. և աղօթքն եզեկիայ. որ յետս դարձոյց զմահ. և այլք բազումք. ապա ուրեմն ո՛չ է հարկ: - 11. _Որպէս_ յորժամ արեգակն և լուսին զտեղի առին առ յեսուաւ. և յետս դարձաւ արեգակն առ եզեկիայիւ: - 11. Եւ _որպէս_ կիրք ցաւոցն մարդոյն են, զի զգա՛յ զկսկիծն. նոյնպէս և կիրք հեշտութեանն նորա՛ են, եթէ չարեաց և եթէ բարեաց, ապա ուրեմն մեր է ներգործութիւնն և ո՛չ հարկին: - 11. ...բոյսք որք յերկրի են դարմանիչք և բժշկութիւնք մարմնոց. այլ երկնային աստեղքն են արարիչք լուսոյ և ժամանակաց. և ի նշանս ապագայից. զի յամենայն ուստեք տեսեալ պատրաստեսցին մարդիկք. _որպէս_ ասէ գիր, եղիցին լուսատու լինիլ երկրի. ի ժամանակս և ի նշանս: - 12. Եւ շարժումն նոցա ո՛չ պատճառէ զչար և զբարիս մարդկան. այլ են պատճառք աւուրց և ժամանակաց և եղանակաց. ծնանելոյ և աճելոյ. և նշան ապագայից _որպէս_ ասացաք...: - 12. Երկրորդ՝ ասեմք եթէ և ոչ աստեղք վայրապար են ստեղծեալ. զի կառավարք են տարրեղէն մարմնոց _որպէս_ ասացաք...: - 13. Այլ կառավարի երբեք ի կամս նախախնամութեան առաջին պատճառին. _որպէս_ ասէ սուրբն գրիգոր նիւսացին ի գիրս որ յաղագս բնութեան մարդոյն: - 13. ...փախչելով յառաջ ասացեալ բախտէ՛ և ճակատագրէ՛ աստեղացն, փոխանակ նոցա յառաջին պատճառն վերագրեն զիարկն. _որպէս_ զի մի՛ ասիցեն երկու սկիզբն ըստ մանիքոսի: - 13. Երկրորդ՝ բարին ունակութիւն է, և չարն պակասութիւն նմին. _որպէս_ խաւարն լուսոյ: - 13. Յնգետասաներորդ՝ թէ չարն է յաստուծոյ՝ և սկիզբն ամենայնի է աստուած, որև չարեաց ըստ նոցա, ապա ո՛չ է սկզբնաչար առաջին գտակն չարեաց սատանայ. _որպէս_ նոքայն բարբանջեն: - 14. Վեշտասաներորդ՝ զի թէ չարն է յաստուծոյ _որպէս_ բարին, և երկուցն սկիզբն է աստուած, և արդ՝ եթէ միևնոյն է սկիզբն երկուցն, անկարելի է ներհակացն ի միասին ունիլ մի սկիզբն...: - 14. Եօթնևժերորդ՝ զի թէ չարն և բարին ունին մի սկիզբն, _որպէս_ ընդդիմաբաժանեալ տեսակքն զսեռն: - 14. Ութևժերորդ՝ զի թէ չարնէ յաստուծոյ, այս լինի կամ հակակայութեամբ յառաջ եկեալ. _որպէս_ սպիտակն յո՛չ սպիտակէն. կամ բաղդատութեամբ. _որպէս_ կենդանին ի կենդանւոյ: - 14. Եւ ըստ ինքեան չար է՝ _որպէս_ ասեմք զչարն չար. և ըստ պատահման՝ _որպէս_ ասեմք զմարդն չար: - 15. Քսաներորդ՝ զի ի հարկէ բարի է աստուած. _որպէս_ ի հարկէ էա՛կ է. այլ արդ՝ հարկաւոր բարին է միշտ բարի և գոյացական բարի և զուտ բարի: - 15. Եւ արդ՝ բաւական է այսչափ _որպէս_ ցուցաւ, թէ աստուած ո՛չ է պատճառ չարեաց, այլ բարեաց միայն: - 15. Իսկ ի տեսութիւն մարդոյ է՛ առաջին և վերջին. զի զանցեալն տեսանէ յիշմամբ, և զներկայն իմացմամբ. և զհանդերձեալն ի պատճառն իւր ըստ ժամանակին փոփոխման _որպէս_ ասացաք: - 15. Նախ եթէ կամացն աստուծոյ ոչ ոք է ընդդէմ. և _որպէս_ կամի այնպէս առնէ. այլ չար ո՛չ կամի և ո՛չ առնէ: - 16. Ասեմ զառաջինն եթէ՝ չար ո՛չ է յաստուծոյ. զի աստուած բարի՛ է բնութեամբ. և ի բարւոյն չար ո՛չ գայ յառաջ. _որպէս_ ո՛չ ի լուսոյն խաւար: - 16. ...բարին ունակութիւն է, և չարն պակասութիւն նորին. _որպէս_ խաւարն լուսոյ, և հիվանդութիւնն առողջութեան, և մահ կենաց: - 16. Յինգերորդ, ասեն թէ՝ գործունեայք չարին են յաստուծոյ _որպէս_

կամքն. ապա և չարն է յաստուծոյ. զի նա՛ ստեղծ զկամքն: - 16. Վեցերորդ՝ ասեն հակառակքն, թէ՝ չարն ոչ է յաստուծոյ, ապա աստուած ո՛չ ճանաչէ զչարն. *որպէս* մեք նմանեաւ զնմանն ճանաչեմք...: - 17. Դարձեալ ասեմք թէ՝ *որպէս* մեք ունիմք կրկին ճանաչումն իրաց, այսինքն զի զոմն ճանաչեմք ի յատուկ տեսակն իւր. և զոմն այլով տեսակաւ: - 17. Նմանապէս և աստուած միակ միջնորդութեամբ ճանաչէ զբարին ըստ ինքեան ի յատուկ տեսակն իւր. և ճանաչէ զչարն կրկին միջոցաւ. այսինքն զի է՛ հակակայ բարւոյն. և է՛ պակասութիւն նմին *որպէս* ասացաւ: - 17. **Ասեմք նախ եթէ՝ չարն ո՛չ է յաստուծոյ *որպէս* բարին. զի բարին ըստ կամա՛ց է. իսկ չարն թոյլ տալով է**...: - 17. Զի նախախնամութեամբ բազում բարիս յառաջած է ի չարէ. *որպէս* սատանայի թոյլ տայ, զի փորձեսցին բարիքն և յաւելցին պսակքն: - 17. Նաև մարդկան չարեաց թոյլ տալ. զի կամ ընտրեսցեն զբարիս՝ կամ յետոյ զղջասցին. և այլ պէսպէս նախախնամութեամբ *որպէս* ինքն գիտէ աստուած՝ ներէ՛ չարեաց. *որպէս* տեսանելոց եմք յառաջիկայսդ: - 17. Իսկ սկիզբն և կատարումն ի մեզ, *որպէս* նախածանօթ ընտրեալքն յառաջ քան զլինիլն աշխարհի. որ այժմ բարի գործովք կատարեսցին ըստ նախասահմանելոյն իւրեանց: - 18. Այլ արդ՝ չար գործոցն ո՛չ է յաստուծոյ. *որպէս* ցուցաւ...: - 18. Իսկ չար փոխանակ բարւոյ ո՛չ առնէ ըստ որում անիրաւութիւնէ. այլ առնէ երբեք ըստ որում նախախնամութիւնէ. զի ի չարէն լինիցի բարի. թէպէտ մեզ չար երևի, այլ այս ևս բարի է. *որպէս* հիւանդութիւն. փորձութիւն. և այլն: - 18. Եւ այսպէս է ընտրեալն և կոչելն և արդարացուցանելն. *որպէս* գրէ առաքեալն: - 18. *Որպէս* յիմար հիւանդն ասիցէ, կամիմ ուտել և ըմպել զհաճոյսն իմ. եթէ առողջանալո՛յ եմ՝ առողջացայց. և եթէ մեռանելո՛յ՝ մեռայց: - 18-19. Մետասաներորդ՝ ասեն թէ *որպէս* ի կենդանիս ուղտն խոհեմ՝ և տատրակն ողջախոհ է, և ա՛յլ կենդանիք են ապուշք և բղջախոհք: - 19. ...ո՛չ գով. և ո՛չ պարսաւ հետևի. *որպէս* և ո՛չ բնական բարուց անաւնոց: - 19. Դարձեալ ասեմք թէ՝ ըստ ինքեան սոքա ոչ են չար. այլ բարի. *որպէս* տգէտն ի մեղաց. և բարկութիւնն ընդդէմ չարեաց...: - 19. Դարձեալ ասեմք թէ՝ սոքա ո՛չ են բնութիւնք ի հոգին. այլ որակութիւնք զանազանք և աննմանութիւնք. *որպէս* պատկերք երեսացն: - 19. *Որպէս* արեգակն զամենայն լուսաւորէ, այլ պարզ նիւթն լուսաւորի և թանձրն ո՛չ: - 20. Այլ զի արեգակն անբանապէս տայ զլոյսն. իսկ աստուած բանիւ և իմացմամբ ընտրէ զարժանիսն և փրկէ. *որպէս* մարդիկ զընտրելիս ընտրեն, և ոչ զխոտելիս: - 20. Վեցերորդ՝ եթէ է ամբոխումն ինչ ի մէջ նոցա, ոչինչ էին մեկուսի ի մէնջ. այլ դժուարաձեռն *որպէս* զմեզ և հակառակ: - 21. Առընչական. *որպէս* մեծ և փոքր: - 21. Պակասական. *որպէս* ունակութիւն և պակասութիւն: - 21. Ներհական. *որպէս* ջերմ և ցուրտ: - 21. Հակասական. *որպէս* ստորասութիւն և բացասութիւն: - 21. Արդ՝ բարի և չար ո՛չ են հակակայք *որպէս* առինչք. զի առինչքն համանգամա՛յն են. և ի միմեանց բաղկանան. իսկ բարին և չարն ո՛չ են համանգամայն. և չարն ի բարւոյն ո՛չ գոյանայ. և ո՛չ բարին ի չարէն: - 21. Եւ ո՛չ են *որպէս* ստորասութիւնք և բացասութիւնք, որ միայն ի բա՛նն են հակակայք. *որպէս* ճշմարիտ, և սուտ. այլ չար և բարի՝ ի բանս և ի գործս պատահին: - 21. Եւ ո՛չ *որպէս* ներհականք. *որպէս* ջերմ և ցուրտ. սպիտակ և սեաւ. զի սոքա որակութիւնք են. իսկ բարին էութիւն է, և չարն ո՛չ է էութիւն: - 21. Այլ թըւի *որպէս* ունակութիւն և պակասութիւն. զի բարին ունակութիւն է, և չարն պակասութիւն նմին. *որպէս* կուրութիւն երեսաց՝ և խաւար լուսո՛յ է պակասութիւն: - 21. Ասեմք առ այս եթէ՝ բարի և չար ըստ ենթակային ներհակք են միմեանց. իսկ ըստ ինքեանց՝ ունակութիւն և պակասութիւն *որպէս* ասացաք: - 21. Չարն ո՞րպէս է ոչ է. զի ահա՛ ներհականա՛յ բարւոյն. *որպէս* առաքինութիւն և չարութիւն: - 22. Եւ ի յէութեան է. *որպէս* հիվանդութիւն ի յողջութեան, և ապականութիւն ի մարմնի: - 22. Ասեմք զառաջինն թէ ո՛չէ է չար. զի ապականիչ և կորուսիչ է *որպէս* ցուցաւ. ա՛րդ՝ ընդ ապականել զայլսն՝ ապականէ և զինքն. և ո՛չ մնայ ի յէութեան: - 22. Զի է՛ ինչ որէ է՛ և բարի. *որպէս* ամենայն էութիւնք: - 22. Եւ է որ ո՛չ է է՝ և բարի. *որպէս* նիւթ անորակ: - 22. Եւ է և ո՛չ բարի. *որպէս* կամքն չար: - 22. Եւ ո՛չ է. և ո՛չ բարի. *որպէս* չարն արտաքոյ էութեան և արտաքոյ բարւոյ: - 22. Եւ է չար՝ որ խա՛ռն է ընդ բարւոյ. և ի յէութեան գոյանայ. *որպէս* հիւանդութիւնն ի յողջութեան. ապականությիւնն ի մարմնի: - 22. Այսպէս և բարին՝ է՛ որ պարզ և միեղէն բարի է. *որպէս* աստուած. զի անփոփոխ և միշտ բարի է. զի էութեամբ բարի է. և բարին էութիւն է աստուծոյ: - 22. Եւ է՛ որ խառն բարի է. *որպէս* առ մեզ պատահեալ բարիս որ ունակութիւն է. զի ա՛յլ է էութիւն մեր, և ա՛յլ է բարի յէութեան մերում: - 22-23. Այժմ պատասխանեսցուք հարցմանն եթէ առաքինութեանն չարութիւն, և արդարութեանն անիրաւութիւն ներհական. *որպէս* խաւարն լուսոյ. և էութիւն է լոյսն. և ո՛չ էութիւն խաւարն. և օդն ընդունակ լուսոյ և խաւարի: - 23. Եւ *որպէս* լոյսն միշտ լոյս է, թէպէտ պակասեցաւ ի յօդոյն. ուստի յայտ է՝ զի դարձեալ լուսաւորէ: - 23. Զբացբարձականսն ի վերայ աստուծոյ՝ *որպէս* անճառ և անսահման՝ ո՛չ ըստ պակասութեան կոչեմք, այլ ըստ գերազանցութեան: - 24. Վասն

ճանաչման իւրոյ աստուած կազմեաց կրկին կերպիւ օրինակս. այսինքն իմանալի և զգալի. *որպէս* հոգին, միտքն, և նմանք սոցա. կամ արեգակն, լոյս, և նմանք նոցա: - 24. Նախ՝ բնական քննութեամբ. *որպէս* իմաստասէրքն գտնի: - 24. Երկրորդ՝ հաւատով. *որպէս* մեզ հաւատացելոցս: - 24. Երրորդ՝ պարգևականն. *որպէս* մարգարէիցն երևակայութեամբ, կամ ի ձեռն մարմնոյ զգայութեանց: - 24. Չորրորդ՝ առանձնակի տեսութեան՝ միայն իմացմանն՝ վասն առանձնակի արժանաւորութեան. *որպէս* մովսէսին: - 24. Այսմ տեսութեանս որք արժանաւորին, նոքա երանին և անքակ միանան ի սէր նորին *որպէս* հրեշտակք: - 24. Ո՛չ է ըստ չարափառացն ասել ուղղակի՝ թէ նախանձու կամ վասն փառաց *որպէս* ասեն, զի անգիտութեամբն պատուեսցի. ընդունա՛յն է կարծիքս այս. ասել զոր չէ՛ արժան անախտ և պարզ բնութեանն աստուծոյ: - 24. Եթէ ոք գիր ո՛չ գիտէ, և ո՛չ ըզվակյութիւն ընդունի սուրբ գրոց, *որպէս* ցուցանեմք նմա թէ է՛ աստուած: - 25. Երրորդ՝ ի միակէ, զի ամենայն բազմութիւն է ի միակէ՛. *որպէս* տեսակն յանհատէ. և գիծն ի կիտէ. և բազում թիւ է՛ ի միոյն: - 25. Ա՛րդ՝ եթէ միակս այս շարադրի բազմաց, ո՛չ մնաց մին. իսկ եթէ ոչ շարադրի, ո՛չ գոն բազումք. այլ մի և մի. և այս *որպէս* այս: - 25-26. Չորրորդ՝ զայլայլումն լուսաւորացդ. այսինքն զի երբեմն խաւարին, *որպէս* առ խաչելութեամբն. և երբեմն յետս դառնան և կանգնին, *որպէս* յեսու և առ եզեկիա: - 26. Առ որս ասեմք եթէ՝ բանս այս «ամենայն» ո՛չ այնպէս նեղագոյն առեալ լինի ի սուրբ գիրս՝ *որպէս* առ փիլիսոփայսն: - 27. Ասեմք եթէ՝ գոգ և մագօգն՝ հոգևորապէս իմացեալ լինին ամենայն հալածօղք եկեղեցւոյ. զորս սատակեսցէ՛ տէր յս զամենեսեան *որպէս* ասէ սաղմոսն՝ «*որպէս* զանօթ բրտի փշրեսցես զնոսա»: - 28. Նախ՝ ոչ ի հօրէ և ո՛չ ի մօրէ. *որպէս* ադամ: - 29. Երկրորդ՝ ի հօրէ՛ և ո՛չ ի մօրէ. *որպէս* եւա: - 29. Երրորդ՝ ի հօրէ՛ և ի մօրէ՛. *որպէս* ամենայն մարդ: - 29. Նախ՝ որք աստիճան դնեն Երրորդութեանն. և ի յայլումն ասեն զհոգին. *որպէս* պատահումն: - 29. Նոյնպէս ո՛չ կարէ իմանալ յորժամ ի սուրբ գրոց և ի սքանչելեաց և ի բանից սուրբ վարդապետաց՝ դարձուցանէ զմիտքն. *որպէս* ասէ առակն՝ պակասամիտն ոչ ընդունի զբանս խոհեմութեանց. բայց միայն զայն՝ որ շրջին ի միտս նորա: - 31. Երրորդ՝ է՛ նրբութիւն իմանալեացն և բնութիւն իմացմանն. *որպէս* բժոտ աչքն ո՛չ տեսանէ զմազն ի հեռաստանէ: - 31. Եւ զոր ինչ տեսանէ աչք արծըւին՝ ո՛չ կարէ տեսանել աչք մարդոյ. այնպէս բթամիտն ո՛չ իմանայ, զոր իմանայ նրբահայեացն և ուսեալն յաստուծոյ. զոր եդ աստուած ուսուցիչ այլոց. *որպէս* մարգարէքն, և առաքեալքն, և վարդապետք: - 31. Չորրորդ՝ է՛ հեռաւորութիւն հաւատալեացն. զի որք ո՛չ կրթին ի գործ իմացման, բայց միայն ի զգայութեանց՝ հեռի՛ են ի հաւատալեացն *որպէս* երկիր յերկնէ: - 31. Եւ այնպիսիքն տրամաբանել ո՛չ կարեն վասն հոգևորին. *որպէս* ի ծնէ կոյրն վասն գունոց, քանզի ասեն վարդապետք՝ աստուած լոյս է ո՛չ մարմնոց, այլ մտաց. զոր թէ ոք ո՛չ տեսանէ՝ կո՛յր է: - 32. Քանզի *որպէս* արեգակն ո՛չ տեսանի՝ եթէ ո՛չ լուսովն իւրով. այսպէս իմանալին աստուած ո՛չ տեսանի, եթէ ո՛չ լուսով շնորհաց հաւատոյն իւրոյ: - 32. Զի *որպէս* սատանայ ամբարտաւանութեամբն ընդդէմ աստուծոյ՝ զրկեցաւ ի լուսոյն, նոյնպէս և հպարտն զրկեցաւ ի շնորհացն ըստ երեմիայ: - 32. Զի *որպէս* գիջակնութիւնն չտայ թոյլ տեսանել յստակ, այսպէս երկիւղն յետս քարշէ զբազումս ո՛չ հաւատալ ի քրիստոս...: - 32. Այլ և ատելութիւնն դարձուցանէ զմիտս բազմաց ի հաւատոցն. *որպէս* ատելութիւն և նախանձ փարիսեցւոցն՝ ո՛չ տային թոյլ հաւատալ ի քրիստոս. թէպէտ տեսանէին զամենայն նշանսն զորս առնէր. *որպէս* ասէ սաղմոսն, «ատեցին զիս ի տարապարտուց»: - 32. Եւ *որպէս* աչք ո՛չ տեսանէ զպակասութիւնն իւր, նոյնպէս բանականն ո՛չ տեսանէ զմոլորութիւնն իւր: - 32. Տասներորդ՝ զի կամակո՛ր են ի չար շաւիղն. որոց բժշկութիւնն դժուարին է. *որպէս* ասէ առակն, «որոց թիւր են ճանապարհք նոցա. և կամակոր շաւիղք»: - 32-33. Երկտասաներորդ՝ այլ և ուրա՛խ լինին ընդ խոտորումն չարութեան. *որպէս* ասէ առակն: - 33. Եւ *որպէս* ասեն վարդապետք՝ քան զամենայն մեղս ծանրագոյն գոլ զպաշտօն կռոցն վասն երկուց: - 33. Արդ՝ կռապաշտն և հերձուածօղն հաւասա՛ր են յամբարիշտ գոլն. զի *որպէս* շուն դառնայ ի փսխած իւր...: - 33. Իսկ սոքա անզեղջ մնան *որպէս* սատանայ՝ զինքեանս ուղիղ կարծելով: - 33. Իսկ սոքա և զհրեշտակս ընդ մեզ դասեն. *որպէս* յայտ է ի գիրս պարապմանցն Կիւրեղի: - 34. Նա՛խ՝ զի գո՛րծ է նեռինն ուրանալ զաստուած, *որպէս* իւր անունն յայտնէ ...: - 34. ...հրեշտակ լուսոյ կերպարանին *որպէս* հայրն իւրեանց սատանայ. և ամենայնն ուրական միայն և ո՛չ ճշմարտութեամբ. և բոլոր դիտումն նոցա է՛ պատրել զմարդիկ և հանել ի հաւատոց...: - 35. Եւ *որպէս* նեռնն ազդումն է սատանայի՝ *որպէս* առաքեալն ասէ. և նոքա յազդմանէ սատանայի՝ խորհին և խօսին զանազան հերձուածս ըստ չար խորհրդոց նորա: - 35. Մանաւանդ թէ՝ *որպէս* վասն նեռինն յառաջագոյն պատմեցաւ եկեղեցոյ՝ զի զգուշասցին: - 35. Եւ կամ *որպէս* յղութիւն հարկ է զծնանիլն: - 36. Յէից՝ *որպէս* դու ի քո հօր մէջքն էիր զօրութեամբ, և յետոյ ծնար նոր

գործութեամբ: - 37. Թէ ոչ՝ Զի թէ մերձ էիր դու քեզ *որպէս* ոք առ ոք, բաժանեցար ընդ երկու. և զիա՞րդ մի իցես: - 37. Զի թէ պատասխանեմք թէ ո՛չ է հարկ թէ սկսեալն ամենայն իրօք և դադարեսցի. *որպէս* հրեշտակք և հոգիք մարդկան...: - 37. Այլ մեր պատասխանին առ այս՝ է՛ այս ինչ, թէ միշտ ծնունդ է ի հօրէ ըստ բնութեանն որդի. այլ անձամբ կատարեալ. *որպէս* լոյս ի հրոյն միշտ ծնանի և ոչ է անկատար՝ յօրինակ որդւոյ: - 37. ...ծնելութիւն և անծնելութիւն հակառա՛կ են միմեանց. *որպէս* սեաւ սպիտակի կամ լոյս խաւարի: - 38. Եւ զի ո՛չ է անծնելութիւնն բնութիւն աստուծոյ՝ *որպէս* ասել թէ աստուած: - 38. Դարձեալ՝ ո՛չ կարէ ծնանիլ որդի զհայր՝ թէպէտ ունի զհօր բնութիւնն. *որպէս* դու ծնեալ ի հօրէն քո՝ ո՛չ կարես ծնանիլ զհայր քո և լինիլ հայր հօրն քում. թէպէտ ունիս յամենայնի զբնութիւն հօր քոյ: - 38. Եթէ *որպէս* հօր, է՛ հայրութիւն միայն. իւր լինի և բնութիւնն: - 39. Ով արիանոսք՝ զի թէ *որպէս* զմեզ զորդի շնորհօք ասէք և արարած, մեք զի եմք շնորհօք որդիք՝ ունիմք ընդ մեզ և ընդ հայր շաղկապ. իբր թէ զլար զհոգին սուրբ: - 39. *Որպէս* գիտէ զիս հայր՝ գիտեմ և ես զհայր: - 39. Եւ զի ո՛չ է հնար *որպէս* ասացի, ապա ուրեմն ո՛չ է մեծ հայր քան զորդի. զի ի միմեանց տանին, և ի միմեանց լնուն: - 39. Իսկ միաւորութեանն իմանալ՝ ոչ է ինչ մեծ. այլ է հաւասար *որպէս* առօղն՝ նոյնպէս և առեալն զոյգ աստուած և մարդ: - 39. Զի ո՛չ էր հայր մեծ քան զնա՝ ի յոր երդնոյր. զի որք երդնուն՝ ի մեծագոյնսն քան զինքեանս երդնուն. ապա ուրեմն հաւասա՛րէ որդի հօր և ո՛չ փոքր *որպէս* ասէ առաքեալն: - 40. Իսկ զի ասէ՝ «առաքեցայ» ո՛չ թէ տեղւոջէ ի տեղի. *որպէս* մեք բովանդակեալքս ի մի տեղի...: - 40. Իսկ անտօն և ո՛չ գիր գիտէր՝ ո՛չ թէ այնքան իմաստութիւն, *որպէս* հաճոյ եղև աստուծոյ. մեք յի՞նչ հաւատամք և ընդունիմք զայն իմաստութիւն: - 40. *Որպէս* ասեմք բարառնաբար, «ծով ետես և փախեաւ». զի՞ է քեզ ծով: - 41. Առ որս ասեմք՝ թէ որդի ո՛չ ասի անդրանիկ վասն գոլոյն ի կարգէ ստեղծուածոց, զի ո՛չ ոք ստեղծեալ՝ էառ զբնութիւն աստուծոյ *որպէս* որդին: - 41. Զի *որպէս* առաջին նա՛ ծնաւ անսերմն ի կուսէ և ի հոգւոյն սրբոյ, այսպէս և մեք յետ նորա ի ձեռն հոգւոյն սրբոյ ծնանիմք ի կոյս աւազանէն: - 41. Երրորդ՝ ի խրատ մեզ. զի *որպէս* չարչարանօքն ազատութիւն արար մարդկային բնութեանս, այսպէս ամէն ոք չարչարանօք իւրովք ազատեսցի ի պատժոց ներգործական մեղացն: - 43. Վեցերրորդ՝ զի պահանջէ՛ ի սիրողաց իւրոց միշտ զայն խորհիլ. զի *որպէս* ինքն վասն սիրոյ զանձն իւր եդ ի վերայ մեր...: - 43. Եօթներորդ՝ զի չարչարանօքն իւրովք յուսադրեաց զմեզ, զի մի՛ յետ տկարութեանս և սակաւ չարչարանաց ի փորձողէն՝ կասեսցուք ի նահատակութեանց. այլ օրինակ դիցուք զչարչարիլն նորա մեզ և համբերեսցուք *որպէս* ասէ: - 43. Նախ՝ զի *որպէս* զգեստիւն ծածկի մարմինն, այսպէս տէրն զաստուածութիւնն իւր ամփոփեաց մարմնովն անհաս լինիլ ի փորձողէն...: - 43. Երկրորդ՝ զի *որպէս* ամէն ոք իւր զգեստիւն ճանաչի, այսպէս և քրիստոս մարմնով երևեալ յայտնեցաւ աշխարհի: - 43. Մեզ ճշմարտապէս ստեղծօղ՝ *որպէս* և նմա ո՛չ բանին՝ այլ երևելոյն: - 43-44. *Որպէս* ասէ առաքեալն՝ «աստուած տէրն մերոյ յիսուսի քրիստոսի և հայրն փառաց»...: - 44. Նախ՝ ոչ կարել վասն նուազութեան զօրութեան ժամանակի և դիմի. *որպէս* ո՛չ կարէ մանուկ կռուիլ՝ և կորիւն տեսանել: - 44. Եւ *որպէս* ո՛չ ոնն նուազ զօրութեամբ ընդ առաւելն մրցի. այլ ընդ համացեղսն: - 44. *Որպէս* յովաբ ո՛չ ընդ դաւթի՝ այլ ընդ աբիսողո՛մ մարտեաւ: - 44. Հինգերորդ՝ որ բնութեամբ անկարելի է. *որպէս* ծնեալն կրկին ծնանիլ. և յուղտու ընդ ասեղ անցանել: - 44. **Իմա՛, *որպէս* բրուտն կարէ՛ գործել անօթ ինչ, այլ ո՛չ երկինք**, և երբեմն ի բարւոջ և երբեմն ի չար և ապականեալ. այլ ըստ այսմ ո՛չ լինի աստուած: - 44. Նմին իրի թէ ոչ հայր և ոչ որդի զի որդի հօրն է որդի՝ ըստ այսմ ապա ո՛չ էանայ աստուածութիւնն որ անկար է, *որպէս* ասացաք: - 45. Եւ *որպէս* լոյս ո՛չ բաժանի ի հրոյ, այսպէս և ոչ զատի բանն ի հօրէ: - 45. Այս ո՛չ *որպէս* չարափառքն ասեն՝ թէ *որպէս* նկարիչ իմաստուն ձևացնէ՛ պատկեր, և ապա ոչ ուսեալն՝ զնոյն օրինակէ՛: - 45. Ասեմք զայս ըստ մարդկութեանն. զի ո՛չ ունէր բնութիւնս մեր. այլ յորժամ միացաւ ընդ բանին և եղև *որպէս* առօղն և առեալն իշխան և տէր ամենեցուն: - 46. Զի *որպէս* ունի զէութիւնն ի գոյութենէ հօր, այսպէս և զիշխանութիւնն յիշխանութենէ հօր. ըստ այսմ և զայլն իմասցիս զառնուլն: - 46. Դարձեալ ասէ թէ՝ ետ ինձ հայր, զի մի՛ հակառակ հօր կարծիցեն զորդի. *որպէս* կարծէին հրէայքն լուծանելով զշաբաթսն: - 46. Այլ *որպէս* բանին սեպհական է և բնութեամբ և ո՛չ ստացմամբ, այսպէս իմացիր և մարմնոյն վասն անճառ միաւորութեան բանին զի իւր է մարմինն...: - 46. Ասեմք եթէ՝ օրինականն *որպէս* զմարդո՛յ բարութիւն կարծէր ունել քրիստոսի՝ այլ ո՛չ գերագոյն...: - 47. Զի յորդորելն նորա՛ է, *որպէս* հոգւոյն ասացաք: - 48. Դարձեալ թէ այսու ոչ, Ասեմք թէ՝ *որպէս* զայլ բարձրագոյնսն հօր ետ, որպէս թէ «հայր իմ մեծ է քան զիս». և թէ՝ «ո՛չ իմ կամք, այլ առաքչին»: - 48. Յիշխանականն. *որպէս* Տէր սաբաւօթ. Թագաւոր ամենակալ: - 49. Եւ ի տնտեսականն. *որպէս* Աստուած փրկիչ. կամ արդարութեան. կամ խաղաղութեան. կամ աբրահամու. կամ իսահակայ

և այլն. և այս հասարա՛կ է Երրորդութեանն: - 49. Չորրորդ՝ զի անորոշելի է ի հօրէ *որպէս* բան ի մտաց: - 49. Հինգերորդ՝ զի բանն է սահման. և *որպէս* յայտնիչ է սահմանն սահմանելոյն...: - 49. Տասներորդ՝ զի *որպէս* բանն թարգման և պատմօղ է մտացն, այսպէս և որդի հօր: - 49. Նաև որք ի ճգունս նահատակին. *որպէս* պօղոս՝ անտօն՝ և այլքն: - 50. Ա՛րդ կատարեալ է աստուածութիւնն երիս անձինս և մի աստուածութիւն. լոյ՛ս և լո՛յս և լո՛յս. և մի՛ լոյս. *որպէս* մի աստուած...: - 51. Ոմանք *որպէս* սադուկեցիք ո՛չ գոլ իմանան: - 51. Եւ աստուածաբանքն հեթանոսաց՝ *որպէս* միտս ամենեցուն՝ և միտս արտաքոյ գոլ ասացին լցեալ զփորուածս երկնից: - 51. Եւ այլք ո՛չ հաշտեն և ո՛չ անպատուեն. զի զկարգն յաւիտենին ո՛չ ստեն *որպէս* ասացաք: - 51. Եւ այլք աստուած խոստովանին. *որպէս* և մերս դաւանութիւն՝ ընդ հօր և ընդ որդւոյ: - 51. Իսկ յորժամ զյայլումն լսեն՝ արձակին ի վերայ մեր ասելով, եթէ յայլո՛ւմ է՝ պատահումն է ի հայր *որպէս* զօրութիւնս առ մեզ. իսկ եթէ զօրացեալ է՝ և ընդ զօրանալն դադարեսցէ ամենայնիւ. շարժումն եղիցի և ոչ շարժօղ: - 52. Եւ թէ արարած է՝ զիա՞րդ հաւատամք և կատարիմք. այսինքն յորժամ խնդրեմք և առնումք. զի ո՛չ տան մեզ զհայցուածքն որք են արարածք. *որպէս* անուամբ միայն աստուածք հեթանոսացն: - 52. Եւ զի ո՛չ է արարած՝ ո՛չ այլ ինչ է՝ քան թէ աստուած *որպէս* ասացաք: - 52. Բայց ո՛չ ծնեալ ասեմք՝ և ո՛չ անծին. այլ արտաքս առաքեալ ի հօրէ. *որպէս* վկայէ քրիստոս թէ՝ «հոգին որ ի հօրէ՛ ելանէ». թերևս ճշմարիտ աստուածաբա՛ն իցէ քան զքեզ: - 52. Նախ՝ ի նոցունց նոյնք. *որպէս* ի ձիոյ ձի, և յարջառոյ արջառ: - 53. Երրորդ՝ յայլոց նոյնք. *որպէս* զձու կաքաւի և սագի թխէ՛ հաւ. և նոյն կաքաւ, և սագ ելանէ: - 53. Չորրորդ՝ ի նոցունց այլք. *որպէս* մեղուք ի մեղուշ արջառոյ. թէպէտ այժմ ի ծաղկանց լինին: - 53. Վեցերորդ՝ որ փոխին այլք յայլոց բնութենէ վասն առատութեան բնութեանն. *որպէս* կարպասածին ճճին ունի սա ծնունդ սերմամբ իւր զնմանն. և ունի ելումն զկերպասն: - 53. Զի ունին ծնունդ ըզնմանն իւրեանց, և ունին զելումն բաց ի ծննդենէն. *որպէս* ի ձիոյն ձիակապիկն. և յարջառոյն մեղու. և յայլոցն որդն: - 53. Զի թէ ասէք հայր աստուած՝ և որդի աստուած՝ և հոգի աստուած, բազմաստուած էք *որպէս* հեթանոսքն: - 54. *Որպէս* տեսանեմք ի բոլորակս արեգականն և մի ասեմք զարեգակն. իսկ թէ հայիմք ի լոյսն և ի ջերութիւնն գ իմանամք: - 54. Ասեն դարձեալ թէ՝ և հեթանոսք մի աստուածս անուանեն զամենայն կուռս, այլ բազումք են. *որպէս* և մարդկութեանս մի ասի բնութիւն, այլ բազումք են մարդիկք. ապա և դուք բազմաստուածք էք: - 54. Իսկ աստուած ո՛չ այսպէս. այլ *որպէս* մի է բնութեամբ՝ և կամօք և զօրութեամբ մի: - 54. Եւ այլ անուն՝ այլոյ բնութեան ո՛չ թըւակցի. *որպէս* ո՛չ մի երկուին և կամ՝ երկուքն երեքին: - 54. *Որպէս* զխեցգետինն՝ կենդանի ներշնչական զգայական: - 54. Վասն հոգւոյն են ի գիրս սուրբս՝ զի ո՛չ են և ասին ի յէքս. *որպէս* եղջերուաքաղն, յարալէզն, յուշկապարիկն: - 55. Այս են որ ո՛չ է և ասի. է՛ և ո՛չ ասի. ո՛չ է և ո՛չ ասի. է՛ և ասի *որպէս* ցուցաք: - 55. Զի *որպէս* էր հօր ծանօթութիւնն ի նախահարսն, և որդոյն ընդ աղօտ, այլ ի մարմնանալն իւր յայտնեցաւ: - 55. Դարձեալ ընդդէմ այնոցիկ որք արարած ասեն զբանն աստուծոյ և զհոգին. *որպէս* արիոս. և մակեդոն. և հրէայք. և այլք: - 55. *Որպէս* հոգի մարդոյ և բան մարդոյ՝ միայն մարդո՛յ է: - 55. Եւ թէ նոքա արարածք են, *որպէ՞ս* արար զսոսա անբան և անկենդան: - 55. Արարիչ է հայր. արարիչ է և որդի. արարիչ է և հոգին սուրբ. *որպէս* և գրեալ է...: - 56. Բարի՛ է և որդի. *որպէս* ասէ՝ «ո՞ որ միայն բարերա՛րդ ես աստուած իմ յիսուս»: - 57. Նախ այսպէս. ո՛չ ումեք սրբի տաճար, բայց միայն աստուծոյ. *որպէս* ասէ սաղմոսն...: - - 57. Ութերորդ՝ *որպէս* հոգի մարդոյն է՛ յէութենէ մարդոյն, այսպէս և հոգին աստուծոյ է յէութենէն աստուծոյ: - 58. Եւ թէ ասիցէ հակառակօղն, եթէ՝ վերոգրեալ գործառնութիւնքս համարին հոգւոյն սրբոյ ո՛չ *որպէս* աստուծոյ, այլ *որպէս* պաշտօնէի: - 59. Պատասխանեմք նախ, *որպէս* ասէ ոսկէբերանն թէ՝ նորածնեալքն աւազանաւն՝ ըստ չափու շնորհացն արժանաւորեին իմաստութեան, թարգմանութեան, և այլն. այսպէս և ոմն շնորհս ընդունէր աղօթելոյ կարգաւորապէս. զի ի նմանէ ուսանէին և այլքն աղօթել: - 59. Նոյնպէս՝ թէ ասի տրտմութիւն հոգւոյն. զի *որպէս* տրտմեալն հեռանա՛յ ի տրտմեցուցողէն, այսպէս և հոգին սուրբ հեռանայ ի մեղաւորէն: - 60. Պատասխանեմք եթէ՝ թէպէտ հոգին ունի զբնութիւնն ի հօրէ՝ սակայն ո՛չ ծննդեամբ *որպէս* որդի, այլ բղխմամբ. *որպէս* շունչն և բանն ունին զէութիւնն հոգւոյն այլ և այլ կերպիւ. և *որպէս* ադամ յառաջ էած յինքենէ զսէթ և զևա...: - 60. Ութներորդ՝ *որպէս* խօսքն ի մտացն է և ի բանէն. այսպէս և հոգին ի հօրէ՛ է և յորդւոյ: - 61. Եւ դարձեալ, զի ամենայն ինչ որ հօր է՝ այն որդւոյ է *որպէս* ասէ տէր. ապա ուրեմն հոգի հօր՝ հոգի է որդւոյ վասն միոյ էութեանն: - 61. Նախ՝ *որպէս* մատն է յէութենէ մարմնոյն, այսպէս և հոգին սուրբ է յէութենէն աստուծոյ: - 62. **Երկրորդ՝ զի *որպէս* մատամբ գրեմք կամ գործեմք զամենայն գործս, այսպէս և հոգին սուրբ գրէր ի մարգարէսն**...: - 62. Ուղիղ է, զի *որպէս* խօսքն թարքման է մտաց և բանի, այսպէս և հոգին սուրբ՝ հօր և որդւոյ...: - 62. Զի եթէ զբնութիւնն, ահա բաժանեցիք զբնութիւնն ի բղխօղ

և ի բղխեալ. *որպէս* ի ծնօղ և ի ծնեալ. որ է մակեդոնի և արիոսի: - 62. Իսկ եթէ բոլոր, այս լինի կամ **բ** հոգի *որպէս* ասացաք, կամ աւելորդ գոյ բղխումն որդւոյ որ է յոյժ հայհոյութիւն: - 63. Դարձեալ հարցանեմ, յանսկզբնէ՞ն բղխէ հոգին, թէ ի սկզբնաւորէն. զի որ յանսկզբնէն յառաջ գայ, է՛ անեղ և անվախճան. *որպէս* որդի և հոգի յանսկիզբն հօրէ: - 63. Իսկ թէ ի սկսելոյն յառաջ գայ, է՛ եղեալ և արարեալ. *որպէս* արարածք ամենայն որդւով և հոգւով եղեն: - 63. Եթէ զնոյն բղխեն՝ աւելո՛րդ է միոյն բղխումն *որպէս* ցուցաւ: - 63. Ա՛րդ՝ *որպէս* արտաշնչումն ո՛չ ելանէ ի բանէ, և ո՛չ հոգի ի յորդւոյ: - 63. Դարձեալ՝ հոգին սուրբ է ի հօրէ *որպէս* կամք ի մտաց. և որդի *որպէս* իմացումն: - 64. Դարձեալ՝ հոգին սուրբ բղխէ ի հօրէ՛ *որպէս* հոտ ծաղկի կամ խնձորի: - 64. Զի *որպէս* այժմ կարեմք ասել ճշմարտապէս թէ հոգին սուրբ ելանէ ի հօրէ. և վասն ապառնւոյն կարեմք ասել թէ հոգին սուրբ ո՛չ ելանէ յորդւոյ. մինչ այլ ո՛չ ևս ելանէ. և ո՛չ այնպէս էառ զգոյացութիւն և զճշմարտութիւն իւր՝ զի ո՛չ ևս երբեք առցէ: - 65. Զի ա՛յլ է բղխումն, և ա՛յլ է առումն. այսպէս՝ զի հոգին բղխումն է ի հօրէ, *որպէս* որդին ծնունդ է ի հօրէ: - 65. Եւ գիտելի է, զի *որպէս* բան կոչի որդին աստուծոյ, նոյնպէս խօսք կոչի հոգին սուրբ...: - 66. Նախ՝ զի խօսքն է ի մտացն յառաջ եկեալ, *որպէս* ներտրամադրեալ բանն ծնեալ. և հոգին սուրբ ի հօրէ բղխեալ. *որպէս* բանն ծնեալ: - 66. Հինգերորդ՝ *որպէս* այլ է անձն՝ այլ է խօսքն՝ և այլ միտքն. նոյնպէս ա՛յլ է անձն հօր, և ա՛յլ բանին, և ա՛յլ հոգւոյն սրբոյ: - 66. Որք ուրանան զբնութեամբ միաւորութիւն աստուծոյ մարդացելոյն, այլ միայն բնակութեամբ և շնորհիւ որդէգրութեան ելեալ յաստուածութեանն փառս. *որպէս* ասեն նեստորականքն: - 66. Երրորդ՝ զի ո՛չ մի որդի և տէր յիսուս քրիստոս խոստովանին *որպէս* ասեն առաքեալքն և հարքն սուրբք: - 66. Եօթներորդ՝ զի թէ մեք *որպէս* և եմք ընդ լծով ծառայութեան՝ այսպէս և նա՛, զիա՞րդ յառակսն որ յաւետարանն՝ յետ ծառայիցն՝ որդի առաքի...: - 67. Ապա ոչ եղիցի նա *որպէս* զաստուած ի տաճարս իւր. այլ *որպէս* տաճար ի տաճար: - 67. Երկոտասաներորդ՝ զի թէ վասն բնակութեան նորա՝ է մարմին նորա ուտելի *որպէս* ինքն ասաց՝ «մարմին իմ ճշմարիտ կերակուր է». կերօղքն եղիցին գազանք մարդակերք. և ո՛չ մարմնոյ և արեան որդւոյն աստուծոյ: - 67. Նաև աշակերտքն. *որպէս* պետրոս որ դաւանեաց զքրիստոս որդի աստուծոյ: - 68. Իսկ թէ ի վերայ անձինն, ահա զերրորդութիւնն չորրորդութիւն արարիք *որպէս* ասացաւ: - 68. Իսկ թէ և զերկու բնութիւնն ասես տէր, ընդդէմ խօսիս առաքելոյն որ մի ասաց զտէր մեր յիսուս քրիստոս՝ *որպէս* և զհայր: - 69. Եւ կամ յորժամ *որպէս* զիւր բարի շնորհէր իւրայնոցն՝ մարմնապէս փչեալ ի նոսա ասելով՝ «առէք հոգի սուրբ»: - 69. Ա՛րդ մկրտիմք հաւատացեալքս *որպէս* ի հայր և ի հոգին սուրբ՝ այսպէս և յորդին մարմնացեալ մի տէր մի քրիստոս: - 69. Իսկ թէ ոք ասիցէ՝ եղևն զփոփոխումն ցուցանէ. *որպէս* այն թէ՝ գաւազանն մովսէսի օձ եղև: - 72. Ութերորդ՝ ելանելն յերկինս պատշաճի մարմնոյն քրիստոսի. *որպէս* ի տեսս առաքելոցն վերացաւ յերկինս. և իջանելն՝ բանին *որպէս* ասացաւ: - 73. Տասներորդ՝ դերանուանքն *որպէս* ես. դու. նա՛. յատկապէս զմի անձն նշանակեն: - 73. Քսաներորդ՝ *որպէս* բարձրագոյնքն կարեն ասիլ մարմնոյն վասն միութեանն՝ *որպէս* աստուած, յարութիւն, և կեանք յաւիտենական: - 74. Այսպէս և խոնարհագոյնքն են աստուծոյ բանին վասն միաւորութեանն. *որպէս* մարդ ծնանիլ ի կուսէ՛ ժամանակեայ. խաչիլ և մեռանիլ...: - 74. Ա՛րդ՝ ընդդէմ քումդ խոհեմութեան *ո՛րպէս* իմանաս ի միում հասարակ բնութեան զբանն ծնեալ և զհոգին բղխեալ...: - 74. *Որպէս* մի էութիւն է խնձորն. և ունի երեք յատկութիւնս որակաց. զհամն, և զհոտն, և զգոյնն ընդ ձևոյն: - 74. Եւ *որպէս* հուրն ունի յէութեան իւրում՝ լոյս և ջերմութիւն: - 75. Ա՛րդ՝ *որպէս* կարծեն ինքեանք զէն մեծ ունիլ առ երկոսին կողմանս, կամ հարկիւ անկանիլ ի նեստորին բնութիւն և բնութիւն, և կամ ըստ եւտիքեայ շփոթել զբնութիւնսն: - 75. Ուստի ո՛չ ասի քրիստոս սոսկ մարդն, կամ մերկ աստուածն. այլ *որպէս* ցուցաւ յերկուց միաւորութիւնն: - 75. Նախ՝ զի մի՛ շփոթեսցին բնութիւնքն ի միաւորութիւնն *որպէս* ասաց եւտիքէս: - 76. Զի անմարմին է՝ և միաւորի ընդ մարմնոյ. *որպէս* հոգի և մարմին բնութեամբ միաւորին և ո՛չ շփոթին: - 76. Որև գոն ի յեղեալքս միաւորեալք. *որպէս* հուր և երկաթ. հոգի և մարմին. որք չարչարին անչարչարապէս: - 76. Ոմանք զբոլորն բաժանեալ ասեն աստուած և մարդ. *որպէս* նեստորականքն: - 77. Եւ ոմանք մասամբ և բաժանեալ. *որպէս* քաղկեդոնիկքն ասեն: - 77. *Որպէս* ասեմք զաստուածածին կոյսն մայր և կոյս. ո՛չ **բ** բնութիւն կամ **բ** անձն. որ է մասամբ և բաժանմամբ. այլ զմի և զնոյն. ունելով զայս և զայն յատկութիւն: - 77. Դարձեալ՝ *որպէս* բացբարձութեամբն ասի հայր աստուած՝ անսկիզբն և անվախճան. ունելով զայս և զայն ի պարզ միութեան իւրում. և ո՛չ է **բ** անձն կամ **բ** բնութիւն: - 77. Դարձեալ՝ *որպէս* էր որդի հօր յատկութեամբ իւրով, և եղև որդի կուսի յատկութեամբ իւրով: - 77. *Որպէս* արարիչն արարածոց եղև մարդ, և ո՛չ ասի արարած. այլ և ո՛չ արարիչ և արարած: - 78. Եւ *որպէս* այս ո՛չ ասի, նոյնպէս և ո՛չ է

հնար երկատելով ասել զքրիստոս անեղ և եղական: - 78. Եւ *որպէս* զայդ ուսար ուղղափառ դաւանութեամբ՝ ի միտ առ զոր ասեմս: - 79. Իսկ միւսն մա՛րդ էր բնութեամբ յարարեալ և ստեղծեալ բնութենէ. և խառնելով ընդ բանին՝ եղև առեալն *որպէս* առօղն զո՛յգ և հաւասար աստուած...: - 79. Այլ՝ էառ զհոգի և զմարմին. որ է կատարեալ բնութիւն մարդոյ. *որպէս* ասէ բնութիւնք **բ**. այսինքն կատարեալք: - 80. Ո՛չ *որպէս* ապօղինար կարծեաց. այլ աստուած կատարեալ և մարդ կատարեալ. հոգով և մարմնով: - 80. **Ընթացք աստուածպաշտութեան՝ զմիջինն ուսուցանեն մեզ գիրք սուրբք. *որպէս* ասէ սողոմոն, «զճանապարհ արքունի գնասցես. մի՛ յաջ խոտորեսցիս, և մի՛ յահեակ»**: - 80. Արդ՝ յաջ և յահեակ խոտորին հերձւածօղք. *որպէս* սաբէլ յաջ խոտորեալ՝ ի մի բնութիւն և ի մի անձն ժողովեաց զերրորդութիւնն սուրբ: - 80. Այլ նոքա ո՛չ խոստովանին զաստուած մարդացեալ. այլ՝ կամ ի նախագոյացեալ անձն բնակեալ ասեն զաստուածայինն բնութիւն, և կամ շնորհօք որդիացեալ *որպէս* նեստորի թըւի: - 81. Իսկ որք յերկուցն մի եղեալ բնութիւն ասեն, *որպէս* յաստուծոյն և ի մարդոյն եղեալ մի բնութիւն ո՛չ աստուծոյ և ո՛չ մարդոյ: - 81. Նոքա ի կիսաէշ նման զտնօրէնութիւնն սուրբ համբաւեն. և կամ առ աչօք և ունայնութեամբ. *որպէս* մանիքեցւոցն, և կամ եւտիքի կարծի: - 81. Եւ կամ բանն բնութեամբ մարմնոյ թանձրացեալ *որպէս* ջուր սառուցեալ: - 82. Այլ և նոքա որք անանձն և անգո՛յ ասեն զբանն մարմնացեալ. *որպէս* մեր բանս: - 82. Ոմանք՝ *որպէս* նեստոր. և սամոստացին պօղոս. և դիոթորոս: - 82. Եւ ոմանք *որպէս* քաղկեդոնիկքն՝ մի անձն համբաւեն, և յերկու բնութիւնս բաժանեն զմի քրիստոսն. և **բ** կամք. և **բ** գործք. *որպէս* անիծեալն լևոն. և փլաբիանոս, և ընկերք նոցա: - 82. Իսկ անձն առանց բնութեան՝ միայն անուն է սոսկ. *որպէս* որդի՝ կամ քրիստոս՝ կամ յիսուս: - 82. Եւ սոքա կամ շփոթեալ խոստովանին. *որպէս* եւտիքէս և այլքն: - 82. *Որպէս* սուրբն աթանաս գրէ՛ ընդ դէմ արիոսի այսպէս: - 83. Եւ *որպէս* սուրբ հարքն ասացին՝ մի է բնութիւն բանին աստուծոյ մարմնացելոյ: - 83. Որք ուսուցին մեզ զխորհուրդ աստուածպաշտութեան *որպէս* ցուցաւ: - 84. Եւ չորրորդ՝ զի ամենայն իր բնութեամբ իւրով միանայ և ո՛չ արտաքոյ բնութեան. *որպէս* հուր ընդ երկաթ՝ և հոգի ընդ մարմին միաւորի: - 85. Թէպէտ բնութեամբ միաւորին՝ տարբերութիւնն ո՛չ բառնի. զի տարբերութեանցն մնալ՝ խափանումն ո՛չ առնէ միաւորութեանն. *որպէս* հոգւոյ և մարմնոյ. ոսկւոյ և հրոյ. և ծանի՛ր՝ զի կրկին է տարբերութիւն. բաղկացական և բաժանական: - 85. Բաղկացական տարբերութիւն է՝ ուստի տեսակքն գոյանան. *որպէս* բանականն և մահկանացուն՝ զբնութիւն մարդոյն կատարեն: - 85. Իսկ բաժանական է՝ *որպէս* բանականն և անբանն բաժանեն զմարդ և զձի: - 85. *Որպէս* միաւորեալ ասեմք զբնութիւն մարդոյն ընդ էութեանն աստուծոյ, այսպէս միաւորեալ և մի է կամք բանին մարդացելոյ: - 85. Այլ մի ասեմք զներգործութիւնսն վասն մի միութենէն ներգործելոյ. *որպէս* մի ձեռն կտրէ՛ և կարէ՛. գրէ՛ և ջնջէ՛: - 85. Իսկ թէ ոք ընդդիմանալ ասելով, *որպէս* հրացեալ սուրն կտրէ և այրէ՛, այսպէս և կրկին ներգործութիւնք են ի քրիստոս: - 85. Նոյնպէս և զկիրսն և զզօրութիւնսն անբաժանաբա՛ր ասեմք ի քրիստոս. *որպէս* Կիրք է քաղցնուլն. և Ներգործութիւն զհազարսն կերակրել: - 85. Իսկ մի գոլ ներգործութիւնք և կիրք. *որպէս* քնարն՝ և որ շարժէ զքնարն՝ մի ներգործութիւն կատարեն և ո՛չ երկուս: - 86. Եւ *որպէս* որ շարժէ զգրիչն՝ և գրիչն՝ մի ներգործութիւն կատարեն և ո՛չ երկուս: - 86. Եւ *որպէս* ձայնն և բանն՝ մի ներգործութիւն կատարեն և ո՛չ երկուս: - 86. Եւ *որպէս* հոգին և մարմինն մի ներգործութիւն կատարեն և ո՛չ երկուս: - 86. *Որպէս* մի է ի հոգւոյ և ի մարմնոյ մարդն՝ և մի ներգործութիւն մարդոյն: - 86. Իսկ թէ անիր, ապա միայն անուա՛մբ է մի և ո՛չ իրօք. *որպէս* հոմանուն ձայն՝ անուամբ հաղորդեալ և բնութեամբ այլև այլ: - 86. Արդ եթէ էութիւն է անձն, և ընդ անձինն մի ասեն զմարդկային բնութիւնն, մի է և ընդ էութեանն. և թէ մի է ընդ էութեանն. *որպէս* ճշմարիտ միութիւն, մի ասա և բնութիւն. զի էութիւն և բնութիւն մի են: - 86. Իսկ թէ բաժանական է անձն՝ *որպէս* յա՛յտ է ի սահմանէն՝ անհաղորդելի կայացութիւն: - 86. Անձն է անհատն և մասնականն *որպէս* պետրոս: - 86. Իսկ անհատ ասի՝ զի ո՛չ քակտի և ո՛չ հատանի *որպէս* բոլորն ի մասունս. զի թէ բաժանես զնա *որպէս* ի հոգի և ի մարմին, կամ յոտս և ի ձեռս և ի գլուխս, ո՛չ մնայ բոլորն: - 86-87. Նախ զՆիւթն զմի բնութիւն նիւթական *որպէս* մարդ. և զմիւսն բնութիւն աննիւթ *որպէս* զաստուած. զՁևն՝ զմինն քանակութեամբ և որակութեամբ տարբերեալ *որպէս* մարդոյ. և զմիւսն ի վեր քան զկերպ և զձև *որպէս* աստուծոյ: - 87. Բաժանեն և ուրեք զյատուկ անունն. այսինքն աստուած և մարդ. այս է զմարդկային բնութիւնն մարդ, և զաստուածային բնութիւնն աստուած. *որպէս* նեստորի թըւի: - 87. Եւ է՛ ուրեք զի միաւորեն զանունն՝ մի քրիստոս՝ մի տէր՝ մի որդի՝ և մի անձն ասելով *որպէս* քաղկեդոնի թըւի երկաբնակ ժողովոյն: - 87. Ութ են եղանակք բաժանման ըստ փիլիսոփային. այսինքն *Որպէս* սեռ ի տեսակս. Տեսակ յանհատս: - 87. *Որպէս* հոմանուն ձայն ի զանազան նշանակեալս: - 87. *Որպէս* յէութենէ ի պատահումն: - 87. Եւ

պարտէ գիտել, զի *որպէս* սեռ ի տեսակս ո՛չ կարէ բաժանիլ: - 87. Նախ՝ զի յընդդիմաբաժանեալ տեսակս սեռի՝ ո՛չ գոյ առաջին և վերջին. *որպէս* բաժանի կենդանին ի բանականն և յանբանն...: - 87. Այլ և ո՛չ *որպէս* տեսակ յանհատս: - 88. Իսկ աստ **բ** բնութիւն ի մի թիւ անձին *որպէս* համբաւեն ոմանք: - 88. Ապա ուրեմն ո՛չ բաժանի մին քրիստոս *որպէս* տեսակ յանհատս: - 88. Այլ և ոչ *որպէս* բոլոր ի մասունս: - 88. Ոչ նմանամասնաբար. զի նոքա բոլորին՝ և միմեանց հոմանունաբար ասին. *որպէս* փայտ ի բազում փայտս: - 88. Եւ ո՛չ աննմանամասնաբար. *որպէս* պետրոս՝ յոտս և ի ձեռս և ի գլուխս. զի նոքա ո՛չ միմեանց և ո՛չ բոլորին հոմանունաբար ասին: - 88. Ապա ուրեմն ո՛չ բաժանի *որպէս* բոլոր ի մասունս: - 88. Այլ և ոչ *որպէս* հոմանուն ձայն: - 88. Իսկ տէր մեր անուամբ և բնութեամբ է աստուած *որպէս* խոստովանիմք դասք ուղղափառաց: - 88. Այլ աստ գոյ *որպէս* ցուցաւ: - 88. Այլ և ո՛չ *որպէս* էութիւն ի պատահումն. զի մարդկութիւնն քրիստոսի է ի սեռէ գոյացութեան, և ո՛չ ի սեռէ պատահման: - 88. Այլ և ո՛չ *որպէս* պատահումն ի յէութիւն. զի բանն աստուած ո՛չ է անանձն և ազդումն ինչ *որպէս* մեր բանս ըստ ոմանց. *որպէս* մարկեղոս և փոտինոս դանդաչեն: - 88. Այլ և ո՛չ է *որպէս* պատահումն ի պատահումն. և այս յա՛յտ է յասացելոցդ: - 88. Այլ է՛ *որպէս* ի միոջէ և առ մի. այսինքն ի միոջէ բանէն՝ առ մի մարդկութիւն նորին կամ աստուածութիւն *որպէս* նոքա կամին: - 88. Եւ *որպէս* ասէ փիլիսոփայն՝ երեք են յասացելոցդ իսկապէս եղանակք բաժանման. այսինքն *Որպէս* սեռ ի տեսակս. *Որպէս* բոլոր ի մասունս. *Որպէս* համանուն ձայն: - 89. Նախ՝ *որպէս* սեռ ի տեսակս բոլորապէս տեսանի և ո՛չ մասամբ. այս է՝ զի գոյացութիւնն որ է սեռ՝ բոլոր է ի մարմինն և յանմարմինն. և կենդանին բոլոր ի բանականն և բոլոր յանբանն: - 89. Կամ *որպէս* բոլորն է ի հոգին, այսպէս բոլորն է ի մարմինն միաւորեալ. և բոլորն յիրաքանչիւր մասն մարմնոյն: - 89. Երկրորդ՝ *որպէս* անբաժանելի մնայ սե՛ռ ի տեսակս. և բանն աստուած անբաժանելի՛ է միաւորեալ ի մարդկութիւնն իւր: - 89. Ա՛յս *որպէս* սեռ ի տեսակս: - 89. Իսկ *որպէս* բոլոր ի մասունս, զի *որպէս* միոյ մասին պակասելոյ՝ բոլորն անկատար մնայ: - 89. Իսկ *որպէս* հոմանուն ձայն, զի հաւասարապէս հաղորդի որոց կոչինն. *որպէս* խոյ երկնային և երկրային և ջրային...: - 89. Եւ մեռեալ ի խաչին զանձն միայն ասէք. *որպէս* երգէք յերեք սրբեանն ձեր, քրիստոս որ խաչեցար ողորմե՛ա մեզ: - 89. Իսկ թէ յայնցանէ փախչիք իբր յայտնապէս որոշումն՝ և այլիմն պատճառաւ *որպէս* գառնենեաւ ծածկէք զգայլենիս ձեր: - 89. Այսպէս և նեստոր մի ասէր զքրիստոս ո՛չ ըստ իրին միութեան, այլ ըստ անուանն համաձայնութեան. *որպէս* հոմանուն ձայն մի ունելով զկոչմունս, և զանազան բնութիւնս ի ներքոյ մի անուանն: - 90. Դարձեալ՝ *որպէս* ասեն աստուած և մարդ անհաւասար. այսինքն հզօր և տկար. անեղ և եղական. բնութեամբ և շնորհօք: - 90. *Որպէս* ասելն՝ աստուածն մարդ է՝ և մարդն աստուած: - 91. Եւ թէ մարմինն քրիստոսի չէ աստուած, և հոգին քրիստոսի չէ աստուած, *որպէս* նոքա բարբանջեն...: - 91. Դարձեալ՝ *որպէս* ձեռն և ոտն մարդոյ ո՛չ է մարդ, նոյնպէս և ձեռն քրիստոսի ո՛չ է քրիստոս. և ոտն և այլ մասունքն ո՛չ են քրիստոս. ապա և բոլոր մարմինն ո՛չ է քրիստոս. և հոգին ո՛չ է քրիստոս. ապա թէ սոքա չեն քրիստոս, և բանն ըստ ինքեան ո՛չ է քրիստոս: - 91. Զի թէ ասեմք եթէ ոչ է աստուած, յայնժամ բաժանեալ յաստուածութենէն՝ ո՛չ լինի աստուծոյ ձեռն. և ո՛չ աստուծոյ մարմին. կամ արիւն. զի մասն բաժանեալ ի բոլորէն ո՛չ է բոլորին մասն. և ո՛չ կոչի. *որպէս* ձեռն հատեալ յանդամոցն՝ ո՛չ կոչի մասն բոլորին: - 92. *Որպէս* յորժամ ասեմք զձեռն բոլոր և մասն. զի մասն է բոլոր մարմնոյն, և բոլոր առ մատունս ձեռացն: - 92. *Որպէս* ձեռն ունի զգոյացութիւն բոլոր մարմնոյն. և կոչի մարմինն առ բոլորն քրիստոս: - 92. Եւ *որպէս* քրիստոս աստուած է և կոչի: - 92. *Որպէս* ի նշխարս մարմնոյն է տեսանել. զի ի բոլորն է բոլոր քրիստոսն. և յիւրաքանչիւր մասունս է բոլոր քրիստոսն: - 92. Եւ դարձեալ *որպէս* ասեմք զմարմինն և զարիւնն և զհոգին և զբանն քրիստոս՝ և ո՛չ է բազում քրիստոս: - 93. Դարձեալ՝ *որպէս* ասելն զհայր աստուած, և որդի աստուած, և հոգի աստուած, ո՛չ է բազմաստուած. այլ մի աստուած: - 93. Ա՛րդ՝ տեսութիւն գրոց սրբոց մի և նոյն ելով՝ առ բազումս բազմանայ. *որպէս* մի և նոյն պարզագոյն ջուր՝ իւրաքանչիւր բնութիւնս տնկոց: - 93. *Որպէս* ասի ներտրամադրեալ բանն պատկեր մտացն. նոյն և յառաջ բերեալն բան և թանձրացեալ՝ է՛ պատկեր նորին և հաւասար մտացն: - 93. Իսկ առաւել բարձրութիւնն. զի *որպէս* անհամեմա՛տ է խոնարհութիւն՝ աստուծոյ մարդանալ և չարչարիլ. և անզուգական բարձրութիւն է մարդոյս բնութեան ընդ աջմէ աստուծոյ նստիլ և հաւասարիլ: - 94. Զի *որպէս* նըւաստացաւ և եղև մարդ, նոյնպէս և շնորհք տըւաւ նմա յաստուծոյ և ի մարդկանէ: - 94. Եւ այժմ զինեսցուք առ քեզ՝ քոյին բանիւ. *որպէս* դուդ ասես՝ շնորհօք տըւաւ մարդոյն այն անուն օծութեան և որդիութեան և տէրութեան և իշխանութեան: - 94. Եւ տես ի հոմանունսն. *որպէս* ի կենդանի մարդն և գրեալն: - 95. Եւ դարձեալ՝ քրիստոսն անուն զմիաւորութիւնն նշանակէ երկուց բնութեանց. ըստ որում աստուածութիւնն էօծ

զմարդկութիւնն. *որպէս* ասէ աստուածաբանն և սուրբն կիւրեղ: - 95. **Ա՛րդ՝ ի մարդկանէ ո՛չ ոք ետես զաստուած, և որդի կուսին ո՛չ ետես *որպէս* դուդ ասես. սո՛ւտ է ապա և պատմութիւնն զոր ինչ ուսոյց մեզ. զի ո՛չ է տեսեալ և պատմէ. ահա անդունդք հայհոյութեան. զոր ի կարգիս լռե՛մ**: - 96. Եւ դարձեալ՝ *որպէս* դուդ կարծես և ինքն որդին մարդոյ զինքն ո՛չ ճանաչէ. և հրէայքն զորդի ո՛չ ճանաչէին ասելով, «ո՛վ է այն որդին մարդոյ»: - 96. Բայց կամեցաւ և յայտնեաց զինքն որդի և զհայր՝ ի ձեռն նշանաց աշակերտաց իւրոց. *որպէս* ի պտղոյն ծառն երևի: - 96. Ա՛րդ՝ եթէ հայր առաւել գիտէ և որդի նըւազ, այս լինի կամ հօրն նոյնպէս նըւազ գիտել *որպէս* որդի. և կամ որդի՝ ո՛չ ճշմարիտ ասել: - 97. Արդ՝ եթէ ինքն ճշմարտութեամբ ո՛չ գիտէ, մեզ *որպէս* ցուցանէ. և թէ ինքն մոլորեալ է՝ զմեզ ո՞րպէս տանի առ հայր: - 97. Իսկ գանձն և աղբիւրն իմաստութեան երկնի և երկրի՝ *ո՛րպէս* լինի կարօտ գիտութեան կամ ստացեալ յայլմէ: - 98. Ա՛րդ՝ եթէ՝ ի յարութեանն հասարակ արդարք տեսանեն զաստուած դէմ յանդիման *որպէս* և է, և քրիստոս ո՛չ կարէ տեսանել, փո՛քր լինի գիտութեամբ քան զմարդ որ է սուտ: - 99. Ա՛րդ՝ եթէ հրեշտակք տեսանեն զբանն աստուած՝ և առնուն գիտութիւն ի նմանէ, և մարդն քրիստոս ո՛չ տեսանէ *որպէս* ասես նեստո՛րդ, ապա քրիստոս փո՛քր է գիտութեամբ քան զհրեշտակս: - 99. Ա՛րդ՝ եթէ ճանաչելն զաստուած հայր և զյիսուս քրիստոս կեանք է յաւիտենից, և մարդն քրիստոս ճշմարտութեամբ ո՛չ կարէ ճանաչել *որպէս* դուդ ասես: - 99. Երեսներորդ՝ զի վարդապետք սուրբք օրինակ տան մարդեղութեանն քրիստոսի, *որպէս* լոյս ընդ օդ՝ և հուր ընդ երկաթ միաւորեալ: - 100. Արդ՝ *որպէս* օդ լուսաւորեալ՝ ո՛չ ունի մասն խաւարի, Նո՛յնպէս հոգին քրիստոսի միաւորեալ ի բանն աստուած՝ ո՛չ ունի մասն տգիտութեան: - 100. Եւ *որպէս* հուր յերկաթ միաւորեալ բառնայ ի նմանէ զցրտութիւնն և զսևութիւնն և մնայ ծանրութիւնն...: - 100. Խոստովանեալ յերկնաւորաց և յերկրաւորաց. և հաստատեալ սուրբ գրոց վկայութեամբ *որպէս* ցուցաւ: - 101. Քանզի ներքին մասամբ ի ձեռն զգայութեանց ճանաչէ զերևելիս. *որպէս* քար: - 103. Եւ կարծեօքն տպաւորէ զնմանութիւնս և ի բացեայ. *որպէս* սպիտակ: - 103. Իսկ տրամախոհութեամբ քննէ զիմանալիս. *որպէս* հրեշտակ: - 103. Յաղագս որոյ և անանուն է աստուած. զի անունն զբնութիւնն յայտնէ. *որպէս* մարդ: - 103. Նախ՝ *որպէս* տեսութիւն աչաց ի մարմինն հանգչի: - 104. Երկրորդ՝ *որպէս* աչք հայելով ի վեր՝ հեշտանայ զի վերընթա՛ց է լոյսն: - 104. Երրորդ՝ *որպէս* աչք ի զգալի լոյսն հեշտանայ ազգակից գոլով: - 104. Իններորդ՝ աչք ի չափաւորն հեշտանայ՝ և յանչափն տկարանայ *որպէս* յարեգակն: - 104. Տե՛ս՝ զի հոգին բղխումն է հօր անձամբ. և առումն յորդւոյ իմաստութեամբ. *որպէս* ցուցաւ ի վեց գլուխն ի **ժգ** համարն: - 105. Հինգերորդ՝ *որպէս* միա՛կ է հայր. զի սկիզբն է ամենայն թւոց. և երկեակ որդի. և երրեակ հոգի ըստ աստուածաբանին: - 105. Վեցերորդ՝ *որպէս* յաւիտեան է հայր. զի անսկիզբն է և անվախճան: - 105. Եւ *որպէս* մշտնջենաւոր որդի ի հօրէ սկսեալ և անվախճան. *որպէս* ժամանակ հոգի ի հօրէ սկսեալ և յորդի դադարեալ: - 105. Ո՛չ ասեմ ժամանակ. զի արարիչ է ժամանակաց և յաւիտեանից. և *որպէս* ո՛չ ի ժամանակի սկսեալ, և ո՛չ ի ժամանակի դադարի: - 105. Նախ՝ զի միեղէն է և հասարակ՝ գերադրականքն. *որպէս* գերագոյն աստուած. և տէր տէրանց: - 106. Եւ բացբարձականքն. *որպէս* անեղ. անմահ: - 106. Եւ պատճառականքն. *որպէս* բարի. իմաստուն. և այլն: - 106. Երկրորդ՝ հասարա՛կ է ի միմեանս գոլ անձանցն. *որպէս* որդի ի հայր. և հայր յորդւոջ. և հոգի ի հայր և յորդի. և անդրադարձեալ: - 106. Ոմանց գոյութիւն միայն. և այլոց կեանք. և բան. և իմացումն. *որպէս* տիպ կնքեալ ի մոմի: - 106. *Որպէս* կնիք մատանւոյ ի բազում մոմս: - 106. Եւ *որպէս* գիծն կոչեցեալ այբ՝ ի բազում վանգս բաժանեալ. և մնացեալ մի: - 106. Զի ո՛չ է *որպէս* պետրոս՝ և պօղոս՝ և յոհաննէս՝ երեք մարդ և մի բնութիւն. այլ մի է անհատութեամբ. ունելով երիս յատկութիւնս դիմաց: - 107. *Որպէս* մի է արեգակն և սպիտակ և դեղին լոյս իւր: - 107. Եւ *որպէս* մի է հոգի և բան և կենդանութիւն իւր. որ է՛ խօսքն և շունչն: - 107. Երրորդ՝ Երրորդութիւնն ցուցանէ երիցն զմի հասարակ բնութիւն. *որպէս* ասեմք մարդ և մարդկութիւն. ձի և ձիութիւն. ընդդէմ արիոսի որ ասէ՝ երեք թիւն ունի երեք բնութիւն, ասեմք երից անձանցն մի բնութիւն: - 108. Զի *որպէս* ճառագայթ յարեգակն է՛, և որդի ծնեալ ի հօրէ: - 108. Զի յաւիտենական բղխէ ի հօրէ առ որդի. և նովաւ առ մեզ գայ. *որպէս* ջերմութիւն ճառագայթիւ արեգականն: - 108. Քանզի ո՛չ է ծնունդ, այլ բղխումն. *որպէս* շունչ և կեանք ի հոգւոյս մեր: - 109. Ա՛րդ՝ զի հայր պատճա՛ռ է որդւոյ ծննդեանն՝ և հոգւոյ բղխման, վասն որոյ հայր նախադասի. իսկ ընդ նմա որդի. ո՛չ *որպէս* ոմանք կարծեն որդի պատճառ է հոգւոյ բղխման, այլ **գ** է ուղիղ տեսութիւնն: - 109. Զի մինն հասարակ է. և միակն մասնաւոր և առանձնակի. զի ամենայն միակ՝ մի է. այլ ամենայն մի միակ ո՛չ է. *որպէս* յորժամ ասեմք՝ մի հօտ. մի շեղջ. մի լիտր. այսպիսիքս մի են. այլ միակ ո՛չ են: - 109. Հինգերորդ՝ մի կոչի. *որպէս* միակն սկիզբն է թըւոց և ո՛չ թիւ. և աստուած սկիզբն է արարածոց և ո՛չ

արարած: - 109. Տասներորդ` *որպէս* միակն է ի ներքոյ տասնեկին և հարիւրեկին և հազարեկին և բիւրեկին, այսպէս և ի վերոյ նոցա՛ է: - 110. Մետասաներորդ` *որպէս* մինն ի բազումս եկեալ ընդարձակի. և ի բազմաց ի մինն ընթացեալ նեղի: - 110. Երրորդ` թիւն ընդ գիտութեամբ մեր է. իսկ աստուած ընդ գիտութեամբ մեր ո՛չ պարունակի *որպէս* ասացաք. ապա ուրեմն ի վեր է քան զմի և զմիակ: - 110. Չորրորդ` սկիզբն է առաջնոցն. և պատճառ վերջնոցս. որք միջնորդութեամբ գոյանան. *որպէս* ի տարերաց կամ ի ծնողաց: - 110. Նախ` պարզ ոչ էն. որ է ոչ ուրեք և ոչ երբեք. որ ո՛չէր և ո՛չէ և ո՛չ լինի. *որպէս* ոչ ինչն: - 111. Երկրորդ` ոչէ ասի գերագոյն էն և գոյն. *որպէս* ի յէիցս ո՛չէ և ո՛չ գոյ. այլ գերագոյն է և գերագոյն ոչէ: - 111. Չորրորդ` ասին ոչէ` և ընդդիմատեսակքն. *որպէս* անմարմին. անկենդան. և անշունչ: - 111. Դարձեալ` յարացոյցն ո՛չ թանձրանայ *որպէս* տարերք. և ո՛չ *որպէս* նիւթ և տեսակ կերպանայ. և ո՛չ թէ յարացոյցն արար զմեզ: - 112. Ա՛րդ` ո՛չէ ի յաստուած անձնաւոր էութիւն. *որպէս* Երրորդական անձինքն. և ո՛չ բաժանեալ ի նմանէ. *որպէս* հրեշտակաց դասքն. և ո՛չ *որպէս* սոսկ մտածութիւն ի տեսութիւնն աստուծոյ: - 112. Զի առ աստուած` ո՛չէ սոսկ տեսութիւն արտաքոյ. այլ յինքն տեսանելով զյարացոյցն. և զմեզ ի յարացոյցն մեր իբր լինիլ մեզ նախ ի յաստուած, և ապա ի յէութեան մերում. և ո՛չ *որպէս* փոփոխումն ինչ ի բարի կամացն: - 112. *Որպէս* նախ քան զլինիլն մեր` էր սկիզբն մեր. և այժմ է՛ նոյն սկիզբն. և յետոյ ի կատարածի անփոփոխելի մնայ ի սկիզբն գոլոյ: - 112. Այլ բազո՛ւմ է և զանազան ըստ պատկերի և նմանութեան յարացուցելոցս որք են բազումք. զի աստուած միով յարացուցիւ զբազումս տեսանէ. *որպէս* անմարմնութեամբն զմարմնաւորս տեսանէ. և յաւիտենիւ զժամանակեայս: - 112. Եւ դարձեալ` *որպէս* ամենայն գիծ բոլորակին` ի միջին կէտն միաւորին առ միմեանս. և հեռացեալք ի միջին կէտէն բաժանին ի միմեանց. և զորօրինակ` մի է սեռն` և ի բազում տեսակս բազմանայ: - 112. Եւ *որպէս* մի է զօրութիւն հոգւոյն, և յիւրաքանչիւր մասունս մասնաւորի: - 112-113. Եւ *որպէս* մի է արեգակն, և բազմանայ ի ներգործութիւնս իւր: - 113. Եւ *որպէս* մի է ձայնն, բազմանայ ի բազում լսելիս: - 113. Եւ *որպէս* մի է կնիք մատանւոյն, և բազմանայ ի կնքեալ մոմս: - 113. Նախ ասի անեղ` որ դեռ չէ՛ եղեալ. *որպէս* այն որ ի հանդերձեալն լինի. որ կարօտ է սկզբան: - 113. Երրորդ ասի անեղ այն` որ ի յումե՛ք է, և ի յումեք ո՛չէ. *որպէս* հրեշտակք յաւիտենի եղեալ, և ի ժամանակի անեղ. սա կարօտ և անկարօտ երկոցունց. այսինքն սկզբան և կատարման: - 113. Չորրորդ` ասի անեղ` *որպէս* ոչ ուրեք և ո՛չ երբեքն. այսինքն է ոչինչն. սա կարօ՛տ է ամենևին սկզբան և կատարման: - 113. Նախ` եթէ անեղ է աստուած` ըստ որում անսկիզբն և անեղ էին արարածք ըստ անգոյին` կարգաւո՛ր է և յոյժ *որպէս* դու ասացեր. զի անեղ էն աստուած յառաջ էած զանեղն ի յէութիւն: - 113. Զի հայր անսկիզբն` յինքենէ՛ սկսեալ որդւով և հոգւով` արար սկիզբն սկզբնաւորացս. *որպէս* ասէ յաւետարանն` «ամենայն ինչ նովաւ եղև»: -114. Ապա ուրեմն յա՛յտ է թէ` *որպէս* յանեղէն եղականքս, և յանսկզբնէն սկզբնաւորքս եղեն: - 114. Զի աստուած պարագրէ զյաւիտեանն. *որպէս* յաւիտեանն զժամանակն. և ասի աստուած մշտնջենաւոր. զի ո՛չ ունի վախճան: - 114. Երրորդ` պատճառ է յաւիտենից. և ժամանակաց. և աւուրց. *որպէս* լոյս. իմաստութիւն և կեանք կոչի. զի պատճա՛ռ է սոցա: - 115. Ապա յա՛յտ է զի հին աւուրցն նշանակէ նախ քան զժամանակ և զյաւիտեան. և բարձրագոյն և արարիչ ժամանակի և յաւիտենի. և պարունակօղ յաւիտենի. *որպէս* յաւիտեանն ժամանակի: - 115. Կոչին և հոմանուն սոցա յաւիտեան. *որպէս* իւրաքանչիւր դարք: - 115. Այլ` կոչի աստուած յաւիտեան. և միշտ. և ժամանակ. զի պատճառ է սոցա *որպէս* ասացաւ ի վերոյ: - 116. Յաւիտենական է` որ ո՛չ սկիզբն ունի, և ո՛չ կատարած. *որպէս* աստուած: - 116. Եւ մշտնջենաւոր` որ ունի սկիզբն` և ո՛չ կատարած. *որպէս* հրեշտակք. և հոգի մարդոյ: - 116. Եւ ժամանակեայ` որ ունի սկիզբն և կատարած. *որպէս* զգայականք. և տնկականք: - 116-117. Իսկ հրեշտակք սկսեալ և անվախճան *որպէս* ասացաք: - 117. Իսկ անեղն ի **բ** դէմս որոշի. *որպէս* անեղ էն աստուած. և անեղ` որ դեռևս ո՛չէ եղեալ և գոյացեալ: - 118. Ո՞րպէս տեսանէ աստուած զէքս. զի զգայութիւն ո՛չ ունի. *որպէս* մեք ներքին զգայութեամբ զիմանալիս` և արտաքին զգայութեամբ զերևելիս տեսանեմք: - 118. *Որպէս* յորժամ ասեմք անբան և յիմարութիւն, գերագոյն ունիլ զբան և զիմաստութիւն քան զմերս: - 118. Իսկ մեք զկնի գործոյն և կամելոյն և էութեան *որպէս* ասացաք: - 118. Զի աստուած ո՛չ արտաքոյ ինքեան ունի զտեսութիւնն. այլ ի ներքս միայն. զի զինքն ի յինքն տեսանէ` և զայլս ի յինքն. ապա զեղեալքս ի յարացոյցն որ է տեսութիւնն աստուծոյ *որպէս* ասացաք: -118-119. Իսկ երկրորդն` կատարելոցն. *որպէս* մարգարէից և առաքելոցն: - 119. Վասն որոյ միեղէն տեսանեն և պարզ. *որպէս* զծագումն լուսոյ առանց ճանապարհորդութեան լուսաւորեալ. և միշտ բարձրանան տեսութեամբ: - 119. Այսու հաւասար է, զի պա՛րզ է և միեղէն և բարձրագոյն տեսութիւն *որպէս* ասացաք: - 119. Երկրորդ` միտք զգոյացութիւն

իրին տեսանէ որ է ի ներքոյ եղեալ. և զգայութիւն զպատահմունքն ի վերայ եկեալ. *որպէս* որա՛կ քանա՛կ և այլն: - 120. Երրորդ` զգայութիւն զմասնաւո՛րն տեսանէ. *որպէս* այս ինչ մարդ որ է անհատ. և միտք զընդհանուրն իմանայ` որ է բնութիւն. *որպէս* մարդկութիւն: - 121. Չորրորդ` զգայութիւնն տեսանէ զմերձակա՛յն. *որպէս* ա՛ստ, և այժմ. և միտք զհեռաւորն և զանցեալն և զհանդերձեալն: - 121. Հինգերորդ` միտքն տեսանէ *որպէս* ներգործական պատճառ և արհեստաւոր. և զգայութիւնն *որպէս* գործիական պատճառ և միջնորդ: - 121. *Որպէս* գործնականն որ է բարոյականն` սկսեալ է ի բարւոյն աստուծոյ. և կատարի առ բարին: - 121. Եւ այսու զանազանի ճշմարիտն և ճշմարտութիւնն` այսինքն մասամբ և բոլորիւ. *որպէս* մարդ և մարդկայնութիւն: - 121. Դարձեալ` ճշմարիտն փոխի երբեմն ի սուտն. *որպէս* իմաստասիրաց բանքն: - 121. Իսկ ճշմարտութիւնն ո՛չ փոփոխի. *որպէս* լոյս հաւատոյն: - 121. *Որպէս* գիտութիւնն միաւորէ զգիտացօղն և զգիտելին: - 121. *Որպէս* է՛ բարի. գեղեցիկ. լոյս. կեանք. իմաստութիւն. և այլն: - 122. Զի *որպէս* խաւարն անյայտ է, նոյնպէս և առաւել լոյսն անտեսութիւն առնէ. և նա անտես է ի հրեշտակաց. և անյայտ ի մարդկային մտաց. թէ ո՞րպէս կամ զի՞նչ է էութիւն և բնութիւն աստուածութեանն: - 122. Երկրորդ` զի խորհրդով և ծածո՛ւկ է. և ո՛չ առակաւ և նշանակաւ. *որպէս* այլ աստուածաբանութիւնքն *որպէս* ասացաւ ի վերոյ: - 123. Նախադրութեամբն` որ է՛ և ասի. *որպէս* Հա՟յր. Որդի՟. Հոգի՟. լո՟յս. կեա՟նք. և այլն: - 123. Երկրորդ` ո՛չէ և ասի. *որպէս* մարմին. ձեռն. և ոտն: - 123. Իսկ բացբարձականքն ի խորհրդական աստուածաբանութեանն է. նախ որ է՛ և ո՛չ ասի. *որպէս* անսկիզբն և անվախճան. ո՛չ բան և ո՛չ միտ. ո՛չէ և այլն: - 123. Երկրորդն` ո՛չէ և ո՛չ ասի. *որպէս* այլայլութիւն. և ապականութիւն. չար. ո՛չէ և ո՛չ ասի: - 123. Զի որքան ի վերուստ ի վայր իջանէ` ի բազումս բաժանի. *որպէս* ի սեռէ ի տեսակս և յանհատս իջեալ բազմանայ: - 123. Կամ *որպէս* բունն մի է ծառոյն, և ճուղքն և տերևքն բազում. նմանապէս և աստուածաբանութիւնն: - 123. Իսկ ի ներքուստ ի վեր` ի բազմութենէ առ միննն ընթանայ. *որպէս* խորհրդական աստուածաբանութիւնն արտաքոյ թողեալ զբազումութիւն էից և ի միննն ընթացեալ, որ ամենեւին անբանութիւն է և անիմացութիւն. անճառելի. անիմանալի. և լռութեամբ պատուի յամենայն արարածոց: - 123. *Որպէս* յորժամ ասեմք բառնալով` ո՛չէ, ո՛չ բան, ո՛չ միտ, ո՛չ որդիութիւն, ո՛չ հայրութիւն. և այլն: - 124. Իսկ բացբարձականն ըստ գերազանցութեան է. զի գերազա՛նց բան է` և գերագունա՛կ միտ. և գերագոյն և առաւել հայր` և որդի. և ո՛չ ըստ մեր կարգիս *որպէս* մեր բանս է և միտք: - 124. Պատասխանեմ առաջնոյն, թէպէտ մի և նոյն ուրացական մասնիկն որ է ո՛չն` գործէ՛ զուրացումն և զբառնալն, այլ ուրացումն և բառնալն ո՛չ է նոյն. զի բազում պատահի որ գործին նոյն է *որպէս* ձեռն. այլ գործելն ո՛չ է նոյն. *որպէս* կտրելն և կարելն: - 124. Երկրորդին պատասխանեմք եթէ` ո՛չէ նոյն դրութիւն և խոստովանութիւն. *որպէս* յորժամ ասեմք դնելով թէ` չա՛ր է. խաւա՛ր է. և մե՛ղք է. ահա այս ուրացութիւն է և պակասութիւն: - 124. Ութերորդ` սպիտակ լոյսն առաւել թափանցիկ է. *որպէս* ընդ ամպս և յայլ նիւթս: - 125. Տասներորդ` նախընթաց և յետամնա՛ց է սպիտակ լոյսն. *որպէս* յառաւօտս և յերեկոյս տեսանի: - 125. Եւ նա՛խ եկաւորի հոգին ամենայն ուրեք. *որպէս* ի մարգարէսն և ի կոյսն սուրբ, և ապա՛ բանն մարմնացաւ. և յետոյ հոգին սուրբ էջ յառաքեալսն և յեկեղեցի մնաց: - 125. Նախ` զի *որպէս* արեգակն ունի մշտնջենաւոր զլոյսն` և առնէ ի վերոյ երկրի տիւ և գիշեր: - 125. Երկրորդ` զի *որպէս* մի արեգակն կոչի տարրեղէն ամանն լուսովն և հրովն: - 125. Նոյնպէս իմանալի արեգակն քրիստոս ի հայրական ծոցոյ անհա՛ս է բնութեամբ` և ի սրբոյ կուսէն իբր ի յարևելից ծագեալ. և ջերմ սիրով ի մարդկային ազգս *որպէս* յարևմուտս խոնարհեալ...: - 126. Զի *որպէս* ո՛չէ սկիզբն աստուածութեան նորա, և ո՛չ վախճան մարդկութեան նորա: - 126. Վեշտասաներորդ` մէջ գոլով աստեղացն և լուսաւորէ. *որպէս* միջին ստեղն եօթնաջահեանն լուսոյ: - 126. Նոյնպէս զլուսոյ և զհրոյ յատկութիւնս բաղդատել դիւրին է իմանալի լուսոյն ճշմարտի. *որպէս* գրեալ ի **ի** գլուխն` **լե** համարն տե՛ս անդ: - 127. *Որպէս* ասի զաստուծոյ զարթնուլ բարկանալ զարմանալ: - 128. Իսկ նախանձն աստուծոյ պարզապէս միայն ունի սիրել և զայլս և ո՛չ ատել. զի նախանձն աստուծոյ` սիրոյ առաւելութիւնն է. *որպէս* բոցն հրոյ: - 128. Եւ *որպէս* զարմացումն առաւելութիւն է իմացմանն, նոյնպէս և նախանձն առաւելութիւն է կամացն: - 128. Դարձեալ` ինքնանախա՛նձ է. զի ո՛չ յայլմէ շարժի ի սէր *որպէս* մեք. այլ յինքենէ՛ շարժի ի սիրել և ի սիրիլ: - 128. Նախ` *որպէս* պատճառ` յառաջածու` և ծնօղ: - 128. Չորրորդ` սիրօղ` *որպէս* սկիզբն մեր. և սէր` *որպէս* հաստատութիւն. և սիրելի` *որպէս* կատարումն: - 128. Սակայն ըստ մեր իմացմանս հասարակ է բարին քան զսէրն. զի ասեմք` սէրն բարի է. ազնիւն բարի է. և այլն. *որպէս* ասեմք` մարդն կենդանի է. ձին կենդանի է. և այլն: - 128-129. Հինգերորդ` անսկիզբն աստուածութեամբն. և անվախճան մարդկութեամբն. զի *որպէս* ո՛չ է սկիզբն աստուածութեանն, և ո՛չ վախճան մարդկութեանն: - 129.

Վեցերորդ՝ սկիզբն եկեղեցւոյ *որպէս* հիմն. և վախճան *որպէս* գլուխ և կատարումն: - 129. Իններորդ՝ սկիզբն է շնորհաց *որպէս* այժմ. և կատարումն փառաց ի հանդերձեալն: - 130. Տասներորդ՝ սկիզբն է օրինացն, և կատարումն ճշմարտութեանն. *որպէս* հնոյն և նորոյս: - 130. Վասն է՞ր զանազանապէս տայ աստուած զպարգևս և ո՛չ հաւասար. *որպէս* առաւել տայ հրեշտակաց՝ և սակաւ մարդկան. և նըւազ կենդանեաց և տնկոց և անշնչից: - 130. Ոմանք մերձ են էութեամբ արարչին. և ոմանք հեռի. *որպէս* իմացականքն քան զբանականս...: - 131. *Որպէս* ի դասս հրեշտակաց՝ առաջին երրեակ դասքն առաւել են փառօք քան զմիջինսն և զվերջինսն: - 131. Եւ ի դասս մարդկան՝ *որպէս* մարգարէք և առաքեալք: - 131. Երրորդ՝ բացակացեալն ընդ աղօտ լսէ ո՛չ զձայն բերանոյն, այլ զձայն բախման օդոյն. *որպէս* արձագանչումն յինքն նկարէ զձայնն և ո՛չ զբանն: - 131. Վասն է՞ր աստուածաբան մարգարէքն զտեսիլ երկնայնոցն սոյնպէս անարգ կերպիւ տպաւորեցին. *որպէս* առիւծ. և եզն. աթոռք. և կառք. և այլն: - 131. Ասեմք եթէ՝ տպաւորութիւնն լինի կրկնակի. մինն նման նմանութեամբ. *որպէս* լոյս. հուր. և այլն: - 131. Երկրորդ՝ աննման նմանութեամբ. *որպէս* առիւծ. եզն. և այլն: - 131. Նախ՝ զի նիւթեղէն միտք՝ միջնորդութեամբ նիւթո՛յ հասանէ յաննիւթն. *որպէս* տեսեալ զգիր՝ իմանամք զզօրութիւն նորա. և տեսեալ զորակ և զքանակ՝ իմանամք զգոյացութիւն իրին: - 131. Չորրորդ՝ զի թէ պատւական նիւթով երևէին *որպէս* արեգակն՝ հուր՝ ոսկի՝ և ակն. գիտէաք թէ զնոյն բնութիւն ունին, և ո՛չ այլ ինչ գերիվերոյ: - 132. *Որպէս* յորժամ ասեմք՝ լո՛յս կեանք՝ և այլն, արտաքո՛յ մնամք գիտութեանն. և յորժամ անժամանակ՝ անիմանալի, առաւել մերձենամք: - 132. Վեցերորդ՝ ըստ այլ եղանակի *որպէս* ասէ՝ իրինոս: - 133. Եզն վաստակասէր. *որպէս* դուկաս ընդարձակ զցեղ ազգատոհմին տեառն ցուցեալ: - 133. Ասեմք թէ՝ երևմունք նոցա ո՛չ են առ աչօք. *որպէս* նմանագործք ի յաչս ցուցանեն: - 133. և Նախ՝ զի նոցայն՝ էութիւն ո՛չ է. այլ առ աչօք ուրուական ցուցմունք. *որպէս* ի միտս ցնորք: - 133. Երրորդ՝ զի անդ բազմաց շրտնու տեսութիւնն. և աստ միայն զօրանայ տեսողական մասն միոյն. *որպէս* աշակերտին եղիսէի: - 133. Եօթներորդ՝ այն երևեալ և ո՛չ կայացեալ. և աստ երևեալ և կայացեալ, *որպէս* ասեմք զեղջերուաքաղն անուանեալ և ո՛չ ենթակայացեալ. իսկ զեղջիւրն անւանեալ և էացեալ: - 133. Իսկ դևք փոխեն զերևակայութիւնն. *որպէս* տապ ջերմութեանն: - 133. Զի աստուած առնէ զբորբոքումն ախորժակին. *որպէս* հուր որ վառէ՛ զփայտ: - 133-134. Իսկ ախորժելի իրն բորբոքէ՛ զախորժակն *որպէս* փայտ զհուր: - 134. Իսկ հրեշտակն զարթուցանէ զախորժակն՝ *որպէս* այն որ դնէ զփայտ ի հուրն: - 134. Եւ են առաջինքն իմացականք. և վերջինքն իմանալիք. և միջինքն իմացականք և իմանալիք. *որպէս* ա՛յլ եղանակաւ ասացաւ ի վերոյ: - 134. Իններորդ՝ յերիս որոշեալ դասս. *որպէս* սերօբէք՝ քերօբէք՝ և աթոռք: - 134. Այլ վասն առանձնութեան դասուցն՝ է՛ կարգ ի նոսա, *որպէս* դիոնէսիոս կարգէ՛: - 135. Այլ թէ ըստ կարգին իմացիս՝ հետևիմք առաջասացեալ սրբոյն դիոնիսեայ. *որպէս* աւանդեցաւ նմա յառաքելոյն պօղոսէ յափշտակելոյն յերրորդ երկինս: - 135. Թէպէտ և զայս կարգ փոխեն ոմանք և զզօրութիւնն և զպետութիւնն աւանդեն որ մեզ ո՛չ է հետևելի. այլ սրբոյն դիոնիսեայ *որպէս* ասացաք: - 135. Դարձեալ՝ առաջինքն կառավարեն ազգի և թագաւորութեան, *որպէս* միքայէլ: - 136. Երկրորդքն՝ մեծագոյնս աւետարանեն, *որպէս* գաբրիէլ: - 136. Երրորդքն պահպանեն զիւրաքանչիւր անձինս, *որպէս* ռաֆայէլ: - 136. Ապա յա՛յտ է զի ա՛յլ է կարգ շնորհականին, և այլ է կարգ բնականին. զի բնականք ներքինք զվերնոցն բոլորապէս ունին և կոչին. այլ ո՛չ անդրադարձեալ. *որպէս* անհատն զտեսակն և զսեռն բոլորապէս ունի և կոչի...: - 136. Ասեմք նախ՝ եթէ *որպէս* ասացաք ներքինք զվերնոցն մասնաւորապէս ունին. *որպէս* վերինք զներքնոցն բոլորաբա՛ր: - 137. Ա՛րդ՝ որ քան սրբութեամբ և իմացմամբ աստուածատեսակ լինին՝ աստուածք կոչին. եթէ հրեշտակք և եթէ արք սուրբք *որպէս* մովսէս: - 137. Եւ արդ *որպէս* ցուցաւ՝ վերինք մինչ ի միջինս ունին բոլորապէս զներքնոցն...: - 137. Տասներորդ՝ զի մշտաշարժք են երեքկին. այսինքն բոլոր՝ ուղիղ՝ և կողմնաւոր. *որպէս* ցուցցի յառաջիկայսդ: - 137. Տասներորդ՝ յատուկ առանձնապէս տըպաւորութիւնք խորհրդական. *որպէս* քերօբէքն բազմաչեայք և ընդ թևեանք. և սերօբէքն սրբաբան՝ ընդ աթոռոցն քառակերպեան: - 138. Երրորդ՝ զի անբաժանելի է յունօղսն. *որպէս* յաստուած՝ և ի հրեշտակս, այսպէս և ի մարդն արժանացեալ...: - 138. Այս զանազանութիւն առ երրորդ էութիւնս *որպէս* ցուցաւ: - 138. Երկրորդ՝ մարդկան քահանայութիւն նիւթական խորհրդով ներգործի. *որպէս* հացիւ գինեաւ և այլով. իսկ նոցայն աննիւթութեամբ կատարի: - 139. Վասն երկրորդ մի՞ է թէ բազում, ասեմք եթէ՝ ի սկիզբն մի է ըստ էութեան ի միոյ պատճառէ՛ յառաջ եկեալ. և ի բազումս բազմացեալ ըստ որակութեան. *որպէս* **է** արփեան և ըստ աստիճանաց: - 140. Եւ դարձեալ՝ զբազումքս միաւորէ՛ ինքեամբ՝ առ պատճառն իւր. *որպէս* լոյս արևու ի բազում տեսութիւնս: - 140. Վասն երրորդին անչա՞փ է թէ չափաւոր՝ գիտելի՛ է, զի

անչա՛փ է շնորհն ըստ իւրում ինքնութեան. այլ չափաւորի՛ ըստ տըւողին կամաց և ըստ ընդունողին կարեաց. *որպէս* բան մարդոյ ի լսելիս: - 140. Չորրորդ՝ հրեշտակն անփոփոխ է. իսկ հոգին փոփոխական. *որպէս* ասացաք ի **լզ** գլուխն: - 141. Այլ թիւ իւրաքանչիւր առանձնութեանցն անգիտելի է մեզ *որպէս* զաստեղս երկնից: - 141. Եւ ըստ որում մի է սկիզբն և կատարումն և թափանցումն. վասն որոյ միով և ինքեամբ գիտէ զբազումս. և ո՛չ *որպէս* մեք բազմօք զբազումս: - 142. Իսկ առ հրեշտակս բոլոր շարժումն է ի նոյնէ ի նոյն. *որպէս* անիւն զոր ետես եզեկիէլ...: - 142. Իսկ գնդակ որ է կողմնաւոր՝ շարժի հոգին, յորժամ բնականապէս լուսափայլի յաստուածային գիտութիւնս տեսութեամբ և մտածութեամբ. և այնպէս հոգէպէս ի յաստուած միաւորի. *որպէս* աշակերտաց առաքելոց և մարգարէից: - 142. Բոլորակ՝ այսինքն ի բնական ներգործութեանց. *որպէս* հրոյ այրելն և ծեան ցրտացուցանելն: - 142. Իսկ կողմնաւոր՝ *որպէս* փոխանցեալքն ի միմեանց. որդի ի հօրէ՛. և լօղակք ի ջրոյ: - 142. Իսկ ուղիղ՝ *որպէս* ապականեալք փոխին յիւրաքանչիւր տարերքս: - 142. Իսկ որ ի յայլս՝ որոշի յերիս. այսինքն ի վերնագոյնն, *որպէս* յաստուած՝ ի հրեշտակս և ի սուրբս: - 143. Եւ ի ներքնագոյնն, *որպէս* ի հնազանդեալս՝ և յորդիս: - 143. Եւ ի հաւասարս, *որպէս* յեղբարս և յընկերս: - 143. Երկրորդ՝ միջայէլ. *որպէս* զաստուած կամ հզօր: - 144. Եւ ասեն, սուրբ սուրբ սուրբ տէր զօրութեանց. *որպէս* լըւաւ եսայի: - 144. Իսկ բանիւ գործոյ խօսի աստուած ընդ դիւին. նա՛և հրեշտակք ընդ սատանայի. *որպէս* որոտ և կայծակունք հրոյ ի վերայ նոցա...: - 145. *Որպէս* ո՛չ արտաբերի հնչումն ձայնական գործեաց և ո՛չ փոփոխէ զօդն որ ի մէջն: -145. Նոյնպէս յերեւումն հրեշտակաց զոր միոյն տեսանէ՝ այլ մերձակայքն ո՛չ տեսանեն. *որպէս* յա՛յտ է ի պատանեակն եղիսէի: - 145. Իսկ խօսի դևն ընդ մարդոյ՝ կամ փոփոխելով զգոյութիւնն *որպէս* հրեշտակն կամ զպատկեր նմանութեանն ցուցանէ տեսանելեացն. և կամ տպաւորէ՛ յերևակայութիւնն: - 145. Նոյնպէս և խօսի հոգին ընդ հրեշտակն մարմնական կերպիւ զոր իմանայ հրեշտակն *որպէս* զայլ զգալիս որքան է ի մարմնի: - 145. Եւ անդ ընթեռնու դևն *որպէս* ի քարտիսի և իմանայ յայնմանէ: - 145. ...թէ դառնային և սիրէին զայն՝ որ ի վեր քան զինքեանս, ելանէին յորպիսութիւն շնորհաց և փառաց. *որպէս* այժմ են հրեշտակք բարիք: - 146. Իսկ թէ դառնային ի ներքոյ ինքեանց առ փոփոխական բարին, անկանէին ի չար մեղացն և ի չար պատժոցն. *որպէս* այժմ դևք և ի կատարածի: - 146. Եւ թէպէտ լոյս կերպարանի այժմ, բայց չտեսնու զլոյս իւր. *որպէս* և ո՛չ մեք զմեր հոգւոյս: - 147. Նախ՝ յորժամ սերօբէն ասէր սուրբ, և միւսն երկրորդէր զնոյն. և սա՛ լռեաց զփառաբանութիւն ընկերին երկրորդել աստուծոյ, թէ փառքն ի վերայ իւր անկանի և աստուածանայ *որպէս* ասաց պօղոս: - 147. Զի ինքնագիտ չարութեամբ նախ ինքն չարացաւ որ ասի գտակ. և ապա զայլս չարացոյց որ ասի մայր. *որպէս* սկիզբն և սերմանօղ չարեաց ի յայլս: - 148. Անմարմինն *որպէս* անկանի: - 148. Ամենայն հրեշտակք զուգապէս ստեղծան յաստուծոյ. և ո՛չ մի ի միոյ. *որպէս* մարդ ի մարդոյ ծնանի: - 149. Վասն զարդու գործոց իւրոց. *որպէս* նկարիչ զթուխ գոյնն ի ներքոյ դնէ՝ զի սպիտակն և այլ պատւականքն երևեսցին: - 149. Ո՛չ են յաւերժահասունք *որպէս* ոմանք կարծեն թէ յերկուց տարերց այսինքն ի հրոյ և յօդոյ են բանական կենդանիք և ունին ծնունդ և մահ...: - 150. Այլ նոքա ամենեքեան ա՛զգ են դիւաց. և ըստ զանազան գործոյն՝ զանազան անուան հանդիպեցան. *որպէս* դևն պոռնկութեան, և հպարտութեան, և բէէղզեբիւղ, բեհմովթ, և այլն: - 150. Եւ *որպէս* երգովն դաւիթի դադարէ՛ր այսն չարութեան ի սաւուղայ, նոյնպէս և այժմ: - 150. Երկրորդ՝ զի *որպէս* ծառայ առ տէրն՝ ընդդէմ աստուածակերպ իմացմանն մեղանչեաց: - 150. ...մարմինն միշտ մարտնչի ընդ հոգին. *որպէս* յառաջիկայդ ասի **լբ** գլուխն: - 151. Դարձեալ՝ ոմանք են յերկնից և յերկինս. *որպէս* հրեշտակէ սուրբք: - 151. Եւ ոմանք ո՛չ յերկնից բայց յերկինս. *որպէս* ի մարդկանք սուրբք: - 151. Եւ ոմանք են յերկնից բայց ո՛չ յերկինս. *որպէս* դևք: - 151. Զի՞նչ է հրեղէն վիշապն. *որպէս* ասէ տեսիլն **լգ** գլուխն: - 151. «Աստեղս» զհրեշտակս կոչէ վասն բարձրութեան և պայծառ լուսոյն *որպէս* հրեշտակք ի յերկինս: - 152. Իսկ «երրորդ մասն», ասէ սուրբն մեթոդէոս եթէ՝ զապստամբ հրեշտակս ասէ որք զթիւ երկնաւոր դասուցն սխալեցին. զի մինչ ո՛չ էին կործանեալ՝ **ղ** կարգ էին իւրաքանչիւր դասուցն. *որպէս* յա՛յտ է ի չորեքկերպեան կենդանեացն: - 152. Դարձեալ զպայծառացեալսն մկրտութեամբ *որպէս* զաստեղս և յերկինս եդեալ զխորհուրդս իւրեանց: - 152. Տեղական անկումն եղև դիւաց ի սկիզբն ստեղծման իւրեանց վասն ամբարտաւանութեան և մախանաց ընդդէմ արարչին փառաց. ուստի անկաւ յերկնից ի դասուց հրեշտակաց և ի փառաց իւրեանց *որպէս* ասացաւ յառաջագոյն: - 153. Եւ այս վասն այնորիկ՝ զի չարախօսէ՛ր զմարդիկ եթէ ինքնայօժար կամօք և բնութեամբ մեղան և ո՛չ ի պատրանաց իմոց. *որպէս* չարախօսէր զյոբայ եթէ՝ «միթէ ձրի՞ պաշտէ յոբ զտէր»: - 153. *Որպէս* ասէ սուրբն իրինոս զբանս յուստիանոսի, թէ բարուք ասաց

վկայն յուստիանոս եթէ՝ «մինչ ի գալուստն քրիստոսի ո՛չ իշխէր հայհոյել զաստուած, զի յո՛յս ունէր դառնալոյ ի փառս. այլ յորժամ լուաւ զպարտութիւն իւր և զարտաքսիլն ի փառաց, ապա քարացաւ ի չարութեան իմաստութեան սիրտ նորա. և անամօթաբար հայհոյէր զնա և մատնիւր յաւիտենից տանջանացն»: -153. Զի յետ քրիստոսի դադարեաց սատանայ զհոգիսն ի դժոխս տանելոյ *որպէս* ասէ սուրբն եպիփան: - 153. Տասներորդ՝ գործ մարդոյս նախ զօրութեամբ՝ և յետոյ ներգործութեամբ եղանի. իսկ աստուծոյն միշտ ներգործութեամբ է. *որպէս* ցուցանի յառաջիկայդ: - 157. Հինգերորդ՝ և *որպէս* ընդ աղօտ ինչ նմանութեամբ ծանօթանամք ի գործն արարչութեան. այսպէս և ստւերակերպ նմանութեամբ ի ծանօթս գամք գործոյ նախախնամութեանն...: - 157. Իսկ ի նոյն ինքն՝ առաջին է նախախնամութիւնն առ աստուած, և ապա՛ ստեղծումն. զի վասն նախախնամական բարութեանն կամեցաւ ստեղծանել զեղեալքս. *որպէս* ասէ սուրբն դիոնէսիոս ի **դ** գլուխն որ յաղագս երկնայնոցն քահանայապետութեանց: - 157-158. Զի առնելն է հաճոյական գործ առանց կասկածանաց. *որպէս* բարի առնել բարեաց, որ է՛ արդարութեանն աստուծոյ. և չար առնել չարեաց, որև այս է՛ խրատ ուղղութեան. այլ բարի առնել չարեաց, այս ողորմութեան է և գրութեան. այսոքիկ առնելոյն են տեսակք: - 158. *Որպէս* արդարոց անկանիլ ի փորձութիւնս և զանազան վնասս վասն օգտութեան իւր՝ և կամ այլոց: - 158. Երկրորդ՝ զի ի ձեռն անտեղի գործոց՝ փրկութիւն լիցի այլոց. *որպէս* ի ձեռն խաչին քրիստոսի՝ փրկութիւն եղև աշխարհի: - 158. Երրորդ՝ *որպէս* պօղոսի տուաւ խայթ մարմնոյն զի մի՛ զ'ի վերուստ առեալ շնորհն և զօրութիւն՝ հպարտութեամբ լքանիցէ ...: - 158. Չորրորդ՝ թոյլ տայ փորձութեան արդարոց ի յուղղութիւն այլոց. *որպէս* ղազարոյն և մեծատանն. զի տեսանելով զղազարոս՝ և լսելով վասն մեծատանն՝ զարհուրիմք և գամք յուղղութիւն: - 158. Հինգերորդ՝ թոյլ տալով լինին ոմանք ի փառս այլոց. *որպէս* ի ծնէ կուրին...: - 158. Վեցերորդ՝ թողեալ լինին ոմանք չարչարեալ առ ի նախանձ այլոց. զի պատիւ չարչարելոցն յայտնի լիցի վասն հանդերձեալ յուսոյն. *որպէս* վկայիցն եղև...: - 158. Ութերորդ՝ թոյլ տալով սրբոց չարչարիլ՝ վասն պսակացն առաւելութեան է. զի կենցաղս այս հանդէ՛ս է նահատակութեան. և ըստ չափոյ համբերութեան՝ առցէ զյաղթանակն. *որպէս* սրբոյն ստեփաննոսի...: - 159. Մետասաներորդ՝ *որպէս* հայրն զորդին գան հարու զի զգաստացեալ մի՛ զրկեսցի ի ժառանգութենէ հայրենեացն. այսպէս և աստուած զսուրբս և զսիրելիս իւր խրատէ՛: - 159. *Որպէս* եղև առ մարիամ բորոտութիւն վասն բանբասելոյն զմովսէս. որ աստ սակաւ ինչ տանջեցաւ, զի մի՛ ելցէ յերկնից ժառանգութենէն: - 159. Նախ է՛ բարի՝ որ ինքն վասն իւր խնդրի. *որպէս* առողջութիւն: - 160. Երկրորդ՝ որ ինքն ո՛չ է բարի, այլ պատճառէ՛ զա՛յլ բարի. *որպէս* դառն դեղն զառողջութիւնն: - 160. Երրորդ՝ որ է՛ ինքն բարի, և պատճառէ՛ զայլ բարի. զորօրինակ՝ *որպէս* քաղցր դեղն պատճառէ՛ զառողջութիւն: - 160. Եւ այսպէս են մարմնաւոր բարիք. *որպէս* ոսկի և այլ ինչ. որ ի ձեռն ողորմութեան պատճառէ՛ զհանդերձեալ բարիսն: - 160. *Որպէս* թոյնք իժից, զի են ինքեանք բնութեամբ չար և պատճառե՛ն զչար. բայց պատահեցաւ ոմանց՝ դեղ լինիլ: - 160. Զորօրինակ՝ *որպէս* տղայ որ տեսանիցէ ցից ի յորմում, երթայ ի մօտ. թէ ամո՛ւր է՝ թողու. վասն զի ո՛չ կարէ հանել. և երթայ առ միւսն. թէ շարժի՝ ի մօտ կենայ մինչև հանէ՛: - 160-161. Եւ այսու զանազանի փորձութիւնն աստուծոյ և սատանայի, Նախ՝ *որպէս* ասացաք՝ աստուած փորձէ՛ զի յայտնեսցէ զբարութիւնն. և սատանայ փորձէ զի հանցէ ի բարւոյն: - 161. Հինգերորդ՝ զանազանութիւն՝ զի սատանայ ի փորձելն ո՛չ գիտէ զառաջիկայն թէ յաղթէ և թէ յաղթի. և եթէ էր տեղեակ՝ ո՛չ մրցէր ընդ կատարելոցն որք յաղթահարեն զնա. *որպէս* ընդ ստեփաննոսի, անտօնի, և այլոցն, որք յաղթեցին սատանայի: - 161. Զի *որպէս* հուր զժանկ արծաթոյ՝ և խարտոց զժանկ երկաթոյ, նոյնպէս և նեղութիւն սրբէ զմեղս մարդոյ: - 162. *Որպէս* այսոքիկ որ փոփոխականք են. որ կարեն գոլ և ո՛չ գոլ. և երբեմն հանդերձ զօրութեամբ: - 162. Զի կամ ի զօրութենէ լինի ներգործութեամբ. *որպէս* մանկան հիւսնել: - 162. Եւ կամ ի ներգործութենէ լինի զօրութեամբ. *որպէս* ի շարժմանէ դադարեալ: - 162. Նախ *որպէս* ցուցաւ միշտ է աստուած էութեամբ և ներգործութեամբ. առ ինքեան միշտ է, և ներգործութիւն իւր առ ա՛յլս: - 162. Եւ թէ ոք ասիցէ, եթէ աստուած զոր ոչ կամի՝ ո՛չ կարէ, *որպէս* զչար զի ո՛չ կամի և ո՛չ կարէ. նոյնպէս զմեղս և զայլսն. ապա երևի անկարութիւն ի յաստուած գոլ: - 163. Առաջին է նախագաղափար տեսութիւն արարչին. *որպէս* նախ քան զժամանակ անսկիզբն յաւիտենիւ. և Երկրորդ սկիզբն է ի ժամանակի լինելութեան իւրոյ: - 163. Երկրորդ՝ հասարակութիւն է, զի *որպէս* է նկարեալ ձևն, նոյնպէս և շինեալ տաճարն քանակութեամբ և որպիսութեամբ. և անդրադարձեալ ևս: - 163. Նախ՝ զի *որպէս* շինօղ տաճարին զսկիզբն և զկատարումն ետես. այսպէս և արարիչն աստուած ի կրկին սկիզբն գործոյն զկատարումն աշխարհի ետես: - 163. Չորրորդ՝ և *որպէս* որք մերձն են զառաջին սկիզբն ո՛չ տեսանեն որ ի միտս

շինողին: - 164. Ասելի է թէ՝ կոյսն և ապականեալն են հակակայք ըստ ունակութեան և պակասութեան. *որպէս* երեսք և կուրութիւն. որոց ի լինիլն համահետևին երեքին սոքա. այսինքն ժամանակն, և մասն, և նոյն: - 165. Իսկ ներհական հակակայքն և այլքն կարեն փոփոխիլ ի միմեանս. *որպէս* չարն և բարին. ջերմն և ցուրտն: - 165. Դարձեալ ասեմք, թէպէտ զթողութիւն ընկալաւ իսկապէս, և զպատիժս կրեաց հատուցմամբն, սակայն մնաց կնիք ապականութեանն ի յանձն *որպէս* ասացաք: - 166. Եւ թէ ոք ասիցէ, ապա զիա՞րդ նոր եկեալքն ի հաւատս՝ թողեալք զկուռս և զամենայն չար՝ լինէին քահանայք և եպիսկոպոսունք. *որպէս* սուրբն կիպրիանոս: - 166. Եւ թէ ոք ասիցէ, ընդէ՞ր այլ մեղուցեալն զղջացեալ մտանէ ի կարգ, *որպէս* հպարտն և ագահն և պոռնիկն ո՞չ: - 166. Դարձեալ ասեմք թէ՝ ամենայն մեղաց անչա՛փն մեղք է. իսկ չափաւորն ո՛չ է ի մեղանս. *որպէս* չափաւոր ագահութիւնն. և չափաւոր բարկութիւնն. և այլն: - 166. Իսկ պոռնկութեան չափաւորն և անչափն մեղք են. *որպէս* մի՛ անգամ կոյսն ապականեալ՝ և մի՛ անգամ պոռնկեալ՝ կոչի պոռնիկ և ապականեալ: - 166. Ապա ուրեմն ո՛չ է նմանապէս ամենայն մեղաց թողութիւն. *որպէս* և ո՛չ է նման գործն: - 167. Երկրորդ՝ զի բազումք գայթակղութեամբ կորնչին. արդ ի հարկէ *որպէս* ասացաւ՝ կամ միոյ կամ բազմաց լինի կորուստ: - 167. Դարձեալ՝ այն զօրութիւնն միշտ է. զի բնաւորեալ է ընդ ներգործութեան. իսկ միւս զօրութիւնն երբեմն է. զի կամ նախ է ներգործութեան. *որպէս* մանկան հիւսնել: - 168. Կամ յետ ներգործութեան. *որպէս* ի շարժելոյն դադարիլ: - 168. Ապա յա՛յտ է զանազանութիւն սոցա, զի ոմն զօրութիւն հարկաւոր է և ներգործութեամբ և անփոփոխ և միշտ. *որպէս* հրոյ ջեռուցանել, և արեգական լուսաւորել: - 168. Իսկ միւս զօրութիւնն որ կարելի է՝ և ներընդունի զգոլն և զչգոլն՝ և երբեմն՝ ասի ի վերայ փոփոխական բնութեանց. *որպէս* հանդերձն կարէ՛ պատառիլ և ո՛չ պատառիլ. և ջուրն կարէ՛ ցրտացուցանել և ո՛չ ցրտացուցանել: - 168. Ութերորդ՝ ներգործութեամբ բնութեամբ առաջին է՝ և ժամանակաւ վերջին. *որպէս* բոլոր եղեալքս: - 169. Իններորդ՝ և է ուրեք ժամանակաւ առաջին ներգործութեամբն՝ և վերջին զօրութեամբն. *որպէս* շարժման դադարիլն: - 169. Է՛ որ միշտ ներգործութեամբ. *որպէս* աստուած. և է՛ որ միշտ զօրութեամբ. *որպէս* նիւթն և ժամանակ. և է՛ որ երբեմն զօրութեամբ և երբեմն ներգործութեամբ. *որպէս* այսոքիկ որ ի լինելութեան և յապականութեան են: - 169. Ապա ուրեմն յա՛յտ է ի բաժանման է թէ ի յաստուած ո՛չ գոյ իր ինչ զօրութեամբ. այլ բովանդակն ներգործութեամբ *որպէս* ցուցաւ: - 169. Այլ ասիցէ ոք, թէ բազում ինչ գոն ի յայլս գոյացութիւն և ի յայլս պատահումն. *որպէս* ջերմութիւն ի հուրն գոյացութենէ...: - 169. Նախ՝ զի զգոլն իւրեանց ունէին ի նախագաղափար տեսութիւնն աստուծոյ. թէպէտ յետո՛յ ընկալան գոյացութիւնս յինքեանս. *որպէս* տաճար ի միտս շինողին: - 170. Երկրորդ՝ թէպէտ յետոյ եղեն արարածք, ո՛չ են պատահումն. *որպէս* և բանն էր յառաջ, և յետոյ եղև մարմին...: - 170. Իսկ պատահումն ի յայլս ունի զէութիւնն, և կարօ՛տ է այլոյ ի գոլն. *որպէս* գոյն ի մարմնի: - 170. Երրորդ՝ զի պատահումն ընդ գոյացութիւն խառնեալ՝ լինի բաղադրեալ. *որպէս* նիւթ և տեսակ: - 170. Յորժամ պատահումն ոչ գոյ յաստուած *որպէս* ասացեր, զԺ ստորոգութիւնս *որպէս* ուղղեսցուք առ նա: - 171. Իսկ անեղ և պարզ էութեանն պատշաճի միայն նմանապէս համեմատութեամբ. զի Է կոչի աստուած, ըստ այնմ «ես եմ որ էն». և ո՛չ ըստ այնմ որ բաժանի ի գոյացութիւն և ի պատահումն. *որպէս* հոմանուն կամ փաղանուն. կամ ի միոջէ և առ մի. *որպէս* ընդհանուր էակն է՝ բաժանի առ մեզ: - 171. Այլ կոչի է, ըստ այնմ որ միշտ է՛, ո՛չ ունելով սկիզբն և ո՛չ վախճան. այլ ինքն է ամենեցուն սկիզբն և վախճան. *որպէս* ասէր՝ «ես եմ ալֆա և օմեգա»: - 171. Իսկ Գոյացութիւն կոչի աստուած, ո՛չ ըստ որում ներհակ պատահմանց է ընդունական *որպէս* մեք. այլ ըստ որում բաժանի ընդդէմ պատահմանց. որ է՛ միայն պարզ գոյացութիւն *որպէս* ասացուք: - 171. Իսկ Որակ կոչի, *որպէս* բարի, լոյս, քաղցր, և գեղեցիկ: - 171. Այլ գոյացական որպիսութիւնն է որակութիւն. *որպէս* ասեմք բանական. անմահ. անմարմին. և այլն: - 172. Իսկ Առինչ կոչի, ո՛չ *որպէս* առ մեզ առինչք են մակագոյեղքն. այլ գոյացական, կամ բաղդատական. *որպէս* ծնօղ. ծնեալ. բղխօղ. բղխեալ. կամ արարիչ և տէր արարածոց և ծառայից: - 172. Այլ և ո՛չ տեղի պատահական. *որպէս* աստ և անդ. զի ոչէ ի տեղոջ իմիք պարունակեալ. և ո՛չ բացեայ ի տեղւոջէ իմիք զատեալ. զի նա՛ է ամենցուն տեղի: - 172. Այլ ասի տեղի կերպիւ ինչ, զի է՛ հայր ի յորդի. և որդի ի հայր. և հոգի ի հայր և յորդի. և անդրադարձեալ. *որպէս* ասէր՝ «հայր ի յիս, և ես ի հայր»: -172. Իսկ Երբ ո՛չ ասի աստուծոյ. զի անժամանա՛կ է և ո՛չ ունի փոփոխումն. այլ ասի յաւիտենական. ըստ որում բոլորն համանգամա՛յն է և կատարեալ. զի ոչ կարօտի սկզբան և վախճանի. *որպէս* ժամանակն. և ո՛չ միայն սկզբան *որպէս* մշտնջենաւորն. այլ անսկիզբն է և անվախճան. վասն որոյ կոչի յաւիտենական: - 172. Եւ ա՛յլ է ստեղծանելն ի յոչնչէ. և այլ է խնամել զստեղծեալ իրն *որպէս* ասացաք: - 172. Նմանապէս ծանիր և զայս կրկին է էակն. մին

մշտնջենաւոր և միշտ ներգործութեամբ, *որպէս* աստուած. հրեշտակք. և արեգակն և հուր: - 173. Եւ է՛ էակ որ երբեմն զօրութեամբ է. *որպէս* այնոքիկ որ ի լինելութեան և յապականութեան են որք միշտ փոփոխին. *որպէս* մարդ և ոչխար և ծառ: - 173. Իսկ մշտնջենաւոր էակն միայն մին ունի զօրութիւն որ է առինքն ներգործութեամբ. *որպէս* հրոյ ջեռուցանելն. և արեգական լոյսն. և հրեշտակին անապականութիւնն: - 173. Այսինքն կամօք է՝ զի գիտութիւնն և կամքն առաջնորդէ՛ գործոյն և հնարաւոր է՛ առնել զայս՝ և առնել զայն, զոր և կամեսցի. *որպէս* մարդ զի տէր է գործոյ իւրոյ՝ առնելոյ և ոչ առնելոյ: - 173. Իսկ գործ բնութեամբ է՝ զի բնութիւնն առաջնորդէ՛ գործոյն. *որպէս* հուր բնութեամբ այրէ, և սարդն բնութեամբ գործէ: - 173. Զի էակքս ամենայն՝ ոմանք բանաւորք են և ո՛չ միշտ ներգործականք. *որպէս* մարդս: - 173. Եւ ոմանք միշտ ներգործեն և ո՛չ են բանաւոր. *որպէս* հուրն: - 173. Իսկ աստուածայինն է ընդդէմ սոցա. զի է բանաւոր և է միշտ ներգործական *որպէս* ասացաւ: - 173. Եւ թէ ոք ասիցէ, որովհետև ներգործութիւնքն բնութեանց հետևին, *որպէս* հուրն միշտ այրէ, և ջուրն ցրտանայ և ջերմանայ. ապա ճշմարիտ երևի բանն դամասկացւոյն՝ եթէ է՛ ի քրիստոս կրկին ներգործութիւն. *որպէս* և կրկին բնութիւն: - 174. Ասեմք առ այս Նախ՝ եթէ ո՛չ ամենայն գործ բնութեան հետևի, այլ և կամաց. *որպէս* մարդոյ. զի մի է կամք ի քրիստոս, մի է և ներգործութիւնն: - 174. և Դարձեալ՝ *որպէս* մի է բնութիւն բանին մարդացելոյ ըստ սրբոյն կիւրղի, մի է և ներգործութիւնն ըստ սրբոյ աստուածաբանին գրիգորի և դիոնէսիոսի: - 174. Էութիւն և բնութիւն մի են *որպէս* մարդկութիւն...: - 174. Այլ գոյացութիւնն է ունօղ բնութեանն, կամ ներքոյ կացեալ բնութեան *որպէս* մարդ: - 174. Իսկ ենթադրութիւն է զանազանելին և ո՛չ զանազանեալն բացորոշ յատկութեամբ. *որպէս* ոմն մարդ: - 174. Իսկ անձն է զանազանեալ հանդերձ բացորոշ յատկութեամբ. *որպէս* պետրոս: - 174. Իսկ պատահական տեղի է, յորում նեստեալ ոք՝ կարէ՛ թողուլ զայն և լինիլ յայլ տեղւոջ. *որպէս* ի վեր կամ ի վայր: - 174. Իսկ անմարմնոյն ո՛չ է տեղի մարմնական. *որպէս* աստուծոյ կամ հրեշտակաց. կամ հոգւոց. զի անպարագրելի են: - 174. Այլ թէպէտ աննիւթ է աստուած՝ ո՛չ է անկարգ զնիւթականքս յառաջ ածել ըստ այսմ օրինակի. զի նիւթն որ է՛ գոյացութիւն մարմնական՝ ունի որակութիւնս իմն մարմնական. *որպէս* քանակ. որակ. և այլքն: - 175. Նախ՝ զի սոքա անմարմինք են ըստ ինքեան. այսինքն քանակ, որակ, և այլքն. և յանմարմին էութիւնս ո՛չ տեսանին. *որպէս* ի հրեշտակս կամ ի հոգիս. զի նոքա ո՛չ ունին ձև. որակ. քանակ. և զայլսն: - 175. Երկրորդ՝ զի իր մարմնական են և ի մարմնի էանան սոքա՝ և ո՛չ են մարմին. այլ անմարմին էութիւն *որպէս* ասացաք: - 175. *Որպէս* տունն ի ժողովիլ փայտից և որմոց՝ շինի. և ի ցրուիլն սոցա կորնչի տունն: - 175. Եւ *որպէս* ի ժողովիլ հոգւոյ և մարմնոյ լինի մարդ. և ի բաժանիլն կորնչի. այսպէս և զայս իմա: - 175. *Որպէս* հոգի և մարմին բնութեամբ միաւորին ի մի բնութիւն և ի մի դէմ և ո՛չ շփոթին: - 176. Վասն էր՞ աստուած գրով խօսի ընդ մեզ *որպէս* մովսէսի և այլոցն: - 177. Նոյնպէս և աստուած ընդ արժանիսն դէմ յանդիման խօսեցաւ. *որպէս* առ ադամ. և առ նոյ. և առ աբրահամ. և առ մովսէս: - 177. Հինգերորդ՝ զի յետոյ լինելոցն էր բանն աստուծոյ մարմին. *որպէս* գիրն ունի յինքեան զբանն. և խօսի ընդ մեզ: - 177. Երկրորդ՝ տառն որ է կոչումն գրոյն. *որպէս* ասեմք այբ: - 177. *Որպէս* ի նիւթոյ և ի տեսակէ մարմին. և ի հոգւոյ և ի մարմնոյ կենդանին. և յարուէ՛ և իգէ ծնեալն. նոյնպէս ի ձայնաւորէ՛ և յանձայնէ՛ բանն ծնանի: - 177. Երկրորդ՝ զի առաջին և սկիզբն է թուոց. *որպէս* միակն թիւ բազմանայ և խառնի յայլս, այսինքն՝ ի **ժ**. ի **ճ**. ի **ռ**. և ի բիւրն. և ի միութենէն իւրմէ ո՛չ որոշի: - 178. Նախ զի է ծնօղ և սկիզբն ամենայն գրոյ և իմաստութեան. *որպէս* հայր աստուած բոլորից: - 178. Երկրորդ՝ յերից գծից բաղկանայ. *որպէս* մարդ ի հոգւոյ և ի մարմնոյ և ի մտաց: - 178. Երրորդ՝ ի ձայնաւորէ՛, կիսաձայնէ՛, և բաղաձայնէ՛. *որպէս* բանական զգայական և տնկական: - 178. **Դարձեալ՝ *որպէս* ասեն իմաստունք՝ թէ քան զամենայն պարգևք գերագո՛յն է իմաստութիւնն յաստուծոյ առ մարդիկ իջեալ. այսինքն քան զկեանս և զառողջութիւն, և քան զմեծութիւն և զայլսն**: - 178. Եւ դարձեալ՝ զի նոցա ամենեցուն ներհակ գոյ. *որպէս* մեծութեան աղքատութիւն. առողջութեան հիվանդութիւն. կենաց մահ: - 178. Թէ հիւանդանայ, փառաւորէ՛ զաստուած *որպէս* զյոբ: - 178. Երկրորդ՝ պատասխանեմք թէ՝ յիրաւի *որպէս* մի է աստուած, և մի աշխարհ: - 179. Եւ արդ՝ այլ աշխարհին կամ լինէր *որպէս* այս, կամ այլապէս: - 179. Արդ եթէ լինէր *որպէս* այս, աւելո՛րդ լինէր. և աւելորդ ոչինչ է ի գործս աստուծոյ: - 179. Գործ զգայարանացն է զարտաքինս ի ներքս զգալ. *որպէս* աչօք զգոյնս. և ականջով զձայնս. և այլն: - 179. Աշխարհս ո՛չ է անուր և աներբ *որպէս* զաստուած: - 180. *Որպէս* կրիտէս թագաւորն կրէատացւոց կախեաց ի մէջ տաճարին անդամանդ քարեայ ամենայն ուստէք ըմբռնեալ: - 180. Ուստի պատճառի լինելութիւն էիցս միշտ և անխափան. *որպէս* ասի ի գիրս աշխարհաց: - 181. Չորրորդ՝ զի մասն ապականի, այլ բոլորն կեայ.

*որպէս* իւրաքանչիւր անհատ մարդոյ և ծիոյ մեռանի, այլ բոլորն մնայ. այսպէս և տարերք: - 181. *Որպէս* ասէ առակն, «ազգ գայ և ազգ գնայ. և երկիր յաւիտեան կեայ»: -181. *Որպէս* զձու հաւի. դեղնուցն ի մէջ ջրոյն. և մզղնա տեսակն ի խեճեպոյն է ամրացեալ: - 181. *Որպէս* կարակնին կէտ անշա՛րժ է, և պատճառէ զբոլորակ ծիրն: - 182. Իսկ արիստոտէլ ի վերայ երկուց բևեռացն ասէ շարժիլ երկնի *որպէս* անիւ սայլին ի վերայ առնոյ: - 182. Եւ երկիրս անշարժ է տեղեաւ, եւ սմա ապականիլ երեսօք. զի տեսեալ մարդիկ եղական և ծառայ իմացեն զնոսա. և մի աստուածս կարծեսցեն և մոլորեսցին. *որպէս* ասէ նիւսացին ի գիրս կազմութեան: - 182. Իսկ նա՛ կոչի հրեղէն, զի է՛ *որպէս* զհուր: - 183. Չինգերորդ՝ երկինք կոչի և դրախտն. զի բա՛րձր է և լուսաւոր և անմահութեան է վայր. *որպէս* ասէ անառակ որդին. «հա՜յր մեղայ յերկինս». այսինքն ի դրախտն: - 183. Երրորդ երկին՝ կատարեալ տեսութիւն իմացականին. որ դէմ յանդիման տեսանէին զաստուած. *որպէս* մովսէս և դաւիթ: - 183. Չինգերորդ՝ երկին կոչի ամենասուրբ Երրորդութիւնն վասն լուսաւորութեան և անհաս բարձրութեանն յամենայն եղելոց *որպէս* ասացաւ: - 184. Դարձեալ և ա՛յլ յատկութիւն երկնից *որպէս* ասացաւ՝ բարձր: - 184. Իններորդ՝ տա՛յ երկրի զոր ունակացեալ է. *որպէս* զանձրև. զլոյս. զջերմութիւն. և զասդողութիւն: - 184. Եւ այս ևս գիտելի է, զի *որպէս* հրեղէն երկինն հոմանուն է, այսինքն լուսեղէնն որ ի սկզբանէ ստեղծաւ. և բոլորակ հրոյն: - 184. Եւ է՛ իմանալի լոյս՝ *որպէս* հրեշտակք՝ և հոգի մարդոյ. և պատւիրանն աստուծոյ...: - 185. Եւ է՛ երկնային լոյս՝ *որպէս* արեգակն և լուսին և աստեղք: - 185. Եօթներորդ՝ միջնորդով զայլս լուսաւորէ. *որպէս* ընդ օդ և ընդ ապիկի: - 185. Ութերորդ՝ ի թանձր և ի կարծր նիւթն անգործ մնայ. *որպէս* ի քար և ի հող: - 185. Եօթներորդ՝ միջնորդով զայլս լուսաւորէ՛. *որպէս* տէրն մեր ասէր՝ «ե՛ս եմ լոյս աշխարհի»: - 185. Տասներորդ՝ ըստ չափու և կարողութեան բաշխէ. *որպէս* ի կեանս յայսմիկ, և ի հանդերձեալն առաւել զի կարիցեմք տանել: - 185. Քսաներորդ՝ է՛ ի նշանս և ի ժամանակս և յաւուրս և ի տարիս *որպէս* ասէ գիրն: - 186. Ոմանց որակ գունոց տայ. *որպէս* խնծորոյ. և զոմանց բառնա՛յ. *որպէս* զմարդոյ: - 186-187. Վարդապետք ասեն. *որպէս* սուրբն բարսեղ՝ թէ *որպէս* երկբերանի քա՛ն է լուսինն. ընդ մինն ելանէ և ի վերի թիկունքն ժողովի և պակասի ի մէնջ լոյսն. և ի միւսն ի ներքս մտանէ և լուսաւորէ՛ զմեզ: - 187. Եւ այլք ասեն թէ՝ կերպն է ցամաք երկրիս. *որպէս* հայելին զմարդոյ կերպն յինքն երևեցնէ: - 187. Երկրորդ՝ լուսաւորքն ի հրոյ են. և տեղիք հրոյն է բարձրագոյն. *որպէս* տարր հրոյն: - 188. Վեցերորդ՝ զի ի միտ ածցուք զառաջին փառսն մեր և ցանկասցուք. և մի՛ *որպէս* զանասուն յերկիր կորասցուք: - 188. Եւ զի ո՛չ շիջանին հրամանաւ արարչին. ի միջի գոլով երկուց ներհակացն օդեղէնն երկին. *որպէս* ստորին տարերքս հուր և ջուր միջնորդ օդիւն կապակցեալ: - 188. Նա՛խ՝ զի յոմանս առաւել է լոյսն. *որպէս* յարեգակն. և յոմանս նուազ. *որպէս* ի լուսին և յայլ աստեղս: - 188. Եւ թէ ասեն՝ յանօրո՛յն է որ մինն առաւել լոյս տայ և մինն նուազ, և ո՛չ ի լուսոյն. *որպէս* յստա՛կ ապիկի առաւել լուսաւորէ: - 188. Ոմանք ասեն *որպէս* արիստոտէլ, թէ ամենայն աստեղքն բևեռեալ են յերկինս և ընդ նմա՛ շրջին: - 189. Իսկ այլք ուղղակի՛ ասեն՝ թէ անմոլար աստեղքն ամրացեալ են ի հաստատութեանն *որպէս* սպի ի վերայ մարմնոյ, և ընդ նմա շարժին: - 189. *Որպէս* յա՛յտ է ի լուսինն յորժամ ծնանի յարևմուտս. և գայ յարևելս ըստ կարգի կենդանակերպիցն: - 189. *Որպէս* ասացաւ ի վերոյ, զխաւարումն լուսոյ՝ և զամիսս՝ լուսինն առնէ: - 190. Եւ *որպէս* իննևժերեակն լուսնի, և իը երեակն արեգական ի միասին ժողովեալ՝ առնէ զհինգ հարիւրեակ շրջանն ի շլբ ամին. զի ժթ իը երեակ է. և իը ժթ երեակ: - 192. Եւ *որպէս* լրումն զատկի ունի աւուրս ժզ. և այլքն ժե. և այս ի տումարս մեր է. և իրն որ է՛ լուսինն մի և նոյն: - 192. Այլ կատարումն լուսնի է ի վախճանի աշխարհի. յորժամ արեգակն և լուսին խաւարեսցին *որպէս* ասէ աւետարանն: - 192. Եօթներորդ՝ ցուցանէ թէ՝ *որպէս* մարմնական բնութիւնք նախ էին անկատար և անտեսակ՝ և յետոյ կատարեցան յաստուծոյ: - 192. Նախ՝ զի սկիզբն և առաջին է ամենայն աւուրց. զի նա կրկնելով առնէ զայլ աւուրս *որպէս* ասացաւ: - 193. Վասն որոյ տօն առաջին աւուրն ի մէջ գիշերի սկսանի. և մեծամեծ տօնքն յերեկօրեայ *որպէս* ասեմք զշաբաթի երեկոյն կիրակմուտ: - 194. Եւ սոքա երեք եղանակքս օրինակ են այսմ կենցաղոյս. և ծմեռն հանդերձելոյն *որպէս* ասացաւ: - 198. *Որպէս* ասեն փիլիսոփայք թէ կրկին է չափ: - 198. Է՛ որ ինքնաչա՛փ է. *որպէս* գիծն ի կանգունն՝ ըստ ինքեան չափէ՛ զկանգունն ի յորում է. և ըստ պատահման չափէ՛ զկտաւն ի յորում ո՛չ է: - 198. Իսկ թէ զանազանապէս իմանաս զժամանակն, նախ է՛ անցեալն *որպէս* երէկ. և ապա ներկայն *որպէս* այսօր. և յետոյ ապառնին *որպէս* վաղիւ: - 198. Տրէ. զի առնու գիշերն յօրէն զժամ և զմասունքն. *որպէս* կրելով յինքն: - 200. Մեհեկի. զի տունկք և բոյսք *որպէս* զմեռեալ զլինին եղեմնապատ և ծիւնաթաղ. մէհէկի. այսինքն ածի: - 201. Մարերի. *որպէս* թուլանան մայրիք տերևօք և ոստովք. և լինին մայր թռչնոց և գազանաց: - 201. Այսինքն զթոյլն պնդէ՛. *որպէս* զձու.

և զպինդն հալէ՛. *որպէս* զերկաթ: - 202. Իսկ ի չորրոյն՝ հողմունք և հնչմունք զանազանք. որոտք և փայլատակմունք. կայծ. և այլն *որպէս* ցուցաւ: - 204. Վեցերորդ՝ յամպոյն իջանէ անձրև և առնէ հեղեղ. *որպէս* առ Նոյիւ: - 206. Եօթներորդ՝ երբեմն ծածկէ՛ զարեգակն. *որպէս* ի գիշերի: - 206. Տասներորդ՝ ամպն ո՛չ միայն զցօղ անձրևէ, այլ և ձիւն և կարկուտ և հրայրեցութիւն. *որպէս* ասացաւ ի վերոյ: - 206. Քանն**ա**՝ սառնու *որպէս* զպլօր: - 207. Եւ այլք ասեն թէ՝ բազում աղբիւրք բղխեն ի ծովն. *որպէս* մեռայի ջուրն, և փոխեն զծովն ի դառն: - 208. *Որպէս* ի մէջ երկրի գոն երակք ջրոց, նոյնպէս և հողմոց, ուստի ի վեր փչեն: - 208. Նոյնպէս և հրոյ. *որպէս* յետն է լեառն յարևմուտս: - 208. Չորրորդ՝ զի նիւթք եղեն երկնաւոր խորհրդոյն. *որպէս* ի տնկոց փայտ խաչին. և յայլ բուսոց հաց պատարագին և գինի. և ձէթ մեռոնի կազմեցաւ: - 212. Նոյնպէս և թագաւորք երկրի և իշխանք՝ որք բարձրացեալ են փառօք և դատա՛րկ յառաքինութեանց, են *որպէս* հովանաւորք: - 212. *Որպէս* ի մեզ նախ զգայականն երևի, և ապա՛ բանականն: - 212. Այլ հոգէպէս *որպէս* ծաղիկք երկրի, նոյնպէս աստեղք երկնից են զարդ: - 213. Առաջին՝ *որպէս* յերկինս նախ տեսանին աստեղք, և ապա բարութիւնք երկնից. այսպէս և ի բոյսս: - 213. Զի են որ զկեղևն ունեն և ո՛չ զմէջն. *որպէս* ծիրան: - 213. Եւ են որ զմէջն ունեն և ո՛չ զկեղևն. *որպէս* նուռն: - 213. Եւ են որ զերկուսքն ևս ունեն. *որպէս* խաղողն: - 213. Եւ են որ ո՛չ մէջն ունի և ո՛չ կեղևն. *որպէս* գղթորն: - 213. Զի տղայութիւնն օդո՛յ է. և միջին հասակն հրոյ և հողոյ. և վերջինն ջրոյ. վասն այն սպիտակի. *որպէս* ցուցանի յառաջիկայդ **ժզ** գլուխն՝ **իզ** համարն: - 213. Իսկ պտուղք զկարգ տարերա՛ցն բերէ *որպէս* ցուցաւ. ի հողոյն սկսեալ և առ հուրն դադարեալ: - 213. Վասն որոյ ի հրոյն ոմն սևանայ. *որպէս* խաղող. և կէսք կարմրին և դեղնին. *որպէս* բոյսք՝ և տերևք չորացեալ ի հրոյ: - 213. Երկրորդ՝ որք երկարակեացք են՝ *որպէս* տունկք, յապաղելով աճին և յա՛մր ծնանին: - 214. Եւ սակաւակեացքն փութով. *որպէս* նարին խոտն, մանուշակն, և այլն: - 214. Նախ՝ զի ծառայք են միշտ վասն այլոց. *որպէս* մարդս միշտ տէր է. և անասունքն տէր և ծառայք. զի ծառայք են մարդկան, և տէր բուսոց. իսկ բոյսք և տունկք միշտ ծառայք են: - 214. Զի մարդն ունի զգլուխն ի վեր *որպէս* երկինքն. և զոտքն ի վայր *որպէս* երկիրս...: - 214. Երկրորդ՝ զի ի հողն կան գ տարերքն ամբարեալք. *որպէս* երևին ուր ուրէք երակ հրոյ և երակ հողմոյ և երակ ջրոյ: - 214. Եւ *որպէս* զհուր՝ ներքին կողմն լայն է և վերին ծայրքն նուրբք: - 215. Իններորդ՝ նոյն ինքն մարմին կենդանւոյն է՛ շօշափելի և է՛ կալեալ և մածեալ. և շարժի և երևի. *որպէս* ասացաք վասն հողոյն: - 215. Ասեմք թէ՝ *որպէս* ցամաքայինքն ունին զշունչ օդոյ: - 215. Եւ են որ թև հաւատոյ ունին, և ո՛չ գործք. *որպէս* չար հաւատացեալքն: - 215. Եւ են որք գործս ունին և ոչ հաւատս. *որպէս* կեղծաւորքն. նմանապէս և սոքա անպիտանք են աստուծոյ: - 215. Եւ են որ ո՛չ ունին հաւատս և ո՛չ գործք. *որպէս* անօրէնք և չարք. և յայտնի անպիտանք են: - 215. Ոմանք **պարզաթևք** են. *որպէս* ճանճք: - 215. Եւ ոմանք **պատենաթևք** *որպէս* մարախք: - 215. Եւ ոմանք **մաշկաթևք**. *որպէս* ջղջիկանք: - 215-216. Եւ ոմանք թևահերձք. *որպէս* ա՛յլ թռչունք: - 216. Երկրորդ՝ ձայնական գործիքն. որ են է. *որպէս* Շրթունք. Ատամունք. Լեզու. Մակալեզու. Բերան. Խռչափող. Թոք: - 216. Նա՛խ՝ թև, *որպէս* թռչնոց: - 216. Երկրորդ՝ թեփ. *որպէս* ձկանց: - 216. Երրորդ՝ մորթ. *որպէս* սողնոց: - 216. Չորրորդ՝ խորխ. *որպէս* օձից: - 216. Հինգերորդ՝ մազ. *որպէս* այծից: - 216. Վեցերորդ՝ ասր. *որպէս* ոչխարաց: - 216. Եօթներորդ՝ կաշի. *որպէս* եզին: - 216. Ութերորդ՝ խեցի. *որպէս* կրիայից: - 216. Իններորդ՝ փուշ. *որպէս* ոզնոց: - 216. Ոմանք զէն ունին զատամունսն. *որպէս* շունք և վարազք: - 216. Կամ եղջիւրք. *որպէս* ցլուց: - 216. Կամ կնջիթ. *որպէս* փղի: - 216. Կամ սմբակ. *որպէս* ձիոյ: - 216. Կամ խայթոց. *որպէս* մեղուի: - 216. Կամ թոյնք. *որպէս* օձի: - 216. Կամ ճիրանունք. *որպէս* արծուի: - 216. Կամ մագիլք. *որպէս* աքաղաղի: - 216. Կամ կտուց. *որպէս* բազէի: - 216. Կամ թև. *որպէս* թռչնոց: - 216. Կամ թեփ. *որպէս* կոկորդիլոսին: - 216. Կամ մազ. *որպէս* ոզնին: - 216. Կամ ապաւառ. *որպէս* եփենոսին: - 216. Կամ մեծութիւն. *որպէս* ուղտու: - 216. Կամ արագութիւն. *որպէս* նապաստակաց: - 216. Կամ խաբէութիւն. *որպէս* աղուեսուց. զայս և զսոյնպիսիս ունին կենդանիք բնութեամբ ի խնամս ինքեանց: - 216. *Որպէս* փուշք վարդից. և քիսք հասկից. և խայթոցն աղնճին: - 217. Երրորդ՝ ստեղծան նոքա՝ զի ի նոցա՛ ջանից ընթերցմանց և բարեաց գործոց օրինակ առցուք. *որպէս* են մրջմունք և սարդք, և այլք այսպիսիք: - 217. *Որպէս* թիւրակէքն որք լինին յօձից և ի գազանաց: - 217. *Որպէս* մրջիւն նախ քան զլինիլն անձրևի՝ զկերակուրն պատրաստէ: - 218. Եւ *որպէս* ընդ գլխոյն պատերազմեցաւ, գլուխն սատակեցաւ: - 219. Երկրորդ՝ անունն սահմա՛ն է կարճառօտ յայտնիչ բնութեան ենթակայ իրին *որպէս* ասէ իմաստունն: - 219. Հինգերորդ՝ օգնական ետ զկենդանիքդ մարդոյն. *որպէս* ծառայք տեառնն. անուամբ պարտ էր ճանաչել զնոսա: - 219. Յիրէն՝ *որպէս* սափոր. երկին. երկիր. գազան. անասուն: - 220. Ի գործոյն, *որպէս* սողուն ի սողալոյն. ի շողոքորթելոյն շունն.

ի հեզոյն եզն. յառնելոյն առիւծ: - 220. Եւ ի ձայնէն, *որպէս* ճնճղուկ. ծիծառն. խօսօղ. ագռաւ. և այլն: - 220. Զանուանս գլխաւորացն *որպէս* սեռ՝ աստուած կոչեաց. *որպէս* երկին. երկիր. լոյս. և այլն: - 220. Իսկ զընդհանուր տեսակացն՝ ադամ. *որպէս* եզն. ձի. և այլն: - 220. Ո՞րպէս գիտեմք թէ մարդն իշխան է ի վերայ անասնոց. զի ահա՛ բազումք անհնազանդք են. *որպէս* վայրիք և գազանք և այլք: - 220. Երկրորդ՝ զի պատկեր աստուծոյ է մարդն. այսինքն զի *որպէս* աստուած իշխան և թագաւոր է ամենայն արարածոց. նոյնպէս և մարդն իշխան է ամենայն կենդանեաց: - 220. Չորրորդ՝ յա՛յտ է ի հնազանդեցելոցն որք կան այժմ ընդ ձեռամբ մադկան. *որպէս* ոչխար, պախրէ՛, և այլն: - 220. Հինգերորդ՝ յա՛յտ է ի փախուցելոցն որ երկնչին ի մարդկանէ *որպէս* զապստամբեալ ծառայս: - 220. Երկրորդ՝ զի ցոր քան իշխէր ինքն ի վերայ անասնական մասանց իւրոց *որպէս* ասացաք, իշխէր և ի վերայ արտաքին անասնոց և գազանաց. իսկ յորժամ ապստամբեցին ներքինքն բանականին տեառն իւրեանց՝ ապստամբեցին և արտաքինքն մարդոյն տեառն իւրեանց: - 220. *Որպէս* դանիէլ առիւծուցն յաղթեաց. և պօղոս իժին. և բազում ճգնաւորաց որք անապատս էին՝ գազանք և անասունք սպասաւորէին նոցա: - 220. *Որպէս* եղիայի. պօղի և անտոնի. և մերոյ լուսաւորչին Գրիգորի: - 220. Նախ՝ *որպէս* ասացաւ ի վերոյ՝ երեք տեսութիւն սրբոցն է գ իրին. այսինքն զգայութեան. երևակայութեան. և իմացման: - 221. Եւ ոմանք միայն զգալի և ապականացու և ծորելի *որպէս* երկիրս այս. և զայսոսիկ ո՛չ ընդունիմք մեք ճշմարտութեան հետևօղքս: - 221. *Որպէս* դամասկացին յօհան՝ և օգոստինոս՝ իմանալի և զգալի ասացին: - 221. Երկրորդ՝ իմանալի՛ է, զի իմացումն և իմաստութիւն տայ մեզ յայլ իրս. *որպէս* ծառն կենաց զքրիստոս: - 222. Չորրորդ՝ զի նոյն ինքն դրախտն և տունկն է իմանալի և զգալի. *որպէս* վայելօղ մարդն էր իմանալի և զգալի: - 222. Իսկ այլք ասեն թէ՝ վասն առաւել բարձրութեանն՝ լոյս արեգականն ո՛չ երբէք հեռանայ ի նմանէ. թէպէտ ի ներքոյ երկրի անցանէ. *որպէս* լուսինն թէպէտ ի վերին կամարն լինի, զլոյսն առնու յարևէն որ ի ներքին կամարն: - 222. Ո՛չ թէ քան զտարրական հուրն ի վե՛ր է անցեալ. այլ զի լուսինն և արեգակն միշտ ի հարաւոյ կողմանէ ի ստորոտէ լերինն ելանեն. և ի հիւսիսոյ կողմն լերինն միշտ գիշեր լինի. *որպէս* աղէքսանդրու պատմութիւնն ասէ. և ի գլուխն միշտ լոյս. և ի հարաւոյ կողմն տիւ և գիշեր: - 222. *Որպէս* առաջին հարքն անապական գոլ ասացին. և մեք հետևօղք նոցին անապական ուսանիմք: - 222. Նա՛խ՝ զի թէ ապականացու էր *որպէս* երկիրս այս, վասն է՞ր զմարդն պատւելով ի դրախտն եդ աստուած: - 222. *Որպէս* հաց մարմնոյն քրիստոսի ըստ գոյացութեան և ներգործութեան անապական է. թէ և փոփոխի ըստ արտաքին որակացն: - 223. Ա՛րդ՝ *որպէս* կենաց պտուղն կերակրելի է և կենսունակ, նոյնպէս ամենայն պտուղքն կերակրելիք էին և անապականք: - 223. Պտո՛ւղ էր զգալի և կերակրելի. *որպէս* կենաց պտուղն անմահութեան էր պատճառ. և այլ ամենայն պտուղքն լիութեան: - 223. Նոյնպէս և նա գիտութեան էր պատճառ բարւոյ և չարի *որպէս* ասէ սուրբն գրիգոր նիւսացին: - 223. Մինն պարզ և զուտ բարին ներքոյ և արտաքոյ. *որպէս* առաքինութիւն. և հոգևոր գործն. յայսպիսիքս հրամայէ՛ մեզ մերձենալ: - 224. Եւ է՛ միւս բարի խառնակն և պատրուակեալն. *որպէս* է աշխարհական բարին. զի գունով և երևելեաւ բարի է, այլ ի ներքոյ ծածկեալ չա՛ր է. յայսմանէ հրաժարէ՛ զմեզ ոչ մերձենալ: - 224. Զէ՛ զարմանք հրաշիցն աստուծոյ. *որպէս* ամենայն ռնգունք զհոտն զգան, և աչք զգոյնն կրէ յինքն, և անծորելի և անպակա՛ս են յենթակայէն: - 224. Եւ *որպէս* ալիւրն ի սափորն և իւղն ի սրուակն կերակրելի՛ էր, և ոչ նուազէր առ եղիայիւ: - 224. *Որպէս* լուսաւորք երկնից քարշեն յերկրէ և ի ծովէ զհիւթ՝ և կերակրին և անապականք են: - 224. Եւ *որպէս* հուր ճրագին զիւղն կերակրի, և ինքն ո՛չ առաւելու: - 224-225. *Որպէս* մարմինն ադամայ յերկրէ է և անապական. և մանանայն յօդոյ և անապական. և յա՛յտ է ի մէջ սափորին: - 225. Եւ *որպէս* ոսկին յերկրէ՛ է և անապական. և քարինք կարծրացեալ ի հրոյ և անապական մնան: - 225. Եւ *որպէս* ակն կենդանւոյն մա՛սն է բոլոր մարմնոյն՝ և լուսաւոր: - 225. Զի *որպէս* ջրհեղեղն ո՛չ եմուտ ի դրախտն զի ո՛չ էր ապականեալ մեղօք: - 225. Ի դրախտին լինէ՞ր մարմնական ծնունդ *որպէս* այժմ ի յերկրի, թէ ոչ: - 225. Երկրորդ՝ զի դրախտն է տեղիք անապական. և ո՛չ լինէր ի մարդոյն ծորումն ինչ աղտեղութեան. և ոչ *որպէս* տնկոցն: - 225. Չորրորդ՝ զի թէ լինէր անդ ախտական ծնունդ *որպէս* ի յերկրի, կարօտանայր մարդն ամենայն պիտոյից զաւակին: - 225. Ա՛րդ՝ եթէ առաջին կեանքն էր ամուսնութեամբ և որդէծնութեամբ *որպէս* նոքա շաղակրատեն. ապա և ի վերջին յարութեանն նոյնպէս է՛ լինելոց: - 226. Ասեմք թէ՝ կանխագէ՛տ է աստուած. և նախ ծանեաւ զի ո՛չ կարէին աճիլ անմեղութեամբ ի դրախտին *որպէս* զհրեշտակս...: - 226. Զայս այսեն սուրբ վարդապետք եթէ՝ *որպէս* հրեշտակք աճեցին յերկինս, նոյնպէս և մարդկան ազգ ի դրախտին: - 226. Ասեն սուրբք, *որպէս* ի միոյ լուսոյ բազում լոյսք վառին: - 226. Եւ կամ *որպէս* եւա ի

կողիցն ադամայ: - 226. Եւ կամ ա՛յլ ինչ եղանակաւ *որպէս* ինքն գիտէ ամէնագէտ արարիչն: - 226. Իսկ ամպք և հողմունք ի յօդոյն են. *որպէս* քարինք և երկաթք յերկրէ. սոյնպէս աղբիւրք և գետք ի ծովէ՛: - 227. Եւ զի անմեղ մարմինն ադամայ՝ անչարչարելի և երագ և պայծառ և թեթև էր, *որպէս* ասէ աստուածաբանն գրիգոր: - 228. Նա՛խ՝ *որպէս* ասացաւ ի վերոյ, հողն ունի զայլ **գ** տարերքն ի յինքն խառնեալ. յորժամ ի հողոյ ասէ՝ իմանալի **զդ** տարերս: - 229. Տասներորդ՝ զի յայսմանէ հաստատեսցի ի մեզ հաւատ յարութեանն. *որպէս* զառաջինն ի հողոյ ստեղծ զմեզ, դարձեալ ի յարութեանն ի նոյն հողոյն լուծեալ և փոշիացեալ՝ յարուցանէ աստուած: - 229. Եւ դարձեալ՝ զի հաստատեսցի ի մեզ հաւատ մարդեղութեանն քրիստոսի. թէ *որպէս* ի յապականացու հողոյն ստեղծ ադամայ մարմին անապական: - 229. *Որպէս* առաջին է կառքն և յետո՛յ կառավարն. և առաջին է նաւն, և ապա նաւավարն. և պատուական է մարդն քան զնաւն և զկառքն: - 230. Ի պատիւ մեծարեաց զմարդն. և նա՛խ՝ պատրաստեաց պէտս զանազան կերակրոց և ըմպելեաց *որպէս* ասացաք...: - 230. *Որպէս* բոյսք վասն անասնոց. այսինքն է՛ այլոցն. ուստի անասունք կերակրիլով ծառայեն մարդոյն: - 230. Յաղագս որոյ նախ եղեալքն՝ են վասն վերջնոցն. *որպէս* բոյսք անասնոց, և անասունք վասն մարդոյն: - 230. Ութերորդ՝ ո՛չ արար նախ զմարդն, զի մի՛ արարչակից գիտասցէ զինքն ոչ գոյիցն, և անկցի հպարտութեամբ. այլ գործօղ գոյիցն, զի կացցէ պահպանութեամբն. *որպէս* ասէ գիր...: - 231. Իսկ թէ ըստ մարմնոյն շեղեսցի՝ ի մահ պարտաւորեսցի և տնկեցի ի մարմնաւոր տեղիս. *որպէս* և եղև իսկ: - 231. Նա՛խ՝ զի աշխարհ է կամ իմանալի, *որպէս* հրեշտակք. կամ զգալի, *որպէս* մարմնականք: - 231. Այսպէս գլուխ մարդոյս ունի զնմանութիւն երկնից. զի է՛ բոլոր. և աչքն *որպէս* լուսաւորքն. և իմացումն ի նմա՛ *որպէս* իմանալիքն յերկինս: - 232. Գլխոյն հերն *որպէս* արմատ. և ջիլք և ոտք՝ *որպէս* ոստք ըստ ձևոյ աշխարհի: - 233. Գլուխն *որպէս* երկինք ի վերոյ. և ոտքն *որպէս* երկիր ի ներքոյ. զի ծանրութիւնք և ծորմունք ամենայն ի վայր հոսեսցին: - 233. Եօթներորդ՝ վասն զգայութեանցն, որ ամենեքին յառաջ հեղուն յուղեղէն, և ազատապէս տեսանեն և իմանան. զի թէ գլուխն և ուղիղն ի վա՛յր էր քարշեալ և կորացեալ՝ ո՛չ կարէր ուղղակի զգալ և իմանալ. *որպէս* այլ կենդանիք: - 233. Զի թէ կորագլուխ էր *որպէս* այլ կենդանիքն, խափա՛ն լինէր զգայութեանցն և պակասումն գիտութեան: - 233. Եւ պիտոյանայր լեզու երկայն և շրթունք ստուար, զի ժողովեսցէ զկերակուր. և յայնժամ ո՛չ կարէր սպասաւորել բանի *որպէս* ա՛յժմ: - 233. Տասներորդ՝ զի կիրք մարմնոյն հեղուն ի հոգին. *որպէս* յորժամ մարմինն ննջէ՝ և հոգին թմրի և անգործ մնայ. վասն որոյ արարաւ ձևն ուղիղ, զի միտքն ընդ նմա՛ ուղղեսցի ի վեր առ աստուած...: - 233. Եւ *որպէս* սակաւ մասն ոտիցն ի յերկի՛ր է հպեալ և կոխէ, նոյնպէս և մեզ սակաւ պէտս մարմնոյ. այսինքն զգեստուց և կերակրոց ի յերկրէ ստանամք...: - 233. Երրորդ՝ զի երեսն հայելի է սրտին. և նորա փոփոխմամբն զխորհուրդն ճանաչեմք. *որպէս* ի տխրիլն և ի զուարճանալն և յայլն...: - 234. Եւ *որպէս* այս, նոյնպէս ի հոգևորն. վասն որոյ մովսէս ցանկայր տեսանել զերեսս աստուծոյ: - 234. Զի շօշափելիքն ի ներքո՛յ է *որպէս* երկիր. և ճաշակելիքն ի վերոյ *որպէս* ջուր. լսելիքն յօդն է. և տեսանելիքն հուրն ի վերոյ: - 235. Զորօրինակ՝ բնութեան յատուկն և անձին. զի բնութեան տարբերն հեռագոյն է և մեծ. *որպէս* կենդանին և բանականն. և դիմաց յատուկն մերձ և նուազ. *որպէս* յատուկն մերձ և նուազ. *որպէս* պատկեր և տիպ: - 235. Եւ պակասեալ ի սոցանէ մարմնոյն, ցուցանի կերպարան ի գոյէ ի քանակէ և յորակէ և ի տեղւոյ շարակցեալ. *որպէս* յա՛յտ է ի հայելւոջ: - 236. Սակայն կերպն և կերպարանն տարորոշին. *որպէս* գաղափարն և պատկերեալն: - 236. Եւ նւազեալ յայսցանէ գոյնն՝ մնայ պատկեր ի քանակէ և ի ձևոյ և ի տեղւոյ երևեալ. *որպէս* յա՛յտ է ի մեռեալ մարդն: - 236. Եւ պակասեալ ի սմանէ տեղին, լինի տիպ ի քանակէ և ի ձևոյ բաղկացեալ. *որպէս* յա՛յտ է ի մոմն տպացեալ: - 236. Եւ նուազեալ ի սմանէ քանակին, լինի նման և աննմանն ցուցեալ. *որպէս* յա՛յտ է ի տառն գրեալ. զի նման և աննմանն ւրոյն են որակի: - 236. Իսկ միայնացեալ որակ ի ձևոյն, երևի աննման. զի նմանն ի վերայ որակութեան ասի. *որպէս* ծանրութիւն: - 236. Իսկ երրորդն թէ վասն է՞ր յամենայն իրս երևի նման և աննման. *որպէս* ի շնչաւորս և յանշունչս. ի կենդանիս և յանկենդանս և յայլսն ամենայն: - 236. Սեռիւ նոյն, *որպէս* եզն և ձի: - 236. Եւ տեսակիւ, *որպէս* պետրոս և պօղոս: - 236. Եւ անհատիւ, *որպէս* նիւթ և տեսակ: - 236. Սեռիւ, *որպէս* բանական և անբան: - 236. Տեսակաւ, *որպէս* մարդ և քար: - 236. Անհատիւ, *որպէս* դէմն: - 236. Ա՛րդ՝ վասն զի գոն յամենայն իրս նոյնութիւն և այլութիւն *որպէս* ցուցաւ, յաղագս որոյ են նմանք և աննմանք միմեանց: - 236. *Որպէս* և իմաստունքն ասացին զամենայն երևելիս յարացոյց իմանալեացն. զոր գոյ և որակ կոչեն. և զնիւթս պատկեր գոյին. զի որակն և գոյք անմարմին են և աննիւթաբար ի մտածութիւնս երևին: - 236. Եւ *որպէս* մարմնոյն պատկերք նման և աննման են իրերաց. նոյնպէս և հոգին ըստ միոյ բնութեան ստեղծեալք նման և

աննմանք են իրերաց: - 237. Նա՛խ՝ զի անմարմին դիմօք առանձնանան ի միմեանց. և այս յատուկ դիմօքս ճանաչեն հոգիքն զմիմեանս. *որպէս* մեծատունն զղազարու և զաբրահամու հոգին: - 237. Եւ այս անճառ խնամոցն աստուծոյ է տեսչութիւն *որպէս* ցուցանի յառաջիկայդ: - 237. Եւ թէ ոք ասիցէ, խառնուածոցն է այս, կամ յատուկ տեսակաց. *որպէս* ձայնք և տերևք և կենդանիք չեն նման միմեանց: - 237. Եւ սոյնպէս մարդն առաւելու ի չարն. ի բանականէն և ի կամացն և ի թունիցն սատանայի չարացեալ *որպէս* ցուցաւ ի սկիզբն գրոցս: - 237-238. Երրորդ՝ զի ո՛չ գիտէին զանդրանիկն ժամանակաւ, և ո՛չ զկրտսերն. և լինէր փոփոխումն վիճակաց նոցին. *որպէս* յակոբ էառ զանդրանկութիւնն եսաւայ. և եփրեմ զմանասէին. թէ և սոքա տեսչութեամբն աստուծոյ. այլ նոքա ի պատրանաց լինէին: - 238. Չորրորդ՝ զի ո՛չ ճանաչէր այր զկին իւր, և ոչ կին զայր իւր. և լինէր անօրէն խառնակումն. *որպէս* յուդայ զնու իւր զթամար ո՛չ ճանաչեաց. և ո՛չ ղովտ զդստերսն իւր: - 238. Կամ զպարտս յոչ պարտականէն խնդրէին. *որպէս* ա՛յժմ անիրաւք զայլ ոք այլոյ գրաւ առնուն: - 238. *Որպէս* ասեն զշամիրամէ թէ՝ յորժամ սպանաւ արա ի պատերազմին, զայլ ոմն նման նորին պատւեաց և ասաց թէ աստուածքն յարուցին: - 238. *Որպէս* պատմի ի դատաւորքն. յորժամ գեդէոն զփողսն հնչեցոյց, այլազգիքն ինքեանք զինքեանս ի սուր մաշեցին ի գիշերի: - 238. Իններորդ՝ զի և ի հոգևորն՝ փոքունք զմեծամեծաց անուանս կոչէին ինքեանց ի մոլորումն մարդկան. *որպէս* սիմոն կախարդն ասէր զինքենէ՛ թէ քրիստոսն իցէ. մինչև յանդիմանեցաւ ի պետրոսէ: - 238. Երկրորդ՝ զի զփոշին սրբէ որ ի յօդոյս նստի յաչքն. *որպէս* մեք ձեռօք սրբեմք զերեսս հայելւոյ: - 239. Այս երկու երակս թէ տաք է և չոր, մարդն ի մօտն աղէկ տեսնու՝ և ի հեռուն վատ. *որպէս* տղայն: - 239. Եւ թէ այս երակս հո՛վ է և գէջ, ի հեռուն աղէկ տեսնու և ի մօտն վատ. *որպէս* ծեր մարդն: - 239. Իսկ մազն է այրեցած արիւնն. որ օդովն ի դուրս փչի. *որպէս* տունկք յերկրէ: - 240. Եւ ուր ջերմութիւնն շատ է, մազն ո՛չ սպիտակի. *որպէս* արտևանունքն աչացն և յայլ տեղիս: - 240. Արևելիցն տա՛ք է և գէջ *որպէս* ասեն բժիկք: - 240. *Որպէս* ասեն տօմարագէտք, Խոյն գլուխն որ է՛ պարսիկք. և այլն: - 241. Եւ *որպէս* է են գլխաւոր անդամք՝ և է մոլորակք յերկինս: - 241. Յալողականն է՝ յորժամ ի ջերմութենէն եփի կերակուրն և հալի *որպէս* ապուր ի պտկի. և հալի ամենայն կերակուրն մինչև ի **զ** ժամն. և է՛ որ պակաս և աւելի. վասն առողջ և տկար մարմնոյն: - 242. Աղին և դառն՝ յաչքն և յականջն *որպէս* ասացաւ: - 242. *Որպէս* ջուրն ի մէջ ամպոյն փրփրի և լինի սպիտակ ձիւն: - 242. Եւ *որպէս* արիւն հոսմանն ի մէջ երակացն փոխի և լինի սպիտակ կաթն, և ժողովի ի ստինսն: - 242. Այսպէս ի սեաւ մաղձէն լինի արտասուքն աղի, զի մի՛ հոտեսցի ակն *որպէս* ցուցաւ նախ: - 243. Եւ է՛ բնութիւն ոսկերաց ցուրտ և չոր. զի խոնաւն և լոյծն ի ցամաք և ի ցուրտ մածնու և լինի ոսկր. *որպէս* ջերմն և խոնաւն լինի միս: - 244. *Որպէս* բունն մի է ծառոյն. և ի բազում ճիւղս բաժանի: - 244. Եւ ցուրտ և լոյծն խառնեալ՝ լինի ջիլ. *որպէս* ցուրտ և խոնաւն փողք: - 244. Ասեմք եթէ երանքն. զի թէ հատանեն զերանսն, մարդն լինի *որպէս* կին. և մորուս ո՛չ բուսանի: - 245. Իսկ զի կէսք քարց և անմորուք լինին, զի ջլապինտ է մորթ երեսացն *որպէս* զթաթ ձեռաց. վասն որոյ մազ ո՛չ բուսանի: - 245. Այլ և լինի յաւելի ի հրոյն ներգործութեանց սեաւ գոյն. *որպէս* հնդկայինն ի ջերմոյ արևուն լինի սեաւ գունով: - 245. Աչք *որպէս* զպայծառ շիտ լուսաւոր՝ նշանակէ՛ զիամեստն: - 246. Դարձեալ են զօրութիւնք հոգւոյն բաժանեալք ի մարմնոյն. *որպէս* իմանալն և կամիլն: - 249. Զի տրամախոհութիւնն ա՛յնպէս է առ իմացումն *որպէս* գոյնն առ տեսանելիքն: - 249. Դարձեալ հոգին ունի զօրութիւնս ոմանս անխառն ընդ մարմնոյն. *որպէս* բանն՝ կամքն՝ և սոյնպիսիք: - 249. Եւ զոմանս ունի խառնեալս ընդ մարմնոյ. *որպէս* է բնական զօրութիւն կենդանականն և շնչականն *որպէս* ասացաւ ի վերոյ: - 249. Դարձեալ հոգին ունի զօրութիւնս ոմանս հասարակ ընդ անասնոց. *որպէս* զգայականութիւնն: - 249. Իսկ զոմանս ունի ո՛չ հասարակ ընդ անասնոց. *որպէս* բանն. իմացումն. և կամքն. և սոյնպիսիք: - 249. Դարձեալ են և ա՛յլ զօրութիւնք անբաժանելիք ի հոգւոյն. *որպէս* տնկականք, և զգայականք: - 249. Զի թէպէտ ըստ ներգործութեանն բաժանին երբեմն ի բաժանելի մարմնոյն՝ զի առանց մարմնոյն ո՛չ կարեն ներգործել սոքօք, այլ անբաժանելի մնան ըստ էութեանն ի հոգին. *որպէս* ցուցանելոց եմք յառաջիկայսդ: - 249. Եւ հնազանդ են բանին՝ զգայականն. *որպէս* ցասումն և ցանկութիւնն: - 249. Իսկ անհնազանդ բանին՝ *որպէս* բանականն և տնկականն: - 249. *Որպէս* յարարածս աստուած ճանաչի, այսպէս և ի մարմնոյս զհոգին օրինակաւ իմանալ մորթի: - 250. *Որպէս* օրինակաւ մասունք հոգւոյ ասացան, նոյնպէս է և մասունք մարմնոյն իւրաքանչիւրոցն գործի: - 250. Այլ զայն ինչ հարցումն որ զմարդն ի հերձուածոյ ի զատ տանի՝ պա՛րտ է հարցանել. *որպէս* յառաջիկայդ հարցումն է սակաւ մի: - 251. Նա՛խ՝ զի զգայարանքն նորա *որպէս* զկակուղ մոմ առաւել ընդունի զտիպն: - 251. Այլ այս է ուղիղ. զի *որպէս* նախախնամութիւնն աստուծոյ զդէմքն մարմնոյն ի

հաւասարութիւնն անհաւասար պահեաց, և ի նմանութիւնն աննման: - 252. Այլ արդ ի մարմնի առաւել մեղանչէ քան յերկնային կեանս. վասն որոյ անկանի ի զգայական մարմին *որպէս* ասեն՝ որ ներքո՛յ է մարդոյն՝ և համանման ախտիւք զի զգայակա՛ն է: - 252. Ասեմք առ այս եթէ *որպէս* դու օրէնս եդեր փոխանցիլ ի բարձրագունէն ի նւաստագոյն կեանս վասն մեղաց: - 252-253. Եւ եթէ այս սուտ է հա՛րկ է ասել քեզ կամ մնալ ի թուփն, կամ փոխիլ յանէն և անգոյանալ *որպէս* ցուցաւ: - 253. Այսպէս և ի կազմուած իւրաքանչիւր մարդոյ ո՛չ է մարմին յառաջ քան զհոգի *որպէս* ցուցանելոց եմք: - 254. Եւ *որպէս* ընդ հանուր մարդկութիւնս լրիւ էացաւ ի տեսութիւնն աստուծոյ յորչափութիւնն և ի թիւն: - 254. Եւ թէ *որպէս*, ասելի է թէ, ի սերմնական զօրութիւնն տեսանի երկու իր: - 254. Եւ օրինակ այսմ, *որպէս* ի ծագել արևուն՝ նախ նշոյլքն երևին և ապա յետոյ արեգակն: - 255. Եւ կամ *որպէս* զօրք թագաւորի՝ նախ հասանեն յիջևանն, և թագաւորին ասի իջևանն. թէպէտ յետոյ գայ: - 255. Եւ դարձեալ՝ *որպէս* հատն ցորենոյ ունի առ ինքն զօրութեամբ զխոտն և զծաղիկն և զհասկն...: - 255. Այսպէս և հոգին ընդ անկատար նիւթոյն ունի զկերակրիլն. և յորժամ հաստատի զգայութեամբն ծաղկի. և յևս հաստատիլն՝ բանականութեամբ պտղաբերի ի վերին խնամոցն *որպէս* պտուղն այն յարեգակնէ՛: - 255. Եւ կամ *որպէս* պատկերագործք մինչ զոտն և զձեռն նկարեն՝ ո՛չ երևի պատկեր մարդոյ. այլ ոտից և ձեռաց: - 255. Եւ կամ *որպէս* ծնեալ մանուկն ունի առ ինքն ծածկեալ զհոգին. այլ նա կերակրի և ապա զգայ. և յետոյ խօսի: - 255. Չորրորդ՝ զի ո՛չ է այն մեռելութիւն միայն՝ որ բանականն կամ շունչն պակասի. այլ և որ տնկականն պակասի. *որպէս* քար. ա՛յն է իսկապէս մեռեալ: - 256. Նա՛խ՝ զի զնման և զաննմանն ծնանի. *որպէս* հատն զցորեանն և զծեղ: - 256. Եօթներորդ՝ զի մի գոլով սկիզբն ենթակային և կենդանութեանն *որպէս* ասացաք: - 256. Ապա ուրեմն հոգին ո՛չ հատանի և ո՛չ գոյանայ ի հոգւոյ *որպէս* մարմին ի մարմնոյ: - 257. *Որպէս* ճիւղ հատեալ ի ծառէ և տընկեալ յերկրի, ճիւղն է հատեալ ի ծառէն, այլ կենդանութիւնն ո՛չ...: - 257. Նախախնամութեամբ՝ ո՛չ *որպէս* փտելով կամ ծնանելով զմարմին ի մարմնոց. այլ յառաջ բերէ զպատկերն իւր *որպէս* ինքն գիտէ: - 258. Եւ իւրաքանչիւր ոք ծննդեամբ յառաջ եկեալ առնու զնոյն պատկերին շնորհ ի ծագմանէն աստուծոյ. և լնուն զնոյն թիւ որքանութեան զոր ետես աստուած նախքան զլինիլն աշխարհի *որպէս* ասէ առաքեալն: - 258. Եւ բնակա՛ն է, զի յանկատարէն ի կատարեալն ելանէ. *որպէս* աստիճանաւ ի գլուխ սանդղոյն. և ի սակաւուն ի բազումս. այսպէս և հոգի: - 258. Ոմն նախախնամութեամբ. *որպէս* տնկականն և զգայականն. և ոմն ստեղծմամբ. *որպէս* բանականն: - 258. Եւ *որպէս* տեսանին՝ այլ և այլ հոգիք են սոքա յայլ և այլ տեսակս: - 259. Երկրորդ՝ զի թէ այլ և այլ էր հոգի, ի յայլ հոգւոյ տեղիս ո՛չ բնակէր այլ հոգի *որպէս* յայլո՛յ կաղապար. և ա՛յլ դրօշած ի յա՛յլ կնիք. այլ մի է ...: - 259. Եւ ըստ որում իմանայ և խորհի, կոչի բանական հոգի. *որպէս* այլուր բաժանի ի տեսողական զօրութիւնն. և յիմացականն. և ի յիշողականն. մնալով անբաժանելի ներգործէ՛ ի նոսա: - 259. Եւ *որպէս* ասէ արիստոտէլ զերեք թիւն՝ որ մի ունի զէութիւն իւր. այլ երկուքն և մինն մասունք են նորա: - 259. Եւ յորժամ ծագէ՛ արեգակն, յայնժամ և նշոյլքն իւր ընդ իւր ծագեն և ինքեամբ լուսաւորեն զմեզ *որպէս* նախ նշուլիւքն: - 260. Այլ հակադարձեալ սոքա ըստ կարգի և ըստ դասու՝ յառա՛ջ է տնկականն քան զզգայականն, և նա՛ քան զբանականն ի յերևումն. այլ էութեամբ համանգամայն են. *որպէս* անդ ուրեմն ասացաք վասն հոգւոյ և մարմնոյ: - 260. **Ասեմք առ այս թէ, օն ի բա՛ց տար ի մտաց քոց զհեթանոսական կարծիս. զի ո՛չ է հոգի յառաջ քան զմարմին. և ո՛չ մարմին նախ քան զհոգի *որպէս* ի սկիզբն ասացաք**: - 260. Այսպէս և հոգի ըստ կամաց խնամողին յետոյ պարգևեալ ըստ թուոյ ծննդեան իւրաքանչիւր մարդոյ *որպէս* ինքն գիտէ: - 260-261. Այսինքն. ազգն՝ տեղին՝ և ժամանակն. *որպէս* ի սերմանս բուսո՛ց է տեսանել: - 261. Եւ յետ այնորիկ յեօթներորդէ՛ աւուրն սկսանի արհնածուծ լինիլ յարգանդէ մօրն ընդ պորտն. *որպէս* դդում և ձմերուկ ընդ կոթն: - 261. Եւ դարձեալ սիրտն է ի մէջ բոլոր անդամոցն *որպէս* կէտ կարակնին: - 261. Եւ *որպէս* սիրտն նա՛խ գոյանայ, նոյնպէս և յետո՛յ մեռանի վասն ջերմութեան նորին: - 261. Եւ էգն հոգևորի յետ **Ձ** աւուրն՝ *որպէս* ասացաք զպատճառն վասն տեղւոյն ցրտութեան որ է՛ ձախ կողմն արգանդին. որ ցուրտ գոլով վասն փայծաղանն՝ յապաղէ՛ զկազմուած նիւթոյն ի կրկնապատիկ ժամանակս **Ձ** աւուրց: - 261. *Որպէս* լերինք ցուրտ գոլով՝ զպտուղս ո՛չ հասուցանեն *որպէս* ի դաշտի: - 261. Արդ՝ **Ժ** թիւն կատարեալ է. և չորսն տարրական է. այսինքն զի կատարեալ հոգին բանական ի նո՛յն ժամն խառնեալ միաւորի ընդ մարմնոյն տարրական, և կերպացեալ լինի մի մարդ մի դէմ և մի բնութիւն մարդոյ ի հոգւոյ և ի մարմնոյ. *որպէս* քառասունն ի տասանց և ի չորից է գոյացեալ: - 262. Վասն որոյ ըստ թուոյ զօրութեան իւրոյ որ է՛ սնանիլն աճիլն և ծնանելն, յերեք ամիսս ծնանի զպտուղս. *որպէս* ցորեան և այլքն: - 262. Այս է պատճառն. զի ոմանք յապաղեն. և ոմանք փութով տան զպտուղն *որպէս* ասացաք: - 263. Եւ կամ

*որպէս* մարդ կատարեալ բերելով ինքեան զ**ղ** և զ**ժ** ինն խորհուրդ: - 263. Իսկ որք ի **խ** աւուրս ծնանին և կամ ի **ի**, *որպէս* հաւ. ունին նոքա զխորհուրդ չորից տասանց և չորից հնգից, ըստ **ե** զգայութեանց ներքոյ և **ե** զգայութեանց արտաքոյ *որպէս* ասացաք: - 263. Վասն որոյ ոմանք յ**բժ**ան ամիսս ծնանին *որպէս* ձի: - 263. Այլ և յաւելեալ ի վերայ զշարժականն և զշնչականն և զցասմնականն և զցանկականն, ընդ նմին և զկազմողական նիւթն և զտնկականն, որ լինի **ժը**. վասն որոյ ոմանք ի տարին և կէսն ծնանին *որպէս* ուղտ: - 263. Արդ՝ *որպէս* ասացաք՝ մարմինն է ի **դ** տարերաց. և ունի **ե** զգայութիւն. վասն որոյ յինն ամիսս հաստատի անդամօք և ապա ծնանի: - 263. Դարձեալ **գ** ամիս տնկականին *որպէս* ասացաք. և **գ** զգայականին. և **գ** բանականին: - 264. Կարծե՛մ *որպէս* ասացեալ եղև այս. բայց ո՛չ լիապէս: - 264. Զի մանունքն յամսօրէից և ի վայր, ի շաբաթս և յաւուրս և ի ժամս ըստ նոյն թուոյ կարեն զնմանն ծնանիլ. և առաւելքն առաւելեալ ամօք կրկին կամ երեքկին *որպէս* ասացաք: - 264. Եւ այսպէս է ըստ ոմանց վեցեկի շարժմունք հասակի մարդոյս *որպէս* ասացաւ. այսինքն Երեխայ: - 265. Ապա ուրեմն յա՛յտ է՝ զի տղայութիւնն ո՛չ կարէ զնմանն ծնանիլ. այլ մանկութիւնն *որպէս* ասացաւ: - 266. Դարձեալ՝ ամենայն իր առաւել ունի զօրութիւն ի տեսակս իւր՝ քան ի յայլս. *որպէս* ջուր առաւել զօրաւոր է ի գետս՝ քան ի յերկիր խառնեալ. և տնկականն առաւել է ի տունկս՝ քան յանասունս: - 266. Ի մարդոյ և յայլ ինչ կենդանեաց կարէ՛ լինիլ ծնունդ. *որպէս* ասեն՝ ի կնոջէ՛ և յարջոյ ծնունդ եղեալ: - 267. Ըստ բնականին այս է. զի ամենայն իր որ լինի՝ յանկատարութենէ ի կատարումն ելանէ, և ի զօրութենէ ի ներգործութիւն *որպէս* ի վերոյ ասացաւ: - 267. Այն որ աստուածայինն է տեսիլ կոչի. *որպէս* Աբրահամուն. Յակոբայն. Յովսեփայն. և Դանիէլին: - 268. Իսկ դիւականն ընդդէմ այսմ՝ վասն մոլորութեան զանազան երևմունս ցուցանէ աղտեղութեան. և կամ զբարին խափանել ջանայ. *որպէս* ի չարչարանս տեառն վասն կնոջն պիղատոսի ընթերցեալ լինի. և *որպէս* գրէ սուրբն Նազիոս: - 268. Երկրորդ՝ զոր ախորժակն ունի զկարօտութիւն՝ զա՛յն տեսանէ. *որպէս* քաղցեալն զկերակուր. և ծարաւն զջուր: - 268. Նա՛խ՝ զի խորհրդական միտքն կարգաւոր և առանց տարակուսանաց տեսանէ. իսկ երազն անկարգ և տարակուսանօք և զանհնարն տեսանէ *որպէս* ի վերայ օդոյ թռչիլ, և ի ծովու գնալն, և աղքատաց թագաւորել, և այլն: - 268. Իսկ տնկականն միայն գործ է ի կերակրիլն և աճիլն, նա նկարէ յինքեան ի զգայութեանցն և ի մտացն ըստ տկարութեան իւրոյ անկարգաբար երևեցուցեալ ի յիշատակարանս մտացն *որպէս* ասացաք: - 268. Եւ նախ ասի իմաստութիւն նոցա, որ զբնութիւն էիցս քննեցին. և զշարժումն լուսաւորացն. *որպէս* իմաստունքն յունաց: - 269. Երկրորդ՝ ըստ պատույն. զի այս երկնային և վերուստ իջեալ. իսկ այնոքիկ երկրաւոր և շնչաւոր *որպէս* ասէ առաքեալն: - 269. Իմաստասէր իմանամք զայնս՝ որք ըստ արտաքին փիլիսոփայիցն կրթութեան են վարժեալք. *որպէս* պղատոն, արիստոտէլ, և այլքն: - 269. Եւ իմաստակ կոչին՝ որք միոյ արհեստի են գլուխ. *որպէս* քերականութեան. ճարտասանութեան. աստղաբաշխութեան. և այլք. *որպէս* պիհռնացիք ակադիմեանքն. որք հակառակ կոչին: - 269. Առաջինն խոհեմք և իմաստունք բնականապէս. *որպէս* նահապետքն առաջինք. աբրահամ. իսահակ. յակոբ. յոբ. կուռնէլիոս. և այլքն: - 269. Երկրորդ՝ շնորհիւ ընկալեալք *որպէս* բեսէլիէլ. եղիաբ ուրիեանց. և սողոմոն: - 269. Եւ *որպէս* զպատկեր թագաւորին նկարեն թագիւ և ծիրանեաւ և այլովն՝ և անուանեն զպատկերն թագաւոր: - 271. Չորրորդ՝ զի անմա՛հ է *որպէս* զաստուած: - 271. Զանազանի պատկեր և նմանութիւն, *որպէս* մարդն և կենդանին. զի ամենայն մարդ ասի կենդանի. այլ ո՛չ ամենայն կենդանի մարդ: - 272. Եւ դարձեալ՝ *որպէս* ձու հաւի և ձու քարեայ՝ նման ասին միմեանց, այլ ո՛չ պատկեր. զի ո՛չ են ի միմեանց ելեալ. և ո՛չ զնոյն էութիւն ունին: - 273. Մեք ո՞րպէս պատկեր և *որպէս* նման եմք աստուծոյ: - 273. Եւ այս չէ՛ ընդունելի. զի մարդն երրորդութեանն է պատկեր եղեալ *որպէս* ցուցաւ. և ո՛չ միայն որդւոյ և հոգւոյն սրբոյ: - 273. Եւ այս ևս ո՛չ է ընդունելի. զի սոցա պատասխանի տայ սուրբն կիւրեղ ի գիրս պարապմանց թէ՝ որ ասաց զպատկերն, իմանամք զնմանութիւնն ի պատկերին *որպէս* ցուցաւ ի վերոյ...: - 273. Եւ նման աստուծոյ, զի սիրեմք զբարութիւն *որպէս* ասացաւ ի վերոյ: - 273. *Որպէս* յարելով զինքն յերկրաւորս՝ լինի ստորև քան զաշխարհս: - 274. Դարձեալ՝ մարդո՛յս է ուղղաձև լինիլ *որպէս* ցուցաւ: - 275. Իմանայ ընդ հրեշտակաց *որպէս* ասացաւ ի վերոյ: - 275. Դարձեալ՝ մէջ և ե՛զր է ամենայն ստեղծուածոց *որպէս* ասացաւ ի վերոյ: - 275. Դարձեալ՝ իշխան և տէր է ամենայն մարմնականաց *որպէս* ասացաւ: - 275. Զի *որպէս* որդի՛ է ի հօրէ նոյն բնութեամբ. և մարդն ի մարդոյ նոյն բնութեամբ: - 275. Եւ *որպէս* աստուած իշխա՛ն է ամենայն ստեղծուածոց. և մարդն իշխա՛ն է ամենայն մարմնաւորաց: - 275. Եւ *որպէս* աստուած է՛ ամենայն ուրեք էապէս. և հոգի մարդոյն է՛ յիւրաքանչիւր մասունս մարմնոյն էապէս: - 275. Նա՛խ՝ զի մի՛ համեմատ առն կարծիցէ զինքն. այլ *որպէս* ոչ համահասակ և ոչ համահող լիցի: - 276.

Երկրորդ՝ զի մի՛ անփոյթ և անհնազանդ եղիցի մարդոյն. այլ ի նմանէ՛ ի կողիցն, զի *որպէս* մարմին հնազա՛նդ լիցի գլխոյն: - 276. Երրորդ՝ զի *որպէս* խօսիլ գլխոյն է. **նոյնպէս լռութիւն կողին է. զի լուռ լիցի կինն ընդ իշխանութեամբ առնն**: - 276. Չորրորդ՝ զի մի՛ տկար ոք կարծիցի. այլ *որպէս* կողե՛դ և հաստակող ասեմք զըմբիշս. **այսպէս զօրեղ եղիցի կինն ի տնօրինել զտունն**: - 276. Իններորդ՝ զի *որպէս* կողից երեսն որ ի փորն նայի՝ կոկ գոլով և մզղնատեսակ. իսկ մէջն փուչ և մրրախառն...: - 276. Տասներորդ՝ *որպէս* կողն զզօրութիւնն քարշէ՛ և տայ ի թիկունքն և պնդէ՛ զնա. այսպէս կինն զփառս և զինչս առն յինքն քարշելով թանձրացուցանէ և պնդէ՛ զինքն: - 276. Նա՛խ՝ զի ո՛չ ունի զառնողական զօրութիւնն. *որպէս* և յամենայն կենդանիս էգն: - 276. **Տասներորդ՝ կին, իբր թէ կեանք**. զի *որպէս* կենօք է տնել. նոյնպէս տեսակ մարդոյս ի ձեռն կնոջ ծննդեանն տևէ՛, և կայ մնայ մինչ ի կատարած: - 276. Իսկ պատուիրանքն՝ բարեկամի առ բարեկամս քաղցրութեամբ. *որպէս* հօր առ որդիս. և եղբօր առ եղբարս: - 277. Եւ ուրեք զսէր և քաղցրութիւն՝ պատուիրել ասէ. *որպէս* ադամայ պատուիրեաց: - 277. Չորրորդ՝ մահու մեռանիլ այն է, որ հոգւով և մարմնով տրտմին. և անմահ չարչարին. *որպէս* մեղաւորք յայս կեանս և յետ մահու. զի որ մեռանի մարմնով՝ զպարտս վճարէ. և որ տրտմի հոգւով՝ անմահ մահանայ: - 277. Եւ բաց յայսցանէ՝ բնական որակօք ներհա՛կք են միմեանց **դ** տարերքդ *որպէս* ցուցաւ ի վերոյ: - 278. Նախ՝ վասն պարզամտութեանն. զի *որպէս* տղայք ո՛չ ամաչեն անծածուկ ունելով զմասունս. նոյնպէս և նոքա: - 278. Այլ կամ իբր զիրեշտակս, կամ *որպէս* ի միոյ լուսոյ բազումք, կամ կուսութեամբ ծնունդ. *որպէս* սուրբ կոյսն մարիամ աստուածածին սրբութեամբ և կուսութեամբ ծնեալ փոխեաց զկարգ բնութեան ծննդեանս որ ի սերմանէ առն և կնոջ. զի սա՛ ծնունդ միայն ի մօրէ՛: - 280. Ա՛րդ՝ որ ոք կամեսցի ի նոյնն ելանել և առ քրիստոս լինիլ, պատշա՛ճ է ի վերջնագունէն սկիզբն առնել *որպէս* սանդղօք: - 280. Եւ կամ *որպէս* ճանապարհորդք հեռացեալք ի տանէ՟ յորժամ դարձցին վերստին ի տունս իւրեանց, նախ թողուն զվերջին բնակետղն ուստի դիմեցինն երթալ: - 280. Եւ ըստ այնմ որ նշանակութիւն է, ցուցանէ զմարմինս մեր փոփոխական. *որպէս* այն որ փչեաց յերեսս մարդոյն շունչ կենդանի: - 282. *Որպէս* ասէ աստուածաբանն թէ՝ ոչ ինչ էր ծածկոյթ ի մէջ նոցա և աստուծոյ. իսկ յետ մեղացն փոխեցան այսոքիկ. վասն որոյ մաշկեղէն հանդերձին ցուցմամբն նշանակէ՛ զմարմինս: - 282. Զայսօսիկ *որպէս* ասացաւ ունէր նա՛ ընդ պատարագելն: - 286. Վասն **ե**երրորդին՝ զի զանդրանկութեան օրհնութիւնն ընկալաւ *որպէս* յակոբ զեսաւայն: - 286. Դարձեալ սիրեցաւ յաստուծոյ, զի առաջին մարտիրոս սա՛ եղև. թէպէտ թոյլ ետ իջանել ի դժոխս, զի ի պատճառս նորա խնդրեսցին այլքն. *որպէս* ի պատճառս ղովտայ զերծան սոդոմայեցիքն աբրահամաւ: - 287. *Որպէս* սոդոմայեցիքն վասն արտօրէն գործոցն՝ արտօրէն իջմամբ հրոյ պատժեցան: - 288. Եւ *որպէս* փարաւօն վասն հեղցուցեալ մանկանցն՝ ջրասոյզ կորեաւ. և յառաջ քան զայս՝ **ժ** հարուածովք պատժեցան: - 288. Եւ *որպէս* կորխ դադան և աբիրոն վասն հակառակութեանցն ընդ մովսէս և ահարոն՝ հրով և բացմամբ երկրի դատապարտեցան: - 288. *Որպէս* ենովս որ յուսացաւ կոչել զանուն տեառն աստուծոյ. այսինքն յուսացաւ զհանդերձեալ կեանսն որ աներևոյթն էր...: - 288. *Որպէս* կայեն յորժամ սպան զաբէլ, պատճառեաց ծնողացն եթէ զնորա պատարագն ընկալաւ աստուած և վերացոյց ի դրախտն: - 290. Նախ՝ եթէ **ռ** ամն մեր՝ յաչս տեառն *որպէս* օր մի է: - 290. Երկրորդ՝ *որպէս* մանուկն տևէ՛ յարգանդի **թ** ամիս՝ և **ե** օր անդրանկանն՝ և ապա՛ ծնանի: - 290. Եւ յետ նորա **ժ** թիւն կենդանեա՛ցն է, որ ի չորից են բաղկացեալ. *որպէս* **ժ** ի **դ** թուոց: - 291. Եւ երբեմն կարճէ՛ ի կենաց *որպէս* առ նոյիւ. զի **ճի** ամ խոստացաւ նոցա, և զի ամն կարճեաց վասն չարեաց նոցա: - 292. Նոյնպէս և արդարութիւնն երբեմն յերկարէ՛ զկեանս *որպէս* առ եզեկիա. և երբեմն կարճէ՛ *որպէս* առ ովսիայ: - 292. Եւ ա՛յս է պատճառ յերկարելոյ և կարճելոյ կենաց. այսինքն արդարութիւնն կամ մեղքն *որպէս* ցուցաւ: - 292. Նա՛խ՝ զի ամենայն ոք պատրաստ լիցի մահուան աւուրն և յանկարծակի գալստեանն քրիստոսի. *որպէս* ինքն ասէր՝ «յորում ժամու ակն ոչ ունիցիք՝ գա՛յ որդի մարդոյ»: - 292. Արդ *որպէս* հաւատով իմանամք հաստատեալ զյաւիտեանս *որպէս* ասէ առաքեալն. և նովին հաւատով իմանամք զկատարած կենցաղոյս և զյարութիւն մեռելոց և զդատաստան հատուցմանն: - 292. Դարձեալ՝ որ քան յերկարի ժամանակս, մաշի՛ երկիր և ի ծերութիւն երթայ և տկարանայ. *որպէս* ծեր մարդոյն զօրութիւնն պակասի և ցաւքն առաւելու: - 292-293. Եւ դարձեալ՝ որ քան մերձիմք կատարածի, այնքան մերձենամք ի ցաւս դժոխոցն. *որպէս* յերիկունն սակաւ սակաւ առաւելու խաւարն և ցուրտ: - 293. Ո՛չ կերին. զի թէպէտ ժողովեաց, սակայն ո՛չ կերին. այլ շնորհօքն աստուծոյ կացին *որպէս* մանուկն յարգանդի մօրն ապրի: - 294. Կամ *որպէս* ասեն թէ՝ ներսէս անուն արուեստաւոր տապանին՝ շինեաց իւր տուն ի վերոյ կողմանէ. և զի ո՛չ էր հրամանաւն աստուծոյ՝ սատակեցաւ նա՛ անդ, և զնորա գէշն ուտէր ագռաւն: - 294.

Ասեն թէ՝ գոն ա՛յլ հոմանուն մասիս և արարատ. *որպէս* կորդւաց լեառն և ի պաղէստին և ի գամիրս: - 294. Զի *որպէս* տապանաւն պահեաց զտունն նոյի հայր աստուած, պահեսցէ և զմեզ: - 295. Երրորդ՝ արիւնն կենդանի է և խօսի տեսութեամբն *որպէս* հաբէլին. վասն որոյ անուտելի է: - 295. Նա՛խ՝ *որպէս* հատանեմք քաղելով զբանջարն և ապա՛ ուտեմք, նոյնպէս զենումք զկենդանին և ապա՛ ուտեմք: - 295. Երրորդ՝ զպնդագոյնն, *որպէս* ոսկր կամ եղջիւր՝ ո՛չ ուտեմք: - 296. Զի արիւն և շունչն արակա՛ն է *որպէս* ցուցաւ. վասն այն ա՛յրն հանէ զնոսա. և կինն չէ տուեալ արիւն՝ ո՞րպէս հանէ: - 296. Նոյնդ է պատճառն *որպէս* կնոջ զենեալն ո՛չ ուտի: - 296. Եւ դարձեալ՝ այլազգին զհոգին իւր սպանեալ է մեղօք. և մեռելոյ զենեալն ո՛չ ուտի. *որպէս* ի քարէ անկեալն կամ ի կարկատէ՛ հարեալն ո՛չ ուտի: - 296. Զի *որպէս* այլասե՛ռք են ցամաքայինք և ջրայինք. նոյնպէս և այլատեսա՛կ են կենդանութեամբ. և այլատեսա՛կ է զենումն նոցա: - 296. Եւ *որպէս* **է է** գործիք ձայնին, որ է՛ թոքն. խռչափողն. մակալեզուն. բերանն. լեզուն. ատամունքն. և շրթունքն. և սոքա միաբանին ի խօսքն: - 296. *Որպէս* ասելն գաւազան, աւազան, սապոն, ամէն, և կամ ա՛յլ ինչ: - 297. Նախ ի գեղեցկութիւն լեզուին. զի *որպէս* գոյն առ գունով պայծառանայ, և արւեստ առ արուեստ: - 297. *Որպէս* այն՝ որ կոչեմք զգայութիւն զգալն և զգայարանս: - 297. **Եւ սահման կոչէ զլեզու որ բաժանէ՛ ի միմեանց զազգս և զազինս. *որպէս* որք պարսպով և նշանիւ սահման դնեն և զանդս բաժանեն**: - 298. Եւ դարձեալ՝ *որպէս* սահմանն զտեսակս ազգացն նշանակէ. նոյնպէս և լեզուն զիւրաքանչիւր ազգս ցուցանէ: - 298. Եւ դարձեալ՝ զի անփոփոխելի է սահմանն. *որպէս* սահման մարդոյն և ձիոյն և այլոցն: - 298. Եւ ո՛չ *որպէս* ասեն ոմանք թէ ի լեզուս ադամայ: - 298. Եւ ի հողմոյն յայնմանէ հոտ անուշութեան դրախտին բուրեաց ի նոսա. և տեսիլ իմանալի տեսին, և լուր իմանալի լուան. և յայնմանէ մոռացան զառաջինն. և *որպէս* ի քնոյ զարթուցեալք ո՛չ լսէին զլեզուս միմեանց: - 298. Եւ *որպէս* անդ հոգին ի նմանութիւն հողմոյ եկեալ զմինն **հբ** բաժանեաց: - 298. **Իսկ վիրք և աղւանք ո՛չ կատարեալ գրով. այլ առեալ ի հայոց. *որպէս* ասորին և իմսայէլացին յեբրայեցւոցն**: - 299. **Համեղական հայն որ կարօ՛ղ է զամենայն լեզուս յինքն ամփոփել և բոլոր խօսիլ**. և այլքն ո՛չ՝ *որպէս* ասացաւ ի վերոյ: - 299. **Եբրայական լեզուաւն կարդային որ ունէր դեռ զառաջինն. *որպէս* ասէ մեր լուսաւորիչն**: - 299. Նոյնպէս և մելքիսեդեկ թագաւոր էր սաղիմայ. *որպէս* և անունն յայտնէ. մելքի՝ որ է՛ թագաւոր: - 300. Հինգերորդ՝ մելքիսեդեկ մարդկան նւիրեաց. *որպէս* քրիստոս առաքելոցն և մեզ: - 301. Վեցերորդ՝ նուիրեաց մելքիսեդեկ զպատարագն և ընկալաւ զտասանորդն. *որպէս* քրիստոս պարգևէ՛ հաւատացելոց զշնորհս, և առնու զտասնեակս զկատարեալ և զբարի գործս. կամ զտասն բանեան օրէնս **ծ** զգայարանօք: - 301. **Եօթներորդ՝ մելքիսեդեկ ինքնին մատոյց զպատարագն քաղցելոց և ծարաւելոց. *որպէս* և քրիստոս ո՛չ միջնորդօք հրեշտակաց կամ մարդկան, այլ ինքնին բաշխեաց զմարմին և զարիւն իւր՝ քաղցեալ և ծարաւեալ ազգի:** - 301. **Ութերորդ՝ *որպէս* և աբրահամ ճաշակեաց զպատարագն մելքիսեդեկի և ո՛չ հաղորդեցաւ ընչիցն սոդոմա**յ: - 301. Նա՛խ՝ *որպէս* մելքիսեդեկ ի յանցաւոր և յանիծեալ ազգէն քանանու: - 301. Երրորդ՝ զի մելքիսեդեկ քահանայ ո՛չ ըստ մարմնական ինչ օծմամբ իւղոյ *որպէս* այլոցն, այլ շնորհօք հոգւոյն անընդմիջաբար: - 301. Տասներորդ՝ *որպէս* մելքիսեդեկ ետ զայն և ընկալաւ յաբրահամէ՛ զտասանորդսն: - 302. Նոյնպէս և տէրն մեր ետ հաւատացելոցն զկենարար մարմինն և արիւնն իւր. յորոց խնդրէ ըզգործս տասնաւոր. այսինքն զկատարեալս. և զկատարումն **ծ** բանեան օրինացն. ի յորս է՛ մաքրութիւն **ծ** զգայարանացս *որպէս* ի վերոյ ասացաւ: - 302. Չորրորդ՝ նոր չարիս գործեցին, խիստ և առաւել պատուհասեցան. *որպէս* և կայեն. զի նշան լիցին աշխարհի ահի՛ և երկիւղի: - 303. Զալէկոծեալսն մեղօք և զծանրացեալսն՝ աւա՛զ կոչէ. *որպէս* զորդիսն իմսայէլի: - 303. Իսկ աստեղք՝ ծնունդքն իսահակայ պայծառ վարուք և երկնընթացք *որպէս* մարգարէքն՝ քահանայքն՝ և ընտրեալ թագաւորք՝ և այլքն: - 303. Եւ որք հաղորդեցան հոգւոյ, այսինքն հաւատոյ նորա, եղեն որդիք հաւատոյ նորա. *որպէս* քրիստոնեայք: - 303. Այլ փորձէ՛ աստուած զմարդ՝ զի յայտնեսցէ զնա. *որպէս* զաբրահամու և զյակոբայն: - 304. Իսկ սատանայ փորձէ՛ զի խաբեսցէ *որպէս* զնախահայրն: - 304. Եւ *որպէս* հայրն աբրահամ նմանեցաւ աստուծոյ հօր, մանաւանդ և որդին իսահակ համեստութեամբ ինչ իրօք նմանի որդւոյ նորա քրիստոսի: - 304. Նա՛խ՝ զի *որպէս* իսահակ է՛ ստուգապէս որդի աբրահամու: - 304. Երկրորդ՝ զի իսահակ աւետեաց է որդի և խնդութեան զաւակ *որպէս* անունն յայտնէ իսահակ, որ է՛ ծաղր: - 304. Եօթներորդ՝ *որպէս* փեսաւէրն իսահակայ եղիազար խօսեցաւ զհարսն ի վերայ ջրհորոյն: - 305. Իններորդ՝ *որպէս* իսահակ նահապետ եղև երկուց իմն ազգաց: - 305. Տասներորդ՝ և *որպէս* իսահակ նախասիրէր զանդրանիկն որդի, բայց յետոյ ետ զօրհնութիւնն նորին՝ որդւոյն կրսերոյ: - 305. Երկոտասաներորդ՝ զի *որպէս* իսահակ հնազանդ գտաւ հօրն մահո՛ւ չափ, լաւ համարելով

զմեռանիլն՝ քան առանց հնազանդութեան զկալն: - 305. Երեքտասաներորդ՝ *որպէս* զհետ իսահակայ չոքան երկուք ի ծառայիցն և կացին ի բացուստ: - 306. Հնգետասաներորդ՝ *որպէս* ի վերայ իսահակայ եդեալ եղև փայտ պատարագին մինչ ի տեղի զենմանն: - 306. Վեշտասաներորդ՝ *որպէս* կապեցաւ իսահակ ոտիւք և ձեռօք ի վերայ սեղանոյն: - 306. Եօթնն**ժ**, *որպէս* իսահակ արձակեցաւ յետ երից աւուրց, զի ի կամս հօրն յօրէ յայնմանէ էր մեռեալ՝ ուստի սկիզբն եղև ճանապարհին: - 306. Զի է՛ որ մատուցօղն մեծ է քան զպատարագն. *որպէս* հին օրինաց պատարագն. զի անասունք էին: - 306. Եւ է՛ որ պատարագն մեծ է քան զմատուցօղն. *որպէս* նոր օրինացս՝ մարմինն քրիստոսի մեծ է քան զքահանայն: - 306. Եւ է՛ որ մատուցօղն մեծ է քան զընդունօղն. *որպէս* մելքիսեդեկ քան զաբրահամ. և քահանայն մեծ է քան զժողովուրդն որ ճաշակէ: - 306. Նա՛խ՝ մարմնական. *որպէս* յղացեալ մանուկն ծնանի ի մօրէ՛: - 308. Երրորդ՝ անդրանիկ են հրեշտակք քան զմարդիկ ըստ կարգի և պատւոյ. թէպէտ բանականեմք *որպէս* նոքա: - 309. Հինգերորդ՝ անդրանիկն բաժին աստուծոյ է. *որպէս* եդ ի յօրէնսն զամենայն անդրանիկ մարդոյ և անասնոյ բաժին տալ աստուծոյ: - 309. Եօթներորդ՝ անդրանիկք են իշխանք հոգևորք, վերակացուք և խնամողք այլ հոգւոցն. *որպէս* քահանայք, ուսուցիչք, և այլք. վասն որոյ երիցունք կոչին: - 309. Ութերորդ՝ անդրանիկք են ըստ մարմնոյ վերակացուք և տեարք. *որպէս* թագաւորք, և իշխանք. նոյն և առաջին ծնունդք ելեալ յարգանդէ՛: - 309. Նոյնպէս և ծնունդք սուրբ աւազանին որք են անդրանիկք և անդամք քրիստոսի եղեալք, ագահութեամբ և պոռնկութեամբ կորուսանեն զշնորհն երկնաւոր. և ո՛չ լան և ո՛չ զղջան *որպէս* եսաւ: - 309. Վասն է՞ր զանդրանիկն խոտէր և զկրտսերն ընտրէր. *որպէս* կայեն խոտեցաւ և սէթ ընտրեցաւ: - 309. Չորրորդ՝ զի մի է և միակ անդրանիկն ի մէջ բազում եղբարց. *որպէս* մի է գլուխն և բազում անդամք: - 310. *Որպէս* վաճառեաց եսաւ և գնեաց յակոբ զանդրանկութիւն նորա: - 310. *Որպէս* նշանակեցաւ յեփրեմն և ի մանասէ. որք փոխեցան յաջ և յահեակ: - 310. Զի զինչէն ի գոյացութեան խնդիրն է. *որպէս* յասելն՝ զի՞նչ է, ասեմք՝ մարդ է, կամ կենդանի: - 311. Նոյնպէս և անունն սահմանէ կարճառօտ՝ յայտնիչ բնութեան իրին. *որպէս* մինչ ասեմք մարդ, քար, յայտնեցաւ բնութիւնն: - 311. Յաղագս որոյ *որպէս* մարդ ինքն ինքեան անուն ո՛չ դնէ. նոյնպէս և աստուած ինքն ինքեան անուն ոչ դնէ: - 312. Դարձեալ՝ ամենայն անուն որ կոչի՝ կամ նախ քան զինքն լինի յորմէ անւանի. *որպէս* հայրն կոչէ՛ զորդին իւր մարդ: - 312. Եւ կամ ի հաւասարէն. *որպէս* պետրոս. կամ ի վերջնոցն *որպէս* հիւսն: - 312. Երկրորդ՝ զի **խ** քաղաք առին ի բենիամենէ՛ յուդայի ցեղքն վասն շնութեան կնոջն պատահելոյ. և կոտորեցին զնոսա առ հասարակ **հեռ** արս. և մնաց վեց հարիւր այր զոր յետոյ ստացան ժառանգութիւն իւրեանց. *որպէս* յա՛յտ է ի դատաւորաց վերջքն: - 312. Երրորդ՝ կոտորեալ մանկունքն բեթլէհէմի ո՛չ էին ի զաւակացն հռաքէլի *որպէս* ցուցաւ ի վերոյ: - 312. Իններորդ՝ *որպէս* զենաւ ուլն և զերծաւ յովսէփ: - 313. Մետասաներորդ՝ յովսէփ **ժե** ամաց վաճառեցաւ **լ** դահեկանի *որպէս* ասէ ի կտակն: - 313. Հինգն**ժ**երորդ՝ որք աստ երկիր պագանեն քրիստոսի, կենաց հացիւն կերակրին *որպէս* եղբարքն յովսեփայ: - 314. Եօթնն**ժ**, և *որպէս* յարծաթն յեղբարսն դարձաւ: - 314. Իննն**ժ**, յովսէփ ստացաւ ոսկի և զարծաթ և զերկիրն եգիպտացւոց՝ փարաւոնի. այսինքն զզէնս սատանայի. զի փարթամութիւնն մեծ զէն է սատանայի որովք գործէ՛ զամենայն պղծութիւնս. *որպէս* երկիրն սոդոմայ պարարտութեամբ գործէր զմեղս: - 314. Քսաներորդ, և *որպէս* յովսէփ եթող զքուրմն և զերկիր նոցա, զոր քրիստոս էր բառնալոց զմեծամեծ մեղսն և զկռապաշտութիւնն. զի ըստ առն և զօրութիւն իւր. և ըստ աստուծոյ և գործք իւր: - 314. Նա՛խ՝ *որպէս* յակոբ պատարագ մատոյց ի ջրհորն երդման զվերջինն և ապա ել յերկրէն: - 314. Երկրորդ՝ *որպէս* նմա ասաց աստուած, ես իջից ընդ քեզ և ես հանից անտի: - 314. Ութերորդ՝ *որպէս* իջեալքն յեգիպտոս ընդ հարաւ մտին ի գեսեմ ի պարարտ երկիր: - 315. Նոյնպէս և քրիստոս աստ ի գնալն հոգւոց և ի գալստեանն աւուր՝ ընդ առաջ ելանէ սրբոցն և համբուրէ զսիրելիս իւր, *որպէս* հայրն երկնաւոր ի դարձ անառակին: - 315. Նոյնպէս և քրիստոս իմաստութեամբն իւրով կերակրէ՛ զնոսա և զգեցուցանէ *որպէս* **իդ** երիցանցն, որ տուաւ նոցա արկանելիս սպիտակս. այս է շնորհն մաքրութեան զոր ընկալան ի քրիստոսէ: - 315. *Որպէս* բժիշկք յորժամ հիւանդաց դեղ տան, նախ ինքեա՛նք զճաշակն առնուն զի հաւատարիմ լիցի: - 316. Ի կապ արեանն *որպէս* ընտանեաց: - 317. Եւ կապ ամուսնութեան *որպէս* պսակն օրհնութեան: - 317. Եւ կապ ցանկութեան *որպէս* մեղաց: - 317. Եւ կապ կարեաց *որպէս* վարձկանաց: - 317. Ի կապ ուսման *որպէս* աշակերտաց: - 317. Եւ կապ կրօնից *որպէս* կարգաւորաց: - 317. Եւ կապ ուխտի *որպէս* բարեկամաց: - 317. Եւ կապ հարկի *որպէս* հնազանդեցելոց: - 317. *Որպէս* հաւատով և սիրով և երկիւղիւ և օրհնօք նորա: - 318. Է և ա՛յլ կապ բաց յայսցանէ, այսինքն Անձնական, *որպէս* հոգւոյ և մարմնոյ: - 318. Բնութենական, *որպէս* ցասումն և ցանկութիւն: - 318. Կենդանական,

*որպէս* ջերմութեան և շնչոյ: - 318. Մասնական, *որպէս* մասանց առ բոլորն: - 318. Էական, *որպէս* գոյացութիւն և պատահումն: - 318. Սեռական, *որպէս* կենդանին: - 318. Տեսական, *որպէս* մարդ: - 318. Որպիսութեան, *որպէս* բանական: - 318. Պատահական, *որպէս* սևութիւն ագռաւու: - 318. *Որպէս* առ մեզ զգեստն հոմանուն է: - 318. Նախ՝ կոչի մարմինն զգեստ՝ գոյացական՝ անփոփոխ և անքակ միութեամբն. զի բաժանմամբ մարմնոյն և բանին ո՛չ է քրիստոս. *որպէս* ի բաժանիլ հոգւոյ և մարմնոյ ո՛չ է մարդ: - 318. Այսպէս կոչի և զգեստ մարմնոյն. զի արտաքին զգեստն *որպէս* ծիրանին թագաւորի ա՛յլ է ի զգեցողէն և պատահական նմա և փոփոխական. այսպէս զգեստ ո՛չ ասի մարմին նորա. այլ եկեղեցի սուրբ *որպէս* ասացաւ: - 319. Զի է՛ տաճար միաւորեալ. *որպէս* մարմինն մեր կոչի տաճար մեզ...: - 319. Եւ է՛ տաճար որոշեալ. *որպէս* արտաքին բնակարանք մեր: - 319. Նոյնպէս և տեառն մերոյ կոչի տաճար արտաքին բնակարան. *որպէս* կոյսն մարիամ, և հաւատացեալ ժողովուրդք, և շինուածք տաճարաց: - 319. Այլ արտաքին տաճար *որպէս* բնակարան և որիշ ի նմանէ՝ ո՛չ է և ո՛չ ասի: - 319. Այլ կոչի տաճար և զգեստ բանական հոգւոյն մարմինն իւրական *որպէս* ամենայն մարդկան: - 319. Այլ որ ստոյգն է ասեն թէ՝ մովսէս գրեաց *որպէս* պատմութիւն, և սողոմոն ստիքսեաց *որպէս* զիւր բանսն. յետոյ գրեաց և եզրաս հոգւովն աստուծոյ երբ ծախեցան գրեանքն ի հրէից: - 321. Ո՛չ կարեն դեք զտարերքս փոփոխել. և ո՛չ հուր և ո՛չ շանթս և ո՛չ այլ ինչ ի տարերացս առնել *որպէս* կարծեն ոմանք: - 321. Նա՛խ՝ *որպէս* հասարակ շինականք ի ծննդեան զաւակաց զմին օրն պատուեն աղարուք կոչելով: - 321. Իսկ թագաւորք յամենայն ամի զնոյն առնեն ուրախութիւն. ուտել և ըմպել և հեշտութիւն մարմնոյ. *որպէս* փարաւօն առնէր և հերովդէս: - 321. Վասն որոյ ի ծննդեան աւուրն ժողովին և օրհնեն զաստուած և մարմնով ուրախանան. *որպէս* յոբայ ուստերքն և դստերքն միաբանեալ գային և ուրախ լինէին գիրն: - 321. Երրորդ՝ զի ծեռամբ թշնամւոյն նահատակեցան. *որպէս* այլ ամենայն մարտիրոսք: - 322. Չորրորդ՝ զի վայելէ՛ր իսկ նմա *որպէս* զհատ ցորենոյ թաղեալ յաղբիւսն՝ այսինքն յերկիր. և պարարտացեալ հասցէ ի հունձս պտղաբերութեան: - 323. Դարձեալ՝ յաղթեաց զսատանայ այնու, զի իմացաւ զչար հնարսն նորա և պատասխանէր զընդ դէմ. *որպէս* կնոջն և բարեկամացն և որք զգուժն բերէին. զի գիտէր ի բանսարկուէն լինիլ: - 323. Եւ մեզ պա՛րտ է իմանալ զչար խորհուրդ խորամանկին ի զանազան հնարս, և պատասխանել ի սուրբ գրոց. *որպէս* յայտ է ի գիրս նազրեայ: - 323. Դարձեալ՝ պահոք և աղօթիւք հնար է յաղթել փորձողին. *որպէս* տէրն ասէ թէ՝ «այս չար ո՛չ իւիք ելանէ՛, եթէ ոչ պահոք և աղօթիւք»: - 324. Նախ՝ զի շարժեալք էին ի բանսարկուէին. *որպէս* երբեմն ի ծեռն կնոջն. և յայնժամ բարեկամօքն մարտնչէր ընդ յոբայ: - 324. Վասն երկրորդին հակառակէր ընդ նոսա, զի մի՛ սուտ լիցի վկայութիւն աստուծոյ ի վերայ նորա. զի և մեք ուսցուք՝ վասն վկայութեանն աստուծոյ այնչափ նախատինս յանձն առնուլ և ո՛չ ուրանալ. *որպէս* վկայից դասքն նահատակեցան: - 324. Դարձեալ *որպէս* իշովն բաղամու զօգուտն խօսեցաւ, և զլեզու սուտ մարգարէին շարժեաց յանիծիցն յօրհնութիւնս: - 325. Վասն է՞ր այնչափ դիմամարտս յարուցանէր բանսարկուն ի վերայ յոբայ. *որպէս* զկինն և զբարեկամսն և զծառայքն և զայլսն: - 325. Չորրորդ՝ զի ի ստեղծանելն զմարդն աստուած ո՛չ վկայեաց թէ բարի է *որպէս* ա՛յլ ամենայն ստեղծուածոցն: - 325. Նախ՝ զի սովո՛ր է աստուած երևիլ ամպօք. *որպէս* ի սինա և ի թաբօր...: - 326. *Որպէս* զխոյն ի ծառոյն սաբեկայ. և զլորամարգն ի ծովէն. և զսատերն ի բերանոյ ձկանն հրաշագործեաց: - 326. Այլ ոմանք ասեն ի ձեռն հրեշտակաց ի միում աւուր ժողովեցան. *որպէս* ի ձեռն դիւաց ցրուեցան: - 326. ...և յայնցանէ աճեցոյց տէր զինչս և զանասունս նորա. *որպէս* յանապատին զսակաւն աճեցոյց նկանակ, և զբազումսն կերակրեաց: - 326. Յայտ է զի յառաջ քան զհարւածն **հ** ամաց էր. և **լը** ամ եկաց ի հիւանդութեանն. և այսպէս կրկին աճեցին կեանքն *որպէս* և ամենայն ինչքն: - 327. Երկրորդ՝ զի թոյլ տուաւ փորձողին մարտնչիլ *որպէս* ընդ ադամայ՝ այսպէս ընդ յոբայ: - 327. Չորրորդ՝ զի յաղբիւսն անկաւ *որպէս* ադամ ի դրախտէն յերկիր: - 327. Նա՛խ՝ զի յաղթեաց փորձողին *որպէս* յոբ՝ նոյնպէս և տէր մեր: - 327. *Որպէս* և յոբ ըստ կարծեաց բարեկամաց ասէր՝ «ե՛ս մոլորեցայ»: - 327. Եւ այլն ամենայն բանք և գործք յոբայ ի տիպ օրինակի էր նորն ադամայ չարչարանաց թաղման և յարութեան *որպէս* յա՛յտ է ի գիրս պատմութեան նորա: - 327. Առաջին, *որպէս* ի ծնունդն իւր ապրեցաւ մովսէս յարուախեղդ մահուանէն փարաւոնի: - 328. Եւ *որպէս* նա՛ ի մէջ գիշերի էհան զժողովուրդն: - 330. *Որպէս* մովսէս լուաւ զպատգամն և ետ ժողովրդեանն: - 330. ...և թուեցան ընդ ղևտացիս *որպէս* պատմէ մնացորդացն գիրք: - 330. Եւ այլք ասեն թէ՝ բանն աստուած էր. *որպէս* խօսեցաւ առ աբրահամ և առ մովսէս...: - 330. Դարձեալ՝ ամենայն որ ի լեառն աստիճանէ բարձրանայ *որպէս* զմովսէս և կամ այլ ինչ, պա՛րտ է սրբութեամբ պաշտել: - 331. Նա՛խ՝ իբր թէ է՛ և գո՛յ աստուած *որպէս* ասացաք: - 331. Եւ ի ձեռն խաչին ներգործին ամենայն սքանչելիք *որպէս*

ի ձեռն գաւազանին մովսէսի: - 332. Եօթներորդ՝ *որպէս* ջուր էր բնութեամբ մի՝ և եղև արիւն: - 333. Չորրորդ՝ շանաճանճն. զի շնաբարոյք էին և մոլէին յառնականայս շնութեամբ. զի շանց է ոչ զուգակցիլ *որպէս* զայլ կենդանիս. վասն որոյ ի շանց ելեալ թունալից ճանճք խայթէին զնոսա: - 334. Այսինքն իգամոլք իբրև զձիս. խեռաբարոյք *որպէս* զէշ. և խորամանկք *որպէս* զուղտ: - 334. Է՛ որ զէութիւնն փոխէ. *որպէս* մովսէս զգետն յարիւն դարձոյց և զգաւազանն յօձ. և այս կոչի սքանչելիք: - 335. Եւ է՛ որ զկերպն և զձևն միա՛յն փոխէ, և կոչի առաչօք. *որպէս* յանէսն և յամրէսն առնէին կախարդութեամբ դիւական: - 335. Զի *որպէս* ստւերն ո՛չ է մարդ, այլ նմանութիւն մարդոյ: - 335. Եւ *որպէս* սատանայ հրեշտակ լուսոյ կերպարանի որ չէ իսկ: - 335. Երրորդ՝ ի լսելոյ. *որպէս* զաւետիսն աբրահամու լուաւ յետ **դճ** ամի լինիլ: - 336. *Որպէս* սովորութիւն է մարդոյ որ վատացն ասէ, ե՛ս արարի զայդ բանդ որ զքեզ ի քո կամդ թողի և ո՛չ խրատեցի: - 336. Երկրորդ ա՛յն է՝ որ յորժամ լինի կամքն մարդոյն չար և խիստ ի ծածուկ, և զայն յայտնէ՛ աստուած. *որպէս* նաբուգոդոնոսորայ. որ ունէր սիրտ գազանի՝ ի կերպարանս գազանաց փոխեցաւ: - 336. Նա՛խ՝ զի հրամանաւն աստուծոյ էր. *որպէս* պոռնկութիւնն ովսէի և սպանութիւնն փենեհէսի ո՛չ էր մեղք: - 337. Եւ յաւուր ուրբաթու խաւարեցաւ երկիր *որպէս* ամպն ի վերայ ժողովրդեանն: - 337. Եւ յերեկունն լոյս ծագեաց հոգւոց *որպէս* սիւն լուսոյն իսրայէլի: - 337. Եւ *որպէս* դարձաւ ժողովուրդն ի հանգրուանն առաջին. և տեառն մարմինն եդաւ ի հող երկրի: - 337. Եւ էր ինքն բոլոր և սպիտակ նման գնձի. և քաղցր *որպէս* զմեղր: - 338. իսկ զաստուծոյ հարցանելն զի՞նչ է՝ անգիտելի մնայ. *որպէս* եհարց յակոբ, «զի՞նչ է անուն քո. և նա՛ ասէ՝ զի՞ հարցանես զանուն իմ. զի սքանչելի՛ է»: - 338. *Որպէս* լոյս, գեղեցիկ, քաղցր, և այլն: - 338. Նա՛խ՝ զի յերկնից է իջեալ. *որպէս* ինքն ասէր «ա՛յս է հացն որ յերկնից իջեալ»: - 339. Հինգերորդ՝ **ե** միշտ է և առ միշտ. *որպէս* մի՛ սպանաներն. և մի՛ գողանարն և այլն: - 340. Եւ թէ ոք ասիցէ, պա՛րտ է ջուր խառնել ի խորհուրդն *որպէս* և մովսէս: - 341. Նա՛խ՝ զի մովսէս յայտնապէս զկէս արեանն անապական եհեղ զսեղանովն որ նշանակէր զանապական խորհուրդ արեանն. և զկէսն խառնեաց ի ջուր *որպէս* ցուցաւ ի խորհուրդ մկրտութեան և հաղորդութեանն խառնեալ: - 341. Եւ յայտ է զի յետ մկրտութեանն պա՛րտ է հաղորդել, և նոքա ո՛չ առնեն *որպէս* ցուցաւ: - 341. Եօթներորդ՝ զի նոր իմն չնաշխարհիկ կազմեաց. նոր ժողովրդեանն և նոր օրինացն, իցէ և նո՛ր տաճար հռչակեալ ընդ ծով և ընդ ցամաք. *որպէս* պսակ և փառք արդարոցն է՛ զոր ակն ո՛չ ետես և ունկն ո՛չ լուսաւ...: - 342. Ութերորդ՝ զի թէ թողցեն զվայելչութիւն խորանիս այս և այլոց հետևեսցին, անպատասխանի լիցին ի պատուհասն. *որպէս* եթող զապերախտ ժողովուրդն և էառ զվրանն մողոքայ և զաստղն հռեմփայ ի դատապարտութիւն ինքեանց: - 342. Իններորդ՝ ի նմանէ՛ լինէր երևումն և աստուածախօսութիւն *որպէս* նախ ի յերկնէ. պա՛րտ էր երկնազարդ լինիլ: - 342. Կապոյտն օդոյն է գոյն. զի թէ ա՛յլ գոյն էր, վնասիչ և խափանիչ լինէր տեսութեանց. *որպէս* սպիտակ կամ սեաւ. այլ կապոյտն է ի հեշտութիւն տեսութեանց: - 342. Իսկ ձև խորանին, *որպէս* սագաշէն եկեղեցոյ: - 343. Եւ սրբութիւն սրբոցն ի յարևելք. զի երուսաղէմ՝ կողմ արևելից է նոցա. և սրբութիւնն ի մէջն. և սրահն յարևմուտս. *որպէս* մերս եկեղեցի: - 343. Եւ այլքն պղինձ արծաթապատ. *որպէս* սիմքուֆտ, և կամ ոսկի: - 343. *Որպէս* հոգի մեր սկիզբն ունին, այլ ո՛չ վախճան: - 344. Չորրորդ՝ և բովանդակն ե կանգուն, ցուցանէ թէ ո՛չ են նոքա ի չորից տարերց. այլ **ե**երորդ էութիւն են. *որպէս* ասեն ոմանք. անմարմին անփոփոխ և անմահ. որ ո՛չ է տարրականացս: - 344. Իսկ կէսն, զի կիսկատար և պակա՛ս են քան զաստուած այնու, զի եղակա՛նք են և յոչ գոյից գոյացեալք *որպէս* ասացաք: - 344. Նշանակէ՛ ըստ փիլոնի, զի անմարմինքն մինչև յերեքն հասանին. *որպէս* երկրաչափքն գրեն նիշ՝ գիծ՝ երևոյթ. ա՛յս է իմանալեացն չափ: - 344. Եւ *որպէս* առաջնորդ է՛ր ժողովրդեանն ի չուելն, և տէր մեր ասէր՝ «ուր եսն եմ, անդ և պաշտօնեայն իմ եղիցի»: - 345. Վասն այն զնշխարն ի կողմն հիւսիսոյ դնեմք և զսկիհն ի հարաւ *որպէս* անդ: - 346. Եւ *որպէս* ներքին տապանակն օրինակ ցուցաւ իմանալեացն: - 346. Նա՛խ՝ զի տղա՛յք էին և ի տե՛սն զուարճանային. *որպէս* խորանն և ա՛յլ սրբութիւնք. նոյնպէս և զգեստք քահանայութեան: - 347. *Որպէս* **բժ**ան կենդանակերպք երկնից, և ամիսք տարւոյն. այլ և **բժ**ան առաքեալքն ի լանջսն յիսուսի: - 348. Կարկեհան՝ որ կայծ կոչի. հրագո՛յն է. գտանի յափրիկէ. ի գիշերի *որպէս* հուր վառի: - 348. Եւ պտղի ձիթով *որպէս* զվարդէջուր եփեալ: - 349. Նա՛խ՝ զի զայրացաւ նախանձուն աստուծոյ. *որպէս* փենեհէս և եղիա: - 349. Ա՛յս է պատճառ խորտակելոյ տախտակին. և ո՛չ *որպէս* ասեն ոմանք թէ գիրն ջնջեալ էր: - 350. Երես զիսկութիւն աստուածութեանն նշանակէ. զոր աստի կենօքս ո՛չ ոք կարէ տեսանել. *որպէս* զբոլորակ արեգականն. այլ ի հանդերձեալն տեսանեն ընտրեալք ըստ չափու: - 350. Դարձեալ գիտելի է, որք զքրիստոս բաժանեն յերկուս բնութիւնս. և յերկուս գործս սոյնպէս. զմինն աստուած՝ և զմիւսն մարդ. հզօր և տկար. և գործ մարդոյ և գործ

աստուծոյ. *որպէս* աղանդն քաղկեդոնի: - 350. Բազում ողորմ առ բազմապարտ դարձեալսն ի մեղաց. *որպէս* պարտապանն բիւր քանքարոյ: - 351. Եւ թեթևացնէ՛ զպարտս մեղաց. *որպէս* արար ողորմութիւն միածին բանն աստուած յիշելոյ զառաջին արդարսն...: - 351. *Որպէս* յորժամ լցան մեղք ամուր հացւոցն ի չորրորդ դարուն՝ սատակեցան ի ձեռն յեսուայ: - 351. Ա՛րդ՝ բնութիւնս մեր ի յադամ ապականեցաւ մեղօք. վասն այն *որպէս* նա՛ պատժեցաւ, նոյնպէս և մեք պատժիմք: - 351. Եօթներորդ՝ զի որ աշակերտի մովսէսի՝ զլոյս ընդունի. և որ ո՛չ աշակերտի՝ ի խաւար մնասցէ *որպէս* քանանացիքն: - 352. Երկոտասաներորդ, լուսաւորեցաւ՝ զի քօղ արկցէ երեսացն. որ օրինակէ՛ զհին կտակարանս. որ քօ՛ղ է արկեալ և առագաստ մտաց նոցա. մինչև դարձցին առ տէր հոգիքն *որպէս* զմովսէս. և ապա վերասցի քօղն և յայտնեսցի լոյս գիտութեան նոցա: - 352. *Որպէս* ասէր յերկրորդ օրէնքն: - 353. Մին վասն հաւատոյ օրինաց. և մին վասն հոգւոյս իբր ահարօնի. և մին վասն մարմնոյս *որպէս* ժողովրդեանն: - 353. Եւ **գ** ըստ շնորհաց. *որպէս* ի ջրոյ, ի հրոյ, և ի վիմէ. ի տիպ տեառն մերոյ *որպէս* ասացաւ: - 353. Նա՛խ՝ հինն օրինակ էր և նորս ճշմարտութիւն. և հանդերձեալն առաւել ճշմարտութիւն *որպէս* սուրբ սրբոց: - 355. Հինգերորդ՝ ի մեռեալ կենդանւոյ է մեղուն. *որպէս* ասեն ի մեղուշ արջառաց: - 356. Երկրորդ՝ օրինաւոր ամուսնութիւնն պատուական է վասն որդեծնութեան. այլ ո՛չ է նա՛ առաքինութիւն. *որպէս* կուսութիւն՝ պահք՝ և աղօթք: - 356. Իսկ յօրինակն խառնեմք աղ. *որպէս* յագապս. յոգէհանգիստս և ի տօնական պատարագս: - 356. Ի կենդանիս. *որպէս* ոչխար և այլն յաղագս մաքրութեան ոգւոց: - 357. Եւ յանկենդանս, *որպէս* նաշիհ՝ իւղ և այլն յաղագս զգայարանաց սրբութեան: - 357. Եւ նախ ասեմք զանկենդանն որ կոչի զոհ. որ է՛ մասնաւոր նւէրք. *որպէս* նաշիհ և իւղ և խունկ: - 357. Սա՛ փոխեալ ի նորս նշանակէ՛ զմարմնաւոր նուէրքս. *որպէս* պահք աղօթք, ողորմութիւն: - 357. Իսկ պան բաղարջն է՛ նաշիհն զանգեալ իւղով. և *որպէս* բոկեղն եփեալ ի թոնրի: - 357. *Որպէս* այժմ մին նշխարն ի հաղորդութիւն սուրբ մարմնոյն, և զայլ նշխարքն արժանացեալք արիութեամբ ճաշակեն: - 358. Եօթներորդ՝ զոհ՝ պատարագն որ ի նաշհոյ և յիւղոյ *որպէս* ասացաւ ի վերոյ: - 358. *Որպէս* տօնականն զատկի և տէրունական տօնից: - 362. Նահապետքն ունէին կրկին պատարագ. բանաւոր և անբան. *որպէս* Աբէլ. Նոյ. Աբրահամ. և այլքն: - 362. Զի՞նչ նշանակէ կրկին ողջակէզն ի նորս. *որպէս* զուարակն և երկու խոյն կատարման: - 362. Երրորդ, երկրորդ սեղան է սիրտ քահանային. *որպէս* սեղանն զողջակէզն մաքրէ՛, նոյնպէս իշխանութիւն քահանային: - 363. Զի *որպէս* ստամոքն զկերակուրն հալէ, նոյնպէս և քահանայն զմեղքն: - 363. Դարձեալ՝ *որպէս* քրիստոս յետ մկրտութեանն՝ ի լեառն պահեաց **խ** օր: - 363. Եւ *որպէս* երեխայն նախ քան զմկրտիլն **խ** օր ուսանի զխորհուրդն: - 363. *Որպէս* նախ քան զօրէնս, բնական քննութեամբ ընտրէին մարդիկ. կամ զանձոռնի մեծն, կամ զամենևին փոքրն, կամ զգարշն տեսութեամբ, կամ զվնասակարն, ուտելոյ պիղծ ասէին զսոսա: - 364. Եւ այսպէս ըստ բարուց մարդկան ընտրէր նոյ ի սրբոցն է. և յանսրբոցն **բ**. *որպէս* ասացաւ ի վերոյ **ժզ** գլուխն ի **զ** համարն: - 364. Դարձեալ՝ զոր ինչ յեգիպտոս աստուած պաշտէին՝ սուրբ հրամայեաց. *որպէս* զանասունս: - 364. Եւ զոր ուտէին և դիւաց զոհէին՝ պիղծ ասաց. *որպէս* զխո՛զ, զճագա՛ր, և զնապաստակ: - 364. Դարձեալ՝ *որպէս* ծառա՛յ են կենդանիք և սպասաւոր մարդկան. նոյնպէս և յօրինակ ընտրութեան մարդկան ընտրեցան զսուրբս և զանսուրբս նշանակելով այսպէս: - 364. Եւ որք զմինն ունին, *որպէս* գիտութիւն առանց գործոց, և գործս առանց հաւատոց, անսուրբք են: - 364. Երկրորդ՝ զենլին. զի լիցի կենդանի. զի մեռեալն՝ և անկենդանն *որպէս* քար՝ ո՛չ զենի: - 365. Զի թէ լինիցի քարեայ սուր, *որպէս* գայլախազ, որով սպանաւ աբէլ. ո՛չ է պիտանի: - 366. Եւ թէ լիցի երկաթ և ո՛չ սուր, և ո՛չ է պիտանի. *որպէս* բոլոր երկաթն թէ հարցէ զկենդանին և սպանցէ, ո՛չ է ուտելի, զի թէպէտ զարիւնն հանէ, այլ ո՛չ համանգամայն զշունչն և զջերմութիւնն: - 366. Ի ներքուստ՝ սիրտն և երիկամունքն և լերդաբոյթն ընդ ճարպին ճեններեալ ի հոտ անուշից. *որպէս* հրամայեաց մովսէս: - 367. Պա՛րտ է տալ զսոսա ի քահանայսն *որպէս* կարգեաց մեծն մովսէս ի հինն, և սուրբն գրիգոր ի նորս: - 367. Իսկ թէ ի հանդերձն յայտնի մեղանչեմք առանց ապաշխարութեան, լուցկի առնէ հրոյն *որպէս* ասացաւ ի վերոյ: - 368. Այլ և հաւատն և յոյս և սէր *որպէս* ցուցաւ: - 368. Նոյնպէս և արիւն դաշտանւոյն պղծէ՛ զչորս դէմս. *որպէս* հոսումն արուին և բղխումն իգին: - 369. Դարձեալ ասեն, մարմնական մեղքն փոխեցաւ. *որպէս* ի մեռեալ մերձիլն: - 369. Այլ մեղքն հոգեկան նոյն է աստ և անդ. *որպէս* շնալ և գողանալ: - 369. Դարձեալ ասեն, բնական մեղքն խտրութեան մնաց ի գրաւորն, նոյնպէս ի նորս. *որպէս* սերմնակաթն և դաշտանին. այլ պատիժն փոխեցաւ հինն ի նորս: - 369. Զի իրն փոխեցաւ ի ճշմարտութիւն, և խորհուրդն մնաց նոյն. *որպէս* ջուրն և խունկն. իւղն և նաշիհն: - 369. Եւ արիւնն, զմեղս մեր բարձեալ յինքեան և տարեալ ի դաշտն առ հայր յերկինս. զի *որպէս* մեռեալ

մարմնովն քաւեաց զմեղս. նոյնպէս և անմահ աստուածութեամբն կենդանացոյց և յերկինս եհան: - 369. Երրորդ` յօրինակ հոգւոյ արատոյ ի նորս *որպէս* ասացաք: - 370. Արիւն ուտելն` և հեղձուցանելն` և գազանաբեկն` մի էր մեղք` *որպէս* ասացաւ ի վերոյ **ժը** գլուխն ի **զ** համարն: - 371. Հինգերորդ` *որպէս* արիւն անասնոց ի հողոյ է և ի հող լուծանի. և բանական հոգիս մեր յաստուծոյ է և առ աստուած երթայ: - 371. Դարձեալ շաբաթ շաբաթուց այն էր. որ քաւութիւն մեղաց հոգւոցն էր շաբաթ. *որպէս* դատարկանալն մարմնոյն: - 371. *Որպէս* և այլ ուր **զժ** էն մինն աստուծոյ բաժին: - 371. Երրորդ` զի հաւասարք են **գ** տօնքս. *որպէս* ծննդեան և յարութեան` նոյնպէս և հոգւոյն գալստեան **ը** օր տօնեմք: - 373. Վասն որոյ ի միասին տօնեմք խաչի և եկեղեցւոյ. *որպէս* ասացաւ ի **լե** գլուխն, **լը** համարն: - 373. *Որպէս* նոքա ի սկիզբն քաւութեան պահօք խոնարհեցուցանէին զանձինս: - 373. Իսկ զվարդավառին և զփոխմանն տօն` ի նորո՛յս է աւանդեալ. *որպէս* ողոգոմեանն, և քառասնօրեայ գալստեանն: - 373. Եւ *որպէս* ի տաղաւարքն կողերս` տերև` և ոստ մատուցանէին. զնոյն և քրիստոսի մատուցին յաւուրն ողոգոմեան ի գալուստ նորին յերուսաղէմ: - 374. Այլ և նաշիհ մարմին սուրբ. և գինի արիւնն. և իւղ օծումն աստուածութեանն. *որպէս* ասացաւ ի վերոյ: - 374. Նախ է` որ ո՛չ գլուխն խնդրի և ո՛չ շահ. *որպէս* ողորմութիւն: - 375. Երկրորդ` որ գլուխն խնդրի և ո՛չ շահ. *որպէս* փոխն: - 375. Երրորդ` որ գլուխն և շահ. *որպէս* ի վաճառս: - 375. Եօթներորդ` երկին երկաթի և երկիր պղնձի. իբր չորացեալ երաշտութեամբ *որպէս* եղիայիւ: - 376. Իսկ զսառայածինսն հրամայէ՛ թուել *որպէս* զաստեղս: - 377. Երկրորդ` *որպէս* աստեղաց գլխաւորքն թւեցան. **բժ**ան ազգն` **բժ**ան կենդանակերպքն. և այլք նմանապէս: - 377. Երրորդ` *որպէս* ինքն զզգալի աստեղս թըւէ՛ և յանուանէ՛ կոչէ, նոյնպէս և զիմանալի՛սն ետ թուել: - 377. Հինգերորդ` թիւն զընտրութիւն` զդաս` և զկարգն ցուցանէ. զի գո՛յ ի նմա՛ առաջին միջին և վերջին. *որպէս* զինուորք. իսկ անթիւն խոտան և անկա՛րգ է. *որպէս* ծերք և տղայք: - 377. Եօթներորդ` զի միտքն զախտն շարժէ ի չարն. և ո՛չ ախտն զմիտքն. *որպէս* ասի, խորհուրդք ծերոց զքարինս պատառեն: - 377. Ութերորդ` զի ապաժո՛ւժ է և պակասամիտ *որպէս* զտղայ. զի անիւ կենացն հոլովեա՛լ է ի տղայութեան տիքն: - 377. Իսկ այլք ի **դ** բաժանեն ըստ չորից տարերաց և **դ** պահու գիշերոյն. *որպէս* ասացաւ ի վերն **ժզ** գլուխն **իգ** համարն: - 378. *Որպէս* կաթուղիկոսն: - 379. Եւ մինչ ի **կ** ա՛մն գործեն զքահանայութիւնն *որպէս* սուրբ հա՛րցն է կանոնեալ: - 379. *Որպէս* ետ առաքելոցն, Նոյնպէս և նոցա ի գիր նզովից զկապելն. և յօրհնութիւն ժողովրդեանն զարձակելն: - 379. Դարձեալ, զի ցուցանէ թէ արիւնքն խնդրին ի մարդկանէ. *որպէս* օրէնք եդ...: - 380. Իսկ այլ տասունքն իմաստասիրաց բանքն. *որպէս* պղատոնին. արիստոտէլին. պիթագորին և այլք. որք միայն զաստեա՛ցս պատմեն մեզ: - 380. Դարձեալ, քահանայից մեղքն զերկին շարժէ *որպէս* անդ: - 381. Ապաւառն ո՛չ գոյ ի ճշմարտութիւնն *որպէս* յօրինակն: - 383. Նա՛խ` զի հուր աստուածութեանն կիզոյր զնա՛. *որպէս* ջուր ի մէջ ապակոյ ի տապոյ արևուն պակասի: - 383. Չորրորդ` *որպէս* ո՛չ ունէր զաւելորդ ցանկութեանն, նոյնպէս և ո՛չ զկերակրոյ: - 383. Ուրեմն յա՛յտ է զի կրեաց զկամաւորն. և զանանգոսնելին, *որպէս* և ծարաւն: - 383. Նա՛խ` զի յորժամ ճշմարիտ սրբութիւնն գայցէ, հաւանեսցին որ է՛ արիւնն քրիստոսի. *որպէս* ասէ պօղոս` «եթէ արիւն ցլուցն և նոխազացն և մոխիր երնջոցն սրբէ՛ր զպղծեալսն քանի՞ առաւել արիւնն յիսուսի»: - 383. Վասն որոյ և պա՛րտ է և նմա՛ խոստովանիլ *որպէս* է՛ ի կանոնս հարցն: - 384. Նա՛խ` ի սեռս իւր ներելի և փոքր. *որպէս* դատարկաբանելն և մորոսն: - 385. Երկրորդ` որ անգիտութեամբն է և ակամայն` է՛ մեղք ներելի և այն. *որպէս* մեղք մանկութեան և անգիտութեան: - 385. Վեցերորդ` զի թէպէտ համբարձաւ յերկինս, ընդ մե՛զ է զամենայն աւուրս *որպէս* ասաց: - 385. *Որպէս* սափորն կոյսն էր, և գաւազանն խաչն, նոյնպէս վէմն քրիստոս: - 386. Իսկ ի ջուր, Նա՛խ` զի ջուր բղխեաց ի լուացումն և յարբուցումն. *որպէս* ի կողից փրկչին ջուր և արիւն: - 386. Իններորդ, զի ցուցցի թէ բարկացողաց ո՛չ երևի աստուած. *որպէս* և ո՛չ եղիայի: - 386. Նա՛խ` *որպէս* բարձրացաւ օձն ի ձողին. նոյնպէս տէրն մեր ի խաչին: - 386. Տասներորդ, *որպէս* ասէ փիլոն` նշանակ հեշտ ցանկութեան է օձն. որ և զցանկացօղ ժողովուրդն սատակէր. ըստ ախտին իւրեանց նմանեցոյց զպատուհասն: - 387. Զոր եզեկիա խարտեաց. *որպէս* մովսէս զգլուխ որթոյն և կորոյս: - 387. Երկրորդ` զի իշխան յանդիմանեսցէ զանմտութիւն նորա. և զանօրէնութիւնն արգելցէ. *որպէս* ասի ի կաթողիկէքն: - 388. Դիւթ է` որ ձեռօք և նիւթո՛վ գործէ. *որպէս* գարի, և ալիւր, և աւազ, և ջուր, և քար. և այն որ թզով չափէ, և այլն ամենայն: - 388. Վհուկն ա՛յն է, որ ի վհաց և յանդնդոց մեռեալս կերպարանեն. դևք ի կերպս մարդկան երևին. զոր դևակոչ ասեն և հազիմաթ. և Նշանագէտ, որ ի գերեզմանս ննջէ և նշանաւոր մարդ կերպարանէ. *որպէս* զսամուէլ սաւուղայ երևեցոյց հարցուկ կինն: - 388. Երկրորդ` զի գործունեայք և հաւանօղքն այնպիսեացն պատժեսցին. *որպէս* ի յերկրորդ օրէնքն հրամայէ՛ սպանանել այնպիսիսն. իսկ

հաստատունքն ի հաւատս՝ վարձս առցեն ի հաւատոց իւրեանց: - 388-389. Յինգերորդ՝ հնազանդք առաջնորդաց. *որպէս* կրօնաւորք և հաւատացեալք: - 389. Վեցերորդ՝ շնորհընկալք. *որպէս* խոստովան որդիք. և ժողովուրդք. և քահանայք հայրապետաց: - 389. Եւ *որպէս* կնոջ ըստ հրամանս առնն իւրոյ յանցանել պոռնկութենէ, նոյնպէս և զաւակաց, և ծառայից, և աշակերտաց, և հնազանդելոց, և ժողովրդոց...: - 389. Եւ *որպէս* ովսէէ ո՛չ է պոռնիկ՝ և ո՛չ սամուէլ մարդասպան զի հրամանաւ աստուծոյ էր: - 389. Եւ ի յանապատն միս ուտելոյ հրաման ո՛չ ունէին. *որպէս* և ո՛չ ի դրախտին: - 390. Եւ ի գլուխն սուր ո՛չ ելցէ *որպէս* սամփսոնին: - 390. *Որպէս* զաւար մադիանացոց մովսէս մասնաւորեաց ի խորանն աստուծոյ: - 390. Եւ այսպէս բաժանեսցեն զաւարն. ի **ծէ**ն զմինն տայցեն քահանայապետին. և յիսնէն զմինն քահանայից և աղքատաց. և հնգէն զմինն թագաւորաց բաժին. և կէսն աւար բերողացն է զինւորացն. և կէսն այլ հեծելիցն. *որպէս* բաժանեաց մովսէս: - 390. Զի **խ** վասն այն կատարեմք, որ առաջինքն զննջեցեալքն **խ** օր լային անմխիթար. *որպէս* զնահապետն յակոբ լացին **խ** օր: - 391. Նա՛խ՝ *որպէս* կանուխ անձրևն բուսուցանէ և անագանն սնուցանէ և պտղաբերէ՛: - 393. Երրորդ՝ զառաջինն հարցն ետ որ սատակեցան. զերկրորդն որդւոցն տայ, զի մի՛ լիցին չար և դառնացօղ *որպէս* հարքն իւրեանց: - 393. Չորրորդ՝ առաջինն *որպէս* բնաբան. և երկրորդն *որպէս* մեկնութիւն զի իմասցեն մտօք: - 393. Նախ՝ *որպէս* արեգակն եղև տեսութիւնն մովսէսի. զի յառաջ զարևմուտս տեսանէ. և վերացեալ զհիւսիս և զհարաւ. և ապա՛ զարևելս: - 394. Երրորդ՝ զօրաւոր հարուածքն եգիպտոսի, որ ո՛չ ոք կարէր հասանիլ և բռնել զպատիժն. *որպէս* ոք հարկանէ և դարձեալ բարձրացուցանէ զձեռն: - 395. Առաջինն՝ զի նախ արտաքին մարմնոյ հանդիպիմք *որպէս* դրան. և ապա հոգւոյն ի ներս: - 395. Նա՛խ՝ հաւատով ճանաչելն է զԵրրորդութիւնն մի բնութիւն, և ապա գործով սիրել զնա. *որպէս* նախ ուսանիլն է և ապա առնել: - 396. Նա՛խ՝ վասն ժողովրդեանն ասէ, թէ ոչ միայն հացիւ կեայ մարդ. *որպէս* ասաց ադամայ ուտել զհաց քրտամբք: - 397. ...վասն որոյ յայսմանէ ասեն ոմանք թէ՝ **գ** ամ կամ **խ** օր յամեաց ադամ ի դրախտին. *որպէս* ժողովուրդն ի յանապատին. կամ *որպէս* մովսէս ի լեառն: - 397. Չորրորդ՝ հաց ի յերկնից իջեալ մանանայն կենարար. և բանն աստուծոյ նոյն ինքն տէրն մեր. *որպէս* ասաց առ փորձիչն թէ՝ ինև կերակրին ամենայն սուրբք և ո՛չ հացիւ: - 397. Յինգերորդ՝ նոյն ինքն մարմինն սուրբ ո՛չ թէ հացիւ միայն կայր *որպէս* հասարակ մարդ. այլ բանիւն կենդանի ի նմա՛ միացեալ: - 397. Իններորդ՝ մանուկն յարգանդի ո՛չ հացիւ կեայ. այլ հրամանաւն աստուծոյ կերակրի ընդ պորտն զինն ամիս. *որպէս* տնկականք, և *որպէս* նոյ ի տապանն. մինչ ելանէ յարգանդէ...: - 397. Տասներորդ՝ ի յարութեանն ո՛չ է մարմնական կերակուր և ըմպելի. այլ բանն աստուծոյ է կերակուր. *որպէս* այժմ հրեշտակաց յերկինս: - 397. Դարձեալ՝ *որպէս* աչօք տեսանեմք զմարմնոյս մասունքն և զտգեղութիւնն զարդարեմք: - 397. Եւ *որպէս* ննջեցեալն քնով՝ ո՛չ տեսանէ զինքն. և *որպէս* յաւելի կերակրոյ խնուն զգայարանքն. նոյնպէս ագահութիւն և փարթամութիւն և հպարտութիւն մոռանալ տայ զինքն...: - 397-398. Երրորդ, վասն վերջնոցն լաւութեան ընտրեցան և խոտանքն. *որպէս* զհող զքար և զխեցցէ մորթն պատւեմք վասն ոսկւոյ և արծաթոյ և մարգարտին: - 398. Երկրորդ՝ զի ասէ «իբրև զիս». իբրևն օրինա՛կ է. *որպէս* մովսէս աստուած կոչեցաւ, և տէր մեր Էմմանուէլ. և զնա՛ հայր կնքեաց աստուած. և *որպէս* մովսէս իշխէր տարերաց, և տէր ի ծովուն գնայր, և ի վերայ օդոյն: - 399. Զոր ա՛յլ մարգարէ ո՛չ արար. *որպէս* գրեալ է ի **ի** համարն ի վերոյ: - 399. Նա՛խ՝ *որպէս* եղև մեղք և եբարձ զմեղս. նոյնպէս եղև անէծք և եբարձ զանէծս: - 400. Երկրորդ՝ զի անպա՛րտ էր անիծից՝ և վասն մեր եղև. *որպէս* անպարտական ոք ո՛չ անիծանի: - 400. Երրորդ՝ զի ինքն օրհնութիւն էր, և անէծքն մերձեալ ի նա յօրհնութիւն փոխեցաւ. *որպէս* խաւարն ի լոյս փոխի. և մեղքն յարդարութիւն. և մահ ի կեանս: - 400. Եւ այլք այսպէս մեկնեն թէ՝ ամենայն անիծեալ կախեալ կայցէ զփայտէ. այլ ո՛չ ամենայն կախեալ զփայտէ՝ անիծեալ է. *որպէս* խոյն ի սաբեկայ կախեալ ո՛չ է անիծեալ: - 400. Զի *որպէս* քահանային օծումն ի հոգւոյն ո՛չ բաժանի յաւիտեան, և պսակի օրհնութիւնն որ ի մարմինն է՝ ո՛չ բաժանի մինչ ի մահ ի մարմնոյն: - 401. Մովսէսին պատճառն վասն խստասրտութեան նոցա է *որպէս* տէրն ասաց. զի մի՛ սպանումն լիցի: - 401. Զի քրիստոնէութիւն *որպէս* մկրտութիւն և այլն՝ անբաժանելի՛ է ի հոգւոյն. թէպէտ ուրանայ լեզուաւ և գործով: - 401. Վասն է՞ր է որ մին կին թէ բազում այր առնէ՝ պոռնիկ է. և թէ այրն բազում կանայս առնէր, չէր պոռնիկ *որպէս* ի հինն օրէնս: - 401. Երրորդ՝ օրինական. զի *որպէս* մին գլխոյ բազում անդամ կարէ՛ լինիլ. այլ ո՛չ անդրադարձեալ: - 401. Երկրորդ՝ թէ կրտսե՛ր է եղբայրն. *որպէս* առակն է եղբարց, որ առաջինն էառ և մեռաւ. և ապա երկրորդն, և որ ի կարգին: - 402. Այլ կենդանի եղբօր, կամ փոքր եղբօր կինն, կամ գոլով զաւակ, անօրէնութիւն էր *որպէս* հերովդին...: - 402. Իսկ ոմանք զքրիստոսէ՛ ասեն բնութեամբ և շնորհօք որդի. *որպէս* նեստորք և քաղկեդոնիկք անիծեալք. զի այսպէս լինին **բ** որդիք և

**բ** անձինք: - 402. Երկրորդ՝ *որպէս* զօրհնութիւն նորա մարմնական ո՛չ ունիմք. նոյնպէս և ո՛չ զանէծսն: - 403. Նա՛խ՝ շնորհակալութիւն է և գոհութիւն երախտեացն աստուծոյ տրիտուր. ո՛չ իբր կարօտի, այլ անկարօտի *որպէս* աստուծոյ: - 406. Նա՛խ՝ ի պարգևաց բանականաց. *որպէս* հրեշտակաց և հոգւոյս մեր: - 406. Այսպէս և օրհնութիւն մարդկան որ գերագոյն է քան զմեզ, շնորհակալութիւն է և գոհութիւն. *որպէս* սրբոց կամ թագաւորաց և այլն: - 406. Նայիլն վերուստ ի վա՛յր է. *որպէս* ասէ՝ «նայեցարո՛ւք երկինք»: - 407. Նա՛խ՝ անընդմիջաբար յերկրէ. *որպէս* նաւթ: - 407. Երկրորդ՝ ի բուսոց և ի պտղոց. *որպէս* ձէթ և այլք: - 407. Երրորդ՝ կիթն ի կենդանեաց. *որպէս* կաթն և ճու: - 407. Նա՛խ՝ անընդմիջաբար ի հողոյ. *որպէս* փայտ: - 407. Երկրորդ՝ ի պտղոյ. *որպէս* ձէթ: - 407. Երրորդ՝ ի ծաղկանց. *որպէս* մոմ: - 407. Չորրորդ՝ ի կենդանեաց. *որպէս* ճարպն առաւել քան զայլսն պարզ և լուսաւոր: - 407. Երկրորդ՝ *որպէս* բնութիւնս մեր բարի՛ էր պատկեր եղեալ բարւոյն. և մեք կամօք մեր ախտացուցաք չար ածելով ի ներքս...: - 408. Վասն է՞ր մերձ ի վախճանն հարք և առաջնորդք օրհնեն զմնացորդս. *որպէս* մովսէս և յակոբ և այլ նահապետք: - 408. Երկրորդ՝ յորժամ երեսքն լուսաւորեցան *որպէս* ադամայն ի դրախտին՝ և ի յարութեանն: - 409. Չորրորդ, մահ՝ այսինքն սատանայ որ յաղթեաց ադամայ. իսկ մարմնոյն մովսէսի ո՛չ կարաց յաղթել հրեշտակային օգնականութեամբն. *որպէս* ասի յառաջիկայդ: - 409. Ձայս նշանակէ թէ՝ յետ ելանելոյ հոգւոյ ի մարմնոյ և գնալոյ ի վերին շաւիղն, հակառակ կայ սատանայ և չար զօրութիւնքն ընդ նմա, տանիլ զհետ իւրեանց որ զչա՛րսն են գործեալ. և յարդարոցն յաղթին հրեշտակին օգնութեամբն. *որպէս* և անտօն ետես. զի իմացեալ և մեք զգուշասցուք այնմ: - 410. *Որպէս* տեառն մերոյ ի համբառնալն՝ ամպն կալաւ զնա՛ յաչաց նոցա: - 411. Երկրորդ՝ նշանակէ զմահ և զյարութիւն մեր. որ **լ** ամեայ յառնեմք. *որպէս* ադամ **լ** ամեայ ստեղծաւ: - 411. Իններորդ՝ սպանմանն աբէլի գործիք եղև *որպէս* ասեն. ուստի գայլախազ կոչեցաւ. զի սրբեսցի դրոշմաւն: - 415. Նա՛խ՝ զի մարդն տէ՛ր է և թագաւոր. և անասունքն ծառայ ընդ անցաւոր տէրանց. և ծառայքն պատուհասին. *որպէս* առ ջրհեղեղաւն: - 416. ...ո՛չ միայն անասունք, այլ և հող և ջուր և օդ երկրին կորուսանեն զպտղածնութիւն. *որպէս* սոդոմայեցոցն: - 416. Չորրորդ՝ զի և անասունքն գործակից լինին մեղացն. վասն որոյ ընդ մարդոյն կորնչին. *որպէս* ի սոդոմ: - 416. Հինգերորդ՝ զի քրէական մեղքն ազգաջինջ առնէ. *որպէս* զդադան և զաբիրոն...: - 416. Վեցերորդ՝ զի թէ լինի անկարօտ գող և զրկօղ, ընդ տեառն իւրոյ կորուսանէ և զինչսն. *որպէս* աքարն որ ունէր բազում ստացւածս, և գողացաւ ի նզովիցն երիքովի...: - 416. Եօթներորդ՝ *որպէս* ինքն պիղծ է, և իւրքն ամենայն պիղծ են. վասն որոյ ընդ նմին կորնչին: - 416. Ձի պղծոցն ամենայն ինչ պիղծ է. *որպէս* պիղծ կենդանւոյն շան՝ մորթ և մազ և միս և այլն: - 416. Նոյնպէս և սրբոյն ամենայն ինչ սուրբ է. *որպէս* ոչխարին մազն և միսն և այլն: - 416. Եւ ի մեծի ուրբաթի խաչին, լուսինն ընթացաւ և ձգեցաւ յարևն, և յետս դարձաւ. *որպէս* ցուցանի յառաջիկայդ առ խաչելութեամբն ի **լ** գլուխն ի **իզ** համարն: - 416. Նա՛խ՝ զի խնայեաց աստուած ի ծերութիւն նորա *որպէս* ի մովսին: - 416. Տասներորդ՝ զի ուսցին նոքա ի նոցանէ զբարիսն, և մնասցեն ժառանգ երկրին. *որպէս* գաբաւոնացիքն: - 417. Երկոտասաներորդ, զի ուսուսցէ մեզ զմարդասիրութիւնն և զներելն միմեանց. *որպէս* աստուած երկայնամիտ եղև առ քանանացիսն որ պատժապա՛րտք էին: - 417. Բարձրամեծարն գործոյ ներմարդութեան բանին աստուծոյ՝ բազում եղեն նախատիպք խորհրդոյ. *որպէս* մովսէս, յովսէփ, իսահակ: - 417. Եօթնն*ժ*՝ յեսու կանգնեաց զգայիսոնն ի գայի, մինչ կոտորեցան թշնամիքն. *որպէս* մովսէս տարածմամբ ձեռաց զամաղէկ: - 418. Գիտելի՛ է, զի *որպէս* զօրութեամբն սամփսոնի՝ տեառն զօրութիւնն նկարեցաւ: - 424. Երկոտասաներորդ՝ զերկանս սպասու մարմնոյ գործեսցէ միշտ և ի նոյն մեռանի *որպէս* սամփսոն: - 424. Այն որ ուսանո՛ց է, *որպէս* վակաս քահանային. և *որպէս* մայրն սամուէլի արար: - 425. Վասն է՞ր աւերէ՛ աստուած զսրբութիւնս և վարէ՛ գերի. *որպէս* զտապանակն յայլազգիս և զտաճարն: - 425. Նա՛խ՝ զի անարժան լինին սպասաւորքն. *որպէս* ոփնի և փենէհէզ որդիքն հեղեայ: - 425. *Որպէս* և մովսէս զտախտակն աստուածագիծ խորտակեաց վասն յանցանաց ժողովրդեանն: - 425. Երրորդ՝ զի առ աբիմելէք նոյնպէս եղև. և *որպէս* յեգիպտոս գորտն. նոյնպէս և անդ մուկն: - 426. Նա՛խ՝ *որպէս* սաւուղ ի խնդիր իշոյ ել և թագաւորութիւն եգիտ. և տէր մեր մարդկան ազգի որ հաւասարեաց անբանից, և թագաւորեաց մեզ: - 426. Այլ *որպէս* յարուցեալն նմանութիւն է և ո՛չ իսկութիւն, նոյնպէս և խօսքն սուտ է և ո՛չ ճշմարիտ: - 428. Հինգերորդ՝ զի *որպէս* զկանխագէտ ոչ ասաց սաւուղայ թէ դու ո՞վ ես որ զիս փրկես ի սաւուղայ: - 428. Ապա յա՛յտ է թէ՝ *որպէս* սաւուղ խաբէր զկինն, նոյնպէս և կինն խաբէր զսաւուղ նմանութեամբն սամուէլի: - 428. Երկրորդ՝ ուստի՞ ճանաչեաց թէ սամուէլ է. զի ահա՛ կինն ասաց. այլ *որպէս* կինն երևեցոյց զձևն, նոյնպէս կարծեաց և սաւուղ: - 429. Երկրորդ՝ ընդէ՞ր ոչ երևեցաւ սաւուղայ. այլ միայն

կնոջն *որպէս* ասացաւ ի վերոյ: - 429. Վեցերորդ` ընդէ՞ր ոչ քաջալերեաց զնա ասելով, եթէ մեռանիս` վիուկդ յարուցանէ՛ զքեզ *որպէս* զիս: - 429. Ութերորդ` *որպէս* սուտ էր յարութիւնն, նոյնպէս սուտ է և խօսքն և կերպարանօք: - 430. Սակայն հանդերձեալն և սիրտ մարդոյն` միայն աստուծոյ է գիտելի և ոչ այլ ումեք *որպէս* ասացաւ ի սկիզբն գրոցս: - 430. Կամ զի օրէնքն գրեալ էր` կուրի և կաղի մի՛ դնել գայթակղութիւն, աստ նախատելով թէ` *որպէս* ո՛չ կարես կոխել զդոսա, նոյնպէս ո՛չ կարես առնուլ զամուրն յեբուսայ: - 431. Վասն որոյ ասաց դաւիթ, ամենայն որ մարտնչի սրով ընդ կաղս և ընդ կոյրս *որպէս* ասացին յեբուսացիքն, նա՛ ատելի՛ է անձին դաւթի. և խնայեաց ի նոսա և փրկեաց: - 431. *Որպէս* յետոյ որդի նորա զկաղս և զկոյրս բժշկեաց ի տաճարին: - 431. Նա՛խ` զի պա՛րտ էր ուսով բառնալ զտապանակն *որպէս* հրամայեաց աստուած. և նոքա սայլիւ բերէին *որպէս* այլազգիքն: - 431. Երրորդ` զի ո՛չ էր քահանայ. վասն որոյ յետոյ ասէր դաւիթ ցքահանայսն, դո՛ւք ղևտացիքդ սրբեցէք և բարձէք զտապանակն. զի մի՛ լիցուք *որպէս* զոզիա: - 431. Եւ սարկաւագն սպիտակ զգեստուք հովանի *որպէս* դաւիթ: - 431. Եւ յետոյ բաշխումն նշխարաց. *որպէս* դաւիթ բաշխեաց ամենայն իսրայէլի բլիթ մի հաց, և պատառ մի ի տապակէ՛ և ի կասկարայիցն: - 431. Զի գա՛յ զղջումն և խոստովանութիւն` որ զմեղքն բառնայ և զպատիժն ընդ նմին. *որպէս* հատեալ տունն` չորանան ճիւղքն. որ բոլորով սրտիւ զղջայ և խոստովանի և այլ ո՛չ գործէ: - 432. ...այսպիսեաց ոչ մեղքն թողուի և ոչ պատիժն. զի *որպէս* զշուն դառնայ ի փսխած իւր: - 432. Զի սա՛ ի կանոնաց թեթևացեալ է *որպէս* յառաջիկայդ ցուցանի ի խոստովանութեան ճառն: - 432. *Որպէս* դաւթին յետ զղջմանն յիշատակութիւն մեղացն մնաց, ապա նո՛յնպէս և ամենայն մարդոյ մնասցէ՞ թէպէտ և խոստովանի: - 432. Դարձեալ` նոյն ինքն քրիստոսի է իշխանութիւնն որ աստ լուծանէ ի ձեռն քահանային. և իշխանութիւն նորա ո՛չ տկարանայ երբէք. *որպէս* զհաց և զգինին կատարէ և զայլ խորհուրդս. նոյնպէս և աստ: - 433. Եւ *որպէս* շնորհք մկրտութեան առաւել է քան զբլփատութիւն նոցա, զի զմեղս սրբէ և զարքայութիւնն բանայ: - 433. Այլ ի դատաստանն քննութեան ջնջեալ է զոր ինչ մեք ի մտի ունիմք. *որպէս* ասացաւ ի վերոյ: - 433. Երրորդ` զի տէր գրգռեաց զնա *որպէս* զնաթան: - 433. Վեցերորդ, լռեաց` զի տէր հատուցէ բարիս ընդ այնր *որպէս* եղև: - 434. Նա՛խ` *որպէս* գեղէոն ջրովն փորձեաց զհաւատս զօրացն. նոյնպէս և դաւիթ: - 434. Նա՛խ` թուել հրամայեաց, *որպէս* այն որ թոյլ ետ իսրայէլի մարտնչիլ ընդ բենիամենի, և անկան **լռ** ի դասուց նոցա: - 434. Երկրորդ` *որպէս* թուեաց դովեկ զքահանայսն զի մի՛ զերծանիցեն ի սրոյն. նոյնպէս և այս վասն քահանայիցն վրէժխնդրութեան էր. զի կամեցաւ ժողովուրդն փրկել զնոսա: - 434. Ցուցանէ թէ տարաժամ մահն ընտրութեամբ և կամօքն աստուծոյ լինի, և ո՛չ պատահմամբ *որպէս* ասեն ոմանք: - 435. Այսինքն *որպէս* սիրտ իմ առնէ՛ զիրաւունս և զարդարութիւն: - 435. ...*որպէս* ադամ տրտմութեամբ ծնաւ զորդին կայէն. ցաւած ծնողացն ցաւածին որդի: - 439. Եւ շնորհք նոր օրինացս հայի յողորմութիւնն աստուծոյ և ի փառս վերինն երուսաղէմի *որպէս* ասացաւ ի վերոյ: - 439. Եւ ոմանք **գռ** գիրք ասեն *որպէս* առակն և ժողովօղն. և **եռ** օրհնութիւնս *որպէս* երգ երգոցն. *որպէս* դաւթի **ծծ** սաղմոսն: - 441. Այլ և զառաւել գութն հեթանոսաց տեսցէ. *որպէս* յօնան զնինուէացւոցն ապաշխարութիւնս: - 444. Եւ որ ո՛չ եթող զոք մերձ. զի ո՛չ ոք լինի գործակից յարութեան մերոյ. *որպէս* և ո՛չ ստեղծմանն: - 444. Նա՛խ` զի վրէժխնդիր եղև օրինացն աստուծոյ. *որպէս* փենէհէզ սպան զզամբրի և զքասբի. և սամուէլ զագագ: - 444. Նա՛խ` զի ուսուսցէ, եթէ մի անգամն ո՛չ լսի` պա՛րտ է անձանձիր աղօթել. *որպէս* այրին որ ժտելովն էառ: - 444. Կամ զգործոց և զարդեանցն խնդրէ. որ է՛ սքանչելեաց և պատժոցն. *որպէս* եղիա: - 445. Երկրորդ` զի իջցէ ի գերեզման և մի՛ տեսցէ զչարիքն որ ի ձեռն նաբուգոդոնոսորայ գալո՛ց էր ի վերայ երուսաղէմի. *որպէս* յայտ է ի պատմութիւնն: - 446. Եւ եղև գերութիւնն բաբիլացւոց **հ** ամ ի վերայ յուդայ և ո՛չ ի վերայ իսրայէլի *որպէս* ասէր երեմիա: - 447. Երրորդ` *որպէս* զստնդիայի մանուկն **է** ամ խրատէ՛ դայեակն. այսպէս ժողովուրդն որ եկ յերկրէն իւրեանց, երկիրն բաբիլացւոց **հ** ամ ի գիրկս իւր դայեկեաց զնոսա և սնոյց...: - 448. Եւ յետ եօթանասուն ամի շինւածոյ տաճարին` ապա արձակեալ նէեմի շինէ զպարիսպն երուսաղէմի ի **լբ** ամին արտաշէսի. *որպէս* ասէ գիրքն եզրի: - 448. Եւ *որպէս* ասէ կղէմ և անանիա դամասկացի, թէ **զ** գիրք այլ ընկալաք յեկեղեցի: - 450. Զի *որպէս* ադամ յաստուածանալն փութացաւ, և բանն աստուած ի մարդանալն փութացաւ. վասն որոյ ամք թուոց զանազան են եղեալ...: - 451. Եւ միանգամայն յադամայ ի ծնունդն քրիստոսի ամք **րճղը.** ըստ եօթանասնիցն *որպէս* ասացաւ ի վերոյ: - 453. Վեշտասաներորդ, *Որպէս* հոգի և մարմին միաւորեալ **ժ** եղանակաւ: - 454. Վասն է՞ր հօր ո՛չ տօնեմք *որպէս* քրիստոսի և հոգւոյն: - 455. Ո՞ր քան առաւել մերս անկրթութեան մտօք և իրօք պարտ էր հրաժարիլ և ի բաց փախչիլ *որպէս* խռիւ ի հրոյ և զաչացու ի լուսոյ: - 456. Եւ են սոքա կրկին զօրութիւնք. արարչական և

արքունական. ըստ փիլոնի *որպէս* կրկին ձեռք մարդոյ աջ և ահեակ: - 457. Նա՛խ` զի գործ ողորմութեանն է ի սկիզբն աշխարհի` և ի մէջն. և ի կատարումն յարութեամբ մարդկան *որպէս* ցուցաւ ի վերոյ: - 458. Այլ արդարութիւնն երբեմն ծածկեալ` և ողորմութիւնն յայտնի, *որպէս* յարդարացուցանել զամբարիշտն, և յառաջին գալուստն քրիստոսի: - 459. Երբեմն արդարութիւնն յայտնի` և ողորմութիւնն ծածկեալ. *որպէս* պատիժն մանկանց առանց մկրտութեան մեռելոց, և յերկրորդ գալուստն քրիստոսի: - 459. Եւ երբեմն երկոքեանն ծածուկ. *որպէս* ի նեղութիւնս իւրաքանչիւր արդարոց և անմեղաց. և ի հիւանդութիւնս տղայոց: - 459. Իսկ երբեմն երկոքեանն յայտնի. *որպէս* ի հատուցումն արդարոց. և ի պատիժ անարգելոցն...: - 459. Եւ յովսէփ արդարն էր ի թագաւորական ցեղէն. *որպէս* պատմէ՛ աստուածախօսութիւնն Մատթէոս և Ղուկաս: - 460. Եւ յովսէփ որդի դաւթի *որպէս* ցուցաւ: - 460. *Որպէս* ահարօն ունէր զդուստրն ամինադաբայ` զքոյրն նայասոնի իշխանին յուդայ: - 461. Տասներորդ` *որպէս* ի դրախտին մերկ էին ադամ և եւա և ո՛չ ամաչէին զի անմեղք էին: - 461. Նա՛խ` սրբութիւն հասարակ. *որպէս* շնորհք մկրտութեան և խոստովանութեան. զի որք անցանեն ընդ նա՛ սրբին: - 462. Երրորդ` շնորհք կուսութեան. որ և սա՛ է յատկական եղանակ. *որպէս* սրբոյ կուսին: - 462. Սակայն արմատ մեղացն որ է՛ ցանկութիւնն և դիւրասահութիւնն ի մեղանչելն` մնայ. *որպէս* յա՛յտ է ի մկրտեալսն որք կարեն մեղանչել: - 462. Երկրորդ` սրբութիւն արգանդին մերժէ՛ զմեղս և հերքէ՛ զդիւրասահութիւն մեղանչելոյն մահու չափ. *որպէս* երեմիային և յովհաննուն: - 462. Երրորդ` սրբութիւն յատկական. *որպէս* սրբոյ կուսին, բառնայ զսկզբնական մեղս և զարմատն և դիւրասահութիւն մեղանչելոյն մահու չափ և ներելապէս: - 462. Երրորդ` համակ հանապազորդ ներգործական դարձումն բոլոր մարդոյն առ աստուած. որով մարդն աստուածային քաղցրութեամբն զմայլի. *որպէս* հրեշտակք ի բոլոր սրտէ` յամենայն անձնէ և յամենայն զօրութենէ միշտ ներգործաբար դիմեն առ աստուած. և յիւրաքանչիւրսն ճառագայթի՛ ի նմա՛ աստուած: - 462. Եւ ունէր շնորհօք արգելք ի մեղաց մահու չափ և ներելապէս. *որպէս* յովհաննուն և երեմիային: - 463. Իսկ զչորրորդ սրբութիւնն որ է՛ միաւորութիւն բանականին առ աստուած, և միշտ ներգործապէս դիմել առ աստուած *որպէս* հրեշտակք. ընկալաւ աստուածածին կոյսն ի յղանալն զորդին աստուծոյ: - 463. Երրորդ` *որպէս* գերազա՛նց է քան զամենայն պատիւ մայր աստուծոյ լինիլ: - 463. Զի *որպէս* սատանայ օձիւն խօսեցաւ առ կոյսն եւա, այսպէս տէր մեր հրեշտակիւն առ կոյսն մարիամ: - 463. Երրորդ` զի կոյս էր ողջոյնընկալն և գերազանց քան զամենայն կոյս *որպէս* ցուցաւ: - 464. Զբառս զայս ընդունելութեան դնէ` ընդ քեզ. այսինքն տէրն յետ ծննդեանն ընդ քեզ յաւիտեանս յաւիտենից. *որպէս* ասէր ընդ աշակերտսն «ես ընդ ձեզ եմ զամենայն աւուրս»: - 464. Երրորդ` ըղձական խնդրութեան. *որպէս* ի տուբիթն «խնդրութիւն քեզ»: - 464. Չորրորդ` ըղձական օրհութեան. *որպէս* ի հռութն ասէ «օրհնեսցէ՛ զքեզ տէր»: - 464. *Որպէս* և ինքն ասէր, «յայսմ հետէ երանիցեն ինձ ամենայն ազգ»: - 464. Այլ և ծանիր, զի յընտրողութիւնն ոչ էր վաղվաղուկ *որպէս* եւա: - 465. Եւ ի հարցանելն ո՛չ էր երկբայ *որպէս* զաքարիա: - 465. Եւ ո՛չ ի հաւանելն յամր *որպէս* սառա: - 465. Ապա թէ առանց ընտրողութեան ամենայն բանի հաւանին` կորիցեն *որպէս* եւա: - 465. Եւ թէ ամենևին անհաւան և յամր լինին` պատժին *որպէս* զաքարիա: - 465. Նոյնպէս և բանն աստուած թէ կարի իսկ յառաջին դարս էր մարմնացեալ, *որպէս* յաւուրս նոյի` աբրահամու և կամ մովսէսի` լինէր կրկին վնաս: - 467. Իսկ ա՛յլ վարդապետք ասեն, թէ ետ զբնական օրէնս *որպէս* նոյի և յառաջ քան զնա: - 467. Իսկ մեր վարդապետք ասեն *որպէս* մեծն ներսէս, թէ ի զերրորդ աւուր արարաւ առաջին ադամն ի պատկեր տիրական: - 467. Եօթներորդ` բանին էր պատշաճ պատմել զհօրէ. և երևիլ մեզ. *որպէս* ներտրամադրեալ բանն յառաջ գայ և լինի բարբառ և գրեալ ի քարտիսի, երևի և շօշափի: - 468. Նա՛խ` զի ո՛չ լինէր այն որդի ըստ բնութեան ծնողին. *որպէս* և ո՛չ եւա ադամայ. վասն որոյ յարգանդէ ծննդեամբ եղև որդի կուսին: - 469. Ա՛րդ` սքանչելիք էին ի մայրն քրիստոսի *որպէս* ասեն վարդապետք: - 469. Եւ *որպէս* ասացաւ ունի մայրական խնդութիւն հանդերձ կուսական պատուով: - 469. Զի *որպէս* զհայելին ո՛չ բեկանէ շառաւիղ արեգականն: - 469. Եւ այն ևս սքանչելիք, որ ի փոքրագոյն մարմինն ընկալեալ եղև հոգի բանական, և տեսակաւորեալ *որպէս* քառասնօրեայ մանուկ յարգանդի: - 470. Երրորդ` զի մի՛ իցէ ըստ հասարակաց կարգի. այլ ի վեր քան զբնութիւն *որպէս* ասացաւ: - 470. Այլ և ո՛չ ի մսոյ կամ յոսկերաց *որպէս* եւա ի կողէն: - 470. Եւ ա՛յս ի վայրկեան ժամու *որպէս* ասացաւ ի վերոյ: - 471. Երկրորդ` ընդ մտանելն յարգանդ բանին` շնչաւորիլն և գտանիլն *որպէս* քառասնօրեայ: - 471. Առաջին ծնունդն ո՛չ յառնէ և ո՛չ ի կնոջէ. *որպէս* ադամայն: - 471. Երկրորդն յառնէ առանց կնոջ. *որպէս* եւա: - 471. Երրորդն յառնէ և ի կնոջէ. *որպէս* հասարակաց ծնունդս: - 471. Չորրորդ եղանակն որ կատարումն է այլոցն` ի կնոջէ առանց առն. *որպէս* ծնունդն քրիստոսի զօրութեամբ հոգւոյն սրբոյ: -

471. Զի *որպէս* ի կուսական արգանդէ, նոյնպէս ծնաւ ի կոյս գերեզմանէ վիմովն կնքելով: - 471. Եւ զի հոգին է Նս ի հօրէ, սակայն բղխումն է և ո՛չ ծնունդ *որպէս* ցուցաւ ի վերոյ: - 472. Եօթներորդ՝ նա՛ միա՛յն է միշտ և անդադար ծնունդ. զի ո՛չ սակաւ ի ժամանակի, և ո՛չ ի ժամանակի դադարի. այլ *որպէս* լոյս ի հրոյ միշտ և անհատապէս ծնանի: - 472. Ութերորդ՝ նա՛ միա՛յն է ծնունդ ի հօրէ և ո՛չ երբէք հայրանայ. զի ո՛չ ունի յինքենէ ծնունդ *որպէս* նա՛ ի հօրէ: - 472. Աստ գիտելի է, *որպէս* միածին կոչի անմարմնաբար և ըստ մարմնոյ: - 472. Յիսուս՝ փրկիչ թարգմանի. *որպէս* ասաց հրեշտակն առ յովսէփ: - 473. Զի տրտմութիւն արտասուաց ընդ մահուանն բարձաւ. իսկ ամօթ և ցաւք մարմնոյ՝ ընդ մեղացն բարձան. *որպէս* ի հատանիլ արմատոյ՝ չորանան ստեղունքն: - 474. Նա՛խ՝ օծումն մարմնական. *որպէս* փափկասիրաց: - 474. Երկրորդ՝ օծումն մարտական. *որպէս* ըմբշամարտից: - 474. Երրորդ՝ օծումն մաքրական. *որպէս* հիւանդաց: - 474. Չորրորդ՝ օծումն զմռոյ. *որպէս* մեռելոց: - 474. Իններորդ՝ օծումն որդէգրութեան. *որպէս* մկրտութիւնն: - 474. Տասներորդ գերագոյն սոցա՝ ըստ բնութեան միաւորութեան. *որպէս* բանին աստուծոյ ընդ մարդկութիւնս: - 474. Իսկ մկրտութիւն նորա ո՛չ որդեգրութեան էր *որպէս* մերս. այլ ճշմարիտ որդիութեանն յայտնութիւն ըստ ձայնին հօր «դա՛ է որդի իմ սիրելի»: - 474. Օծօղն է հայր. և Օծումն *որպէս* իւղ հոգին սուրբ. և Օծեալն բանն մարմնացեալ: - 475. Զի էութիւն ընդ պատահման միշտ անշփոթ միաւորի. *որպէս* որակ և քանակ ի գոյացութեան. զի անմեկնելի որոշմունք են: - 475. Իսկ պատահումն ընդ պատահման միշտ շփոթմամբ միաւորին. *որպէս* գոյն ի սևէ և ի սպիտակէ՛: - 475. Եւ այնք որ էութիւն ընդ էութիւն միաւորին՝ են որք շփոթմամբ միաւորին. *որպէս* ջուր ընդ գինի. և **դ** տարերք: - 475. Եւ են որք անշփոթ միաւորին. *որպէս* հուր և երկաթ. հոգի և մարմին. սեռ ի տեսակս. և տեսակ յանհատս: - 475. Զի են որ միաւորեալքն էութիւնք են և շաղկապն պատահումն. *որպէս* երկուք ոմանք անջատեալք ի միմեանց՝ պատահմամբ սիրոյ շաղկապին: - 476. *Որպէս* ձևն բոլորակ՝ և գոյնն՝ ենթակայ նիւթովն: - 476. Եւ են որ էութիւնք են և էութեամբ շաղկապին. *որպէս* երկոքին նիւթք սոսընձով կամ երկաթով: - 476. Առաջինն ըստ դրութեան, *որպէս* կէտ. գիծ. մակերևոյթ. և մարմին: - 476. Իսկ ըստ ժողովման, *որպէս* եկեղեցի. և անձն. հօտ. կամ քաղաք: - 476. Իսկ ըստ կոչման, *որպէս* քրիստոնեայք. մկրտեալք. ծառայք. և ստեղծեալք: - 476. Յասիցելոցս ո՛չ ոքն յարմարի միաւորութեան փրկչին. բայց միայն երրորդն առաջնոյն. այսինքն էութիւն առ էութիւն անշփոթ խառնումն. *որպէս* հոգւոյ և մարմնոյ. զոր և յառաջիկայդ ցուցցի: - 476. Առաջին միաւորութիւն ստոյգ և ճշմարիտ՝ հոմանիւթ մասնաւորաբար որոշեցելոց. որոց ոչ ինչ տարանիւթ ընդ մէջ երևի. *որպէս* երկուց ջահից լուցելոց միաւորութիւն լուսոյն: - 476. Երրորդ առ այսոքիւք՝ միաւորութիւն անուանեմք և զխառնուածս երկուց նայից ըստ զանազան որակութեանց. յորում ո՛չ ոք ի խառնեցելոցն զիւր ծայրագոյն որակութիւնն սեռաբար կարօղ է պահել. այլ շփոթեալ անկանի ի ծայրագոյն որակութենէն. *որպէս* զջուրց և զգինեացն խառնուած, և զմեղերաց: - 476. Եւ կամ աննիւթ ինչ և անկերպ՝ ընդ նիւթական կերպարանաց ձևացեալ. յորում իւրաքանչիւրոցն էութիւնք անշփոթաբար երևին. *որպէս* պղինձ գնդացեալ. կամ քուէացեալ: - 476. Եւ կամ *որպէս* հուր ընդ գնդացելոյն ձևացեալ պղնձոյ: - 476. Նա՛խ՝ *որպէս* մարդն յայլ և այլ բնութեանց միաւորեալ՝ մի անձն և մի դէմ և մի բնութիւն կատարի. զի մի ասեմք զմարդն և մի զբնութիւն նորա: - 477. Երկրորդ՝ *որպէս* բոլոր հոգին է՛ ի բոլոր մարմինն միաւորեալ. և բոլորն է՛ յիւրաքանչիւր մասն մարմնոյն: - 477. Երրորդ՝ *որպէս* բաժանեալ ի միմեանց՝ ո՛չ գոյ մարդ. այլ մեռեալ մարմին կամ մերկ հոգի: - 477. Հինգերորդ՝ *որպէս* մարմինն զգայական միաւորեալ ընդ բանական հոգոյ՝ ո՛չ է և ոչ ասի զգայական. այլ բանական մարդ: - 477. Վեցերորդ՝ *որպէս* անկենդան մարմինս միաւորեալ ընդ հոգւոյն՝ կենդանի է և ասի: - 477. Եօթներորդ՝ *որպէս* այլայլական և փոփոխելի մարմինս կայ և մնայ անփոփոխ և անապական միաւորեալ ընդ հոգւոյն մինչև ցորոշումն: - 477. Ութերորդ՝ *որպէս* ի միաւորիլ հոգւոյ և մարմնոյ յառաջագայի ի միոյ կամաց միով զօրութեամբ հանճար և ներգործութիւն: - 478. Զի *որպէս* ո՛չ գոյ սկիզբն աստուածութեան նորա, այսպէս և ոչ կատարումն մարդկութեան և աստուածութեան նորա: - 478. Վասն է՞ր ոչ կատարեալ հասակաւ ծնաւ քրիստոս *որպէս* զադամ: - 479. Երկրորդ՝ զի արարիչն ընդ բութեան կարգս եմուտ. *որպէս* մարդ լինիլն և ի կուսէ ծնանիլն: - 479. Երրորդ՝ զի իւրաքանչիւր հասակի զմեղս բարձցէ. *որպէս* ծննդեամբն զերկունս ելոյծ. և մահուամբն զմահ. նոյնպէս և տղայ և մանուկ և երիտասարդ հասակաւ զնոսա արդարացոյց: - 479. Չորրորդ՝ *որպէս* արու բռնացա՛ւ տէր ի քակել զօրէնս բնութեան. և խզեաց զկապ կուսանաց և զմայրական. այսինքն զի որ մա՛յր է՝ կոյս ո՛չ է. և որ կոյս է՝ մայր ո՛չ է: - 480. Այլ և եղև այր, զի *որպէս* ծնօղն աստուածածին ազգի կանանց, և ի նմանէ ծնեալն աստուած՝ արանց միանգամայն և հանուրց լիցի փրկութեան պատճառ: - 480. Ասեն

վարդապետք եթէ՝ *որպէս* մարգարէքն և առաքեալքն զխօսեցեալ բանս իւրեանց ի ձեռս ունին իբր պատգամաբեր յաստուծոյ առ մարդիկ: - 481. Կրկին է գիր. այսինքն կենաց և մահու. զի բարի գործովք գրիմք ի դպրութիւնն կենաց. և մեղօք գրիմք ի գիրն մահու և դատապարտութեան. *որպէս* ասեմք թէ զձեռագիր յանցանաց քոց ջնջեսցէ աստուած: - 481. Այս դպրութիւնքս բանին ի կատարածի ըստ դանիէլի. *որպէս* գրեալ է աստ յայլում տեղւոջ՝ անդ տեսցես: - 481. Զայս *որպէս* ձեռին գիր ունէր սատանայ, և նովաւ չարչարէր զմարդիկ՝ թէ աստուած ասաց մի ուտել և դու կերեր և մեռար. իմ ի՞նչ մեղք է: - 481. Եւ *որպէս* կարգեաց տեառն եղբայրն յակոբոս զընթերցուածն. և ի նմին աւուր զերկու տօնս: - 482. Իսկ հայաստանեայ քրիստոս *որպէս* ուսան ի սրբոյն գրիգորէ՝ անփոփոխ կացին ի նմին: - 482. Չորեքտասաներորդ՝ ըստ մեծին գրիգորի աստուածաբանի և սրբոյն բարսղի կեսարացւոյ *որպէս* ասացաւ ի վերոյ: - 484. Այլ և ո՛չ օրէնս դնէր *որպէս* մկրտութիւնն ի մեզ: - 485. Երկրորդ՝ զի ցուցցէ զճշմարիտ մարդեղութիւն իւր և ո՛չ կարծեսցի առ աչօք. *որպէս* զրկեալքն ի շնորհաց նորա ասացին: - 485. Իններորդ՝ զի աւետիս հարցն հաստատեսցէ. զի անսո՛ւտ է խոստմունք աւետեացն աստուծոյ. և *որպէս* զայս աւետիս ուխտի կատարեաց, նոյնպէս և զայլսն կատարեսցէ. այսինքն ի ծառայութենէ ազատութիւն, և արքայութեան խոստմունքն: - 485. Այլ ճեղքելով *որպէս* օրէնն էր անդրանկացն ճեղքել և ո՛չ հատանել: - 486. *Որպէս* եսաւ անդրանիկն իսահակայ՝ կցողական դեղօք ողջացոյց զմարմին իւր և արար անթլփատ. զի ցրեսցէ զուխտն աստուծոյ: - 486. Եւ *որպէս* զմարմնաւոր թլփատութիւնն աւանդեաց աբրահամու, նոյնպէս զհոգևորն որ է՛ թլփատութիւն սրտի՝ հրամայեաց ի ձեռն մովսէսի. *որպէս* յերկրորդ օրէնքն «թլփատեցէք զխստութիւն սրտից ձերոց» ասէ: - 486. Մկրտողն էր յովհաննէս. *որպէս* սպասաւոր քահանայքն: - 487. Զի են անուանք որ զբնութիւնն նշանակեն *որպէս* մարդ: - 487. Եւ են որ զանձն. *որպէս* պետրոս: - 487. Եւ են որք զանձն և զբնութիւնն նշանակեն. *որպէս* դա՛, սա՛, նա՛: - 487. Զի է՛ որ մատուցօղն մեծ է քան զպատարագն. *որպէս* հին օրինաց պատարագն. զի անասունք էին: - 491. Եւ է՛ որ պատարագն մեծ է քան զմատուցօղն. *որպէս* նոր օրինացս մարմինն քրիստոսի մեծ է քան զքահանայն: - 491. Եւ է՛ որ մատուցօղն մեծ է քան զընդունօղն. *որպէս* մելքիսեդեկ քան զաբրահամ. և քահանայն մեծ է քան զժողովուրդն որ ճաշակէ: - 491. Չորրորդ՝ յապարանս պիղատոսի. և մատնեցաւ *որպէս* չարագործ: - 492. Ասեմք թէ՝ ո՛չ զիարկաւորն, այլ զկամաւոր մահն կրեաց *որպէս* ցուցաւ ի վերոյ: - 497. *Որպէս* այնոքիկ որք զօրացան այսու մահուամբ և զորդեգրութեանն ընկալան շնորհ և նախատակեցան, նոքա չարչարակից եղեն քրիստոսի, և փառացն հաղորդակիցք: - 497. և Դարձեալ ասեմք, մեղքն ապականութիւնն են առաջին և վերջին ծայրքն կրից. իսկ մահն միջին *որպէս* ցուցաւ ի վերոյ: - 497. Եւ թէ ոք ասիցէ, *որպէս* մահուամբ զմահ եբարձ, այսպէս և ապականութեամբ զապականութիւն: - 497. Զի *որպէս* մահուամբ զմահ եբարձ, և ապականութեամբ զապականութիւն, և անիծիւք զանէծք, և մեղօք զմեղս *որպէս* դու ժայթքե՛ս: - 497. Այլ զորօրինակ՝ բժիշկք երբեմն նմանեաւն և երբեմն հակառակաւն բժշկեն. նմանեաւ՝ *որպէս* հրով զհուր, և ցրտով զցուրտ: - 497. Իսկ հակառակաւն՝ *որպէս* ջերմ զցուրտ, և գէճ զչորն արտաքսէ: - 497. Այսպէս և տէր մեր նմանեաւ, *որպէս* անիծիւք զանէծս՝ և մահուամբ զմահ եբարձ. իսկ հակառակաւն՝ անապական և անմեղ մարմնովն զմեղս և զապականութիւն եղոյծ: - 498. Դարձեալ՝ մահն խառնեա՛լ է ընդ բարւոյ. և ապականութիւնն ամենևին չար. *որպէս* ցուցաւ ի գիրս քառասնօրեայ գալստեանն և մահուն սիմէօնի. ապա յա՛յտ է թէ ա՛յլ է մահ և ա՛յլ ապականութիւն: - 498. Նախ *որպէս* ասացաւ՝ ապականութիւնն ծունդ է մեղաց՝ և մեղքն չա՛ր է. և մեղք ո՛չ կրեաց սուրբ մարմինն քրիստոսի. ապա ուրեմն անապակա՛ն է: - 498. Հինգերորդ՝ ապականութիւն մեր մարմնոցս է՛ ի սերմանէ հօր ի ձեռն կնոջ խառնեալ. իսկ մարմին բանին ո՛չ է ի սերմանէ հօր և մօր. այլ ի կուսական արգանդէ և յանապական արենէ բեղնաւորեալ *որպէս* ցուցաւ ի վերոյ ի սոյն գլուխ ի Ժ համարն. ապա ուրեմն անապակա՛ն է մարմին բանին աստուծոյ: - 499. Ա՛րդ՝ եթէ ծնօղն անապական է *որպէս* և է՛, զիա՞րդ ծնեալն ի նմանէ ապականացու լիցի. ապա ուրեմն անապակա՛ն է բանն աստուած ծնեալ մարմնովն: - 499. Տասներորդ՝ ամենայն սուրբ վարդապետք ուղղափառաց *որպէս* եփրեմ՝ ոսկէբերանն՝ կիւրեղ՝ աթանաս՝ և այլք, անապական գրեն և խոստովանին զմարմինն սուրբ: - 499. *Որպէս* դաւիթ ասէ յառաջագոյն. և պետրոս զնոյն ի գիրս գործոց երկրորդէ՛ «մարմին նորա ո՛չ ետես զապականութիւն». ապա ուրեմն անապակա՛ն է մարմինն սուրբ: - 499. Երկոտասաներորդ՝ յա՛յտ է յերից իրաց թէ ապականացու ասելն՝ ակնարկէ՛ ի յապագայն իբր թէ ապականելի՛ է. *որպէս* ասեմք մահկանացու և չարչարելի. և ահա չարչարեցաւ և մեռաւ: - 499. Այլ ա՛րդ՝ յառաջ քան զխաչն ո՛չ ապականացու, և ո՛չ ի խաչին, և ո՛չ ի գերեզմանի *որպէս* մեք խոստովանիմք: - 500. Ասեմք առ այս՝ եթէ ո՛չ են նման մահկանացու և ապականացու ասելն. զի

ա՛յլ է մահ և ա՛յլ ապականութիւն *որպէս* ցուցաւ ի վերոյ: - 500. Դարձեալ ասեմք ըստ ձեզ, թէ յետ խաչին յապականութիւն փոխեցաւ մարմինն տեառն, ապա յառաջ քան զխաչն կատարեալ էր զի ապականացո՛ւ էր. և յետ խաչին անկատար զի անապական եղև *որպէս* դուքդ ասէք: - 500. Այլ միաւորեալ ընդ ինքեան բաժանեաց զմեղս ի հոգւոյն և զապականութիւն ի մարմնոյն. *որպէս* հուր ընդ ոսկւոյ միաւորեալ բաժանէ զժանկն ի նմանէ: - 500. Դարձեալ ասեն հակառակքն, եթէ անապական է մարմինն, ապա ո՛չ է տարրական. այլ ի յերկնից բերեալ. կամ ինքն ի բնութիւնն իւր թանձրացեալ. *որպէս* ասէ եւտիքէս: - 500-501. Ապա թէ ոչ՝ նա՛ որ զադամ երեսնամեայ ստեղծ, կարէ՛ր և նոյն հասակաւն ծնանիլ. այլ այն ո՛չ լինէր ըստ սովորութեան մեր *որպէս* ցուցաւ ի վերոյ: - 501. Եւ տէրն ի մարդեղութեանն զկամաւո՛րն կրեաց յինքեան և ո՛չ զակամայն. զի ո՛չ էր ի ներքոյ հարկի և ծառայութեան բնութեան *որպէս* մեք. այլ տէր և ազատ յամենայն կրից: - 501. Նա՛խ՝ զի բանական մարդ կամաւորո՛քն է մարդ, և ո՛չ ակամայիւքն. *որպէս* կատարեալ էր մարմինն ադամայ նախ քան զմեղանչելն: - 502. Ասեմք մեք, թէ արտածորումն մարմնոյ ո՛չ ունէր մարդն ադամ նախ քան զմեղանչելն ի դրախտին. *որպէս* նոյ ի տապանին. և մանուկն իննամսեայ յարգանդին: - 502. *Որպէս* քաղցն և ծարաւն: - 502. Դարձեալ՝ եթէ առհասարակ սոքա՝ կերակուր՝ արիւն և խոցուածք և մահ՝ ապականութիւնք են *որպէս* դու ասես...: - 503. Երրորդ՝ *որպէս* մարմնով լոյս ծագեաց մարմնաւորացն և քարոզեաց զփրկութիւն: - 503. Չորրորդ՝ *որպէս* անիրաւութեամբ կապեաց սատանայ զհոգիս մարդկան. արդարութեամբն ազատեսցէ քրիստոս զնոսա: - 503. Նախ՝ վասն վճարման պարտուցն լուծան կապանք դժոխոցն. *որպէս* ասէ դաւիթ «զդրունս դժոխոց խորտակեաց և զնիգս փշրեաց»: - 503-504. *Որպէս* մարմնական հուր զանմարմին հոգիսն և զդևսն տանջէ, նոյնպէս և տեղին ըմբռնէ: - 504. Եւ դարձեալ՝ *որպէս* աստուծոյ կարողութեանն է զանմարմին հոգին հրով տանջել և զմարմինն անմահ պահել ի հուրն: - 504. Զի *որպէս* յեսու աւերեաց զերիքով և անէծ զի մի՛ շինեսցի. նոյնպէս և զդժոխքն աւերեաց քրիստոս և անէծ զշինօղսն չար գործօք...: - 504. Այլ մի՛ է դժոխքն. *որպէս* մի է արքայութիւնն: - 504. Եւ *որպէս* ի մի արքայութիւնն օթևանք և փառք բազում են ըստ գործոցն. այսինքն երեսնաւոր. վաթսնաւոր. և **ճ**աւոր: - 504-505. Եւ *որպէս* մի հուրն զանազանապէս այրէ զդալար փայտ՝ և զչոր խոտ՝ և զեղէգն: - 505. Իսկ միջին դժոխք որ կոչի բանտ դժոխոց՝ է՛ միջակ մեղաւորաց. որք ունին հաւատ և ո՛չ գործք. *որպէս* չար հաւատացեալք. կամ գործք և ո՛չ հաւատ. *որպէս* թերահաւատք և անհաւատք: - 505. Իսկ վերջին դժոխք որ կոչի անջրդի գուբ, նոցա՛ է որք ո՛չ ունին չար և ո՛չ բարի. *որպէս* մանկունք անմկրտեալք. ո՛չ տանջին զի չեն մեղանչեալ. և ո՛չ հանգչին զի չեն արդարացեալ. այլ վասն սկզբնականին մնան յանջրդի գուբն խաւարին: - 505. Ա՛րդ՝ եթէ քրիստոս ի ներքին դժոխքն ոչ էջ, ո՛չ է կապեալ հզօրն *որպէս* աւետարանն ասէ. և ոչ զդրունսն խորտակեալ. և ո՛չ զգերիսն աւար առեալ *որպէս* դաւիթ ասէ: - 506. Չորրորդ՝ *որպէս* ադամաւ առ հասարակ մեռան արդարք և մեղաւորք: - 507. Հինգերորդ՝ *որպէս* մեղքն զամենեսին մեռոյց, և շնորհքն առաւել զամենեսին կեցոյց որ գերազօ՛րն է ի վերայ մեղաց: - 507. Եօթներորդ՝ *որպէս* ասացաք յառաջին պատասխանին՝ որդիք մահապարտաց և ապստամբք աստուծոյ մեղաւո՛րքն էին նոցա քարոզեաց և ազատեաց: - 507. Ա՛րդ՝ *որպէս* կենդանեաց շնորհեաց զթողութիւն, նոյնպէս և հոգւոցն առ հասարակ ազատութիւն. *որպէս* ասէ սուրբն եպիփան...: - 507. *Որպէս* բազում անգամ ի ժամանակս պատժոց մեղաց՝ և արդարք ընդ մեղաւորացն կրեն զպատուհասն: - 507. Եւ դարձեալ որ ուղիղն է, *որպէս* մարմնով տեսին ի յերկրի, նոյնպէս և հոգւով ի դժոխս պարտ էր հոգւոցն հաւատալ ի հոգին քրիստոսի և ազատիլ: - 507-508. Եւ *որպէս* դւք զկնի անկման իւրեանց ոչ կարեն արդարանալ ըստ ինքեան. զի անկումն նոցա մա՛հ է նոցա: - 508. *Որպէս* յօրինակէն տեսանի. որ թէպէտ առ հասարակ ելին յեգիպտոսէ յանապատն, այլ ոմանք մտին յերկիրն պարգևաց: - 508. Եւ *որպէս* յինն ժամու ուրբաթուն լոյս ծագեաց հոգւոցն ի դժոխս, նոյնպէս և յինն ժամու շաբաթուն լոյս ծագէ զճառագայթս իւր արեգակն արդարութեան քրիստոս. մինչ յառաւօտուն բոլորապէս տեսանի ինքն յարուցեալ ի մեռելոց: - 509. Եւ *որպէս* ադամ յամենէն ո՛չ եկեր, այլ ի միոյն եկեր և դատապարտեցաւ: - 510. Եւ զի **գ** է օր ի բոլոր տարին. կամ ամենևին պահք. կամ ուտիք. կամ միջակ. *որպէս* նաւակատիկք: - 510. Իսկ նաւակատեաց կերակուր այն է՝ որ միջակ է սոցա երկոցունց. այսինքն ի կենդանւոյ և ի տնկոյ. *որպէս* ձուկն, ձու, և կաթն: - 510. Կամ *որպէս* ասեն ոմանք թէ երկու յաւազոյ և մի ի սերմանէ՛ գոյանան մարմինք ձկանցն: - 510. Նա՛խ՝ զի յետ յարութեանն ո՛չ էր պահք. այլ զատիկ մինչ փեսայն ընդ նոսա էր *որպէս* ինքն հրամայեաց: - 511. Ասեմք, զի ո՛չ ունին շունչ օդոյ այլ շունչ ջրոյ. և հանեալ ի ջրոյն պակասի շունչն. *որպէս* ասացաւ ի վերոյ ի **ծը** գլուխն ի **զ** համարն: - 511. Դարձեալ՝ *որպէս* տնկոց

հատումն է, և ծկանց հանումն, և այլ կենդանեաց զենումն: - 511. Նա՛և բազում տեսակք են ի ջուրս և ի յօդս. *որպէս* չղջիկանն առանց արեան է կե՛ր զամենայն: - 511. Նա՛խ՝ զի աւետարանն յայտնապէս ո՛չ ասէ զժամ յարութեանն. *որպէս* զխաչին և զթաղմանն: - 512. Երրորդ՝ ի մէջ գիշերի ծնաւ ի կուսական արգանդէն *որպէս* յա՛յտ է ի հովւացն և հրեշտակացն: - 512. Ապա ուրեմն յարութիւնն քրիստոսի է՛ ի մէջ գիշերի յաւուր կիրակէի *որպէս* ասացաւ: - 512. Եւ յաւուր ուրբաթու խաւարեցաւ երկիր. *որպէս* ամպն ի վերայ ժողովրդեանն: - 513. Եւ յերեկոյին լոյս ծագեաց հոգւոցն. *որպէս* սիւն լուսոյն իսրայէլի: - 513. Եւ *որպէս* դարձաւ ժողովուրդն ի հանգրուանն առաջին, և տն մարմինն եդաւ ի հող երկրի: - 513. Հնգետասաներորդ՝ ի մէջ գիշերի՛ է յարութիւնն. *որպէս* ասէ ոսկէբերանն ի յարութեան ճառին, և սուրբն նիւսացին, և բարսեղ կեսարացին, և գրիգոր սկեռացին, և այլք...: - 514. Ութև**Ժ**՝ ի մէջ գիշերի է յարութիւն փրկչին, վասն որոյ յերեկոյն մեծ ի մուտս գիշերոյն ճրագալոյց առնեմք և պատարագ *որպէս* ի ծննդեանն: - 514. Ասեմք նախ՝ թէ յարութիւնն ի մէջ գիշերի է *որպէս* ցուցաւ. այլ երևիլն ընդ արշալո՛յսն է: - 515. Այլ պիտո՛յ է բնական **գ** տիւ և **գ** գիշեր գոլ ի սիրտ երկրի *որպէս* ասաց քրիստոս: - 516. Դարձեալ՝ *որպէս* ծալեալն ծածո՛ւկ է և մի կողմն երևի: - 517. Իսկ պատանքն ո՛չ ծալեալ. զի խորհուրդ տընօրէնութեանն ո՛չ ամենևիմբ յայտնի է և ո՛չ անյայտ. *որպէս* կտաւն բազո՛ւմ ունէր փոթուածս: - 517. Երրորդ վասն այն արգել, զի ցուցանէ թէ յոյժ պատուեցաւ մարմինն այն և ո՛չ է համարձակելի *որպէս* յառաջն մաքսաւորք և պոռնիկք մերձենային: - 517. Երեքտասաներորդ, զի մարիամ ո՛չ խոնարհութեամբ կամէր մերձենալ յոտս նորա *որպէս* այլ կանայքն...: - 518. Եւ դարձեալ՝ *որպէս* զայլ կանայսն արար աւետաւորս յարութեան իւրոյ. սոյնպէս և զմագդաղենացին վերանալոյն առ հայր: - 518. Արդ մի՛ մերձենար դու յիս անկատար գոլով. *որպէս* մայր քո եւա ի ծառն գիտութեան...: - 518. Նա՛խ՝ *որպէս* ասաց սուրբն ներսէս՝ քրիստոսի բնութեամբ է հայր՝ և մեզ շնորհօք: - 518. Երրորդ՝ վասն մխիթարութեան աշակերտացն. զի **խ** օր մխիթարեսցէ զնոսա փոխանակ **խ** ժամուն որ տրտմեցան ի մահն քրիստոսի. *որպէս* ասացաւ թէ յարութիւնն ի մէջ գիշերի, այլ երևեցաւ ընդ արշալոյսն առաքելոցն...: - 520. Նա՛խ՝ զի չարչարանքն քրիստոսի պատճառ եղև պարգևաց սուրբ հոգւոյն, պարտ էր նախկին գոլ. *որպէս* ամենայն պատճառ նա՛խ է քան զպատճառելին: - 521. Երկրորդ՝ զի թէ քրիստոս այնպէս փառաւորեալ էր *որպէս* յետ խաչին, արգել և խափան լինէր ամենայն չարչարանացն և փրկութեան մարդկան: - 521. Երրորդ՝ զի պա՛րտ էր քրիստոսի հովուել զպարզամիտ աշակերտսն *որպէս* հաւ զձագս, և_մայր զմանկունսն. և թէ ի սկզբանէ զհոգին ընկալեալ էին՝ ո՛չ էր պիտոյ հովուել զնոսա: - 521. ...զի ուսցին բառնալ զտկարութեան այլոց. *որպէս* քրիստոս զնոցայն եբարձ. իսկ թէ նախ զհոգին առեալ էին՝ ո՛չ կարէին բառնալ զայլոց տկարութիւնն: - 521. Վեցերորդ՝ *որպէս* սերմանելն նա՛խ է քան զպտուղն և զհունձն: - 521. Իններորդ՝ *որպէս* թագաւորք նախ հաշտին ընդ մահապարտս և ապա՛ պարգևաց արժանի առնեն: - 522. *Որպէս* ի ստեղծումն ասացաւ: - 522. Այսպէս և առեալք զհոգին սուրբ բղխեն. ոմանց ի մահ և ոմանց ի կեանս. *որպէս* առ տաբիթայն և առ սափիրային: - 523. Զսառուցեալսն ի հաւատս բորբոքեն. և զվառեալսն չարութեամբ՝ շիջուցանեն. *որպէս* զելիմաս և զսիմոն: - 523. Նախ՝ զի ցուցանէ թէ որ ետ զօրէնսն՝ նոյն առաքեաց և զհոգին և ի նոյն տիպն որոտ և փայլատակումն հողմ և հուր երևեալ *որպէս* անդ ի լերինն: - 524. Երրորդ՝ համարձակութիւն քարոզութեան առանց երկիւղի խօսիլ զբանն առաջի ազգաց և ազանց և թագաւորաց. *որպէս* պետրոս ի միում ժամու զերեք հազարսն հաւատացոյց: - 524. Յօր աստուծոյ վասն է՞ր ոչ տօնեմք *որպէս* քրիստոսի և հոգւոյն սրբոյ: - 525. Դարձեալ՝ զի հայր մարմնով ո՛չ երևեցաւ *որպէս* բանն մարմնացեալ. կամ *որպէս* հոգին սուրբ աղաւնակերպ և հրաձև: - 525. Աղաւնին աւետաբեր է շնորհաց. *որպէս* ի տապանն նոյի եբեր զշիւղ ձիթենւոյն. որ ցուցանէ զշնորհս մկրտելոցն: - 525. Նախ այն է՝ որ զորդի ընդ հօր և սուրբ հոգւոյն փառաւորեմք և օրհնեմք **գ** անձինք ի միում բնութեան. և ո՛չ *որպէս* հինքն հրէական օրհնութիւնս. որք ո՛չ օրհնէին զորդի և զհոգի: - 528. Երկրորդ՝ ի վերնատանն դասք առաքելոցն ի վերայ նոր հաղորդութեանն մարմնոյ և արեանն՝ նոր օրհնեցին զքրիստոս և ելին ի լեառն ձիթենեաց *որպէս* ասէ աւետարանն: - 528. Սակայն մի և նոյն բանն բազմանայ ի բազումս. *որպէս* ի հրեշտակս և ի մարդիկ. ի հին և ի նոր օրէնս. այլ ի միութենէն ո՛չ բաժանի: - 529. Զի յատուկ է անմարմնոյ, *որպէս* ի բազումս բազմանայ և ի միութենէն ո՛չ բաժանի, այսպէս ի մասունս մասնաւորի և ի բոլորէն ո՛չ քակտի: - 529-530. Զի բազմանայ և ի միութեան մնայ. բովանդակի անբովանդակապէս. և բաժանի անբաժանապէս. որ է մի և նոյն տեսակաւ և գոյացութեամբ *որպէս* ցուցաւ: - 530. *Որպէս* գրեալ է ի գիրս պարապմանց այսպէս. եթէ մարդն պատկեր է բանին՝ և բանն է աստուած. ապա և մարդն է պատկեր աստուծոյ: - 530. *Որպէս* խօսեցաւ

հոգին սուրբ ի մարգարէսն. և հոգին սուրբ աստուած է ճշմարիտ. ապա և խօսեցեալքն ի հոգւոյն սրբոյ ճշմարիտ խօսք է աստուծոյ: - 530. Դարձեալ յայտնապէս, զի բանն միացեալ ի մարմնի՝ էր անբաժանաբար ի հայր. *որպէս* առ մեզ ներտրամադրեալս բան և գրեալն ի թղթի: - 531. Նոյնպէս վասն երկրորդին գիտելի է, զի *որպէս* զփայտ թիւրութեամբ պնդեալ՝ դժուարին է ուղղել. նոյնպէս զչար սովորութիւն մարդկան դժուարին է փոփոխել: - 531. Եւ *որպէս* անչափ են սպեղանիք և դեղք բժշկականք մարմնոյ ի բազում և զանազան ծաղիկս խոտոյ և յարմատս, ի տերևս ի պտուղս. և յայլսն. զի սոքա յայտնեն զբազմութիւն հիւանդութեանց մարմնոյ: - 531. Եւ *որպէս* ասեմք, զգայութիւն. զգալ. և զգալի: - 531-532. *Որպէս* ասէ առաքեալն, «գլուխ կնոջ ա՛յր է». զի կինն յառնէ՛ն է և բնութիւն նորա ունի: - 532. Նա՛խ՝ *որպէս* մի է գլուխ, և անդամք բազում: - 532. Նոյնպէս մի է քրիստոս և մի մարմին նորա. որ կոչի մի կաթուղիկէ եկեղեցի. *որպէս* ի հաւատամքն ասի: - 532. Եւ այլ բազում ինչ ունիմք հաւասարութիւն. *որպէս* ցուցանի յառաջիկայդ ի **լը** համարն: - 533. *Որպէս* սեռիւ մի են ամենայն կենդանիք. և տեսակաւ ամենայն մարդ. և անհատիւ մի *որպէս* պետրոս: - 533. Ա՛րդ՝ մի է ամենայն ընդհանուր եկեղեցիք որ է բոլոր քրիստոնեայք ըստ հաւատոյն և կոչմանն յուսոյն *որպէս* սեռիւ: - 533. Եւ մի է ըստ խորհրդոյն՝ այսինքն մկրտութեամբ՝ պատարագելով՝ կարգիւ՝ և այլովն՝ *որպէս* տեսակաւ: - 533. Եւ մի է ըստ ձևոյն արարողութեան պահոց աղօթից *որպէս* անհատիւ: - 533. Կամ *որպէս* բոլոր ի մասունս. կամ *որպէս* հոմանուն ձայն. կամ *որպէս* ի միոջէ և առ մի: - 533. Նա՛խ՝ *որպէս* բոլորն է մարմին և իւրաքանչիւր մասունքն. նոյնպէս և բոլորն մի եկեղեցի՝ և իւրաքանչիւրքն. և բոլորն քրիստոնեայ՝ և մին մարդն. եթէ նման են միմեանց և եթէ աննման: - 533. և Երկրորդ, մի անուն՝ և նշանակեալքն բազումք. *որպէս* խոյ է յերկինս և յերկրի և ի ծովս. նոյնպէս մի կոչի եկեղեցի կենդանի մարդն և շինեալն ի քարանց և եկեղեցին անդրանկացն յերկինս. սակայն զանազա՛ն են որպիսութեամբ: - 533. **Երրորդն ի միոջէ և առ մի. *որպէս* բժշկական դեղ և գործիք. նոյնպէս մի է եկեղեցի յիւրաքանչիւր ազգս. զմի և զնոյն ունելով գործ և իր ի միոյ գլխոյն առ մի անդամքս. ի միոյն քրիստոսէ առ մի քրիստոնեայքս. ի միոյ հաւատոյն առ մի հաւատացեալքս**...: - 533. ...և այլ նմանապէս առ այսոքիւք երրորդ եկեղեցի որով կարո՛ղ են հաւաքել ամենայն տիեզերք երկրի և լինիլ միով հաւատովն մի հաւատացեալք *որպէս* ասացաւ: - 533. Նա՛խ՝ վասն կատարեալ սիրոյն քրիստոսի *որպէս* փեսայի և հարսին: - 534. Ընդ քրիստոսի միաւորեալ. *որպէս* փեսայն որդի է, և հարսն դուստր կոչի աստուծոյ հօր: - 534. *Որպէս* և առ մեզ է. զի կին որդւոյն դուստր կոչի հօրն վասն մի մարմնոյն: - 534. Եւ *որպէս* կողն ադամայ եղև կին. և շինեալ եկեղեցի լինի հարսն քրիստոսի: - 534. Գլուխ եկեղեցւոյ է՛ տէր մեր յիսուս քրիստոս *որպէս* ասացաւ: - 534. Եւ փոխանորդ նորա ի յերկրի ի հինն քահանայապետն *որպէս* ահարօն. և ի նորս կաթողիկոսն իւրաքանչիւր ազգի: - 534. Եւ դարձեալ՝ գլուխ է քրիստոս. և հերք՝ *որպէս* դասք վերին զօրացն ի նմանէ՛ առ մեզ իջուցեալ զշնորհս: - 534. Երրորդ՝ մարգարէք *որպէս* խորհեցեալն բան. առաքեալք *որպէս* խօսեցեալն. և վարդապետք *որպէս* գրեալն: - 535. Երկրորդ՝ *որպէս* հանուրն նախադասի մասնականաց, այսպէս առաքեալքն հանուրց աշխարհի լոյս կոչեցան. և մարգարէքն միոյ ազգի...: - 535. Առաջին վասն պատգամաց. *որպէս* գաբրիէլ առ կոյսն սուրբ: - 535. Եօթներորդ զաւետարանն քարոզել. *որպէս* առաքեալք: - 536. Տասներորդ վասն տեսութեան մեկնութեանն. *որպէս* առ դանիէլին: - 536. ...վասն այն ո՛չ կոչին ճշմարիտ մարգարէ պարզաբար. այլ բաղադրեալ. *որպէս* մարգարէ բահաղու. կամ մարգարէ բարձանց կամ անտառին: - 536. Զորօրինակ՝ մեռեալ մարդ ո՛չ ասի պարզաբար մարդ, նոյնպէս և այս. *որպէս* ցուցաւ ի թագաւորութեանցն **իզ** գլուխն. **ժբ** համարն: - 536. Առաջին՝ ի բնական. *որպէս* երէոց, անասնոց, թռչնոց, և մրջմանց. *որպէս* ցուցաւ ի վերոյ ի **ժգ** գլուխն, **ծա** համարն: - 536. Երկրորդ, արուեստական. *որպէս* բժիշկք, և նաւավարք: - 536. Երրորդ, դիւական. *որպէս* կռոց սուտ մարգարէքն. սեդեկիայն և այլոց բազմաց. որ այժմ երևին ի պատասխանիս կախարդաց. նաև հաւկռիչք և գարէդիւթք. որք են բնաւ սուտք և ոչինչք: - 536. Նա՛խ՝ երազօք. *որպէս* սողոմոնի: - 536. Երկրորդ՝ տեսլեամբ. *որպէս* եսայեայ: - 536. Երրորդ՝ երևակայութեամբ. *որպէս* եղիսէին ի տեսանել զզօրս հրեշտակացն, և մանկանն ո՛չ տեսանել: - 536. Նախ բնական խելքն. որ ի բարեխառն կազմուածոյ հանդիպի. *որպէս* էր՝ ակիտոփէլին և քուսեայ բարեկամին դաւթի: - 537. Երկրորդ ի կրթութենէ ուսմանց. որ արտաքուստ կրթութեամբ ստանայ. *որպէս* պղատոնին և այլոցն: - 537. Երրորդ ի շնորհաց հոգւոյն. *որպէս* մարգարէիցն և առաքելոցն: - 537. Սա յիմա՛ր է ո՛չ գիտէ զտկարութիւն իւր *որպէս* չար հիւանդ. զարթո՛ զսա: - 537. Իսկ հոգևորին հնազանդիմք կամաւ *որպէս* աստուծոյ: - 538. Նախ՝ *որպէս* սահմանն պարունակէ՛ զընդհանուր սահմանեալսն *որպէս* սահման մարդոյ զմարդ: - 538. Երկրորդ՝ *որպէս* սահմանն բաժանէ՛ զմարդն ի ձիոյ: - 538. Երրորդ՝ *որպէս* որք

ելեալ ի սահմանէն՝ ո՛չ են ի նոյն տեսակն: - 538. Նա՛խ՝ թէ անկարգաբար կապէ. *որպէս* քահանայ զեպիսկոպոս կամ զկաթողիկոսս. կամ սարկաւագ զքահանայ. այս ո՛չ կատարի: - 539. *Որպէս* դիմոփիլոս կիսասարկաւագ զքահանայ ոմն արտաքսեաց յեկեղեցւոյ. զոր յանդիմանէ՛ սուրբն դիոնէսիոս յութերորդ թուղթն իւր: - 539. Իսկ առ ներքինս օրհնելն՝ իշխանութիւն և շնորհաց տալն թարգմանի. որ քահանայն կամ եպիսկոպոսն տայ. *որպէս* ցուցաւ ի վերոյ ի **իգ** գլուխն, **հե** համարն: - 540. *Որպէս* մինչ անարժան քահանայն պատարագէ, այլքն հաղորդին սրբութեան. այլ ինքն դատապարտի: - 540. Ասեմք, եթէ որք ի հաւատս ունին թիւրութիւն. *որպէս* հերձուածօղք և վնասիչք եկեղեցւոյ. և որք ի զազիր վարս պղծեալ են գործովք և վնասեն զինքեանս. և անզեղջք են առ երկոսին. յետ մի անգամ և երկիցս խրատելոյ, որոշեսցին յեկեղեցւոյ և պատժեսցին: - 540. Այլ որ այսպէս իրաւամբք կապեսցի՝ հնազանդիլ պարտի կապողին *որպէս* յաստուծոյ շարժեալ: - 540. Իսկ կապելն ի դէմս մեղացն է և մեղսասիրաց. *որպէս* տէր մեր բևեռեաց զմեղս և զսատանայ ընդ խաչափայտին: - 540. Եւ *որպէս* նախ զգայականն և ապա բանականն: - 541. Ըստ այսմ կարգի նախ կապելն է և ապա արձակելն. *որպէս* ասաց պետրոսի: - 541. *Որպէս* որք յեփեսոս՝ զնիկիականն ուղղութիւն ո՛չ քակեցին. այլ ի նոյն տեսակ նոր կանոնս կարգեցին ի հաւատս ուղիղ: - 541. Եւ դարձեալ՝ կարէ՛ վերջինն զառաջնոյն թիւրութիւնն ուղղել և զանիրաւ կապեալն արձակել. *որպէս* աստուածաբանն գրիգոր զարիանոսացն: - 541. Ասեմք առ այս, եթէ համակա՛րգ են քահանայք կամ եպիսկոպոսք *որպէս* առաքեալքն. այլ ունին զվիճակ և ժողովուրդ այլ և այլ: - 541. Եւ զոր նա՛ կապէ, այլքն ո՛չ արձակեն. *որպէս* որ կապեաց զհոգիս ի մարմնի՝ նա՛ արձակեսցէ: - 542. Եւ դարձեալ՝ *որպէս* բանն աստուած անէծ զադամ, նոյն բանն դարձեալ օրհնեաց մարմնովն. թէպէտ մի է գործ Երրորդութեանն: - 542. Եւ *որպէս* եղիա որ կապեաց զերկինս և փախեաւ ի սիդոն. նոյն նմա հրամայեաց աստուած բանալ զերկինս. նմանապէս և այս: - 542. Եւ *որպէս* այսորիկ ժողովք ընդ դէմ հասարակ հերձուածողաց, նոյնպէս և առանձին ժողովք եղև ազգիս հայոց **է** երորդ: - 544. Պետրոս գլուխ է առաքելոցն. *որպէս* գրէ դիոնէսիոս ի **գ** գլուխն եկեղեցական քահանայապետութեան: - 546. *Որպէս* և քրիստոս արար. որ քան մարմնով ընդ առաքեալսն էր՝ եպիսկոպոսունս արար զնոսա. և յետ համբառնալոյն՝ հոգւովն սրբով արար զնոսա կաթողիկոսունս: - 546. *Որպէս* Թադէոս ի հայք զադդէ և զթէոփիլոս: - 546. Ասեմք թէ՝ պետրոս գլուխ է առաքելոցն՝ ո՛չ *որպէս* եպիսկոպոսն քահանայից. կամ կաթողիկոսն եպիսկոպոսաց: - 546. Այլ *որպէս* ի մէջ համակարգից քահանայից մինն լինի հայր: - 546. Եւ *որպէս* ի կենդանակերպս խոյն գլուխ է և առաջին: - 546. Եւ *որպէս* ի դասս հրեշտակաց մինն գնդապետ **բժ**ան գնդին: - 547. Ասեմք առ այս, թէ *որպէս* ի մէջ սերովբէից և քերովբէից և աթոռոց ո՛չ ասի վերնագոյն և նուաստագոյն, զի համակա՛րգ են և շուրջ զավ: - 547. Եւ *որպէս* ի մէջ աւետարանչացն ո՛չ է մեծ և փոքր: - 547. Ո՛չ թէ յայնժամ ետ, այլ յայնժամ խոստացաւ և յետո՛յ ետ. *որպէս* խոստացաւ նստուցանել յերկոտասան աթոռ և յետոյ ետ. նոյնպէս և զայն: - 547. Առաքելոյն պետրոսի հնազա՛նդ եմք *որպէս* քրիստոսի. նաև պօղոսի և ամենայն առաքելոցն և աշակերտացն ամենեցուն և հետևողաց նորա և աթոռոց նոցա: - 547. Եւ այլ չորիցն հնազանդիմք *որպէս* աթոռակից քրիստոսի: - 547. Եւ **լզ** բիւրս սպանին յուղղափառաց դասուց. *որպէս* յա՛յտ է ի պատմութիւնս սրբոյն միխայէլի: - 547. Եւ անապական պատարագեմ զքրիստոս *որպէս* կանոնքն է առաքելոցն և կղեմայ. և դու ապականես ջրով և զայլն *որպէս* յառաջիկայդ ասացի: - 548. ...թէ զերկու քորս **բ** եղբարցն տալ. կամ զսանին քոյրն միւս եղբօրն. *որպէս* քո սուտ պետրոսին կանոն է, և ո՛չ ճշմարիտ պետրոսին. և զայլն լռեմ իբրև զամօթալի: - 548. Եւ թէ ոք ասիցէ, կարի՛ բարկացար. ո՛չ զայս ասեմ հնազանդիլ. այլ *որպէս* լուսաւորիչն գնաց ի հռոմ և հնազանդեցաւ: - 548. Սոքա **է** սիւնք և **է** խարիսխք են եկեղեցւոյ գլուխ կարգեալք ընդ բոլոր տիեզերս *որպէս* ասացաւ: - 549. Եւ ա՛յս է պատճառն որ ոմանք յեօթանասնիցն ասեն. զի եօթանասուն աշակերտացն գլուխ և վարդապետ էր. *որպէս* պետրոս երկոտասանիցն. և առաջինքն ամենայն ուրեք յետնոցն անուամբ կոչեին. այս է ստոյգ պատճառն: - 549. Այլ թէ գիր չունէր մեր ազգս, տե՛ս զի յաստուծոյ տուաւ մեզ գիր, *որպէս* մովսէսիւ իսրայէլի. և այլ ո՞ր ազգ պարծի այսու: - 549. *Որպէս* ասելն, ամենայն մարդ է արդար. ո՛չ ոք մարդ է արդար: - 550. Ահա՛ սոքա առանձնականք և ճշմարիտք. *որպէս* ասի ըստ իմաստասիրացն: - 550. Դարձեալ՝ թէպէտ ըստ պորփիւրոսի՝ մասն բոլորին հետևի. *որպէս* անհատն տեսակին. և տեսակն սեռին: - 550. Իսկ անհատն է առաւել և իսկագոյն և առաջին գոյացութիւն. որ է առանձնական և մասնաւոր *որպէս* զազգս մեր: - 550. Դարձեալ՝ գոյ առաւել ճշմարիտ, գոյ և նուազ ճշմարիտ, *որպէս* գոյ առաւել բարի, և նուազ բարի: - 550. Եւ յորժամ ասիցէ զբարին ոչ չար գոլ, ճշմարիտ է և այս. այլ ըստ պատահման է *որպէս* ցուցաւ: - 550. Ապա յա՛յտ է, զի նըւազ ճշմարիտն

առաւել ճշմարտին հետևեսցի. *որպէս* նուազ բարին առաւել բարւոյն. եթէ ընդհանուրն և եթէ մասնաւորն: - 550. Այլ և արդ կարելի՛ է զի մինն բազմաց հակառակեսցի և յաղթեսցէ. *որպէս* ազգս հայոց զայլս ամենայն որ բազո՛ւմ են և ո՛չ մի: - 550. Դարձեալ՝ որ ոք մեծ է ի ճշմարտութիւնն՝ նա՛ առաւե՛լ է ճշմարիտ. *որպէս* որք մեծ են լուսոյն և ջերմութեան՝ առաւել լոյս են և ջերմ: - 550. Այսպէս և ամենայն ազգք քրիստոնէից զնոյն ունէին ճանապարհ դաւանութեան և աւանդութեան յառաքելոց անտի մինչ ի ժողովն քաղկեդոնի. և յետ անտի բաժանեցան ամենայն ազգք յամենայն իրս, *որպէս* յա՛յտ է յիւրաքանչիւր եկեղեցիս: - 551. *Որպէս* զինչ ասեմ համառօտ թէ՝ թերութիւն է մեր բաժանել զբանն ի մարմնոյն յերկու բնութիւնս և յերկու դէմս. ի կրկին կամս և ի գործս: - 552. Այլ դաւանութիւն նոցա այս է. *որպէս* զի մի՛ լիցի ըստ նոցա աստուած մարդացեալ. կամ մերս բնութիւն ընդ աստուածութեանն միաւորեալ. *որպէս* ընդարձակապէս ցուցանէ աստուածաբանն կիւրեղ ի գիրս պարապմանց: - 552. Չորրորդ՝ մնացուած պատարագին. *որպէս* ինքեանք քաջ գիտեն: - 553. Եւ այսպէս բազում ունելով իւրաքանչիւր ոք սահմանս առանձին, միայն հայք նախատեալ լինին *որպէս* ո՛չ ունել միաբանութիւն ընդ այլս ի քրիստոնէից. այլ առանձին միայնաբար ընթանալ. և այսու *որպէս* հակառակ եպերեալ: - 553. *Որպէս* ահա՛ յերկոսեան ճրագալոյցսն այսինքն ի ծննդեանն և ի յարութեանն միաբանին հայք և յոյնք և ասորիք. իսկ լատինք ո՛չ: - 554. Եւ այսոքիկ թէպէտ և ոմանց ո՛չ թուեսցին *որպէս* փոքր կարծեցեալք. սակայն աւանդութիւն և ո՛չ հաւատ: - 554. *Որպէս* և տօն ծննդեանն զոր միաբան ասեն տօնել այլոց քրիստոնէից բաց ի հայոց. և զի և այն աւանդութիւն է և տօնախմբութիւն և ո՛չ հաւատ: - 554. *Որպէս* և ո՛չ բարկանայ վասն պայծառակերպութեանն իւրաքանչիւր ոք յայլում ժամու տօնել: - 554. Դարձեալ՝ որ ինչ նախ քան զօրէնս գործեին՝ մեղք կոչիւր. *որպէս* ի դարս նոյի. և այլս: - 555. Իսկ յետ օրինացն՝ անօրէնութիւն. *որպէս* որք յանապատի անդ անօրինեցաւ ժողովուրդն: - 555. Եւ բերէին զպատարագն *որպէս* վասն մեղաց՝ նոյնպէս և վասն յանցանաց: - 555. Պատասխանեմ և ասեմ եթէ ո՛չ են միմեանց հակառակ. այլ երկոքեանն ճշմարիտք են *որպէս* ցուցանեմք յետոյ: - 556. Եւ սոքա մտօք և ո՛չ մարմնով կատարին. *որպէս* յայտ է ի բանսարկուն սատանայ որ յանցեաւ հպարտութեամբ և նախանձով: - 556. Ապա անհաւատութիւն և յուսահատութիւն և ատելութիւն է՛ ի միտս. և սոքա մեծ են քան զամենայն չարիս *որպէս* ուսուցանեն գիրք սուրբք: - 557. Տասներորդ՝ յա՛յտ է ի համազօրութենէ. զի երբեմն շարժէ՛ ախտ զմիտս. և երբեմն շարժի ի մտացն ախտ. *որպէս* ասէ երանելին եւագրիոս. եթէ մինչ յերեսնամեայ հասակս ախտն շարժէ զմիտս ի ցանկութիւն. և անտի յառաջ միտքն շարժէ զախտն: - 557. Ա՛րդ՝ եթէ շարժումն ախտիցն մեղք է ըստ որում է՛, ապա և շարժումն մտացն մեղք է *որպէս* ցուցաւ: - 557. Նա՛խ՝ զի խորհրդոյն չարն ի բոլոր հոգի և ի մարմինն սփռի *որպէս* թոյնք օձից: - 557. Երկրորդ՝ *որպէս* կառք և կառավարն. եթէ մարմինն թիւրի, միտքն ուղղէ՛ զնա: - 557. Վասն որոյ յետոյ տրտմի և նեղի. ատէ՛ զպատճառ մեղացն և դառնայ ինքեան. *որպէս* ամոնի եղև: - 558. Ապա յա՛յտ է թէ *որպէս* գործ մարմնոյն առ այլս է չար, և խորհուրդ մեղացն առաւել ինքեան է չար: - 558. Ապա ուրեմն յա՛յտ է լուծումն տարակուսանացդ ըստ կարգի. և ոչ ոքն ի նոցանէ հակառակ գոն միմեանց *որպէս* ասացաւ: - 558. Տրտմութիւն հողոյ *որպէս* ասացաք: - 560. Հինգերորդ՝ *որպէս* ասեն այլ վարդապետք, թէ լինելութիւն մեղաց է յանկարգութենէ կամաց. և անկարգութիւն կամացն է կրկին...: - 560. Նա՛խ՝ զի ամենայն մեղք կամ ընդ դէմ իւր մարմնոյ է, կամ ընկերին. իսկ հպարտութիւնն է մեղանչումն ընդ դէմ աստուծոյ. *որպէս* սատանայի: - 561. Երրորդ՝ զի զայլ մեղս մեղսասէրքն գործեն. իսկ զհպարտութիւնն սուրբք և ընտիրք. *որպէս* հրեշտակք յերկինս: - 562. **Հինգերորդ՝ զի յամենայն մեղս գտանի հպարտութիւն. զի *որպէս* առանց սիրոյ այլ առաքինութիւնք ոչ ինչ են, նոյնպէս առ հպարտութեան ամենայն մոլութիւնք ոչ ինչ են:** - 562. **Ութերորդ՝ զի ամենայն տեսակք ախտիցն ի՛ր մի երևեցուցանեն մեզ. *որպէս* գողութիւն զինչս, և պոռնկութիւն զհեշտութիւն. իսկ հպարտութեանն ո՛չ գոյ ամենևին ակնկալութիւն**: - 562. *Որպէս* ոք զգգալի ակն խփէ և զրկի ի լուսոյն և առնէ խաւար. նոյնպէս և նոքա: - 562. Նա՛խ՝ զի որ կամաւ և գիտութեամբ մեղանչէ, առաւել է քան զակամայն և զտգիտութեան. զի թէպէտ և սոքա մեղք են, այլ պատիժն նուազ. *որպէս* անասնոյն քան զմարդոյն: - 563. ...*որպէս* առաւել է մեղք հրեշտակին քան զմարդոյն. վասն այն մին քահանայի մեղք՝ որ չափ բոլոր ժողովրդեանն է. ուստի յա՛յտ է ի պատարագէ հնոյն...: - 563. *Որպէս* յա՛յտ է ի տրտմիլն. զի խորհուրդն մշակ եղեալ յետոյ ի յոխս և ի քէնս և ի նախանձս յաւելու: - 564. *Որպէս* անպտուղ երկիր կորուսանէ զբարի սերմանս և փուշ բուսուցանէ. նոյնպէս և մեք զբարի սերմանս որ եդ ի մեզ աստուած ի չարն փոխարկեմք: - 564. *Որպէս* բարկութիւնն բարի է ի դէմս չարեացն. փոխեմք զայն ընդ դէմ բարւոյն: - 564. Ոմանք բազում եղանակս ասեն.

այսինքն Պատճառաւ մեծ. *որպէս* մեղք արուսեկին: - 565. Հասարակութեամբ *որպէս* ադամայն: - 565. Տգեղութեամբ *որպէս* յուդային: - 565. Դժուարաթողութեամբ, *որպէս* մեղքն որ ընդ դէմ հոգւոյն սրբոյ: - 565. Կամ վտանգաւ. *որպէս* տգիտութիւնն: - 565. Անանջատութեամբ. *որպէս* ագահութիւնն: - 565. Դիւրասահութեամբ. *որպէս* գիճութիւնն: - 565. Դժուարայաղթութեամբ. *որպէս* հպարտութիւնն: - 565. Մտակուրութեամբ. *որպէս* բարկութիւնն: - 565. Կամ բարկացուցանելով զաստուած. *որպէս* կռապաշտութիւնն. և այլք այլ ինչ ասեն: - 565. Զի **ժ** պատուիրանքն և **է** մահու չափ մեղքն են ըստ գոյացութեան մեղք. *որպէս* մի՛ շնարն և մի՛ գողանարն և մի սպանաներն և մի՛ սուտ վկայերն: - 565. Երրորդ՝ զի չունէին պատճառս հայհոյութեան հոգւոյն *որպէս* զորդոյ. զի տեսանէին մարմին զգեցեալ, ուտել և ըմպել, տքնիլ և ննջել: - 566. Հինգերորդ՝ նման սատանային լինին որք ուրանան զպատճառն գոյութեան հոգոց իւրեանց. յիրաւի ապա *որպէս* սատանայ ո՛չ ունի թողութիւն ի կեանս յայս և ո՛չ ի հանդերձեալն և գործ ունէի նմին: - 566. Ա՛րդ՝ թէպէտ հոգին ո՛չ լինի սերեալ ի հօրէն *որպէս* մարմինն, սակայն սկզբնական մեղքն անցանէ ի հոգւոյն յադամայ ի հոգիս զհետ եկելոցն միջնորդութեամբ մարմնոյն ցանկութեամբ ծնելոյն: - 567. Զի *որպէս* ի մեղանչել հոգւոյն ապականեցաւ մարմինն ադամայ և եղև դիւրասահ առ վավաշոտ ցանկութիւնն. այսպէս և սերեալ մարմինն քարշելով ընդ ինքեան զապականութիւնն՝ աղտեղացուցանէ զհոգին: - 567. Իսկ մահացուն մեղք է գլխաւորօրէն է. կամ **ը** *որպէս* ասացաւ: - 567. Նա՛խ ըստ միութեան. զի մի է մեղքն սկզբնական և ո՛չ բաժանի. *որպէս* մահացուն **է**. և ներելին **գ**: - 567. Եւ զի ո՛չ է *որպէս* մահացուն մեծ կամ փոքր. *որպէս* շնութիւն մեծ է քան զպոռնկութիւն. և մարդասպանութիւն քան զգողութիւն: - 568. Իսկ զանազանի մահացուն և ներելին ըստ առաւելութեան և նուազութեան. *որպէս* առաւել է հարկանումն օձի քան զլուոյ. և նետի քան զփշի. այսպէս և մահացուն է առաւել քան զներելին: - 568. Իսկ ներելին թէպէտ որոշի յերիս տեսակս ըստ մեծութեան և նւաղութեան. այլ մանրամասնաբար յանթիւս ելանէ. *որպէս* ծիծաղիլ. վայրաբանել. և այլն: - 568. Եւ *որպէս* ա՛յլ է ունելն և առնելն և կրելն. այսպէս ա՛յլ է ունակութիւն մեղաց. և առնել զմեղս. և կրել զպատիժս: - 569. Եւ սկիզբն ամենայն մեղաց ամբարտանութիւնն է *որպէս* ասէ սիրաք: - 569. Զի *որպէս* ամբարտաւանութիւնն հանէ՛ զմարդն յաստուծոյ, նոյնպէս և նախանձն զմարդն զինքն յինքենէ՛ հանէ: - 569. Եւ *որպէս* օձ յայգւոյ ծաղկէն մեռանի, նոյնպէս նախանձոտն սատակի ի տեսանել զբարի ընկերին: - 569. Զի *որպէս* նախանձն կորուսանէ զինքն, այսպէս և բարկութիւնն փախուցանէ զընկերն: - 570. Որ անհնազանդ է բանին, *որպէս* տնկականն. հալելն և աճիլն և այլն. և սոքա ոչ կարեն լինիլ ենթակայ առաքինութեանց: - 572. Եւ հաւատն է յիմացումն *որպէս* ի յենթակայս. և է՛ ի կամքն *որպէս* հրամանատու: - 572. Եւ *որպէս* հաւատն է ի հանճարն, նոյնպէս յոյսն և սէրն են ի կամքն վասն **բ** պատճառի: - 572. Եւ զի յառաջ եղեալ հաւատոյն է՛ ճշմարիտն. վասն այն հաւատն է՛ յիմացումն *որպէս* ի ենթակայս. և յառաջ եղեալ յուսոյն և սիրոյն է բարին, վասն այն յոյսն և սէրն են ի կամքն *որպէս* ի յենթակայս: - 572. *Որպէս* **ժ** բան է օրինացն՝ և **ժ** բան է հայր մեր որ յերկինս: - 572. Այլ և զանազանի յոյսն. զի որք են ի ճանապարհ աստի կենաց, յոյս նոցա է՛ հանդերձ ստուգութեամբ կարծեաց *որպէս* ասացաւ: - 574. Երկրորդ զօրացուցանէ. *որպէս* յա՛յտ է ի մակաբայեցւոցն զկնոջէն որ ունէր է որդիս՝ ածեալ ի սպանումն ի միումն աւուր տեսեալ. և տանէր այնմ՝ յուսովն որ առ աստուած. նոյնպէս և ամենայն դասք մարտիրոսացն յուսով զօրացան: - 574. Երբեմն նշանակէ՛ զբոլորութիւնն. *որպէս* ասէ՝ «աստուած սէր է». և այս առաւել լինի անձնականապէս և էականապէս: - 575. Կամ այլ ազգ. սէրն է սկիզբն գործոց բարեաց, զի շարժէ՛ առ այն. *որպէս* ասեն վարդապետք՝ սէրն գործէ՛ մեծամեծս թէ է՛. և թէ դադարէ ի գործելոյն՝ ո՛չ է սէր: - 575. Երեք. այսինքն զի բոլոր սրտիւ սիրէ և միշտ սիրէ և առանց փոխարինաց սիրէ. *որպէս* ասացաւ յերկրորդ օրէնքն: - 576. Գիտելի է, *որպէս* պատկեր աստուածութեանն կայանայ ի մի էութիւն և յերիս անձինս: - 577. Նա՛խ *որպէս* ասէ սուրբն եւագրիոս՝ հաւատն ի հայր, յոյսն առ որդի, սէրն ի հոգին սուրբ: - 577. **Երրորդ՝ հաւատն է *որպէս* արմատ ծառոյն որ է հայր. յոյսն ստեղունքն որ է որդի. սէրն հոգին սուրբ որ է՛ ծաղիկ և պտուղ ըստ դիոնիսեայ: - 577. Չորրորդ՝ հաւատն է յանցեալն և ի հանդերձեալն *որպէս* ասացաւ. յոյսն միայն ի հանդերձեալն. և սէրն ի ներկայն որ է միշտն**: - 577. Զի նա պարունակէ՛ զառաքինութիւնս որ կարգեն զմարդ առ ընկերն. *որպէս* ուղղութիւնն և առատաբաշխութիւնն: - 578. Եւ որ կարգեն զմարդն առ աստուած. *որպէս* աստուածապաշտութիւնն և հնազանդութիւնն: - 578-579. Եւ որ կարգեն առ ինքն. *որպէս* ապաշխարութիւնն և անմեղութիւնն: - 578. Եւ արդարութիւնն է մշտնջենաւոր. *որպէս* ասէ սիրեցէքն: - 579. Այլ և ի յանբան կենդանիս բնաւորեցաւ գոլ. *որպէս* ուղտ խոհեմ. և առիւծ արի. տատրակ ողջախոհ. և արագիլ արդար: - 581. Դարձեալ կոչին և բարոյական և տնտեսական և քաղաքական

առաքինութիւնք. *որպէս* ասացաւ ի վերոյ ի ճառս խոհեմութեան: - 582. Նա՛խ՝ զի սոքօք արտաքսեցին է մոլորութիւնքն *որպէս* ասացաւ: - 583. Եւ *որպէս* ի թուումն պարգևացն է՛ կարգ արհեստական. զի նախ դնին արժանաւորագոյնքն: - 583. Իսկ ընդ դէմ այսմ, դիւական տրտմութիւնն ի մարմինն է և վասն մարմնոյն. և զարտասուս ցամաքեցնէ. և տրտմի և ամբոխի. և հետևի նմա ոխ և ատելութիւն. այլ և մահ ևս գործէ *որպէս* ասէ առաքեալն: - 584. Իսկ որ մարմնական խնդութիւնն է և դիւական՝ ընդ դէմ այսմ ամենայնի. և ի վախճանի տրտմութիւն հետևի *որպէս* ասէ սուրբն եւագրիոս: - 584. Նախ որ խաղաղութիւն առնէ այլոց ընդ այլ. *որպէս* միջնորդք: - 585. Երրորդ ինքն առ ինքն. *որպէս* առաքինիքն ի մէջ հոգւոյն և մարմնոյն և մտացն առնեն զխաղաղութիւն. և զպատերազմն որով ցանկայ մարմինն հակառակ հոգւոյն, հանեն ի միջոյ: - 585. Օծումն է՛ խորհուրդ ի լրումն արդարութեան. զի ելեաք ի պատերազմէ՛ զփոշին և զքիրտն սրբեմք. *որպէս* ելեալքն ի մարմնական պատերազմէ՛: - 587. ...*որպէս* և գրեալ է ի գիրս նիկիական կանոնացն եթէ զծառայս ի ժառանգութիւն եկեղեցւոյ կարգել ո՛չ հրամայեմք. - 589. ...բայց թէ ազատեալ լիցի տեառն կամօք. *որպէս* նեսիմոնս այն. իսկ թէ զայր որ ընդ ծառայութեամբ է՝ ո՛չ հրամայեցին հայրապետքն սուրբք գալ ի յաստիճան եկեղեցւոյ...: - 589. Նա՛խ՝ զի մարմնաւոր ծնունդն նշանա՛կ է հոգևոր ծննդեանն. և *որպէս* մի է մարմնաւոր ծնունդն, այսպէս մի է և հոգևորն: - 590. Երրորդ՝ զի որ մկրտի՝ ի մահն քրիստոսի մկրտի. և քրիստոս միանգամ մեռաւ. և թէ ոք դարձեալ մկրտէ՝ անձանց ի խաչ հանէ զորդին աստուծոյ և դարձեալ խայտառակէ *որպէս* առաքեալն: - 590. Չորրորդ՝ զի մկրտութիւնն է անքակտելի կնիք ի հոգին. *որպէս* կարգն և դրոշմն. վասն որոյ ո՛չ կրկնին որք յանուն սուրբ Երրորդութեանն մկրտեցան: - 590. Զի և տիրամայր կոյսն ո՛չ էր ի ժամ մկրտութեանն ընդ քրիստոսի ի յորդանան *որպէս* ասացաւ ի վերոյ: - 591. Զի ջուր հակառակ է հրոյ. և զի՞նչ է մեղք, եթէ ոչ հուր. *որպէս* յոգւոջ բարկութիւն. և ի մարմնի ցանկութիւն...: - 591. Ոչ ինչ ամենևին՝ թէ ընկալցին զմկրտութիւնն. *որպէս* և ոչ ցորենոյն է վտանգ թէ գողունի իցէ և սերմանի ի ձեռն գողի: - 593. *Որպէս* ո՛չ եղև վնաս յովսիայ որով հայրն թիւրէր: - 593. ...զի էառ *որպէս* գլուխ մեր, և եհեղ յանդամս ի հաւատացեալս իւր...: - 593. Եւ թէ ոք ասիցէ, զդրոշմն ո՛չ ունիք. զի եպիսկոպոսն տայ *որպէս* ազգն Ֆռանկաց: - 594. Ասեմք թէ՝ առնեմք ըստ ազգին յունաց. որ *որպէս* քահանայն պատարագէ և մկրտէ, նոյնպէս և դրոշմէ ըստ սրբոյն դիոնիսեայ: - 594. Եւ հաղորդելն, *որպէս* անդամ ի գլուխն յօդէ. զի ամենայն կատարմանց կատարումն հաղորդութիւնն է. այսինքն կարգին՝ պսակին՝ խոստովանութեան՝ մկրտութեան՝ և այլն: - 594. Ասեմք առ այս, թէ յառաջ խառնումն ջրոյն ո՛չ է ըստ խորհրդոյն. *որպէս* և ո՛չ առ մեզ, թէ վաճառօղն խառնեսցէ ջուր. այլ քրիստոս ո՛չ խառնեաց: - 596. Դարձեալ՝ խառնելն զմիաւորելն նշանակէ զարեան ընդ մարմնոյն *որպէս* մեր է սովորութիւն: - 596. Դարձեալ՝ խառնումն է աստուծոյ իմաստութեանն ընդ մարդկան. որ բանիւն խառնեալ միաւորեցան. *որպէս* ասէ սուրբն դիոնէսիոս: - 596. ...*որպէս* գրէ սուրբն դիոնէսիոս ի թուղթն տիտոսի: - 596. Այլ և առաքեալքն և հետևօղք նոցա հարքն սուրբք՝ ո՛չ գիտէին զխառնարանն. և դու ուսար և խառնես ջուր և ընդ անիծիւք նոցա մնաս *որպէս* ցուցաւ ի վերոյ: - 596. Նա՛խ՝ *որպէս* հացն նոյն է ըստ ձևին, այլ այլ գոյացութիւնն է եղեալ մարմին քրիստոսի...: - 598. Եւ դարձեալ՝ *որպէս* բոլոր նշխարն մի մարմին է, և ի մասունս բաժանեալ իւրաքանչիւրն բոլոր և կատարեալ մարմին է քրիստոսի: - 598. Նա՛խ՝ զի արիւնն հեղուկ նիւթ է. կամ ո՛չ է տալի *որպէս* այլ ազգք, և զրկել զժողովուրդն ի փրկական արենէն: - 598. Զի *որպէս* բաշխի մարմինն, նոյնպէս և մասնաւորեսցի արիւնն առ հասարակ: - 598. Իսկ որք ոչ միաւորեն, բաժան և որիշ նշանակեն զբանն ի մարմնոյ իւրմէ. *որպէս* երկաբնակքն քաղկեդոնիկք: - 598. Եւ սուրբն բարսեղ կեսարացի այսպէս բաշխէր ժողովրդեանն. *որպէս* գրեալ է ի պատմութեան նորին յունվարի **ա**: - 599. Նա՛խ՝ եթէ ո՛չ զմարմինն տան ժողովրդեանն. այլ սոսկ հաց և գինի. զի մարմին քրիստոսի այն մինն է որ օրհնեցաւ *որպէս* ցուցաւ ի վերոյ: - 600. Եւ ա՛յլ տեսութիւն բանիս. *որպէս* ասացեր ի մարմինն է կապեալ արիւնն և այլն...: - 600. Զի *որպէս* **գ** կերպիւ մեղանչեմք. այսինքն ի խորհուրդս, ի բանս, և ի գործս: - 601. Զի *որպէս* հուրն դիզին վնասակա՛ր է, նոյնպէս մեղքն հոգւոյն: - 601. ...աստուծոյ մնայ պատիժն զոր պահօք և աղօթիւք վճարէ *որպէս* ասեն ոմանք: - 602. ...*որպէս* այնք որք խոստովանին ի մուտս քառասնորդաց պահոց. *որպէս* ասէ եսայի: - 602. ...և այսպիսիքս, *որպէս* նոքա որք մերձ ի զատիկն խոստովանին և սրբութեանց արժանաւորին: - 603. ...*որպէս* ազգն Ֆռանկաց ունին զայսպիսի խոստովանութիւնս միշտ քահանայքն և ժողովուրդքն. և այսպիսիս անկատար առնու զթողութիւն...: - 603. ...ընդ բառնիլ մեղացն բարձաւ և պատիժ գեհենին. *որպէս* տէր մեր եթող զմեղս անդամալուծին. և բարձան պատիժքն: - 603. ...*որպէս* ասացաւ յառաջագոյն ի թագաւորութեանց **իէ** գլուխն. **ժե** համարն տես: - 603. Ասեմք թէ, ունիմք զխորհուրդ օծմանն, այլ

ծածկապէս. *որպէս* ի մկրտութիւնն...: - 604. Եւ թէ ընդէ՞ր ո՛չ յայտնապէս *որպէս* այլազգաց: - 604. *Որպէս* ազգն յունաց և վրաց և ասորւոց բարձեալ են զխոստովանութիւնն. որ անինա՛ր է առանց խոստովանելոյ արդարանալ մարդոյ: - 604. Եւ *որպէս* բազում են ներելիքն և անթիւ որ ի զգայարանս և ի միտս: - 605. Ասեմք թէ՝ և զայս ունիմք ծածկապէս. *որպէս* այն որ ի ջուր աւազանին խաչանման մեռոնն խառնի...: - 605. ...զի օծանեմք զնոսա *որպէս* զըմբիշս. զի ի հանդէս մտցէ ընդ այսս չարութեան օդոյդ: - 605. Ասեմք թէ՝ *որպէս* մահն է վախճան կենցաղոյս և սկիզբն հանդերձելոյն: - 605. Ապա թէ և զապաշխարօղքն ի թիւ կալցես, Կաթողիկոսն լինի **ժ**երորդ. *որպէս* աստուած **ժ**երորդ է ի վերայ **թ** դասուց հրեշտակաց: - 608. ...և իշխէ ժողովրդեանն ներքին դասուց *որպէս* ասացաք: - 608. Ասեմք թէ՝ *որպէս* ծառն որ նախ ծաղկի և ապա՛ պտղաբերի: - 609. Եւ *որպէս* հրեշտակապետն գաբրիէլ, նախ ետ զաւետիս սրբոյ կուսին, և նա՛ խորհէր ի միտս...: - 610. Յաւատն է՛ զի ո՛չ ոք ի յերկուցն պղծեսցի օտար անկողնով. *որպէս* այն որ թողու զհաւատն և ուրանայ բանիւ...: - 610. ...զի բազում արգելմունք գոն պսակին. *որպէս* ազգակցութիւնն հոգևոր կամ մարմնաւոր. կամ տկարութիւն բնութեանն. կամ պոռնկութիւնն. կամ այսահարութիւնն. կամ ծառայութիւնն. կամ բռնութեամբն. կամ այլ ինչ այսպիսի պատճառ. որով բաժանին այրն և կինն: - 610. Իսկ ի կողմանէ, *որպէս* եղբայր և քոյր մեր, և նոցին ծնունդքն: - 611. Յինգերորդ, ի նորս **զ** ազգ է *որպէս* ասէ մեկնիչն վարդան այսպէս: - 611. Եւ *որպէս* ի մէջ արենազգացն ո՛չ լինի խնամութիւն մինչև ի չորրորդ ծնունդն: - 611. ...*որպէս* մովսէս եղև որդէգիր դստերն փարաւոնի: - 611. ...զի անխառնակ և անշփոթ երևեսցի մադանալն բանին յազգէն յուդայ. *որպէս* ասացաւ ի վերոյ ի **լ** գլուխն, **դ** համարն: - 612. Այլ *որպէս* ի հինն ո՛չ առնէին ընդ հեթանոսացն խնամութիւն որք չէին թլփատեալք: - 612. Իսկ ի նորս փոխեցաւ ի հոգևոր օրհնութիւն և ծնունդ. և զմարմնաւորն ի սկզբան չափաւորն կապեաց. *որպէս* ադամ և եւա: - 613. Զի եկեղեցին ժողովո՛յ է անուն. *որպէս* հրամայեաց աստուած մովսէսի...: - 613. Նա՛խ՝ *որպէս* նա ի քարանց և յայլ նիւթո՛ց է ժողովեալ: - 613. Կամ ի զանազան դիմաց և ազգաց. *որպէս* այր, կին, ծեր, տղայ, ժողովեալ կոչի մի եկեղեցի: - 613. Երկրորդ, *որպէս* նա եռայարկեան խորան, որ է՛ գաւիթն, և մէջն և բեմն: - 613. և յարևելս երկրպագեմք ուստի ակն ունիմք գալստեան փրկչին. *որպէս* լուսանցն յարևելից: - 613-614. Եւ ի մեզ **բժ**ան անդամք մարմնոյ. և **բժ**ան դրունք զգայութեանց. *որպէս* **բ** աչք. ականջք. պինչք. բերան. և այլն: - 614. Զի մե՛ք կատարեմք զխորհուրդս. և ի մեզ կրեմք դարձեալ. *որպէս* մկրտութիւնն. դրոշմն. պատարագն. և այլն: - 614. ...և ապա լինի եկեղեցի և ժողովուրդ քրիստոսի. *որպէս* ասացաւ ի վերոյ **լա** գլուխն, **գ** համարն: - 614. Չորրորդ՝ զի սողոմոն յորժամ շինեաց զտաճարն՝ յաղօթս եկաց և նոյնպէս օրհնեաց և օծ. *որպէս* մովսէս...: - 615. Յայս միտս ի վերայ սեղանոյն խունկ վառեմք. *որպէս* ասացաւ ի վերոյ **իա** գլուխն, **իգ** համարն: - 615. ...զի և մեք եկեղեցի կոչիմք *որպէս* ասացաք ի վերոյ: - 615. Չորրորդ՝ զի խորանն մովսէսի խաչաձև էր կանգնեալ *որպէս* մերս եկեղեցի: - 616. Եօթներորդ՝ զի պսակ եկեղեցւոյ և փառք է՛ սուրբ խաչն տէրունական. *որպէս* ի գլուխն է կանգնեալ: - 616. Եօթներորդ՝ զի լի՛րբ է ոչխարն. և լիրբն արտաքսելի՛ է յեկեղեցւոյ. *որպէս* յուդա լրբութեամբ ել արտաքս: - 617. Նա՛խ՝ *որպէս* զմեռեալս հոգւով՝ արտաքսեմք յեկեղեցւոյ. նոյնպէս և զմեռեալն մարմնով: - 617. Այլ մովսէս օրինադրեաց ի թիւքն առնել կրկին փողս արծաթի. և կոչեաց զնոսա փողս ազդեցութեան. *որպէս* դեռևս գոն ի դրունս թագաւորաց կրկին փողք: - 618. Նոյնպէս և քահանայքն հնչէին ի հինն. *որպէս* այժմ ի յեկեղեցի ժողովեն ի յաղօթս հանապազորդ: - 618. ...և ապա՛ ի յերկրէ յարուցանէ զմարմինս. *որպէս* այն որ հրեշտակապետն նստեալ ի վերայ վիմին փողէր զյարութիւնն քրիստոսի: - 618. Արդ *որպէս* ի սրտէն յառաջ գայ հեշտութիւն մեղաց, շնութիւն՝ ագահութիւն՝ և այլն. *որպէս* աւետարանն հրամայէ: - 619. Նա՛խ ի տէրունական բանիցն է յայտ. *որպէս* ուսոյց հասարակ աղօթել...: - 623. Նա՛խ՝ զի յերի՛ց եմք գոյացեալ ի մարմնոյ, ի հոգւոյ, և ի մտաց, *որպէս* ասեն ոմանք. վասն որոյ **գ** առանձնական աղօթս մատուցանեմք: - 623. Երրորդ խոստովանութիւն և վկայութիւն է. իբր բարի՛ է. երջանի՛կ է. անմա՛հ է բնութեամբ և այլն. *որպէս* ասացաւ ի վերոյ: - 624. Նա՛խ *որպէս* սովորութիւն է մարդկան որք զաղերսն ընծայեն ի դրունս մեծամեծացն, և նոքա՛ մատուցանեն թագաւորին: - 624. Երկրորդ, *որպէս* ի հինքն մատուցանէին զպատարագն առ քահանայսն. և նոքա նուիրէին աստուծոյ: - 624. Երրորդ, *որպէս* յերկինս յերիս երրեակս որոշին դասքն. այսինքն առաջին՝ աթոռոցն. միջին՝ տէրութեանցն. և վերջին՝ հրեշտակացն: - 624. Արդ սաղմոս երգօղքն տան ի սարկաւագն. և սարկաւագն ի քահանայն. և նա՛ մատուցանէ աստուծոյ զօրհնութիւնն. *որպէս* առաջին դասք քերօբէիցն: - 624. Չորրորդ և ուղիղ, *որպէս* ասէ տեսիլն հրեշտակք առնուին զխունկս որ է՛ աղօթք սրբոցն, և նուիրէին ի սեղանն ոսկի որ է՛ քրիստոս. և ի նմանէ բուրէր ծուխն առ հայր: - 625. ...*որպէս*

ընծայէ՛ զաղօթս մեր աստուծոյ, նոյնպէս և ի նմանէ առնու և տայ մեզ զշնորհս և զպարգևս հաշտութեան: - 625. ...*որպէս* յամենայն ինչ իրաց՝ մա՛սն նուիրելի է աստուծոյ. նոյնպէս և ի բարեաց գործոց զգոհութիւնն: - 626. Նոյնպէս և **ը** ձայն եղանակաց. և **ը** օրեայ զտօնս գլխաւորս. *որպէս* ծննդեանն ութն օր. և յարութեանն՝ և հոգւոյն գալստեանն՝ և խաչի՝ և եկեղեցւոյ՝ և այլն: - 627. Այլ և **ը** խորհրդով պատերազմն սատանայի. *որպէս* գրէ սուրբն եւագրիոս: - 627. Եւ այս *որպէս* ասացաւ: - 627. Իսկ ողորմեայն է՛ *որպէս* հարցն վասն յանցանացն ադամայ: - 628. Եւ մեսեդի ճաշոյն և երեկոյեան, չորրորդ մասն դորակի գինւոյն. *որպէս* ասացաւ ի վերոյ ի **իա** գլուխն **ծբ** համարն: - 629. ...նոքա սիրեն զտէր. և զօրացեալ ի նմանէ՝ կոխեն զանմարմին թշնամին. *որպէս* ժողովուրդն զփարաւօն: - 629. ...զի օրն այն ուրախութիւն է արդարոց. և կործանումն ամբարշտաց. *որպէս* երգն այն ուրախութիւն է, և սուգ՝ եգիպտոսի: - 630. ...*որպէս* և մեք ի սաղմոսաքաղ փոխերն չեմք ասեր. և այս այլ ի սաղմոսաքաղի հաշիւն է: - 630. Զի թէ մանկութիւնն է և թէ մեռանիլն, երկիւղի ժամանակ է. *որպէս* ծառայ ի տեառնէ: - 631. Եւ կանոնն սահման կոչի. *որպէս* թուղթն պօղոսի: - 631. Եւ գուբղայն *որպէս* ընթերցուածն: - 631. Եւ փոխն *որպէս* գլուխն: - 631. Յանգիստն *որպէս* մասնաւորքն. նոյնպէս և տունքն: - 631. Եւ այս է մեկնութիւնն. թէպէտ հրէայքն *որպէս* յանցաւոր մարդ սպանին՝ սուրբ աստուած և ո՛չ սոսկ մարդ: - 632. Յասարակ, *որպէս* ի սկզբանէ մինչև ցաւարտումն առ Երրորդութիւնն սուրբ աղերսեմք: - 633. Դարձեալ՝ սկիզբն աղօթիցն է՛ առ հայր. և մէջն որ է՛ խաղաղութիւնն առ հոգին սուրբ. *որպէս* ասացաւ ի վերոյ...: - 633. ...և կատարումն ամենայն աղօթից առ բանն մարմնացեալ. *որպէս* ասացաւ: - 633. Թովմաս առաքեալն ի թաղումն տիրամօրն է ասացէալ. *որպէս* գրեալ է ի գիրս որ կանոնական լրմունք կոչի: - 633. *Որպէս* ասացաք՝ վասն գերապատուութեան կատարումն և աւարտ ամենայն աղօթից զայն երգեմք: - 634. Դարձեալ՝ *որպէս* յետ ամենայն տնօրէնութեանցն ել առ հայր և պարգևեաց զհոգին սուրբ: - 634. Եւ որ՝ քան զայս աւելի ասեն, *որպէս* տնօրինեցար. կամ ընծայեցար. կամ քո տէրութեամբդ. կամ որ եկիր ի բեթանիա. կամ ի վերնատունն: - 634. Զի սուրբ աստուածն անդ հաստատեցաւ. *որպէս* և փառք ի բարձունսն. սկսեալ ի հրեշտակացն ի ծնունդ քրիստոսի. և յերեք սուրբ ժողովնս եղև կատարեալ: - 635. Ո՛չ միայն զգլուխս բանամք, այլ և զձեռս համբառնամք ի վեր. *որպէս* և յովսէփ ասաց: - 635. *որպէս* յա՛յտ է ի սաղմոսն ասափայ և կորխայ և այլոցն...: - 636. Իսկ երբեմն համաձայնին երկու դասքն. *որպէս* ի փառք ի բարձունսն և յայլ երգսն: - 636. Այլ գիտելի՛ է, թէ սաղմոսն շարականաց որ **բժ**ան տուն է՝ զփառքն և զայժմն ի միասին երգեմք. *որպէս* զօրհնութիւնն, հարցն, ողորմեայն, տէր յերկնիցն: - 636. Իսկ թէ նուազ է, *որպէս* մանկունքն ճաշուն, և համբարձին. որիշ ասեմք զփառքն և զայժմն: - 636. Եւ ի դէմս Երրորդութեանն *որպէս* ասացաք: - 637. Այլ և զընծայիլն ի տաճարն. յորում երգէին մանկունքն՝ ո՛վսաննայ. *որպէս* յողոգոմեանն: - 638. Ոստաքանց եղէ ես *որպէս* զարմաւենի: - 638. Զտարւոյն ոստն ջարդեն ի վերայ բնոյն. և որ աճէ՛ զայն քաղեն և հիւսեն. պտղակորոյս *որպէս* ձիթենի: - 638. Այլ և էն և օն՝ անփակ գիր է. *որպէս* այն «ես եմ աստուած որ էն» և բացարձակ: - 638. Նոյն զօրութիւն է ամենայն խաչի. *որպէս* բազում ճառագայթք արևուն...: - 639. Եւ դարձեալ՝ զի այն անհաստա՛տ էր *որպէս* ստուեր. և դու իսկապէս: - 639. Նա՛խ՝ ամենևին անձայն. *որպէս* ներտրամադրեալն ի խորհուրդս: - 639. Երկրորդ՝ ամենևին ձայն առանց բանի. *որպէս* գոչումն: - 639. Երրորդ՝ որ բանն առաւե՛լ է քան զձայնն. *որպէս* երգ շարականաց: - 639. Չորրորդ՝ ձայնն առաւել քան զբանն. *որպէս* ձայնաւոր երգք: - 639. Յինգերորդ՝ որ հաւասա՛ր է բանն և ձայնն ի լեզուն. *որպէս* բարբառ խօսից: - 639. ...զի իւր սրովն խոցեսցէ զինքն և հալածեսցէ *որպէս* ի սաւուղայ: - 641. ...այլ արար գործի տասն աղի. զի տասն մատամբն *որպէս* խօսս նուագեսցէ աստուծոյ: - 641. Եւ նախ ըստ աւուրց տօնից, *որպէս* մեծն ներսէս ասացեալ է զերգն: - 641. Եւ շաբաթն տօն մեծ *որպէս* ասացաք: - 642. Նախ *որպէս* ձայնիւ եղանակաւ նման միմեանց. *որպէս* զողորմեայքն առ նոյն. և զտէր յերկնիցն առ նոյն: - 642. ...զի սուրբ գիրք կամ զառաջինսն պատմեն. *որպէս* մովսէսին. կամ զվերջինսն կանխաճառեն. *որպէս* եսայեայն և այլոցն: - 643. *Որպէս* ժողովուրդն գնաց մերձ ի լեառնն, և մեզ պա՛րտ է յոտաց կալ և յառաջ գնալ և լսել: - 644. Եւ ձայն բուրվառին՝ *որպէս* փողքն: - 644. *Որպէս* ժողովուրդն ասաց և երկիրպագին, նոյնպէս և մեք երկիրպագանեմք և համբուրեմք զաւետարանն...: - 644. Կամ *որպէս* յետ յարութեանն պետրոս նախ ետես զքրիստոս...: - 644. Եւ ինքն դաւիթ հանդերձեալ և հոլանեալ երգէր զտաւիղն *որպէս* սարկաւագունք...: - 645. ...և բերէր ի խորանն հանգուցանէր. *որպէս* ցուցաւ յառաջագոյն յերկրորդ թագաւորութեանց **ժդ** համարն: - 645. Նա՛խ՝ *որպէս* ասեն ոմանք՝ Բուրվառն նշանակէ զմարդկութիւնն քրիստոսի. և Յուրն զաստուածութիւնն. Ծխումն զբուրումն հոգւոյն սրբոյ: - 645. Զերկինս և զերկիր. և այլն *որպէս* ասացաւ: - 645. *Որպէս* ի գալ թագաւորին նախ

կարապետք և աւետաւորք մտանեն...: - 646. Եւ ապա ի գիշերին դնին սրբութիւնքն ի վերայ բազմոցին մինչև յառաւօտն անշարժապէս *որպէս* ասացաք: - 647. Իսկ գլխաւորագոյն սրբոցն, *որպէս* յաւագ տօներն և յայլս, որ առնեմք նախատօնակ *որպէս* ի տօնս տէրունականս: - 647. Զի *որպէս* աստուած ի գործոց իւրոց հանգուցեալ է...: - 647. Եւ *որպէս* ի բարին է հանգուցեալ աստուած, նոյնպէս և բարի գործքն մեր հանգիստ է աստուծոյ և մեզ: - 647. Հինգերորդ, *որպէս* յետ **զ** աւուր լինի շաբաթ և հանգիստ...: - 648. Ութերորդ՝ *որպէս* յետ շաբաթուց կիրակէն փոխի: - 648. Զի *որպէս* ի մէջ շաբաթուն և ի կիրակէին այլ միջոց օր չկայ: - 648. Զի *որպէս* աստուած ի գործոց իւրոց հանգչի...: - 648. Երրորդն գալստեան. թէպէտ յայլ և այլ աւուրս. *որպէս* քառասնօրեայն, և յաւանակաւն, և յինանց կիրակմտիցն: - 649. Եօթներորդ հոգոյն գալստեան. *որպէս* ասացաւ պատճառն ի վերոյ ի **իա** գլուխն, **ծա** համարն: - 649. Տօնն ուրախութիւն է. *որպէս* հոգւոյ՝ նոյնպէս և մարմնոյ: - 650. ...*որպէս* չորեքշաբաթն վասն նայի, և ուրբաթն վասն ադամայ...: - 650. *Որպէս* յաղուհացս զառաջին շաբաթն թէոդորոսի կոչեմք. և զմիւսն ղազարու. կամ այլ ինչ: - 650. ...*որպէս* յառաջն ունէին ամենայն ազգք քրիստոնէից. և դեռևս պահէ՛ ազգն ղպտի և հապաշի: - 650. Զի արտա՛քս եմք *որպէս* ադամ ի դրախտէն՝ և ի սուգ մտեալ: - 650-651. *Որպէս* գանձակեցին գրէ ընթերցուածոց մեկնիչն: - 651. Վասն որոյ ի թագաւորութեանցն սկսանի ընթերցուածն. *որպէս* յա՛յտ է ի մեկնութիւն նորին: - 651. Եւ թէ կիրակէն ո՛չ է պահք *որպէս* զերկու աւուրքն լուծանեն, նոյնպէս և զկիրակէն լոյծ: - 652. Եւ զի ճշմարիտ պահք է չորեքշաբաթն *որպէս* ուրբաթն յայտ է ...: - 652. Նախ, զի առաքելական է աւանդ. *որպէս* ի հինքն զերկուշաբաթի և զհինգշաբաթի պահէին...: - 652. Եւ ի նորս՝ ի չորեքշաբաթ և յուրբաթ փոխեցին առաքեալքն. *որպէս* յա՛յտ է յառաքելական կանոնս. նաև ի նիկիականն: - 652. Եւ որ ոք ո՛չ պահէ *որպէս* ազգն Ֆռանկաց, ընդ անիծիւք է յառաքելական և հայրապետական կանոնաց: - 652. Եւ դարձեալ՝ նոյ և ամենայն կենդանիքն ի տապանն կացին զբոլոր մի ամ և ոչ ինչ կերին. *որպէս* մանուկն յարգանդի: - 652. Դարձեալ՝ **գ** տաղաւարն՝ *որպէս* ասաց պետրոս, գուշակէ՛ զերեք յիսուսս: - 653. Նա՛խ՝ *որպէս* աղուհացքն զշաբաթ և զկիրակի պահել ետ...: - 654. ...*որպէս* ասացաւ ի վերոյ: - 654. ...ո՛չ պահեմք սուգ մինչ վերասցի և ապա՛ պահեմք. *որպէս* աւետարանն ասէ: - 654. *Որպէս* և մանկունք նախ խնդրեն և ապա՛ ծնօղքն կերակրեն: - 654. ...*որպէս* նոքա որ զդեղ մահու խառնեն. վասն որոյ նշանաւ խաչին կնքեմք զնոսա, զի փախիցեն դևքն: - 654. *Որպէս* աղքատք նախ խնդրեն. և յորժամ առնուն՝ գոհանան. նոյնպէս և մեք առնեմք: - 655. Եւ *որպէս* ասացաւ ի վերոյ **լե** գլուխն, **խդ** համարն: - 655. Իսկ պահքն զչարութիւնն. զի նուազի և կարօտի հոգին յամենայն բարեաց. *որպէս* ի պահոց մարմինն: - 657. Եւ մատաղն, Նախ պատարագ և նուէրք է աստուծոյ. *որպէս* աբէլ՝ նոյ՝ և աբրահամ մատուցանէին: - 657. Երկրորդ, զի հաճո՛յ լիցի *որպէս* աբելին և մի՛ *որպէս* կայենին: - 657. Հինգերորդ, ընտիրն յաչս մեր սիրելի՛ է. *որպէս* իսահակ աբրահամու: - 657. ...*որպէս* ցուցաւ ի **իա** գլուխն, **խե** համարն: - 657. Նա՛խ՝ *որպէս* ի սուրբ կենդանեաց է պատարագն...: - 658. Երկրորդ, *որպէս* կենդանւոյն աղ, նոյնպէս ի կեանս մեր հանապազ պա՛րտ է ի լեզուս ունել զօրհնութիւն և զփառս աստուծոյ: - 658. Երրորդ, *որպէս* ողջակէզ նորին, և մեզ պա՛րտ է զանազան փորձանաց և նեղութեան զանձինս մատուցանել սիրովն աստուծոյ: - 658. Չորրորդ, *որպէս* մասն ինչ է քահանայից և մասն աշխարհականաց...: - 658. *Որպէս* լեզուն մտաց՝ և ձեռքն սրտին է գործի. նոյնպէս ունկն կամա՛ց է. հնազանդութեան և կամ ոչ: - 658. ...թէպէտ մեք անգիտանամք ի խորհրդոյն *որպէս* տկար տեսութեամբ: - 662. Վասն որոյ յերկրի աստ բազմանան թուով. և ապա՛ միահաղոյն մտցեն անդ *որպէս* բազմութիւնք հրեշտակաց: - 662. Վեցերորդ՝ ամենայն պատուական իր՝ ի բարձր տեղւո՛ջէ. *որպէս* գլուխն զի պատուական մասն է. և լուսաւորքն և երկին քան զերկիրս: - 662. Ութերորդ՝ *որպէս* ողորմած նոյնպէս և արդա՛ր է տէր: - 663. Ա՛րդ՝ թէ յերկինս էաք մեղանչեալ՝ ո՛չ կարէաք բշժկիլ *որպէս* դևքն: - 663. ...*որպէս* մեծատունն որ ընկալաւ զբարիսն ի յայս կեանքս: - 664. ...*որպէս* հրովն փորձի ոսկին թէ լաւ է թէ վատ. - 664. Երրորդ, զլաւ մարդն աղքատացնէ և փորձէ, թէ վասն ընչի՞ցն սիրէր զաստուած՝ թէ յաղքատութեանն այլ նոյնպէս է. *որպէս* յոբայն: - 664. Երրորդ հիւանդութիւն է ընտրելոց, զի փո՛րձ երևեսցին ի յամօթ չարին. *որպէս* յոբայն: - 665. Չորրորդ նախախնամութեամբ. զի մի՛ հպարտասցին. *որպէս* խէթն առաքելոյն պօղոսի: - 665. Աստ զանազան ցաւոց՝ և զանազան դեղս կազմեաց արարիչն աստուած. *որպէս* յարմատս ի ծաղիկս ի պտուղս և յայլսն: - 665. *Որպէս* մշակն յորժամ սերմանէ, ո՛չ ի գործն՝ այլ յաստուած ապաւինի: - 665. Ասեն վարդապետք, *որպէս* միաւորութիւն նոցա կեանք է, նոյնպէս և որոշումն նոցա մահ: - 667. ...*որպէս* ասէ սուրբն դիոնէսիոս եթէ՝ հոգին և մարմինն առցէն ի բոլոր յարութեանն: - 667. ...այլ դատապարտի՛լ հարկաւոր է. *որպէս* դիւաց մեղանչումն և անկումն. որ է մահն և դատապարտումն որ

է՛ պատիժն: - 667. ...զի անկումն նոցա մահ է նոցա *որպէս* ասէ սուրբն գրիգոր նիւսացին: - 667. Մահն բաժանի յերկուս. այսինքն յիմանալի և ի զգալի. *որպէս* և կեանքն է իմանալի և զգալի: - 668. Յորժամ սրբազան և մաքուր հոգին հասանէ ի վախճան՝ ուրախութեամբ ցնծայ իբր ի հանդիսից զերծեալ և ի պսակն ընթացեալ. և *որպէս* յանփոփոխ կեանքն հետևեալ: - 668. *Որպէս* որք ի խաւար բանտից զերծանին և ազատեալք զլոյս տեսանեն. նոյնպէս և հոգին բաժանեալ ի մարմնոյ...: - 669. Զի արդարոյն մահ՝ պատուակա՛ն է առաջի տեառն *որպէս* ասէ մարգարէն...: - 669. Եւ *որպէս* արդարքն դեռևս ոչ են ընկալեալ զկատարեալ փառս իւրեանց...: - 669. ...*որպէս* ցուցանի յառաջիկայդ բազում վկայութեամբ: - 670. Դարձեալ՝ ցուցանէ՝ իբր թէ սիրելոյն որ մեռաւ՝ կցորդիմք և չարչարեմք զմարմինս. մերկանալով, ի սով և ի ծարաւ, ի մութն և ի հող *որպէս* նա ի գերեզմանի եղև: - 670. Եւ *որպէս* այս բնական եղև ի մեզ ամենայն մարդոյ: - 670. ...զի անցեալ է ժամանակն ողորմութեան, և դատաւորն առ դուրս հասեալ՝ դնել ի տանջանս դժոխոց. *որպէս* աստ զմարմինն ի գերեզմանի: - 671. Իսկ թէ ի կրօնաւորաց իցէ, պատեսցեն իւր զգեստիւն, մազեղէն և կնկուղ և այլ *որպէս* գրեալ է ...: - 671. Դարձեալ, մերկ եկն և մերկ գնայ ի մարմնոյ զգեստու *որպէս* ասէ յոբ: - 671. Եւ *որպէս* հրեշտակքն զհոգին ածեն առ աստուած, նոյնպէս և զմարմինն տանին առ քահանայապետն...: - 672. Առաջին, *որպէս* քրիստոս նախ օծաւ իւղով և ապա թաղեցաւ...: - 672. Երկրորդ, ցուցանէ թէ՝ *որպէս* ի մկրտութիւնն նախ օծաւ և ապա թաղեցաւ ի ջուր...: - 672. Չորրորդ, *որպէս* այն սկիզբն էր հանդիսին և աստ կատարումն...: - 672. Հինգերորդ, ցուցանէ թէ *որպէս* մարմինն օծանի ի քահանայապետէն անուշահոտ իւղով...: - 672. Եօթներորդ, ցուցանէ թէ հոգին սուրբ և քրիստոս հանգուցեալ է ի նշխարս սրբոց. *որպէս* ի կեանքն՝ նոյնպէս և ի մահն: - 672. ...զի կնիք է ի հոգին և անքակ. *որպէս* ի կեանքն՝ նոյնպէս և յետ մահու ունի: - 673. ...*որպէս* և դաւիթ օծաւ **գ** անգամ: - 673. Տասներորդ, նշանակէ զվերջին օծումն. զի ամենայն կարգ զոր մարմնոյն կատարեմք՝ հոգւոյն է և մարմնոյն *որպէս* ասացաք: - 673. ...զի *որպէս* հոգևոր սիրով կեցաք. նոյնպէս սիրով բաժանիմք. և թէ իցէ քէն ինչ, զայն շնորհմեք միմեանց: - 673. Իններորդ՝ *որպէս* հոգին եղիայի էջ ի վերայ եղիսէի...: - 673. Տասներորդ՝ զի այսպէս ողջունի և հոգին անդ *որպէս* մարմինն աստ. նախ յաստուածպետութենէն, և ապա ի համակարգ հոգւոց սրբոց: - 673. Փակեղն և վարշամակն ի գլուխն, *որպէս* սաղաւարտ: - 674. Բաճկոնն և փիլոնն, *որպէս* զրահ: - 674. Եւ վարագոյր ծածկոյթն, *որպէս* ի թաղումն մովսէսի ամպն ծածկեաց...: - 674. Եւ *որպէս* ի հիմնարկութեան եկեղեցւոյ խաչիւ և աւետարանաւ բրել է աստիճանաւ...: - 674. ...*որպէս* ասեն ոմանք. վասն սոցա երեք հանգստեան տամք և աւետարան ընթեռնումք: - 675. Եօթներորդ, զի **գ** են հանգիստ և վարձք սրբոցն. *որպէս* ասէ տէրն. **ճ**, **կ**, և **լ**...: - 675. ...*որպէս* արտասուեաց քրիստոս ի վերայ ղազարու: - 676. ...*որպէս* ցուցաւ ի վերոյ **լե** գլուխն ի կարգ աղօթիցն ի **խա** համարն: - 676. Եւ դարձեալ *որպէս* որք յեզր ծովուն հասեալ զառագաստ նաւին իջուցանեն...: - 676. ...վասն որոյ *որպէս* ի մկրտութիւնն ուղիղ մկրտիմք գլուխ ի վեր և ոչ ի վայր *որպէս* արիոսեանք: - 676. ...և *որպէս* ի կեանքն հանդերձիւ ծածկեմք, նոյնպէս ի մահն հողով: - 677. Երրորդ, զի մի՛ կոխան լիցի կամ կերակուր գազանաց *որպէս* շաղիղ անասնոցն: - 677. Վեցերորդ, *որպէս* կենօք փոխեցաւ, նոյնպէս և տեղեաւ փոխեսցի...: - 677. ...*որպէս* սերմանիքն թաղեալ կենդանանան և բուսանին. նոյնպէս և մարդոյս մարմին: - 677. ...ծածկէ՛ զգարշութիւն մեր. *որպէս* մայր մանկան քան զայլ կարևորս: - 677. Ութերորդ, զի որակ եկրի խաւար է և սեաւ. և ո՛չ է պայծառ *որպէս* այլքն...: - 678. Իսկ դամբարան, որ է պահարան. զի անտի դարձեալ առցի *որպէս* և եդաւ: - 678. Երրորդ, և *որպէս* այն քար անպիտան է գործոյ, նոյնպէս և մեռեալն անպիտան է աշխարհի: - 679. ...այսպէս և քար տապանիս մեր լիցի. նշանակէ՛ զանապական յարութիւնն. որ վիմածին լինիմք և առանց ապականութեան *որպէս* քրիստոս. և ո՛չ հողածին ապականացու *որպէս* զառաջին ադամն: - 679. Նա՛խ՝ զի մի՛ շարժեսցէ զնա այսն չարութեան *որպէս* զմարմին անհաւատից: - 679. Եւ *որպէս* իւղաբեր կանայքն նախ եկին ի գերեզմանն և տեսին յարուցեալ զքրիստոս, և ապա առաքեալքն...: - 680. Դարձեալ՝ *որպէս* զսերմանիս թաղեալ յերկրի՝ դարձեալ ջրով ոռոգանեմք...: - 680. Դարձեալ՝ *որպէս* բժիշկք դեղ տան հիւանդաց՝ և ի միւս օրն դարձեալ հարցանեն...: - 680. ...զի մեղօք մեռանի հոգին ի դժոխս. *որպէս* և մարմինն...: - 680. Զի կենցաղս այս *որպէս* երկդռնի քաղաք է. ի միոնն մտանեմք և ի միւսն ելանեմք...: - 680. ...զի հայրն աբրահամ առեալ հուր և սուր, և յետ երից աւուրց տեսին զտեղին ի հեռաստանէ *որպէս* ասէ պատմութիւնն: - 681. ...և հոգին անվնաս մնայ *որպէս* զիսրայէլ...: - 682. Նա՛խ՝ *որպէս* ասացաւ ի քահանայաթաղն վասն **է** շնորհաց հոգւոյն, և **է** խորհրդոց եկեղեցւոյ, և **է** առաքինութեանց, և **է** գլխաւորագոյն մեղաց, և **է** զգայարանօք մեղանչեմք, և **է** փոփոխմամբ հասակի...: - 683. Եւ ո՛չ *որպէս*

շաղակրատեն ոմանք մտացածին բանիւ. թէ երեք օրն՝ կամ յեօթն՝ կամ յամիսն՝ և կամ ի տարին ելանեն ի քաւարանէն: - 683-684. ...զի անցեալ է ժամանակն *որպէս* յիմար կուսանացն: - 684. Նա՛խ՝ *որպէս* մեք ի կիրակէ ուրախացաք և վայելեցաք ի շնորհաց յարութեանն քրիստոսի, ի միւս օրն և զնոսա մասնաւորեմք: - 684. Այլ թէ ասեն՝ հաղորդադրամ, կամ խոստովանադրամ, խո՛րթ է. յազահութեանց երիցանց սահմանեալ և ո՛չ ըստ կանոնաց *որպէս* այլքն: - 684. Ի մարմնոյ բաժանեալ հոգին պայծառանայ տեսութեամբ. *որպէս* որք ի խաւար բանտից ազատին: - 685. Եւ են յիմացումն և յուշի. *որպէս* ասէ առաքեալն թաղէոս. և յոյս նոցա լի է անմահութեամբ. և սիրով առ աստուած միացեալ: - 685. Դարձեալ՝ զչարս և զբարիս ճանաչեն անւամբն. *որպէս* մեծատունն զաբրահամ և զղազար: - 685. Տեսութիւնն է աստուծոյ. որք ըստ բազմազան գործոց իւրեանց տեսանեն. և *որպէս* ի տան փառաւորին: - 686. Այլ մեր վարդապետք յերկինս և ի ներքոյ երկնից ասեն. *որպէս* և կալիստրատոս վկայն առ **ը** երորդ կամարաւն ուր են լուսաւորք և եթերային լոյսն: - 686. Այլ և ոմանք ի մէնջ *որպէս* վարդապետն վարդան և այլք ասեն գոլ ի միում տեղւոջ զամենայն հոգիս...: - 686. Ոմն լի՛ է անմահութեամբ և խնդրութեամբ. և ոմն լի դառնութեամբ և յուսահատութեամբ. *որպէս* ասացաւ ի վերոյ: - 687. ...այսինքն է որ ի վեր քան զհրամայեալ օրէնսն կատարեցին զգործս. *որպէս* առաքեալքն, մարգարէքն, մարտիրոսքն, կուսանքն, և այլքն: - 687. ...են հոգիք նոցա ի միում խորանի մինչ դատաստանն ընտրեսցէ զնոսա և որոշեսցէ. *որպէս* ցուցանի յառաջիկայդ: - 687. ...*որպէս* որք մահկանացու ասեն զհոգին. և այս խոտելի է ի բաց: - 687. Այլ որք ուղիղ դատեցան վարդապետք եկեղեցւոյ ըստ տեսլեանն յոհաննու. *որպէս* մեծն անդրէաս և համախոհք նմին սուրբն իրինոս, եպիփան, և բասիլիոս: - 687. Եւ այն է եկեղեցիք անդրանկաց կատարելոց յերկինս *որպէս* ասէ պօղոս: - 688. Ո՞ հա՛յրդ ես որոց ի վեր քան զերկինս. այսինքն հոգւոց սրբոց կատարելոցն որ ի վերեն քան զդասս հրեշտակաց մերձ քրիստոսի *որպէս* քահանայք առ քահանայապետ, և անդամք առ գլուխն. և որդիք առ հայր: - 688. *Որպէս* ծառայքն փարաւոնի ի տան բանտին ընդ յովսեփայ: - 689. Եւ ո՛չ ոքն է առեալ արդեամբ զգործոց հատուցումն մինչ ի գալուստն դատաւորին *որպէս* ասէ աւետարանն: - 689. ...*որպէս* փախեաւ կինն որ ծնաւ զմանուկն արու ի տեսիլն. և ո՛չ կարաց հրեղէն վիշապն հասանիլ: - 689. ...և ի յարութեանն առնուն զփառս հատուցմանց հոգւով և մարմնով. և այնպէս փառաց ի փառս բարձրանան *որպէս* ասի յերգս: - 689. Զի գործք չարութեան այժմ դատէ՛ խղճիւ զմիտս. և յետ մահու զհոգիս. և յետ յարութեանն զհոգի և զմարմին *որպէս* ասացաւ: - 690. Ապա զի՞նչ էր արկանելիքն սպիտակ, և պսակն ոսկեղէն *որպէս* ասէ տեսիլն: - 690. ...*որպէս* վասն նեռինն և դատաստանին ետես. նոյնպէս և զհատուցումն սրբոց: - 690. ...*որպէս* ասէ մեկնիչն տեսլեան. եթէ սպիտակ հանդերձն շնորհացն քրիստոսի մաքրութիւնն է. որ սրբութիւն մեղաց մերոց արար քրիստոս. յոր ամենայնքն վայելեցաք. զի յորժամ սրբի հոգին, բնական ունի զպայծառութիւնն: - 690. Ապա ո՞րպէս են ի դժոխս հոգիք մեղաւորաց *որպէս* ասէ տեսիլն եթէ «դժոխք ետ զմեռեալս իւր»: - 690. Երրորդ, աներևոյթ են մեղօք և ո՛չ ունին զպայծառութիւն բարեաց. *որպէս* այն որ ո՛չ ունէր զհանդերձ հարսանեաց: - 691. ...*որպէս* յա՛յտ է յառաջիկայդ ի զանազան վկայութեանց վարդապետաց սրբոց և ի հին և ի նոր աստուածաշունչ կտակաց: - 691. Արդ չև է եկեալ դատաւորն. և ոչ է եղեալ դատաստան. նա և ո՛չ հատուցումն. ո՛չ բարեաց և ո՛չ չարաց *որպէս* ասացաւ ի վերոյ: - 691. ...զոյգ և ի միասին մտցեն ի հոգևոր կեանքն *որպէս* ասացաւ ի վերոյ: - 691. Չորրորդ, ասէ սուրբն եպիփան ի հաւատոց գիրն, եթէ *որպէս* հոգին միայն դատի ըստ բանի հերձուածողացն զի կարէ՛ ասել մարմնոյն եղեալ զյանցանքն: - 691. ...զի *որպէս* չարչարանացն հաղորդեցաւ, նոյնպէս և վայելչականացն նմա: - 691. Այլ *որպէս* ի միասին վարեցին զայս կեանս հոգին և մարմինն, նոյնպէս և զայն կեանս ընդունիցին: - 694. Պատասխանեմք առ այս *որպէս* ասէ սուրբն կիւրեղ ի գիրս պարապմանց եթէ առակ օրինակ են սոքա արդարոց և մեղաւորաց որ այսպէս լինելոց է ի կատարածի: - 695. Ասեմք առ այս, եթէ ո՛չ է պահել *որպէս* այժմ ի մարմնի. և ո՛չ առնուն *որպէս* ի կատարածի...: - 695. ...*որպէս* ասացաւ ի վերոյ **լգ** գլուխն ի **իբ** համարն: - 696. ...և են առ աստուած ի հանգիստ *որպէս* լուաք. և ճշմարիտ է հանգչիլն ի թանձրութենէն՝ յախտաւոր կրից զերծելոցն և առ աստուած եղելոցն: - 696. Ասէ մեկնիչն, սպիտակ հանդերձն զոր զգեցեալ էին՝ շնորհացն քրիստոսի մաքրութիւնն է. յորմէ ամենեքեան վայելեցաք *որպէս* ասէ առաքեալն...: - 696. Առ առաջինն ասեմք թէ՝ *որպէս* ո՛չ ոք ընդ քրիստոսի ի խաչ ելեալ է՝ բայց միայն աւազակն...: - 697. Զի այս ո՛չ է ի կարգէ դատաստանին. այլ ի սքանչելեաց միածնին. *որպէս* արեգական խաւարիլն, և գերեզմանաց բանիլն, և այլն: - 697. ...այլ սկիզբն է ի մահն, և կատարումն ի յարութեանն *որպէս* ասացաւ: - 697. ...իսկ միջակ արդարքն որ են ի կայանս հոգւոցն՝ և

զտեսանելն պայծառապէս ընկալցին ի յարութեանն դէմ յանդիման *որպէս* և էն...: - 697-698. Նա՛խ՝ զի ընդ դէմ է սուրբ գրոց և ուղղափառ վարդապետաց *որպէս* ցուցանի յառաջիկայդ: - 698. Հինգերորդ, հոգի և մարմին ի միասին գործեն զմեղս *որպէս* ասացաւ ի վերոյ...: - 699. ...*որպէս* և հրեշտակք յետ անկմանն ո՛չ կարացին փոխիլ յարդարութիւն: - 699. Տասնեմի, պատժոյն մեղաց չափ և ժամանակ գոյ ըստ իւրաքանչիւրիցն. *որպէս* յա՛յտ է ի կանոնս: - 700. ...*որպէս* յա՛յտ է ի մեծատանէն: - 700. ...զի զգործ դատաստանին այժմ կատարէ՛ *որպէս* ցուցաւ ի վերոյ: - 700. Այլ թէ ոչ գոյ դատաստան, նաև ոչ յարութիւն մարմնոյ. և ոչ հատուցումն գործոյ. ապա և ո՛չ գալուստն քրիստոսի *որպէս* ասէ սուրբն կիւրեղ: - 700. Իսկ թէ այժմ հոգւոյն եղեալ է դատաստան, և հատուցումն ըստ գործոց, և արդարոցն փառք և մեղաւորացն տանջանք. և յայնժամ մարմնոյն *որպէս* ասեն նոքա...: - 700. ...ապա ի յարութեանն ո՛չ է բոլոր մարդոյն հատուցումն. այլ մարմնոյն միայն *որպէս* ցուցաւ: - 700. Նա՛խ եթէ ի խոստովանութիւն մեղացն մնայ պատիժն զոր ապաշխարութիւնն քաւէ. *որպէս* յայտ է ի կանոնս...: - 701. ...*որպէս* ասացաւ ի վերոյ ի ճառս խոստովանութեան: - 701. Երկրորդ, ասեն խնդրէ արդարութիւնն աստուծոյ՝ զի վասն մեղաց պատիժ տացի. *որպէս* յօրէնս մարդկային պատժին յանցաւորք...: - 701. Երրորդ, ասեն բոլոր աշխարհ նորոգի հրով. *որպէս* ասէ պետրոս...: - 701. Նա՛խ՝ զի աստ յայժմու կեանս շնորհքն է, իսկ անդ փառքն. *որպէս* աստ մեղքն է և անդ պատիժն. այլ ո՛չ քաւարան: - 702. Դարձեալ մեր վարդապետք ասեն, *որպէս* ի տեսլեան մեկնիչն **լդ** գլուխն ասէ այսպէս: - 703. ...զի գիտասցուք թէ *որպէս* արդարոց փափկութիւնն է յաւիտենական, ա՛յսպէս և մեղուցելոց տանջանքն: - 703. ...*որպէս* և ամենայն աղօթք մեր վասն կատարածի և յարութեանն է, նոյնպէս և այս: - 703. Դարձեալ՝ թէպէտ վասն հոգւոյն ասեմք *որպէս* այս, և տեսիլ անտօնին, և այլոց, այն ո՛չ է բերքաթուր. այլ պատերազմ դիւաց. *որպէս* աստ մարմնով, նոյնպէս և յետ մահու առ հոգիսն...: - 703. Նա՛խ՝ *որպէս* ո՛չ է անդ գործ մեղաց, նոյնպէս և ո՛չ թողութիւն: - 704. Երկրորդ, *որպէս* մարմինն ոչ փոխի ի բարւոյ ի չար, կամ ի հակառակն. նոյնպէս և ո՛չ հոգին...: - 704. ...և սուրբքն ելեալք ի մարմնոյ և յաղթեալք թշնամոյն՝ թագաւորեն ընդ քրիստոսի *որպէս* ցուցանի յառաջիկայդ: - 706. Երրորդ, ներելով արձակէ զսատանայ որով փորձին ընտրեալքն *որպէս* ցորեան ի շտեմարանս արքայութեան...: - 706. ...և կորիցեն անհաւատք *որպէս* զյարդ այրեցեալ ի հուրն: - 706. Չորրորդ, արձակէ՛ զսատանայ, զի տեսցէ զիւր ժամանակ տանջանացն մերձեալ. և մոլի *որպէս* գազան մերձ ի սատակումն. և շուն կատաղեալ: - 706. Հինգերորդ, *որպէս* տուտն ջախջախեալ վիշապին շարժի: - 706. Եւ զամենայնսն դրոշմէ՛ ի ճակատն և յաջոյ ձեռն. *որպէս* ասէ տեսիլն յօհաննու: - 707. Եւ *որպէս* ի քրիստոս բնակեալ է ամենայն լրումն աստուածութեան *որպէս* ասէ թեսաղոնիկեցոց. նոյնպէս և ի նեռն ամենայն լրումն անօրէնութեան...: - 707. ...*որպէս* ցուցաւ ի վերոյ ուր յաղագս անկման դիւաց ասացաւ: - 708. Զի նա՛ է օձ դարանակալ ի ճանապարհի *որպէս* ասաց յակոբ յազգէն դանայ: - 708. Եւ *որպէս* նեռն լինիցի անողորմ քան զամենայն հալածիչս յառաջագոյն...: - 708. Բայց ի կատարածի փոքրիկ լինին հասակք մարդկան քան զմերս. *որպէս* մերս քան զառաջնոցն: - 708. Ընդ երևիլ նեռինն և թագաւորելն յերուսաղէմ, եկեսցեն ենովք և եղիա *որպէս* ասէ մաղաքիա և դարձուսցեն զսիրտս հարց յորդիս...: - 709. Եւ քարոզեսցեն զաւուրս **ռմ** և **կ**. այսինքն **գ** ամ և կէս. *որպէս* ասէ տեսիլն: - 709. Եւ մինչդեռ ասասցեն զայս, յանկարծակի եկեսցէ ի վերայ նոցա սատակումն *որպէս* յաւուրսն նոյի ըստ հրամանի փրկչին: - 709. ...*որպէս* ասէ տեսիլն. այս է յարութիւնն առաջին: - 710. Ոմանք հերձուածօղք *որպէս* որոգինէս, առաջին յարութիւն ասաց զհազարամեայ արքայութիւնն...: - 710. Եւ *որպէս* **բժ**ան բիւր հրեշտակացն, և եօթանասնից եօթն թողուլն, և ամլոյն եօթն ծնանիլն ո՛չ է վճիռ, նոյնպէս և **իդ** երիցանցն: - 711. Նա՛խ՝ *որպէս* **բժ**ան գունդ հրեշտակացն և չորք կենդանիքն զբոլոր երկնային զօրսն նշանակեն, նոյնպէս և **իդ** երիցունքն զբոլոր դասս սրբոցն: - 711. Երկրորդ, *որպէս* չորք կենդանիքն զվեհագոյնս և զնախամեծարս երկնայնոցն ցուցանեն. նոյնպէս և **իդ** երիցունքն զնախամեծարս ընտրելոցն մարդկան...: - 711. ...որք աստիճանաւ վեհագոյնք են քան զհասարակաց արդարս. *որպէս* աբէլ, և առաքեալքն. և մարգարէքն. և այլք: - 711. Երրորդ, *որպէս* **իդ**ն բազում է քան զչորսն. նոյնպէս կարծի վեհագոյնքն ի մարդկանէ բազում գոլ քան զվեհագոյնս երկնայնոցն: - 711. Եւ ոսկեղէն պսակն զթագաւորելն ընդ քրիստոսի *որպէս* ցուցաւ: - 712. Երրորդ, ասեն թէ միովն զարթուցանէ *որպէս* ի քնոյ. և միովն յառնեն...: - 713. Երկրորդ երևելի ձայնն հրեշտակապետին. *որպէս* ձայնն փողոյ ի սինա լերինն. և ազդումն զօրութեանն քրիստոսի: - 713. ...*որպէս* ցուցաւ յերգս երգոց ի **իդ** համարն: - 714. Այնպէս եղիցի լի մարդկամբ *որպէս* այժմ է. և այնպէս յիւրաքանչիւր գործս *որպէս* այժմ: - 714. Եւ *որպէս* զմարմինս մեր ընդունին յաւանդ, նոյնպէս և զգործս մեր խնդրէ ի սոցանէ և յառաջ բերեն: - 714. Թէպէտ

բան յարութեան է ի մասնէ հաւատոյ, *որպէս* սկիզբն աշխարհի և վախճան...: - 714. ...զի կամ իմանալիք են *որպէս* հրեշտակք. կամ զգալիք *որպէս* տարրեղէնք. և կամ յերկուց գոյացեալ *որպէս* մարդ. այսինքն ի հոգւոյ և մարմնոյ...: - 715. Իսկ վկայութեամբ սուրբ գրոցս, *որպէս* ասաց աստուած ցնոյ...: - 715. ...*որպէս* վեց մեռեալքն որք յարեան նախքան զքրիստոս. և յարութիւնս այս անկատար է. զի դարձեալ մեռան: - 716. Եւ ի նոյն կէտ լրմանն որ է՛ վախճան ժամանակի և սկիզբն յաւիտենի՝ լինի վերառութիւն համայնից մարդկան *որպէս* գրէ առաքեալն կորնթացւոց...: - 716. ...այլ յորժամ բոլոր արարածք ազատեսցին յապականութենէ ծառայութեան *որպէս* գրէ հռօմ յայնժամ և մարմինք մարդկան յանապականութիւն վերափոխեսցին: - 717. Պատասխանեն վարդապետք թէ՝ *որպէս* մովսէս թանձրամիտ ժողովրդեանն իսրայէլի պատմէր զլինելութիւն արարածոց ի **զ** օրս...: - 717. Եւ *որպէս* կարելի է քեզ ի քում ափիդ զսերմանս զանազանել, և զեդեալն ի շտեմարանս քո յիւրաքանչիւր անկեան յառաջ բերել...: - 718. Եւ դարձեալ՝ *որպէս* զանազան սերմանիք ցորեան կորեակ և այլք՝ հասարակ ի մի վայր սերմանին. և հասարակ ջրով և ջերմութեամբ սնանին. և ի յազգս իւրեանց կատարին. ցորեանն ի ցորեանն և այլն: - 719. Այլ բանն պօղոսի ո՛չ է այսպէս թէ մարմինն էութեամբ հոգի լինի. այլ նման հոգւոյ. զի անմահ լինի *որպէս* հոգի և անկարօտ կերակրոյ: - 720. Նա՛խ՝ զի *որպէս* նախ սերմանի և ապա բուսանի. այսպէս և մարդն նախ մեռանի և ապա՛ կենդանանայ...: - 720. Երկրորդ, *որպէս* հատ մերկ անկանի և բուսանի ծաղկեալ և զարդարեալ տերևով...: - 720. ...նմանապէս և մերկ մարմին մեռելոյ ո՛չ յառնէ մերկ, այլ փառօք. *որպէս* ցուցանի յառաջիկայդ: - 720. Երրորդ, *որպէս* նոյն հատն սերմանեալ նոյն հատն բուսանի ըստ ազգի իւրում...: - 720. ...իսկ հոգիք սրբոցն նախ ծաղկին բնական պայծառութեամբն իւրեանց *որպէս* ցուցաւ ի վերոյ, և ապա՛ յետոյ արդեամբք պտղոյն կատարին ի հանդերձեալ կեանքն: - 721. ...այսպէս և ննջեցեալք ամենայն ծեր և տղայ՝ յառնեն ի մի չափ հասակի երեսնամեայ որ է կատարեալ հասակ *որպէս* ցուցանի յառաջիկայդ: - 721. Տասներորդ, *որպէս* հատն սերմանեալ և բուսեալ և չարչարեալ և ընդ հուր անցեալ՝ ապա՛ ի սեղան եդեալ պատուեսցի: - 721. Դարձեալ *որպէս* հատն մերկ սերմանի և մերկ ո՛չ բուսանի. այլ զարդարեալ խոտով և տերևով եօթն թուով: - 721. Եւ զարդարեալ լինի **է** զարդուք. այսինքն **գ** հոգւոյն և **դ** մարմնոյն *որպէս* ասեն վարդապետք: - 721. Իսկ առաջին պակասութիւն է մարմնոյն աստ՝ զի է՛ մահկանացու՝ յապականացու՝ և չարչարելի. *որպէս* քաղցն՝ ծարաւն՝ հիւանդանալն և այլն...: - 722. Երկրորդ պակասութիւն է մարմնոյն՝ սևութիւն և աղտեղութիւն. և բաժանի այս ի մարմնոյն և զարդարի լուսով *որպէս* զարեգակն: - 722. *Որպէս* լոյս արեգակն անցանէ ընդ երկինս առանց ապականութեան. և *որպէս* քրիստոս յարեաւ մարմնով ի գերեզմանէն վիմովն կնքելով. և եմուտ առ աշակերտսն դրօքն փակելովք: - 722. Եւ մարմինք նոցա լինին առաւել թանձր և ծանր և գարշելիք *որպէս* աստ: - 723. Եւ երևի *որպէս* բլուր մեծամարմինք նոցա յաչս իւրեանց. սև և աղտեղի և չարչարելի. զի կրեն անչափ չարչարանս և ցանկան մահու և ո՛չ մեռանին...: - 723. Զի այժմ հոգիս փոփոխական է. *որպէս* խորհրդով կամօք և այլն. վասն որոյ զմիաւորութիւնն ընդ մարմնոյ փոփոխական ունի...: - 723. Եւ *որպէս* այժմ հոգով և մարմնով զմահկանացու կեանս վայելեաց, նոյնպէս և յայնժամ հոգւով և մարմնով զանմահ կեանս ժառանգեսցէ. վասն այն յառնէ: - 724. Եւ *որպէս* ելաք ի բարի կենաց և մտաք ի չար մահն, այսպէս և ելեալք ի մահուանէ մտաք յանեզր և անվախճան կեանքն և բարութիւն: - 724. Եւ *որպէս* աստ հոգին ի մարմնոյն կրեաց. նոյնպէս և անդ մարմինն ի հոգւոյն կրեսցէ եթէ զբարիս և եթէ զչարիս: - 724. Տասներորդ, գործք մարդոյ անցաւոր է *որպէս* ինքն. իսկ հատուցմունքն աստուծոյ մշտնջենաւոր *որպէս* նոյն ինքն. վասն որոյ յարուցանէ անմահ, զի հատուսցէ ոմանց զփառս և ոմանց զտանջանս անմահ մարմնով: - 724. Դարձեալ՝ ո՛չ գան ի դատաստան, զի մասն բարւոյ ո՛չ ունին որով քննիցին. այլ դատապարտին *որպէս* ցուցանի յառաջիկայդ: - 725. Եւ *որպէս* հոգին ունի զզօրութիւն իւր անպակաս. նոյնպէս և անդամք մարմնոյն պարտ է լինիլ անպակաս զի իցէ կատարեալ մարդ: - 725. Նախ զպակասութիւնն. *որպէս* ի տղայս և յանդամնահատս և նուազեալ անդամք. *որպէս* **դ** մատնի և այլքն...: - 725. ...զի լցցին նոքա ի բոլոր մարմնոյն *որպէս* գարեղէն նկանակ հացիցն: - 725. Երկրորդ՝ ուղղեսցին աւելիքն ի չափն. *որպէս* աւելո՛րդ եղունգաց հերաց և վեցամատնից և այլոցն. որք չափաւորին: - 725. Եւ թէ ոք ասիցէ, բազում անդամք են կենդանականք, *որպէս* սիրտն լեարդն թոքն և այլքն որք ի յարութեանն ո՛չ են պէտք. զի ո՛չ է հարկ կենդանութիւն մարդկան: - 725. ...*որպէս* ստինքն զի ո՛չ է պէտք կաթին, այլ առնէ վասն կատարելութեան և գեղեցկութեան մարդոյն: - 725. Գոյն է *որպէս* մարդն հոգի և մարմին: - 725. Ամբողջ գոյն *որպէս* բոլոր անդամօքն: - 725. Գեղեցիկ գոյն *որպէս* ձևովն հերովն և այլովքն որ ասացաւ: - 725. Նա՛խ՝ զի արու և էգ անդ ո՛չ ճանաչին մասին անդամօք, այլ

յատուկ դիմօք և բարի գործովք և փառօք և անուամբ զանազանին. *որպէս* դասք կուսանացն ի հայրապետացն: - 725. Այլ և *որպէս* հրեշտակք զանազանին. նոյնպէս և ի յարութեանն փառօք և պսակաւն: - 725. Այլ *որպէս* կայծ հրոյ և անօթ արեգական բոլորովիմբ է լոյս, նոյնպէս և անդ բոլոր անդամօքն փայլեսցին իբրև զարեգակն: - 726. Սակայն իւրաքանչիւր ոք անսխալ անդամօք իւրովք յառնէ. այլ ո՛չ երևի թէ սա այր է և նա կին. այն ծեր և այն տղայ. զի *որպէս* հրեշտակք են յերկինս: - 726. Այլ և *որպէս* նախաստեղծքն ի դրախտին ո՛չ ամաչէին. նոյնպէս և սուրբք ի յարութեանն. զի ծածկեալ են ի ներքուստ հոգւոյն լուսաւորութեամբն, և արտաքուստ պսակաւն և փառօք: - 726. Երրորդ՝ քանակաւ հասակին. զի իւրաքանչիւր ոք յիւրն երեսնամեայ յարիցէ. *որպէս* հարիւրամեան անցեալ և քառասնօրեայ մեռեալ. որ լինելոց էր երեսնամեայ, ի նոյն հասակն յառնեն: - 726. Իսկ զի նիւթ խաչին մնայ ըստ ոմանց՝ այս ո՛չ է ըստ բնութեան կարգի, այլ սքանչելեաց հարկի *որպէս* ցուցանի յառաջիկայդ: - 727. Ասեն վարդապետք՝ եթէ են ինչ որ էութեամբ և պատահմամբ անցանեն. *որպէս* կենդանիք և տունկք և որ ինչ ի չորից տարերաց են գոյացեալք: - 727. Եւ են ինչ որ պատահմամբ անցանեն և էութեամբ մնան. *որպէս* երկնային մարմինք և **դ** տարերքս և մարդոյս մարմին. սոքա պատահմամբ անցանեն և գոյացութեամբ մնան: - 727. Եւ ըստ ոմանց կարծեաց զի տեղիք լիցին երեսնաւոր արդարոցն. *որպէս* ցուցանելոց եմք յառաջիկայդ: - 727. Զի հուր մեծ ընթանայ ի գալստեանն քրիստոսի. և վառեսցին երկինք և երկիր հրովն այն, *որպէս* ասէ պետրոս: - 727-728. Նոյնպէս սրբին ամենայն տիեզերք. զի երեսք երկրի այնպէս պայծառանայ *որպէս* զհայելի: - 728. Եւ ջուրքն այնպէս պարզ լինին *որպէս* զպլօր: - 728. Եւ օդք այնպէս պայծառանան *որպէս* զեթերն: - 728. Եւ հուրն այնպէս փայլատակէ *որպէս* զլուսին. և լուսինն *որպէս* զարեգակն. և արեգակն եօթնապատիկ պայծառանայ *որպէս* ասէ եսայի: - 728. Գոյացական որակքն մնան և պատահականքն պակասին *որպէս* ասացաւ: - 728. Դարձեալ՝ էութիւնն մնայ, այլ ներգործութիւնն պակասի՝ այսպէս. զի ջերմութիւն հրոյն և ցրտութիւն ջրոյն և փոփոխմունք օդոյդ *որպէս* ամպք և այլն, և սևութիւն երկրի...: - 728. ...այլ ա՛յս է՝ զի իւրաքանչիւր մարմինք սրբոց պայծառասցին էպատիկ քան զարեգակն. *որպէս* տեառն մերոյ ի թաբօր լերինն. և **թ** դասուց հրեշտակաց լոյսն յերկիր ծաւալին. զի զօրութիւնք երկնից շարժեսցին: - 728. Եւ այլ ևս ի շարժմանէ դադարին *որպէս* ասացաւ. զի ո՛չ առնեն ամառն և ձմեռն: - 728. Սո՛ւտ է այս և չէ՛ ընդունելի *որպէս* ցուցանելոց եմք: - 729. Նա՛խ՝ այն է գալարիլն երկնի, զի եթերն *որպէս* մագաղաթ ծալեալ նուազի և նսեմանայ վասն առաւել ճառագայթից լուսաւորացն հրեշտակաց և սրբոցն յերկնէ երևեալ: - 729. *Որպէս* թօթափիլն է լուսաւորաց, նոյնպէս գալարիլն երկնի: - 729. Իսկ ըստ իրին, զի *որպէս* ամպ զարեգակն արգելու, այսպէս նսեմութիւն օդոյդ զարփին որ արգելէ՛ զտեսութիւն մեր: - 729. Արդ ի պարզիլ օդոյդ *որպէս* ցուցաւ երևի լոյս արփւոյն անարգել: - 729. ...և վառեսցեն զերկինս որ է՛ օդն. և զերկիր և զլերինս և զդաշտս և զբոյսս և զկենդանիս. և զժանկս մեղաց *որպէս* ասէ աստուածաբանն գրիգոր: - 731. Այլ և պարզէ՛ զնոսա *որպէս* ասացաւ: - 731. Զի *որպէս* փայլակն ելանէ յարևելից ի վերայ լուսեղէն ամպոյ, և քառաձև լուսովն լնու զչորս կողմ աշխարհի և հաստատի ի գողգոթայ յորում խաչեցաւ տէրն: - 732. Եւ ոմանք թէ՝ խաչն լուսաւորեալ ճառագայթէ *որպէս* բևեռք և գեղարդն: - 732. Ա՛րդ՝ *որպէս* հրեշտակք ի յոչ գոյից գոյացան և են անապականք և անմահք ի կամքն աստուծոյ: - 733. Հինգերորդ՝ զի ո՛չ ոք ապականացու զայլ ոք ամբողջ կարէ պահել *որպէս* յայտ է ի նիւթական իրս ամենայն: - 733. Վեցերորդ՝ զի գործ աստուծոյ է ի նւաստ և ի փոքր ինչ իր զմեծամեծսն ներգործել. *որպէս* կաւովն զկուրին աչքն եբաց, և ի վիմէն ջուր բղխեցոյց **բժ**ան. և այլ բազումս: - 733-734. ...*որպէս* յա՛յտ է ի սերովբէսն որ ի ներքոյ փառաց աթոռոյն, այսինքն է խաչին. թևասքօղեալ զերեքսրբեանն վերածայնէին: - 734. Արդ՝ եթէ ապականացո՛ւ էր սա, ո՛չ երկնչէին ի սմանէ դևք. *որպէս* և ո՛չ յանասնոց և յանշնչից. ապա ուրեմն անապական է խաչն: - 734. Զի *որպէս* խաչեալն ի ժամ խաչելութեանն տգեղ երևէր, և ի միւսանգամ գալստեանն փառօք հօր և ընդ ամպս: - 734. *Որպէս* յորժամ կայսր մտեալ ի քաղաք՝ թագ և այլ նշանք առաջի տարցին, որով գալուստ նորա ցուցանիցի: - 734. ...*որպէս* ասի «հուր առաջի նորա բորբոքեսցի և շուրջ զնովաւ մրրիկ յոյժ». *որպէս* ի սինա լեառն: - 735. Նախ կոչի աթոռ նշանակ հանգստեան. *որպէս* հասարակաց մարդկան: - 736. *Որպէս* մեծութիւնն աստուծոյ անչափ է՝ և փառքն անհաս...: - 736. Այլ ի գալուստն քրիստոսի Առաջին փառք է՝ զի փառաւոր երևեսցի սիրելեաց իւրոց, յայտնեալ զաստուածութեան փառս միաւորեալ ի մարմնի. *որպէս* երևեցաւ ի թաբօր: - 736. Վեցերորդ, զի ահագին փառօք գայցէ փողով մեծաւ և ամպախաղաց որոտմամբ և շարժմամբ և հրով բորբոքելոյ *որպէս* ի սինայ: - 737. Եօթներորդ, զի ահագնակերպ երևի ի վերայ մեղաւորաց. մինչ ասիցեն լերանց թէ անկերուք ի վերայ մեր. և բլրոց թէ ծածկեցէք զմեզ

յերեսաց բարկութեանն աստուծոյ որ նստի յաթոռ. *որպէս* ասէ տեսիլն: - 737. Իններորդ, փա՛ռք է զդատաստանն առնել. զի նմա տըւաւ իշխանութիւն ասէ դանիէլ. և հայր ո՛չ զոք դատէ. այլ զամենայն ետ որդւոյ *որպէս* ցուցաւ: - 737. ...զի անդ արդարութիւնն ծածկէ՛ զողորմութիւն. *որպէս* աստ ողորմու-թիւնն ծածկէ զարդարութիւնն: - 738. Իսկ մեղաւորքն ի ձախմէ. այսինքն վայր ի յերկիր ծանրացեալ մեղօքն. *որպէս* կապար ի յերկիր հակեալ. ուր բոլորով սրտիւ սիրեցին զնա: - 738. Եւ այսպէս բաժանեսցին ի միմեանց տեղեաւ և փառօք. *որպէս* օդիք և այծիք յաջմէ և յահեկէ քրիստոսի: - 738. Երկրորդ, աթոռակիցքն քրիստոսի. *որպէս* առաքեալքն և մարգարէք և կատարեալքն դատեն զմեղաւորս իբր տեղեակք օրինացն աստուծոյ: - 738. Ոմանք դատին և դատապարտին. *որպէս* միջակք որք ունին հաւատ և ո՛չ գործք. *որպէս* չար հաւատացեալք. և որք ունին գործք և ո՛չ հաւատ. զի աստ հատուցաւ նոցա: - 739. Ոմանք ո՛չ դատին և ո՛չ դատապարտին. *որպէս* բուն արդարքն և կատարեալքն...: - 739. ...և Ոմանք դատին այլ ո՛չ դատապարտին. *որպէս* միջակ արդարքն. որք ունին ներելի և մասնաւոր մեղս: - 739. Որք արտաքոյ օրինաց մեղանչեցին *որպէս* կռապաշտք՝ և հրէայքն որք յետ խաչելութեանն քրիստոսի. զի յետ խաչին պահպանութիւն օրինացն ի կռապաշտութիւն է համարեալ նոցա: - 739. Որք առին զօրէնս և ո՛չ պահեցին. *որպէս* չար քրիստոնեայք ի նորս և չար հրէայքն ի հինն...: - 739. Որք ի վեր քան զօրէնս գործեցին. *որպէս* առաքեալք, մարգարէք, մարտիրոսք, կուսանք, և այլք: - 739. Դարձեալ *որպէս* ի վեր անդր ի հրեշտակացն՝ բանն յերիս որոշեցաւ. այսինքն է՛ բան մտաց և բան լեզուի և բան գործոյ: - 739. *Որպէս* առաքեալքն ի մի լեզու քարոզէին և ամենեքեան ի լեզուս իւրեանց լսէին: - 739. Դարձեալ, *որպէս* մի շնչմամբ օդոյ՝ ցորեանն ժողովի և յարդն հոսի: - 739. ...*որպէս* ասացաւ ի սկիզբն գրոցս երեք համարն: - 741. Արդ՝ ա՛յս գիր գործոց մերոց գրեալ ի հոգի և ի մարմին մեր *որպէս* ի մագաղաթի՝ դատաւորն ընթեռնու ի տես և ի լուր հրեշտակաց և սրբոց: - 741. Յոգի և մարմինս է *որպէս* մագաղաթ. կամք և իմացումն դպիր և գրօղ. հաւատքն գրիչ. արտասուքն մելան. և գիրն գործք բարի կամ բան աղօթից: - 741. Որք *որպէս* գիրք յայնժամ բացեալք եղիցին. քանզի վարդապետութիւնք նոցա և օրինակք՝ ամենեցունց յայտնեսցին. ի յորս ամենեքեան իբրև ի գիրս տեսցեն թէ զի՞նչ պարտ էր առնել կամ խոտել ինքեանց: - 742. Եւ *որպէս* այս առ մեզ, նոյնպէս և զկշիռ իրաւանցն աստուծոյ է տեսանել...: - 745. Եւ պա՛րտ է գիտել զի ի միոյ սեռէ բարութեանցն աստուծոյ՝ յառաջե՛ն առ մեզ ողորմութիւն և արդարութիւն. կրկին տեսակ կամ գործք կամ զօրութիւն. *որպէս* ի մեզ երկոքին ձեռք մարմնոյ. և *որպէս* իմացումն և կամք հոգւոյ: - 745. Եւ *որպէս* մեք յարաժամ միտեմք ի գործ բարութեան կամ չարութեան. և գործ նորա միտէ՛ յողորմութեան կամ արդարութեան հատուցումն...: - 745. Զի *որպէս* ի կշիռն արդար՝ մէտ մի յաւելուածն հարստահարէ՛ զդիմակն և ի խոնարհ ձգէ, այսպէս և դատաստանն աստուծոյ...: - 745. Եւ *որպէս* աստ՝ նոյնպէս և ա՛նդ է կշիռ արդարութեան: - 745. Նախ ըստ գոյացութեան. զի *որպէս* անսկիզբն է աստուածութեամբն, նոյնպէս և անվախճան է մարդկութեամբն հաւասարեալ: - 745. ...*որպէս* ասացաւ ի վերոյ յութերորդ հատոր գրոցս **լ** համարն: - 746. Եւ սոքա երբեմն հաւասարին. *որպէս* յորժամ արդարապէս հատուցէ բարեաց և չարաց. և միտեն յարաժամ անվախճան պատուէ և պատժէ: - 746. Այլ և աստ երբեմն հաւասարին արժանեաց և ոչ արժանեաց. *որպէս* ծագել զարև: - 746. Եւ երբեմն միտէ՛. *որպէս* ի փրկել զբարիս կամ զչարս. և փարթամանալ բարեաց կամ չարաց: - 746. Եթէ ումեք տւեալ իցէ շնորհ հասարակ կամ յատուկ, *որպէս* մկրտութիւնն և հաւատքն. քանքար և տաղանդ. իշխան և առաջնորդ. մեծութիւն և ինչք. կեանք լոյս ամանակ և այլն ամենայն. այսու եղանակաւ կշռոյ հատուցցի: - 747. Եւ այսպէս դնի կշիռք արդարութեան *որպէս* ցուցաւ: - 747. Յասարակական է, *որպէս* ածէ՛ անձրև ի վերայ չարաց և բարեաց և այլն: - 747. Իսկ կշռողականն է զոյգ արդարութեամբ կշռել. *որպէս* յորժամ ողորմելով միոյն՝ պատժէ՛ զընդդիմակն նորին. *որպէս* փրկեցաւ իսրայէլ և պատժեցաւ եգիպտոս. և յազատիլ բնութեան մարդոյս՝ պատժեցաւ սատանայ: - 747. Յարութիւն մարդկան ի վայրկեան ժամանակի և յանկարծակի լինի *որպէս* ցուցաւ ի վերոյ. այլ զյերկարութիւն ժամու քննութեան դատաստանին, ոմանք ժամ մի ասեն. որքան եկաց ընդ ադամայ ի քննութիւն հարցմանց յետ յանցանաց նորին: - 747. Զի *որպէս* յաւուրս **զ** կազմեցաւ աշխարհ և ի **զ** դարս կայացաւ. նմանապէս և ի ժամս **զ** նորոգեսցի դարձեալ: - 747. Երկրորդ, նշանակէ՛ զծածուկ սէր սրտին. *որպէս* ծուխն զհուր: - 749. Իսկ ծուխն յերեսացն աստուծոյ, Նախ նշանակէ զահագին սպառնալիք բարկութեան տանջանացն. *որպէս* նա՛խ է ծուխն քան զհուր, և սպառնալիքն քան զտանջանս: - 749. Վասն չորից անհանգիստ տանջին մեղաւորքն յաւիտեան. *որպէս* տեսանի ի մարմնաւոր տանջանացս: - 750. Որպիսութեան կրիցն չափ ո՛չ է անտի տանջանացն. զի բոլոր աստի նեղութիւնս համեմատեալ այնմ՝ է՛ *որպէս* կաթիլ մի ի ծովէ և կայծ մի ի

հնոցէ: - 751. Չորրորդ՝ նմանոյն հատումն մասանց. *որպէս* ակն ընդ ական: - 751. Զի այնպէս ծանակեալ լիցի մարմին մեղաւորին, մինչ զի հոգին գարշեսցի առնուլ զնա. և *որպէս* ուրուկ և որդնալից այնպէս ո՛չ կամեսցի ունել զնա: - 751. Զի *որպէս* աստ եղև ծառայ մեղաց, լիցի և անդ հարկատու պատժոց: - 751. Եւ այնպէս յաղթէ զնիւթականս զայս հուր, *որպէս* այս զնկարեալն պատկեր հրոյ: - 752. Զի *որպէս* ձկունք ի ջուրս, այնպէս նոքա կան ի հուր: - 752. Հինգերորդ՝ ծեծ հարկանողացն. *որպէս* ուռունք զերկաթս ծեծողաց: - 752. Վասն երրորդին, զի նախանձ և ատելութիւն աստէն *որպէս* որդունք խածատեցին զընկերս. արժանապէս որդունքն անդ խածատեն զնոսա: - 752. Ոմանք որդն զխիղճ մտացն ասեն *որպէս* ցուցաւ ի վերոյ: - 753. Եւ *որպէս* որդս այս ո՛չ ունի զգայարանք, նոյնպէս և հրեղէն որդունքն: - 753. *Որպէս* գառն զմայրն, և նոքա զճնօղս իւրեանց: - 753. Զի այսպէս ասեն վարդապետք՝ թէ յորժամ յղանայ ոք ի միտս իւր զխորհուրդ մեղացն, ի սատանայէ՛ սերմն առեալ *որպէս* կին յառնէ. և ի ծնանիլ մեղացն՝ ծնանին և որդունքն ի հրեղէն ծովն որ է՛ ի հարաւ: - 753. Եւ յորժամ առաքին մեղաւորքն ի հուրն յաւիտենից, գտանեն զճնօղս իւրեանց *որպէս* գառինք զմարս, և յաւիտեան խածատեն զնոսա: - 753. Արդարքն տեսանեն զնոսա ի տանջանս և ուրախանան զի զերծան յայնմանէ. *որպէս* ցուցանի յառաջիկայդ: - 754. Այլ զկնի դատաստանին՝ բարիքն թէպէտ տեսցեն զչարսն ի տանջանս, բայց չարքն ո՛չ երբէք այնուհետև տեսցեն զբարիսն *որպէս* ցուցաւ: - 754. Ո՛չ բնաւ, թէպէտ հայր տեսանէ զորդի կամ մայր զդուստր. և կամ զեղբայր և զայլս. ո՛չ միայն ո՛չ ցաւին, այլ ա՛յնպէս լինի հեշտալի, *որպէս* տեսանեմք զձկունս որ խաղան ի վտակս: - 754. *Որպէս* համեմատեցաւ ի վերոյ ի **ժթ** գլուխն, **ժբ** համարն: - 756. Որ և ա՛յն քան գերազանց է միաւորութիւնն քրիստոսի ընդ եկեղեցի քան զմարմնական հարսանեաց, *որպէս* լոյս քան զխաւար. և իւղ անոյշ քան զգարշութիւնս: - 757. Եւ որք ի ծերութեանն գան յուղղութիւն, *որպէս* զսէզ դալարին, և տան պտուղ զերեսնաւորն: - 757-758. Ասեմք եթէ՝ բնութեամբ բարին մի է. *որպէս* ասէ մեծն դիոնէսիոս. այլ ներգործութեամբ բազում է ի զանազան կամաց յառաջ եկեալ: - 758. Եւ դարձեալ՝ թէ տեսանես ուղղակի՝ ըստ ինքեան առաւել է բարին և բազում. զի է՛ բնութեամբ բարի *որպէս* աստուած. և ներգործութեամբ բարի *որպէս* արարածք ամենայն: - 758. Իսկ չար՝ թէպէտ լինի ներգործութեամբ անձնիշխան կամօք, այլ բնութեամբ չար ո՛չ է ըստ ինքեան. զի ո՛չ է էութիւն այլ պակասութիւն բարւոյ. *որպէս* ցուցաւ ի վերոյ ի **ե** համարն: - 758. Զի նախ քան զյանցանելն ադամ ունէր զկիրս բնական և անգոսնելի. *որպէս* կերակրիլն, ննջելն, և այլն: - 759. Դարձեալ, հոգիք սրբոց ա՛յժմ են ի յերկինս և առ երկինս *որպէս* ցուցաւ. և յայնմ աւուր փառաց ի փառս բարձրանալ հաւատացեալ լինի: - 759. ...*որպէս* ասէ Այլ և արդեամբք սրբոց ոռոգեցաւ, լիցի *որպէս* զդրախտ աստուծոյ անուշահոտ ծաղկօք և մանուշակօք և մարդօք զարդարեալ և գեղեցկացեալ: - 759. Այսպէս և օդն յորս եկաց փրկիչն յետ յարութեանն, փոփոխեսցէ զբնական նսեմութիւնն իւր և պայծառասցի *որպէս* զեթերն: - 759. Նմանապէս և հուրն որով հրեղէն լեզուօք երևեցաւ սրբութեան հոգին, բաժանեսցի այրեցումն և մշտափայլ լուսով փայլեսցի *որպէս* զարփին և *որպէս* զարեգակն: - 759-760. Եւ այնպէս մնասցեն յաւիտեան *որպէս* ցուցաւ ի վերոյ: - 760. Այլ ի նոցանէ՛ անկաւ, *որպէս* ցուցաւ ի վերոյ **թ** գլուխն, **իբ** համարն: - 760. *Որպէս* ի թաբօր ծածկեաց զլոյս նորա. նոյնպէս և ի յարութեանն: - 760. Եօթն զարդ հարսին *որպէս* ցուցաւ. և օժիտք յաւիտենիցն կենացն. պսակք և արկանելիք, ասացան մեզ փոքրիշատէ յառաջագոյն ի բանից սրբոց: - 761. Դարձեալ *որպէս* ասեն վարդապետք, եօթն յատկապէս փառս ունին մարմինք, և եօթն հոգիք: - 761. Հաճոյ լինէր քեզ թէ լինէիր գեղեցիկ *որպէս* զաբիսողոմ. որում ո՛չ գոյր արատ ի մարմնի: - 761. Կամ թէ արագ *որպէս* ասայէլ որ հասնէր այծեման: - 761. Կամ լինէիր ուժեղ *որպէս* սամփսոն. որ զհազար այր ծնօտիւ իշոյն եսպան: - 761. Կամ լինէիր ազատ *որպէս* զօգոստոս. որում բոլոր աշխարհ ծառայեաց: - 761. Եւ թէ լինէիր կամօք փարթամ *որպէս* սողոմոն. որում ո՛չ անխայեաց զոր ինչ ցանկացաւ ի սրտի: - 761. Կամ առողջ *որպէս* զմովսէս. որում ո՛չ վատեցին աչքն և ո՛չ շարժեցաւ ատամն: - 761. Կամ երկայնակեաց *որպէս* զմաթուսաղայ. որ մերձ ի **ռ** ամն ժամանեաց: - 761. Դարձեալ և այսոքիւք, թէ լինէիր իմաստուն *որպէս* զսողոմոն. որում ո՛չ գտաւ հանգոյն նման ի վերայ երկրի: - 761. Կամ սիրելութիւն *որպէս* դաւթի և յովնաթանու. զոր սիրեաց *որպէս* զհոգի իւր: - 761. Կամ միաբանութիւն *որպէս* առաքելոցն. որոց էր սիրտ և անձն մի: - 761. Կամ ունէիր իշխանութիւն *որպէս* աղէքսանդրու. որ զասիա զեւրոպիա և զլիբիա ընդ իշխանութեամբ էարկ: - 761. Կամ լինէիր պատւեալ *որպէս* զյովսէփ. որում երկրպագէին եգիպտացիքն *որպէս* աստուծոյ: - 761. Կամ լինէիր անհոգ *որպէս* ենովք և եղիա որ այնպէս անհո՛գ են, որք ոչ ի մահու և ո՛չ յայլ ինչ պատահմանէ երկնչին: - 762. Կամ լինէիր այնպէս ուրախ *որպէս* զայն որ ի կախաղան ածեալ լինի՝ և

յանկարծակի ի ճանապարհին թագաւորութիւն ընկալեալ լինի: - 762. *Որպէս* զսաւուղայ ասեն՝ էշ կորուսեալ և թագաւորութիւն գտեալ: - 762. Նախ ի տեսանելն զերեսս աստուածային որ է անճառելի ցնծութիւն. *որպէս* ասեն վարդապետք, այն է ճշմարիտ և միայն ուրախութիւն, և ո՛չ յաղագս ստեղծուածոյ, այլ ի ստեղծողին լինի. զոր իբրև ստանայցես, ո՛չ ոք բարձցէ ի քէն: - 762. Զի նւազունք են ամենայն փափկութիւնք որ լինին յաշխարհի մինչև ցօրն դատաստանի, բաղդատեալ առ այն քաղցրութիւն. *որպէս* կաթիլ մի ջրոյ առ համեմատութիւն ընդ հանուր ծովու: - 762. *Որպէս* ասեն վարդապետք, լցեալ առ ժամայն ամենայն անոյշ և քաղցր ուրախութեամբ, տեսանեն զմարդն մարդկան արարիչ: - 763. *Որպէս* գլուխ մարդոյ՝ զքարիս կամ զչարիս հատուցեալս անդամոց իւրոց՝ ինքեան համարի: - 763. *Որպէս* ասեն վարդապետք, ի վերջին ծովէն սպանիու մինչև ի հնդիկս սակաւ աւուրց բացատ գոյ թէ վարեսցէ հողմ զնաւն: - 763. Չորրորդ վասն նորին անչարչարութեանն. *որպէս* ասացաւ նախ, և այժմ ի կարճոյ: - 764. Մեք եմք *որպէս* մարախ. թշնամիք մեր *որպէս* հսկայս: - 765. *Որպէս* ասեն վարդապետք, այնքան եղիցի երջանկութիւն, ուր ոչ ինչ եղիցի չար, և ոչ ինչ ծածկեսցի բարի: - 765. *Որպէս* ասեն վարդապետք, յագեալ ցանկասցուք, զի մի՛ յագեցումն ծնսի զտաղտկութիւն. ցանկացեալ յագեսցուք, զի մի՛ ծանծրութեամբ իցէ ցանկութիւնն: - 766. Այժմ ճանաչեմք փոքրիշատէ. իսկ յայնժամ ծանեայց *որպէս* ծանուցայ ի նմանէ: - 767. Եւ *որպէս* զկենդանարար ջուր զընդունակս իւր դալարացուցեալ. ծաղկեալ յաստիս և պտղաբերեալ ի հանդերձեալն...: - 768. ...*որպէս* ծաղկեալ զաւազանն ահարոնի նշանակէր զխրատ իմաստութեանն. որով զարդարեալ տայ զպտուղ լուսաւոր նիւթոյ կերակուր ոգւոյ: - 768. *Որպէս* և ոմն ի Պետաց մերային ազգաց՝ զհաւատն դրուատեաց ասելով, Յաւատ ի հօրէ սկսեալ յորդի և ի հոգի վերաբերի: - 769. *Որպէս* միտք հոգւոյ, և բան մտաց, և ակն մարմնոյ, և լոյսական: - 769. Եւ առաւօտ ասեն զսկիզբն աւուրն. *որպէս* առաւօտ արեգականն գալոյ: - 769. Մեր գործքն և յաստուծոյ տուեալ բարին հաւատով կնքի. և պակասն յանդիմանի այժմ ի խղճէ մտաց *որպէս* ի գրոյ. և անդ ի դատաւորէն, որ չար ծառայ կոչէ: - 769. Իսկ հաւատ ի մարդկութիւն որդւոյ, Ի կուսէն երևեալ անհայր ի մօրէ. *որպէս* անմայր ի հօրէ: - 769. *Որպէս* բան ի ձայն՝ և բան ի գիր՝ և լոյս յօդ՝ և տեսութիւն յակն՝ և հուր յերկաթ՝ և մուխ ի պողուատ: - 769-770. Ո՛չ բանն *որպէս* հալածու կաղապարեալ. և կամ մարմինն *որպէս* բոց ի հրոյ և ծուխ անօսր լուծեալ յօդդ: - 770. Այլ հզօրագունին յաղթելով. *որպէս* լոյս արեգականն ընդ իւր միաւորէ՛ զամենայն լոյս անշփոթ և անծախ: - 770. Ոչ բաժանեալ կամ հատեալ ի հօրէ և ի հոգւոյն. *որպէս* ո՛չ ջերմութիւն ի հրոյ կամ ի լուսոյ. կամ նկարագիր յէութենէ: - 770. Զոր և ես զօրէն մշակաց բազմահաւաք պտղոց. կամ փունջ մի անուշահոտ բազմերանգ ծաղկանց. կամ չնչին թռչնոյ զխորիսխ մեղու. կամ *որպէս* զլոմայս այրւոյն տառապեալ գոյիւ: - 772. Եւ են ամենայն հարցմունքդ դժան գլխով. *որպէս* յա՛յտ է ի կարգիդ: - 773. Իսկ է՛ իր ինչ ի բոլոր տեսակս մարդկային բնաւորեալ, և ո՛չ է բնութեամբ. *որպէս* այս: - 773. Առ այս ասեմք, թէպէտ է՛ ամենայն իր բնութեամբ նա՛ և հասարակ. *որպէս* և սնութիւն ագռաւու. այլ ո՛չ անդրադարձեալ. զի է՛ ինչ բնութեամբ, այլ ո՛չ հասարակ. *որպէս* կնտութիւն մարդոյ: - 774. Եւ այս ո՛չ միայն փութանցիկ գոլոյ վասն, կամ ներհակաբար հատուցման *որպէս* սովորութիւն է...: - 775. Յիրաւի ապա ըստ այսմ օրինակի՝ որք ի մշտնջենաւորէն փոխանցին առ երազ սնոտեաց, ոչ ունիցին ինչ ի մտի. թէ և անդրադարձեալ աստի անդ մնասցէ յիշատակութիւն *որպէս* ասացաւ: - 775. ***Որպէս* ասեն երբեմն ժամանակի ի կոստանդնուպօլիս հռչակեալ քաղաքի, մոլորեալ յոյնք ի մոլորեալ երիտասարդէ՛ միոջէ՛, բարձին յեկեղեցւոյ զերգ երեքսրբենին**: - 775. Եւ այսպէս պատժոյ նորին հաղորդեալ մահու մեռանելոյն հասարակ ամենեցուն *որպէս* ասացաւ: - 776. Նա՛խ՝ *որպէս* ի վերոյ ասացաւ. զի թէ ադամ որ սկիզբն և պատճառ էր մեղաւորաց՝ ազատեցաւ. ապա ուրեմն և որդիքն որ վասն յանցանաց նորա՝ ազատեսցին: - 776. Չորրորդ, զի *որպէս* ադամաւ ամենեքին մեռան արդարք և մեղաւորք. այսպէս և քրիստոսիւ ամենեքին կենդանացան. այսինքն ազատեցան: - 777. ...իսկ Բաղդատութեամբ. *որպէս* է սկզբնականն առ ներգործականն մեղք. այսպէս ադամայն առ որդւոցն նորա: - 777. Եւ այլ ևս. *որպէս* ասացաւ կրկին է մեղքն. սկզբնական և ներգործական: - 777. Ա՛րդ՝ *որպէս* հասեալ պատժոյն հաղորդեցան, նմանապէս և հասեալ շնորհօքն ազատեցան: - 777. Որ և ամենայն վերոյ գրեալքդ առակք, անառակին, մոլորելոյն, կորուսելոյն և այլն ևս, այսպէս ուղղին. այսինքն նմա՛, վասն նմա՛, *որպէս* նմա՛: - 778. Ապա ուրեմն ողորմութեամբ և արդարութեամբ ազատեցաւ նախահայրն յաւիտեան. իսկ այլքն առ ժամանակ մի ողորմութեամբ վասն նորա *որպէս* ասացաւ: - 778. Զի *որպէս* կարողութիւնն աստուծոյ երևի ի ստեղծանելն և ողորմութիւնն ի բարերարելն, այսպէս և արդարութիւնն ի հատուցանելն: - 778. Այսպէս և յամենայն գործս աստուծոյ գտանի արդարութիւն և

ողորմութիւն *որպէս* ասեն ոմանք. այլ երբեմն արդարութիւնն ծածկեալ և ողորմութիւնն յայտնի. *որպէս* յարդարացուցանելն ամբարշտին՝ և յառաջին գալուստն քրիստոսի: - 779. Երբեմն ողորմութիւնն ծածկեալ և արդարութիւնն յայտնի. *որպէս* ի պատիժ մանկանց առանց մկրտութեան մեռելոց. և յերկրորդ գալուստն: - 779. Եւ երբեմն երկոքեանն ի ծածուկ. *որպէս* ի նեղութիւն իւրաքանչիւր արդարոց և անմեղաց: - 779. Երբեմն երկոքեանն յայտնի. *որպէս* ի հատուցումն իւրաքանչիւր արդարոց և մեղուցելոց: - 779. Այլ թէ յետ մահու ո՛չ հանդիպի թողութեան, *որպէս* և ո՛չ դևք: - 780. Չորրորդ՝ զի ակամայ ի կրիցն ցաւոց, *որպէս* աւազակաց հատուցմանց: - 780. Զի *որպէս* քրիստոս չարչարանօքն փրկեաց զեկեղեցի և հարսնացոյց, նոյն և առաքեալն քարոզութեամբ իբր զկոյս մի սուրբ յանդիման արար փեսային քրիստոսի: - 781. Իսկ զոր ինչ շնորհօք լինի որ ստացեալ, կարէ՛ և մերկանալ. *որպէս* ադամ զեռակի շնորհն. և առ ջրհեղեղաւն...: - 782. Ամենայն իր բնութեան՝ գոյացակա՛ն է նորին. և ամենայն պարգևք այսինքն շնորհք պատահական է ի զարդ նմին. յաղագս որոյ ո՛չ բառնին գոյացականքն. *որպէս* անմահութիւն դիւի և բան մարդոյ: - 782. Եւ բառնին շնորհականքն. *որպէս* եռակին ասացեալ ադամայ. և լոյս մտաց. և երանութիւն դիւաց: - 782. Իսկ առ լուծումն խնդրոյս թէ վասն է՞ր արդեօք առ նորս շնորհ՝ *որպէս* աւազանին և կարգին ո՛չ բառնի ընդ բառնիլ շաղկապին. իսկ առ հնովն բարձաւ. *որպէս* յա՛յտ է ի վերոյ ասիցդ ադամայ և յայլոցն: - 782. Զի *որպէս* բան պատկերին, այսպէս և բան շնորհացն եռակի. զի միապէս սոքա եղծանին մեղօք, և նմանապէս արծարծին մաքրութեամբ առ որ ոք և իցէ: - 782. *Որպէս* ծառ մերկացեալ ի պտղոյ՝ այլ ո՛չ ըստ ունակութեանց. և նովին ունակութեամբ վերստին պտղաբերի ինքն: - 782-783. Զի *որպէս* բառնի վասն մեղաց, նոյնպէս տացի վասն զղջմանն: - 783. Այլ զբանիս խրթնութիւն առնէ կոչմանցն անորոշութիւն. զի կոչի շնորհ իջեալն պարգև. *որպէս* մարգարէութիւնն: - 783. Կոչի և շնորհ գործ նորին. *որպէս* մարգարէանալ: - 783. Եւ է՛ շնորհ յատուկ ընրութեամբն աստուծոյ, որ պատճառ է՛ զփառս զանազան ներգործութեամբ. և է՛ սա՛ ան՚ի բաց դնելի անզեղջ խոստմամբ ի կողմանէ տուողին. *որպէս* է՛ առ մեզ շնորհք աւազանին: - 783. Շնորհք որ ի հինն զինչ և իցէ փոփոխական գոլով՝ օրինակ նորոյս էր. *որպէս* քահանայութեան և այլն: - 783. Նորս խորհրդոյ շնորհք ոմանք են անիբաց դնելիք. զի են կնիք ի հոգին անփոփոխ գոլով ընդ նմա. *որպէս* է՛ շնորհք կնքոյն դրոշմին և կարգին: - 783. Են և այլ շնորհք մասնականք պարգևաց հոգւոյն. *որպէս* բան իմաստութեան և այլն: - 783. Եթէ վարծատրելի է ասիցէ ոք, ապա զիա՞րդ որք ի հարկէ հաւատացին ո՛չ վարծատրեցան. *որպէս* դևքն ի հալածիլ...: - 783. Արդ *որպէս* յամենայն ժամանակս սոքօք գան ի հաւատս ուղղութեան և է՛ վարծատրելի. այսպէս և ի վերջին ժամանակս որք յետ նեռինն՝ ո՛չ միայն ի հարկէ սքանչելեաց, այլ և ի լրոյ քարոզչաց երկուցն վկայից իջելոց սրբոց: - 785. *Որպէս* և այժմ մեռելոց զղջումն և խոստովանիլն անվա՛րձ է ամենևին և ակամայ: - 785. Եւ *որպէս* այլքն այլ ինչ, և սա՛ զծխատեսակ ջերմութիւն սրտի ընդ ցնցուղս ծայրից արտաքարշելով ի կրկին կողմանէ *որպէս* ասեն բժիշկք: - 786. Առ այսոքիւք, թէ արտասուքն որ յաչացն հեղու, ընդէ՞ր աղի գոլով, Ո՛չ միայն զվասն էրն խնդրեմ. այլ և *զորպէսն* դառնալ նմա աղի ընդ երակս աչաց: - 786. *Որպէս* յա՛յտ է ի ծխոյ և ի փոշւոյ և յայլոց. ընդ դէմ գոլոյ պարզութեանցն լուսոյ՝ ի ներքս մտեալ զկծեցուցանէ զնա: - 786-787. Զի է՛ բացասութիւն բացբարձօղ ամենայնի ուր և դիպեսցի. *որպէս* զէութիւն այսպէս զոչէութիւն: - 787. Յորժամ պարուկաւ այսինքն հարցմամբ ասի. *որպէս* ասելն, ո՞չ քեզ ասացի զայդ. ահա՛ եղև ստորասութիւն. իբր թէ՝ ասացի՛: - 787. Զի *որպէս* սիւն տան, և ոսկերք մարմնոյ, և բրգունք աշտարակի: - 788. *Որպէս* և բազում ուրէք յերգս գտանի. վէմք պատառեալ. երկիր շարժեալ առ խաչին քրիստոսի: - 788. Ա՛րդ՝ *որպէս* երկիր շարժեցաւ, վէմք պատառեցան: - 788. Նախ՝ *որպէս* անդանօր ողջունեն զխաղաղութեան և շինութեան գոլ. յեղակարծ ժամու հասանիլ բարկութեան: - 788-789. Այլ ինչ ո՛չ օգնել ի գերութիւն վարելոց. *որպէս* և յայնմ աւուր ի կորուստ մատնելոց: - 789. Այլ և աստ ապաշաւելն ոչ ինչ օգտեալ. *որպէս* և անդ ո՛չ լսողաց բերանով հաշեալք. որ և ո՛չ գոյր անդրէն դառնալ. և ո՛չ կարի յօժարացն շահավաճառ եղեալ. ո՛չ գիւտ և ո՛չ ողորմ. հանգոյն յիմարացն օրիորդաց: - 789

***Ո՞ՐՊԷՍ +*** Չարն *ո՞րպէս* է ոչ է. զի ահա՛ ներհականա՛յ բարւոյն. որպէս առաքինութիւն և չարութիւն: - 22. *Ո՞րպէս* է չարն անբաւ և անսահման: - 23. Մետասաներորդ՝ Թէ *ո՞րպէս* ասէ աստուածաբանն բնութիւնք երկուք: - 30. Իսկ թէ առանձնապէս զմարդոյն, զիա՞րդ իցէ կենդանարար մարմինն մարդոյ. կամ *ո՞րպէս* առաքեցաւ նա ի հօրէ. զիա՞րդ իցէ և կենդանի վասն հօր: - 69. Զի թէ առանձին մարդկութեանն, *ո՞րպէս* է յերկնից իջեալ. զի ի կուսէն ծնաւ մարմինն: - 70. Եթէ մի է առհասարակ բնութիւն երրորդութեանն և ո՛չ բաժանեալ, *ո՞րպէս* իմանամք զբանն միայն

մարմնացեալ. և ո՛չ զհայր և զհոգի: - 74. *Ո՞րպէս* ասեմք աստուած և մարդ: - 77. Իսկ թէ *ո՞րպէս*՝ ասացից: - 77. *Ո՞րպէս* ասէ աստուածաբանն եթէ՝ «բնութիւնք երկու»: - 79. *Ո՞րպէս* փախիցուք ի նեստորի բաժանելոյն, և յեւտիքեայ շփոթելոյն: - 80. *Ո՞րպէս* ասես: - 84. *Ո՞րպէս* ասէք մի կամք և մի գործ աստուծոյ և մարդոյ: - 85. Ապա *ո՞րպէս* է Երրորդութիւնն յատկացեալ՝ եթէ ոչ անձամբ: - 86. Իսկ եթէ ի դէմս մարդոյն, *ո՞րպէս* ունէր զփառս յաւիտենից այն որ այսօր ի կուսէն ծնաւ: - 94. Ա՛րդ՝ եթէ քրիստոս տգէտ է և նոքա զմիտս տգիտի ունէին. *ո՞րպէս* լինէին հազարապետք աստուծոյ խորհրդոցն. կամ հազարապետքն առաւել են քան զխորհուրդն աստուծոյ: - 96. Արդ՝ եթէ ինքն ճշմարտութեամբ ո՛չ գիտէ, մեզ որպէս ցուցանէ. և թէ ինքն մոլորեալ է՝ զմեզ *ո՞րպէս* տանի առ հայր: - 97. *Ո՞րպէս* զամենայն գիտէ՝ որ զինքն ո՛չ գիտէ ըստ քեզ: - 98. Ապա *ո՞րպէս* է գլուխ նա ամենայն իշխանութեանց և պետութեանց և ուսուցիչ: - 99. Եւ *ո՞րպէս* երկիր պագանեն նմա երկնաւորք և երկրաւորք և սանդարամետականք. և ամենայն լեզու խոստովան լիցի թէ տէր է յիսուս քրիստոս ի փառս աստուծոյ հօր: - 99. *Ո՞րպէս* երևի անմարմինքն. մարմնո՞վ, առ աչօ՞ք, թէ իսկութեամբ: - 102. *Ո՞րպէս* անգիտութեամբ գիտելի է աստուած: - 103. Տգիտութիւն *ո՞րպէս* խաւար է մտացն: - 103. *Ո՞րպէս* բազմանայ և բազմապատկի աստուած: - 110. *Ո՞րպէս* անեղ է աստուած, և անեղ ասեմք զոչէսն: - 113. *Ո՞րպէս* է անժամանակ աստուած, և անժամանակ է հոգի: - 114. *Ո՞րպէս* յաւիտենական է աստուած. և յաւիտենական հոգին: - 114. *Ո՞րպէս* աստուած զանցեալն և զապագայն համանգամայն տեսանէ ներկայաբար. իսկ մեք ո՛չ: - 117. *Ո՞րպէս* տեսանէ աստուած զէքս. զի զգայութիւն ո՛չ ունի. որպէս մեք ներքին զգայութեամբ զիմանալիս՝ և արտաքին զգայութեամբ զերևելիս տեսանեմք: - 118. Մեք *ո՞րպէս* տեսանեմք զաստուած. իմացմա՞մբ՝ թէ զգայութեամբ: - 119. Հրեշտակք *ո՞րպէս* ունին տեսութիւն: - 119. *Ո՞րպէս* է տեսութիւն մարդոյ: - 120. Առաջինն որ է տըպաւորական աստուածաբանութիւն՝ է՛ ի դէմս սուրբ Երրորդութեանն և մի աստուածութեանն. թէ *ո՞րպէս* է մի. *ո՞րպէս* երրեակ. և ծնօղ. և ծնունդ. և բղխումն. և վասն մարդեղութեանն քրիստոսի: - 122. Եւ թէ *ո՞րպէս* ասեմք ննջել զարթնուլ սրտմտիլ կամ տրտմիլ աստուծոյ: - 122. Զի որպէս խաւարն անյայտ է, նոյնպէս և առաւել լոյսն անտեսութիւն առնէ. և նա անտես է ի հրեշտակաց. և անյայտ ի մարդկային մտաց. թէ *ո՞րպէս* կամ զի՞նչ է էութիւն և բնութիւն աստուածութեանն: - 122. Զարմանալ *ո՞րպէս* ասի աստուծոյ: - 127. *Ո՞րպէս* կոչի աստուած սիրօղ՝ և սէր և սիրելի: - 128. Իսկ թէ *ո՞րպէս* ի մի և նոյն պարզ պարգևացն զանազանապէս ընկալցին...: - 131. *Ո՞րպէս* երևին անմարմինքն. մարմնո՞վ, առ աչօ՞ք, թէ իսկութեամբ: - 133. Քահանայապետութիւնն *ո՞րպէս* է ի հրեշտակս, և *ո՞րպէս* ի մեզ: - 138. Ապա յա՛յտ է թէ *ո՞րպէս* է հասարակ և զանազան քահանայապետութիւնն առ աստուած ի հրեշտակս և ի մարդիկ: - 139. Իմացումն հրեշտակաց և հոգւոց *ո՞րպէս* զանազանին: - 141. *Ո՞րպէս* ասեն վարդապետք՝ երեքկին է բանն. մտաց. բերանոյ, և գործոյ: - 144. *Ո՞րպէս* անկան դևքն: - 146. *Ո՞րպէս* հաւասար և մեծագոյն: - 149. Հասարակ տարերք թէ *ո՞րպէս* են անապականք: - 154. Թէ *ո՞րպէս* երկիր անշարժ է՝ և երկինք շարժի: - 154. *Ո՞րպէս* է զի աստուած պարզ է և աննիւթ, զնիւթականքս յառաջ էած. զի այս է կարգն որ նիւթն ի նիւթոյ, և աննիւթն յաննիւթոյ յառաջագայի: - 175. *Ո՞րպէս* է երկիրս ի մէջ երկնից հաստատեալ և անշարժ մնայ: - 181. Զլոյսն *ո՞րպէս* ունի: - 187. Իսկ որ զերկրաւորքս ըստ կարգի, ամենագութ մարդասիրութեանն է երևումն. *ո՞րպէս* խնամով զպէտս մարդկան յայնքան աւուրս կատարեաց: - 192. Ժամանակն թէ *ո՞րպէս* բաժանի ի մշտնջենաւորն և յաւիտեանցն՝ ասացաւ ի վերոյ ի **ը** գլուխն՝ **ժբ** համարն: - 198. *Ո՞րպէս* գիտեմք թէ մարդն իշխան է ի վերայ անասնոց. զի ահա՛ բազումք անհնազանդք են. որպէս վայրիք և գազանք և այլք: - 220. *Ո՞րպէս* ասէ մեծն Ներսէս շնորհալին. ընդ ծառոց երկրի զգալեաց. տնկեաց և զտունկս իմանալեաց: - 221. *Ո՞րպէս* ասեն թէ դրախտն լուսոյ արեգական չէ կարօտ: - 222. *Ո՞րպէս* ասեն թէ լուսնոյ կամարին հաւասա՛ր է: - 222. Պտուղն որ հատանի և ծասկի և ի մարմին փոխարկի. *ո՞րպէս* է անապական: - 223. Ա՛րդ՝ զի՞նչ ասես վասն կենաց պտղոյն. եթէ կերակրելի է և հատանելի, *ո՞րպէս* է կենաց պտուղ: - 223. Եւ թէ կեանս տայ՝ *ո՞րպէս* հատանի: - 223. Այլ ա՛յս է ճշմարիտն. որ մինն ծառ էր կենաց՝ և մինն գիտութեան. և ի դրախտին այլ ո՛չ գոյր նման նմա. թո՛ղ թէ յերկիրս. *ո՞րպէս* ասեմք թէ այս է՝ կամ այն: - 224. *Ո՞րպէս* է, կերակրելի՝ թէ անծորելի է պտուղն: - 224. Ծառք դրախտին *ո՞րպէս* ըմպեն ջուր, թէ անապականք են: - 224. Տկարանայ միտքս թէ յապականացու երկրէ՛ է դրախտն և մասն է երկրի, *ո՞րպէս* է անապական: - 225. Երեսունն՝ Մեք *ո՞րպէս* պատկեր և նման եմք: - 228. Քառասուներորդ՝ *Ո՞րպէս* է ի մեր մարմինս մաշկեղէն հանդերձն: - 228. *Ո՞րպէս* է **յկե** զօդուածք: - 243. Մասունք հոգւոյն *ո՞րպէս* ճանաչին: - 250. Իմաստութիւնն *ո՞րպէս* է: - 250. Իմացական միտս մեր՝ առ անիմանալին աստուած *ո՞րպէս* վերանայ: -

251. Զմարդոյ հոգին *ո՞րպէս* իմանալ մարթի: - 251. Յոգին պատկե՛ր է աստուծոյ. և աստուածապաշտ մարդոյ՝ զաստուած քննել ո՛չ մարթի թէ ուստի՞ է. կամ ո՞ւր է կամ ո՞րչափ է. և կամ թէ *ո՞րպէս* է. կամ թէ մինչ ի յուր է: - 251. Խնդրեմ ուսանիլ վասն բոլոր էութեան հոգւոյն թէ *ո՞րպէս* կամ զի՞նչ եղանակաւ գոյանայ: - 252. Եւ թէ ասէ ոք, *ո՞րպէս* է բանական հոգին նախ զօրութեամբ և յետոյ ներգործութեամբ: - 254. Եւ թէ ասիցէ ոք, *ո՞րպէս* է մի, զի ահա ի մահուանն բաժանին ի նմանէ: - 260. Մեք *ո՞րպէս* պատկեր և որպէս նման եմք աստուծոյ: - 273. *Ո՞րպէս* ասեն մաշկեղէն հանդերձ զմարմինս մեր: - 282. Քսաներորդ՝ *Ո՞րպէս* զգեստ կոչի մարմինն: - 283. Եւ թէ *ո՞րպէս* փոխեցաւ հինն ի նորս: - 284. Եւ *ո՞րպէս* օրէնք յաւիտենից. և վասն **բ** նոխազացն: - 284. Զի արիւն և շունչն արակա՛ն է որպէս ցուցաւ. վասն այն ա՛յրն հանէ զնոսա. և կինն չէ տուեալ արիւն՝ *ո՞րպէս* հանէ: - 296. Եւ թէ *ո՞րպէս* բաժանեցաւ: - 298. Երբ լեզուքն բաժանեցան, զառաջին գիրն *ո՞րպէս* կարէին կարդալ: - 299. *Ո՞րպէս* էր յոբ օրինակ հնոյն ադամայ և նորոյն: - 327. Գէտքն *ո՞րպէս* առնեն հրաշք: - 335. Դևք *ո՞րպէս* խօսին զառաջիկայն: - 336. Մանանայն *ո՞րպէս* է օրինակ մարմնոյն քրիստոսի: - 339. *Ո՞րպէս* զանազանի հին օրէնքն և նորս: - 353. *Ո՞րպէս* է ընտրելի զենումն կենդանեաց: - 365. *Ո՞րպէս* է փոխեալ հինն ի նորս: - 369. *Ո՞րպէս* ասէ թէ՝ օրէնք յաւիտենական եղիցի: - 369. *Ո՞րպէս* բանակէին **բժ**ան ցեղքն: - 378. Յին քահանայքն *ո՞րպէս* էին օրինակ աստիճանի նորոյս: - 379. Վէմն *ո՞րպէս* էր քրիստոս: - 386. *Ո՞րպէս* զանազանի օրհնութիւնն: - 403. Բարկութիւնն առ մեզ ա՛խտ է և չար. և աստուած բարի՛ է բնութեամբ և անախտ ապա *ո՞րպէս* բարկանայ: - 407. *Ո՞րպէս* արգել զարեգակն և զլուսին: - 416. Վհուկ կինն *ո՞րպէս* յարոյց զսամուէլ. կամ *ո՞րպէս* զառաջիկայն պատմէր: - 428. *Ո՞րպէս* խօսէին առաքեալքն: - 455. *Ո՞րպէս* է միածին որ այս քան ծնունդ ունի: - 472. Յոգւոյ և մարմնոյ միաւորութիւն *ո՞րպէս* նմանի քրիստոսի: - 476. *Ո՞րպէս* ասեմք մահկանացու զմարմինն քրիստոսի առանց ապականութեան: - 498. Մարմնական տեղին զանմարմին հոգին *ո՞րպէս* արգիլէ: - 504. Ապա *ո՞րպէս* է **գ** տիւ և **գ** գիշեր թաղումն տեառն: - 516. *Ո՞րպէս* խօսէին յամենայն լեզուս: - 525. Եւ *ո՞րպէս* է մի կաթուղիկէ եկեղեցի: - 525. Իններորդ, Թէ *ո՞րպէս* է պետրոս գլուխ: - 525. Եւ զառաքեալսն *ո՞րպէս* ձեռնադրեաց: - 526. ...իսկ թէ մի է, *ո՞րպէս* կարասցուք ասել մի և զնոյն բանն աստուծոյ որ նախ քան զյաւիտեանս. և այսօր գրեալ ի քարտիսի: - 529. Եւ թէ ոք ասիցէ, երևի այպէս ասելդ թէ՝ մի է և բազում. և այս *ո՞րպէս* լինի: - 529. Եւ թէ ոք ասիցէ, *ո՞րպէս* է մի բանն աստուծոյ. զի ահա՛ բանն մարմնացեալ էր. և հայր բանիւ վկայեաց ի վերայ որդւոյն. և անյարմար է ինքն ինքեան վկայել: - 530. *Ո՞րպէս* է մի կաթուղիկէ եկեղեցի ընդ ոլորտս տիեզերաց: - 532. Այժմ ասասցուք թէ *ո՞րպէս* կոչի մի եկեղեցի յայտնապէս ի կարճոյ: - 533. *Ո՞րպէս* կոչի հարսն և դուստր: - 534. Եւ թէ ոք ասիցէ, յորժամ համակարգ են իշխանութեամբ ամենայն երկոտասանքն, ապա *ո՞րպէս* է գլուխ առաքելոցն պետրոս: - 546. *Ո՞րպէս* զանազանին մեղք. անօրէնութիւնք, և յանցանք: - 555. *Ո՞րպէս* է մեծութիւն մեղաց: - 565. Ապա *ո՞րպէս* մի է հաւատս ըստ առաքելոյ: - 573. Եւ թէ *ո՞րպէս*, ի բուն գիրս յայտնի է աշխատողաց անդ գտցես: - 583. Յորժամ բոլորովիմբ մարդն ի ձեռն մկրտութեանն սրբի, սերմն նորա *ո՞րպէս* է անսուրբ: - 592. *Ո՞րպէս* լինի մարմին և արիւն քրիստոսի: - 597. Իսկ յորժամ քահանայն լաւ քննէ զխղճմտանքն ժողովրդեանն. խորհի վասն ապաշխարութեանն թէ *ո՞րպէս* կարէ ապաշխարել...: - 601. Զառաքեալսն *ո՞րպէս* աստիճանեաց: - 607. Զձայնն *ո՞րպէս* գիտենամք թէ ո՞ր դասուն է: - 641. Զշարականն *ո՞րպէս* քաղեմք: - 641. Զգիրս *ո՞րպէս* է ընթեռնլի յեկեղեցի: - 643. Եւ թէ *ո՞րպէս* երևին մեզ: - 660. Եւ թէ *ո՞րպէս* երևի քրիստոս: - 661. Յոգիքն *ո՞րպէս* երևին մարդկան: - 685. Ապա *ո՞րպէս* մի կայանք հոգւոցն որ ասացաւ յառաջն: - 689. Ապա *ո՞րպէս* են ի դժոխս հոգիք մեղաւորաց որպէս ասէ տեսիլն եթէ «դժոխք ետ զմեռեալս իւր»: - 690. *Ո՞րպէս* պատրէ զմարդիկ: - 708. *Ո՞րպէս* ի հող լուծեալ և յա՛յլ տարերս, և ի գազանաց կերեալ, ժողովի մարմինն մեր: - 718. *Ո՞րպէս* անսխալ ճանաչէ հոգին զմարմինն: - 719. *Ո՞րպէս* ի հասարակ տարրէ՛ մարմին մարդոյ անխառնապէս ժողովի: - 719. *Ո՞րպէս* նորոգին արարածք: - 727. *Ո՞րպէս* թօթափին աստեղք: - 728. *Ո՞րպէս* եկեսցէ տէրն ի դատաստան: - 734. *Ո՞րպէս* դատին: - 738. Զարդարս *ո՞րպէս* դատեն սուրբք: - 740. Գործքն մեր *ո՞րպէս* գրին: - 741. Գիրն անփոփոխ *ո՞րպէս* լինի փոփոխեալ: - 742. Ապա յա՛յտ է թէ *ո՞րպէս* է անհանգիստ տանջանք դատապարտելոցն: - 750. *Ո՞րպէս* են եղեալ անդ: - 753. *Ո՞րպէս* գտանեն զմարդն: - 753. *Ո՞րպէս* ասեն վարդապետք թէ յառաջին կեանս դրախտին ելանելոց եմք: - 758. Զի թէ կորուսեալ էր, այսինքն բարձեալ ամենևին յազգէն ադամայ, ուստի՞ գոյր որդւոց նորա. կամ *ո՞րպէս* առ ջրհեղեղաւն բառնիւր բարձեալն: - 782

***Ո՛ՐՊԷՍ +*** Նախ՝ թէ *ո՜րպէս* պատւով ետ զողջոյնն կուսին ասելով «ուրա՛խ լեր լի՛ շնորհօք»: - 464. Երկրորդ՝ թէ *ո՜րպէս* գերազանց գովեաց զնա ասելով, «տէր ընդ քեզ օրհնեալդ ի կանայս»: - 464.

Երրորդ՝ թէ *ո՛րպէս* քաղցրութեամբ զօրացոյց զնա ասելով «մի՛ երկնչիր մա՛րիամ»: - 465. Չորրորդ՝ թէ *ո՛րպէս* զգուշութեամբ կատարեաց զպատգամն «ահա՛ յղասցիս և ծնցես որդի»: - 465. Հինգերորդ՝ թէ *ո՛րպէս* գեղեցկաբար մեկնեաց զեղանակ յղութեանն ասելով «հոգին սուրբ եկեսցէ ի քեզ»: - 465. Եւ տե՛ս թէ *ո՛րպէս* անձուկ և ահագին է յամենայն կողմանէ մեղաւորացն: - 738

**ՈՐՊԷՍ ԶԻ +** *Որպէս զի* լիցի կոյսն մարիամ յազգէ հարց ի քագաւորական ցեղէն. և յազգէ մօր ի քահանայից: - 461. *Որպէս զի* և դուք լիջիք գրեալ ի գիրն կենդանեաց ա՛մէն: - 773

**ՈՐՊԷՍ ԹԷ +** Եւ դարձեալ ի բաց պատառես զէութիւնն. *որպէս թէ* կէսն կայր՝ և զկիսոյն լինիլն կամեցաւ: - 36. Իսկ «աստուած աստուած իմ ընդէ՞ր թողեր զիս», ո՛չ թէ յինքենէ՛ թողաւ և կամ ի հօրէ. *որպէս թէ* երկեաւ ի չարչարանացն. վասն զի կամաւ եկն և ո՛չ հարկիւ: - 42. Չորրորդ՝ զի չարչարանօքն իւրովք փորձեսցէ՛ զհնազանդութիւնս մեր. այսինքն զկսկիծ և զծանրութիւն չարչարանաց մերոց. *որպէս թէ* ունիցի գիտել իւրովք զմերս և ողորմիլ մեզ: - 43. Զի ոչս այս բացբարձակա՛ն է. *որպէս թէ* ո՛չ չափով տայ աստուած զհոգին որդւոյ. այսինքն է՝ զի ոչ տայ և ո՛չ չափէ: - 46. Առակի են նման, *որպէս թէ* որ որ նախ զպարիսպ քաղաքին ինչ իցէ գիտենայ, և զպարսպէն ասէ ո՛չ գիտեմ: - 48. Եւ *որպէս թէ* զկատարած աւուրն որ գիտենայ, և զսկիզբն գիշերոյն ասէ չգիտել: - 48. Դարձեալ թէ այսու ոչ, Ասեմք թէ՝ որպէս զայլ բարձրագոյննն հօր եւտ, *որպէս թէ* «հայր իմ մեծ է քան զիս». և թէ՝ «ո՛չ իմ կամք, այլ առաքչին»: - 48. Այսպէս զհոգւոյն թէ յայտնապէս աստուած ասիլ ծածկեցաւ, և այլ իմն բառիւ յայտնեցաւ. որ ցուցանէ զնոյն ճշմարտապէս աստուած կատարեալ. *որպէս թէ*, «հոգի աստուծոյ, հոգի տեառն, հոգի ճշմարտութեան, հոգի բարի, հոգի սուրբ»: - 55. Տասներորդ՝ թէ բանն աստուծոյ և հոգին արարա՛ծ են և այլ բնութիւն, յայնժամ ո՛չ լինի մի աստուած. այլ բազում և զանազան աստուած. զի յոլովութիւնն յոլովութիւն է աստուծոյ. *որպէս թէ* երեք բնութիւնն երեք աստուած, և երկու բնութիւնն երկու աստուած: - 56. *Որպէս թէ* մարմինն պետրոսի խոցի կամ տանջի, ասեմք թէ պետրոս խոցեցաւ և պետրոս տանջեցաւ: - 74. Ո՛չ ասեմք մի ներգործութիւն *որպէս թէ* չկայ բարձրագոյն և նուաստագոյն: - 85. Արեգի. *որպէս թէ* յառնեն բոյսք և բանջարք աստուածային հրամանաւն: - 201. Զի թէ մարդն ունէր զբնութեամբ զէնս, *որպէս թէ* եղջիւր ի գլուխն. և սուր զատամունսն. ճիրանունք ի ձեռս. և սմբակ կամ կճղակ ոտիւք. և զայլսն, Նախ՝ զի գազանադէմ և դժւարատես լինէր ամենեցուն: - 217. *Որպէս թէ* ցանկութեամբն ասի խոզ. և բարկութեամբն շուն. յափշտակութեամբն գայլ. և այլն: - 274. Եւ զայն *որպէս թէ* ո՛չ ունիցին. և այնու կոխեսցեն զգլուխ կամակոր օձին: - 331. Փորձանքն է՝ *որպէս թէ* զայս առնես՝ լսեմք. և թէ ոչ առնես՝ ո՛չ լսեմք. և Չարաչարն՝ հայհոյութեամբ տրտունջն է: - 381. *Որպէս թէ* զվերնագոյնն կամ զանարժանս կամ վասն ախտի ինչ օրհնել կամ ձեռնադրել. այլ զոր հոգին յայտնեսցէ զարժանիսն՝ նմա՛ կատարի: - 539. Երկրորդ ըստ որակին. *որպէս թէ* **բ** մարդ գործեն զորովայնամոլութիւն: - 565. Եւ ո՛չ զկարգն փոխել. *որպէս թէ* յառաջ զհոգւոյ անունն ասել և ապա զորդւոյ և ապա՛ զհօր: - 588. *Որպէս թէ* որ ի պատուհան ինչ ցուցանէ զինքն յաշխարհի, և վաղվաղակի ի մահ դառնայ: - 592. ...*որպէս թէ* որ հատանէ զարմատն՝ չորանան և ստեղունքն: - 604. Իսկ վախճանեալն կատարեալ լսի. *որպէս թէ* որ սկսանի երթալ ի ճանապարհ կամ ի գործ ինչ և ի յաւարտիլն կատարած ասի: - 666. *որպէս թէ* այժմ ակն ունին և մնան գալստեանն քրիստոսի և վարձուց հատուցման: - 691. Արդ այսորիկ փրկին արդեամբք հիման հաւատոյն. սակայն այնպէս *որպէս թէ* ի հուր: - 702. Եւ *որպէս թէ* բազումք զմիմեանց զմիոջէ կախեալք զվախէ՛. և եթէ որ խզեսցէ զառաջնոյն զկապ, միապէս անկանին. թէպէտ մինն առաջին: - 777

**ՈՐՊԻՍԻ, Ո՞ՐՊԻՍԻ +** Իսկ ուրախանալն ի չարն մահ է և անզգայութիւն. և ընդդէմ բժշկողացն մրցումն. *որպիսիք* էին հեթանոսքն ի կուռս իւրեանց. և հրէայքն յօրէնսն. և փաղանք հերետիկոսացն յաղանդս իւրեանց: - 33. Աստուածային էութիւնն ըստ որում բնութիւն է՝ թէ զինչ է կամ *որպիսի* ինչ է անգիտելի՛ է մեզ յայսմ աշխարհի և ի հանդերձելումն: - 119. *Ո՞րպիսի* էր տապանին ձև: - 293. Զաշտարակն *ո՞րպիսի* մտօք շինէին: - 296. Զի ըստ փիլիսոփային եթէ է՞, և զի՞նչ է, և *ո՞րպիսի* ինչ է: - 331. Իսկ *որպիսի* ինչէն աստուծոյ՝ անգիտելի մնայ աստ և ի հանդերձեալն յամենայն եղական մտաց. թէ հրեշտակաց և թէ մարդկան: - 331. Զի հաւատամք զեթէ էն. այլ՝ ինչ և *որպիսի* ինչն ծածկեալ մնայ: - 406. Զի ասեն վարդապետք թէ *որպիսի* իւրաքանչիւր որ ծածկեալ իցէ յինքեան. փո՛րձ է տուեալ նախատիպքն: - 586. Եւ տես թէ ո՞ր քան և *ո՞րպիսի* անիմանալի և անճառելի երանութիւն է սրբոցն. - 647. Նա՛խ՝ արտասուեմք զբնութիւնս մեր թէ վասն մեղաց *յո՞րպիսի* կենաց դրախտին ի մահ անկաւ և ի հող դարձաւ: - 676. *Ո՞րպիսի* հասակաւ գայցեն: - 709. *Ո՞րպիսի* մարմնով յառնեն մեռեալք: - 720. *Ո՞րպիսի* հասակաւ յառնեն և յո՞ր թիւ: - 726. *Ո՞րպիսի* կերպարանօք երևի տէրն: - 740. Մինչև յօր

դատաստանին տեսանեն մեղաւորք փառս արդարոց ընդհանրապէս՝ այլ ո՛չ մասնաւորաբար. զի տեսանիցեն զնոսա ի մեծ փառս՝ այլ ո՛չ ի *յորպիսիս:* - 741. *Ո՞րպիսի* լիցի օրն այն, մինչ քեզ մարիամ մայր տն ընդ առաջ ելանէ հանդերձ պարուք կուսանաց: - 764

**ՈՐՊԻՍՈՒԹԻՒՆ +** Եւ դարձեալ՝ *զորպիսութիւնն* հարցեր մի գործոյն: - 85. Չորրորդ՝ **գ** *որպիսութեամբ*. բնութեամբ՝ շնորհօք՝ և փառօք: - 134. Ապա յայտ է *որպիսութիւն* կարգին: - 135. Զամենայն հրեշտակս բարի արար աստուած, այլ ո՛չ ծայրագոյն բարիս. այլ միջակս. որ է ի մէջ անփոփոխ և փոփոխական բարւոյն. այնպէս՝ զի թէ դառնային և սիրէին զայն՝ որ ի վեր քան զինքեանս, ելանէին *յորպիսութիւն* շնորհաց և փառաց. որպէս այժմ են հրեշտակք բարիք: - 146. Եւ յայսմանէ յայտ է թէ երեքկին է *որպիսութիւն* հրեշտակաց: - 151. Երկրորդ՝ հասարակութիւն է, զի որպէս է նկարեալ ձևն, նոյնպէս և շինեալ տաճարն քանակութեամբ և *որպիսութեամբ*. և անդրադարձեալ ևս: - 163. Եւ յայտնի եղեալ *որպիսութիւն* սոցա ի միտ առ...: - 166. Այլ գոյացական *որպիսութիւնն* է որակութիւն...: - 172. Եւ թէ ոք պնդեսցէ զօրինակ և *զորպիսութիւն* անմեղութեան ծննդեանն: - 226. Երեսունև**դ**՝ *Որպիսութիւն* մարդոյս: - 228. Եւ դարձեալ պարզ և յայտնի, այսպէս ասէ սուրբն գրիգոր նիւսացին եթէ, բանականին շնորհ ընդ լրումն մարդկութեանս թա՛փ էանց ի տեսութիւնն աստուծոյ՝ որքանութիւնն և *որպիսութիւնն*...: - 258. Նմանապէս և արուեստաւորն աստուած նախանկար տեսութեամբն ունի ի միտս իւր նախքան զլինիլն մարդոյն՝ *զորպիսիութիւնն*. զորքանութիւնն. և զայլն...: - 258. Գիտելի է, զի *որպիսութիւն* կենաց մարդոյս տրամատի յերիս. ըստ երից փոփոխմանց մարդոյն. այսինքն նախ քան զմեղքն. և յետ մեղացն. և յետ մահուն: - 278. Եւ զչորեքկին *որպիսութիւնս* զայսոսիկ երևեցոյց ի մարմինն ի՛ւր նախ քան զխաչն: - 282. *Որպիսութեան*, որպէս բանական: - 318. Երկրորդ՝ *զորպիսութիւն* և զձև աշխարհիս ցուցանէր ի խորանն եռայարկեան ի չորից նիւթոց փոխանակ **դ** տարերաց յանապական և յապականացու բնակչաց: - 342. Նա՛խ՝ զի **գ** է *որպիսութիւն* մեր: - 394. Տեսցուք և այժմ *զորպիսութիւն* յարուցելոյն: - 429. Բե՛ր տեսցուք և *զորպիսութիւն* խօսիցն, որ թուի թէ ճշմարիտ զապագայն պատմեն դևք: - 430. Ապա ուրեմն պա՛րտ է ամենայն մարդոյ ըստ կարգի և *որպիսութեան* լուծ կարգել: - 432. Ապա յա՛յտ է *որպիսութիւն* սրբութեան կուսին: - 463. Եւ հարցանել՝ *զորպիսութիւնն:* - 465. Ապա յա՛յտ է *որպիսութիւն* մեղաց՝ մահու՝ և ապականութեան: - 496. Եւ վասն այն աստուած եդև զի յառաջին փառս և *որպիսութիւնն* զմեզ հանցէ: - 500. Երկրորդ՝ զի փոխեալ է *որպիսութիւն* մարդոյն...: - 508. Եւ մի և նոյն բանն է ներտրամադրեալն ի սրտի. զի ըստ բան գոլոյն ո՛չ զանազանի. սակայն ըստ *որպիսութեան* որակին...: - 529. Երկրորդ, մի անուն՝ և նշանակեալքն բազումք. որպէս խոյ է յերկինս և յերկրի և ի ծովս. նոյնպէս մի կոչի եկեղեցի կենդանի մարդն և շինեալն ի քարանց և եկեղեցին անդրանկացն յերկինս. սակայն զանազա՛ն են *որպիսութեամբ:* - 533. Եւ զայլ ամենայն *որպիսութիւն* չար ժողովոյն քաղկեդոնի գտցես ի պատմագիրս միխայէլի: - 543. Հինգերորդ՝ ըստ *որպիսութեան* մեր հաւատն է այժմ. յոյսն յետ մահու...: - 78. Ա՛րդ՝ առեալ լինի աստ սրբութիւն սրտին ո՛չ վասն առաքինութեան, այլ վասն *որպիսութեան* իմն մաքրեալ հոգւոյն: - 585. Եւ դարձեալ՝ **գ** է *որպիսութիւնք* մեր և փոփոխմունք. որ է՛ աստի կեանս. և յետ մահուն. և յետ յարութեանն. - 623. Քաանբ, ճանաչման հոգւոց. և *որպիսութեան* մարդոյ: - 660. Եւ տե՛ս *զորպիսիութիւնն:* - 667. Եւ չորրորդ *որպիսութիւն*, զի աստ հոգին կարէ՛ մեղանչել՝ կարէ՛ և ոչ մեղանչել: - 667. Վեցերորդ, *որպիսութիւն* կենաց մեր **գ** է. այսինքն այժմու կեանս. և յետ մահու. և յետ յարութեանն: - 675. և դարձեալ այսօր հարցանեմք *զորպիսութիւնն:* - 680. Երեսուներորդ, յա՛յտ է *յորպիսութեանցն* չորից...: - 694. Ապա ուրեմն յա՛յտ է *որպիսութիւն* թագաւորելոցն սրբոց: - 711. Եւ *զորպիսութիւն* յարութեան մեր ի յաստուածացեալ մարմինն իւր երևեցոյց. - 716. Եւ *զորպիսութիւն* բարեաց և չարեաց. և զերկայնութիւն ժամանակին որով թիւ մարդկան զլրումն առցէ: - 716. Իսկ ըստ տեսակի, *որպիսութիւն* հաստուցմանց ըստ հաւատոց և գործոց վկայից և կուսից: - 746. *Որպիսութեան* կրիցն չափ ո՛չ է անտի տանջանացն...: - 751. Ապա ուրեմն յայտնի՛ է *որպիսութիւն* հարցմանս: - 774. Եւ այսպէս յարմարին սոքա երից *որպիսութեանց* մերոց: - 774. Ապա բնաւորապէս ընդ դէմ գոյ երից *որպիսութեանց* սա՛ մեզ չորրորդ գոլով...: - 775. Հինգերորդ՝ զի ա՛յլ է *որպիսութեամբ* մարդ: - 780. Եւ յայսցանէ երևի չորս ինչ հարկաւոր զղջման. այսինքն է *որպիսութիւնն*, ժամանակն, յորմէ, վասն որոյ: - 780. *Որպիսութիւն* պահանջի, զի իցէ փոփոխական կենօք: - 780. Յորում թէ վասն է՞ր իննամսեայ ծնանին, կամ յաւուր **խ** շնչաբերին, և *որպիսութիւնք* նոցա: - 785

**ՈՐՋ +** Յայնժամ փախուցեալ սատանայ իբր զապստամբ ծառայ. և մտեալ *յորջն* դժոխոց կարծէր ամրանալ անդ և ունել զհոգիսն: - 503

**ՈՐՍ +** Երեքտասաներորդ՝ *յորսոյ* իւրոյ ինքն ուտէ և այլոց տայ: - 316

**ՈՐՍԱՄ +** Վասն **դ** պատճառի այնպէս *որսայ* և խաբէ զմարդիկ: - 146

**ՈՐՍՈՐԴ +** Հայկն յաբեթի. և Բէլն ի քամայ *որսորդ* նոցա: - 297

**ՈՐՔԱՆ +** Եւ որովհետև ծանեաք զայս, արդ պատասխանեմք առարկութեանցն, եթէ *որքան* է՛ ի հարկաւոր պատճառ է՛, լինի բացորոշապէս բանն ճշմարիտ...: - 10. Եւ ծանիր զայս, զի *որքան* նըւազի ողջութիւնն՝ առաւելու հիւանդութիւնն. և որչափ նըւազի մարմին՝ առաւելու ապականութիւն. այլ յամենևին նըւազիլ ողջութեան՝ և հիւանդութիւնն կորընչի: - 22. *Ո՞րքան* է ճանաչումն աստուծոյ: - 24. Իսկ որ զկամսն է չարացուցեալ, զճանապա՛րհն ունի թիւր. և *որքան* ընթանայ՝ մոլորի: - 33. **Այլ *որքան* հայրն հայր. նոյնքան և որդին ընդ նմա որդի**: - 37. Եւ այսքան է միաւորթիւնն, զի *որքան* մին ինքն առ ինքն ունի զբնութիւնն և զզօրութիւնն և զկամքն, նոյնքան և ունի առ երկուսն. թէ զհայր իմանաս՝ թէ զորդի՝ թէ զհոգին: - 54. Դարձեալ հարցանեն թէ՝ զիա՞րդ ասէք երեք և մի բնութիւն. զի **գ** միոյ բնութեանն ո՛չ հաղորդի. այլ մինն հաղորդի միոյ բնութեանն, և երկուքն երկուքին. և երեքն երեքին. զի *որքան* է թիւն, այնքան բնութեան թըւակից լինի: - 54. Դարձեալ՝ հոգին սուրբ ելանէ ի հօրէ և առաքի յորդւոյ. և ինքնիշխան կամօք շնչէ զշնորհս իւր յորս կամի և *որքան:* - 66. Նախ քան զմարդեղութիւնն հեռի ի միմեանց. *որքան* աստուծոյ և արարածոյ. անեղի և եղականի. ժամանակէի և յաւիտենականի: - 82. Այլ արդ՝ յերկնաւոր փառսն այն է գերագոյն՝ *որ քան* կատարեալ տեսանէ զաստուած: - 97. *Ո՞րքան* է անկումն սատանայի: - 102. Վեցերորդ՝ աչք հեշտանայ *որքան* առաւել տեսանէ: - 104. Եւ միտք *որքան* առաւել իմանայ: - 104. Եւ գիտելի է, զի *որքան* եղանակաւ ասի ոչ էն, նոյնքանաբար և էն. զի ընդ դէմ միմեա՛նց են: - 111. Հինգերորդ՝ նոցա անմոռանալի՛ է տեսութիւնն. իսկ մերս հանդերձ մոռացմամբ. *որքան* զգայութեամբս տեսանէ միտքն: - 120. *Ո՞րքան* է եղանակ աստուածաբանութեան: - 122. Զի *որքան* ի վերուստ ի վայր իջանէ՝ ի բազումս բաժանի. որպէս ի սեռէ ի տեսակս և յանհատս իջեալ բազմանայ: - 123. Եւ տէր մեր հաւասար ողորմութեամբ և արդարութեամբ. զի *որքան* տեսանեն ողորմութեամբ՝ ձգտին առ շնորհն արդարութեան: - 127. *Ո՞րքան* է թիւ դասուց հրեշտակաց: - 134. Ա՛րդ՝ *որ քան* սրբութեամբ և իմացմամբ աստուածատեսակ լինին՝ աստուածք կոչին. եթէ հրեշտակք և եթէ արք սուրբք որպէս մովսէս: - 137. Վասն որոյ ասէ ռք հազարաց և բիւրք բիւրուց, ո՛չ *զորքանն* նշանակէ, այլ զանբաւն: - 141. Սէրն *ո՞րքան* շարժի: - 143. Նոյնպէս և խօսի հոգին ընդ հրեշտակն մարմնական կերպիւ զոր իմանայ հրեշտակն որպէս զայլ զգալիս *որքան* է ի մարմնի: - 145. Զի ընդ իւր անկումն ի պատուոյ այնչափ չէ՛ տրտում, *որքան* ընդ մարդոյն փառաւորիլն: - 146. *Ո՞ր քան* եկաց յերկինս: - 147. Իսկ առ չարն յո՛յժ ազդողակա՛նք են. այլ ո՛չ այնքան որչափ և կամին. այլ *որքան* իբր ի հրեշտակաց թոյլ տացի: - 149. Եւ *որքան* պատուական է ճանաչումն՝ այնքան մեծ է սխալումն: - 150. *Ո՞րքան* է անկումն սատանայի: - 152. Իսկ առաքեալն վասն արտաքին փորձութեանցն ասէ. որ ի հալածչաց հասանէ ի վերայ մեր. յորում ուրախանալ պարտիմք. զի *որքան* յաճախէ փորձութիւնն, ա՛յնքան առաւելու և պսակն: - 160. Երրորդ՝ զի վեցեակ թիւն ի մէջ ամենայն թուոց առաջին կատարեալ է. և **զ** թիւն է ի բոլորակ ձևն. զի *որ քան* է ի միջին կիտէն ի բոլոր ծիրն, վեց այնչափ է իւր բոլորակ ծիրն: - 182-183. Եւ *յոր քան* հետևի արեգական՝ առաւելու լոյսն: - 187. Եւ այնուհետև նուազի *որքան* յառաջ է՛ քան զարեգակն և թեքի ի նմանէ: - 187. Եւ *որքան* ի վերին կիսագունդն տևէ՛, կոչի տիւ: - 190. *Ո՞րքան* եղանակաւ ասի օր: - 195. Վեցերորդ՝ *որքան* յամէ՝ լոյսն պայծառանայ, և խաւարն նուազի՛: - 196. Եւ համառօտ ասեմ, կեանք մեր և ժամանակ *որքան* առաւել յերկարէ՛ և աճէ՛, այն քան առաւել պակասի և նուազէ...: - 199. Եւ տևէ՛ *որքան* է նիւթ գոլորշոյն. և լուսեղէն բա՛շս արձակէ առ ի ցուցանել թէ ո՛չ է ի բնական աստեղաց: - 203. Նախ՝ ասեն ոմանք թէ՝ *որքան* բարձր է ի վերայ երկրի հողն, նոյնքան ծոծո՛ր է ի ներքին կողմն...: - 209. Ասեն վարդապետք թէ՝ ա՛յն չափ հոգս տարաւ աստուած ի ստեղծանել զճանճս և զմրջմունս *որքան* հրեշակաց: - 217. Երկրորդ՝ զի *զոր քան* իշխէր ինքն ի վերայ անասնական մասանց իւրոց որպէս ասացաք, իշխէր և ի վերայ արտաքին անասնոց և գազանաց...: - 220. Ի քթթելական՝ *որքան* վաղվաղակի կարես բանալ զակն՝ զբոլորն համանգամայն ստեղծ: - 227. Զի *որ քան* եմք ի մարմնի՝ միշտ պարտ է երկնչիլ ի պատժոյ ի գլորելոյ ի մահու և այլոցն: - 229. Երրորդ՝ զի աշխարհ *որ քան* է ի բեւեռէ՛ հիւսիսոյ մինչև ի բեւեռն հարաւոյ, նոյն քան է յարևելից մինչև յարևմուտս: - 231-232. Այսպէս մարմին մարդոյ *որ քան* է երկայնութեամբ ի գագաթէ՛ գլխոյն մինչև ի ներբանս ոտիցն, նոյն քան է լայնութիւն ի մէջ երկուց երկայն մատիցն ձեռաց: - 232. *Ո՞րքան* են զօրութիւնք հոգւոյն: - 248. Եւ *որքան* սոքա առաւելուն, առաւել ձկտի ներգործութիւն իմացականին: - 251. Եւ արդ ի կատարեալ մարդն հոգւով և մարմնով՝ փչեաց զշնորհաց հոգին ի մարդկայինս ազգ. և ունէին *որ քան*

յանմեղութեան էին. և կորուսին ի մեղանչելն: - 253. Եւ նա հոգին է որ զգայական և զտնկական զօրութիւնն ի գործ ածէ միայն ի մարմինն *որքան* է ի մարմնի: - 260. Եւ փոխանակ ծիրանւոյն՝ զառաքինութիւն զգեցոյց. *որ քան* զամենայն զգեստ արքունակա՛ն է: - 271. Տասներեք՝ *Ո՞րքան* է յղացումն և ծնունդ: - 283. Ութսուներորդ, *Ո՞րքան* խօսեցաւ աստուած ընդ նախահարսն: - 285. Եւ *որ քան* օրս յաւելու, նոյնպէս և ցաւս մեր բազմանայ: - 292. Դարձեալ՝ *որ քան* յերկարի ժամանակս, մաշի՛ երկիր և ի ծերութիւն երթայ և տկարանայ. որպէս ծեր մարդոյն զօրութիւնն պակասի և ցաւքն առաւելու: - 292-293. Եւ դարձեալ՝ *որ քան* մերձիմք կատարածի, այնքան մերձենամք ի ցաւս դժոխոցն. որպէս յերիկունն սակաւ սակաւ առաւելու խաւարն և ցուրտ: - 293. Վեցերորդ՝ մարմինն երէց է ըստ կարգի քան զհոգին. և յա՛յտ է, զի *որ քան* կենդանի եմք՝ զերիցագոյն պատիւն մարմնոյն տամք...: - 310. *Ո՞րքան* էր փորձութիւնք յոբայ: - 322. Իսկ զինչէն ի հանդերձեալն *որքան* կա՛ր է մեր...: - 331. Չորրորդ՝ զի յայտնեսցի թէ՝ ի մէջ ծառայութեանն յեգիպտոս այնքան բազմացոյց զնոսա խնամքն աստուծոյ. այսքան բազմութիւնս ի տեղիս իւրեանց խաղաղութեամբ բնակեալ՝ *ո՞րքան* անթիւ բազմասցին: - 377. Եւ դժուարն *որ քան* յայտնէ մեզ: - 406. *Ո՞ր քան* են պարարտութեան աստիճանք: - 407. *Ո՞րքան* կոչին անուանք արարչին ի գիրս մովսէսի: - 412. Երեսուներորդ, Աստուածաշունչ գիրք *ո՞ր քան* է: - 413. Եւ տէր մեր մահուամբ առաւել կորոյս զբշնամին, *որ քան* ի կեանս գործով հրաշից: - 424. Զայս ցուցանէ թէ՝ *որ քան* ի խռովութեան եմք ընդ թշնամւոյն և յանձինս մեր՝ ո՛չ լինիմք տաճար աստուծոյ: - 440. *Ո՞ր քան* են և ո՞րք գիրք սուրբք հին և նոր կտակարանք: - 450. Եւ թէ *ո՞րքան* է ողջոյնն: - 454. Մետասաներորդ, Թէ *ո՞րքան* է ծնունդն քրիստոսի: - 454. *Ո՞ր քան* առաւել մերս անկրթութեան մտօք և իրօք պարտ էր հրաժարիլ և ի բաց փախչիլ որպէս խռիւ ի հրոյ և զաչացու ի լուսոյ: - 456. *Ո՞րքան* է ողջոյնն: - 464. *Ո՞ր քան* է եղանակ միաւորութեան: - 475. *Ո՞ր քան* ևս քահանայապետին որ զերկոտասան օր պարտ էր խնկօք պաշտել ի մէջ տաճարին ի ժամ աղօթիցն. թէպէտ ի սուրբն սրբոց միանգամ ի տարւոջն: - 483-484. Զի *որ քան* ամ ի յերկրի քարոզեաց, նոյն քան ժամ ի դժոխս առ հոգիսն: - 495. Զի հակակայք են. և *որ քան* ասի մինն, նոյն քան ասի և միւսն: - 504. Եւ ա՛յն է խորհուրդն, զի *որ քան* ամ մարմնով մարմնաւորացն քարոզեաց. նոյնքան ժամս հոգւով հոգւոցն քարոզեաց. այսինքն լգ ամ և կէս ի յերկրի. լգ ժամ և կէս ի դժոխս...: - 516. Երկրորդ՝ *որ քան* բանայ զբերանն՝ առնու զօդն: - 523. Եւ զհոգին *որ քան* յօժարին՝ այն քան և առնուն: - 523. Չորրորդ՝ զի *որ քան* և ծծեն՝ ևս խնդրեն զօդ: - 523. Հինգերորդ՝ *որ քան* ծծեն ո՛չ պակասի օդն: - 523. Երկրորդ՝ զի մարմնաւորն իշխէ՛ *որքան* մերձ է և ձեռնհաս: - 538. Եւ տե՛ս, զի սիմէի *որքան* յամեաց ի քաղաքն ըստ հրամանի սողոմոնի ո՛չ մեռաւ զերիս ամս: - 540. Իսկ քահանայք ժողովրդեանն՝ նա կանոնս դնէ՝ որ խոստովանահա՛յր է և գիտէ զկարն և *զորքանն* մեղաց: - 541-542. Որպէս և քրիստոս արար. *որ քան* մարմնով ընդ առաքեալսն էր՝ եպիսկոպոսունս արար զնոսա. և յետ համբառնալոյն՝ հոգւովն սրբով արար զնոսա կաթողիկոսունս: - 546. Եօթներորդ՝ զի որ հպարտքն են ոչ ունին հանգիստ մտաց և մարմնոյ. քանզի *որ քան* մարդ խոնարհէ՝ այն քան հանգիստ է: - 562. Զի նման է ջրգողեալ հիւանդի. որ *որքան* աւելի խմէ, առաւել ծարաւի: - 570. *Ո՞րքան* յամեաց ի մեղքն: - 601. Արդ ըստ այնմ որ է՛ հնարք՝ ո՛չ է օգուտ *որ քան* է մարդ ի մեղս: - 603. վասն որոյ ո՛չ է պարտ բաժանել զօրինաւոր պսակն *որքան* կենդանի իցեն: - 611. Յառաջ քան զայլսն հարցանեմ, *ո՞րքան* է եղանակ աղօթից: - 619. Եւ ա՛յս է խորհուրդն. զի *որ քան* են սուրբք ի յերկրի կենդանի, ո՛չ տօնեմք նոցա մինչ ի հանդէս նահատակութեան են...: - 47. Եւ տես թէ *ո՞ր քան* և ո՞րպիսի անիմանալի և անճառելի երանութիւն է սրբոցն...: - 647. Դարձեալ՝ *որ քան* եմք ի պահքն՝ ընդ ապաշխարութեամբ եմք և ո՛չ եմք արժանի տօնել սրբոց. - 650. *Ո՞ր քան* է փոփոխումն մարդոյ: - 663. Երկրորդ ի թիւ ամացն. զի *որքան* յերկարեմք անցանելով, պակասի մասն վերին և յաւելու մասն ներքին...: - 666. ...զի *որ քան* էր ի ժամանակս ի մէջ փոփոխման էր հոգին...: - 667. Դարձեալ՝ մահն ե՛զր է հանդիսից որք են ի պատերազմ կենցաղոյս *որ քան* են: - 667. Եւ սոյնպէս զկարօտութիւն և զպակասութիւն ախորժակացս նշանակէ. *որ քան* ի միտ ածեմք և սգամք: - 670. Նոյնպէս և այժմ *որ քան* ի մարմնի եմք՝ գոյ հնար քաւութեան...: - 700. Ա՛րդ՝ ողորմութիւնն աստուծոյ է՛ այսմ աշխարհի *որ քան* կենդանի եմք. - 700. Այս է ի գլխաւորութիւն ամենայնի զռ եղելոյ ապստամբութեանն. զի *որ քան* աւուրբ եղև աշխարհ, այն քան ամօք յանկ ելանէ: - 707. *Ո՞ր քան* թագաւորէ՛ նեռն: - 709. Իսկ թէ *ո՞րքան* է միջոցն ի մէջ խե աւուրցն՝ ո՛չ ոք գիտէ: - 709. Երրորդ, զի *որ քան* յապաղէ՛ ժամանակն, այն քան վարձք հաւատոյն աճէ՛...: - 717. Ժամ դատաստանին *ո՞ր քան* է. յերկա՞ր թէ սուղ: - 747. Յարութիւն մարդկան ի վայրկեան ժամանակի և յանկարծակի լինի որպէս ցուցաւ ի վերոյ. այլ զյերկարութիւն ժամու քննութեան դատաստանին, ոմանք ժամ մի ասեն.

*որքան* եկաց ընդ ադամայ ի քննութիւն հարցմանց յետ յանցանաց նորին: - 747. Այլ զի մի՛ իրողութիւն դատաստանին և յարութեան ուրուական և առ աչօք թուեսցի ընդհանուր ամենայն մարդկան, վասն որոյ ասեն վարդապետք ի յարութենէն մինչ ի գալուստն և քննութիւնն և հրով նորոգիլն և այլն՝ յերկարի միջոցաւ *որքան* ժամս զ: - 747. *Ո՞ր քան* են տանջանք դժոխոցն: - 751. Եւ *որ քան* գործեմք զմեղս, այնքան բազմանայ ծնունդն նոցա. և ծուլութիւն և հեշտութիւն մեր սնունդ է նոցա: - 753. Զի թէ և սակաւ ժամ լինի մնացեալ ի կենացն *որ քան* աւազակին ի յելս շնչոյն. և նա՛ յառաջ քան զամենայն արդարս եմուտ ի դրախտն աստուծոյ ընդ տեառն: - 758. Յետ յարութեանն ո՞ւր և *ո՞ր քան* իցէ տեղիք բնակութեան: - 760. *Ո՞ր քան* է ընտրելոցն թիւ: - 760. *Որքան* մնացին հրեշտակք ի յերկինս, նոյնքան և բազմութիւնք ի մարդկանէ ընտրեսցին: - 760. Մինչ զի այս քան գտանիցին հեշտութիւնք ի մասնկան ստեղծուածոյս, *որ քան* գտցին ի ստեղծօղն յայն: - 762. Եւ *որ քան* մեծ վիշտ եղև ի պատերազմին, ա՛յն քան է մեծագոյն ուրախութիւն ի յաղթութենէն: - 765. Եօթներորդ՝ վասն բարձրութեանն ի ջանուց մշակաց. զի *որ քան* առաւել բրի ի ներքոյ երկիրն և քարինս դնի, այն քան առաւել բարձրանայ: - 766. Այլ *որ քան* և կարասցէ ոք զմիտս ուղղել. խօսակցելով առ նա, հաճո՛յ է աստուծոյ: - 779. Երկրորդ, ապաշխարութեան ժամանակն ընդունելի է. իսկ *որ քան* մարդ է ի մեղս՝ ո՛չ է հաճոյ աստուծոյ: - 780

**ՈՐՔԱՆԱԲԱՐ +** *Ո՞րքանաբար* է յղացումն և ծնունդ: - 308. Այս թէ *ո՞րքանաբար* կոչի եկեղեցի: - 534. Զի ի հակակայիցն *որքանաբար* ասի մինն, նոյն քան և միւսն: - 758

**ՈՐՔԱՆՈՒԹԻՒՆ +** Հինգերորդ՝ զի չա՛փ եդ *զորքանութիւն* չարչարանացն իւրոց հետևողացն...: - 43. Վեցերորդ՝ զի սահմանէ՛ *զորքանութիւն* հօր: - 49. Նա՛խ՝ *զորքանութիւն* աւուրցն ցուցանէ, թէ տիւ և գիշեր իդ ժամն լինի օր մի բնական: - 193. Եւ դարձեալ պարզ և յայտնի, այսպէս ասէ սուրբն գրիգոր նիւսացին եթէ, բանականին շնորհ ընդ լրումն մարդկութեանս թա՛փ էանց ի տեսութիւնն աստուծոյ՝ *որքանութիւնն* և որպիսութիւնն...: - 258. Եւ իւրաքանչիւր ոք ծննդեամբ յառաջ եկեալ առնու զնոյն պատկերին շնորհ ի ծագմանէն աստուծոյ. և լնուն զնոյն թիւ *որքանութեան* զոր ետես աստուած նախքան զլինիլն աշխարհի որպէս ասէ առաքեալն: - 258. Նմանապէս և արուեստաւորն աստուած նախանկար տեսութեամբն ունի ի միտս իւր նախքան զլինիլն մարդոյն՝ զորպիսիութիւնն. *զորքանութիւնն*. և զայլն...: - 258. Այլ թէ հարցանեն *զորքանութիւն* սիւնիցն. **ծ** սիւն ի մէջ խորանին. և **թ** սիւն վարագուրացն. և մի թափանց ի մէջն յարնելից յարևմուտս. որ լինի **կ.** և **ձ** սփռիչ. և **խ** նիգք. և ամենայնն ոսկեպատ. որ բովանդակն լինի **ճձ** ի ներքս: - 343. Չորրորդ՝ թուեաց զնոսա, զի յորժամ մարդամահն լինի, գիտասցեն *զորքանութիւն* մեռելոցն, և զծանրութիւն մեղացն: - 434. Նաև անդանօր ետես նախանկար տեսչութեամբ *զորքանութիւն* մարդկան ըստ թւոյ: - 716. Քանակաւ. Օրինակաւ. *Որքանութեամբ*. Պարագայիւ. և Բաղդատութեամբ: - 777. ...իսկ *Որքանութեամբ*, զի նա միով և միանգամ. իսկ նոքա բազմօք և բազում անգամ: - 777. Իսկ *որքանութիւն* ստեանց կենդանեաց, բերէ՛ զօրինակ *որքանութեան* կարելոյ ծնանիլ յանոցիկ տեսակացեալ: - 786

**ՈՒԹՕՐԵԱՅ +** Յիսունևմի, Վասն շաբաթի տօնից. և *ութօրէք.* և փոխմունք ժամատեղաց: - 527. Վասն է՞ր *ութօրէք* միայն ծննդեանն է և յարութեանն առանց պահոց չորեքշաբաթի և ուրբաթի: - 649. Քանի՞ են *ութօրեայ* տօնք ի բոլոր տարին: - 649

**ՈՒԺ (տ. ՈՅԺ) +** Եւ զի *ո՛ւժ* առնուն դարձեալ գործելոյ: - 196. Մետասաներորդ՝ Վասն ստամոքսին. բերանն դառն և աղի՛ փոխի. և աջ կողմն *ուժո՛վ* է: - 227. Երրորդ՝ զի փափուկ ջիլք և նեարք՝ յերեսացն գան և առնեն զգայարանս. և հաստն ի թիկունքն սփռի վասն *ուժոյ* և պնդութեան և շարժութեան: - 234. Վասն է՞ր մարդոյն աջ կողմն *ուժով* է քան զձախն: - 243. Գոյնն սպիտակ և դեղին՝ պակաս *ուժ* է: - 247. *Ուժն* ի յուսն: - 250. Եւ մարտեաւ ընդ նմա այր, զչափ *ուժոյ* և զկերպարանքն եսաւայ զգեցեալ. զի կրթեսցի և մի երկիցէ ի նմանէ: - 311. Վեցերորդ՝ հզօ՛ր է *ուժով:* - 315. Երկրորդ զպակասութիւնն. այսինքն *ուժոյ*, տեսութեան, և այլոցն: - 665

**ՈՒԺԳԻՆ +** Կամ ի յերկրի պատառմանէն *ուժգին* վերաբերեալք լինին: - 206

**ՈՒԺԳՆՈՒԹԻՒՆ +** Իսկ Երկրորդն արքայութիւն, նշանակի յազատն սառա. որ ո՛չ *ուժգնութեամբ* մարմնոյն, այլ միայն շնորհօքն աստուծոյ ծնաւ: - 756. Քանզի՝ ունիցի մարմինն Զգեղեցկութիւն. Զարագութիւն. *Զուժգնութիւն*. Զազատութիւն. Զկամաւորութիւն. Զառողջութիւն. և Զանմահութիւն: - 761

**ՈՒԺԵՂ +** Պէտք են գազանք և սողունք. և զի գազանք *ուժեղք* են: - 155. Վասն է՞ր գազանք հնարաւոր և *ուժեղք* են քան զանասուն: - 218. Բացունչն՝ զուարթ է և *ուժեղ:* - 246. Բազուկն երկայն որ միջին մատն հասանէ ի ծունկն՝ *ուժե՛ղ* է: - 247. Ձեռքն կարճ և փոքր, *ուժեղ* է և հնարաւոր: - 247. Եղունկն սպիտակ տափակ կակուղ և նօսր, կարմրագոյն և փայլուն, *ուժե՛ղ* է: - 247. Գոյնն սպիտակ և

կարմիր՝ *ուժեղ* է և սրտային: - 247. Կամ լինէիր *ուժեղ* որպէս սամփսոն. որ զիազար այր ծնօտիւ իշոյն եսպան: - 761

**ՈՒԺՈՎԱՆԱՄ +** Իսկ գազանացն միս է՛ զօրեղ. վասն այն ի խելս նոցա առաւել յարմարի և *ուժովացնէ՛* զնոսա: - 218

**ՈՒԻԱՅ** - Դարձեալ՝ ի յեբրայեցի լեզուն «ալ», ասէ թէ՝ գայ յայտնեսցի. «էլ», աստուած. «*ուիայ*», օրհնեցէք և գովեցէք զկենդանին աստուած: - 644

**ՈՒԼ +** Գառն՝ որդիք քրիստոնէի. և *Ուլն*՝ որդիք հեթանոսի յորժամ գան յեկեղեցին սրբին և նւիրին աստուծոյ: - 358

**ՈՒԼՆ +** Նա՛խ՝ խելապատակն սկիզբն է ջլացն. որ միայնաբար ընդ *ուլունս* պարանոցին անցանէ. և բաժանի ի թիկունս, ի ձեռս, և յա՛յլ մարմինս: - 244

**ՈՒԽՏ +** Վեցերորդ՝ իսահակ նախկին էր կատարումն *ուխտի* **ը** օրեայ նշանին: - 305. Եւ կապ *ուխտի* որպէս բարեկամաց: - 317. Նմանապէս և միջակ կապիւն, զի ուսանիմք յաստուծոյ ընկալեալք զկարգ կրօնիցն. և ունիմք *ուխտ* և դաշին և հնազանդութեան նմա...: - 318. Երկոտասաներորդ, նոքա հին *ուխտին* էին միջնորդ. իսկ տէրն նորոյս...: - 355. Իններորդ, պատարագ *ուխտի*. որ ո՛չ վասն երախտեաց ինչ, այլ իւր կամաւ ուխտեալ. որ յերկրորդ օրն ևս ուտէին զմիսն: - 359. Եւ վասն *ուխտի*, խաչի, և եկեղեցւոյ: Պտուղս: Շօթ: Նաշիհ: Ջէթ: Մոմ: Խունկ. և այլն: - 362. Զի՞նչ է *ուխտ*, և զի՞նչ է սահման: - 389. *Ուխտն* բանիւն է, և սահմանն գործով: - 389. Դարձեալ՝ *ուխտն* յապա՛յն է, և սահմանն ի ներկայն: - 389. Եւ է ոմանց *ուխտից* զանցումն անմեղադրելի է: - 389. Նոյնպէս և ամենայն որք հրամանաւ առաջնորդին թէ պահեսցէ *զուխտն* բարի է. և թէ զանցուսցէ ո՛չ դատապարտի: - 389. Նախ գերծու զհերն. և զոր *ուխտիւն* աճէ՝ զայն ի սեղանն հանել ի կատարումն *ուխտին:* - 389. Եւ թէ մեռանի ոք ի տուն ուխտաւորին, պղծեցաւ *ուխտն*. և անհամար լիցին առաջին աւուրքն, և նո՛ր սկսցի: - 390. Այն է որ թէ ի մասանց հոգւոյն և մարմնոյն այսինքն բանիւ՝ ցասմամբ՝ և ցանկութեամբ, կամ աչօք կամ լսելեօք կամ այլ ինչ գործով մեղանչէ դարձեալ, *ուխտն* ո՛չ եղև ամբողջ. դարձեալ նո՛ր պարտ է ապաշխարել: - 390. Իսկ զփղշտացիսն եթող վասն *ուխտին* աբրահամու և աբիմելիքայ: - 417. Եւ տէր մեր լրումն աւետեաց *ուխտին* նախահարցն. և նախ քան զսկիզբն աշխարհի *ուխտի* աւետեաց մարդկան փրկանաց: - 422. Երկրորդ՝ զի անցանէ *զուխտն* աստուծոյ: - 424. Չորրորդ՝ զի ուտելով և ըմպելով անփոյթ առնէին զուխտաւորս ի հեռուստ եկեալ քառասնօրեայ մանկամբ և այլ *ուխտիւ*. և յանձրև և յարև և ի ցուրտ վաստակէին: - 425. Երեսունևե, հաստատեաց *զուխտն* առ յովնաթան և մելքօղ...: - 437. Իններորդ՝ երիցս *ուխտ* երդմանն սողոմոնի: - 441. Քանզի ո՛չ կարէին ի միում աւուր յերկոսեան *ուխտսն* կատարել զտօնսն հեռի գոլով ի միմեանց. երուսաղէմացիքն այսր աղագաւ փոխեցին. և փոքր փոքր աճմամբ ընկալան և ա՛յլ եկեղեցիք զնոյն: - 482. Իններորդ՝ զի աւետիս հարցն հաստատեսցէ. զի անսո՛ւտ է խոստմունք աւետեացն աստուծոյ. և որպէս զայս աւետիս *ուխտի* կատարեաց, նոյնպէս և զայլսն կատարեսցէ ...: - 485. Որպէս եսաւ անդրանիկն իսահակայ՝ կցողական դեղօք ողջացոյց զմարմին իւր և արար անթլփատ. զի ցրեսցէ *զուխտն* աստուծոյ: - 486. Երրորդ՝ և յայսմ աւուր *ուխտ* եդ աստուած ընդ ամենայն ժողովրդեանն իսրայէլի: - 524. Եւ վասն *ուխտի* և սահմանի ասացաւ ի վերոյ ի **իբ** գլուխն, **կե** համարն: - 538. Եւ թէ ոք ասիցէ, թէ վասն *ուխտի* կամ ագահութեան զանարժանս ձեռնադրեն՝ ո՞չ կատարի: - 540. Իսկ յաղուհացն՝ *ուխտս* դիք...: - 629. Նա՛խ՝ երեխայքն ուխտեցին հրաժարիլ ի սատանայէ՛. և ի մեծի զատկին մկրտելովն իսրայէլ. և ապա *ուխտ* ապաշխարութեան պահոցն. և յարութեանն տեսանել զքրիստոս. աստ և անդ: - 629. Այն է՝ յորժամ դաւիթ զտապանակ *ուխտին* հանէր յերուսաղէմ, **է** դաս պարուց որք են քահանայից դասք. և սրինկ. և փողք. և քնար. և այլն: - 645. Երկրորդ զքահանայս հին և նոր. որ գնեն զպատարագս *ուխտից* ի սեղանն: - 713. Ընդ հովանեաւ երկնահանգէտ մեծարագոյ *ուխտի* Սիւնեաց նահանգի: - 772

**ՈՒԽՏԱԶԱՆՑ +** Ուստի յա՛յտ է զի էրէցն երկրորդ ամուսնութեամբն ո՛չ կարէ քահանայագործել. յիրաւի և ապա պոռնկեալն էրէց կամ աբեղայ՝ ո՛չ կարէ քահանայագործել. զի *ուխտազա՛նց* է: - 167. ...նոքա *ուխաատազանց* եղեն. վասն որոյ մահ էած ի վերայ: - 434

**ՈՒԽՏԱԿԱՆ +** Եւ այսպիսիքս ամէն ո՛չ են յարմար *ուխտականի:* - 390

**ՈՒԽՏԱՒՈՐ +** Վաթսունևե, Վասն *ուխտաւորաց* որ միս չուտէին և ո՛չ գինի: - 285. Այլ և զոհ *ուխտաւորաց* զմազ հերացն այրել: - 359. Եւ գինք անձանց *ուխտաւորացն:* - 359. Իսկ *ուխտաւորին* օրէնք զայն հրամայեաց աստուած: - 389. ***Ուխտաւոր* է որ ապաշխարէ վասն մեղաց**: - 389. **Եւ *ուխտաւորն* ի տուն սգոյ ո՛չ երթայ. այն է որ ի մեղքն այլ ո՛չ դառնայ. և ո՛չ ընդ մեղսասէր գործակիցս**:

- 390. Եւ թէ մեռանի ոք ի տունն *ուխտաւորին*, պղծեցաւ ուխտն. և անհամար լիցին առաջին աւուրքն, և նո՛ր սկսցի: - 390. Չորրորդ՝ սամփսոն *ուխտաւոր* յորովայնէ: - 422. Չորրորդ՝ զի ուտելով և ըմպելով անփոյթ առնէին *զուխտաւորս* ի հեռուստ եկեալ քառասնօրեայ մանկամբ և այլ ուխտիւ. և յանձրև և յարև և ի ցուրտ վաստակէին: - 425

**ՈՒԽՏԵԼ +** Ասելի՛ է թէ՝ երիցունք աշխարհի՝ հալալ ամուսնութեամբ և ողջախոհութեամբ են *ուխտեալ* քահանայագործել: - 167. Իսկ աբեղայն *ուխտեալ* է կուսութեամբ քահանայագործել: - 167. Իններորդ, պատարագ ուխտի. որ ո՛չ վասն երախտեաց ինչ, այլ իւր կամաւ *ուխտեալ*. որ յերկրորդ օրն ևս ուտէին զմիսն: - 359. Եւ դարձեալ՝ *ուխտելն* է բարիս առնել. և սահմանն չար ո՛չ առնել: - 389. Ակնառութիւն ո՛չ է աստուծոյ. զնախնիքն սիրեաց աստուած, զի արժանիք էին. և եցոյց նոցա զինքն. և զխոստումն աւետեաց *ուխտեաց* նոցա մարդ լինիլ ի զաւակէ նոցա յետոյ: - 398. Երկրորդ՝ զի յորժամ *ուխտէ* մարդ, ի նոյն ժամն դադարի ցասումն աստուծոյ. ապա յորժամ կատարեմք՝ երևի մեզ: - 435. Իսկ այժմ *ուխտէ՛* սպանանել. զի ըստ օրինացն զգործ արդարութեանն գործեսցէ: - 439. Աւետեօք *ուխտեցին:* - 456. Նա՛խ՝ երեխայքն *ուխտեցին* հրաժարիլ ի սատանայէ՛. և ի մեծի զատկին մկրտելովն իսրայէլ. և ապա ուխտ ապաշխարութեան պահոցն. և յարութեանն տեսանել զքրիստոս. աստ և անդ: - 629

**ՈՒՂԱՐԿԵԼ +** Երրորդ՝ զի կամօք և ուրախութեամբ *ուղարկեմք* ի քրիստոս և ո՛չ ակամայ կամ տրտմութեամբ: - 673

**ՈՒՂԳԱՐԱՑԻ** - Եւ այս են **իբ** լեզուքն: ...*Ուղգարացիք:* - 299

**ՈՒՂԳԻՐԱՑԻ** - Եւ այս են **իբ** լեզուքն: ...*Ուղգիրացիք:* - 298

**ՈՒՂԵԿԻՑ +** Այլ մեք եղբարք *ուղեկիցք* իմ և դաւանակիցք եղիցուք. շինեալք և հաստատեալք ի վերայ հաւատոյ հիման. անշարժ խարսխեալք ի վերայ յուսոյն քրիստոսի, սեռն և յստակ կատարեալ սիրով սուրբ հոգւոյն: - 503. Առ հասարակ *ուղեկիցք:* - 660

**ՈՒՂԵՂ +** Նախ՝ զի լպրծի՛ միտք մեր և մոռանայ զբանն. զի հով և գէջ է պարուտակն և *ուղեղ* գլխոյն: - 120. Եօթներորդ՝ վասն զգայութեանցն, որ ամենեքին յառաջ հեղուն *յուղեղէն*, և ազատապէս տեսանեն և իմանան. զի թէ գլուխն և ուղիղն ի վա՛յր էր քարշեալ և կորացեալ՝ ո՛չ կարէր ուղղակի զգալ և իմանալ. որպէս այլ կենդանիք: - 233. Երկու լուսերակն որ ասացաք՝ ի *յղեղէն* գայ ի յաչքն դատարակ և անարիւն: - 239. Նախ՝ մազն ի վերոյ. և մորթն. և միսն. վերին ոսկրն. և ներքին պինտ ոսկրն. խելապատակ մաշկն. և *ուղեղն:* - 239. Որ է՛ մազն. և մորթն. և միսն. և արիւնն. և ջիլն. և ոսկրն. և *ուղեղն* ի մէջն: - 240. Զի *ուղեղն* ի մէջն սնուցանէ զոսկրն. և ջիլն կապէ՛ առ միմեանս զի մի քակտեսցին ոսկերքն. և արիւնն կերակո՛ւր է նոցա: - 240. Երկրորդն *ուղեղ* գլխոյն է. հով է և գէճ ընդ դէմ սրտին ջերմութեանն և չորութեանն. զի բարեխառնեսցէ՛ զնոսա. և իւր տանուտէր լուսինն է: - 241. Իսկ պարզն և մաքուրն մնայ ի *յուղեղն* ի փափկոց խելացն: - 242. Եւ բաց յայյսցանէ՝ ի *յուղեղէն* **բ** **բ** երակ գայ յիւրաքանչիւր զգայարանս. **բ** յաչքն. **բ** յականջն. **բ** ի քիթն. **ա** ի բերանն. մին ի լեզուն. **բ** ի ձեռքն. **բ** ի յոտքն. որ լինի **ժբ**: - 244. Նախ ասեն ոմանք, եթէ *ուղեղ* գլխոյ անբանիցն ընդ խելապատակին ունի չորութիւն և հովութիւն. և ջիլքն ի նմանէ յառաջեալ յանդամս մարմնոյն՝ փութապէս պնդէ՛ և տայ շարժիլ: - 266. Իսկ մարդոյն *ուղեղն* գէճ է և հով. զի նկարեսցէ յինքն զիմացումն մտացն. և ջիլքն յառաջեալ ի նմանէ վասն գիճութեան ո՛չ կարէ պնդել զանդամսն. վասն որոյ ո՛չ կանգնի և ոչ գնայ: - 266. Ի ստամոքս որովայնի. և ի լեարդս, և ի *յուղեղս* գլխոյն: - 786

**ՈՒՂԻՂ +** Վասն զի խղճմտութեամբ յանցաւորին ճանապարհն ո՛չ է թիւր. այլ ինքն թիւրի *յուղիղ* ճանապարհէն: - 33. Իսկ սոքա անզեղջ մնան որպէս սատանայ՝ զինքեանս *ուղիղ* կարծելով: - 33. Երրորդ՝ մոլորեցուցիչ կոչի. և հերձւածօղք մոլորեն *զուղիղ* հաւատս քրիստոնէին. և զբարի գործս նոցա: - 35. *Ուղիղ* է, զի որպէս խօսքն թարքման է մտաց և բանի, այսպէս և հոգին սուրբ՝ հօր և որդւոյ...: - 62. Ո՛չ ինչ ունիմ ասել առ այս. այլ՝ *զուղիղ* պատասխանին խնդրեմ: - 92. Այս է *ուղիղն* ի կարճոյ: - 92. Ա՛րդ՝ զի հայր պատճա՛ռ է որդւոյ ծննդեան՝ և հոգւոյ բղխման, վասն որոյ հայր նախադասի. իսկ ընդ նմա որդի. ո՛չ որպէս ոմանք կարծեն որդի պատճառ է հոգւոյ բղխման, այլ **գ** է *ուղիղ* տեսութիւնն: - 109. Եւ այս ո՛չէ *ուղիղ:* - 112. Տասներորդ՝ զի մշտաշարժ են երեքկին. այսինքն բոլոր՝ *ուղիղ*՝ և կողմնաւոր. որպէս ցուցցի յառաջիկայսդ: - 137. Իսկ *ուղիղ*՝ զի իջանեն առ երկրորդսն նախախնամապէս ո՛չ ի նոյնէ ի նոյն, այլ ի միոյ ի միւսն: - 142. Նմանապէս և հոգին շարժի բոլոր՝ գնդակ՝ և *ուղիղ:* - 142. Իսկ *ուղիղ* շարժի՝ յորժամ ի ձեռն զգայութեանց յարացուցիւ և օրինակաւ հպիմք ի նախատիպն աստուած: - 142. Իսկ *ուղիղ*՝ որպէս ապականեալք փոխին յիւրաքանչիւր տարերս: - 142. Այլ *զուղիղ* պատճառն բացայայտէ՛ եսայի մարգարէն: - 148. Երրորդ՝ ի նոյն իսկ ի ծնոյ շինւածոյ մարդոյն. զի *ուղիղ* գոլով՝

զիշխանականն նշանակէ. իսկ կենդանիքն կո՛ր գլխով զծառայականն ցուցանեն: - 220. Չորրորդ՝ Զև ն *ուղիղ* է մարդոյս: - 227. Վասն է՞ր մարդոյս ձև ն *ուղիղ*. գլուխն ի վերայ. և այլ անդամքն ի ներքոյ: - 232. Իսկ մարդս *ուղիղ* ի վեր: - 233. Եօթներորդ՝ վասն զգայութեանցն, որ ամենեքին յառաջ հեղուն յուղեղէն, և ազատապէս տեսանեն և իմանան. զի թէ գլուխն և *ուղիղն* ի վա՛յր էր քարշեալ և կորացեալ՝ ո՛չ կարէր ուղղակի զգալ և իմանալ. որպէս այլ կենդանիք: - 233. Տասներորդ՝ զի կիրք մարմնոյն հեղուն ի հոգին. որպէս յորժամ մարմինն ննջէ՝ և հոգին թմրի և անգործ մնայ. վասն որոյ արարաւ ձև ն *ուղիղ*, զի միտքն ընդ նմա՛ ուղղեսցի ի վեր առ աստուած...: - 233. Եւ ձև ն *ուղիղ* և թիւր՝ որա՛կ է: - 236. Այլ այս է *ուղիղ*. զի որպէս նախախնամութիւնն աստուծոյ զդէմքն մարմնոյն ի հաւասարութիւնն անհաւասար պահեաց, և ի նմանութիւնն աննման: - 252. Իսկ սահմանօրէն, հանճարն կարծիք է կապեալ ընդ *ուղիղ* խորհրդոյ: - 270. Նա՛խ՝ զի իմաստնոց *ուղիղ* է, և անմտաց կարծիք: - 270. Երկրորդ՝ կարծիք է զգայութեանց, և *ուղիղ* իմացմամբ: - 270. Երրորդ՝ կարծիք է, զի ի ներկայս ո՛չ է. և *ուղիղ* խորհուրդ, զի յապագայն լինելո՛ց է: - 270. Դարձեալ՝ հանճարն է տրամախոհութեանն. զի կարծիք է կապեալ ընդ *ուղիղ* խորհրդոյ. իմաստութիւնն իմացմանն. գիտութիւնն յիշողութեանն: - 270. Իննեւ՝ *ուղիղ* է ձև մարդոյ. և *ուղիղ* է տէր աստուած մեր: - 272. Այսպէս *ուղիղ* իմացիր թէ ուրեք և տաճար կոչէ զմարմին. զի կրկին է տաճարն: - 319. Այլ որ *ուղիղն* է, մովսէս յամենայն ժամ մտանէր ի սուրբն սրբոց. և ահարօն մի՛ անգամ ի տարւոջն. և քահանայքն ո՛չ մտանէին: - 364. Որոճօղն՝ քննօղ իմաստութեան. և կճղակն *ուղիղ* վարք հոգւոյ և մարմնոյ. սուրբ են: - 364. Այլ *ուղիղն*, զի օրէնքն թէպէտ ըստ խորհրդոյն փոխեցաւ, այլ ըստ իրին մնաց յաւիտեան. զի օրինակն էանց, այլ ճշմարտութիւնն մնաց: - 369. Այլ ա՛յս է *ուղիղն*. զի բովանդակն ամենայն **թ** դասք են հրեշտակաց. այլ անկեալքն ի նոցանէ՝ են ի չափ միոյ դասու. և մարդիկ զնոցա տեղին լնուն: - 376. Այլ որ *զուղիղն* ասեն ա՛յս է, կորխ՝ եցոյց զօրինակ զղջման. զի լուաւ խրատուն մովսէսի և մնաց ընտրութեանն աստուծոյ ի դուռն խորանին: - 382. Այլ որ *ուղիղն* է՝ զվճիռ գերոյն **հ** ամ եդ երեմիա: - 447. Այլ միջինն *ուղիղ* է և բարի: - 465. Զոր ունի զայս աւանդ այժմ սուրբ և *ուղիղ* աւանդապահ եկեղեցիս հայաստանեայց ըստ վկայութեանս որ եդաւ: - 484. Եւ այլք ասեն՝ դրախտ զտեսութիւն աստուածութեանն կոչէ. զոր յետ աւանդելոյ հոգւոյն ետես աւազակն. և այս *ուղիղ* է. զի ո՛չ ասաց թէ՝ իցեմք, այլ թէ՝ իցես: - 495. Եւ դարձեալ որ *ուղիղն* է, որպէս մարմնով տեսին ի յերկրի, նոյնպէս և հոգւով ի դժոխս պարտ էր հոգւոցն հաւատալ ի հոգին քրիստոսի և ազատիլ: - 507-508. Հինգերորդ որ *ուղիղն* է. զի **բ** է օր. բնական և արուեստական. և ասացեալքդ ամենայն յարուեստական օրս նկատեն և ի չարչարանս: - 516. Ասեմք առ այս, եթէ ո՛չ է արտաքոյ *ուղիղ* տեսութեան եթէ մի է առ հօր և բազում է առ մեզ: - 529. Որպէս որք յեփեսոս՝ զնիկիականն ուղղութիւն ո՛չ քակեցին. այլ ի նոյն տեսակ նոր կանոնս կարգեցին ի հաւատս *ուղիղ:* - 541. Ապա յա՛յտ է թէ ո՛չ ազգս հայոց եթող և բաժանեցաւ, այլ նոքա թողին *զուղիղն* և բաժանեցան: - 551. **Դարձեալ՝ կատարեալ սէր է, յորժամ է ունակութեամբ մեծ. ներքին շարժմամբն *ուղիղ*. արտաքին գործքն ժիր. արմատովն հաստատեալ. ջերմ եռանդութեամբն խոհեմ. և քաղցրութեամբն մխիթարական**: - 576. Դարձեալ՝ առաքինութիւն է բարի ունակութիւն մտաց, որով *ուղիղ* կեայ. և ո՛չ ոք չարաչար առնու ի կիր...: - 578. Այս է *ուղիղ* պատճառն...: - 596. Չորրորդ և *ուղիղ*, որպէս ասէ տեսիլն հրեշտակք առնուին զխունկս որ է՛ աղօթք սրբոցն, և նուիրէին ի սեղանն ոսկի որ է՛ քրիստոս. և ի նմանէ բուրէր ծուխն առ հայր: - 625. Երեսունևէ, *Ուղիղ* է դատաստանն աստուծոյ. և յաւիտեան տանջէ. և վասն կշռոց դատաստանին: - 661. Այսպէս և այս կարգաւո՛ր է և *ուղիղ* վասն բազում պատճառի: - 662. ...վասն որոյ որպէս ի մկրտութիւնն *ուղիղ* մկրտիմք գլուխ ի վեր և ոչ ի վայր որպէս արիոսեանք: - 676. Այլ որք *ուղիղ* դատեցան վարդապետք եկեղեցւոյ ըստ տեսլեանն յօհաննու...: - 687. Եւ թէ մասն մարդոյն որ է հոգին՝ տանջի այժմ վասն մեղաց և մարմինն հանգչի, այս ո՛չ է *ուղիղ*, նոյնպէս և զփառսն: - 694. Եւ զի *ուղիղ* է դատաստանն աստուծոյ՝ յա՛յտ է ի վկայութեանց սուրբ գրոց: - 743. Ապա ուրեմն *ուղիղ* է դատաստան նորա: - 744. Լուծն՝ *ուղիղ* և անաչառ քննութիւնն: - 745. Այլ որ *ուղիղն* է տեսութիւն, յետ յարութեան փոխի ժամանակն ի յաւիտեան. և այլ ո՛չ գտանի մասն և րոպէ և ժամ. զի երկնային մարմինք դադարին ի շարժմանէ ուստի ժամանակն գոյանայ: - 747. Սակայն առաջինն է *ուղիղ:* - 788

**ՈՒՂԽ +** Նմանապէս և աստ յաւուր նոր կիրակէի ասացեալն կրկնո՛յ զատկի, յանկարծահաս ժամու շարժեալ հեղեղաց *ուղխից* խռովութեանց: - 789

**ՈՒՂՂԱԿԱՆ +** Ապա ուրեմն համանգամայն ի միասին լինին երկու հակակայք. այսինքն *ուղղական* և հոլովական. զի ասելն աստուած *ուղղական* է. և աստուծոյ՝ սեռական հոլով: - 92. Ո՞չ ապաքէն ասեմք զքրիստոս՝ աստուած և որդի աստուծոյ. զի աստուածն *ուղղական* է՝ և որդի աստուծոյ հոլովական: -

92. Վեցերորդ՝ զի թէ երկինքն ո՛չ էր բոլորակ, յայնժամ արեգակն և այլ աստեղք յորժամ գային ի մէջ երկնից, մեծագոյն երևէին. քանզի ի միջին կիտէն երկնից առ մեզ է *ուղղական* գիծ. իսկ յարևելից առ մեզ է՛ խոտորնակի գիծ. և *ուղղական* գիծն կա՛րճ է քան զխոտորնակ գիծն: - 183

**ՈՒՂՂԱԿԻ +** Ո՛չ է ըստ չարափառացն ասել *ուղղակի*՝ թէ նախանձու կամ վասն փառաց որպէս ասեն, զի անգիտութեամբն պատուեսցի. ընդունա՛յն է կարծիքս այս...: - 24. Այլ և ի նոյն ինքն մխիթարիչ հոգին այսպէս *ուղղակի*՛ է բանս: - 59. Զի այս է *ուղղակի* դաւանութիւն միաւորութեանն քրիստոսի: - 75. Բե՛ր յարմարեսցուք այժմ զերիս եղանակս սոցա՝ միաւորութեան փրկչին *ուղղակի* իմն տեսութեամբ. որ ո՛չ ախորժելի է այլոց: - 89. Այլ ասելն՝ աստուած է և աստուծոյ մարմին. հոգի. և այլն. *ուղղակի*՛ է: - 92. Եւ այս թէ առընչապէս, և թէ բնակցապէս *ուղղակի*՛ իմասցի. ըստ այնմ, «հայր ի յիս և ես ի հայր». և «հոգւով սրբով գործեմ զգործս»: - 108. Այլ ո՛չ *ուղղակի*. զի նիւթն ամենևին անտեսա՛կ է: - 111. Նախ պետութիւնք. և ապա հրեշտակապետք. և վերջին հրեշտակք. և այս կարգ այսպէս *ուղղակի*՛ է: - 136. Իսկ շարժումն է եռակի ըստ սրբոյն դիոնիսեայ. այսինքն բոլոր՝ *ուղղակի*՝ և կողմնաւոր: - 142. Իսկ այլք *ուղղակի*՛ ասեն՝ թէ անմոլար աստեղքն ամրացեալ են ի հաստատութեանն որպէս սպի ի վերայ մարմնոյ, և ընդ նմա շարժին: - 189. Եօթներորդ՝ վասն զգայութեանցն, որ ամենեքին յառաջ հեղուն յուղեղէն, և ազատապէս տեսանեն և իմանան. զի թէ գլուխն և ուղիղն ի վա՛յր էր քարշեալ և կորացեալ՝ ո՛չ կարէր *ուղղակի* զգալ և իմանալ. որպէս այլ կենդանիք: - 233. Պերճական պարսիկն. և համեղ հայոյն. որ բոլորապէս կարօ՛ղ է զամենայն լեզու *ուղղակի* ուսանիլ: - 297. Եւ այլն նոյնպէս իմասցի *ուղղակի:* - 534. Ա՛րդ՝ մեղքն որ ընդ դէմ հոգւոյն սրբոյ՝ մանաւանդ ելանէ ի չար կամաց անձնիշխանականին. և *ուղղակի* մարտնչի ընդ դէմ շնորհաց հոգւոյն սրբոյ. և յիրաւի անթողլի՛ է: - 566. Եւ դու խառնեա զսոսա ի խորհուրդ պատարագին. զի իցես *ուղղակի* մեկնիչ և գրոյն հետևօղ: - 596. Նոյնպէս ի գերեզմանն *ուղղակի* տանիմք: - 676. Ասեմք եթէ՝ այսմ պատասխանի ասացաւ յառաջագոյն. զի ո՛չ *ուղղակի* իմանան վասն առակին. զի երեկոյ կատարա՛ծն է աշխարհիս. զի «**ռ** ամ յաչս տեառն որպէս օր երեկո՛յ է»: - 696. *Ուղղակի* ուրեմն փայտս այս ասի գոլ տընկեալ մերձ յընթացս ջուրց. զի ի նմանութիւն մարմնոյ մեղաց երևեցաւ. և զամենայն նուաստութիւնս մեր յինքն ընկալաւ: - 755. Եւ դարձեալ՝ թէ տեսանես *ուղղակի*՝ ըստ ինքեան առաւել է բարին և բազում. զի է՛ բնութեամբ բարի որպէս աստուած. և ներգործութեամբ բարի որպէս արարածք ամենայն: - 758. *Ուղղակի* ճշգրտութեան և անըստգիւտ իմացման: - 772. Իսկ *ուղղակին*. զի մոռացումն բնաւորեալ է առ խառնուած կազմութեան մարդոյ. իսկ խրատ՝ յանդիմանութեան է՛ ի ցոյց ինքեան: - 774. Թերևս հետևելով ո՛չ ինքեան, այլ *ուղղակին* խորհրդոց հաւանականք գոն: - 782. Իսկ հաւատ *ուղղակի* և վարձատրելի՝ է՛ մարդկայինս ազգի ի ճանապարհ աստի կենաց. և չորիւք բացակատարի: - 784

**ՈՒՂՂԱԿԻՑ** - Վասն այն յերկարեցի, թէ ոք հակառակի՝ այսպէս պատասխանեսցես նոցա. և զեղկելի անձն իմ յիշեսցես ի տէր *ուղղակից* եղբայր իմ ի քրիստոս: - 511

**ՈՒՂՂԱԿՇԻՌ +** Եւ այն զի աչքն ի դէմքն է, և ականջն ի կողմանէ. զի աչքն *ուղղակշիռ* ի դէմն տեսանէ. և ականջն շուրջանակի յամենայն կողմանէ լսէ. ի վերոյ ի ներքոյ և այլն: - 235

**ՈՒՂՂԱՁԵՒ** - Հինգերորդ՝ զի մարդն իշխան և տէր է ամենայն կենդանեաց. վասն որոյ ամենայն կենդանիք գլխակո՛ր են իբրև զծառայ և հնազանդ. և մարդն *ուղղաձև* իբրև ազատ և թագաւոր: - 233. Դարձեալ՝ մարդո՛յս է *ուղղաձև* լինիլ որպէս ցուցաւ: - 275

**ՈՒՂՂԱՁԵՒՈՒԹԻՒՆ** - Զի *ուղղաձևութեան* ուսուցիչք ի բաժանմանէ ի միութիւն եկեալ խոստովանին զքրիստոս. և սոքա ի միութենէ ի բաժանումն որոշեն: - 176. Իսկ վարդապետք *ուղղաձևութեան*՝ յանդիմանեալ զերկոսին կողմանց ստախօսութիւն, ո՛չ զհոգի յառաջ քան զմարմին ասեն ստեղծեալ, և ո՛չ զմարմին քան զհոգի: - 254. Այլ որք *ուղղաձևութեան* են աշակերտք՝ ի մէջ գիշերի ասեն զժամ յարութեանն քրիստոսի ի գերեզմանէն. որոց հետևիմք և մեք և հաստատեմք բազում վկայութեամբ և օրինակաւ: - 512

**ՈՒՂՂԱՊԷՍ +** Յորոյ փախչելով մեր և յերկուց ծայրիցն, զառ ի մէջն ունելով *ուղղապէս* ընթացք, ասեմք եթէ քրիստոս ըստ անշփոթ միաւորութեանն՝ աստուածային բնութեամբն մարդ է, և մարդկային բնութեամբն աստուած է: - 75. Դարձեալ՝ ծանի՛ր *ուղղապէս*. զի ասի աստուած մարմնացեալ և մարդացեալ. զի այս միաւորութեան է: - 79. Եւ յորժամ ի միւս կիսագունդն հասանէ, ընդ **զ** կենդանակերպս հետևեալ՝ բոլորի լոյսն ի նմա. զի *ուղղապէս* զլոյսն ընդունի: - 187. Եւ գիտելի՛ է, զի ընդ ամենևին հեռանալն լուսինն խաւարի. և ամենևիմբ մերձ եկեալ ի նոյն կենդանակերպն և *ուղղապէս* ընդ դէմ անցեալ արեգականն՝ խաւարէ՛ զնա. զի ընդ դիմատիպ է անօթ լուսնոյն: - 187.

Նմանապէս և զայլ մոլորականսն ծածկէ յորժամ *ուղղապէս* ընդ դէմ անկանի: - 187. Այլ որ *ուղղապէս* հանդիպիմք՝ ասեմք թէ **լ** ժամ մարմինն եկաց ի գերեզմանի. և հոգին **լգ** ժամ և կէս յամեաց ի դժոխս: - 515. Եւ մաղթե՛մ եղբայրական սիրով, ըստ բնածին բարեբոյս բարուցդ աշխոյժ մտօք *ուղղապէս* որոնել. զթերին լնլով և զաւելորդն կշռել: - 789

**ՈՒՂՂԱՓԱՌ +** Այլ մեք դասք *ուղղափառաց*, հետևօղք ճշմարտասիրութեան, ընդդիմանամք այսմ ասելով թէ աստուած ո՛չ է պատճառ չարեաց. այլ միա՛յն բարեաց: - 13. Արդ՝ ըստ *ուղղափառ* վարդապետաց եկեղեցւոյ: - 24. Եւ պատասխանիք, և ա՛յլ հարցմունք *ուղղափառի* առ նոսա: - 29. Վեշտասաներորդ՝ Հարցմունք *ուղղափառաց* առ նոսա **ժ** թւով: - 30. Վեցերորդ՝ հակառակէ քրիստոսի՝ և քրիստոնէից. և սոքա հակառակին սուրբ եկեղեցւոյ և *ուղղափառ* հաւատոյ...: - 35. Վասն որոյ և մեք համաձայն գոլով *ուղղափառաց* հարցն սրբոց՝ դիցուք սուղ ինչ յառարկութեանց նոցա, և ընդ նմին զպատասխանիս: - 35. Եւ մեք համաձայնեալ սուրբ և *ուղղափառ* վարդապետութեանցս, այսպէս դաւանիմք և խոստովանիմք զՀոգին սուրբ աստուած բղխումն ի հօրէ աստուծոյ...: - 65. Զոր զայսպիսի չարութեան խնդիրս տարագրէ՛ եկեղեցի *ուղղափառաց:* - 76. Եւ որպէս զայդ ուսար *ուղղափառ* դաւանութեամբ՝ ի միտ առ զոր ասեմս: - 79. Իսկ մեք դասք *ուղղափառաց* կրկին կերպիւ իմանամք զբանս զայս: - 80. Իսկ մեք դասք *ուղղափառաց*՝ գիտեմք զբնութեանն բան: - 82. *Ուղղափառն* ասէ: - 84. *Ուղղափառն* ասէ: - 84. Իսկ տէր մեր անւամբ և բնութեամբ է աստուած որպէս խոստովանիմք դասք *ուղղափառաց:* - 88. Իսկ թէ և որոշակի ասես *ուղղափառ* մտօք, և ո՛չ այն է զարտուղի. յորժամ ասես աստուծոյ մարմին և աստուծոյ արիւն. զի որ ինչ է՛ ի յաստուած՝ աստուած է և ո՛չ օտար յաստուծոյ: - 92-93. Եւ ո՛չ ուրեք երբեք միտք *ուղղափառաց* բաժանմամբ տեսանէ. ո՛չ զբնութիւնս և ո՛չ զկամս և ո՛չ ներգործութիւնս որ յառաջն հարցափորձեցաք սակաւիկ: - 174. Որ ընդ դէմ է ըստ գրոց. և *ուղղափառ* հարց: - 225. Գինին՝ մարտիրոսքն սուրբք. և Իւղն՝ լուսատու վարդապետքն *ուղղափառք:* - 374. Այլ մեզ *ուղղափառ* եկեղեցոյս միջինն է ընդունելի: - 391. Զոր զայսպիսի խորհօղսն և ասացօղսն նզովէ՛ եկեղեցի ամենայն *ուղղափառաց* ամէն: - 475. Զի այսպէս միատեսակ բնութեամբ խոստովանի ընդ մեզ և այլ ժողովուրդ *ուղղափառաց* ըստ ուսուցման մեծին դիոնիսեայ...: - 477. Տասներորդ՝ ամենայն սուրբ վարդապետք *ուղղափառաց* որպէս եփրեմ՝ ոսկէբերանն՝ կիւրեղ՝ աթանաս՝ և այլք, անապական գրեն և խոստովանին զմարմինն սուրբ: - 499. Այլ զայսոսիկ ո՛չ ընդունին *ուղղափառ* վարդապետք: - 504. Եւ **լզ** բիւրս սպանին *յուղղափառաց* դասուց. որպէս յա՛յտ է ի պատմութիւնս սրբոյն միխայէլի: - 547. Ասեմք առ այս՝ թէ լուսաւորիչն գնաց ի հռօմ ո՛չ վասն ձեռնադրութեան, այլ վասն սիրոյ և միաբանութեան երկուց ազգաց և *ուղղափառ* թագաւորացն տրդատայ և կոստանդիանոսի: - 548. Իսկ մեք դասք *ուղղափառաց* խոստովանիմք զկուսածին մարմինն քրիստոսի առանց ապականութեան. - 597. Դարձեալ թէ՝ ի՞նչ մարդոյ խոստովանեցաւ. թէ քահանա՞յ էր. հերձուածո՞ղ էր թէ *ուղղափառ:* - 601. Եւ գիտելի է, զի մարդ որ ի մեղք անկանի և իմանայ զինքն որ մեղք գործեաց, և ունի զխոստովանահայրն պատրաստ *ուղղափառ* և գիտուն, ի յա՛յն պահին պարտի խոստովանիլ: - 601. Այս է *ուղղափառ* վարդապետաց: - 667. Այսքան առարկութիւնք հակառակաց և պատասխանիք *ուղղափառաց:* - 698. Ընդհանուր ամենայն վարդապետք *ուղղափառաց* համաձայնեալ աստուածեղէն գրոց՝ ո՛չ ասեն քաւարան հրոյ: - 698. Նա՛խ՝ զի ընդ դէմ է սուրբ գրոց և *ուղղափառ* վարդապետաց որպէս ցուցանի յառաջիկայդ: - 698. ...և ընդ դէմ խօսեսցի աւետարանին և արգելուցու *զուղղափառ* վարդապետս զի մի՛ քարոզեսցեն: - 708. Ի խնդրոյ ումեմն բանասիրի Ատոմի *ուղղափառի:* - 772

**ՈՒՂՂԱՓԱՌՈՒԹԻՒՆ +** Զորոց պատճառս մլորութեանն **ը** են ասացեալ հետեւօղք *ուղղափառութեան:* - 31. Եւ երևեալ մարմնովն մի բնութիւն տեսակացեալ և մի անձնաւորութիւն. մի տէր. մի որդի. ըստ սուրբ հարցն *ուղղափառութեան:* - 76. Երրորդ՝ բանական քննութեան հետևի հերձուած. և հաւատոյն *ուղղափառութիւն:* - 122. Վեցերորդ՝ զմարիամ մայր փրկչին կոյս և անապական խոստովանին հարք *ուղղափառութեան*. և զայս ո՛չ ըստ գոյացութեան բնութեան, այլ զի ծնաւ զբանն աստուած անապական մարմնով: - 499. Որ կանոնական գլխօք պայծառացոյց զկարգ եկեղեցւոյ և *զուղղափառութիւն* հաւատոյ. զոր **զ** ամաւ յառաջ եղծեալ էր եզրի կաթողիկոսի...: - 545. Յորժամ անիծիւք աքսորեցին զներսէս եպիսկոպոս որ եղև աղանդովն ներսէսի, և այլայլեաց զկարգ և *զուղղափառութիւն* հաւատոյ: - 545

**ՈՒՂՂԵՄ +** Ա՛յսպէս և ցանկասէրն ի բարւոյն *ուղղեսցի:* - 19. Այլ արդ՝ եդ աստուած զսոսա բնական որակութիւնս ի մասունս հոգւոյն. եդ և զանձնիշխան կամքն տէր և իշխան իներքս ի հոգին. զի կառավարէ և առաջնորդէ՛ հոգւոյն. զվատ որակն ի բարին *ուղղել*, և զբարին ի նոյնն պահել և

առաւելուլ. զի այս է գործ անձնիշխանին: - 19. Իններորդ՝ զի նոցա բանականն է մոլորեալ. և ո՛չ ցասումն և ցանկութիւնն. յորոց վերայ բանն բռնադատէ խղճիւն, և ստիպէ զնոսա յուղղութիւն. այլ ինքն կառավարն խոհեմութիւնն մոլորեալ ո՛չ *ուղղի:* - 32. Վասն այն հերձւածօղն ո՛չ կարէ *ուղղիլ:* - 33. Իսկ այլք՝ հոգի զիրեշտակական հոգին ասեն. որ տըւեալ է առ ի պահպանութիւն մեզ. զի նա *ուղղէ* զմեզ ի բարիս, և զաղօթս մեր մատուցանէ աստուծոյ: - 59. Սակայն աշակերտացն է ուղղութեան՝ ո՛չ յանձնէ խօսիլ. այլ նախնեացն սրբոց հետևիլ և նոքօք *ուղղել:* - 93. Զպակասն *ուղղեա՛* և զաւելիսն կշռեա՛ աղաչեմ ի ներգոյէ՛ քոյինդ մեծանձնութեան: - 95. Իսկ սուրբ գիտութիւնն ընդ դէմ այսմ լուսաւորէ՛ զմիտս և *ուղղէ՛*. և ընդարձակէ զտեսութիւնն և թեթեւացնէ առ վերինն. և ժողովէ ի մինն. և կատարէ զպատկերն: - 104. Երկրորդ՝ զի կամքն աստուծոյ հանգուցեալ է ի նոսա և *ուղղէ՛:* - 139. Տասն ստորոգութիւնքն այսպէս *ուղղին:* - 154. Յորժամ պատահումն ոչ գոյ յաստուած որպէս ասացեր, զծ ստորոգութիւնս որպէս *ուղղեսցուք* առ նա: - 171. Հինգերորդ՝ զի մարդն տէր և իշխա՛ն է երկրաւորացս, գիտասցէ ըստ կարգի զիշխանութիւնն իւր *ուղղել*. և մի՛ անկարգ և անիրաւ: - 192. Տասներորդ՝ զի կիրք մարմնոյն հեղուն ի հոգին. որպէս յորժամ մարմինն ննջէ՝ և հոգին թմրի և անգործ մնայ. վասն որոյ արարաւ ձևն ուղիղ, զի միտքն ընդ նմա՛ *ուղղեսցի* ի վեր առ աստուած...: - 233. Դարձեալ գիտելի՛ է, զի յոբ կրկնելով զբանսն՝ *ուղղէ՛ր* զբարեկամսն և ընկրկէ՛ր զսատանայ. զի այսպէս ամենայն ոք կարէ՛ յաղթել սատանայի յորժամ զընկերն *ուղղէ* ի բանս կամ ի գործս կամ ի հաւատս և յայլսն. յայնժամ սատանայ թիւրի և հեռանայ: - 323. Այլ յորժամ զընկերն թիւրեմք չար յաղթութեամբ, յայնժամ սատանայ *ուղղի* և ուրախանայ: - 323. Մեսեդին **բ** տուն. և **բ** տուն *ուղղիցին* խնկօքն: - 375. Եւ է՛ ինչ ի մեկնչաց *ուղղեալ*. այլ միտքն նո՛յն է: - 407. ...Մարգարէք նախապատմեցին: ...Պետք՝ *ուղղեցին:* - 456. Նոյնպէս վասն երկրորդին գիտելի է, զի որպէս զփայտ թիւրութեամբ պնդեալ՝ դժուարին է *ուղղել*. նոյնպէս զչար սովորութիւն մարդկան դժուարին է փոփոխել: - 531. Յաղագս որոյ կացոյց հոգևոր իշխան զքահանայս. զի հոգէպէս *ուղղեսցեն* զմարդիկ և արգելցեն ի մեղաց: - 537-538. Ասեմք առ այս, եթէ համակարգ և համիշխանք են վերջինն ընդ առաջնոյն ի կարգել և ի *յուղղել*. այլ ո՛չ ի թիւրել և ի քակել. զի առաջնոյն աւանդապա՛հ է վերջինն նո՛յն մտօք և նո՛յն կամօք: - 541. Եւ դարձեալ՝ կարէ՛ վերջինն զառաջնոյն թիւրութիւնն *ուղղել* և զանիրաւ կապեալն արձակել. որպէս աստուածաբանն գրիգոր զարիանոսացն: - 541. Եւ թէ ոք ասիցէ, այս առաջնոյն. զի վերջինն կարէ՛ *ուղղել*. այլ ո՛չ կարէ թիւրել: - 541. Երկրորդ՝ որպէս կառք և կառավարն. եթէ մարմինն թիւրի, միտքն *ուղղէ՛* զնա: - 557. Իսկ թէ կառավարն թիւրի, կառքն ո՛չ կարէ *ուղղել*. այլ երկոքինն գահավիժին: - 557. Ասի և վախճան. զի *ուղղէ՛* զգործս և ածէ՛ ի պատշաճաւոր վախճանն: - 575. Եւ կարելի է որ ոք կամեսցի՝ զայսոսիկ գլուխս ի սէրն աստուծոյ *ուղղել:* - 576. Որ է՛ հաւատ՝ յոյս՝ սէր. և սոքա երեքեան հեղո՛ւմն են յաստուածային շնորհացն ի բանական ոգիս. որով *ուղղիմք* յերկնային կեանս: - 577. Այլ գիտելի է, զի առաքինութեամբն *ուղղի* հոգին ի զօրութիւնս իւր. քանզի խոհեմութիւնն *ուղղէ* զբանականն. արիութիւնն զցասմնականն. ողջախոհութիւնն զցանկականն. իսկ արդարութիւնն *ուղղէ՛* զամենայն զօրութիւնս: - 578. Դարձեալ՝ խոհեմութիւն է *ուղղել* զառաքինութիւնս ըստ բարոյական իմաստասիրութեանն: - 580. Ա՛րդ՝ ժուժկալութիւն է որով ամենայն ցանկութիւն *ուղղի* կառավարութեամբ խրատուն: - 581. Եւ բոլորն զկատարեալ ընթացս մեր առ աստուած *ուղղեալ:* - 645. ...և ո՞ր արդարութիւն նուազեալ է՝ զայն *ուղղել*...: - 665. Իսկ զղէմքն և զգերեզմանն *ուղղեմք* յարնելս...: - 677. Արդարքն վասն իւրեանց սիրելեացն միշտ աղօթեն զի ազատեսցին ի փորձանաց և *ուղղեսցին* ի մոլորութեանց և ընկեր փառաց նոցա լինիցին: - 685. Եւ այս գիտելի է, զի յարութիւնն երիս իրս *ուղղեսցէ* ի բնութիւնն: - 725. Երկրորդ՝ *ուղղեսցին* աւելիքն ի չափն. որպէս աւելո՛րդ եղունգաց հերաց և վեցամատնից և այլոցն. որք չափաւորին: - 725. Երրորդ՝ *ուղղի* մոլորութիւնն որ է՛ խանգարումն անդամոցն ի միմեանս սխալեալ ըստ բնութեան տկարութեանն: - 725. Եւ սոքա *ուղղին* ի յարութեանն. զի գո՛րծ է կարօղ զօրութեանն աստուծոյ և ո՛չ տկար բնութեան: - 725. Եւ թէ կամիս *ուղղել* մարմնապէս: - 745. Ոտք ի վեր *ուղղեալք*, և ի տանջանս ամենայն ուստէք ձկտեալք: - 753. Որ և ամենայն վերոյ գրեալքդ առակք, անառակին, մոլորելոյն, կորուսելոյն և այլն ևս, այսպէս *ուղղին*. այսինքն նմա՛, վասն նմա՛, որպէս նմա՛: - 778. Այլ որ քան և կարասցէ ոք զմիտս *ուղղել*. խօսակցելով առ նա, հաճո՛յ է աստուծոյ: - 779

**ՈՒՂՂԵՑԻՆ, ՈՒՂՂԻՑԻՆ (Շարականի տեսակ)** - Այլ և *ուղղիցին* **դ** տուն է կիսամասնեայ. ընդ սրբոյ խաչեցարին հզօր և անմահ գառինն եղեալ: - 375. Եւ նոյնպէս **դ** անգամ յերեկոյն. ի լոյս զըւարթն, և *յուղղեցին*, և յերեքսրբեանն. կամ յարձակմանն խնկարկեն ոմանք: - 618

**ՈՒՂՂՈՐԴ +** Յինգերորդ, զի *ուղղորդ* և առանձին ընթանայր՝ ետես զաստուած: - 387

**ՈՒՂՂՈՒԹԻՒՆ +** Իններորդ՝ զի նոցա բանականն է մոլորեալ. և ո՛չ ցասումն և ցանկութիւնն. յորոց վերայ բանն բռնադատէ խղճիւն, և ստիպէ զնոսա *յուղղութիւն*...: - 32. Ուստի հեշտութիւն և աւանդութիւն յիրաւի խառնեալ ընդ միմեանս, և հակառակասիրութիւն և ինքնահաճութիւն յառաջ եկեալ, որով զինեալ պնդին ընդդէմ *ուղղութեան*...: - 33. Վասն որոյ ո՛չ հաւանին *ուղղութեան* վարդապետաց: - 33. Ութերորդին ասեմք՝ եթէ օրինակաւ խօսից իմանալ զհոգին սուրբ՝ ունի ինչ *ուղղութիւն* և ունի ինչ թիւրութիւն: - 62. Իսկ *ուղղութեանցն* աշակերտք՝ ընդ դէմ երկուցն յաջ և յահեակ պատերազմին: - 81. Եւ այսպէս փախչելով ի թիւր ծայրիցն, զմիջինն պահելով ընթացք բարեպաշտութեան, անշթոփ և անբաժան միութիւն, խոստովանիմք զքրիստոս՝ աստուած մարդացեալ. մի անձն և մի բնութիւն. և մի կամք և գործք ըստ *ուղղութեանն* բանի: - 81. Սակայն աշակերտացն է *ուղղութեան*՝ ո՛չ յանձնէ խօսիլ. այլ նախնեացն սրբոց հետևիլ և նոքօք ուղղել: - 93. Եւ աստ երևումն և խրատ *ուղղութեան*. պատիժ կամ պարգևք բարութեան: - 133. Երրորդ՝ զի սերօբէն մաքրական լսի և հրաբերձ. ըստ որում մաքրեաց զմարգարէն. և քերօբէն իմաստութեամբ լուսաւորիչ. և աթոռքն *ուղղութեամբն* կատարիչ: - 135. Նախ՝ զի սերօբէն խոկայ զբարութիւնն աստուծոյ. և քերօբէն զճշմարտութիւնն. և աթոռք *զուղղութիւնն:* - 135. Երկրորդ՝ զի սերօբէն բորբոքէ ի սէրն որ է անմիջոց կապ. և քերօբէն ի ճանաչումն ճշմարտութեան. և աթոռքն ի *յուղղութիւնն*. և նոքա են վերակացուք դատաստանի իրաւանց: - 135. Իններորդ՝ ոմանք մեծամեծ իրողութեանց են միջնորդք *ուղղութեան*...: - 138. Զի առնելն է հաճոյական գործ առանց կասկածանաց. որպէս բարի առնել բարեաց, որ է՛ արդարութեանն աստուծոյ. և չար առնել չարեաց, որև այս է՛ խրատ *ուղղութեան*...: - 158. Չորրորդ՝ թոյլ տայ փորձութեան արդարոց ի *յուղղութիւն* այլոց. որպէս ղազարոյն և մեծատանն. զի տեսանելով զղազարոս՝ և լսելով վասն մեծատանն՝ զարհուրիմք և գամք յուղղութիւն: - 158. Չորրորդ՝ թոյլ տայ փորձութեան արդարոց ի յուղղութիւն այլոց. որպէս ղազարոյն և մեծատանն. զի տեսանելով զղազարոս՝ և լսելով վասն մեծատանն՝ զարհուրիմք և գամք *յուղղութիւն:* - 158. Երկրորդ՝ *զուղղութեան* գործոց բուռն էհար. և յուսացաւ թէ գո՛յ հատուցումն գործոց, և բարեաց փոխարէն: - 289. Նախ՝ *ուղղութիւն* ընկերաց. **բ** գոհութիւն և համբերութիւն. **գ**՝ իմանալ զչար խորհուրդն սատանայի. **դ**՝ աղօթք և պահք. **ե**՝ խոնարհութիւն և ճշմարտութիւն. որ գերագոյն է ամենայն զինուց և իսպառ կորուսանէ զչար որ մայրն է ստութեան և հպարտութեան: - 324. Նա՛խ՝ նշանակէ զնոյն ինքն սկզբնաչարն սատանայ. որ էր յերկինս գաւազան *ուղղութեան* և ընկեցեալ եղև օ՛ձ: - 332. Վեցերորդ՝ նշանակէ՛ զբանն աստուած գաւազան *ուղղութեան* և թագաւորութեան առ հայր. եկն նա՛ յերկիր և էառ զօձաձև բնութիւնս մեր. և դարձեալ ըմբռնեալ մարմնովն ել յերկինս և նստաւ ընդ աջմէ հօր: - 332. Զայն ցուցանէ թէ *յուղղութիւնս* մեր երևի աստուած. այլ ի խոտորիլն ո՛չ: - 387. Բայց զի յուսացեալ ի բանն ճշմարտութեան յաղագս որոյ բանս հարցափորձութեան, հետևելով ուսուցչացն *ուղղութեան*...: - 456. *Ուղղութիւն* մոլորելոց: - 474. Ստուգաբանութեամբ կոչի կանոնն քանոն. այսինքն *ուղղութիւն* և կարգ և օրէնք: - 538. Այլ կարէ յաւելուլ ի նոյն տեսակն *ուղղութիւն* և կարգ: - 541. Որպէս որք յեփեսոս՝ զնիկիականն *ուղղութիւն* ո՛չ քակեցին. այլ ի նոյն տեսակ նոր կանոնս կարգեցին ի հաւատս ուղիղ: - 541. ...որ եզր եղև հաւատոյ *ուղղութեան*. և հրամանաւ հերակլի հաւանեցաւ ժողովոյն քաղկեդոնի. կացեալ **զ** կաթողիկոսք նոյն աղանդովն որ են այսոքիկ. Եզր. Մովսէս. Անաստաս. Իսրայէլ. Սահակ. Եղիա: - 545. Գրէ կարգս կանոնականս **իդ** գլխօք. և հաստատէ՛ զեկեղեցի պայծառ կարգօք և *ուղղութեամբ:* - 545. Ա՛րդ՝ բե՛ր ածցուք զվկայս առ դատաւոր միտս, և դատեսցուք *ուղղութեամբ*, այլ ո՛չ զրպարտութեամբ: - 552. Զի նա պարունակէ՛ զառաքինութիւնս որ կարգեն զմարդ առ ընկերն. որպէս *ուղղութիւնն* և առատաբաշխութիւնն: - 578. Վասն այն ասի արդարութիւնն *ուղղութիւն* կամաց. զի ո՛չ միայն է առանձնական զօրութիւն կամ առաքինութիւն. այլ և հասարակ և պարունակիչ *ուղղութեան* հոգւոյն: - 579. Փոքերն *զուղղութիւն* և զողորմութիւն: - 579. Այս ըստ հակառակասիրութեան նոցա ասի. այլ ըստ *ուղղութեան*՝ քահանայն ունի իշխանութիւն զեօթն խորհուրդ եկեղեցւոյ կատարել. և եպիսկոպոսն առաւել ունի. զի միայն տայ զկարգն, եկեղեցի օրհնէ և սեղան: - 594. Եւ արդարութիւնն դէմ յանդիման որ *ուղղութեամբ* դատէ՝ դուռն է արևմտեան: - 614. Երկրորդ, որ անզեղջ են ի մեղս՝ տայ աստուած զհիւանդութիւն ի խրատ *ուղղութեան:* - 665. Երրորդ՝ *զուղղութիւն* իմացման նոցա առանց խոտորման: - 713. Երրորդ՝ աթոռ դատողական ի նշանակ *ուղղութեան:* - 736. Մանաւանդ թէ՝ հոգին սուրբ գրօղ դպիր. և *ուղղութիւնն* գրիչ գործիք. և որք զմելանն առատ տամք և զմագաղաթն, զսուրբ գործս անկեղծաւոր և զբանս աղօթից օրինաւոր,

ա՛յնքան առաւել գրիմք ի գիրն կենաց: - 741. Եւ որք ի ծերութեանն գան *յուղղութիւն*, որպէս զսէգ դալարին, և տան պտուղ զերեսնաւորն: - 757-758. Արդ որպէս յամենայն ժամանակս սոքօք գան ի հաւատս *ուղղութեան* և է՛ վարձատրելի. այսպէս և ի վերջին ժամանակս որք յետ նեռինն՝ ո՛չ միայն ի հարկէ սքանչելեաց, այլ և ի լրոյ քարոզչաց երկուցն վկայից իջելոց սրբոց: - 785. Եւ բազում ուրէք որք ընդ արեգակամբս խորհրդածուք էին, ի լուր բանից և ի տես սքանչելեաց ածին *յուղղութիւն:* - 785

**ՈՒՂՏ +** Մետասաներորդ՝ ասեն թէ որպէս ի կենդանիս *ուղտն* խոհեմ՝ և տատրակն ողջախոհ է, և ա՛յլ կենդանիք են ապուշք և բղջախոհք: - 19. Հինգերորդ՝ որ բնութեամբ անկարելի է. որպէս ծնեալն կրկին ծնանիլ. և *յուղտու* ընդ ասեղ անցանել: - 44. Կամ մեծութիւն. որպէս *ուղտու:* - 216. Այլ և յաւելեալ ի վերայ զշարժականն և զշնչականն և զցասմնականն և զցանկականն, ընդ նմին և զկազմողական նիւթն և զտնկականն, որ լինի **ժը**. վասն որոյ ոմանք ի տարին և կէսն ծնանին որպէս *ուղտ:* - 263. *Ուղտք* **զռ**: - 321. Եւ յաւուր փորձութեանցն հուր անկեալ յերկնից այրեաց զհօտսն. և ասպատակք աւար առին *զուղտն* և զէշսն և զեզինսն: - 321. Երրորդ՝ կորեան երամակք *ուղտուցն:* - 322. Եւ այսպէս **է** էին հարուածքն. այսինքն **ա**՝ եզինքն. **բ**՝ էշքն. **գ**՝ *ուղտքն*. **դ**՝ անասնոց մահն. **ե**՝ սպասաւորաց նոցին. **զ**՝ զաւակաց մահն. **է**՝ մարմնոյն հարուածքն: - 322. *Ուղտքն* **զռ**: - 326. Այսինքն իգամոլք իբրև զձիս. խեռաբարոյք որպէս զէշ. և խորամանկք որպէս *զուղտ:* - 334. Այլ և ի յանբան կենդանիս բնաւորեցաւ գոլ. որպէս *ուղտ* խոհեմ. և առիւծ արի. տատրակ ողջախոհ. և արագիլ արդար: - 581

**ՈՒՆԱԿԱՆ +** Եւ ունի ստամոքն **դ** զօրութիւնս. որ է՛ քարշողական. *ունական*. հալողական. վտարական: - 242. *Ունականն* է՝ յորժամ ժողովէ զկերակուրն՝ ծկտի և լայնանայ և փակէ՛ զամենայն դրունսն որ ի ներքոյ և ի վերոյ և ի կողմանէ, զի մի՛ թափեսցի կերակուրն: - 242. Նմանապէս և կերակրականն ունի զօրութիւնս **դ**. որ է՛ քարշողականն. *ունականն*. հալողականն. և վտարականն: - 262.

**ՈՒՆԱԿԱՆԱՄ +** Իններորդ՝ տա՛յ երկրի զօր *ունակացեալ* է. որպէս զանձրև. զլոյս. զջերմութիւն. և զասդողութիւն: - 184. Զի քարշեն յերկրէ զհիւթ, և *ունակացեալ* պահեն, և հալեալ փոխեն յինքեանս. և վտարեն զաւելորդսն ի կեղև՝ ի տերև՝ և յայլսն: - 262. Նախ՝ կոչի սիրտ և անձինք մեղաւորաց, ուր ժողովին ամենայն գործք չար որ է՛ խաղող դառնութեան. և *ունակացեալ* պահէ յինքեան. և հեշտութեամբն ծմլէ հանապազ և արբենայ մեղացն գինով: - 748. Այսպէս և ժանգ յանցանաց մկրտելոց և քահանայից՝ բառնայ զգործ՝ կամ զնշանակութիւն շնորհացն. իսկ յետ սրբութեան զղջմամբ՝ զիա՞րդ կրկնի *ունակացեալն* ի նմա՛: - 782

**ՈՒՆԱԿՈՒԹԻՒՆ +** Երկրորդ՝ բարին *ունակութիւն* է, և չարն պակասութիւն նմին. որպէս խաւարն լուսոյ: - 13. Այլ արդ՝ աստուած պատճառ է *ունակութեան*, և ո՛չ պակասութեան. ուրեմն չարն ո՛չ է յաստուծոյ: - 13. Այլ և ո՛չ է բնութիւն. ո՛չ մասն և ո՛չ բոլոր. այլ պակասութիւն *ունակութեան*. զի բարին *ունակութիւն* է, և չարն պակասութիւն նորին. որպէս խաւարն լուսոյ, և հիվանդութիւնն առողջութեան, և մահ կենաց: - 16. Այսպէս *զունակութիւնն* ճանաչեմք իւր յատուկ տեսակաւն. և զպակասութիւնն այլով տեսակաւ. զի հակակայի *ունակութեանն:* - 17. Պակասական. որպէս *ունակութիւն* և պակասութիւն: - 21. Այլ թըւի որպէս *ունակութիւն* և պակասութիւն. զի բարին *ունակութիւն* է, և չարն պակասութիւն նմին. որպէս կուրութիւն երեսաց՝ և խաւար լուսո՛յ է պակասութիւն: - 21. Այլ և այսու որոշեսցին. զի *յունակութենէ* պակասութիւն լինի. այլ ի պակասութենէ *ունակութիւն* ո՛չ երբեք: - 21. Եւ թէ ոք ասիցէ, այս ներհակա՛ց է որք փոխեն զմիմեանս. և ո՛չ *ունակութեանց* և պակասութեանց: - 21. Ասեմք առ այս եթէ՝ բարի և չար ըստ ենթակային ներհակք են միմեանց. իսկ ըստ ինքեանց՝ *ունակութիւն* և պակասութիւն որպէս ասացաք: - 21. Եւ է՛ որ խառն բարի է. որպէս առ մեզ պատահեալ բարիս որ *ունակութիւն* է. զի ա՛յլ է էութիւն մեր, և ա՛յլ է բարի յէութեան մերում: - 22-23. Այլ այս զանազանի. զի բարին բնական *ունակութիւն* է մեզ. զի ի բարին եմք գոյացեալ: - 23. Երրորդ՝ զի *ունակութիւն* և պակասութիւն եդեր ի մէջ աստուածութեանն: - 38. Չորրորդ՝ զի առաջին դրեր զպակասութիւնն, և ապա՛ *զունակութիւնն*. որ է՛ հակառակ ասացելոցն: - 38. Վեցերորդ՝ զի լինի զօրանալ պակասութեանն՝ և յաղթահարել *զունակութիւնն:* - 38. Զի ոմանց տացի և յաւելցի. և յոմանց բարձցի և պակասեսցի ըստ չափու *ունակութեան* ընդունողաց: - 127. Երրորդ՝ զի անբաժանելի է յունօղսն. որպէս յաստուած՝ և ի հրեշտակս, այսպէս և ի մարդն արժանացեալ. զի *ունակութիւն* է յարամնայ և կնիք անքակտելի: - 138. Իսկ մարդս ո՛չ բնութեամբ, այլ յետոյ ստացմամբ և *ունակութեամբ:* - 138. Ասելի է թէ՝ կոյսն և ապականեալն են հակակայք ըստ *ունակութեան* և պակասութեան. որպէս երեսք և կուրութիւն. որոց ի լինիլն համահետևին երեքին սոքա. այսինքն ժամանակն, և մասն, և նոյն: - 165. Ժամանակն՝ զի նա՛խ է *ունակութիւն*. և յետոյ պակասութիւն: - 165. և Մասն՝ զի նոյն մասինն որոյ էր *ունակութիւն*՝ նորին եղիցի

և պակասութիւն: - 165. և Նոյն՝ զի նոյն *ունակութիւնն* եղև նոյն պակասութիւն: - 165. Զի կարէ՛ *ունակութեանն* լինիլ պակասութիւն. և անկա՛ր է պակասութեանն լինիլ *ունակութիւն:* - 165. Ապա յա՛յտ է զի կուսութիւնն է *ունակութիւն*. և ապականութիւնն պակասութիւն նմին: - 165. Եւ գործ պոռնկութեանն է *ունակութեանն* պակասութիւն. վասն որոյ ո՛չ հակադարձին: - 165. Հինգերորդ՝ զի *ունակութիւնն* նա՛խ է քան զպակասութիւնն. զի ուր ո՛չ է *ունակութիւն*, և ո՛չ է անդ պակասութիւն: - 256. Ապա ուրեմն հիւքն այն, նախ ունի զկեալն որ է՛ *ունակութիւն*. և ո՛չ զպակասն որ է մեռելութիւն: - 256. Քսանն**դ**, ըստ *ունակութեան* զօրութեան՝ և ներգործութեան. բայց այլազգաբա՛ր են ի մեզ և յաստուած: - 272. Սոքա ըստ իրին ո՛չ առաւելուն և ո՛չ նուազին. թէպէտ հաղորդեալքն առաւելուն և նուազին ըստ *ունակութեան:* - 444. Դարձեալ ըստ կատարման բաժանի մեղքն յերիս. այսինքն ի գործ մեղացն, և *յունակութիւնն*, ի պատիժն: - 568. Եւ *ունակութիւնն* է՛ ի խորհուրդն և ի կամսն: - 568. Եւ *ունակութիւնն* է՛ մնացեալ միշտ: - 568. Իսկ *ունակութիւն* մեղացն է ի մէնջ և առ մեզ. զի կամաւորապէս կրեցաք և կամաւոր պահեմք ի մեզ: - 569. Դարձեալ զանազանին սոքա ըստ սեռին. զի գործ մեղացն է ի սեռս առնելոյն. և պատիժն ի սեռս կրելոյն. և *ունակութիւն* ի սեռս ունելոյն: - 569. Եւ որպէս ա՛յլ է ունելն և առնելն և կրելն. այսպէս ա՛յլ է *ունակութիւն* մեղաց. և առնել զմեղս. և կրել զպատիժս: - 569. Դարձեալ՝ յոյսն է *ունակութիւն* մտաց յղացեալ յառատութենէն աստուծոյ. ունելով կեանս յաւիտենական՝ բարի արդեամբք: - 574. Արդ յորժամ ասեմք կրկին զսէրն, այսինքն աստուծոյ և ընկերին. կրկինս այս ո՛չ է ըստ *ունակութեանցն*. այլ ըստ ներգործութեանցն: - 575. Զի միով *ունակութեամբ* սիրոյ սիրի աստուած և ընկերն: - 575. Երբեմն ասէ *զունակութիւնն* ըստ առաքելոյ. «սէրն աստուծոյ սփռեալ է ի սիրտս մեր»: - 575. Դարձեալ՝ կատարեալ սէր է, յորժամ է *ունակութեամբ* մեծ. ներքին շարժմամբն ուղիղ. արտաքին գործքն ժիր. արմատովն հաստատեալ. ջերմ եռանդութեամբն խոհեմ. և քաղցրութեամբն մխիթարական: - 576. Այսպէս և պատկեր վերստին ստեղծմանն ի մեզ կայանայ ի միութիւն շնորհին և յերիս *ունակութիւնս:* - 577. Ի յասացելոցս յառաջագոյն այս ինչ հաւաքի, եթէ *ունակութիւնք* մարդկային առաքինութեանց նախկնաբար պատրաստե՛ն ի վարժումն գործնական կենացն. իսկ *ունակութիւնք* պարգևացն պատրաստե՛ն ի վարժումն տեսական կենացն: - 586. Այլ *ունակութիւնք* երանութեանցս պատրաստե՛ն առ կատարելութիւն երկոցունց: - 586. Եւ կրկին է *ունակութիւն* կենաց. այսինքն նախ ունելով յինքեան զկեանս, և ապա բաշխելով այլոց: - 765. Դարձեալ, ամենայն շնորհք առ ո ոք և իցէ՝ բառնի վասն մեղաց. ո՛չ ըստ *ունակութեան* այլ ըստ ներգործութեան կամ նշանակութեան: - 782. Որպէս ծառ մերկացեալ ի պտղոյ՝ այլ ո՛չ ըստ *ունակութեանց.* և նովին *ունակութեամբ* վերստին պտղաբերի ինքն: - 782-783

**ՈՒՆԱՅՆ +** Քսանն**ե**՝ *զունայն* տեղիս լնու: - 207. Քսանն**բ**, *ունա՛յն* էր ծնօտն ի պատերազմին, և լի՛ էր ծարաւոյն: - 423. Եւ որք ծարաւին նմա՝ լիանան. և հակառակքն *ունա՛յն* մերժեցին: - 423. Եթէ ի խելս և ի խորհուրդ ցնորութիւնք և զայրոյք ուռուցանիցեն խխայթեալք. բժշկեսցիս հաւատով. ըստ մարգարէին հիացեալ՝ ստուերս և *ունայնս* դնելով զամենայն անցաւորս: - 770

**ՈՒՆԱՅՆԱԽՈՀ +** Եւ աստ ասէ իրինոս՝ զի թէ յաւիտենական է հուրն, զիա՞րդ վախճան ածեն տանջանաց յաւիտենից *ունայնախոհքն*. թերևս կարծելով թէ ի հուրն մաքրեսցի. զի մի՛ լիցի աշակերտացն ճշմարտութեան խորհիլ և ասել: - 153. Զիա՞րդ վախճան ածեն տանջանաց *ունայնախոհքն*. թէրևս կարծելով թէ ի հուրն մաքրեսցին. զոր մի՛ լիցի աշակերտաց ճշմարտութեանն խորհիլ: - 703

**ՈՒՆԱՅՆԱՆԱՄ +** Զի որ խոնարհեցաւ բանն ի մարմին՝ նո՛յն բարձրացաւ մարմնով. և որ էջն ի ստորինս երկիր, նո՛յն է որ ելն ի վերոյ քան զամենայն երկինս. և որ *ունայնացաւ*՝ նո՛յն ելից զամենայն: - 94. Եւ յորժամ ասեմք *ունայնանալ*, զառաւել զօրութիւնն նշանակէ: - 118

**ՈՒՆԱՅՆԱՊԷՍ +** Երկոտասաներորդ, «մի՛ մերձենար», եցոյց թէ՝ որք յետ յարութեանն և վերանալոյն յերկինս կամին մերձենալ ի մարմին նորա առաքինութեամբ և սրբութեամբ, զախտս հոգւոց ի բա՛ց ընկեսցեն և մի *ունայնապէս* մերձեսցին ի նա: - 518

**ՈՒՆԱՅՆՈՒԹԻՒՆ +** Իսկ թէ մարդ աստուածացեալ, ստէ՛ ուրեմն առաքեալն՝ ի լրութենէն *ունայնութիւն* ասացեալ. զի այս ընդդէմ նորին ի նըւաստութենէ ի բարձրութիւնս ելանէ: - 68. Նոքա ի կիսաէշ նման զտնօրէնութիւնն սուրբ համբաւեն. և կամ առ աչօք և *ունայնութեամբ*. որպէս մանիքեցւոցն, և կամ եւտիքի կարծի: - 81. Այն որ նըւաստացոյց զինքն ի *յունայնութիւն* մարդկան, եղև ի կերպ ծառայի՝ և գործով և կրիւք և նմանութեամբ մարդկան. և կերպարանօք գտաւ մարդ. զի ի վեր էր քան զմարդ՝ և քան զկերպարան մարդոյ: - 93. Ութերորդն *ունայնութեան:* - 195. Իններորդ՝ և զեծցին յընդունայն վաստակոց կռոցն որ ոչ օգտէին. զի *ունայնութիւն* լսի գերաղն: - 402

**ՈՒՆԴ +** Եւ որ խոտէ և *ունդ* և պտուղ՝ է՛ կերակուր պահոց. զի անզգայ է և անշարժ տեղւոջէ ի տեղի և անշունչ: - 510

**ՈՒՆԻՄ +** Նա՛խ, զի ըստ սոցա ոչինչ է զանազանութիւն մշտնջենաւորացն և փոփոխականացն. որք են երկնայինք և երկրաւորք. զի նոքա միա՛յն են ի հարկէ, որք միշտ նոյնպէս *ունին*...: - 8. Զորօրինակ՝ իրն ի ներկայս որ է նիւթ ներընդունակ՝ *ունի* կրկին զօրութիւն...: - 9. Ա՛յսպէս և որ ի հանդերձեալն լինելոցն է՝ *ունի* կրկին զօրութիւն լինելոյ և ո՛չ լինելոյ. և հանդիպմամբ մինն յառաջէ՛ ի նոցանէ և լինի ներգործութեամբ: - 9. Կամ է՛ ի ներգործական պատճառն. որ *ունիցի* խափան ինչ և արգելումն. որպէս մանուկս այս երկար ապրեսցի. կամ թէ մանուկս այս լինի երաժիշտ, թէ ո՛չ լինի խափանումն իմն: - 9-10. Եւ թէ է ի պատճառն ներգործական՝ որ *ունի* արգելումն, է՛ որպէս անէծք, կամ օրհնութիւնք, կամ աղօթք. և մանկանն յերկար ապրիլ. կամ լինիլ երաժիշտ: - 10. Իսկ թէ է ի պատճառն ներընդունական, յայտնի՛ է որ հաւասար *ունի* զգոլն և զո՛չ գոլն որպէս ասացաւ: - 10. Ասեմք առ այս, եթէ՝ ամենայն ինչ որ լինի՝ *ունի* պատճառ...: - 10. Դարձեալ եթէ է՛ հարկ, ապա ո՛չ էր անձնիշխան կամք, այլ արդ՝ եթէ *ունիմք* կամք և է՛ սկիզբն գործոյն ի մեզ և առ մեզ, ապա ուրեմն ո՛չ է հարկ որոյ սկիզբն յայլմէ՛ է: - 11. Դարձեալ՝ *ունիմք* խորհուրդ, և ընտրեմք զառնելիսն, և խոտեմք զոչ առնելիսն. և բազում անգամ խորհելովն հանդիպիմք բարւոյ, և փախչիմք ի չարէ. և խորհուրդն ի հնարաւորա՛ցն է որպէս ասացաւ և ո՛չ ի հարկաւորացն: - 11. Դարձեալ ասեն հակառակօղքն, թէ բոյսք և ծաղիկք և պտուղք երկրի *ունին* զօրութիւն ազդողական. իսկ աստեղք երկնից ո՞չ *ունիցին:* - 12. Ասեմք առ այս թէպէտ *ունին* զօրութիւնս, բայց այլ և այլ կերպիւ...: - 12. Դարձեալ ասեն թէ՝ աստեղք *ունին* բնութիւնս ներհակս միմեանց...: - 12. Ասեմք առ այս, մոլորականքն ո՛չ եթէ զի *ունին* ներհակ շարժումն վասն այն կոչին մոլորականք, կամ պատճառք են չարեաց, այլ զի մեք մոլորիմք ի շարժումն նոցա. զի *ունին* հասարակ շարժումն, և *ունին* յատուկ շարժումն: - 12. Դարձեալ ասեն ըստ փիլիսոփային թէ՝ ո՛չ աստուած՝ և ո՛չ բնութիւնն՝ և ո՛չ արհեստ՝ վայրապար իրս երբեք ստեղծանեն. ապա թէ աստեղքն ո՛չ *ունին* զօրութիւն ազդելոյ՝ վայրապա՛ր են ստեղծեալք յարարչէն: - 13. Երկոտասաներորդ՝ եթէ չարն է յաստուծոյ, կամ գիտէ զչարն չար՝ կամ ո՛չ գիտէ. թէ ո՛չ գիտէ՝ անգիտութիւն *ունի*. և թէ գիտէ՝ գիտութեամբ առնէ զչարն: - 14. Վեշտասաներորդ՝ զի թէ չարն է յաստուծոյ որպէս բարին, և երկուցն սկիզբն է աստուած, և արդ՝ եթէ միևնոյն է սկիզբն երկուցն, անկարելի է ներհակացն ի միասին *ունիլ* մի սկիզբն...: - 14. Եօթնևժերորդ՝ զի թէ չարն և բարին *ունին* մի սկիզբն, որպէս ընդդիմաբաժանեալ տեսակքն զսեռն: - 14. Եւ զի ի հարկէ *ունի* զգոլն բարի՝ անկար է ո՛չ գոլ բարի: - 15. Դարձեալ ասեմք թէ՝ որպէս մեք *ունիմք* կրկին ճանաչումն իրաց, այսինքն զի զոմն ճանաչեմք ի յատուկ տեսակն իւր. և զոմն այլով տեսակաւ: - 17. Նախ եթէ՝ *ունիմք* անձնիշխան կամք. և տէ՛ր եմք գործոց մերոց. առնել և ո՛չ առնել. այլ երբեմն սկիզբն ի մէնջէ, և կատարումն ի նախախնամութիւնն աստուծոյ: - 17. Ասեմք առ այս եթէ կրկին *ունի* դէմս գիրն դպրութեան կենաց: - 18. Հինգերորդ՝ զի խափանեալ լինէր անձնիշխանութիւնն մեր. որ *ունի* զինքն առ երկոսեան կողմն: - 20. Դարձեալ՝ ամենայն ինչ որ յէից է՝ սկիզբն *ունի* և պատճառ. իսկ չարն ո՛չ *ունի* սկիզբն և ո՛չ պատճառ. վասն որոյ ո՛չ է յէից: - 22. Եւ այսպիսի չարս ո՛չ է է. և ո՛չ ի յէսս. և ո՛չ սկիզբն *ունի* կամ պատճառ. և ո՛չ ինքն սկիզբն այլոց կամ պատճառ. ա՛յս է ինքնաչարն: - 22. Եւ յամենևին նըւազիլ կենաց՝ և մահն կորընչի. զի յէութեան *ունի* զգոլն ներհակապէս: - 22. Սկիզբն և պատճառ՝ էութեա՛ն ասեմք *ունիլ:* - 23. Իսկ չարն ոչընչութիւն է. և ո՛չ *ունի* առաջք և վերջք. վասն որոյ անչափ է չարն և անպատճառ, որպես ի վերոյ ցուցաւ: - 23. Զորօրինակ ո՛չ է անզգուշագոյն յառել ի բոլորակս արեգական՝ զի շրտնու և ի սակաւուն զոր *ունի*...: - 24. Երկոտասաներորդ՝ Ընդդէմ նմին երրորդութեանն *ունի:* - 30. Առաջին է՛ անգիտանալ զտկարութիւն և զփոքրկութիւն մարդկային մտաց. կարծեն թէ՝ ամենայնի պարունակօ՛ղ է, և ո՛չ *ունի* սահման: - 31. Նոյնպէս զիմանալի խորհուրդս և զգիտութիւնս զոր տկարանայ միտք, կարողանայ հաւատքն տեսանել. այլ ո՛չ *ունի* հաւատ՝ քան զտեսութիւն մտացն: - 31. Իսկ որ զկամսն է չարացուցեալ, զճանապա՛րհն *ունի* թիւր. և որքան ընթանայ՝ մոլորի: - 33. Երկրորդ՝ զի ամենայն մեղք զերկիւղն աստուծոյ սանձ *ունի*. որով և զղջանայ: - 33. Իսկ պաշտօն կռոցն ո՛չ *ունի* զերկիւղն աստուծոյ: - 33. Արդ՝ կռապաշտն և հերձուածօղն հաւասա՛ր են յամբարիշտ գոլն. զի որպէս շուն դառնայ ի փսխած իւր. այսինքն զի նա ո՛չ *ունէր*, և սա՛ ուրացաւ և դարձաւ անդրէն: - 33. Երկրորդ՝ զի նոքա զղջումն *ունին*. և յա՛յտ է ի հեթանոսաց հաւատացելոց: - 33. Ութերորդ՝ զնա օ՛ձ դարանակալ ասէ ի ճանապարհի. և սոքա առաջին օձին նմանեալ՝ հրապուրեն զբազումս. և արտաքսեն ի դրախտէ եկեղեցւոյ. և թոյնք իժից ի ներքոյ շրթանց *ունելով* և խայթոց՝ զի առորս մերձենան, ի յսկիզբն բանից կամ ի վերջն՝ մահացուցանեն զհոգիս.

երկճղի *ունելով* լեզու նենգաւոր՝ չար և բարի, ծածուկ և յայտնի: - 35. Իններորդ՝ նա՛ ի տաճարին նստի և ուսուցանէ. և սոքա ի ներքս ի յեկեղեցի. զկերպարանս բարեպաշտի *ունելով* արտաքոյ՝ ծածկեալ են գառնենեաւ զգայլենիս: - 35. Թէ դադարեցաւ, ամենայնն հարկիւ է և սկիզբն *ունի:* - 37. Զի և յօհան դամասկացին ասէ հարկ գոլ ամենայն սկսման *ունել* դադարումն...: - 37. Առաջին՝ զի թէ աստուած էր անծնելութիւնն, պա՛րտ էր *ունել* և անծնելութեանն ստեղծուած ինչ. և զի ոչ *ունի*, և ո՛չ ոք ասէ ի հեթանոսացն այսպիսի բան. այլ ամենքն խոստովանին թէ աստուած է աստուած. և ո՛չ անծնելութիւն աստուած: - 38. Դարձեալ՝ զի յիմարութիւն և իմաստութիւն են ի նոյն և ի մի բնութիւն մարդոյն, և ո՛չ ասին հակառակ միմեանց. այլ միապէս *ունի* յիմարն զիմաստնոյն բնութիւն և զսահման: - 38. Դարձեալ՝ ո՛չ կարէ ծնանիլ որդի զհայր՝ թէպէտ *ունի* զհօր բնութիւնն. որպէս դու ծնեալ ի հօրէն քո՝ ո՛չ կարես ծնանիլ զհայր քո և լինիլ հայր հօրն քում. թէպէտ *ունիս* յամենայնի զբնութիւն հօր քոյ: - 38. Թէ բնութեանն է, ապա ասեն որդի ո՛չ *ունի* զնոյն բնութիւնն. զի բնութիւնն մի է աստուծոյ: - 39. Ով արիանոսք՝ զի թէ որպէս զմեզ զորդի շնորհօք ասէք և արարած, մեք զի եմք շնորհօք որդիք՝ *ունիմք* ընդ մեզ և ընդ հայր շաղկապ. իբր թէ զլար զհոգին սուրբ: - 39. Այս է մեկնութիւնն թէ՝ հաւասարն աստուծոյ՝ յափշտակութիւն և զրկումն չհամարէր իւր զծառայի կերպարանս առնուլ. զի ո՛չ *ունէր* յայլմէ կասկած խլելոյ զփառսն. զի ի՛ւրն է սեպհական: - 39. Դարձեալ անդրանիկ է ըստ շնորհաց հոգւոյն զոր ընկալաւ ո՛չ վասն կարօտութեան՝ զի լիապէս *ունէր* այլ զի գլուխ էր մեր՝ ընկալաւ՝ զի յանդամս իւր սփռեսցէ: - 41. Չորրորդ՝ զի չարչարանօքն իւրովք փորձեսցէ՛ զհնազանդութիւնս մեր. այսինքն զկսկիծ և զծանրութիւն չարչարանաց մերոց. որպէս թէ *ունիցի* գիտել իւրովք զմերս և ողորմիլ մեզ: - 43. Եւ այս ոչ էութիւն և չարութիւն՝ առ մեզ կարէ՛ երևիլ, զի մասա՛մբ *ունիմք* զկարողութիւն և ո՛չ կատարեալ: - 44. Բայց և այս բան՝ հանգոյն առաջնո՛յն է իմանալ. որք միտս *ունին* և ո՛չ նուազին: - 45. Եւ պատաճառն է այս. զի թէպէտ մի է բնութիւն ծնողաց և ծնիցելոց, բայց ոչ *ունին* զմի կամս. զի հատեալ բաժանեցաւ որդին ի հօրէն: - 45. Թուի թէ նուազ է քան զհայր. զի ոչ *ունէր* և տւաւ: - 46. Ասեմք զայս ըստ մարդկութեանն. զի ո՛չ *ունէր* բնութիւնս մեր. այլ յորժամ միացաւ ընդ բանին և եղև որպէս առօղն և առեալն իշխան և տէր ամենեցուն: - 46. Զի որպէս *ունի* զէութիւնն ի գոյութենէ հօր, այսպէս և զիշխանութիւնն յիշխանութենէ հօր. ըստ այսմ և զայլն իմասցիս զառնուլն: - 46. Վասն այն տէրն ընկրկեաց զօրինականն թէ միայն ծայրագոյն բարի է՛ աստուած. և ի մարդկանէ ո՛չ ոք *ունի* զայս: - 47. Այսպէս և քրիստոս ի հօրէ՛ *ունէր* զիշխանութիւնն: - 50. Ապա՛ տամք զիւրն օրինակ. զի *ունի* զլոյսն ծնունդ՝ և զջերմութիւնն բղխումն: - 53. Եւ ապա՛ զադամ, զի Եւ ապա՛ զադամ, զի *ունի* զսէթ ծնունդ՝ և զևա ո՛չ ծնունդ. այլ հատումն ի նոյն բնութենէ. և ընդ միով սահմանաւ գոլ ծնողին և հատմանն և ծնիցելոյն: - 53. ...զսէթ ծնունդ՝ և զևա ո՛չ ծնունդ. այլ հատումն ի նոյն բնութենէ. և ընդ միով սահմանաւ գոլ ծնողին և հատմանն և ծնիցելոյն: - 53. Վեցերորդ՝ որ փոխին այլք յայլոց բնութենէ վասն առատութեան բնութեանն. որպէս կարպասածին ճճին *ունի* սա ծնունդ սերմամբ իւր զնմանն. և *ունի* ելումն զկերպասն: - 53. Զի *ունին* ծնունդ ըզնմանն իւրեանց, և *ունին* զելումն բաց ի ծննդենէն. որպէս ի ձիոյն ձիակապիկն. և յարջառոյն մեղու. և յայլոցն որդն: - 53. Եւ այսքան է միաւորթիւնն, զի որքան մին ինքն առ ինքն *ունի* զբնութիւնն և զզօրութիւնն և զկամքն, նոյնքան և *ունի* առ երկուսն. թէ զհայր իմանաս՝ թէ զորդի՝ թէ զհոգին: - 54. Նաև բնական քննութեամբ. զի յորժամ ասես՝ մի և մի՝ եղև երկու. և այժմ *ունի* զերկուին բնութիւն: - 55. Իսկ յորժամ քակես՝ լինի մի և մի. քակեցաւ այժմ ի յառաջին բնութենէն ըստ քեզ՝ և *ունի* դեռևս զնոյն համարն: - 55. Այս ո՛չ թէ *ունիլ* զկիրս նշանակէ յաստուած, այլ զպատիժ վասն գործոյ յանցաւորացն: - 60. Հինգերորդ ասեն, եթէ հոգին սուրբ առնու զբնութիւնն ի հօրէ՝ լինի որդի նորին. զի այն կոչի որդի որ *ունի* զբնութիւնն ի հօրէ ի նոյն տեսակէ: - 60. Իսկ թէ ո՛չ *ունի* զբնութիւնն հօր աստուծոյ՝ ո՛չ ուրեմն է աստուած: - 60. Պատասխանեմք եթէ՝ թէպէտ հոգին *ունի* զբնութիւնն ի հօրէ՝ սակայն ո՛չ ծննդեամբ որպէս որդի, այլ բղխմամբ. որպէս շունչն և բանն *ունին* զէութիւնն հոգւոյն այլ և այլ կերպիւ. և որպէս ադամ յառաջ էած յինքենէ զսէթ և զևա. զմինն ծնունդ և զմիւսն ո՛չ ծնունդ. և *ունին* երեքեանն զմի և զնոյն բնութիւն մարդոյ: - 60. Ութերորդին ասեմք՝ եթէ օրինակաւ խօսից իմանալ զհոգին սուրբ՝ *ունի* ինչ ուղղութիւն և *ունի* ինչ թիւրութիւն: - 62. Ա՛րդ՝ ո՛չ ելանէ ի հայր. զի ո՛չ *ունի* հայր իր ինչ ի յորդոյ: - 63. Այլ զի ամենայն ինչ զոր *ունի* հայր՝ որդւոյ է. և քրիստոս աստուծոյ զօրութիւն և իմաստութիւն: - 65. Երկրորդ՝ խօսքն *ունի* զիմաստ բանին և զմտացն. և հոգին սուրբ զիմաստութիւն հօր և որդւոյ: - 66. Եւ թէ և նա՛ է բնակարան, ապա ո՛չ ինչ *ունի* քան զմեզ առաւել: - 66. Երկրորդ՝ զի թէ նա՛ շնորհիւ *ունի* զորդիութիւնն և ո՛չ էապէս, ապա ուրեմն մասամբ և ըստ կարգի *ունի*՝ և ո՛չ զլրումն աստուածութեանն. զի շնորհն է մասնաւո՛ր պարգև: - 66. Իսկ թէ և նա

արտաքուստ *ունի* զորդիութիւն և զայլսն, զոյ կասկած երբեմն ի բաց մերժել զոր էառն: - 66. Իսկ թէ և նա շնորհիւ *ունի* զորդիութիւնն, զիա՛րդ կարէ տալ ումեք զոր հազիւն հարստացաւ: - 67. Եւ թէ զամենայն արտաքուստ և եկամուտ *ունի*, զիա՞րդ ասէ զինքն ճշմարիտ գոլ: - 67. Տասներորդ՝ զի թէ նա վասն բնակութեանն երկրպագելի է և աստուած, ո՛չ միայն եղիցի նա՛ աստուած, այլև ամենայն երկնաւորք և երկրաւորքս. որք բնակեալ *ունին* զաստուած և կոչին անուամբ աստուածք: - 67. Իսկ թէ ըստ ինքեան զմարդկայինն, զիա՞րդ *ունէր* զփառս յառաջ քան զլինիլն աշխարհի. զի ինքն ի ժամանակի եղև: - 69. Զի թէ բանին, աննման ինչ խորհիս. զի նա՛ բնութեամբ *ունի*. մանաւանդ եղեր արհոսեան: - 70. Զի ո՛չ էապէս՝ այլ արտաքո՛ւստ և եկամուտ *ունի* զաստուածն անուն: - 70. Երկոտասաներորդ՝ այն որ սկիզբն յաշխարհի *ունի*՝ և ո՛չ է յառաջ քան զլինիլն իւր յաշխարհի՝ ո՛չ ասի գալ յաշխարհս: - 73. Այլ մարմին և հոգին քրիստոսի զսկիզբն յաշխարհի *ունին*. այլ վասն միաւորեալ մարմնոյն ասէ բանն աստուած...: - 73. Իննևժերորդ՝ թէպէտ մարդիկ ոմանք կոչին տէր վասն *ունելոյ* իշխանութիւն ինչ, այլ տէր միայն աստուած է...: - 74. Այլ զորօրինակ՝ ոմն անհատ *ունի* զհասարակ զբնութիւնն լիով յիւրում առանձնութեանն: - 74. Ա՛րդ՝ դու առանձնութեամբ քո որ *ունիս* զհասարակ բնութիւնդ՝ ծանր այսօր ի մօրէ՛ կամ մեռար յաշխարհէ՛ և ո՛չ հասարակ մարդկութիւնս: - 74. Նոյնպէս իմա՛ և զաստուածն բան. *ունելով* զնոյն բնութիւն յառանձնութեան իւրում...: - 74. Եւ այն զի ո՛չ ինչ *ունի* մինն նըւազ քան զերկուքն, և ո՛չ երկուքն առաւել քան զմին, բաց յառանձնութեանցն: - 74. Որպէս մի էութիւն է խնծորն. և *ունի* երեք յատկութիւնս որակաց. զհամն, և զհոտն, և զգոյնն ըստ ծևոյն: - 74. Եւ որպէս հուրն *ունի* յէութեան իւրում՝ լոյս և ջերմութիւն: - 75. Ա՛րդ՝ որպէս կարծեն ինքեանք զէն մեծ *ունիլ* առ երկոսին կողմանս, կամ հարկիւ անկանիլ ի նեստորին բնութիւն և բնութիւն, և կամ ըստ եւտիքեայ շփոթել զբնութիւնսն: - 75. Յորոյ փախչելով մեր և յերկուց ծայրիցն, զառ ի մէջն *ունելով* ուղղապէս ընթացք, ասեմք եթէ քրիստոս ըստ անշփոթ միաւորութեանն՝ աստուածային բնութեամբն մարդ է, և մարդկային բնութեամբն աստուած է: - 75. Որպէս ասեմք զաստուածածին կոյսն մայր և կոյս. ո՛չ **բ** բնութիւն կամ **բ** անձն. որ է մասամբ և բաժանմամբ. այլ զմի և զնոյն. *ունելով* զայս և զայն յատկութիւն: - 77. Դարձեալ՝ որպէս բացբարձութեամբն ասի հայր աստուած՝ անսկիզբն և անվախճան. *ունելով* զայս և զայն ի պարզ միութեան իւրում. և ո՛չ է **բ** անձն կամ **բ** բնութիւն: - 77. Դարձեալ՝ ըստ նոյն սարասի՝ բանն աստուած *ունի* ծնունդ ի հօրէ նախ քան զյաւիտեանս. և *ունի* ծնունդ ի մօրէ ի յետին ժամանակիս. և ո՛չ ասի երկածին. այլ՝ միշտ միածին. այսպէս նոյն բանն *ունի* զբնութիւն աստուծոյ ի հօրէ. *ունի* և զբնութիւն մարդոյ ի մօրէ՛. և ո՛չ ասի **բ** բնութիւն. այլ մի բնութիւն վասն միաւորութեանն: - 77. Զի՞նչ է ասելն աստուածաբանին, այլ և այլ ըստ նմին Երրորդութեանն *ունի*. քանզի՝ անդ այլ ոմն է և այլ. զի մի՛ զդէմսն խառնակիցեմք: - 80. Զի ո՛չ երբեք՝ ոչ բանիւ՝ ո՛չ իմացմամբ՝ և ո՛չ իրօք բաժանումն *ունելով:* - 83. Միաւորութիւնն քրիստոսի *ունի* սկիզբն. և մէջ. և կատարումն: - 84. Երկրորդ՝ զի յընդդիմաբաժանեալ տեսակս՝ ո՛չ *ունի* պէտս մինն միւսոյն առ ի բաղկանալ: - 87. Երրորդ՝ զի բաժանեալ անհատքն *ունին* զնոյն բնութիւն տեսակին: - 88. Այսպէս և նեստոր մի ասէր զքրիստոս ո՛չ ըստ իրին միութեան, այլ ըստ անուանն համաձայնութեան. որպէս հոմանուն ձայն մի *ունելով* զկոչմունս, և զանազան բնութիւնս ի ներքոյ մի անուանն: - 90. Ո՛չ ինչ *ունիմ* ասել առ այս. այլ՝ զուղիղ պատասխանին խնդրեմ: - 92. Երկրորդ՝ ասեմք եթէ ամենայն մասունք է՛ ի գոյացութենէ բոլորին. և որ *ունի* զնոյն գոյացութիւն, *ունի* զնոյն կոչումն: - 92. Որպէս ձեռն *ունի* զգոյացութիւն բոլոր մարմնոյն. և կոչի մարմինն առ բոլորն քրիստոս: - 92. Երրորդ՝ զի ո՛չ է նման առ մեզ և առ նա մասն և բոլորն. զի թէպէտ մասունք մարդոյ՝ ո՛չ *ունին* զկոչմունս բոլորին, սակայն մասունք մարմնոյն քրիստոսի՝ կոչին և *ունին* զբոլորին էութիւն: - 92. Իսկ եթէ ի դէմս մարդոյն, ո՞րպէս *ունէր* զփառս յաւիտենից այն որ այսօր ի կուսէն ծնաւ: - 94. Ա՛րդ՝ եթէ քրիստոս տգէտ է և նոքա զմիտս տգիտի *ունէին*. ո՞րպէս լինէին հազարապետք աստուծոյ խորհրդոցն. կամ հազարապետքն առաւել են քան զխորհուրդն աստուծոյ: - 96. Ապա ուրեմն հոգին քրիստոսի *ունի* զամենայն ճանաչումն լցեալ հոգւովն սրբով: - 97. Ա՛րդ՝ տգէտն ո՛չ *ունի* զբոլոր զամենայն իմաստութիւն և զգիտութիւնն գանձեալ: - 98. Քսանևմիերորդ՝ արդ՝ եթէ քրիստոս տգէտ *ունէր* միտս, և տկար հոգի, և ապականացու մարմին և եկն քրիստոս զի բարձցէ զտկարութիւնս մեր. և լուսաւորեսցէ որ նստէաք ի խաւարի. և նա՛ է գառն աստուծոյ որ բառնայ զմեղս աշխարհի և զապականութիւն: - 99. Ապա ուրեմն բարձօղն տգիտութեանց ո՛չ *ունէր* տգիտութիւն. և բարձօղն մեղաց և ապականութեանց՝ ո՛չ մեղք և ո՛չ ապականութիւն: - 99. Քսաներորդ չորրորդ՝ ասեն վարդապետք վասն հրեշտակաց թէ *ունին* առաւօտեան և երեկոյին ճանաչումն: - 99. Յորժամ ինքն ո՛չ *ունի* յաւիտենից կեանք, այլոց ո՞րպէս տայ: - 99. Այլ դատաւորին պարտէ *ունիլ* անհուն գիտութիւն. զի

քննել կարասցէ զամենայն բնութիւն հրեշտակաց և մարդկան. և զամենայն գործս եղեալս և զլինելոցն. զխորհուրդս և զբանս բոլորից. զառաջինն՝ զմիջինն՝ և վերջինն: - 100. Ապա ուրեմն հոգին քրիստոսի *ունի* անհուն գիտութիւն. զի ճանաչէ զանհուն գիտացեալս: - 100. Արդ՝ որպէս օդ լուսաւորեալ՝ ո՛չ *ունի* մասն խաւարի, Նո՛յնպէս հոգին քրիստոսի միաւորեալ ի բանն աստուած՝ ո՛չ *ունի* մասն տգիտութեան: - 100. Այսպէս մարմինն քրիստոսի միաւորեալ ընդ բանն աստուած՝ *ունի* զկարողութիւն և զաստուածութիւն բանին...: - 100. Վասն թէ բան *ունի* աստուած: - 101. Դարձեալ՝ ա՛յն է հասարակն՝ որ մի՛ է երիցն. և երկուքն ո՛չ աւելի. և մինն ո՛չ *ունի* պակաս: - 104. Վասն զի հայր ո՛չ *ունի* հայր. այլ *ունի* որդի և հոգի: - 105. Որդի ո՛չ *ունի* որդի. այլ *ունի* հայր և հոգի. զի հոգի քրիստոսի ասեմք: - 105. Հոգին ո՛չ *ունի* որդի և ո՛չ հոգի. այլ պատճառ զհայր: - 105. Նախ՝ զի գ թիւն կատարեալ է. զի *ունի* սկիզբն. և մէջ և կատարումն: - 107. Չորրորդ՝ զի երեքն զնոյն բնութիւն *ունի* զերիցն. նոյնպէս Երրորդութիւնն սուրբ նո՛յն է բնութեամբ: - 107. Զի ո՛չ է որպէս պետրոս՝ և պօղոս՝ և յօհաննէս՝ երեք մարդ և մի բնութիւն. այլ մի է անհատութեամբ. *ունելով* երիս յատկութիւնս դիմաց: - 107. Երրորդ՝ Երրորդութիւնն ցուցանէ երիցն զմի հասարակ բնութիւն. որպէս ասեմք մարդ և մարդկութիւն. ձի և ձիութիւն. ընդդէմ արիոսի որ ասէ՝ երեք թիւն *ունի* երեք բնութիւն, ասեմք երից անձանցն մի բնութիւն: - 108. Երկրորդ՝ յերեք թիւն մինն պակաս *ունի* քան զերկուքն. և երկուքն աւելի քան զմինն: - 108. Իսկ ի սուրբ Երրորդութիւնն՝ մինն պակաս *չունի* քան զերկուքն. և ո՛չ երկուքն աւելի քան զմինն. զի հայր *ունի* զամենայն լիութիւն որդւոյ և հոգւոյ: - 108. Այլ ի դէմս պատճառաւորացն *ունի* զանազանութիւն: - 110. Երրորդ՝ ասի ոչէ՝ նիւթն անորակ. որ ո՛չ *ունի* ձև և ո՛չ *ունի* տեսակ և ո՛չ որակ: - 111. Երկրորդ՝ ասի անեղ այն՝ որ ո՛չէ եղեալ ի կատարումն. զի *ունի* սկիզբն՝ և կարօ՛տ է կատարման: - 113. Այլ արդ՝ որդի և հոգի ըստ որում ի պատճառէն՝ սկիզբն *ունին* զհայր. և ըստ որում՝ նախ քան զյաւիտեանս՝ անսկիզբն են ընդ հօր: - 114. Զի աստուած պարագրէ զյաւիտեանն. որպէս յաւիտեանն զժամանակն. և ասի աստուած մշտնջենաւոր. զի ո՛չ *ունի* վախճան: - 114. Նմանապէս և յաւիտենական. զի ո՛չ *ունի* սկիզբն և ո՛չ վախճան: - 114. Ասին և մշտնջենաւորք. զի *ունին* սկիզբն, այլ ո՛չ վախճան: - 114. Հին աւուրց որ է ծերն՝ չորս յատկութիւն *ունի:* - 114. Նախ՝ որ ոչ սկիզբն *ունի* և ո՛չ կատարած: - 115. Երկրորդ՝ որ ո՛չ սկիզբն *ունի*, այլ կատարած: - 115. Երրորդ՝ որ սկիզբն *ունի*, այլ ո՛չ կատարած: - 115. Չորրորդ՝ որ սկիզբն *ունի* և կատարած. և թէպէտ հասարակ սոքա յաւիտեանք կոչին, այլ *ունին* յատուկ անունս: - 115. Յաւիտեանս Յաւիտենից. որ է՛ սկզբնական և յարաձգական. զի նա պարունակէ զերեք յաւիտեանն. որ ո՛չ սկիզբն *ունի* և ո՛չ կատարած: - 116. Եւ գիտելի է՝ զի աստուած կոչի յաւիտեան անսկիզբն և անվախճան. և է՛ պատճառ պարունակողացն յաւիտենին. որ ո՛չ սկիզբն *ունի* և ո՛չ կատարած: - 116. Այլ զայս ստեղծեալ յաւիտեանս ասեմք ոչ սկիզբն *ունիլ* և ո՛չ կատարած. զի պարունակօղ է ա՛յլ յաւիտենից որք *ունին* սկիզբն կամ կատարած. այլ ինքն պարունակի յանստեղծ յաւիտենէն որ է՛ աստուած: - 116. Նախ՝ զի յաւիտեանն ո՛չ *ունի* սկիզբն և ո՛չ վախճան: - 116. Եւ միշտն *ունի* սկիզբն, այլ ո՛չ վախճան: - 116. Եւ ժամանակն *ունի* սկիզբն և վախճան: - 116. Երրորդ՝ յաւիտեանն ո՛չ *ունի* մասն. այլ բոլորն համանգամայն և կատարեալ. այսպէս և միշտն: - 116. Իսկ ժամանակն գ մասն *ունի*. այսինքն անցեալ՝ ներկայ՝ և ապագայ: - 116. Յաւիտենական է՝ որ ո՛չ սկիզբն *ունի*, և ո՛չ կատարած. որպէս աստուած: - 116. Եւ մշտնջենաւոր՝ որ *ունի* սկիզբն՝ և ո՛չ կատարած. որպէս հրեշտակք. և հոգի մարդոյ: - 116. Եւ ժամանակեայ՝ որ *ունի* սկիզբն և կատարած. որպէս զգայականք. և տնկականք: - 116-117. Նախ՝ ի աստուած ինքնակեա՛նք է. զի յինքենէ՛ *ունի:* - 117. Իսկ հրեշտակք յայլմէ *ունին*. այսինքն յաստուծոյ: - 117. Երկրորդ՝ զի տնկականն *ունի* զկերակրիլն՝ զաճիլն՝ և զծնանիլն: - 117. Իսկ զգայականն *ունելով* զայսորիկ առաւելու զզգալն և զշարժիլն: - 117. Միտք մեր բ պակասութիւն *ունի*. այսինքն զմոռացումն և զտգիտութիւն. զի զանցեալն մոռանայ. և զապագայն ո՛չ գիտէ: - 117. Ո՞րպէս տեսանէ աստուած զէքս. զի զգայութիւն ո՛չ *ունի*. որպէս մեք ներքին զգայութեամբ զիմանալիս՝ և արտաքին զգայութեամբ զերևելիս տեսանեմք: - 118. Որպէս յորժամ ասեմք անբան և յիմարութիւն, գերագոյն *ունիլ* զբան և զիմաստութիւն քան զմերս: - 118. Դարձեալ՝ տեսանէ աստուած ըստ պատճառի. զի ամենեցուն է պատճառ. և ըստ պարունակութեան, որ զամենայն առ ինքն *ունի*. և ըստ կատարման, որ ամենեցուն է վաղճան և կատարումն: - 118. Զի աստուած ո՛չ արտաքոյ ինքեան *ունի* զտեսութիւնն. այլ ի ներքս միայն. զի զինքն ի յինքն տեսանէ՝ և զայլս ի յինքն. ապա զեղեալքս ի յարացոյցն որ է տեսութիւնն աստուծոյ որպէս ասացաք: -118-119. Հրեշտակք ո՞րպէս *ունին* տեսութիւն: - 119. Այլ այսու զանազանին, զի աստուած ինքնիմա՛ստ *ունի* զտեսութիւնն. այսինքն յինքենէ՛ է անսկիզբն և անվախճան: - 120. Իսկ հրեշտակք ո՛չ յինքենէ՛, այլ յաստուծոյ սկսեալ և

անվախճան. զի առանց մոռացութեան *ունին:* - 120. Ա՛րդ՝ բնականն *ունի* գ յատկութիւն: - 120. Նոյն պարզ և աստուածային բանն է ճշմարտութիւնն. որ ո՛չ *ունի* ինչ ստութիւն և հակառակ իւր: - 121. Այսու հաւասարին, զի երկոքինն առ ճշմարիտն *ունին* զդիտումն: - 121. Երրորդ՝ դեղին լոյսն ստւեր *ունի*՝ և սպիտակն ո՛չ: - 125. Նախ՝ զի որպէս արեգակն *ունի* մշտնջենաւոր զլոյսն՝ և առնէ ի վերոյ երկրի տիւ և գիշեր: - 125. Այսպէս վասն գերազանց սիրոյն զոր *ունի* աստուած առ էսս՝ զարմանալ ասի. այսինքն արտաքս ելանել՝ թափիլ և հեղուլ ի յէսս. և միաւորիլ անփոխաբուն բնութեամբ: - 127. Դարձեալ՝ բնականապէս ամենայն նախանձ *ունի* սիրել զինքն, և ատել զայլս: - 128. Իսկ նախանձն աստուծոյ պարզապէս միայն *ունի* սիրել և զայլս և ո՛չ ատել. զի նախանձն աստուծոյ՝ սիրոյ առաւելութիւնն է. որպէս բոցն հրոյ: - 128. Եօթներորդ՝ սկիզբն և վախճան գիտութեամբն ասի. զի զսկիզբն էից և զկատարածն ի ներքոյ իւր ամենահաս գիտութեանն բովանդակեալ *ունի:* - 129-130. Չորրորդ՝ զի թէ պատւական նիւթով երևէին որպէս արեգակն՝ հուր՝ ոսկի՝ և ակն. գիտէաք թէ զնոյն բնութիւն *ունին*, և ո՛չ այլ ինչ գերիվերոյ: - 132. Վեցերորդ՝ զի թէպէտ անա՛րգ են՝ *ունին* զբարի գոլն ստեղծմամբ և նախախնամութեամբ: - 132. Ա՛յսպէս, զի սոքա *ունին* սրտմտութիւն և ցանկութիւն: - 132. Եւ նոքա ըստ առաւելութեան. զի *ունին* զիմացականն բան և զգայութիւն: - 132. Երրորդ՝ զի վերինքն զներքնոցն *ունին* բոլորապէս զամենայն. և ներքինքն զվերնոցն մասնաբար ըստ չափու իւրեանց. և քահանայապետն *ունի* զաստիճան ներքնոցն բոլորապէս. և ներքինք զվերին քահանայապետիցն մասնապէս: - 136. Ապա յա՛յտ է զի ա՛յլ է կարգ շնորհականին, և այլ է կարգ բնականին. զի բնականք ներքինք զվերնոցն բոլորապէս *ունին* և կոչին. այլ ո՛չ անդրադարձեալ. որպէս անհատն զտեսակն և զսեռն բոլորապէս *ունի*...: - 136. Իսկ ընդդէմ այսմ՝ քահանայապետն որ վերին է՝ *ունի* զքահանային և կոչի: - 136. Իսկ քահանայն կամ սարկաւագն ո՛չ *ունի* զվերնոցն և ո՛չ կոչի: - 136. Ա՛յս է պատճառն, զի որ առաջին է և վերին՝ *ունի* զերկրորդն և զներքինն: - 136. Ասեմք նախ՝ եթէ որպէս ասացաք ներքինք զվերնոցն մասնաւորապէս *ունին*. որպէս վերինք զներքնոցն բոլորաբա՛ր: - 137. Նախ՝ զի ընդհանուր դասք և իւրաքանչիւր անհատք *ունին* էութիւն՝ զօրութիւն՝ և ներգործութիւն. այսինքն ըստ որում էացեալքեն, և կարողութիւն *ունին*, և ներգործեն: - 137. Երկրորդ՝ զի առանձնաւորութիւն է զօրութեանց, այսինքն արիութիւն յաստուածայինսն և անշարժ գոլն և զօրացուցանելն. և զայս առ հասարակ *ունին*. վասն որոյ առ հասարակ զօրութիւնք կոչին: - 137. Եւ արդ որպէս ցուցաւ՝ վերինք մինչ ի միջինս *ունին* բոլորապէս զներքնոցն. և ներքինքն մասնաւորաբար մինչ ի զօրութիւնսն՝ յաղագս առ հասարակ զօրութիւնք կոչին: - 137. Երրորդ՝ ամենեքեան զօրութիւնք կոչին. զի *ունին* զօրութիւն էութիւն և ներգործութիւն: - 137. Երրորդ՝ զի աստուած անսկզբնապէս և բնութեամբ *ունի:* - 138. Եւ զբարւոյ ցանկութիւնս *ունին:* - 140. Երկրորդ՝ զի զամենեսեան միահամուռ *ունի* և պահէ՛. և այսպէս գիտէ զորս *ունի* առ ինքն և պահէ՛: - 141. Երրորդ՝ զի ամենեցուն կատարումն է և բովանդակութիւն. ապա այսպէս գիտէ զամենեսեան. ըստ որում սկիզբն է և կատարումն, յամենայնսն թափանցեալ է և *ունի:* - 141-142. Ամենայն իր *ունի* կայումն և *ունի* շարժումն: - 142. Բոլո՛ր է՝ յորժամ զիմացումն մտաց յամենայն եղելոց առ ինքն ժողովէ՛, և այնպէս բոլորովիմբ յաստուած հպի և միանայ. և ա՛յս է ի բոլոր սրտէ և ի բոլոր մտաց սիրել զաստուած. և զայս *ունին* ընտրեալքն մարգարէք և առաքեալք: - 142. Զի *ունի* զգայարանք. այսինքն տեսանելի՛ք՝ լսելիք՝ և այլն: - 143. Իսկ հրեշտակք զի ո՛չ *ունին* զգայարանք՝ ո՛չ կարօտին գրոց և բանից: - 143. Իսկ մարդս զի յերկուց է գոյացեալ՝ *ունի* զգութ բնական՝ և զսէրն աստուածական: - 144. Դարձեալ *ունին* հրեշտակք առաւօտեան և երեկոյին ճանաչումն. այսինքն զի տեսանելով. զբանն աստուած՝ կոչի առաւօտու ճանաչումն: - 145. Եւ գործոյն որ *ունին* կրթել զմարդիկ՝ յարմարի օդն որ է՛ մերձ առ մեզ փորձելոյ զմեզ. այլ ո՛չ ի լոյս. զի մի ուրախասցին: - 146. Զի զոր ինչ բնութեամբ *ունէին* դևք՝ եթող ի նոսա աստուած յետ յանցմանն. և զոր ինչ երանութեամբ ստանալոց էին՝ զրկեցան: - 147. Ո՛չ են յաւերժահասունք որպէս ոմանք կարծեն թէ յերկուց տարերց այսինքն ի հրոյ և յօդոյ են բանական կենդանիք և *ունին* ծնունդ և մահ...: - 150. Մի է աշխարհ. և *չունի* զգայարանք. և թէ ուր էր աստուած. և ուր էր աշխարհ. և յի՞նչ պատճառի ստեղծաւ: - 154. Զո՞ր ձև *ունի* երկինք. և քանի՞ է: - 154. Թէ բնական զգեստ և զէն *ունին* կենդանիք, և մարդս ոչ. և ճանճք և այլքն: - 155. Տասներորդ՝ գործ բութեան ո՛չ ինչ *ունի* մեղք. զի ըստ բնութեան գործելով ոչ ոք մեղանչէ ասէ փիլիսոփայն. իսկ կամացն գործ՝ մեղանչական է. վասն որոյ կամաւորին գով և պարսաւ հետևի: - 156. Չորրորդ՝ մարդս պակասութիւն *ունի*. իսկ աստուած առանց ամենայն պակասութեան է: - 156. Եօթներորդ՝ թոյլ տուեալ լինի և ոմանց անկանիլ ի մեղս ինչ. զի ի հպարտութենէն զոր *ունէր* վասն առաքինութեան՝ խոնարհեսցի և անկցի առաջի տեառն

խոստովանութեամբ. և ընկալցի զթողութիւն. որ նախ համասե՛ռ էր սատանայի: - 159. Զի ի հարկէ՛ էակ է, որ զգոլն միայն *ունի*. իսկ զչգոլն ո՛չ *ունի*. ապա ուրեմն անփոփո՛խ է էութեամբ: - 162. Եւ զի օրինակն *ունի* նմանութիւն և *ունի* աննմանութիւն. վասն որոյ կոչի օրինակ: - 163. Ուստի յա՛յտ է զի կարելին *ունի* զգոլն և զչգոլն. և անկարն զմինն. կամ զգոլն կամ զչգոլն: - 165. Այլ արդ՝ կուսութիւնն է ի կարելոյն որ *ունի* զգոլն և զչգոլն. իսկ ապականութիւնն է յանկարելւոյն. որ *ունի* զմինն և ո՛չ կարէ հակադարձիլ առ միւսն: - 165. Երրորդ՝ զի ի հարկէ՛ էակ է աստուած. և հարկն զմինն *ունի* ի հակադրութեանց. այսինքն կամ զգոլն կամ զչգոլն: - 168. Նախ՝ զի զգոլն իւրեանց *ունէին* ի նախագաղափար տեսութիւնն աստուծոյ. թէպէտ յետո՛յ ընկալան գոյացութիւնս յինքեանս. որպէս տաճար ի միտս շինողին: - 170. Այսպէս առինչք են արարածք արարչին. և առինչքն համանգամայն *ունին* զգոլն: - 170. Իսկ պատահումն ի յայլս *ունի* զէութիւնն, և կարօ՛տ է այլոյ ի գոլն. որպէս գոյն ի մարմնի: - 170. Եւ զի յաստուած ո՛չ գոյ առաւել և նուազ. վասն որոյ միայն գոյացութիւն է և ո՛չ *ունի* պատահումն: - 171. Այլ կոչի է, ըստ այնմ որ միշտ է՛, ո՛չ *ունելով* սկիզբն և ո՛չ վախճան. այլ ինքն է ամենեցուն սկիզբն և վախճան. որպէս ասէր՝ «ես եմ ալֆա և օմեգա»: - 171. Իսկ Երբ ո՛չ ասի աստուծոյ. զի անժամանա՛կ է և ո՛չ *ունի* փոփոխումն. այլ ասի յաւիտենական. ըստ որում բոլորն համանգամա՛յն է և կատարեալ. զի ոչ կարօտի սկզբան և վախճանի. որպէս ժամանակն. և ո՛չ միայն սկզբան որպէս մշտնջենաւորն. այլ անսկիզբն է և անվախճան. վասն որոյ կոչի յաւիտենական: - 172. Իսկ *Ունիլ* ասի, իմաստութիւն և բան *ունի* և զարարածս. և *ունի* յատկութիւն որով տարորոշի յարարածոց: - 172. Մին է՝ զի միշտ ոչ ինչ է. զի ոչ զօրութեամբ և ո՛չ ներգործութեամբ *ունի* զգոլն. և յայս ոչ էակէս ոչ ինչ լինի: - 173. Եւ դարձեալ է՛ ոչ էակ՝ որ թէպէտ ներգործութեամբ ո՛չ է, սակայն զօրութեամբ *ունի* զգոլն. և յայսպիսի յոչնչէ եղեն արարածք ամենայն. ապա ուրեմն յայտնի է հարցումնդ: - 173. Եւ այսպիսի էակքս կրկին *ունին* զօրութիւն. լինելոյ և ո՛չ լինելոյ. գոլոյ և ո՛չ գոլոյ. և այլն: - 173. Իսկ մշտնջենաւոր էակն միայն մին *ունի* զօրութիւն որ է առինքն ներգործութեամբ. որպէս հրոյ ջեռուցանելն. և արեգական լոյսն. և հրեշտակին անապականութիւնն: - 173. Այլ գոյացութիւնն է *ունօղ* բնութեանն, կամ ներքոյ կացեալ բնութեան որպէս մարդ: - 174. Եւ անձն *ունիլ* ասի միայն ի պատիւ բանական բնութեանն: - 174. Բաղկացական է, որ ընդ մարմնոյ մասնկանցն գոյանայ ի ներս և ի դուրս. վերոյ և ներքոյ շուրջանակի. զի իւրաքանչիւր մասունք ի տեղին *ունին* զդրութիւնն. և կայացեալ ի բոլորն: - 174. Իսկ աստուած արտաքոյ է սոցա. զի ո՛չ է սահմանեալ և ո՛չ պարագրեալ և ո՛չ *կալեալ* յիմեքէ. ո՛չ իմացմամբ և ո՛չ տեղեաւ կամ մարմնով: - 174. Նախ՝ զի ո՛չ *ունի* քանակ, որակ, ձև, և այլքն, որ նիւթո՛յ են յատկականք: - 175. Այլ թէպէտ աննիւթ է աստուած՝ ո՛չ է անկարգ զնիւթականքս յառաջ ածել ըստ այսմ օրինակի. զի նիւթն որ է՛ գոյացութիւն մարմնական՝ *ունի* որակութիւնս իմն մարմնական. որպէս քանակ. որակ. և այլքն: - 175. Եւ մարմնով ո՛չ բաժանին սոքա. թէպէտ և մանր փոշի լինին՝ *ունին* զքանակն զորակն և զայլն. զի անմեկնելի որոշմունք են գոյացութիւն և պատահմունք: - 175. Այլ *ունին* սոքա բազում զարմանալի տեսութիւնս: - 175. Նախ՝ զի սոքա անմարմինք են ըստ ինքեան. այսինքն քանակ, որակ, և այլքն. և յանմարմին էութիւնս ո՛չ տեսանին. որպէս ի հրեշտակս կամ ի հոգիս. զի նոքա ո՛չ *ունին* ձև. որակ. քանակ. և զայլսն: - 175. Չորրորդ՝ զի իւրաքանչիւր սոքա առանձին սահման *ունին* և բնութիւն. և ո՛չ միաբանին ընդ միմեանս և ո՛չ ընդ մարմնի. այսինքն քանակն որակն. և ծանրութիւնն. և այլքն: - 175. Մանաւանդ թէ իւրաքանչիւր տարերք **բ** ծայրք որակութեանց *ունին*. զմինն գոյացական և զմիւսն պատահական. ըստ այսմ պա՛րտ է ասել քեզ մետասան բնութիւն քրիստոսի: - 176. Յինգերորդ՝ զի յետոյ լինելոցն էր բանն աստուծոյ մարմին. որպէս գիրն *ունի* յինքեան զբանն. և խօսի ընդ մեզ: - 177. Եւ Նախ զի է գիր՝ *ունի* գովութիւն երեքկին: - 177. Առաջին՝ զի ամենայն գիր գործիք է բանի. և *ունի* իմաստութիւն և բան ծածկեալ յինքեան: - 177. Առհասարակ զսոսա *ունի* այբն ըստ այնմ որ է՛ գիր: - 177. Եւ զայս *ունի* այբն. զի է՛ ձայնաւոր ընդ այլ է ձայնաւորաց: - 178. Իսկ Չորրորդն զի *ունի* ձև, **գ** ստեղն ի մի խառնալ: - 178. Աշխարհս ընդէ՞ր ոչ *ունի* զգայարանք. այսինքն տեսանելիք. լսելիք. և այլն: - 179. Այլ և ո՛չ *ունի* տեղի մարմնական. և ոչ ի ժամանակի երեքմասնեան. այսինքն յանցեալն՝ ի ներկայս՝ կամ յապառնին: - 180. Եւ ջուրն քան զօդ. և օդն ծա՛նր է քան զհուր. զի սակաւ ինչ գիճութիւն *ունի:* - 180. Եւ իւրաքանչիւր տարերք *ունին* կրկին որակութիւնս. այսինքն գոյացական և պատահական: - 181. Երկինք զո՞ր ձև *ունի:* - 182. Վարդապետք ասեն թէ ամենայն երկինք ի հարկէ պարտին *ունել* զբոլորակ ձև: - 182. Ապա ուրեմն պարզ էութեան երկնից պարտ է *ունել* զպարզ ձև որ է բոլորակն: - 182. Երկրորդ՝ զի բոլորակ ձևն պարունակօ՛ղ է. և երկինքն զամենայն պարունակեալ *ունի* ի ծոց իւր: - 182. Ապա ուրեմն պա՛րտ է զի *ունիցի* զձև բոլորակ: - 182. Սոքա հնգեքին կոչին

երկինք. զի զյատկութիւնս երկնից *ունին*. և սոքօք լինին հնգետասան երկինք: - 183. Երրորդ` զի բոլորակ *ունի* ձևս. որ է կատարեալ վեցեկի չափովք: - 184. Իններորդ` զի մշտակա՛յ է ի պարունակութիւնս իւր. այսինքն զի ո՛չ *ունի* այլայլումն և փոփոխումն ըստ անարգ շարժութեան երկրի: - 184. Եօթներորդ` ի ծոց իւր *ունի* զամենայն: - 184. Նմանապէս և հոմանուն է հաստատութիւնն ի ներքոյ ջրոյ. այսինքն **ը**երրորդ կամարն. և օդս առ մեզ որ *ունի* զջուրս ամպով հաստատեալ: - 184. Երկրորդ` զտեսակն անիբաց դնելի *ունի:* - 186. Իններորդ` հաւասար *ունի* զջերմութիւն և զլոյս: - 186. Յասարակ և յատուկ շարժութիւն *ունի:* - 186. *Ունի* բնական լոյս. և յարեգակնէն փոխ առնու լոյս: - 186. Զամենայն մոլորակաց զօրութիւն *ունի:* - 187. Զլոյսն ո՞րպէս *ունի:* - 187. Եւ այլք ասացին թէ` *ունի* բնական լոյս` և առնու զլոյս յարևէ. և այսպէս խառնի **բ** լոյսն ի նմա՛. և սնուցանէ զորս յերկրի: - 187. Երկրորդ` յա՛յտ է զի *ունին* ջերմութիւն և ցրտութիւն. չորութիւն և գիճութիւն. որ յայտնապէս տարրական է որակութիւն: - 188. Ասեմք թէ **բժ**ան կենդանակերպքն *ունին* զբնութիւն չորից տարերաց: - 189. Զի Խոյն և Առիւծն և Աղեղնաւորն, *ունին* զբնութիւն հրոյ ջերմ և չոր: - 189. Իսկ Ցուլն և Կոյսն և Այծեղջիւրն, *ունին* զբնութիւն հողոյ չոր և ցուրտ: - 189. Իսկ Եկաւորն և Կշիռն և Ջրհոսն, *ունին* զբնութիւն օդոյ ջերմ և գէջ: - 189. Իսկ Խեցգետինն և Կարիճն և Ձուկն, *ունին* զբնութիւն ջրոյ ցուրտ և գէճ: - 189. Եւ այսպէս զերկինս պատեալ *ունին* **բժ**ան կենդանակերպքս: - 189. Եւ *ունին* կրկին շարժումն. հասարակ և յատուկ: - 189. Եւ որպէս լրումն զատկի *ունի* աւուրս **ժգ**. և այլքն **ժե**. և այս ի տումարս մեր է. և իրն որ է՛ լուսինն մի և նոյն: - 192. Իսկ երկրաւորքս ժամանակեայ. և ժամանակն կարգ *ունի*, առաջին` միջին` և վերջին: - 192. Զի առաջին օրն եղև անառաւօտ. և վերջինն աներեկոյ. և միջինն ամենայն աւուրք *ունին* առաւօտ և երեկոյ: - 193. Ութերորդ` զնոյն բնութիւն լուսոյ *ունի:* - 196. Իսկ աշուն զնմանութիւն գարնան *ունի*. վասն այն և նա՛ բուսուցանէ: - 198. Զի հուրն կրկին որակ *ունի*. ջերմ և չոր: - 202. Իսկ հուրս առ մեզ որ կապեալ է ի նիւթ` տկա՛րն *ունի* զայրելն. վասն որոյ նախ զքանակն և զորակն ապականէ, և ապա զգոյացութիւն իրին: - 204. Երկրորդ` զի ամպն այն ո՛չ *ունի* խոնաւութիւն ինչ: - 206. Եւ ի բաքու յեզրն կազբիական ծովուն. ուստի ծծումբն զօրութեամբ *ունի* զհուրն: - 208. Երկրորդ` զի *ունի* երկիցս **բ** ծայրք. երկայնք և լայնքն. որ է յարևելից յարևմուտս. և ի հիւսիսոյ ի հարաւ: - 210. Դարձեալ պտղաբեր ծառ` *ունի* պտուղ և ծաղիկ և հոտ անոյշ: - 212. Նշանակեն զնոսա` որք *ունին* զպտուղս բարի գործոց. և զծաղիկն հաւատոյ. և զհոտ գիտութեան` ամենայն մարդկան անոյշ: - 212. Զի ի չորս տարրէ՛ է գոյացեալ. և *ունի* զաճումն հողոյն. վասն այն նախ աճէ ենթակայ մարմինն: - 213. Վասն է՞ր ամենայն բոյսք զձևն զառ ի վեր *ունին:* - 213. Զի մարդն *ունի* զգլուխն ի վեր որպէս երկինքն. և զոտքն ի վայր որպէս երկիրս. վասն որոյ ամենայն ծորմունք բնականապէս զառիվա՛յր հոսին. իսկ ծառն ծռեալ *ունի* զգլուխն ի վայր, և զոտսն ի վեր. կամ թէ ծռեա՛լ *ունի* զոտս և զստեղունս յայս կոյս և յայն կոյս: - 214. Երրորդ` զի ինքն երկիրն *ունի* զթանձրութիւն որ հողոյն է. և զմածումն որ է՛ ջրոյն. և զշարժումն որ է հողմոյն. և զերևիլն որ է հրոյն: - 214-215. Նոյնպէս և ջուրն *ունի* զսոսա. զի շօշափելի՛ է` և մածեալ` և շարժի` և երևի: - 215. Չորրորդ` զի կենդանիքդ *ունին* **գե** զգայարանք: - 215. Յինգերորդ` զի *ունին* կենդանիքդ **դ** մաղձ որ են. **դ** տարերքն: - 215. Իններորդ` նոյն ինքն մարմին կենդանւոյն է՛ շօշափելի և է՛ *կալեալ* և մածեալ. և շարժի և երևի. որպէս ասացաք վասն հողոյն: - 215. Եւ թէ ոք ասիցէ` զշունչն ո՛չ *ունին* ջրայինքն: - 215. Ասեմք թէ` որպէս ցամաքայինքն *ունին* զշունչ օդոյ: - 215. Են ոմանք որ թև *ունին* և թեփ: - 215. Եւ են որ թև *ունին* և ո՛չ թեփ: - 215. Եւ են որ թեփ *ունին* և ո՛չ թև: - 215. Եւ են որ ո՛չ թեփ *ունին* և ո՛չ թև: - 215. Եւ են ոմանք որ զթև հաւատոյ և զթեփ բարեաց գործոց *ունին*. և պիտանիք են աստուծոյ: - 215. Եւ են որ թև հաւատոյ *ունին*, և ո՛չ գործք. որպէս չար հաւատացեալքն: - 215. Եւ են որք գործս *ունին* և ոչ հաւատս. որպէս կեղծաւորքն. նմանապէս և սոքա անպիտանք են աստուծոյ: - 215. Եւ են որ ո՛չ *ունին* հաւատս և ո՛չ գործք. որպէս անօրէնք և չարք. և յայտնի անպիտանք են: - 215. Վասն է՞ր է` զի ջրայինքն և սողունքն ձայն ո՛չ *ունին:* - 216. Արդ` ցամաքային կենդանիքն զերկոսին զսոսա՛ *ունին*. վասն որոյ ձայն արձակեն: - 216. Իսկ ձկունք զի ո՛չ *ունին* զօդ` ամենևին են անձայնք: - 216. Իսկ գազան, կամ զի գզօ՛ղ են և պատառօղ. կամ զի զանազան և աhագին կերպարանք *ունին:* - 216. Ոմանք զէն *ունին* զատամունսն. որպէս շունք և վարազք: - 216. Կամ խաբէութիւն. որպէս աղուեսուց. զայս և զսոյնպիսիս *ունին* կենդանիք բնութեամբ ի խնամս ինքեանց: - 216. Եւ ո՛չ այս միայն, այլ և բոյսք և տունկք *ունին* բնութեամբ զէնս պահապան ինքեանց: - 217. Վասն է՞ր է զի մարդս ո՛չ *ունի* զբնութեամբ զէնս. կամ զծածկոյթ: - 217. Զի թէ մարդն *ունէր* զբնութեամբ զէնս, որպէս թէ եղջիւր ի գլուխն. և սուր զատամունսն. ճիրանունք ի ձեռս. և սմբակ կամ կճղակ ոտիւք. և զայլսն, Նախ` զի գազանադէմ և դժւարատես լինէր ամենեցուն: - 217. Երկրորդ`

զի անհանգիստ և ի չարչարանս լինէր հանապազ. ընդ ինքեան *ունելով* զնոսա: - 217. Երրորդ՝ զի թէ *ունէր* ի բնութենէ զէնս կամ զգեստս. ո՛չ կարօտէր այլոց կենդանեաց. այլ և ո՛չ խնամէր զնոսա: - 217. Եւ զի բնութեամբ *ունին* յայտ է, զի ամենայն տեսակն զմի և զնոյն *ունի* հնարս. վասն զի մի բնութենէ ի նոսա: - 218. Վասն է՞ր զթոյնք մահուն ի գլուխն *ունի:* - 219. Երկրորդ՝ զի *ունի* զերեք յատկութիւնս երկնից. որ է՛ բարձրութիւն. լուսաւորութիւն. և անմահութիւն: - 221. Այլ ո՛չ թէ հոգի *ունէր* բանական. այլ զօրութիւն իմացական: - 222. Դարձեալ՝ փայտն կենաց *ունէր* կերակրելի՛ պտուղ: - 223. Հինգերորդ՝ նախ քան զյանցանելն՝ էին ադամ և կինն մերկ և ո՛չ ամաչէին. վասն զի ո՛չ *ունէին* ցանկութիւն հեշտութեան: - 225. Նա՛խ՝ որպէս ասացաւ ի վերոյ, հողն *ունի* զայլ **գ** տարերքն ի յինքն խանեալ. յորժամ ի հողոյ ասէ՝ իմանալի զդ տարերս: - 229. Երկրորդ՝ զի հողն բնակա՛ն *ունի* զթանձրութիւն, և այլքն խառնմամբ ի նմանէ. և մարմինս մեր թա՛նձր է ի հողոյ: - 229. Եւ ի վախճանի եդև զգալի բանականն իբրև մատնահար և կնիք արարածոց. *ունելով* զիմացումն և զզգացումն...: - 231. Եւ զմիջին կշեռ մահու և կենաց *ունելով:* - 231. Եւ մարդն *ունի* իմանալի հոգի և զգալի մարմին: - 231. Այսպէս գլուխ մարդոյս *ունի* զնմանութիւն երկնից. զի է՛ բոլոր. և աչքն որպէս լուսաւորքն. և իմացումն ի նմա՛ որպէս իմանալիքն յերկինս: - 232. Վասն որոյ գլուխն է՛ ի վերոյ. և խռչափողն որ *ունի* զտուր և զառն՝ օդո՛յդ է նման. և ի ներքոյ այլ մարմինք և հիւթ արեան և ջրոյ՝ երկրիս է օրինակ: - 232-233. Վեցերորդ՝ զի բաժանեսցի մարդն ի կենդանեաց և ի տնկոց. զի տունկք զհակառակն *ունին* զարմատն որ է՛ գլուխ՝ ի յերկիր, և զոտն ի յերկինս: - 233. Եւ բնականն, Նա՛խ՝ զի նմանիմք երկրի որ յերեսն *ունի* զգեղեցկութիւն բուսոց, և ի թիկունս ոչ: - 234. Իսկ բարոյականն, Նա՛խ՝ զի յերեսն փչեաց զշունչ կենդանի. վասն որոյ յերեսն *ունի* զզգայարանս մարմնոյ: - 234. Երրորդ՝ զի զդէմս *ունիցիմք* միշտ ի յերկինս. և զթիկունս յերկիր. և հանապազ ի բարին յառաջեմք ոտիւք և ձեռօք և ո՛չ դառնամք ի չարն: - 234. Այլ և *ունի* յատուկ պատւականութիւն և ունկն՝ զոր ո՛չ *ունի* ակն: - 235. Եւ բնական, Նա՛խ այսպէս. զի ամենայն իր մարմնական ի նոյն տարերաց են բաղկացեալ. վասն որոյ *ունին* նմանութիւն առ միմեանս: - 236. Երկրորդ՝ զի *ունին* նոյնութիւն սեռի և տեսակի և անհատի: - 236. Եւ *ունի* այլութիւնս: - 236. Եւ սուտ առաքեալք զճշմարտիցն կերպանային. և այն զի ո՛չ *ունէին* զնոյն տիպ. իսկ թէ *ունիցին* զնոյն տիպ՝ ո՞րչափ ևս: - 238. Տասներորդ՝ զի և բանականս մարդ՝ քան զանբան կենդանիս տգէտ լինէր. վասն զի ամենայն կենդանի *ունի* բնական ճանաչումն իւրոց և օտարաց. ըստ այնմ որ արագիլ արդար՝ կերակրէ զիւր ծնօղսն միայն. և տատրակ մենացեալ ի զուգակցէն, ո՛չ զուգի ընդ ա՛յլ տատրակի: - 238-239. Նախ՝ ի տղայութեան հասակն. յորժամ ծնանի տղայն՝ *ունի* զհողմն արևելից տաք և գէջ: - 240. Իսկ է գլխաւոր անդամքն են այսորիկ ըստ է մոլորակացն *ունելով* զբնութիւնս նոցա: - 241. Երրորդն լեա՛րդն է, աղբիւր արեանն. տա՛ք է և գէճ՝ *ունելով* զբնութիւն մուշթարոյն, որ տանուտէր է նմա: - 241. Չորրորդն թո՛քն է. հո՛վ և գէճ. և է՛ տուն պլղամի. և *ունի* տանուտէր զլուսինն: - 241. Հինգերորդն փայծեղն է. որ է՛ ախոռ այրեցած արեանն. ցո՛ւրտ է և չոր. և *ունի* տանուտէր զզոհալն որ է երևակն ցուրտ և չոր գոլով: - 241. Վեցերորդն երիկամունքն որ է տուն սերման. ջերմ և գէջ. և տանուտէր *ունի* զզօհրայն. որ է լուսաբերն: - 241. Եօթներորդն է՛ լեղին. որ է խարտեաշ մաղձն. տա՛ք է և չոր. և տանուտէր *ունի* զմառեխն որ է հրատն: - 241. Եւ *ունի* ստամոքն **դ** զօրութիւնս. որ է՛ քարշողական. ունական. հալողական. վտարական: - 242. Զայս **դ** յատկութիւնս *ունի* ջիլն: - 244. Զի սիրտն *ունի* **բ** տուն. ի յաջ կողմն իւր զարիւնն ժողովեալ որ առնու ի լերդէն: - 244. Եւ յայս կողմս *ունի* **դ** երակ առանց արեան լի ջերմութեամբ. և բաժանի ամենայն երակ՝ յերեսունբ երակս. որ լինի ամէնն **ճիը** երակ: - 244. Եւ հիւսիսայնոցն ո՛չ բուսանի վասն խիստ ցրտոյն. և միջերկրայքս վասն բարեխառնութեանն մորուս *ունին:* - 245. Զի որ զհուրն առաւել *ունի* որ է շէկն՝ բարկացօ՛ղ է: - 245. Եւ որ զօդն աւելի *ունի*, է՛ թեթևամիտ և սրընթաց և ծիծաղկոտ: - 245. Եւ որ զհողն *ունի*, տրտմակեաց է և ծանրաշարժ և ծոյլ մարմնով: - 245. Դարձեալ՝ ասէ պղատոն, եթէ մարդն որ *ունի* զնմանութիւն անասնոց ինչ՝ հետևի և բարուց նոցին: - 248. Եւ իւրաքանչիւրն **ե ե** զօրութիւն *ունին:* - 248. Իսկ մաքսիմոս իմաստասէրն ասէ, Հոգի մարդոյ **բ** զօրութիւն *ունի*. միտք և բան: - 248. Եւ սոքա **ե ե** զօրութիւնս *ունին*. Մտացն. Իմաստութիւն. Տեսողութիւն. Ուսողութիւն. Անմոռացութիւն: - 248. Դարձեալ հոգին *ունի* զօրութիւնս ոմանս անխառն ընդ մարմնոյն. որպէս բանն՝ կամքն՝ և սոյնպիսիք: - 249. Եւ զոմանս *ունի* խառնեալս ընդ մարմնոյ. որպէս է բնական զօրութիւն կենդանականն և շնչականն որպէս ասացաւ ի վերոյ: - 249. Դարձեալ հոգին *ունի* զօրութիւնս ոմանս հասարակ ընդ անասնոց. որպէս զգայականութիւնն: - 249. Իսկ զոմանս *ունի* ո՛չ հասարակ ընդ անասնոց. որպէս բանն. իմացումն. և կամքն. և սոյնպիսիք: - 249. Երկրորդ՝ զբոյս ախտից և զայլ հոգս պակա՛ս *ունի:* -

251. Երրորդ՝ զկամքն հնազանդ *ունի:* - 251. Եւ *ունին* առաքինութիւն պաշտմանց: - 252. Եւ արդ ի կատարեալ մարդն հոգւով և մարմնով՝ փչեաց զշնորհաց հոգին ի մարդկայինս ազգ. և *ունէին* որ քան յանմեղութեան էին. և կորուսին ի մեղանչելն: - 253. Նախ՝ զի նիւթն այն *ունի* առ ինքն բնական զկենդանութիւն տնկականին. և տնկականն մա՛սն է զգայականին. և զգայականն բանականին. և սոքա ո՛չ որոշին ի բոլորէն. զի մի են էութեամբ ի մարդն թէպէտ ա՛յլ են ներգործութեամբ: - 254. Երկրորդ՝ զի զօրութեամբ *ունի* զհոգին յինքեան ծածկեալ. որ յետոյ ներգործութեամբ երևի: - 254. Ասեմք եթէ՝ ի կողմանէ նիւթո՛յն կարելի է ասել. զի զոմն *ունի*, և զոմն ընդունի. այսինքն զտնկականն *ունի*, և ընդունի զբանականն: - 254. Զի զօրութիւն *ունի* այս նիւթ՝ ընդունել զբանականն. զոր նիւթ անասնոցն ո՛չ կարէ ընդունել: - 254-255. Եւ դարձեալ՝ որպէս հատն ցորենոյ *ունի* առ ինքն զօրութեամբ զխոտն և զծաղիկն և զհասկն...: - 255. Այսպէս և հոգին ընդ անկատար նիւթոյն *ունի* զկերակրիլն. և յորժամ հաստատի զգայութեամբն ծաղկի. և յեւ հաստատիլն՝ բանականութեամբ պտղաբերի ի վերին խնամոցն որպէս պտուղն այն յարեգակնէ՛: - 255. Եւ համանգամայն երևի ասեմ. զոր օրինակ նիւթն այն *ունի* առ ինքն ծածկեալ զմասունս մարմնոյ. զձեռս և զոտս, զմիս և զմազ, որ յետոյ երևին ի նմանէ: - 255. Եւ կամ որպէս ծնեալ մանուկն *ունի* առ ինքն ծածկեալ զհոգին. այլ նա կերակրի և ապա զգայ. և յետոյ խօսի: - 255. Եւ թէ ոք ասիցէ, ուստի՞ գտանեմք եթէ *ունի* զկենդանութիւն հիւթն այն: - 255. Ապա ուրեմն հիւթն այն, նախ *ունի* զկեալն որ է՛ ունակութիւն. և ո՛չ զպակասն որ է մեռելութիւն: - 256. Ապա ուրեմն *ունի* բնականապէս զկենդանութիւն: - 256. Եւ թէ ոք ասիցէ, յորժամ *ունի* զկենդանութիւն սերմն այն՝ ընդէ՞ր ի վիժումն մեռանի: - 256. Ասեմք թէ՝ ամենայն սերմն *ունի* զջերմութիւն և զգիճութիւն ամոքեալ յինքեան: - 256. Պատասխանեմք եթէ՝ ոմանք յարմատս *ունին* զսերմն. ոմանք ի ծայրքն. կէսք ի տերևն. այլք ի կեղևն. թէպէտ և սոցա սերմնական զօրութիւնն է՛ ի մէջն, այլ առաւել կենդանւոյն: - 256. Երկրորդ՝ զի ամենայն մասունս համանգամայն առ ինքն *ունի:* - 256. Երրորդ՝ զի զկենդանութիւն *ունի* և ո՛չ երևի: - 256. Այլ հատանի նիւթն *ունելով* առ ինքն զբոլոր կենդանութիւն. և լինի նիւթ ա՛յլ մարմնոյ նովին կենդանութեամբն զոր *ունի* առ ինքն: - 257. Որպէս ճիւղ հատեալ ի ծառէ և տընկեալ յերկրի, ճիւղն է հատեալ ի ծառէն, այլ կենդանութիւնն ո՛չ. ուստի յա՛յտ է զի տընկեալ ճիւղն նոյն կենդանութեամբն բուսանի զոր *ունի* առ ինքն: - 257. Զի նախախնամութեամբ *ունի* զտնկականն և զզգայականն. և ստեղծմամբ զբանական հոգին զպատկերն աստուծոյ: - 257. Նմանապէս և արուեստաւորն աստուած նախանկար տեսութեամբն *ունի* ի միտս իւր նախքան զլինիլն մարդոյն...: - 258. Եւ որպէս ասէ արիստոտէլ զերեք թիւն՝ որ մի *ունի* զէութիւն իւր. այլ երկուքն և մինն մասունք են նորա: - 259. Եւ յորժամ ասես **գ**, յայնժամ զառաջին թիւսն *ունելով* յինքեան՝ կատարումն եղև նոցա: - 259. Եւ յայնժամ զզգայականն և տնկականն ո՛չ *ունին* զներգործութիւն իւրեանց ի կազմողական զօրութենէն. այլ ի նոյն ինքն ի հոգւոյն: - 260. Իսկ զերրորդ գործն որ է իմանալն և բանաւորիլն, *ունի* հոգին և յետ անջատելոյն ի մարմնոյն: - 260. Իսկ որ հասարակն է սոցա և պատշաճաւոր, *ունին* զնոյն հասարակութիւն բուսոց ի նոյն ժամանակս: - 261. Ասեմք առ այս, եթէ քառասունն *ունի* զչորս և զտասն թիւն. զի **դ** տասն է: - 261-262. Այսպէս և շնչականն գոյացեալ ի հերորդ աւուր՝ կիսակատար գոլով բանականին զնոյն *ունի* խորհուրդ: - 262. Զի քսանն **դ ե** է. և կենդանին է ի չորից տարերց. *ունելով* զ**ե** զգայութիւնս: - 262. Զի վեցն որ է՛ կատարեալ թիւ, և նիւթն այն է՛ ի չորից տարերց, և *ունի* առ ինքն զկազմողական և զտնկական զօրութիւնն որ է **զ**: - 262. Կամ ընդ **դ** տարերց *ունի* զխառնումն երկուց նիւթոց, այսինքն արուական և իգական: - 262. Զի ամենայն նիւթ սերմնականի է՛ ի չորից տարերց. և *ունի* զկազմողականն զօրութիւն. որով լինի տնկականն: - 262. Իսկ տնկականն *ունի* երիս զօրութիւնս. այսինքն զկերակրականն որ է՛ սննդականն. զաճողականն և զծննդականն: - 262. Նմանապէս և կերակրականն *ունի* զօրութիւնս **դ**. որ է՛ քարշողականն. ունականն. հալողականն. և վտարականն: - 262. Եւ *ունին* զայս ամենայն բոյսք և տունկք: - 262. Եւ այլք *ունելով* և զկերակրականին զօրութիւնս՝ յապաղեն մինչ **բժ**ան ամիսս: - 262. Ասեմք թէպէտ նիւթն ի չորից տարերց է, այլ տնկականն զօրացեալ քան զնիւթն՝ ըստ իւրոյ մասանցն ծնանի. զի ծնանիլն տնկականին է. այլ և *ունի* զտարերացն թիւ. զի յամիսս չորս կատարի այն՝ որ յառաջ ծնաւ: - 262-263. Արդ՝ զգայականն է ի չորից տարերց. և *ունի* զտնկականն: - 263. Իսկ որք ի **խ** աւուրս ծնանին և կամ **ի ի**, որպէս հաւ. *ունին* նոքա զխորհուրդ չորից տասանց և չորից հնգից, ըստ **ե** զգայութեանց ներքոյ և **ե** զգայութեանց արտաքոյ որպէս ասացաք: - 263. Արդ՝ որպէս ասացաք՝ մարմինն է ի **դ** տարերաց. և *ունի* **ե** զգայութիւն. վասն որոյ յինն ամիսս հաստատի անդամօք և ապա ծնանի: - 263. Դարձեալ տնկականն *ունի* **գ** զօրութիւն, և **ա** զնիւթն, և **ե** զգայութիւնս, որ լինի **թ**. վասն որոյ **թ** ամսեայ ծնանի: - 263. Դարձեալ *ունի* զ**ե** զգայութիւնս, և

զշարժականն` և զշնչականն` և զսրտմտականն` և զցանկականն, որ լինի ինն: - 263. Դարձեալ մարմինն է ի **գ** տարերց. և *ունի* երիս տեսակս ոգւոց: - 263. Դարձեալ **թ** թիւն է երիցս երրեակ. և երեք թիւն է կատարեալ. *ունելով* առաջին միջին և վերջին. ի նմանութիւն **թ** դասուց հրեշտակաց: - 264. Եւ դարձեալ` հասակ մարդոյ չորիցս *ունի* զփոփոխումն. այսինքն, Ի մանկութիւն. Յերիտասարդութիւն. Յալևորութիւն. և Ծերութիւն: - 265. Եւ կրկնեալ ի հնգետասանէն մինչև ի **Լ**, կատարի երիտասարդական հասակն. որ է **գ** տասամբ կատարեալ. *ունելով* զցանկականն և զցասմնականն և զբանականն լիով առ ինքեան: - 265. Յեղանակս գարնան, և յառաւօտուն մինչև յերեք ժամս, և հիւթոյ արեան, և մանկութեան հասակն ի տղայութենէ ծննդեան և աճման` *ունին* զնմանութիւն օդոյ ջերմ և գէջ գոլով: - 266. Նախ ասեն ոմանք, եթէ ուղեղ գլխոյ անբանիցն ընդ խելապատակին *ունի* չորութիւն և հովութիւն. և ջիլքն ի նմանէ յառաջեալ յանդամս մարմնոյն` փութապէս պնդէ՛ և տայ շարժիլ: - 266. Դարձեալ` ամենայն իր առաւել *ունի* զօրութիւն ի տեսակս իւր` քան ի յայլս. որպէս ջուր առաւել զօրաւոր է ի գետս` քան ի յերկիր խառնեալ. և տնկականն առաւել է ի տունկս` քան յանասունս: - 266. Դարձեալ` նախախնամութեանն է այսպէս կարգեալ. զի մարդս *ունի* դայեակ և սնուցօղ, պէտս *ունի* խնամարկութեան զի հասցէ ի չափ հասակի: - 267. Եւ մի՛ աստ ընդ դէմ բերցի բանիս թէ` ամենայն մեծամեծք գուք *ունին* փոքունց...: - 267. Երկրորդ` զոր ախորժակն *ունի* զկարօտութիւն` զա՛յն տեսանէ. որպէս քաղցեալն զկերակուր. և ծարաւն զջուր: - 268. Երրորդ` ըստ կատարման. զի այս յետ փոխման զյոյսն *ունի* լծակցեալ անմահութեան և խնդութեան. իսկ այնոքիկ կորստական և անցաւոր: - 269. Դարձեալ հանճար ասի, զի առ յապայն *ունի* զկատարումն: - 270. Վեցերորդ` ի յաստուած է՛ միտք և իմացումն և կամք. *ունի* և մարդս զայսոսիկ: - 271. Իսկ մարդն ասի պատկեր աստուծոյ ըստ նմանութեանն. վասն զի ո՛չ *ունի* զնոյն էութիւն. այլ զնմանութիւնն աստուծոյ: - 273. Եւ դարձեալ` որպէս ձու հաւի և ձու քարեայ` նման ասին միմեանց, այլ ո՛չ պատկեր. զի ո՛չ են ի միմեանց ելեալ. և ո՛չ զնոյն էութիւն *ունին:* - 273. Եւ դարձեալ ասեն թէ` հոգին է պատկեր աստուծոյ ըստ զօրութեանցն. զի *ունի* միտք և իմացումն և կամք: - 273. Իսկ պատկեր շնորհաց և փառաց է, կատարելապէս ճանաչել և սիրել զաստուած. և այս է նմանութիւնն զոր կատարեալքն *ունին* աստ և ի վերին գաւառին: - 274. Դարձեալ` մարդո՛յն է յատուկ *ունել* զամենայն սիրելութիւն առ ամենայն ազգս. առ վերինս և առ ներքինս և առ միջինս: - 274. Դարձեալ մարդո՛յն է *ունել* օրինաւոր ամուսնութիւն առ զուգակիցս իւր: - 274. Դարձեալ` մա՛րդն *ունի* հասարակութիւն ինչ ամենայն ստեղծւածոց: - 275. Զգոլն *ունի* ընդ քարանց: - 275. Դարձեալ` մարդո՛յն է թողութիւն մեղաց վասն մարմնոյն` զոր ոչ *ունին* հրեշտակք: - 275. Դարձեալ` մարդո՛յն է յարութիւն կենաց. և դատաստանի վասն հոգւոյն` զոր ո՛չ *ունին* այլ կենդանիք: - 275. Դարձեալ` մա՛րդն է ի պատկեր աստուծոյ եղեալ առաւել քան զհրեշտակս **գ** կերպիւ, ներքոյ և արտաքոյ. զորս ո՛չ *ունին* հրեշտակք: - 275. Դարձեալ` մարդս միա՛յն *ունի* **գ** աչք: - 275. Դարձեալ` յատկութիւն ի տկարութենէ. զի հանապազորդ *ունի* զպակասութիւն. և անկա՛ր է ի միշտ կանգնիլն: - 275. Դարձեալ` զոր ինչ *ունիմք*` յայլմէ՛ *ունիմք*. և անկատա՛ր *ունիմք*. և միշտ կարեմք կորուսանել: - 275. Հինգերորդ` զի կողնէ աման և տեղի երիկամանց. յորմէ շարժի ցանկութիւնն. զի թէպէտ ո՛չ շարժէ զնա. այլ ազդումն ինչ *ունի* զնմանէ: - 276. Իններորդ` զի որպէս կողից երեսն որ ի փորն նայի` կոկ գոլով և մզղնա տեսակ. իսկ մէջն փուչ և մրրախառն. այսպէս սէրն զոր ցուցանէ առ այրն, նօսր առ ի ցոյցս` և երեսս միայն *ունի*. իսկ ի սիրտն զմրուր դառնութեան: - 276. Նա՛խ` զի ո՛չ *ունի* զառնողական զօրութիւնն. որպէս և յամենայն կենդանիս էգն: - 276. Նախ` առ ի նշանակել զանձնիշխանութիւն մարդոյն. իբր թէ *ունի* կարողութիւն պահել և ո՛չ պահել: - 277. Նախ` վասն պարզամտութեանն. զի որպէս տղայք ո՛չ ամաչեն անծածուկ *ունելով* զմասունս. նոյնպէս և նոքա: - 278. Ա՛րդ` անկման աստիճան առաջին էր հեշտութիւնն. որ *ունի* յինքեան զերեք կարգն: - 280. Ութերորդ` մաշկեղէն հանդերձն. ո՛չ ըստ ոմանց թէ մորթ մարմնոյս, զի *ունէր* զայս ի ստեղծմանէն: - 280. Իններորդ` խորհրդակից *ունել* ո՛չ զթունարկու օձն. այսինքն զարկածք չարին. այլ զպատուիրանս աստուծոյ որ ի գիրս սուրբս: - 281. Եւ *ունէր* առաջադրեալ իւր զերանութիւնն և զթշուառութիւնն. որ է՛ անմահութիւն և մահ: - 282. Եւ թէ ոք ասիցէ, և երկրորդն ադամ քրիստոս` զմարմինն ադամայ *ունէր*, և էր թա՛նձր և ծա՛նր: - 282. Այսպէս ասեմք զմարմինն քրիստոսի *ունել* զադամայն որ էր յանմեղութեանն: - 282. Եւ զի **գ** պատարագս *ունիմք*. և թէ զի՞նչ էր կրկին ողջակէզն: - 284. Եօթանասունն**Ե**, Տալ զօրէնս հեթանոսաց. և օրհնութիւն և անէծք. և բան ընդդէմ հրէիցն որք մարմնաւոր *ունին* զօրհնութիւնս: - 285. Նա՛խ զի սիրտ սուրբ և աններենգ *ունէր*. ուստի յա՛յտ է յանմեղութեամբ գնալոյն ընդ եղբօրն ի դաշտն: - 286. Եւ սոքա ամենեքեան վասն **Է**երորդին են որ է՛ սէրն. զոր *ունէր* կատարելապէս առ աստուած: - 286.

Զայսոսիկ որպէս ասացաւ *ունէր* նա՛ ընդ պատարագելն: - 286. Այլք եղջիւրս ասեն *ունել* ի ճակատն որ իբր զփող գոչէր թէ՝ գա՛յ ահա կայեն եղբայրասպանն: - 287. Եւ հարիւրն ժամանակեայն է՛ մարդն, որ *ունի* հոգի: - 291. Ա՛րդ՝ առաջին դարն որ էր երևակին՝ ընդ երկա՛ր ապրէին մարդիկքն. զի *ունի* երևակն յերկար ընթանալ զճանապարհն իւր. որ ի **լ** ամն վճարէ զկենդանակերպսն: - 291. Եւ այլ ևս. նոքա *չունէին* օրէնք գրաւոր, պա՛րտ էր նոցա յերկար կեալ և ի բնական օրէնս կրթել զծնունդս և զազգս իւրեանց: - 291. Դարձեալ՝ գիտութիւն կատարածի խափանէ՛ զվարձս հաւատոյ. զի վարձքն ի հաւա՛տն է և ո՛չ ի գիտութիւնն. վասն այն հաւատով ակն *ունիմք* կատարածի և ո՛չ գիտութեամբ: - 292. Ոմանք ի վերայ մարդոյս մեկնեն զտապանն և յիրաւի. զի տապանն *ունէր* զբոլոր աշխարհս. և մարդն մասն է աշխարհի. պա՛րտ է զի մասն նմանեսցի բոլորին: - 293. Եւ վեցակողմն, զի մարմինն եռակի տարրո՛շ է. *ունի* վեր և վայր. յետ և առաջք. աջ և ահեակ: - 293. Սա՛ *ունի* զձև նմանութեան տապանին վեցակողմ և կաթողիկէ, և դուռն ի կողմանէ: - 294. Եւ թէ *չունիս* հաւատ զփտեալ փայտն տե՛ս ի գիշերի: - 294. Նա՛խ՝ է՛ աննշանն զորս որոշէ՛ օրէնքն. որ ո՛չ *ունի* կճղակս և որոճ և այլն՝ անսուրբ է: - 295. Զենուլ ծկանն այն է՝ որ ի ջրոյն հանեն. զի զշունչ ջրոյ *ունի* և ո՛չ զշունչ օդոյ: - 296. Եւ ասեն՝ զգործս ջրհեղեղին *ունիմք*՝ երկնչիմք զի պատուհասէ զմեզ: - 296. Եբրայական լեզուաւն կարդային որ *ունէր* դեռ զառաջինն. որպէս ասէ մեր լուսաւորիչն: - 299. Եւ մինչ զգիրն յառաջ *կալան* թէ այսո՛ւ փորձիմք, այլ ո՛չ ոք գիտաց կարդալ՝ բաց յեբրայեցւոցն. վասն այն ասի եբեր, թէ զառաջին լեզուն նա՛ եբեր: - 299. Զի ասեն թէ՝ ամենայն մարդ կարծէր թէ ե՛ս եմ ըղորդ և ե՛ս *ունիմ* զառաջին լեզուն: - 299. Նախ՝ զի մելքիսեդեկ *ունէր* պատարագ հաց և գինի. և աբրահամ ո՛չ *ունէր*: - 300. Եւ դարձեալ՝ աբրահամ *ունի* մարմին և հոգի. և *ունի* **բ** զաւակ, այսինքն մարմնոյ և հոգւոյ: - 303. Երրորդ՝ սառա կոչի առաքինութիւն. և մարիամ լուսաւորութիւն. և եկեղեցի ժողովք հաւատացելոց՝ գործով *ունի* զառաքինութիւն և զլոյս հաւատոյ: - 307. Իններորդ՝ ըստ փոփոխման ասի. զի յղացեալ *ունիմք* զմահ անդըստին. և ի վախճան մերձեալ հասանէ երկն ցաւոց. և բաժանեալ հոգին ծնանի ի մահ: - 308. Եւ երէց է աստուած քան զաշխարհս. և անդրանիկն զաստուծոյ պատկերն *ունի*. զի հայր և խնամածո՛ւ է այլ հարազատ եղբարցն: - 308. Ա՛րդ՝ դաւանութեամբն գերազա՛նց եմք մարդկան հեթանոսաց. և մկրտութեամբն՝ հրէից. և ծննդեամբն ի հոգւոյն՝ հրեշտակաց. զի նոքա ո՛չ *ունին* ծնանիլ ի հոգւոյն. և ո՛չ եղբայր լինի քրիստոսի: - 309. Հինգերորդ՝ զի *ունի* զվերոյ ասացեալն խորհուրդ տասնեակ թւով...: - 310. Իսկ այն որ երբեմն անդրանիկն խոտիւր և կրտսերն ընտրիւր, բազում *ունի* խորհուրդ և նշանակութիւն: - 310. Նա՛խ զայս *ունի* խորհուրդ, զի յառաջագոյն ընտրեալքն՝ յետոյ եղեն ի ժամանակի: - 310. Երրորդ՝ զի զաստուած *ունէր* օգնական՝ երկեաւ ի մարդոյ: - 311. Զի էն՝ անսկիզբն և անվախճան ընդ դէմ է ժամանակին որ սկիզբն *ունի* և վախճան: - 312. Եւ ընդ դէմ է մշտնջենաւորին որ *ունի* սկիզբն և ո՛չ վախճան: - 312. Եւ ընդ դէմ է յարաձգականին որ *ունի* վախճան և ո՛չ սկիզբն: - 312. Հնգետասաներորդ՝ առիւծն յորժամ ննջէ՝ բա՛ց *ունի* զաչսն: - 316. Եւ կարելի՛ է ամենայն կապիւս զոր *ունիմք* առ միմեանս՝ փոխիլ առ աստուած և կապիլ ի նա: - 317. Նմանապէս և միջակ կապիւն, զի ուսանիմք յաստուծոյ ընկալեալք զկարգ կրօնիցն. և *ունիմք* ուխտ և դաշին և հնազանդութեան նմա...: - 318. Եւ *ունէր* **է** որդիս և **գ** դստերս նման բարեպաշտութեան իւրեանց: - 321. Բազում *ունի* խորհուրդ: - 321. Այլ ըստ մտաց՝ *ունի* **զ** խորհուրդս: - 323. Երրորդ՝ զի մարմնոյն յիշեցուցէ զնոյն *ունել* բնութիւն, և ո՛չ այլ ինչ աւելի: - 323. Եւ թէ որ ասիցէ՝ *ունէր* զայս յոբ. վասն է՞ր մերձեցաւ ի նա: - 324. Իսկ ի հոգւոյ մարդոյն **բ** իր հեռացուցանեն զդևսն. այսինքն խոնարհութեամբ և ճշմարտութեամբ. վասն զի զերկուքս զայս ո՛չ *ունի* սատանայ. և ամենևին փախչի և ատէ՛ զխոնարհութիւն և զճշմարտութիւն: - 324. Նախ՝ զի *ունէր* զամենայն առաքինութիւնս և համբերեաց նախատողացն. վասն որոյ խօսեցաւ աստուած և մխիթարեաց զնա: - 325. Նախ՝ թագաւորութեամբն *ունէր* զպատկեր փառացն ադամայ: - 327. Հուրն *ունի* լոյս և կիզումն: - 330. այլ չոր ձաղկն դալարիւր. այսինքն թէ ի զանգուածոյն ադամայ *ունէր* ինչ փոշետեսակ՝ սրբեցաւ հրով հոգւոյն սրբոյ: - 331. Եւ զայն որպէս թէ ո՛չ *ունիցին*. և այնու կոխեսցեն զգլուխ կամակոր օձին: - 331. Երկրորդ՝ կարկուտն զհպարտ և զհայհոյիչ բանս նոցա խայտառակէ, և հուրն զբարկութիւն սրտին զոր *ունէին* առ որդիսն իսրայէլի: - 334. Երկրորդ ա՛յն է՝ որ յորժամ լինի կամքն մարդոյն չար և խիստ ի ծածուկ, և զայն յայտնէ՛ աստուած. որպէս նաբուգոդոնոսորայ. որ *ունէր* սիրտ գազանի՝ ի կերպարանս գազանաց փոխեցաւ: - 336. Մովսէս զի՞նչ *ունէր* բարձեալ: - 338. Նոյնպէս և նշխարք մարմնոյն բոլոր. առ ի նշանակել թէ բոլոր պարտ է *ունել* հաւատ կերողացն: - 339. Եւ արտաքին սրահին պատւարն ի մէջ *ունելով* զխորանն յամենայն կողմանց **ճ** կանգուն երկայն ի հիւսիսոյ և ի հարաւոյ կողմն: - 343. Երկրորդ, *ունի* զձև երկնայնոցն: - 343. Նա՛խ՝ զի ամենայն իր որ

ընտի՛ր է՝ չա՛փ *ունի* և սահման. և ո՛չ շփոթումն. վասն այն կանգնաւ չափէ զնոսա: - 344. Որպէս հոգի մեր սկիզբն *ունին*, այլ ո՛չ վախճան: - 344. Եւ անապական վարուք ոսկէզարդեալ *ունի* յինքեան զերկուս կտակս: - 345. Երրորդ՝ վեցեքեանն *ունին* լոյս, և առնուն զհուղն ի միջոյն. և ամէն մոլորակք *ունին* լոյս. և այլ առնուն յարևու: - 346. Սոքա ամենայնքն զբերանս մտաց բացեալ *ունին* առ մինն և ճշմարիտ ջահն քրիստոս: - 347. ...և **բ** Ակունք ուսոյն՝ կրկին կիսագունդք երկնից. *ունելով* **զզ** կենդանակերպս. և Վակաս լանջացն **բժ**ան ակամբք նոյն կենդանակերպք ի լանջս երկնից Միթրն՝ պսակ քահանայապետութեան. և Թիթեղն՝ մտաց թեթևութեան: - 348. Իբր թէ զնոսա ի վե՛ր բարձրացուցի և ի սէր սրտի իմում *ունիմ:* - 348. Եւ թէ ոք ասիցէ՝ վասն է՞ր զպարտիսն ադամայ մեք *ունիմք:* - 351. Վեցերորդ՝ զի իմանալի *ունի* լոյս՝ ցուցանէ՛ զգալի լոյսն. զի ի գիշերի ելեալ ի խորանէն հալածէր զխաւարն և լուսաւորէր զանապան: - 352. Իններորդ՝ ի յօրինակ արդարոցն լուսոյն. որ ո՛չ կարօտին արտաքին լուսոյ, սոյնպէս և մովսէս ո՛չ կարօտէր. զի ո՛չ բնական էր լոյսն. զի աչք բնական տեսութիւն *ունի*, այլ ո՛չ թէ լոյս: - 352. Դարձեալ՝ տէրն բնութեամբ *ունէր* զլոյսն. և նա՛ արտաքուստ ստացաւ...: - 352. Իսկ ի նորս *ունիմք* զճշմարտութիւն՝ *ունիմք* և զօրինակն: - 356. Ոչխար զգօն և հեզ. *ունելով* պտուղ ասր և կաթն և ծնունդ: - 358. Աջոյ երին. յաջողակ բարի գործն. և Երբուծն դօշն է. որ *ունի* զսիրտն: - 360. Ալոջ, և Որոջ. *ունելով* զկէս ամն աւելի քան զերեք ամն ի ծննդենէն մինչև ի խաչն: - 361. Այլ և *ունիմք* զբանաւոր պատարագս՝ զհոգի և զմարմին մեր սրբութեամբ փոխանակեալ նմա: - 362. Այլ և *ունիմք* զմարմնաւոր պատարագս զօրինակին. զենմունք վասն կենդանեաց և մեռելոց: - 362. Վասն է՞ր զերեքեան պատարագս *ունիմք* մեք: - 362. Նահապետքն *ունէին* կրկին պատարագ. բանաւոր և անբան. որպէս Աբէլ. Նոյ. Աբրահամ. և այլքն: - 362. Ա՛րդ՝ մեք *ունիմք* զօրինակ կրկին պատարագաց. զնախնեացն և զճշմարտութիւնն քրիստոսի: - 362. Եւ միւսն, որ զմարմին մեր պատարագեմք միշտ. սիրտ սուրբ և հոգի խոնարհ *ունելով*. զոր աստուած ո՛չ արհամարհէ: - 363. Յորժամ զգործ քահանայի *ունիցին*՝ ո՛չ է մեղք. այլ սրբութիւն: - 363. Եւ բացերես ի ճակա՛տն *ունի:* - 363. Այս նոցա՛ է որք սրբութեամբ *ունիցին* զքահանայութիւնն: - 363. Եւ որք զմինն *ունին*, որպէս գիտութիւն առանց գործոց, և գործս առանց հաւատոց, անսուրբք են: - 364. Նոյնպէս ի ձկունս որ թև *ունին* և թեփ: - 364. Եւ չէ զուտքն, զի *չունի* արիւն սերման, ո՛չ հեղցէ զարիւն կենդանւոյ: - 365. Նա՛խ՝ զի ո՛չ *ունի* կատարեալ զօրութիւն սերման: - 365. Եւ անհաւատն սպանեալ է զհոգին մեղօք. և կամ *ունի* զգործ իգական՝ պիղծ է: - 366. Նա՛խ՝ զի իցէ կենդանի յորմէ ելցէ արիւն. իսկ մեռեալն կամ անշունչ քար ո՛չ *ունի* արիւն: - 366. Կամ ջրայինն որ ո՛չ *ունի* զարիւն շնչոյ, այլ զարիւն ջրոյ, ո՛չ զենի. զի զենումն նոցա հանումն ի ջրոյն է: - 366. Երրորդ՝ պտղակն ելուստ ի պտղոյն. որ բիծ *ունի* ի միտքն: - 370. Երրորդ՝ լեզւատն որ է՛ անձայնն. որք ո՛չ *ունին* զխոստովանութիւն: - 371. Այլ և բոլոր ամենայն տօնք հնոյն՝ **ը** տօն էր. զոր այժմ մեք *ունիմք* փոխեալ ի նորս: - 372. Եւ տես, զի սոքա երեքեան տօնքս, այսինքն ամսամուտն, և պասքայն, և յիսներեակն, հաւասար *ունին* զմատուցմունքն տօնից: - 373. Եւ զամենայնն *ունէր* ժողովուրդն: - 381. Եւ դարձեալ, երկոտասան արքեպիսկոպոսք. և կաթողիկոսն ի մէջն. նոյնպէս և արքեպիսկոպոսն **բժ**ան *ունի* գաւազան: - 382. Չորրորդ՝ զդեղձան հերն և անարատ մարմնով և անբիծ հոգով, որ ո՛չ *ունէր* զլուծ մեղաց: - 383. Չորրորդ՝ որպէս ո՛չ *ունէր* զաւելորդ ցանկութեանն, նոյնպէս և ո՛չ զկերակրոյ: - 383. Երինջն ըստ իրաւանցն *ունէր* զմեղս ժողովրդեանն. և խորհրդովն քրիստոսի՝ սրբութիւն գործէր: - 384. Երկրորդ, մկրտութիւնն է **գ** օրն. զի *ունի* հրաժարիլն և զդաւանելն և զմաքրիլն. և ապա՛ եօթն խորհուրդ եկեղեցւոյ: - 384. Տապանակն էր քրիստոս. և *ունէր* զտախտակս օրինացն: - 385. Երրորդ՝ զի ցուցցէ թէ ոչ ինչ զօրութիւն *ունի* բան նորա: - 388. Եւ յա՛յտ է, զի ոչ ինչ զօրութիւն *ունէր* բան նորա: - 388. Եւ դարձեալ՝ ոչ ինչ շնորհ *ունէր* բան նորա. զի այնքան օրհնեաց զժողովուրդն, ընդէ՞ր ոչ դարձաւ մահն և սատակումն: - 388. Ապա յա՛յտ է զի անօրինին ո՛չ անէծքն *ունի* զօրութիւն. և ո՛չ օրհնութիւնն շնորհք: - 388. Եւ բաւականութիւն սոցա է այսպէս. զի եմք մարմին հոգի և միտք գոյացեալ. և *ունիմք* կարիս և ինչս և շնորհք և կրօնք: - 389. Վասն որոյ պա՛րտ է ընդ հրամանաւն կալ նոցա՝ յորմէ և առ որ զկապակցութիւն *ունիմք* եօթանցն ասացեալ: - 389. Եւ կէսն զնոսա, որք *ունին* թերութիւն ինչ ի հաւատս կամ ի վարս ինչ և յուսմունս: - 391. Եւ դարձեալ հրեշտակք և մարդիկք մշտնջենաւորք՝ պակաս *ունին* առ աստուածպետութիւնն յաւիտենական. և նա՛ է կատարումն ժերորդ. անսկիզբն և անվախճան գոլով: - 391. Եւ դեռևս *ունին* ազգն վրաց. զի գիթվորն մտեալ յեկեղեցի ազա՛տ են: - 392. Իններորդ՝ զի ինքն սատանայ *ունի* բնութիւն և մեղք և պատիժ. բնութեամբ աստ զինի. և մեղօք յետոյ. և յարութեանն պատժակից իւր առնելով: - 394. Տասներորդ՝ *ունի* **գ** տեղիս. կրկին ուստի զրկեցաւ. և օդդ ուր անկաւ. և հուրն ուր տանջի: - 394. Այլ տե՛ս

յայտնապէս, զի զայսպիսի նշան վկայութեան ո՛չ *ունէին* յուդաս և դնդաս. և ո՛չ նեռն *ունելոց* է դերաքրիստոսն. վասն որոյ ո՛չ են մարգարէ, այլ մոլորեցուցիչք և չարք: - 400. Նա՛խ՝ զի զօրինակն ո՛չ *ունիմք*. այլ զճշմարտութիւն օրինացն *ունիմք:* - 403. Երկրորդ՝ որպէս զօրինութիւն նորա մարմնական ո՛չ *ունիմք*. նոյնպէս և ո՛չ զանէծսն: - 403. Այլ այս անէծքս յայտնապէս ի վերայ հրէիցն է. որք ո՛չ կատարեն զօրէնս, և ո՛չ *ունին* զմկրտութիւնն քրիստոսի: - 403. Նա՛խ եթէ՝ բնութեամբ բարի է աստուած և ո՛չ *ունի* բարկութիւն...: - 408. Տասներորդ՝ ի սկզբանէ հայհոյիչ աստուածամարտ էր սատանայ. և վասն այն զմարդիկ կորուսանէր մեղօք. որում զվճիռն և զաստն տէրն ետ, և դատապարտեաց զմեղս ի մարմնի իւրում. և եբարձ մահուամբն զմահ, և որ զիշխանութիւն մահուն *ունէր:* - 410. Վեցերորդ՝ զի թէ լինի անկարօտ գող և զրկօղ, ընդ տեառն իւրոյ կորուսանէ և զինչսն. որպէս աքարն որ *ունէր* բազում ստացւածս, և գողացաւ ի նզովիցն երիքովի...: - 416. Եւ դևք ո՛չ միայն զապագայն ոչ գիտեն, այլ և զներկայ խորհուրդն ո՛չ ճանաչեն. նաև զանցեալ ճշմարիտն և զբարին ի միտ ո՛չ *ունին:* - 428. Այլ ի դատաստանն քննութեան ջնջեալ է զոր ինչ մեք ի մտի *ունիմք*. որպէս ասացաւ ի վերոյ: - 433. Դարձեալ, ժամանակն *ունի* մասունս երիս...: - 437-438. Եւ հրաւիրակք են անուանեալ քրիստոնեայք. որք *չունին* զգործս՝ նոքա փուքով հանին ի բաց: - 440. Այսինքն թէ՝ *ունի* զմարգարէութեանն, և զսքանչելեացն խնդրէ: - 445. Եւ *ունի* այս կրկին իմացումն: - 458. Իսկ ի մօր կողմանէ՝ մարիամ էր ի քահանայից ցեղէն, զի մատթան քահանայն բնակէր ի բեթլէհէմ, և *ունէր* երիս դստերս: - 460. Որպէս ահարօն *ունէր* զդուստրն ամինադաբայ՝ զքոյրն նայասոնի իշխանին յուդայ: - 461. Այսպէս և յովակիմ ի յուդայէ՛ էր և *ունէր* զաննա զդուստր մատթանայ ի ցեղէն ղևեայ. վասն այն ազգական մարիամու զեղիսաբեթ ասէր գաբրիէլ: - 461. Չորրորդ՝ զի մի՛ վատահամբաւ լիցի ընդ ծնանիլն իբր ոչ *ունելով* այր: - 461. Ութերորդ՝ զի մի՛ հրէայքն համարելով զքրիստոս ո՛չ *ունելով* օրինաւոր ծնունդ՝ երևեցին յիրաւի ի հալածելն զնա: - 461. Եւ *ունի* երիս ներգործութիւնս: - 462. Ա՛րդ՝ *ունէր* սուրբ կոյսն զհասարակ շնորհացն մկրտութիւն: - 462. Նաև *ունէր* զշնորհս սրբութեան արգանդին. զի յորովայնէ՛ սրբեցաւ յարգանդէ: - 462. Եւ *ունէր* շնորհօք արգելք ի մեղաց մահու չափ և ներելապէս. որպէս յովհաննուն և երեմիային: - 463. Այլ և ի վերայ ա՛յնր՝ *ունէր* և զերրորդն սրբութիւն...: - 463. Զի *ունի* մայրական խնդութիւն հանդերձ կուսութեան պատուով: - 463. Երկրորդ՝ զի հրեշտակք ի հարկէ բնութեան *ունին* զկուսութիւնն. իսկ աստուածածինն զայն պահեաց մաքրութեամբ մարմնով զկուսութիւն ողջախոհութեան: - 463. Իսկ ողջոյնս այս *ունի* համազուգիլ ընդ ամենայնսն: - 464. Դարձեալ ողջոյնս այս՝ *ունի* նշանակութիւն գերազանցութեան կուսին. բնութեան, շնորհաց, և փառաց: - 464. Իններորդ՝ վասն հաստատ ժառանգութեան խոստացելոյն. զի մի՛ ասիցէ ոք ցհայր, տէր դու *ունիս* որդի և ժառանգ: - 468. Նա միա՛յն էր մայր և կոյս. որ ընդ աստուծոյ *ունէր* զորդին: - 469. Եւ որպէս ասացաւ *ունի* մայրական խնդութիւն հանդերձ կուսական պատուով: - 469. Այլ և *ունէր* հայր ի յերկինս, և մայր ի յերկրի. իսկ անդ հայր առանց մօր. և աստ մայր առանց հօր: - 470. Նա՛խ՝ զի այն ո՛չ *ունէր* ծնունդ: - 470. Երկրորդ՝ զի զօրութեամբ *ունի* և ոչ է ներգործական մասն: - 470. Ո՞րպէս է միածին որ այս քան ծնունդ *ունի:* - 472. Երրորդ՝ զի նա՛ միա՛յն է ի հօրէ ծնեալ. և *չունի* եղբայր: - 472. Ութերորդ՝ նա՛ միա՛յն է ծնունդ ի հօրէ և ո՛չ երբէք հայրանայ. զի ո՛չ *ունի* յինքենէ ծնունդ որպէս նա՛ ի հօրէ: - 472. Անդրանիկն անուն կրկին *ունի* իմացումն: - 472. Այլ և անդրանիկ ծնաւ ի մօրէ առաջին ծնունդ. թէպէտ ո՛չ *ունի* եղբար ի կուսէն, անդրանկութիւն իւր ո՛չ խափանի: - 472. Այսպէս և մարդկութիւնն միաւորեալ ընդ բանին՝ ո՛չ *ունի* տգիտութիւն ինչ մարդկային. այլ գիտէ զամենայն աստուածաբար: - 477. Իսկ բանն աստուած կատարեալ լրիւ մարդացեալ բովանդակապէս. հոգի մարմին և միտս *ունելով* անչփօթ կատարելութեամբ և անբաժ ենթակայութեամբ: - 479. Երրորդ՝ զի քրիստոս զչափ հասակի զադամայն *ունէր*, որ նախ քան զյանցանս և ադա՛մ ոչ *ունէր* հիւանդութիւն և ո՛չ ծերութեան փոփոխումն: - 480. Ասեն վարդապետք եթէ՝ որպէս մարգարէքն և առաքեալքն զխօսեցեալ բանս իւրեանց ի ձեռս *ունին* իբր պատգամաբեր յաստուծոյ առ մարդիկ: - 481. Նոյնպէս և փրկիչն զիւր աւետարանն ի ձեռն *ունի:* - 481. Զայս որպէս ձեռին գիր *ունէր* սատանայ, և նովաւ չարչարէր զմարդիկ՝ թէ աստուած ասաց մի ուտել և դու կերեր և մեռար. իմ ի՞նչ մեղք է: - 481. Զոր *ունի* զայս աւանդ այժմ սուրբ և ուղիղ աւանդապահ եկեղեցիս հայաստանեայց ըստ վկայութեանս որ եդաւ: - 484. Զի ո՛չ սկզբնական և ո՛չ ներգործական մեղս ինչ *ունէր:* - 485. ...իսկ քրիստոս ո՛չ *ունէր* զմեղս. վայն այն վաղվաղակի ել ի ջրոյն. և նշանակէ ի մեզ զշնորհաց հեղումն. որ մկրտեալն ազատի ի մեղաց և իսկոյն ելանէ յառաքինութիւնս: - 487. Երրորդ՝ ի վախճանն. զի յովհաննուն *ունէր* կարգեալ առ մկրտութիւնն քրիստոսի. զի յա՛յն սովորեցուցանէր զժողովուրդն որ էր կատարեալ մկրտութիւն: - 488. Աիեակն ողջախոհ և սուրբ *ունել*

կեանս յանձին: - 493. Զոր օրինակ ի բարձր ուստէք քար հոլովեսցի, և որ մօտն կացցէ ասէ ցնա՝ երթալ *ունիս* մինչ ի ներքին վայր տեղիս և ապա դադարիս: - 497. Եւ *ունի* մահն կրկին յատկութիւն որ ընդ դէմ է երկուց ծայրիցն. այսինքն զի է՛ վախճան կենաց՝ և է՛ սկիզբն կենաց: - 497. Իսկ զի անապական է մարմին կենարարին՝ է՛ ի դաւանութենէ հաւատոյ. զոր *ունիմք* և եմք անփոփոխ: - 498. Իսկ տէր մեր զի էր աստուած մարդացեալ՝ ո՛չ *ունէր* ակամայ կիրք. այլ զկամաւորն: - 502. Ասեմք մեք, թէ արտածորումն մարմնոյ ո՛չ *ունէր* մարդն ադամ նախ քան զմեղանչելն ի դրախտին. որպէս նոյ ի տապանին. և մանուկն ինննամսեայ յարգանդին: - 502. Յայնժամ փախուցեալ սատանայ իբր զապստամբ ծառայ. և մտեալ յորջն դժոխոց կարծէր ամրանալ անդ և *ունել* զհոգիսն: - 503. Որ և անդ ժամանեաց տէրն և կապեաց զհզօրն. և զկարծրացեալ ամրոցն աւերեաց. և կողոպտեաց ի նմանէ զհոգիսն մարդկան որ յադամայ հետէ ընդ բռամբ *ունէր:* - 503. Իսկ միջին դժոխք որ կոչի բանտ դժոխոց՝ է՛ միջակ մեղաւորաց. որք *ունին* հաւատ և ո՛չ գործք. որպէս չար հաւատացեալք. կամ գործք և ո՛չ հաւատ. որպէս թերահաւատք և անհաւատք: - 505. Իսկ վերջին դժոխք որ կոչի անջրդի գուբ, նոցա՛ է որք ո՛չ *ունին* չար և ո՛չ բարի. որպէս մանկունք անմկրտեալք. ո՛չ տանջին զի չեն մեղանչեալ. և ո՛չ հանգչին զի չեն արդարացեալ. այլ վասն սկզբնականին մնան յանջրդի գուբն խաւարին: - 505. Ա՛րդ՝ ի կենդանեաց երկոքինն պահանջին. իսկ հոգւոցն բաւակա՛ն է միայն ներքին իմացումն զի *չունին* մարմին: - 508. Եւ տե՛ս, զի լուսաւորիչն կարգեաց զնաւակատիսս յայսմ աւուր որ էր յաւուրս նիկիական ժողովոյն. զոր յառաջն *ունէին* ամենայն ազգ, զնոյն կարգեաց մեզ: - 509. Զմիս կենդանւոյ, որ կատարեալ կենդանի է և ի կենդանւոյ յառաջ եկեալ. այն է կատարեալն որ **ե** զգայարանս *ունի* և շարժի և շունչ *ունի*. և է՛ այս կերակուր ուտեաց և զատկի: - 510. Իսկ ձուկն կենդանի՛ է կատարեալ զգայարանօք և շարժմամբ. այլ զտուր և առ շնչոյ ո՛չ *ունի*. վասն այն պակա՛ս է: - 510. Ասեմք, զի ո՛չ *ունին* շունչ օդոյ այլ շունչ ջրոյ. և հանեալ ի ջրոյն պակասի շունչն. որպէս ասացաւ ի վերոյ ի **ծը** գլուխն ի **զ** համարն: - 511. Վեցերորդ ասեն ձուկն արիւն ո՛չ *ունի:* - 511. Ասեմք եթէ՝ մողեզն և կոկորդիլոսն որ քարթոշ ասեն, և յերկրի ազգի ազգի զեռունք արիւն ո՛չ *ունին:* - 511. Եվ դարձեալ՝ զձու և զկաթն վասն այն ո՛չ ուտես զի արիւն *ունին*. և դարձեալ դու ասես թէ արիւն ո՛չ *ունին:* - 511. Այլ ես ասեմ թէ արիւն *ունին* յայտնապէս, թէպէտ փուքով ցամաքի: - 511. Իսկ պատանքն ո՛չ ծալեալ. զի խորհուրդ տնօրէնութեանն ո՛չ ամենևիմբ յայտնի է և ո՛չ անյայտ. որպէս կտաւն բազո՛ւմ *ունէր* փոթուածս: - 517. Վասն է՞ր ոչ ետ թոյլ մերձենալ մարիամու. և այն զի ի ճանապարհին *կալան* զոտս նորա և համբուրեցին ա՛յլ կանայք: - 517. Չորեքտասաներորդ, զի ցուցցէ թէ յայսմ հետէ արքն միա՛յն *ունին* իշխանութիւն մերձենալ առ ի պատարագել. և ո՛չ գոյ համարձակութիւն կանանց յայս գործ: - 518. Զի արտաքս հանելով ցուցցէ ո՛չ *ունել* քաղաք որ աստէն մնալոց իցէ: - 519. Իսկ հուրն կրկին *ունի* յատկութիւն. որ է լոյս և սրբիչ հաւատացելոց. պատիժ և այրիչ անհաւատից: - 525. Այս է. զի հաւատն *ունի* **գ** յատկութիւն. որ է՛ հաւատն. և հաւատալն. և հաւատալին: - 531. Որպէս ասէ առաքեալն, «գլուխ կնոջ ա՛յր է». զի կինն յառնէ՛ն է և բնութիւն նորա *ունի:* - 532. Եւ այլ բազում ինչ *ունիմք* հաւասարութիւն. որպէս ցուցանի յառաջիկայդ ի **լը** համարն: - 533. Մի կոչի եկեղեցի՝ ո՛չ տեղեաւ մի. այլ միով հաւատով և յուսով կոչմանն. և միոյ մօր և մի որովայնի ծնունդ աւազանին. և մի կերակուր որ է տեսութիւն աստուածային գրոց. և մի մարմին և արիւն փրկական. և մի գլուխ և պսակ և զգեստ *ունիմք* զքրիստոս: - 533. Երրորդն ի միոջէ և առ մի. որպէս բժշկական դեղ և գործիք. նոյնպէս մի է եկեղեցի յիւրաքանչիւր ազգս. զմի և զնոյն *ունելով* գործ և իր ի միոյ գլխոյն առ մի անդամքս. ի միոյն քրիստոսէ առ մի քրիստոնեայքս. ի միոյ հաւատոյն առ մի հաւատացեալքս...: - 533. Իբր զի հոմանուն է եկեղեցի և *ունի* **դ** նշանակութիւնս. որ է՛ ստորինս. և վերինն եկեղեցի. և շինեալք ի մէնջ. և հաւատն ժողովարան մեր: - 534. Կրկին իշխանութիւն է զոր *ունի* քահանայն. զի կապելն որոշելն է. սարկաւագին որ որոշէ՛ զանմաքուրն յեկեղեցւոյ: - 538. Այլ վերնագոյն է քահանայն. վասն որոյ *ունի* զկրկինն: - 538. Ասեմք, եթէ որք ի հաւատս *ունին* թիւրութիւն. որպէս հերձուածօղք և վնասիչք եկեղեցւոյ. և որք ի զազիր վարս պղծեալ են գործովք և վնասեն զինքեանս. և անզեղջք են առ երկոսին. յետ մի անգամ և երկիցս խրատելոյ, որոշեցին յեկեղեցւոյ և պատժեսցին: - 540. Այսպէս լիցի ամենայն անհնազանդ կապեալ. վասն որոյ այնպիսին կրկին *ունի* պատիժ: - 540. Ասեմք առ այս, եթէ համակա՛րգ են քահանայք կամ եպիսկոպոսք որպէս առաքեալքն. այլ *ունին* զվիճակ և ժողովուրդ այլ և այլ: - 541. Եւ համակա՛րգ է նոցա ըստ առաքելութեան և ըստ քահանայապետութեան. զի ամենայնքն համահաւասար զիշխանաութիւն առաքելութեան և քահանայապետութեան *ունէին:* - 546. Եւ թէ ոք ասիցէ, երևի թէ առանձին իշխանութիւն *ունի* քան զայլսն: - 547. Այսուցիկ սուրբ հարց և սիւնհոդոսաց հնազա՛նդ եմք. և զնոցա կանոնքն *ունիմք* և

զդաւանութիւն, և պահեմք մինչև յելս շնչոյ մերոյ: - 547. **Ա՛րդ՝ ե՛կ ես և դու փորձեսցուք թէ ով զդաւանութիւն առաքելոյն *ունի* և զկանոնքն՝ նա՛ է հնազանդ նմա**: - 548. **Դարձեալ ասեմք թէ՝ երեք առաքեալս *ունին* հայք: - 549. Եւ ի գալն յերկիրս հայոց, ետուն նմա օգնական զիւղն օծման զոր քրիստոս օրհնեալ էր. և զգեղարդն. և այլոց ազգաց չկա՛յ այս պարծանքս. զի մեր մեռոնս հանապազ և միշտ զնոյն շնորհ *ունի:*** - 549. **Այլ թէ գիր *չունէր* մեր ազգս, տե՛ս զի յաստուծոյ տուաւ մեզ գիր, որպէս մովսէսիւ իէլի. և այլ ո՞ր ազգ պարծի այսու**: - 549. **Այլ արդ՝ ազգս հայոց *ունի* զառաւել ճշմարիտն և զառաւել բարին ի դաւանութիւնն և ի կարգս. այսինքն ի հաւատս և ի գործս**: - 550. Այսպէս և ամենայն ազգք քրիստոնէից զնոյն *ունէին* ճանապարհ դաւանութեան և աւանդութեան յառաքելոց անտի մինչ ի ժողովն քաղկեդոնի. և յետ անտի բաժանեցան ամենայն ազգք յամենայն իրս, որպէս յա՛յտ է յիւրաքանչիւր եկեղեցիս: - 551. **Իսկ մերս դաւանութիւն ամենայնիւ նոյնն եկաց մնաց զոր *ունէր* նախ ի սրբոյն գրիգորէ՛ լուսաւորչէ և ի նմանեաց նորա:** - 551. Դարձեալ, բնաւորեալ է մարդոյ՝ զի ամենայն ոք կարծէ զինքն ճշմարիտ և արդար. այլ որ *ունի* զճշմարտութիւնն նա՛ է ճշմարիտ և արդար: - 551. Այսինքն է, զազգս քրիստոնէից տեսանեմք զի ո՛չ ըստ անուանն և զմիութիւն կանոնական սահմանի *ունել:* - 553. Զի ահա՛ լատինացիք առանձնականս *ունին* աւանդութիւնս...: - 553. Վեցերորդ՝ զծև զգեստուն այլաբա՛ր *ունել:* - 553. Եօթներորդ՝ ի պահս և յաղօթս և յայլ աւանդութիւնս բազում *ունել* որոշումն: - 553. Հինգերորդ՝ ոմանց թլփատութիւն *ունել:* - 553. Եւ այսպէս բազում *ունելով* իւրաքանչիւր ոք սահմանս առանձին, միայն հայք նախատեալ լինին որպէս ո՛չ *ունել* միաբանութիւն ընդ այլս ի քրիստոնէից. այլ առանձին միայնաբար ընթանալ. և այսու որպէս հակառակ եպերեալ: - 553. Երկրորդ՝ ի յաղուհացսն ո՛չ *ունել* հրաման պատարագ մատուցանել բաց ի շաբաթէ՛ և ի կիրակիէ՛: - 554. Երրորդ՝ առ քահանայս զգուշութիւն օրինօք *ունել*. թէպէտ և ոմանք կաղան առ այս: - 554. Եւ ըստ այսմ միաբանութեան և զմէրս տեսանեմք եկեղեցի *ունել* եզով միաբանութիւն առ այլ քրիստոնեայս: - 554. Տե՛ս զի ո՛չ բանիւ և ո՛չ գործով էր, այլ միայն ի միտս *ունէին* և յանդիմանեցան ի տնէ: - 557. Այլ զանազանին. զի հպարտն ի ներքուստ *ունի* զբարձրամտութիւնն. և փառասէրն յարտաքուստ յայլմէ՛ բերանոյ ընդունի զփառս գովութեան: - 560. Երրորդ՝ զի շղթայք մեղաց այսպէս *ունին* զկարգն. զի նախ որկորստութեամբ լնու զորովայնն. և յետ այնորիկ պոռնկութեամբ թափէ՛ զնա. և ապա՛ արծաթ ժողովէ զի լնու զորովայնն և պոռնկի...: - 561. Եօթներորդ՝ զի որ հպարտքն են ոչ *ունին* հանգիստ մտաց և մարմնոյ. քանզի որ քան մարդ խոնարհէ՝ այն քան հանգիստ է: - 562. Երկրորդ ի միտ առ, զի որ առաւել գիտութեամբ և կամօք մեղանչէ, առաւել պատժի քան զայն որ նուազ գիտութիւն *ունի* և կամք...: - 563. Նոյնպէս զցանկութիւնն ի շնութիւն և ի պոռնկութիւն յաւելու հանապազ. զոր անասունք յիւրեանց ժամանակին *ունին* զխառնումն: - 564. Եւ զցանկութիւնն զոր *ունիմք* առ բարին, փոխեմք և ցանկամք չարեաց: - 564. Երկրորդ՝ գործօղն որ *ունիցի* զճշմարտութիւն ինչ կարգի՝ թողու զայն և գործէ՛ զմեղս: - 564. Նոյնպէս և Կալն և *Ունելն* զամենայն մահու չափ մեղս. թէ գործեալ է և թողեալ. զի որ հաստատեալ է մեղքն յինքն, առաւել մեղանչէ: - 565. Երրորդ՝ զի *չունէին* պատճառս հայհոյութեան հոգւոյն որպէս զորդոյ. զի տեսանէին մարմին զգեցեալ, ուտել և ըմպել, տքնիլ և ննջել: - 566. Հինգերորդ՝ նման սատանային լինին որք ուրանան զպատճառն գոյութեան հոգոց իւրեանց. յիրաւի ապա որպէս սատանայ ո՛չ *ունի* թողութիւն ի կեանս յայս և ո՛չ ի հանդերձեալն և գործ *ունէի* նմին: - 566. Զի սուտ է բառնալն զոր *ունի:* - 568. Եւ զուրն է դնել զոր ո՛չ *ունի:* - 568. Դարձեալ զանազանին սոքա ըստ սեռին. զի գործ մեղացն է ի սեռս առնելոյն. և պատիժն ի սեռս կրելոյն. և ունակութիւն ի սեռս *ունելոյն:* - 569. Եւ որպէս ա՛յլ է *ունելն* և առնելն և կրելն. այսպէս ա՛յլ է ունակութիւն մեղաց. և առնել զմեղս. և կրել զպատիժս: - 569. Ագահութիւն է անկերպ ցանկութիւն *ունել* յինչքն: - 570. Եւ ա՛յս է մեծագոյն չար աշխարհի. զի չէ աւելի աղքատ քան զայն որ ցանկայ աւելի *ունել:* - 570. Ա՛յս է քաղցն որ կշտումն ո՛չ *ունի:* - 570. Դարձեալ՝ յոյսն է ունակութիւն մտաց յղացեալ յառատութենէն աստուծոյ. *ունելով* կեանս յաւիտենական՝ բարի արդեամբք: - 574. Երկրորդ զօրացուցանէ. որպէս յա՛յտ է ի մակաբայեցւոցն զկնոջէն որ *ունէր* է որդիս՝ ածեալ ի սպանումն ի միումն աւուր տեսեալ. և տանէր այնմ՝ յուսովն որ առ աստուած. նոյնպէս և ամենայն դասք մարտիրոսացն յուսով զօրացան: - 574. Երբեմն զնշանակ սիրոյն. ըստ այսմ որ ասէ՝ «մեծագոյն սէր ո՛չ ոք *ունիցի*». այսինքն մեծ նշան սիրոյ: - 575. Եւ այսպէս հաւասարութիւն *ունին* սոքա: - 577. Եւ այս տուեալ է յաստուծոյ ընդ դէմ նոցա որ հաստ և բութ *ունին* զիմացումն: - 582. Խրա՛տ է լոյս հոգւոյ առ ի *յունել* զհոգին. որ յերկրայինս և ի մարդկայինս ո՛չ շաղախի: - 582. Զօրութիւն է *ունել* ինչ որով տանի չարչարանացն: - 582. Եւ աղքատք հոգւով են ըստ մարմնոյ աղքատքն. որք ոչ ինչ *ունին* և զամենայն

ինչ *ունին:* - 583. Այն որ աստուածային տրտմութիւնն է, *ունի* **դ** յատկութիւնս: - 584. Իսկ աստուածային խնդութիւնն *ունի* դարձեալ **դ** յատկութիւնս: - 584. Զառաջին վեցն *ունիմք* յաւետարանէն. և զեօթներորդն ի տուբիթայ: - 585. Դարձեալ խնդրի որ մկրտօղն *ունիցի* դիտաւորութիւն որ այն մտօքն մկրտէ զոր բոլոր եկեղեցին: - 588. Եօթներորդ, զի մկրտելն է գործ քահանայի. և քահանայութիւնն է սպասաւորութիւն աստուծոյ. իսկ զայս սպասաւորութիւն աստուծոյ և ո՛չ կռապաշտքն *ունէին* սովորութիւն սնոտի կռոցն ի ձեռն կանանցն մատուցանել զպատարագն...: - 589. Ութերորդ, զի թէ զզենումն կենդանեաց ո՛չ *ունին* հրաման զենուլ ազգ կանանց որ է՛ խտրութիւն մարմնաւոր սրբութեանց. զիա՞րդ պատշաճի տալ հրաման կանանց ազգի մերձենալ ի կարգ հոգևոր սրբութեան: - 589. Բայց գիտելի է, զի գործ մկրտութեանն է սրբել զհոգիս յամենայն մեղաց զոր *ունիցի*. թէ բնական թէ ներգործական և ի պատժոց մեղացն. զի թէ նոր մկրտեալն մեռանի, առ ժամայն թռչի ի կեանս յաւիտենականս: - 590. Այլ կնքահայր ո՛չ է պարտ առնել զայլազգին. զի ո՛չ *ունի* զհաւատն սուրբ, և ո՛չ է հրաժարեալ ի սատանայէ. վասն որոյ ո՛չ կարէ լեզու լինիլ տղային կամ երաշխաւոր...: - 591. ...զի նա որ ոչ *ունի* զհաւատ, այլոց ո՛չ կարէ միջնորդել: - 591. Արդ փոքրիկ տղայն ո՛չ վասն այն տանջի թէ ադամ եթող զայն. այլ զի ինքն զարդարութիւնն զայն ո՛չ *ունի* վասն այն տանջի: - 591. Եւ վասն այն ամենայն ոք *ունի* զսկզբնական մեղքն...: - 591. ...և առանց ցանկութեան մեղաց ո՛չ ոք կարէ ծնանիլ. բայց միայն տէր մեր որ առանց ցանկութեան ի կուսական արգանդէ ծնաւ՝ ո՛չ *ունէր* զմեղս սկզբնական: - 592. Արդ *ունիմք* կրկին ծնօղ. ըստ մարմնոյ զադամ. և ըստ հոգւոյ զքրիստոս: - 592. Եւ թէ ոք ասիցէ, զդրոշմն ո՛չ *ունիք*. զի եպիսկոպոսն տայ որպէս ազգն Ֆռանկաց: - 594. Դարձեալ ասեմք թէ՝ քահանայքն մեր *ունին* իշխանութիւն դրոշմելոյ զոր նոցա եպիսկոպոսն դնէ. ապա ուրեմն իշխանակիցք են քահանայք մեր և եպիսկոպոսք նոցա: - 594. Այս ըստ հակառակասիրութեան նոցա ասի. այլ ըստ ուղղութեան՝ քահանայն *ունի* իշխանութիւն զեօթն խորհուրդ եկեղեցւոյ կատարել. և եպիսկոպոսն առաւել *ունի*. զի միայն տայ զկարգն, եկեղեցի օրհնէ և սեղան: - 594. Երկրորդ *ունիմք* վկայութիւն ի քրիստոսէ յորժամ ետ զարիւնն ի տեսակ գինւոյն՝ ասաց, «ո՛չ արբից ի բերոյ որթոյ մինչև արբից զդա նոր արքայութեան հօր իմոյ». և ջուրն ո՛չ է բեր որթոյ: - 595. Երրորդ վկայ *ունիմք* զմարգարէս և զառաքեալս...: - 595. Եւ թէ ասեն՝ ջուրն կրկին յատկութիւն *ունի*. այսինքն զովացնէ և լուանայ: - 596. Եւ թէ ոք ասիցէ, կարողութիւն *ունի* քահանայն բազում հացս օրհնել: - 597. Եւ սուրբ լուսաւորիչն զոր ի ժամանակին այնմիկ էր՝ զա՛յն կարգեաց ի մերս եկեղեցի. և *ունիմք* հաստատապէս: - 599. Եւ զպատառն զայն զոր ի ձեռն *ունէր* քրիստոս՝ ետ ի նա...: - 599. ...որ ո՛չ ուտէ զմարմին իմ և ո՛չ ըմպէ զարիւն իմ, ո՛չ *ունի* կեանս: - 600. Եւ ապաշխարութիւնն **գ** բաժին *ունի*. այսինքն զղջումն սրտի. խոստովանութիւն բերանոյ. և ապաշխարութիւն գործով: - 601. Ո՞րչափ իմաստութիւն *ունէր:* - 601. Եւ գիտելի է, զի մարդ որ ի մեղք անկանի և իմանայ զինքն որ մեղք գործեաց, և *ունի* զխոստովանահայրն պատրաստ ուղղափառ և գիտուն, ի յա՛յն պահն պարտի խոստովանիլ: - 601. Թէ կրօնաւոր է՝ հարցանէ թէ ծոյլ եղեա՞լ է յաղօթքն. կամ անհնազանդ. թէ բղջախոհ. թէ յատուկ իրք *ունօղ*. թէ պճնօղ. թէ որոնօղ լաւ կերակրոց և ըմպելեաց. թէ քնափ և թէ կռւօղ: - 601. ...այս է որ ի միտ *ունի* խոստովանիլ և դարձեալ մեղանչել...: - 603. ...որպէս ազգն Ֆռանկաց *ունին* զայսպիսի խոստովանութիւնս միշտ քահանայքն և ժողովուրդքն. և այսպիսիս անկատար առնու զթողութիւն...: - 603. Նաև կատարեալ խոստովանութիւնն *ունի* զերիս մասունս ապաշխարութեան: - 603. Նա՛խ՝ թէ խոստովանահայրն *չունի* իշխանութիւն արձակելոյ. կամ ընդ բանիւ արգելեալ է: - 603. ...զի պարտ է զոր ի մտի *ունի*՝ զբոլորն միոյ քահանայի խոստովանիլ: - 603. ...թէ մեղս *ունիցի*՝ թողցի նմա...: - 604. Եւ թէ ոք ասիցէ՝ օծումն խորհո՛ւրդ է. ընդէ՞ր մեք ո՛չ *ունիմք:* - 604. Ասեմք թէ, *ունիմք* զխորհուրդ օծմանն, այլ ծածկապէս. որպէս ի մկրտութիւնն...: - 604. Այլ և զայս օծումնս *ունիմք* ի յոտնալուայն: - 604. Այլ և զայս օծումնս *ունիմք* ի ննջեցեալ քահանայս: - 604. Եւ թէ ոք ասիցէ, զառաջին օծումն որ նախ քան զմկրտելն՝ ո՛չ *ունիմք:* - 605. Ասեմք թէ՝ և զայս *ունիմք* ծածկապէս. որպէս այն որ ի ջուր աւազանին խաչանման մեռոնն խառնի...: - 605. Եւ վասն այն զանազան իւղ ո՛չ *ունիմք*, բայց միայն զմեռոնն սուրբ...: - 605. Դարձեալ և զօծման խորհուրդս *ունիմք* ի քահանայս ննջեցեալս. - 605. Եւ ի համբառնալն *կալան* հրաման վերագոյն. առաքելով զնոսա ընդ տիեզերս: - 607. ...որք *ունին* զաթոռ չորից աւետարանչացն. որ փոխանակ չորեքկերպեան կենդանեացն եդան աւետարանիչքն: - 607. Եւ *ունին* զգեստ՝ նափորտ բազմախաչ. և ի վերայ եմիփորոն **ե** կրկին խաչիւ զարդարեալ: - 607. Եւ **գ** արքեպիսկոպոսք *ունին* իշխանութիւն ձեռնադրել զպատրիարգսն: - 607. Երրորդ՝ Մետրապօլիտք. որք են մայրաքաղաքացիք. և *ունին* սըքեմ զնոյն. բայց եմիփորոն **գ** կրկին: - 607. Եւ **գ** մետրապօլիտք *ունին* իշխանութիւն

ծեռնադրել զարքեպիսկոպոսունս իւրեանց: - 607. Եւ *ունին* զնոյն սքեմ. բայց եմիփորոն կրկին: - 607. Եւ *ունին* նափորտ կրկին: - 608. Բազկուրար յահեակ բազուկն ուսովն ածեալ՝ և կապեալ ի վերայ արմնկանն ի կախ *ունելով:* - 608. Երրորդն ասեն եթէ՝ **բ** ազգն գեթսոնի և **բ** գունդն մերարեայ՝ զչորս փոքրիկ աստիճանս *ունէին* ի խորանն. զպահպանութիւնն մինչ ի ջահընկալն որ զաշտանակն բառնային. և որդիքն կահաթու էին բարձրագոյնք: - 609. Դարձեալ՝ պսակն է զուգաւորութիւն արուի և իգի. *ունելով* անբաժանելի կենցաղավարութիւն: - 609. Զայս *ունի* խորհուրդ, որ հարսն և փեսայն յառաջ քան զպսակն տեսանեն զմիմեանս. և հաւանին սրտիւք և կամօք և ապա՛ պսակին: - 610. ...վասն զի *ունիմք* զմարմին և հոգի և օրէնք: - 611. Զի եղբայրն և քոյրն *ունին* զբոլոր արիւն ծնողին...: - 612. ...և նոցա որդին որ է՛ թոռն հօրն՝ *ունի* զկէս արեանն. և թոռին որդին զերրորդ մասն. և թոռին թոռն զչորրորդ մասն: - 612. Ա՛րդ՝ **բ** եկեղեցոյս մին է անուն. և *ունին* բազում բաղդատութիւն ըստ մի անուանն: - 613. Վեցերորդ օրհնեմք, զի բաժանեսցի յայլ աշխարհական տանց որք ո՛չ *ունին* զօծումն սրբութեան: - 615. Զայս *ունի* խորհուրդ օրհնութիւն եկեղեցւոյն: - 615. Իններորդ, զի եկեղեցի հաւատացելոց՝ *ունի* զձև խաչին ըստ մարմնոյ...: - 616. Վեցերորդ՝ արտասուքն զզղջումն և զսուգն նշանակէ՛ զոր *ունիմք* վասն մեղաց: - 619. ...և միւսն երախայ և ո՛չ *ունի* լեզու, միայն լայ. և մայրն գթայ ի յարտասուքն և տայ կերակուր: - 620. Իսկ մեք ո՛չ ոտք և ո՛չ լեզու *ունիմք*. այլ տհաս և տգէտ...: - 620. Իսկ եկեսցէն *ունի* սաղմոսս **թ** փոխ բոլոր. պահապան **թ** ժամուց հանապազորդ գիշերոյն: - 622. Նա՛խ՝ վասն զի հոգին եռամասնեայ է. բան, ցասումն, և ցանկութիւն. և *ունի* իմացումն և կամք: - 622. Եւ դարձեալ՝ հոգին *ունի* **ե** ներքին զգայարանք...: - 622. Երրորդ՝ զի *ունիմք* զբնութիւնս հասարակ՝ պա՛րտ է հասարակ աղօթել. և զի *ունիմք* անձն և դէմք յատուկ՝ պա՛րտ է առանձնակի աղօթել: - 623. Դարձեալ՝ *ունիմք* **բժ**ան անդամք. ըստ իւրաքանչիւրոցն մի մի ժամս աղօթեմք: - 624. Իսկ սկսուածն ընդ երգոյն խառնեալ, Նախ նշանակէ՛ թէ զմարգարէից և զառաքելոցն բանս ի միասին խառնեալ *ունի* նորս եկեղեցի: - 627. Իսկ ի կիրակէի խնկարկելն և **ժ** օրհնութիւնն՝ նշանակէ զտասն քաղաքացն իշխանութիւն *ունել*. և **ժ** քանքարացն: - 628. Իսկ ի պահս ո՛չ խունկ և ո՛չ օրհնութիւն. զի ընդ ապաշխարութեամբ եմք, ո՛չ իշխեմք գոհանալ և ո՛չ *ունիմք* անուշահոտ վարս: - 628. Այլ և ոմանք ի հանդերձեալն ո՛չ *ունին* պատասխանի առաջի ահաւոր բեմին քրիստոսի: - 628. Նոյնպէս նոյ և աբրահամ մի *ունէին* օրէնք: - 629. Անբիծքն զի՞նչ խորհուրդ *ունին:* - 630. Եւ դարձեալ թէ՝ այսպէս սուրբ *ունիմք* զմիտս և զհոգիս մեր: - 635. Չորրորդ՝ զի մասունք արարածոց ձայն *ունին* և բան *չունին...* - 641. Զի մեծ զատկի կիրակէն առաջի ձայն լիցի. որ զյարութեանն *ունի* խորհուրդ: - 641. Դարձեալ՝ *ունի* զխորհուրդ անկմանն ադամայ որ վերջին խօսեցաւ աստուած և եհան ի դրախտէն: - 641. Այլ և *ունի* զխորհուրդ վերջին աւուրն որ կատարա՛ծ է աշխարհի: - 641. Զնոյն կարգ և ա՛յժմ *ունի* եկեղեցի: - 643. Երկրորդ, սա՛ զամենայն գրելոց զօրութիւնս յինքն *ունի*...: - 643. Իսկ սաղմոսն զամենայն յինքն *ունի*. զանցելոյն զներկայիս և զապագային...: - 643. Իսկ քեզ վայելէն, զարարչութեանն *ունի* խորհուրդ. այլ և զտնօրէնութեանն և զկատարածին...: - 644. Զի այժմ յուսով լցեալ *ունին* ի հոգիս իւրեանց զփառս և զպայծառութիւն գործոցն: - 648. ...որպէս յառաջն *ունէին* ամենայն ազգք քրիստոնէից. և դեռևս պահէ՛ ազգն դպտի և հապաշի: - 650. Եւ զայս *ունին* սկիզբն և հիմն պահոց ամենայն ազգ քրիստոնէից զոր նոքա լուծանեն: - 651. Ուստի՞ *ունիմք* վկայութիւն վասն պահոց: - 652. Իսկ շաբաթապահքն բազում *ունի* նշանակ: - 653. Ութերորդ, զի *ունիմք* **բ** առաքինութիւն. այսինքն տեսական և գործական...: - 654. Զի գոհութիւնն կրկին զօրութիւն *ունի*...: - 655. Նոյնպէս զայս ի քրիստոսէ *ունիմք* քրիստոնեայքս: - 655. Եւ զայս ա՛յլ ազգք ո՛չ *ունին*. այլ ի մէնջ են սովորեալ: - 656. Նախ՝ զի հաւասարութիւն *ունիմք* առ միմեանս. այլ և կարգ. որ է՛ առաջին միջին և վերջին: - 656. Երկրորդ, որպէս կենդանւոյն աղ, նոյնպէս ի կեանս մեր հանապազ պա՛րտ է ի լեզուս *ունել* զօրհնութիւն և զփառս աստուծոյ: - 658. Եւ նոյն զքահանայթաղէքն, որ *ունի* է աւետարան. և զաշխարհական թաղումն, ի յայրարատ գաւառի ի վաղարշապատ քաղաքի ի վկայարանս սրբոյն հռիփսիմի. յետ **ճժա** ամի սրբոյն գրիգորի. զի մինչև ցայն հնովն վարեին: - 659. Եւ գիտելի է, զի հրեշտակք ո՛չ *ունին* զայսպիսի փոփոխմունս. զի ո՛չ են տարրականք, և ո՛չ ընդ ժամանակաւ: - 663. Այսպէս և ի յարութեանն սուրբք զայսպիսի փոփոխմունս ո՛չ *ունին*...: - 663. ...որ ի դատաստանին պատասխանի *չունենայ* թէ ինձ զի՞նչ տուեր որ զքեզ սիրէի: - 664. Չորրորդ, տայ մեծութիւն և նոցա. որք բազում չարիս՝ և մի մասն բարեաց *ունին*... - 664. ...և զայն սակաւ բարին վճարէ՛ աստ, որ ի դատաստանին ակն բարւոյ այլ ո՛չ *ունիցին*...: - 664. ...այլ *ունիմք* թերևս փոփոխումն յուսոյ և սիրոյ...: - 667. Եւ ոչ մի ինչ *ունի* յոյս փրկութեան. ո՛չ օգնական. ո՛չ բարեխօս. ո՛չ ողորմութիւն. և ո՛չ այլ ինչ

այնպիսի որ արաժանաւորացն է: - 669. ...և զիմանալի լոյս շնորհաց ոչ *ունին:* - 669. Այլ երկոքինն *ունին* ի հոգիս իւրեանց մերձ տեսեալ՝ զոր ի յարութեանն առնելո՛ց են կատարեալ անձամբ՝ հոգւով և մարմնով...: - 670. Ո՛չ միայն մարմնով, այլ և հոգւով. թէ *չունի* զմասն բարութեան: - 670. ...զի կնիք է ի հոգին և անքակ. որպէս ի կեանքն՝ նոյնպէս և յետ մահու *ունի:* - 673. Չորրորդ՝ զսէր և զհաշտութիւն նշանակէ զոր *ունիմք* առ նա...: - 673. ...միշտ ի մտի *ունելով*. և պատրաստ տանելով սահմանեալ ժամանակին: - 673. Եւ թէ ոք ասիցէ, անմեղ տղայքն զի՞նչ պէտք *ունին* առաւել թաղման: - 674. Երկրորդ, զի ննջեցեալն եղբա՛յր է մեր և *ունի* բազում պատերազմ, օգնական լինիմք նմա: - 676. Իսկ ի վեր կոյս *ունել* զերեսս մեռելոյն...: - 676. Նա՛խ՝ նշանակէ զակնարկութիւնն ի վեր առ աստուած *ունիլ:* - 676. Եւ երեք աւուր յիշատակ ննջեցելոց *ունի* բազում խորհուրդ: - 681. Նա՛խ՝ զի **գ** թիւն խորհրդաւոր է. որ *ունի* սկիզբն և մէջ և կատարումն: - 681. Եւ **գ** փոփոխումն *ունիմք*. զի նախ յոչ է է ի յէութիւն գամք...: - 681. ...իսկ հրեշտակք զմինն *ունին*. զի յոչ է է՛ եղեն. և զերկուքն *չունին*... - 681. ...իսկ դևք զերկուքն *ունին*. զի յոչ էից եղէն. և փոխեցան ի բարւոյն ի չար. այլ զմինն *չունին*...: - 681. ...իսկ մարդ զերեքեանն *ունի*. վասն որոյ երեքօրեայ յիշատակ կատարեմք: - 681. Նաև **գ** զօրութիւնք են տնկականին. այսինքն կերակրիլն, աճիլն, և ծնանիլն. և մեք *ունիմք* զայս: - 681. Իսկ անարժանքն որ *ունէին* զսիրտն յեգիպտոս, սատակեցան յանապատին և ո՛չ մտին յերկիրն պարգևաց: - 682. Ասեմք թէ որ *ունին* զհաւատ սուրբ Երրորդութեանն և անկան ի սխալանս աշխարհի...: - 683. Արդարքն *ունի՞ն* լիակատար ուրախութիւն, թէ ոչ: - 686. Ո՛չ. զի ըստ այնմ որ զերծան ի չարեաց, միայն ի հոգիս իւրեանց *ունին* զուրախութիւնն: - 686. ...որք *ունին* զհին օրէնս և ո՛չ զնորս. այլ ի ներքոյ մնացեալ սկզբնական մեղաց՝ նոքա ի տանջանս ընթանան: - 678. Որք աստ *ունին* զյաջողակ գործս բարեաց կամ ձախողակ. և նոյնպէս դասին յաջակողմն և ձախակողմն քրիստոսի: - 689. Յոգիք արդարոց կամ մեղաւորաց *ունի՞ն* այժմ զփառս կամ զտանջանս թէ ոչ: - 689. ...որպէս ասէ մեկնիչն տեսլեան. եթէ սպիտակ հանդերձն շնորհացն քրիստոսի մաքրութիւնն է. որ սրբութիւն մեղաց մերոց արար քրիստոս. յոր ամենայնքն վայելեցաք. զի յորժամ սրբի հոգին, բնական *ունի* զպայծառութիւնն: - 690. Ոչ մկրտեալքն կամ չարքն ո՞չ *ունին* տանջանս վասն սկզբնական կամ ներգործական մեղաց: - 690. Որք ո՛չ թլփատեցան ի հինն և ոչ մկրտեցան ի նորս, կամ չարք ի մարդկանէ, *ունին* զդատապարտութիւնն զոր զրկելոց են ի դատաստանին զանազան տանջանս և ո՛չ այժմ: - 690. Դժոխքն նշանակէ զդժուարին և զնեղ տեղիս որ է՛ խորանն ձախակողմեան. ուր մեղաւորքն կրկին *ունին* զտանջանս: - 690. Երրորդ, աներևոյթ են մեղօք և ո՛չ *ունին* զպայծառութիւն բարեաց. որպէս այն որ ո՛չ *ունէր* զհանդերձ հարսանեաց: - 691. Ապա ուրեմն մինչ ի դատաստան ընտրեալքն ո՛չ *ունին* կեանս, և ո՛չ մեղաւորքն տանջանս: - 693. Ապա հոգին առանց մարմնոյ ո՛չ *ունի* ներգործութեամբ ինչ վարձ կամ պսակ: - 694. Այլ յորժամ հոգին միաւորեսցի ընդ մարմնի և յերկուցն լինիցի անձն, յայնժամ կարէ՛ *ունել* ներգործութեամբ զփառս կամ զտանջանս: - 694. Արդ ըստ կատարեալ գործոցն զոր *ունին* յինքեանս՝ եղեն անդրանիկ երանութեամբ և հանգստեամբ: - 695. ...այլ ընկալեալ *ունին* զյոյս անմահութեան և զերանութեանն ի հոգի: - 695. ...քանզի յորժամ սրբի հոգին՝ բնական *ունի* զպայծառութիւնն: - 696. Դարձեալ ասեն, զի՞նչ է փառքն և պսակ արդարոցն, եթէ ոչ տեսութիւնն աստուծոյ զոր *ունին* հոգիքն: - 697. Այլ հոգի դատարկ ի քաւարանին աչս ո՛չ *ունի* զի լացցէ որով յարատ հայեցաւ. և ո՛չ մարմին զի պահեսցէ և աղօթեսցէ. այլ և ո՛չ զղջումն. զի հոգին ինքն ըստ ինքեան ո՛չ կարէ զղջալ: - 699. Եւ որք *ունին* զխռիւն և զխոտ, այրելիք են հրոյ: - 702. զի նա՛ է գազանն որ ել ի ծովէն և *ունէր* գլուխս է. այսինքն զամենայն իշխանս: - 707. ...և ասասցեն՝ թէպէտ մեռաւ իշխանն մեր, սակայն մեք *ունիմք* անհոգութիւն և խաղաղութիւն: - 709. Յազար ամն է թիւ կատարեալ. զի *ունի* զտասն հարիւրեակն: - 710. Զի յորժամ սրբի հոգին ի մեղաց, բնական *ունի* զպայծառութիւնն: - 712. Եւ *ունի* բեհեզն վեց յատկութիւնս որ նշանակէ զվայելչութիւն հոգւոց սրբոցն ելեալք ի մարմնոյ: - 712. Զի գերազանց գո՛րծ է բանին ուսուցանելն զճշմարտութիւնն. և զայս *ունին* վարդապետքն: - 712. Եւ գերազանց գործ ցասմանն է համբերել չարչարանաց. և զայս *ունին* մարտիրոսքն: - 712. Եւ գերեզանց գործ ցանկութեանն է տանել ողջախոհ կուսութեան. և զայս *ունին* կուսանքն: - 712. ...և տան ի բաց զոր *ունին* յաւանդի: - 714. Եւ զբանս օդն *ունի*. եթէ հոգևոր եթէ մարմնաւոր. զի օդով խօսեցաք: - 714. Այսպէս **դ** տարերք զչորեքին գործս մեր ընդ էութեանս *ունին* յաւանդի և յառաջ բերեն: - 714. ...զի հաւատն վարձք ո՛չ *ունի* թէ վկայութեամբ հաստատի: - 717. Այն նիւթն զոր ի ծնողացն *ունիմք*՝ բոլոր առնէ. զի սկիզբն է գոյացութեան մեր...: - 718. Նմանապէս և մարմին մարդոյ առ հասարակ մեռանին և ի հող լուծանին և յայլ տարերս. և յորժամ յառնեն՝ ո՛չ *ունին* ի հասարակ տարրէ ընդ ինքեանս. և այս

մարմին ի յայն մարմնոյ ոչ ինչ *ունի* խառնումն: - 719-720. Վասն զի մարդն յայսմ աշխարհի եօթն պակասութիւն *ունի*. **գ** հոգւոյ և **դ** մարմնոյ...: - 722. Մեղաւորաց մարմինքն ո՞չ *ունին* զզարդս զայսոսիկ: - 723. Բայց եօթն զարդքն զոր *ունին* սուրբքն որք են հարսունք քրիստոսի՝ ո՛չ *ունին* անսուրբքն որք են հարսունք սատանայի: - 723. Զի այժմ հոգիս փոփոխական է. որպէս խորհրդով կամօք և այլն. վասն որոյ զմիաւորութիւնն ընդ մարմնոյ փոփոխական *ունի*...: - 723. Դարձեալ՝ ո՛չ գան ի դատաստան, զի մասն բարւոյ ո՛չ *ունին* որով քննիցին. այլ դատապարտին որպէս ցուցանի յառաջիկայդ: - 725. Եւ որպէս հոգին *ունի* զզօրութիւն իւր անպակաս. նոյնպէս և անդամք մարմնոյն պարտ է լինիլ անպակաս զի իցէ կատարեալ մարդ: - 725. Իսկ մանկութիւնն թերի է զի ո՛չ եհաս ի կատարումն. և ծերութիւնն պակասութիւն *ունի* զի անցեալ է զկատարելութեամբն: - 726. Նա՛խ՝ զի ամենևին ապականացո՛ւք են. և մասն ինչ ո՛չ *ունին* անապականութեան: - 727. Չինգերորդ հալեալ մոմ ո՛չ *ունի* զառաջին կերպն այլ զգոյացութիւնն. նոյնպէս և գոյացութիւնն երկրի ո՛չ կորնչի. այլ պատահմունքն այլայլին. զի ո՛չ ճանաչի թէ այս այն է: - 728. Թէպէտ ո՛չ *ունին* բանք և ոչ խօսք, այլ ընդ ամենայն երկիր ել բարբառ վկայութեան նոցա...: - 729. Այլ և վառ *ունիլ* զճրագ մտաց մերոց և նայիլ զտունս մտաց մերոց և նայիլ զտունս մեր...: - 730. Երկրորդ՝ զի հուրն կրկին *ունի* զօրութիւն. այսինքն զլոյսն և զայրելն. և կրկին լինին մարդիկ. այսինքն արդարք և մեղաւորք...: - 731. Ոմանք դատին և դատապարտին. որպէս միջակք որք *ունին* հաւատ և ո՛չ գործք. որպէս չար հաւատացեալք. և որք *ունին* գործք և ո՛չ հաւատ. զի աստ հատուցաւ նոցա: - 739. Ոմանք դատին այլ ո՛չ դատապարտին. որպէս միջակ արդարքն. որք *ունին* ներելի և մասնաւոր մեղս: - 739. Իսկ վճիռն որ ընդ դէմ չարեացն, *ունի* մասունս **զ**: - 740. Երկրորդ՝ զի ո՛չ *ունին* զլոյս շնորհացն որովք տեսանի աստուած. զի որք աստ ո՛չ տեսին հաւատով, և անդ ո՛չ տեսանեն իմացմամբ: - 740. Առասանքն երեքկղի՝ յերրորդութեանն դիմաց արդարութեան և ողորմութեան զօրութիւնք առ մեզ խոնարհեալ. *ունելով* զյիշատակ բարեացն և չարեացն մերոց: - 745. Եւ նոյնն գոլ ողորմութեան և արդարութեանն գործոց *ունել* հաւասարութիւն: - 746. Երրորդ, հայի առ նոյն ինքն արդարապէս հատուցումն մանրամասն քննութեամբ բարեացն և չարացն. որք առաւել կամ նուազ *ունին*. կամ հասարակ յերկուցն կրից: - 746. Եւ թէ *ունիցին* ըստ օրինացն հաւասարեալ ի գործս կամ ի հաւատս, և եթէ միտեալ և կամ նուազեալ, ըստ նոցին օրինացն հատուցանել. և կամ արտաքոյ օրինացն կորնչիլ ի յայսմ կշռոյ է հատուցումն: - 747. Զի ըստ առաջնոյն ամբարիշտքն կորուսին զաստուած և զամենայն բարի շնորհս և զփառս. և ոչ *ունին* յոյս ողորմութեանն աստուծոյ...: - 751. Զի այնպէս ծանակեալ լիցի մարմին մեղաւորին, մինչ զի հոգին գարշեսցի առնուլ զնա. և որպէս ուրուկ և որդնալից այնպէս ո՛չ կամեսցի *ունել* զնա: - 751. Վասն իններորդին, որք աստ իւրաքանչիւր մեղօք գոյին շաղախեալք. արդարապէս *ունին* զիւրաքանչիւր անդամս կապանօք կաշկանդեալս. և ցանկան մեռանիլ և փախիցէ մահ ի նոցանէ: - 753. Եւ որպէս որդս այս ո՛չ *ունի* զգայարանք, նոյնպէս և հրեղէն որդունքն: - 753. Եւ վասն այն կոչի եկեղեցի արքայութիւն, զի որ ի ներկայիս եկեղեցւոյ արքայութիւն առնէ և գործէ՛, *ունի* զվախճան մեծի փառաց: - 754. Այսպէս և քրիստոս քան զամենայն սուրբս զպարգևս *ունի* առատագոյնս. որում հոգին ո՛չ տուաւ չափով: - 755. Վեցերորդ, այլ և բարեպաշտ թագաւորք՝ և իշխանք՝ և իշխեցեալք՝ *ունին* զայս կարգ. թէ օրինօք կենցաղավարին ըստ հրամանացն աստուծոյ: - 757. Ասեմք առ այս, եթէ առաջին կեանքն դրախտին ո՛չ զայն իմանան վարդապետք զոր *ունէրն* ադամ. այլ զոր խոստացաւն ադամայ եթէ պահեալ էր զպատւիրանն...: - 758. Դարձեալ ասեմք առաջին կեանք մասնաւոր, զոր նախ քան զյանցանելն *ունէր*. անկարօտութիւն. լուսաւորութիւն. անծերանելի հասակ. անմահ կեանք. և այլն որ ասացաւ ի վերոյ **ժէ** գլուխն **լզ** համարն: - 758. Զի նախ քան զյանցանելն ադամ *ունէր* զկիրս բնական և անգոսնելի. որպէս կերակրիլն, ննջելն, և այլն: - 759. Զի փոխեսցին յայսմ կերպարանաց զոր *ունին*, և այլ իմն նո՛ր զգեցցին...: - 759. Նախ վասն անկարօտութեան. զի սուրբքն իմանալի լոյս *ունին* զքրիստոս. և ո՛չ են կարօտ զգալի լուսոյ: - 760. Դարձեալ որպէս ասեն վարդապետք, եօթն յատկապէս փառս *ունին* մարմինք, և եօթն հոգիք: - 761. Քանզի՝ *ունիցի* մարմինն Զգեղեցկութիւն. Զարագութիւն. Զուժգնութիւն. Զազատութիւն. Զկամաւորութիւն. Զառողջութիւն. և Զանմահութիւն: - 761. Եւ թէպէտ գերազանցեալ են այսոքիկ փառք քան որք այժմ *ունին* յերկրի. այլ սակայն օրինակաւ սակաւ ինչ բացայայտութիւն առցուք: - 761. **Կամ *ունէիր* իշխանութիւն որպէս աղէքսանդրու. որ զասիա զեւրոպիա և զլիբիա ընդ իշխանութեամբ էարկ**: - 761. Զի թէ աստուածային բարութեանց շաւղացն շաւիղք այս քան *ունին* քաղցրութիւնս, զի՞նչ *ունի* ինքն աղբիւրն անուշութեան աստուած: - 762. Մինչ զկնի կարմիր ծովուն՝ յընկղմիլն փարաւոնի հանդերձ զօրօքն, զթմբուկն *ունելով* եղգէ՛ զերգն...: - 764.

Երրորդ բաղդատութեամբ այնորիկ՝ որ եղիցի ի վերոյ ինքեան. զի առ հոգի իւր կատարեալ կարիցէ *ունել* հնազանդութիւնս: - 764. *Ունելով* տերև զգիտութիւն սուրբ գրոց. և զծաղիկ հաւատոյ՝ և զպտուղ բարեաց գործոց: - 765. Եւ կրկին է ունակութիւն կենաց. այսինքն նախ *ունելով* յինքեան զկեանս, և ապա բաշխելով այլոց: - 765. Երկրորդ՝ ծառ կենաց են բնակիչք վերնոյն սիօնի. տնկեալք յաղբիւրն կենաց որ իջանէ յաթոռոյն աստուծոյ ի մէջ նոցա. *ունելով* զանմահ կեանս յաւիտենից: - 765. *Ունելով* տերև և ծաղիկ և պտուղ. այսինքն մաքրել, լուսաւորել, և կատարեալս առնել ըստ մեծին դիոնիսի: - 767. Այսպէս վասն երկնային և իմանալի տնկոցն որ կոչին ծառ կենաց. *ունելով* յինքեան զկեանս և բաշխելով այլոց ամենեցուն զխնամս: - 767. Ի գնացս հոգւոյն զօրացեալ, զի ըստ տնօրէնութեանն խորհրդոյ միշտ հոգւով սրբով ներգործէր. *ունելով* տերև զաշխարհակեցոյց վարդապետութիւնն: - 768. *Ունելով* մշտասաղարթ ծաղիկ որ է՛ կարմիր երանգն գունոյ, և երկնագոյն հիւթով զարդարեալ: - 768. Ոչ *ունիմք* վեհագոյն քան զհաւատն. տիպ աստուծոյ ճշմարտի դրոշմեալ ի մեզ ի բնէ. մեր հրահանգ և զարդ: - 769. Երկու ենթակայ *ունիմք* հաւատոյ. մօտ և հեռի: - 769. Որք տեսչութեամբն աստուծոյ՝ ի մեռելոցն զառհաւատաչեայն ընկալան յարութեան, թէ զիա՞րդ ոչ *ունէին* ի մտի զանտի կենացն ծանօթութիւն. պատմել մեզ խնդրի: - 774. Տեսանելի՛ է թէ՝ զի՞նչ արդեօք իցէ ոչ *ունելն* ի մտի որ է՛ մոռանալ...: - 774. Զի յայսմ կենցաղոյս զուգաւորին յիշելն երբեմն և մոռանալ զներքոյս և զարտաքոյս. ըստ որում փոխանցապէս *ունիմք* զերից ժամանակաց գիտութիւն: - 774. Ապա բնաւորապէս ընդ դէմ գոյ երից որպիսութեանց սա՛ մեզ չորրորդ գոլով. ոչ *ունել* ինչ ի մտի. մոռանալով միշտ. ո՛չ գիտել և ո՛չ յիշել ինչ զանտի կենաց: - 775. Յիրաւի ապա ըստ այսմ օրինակի՝ որք ի մշտնջենաւորէն փոխանցին առ երազ սնոտեաց, ոչ *ունիցին* ինչ ի մտի...: - 775. Խնամք մարդասիրութեանն աստուծոյ որ զամենայն յամենայնի տնօրինէ՛, արգել զայս. զի մի՛ *ունիցին* ինչ ի մտի յարուցեալքն ի մեռելոց...: - 775. ...իսկ Պարագայիւ, զի նա ակամայ և տգիտութեամբ. ուստի ո՛չ *ունելով* զգիտութիւն բարւոյ և չարի: - 777. Այլ զանազանի. զի դևք ամենևին ո՛չ *ունին* զղջումն և ոչ կարեն. վասն որոյ ո՛չ հանդիպին թողութեան. իսկ մեղաւորն *ունի* զղջումն այլ ո՛չ կարէ վարձաւորիլ: - 780. Երկրորդ՝ զի ո՛չ *ունին* զգործս զղջման: - 780. Եւ այլևս յարմար տեղւոյս այսպէս իմանի. զի սուրբ հարքն առաջինք պակաս *ունէին* զչարչարանս...: - 781. Դարձեալ, գոյականքն ո՛չ *ունին* շաղկապ գոլոյ. այլ շնորհականքն զանմեղութիւն: - 782. Գիտելի՛ է, զի դևք ո՛չ *ունին* հաւատս իսկապէս. և յա՛յտ է ի բազմաց: - 784. Երրորդ, զի հաւատն է լուսաւորութիւն մտաց հեղեալ յաստուծոյ ի ճանաչել զհոգևոր բարիսն. իսկ դևք ո՛չ *ունին* զլոյս մտաց և ո՛չ զհեղումն շնորհաց...: - 784. Չորրորդ, հաւատն է՛ աստուածային առաքինութիւն. իսկ դևք զի են խստացեալ ի չար՝ ո՛չ *ունին* զղջումն որ է բարոյական. ապա և ոչ հաւատ որ է վերնագոյն և բարի կամաց խոնարհումն առ աստուած: - 784. Յա՛յտ ուրեմն է յասացելոցս, զի դևք ո՛չ *ունին* հաւատս վարձաւոր. այլ *ունին* գիտութիւն նրբահայեաց որով սարսին յառաջ քան զտանջանս: - 784. Որք դարձուցեն զսիրտ հարց յորդիս ըստ մաղաքիայի. այսինքն ուսուցանեն զհաւատն փրկչին զոր հարքն *ունէին*. և է՛ վարձաւորելի և կարի քաջ. և թէ այսպէս և թէ այն՝ քրիստոս քարոզի: - 785. Զի *ունօղքն* բարեկեցիկ կենօք, և ոչ նոյնպիսիքն սովամահ տուայտեալք: - 789

**ՈՒՆԿԻ +** Կոնք արծաթի որ է՛ **բ** *ունկի* անգանակ: - 359

**ՈՒՆԿՆ +** Երկրորդ՝ զի տեսանելն հաստա՛տ է քան զլուր *ունկան:* - 235. Այլ և ունի յատուկ պատւականութիւն և *ունկն*՝ զոր ո՛չ ունի ակն: - 235. Եւ երկայն և կարճ՝ քանա՛կ է շարունակ. և բ ակն և *ունկն* տարորո՛շ է: - 236. Բոլոր *ունկն*՝ անխելամուտ: - 246. *Ունկն* կողմանեալ ի վերայ գլխոյն՝ ծո՛յլ է: - 246. Լսողութիւնն *ունկն:* - 250. Եօթներորդ՝ զի նոր իմն չնաշխարհիկ կազմեաց. նոր ժողովրդեանն և նոր օրինացն, իցէ և նո՛ր տաճար հռչակեալ ընդ ծով և ընդ ցամաք. որպէս պսակ և փառք արդարոցն է՛ զոր ակն ո՛չ ետես և *ունկն* ո՛չ լուսաւ. նոյնպէս և սա՛ ի զգալիսս անհաս ի մտաց մարդկան: - 342. Իսկ քրիստոս ամենևին ա՛կն՝ ամենևին *ունկն*՝ ընդ հօր և հոգւոյն աստուածաբար ներգործէ: - 479. *Ունկն*՝ աշակերտք ճշմարտութեան բանին: - 534. Դարձեալ, նշանակէ զժողովուրդն աստուծոյ. յորոց *ունկն* ընթերցեալ լինին միշտ բանք աստուածայինք. հնգիւք զգայութեամբք հոգւոյ և մարմնոյ առ միմեանս յեռեալք: - 646. Որպէս լեզուն մտաց՝ և ձեռքն սրտին է գործի. նոյնպէս *ունկն* կամա՛ց է. հնազանդութեան և կամ ոչ: - 658. Զոր ակն ո՛չ ետես, և *ունկն* ո՛չ լուաւ, և ի սիրտ մարդոյ ո՛չ անկաւ, զա՛յն է պատրաստեալ աստուած սիրելեաց իւրոց: - 761

**ՈՒՆՉ +** Զի սէր *ընչիցն* է աչք ագահացն. և սէր հեշտութեանցն է՛ աչք հեշտասիրացն: - 32. Վասն է՞ր մի ջուրն ի բերանն քաղցր լինի, և յաչքն աղի. *յունչն* հոտեալ. և յականջն դառն: - 243. Զլինիլ արտասուաց՝ ուսուցանեն գիրք կազմութեան և որ ի բժշկաց, յերիս բաժանմանէ բնաւորեալ

կերակրոց: ...Թթուագոյնն *յունչս:* - 786

**ՈՒՇ +** Երրորդ՝ արմաւենին *ուշ* բերէ պտուղն. և մայրն յետոյ պնդի. և փառք արդարոցն է՛ ի կատարած աշխարհի. և պնդիլն անմահութեամբ: - 765

**ՈՒՇԻՄ +** Նա՛խ՝ եթէ *ուշիմ* և ապուշ և այլն ըստ կարգի, սոքա եթէ ի մարմնոյն խառնուածոյ պատճառին՝ և եթէ բնական որակութեամբ հոգւոյն՝ նման...: - 19. Ծանիր և զայս *ուշիմ* մտօք, զի ամենայն աստուածաբանութիւն նախ յերկուս բաժանի. այսինքն դրութեամբ և բացբարձմամբ: - 123. Է և այլ իմն աննմանութիւն հոգւոյ ըստ իմացմանն. առաւել և նուազ. *ուշիմ* և ապուշ. չկամ և կամեցող. հեզ և յանդուգն. ցանկացող և ողջախոհ...: - 237. Թէ լինի սակաւ մի մեղուշագոյն, արդարամիտ է և քաջ *ուշիմ:* - 246. Գոյնն միջակ ի մէջ սպիտակին և սևին՝ ցուցանէ *զուշիմն* և զբարեբարոյն: - 247. Վասն է՞ր մին տղայն *ուշիմ* և մտացի լինի. և մինն ապուշ և բռնամիտ: - 251

**ՈՒՌ +** Այն է զոր հրամայէ՛ տէր՝ «ես եմ որթ և դուք *ուռ*». այսինքն որթ և հիմն հաւատոյս մեր է՛ քրիստոս: - 317. Եւ *ուռ*՝ ի նա՛ հաւատացեալ առաքեալքն: - 317. Քանզի անդ տարաւ յինքեան աստղն զարեգակն: ...*Ուռն* զորթն: - 469

**ՈՒՌԻ +** Երկրորդ՝ հրէայքն ի գերութեան կախեցին զկտակարանքն ի *յուռեաց*, և ո՛չ հաւատային կենաց. որ ասէր կտակարանքն պահել զպատուիրանս աստուծոյ և կեալ: - 405

**ՈՒՌԿԱՆ +** Խոտան ձկունքն ընդ բարեաց *յուռկանին:* - 756

**ՈՒՌՀԱՅ -** Զի առաքեալն թադէոս յորժամ ձեռնադրեաց զադդէ *յուռհայ*, և ապա՛ ի կեսարիայ եկն և ձեռնադրեաց առաջին եպիսկոպոս զթէոփիլոս. զայն յորոյ անունն գրեաց Ղուկաս զաւետարանն և զգործքն առ թէոփիլոս: - 548

**ՈՒՌՃԱԼՐԱՑԵԱԼ +** Եւ թէ այս և թէ այն, դու ընկա՛լ զխնդիր մտաց քոց առանց ամենայն երկբայութեանց. իբր ի միոյ կենեղուտ աղբերէ կենաց *ուռճալրացեալ* և պտղաւէտեալ: - 772

**ՈՒՌՆ +** *Ուռն*՝ կոյսն յարմատոյն և յեսսեայ. և Ողկոյզն տէր մեր ծնեալ ի նմանէ զուարճալի կերակուր մեզ: - 381. Դարձեալ՝ *ուռն* և լծակն՝ խաչն. և Ողկոյզն անապական ճմլեալ ի վերայ խաչին հնձանի. և եղև ուրախարար գինի տրտմեցելոցս մեռօք: - 381. Հինգերորդ՝ ծեծ հարկանողացն. որպէս *ուռունք* զերկաթս ծեծողաց: - 752. Վասն հինգերորդին, որք աստէն զխրատս ընդունել ո՛չ կամեցան և ընդ մարդկան տանջիլ ո՛չ արժանացան. վասն յանորիկ արդարապէս անդ՝ անդադար հարկանին *ուռամբ:* - 752

**ՈՒՌՆԱՅ -** Եւ մինչ ընթացաւ ի կալն *ուռնայի* և գնեաց զեզինսն և ողջակիզեաց, եհաս ի **զ** ժամն. որ յառաջն դադարեալ էր սուրն: - 435. Դարձեալ, ձորն յովսափաթու կոչի ձոր դատաստանի. այսինքն է կալն *ուռնայի*, ուր դաւթի խոստացաւ անդ առնել դատաստան. յորժամ սեղան շինեաց և պատարագեաց զեզինսն և բարձաւ մահն: - 737

**ՈՒՌՆՈՒՄ կմ ՈՒՌՉԻՄ +** Այլ առ ժամայն հպարտութեամբն *ուռուցաւ* և ի ճշմարտութենէ լուսոյն դարձոյց զանձն իւր և խաւարեցաւ: - 147. Եւ *ուռուցան* երաստանքն: - 412. Զի՞նչ է որ զերաստանս *ուռոյց*, և զմսկն եռացոյց: - 426. Եթէ ի խելս և ի խորհուրդ ցնորութիւնք և զայրոյք *ուռուցանիցեն* խխայթեալք. բժշկեսցիս հաւատով. ըստ մարգարէին հիացեալ՝ ստուերս և ունայնս դնելով զամենայն անցաւորս: - 770

**ՈՒՍ +** Երրորդ՝ *ուսքն* և ձեռքն: - 241. *Ուսքն* բարակ և վերամբարձ, դարանակա՛լ է: - 247. Ուժն ի *յուսն:* - 250. Եւ տէրն եբարձ ի *յուս* իւր զփայտ խաչին մինչ ի նոյն տեղի գողգոթային ուր զենանէր իսահակ: - 306. Լուսնաձև Վահանն ի վերայ թիկանցն և սրտին՝ և կրկին տախտակ դատաստանին *յուսն*, եմիփորո՛նն է: - 348. ...և **բ** Ակունք *ուսոյն* կրկին կիսագունդք երկնից. ունելով **զզ** կենդանակերպս. և Վակաս լանջացն **բժ**ան ակամբք նոյն կենդանակերպք ի լանջս երկնից Միթրն՝ պսակ քահանայապետութեան. և Թիթեղն՝ մտաց թեթևութեան: - 348. Եւ բաց յայսցանէ **բ** ակն յանդիմանութեան զոր անդամանդեայ կոչէին, և էր ի պճղնաւոր զգեստին ի վերայ *ուսոց* քահանայապետին...: - 349. Եւ զաղխեալ դուռն քաղաքին եդեալ ի *յուսն* եհան ի գլուխ լերինն: - 420. Ութերորդ՝ նա՛ *ուսովք* էր բարձր քան զամենայն մարդ. և տէր մեր ո՛չ միայն աստուածութեամբն որ գլուխ է, այլ և չարչարանօք իւր՝ գերագոյն և բարձրագոյն ցուցաւ. զի փրկեաց զամենայն: - 427. Նա՛խ՝ զի պա՛րտ էր *ուսով* բառնալ զտապանակն որպէս հրամայեաց աստուած. և նոքա սայլիւ բերէին որպէս այլազգիքն: - 431. Այսպէս. **բ** ոտիցն. **բ** ձեռացն. **ա** *ուսոյն* վերայ. **ա** խաչին թևին. **ա** պիղատոսի տախտակին. **բ** այն տախտակին որ պատուանդան էր և ոտքն ի վերայ բևեռեալ: - 495. Այլ մեք եղբարք ուղեկիցք իմ և դաւանակիցք եղիցուք. շինեալք և հաստատեալք ի վերայ հաւատոյ հիման. անշարժ

խարսխեալք ի վերայ *յուսոյն* քրիստոսի, սեռն և յստակ կատարեալ սիրով սուրբ հոգւոյն: - 503. Եւ ի մէջ գիշերի զարթեաւ և զդրունս փակեալ նգօքն և սեմօք եհան *յուսն* և ել ի լեառն: - 513. Եւ սքեմ նոցա զահեակ *ուսովն:* - 608. Այլ և բազպան, և բազկուրար զահեակ *ուսովն:* - 608. Բազկուրար յահեակ բազուկն *ուսովն* ածեալ՝ և կապեալ ի վերայ արմնկանն ի կախ ունելով: - 608

**ՈՒՍԱՆԻՄ +** Դարձեալ, ասեմք եթէ՝ առնէ՛ աստուած զոմն խոհեմ և զոմն տգէտ, զի նա՛ ի նմանէ՛ *ուսցի:* - 19. Եւ զոր ինչ տեսանէ աչք արծըւին՝ ո՛չ կարէ տեսանել աչք մարդոյ. այնպէս բթամիտն ո՛չ իմանայ, զոր իմանայ նրբահայեացն և *ուսեալն* յաստուծոյ...: - 31. Այս ո՛չ որպէս չարափառքն ասեն՝ թէ որպէս նկարիչ իմաստուն ձևացնէ՛ պատկեր, և ապա ոչ *ուսեալն* զնոյն օրինակէ՛: - 45. Պատասխանեմք նախ, որպէս ասէ ոսկէբերանն թէ՝ նորածնեալքն աւազանաւն՝ ըստ չափու շնորհացն արժանաւորեին իմաստութեան, թարգմանութեան, և այլն. այսպէս և ոմն շնորհս ընդունէր աղօթելոյ կարգաւորապէս. զի ի նմանէ *ուսանէին* և այլքն աղօթել: - 59. Եւ այսպէս *ուսար* ի սրբազան առաջնորդէն մերմէ: - 75. Եւ որպէս զայդ *ուսար* ուղղափառ դաւանութեամբ՝ ի միտ առ զոր ասեմս: - 79. Ա՛րդ՝ ամենայն մարդկան՝ մարգարէից և սրբոց՝ հրեշտակք ուսուցանեն. և նոքա ի քրիստոս է՛ *ուսանին:* - 98. Եւ զայլ զանազանութիւն սոցա կատարելապէս *ուսցուք* յառաջիկայսդ: - 117. Եօթներորդ՝ ուսմամբ. զի ուսուցանեն և *ուսանին:* - 138. ...յեկեղեցւոյ *ուսան* հրեշտակք ըստ պօղոսի: - 147. Իսկ թէ կամիս *ուսանիլ* թէ զի՞նչ է նիւթ պսակին. որ ինչ առ աստուածութեան իւրում մեծութիւն գտանի, զա՛յն պատրաստեաց սիրելեաց իւրոց. զոր ո՛չ կարեմ զմտաւ ածել. կամ վայրապար լսելեօք լսել: - 161. Եւ *ուսեալք* զայս, ընկա՛լ և այժմ զլուծումն խնդրոյն...: - 168. *Ուսար* յիմաստնոց թէ՝ ի բաժանիլ լեզուաց **իբ** տանուտերանց, և ի գնալն յիւրաքանչիւր տեղիս ի հեռու կամ ի մօտաւոր աշխարհս. զօրն զայն տարեմուտս կարգեցին. և *ուսուցին* որդւոց իւրեանց պատւեալ զօրն զայն տրօք ընչից: - 200. Յորմէ *ուսեալք*՝ յամենայն ամի կատարեմք իւրաքանչիւր ազգ քրիստոնէից: - 200. Չորրորդ՝ զի զտգիտութիւն իւր լուացցէ, և ապա՛ զգիտութիւն *ուսցի:* - 218. Որպէս առաջին հարքն անապական գոլ ասացին. և մեք հետևօղք նոցին անապական *ուսանիմք:* - 222. Զի այսպէս ի կազմուածոյ քո *ուսցիս* զբարեկարգութիւն և զպատիւ առ վերինս և առ ներքինս և առ հաւասարս: - 232. Վասն է՞ր տղայն առաւել *ուսանի* քան զմեծն: - 251. Եւ գիտելի՛ է, զի զբնական արուեստն տղայքն առաւել *ուսանին:* - 251. Խնդրեմ *ուսանիլ* վասն բոլոր էութեան հոգւոյն թէ ո՞րպէս կամ զի՞նչ եղանակաւ գոյանայ: - 252. Եւ արդ՝ *ուսեալք* զայս, մտցուք և ի ներքս բանիցս այսուհետև տեսցուք: - 261. Եւ *ուսեալք* զտնկականն՝ կարգաւ ելցուք ի զգայականն: - 263. *Ուսեալք* և զայս, բե՛ր տեսցուք և զմարդոյն թէ վասն է՞ր յինն ամիսս ծնանի: - 263. Խնդրեմ և զայս *ուսանիլ* թէ ընդէ՞ր է՝ զի մարդս կատարեալ կենդանի է քան զանասունս. և յորժամ ծնանին նոքա ահա՛ ի նոյն ժամն կանգնին յոտից վերայ և գնան, և այլն. իսկ մարդն ոչ: - 266. Խնդրեմ *ուսանիլ* թէ զի՞նչ է երազն որ տեսանէ մարդ: - 268. Իսկ այժմ ամենայն ոք ի գրեալսն *ուսանի* զպատւիրանս աստուծոյ և ո՛չ ի հարց իւրեանց: - 291. Պերճական պարսիկն. և համեղ հայոյն. որ բոլորապէս կարօ՛ղ է զամենայն լեզու ուղղակի *ուսանիլ:* - 297. Եւ այլք զհայոյն՝ ծեքական և թիւր *ուսանին*. զի մասնաւո՛ր է լեզու նոցա: - 297. Նոյնպէս և յակոբ, եփրեմ, դաւիթ, կրտսեր ի մէջ եղբարցն և թագաւորացն. խնդրե՛մ *ուսանիլ:* - 309. Ասեմք թէ յակոբ ո՛չ զներգործութեան անունն հարցանէր աստուծոյ, զի գիտէր որ աստուած էր և ինքն իսրայէլ կոչեցաւ որ է աստուածատես. այլ անուամբ զբնութիւնն և զգոյացութիւնն աստուծոյ կամէր *ուսանիլ:* - 311. Նմանապէս և միջակ կապիւն, զի *ուսանիմք* յաստուծոյ ընկալեալք զկարգ կրօնիցն...: - 318. Վասն երկրորդին հակառակէր ընդ նոսա, զի մի՛ սուտ լիցի վկայութիւն աստուծոյ ի վերայ նորա. զի և մեք *ուսցուք*՝ վասն վկայութեանն աստուծոյ այնչափ նախատինս յանձն առնուլ և ո՛չ ուրանալ. որպէս վկայից դասքն նահատակեցան: - 324. Երրորդ՝ զի *ուսցի* զխոնարհութիւն: - 325. Եւ ի յայտնութենէն աստուծոյ *ուսանին* հրեշտակք և մարդիկք զառաջիկայն: - 336. Զի աթոռք և քերովբէք շուրջ են զաստուծով. և անընդմիջաբար *ուսեալք* ի սուրբ Երրորդութենէն, որ ուսուցանեն զներքինսն: - 345. Այլ զանբան պատարագն *ուսան* հեթանոսք և կռոց մատուցին. և այն սովորութեամբն իէլ մատոյց աստուծոյ զանբան կենդանիս մինչ եկն քրիստոս և եղև ինքն բանաւոր պատարագ, և զնոյնս աւանդեաց մեզ: - 362. Եւ որպէս երեխայն նախ քան զմկրտիլն **խ** օր *ուսանի* զխորհուրդն: - 363. Երկրորդ՝ զի ողորմութիւն և մարդասիրութիւն *ուսցին*. տալ զբաժին աղքատաց և տնանկաց: - 371. Նա՛խ՝ հաւատով ճանաչելն է զԵրրորդութիւնն մի բնութիւն, և ապա գործով սիրել զնա. որպէս նախ *ուսանիլն* է և ապա առնել: - 396. Վեցերորդ՝ զի որդիք նոցա ի նոցանէ *ուսցին* զպատերազմ: - 417. Տասներորդ՝ զի *ուսցին* նոքա ի նոցանէ զբարիսն, և մնացեն ժառանգ երկրին. որպէս գաբաւոնացիքն: - 417. Երկրորդ՝ զի սուտ խօսեցաւ աստ. զի թէ սամուէլ էր՝

ո՛չ *ուսանէր* ի սաւուղայ. և դնն յերկրէ ո՛չ ելանէ: - 430. Երրորդ՝ զի նոր բան ինչ ո՛չ պատմեաց. այլ զոր ինչ *ուսաւ* ի սաւուղայ՝ երկրորդեաց նմա: - 430. Եւ հաւանիլ՝ այս է հնազանդիլ և *ուսանիլ:* - 465. Իսկ հայաստանեայ քրիստոս որպէս *ուսան* ի սրբոյն գրիգորէ՞ անփոփոխ կացին ի նմին: - 482. ...զի *ուացին* բառնալ զտկարութեան այլոց. որպէս քրիստոս զնոցայն եբարձ. իսկ թէ նախ զիոգին առեալ էին՝ ո՛չ կարէին բառնալ զայլոց տկարութիւնն: - 521. Եւ ի կարմրանալ երկնից ընդ երեկս և ընդ առաւօտս, զերաշտոց և զանձրևոց ի փորձոյ *ուսեալք* յառաջագուշակ լինին: - 536. Իսկ հինգերորդ մարգարէութիւն է հոգևոր և աստուածային գիտութեամբ. զոր յայտնութեամբ սուրբ հոգւոյն *ուսեալք* խօսին առ ի զգուշութիւն մարդկան ի հոգևոր շինուածս: - 536. Սա իմաստուն է և հեզ. *ուսի՛ր* ի սմանէ: - 537. Եւ սա բարի՛ է. *ուսո՛* զսա: - 537. Ուստի՞ *ուսանիմք* զսէր ընկերին: - 577. Այլ և առաքեալքն և հետևօղք նոցա հարքն սուրբք՝ ո՛չ գիտէին զխառնարանն. և դու *ուսար* և խառնես ջուր և ընդ անիծիւք նոցա մնաս որպէս ցուցաւ ի վերոյ: - 596. Յասմանէ *ուսեալք* ազգ քրիստոնէից յօտար ազգէ առնեմք զհարսն: - 612. Եւ ի նոյն ժողովն ի փառք ի բարձունս, օրհնեալ տէր *ուսո՛* ինձ զարդարութիւնս քո. **գ** անգամ: - 632. Յաղագս որոյ եկեղեցի սուրբ *ուսեալ* յաւետարանչէն և ի սրբոց հայրապետացն, երգեմք զերեքսրբեանն ի դէմս որդւոյ: - 633. Բայց արքեղայոս դարձեալ մաքրեաց զամենայն որ *ուսաւ* ի ծովային կենդանեաց: - 640. Երրորդ՝ զի քաղցր ձայնիւ հեշտացեալ մարդիկ՝ զանխլաբար *ուսցին* զհոգւոյն բանս: - 641. Դարձեալ՝ նախ զօրինակն, և ապա՛ զճշմարտութիւնն *ուսանիմք* աստ, և ապա՛ անդ անընդմիջաբար ի տեառնէ...: - 643. Յայս միտս սարկաւագն նախ առաջի քահանային ընթեռնու իբր ի նմանէ՛ *ուսեալ*...: - 644. Յայս միտս այլ ազգք միշտ ի վերայ գրակալին պահեն զգիրս. զի արժա՛ն է միշտ *ուսանիլ:* - 646. Երրորդ, զայս ի քրիստոսէ *ուսար*. զի գոհացաւ ի հօրէ և ապա՛ բաշխեաց զգարեղէն նկանակսն և աճեաց...: - 54. Եւ զայս *ուսար* ի քրիստոսէ. որ ի վերնատունն յետ ընթրեացն օրհնեցին և ելին ի լեառն ձիթենեաց: - 655. Եւ զայս ի քրիստոսէ *ուսար*. զի այսպէս խաչանման բեկանէր զհացն երկոքին ձեռօքն: - 655. Երկրորդ, զի *ուսցուք* այսպէս զամենայն ինչս մեր հաղորդել ի պէտս կարօտելոց. և զմիմեանս մեծարել և պատուել սիրով: - 655. Չորրորդ, այլ և մարտիրոսք և ճգնեալքն ճաւոր. և ուսուցիչքն կաւոր. և *ուսեալքն* երեսնաւոր: - 757. Զի այսպէս *ուսար* ի սրբազան վեհէն մերմէ ըստ սրբոցն աւանդութեանց. թէ ամենայն իր որ բնութեան է պարզև, ան՚ի բաց դնելի՛ է ի նմանէ: - 782

**ՈՒՍԱՆՈՑ +** Եփուտն հոմանուն է. քանզի կոչի *ուսանոց*. և կոչի վիճակ: - 425. Այն որ *ուսանո՛ց* է, որպէս վակաս քահանային. և որպէս մայրն սամուէլի արար: - 425

**ՈՒՍՈՂ +** Բայց զի յուսացեալ ի բանն ճշմարտութեան յաղագս որոյ բանս հարցափորձութեան, հետևելով ուսուցչացն ուղղութեան, և յուսոյ *ուսողացդ* նպաստութեան. բացցուք զբերանս մտաց, և ձգեսցուք ի մեզ զհոգին շնորհաց: - 456

**ՈՒՍՈՂՈՒԹԻՒՆ +** Եւ սոքա **Ե Ե** զօրութիւնս ունին. Մտացն. Իմաստութիւն. Տեսողութիւն. *Ուսողութիւն*. Անմոռացութիւն: - 248. *Ուսողութիւն* ընդ առաքինութիւն: - 248

**ՈՒՍՈՒՄՆ +** Դարձեալ թե ի հարկէ՛ է ոչ լինին օգուտ խրատք և սպառնալիք և *ուսմունք*. որովք բազումք յորդորին ի բարիս, և հեռանան ի չարեաց կենցաղոյս: - 11. Ութերորդ՝ ընդ վա՛յր էին *ուսմունք* և յորդորմունք ի բարիս. որովք փախչիմք ի չարէն, և հասանիմք բարւոյն: - 20. Ահա նոր *ուսմունք* և երրորդ կտակ: - 89. Կրկին է անգիտութիւնն. մինն է ի հեղգութեան *ուսման:* - 103. Եօթներորդ՝ *ուսմամբ*. զի ուսուցանեն և ուսանին: - 138. Իններորդ՝ գործ բնութեան առանց *ուսմա՛ն* է. իսկ կամացն *ուսմամբ* է և կրթութեամբ: - 156. Վեցերորդ՝ մարդս կարօ՛տ է *ուսմանց* և իմաստից. իսկ աստուած անկարօ՛տ է *ուսման* և իմաստութեան. զի ինքն է աղբիւր գիտութեան և իմաստութեան: - 156. Եօթներորդ՝ զի *ուսմամբ* է նախատեսութիւնն որ առ մեզ: - 164. Իսկ առ աստուած բնութեամբ է և առանց *ուսման:* - 164. Չորրորդ՝ երկիրս այս տեղիք *ուսմա՛ն* է մեր՝ ըստ կարգի կատարեցան...: - 192. Եւ զի տեղի է *ուսման* արուեստից և առաքինութեանց և իմաստութեան հանճարոյ: - 211. Եւ *ուսումն* տղայոց: - 228. Երկրորդ՝ ցուցմամբ. զի տեսանելն զհաւատն նշանակէ որ է հաստատ. և լսելն *զուսումն* ճարտարութեան: - 239. Վասն որոյ զխրատ և *զուսումն* ո՛չ լսեն մեծամեծք: - 251. Եւ **է** ամեայ *ուսումն* ստանայ...: - 264. Իսկ աշունն, և մինչ ի **թ** ժամս աւուրն, և սեաւ մաղձն, և ալևորն, ըստ նմանութեան երկրի ցուրտ և չոր գոլով՝ ծոյլ և պղերգ գոլով ամենայն *ուսմանց* և գործոց: - 266. Հինգերորդ՝ ի *յուսումն* խոնարհութեան մերոյ. զի տեսանելով զմեզ տկար քան զանասունս, մերկ և աղքատ ի մօրէ ծնեալ, խոնարհեալ զիջանիմք ի հնազանդութիւն արարչին. և զի մի՛ եկամուտ հպարտութեամբ կրեսցուք զանկումն արուսեկին: - 267. Դարձեալ՝ մարդո՛յն է ընդունակ լինիլ *ուսմանց* և լինիլ հեզ և խոնարհ սրտիւ: - 275. Եօթներորդ՝ ըստ

*ուսման*. որպէս աշակերտք ծնունդք կոչին վարժողաց. եթէ ի մարմնականս. և եթէ ի հոգեկանս...: - 308. Ի կապ *ուսման* որպէս աշակերտաց: - 317. Հինգերորդ, ըստ փիլոնի գաւազանն է իմաստութիւնն. դալարեալ մտօք և ծաղկեալ *ուսմամբն*. և պտուղ՝ ուսուցմամբ աշակերտաց: - 382. Եւ կէսն զնոսա, որք ունին թերութիւն ինչ ի հաւատս կամ ի վարս ինչ և *յուսմունս:* - 391. Վեցերորդ՝ զի փութասցին *ուսման* և դպրութեան: - 402. Եօթներորդն օգտակար *ուսման:* - 465. Երկրորդ ի կրթութենէ *ուսմանց*. որ արտաքուստ կրթութեամբ ստանայ. որպէս պղատոնին և այլոցն: - 537

**ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ +** Դարձեալ՝ հանճարն է ի բնականականն. գիտութիւնն *յուսումնականն*. և իմաստութիւնն յաստուածաբանականն: - 270

**ՈՒՍՈՒՄՆԱԿԻՑ +** Կամ ի չար *ուսումնակցաց* և բարեաց: - 251

**ՈՒՍՈՒՑԱՆԵՄ +** Որք հերձեալ ըստ ինքեան սարտուցան ի կենաց. և զհերձուած կորստեան *ուսուցին* բազմաց: - 31. *Ուսուցանեն* թիւր հաւատս, և գործս վատթարս: - 35. Իններորդ՝ նա՛ ի տաճարին նստի և *ուսուցանէ*. և սոքա ի ներքս ի յեկեղեցի. զկերպարանս բարեպաշտի ունելով արտաքոյ՝ ծածկեալ են գառնենեաւ զգայլենիս: - 35. Երկոտասաներորդ՝ *ուսուցանել* զմիտս մարդոյն ի ներքս՝ միայն աստուծոյ է ըստ սաղմոսին...: - 58. Նաև ի կանոն երից սուրբ ժողովոցն՝ *ընդ* բանիւ արգելեալք կան նոքա՝ որ ա՛յլ կերպիւ քարոզեն և այլ կերպիւ *ուսուցանեն* քան զոր նոքա *ուսուցանեն:* - 64. Նոյնպէս հոգին սուրբ պատմէ և *ուսուցանէ* զգիտութիւն հօր և որդւոյ: - 66. Զի նոյն ինքն քրիստոսդ անուն՝ *ուսուցանէ* զքեզ աստուածութեամբն մարդ գոլ, և մարդկութեամբն աստուած: - 75. Որք *ուսուցին* մեզ զխորհուրդ աստուածպաշտութեան որպէս ցուցաւ: - 84. Ա՛րդ՝ ի մարդկանէ ո՛չ ոք ետես զաստուած, և որդի կուսին ո՛չ ետես որպէս դուդ ասես. սո՛ւտ է ապա և պատմութիւնն զոր ինչ *ուսոյց* մեզ. զի ո՛չ է տեսեալ և պատմէ. ահա անդունդք հայհոյութեան. զոր ի կարգիս լռե՛մ: - 96. Ա՛րդ՝ ամենայն մարդկան՝ մարգարէից և սրբոց՝ հրեշտակք *ուսուցանեն*. և նոքա ի քրիստոս է՛ ուսանին: - 98. Ապա զիա՞րդ պակաս լինի գիտութեամբ. *ուսուցանօղն* հրեշտակաց: - 98. Եօթներորդ՝ ուսմամբ. զի *ուսուցանեն* և ուսանին: - 138. Երկոտասաներորդ՝ զի սուրբքն բանիւ մեզ *ուսուցանեն*՝ նեղութեան և փորձանաց համբերել...: - 159. Երկրորդ՝ զի համբերութիւն *ուսուցանէ* մեզ...: - 161. Երկրորդ՝ զի ձեռամբ գրչի մտանէ ի բառ. և առանց բերանոյ բարբառի. և տեսանի աչաց. և լսի ականջաց. և *ուսուցանէ* զմիտս: - 177. Չորրորդ՝ երկիրս այս տեղիք ուսմա՛ն է մեր՝ ըստ կարգի կատարեցան. զի մեք զամենայն ինչ ըստ կարգի *ուսցուք*. և մի՛ անկարգ և շփոթեալ: - 192. Վեցերորդ՝ խօսեցաւ աստուած՝ և զամենայն անճառելի գիտութիւնս վասն արարածոց *ուսոյց* նմա. զոր ոչ գիտէին մարդիկ զլինելութիւն երկնի և երկրի և ծովու և կենդանեաց: - 326. Զի աթոռք և քերովբէք շուրջ են զաստուծով. և անընդմիջաբար ուսեալք ի սուրբ Երրորդութենէն, որ *ուսուցանեն* զներքինսն: - 345. Վեցերորդ՝ այլ և ի թողութեան ամն *ուսուսցէ* թողուլ զպարտիս բանից և գործոց մերոց պարտապանաց: - 372. Նա՛խ՝ զի մի՛ խօսեսցի դնն և չարիս *ուսուսցէ:* - 387. Դարձեալ՝ և դուք զծածուկն աստուծոյ մի՛ համարձակիք քննել. այլ զոր ինչ յայտնէ ձեզ՝ *ուսուցէք* որդւոց ձերոց: - 405. Դարձեալ՝ օրէնքս յայտնի էր զոր *ուսոյց*. և աւետարանն ծածկեալ, զոր հոգին սուրբ յայտնէ որ քննէ զխորս աստուծոյ: - 405. Երկոտասաներորդ, զի *ուսուսցէ* մեզ զմարդասիրութիւնն և զներելն միմեանց...: - 417. Երկրորդ՝ զի մի՛ զատեսցին ի ժողովրդենէն. այլ ի քաղաքս ապաստանաց սփռեսցին և *ուսուսցեն* զնոսա: - 417. Նա՛խ՝ զի *ուսուսցէ*, եթէ մի անգամն ո՛չ լսի՝ պա՛րտ է անձանձիր աղօթել. որպէս այրին որ ժտելովն էառ: - 444. ...իսկ երրորդն նէեմի և եզր դպիր՝ կանգնեցին զպարիսպն և զդրունսն. նշանակեն զառաքեալսն զհայրապետսն և զվարդապետսն. որք օրինօք պարսպեն զեկեղեցի, և հանապազ *ուսուցանեն* զդպրութիւն: - 449. Առաջինն *ուսուցանէ* թողուլ զանիրաւութիւնս արարեալ ընդ դէմ մեր: - 492. Նոյնպէս և զկամաւոր մահն որ է՛ դեղ և առիթ յաւիտենական կենացն, նախ ինքն ճաշակեաց և *ուսոյց* հետևողաց իւրոց: - 497. Երեքտասաներորդ, զի մարիամ ո՛չ խոնարհութեամբ կամէր մերձենալ յոտս նորա որպէս այլ կանայքն. այլ յերե՛սն դիմեաց նա հպարտութեամբ առ ի համբուրել զնա. իսկ տէրն կամեցաւ *ուսուցանել* նմա զխոնարհութիւն՝ արգել զնա: - 518. Չորրորդ՝ **լգ** ամ յերկրի եկաց, զի *ուսուսցէ* զկենդանիս: - 520. Ապա անհաւատութիւն և յուսահատութիւն և ատելութիւն է՛ ի միտս. և սոքա մեծ են քան զամենայն չարիս որպէս *ուսուցանեն* գիրք սուրբք: - 557. Առաջինն *ուսուցանէ* կարգաւորել զբարս իւր առ ինքն: - 580. ...**գ**՝ *ուսուցանել* զտգէտսն...: - 585. Կարգն է՛ ի խորհուրդ խոհեմութեան և գիտութեան. զի իմաստութեամբ և գիտութեամբ սպասաւորեսցէ խորհրդոցն և խրատեալ *ուսուսցէ* զժողովուրդն: - 587. Եւ թէ այր մարդ ոչ լինի և տղայն մերձ ի մեռանիլ լինի, կինն կարէ՛ մկրտել թէ գիտէ զձև բանին զոր քրիստոս *ուսոյց* «յանուն Հօր և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ». ցանէ՛

զջուրն և ասէ՝ մկրտեալ լինի: - 588-589. Այլ սուրբն աքանաս որ զխորհուրդ պատարագին աւանդեաց՝ այսպէս *ուսոյց:* - 599. Զամենայն ճշմարտութեամբ հարցանէ քահանայն. և այնպէս որ մի՛ լիցի ի հարցանելն մեղք *ուսուցանել* ժողովրդեանն: - 601. Այլ և ք են աստիճանք եկեղեցւոյ և զայս ևս մարգարէն *ուսուցանէ*...: - 621. Նա՛խ ի տէրունական բանիցն է յայտ. որպէս *ուսոյց* հասարակ աղօթել...: - 623. Նոյնպէս *ուսոյց* և զառանձինն. ըստ այնմ՝ «մուտ ի սենեակ քո և աղօթեա՛ ի ծածուկ»: - 623. ...վասն որոյ յորժամ հրաւիրէ՛ զմեզ՝ *ուսուցանէ* այսպէս աղօթել: - 626. Այլ զոր մեզ *ուսուցին*՝ եփեսոսին է: - 635. Եւ զայսոսիկ հոգէխառնեաց դաւիթ և *ուսոյց* երգեցողացն: - 640. Իսկ աղօթքն զոր յովհաննէս *ուսոյց* աշակերտաց իւրոց այս էր: - 659. Յայր սուրբ՝ *ուսո՛* մեզ զբան քո: - 659. Նաև բժշկութիւնն բազում անգամ ժուժկալութիւն *ուսուցանէ* ընդդէմ անչափութեան կերակրոց...: - 665. Ասեմք թէ՝ մարգարէն *ուսուցանէ* մեզ զչափ սրգոյ մինչ յերեկոյն, և յառաւօտուն ուրախանալ...: - 680. Ասեմք, թէ ո՛չ գիտես զի՞նչ է, ե՛րբ առ առաքեալն և *ուսուցէ* քեզ... - 697. ...այսինքն զի *ուսուսցեն* վերջնոցն զիաւատս փրկչին. յոր և նոքայն հաւատացին: - 709. Զի գերազանց գո՛րծ է բանին *ուսուցանելն* զճշմարտութիւնն. և զայս ունին վարդապետքն: - 712. Եւ դարձեալ ի ճառս անառակին և կորուսեալ դրամին և մոլորեալ միոյ ոչխարին և անկելոյն ի ծեռս աւազակին, զնոյնս *ուսուցանեն* մեզ հարքն հոգելիցք արտայայտել: - 775. Այլ և պատմութիւնք և մեկնութիւնք սրբոց՝ նորին հոգւոյն են որք *ուսուցանեն* մեզ զնոյնս: - 778. Որք դարձուսցեն զսիրտ հարց յորդիս ըստ մաղաքիայի. այսինքն *ուսուցանեն* զիաւատն փրկչին զոր հարքն ունէին. և է՛ վարձաւորելի և կարի քաջ. և թէ այսպէս և թէ այն՝ քրիստոս քարոզի: - 785. Զլինիլ արտասուաց՝ *ուսուցանեն* գիրք կազմութեան և որ ի բժշկաց, յերիս բաժանմանէ բնաւորեալ կերակրոց: - 786

**ՈՒՍՈՒՑԻՉ +** Եւ զոր ինչ տեսանէ աչք արծուին՝ ո՛չ կարէ տեսանել աչք մարդոյ. այնպէս բթամիտն ո՛չ իմանայ, զոր իմանայ նրբահայեացն և ուսեալն յաստուծոյ. զոր եդ աստուած *ուսուցիչ* այլոց. որպէս մարգարէքն, և առաքեալքն, և վարդապետք: - 31. Ապա ո՞րպէս է գլուխ նա ամենայն իշխանութեանց և պետութեանց և *ուսուցիչ:* - 99. Երկրորդ՝ ամենեքեան հրեշտակք կոչին. իբր միմեանց *ուսուցիչք* և յայտնօղք: - 137. Զի ուղղաձևութեան *ուսուցիչք* ի բաժանմանէ ի միութիւն եկեալ խոստովանին զքրիստոս. և սոքա ի միութենէ ի բաժանումն որոշեն: - 176. Եօթներորդ՝ անդրանիկք են իշխանք հոգևորք, վերակացուք և խնամողք այլ հոգւոցն. որպէս քահանայք, *ուսուցիչք*, և այլք. վասն որոյ երիցունք կոչին: - 309. Եւ է՛ հոգին յաստուծոյ. և մարմինն ի ծնողաց. և միտք *յուսուցչաց:* - 389. Բայց զի յուսացեալ ի բանն ճշմարտութեան յաղագս որոյ բանս հարցափորձութեան, հետևելով *ուսուցչացն* ուղղութեան, և յուսոյ ուսողացդ նպաստութեան. բացցուք զբերանս մտաց, և ձգեսցուք ի մեզ զհոգին շնորհաց: - 456. Սարկաւագն է՛ քարոզ և *ուսուցիչ* մեր ի դէմս հոգւոյն և ի դէմս առաքելոցն. - 626. Չորրորդ, այլ և մարտիրոսք և ճգնեալքն ճաւոր. և *ուսուցիչքն* կաւոր. և ուսեալքն երեսնաւոր: - 757

**ՈՒՍՈՒՑՈՒՄՆ +** Յինգերորդ, ըստ փիլոնի զաւազանն է իմաստութիւնն. դալարեալ մտօք և ծաղկեալ ուսմամբն. և պտուղ՝ *ուսուցմամբ* աշակերտաց: - 382. Զի այսպէս միատեսակ բնութեամբ խոստովանի ընդ մեզ և այլ ժողովուրդ ուղղափառաց ըստ *ուսուցման* մեծին դիոնիսեայ յերկրորդ գլուխն եկեղեցական քահանայապետութեանն ասել...: - 477

**ՈՒՍՏ +** Սուտակ՝ որ է՛ լիգրոնն. զոր ո՛չ գիտէ ոք *զուստն.* նման է կապուտակ աւազոյ. ոմանք ասեն յամազունից բերաւ ի կանանց աշխարհէն: - 348. ...ընդ որում անպատշա՛ճ էր լինիլ խօսակից և *զուստն* ո՛չ գիտել. այլ պատշա՛ճ էր որդւոյ վասն մարմնով երևելոյն: - 735

**ՈՒՍՏԵՔ +** Զոր օրինակ ի բարձր *ուստէք* քար հոլովեսցի, և որ մօտն կացցէ ասէ ցնա՝ երթալ ունիս մինչ ի ներքին վայր տեղիս և ապա դադարիս: - 497

***ԱՄԵՆԱՅՆ ՈՒՍՏԵՔ +*** Ասեմք առ այս թէպէտ ունին զօրութիւնս, բայց այլ և այլ կերպիւ. զի բոյսք որք յերկրի են դարմանիչք և բժշկութիւնք մարմնոց. այլ երկնային աստեղքն են արարիչք լուսոյ և ժամանակաց. և ի նշանս ապագայից. զի *յամենայն ուստեք* տեսեալ պատրաստեցին մարդիկք. որպէս ասէ գիր, եղիցին լուսատու լինիլ երկրի. ի ժամանակս և ի նշանս: - 12

**ՈՒՍՏԻ +** Նախ՝ զի բարին էութիւն է. *ուստի* յա՛յտ է՝ զի հակադարձին առ միմեանս. զի ամենայն որ բարի՛ է՝ է է. և ամենայն որ է է՝ բարի՛ է: - 13. *Ուստի* յա՛յտ է թէ սերմանեաց ի բնութիւնս զբարին, և օրէնս եդ բարւոյ. այլ և խրատ և յորդորումն և պարգևս բարեաց: - 17. Եւ որպէս լոյսն միշտ լոյս է, թէպէտ պակասեցաւ ի յօդոյն. *ուստի* յայտ է՝ զի դարձեալ լուսաւորէ: - 23. Յիւրմէ վասն իւր, ըստ որում «ես տէր աստուած առաջին և առ յապայ. և Երկրորդ ի սկզբանէ, զի իր ինչ ինքն ինքեան սկիզբն և սկսեալ անկար է գոլ. *ուստի* հա՛րկ է ամենայն սկզբնաւորաց գոլ սկիզբն»: - 25. *Ուստի* հեշտութիւն և

աւանդութիւն յիրաւի խառնեալ ընդ միմեանս, և հակառակասիրութիւն և ինքնահաճութիւն յառաջ եկեալ, որով զինեալ պնդին ընդդէմ ուղղութեան. զի կարծեն զինքեանս ճշմարիտ գոլ քան զայլսն: - 33. *Ուստի* յա՛յտ է մեծութիւն յանցանացն. քանզի ի հինն զինչև մեղանչէր ոք մեծ կամ փոքր՝ պատարագաւն սրբէր. թռչնօք և անասնօք: - 33. *Ուստի* որդի ո՛չ միայն ասի անդրանիկ՝ այլ և միածին: - 41. Հինգերորդ՝ զի զօրութիւն՝ կարողութիւն՝ *ուստի* առնելն է՝ և աստուածութիւն՝ տէրութիւն՝ իշխանութիւն և այլք այսպիսիք՝ ո՛չ են առանձին անձնաւորութեանց. այլ հասարա՛կ են. և ո՛չ մին առաւել քան զմի. վասն այն ո՛չ կարէ որդի առնել ինչ յանձնէ իւրմէ թարց հօր որպէս ասացաք: - 45. *Ուստի* մինն տըւօղ և միւսն առօղ ըստ նոցայն. այս է բանն և մարդն: - 66. *Ուստի* մկրտիմք յանուն Հօր և Որդոյ և Հոգւոյն սրբոյ: - 69. *Ուստի* ընդ հաւատացեալս է մինչ ի կատարած աշխարհի: - 71. *Ուստի* յա՛յտ է ի սահմանէն. ամենայն մարդ կենդանի բանաւոր մահկանացու մտաց և հանճարոյ ընդունակ: - 74. *Ուստի* ո՛չ ասի քրիստոս սոսկ մարդն, կամ մերկ աստուածն. այլ որպէս ցուցաւ յերկուց միաւորութիւնն: - 75. Բաղկացական տարբերութիւն է՝ *ուստի* տեսակքն գոյանան. որպէս բանականն և մահկանացուն՝ զբնութիւն մարդոյն կատարեն: - 85. *Ուստի* յա՛յտ է յորժամ ասեմք Երրորդութիւն աստուած. Երրորդութիւն անեղ. այլ ո՛չ ասեմք **գ** աստուած. կամ **գ** անեղ. այլ մի աստուած և մի անեղ: - 107. Ոմանք ասացին զսկզբնապետագոյն տարերքն. *ուստի* եղեն ամենայն մարմնական էութիւնք: - 112. Իսկ առողջ լսելիք և տկար՝ պատճառի ի համակարգս. և ի հաւասարն բնութեամբ. որք իմացմամբ և սիրով և ներգործութեամբ առաւել կամ նըւազ են. *ուստի* առաւել կամ նըւազ պարգևս ընդունին: - 131. Զի թիւ մեր նիւթեղէն և տկա՛ր և չափաւո՛ր է. վասն որոյ զանբաւութիւն նոցա ո՛չ կարէ չափել. *ուստի* յայտ է՝ զի և ո՛չ զթիւ մեր կարեմք գիտել: - 141. *Ուստի* բնութիւն նոցա էր անմարմին և լոյս և անմահ՝ և մնաց ի նոյն: - 147. Տեղական անկումն եղև դիւաց ի սկիզբն ստեղծման իւրեանց վասն ամբարտաւանութեան և մախանաց ընդդէմ արարչին փառաց. *ուստի* անկաւ յերկնից ի դասուց հրեշտակաց և ի փառաց իւրեանց որպէս ասացաւ յառաջագոյն: - 153. *Ուստի* յա՛յտ է զի կարելին ունի զգոլն և զչգոլն. և անկարն զմինն. կամ զգոլն կամ զչգոլն: - 165. *Ուստի* յա՛յտ է զի էրէցն երկրորդ ամուսնութեամբն ո՛չ կարէ քահանայագործել. յիրաւի և ապա պոռնկեալն էրէց կամ աբեղայ՝ ո՛չ կարէ քահանայագործել. զի ուխտազա՛նց է: - 167. *Ուստի* յա՛յտ է զի ի լինիլն աշխարհի՝ նախագաղափար տեսութիւնն նոյնպէս եկաց մնաց առանց յաւելուածոյ և պակասութեան: - 169. *Ուստի*՞ ճանաչի անհատն: - 174. Եւ գոյացութիւն ասեմ, որով տարորոշի ընդդէմ ոչ գոյին. և որակութեամբ բացորոշի յանմարմին էութեանց. *ուստի* բաղկանայ մարմին գոյացութեամբ և որակութեամբ: - 175. Եւ *ուստի*՞ է յայտ ասիցէ ոք. այսինքն զի բանն անմարմին է որ բաժանէ զսոսա. զի այս է կարգն որ մարմին զմարմին բաժանէ. և անմարմին զանմանմինն: - 175. *Ուստի* տարերք և տարրեղէն մարմինք խառնեցան և յառաջ եկին ի մի և ի նոյն նիւթոյն: - 175. Եւ զի անշփո՛թ են սոքա յատկութեամբ՝ յայտ է. *ուստի* ասեմք, պետրոս մա՛րդ է և բանաւոր և կենդանի և զգայուն և շնչաւոր և մարմին և գոյացութիւն: - 176. *Ուստի* պատճառի լինելութիւն էիցս միշտ և անխափան. որպէս ասի ի գիրս աշխարհաց: - 181. *Ուստի* և նեղեալք՝ ի խնդիրս առ ի բարձունս զձեռս տարածել ըղձան: - 184. Լուսաւորքն *ուստի*՞ գոյացան: - 188. Եւ եթէ *ուստի*՞ է պակասն: - 191. *Ուստի* յա՛յտ է՝ զի երեկոյ շաբաթուն որ կոչի կիրակմուտ՝ պատուակա՛ն է քան զմիւս գիշերն որ ըզհետագայ կիրակէին: - 194. Լոյսն *ուստի*՞ իջանէ յերկիր: - 203. *Ուստի*՞ լինին ամպք և անձրևք: - 204. Եօթներորդ՝ ամենայն աղբերք և գետք ժողովին ի ծով՝ *ուստի* ելին: - 207. *Ուստի*՞ ջերմանան աղբիւրք ջերմուկք: - 208. Որպէս ի մէջ երկրի գոն երակք ջրոց, նոյնպէս և հողմոց, *ուստի* ի վեր փչեն: - 208. Եւ ի բաքու յեզրն կազբիական ծովուն. *ուստի* ծծումբն զօրութեամբ ունի զհուրն: - 208. Նա՛խ՝ զի մայր է մեր, *ուստի* ծնանիմք ամենեքեան: - 211. *Ուստի*՞ գոյանան համն և հոտն և գոյնն: - 213. Նա՛խ՝ զի սերմնական զօրութիւնն է ի մէջն բնաւորեալ. *ուստի* բոլորապէս և հաւասար տայ շարժիլ տնկոյն: - 213. *Ուստի* յա՛յտ է թէ՝ և իշխէ՛ արտաքին անասնոց: - 220. *Ուստի* յա՛յտ է, որք վերստին յաղթեն ախտիցն որք յինքեանս, այսինքն ցասման և ցանկութեան. յաղթին և հնազանդին նոցա արտաքին գազանք և անասունք: - 220. Որպէս բոյսք վասն անասնոց. այսինքն է՛ այլոցն. *ուստի* անասունք կերակրիլով ծառայեն մարդոյն: - 230. *Ուստի* միջակ գոլով ըստ էութեան՝ և ի միջակ վայրս դրախտին բնակեալ: - 231. Այլ և ի միտ ածցուք զփառս երկնային կենաց *ուստի* անկաք, և անդ դիմելոց եմք...: - 233. Իններորդ՝ ա՛նդ են բերան և լեզուն. *ուստի* ներքին կիրք հոգւոյն և ամենայն բարութիւնք յառաջեն ի մեզ: - 234. Հարցումն ա՛յսմ իրի՝ նախ գիտելի է՝ թէ *ուստի*՞ գոյանայ պատկերն և տիպ: - 235. Ըստ այսմ ապացուցի. զի բնութիւնն ի սեռ՛սմն է և ի տարբերութեան *ուստի* բաղկանայ. և անձն ի բութիւնն է յորմէ կայանայ. և դէմքն ի յանձնէ՛. և

կերպարանն ի դիմաց. և պատկերն ի կերպարանաց. և տիպն ի պատկերաց. և որակ տպաւորեալ ի պատահմանց: - 235. Այս՝ թէ *ուստի*՞ գոյանայ պատկերն և տիպ: - 236. Յոգին պատկե՛ր է աստուծոյ. և աստուածապաշտ մարդոյ՝ զաստուած քննել ո՛չ մարթի թէ *ուստի*՞ է. կամ ո՞ւր է կամ ո՞րչափ է. և կամ թէ ո՞րպէս է. կամ թէ մինչ ի յուր է: - 251. Այլ ա՛րդ եթէ փոխի ի տնկոյն ի մարդն, վատթա՛ր է մարդոյն կեանք քան զտնկոյն. *ուստի* ի մեծագունէն ի նուաստն փոխեցաւ: - 253. Պատասխանեմք առ այս եթէ՝ փչումն ո՛չ զբանական հոգին ասեն սուրբ հարքն. զի մարդ ասելով զհոգի և զմարմին նշանակեաց. և զմարմինն զի ի նիւթո՛յ է՝ ի հողոյ ասաց. այսինքն ի **դ** տարերաց որ է՛ ի հողն. և զհոգին ո՛չ նշանակեաց թէ *ուստի*՞ է. զի յանէից է ստեղծումն նորա: - 253. Եւ թէ ոք ասիցէ, *ուստի*՞ գտանեմք եթէ ունի զկենդանութիւն հիւթն այն: - 255. Որպէս ճիւղ հատեալ ի ծառէ և տնկեալ յերկրի, ճիւղն է հատեալ ի ծառէն, այլ կենդանութիւնն ո՛չ. *ուստի* յա՛յտ է զի տընկեալ ճիւղն նոյն կենդանութեամբն բուսանի զոր ունի առ ինքն: - 257. *Ուստի* յա՛յտ է՝ զի յառաւել կերակրի և աւելի աճէ և բազումս ծնանի տունկն քան զանասունս: - 266. *Ուստի* յա՛յտ է՝ զի այծեամն առաւել է տեսանելեաւ. և շուն հոտոտելեաւ. և այլն նմանապէս. վասն որոյ փութով շարժին և կանգնին քան զմարդն: - 266. Եւ կամ որպէս ճանապարհորդք հեռացեալք ի տանէ՞ յորժամ դարձցին վերստին ի տունս իւրեանց, նախ թողուն զվերջին բնակետղն *ուստի* դիմեցինն երթալ: - 280. Եւ *զուստին* մի՛ հարցանէր թէ ի կենդանւո՞յ էառ, և թէ նո՛ր գոյացոյց. զի ամենայն ինչ կարելի՛ է աստուծոյ: - 281. Նա՛խ զի սիրտ սուրբ և աննենգ ունէր. *ուստի* յա՛յտ է յանմեղութեամբ գնալոյն ընդ եղբօրն ի դաշտն: - 286. Երկրորդ՝ զի խոնարհ և հնազանդ էր յամենայնի. *ուստի* մնաց եղբօրն պատարագի. որ իւրն **գ** ամսով յառա՛ջ էր հասեալ քան զեղբօրն. այսինքն ծնունդ ոչխարացն քան զպտուղ երկրին...: - 286. Եւ **բ** գետն ի բանն և ի հոգին սուրբ որ բղխեն ի հօրէ. զի հրաւիրակք են մեզ՝ յակն տանելով *ուստի* բղխեն սոքա: - 295. *Ուստի*՞ է մելքիսեդեկ: - 300. Վեցերորդ՝ զի ի ձեռս ետ զհագար աղախինն չարչարել սառայի. *ուստի* զերծեալ փախեաւ և հարցաւ ի հրեշտակէն: - 304. *Ուստի* յա՛յտ է յերից արանցն երևելոյն առ կաղնեաւն մամբրէի: - 305. *Ուստի* եղեն յետինքն առաջինք. և իսրայիէլ նոր և աստուածատեսք եղեն: - 305. Եօթնն**ժ**, որպէս իսահակ արձակեցաւ յետ երից աւուրց, զի ի կամս հօրն յօրէ յայնմանէ էր մեռեալ՝ *ուստի* սկիզբն եղև ճանապարհին: - 306. Իսկ մեզ հոգևորապէս ետ պարգև զբնակութիւնս երկնից. *ուստի* մերժեցաւ հակառակորդն մեր սատանայ...: - 306. *Ուստի* յայտ է զի բարձր գոչեաց և եհան զոգի. զի ամենայն մարդկան նուազի ձայնն ի ժամ մահուանն: - 316. *Ուստի* յա՛յտ է զի բաժանեցաւ հոգին, այլ աստուածութիւնն անբաժանելի մնաց ի բաժանեալ հոգւոյն և ի մեռեալ մարմնոյն: - 319. Երկրորդ՝ ի նշան քաղցրութեանն յոբայ. *ուստի* իջանեն անձրևք: - 326. *Ուստի*՞ աճեցին ստացւածքն յոբայ: - 326. *Ուստի* բազմացեալ լցին զարևելս ի պալի. յորմէ թագաւորք պարսից և հայոց արշակունիք կոչեցեալ: - 330. *Ուստի* յա՛յտ է զի ի մի նիւթ ժողովեաց զամենայն որակս համոց: - 339. Եթէ խորհրդական մարմինն քրիստոսի անապակա՛ն է, *ուստի* գոյանան կենդանիք և բորբոսք: - 339. Եւ զի պատահմունքն փոփոխելի է, *ուստի* յա՛յտ է զի փոփոխի և միաւորի՛ ի մարմին կերողացն: - 339. Իններորդ, նոքա ծառայաբար մատուցանէին. *ուստի* յա՛յտ է զի ո՛չ կարէին նստիլ ի սրբութիւնսն կամ ի քաւութիւնսն...: - 354. *Ուստի*՞ լինի ծորումն: - 368. Տասներորդ՝ ունի **գ** տեղիս. կրկին *ուստի* զրկեցաւ. և օդդ ուր անկաւ. և հուրն ուր տանջի: - 394. Այլ և ի վերայ այսր ամենայնի անասելի բարութիւն. զարիւնն իւր ետ ի փրկութիւն մեզ. *ուստի* ի հնոյն արգելեաց զարիւն զենմանցն. մեզ զիւրն արիւն ետ ի ճաշակումն: - 398. *Ուստի* յա՛յտ է զի փոխեաց զփայտն անիծից և զգերեզմանն, և արար աղբիւր օրհնութեան փայտի և գերեզմանի: - 400. Իսկ թէ *ուստի*՞ են օրհնութիւնք և անէծք: - 403. Այլ և աղքատութեամբ. *ուստի* յա՛յտ է զի անէ՛ծ զգէեզի վասն ընչիցն նէեմանայ: - 404. *Ուստի* յա՛յտ է, զի յորժամ ի սպառնալն դառնամք ի մեղաց, ո՛չ սրտմտի նա: - 408. Եօթներորդ՝ ի յօրինակ բնութեանս դառնալոյ անդրէն ի տեղիքն մեր *ուստի* ելաք որք են հաւատացեալք: - 414. Իններորդ՝ սպանմանն աբէլի գործիք եղև որպէս ասեն. *ուստի* գայլախազ կոչեցաւ. զի սրբեսցի դրոշմաւն: - 415. Երկրորդ՝ *ուստի*՞ ճանաչեաց թէ սամուէլ է. զի տհա՛ կինն ասաց. այլ որպէս կինն երևեցոյց զձևն, նոյնպէս կարծեաց և սաւուղ: - 429. *Ուստի* յա՛յտ է, զի ցեղն հէլի **ըճռ** էին. և ցեղն յուդայ **եճռ**. և ցեղն քահանայից և բենիամենի ո՛չ անկաւ ի թիւ: - 434. Երկրորդ՝ զի սովն և սուրն զբարի և զչար ի միասին պատժէ. այլ մահն ընտրութեամբն աստուծոյ է. և ժողովի ի վերայ յանցաւորացն. *ուստի* յա՛յտ է զի դաւիթ ո՛չ էր յանցաւոր ո՛չ պատժեցաւ: - 435. *Ուստի* յա՛յտ է, զի որակ ծնողացն խառնի ի բեղնաւորիլն. ի դաշտանւոյն գօդի. ի հիւանդութենէ, ի շիկութենէ...: - 439. Զի՞նչ է որ ի ձեռաց ագռաւու կերակրեցաւ եղիա. և *ուստի*՞ էր: - 443. *Ուստի* տէր տէր տայ ինձ լեզու խրատու և սիրտ ի ժամու: - 456. *Ուստի*՞

փրկեաց զմեզ: - 473. *Ուստի* եղև պապանձեալ զաքարիա ի նմին աւուր: - 483. Ոմանք ասեն թէ աւանդիլ հոգւոյն քրիստոսի, աւազակն եմուտ յերկրաւոր դրախտն *ուստի* ել ադամ. և չէ՛ հաւանելի. զի անդ մարմնովն եմուտ յետ յարութեանն: - 495. *Ուստի* յա՛յտ է զի ո՛չ ասաց ի հող դարձիր. այլ թէ՝ «դարձցիս»: - 496-497. Եւ զի ա՛յլ է կամաւոր մահն ի հարկաւորէն. *ուստի* յա՛յտ է զի հարկաւոր մահն է՛ պատիժ. և կամաւորն պսակ և պարգև: - 497. Ասեմք եթէ, կերակրիլն ո՛չ է մասն ապականութեան. *ուստի* յա՛յտ է զի ադամ նախ քան զյանցանելն ի դրախտին կերակրիւր և ո՛չ էր ապականացու. այլ անապական: - 501. *Ուստի* յա՛յտ է զի յորժամ կամէր՝ քաղցնոյր և ծարաւէր: - 501. *Ուստի* յա՛յտ է զի մեք կրեմք զամենայն զայսոսիկ: - 502. *Ուստի* յա՛յտ է թէ մի է դժոխք հոգւոցն: - 505. *Ուստի* յա՛յտ է զի արդարք և մեղաւորք ի դժոխս էին: - 506. Եւ կրկին սուտ. զի ուր զձուկն կերին՝ ի գալիլեայ յեզր տիբերիայ ծովուն էր **դ** աւուր ճանապարհ հեռի յերուսաղէմէ՛ և ի լեռնէն ձիթենեաց *ուստի* համբարձաւ քրիստոս: - 511. Յիսունևվեց, Թէ *ուստի*՞ է օրհնութիւն կարգաց եկեղեցւոյ: - 527. *Ուստի* յայտ է զի պատժէ զմարմին. և կապէ՛ զհոգին ի կեանս և ի մահ: - 538. *Ուստի* յա՛յտ է, զի առեալ էր զքահանայութիւն. և մկրտեալ զթագաւորն և լուսաւորեալ զազգս, և շինեալ եկեղեցիս: - 548. *Ուստի* զանազանին և պատիժք մեղացն. ...: - 556. *Ուստի* ծառ չար պտուղ չար առնէ: - 556. Երրորդ՝ զի **ե** են զգայութիւնք և մի բոլոր մարմինն. *ուստի* ծնանին **գ** խորհուրդք այսպէս: - 560. *Ուստի* յառաջեն ամենայն խորհուրդք այսպէս: - 560. ...որպէս առաւել է մեղք հրեշտակին քան զմարդոյն. վասն այն մին քահանայի մեղք՝ որ չափ բոլոր ժողովրդեանն է. *ուստի* յա՛յտ է ի պատարագէ հնոյն...: - 563. Նա՛խ առ հրէայսն. որ գիտէին զհոգին սուրբ՝ շնորհաց բաշխօղ. *ուստի* ելից հոգին զբէսէլիէլ ճարտարապետ. և զեօթնարփեան շնորհս թուէ եսայի...: - 566. *Ուստի*՞ ուսանիմք զսէր ընկերին: - 577. Զի մկրտութիւնն է՛ խորհուրդ հաւատոյ. *ուստի* յա՛յտ է զի նախ հաւատամք և ապա՛ մկրտիմք: - 587. Զի ջուր հակառակ է հրոյ. և զի՞նչ է մեղք, եթէ ոչ հուր. որպէս յոգւոջ բարկութիւն. և ի մարմնի ցանկութիւն. *ուստի* յայտ է զի հրով տանջանաց պատժի. և աստ զի հուրն շիջցի ի ջուր մկրտիմք: - 591. Եւ առաջին ծնօղն *ուստի* յառաջ եկին **դ** ծնունդքն. և **ե** երրորդն որ լինի խնամութիւն. լինի այս **գ** ազգ: - 611. ...և յարնելս երկրպագեմք *ուստի* ակն ունիմք գալստեան փրկչին. որպէս լուսանցն յարևելից: - 613-614. Եւ որ նա՛խ է վերջին տունն ի մեսեդի կամ կցորդ. այն է զի քրիստոսիւ դարձաք յառաջինն և ի բարձրագոյնսն. *ուստի* ադամաւ խոնարհեցաք...: - 629. *Ուստի* յա՛յտ է՝ զի ուր և ալէլու ասեմք, սաղմոս տուն գոյ ընդ նմա: - 644. *Ուստի*՞ ունիմք վկայութիւն վասն պահոց: - 652. Զի մարմինն բաժանեալ ի հող լուծանի *ուստի* առաւ...: - 667. Նախ զերանական կեանս արդարոց *ուստի* զրկեցաւ մեզօք: - 669. Նախ ի դէմս դրախտին *ուստի* արտաքսեցաւ մարդն: - 677. *Ուստի* յա՛յտ է զի մինչև յօր դատաստին ո՛չ առնուն: - 692. *Ուստի* յա՛յտ է զի նախ քան զքրիստոս արդարք և մեղաւորք ի դժոխս էին: - 695. ...*ուստի* յայտ է զի քաւարանն ջուր ո՛չ է: - 701. և Պատւական ակունք սէրն առ աստուած և առ ընկերն. *ուստի* ամենայն բարեգործութիւնք կատարին: - 702. Նեռն *ուստի*՞ լինի: - 706. Եւ յետ այսորիկ ի լեառն ձիթենեաց *ուստի* համբարձաւ քրիստոս՝ տէր իշխանութեամբ իւրով սպանցէ զնեռն: - 709. Այսպէս և հողն *ուստի* շինեցաւ ադամ, ո՛չ մնայ ի տարերս. այլ յառնէ ի յադամ որ սկիզբն եղև գոյութեան նմա: - 719. *Ուստի* յայտ է թէ՝ զմարմին բանին ապականացու խոստովանին նոքա՝ որ զխաչն ապականացու ասեն. և են նեստորականք: - 733. Այլ որ ուղիղն է տեսութիւն, յետ յարութեան փոխի ժամանակն ի յաւիտեան. և այլ ո՛չ գտանի մասն և րոպէ և ժամ. զի երկնային մարմինք դադարին ի շարժմանէ *ուստի* ժամանակն գոյանայ: - 747. *Ուստի* երևի **գ** ժամս ի յարութենէն մինչ ի վճիռ հատուցման և կորստեան չարաց չորեքկին. այսինքն գործոց չարաց և պատժոց նոցին. պատճառաց դիւաց և հետևելոց մարդկան: - 748. Եւ այն է կեանք՝ *ուստի* մերժեալ են ցաւք և տրտմութիւնք և հեծութիւնք: - 762. *Ուստի* որդին աստուծոյ եկեալ թագաւորական աթոռովն և ամենայն թագակիցք ընդ նմա: - 763. Զի ա՛յն է կեանք՝ *ուստի* մերժեալ են ցաւք և տրտմութիւնք և հեծութիւնք: - 767. Հասարա՛կ է և բնութեան իր, զի ամենայն ինչ նախնի մարդոյն բնութեամբ է ի մեզ և հասարակ իր. և առ յանդիմանութիւն դժկամակ երևեցան նախնիքն մեր. *ուստի* պատճառեցին զմիմեանս: - 774. *Ուստի* ասացաւ թէ մահու մեռցիս. ոչ սոսկ. այլ զկրկնակի նշանակելով մահ. այսինքն զմեռանիլն մարմնով և զպատժիլն հոգւով: - 776. *Ուստի* յա՛յտ է զի ելեալ էին երբեմն և վերըստին դառնան ի նոյն: - 777. ...իսկ Պարագայիւ, զի նա ակամայ և տգիտութեամբ. *ուստի* ո՛չ ունելով զգիտութիւն բարւոյ և չարի: - 777. Զի թէ կորուսեալ էր, այսինքն բարձեալ ամենևին յազգէն ադամայ, *ուստի*՞ գոյր որդւոց նորա. կամ ո՞րպէս առ ջրհեղեղաւն բառնիւր բարձեալն: - 782. Նա՛խ՝ զի ի վերին գաւառս *ուստի* էին դևք՝ ո՛չ գոյ հաւատ. այլ դէմ յանդիման տեսութիւն: - 784

***ՈՒՍՏԻ ԵՒ*** **+** Դարձեալ՝ փործիչս այս փառասիրութեամբ յառաջեաց առ քրիստոս. *ուստի և* ի բանից իւրոց երևի թէ ամէն պատուիրանացն պահպանող եմ. զոր տէրն պակաս լինել յանդիմանեաց: - 47. *Ուստի և* զորդիսն նորա՝ որդիս աստուծոյ անուանէ գիր: - 288. *Ուստի և* վեհագոյն իմացութեանց էից սերովբէն զքօղեալ զերեսս և զոտս մարդեղութեան խորհրդոյն պարուրեալ: - 456. Ապա թէ ոչ՝ ո՛չ կարէ մեղաւոր հոգին ելանել յերկինս. *ուստի և* հրեշտակք վասն մեղաց անկան. և մարդն ի դրախտէն: - 689. *Ուստի և* փրկչին ակնունիմք նորոգել զմարմին խոնարհութեան մերոյ ըստ մարմնոյ փառաց իւրոց: - 716

**ՈՒՍՏԻԱՆԷ** - Որ և *զուստիանէ* սրբուհի կոյսն մա՛յր արար կանանց հաւատաւորաց: - 658

**ՈՒՍՏԻԱՆՈՍ** - Այլ հրամանաւ մեծի թագաւորին *ուստիանեայ* ժողովեցան յունաց և հռոմոց և հայոց և վրաց և աղուանից եպիսկոպոսունք. և կաթողիկոսն հայոց սահակ...: - 544

**ՈՒՍՏՐ** **+** Իսկ աղուանից ամիս Նաւասարդուլ. որ է՛ նաւասարդացի. այսինքն ի թոռանց է. *յուստերաց* կամ ի դստերաց: - 201. Նոյնպէս և զփոխումն ենովքայ տեսին եղբարքն *ուստերքն* և դստերք նորա. զի մի՛ ասիցեն թէ սպա՛ն զնա՛ կուրացեալն ղամեք թոռն կայենի: - 290. Վասն որոյ ի ծննդեան աւուրն ժողովին և օրհնեն զաստուած և մարմնով ուրախանան. որպէս յոբայ *ուստերքն* և դստերքն միաբանեալ գային և ուրախ լինէին գիրն: - 321. Նա՛խ՝ զի **ժ** էին թւով. է *ուստերք* և **գ** դստերք. ըստ թըւոյ նոցա մատուցանէր: - 322. Նոյնպէս **է** *ուստերք* և **գ** դստերք: - 326. Է՛ և ա՛յլ իմն տեսութիւն բանիս. զի կամի՛ զպաշտօնս մեր որոշել ի կռոց զոհիցն. զի սուտանուն դիքն խնդրէին *ուստերս* և դստերս և արջառս և ոչխարս զոհել և սպանումն օտարաց: - 396

**ՈՒՏԵԼԻ** **+** Երկրտասաներորդ՝ զի թէ վասն բնակութեան նորա՝ է մարմին նորա *ուտելի* որպէս ինքն ասաց՝ «մարմին իմ ճշմարիտ կերակուր է». կերօղքն եղիցին գազանք մարդակերք. և ո՛չ մարմնոյ և արեան որդւոյն աստուծոյ: - 67. Նախ՝ զի արիւնն և շունչն կենդանութիւնն է որ է աստուծոյ բաժին. վասն այն արիւնն ո՛չ է *ուտելի:* - 295. Չորրորդ՝ ի յարութեանն խնդրի ամենայն արիւն մարդոյ և ժողովի. վասն այն այժմ ո՛չ է *ուտելի:* - 295. Եօթներորդ՝ արիւնն հուրն է՝ և շունչն օդն. պա՛րտ է հանել զբ տարրն. իսկ մնացեալն ջուր է և հող՝ *ուտելի* է: - 295. Հինգերորդ՝ մասն. որ է՛ գլխոյն հատումն ուր ամենայն զգայութիւնքն են. և թէ այլ ինչ մասն հատցի՝ կամ գլուխն ջախջախեսցի՝ ո՛չ է *ուտելի:* - 365. Ապա թէ պակա՛ս է ի սոցանէ՝ պիղծ է և խոտան և ո՛չ է *ուտելի* զենեալն: - 365. Ո րք և հանցէ՝ *ուտելի՛* է: - 366. Երկրորդ՝ զի իցէ կենդանին սուրբ. զի անսուրբն ո՛չ զենանի և ո՛չ է *ուտելի:* - 366. Զի թէ նախ բնական ջերմութիւնն պակասի, այս լինի բնական մահ. ո՛չ է *ուտելի:* - 366. Եւ թէ շունչն քաղի, է՛ հեղձական մահ. ո՛չ է *ուտելի:* - 366. Եւ թէ լիցի երկաթ և ո՛չ սուր, և ո՛չ է պիտանի. որպէս բոլոր երկաթն թէ հարցէ զկենդանին և սպանցէ, ո՛չ է *ուտելի*, զի թէպէտ զարիւնն հանէ, այլ ո՛չ համանգամայն զշունչն և զջերմութիւնն: - 366. Ապա յա՛յտ է թէ՝ որ անկանի ընդ քար կամ ի վիհ և մեռցի, ո՛չ է *ուտելի:* - 366. Իսկ թէ այլ ինչ անդամն հատցի և մեռցի կենդանին, ո՛չ է *ուտելի*. ո՛չ հատեալ անդամն և ո՛չ բոլորն: - 366. Եւ թէ գլուխն ջախջախի, ո՛չ է *ուտելի*. զի ո՛չ հատաւ պարանոցն. ի հեղձուցելո՛ց կարգի է: - 366

**ՈՒՏԵԼ** **+** Որպէս յիմար հիւանդն ասիցէ, կամիմ *ուտել* և ըմպել զհաճոյսն իմ. եթէ առողջանալո՛յ եմ՝ առողջացայց. և եթէ մեռանելո՛յ՝ մեռայց: - 18-19. Զպահս լուծեալ ի միս ծկան, և նաւակատեաց զմիս առանց ոսկր *ուտեն:* - 34. Զի են որ զկեղևն *ուտեն* և ո՛չ զմէջն. որպէս ծիրան: - 213. Եւ են որ զմէջն *ուտեն* և ո՛չ զկեղևն. որպէս նուռն: - 213. Եւ են որ զերկուսքն ևս *ուտեն*. որպէս խաղողն: - 213. Եւ են որ ո՛չ մէջն *ուտի* և ո՛չ կեղևն. որպէս գղթորն: - 213. Եւ յիւր ժամանակն *ուտելոյ* բարի էր ըստ այլ ամենայն պտղոցն...: - 223. Դարձեալ ասեն ոմանք, նախ քան *զուտելն* ի պտղոյն՝ գիտէր ադամ զբարին փործիւ, և զչարն գիտութեամբ. իսկ յորժամ *եկեր*՝ գիտաց զչարն փործիւ, և զբարին գիտութեամբ. այն է գիտութիւն բարւոյ և չարի: - 223. Զի՞նչ էր պտուղն որ *կերաւ* ադամ: - 224. Ոմանք թուզ ասեն. թէ ի նոյն ժամն որ *կերաւ* և մերկացաւ՝ և կարեաց ի տերևոյ նորա. և վկայ բերեն թէ՝ վասն այն անէծ զթզենին յերուսաղէմ: - 224. Ի լուսաւոր պատմունճանէն, յորժամ *կերին* ի պտղոյն և ծանեան զի մերկ էին և արարին սփածանելիս: - 279. Չորրորդ՝ զի *եկեր* ի պտղոյն: - 279. Եօթներորդ՝ զի զաստուած ասաց պատճառ. եթէ կինս զոր ետուր՝ սա՛ ետ ինձ *ուտել:* - 279. Ասեմք եթէ՝ զոր ինչ ի յարութեանն աւուր լինելոց է սրբոցն, զսկիզբն անդանօր սերմանեաց ի նախնի մարդն ադամ. զի թէ յիւրում ժամանակին *կերեալ* էին ի կենաց պտղոյն, լինէին կատարեալ անմահք. և փոխէին յարքայութիւնն: - 282. Եւ թէ զի՞նչ *կերին*. և զի՞նչ տայր լոյս և վասն ագռաւուն: - 283. Վաքսունեւ, Վասն ուխտաւորաց որ միս *չուտէին* և ո՛չ գինի: - 285. Չորրորդ՝ զի պտուղ ո՛չ *եկեր*. որով ևս *ուտելովն* զրկեցաւ կենաց. և այսպիսիքս յերկինս հանեն զմարդն: - 290. Կերակուր *կերի՞ն* ի տապանին, թէ ոչ: - 294. Ո՛չ *կերին*. զի

թէպէտ ժողովեաց, սակայն ո՛չ *կերին*. այլ շնորհօքն աստուծոյ կացին որպէս մանուկն յարգանդի մօրն ապրի: - 294. Կամ որպէս ասեն թէ՝ ներսէս անուն արուեստաւոր տապանին՝ շինեաց իւր տուն ի վերոյ կողմանէ. և զի ո՛չ էր հրամանաւն աստուծոյ՝ սատակեցաւ նա՛ անդ, և զնորա գէշն *ուտէր* ագռաւն: - 294. Զկենդանին հրամայէ զենուլ. և զարիւնն և զշունչն հանել և ապա՛ *ուտել*: - 295. Հինգերորդ՝ արեամբն ազգակիցեն մարդ և անասուն. վասն որոյ ո՛չ է պարտ մարդոյ զհարազատն իւր *ուտել*: - 295. Վեցերորդ՝ սկայքն անխտիր *ուտէին* թէ մեռեալ և թէ հեղձուցեալ. վասն որոյ զի որոշեսցէ ի նոցանէ՝ ասէ արեամբ շնչոյ մի՛ ուտիցէք: - 295. Վեցերորդ՝ սկայքն անխտիր ուտէին թէ մեռեալ և թէ հեղձուցեալ. վասն որոյ զի որոշեսցէ ի նոցանէ՝ ասէ արեամբ շնչոյ մի՛ *ուտիցէք*: - 295. Ութերորդ՝ հուրն և օդն առաւել է յարիւնն զի առնօղք են. և յայտ է ի խառնումն միութեանց. զի հուրն մածուցանէ՛, և ջուրն և հողն մածնուն, և օդն սնուցանէ. վասն այն զարարօղն և զսնուցանօղն ո՛չ *ուտեմք*: - 295. Եւ միապէս է մեր և կենդանեաց. վասն որոյ ո՛չ է պարտ զսկիզբն գոյացութեան մերոյ *ուտել*: - 295. Տասներորդ՝ արիւն *ուտել* գազանա՛ց է հմակերաց. զի մի՛ լիցուք անողորմ և գազանասիրտ՝ հրամայէ՛ զարիւնն հանել և զանզգայ մարմինն եփել և *ուտել*: - 295. Նա՛խ՝ որպէս հատանեմք քաղելով զբանջարն և ապա՛ *ուտեմք*, նոյնպէս զենումք զկենդանին և ապա՛ *ուտեմք*: - 295. Դարձեալ՝ զբանջարն ընտրելով *ուտեմք*. այս է զի զվնասակարն և զդառն և զժահահոտն ի բաց ձգեմք և զչորրորդ մասն *ուտեմք*: - 295. Իսկ զչորրորդ մասն որ արտաքո՛յ է սոցա՝ *ուտեմք*: - 296. Նոյնպէս և ի սուրբ կենդանիս ի **դ** մասնէն զմինն *ուտեմք*: - 296. Երրորդ՝ զպնդագոյնն, որպէս ոսկր կամ եղջիւր՝ ո՛չ *ուտեմք*: - 296. Իսկ չորրորդ մասն միայն զկակուղ միսն *ուտեմք*: - 296. Ընդէ՞ր կնոջ զենեալն ոչ *ուտի*: - 296. Այլազգւոյ զենեալն վասն է՞ր ոչ *ուտի*: - 296. Նոյնդ է պատճառն որպէս կնոջ զենեալն ո՛չ *ուտի*: - 296. Եւ դարձեալ՝ այլազգին զհոգին իւր սպանեալ է մեղօք. և մեռելոյ զենեալն ո՛չ *ուտի*. որպէս ի քարէ անկեալն կամ ի կարկատէ՛ հարեալն ո՛չ *ուտի*: - 296. Վասն է՞ր քահանայի զենեալն ո՛չ *ուտի*: - 296. Երրորդ՝ աբրահամուն *ուտէ* և *ուտի* շնչաւոր և արիւնաւոր: - 301. Այլ մելքիսեդեկին անխիղճ. որ միշտ *ուտի* անշունչ և անարիւն: - 301. Երեքտասաներորդ՝ յորսոյ իւրոյ ինքն *ուտէ* և այլոց տայ: - 316. Եւ տէրն մեր որ զմարմինն և զարիւնն իւր ետ ամենայն աշխարհի. նախ ինքն *եկեր*, և ապա ետ առաքելոցն: - 316. Իսկ թագաւորք յամենայն ամի զնոյն առնեն ուրախութիւն. *ուտել* և ըմպել և հեշտութիւն մարմնոյ. որպէս փարաւոն առնէր և հերովդէս: - 321. Երևի թէ ո՛չ. զի *յուտել* և ըմպել մեռան որ է մեղք: - 322. Է՛ և երրորդ պատճառ. զխոզն *ուտէին* յեգիպտոս, և զարջառ և զոչխար պաշտէին. վասն որոյ հրամայեաց զաստուածս նոցա զենուլ զի չեն աստուածք. և ի խոզենւոյն հրաժարիլ ամենևին: - 355. Եւ ո՛չ միայն այս, այլ զեօթն օր անխմոր բաղարջ *ուտէին* ամենայն ժողովուրդն. և Աբրահամ և ղովտ բաղա՛րջ յօրինեցին զխորհուրդ փրկական մարմնոյ տեառն որ ի վերնատունն բաղարջով աւանդեաց: - 356. Եւ զմնացեալ նշխարսն *ուտէին*. քահանայքն և արուք նոցա ի սուրբ տեղւոջ: - 358. Եւ ա՛ջ երին քահանային, և երբուծն քահանայապետին. և զայլն *կերիցեն* քահանայքն: - 358. Իններորդ, պատարագ ուխտի. որ ո՛չ վասն երախտեաց ինչ, այլ իւր կամաւ ուխտեալ. որ յերկրորդ օրն ևս *ուտէին* զմիսն: - 359. Եւ ի սմանէ առցեն ասէ զհաս իրաւանցն. և զմնացեալն եփեսցեն ի սուրբ տեղւոջ և *կերիցեն* քահանայքն զեօթն օր: - 359. Երկոտասաներորդ, ոչխար տարևոր մեծի զատկին յելսն եգիպտոսի, խորովեալ հրով. և բաղարջ ընդ եղեգի *կերեալ*: - 359. Եւ այն՝ զի զամենայն ճարպ և զամենայն արիւն ո՛չ *ուտէին* յամենայն տեղիս բնակութեան իւրեանց: - 360. Որպէս նախ քան զօրէնս, բնական քննութեամբ ընտրէին մարդիկ. կամ զանճոռնի մեծն, կամ զամենևին փոքրն, կամ զգարշն տեսութեամբ, կամ զվնասակարն, *ուտելոյ* պիղծ ասէին զսոսա: - 364. Եւ զոր *ուտէին* և դիւաց զոհէին՝ պիղծ ասաց. որպէս զխո՛զ, զճագա՛ր, և զնապաստակ: - 364. Ցին, որ զայլոց վաստակս *ուտէ*: - 365. Բայց յենքեանց սատակեալն՝ և գազանաբեկն՝ և գիշատեալն ի հաւուց՝ մի՛ *ուտիցի*: - 366. Նա՛խ՝ զարիւնն հանել որ է՛ կենդանութիւն և աստուծոյ մասն. և զմնացեալն *ուտել* որ է տարր միայն: - 366. Ցուցանէ թէ՝ մինչ ի մեղս իցեն քահանայքն՝ ո՛չ զհասն *կերիցեն* և ո՛չ ի սուրբ խորհուրդն մերձեսցին: - 370. Զի՞նչ է որ զարիւն անասնոյ հրամայէ՛ ծածկել և ո՛չ *ուտել*: - 371. Արիւն *ուտելն*՝ և հեղձուցանելն՝ և գազանաբեկն՝ մի էր մեղք՝ որպէս ասացաւ ի վերոյ **ժը** գլուխն ի **զ** համարն: - 371. Եօթներորդ՝ սովն *ուտել* զմարմին զաւակաց. և գերութիւն ի թշնամեաց: - 376. Եւ քացախ ո՛չ *ուտել*, զի ապականութիւն է: - 389. Եւ ի յանապատն միս *ուտելոյ* հրաման ո՛չ *ունէին*. որպէս և ո՛չ ի դրախտին: - 390. Զի ասեն եթէ՝ **խ** օր էր պայմանն ադամայ. յետ **խ** աւուր *ուտէր* ասեն՝ ի փայտէն գիտութեան և սրբութեամբ որդիս ծնանէր. և ապա՛ *ուտէր* ի կենաց փայտէն և վերափոխեր. և այլ բազում բանս տողե՛ն: - 391. Նա՛խ՝ վասն ժողովրդեանն ասէ, թէ ոչ միայն հացիւ կեայ մարդ. որպէս ասաց ադամայ *ուտել* զհաց քրտամբք: - 397.

Մետասաներորդ՝ Զսուրբ հացն *եկեր* դաւիթ: - 412. Երրորդ՝ զի յառաջ քան զճենճերիլն *ուտէին*. իբր յառաջ քան զժամ պատարագին: - 425. Չորրորդ՝ զի *ուտելով* և ըմպելով անփոյթ առնէին զուխտաւորս ի հեռուստ եկեալ քառասնօրեայ մանկամբ և այլ ուխտիւ. և յանձրև և յարև և ի ցուրտ վաստակէին: - 425. Եօթներորդ՝ ընդէ՞ր ոչ *եկեր* ընդ նոսա և ոչ նստաւ և ոչ շօշափեցաւ: - 429. Եւ հաց ոչ *ուտել* և ջուր ոչ ըմպել. զի անընդունելի՛ էր մարմին և արիւն զոհիցն: - 442-443. Դարձեալ հաց ոչ *ուտել*՝ զբարկութիւնն նշանակէ: - 443. Եւ յորժամ *ուտէր*՝ նոցա փշրէր զմնացեալն: - 443. Զայս որպէս ձեռին գիր ունէր սատանայ, և նովաւ չարչարէր զմարդիկ՝ թէ աստուած ասաց մի *ուտել* և դու *կերեր* և մեռար. իմ ի՞նչ մեղք է: - 481. Դարձեալ ասեն նոքա, կաթնասուն եղև և կերակուր *եկեր*. և այս մա՛սն է ապականութեան: - 501. Եւ դարձեալ ասեմք, թէ կերակուրն մասն է ապականութեան, զոր յանմարմնութեանն *եկեր* առ աբրահամ զի՞նչ ասէք: - 501. Նաև յետ յարութեանն *եկեր* ընդ աշակերտսն անապական մարմնովն: - 501. Զի ցուցանիցէ թէ նոյնպէս *եկեր* և յառաջ քան զխաչն անապական մարմնով: - 501. Վեցերորդ վկայ նոյն ինքեանք ազգն Ֆռանկաց. որ յամենայն շաբաթ օր վիճիլ ասեն. և միս ո՛չ *ուտեն* ի խորհուրդ նաւակատեաց մեծի շաբաթուս: - 509. Թէպէտ այսօր վասն պատրանաց մարդկան և փոխելոյ զտօնս՝ ոչ ինչ *ուտեն* զնաւակատեաց որ է ձուկն. զոր միշտ զքառասնորդ պահքս պղծեալ են ձկամբ և արբեցութեամբ: - 509. Վասն է՞ր ի նաւակատիսս ձուկն *ուտի* և միսն ոչ: - 509. Եւ խորհուրդ նաւատակեաց ի դրախտին աւանդեցաւ յամենայն պտղոյ *ուտել* և ի միոյն ոչ: - 510. Այսպէս և մեզ աւանդեցաւ յամենայն կերակրոց *ուտել* և զմիս ոչ: - 510. Եւ որպէս ադամ յամենէն ո՛չ *եկեր*, այլ ի միոյն *եկեր* և դատապարտեցաւ: - 510. Նոյնպէս և որ ոք յայս օրս պահէ և յամենայն կերակրոց *չուտէ*, կամ միս *ուտէ*, ընդ դատապարտութեամբ է: - 510. Եւ տե՛ս և ի միտ առ. զի սոքա ի մի կարգի՛ են եդեալ. այսինքն ձուկն և ձու և կաթն. և որ *ուտէ* զմինն՝ *կերիցէ* և զմիւսն: - 510. Նա՛խ այսպէս, եթէ ի վերնատունն քրիստոս ձուկն *եկեր*. պա՛րտ է ի նմին աւուր ձուկն *ուտել:* - 510. Ապա թէ ոչ՝ և գառն *կերաւ* ի վերնատանն, *կե՛ր* և դու ի պահոցն: - 510. Եւ դարձեալ՝ ի քառասունս իւր ո՛չ *եկեր* ձուկն. և մեք զքրիստոսի քառասունսն պահեմք և ո՛չ զիրէիցն: - 510. Դարձեալ պատճառե՛ն թէ՝ յետ յարութեանն *եկեր* ձուկն ընդ աշակերտսն. յորում կրակեաղ կայծականց տեսին և ձուկն խորովեալ և հաց. և օրն էր չորեքշաբաթի. և ի **ե** շաբաթի համբարձաւ: - 511. Եւ կրկին սուտ. զի ուր զձուկն *կերին* ի գալիլեայ յեզր տիբերիայ ծովուն էր **դ** աւուր ճանապարհ հեռի յերուսաղէմէ՛ և ի լեռնէն ծիթենեաց ուստի համբարձաւ քրիստոս: - 511. Ապա յա՛յտ է զի ո՛չ ի չորեքշաբաթի *եկեր* զձուկն. այլ ի յանցեալ կիրակէն: - 511. Հինգերորդ ասեն, զձուկն ո՛չ զենումք վասն այն ի պահոց *ուտեմք:* - 511. Ասեմք թէ՝ և զձու հաւի և զկաթն ո՛չ զենումք, *կե՛ր* և զայն ի պահոց. զի համատեսա՛կք են: - 511. Նա՛և բազում տեսակք են ի ջուրս և ի յօդս. որպէս չղջիկանն առանց արեան է *կե՛ր* զամենայն: - 511. Եվ դարձեալ՝ զձու և զկաթն վասն այն ո՛չ *ուտես* զի արիւն ունին. և դարձեալ դու ասես թէ արիւն ո՛չ ունին: - 511. Տասներորդ, զի ցուցցէ թէ թշնամեաց նորա ո՛չ է իշխանութիւն բուռն հարկանել զնմանէ. իսկ բարեկամաց նորա գոյ իշխանութիւն այլով իւիք մերձենալ ի նա. այսինքն սիրով և երկիւղիւ յայնմիկ զոր *ուտեն* զնա: - 518. Ա՛րդ՝ զի՞նչ կամիս որ հնազանդիմք պետրոսի. ուրանա՞լ պարտ է զքրիստոս որ լինիմք հնազանդ պետրոսի, եթէ եղծանել զպահքն, թէ զամենայն պիղծ կերակուր *ուտել*...: - 548. Զպիղծ կենդանիս ո՛չ խաբել. և զհեղձուցեալսն *ուտել*. և այլ բազում ինչ: - 553. Նաև ասեն թէ՝ վասն փառաց աստուածանալոյն մեղանչեաց ադամ. և վասն նախանձու առն՝ կինն նախ *եկեր* զպտուղն: - 561. Երրորդ՝ զի չունէին պատճառս հայհոյութեան հոգւոյն որպէս զորդոյ. զի տեսանէին մարմին զգեցեալ, *ուտել* և ըմպել, տքնիլ և ննջել: - 566. Որկրամոլութիւն է անսահման բաղձանք *ուտելոյ* և ըմպելոյ: - 570. ...զի զկերակուրն ի հարկաւոր ժամանակին պարտ է *ուտել*. այսինքն որ քաղցեալ լինի. այլ ո՛չ յամենայն ժամ որ յագեալ լինի: - 570. Մեք այսպէս լուաք ի սուրբ գրոց թէ՝ անարժան *ուտելն* առնէ յուդա. և ո՛չ թէ միաւորութեամբ զմարմին և զարիւնն ճաշակել: - 598. ...որ ո՛չ *ուտէ* զմարմին իմ և ո՛չ ըմպէ զարիւն իմ, ո՛չ ունի կեանս: - 600. Որ *ուտէ* զմարմին իմ և ըմպէ զարիւն իմ, նա յիս բնակեսցէ և ես ի նմա: - 600. Եւ յառաջին արտորէիցն պտղոց տալով նոցա *ուտել* զոր քահանայքն *ուտէին* արար զնոսա Քահանայս: - 607. Եւ յորժամ միտքն երթայ յաշխարհական հոգս թէ զինչ *կերիցուք* և արբցուք, է՛ ներելի: - 620. ...և պապ նոցա հրամայեաց զերկու օրն *ուտել:* - 651. Ապա պա՛րտ է քեզ ի փոքր կարգն *ուտել* զամենայն աւուրս և զմեծն պահել: - 651. Խորհուրդ պահոց նախ ի դրախտին եդաւ մարդոյն. յամենայնէ *ուտել* և ի միոյն *չուտել:* - 652. Դարձեալ՝ ենովքայ *չուտելն* ի պտղոյ զամենայն ժամանակս իւր զերկու հարիւր ամ: - 652. Եւ դարձեալ՝ նոյ և ամենայն կենդանիքն ի տապանն կացին զբոլոր մի ամ և ոչ ինչ *կերին*. որպէս մանուկն յարգանդի: - 652. Զի ո՛չ *եկեր* և ո՛չ էարբ զքառասուն տիւ և **ըզխ**

գիշեր: - 652. Երրորդ, չորեքշաբաթն ի խորհուրդ խաբէութեան նայի. յորում ասաց օձն *ուտել* ի պտղոյն. - 653. ...և ուրբաթն՝ զի ադամ *եկեր* ի պտղոյն, և մեք պահեմք զնոսա: - 653. ...որ ամենայնիւ ընդ դէմն փոխի *ուտելն* և ըմպելն ի ծոմ և ի ծարաւ. ծաղրն ի սուգ. հեշտութիւնն ի տքնութիւն. և ի չարչարանս և այլն: - 657. Քսանևմի, Յամանգամայն յառնեմք. և վասն կերակրոյ. և *կերեալ* մարդոյ ի գազանաց: - 660. Վասն որոյ ո՛չ *ուտեմք*...: - 670. Եւ զի պահէ՛ ո՛չ *ուտիլ* ի գազանէ, և ո՛չ ցրուիլ ի ջրոյ. և ո՛չ հոսիլ ի հողմոյ, և յայլոցն պահէ: - 678. Ո՞րպէս ի հող լուծեալ և յա՛յլ տարեր, և ի գազանաց *կերեալ*, ժողովի մարմինն մեր: - 718. ...և թէ ի գազանաց և ի թռչնոց և ի ձկանց կամ ի մարդոյ *ուտի*, և նոքա ևս ի տարերս լուծանին: - 718. Կերակուրս զոր *ուտեմք*՝ յառնէ՞ ի մարդն թէ ոչ: - 718. Գիտելի է, զի ոմանք ասեն թէ կերակուրս զոր ինչ *ուտեմք* ո՛չ յառնէ ի մարդն. - 718. Եւ դարձեալ՝ ո՛չ միայն մարդոյս մարմինն, այլ և անշնչից և շնչաւորաց զոր ինչ *ուտեմք* յառնէ՛ ասեն որ է՛ անպատշաճ: - 718. Թէ զձուկն զայն որ *եկեր* զմարմին մարդոյ՝ *ուտէ* մարդ, և յայնմ սերմանէ ծնանի զա՛յլ մարդ. ի յորո՞յ մարմին յարիցէ: - 718. Մարմին մարդոյն զոր *եկեր* ձուկն՝ ո՛չ յառնէ ի ծնեալ մարդն այլ ի *կերեալն:* - 718. Այսպէս և թէ ոք զմարդոյ մարմին *ուտէ* և ծնանի ա՛յլ մարդ, մարմին մարդոյն ո՛չ յառնէ ի ծնեալ մարդն և ո՛չ ի ծնօղն որ *եկեր*, այլ ի *կերեա՛լն* մարդ: - 718-719. Որոյ պատճառ է, զի մարմին *կերեալ* մարդոյն է իւրն նիւթ գոյացական և սոցա եղև նիւթ պատահական: - 719. Եւ թէ որ *ուտէ* անարժանութեամբ, դատաստան անձին իւր *ուտէ:* - 782

***ՈՒՏԵԼ ՏԱԼ*** - Եւ զանչարչարութիւնն ի վերնատունն. յորժամ զմարմինն իւր *ուտել ետ* աշակերտացն՝ անչարչարելի էր ներգործութեամբ և ոչ թէ զօրութեամբ: - 282

**ՈՒՏԻՔ +** Իսկ միւսն է ընդ ծագումն լուսոյն. յորում զպահք և *զուտիք* բաժանեն. այսինքն լոյսն և գիշերն: - 194. Բնական օրն է մարմնաւոր. որ բաժանէ զպահս և *զուտիսս:* - 508. Եւ զի **գ** է օր ի բոլոր տարին. կամ ամենևին պահք. կամ *ուտիք*. կամ միջակ. որպէս նաւակատիկք: - 510. Պահքն վասն հոգւոյն պատշաճի. և *Ուտիքն* մարմնոյն. իսկ Նաւակատիքն վասն խառնեալ շնչոյն: - 510. Զմիս կենդանւոյ, որ կատարեալ կենդանի է և ի կենդանւոյ յառաջ եկեալ. այն է կատարեալն որ **ե** զգայարանս ունի և շարժի և շունչ ունի. և է՛ այս կերակուր *ուտեաց* և զատկի: - 510. Ապա զի *ուտիք* էր յորում բաժանեաց զձուկն: - 510. Այլ **գ** թագաւորքն պահոց, և **գ** տուն *յուտիքն*, ի դէմս սուրբ Երրորդութեանն: - 628. Եւ ի պահքն առաւել ձայնաւորքն քան զերգս. զի յաւուրս պահոց՝ հրեշտակաց նմանիմք, և *յուտիքն* մարդկան: - 628. Այլ և բոլոր ամենայն տնօրէնութեանցն պատմօղ. վասն այն յամենայն օր ի տօնս, ի պահս, և *յուտիս*, ի շաբաթս, և ի կիրակէ, զնա՛ ընթեռնումք: - 644. Ո՛րչափ *ուտիք* է, նոյնչափ պահք է: - 649. Զի հոգի և մարմին եմք. *ուտիքն* է մարմնոյ, և պահքն հոգւոյ հեշտալի: - 649. Վասն որոյ կարգեցին առաքեալքն և հարքն՝ **ճձ** օր պահք. և նոյնչափ *ուտիք:* - 649. Եւ նոյն քան *ուտիք*. սակաւ ինչ աւելի կամ նուազ: - 650

**Ո՞ՒՐ +** Ասեմք առ այս, եթէ այսու վկայե՛ս և դու մեզ՝ թէ ո՛չ է հարկ. զի ի բոլոր քաղաքն այնքան բիւր մարդիկ՝ ծեր և տղայ՝ ե՛րբ և *ո՛ւր* ի մի շարժումն աստեղաց ծնան...: - 13. Այլ զայս երկբայիս յաղագս ոչ գիտելոյ քոյ թէ «մինչդ» ամենուրէք ո՛չ որոշէ ընդդէմ հանդերձելոյն. զի թէպէտ նշանակէ՛ զկէտն *ուր* մինչն է եղեալ, այլ զոր ա՛նդր է քան զնա՝ ո՛չ ուրանայ: - 42. Զի եթէ վարձ նահատակութեան են այդոքիկ, *ո՞ւր* իցեն շնորհք: - 94. Երկրորդ՝ զի տեսութիւն մտաց հասարակի ընդ գոյութեան էութեան. և *ուր* եզերի բնութիւն՝ անդ և մտաւորութիւն: - 103. Զի *ուր* բնութիւն ո՛չ հասանի, անդ և միտք մեր ո՛չ կարեն հասանիլ: - 118. Այսպէս և ոչն. որպէս անդ՝ *ուր* ասէ արիստոտէլ՝ «ո՛չ մարդ» որ է անորոշելի անուն. և «ո՛չ նստի» որ է՛ բացասութիւն. և ա՛յլ է անորիշ անունն. և այլ բացասութիւն ստորասութեան: - 124. Եօթնևժերորդ՝ հաւասա՛ր է լուսով և ջերմութեամբ. զի *ուր* հասանի լոյսն անդ և ջերմութիւնն: - 127. Մի է աշխարհ. և չունի զգայարանք. և թէ *ուր* էր աստուած. և *ուր* էր աշխարհ. և յի՞նչ պատճառի ստեղծաւ: - 154. Երկրորդ՝ զի *ուր* հասանէ գործ արարչութեան, անդ գոյ և նախախնամութեան. և անդրադարձեալ ևս՝ զի *ուր* գործ նախախնամութեան է, անդ և գործ արարչութեան: - 157. Իսկ *Ուր* ոչ ասեմք տեղի աստուծոյ. զի տեղի որ է՛ բովանդակութիւն, եռաբա՛ր ասի: - 172. Յառաջ քան զլինիլն աշխարհի աստուած *ո՞ւր* էր: - 179. *Ուր* և երբ այսինքն տեղի և ժամանակ գո՞յ աշխարհիս թէ ոչ: - 180. Եւ եթէ գո՛յ՝ ցոյց թէ յորո՞ւմ ժամանակի եղև կամ *ո՞ւր:* - 180. Տասներորդ՝ **զ** թիւն նշանակէ զժամանակս բարեգործութեան. այլ շաբաթն *ուր* հանգեաւ աստուած՝ զհանգիստն յաւիտենական: - 193. Չորրորդ՝ ցոյցք է ամենահրաշ խնամոց արարչին. որ զհոսանուտ ջուրս ներքին՝ ի մէջ լերանց ի վե՛ր հանէ ի պէտս կենդանեաց որ ա՛նդ են. այլ և յոռոգումն *ուր* գետք ոչ ելանեն: - 209. *Ո՞ւր* երևի անապականութիւն նորա: - 223. Եւ *ուր* ջերմութիւնն շատ է, մազն ո՛չ սպիտակի. որպէս արտևանունքն

աչացն և յայլ տեղիս: - 240. Ջիմաստութիւնն *ո՞ւր* գտանէ մարդ: - 250. Յոգին պատկե՛ր է աստուծոյ. և աստուածապաշտ մարդոյ՝ զաստուած քննել ո՛չ մարթի թէ ուստի՞ է. կամ *ո՞ւր* է կամ ո՞րչափ է. և կամ թէ ո՞րպէս է. կամ թէ մինչ ի *յուր* է: - 251. Նախ տնկականն. և ապա զգայականն. և *ուր* սոքա երևին ի հրամանէն աստուծոյ, երևի և անդ բանականն: - 255. Յինգերորդ՝ զի ունակութիւնն նա՛խ է քան զպակասութիւնն. զի *ուր* ո՛չ է ունակութիւն, և ո՛չ է անդ պակասութիւն: - 256. Իսկ դրամն և տախտակն *ուր* գրեալ է պատկեր թագաւորին՝ միայն նման է թագաւորին ըստ ձևոյն. այլ ո՛չ ըստ բնութեանն: - 273. Երեսունք, Վասն տապանակին և խորհրդոց նորին. և այժմ *ո՞ւր* է տապանակն: - 284. Յիսունեմի, *Ուր* էր և տօնք ի հինն որ փոխեցաւ ի նորս: - 284. *Ո՞ւր* փոխեցան եռովք և եղիա: - 289. Եւ փոխանակ յ կանգնոյն՝ յ ամքն ի քրիստոսէ մինչև ի մեծն կոստանդիանոս. *ուր* յայտնեցաւ խաչն փրկչական: - 294. Երրորդ՝ նշանն սրբոյն յակոբայ մծբնայ հայրապետին. և գեօղն արկուռի՝ *ուր* տնկեաց այգի. և քաղաքն նախիջևան, *ուր* ինքն նոյ հանգուցեալ է ի տապանի: - 295. Բնակէր ի ներքոյ գողգոթային *ուր* ադամայ գերեզմանն էր: - 300. *Ուր* եկեալ աբրահամ, և նա՛ ել ընդ առաջ նորա ջերմ բաղարջ հացով և գինեաւ օրինակ տէրունեան խորհրդոյն: - 300. Եւ տէրն եբարձ ի յուս իւր զփայտ խաչին մինչ ի նոյն տեղի գողգոթային *ուր* զենանէր իսահակ: - 306. Եւ է՛ ի մէջ արաբիոյ և եդոմայ. զոր այժմ կոչի թիլգուրան. *ուր* գերեզման նորա՛ է: - 327. *Ուր* բեմն է. և մէջ եկեղեցւոյն. և արտաքին գաւիթն. կամ ժամատունն: - 343. Այժմ *ո՞ւր* է տապանակն: - 345. Նախ՝ մանանայն, *ուր* ո՛չ խառնիւր աղ...: - 356. Երկրորդ նաշիհն իւղով զանգեալ, *ուր* խառնէին աղ: - 356. Ա՛րդ՝ մանանայն նշանակէ՛ զփրկական խորհուրդն *ուր* ո՛չ է աղ: - 356. Եւ զանգեալ նաշիհն զյիշատակ մարտիրոսացն՝ *ուր* խառնեմք աղ ի հատ պատարագին և իւղ անոյշ ի խորհուրդ նոցա: - 356-357. Յինգերորդ՝ մասն. որ է՛ գլխոյն հատումն *ուր* ամենայն զգայութիւնքն են. և թէ այլ ինչ մասն հատցի՝ կամ գլուխն ջախջախեսցի՝ ո՛չ է ուտելի: - 365. Յինգերորդ՝ ընտրելի է մասն որ է հատումն գլխոյ. յառաջուստ *ուր* են շնչերակքն՝ արիւնն և այլքն: - 366. Յինգերորդ՝ զի և վայրի անասնոց և գազանաց բաժին լիցի ի վաստակն մեր. զի նոցա է երկիրս այս և տեղիք *ուր* մեք բնակեցաք: - 372. Իսկ մովսէս և ահարօն և ա՛յլ քահանայք յարևելից կուսէ *ուր* սուրբն սրբոց էր պաշտէին: - 379. Այլք ասեն վասն դաղանեանցն թէ՝ հոգիք նոցա մարմնով ի տանջանս կային. *ուր* ընկեղմեցան մինչև ցաւարումն դժոխոց. ընդ որս և զնոսա ազատեաց քրիստոս իջանելովն ի դժոխս: - 382. Տասներորդ՝ ունի գ տեղիս. կրկին ուստի զրկեցաւ. և օդդ *ուր* անկաւ. և հուրն *ուր* տանջի: - 394. Աստ զսէրն աստուծոյ ասէ. զսէր ընկերին *ո՞ւր* ասէ որ ասաց փրկիչն...: - 396. Այլ ի կուսանս հանգչի. որք հրեշտակաց նմանք եղեն կուսութեամբ. վասն այն ասեն աստուած բնակեալ է յերկինս *ուր* կուսանք են հրեշտակք. և ո՛չ յերկրի *ուր* ամուսնացեալք են: - 404. Իններորդ՝ ի ժամ այլակերպութեան տեառն ի բերել հրեշտակապետին զմովսէս, ասէ սատանայ ցհրեշտակն, ստեաց աստուած զմովսէս մուծանել յերկիրն *ուր* երդուաւ ո՛չ մտանել նմա: - 410. Եւ *ո՞ւր* է դժոխքն: - 455. Իսկ զօծումն բնութեանն միաւորութեան՝ ընկալաւ ի կուսական արգանդին. *ուր* խառնեալ միաւորեաց զմերս բնութիւն ընդ իւրում աստուածութեանն և ծնաւ քրիստոս որ թարգմանի օծեալ: - 475. Վերին մասն միշտ զվերինն խորհիլ *ուր* քրիստոս նստի...: - 493. Այլ և ծառն սաբեկայ *ուր* խոյն կախեցաւ: - 494. *Ո՞ւր* էր դժոխքն որ աւերեցաւ: - 504. Ի գիրս բենետիքտոսի հարցեալ եղև թէ *ո՞ւր* են դժոխքն. և տուաւ պատասխանի թէ՝ յանկեան և յեզր ծովուն ի ներքոյ երկրի ի խաւարչուտ վայրս: - 504. *Ուր* արկեալ էր սատանայ զաթոռ իւրոյ իշխանութեանն. և անդ արգելեալ բանտէ՛ր զհոգիսն որ յադամայ. մինչ ի գնալ անդ անմահ թագաւորին մերոյ և աստուծոյ յիսուսի քրիստոսի: - 504. Դժոխ՝ զդժուար զնեղ և զանձուկն նշանակէ. և կոչի բազմաւոր, Նախ վասն բազում կրիցն. *ուր* լալ աչացն է և կրճել ատամանց և խաւար ներքին և արտաքին և այլն: - 505. Ոմանք ասեն թէ ի չորրորդ դժոխքն էջ *ուր* էին արդարոց հոգիքն արտաքոյ ասացեալ երիցս, և զնա միայն աւերեաց. և զարդարսն միայն եհան. և զայլսն եթող անդ: - 505. Վեցերորդ՝ ամուրն սատանայի է ներքին դժոխքն. *ուր* են դրունք պղնձիք և նիգք երկաթիք. որ է՛ մեղքն մեծամեծք և յուսահատութիւնք. և ա՛յն էր ամրոց նորա: - 506. Եւ շնորհականն հոգևոր. *ուր* սկսանին ամենայն տօնք սրբոց զ ժամով յառաջ քան զբնական օրն: - 508. Տե՛ս զի ի ժողովն եփեսոսի հասարակ ամենայն ազգ այսօր նաւակատիս առնէին մինչ ի ժողովն քաղկեդոնի *ուր* փոխեցան տօնք և պահք և դաւանութիւնք: - 509. Եւ կրկին սուտ. զի *ուր* զծուկն կերին՝ ի գալիլեայ յեզր տիբերիայ ծովուն էր դ աւուր ճանապարհ հեռի յերուսաղէմէ՛ և ի լեռնէն ծիթենեաց ուստի համբարձաւ քրիստոս: - 511. Այնց է իմանալ, *ուր* ժողով լինէր մի լեզուաւ խօսէր ոք առաքեալ, և ամենայն ոք լսէր իւր ձայնիւն: - 525. Իսկ աստուածաբանն ասէ, *ուր* պիտոյ էր՝ յամենայն լեզուս խօսիլ կարէին. զի լիցի շնորհքն խօսողաց և ո՛չ թէ լսողաց: - 525. Յորո՞ւմ ամի եղեն ժողովքն. և *ո՞ւր*.

և վասն է՛ր: - 542. Զի յղացեալ էր ի գերեզմանին թաղէոսի. և սնաւ անդ՝ *ուր* առաքեալն սկսաւ քահանայագործել. և փոխեաց յինքն զշնորհս նորա անդր եղեալ եպիսկոպոս: - 548. Հինգերորդ ըստ *ուրին*. թէ *ուր* գործեն զմեղքն. կամ ի վանք, կամ յեկեղեցի որ է տուն աստուծոյ. կամ ի գեօղ, կամ ի քաղաք, կամ ի պոռնկատուն: - 565. Չորրորդ՝ ի խաղաղութեան բնակի. զի *ուր* խնդութիւն է՝ խաղաղութիւն է. և *ուր* խաղաղութիւն է՝ խնդութիւն է: - 584. Եւ ի նոյն ճառն *ուր* թուէ ը քաղցրութիւնս չարչարանցն քրիստոսի, զչորրորդն ասէ՝ ելումն արեան և ջրոյն ի լուացումն մեր: - 594-595. Ասեմք թէ՝ յարաժամ աջ քահանային մերձի ի գլուխ քրիստոնէին *ուր* արմատն է բոլոր զգայութեանցն: - 605. Եւ *ուր* չիցէ եպիսկոպոս՝ եկեղեցի օրհնեն և խաչի կնիք տան: - 608. Եւ գմբէթն զվերինն խորհիլ *ուր* քրիստոս նստի ընդ աջմէ աստուծոյ: - 614. Հինգերորդ, օրհնեմք զեկեղեցիս, զի օրհնութիւն վերնատանն *ուր* տէրն պատարագեաց, և հոգին սուրբ էջ յառաքեալսն...: - 615. Նա՛խ՝ զի եկեղեցին է ի խորհուրդ դրախտին. *ուր* անասուն ո՛չ մտանէր. նոյնպէս և յեկեղեցի ո՛չ մտանէ: - 617. Տեսանէր ժողովուրդն *ուր* կայր աստուած, և ընդ ոտիւքն իբր զգործած աղիւս շափիւղայ. որ է՛ ակն պատուական. և աղիւսն խաչաձև է: - 639. Տասնեմի, *Ո՞ւր* են կայանք ամենայն հոգւոց: - 660. Երեսունգ, *Ո՞ւր* լիցի դատաստանն: - 661. ...*ուր* սուրբք ամենայն սպասեն մեծի հարսանեաց գալստեանն փրկչին: - 675. Իսկ շիրիմն՝ յիշատակ այնոցիկ *ուր* զազգին մեռեալքն դնէին: - 678. ...*ուր* բելիարն նստի. զորս աւերեաց քրիստոս, և շինեն մեղսասէրք: - 679. ...զի վերափոխեաց զնա աստուած ի տեղի *ուր* ինքն գիտէ...: - 681. Այսինքն սուրբն սրբոց որ է արքայութիւնն երկնից. *ուր* աստուածութիւնն է բնակեալ. և քերովբէիւք սպասաւորեալ: - 682. Եւ միջին սրբութին է կայանք հոգւոցն. *ուր* աշտանակն լուսոյ և խունկն և հաց երեսացն: - 682. Իսկ վերին և արտաքին սրահն *ուր* զենմունք և պատարագն մատչէին, է՛ մարմնական աշխարհս այս...: - 682. ...*ուր* արդարք և մեղաւորք ի միասին բնակին կարօտ կերակրոց և ըմպելեաց: - 682. *Ո՞ւր* է կայանք հոգւոցն և պահեստ: - 686. Իսկ թէ այժմ *ո՞ւր* են կայանք հոգւոց: - 686. Այլ մեր վարդապետք յերկինս և ի ներքոյ երկնից ասեն. որպէս և կալիստրատոս վկայն առ ը երորդ կամարաւն *ուր* են լուսաւորք և եթերային լոյսն: - 686. Իսկ թէ *ո՞ւր* իցեն սոքա երկոքեանս, տեսիլն յօհաննու յայտնապէս ցուցանէ. սրբոց խորանս ասէ զվերինն սիօն և զհրեշտակացն դասս: - 688. *Ուր* ետես զիդ երիցունսն շուրջ զաթոռովն աստուծոյ. և զբազմութիւն հոգւոց սրբոց յամենայն ազգաց ժողովեալ անդ: - 688. Այս է խորանն առ երկնիւ *ուր* ժողովին արդարք և մեղաւորք հոգիք հաւատացելոց...: - 688. Իսկ ձախակողմեան խորան՝ է՛ ի յօդս յաներևոյթ տեղիս. *ուր* ժողովին հոգիք չարաց և մեղաւորաց. որք դատապարտանաւն դատապարտին: - 688. Դժոխքն նշանակէ զդժուարին և զնեղ տեղիս որ է՛ խորանն ձախակողմեան. *ուր* մեղաւորքն կրկին ունին զտանջանս: - 690. Թովմաս ասէ, կին յեգիպտոսէ ի գալ լինի. և անդ *ուր* կինն ղովտայ էր ննջէ: - 706. ...որպէս ցուցաւ ի վերոյ *ուր* յաղագս անկման դիւաց ասացաւ: - 708. *Ո՞ւր* գոչէ փողն: - 713. ...*ուր* ազգին բունն է և գլուխ՝ ա՛նդ հնչեցուցանէ որ ազգին առաջնորդն է: - 713. Զի *ուր* կամք հոգւոյն խնդրէ՝ անդ ընթանայ և մարմինն անարգել ի յական թօթափելն...: - 722. Եւ դարձեալ՝ *ուր* գիշեր ոչ է՝ ոչ են պիտոյ անդ լուսին և աստեղք: - 728. *Ո՞ւր* է հուրն որ գայ ի կատարածի: - 731. Եւ վերջընթացն է հրեղէն ծովն ի հարաւ. *ուր* առաքէ՛ զմեղաւորս ի հուրն յաւիտենից: - 731. *Ո՞ւր* լիցի դատաստանն: - 737. Նա՛խ՝ զի տեղիք դատաստանին ո՛չ է յերկինս *ուր* մեղաւորք ո՛չ կարեն ելանել: - 737. Եւ ոչ ի դժոխս *ուր* արդարք ոչ իջանեն: - 737. Դարձեալ, ձորն յովսափաթու կոչի ձոր դատաստանի. այսինքն է կալն ուռնայի, *ուր* դաւթի խոստացաւ անդ առնել դատաստան. յորժամ սեղան շինեաց և պատարագեաց զեզինսն և բարձաւ մահն: - 737. *Ուր* սողոմոն զտաճարն շինեաց: - 737. *Ուր* ինքն տէրն խաչեցաւ և յարեաւ. և սոքա ամենեքեան ձոր յովսափաթու կոչին, որ յերկու ձորի մէջն է յերուսաէմ: - 737. Իսկ մեղաւորքն ի ձախմէ. այսինքն վայր ի յերկիր ծանրացեալ մեղօքն. որպէս կապար ի յերկիր հակեալ. *ուր* բոլորով սրտիւ սիրեցին զնա: - 738. Նախ՝ կոչի սիրտ և անձինք մեղաւորաց, *ուր* ժողովին ամենայն գործք չար որ է՛ խաղող դառնութեան...: - 748. Երրորդ՝ կոչի հնձան դժոխքն. *ուր* ամբարիշտքն ժողովին և ճմլին...: - 748. Զի արտաքոյ երկնային քաղաքին եէմի է՛ տանջանաց տեղի, *ուր* մեղաւորքն ժողովին: - 748. Նախ կոչի հնձան նախածանօթ տեսութիւնն աստուծոյ. *ուր* ընտրէ՛ և ժողովէ՛ զսուրբս իւր յառաջ քան զլինիլն իւրեանց...: - 748. Երկրորդ կոչի հնձան արքայութիւնն երկնից. *ուր* ժողովին պսակք և փառք զանազան հանգստեան սրբոց զոր պատրաստեալ է աստուած սիրելեաց իւրոց ըստ առաքելոյ: - 748-749. ...և Եօթներորդ կոչի հնձան եկեղեցի սուրբ. *ուր* ամենայն առաքինութիւնք մեր ժողովին. ու ճմլէ ապաշխարութեամբ և բաշխէ՛ զգինի շնորհաց...: - 749. Տասներորդ, ասի հնձան և կտակարանքն սուրբ. *ուր* հին և նոր իմաստութիւն ժողովեցաւ ի խառնարանին գինւոյ...: - 749. Այլ նախ ասի միշտ

տիւ ի վերին երես երկրի. *ուր* արեգակն և լուսին զկա՛յէ առեալ. իսկ ներքինն միշտ գիշեր և խաւար անփոփոխելի: - 750. Յետ յարութեանն *ո՞ւր* և ո՞ր քան իցէ տեղիք բնակութեան: - 760. Որպէս ասեն վարդապետք, այնքան եղիցի երջանկութիւն, *ուր* ոչ ինչ եղիցի չար, և ոչ ինչ ծածկեսցի բարի: - 765. Անդ եղիցի ճշմարիտ փառք, *ուր* ո՛չ ոք գովեսցէ մոլորութեամբ. և ո՛չ գովեսցի ոք սուտակասպասութեամբ: - 765. Զի *ուր* կամեսցի հոգին՝ անդ եղիցի առ ժամայն և մարմինն: - 766. Եւ *ո՞ւր* արդեօք իցէ հաւատոյն վարձ: - 775

***ՈՒՐԵՒ*** - Ապա ուրեմն թէ չարն ապականիչ է այլոց, *ուրև* պատահի ապականէ՛ և զինքն ըստ որում չար է. ապա ուրեմն ոչ է՝ և ո՛չ կարէ գոլ չարն: - 22. *Ուր և* թըւէ՛ ասելով՝ «ումեմն ի հոգւոյն տըւեալ է բան իմաստութեան, այլում բան գիտութեան», և այլն: - 140. Եւ զօծումն քահանայութեան ի թաբօր լերինն. *ուր և* հոգին սուրբ ամպ հովանի եղեալ. և հայր հաճութեամբ վկայեալ: - 474. *Ուր և* առաւել չարք և ամբարիշտք տանջին, և գլխաւորն դիւաց: - 505. Ուստի յա՛յտ է՝ զի *ուր և* ալէլու ասեմք, սաղմոս տուն գոյ ընդ նմա: - 644. Զի *ուր և* գործեցին մարդիկ՝ գիտեն երկինք և երկիր: - 729. Զի է՛ բացասութիւն բացբարձօղ ամենայնի *ուր և* դիպեսցի. որպէս զէութիւն այսպէս զոչէութիւն: - 787

***ՈՒՐ ՈՒՐԵՔ +*** Իսկ *ուր ուրէք* զի զգեստ անւանի մարմինն յաղագս **բ** իմն պատճառաց: - 43. Թէպէտ *ուր ուրէք* զհանգիստ նշանակելով նստիլ ասի աստուծոյ, և ի յօգնութիւն ժամանել: - 172. Երկրորդ՝ զի ի հողն կան **գ** տարերքն ամբարեալք. որպէս երևին *ուր ուրէք* երակ հրոյ և երակ հողմոյ և երակ ջրոյ: - 214. Երբեմն ժամանակաց, *ուր ուրէք* մտանէին հերձւածօղք և սերմանէին զորոմն աղանդոց: - 544

***ՈՒՐ ԵՒ ԻՑԷ*** - Եւ ապա ասեմք, եթէ աստուած յամենայն տեղիս է. վասն որոյ կայանք հոգւոցն *ուր և իցէ* առ աստուած է: - 695

**ՈՒՐԱԽ +** Երկրորդ՝ փարատէ՛ զտրտմութիւն և *ուրախ* առնէ: - 185. Այսպէս և մեք խոնարհ մտօք և *ուրախ* սրտիւք տօնեմք զտօն պահոցն: - 373

***ՈՒՐԱԽ ԼԻՆԻՄ կմ ԵՄ +*** Երկոտասաներորդ՝ այլ և *ուրա՛խ լինին* ընդ խոտորումն չարութեան. որպէս ասէ առակն: - 33. Նախ՝ զի *ուրախ լինի* ի վերայ սպանելոցն յինքենէ: - 151. Զի՞նչ է զոր տէրն հրամայէ աղօթել՝ «մի՛ տար զմեզ ի փորձութիւն». և առաքեալն յակոբոս՝ *ուրախ լինիլ* ասէ...: - 160. Վասն որոյ ի ծննդեան աւուրն ժողովին և օրհնեն զաստուած և մարմնով ուրախանան. որպէս յոբայ ուստերքն և դստերքն միաբանեալ գային և *ուրախ լինէին* գիրն: - 321. **Այլ թէպէտ մի է տեղեաւ, այլ արդարքն յուսով *ուրա՛խ են*, և մեղաւորքն տանջին:** - 689. Մատռուակն *ուրա՛խ էր*. և խոհագործն տրտում վասն ցուցման երազոյն: - 689. Ա՛րդ՝ դարձեալ տեսանելն զհիւսանգամ գալուստն նշանակէ. որով *ուրախ լիցին* առանց տրտմութեան: - 692. Երկրորդ՝ ի ստեղծումն յարարչութեան բոլորից՝ *ուրախ եղև* տէր յարարածս իւր և յորդիս մարդկան ըստ սողոմոնի: - 748. Չորրորդ՝ ի վախճանի յորժամ հնազանդին նմա ամենայն և պսակէ զսուրբս իւր, *ուրախ եղիցի* տէր յարարածս իւր: - 748. Եւ դարձեալ այնպէս միաւորեալք են ընդ աստուծոյ, որ դատաստանն աստուծոյ ամենայն իրօք հաճոյ թուի նոցա. վասն այսորիկ այնոքիւք *ուրախ լինին*: - 754. Կամ *լինէիր* այնպէս *ուրախ* որպէս զայն որ ի կախաղան ածեալ լինի՝ և յանկարծակի ի ճանապարհին թագաւորութիւն ընկալեալ լինի: - 762

**ՈՒՐԱԽԱՆԱՄ +** Իսկ *ուրախանալն* ի չարն մահ է և անզգայութիւն. և ընդդէմ բժշկողացն մրցումն...: - 33. Եւ գործոյն որ ունին կրթել զմարդիկ՝ յարմարի օղն որ է՛ մերձ առ մեզ փորձելոյ զմեզ. այլ ո՛չ ի լոյս. զի մի *ուրախասցին:* - 146. Յնգետասաներորդ՝ ասէ սուրբն դիոնէսիոս՝ թէ վասն այն տայ աստուած սրբոցն նեղութիւնս և փորձութիւնս, զի նեղութիւնն սիրելի և փափագելի՛ է նոցա. և յայնժամ *ուրախանան* սուրբքն...: - 159-160. Իսկ առաքեալն վասն արտաքին փորձութեանցն ասէ. որ ի հալածչաց հասանէ ի վերայ մեր. յորում *ուրախանալ* պարտիմք. զի որքան յաճախէ փորձութիւնն, ա՛յնքան առաւելու և պսակն: - 160. Ապա թէ զկամքն երետ՝ *ուրախանայ* և կենայ ի մօտն մինչև զմեղքն գործել տայ և հանէ ի բարւոյն: - 161. Ութերորդ՝ զի էառ իսահակ զհարսն և *ուրախացաւ* ի տան մօրն իւրում սառայի. որ զվեց ամ փրկեալ գոյր և ո՛չ ոք մտեալ: - 305. Վասն որոյ ի ծննդեան աւուրն ժողովին և օրհնեն զաստուած և մարմնով *ուրախանան*. որպէս յոբայ ուստերքն և դստերքն միաբանեալ գային և ուրախ լինէին գիրն: - 321. Այլ յորժամ զընկերն թիւրեմք չար յաղթութեամբ, յայնժամ սատանայ ուղղի և *ուրախանայ:* - 323. Երկրորդ՝ զփոփոխելի կեանքս սգան. և յուսով հանդերձեալ յարութեանն դադարին ի սգոյ և *ուրախանան:* - 411. Ութերորդ՝ *ուրախանան* թշնամիքն: - 424. Եւ շուրջ զնովաւ հրեշտակք ամենայն ոչ հաւանեցան. զի նոքա զամենայնն ճշմարիտ խօսին. և բարի առնեն մարդկան. և յապաշխարութիւնն խնդան. իսկ սուտ խօսիլն և չար առնելն և ի վիշտս *ուրախանալ*՝ դիւա՛ցն է որ են

չար հոգիքն: - 444. Այսպէս հոգևոր սակաւ ինչ այսօր *ուրախանամք* և պատրաստեմք զմեզ: - 646. Վասն որոյ յորժամ տօնեմք հոգւով` *ուրախանամք* մարմնով: - 650. ...իսկ յետ մահու հաստատուն յուսով տեսանեմք և *ուրախանամք:* - 667. Ասեմք թէ` մարգարէն ուսուցանէ մեզ զչափ սըգոյ մինչ յերեկոյն, և յառաւօտուն *ուրախանալ*...: - 680. ...նոյնպէս յերկրորդ օրն պարտ է գալ կանանց նախ ի գերեզմանն, և ապա արանց. և հոգևոր տեսութեամբ *ուրախանալ:* - 680. ...և աւետիս յարութեան տամք նոցա. և տեսեալ հոգով *ուրախանամք:* - 681. Նա՛խ` որպէս մեք ի կիրակէ *ուրախացաք* և վայելեցաք ի շնորհաց յարութեանն քրիստոսի, ի միւս օրն և զնոսա մասնաւորեմք: - 684. Եւ այժմ հոգիք սրբոց առնուն զփառս գործոց ըստ ինքեան. զի հանգչին և *ուրախանան* ի գործս իւրեանց...: - 689. Զի հոգիք սրբոցն ո՛չ են առանց մխիթարութեան. այլ հանգչին և *ուրախանան* ի գործս իւրեանց և յուսով փառացն հատուցման...: - 690. Այսպէս հոգին նախ տեսութեամբն *ուրախանայ* և փառաւորի, և ապա՛ մարմնովն կատարեալ պսակի: - 696. Այլ արբանեակք նեռին յետ մահուան նորա *ուրախասցին* և առցեն իւրեանց կանայս...: - 709. Իսկ յայսպիսի տեսութենէս ո՛չ *ուրախանան*, այլ տրտմին. և այս վասն նախանձու նոցա ընդ բարեբաստութիւնս այլոց: - 741. Արդարքն տեսանեն զնոսա ի տանջանս և *ուրախանան* զի զերծան յայնմանէ. որպէս ցուցանի յառաջիկայդ: - 754. Երկրորդ այնու` զի ի նաւաբեկութենէ փրկեալք եղիցին. թէ նաւաբեկեալքն որ ի ծովէն ելանեն այնքան *ուրախանան*, ո՞րչափ ևս առաւել *ուրախասցին* որք զայս քան նաւաբեկութիւնս կրեալք ի վշտագին ծովէ այսմ աշխարհի զերծան: - 764

**ՈՒՐԱԽԱՐԱՐ +** Կնդրուկ անուշահոտ բուրեալ. և Գինի *ուրախարար* ի զմայլումն հոգևոր: - 361. Դարձեալ` ուռն և լծակն` խաչն. և Ողկոյզն անապական ճմլեալ ի վերայ խաչին հնձանի. և եղև *ուրախարար* գինի տրտմեցելոցս մեղօք: - 381. Երրորդ հնձան է իւրաքանչիւր սիրտ և անձինք արդարոց. որ հաստատեալ է հաւատով յորթն ճշմարիտ և պտղաբերէ՛ զողկոյզ բարեաց. և չարչարանօք ճմլէ՛ յինքեան *զուրախարարն* գինի հրեշտակաց և մարդկան. և այսոքիկ բարեա՛ցն են հնձան: - 749. Իններորդ` կոչի հնձան և խաչն փրկական. յորում ողկոյզն անապական ճմլեցաւ և ետ մեզ *ուրախարար* գինի զանապական արիւնն իւր. - 749. Մետասաներորդ, հնձան կոչի և հաւատն սուրբ. զի ի նա՛ հաւաքի ամենայն բան և գործք մեր. և ճմլեալ այսինքն քննեալ` լինի գինի *ուրախարար* աստուծոյ և հրեշտակաց: - 749

**ՈՒՐԱԽՈՒԹԻՒՆ +** Զի թէ մարմնապէս տեսանես. *ուրախութեան* էր ժամանակն գալստեան և ո՛չ սգոյ որ է պահք և ապաշխարանքն: - 44. Նոյնպէս և յաւերժահասունք` զի միշտ պատրեն զմարդիկ *ուրախութեամբ:* - 150. Դարձեալ` մարդն միա՛յն է ծիծաղական. և փառաւորիլ վասն *ուրախութեան* սրտին: - 275. Եօթներորդ` վասն նշանակելոյ զսուգ կամ *զուրախութիւն:* - 281. Վեցերորդ` *ուրախութեամբ* յղացաւ սառա...: - 307. Իսկ թագաւորք յամենայն ամի զնոյն առնեն *ուրախութիւն*. ուտել և ըմպել և հեշտութիւն մարմնոյ. որպէս փարաւօն առնէր և հերովդէս: - 321. Չորրորդ` ի խորհուրդ յարութեան մերոյ, որ վերստին գոյացուցանէ ի խաւարէ՛ գերեզմանին և ի լոյս հանէ և *ուրախութեամբ* զարդարէ՛ և փառաւորէ՛: - 321. Լերդափոյթն, *զուրախութիւնս* և զհեշտութիւնս մեր նուիրել աստուծոյ: - 360. ...և Գինին *ուրախութիւնն* հոգևոր: - 374. Գինին *ուրախութեան* ձայնք պաշտամանց քահանայից: - 375. Նաւակատիսն նորոգումն և տօն կամ *ուրախութիւն* թարգմանի: - 509. զի ցուցցէ թէ աստուածային *ուրախութիւնն* գերազա՛նց է քան զմարմնաւոր տրտմութիւնս: - 520. Որով զփառս որդէգրութեան և զժառանգութիւն արքայութեան ընկալաք. որ է՛ անտրտում *ուրախանութիւն:* - 532. Այլ և տարակո՛յս է թէ` վասն է՞ր տրտմութեան արտասուքն դառն է, և *ուրախութեան* քաղցր: - 619. Ասեն վարդապետք թէ` ի լուր *ուրախութեան* հեշտանայ լեարդն և տարածեալ լայնանայ. և այնպէս շունչն ելեալ յորդ ընդ շնչերակսն և առնէ զծաղրն: - 619. ...զի օրն այն *ուրախութիւն* է արդարոց. և կործանումն ամբարշտաց. որպէս երգն այն *ուրախութիւն* է, և սուգ` եգիպտոսի: - 630. Տօնն *ուրախութիւն* է. որպէս հոգւոյ` նոյնպէս և մարմնոյ: - 650. Եւ *ուրախութեան* նոցա. և օթևանացն: - 660. Քառասունք, Վասն *ուրախութեան* և փառաց նոցա: - 661. Երկրորդ ըստ ախորժակին, տրտմութիւն և *ուրախութիւն:* - 663. Յորժամ սրբազան և մաքուր հոգին հասանէ ի վախճան` *ուրախութեամբ* ցնծայ իբր ի հանդիսից զերծեալ և ի պսակն ընթացեալ. և որպէս յանփոփոխ կեանքն հետևեալ: - 668. Այսպէս է վախճան մաքուր և սուրբ հոգւոցն. *ուրախութեամբ* ընթացեալ ի պսակն և զերծեալ ի բանտէ խաւարային մարմնոյ: - 669. Դարձեալ` նշանակէ՛ յետ մեռելոյն զփոխումն *ուրախութեան* մեր ի սուգ և ի մերկութիւն. և ի սև հանդերձս. ի խաւար տունս և այլն: - 670. Երրորդ` զի կամօք և *ուրախութեամբ* ուղարկեմք ի քրիստոս և ո՛չ ակամայ կամ տրտմութեամբ: - 673. Արդարքն

ունի՞ն լիակատար *ուրախութիւն*, թէ ոչ: - 686. Ո՛չ. զի ըստ այնմ որ զերծան ի չարեաց, միայն ի հոգիս իւրեանց ունին *զուրախութիւնն:* - 686. Այս է ի միւսանգամ գալուստն. որք զարծաթ բանին շահեցան, տալ զփառս և զմուտն *ուրախութեան*. և որք ո՛չ՝ նոյնպէս զտանջանս: - 693. Յինգերորդ, զի մեծ *ուրախութիւն* է և տօն յորժամ համանգամայն ամենայն մարդկան յական թօթափելն լիցի յարութիւն, քան յայլ և այլ ժամանակս. - 717. և այս բառնի ի հոգւոյն և ընդունի *ուրախութիւն* և տարփումն հոգևոր առ աստուած. - 722. ...ապա պա՛րտ է ի նա՛ ընկենուլ զդատաստան չարչարողացն մերոց և հալածողաց. և *ուրախութեամբ* տանիլ զլլկանս. և մի՛ մեզէն վրէժխնդիր լինիլ մեզ. - 735. Իսկ *ուրախութիւնն* աստուծոյ չորիւք իմանի: - 748. Երբեմն փեսայ և հարսանիք, վասն անտրտում *ուրախութեանն:* - 757. Զի՞նչ իցէ *ուրախութիւն* սրբոցն և փառք: - 761. Իսկ հոգին՝ Զիմաստութիւն. Զսիրելութիւն. Զմիաբանութիւն. Զիշխանութիւն. Զպատիւ. Զանհոգութիւն. և *Զուրախութիւն:* - 761. Դարձեալ վասն *ուրախութեան* երանելեացն ասէ տէր՝ «դարձեալ տեսից զձեզ և ուրախ եղիջիք. և *զուրախութիւնն* ձեր ո՛չ ոք հանիցէ ի ձէնջ»...: - 762. Եւ գիտելի է, զի *ուրախութիւն* ընտրելոցն հանդիպեսցի իբրև ի վեց կողմանէ: - 762. Ի տեսութենէ արքային եռակի լիցի *ուրախութիւն* նոցա: - 762. Նախ ի տեսանելն զերեսս աստուածային որ է անճառելի ցնծութիւն. որպէս ասեն վարդապետք, այն է ճշմարիտ և միայն *ուրախութիւն*, և ո՛չ յաղագս ստեղծուածոյ, այլ ի ստեղծողին լինի. զոր իբրև ստանայցեն, ո՛չ ոք բարձցէ ի քէն: - 762. Երկրորդ *ուրախութիւնն* լինիցի տեսանելովն զմարդկութիւնն քրիստոսի: - 763. Որպէս ասեն վարդապետք, լցեալ առ ժամայն ամենայն անոյշ և քաղցր *ուրախութեամբ*, տեսանեն զմարդն մարդկան արարիչ: - 763. Երրորդ *ուրախութիւնն* եղիցի ի տեսութենէ միաւորութեան մարդկային բնութեանն առ աստուածայինն...: - 763. Երրորդ ուրախութիւնն եղիցի ի տեսութենէ միաւորութեան մարդկային բնութեանն առ աստուածայինն. քանզի սքանչելի *ուրախութիւն* լինիցի ընտրելոցն, յորժամ ճանաչիցեն թէ եղբայր նոցա ըստ մարմնոյ՝ ճշմարիտ աստուած է: - 763. Մեծութիւն այսմ *ուրախութեան* կարէ՛ զմտաւ ածիլ յայնմանէ, զոր սովո՛ր են ծնօղք յորժամ որդիք նոցա լինին եպիսկոպոսունք կամ թագաւորք: - 763. Այսպէս առաջին *ուրախութիւնն* է յերանելի տեսութեանցն աստուծոյ: - 763. Երկրորդ՝ ի տեղւոյն բարձրութեան եռակի *ուրախութիւն* ընտրելոցն հանդիպեսցի: - 763. Դարձեալ վասն ընկերութեանն լիցի եռակի *ուրախութիւն:* - 763. Երրորդ յաղագս սիրելութեան ընկերացն այնոցիկ. զի այն քան եղիցի սէր ի մէջ նոցա, մինչ զի *զուրախութիւնս* նոցա ինքեանց համարեսցեն: - 764. Չորրորդ վասն մարմնոյ փառաւորութեան քառակի լիցի *ուրախութիւնն:* - 764. Նախ եղիցի *ուրախութիւն* ի մարմնի, բաղդատելով առ այն որ եղիցի մերձ ինքեան. այսինքն զի ա՛յլ մարմինք փառաւորեալ առաջի նորա հրճուին: - 764. Յինգերորդ վասն դժոխոցն եռակի հանդիպեսցի ընտրելոց *ուրախութիւն:* - 764. Վեցերորդ և վերջին՝ վասն աշխարհի՝ ընտրելոցն հանդիպի եռակի *ուրախութիւն:* - 764. Նախ այնու՝ զի ի տանջանաց թշուառութեան այսմ տարագրութեան ազատեալք լիցին. զի անցեալն ի մահուանէ ի կեանս՝ զկենացն *ուրախութիւն* կրկնապատկէ՛: - 764. Արդարև *ուրախութիւն* է յոյժ յայսմ ազատութեան...: - 764. Եւ որ քան մեծ վիշտ եղև ի պատերազմին, ա՛յն քան է մեծագոյն *ուրախութիւն* ի յաղթութենէն: - 765. Այսպէս ի վեցից կողմանէ եղիցի *ուրախութիւն* սրբոցն. որ եղև հաւաքեալ ի վարդապետաց սրբոց: - 765. Եւ ի ճաշակելեաց և շօշափելեաց, շօշափման բանի և ճաշակման պարարուն. և *ուրախութեան* նարդոս և կերակուր անմահութեան: - 771. Յորոց յա՛յտ է թէ՝ որք աստի կենօքս ի սուգ տրտմութեան անցուցանին զի *ուրախութեան* հասցեն: - 775. Նոյնպէս և երբեմն յուզել *ուրախութեանց*. ի փեռեկեալ թքոյ ի կոտորումն շնչոյն, ի թաղանթէ՛ որ առ լերդաւն՝ հիւթ ինչ ծաւալի առ նոյն ասացեալ տեղի. ելեալ գոլորշեացն նմանապէս առաջնոյն. և լինի քաղցրագոյն արտօսր. վասն ասացեալ հիւթոյն ի քաղցրորակն անօթոյ: - 787

**ՈՒՐԱՆԱՄ +** Եօթներորդ՝ Վասն է՞ր *ուրանան* քաղկեդոնիկք զբնութեամբ միաւորութիւնն: - 30. Արդ՝ կռապաշտն և հերձուածօղն հաւասա՛ր են յամբարիշտ գոլն. զի որպէս շուն դառնայ ի փսխած իւր. այսինքն զի նա ո՛չ ունէր, և սա՛ *ուրացաւ* և դարձաւ անդրէն: - 33. Եւ սոքա *ուրանան* զերրորդութիւն անձանցն ի միում բնութեան: - 34. Չորրորդ՝ հրէայքն դաւանին զմովսէս՝ և *ուրանան* զքրիստոս, զխաչն և զօրէնս նորա: - 34. Նա՛խ՝ զի զո՛րծ է նեռինն *ուրանալ* զաստուած, որպէս իւր անունն յայտնէ. ա՛յսպէս և հերձւածօղն *ուրանայ* զաստուածութիւն որդւոյ. կամ զհոգւոյն սրբոյ...: - 34. Իսկ դուք զի *ուրանայք* զհոգին հաւասար գոլ հօր և որդւոյ, և կրտսե՛ր ասէք քան զորդի: - 39. Այլ զայս երկբայիս յաղագս ոչ գիտելոյ քոյ թէ «մինչդ» ամենուրէք ո՛չ որոշէ ընդդէմ հանդերձելոյն. զի թէպէտ նշանակէ՛ զկէտն ուր մինչն է եղեալ, այլ զոր ա՛նդր է քան զնա՝ ո՛չ *ուրանայ:* - 42. Որք *ուրանան* զբնութեամբ միաւորութիւն

աստուծոյ մարդացելոյն, այլ միայն բնակութեամբ և շնորհիւ որդէգրութեան ելեալ յաստուածութեանն փառս. որպէս ասեն նեստորականքն: - 66. Զի թէ աստուած մարդացեալ, ապա զիա՞րդ *ուրանայք* և բաժանէք յերկուս բնութիւնս զաստուածն և մարդն: - 68. Այսքան հարցուածս է ընդդէմ երկաբնակացն որք *ուրանան* զմիաւորութիւն բնութեանցն քրիստոսի: - 70. Այսոքիկ և այսպէս ասել՝ քակէ՛ և *ուրանայ* զմիութեանն բան: - 76. Եւ որ ուրանայ զմիութիւնն՝ *ուրանայ* և զքրիստոսն գոլ. ապա ուրեմն և զհաւատ քրիստոնէութեանն: - 76. Ուրեմն նա ինքն հաւատարիմ մնայ, *ուրանալ* զանձն իւր ո՛չ կարէ: - 76. Վասն է՞ր քաղկեդոնիկքն և նեստորականքն *ուրանան* զբնութեամբ միաւորութիւնն...: - 76. Յաղագս երից պատճառաց *ուրանան* զմիաւորութիւնն ի մարդեղութիւն բանին: - 76. Որև ըստ այսմ պարտին նոքա *ուրանալ* և զանհատ բնութիւնս մարդկութեան նորին. զիմի՛ հասարակ մարդկութիւնս միաւորեսցի: - 76. Դարձեալ՝ մի բնութիւն ասէ ապօղինար. որ զհոգի և զմիտս *ուրացաւ*...: - 81. Ապա ուրեմն յորդիութիւնն և յանունն խոստովանին միութիւն ի պատրանս պարզամտաց. և զճշմարիտ միութիւնն *ուրանան* և փախչին: - 82. Ի յերկուց զո՞րն *ուրանաս* և մի ասես բնութիւն: - 84. Իսկ զմիաւորութիւն երկուց բնութեանցն *ուրանան* երկաբնակքն: - 88. Եւ *ուրանալ* զբոլոր տնօրէնութեանն խորհուրդ: - 90. Ապա ուրեմն յայտնապէս նոքա *ուրանան* զայս, և ասեն թէ՝ ձեռքն քրիստոսի ոչ է աստուած. և գլուխն քրիստոսի ո՛չ է աստուած. և այլն. զի մի բազմաստուածք լիցին: - 91. Եւ յայտնի եղև թէ և զքրիստոս գոլն *ուրանան*. և զաստուածն *ուրանան* այսպիսի առարկութեամբ: - 91. Նոյնպէս որք *ուրանան* և ասեն, ո՛չէ աստուած քրիստոս. ո՛չէ հայր. ո՛չէ որդի: - 124. Ա՛րդ՝ մի և նոյն է դրութիւն և խոստովանութիւն. ապա մի և նոյն է բառնալն և *ուրանալն:* - 124. Երկրորդ՝ ուրացականն ընդդէմ էութեան և փառացն աստուծոյ է. զի զէութիւն և զփառս աստուծոյ *ուրանալ* տայ: - 124. Ո՜վ մեծի աղետիս և վշտալից տարակուսի. զի այսպիսիքս զմի միաւորութիւն տեառն *ուրանան*...: - 176. Վասն երկրորդին հակառակէր ընդ նոսա, զի մի՛ սուտ լիցի վկայութիւն աստուծոյ ի վերայ նորա. զի և մեք ուսցուք՝ վասն վկայութեանն աստուծոյ այնչափ նախատինս յանձն առնուլ և ո՛չ *ուրանալ*. որպէս վկայից դասքն նահատակեցան: - 324. Զի քրիստոնէութիւն որպէս մկրտութիւն և այլն՝ անբաժանելի՛ է ի հոգւոյն. թէպէտ *ուրանայ* լեզուաւ և գործով: - 401. Երկրորդ՝ կապեալ ածաւ ի տունն աննայի. և ի ծառայէն ապտակեցաւ. և պետրոս գ անգամ *ուրացաւ:* - 492. Աւա՜ղ անբան մտահաճութեան նոցա. որք զմիայն տէրն *ուրացեալ*, ածեն ի վերայ ինքեանց զարագահասն կորուստ: - 503. Զոր ո՛չ կարեն զայս *ուրանալ* ազգն ժխտողաց: - 509. Ա՛րդ՝ զի՞նչ կամիս որ հնազանդիմք պետրոսի. *ուրանա՞լ* պարտ է զքրիստոս որ լինիմք հնազանդ պետրոսի, եթէ եղծանել զպահքն, թէ զամենայն պիղծ կերակուր ուտել...: - 548. Հինգերորդ՝ նման սատանային լինին որք *ուրանան* զպատճառն գոյութեան հոգոց իւրեանց...: - 566. Հաւատն է՟ զի ո՛չ ոք ի յերկուցն պղծեսցի օտար անկողնով. որպէս այն որ թողու զհաւատն և *ուրանայ* բանիւ...: - 610. Եբրայեցերէն կոչի արնաւիմէ. այսինքն *ուրանամ:* - 707. Որ է՝ *ուրանամ* կամաւ զարարիչն երկնի և երկրի: - 707. Եւ իւրաքանչիւր ոք զգործս իւր ընթեռնու յայտնապէս և ո՛չ կարէ *ուրանալ* և մոռանալ: - 741

***ՈՒՐԱՑԵԱԼ, ՈՒՐԱՑՈՂ +*** Եւ սոքա զմիայն տէրն *ուրացեալ*՝ քրիստոսամարտ լեզուաւ զանձինս կորուսանեն: - 34. Եւ սոքա մարդադաւան *ուրացօղք* խաչին և կրօնից նորոց: - 34. Զհաւատս *ուրացեալ*, և գիտութեամբ պարծեցեալ: - 34. Եւ այլս բազում բաղդատութիւն գոլով հերձուածողի և նեռինն. և զորս տէրն գնեաց՝ սոքա *ուրացեալք*՝ ածեն ի վերայ անձանց զերագահասն կորուստ: - 35. Եւ կամ զմի բնութիւնն *ուրացեալ*. և կամ առ աչօք ասացեալ. զորս նզովէ՛ սուրբ եկեղեցի աստուծոյ: - 82. Այլ և դարձ նորա և կանգնումն՝ հաստատութիւն եղև ամենայն *ուրացողաց* և մեղաւորաց: - 547. Երկրորդ *ուրացօղք*. և սոցա քարոզէ՛ ընթերցօղն: - 608. ...այսինքն է անհաւատքն և *ուրացօղքն* և չար հաւատացեալքն: - 648. Երկրորդ՝ զի կործանեսցին *ուրացօղքն* և խաչօղքն: - 732. Եւ յայտ *յուրացողացն* է. զի ի դարձին վերստին ո՛չ մկրտեմք: - 782

**ՈՒՐԱՍՏ ԼԻՆԵԼ +** Աստ ուրեմն ի հարկէ՛ երևեցաւ թէ գոն և են սոքա ասացեալքս, այսինքն գործ բնութեան և գործ կամաց և գործ պատահմանց. և ո՛չ ոք *ուրաստ լինի* վասն սոցա: - 8

**ՈՒՐԱՐ +** Վակասն՝ *ուրա՛րն* է. և Տախտակ ականցն՝ կոնքեռն: - 348

**ՈՒՐԱՑԱԿԱՆ +** Զանազանին բացբարձականքն. և *ուրացականքն:* - 102. Որո՞վ զանազանին և հաւասարին բացբարձականքն և *ուրացականքն*. զի մի և նոյն երևին: - 124. Նախ՝ զի նոյն *ուրացական* մասնիկն այն՝ այսինքն ո՛չն՝ ներգործէ՛ զուրացումն և զբառնալն: - 124. Ո՛չ են մի բացբարձականքն և *ուրացականքն:* - 124. Նախ՝ զի *ուրացականն* ըստ պակասութեան է. որ ասէ ո՛չէ աստուած քրիստոս. այսինքն պակա՛ս է և ո՛չէ աստուած. և ո՛չէ հայր. և ո՛չ որդի: - 124. Երկրորդ՝ *ուրացականն* ընդդէմ

էութեան և փառացն աստուծոյ է. զի զէութիւն և զփառս աստուծոյ ուրանալ տայ: - 124. Պատասխանեմ առաջնոյն, թէպէտ մի և նոյն *ուրացական* մասնիկն որ է ո՛չն՝ գործէ՛ զուրացումն և զբառնալն, այլ ուրացումն և բառնալն ո՛չ է նոյն. զի բազում պատահի որ գործին նոյն է որպէս ձեռն. այլ գործելն ո՛չ է նոյն. որպէս կտրելն և կարելն: - 124. Ապա ուրեմն ա՛յլ է բացբարձականն և այլ է *ուրացականն:* - 124

**ՈՒՐԱՑՈՒԹԻՒՆ +** Այսպէս և զանհնազանդութիւնս մեր. զոր ոմանք *ուրացութեամբ* և կէսք ախտիւ՝ իւրն վերագրէ գլուխ գոլով անհնազանդ անդամոցն: - 42. Երկրորդ՝ զի ընդդիմակ բառնալոյն՝ դրութիւնն է. և ընդդիմակ *ուրացութեան* խոստովանութիւնն: - 124. Երկրորդին պատասխանեմք եթէ՝ ո՛չէ նոյն դրութիւն և խոստովանութիւն. որպէս յորժամ ասեմք դնելով թէ՝ չա՛ր է. խաւա՛ր է. և մե՛ղք է. ահա այս *ուրացութիւն* է և պակասութիւն: - 124. Առ երկրորդն ասեմք թէ, ընդ *ուրացութիւնն* պետրոսի՝ սիրտ ամենայն առաքելոցն տրտմեցան և կոտորեցան. և ի զղջումն նորա ամենեքեան հաստատեցան վերստին: - 547. Առ երրորդն ասեմք թէ՝ երիցս հարցումն սիրոյն և արածելն զոչխարսն՝ վասն երից *ուրացութեանցն* էր բժշկութիւն. զի ո՛ր մասն որ խոցի՝ նորին է բժշկական դեղն դնելի՝ և ո՛չ առողջից: - 547. Ապա զի՞նչ է այն՝ որ զշնորհս աւազանին ոչ *ուրացութիւն* և ո՛չ այլ ինչ նոյնպիսի մերկացուցանել կարէ: - 782

**ՈՒՐԱՑՈՒՄՆ +** Ո՛չ *ուրացմամբ*, և ո՛չ կորուսմամբ. այլ՝ միաւորութեամբ մի բնութիւն: - 84. Նախ՝ զի նոյն ուրացական մասնիկն այն՝ այսինքն ո՛չն՝ ներգործէ՛ *զուրացումն* և զբառնալն: - 124. Պատասխանեմ առաջնոյն, թէպէտ մի և նոյն ուրացական մասնիկն որ է ո՛չն՝ գործէ՛ *զուրացումն* և զբառնալն, այլ *ուրացումն* և բառնալն ո՛չ է նոյն. զի բազում պատահի որ գործին նոյն է որպէս ձեռն. այլ գործելն ո՛չ է նոյն. որպէս կտրելն և կարելն: - 124

**ՈՒՐԲԱԹ +** Զափրոդիտեայն՝ *ուրբաթ:* - 190. Եւ վասն այն ստեղծաւ մետասանօրեայ, զի յաւուր *ուրբաթի* յորում ադամ ստեղծանիւր, լինէր լուսինն բոլոր և **ժդ**օրեայ: - 191. Զնոյն յայտնէ և ի մերս. զի *ուրբաթ* ասի որ է՛ կազմութիւն: - 200. Իսկ յաւուր **ե** շաբաթոջ երեկունն զգառն զենին և ելին յայգ *ուրբաթի*. նիսանի **ժե**. որ էր առաջին ամիս նոցա. և ի կիրակէ անցին ընդ ծովն որ էր նիսանի **ժէ**: - 337. Եւ յաւուր *ուրբաթու* խաւարեցաւ երկիր որպէս ամպն ի վերայ ժողովրդեանն: - 337. Այլ և նշանակէ՛ զօր մեծի *ուրբաթուն* չարչարանացն քրիստոսի. որով քաւեցաք ի մեղաց: - 373. Եւ ի մեծի *ուրբաթի* խաչին, լուսինն ընթացաւ և ձգեցաւ յարևն, և յետս դարձաւ. որպէս ցուցանի յառաջիկայդ առ խաչելութեամբն ի **լ** գլուխն ի **իզ** համարն: - 416. Եւ որպէս յինն ժամու *ուրբաթուն* լոյս ծագեաց հոգւոցն ի դժոխս, նոյնպէս և յինն ժամու շաբաթուն լոյս ծագէ զճառագայթս իւր արեգակն արդարութեան քրիստոս. մինչ յառաւօտուն բոլորապէս տեսանի ինքն յարուցեալ ի մեռելոց: - 509. Որ այսպիսի էր պատկեր աւուրն. յաւուր ե շաբաթոջ երեկոյին ի չորեքտասան լուսնին զգառն զենին և ելին յայգ *ուրբաթի* **ժե** ամսեանն. և ի կիրակէ անցին ընդ ծովն որ էր նիսանի **ժէ**: - 513. Եւ յաւուր *ուրբաթու* խաւարեցաւ երկիր. որպէս ամպն ի վերայ ժողովրդեանն: - 513. Զի յինն ժամու *ուրբաթուն* արձակեաց զհոգին և էջ ի դժոխս. և ապա՛ ընդ երեկոյս ի մուտն արևու մարմինն եմուտ ի գերեզման: - 516. Երկրորդ այսպէս, զի *յուրբաթի* գիշերն ըմբռնեցին մինչև ցվեց ժամն որ խաւար եղև մինչև ցինն ժամն: - 516. Եւ **զ** ժամն անցեալ և իւր գիշերն լինի **բ** օր *ուրբաթուն:* - 516. Երրորդ սոյնպէս ասեն, ընդ տիւն և ընդ գիշերն **գ**. որ է՛ *ուրբաթն*, և շաբաթի գիշերն, և շաբաթի օրն. և յերեկօրեայ յարութիւնն: - 516. Չորրորդ սոյնպէս ասեն. *ուրբաթն* և իւր գիշերն որ չարչարեցաւ. և շաբաթն և իւր գիշերն որ թաղեցաւ. կիրակէ և իւր գիշերն որ յարեաւ. յորում ժամու և իցէ: - 516. Եւ այսպէս սովորաբար խօսիմք, թէ *յուրբաթի* կէս օրն ելեալ ոք ի տեղւոջէ՛ մինչև գայ առ մեզ ի լոյս կիրակէին կամ ընդ առաւօտն, ասեմք թէ **գ** օր է ճանապարհին. նոյնպէս և յարութիւնն քրիստոսի: - 516. Իսկ անօրէնութիւն է մեզ լուծումն պահոց աւանդեալ յառաքելոց անտի զերեք յիսունս և զչորեքշաբաթի և *զուրբաթ*. և զայլ շաբաթապահս ի նիկիական ժողովոյն սրբութեամբ պահել: - 552. Երրորդ «որ մատնեցար». ի մեծի *ուրբաթի* առաւօտին մէն ասի: - 634. Չորրորդ «որ խաչեցար». *յուրբաթի* ճաշոյն ասա: - 634. Հինգերորդ «որ թաղեցար». *յուրբաթի* երեկոյն, և յառաւօտն շաբաթուն մեծի: - 634. *Ուրբաթ* խաչի և ննջեցելոց: - 642. ...նոյնպէս և ի շաբաթի օրս հանգեաւ ի չարչարանաց *ուրբաթուն* և եղաւ ի գերեզմանի: - 647-648. Վեցերորդ՝ յետ *ուրբաթուն* չարչարանաց՝ ի շաբաթի օր տօնեմք սրբոցն...: - 648. ...նշանակէ զհանգիստ ապաշխարողաց. որք *յուրբաթի* յանցեաք ընդ ադամայ. ի շաբաթի հանգչիմք ընդ քրիստոսի: - 648. Այսու մտօք և տէր մեր զհարուածեալսն ի *յուրբաթու*՝ բժշկէր ի շաբաթու: - 648. Վասն է՞ր ութօրէք միայն ծննդեանն է և յարութեանն առանց պահոց չորեքշաբաթի և *ուրբաթի:* - 649. ...վասն որոյ *զուրբաթ* և զչորեքշաբաթ լուծանէ այնմ փոխանակ: - 649. ...նա փոխան այնմ *զուրբաթ* և զչորեքշաբաթ լուծանէ: - 649. Զի **կ** օր *ուրբաթ* և

չորեքշաբաթի և **գ** քառասունք պա՛հք է ի բոլոր տարին: - 649. ...որպէս չորեքշաբաթն վասն նայի, և *ուրբաթն* վասն ադամայ...: - 650. Եւ նոյնպէս նինուէացիքն **գ** օր պահեցին. և երկուքն՝ չորեքշաբաթ և *ուրբաթ:* - 650. ...և է՛ սկիզբն ի չորեքշաբաթի, և աւարտն ի *յուրբաթի:* - 651. Իսկ տեառն մերոյ քառասնիցն սկիզբն է երկրորդ շաբաթն, և կատարումն չարչարանք մեծի *ուրբաթուն:* - 651. Եւ զի ճշմարիտ պահք է չորեքշաբաթն որպէս *ուրբաթն* յայտ է...: - 652. Եւ ի նորս՝ ի չորեքշաբաթ և *յուրբաթ* փոխեցին առաքեալքն. որպէս յա՛յտ է յառաքելական կանոնս. նաև ի նիկիականն: - 652. Չորրորդ յայտնի և հաստատուն, որ ամենայն ազգ քրիստոնէից պահեն զչորեքշաբաթն և *զուրբաթն* վասն խաչելութեանն որ սո՛ւգ է և պահք: - 652. Իսկ թէ արհամարհելով զառաքելական կանոնս լուծցեն զչորեքշաբաթ և *զուրբաթ*...: - 652. Ահա՛ ա՛յս է կանոնք վասն պահոց չորեքշաբաթի և *ուրբաթի:* - 652. Իսկ չորեքշաբաթն և *զուրբաթն* առանձին պահել, - 653. ...որ էր նոցա **բ** շաբաթին և **ե** շաբաթին. և մեզ **դ** շաբաթին և *ուրբաթին:* - 653. ...և *ուրբաթն* զի ադամ եկեր ի պտղոյն, և մեք պահեմք զնոսա: - 653. ...վասն որոյ պահեմք զչորեքշաբաթն. և *ուրբաթն* խաչելութեանն քրիստոսի. զի կցորդեսցուք խաչին: - 653. ...զոր նշանակէ **դ** թիւն. և *ուրբաթն* սուգ և բոթ լսի՝ պահելի՛ է: - 653. ...պահեմք զչորեքշաբաթն. և վեցիւք շարժմամբ ի մեղս ընթանամք, պահեմք *զուրբաթն:* - 653. ...և վասն ներգործականին *զուրբաթն*. որով սրբասէր լեալ հասցուք առ ճշմարիտն և առ բարին ի ձեռն աստուծոյ: - 654. ...բարեխօս դնելով զնոսա զչորեքշաբաթս և *զուրբաթս* պահեմք: - 654. Յինանցն ընդէ՞ր ոչ պահեմք. ո՛չ *ուրբաթ* և ո՛չ **դ** շաբաթի: - 654. Վասն որոյ յետ համբարձմանն պահելի է զ**դ**շաբաթ և *զուրբաթ*. և կամ զինն օր մինչ ի հոգւոյ գալուստն: - 654. Եւ ի մեծ բարեկենդանին՝ **դ** շաբաթն և *ուրբաթն* հանգստեան: - 660. Ի մեծի *ուրբաթին:* - 684. Եւ զի՞նչ է որ ի մեծի բարեկենդանին զ**բ** չորեքշաբաթ և *զուրբաթն* հանգստեան ասեմք: - 684. Ոմանք յաւուր *ուրբաթու* ասեն յորում խաչեցաւ քրիստոս. և այլք ի կիրակէն: - 732

**ՈՒՐԲԱԹԱՋԵՆ** - Եւ զի՞նչ այս: Այսինքն է, զազգս քրիստոնէից տեսանեմք զի ո՛չ ըստ անուանն և զմիութիւն կանոնական սահմանի ունել: ...Ասորիք, Առաջինն՝ *ուրբաթազենն:* - 553

**ՈՒՐԵՄՆ +** Աստ *ուրեմն* ի հարկէ՛ երևեցաւ թէ գոն և են սոքա ասացեալքս...: - 8. Ամենայն ինչ որ լինի՝ ունի պատճառ. և ամենայն պատճառ ի հարկէ է՛ նախքան զպատճառելին. ապա թէ հարկաւոր պատճառս այս ո՛չ է բանն մեր որպէս ցուցաւ, է՛ *ուրեմն* զօրութիւնն աստեղաց ի շարժմանէ նոցա ազդեցեալ: - 10. Դարձեալ, որոյ է իր գործեացն՝ նորա՛ է և ներգործութիւնն. եթէ առնել և եթէ կրել. արդ՝ մարդո՛յ է հոգին և մարմինն և ձեռն. մարդո՛յ է *ուրեմն* և գործ նոցին, եթէ չար և եթէ բարի: - 11. Այլ արդ՝ աստուած պատճառ է ունակութեան, և ո՛չ պակասութեան. *ուրեմն* չարն ո՛չ է յաստուծոյ: - 13. Ութերորդ՝ եթէ չարն է յաստուծոյ, ո՛չ պատժէ զաստանայ որ չարացաւ. և ո՛չ զչարս ի մարդկանէ, այլ ահա՛ պատժէ՛. չար *ուրեմն* ո՛չ է յաստուծոյ: - 14. Տասներորդ՝ եթէ չարն է յաստուծոյ և կամի զչարն, ապա զբարին ո՛չ կամի. ապա թէ զբարին ո՛չ կամի, բարին *ուրեմն* ո՛չ է յաստուծոյ: - 14. *Ուրեմն* ո՛չ են **բ** սկիզբն: - 16. Եւ եթէ է մի զկնի միոյն, յայտ *ուրեմն* է թէ նախկինն է սկիզբն: - 21. Ա՛րդ՝ ըստ որում յոլովք են բազումք, *ուրեմն* և միակք: - 26. Ապա *ուրեմն* ամենայնն ցուցանէ զբազումս: - 27. Արդ՝ թէ ինն ամսով յառաջ թագաւորեալ էր թագաւորն չար, ապա *ուրեմն* ի ժամանակս Օգոստոս կայսեր ծնաւ քրիստոս. զոր և վկայէ՛ աւետարանն սուրբ: - 29. Ապա *ուրեմն* որդի է յառաջ քան զկամքն: - 36. Եւ ասեն՝ թէ այդպէս է, ապա *ուրեմն* և ո՛չ կամաւ է որդի: - 36. Ապա *ուրեմն* բնութեամբ և էութեամբ է որդի. և ոչ թէ կամաւ կամ ոչ կամայ: - 36. Իսկ թէ յոչ կամայ, այլ *ուրեմն* բռնադատութեամբ քարշեցաւ յաստուածութիւն. և բարձեր զանսկզբնութիւն նորա: - 36. Դարձեալ առարկեն, եթէ աստուած է հայր՝ և անծին է բնութեամբ, և որդի ծնեալ է, ապա *ուրեմն* ո՛չ է որդի աստուած...: - 38. Ապա *ուրեմն* ո՛չ է անծնելութիւնն և ծնելութիւնն որիշ որիշ բնութիւն. այլ ի նոյն ի մի բութեանն աստուծոյ: - 38. Պատասխանեմք թէ՝ կարի՛ յիմարութիւն է հարցումնդ. և զի գոյ հայր ըստ քում բանիդ ծնօղ որդւոյ. ապա *ուրեմն* ո՛չ կարէ ոչ լինիլ և ծնանիլ: - 38. Եւ զի ո՛չ է հնար որպէս ասացի, ապա *ուրեմն* ո՛չ է մեծ հայր քան զորդի. զի ի միմեանց տանին, և ի միմեանց լնուն: - 39. Զի ո՛չ էր հայր մեծ քան զնա՝ ի յոր երդնոյր. զի որք երդնուն՝ ի մեծագոյնսն քան զինքեանս երդնուն. ապա *ուրեմն* հաւասա՛րէ որդի հօր և ո՛չ փոքր որպէս ասէ առաքեալն: - 40. Իսկ թէ ո՛չ ունի զբնութիւնն հօր աստուծոյ՝ ո՛չ *ուրեմն* է աստուած: - 60. Ա՛րդ եթէ է՛ այլ որդի և եղև աթոռակից հօր, *ուրեմն* ի բաց էհան զբանն ի նստելոյն ընդ աջմէ հօր որ է սեփհական նմա և վայելուչ հօր՝ լինիլ աթոռակից և գահակից: - 67. Ութևժերորդ՝ ստէ՛ *ուրեմն* հայր թէ՝ «դա՛ է որդի իմ սիրելի»: - 68. Իսկ թէ մարդ աստուածացեալ, ստէ՛ *ուրեմն* առաքեալն՝ ի լրութենէն ունայնութիւն ասացեալ. զի այս ընդդէմ նորին ի նըւաստութենէ ի բարձրութիւնս ելանէ: - 68. Ստէ՛

*ուրեմն* և առաքեալն. զի «յիսուսի քրիստոսի» ասէ: - 68. Ստեաց *ուրեմն* և հայր՝ կոչելով իւր որդի զօր ի զաւակէն Դաւթի: - 69. Զի թէ զբնութեամբն ասես, ստեա՛ց *ուրեմն* առաքեալն և աւետարանն. որք զքրիստոս ասեն յարուցեալ և համբարձեալ և նստեալ ընդ աջմէ հօր: - 70. Եւ զի բանն մարմին եղև միաւորութեամբն. *ուրեմն* յայտ է՝ զի մարմին բանին բան եղև նոյն միաւորութեամբն: - 72. *Ուրեմն* և ծնեալ ի մօրէ միայն զմարդկութիւնն՝ և ո՛չ զաստուածային էութիւնն: - 75-76. *Ուրեմն* նա ինքն հաւատարիմ մնայ, ուրանալ զանձն իւր ո՛չ կարէ: - 76. Այլ զի զանձնաւոր բնութիւն և զանհատն ասեմք մարմնացեալ. զի սկիզբն միաւորութեանն է ի բնութիւնն, և կատարումն կայացեալ ի յանձն, յիմարա՛ց *ուրեմն* և ափշելոց է խնդիր նոցա: - 76. Իսկ թէ աստուծոյ բան է և անանց, ո՛չ *ուրեմն* է տգէտ կամ նըւազ գիտութեամբ: - 98. Յայտ *ուրեմն* է, զի որ ի վեր է քան զէութիւն, ի վե՛ր է քան զգիտութիւն: - 103. Եւ թէ այդպէս է, *ուրեմն* ի հրամանն աստուծոյ ո՛չ է նոր. այլ ի գոյացութիւն իւր նո՛ր է: - 258. Եւ յա՛յտ *ուրեմն* է՝ թէ մի է հոգի մարդոյն: - 259. Այլ հակադարձեալ սոքա ըստ կարգի և ըստ դասու՝ յառա՛ջ է տնկականն քան զզգայականն, և նա՛ քան զբանականն ի յերևումն. այլ էութեամբ համանգամայն են. որպէս անդ *ուրեմն* ասացաք վասն հոգւոյ և մարմնոյ: - 260. *Ուրեմն* յա՛յտ է զի կրեաց զկամաւորն. և զանանգոսնելին, որպէս և ծարաւն: - 383. Ապա յայտ *ուրեմն* է զի սուտ երևումն էր սամուէլի ձևացեալ: - 429. Տասներորդ՝ յորժամ եկն հեզութեամբ լսէր ի նմանէ. իսկ զայս ամենայն համեմատելով ի վերայ հրէիցն՝ յիրաւի *ուրեմն* դատապարտեսցէ զնոսա ի դատաստանի: - 442. Պարտ *ուրեմն* էր բանին կենաց ելանել յայնմ անդամոց, որ պատերազմի՛ ընդ մահու: - 469. Եւ ո՛չ զանգոսնելիսն կրեաց զի տեսա՛կ է մեղաց. *ուրեմն* ապա կրեաց զկամաւորն և զանանգոսնելիսն: - 502. Յայտ *ուրեմն* է թէ ո՛չ է առակս վասն հատուցման արդարոց: - 697. ...յիրաւի է *ուրեմն* որում անիրաւութիւնն եղև առնել դատաստան վասն վրիժու. թէպէտ նմա հայր և հոգին սուրբ գործակից լինին: - 735. Ուղղակի *ուրեմն* փայտս այս ասի գոլ տընկեալ մերձ յընթացս ջուրց. զի ի նմանութիւն մարմնոյ մեղաց երևեցաւ. և զամենայն նուաստութիւնս մեր յինքն ընկալաւ: - 755. Է՛ *ուրեմն* ասել, եթէ ոչ տեառն սաբաւովթ, այսինքն զօրութեանց, թողեալ էր մեզ սերմն առաքելօք և մարգարէիւք և այլովք սրբովք և վարդապետութեամբ աւետարանին, համերք և ի մեղս լինէաք խստացեալք: - 755. Երկրորդ, զի անկումն դիւաց մահ է նոցա. և յետ մահու ո՛չ է հաւատ. *ուրեմն* և ո՛չ ի դևս: - 784. Յա՛յտ *ուրեմն* է յաւացելոցս, զի դևք ո՛չ ունին հաւատս վարձաւոր. այլ ունին գիտութիւն նրբահայեաց որով սարսին յառաջ քան զտանջանս: - 784

**ՈՒՐԵՔ և ՈՉ ՈՒՐԵՔ +** Երկրորդ, ասեմք եթէ՝ չարն կրկին իմանի. է՛ որ ինքնաչա՛ր է. որ պարզ և ամենևիմբ չարն է. և արտաքոյ բարւոյ և էութեան է. որ *ո՛չ ուրեք* է. և ո՛չ երբեք. և ո՛չ էր. և ո՛չ է. և ո՛չ լինիլ կարօղ է. որ է ո՛չ ինչ: - 22. Բաժանեն և *ուրեք* զյատուկ անունն. այսինքն աստուած և մարդ. այս է զմարդկային բնութիւնն մարդ, և զաստուածային բնութիւնն աստուած. որպէս նեստորի թըւի: - 87. Եւ է՛ *ուրեք* զի միաւորեն զանունն՝ մի քրիստոս՝ մի տէր՝ մի որդի՝ և մի անձն ասելով որպէս քաղկեդոնի թըւի երկաբնակ ժողովոյն: - 87. Երրորդ՝ զի յընդդիմաբաժանեալ տեսակս՝ *ո՛չ ուրեք* մինն ի միւսումն տեսանի. և ո՛չ անբանն ի բանականումն: - 87. Իսկ թէ ասի *ուրեք*՝ ի հոգւոյն և ի հօրէ օծանիլ նմա, վասն տնօրէնութեանն խորհրդոյ ասին: - 95. Նախ՝ պարզ ոչ էն. որ է *ոչ ուրեք* և ոչ երբեք. որ ո՛չէր և ո՛չէ և ո՛չ լինի. որպէս ոչ ինչն: - 111. Չորրորդ՝ ասի անեղ՝ որպէս *ոչ ուրեք* և ո՛չ երբեքն. այսինքն է ոչինչն. սա կարօ՛տ է ամենևին սկզբան և կատարման: - 113. Զի՞նչ է որ ասեն փիլիսոփայք թէ *յոչ ուրեքէն* յոչ երբեքէն ոչինչ լինի: - 173. Նախ՝ զի ասեմք եթէ աշխարհ յառաջ քան զլինիլն իւր գոյր ի նախագաղափար տեսութիւնն աստուծոյ. ապա ուրեմն ո՛չ է *յոչ ուրեքէ* յոչ երբեքէ: - 173. Եւ *ո՛չ ուրեք* երբեք միտք ուղղափառաց բաժանմամբ տեսանէ. ո՛չ զբնութիւնս և ո՛չ զկամս և ո՛չ ներգործութիւնս որ յառաջն հարցափորձեցաք սակաւիկ: - 174. Զի ըստ իմաստ նոյն է՛ աստուած ամենայն ուրէք և *ո՛չ ուրէք*. ոչ ի տեղւոջ իմիք՝ և ո՛չ բացեայ ի տեղւոջէ իմիք. այլ վերոյ սորա, և ներքոյ սորա. ի մէջ սորա, և արտաքոյ սորա: - 180. Իններորդ՝ և է *ուրեք* ժամանակաւ առաջին ներգործութեամբն՝ և վերջին զօրութեամբն. որպէս շարժման դադարիլն: - 169. Զի՞նչ է որ ասեն փիլիսոփայք թէ *յոչ ուրեքէն* յոչ երբեքէն ոչինչ լինի: - 173. Նախ՝ զի ասեմք եթէ աշխարհ յառաջ քան զլինիլն իւր գոյր ի նախագաղափար տեսութիւնն աստուծոյ. ապա ուրեմն ո՛չ է *յոչ ուրեքէ* յոչ երբեքէ: - 173. Եւ *ո՛չ ուրեք* երբեք միտք ուղղափառաց բաժանմամբ տեսանէ. ո՛չ զբնութիւնս և ո՛չ զկամս և ո՛չ ներգործութիւնս որ յառաջն հարցափորձեցաք սակաւիկ: - 174. Զի ըստ իմաստ նոյն է՛ աստուած ամենայն ուրէք և *ո՛չ ուրէք*. ոչ ի տեղւոջ իմիք՝ և ո՛չ բացեայ ի տեղւոջէ իմիք. այլ վերոյ սորա, և ներքոյ սորա. ի մէջ սորա, և արտաքոյ սորա: - 180. Այլ և է՛ *ուրէք*. ըստ այնմ որ յա՛յլս է հաստատեալ: - 180. Դարձեալ՝ ի սուրբ գիրս

է՛ *ուրեք* որ զբարերարելն աստուծոյ նշանակէ՞ հրամայել ասէ: - 277. Եւ *ուրեք* զահարկութիւնն՝ օրէնս դնել ասէ: - 277. Եւ *ուրեք* զսէր և քաղցրութիւն՝ պատուիրել ասէ. որպէս ադամայ պատուիրեաց: - 277. Այսպէս ուղիղ իմացիր թէ *ուրեք* և տաճար կոչէ զմարմին. զի կրկին է տաճարն: - 319. Այն է, որ բովանդակ մարմինն այնպէս խոցոտեալ էր կեղով՝ և լուծեալ ի շարաւ և ի թարախ. որ ո՛չ կարէր յոտին կալ կամ սողալ *ուրեք*. և ո՛չ ըմբռնիւր յայլմէ: - 322-323. Այսպէս թէ *ուրեք* մարդ միայն անուանի քրիստոս «զճշմարութիւն խօսեալ». և կամ՝ «աստուած կնքեալ». ո՛չ ինչ *ուրէք* վնասէ զմիաւորութիւնն իբր մարդ սոսկ կամ աստուած միայն. այլ աստուած համանգամայն և մարդ խոստովանի միացեալ: - 477. Յինգերորդ՝ զի հոգի միաւորեալ ընդ մարմնոյ՝ է՛ ի մարմնումն էութեամբ և *ո՛չ* այլ *ուրեք* թէ և մտօք բազումս տեսանէ: - 478. Իսկ թէ *ուրեք* առաքեալք և մարգարէք հիմն կոչին, քանզի նա՛խ նոքա ժողովեցան ի հաւատս և եղեն հիմունք եկեղեցւոյ, և ապա՛ զայլս ժողովեցին: - 532. Նոյնպէս և հոգիք արդարոց ո՛չ մնան *ուրեք* ընդ ներքոյ դատապարտեալ տարերաց...: - 689. Եւ միտումն երբէք և *ուրէք* հարստահարելով և հաւասարելով ընդ միմեանս՝ այսպէս...: - 746. Չորրորդ՝ զի այս խաւար երբէք է և *ուրեք*. և այն միշտ և ամենեցուն: - 753. Իսկ եթէ բաղդատելով ոք ասիցէ, թէ ի մարմնի գոլով ապաշխարեալ սրբեցաւ նա ի ներգործականէն իւրմէ մեղաց. և այս *ո՛չ ուրէք* երևի ցոյցք ի գիրս սուրբս: - 775-776. Եւ թէ այս ո՛չ է գրեալ, նա՛ և ո՛չ այն եթէ մեղանչեաց *ուրէք* զամենայն կեանս իւր բաց ի միոյն. և ո՛չ մեղանչելն կրկին՝ ապաշխարութիւն է առաջնոյն: - 778. Զի ո՛չ երբէք անկար և անգութ և անիրաւ ասել զնա ցուցանի բնաւ *ուրէք*...: - 778

**ՈՒՐԻԱ** - Երկրորդ՝ զի ճշմարիտ էր նախատինք. զի սպան *զուրիա:* - 433. Եւ ի յանցանս *ուրիայի* ո՛չ էր անկեալ: - 439. Յինգերորդ՝ բանիւ և արդեամբ սպան *զուրիա*, և նոյնպէս վճարի. բանիւ նախատէ սիմէի, և արդեամբ աբիսողոմ: - 433

**ՈՒՐԻԱՍ** - Եւ ճարտարապետք խորանին՝ բեսելիէլ ոսկւոյ և արծաթոյ: ...Եւ *ուրիաս* փայտի: - 344

**ՈՒՐԻԷԼ** - Յինգերորդ՝ *ուրիէլ*. տեսումն աստուծոյ: - 144

**ՈՒՐԻՇ +** Երևի թէ բաժանե՛ս զմարդկութիւնն և *ուրիշ* իմանաս զմարդն և զաստուածն: - 95. Զի՞նչ է որ բնաբանն ի բնագիրն *ուրիշ* է, և ի սաղմոսն *ուրիշ:* - 407

**ՈՒՐՈՅՆ +** Եւ նուազեալ ի սմանէ քանակին, լինի նման և աննմանն ցուցեալ. որպէս յա՛յտ է ի տառն գրեալ. զի նման և աննմանն *ուրոյն* են որակի: - 236

**ՈՒՐՈՒԱԿԱՆ +** Տասներորդ՝ նեռն քարոզութեամբ պատրէ՝ և *ուրւական* սքանչելեօ. և այլն. և սոքա քաղցրաբանութեամբ և օրհնութեամբ պատրեն զմիտս անմեղաց. և հրեշտակ լուսոյ կերպարանին որպէս հայրն իւրեանց սատանայ. և ամենայնն *ուրւական* միայն և ո՛չ ճշմարտութեամբ. և բոլոր դիտումն նոցա է՛ պատրել զմարդիկ և հանել ի հաւատոց. և լնուլ զորովայնս. և զկանայս շեղջակուտեալս մեղօք յինքեանս գրաւել: - 35. և Նախ՝ զի նոցայն՝ էութիւն ո՛չ է. այլ առ աչօք *ուրուական* ցուցմունք. որպէս ի միտս ցնորք: - 133. Երկրորդ՝ անդ աչքն տկարանայ ի տեսութիւն *ուրուականին:* - 133. Այլ զի մի՛ իրողութիւն դատաստանին և յարութեան *ուրուական* և առ աչօք թուեսցի ընդհանուր ամենայն մարդկան, վասն որոյ ասեն վարդապետք ի յարութենէն մինչ ի գալուստն և քննութիւնն և հրով նորոգիլն և այլն՝ յերկարի միջոցաւ որքան ժամս **զ**: - 747. Եւ այս ո՛չ միայն փութանցիկ գոլոյ վասն, կամ ներհակաբար հատուցման որպէս սովորութիւն է. այլ զի ո՛չ ինչ կարեն տանիլ ընդ ինքեանս. բայց միայն նշխարիս ինչ յիշատակութեան *ուրուական* տեսլեան: - 775

**ՈՒՐՈՒԿ +** Զի այնպէս ծանակեալ լիցի մարմին մեղաւորին, մինչ զի հոգին գարշեսցի առնուլ զնա. և որպէս *ուրուկ* և որդնալից այնպէս ո՛չ կամեսցի ունել զնա: - 751

**ՈՓՆԻ** - Եւ վասն այսմ ի սուր անկան ծոյլ քահանայքն *ոփնի* և փենէհէզ. և լա ի դասուց անկան և տապանակն գերի առաւ: - 425. Նա՛խ՝ զի անարժան լինին սպասաւորքն. որպէս *ոփնի* և փենէհէզ որդիքն հեղեայ: - 425

**ՈՔ +** Իսկ թէ *ոք* ի բարձր աշտարակ կայցէ՝ տեսանէ զամենայն միահամուռ: - 15. Զորօրինակ՝ արուեստաւոր *ոք* մինչ գործէ զսայլ, և ի հեռուստ տեսանէ *ոք* զոր նա՛ գործէ, այլ ո՛չ տեսութիւնն հարկեաց զսայլն լինիլ այնպէս. այլ կամք արուեստաւորին: - 16. Այլ և ո՛չ ի բնութեան. զի ո՛չ է չարն ի բնութեան *ուրուք*. այլ արտաքոյ բնութեան պատահեալ: - 16. Զորօրինակ՝ արուեստաւոր *ոք* կազմէ սուր ի պատճառս բարւոյ. այլ որ նորգործեաց չար՝ նա եղև չարին պատճառ: - 16. Իսկ զչար ո՛չ կամի. և ո՛չ բռնադատէ ի չարն. այլ տանջանս և պատիժս եդ գործողացն զչար. ապա ուրեմն չարն ո՛չ է յաստուծոյ. և ո՛չ կամի զչար *ուրուք:* - 17. Մինն է արդարութեան այժմու կենացս, որ է փոփոխական. յորմէ կարէ՛ *ոք* ջընջիլ: - 18. Այսպէս է նախասահմանումն աստուծոյ և յառաջընտրութիւնն. և ո՛չ առնէ

հարկ իվր *ումեք*: - 20. Եթէ ո՛չ իշխեն, ո՛չ ոք ի նոցանէ է աստուած. և եթէ իշխեն, որ *ոք* և իշխէ միայն՝ նա՛ է աստուած: - 21. Իսկ ի բարւոյն ի չար՝ և ի չարէն ի բարի կարէ *ոք* փոխիլ: - 21. Եւ թէ *ոք* ասիցէ, այս ներհակա՛ց է որք փոխեն զմիմեանս. և ո՛չ ունակութեանց և պակասութեանց: - 21. Եւ թէ *ոք* ասիցէ, ջերմն ապականէ՛ զցուրտ՝ և ինքն մնայ. սոյնպէս և չարն: - 22. Եթէ *ոք* գիր ո՛չ գիտէ, և ո՛չ ըզվակյութիւն ընդունի սուրբ գրոց, որպէս ցուցանեմք նմա թէ է՛ աստուած: - 25. Քանզի հրէայքն ի ժամանակս քրիստոսի ո՛չ լինէին նեղեալք *յումեքէ:* - 28. Ութևժերորդ՝ Չիք *ոք* բարի. բայց մի աստուած: - 29. Եւ այնպիսիքն տրամաբանել ո՛չ կարեն վասն հոգևորին. որպէս ի ծնէ կոյրն վասն գունոց, քանզի ասեն վարդապետք՝ աստուած լոյս է ո՛չ մարմնոց, այլ մտաց. զոր թէ *ոք* ո՛չ տեսանէ՝ կո՛յր է: - 32. Ուստի յա՛յտ է մեծութիւն յանցանացն. քանզի ի հինն զինչև մեղանչէր *ոք* մեծ կամ փոքր՝ պատարագաւն սրբէր. թռչնօք և անասնօք: - 33. Յա՛րց և դու զնոսա, թէ հայր *յումեքէ՛* է, թէ յոչ *ումեքէ* է եղեալ: - 37. Զի թէ *յումեքէ* է, բարձեր զանսկզբնութիւն և զանծնելութիւն հօր: - 37. Թէ ոչ՝ Զի թէ մերձ էիր դու քեզ որպէս *ոք* առ *ոք*, բաժանեցար ընդ երկու. և զիա՞րդ մի իցես: - 37. Բայց է և այլ իմն տեսութիւն խորին և գեղեցիկ. զի նա՛ վասն սրբութեան չարչարեցաւ. և որ *ոք* ևս չարչարեսցի վասն սրբութեան՝ մի և նոյն է դիտաւորութիւն երկուցն...: - 43. Առակի են նման, որպէս թէ *ոք* որ նախ զպարիսպ քաղաքին ինչ իցէ գիտենայ, և զպարսպէն ասէ ո՛չ գիտեմ: - 48. Եւ որպէս թէ զկատարած աւուրն *ոք* գիտենայ, և զսկիզբն գիշերոյն ասէ չգիտել: - 48. Երրորդ՝ զի միածին է. զի զայլ *ոք* ո՛չ ծնանի: - 49. Վեցերորդ վկայ ի ժողովոյն քաղկեդոնի զոր նոքա ընդունին և ո՛չ մեք. այսպէս է գրեալ թէ՝ որ *ոք* զհոգին ի հօրէ և յորդւոյ բղխումն ասիցէ՝ նզովեալ լիցի: - 64. Իսկ թէ և նա շնորհիւ ունի զորդիութիւնն, զիա՛րդ կարէ տալ *ումեք* զոր հազիւն հարստացաւ: - 67. ...ո՛չ եթէ հայր դատէ *զոք*, այլ զամենայն դատաստան ետ որդւոյ իւրում: - 70-71. Այլ թերևս ասիցէ *ոք* եթէ՝ վերոյ ասացեալ գործառնութիւնքս պատշաճին քրիստոսի վասն բնութեան բանին, և ո՛չ վասն մարմնոյն: - 72. Իսկ թէ *ոք* ասիցէ՝ եղևն զփոփոխումն ցուցանէ. որպէս այն թէ՝ գաւազանն մովսէսի օձ եղև: - 72. Իսկ թէ *ոք* ընդդիմանալ ասելով, որպէս հրացեալ սուրն կտրէ և այրէ՛, այսպէս և կրկին ներգործութիւնք են ի քրիստոս: - 85. Երրորդ ասի անեղ այն՝ որ ի *յումե՛ք* է, և ի *յումեք* ո՛չէ. որպէս հրեշտակք յաւիտենի եղեալ, և ի ժամանակի անեղ. սա կարօտ և անկարօտ երկոցունց. այսինքն սկզբան և կատարման: - 113. Եւ թէ *ոք* ասիցէ, որովհետև աստուած յաւիտեան է անսկիզբն և անվախճան. նոյնպէս և յարաձգականն: - 116. Եւ թէ *ոք* ասիցէ, վասն էր մարդիկք հրեշտակք կոչին. նաև հրեշտակք աստուած՝ որ վերնոցն են կոչմունք: - 136. Եւ թէ *ոք* ասիցէ՝ յորժամ գիտէ՛ աստուած զկատարածն, վասն է՞ր տայ ի փորձանս: - 161. Եւ թէ *ոք* ասիցէ, եթէ աստուած զոր ոչ կամի՝ ո՛չ կարէ, որպէս զչար զի ո՛չ կամի և ո՛չ կարէ. նոյնպէս զմեղս և զայլսն. ապա երևի անկարութիւն ի յաստուած գոլ: - 163. Զորօրինակ եթէ կամիցի *ոք* տաճար շինել. նախ ձևանայ ի միտքն և յետոյ շինէ զտաճարն ըստ այնմ ձևոյ: - 163. Եւ թէ *ոք* ասիցէ՝ ապա վասն է՞ր զթողութիւն գտանէ զղջացեալն: - 165. Եւ եթէ *ոք* ասիցէ, եթէ պոռնիկն դարձեալ ի կարգ քահանայութեան ոչ մտանէ, ապա չեղև իսկապէս թողութիւն: - 165. Եւ թէ *ոք* ասիցէ, ապա զիա՞րդ նոր եկեալքն ի հաւատս՝ թողեալք զկուռս և զամենայն չար՝ լինէին քահանայք և եպիսկոպոսունք. որպէս սուրբն կիպրիանոս: - 166. Եւ թէ *ոք* ասիցէ, ընդէ՞ր այլ մեղուցեալն զղջացեալ մտանէ ի կարգ, որպէս հպարտն և ագահն և պոռնիկն ո՞չ: - 166. Եւ թէ *ոք* ասիցէ, ամենայն վերոյ ասացեալքս գո՛ն և յամուսնացեալ երիցունս աշխարհի, և քահանայագործե՛ն: - 167. Եւ թէ *ոք* ասիցէ, երևի ապա թէ քահանայագործութիւն պոռնկին ո՛չ լինի կատարեալ. վասն այն արգիլեալ է ի գործոյն: - 167. Այլ ասիցէ *ոք,* թէ բազում ինչ գոն ի յայլս գոյացութիւն և ի յայլս պատահումն...: - 169. Եւ թէ *ոք* ասիցէ, որովհետև ներգործութիւնքն բնութեանց հետևին, որպէս հուրն միշտ այրէ, և ջուրն ցրտանայ և ջերմանայ. ապա ճշմարիտ երևի բանն դամասկացւոյն՝ եթէ է՛ ի քրիստոս կրկին ներգործութիւն. որպէս և կրկին բնութիւն: - 174. Իսկ պատահական տեղի է, յորում նեստեալ *ոք*՝ կարէ՛ թողուլ զայն և լինիլ յայլ տեղւոջ. որպէս ի վեր կամ ի վայր: - 174. Եւ ուստի՞ է յայտ ասիցէ *ոք*. այսինքն զի բանն անմարմին է որ բաժանէ զսոսա. զի այս է կարգն որ մարմին զմարմին բաժանէ. և անմարմին զանմանմինն: - 175. Զորօրինակ՝ եթէ *ոք* պատառէ զկտաւ և թափի փոշին: - 204. Եւ թէ *ոք* ասիցէ՝ զշունչն ո՛չ ունին ջրայինքն: - 215. Իսկ եթէ *ոք* հարցանէ, ապա վասն է՞ր ստեղծան ծննդական անդամքն յորժամ ո՛չ ծնանէին ի դրախտին: - 226. Եւ թէ *ոք* պնդեսցէ զօրինակ և զորպիսութիւն անմեղութեան ծննդեանն: - 226. Յինգերորդ՝ զորօրինակ մեծատուն ոմն *զոք* ի ճաշ կոչիցէ, նախ պատրաստէ՛ զամենայն պէտս կերակրոց և ըմպելեաց. և ապա՛ մեծարէ՛ զկոչնականսն: - 230. Եւ թէ *ոք* ասիցէ, խառնուածոցն է այս, կամ յատուկ տեսակաց. որպէս ձայնք և տերևք և կենդանիք չեն նման միմեանց: - 237. Եւ թէ *ոք* ասիցէ՝ աստուած զամենայն ինչ բարի՛ է ստեղծեալ, և սոքա չար

երևին: - 237. Հինգերորդ՝ զի թէ *որ* գողանայր և սպանանէր, զանմեղն դատապարտէին. և լինէր ամենևին անօրէնութիւն: - 238. Եւ թէ *որ* ասիցէ, զի՞նչ է այն մի սկիզբն գոյութեան մարդոյ: - 254. Եւ թէ *որ* ասիցէ, զի՞նչ է այս որ յետ **խ**, կամ **ծ** աւուր ստեղծանի բանական հոգին: - 254. Եւ թէ ասէ *որ*, ո՞րպէս է բանական հոգին նախ զօրութեամբ և յետոյ ներգործութեամբ: - 254. Եւ թէ *որ* ասիցէ, ուստի՞ գտանեմք եթէ ունի զկենդանութիւն հիւթն այն: - 255. Եւ թէ *որ* ասիցէ, յորժամ ունի զկենդանութիւն սերմն այն՝ ընդէ՞ր ի վիժումն մեռանի: - 256. Եւ թէ *որ* հարցանէ, ընդէ՞ր է զի ամենայն սերմն ի մէջն է: - 256. Եւ թէ ասիցէ *որ*, ապա երևի թէ և բանական հոգին ի ծնողա՛ցն հատանի կամ գոյանայ: - 257. Եւ թէ ասիցէ *որ*. արդ յայտնեա՛, նախախնամութեա՞մբ է լինելութիւն հոգւոյ, թէ ստեղծմամբ: - 257. Զորօրինակ՝ արուեստաւոր *որ* կամիցի դրօշել ի քարեայ պատկեր, նախ նկարէ՛ ի միտս իւր զձև պատկերին. և ապա հատանէ զքարն և տաշէ՛ և դրօշմէ՛ զկերպն ըստ այնմ նմանութեանն որ էր ի միտս ծևացեալ: - 258. Եւ թէ *որ* ասիցէ, վասն է՞ր նախ զտնկականն տայ և ապա զբանական հոգին: - 258. Եւ թէ *որ* ասցէ, երևի ապա թէ **գ** հոգի է ի մարդն զանազանութեամբ էացեալ: - 258. Եւ թէ ասիցէ *որ*, ո՞րպէս է մի, զի ահա ի մահուանն բաժանին ի նմանէ: - 260. Եւ թէ ասիցէ *որ*, երևի ապա թէ հոգին ինքն առ ինքն նախկին է և յետոյ եթէ մի է հոգի: - 260. Եւ թէ ասիցէ *որ*, երևի ապա թէ առաջին զօրութիւն հոգւոյն տնկականն է՝ և վերջին բանականն որ է՛ յոյժ անպատշաճ: - 260. Եւ թէ *որ* ասիցէ, երևի ապա թէ յառաջագո՛յն է հոգի քան զմարմին, և յետոյ մասամբ երևի: - 260. Եւ թէ վասն է՞ր ասիցէ *որ*՝ ոմն յետ **զ** աւուր՝ և ոմն ի **ի** և ոմն ի **խ**: - 261. Իսկ թէ վասն է՞ր ասիցէ *որ*՝ յղացեալ մնան յարգանդի՝ մարդն ինն ամիս, և այլ կենդանիք աւելի և կամ պակաս: - 262. Եւ թէ ասիցէ *որ*, **դ** տարերքն են հիմն ամենայն նիւթոյ, պարտ էր լնուլ զ**դ** թիւն: - 262. Չորրորդ՝ ըստ բարուցն տեսանէ *որ*. զի ա՛յլ է երազ արի մարդոյ, և այլ երկչոտին. ա՛յլ գիճասիրին, և այլ պարկեշտին: - 268. Երկրորդ՝ զի բանական միտքն և զգայականն խափանեալ է ի գործոյ յորժամ ննջէ *որ:* - 268. Չորրորդ՝ զի մի՛ տկար *որ* կարծիցի. այլ որպէս կողե՛ղ և հաստակող ասեմք զըմբիշս. այսպէս զօրեղ եղիցի կինն ի տնօրինել զտունն: - 276. Եւ որ *որ* կամեսցի զդարձն, անդրէն ի ձեռն նորին յարմարութեան այսինքն նորին կարգին կարողանայ ելանել ի նոյն: - 280. Եւ թէ *որ* ասիցէ, այսոքիկ ի յարութեանն են լինելոց անկարօտ մարմնոցն: - 282. Եւ թէ *որ* ասիցէ, և երկրորդն ադամ քրիստոս՝ զմարմինն ադամայ ունէր, և էր թա՛նձր և ծա՛նր: - 282. Իսկ թէ *որ* հարցանէ թէ զի՞նչ էր սոցա առաքինութիւնն որ այսպէս պատուեցան: - 289. Դարձեալ՝ պիտանի է ի ստուգաբանութիւնս բանի. զի թէ *որ* զամենայն լեզուս գիտիցէ, ոչ ինչ բառի կարօտանայ: - 297. Եւ թէ *որ* ասիցէ, մովսէսի ընդէ՞ր ասաց՝ ա՛յս է անուն իմ յաւիտեան: - 312. Եւ տէր մեր ո՛չ երկնչի *յումեքէ:* - 315. Եւ թէ *որ* ասիցէ՝ յորժամ սոյնպէս չարք էին՝ զնոցա բանքն ընդէ՞ր գրեաց հոգին սուրբ: - 325. Զոր թէ ընկենու *որ*, լինի երկրաքարշ մարդ և մեղաւոր. և մինչ զղջացեալ դարձեալ ըմբռնէ յետոյ, լինի պատճառ կանգնելոյ և փրկութեան: - 332. Եթէ *որ* զմեզ զրկէ արդարութի՞ւն է ապա թէ խաբեմք և գողանամք զինչս նորա: - 337. Եւ թէ *որ* ասիցէ, վասն է՞ր յառաջին օրն նեխեցաւ, և յամենայն օր հալէր: - 339. Երկրորդ՝ զի մի *որ* որ կատարէ զօրէնս, պատուակա՛ն է աստուծոյ քան զամենայն աշխարհս. վասն այն ընդ մինն խօսի: - 340. Եւ թէ *որ* ասիցէ, պա՛րտ է ջուր խառնել ի խորհուրդն որպէս և մովսէս: - 341. Զորօրինակ թագաւոր *որ* յորժամ լսէ՛ զգոյժ որդւոյ իւրոյ մեռելոյ, խորտակէ՛ զքագն, և զամենայն ինչ որ վասն նորա՛ է: - 349-350. Եւ թէ *որ* ասիցէ՝ վասն է՞ր զպարտիսն ադամայ մեք ունիմք: - 351. Եւ թէ *որ* ասիցէ, ո՞րն է խորհուրդն քրիստոսի որով սրբիւր իսրայէլ ի մեղաց: - 361. Ո *որ* և հանցէ՝ ուտելի՛ է: - 366. Եւ թէ *որ* ասիցէ, ընդէ՞ր ծննդեան և յարութեան **ը** օրէք առնեմք և հոգւոյ գալստեան ո՛չ: - 373. Որ և այս երևի ի հինն ստուերագրեալ թէ *որ* խնդրեսցէ: - 373. Չորրորդ, նախքան զօրէնս և յօրէնն և զկնի օրինացն թէ ոչ արդարանամք. և ո՛չ յէ դարուն *որ* արդարանայ: - 384. Տասներորդ, բարկութեամբն արգելաւ յերկրէն աւետեաց. զի ցուցցի թէ արդա՛ր է աստուած. և ա՛կն *ումեք* ո՛չ առնու: - 386. Եւ թէ մեռանի *որ* ի տուն ուխտաւորին, պղծեցաւ ուխտն. և անհամար լիցին առաջին աւուրքն, և նո՛ր սկսցի: - 390. Երրորդ՝ զօրաւոր հարւածքն եգիպտոսի, որ ո՛չ ոք կարէր հասանիլ և բռնել զպատիժն. որպէս *որ* հարկանէ և դարձեալ բարձրացուցանէ զձեռն: - 395. Ի խրատ՝ զի սնուցօղն մի լիցի չարչարօղ. և բանն օրհնութեան մի՛ անիծեսցէ *զոր:* - 399. Երկրորդ՝ զի անպա՛րտ էր անիծից՝ և վասն մեր եղև. որպէս անպարտական *որ* ո՛չ անիծանի: - 400. Երկրորդ՝ առաւել ի սպառնալեա՛ց երկնչի *որ*, քան ի խոստմանց: - 403. Այսու ամենայնիւ ապաշնորհ և ապերախտ լինի *որ* եթէ աստուծոյ և եթէ մարդոյ: - 406. Եւ թէ *որ* ասիցէ, աստեղագէտք գիտեն զառաջիկայն: - 430. Սակայն հանդերձեալն և սիրտ մարդոյն՝ միայն աստուծոյ է գիտելի և ոչ այլ *ումեք* որպէս ասացաւ ի սկիզբն գրոցս: - 430. Նախ զայն ցուցանէ առ նորս, եթէ *որ* յանգիտութեան մեղանչէ՝ թողու աստուած. և որ դարձեալ կրկնէ,

և զառաջինն պահանջէ աւէ: - 439. Երկրորդ՝ զկանոնս ապաշխարութեան նշանակէ զոր խոստովանահայրն կարգէ. զի թէ յանցանէ *ոք*՝ մեղանչէ՛: - 439. Եւ որ ո՛չ եթող *զոք* մերձ. զի ո՛չ ոք լինի գործակից յարութեան մերոյ. որպէս և ո՛չ ստեղծմանն: - 444. Երկրորդ՝ զի մի՛ *ոք* փախիցէ: - 446. Նա՛խ՝ յորժամ հատուցանէ *ումեք* ըստ արժանեաց: - 458. Վասն է՞ր հրեշտակապետն գաբրիէլ աւետեաց կուսին, և ո՛չ մարդ *ոք:* - 463. Չինգերորդ, որդի կնոջ ասի *ոք*՝ որ լինի մարմին ի նմանէ. թէպէտ հոգին յաստուծոյ է: - 466. Իններորդ՝ վասն հաստատ ժառանգութեան խոստացելոյն. զի մի՛ ասիցէ *ոք* ցհայր, տէր դու ունիս որդի և ժառանգ: - 468. Նա՛խ՝ զի երևելի էր և ո՛չ անարգ *ոք*. որ և սակաւ ինչ յառաջ փառօք եմուտ ի քաղաքն: - 490. Եւ թէ *ոք* ասիցէ ապաքէն և զապականութիւնն աստուած եդ պատիժ ադամայ...: - 496. Եւ թէ *ոք* ասիցէ, ապա և ի մահու ազատեաց զմեզ, վասն է՞ր կրեաց զմահ: - 497. Եւ թէ *ոք* ասիցէ, որպէս մահւամբ զմահ եբարձ, այսպէս և ապականութեամբ զապականութիւն: - 497. Եւ թէ *ոք* ասիցէ թէ՝ ադամ ևս ապականացո՛ւ էր և դրախտն: - 501. Եւ թէ *ոք* ասիցէ՝ ի յերկրի որք հաւատացին փրկեցան, և անհաւատքն ո՛չ նոյնպէս և ի դժոխս: - 507. Եւ թէ *ոք* ասիցէ՝ հաւատն ա՛ստ է, և ի հանդերձեալն խափանի: - 507. Եւ թէ *ոք* ասիցէ, ապա ուրեմն ամենայն հոգիք յետ մահու կարեն խոստովանիլ: - 508. Վասն այն յերկարեցի, թէ *ոք* հակառակի՝ այսպէս պատասխանեսցես նոցա. և զեղկելի անձն իմ յիշեսցես ի տէր ուղղակից եղբայր իմ ի քրիստոս: - 511. Իսկ թէ *ոք* ասիցէ, աւետարանն ընդ արշալոյսն ասէ զգալ կանանցն և տեսանել զքրիստոս: - 515. Եւ այսպէս սովորաբար խօսիմք, թէ յուրբաթի կէս օրն ելեալ *ոք* ի տեղւոջէ՛ մինչև գայ առ մեզ ի լոյս կիրակէին կամ ընդ առաւօտն, ասեմք թէ գ օր է ճանապարհին. նոյնպէս և յարութիւնն քրիստոսի: - 516. Յայսմիկ յայտ արար թէ ի յարութեան անդ ո՛չ դառնայ *ոք յոք*. ո՛չ հայր յորդիս՝ և ո՛չ որդիք առ հարս իւրեանց. այլ դառնան ամենեքեան յայս. զի արժանի լիցին ողորմութեամբ ելանել առ հայր: - 517. Վեցերորդ՝ զփորուածս լնու և ամենայն *ումեք* մերձ է: - 523. Այնց է իմանալ, ուր ժողով լինէր մի լեզուաւ խօսէր *ոք* առաքեալ, և ամենայն ոք լսէր իւր ձայնիւն: - 525. Եւ թէ *ոք* ասիցէ, երևի այպէս ասելդ թէ՝ մի է և բազում. և այս ո՞րպէս լինի: - 529. Եւ թէ *ոք* ասիցէ, ծանեաք զմիութիւնն. այլ թուի թէ անկատար է քան զբանն աստուծոյ՝ բան աւետարանիս: - 529. Եւ թէ *ոք* ասիցէ, երևի ապա թէ նոյն անձնաւոր բանն աստուծոյ է յաւետարանս խօսեցեալ յայնժամ բազմացեալ է անձամբ և գոյութեամբ: - 530. Եւ թէ *ոք* ասիցէ, զնոյնութիւնն ընկալայ. այլ ինձ այսպէս թուի թէ աւետարանս բանն է քրիստոսի, և քրիստոս բանն աստուծոյ. ապա ուրեմն և աւետարանս բան է բանին: - 530. Եւ թէ *ոք* ասիցէ, ո՞րպէս է մի բանն աստուծոյ. զի ահա՛ բանն մարմնացեալ էր. և հայր բանիւ վկայեաց ի վերայ որդւոյն. և անյարմար է ինքն ինքեան վկայել: - 530. Եւ թէ *ոք* ասիցէ, ապա թէ զամենայն ոք առ հասարակ կապէ կամ արձակէ, այսինքն օրհնէ կամ անիծանէ, ո՞չ կատարի: - 539. Զորօրինակ, քահանայ *ոք* ի վաճառանոցն ի բազում հացս և ի գինիս ասասցէ «ա՛յս է մարմին իմ և արիւն իմ» ո՛չ կատարի. զի ոչ ունի զդիտաւորութիւնն. նոյնպէս և աստ: - 539. Եւ թէ *ոք* ասիցէ, անպատշա՛ճ է աստուծոյ իշխանութեանն անկատար մնալ: - 539. Եւ թէ *ոք* ասիցէ, աստուած վերնագոյն է և հանապազ օրհնեմք զնա, և այլ զուրբս նորա: - 539. Եւ թէ *ոք* ասիցէ, թէ վասն ուխտի կամ ազահութեան զանարժանս ձեռնադրեն՝ ո՞չ կատարի: - 540. Եւ թէ *ոք* ասիցէ, յայտնեա՛ ապա զո՞րս պարտ է կապել կամ արձակել: - 540. Եւ թէ *ոք* ասիցէ, այլավիճակք այլ և այլ աթոռոց ճշմարիտ երևի զի ինքնագլուխք են: - 541. Եւ թէ *ոք* ասիցէ, այս առաջնոյն. զի վերջինն կարէ՛ ուղղել. այլ ո՛չ կարէ թիւրել: - 541. Եւ թէ *ոք* ասիցէ՝ զի՞նչ է խորհուրդ երկոտասանիցն: - 546. Եւ թէ *ոք* ասիցէ, յորժամ համակարգ են իշխանութեամբ ամենայն երկոտասանքն, ապա ո՞րպէս է գլուխ առաքելոցն պետրոս: - 546. Եւ թէ *ոք* ասիցէ, երևի թէ առանձին իշխանութիւն ունի քան զայլսն: - 547. Եւ թէ *ոք* ասիցէ, երևի ապա թէ ո՛չ է պարտ հնազանդիլ առաքելոյն պետրոսի և աթոռոյ նորա: - 547. Եւ թէ *ոք* ասիցէ, կարի՛ բարկացար. ո՛չ զայս ասեմ հնազանդիլ. այլ որպէս լուսաւորիչն գնաց ի հռոմ և հնազանդեցաւ: - 548. Եւ թէ *ոք* ասիցէ, ի կեսարիայ ձեռնադրեցաւ ի ղևոնդիէ պատրիարգէ: - 548. Եւ թէ *ոք* ասիցէ, ազգս հայոց յետին է հաւատացեալ: - 549. Զորօրինակ՝ յորժամ ասիցէ *ոք* զբարին բարի գոլ, այս ըստ ինքեան ճշմարիտ է: - 550. Դարձեալ՝ որ *ոք* մերձ է ի ճշմարտութիւնն՝ նա՛ առաւե՛լ է ճշմարիտ. որպէս որք մերձ են լուսոյն և ջերմութեան՝ առաւել լոյս են և ջերմ: - 550. Եւ թէ *ոք* ասիցէ, ապա ուրեմն լա՛ւ է տարաձայնութիւն քան զհամաձայնութիւն. և բաժանումն քան զմիութիւն: - 551. Զորօրինակ **բ** *ոք* ի դատախազից իւրաքանչիւրն զինքն կամի և կարծէ ճշմարիտ գոլ. այլ մերձ եկեալ դատաւորին՝ վկայիւք յայտնի ճշմարիտն: - 551. Եւ այն որ ի գլխաւորագոյնս ո՛չ ասի միաբանութիւն, և զիա՞րդ միաբանութիւն ասիցէ *ոք* զայս: - 552. Եւ այլք գոն յոլովք. զի յորժամ պարապով *ոք* քննիցէ գտանէ: - 553. ...ապա՛ ի

պակասիլն սոցա տրտմի. և թէ *որ* հակառակի՝ բարկանայ ընդ դէմ նոցա. ապա յամենայնէ ծանծրանայ: - 561. Որպէս *որ* զգգալի ակն խփէ և զրկի ի լուսոյն և առնէ խաւար. նոյնպէս և նոքա: - 562. Մեղքն այն է՝ յորժամ ի կրօնս լինի *որ* և գթէ՛ մեղօք և դարձեալ ապաշխարէ: - 564. Նա՛խ՝ ի գործն և ի պատիժն. յորժամ գիտէ *որ* թէ այն գործն մեղք է և գործէ՛. և գիտէ՛ զպատիժ այն մեղացն որ ծա՛նր է: - 564. Բարկութիւն է ցասումն հոգւոյ. որով *որ* ընդ դէմ այլոց յառնէ: - 570. Դարձեալ կոչին յանձնառականք. որ ի պատուիրելոյ *ումեք* գոյ ողջախոհ. այլ զպատճառն ո՛չ գիտէ. նաև ո՛չ հետևին միմեանց: - 582. Հինգերորդ, զի թէ գո՛յր հնար կնոջ վասն հարկին առնել զգործ քահանայի, ընդէ՛ր ոչ կարաց նունի կոյսն մկրտել *զոր* ի վրաց յորժամ դարձոյց յաստուածգիտութիւն... - 589. Իններորդ, զի մկրտութիւնն է գործ քահանայութեան. և քահանայութիւնն է ազատ և ո՛չ ընդ *ումեք* հարկի ներքոյ. իսկ կինն ծառայ և ոտք է առն. վասն այսր հարկի ո՛չ է պարտ ծառային առնել զգործ տեառն...: - 589. Երրորդ՝ զի որ մկրտի՝ ի մահն քրիստոսի մկրտի. և քրիստոս միանգամ մեռաւ. և թէ *որ* դարձեալ մկրտէ՝ անձանց ի խաչ հանէ զորդին աստուծոյ և դարձեալ խայտառակէ որպէս առաքեալն: - 590. Ո՛չ *ումեք* մեղք յայլմէ խնդրի. այլ ամենայն մարդ վասն իւր մեղացն պատժի: - 591. Որպէս թէ *որ* ի պատուհան ինչ ցուցանէ զինքն յաշխարհի, և վաղվաղակի ի մահ դառնայ: - 592. Եւ թէ *որ* ասիցէ, զդրոշմն ո՛չ ունիք. զի եպիսկոպոսն տայ որպէս ազգն Ֆռանկաց: - 594. Եւ թէ *որ* ասիցէ, առանց ջրոյ գինի ո՛չ ըմպեն յերուսաղէմ: - 596. Եւ թէ *որ* ասիցէ, կարողութիւն ունի քահանայն բազում հացս օրհնել: - 597. ...իսկ որ յանմերձ ունիցին ակն, *յումեքէ* ոչ երկնչին: - 698. Եւ թէ *որ* ասիցէ՝ ընդէ՞ր ապա յորժամ խոստովանին հաղորդին: - 602. Եւ թէ *որ* ասիցէ՝ օծումն խորհո՛ւրդ է. ընդէ՞ր մեք ո՛չ ունիմք: - 604. ...որպէս թէ *որ* հատանէ զարմատն՝ չորանան և ստեղունքն: - 604. Եւ թէ *որ* ասիցէ, պա՛րտ է զի ձեռն քահանային մերձեսցի ի զգայարանսն: - 605. Եւ թէ *որ* ասիցէ, զառաջին օծումն որ նախ քան զմկրտելն՝ ո՛չ ունիմք: - 605. Եւ թէ *որ* ասիցէ, այս ննջեցելոց օծումս՝ վերջի՞ն օծումն է՝ թէ առաջին: - 605. Զի յորժամ մեղօք ինչ սրբութիւնս մեր ապականի, կամ շարժի *որ* ի հաւատոյ, վերստին կարէ՛ հաստատիլ ի հաւատս, և դարձեալ կրկնել զխոստովանութիւն և զապաշխարութիւն: - 615. Եւ թէ *որ* ասիցէ, զսրբոց մարմինս ընդէ՞ր արգելումք: - 617. Այլ ի պատարագն պարտ է բանալ զգլուխս որ պատարագիչն է ամենայն ոք որ և իցէ. թէ քահանայ և թէ եպիսկոպոս և կամ ա՛յլ *որ*: - 635. վասն որոյ թէ *որ* սրբութեամբ երգէ՝ լցցի շնորհօք հոգւոյն սրբոյ: - 643. Եւ թէ հարցանէ *որ*, այժմ ի յո՞ր հանգիստ են որ փոխին: - 648. Եւ թէ *որ* ասիցէ, տէր ամենակալն ի չորեքշաբաթի մտանէ: - 651. Եւ թէ *որ* ասիցէ, **խ** օր է պահոց. զի **խ** օր պահեաց քրիստոս. և կիրակէն ո՛չ է ի համարս: - 651. Եւ թէ ազատ *որ* է և ո՛չ կարէ ապաշխարել...: - 652. Իսկ թէ քահանայ *որ* հանդիպի ի նոյն չարիս, մի՛ պաշտեսցէ զքահանայութիւնն...: - 652. ...թէ ասեն եպիսկոպոսին թէ *որ* եկեալ է կնունք խնդրել...: - 659. ...նա զձեռն ի վեր առեալ գոհանայ զաստուծոյ. նմանապէս թէ պատմի վասն վախճանի *ուրուք*: - 659. Իսկ վախճանեալն կատարեալ լսի. որպէս թէ *որ* սկսանի երթալ ի ճանապարհ կամ ի գործ ինչ և ի յաւարտիլն կատարած ասի: - 666. Եւ զի կտաւն յերկրէ է և արուեստիւ գործեալ. ցուցանէ թէ զոր ինչ գործեաց *որ* ի յերկրի, զնոյն զգենու և զարդարի: - 671. Զորօրինակ զմարտիկ *որ* յետ հանդիսին դարձեալ լուանան ի փոշոյն և օծանեն: - 672. Եւ թէ *որ* ասիցէ, անմեղ տղայքն զի՞նչ պէտք ունին առաւել թաղման: - 674. Եւ թէ *որ* ասիցէ, թէ տուրք աղօթք և պատարագ, ո՞չ է օգուտ նոցա: - 683. Տասնգ, ողորմութեամբ աստուծոյ զերծանի *որ* ի մեղաց. և արժանաւորի արքայութեան: - 700. Զի որ խոկայ առանց հաւատոյ՝ այնպէս է իբր թէ ջանայ *որ* տեսանել զարեգակն առանց աչաց: - 702. ...զի թէ *որ* աստ զպատիժ մեղաց ոչ կարասցէ վճարել, անդ վճարեսցէ և թողցի: - 704. Եղիցի՞ յայնժամ *որ* յաշխարհի: - 714. Երկրորդ՝ է՛ յարութիւն զի յառնէ *որ* միանգամ և այլ ո՛չ ևս մեռանի. և յարութիւնս այս կատարեալ է: - 716. Այսպէս և թէ *որ* զմարդոյ մարմին ուտէ և ծնանի ա՛յլ մարդ, մարմին մարդոյն ո՛չ յառնէ ի ծնեալ մարդն և ո՛չ ի ծնօղն որ եկեր, այլ ի կերեա՛լն մարդ: - 718-719. Եւ թէ *որ* ասիցէ՝ բազում անդամք են ի մեզ լցեալ աղտեղի ապաւառով՝ և նոքա ո՞չ յառնեն: - 725. Եւ թէ *որ* ասիցէ, բազում անդամք են կենդանականք, որպէս սիրտն լեարդն թոքն և այլքն որք ի յարութեանն ո՛չ են պէտք. զի ո՛չ է հարկ կենդանութիւն մարդկան: - 725. Երրորդ, յատեան դատաստանի **դ** խնդրին վկայք. զի մինն կարէ՛ *որ* խաբել և սուտ վկայել. այլ զերկու և զերեքն ո՛չ: - 742. Այսպէս բաղդատի կոչումն կշռոյ եթէ *ումէք* հաճոյ մարթասցի: - 745. Եթէ *ումեք* տուեալ իցէ շնորհ հասարակ կամ յատուկ, որպէս մկրտութիւնն և հաւատքն. քանքար և տաղանդ. իշխան և առաջնորդ. մեծութիւն և ինչք. կեանք լոյս ամանակ և այլն ամենայն. այսու եղանակաւ կշռոյ հատուսցի: - 747. Զի այսպէս ասեն վարդապետք՝ թէ յորժամ յղանայ *որ* ի միտս իւր զխորհուրդ մեղացն, ի սատանայէ՛ սերմն առեալ որպէս կին յառնէ. և

ի ծնանիլ մեղացն՝ ծնանին և որդունքն ի հրեղէն ծովն որ է՛ ի հարաւ: - 753. Այլ թէ ի սոցանէ մի մի _ուրուք_ տուեալ լինէր, փոխանակ թագաւորութեան համարէր. իսկ թէ սոքօ ամենեքումբք վայելեսցէ, գերագոյն բոլոր աշխարհի լինէր: - 761. Չորրորդ առ այն որ եղիցի ընդդէմ ինքեան. զի մի՛ _յումեքէ_ կարիցէ վտանգիլ: - 764. Ղամպարք ի միում տան. և _ուրուք_ շարժեցելոյ՝ ի նոցանէ լոյսն ո՛չ շարժի և ոչ բաժանի և ո՛չ հատանի թէ անջրպետ ոչ կայցէ ի միջի. և անդ ո՛չ է միջոց: - 770. Կամ զինչ անհնարին սաստ, եթէ _որ_ խոստեսցէ զուրբ հոգւոյն խօսեցեալս ի գիրս սուրբս. ընտրելով զմնն յարուցեալ ի մեռելոց...: - 775. ...ասիցէ _որ_, ապա զիա՞րդ ա՛յլք ի ծննդոց նորա որք ընդ նմա ի բանտէն ազատեցան, պատժապարտք գոլով...: - 775. Իսկ եթէ բաղդատելով _որ_ ասիցէ, թէ ի մարմնի գոլով ապաշխարեալ սրբեցաւ նա ի ներգործականէն իւրմէ մեղաց. և այս ո՛չ ուրէք երևի ցոյցք ի գիրս սուրբս: - 775-776. Եւ յիրաւի այս. զի այն _որ_ որ առնէ զոր ինչ ոչ է պարտ, յիրաւապէս կրեսցէ զոր ինչ պա՛րտն է. զի մեղքն է առնել, իսկ պատիժն է՛ կրել: - 776. Եւ որպէս թէ բազումք զմիմեանց զմիոջէ կախեալք զվախէ՛. և եթէ _որ_ խզեսցէ զառաջնոյն զկապ, միապէս անկանին. թէպէտ մինն առաջին: - 777. Եթէ յարդեան ժամանակիս հաւատարիմ է, զի որ _որ_ և իցէ յանցաւոր, եթէ զղջասցի և ատեսցէ զմեղս ըստ մարգարէին՝ խոստովանութեամբն առնու զմաքրութիւն և զվարձս ապաշխարութեան: - 778. Թէ ասիցէ _որ_, թէ աստուած յողորմութենէ կամացն փոխի յայնժամ յանողորմութեան յաքոռ: - 778. Իսկ եթէ _որ_ զփոփոխումն ի մեզ ասիցէ ըստ օրինակի արեգական. որ զչորեսին եղանակս կազմէ՛ և ինքն անյեղ մնայ: - 778. Այլ որ քան և կարասցէ _որ_ զմիտս ուղղել. խօսակցելով առ նա, հաճո՛յ է աստուծոյ: - 779. Դարձեալ ասեմ, թէ անունս այս՝ պակասութիւն, նոյն է որ լսի չարչարանք. զի յորժամ կրէ _որ_ զչարչարանս զայս ինչ կամ զայն, պակասի ի նմանէ այն ինչ կամ այն. այսինքն առողջութիւն, կեանք, և այլն: - 781. Եթէ վարձատրելի է ասիցէ _որ,_ ապա զիա՞րդ որք ի հարկէ հաւատացին ո՛չ վարձատրեցան. որպէս դևքն ի հալածիլ. և որդիքն սկեւեայ. և սիմոն կախարդն. և այլք նման սոցին: - 783. Իններորդ, հաւատով հնազանդի _որ_ օրինացն աստուծոյ. այլ դևն հակառակ կայ օրինացն և աստուծոյ. թէպէտ գիտէ զայն լինիլ ինքեան չար, այլ գիտութեամբ մեղանչէ: - 784

***ՈՔ ԵՒ ԻՑԷ*** - Զի որպէս բան պատկերին, այսպէս և բան շնորհացն եռակի. զի միապէս սոքա եղծանին մեղօք, և նմանապէս արծարծին մաքրութեամբ առ որ _որ և իցէ:_ - 782. Դարձեալ, ամենայն շնորհք առ ո _որ և իցէ՝_ բառնի վասն մեղաց. ո՛չ ըստ ունակութեան՝ այլ ըստ ներգործութեան կամ նշանակութեան: - 782

**ՈՔՈՋԻԱ** - _Որոզիա_ ամս **ա**: - 452. Զչորքս զայս՝ _Զորոզիա_ և Զգոդողիա մայրն, և Զյովաս և Զամեսիա ո՛չ գրէ յազգահամարսն աւետարանիչն վասն լինելոյ դուստր և թոռունք եզաբելի: - 452. Այլ և յովսաբեթ դո՛ւստր է յովրամայ և գոդողիայ և քոյր _որոզիայ:_ - 452

**ՈՔՈՂԻԱ** - Այլ և յովիդա քահանայապետ զդուստր յովրամայ արքայի զքոյր _որողիայ:_ - 461

# Չ

**ՉԱՄԻՉ +** Եւ ո՛չ *գչամիչն*, զի արևակէ՛զ է և պակաս ի զօրութենէ: - 390

**ՉԱՐ +** Առաջին պատճառն աստուած՝ եդ զզօրութիւն իւր յաստեղս. և նոքա ազդե՛ն ի մեզ, և դարձուցանեն զմեզ ըստ իւրեանց շարժութեանն ի *չար* կամ ի բարի: - 7. Եւ թէպէտ մարմինք մարդկան են տարրականք, այլ բարի և *չար* ներգործի ըստ կամաց և ո՛չ ըստ բանականութեան: - 10. Դարձեալ ասեն, թէ բազում ինչ հանդիպի արտաքոյ կամաց մերոց. որպէս *չար* հիւանդութիւն...: - 11. Նախ՝ եթէ *չար* հիւանդութիւնն և այլն ի հարկէ՛ է, ապա ամենեցուն նոյնպէս պարտ էր գոլ...: - 11. Իսկ թէ այլ և այլ է ամենեցուն հարկն, ապա նոյնպէս ո՛չ լինէր ամենեցուն *չար:* - 11. Դարձեալ, որոյ է իր գործեացն՝ նորա՛ է և ներգործութիւնն. եթէ առնել և եթէ կրել. արդ՝ մարդո՛յ է հոգին և մարմինն և ձեռն. մարդո՛յ է ուրեմն և գործ նոցին, եթէ *չար* և եթէ բարի: - 11. Դարձեալ ասեն թէ՝ աստեղք ունին բնութիւնս ներհակս միմեանց. *չար* և բարի. և միմեանց դիպեալ ներհականան իրերաց. և առնեն *չար* կամ բարի խռովութիւն կամ խաղաղութիւն. աւեր կամ շինութիւն. և այլն: - 12. Եւ շարժումն նոցա ո՛չ պատճառէ *զչար* և զբարիս մարդկան. այլ են պատճառք աւուրց և ժամանակաց և եղանակաց. ծնանելոյ և աճելոյ. և նշան ապագայից որպէս ասացաք. այլ նշանն ո՛չ է պատճառ *չար* լինելոյ ումեք կամ բարի: - 12. Եւ շարժումն նոցա ո՛չ պատճառէ *զչար* և զբարիս մարդկան. այլ են պատճառք աւուրց և ժամանակաց և եղանակաց. ծնանելոյ և աճելոյ. և նշան ապագայից որպէս ասացաք. այլ նշանն ո՛չ է պատճառ *չար* լինելոյ ումեք կամ բարի: - 12. Իսկ *չարն* ո՛չ է էութիւն: - 13. Ա՛յլ արդ՝ աստուած պատճառ էութեան է և ո՛չ ոչ էութեան, ապա ուրեմն *չարն* ո՛չ է յաստուծոյ: - 13. Երկրորդ՝ բարին ունակութիւն է, և *չարն* պակասութիւն նմին. որպէս խաւարն լուսոյ: - 13. Այլ արդ՝ աստուած պատճառ է ունակութեան, և ո՛չ պակասութեան. ուրեմն *չարն* ո՛չ է յաստուծոյ: - 13. Իսկ սուտն *չար* է, և *չարն* սուտ: - 13. Չորրորդ՝ զի թէ *չարն* է յաստուծոյ, այլ արդ չարն եկամուտ է և պատահեալ. լինէր ապա ի յաստուած օտա՛ր ինչ և պատահական. որ է անտեղի: - 13. Չորրորդ՝ զի թէ *չարն* է յաստուծոյ, այլ արդ *չարն* եկամուտ է և պատահեալ. լինէր ապա ի յաստուած օտա՛ր ինչ և պատահական. որ է անտեղի: - 13. Հինգերորդ՝ բարին կարգաւոր է և *չարն* անկարգութիւն: - 13-14. Այլ արդ՝ եթէ *չարն* յաստուծոյ է՝ լինի անկարգութիւն աստուծոյ որ է՛ անյարմար: - 13. Վեցերորդ՝ թէ *չարն* է յաստուծոյ, երևի թէ աստուած պատճառ է չարեաց: - 14. Այլ արդ՝ ամենայն պատճառ առաւել է քան զպատճառելին. եթէ բարեաց և եթէ չարեաց. ապա անհնարին հերձուած է ասել *զչարն* յաստուծոյ: - 14. Եօթներորդ՝ եթէ *չարն* է յաստուծոյ, ապա սիրէ *զչարն*. և եթէ սիրէ *զչարն*, սիրէ և զչարագործս որք սիրեցին *զչար:* - 14. Ութերորդ՝ եթէ *չարն* է յաստուծոյ, ո՛չ պատժէ զսատանայ որ չարացաւ. և ո՛չ *զչարս* ի մարդկանէ, այլ ահա՛ պատժէ՛. *չար* ուրեմն ո՛չ է յաստուծոյ: - 14. Իններորդ՝ եթէ *չարն* է յաստուծոյ, ապա և կամի՛ *զչարն*. յայնժամ լինի կրկին կամք աստուծոյ. *չար* և բարի. զի կրկին գործ՝ ի կրկին կամաց առաջագայի: - 14. Իններորդ՝ եթէ *չարն* է յաստուծոյ, ապա և կամի՛ *զչարն*. յայնժամ լինի կրկին կամք աստուծոյ. *չար* և բարի. զի կրկին գործ՝ ի կրկին կամաց առաջագայի: - 14. Տասներորդ՝ եթէ *չարն* է յաստուծոյ և կամի *զչարն*, ապա զբարին ո՛չ կամի. ապա թէ զբարին ո՛չ կամի, բարին ուրեմն ո՛չ է յաստուծոյ: - 14. Երկոտասաներորդ՝ եթէ *չարն* է յաստուծոյ, կամ գիտէ *զչարն* *չար*՝ կամ ո՛չ գիտէ. թէ ո՛չ գիտէ՝ անգիտութիւն ունի. և թէ գիտէ՝ գիտութեամբ առնէ *զչարն:* - 14. Երեքտասաներորդ՝ թէ *չարն* է յաստուծոյ՝ կարողութեամբ առնէ *զչարն*, թէ անկարութեամբ: - 14. Թէ անկարութեամբ՝ ահա բռնադատեալ է. և թէ կարողութեամբ առնէ *զչար*՝ անկա՛ր է առնել զբարի: - 14. Չորեքտասաներորդ՝ թէ *չարն* է յաստուծոյ, ինքն բարի է և առնէ *զչա՞ր*, թէ *չար* է և առնէ *զչար:* - 14. Զի եթէ բարի է և առնէ *զչար*, ահա ներհակ գործ է ինքեան: - 14. Իսկ թէ *չար* է և առնէ *զչար*, ո՛չ ոք է ի յէակս բարի: - 14. Հնգետասաներորդ՝ թէ *չարն* է յաստուծոյ՝ և սկիզբն ամենայնի է աստուած, որև չարեաց ըստ նոցա, ապա ո՛չ է սկզբնաչար առաջին գտակն չարեաց սատանայ. որպէս նոքայն բարբանջեն: - 14. Վեշտասաներորդ՝ զի թէ *չարն* է յաստուծոյ որպէս բարին, և երկուցն սկիզբն է աստուած, և արդ՝ եթէ միևնոյն է սկիզբն երկուցն, անկարելի է ներհակացն ի միասին ունիլ մի սկիզբն...: - 14. Եօթնևտասներորդ՝ զի թէ *չարն* և բարին ունին մի սկիզբն, որպէս ընդդիմաբաժանեալ տեսակքն զսեռն: - 14. Եւ լինէր բարին և *չարն* ի սեռէ աստուծոյ, որ է անհնարին: - 14. Ութևտասներորդ՝ զի թէ *չարնէ* յաստուծոյ, այս լինի կամ հակակայութեամբ յառաջ եկեալ. որպէս սպիտակն յո՛չ սպիտակէն. կամ բաղդատութեամբ. որպէս կենդանին ի կենդանւոյ: - 14. Այլ ի յաստուած զօրութեամբ իր ո՛չ ինչ գոյ, ո՛չ բարի և ո՛չ *չար:* - 14. Իսկ

թէ բաղդատութեամբ, աստուած բարի՛ է և ի բարւոյն բարի լինի և ո՛չ *չար:* - 14. Իննժերորդ՝ զի թէ *չարն* է յաստուծոյ, այլ արդ է՝ ըստ ինքեան *չար*, և է ըստ պատահման: - 15. Եւ ըստ ինքեան *չար* է՝ որպէս ասեմք *զչարն* *չար*. և ըստ պատահման՝ որպէս ասեմք զմարդն չար: - 15. Իսկ թէ ըստ ինքեան է *չարն* յաստուծոյ, նա ո՛չ լինէր բարին յաստուծոյ. զի ըստ ինքեան՝ հարկաւոր է և գոյացական և անփոփոխ: - 15. Եւ զի գոյացական է բարի, անկա՛ր է լինիլ պատահական *չար:* - 15. Երկրորդ՝ ասեն թէ աստուած նախքան զլինիլն մեր՝ ի նախատեսութիւնն իւր ետես զամենայն լինելոցն այնպէս. *զչարն* *չար*, և զբարին բարի: - 15. Դարձեալ ասեմք՝ թէպէտ տեսանէ աստուած զամենայն նախքան զլինիլն իւրեանց, սակայն տեսութիւնն աստուծոյ ո՛չ հարկ է ի վերայ նոցա լինիլ *չար* կամ բարի: - 15-16. Նո՛յնպէս և տեսութիւնն աստուծոյ ո՛չ հարկէ ի վերայ մեր գործ զբարի կամ *զչար*. այլ կամք մեր: - 16. Երրորդ՝ ասեն թէ կամքն աստուծոյ ո՛չ է ընդունայն. և ո՛չ ոք կայ ընդդէմ կամացն աստուծոյ. վասն որոյ զորինչ կամի՝ այնպէս առնէ. զոմն *չար* և զոմն բարի: - 16. Նախ եթէ կամացն աստուծոյ ոչ ոք է ընդդէմ. և որպէս կամի այնպէս առնէ. այլ *չար* ո՛չ կամի և ո՛չ առնէ: - 16. Դարձեալ ասեմք՝ թէ կամքն աստուծոյ ո՛չ է ընդունայն. զի զոր ինչ կամի առնէ. այլ կամեցաւ և արար զմեզ անձնիշխան և տէր գործոց մերոց. եթէ *չար*՝ և եթէ բարի: - 16. Չորրորդ ասեն՝ թէ *չարն* ո՛չ է յաստուծոյ, ապա երևի թէ այլ ոմն է *չարի* սկիզբն, և այլ ոմն բարւոյ. և լինի **բ** սկիզբն բարի և *չար* ըստ մանիքոսի: - 16. Նախ՝ եթէ *չարն* ո՛չ է յաստուծոյ և ո՛չ ի բնութենէ և ո՛չ ի բնութեան և ո՛չ է բնութիւն: - 16. Ասեմ զառաջինն եթէ՝ *չար* ո՛չ է յաստուծոյ. զի աստուած բարի՛ է բնութեամբ. և ի բարւոյն *չար* ո՛չ գայ յառաջ. որպէս ո՛չ ի լուսոյն խաւար: - 16. Այլ և ո՛չ ի բնութենէ. զի բնութիւնք ամենայն հրեշտակաց կամ մարդկան բարի՛ են ի բարւոյն յառաջ եկեալ. այլ *չարն* է՛ յանձնիշխան կամաց եկամուտ ի բնութիւնս: - 16. Այլ և ո՛չ ի բնութեան. զի ո՛չ է *չարն* ի բնութեան ուրուք. այլ արտաքոյ բնութեան պատահեալ: - 16. Այլ և ո՛չ է բնութիւն. ո՛չ մասն և ո՛չ բոլոր. այլ պակասութիւն ունակութեան. զի բարին ունակութիւն է, և *չարն* պակասութիւն նորին. որպէս խաւարն լուսոյ, և հիվանդութիւնն առողջութեան, և մահ կենաց: - 16. Ա՛րդ՝ թէպէտ *չարն* ո՛չ է յաստուծոյ, այսու ո՛չ լինին երկու աստուածք. կամ **բ** սկիզբն. զի *չարն* ո՛չնչութիւն է. և ո՛չընչին սկիզբն ո՛չ է աստուած. զի աստուած սկիզբն էւեցէ: - 16. Այլ և ո՛չ **բ** սկիզբն. զի գործունեայք *չարին* սկսեալք են: - 16. Հինգերորդ, ասեն թէ՝ գործունեայք *չարին* են յաստուծոյ որպէս կամքն. ապա և *չարն* է յաստուծոյ. զի նա՛ ստեղծ զկամքն: - 16. Նախ թէ աստուած ստեղծ զկամքն բարի. և զբարին եդ առաջի կամիլ. իսկ նա անձնիշխանութեամբ հեռացեալ ի բարւոյն՝ գտա՛կ եղև *չարին*. զի *չարն* ո՛չ այլ ինչ է, բայց հեռացումն. կամ պակասութիւն բարւոյ. ապա ուրեմն թէպէտ բանն և կամքն է աստուծոյ, այլ կամիլն և ընտրելն *զչարն*՝ ոչ է յաստուծոյ, այլ կամացն և բանին: - 16. Զորօրինակ՝ արուեստաւոր ոք կազմէ սուր ի պատճառս բարւոյ. այլ որ նորգործեաց *չար*՝ նա եղև *չարին* պատճառ: - 16. Դարձեալ, անձնիշխան կամքն է՛ յաստուծոյ. և է՛ յոչընչէ եղեալ. այլ ա՛րդ՝ անձնիշխան կամքն ըստ այնմ՝ որ յաստուծոյ է եղեալ՝ ո՛չ է պատճառ *չարի*. այլ ըստ այնմ որ յոչընչէ՝ և ցանկայ ոչընչի. այսինքն *չարի*. վասն այսորիկ մեղքն և *չարն* ո՛չ են յաստուծոյ. այլ յոչընչէ՝ որ է՛ սկիզբն նոցա: - 16. Իսկ *զչար* ո՛չ կամի. և ո՛չ բռնադատէ ի չարն. այլ տանջանս և պատիժս եդ գործողացն *զչար*. ապա ուրեմն *չարն* ո՛չ է յաստուծոյ. և ո՛չ կամի *զչար* ուրուք: - 17. Վեցերորդ՝ ասեն հակառակքն, թէ՝ *չարն* ոչ է յաստուծոյ, ապա աստուած ո՛չ ճանաչէ *զչարն*. որպէս մեք նմանեաւ զնմանն ճանաչեմք. այսինքն հոգւով զհոգևորս, և մարմնով զմարմնաւորս: - 17. Նմանապէս և աստուած գոլով բարի՝ ճանաչէ *զչարս:* - 17. Այսպէս և առաջնովն ճանաչեմք զբարին, և երկրորդիւն *զչարն:* - 17. Նմանապէս և աստուած միակ միջնորդութեամբ ճանաչէ զբարին ըստ ինքեան ի յատուկ տեսակն իւր. և ճանաչէ *զչարն* կրկին միջոցաւ. այսինքն զի է՛ հակակայ բարւոյն. և է՛ պակասութիւն նմին որպէս ասացաւ: - 17. Եօթներորդ ասեն, թէ յաստուծոյ չէ *չարն*, վասն էր ներէ սատանայի, և *չար* մարդկան: - 17. Ասեմք նախ եթէ՝ *չարն* ո՛չ է յաստուծոյ որպէս բարին. զի բարին ըստ կամա՛ց է. իսկ *չարն* թոյլ տալով է. և ա՛յլ է կամացն որ յօժարութեամբ է, և այլ է թոյլ տալովն որ իբր ի յո՛չ կամացէ: - 17. Զի նախախնամութեամբ բազում բարիս յառաջած է ի *չարէ*. որպէս սատանայի թոյլ տայ, զի փորձեսցին բարիքն և յաւելցին պսկքն: - 17. Ութերորդ ասեն, թէ աստուած ո՛չ կամի *զչար*, ապա կարեմք առնել ինչ զոր ո՛չ կամի աստուած. ապա ընդէ՞ր ասէ աւետարանն, «տերև մի ի ծառոյ ո՛չ անկանի, և մազ մի ի գլխոյ ո՛չ սպիտակի առանց հրամանի»: - 17. Եւ թէ սկսանիմք *զչար*, և նա փոխէ ի բարին ըստ բարի խնամոցն իւրոց: - 18. Դարձեալ ասեմք թէ՝ ո՛չ է բարի առանց աստուծոյ կամացն. և ո՛չ *չար* առանց թոյլ տալոյ նորա. ա՛յն է որ ասէ՝ տերև ո՛չ անկանի, և մազ մի ի գլխոյ. զի ո՛չինչ կարեմք առնել առանց կամաց՝ կամ առանց գիտութեան՝ կամ առանց թոյլ տալոյն

աստուծոյ: - 18. Նախ եթէ կրկին է *չար*. է՛ *չար* գործոց, և է՛ *չար* պատժոց: - 18. Այլ արդ՝ *չար* գործոցն ո՛չ է յաստուծոյ. որպէս ցուցաւ. այլ *չար* պատժոցն է արդարութեանն աստուծոյ. որ հատուցանէ արդարապէս: - 18. Դարձեալ, չորեքկին են հատուցմունք. բարի՛ փոխանակ բարւոյ, և *չար* փոխանակ *չարի*. որ է՛ գործ արդարութեան: - 18. Եւ բարի փոխանակ *չարի*, որ է անբաւ գթութեանն և ողորմութեանն աստուծոյ: - 18. Իսկ *չար* փոխանակ բարւոյ ո՛չ առնէ ըստ որում անիրաւութիւնէ. այլ առնէ երբեք ըստ որում նախախնամութիւնէ. զի ի *չարէն* լինիցի բարի. թէպէտ մեզ *չար* երևի, այլ այս ևս բարի է. որպէս հիւանդութիւն. փորձութիւն. և այլն: - 18. Այսպէս է հաստատել *զչարն*. և խստացուցանել զսիրտն. և այլն: - 18. Արդ՝ ժամանակեայ արդարութիւնն յայտնի է որ անձնիշխան կամօք փոփոխի. երբեմն ի *չար* և երբեմն ի բարի. և ժամանէ փրկութեան կամ դատապարտութեան: - 18. Որ անձնիշխան կամօք և *չար* գործովք խոտեցին *չարքն:* - 18. Ապա ուրեմն յաստուծոյ է *չարն* և բարին: - 19. Դարձեալ ասեմք թէ՝ ըստ ինքեան սոքա ոչ են *չար*. այլ բարի...: - 19. Ապա ուրեմն ամենայն ինչ որ յաստուծոյ է՝ բարի է, և ո՛չ *չար:* - 19. Ապա թէ զայս ո՛չ առնէ, անձնիշխան կամօք հետևի *չարին* և ո՛չ ի բնութենէ, զոր աստուած բարի է ստեղծեալ: - 19. Ապա ուրեմն *չարն* ո՛չ է յաստուծոյ այլ ի մէնջ՝ կամ ի նենգութիւնէ թշնամւոյն որ պատրէ՛ զմեզ: - 19. Այսպէս առնէ զոմն արդար և զոմն մեղաւոր. *չար*՝ և բարի: - 19. Ապա ուրեմն և զոմն *չար* և զոմն բարի ստեղծանէ: - 19. Նախ՝ եթէ աղքատութիւն և մեծութիւն տիրելն և ծառայելն, է՛ յաստուծոյ. սակայն ոմանց կամելով՝ և ոմանց ներելով և թոյլ տալով. այսինքն զբարի մեծատունս և զաղքատս կամելով առնէ. և *զչարսն* ներելով և թոյլ տալով առնէ: - 19. Այսպէս և զարդարս և զմեղաւորս. *զչարս* և զբարիս. զոմանս կամելով առնէ բարիս, և զոմանս թոյլ տալով առնէ *չար*...: - 19. Ա՛յսպէս առնէ *զչարս* և զմեղաւորս, զի ի ձեռն բարեաց օգտեսցին և ի լաւութիւն գայցեն: - 19-20. Եւ գիտելի է այս, եթէ նախասահմանութիւնն աստուծոյ առնէր հարկ գործոց մարդկան, *չարի* և բարւոյ, լինէր բազում անպատշաճութիւն որ վասն բախտին ասացեալ եղև. զորև աստ կարգեսցուք: - 20. Վեցերորդ՝ զի ո՛չ բարեգործքն լինէին գովելի, և ո՛չ *չարքն* պարսաւելի: - 20. Ութերորդ՝ ընդ վա՛յր էին ուսմունք և յորդորմունք ի բարիս. որովք փախչիմք ի *չարէն*, և հասանիմք բարւոյն: - 20. Իններորդ՝ աւելորդք էին դժոխք և արքայութիւն. որք տեղիք են բարեաց և *չարաց:* - 20. Տասներորդ՝ զի սուտ լինէին ամենայն օրէնք բնական՝ գրական և աւետարանական. զի սոքա ամենքն խրատեն զմեզ խոտորիլ ի *չարէ*՝ և առնել զբարի. և այլն ամենայն: - 20. Այսքան ընդդէմ նոցա՝ որք յաստուծոյ ասեն զբարիս. և *զչարս:* - 20. Իսկ ընդդէմ մանիքեցւոցն՝ որք ասեն **բ** սկիզբն, *չար*՝ և բարի. այսպէս հանդիպեսցուք և պատասխանեսցուք ի կարճոյ: - 20. Իններորդ՝ թէ են **բ** սկիզբն *չար* և բարի, կամ հաղորդին միմեանց՝ կամ ոչ: - 21. Իսկ թէ հաղորդին, ո՛չ կարէ լինիլ *չար*. զի *չարն* բարւոյն պակասութիւնէ. և սոյնպէս մի է սկիզբն: - 21. Տասներորդ՝ **բ** սկիզբն՝ գերագոյն բարին. և ծայրագոյն *չարն* կամ ըստ ինքեանց կայանան, կամ ո՛չ: - 21. Եւ եթէ կայանան ըստ ինքեանց, ո՛չ ոքն է *չար*. զի կայանալն ըստ ինքեան բարի՛ է: - 21. Արդ՝ բարի և *չար* ո՛չ են հակակայք որպէս առինչք. զի առ ինչքն համանգամա՛յն են. և ի միմեանց բաղկանան. իսկ բարին և *չարն* ո՛չ են համանգամայն. և *չարն* ի բարւոյն ո՛չ գոյանայ. և ո՛չ բարին ի *չարէն:* - 21. Եւ ո՛չ են որպէս ստորասութիւնք և բացասութիւնք, որ միայն ի բա՛նն են հակակայք. որպէս ճշմարիտ, և սուտ. այլ *չար* և բարի՝ ի բանս և ի գործս պատահին: - 21. Եւ ո՛չ որպէս ներհականք. որպէս ջերմ և ցուրտ. սպիտակ և սեաւ. զի սոքա որակութիւնք են. իսկ բարին էութիւն է, և *չարն* ո՛չ է էութիւն: - 21. Այլ թըւի որպէս ունակութիւն և պակասութիւն. զի **բարին ունակութիւն է, և *չարն* պակասութիւն նմին. որպէս կուրութիւն երեսաց՝ և խաւար լուսո՛յ է պակասութիւն**: - 21. Իսկ ի բարւոյն ի *չար*՝ և ի *չարէն* ի բարի կարէ ոք փոխիլ: - 21. Ասեմք առ այս եթէ՝ բարի և *չար* ըստ ենթակային ներհակք են միմեանց. իսկ ըստ ինքեանց՝ ունակութիւն և պակասութիւն որպէս ասացաք: - 21. Զի՞նչ է գործ բարւոյն՝ և գործ *չարին:* - 22. Իսկ *չարն* կորուսիչ է և ապականիչ: - 22. Ապա ուրեմն թէ *չարն* ապականիչ է այլոց, ուրև պատահի ապականէ՛ և զինքն ըստ որում *չար* է. ապա ուրեմն ոչ է՝ և ո՛չ կարէ գոլ *չարն:* - 22. Եւ թէ ոք ասիցէ, ջերմն ապականէ՛ զցուրտ՝ և ինքն մնայ. սոյնպէս և *չարն:* - 22. Իսկ *չարն* ոչ մնայ. զի *չարն* ոչ է էութիւն. այլ պակասութիւն: - 22. *Չարն* ո՞րպէս է ոչ է. զի սիա՛ ներհականա՛յ բարւոյն. որպէս առաքինութիւն և չարութիւն: - 22. Նախ՝ եթէ *չարն* ո՛չ է էութիւն, և ո՛չ ի յէս. և ո՛չ ի յէից. և ո՛չ սկիզբն էից: - 22. Ասեմք զառաջինն թէ ո՛չէ է *չար*. զի ապականիչ և կորուսիչ է որպէս ցուցաւ. ա՛րդ՝ ընդ ապականել զայլսն՝ ապականէ և զինքն. և ո՛չ մնայ ի յէութեան: - 22. Այլ և ո՛չ ի յէս է *չարն*. և զայս ցուցցուք ի բաժանմանէ: - 22. Եւ է և ո՛չ բարի. որպէս կամքն *չար:* - 22. Եւ ո՛չ է. և ո՛չ բարի. որպէս *չարն* արտաքոյ էութեան և արտաքոյ բարւոյ: - 22. Այլ և ո՛չ յէից է *չարն*. զի

ամենայն որ է է՝ բարի՛ է և անդրադարձեալ ևս...: - 22. Դարձեալ՝ ամենայն ինչ որ յէից է՝ սկիզբն ունի և պատճառ. իսկ *չարն* ո՛չ ունի սկիզբն և ո՛չ պատճառ. վասն որոյ ո՛չ է յէից: - 22. Այլ և ո՛չ սկիզբն է էից. զի ի *չարէն* բարի ո՛չ լիցի: - 22. Երկրորդ, ասեմք եթէ՝ *չարն* կրկին իմանի. է՛ որ ինքնաչա՛ր է. որ պարզ և ամենևիմբ *չարն* է. և արտաքոյ բարւոյ և էութեան է. որ ո՛չ ուրեք է. և ո՛չ երբեք. և ո՛չ էր. և ո՛չ է. և ո՛չ լինիլ կարող է. որ է ո՛չ ինչ: - 22. Եւ այսպիսի *չարս* ո՛չ է է. և ո՛չ ի յէսս. և ո՛չ սկիզբն ունի կամ պատճառ. և ո՛չ ինքն սկիզբն այլոց կամ պատճառ. ա՛յս է ինքնաչարն: - 22. Եւ է *չար*՝ որ խա՛ռն է ընդ բարւոյ. և ի յէութեան գոյանայ. որպէս հիւանդութիւնն ի յողջութեան. ապականությիւնն ի մարմնի: - 22. Զի փոփոխական է հոգիս մեր. երբեմն բարի և երբեմն *չար:* - 23. Իսկ *չարն* է եկամուտ և պակասութիւն բարւոյն: - 23. Իսկ *չարն* բազում է և ի բազում պատճառաց: - 23. Այսպէս հոգին էութիւն է և ընդունակ բարւոյ և *չարի*. այսինքն առաքինութեան և չարութեան: - 23. Իսկ *չարն* կորեաւ յորժամ բարձաւ ի հոգւոյն. զի *չարն* ո՛չ է է՝ և ո՛չ գոյ: - 23. Իսկ *չարն* ըստ ենթակային էանայ և երևի, և ըստ ինքեան ոչընչանայ և ապականի. զի ո՛չ է է. և ո՛չ գոյ: - 23. *Չարն* ո՛չ է է, և ո՛չ գոյ. որո՞վ զանազանի ի պարզ ոչ է էն. որէ՛ ամենևիմբ ոչինչ: - 23. Յաւասար են ի յոչինչ գոլն *չարն* որ ներհականայ բարւոյ, և ոչինչն որ ներհականայ էի: - 23. Իսկ *չարն* ո՛չ փափագի բարի լինիլ: - 23. Իսկ *չարն* բարւոյ ո՛չ հաղորդի և ո՛չ լինի բարի: - 23. Երրորդ՝ ոչ էն ըստ ինքեան ո՛չ բարի է և ո՛չ *չար*. և *չարն* ըստ ինքեան *չա՛ր* է. թէպէտ և բարի: - 23. Իսկ *չարն* ի յէութեան երևեալ՝ փոխի դարձեալ յոչինչ և յոչ գոյ: - 23. Հինգերորդ՝ ոչ ինչն ի յենթակայս եղեալ՝ ո՛չ ներհականայ էի. թէպէտ ըստ ինքեան ներհա՛կ է. և *չարն* ի յենթակայն երևեալ՝ ներհականայ և կորուսանէ՛ զբարին...: - 23. Ո՞րպէս է *չարն* անբաւ և անսահման: - 23. Իսկ *չարն* արտաքո՛յ է էութեան և բնութեան. վասն որոյ անբաւ է և անպատճառ: - 23. Իսկ *չարն* ոչնչութիւն է. և ո՛չ ունի առաջք և վերջք. վասն որոյ անչափ է *չարն* և անպատճառ, որպես ի վերոյ ցուցաւ: - 23. Աստուած անսահման է և անպատճառ. և *չարն* ըստ ինքեան անպատճառ և անսահման. որո՞վ զանազանին: - 23-24. Իսկ *չարն* անսահման է ըստ ինքեան, և ո՛չ է սահմանիչ այլոց: - 24. Եւ զայլ ամենայն բնախօսութիւն յաղագս բարւոյ և *չարի*՝ գտցես ի Դիոնէսիոսի ի չորս գլուխն յաստուածային անուանսն...: - 24. Արդ՝ թէ ինն ամսով յառաջ թագաւորեալ էր թագաւորն *չար*, ապա ուրեմն ի ժամանակս Օգոստոս կայսեր ծնաւ քրիստոս. զոր և վկայէ՛ աւետարանն սուրբ: - 29. Վեցերորդ՝ է՛ պատրուակ մեղացն. զի ոմանք *չար* գործով ի բաց մերժեն յինքեանց զլոյս արեգականն արդարութեան...: - 32. Տասներորդ՝ զի կամակո՛ր են ի *չար* շաւիղն. որոց բժշկութիւնն դժւարին է ...: - 32-33. Իսկ ուրախանալն ի *չարն* մահ է և անզգայութիւն. և ընդդէմ բժշկողացն մրցումն...: - 33. Այլ սոքա ինքեանց և բազմաց. այսինքն հօտին քրիստոսի. «յափշտակելով ի նմանէ և ինքեանց առնելով» ասէ սուրբն կիւրեղ. և յետոյ գրով աւանդեցին *զչար* աղանդն այլոց *չար* յիշատակ և ի կորուստ անձանց իւրեանց: - 33. Ութերորդ՝ զնա օ՛ձ դարանակալ ասէ ի ճանապարհի. և սոքա առաջին օձին նմանեալ՝ հրապուրեն զբազումս. և արտաքսեն ի դրախտէ եկեղեցւոյ. և թոյնք իժից ի ներքոյ շրթանց ունելով և խայթոց՝ զի առորս մերձենան, ի յսկիզբն բանից կամ ի վերջն՝ մահացուցանեն զհոգիս. երկճղի ունելով լեզու նենգաւոր՝ *չար* և բարի, ծածուկ և յայտնի: - 35. Եւ որպէս նեռնն ազդումն է սատանայի՝ որպէս առաքեալն ասէ. և նոքա յազդմանէ սատանայի՝ խորհին և խօսին զանազան հերձուածս ըստ *չար* խորհրդոց նորա: - 35. Զի չարչարանքն այսպէս ստուգաբանի, նախագործեցեալ *չարին* *չար* հատուցմունք: - 42. Իմա՛, որպէս բրուտն կարէ՛ գործել անօթ ինչ, այլ ո՛չ երկինք, և երբեմն ի բարւոջ և երբեմն ի *չար* և ապականեալ. այլ ըստ այսմ ո՛չ լինի աստուած: - 44. Երրորդ՝ ո՛չ կարեմ ոչ ինչ. այսինքն մեղք և *չար:* - 45. Իսկ ի յաստուած՝ զի ո՛չ է *չար*. և ո՛չ տգէտ. և ո՛չ անկար, և ո՛չ ասի: - 55. Եւ ըստ այսմ լինին մանեայ բ աստուածքն. մինն բարւոյ և մինն *չարի* արարիչ. որ է անաստուածութիւն: - 62. Իսկ թէ զմարդն միայն ասես, զրկեցեր զբանն ի տէրութենէ. և առանձին մարդո՛վ ասես եղեալ զամենայն. որ է անհնարին *չար:* - 69. Այսորիկ են *չար* աղանդաւորացն համբաւօղք մի բնութիւն բանին և մարմնոյն: - 82. Եօթներորդ՝ ոչէ ասի *չարն*. զի պակասութիւն է բարւոյ և արտաքոյ բնութեան: - 111. Երկրորդն՝ ո՛չէ և ո՛չ ասի. որպէս այլայլութիւն. և ապականութիւն. *չար*. ո՛չէ և ո՛չ ասի: - 123. Երկրորդին պատասխանեմք եթէ՝ ո՛չէ նոյն դրութիւն և խոստովանութիւն. որպէս յորժամ ասեմք դնելով թէ՝ *չա՛ր* է. խաւա՛ր է. և մե՛ղք է. ահա այս ուրացութիւն է և պակասութիւն: - 124. Եւ յորժամ ասեմք ո՛չէ *չար*. ո՛չէ խաւար. ո՛չէ մեղք. ահա այս խոստովանութիւն է և ո՛չ դրությունն: - 124. Եւ քրիստոսիւ լուսաւորեալք որոշեցաք զբարի և *զչար:* - 126. Նոյնպէս հրեշտակաց և դիւաց՝ *չարաց* ի մարդկանէ և բարեաց ընտրութեան հոգի ընկալաք: - 126. Երկայնութիւն է համբերութիւնն. որով տանի *զչարսն*. և վասն

ապաշխարութեան անտես առնէ զմեղս: - 129. Իսկ աստուած կարէ՛ փոխել և զկամքն՝ որ է՛ ախորժակ ի *չարէն* առ բարին. զոր հրեշտակք ո՛չ կարեն փոխել. այլ միայն զարթուցանեն զախորժակն և օգնեն: - 133. Երրորդքն՝ յետս ընկրկեն զիշխանութիւնս դիւաց և *չարաց:* - 136. Ութերորդ՝ զի ազատ և անձնիշխան կամօք ընտրեն զբարին և խոտեն *զչարն*. և դիւրասերտեալք ի բարին, և դժուարաշարժք ի *չարն:* - 137. Տասներորդ՝ զի *չարն* իւրովի ատեաց զնոսա և հեռացաւ, և իբրև զմրուր յերկիրս զետեղեցաւ: - 139. Վասն այն աշխարհ ամենայն այժմ ի *չարի* կայ, և խաւարեալ զանազան մեղօք: - 139. Եւ սոյնպէս ածէ ի ներքս *զչար* խորհուրդսն թէ ի յարթնութեան թէ ի ննջման: - 145. Սակայն *զչար* խորհուրդն ո՛չ կարէ ածել ի ներքս որ միայն հաւանութեամբն է *չար:* - 145. Իսկ թէ դառնային ի ներքոյ ինքեանց առ փոփոխական բարին, անկանէին ի *չար* մեղացն և ի *չար* պատժոցն. որպէս այժմ դևք և ի կատարածի: - 146. **Յոգևորն այն է՝ զի անկաւ անձնիշխան կամօք ի բարւոյն ի *չարն*, ի լուսոյն ի խաւարն, ի գիտութենէն յանգիտութիւն, յանմեղութենէն ի մեղս, յերանութենէն ի թշուառութիւն, ի սիրոյն յատելութիւն**: - 146. Զի յետ անկմանն եղև խստացեալ և անզեղջ ի *չարն*. կորացեալ ի ճշմարտութենէն. անկեալ ի բարւոյն. տկարացեալ ի զօրութենէն. արտաքսեալ յաստուածային խոկմանէն: - 146. Եւ այնչափ կուրացեալ է՝ մինչ զի պատերազմի ընդ դէմ աստուծոյ. թէպէտ գիտէ զայն լինիլ ինքեան ի *չար*, զի զոր ինչ *չար* գործէ անձնիշխան կամօքն, մեղանչէ մահու չափ: - 146. Այլ և գործակից նմա մարդիկ՝ անւանակից եղեն նմա և *չար* կոչեցան: - 148. Նախ՝ *զչար* խորհուրդն սատանայի առարկէ՛: - 148. Եւ ապա զի ցուցցէ թէ՝ *չար* խորհրդոցն վրէժ խնդրութիւն կայ և պատիժ: - 148. Իսկ առ *չարն* յո՛յժ ազդողակա՛նք են. այլ ո՛չ այնքան որչափ և կամին. այլ որքան իբր ի հրեշտակաց թոյլ տացի: - 149. Եօթն գլուխն է **է** *չար* զօրութիւն նորին...: - 51. Իսկ «տուտն», Նախ՝ նշանակէ զվերջին հետեւեալսն ընդ նմա. զի նա առաջին ինքնագիւտ էր ի *չարն*. և այլքն հետևեցան նմա: - 152. Զի՞նչ էր պտուղն ադամայ, և գիտութիւն բարւոյ և *չարի:* - 155. Զի առնելն է հաճոյական գործ առանց կասկածանաց. որպէս բարի առնել բարեաց, որ է՛ արդարութեանն աստուծոյ. և *չար* առնել չարեաց, որև այս է՛ խրատ ուղղութեան. այլ բարի առնել չարեաց, այս ողորմութեան է և գրութեան. այսոքիկ առնելոյն են տեսակք: - 158. Իսկ *չար* առնել բարեացն՝ է գործ անիրաւութեան, և ո՛չ գոյ յաստուած: - 158. Բայց թէ թոյլ տըւութեամբ՝ որ մեզ երևի *չար*. և է՛ ծածուկ բարութիւն ի նմա: - 158. Դարձեալ այսպէս մեկնեն եթէ՝ փորձութիւնն ըստ ինքեան ո՛չ է բարի. այլ պատահմամբ լինի բարի. յորժամ համբերութիւնն մեծ դնի և յաղթիցէ. իսկ յորժամ համբերութիւն ոչ լիցի, ըստ ինքեան *չար* և վատ է փորձութիւնն. վասն այն տէրն արգելուլ հրամայէ: - 160. Որպէս թոյնք իժից, զի են ինքեանք բնութեամբ *չար*. և պատճառե՛ն *զչար*. բայց պատահեցաւ ոմանց՝ դեղ լինիլ: - 160. Եւ ըստ ա՛յսմ կերպի է փորձութիւնն բարի. զի բնութեամբ *չար* է. և պատճառէ՛ *զչար* մեղքն. բայց պատահեցաւ ոմանց զի յաղթեցին փորձութեանց և ընտրիք երևեցան: - 160. Իսկ սատանայ փորձէ՝ զի ի *չար* ընկեսցէ: - 160. Եւ թէ ոք ասիցէ, եթէ աստուած զոր ոչ կամի՝ ո՛չ կարէ, որպէս *զչար* զի ո՛չ կամի և ո՛չ կարէ. նոյնպէս զմեղս և զայլսն. ապա երևի անկարութիւն ի յաստուած գոլ: - 163. Ապա յա՛յտ է զի *զչարն* և զմեղս ո՛չ կամի, վասն այն ո՛չ կարէ: - 163. Իսկ այն որ ո՛չ կարէ *զչար*, առաւել կարողութեանն է ցոյցք, և ո՛չ եթէ անկարութեան: - 163. Նմանապէս և աստուած ո՛չ կարէ *զչար*, զի առաւել կարէ զբարին: - 163. Իսկ ներհական հակակայքն և այլքն կարեն փոփոխիլ ի միմեանս. որպէս *չարն* և բարին. ջերմն և ցուրտն: - 165. Եւ թէ ոք ասիցէ, ապա զիա՞րդ նոր եկեալքն ի հաւատս՝ թողեալք զկուռս և զամենայն *չար*՝ լինէին քահանայք և եպիսկոպոսունք. որպէս սուրբն կիպրիանոս: - 166. Եւ յայտնի եղեալ որպիսութիւն սոցա ի միտ առ. զի անհաւատն այժմ եկեալ ի հաւատս կարէ՛ լինիլ և քահանայ. իսկ *չար* հաւատացեալն ո՛չ կարէ լինիլ քահանայ: - 166. Երրորդ՝ զթշնամին սատանայ և *զչարն* փախուցանէ: - 185. Յինգերորդ՝ զբարիս և *զչարս* որոշէ՛: - 185. Եւ են որ թև հաւատոյ ունին, և ո՛չ գործք. որպէս *չար* հաւատացեալքն: - 215. Եւ են որ ո՛չ ունին հաւատս և ո՛չ գործք. որպէս անօրէնք և *չարք*. և յայտնի անպիտանք են: - 215. Ութերորդ՝ օրինակ՝ զի գլուխ օձին է *չար* խորհուրդն որ մտանէ ի մեզ. պա՛րտ է սպանանել զնա: - 219. Եւ զի թև և ոտք եղև *չարին*, թևք և ոտք իւր կտրեցան: - 219. Զի՞նչ էր պտուղն գիտութեան բարւոյ և *չարի:* - 223. Նոյնպէս և նա գիտութեան էր պատճառ բարւոյ և *չարի* որպէս ասէ սուրբն գրիգոր նիւսացին: - 223. Դարձեալ ասեն ոմանք, նախ քան զուտելն ի պտղոյն՝ գիտէր ադամ զբարին փորձիւ, և *զչարն* գիտութեամբ. իսկ յորժամ եկեր՝ գիտաց *զչարն* փորձիւ, և զբարին գիտութեամբ. այն է գիտութիւն բարւոյ և *չարի:* - 223. Եւ այլք ասեն թէ՝ պատճա՛ռ էր բարւոյ և *չարի*՝ ո՛չ ըստ ինքեան, այլ օրինօքն: - 223. Զի թէ հնազանդեալ էր օրինացն, լինէր բարւոյ պատճառ. և ո՛չ հնազանդեալ՝ եղև *չարի*

պատճառ: - 223. Որ է՛ ընտրողութիւն բարւոյ և *չարի*՝ կատարելոցն իմաստիւք: - 224. Եւ է՛ միւս բարի խառնակն և պատրուակեալն. որպէս է աշխարհական բարին. զի գունով և երևելեաւ բարի է, այլ ի ներքոյ ծածկեալ *չա՛ր* է. յայսմանէ հրաժարէ՛ զմեզ ոչ մերձենալ: - 224. Երրորդ՝ զի զդէմս ունիցիմք միշտ ի յերկինս. և զթիկունս յերկիր. և հանապազ ի բարին յառաջեմք ոտիւք և ձեռօք և ո՛չ դառնամք ի *չարն:* - 234. Եւ թէ ոք ասիցէ՝ աստուած զամենայն ինչ բարի՛ է ստեղծեալ, և սոքա *չար* երևին: - 237. Ասեմք թէ՝ սոքա ի մասնաւոր հոգւոյն բարի են բնաւորեալ նախանձ ցանկութիւն և այլն. և վասն բարւո՛յ են եղեալ. այլ մարդն կամօք իւրովք փոխէ՛ զբնական բարին ի *չարն:* - 237. Այլ և ի թունից բանսարկուին ներկին և լինին *չար:* - 237. Եւ սոյնպէս մարդն առաւելու ի *չարն*. ի բանականէն և ի կամացն և ի թունիցն սատանայի չարացեալ որպէս ցուցաւ ի սկիզբն գրոցս: - 237-238. Եօթներորդ՝ զի ո՛չ կարէին ընտրել և խոտել *զչարն* և զբարին...: - 238. Յականջն դառն. որ *զչար* բանս մի՛ լուիցէ: - 243. Իսկ թխակն և կարմրագոյն՝ քան զգազան *չա՛ր* է: - 246. Տէրն յաւետարանին *զչարն* և զվատն մին ասէ: - 251. Կամ ի *չար* ուսումնակցաց և բարեաց: - 251. Այլ անճառ երանութիւնն և առաքինութիւնն է աստուծոյ գեղեցկութիւնն զոր մեզ պարգևեաց. այսինքն մաքրութիւն, անախտութիւն, և ի *չարէն* օտարութիւն ասէ նիւսացին սուրբ գրիգոր: - 271. Բնական պատկեր է, որով իմանամք և կարեմք սիրել զաստուած. և այս հասարա՛կ է բարեաց և *չարաց:* - 273-274. Նա՛խ՝ զի մարդո՛յն է զանազանել զբարի և *զչար*. և փախչիլ ի *չարէ՛*, և երթալ զհետ բարւոյն՝ կատարելոցն է ...: - 274. Վասն որոյ *չարքն* անամօթ կոչին. իբր թողեալ զպատիւ մարդոյն՝ և անասնոցն նմանեալ: - 274. Երրորդ՝ մահու մեռանիլ զհոգւոյ մահն ասէ որ մեղօքն մեռանի. զի այն է առաւել մահ և յաւիտեան *չար*...: - 277. Իններորդ՝ խորհրդակից ունել ո՛չ զթունարկու օձն. այսինքն զարկածք *չարին*. այլ զպատուիրանս աստուծոյ որ ի գիրս սուրբս: - 281. Եւ սատանային յայտնի են է *չար* խորհուրդքն որ կոչին գլխաւոր մեղք: - 287. Նոյնպէս և **h** տանուտեարքն միաբանեցան ի *չարն:* - 296. Երկրորդ՝ զի մի՛ միաբանեալ ի *չարն* անզղջապէս գործեսցեն: - 298. Սէթ ջրարբ. կամ մոռացումն *չարի:* - 299. Երրորդ՝ զի առաքինութիւնն դովտայ առաւել երևեսցի ի մէջ *չարացն:* - 302. Երկրորդ՝ զի թէ ոչ օգտեսցին *չարքն*, առաւել պատժեսցին: - 302. Չորրորդ՝ զի բարիքն ամբողջ մնալով ի մէջ *չարացն*, զօրութիւնն և արդարութիւնն աստուծոյ երևեսցի: - 302. Նոյնպէս և տէր մեր յետոյ բառնալո՛ց է *զչար*. գազանն զորդին կորստեան և զպաշտօնեայսն նորա ի կատարածի: - 314. Եւ տէր մեր փոյթ ի հատուցումն *չարաց:* - 315. Եւ տէր մեր ի վերայ *չարաց:* - 315. Երկրորդ՝ և արդարք առնեն ընդ դէմ սմին ի յամօթ *չարին*. որ հնարեցաւ ի ձեռն մեղացն՝ մահւամբ բառնալ զմարդկութիւնս. այլ հրամանաւն արարչին ծննդեամբք տնէ՛ և յերկարէ՛ բնութիւնս: - 321. Վեցերորդ՝ կնոջն *չար* խրատն և կագն: - 322. Արդ՝ առաջինն և վերջինն վայելչակա՛ն է յոբայ և աստուծոյ. իսկ միջին երկուքն բարեկամացն յոբայ, և *չար* բանսարկուին յարմարի: - 323. Այլ յորժամ զընկերն թիւրեմք *չար* յաղթութեամբ, յայնժամ սատանայ ուղղի և ուրախանայ: - 323. Դարձեալ՝ յաղթեաց զսատանայ այնու, զի իմացաւ *զչար* հնարսն նորա և պատասխանէր զընդ դէմ. որպէս կնոջն և բարեկամացն և որք զգուժն բերէին. զի գիտէր ի բանսարկուէն լինիլ: - 323. Եւ մեզ պա՛րտ է իմանալ *զչար* խորհուրդ խորամանկին ի զանազան հնարս, և պատասխանել ի սուրբ գրոց. որպէս յայտ է ի գիրս ևագրեայ: - 323. Նախ՝ ուղղութիւն ընկերաց. **բ** զոհութիւն և համբերութիւն. **գ**՝ իմանալ *զչար* խորհուրդն սատանայի. **դ**՝ աղօթք և պահք. **ե**՝ խոնարհութիւն և ճշմարտութիւն. որ գերագոյն է ամենայն զինուց և իսպառ կորուսանէ *զչար* որ մայրն է ստութեան և հպարտութեան: - 324. Երրորդ՝ զբարի և *զչար* գործոց հատուցմունքն աստէն կարծէին լինիլ ի մարմնի: - 324. Վասն երրորդին ասէր յոբ զբարի և *չար* գործոց հատուցմունքն լինիլ առհասարակ յետո՛յ ի հանդերձեալն...: - 324. Երկրորդ՝ թիւրէ զճշմարտութիւնն յորժամ *զչարն* բարի ասէ և զբարին *չար:* - 325. Չորրորդ՝ կեղծաւորութիւն է և խաբէութիւն գովելն *զչարն* և զանիրաւն. վասն այն ո՛չ ասաց բարեկամացն բարիս՝ զի *չարք* էին: - 325. Եւ թէ ոք ասիցէ՝ յորժամ սոյնպէս *չարք* էին՝ զնոցա բանքն ընդէ՞ր գրեաց հոգին սուրբ: - 325. Ոմանք **է** ամ ասեն. ըստ որում ի վեցից վշտաց փրկեսցէ, և յեօթներորդին ո՛չ փորձեսցի *չար:* - 326. Իսկ աստուած փոխէ՛ և զկամս ազդելով ի նոսա զբարին. և դարձուցանէ՛ ի *չարէ՛*. և երբեմն թոյլ տալով անձնիշխան կամացն դառնալ ի չարիս: - 336. Նախ՝ թոյլ տա՛լն է աստուծոյ. որ անձնիշխան կամօք ամրանայ մարդ ի *չարն*, և աստուած ներէ՛ և ո՛չ երկիւղիւ խրատէ զնա: - 336. Երկրորդ ա՛յն է՝ որ յորժամ լինի կամքն մարդոյն *չար* և խիստ ի ծածուկ, և զայն յայտնէ՛ աստուած...: - 336. Երրորդ, զի մեր ախորժակացս հետազայ և աստուծոյն. զի յորժամ ի բարին լինիմք՝ օգնէ՛. և ի *չարն* թո՛յլ տայ. ա՛յն է խստացուցանելն զսիրտ մարդոյ: - 336. Ապա թէ որդիք և թոռունք չօգտին ի

ներելոյն, յայնժամ պատուհասէ՛ և ջնջէ զյիշատակ *չար* ազգին: - 351. Այլ զներգործական մեղս անձին հօր՝ ո՛չ հատուցանէ անձն որդւոյ. ապա թէ ոչ՝ *չար* ծնողաց ո՛չ լինէր բարի զաւակ: - 351. Եւ ընդ դէմ այսմ. անհաւատ և *չարքն* անսուրբ են: - 364. Եւ լիրբն առանց ամօթոյ որ է՛ լերկն և *չարն* պիղծ է: - 364. Երրորդ՝ զի հանգիցէ երկիր և տարերք որ ի *չար* գործն մեր չարչարին. այլ և պահպանապետ հրեշտակք նոցա: - 372. Զի շաբաթացեալ հանգչիցի երկիր ի *չար* բնակչաց: - 376. Եօթներորդ՝ զի **միտքն զախտն շարժէ ի *չարն*. և ո՛չ ախտն զմիտքն. որպէս ասի, խորհուրդք ծերոց զքարինս պատառեն:** - 377. Դարձեալ՝ **զղջմամբ սատակի *չար* խորհուրդն. և ապա՛ խոստովանիմք լեզուաւ. և զնոսա փոխեալ գործե՛մք զբարիս**: - 380. Երկոտասան լրտեսաց տասունքն *չա՛ր* համբաւէին. և երկուքն զբարութիւն երկրին: - 380. Չորրորդ, զի գիտասցուք թէ ո՛չ միայն բարեաւ, այլ և *չարաւ* ոմանք բարի առնէ աստուած: - 387. Երկրորդ՝ զի մի՛ *չար* խրատ տացէ: - 388. Եւ դարձեալ՝ ուխտելն է բարիս առնել. և սահմանն *չար* ո՛չ առնել: - 389. Երրորդ՝ զառաջինն հարցն ետ որ սատակեցան. զերկրորդն որդւոցն տայ, զի մի՛ լիցին *չար* և դառնացօղ որպէս հարքն իւրեանց: - 393. Նշանակէ՛ որ չէ՛ պարտ կռուիլ մեզ ընդ ամենայն մարդկան. թէ *չար* թէ բարի. զի ա՛զգ են մեր և որդիք ադամայ: - 393. Իսկ ճշմարիտն աստուած զայս ո՛չ խնդրէ. այլ երկիւղ խնդրէ ի տղայոց որով խորշին ի *չարէ*. և սէր ի սրտէ փոխանակ անասնոց. և խաղաղութիւն առ ընկերս և օտարս...: - 396. Այլ տե՛ս յայտնապէս, զի զայսպիսի նշան վկայութեան ո՛չ ունէին յուդաս և դնդաս. և ո՛չ նեռն ունելոց է դերաքրիստոսն. վասն որոյ ո՛չ են մարգարէ, այլ մոլորեցուցիչք և *չարք:* - 400. Դարձեալ՝ մի *չար* կամք է ամենայնցն որպէս ասացաւ: - 404. Այսինքն՝ զոր ծածկեալ է մեզ՝ բարի կամ *չար* ո՛չ կարեմք ասել: - 405. Բարկութիւնն առ մեզ ա՛խտ է և *չար*. և աստուած բարի՛ է բնութեամբ և անախտ ապա ո՞րպէս բարկանայ: - 407. Եւ երկոքին սոքա առ մեզ եկեալ, յորժամ *չարաց* բարի առնէ, ողորմութիւն է: - 408. Եւ յորժամ բարեացն բարի, և *չարացն չար*, արդարութիւն է: - 408. Իսկ բարեաց *չար* առնել՝ անիրաւութիւն է. որ ո՛չ գոյ բնաւ առ աստուած. ո՛չ ի կեանս յայս և ո՛չ ի հանդերձելումն: - 408. Նա՛խ եթէ՝ բնութեամբ բարի է աստուած և ո՛չ ունի բարկութիւն. զի ծառ բարի պտուղ *չար* ո՛չ առնէ. այլ մեք գործովք մեր զայրացուցանեմք զնա և արկանեմք ի բարի կամս նորա բարկութիւն: - 408. Երկրորդ՝ որպէս բնութիւնս մեր բարի՛ էր պատկեր եղեալ բարւոյն. և մեք կամօք մեր ախտացուցաք *չար* ածելով ի ներքս...: - 408. Երրորդ՝ յա՛յտ է յայսմանէ. զի նոյն ինքն բարկութիւնն ո՛չ եկեալ ի գործ՝ չէ՛ *չար*...: - 408. իսկ յորժամ սպասաւորեաց հրեշտակապետն՝ զտիրական անունն ի սաստ կոչելով. յայնժամ ամպ ինչ լուսաւոր ծագեալ ի տեղւոջն, շիջոյց զերևումն *չարին:* - 410. Զայս նշանակէ թէ՝ յետ ելանելոյ հոգւոյ ի մարմնոյ և գնալոյ ի վերին շաւիղն, հակառակ կայ սատանայ և *չար* զօրութիւնքն ընդ նմա, տանիլ զհետ իւրեանց որ *զչա՛րսն* են գործեալ. և յարդարոցն յաղթին հրեշտակին օգնութեամբն. որպէս և անտօն ետես. զի իմացեալ և մեք զգուշասցուք այնմ: - 410. Եւ զօրութեամբ խաչելոյն գլուխ *չարին* ջախջախի. և սրբին անդամք մեր: - 424. Երկրորդ՝ զի նմանեաւն տանջեցան որկորայք և *չարք:* - 426. Հինգերորդ՝ ոմանք *չարք* ո՛չ հնազանդէին նմա...: - 426. Նա՛խ՝ զի մի՛ մարդիկ յանդիմանեսցեն *չարք* և անողորմք. այլ աստուած յանդիմանեաց և ողորմեցաւ: - 432. Նա՛խ՝ զի հեռասցի ի *չարէն:* - 432. Երկրորդ՝ զի սովն և սուրն զբարի և *զչար* ի միասին պատժէ. այլ մահն ընտրութեամբն աստուծոյ է. և ժողովի ի վերայ յանցաւորացն. ուստի յա՛յտ է զի դաւիթ ո՛չ էր յանցաւոր ո՛չ պատժեցաւ: - 435. Քսանևե, այսն *չար* խեղդէ՛ր զսաւուղ. և նոյն այսն զորդիսն սաւուղայ յաւուրս տեառն: - 436. Դաւիթ բարի արար *չարին* սաււողայ. և որդի դաւթի չարչարողացն զնա: - 437. Խորհի ակիտոփէլ *չար* վասն դաւթի և խեղդի. և յուդա վասն տեառն խորհեցաւ և խեղդեցաւ: - 438. Իսկ նստիլն ի յաթոռ՝ ասէր պատրել զաքայաբ, թոյլ տալն է աստուծոյ որ մարդ իւր կամօքն հաւանի *չարին* և պատժի: - 444. Եւ շուրջ զնովաւ հրեշտակք ամենայն ոչ հաւանեցան. զի նոքա զամենայնն ճշմարիտ խօսին. և բարի առնեն մարդկան. և յապաշխարութիւնն խնդան. իսկ սուտ խօսիլն և *չար* առնելն և ի վիշտս ուրախանալ՝ դիւա՛ցն է որ են *չար* հոգիքն: - 444. Մատնեաց *զչարս* ի գերութիւն. զի ա՛նդ վախճանեսցին, և արդար ծնունդք նոցա դարձցին ի տեղիս իւրեանց: - 448. Երկրորդ՝ զի **հ** ամն իբրև զմի օր համարեցաւ նոցա. զի հանգիցեն ի *չար* գործոց, և երկիրն ի *չար* գործելոյ: - 448. Իսամարիայ **ժ** ազգին տիրէ՛ րոբովամ որդին նաբատայ. որք կոչեցան թագաւորք իսրայէլի *չարք* և ո՛չ բարիք: - 452. Առաջին կերպիւն է՛ հատուցումն բարեաց և պատիժ *չարաց*՝ որ է՛ գործ արդարութեան: - 458. Այլ իւրաքանչիւրոցն հատուցանէ ըստ արժանեաց. այսինքն բարեացն բարիս, և *չարացն* չարիս: - 459. Իսկ ամենայն մարդկան միտք հաստատեալ են ի խնամս *չարի*...: - 473. Եւ այս ևս կրկին է գիր և դպրութիւն. մին անջինջ և յաւիտենից որ առ աստուած.

և միւսն ժամանակեայ և ջնջելի որ առ մեզ. զոր մեր գործօք և կամօք գրեմք և ջնջեմք. թէ *գչար* թէ զբարի: - 481. Արդ՝ երկոքին ծայրքն՝ այսինքն մեղքն և ապականութիւնն են պարզաբար և ամենևիմբ *չար* անւամբ և իրօք...: - 496. Իսկ մահն ո՛չ է պարզաբար *չար*. այլ շարամանեալ ընդ բարւոյ անուամբ և իրօք: - 496. Դարձեալ՝ մահն խառնեա՛լ է ընդ բարւոյ. և ապականութիւնն ամենևին *չար*. որպէս ցուցաւ ի գիրս քառասնօրեայ գալստեանն և մահուն սիմէօնի. ապա յա՛յտ է թէ ա՛յլ է մահ և ա՛յլ ապականութիւն: - 498. Նախ որպէս ասացաւ՝ ապականութիւնն ծունդ է մեղաց՝ և մեղքն *չա՛ր* է. և մեղք ո՛չ կրեաց սուրբ մարմինն քրիստոսի. ապա ուրեմն անապակա՛ն է: - 498. Հինգերորդ՝ զադամաստեղծ ձեռս իւր տարածեաց տէրն ի վերայ խաչին. և արտաքս ընկէց *գչար* իշխանն. և կորզեաց զմարդիկ յիշխանութենէ նորա: - 503. Զի որպէս յեսու աւերեաց զերիքով և անէծ զի մի՛ շինեսցի. նոյնպէս և զդժոխքն աւերեաց քրիստոս և անէծ զշինօղսն *չար* գործօք...: - 504. Ուր և առաւել *չարք* և ամբարիշտք տանջին, և գլխաւորն դիւաց: - 505. Իսկ միջին դժոխք որ կոչի բանտ դժոխոց՝ է՛ միջակ մեղաւորաց. որք ունին հաւատ և ո՛չ գործք. որպէս *չար* հաւատացեալք. կամ գործք և ո՛չ հաւատ. որպէս թերահաւատք և անհաւատք: - 505. Իսկ վերջին դժոխք որ կոչի անջրդի գուբ, նոցա՛ է որք ո՛չ ունին *չար* և ո՛չ բարի. որպէս մանկունք անմկրտեալք. ո՛չ տանջին զի չեն մեղանչեալ. և ո՛չ հանգչին զի չեն արդարացեալ. այլ վասն սկզբնականին մնան յանջրդի գուբն խաւարին: - 505. Նոյնպէս վասն երկրորդին գիտելի է, զի որպէս զփայտ թիւրութեամբ պնդեալ՝ դժուարին է ուղղել. նոյնպէս *գչար* սովորութիւն մարդկան դժուարին է փոփոխել: - 531. Հոտոտելիք՝ որք ընտրեն և որոշեն զբարի և *գչար:* - 534. Երկրորդ՝ զի թէ ճանաչիցէ զհեռաւորն միջնորդութեամբ բարի հոգւոյն. զի թէ յայտնէ միջնորդութեամբ *չար* հոգւոյն՝ ո՛չ է մարգարէ. այլ ստոցն ծանօթութիւն...: - 536. Սա յիմա՛ր է ո՛չ գիտէ զտկարութիւն իւր որպէս *չար* հիւանդ. զարթո՛ զսա: - 537. Այլև՝ ոմանք ասեն և ո՛չ առնեն. *չա՛ր* է: - 537. Նոյնպէս՝ որք լսեն և ո՛չ առնեն, *չա՛ր* է: - 537. Այսպէս՝ գիտել և ոչ ասել՝ *չա՛ր* է: - 537. Եւ սոքա են սուր երկսայրիք տուեալ ի ձեռս քահանայից զինուորաց քրիստոսի. զի յաջ և յահեակ հարցեն. այսինքն զսատանայ և *գչարսն* ի մարդկանէ որք հակառակին բարեաց: - 538-539. Եւ զայլ ամենայն որպիսութիւն *չար* ժողովոյն քաղկեդոնի գտցես ի պատմագիրս միխայէլի: - 543. Այլ *գչար* և զաստուածուրաց ժողովն քաղկեդոնի որ ի ձեռն մարկիանոսի և անիծելոյն պօղքերի՝ ո՛չ ընդունիմք. և զընդունօղսն նզովեմք: - 547. Եւ **գճ** ամ աւելի՝ բազում ազգ Ֆռանկաց ո՛չ հնազանդեցան *չար* ժողովոյն քաղկեդոնի: - 547. Եւ յորժամ ասիցէ զբարին ոչ *չար* գոլ, ճշմարիտ է և այս. այլ ըստ պատահման է որպէս ցուցաւ: - 550. Դարձեալ՝ ճշմարիտն մի է և սուտն բազում. և բարին մի է և *չարն* բազում. և առաքինութիւնն մի է և մոլորութիւնն բազում: - 550. Ասեմք առ այս թէ՝ ո՛չ է հարկաւոր այս ամենայն ուրէք. զի գո՛յ և տարաձայնութիւն բարի՝ քան զհամաձայնութիւն ընդ հերձուածօղս. և լաւ է բաժանումն ի *չար* ժողովոց՝ քան զմիաբանութիւն: - 551. Եթէ յաւելուածքն *չար*, և մթերքն *չար:* - 556. Ուստի ծառ *չար* պտուղ *չար* առնէ: - 556. Դարձեալ ասեն վարդապետք եթէ՝ խորհրդոցն մեղք՝ որ ընտրէ և կամաւ հեշտանայ, առաւել *չար* է քան զգործոցն ըստ պատահմանն: - 557. Նա՛խ՝ զի խորհրդոյն *չարն* ի բոլոր հոգի և ի մարմինն սփռի որպէս թոյնք օձից: - 557. Իսկ գործն զհակառակն նմին սուտ երևեցնէ զխորհուրդն և *չար* ցուցանէ զգործն և զազրալի: - 558. Ապա ուրեմն յա՛յտ է թէ՝ առաւել *չա՛ր* է խորհուրդն արբեալ որ շարժէ՛ ի գործն. քան զգործն որ շարժէ՛ ի զղջումն: - 558. Ապա յա՛յտ է թէ որպէս գործ մարմնոյն առ այլս է *չար*, և խորհուրդ մեղացն առաւել ինքեան է *չար:* - 558. Եւ զայս առնէ միտքն իբրև մշակ. որ առեալ զսերմն և բազմաբեղունս աճեցուցանէ. այսպէս և միտքն խորհելով *գչարն* զայսոսիկ ախտս առաւելու ի մեզ: - 564. Որպէս անպտուղ երկիր կորուսանէ զբարի սերմանս և փուշ բուսուցանէ. նոյնպէս և մեք զբարի սերմանս որ եդ ի մեզ աստուած ի *չարն* փոխարկեմք: - 564. Այսպէս և զխոհեմութիւնն ի *չար* խորհուրդս և ի խորամանկութիւնս փոխեմք: - 564. Խրոխտալ պարտ էր առ *չարսն* և ո՛չ հնազանդիլ. այժմ անհնազանդիմք օրինացն աստուծոյ և ամբարհաւաճիմք առ ընկերս: - 564. այսինքն չարութեամբն յորժամ կամքն կարէ՛ և գիտէ ընդ դէմ կալ *չարի* իմն, սակայն վասն չարութեան ընտրէ զայն: - 566. Ա՛րդ՝ մեղքն որ ընդ դէմ հոգւոյն սրբոյ՝ մանաւանդ ելանէ ի *չար* կամաց անձնիշխանականին. և ուղղակի մարտնչի ընդ դէմ շնորհաց հոգւոյն սրբոյ. և յիրաւի անթողլի՛ է: - 566. Դարձեալ զանազանին. զի գործ մեղացն է յայլմէ՛ առ մեզ՝ կամ ի մէնջ առ այլս. այսինքն ի պատրանաց բանսարկուին և ի *չարաց* ոմանց առ մեզ. և ի մէնջ առ ընկերակիցս մեր: - 569. Զի թէպէտ անպատեհ է ասել զբարկութիւնն առ աստուած զի անփոփոխելի քաղցրութիւն է. այլ կամքն որով մեղաւորքն վասն *չար* գործոցն տանջեալ լինին՝ բարկութիւն ասի աստուծոյ: - 569. Եւ ա՛յս է մեծագոյն *չար* աշխարհի.

զի չէ աւելի աղքատ քան զայն որ ցանկայ աւելի ունել: - 570. Այս է ծառն *չար* որ պտուղ *չար* բերէ. և յետոյ հատանի. և ի հուրն յաւիտենից արկանի: - 570. Եօթներորդն՝ դատել զկենդանիս և զմեռեալս. որ է՛ զբարիս և *գչարս*: - 573. Անծին թշնամւոյն պա՛րտ է բարի առնել. իսկ թշնամւոյն եկեղեցւոյ՝ ո՛չ առնել բարի և ո՛չ *չար*: - 577. Խոհեմութիւնն է զօրութիւն հոգւոյ, որով ընտրութիւն առնէ ի մէջ *չարին* և բարւոյն: - 579. Երրորդ խոհեմութիւն է գործոյն. որ կայանայ ի փախուստ *չարին* և յընտրութիւն բարւոյն...: - 580. Իսկ վեցերորդ կոչին մակստացականք. այսինքն ի վեր ստացեալ աշխատութեամբ. որք հետևին միմեանց իբրև *գչարս* շղթայից: - 582. Երկիւղ է հոգևորապէս փախուստ ի *չարէն*. զի մի՛ կորուսանիցէ զայն զոր սիրէ: - 582. Իսկ սգալ վասն *չարին*, զի փախիցուք ի նմանէ: - 583. Այլ սգալ վասն յատուկ ինչ *չարի*, է՛ իւրաքանչիւր առաքինութեան. զի իւրաքանչիւր առաքինութիւն սըգայ վասն ներհակին: - 583. Իսկ դիւական տրտմութիւն և խնդութիւնն մարմնաւո՛ր է և *չար*: - 584. Այս է՝ զմեղքն՝ զկամքն *չար*՝ և զսատանայ՝ որ խռովարարք էին եբարձ ի միջոյ. և արար խաղաղութիւն յերկինս և յերկրի: - 585. Նա՛խ՝ զի այսպիսի *չար* աղանդս ո՛չ գտանի յայլ եկեղեցիս քրիստոնէից: - 589. Այլ թէ ծնօղք որդւոց՝ կամ որդիք ծնողաց մեղացն կամակիցք և համախոհք լինին ի մեղս *չա՛րք* են ընդ նոսին...: - 593. Այլ գիտելի է, զի ոմանք հետևօղք *չար* աղանդոյն քաղկեդոնի մոլորեալք ի ճշմարտութենէն՝ ջուր խառնեն յանապական բաժակ արեանն քրիստոսի: - 594. և պատժէ զինքն վասն *չարին* զոր արարեալ լինի: - 601. Ասեմք թէ, ի հնարից *չարին* բարծին մարդիկք զխոստովանութիւնն որ հարկաւոր էր, յայն ապաւինեալ թէ՝ ի վերջին օրն օծանիմք ծիթով բալասամինաւ և արդարանամք: - 604. Ապա և ո՛չ աղօթք և պաշտօն քահանայից կամ տուրք կամ պատարագք է օգուտ հոգւոյն ըստ քեզ որ է բնաւ սուտ և *չար* հերձւած: - 605. Եւ է՛ որդէծնութիւնն բարի, և հեշտութիւնն *չար*: - 613. Եւ սոքօք զամենայն բարի և *գչար* գործէ մարդ. վասն որոյ ի ցերեկն **Է** անգամ աղօթեմք: - 622. Երկրորդ, զի ի գոհութիւնն ամենայն *չարք* կործանին որ հակառակ կան մեզ: - 626. Զի առաջին կանոն երանելեացն, որք դառնան ի *չարէ* և զճանապարհս օրինացն ընթանան...: - 629. Նոյնպէս և երկրորդն որ ասէ ոչ նախանձիլ ընդ *չարս* որ են անզգամք. և զի ո՛չ գոյր նոցա աստ փոխարէն մեղաց. վասն այն հրովն յաւիտենից այրեսցէ զնոսա: - 629. ...այսինքն է անհաւատքն և ուրացօղքն և *չար* հաւատացեալքն: - 648. Հինգերորդ, ըստ անուանն. զչորեքշաբաթն պահեմք, զի ի չորիցս *չարաց* պահպանեալ լիցուք...: - 653. Եւ ըստ հոգւոյն բարի և *չար*: - 664. Երկրորդ ի զրկանաց և յափշտակութեանց. և այս *չա՛ր* է: - 664. Երկրորդ, թէ *չար* մարդ լինի, տայ աստուած զմեծութիւնն՝ - 664. Երրորդ հիւանդութիւն է ընտրելոց, զի փո՛րձ երևեսցին ի յամօթ *չարին*. որպէս յոբայն: - 665. Եւ այս լինի բարեաց և *չարաց*: - 668. Իսկ *չարաց*՝ առ հաւատչեայ տանջանացն. և կամ թեթևութիւն: - 668. Կամ ի խիստ պատժէ անզղջից *չարաց*՝ իսկոյն սատակին: - 668. Եւ այնպէս յարաժամ տեսանէ զցաւս մեծ ինքեան և առ ինքն ի *չար* գործս իւր անբաժանելի ի նմանէ մինչ ի յարութեանն օր...: - 669. Իսկ մահ մեղաւորին *չա՛ր* է ...: - 669. Զի ի *չար* կենաց ի *չար* տանջանս ընթանայ: - 669. Այլ և ի բաժանիլ *չար* հոգւոյն ի չարացեալ մարմնոյն...: - 669. ...*չար* հոգիքն ընդ առաջ ելեալ արգելուն զնա ի ճանապարհն...: - 669. Եւ կոչի պատանք, զի պատեալ և կապեալ է զամենայն զգայարանսն. և ոչ ինչ կարէ գործել. ո՛չ *չար* և ո՛չ բարի: - 671. ...զի նոքա ո՛չ *չար* են գործեալ և ո՛չ բարի. ո՛չ տանջին և ո՛չ պսակին...: - 675. *Չարքն* ի սուրբ տեղիս թաղեալ օգո՞ւտ է նոցա: - 678. Իսկ հանգիստ կոչի, Նա՛խ՝ զի հանգեաւ յաշխատանաց մարմնոյն. այլ և ի *չար* գործոց: - 679. ...իսկ դևք զերկուքն ունին. զի յոչ էից եղէն. և փոխեցան ի բարւոյն ի *չար*. այլ զմինն չունին...: - 681. Եւ փարաւոն ընկղմեալ զօրօքն. զի ոչ ինչ կարեն վնասել *չար* դևքն՝ քրիստոնէից հոգւոց: - 682. ...այլ խաւար մեղացն արգելու զտեսութիւնն. և *չա՛ր* է կարծիք նոցա, և երկիւղ տանջանաց: - 685. Իսկ *չար* հոգիքն ճանաչեն այն քան *գչարս*՝ վասն զի ըստ արժանեաց իւրոց տանջելոց են: - 685. Դարձեալ՝ *գչարս* և զբարիս ճանաչեն անւամբն. որպէս մեծատունն զաբրահամ և զղազար: - 685. Իսկ *չարացն* ոչ ինչ գիտեն. այլ զոր հրեշտակք կամ դևք նոցա պատմեն: - 685. Այլ *չար* հոգիքն ոչ կարեն գալ առ մեզ մինչ ի դատաստանի օրն...: - 686. Իսկ ազգն Ֆռանկաց ասեն *գչարաց* հոգիսն ի դժոխս իջեալ. և զբարեացն յերկինս ելեալ...: - 686. Եւ զբուն *չարսն* ի դժոխս. որք են անհաւատք, և *չարք*, և կռապաշտք...: - 687. Իսկ ձախակողմեան խորան՝ է՛ ի յօդս յաներևոյթ տեղիս. ուր ժողովին հոգիք *չարաց* և մեղաւորաց. որք դատաստանաւն դատապարտին: - 688. Անդ ժողովին և հոգիք *չարաց* և ամբարշտաց ի ձեռն հրեշտակաց *չարաց*. ո՛չ ըստ բնութեան...: - 688. Այլ հոգիք սրբոցն ելանեն յերկինս որ անապա՛տն է *չարաց*...: - 689. Նոյնպէս կրկին է և տանջանք *չարաց*. այսինքն տանջանք գործոց ըստ ինքեան, և տանջանք հատուցման, զի

զտանջանք գործոցն կրեն յետ մահու. և զտանջանք հատուցման ի յարութեանն հոգւով և մարմնով: - 690. Ոչ մկրտեալքն կամ *չարքն* ո՞չ ունին տանջանս վասն սկզբնական կամ ներգործական մեղաց: - 690. Որք ո՛չ թլփատեցան ի հինն և ոչ մկրտեցան ի նորս, կամ *չարք* ի մարդկանէ, ունին զդատապարտութիւնն զոր զրկելոց են ի դատաստանին զանազան տանջանս և ո՛չ այժմ: - 690. Որոյ պատճառ է, զի դատապարտութիւնն ադամայ բարձաւ քրիստոսիւ. և *չարաց* տանջանքն է՛ ի դատաստանին: - 690. Նախ ի *չար* գործոց իւրեանց տանջին նոքա...: - 690. Արդ չև է եկեալ դատաւորն. և ոչ է եղեալ դատաստան. նա և ո՛չ հատուցումն. ո՛չ բարեաց և ո՛չ *չարաց* որպէս ասացաւ ի վերոյ: - 691. Իսկ որոմն *չարք* և անպիտանք: - 693. Եւ զի դժւարաւ խլին *չարքն* առանց վնասելոյ բարեաց, վասն որոյ թոյլ ետ մինչ ի ժամանակի հնձոցն: - 693. Քսանևզ, ո՛չ է արդարութիւն աստուծոյ թէ այժմ հատուցանի. զի մարմին և հոգին ի միասին գործեցին *գչար* և զբարի: - 694. Ասեմք եթէ՝ մտանելն առ աստուած այն է՝ որ հեռանայ ի չարութեանց և լինի ի բարութեան և ո՛չ փոփոխի ի *չար*, աստուծոյ պահելովն...: - 695. Եւ ի խոստովանիլ մեղաց՝ լուծանի և պտուղն *չար:* - 701. Երկրորդ, որպէս մարմինն ոչ փոխի ի բարւոյ ի *չար*, կամ ի հակառակն. նոյնպէս և ո՛չ հոգին...: - 704. Սակայն ի յղութեանն իջանէ *չար* հոգին ի յորովայն մօրն. և նմա զօրութեամբն և ներգործութեամբն ծնանի մանուկն և սնանի և հասանէ յերիտասարդութիւն...: - 706. Ա՛րդ՝ քարշէ *գչարսն* տրօք. զբարիսն տանջանօք. զպարզամիտսն քարոզութեամբ և սքանչելեօք: - 708. մինչ խօսիլ տայ բազնեաց, և լերանց գնալ, և ծառոց ծաղկիլ և չորանալ. և մեռելոց յառնել. և հրոյ իջանել յերկնից. և *չար* հոգւովն խօսիլ տայ այլ և այլ լեզուս: - 708. Եւ զպտուղս զգայութեանց ջրով հասուցաք. եթէ բարի և եթէ *չար:* - 714. Եւ բնական քննութեամբ նախ այսպէս եթէ՝ տեսանեմք ի քաղաքական օրէնս զի գոյ դատաստան. այսինքն բարեացն պատիւ և *չարացն* պատիժ...: - 15. Այլ արդ ի կեանս յայս տեսանեմք զբազումս որ բարիքն ի նեղութեան են և *չարքն* ի հանգստեան...: - 715. ...ապա պիտոյ է և ա՛յլ կեանս զի հատուսցի բարեացն բարի և *չարացն չար*. և այս ո՛չ լինի եթէ ոչ իցէ յարութիւն: - 715. Եւ դարձեալ՝ հոգին և մարմինն ի միասին գործեցին զբարի կամ *գչար*...: - 715. ...իսկ ներգործութեամբ *չարին* յապաղեաց ժամանակաւ...: - 716. Ութերորդ, բարի և *չար* սերմանիքն ի միասին բուսանին և մնան մինչ ի հունձս. մանաւանդ մինչ ի կալն ըստ առակի տն. - 721. Ութերորդ, կեանքն բարի է և անեզր. և մահն *չար* և եզերեալ: - 724. Եւ որպէս ելաք ի բարի կենաց և մտաք ի *չար* մահն, այսպէս և ելեալք ի մահուանէ մտաք յանեզր և անվախճան կեանքն և բարութիւն: - 724. Չորրորդ, յայտնելով մեղացն. և այսպէս մեղաւորք և *չարք* զմիմեանս դատեսցեն: - 738. Ոմանք ո՛չ դատին այլ դատապարտին որպէս բուն *չարքն* և յայտնի մեղաւորքն...: - 738-739. Ոմանք դատին և դատապարտին. որպէս միջակք որք ունին հաւատ և ո՛չ գործք. որպէս *չար* հաւատացեալք. և որք ունին գործք և ո՛չ հաւատ. զի աստ հատուցաւ նոցա: - 739. Որք առին զօրէնս և ո՛չ պահեցին. որպէս *չար* քրիստոնեայք ի նորս և *չար* հրէայքն ի հինն. նոցա ասասցի «երթա՛յք յինէն ա՛նիծեալք ի հուրն յաւիտենից»: - 739. Եւ բանիւ գործոյ խօսի ընդ բուն *չարս* և ընդ դևս որք առաքին ի տանջանս: - 739. Իսկ խոտելոցն գիր, դպիր է պիղծ հոգին դիւական. և *չար* կամքն իւրեանց և խորհուրդն և հեշտութիւն մարմնոյն մեղան...: - 741. Դարձեալ՝ *չար* կամք մեղաւորին է յաւիտենական...: - 744. Ապա ուրեմն յիրաւի և արդարապէս հատուցանէ աստուած *չար* փոխանակ չարեաց. այսինքն պատիժ վասն անիրաւութեան նոցա. զի արդար է աստուած: - 744. Այլ *չար* փոխանակ բարեաց ո՛չ երբէք հատուցանէ. ոչ ի կեանս յայս և ո՛չ ի հանդերձեալն. զի ո՛չ է անիրաւ. այլ արդար յամենայնի և ճշմարիտ: - 744. Չորրորդ զբարի և *գչար* գործս մեր առ միմեանս հաւասարել. կամ միտել ի *չարս* և ի բարիս: - 745. Նոյնպէս առ մեզ գործս բարի և *չար:* - 745. Արդ բարի գործս մեր հայի առ գործ ողորմութեանն, և *չար* գործս առ գործ արդարութեանն աստուծոյ: - 745. ...զի մարդոյ ի բարի գործս հակեալ՝ հարստահարի՛ արդարութիւնն յողորմութենէն. և թէ ի *չարն* հետևիմք՝ ողորմութիւնն յարդարութենէն: - 745. Այսպէս ի միտելն սակաւ ի *չարն*՝ յաղթահարեաց արդարութիւնն: - 745. Զի իրաւունք է բարոյն բարի առնել. և արդարութիւն *չարին չար:* - 746. Եւ սոքա երբեմն հաւասարին. որպէս յորժամ արդարապէս հատուսցէ բարեաց և *չարաց.* և միտեն յարաժամ անվախճան պատուէ և պատժէ: - 746. Եւ երբեմն միտէ՛. որպէս ի փրկել զբարիս կամ *գչարս*. և փարթամանալ բարեաց կամ *չարաց:* - 746. Երրորդ, հայի առ նոյն ինքն արդարապէս հատուցումն մանրամասն քննութեամբ բարեացն և *չարացն*. որք առաւել կամ նուազ ունին. կամ հաւասարակ յերկուցն կրից: - 746. Զի ըստ սեռի հատուցանի բարեացն բարի և *չարացն չար:* - 746. Յասարակական է, որպէս ածէ՛ անձրև ի վերայ *չարաց* և բարեաց և այլն: - 747. Դարձեալ՝ առաջինն վասն *չարաց*.

երկրորդն վասն բարեաց. երրորդն վասն *չարաց* և բարեաց: - 747. Ուստի երևի **զ** ժամս ի յարութենէն մինչ ի վճիռ հատուցման և կորստեան *չարաց* չորեքկին. այսինքն գործոց *չարաց* և պատժոց նոցին. պատճառաց դիւաց և հետևելոց մարդկան: - 748. Այգի և հնձան երբեմն *զչարս* օրինակէ՛ և երբեմն զբարիս. որպէս այն «յայգւոյն սոդոմա՛յ էր տունկ նոցա. և խաղող դառնութեան». այս *չարացն* է: - 748. Նոյնպէս և հնձան ասի *չարաց* և բարեաց: - 748. Եւ *չարաց* հնձան իմանի եռակի: - 748. Նախ՝ կոչի սիրտ և անձինք մեղաւորաց, ուր ժողովին ամենայն գործք *չար* որ է՛ խաղող դառնութեան. և ունակացեալ պահէ յինքեան. և հեշտութեամբն ճմլէ հանապազ և արբենայ մեղացն գինով: - 748. Եւ այսպէս երեքին սոքա կոչին *չարացն* հնձան: - 748. Երկոտասաներորդ, հնձան կոչի և վերջին օր դատաստանին. զի անդ հաւաքին ամենայն բարիք և *չարք* և գործք նոցին. և *չարքն* ճմլեալ արտաքսին ի տանջանս, և բարիքն ի կեանս: - 749. Այլ զկնի դատաստանին՝ բարիքն քէպէտ տեսցեն *զչարսն* ի տանջանս, բայց *չարքն* ո՛չ երբէք այնուհետև տեսցեն զբարիսն որպէս ցուցաւ: - 754. Եւ նոքա որք բազում համբաւեն դժոխս, մի ասեն գոլ արքայութիւն. պատճառելով եթէ՝ բարին մի է և *չարն* բազում: - 758. Իսկ *չար*՝ քէպէտ լինի ներգործութեամբ անձնիշխան կամօք, այլ բնութեամբ *չար* ո՛չ է ըստ ինքեան. զի ո՛չ է էութիւն այլ պակասութիւն բարւոյ. որպէս ցուցաւ ի վերոյ ի **Ե** համարն: - 758. Եւ դժոխքն տեղիք դիւաց և մարդկան *չարաց:* - 760. Եւ այնպիսի քաղցր է տեսութիւնն աստուծոյ, մինչ զի *չարքն* թէ կարէին՝ յօժարէին ի դժոխս կալ և զաստուած տեսանել. քան արտաքոյ տանջանաց լինիլ և զաստուած ո՛չ տեսանել: - 763. Որպէս ասեն վարդապետք, այնքան եղիցի երջանկութիւն, ուր ոչ ինչ եղիցի *չար*, և ոչ ինչ ծածկեսցի բարի: - 765. Մեր գործքն և յաստուծոյ տուեալ բարին հաւատով կնքի. և պակասն յանդիմանի այժմ ի խղճէ մտաց որպէս ի գրոյ. և անդ ի դատաւորէն, որ *չար* ծառայ կոչէ: - 769. ...իսկ Պարագայիւ, զի նա ակամայ և տգիտութեամբ. ուստի ո՛չ ունելով զգիտութիւն բարւոյ և *չարի:* - 777. Իսկ իւրաքանչիւրոց հատուցումն՝ այսինքն բարեացն բարիս և *չարացն* չարիս, է՛ այս գործ արդարութեան. և այսուքիկ առ մե՛զ փոփոխմունք. և ո՛չ անեղ բնութեանն: - 779. Չորրորդ, հաւատն է՛ աստուածային առաքինութիւն. իսկ դևք զի են խստացեալ ի *չար*՝ ո՛չ ունին զզջումն որ է բարոյական. ապա և ոչ հաւատ որ է վերնագոյն և բարի կամաց խոկումն առ աստուած: - 784. Իններորդ, հաւատով հնազանդի ոք օրինացն աստուծոյ. այլ դևն հակառակ կայ օրինացն և աստուծոյ. քէպէտ գիտէ զայն լինիլ ինքեան *չար*, այլ գիտութեամբ մեղանչէ: - 784

**ՉԱՐԱԲԱՐՈՅ +** Այսպէս ի բնական ստեղծումն հոգւոյն՝ ոմն խոհեմ և ոմն անզգամ. ցանկասէր՝ և ողջախոհ. բարեբարոյ՝ և *չարաբարոյ* լինին: - 19. Նոյնպէս և *չարաբարոյն:* - 19. Մատունքն մած և վայրակոր, ագա՛հ է և *չարաբարոյ:* - 247. Ոտք բարակ և կարճ, *չարաբարո՛յ* է: - 247. Մանրաքայլն և արագն՝ *չարաբարոյ* և վատուժ ասեն լինիլ: - 247

**ՉԱՐԱԳՈՅՆ +** Ոմանք ո՛չ ասեն և ո՛չ առնեն. *չարագո՛յն* է: - 537. Եւ որք ո՛չ լսեն և ո՛չ առնեն, *չարագոյն* է: - 537. Ոչ գիտել և ասել *չարագո՛յն* է: - 537

**ՉԱՐԱԳՈՐԾ +** Եօթներորդ՝ եթէ չարն է յաստուծոյ, ապա սիրէ զչարն. և եթէ սիրէ զչարն, սիրէ և *զչարագործս* որք սիրեցին զչար: - 14. Եւ զի *չարագործա՛ցն* է ապաւէն, և ամօթոյ բարձօղ: - 196. Զի եւ տէր *զչարագործս* և զհերձուածօղս սատակէ՛: - 441. Եւ չորիւքս այս առաւելու ամօթն. իսկ Հինգերորդ՝ զի ի մէջ *չարագործ* աւազակա՛ցն էր համարեալ: - 490. Չորրորդ՝ յապարանս պիղատոսի. և մատնեցաւ որպէս *չարագործ:* - 492. **ՉԱՐԱԹՈՅՆ +** Դարձեալ՝ վիշապն *չարաթոյնք* է քան զօձն: - 488

**ՉԱՐԱԽԱՅՏ -** Երրորդ՝ ժողովուրդն *չարախայտ* եղև յեգիպտոս. մինչև արկաւ ի ծոց խնամոցն աստուծոյ և ողջացաւ: - 332

**ՉԱՐԱԽԱՌՆ -** Կամ ի խառնուածոյ տարերացն՝ *չարախառն* և բարեխառն գոլ: - 251

**ՉԱՐԱԽԻՆԴ -** Եւ որոց ձայն յոնգունսն հնչէ, ստաբանք են և *չարախնդացք:* - 247. Իսկ որ իջանէ ի բարձնն, չարակա՛մ է և *չարախնդաց:* - 247

**ՉԱՐԱԽՈՐՀՈՒՐԴ +** Վիզն երկայն և բարակ՝ *չարախորհուրդ* է: - 247

**ՉԱՐԱԽՕՍԵՄ +** Եւ այս վասն այնորիկ՝ զի *չարախօսէ՛ր* զմարդիկ եթէ ինքնայօժար կամօք և բնութեամբ մեղան և ո՛չ ի պատրանաց իմոց. որպէս *չարախօսէր* զյոբայ եթէ՝ «միթէ ձրի՞ պաշտէ յոբ զտէր»: - 153. Եօթներորդ՝ յոբ ի բարեկամացն նախատեալ. և տէր մեր յազգէ իւրմէ չարչարեալ և *չարախօսեալ:* - 327. Եօթներորդ՝ աստ *չարախօսէ՛* ի ծածուկ. և յետ մահու յայտնի. և յարութեանն ևս յայտնի առաջի դատաւորին և դատախազաց: - 394. Հինգերորդ՝ ածաւ առ հերովդէս. և ի հրէից յոյժ *չարախօսեալ*. և սպիտակ հանդերձ զգեցեալ առ ի նախատինս: - 492

**ՉԱՐԱԿԱՄ +** Իսկ որ իջանէ ի բարձսն, *չարակա՛մ* է և չարախնդաց: - 247. Եղունկն յոյժ կարճ՝ նշանակէ *զչարակամն:* - 247. Իսկ մեղաւորքն ոչ. զի *չարակամք* են և նախանձուք: - 685

**ՉԱՐԱԿԱՐԾԻՔ** - Եղիցի անդ երևակայութիւնն *չարակարծիք:* - 751-752

**ՉԱՐԱՆԱՄ +** Ութերորդ՝ եթէ չարն է յաստուծոյ, ո՛չ պատժէ զաստանայ որ *չարացաւ*. և ո՛չ զչարս ի մարդկանէ, այլ ահա՛ պատժէ՛. չար ուրեմն ո՛չ է յաստուծոյ: - 14. Բայց ա՛յս է անկարութիւն աստուծոյ. *չարանալ* և ոչ էանալ: - 44. Զի միշտ է է, ո՛չ ոչ էանայ. և միշտ բարի և լոյս է, ո՛չ *չարանայ* և խաւարի: - 44. Առաջին միտք՝ զի ասաց թէ «հայր գործէ՛ և ես գործեմ». և վասն այնր *զչարացան* հրէայքն, այժմ իբր թէ զնուաստագոյնս ճառէ ի զիջումն բորբոքման նոցա: - 45. Զի ինքնագիտ չարութեամբ նախ ինքն *չարացաւ* որ ասի գտակ. և ապա զայլս չարացոյց որ ասի մայր. որպէս սկիզբն և սերմանօղ չարեաց ի յայլս: - 148. Եւ սոյնպէս մարդն առաւելու ի չարն. ի բանականէն և ի կամացն և ի թունիցն սատանայի *չարացեալ* որպէս ցուցաւ ի սկիզբն գրոցս: - 237-238. Այլ և ի բաժանիլ չար հոգւոյն ի *չարացեալ* մարմնոյն...: - 669

**ՉԱՐԱՉԱՐ +** Նոյնպէս և ի տնօրէնութիւնն քրիստոսի նեստոր *չարաչա՛ր* բաժանէ զանձինս և զբնութիւնս, զկամս և զգործս: - 81. Երկրորդ՝ զի զօրութիւնն որ քեզ տուաւ յաստուծոյ՝ *չարաչար* արկեր ի կիր: - 287. Այսպէս հինգ եղանակաւ *չարաչար* ատեցին զհիւրսն. վասն այն կրկին կրեցին զհատուցումն վրիժուց **Ժ** հարուածովք: - 335. Եւ երեք դաս է տրտունջն. այսինքն Կարօտանաց. և Փործանաց. և *Չարաչար:* - 381. Փործանքն է՝ որպէս թէ զայս առնես՝ լսեմք. և թէ ոչ առնես՝ ո՛չ լսեմք. և *Չարաչարն*՝ հայհոյութեամբ տրտունջն է: - 381. Ապա վասն է՞ր յեմ ասեն զդժոխքն՝ թէ Է՛ այր դիւահոտ և ձայն աղաղակի և չարչարանք և այրեցումն *չարաչար* դիւաց լսելի լինի: - 504

**ՉԱՐԱՍԷՐ +** Վասն առաջնոյն, զի գիտէր զնոսա շարժեալ ի *չարասիրէն*. և յաղթելով զնոսա յաղթեաց զբանսարկուն սատանայ: - 324

**ՉԱՐԱՑՈՒՑԱՆԵՄ +** Իսկ որ զկամսն է *չարացուցեալ*, զճանապա՛րհն ունի թիւր. և որքան ընթանայ՝ մոլորի: - 33. Զի ինքնագիտ չարութեամբ նախ ինքն չարացաւ որ ասի գտակ. և ապա զայլս *չարացոյց* որ ասի մայր. որպէս սկիզբն և սերմանօղ չարեաց ի յայլս: - 148. Այլ և զնախնիքն մեր պատրեաց և *չարացոյց:* - 148

**ՉԱՐԱՓԱՌ +** Ո՛չ է ըստ *չարափառացն* ասել ուղղակի՝ թէ նախանձու կամ վասն փառաց որպէս ասեն, զի անգիտութեամբն պատուեսցի. ընդունա՛յն է կարծիքս այս. ասել զոր չէ՛ արժան անախտ և պարզ բնութեանն աստուծոյ: - 24. Թէ կամաւ, Ասեն *չարափառքն* կամա՛ցն է որդի՝ և թոռն աստուծոյ: - 36. Երկրորդ հարցումն *չարափառաց*, զէ՛ն ծնաւ, թէ զոչ էն: - 36. Այս ո՛չ որպէս *չարափառքն* ասեն՝ թէ որպէս նկարիչ իմաստուն ձևացնէ՛ պատկեր, և ապա ոչ ունեալն՝ զնոյն օրինակէ՛: - 45. Ապա ուրեմն ասեն *չարափառքն* թէ հայր միա՛յն է ճշմարիտ աստուած. և ո՛չ որդի և հոգի: - 47. Զբանս զայս *չարափառքն* այսպէս մեկնեն, թէ միութիւն բանին ընդ դէմ է միութեան Երրորդութեանն. զի անդ բնութիւնն մի՝ և **գ** անձինք. իսկ աստ **բ** բնութիւն և մի անձն: - 80. Եւ **բճք**ն որ յեփեսոս ժողովեցան ընդ դէմ նեստորի *չարափառի* և մարդադաւանի: - 547

**ՉԱՐԱՓԱՌՈՒԹԻՒՆ +** Եւ կամ թէ զո՛չ ոքն ասիցէք, ահա նո՛ր աղանդ *չարափառութեան* և խափանումն տընօրէնութեան մեծի խորհրդոյն: - 68

**ՉԱՐԻՔ +** Դարձեալ, թէ է հարկ, վասն է՞ր աղօթք և պատարագք և ողորմութիւնք և այլն՝ դարձուցանեն զմերձեալ *չարիսն*, և փոխեն ի բարիս: - 11. Եւ որպէս կիրք ցաւոցն մարդոյն են, զի ըզգա՛յ զկսկիծն. նոյնպէս և կիրք հեշտութեանն նորա՛ են, եթէ *չարեաց* և եթէ բարեաց, ապա ուրեմն մեր է ներգործութիւնն և ո՛չ հարկին: - 11. Դարձեալ թե ի հարկէ՛ է ոչ լինին օգուտ խրատք և սպառնալիք և ուսմունք. որովք բազումք յորդորին ի բարիս, և հեռանան ի *չարեաց* կենցաղոյս: - 11. Դարձեալ, թէ է՛ հարկ՝ ո՛չ են իրաւունք դատաստանի և քննութիւն. և ո՛չ օրէնք քաղաքական. և ո՛չ արժանապէս հատուցմունք բարեաց և *չարեաց*. զի հարկն բռնադատեաց գործել զայս. հարկին եղիցին պատիւք և պատիժք. և ո՛չ մարդոյն: - 12. Դարձեալ, թէ է՛ հարկ՝ անիրաւք են և ինքեանք աստեղքն. զի ոմանց բարիս գրեն, և ոմանց *չարիս*. զոմանս մեծատունս և զոմանս աղքատս. հեշտ կեանս և դժւարս. երկարակեացս և սակաւակեացս. բազում անգամ անարժանիցն բարիս խոստանան, և արժանեացն *չարիս:* - 12. Ասեմք առ այս, մոլորականքն ո՛չ եթէ զի ունին ներհակ շարժումն վասն այն կոչին մոլորականք, կամ պատճառք են *չարեաց*, այլ զի մեք մոլորիմք ի շարժումն նոցա. զի ունին հասարակ շարժումն, և ունին յատուկ շարժումն: - 12. Զորօրինակ՝ ի կենդանեաց բազումք նշանակեն զլինելոց

իրաց, և ո՛չ են նոքա պատճառք լինելոյ *չարեացն* կամ բարեաց: - 12. Ասելով թէ պատճառ ամենայնի՝ բարեաց և *չարեաց* մերոց ո՛չ մեք եմք, այլ է՛ առաջին պատճառն աստուած. որք փախչելով յառաջ ասացեալ բախտէ՛ և ճակատագրէ՛ աստեղացն, փոխանակ նոցա յառաջին պատճառն վերագրեն զիարկն. որպէս զի մի՛ ասիցեն երկու սկիզբն ըստ մանիքոսի: - 13. Այլ մեք դասք ուղղափառաց, հետևօղք ճշմարտասիրութեան, ընդդիմանամք այսմ ասելով թէ աստուած ո՛չ է պատճառ *չարեաց*. այլ միա՛յն բարեաց: - 13. Վեցերորդ՝ թէ չարն է յաստուծոյ, երևի թէ աստուած պատճառ է *չարեաց:* - 14. Այլ արդ՝ ամենայն պատճառ առաւել է քան զպատճառելին. եթէ բարեաց և եթէ *չարեաց*. ապա անհնարին հերձուած է ասել զչարն յաստուծոյ: - 14. Յնգետասաներորդ՝ թէ չարն է յաստուծոյ՝ և սկիզբն ամենայնի է աստուած, որև *չարեաց* ըստ նոցա, ապա ո՛չ է սկզբնաչար առաջին գտակն *չարեաց* սատանայ. որպէս նոքայն բարբանջեն: - 14. Եւ արդ՝ բաւական է այսչափ որպէս ցուցաւ, թէ աստուած ո՛չ է պատճառ *չարեաց*, այլ բարեաց միայն: - 15. Դարձեալ, թոյլ տալ և ներել *չարեաց*՝ վասն բարւոյ է: - 17. Նաև մարդկան *չարեաց* թոյլ տալ. զի կամ ընտրեսցեն զբարիս՝ կամ յետոյ զղջասցին. և այլ պէսպէս նախախնամութեամբ որպէս ինքն գիտէ աստուած՝ ներէ՛ *չարեաց*. որպէս տեսանելոց եմք յառաջիկայսդ: - 17. Նոյնպէս և նախագիտութիւնն ճանաչումն է *չարեաց:* - 18. Դարձեալ ասեմք թէ՝ ըստ ինքեան սոքա ոչ են չար. այլ բարի. որպէս տգէտն ի մեղաց. և բարկութիւնն ընդդէմ *չարեաց*. և ցանկացօղն բարեաց. զի ըստ բնութեան գործելով ոչ ոք մեղանչէ ասէ փիլիսոփայն: - 19. Նախ՝ զի ընդունայն լինէին խոստմունքն. բարեացն վարձս և *չարեացն* պատիժս: - 20. Երկրորդ՝ անիրաւ լինէին հատուցմունքն. բարեացն բարիս և *չարեացն չարիս:* - 20. Երրորդ՝ զի աստուած լինէր պատճառ *չարեաց* մերոց: - 20. Վասն է՞ր հրեշտակք մաքուր և ազատ են յամենայն *չարեաց:* - 139. Վասն որոյ ասի սատանայ՝ գտակ և հայր *չարեաց:* - 148. Զի ինքնագիտ չարութեամբ նախ ինքն չարացաւ որ ասի գտակ. և ապա զայլս չարացոյց որ ասի մայր. որպէս սկիզբն և սերմանօղ *չարեաց* ի յայլս: - 148. Նոյնպէս երևմամբ *չարեացն* արդարքն պայծառագոյն երևեսցին: - 149. Զի առնելն է հաճոյական գործ առանց կասկածանաց. որպէս բարի առնել բարեաց, որ է՛ արդարութեանն աստուծոյ. և չար առնել *չարեաց*, որև այս է՛ խրատ ուղղութեան. այլ բարի առնել *չարեաց*, այս ողորմութեան է և գրութեան. այսոքիկ առնելոյն են տեսակք: - 158. Եւ յորժամ զանազան շրջի, *չարիք* գոն ի սիրտն: - 246. Իսկ մարդոյս է *չարիքն* կրկին է: - 287. Երկրորդ այսպէս. գ մասանց աւելին և պակասն լինին **զ** *չարիք*. և մի գործ մարմնոյն որ լինի է նենգութեան խորհուրդ: - 287. Երրորդ՝ զի որ նոր *չարիս* գործեսցէ՝ առաւել պատժեսցի: - 288. Նոքա յերկար ապրէին՝ զի յաճախեսցին բարիք և ծնունդք նոցա. և մեք պակաս, զի կարճեսցին *չարիք* և բազմութիւնք մարդկան: - 291. Եւ երբեմն կարճէ՛ ի կենաց որպէս առ նոյիւ. զի **ճի** ամ խոստացաւ նոցա, և զի ամն կարճեաց վասն *չարեաց* նոցա: - 292. Չորրորդ՝ նոր *չարիս* գործեցին, խիստ և առաւել պատուհասեցան. որպէս և կայեն. զի նշան լիցին աշխարհի ահի՛ և երկիւղի: - 303. Իսկ աստուած փոխէ՛ և զկամս ազդելով ի նոսա զբարին. և դարձուցանէ՛ ի չարէ՛. և երբեմն թոյլ տալով անձնիշխան կամացն դառնալ ի *չարիս:* - 336. Զի՞նչ է եօթնպատիկ պատիժ *չարեաց*...: - 376. Նա՛խ՝ զի մի՛ խօսեսցի դևն և *չարիս* ուսուսցէ: - 387. Ութերորդ՝ ի խորխորատէ՛ *չարեաց* ելցեն օրինօք. զի գեբաղն՝ հին ձոր թարգմանի: - 402. Երրորդ՝ ի *չարեաց* հեռանալ պարտ է, և ապա ի բարին մերձիլ: - 403. Նոյնպէս որ պատրաստեաց սիրելեաց զփառս, և զտանջանս *չարեաց*, անգիտելի՛ է այժմու կենացս: - 406. Մետասաներորդ, կարճեաց զիշխանութիւն նոցա. զի նոքա կարճեսցին ի *չարեացն* և թեթևասցին տանջանքն: - 417. Եւ եկեղեցի եթող զպաշտօնս իւր և *զչարիս*՝ և սիրեաց զքրիստոս: - 417. Քանևէ, սաւուղ փոխանակ պատուելոյ խորհէր դաւթի *չարիս*...: - 436. Երկրորդ՝ զի իջցէ ի գերեզման և մի՛ տեսցէ *զչարիքն* որ ի ձեռն նաբուգոդոնոսորայ գալո՛ց էր ի վերայ երուսաղէմի. որպէս յայտ է ի պատմութիւնն: - 446. Երկրորդ՝ զի ողորմութիւն է բացարձակ և պարզապես բարի. իսկ արդարութիւնն է խառնել բարի. ըստ որում հատուցանէ բարեացն բարիս, և *չարեացն* տանջանս: - 458. Այլ իւրաքանչիւրոցն հատուցանէ ըստ արժանեաց. այսինքն բարեացն բարիս, և չարացն *չարիս:* - 459. Չորրորդ՝ զի անկասկած լիցի ամենևին և անկարծ ի *չարեաց* զատուցեալ սուրբ կոյսն. ի ձեռն հրեշտակին աւետարանել զյղութիւնն. և ո՛չ ի ձեռն մարդոյ: - 463. Ապա անհաւատութիւն և յուսահատութիւն և ատելութիւն է՛ ի միտս. և սոքա մեծ են քան զամենայն *չարիս* որպէս ուսուցանեն գիրք սուրբք: - 557. Դարձեալ ևս յայտնի. որ խորհրդովն է պղծեալ՝ ո՛չ կարծէ զինքն մեղանչական գոլ. այլ ի գործ մարմնոյն իմանայ *զչարիս* իւր զղջա՛յ և ապաշխարէ: - 558. Զի հոգի է աստուած. և յիմացական միտս և ի հոգիս բնակէ. և չէ՛ օգուտ մարմնոյն սրբութիւն յորժամ միտքն զբաղեալ է ի

*չարիս*. զի հեռանայ ի սիրոյն աստուծոյ և ի բնակութեանց նորա...: - 558. Յառաջ շարժումն է բարկութիւն. զի վասն *չարեաց* ասէ բարեկամ: - 560. Որպէս բարկութիւնն բարի է ի դէմս *չարեացն*. փոխեմք զայն ընդ դէմ բարւոյն: - 564. Եւ զցանկութիւնն զոր ունիմք առ բարին, փոխեմք և ցանկամք *չարեաց:* - 564. Այս է արմատ ամենայն *չարեաց* ասէ առաքեալն: - 570. Դարձեալ ապաշխարութիւն է վասն անցեալ *չարեացն* լալ. և լալովն վերստին այլ ո՛չ առնել: - 601. Եւ անցեալ ընդ խորս *չարեաց*՝ օրհնեն զտէր և փառաւորեն: - 629. Իսկ թէ քահանայ ոք հանդիպի ի նոյն *չարիս*, մի՛ պաշտեսցէ զքահանայութիւնն...: - 652. Չորրորդ, տայ մեծութիւն և նոցա. որք բազում *չարիս*՝ և մի մասն բարեաց ունին...: - 664. Նախ աստ հոգի մարդոյն է ի մէջ *չարեաց* և բարեաց. իսկ յետ մահու ի մէջ բարեաց միայն. և ի յարութեանն ի մէջ բարեաց և փառաց: - 667. ...զի սոքա բարեաց և *չարեաց* են հատուցմունք: - 675. Ո՛չ. զի ըստ այնմ որ զերծան ի *չարեաց*, միայն ի հոգիս իւրեանց ունին զուրախութիւնն: - 686. Երեսուներորդ, յա՛յտ է յորպիսութեանցն չորից որ ասացաւ յառաջագոյն եթէ աստ հոգի մարդոյն է ի մէջ բարեաց և *չարեաց*. իսկ յետ մահու ի մէջ բարեաց միայն. իսկ ի յարութեանն ի մէջ բարեաց և փառաց: - 694. Նմանապէս և մեղաւորքն անդ ի յարութեանն ի մէջ *չարեաց* և տանջանաց: - 694. ...զի որք զպատիժ այսմ կենացս ակն ունին առնուլ՝ երկնչին ի *չարեաց* կամ սակաւ առնեն. - 698. Ասեմք եթէ՝ պատիժ *չարեաց* պտուղ է մեղաց: - 701. Զի այս կեանքս է գործոց, և այն հատուցմանց բարեաց և *չարեաց:* - 704. Ա՛յն է որ սատանայ խաբէութեամբ և բռնութեամբ զօրացեալ էր և իշխան եղեալ ի վերայ մարդկան. ի կեանս զանազան *չարեօք* և կռոց պաշտմամբ...: - 705. ...և ելոյծ առաւելուլ *չարեօք* զի արդարապէս կրեսցէ զանվախճան տանջանս: - 706. զի ի նմա՛ բնակէ գլուխն ամենայն *չարեաց:* - 707. ...այլ յորժամ խստանայ ի *չարիս* մինչ զի զպաշտօնն աստուծոյ յինքն ծգեսցէ ...: - 707. այլ պա՛րտ է զի յարիցէ և մարմինն և ի միասին առցեն զհատուցումն բարեաց կամ *չարեաց:* - 715. Եւ զորպիսութիւն բարեաց և *չարեաց*. և զերկայնութիւն ժամանակին որով թիւ մարդկան զլրումն առցէ: - 716. Իններորդ, հոգին և մարմինն են մի անձն մարդոյ. վասն որոյ փոխակրեն ի միմեանց զբարիս և *զչարիս:* - 724. Եւ որպէս աստ հոգին ի մարմնոյն կրեաց. նոյնպէս և անդ մարմինն ի հոգւոյն կրեսցէ եթէ զբարիս և եթէ *զչարիս:* - 724. Իսկ վճիռն որ ընդ դէմ *չարեացն*, ունի մասնունս **զ**: - 740. Մին յաւիտենից առ աստուած. ըստ որում «ի գիրս քո ամենեքեան գրեցան». և գիրս այս անջնջելի՛ է ի տեսութիւնն աստուծոյ. թէ *չարեաց* և թէ բարեաց. - 741. Սոքա՛ են **բ** գիր *չարեաց* և բարեաց. մահու և կենաց: - 741. Նմանապէս և *չարեացն* վկայ՝ ոսոխն մեր սատանայ և գործակիցքն. և խիղճ մտացս որով տանջիմք միշտ: - 743. Ապա ուրեմն յիրաւի և արդարապէս հատուցանէ աստուած չար փոխանակ *չարեաց*. այսինքն պատիժ վասն անիրաւութեան նոցա. զի արդար է աստուած: - 744. Առասանքն երեքկի՝ յերրորդութեանն դիմաց արդարութեան և ողորմութեան զօրութիւնք առ մեզ խոնարհեալ. ունելով զյիշատակ բարեացն և *չարեացն* մերոց: - 745. Իսկ միտելն՝ զչափ թաքաղուն զեղուն երկոցունց կողմանց. այսինքն բարեաց և *չարեաց:* - 745. Որպէս գլուխ մարդոյ՝ զբարիս կամ *զչարիս* հատուցեալս անդաման իւրոց՝ ինքեան համարի: - 763. Այսպէս սատանայ է մեղադրելի իբր պատճառ և գտակ *չարեաց* մարդկայինս բնութեան և ո՛չ ադամ: - 777. Իսկ իւրաքանչիւրոց հատուցումն՝ այսինքն բարեացն բարիս և չարացն *չարիս*, է՛ այս գործ արդարութեան. և այսորիկ առ մե՛զ փոփոխմունք. և ո՛չ անդ բնութեանն: - 779

**ՉԱՐՈՒԹԻՒՆ +** Այսպէս և զարդարս և զմեղաւորս. զչարս և զբարիս. զոմանս կամելով առնէ բարիս, և զոմանս թոյլ տալով առնէ չար. ապա ուրեմն ո՛չ են ի կամացն աստուծոյ *չարութիւնք* և ո՛չ մեղքն: - 19. Չարն ո՞րպէս է ոչ է. զի ահա՛ ներհականա՛յ բարւոյն. որպէս առաքինութիւն և *չարութիւն:* - 22. Այժմ պատասխանեսցուք հարցմանն եթէ առաքինութեանն *չարութիւն*, և արդարութեանն անիրաւութիւն ներհական. որպէս խաւարն լուսոյ. և էութիւն է լոյսն. և ո՛չ էութիւն խաւարն. և օդն ընդունակ լուսոյ և խաւարի: - 23. Այսպէս հոգին էութիւն է և ընդունակ բարւոյ և չարի. այսինքն առաքինութեան և *չարութեան:* - 23. Երկոտասաներորդ՝ այլ և ուրա՛խ լինին ընդ խոտորումն *չարութեան*. որպէս ասէ առակն: - 33. Եւ այս ոչ էութիւն և *չարութիւն* առ մեզ կարէ՛ երևիլ, զի մասա՛մբ ունիմք զկարողութիւն և ո՛չ կատարեալ: - 44. Զոր զայսպիսի *չարութեան* խնդիրս տարագրէ՛ եկեղեցի ուղղափառաց: - 76. Է՞ որ ի ներքուստ, որ *չարութիւն* և ախտ կոչի. և է՛ որ արտաքուստ, որ կիրք և արատ կոչի: - 139. Զի ինքնագիւտ *չարութեամբ* նախ ինքն չարացաւ որ ասի գտակ. և ապա զայլս չարացոյց որ ասի մայր. որպէս սկիզբն և սերմանօղ չարեաց ի յայլս: - 148. «Ի բարձունս հիւսիսոյ». այսինքն ի վերայ ցուրտ և սառնասառոյց *չարութեան* իւրոյ: - 148. Եւ որպէս երգովն դաւիթի դադարէ՛ր այսն *չարութեան* ի

սաւուղայ, նոյնպէս և այժմ: - 150. Դարձեալ ասեմք, թէ կոյսն և պոռնիկն՝ առաքինութեան և *չարութեան* են տեսակք, և ներհա՛կք են առաքինութիւն և *չարութիւն*. զի փոփոխեն զմիմեանս. ըստ այնմ և թողութեան հանդիպին: - 165. Խաժակն և փայլուն, համարձա՛կ է ի *չարութիւնն:* - 246. Վասն այն արդարադատն աստուած է պատիժս եդ. ի վերայ կայենի. վասն զի է *չարութեամբ* յանցեաւ: - 287. 303. Չորրորդ՝ ի ձեռն յովսեփայ ժողովուրդն էջ ի յեգիպտոս և եղև *չարութիւն:* - 332. Նախ նշանակէ զբազմապատիկ *չարութիւն* նոցա: - 334. Նա՛խ՝ զի խմորն զիին *չարութիւնն* ցուցանէ. որ նախ հրաժարիլ պարտէ, և ապա՛ զբարիս գործել: - 356. Նա՛խ՝ որ ստոյգ *չարութեամբ* լինի մեղքն. այսինքն կամաւ և գիտութեամբ և կարողութեամբ, անթողելի՛ է: - 385. Երկրորդ՝ յանապատն ամաղէկ և այլքն. յետ մահու որ ընդ հոգիս պատերազմին. որք են այսք *չարութեան* ի ներքոյ յերկնից ըստ առաքելոյ: - 393-394. Չորրորդ՝ *չարութեամբ* աստ մեղօք տանջեն. և յետ մահու առհաւատչեայ մասնաւոր. և ի յարութեանն յաւիտենական տանջանօք: - 394. Ութերորդ ի կատարածի. այն որ ո՛չ ի փրկութիւն, այլ ամենայն *չարութեան* ջնջումն առնելով տանջանօք որ է հուրն անշիջանելի: - 488. Եւ յորում ժամու ել մովսէս յեգիպտոսէ և եհան զժողովուրդն, ի նոյն ժամն յարեաւ քրիստոս ի մեռելոց և եհան ազատեաց զհոգիսն ի հրահալոց *չարութենէ* դժոխոցն և ի բռնութեանց իմանալի փարաւոնին: - 512. Եւ սուրբ հոգին *զչարութիւնն* վարէ՛ և սրբեալ բարեգործէ՛ զհոգին: - 523. Ջսառուցեալսն ի հաւատս բորբոքեն. և զվառեալսն *չարութեամբ*՝ շիջուցանեն. որպէս զելիմաս և զսիմոն: - 523. Ապա ուրեմն և հայհոյելն մտօք և մախալն և նենգելն կատարեալ *չարութիւն* է և մեղք...: - 557. Այլ յատկապէս ըստ երից դիմացն, որ տկարութեամբ մեղանչէ՝ է՛ ընդ դէմ հօր. և տգիտութեամբն ընդ դէմ որդւոյ. և *չարութեամբն* ընդ դէմ հոգւոյն սրբոյ...: - 566. ...այսինքն *չարութեամբն* յորժամ կամքն կարէ՛ և գիտէ ընդ դէմ կալ չարի իմն, սակայն վասն *չարութեան* ընտրէ զայն: - 566. Յաղորդութիւնն ընդ դէմ *չարութեան:* - 588. ...զի օծանեմք զնոսա որպէս զըմբիշս. զի ի հանդէս մտցէ ընդ այսս *չարութեան* օդոյդ: - 605. Նոյն սարասիւք այժմ ի ձեռն փրկչին մերոյ յիսուսի՝ տապանակաւ խաչին և աղօթիւք սուրբ եկեղեցւոյս՝ բարձրացեալ պարիսպն *չարութեան* եօթնից զգայութեանց մեղաց որոշօղ ի մէջ մեր և աստուծոյ, կործանեսցի ի սպառ: - 627. Իսկ պահքն *զչարութիւնն*. զի նուազի և կարօտի հոգին յամենայն բարեաց. որպէս ի պահոց մարմինն: - 657. Չորրորդ ըստ բանական հոգւոյն յառաքինութիւն և ի *չարութիւն:* - 663. Ա՛րդ՝ իմանալի մահ է՝ ի ձեռն առաքինութեան զմարմինն մեռուցանել և ի ձեռն *չարութեան* զհոգին: - 668. Եւ յորժամ *չարութեամբ* հոգին նուազի, մարմինն զօրանայ և լինի մարդն շնչաւոր և անբան...: - 668. ...զի *չարութեամբ* կեցեալ ոգին՝ *չարութեամբ* և մեռանի: - 669. Նա՛խ՝ զի մի՛ շարժեսցէ զնա այսն *չարութեան* որպէս զմարմին անհաւատից: - 679. Արդ եգիպտոս նշանակէ՛ զաշխարհս որ է՛ հալոց *չարութեան* և տեղի ծառայութեան մեղաց և սատանայի որ է՛ փարաւօն: - 682. Ջի գործք *չարութեան* այժմ դատէ՛ խղճիւ զմիտս. և յետ մահու զհոգիս. և յետ յարութեանն զհոգի և զմարմին որպէս ասացաւ: - 690. Ասեմք եթէ՝ մտանելն առ աստուած այն է՝ որ հեռանայ ի *չարութեանց* և լինի ի բարութեան և ո՛չ փոփոխի ի չար, աստուծոյ պահելովն...: - 695. Ասեմք նախ՝ եթէ գ են մեղք. այսինքն անգիտութեամբն և գիտութեամբն և *չարութեամբ:* - 701. Եւ արդ՝ անգիտութեամբն ներելի՛ է. իսկ գիտութեամբն ապաշխարելի. իսկ *չարութեամբ* մեղքն է պատժելի. կամ աստ ժամանակեայ, կամ անդ յաւիտենական: - 701. Եւ որպէս մեք յարաժամ միտեմք ի գործ բարութեան կամ *չարութեան*. և գործ նորա միտէ՛ յողորմութեան կամ արդարութեան հատուցումն...: - 745. Վասն երկրորդին, որք ցրտիւ *չարութեան* աստ կարծրացան, արդարապէս անդ տանջողական ցրտիւ կրճտեն զատամունս իւրեանց: - 752

**ՉԱՐՉԱՐԱԿԻՑ +** Եւ պա՛րտ է մեզ հանապազ զքրիստոս առաջի աչաց տեսանել ի խաչ վասն մեր և հաւատալ. և *չարչարակից* լինիլ նմա յամենայն ժամ: - 405. Երկրորդ՝ զի *չարչարակից* եղև մովսէսի. պահելով զերեք քառասունս ընդ նմա: - 414. Որպէս այնոքիկ որք զօրացան այսու մահուամբ և զորդեգրութեանն ընկալան շնորհ և նահատակեցան, նոքա *չարչարակից* եղեն քրիստոսի, և փառացն հաղորդակիցք: - 497. Նոյնպէս և սուրբքն՝ քրիստոսի *չարչարակիցք* եղեն. և զպակասութիւն չարչարանացն քրիստոսի ի մարմինս իւրեանց կրեցին...: - 648. ...և *չարչարակից* եղեն նմա. - 648. Ջի առ հասարակ ամենայն տարերք ըստ իւրեանց կերպի կրեցին զայլայլութիւն սըգոյ, *չարչարակիցք* գոլով արարչին իւրեանց: - 788

**ՉԱՐՉԱՐԱԿՑԻՄ +** Դարձեալ՝ մարմին քրիստոսի խորհրդապէս է՛ եկեղեցի. և պա՛րտին *չարչարակցիլ* նորին՝ հետևելով նմին: - 781

**ՉԱՐՉԱՐԱՆՔ +** Իսկ «աստուած աստուած իմ ընդէ՞ր թողեր զիս», ո՛չ թէ յինքենէ՛ թողաւ և կամ ի

հօրէ. որպէս թէ երկեաւ ի *չարչարանացն*. վասն զի կամաւ եկն և ո՛չ հարկիւ: - 42. Իսկ վասն *չարչարանաց* հնազանդութեանն քրիստոսի բազում պատճառս դնէ յայսմ վայրի աստուածաբանն գրիգորիոս: - 42. Առաջին պատճառն, զի յինչիրս և մերձենայր *չարչարանօրն* ծախէ՛ր *զչարչարանրն* իմ: - 42. Զի *չարչարանրն* այսպէս ստուգաբանի, նախագործեցեալ չարին չար հատուցմունք: - 42. Երկրորդ՝ զի գործով կատարեսցէ զհնազանդութիւնն փործիւ *չարչարանացն:* - 43. Երրորդ՝ ի խրատ մեզ. զի որպէս *չարչարանօրն* ազատութիւն արար մարդկային բնութեանս, այսպէս ամէն ոք *չարչարանօր* իւրովք ազատեսցի ի պատժոց ներգոծական մեղացն: - 43. Չորրորդ՝ զի *չարչարանօրն* իւրովք փործեսցէ՛ զհնազանդութիւնս մեր. այսինքն զկսկիծ և զծանրութիւն *չարչարանաց* մերոց. որպէս թէ ունիցի գիտել իւրովք զմերս և ողորմիլ մեզ: - 43. Հինգերորդ՝ զի չա՛փ եդ զորքանութիւն *չարչարանացն* իւրոց հետևողացն...: - 43. Եօթներորդ՝ զի *չարչարանօրն* իւրովք յուսադրեաց զմեզ, զի մի՛ յետ տկարութեանս և սակաւ *չարչարանաց* ի փործողէն՝ կասեսցուք ի նախատակութեանց. այլ օրինակ դիցուք զչարչարիլն նորա մեզ և համբերեսցուք որպէս աււէ: - 43. Ութերորդ՝ զի որ զփործ էառ *չարչարանացն*՝ օգնեսցէ որք ի *չարչարանս* իցեն: - 43. Այսքան պատճառս եցոյց *չարչարանրն* փրկչին յայսմ տեղւոջ: - 43. Չորեքտասաներորդ՝ զի թէ մահւամբ *չարչարանօր* նորա փրկեցաք մեք ամենեքեան՝ և այն է սոսկ մարդոյ փրկութիւն մեր: - 67. Եւ ասես՝ վասն *չարչարանացն* խոնարհութեան՝ առաւել զնա բարձրացոյց աստուած: - 94. Գիտելի է, զի *չարչարանք* մտացն է սուտն՝ և տարակոյսն՝ և աննմանն: - 104. Տասներորդ՝ զանկեղծ սէրն նշանակէ զոր ունին առ քրիստոս, փոխանակ *չարչարանաց* նորա *չարչարանս* կրել. և ի սիրոյ նորա ոչ մեկնիլ...: - 159. Իններորդ՝ կենսատու *չարչարանաց* ժամանակ. թաղման և յարութեան. նաև համբարձմանն: - 196. Երկրորդ՝ զի անհանգիստ և ի *չարչարանս* լինէր հանապազ. ընդ ինքեան ունելով զնոսա: - 217. Իսկ դիւականն ընդդէմ այսմ՝ վասն մոլորութեան զանազան երևմունս ցուցանէ աղտեղութեան. և կամ զբարին խափանել ջանայ. որպէս ի *չարչարանս* տեառն վասն կնոջն պիղատոսի ընթերցեալ լինի. և որպէս գրէ սուրբն նագրիոս: - 268. Եւ այլն ամենայն բանք և գործք յոբայ ի տիպ օրինակի էր նորն ադամայ *չարչարանաց* թաղման և յարութեան որպէս յա՛յտ է ի գիրս պատմութեան նորա: - 327. Այլ և նաշիհ. զի հաց կենդանարար և հատ ցորենոյ կոչեցեալ. ճնշեալ *չարչարանօր* և որոշեալ ի թեփոյ մեղաց: - 361. Հինգերորդ՝ կրկին ողջակէզն. մին պատարագն է ամենայն աւուր. և միւսն տօն *չարչարաց* խաչի և մահու յամենայն ամի՛ զոր նոյն խորհրդով կատարէ՛ եկեղեցի: - 363. Փայտն *չարչարանրն* ի մեզ: - 368. Այլ և նշանակէ՛ զօր մեծի ուրբաթուն *չարչարանացն* քրիստոսի. որով քաւեցաք ի մեղաց: - 373. Զոր պահեմք և մեծ *չարչարանօր* ճնշեմք զանձինս: - 373. Այլ հոգեպէս՝ նաշիհն է՛ մարմնական նուէրքն. և կամ *չարչարանք* մարմնոյ որ ի տօնս ճգնիմք...: - 375. Նա՛խ՝ զի զա՛յլ հարուածոց փոխն կրեցին *զչարչարանրն* յեգիպտոս. իսկ անդրանկացն մնաց: - 380. Ութերորդ՝ նա՛ ուսովք էր բարձր քան զամենայն մարդ. և տէր մեր ո՛չ միայն աստուածութեամբն որ գլուխ է, այլ և *չարչարանօր* իւր՝ գերագոյն և բարձրագոյն ցուցաւ. զի փրկեաց զամենայն: - 427. Դարձեալ խաչն երկրպագելի, և խաչ *չարչարանաց* մարդկան: - 441. Քսանևզ, Վասն խաչին և *չարչարանացն:* - 454. Որ և *զչարչարանրն* և զմահն՝ աստուծոյ մարդացելոյ խոստովանիմք որով փրկեցաքն: - 478. Բայց անյա՛յտ էր գրեալն. մինչ խաչիւ և *չարչարանօր* զգիրն պատրանաց նախաստեղծիցն պատառեաց, և ապա՛ զայս գիր ետ յայտնապէս: - 481. Չորրորդ՝ զի կամաւ հնազանդեցաւ խաչի և *չարչարանաց*. վասն այն ի գլուխն է նկարեալ: - 481. Չորրորդ՝ թլփատեցին զնա հրէայքն՝ ի *չարչարանս*՝ սրով խաչին. և զայս զհնուորքն պիղատոսի: - 486. Ծանի՛ր, զի վասն *չարչարանաց* ասացեալ է ի վերոյ ի **ժա** պրակն աստուածաբանին գրիգորի ընդ դէմ արիոսի: - 489. Իսկ այժմ վասն խաչին նախ գիտելի է, զի *չարչարանրն* քրիստոսի ընդ դէմ է և բարձօղ է մոլորութեանց մեղաց: - 489. Ջծուլութիւնն՝ փութալովն ի *չարչարանս:* - 489. Դարձեալ՝ ի *չարչարանրն* քրիստոսի ծանիր **ը** քաղցրութիւնս: - 489. Ի քանի՞ տեղ յոյժ անարգեցաւ քրիստոս ի ժամ *չարչարանացն:* - 492. Դարձեալ՝ եթէ առհասարակ սոքա՝ կերակուր՝ արիւն և խոցուածք և մահ՝ ապականութիւնք են որպէս դու ասես, և փրկութիւն աշխարհի սոքօք ներգործեցաւ. այսինքն *չարչարանօր*՝ մահուամբ և խոցւածովքն: - 503. Եւ *չարչարանրն* քրիստոսի երկու իրս ներգործեաց. նախ զպարտիս մեղաց վճարեաց. երկրորդ զդրունս երկնից եբաց: - 503. Ապա վասն է՞ր յէմ ասեն զժոխքն՝ թէ Է՛ այր դիւահոտ և ձայն աղաղակի և *չարչարանք* և այրեցումն չարաչար դիւաց լսելի լինի: - 504. Հինգերորդ որ ուղիղն է. զի **բ** է օր. բնական և արուեստական. և ասացեալքդ ամենայն յարուեստական օրս նկատեն և ի *չարչարանս:* - 516. Իսկ ասելն «չև՛ ևս ելեալ եմ առ հայր իմ», ցուցանէ

թէ որպէս նախ *զչարչարանսն* և զյարութիւնն ասաց վասն *չարչարանաց* և յարութեանն: - 518. Մինչև ցամպս այնու կերպիւ որ նախ քան *զչարչարանս:* - 520. Վեցերորդ, զի եկեղեցի որ է մարմինն քրիստոսի՝ յետ *չարչարանաց* նեռինն որ հանդերձեալ է կրել, զկնի **խ** աւուր յերկինս համբառնալոց հաւատացեալ լինի: - 521. Նա՛խ՝ զի *չարչարանքն* քրիստոսի պատճառ եղև պարգևաց սուրբ հոգւոյն, պարտ էր նախկին գոլ. որպէս ամենայն պատճառ նա՛խ է քան զպատճառելին: - 521. Երկրորդ՝ զի թէ քրիստոս այնպէս փառաւորեալ էր որպէս յետ խաչին, արգել և խափան լինէր ամենայն *չարչարանացն* և փրկութեան մարդկան: - 521. Չորրորդ վասն *չարչարանաց* փրկչին: - 572. Զօրութիւն է ունել ինչ որով տանի *չարչարանացն:* - 582. Եւ ի նոյն ճառն ուր թուէ **ը** քաղցրութիւնս *չարչարանցն* քրիստոսի, զչորրորդն ասէ՝ ելումն արեան և ջրոյն ի լուացումն մեր: - 594-595. Եւ ի մեզ խաչ *չարչարանացն* քրիստոսի և մահ: - 614. Վեցերորդն *չարչարանաց* պատիժ չարչարեցելոց. և ապաշխարողաց թողութիւն. յասելն «ընկեցեր յետս զամենայն թշնամիսն իմ»: - 630. Եւ զայն ընդ առաւօտն յորում մատնեցաւ ի *չարչարանս:* - 632. ...նոյնպէս և ի շաբաթի օրս հանգեաւ ի *չարչարանաց* ուրբաթուն և եդաւ ի գերեզմանի: - 647-648. Նոյնպէս և սուրբքն՝ քրիստոսի չարչարակիցք եղեն. և զպակասութիւն *չարչարանացն* քրիստոսի ի մարմինս իւրեանց կրեցին...: - 648. Վեցերորդ՝ յետ ուրբաթուն *չարչարանաց*՝ ի շաբաթի օր տօնեմք...: - 648. Չորրորդ *չարչարանացն* ի մեծի աւագ շաբաթին: - 649. Եւ աւագ շաբաթ *չարչարանացն* քրիստոսի՝ է՛ ընդ քառասունս կարգեալ...: - 651. Իսկ տեառն մերոյ քառասնիցն սկիզբն է երկրորդ շաբաթն, և կատարումն *չարչարանք* մեծի ուրբաթուն: - 651. ...որ ամենայնիւ ընդ դէմն փոխի ուտելն և ըմպելն ի ծոմ և ի ծարաւ. ծաղրն ի սուգ. հեշտութիւնն ի տքնութիւն. և ի *չարչարանս* և այլն: - 657. Դարձեալ աղօթքն՝ *չարչարանքն* և բարի գործքն է նոցա, զոր վասն քրիստոսի կրեցին...: - 685. ...զի որպէս *չարչարանացն* հաղորդեցաւ, նոյնպէս և վայելչականացն նմա: - 691. Զի թէպէտ անդ ո՛չ է փառք, այլ և ո՛չ տանջանք և *չարչարանք* գոյ. վասն այսորիկ առ աստուած ասէ որք են ի պահեստ հոգւոցն: - 695. ...քանզի մեծամեծ և խստագոյն *չարչարանս* տացէ պաշտօնէիցն աստուծոյ: - 708. Եւ գերազանց գործ ցասմանն է համբերել *չարչարանաց*. և զայս ունին մարտիրոսքն: - 712. ...և էր մարտիրոս ըստ որում *չարչարանաց* համբերեաց...: - 712. Հինգերորդ՝ զմեռելութիւն մարմնոյ և զկրթութիւն *չարչարանաց* նոցա ցուցանէ: - 713. Եւ երևի որպէս բլուր մեծամարմինք նոցա յաչս իւրեանց. սև և աղտեղի և չարչարելի. զի կրեն անչափ *չարչարանս* և ցանկան մահու և ո՛չ մեռանին...: - 723. Եւ որք մկրտեալ մեռանին, առնուն վարձ ի խորհրդոյ եկեղեցւոյ և ի *չարչարանացն* քրիստոսի յոր մկրտեցան: - 724. Եւ ո՛չ միայն խաչն, այլ և ամենայն գործիք *չարչարանացն*. այսինքն բևեռքն գեղարդն և այլք...: - 732. Դարձեալ յուշ առնէ մարդոյ *զչարչարանքն* քրիստոսի. և խնդրեսցի ի նոցանէ մահն քրիստոսի իբր զգին որ տըւեալ է նոցա, և նոքա յափշտակեցին զինքեանս ի նմանէ: - 732. Հինգերորդ, զի որդին ծնաւ ի կուսէն և յերկրի շրջեցաւ և քարոզեաց և *չարչարանօք* փրկեաց և պատճառ եղև ընդհանուր յարութեան բնութեանս մերոյ...: - 735. Երրորդ հնձան է իւրաքանչիւր սիրտ և անձինք արդարոց. որ հաստատեալ է հաւատով յորթն ճշմարիտ և պտղաբերէ՛ զողկոյզ բարեաց. և *չարչարանօք* ճնլէ՛ յինքեան զուրախարարն գինի հրեշտակաց և մարդկան. և այսոքիկ բարեա՛ցն են հնձան: - 749. Կամ թէ ոստք փայտիս այսորիկ ասին եօթանքս այսոքիկ. այսինքն՝ քրիստոսի ծնունդն, մկրտութիւնն, *չարչարանքն*, ի դժոխս իջումն, յարութիւն, յերկինս համբարձումն, և հոգւոյն սրբոյ պարգևումն: - 755. Զի թէ պակասութիւն *զչարչարանքն* ասէ, *չարչարանքն* այն ոչ ասի պակասութիւն քրիստոսի. զի «մարմին նորա ո՛չ ետես զապականութիւն» ասէ գիրն: - 781. Եւ այլևս յարմար տեղւոյս այսպէս իմանի. զի սուրբ հարքն առաջինք պակաս ունէին *զչարչարանս*. վասն որոյ ո՛չ կարէին փրկիլ. իսկ քրիստոս եղեալ ըստ մարմնոյ որդի նոցա, զպակասութիւն հարցն *չարչարանաց* յիւրումն մարմնի էլից: - 781. Վասն որոյ *չարչարանքն* քրիստոսի ասի պակասութիւն վասն հարցն. ասի և կատարեալ առ ինքեան: - 781. Դարձեալ ասեմ, թէ անունս այս՝ պակասութիւն, նոյն է որ լսի *չարչարանք*. զի յորժամ կրէ ոք *զչարչարանս* զայս ինչ կամ զայն, պակասի ի նմանէ այն ինչ կամ այն. այսինքն առողջութիւն, կեանք, և այլն: - 781. Իսկ մեծն ներսէս ասէ, պակասութիւնն այն է, որ կիրք *չարչարանացն* քրիստոսի թուով և տեսակաւ պակա՛ս էր յառաքեալն պօղոս. այսինքն խաչն, բևեռքն, և այլն. և զայն էլից քարոզութեամբն իւր ի մարմինս եկեղեցւոյ: - 781. **Զի որպէս քրիստոս *չարչարանօքն* փրկեաց զեկեղեցի և հարսնացոյց, նոյն և առաքեալն քարոզութեամբ իբր զկոյս մի սուրբ յանդիման արար փեսային քրիստոսի**: - 781

**ՉԱՐՉԱՐԵԼԻ +** *Չարչարելի* զմարդկութիւնն՝ և անչարչարելի զաստուածութիւնն: - 75. Ասեմք եթէ՝

յորժամ մի ասեմք բնութիւն բանին և մարմնոյն, այս լինի կամ արիոսին. որ զբանն արարած ասէ և զմարմինն արարած. և այսպէս մի բնութիւն է արարածոյն ասէ. և զբանն ընդ մարմնոյն *չարչարելի* և մահկանացու: - 81. Եւ կարելի՛ է ասել զմարմին կենարարին *չարչարելի* և մահկանացու, այլ ո՛չ կարելի ասել ապականացու: - 498. Երկոտասաներորդ՝ յա՛յտ է յերից իրաց թէ ապականացու ասելն՝ ակնարկէ՛ ի յապագայն իբր թէ ապականելի՛ է. որպէս ասեմք մահկանացու և *չարչարելի*. և ահա չարչարեցաւ և մեռաւ: - 499. Իսկ թէ մահկանացու և *չարչարելի*, ապա և ապականացու: - 500. Ապա ուրեմն կարելի՛ է ասել *չարչարելի* և մահկանացու վասն մեր. այլ անապական և անմեղ մարմին: - 500. Իսկ առաջին պակասութիւն է մարմնոյն աստ՝ զի է՛ մահկանացու՝ յապականացու՝ և *չարչարելի*. որպէս քաղցն՝ ծարաւն՝ հիւանդանալն և այլն. - 722. Եւ երևի որպէս բլուր մեծամարմինք նոցա յաչս իւրեանց. սև և աղտեղի և *չարչարելի*. զի կրեն անչափ չարչարանս և ցանկան մահու և ո՛չ մեռանին...: - 723

**ՉԱՐՉԱՐԵՄ +** Եօթներորդ՝ զի չարչարանօքն իւրովք յուսադրեաց զմեզ, զի մի՛ յետ տկարութեանս և սակաւ չարչարանաց ի փործողէն՝ կասեցուք ի նահատակութեանց. այլ օրինակ դիցուք *զչարչարիլն* նորա մեզ և համբերեսցուք որպէս ասէ: - 43. **Բայց է և այլ իմն տեսութիւն խորին և գեղեցիկ. զի նա՛ վասն սրբութեան *չարչարեցաւ*. և որ ոք ևս *չարչարեսցի* վասն սրբութեան՝ մի և նոյն է դիտաւորութիւն երկուցն. յայնժամ օգնեսցէ նմա. այսինքն միաւորեսցի ընդ նա՛ սրբութեամբն, և եղիցի աստուած ամենայն յամենայնի. այսինքն կատարեսցէ զնա աստուածս առնելովն. և եղիցին աստուածք ամենայնքն:** - 43. **Ապա ուրեմն *չարչարեալ* և մեռեալ մարդն է որդի աստուծոյ**: - 74. Անչարչարելի և *չարչարեալ:* - 75. Երկրորդ՝ զի մի՛ *չարչարեալ* լիցի աստուածային բնութիւնն ընդ մարդկութեանն: - 76. Որև գոն ի յեղեալքս միաւորեալք. որպէս հուր և երկաթ. հոգի և մարմին. որք *չարչարին* անչարչարապէս: - 76. Որև ընդ *չարչարիլն* քրիստոսի՝ *չարչարեցաւ* և մեռաւ բոլոր մարդկութիւնս ըստ նոցա: - 76. Նմանապէս ասի մարմնով *չարչարեալ*. և մարմնով մեռեալ. և յարուցեալ. և համբարձեալ: - 79. Այլ ո՛չ ասի մարդով *չարչարեալ*. և մարդով մեռեալ. կամ յարուցեալ. կամ համբարձեալ: - 79. Եթէ զաստուածային անձն և զնորին բնութիւնն ասէք մի քրիստոս, դեռևս կայք յառաջ ասացեալ տարակուսանսդ. զի զաստուածային անձն և զբնութիւնն ասէք *չարչարեալ* և մեռեալ. զի քրիստոս խաչեցաւ և մեռաւ ըստ գրոց: - 89. Իսկ առաւել բարձրութիւնն. զի որպէս անհամեմա՛տ է խոնարհութիւն՝ աստուծոյ մարդանալ և *չարչարիլ*. և անզուգական բարձրութիւն է մարդոյս բնութեան ընդ աջմէ աստուծոյ նստիլ և հաւասարիլ: - 94. Որև կործանմամբն իւրով *չարչարեաց* զվերին դասքն սրտմտութեամբ, և զներքին դասքն սասանմամբ, և զհամակամսն ընդ ինքեան քարշեաց: - 148. Վեցերորդ՝ թողեալ լինին ոմանք *չարչարեալ* առ ի նախանձ այլոց. զի պատիւ *չարչարելոցն* յայտնի լիցի վասն հանդերձեալ յուսոյն...: - 158. Ութերորդ՝ թոյլ տալով սրբոց *չարչարիլ*՝ վասն պսակացն առաւելութեան է...: - 159. Երկրորդ՝ զի աշխատութեամբ զմիտսն լուսաւորեսցէ. կամ ճգնութեամբ *չարչարեսցէ:* - 218. Չորրորդ՝ մահու մեռանիլ այն է, որ հոգւով և մարմնով տրտմին. և անմահ *չարչարին*. որպէս մեղաւորք յայս կեանս և յետ մահու. զի որ մեռանի մարմնով՝ զպարտս վճարէ. և որ տրտմի հոգւով՝ անմահ մահանայ: - 277. Վեցերորդ՝ զի անկասկած լիցուք ի վատթար երկիւղէ. յորում երկիւղազգածք *չարչարին* ըմբռնեալք ի մեղս: - 281. Այլ գիտելի է, զի մեղքն երբեմն յերկարէ՛ զկեանս՝ զի *չարչարեսցի* իբրև զկայեն: - 292. Վեցերորդ՝ զի ի ձեռս ետ զհագար աղախինն *չարչարել* սառայի. ուստի զերծեալ փախեաւ և հարցաւ ի հրեշտակէն: - 304. Եւ ի սակաւ զօրութենէն նախքան զյարութիւնն *չարչարէին* դևքն...: - 316. Եօթներորդ՝ յոբ ի բարեկամացն նախատեալ. և տէր մեր յազգէ իւրմէ *չարչարեալ* և չարախօսեալ: - 327. Եւ տէր մեր՝ *չարչարողացն* իւրոց թողութիւն խնդրէր ի հօրէ՛: - 329. Վասն զի **ե** տանջանօք *չարչարեաց* զիէլ, կրկին ընկալաւ զհատուցումն: - 335. Չորրորդ՝ և զայնպիսի հիւրսն գերի՛ և ծառայ *չարչարեցին:* - 335. Որ նշանակէ զքրիստոս արտաքոյ դրանն *չարչարեալ:* - 358. Երրորդ՝ զի հանգիցէ երկիր և տարերք որ ի չար գործն մեր *չարչարին*. այլ և պահպանապետ հրեշտակք նոցա: - 372. Հինգերորդ, զի քրիստոս *չարչարելո՛ց* էր ի քահանայից: - 386. Ի խրատ՝ զի սնուցօղն մի լիցի *չարչարօղ*. և բանն օրհնութեան մի՛ անիծեսցէ զոք: - 399. Եւ կամ այն թէ՝ «ութնօրեայ թլփատեսցես զմանուկն և մի պակաս». զի մի՛ ճիչ տղային *չարչարեսցէ* զգութ մօրն: - 399. Չորրորդ, նշանակէ՛ թէ՝ մի՛ ընդ յանցանաց ծնողին *չարչարեսցես* զզաւակն: - 399. Ասէ՝ մի՛ *չարչարէք* զքրիստոս օրինօքն...: - 399. Հինգերորդ՝ զի խրատեսցին նոքօք և *չարչարեսցին:* - 417. Քսանևթ, հարեալ որմն վկայեաց թէ սպանօ՛ղ է դաւթի սաւուղ. և *չարչարեալ* և մեռեալ մարմինն վկայէ՛ թէ աստուածասպա՛նք են հրէայքն: - 436. Դաւիթ բարի արար չարին սաւուղայ. և որդի դաւթի

*չարչարողացն* զնա: - 437. Նոյնպէս ասի այս անուն մարդ *չարչարեալ* և մեռեալ. որ և յատուկ մարմնո՛յ են սոքա: - 478. Զայս որպէս ձեռին գիր ունէր սատանայ, և նովաւ *չարչարէր* զմարդիկ՝ թէ աստուած ասաց մի ուտել և դու կերեր և մեռար. իմ ի՞նչ մեղք է: - 481. Յիրաւի ապա տէր մեր զգին արեանն ի հայր ետ. թէպէտ սատանայ էր գերեալ և *չարչարէր* զմարդիկ: - 492. Երկոտասաներորդ՝ յա՛յտ է յերից իրաց թէ ապականացու ասելն՝ ակնարկէ՛ ի յապագայն իբր թէ ապականելի՛ է. որպէս ասեմք մահկանացու և չարչարելի. և ահա *չարչարեցաւ* և մեռաւ: - 499. Եւ ահա՛ զմահ կրեաց կամաւորապէս և *չարչարեցաւ:* - 500. Զի և նա՛ *չարչարէ՛* զհոգիս և է կենդանւոյն ի դժոխս ընդ մեզ շրջեալ: - 505. **Չորրորդ սոյնպէս ասեն. ուրբաթն և իւր գիշերն որ *չարչարեցաւ*. և շաբաթն և իւր գիշերն որ թաղեցաւ. կիրակէ և իւր գիշերն որ յարեաւ. յորում ժամու և իցէ:** - 516. Հինգերորդ՝ զանբաժանելի միացումն ի սէրն քրիստոսի. զի որ ի խաչին թողին և փախեան, յետ իջման հոգւոյն՝ ամենեքեան վասն անուան նորա *չարչարեցան* և մեռան...: - 524-525. Երրորդն՝ որդին աստուծոյ վասն մեր *չարչարեալ* և մեռեալ: - 573. ինգերորդ՝ զի աղօթս խաչողացն և *չարչարողացն* արար: - 585. Եւ խաչիւ *չարչարեալ* և յարուցեալ ի մեռելոց. և առ աշակերտսն մտեալ եպիսկոպոս եցոյց զինքն: - 607. ...որք տեսին զքրիստոս *չարչարեալ*...: - 648. ...տայ նորա աստուած աղքատութիւն որ այնու *չարչարի*...: - 664. Դարձեալ՝ ցուցանէ՝ իբր թէ սիրելոյն որ մեռաւ՝ կցորդիմք և *չարչարեմք* զմարմինս. մերկանալով, ի սով և ի ծարաւ, ի մութն և ի հող որպէս նա ի գերեզմանի եղև: - 670. Ճանապարհ կեանս այս. և ոստխ մարմինն. և դատաւոր միտքն. դահիճ խիղճ մտացն որ *չարչարէ՛* զհոգին և ոչ ազատէ մինչև զամենայն պարտսն վճարեսցէ ապաշխարութեամբ: - 704. եթէ սուրբք որ աստ *չարչարեցան*, յառնեն յառաջագոյն և փափկանան մարմնով ռ ամ. և ապա հասարակ յարութիւնն ամենայն մարդկան: - 710. Վեցերորդ զի կրթելով առնու զսպիտակ գոյնն. նոյնպէս և սուրբքն ի կեանս յայս կրթելով *չարչարեցան*, և ապա՛ այն կենացն արժանի գտան: - 712. Տասներորդ, որպէս հատն սերմանեալ և բուսեալ և *չարչարեալ* և ընդ հուր անցեալ՝ ապա՛ ի սեղան եդեալ պատուեսցի: - 721. իսկ այս ամենայն բառնի ի մարմնոյն և դնի անմահութիւն անապականութիւն և անչարչարութիւն. զի բնաւ ո՛չ *չարչարի*...: - 722. ...ապա պա՛րտ է ի նա՛ ընկենուլ զդատաստան *չարչարողացն* մերոց և հալածողաց. և ուրախութեամբ տանիլ զլըլկանս. և մի՛ մեզէն վրէժխնդիր լինիլ մեզ...: - 735. Ապա առաւել նոքա որք *չարչարեցին*. զի մի՛ այլ և այլ կարծեսցեն: - 741. Կէսք խստամբէր կրիւք *չարչարեալք*. և այլ երկիւղիւ պակուցեալք: - 788

**ՉԱՐՉԱՐԻՉ +** Զանէծքն ո՛չ յինքենէ ասաց զի մի՛ սատակեսցի. այլ յերկիր ետ որ է՛ զէն մահու և *չարչարիչ*՝ և գերեզման յետոյ: - 287. Եգիպտոսի իշխանին քսանթիս կոչէին որ *չարչարիչն* էր իսրայէլի...: - 330

**ՉԱՓ +** Նոյնպէս *չափ* և սահման՝ բնութեա՛ն է: - 23. Դարձեալ՝ *չափ* և սահման ի վերջին եզր էութեան նկատէ, և սկիզբն և պատճառ ի յառաջինն: - 23. Եւ ի միւս բանին թէ՝ «հայր իմ մեծ է քան զիս». զքանն *չա՛փ* իմացիր՝ թէ մեծ է որչափ ես. որպէս ասէ որդի, «ես և հայր իմ մի եմք»: - 39. Հինգերորդ՝ զի *չա՛փ* եդ զորքանութիւն չարչարանացն իւրոց հետևողացն...: - 43. Զի ոչս այս բացբարձակա՛ն է. որպէս թէ ո՛չ *չափով* տայ աստուած զհոգին որդւոյ. այսինքն է՝ զի ոչ տայ և ո՛չ չափէ: - 46. Պատասխանեմք նախ, որպէս ասէ ոսկէբերանն թէ՝ նորածնեալքն աւազանաւն՝ ըստ *չափու* շնորհացն արժանաւորեին իմաստութեան, թարգմանութեան, և այլն...: - 59. Իսկ ի յերրորդութիւնն ո՛չ է քանակ և *չափ*, և ո՛չ պատահումն, և ո՛չ գիտելի եղական մտաց: - 108. Երկրորդ՝ թիւն քանակ է. և աստուած ո՛չ *չափի:* - 110. Երկրորդ՝ ըստ *չափոյ* մտիցն քանականայ մեծ կամ փոքր: - 125. Եւ ըստ *չափոյ* ընդունողաց ծնանի քրիստոս ի սիրտս մեր: - 125. Մեծ է տէր մեր և մեծ է զօրութեամբ. այլ քանակեալ մարմնով ի *չափս* մեր տեսանի: - 127. Զի ոմանց տացի և յաւելցի. և յոմանց բարձցի և պակասեսցի ըստ *չափու* ունակութեան ընդունողաց: - 127. Նախ՝ թէ անկեալքն ի նոցանէ են *չափով* միոյ դասի: - 134. Երրորդ՝ զի վերինքն զներքնոցն ունին բոլորապէս զամենայն. և ներքինքն զվերնոցն մասնաբար ըստ *չափու* իւրեանց. և քահանայապետն ունի զաստիճան ներքնոցն բոլորապէս. և ներքինք զվերին քահանայապետիցն մասնապէս: - 136. Երրորդ՝ զի առաջինքն առաւել լուսաւորին գիտութեամբ, և այլքն ըստ *չափու:* - 138. Եւ այլք ասեն թէ՝ ի տէրութեանց դասուն ի վայր ի ներքոյ քերօբէիցն յամենայն դասուցն անկան դասու միոյ *չափ:* - 150. Ութերորդ՝ թոյլ տալով սրբոց չարչարիլ՝ վասն պսակացն առաւելութեան է. զի կենցաղս այս հանդէ՛ս է նահատակութեան. և ըստ *չափոյ* համբերութեան՝ առցէ զյաղթանակն...: - 159. Հինգ. այսինքն Քանակն որ է *չափն*. Որակն. որ է գոյնն. ձևն. տեղին. զատութիւնն: - 174. Նախ՝ ի շարժմանէ՛ երկնային մարմնոց. զի միշտ նոյնպէս և անդադար շարժին.

առնելով զօր և զամիս՝ և զեղանակս՝ և զտարի՝ ստուգագոյն *չափով* առանց յաւելուածոյ և պակասութեան: - 181. Երրորդ՝ զի բոլորակ ունի ձևս. որ է կատարեալ վեցեկի *չափովք:* - 184. Տասներորդ՝ ըստ *չափու* կարողութեան զաչս լուսաւորէ՛: - 185. Տասներորդ՝ ըստ *չափու* և կարողութեան բաշխէ. որպէս ի կեանս յայսմիկ, և ի հանդերձեալն առաւել զի կարիցեմք տանել: - 185. Եօթնևժերորդ՝ զի *չա՛փ* է ժամանակաց: - 186. Որպէս ասեն փիլիսոփայք թէ կրկին է *չափ:* - 198. Եւ ըստ *չափու* թանձրութեանն պատառեալ բեկանի, և ի վայր բերմամբ գնդի ի ջերմութենէ օդոյն, և լինի կարկուտ: - 205. Երրորդ՝ զի ջուրք ծովուն բա՛րձր է քան զերկիր. վասն որոյ հա՛րկ առնէ և ի վե՛ր մղէ և ապա՛ հեղու յերկիր. զորօրինակ մարդիկք ի բարձրագոյն լերանց իջուցանեն զջուրն, և ըստ նոյն *չափոյ* ի միւս կողմն ի վեր հանեն սակաւ ինչ պակաս: - 209. Նոյնպէս և վերջին հուրն նովին *չափով* հեղեղին ի նոյն տեղիսն ընթանայ: - 225. Եւ վասն տնկական և զգայական մասին՝ կազմողական զօրութիւնն այլ ևս աճեցուցեալ զմարմինն **ք** ամ և դադարեալ յերեսներորդին, լինի ժամանեալ ի *չափ* հասակի կատարմանն քրիստոսի, յորում մկրտեցաւ տէրն մեր: - 265. Եւ այս հասակաւ և *չափով* յառնելոց եմք առ հասարակ: - 265. Եւ զի ա՛յս է թիւ կատարեալ *չափոյ* հասակի մարմնոյ և մասանց հոգւոյ: - 265. Դարձեալ՝ նախախնամութեանն է այսպէս կարգեալ. զի մարդս ունի դայեակ և սնուցօղ, պէտս ունի խնամարկութեան զի հասցէ ի *չափ* հասակի: - 267. Եւ մի՛ աստ ընդ դէմ բերցի բանիս թէ՝ ամենայն մեծամեծք գութ ունին փոքունց. զի և այս նախախնամութեանն է. որ եդ ի բնութեանս խնամ տանիլ նոցա, մինչ ինքեանք ևս ի *չափ* հասակի եկեսցեն և զերծանիցեն ի վնասուց: - 267. Չորրորդ՝ կօշիկն կարմիր. զի արեամբ *չափ* ի ներքոյ ոտից են հնազանդեալք ամենայն: - 271. Եւ մարտեաւ ընդ նմա այր, *զչափ* ուժոյ և զկերպարանքն եսաւայ զգեցեալ. զի կրթեսցի և մի երկիցէ ի նմանէ: - 311. Երրորդ՝ զի *չափով* և թուով և կշռով տայ աստուած զտանջանս մեղաց. թէպէտ մեզ անգիտելի՛ է: - 333. Եւ **գ** *չափն* զհաւատն մեր որ ի սուրբ Երրորդութիւնն է նշանակէ՛: - 340. Եւ այն որ շուրջ զսեղանովն, նշանակէ՛ զքահանայս. որ մերձ սեղանոյն որ է՛ քրիստոս՝ միշտ սպասաւորե՛ն և պատերազմին արեամբ *չափ* ընդ ախտս և ընդ դևս: - 341. Զի՞նչ է տապանակին *չափն* **ք** կանգուն և կէս երկայն: - 344. Իսկ *չափն:* - 344. Նա՛խ՝ զի ամենայն իր որ ընտի՛ր է՝ *չա՛փ* ունի և սահման. և ո՛չ շփոթումն. վասն այն կանգնաւ չափէ զնոսա: - 344. Նշանակէ՛ ըստ փիլոնի, զի անմարմինքն մինչև յերեքն հասանին. որպէս երկրաչափքն գրեն նիշ՝ գիծ՝ երևոյթ. ա՛յս է իմանալեացն *չափ:* - 344. Ճաշքն՝ *չափ* առաքինութեանցն: - 346. Երես զիսկութիւն աստուածութեանն նշանակէ. զոր աստի կենօքս ո՛չ ոք կարէ տեսանել. որպէս զբոլորակ արեգականն. այլ ի հանդերձեալն տեսանեն ընտրեալք ըստ *չափու:* - 350. Իսկ երախայրին՝ որ է՛ կալոյ և հնձանաց առաջին *չափն:* - 357. Ի սոցանէ ափով *չափ* դնէր քահանայն ի սեղան ողջակիզացն ի հոտ անուշից տեառն: - 357-358. Դարձեալ՝ իւղով զանգեալ բաղարջն և նոյն *չափ* իւղովն որ *չափ* մասն գինւոյն. այն է՝ զի ընդ օրհնութեան բանին աստուծոյ՝ և հոգին սուրբ իջանէ ի հացն և ի բաժակն և կատարէ՛ մարմին և արիւն քրիստոսի: - 361. Դարձեալ՝ այն որ մի քան զմի առաւել են *չափով* դորակին, նշանակէ՛ զհաւատն և զյոյսն և զսէրն առաւել: - 375. Այլ ա՛յս է ուղիղն. զի բովանդակն ամենայն **թ** դասք են հրեշտակաց. այլ անկեալքն ի նոցանէ՝ են ի *չափ* միոյ դասու. և մարդիկ զնոցա տեղին լնուն: - 376. Երիտասարդն **գ ժ** է հասակն. իբր թէ հասա՛ք ի *չափ* լրման և աճման: - 378. Ասա՛ թէ՝ չափաւորն ընդունելի է. այլ անչափն պոռնկութիւն և ագահութիւն. իսկ կուսութիւն և աղքատութիւն որ *չափ* առաւելու՝ այնչափ գեղեցկանայ: - 404. Խաչանման տարածեցաւ ի վերայ մանկանն և կծկեցաւ. այսինքն փոքրկացաւ ի *չափ* մանկանն. և ապա յայտնապէս է անգամ յօրանչելով և կծկելով կենդանացոյց զնա: - 446. Երրորդ՝ զի քրիստոս *զչափ* հասակի զադամայն ունէր, որ նախ քան զյանցանս և ադա՛մ ոչ ունէր հիւանդութիւն և ո՛չ ծերութեան փոփոխումն: - 480. Նա՛խ յաղագս շնորհին և ճշմարտութեան. և մարգարէք վասն ստուերին և օրինակին. և վարդապետք ըստ *չափոյ* պիտոյից նոցին: - 535. Զգաստութիւնն կայանայ առ ճաշակելիսն. ի յորում դնէ զկապն և *զչափն:* - 581. Եւ դարձեալ՝ ի յարքայութիւնն երկնից այսպէս ըստ իւրաքանչիւր *չափու* և արժանեաց կարգաւորապէս պարգևէ աստուած զիմաստութիւնն. և ո՛չ անկարգ. կամ զրկելով. կամ աչառելով: - 656. Ասեմք թէ՝ մարգարէն ուսուցանէ մեզ *զչափ* սգոյ մինչ յերեկոյն, և յառաւօտուն ուրախանալ...: - 680. Տասնևմի, պատժոյն մեղաց *չափ* և ժամանակ գոյ ըստ իւրաքանչիւրիցն. որպէս յա՛յտ է ի կանոնս: - 700. Ապա ուրեմն կենդանեաց մարմինն ոչ յառնէ ի մեզ ըստ բոլոր նիւթոյն, այլ ըստ *չափոյ* զօրութեանն որ փոխեցաւ ի մեզ և եղև մարմին մարդոյ, ա՛յն մարմինն յառնէ: - 718. Վեցերորդ, ոմանք ատոքք և կէսք ազազունք և այլք անպտուղք. այսպէս և մարմինք ընտրելոցն և ոչ նոյնպիսեացն ըստ

*չափու* զանազանին: - 721. ...այսպէս և ննջեցեալք ամենայն ծեր և տղայ՝ յառնեն ի մի *չափ* հասակի երեսնամեայ որ է կատարեալ հասակ որպէս ցուցանի յառաջիկայդ: - 721. Երկրորդ՝ ուղղեցին աւելիքն ի *չափն*. որպէս աւելո՛րդ եղունգաց հերաց և վեցամատնից և այլոցն. որք չափաւորին: - 725. Իսկ միտելն՝ *զչափ* թաթաղուն զեղուն երկոցունց կողմանց. այսինքն բարեաց և չարեաց: - 745. Այլ և յորժամ ի վեր քան *զչափն* պատուէ զսուրբս, և ի վայր քան *զչափն* պատժէ զմեղաւորս: - 746. Իսկ ըստ քանակի, *չափու* գործելեացն առաւել և նուազ իւրաքանչիւրոց ի խորհուրդս ի բանս և ի գործս: - 746. Կամ ցուցանէ *զչափով* տանջանս մեղաւորացն. որք *չափով* աստ տանջին, *չափով* կրեն զհանդերձեալ պատիժն. զի ընդ պակասիլ ծխոյն՝ և հուրն նուազի: - 749. Որպիսութեան կրիցն *չափ* ո՛չ է անտի տանջանացն. զի բոլոր աստի նեղութիւնս համեմատեալ այնմ՝ է՛ որպէս կաթիլ մի ի ծովէ և կայծ մի ի հնոցէ: - 751. Այլ ըստ զանազանութեան *չափոյն*, ոմանք Ժ են ասացեալ թուով ըստ հարուածոցն եգիպտոսի: - 751. Այսպէս և քրիստոս քան զամենայն սուրբս զպարգևս ունի առատագոյնս. որում հոգին ո՛չ տուաւ *չափով:* - 755

**ՉԱՓԱՒՈՐ +** Իններորդ՝ աչք ի *չափաւորն* հեշտանայ՝ և յանչափն տկարանայ որպէս յարեգակն: - 104. Եւ միտքն ի *չափաւոր* աստուածաբանութիւնն: - 104. Այլ և մեծ առ հաւատացեալս, և *չափաւոր* անհաւատիցն երևի: - 127. Երրորդ՝ անչա՞փ է թէ *չափաւոր:* - 140. Վասն երրորդին անչա՞փ է թէ *չափաւոր*՝ գիտելի՛ է, զի անչա՛փ է շնորհին ըստ իւրում ինքնութեան. այլ չափաւորի՛ ըստ տըւողին կամաց և ըստ ընդունողին կարեաց. որպէս բան մարդոյ ի լսելիս: - 140. Զի թիւ մեր նիւթեղէն և տկա՛ր և *չափաւո՛ր* է...: - 141. Դարձեալ ասեմք թէ՝ ամենայն մեղաց անչա՛փն մեղք է. իսկ *չափաւորն* ո՛չ է ի մեղանս. որպէս *չափաւոր* ագահութիւնն. և *չափաւոր* բարկութիւնն. և այլն: - 166. Իսկ պոռնկութեան *չափաւորն* և անչափն մեղք են. որպէս մի՛ անգամ կոյսն ապականեալ՝ և մի՛ անգամ պոռնկեալ՝ կոչի պոռնիկ և ապականեալ: - 166. Իսկ քառակուսի և *չափաւոր* մեծն՝ իմաստուն է և մեծահոգի: - 246. Կլափն որ *չափաւոր* է և քառակուսի՝ օգո՛ւտ է: - 247. Նախ՝ *չափաւոր* ձևն: - 271. Եւ այլք թէ՝ սողոմոն. զի *չափաւո՛ր* է բանքն տնատեալ հանգոյն բանիցն սողոմոնի: - 320. Եւ թէ ասեն, *չափաւոր* ամուսնութիւն և ինչք ընդունելի՛ է աստուծոյ: - 404. Ասա՛ թէ՝ *չափաւորն* ընդունելի է. այլ անչափն պոռնկութիւն և ագահութիւն. իսկ կուսութիւն և աղքատութիւն որ չափ առաւելու՝ այնչափ գեղեցկանայ: - 404. Նա՛խ՝ ցուցանէ *զչափաւոր* հարկաւորքն մեր: - 444. Եւ յամպս ճշմարտութիւն *զչափաւորն:* - 458. Նա՛խ՝ զի ի նոսա *չափաւո՛ր* են ախտքս այսորիկ. իսկ ի մարդն առաւել և անչափ: - 563-564. Իսկ ի նորս փոխեցաւ ի հոգևոր օրհնութիւն և ծնունդ. և զմարմնաւորն ի սկզբան *չափաւորն* կապեաց. որպէս ադամ և եւա: - 613. Այլ մեք զբաժակ օրհնութեան ճաշակեմք *զչափաւորն*. և ո՛չ զանչափն որ է մեղաց՝ և արբեցութիւն: - 656. Զի՞նչ է խորհուրդ բարեկենդանին որ յամենայն տեղիս ի վանորայս և յանապատս ներե՛ն սակաւ ինչ ի *չափաւոր* վայելս: - 657. Իսկ *չափաւոր* արտասուել պարտ է ամենայն մարդոյ ի տեսանել զմեռեալն...: - 676

**ՉԱՓԱՒՈՐԵՄ +** ...խնայեաց աստուած ի յազինս մարդկային, զի մի՛ կրիցեմք զկիրս զանկելոյ արուսեկին. որ ո՛չ կարացեալ տանիլ մեծութեան փառացն՝ զրկեցաւ և ի *չափաւորէն:* - 24. Նախ՝ զի եղականք ամենայն *չափաւորեալ* գոյացան. եթէ իմանալիք և եթէ զգալիք: - 103. Վասն երրորդին անչա՞փ է թէ չափաւոր՝ գիտելի՛ է, զի անչա՛փ է շնորհին ըստ իւրում ինքնութեան. այլ *չափաւորի՛* ըստ տըւողին կամաց և ըստ ընդունողին կարեաց. որպէս բան մարդոյ ի լսելիս: - 140. Դարձեալ՝ ջերմ և գէջ *չափաւորեալ* է ի նիւթն այն. և որ արտաքուստ մտանէ՝ անչափութեամբն վնասեցէ՛ զսերմնական զօրութիւնն ընդ նիւթոյն: - 256. Վեցերորդ՝ ո՛չ առնու ի գլխոյն և ո՛չ յոտիցն. այլ ի միջացն. զի խրատէ՛ զմարդիկ ո՛չ հաւասար գլխոյն պատուել զկինն, և ո՛չ անարգել իբրև զոտք. այլ միջակ պատուով *չափաւորել* զնա: - 276. Երկրորդ՝ ուղղեցին աւելիքն ի չափն. որպէս աւելո՛րդ եղունգաց հերաց և վեցամատնից և այլոցն. որք *չափաւորին:* - 725. Այլ որ առաւել մեծն է և հսկայանդամ, և կարի փոքր և փանաքի, յերեսնամեայ հասակն իւրեանց *չափաւորին:* - 726

**ՉԱՓԱՒՈՐՈՒԹԻՒՆ +** Իսկ *չափաւորութիւնն* զանչափութիւնն ո՛չ կարէ չափել: - 103. Եւ առ հասարակ ասեմ զայս դնել ի մտի. զի *չափաւորութիւն* անդամոցն ըստ ձևոյն և ըստ գունոյն և ըստ քանակութեան և ըստ կազուածոյն և ըստ շարժմանն, նշանակէ զբարի մտացն ընդաբոյս յարմարութիւնն: - 248. Երկրորդ խոհեմութիւն. և այս է *չափաւորութեամբ* բանից...: - 580. Եւ գեղեցկութիւն մարմնոյն բաղկանայ յերից. այսինքն ի մաքրութիւնն, ի *չափաւորութիւնն*, ի ձև անդամոցն: - 766

**ՉԱՓԵՄ +** Զի ոչս այս բացբարձակա՛ն է. որպէս թէ ո՛չ չափով տայ աստուած զհոգին որդւոյ. այսինքն է՝ զի ոչ տայ և ո՛չ *չափէ:* - 46. Իսկ չափաւորութիւնն զանչափութիւնն ո՛չ կարէ *չափել:* - 103. Իմաստութիւնն աստուծոյ անեղ է. վասն որոյ զանեղսն որ ո՛չ են եղեալ՝ *չափէ՛:* - 118. Իսկ մերս եղական է. վասն որոյ զեղեալսն *չափէ:* - 118. Այսպէս բանն աստուած զվերին աշխարհն մշտնջենաւոր պահէ, և զներքինս ժամանակաւ *չափելով* պահէ՛ և խնամէ: - 125. Զի թիւ մեր նիւթեղէն և տկա՛ր և չափաւո՛ր է. վասն որոյ զանբաւութիւն նոցա ո՛չ կարէ *չափել*. ուստի յայտ է՝ զի և ո՛չ զթիւ մեր կարեմք գիտել: - 141. Վասն զի առաջին շարժումն զայլս *չափէ՛*, և զինքն ո՛չ *չափէ:* - 198. Է՛ որ ինքնաչա՛փ է. որպէս գիծն ի կանգունն՝ ըստ ինքեան *չափէ՛* զկանգունն ի յորում է. և ըստ պատահման *չափէ՛* զկտաւն ի յորում ո՛չ է: - 198. Այլ ժամանակն է առաջին շարժումն երկնից, սակայն ո՛չ *չափէ* զնա. այլ *չափէ՛* զտարրականս և զներգործութիւնս մեր յորում ո՛չ է: - 198. Այսպիսի ժամանակ է յայտնապէս կեանք մեր. զի զոր ինչ ժամանակ կենցաղոյս *չափէ* բնութեամբ՝ ապականէ և փոփոխէ ...: - 199. Դարձեալ՝ քան զժամանակն ոչ ինչ անցաւոր և հասական. զի ժամանակ կենցաղոյս հանապազ հոսի. զի *չափէ՛* զբնութիւնս՝ և զինքն *չափէ՛:* - 199. Վասն այնորիկ յորժամ զիրս հոսականս և շարժունս *չափէ՛*, հա՛րկ է զի ի նոսին հոսեսցի. քանզի միշտ ժամանակն անցանէ և հոսի. յանցելոյն ի ներկայս. և ի ներկայէս յապառնին: - 199. Երրորդ՝ Վասն կենաց նահապետացն և կենաց մեր՝ *չափեալ* թւով: - 283. Թիւ կենաց մարդոյ *չափեա՞լ* է՝ թէ պատահմամբ յերկար և սակաւ ապրին: - 291. Ամենայն մարդոյ թիւ կենաց *չափեալ* է առ աստուած. և ո՛չ ոք կարէ սահմանն անցանել...: - 291. Եւ **յ** կանգուն երկայն, զի ի կրնկէն ի գագաթն լար *չափեալ*՝ **դ** պատ առնու զգլխովն: - 293. Նա՛խ՝ զի ամենայն իր որ ընտի՛ր է՝ չա՛փ ունի և սահման. և ո՛չ շփոթումն. վասն այն կանգնաւ *չափէ* զնոսա: - 344. Դիւք է՝ որ ծեռօք և նիւթո՛վ գործէ. որպէս գարի, և ալիւր, և աւազ, և ջուր, և քար. և այն որ թզով *չափէ*, և այլն ամենայն: - 388. Եւ ժամանակն **գ** է և եօթամբ *չափի* շաբաթի աւուրբ. և եօթն դար կենցաղոյս: - 683. Զի աւուրքս այս առ մե՛զ *չափին* և ո՛չ առ նոսա...: - 684

**ՉԱՓՈՒՄՆ +** Դարձեալ ասեն վարդապետք թէ՝ ժամանակն է *չափումն* իրաց մարմնականաց: - 198

**ՉԵՒ, ՉԵՒ ԵՒՍ +** Ո՛չ է օգուտ. զի *չև ևս* ծնաւ երկրորդ ադամ. զի նախ պա՛րտ էր ըստ մարմնոյ ծնանիլ. և ապա ըստ հոգւոյ վերստին ծնունդ: - 592-593. Արդ *չև* է եկեալ դատաւորն. և ոչ է եղեալ դատաստան. նա և ո՛չ հատուցումն. ո՛չ բարեաց և ո՛չ չարաց որպէս ասացաւ ի վերոյ: - 691. Սակայն զփառսն *չև ևս* են ընկալեալ մինչև ի սքանչելի երկրորդն գալուստ. այսպէս մեծն անդրէաս: - 696

**ՉԷ +** Չորրորդ՝ զի *չէ՛ր* բանաւոր, և բանից տեսակով խաբեաց զմարդն: - 218. Ո՞րպէս ասեն թէ դրախտն լուսոյ արեգական *չէ* կարօտ: - 222. Ոմանք ի դրախտն ևս ասեն թէ տիւ և գիշեր լինի. կամ գարուն և աշուն. զոր մեզ *չէ* ընդունելի: - 222. *Չէ՛* զարմանք հրաշիցն աստուծոյ. որպէս ամենայն ռնգունք զհոտն զգան, և աչք զգոյնն կրէ յինքն, և անծորելի և անպակա՛ս են յենթակայէն: - 224. Որ մտօքն է՛ մոլի, և մեղօք հիւանդ, *չէ՛* ընդունելի: - 371. Երրորդ՝ զի հոգիքն ի դժոխքն *չէ՛* մոռացեալ ի նմանէ: - 371. Երրորդ՝ արծաթ զբանն նշանակէ. որոյ *չէ՛* պարտ վասն իրաւանց և քարոզութեան արծաթ առնուլ: - 375. Գլուխն նշանա՛կ է մտաց. զոր *չէ* պարտ յաւելուլ՝ և ո՛չ պակասել. որպէս մուրճ ո՛չ գործէր ի սեղանն զի մի՛ պղծեսցի: - 390. Նշանակէ՛ որ *չէ՛* պարտ կռուիլ մեզ ընդ ամենայն մարդկան. թէ չար թէ բարի. զի ա՛զգ են մեր և որդիք ադամայ: - 393. Եւ թէ միսն է պատճառ՝ որ և իցէ թէ այրն և թէ կինն, առանց ամուսութեան մնասցէ. և միւսն զուգեսցի այլոյ որ *չէր* պատճառ: - 401. Վասն է՞ր է որ մին կին թէ բազում այր առնէ՝ պոռնիկ է. և թէ այրն բազում կանայս առնէր, *չէր* պոռնիկ որպէս ի հինն օրէնս: - 401. Եւ *չեն* անկարօտք. այլ արարածք են և կարօ՛տ են աստուծոյ: - 406. Երրորդ՝ յա՛յտ է յայսմանէ. զի նոյն ինքն բարկութիւնն ո՛չ եկեալ ի գործ՝ *չէ՛* չար...: - 408. Մարմնական նշանքն զոր կատարէր՝ *չէ՛ր* պակաս քան զնոցայն: - 411. Նա՛խ՝ երեքժանի մսահանաւ հանել զմիսն որ *չէր* օրէն: - 425. Այլ և ո՛չ անդ է գրեալ բոլորն, այլ ի թագաւորութեանցն որ *չէ* թարգմանեալ ի մերս. այլ միայն **բ** մնացորդացն զոր եզր գրեաց: - 443. Ոմանք ասեն թէ աւանդիլ հոգւոյն քրիստոսի, աւազակն եմուտ յերկրաւոր դրախտն ուստի ել ադամ. և *չէ՛* հաւանելի. զի անդ մարմնովն եմուտ յետ յարութեանն: - 495. Իսկ վերջին դժոխք որ կոչի անջրդի գուբ, նոցա՛ է որք ո՛չ ունին չար և ո՛չ բարի. որպէս մանկունք անմկրտեալք. ո՛չ տանջին զի *չեն* մեղանչեալ. և ո՛չ հանգչին զի *չեն* արդարացեալ. այլ վասն սկզբնականին մնան յանջրդի գուբն խաւարին: - 505. Հինգերորդ, այլք ասեն թէ հայցեաց ինչ շնորհս քահանայութեան որ *չէր* անկ կանանց: - 517. Զի հոգի է աստուած. և յիմացական միտս և ի հոգիս բնակէ. և *չէ՛* օգուտ մարմնոյն սրբութիւն յորժամ միտքն զբաղեալ է ի չարիս. զի հեռանայ ի սիրոյն աստուծոյ և ի բնակութեանց նորա...: - 558. Այնպէս մարդ մեղօք զրկի ի շնորհաց լուսոյն. այլ լոյս խնամոցն աստուծոյ *չէ* հեռացեալ

և սակաւ փայլէ ի ներքս ի տրտնջականն...: - 562-563. Եւ ա՛յս է մեծագոյն չար աշխարհի. զի *չէ* աւելի աղքատ քան զայն որ ցանկայ աւելի ունել: - 570. Երկրորդ յայտնել ասի. իբր *չէ* ծածուկ այլ յայտնի է աստուածութիւն նորա յարարածս իւր: - 624. ...որպէս և մեք ի սաղմոսաքաղ փոխերն *չեմք* ասեր. և այս այլ ի սաղմոսաքաղի հաշիւն է: - 630. Մեղաց պատարագին խունկ և իւղ *չէր* հրամայեալ օրէնքն. զի տրտում և ժահահո՛տ է: - 630. Զի այսպէս ասէ Ներքտառիոս հայրապետն հռօմայ թէ՝ *չէր* հնար իջուցանել զմարմինն տեառն ի խաչէն վասն փայլատակմանցն ի խոցուածոյն: - 631. Զայս սովորութեամբ առնեն զոր *չէ՛* պարտ. զի յուսահատութեան է նշան և հեթանոսաց գործ: - 656. Զի վասն յանցանացն ադամայ անիծաւ երկիր ի գործս նորա. զսուրբ մարմինն քրիստոնէի *չէ՛* պարտ դնել յանսուրբ հող...: - 76. Եւ այս զանազան կարծիքս վասն այն է, զի գիրք սուրբք *չե՛ն* յայտնի բացայայտեալ զնոսա: - 687. Սո՛ւտ է այս և *չէ՛* ընդունելի որպէս ցուցանելոց եմք: - 729. Եւ զանազան տեսութիւնք վարդապետաց *չեն* ընդ դէմ միմեանց. այլ զորօրինակ ոմն զական պատւականութիւն, և այլ ոմն զբնութեան, և կէսք զասդողութեան, և ոմանք զորակացն գեղեցկութեանց, պատմեն զմի և զնոյն ական իր: - 781-782

**ՉԷԶՈՔ (տեքստում՝ ՉԵԶՈՔ) +** Հինգերորդ՝ *զչեզորս* աբեղայ առնել: - 553

**ՉԷԶՈՏՔ** - Զի էգն, և *չէզոտքն,* և անկատարն, և անհաւատն, և արիւնահեղն, և կարգաւոր, սոքա վեցեքեան ո՛չ կարեն զենուլ զի պիղծ է զենն նոցա: - 365. Եւ *չէզոտքն*, զի չունի արիւն սերման, ո՛չ հեղցէ զարիւն կենդանւոյ: - 365

**ՉԻՔ +** Ութևժերորդ՝ *Չիք* ոք բարի. բայց մի աստուած: - 29. Եւ այսմ հետևի աղանդն սադուկեցւոց որ ասէին *չիք* յարութիւն: - 694

**ՉԿԱՄ** - Է և այլ իմն աննմանութիւն հոգւոյ ըստ իմացմանն. առաւել և նւազ. ուշիմ և ապուշ. *չկամ* և կամեցօղ. հեզ և յանդուգն. ցանկացօղ և ողջախոհ. ըստ բնական բարոյիցն որակացեալ. նման և աննման գոլով իրերաց: - 237

**ՉԿԱՅ +** Եւ ո՛չ ի միւս անձն. զի *չկա՛յ* միւս անձն: - 63

**ՉՂՋԻԿԱՆ +** Նա՛և բազում տեսակք են ի ջուրս և ի յօդս. որպէս *չղջիկանն* առանց արեան է կե՛ր զամենայն: - 511

**ՉՆԱՇԽԱՐՀԻԿ +** Եօթներորդ՝ զի նոր իմն *չնաշխարհիկ* կազմեաց. նոր ժողովրդեանն և նոր օրինացն, իցէ և նո՛ր տաճար հռչակեալ ընդ ծով և ընդ ցամաք. որպէս պսակ և փառք արդարոցն է՛ զոր ակն ո՛չ ետես և ունկն ո՛չ լուսաւ. նոյնպէս և սա՛ ի զգալիսս անհաս ի մտաց մարդկան: - 342

**ՉՆՉԻՆ +** Այսպէս և *զչնչին* փայտն առեալ արար փրկութիւն տիեզերաց և արար անապական: - 734. Եւ տե՛ս յօրինակաց. զի *չնչին* գողութիւնն, զաքար իւր զարմիւքն քարկոծեաց. և կրկուտ քաղելն զայրին: - 745. Զոր և ես զօրէն մշակաց բազմահաւաք պտղոց. կամ փունջ մի անուշահոտ բազմերանգ ծաղկանց. կամ *չնչին* թռչնոյ զխորիսխ մեղու. կամ որպէս զլոմայս այրւոյն տառապեալ գոյիւ: - 772

**ՉՈՐ +** Եւ ո՛չ միայն այս. այլ և **դ** բնութիւն է չորից տարերաց մարմնոյն. ջերմ և ցուրտ. *չոր* և գէճ: - 176. Զի երկիր ցուրտ է և *չոր:* - 181. Հուրն *չո՛ր* է և ջերմ: - 181. Եւ այսպէս ջերմ և ցուրտ, *չոր* և գէճ, թշնամիք են անհաշտելիք. և լինին միաւորեալք դարձեալ ծայրիւքն և մնան սիրելիք անքակտելիք այսպէս: - 181. Զի Խոյն և Առիւծն և Աղեղնաւորն, ունին զբնութիւն հրոյ ջերմ և *չոր:* - 189. Իսկ Ցուլն և Կոյսն և Այծեղջիւրն, ունին զբնութիւն հողոյ *չոր* և ցուրտ: - 189. Եւ է՛ առաջին և վերջին մոլորակացն Երևակն. զոր պարսիկք զօհալ կոչեն. ցուրտ է և *չոր*. **բ** ամ և կէս յամէ ի կենդանակերպն. և յերեսուն ամն վճարէ՛ զամենայն: - 189. Երրորդ՝ Հրա՛տն. զոր մարեխ անւանեն. ջերմ է և *չոր*. **խ** օր յամէ՛ ի կենդանակերպն. և ի ժ**զ** ամիսն պատէ՛ զամենայն: - 189. Եւ զի *չոր:* - 196. Նա՛խ՝ զի ամառն կարի՛ ջերմ է և *չոր*՝ չորացուցանէ՛. և ձմեռն խիստ ցուրտ՝ սառուցանէ՛ զսերմն: - 197. Զի հուրն կրկին որակ ունի. ջերմ և *չոր:* - 202. Գոլորշիք վերացեալ յերկրէ գէջ և *չոր* խառնեալ: - 203. Իսկ գէջն լինի ամպ. և *չորն* ի մէջ ամպոյն նեղեալ պատառելով զծալմունս ամպոյն՝ լինի որոտ և փայլատակունք ևս: - 204. Եւ դարձեալ՝ զի ի գոլորշեաց է բաղկացեալ՝ արտաքին մասն հով է և գէջ, և ներքինն ջերմ և *չոր*. վասն որոյ զարտաքինսն պահէ՛, և զներքինսն ապականէ: - 204. Երկու գոլորշիք վերանան յերկրէ. մինն *չոր* և ծխատեսակ. և միւսն խոնաւ ի գէճ բնութեանց վերացեալ: - 204. Իսկ ի *չորոյն*՝ հողմունք և հնչմունք զանազանք. որոտք և փայլատակմունք. կայծ. և այլն որպէս ցուցաւ: - 204. Իսկ *չորն* ի ցրումն վանելով արտաքս հոսմանէն հո՛ղմ եղև: - 205. Որ մերձ ի հիւսիս հնչէ, Կիկիաս կոչի. *չո՛ր* է և ցամաքեցուցիչ: - 205. Երկրորդ՝ զի երկիր *չո՛ր* է և ցամաք, պարտ էր լինիլ բազմութեան ջուրց. զի խառնեսցի ընդ երկիր

և ծննդականս արասցէ: - 207. Եւ զի ցուրտ է և *չոր:* - 211. Այս երկու երակս թէ տաք է և *չոր*, մարդն ի մօտն աղէկ տեսնու՝ և ի հեռուն վատ. որպէս տղայն: - 239. Արևմտիցն ընդ դէմ նմին հո՛վ է և *չոր:* - 240. Յարաւայինն տա՛ք է և *չոր:* - 240. Եւ յերիտասարդութեանն՝ լինի հողմն հարաւային տաք և *չոր:* - 240. Եւ յալևորութեանն՝ լինի հողմն արևմտիցն հով և *չոր:* - 240. Առաջինն սիրտն է՛ թագաւոր անձինն. տա՛ք է և *չոր*. և իւր տանուտէր արեգակն է: - 241. Յինգերորդն փայծեղն է. որ է՛ ախոռ այրեցած արեանն. ցո՛ւրտ է և *չոր*. և ունի տանուտէր զզոհալն որ է երևակն ցուրտ և չոր գոլով: - 241. Յինգերորդն փայծեղն է. որ է՛ ախոռ այրեցած արեանն. ցո՛ւրտ է և չոր. և ունի տանուտէր զզոհալն որ է երևակն ցուրտ և *չոր* գոլով: - 241. Եօթներորդն է՛ լեղին. որ է խարտեաշ մաղձն. տա՛ք է և *չոր*. և տանուտէր ունի զմառեխն որ է հրատն: - 241. Եւ է՛ բնութիւն ոսկերաց ցուրտ և *չոր*. զի խոնաւն և լոյծն ի ցամաք և ի ցուրտ մածնու և լինի ոսկր. որպէս ջերմն և խոնաւն լինի միս: - 244. Թէ ժամանակն ցուրտ է կամ ջերմ. և երկիրն գէջ կամ *չոր*. և սերմն հոտեալ կամ աղանձեալ. և սերմանօղ ո՛չ լինի կամ ոչ սերմանէ. վասն որոյ ո՛չ բուսանի: - 256. Այլ արդ՝ գիճութիւն ջրոյ զջերմ և *զչորն* վնասէ՛, և ջերմութիւն հրոյ զգէջն, և լինի անպտուղ: - 256. Ոմանք ըստ ազգի և տեսակի իւրեանց հով և ջերմ՝ *չոր* և գէջ գոլով, փութով կամ յապաղելով բուսանին: - 261. Իսկ ամառն, և մինչ ի **զ** ժամս աւուրն, և խարտեաշ մաղձն, և երիտասարդն՝ ըստ նմանութեան տարրական հրոյ ջերմ և *չոր* գոլով. վասն որոյ առաւել բարկացօղ և ցանկասէր լինի: - 266. Իսկ աշունն, և մինչ ի **թ** ժամս աւուրն, և սեաւ մաղձն, և ալևորն, ըստ նմանութեան երկրի ցուրտ և *չոր* գոլով՝ ծոյլ և պղերգ գոլով ամենայն ուսմանց և գործոց: - 266. ...այլ *չոր* ծաղկն դալարիւր. այսինքն թէ ի զանգուածոյն ադամայ ունէր ինչ փոշետեսակ՝ սրբեցաւ հրով հոգւոյն սրբոյ: - 331. Չորրորդ՝ միաւորութիւն ասեմք գոլ և զզանգումն որ ի նա է՛ և ի *չորո՛յ* բնաւորեցաւ լինիլ. յորում ո՛չ ամբողջ պահի բան որակութեանն: - 476. Իսկ հակառակաւն՝ որպէս ջերմ զցուրտ, և գէճ *զչորն* արտաքսէ: - 497. Եւ որպէս մի հուրն զանազանապէս այրէ զդալար փայտ՝ և *զչոր* խոտ՝ և զեղէգն: - 505. Նաև բերանն դառնանայ և չորանայ տրտմեցելոյն. զի *չո՛ր* է և դառն...: - 620. Իսկ ի ներքուստ, ի լինիլ տրտմութեանց՝ խուճապեալ մարմնոյն հոսի մաղձ դառն ի ստամոքս որովայնի. և վերացեալ գոլորշեաց նորա զօրէն շոգոլեաց պուտկի առ խելապատակս գլխոյ. և ծանրացեալ անտի թորի՛ առ բիբն ասացեալ ական. *չոր* գոլով և աղէգոյն ի սևատեսա՛կն մաղձոյ: - 787

**ՉՈՐԱՆԱՄ +** Եւ զի ծառք *չորացեալք*՝ դալարին և կանաչին: - 197. Իսկ ձմեռն է կատարած և վերջք կենցաղոյս. վասն այն բոյսք և ծնունդք դադարին և *չորանան:* - 198. Շանթքն լինի ի մէջ գոլորշեացն որ ի մէջ ամպոյն. և ջերմութեամբն *չորացեալ*. քանզի հո՛ւր է քարացեալ: - 204. Ոմանք ի ջրո՛յ ասեն զկանաչն. և յորժամ պակասի ջուրն՝ *չորանան* և սպիտակին: - 212. Վասն որոյ ի հրոյն ոմն սևանայ. որպէս խաղող. և կէսք կարմրին և դեղնին. որպէս բոյսք՝ և տերևք *չորացեալ* ի հրոյ: - 213. Եօթներորդ՝ երկին երկաթի և երկիր պղնձի. իբր *չորացեալ* երաշտութեամբ որպէս եղիայիւ: - 376. Զի գա՛յ զղջումն և խոստովանութիւն՝ որ զմեղքն բառնայ և զպատիժն ընդ նմին. որպէս հատեալ տունկ՝ *չորանան* ճիւղքն. որ բոլորով սրտիւ զղջայ և խոստովանի և այլ ո՛չ գործէ: - 432. Զի տրտմութիւն արտասուաց ընդ մահուանն բարձաւ. իսկ ամօթ և ցաւք մարմնոյ՝ ընդ մեղացն բարձան. որպէս ի հատանիլ արմատոյ՝ *չորանան* ստեղունքն: - 474. Զորօրինակ, արեգական լոյսն տկար աչաց վնասիչ է և ո՛չ օգուտ. և ջուր *չորացեալ* տնկոյ: - 540. ...որպէս թէ ոք հատանէ զարմատն՝ *չորանան* և ստեղունքն: - 604. Նաև բերանն դառնանայ և *չորանայ* տրտմեցելոյն. զի չո՛ր է և դառն...: - 620. ...մինչ խօսիլ տայ բազնեաց, և լերանց գնալ, և ծառոց ծաղկիլ և *չորանալ*. և մեռելոց յառնել. և հրոյ իջանել յերկնից. և չար հոգւովն խօսիլ տայ այլ և այլ լեզուս: - 708. Եւ արմատ ծառոյն գոսացեալ՝ *չորանան* և յառաջ եկեալ ստեղունքն: - 776

**ՉՈՐԱՑՈՒՑԱՆԵՄ +** Նա՛խ՝ զի ամառն կարի՛ ջերմ է և չոր՝ *չորացուցանէ՛*. և ձմեռն խիստ ցուրտ՝ սառուցանէ՛ զսերմն: - 197

**ՉՈՐԱՑՈՒՑԻՉ** - Եւ են բարեխառն և *չորացուցիչ:* - 205

**ՉՈՐԵՔԱՆԿԻՒՆԻ +** Զայս ասէ գիրն եթէ՝ *չորեքանկիւնի* էր՝ զի մի՛ շրջեսցի: - 293

**ՉՈՐԵՔԾԱԳԵԱՆ +** Եւ առաքեալքն զաւազանն ընդ *չորեքծագեան* տիեզերս: - 441. Դարձեալ՝ մի տախտակն է՛ մի և նոյն քարոզութիւնն առաքելական ի *չորեք ծագեան* տիեզերս տարածեալ: - 646

**ՉՈՐԵՔԿԵՐՊԵԱՆ +** Վասն *չորեքկերպեան* կենդանեացն: - 102. Զի՞նչ է *չորեքկերպեան* կենդանիքն զոր ետես եզէկիէլ: - 132. Իսկ «երրորդ մասն», ասէ սուրբն մեթոդէոս եթէ՝ զապստամբ հրեշտակս ասէ որք զթիւ երկնաւոր դասուցն սխալեցին. զի մինչ ո՛չ էին կործանեալ՝ **դ** կարգ էին իւրաքանչիւր դասուցն. որպէս յա՛յտ է ի *չորեքկերպեան* կենդանեացն: - 152. ...որք ունին զաթոռ չորից

աւետարանչացն. որ փոխանակ *չորեքկերպեան* կենդանեացն եղան աւետարանիչքն: - 607. Զի՞նչ է, *չորեքկերպեան* կենդանեացն զխորհուրդ քարոզեաց ամլորդին: - 638. *Չորեքկերպեան* կենդանիքն է՛ խաչն. և տեսեալն ի վերայ նորա՝ գառն որ բառնայ զմեղս աշխարհի: - 638

**ՉՈՐԵՔԿՈՒՍԻ +** Իսկ *չորեքկուսի*, զի խաչաձև՛ է մարդն: - 293. Դարձեալ՝ տապանն *չորեքկուսի*՝ է՛ սուրբ խաչն քառակուսի. որ ժողովէ՛ յերկրպագութիւն իւր յամենայն ազգաց և լեզուաց: - 294. Իսկ զկատարեալ հասակն նկարելով՝ ի ձև *չորեքկուսի* հանեն զաւետարանն ի ձեռն և ի գիրկն: - 481

**ՉՈՐԵՔՆԻԹԵԱՅ +** Եւ **դ** օդք և **բ** լծակքն, զի *չորեքնիւթեայ* աշխարհի են խնամածուք երկակի զօրութեամբ խնամոցն աստուծոյ. այսինքն արարչական և արքունական: - 344-345. Եւ **դ** փոխն վասն *չորեքնիւթեայ* բնութեանս. և վասն **դ** պահու գիշերոյն. - 621. Եւ դարձեալ՝ *չորեքնիւթեա՛յ* է բնութիւն մարմնոյս մերոյ և սոքօք յանցանեմք. - 622. Իսկ չորրորդն, ողորմելիքս *չորեքնիւթեայ* բնութեամբ յուսասցուք ի տէր և երկիր պագցուք նմա. և այնու հաստատեսցին սիրտք մեր ի տէր: - 629. Երեք չուանն յեռեալ ի միմեանս մակդարձապէս, է՛ *չորեքնիւթեայ* բնութիւնս մեր ի տարերց խառնեալ. կամ շնչոյ մարմնոյ և հոգոյ խառնումն: - 645. Վեցերորդ, ըստ թուոյն. զի *չորեքնիւթեայ* բնութեամբ մեղանչեմք...: - 653. Եւ **խ** ամն է՛ **դժ**. այսինքն մինչ ի կատարումն *չորեքնիւթեայ* կենցաղոյս: - 682

**ՉՈՐԵՔՇԱԲԱԹ, ՉՈՐԵՔՇԱԲԱԹԻ +** Եւ զերմեսին՝ *չորեքշաբթի*: - 190. Ա՛րդ՝ աստի մինչ ի նիսանի **ժէ**, և յապրիլի է՝ կատարի է ամիս. յորում առաքեցաւ գաբրիէլ առ կոյսն մարիամ յաւուր *չորեքշաբաթու*: - 483. Դարձեալ պատճառե՛ն թէ՝ յետ յարութեանն եկեր ձուկն ընդ աշակերտսն. յորում կրակեաղ կայծականց տեսին և ձուկն խորովեալ և հաց. և օրն էր *չորեքշաբաթի*. և ի **ե** շաբաթի համբարձաւ: - 511. Ապա յա՛յտ է զի ո՛չ ի *չորեքշաբաթի* եկեր զձուկն. այլ ի յանցեալ կիրակէն: - 511. Ապա ուրեմն սուտ ասեն թէ ի *չորեքշաբաթի* ձուկն եկեր: - 511. Եւ վասն *չորեքշաբաթի* է: - 527. Յիսունգ, Վկայութիւն պահոցն մեծի. և շաբաթու. և *չորեքշաբաթին*. և զի յինանցն ո՛չ պահեմք: - 527. Իսկ անօրէնութիւն է մեզ լուծումն պահոց աւանդեալ յառաքելոց անտի զերեք յիսունս և *զչորեքշաբաթի* և ուրբաթ. և զայլ շաբաթապահս ի նիկիական ժողովոյն սրբութեամբ պահել: - 552. *Զչորեքշաբաթս* ո՛չ պահել: - 553. *Չորեքշաբաթի* օրն աւետաց: - 642. Եւ ի *չորեքշաբաթի* աւետեաց և ծննդեան: - 642. Վասն է՞ր ուքօրէք միայն ծննդեանն է և յարութեանն առանց պահոց *չորեքշաբաթի* և ուրբաթի: - 649. ...վասն որոյ զուրբաթ և *զչորեքշաբաթ* լուծանէ այնմ փոխանակ: - 649. ...նա փոխան այնմ զուրբաթ և *զչորեքշաբաթ* լուծանէ: - 649. Զի **կ** օր ուրբաթ և *չորեքշաբաթի* և **գ** քառասունք պա՛հք է ի բոլոր տարին: - 649. ...որպէս *չորեքշաբաթն* վասն նայի, և ուրբաթն վասն ադամայ. - 650. Եւ նոյնպէս նինուէացիքն **գ** օր պահեցին. և երկուքն՝ *չորեքշաբաթ* և ուրբաթ: - 650. Եւ թէ որ ասիցէ, տէր ամենակալն ի *չորեքշաբաթի* մտանէ: - 651. ...և է՛ սկիզբն ի *չորեքշաբաթի*, և աւարտն ի յուրբաթի: - 651. Եւ ո՛չ միայն լուծանեն զսկիզբն մեծի պահոցն, այլ և զամենայն *չորեքշաբաթս* որ յառաքելո՛ցն է կանոնեալ, լուծանեն ի բոլոր տարին, և լինին ընդ անհծիւք նոցին: - 652. Եւ զի ճշմարիտ պահք է *չորեքշաբաթն* որպէս ուրբաթն յայտ է ...: - 652. Եւ ի նորս՝ ի *չորեքշաբաթ* և յուրբաթ փոխեցին առաքեալքն. որպէս յա՛յտ է յառաքելական կանոնս. նաև ի նիկիականն: - 652. Չորրորդ յայտնի և հաստատուն, որ ամենայն ազգ քրիստոնէից պահեն *զչորեքշաբաթն* և զուրբաթն վասն խաչելութեանն որ սո՛ւգ է և պահք: - 652. Իսկ թէ արհամարհելով զառաքելական կանոնս լուծցեն *զչորեքշաբաթ* և զուրբաթ...: - 652. Ահա՛ ա՛յս է կանոնք վասն պահոց *չորեքշաբաթի* և ուրբաթի: - 652. Իսկ *չորեքշաբաթն* և զուրբաթն առանձին պահել...: - 653. ...որ էր նոցա **բ** շաբաթին և **ե** շաբաթին. և մեզ ***դ*** ***շաբաթին*** և ուրբաթին: - 653. Երրորդ, *չորեքշաբաթն* ի խորհուրդ խաբէութեան նայի. յորում ասաց օձն ուտել ի պտղոյն...: - 653. ...վասն որոյ պահեմք *զչորեքշաբաթն*. և ուրբաթն խաչելութեանն քրիստոսի. զի կցորդեսցուք խաչին: - 653. Հինգերորդ, ըստ անուանն. *զչորեքշաբաթն* պահեմք, զի ի չորիցս չարաց պահպանեալ լիցուք...: - 653. ...պահեմք *զչորեքշաբաթն*. և վեցիւք շարժմամբ ի մեղս ընթանամք, պահեմք զուրբաթն: - 653. ...վասն տեսականին սրբեմք *զչորեքշաբաթն*...: - 654. ...բարեխօս դնելով զնոսա *զչորեքշաբաթս* և զուրբաթս պահեմք: - 654. Յինանցն ընդէ՞ր ոչ պահեմք. ո՛չ ուրբաթ և ո՛չ ***դ շաբաթի***: - 654. Վասն որոյ յետ համբարձմանն պահելի է *զդշաբաթ* և զուրբաթ. և կամ զինն օր մինչ ի հոգւոյ գալուստն: - 654. Եւ ի մեծ բարեկենդանին՝ ***դ շաբաթն*** և ուրբաթն հանգստեան: - 660. Եւ զի՞նչ է որ ի մեծի բարեկենդանին զ**բ** *չորեքշաբաթ* և զուրբաթն հանգստեան ասեմք: - 684

**ՉՈՐԵՔՕՐԵԱՅ +** Եւ հաւատարիմ վկայ ընդհանուր յարութեանն զգործս եցոյց. որ զղազար *չորեքօրեայ* ի գերեզմանէն յարոյց: - 716

**ՉՈՐՈՒԹԻՒՆ +** Եւ օդ ջերմութեամբ ընդ հուր. և հուր *չորութեամբ* ընդ երկիր: - 181. Երկրորդ՝ յա՛յտ է զի ունին ջերմութիւն և ցրտութիւն. *չորութիւն* և գիճութիւն. որ յայտնապէս տարրական է որակութիւն: - 188. Եւ զի ջերմութեամբ և *չորութեամբ* ցամաքի երկիր: - 197. Եւ զի ցրտութեամբ և *չորութեամբ* տերևք դեղնին և թափին: - 197. Զի *չորութիւն* և ցրտութիւն հակառա՛կ է ծննդեան. և ջերմ և գէջն օգնական: - 197. Վասն որոյ ջերմութեամբ զցրտութիւն լուծանէ որ յերկաթն և ի սառն. և *չորութեամբ* զհիւթն մերժէ որ ի ձու հաւի և յայլսն: - 202. Դարձեալ ասեմք թէ՝ ծանրութիւն փայտին գիճութիւնն է և ցրտութիւնն. և հուրն ջերմութեամբ և *չորութեամբ* զսոսա կորոյս: - 202. Երկրորդ՝ զի վերին մասն օդոյն պա՛րզ է. և ներքին մասն մերձեալ ի յերկիր՝ թանձրանայ ի *չորութեանց* նորին. և ջերմութիւնն խառնեալ ընդ այն՝ առաւել շող լինի: - 211. Զի զգայ զջերմութիւն հրոյն. և զցրտութիւն՝ որ է ջրոյն. և զխոնաւութիւն որ է օդոյն. և *չորութիւն* հողոյն: - 215. Երկրորդն ուղեղ գլխոյն է. հով է և գէճ ընդ դէմ սրտին ջերմութեանն և *չորութեանն*. զի բարեխառնեսցէ՛ զնոսա. և իւր տանուտէր լուսինն է: - 241. Նախ ասեն ոմանք, եթէ ուղեղ գլխոյ անբանիցն ընդ խելապատակին ունի *չորութիւն* և հովութիւն. և ջիլքն ի նմանէ յառաջեալ յանդամս մարմնոյն՝ փութապէս պնդէ՛ և տայ շարժիլ: - 266

**ՉՈՐՔՈՏԱՆԻ +** Եւ *չորքոտանիք* զծնունդս իւրեանց դիեցուցանեն և խնամեն: - 239. Զի բոյսք մանունք և *չորքոտանիք* մանունք կարեն ի նոյն ամի զնմանն ծնանիլ ըստ վերոյ ասացեալ երրեակ թուոյ ամսոյ, կամ կրկին վեցեկի: - 264. Իսկ տունկք որք են մեծաբոյսք՝ և *չորքոտանիք* մեծամեծք՝ յերրորդ ամին ծնանին զնմանսն. որ է թիւ կրկին ամսոյ ընդ երրեակ վեցից: - 264. Ի ներքին տունն *չորքոտանիք*. և ի միջինն մարդն. և ի վերինն թռչունք: - 293

**ՉՈՒԱՆ +** Երեք *չուանքն* գ գոյացութիւնն: - 645. Երեք *չուանն* եռակի պատիւն նորա: - 645. Երեք *չուանն* յեռեալ ի միմեանս մակդարձապէս, է՛ չորեքնիւթեայ բնութիւնս մեր ի տարերց խառնեալ. կամ շնչոյ մարմնոյ և հոգոյ խառնումն: - 645

**ՉՈՒԱՆԵԱՅ կմ ՉՈՒԱՆԵՂԷՆ +** Եւ ի տօն զատկին որ արար խարազան *չուանեայ* և եհան զվաճառականսն, ցուցաւ սարկաւագի գործ նորա: - 606-607

**ՉՈՒԵՄ +** Եւ *չուէին* է բանակք. և տապանակն առաջի: - 284. Եւ ի յայս մէջս *չուէր* խորանն: - 378. Զի՞նչ էր եօթն բանակ *չուելն*: - 380. Եւ ա՛յն էր նշանակ չւելոյ բանակին կամ ժողովելոյ իշխանացն. կամ ամսամտից և այլ տօնից նոցա: - 618. ...ասն զի չորիցս գոչէր փողն ազդարար ի *չուել* բանակին իսրայէլի: - 713

**ՉՈՔԱՅ (տ. ԵՐԹԱՄ, ՉՈԳԱՄ) +** Երեքտասաներորդ՝ որպէս զհետ խաահակայ *չոքան* երկուք ի ծառայիցն և կացին ի բացուստ: - 306

**ՉՔԱՒՈՐՈՒԹԻՒՆ +** Չորրորդ՝ զի մի իցէ նեղասիրտ և տառապեալ բարուք տեսանելով զինքն ի *չքաւորութեան* ստեղծեալ. այլ տեսցէ զամենայն կատարեալ. զի արձակ և առատ բարուք սնանիցի և վայելեսցէ: - 230. Երկրորդ՝ զի ոչ հարազատ որդին սեպհականէր զժառանգութիւնս հօր. այլ օտարն ի մեծութիւն հասանէր, և իւրն *չքաւորութեամբ* տառապէր: - 238

**ՉՔՆԱՂ +** Եւ զի բառնալո՛ց էր ի նոցանէ *չքնաղ* կերակուրն: - 340

# Պ

**ՊԱԼԱՏ +** Կանայք առաջի դրան խորանին նստեալք՝ են հաւատացեալքն. որք դրան երկնաւոր *պալատին* բանիլ ինքեանց ակն կալեալ մնան: - 756

**ՊԱԼԱՐ +** Իններորդ, բորն **գ** ազգ է. սպին սպիտակ շիտ. և *պալար* միատարր. և պաղպաջ շիտ աստ և անդ. որ է՛ մտաց և հոգւոյ և մարմնոյ մեղքն: - 367

**ՊԱԼՅ** - Ուստի բազմացեալ լցին զարևելս ի *պալի.* յորմէ թագաւորք պարսից և հայոց արշակունիք կոչեցեալ: - 330

**ՊԱԼՂԱՄ +** Եւ ջուրն **դ** հիւթք. այսինքն արիւնն. *պալղամն*. սեաւ և խարտեաշ մաղձն: - 232. Յորժամ *պալղամն* շատանայ ի մարդն, մազն նօսրանայ. վասն այն մարդն ի ծերութեանն լինի ճաղատ: - 240. Եւ սպիտակի մազն ի *պալղամէն* և ի մաղասէն: - 240. Յորժամ ծերանայ մարդն, և սպիտակ ջուրն որ է *պալղամն* առաւելու, յայնժամ մազն ընդ սպիտակ ջուրն ի դուրս անցանէ և սպիտակի: - 240. Չորրորդն թո՛քն է. հո՛վ և գէճ. և է՛ տուն *պլղամի*. և ունի տանուտէր զլուսինն: - 241. Արդ եթէ ի խարտեաշ մաղձէն ի լեարդն է մնացեալ, լերդին համն ի լեղւոյն առնու և բերանն լեղի դառնայ. իսկ եթէ ի սեաւ մաղձէն է մնացեալ ի լեարդն. բերանն թթո՛ւ դառնայ. իսկ թէ *պալղամն* մնայ ի լեարդն, բերանն աղի փոխի. իսկ թէ յստակ արիւնն մնայ ի լեարդն, լերդին համն անոյշ լինի, և բերանոյն համն անուշ տայ և քաղցր: - 242-243. Եւ ոմանք ասեն՝ թէ սեաւ մաղձն առնէ տրտմութիւն և սրտմտութիւն. և խարտէշն զբարկութիւն և զմախանք. արիւնն արի և վայրաբեր. և *պալղամն* ծոյլ և քնափ: - 245. Իսկ ձմեռն, և յինն ժամէն մինչև յերեկոյ և բոլոր գիշերն, և սպիտակաթոյր հիւթ *պլղամին*, և ծեր մարդ, ըստ նմանութեան ջրոյ ցուրտ և գէջ գոլով. վասն որոյ սպիտակի և ցրտանայ և պակասի զօրութեամբ: - 266

**ՊԱԽՐԷ +** Չորրորդ՝ յա՛յտ է ի հնազանդեցելոցն որք կան այժմ ընդ ձեռամբ մադկան. որպէս ոչխար, *պախրէ*՛, և այլն: - 220

**ՊԱԿԱՍ +** Դարձեալ՝ փորձիչս այս փառասիրութեամբ յառաջեաց առ քրիստոս. ուստի և ի բանից իւրոց երևի թէ ամենայն պատուիրանացն պահպանօղ եմ. զոր տէրն *պակաս* լինել յանդիմանեաց: - 47. Ջի թէ զաստուծոյն միայն՝ անկար ի յարիոսին. զի զբանն առանձին քրիստոս ասացեր. այսինքն օծեալ և սրբեալ ի հօրէ. յորմէ իմանի *պակաս* գոլ քան զհայր: - 68-69. *Զպակասն* ուղղեա՛ և զաւելիսն կշռեա՛ աղաչեմ ի ներգոյէ՛ քոյինդ մեծանձնութեան: - 95. Ահա աւետարանն լի՛ ասէ իմաստութեամբ. և դու *պակաս:* - 97. Ա՛րդ՝ եթէ *պակա՛ս* է շնորհք և իմաստութիւն նորա, մեք զիա՞րդ լիութեամբ առաք: - 97. Ապա զիա՞րդ *պակաս* լինի գիտութեամբ. ուսուցանօղն հրեշտակաց: - 98. Իսկ թէ զամենայն ճանաչէ՝ և զսէրն պետրոսի, ապա ո՛չ է *պակաս* գիտութիւն նորա: - 98. Դարձեալ՝ ա՛յն է հասարակն՝ որ մի՛ է երիցն. և երկուքն ո՛չ աւելի. և մինն ո՛չ ունի *պակաս:* - 104. Երկրորդ՝ յերեք թիւն մինն *պակաս* ունի քան զերկուքն. և երկուքն աւելի քան զմինն: - 108. Իսկ ի սուրբ Երրորդութիւնն՝ մինն *պակաս* չունի քան զերկուքն. և ո՛չ երկուքն աւելի քան զմինն. զի հայր ունի զամենայն լիութիւն որդւոյ և հոգւոյ: - 108. Եւ այս ամենայն ընդդէմ է տեսութեան մեր. զի մեք մասամբ տեսանեմք. և մի զկնի միոյ. և առաւել և *պակաս* գիտութեամբ. և ըստ իրին փոփոխմամբ: - 118. Նախ՝ զի ուրացականն ըստ պակասութեան է. որ ասէ ո՛չէ աստուած քրիստոս. այսինքն *պակա՛ս* է և ո՛չէ աստուած. և ո՛չէ հայր. և ո՛չ որդի: - 124. Եւ այլապէս ո՛չ կարէր լինիլ. զի ամենայն ինչ ի սմա՛ կատարեալ գոյ. և ոչինչ է *պակաս* ի սմանէ: - 179. Վեցերորդ Փայլածուն. զոր օտարիտ կոչեն. միշտ շրջի ընդ արեգականն. և սակաւ հեռանայ ի նմանէ. զընթացս իւր կատարէ՛ **յլը** աւուրս. **ժ** օր *պակաս* քան զլուսաբերն. և այլք թէ **գ** ամիս: - 189. Իսկ վերադիրն լինի ի *պակաս* ընթացից լուսնոյն ըստ այսմ օրինակի: - 191. Ջի արեգական տարին է՛ **յկե** օր. և լուսնին տարին **յծդ** օր. **ժա** օր *պակաս* քան զարեգակն: - 191. Եւ եթէ ուստի՞ է *պակասն:* - 191. Արդ յամենայն ամիս կէս օրն՝ ի բոլոր տարին լինի վեց օր *պակաս* լուսնոյն: - 191. Երրորդ՝ զի ջուրք ծովուն բա՛րձր է քան զերկիր. վասն որոյ հա՛րկ առնէ և ի վե՛ր մղէ և ապա՛ հեղու յերկիր. զորօրինակ մարդիկք ի բարձրագոյն լերանց իջուցանեն զջուրն, և ըստ նոյն չափոյ ի միւս կողմն ի վեր հանեն սակաւ ինչ *պակաս:* - 209. Եւ սողունք որք *պակա՛ս* են ի ձայնական գործեաց, սո՛ւղ են և ձայնից: - 216. **Քսանևբ**՝ Վասն է՞ր մարդն ինն ամիս, և այլ կենդանիք աւելի և *պակաս* կան յարգանդի: - 228. Յալողականն է՝ յորժամ ի ջերմութենէն եփի կերակուրն և հալի որպէս ապուր ի պտկի. և հալի ամենայն կերակուրն մինչև ի **զ** ժամն. և է՛ որ *պակաս* և աւելի. վասն առողջ և տկար մարմնոյն: - 242. Գոյնն

սպիտակ և դեղին՝ *պակաս* ուժ է: - 247. Երկրորդ՝ զբոյս ախտից և զայլ հոգս *պակա՛ս* ունի: - 251. Ապա ուրեմն հիւթն այն, նախ ունի զկեալն որ է՛ ունակութիւն. և ո՛չ *զպակասն* որ է մեռելութիւն: - 256. Իսկ թէ վասն է՞ր ասիցէ ոք՝ յղացեալ մնան յարգանդի՝ մարդն ինն ամիս, և այլ կենդանիք աւելի և կամ *պակաս:* - 262. Եւ աւելի և *պակասն* է ի նոյն թիւն չորից և երից. եթէ աւուրց և եթէ ժամուց մինչև ի ճանճ և ի մժեխ: - 263. Դարձեալ **թ** թիւն *պակա՛ս* է ի **ժ**երորդէն. և մեք պակասեցաք յինն դասուց հրեշտակաց...: - 264. Երկրորդ այսպէս. **գ** մասանց աւելին և *պակասն* լինին **զ** չարիք. և մի գործ մարմնոյն որ լինի է նենգութեան խորհուրդ: - 287. Վասն է՞ր նահապետքն ի **ռ** ամն ո՛չ հասին. այլ **թճ**, աւելի և կամ *պակաս* ապրեցան: - 290. Զի վասն առաջնոյն ասեն վարդապետք, եթէ ադամ ո՛չ եկաց ի դրախտին **ռ** ամ, կամ աւելի և կամ *պակաս*, այլ մի օր. մանաւանդ **է** ժամ: - 290. Նոքա յերկար ապրէին՝ զի յաճախեսցին բարիք և ծնունդք նոցա. և մեք *պակաս*, զի կարճեսցին չարիք և բազմութիւնք մարդկան: - 291. Երանելին յոբ՝ էր ի ժամանակս մովսէսի. **ճ** ամաւ յառաջ՝ աւելի և կամ *պակաս:* - 320. Երկայնութիւն՝ է՛ կեանք նոցա անմահ. զի գերազանցեալ են քան զժամանակեայս, և *պակաս* քան զյաւիտենականն աստուած: - 344. Նոյնպէս և բարձրացեալ են գիտութեամբ առաւել քան զմարդիկք, և *պակաս* քան զաստուծոյ: - 344. Իսկ կէսն, զի կիսկատար և *պակա՛ս* են քան զաստուած այնու, զի եղակա՛նք են և յոչ գոյից գոյացեալք որպէս ասացաք: - 344. Զի եօթանսունքն **եռբճ** *պակաս* **բ** թիւ գրեն. և այլք **եռշ** ամ. որ է՛ **ե** դար և կէս: - 345. Եւ **ի** են ո՛չ ժամանեալ, *պակաս* գոլով մարմնոցն: - 346. Ապա թէ *պակա՛ս* է ի սոցանէ՝ պիղծ է և խոտան և ո՛չ է ուտելի զենեալն: - 365. Յինգերորդ՝ կարճունչն. *պակաս* ընտրողութեամբ: - 370. Երկոտասաներորդ՝ միործի. *պակաս* զօրութեամբ և անգործ: - 370. Նա՛խ՝ զի մի *պակաս* երևեսցի քան զհեթանոսս, խտրէին զմարմնոյ արատն: - 370. Մետասաներորդ՝ մալեալն, տրեալն. *պակասն* արիութեամբ: - 371. Նա՛խ՝ զի ծերն և տղայն *պակա՛ս* է ի զօրութենէ: - 377. Մինն անկատա՛ր է և *պակաս*. և մինն թերացեալ և *պակաս:* - 377. Եւ *պակասն* ի գիտութեանց բանին, և կնատքն և բղջախոհքն ո՛չ կարգին զինուորք աստուծոյ: - 377. Երկրորդ՝ զի զգին ծերոյն *պակաս* հրամայեաց. զի **ե** ամեայ տղայոյ երկդրամեան էր. և ի ամենին ի երկդրամեան. և անտի մինչև ի **կ** ամն **ծ** երկդրամեան. և ի **կ** էն յառաջ **ժե** երկդրամեան: - 377. Եւ ո՛չ զչամիչն, զի արևակէ՛զ է և *պակաս* ի զօրութենէ: - 390. Եւ դարձեալ հրեշտակք և մարդիկք մշտնջենաւորք՝ *պակաս* ունին առ աստուածպետութիւնն յաւիտենական. և նա՛ է կատարումն **ժ**երորդ. անսկիզբն և անվախճան գոլով: - 391. Իսկ ըստ եսեբեայ **վպծ** ամք. թիւ մի *պակաս:* - 411. Մարմնական նշանքն զոր կատարէր՝ չէ՛ր *պակաս* քան զնոցայն: - 411. Վասն է՞ր թիւ մի *պակաս* լինի թագաւորացն: - 443. Զի աւելին ազահութիւն հեթանոսաց էր. և *պակասն* անհաւատից. այլ միջինն քրիստոնէից...: - 444. Եւ ոմանք յառաջին գերութենէն յովակիմայ՝ և *պակա՛ս* է: - 447. Եւ յետ նոյն քան ամաց շինութեան տաճարին աւելի կամ *պակաս*, նա՛խ արձակեցաւ եզր դպիր. և յետ նորա նէեմի: - 447-448. Զի ի րոբովամէ՛ որ զերինջսն գործեաց՝ վեց եօթանասուն ամ է մինչև զգերութիւնն սակաւ ինչ *պակաս*. վասն որոյ եօթանասուն ամ շաբաթեցոյց զնոսա ի գերութեան: - 448. Որ լինի **ծ**, *պակաս* մի. սոյնպէս թւեալ: - 450. Ա՛րդ՝ եթէ նահապետքն ամենայն որ **թճ** ամ կամ աւելի և *պակաս* ապրէին՝ ո՛չ ալևորէին, ապա և ո՛չ տէր մեր յիսուս քրիստոս: - 480. Եւ էր արտեմոնս այս զկնի առաքելոցն **բճ** ամաւ սուղ ինչ *պակաս:* - 482. Զի **բժ**ան օրն թէպէտ *պակաս* է ի թիւս տարւոյն, սակայն սկիզբն է տարւոյն: - 484. Զոր օրինակ՝ անցեալ լինի մին ժամն յաւուր՝ կիրակէ կոչի. թէպէտ **իգ** ժամն *պակա՛ս* է: - 484. Իսկ ձուկն կենդանի՛ է կատարեալ զգայարանօք և շարժմամբ. այլ զտուր և առ շնչոյ ո՛չ ունի. վասն այն *պակա՛ս* է: - 510. Ոմանք **խ** ժամս ասեն. և այլք աւելի և *պակաս:* - 515. Ասեմք թէ **դ**. զի թէ մինն *պակաս* լինի, խորհուրդն ո՛չ կատարի: - 597. Այլ ըստ պսակացն որ մարմնով կատարին՝ և վասն ընկերացն որ ժողովին՝ *պակաս* է նոցա. զոր ի կատարածի լինելո՛ց է ի գալուստն քրիստոսի...: - 686. Իսկ ի ներքոյ երկնից առ երկնիւ է կայանք հոգւոց կիսամասնեայ արդարոց այնոցիկ որոց *պակա՛ս* է արդարութիւն քան զմեղս և կամ առաւել: - 688. Մեր գործքն և յաստուծոյ տուեալ բարին հաւատով կնքի. և *պակասն* յանդիմանի այժմ ի խղճէ մտաց որպէս ի գրոյ. և անդ ի դատաւորէն, որ չար ծառայ կոչէ: - 769. Որ և աղաչեմ զբարեմիտ հանդիպօղսդ՝ եղբայրական սիրով հաւանիլ. *զպակասն* լնուլ և զաւելիսն կշռել: - 772. Եւ այլևս յարմար տեղւոյս այսպէս իմանի. զի սուրբ հարքն առաջինք *պակաս* ունէին զչարչարանս. վասն որոյ ո՛չ կարէին փրկիլ. իսկ քրիստոս եղեալ ըստ մարմնոյ որդի նոցա, զպակասութիւն հարցն չարչարանաց յիւրումն մարմնի էլից: - 781. Իսկ մեծն ներսէս ասէ, պակասութիւնն այն է, որ կիրք չարչարանացն քրիստոսի թուով և տեսակաւ *պակա՛ս* էր յառաքեալն պօղոս. այսինքն խաչն, բևեռքն, և այլն. և զայն

էլից քարոզութեամբն իւր ի մարմինս եկեղեցւոյ: - 781. Այլ վարկանին ոմանք զթիւ կազմութեան աւուրց *պակաս* գոլոյ նախնւոյն մարդոյ. զորոյ զտիպ յինքն նկարելով և այժմ անդրանիկն ծնունդ` յապաղելով գայ աշխարհ: - 785. Իսկ զի և արուի թէպէտ ո՛չ նոյն պիտոյիւք. սակայն ո՛չ ընդ վայր կազմեցաւ. ի լրումն **բժ**ան դրանց անդամոց. ի ներքս մուծանելոյ և արտաքս հոսելոյ *զպակաս* և զաւելորդս ինչ. անվնաս կելով կենդանւոյն: - 786

**ՊԱԿԱՍԱԿԱՆ +** *Պակասական*. որպէս ունակութիւն և պակասութիւն: - 21. Ոմանք ասեն պակասութիւն զքաղց և զծարաւ` զերկիւղ և զայլն. որք են *պակասականք* բնութեան զորս կրեաց քրիստոս. - 781. Այլ ո՛չ զամենայն *պակասականսն* կրեաց քրիստոս. որ է՛ հիւանդութիւն մարմնոյ և ապականութիւն. կամ մեղք հոգւոյ և տգիտութիւն: - 781

**ՊԱԿԱՍԱՄԻՏ +** Նոյնպէս ո՛չ կարէ իմանալ յորժամ ի սուրբ գրոց և ի սքանչելեաց և ի բանից սուրբ վարդապետաց` դարձուցանէ զմիտքն. որպէս ասէ առակն` *պակասամիտն* ոչ ընդունի զբանս խոհեմութեանց. բայց միայն զայն` որ շրջին ի միտս նորա: - 31. Ութերորդ` զի ապաժո՛ւժ է և *պակասամիտ* որպէս զտղայ. զի անիւ կենացն հոլովեա՛լ է ի տղայութեան տիքն: - 377

**ՊԱԿԱՍԵՄ կմ ՊԱԿԱՍԻՄ +** Եւ որպէս լոյսն միշտ լոյս է, թէպէտ *պակասեցաւ* ի յօդոյն. ուստի յայտ է` զի դարձեալ լուսաւորէ: - 23. Նոյնպէս և բարին միշտ բարի է. թէպէտ ի հոգւոյն *պակասեցաւ*, դեռևս ի յէութեան է. զի է է բարին. և էութիւն ո՛չ կորնչի: - 23. Որոց պատասխանեն վարդապետք եկեղեցւոյ. և ես զնոցայն առեալ ասացից` թէ յաւուրս յետինս` ոչ զկատարած աշխարհի կոչէ, այլ կոչէ աւուրս յետինս` զպակասութիւն օրինացն և արդարութեան նորա. քանզի օրէնք նոցա *պակասեցաւ* ի գալստեանն քրիստոսի: - 27. Իսկ որպէս բոլոր ի մասունս, զի որպէս միոյ մասին *պակասելոյ*` բոլորն անկատար մնայ: - 89. Նոյնպէս բանն աստուած և հոգի և մարմինն միաւորեալ է բոլոր մի քրիստոս. և ի *պակասիլ* միոյն` ո՛չ մնայ քրիստոս: - 89. Հինգերորդ` ի բանէն կրկին էութիւնք յառաջեցան. այսինքն իմանալի և զգալի. զի թէ միայն ի հրեշտակաց էր առեալ` *պակասէ՛ր* զգալին. և թէ ի կենդանեաց` *պակասէ՛ր* իմանալին: - 107. Երրորդ` զի աւուրքն *պակասեա՛լ* են: - 114. Ա՛րդ` երեքն ո՛չ յարմարին աստուծոյ. զի ո՛չ հնանայ և ո՛չ ծերանայ. և ամք նորա ո՛չ *պակասին*...: - 114. Զի ոմանց տացի և յաւելցի. և յոմանց բարձցի և *պակասեսցի* ըստ չափու ունակութեան ընդունողաց: - 127. Եւ քրիստոսիւ տկարացան ի կրկին զօրութենէ. ըստ այնմ, «թշնամւոյն զէն *պակասեաց* մինչ իսպառ»: - 153. Նախ զի ո՛չ կարէ յաւելուլ ի նմա և ո՛չ *պակասիլ*: - 182. Այլ ըստ ներգործութեան որ ի մէնջ *պակասի* և լուսաւորի` զայն ասէ: - 186. Վարդապետք ասեն. որպէս սուրբն բարսեղ` թէ որպէս երկբերանի քսա՛կ է լուսինն. ընդ մինն ելանէ և ի վերի թիկունքն ժողովի և *պակասի* ի մէնջ լոյսն. և ի միւսն ի ներքս մտանէ և լուսաւորէ՛ զմեզ: - 187. Նոյնպէս յորժամ հնանայ և *պակասի* լոյսն: - 187. Եւ համառօտ ասեմ, կեանք մեր և ժամանակ որքան առաւել յերկարէ՛ և աճէ՛, այն քան առաւել *պակասի* և նուազէ...: - 199. Ոմանք ի ջրո՛յ ասեն զկանաչն. և յորժամ *պակասի* ջուրն` չորանան և սպիտակին: - 212. Եւ *պակասեալ* ի սոցանէ մարմնոյն, ցուցանի կերպարան ի գոյէ ի քանակէ և յորակէ և ի տեղւոյ շարակցեալ. որպէս յա՛յտ է ի հայելւոջ: - 236. Եւ *պակասեալ* ի սմանէ տեղին, լինի տիպ ի քանակէ և ի ձևոյ բաղկացեալ. որպէս յա՛յտ է ի մոմն տպացեալ: - 236. Չորրորդ` զի ո՛չ է այն մեռելութիւն միայն` որ բանականն կամ շունչն *պակասի*. այլ և որ տնկականն *պակասի*. որպէս քար. ա՛յն է իսկապէս մեռեալ: - 256. Երրորդ` զի հատեալն մասնաւորի. այլ ընդ ծնանիլ զաւակին` ոչ ինչ *պակասի* ի ծնօղն. բան, կամ շունչ, կամ կենդանութիւն. այլ բոլորն է ի ծնօղն և բոլորն ի ծնեալն: - 257. Դարձեալ **թ** թիւն պակա՛ս է ի **ժ**երորդէն. և մեք *պակասեցաք* յինն դասուց հրեշտակաց...: - 264. Իսկ ձմեռն, և յինն ժամէն մինչև յերեկոյ և բոլոր գիշերն, և սպիտակաթոյր հիւր պլղամին, և ծեր մարդ, ըստ նմանութեան ջրոյ ցուրտ և գէջ գոլով. վասն որոյ սպիտակի և ցրտանայ և *պակասի* զօրութեամբ: - 266. Ութերորդ` **գ** անձինք կատարեալք. և թէ մինն *պակասիցէ*` ո՛չ է կատարեալ աստուած. և մարդս երրորդությամբ է կատարեալ. հոգւով և մարմնով և բանիւ. և թէ մինն *պակասիցէ*` անկատա՛ր է մարդն ասէ վարդապետն վարդան: - 271. Դարձեալ` որ քան յերկարի ժամանակս, մաշի՛ երկիր և ի ծերութիւն երթայ և տկարանայ. որպէս ծեր մարդոյն զօրութիւնն *պակասի* և ցաւքն առաւելու: - 292-293. Երկրորդ` զմանանայն որ շատ ժողովեաց` ո՛չ յաւելաւ. և նւազն ո՛չ *պակասեաց*: - 339. Զի թէ նախ բնական ջերմութիւնն *պակասի*, այս լինի բնական մահ. ո՛չ է ուտելի: - 366. Զի՞նչ էր որ ի տաղաւարահարքն ըստ միոյ միոյ աւուրց մի մի զուարակ *պակասէին* ի տօնս. և յութերորդ օրն ի մինն յանգէին: - 374. Երկրորդ` մեղք եօթնից զգայարանացն *պակասի*. և արդարութիւն որ մինն է հաստատի առ զղջացեալս: - 374. Չորրորդ` է դար

կենցաղոյս *պակասի*. և մինն հաստատի: - 374. Դարձեալ՝ ծեր և կին և տղայք ո՛չ թուին. զի *պակասեա՛լ* են յարիութեանց: - 377. Չորրորդ՝ *պակասեալ* է զօրութեամբ տեսանել և լսել և այլն: - 377. Նա՛խ՝ զի հուր աստուածութեանն կիզոյր զնա՛. որպէս ջուր ի մէջ ապակոյ ի տապոյ արևուն *պակասի:* - 383. Գլուխն նշանա՛կ է մտաց. զոր չէ պարտ յաւելուլ՝ և ո՛չ *պակասել*. որպէս մուրճ ո՛չ գործէր ի սեղանն զի մի՛ պղծեսցի: - 390. Եօթներորդ՝ որպէս հացն մարմնո՛յ է կերակուր, և բանն իմաստութեան աստուծոյ՝ հոգւոյ. զոր ի *պակասիլն* ասէր, «տաց ձեզ ո՛չ սով հացի և ծարաւ ջրոյ, այլ սով լսելոյ զբանն աստուծոյ»: -397. Երկրորդ՝ զի աստուած էր կոչեցեալ, ո՛չ էր պարտ *պակասիլ* զգայութեանցն: - 411. Ո՛չ *պակասեաց* ալիւրն և իւղն: - 413. Նուազիլ՝ ո՛չ ասեմ զամենևին *պակասիլն*. զի առ ջրհորաւն մեծի անչափ եղև վէմն. և յեւսն յորդանանու մանանայն ո՛չ գտաւ: - 415. Զի՞նչ է որ ո՛չ *պակասեաց* ալիւրն և իւղն: - 444. Ո՛չ ասէ թէ յաւելցի. այլ թէ ո՛չ *պակասի:* - 444. Ասեմք, զի ո՛չ ունին շունչ օդոյ այլ շունչ ջրոյ. և հանեալ ի ջրոյն *պակասի* շունչն. որպէս ասացաւ ի վերոյ ի **ժը** գլուխն ի **զ** համարն: - 511. Յինգերորդ՝ որ քան ծծեն ո՛չ *պակասի* օդն: - 523. Ի վայր շարժումն է տրտմութիւն և ծանծրութիւն. որ է՛ ծուլութիւն. զի մինն ծանրանայ և ո՛չ գործէ զբարիս. և միւսն տրտմի և *պակասի:* - 560. ...ապա՛ ի *պակասիլն* սոցա տրտմի. և թէ ոք հակառակի՝ բարկանայ ընդ դէմ նոցա. ապա յամենայնէ ծանծրանայ: - 561. Երրորդ՝ Վասն ճանապարհաց. և *պակասելոյ:* - 660. Զի՞նչ է չորեքկին բառս որ ասեմք, *պակասեալ*. յաւելեալ. լցեալ. և անցեալ զաւուրբք: - 666. Նախ ի դէմս մեր. զի *պակասիմք* ի մարմնոց և յաւելումք ի հոգիսն: - 666. Երկրորդ ի թիւ ամացն. զի որքան յերկարեմք անցանելով, *պակասի* մասն վերին և յաւելու մասն ներքին...: - 666. Երրորդ ի ժամն. զի անցեալ մասն յաւելու. և ներկայն անցանէ. և հանդերձեալն *պակասի*. և բոլորն կատարի և լցուի: - 666. Չորրորդ ի հասակն է իմանալ. զի տիքն անցանեն, և զօրութիւնք և ներգործութիւնքն *պակասին*...: - 666. Զի՞նչ որակ *պակասի* ի տարերացդ և զինչ մնայ: - 728. Գոյացական որակքն մնան և պատահականքն *պակասին* որպէս ասացաւ: - 728. Դարձեալ՝ էութիւնն մնայ, այլ ներգործութիւնն *պակասի*՝ այսպէս. զի ջերմութիւն հրոյն և ցրտութիւն ջրոյն և փոփոխմունք օդոյդ որպէս ամպք և այլն, և սևութիւն երկրի...: - 728. ...*պակասին* սոքա և ժողովին ի ներքոյ երկրի և լինին տանջանարանք մեղաւորաց որպէս ասէ սուրբն բասիլիոս: - 728. Կամ ցուցանէ զչափով տանջանս մեղաւորացն. որք չափով աստ տանջին, չափով կրեն զհանդերձեալ պատիժն. զի ըստ *պակասիլ* ծխոյն՝ և հուրն նուազի: - 749. Երրորդ՝ կամ գործիք տանջանացն նուազին. իսկ անդ հուրն է յաւիտենական որ ոչ *պակասի:* - 750. Եւ ոմանք յորոց սրբազան առաջնորդն մեր, պակասութիւն ասաց զոլ զորս յետոյ կրեցին անդամք նորա. այսինքն զիատումն մասանց. այրումն հրոյ. և այլ իմն բազմազան տանջանս. յորմէ թուով *պակասեաց* ի քրիստոս և յաւելաւ անդամս իւր: - 781. Դարձեալ ասեմ, թէ անունս այս՝ պակասութիւն, նոյն է որ լսի չարչարանք. զի յորժամ կրէ ոք զչարչարանս զայս ինչ կամ զայն, *պակասի* ի նմանէ այն ինչ կամ այն. այսինքն առողջութիւն, կեանք, և այլն: - 781. Որոց սկիզբն է հաւատն առ մկրտութեամբն. և կատարումն հայի առ գործն. և սոքա փոփոխականք են ըստ քանքարացն յարգելոյ և *պակասելոյ:* - 783

**ՊԱԿԱՍԵՑՈՒՑԱՆԵՄ +** Արդ՝ մեք ո՛չ մտացածին բանիւ ինչ իշխեմք յաւելո՛ւլ կամ *պակասեցուցանել:* - 84. իսկ թէ յայլ երիցն է, նայիլ պարտ է առ ինքն թէ ո՞ր յանցանք առաւել զօրացեալ է յինքն, զայն *պակասեցուցանել*...: - 665

**ՊԱԿԱՍՈՒԹԻՒՆ +** Երկրորդ՝ բարին ունակութիւն է, և չարն *պակասութիւն* նմին. որպէս խաւարն լուսոյ: - 13. Այլ արդ՝ աստուած պատճառ է ունակութեան, և ո՛չ *պակասութեան*. ուրեմն չարն ո՛չ է յաստուծոյ: - 13. Այլ և ո՛չ է բնութիւն. ո՛չ մասն և ո՛չ բոլոր. այլ *պակասութիւն* ունակութեան. զի բարին ունակութիւն է, և չարն *պակասութիւն* նորին. որպէս խաւարն լուսոյ, և հիվանդութիւնն առողջութեան, և մահ կենաց: - 16. Նախ թէ աստուած ստեղծ զկամքն բարի. և զբարին եդ առաջի կամիլ. իսկ նա անձնիշխանութեամբ հեռացեալ ի բարւոյն՝ գտա՛կ եղև չարին. զի **չարն ո՛չ այլ ինչ է, բայց հեռացումն. կամ *պակասութիւն* բարւոյ**...: - 16. Այսպէս զունակութիւնն ճանաչեմք իւր յատուկ տեսականւն. և *զպակասութիւնն* այլով տեսակաւ. զի հակակայի ունակութեանն: - 17. Նմանապէս և աստուած միակ միջնորդութեամբ ճանաչէ զբարին ըստ ինքեան ի յատուկ տեսակն իւր. և ճանաչէ զչարն կրկին միջոցաւ. այսինքն զի է՛ հակակայ բարւոյն. և է՛ *պակասութիւն* նմին որպէս ասացաւ: - 17. Իսկ թէ հաղորդին, ո՛չ կարէ լինիլ չար. զի չարն բարւոյն *պակասութիւնէ*. և սոյնպէս մի է սկիզբն: - 21. Պակասական. որպէս ունակութիւն և *պակասութիւն:* - 21. Այլ թըւի որպէս ունակութիւն և *պակասութիւն*. զի **բարին ունակութիւն է, և չարն *պակասութիւն* նմին. որպէս կուրութիւն երեսաց՝ և**

խաւար լուսո՛յ է *պակասութիւն:* - 21. Այլ և այսու որոշեսցիՆ. զի յուՆակութեՆէ *պակասութիւն* լիՆի. այլ ի *պակասութեՆէ* ուՆակութիւՆ ո՛չ երբեք: - 21. Եւ թէ ոք ասիցէ, այս ՆերհակԿ՛ց է որք փոխեն զմիմեանս. և ո՛չ ուՆակութեանց և *պակասութեանց:* - 21. Ասեմք առ այս եթէ՝ բարի և չար ըստ ենթակային Ներհակք են միմեանց. իսկ ըստ ինքեանց՝ ուՆակութիւՆ և *պակասութիւն* որպէս ասացաք: - 21. Իսկ չարն ոչ մնայ. զի չարն ոչ է էութիւն. այլ *պակասութիւն:* - 22. Իսկ չարն է եկամուտ և *պակասութիւն* բարւոյն: - 23. Զբացբարձականսն ի վերայ աստուծոյ՝ որպէս անճառ և անսահման՝ ո՛չ ըստ *պակասութեան* կոչեմք, այլ ըստ գերազանցութեան: - 24. Որոց պատասխանեն վարդապետք եկեղեցւոյ. և ես զնոցայն առեալ ասացից՝ թէ յաւուրս յետինս՝ ոչ զկատարած աշխարհի կոչէ, այլ կոչէ աւուրս յետինս՝ *զպակասութիւն* օրինացն և արդարութեան նորա. քանզի օրէնք նոցա պակասեցաւ ի գալստեանն քրիստոսի: - 27. Եւ որպէս աչք ո՛չ տեսանէ *զպակասութիւնն* իւր, նոյնպէս բանականն ո՛չ տեսանէ զմոլորութիւնն իւր: - 32. Երրորդ՝ զի ուՆակութիւՆ և *պակասութիւն* եղեր ի մէջ աստուածութեանն: - 38. Չորրորդ՝ զի առաջին դրեր *զպակասութիւնն*, և ապա՛ զուՆակութիւնն. որ է՛ հակառակ ասացելոցն: - 38. Հինգերորդ՝ զի որ եղեր նախկին *զպակասութիւնն*, բարձեր զէութիւնն հօր և որդւոյ: - 38. Վեցերորդ՝ զի լինի զօրանալ *պակասութեանն* և յաղթահարել զուՆակութիւնն: - 38. Եւ ոչինչ են՝ զի *պակասութիւնք* են բարւոյն...: - 45. Եօթներորդ՝ ոչէ ասի չարն. զի *պակասութիւն* է բարւոյ և արտաքոյ բնութեան: - 111. Միտք մեր **բ** *պակասութիւն* ունի. այսինքն զմոռացումն և զտգիտութիւն. զի զանցեալսն մոռանայ. և զապագայն ո՛չ գիտէ: - 117. Իսկ *պակասութիւնքս* այս ո՛չ են ի յաստուած: - 117. Անմիտն և անզգայն զոր ասեմք աստուծոյ, ո՛չ ըստ *պակասութեան*, այլ ըստ գերազանցութեան է դնելի: - 118. Կատարեալ, զի առանց աւելւածոյ և *պակասութեան*. և Անփոփոխ, զի տեսութիւնն աստուծոյ նոյն է: - 118. Եւ այս ո՛չ ըստ *պակասութեան*, այլ ըստ գերազանցութեան: - 123. Նախ՝ զի ուրացականն ըստ *պակասութեան* է. որ ասէ ո՛չէ աստուած քրիստոս. այսինքն պակա՛ս է և ո՛չէ աստուած. և ո՛չէ հայր. և ո՛չ որդի: - 124. Երկրորդին պատասխանեմք եթէ՝ ո՛չէ նոյն դրութիւն և խոստովանութիւն. որպէս յորժամ ասեմք դնելով թէ՝ չա՛ր է. խաւա՛ր է. և մե՛ղք է. ահա այս ուրացութիւն է և *պակասութիւն:* - 124. Եւ սոքա կոչին անբանք և անզգայք ըստ *պակասութեան:* - 132. Չորրորդ՝ մարդս *պակասութիւն* ունի. իսկ աստուած առանց ամենայն *պակասութեան* է: - 156. Ասելի է թէ՝ կոյսն և ապականեալսն են հակակայք ըստ ուՆակութեան և *պակասութեան*. որպէս երեսք և կուրութիւն...: - 165. Ժամանակն՝ զի նա՛խ է ուՆակութիւն. և յետոյ *պակասութիւն:* - 165. Մասն՝ զի նոյն մասինն որոյ էր ուՆակութիւն՝ նորին եղիցի և *պակասութիւն:* - 165. ...և Նոյն՝ զի նոյն ուՆակութիւնն եղև նոյն *պակասութիւն:* - 165. Զի կարէ՛ ուՆակութեանն լինել *պակասութիւն*. և անկա՛ր է *պակասութեանն* լինել ուՆակութիւն: - 165. Ապա յա՛յտ է զի կուսութիւնն է ուՆակութիւն. և ապականութիւնն *պակասութիւն* նմին: - 165. Եւ գործ պոռնկութեանն է ուՆակութեանն *պակասութիւն*. վասն որոյ ո՛չ հակադարձին: - 165. Ուստի յա՛յտ է զի ի լինիլն աշխարհի՝ նախագաղափար տեսութիւնն նոյնպէս եկաց մնաց առանց յաւելուածոյ և *պակասութեան:* - 169. Նախ՝ ի շարժմանէ՛ երկնային մարմնոց. զի միշտ նոյնպէս և անդադար շարժին. առնելով զօր և զամիս՝ և զեղանակս՝ և զտարի՝ ստուգագոյն չափով առանց յաւելուածոյ և *պակասութեան:* - 181. Հինգերորդ՝ զի ուՆակութիւնն նա՛խ է քան *զպակասութիւնն*. զի ուր ո՛չ է ուՆակութիւն, և ո՛չ է անդ *պակասութիւն:* - 256. Պատասխանեմք եթէ **դ** իրաց *պակասութիւն*, խափանէ՛ զկենդանութիւն նորին: - 256. Երկրորդ՝ *պակասութիւն* սերմանողին: - 256. Երրորդ՝ ըստ հիւթին յաւելւածոյ՝ և *պակասութեան* մաղձիցն՝ ի ներքուստ կամ յարտաքուստ, ջերմ և ցուրտ և այլն, զնորին նմանն և զկերպարանն առնու առ ինքն: - 268. Դարձեալ՝ յատկութիւն ի տկարութենէ. զի հանապազորդ ունի *զպակասութիւն*. և անկա՛ր է ի միշտ կանգնիլն: - 275. Տասներորդ՝ զմին ոտն ի գերեզմանէ դրեալ ծերութեամբն և *պակասութեամբ:* - 378. Կարօտն է՛ վասն իւր *պակասութեանն:* - 381. Եւ դարձեալ՝ հայեաց ի քեզ. և մի՛ մոռանար զտկարութիւն և *զպակասութիւն* քո: - 398. Իսկ թէ ամենևին հուսկ յետոյ անագան ի վերջին դարս, լինէր և այսպէս կրկին *պակասութիւն:* - 467. Չորրորդ՝ զի նա՛ է առաւել օգնական բնութեանս. մարտնչելով աճելութեամբ ընդ դէմ *պակասութեան* մահու: - 469. Նախ ասեմք թէ՝ համաձա՛յն են միմեանց. զի և սա Նագրիոս է ասէ. զի տրտմութիւն և ծանծրութիւն մի երևին. զի տրտմութիւն ի *պակասութենէ* բարւոյն լինի, իսկ ծանծրութիւն յաւելուածոյ բարւոյն: - 559. ...զի տեսանելով *զպակասութիւն* մեր՝ արտասուեմք և լամք. վասն որոյ առնումք զթողութիւն...: - 619. Նոյնպէս և սուրբքն՝ քրիստոսի չարչարակիցք եղեն. և *զպակասութիւն* չարչարանացն քրիստոսի ի մարմինս իւրեանց կրեցին...: - 648. Նա՛խ՝ յանպատրաստութենէ կամ ի *պակասութենէ* հարկաւոր

պիտոյից. կամ յարտաքին ստահակութենէ օդոց: - 665. Երկրորդ *զպակասութիւնն*. այսինքն ուժոյ, տեսութեան, և այլոցն: - 665. Եւ սոյնպէս զկարօտութիւն և *զպակասութիւն* ախորժակացս նշանակէ. որ քան ի միտ ածեմք և սգամք: - 670. Վասն զի մարդն յայսմ աշխարհի եօթն *պակասութիւն* ունի. **գ** հոգւոյ և **դ** մարմնոյ. - 722. այս է *պակասութիւնս* ի յարութեանն բառնի և եօթն զարդ ընդունի: - 722. Առաջին *պակասութիւն* է հոգւոյն իմացականին խաւարն և տգիտութիւնն. իսկ ի յարութեանն բառնի այս ի հոգւոյն և լինի լոյս պայծառ՝ և գիտութիւն աստուածային տեսութեանն...: - 722. Երկրորդ *պակասութիւն* է թուլութիւն և մոռացումն մտաց. զի աստ զաստուած մոռանամք և որոշիմք մեղօք ի նմանէ...: - 722. Երրորդ *պակասութիւն* տրտմութիւնն է ի հոգին. զի բազում ինչ խնդրէ և ո՛չ կարէ առնուլ. և բազում ինչ ոչ խնդրէ և լինի նմա...: - 722. Իսկ առաջին *պակասութիւն* է մարմնոյն աստ՝ զի է՛ մահկանացու՝ յապականացու՝ և չարչարելի. որպէս քաղցն՝ ծարաւն՝ հիւանդանալն և այլն...: - 22. Երկրորդ *պակասութիւն* է մարմնոյն՝ սևութիւն և աղտեղութիւն. և բաժանի այս ի մարմնոյն և զարդարի լուսով որպէս զարեգակն: - 722. Երրորդ *պակասութիւն* է մարմնոյն՝ զի ծա՛նր է և ծոյլ յամենայն գործս հոգևորս: - 722. Չորրորդ *պակասութիւն* է՝ զի այժմ է՛ մարմին մեր թանձր և կոպիտ. այլ յայնժամ բառնի այս ի մարմնոյ և լինի անօսր և թափանցիկ. զոր ոչ պարիսպ կամ բանտ ըմբռնել կարիցէ: - 722. Նախ *զպակասութիւնն*. որպէս ի տղայս և յանդամնահատս և նուազեալ անդամք. որպէս **դ** մատնի և այլքն. - 725. Իսկ մանկութիւնն թերի է զի ո՛չ եհաս ի կատարումն. և ծերութիւնն *պակասութիւն* ունի զի անցեալ է զկատարելութեամբն: - 726. Նա՛խ՝ զի արտաքո՛յ է այսմ խաւարի որ է *պակասութիւն* լուսոյ. այլ այն խաւարն *պակասութիւն* է բարեաց: - 753. Իսկ չար՝ թէպէտ լինի ներգործութեամբ անձնիշխան կամօք, այլ բնութեամբ չար ո՛չ է ըստ ինքեան. զի ո՛չ է էութիւն այլ *պակասութիւն* բարւոյ. որպէս ցուցաւ ի վերոյ ի **ե** համարն: - 758. Ապա ուրեմն մի է բարի արքայութիւնն. և մի դժոխք *պակասութիւն* նմին: - 758. Զի թէ *պակասութիւն* զչարչարանքն ասէ, չարչարանքն այն ոչ ասի *պակասութիւն* քրիստոսի...: - 781. Ոմանք ասեն *պակասութիւն* զքաղց և զծարաւ՝ զերկիւղ և զայլն. որք են պակասականք բնութեան զորս կրեաց քրիստոս...: - 781. Եւ ոմանք յորոց սրբազան առաջնորդն մեր, *պակասութիւն* ասաց զօլ զորս յետոյ կրեցին անդամք նորա. այսինքն զհատումն մասանց. այրումն հրոյ. և այլ իմն բազմազան տանջանս. յորմէ թուով պակասեաց ի քրիստոս և յաւելաւ անդամս իւր: - 781. Եւ այլևս յարմար տեղւոյս այսպէս իմանի. զի սուրբ հարքն առաջինք պակաս ունէին զչարչարանս. վասն որոյ ո՛չ կարէին փրկիլ. իսկ քրիստոս եղեալ ըստ մարմնոյ որդի նոցա, *զպակասութիւն* հարցն չարչարանաց յիւրումն մարմնի էլից: - 781. Եւ ի վճարման *պակասութեանց* նոցա ասաց...: - 781. Վասն որոյ չարչարանքն քրիստոսի ասի *պակասութիւն* վասն հարցն. ասի և կատարեալ առ ինքեան: - 781. Դարձեալ ասեմ, թէ անուսն այս՝ *պակասութիւն*, նոյն է որ լսի չարչարանք. զի յորժամ կրէ ոք զչարչարանս զայս ինչ կամ զայն, պակասի ի նմանէ այն ինչ կամ այն. այսինքն առողջութիւն, կեանք, և այլն: - 781. Եւ որպէս այլուր ասաց առաքեալն «զչարչարանս քրիստոսի ի մարմնի իմում կրեմ», այսպէս և աստ *զպակասութիւնս* ասէ. որ է նոյն փոխանորդ չարչարանաց: - 781. Իսկ մեծն ներսէս ասէ, *պակասութիւնն* այն է, որ կիրք չարչարանացն քրիստոսի թուով և տեսակաւ պակա՛ս էր յառաքեալն պօղոս. այսինքն խաչն, բևեռքն, և այլն. և զայն էլից քարոզութեամբն իւր ի մարմինս եկեղեցւոյ: - 781. Եւ այլքն ո՛չ են կնիք. այլ զարդ *պակասութեանց* նորին. վասն որոյ և փոփոխականք են: - 783

**ՊԱԿԱՍՈՒՄՆ +** Զի թէ կորագլուխ էր որպէս այլ կենդանիքն, խափա՛ն լինէր զգայութեանցն և *պակասումն* գիտութեան: - 233. Երրորդ՝ զի չէին առեալ զպատուէրս որ ծնանէր զերկիւղ և զգուշութիւն. որ ի *պակասումն* զգուշութեան ամօ՛թն է: - 278. Առ տեղեաւն՝ նշանակէր զնուազութիւն աւուրցն տօնից ի *պակասումն* զուարակացն: - 374

**ՊԱԿՆՈՒՄ (ՊԱԿՉԻՄ) +** Երկրորդ՝ յորժամ յերկրի երևին, և *պակնուլ* տեսօղքն երևմամբ նոցա, վկայք լինին փառաց ամենազօրին: - 345. Կէսք խստամբէր կրիւք չարչարեալք. և այլ երկիւղիւ *պակուցեալք*: - 788

**ՊԱՀ +**Իսկ այլք ի **դ** բաժանեն ըստ չորից տարերաց և **դ** *պահու* գիշերոյն. որպէս ասացաւ ի վերն **ժզ** գլուխն **իգ** համարն: - 378. Եւ գիտելի է, զի մարդ որ ի մեղք անկանի և իմանայ զինքն որ մեղք գործեաց, և ունի զխոստովանահայրն պատրաստ ուղղափառ և գիտուն, ի յա՛յն *պահն* պարտի խոստովանիլ: - 601. Եւ **դ** փոխն վասն չորեքնիւթեայ բնութեանս. և վասն **դ** *պահու* գիշերոյն. - 621. Վասն զի **դ** *պահ* է գիշերն: - 622. Երկրորդ՝ *պահն* է մէջ գիշերն: - 622

**ՊԱՀԱՆՋԵՄ +** Վեցերրորդ՝ զի *պահանջէ՛* ի սիրողաց իւրոց միշտ զայն խորհիլ...: - 43. Այլ և թիւ և

համար գործ. *պահանջին* ի մէնջ ի յերկրին աւետեաց: - 381. Նախ զայն ցուցանէ առ նորս, եթէ ոք յանգիտութեան մեղանչէ՝ թողու աստուած. և որ դարձեալ կրկնէ, և զառաջինն *պահանջէ* ասէ: - 439. Քանզի առ ի կատարել զգործ արդարութեանն՝ *պահանջէ* ինչ և ի կողմանէ մարդոյն. այսինքն պահանջումն ըստ արժանւոյն...: - 459. ...իսկ ի կատարել զգործ ողորմութեանն՝ ո՛չ ինչ *պահանջի*, եթէ ոչ կամքն նորա, որպէս երևեցաւ ի մարդեղութիւն բանին աստուծոյ ի սրբոյ կուսէն մարիամայ: - 459. Դարձեալ՝ եթէ հարկիւ *պահանջես* ըստ մտաց քոց գ դժոխք: - 505. Ա՛րդ՝ ի կենդանեաց երկոքինն *պահանջին*. իսկ հոգւոյն բաւակա՛ն է միայն ներքին իմացումն զի չունին մարմին: - 508. Նաև ի յայն որում թողեալ լինի՝ բ ինչ *պահանջի*. այսինքն ցաւ վասն գործելոյն, և մտադիւրութիւն վասն ոչ գործելոյն...: - 567. Չորրորդ, կշիռն նշանակէ՛ զգործս մարդկան. ըստ կշռոյ օրինացն հաւասարել և հատուցանել. եթէ ըստ բնականին կամ ըստ գրոյն և աւետարանին. որում շատ տուաւ առաւել *պահանջել:* - 747. Վեցերորդ՝ զի անցեա՛լ է ժամանակն յորում *պահանջի* զղջումն: - 780. Որպիսութիւն *պահանջի*, զի իցէ փոփոխական կենօք: - 780. Զի որոց բազում աւանդեցաւ. առաւել ինչ *պահանջեցաւ*. և փքացելոց հպարտութեամբ՝ ստորասուզեալ մակբեկութեամբ: - 789

**ՊԱՀԱՆՋՈՂ +** Զի ասէ մեծն իգնատիոս մեկնիչն յայսմ բանի, եթէ բարեկամ եկեալ՝ *զպահանջօղ* հրեշտակն ասէ յօր մահուն. իսկ առաջին բարեկամ է՛ աստուած: - 697

**ՊԱՀԱՆՋՈՒՄՆ +** Քանզի առ ի կատարել զգործ արդարութեանն՝ պահանջէ ինչ և ի կողմանէ մարդոյն. այսինքն *պահանջումն* ըստ արժանւոյն...: - 459

**ՊԱՀԱՊԱՆ +** Ութերորդ՝ խնամարկութեամբ. զի ոմանք ազգի և թագաւորութեան, և ոմանք անհատի և առանձնականի լինին *պահապան:* - 138. Եւ զի *պահապանք* առ պարիսպս կացուցանին: - 196. Այլ և *պահապանք* ի թշնամեաց: - 212. Եւ ո՛չ այս միայն, այլ և բոյսք և տունկք ունին բնութեամբ զէնս *պահապան* ինքեանց: - 217. Երրորդ՝ զի թոյնք և խայթոցք նոցա՝ զէն և *պահապան* է նոցա. զի առհիծքն պատառելովն ապրին. նոյնպէս և այլքն: - 217. *Պահապանք* աչացն: - 227. Նա՛խ՝ զի *պահապա՛ն* է նմա յարտաքին վնասուց: - 239. Քանի՞ են *պահապանք* աչաց լուսոյն: - 239. Իսկ մազն արտաքոյ անզգայ՝ ծածկոյթ՝ զգեստ՝ և *պահապա՛ն* է ամենեցուն: - 240. Եւ դառն ջուրն է ի յականջսն առ ի *պահապան* դրանն: - 240. Եւ ի լեղւոյն ականջին դառն. *պահապան* սողնոց: - 243. Ութերորդ՝ մշակութիւն աստուծոյ. այսինքն անմահ տնկոցն երկրագործ և *պահապան:* - 279. Նոյնպէս յորժամ բնակին բարեպաշտք ի մէջ անհաւատից, Նա՛խ՝ զի աղօթք նոցա *պահապան* է նոցա: - 302. Սիրտ զանմահ աստուածութիւնն ասէ որ ո՛չ ննջէ և ոչ ի քուն երթայ *պահապանն* իսրայէլի: - 316. Երկրորդ՝ զի *պահապան* է յառաջին և վերջին թշնամեաց որ է սատանայ և մեղքն: - 385. Երեսուներորդ, կացոյց սաւուղ *պահապան* դաւթի. և կացուցին *պահապան* գերեզմանին քրիստոսի: - 436. Ասեն թէ՝ ռ կին էր սողոմոնի. է ճ տիկնայք, և գ ճ հարճք. և նոցա ռ *պահապան*. իսկ ի փորձելն խաբեաց զհազար կանայսն. և ի յարանցն մին ո՛չ խաբեցաւ. այս առասպե՛լ է: - 440. Այլ և *պահապան* չորից զգայութեանց ըստ չորից տարերաց: - 493. Որ և *պահապանքն* շրջապատեալ. որ և զհանդերձն պատառեալ յանկողնի, և լերդ այծեաց և մազ ի սնարսն. և ի գիշերի իջեալ ընդ պատուհանն և ելեալ առ սամուէլ զերծաւ ի ձեռաց նոցա: - 513. Իսկ գրապան՝ վարդապետք և քահանայք *պահապանք* ժողովրդեանն. որք բոլորակի զգեստ կոչեցան քրիստոսի: - 534. Իսկ եկեղեցէն ունի սաղմոսս թ փոխ բոլոր. *պահապան* թ ժամուց հանապազորդ գիշերոյն: - 622. Նա՛խ՝ զի յաղօթս զկոյսն սուրբ բարեխօս մաղթեմք. և զխաչն սուրբ՝ *պահապան:* - 642. Իսկ զի չորիցն բարձեալ տանին, նշանակէ որ բ հրեշտակք *պահապանք* ամբառնան զհոգին...: - 671. Դարձեալ, ի տիպ *պահապան* հրեշտակին որ նստէր մի ի սնարից և մի յանոտից տեառն գերեզմանին...: - 679. Եւ դարձեալ հոգւոյ և մարմնոյ. և շնչոյս *պահապան:* - 679. Այլ մեծն ներսէս ասէ թէ՝ սուրբքն ի ձեռն *պահապան* հրեշտակացն երևին. թէ յերազս թէ յարթնութեան. և օգնեն մեզ. և խօսին. և լսեն զաղօթս մեր: - 685. Այլ և արդարութիւնն աստուծոյ, *պահապան* հրեշտակքն, և խիղճ մտացն իւր, են երեք վկայք: - 743. Թէ ի բերան պատերազմի յել անմահին և ի մուտ մահկանացուին. դիցես *պահապան* բերանոյդ...: - 770-771. Եւ ապա ի *պահապան* մտից ի վնասակար զեռնոց: - 786. Զոր և բիբն անուանեալ *պահապան*, զառաջինն ո՛չ զգուշացեալ, լինի դարձեալ ձեռնտու, զաւելորդսն արտաքս մերժելով. որ անուանի արտասուք. այսինքն արտաքսեալ: - 787

**ՊԱՀԱՐԱՆ +** Իսկ դամբարան, որ է *պահարան*. զի անտի դարձեալ առցի որպէս և եդաւ: - 678

**ՊԱՀԵԼԻ** - Երրորդ՝ զի խորհրդով և ծածուկ է *պահելի* ի հերձուածողաց և ի հեթանոսաց և յանմարժ մտաց ախմարաց...: - 123. Ո՞չ ապաքէն մովսէս ի հինն որոշեաց զսուրբս և անսուրբս. մանաւանդ թէ

յաւուրս նոյի գոյր ընտրութիւնս. այսպէս ցուցաւ և մեզ *պահելի* իբր զբնական օրէնս. այլ սոցա ոչինչ է պիղծ ի կենդանեաց: - 552. Երկրորդ, զի և ի տաճարն հին՝ ո՛չ թաղեցին զսուրբս. այլ ի գերեզմանատունս. նոյնպէս և առաւել սրբութեամբ *պահելի* է զնոր տաճարս: - 617. ...զոր նշանակէ **դ** թիւն. և ուրբաթն սուգ և բօթ լսի՝ *պահելի՛* է: - 653. Վասն որոյ յետ համբարձմանն *պահելի* է զ**դ**շաբաթ և զուրբաթ. և կամ զինն օր մինչ ի հոգւոյ գալուստն: - 654

**ՊԱՀԵՄ +** ...զբարին ի նոյնն *պահել* և առաւելուլ. զի այս է գործ անձնիշխանին: - 19. Երկրորդ և ոչ վասն յետին յանցանացն կռապաշտութեան եպերեմք զիմաստութիւն նորա և ո՛չ ընդունիմք. թէպէտ և հնա՛ր է պատճառել թէ այնքան իմաստութիւնն, զնա ո՛չ *պահեաց* հաճոյ մնալ աստուծոյ: - 40. Ութերորդ՝ զզօրաւորսն *պահէ՛:* - 49. Երրորդ՝ ըստ ո՛չ պատշաճի. որպէս ո՛չ կարեն *պահել* որդիք առագաստի մինչ ընդ նոսա իցէ փեսայն որ է քրիստոս: - 44. Իսկ ընդ դէմ եւտիքեայ անշփոթ ասել՝ *պահէ՛* զյատկութիւն բնութեանցն՝ ի միութիւն խառնեալ էութեանցն: - 75. Եւ այսպէս փախչելով ի թիւր ծայրիցն, զմիջինն *պահելով* ընթացք բարեպաշտութեան, անշթոփ և անբաժան միութիւն, խոստովանիմք զքրիստոս՝ աստուած մարդացեալ. մի անձն և մի բնութիւն. և մի կամք և գործք ըստ ուղղութեանն բանի: - 81. Այլ հետևիմք հարցն սրբոց, որք առանց կարծեաց և խոտորմանց՝ զմիաւորութիւնն քրիստոսի անշա՛րժ *պահեն:* - 83. Ահա տե՛ս յայտնապէս. զի որք բաժանեն զմի քրիստոսն յերկուս բնութիւնս, ո՛չ *պահեն* զմիաւորութիւնն անբաժանելի: - 88. Զի զոչ առեալն ասեն մի ի քրիստոս՝ և ո՛չ զառեալն. այսինքն զանձն՝ որ ո՛չ է առեալ՝ մի ասեն. իսկ զառեալ բնութիւնն որոշեալ *պահեն* և յերկուս քակտեն: - 88. Եւ թէ զհայր ո՛չ գիտէ, զիա՞րդ զբան նորա *պահէ* առ ինքեան: - 98. Այսպէս բանն աստուած զվերին աշխարհն մշտնջենաւոր *պահէ*, և զներքինս ժամանակաւ չափելով *պահէ՛* և խնամէ: - 125. Երկրորդ՝ զի զամենեսեան միահամուռ ունի և *պահէ՛*. և այսպէս գիտէ զորս ունի առ ինքն և *պահէ՛:* - 141. Առաջին՝ զի արարչութիւն է յոչէից ստեղծանել. իսկ նախախնամութիւն է զեղեալն ի նոյնութեան *պահել:* - 157. Հինգերորդ՝ երկինքն թեթև է ի վեր քարշէ. և երկիրս ծանր ի վայր հակէ. և այսպէս մի զմի հաստատուն *պահեն:* - 182. Ի ներքոյ երկրի անցեալ և զերկին փեռեկեալ հաստատուն *պահէ:* - 203. Իններորդ՝ պարիսպ լինին շուրջանակի ջուրք. ի թշնամեաց ի գազանաց՝ և ի գողոց *պահելով:* - 207-208. Այլ այժմ վասն զգեստուց *պահեմք* զոչխարս...: - 217. Երրորդ՝ զհաւատն որ է գլուխ՝ *պահեսցէ*, զի մի՛ մոլորեսցի զհետ հերձուածողաց: - 218. Ճարպ երիկամանցն նախ՝ ամոքէ՛ զցանկականն. և երկրորդ անվնաս *պահէ:* - 241. Սոքա ո՛չ *պահեն* զճարպն որ մասն է օդոյ պարարտացեալ: - 242. Այլ այս է ուղիղ. զի որպէս նախախնամութիւնն աստուծոյ զդէմքն մարմնոյն ի հաւասարութիւնն անհաւասար *պահեաց*, և ի նմանութիւնն աննման: - 252. Ասեմք առ այս. զի թէպէտ ա՛յլ է գործ ստեղծման և ա՛յլ նախախնամութեան. զի ստեղծանելն է առնել իր ինչ ի յոչընչէ. և նախախնամելն՝ զեղեալն փոխանորդութեամբ ի նոյն տեսակն *պահել:* - 257. Այլ արդ՝ նախախնամութեամբ է տնկականն և զգայականն. որք փտելով և զնմանս ծնանելով *պահեն* զնոյն տեսակն: - 257. Զի թէպէտ մի իրէ նախախնամութիւնն աստուծոյ առ արարածս, այլ զամենայնս ո՛չ միապէս *պահէ* և նախախնամէ: - 258. Արդ կերակրելովն *պահի* անհատն: - 262. Եւ աճելովն *պահի* ենթակայ նիւթն: - 262. Եւ ծնանելովն *պահի* տեսակն: - 262. Զի քարշեն յերկրէ զհիւթ, և ունակացեալ *պահեն*, և հալեալ փոխեն յինքեանս. և վտարեն զաւելորդսն ի կեղև՝ ի տերև՝ և յայլսն: - 262. Զայս կարգ *պահէ՛* և ի զարգացման հասակին. զի մինչև ցեօթն ամն ատամն բուսանելով և փոփոխելով՝ նշանակէ՛ զկերակրականն: - 267. Նախ՝ առ ի նշանակել զանձնիշխանութիւն մարդոյն. իբր թէ ունի կարողութիւն *պահել* և ո՛չ *պահել:* - 277. Չորրորդ՝ թշնամիք եղեն հրեշտակք մարդկան. որք *պահէին* սրով զճանապարհ ծառոյն: - 277. Զի *պահելով* զպատուիրանն ի կատարեալ անմահութիւնն ժամանէր յերկինս. իսկ անցանելովն փոխեցաւ ի մահ և անկաւ յերկիր: - 282. Եւ քանի՞ անգամ ել ի լեառն. և **գ** քառասուն *պահեաց*. և **դ** ծնունդն մովսէսի: - 284. Եւ այլք ասեն ընդդէմ այսմ, եթէ յետ **ռ** ամին ի դրախտէն փոխիլոց էին յարքայութիւնն թէ *պահէին* զպատուիրանն. և յորժամ ելին ի դրախտէն՝ ի նոյն թիւն ո՛չ հասին: - 290. Զի որպէս տապանաւն *պահեաց* զտունն նոյի հայր աստուած, պահեսցէ և զմեզ: - 295. Զի որպէս տապանաւն պահեաց զտունն նոյի հայր աստուած, *պահեսցէ* և զմեզ: - 295. Եւ այլք ասեն թէ մովսէս գրեաց ի յանդիմանութիւն որդւոցն յակոբայ. որք առին զօրէնս և ո՛չ *պահեցին*. և զաստուծոյ զամենայն երախտիսն մոռացան: - 320. Եօթներորդ՝ մովսէս **խ** օր անսըւաղ *պահեաց* ի լերինն: - 328. Եւ տէր մեր *պահեաց* **խ** օր ի փորձութեան լեառն: - 328. Նա՛խ՝ զի ծառայ և գերի *պահէին:* - 335. Եւ ի գիշերն լոյս տայր նորա, և *պահէր* ի վնասէ՛ լուսնոյն և առաջնորդէ՛ր: - 338. Զի բարերարե՛ն

և պատուհասե՛ն. զոմանս *պահելով* ի խաղաղութեան: - 345. Երկրորդ՝ զի կորուսեալք էին հոգւով, ո՛չ *պահեաց* զօրէնս նոցա: - 349. Նա՛խ եթէ՝ դո՛ւ աշխատեաց ի գործն, զի հաստատ *պահեսցես*. զի մի՛ դիւրաւ արհամարհիցի: - 350. Չորրորդ՝ յօրինակ դրախտին ադամայ՝ որ ծրի տուաւ և ո՛չ *պահեաց*. վասն այն որդւոց նորա գործով և աշխատութեամբ պարգևէ: - 350. Երկրորդ, քառասնօրեայ *պահելով* էառ զ**բ** տախտակս և խորտակեաց: - 352. Երրորդ, դարձեալ **խ** *պահեաց* և էառ զկրկին տախտակն գրեալ մատամբն աստուծոյ իբրև զառաջինն, և եդ ի տապանակ վկայութեանն: - 352. Եւ մին յորժամ զլրտեսքն առաքեցին ի կագիսա. և **խ** օր յամեցին և մովսէս զ**խ** *պահեաց:* - 353. Ձնոյնս *պահեմք* և մեք **գ** քառասունք: - 353. Կամ զքրիստոսի քառասունքն *պահեմք* և զմովսիսին և զեղիային: - 353. Իսկ մեք **խ** զմովսէսին *պահեմք* որ ի լեառն սինա, և յեսու արտաքոյ միգին: - 363. Դարձեալ՝ որպէս քրիստոս յետ մկրտութեանն՝ ի լեառն *պահեաց* **խ** օր: - 363. Այլ և *պահեն* զեօթն օր սուրբ զգեստիւն: - 363. Ձայն խորհուրդն *պահեմք* ի վերայ նոր սեղանոյս: - 363. Պա՛րտ է զմեզ սրբութեամբ արժանապէս տաճար և զգեստ և անդամս *պահել* նմա: - 368. Նոյնպէս և ի նորս *պահեսցի* **է**օրեայ սրբութիւն դաշտանի: - 369. Չորրորդ՝ զի երկնչիմք և անմեղ *պահեմք* զհոգիս մեր որ ելանելոց է յերկինս: - 371. Երրորդ՝ զի աւետարանիչքն յայտնապէս ասեն թէ՝ ընդ մկրտիլ տեառն՝ նոյն ժամայն հոգին հանէ՛ զնա յանապատ. և *պահեաց* զ**խ** տիւ և զ**խ** գիշեր: - 373. Ձոր *պահեմք* և մեծ չարչարանօք ճնշեմք զանձինս: - 373. Ձի վարդավառին ա՛յն է, յորժամ կրկին **խ** *պահեաց* մովսէս ի լեառն և լուսաւորեցան երեսքն. վասն այն զկնի երկու յիսնակացն տօնեմք: - 373-374. Ձաստուած մասնակից առնել ընչիցն զի այլքն խնամով *պահեսցին:* - 376. Դարձեալ, քահանայութիւնն կա՛րգ է հրեշտակաց. պա՛րտ է սրբութեամբ *պահել:* - 381. Նոյնպէս և ամենայն ոք հրամանաւ առաջնորդին թէ *պահեսցէ* զուխտն բարի է. և թէ զանցուսցէ ո՛չ դատապարտի: - 389. Ի գինւոյ և ի ցքոյ *պահել*, զի մոռացկոտ և քնու և ծոյլ և ապուշ առնէ գինին: - 389. Ապա յա՛յտ է՝ զի որ ընդ ապաշխարութեամբ է և կրօնաւոր, ի գինւոյ ի մրգոյ և ի մսոյ *պահեսցէ:* - 390. Եւ զքառասունսն *պահեաց*. և պայծառացաւ ի թաբօր. և այլն: - 399. Իսկ ի միասին կարգէ՛, զի կամ երկիցեն յանիծիցն, և կամ ցանկասցին օրհնութեանն և *պահեսցեն* զօրէնսն աստուծոյ: - 403. Երկրորդ՝ հրէայքն ի գերութեան կախեցին զկտակարանքն ի յուռեաց, և ո՛չ հաւատային կենաց. որ ասէր կտակարանքն *պահել* զպատուիրանս աստուծոյ և կեալ: - 405. Եւ թէ *պահեալ* էր զպատուիրանն յաւիտեան անծերանելի էր կացեալ: - 411. Երկրորդ՝ զի չարչարակից եղև մովսէսի. *պահելով* զերեք քառասունս ընդ նմա: - 414. Երեսունն**զ**, *պահեցաւ* սուրն գողիաթու ի խորանն. և խաչն փրկական ի յեկեղեցի: - 437. Չորրորդ՝ զի առանց այլ մեղաց ո՛չ մեռցի. և ճշմարիտ *պահեաց:* - 439. Երկրորդ՝ զի հրեշտակք ի հարկէ բնութեան ունին զկուսութիւնն. իսկ աստուածածինն զայն *պահեաց* մաքրութեամբ մարմնով զկուսութիւն ողջախոհութեան: - 463. Երրորդ առ այսոքիւք՝ միաւորութիւն անուանեմք և զխառնուածս երկուց նայից ըստ զանազան որակութեանց. յորում ո՛չ ոք ի խառնեցելոցն զիւր ծայրագոյն որակութիւնն սեռաբար կարօղ է *պահել*...: - 476. Չորրորդ՝ միաւորութիւն ասեմք զոլ և զզանգումն որ ի նա է՛ և ի չորո՛յ բնաւորեցաւ լինիլ. յորում ո՛չ ամբողջ *պահի* բան որակութեանն: - 476. Եւ թէ *պահեալ* էր զպատուիրանն աստուծոյ՝ լինէր գիր կենաց դպրութեան: - 481. Եւ երբ ոչ *պահեաց*, գրեցաւ գիր մեղաց և դատապարտութեան: - 481. Այլ ա՛րդ՝ բանն աստուած եղև մարդ և անմեղ *պահեաց* զբնական կիրս...: - 492. Եւ դարձեալ՝ որպէս աստուծոյ կարողութեանն է զանմարմին հոգին հրով տանջել և զմարմինն անմահ *պահել* ի հուրն: - 504. Նոյնպէս և որ ոք յայս օրս *պահէ* և յամենայն կերակրոց չուտէ, կամ միս ուտէ, ընդ դատապարտութեամբ է: - 510. Եւ դարձեալ՝ ի քառասունս իւր ո՛չ եկեր ծուկն. և մեք զքրիստոսի քառասունսն *պահեմք* և ո՛չ զիրէիցն: - 510. Այսպէս և որդիքն սաւուղայ հարեալ նախանձու բևեռեցին զտէրն և խոցեցին նիզակաւ. և *պահէին* զգերեզմանն: - 513. Իններորդ, ասէ «մի՛ մերձենար», զի մարմինն այն պտուղ էր կանուխ դժոխոցն. և ինքն տէր մեր իբրև քահանայ նոր յամենայն ծեռաց *պահէր* զգուշութեամբ, զի *պահեսցէ* զնա ի ծեռինն որ կարօ՛ղ է ընդունել զայնպիսի պատարագն: - 517-518. Վասն այն ո՛չ ետ մարիամու մերձենալ. այլ *պահեաց* զնա բազկին այնմիկ որ նստոյց զնա ընդ աջմէ իւրմէ: - 518. Վկայութիւն պահոցն մեծի. և շաբաթու. և չորեքշաբաթին. և զի յինանցն ո՛չ *պահեմք:* - 527. Բարոյականն՝ նոյի, որ ի բարուց վարդապետեալ բնակէր ի յանապատ և *պահէր* զկուսութիւն **եճ** ամ: - 528. Այսուցիկ սուրբ հարց և սիւնհոդոսաց հնազա՛նդ եմք. և զնոցա կանոնքն ունիմք և զդաւանութիւն, և *պահեմք* մինչև յելս շնչոյ մերոյ: - 547. Եւ եբեր միայն *պահեաց* անխառնակ զնախնական լեզուն: - 551. Իսկ անօրէնութիւն է մեզ լուծումն պահոց աւանդեալ յառաքելոց անտի զերեք յիսունս և զչորեքշաբաթի և զուրբաթ. և զայլ

շաբաթապահս ի նիկիական ժողովոյն սրբութեամբ *պահել:* - 552. Զչորեքշաբաթս ո՛չ *պահել:* - 553. Վասն այն այլ վարդապետք կոչեն զայս ախտ՝ ծուլութիւն. զի **ծուլութիւնն յերկու իրաց երևի. մին որ յետս դառնայ ի հոգևոր բարւոյն և ծանրանայ ի գործելն. այսինքն *պահել*՝ աղօթել և այլն. և ըստ այսմ կոչի տրտմութիւն:** - 559. Իսկ ունակութիւն մեղացն է ի մէնջ և առ մեզ. զի կամաւորապէս կրեցաք և կամաւոր *պահեմք* ի մեզ: - 569. **Խորագիտութեամբ *պահէ* զինքն յայլ մարդոյ. և միամտութեամբն այլոց վնաս ո՛չ առնէ**: - 579. Եւ զդրունքն նոքա *պահեն*. և զեկեղեցին նոքա զարդարեն: - 608. Նոյնպէս և օրինաւոր ազգն խնամութեան, *պահի* մինչ ի **դ** ծնունդն: - 612. Երրորդ՝ զի մարմինք սրբոց ի գաւիթս *պահին* և ո՛չ յեկեղեցի. յօրինակ հոգւոց նոցա որք են ի պահեստ հոգւոյն ի տեղւոջ լուսոյ և հանգստեան: - 617. ...զի աբեղութիւնն կրօնաւորութիւն է. և կրօնաւորին պարտ է զամենայն զգայարանս ծածուկ *պահել:* - 635. Յայս միտս այլ ազգք միշտ ի վերայ գրակալին *պահեն* զգիրս. զի արժա՛ն է միշտ ուսանիլ: - 646. Ասեմք թէ՝ ծննդեան պահքն **ը** օր է. զշաբաթն և զկիրակէ *պահեաց*...: - 649. Նո՛յնդ է պատճառ և վասն յիսներեկին. զի յաղուհացն զշաբաթ և զկիրակէ *պահեաց*...: - 649. Եւ որ յինանցն *պահէ* մինչ ի համբարձումն, ընդ դէմ է կանոնաց հարցն և աւետարանին որ ասէ...: - 649. Դարձեալ, **ժ** շաբաթ պահոց այն է՝ որ մեծն ներսէս կանոնեաց յամենայն ամսամուտս *պահել* շաբաթ մի: - 650. Զոր այժմ *պահեմք* **ժ** շաբաթ **ժ** ամսեան: - 650. Եւ դարձեալ՝ յորժամ *պահեցաք* զշաբաթն, յաւարտումն զնոսա միջնորդ աղաչեմք...: - 650. Զի յորժամ ելին ի դրախտէն՝ **ե** օր անսւաղ *պահեցին:* - 650. Եւ նոյնպէս նինուէացիքն **գ** օր *պահեցին*. և երկուքն՝ չորեքշաբաթ և ուրբաթ: - 650. ...որպէս յառաջն ունէին ամենայն ազգք քրիստոնէից. և դեռևս *պահէ*՛ ազգն դպտի և հապաշի: - 650. Զի յառաջն զսոսա լուծանէին որք յառաջաւորացն ի վեր *պահէին* **հ** օր: - 651. Ապա պա՛րտ է քեզ ի փոքր կարգն ուտել զամենայն աւուրս և զմեծն *պահել:* - 651. Եւ թէ ոք ասիցէ, **խ** օր է պահոց. զի **խ** օր *պահեաց* քրիստոս. և կիրակէն ո՛չ է ի համարս: - 651. Ասեմք թէ՝ քրիստոս **խ** օր *պահեաց*, և **խ** օր է մինչ ի ղազարու տօնն: - 651. Նախ, զի առաքելական է աւանդ. որպէս ի հինքն զերկուշաբաթի և զհինգշաբաթի *պահէին*...: - 652. Չորրորդ յայտնի և հաստատուն, որ ամենայն ազգ քրիստոնէից *պահեն* զչորեքշաբաթն և զուրբաթն վասն խաչելութեանն որ սո՛ւգ է և պահք: - 652. Եւ օրն յորում պղծեցաւ, սրբութեամբ *պահեսցէ* զնա մինչ ցմահ իւր. և ապա՛ հաղորդեսցի: - 652. Եւ որ ոք ո՛չ *պահէ* որպէս ազգն Ֆռանկաց, ընդ անիծիւք է յառաքելական և հայրապետական կանոնաց: - 652. Իսկ վասն քառասնից պահոց, Նախ մովսէս *պահեաց* կրկին **խ** ի լերինն. և յեսու ընդ նմա: - 652. Այլ և եղիա *պահեաց:* - 653. Երկրորդ, յետ ելիցն ի դրախտին **ե** օր սուգ *պահեաց* անսուաղ...: - 653. Իններորդ, շաբաթուց շաբաթն զոր հրամայեաց *պահել:* - 653. Իսկ չորեքշաբաթն և զուրբաթն առանձին *պահել*...: - 653. ...և ուրբաթն՝ զի ադամ եկեր ի պտղոյն, և մեք *պահեմք* զնոսա: - 653. ...վասն որոյ *պահեմք* զչորեքշաբաթն. և ուրբաթն խաչելութեանն քրիստոսի. զի կցորդեսցուք խաչին: - 653. Հինգերորդ, ըստ անուանն. զչորեքշաբաթն *պահեմք*, զի ի չորիցս չարաց պահպանեալ լիցուք...: - 653. ...*պահեմք* զչորեքշաբաթն. և վեցիւք շարժմամբ ի մեղս ընթանամք, *պահեմք* զուրբաթն: - 653. Եօթներորդ, ի դէմս հոգւոյ և մարմնոյ մերոյ սրբութեամբ *պահեմք* երկու ի շաբաթուն: - 653. Իններորդ, ընկալաք կրկին օրէնս հին և նոր. վասն որոյ **բ** աւուրս սրբութեամբ *պահեմք:* - 654. ...բարեխօս դնելով զնոսա զչորեքշաբաթս և զուրբաթս *պահեմք:* - 654. Յինանցն ընդէ՞ր ոչ *պահեմք*. ո՛չ ուրբաթ և ո՛չ **դ** շաբաթի: - 654. Նա՛խ՝ որպէս աղուհացքն զշաբաթ և զկիրակի *պահել* ետ...: - 654. Երկրորդ, զի **ծ** օր *պահեցաք* վասն հոգւոյն...: - 654. ...ո՛չ *պահեմք* սուգ մինչ վերասցի և ապա՛ *պահեմք*. որպէս աւետարանն ասէ: - 654. ...թէ զպատուիրանս նորա *պահեմ*, և զայն կեանքն տայ: - 664. ...և *պահեմք* զմարմինն իբր զգանձ պատւական: - 677. Եւ զի *պահէ*՛ ո՛չ ուտիլ ի գազանէ, և ո՛չ ցրուիլ ի ջրոյ. և ո՛չ հոսիլ ի հողմոյ, և յայլոցն *պահէ:* - 678. Այլ և գանձարա՛ն է մարմնոյն. զի *պահէ*՛, և դարձեալ ի տէրն տայ: - 678-679. Ասեմք եթէ՝ մտանելն առ աստուած այն է՝ որ հեռանայ ի չարութեանց և լինի ի բարութեան և ո՛չ փոփոխի ի չար, աստուծոյ *պահելովն*...: - 695. Ասեմք առ այս, եթէ ո՛չ է *պահել* որպէս այժմ ի մարմնի. և ո՛չ առնուն որպէս ի կատարածի...: - 695. ...զի վասն անտի քաւարանին աստ ո՛չ *պահեն* և ո՛չ աղօթեն. և անդ ի դժոխս մատնին: - 698. Այլ հոգի դատարկ ի քաւարանին աչս ո՛չ ունի զի լացցէ որով յարատ հայեցաւ. և ո՛չ մարմին զի *պահեսցէ* և աղօթեսցէ. այլ և ո՛չ զղջումն. զի հոգին ինքն ըստ ինքեան ո՛չ կարէ զղջալ: - 699. ...և էր կոյս ըստ որում *պահեաց* զմաքրութիւնն. վասն որոյ նմանակիցք նորին՝ թագիւ պսակին ընդ նմին: - 712. Եւ այսպէս հսկել և *պահել* զտունս մեր, զի մի՛ գող մահուն և կատարածի՝ գտեալ զմեզ անպատրաստ ի մեղս՝ տանիցի զհոգիս մեր ի տանջանս յաւիտենից: - 730. Երկրորդ՝ զի աստուած

զամենայն արարածս կրէ բանիւ զօրութեան իւրոյ ասէ առաքեալն և ի նոյնութեան *պահէ*. և սոքա *պահին* առանց միաւորութեան էութեան նորա: - 733. Հինգերորդ՝ զի ո՛չ ոք ապականացու զայլ ոք ամբողջ կարէ *պահել* որպէս յայտ է ի նիւթական իրս ամենայն: - 733. Արդ նա՛ որ զամենայն գերեզման կնքեալ *պահէ*, զեկեղեցիս օրհնէ՛ և հաստատէ՛ և ամենեցուն զօրաւիգն է ի փորձութիւնս, կարօ՛ղ է անապական լինիլ. զի աստուածային է նշան: - 733. Որք առին զօրէնս և ո՛չ *պահեցին*. որպէս չար քրիստոնեայք ի նորս և չար հրէայքն ի հինն. նոցա ասացի «երթա՛յք յինէն ա՛նիծեալք ի հուրն յաւիտենից»: - 739. Նախ՝ կոչի սիրտ և անձինք մեղաւորաց, ուր ժողովին ամենայն գործք չար որ է՛ խաղող դառնութեան. և ունակացեալ *պահէ* յինքեան. և հեշտութեամբն ծմլէ հանապազ և արբենայ մեղացն գինով: - 748. Ասեմք առ այս, եթէ առաջին կեանքն դրախտին ո՛չ զայն իմանան վարդապետք զոր ունէրն ադամ. այլ զոր խոստացաւն ադամայ եթէ *պահեալ* էր զպատուիրանն. որ նոյն ինքն է արքայութիւնն երկնից ի տեղի անկելոց հրեշտակացն: - 758. Զի կարէր կորուսանել մեղօք, և կարէր *պահել* անմեղութեամբ. որպէս զանմահութիւն և զայլսն: - 783. Ասեն զայս՝ անընտել գոլ սնուցողականին, յապաղելով աւելի *պահէ*: - 785. Որ և զայս թիւ խորհրդոյ *պահէ՛* յինքեան ամացն շրջագայութիւն: - 785. Տարորոշումն խառնեալ տարերց. և լաւին և վատթարին. զոմանս *պահել* և զոմանս վտարել: - 786. Սաստկագին գոչմամբ. և ահագնատեսիլ սուսերամերկ կորովալից նետողաց. որ պատեալ *պահեալ* պաշարէին զմեզ: - 789

**ՊԱՀԵՍՏ +** Երրորդ՝ զի մարմինք սրբոց ի գաւիթս պահին և ո՛չ յեկեղեցի. յօրինակ հոգւոց նոցա որք են ի *պահեստ* հոգւոյն ի տեղւոջ լուսոյ և հանգստեան: - 617. Ո՞ւր է կայանք հոգւոցն և *պահեստ*: - 686. Վարդապետք սուրբք՝ *զպահեստ* հոգւոց յերիս փոփոխմունս գիտեն. այսինքն նախ քան զքրիստոս. և յետ քրիստոսի. և յետ դատելոյն: - 686. Զի թէպէտ անդ ո՛չ է փառք, այլ և ո՛չ տանջանք և չարչարանք գոյ. վասն այսորիկ առ աստուած ասէ որք են ի *պահեստ* հոգւոցն: - 695

**ՊԱՀՈՂ +** Եւ ասաց ինքն *պահողացն* զպատուիրանս, «ես և հայր առ նա եկեսցուք՝ և օթևանս առ նմա արասցուք»: - 71. Չորրորդ՝ ի ցուցանել զարդար վճիռ հատուցմանն. *պահողացն* ըզվայելս դրախտին և զանմահ կեանս. և ոչ *պահողացն* զարտաքսիլն և զմահու մեռանիլն: - 277. Նա՛խ ցուցանէ՛ թէ՝ ձեռքդ այդ գրեսցէ օրէնս որով սրբին *պահօղք*, և պղծին ո՛չ *պահօղք*: - 332. Իսկ վկայութիւնն որ է՛ տախտակքն օրհնաց. զի վկայե՛ն *պահողացն* բարիս. և ոչ *պահողացն* պատիժս: - 345. Եւ այս պատուիրանս՝ տայ *պահողացն* օրհնութիւնս. և ոչ *պահողացն* անէծս: - 403. Արդարութիւն է զօրութիւն *պահօղ* զմարդկային ընտրութիւնն: - 579. Երկրորդ, պատուիրանն աստուծոյ և օրէնքն է վկայ *պահողացն* և անարգողացն զնա: - 743. Եւ վասն այն ասի արքայութիւնն աստուծոյ, զի պատուիրանօքն որ յաւետարանն կամ յայլ գիրս սուրբս գտանին, *պահողացն* արքայութեանն մուտ բացեալ լինի. և ներքին մարդս ամրացեալ հաստատի: - 754

**ՊԱՀՊԱՆԱՊԵՏ +** Երրորդ՝ զի հանգիցէ երկիր և տարերք որ ի չար գործն մեր չարչարին. այլ և *պահպանապետ* հրեշտակք նոցա: - 372

**ՊԱՀՊԱՆԵՄ +** Երրորդքն *պահպանեն* զիւրաքանչիւր անձինս, որպէս ռափայէլ: - 136. Այսպէս հայցէր մարգարէն *պահպանիլ* յաստուծոյ...: - 239. Հինգերորդ, ըստ անուանն. զչորեքչաբաթն պահեմք, զի ի չորիցս չարաց *պահպանեալ* լիցուք...: - 653

**ՊԱՀՊԱՆՈՂ +** Դարձեալ՝ փորձիչս այս փառասիրութեամբ յառաջեաց առ քրիստոս. ուստի և ի բանից իւրոց երևի թէ ամենայն պատուիրանացն *պահպանօղ* եմ. զոր տէրն պակաս լինել յանդիմանեաց: - 47. Սոքա ի յանբանսն ո՛չ միայն գո՛րծ են, այլ և *պահպանօղ* նոցա: - 563. Իսկ գործս այսորիկ որ նոցա *պահպանօղք* են՝ մեզ կորուստ և մեղք են: - 563

**ՊԱՀՊԱՆՈՒԹԻՒՆ +** Զի և յօհան դամասկացին ասէ հարկ գոլ ամենայն սկզբման ունել դադարումն. այլ զի հրեշտակք և հոգիք ոչ դադարին, այս կամա՛ցն աստուծոյ է *պահպանութիւն*, և ոչ բնութեան նոցա. զի յո՛չ էից եղեալքն՝ կարեն յոչ էութիւն փոխիլ: - 37. Իսկ այլք՝ հոգի զհրեշտակական հոգին ասեն. որ տըւեալ է առ ի *պահպանութիւն* մեզ. զի նա ուղղէ զմեզ ի բարիս, և զաղօթս մեր մատուցանէ աստուծոյ: - 59. Զի *պահպանութիւն* օրհնացն՝ մարդոյս է՛ զէն պատերազմի: - 151. Ութերորդ՝ ո՛չ արար նախ զմարդն, զի մի՛ արարչակից գիտասցէ զինքն ոչ գոյիցն, և անկցի հպարտութեամբ. այլ գործօղ գոյիցն, զի կացցէ *պահպանութեամբն*...: - 231. Տե՛ս, զի յայտնապէս ցուցանէ սուրբն, զի թէ *պահպանութեամբ* կացեալ էին ի դրախտին, ո՛չ ևս ամուսնութեամբ լինէր աճումն: - 280. Հինգերորդ՝ վասն զինուց և *պահպանութեան*: - 281. Եւ ի *պահպանութիւն* աշխարհին հրէից՝ առաքեաց

սաղմանասար յերկրէն ասորւոց պանդուխտս որ բնակեցան ի սամարիայ և սամարացիք կոչեցան: - 447. Իսկ բանն աստուած մարդացեալ` էութեամբ է առ հայր. *պահպանութեամբ* ի բոլոր էակքս. շնորհօք յամենայն սուրբս. և բնութեամբ ի մարմնի միաւորեալ: - 478. Եւ թէ ցանկայ ստորև հեշտալեաց, և այս լինի կրկին. թէ հեշտալին այն է ի *պահպանութիւն* անհատին, լինի որկորստութիւն...: - 561. ...զի անկարգ յօժարի ի կերակուրն. և թէ է ի *պահպանութիւն* տեսակին, լինի բղջախոհութիւն. զի անկարգ յօժարի ի պոռնկութիւն: - 561. Եւ մասունք արդարութեան են **գ**. այսինքն կրօնաւորութիւն. գթութիւն. շնորհ. վրէժխնդրութիւն. *պահպանութիւն*. և ճշմարտութիւն: - 579. *Պահպանութիւն* է որք արժանաւորին մարդկան պատուոյ իմն և պաշտաման: - 579. Երրորդն ասեն եթէ` **բ** ազգն գեբսոնի և **բ** գունդն մերարեայ` գչորս փոքրիկ աստիճանս ունէին ի խորանն. *զպահպանութիւնն* մինչ ի ջահընկալն որ զաշտանակն բառնային. և որդիքն կահաթու էին բարձրագոյնք: - 609. Այլ և խաղաղականն որ է ի կարդալն` է՛ է փոխ. ի *պահպանութիւն* է զգայարանցս. և ի մաքրութիւն անցեալ գործելեացն: - 622. Եւ հրեշտակ բարի նախ կարգեսցի ի *պահպանութիւն* նեռին...: - 707. Որք արտաքոյ օրինաց մեղանչեցին որպէս կռապաշտք` և հրէայքն որք յետ խաչելութեանն քրիստոսի. զի յետ խաչին *պահպանութիւն* օրինացն ի կռապաշտութիւն է համարեալ նոցա: - 739

**ՊԱՀՔ +** *Զպահս* լուծեալ ի միս ձկան, և նաւակատեաց զմիս առանց ոսկր ուտեն: - 34. Զի թէ մարմնապէս տեսանես. ուրախութեան էր ժամանակն գալստեան և ո՛չ սգոյ որ է *պահք* և ապաշխարանքն: - 44. Եւ թէ բան իմանաս` և ոչ *պահքն* պատշաճ էր սրբեցելոցն բանիւն...., զի *պահքն* զոչ սուրբն սրբէ. իսկ նոքա զի սուրբք էին ոչ պատշաճ *պահքն*. վասն այն ո՛չ կարէին: - 44. Իսկ միւսն է ընդ ծագումն լուսոյն. յորում *զպահք* և զուտիք բաժանեն. այսինքն լոյսն և գիշերն: - 194. ...**բ** *պահք* ո՛չ կարեն համանգամայն գոլ: - 199. Հինգերորդ` զի կարէ՛ մարդ ներհակ սովորութեամբ *պահոք* և աղօթիւք և կրթութեամբ մարմնոյ սանձել յինքեան զայսպիսիս նշանաց գործ: - 246. Դարձեալ` *պահոք* և աղօթիւք հնար է յաղթել փորձողին. որպէս տէրն ասէ թէ` «այս չար ո՛չ իւիք ելանէ՛, եթէ ոչ *պահոք* և աղօթիւք»: - 324. Ասեմ` թէ *պահոք* և աղօթիւք հեռանայ ի մարմնոյ մարդոյն և ո՛չ լլկէ: - 324. Նախ` ուղղութիւն ընկերաց. **բ** գոհութիւն և համբերութիւն. **գ**` իմանալ զչար խորհուրդն սատանայի. **դ**` աղօթք և *պահք*. **ե**` խոնարհութիւն և ճշմարտութիւն. որ գերագոյն է ամենայն զինուց և իսպառ կորուսանէ զչար որ մայրն է ստութեան և հպարտութեան: - 324. Այսպէս յետ **ծ** աւուրց տւաւ օրէնքն. և **ձ** օր *պահքն* երեքօրեայ սրբութիւն: - 344. **Երկրորդ` օրինաւոր ամուսնութիւնն պատուական է վասն որդեծնութեան. այլ ո՛չ է նա՛ առաքինութիւն. որպէս կուսութիւն, *պահք* և աղօթք**: - 356. Սա՛ փոխեալ ի նորս նշանակէ՛ զմարմնաւոր նուէրքս. որպէս *պահք* աղօթք, ողորմութիւն: - 357. Ա՛յս է` հանապազ աղօթք, *պահք*, ողորմութիւն, և այլն: - 363. Եւ զալստեան հոգւոյն` հոգեպէս *պահոք* և հոգևոր երգով տօնեմք: - 373. Նոյնպէս և մեք ի յառնուլ զհոգին սուրբ *պահօ՛ք* տօնեմք: - 373. Այլ ըստ ոմանց` տօն քաւութեան որքազործութեանն, նշանակէ ի մեզ զտօն մեծ քառասնորդացն *պահոց:* - 373. Որ զգործեցեալ մեղս ապաշխարութեամբ քաւեմք. ճնշելով զանձինս մեր *պահոք:* - 373. Որպէս նոքա ի սկիզբն քաւութեան *պահոք* խոնարհեցուցանէին զանձինս: - 373. Այսպէս և մեք խոնարհ մտօք և ուրախ սրտիւք տօնեմք զտօն *պահոցն:* - 373. Տասներորդ` զի ծուլացեալ է և ծանրացեալ յառաքինութիւնսն. ի *պահս*` յաղօթս` և յայլս: - 377. Զի *պահքն* և աղօթքն խո՛յ է աստուծոյ. և ողորմութիւնն տուգանք. և ամենայն ապաշխարութիւն սրբօք կատարի: - 384. Դարձեալ` **խը** քաղաք` մեծ *պահքն* է քառասնիցն: - 392. Որ է՛ *պահք*, աղօթք, ողորմութիւն: - 392. Անսուաղ` *զպահքն* քառասնօրեայ: - 491. Բնական օրն է մարմնաւոր. որ բաժանէ *զպահս* և զուտիսս: - 508. Տե՛ս զի ի ժողովն եփեսոսի հասարակ ամենայն ազգ այսօր նաւակատիս առնէին մինչ ի ժողովն քաղկեդոնի ուր փոխեցան տօնք և *պահք* և դաւանութիւնք: - 509. Թէպէտ այսօր վասն պատրանաց մարդկան և փոխելոյ զտօնս` ոչ ինչ ուտեն զնաւակատեաց որ է ձուկն. զոր միշտ զքառասնորդ *պահս* պղծեալ են ձկամբ և արբեցութեամբ: - 509. Եւ զի **գ** է օր ի բոլոր տարին. կամ ամենևին *պահք*. կամ ուտիք. կամ միջակ. որպէս նաւակատիկք: - 510. *Պահքն* վասն հոգւոյն պատշաճի. և Ուտիքն մարմնոյն. իսկ Նաւակատիքն վասն խառնեալ շնչոյն: - 510. Եւ վա՛յ ասեմ որովայնամոլ ազգացն որք զամենայն *պահս* լուծանեն ի ձուկն անխտիր. որոց աստուած որովայնք իւրեանց է և փառք ամօթն ըստ առաքելոյ: - 510. Ապա թէ ոչ` և զառն կերաւ ի վերնատանն, կե՛ր և դու ի *պահոցն:* - 510. Ասեմք թէ և այդ ևս է սուտ պատճառ. զի հրէից նախ զատիկն էր և ապա բաղարջակերքն *պահք:* - 510. Նա՛խ` զի յետ յարութեանն ո՛չ էր *պահք*. այլ զատիկ մինչ փեսայն ընդ

նոսա էր որպէս ինքն հրամայեաց: - 511. Յինգերորդ ասեն, զձուկն ո՛չ զենումք վասն այն ի պահոց ուտեմք: - 511. Ասեմք թէ՝ և զձու հաւի և զկաթն ո՛չ զենումք, կե՛ր և զայն ի պահոց. զի համատեսա՛կք են: - 511. Յիսունք, Վասն պահոց բոլոր տարւոյն. և Առաջաւոր պահքն: - 527. Եւ պահոցն ո՛չ տօնեմք: - 527. Յիսունգ, Վկայութիւն պահոցն մեծի. և շաբաթու. և չորեքշաբաթին. և զի յինանցն ո՛չ պահեմք: - 527. Եւ մի է ըստ ձևոյն արարողութեան պահոց աղօթից որպէս անհատիւ: - 533. Յաղագս որոյ ո՛չ կարեմք զառաջնոյն հայրապետաց կարգ կամ զկանոնս զպահք կամ զայլ ինչ թիւրել և փոխել: - 541. Եւ լուծին զպահքն ի ձուկն և ի միս: - 547. Ա՛րդ՝ զի՞նչ կամիս որ հնազանդիմք պետրոսի. ուրանա՞լ պարտ է զքրիստոս որ լինիմք հնազանդ պետրոսի, եթէ եղծանել զպահքն, թէ զամենայն պիղծ կերակուր ուտել...: - 548. Իսկ անօրէնութիւն է մեզ լուծումն պահոց աւանդեալ յառաքելոց անտի զերեք յիսունս և զչորեքշաբաթի և զուրբաթ. և զայլ շաբաթապահս ի նիկիական ժողովոյն սրբութեամբ պահել: - 552. Այլ արդ լուծումն պահոցս այսոցիկ օրէնք է նոցա. նաև ի ձուկն և ի ձէթ և յայլ սոյնպիսիս: - 552. Զսկիզբն պահոցն լուծանել: - 553. Եօթներորդ՝ ի պահս և յաղօթս և յայլ աւանդութիւնս բազում ունել որոշումն: - 553. Եւ յետոյ դնէ ապաշխարանք թէ զինչ կերպիւ պատեհ է. պահք. թէ աղօթք. թէ ողորմութիւն. պատարագ. և այլ զինչ զոր կարօղ իցէ...: - 602. ...աստուծոյ մնայ պատիժն զոր պահօք և աղօթիւք վճարէ որպէս ասեն ոմանք: - 602. ...որպէս այնք որք խոստովանին ի մուտս քառասնորդաց պահոց. որպէս ասէ եսայի: - 602. Եւ երկրորդ խոստովանութիւնն է՝ որք նախ ապաշխարեն պահօք և ճգնութեամբ...: - 602-603. Այլ գ թագաւորքն պահոց, և գ տուն յուտիքն, ի դէմս սուրբ Երրորդութեանն: - 628. Եւ ի պահքն առաւել ձայնաւորքն քան զերգս. զի յաւուրս պահոց՝ հրեշտակաց նմանիմք, և յուտիքն մարդկան: - 628. Իսկ ի պահս ո՛չ խունկ և ո՛չ օրհնութիւն. զի ընդ ապաշխարութեամբ եմք, ո՛չ իշխեմք գոհանալ և ո՛չ ունիմք անուշահոտ վարս: - 628. Նա՛խ՝ երեխայքն ուխտեցին հրաժարիլ ի սատանայէ՛. և ի մեծի զատկին մկրտելովն իէլ. և ապա ուխտ ապաշխարութեան պահոցն. և յարութեանն տեսանել զքրիստոս. աստ և անդ: - 629. Եւ այսպէս ի պահոց թագաւորքն նշանակի: - 641. Այլ և բոլոր ամենայն տնօրէնութեանցն պատմօղ. վասն այն յամենայն օր ի տօնս, ի պահս, և յուտիս, ի շաբաթս, և ի կիրակէ, զնա՛ ընթեռնումք: - 644. Վասն է՞ր ուրօրէք միայն ծննդեանն է և յարութեանն առանց պահոց չորեքշաբաթի և ուրբաթի: - 649. Ասեմք թէ՝ ծննդեան պահքն ը օր է. զշաբաթն և զկիրակէ պահեաց...: - 649. Այսինքն երեքն ի մին շաբաթն. որ է՛ Պահոց, Մարտիրոսաց, և Կիրակէն այլածն կարգ. Առաջաւորացն. Աղուհացիցն. և Յինանցն կարգ: - 649. Ի տարին քանի՞ օր պահք է: - 649. Ո՛րչափ ուտիք է, նոյնչափ պահք է: - 649. Զի հոգի և մարմին եմք. ուտիքն է մարմնոյ, և պահքն հոգւոյ հեշտալի: - 649. Վասն որոյ կարգեցին առաքեալքն և հարքն՝ ճճ օր պահք. և նոյնչափ ուտիք: - 649. Զի կ օր ուրբաթ և չորեքշաբաթի և գ քառասունք պա՛հք է ի բոլոր տարին: - 649. ...որ լինի իզ շաբաթ պահք ի տարին: - 650. Դարձեալ, ժ շաբաթ պահոց այն է՝ որ մեծն ներսէս կանոնեաց յամենայն ամսամուտս պահել շաբաթ մի: - 650. Պահք օրն վասն է՞ր ո՛չ տօնեմք: - 650. Իսկ պահքն սուգ է և ապաշխարութիւն վասն յանցանաց նախաստեղծիցն...: - 650. ...և այլ պահք ամենայն վասն ներգործեալ մեղաց մերոց: - 650. Դարձեալ՝ որ քան եմք ի պահքն ընդ ապաշխարութեամբ եմք և ո՛չ եմք արժանի տօնել սրբոց...: - 650. Վասն է՞ր ասեմք պահք սուրբ սարգսի և սուրբ գրիգորի և սուրբ յակոբայ և այլոց: - 650. Ամենայն պահք աստուծոյ է և ո՛չ մարդոյ...: - 650. ...այլ զպահքն այսպիսի անուամբ ճանաչեմք: - 650. Զի յաւարտումն պահոցն նոցա տօնեմք...: - 650. ...վասն որոյ պահքն յանուն նոցա կոչի: - 650. ...զի նոցա բարեխօսութեամբն ընկալցի զպահքն մեր: - 650. Զի այն պահքն յառաջ քան զգիրս և քան զմարգարէս ի նախահարցն եղաւ: - 650. Եւ յորժամ մերն լուսաւորիչ ել ի վիրապէն, ե օր պահք կարգեաց և ապա՛ բժշկեաց ի հարուածոյն...: - 650. Եւ դարձեալ՝ առաջաւոր կոչի, զի սա՛ է առաջին շաբաթ մեծի պահոց աղուհացիցն...: - 650. ...մնաց շաբաթս այն անփոխ և առաջաւոր պահք և մուտ աղուհացից պահոցն: - 650. Այլ ի ժողովն նիկիոյ քարոզեցաւ պահք, բայց պատարագ մատչիլ: - 651. Վասն է՞ր ազգն Ֆռանկաց զերկու օր պահոցն լուծանէ: - 651. Զսկիզբն պահոցն մեծի՝ կիրակէն է ...: - 651. Եւ զայս ունին սկիզբն և հիմն պահոց ամենայն ազգ քրիստոնէից զոր նոքա լուծանեն: - 651. Եւ թէ որ ասիցէ, խ օր է պահոց. զի խ օր պահեաց քրիստոս. և կիրակէն ո՛չ է ի համարս: - 651. Նոյնպէս և առաջին շաբաթն պահոց՝ մեզ մուտէ խ աւուրցն...: - 651. Եւ այսպէս բազում են խորհուրդ քառասնորդացն. և ըստ խորհրդոցն պահքն ո՛չ լուծանի: - 651-652. Եւ թէ կիրակէն ո՛չ է պահք որպէս զերկու աւուրքն լուծանեն, նոյնպէս և զկիրակէն լոյծ: - 652. Եւ ո՛չ միայն լուծանեն զսկիզբն մեծի պահոցն, այլ և զամենայն չորեքշաբաթս որ յառաքելո՛ցն է կանոնեալ,

լուծանեն ի բոլոր տարին, և լինին ընդ անիծիւք նոցին: - 652. Եւ զի ճշմարիտ *պահք* է չորեքշաբաթն որպէս ուրբաթն յայտ է...: - 652. Չորրորդ յայտնի և հաստատուն, որ ամենայն ազգ քրիստոնէից պահեն զչորեքշաբաթն և զուրբաթն վասն խաչելութեանն որ սո՛ւգ է և *պահք:* - 652. Ահա՛ ա՛յս է կանոնք վասն *պահոց* չորեքշաբաթի և ուրբաթի: - 652. Ուստի՞ ունիմք վկայութիւն վասն *պահոց:* - 652. Խորհուրդ *պահոց* նախ ի դրախտին եդաւ մարդոյն. յամենայնէ ուտել և ի միոյն չուտել: - 652. Իսկ վասն քառասնից *պահոց*, Նախ մովսէս պահեաց կրկին խ ի լերինն. և յեսու ընդ նմա: - 652. Դարձեալ, **խը** քաղաքն ապաստանի, նշանակէ՛ զմեզ *պահքն* **խը** օր: - 653. Նախ արարչութեանն շաբաթ՝ էր սրբութիւն և *պահք* մինչև ստեղծաւ ադամ և ելոյծ *զպահքն:* - 653. Այլև **է** օր տաղաւարահարացն նշանակէ՛ զսրբութիւն *պահոց* շաբաթոյս...: - 653. Իսկ ճշմարտութիւնն ի մեզ, վասն **ե** զգայարանացս սրբութեան. որով մեղանչեմք՝ սրբիմք *պահօք* և ապա՛ սրբոցն ի բարեխօս մեզ: - 653. Այս քան վասն Աղօթից և Կարգաց եկեղեցւոյ և *Պահոց:* - 654. Որպէս ասաց հրեշտակն եղիայի, «արի՛ կե՛ր և ա՛րբ. զի ի բազմօրեայ ճանապարհ ես ընթանալոյ». որ է՛ քառասունք *պահոցն:* - 657. Նոյնպէս և բարեկենդանս. զի ի լեառն *պահո՛ց* ելանեմք: - 657. Նա՛խ՝ նշանակէ՛ բարեկենդանին արձակութիւնն *զպահոց* նեղութիւնս...: - 657. Իսկ *պահքն* զկենաց կարօտութիւնս զայս: - 657. Իսկ *պահքն* զչարութիւնն. զի նուազի և կարօտի հոգին յամենայն բարեաց. որպէս ի պահոց մարմինն: - 657. Իսկ պահքն զչարութիւնն. զի նուազի և կարօտի հոգին յամենայն բարեաց. որպէս ի *պահոց* մարմինն: - 657. Եւ դարձեալ, զի ի **խ** օր *պահոցն* մինչ ի յարութիւնն ղազարու այլ հանգստեան ո՛չ տօնեմք: - 684. ...և Ակն պատուական՝ գործ մարմնոյն. *պահք,* աղօթք, ողորմութիւն, և այլն: - 702. Յաւատացեալ արդարք. որք ըստ օրինաց հնոյն կամ նորոյս գործեցին զարդարութիւն. կամ որք սխալեցին և ապաշխարեցին զմեղս զղջմամբ խոստովանութեամբ *պահօք* աղօթիւք ողորմութեամբ և այլովք: - 739

**ՊԱՂ +** Յարաւայինք որք Նոտոսք կոչին, Այն որ մերձ յարևելս է, Եւրո՛ նոտոս կոչի. հալէ՛ *զպաղս:* - 206

**ՊԱՂԱՏԻՏ +** Նաև *պաղատիտս* թզոյ եդաւ ի վերայ վիրացն եզեկիայի և ողջացաւ: - 665

**ՊԱՂԷՍՏԻՆ** - Ասեն թէ՝ գոն ա՛յլ հոմանուն մասիս և արարատ. որպէս կորդւաց լեառն և ի *պաղէստին* և ի գամիրս: - 294

**ՊԱՂԻՄ +** Եւ ի հիւսիսոյ հողմոյն որ կոչի ապարքտիաս՝ լինի *պաղուցեալ:* - 205

**ՊԱՂՊԱՋ +** Իններորդ, բորն **գ** ազգ է. սպին սպիտակ շիտ. և պալար միատարր. և *պաղպաջ* շիտ աստ և անդ. որ է՛ մտաց և հոգւոյ և մարմնոյ մեղքն: - 367

**ՊԱՂՏԱՍԱՐ** - Եւ մինչ օգտիցիս անաշխատ գտմամբ, զաշխատօղ ցանկիս՝ և զսրբագրօղ Գրքոյս, *զպաղտասար* մեղսալի անձն իմ իմայնովքս հանդերձ, միով Յայր մերիւ յիշեսջիր ի տէր: - 808

**ՊԱՄՓԻՒԼԱՑԻ** - Իսկ զսըքեմայ կարգն՝ սուրբն դիոդորոս եպիսկոպոս *պամփիւլացոց* քաղաքի. յառաջին ամի իւրոյ. հրամանաւ մեծին անտօնի և **բ** թեբայեցոցն. և **բ** սկիւթացւոց լերինն: - 659

**ՊԱՅԾԱՌ +** Իսկ երկրորդն՝ հաւատոյն *պայծառ* և լուսաւոր տեսութիւն: - 119. «Աստեղս» զհրեշտակս կոչէ վասն բարձրութեան և *պայծառ* լուսոյն որպէս հրեշտակք ի յերկինս: - 152. Զորօրինակ լոյսն որ մինևնոյն է, այլ *պայծառ*՝և բժոտեալ ակն ոչ միապէս տեսանէ: - 166. Իսկ երկրային լոյս՝ է ճրագն և *պայծառ* օդն և լոյս աչաց: - 185. Նոյնպէս և լուսինն. զի այն որ *պայծառն* է՝ կերպարանք երկրի է. և աղտն՝ ծովուց: - 187. Նա՛խ՝ զի *պայծա՛ռ* է լոյսն: - 196. Եւ այն որ կրկին լինի, ներքին *պայծառն* է տիպ յարեգակնէն. և վերին նուազն զտիպ ներքնոյն է ընկալեալ: - 203. Երրորդ՝ զի *պայծառ* և լուսաւո՛ր է: - 206. Եւ զի անմեղ մարմինն ադամայ՝ անչարչարելի և երագ և *պայծառ* և թեթև էր, որպէս ասէ աստուածաբանն գրիգոր: - 228. Աչք որպէս *զպայծառ* շիտ լուսաւոր՝ նշանակէ՛ զիամեստն: - 246. Զոր յանմեղութեանն էր մարմինն ադամայ անչարչարելի և երագ և *պայծառ* և թեթև: - 282. Իսկ աստեղք՝ ծնունդքն իսահակայ *պայծառ* վարուք և երկնընթացք որպէս մարգարէքն՝ քահանայքն՝ և ընտրեալ թագաւորք՝ և այլքն: - 303. Է՛ և այլ իմն *պայծառ* տեսութիւն այսմ բանի. զի զգեստ և տաճար կոչի մարմինն ստուգապէս ո՛չ աստուածութեանն քրիստոսի՝ որ ո՛չ բաժանեցաւ ի մարմնոյն ոչ ի մահ և ո՛չ ի գերեզմանն: - 319. Այսմ պատասխանէ *պայծառ* ջահն եկեղեցւոյ սուրբն յոհան ոսկեբերանն...: - 467. Գրէ կարգս կանոնականս **իդ** գլխօք. և հաստատէ՛ զեկեղեցի *պայծառ* կարգօք և ուղղութեամբ: - 545. Եւ գիտելի է, զի յետ օծանելոյն զգեցուցանեն զհանդերձս *պայծառ*. որ զլուսաւոր վարս և *զպայծառ* հաւատս և զանմեղութիւնն նշանակէ: - 594. Որ էր յերկինս երկնից բանն աստուած, ի *պայծառ* և լուսաւոր դասուց հրեշտակաց օրհնաբանեալ...: - 621. Եւ բամպակ երեսացն՝ *զպայծառ* հաւատն: - 671. Ութերորդ, զի որակ եկրի խաւար է և սեաւ. և ո՛չ է *պայծառ* որպէս այլքն...: - 678. ...և

Դարձեալ, Ոսկի է հաւատն սուրբ. և Արծաթ յոյսն *պայծառ:* - 702. *Պայծառ* հանդերձն զոր զգեցեալ են՝ շնորհացն քրիստոսի մաքրութիւնն է յոր ամենայնքն վայելեցաք...: - 712. Երկրորդ զի սպիտա՛կ է. նշանակէ՛ *զպայծառ* առաքինութիւն նոցա: - 712. Առաջին պակասութիւն է հոգւոյն իմացականին խաւարն և տգիտութիւնն. իսկ ի յարութեանն բառնի այս ի հոգւոյն և լինի լոյս *պայծառ*՝ և գիտութիւն աստուածային տեսութեանն...: - 722. Երրորդ՝ տիւ ասի *պայծառ* լուսոյն գիտութեան հասումն. և գիշեր ծածուկ խորոցն աստուծոյ անգիտութիւն անհասիցն: - 750. Այլ և ծաղիկ՝ *զպայծառ* և զանուշահոտ վարս առաքինութեան. և պտուղ՝ արդիւնքն ըստ գործոց. յորմէ փրկութիւն եղև ամենայն աշխարհի և վայելչութիւն արքայութեանն երկնից: - 768

**ՊԱՅԾԱՌԱԳՈՅՆ +** Նոյնպէս երևմամբ չարեացն՝ արդարքն *պայծառագոյն* երևեսցին: - 149

**ՊԱՅԾԱՌԱԽՕՍՈՒԹԻՒՆ -** Զի լոյս Բանին և *պայծառախօսութիւն* ի խելքն ծագէ. և Իմացականն՝ ի միջին փորուած գլխոյն: - 250

**ՊԱՅԾԱՌԱԿԵՐՊՈՒԹԻՒՆ +** Որպէս և ո՛չ բարկանայ վասն *պայծառակերպութեանն* իւրաքանչիւր ոք յայլում ժամու տօնել: - 554

**ՊԱՅԾԱՌԱՄԻՏ -** Այլ դու ո՛վ այրդ աստուծոյ մաքրամիտ և ճգնազգեաց միայնաւոր սուրբ հայրդ սահակ, թէ և զիջանես եղբայրական սիրով խնդրել բանս ի մէնջ. սակայն կարող ես և զթերին լնուլ և զյաւելորդն կշռել. և զմեզ օգտեցուցանել ի ներգոյէ՛ քոյին *պայծառամիտ* սրբութեան սրտի: - 558

**ՊԱՅԾԱՌԱՆԱՄ +** Դարձեալ *զպայծառացեալսն* մկրտութեամբ որպէս զաստեղս և յերկինս եղեալ զխորհուրդս իւրեանց: - 152. Վեցերորդ՝ որքան յամէ՝ լոյսն *պայծառանայ*, և խաւարն նուազի՛: - 196. Տասներորդ՝ յորժամ ջնջի ամպն, վերըստին *պայծառանայ* օդն յառաջին մաքրութիւնն իւր: - 206. Նախ ի գեղեցկութիւն լեզուին. զի որպէս գոյն առ գունով *պայծառանայ*, և արուեստ առ արուեստ: - 297. Զի հա՛յր ասէ զնա մարգարէն՝ հանդերձեալ աշխարհին աստեղափայլ *պայծառացելոցն* լուսաճաճանչ սլացմամբ: - 306. Մետասաներորդ՝ յօրինակ տեառն որ *պայծառացաւ* ի թաբօր: - 352. Եւ ապա՛ *պայծառանայ* տեսութիւն մեր դէմ յանդիման տեսութեանն աստուծոյ: - 353. Եւ զքառասունսն պահեաց. և *պայծառացաւ* ի թաբօր. և այլն: - 399. Եւ զայս հրոյ իմանի որ առ գալստեամբն քրիստոսի ոմանց մաքրութիւն ներելեացն լինիլ և առաւել *պայծառանալ*. որք ոսկի և արծաթ և ականս պատուականս շինեցին: - 488. Սրբութիւն սրտին է որով *պայծառանայ* և մաքրի սիրտն առ ի տեսանել զաստուած. և առ ի սիրել յոյժ ջերմ եռանդապէս: - 585. ...մինչ դարձեալ միաւորի ընդ մարմնոյն. և իբրև զարեգակն *պայծառացեալ* ծագէ ընդ քրիստոսի: - 681. Ի մարմնոյ բաժանեալ հոգին *պայծառանայ* տեսութեամբ. որպէս որք ի խաւար բանտից ազատին: - 685. Եւ ի յայս հուրս անցեալք՝ որ զգեցեալ են ոսկի՝ արծաթ՝ և ականս, առաւե՛լ *պայծառանան:* - 702. Երկրորդ, նոքա զարդարս ո՛չ ասեն անցանել ընդ հուրն. այլ ոսկեբերանն ամենեցուն անցանել և *պայծառանալ* ասէ: - 702. Կամ ոսկի՝ արծաթ՝ ականս. զի արդարքն առաւել *պայծառանան* և ապա՛ բազմին ի սեղան հօրն երկնաւորի պաշտելովն ի քրիստոսէ: - 721. Զի երկինք ի շարժմանէ դադարէ և և՛ս *պայծառանայ:* - 728. Նոյնպէս սրբին ամենայն տիեզերք. զի երեսք երկրի այնպէս *պայծառանայ* որպէս զհայելի: - 728. Եւ օդք այնպէս *պայծառանան* որպէս զեթերն: - 728. Եւ հուրն այնպէս փայլատակէ որպէս զլուսին. և լուսինն որպէս զարեգակն. և արեգակն եօթնապատիկ *պայծառանայ* որպէս ասէ եսայի: - 728. ...այլ ա՛յս է՝ զի իւրաքանչիւր մարմինք սրբոց *պայծառասցին* էպատիկ քան զարեգակն. որպէս տեառն մերոյ ի թաբօր լերինն. և **թ** դասուց հրեշտակաց լոյսն յերկիր ծաւալին. զի զօրութիւնք երկնից շարժեսցին: - 728. **Նոյնպէս և ջուրն որ հպեցաւ ի մարմին փրկչին, և ծնաւ զմարդիկ որդիս աստուծոյ, նորոգեսցի և *պայծառասցի* քան զամենայն տեսիլս գեղեցկագոյն ականց**: - 759. **Այսպէս և օդն յորս եկաց փրկիչն յետ յարութեանն, փոփոխեսցէ զբնական նսեմութիւնն իւր և *պայծառասցի* որպէս զեթերն**: - 759. Դարձեալ, ծառ կենա՛ց է աստուածածին կոյսն մարիամ բղխեալ յարմատոյն յեսսեայ. երկնուղէշ զարգացմամբ մշտասաղարթ կուսութեամբ ծաղկեալ և *պայծառացեալ* հոգւոյն սրբոյ եկաւորութեամբն. և պտղաբերեալ մեզ անմահ պտուղ զբանն մարմնացեալ. յորմէ վայելեալք երկնաւորք և երկրաւորք ի շնորհաց նորին զյաւիտենից կեանսն ժառանգեցաք: - 768

**ՊԱՅԾԱՌԱՊԷՍ +** ...իսկ միջակ արդարքն որ են ի կայանս հոգւոցն՝ և զտեսանելն *պայծառապէս* ընկալցին ի յարութեանն դէմ յանդիման որպէս և էն...: - 697-698

**ՊԱՅԾԱՌԱՑՈՒՑԱՆԵՄ +** Եւ ի նմանէ լուսաւորեալք՝ *պայծառացուցանեն* վարդապետութեամբքն իւրեանց զերկու ժողովուրդս որք ի հրէից և որք ի հեթանոսաց օծեցան մկրտութեամբն: - 347. Վասն

որոյ և յաւուրս զաքարիայի հօրն յովհաննու յորժամ յամեաց ի տաճարին և ել, ակնունէր ժողովուրդն տեսանել զա՛կնն և տե՛սին լուսափայլ սպիտակացեալ իբրև զծիւն. և լի՛ եղեն խնդութեամբ. զի երկնաւոր արքայութեան նշոյլքն *պայծառացուցին* զակն: - 349. Որ կանոնական գլխօք *պայծառացոյց* զկարգ եկեղեցւոյ և զուղղափառութիւն հաւատոյ. զոր **զ** ամաւ յառաջ եղծեալ էր եզրի կաթողիկոսի...: - 545. ժողովեալ բազում եպիսկոպոսաց յամենայն կողմանց. և իշխանաց և մեծամեծաց հայոց. կարգեցին սահմանս կանոնականս **իբ** գլխով. և *պայծառացուցին* զեկեղեցի սուրբ: - 545. Զոր յառաջին ամին յորժամ նստաւ կաթողիկոս տէր սիմէոնի, ի ձեռն տէր եղիայի մեծահանդէս ժողովմամբ *պայծառացոյց* զեկեղեցի կանոնական հաստատութեամբ ի փառս քրիստոսի աստուծոյ մերոյ օրհնելոյն յաւիտեանս ամէն: - 545

**ՊԱՅԾԱՌՈՒԹԻՒՆ +** Դարձեալ՝ յետ մահու հոգի մարդոյն ծաղկի և գեղեցկանայ առաքինութեամբն իւրով և բնական *պայծառութեամբն:* - 213. Չորրորդ՝ *պայծառութիւն* հաւատոյն: - 251. Զի յանապական կուսէ ծնաւ եցոյց զանընդդիմահարութիւնն և զանօսրութիւնն. և գնալով ի վերայ ծովուն, զթեթևութիւնն և զերագութիւնն. իսկ *զպայծառութիւնն* յայլակերպիլն: - 282. Նոյնպէս և տէր ի հօրէ և ի մօրէ. *պայծառութեամբն* ի թաբօր. մկրտութեամբն ի ջրոյ. և յարութեամբն ի գերեզմանէ՛: - 329. Զի այժմ յուսով լցեալ ունին ի հոգիս իւրեանց զփառս և *զպայծառութիւն* գործոցն: - 648. այսինքն *զպայծառութիւն* գործոցն և զանմեղութիւն հոգւոյն զոր ընկալան ի շնորհացն քրիստոսի: - 648. ...որպէս ասէ մեկնիչն տեսլեան. եթէ սպիտակ հանդերձն շնորհացն քրիստոսի մաքրութիւնն է. որ սրբութիւն մեղաց մերոց արար քրիստոս. յոր ամենայնքն վայելեցաք. զի յորժամ սրբի հոգին, բնական ունի *զպայծառութիւնն:* - 690. Երրորդ, աներևոյթ են մեղօք և ո՛չ ունին *զպայծառութիւն* բարեաց. որպէս այն որ ո՛չ ունէր զհանդերձ հարսանեաց: - 691. Այլ արկանելիք սպիտակ՝ զծաղկեալ նոցա առաքինութեանն երևեցուցանէ *զպայծառութիւն* յետ ի թանձրութենէ մարմնոյս փոխելոյն. զոր զգեցեալ են նախ քան զխոստացեալ զփառսն...: - 696. ...քանզի յորժամ սրբի հոգին՝ բնական ունի *զպայծառութիւնն:* - 696. Զի յորժամ սրբի հոգին ի մեղաց, բնական ունի *զպայծառութիւնն:* - 712. ...իսկ հոգիք սրբոցն նախ ծաղկին բնական *պայծառութեամբն* իւրեանց որպէս ցուցաւ ի վերոյ, և ապա՛ յետոյ արդեամբք պտղոյն կատարին ի հանդերձեալ կեանքն: - 721. *Զպայծառութիւնն* ի թաբօր լեառն. և Զանչարչարութիւնն ի յօրհնելն զմարմինն իւր և տալ աշակերտացն ի վերնատունն՝ անչարչարելի էր մարմինն քրիստոսի ներգործութեամբ և ո՛չ զօրութեամբ: - 723. Երրորդ վասն *պայծառութեանն.* զի մարմինք արդարոցն առաւել լուսաւոր են քան զարեգակն...: - 760

**ՊԱՅՄԱՆ +** Զի ասեն եթէ՝ **խ** օր էր *պայմանն* աղամայ. յետ **խ** աւուր ուտէր ասեն՝ ի փայտէն գիտութեան և սրբութեամբ որդիս ծնանէր. և ապա՛ ուտէր ի կենաց փայտէն և վերափոխեր. և այլ բազում բանս տողե՛ն: - 391

**ՊԱՆ +** Պերիտոս. ա՛յս՝ *պա՛ն* նոխազոտն: - 201. Եւ թէ զի՞նչ է *պանն* և մուրկն և այլն: - 284. Իսկ *պան* բաղարջն է՛ նաշիհն զանգեալ իւղով. և որպէս բոկեղն եփեալ ի թոնրի: - 357. Տասներորդ, խոյն կատարման քահանայից և *պանն:* - 359.

**ՊԱՆԴԽՏԱՆԱՄ, ՊԱՆԴԽՏԻՄ +** Եւ ապա Իններորդ ի ցաւալից երկիրս այս *պանդխտանալ:* - 280. Յերկրորդումն *պանդխտանամբ:* - 755. Իսկ Չորրորդն արքայութիւն՝ է՛ յաւիտենականն գաւառ. յորմէ ի ձեռն մեղաց առաջնոյ մարդոյն՝ տարեալք *պանդխտիմք* յայսմ տառապանաց գբի և ի տիղմ կաւոյ. անարգաբար դեգերեալք ի հովիտս արտասուաց. յանապատի կալով և ո՛չ ի ճանապարհի...: - 756

**ՊԱՆԴՈՒԽՏ +** Եւ ի պահպանութիւն աշխարհին հրէից՝ առաքեաց սաղմանասար յերկրէն ասորւոց *պանդուխտս* որ բնակեցան ի սամարիայ և սամարացիք կոչեցան: - 447

**ՊԱՆԹԵՐ** - Զի ի ցեղէն նաթանայ որդւոյ դաւթի այրն ոնն անուն դևի՝ ծնաւ երկուս որդիս. զմելքի և *զպանթեր:* - 460. *Պանթեր* ծնաւ զվերապանթեր: - 460. Եւ յետ մահուանն մատթանայ՝ մելքի ի ցեղէն նաթանայ որ որդի էր դևեայ և եղբայր *պանթերայ*, առեալ զնոյն կին մատթանայ և ծնաւ զեւլի: - 460. Եւ այսպէս **բ** եղբօր թոռունք էին Մարիամ կոյսն և Յովսէփ ի հարց կողմանէ մելքեայ և *պանթերի* ի նաթանայ: - 460

**ՊԱՆԻՐ +** Նա՛խ՝ ի լուծանել զծրագալոյցսն ի *պանիր*՝ ի յիւղ՝ և յա՛յլ այսպիսի կերակուր բաց ի մսոյ: - 554

**ՊԱՆՓԻՒԼԱՑԻ** - Եւ այս են **իբ** լեզուքն: ...*Պանփիւլացիք:* - 298

**ՊԱՇԱՐԵՄ +** Քսանգ՝ յեսու փրկեաց զգաբաւոն ի **ե** թագաւորացն որք *պաշարէին:* - 419. Եւ տէր մեր փրկէ զյուսացեալս իւր, որք *պաշարին* հնգիւք զգայութեամբք յիշխանացն դիւաց: - 419. Դաւիթ

*պաշարեցաւ* յայրին. և տէրն մեր ի դժոխս և քակեաց զնա՛: - 437. Եւ յետ **բ** ամի՝ դարձեալ եւ յերուսաղէմ, և **թ** ամ *պաշարեաց* զքաղաքն ի սով սաստիկ: - 447. Ութերորդ՝ արին սամփսոն որ օրինա՛կ էր ամենազօր տն մերոյ, էջ ի գազա ի տիպ աշխարհի. և օթեցաւ ի պոռնկատունն յօրինակ դժոխոցն. յորում *պաշարեցին* զքաղաքն այլազգիքն: - 513. Երկոտասաներորդ՝ դարձեալ սաւուղ կամէր *պաշարել* զդաւիթ. և եկն զօրօքն իւր և ննջեաց ի դաշտի...: - 514. Չորեքտասաներորդ՝ այլ և ի գիշերի հրեշտակն տն էհան զզօրսն ռափսակայ. որ *պաշարեալ* էին զերուսաղէմ և փրկեաց զնոսա...: - 514. Յորում *պաշարեալք* ի հինից նետողաց կրկին յարուցեալ խորա՛զմ անուանեալ ազգաց: - 788. Սաստկագին գոչմամբ. և ահագնատեսիլ սուսերամերկ կորովալից նետողաց. որ պատեալ պահեալ *պաշարէին* զմեզ: - 789

**ՊԱՇՏԵԼԻ** - Երկրքին բնութիւնքն *պաշտելի՞* են թէ մի: - 90. Եւ արդ, Ո՜ հաւատ մեծ *պաշտելի* լոյս իմ և տիպ. և գանձ անկողոպուտ. կացցես առ իս. յարգանդէ մօր իմոյ խուսափեալս ի ծոց քո: - 771

**ՊԱՇՏԵՄ +** Նախ՝ զի հեթանոսք անգիտութեամբ կուռս *պաշտեցին:* - 33. Իսկ թէ զմարդկային բնութիւնն *պաշտէք*, եղէք կռապարիշտք. և նո՛ր և եղական ոմն աստուած մուծանէք յերրորդութեանն կարգ: - 90. Զի թէ ո՛չ էր ասացեալ ընդ պատկերին զնմանն լինիլ, ամենայն ոք պատճառէր, և զմարդն *պաշտելով* անկանէր ի կռապաշտութիւն...: - 274. Եւ զի ո՛չ նկարեցաւ ի պատկեր կռոց և ո՛չ *պաշտեցաւ* մորենին. վասն այն տէր երևեցաւ ի նմա: - 330. Դարձեալ՝ ամենայն որ ի լեառն աստիճանէ բարձրանայ որպէս զմովսէս և կամ այլ ինչ, պա՛րտ է սրբութեամբ *պաշտել:* - 331. Նախ՝ զի անմտացան նոքա, և զճանճս և զօձս և զգետս և զանասունս *պաշտէին*...: - 333. Է՛ և երրորդ պատճառ. զխոզն ուտէին յեգիպտոս, և զարջառ և զոչխար *պաշտէին*. վասն որոյ հրամայեաց զաստուածս նոցա զենուլ զի չեն աստուածք. և ի խոզենւոյն հրաժարիլ ամենևին: - 355. Դարձեալ՝ զոր ինչ յեգիպտոս աստուած *պաշտէին* սուրբ հրամայեաց. որպէս զանասունս: - 364. Իսկ մովսէս և ահարօն և ա՛յլ քահանայք յարևելից կուսէ ուր սուրբն սրբոց էր *պաշտէին:* - 379. Թէ եսթանանունդրին. որ է՛ դարիճակաւ արարած. այսինքն կաղպարաւ. և *պաշտեցին:* - 387. Երկրորդ՝ զի տեսցեն զտկարութիւն դիցն որք զլուսաւորսն *պաշտէին:* - 416. Քսանեա՝ յեսու յաղթեաց ըզդիս և զդիակունս հեթանոսաց. զի զլուսաւորսն *պաշտէին:* - 418. Ո՜ր քան ևս քահանայապետին որ զերկոտասան օր պարտ էր խնկօք *պաշտել* ի մէջ տաճարին ի ժամ աղօթիցն. թէպէտ ի սուրբն սրբոց միանգամ ի տարւոջն: - 483-484. Եւ ըստ **թ** դասուց եկեղեցւոյ որ աստուածաբանեն միշտ, զխաչեալն *պաշտելով:* - 632. Զի՞նչ է որ երկու դասք *պաշտեն* յեկեղեցիս: - 636. Զի՞նչ է նախատօնակն որ յերեկոյն սուրբ զգեստիւ խաչիւ և աւետարանաւ և լոյս վառեալ համաձայն *պաշտեմք:* - 646. ...նշանակէ համաձայն *պաշտելն:* - 647. Վասն որոյ վառեալ մոմեղինիւ ի միասին համաձայն *պաշտեմք:* - 647. Իսկ թէ քահանայ ոք հանդիպի ի նոյն չարիս, մի՛ *պաշտեսցէ* զքահանայութիւնն...: - 652. ...և ապա՛ հրամանաւ եպիսկոպոսին *պաշտեսցէ* զքահանայութիւնն: - 652. Իններորդ, զի մի՛ *պաշտեսցեն* զդիս մեռեալ սիրելեաց իւրեանց...: - 677. ...որ այս եղև սկիզբն պարկեշտութեան յորժամ զսիրելի զաւակաց պատկերս արարին և *պաշտեցին:* - 677. Կամ ոսկի՝ արծաթ՝ ականս. զի արդարքն առաւել պայծառանան և ապա՛ բազմին ի սեղան հօրն երկնաւորի *պաշտելովն* ի քրիստոսէ: - 721

**ՊԱՇՏՈՒՄՆ +** Պատասխանեմք թէ՝ ո՛չ են հեթանոսաց աստուածքն մի, այլ բազումք և միմեանց հակառակք կամօք *պաշտմանն* և զոհիւք խնդրոյն: - 54. Եւ ունին առաքինութիւն *պաշտմանց:* - 252. Եւ տես, զի *պաշտմամբ* և պատարագաւ յետս դառնայ բարկութեան սուրն: - 435. Իսկ թէ զի՞նչ է յորժամ վերընծայի խորհուրդն *պաշտմամբ* և ինչմամբ ժամահարաց: - 645

**ՊԱՇՏՊԱՆԵՄ +** Հրեշտակք *պաշտպանեցին:* - 456

**ՊԱՇՏՕՆ +** Եւ մի է, և անմարմին է, և անբաւազօ՛ր է, և անեղ է. յայն սակս և անվախճան է. և նա՛ է արարիչ ամենայն եղելոց. և նմա՛ է տալի *պաշտօն:* - 26. Եւ որպէս ասեն վարդապետք՝ քան զամենայն մեղս ծանրագոյն գոլ *զպաշտօն* կռոցն վասն երկուց: - 33. Իսկ *պաշտօն* կռոցն՝ մեղանչումն է ընդդէմ էութեանն աստուծոյ և փառաց: - 33. Իսկ *պաշտօն* կռոցն ո՛չ ունի զերկիւղն աստուծոյ: - 33. Նմանապէս հաւասարի *պաշտօն* հերձուածողաց և հրէից: - 34. Երկրորդ՝ *պաշտօն* որ յաստուած վերաբերի՝ միայն աստուծոյ պատշաճի...: - 57. Երրորդ՝ զի հալեսցի և մի ի *պաշտօն* առցի: - 303. Նշանակէր զխաւար անմտութեան նոցա որ առաւել էր քան զամենայն երկրի. զի զամենայն գարշ կենդանիս ի *պաշտօն* առին: - 334. Երրորդ, զի կորնչելոց էին անդրանիկ ծնունդքն սատանայի. որ էր հպարտութիւնն և կռապաշտութիւն. զի խոնարհութեամբ էր գալուստն քրիստոսի և ի մի աստուածպաշտութիւն

հրաւիրեաց և կորոյս *զպաշտօնն* դիւական: - 334. Գինին ուրախութեան ծայնք *պաշտամանց* քահանայից: - 375. Է՛ և ա՛յլ իմն տեսութիւն բանիս. զի կամի՛ *զպաշտօնս* մեր որոշել ի կռոց զոհիցն. զի սուտանուն դիքն խնդրէին ուստերս և դստերս և արջառս և ոչխարս զոհել և սպանումն օտարաց: - 396. Եւ եկեղեցի եթող *զպաշտօնս* իւր և զչարիս՝ և սիրեաց զքրիստոս: - 417. Եւ տէր մեր խաչիւն կործանեաց զկուռս և *զպաշտամունս* նոցա: - 418. ...իսկ յետ մահու *պաշտօնք* և տուրք աղքատաց և այլն՝ է՛ հատուցումն պատժոց միայն...: - 434. Եւ աւուրք *պաշտամանն* էր երկոտասան. **Ե** օր քաւութեանն վասն որթոյն յանապատին. և **Է** օր տաղաւարահարացն ի յիշատակ խորանաւ բնակելոյն յանապատին ամս **Խ**. և այլ սքանչելեացն զոր գործեցաւ անդ: - 483. Վեցերորդ՝ զի հարկ էր մատուցմունք նւիրաց ժողովրդեանն. և կատարեալ էր մի օր *պաշտամանն:* - 484. Անմարթ էր թողուլ զժողովուրդն ի դրան տաճարին և մերծիլ յանկողինս. և ըստ օրինացն գօրեայ սրբութիւն ստանալ. որ անհնա՛ր է ամենևին. թէպէտ ասեն՝ գոյր ա՛յլ քահանայապետ որ զկարգ *պաշտամանն* կատարէր: - 484. Քառասունևէ, Երկուս դասս *պաշտմանց:* - 527. Կրօնաւորութիւնն է աստուծոյ *պաշտօն* և առանձնակի սպասաւորութիւն մատուցանել: - 579. Պահպանութիւն է որք արժանաւորին մարդկան պատուոյ իմն և *պաշտաման:* - 579. Երկրորդն ի յօգուտ մարմնոյն. և Երրորդն յաստուածային *պաշտամունս:* - 580. Յայս միտս ժողովիմք քահանայքս և *պաշտօն* առնեմք յերեկօրեայ մինչ ի լոյս. - 604-605. Ապա և ո՛չ աղօթք և *պաշտօն* քահանայից կամ տուրք կամ պատարագք է օգուտ հոգւոյն ըստ քեզ որ է բնաւ սուտ և չար հերձուած: - 605. Իսկ զաւակն, զի ծնցի և սնուցանի ի *պաշտօնն* աստուծոյ. զի վասն ծննդեան զաւակին է հրաման պսակին: - 610. Եւ հեշտութիւնն է վասն որդէծնութեան, և որդէծնութիւնն վասն հեշտութեան, կամ ի *պաշտօնն* աստուծոյ: - 613. Իսկ յառաւօտն և յերեկոյն պատարագ ո՛չ մատչի. վասն այն ամենայն աղօթից և *պաշտմանց* կատարումն և աւարտ զխաչէն ճառեմք...: - 634. Երկու դասք էին երգիչք ի տաճարին զոր կարգեաց դաւիթ ընդ տիւ և ընդ գիշեր հանապազորդ *պաշտօն* **ԻԴ** ժամուց...: - 636. Նշանակէ այս զմիութիւն հրէից և հեթանոսաց ի մի հօտ և ի մի *պաշտօն:* - 636. ...և իւրաքանչիւր ոք լոյս և հուր վառեալ՝ նմա՛ նըւիրէին *զպաշտօնն* իբր արարչի...: - 638. Իսկ *պաշտօնք* և ողորմութիւնք և պատարագք լինին նոցա առիթ պսակաց: - 675. ...նոցա՛ է օգուտ *պաշտօն* և պատարագ և այլն...: - 683. Ահա՛ ժամանակ ընդունելի. ահա՛ օր փրկութեան. մի և մի իւիք տայցէք պատճառս. զի մի՛ արատեսցի *պաշտօնն:* - 698. Ա՛յն է որ սատանայ խաբէութեամբ և բռնութեամբ զօրացեալ էր և իշխան եղեալ ի վերայ մարդկան. ի կեանս զանազան չարեօք և կռոց *պաշտմամբ*...: - 705. ...այլ յորժամ խըստանայ ի չարիս մինչ զի *զպաշտօնն* աստուծոյ յինքն ձգեսցէ...: - 707. Ի յայս միտս ի ստորինս եկեղեցի այժմ կրկին են դասք *պաշտամանց*. որ և նոյնպէս է լինելոց ի վերնումն սիօնի յեկեղեցիս անդրանկաց: - 760

**ՊԱՇՏՕՆԵԱՅ +** Եւ այլք աստիճան դնեն Երրորդութեանն և անւանեն արարիչ՝ և գործակից՝ և *պաշտօնեայ:* - 51. Իսկ զմիւսն զօրութեամբ և բնութեամբ սահմանելի. զի արարած և *պաշտօնեայ* և ծառա՛յ է ասեն: - 51. Եւ զի աստուած է՝ ո՛չ կարէ ասիլ ստեղծուած կամ արարած կամ *պաշտօնեայ* կամ ծառայ: - 52. Եւ թէ ասիցէ հակառակօղն, եթէ՝ վերոգրեալ գործառնութիւնքս համարին հոգւոյն սրբոյ ո՛չ որպէս աստուծոյ, այլ որպէս *պաշտօնէի:* - 59. Նոյնպէս և տէր մեր յետոյ բառնալո՛ց է զչար. գազանն զորդին կորստեան և *զպաշտօնեայսն* նորա ի կատարածի: - 314. Նոյնպէս *պաշտօնեայք* նորա ցուցանեն ինչ որ չէ ճշմարիտ: - 335. Երկրորդ՝ **Գ** իշխանք նոցա ընդ իշխանութեամբ եղիազարու, **Գ** դասքն են *պաշտօնէից* ընդ իշխանութեամբ քահանայիցն: - 379. Չորրորդ՝ գեթսոնի ազգն դռնապա՛նք էին. և մերարեայ երդմնեցուցիչք ընդ իշխանութեամբն իթամարայ քահանայի. և կահաթու գունդն աւագ *պաշտօնեայք:* - 379. Մին՝ քահանայապետք և քահանայք. և վեց *պաշտօնեայք:* - 380. Երկրորդն Սարկաւագն և Դպիրն և Գղերիկոսն. զայսոսիկ հոմանուամբ *պաշտօնեայ* կոչէ: - 608. Աստ **Գ** դասք *պաշտօնէից:* - 614. Իններորդ սրբեմք, զի բնակելոցս ի սմա և *պաշտօնէիցս* պա՛րտ է սուրբ լինի զի մի՛ պղծեսցեն զսրբութիւնսմն: - 615. Նոյնպէս և յեկեղեցիս **Գ** են դասք *պաշտօնէից:* - 624. Դարձեալ զվերին և զստորին *պաշտօնեայս:* - 636. ...քանզի մեծամեծ և խստագոյն չարչարանս տացէ *պաշտօնէիցն* աստուծոյ: - 708. Հինգերորդ, քահանայապետք հարիւրաւոր. և քահանայք վաթսունաւոր. և *պաշտօնեայք* երեսնաւոր: - 757

**ՊԱՊ +** Եւ ա՛յս է բարձր հասակն և կատարեալ. զի ի սմա *պապ* կարէ լինիլ մարդն երեսն ամենի: - 265. Եւ **Լ** կանգուն բարձրութիւնն, զի բարձր հասա՛կ է մարդոյն. և *պապ* լինի երեսնամենի: - 293. Եւ ի հռոմ գնացեալ՝ եղև հայրապետ և *պապ:* - 548. Եւ Իններորդ՝ *Պապն*. որ է՛ կաթողիկոս. գերագոյն վերոյ

ասացելոցն: - 606. Առաջին մեք, և հայրն, և *պապն* մեր. հօր *պապն*, և *պապու* հայրն, և *պապուն պապն*, և ապպապն. որ է՛ է. նմանապէս և ի մօր կողմն: - 611. ...և *պապ* նոցա հրամայեաց զերկու օրն ուտել: - 651. Ճշմարիտ *պապին*՝ որ ո՛չ ումէք անխայեսցի արժանաւորի: - 765

***ՊԱՊ ՅՌՈՄԱՅ*** - Արար զ երրորդ ժողով՝ ազաթոն *պապն հռոմայ*. ի թագաւորութեան հօրն յուստիանու ի կոստանդնուպօլիս: - 543

**ՊԱՊԱԿՈՒՄՆ +** Տեսիլ դիւաց: Աղաղակ: Նախատինք: *Պապակումն* ծարաւոյ: - 751

**ՊԱՊԱՆՁԻՄ +** Ուստի եղև *պապանձեալ* զաքարիա ի նմին աւուր: - 483

**ՊԱՊԱՆՁՈՒՄՆ +** Առնեն ի սեպտեմբերի իէ *զպապանձումն* զաքարիային. և ի նմին աւուր զյղութիւնն եղիսաբեթի: - 483

**ՊԱՊԻԱՆՈՍ** - ...ապա *Պապիանոս* քեռորդի սոցա՝ արար զչորրորդ ծայնն ի ծփանաց ծովու: - 640

**ՊԱՍՔԱ +** Հինգերորդ՝ *պասքայն*. որ է՛ բաղարջակերք: - 373. Եւ տես, զի սոքա երեքեան տօնքս, այսինքն ամսամուտն, և *պասքայն*, և յիսներեակն, հաւասար ունին զնատուցմունքն տօնից: - 373

**ՊԱՍՔԻՄ +** Եւ ի կողից տեառն բղխեցին աղբերք ի զմայլումն *պասքեցելոց* և ի լուացումն ախտաժէտ հոգւոց: - 329

**ՊԱՏ +** Եւ արծակօղն կապից՝ խանձարրօք *պատի:* - 470

***ՊԱՏ ԱՌՆՈՒԼ +*** Եւ յ կանգուն երկայն, զի ի կրնկէն ի գագաթն լար չափեալ՝ դ *պատ առնու* զգլխովն: - 293

**ՊԱՏԱՀԱԿԱՆ** - Չորրորդ՝ զի թէ չարն է յաստուծոյ, այլ արդ չարն եկամուտ է և պատահեալ. լինէր ապա ի յաստուած օտա՛ր ինչ և *պատահական*. որ է անտեղի: - 13. Եւ զի գոյացական է բարի, անկա՛ր է լինիլ *պատահական* չար: - 15. Նախ՝ զի թիւն քանակ է *պատահական* և գիտելի մեզ: - 108. Նախ՝ զի գործ բնութեան է՛ բնական. իսկ գործ կամացն է *պատահական:* - 156. Հինգերորդ՝ *պատահական* է ի միտս և երբեմն: - 164. Երրորդ՝ զի արարածք՝ են ի գոյացական սեռէ, և ո՛չ ի *պատահական*. զիարդ լինին պատահումն ի յարարիչն: - 169. Եւ ո՛չ թիւ *պատահական* կամ բան տարալուծական. այլ մի երրեակ. և երրեակ մի. ըստ որում սկիզբն է թուոց՝ և ո՛չ թիւ. և բաժանեալ յա՛յլ էակաց: - 171. Այլ և ո՛չ տեղի *պատահական*. որպէս աստ և անդ. զի ոչէ ի տեղոջ իմիք պարունակեալ. և ո՛չ բացեայ ի տեղւոջէ իմիք զատեալ. զի նա՛ է ամենցուն տեղի: - 172. Տեղին է պարագրող մարմնոյ. զի ամենայն մարմին տեղեաւ պարագրի. և ամենայն տեղի է ի *պատահական* սեռէ: - 174. Այլ է՛ բաղկացական մարմնոյ, և է՛ տեղի *պատահական:* - 174. Իսկ *պատահական* տեղի է, յորում նեստեալ ոք՝ կարէ՛ թողուլ զայն և լինիլ յայլ տեղւոջ. որպէս ի վեր կամ ի վայր: - 174. Այլ և ո՛չ տեղի *պատահական*. թէպէտ ի նշան պատւոյ ասին յերկինս. այլ ոչ իբր ի մարմնական տեղւոջ: - 174. Մանաւանդ թէ իւրաքանչիւր տարերք բ ծայրք որակութեանց ունին. զմինն գոյացական և զմիւսն *պատահական*. ըստ այսմ պա՛րտ է ասել քեզ մետասան բնութիւն քրիստոսի: - 176. Եւ իւրաքանչիւր տարերք ունին կրկին որակութիւնս. այսինքն գոյացական և *պատահական:* - 181. Դարձեալ ասեմք թէ՝ զինչ ծանրութիւն որ *պատահական* է՝ ի ցրուիլն նիւթոյն կորնչի ծանրութիւնն: - 202. Նոյնպէս ծանրութիւն փայտին *պատահակա՛ն* է և եկամուտ. զորս կորուսանէ հուրն: - 202. Պտուղքն դրախտին շօշափելիք են և կերակրելիք. հատանի և ծասկի և փոփոխի ըստ *պատահական* որակացն. և անապական մնայ ըստ գոյացութեանն և ներգործութեանն ի կերօղն: - 223. Չորրորդ՝ զի բազմաց լինի նշան *պատահական* և ո՛չ բնական: - 246. *Պատահական*, որպէս սևութիւն ագռաւու: - 318. Եւ այսպէս զանազանին սոքա. մարմին մեր զգեստ է գոյացական. և հանդերձն *պատահական:* - 318. Այսպէս կոչի և զգեստ մարմնոյն. զի արտաքին զգեստն որպէս ծիրանին թագաւորի ա՛յլ է ի զգեցողէն և *պատահական* նմա և փոփոխական...: - 319. Իսկ մարմնաւոր մահն բաժանի ի դ. այսինքն ի բնականն, ի *պատահականն*, յանձնիշխանականն, և ի խնամականն: - 668. Որոյ պատճառ է, զի մարմին կերեալ մարդոյն է իւրն նիւթ գոյացական և սոցա եղև նիւթ *պատահական:* - 719. Գոյացական որակքն նման և *պատահականքն* պակասին որպէս ասացաւ: - 728. Ամենայն իր բնութեան՝ գոյացակա՛ն է նորին. և ամենայն պարգևք այսինքն շնորհք *պատահական* է ի զարդ նմին...: - 782. Բարւոք ասացաւ յարարչէն. զի թէ և բնութիւն թարց երևակայութեան, և արհեստ հանդերձ երևակայութեամբ, սակայն կամք արարչական ետ նոցա բնական և բանական կարողութիւն. և ոչ ինչ վայրապար կազմեն զտեսակ գոյացական և զտեսակ *պատահական*. խնդրելով ոմն պարզ նիւթ. և ոմն տեսակացեալ: - 786

**ՊԱՏԱՀԱՐ +** Երկրորդ՝ ի մէջն գոլով՝ մի վնասեսցի յարտաքին *պատահարից:* - 256

**ՊԱՏԱՀԻՄ +** Չորրորդ, զի ո՛չ լինի ի դիպուածոց ինչ. որպէս սղից ոմանց *պատահին* բարեբախտութիւն, կամ վատաբախտութիւն. ա՛րդ՝ թէ է՛ ամենայն ի հարկէ, ո՛չ լինին վերոյ ասացեալքս: - 8. Չորրորդ՝ զի թէ չարն է յաստուծոյ, այլ արդ չարն եկամուտ է և *պատահեալ*. լինէր ապա ի յաստուած օտա՛ր ինչ և պատահական. որ է անտեղի: - 13. Այլ և ո՛չ ի բնութեան. զի ո՛չ է չարն ի բնութեան ուրուք. այլ արտաքոյ բնութեան *պատահեալ*: - 16. Եւ ո՛չ են որպէս ստորասութիւնք և բացասութիւնք, որ միայն ի բա՛նն են հակակայք. որպէս ճշմարիտ, և սուտ. այլ չար և բարի՝ ի բանս և ի գործս *պատահին*: - 21. Ապա ուրեմն թէ չարն ապականիչ է այլոց, ուրև *պատահի* ապականէ՛ և զինքն ըստ որում չար է. ապա ուրեմն ոչ է՝ և ո՛չ կարէ գոլ չարն: - 22. Զի ի նըւազիլ ողջութեան՝ հիւանդութիւնն երևի. և ի նըւազիլ մարմնոյ՝ ապականութիւնն *պատահի*: - 22. Եւ է՛ որ խառն բարի է. որպէս առ մեզ *պատահեալ* բարիս որ ունակութիւն է. զի ա՛յլ է էութիւն մեր, և ա՛յլ է բարի յէութեան մերում: - 22-23. Պատասխանեմ առաջնոյն, թէպէտ մի և նոյն ուրացական մասնիկն որ է ո՛չն՝ գործէ՛ զուրացումն և զբառնալն, այլ ուրացումն և բառնալն ո՛չ է նոյն. զի բազում *պատահի* որ գործին նոյն է որպէս ծեռն. այլ գործելն ո՛չ է նոյն. որպէս կտրելն և կարելն: - 124. Որպէս թոյնք իժից, զի են ինքեանք բնութեամբ չար և պատճառե՛ն զչար. բայց *պատահեցաւ* ոմանց՝ դեղ լինիլ: - 160. Եւ ըստ ա՛յսմ կերպի է փորձութիւնն բարի. զի բնութեամբ չար է. և պատճառէ՛ զչար մեղքն. բայց *պատահեցաւ* ոմանց զի յաղթեցին փորձութեանց և ընտրիք երևեցան: - 160. Երրորդ՝ զի շինօղն որ ինչ *պատահի* գործոյն ո՛չ գիտէ: - 164. Նախ է տեղի մարմնական. որ ըստ իւրաքանչիւր մասնկանց մարմնոյն *պատահի*: - 172. Ստե՞ղծ աստուած հոգաբարձութեամբ զճանճս և զմժեղս և զայլսն, թէ ի գոյի՞ց *պատահեցան*: - 217. Երկրորդ՝ զի **խ** քաղաք առին ի բենիամենէ՛ յուդայի ցեղքն վասն շնութեան կնոջն *պատահելոյ*. և կոտորեցին զնոսա առ հասարակ իեռ արս. և մնաց վեց հարիւր այր զոր յետոյ ըստացան ժառանգութիւն իւրեանց. որպէս յա՛յտ է ի դատաւորաց վերջքն: - 312. Իսկ գործ մարմնոյն միայն մասինն այն է որում *պատահեցաւ*: - 557

**ՊԱՏԱՀՈՒՄՆ +** Աստ ուրեմն ի հարկէ՛ երևեցաւ թէ գոն և են սոքա ասացեալքս, այսինքն գործ բնութեան և գործ կամաց և գործ *պատահմանց*. և ո՛չ ոք ուրաստ լինի վասն սոցա: - 8. Իննևժերորդ՝ զի թէ չարն է յաստուծոյ, այլ արդ է՝ ըստ ինքեան չար, և է ըստ *պատահման*: - 15. Եւ ըստ ինքեան չար է՝ որպէս ասեմք զչարն չար. և ըստ *պատահման*՝ որպէս ասեմք զմարդն չար: - 15. Եւ ա՛րդ՝ ցուցաւ զի *պատահումն* ո՛չ է ի յաստուած: - 15. Նախ՝ որք աստիճան դնեն Երրորդութեանն. և ի յայլումն ասեն զհոգին. որպէս *պատահումն*: - 29. Իսկ այսորքիկ *պատահմունք* են քեզ: - 37. Իսկ յորժամ զյայլումն լսեն՝ արծակին ի վերայ մեր ասելով, եթէ յայլո՛ւմ է՝ *պատահումն* է ի հայր որպէս զօրութիւնս առ մեզ. իսկ եթէ զօրացեալ է՝ և ընդ զօրանալն դադարեսցէ ամենայնիւ. շարժումն եղիցի և ոչ շարժօղ: - 52. Որպէս յէութենէ ի *պատահումն*: - 87. Կամ ի *պատահմանէ* յէութիւն: - 87. Կամ ի *պատահմանէ* ի *պատահումն*: - 87. Այլ և ո՛չ որպէս էութիւն ի *պատահումն*. զի մարդկութիւնն քրիստոսի է ի սեռէ գոյացութեան, և ո՛չ ի սեռէ *պատահման*: - 88. Այլ և ո՛չ որպէս *պատահումն* ի յէութիւն. զի բանն աստուած ո՛չ է անանձն և ազդումն ինչ որպէս մեր բանս ըստ ոմանց. որպէս մարկեղոս և փոտինոս դանդաչեն: - 88. Այլ և ո՛չ է որպէս *պատահումն* ի *պատահումն*. և այս յա՛յտ է յասացելոցդ: - 88. Իսկ ի յԵրրորդութիւնն ո՛չ է քանակ և չափ, և ո՛չ *պատահումն*, և ո՛չ գիտելի եղական մտաց: - 108. Նախ՝ զի թիւն *պատահումն* է. որ ի աստուած ո՛չ է: - 110. Զի է՛ մի՝ որ սկիզբն է թըւոյ. և այսպէս մի ո՛չ ասի աստուծոյ. զի այս քանա՛կ է. և *պատահումն* ո՛չ գոյ յաստուած: - 110. Եւ է մի՝ որ անդրադարձի էի. և այսպէս ասի մի աստուած իբր թէ է՛. զի *պատահումն* ո՛չ ցուցանէ: - 110. Դարձեալ՝ եղեալ էութիւն բաժանի կրկնակի. ի գոյացութիւն և ի *պատահումն*: - 111. Իսկ *պատահումն* է քանակ՝ որակ՝ և այլն: - 111. Երկրորդ՝ միտք զգոյացութիւն իրին տեսանէ որ է ի ներքոյ եղեալ. և զգայութիւն *զպատահմունքն* ի վերայ եկեալ. որպէս որա՛կ քանա՛կ և այլն: - 120. Ո՛չ է *պատահումն* ի յաստուած: - 154. Դարձեալ եթէ *պատահումն* ո՛չ է ի յաստուած: - 154. Դարձեալ այսպէս մեկնեն եթէ՝ փորձութիւնն ըստ ինքեան ո՛չ է բարի. այլ *պատահմամբ* լինի բարի. յորժամ համբերութիւնն մեծ դնի և յաղթիցէ. իսկ յորժամ համբերութիւն ոչ լիցի, ըստ ինքեան չար և վատ է փորձութիւնն. վասն այն տէրն արգելուլ հրամայէ: - 160. Չորրորդ՝ որ ինքն ո՛չ է բարի, և ո՛չ պատճառէ զբարի. բայց թէ *պատահմամբ*: - 160. Իսկ նախախնամութիւնն առ աստուած գոյացական է և միշտ. զի *պատահումն* ո՛չ գոյ յաստուած: - 164. Խնդրեմ և զայս որ ասացաւ ի վերոյ թէ *պատահումն* ո՛չ է յաստուած: - 169. Այլ արդ՝ երևի թէ արարածք *պատահումն* են ի յարարիչն զի յետո՛յ եղեն: - 169. Նախ՝ զի *պատահմունքն* են յէութենէ իրին երևեալ.

այլ արարածք ոչ յէութենէ, այլ ի կամաց արարչին յոչնչէ ներգործեալ են: - 169. Երկրորդ՝ *պատահմունքն* բաժանեալ ի գոյացութեանց ո՛չ կարեն ըստ ինքեան կեալ: - 169. Երրորդ՝ զի արարածք՝ են ի գոյացական սեռէ, և ո՛չ ի պատահական. զիարդ լինին *պատահումն* ի յարարիչն: - 169. Այլ ասիցէ ոք, թէ բազում ինչ գոն ի յայլս գոյացութիւն և ի յայլս *պատահումն*. որպէս ջերմութիւն ի հուրն գոյացութենէ, և ի անորակ մարմինն *պատահումն*. և տերևն ըստ ինքեան գոյացութիւն է, և ի ծառն *պատահումն*. այսպէս և մազն: - 169. Թէպէտ արարածք յետոյ եղեն, այլ ոչ են *պատահումն* արարչին: - 170. Երկրորդ՝ թէպէտ յետոյ եղեն արարածք, ո՛չ են *պատահումն*. որպէս և բանն էր յառաջ, և յետոյ եղև մարմին. այլ մարմինն բանին ո՛չ է *պատահումն*. և որդի հօրն ո՛չ է *պատահումն* թէպէտ յետոյ ծնանի զի առ ինչ է հօրն: - 170. Գոյացութիւն և *պատահումն* անմեկնելի որոշմունք են. վասն է՞ր ի յաստուած միայն գոյացութիւն է և ո՛չ *պատահումն:* - 170. Ի սեռս էականութեան գոյացութիւն նախապատիւ է քան *զպատահումն*. և զի նախապատիւ է աստուած ամենայն գոյից, վասն որոյ գոյացութիւն է և ո՛չ *պատահումն:* - 170. Ի սեռս էականութեան գոյացութիւն նախապատիւ է քան զպատահումն. և զի նախապատիւ է աստուած ամենայն գոյից, վասն որոյ գոյացութիւն է և ո՛չ *պատահումն:* - 170. Այլ արդ՝ բնականին հետևելով տեսցուք զի՞նչ է գոյացութիւն և զի՞նչ *պատահումն:* - 170. Իսկ *պատահումն* ի յայլս ունի զէութիւնն, և կարօ՛տ է այլոյ ի գոլն. որպէս գոյն ի մարմնի: - 170. Եւ զի յայտ եղև այս, ծանուսցի և այն, թէ վասն է՞ր աստուած միայն գոյացութիւն է և ո՛չ *պատահումն:* - 170. Երկրորդ՝ զի *պատահումն* յետ գոյացութեան է: - 170. Երրորդ՝ զի *պատահումն* ընդ գոյացութիւն խառնեալ՝ լինի բաղադրեալ. որպէս նիւթ և տեսակ: - 170. Չորրորդ՝ զի *պատահումն* է՛ փոփոխական իր. իսկ աստուած անփոփոխ է էութեամբ զօրութեամբ կամօք և գիտութեամբ...: - 170. Հինգերորդ՝ գոյացութիւն մի է, և *պատահումն* բազում: - 170. Զի թէ գոյր *պատահումն* ի յաստուած, լինէր բազում և ո՛չ մի. իսկ աստուած մի է և ո՛չ բազում. ըստ այնմ, «տէր աստուած քո տէր մի է»: - 170. Վեցերորդ՝ զի ներհականայ *պատահումն* գոյացութեան. այլ աստուած աններհա՛կէ է: - 170. Եօթներորդ՝ զի *պատահումն* աւելո՛րդ է գոյացութեան. զի գոլովն ո՛չ գոյացուցանէ. և այլն: - 170. Ութերորդ՝ զի *պատահումն* ժողովելով առ գոյացութիւնն լինի մարմին: - 170. Իններորդ՝ *պատահումն* ա՛յլ է ի գոյացութենէ. և առ եղեալ գոյացութեան առնէ այլ՝ և այլայլակ: - 170. Իսկ ի յաստուած *պատահումն* ո՛չ է. զի ո՛չ է ինքն ինքեան այլ՝ և այլայլակ: - 170. Տասներորդ՝ *պատահումն* է առաւել և նըւազ. իսկ գոյացութիւն ո՛չ է առաւել և նուազ: - 171. Եւ զի յաստուած ո՛չ գոյ առաւել և նուազ. վասն որոյ միայն գոյացութիւն է և ո՛չ ունի *պատահումն:* - 171. Յորժամ *պատահումն* ոչ գոյ յաստուած որպէս ասացեր, զժ ստորոգութիւնս որպէս ուղղեսցուք առ նա: - 171. Ստորոգութիւնս պատշաճի եղական գոյիցս իսկութեամբ. որ ի նիւթոյ և ի տեսակէ՝ ի գոյացութեանց և ի *պատահմանց* են ժողովեալ: - 171. Իսկ անեղ և պարզ էութեանն պատշաճի միայն նմանապէս համեմատութեամբ. զի Է կոչի աստուած, ըստ այնմ «ես եմ որ էն». և ո՛չ ըստ այնմ որ բաժանի ի գոյացութիւն և ի *պատահումն*. որպէս հոմանուն կամ փաղանուն. կամ ի միոջէ և առ մի. որպէս ընդհանուր էակն է՝ բաժանի առ մեզ: - 171. Եւ դարձեալ՝ է կոչի աստուած, զի նա միա՛յն է տեսակ առանց նիւթոյ. և գոյ առանց *պատահման:* - 171. Իսկ Գոյացութիւն կոչի աստուած, ո՛չ ըստ որում ներհակ *պատահմանց* է ընդունական որպէս մեք. այլ ըստ որում բաժանի ընդդէմ *պատահմանց*. որ է՛ միայն պարզ գոյացութիւն որպէս ասացուք: - 171. Նախ՝ զի գոյն նախկին է քան *զպատահումն*. և նախկին է աստուած ամենայնի: - 171. Վեցերորդ՝ ի *պատահմանցն* իմանամք զգոյն. և յերևելեացս զաներևոյթն աստուած: - 171. Եօթներորդ՝ մի է գոյն՝ և բազում *պատահմունք*. և մի է աստուած՝ և բազում եղեալքս: - 171. Տասներորդ՝ գոյն բաժանի ընդդէմ *պատահմանց* միայն պարզ գոյացութիւն: - 171. Եւ մարմնով ո՛չ բաժանին սոքա. թէպէտ և մանր փոշի լինին՝ ունին զքանակն զորակն և զայլն. զի անմեկնելի որոշմունք են գոյացութիւն և *պատահմունք:* - 175. Հինգերորդ՝ զի անձերանալի՛ է երկիր. ըստ որում շարժմամբ թօթափի երկիր ի ներքին *պատահմանց*. և հեղեղօք ողողի և սրբի յարտաքին *պատահմանց:* - 181. Է՛ որ ինքնաչա՛փ է. որպէս գիծն ի կանգունն՝ ըստ ինքեան չափէ՛ զկանգունն ի յորում է. և ըստ *պատահման* չափէ՛ զկտաւն ի յորում ո՛չ է: - 198. Եւ վասն առաւել և ազդու զօրութեան և ջերմութեան՝ զգոյացութիւն կենդանեաց և մարդկան առ որս դիպի ապականէ՛. և *պատահմունքն* քանակ և որակ մնան: - 204. Ըստ այսմ ապացուցի. զի բնութիւնն ի սեռո՛ւմն է և ի տարբերութեան ուստի բաղկանայ. և անձն ի բութիւնն է յորմէ կայանայ. և դէմքն ի յանձնէ՛. և կերպարանն ի դիմաց. և պատկերն ի կերպարանաց. և տիպն ի պատկերաց. և որակ տպաւորեալ ի *պատահմանց:* - 235. Եւ ըստ ա՛յսմ է տարբերութիւնն և յատուկ և

*պատահումն* նոյն գոլ: - 236. Նմանապէս տարբերութեամբ յատկիւ և *պատահմամբ*. այլ են քննօղ մտաց: - 236. Եւ թէ ասեն՝ ի *պատահմանէ* լինին. կամ յարուեստից, կամ ի բնութեանց գործոց: - 237. Ասեմք թէ՝ նոյն է պատասխանին. զի *պատահումն* առ մե՛զ հանդիպի. այլ առ աստուած ոչ ինչ է *պատահմամբ*. այլ ամենայն ինչ գիտութեամբ. զի ո՛չ տերև մի ի ծառոյ անկանի առանց գիտութեանն աստուծոյ: - 237. Թիւ կենաց մարդոյ չափեա՞լ է՝ թէ *պատահմամբ* յերկար և սակաւ ապրին: - 291. էական, որպէս գոյացութիւն և *պատահումն:* - 318. Եւ զի *պատահմունքն* փոփոխելի է, ուստի յա՛յտ է զի փոփոխի և միաւորի՛ ի մարմին կերողացն: - 339. Այլ և *զպատահումն* սոցա ի սրտի իմում կրեմ: - 348. Եւ է՛ որ զմեղքն թողու՝ և զպատիժն կրէ. որք յայլմէ բռնաբա՛ր խոստովանին և *պատահմամբ*, և դարձեալ սխալին. այսպիսեաց մեղքն միայն թողւի: - 432. Ցուցանէ թէ տարաժամ մահն ընտրութեամբ և կամօքն աստուծոյ լինի, և ո՛չ *պատահմամբ* որպէս ասեն ոմանք: - 435. Զի կամ միաւորի էութիւն ընդ էութիւն. կամ *պատահումն* ընդ *պատահման*. կամ էութիւն ընդ *պատահման:* - 475. Զի էութիւն ընդ *պատահման* միշտ անշփոթ միաւորի. որպէս որակ և քանակ ի գոյացութեան. զի անմեկնելի որոշմունք են: - 475. Իսկ *պատահումն* ընդ *պատահման* միշտ շփոթմամբ միաւորին. որպէս գոյն ի սևէ և ի սպիտակէ՛: - 475. Զի են որ միաւորեալքն էութիւնք են և շաղկապն *պատահումն*. որպէս երկուք ոմանք անջատեալք ի միմեանց՝ *պատահմամբ* սիրոյ շաղկապին: - 476. Այլ որակն և *պատահմունքն* ցուցանեն այլ և այլ: - 530. Երկրորդ սահմանն գոյացութիւն է. իսկ կանոնն *պատահումն:* - 538. Այսպէս ասեմք, զի որ ըստ ինքեան է ճշմարիտ և ըստ ինքեան բարի՝ առաւել է. և որ ըստ *պատահման* է ճշմարիտ կամ բարի՝ նուա՛զ է ...: - 550. Իսկ ըստ *պատահմանն*՝ կարելի՛ է և ներընդունական. այսինքն փոփոխական և երբեմն: - 550. Եւ յորժամ ասիցէ զբարին ոչ չար գոլ, ճշմարիտ է և այս. այլ ըստ *պատահման* է որպէս ցուցաւ: - 550. Դարձեալ՝ յայտնապէս ասել ո՛չ է հարկ՝ է ամենայն բազում պատուական է քան զմին. զի ահա՛ գոյացութիւնն մի է և *պատահումն* բազում. և արեգակն մի է և աստեղք բազում. և գլուխն մի է և անդամք բազում: - 551. Դարձեալ ասեն վարդապետք եթէ՝ խորհրդոցն մեղք՝ որ ընտրէ և կամաւ հեշտանայ, առաւել չար է քան զգործոցն ըստ *պատահմանն:* - 557. Ասեմք թէ՝ յատկութիւն *պատահմունք* են. այլ խորհուրդն ի յէութիւնն է կացուցեալ որ մի է, և ո՛չ ի *պատահմունքն* որ բազումք են: - 596. *Պատահմունք* և որակն մնան ի հացն և ի գինին. իսկ գոյացութիւնն փոխարկի ի մարմին և արիւնն քրիստոսի վասն **դ** պատճառի: - 597. Նախ՝ զի մեք զգայարանօք՝ միջնորդութեամբ *պատահմանցն* հասանիմք ի գոյացութիւնն. զի անմեկնելի որոշմունք են ի գոյացութեանց սոքա: - 597. Երկրորդ՝ զի մեք կարասցուք մերձենալ ի սրբութիւնն, վասն այն մնան *պատահմունքն*...: - 597. Երրորդ ի *պատահմանէ* դիպւածոյ. և այս միջա՛կ է: - 664. Կամ ի *պատահման* է երևելոյ ինչ տեսլեան: - 668. Ասեն վարդապետք՝ եթէ են ինչ որ էութեամբ և *պատահմամբ* անցանեն. որպէս կենդանիք և տունկք և որ ինչ ի չորից տարերաց են գոյացեալք: - 727. Եւ են ինչ որ *պատահմամբ* անցանեն և էութեամբ մնան. որպէս երկնային մարմինք և **դ** տարերքս և մարդոյս մարմին. սոքա *պատահմամբ* անցանեն և գոյացութեամբ մնան: - 727. Հինգերորդ հալեալ մոմ ո՛չ ունի զառաջին կերպն այլ զգոյացութիւնն. նոյնպէս և գոյացութիւնն երկրի ո՛չ կորնչի. այլ *պատահմունքն* այլայլին. զի ո՛չ ճանաչի թէ այս այն է: - 728. Կամ լինէիր անհոգ որպէս ենովք և եղիա որ այնպէս անհո՛գ են, որք ոչ ի մահու և ո՛չ յայլ ինչ *պատահմանէ* երկնչին: - 762

**ՊԱՏԱՆ +** Երեսունևմի, գիշերի ընդ պատուհանն ել, թողեալ *զպատանսն* յանկողնի. և տէրն ի գիշերի յարուցեալ եթող զկտաւն ի գերեզմանին կնքեալ: - 436-437. Իսկ *պատանքն* ո՛չ ծալեալ. զի խորհուրդ տնօրէնութեանն ո՛չ ամենևիմբ յայտնի է և ո՛չ անյայտ. որպէս կտաւն բազո՛ւմ ունէր փոթուածս: - 517. Չորրորդ՝ Վասն ոգւոյ. և կարգ կատարելոյ. և *պատանաց*, և այլն: - 660. Եւ կոչի *պատանք*, զի պատեալ և կապեալ է զամենայն զգայարանսն. և ոչ ինչ կարէ գործել. ո՛չ չար և ո՛չ բարի: - 671. Այսինքն նախ արմատն. և յետոյ խոտն. յետոյ ծղօտն. և ծնունդն. և ապա՛ տերև. *պատանք*. և քիստք. և ապա՛ ցորեանն ատոք ի հասկին: - 721

**ՊԱՏԱՆԵԱԿ +** Նոյնպէս յերեւումն հրեշտակաց զոր մինն տեսանէ՝ այլ մերձակայքն ո՛չ տեսանեն. որպէս յա՛յտ է ի *պատանեակն* եղիսէի: - 145. Եւ երիցս կրկնեալ **է**-ից մինչև ի **իա**, լինի կատարեալ արիական մասն ցասմնականին. և կոչի *պատանեակ* մինչև ի **իը** ամն: - 265. Մանուկ. *Պատանեակ*. Երիտասարդ. Ծեր. և Զառամացեալ: - 265. Տասն ամն մանկութեան է. և **ի**՝ *պատանեակ* զինուորութեան. և **իը**՝ երիտասարդութեան որ է՛ **դէ**: - 343. Որ է՛ Տղայ. Մանուկ. *Պատանեակ.* Երիտասարդ. Ալևոր. Ծեր. իսկ երեխայն դեռածինն է: - 378. *Պատանեակ* ի ամեան. որ զ**ժ** պատեաց: - 378

**ՊԱՏԱՆԻ +** Զի՞նչ է կծկիլին. և է անգամ յօրանչելն ի վերայ մեռեալ *պատանոյն:* - 446

**ՊԱՏԱՌ +** Եւ քաքար՝ *պատա՛ռ պատառ* կոտորեալ և ի տապակի եփեալ իւղով: - 357. Եւ յետոյ բաշխումն նշխարաց. որպէս դաւիթ բաշխեաց ամենայն իսրայէլի բլիթ մի հաց, և *պատառ* մի ի տապակէ՛ և ի կասկարայիցն: - 431. Եւ վասն միաւորութեան. և թացեալ *պատառացն*. և թէ ո՛չ տան ժողովրդեանն յօրինեալ մարմնոյն քրիստոսի: - 526. Իսկ վասն թացեալ *պատառին* զանազան են կարծիք: - 599. Ոմանք ասեն թէ ի հասարակ ընթրիսն յորժամ բազմեցան՝ ի հասարակ սեղանոյն թացեալ *զպատառն* ետ յուդայի...: - 599. ...այսպէս պատմէ Մատթէոս և Մարկոս. իսկ Ղուկաս և Յոհաննէս յետ ընթրեա՛ցն նշանակեն զթացեալ *պատառն:* - 599. Այլ թացեալ *պատառն* այսպէս էր. զի ի սկաւառակն ընդ վարդապետին փութացաւ մատնիչն տանիլ զձեռն լիրբ դիմօք և արհամարհեալ մտօք: - 599. Եւ *զպատառն* զայն զոր ի ձեռն ունէր քրիստոս՝ ետ ի նա...: - 599. Եւ յետոյ թացեալ *պատառովն* նշանակեաց զմատնիչն: - 599. Ապա յա՛յտ է զի ո՛չ ի մարմնոյ և ո՛չ յարենէն էր թացեալ *պատառն*. այլ ի այլ ինչ կերակրոյ ի սեղանոյն առեալ թացեալ և տուեալ. զի ցուցցէ զմատնիչն: - 599. Եւ ոմանք ըստ իւրաքանչիւր *պատառոյ* զմահն ի միտ ածեն և զդատաստանն...: - 655

**ՊԱՏԱՌԵՄ +** Զորօրինակ՝ իրն ի ներկայս որ է նիւթ ներընդունակ՝ ունի կրկին զօրութիւն. որպէս հանդերձն կարէ՛ *պատառիլ*, և կարէ՛ ո՛չ *պատառիլ*. և ջուրն կարէ ջերմն գոլ, և կարէ՛ ո՛չ գոլ. և մինն ի նոցանէ՛ լինի ներգործութեամբ որն և հանդիպի: - 9. Եւ դարձեալ ի բաց *պատառես* զէութիւնն. որպէս թէ կէսն կայր՝ և զկիսոյն լինիլն կամեցաւ: - 36. Պատասխանեմք թէ՝ մի՛ *պատառեր* զգիրս աստուածաշունչ. տե՛ս և զմեկնութիւն բանից թէ՝ «որ առաքեացն զիս հայր՝ ընդ իս է»: - 39. Իսկ միւս զօրութիւնն որ կարելի է՝ և ներընդունի զգոլն և զչգոլն՝ և երբեմն՝ ասի ի վերայ փոփոխական բնութեանց. որպէս հանդերձն կարէ՛ *պատառիլ* և ո՛չ *պատառիլ*. և ջուրն կարէ՛ ցրտացուցանել և ո՛չ ցրտացուցանել: - 168. Իսկ գէջն լինի ամպ. և չորն ի մէջ ամպոյն նեղեալ *պատառելով* զձայլմունս ամպոյն՝ լինի որոտ և փայլատակունք ևս: - 204. Զորօրինակ՝ եթէ ոք *պատառէ* զկտաւ և թափի փոշին: - 204. Եւ վասն առաւել և նըւազ ջերմութեանն, է՛ որ ի դուրս *պատառիլն* շիջանի: - 204. Եւ է՛ որ յերկիր հասանէ և *պատառի:* - 204. Եւ ըստ չափու թանձրութեանն *պատառեալ* բեկանի, և ի վայր բերմամբ գնդի ի ջերմութենէ օդոյն, և լինի կարկուտ: - 205. Իսկ գազան, կամ զի գզօ՛ղ են և *պատառօղ*. կամ զի զանազան և ահագին կերպարանք ունին: - 216. Երրորդ՝ զի թոյնք և խայթոցք նոցա՝ զէն և պահապան է նոցա. զի առիւծքն *պատառելովն* ապրին. նոյնպէս և այլքն: - 217. Հինգերորդ՝ մովսէս զծովն *պատառեաց:* - 328. Քսանևդ, նա՛ զերկիր *պատառեաց* դադանեանցն: - 329. Քսանևը, մովսէս խաչանիշ գաւազանաւն զծովն *պատառեաց:* - 329. Եւ յերեկոյ շաբաթուն *պատառեցաւ* ծովն. և ի գիշերի կիրակէին անցին ընդ ծովն. և ընկղմեցաւ փարաւոն: - 337. Մովսէս զի՞նչ ասաց ի *պատառել* ծովուն: - 338. Նոյնպէս ի թռչունսն, կռաշուրթն և մսակերն նոքա են, որ *պատառեն* զընկերս՝ պիղծ են: - 365. Չորրորդ, թէ լուացեալ փոխէ զգոյնն, *պատառէ*՛ և սրբի: - 367. Այսինքն յորժամ խոստովանին և փոխին յապաշխարութեան վարս, *պատառեն* զմեղս և սրբին ի գործեցեալ մեղացն: - 367. Չորրորդ՝ մարմառոտն. որ կաշին *պատառեալ* և խոց լինի նշանակէ՛ զխոց մեղաց: - 371. Եօթներորդ՝ զի միտքն զախտն շարժէ ի չարն. և ո՛չ ախտն զմիտքն. որպէս ասի, խորհուրդք ծերոց զքարինս *պատառեն:* - 377. Վէմք *պատառեցան*. և խաւարեցաւ լոյսն: - 399. Եւ զի *պատառեաց* զկրկնոցն. և եհարց՝ ո՞յր որդի է դաւիթ: - 412. Զի և եղիա *պատառեաց* և էանց: - 414. Եւ տէրն զոսոխն մեր սատանայ իբր զառիւծ *պատառօղ*՝ տարածմամբ ձեռաց ի խաչին սատակեաց: - 422. Եւ տէր մեր ի սպանօղ մարմնոյս որ է՛ *պատառօղ* հոգւոյս, սպանելով զսա՛ գտանէր զքաղցր կեանս տալ որդւոց մարդկան ազգի: - 422. Զի՞նչ նշանակէր *պատառիլ* կրկնոցին: - 427. Սեղանոյն *պատառիլն* նշանակէր զկործանումն սեղանոյն դիցն: - 442. Բայց անյա՛յտ էր գրեալն. մինչ խաչիւ և չարչարանօք զգիրն պատրանաց նախաստեղծիցն *պատառեաց,* և ապա՛ զայս գիր ետ յայտնապէս: - 481. Զի՞նչ է ձեռագիրն ադամայ զոր *պատառեաց* քրիստոս: - 481. Արդ զգիրն ադամայ պարտուց՝ տէրն որդի եղև նմա և անմեղ մահուամբն տարածեալ զձեռս ի խաչին *պատառեաց* ասելով, նա մեղաւ և մեռաւ. ես զինչ մեղայ. դո՛ւ ես պատճառն: - 482. Իսկ զձեռագիր հրէիցն, և զայն ևս *պատառեաց* քրիստոս կատարելով զամենայն օրէնս աստուծոյ: - 482. Իսկ զգիր քրիստոնէից զոր յետ աւազանին մեղանչեմք և գրեմք զյանցանս, զայն *պատառէ* ապաշխարութիւնն. որ է՛ զղջումն սրտի և խոստովանութիւն լեզուի և հատուցումն գործոց մարմնոյ: - 482. Երկրորդ՝ վէմք *պատառեցան:* - 490. Եւ ի ձայնէն վէմք *պատառեալ* և երկիր շարժեալ, տեղի ետուն իջանել ի նոսա՛. և քարացեալ սիրտ նոցա ո՛չ շարժեցաւ: - 490. Եւ վարագոյրն

*պատառեցաւ*. զի յանարգանս փեսային *պատառեաց* հարսն զքօղն. և կողն աղբիւրացաւ. և նոքա ո՛չ արտասուեցին: - 490. Եւ յերեկոյի շաբաթուն *պատառեցաւ* ծովն, և ի գիշերի կիրակէի անցին ընդ ծովն և ընկղմեցաւ փարաւօն: - 513. Եւ յետոյ բազումք զղջացան և ասացին, *պատառեցար* զկանոնս հաւատոյ: - 543. Զի ա՛ռդ բաժանեցին զբանն ի մարմնոյ. և *պատառեցին* զկանոն սուրբ հարցն: - 547. Իսկ որք այլ իմն շաղակրատեն թէ քացեալ *պատառնէ՛* յուդայի: - 598. Զի՞նչ նշանակէ սուգն և կոծն և հանդերձին *պատառելն:* - 670. ...և ծովն *պատառեցաւ.* և փարաւօն ընկղմեցաւ...: - 682. Եւ ծովն *պատառեալ* ի ձեռն մովսիսի այսինքն խաւարային անդունդք օդոյդ ի ձեռն առաջնորդ հրեշտակին: - 682. Որպէս և բազում ուրէք յերգս գտանի. վէմք *պատառեալ*. երկիր շարժեալ առ խաչին քրիստոսի: - 788. Ա՛րդ՝ որպէս երկիր շարժեցաւ, վէմք *պատառեցան:* - 788

**ՊԱՏԱՌՈՒՄՆ +** Կամ ի յերկրի *պատառմանէն* ուժգին վերաբերեալք լինին: - 206

**ՊԱՏԱՍԽԱՆԵՄ +** *Պատասխանեմք* այսմ եթէ սո՛ւտ են ասացեալքդ. և պատուակին ճշմարտութեամբ. սակայն յայտնի՛ է իմաստնոց: - 8. Եւ որովհետև ծանեաք զայս, արդ *պատասխանեմք* առարկութեանցն, եթէ որքան է՛ ի հարկաւոր պատճառ է՛, լինի բացորոշապէս բանն ճշմարիտ. որպէս բան թագաւորի. և մարդոյն մեռանիլն. և արև ծագելն. և լինիլն գարուն յետ ձմռան: - 10. Արդ *պատասխանեմ* առարկութեանցն: - 15. Այժմ *պատասխանեսցուք* ընդդիմութեանն: - 16. Իսկ ընդդէմ մանիքեցւոցն՝ որք ասեն **բ** սկիզբն, չար՝ և բարի. այսպէս հանդիպեսցուք և *պատասխանեսցուք* ի կարճոյ: - 20. Այժմ *պատասխանեսցուք* հարցմանն եթէ առաքինութեանն չարութիւն, և արդարութեանն անիրաւութիւն ներհական. որպէս խաւարն լուսոյ. և էութիւն է լոյսն. և ո՛չ էութիւն խաւարն. և օդն ընդունակ լուսոյ և խաւարի: - 23. Որոց *պատասխանեն* վարդապետք եկեղեցւոյ. և ես զնոցայն առեալ ասացից՝ թէ յաւուրս յետինս՝ ոչ զկատարած աշխարհի կոչէ, այլ կոչէ աւուրս յետինս՝ զպակասութիւն օրինացն և արդարութեան նորա. քանզի օրէնք նոցա պակասեցաւ ի գալստեանն քրիստոսի: - 27. Ասեմք թէ՝ թալմուտն *պատասխանէ* այսմ: - 28. *Պատասխանեմք* թէ՝ ամենայն հաւանութիւն որ է կամք յետ խոկմանցէ և իմաստութեանց. և քրիստոս է աստուծոյ իմաստութիւն ըստ առաքելոյ: - 36. Զի թէ *պատասխանեմք* թէ ո՛չ է հարկ թէ սկսեալն ամենայն իրօք և դադարեսցի. որպէս հրեշտակք և հոգիք մարդկան. զի են սկսեալք և ո՛չ դադարին. է՛ այս պատասխանի, այլ ո՛չ բաւական: - 37. *Պատասխանեմք* թէ՝ անծնելութիւնն և կամ ծնելութիւնն ո՛չ ասի միայն աստուածութիւն. զի աստուածութիւնն հաւասա՛ր է Երրորդութեանն: - 38. *Պատասխանեմք* թէ՝ կարի՛ յիմարութիւն է հարցումնդ. և զի գոյ հայր ըստ քում բանիդ ծնօղ որդւոյ. ապա ուրեմն ո՛չ կարէ ոչ լինիլ և ծնանիլ: - 38. *Պատասխանեմք*՝ թէ հայր ո՛չ բնութեանն է անուն՝ և ո՛չ արարչութեանն. այլ առանձնաւորութեանն. զի այնու յատկանայ յորդւոյ և ի հոգւոյ: - 39. *Պատասխանեմք* թէ՝ մի՛ պատառեր զգիրս աստուածաշունչ. տե՛ս և զմեկնութիւն բանիդ...: - 39. Այլ ո՛չ զայս *պատասխանեմք:* - 41. *Պատասխանեմք*, ո՛վ յանդուգն մեկնիչ դու...: - 41-42. *Պատասխանեմք:* - 47. *Պատասխանեմք* թէ՝ ո՛չ է զօրացեալ՝ այլ զօրացուցանօղ...: - 52. *Պատասխանեմք* թէ ո՛չ է նուազ հոգին. զի ո՛չ է անկատար աստուածութիւնն. և ո՛չ նուազութիւնն առնէ հոգւոյն ո՛չ լինիլ որդի, այլ դէմքն և առանձնաւորութիւնքն: - 53. *Պատասխանեմք* թէ ցո՛յց մեզ սոյնպէս աստուած երեք անձինք ի մի բնութիւն. և ես ցուցանեմ զմինն ծնունդ և զմիւսն ո՛չ ծնունդ: - 53. *Պատասխանեմք* թէ՝ ո՛չ ասէ պարզաբար ամենայն, այլ կարգէ՛ զհետն թէ՝ ամենայն որ ինչ եղև. թէ եղեալ ցուցանես զհոգին, և ես հաւատամ թէ ի ձեռն որդւո՛յ է եղեալ: - 53. *Պատասխանեմք*՝ Նախ՝ առ մակեդոնացիս որք զորդի խոստովանին աստուած՝ թէ ասացէ՛ք զպատճառ **բ** աստուածոց ձեր: - 54. Զի լիցի քո պատճառն ի կողմանէս մեր՝ *պատասխանի* քեզ: - 54. *Պատասխանեմք* թէ՝ ո՛չ են հեթանոսաց աստուածքն մի, այլ բազումք և միմեանց հակառակք կամօք պաշտմանն և զոհիւք խնդրոյն: - 54. *Պատասխանեմք* թէ՝ ամենայն թիւ ո՛չ բնութեան է յայտնիչ՝ այլ քանիութեան ներքոյ արկելոյ թւին: - 54. *Պատասխանեմք* նախ, որպէս ասէ ոսկէբերանն թէ՝ նորածնեալքն աւազանաւն՝ ըստ չափու շնորհացն արժանաւորեին իմաստութեան, թարգմանութեան, և այլն. այսպէս և ոմն շնորհս ընդունէր աղօթելոյ կարգաւորապէս. զի ի նմանէ ուսանէին և այլքն աղօթել: - 59. *Պատասխանեմք* եթէ՝ որպէս ասի որդի առաքեալ ի հօրէ և ի հոգւոյն...: - 60. *Պատասխանեմք* եթէ՝ հոգի աստուծոյ ոմանք զօդս ասեն. որոյ բնական տեղի իւր է՛ ի վերայ ջուրց: - 60. *Պատասխանեմք* եթէ՝ թէպէտ հոգին ունի զբնութիւնն ի հօրէ՝ սակայն ո՛չ ծննդեամբ որպէս որդի, այլ բղխմամբ...: - 60. *Պատասխանեմք*, այն որ ասի հոգի քրիստոսի, և թէ՝ փչեաց, և թէ՝ առաքեաց, յայն սակս ասացան, զի ծաւալումն հոգւոյն սրբոյ յաղագս մարդկան՝ գալստեամբն քրիստոսի եղև: - 61. Հինգերորդին *պատասխանեմք*, եթէ փառաւորէ հոգի զորդի՝ ասես ի

նմանէ սկզբնաւորեալ: - 61. Վեցերորդին *պատասխանեմ*, թէ ասիցես որդին անկենդան է յորմէ հոգին ո՛չ բղխէ. ապա՛ և ըստ քեզ հոգին անբան է զի ըզբանն ո՛չ ծնանի: - 61-62. Իսկ մեք ի կարճոյ *պատասխանեսցուք:* - 76. Զի՞նչ *պատասխանեմք* երկաբնակացն որք հարցանեն զմեզ, թէ մասունքն քրիստոսի աստուած է՝ այսինքն ոտքն և ձեռքն և գլուխն ապա բազմաստուածք էք: - 91. Ելե՛ր ի բանէդ և դժուարինս խօսիս. և զոր հարցի՝ ո՛չ ընկալայ *զպատասխանին:* - 92. Ո՛չ ինչ ունիմ ասել առ այս. այլ՝ զուղիղ *պատասխանին* խնդրեմ: - 92. Եւ որովհետև ծանեաք զայս, *պատասխանե՛մք* ասելով՝ եթէ կարգաւո՛ր է և յոյժ: - 114. *Պատասխանեմ* առաջնոյն, թէպէտ մի և նոյն ուրացական մասնիկն որ է ո՛չն՝ գործէ՛ զուրացումն և զբառնալն, այլ ուրացումն և բառնալն ո՛չ է նոյն. զի բազում պատահի որ գործին նոյն է որպէս ձեռն. այլ գործելն ո՛չ է նոյն. որպէս կտրելն և կարելն: - 124. Երկրորդին *պատասխանեմք* եթէ՝ ո՛չէ նոյն դրութիւն և խոստովանութիւն. որպէս յորժամ ասեմք դնելով թէ՝ չա՛ր է. խաւա՛ր է. և մե՛ղք է. ահա այս ուրացութիւն է և պակասութիւն: - 124. Նմանապէս և *պատասխանին* այլ և այլ և ո՛չ մի: - 162. Եւ զի յա՛յտ եղև այս, այժմ *պատասխանեսցուք* հարցմանն: - 162. *Պատասխանեմք* առ այս եթէ՝ առանց ջերմութեան անձն և անկերպ է անորակ մարմինն. իսկ տերևն զա՛րդ է ծառոյն. և մազն մարմնոյն: - 170. Այժմ *պատասխանեմք* առարկութեանն: - 170. Արդ այսպէս *պատասխանեմք*, եթէ բնութեամբ և կամօք ներգործէ աստուած ընդդէմ էակացս: - 173. Ա՛րդ՝ *պատասխանեմք* առարկութեանցն: - 175. Երկրորդ՝ *պատասխանեմք* թէ՝ յիրաւի որպէս մի է աստուած, և մի աշխարհ: - 179. *Պատասխանեմք* յայտնի տեսութեամբ, թէ զոր ինչ այրէ հուր, ծախէ՛ և կորուսանէ զամենայն որակսն. այսինքն զգոյն. զհամ. զհոտ. նոյնպէս և զծանրութիւն: - 202. Եւ այժմ *պատասխանեսցուք* այնմ որ ասեն՝ յարարածքս զիմանալիս յառաջ ստեղծեալ քան զզգալիս: - 253. *Պատասխանեմք* առ այս եթէ՝ փչումն ո՛չ զբանական հոգին ասեն սուրբ հարքն...: - 253. *Պատասխանեմք* եթէ, սերմնական զօրութիւնն որ է՛ ի մեզ, նոյն է սկիզբն գոյութեան մարդոյ: - 254. *Պատասխանեմք* և ասեմք թէ, ո՛չ է հոգին յետոյ. ո՛չ ժամանակաւ և ո՛չ բնութեամբ. այլ դասիւ և կարգաւ: - 254. *Պատասխանեմք* եթէ **դ** իրաց պակասութիւն, խափանէ՛ զկենդանութիւն նորին: - 256. *Պատասխանեմք* եթէ՝ ոմանք յարմատս ունին զսերմն. ոմանք ի ծայրքն. կէսք ի տերևն. այլք ի կեղևն. թէպէտ և սոցա սերմնական զօրութիւնն է՛ ի մէջն, այլ առաւել կենդանւոյն: - 256. *Պատասխանեմք* եթէ՝ և զայս երթիցուք յառաջինսն և գտցուք: - 262. Իսկ այնմ որ ասեն թէ յարբեցութեան մեռան, *պատասխանեմք* եթէ՝ զմեղս յամենայն աւուր արիւն պատարագացն սրբէ՛ր. իսկ զայնմ աւուր՝ արիւնն իւրեանց: - 322. *Պատասխանեմք* եթէ՝ **է** էին: - 322. Երրորդ՝ ցուցանէ զգողացեալն ի բանից, զնոյնն կրկնել և շրջել *պատասխանելով:* - 323. Դարձեալ՝ յաղթեաց զսատանայ այնու, զի իմացաւ զչար հնարսն նորա և *պատասխանէր* զընդ դէմ. որպէս կնոջն և բարեկամացն և որք զգուժն բերէին. զի գիտէր ի բանսարկուէն լինիլ: - 323. Եւ մեզ պա՛րտ է իմանալ զչար խորհուրդ խորամանկին ի զանազան հնարս, և *պատասխանել* ի սուրբ գրոց. որպէս յայտ է ի գիրս Նագրեայ: - 323. Այսմ *պատասխանէ՛* իմաստունն ի սիրեցէքն և դնէ **դ** պատճառ: - 333. Դարձեալ՝ զայս օրինակ ետես մարգարէն զաքարիա և *պատասխանեաց* հրեշտակին...: - 346. Չորրորդ՝ զի ասաց՝ «տէր հեռացաւ յինէն» և ո՛չ *պատասխանեաց:* - 429. Հինգերորդ՝ զի **դեղն *պատասխան* էր հիւանդութեանն**: - 463. Երրորդ զհաւանումն. զի *պատասխանեաց* թէ՝ «ահաւասիկ կա՛մ աղախին տեառն»: - 465. Այսմ *պատասխանէ* պայծառ ջահն եկեղեցւոյ սուրբն յոհան ոսկեբերանն...: - 467. Այլ այժմ *պատասխանեսցուք* հարցմանն: - 481. Վասն այն յերկարեցի, թէ ոք հակառակի՝ այսպէս *պատասխանեսցես* նոցա. և զեղկելի անձն իմ յիշեսցես ի տէր ուղղակից եղբայր իմ ի քրիստոս: - 511. *Պատասխանեմք* թէ՝ նման է այնմ որ ասեն թէ՝ բան աստուած է պատկեր հօր, և մարդն ի պատկեր բանին. ապա մարդն ո՛չ է պատկեր աստուծոյ, այլ պատկեր պատկերի: - 530. *Պատասխանեմք* առաջնոյն որ ասէ «տաց քեզ զփականս»: -547. Զի՞նչ *պատասխանեմք* որք բամբասեն զազգս հայոց ո՛չ միաբանիլ այլոց: - 550. *Պատասխանեմ* և ասեմ եթէ ո՛չ են միմեանց հակառակ. այլ երկոքեանն ճշմարիտք են որպէս ցուցանեմք յետոյ: - 556. Այժմ *պատասխանեսցուք* հարցմանն: - 558. Եւ վերջինս այս վասն այն ասի գործ ողորմութեան, զի կակուղ և խոնարհ *պատասխանին* խորտակէ՛ զբարկութիւն ընկերին և շահի՛ զնա: - 585. Այժմ *պատասխանեսցուք* նախ՝ եթէ խոստովանութեամբն թողութիւն լինի ամենայն մեղաց...: - 602. *Պատասխանեմք* այսմ, թէ ամենայն ինչ զոր արար և զոր առնէ աստուած՝ բարի՛ են և յօգուտ մեզ...: - 662. *Պատասխանեմք* առ այս որպէս ասէ սուրբն կիւրեղ ի գիրս պարապմանց եթէ առակ օրինակ են սոքա արդարոց և մեղաւորաց որ այսպէս լինելոց է ի կատարածի: - 695. *Պատասխանեն* վարդապետք եթէ երից ոմանց. այսինքն կուսանաց. և մարտիրոսաց. և

վարդապետաց: - 712. *Պատասխանեն* վարդապետք և դնեն **գ** սահմանս: - 716. *Պատասխանեն* վարդապետք թէ՝ որպէս մովսէս թանձրամիտ ժողովրդեանն իսրայէլի պատմէր զլինելութիւն արարածոց ի **գ** օրս...: - 717. Որոց *պատասխանեսցուք* այսպէս: - 733. Իսկ երկրորդին այսպէս *պատասխանեսցուք* ընդդիմայարակայութեամբ. զի մարդոյ մարմին ապականի. վասն զի քակտի ի նմանէ կենդանացուցիչ նորին հոգին...: - 733. Եւ զոր օրինակ փայտն գիտութեան պատճառ մահու եղև. *պատասխանեալ* դեղն ցաւոց: - 734

**ՊԱՏԱՍԽԱՆԻ +** Այսքան առ երկրորդն՝ տա՛սն գլխով եղեալ հակաճառութեանց *զպատասխանիսն*. և **բժան** գլխով առհասարակ տարահաճելիս: - 13. Եւ *պատասխանիք*, և ա՛յլ հարցմունք ուղղափառի առ նոսա: - 29. Եօթներորդ՝ Հայր իմ մեծ քան զիս. և *պատասխանիք* նոցա **ը** գլխով: - 29. Ութերորդ՝ Տէր ստացաւ զիս, և *պատասխանիք* նոցա **դ** գլխով: - 29. Իններորդ՝ Անդրանիկն արարածոց. և *պատասխանիք* նոցա **ե** գլխով: - 29. Մետասաներորդ՝ Աստուած աստուած իմ ընդէ՞ր թողեր զիս. և *պատասխանիք* նոցա **ը** գլխով: - 29. Երեքտասաներորդ՝ Ո՛չ կարեմ յանձնէ. և *պատասխանիք* նոցա **ժ** գլխով: - 29. Իններորդ՝ զիա՞րդ մի և **գ** ասէք. և *պատասխանիք* սոցա ամենեցուն: - 30. Վասն որոյ և մեք համաձայն գոլով ուղղափառաց հարցն սրբոց՝ դիցուք սուղ ինչ յառարկութեանց նոցա, և ընդ նմին *զպատասխանիս:* - 35. Այլ ա՛յս է մեր *պատասխանի:* - 37. Զի թէ պատասխանեմք թէ ո՛չ է հարկ թէ սկսեալն ամենայն իրօք և դադարեսցի. որպէս հրեշտակք և հոգիք մարդկան. զի են սկսեալք և ո՛չ դադարին. է՛ այս *պատասխանի*, այլ ո՛չ բաւական: - 37. Վասն այն հեզն յամենայնի արհամարհեաց զփառամոլ միտս նորա խոնարհ *պատասխանեօք:* - 47. Այլ այժմ տեսցուք ի սուրբ գրոց զվկայութիւնսն մակեդոնի, և յարմարեսցուք *զպատասխանիս* նոցա: - 59. *Պատասխանի* հակառակողի: - 86. Ասեմք թէ՝ նոյն է *պատասխանին*. զի պատահումն առ մե՛զ հանդիպի. այլ առ աստուած ոչ ինչ է պատահմամբ. այլ ամենայն ինչ գիտութեամբ. զի ո՛չ տերև մի ի ծառոյ անկանի առանց գիտութեանն աստուծոյ: - 237. Նա՛խ՝ նշանակէ՛ *զպատասխանին*. զի *պատասխանին* կրկին է ի վերայ հարցմանն: - 323. Նա՛խ՝ զի կոչի «զի՞նչ սա՛». զի ամենայն հարցանելոյ լուծումն գոյ և *պատասխանի*...: - 338. Վեցերորդ, Վասն *պատասխանւոյ* Կուսին: - 454. Զի՞նչ ցուցանեն *պատասխանիք* Կուսին: - 465. Իսկ հաւանական *պատասխանիք* սրբուհւոյ կուսին մարիամու են **դ** բանք: - 465. Զքարկութիւնն՝ կակուղ *պատասխանին:* - 489. Եւ թէպէտ ասացաւ ճշմարիտն թէ անապակա՛ն է մարմինն տեառն, այլ այժմ դիցուք զբանս նոցա թէ վասն է՞ր ասեն ապականացու. և յարմարեսցուք *զպատասխանիսն:* - 500. Եօթներորդ՝ որպէս ասացաք յառաջին *պատասխանին* որդիք մահապարտաց և ապստամբք աստուծոյ մեղաւո՛րքն էին նոցա քարոզեաց և ազատեաց: - 507. Երրորդ, դիւական. որպէս կռոց սուտ մարգարէքն. սեդեկիայն և այլոց բազմաց. որ այժմ երևին ի *պատասխանիս* կախարդաց. նաև հաւկռիչք և գարշդիւբք. որք են բնաւ սուտք և ոչինչք: - 536. Այլ և ոմանք ի հանդերձեալն ո՛չ ունին *պատասխանի* առաջի ահաւոր բեմին քրիստոսի: - 628. Երեքտասաներորդ, Վկայութիւնք հակառակ ախթարմայիցն. և *պատասխանիք* նոցա **ժե** թւով: - 660. ...որ ի դատաստանին *պատասխանի* չունենայ թէ ինձ զի՞նչ տուեր որ զքեզ սիրէի: - 664. Այլ և տեսցուք զվկայութիւնս հակառակացն և յարմարեսցուք *զպատասխանիսն*, զի առ ձեռն պատրաստ լիցի: - 695. Ասեմք եթէ՝ այսմ *պատասխանի* ասացաւ յառաջագոյն. **զի ո՛չ ուղղակի իմանան վասն առակին. զի երեկոյ կատարա՛ծն է աշխարհիս. զի «ռ ամ յաչս տն որպէս օր երեկո՛յ է»**: - 696. Այսքան առարկութիւնք հակառակաց և *պատասխանիք* ուղղափառաց: - 698

***ՊԱՏԱՍԽԱՆԻ ԱՌՆԵԼ +*** Իսկ երանելին յոբ չորիցս այսոցիկ ընդդիմամարտէ՛ր և *պատասխանի առնէր:* - 324

***ՊԱՏԱՍԽԱՆԻ ՏԱԼ, ՏԱԼ ՊԱՏԱՍԽԱՆԻ +*** *Տո՛ւր պատասխանի:* - 86. Եւ այս ևս ո՛չ է ընդունելի. զի սոցա *պատասխանի տայ* սուրբն կիւրեղ ի գիրս պարապմանց թէ՝ որ ասաց զպատկերն, իմանամք զնմանութիւնն ի պատկերին որպէս ցուցաւ ի վերոյ. զի ամենայն պատկեր 'ի հարկէ նմա՛ն է: - 273. Եւ ո՛չ *ետ պատասխանի* սիմէի որ նախատէրն զնա՛: - 413. Դաւիթ ընդէ՞ր ոչ *ետ պատասխանի* անարգանացն սիմէի: - 433. Նա՛խ՝ զի մեզ օրինակ լիցի *չտալ պատասխանի* որք նախատեն զմեզ...: - 433. Ի գիրս բենետիքտոսի հարցեալ եղև թէ ո՞ւր են դժոխքն. և *տուաւ պատասխանի* թէ՝ յանկեան և յեզր ծովուն ի ներքոյ երկրի ի խաւարչուտ վայրս: - 504. և կրկին է մահն որ *պատասխանի տայ* նոցին այսպէս: - 610. ...իսկ միտքն *տայ պատասխանի*՝ դրունքս փակեալ են. այսինքն զգայարանքս խցեալ են և մեղաց մանկունքս ընդ ինև ո՛չ տան թոյլ...: - 697

**ՊԱՏԱՏԵՄ +** Որ և պահապանքն շրջապատեալ. որ և զհանդերձն *պատատեալ* յանկողնի, և լերդ այծեաց և մազ ի սնարսն. և ի գիշերի իջեալ ընդ պատուհանն և ելեալ առ սամուէլ զերծաւ ի ձեռաց նոցա: - 513

**ՊԱՏԱՐԱԳ +** Դարձեալ, թէ է հարկ, վասն է՞ր աղօթք և *պատարագք* և ողորմութիւնք և այլն՝ դարձուցանեն զմերձեալ չարիսն, և փոխեն ի բարիս: - 11. Ուստի յա՛յտ է մեծութիւն յանցանացն. քանզի ի հինն զինչև մեղանչէր ոք մեծ կամ փոքր՝ *պատարագաւն* սրբէր. թռչնօք և անասնօք: - 33. Առիւծն՝ զի թագաւոր է. և եզն՝ զի քահանայ է և *պատարագ:* - 132. Արդ եթէ ոչ է կատարեալ *պատարագն*, վասն է՞ր դատապարտէ զոչ արժանիսն: - 167. Այլ տեսցուք զայս և յօրինակս ճշմարտութեան. զի ադամ յետ միոյ յանցանացն ո՛չ մատոյց *պատարագ* զամենայն աւուրս կենաց իւրոց. այլ որդւո՛ցն հրամայէր մատուցանել: - 167. Ի քահանայութենէն, զի ո՛չ իշխեաց *պատարագ* մատուցանել ի կեանս իւր: - 279. Առաջին հարցումն Վասն աբէլի և կայենի, և *պատարագաց* նոցա: - 283. Երեսուներ, Վասն է՞ր խնդրեաց յանբանից *պատարագ:* - 284. Երեսունն**ք**՝ Թէ քանի՞ են *պատարագ* հնոյն: - 284. Քառասուն, Զի՞նչ նշանակէր կատարումն *պատարագացն:* - 284. Քառասուն**բ**, Վասն նորոյս *պատարագաց:* - 284. Եւ զի **գ** *պատարագս* ունիմք. և թէ զի՞նչ էր կրկին ողջակէզն: - 284. Քառասուն**գ**, Արատ *պատարագացն* **բժ**ան: - 284. Երկրորդ՝ զի խոնարհ և հնազանդ էր յամենայնի. ուստի մնաց եղբօրն *պատարագի*...: - 286. Առաջին յանցանք՝ անարժան *պատարագն:* - 287. Որպէս կայէն յորժամ սպան զաբէլ, պատճառեաց ծնողացն եթէ զնորա *պատարագն* ընկալաւ աստուած և վերացոյց ի դրախտն: - 290. Եւ վերինն քահանայից բեմն տեղիք *պատարագաց:* - 294. Երրորդ՝ զի զանարիւն *պատարագն* մատուցանէ որ հոգևորն է և ճշմարտութիւնն: - 296. Իսկ քահանայ, զի հաց և գինի *պատարագ* մատոյց: - 300. Այլ զանազանին *պատարագաւն:* - 300. Նախ՝ զի մելքիսեդեկ ունէր *պատարագ* հաց և գինի. և աբրահամ ո՛չ ունէր: - 300. Երկրորդ՝ զի աբրահամ յետոյ պատարագեաց կենդանիս. որ էր նշանակ ժամանակեայ *պատարագին* ահարօնի: - 300. Այլ մելքիսեդեկին էր նշանակ յաւիտենական *պատարագին* քրիստոսի ի տեսակ հացի և գինւոյ: - 301. Վեցերորդ՝ նուիրեաց մելքիսեդեկ *զպատարագն* և ընկալաւ զտասանորդն. որպէս քրիստոս պարգևէ՛ հաւատացելոց զշնորհս, և առնու զտասնեակս զկատարեալ և զբարի գործս. կամ զտասն բանեան օրէնս **ժ** զգայարանօք: - 301. Եօթներորդ՝ մելքիսեդեկ ինքնին մատոյց *զպատարագն* քաղցելոց և ծարաւելոց. որպէս և քրիստոս ո՛չ միջնորդօք հրեշտակաց կամ մարդկան, այլ ինքնին բաշխեաց զմարմին և զարիւն իւր՝ քաղցեալ և ծարաւեալ ազգի: - 301. Ութերորդ՝ որպէս և աբրահամ ճաշակեաց *զպատարագն* մելքիսեդեկի և ո՛չ հաղորդեցաւ ընչիցն սոդոմայ: - 301. Իններորդ՝ քահանայութիւն և *պատարագն* մելքիսեդեկի առաջին էր և երկնաւոր: - 301. Տասներորդ՝ զի մելքիսեդեկ ո՛չ միայն *պատարագաւն*, այլ և անուամբ և տեղեաւ ևս օրինակ էր քրիստոսի: - 301. Ութերորդ՝ զի մելքիսեդեկ *պատարագ* հաց և գինի մատոյց աբրահամու: - 302. Հնգետասաներորդ՝ որպէս ի վերայ խսահակայ եղեալ եղև փայտ *պատարագին* մինչ ի տեղի զենմանն: - 306. Գիտելի է, զի ամենայն *պատարագ* յերեք դէմս որոշի. այսինքն մատուցօղն, և ընդունօղն և *պատարագն:* - 306. Զի է՛ որ մատուցօղն մեծ է քան *զպատարագն*. որպէս հին օրինաց *պատարագն*. զի անասունք էին: - 306. Եւ է՛ որ *պատարագն* մեծ է քան զմատուցօղն. որպէս նոր օրինացս՝ մարմինն քրիստոսի մեծ է քան զքահանայն: - 306. Իսկ չորրորդն է՛ *պատարագ* տեառն մերոյ քրիստոսի որ ի մի դէմ անձնաւորութեան **գ** երես *պատարագին* բացայայտեցաւ: - 306. Այսինքն մեծ գոլ մատուցօղն և ընդունօղն և *պատարագն:* - 306-307. Նոր *պատարագ*, և նոր քահանայ, և նոր եղանակն: - 307. Նա՛խ՝ որպէս յակոբ *պատարագ* մատոյց ի ջրհորն երդման զվերջինն և ապաել յերկրէն: - 314. Վասն որոյ ի յընչիցն *պատարագ* մատուցանելով և աղքատս կերակրելով գոհանան զաստուծոյ: - 321. Վասն է՞ր յոբ յետ խրախութեանն **ժ** *պատարագաւ* սրբէր զորդիսն. և մի զուարակ վասն մտաց մեղացն մատուցանէր: - 322. Երրորդ՝ ի խորհուրդ **ժ** բանեան օրինացն **ժ** *պատարագ* մատուցանէր: - 322. Վասն այն յոբ **ժ** *պատարագաւ* սրբէ՛ր զ**ժ** մասնաւոր մեղսն որ գտանին յարբեցութեան. և մին զուարակն ի սրբութիւն վասն ակամայ և խորհրդոյ մեղացն: - 322. Երկրորդ՝ զի ամենայն աւուր *պատարագաւ* սրբէ՛ր զնոսա: - 322. Իսկ այնմ որ ասեն թէ յարբեցութեան մեռան, պատասխանեմք եթէ՝ զմեղս յամենայն աւուր արիւն *պատարագացն* սրբէ՛ր. իսկ զայնմ աւուր՝ արիւնն իւրեանց: - 322. Զի՞նչ է որ զկէս արեան *պատարագին* խառնեաց ի ջուր և ցանեաց ի ժողովուրդն. և զկէսն էարկ շուրջ զսեղանովն: - 341. Հինգերորդ, նոքա մատուցանէին *պատարագ* նախ վասն իւրեանց...: - 354. Մետասաներորդ, նոքա ո՛չ իշխէին ճաշակել *զպատարագս*

իւրեանց. այլ արտաքոյ յարէին. իսկ տէրն մեր և մեք ճաշակեմք *զպատարագ* նորոյս...: - 355. Չորեքտասաներորդ, նոքա յերկրէ և յերկրի մատուցանէին *պատարագ*. իսկ տէրն մեր յերկնից և յերկինս մատոյց: - 355. Վասն է՞ր խնդրեաց աստուած յանբանից *պատարագ* արեամբ: - 355. Երկրորդ՝ ի յօրինակ նորոյս *պատարագի* ընկալաւ. զի անդ ստուերն է. և աստ ճշմարտութիւն: - 355. Նախ ցուցանէ զխոհեմութիւն բարուց որ ընդունելի է աստուծոյ և մարդոյ. այլ պարզութիւնն է՛ *պատարագ:* - 356. Հին *պատարագն* վասն է՞ր աղիւ կատարէր և նորս ոչ: - 356. Իսկ յօրինակն խառնեմք աղ. որպէս յագապս. յոգէհանգիստս և ի տօնական *պատարագս:* - 356. Դարձեալ ասեմք, ի հինն կրկին էր ընծայ *պատարագայցն:* - 356. Եւ զանգեալ նաշիհն զյիշատակ մարտիրոսացն՝ ուր խառնեմք աղ ի հատ *պատարագին* և իւղ անոյշ ի խորհուրդ նոցա: - 356-357. Զի՞նչ էր հին *պատարագն:* - 357. Գիտել պա՛րտ է, զի ամենայն *պատարագ* հին օրինացն նախ ի յերկուս բաժանի: - 357. Ա՛յսոքիկ են *պատարագք* զոհիցն ի նաշհոյ: - 358. Իսկ *պատարագ* ի կենդանեաց: - 358. Զուարակն հզօր և արդիւնարար. զի արդիւնարարք և հզօրացեալք ի գործս բարիս՝ *պատարագ* են աստուծոյ...: - 358. Եւ է՛ առաջին *պատարագ*՝ ողջակէզն: - 358. Չորրորդ՝ վասն փրկութեան ի հիւանդութենէ կամ ի պատերազմէ՛ փրկեալք, մատուցեն աստ *պատարագ* և նւէրս ընծայեսցեն ի սեղանն ի հոտ անուշից: - 358. Հինգերորդ, վասն մեղաց *պատարագ*, ի մեռելոտի կամ ի պիղծ ինչ մերձեցեալ. ոչխարով և թռչնով և նաշիով առանց իւղոյ և խնկոյ քաւէին: - 358. Եօթներորդ՝ զոհ՝ *պատարագն* որ ի նաշհոյ և յիւղոյ որպէս ասացաւ ի վերոյ: - 358. Իններորդ, *պատարագ* ուխտի. որ ո՛չ վասն երախտեաց ինչ, այլ իւր կամաւ ուխտեալ. որ յերկրորդ օրն ևս ուտէին զմիսն: - 359. Սոքա **բժ**ան ազգ նուէրք գլխաւոր *պատարագք* կարգեալ ի մեծէն մովսիսէ՛: - 359. Երրորդ՝ նշանակէ՛ թէ իւրաքանչիւր ոք իշխա՛ն է մատուցանել զինքն բանաւոր *պատարագ* աստուծոյ: - 359-360. Դարձեալ՝ հարաւն նշանակէր զիրէայս, և հիւսիս զհեթանոսս. որ լինելոց էին *պատարագ* և ժողովուրդ աստուծոյ...: - 360. Իսկ փայտն. մարմնոյ ցամաքութիւն և պարկեշտութիւն. որ առաւել բորբոքէ *զպատարագն:* - 360. Այս է ողջակիզաց և այլ *պատարագաց* խորհուրդն: - 360. Ո՛չ միայն զի յանունն աստուծոյ, այլ զի օրինա՛կ էին նորոյս *պատարագի*. և խորհրդովն քրիստոսի սրբեցան: - 361. Ասեմք եթէ՝ ամենայն զենմունք և *պատարագ* ի խորհուրդ և յօրինա՛կ էր քրիստոսի: - 361. Ա՛յս է խորհուրդ հին *պատարագացն* և քրիստոսիւ մաքրեին: - 361. Իսկ ի նորս ճշմարտութենէ *պատարագ* քրիստոս. որ միշտ բաշխի յեկեղեցի: - 362. Այլ և ունիմք զբանաւոր *պատարագս*՝ զհոգի և զմարմին մեր սրբութեամբ փոխանակեալ նմա: - 362. Այլ և ունիմք զմարմնաւոր *պատարագս* զօրինակին. զենմունք վասն կենդանեաց և մեռելոց: - 362. Հատ *պատարագի* մարտիրոսաց: - 362. Առաջինն է ի հոգւոյն *պատարագ:* - 362. Վասն է՞ր զերեքեան *պատարագս* ունիմք մեք: - 362. Նահապետքն ունէին կրկին *պատարագ*. բանաւոր և անբան. որպէս Աբէլ. Նոյ. Աբրահամ. և այլքն: - 362. Այլ զանբան *պատարագն* ուսան հեթանոսք և կռոց մատուցին. և այն սովորութեամբն իսրայէլ մատոյց աստուծոյ զանբան կենդանիս մինչ եկն քրիստոս և եղև ինքն բանաւոր *պատարագ*, և զնոյնս աւանդեաց մեզ: - 362. Ա՛րդ՝ մեք ունիմք զօրինակ կրկին *պատարագաց*. զնախնեացն և զճշմարտութիւնն քրիստոսի: - 362. Եւ մի է քաւութեան *պատարագն* քրիստոսի. մեղաւորին և յանցաւորին: - 362. Դարձեալ՝ կրկին ողջակէզն, մին այն է որ մատուցանեմք *զպատարագն* քրիստոսի մարմնոյ և արեան: - 362. Հինգերորդ՝ կրկին ողջակէզն. մին *պատարագն* է ամենայն աւուր. և միւսն տօն չարչարաց խաչի և մահու յամենայն ամի՛ զոր նոյն խորհրդով կատարէ՛ եկեղեցի: - 363. Երկրորդ՝ փոքր ողջակիզացն. յոր մասնաւոր *պատարագացն* էր: - 364. Երկրորդ՝ զի *պատարագն* զոր մատուցանէին անարատք էին. նոյնպէս և սպասաւորքն լիցին: - 370. Վասն է՞ր *զպատարագն* անարատ ընտրէին: - 370. Երկրորդ՝ ի յօրինակ մեծի և անարատ *պատարագինն:* - 370. Եւ **բժ**ան արատ *պատարագին:* - 371. Ի նոր *պատարագս* այսպիսի մարմնոյ ընտրութիւն ո՛չ է: - 371. Զի ճշմարիտ *պատարագն* քրիստոս է: - 371. Որ է՛ ի մեզ յամենայն աւուր *պատարագն* սուրբ. այլ և առաւօտուն և երեկոյին աղօթքն հանապազորդ: - 372. Նա՛խ՝ զի **ը** էին նւէրք *պատարագացն*. է գառն. և մի խոյ: - 373. Երկրորդ՝ նշանակէ՛ զբանաւոր *պատարագս* մեր. այսինքն զհոգի զմարմին և զմիտս մեր անարատ մատուցեալ: - 374. Նոյնպէս և մեք ի հանդէս տօնից նուիրեմք նաշիհ և գինի *պատարագի*. ծէթ՝ մոմ՝ խունկ՝ և զենումն մատաղի: - 375. Իսկ չորրորդ դորակ գինւոյն և իւղոյն ընդ նաշհոյ և գառինն, նշանակէ՛ զբանաւոր և զկենդանի *պատարագս* մեր: - 375. Զի՞նչ է որ զականմայ մեղուցեալն քաւէր *պատարագօր*. և զկամաւոր յանցաւորն սատակել տայր ժողովրդեանն: - 385. Իսկ կրկին *պատարագն*. մին վասն բոլոր ժողովրդեանն, և մին վասն

անձին ակամայիցն. ցուցանէ զկրկին խոստովանութիւնն. մին յայտնի առհասարակ եկեղեցոյն. և միւսն ծածուկ առանձին մեղաց: - 385. Նա՛խ՝ զի է էր *պատարագն*. վասն զի մատոյց է զուարակ. և է խոյ. վասն որոյ ընկալաւ պարգևս է բանից մարգարէութեան: - 387. Եւ զի կրկին ետես, Նա՛խ՝ զի կրկին էր *պատարագն*. խոյ և զուարակ: - 387. Եւ քահանայի մահն՝ *պատարագն* քրիստոսի է. մինչ վճարեսցի կանոն ապաշխարութեանն և ապա արժանասցին հաղորդելոյ: - 392. Դարձեալ, եկեղեցի սուրբ՝ է՛ քաղաք ապաստանի. և քահանայապետ ի նմա՛ *պատարագն*. յոր մտեալ աղօթեմք և թողութիւն գտանեմք: - 392. Իսկ յետ մահու ա՛յնցիկ հոգւոց որք զղջան կամ խոստովանին զմեղս, քաղաք ապաստանի է նոցա ի կայանս հոգւոցն տրտմութիւն և ցաւն վասն փոխարինաց մինչ մեռանի քահանայն մեծ. որ եկեղեցի սուրբ՝ *պատարագաւ* և աղօթիւք և ողորմութեամբ հատուցանէ՛ զպարտս նոցա և ազատին: - 392. Զի հին ժողովուրդն զանասունս մատուցանէր *պատարագ* ոչխար և արջառ և այլն: - 396. Երրորդ՝ զի յառաջ քան զճեններիլն ուտէին. իբր յառաջ քան զժամ *պատարագին:* - 425. Իսկ անդրանկածին երինջքն են մարգարէք և առաքեալք. որ զհաւատացեալս անդրանիկ ծնան. նոքա են ամոլք և *պատարագք* աստուծոյ: - 426. Նա՛խ՝ զի *պատարա՛գ* է աստուծոյ: - 427. Եւ տես, զի պաշտմամբ և *պատարագաւ* յետս դառնայ բարկութեան սուրն: - 435. Դաւիթ կանգնեաց սեղան և դարձոյց զսուր հրեշտակին. և տէր մեր զսեղան խաչին զենմամբ *պատարագին* ի փրկանս և ի կեանս աշխարհի: - 438. Քսանևդ, եբեր բազում *պատարագս*. ոսկի և ակն և խունկ: - 441. Եւ փոխանակ հայհոյութեան *զպատարագ* օրհնութեան մատուցանեն աստուծոյ: - 443. Այլ և նշանակէ *զպատարագ* նորոյս. զոր ինչ մատուցանեմք աստուծոյ հաղորդիմք ի նմանէ: - 443. Եւ վասն *պատարագաց* խաչին: - 454. Այլ և գիտելի է, զի ամենայն *պատարագ* յերեք դէմս որոշի. որ է՛ մատուցօղն, և ընդունօղն, և *պատարագն:* - 491. Զի է՛ որ մատուցօղն մեծ է քան *զպատարագն*. որպէս հին օրինաց *պատարագն*. զի անասունք էին: - 491. Եւ է՛ որ *պատարագն* մեծ է քան զմատուցօղն. որպէս նոր օրինացս մարմինն քրիստոսի մեծ է քան զքահանայն: - 491. Իսկ չորրորդն է՛ *պատարագ* տեառն մերոյ քրիստոսի որ ի մի դէմ անձնաւորութեան գ երես *պատարագին* բացայայտեցաւ. այսինքն մեծ գոլ մատուցօղն և ընդունօղն և *պատարագն:* - 491. Նոր *պատարագ* և նոր քահանայ և նոր եղանակ: - 491. Այլ և գաւազանն ի ձեռն հրեշտակին. որ ընկալաւ *զպատարագն* գեղէովնի: - 494. Ութևժ՝ ի մէջ գիշերի է յարութիւն փրկչին, վասն որոյ յերեկոյն մերձ ի մուտս գիշերոյն ճրագալոյց առնեմք և *պատարագ* որպէս ի ծննդեանն: - 514. Ապա թէ ի լոյս կիրակէին էր յարութիւնն, պա՛րտ էր յառաւօտին առնել *պատարագ* և ո՛չ յերեկոյին: - 514. ...տէր մեր իբրև քահանայ նոր յամենայն ձեռաց պահէր զգուշութեամբ, զի պահեսցէ զնա ի ձեռինն որ կարո՛ղ է ընդունել զայնպիսի *պատարագն:* - 517-518. Եւ սուրբն ղուկիոս սքանչելագործ և մարգարէաշնորհ, գրեաց առ մարկիանոս, թէ սուգ զգեցուցեր առաքելոց և մարգարէից. զի քակտեցեր զնոցա շինուածն. և արգելաւ հոգին սուրբ յօրհնելոյ *զպատարագն* և զաւազան մկրտութեան: - 543. Երկրորդ՝ մի քահանայ երիցս անգամ ի միում աւուր *պատարագս* մատուցեալ: - 553. Չորրորդ՝ և յերկուսեան ճրագալոյցս ո՛չ առնել *պատարագ:* - 553. Իսկ յոյնք, Առաջին՝ նախասրբեալ *պատարագն:* - 553. Երրորդ՝ զբոլոր հաց *պատարագին* ո՛չ հանել ի սեղանն. այլ մասն ինչ: - 553. Չորրորդ՝ մնացուած *պատարագին*. որպէս ինքեանք քաջ գիտեն: - 553. Վեցերորդ՝ և զհաց *պատարագին* ձիթով օծանել: - 553. Նա՛խ՝ զհաց *պատարագին* բաղարջ առնել: - 553. Երկրորդ՝ ի յաղուհացսն ո՛չ ունել հրաման *պատարագ* մատուցանել բաց ի շաբաթէ՛ և ի կիրակէէ՛: - 554. Վասն զի սոքա *պատարագ* մատուցանեն ի նախատօնակ ծննդեանն և յարութեանն. և լատինք ո՛չ: - 554. Եւ ի հաց *պատարագին* զբոլորն մատուցանեն և ո՛չ մասն ինչ, լատինք և հայք և ասորիք. իսկ յոյնք ո՛չ: - 554. Եւ բերէին *զպատարագն* որպէս վասն մեղաց՝ նոյնպէս և վասն յանցանաց: - 555. ...որպէս առաւել է մեղք հրեշտակին քան զմարդոյն. վասն այն մին քահանայի մեղք՝ որ չափ բոլոր ժողովրդեանն է. ուստի յա՛յտ է ի *պատարագէ* հնոյն...: - 563. Առ աստիճանս այս պարունակի է խորհուրդ եկեղեցւոյ. որ է՛ Մկրտութիւնն. Դրոշմն. *Պատարագն*. Ապաշխարութիւնն. Կարգ քահանայութեանն. Պսակն. և Օծումն: - 573. Եօթներորդ, զի մկրտելն է գործ քահանայի. և քահանայութիւնն է սպասաւորութիւն աստուծոյ. իսկ զայս սպասաւորութիւն աստուծոյ և ո՛չ կռապաշտքն ունէին սովորութիւն սնոտի կռոցն ի ձեռն կանանցն մատուցանել *զպատարագն*...: - 589. Դարձեալ՝ մելքիսեդեկ հաց և գինի մատոյց *պատարագ* աբրահամու և ո՛չ ջուր. որ նշանակէր զճշմարիտ *պատարագն* քրիստոսի. ապա ուրեմն ո՛չ է պարտ խառնել ջուր: - 595. Հինգերորդ վկայութիւն հայրապետացն որք զխորհուրդ *պատարագին* գրեցին: - 595. Սոքա զխորհուրդ

*պատարագին* ասացին և ջուր ո՛չ յիշեն: - 595. Երկրորդ՝ զի թէ խառն բղխեաց ըստ քեզ վասն այն ի *պատարագն* ջուր խառնես, ապա և ի ջուրն գինի խառնեա և այնպէս մկրտեա՛: - 595. Եւ դու խառնեա զսոսա ի խորհուրդ *պատարագին*. զի իցես ուղղակի մեկնիչ և գրոյն հետևօղ: - 596. Քանի՞ են գոյացականք *պատարագին:* - 597. Այլ սուրբն աթանաս որ զխորհուրդ *պատարագին* աւանդեաց՝ այսպէս ուսոյց: - 599. Եւ յետոյ դնէ ապաշխարանք թէ զինչ կերպիւ պատեհ է. պահք. թէ աղօթք. թէ ողորմութիւն. *պատարագ.* և այլ զինչ զոր կարօղ իցէ...: - 602. ...և *պատարագ* և խաչ օրհնեմք. եթէ կենդանեաց և եթէ մեռելոց: - 605. Ապա և ո՛չ աղօթք և պաշտօն քահանայից կամ տուրք կամ *պատարագք* է օգուտ հոգւոյն ըստ քեզ որ է բնաւ սուտ և չար հերձուած: - 605. Եւ յորժամ զինքն ի խաչին՝ հօր *պատարագ* մատոյց: - 606. Եւ յերուսաղէմ եկեալ *պատարագ* մատոյց զիւրակա՛նն մարմին: - 607. Զի մե՛ք կատարեմք զխորհուրդս. և ի մեզ կրեմք դարձեալ. որպէս մկրտութիւնն. դրոշմն. *պատարագն*. և այլն: - 614. Աստ անարիւն *պատարագն* մատչի. և ի մեզ բանեղէն *պատարագն* հոգի և մարմին միշտ նուիրեալ կենդանի: - 614. ...վասն որոյ փառքն աստուծոյ լցին զտաճարն. և հուր էջ ի *պատարագն:* - 615. Ութերորդ՝ զի ամենայն խորհուրդ եկեղեցւոյ՝ խաչիւն կատարի. Մկրտութիւն. Դրոշմն. *Պատարագն.* և այլն: - 616. *Պատարագն* ի հնումն անբան կենդանիքն էին. վասն որոյ և զճարպս նոցա լուցանէին ի տաճարին: - 617. Իսկ նորոյս *պատարագն* բանաւո՛ր է և անարիւն...: - 617. Երրորդ՝ ի հին տաճարն գառն էր *պատարագ*. որ էր օրինակ գառինն աստուծոյ: - 617. ...յորժամ դնէին զառաւօտու *պատարագն* ի սեղանն. նոյնպէս յերեկոյն ի դնել *պատարագին* և ի վառել աշտանակին լուսոյ: - 618. Իսկ և ի ճաշոյն *պատարագն* **գ** անգամ. մին քահանայն. և **բ** սարկաւագն: - 618. Վեցերորդ՝ աղօթք է ինչք և *պատարագք* որ յեկեղեցիս ընծայեն. ըստ այնմ «քեզ տացին աղօթք յերուսաղէմ»: - 619. Հինգերորդ՝ ժամն՝ միջին ողորմեայն է և *պատարագն:* - 622. Որղորմեայն ի դէմս հօր որ առաքեաց զորդին ի խաչ. և *պատարագն* ի դէմս որդւոյ որ խաչեցաւ վասն մեր: - 622. Զոր այժմոյս **գ** ողորմեայն և *պատարագն* ի միասին կատարի: - 622. Երկրորդ, որպէս ի հինքն մատուցանէին *զպատարագն* առ քահանայսն. և նոքա նուիրէին աստուծոյ: - 624. Նոյնպէս և մեք զբանեղէն *պատարագս* մեր տամք ի քահանայս ընծայել աստուծոյ...: - 624. Զի՞նչ է որ զառաւօտու քարոզն՝ այսինքն զերկրպագեմքն, և *զՊատարագին* գոհութիւնն, և յերեկոյն զՀասեալքս ի ժամն, աղօթից ձևով ասէ սարկաւագն: - 626. Մեղաց *պատարագին* խունկ և իւղ չէր հրամայեալ օրէնքն. զի տրտում և ժահահո՛տ է: - 630. **Անբիծքն վասն մեղաց *պատարա՛գ*** է. նոյնպէս և յիսներորդ ողորմեայն վասն մեղաց է ալէլու ո՛չ ասի: - 630. Եւ սուրբն աթանաս ի *պատարագն* ասէ. «սուրբ սուրբ սուրբ տէր զօրութեանց. լի են երկինք և երկիր փառօք քո»: - 632. Վասն է՞ր ի *պատարագի* ժամն ո՛չ ասեմք զփառաւորեալն: - 634. Նա՛խ՝ զի *պատարագն* է՛ խաչելութեան ժամն. և յայնժամ ո՛չ ասաց յովսէփ: - 634. Երկրորդ՝ զի *պատարագն* է դէմ յանդիման լինի քրիստոսի. և ո՛չ եմք կարօտ բարեխօսի: - 634. Վասն է՞ր զերեքսրբեանն որ է սուրբ աստուածն՝ յառաւօտուն և յերեկոյին ժամն ի վերջքն երգեմք. և ի *պատարագին* ի սկիզբն: - 634. Այսպէս ասէ մեծ իմաստասէրն և երկրորդ աւետարանիչն մեր և կաթողիկոսն սուրբ յոհան յօձնեայ թէ՝ *պատարագին* ժամն խորհուրդ է խաչին քրիստոսի...: - 634. Իսկ յառաւօտն և յերեկոյն *պատարագ* ո՛չ մատչի. վասն այն ամենայն աղօթից և պաշտմանց կատարումն և աւարտ զխաչէն ճառեմք...: - 634. Այլ ի *պատարագն* պարտ է բանալ զգլուխս որ պատարագիչն է ամենայն ոք որ և իցէ. թէ քահանայ և թէ եպիսկոպոս և կամ ա՛յլ ոք: - 635. Վասն որոյ ի *պատարագն* յիշատակի եբրայեցին և յունացն: - 645. Այլ և **թ** տէր ողորմեայն ի *պատարագն*. և **թ** երեքսրբեանն, ի խորհուրդ **թ** դասուց վերնական յերիս երրեակս որոշեալ: - 645. Եօթներորդ՝ շաբաթի օր տօնեմք սրբոցն և *պատարագ* մատչի ըստ նիկիական կանոնին. - 648. Նոյնդ է պատճառն որ *պատարագ* ո՛չ մատուցանեմք. զի անարժա՛ն եմք: - 651. Իսկ ի շաբաթն և ի կիրակէն *պատարագ* մատչի: - 651. Այլ ի ժողովն նիկիոյ քարոզեցաւ պահք, բայց *պատարագ* մատչիլ: - 651. Եւ այլ ևս, յորժամ զշաբաթ և զկիրակէ արտաքոյ թուեմք որ *պատարագ* մատչի, **ե** օր առաջաւորն ըստ աղուհացիցն համարեալ՝ լինի **խ** օր: - 651. Ութերորդ, **է է** ածել զգառինսն *պատարագ* ի տօնսն: - 653. Եւ մատաղն, Նախ *պատարագ* և նուէրք է աստուծոյ. որպէս աբէլ՝ նոյ՝ և աբրահամ մատուցանէին: - 657. Դարձեալ՝ մատաղն ստւեր և օրինա՛կ է ճշմարիտ *պատարագին* քրիստոսի որ գառն աստուծոյ և եզն պարարակ կոչեցաւ...: - 57. Դարձեալ՝ ճշմարիտ *պատարագն* քրիստոս՝ Նախ կենդանի աղ կոչեցաւ...: - 657. Նա՛խ՝ որպէս ի սուրբ կենդանեաց է *պատարագն*...: - 658. ...զի *պատարագ* աստուծոյ սիրտ սուրբ և հոգի խոնարհ զոր աստուած ո՛չ արհամարհէ: - 658. Իսկ զկամքն տալ աստուծոյ հաճո՛յ է քան *զպատարագ*՝ վասն չորից: - 658. Նախ՝

զի լսելովն զկամս աստուծոյ կատարեմք. իսկ *պատարագաւն* զմեղս: - 658. Երկրորդ՝ *պատարագն* մասն է ի կամացն. և կամքն բոլոր: - 658. Չորրորդ՝ զի այս՝ է՛ խօսուն և բանաւոր *պատարագ* և այն անբան զենումն զոր խօսեցաւ վասն հնոյն...: - 658. ...զի քահանայական աղօթիւք և *պատարագօք* կամ առաւելուն պսակքն, կամ ջնջին մեղք նոցա: - 674. Իսկ պաշտօնք և ողորմութիւնք և *պատարագք* լինին նոցա առիթ պսակաց: - 675. Իսկ վերին և արտաքին սրահն ուր զենմունք և *պատարագն* մատչէին, է՛ մարմնական աշխարհս այս...: - 682. Եւ թէ ոք ասիցէ, թէ տուրք աղօթք և *պատարագ*, ո՞չ է օգուտ նոցա: - 683. ...նոցա՛ է օգուտ պաշտօն և *պատարագ* և այլն...: - 683. ...և *պատարագաւ* խաչին հաշտեցոյց զհայր. և իջմամբ ի դժոխս կապեաց զհզօրն սատանայ և արձակեաց զկապեալ հոգիսն...: - 705. Երիցունք նախ նշանակէ՛ զքահանայս որք զանձինս իւրեանց մատուցանեն *պատարագ* աստուծոյ: - 711. Երկրորդ զքահանայս հին և նոր. որ գնեն *զպատարագս* ուխտից ի սեղանն: - 713

**ՊԱՏԱՐԱԳԵԼԻ** - Ոչխար տարեկան. և *պատարագելի*. և զգօն և հեզ. և պտղատու զկաթն և ասր և ծնունդ: - 361

**ՊԱՏԱՐԱԳԵՄ +** Դարձեալ և ի յառակս անառակին որ դարձաւ առ հայրն՝ և ողջմամբ ընկալաւ և զգեցոյց զնա և զարդարեաց մատանի ի ձեռս՝ և կօշիկ յոտս. այլ ո՛չ ետ թոյլ նմա *պատարագել*. այլ հրամայէ՛ այլոցն...: - 167. Յասցանէ յայտնի է զի զղջացեալ այնպիսին կարէ՛ հաղորդիլ ի ձեռն այլոց. այլ ո՛չ ինքն *պատարագել:* - 167. Չորրորդ՝ զի նիւթք եղեն երկնաւոր խորհրդոյն. որպէս ի տնկոց փայտ խաչին. և յայլ բուսոց հաց *պատարագին* և գինի. և ծէք մեռոնի կազմեցաւ: - 212. Զայսոսիկ որպէս ասացաւ ունէր նա՛ ընդ *պատարագելն:* - 286. Երկրորդ՝ զի աբրահամ յետոյ *պատարագեաց* կենդանիս. որ էր նշանակ ժամանակեայ պատարագին ահարօնի: - 300. Նախ՝ զի զաստուած աստուծոյ *պատարագեաց:* - 307. Երկրորդ՝ զի ինքն զինքն *պատարագեաց:* - 307. Զի ըստ որում մարդ եղև տնօրէնութեամբ՝ *պատարագեաց* զինքն: - 307. Վեցերորդ՝ օրհնեաց զաբրահամ ի լերինն ամուր հացուց ի *պատարագիլն* խահակայ...: - 320. Եօթնևժ, մովսէս մի անգամ *պատարագեաց* և ետ ցահարօն և ցորդիսն: - 329. Ութերորդ՝ մի՛ անգամ յաւուրն. և մի անգամ *պատարագեմք* զքրիստոս ըստ աւուրց: - 339. Առաւօտն նշանա՛կ է աստ *պատարագելոյն* զքրիստոս: - 346. Հինգերորդ, նոքա մատուցանէին պատարագ նախ վասն իւրեանց, և ապա՛ վասն ժողովրդեանն անգիտութեան. իսկ տէրն մեր ո՛չ արար մեղս ըստ մարգարէին. այն անմեղն վասն մեղաւորաց *պատարագեցաւ*...: - 354. Եօթներորդ, նոքա յօտարա՛ց մատուցանէին. այսինքն զուարակ և նոխազ, իսկ քահանայապետն մեր քրիստոս զմարմին իւր *պատարագեաց* հօր ի հոտ անուշից...: - 54. Այլ զգալապէս հաց և գինի աւանդեաց, զայն *պատարագեմք:* - 357. Եւ դարձեալ՝ առաջինն քրիստոս *պատարագի* վասն մեր: - 362. Նշանակէ՛ *զպատարագիլն* քրիստոսի ի սեղան խաչին ի հոտ անուշից հօր և հոգւոյն: - 362. Եւ միւսն, որ զմարմին մեր *պատարագեմք* միշտ. սիրտ սուրբ և հոգի խոնարհ ունելով. զոր աստուած ո՛չ արհամարհէ: - 363. Եւ զայս ցուցանէ զմորթն ի բաց հանելն և ապա՛ *պատարագել:* - 363. Նա՛խ՝ որ զքրիստոս *պատարագէ:* - 370. Այն որ զինքն *պատարագէ*, կամ առանձին կրօնիւք, կամ հասարակ աղօթիւք: - 370. Իսկ որ զքրիստոս *պատարագէ*, խտրութիւն է արատոյ ի հոգի և ի մարմին: - 370. Այլ զքրիստոս ո՛չ *պատարագեն*. և ո՛չ այլ ինչ ի խորհրդոց եօթանց կատարեն: - 370. Երրորդ՝ ի խորհուրդ *պատարագողին.* զի նուէրքն զնուիրո՛ղն նշանակէր: - 370. Զուարակն է *պատարագեալ*. և խոյ մեզ ծնեալ. և գառն կերակրելի. և նոխազ զմեղս մեր առեալ: - 374. Եւ զհերսն *պատարագել* աստուծոյ, նախ զինքնածին բոյսքն ի յանձնէ իւրմէ, և ապա՛ զայլսն ի յանասնոց: - 390. Չորրորդ՝ ի տիպ մարմնոյն փրկական. զի ոչ յաւելու ի բազում *պատարագելն*. և ոչ նուազէ ի ճաշակելն: - 444. Նա՛խ՝ զի զաստուած աստուծոյ *պատարագեաց:* - 491. Երկրորդ՝ զի ինքն զինքն *պատարագեաց:* - 491. Զի ըստ որում մարդ եղև տնօրէնութեամբ *պատարագեաց* զինքն: - 491. Զի զանմեղ մարմինն իւր կամաւ *պատարագեաց* վասն մեր: - 492. Իններորդ, գեթէօն՝ այն որ զգօղն ետես ի վերայ գեղման, զիօր իւրոյ զեզն պարարակ հրամանաւ հրեշտակին ի մէջ գիշերին *պատարագեալ*. և զանտառն և զսեղանն բահաղու կործանեալ և զերծեալ ի ձեռաց նոցա. որ էր օրինակ փրկչին. զի նա՛ է եզն պարարակ *պատարագեալ*. և ի մէջ գիշերի զբագինսն դժոխոց կործանեալ և յարուցեալ և ապրեալ ի մահու: - 513. Չորեքտասաներորդ, զի ցուցցէ թէ յայսմ հետէ արքն միա՛յն ունին իշխանութիւն մերձենալ առ ի *պատարագել*. և ո՛չ զոյ համարձակութիւն կանանց յայս գործ: - 518. Եւ մի է ըստ խորհրդոյն՝ այսինքն մկրտութեամբ՝ *պատարագելով*՝ կարգիւ՝ և այլովն՝ որպէս տեսակաւ: - 533. Որպէս մինչ անարժան քահանայն *պատարագէ*, այլքն հաղորդին սրբութեան. այլ ինքն դատապարտի: - 540. Եւ անապական

*պատարագեմ* զքրիստոս որպէս կանոնքն է առաքելոցն և կղեմայ. և դու ապականես ջրով և զայլն որպէս յառաջիկայդ ասացի: - 548. Ութերորդ` ի բոլոր աղուհացսն *պատարագել:* - 553. Ասեմք թէ` առնեմք ըստ ազգին յունաց. որ որպէս քահանայն *պատարագէ* և մկրտէ, նոյնպէս և դրոշմէ ըստ սրբոյն դիոնիսեայ: - 594. Եւ քահանայապետ ասէ զնա` որ *պատարագէ* և մկրտէ և դրոշմէ. զի նա՛ է պետ և աւագ ի կատարմունս խորհրդոյն: - 594. Յինգերորդ, օրհնեմք զեկեղեցիս, զի օրհնութիւն վերնատանն ուր տէրն *պատարագեաց*, և հոգին սուրբ էջ յառաքեալսն...: - 615. Վեցերորդ` զի նոյն է խորհուրդն որ անդ ի վերայ խաչին *պատարագեցաւ*, և այժմ յեկեղեցի սուրբ ի խաչ սեղանին: - 616. Իսկ յեկեղեցի ճշմարիտ գառն *պատարագի*. վասն որոյ զօրինակն արգելումք: - 617. Իսկ քահանայն` յորժամ աղօթէ՛ կամ *պատարագէ՛:* - 635. Եւ որ եպիսկոպոսն զմիւռոն և զեմիփորոնն և զմատանին զոր զգեցեալն էր ի ձեռնադրութեանն` հանէ՛ յորժամ *պատարագէ:* - 635-636. Այլ և յամենայն խորհուրդս. այսինքն ի կնքելն, և ի *պատարագելն*, ի կարգն, ի պսակն, և յայլն: - 643. Եւ փոխանակ դաղմատին է՛ իւրաքանչիւր լեզու որ *պատարագէ՛:* - 645. Դարձեալ` չորիւք յատկութեամբ մատաղին պա՛րտ է զանձինս մեր *պատարագել:* - 658. Դարձեալ, ծորն յովսափաթու կոչի ծոր դատաստանի. այսինքն է կալն ուռնայի, ուր դաւթի խոստացաւ անդ առնել դատաստան. յորժամ սեղան շինեաց և *պատարագեաց* զեզինսն և բարձաւ մահն: - 737

**ՊԱՏԱՐԱԳԻՉ +** Այլ ի պատարագն պարտ է բանալ զգլուխս որ *պատարագիչն* է ամենայն ոք որ և իցէ. թէ քահանայ և թէ եպիսկոպոս և կամ ա՛յլ ոք: - 635

**ՊԱՏԳԱՄ +** Որպէս մովսէս լուաւ *զպատգամն* և ետ ժողովրդեանն: - 330. Երրորդ` զի ասէ` *զպատգամն* աստուծոյ ունի և ո՛չ զօտար աստուծոյ. և քրիստոս ասէր, «զոր լուայ ի հօրէ` պատմեմ ձեզ». և յանուն հօր եկն. և զհայր ետ փառաւորել միայն ճշմարիտ աստուած: - 399. Զի՞նչ յայտնէ *պատգամ* հրեշտակին: - 464. Վեց իրս յայտնէ մեզ աստանօր *պատգամ* հրեշտակապետին: - 464. Չորրորդ` թէ ո՞րպէս զգուշութեամբ կատարեաց *զպատգամն* «ահա՛ յղասցիս և ծնցես որդի»: - 465. Իսկ մորուս կոչին մարգարէք և առաքեալք և հայրապետք մերձ բերանոյն առ մեզ խօսելով *զպատգամս* օրինացն աստուծոյ: - 534. Առաջին վասն *պատգամաց*. որպէս գաբրիէլ առ կոյսն սուրբ: - 535. Նա՛խ` գրակալն նշանակէ՛ զմովսէս. որ ընկալեալ *զպատգամն* աստուծոյ` խօսէր առ ժողովուրդն: - 646

**ՊԱՏԳԱՄԱԲԵՐ +** Երկրորդ` հրեշտակն *պատգամաբեր* և յայտնօ՛ղ լսի. և առհասարակ զծածուկս առնուն յառաջնոցն և յայտնեն երկրորդիցն: - 136. Զորս հրեշտակս կոչէ ո՛չ վասն առաքինութեան, այլ զի *պատգամաբերք* և թարգմանք եղեն աստուծոյ իմաստութեանն առ մեզ ի ձեռն լեզուաց գիտութեանն: - 297. ...զի հրեշտակն *պատգամաբեր* լսի...: - 331. Ասեն վարդապետք եթէ` որպէս մարգարէքն և առաքեալքն զխօսեցեալ բանս իւրեանց ի ձեռս ունին իբր *պատգամաբեր* յաստուծոյ առ մարդիկ: - 481

**ՊԱՏԳԱՄԱՒՈՐ +** Ներքին` դասք հրեշտակացն. որ են *պատգամաւորք* և հրամանատարք: - 144

**ՊԱՏԵԱՆ +** Եւ բազումք տեսանեն զսուրն ի մէջ *պատենիցն* հալեալ, և *պատեանքն* անխանձ մնացեալ: - 204. Զոր օրինակ ցորեան մերկ սերմանի և խոտոր և *պատենօր* բուսանի: - 592

**ՊԱՏԵՀ +** Եւ յետոյ դնէ ապաշխարանք թէ զինչ կերպիւ *պատեհ* է. պահք. թէ աղօթք. թէ ողորմութիւն. պատարագ. և այլ զինչ զոր կարօղ իցէ...: - 602

**ՊԱՏԵՄ +** Եօթներորդ` զբեկեալսն *պատէ՛:* - 49. Յինգերորդ` զի յարնելից ընդ հարաւ խոնարհի յարեմուտս` և *պատէ՛* հիւսիս, և դարձեալ ելանէ յարնելս: - 126. Նոյնպէս իմանալի արեգակն քրիստոս ի հայրական ծոցոյ անհա՛ս է բնութեամբ` և ի սրբոյ կուսէն իբր ի յարնելից ծագեալ. և ջերմ սիրով ի մարդկային ազգս որպէս յարեմուտս խոնարհեալ. և զսառուցեալ բնութիւնս *պատեալ*. և ի գերեզմանէն ի բարձունս դարձեալ յարնելս առ հայր ամբարձեալ: - 126. Նախ այսպէս ասեն եթէ` տարերքն գնդաձև *պատեալ* են զմիմեանս և ամրացեալ. զի բոլորակ հուրն *պատեալ* է զօդ. և օդ զջուր. և ի մէջ ջրոյն երկիր է՛ հաստատեալ: - 181. Եւ այսպէս զերկինս *պատեալ* ունին **բժ**ան կենդանակերպքս: - 189. Երկրորդ` Լուսնթագն. զոր մուշթարի կոչեն. ջե՛րմ է և գէճ. մին ամ յամէ՛ ի կենդանակերպն. և ի **ժբ** ամն *պատէ՛* զամենայն: - 189. Երրորդ` Յրա՛տն. զոր մարեխ անուանեն. ջերմ է և չոր. **խ** օր յամէ՛ ի կենդանակերպն. և ի **ժզ** ամիսն *պատէ՛* զամենայն: - 189. Եօթներորդ Լուսինն. զոր կամր կոչեն. հո՛վ է և գէճ. **բ** օր և կէս յամէ՛ ի կենդանակերպն. և ի **իթ** օր և կէս *պատէ՛* զամենայն: - 189. Եւ զի ամպ և մէգ և մութն *պատէ՛:* - 197. Կամ են **բ** հողմունք ընդ դէմ միմեանց հանդիպեալք և զմիմեանս *պատեալք:* - 206. Վասն է՞ր երիկամունքն ճարպով *պատեալ* է, և սիրտն և լեարդն ոչ: - 241. Իսկ կցկցեալ. զի յօդեալ և

կցեալ են ոսկերք մարդոյն առ իրեարս. և ի ներքոյ միս՝ և արտաքոյ մորթն է *պատեալ:* - 293. Եւ խնդրեցին զդրախտն թէ ա՛նդ զերծանիմք և ո՛չ գտին. զի ծովք և շամանդաղ *պատեալ* էին: - 296. Եւ թէպէտ յովսէ՛փ իջոյց ի խաչէն, և յովսէփ և նիկոդիմոս *պատեցին*, այլ ինքն կամաւն էջ ի բազուկսն յովսեփայ և *պատեցաւ* զմռով: - 316. Իսկ *պատելն* ոսկի ներքոյ և արտաքոյ, զի աստուածատեսա՛կք են և մաքուր: - 344. Խաչաձև ապարօշն ի վերայ սրտին, եմիփորոնն *պատեալ:* - 348. Պատանեակ ի ամեան. որ զԺ *պատեաց:* - 378. ...որ *պատեալ* է ի ներքոյ զսիրտն...: - 619. Ա՛րդ՝ եթէ ի հասարակ ժողովրդենէ իցէ ննջեցեալն, հանեն զհին հանդերձն և *պատե՛ն* սուրբ կտաւովք և զգլուխն փակեղամբ և վարշամակօք, և օդ յոտս: - 671. Իսկ թէ ի կրօնաւորաց իցէ, *պատեսցեն* իւր զգեստիւն, մազեղէն և կնկուղ և այլ որպէս գրեալ է...: - 671. Նոյնպէս թէ քահանայ իցէ՝ կարգիւն *պատեն* և դնեն ի վերայ բեմին. առաջի սեղանոյն: - 671. Եւ կոչի պատանք, զի *պատեալ* և կապեալ է զամենայն զգայարանսն. և ոչ ինչ կարէ գործել. ո՛չ չար և ո՛չ բարի: - 671. ...և ողջունեն առ հասարակ և *պատեալ* դնեն զմարմինն ի տան պատուականի: - 672. Իսկ որ *պատեն* զնա քահանայական զգեստիւք: - 674. Եւ համընթաց հուրն զհիւսիսիւ և *պատէ՛* զմեղաւորս: - 731. Սաստկագին գոչմամբ. և ահագնատեսիլ սուսերամերկ կորովալից նետողաց. որ *պատեալ* պահեալ պաշարէին զմեզ: - 789

**ՊԱՏԵՆԱԹԵՒ** - Եւ ոմանք *պատենաթևք* որպէս մարախք: - 215

**ՊԱՏԵՐԱԶՄ +** Երկրորդքն՝ զօրացուցանեն՝ ի գործս սքանչելեաց և հոգևոր *պատերազմաց:* - 136. Եւ ասեն՝ տէր հզօր զօրութեամբ, տէր կարօղ ի *պատերազմի:* - 144. Այլ է՛ նշան փոխելոյ թագաւորաց. *պատերազմի*. և սովոյ. կամ այլ ինչ խռովութեան երկրի: - 203. Որպէս ասեն զշամիրամէ թէ՝ յորժամ սպանաւ արա ի *պատերազմին*, զայլ ոմն նման նորին պատուեաց և ասաց թէ աստուածքն յարուցին: - 238. Ութսուներորդ, *Պատերազմ* մարմնոյն մովսէսի և գերեզմանի նորա: - 285. Եւ տէր մեր արի եղև ի *պատերազմի:* - 315. Դարձեալ՝ աստուած յառաջնումն ծննդեան յորժամ զյանցաւորս ըստ բնական մեղացն՝ ջրհեղեղաւն ջնջեաց. յերկրորդումն ծննդեան յորժամ զյանցաւորս ի կռապաշտութիւն՝ կարմիր ծովովն ընկղմեաց. յերրորդումն ծննդեան տուժեաց, յորժամ զյանցաւորս գրաւորական օրինացն *պատերազմօք* սատակեաց: - 351. Չորրորդ՝ վասն փրկութեան ի հիւանդութենէ կամ ի *պատերազմէ՛* փրկեալք, մատուցեն աւէ պատարագ և նւէրս ընծայեսցեն ի սեղանն ի հոտ անուշից: - 358. Դարձեալ գիտելի է, զի յերիս նշանաւոր տեղիս եղև *պատերազմ* նոցա: - 393. Զի՞նչ էր *պատերազմն* ընդ մարմնոյն մովսէսի: - 409. Վեցերորդ՝ զի որդիք նոցա ի նոցանէ ուսցին *զպատերազմ:* - 417. Քսանը, եհար քարեայ կարկտիւ ի *պատերազմի:* - 419. Եւ տէր մեր մարմնով *զպատերազմն* վանեալ. և նոյն մարմնով մեզ կեանս բղխեալ: - 423. Քսանևթ, ունա՛յն էր ծնօտն ի *պատերազմին*, և լի՛ էր ծարաւոյն: - 423. Նա՛խ՝ զի մի՛ համարեսցեն այլազգիք թէ դիքն իւրեանց առաջի ընթացան և գլուխ եղեն զօրացն և հարին *զպատերազմն:* - 425. Վեցերորդ՝ զի թէ հաւատացեալ էր սաւուղ ո՛չ երթայր ի *պատերազմ*. այլ խոյս տայր և փախչէր: - 429. Զի որդիքն և սպարապետն կազմէին *զպատերազմն:* - 429. Ապա յա՛յտ է զի ի մէջ կարծեաց էր նա. զի թէ սուտ համարէր զվհուկն, ո՛չ երկնչէր ի մահու. և թէ ճշմարիտ՝ ո՛չ երթայր ի *պատերազմ:* - 429. ...ոչ յերկրորդ և ո՛չ յերրորդ օրն՝ ո՛չ եղև *պատերազմ*. ապա ուրեմն սուտ խօսեցաւ: - 430. Այլ ա՛յս է ճշմարիտն. զի *պատերազմ* և խռովութիւն էր յաւուրս դաւթի մինչ սատակեաց զնոսա. և որդի նորա ի խաղաղութեան ժամու շինեաց զտաճարն: - 439-440. Երրորդ՝ եցոյց յայտնապէս *զպատերազմն* առաջի այսոց օդոցս. վասն այն պիտոյ էր հեծեալք: - 445. Եւ այս՝ և *պատերազմն* վասն մովսիսեան մարմնոյն՝ ցուցանեն *զպատերազմ* հոգւոց յետ ելից մարմնոյն: - 445. Իսկ ի հիւանդանալն՝ եղիսէոս եդ զձեռն ի վերայ ձեռաց արքային յովասու և զօրացոյց զնա ի *պատերազմին* ընդ դէմ ասորոցն փոխանակ լալոյն ի վերայ նորա: - 446. Նա՛խ՝ զի ո՛չ եհարց զաստուած. այլ վաղվաղեաց ի *պատերազմ:* - 446. Երրորդ ինքն առ ինքն. որպէս առաքինիքն ի մէջ հոգւոյն և մարմնոյն և մտացն առնեն զխաղաղութիւն. և *զպատերազմն* որով ցանկայ մարմինն հակառակ հոգւոյն, հանեն ի միջոյ: - 585. Երրորդն հաղորդութիւնն. որ է՛ վերըստին զօրացելոցն ի *պատերազմի*, և հոգևոր կերակուր: - 587. Հինգերորդ վերջին օծումն. որ է՛ ելելոցն ի կենցաղոյս և զերծելոցն ի *պատերազմէ՛:* - 587. Օծումն է՛ խորհուրդ ի լրումն արդարութեան. զի ելեաք ի *պատերազմէ՛* զփոշին և զքիրտն սրբեմք. որպէս ելեալքն ի մարմնական *պատերազմէ՛:* - 587. ...և է՛ առաջին վասն նոր *պատերազմին* որ առաջի կայ: - 605. Այլ և ը խորհրդով *պատերազմն* սատանայի. որպէս գրէ սուրբն եւագրիոս: - 627. Դարձեալ՝ մահն ե՛զր է հանդիսից որք են ի *պատերազմ* կենցաղոյս որ քան են: - 667. Իսկ կնկուղ ի գլուխ կրօնաւորաց և օդ յոտս և գօտի ընդ մէջ. զսպառազինիլն և

զարիութեամբ ընթանալն ի *պատերազմ:* - 671. Երկրորդ, զի ննջեցեալն եղբա՛յր է մեր և ունի բազում *պատերազմ*, օգնական լինիմք նմա: - 676. Դարձեալ՝ թէպէտ վասն հոգւոյն ասեմք որպէս այս, և տեսիլ անտօնին, և այլոց, այն ո՛չ է բերքաթուր. այլ *պատերազմ* դիւաց. որպէս աստ մարմնով, նոյնպէս և յետ մահու առ հոգիսն...: - 703. Եւ որ քան մեծ վի՛շտ եղև ի *պատերազմին*, ա՛յն քան է մեծագոյն ուրախութիւն ի յաղթութեանն: - 765. Որ թէ ի բարձանց լինի *պատերազմ* անձրև օրէն փորձանաց, ի ներքոյ կացցես հաւատոցն և ապրիս: - 770

**ՊԱՏԵՐԱԶՄԱԿԻՑ +** Զնոյնս նշանակէ **բ** ցեղն յայնկոյս յորդանանու. որք այլոցն *պատերազմակից* եղեն, և ապա՛ ի միասին զժառանգութիւնն առին: - 394. Իսկ որ ասէ սուրբն ստեփաննոս «յիսուս կայ ընդ աջմէ աստուծոյ», կալն նշանակէ իբր *պատերազմակից* և յօգնականութիւն գալ որք նահատակին վասն անուան նորա: - 521

**ՊԱՏԵՐԱԶՄԻՄ +** Չորրորդ՝ զի ընդ գազանսն *պատերազմի:* - 49. Զի մեծն աստուածաբան ընդ դէմ արիոսի *պատերազմի*. որ արարած ասէր զբանն՝ աստուածացեալ յետոյ: - 79. Իսկ ուղղութեանցն աշակերտք՝ ընդ դէմ երկուցն յաջ և յահեակ *պատերազմին:* - 81. Եւ այնչափ կուրացեալ է՝ մինչ զի *պատերազմի* ընդ դէմ աստուծոյ. թէպէտ գիտէ զայն լինիլ ինքեան ի չար, զի զոր ինչ չար գործէ անձնիշխան կամօքն, մեղանչէ մահու չափ: - 146. Իսկ **ժ** եղջիւրն է **ժ** պատուիրանին յանցումն, որով *պատերազմի* ընդ մարդկան: - 151. Զի պահպանութիւն օրինացն՝ մարդոյս է՛ զէն *պատերազմի:* - 151. Իսկ յանցումն օրինացն՝ լինի զէն և գործի դիւացն որով *պատերազմին* ընդ մարդոյս: - 151. Զի **գ** գլխոյն կրկին է եղջիւր. որ է հպարտութիւն՝ նախանձ՝ և բարկութիւն. զի սոքօք յաջ և յահեակ *պատերազմի*. և առ ընտիրս և առ խոտանս գտանին բազում ուրեք երեքին ախտքս այսօրիկ: 151-152. Եւ որպէս ընդ գլխոյն *պատերազմեցաւ*, գլուխն սատակեցաւ: - 219. Եւ զի յերիս տեղիս *պատերազմին* դևք: - 285. Դարձեալ՝ վարժէ՛ զնա զօտեաւն՝ *պատերազմիլ* ընդ մեղս և ընդ մեղսասէր մարդիկ որ կամին զանմեղն քարշել արտաքոյ օրինացն աստուծոյ: - 311. Եւ այն որ շուրջ զսեղանովն, նշանակէ՛ զքահանայս. որ մերձ սեղանոյն որ է՛ քրիստոս՝ միշտ սպասաւորե՛ն և *պատերազմին* արեամբ չափ ընդ ախտս և ընդ դևս: - 341. Այլ ընդ դևս *պատերազմիլ* միշտ. զի որոց դիւաց թէ յաղթէ մարդ, թէ հպարտութեան և թէ պոռնկութեան, զնոցա տեղիքն ժառանգէ յերկինս: - 393. Նշանակէ՛ զկրկին դևսն որ ի խորհուրդս և ի զգայութիւնս *պատերազմին:* - 393. Այլ **ե** թագաւորք մաղիանացիքն էին, և **բ** այսօրիկ. որ են **է** դևք **է** գլխաւոր մեղաց. որք ի կեանս *պատերազմին*, և յետ մահու ընդ հոգւոցն բազումք: - 393. Երկրորդ՝ յանապատն ամաղէկ և այլքն. յետ մահու որ ընդ հոգիս *պատերազմին*. որք են այսք չարութեան ի ներքոյ յերկնից ըստ առաքելոյ: - 393-394. Վասն է՞ր յայս **գ** տեղիս *պատերազմին* դևք: - 394. Պարտ ուրեմն էր բանին կենաց ելանել յայնմ անդամոց, որ *պատերազմի*՛ ընդ մահու: - 469. Թէ ի բերան *պատերազմի* յել անմահին և ի մուտ մահկանացուին. դիցես պահապան բերանոյդ...: - 770-771

**ՊԱՏԵՐԱԶՄՈՂ +** Եւ սոքա *պատերազմօղք*. թռ՛ղ զայլ խառնիճաղանճն: - 434. Երկրորդն դրոշմն. որ է՛ *պատերազմողացն* ընդ դէմ թշնամոյն սատանայի: - 587

**ՊԱՏԺԱԿԱՆ +** Զանկումն սատանայի եռակի՛ է իմանալ. առաջին՝ և միջին և վերջին: ...Երրորդն՝ *պատժական:* - 152

**ՊԱՏԺԱԿԻՑ +** Իններորդ՝ զի ինքն սատանայ ունի բնութիւն և մեղք և պատիժ. բնութեամբ աստ զինի. և մեղօք յետոյ. և յարութեանն *պատժակից* իւր առնելով: - 394

**ՊԱՏԺԱՊԱՐՏ +** Երկոտասաներորդ, զի ուսուցէ մեզ զմարդասիրութիւնն և զներելն միմեանց. որպէս աստուած երկայնամիտ եղև առ քանանացիսն որ *պատժապա՛րտք* էին: - 417. ...ասիցէ ոք, ապա զիա՞րդ ա՛յլք ի ծննդոց նորա որք ընդ նմա ի բանտէն ազատեցան, *պատժապարտք* գոլով...: - 775. Նախ խնդրելի է թէ վասն ի՞նչ պատճառի նախահօրն յանցանաց *պատժապարտ* եղեն և որդիքն: - 776

**ՊԱՏԺԱՒՈՐ +** Դարձեալ՝ մահն ի յաղամ *պատժաւո՛ր* է. և ի քրիստոս կամաւոր. և ի մեզ հարկաւոր: - 495

**ՊԱՏԺԵԼԻ** - Եւ արդ՝ անգիտութեամբն ներելի՛ է. իսկ գիտութեամբն ապաշխարելի. իսկ չարութեամբ մեղքն է *պատժելի*. կամ աստ ժամանակեայ, կամ անդ յաւիտենական: - 701

**ՊԱՏԺԵՄ +** Ութերորդ՝ եթէ չարն է յաստուծոյ, ո՛չ *պատժէ* զսատանայ որ չարացաւ. և ո՛չ զչարս ի մարդկանէ, այլ ահա՛ *պատժէ՛*. չար ուրեմն ո՛չ է յաստուծոյ: - 14. Ապա թէ ոչ կամեցին, յիրաւի *պատժեցին:* - 19. Դարձեալ է յանցանօք մեղաւ կայեն. վասն որոյ և եօթնիցս *պատժեցաւ:* - 287. Իսկ թէ վասն է՞ր այսպիսի դառն *պատժեցաւ:* - 288. Երրորդ՝ զի որ նոր չարիս գործեսցէ՝ առաւել

*պատժեսցի*: - 288. Որպէս սոդոմայեցիքն վասն արտօրէն գործոցն՝ արտօրէն իջմամբ հրոյ *պատժեցան*: - 288. Եւ որպէս փարաւոն վասն հեղցուցեալ մանկանցն՝ ջրասոյզ կորեաւ. և յառաջ քան զայս՝ ժ հարուածովք *պատժեցան*: - 288. Երկրորդ՝ զի թէ ոչ օգտեսցին չարքն, առաւել *պատժեսցին*: - 302. Երրորդ՝ համարձակ և յայտնի *պատժեցան*: - 303. Վեցերորդ՝ *պատժեաց* զսոդոմայեցիսն մարմնով, զի թեթևասցին տանջանք նոցա հոգւով: - 303. Եւ ի խրատ նոցա՝ *պատժէ*՛ զանասունս նոցա. զի զգաստացեալ երկիցեն յանձինս իւրեանց: - 334. Մ՛րդ՝ բնութիւնս մեր ի յադամ ապականեցաւ մեղօք. վասն այն որպէս նա՛ *պատժեցաւ*, նոյնպէս և մեք *պատժիմք*: - 351. Ապա ուրեմն յերրորդ և ի չորրորդ ազգն հատուցանէ աստուած զմեղս՝ յորժամ վասն գործեաց զյամառեալն ի մեղս *պատժէ*՛: - 351. Հինգերորդ՝ խնայեաց ի նա՛ տէր ո՛չ ցուցանել զերեսս իւր. այն կոչեաց զնա՛ տէր և արար զաչս նորա տէր և *պատժօղ*: - 352. Եւ քահանայքն հպարտացան և օտար հրով խնկարկեցին ի ներքս վարագուրին, վասն այն *պատժեցան* ի խրատ այլոց: - 364. Երկրորդ՝ զի գործունեայք և հաւանօղքն այնպիսեացն *պատժեսցին*. որպէս ի յերկրորդ օրէնքն հրամայէ՛ սպանանել այնպիսիսն. իսկ հաստատուոնքն ի հաւատս՝ վարձս առցեն ի հաւատոց իւրեանց: - 388-389. Վասն է՞ր զաքար ընտանեօք և անասնօք *պատժեաց*: - 415. Նաև զընտանիսի աքարայ *պատժեաց*. զի և նոքա ո՛չ խոստովանեցան զգողօնքն: - 415. Եւ վասն է պատճառի *պատժէ* աստուած զմարդն և զինչսն: - 415. Եւ զի հեղի ո՛չ խրատէր զնոսա սաստիւ և տանջանօք. վասն որոյ և ինքն *պատժեցաւ* և մեռաւ. և քահանայութիւնն յազգէ նորա փոխեցաւ յաւուրս սողոմոնի: - 425. Երկրորդ՝ զի սովն և սուրն զբարի և զչար ի միասին *պատժէ*. այլ մահն ընտրութեամբն աստուծոյ է. և ժողովի ի վերայ յանցաւորացն. ուստի յա՛յտ է զի դաւիթ ո՛չ էր յանցաւոր ո՛չ *պատժեցաւ*: - 435. Իսկ նստիլն ի յաթոռ՝ ասէր պատրել զաքայար, թոյլ տալն է աստուծոյ որ մարդ իւր կամօքն հաւանի չարին և *պատժի*: - 444. Զայս հատուցանել ի վեր քան զարժանն. և *պատժել* սակաւ քան զարժանն: - 459. ...զի զնոսա փառաւորէ ի վեր քան զարժանն. և զսոսա *պատժէ* սակաւ քան զարժանն. այսրքիկ ողորմութեանն են: - 459. Եւ թէ ամենևին անհաւան և յամր լինին՝ *պատժին* որպէս զաքարիա: - 465. Զի թէպէտ սատանայ էր գերեալ զմարդն, սակայն ի գերութիւն նմա հա՛յր մատնեաց յորժամ *պատժեաց* զնա: - 492. Եւ շնչաւոր մարդոյ յիմարութիւն է հոգին. որ և *պատժեաց* զանանիա և զսափիրայ: - 523. Ուստի յայտ է զի *պատժէ* զմարմին. և կապէ՛ զհոգին ի կեանս և ի մահ: - 538. Ասեմք, եթէ որք ի հաւատս ունին թիւրութիւն. որպէս հերձուածօղք և վնասիչք եկեղեցւոյ. և որք ի զազիր վարս պղծեալ են գործովք և վնասեն զինքեանս. և անզեղջք են առ երկոսին. յետ մի անգամ և երկիցս խրատելոյ, որոշեսցին յեկեղեցւոյ և *պատժեսցին*: - 540. Այլ անիրաւ կապելն արձակեսցի. և կապօղն *պատժեսցի*. ոչ միայն ի համակարգից, այլ և ի ներքնոց: - 542. Ապա ուրեմն կատարեալ մեղք է մտաց մեղքն. զի զոմանս առաւել *պատժէ*, և զոմանս սակաւ: - 556. Երկրորդ ի միտ առ, զի որ առաւել գիտութեամբ և կամօք մեղանչէ, առաւել *պատժի* քան զայն որ նուազ գիտութիւն ունի և կամք...: - 563. Վեցերորդ ըստ երբին. այսինքն թէ ե՞րբ գործեն զմեղքն. ի տղայութեա՞ն, թէ ի ծերութեան որ մեծ մեղք է. ի սո՞ւկ աւուրս, թէ ի տէրունական տօնս. զի որ ի տօնս մեղք գործէ, առաւել *պատժի* քան զմիւսն: - 565. Զի ջուր հակառակ է հրոյ. և զի՞նչ է մեղք, եթէ ոչ հուր. որպէս յոգւոց բարկութիւն. և ի մարմնի ցանկութիւն. ուստի յայտ է զի հրով տանջանաց *պատժի*. և աստ զի հուրն շիջցի ի ջուր մկրտիմք: - 591. Ո՛չ ումեք մեղք յայլմէ խնդրի. այլ ամենայն մարդ վասն իւր մեղացն *պատժի*: - 591. ...և այնուհետև ո՛չ վասն այլոց, այլ վասն ինքեանց մեղացն *պատժին* իւրաքանչիւրքն: - 593. ...և *պատժէ* զինքն վասն չարին զոր արարեալ լինի: - 601. ...*պատժեաց* զմարդն և ետ զնա ի կերակուր օձին...: - 678. ...և որ ոք աստ կամաւ ո՛չ *պատժի*, աստուած *պատժէ* զնա ի հուրն և քաւի: - 701. Եւ լինիցի յանդուգն. զի ո՛չ համարի *պատժիլ* ի յաստուծոյ. զի յապաղէ դատաստանն...: - 707. ...այլ արդ եթէ հոգին առանց մարմնոյ պսակի կամ *պատժի*՝ ո՛չ է արդար դատաստան...: - 715. Հինգերորդ, ստեղծաւ մարդն հաւասար հրեշտակաց. և յորժամ մեղանչեաց՝ անասնոց հաւասարեցաւ ըստ դաւթի և ընդ նոսա ապականեցաւ և *պատժեցաւ*...: - 724. Այլ արդ՝ երեխայքն որ յառաջ քան զմկրտիլն մեռանին, վասն ադամայ մեղացն *պատժին*: - 724. Եւ յիրաւի նախ ջրով. զի յայնժամ ջերմացեալ էին մարդիկ ի ցանկութիւն մեղաց, վասն որոյ ջրով *պատժեցան*: - 731. Իսկ ի կատարածի ցրտացեալ լինին մարդիկ ի սիրոյն աստուծոյ իբր ծերացեալ աշխարհի. վասն այն ջերմ հրով *պատժեսցին*: - 731. Ապա վասն է՞ր սակս ժամանակեայ մեղաց՝ յաւիտեան *պատժէ* աստուած: - 744. Ասեն վարդապետք թէ արդարապէ՛ս *պատժի* մեղաւորն յաւիտեան: - 744. Նա՛խ՝ քանզի մեղանչեաց յիւր յաւիտեանին, արժանապէս *պատժի* ի յաւիտենին

աստուծոյ: - 744. Դարձեալ՝ մեղանչեն ընդ դէմ յաւիտենականին աստուծոյ. վասն որոյ յաւիտեան *պատժէ* զնոսա: - 744. Եւ սոքա երբեմն հաւասարին. որպէս յորժամ արդարապէս հատուցէ բարեաց և չարաց. և միտեն յարաժամ անվախճան պատուէ և *պատժէ:* - 746. Այլ և յորժամ ի վեր քան զչափն պատուէ զսուրբս, և ի վայր քան զչափն *պատժէ* զմեղաւորս: - 746. Իսկ կշռողականն է զոյգ արդարութեամբ կշռել. որպէս յորժամ ողորմելով միոյն՝ *պատժէ*՛ զընդդիմակն նորին. որպէս փրկեցաւ Իսրայէլ և *պատժեցաւ* եգիպտոս. և յազատիլ բնութեան մարդոյս՝ *պատժեցաւ* սատանայ: - 747. Ուստի ասացաւ թէ մահու մեռցիս. ոչ սոսկ. այլ զկրկնակի նշանակելով մահ. այսինքն զմեռանիլն մարմնով և *զպատժիլն* հոգւով: - 776. ...Իսկ Օրինակաւ, զի նմա ո՛չ գոյր օրինակ յանցաւորաց. իսկ նոքա տեսին զնա *պատժեալ:* - 777. ...Նոյնպէս ողորմութեան և արդարութեան է միշտ բարերարելն և *պատժելն* ըստ նախասահման գիտութեան նորին նախքան զլինիլն էիցս ըստ առաքելոյ: - 779

**ՊԱՏԻԺ +** Դարձեալ, թէ է՛ հարկ՝ ո՛չ են իրաւունք դատաստանի և քննութիւն. և ո՛չ օրէնք քաղաքական. և ո՛չ արժանապէս հատուցմունք բարեաց և չարեաց. զի հարկն բռնադատեաց գործել զայս. հարկին եղիցին պատիւք և *պատիժք*. և ո՛չ մարդոյն: - 12. Իսկ զչար ո՛չ կամի. և ո՛չ բռնադատէ ի չարն. այլ տանջանս և *պատիժս* եդ գործողացն զչար. ապա ուրեմն չարն ո՛չ է յաստուծոյ. և ո՛չ կամի զչար ուրուք: - 17. Նախ եթէ կրկին է չար. է՛ չար գործոց, և է՛ չար *պատժոց:* - 18. Այլ արդ՝ չար գործոցն ո՛չ է յաստուծոյ. որպէս ցուցաւ. այլ չար *պատժոցն* է արդարութեանն աստուծոյ. որ հատուցանէ արդարապէս: - 18. Նախ՝ զի ընդունայն լինէին խոստմունքն. բարեացն վարձս և չարեացն *պատիժս:* - 20. Իսկ հերձուածող գիտութեամբ ամբարշտին. որոց ծա՛նր է *պատիժն:* - 33. Երրորդ՝ ի խրատ մեզ. զի որպէս չարչարանօքն ազատութիւն արար մարդկային բնութեանս, այսպէս ամէն ոք չարչարանօք իւրովք ազատեսցի ի *պատժոց* ներգործական մեղացն: - 43. Այս ո՛չ թէ ունիլ զկիրս նշանակէ յաստուած, այլ *զպատիժ* վասն գործոյ յանցաւորացն: - 60. Եւ աստ երևումն և խրատ ուղղութեան. *պատիժ* կամ պարգևք բարութեան: - 133. Իսկ թէ դառնային ի ներքոյ ինքեանց առ փոփոխական բարին, անկանէին ի չար մեղացն և ի չար *պատժոցն*. որպէս այժմ դևք և ի կատարածի: - 146. Եւ ապա զի ցուցցէ թէ՝ չար խորհրդոցն վրէժ խնդրութիւն կայ և *պատիժ:* - 148. Երկրորդ՝ զի պա՛րտ էր տեսանել այլոցն զմեղս նոցա և *զպատիժ* և մնալ ի բարին: - 149. Երրորդն՝ *պատժոյն* և թշուառութեանն: - 151. Կրկին է փորձութիւն. այսինքն ներքին և արտաքին. որ է՛ մեղաց և *պատժոց:* - 160. Դարձեալ ասեմք, թէպէտ զթողութիւն ընկալաւ իսկապէս, և *զպատիժս* կրեաց հատուցմամբն, սակայն մնաց կնիք ապականութեանն ի յանձն որպէս ասացաք: - 166. Եւ եթէ անկեալէս՝ երկի՛ր ի *պատժոց:* - 210. Երեսունեւէ՝ եօթն շնորհքն, և եօթն յանցանք, և եօթն *պատիժն* աղամայ: - 228. Զի որ քան եմք ի մարմնի՝ միշտ պարտ է երկնչիլ ի *պատժոյ* ի գլորելոյ ի մահու և այլոցն: - 229. Ութերորդ՝ թշնամիք եղեն կիրք *պատժոցն*. այսինքն մահ՝ ապականութիւն՝ տանջանք՝ հիւանդութիւնք՝ սով՝ և ծարաւ՝ և այլն ամենայն սոքա ի կրիցն են: - 277. Որո՞ց է *պատժոց* ընդունակ եղև: - 279. Վասն այն արդարադատն աստուած է *պատիժս* եդ. ի վերայ կայենի. վասն զի է չարութեամբ յանցեաւ: - 287. Իսկ է *պատիժքն*, Նախ անէծքն: - 287. Երկրորդ՝ զի *զպատիժս* անցաւորովս կրեսցէ: - 288. Նախ՝ զի ատէին զաստուած, և երկնչէին ի *պատժոցն*, և հակառակէին աստուծոյ: - 296. Եւ է՛ կապ *պատժոց*. ըստ որում «կապեցէք զդորա զձեռս և զոտս»: - 318. Թէ հոգւոյ և թէ մարմնոյ՝ գոյ մեղք և գոյ *պատիժ:* - 318. *Զպատիժն* որ է վայըն՝ միապէս գնէ: - 324. Չորրորդ՝ զի և բանբասօղքն *պատիժս* կրեսցեն վասն նախատելոյն զնա: - 325. Արդ՝ լոյսն ցուցանէ զխնամս արժանաւորացն. և կիզումն *զպատիժ* անարժանիցն: - 330. Իսկ վկայութիւնն որ է՛ տախտակքն օրինաց. զի վկայե՛ն պահողացն բարիս. և ոչ պահողացն *պատիժս:* - 345. Երրորդ, այն առանց զթութեան հատուցանէր *պատիժս* պարտուց. իսկ տեառն մերոյ շնորհիւ և ողորմութեամբ...: - 354. Եւ այրել զհանդերձն, հանդերձեալ *պատիժ* հրոյն: - 367. Դարձեալ ասեն, բնական մեղքն խտրութեան մնաց ի գրաւորն, նոյնպէս ի նորս. որպէս սերմնականքն և դաշտանին. այլ *պատիժն* փոխեցաւ հինն ի նորս: - 369. Զի՞նչ է եօթնպատիկ *պատիժ* չարեաց...: - 376. Երկրորդ, ըստ փիլոնի, օձն ցանկութեան է օրինակ, որ զցանկացօղ ժողովուրդն սատակէր. ի յախտս իւրեանց նմանեցոյց *զպատիժն:* - 386. Իններորդ՝ զի ինքն սատանայ ունի բնութիւն և մեղք և *պատիժ*. բնութեամբ աստ զինի. և մեղօք յետոյ. և յարութեանն պատժակից իւր առնելով: - 394. Տասներորդ՝ ի կայանս հոգւոց նախ տեսանի *պատիժն*, և ապա փառքն: - 395. Երրորդ՝ զօրաւոր հարուածքն եգիպտոսի, որ ո՛չ ոք կարէր հասանիլ և բռնել *զպատիժն*. որպէս ոք հարկանէ և դարձեալ բարձրացուցանէ զձեռն: - 395. Եւ տէր մեր զխորհրդոց և զգործոց՝ և յետոյ *զպատիժն* մեղաց ջնջէր: - 424. Չորրորդ՝ մինն տեսակին, և

միւսն անհատին էր *պատիժ:* - 426. Յորժամ մեղայ ասաց՝ վասն է՞ր ոչ եբարձ *զպատիժն*. զի ահա՛ խայտառակեցան կանայք նորա: - 432. Նա՛խ՝ զի մեղայն դաւթի՝ *զպատիժն* յաւիտենից՝ արար ժամանակեայ խրատ: - 432. Երկրորդ՝ զի կրկին էր *պատիժն*. սուր ի տանն, և խայտառակութիւն կանանցն: - 432. Եւ վասն զի նաթան շարժեաց ի զղջումն՝ զկէս *պատժոյն* կրեաց: - 432. Զի գա՛յ զղջումն և խոստովանութիւն՝ որ զմեղքն բառնայ և *զպատիժն* ընդ նմին. որպէս հատեալ տունկ՝ չորանան ճիւղքն. որ բոլորով սրտիւ զղջայ և խոստովանի և այլ ո՛չ գործէ: - 432. Եւ է՛ որ զմեղքն թողու՝ և *զպատիժն* կրէ. որք յայլմէ բռնաբա՛ր խոստովանին և պատահմամբ, և դարձեալ սխալին. այսպիսեաց մեղքն միայն թողլի: - 432. Եւ է՛ որ խոստովանի. և ոչ մեղքն միայն թողուի. որք թերի են սրտիւ. և զմեղս թերի խոստովանին. և ի միտս եդեալ են դարձեալ գործել. այսպիսեաց ոչ մեղքն թողուի և ոչ *պատիժն*. զի որպէս զշուն դառնայ ի փսխած իւր: - 432. Երկրորդ՝ զի մի՛ կրեսցէ զյաւիտենական *պատիժն:* - 432. Ասեմ թէ ոչ, զի կատարեալ խոստովանութիւնն թողու զմեղս, բառնայ *զպատիժն*, և ջնջէ՛ զյիշատակ մեղացն. մինչ զի ո՛չ երևի ի դատաստանին աստուծոյ: - 432. Երկրորդ՝ զի զսուր *պատժոյն* նա կրեաց: - 433. ...իսկ յետ մահու պաշտօնք և տուրք աղքատաց և այլն՝ է՛ հատուցումն *պատժոց* միայն...: - 434. Կամ զգործոց և զարդեանցն խնդրէ. որ է՛ սքանչելեաց և *պատժոցն*. որպէս եղիա: - 445. Եւ այս է նշանն, եթէ տեսցես զվերանալն իմ, ապա լինի՛ *պատիժ* նոցա. ապա թէ ոչ տեսցես՝ չեն արժանի *պատժոց*. այլ շնորհքն խնայէ՛ ի նոսա: - 445. Ութերորդ՝ ողորմութիւն է ի թողութիւն մեղաց. և արդարութիւն ի ներումն *պատժոց:* - 458. Առաջին կերպիւն է՛ հատուցումն բարեաց և *պատիժ* չարաց՝ որ է՛ գործ արդարութեան: - 458. Երբեմն արդարութիւնն յայտնի՝ և ողորմութիւնն ծածկեալ. որպէս *պատիժն* մանկանց առանց մկրտութեան մեռելոց, և յերկրորդ գալուստն քրիստոսի: - 459. Իսկ երբեմն երկոքեանն յայտնի. որպէս ի հատուցումն արդարոց. և ի *պատիժ* անարգելոցն...: - 459. Աջ և ահեակն զընտրութիւն դատաստանին. զփառս աջակողմեանց, և *զպատիժ* ձախակողմեանց: - 493. Դարձեալ՝ մահն ի յադամ *պատիժ* ինքեան էր. իսկ ի քրիստոս *պատիժ* այլոց. իսկ ի մեզ *պատիժ* ինքեան և այլոց. այսինքն զի վասն մեր և վասն ադամա՛յ կրեմք զմահն: - 496. Մեղքն է գործ. և մահն *պատիժ.* և ապականութիւնն հետևանք *պատժոյն:* - 496. *Զպատիժն* եդ աստուած: - 496. Երկրորդ՝ զմահ կրեաց. զի ինքն եդ զմահն *պատիժ* ի վերայ մեր. իսկ զմեղքն և զապականութիւն՝ բանսարկուն և ադամ արկին ի բնութիւնս. վասն որոյ զոր ինքն ոչ եդ՝ ո՛չ կրեաց մարմնով իւրով: - 496. Եւ թէ ոք ասիցէ ապաքէն և զապականութիւնն աստուած եդ *պատիժ* ադամայ...: - 496. Եւ զի ա՛յլ է կամաւոր մահն ի հարկաւորէն. ուստի յա՛յտ է զի հարկաւոր մահն է՛ *պատիժ*. և կամաւորն պսակ և պարգև: - 497. Եւ պատճառն ասացաւ ի վերոյ, զոր ինչ ինքն եդ *զպատիժ* նմանեաւն եբարձ. և զորս յանձնիշխան կամաց մարդոյն և ի բանսարկուէն արկածք, զայնոսիկ հակառակաւն ելոյծ տէր մեր յիսուս քրիստոս: - 498. Դարձեալ ի սկզբանէն ցուցցուք. մահն *պատիժ* է յարարչէն եդեալ. և ապականութիւնն ի բանսարկուէն արկեալ հետևանք մահուն: - 498. Նախ ասեմք, եթէ դժոխքն է *պատիժ* մեղաց. և կրկին է մեղք. այսինքն սկզբնական և ներգործական: - 507. Եւ *պատիժ* սկզբնականին էր դժոխքն առաջին...: - 507. Որպէս բազում անգամ ի ժամանակս *պատժոց* մեղաց՝ և արդարք ընդ մեղաւորացն կրեն զպատուհասն: - 507. Իսկ հուրն կրկին ունի յատկութիւն. որ է լոյս և սրբիչ հաւատացելոց. *պատիժ* և այրիչ անհաւատից: - 525. Այսպէս լիցի ամենայն անհնազանդ կապեալ. վասն որոյ այնպիսին կրկին ունի *պատիժ:* - 540. Դարձեալ՝ արձակեալ ի մեղաց, և կապեալ ի *պատիժս:* - 540. Դարձեալ՝ երկրիւ զգործ, և երկնիւ *զպատիժն* է իմանալ: - 541. Ա՛րդ՝ որք զնոյն ախտանան մտօք՝ զնոյն մեղանչեն և ընդ նմին *պատժին*...: - 556. Ուստի զանազանին և *պատիժք* մեղացն...: - 556. Նա՛խ՝ զի որ կամաւ և գիտութեամբ մեղանչէ, առաւել է քան զակամայն և զտգիտութեան. զի թէպէտ և սոքա մեղք են, այլ *պատիժն* նւազ. որպէս անասնոյն քան զմարդոյն: - 563. Նա՛խ՝ ի գործն և ի *պատիժն*. յորժամ գիտէ ոք թէ այն գործն մեղք է և գործէ՛. և գիտէ՛ *զպատիժ* այն մեղացն որ ծա՛նր է: - 564. Այն որ բազում գործեաց՝ մեծագոյն *պատիժք* զմիւսն: - 565. Չորրորդ՝ որք միայն զորդւոյ ասեն բան՝ սակաւ *պատիժն*, զի մի է յերրորդութենէն. իսկ որ զփառակիցն նա՝ կրկնապատիկ հատուցանի նմա: - 566. Դարձեալ ըստ կատարման բաժանի մեղքն յերիս. այսինքն ի գործ մեղացն, և յունակութիւնն, ի *պատիժն:* - 568. Եւ *պատիժն* ի հոգին կամ ի մարմինն: - 568. Եւ *պատիժն* է ի հանդերձեալն որ է ապագայն: - 569. Իսկ *պատիժն* է յայլմէ առ մեզ. այսինքն յարդար իրաւանցն աստուծոյ առ անիրաւս հասեալ: - 569. Դարձեալ զանազանին սոքա ըստ սեռին. զի գործ մեղացն է ի սեռս առնելոյն. և *պատիժն* ի սեռս կրելոյն. և ունակութիւն ի սեռս ունելոյն: - 569. Եւ որպէս

ա՛յլ է ունելն և առնելն և կրելն. այսպէս ա՛յլ է ունակութիւն մեղաց. և առնել զմեղս. և կրել *զպատիժս:* - 569. Եօթներորդ՝ հատուցումն բարեաց. ընդ որով և *պատիժ* չարեացն...: - 573. Դարձեալ՝ անկատար սէր է ծառայական երկիւղն վասն *պատժոյն:* - 576. Երկրորդ՝ առաւել է ի թողութիւն *պատժոյն*. զի առաւել դժուարութիւն է: - 577. Դարձեալ՝ է և այլ պատճառ. զի կարգին ընդ դէմ երից մեղացն և ընդ դէմ չորեքկին *պատժոցն:* - 587. Բայց գիտելի է, զի գործ մկրտութեանն է սրբել զհոգիս յամենայն մեղաց զոր ունիցի. թէ բնական թէ ներգործական և ի *պատժոց* մեղացն. զի թէ նոր մկրտեալն մեռանի, առ ժամայն թռչի ի կեանս յաւիտենականս: - 590. Զգաւակս այլազգեաց մկրտել պարտ է. զի թէ մեռանի ազատեալ է ի սկզբնական մեղաց և ի *պատժոց* դժոխոց: - 591. Թէ մկրտութիւնն ազատէ՛ ի *պատժոց*, վասն է՞ր մեռանի մկրտեալն: - 592. Կրկին է *պատիժ* մեղաց. այսինքն մահ մարմնոյն, և դժոխք հոգւոյն: - 592. Ա՛րդ մկրտեալն ի քրիստոս՝ վասն հոգևոր հօրն ազատի ի հոգևոր *պատժոյն*. և վասն մարմնաւոր հօրն կրէ՛ զմարմնաւոր *պատիժն:* - 592. Դարձեալ՝ կրկին է գալուստն քրիստոսի. յառաջինն զհոգւոյ *պատիժն* եբարձ. և յերկրորդն զմարմնոյն. զի երկրորդ է մարմինն հոգւոյն: - 592. Եւ զի՞նչ իցէ *պատիժ* անմկրտեալ տղային: - 592. Զի տանջանք հրոյն ներգործական մեղա՛ցն է և ո՛չ սկզբնականին *պատիժ:* - 593. Ասեմք թէ՝ այնպէս է շնորհք խոստովանութեանն որ զյաւիտենից *պատիժն* ժամանակեայ առնէ...: - 602. ...զի յորժամ մեղանչեմք, գրիմք ի *պատիժն* յաւիտենից. այլ ի զղջանալն և փոխիլն մեր, փոխէ՛ աստուած և *զպատիժն* ի ժամանակեայս: - 602. ...աստուծոյ մնայ *պատիժն* զոր պահօք և աղօթիւք վճարէ որպէս ասեն ոմանք: - 602. ....այլք սոքա ընդ ապաշխարութեան *պատժոց* են և ոչ հաղորդին...: - 602. ...զի խոստովանեալ մեղքն բարձուի, այլ *պատիժն* ո՛չ: - 603. ...այսպիսիս կատարեալ խոստովանութիւն է. և զայսպիսոյ մեղս թողու քահանայական իշխանութիւնն. և *զպատիժն* ընդ նմին: - 603. Զի *պատժոյ* արմատն մեղքն է...: - 603. ...ընդ բառնիլ մեղացն բարձաւ և *պատիժ* գեհենին. որպէս տէր մեր եթող զմեղս անդամալուծին. և բարձան *պատիժքն:* - 603. Զի ատելութիւն մեղաց զղջումն է սրտին. և խոստովանի բերանով. և զամօթն կրէ փոխանակ *պատժոյն:* - 603. Յիրաւի ապա այսպիսի խոստովանութիւնս կատարելապէս թողու զմեղս և *զպատիժս...:* - 603. Վեցերորդն չարչարանաց *պատիժ* չարչարեցելոց. և ապաշխարողաց թողութիւն...: - 630. ...այլ դատապարտի՛լ հարկաւոր է. որպէս դիւաց մեղանչումն և անկումն. որ է մահն և դատապարտումն որ է՛ *պատիժն:* - 667. Կամ ի խիստ *պատժէ* անզղջից չարաց՝ իսկոյն սատակին: - 668. ...յորում կրեսցէ զվճիռս անվճար *պատժոյն* յաւիտենից տանջանացն: - 669. Եւ տեսանեն *զպատիժս* մերձ ինքեանց...: - 669. ...զի ի մեծի ծագման առաւօտուն կրեսցեն *զպատիժն* ըստ գործոց իւրեանց: - 669. Եւ յետ այնորիկ յիշեմք *զպատիժ* հրամանացն աստուծոյ որ կատարեցաւ ի վերայ նորա...: - 676. Երրորդ, զի զառաջին *պատիժն* աստ կրէ. հողանալով գեղեցկայարմար շինուածն: - 679. Դարձեալ՝ ամենայն մեղաց *պատիժ* գոյ. և ա՛յլ է մեղքն և ա՛յլ է *պատիժն* որ հետևի մեղացն...: - 680. ...զի մեղքն առնելն է, և *պատիժն* կրելն. յերեկեան օրն վասն մեղաց խնդրեցաք. այսօր վասն *պատժոց:* - 680. ...և ազատի նա ի *պատժոց* անտի: - 683. Առաջինն վասն *պատժոյն* ադամայ: - 686. ...զի ազատեցան ի *պատժոց* և առ հայր աւանդեցան. - 689. ...զի որք *զպատիժ* այսմ կենացս ակն ունին առնուլ՝ երկնչին ի չարեաց կամ սակաւ առնեն...: - 698. Եւ անիրաւք որ ո՛չ խոստովանին զմեղս, նոքա ո՛չ զերծանին ի ձեռաց. այսինքն *պատժոցն* աստուծոյ...: - 699. Իններորդ, հուր քաւարանին *պատիժ* է մեղացն ըստ նոցա: - 699. Ա՛րդ՝ եթէ մարմինն ևս գործեաց զմեղս, պա՛րտ է և նմա կրել *պատիժ*...: - 699. ...և յա՛յտ է զի մեռելութիւնն բնութեանս է *պատիժ* և ո՛չ մարմնոյն: - 699. Տասնևմի, *պատժոյն* մեղաց չափ և ժամանակ գոյ ըստ իւրաքանչիւրիցն. որպէս յա՛յտ է ի կանոնս: - 700. ...ապա ուրեմն դժոխքն է անտի *պատիժ* որ է յաւիտենական և անզերծանելի. և ո՛չ գոյ քաւարան: - 700. Նա՛խ եթէ ի խոստովանութիւն մեղացն մնայ *պատիժն* զոր ապաշխարութիւնն քաւէ. որպէս յայտ է ի կանոնս...: - 701. ...և որ ոք ի *պատիժն* աստ ոչ ժամանէ կրել, անդ կրէ յետ մահու ի հուրն և քաւի: - 701. Ասեմք եթէ՝ *պատիժ* չարեաց պտուղ է մեղաց: - 701. Դարձեալ ասեմք, եթէ *զպատիժ* մեռելոյն զոր նա ո՛չ կարէ քաւել...: - 701. Երկրորդ, ասեն խնդրէ արդարութիւնն աստուծոյ՝ զի վասն մեղաց *պատիժ* տացի. որպէս յօրէնս մարդկային *պատժին* յանցաւորք...: - 701. Դարձեալ ասեմք եթէ՝ խոստովանողին *պատիժ* ամօթն է զոր կրէ առաջի քահանային. և ո՛չ կրէ զամօթն յաւիտենից: - 701. Ա՛րդ՝ որք կրեն զամօթն առաջի քահանային, ո՛չ կրկնի ի վերայ նոցա *պատիժ:* - 701. Նա՛խ՝ զի աստ յայժմու կեանս շնորհքն է, իսկ անդ փառքն. որպէս աստ մեղքն է և անդ *պատիժն*. այլ ո՛չ քաւարան: - 702. ...այլ ի սիրտս ամենեցուն խորհուրդ ամբարշտացն պատուհասից կերպարանի. իսկ *պատիժն* յետ արդար

դատաստանին: - 703. Դարձեալ ասեմք, մեղք աստ *զպատիժն* ասէ...: - 704. ...զի թէ ոք աստ *զպատիժ* մեղաց ոչ կարասցէ վճարել, անդ վճարեսցէ և թողցի: - 704. Եւս յայտնի, աստեացս ամենայնի կատարումն է՛ ի հանդերձեալն. այսինքն մեղաց և արդարութեան. *պատժի* և պարգևի. կապելոյ և արձակելոյ: - 704. Եւ բնական քննութեամբ նախ այսպէս եթէ՝ տեսանեմք ի քաղաքական օրէնս զի գոյ դատաստան. այսինքն բարեացն պատիւ և չարացն *պատիժ:* - 715. Եւ ա՛յս է պատճառ յարութեանն. զի ամենայն մարդիկ առնուցուն զվարձ կամ *զպատիժ* կամ վասն իւրեանց գործոց, կամ վասն սկզբնականին: - 724. Իսկ դատապարտեալքն ծանրացեալ մասամբք և զազիր անդամօք այր և կին. զի իւրաքանչիւր ոք ի գործիական անդամս իւր կրեսցէ *զպատիժն:* - 726. Դարձեալ՝ չար կամք մեղաւորին է յաւիտենական. զի կամին յաւիտենական հեշտանալ ի մեղս թէ կարէին. ապա ուրեմն *պատիժն* լինի յաւիտենական: - 744. Ապա ուրեմն յիրաւի և արդարապէս հատուցանէ աստուած չար փոխանակ չարեաց. այսինքն *պատիժ* վասն անիրաւութեան նոցա. զի արդար է աստուած: - 744. Ուստի երևի **զ** ժամս ի յարութենէն մինչ ի վճիռ հատուցման և կորստեան չարաց չորեքկին. այսինքն գործոց չարաց և *պատժոց* նոցին. պատճառաց դիւաց և հետևելոց մարդկան: - 748. ...զի որպէս ի հնձանի ամբարեալ է ի գիտութիւնն աստուծոյ՝ մեղաւորացն *պատիժ*...: - 748. Կամ ցուցանէ զչափով տանջանս մեղաւորացն. որք չափով աստ տանջին, չափով կրեն զհանդերձեալ *պատիժն*. զի ըստ պակասիլ ծխոյն՝ և հուրն նուազի: - 749. Ոմանք ըստ քաղաքական օրինացն **ը** ասեն գոլ *պատիժ:* - 751. Եւ սոքա համեմատին *պատժոց* դժոխոցն: - 751. Զի որպէս աստ եղև ծառայ մեղաց, լիցի և անդ հարկատու *պատժոց:* - 751. Բարձումն յուսոյ և ամենայն փրկութեան Նաև գոլն իսկ որում տենչան ամենայն ստեղծուածք՝ է՛ նոցա *պատիժ*. վասն զի խնդրեսցեն զմահ և ո՛չ գտանիցեն: - 751. Եւ յիրաւի այս. զի այն ոք որ առնէ զոր ինչ ոչ է պարտ, յիրաւապէս կրեսցէ զոր ինչ պա՛րտն է. զի մեղքն է առնել, իսկ *պատիժն* է՛ կրել: - 776. Եւ այսպէս *պատժոյ* նորին հաղորդեալ մահու մեռանելոյն հասարակ ամենեցուն որպէս ասացաւ: - 776. Զի անապական մարմնով եդաւ ի գերեզմանի. բառնալով զապականութիւն նախնւոյն. և իջանելով ի դժոխս՝ եբարձ *զպատիժ* նորին: - 776. Երկրորդ, զի դժոխքն այն *պատիժ* բնութեանս էր և ո՛չ առանձին գործոց. զի հաստատեաց օր մի յորում դատելո՛ց է զամենայն ըստ պօղոսի: - 776. Արդ՝ քրիստոս *զպատիժ* նախահօրն կրեաց և զբնութեանս զպարտն վճարեաց: - 776. Որով յա՛յտ է ի գործոյն և ի *պատժոյն:* - 777. Ապա ուրեմն յիրաւի, զի որք առաւել եղեն մեղօք, առաւելասցին և *պատժօք:* - 777. Վասն որոյ կրկին է և *պատիժն*. զառաջինն ի նախնւոյն հասեալ. և ապա յետոյ յօր մի հաստատեալ ըստ առաքելոյ: - 777. Ա՛րդ՝ որպէս հասեալ *պատժոյն* հաղորդեցան, նմանապէս և հասեալ շնորհօքն ազատեցան: - 777. Յիրաւի դարձեալ՝ դարձցին յետոյ ի *պատիժս* անձնիշխան կամաց ներգործական մեղաց: - 778. Իսկ աստուած ո՛չ փոխեաց զխորհուրդն իւր որ էր յաւիտենական. այլ վճիռն որ հայէր ի *պատիժ* արժանեաց նոցա: - 779. Զի յորժամ ինքեանք փոխեցան, փոխեցաւ և ըստ նոցա *պատիժն* ասացեալ. այսպէս և ամենայն ուրէք տեսցես: - 779. Երբեմն ողորմութիւնն ծածկեալ և արդարութիւնն յայտնի. որպէս ի *պատիժ* մանկանց առանց մկրտութեան մեռելոց. և յերկրորդ գալուստն: - 779. Եւ յարամնայութիւն կնքոյն պատճառէ՛ ոմանց գերագոյն պատիւս. և ոմանց խստագոյն *պատիժս*. ըստ բազում գանից առակի ասիցն: - 783

**ՊԱՏԻՒ +** Դարձեալ, թէ է՛ հարկ՝ ո՛չ են իրաւունք դատաստանի և քննութիւն. և ո՛չ օրէնք քաղաքական. և ո՛չ արժանապէս հատուցմունք բարեաց և չարեաց. զի հարկն բռնադատեաց գործել զայս. հարկին եղիցին *պատիւք* և պատիժք. և ո՛չ մարդոյն: - 12. Սոյնպէս և զգիտութիւն մեծագունիս ի պատճառն ի հայր վերաբերէ ի *պատիւ* ծնողին: - 48. Այլ այսորիկ զհաւասար *պատիւն* բացայայտեն: - 61. Որով և ընդ Որում Հօր և Հոգւոյն սրբոյ փառք և *պատիւ* և իշխանութիւն յամենայն գոյից անբաւ յաւիտենիւ ամէն: - 101. Այլ և այսպիսի ե ասեն զեղանակ նախկնից. այսինքն՝ ժամանակաւ. և բնութեամբ. և դաստիւ. և *պատւով*. և պատճառաւ: - 109. Երկրորդ՝ փառքն և *պատիւն*. զի ոմանք են ի գերագոյն փառսն քան զոմանս: - 137. Երկրորդ՝ զի կամի այնու զփառս և *զպատիւ* աստուծոյ նուազել: - 146. Զի ընդ իւր անկումն ի *պատուոյ* այնչափ չէ՛ տրտում, որքան ընդ մարդոյն փառաւորիլն: - 146. Եւ ոմանք ասեն թէ՝ ըստ *պատիւ* մարդոյն նախանձեցաւ և ի խորհուրդ եմուտ թէ սորա կատարումն ի՞նչ լինի, և ո՛չ կարաց հասու լինիլ: - 147. Վեցերորդ՝ թողեալ լինին ոմանք չարչարեալ առ ի նախանձ այլոց. զի *պատիւ* չարչարելոցն յայտնի լիցի վասն հանդերձեալ յուսոյն...: - 158. Ութերորդ՝ թոյլ տալով սրբոց չարչարիլ՝ վասն պսակացն առաւելութեան է. զի կենցաղս այս հանդէ՛ս է նահատակութեան. և ըստ չափոյ համբերութեան՝ առցէ զյաղթանակն. որպէս սրբոյն ստեփաննոսի. զի ունէր

զսարկաւագութեան և զառաքելութեան *պատիւն*, ընկալաւ և զմարտիրոսութեան պսակն ի քարկոծումն իւր...: - 59. Եւ անձն ունիլ ասի միայն ի *պատիւ* բանական բնութեանն: - 174. Այլ և ո՛չ տեղի պատահական. թէպէտ ի նշան *պատւոյ* ասին յերկինս. այլ ոչ իբր ի մարմնական տեղւոջ: - 174. Իսկ թէ ըստ *պատուոյ* իմանաս, նա՛խ է ներկայն. զի է՛ ստոյգ և ճշմարիտ. և ապա՛ անցեալն. և յետոյ ապառնին. և այսպէս շարադասեն քերթօղքն: - 198. *Ի պատիւ* մեծարեաց զմարդն. և նա՛խ՝ պատրաստեաց պէտս զանազան կերակրոց և ըմպելեաց որպէս ասացաք. և վառեաց զճրագ լուսաւորացն. և զգեղեցիկ ձայն երգեցողաց թռչնոց. և զզուարճութիւն զանազան ծաղկանց. և ապա՛ զմարդն ի *պատիւ* էած...: - 230. Զի այսպէս ի կազմուածոյ քո ուսցիս զբարեկարգութիւն և *զպատիւ* առ վերինս և առ ներքինս և առ հաւասարս: - 232. Ասեմք առ այս, եթէ բանականն առաջին է ըստ *պատւոյ* քան զզգայականն. և զգայականն քան զտնկականն: - 260. Դարձեալ ₽ թիւն պակա՛ս է ի Ժերորդէն. և մեք պակասեցաք յինն դասուց հրեշտակաց, որ նախ հաւասար էաք ի դրախտին. և կարօտացաք մարմնաւոր ծննդեան, նմանելով անասնոց...: - 264. Երկրորդ՝ ըստ *պատւոյն*. զի այս երկնային և վերուստ իջեալ. իսկ այնոքիկ երկրաւոր և շնչաւոր որպէս ասէ առաքեալն: - 269. Եւ յայնժամ մերկանայ *զպատիւն* իւր, և առնէ զյատկութիւնս անասնոց: - 274. Վասն որոյ չարքն անամօթ կոչին. իբր թողեալ *զպատիւ* մարդոյն՝ և անասնոցն նմանեալ: - 274. Վեցերորդ՝ ո՛չ առնու ի գլխոյն և ո՛չ յոտիցն. այլ ի միջացն. զի խրատէ՛ զմարդիկ ո՛չ հաւասար գլխոյն պատուել զկինն, և ո՛չ անարգել իբրև զոտք. այլ միջակ *պատուով* չափաւորել զնա: - 276. Երրորդ՝ անդրանիկ են հրեշտակք քան զմարդիկ ըստ կարգի և *պատւոյ*. թէպէտ բանականեմք որպէս նոքա: - 309. Չորրորդ՝ անդրանիկ է հոգին քան զմարմին բնութեամբ և *պատւով*. թէպէտ հաւասարք են ամանակաւ գոյացեալք: - 309. Ա՛րդ՝ զայս քան մեծագոյն *պատիւ* և խորհուրդ անդրանկութեանն անարգեաց եսաւ ընդ պոռնկութեան. և վաճառեաց ընդ կերակրոյ: - 309. Վայելչապէս արժանաւորեաց աստուած *զպատիւն* անդրանկաց: - 309. Վեցերորդ՝ մարմինն երէց է ըստ կարգի քան զհոգին. և յա՛յտ է, զի որ քան կենդանի եմք՝ զերիցագոյն *պատիւն* մարմնոյն տամք...: - 310. Եւ որք աստ *պատւով* են, փոխին և լինին անդ անարգ. և անպատիւքն պատւաւորք: - 310. Վեցն զկատարելութիւն մարմնոյն ցուցանէ, և հարիւրն, զհոգւոյն. և հազարն, *զպատիւ* կենաց յաւիտենից: - 315. Վասն որոյ այսօր ժողովեալ փառս և *պատիւս* տամք աստուծոյն մերոյ որ յաւիտեան զփառաւորիչս իւր փառաւորէ՛: - 321-322. Երրորդ՝ խոնարհեցաւ յոբ ի *պատւոյն*. և տէր մեր էջ ի յերկիր և վասն մեր աղքատացաւ: - 327. Տասներորդ՝ կրկին եղև կեանքն և *պատիւն* յոբայ. և տէր մեր ել ի փառս առաջին և նստաւ մարմնով ընդ աջմէ հօր: - 327. Եւ ըստ միտս, զի առաքինութիւնն է ի փառս աստուծոյ. այլ և ի *պատիւ* և ի գովութիւն մարդկան. զի բազումք հաղորդին սրբութեան նորա: - 358. Երրորդ՝ յայտնեմք զփառս և *զպատիւ* և զհանգիստ նոցա և զայլն: - 406. Երրորդ՝ վասն կատարածի և վերջին օրհնութեանն պատմէ. արդարոց *զպատիւ*, և մեղաւորաց զտանջանս: - 407. Չորրորդ՝ տեսեալ զմովսէս առաւել փառաւորեալ, և յետ վախճանին թոյլ ետ ներողութիւնն աստուծոյ ժպրհիլ բանսարկուին ստգտանօք մեղաց. զի մի՛ տացեն նմա զգերազանց *պատիւն* աստուած կարծելով: - 410. Նախ ասեն թէ՝ փոխեալ էր զզգեստ *պատւոյն* և զգեցեալ ձորձ հովլութեան և այլագունեալ: - 427. Ըստ որում թէ՝ «եղիցին կատարեալք ի մի». և Նմա փառք և *պատիւ* յարակայ Ամէն: - 450. Զի՞նչ է *պատիւ* իջման աւուրն: - 455. Զի ունի մայրական խնդութիւն հանդերձ կուսութեան *պատուով:* - 463. Երրորդ՝ որպէս գերազա՛նց է քան զամենայն *պատիւ* մայր աստուծոյ լինիլ: - 463. Ողջոյնս այս՝ է հանդերձ բերողիւն և առաքողիւն և կուսիւն ցուցանէ զժ գերազանցութիւն *պատուոյ* կուսին: - 463-464. Տասներորդ՝ այն քան գերազանցեաց *պատիւ* կուսին, զի այնմ որ մարգարէք գուշակէին զլինելոցն. ի սմա ընդ խօսից հրեշտակին եղև կատարումն: - 464. Նախ՝ թէ ո՞րպէս *պատւով* ետ զողջոյնն կուսին ասելով «ուրա՛խ լեր լի՛ շնորհօք»: - 464. Եւ որպէս ասացաւ ունի մայրական խնդութիւն հանդերձ կուսական *պատուով:* - 469. Եւ այս ի խնդրոյ սրբոյ լուսաւորչին մերոյ ի *պատիւ* ազգիս հայոց: - 509. Յնգետասաներորդ, զի բաւական համարեցաւ ի *պատիւ* կանանց զայն՝ զի յառաջագոյն մերձեցաւ ի նոսա ծննդեամբ. իսկ յետ յարութեանն կամի՛ զի ա՛րք նախ մերձեսցին ի նա մինչ դեռ ո՛չ է ելեալ նա առ հայր: - 518. Զի՞նչ է *պատիւ* այսմ աւուր իջման հոգւոյն: - 523. Սակայն կարգ գոյ ի մէջ նոցա և *պատիւ* և հնազանդութիւն և սէր. այլ իշխանութեամբ համահաւասարք են: - 547. Եւ կատարեալ՝ վարձկականն վասն *պատուոյն:* - 576. Պահպանութիւն է որք արժանաւորին մարդկան *պատուոյ* իմն և պաշտաման: - 579. Աղքատութիւն հոգւոյ է՛ հրաժարիլն յաշխարհէ. այսինքն ի սիրոյ մարմնական հեշտութեանց և ի փարթամութեանց և ի *պատուոյ.* քանզի զերիսս զայս

պարունակէ սէր աշխարհիս: - 583. Յինգերորդ՝ զի համապատիւ ծնանիմք ամենեքեան. ո՛չ ոմն *պատուով* կամ անպատիւ. իշխան կամ իշխեցեալ...: - 590. Չորրորդ, հասարակ աղօթքն է միակի *պատիւ* և փառք. և առանձնականն կրկնակի: - 623. Այլ սուրբն ստեփաննոս սիւնեաց, և մեծն ներսէս, վասն *պատուոյ*՝ նախ զխաչի տուննն են ասացեալ, և ապա՛ զաստուածածնին: - 642. Երեք չուանն՝ եռակի *պատիւն* նորա: - 645. Զի նախ է մարմին քան զհոգի. ոչ ժամանակաւ և *պատուով*. այլ նիւթով և զօրութեամբ: - 662. ...զի յորժամ տեսցուք զանցաւոր կեանս, իմասցուք զմեծութիւն *պատւոյն* ա՛յնր կենացն: - 663. ...այսպէս և ո՛չ ոք առեալ *զպատիւ*, բայց միայն աւագակն: - 697. Եւ բնական քննութեամբ նախ այսպէս եթէ՝ տեսանեմք ի քաղաքական օրէնս զի գոյ դատաստան. այսինքն բարեացն *պատիւ* և չարացն պատիժ. - 715. Իսկ հոգին՝ Զիմաստութիւն. Զսիրելութիւն. Զմիաբանութիւն. Զիշխանութիւն. *Զպատիւ*. Զանհոգութիւն. և Զուրախութիւն: - 761. Այն քան եղիցի միութիւն գլխոյն և անդամոցն, զի անդամքն *զպատիւ* գլխոյն իւրեանց՝ ինքեանց համարեսցեն: - 763. Որով և ընդ որում հօր միանգամայն և հոգւոյն սրբոյ վայելէ փառք և *պատիւ* և իշխանութիւն և զօրութիւն. այժմ և միշտ և յաւիտենից յաւիտեանս Ամէն: - 771. Զի հաճելի՛ է բնաւորեալ գովութիւն մարդոյ. ըստ որում մեծարեցաւ տիրական *պատուով*. և է՛ այս հասարակ: - 774. Եւ յարամնայութիւն կնքոյն պատճառէ՛ ոմանց գերագոյն *պատիւս*. և ոմանց խստագոյն պատիժս. ըստ բազում գանից առակի ասիցն: - 783

**ՊԱՏԿԱՆԵՄ +** Բերանն փոքր՝ *պատկանի* կանանց: - 247. Երկրորդ՝ զի *պատկանեալ* են և համաշունչ յերգն աստուածային՝ և ի սէրն առ միմեանս և առ աստուած: - 713

**ՊԱՏԿԱՌԱՆՔ +** Աստուծոյ պարտիմք զերկիւղն և *զպատկառանքն:* - 579. Յամեստութիւն է որով զպարկեշտ ամօթխածութիւնն ստանայ և զնազելի *պատկառանս:* - 581. Չորրորդն պարտապան գոհութեան վասն էից փոփոխման. և ոմանց ամօթ *պատկառանաց:* - 630

**ՊԱՏԿԱՌԵԼԻ +** Չորրորդ՝ նշան *պատկառելի* է ծերութիւն. որ զհին աւուրցն տպաւորէ՛: - 378

**ՊԱՏԿԱՌԵՄ +** Երկրորդ՝ ի յանդիմանութիւն խաչողացն. զի լուսաւորքն տեսեալ զտէրն իւրեանց մերկացեալ, *պատկառեցին* և քօղ արկին զխաւարն: - 490

**ՊԱՏԿԵԼ** - Վեցերորդ՝ միակն *պատկելով* բազմանայ. և աստուած է շարունակօղ բազմութեան էից: - 109. Ութերորդ՝ մինն *պատկելով* առնէ զտասն՝ և զհարիւր՝ և զհազար՝ և զբիւրն. և զանթիւն: - 109. Սակայն և նա՛ է ի թիւս յայս. այսինքն զի երիցս *պատկելով* երեքտասանն՝ լինի **լթ**. և ի քառասներորդումն պտղաբերի: - 263. Վասն այն նահապետքն զհարիւրն *պատկե՛ն* որ է՛ ժամանակեան. և ի հազարն ո՛չ հասանին որ մշտնջենաւորն է: - 291

**ՊԱՏԿԵՐ +** Դարձեալ ասեմք թէ՝ սոքա ո՛չ են բնութիւնք ի հոգին. այլ որակութիւնք զանազանք և աննմանութիւնք. որպէս *պատկերք* երեսացն: - 19. Եւ վասն առաւել բարութեանն արար ի *պատկեր* իւր և նման զմարդն: - 24. Առ որս ասելի է թէ՝ ո՛չ կամաւ, և ո՛չ յոչ կամայ. զի *պատկեր* և նկարագիր էութեանն հօր է որդի, ըստ առաքելոյ: - 36. Այս ո՛չ որպէս չարափառքն ասեն՝ թէ որպէս նկարիչ իմաստուն ծնացնէ՛ *պատկեր*, և ապա ոչ ունեսալն՝ զնոյն օրինակէ՛: - 45. Եւ դարձեալ՝ զի մի՛ կարծի միայն յանմարմնութեանն *պատկեր* հօր, ի վերայ էած և ի լինելութեանն հաւասար աստուծոյ գոլ նովին մարմնովն առանց յափշտակութեան: - 93. Որպէս ասի ներտրամադրեալ բանն *պատկեր* մտացն. նոյն և յառաջ բերեալն բան և թանձրացեալ՝ է՛ *պատկեր* նորին և հաւասար մտացն: - 93. Զի խաւարի միտքն. և մոլորի՛ իմացումն. և կապի ընդարձակ տեսութիւնն. և ծանրանայ թեթեւութիւնն. և անջատի ի բազումս. և տգեղանայ *պատկերն:* - 104. Իսկ սուրբ գիտութիւնն ընդ դէմ այսմ լուսաւորէ՛ զմիտս և ուղղէ՛. և ընդարձակէ զտեսութիւնն և թեթեւացնէ առ վերինն. և ժողովէ ի մինն. և կատարէ *զպատկերն:* - 104. Երրորդ՝ բանն *պատկեր* է հօր. և մարդն *պատկեր* բանին. *պատկերն զպատկերն* էառ կամ նախատիպն զպատկերն: - 107. Եւ աստուած յայտնի է ի բանականքս իմացմամբ և *պատկերաւ*. այլ ի կենդանիս և ի բոյսս և ի գոյսս սակաւ ինչ նմանութեամբ: - 109-110. Երկրորդ՝ սկիզբն է յարացուցի. և պատճառ էից. *պատկեր* և նմանութիւն նորին յարացուցի: - 110. Եւ յէութիւն եղելոցս. որ է *պատկեր* և նմանութիւն յարացուցի: - 111. Երբեմն նախագաղափար. իբր նախօրինակ. և մեք *պատկեր* և նմանութիւն նորին: - 112. Այլ բազո՛ւմ է և զանազան ըստ *պատկերի* և նմանութեան յարացուցելոցս որք են բազումք. զի աստուած միով յարացուցիւ զբազումս տեսանէ. որպէս անմարմնութեամբքն զմարմնաւորս տեսանէ. և յաւիտենիւ զժամանակեայս: - 112. Եւ բազում է ըստ բազում *պատկերաց:* - 112. Եւ է՛ հօր *պատկեր* բոլոր արեգակն: - 124. Եւ որդւոյ *պատկեր*՝ լոյսն դեղին:

- 124. Եւ հոգւոյն *պատկեր*՝ լոյսն սպիտակ: - 124. Նախ՝ զի *պատկե՛ր* է նմա. և ապա զի փառաբանիչ աստուծոյ: - 128. Իսկ ասա աչքն զօրանայ ի տեսանել զերևեալ *պատկերն* կազմեալ ի յօդոյ: - 133. Որև այժմ ի յեկեղեցի ի նոյն խորհուրդ՝ սերոբէին *պատկեր* որ է քշոցն՝ ի ձեռն սարկաւագին աւանդի՝ որ է՛ մաքրօղն. և երրորդ կարգ յետ քահանային և քահանայապետին: - 135. Առաջին՝ գաբրիէլ. որ է՛ *պատկեր* աստուծոյ: - 144. Իսկ խօսի դնն ընդ մարդոյ՝ կամ փոփոխելով զգոյութիւնն որպէս հրեշտակն կամ *զպատկեր* նմանութեանն ցուցանէ տեսանելեացն. և կամ տպաւորէ՛ յերևակայութիւնն: - 145. Նախ՝ զի հակառա՛կ է աստուծոյ, և մարդն *պատկեր* է աստուծոյ. յորժամ տկարանայ ի նախատիպն՝ ընդ *պատկերն* հակառակի: - 146. Եւ պատասխանէ՛ դաւիթ և եսայի՝ «ի ձեռն նորա են ամենայն տիեզերք». որ ունի զշրջանակ երկրի ըստ օրինակի *պատկերին* երկաթեայ: - 180. Հինգերորդ՝ *պատկեր* և օրինա՛կ է քրիստոսի՝ արեգականն արդարութեան: - 186. Եւ գիտելի է, զի օրն *պատկեր* է ամսոյն և տարւոյն: - 190. Երկրորդ՝ զի *պատկեր* աստուծոյ է մարդն. այսինքն զի որպէս աստուած իշխան և թագաւոր է ամենայն արարածոց. նոյնպէս և մարդն իշխան է ամենայն կենդանեաց: - 220. Եւ զի *պատկե՛ր* է աստուծոյ՝ լ թուով: - 228. Քսանևթ՝ Զինչ է *պատկերն* և նմանն: - 228. Երեսուն՝ Մեք ո՞րպէս *պատկեր* և նման եմք: - 228. Երրորդ՝ հողն վերջին է ի տարերս. զի գիտասցէ զշնորհս աստուծոյ՝ որ այսպէս առաջին և *պատկեր* աստուծոյ ստեղծաւ: - 229. Զի թէ *զպատկերն* աստուծոյ տեսեալ ի մեզ հպարտասցուք, զհողն տեսեալ խոնարհեսցուք...: - 229. Եւ զկրկնակի կենաց վայելումն ըստ խառնեալ էութեան իւրոյ. զի թէ զաստուածայինսն բերցէ յինքեան ըստ որում ի *պատկերն* եղև, վերափոխեսցի անմահ կենօք ի պատրաստեալն ժառանգութիւն: - 231. Երկրորդ՝ զի արարաւ մարդն ի *պատկեր* աստուծոյ, վասն որոյ *պատկե՛րն* է ցանկալի: - 234. Հարցումն ա՛յսմ իրի՝ նախ գիտելի է՝ թէ ուստի՞ գոյանայ *պատկերն* և տիպ: - 235. Զորօրինակ՝ բնութեան յատուկն և անձին. զի բնութեան տարբերն հեռագոյն է և մեծ. որպէս կենդանին և բանականն. և դիմաց յատուկն մերձ և նուազ. որպէս յատուկն մերձ և նուազ. որպէս *պատկեր* և տիպ: - 235. Ըստ այսմ ապացուցի. զի բնութիւնն ի սեռ՛ումն է և ի տարբերութեան ուստի բաղկանայ. և անձն ի բութիւնն է յորմէ կայանայ. և դէմքն ի յանձնէ՛. և կերպարանն ի դիմաց. և *պատկերն* ի կերպարանաց. և տիպն ի *պատկերաց*. և որակ տպաւորեալ ի պատահմանց: - 235. Այս՝ թէ ուստի՞ գոյանայ *պատկերն* և տիպ: - 236. Եւ նւազեալ յայսցանէ գոյնն՝ մնայ *պատկեր* ի քանակէ և ի ձևոյ և ի տեղւոյ երևեալ. որպէս յա՛յտ է ի մեռեալ մարդն: - 236. Որպէս և իմաստունքն ասացին զամենայն երևելիս յարացոյց իմանալեացն. զոր գոյ և որակ կոչեն. և զնիւթս *պատկեր* գոյին. զի որակն և գոյք անմարմին են և աննիւթաբար ի մտածութիւնս երևին: - 236. Զի որդի *պատկե՛ր* է հօր և տիպ և կերպարան: - 237. Եւ որպէս մարմնոյն *պատկերք* նման և աննման են իրերաց. նոյնպէս և հոգին ըստ միոյ բնութեան ստեղծեալք նման և աննմանք են իրերաց: - 237. Այժմ տեսցուք թէ զի՞նչ է շահն աննման *պատկերաց*. զի բազում վնաս էր լինելոց թէ անհատք ո՛չ էին որոշեալ դիմօք: - 238. Եւ սոքա առնեն զմարդն կատարեալ *պատկեր* աստուծոյ: - 248. Հոգին *պատկե՛ր* է աստուծոյ. և աստուածապաշտ մարդոյ՝ զաստուած քննել ո՛չ մարթի թէ ուստի՞ է. կամ ո՞ւր է կամ ո՞րչափ է. և կամ թէ ո՞րպէս է. կամ թէ մինչ ի յուր է: - 251. Եւ կամ որպէս պատկերագործք մինչ զոտն և զձեռն նկարեն՝ ո՛չ երևի *պատկեր* մարդոյ. այլ ոտից և ձեռաց: - 255. Եւ յորժամ ձևանայ դէմքն, ի նոյն ժամն երևի յինքեան *պատկերն* մարդոյ: - 255. Զի նախախնամութեամբ ունի զտնկականն և զզգայականն. և ստեղծմամբ զբանական հոգին *զպատկերն* աստուծոյ: - 257. Նախախնամութեամբ՝ ո՛չ որպէս փտելով կամ ծնանելով զմարմին ի մարմնոց. այլ յառաջ բերէ *զպատկերն* իւր որպէս ինքն գիտէ: - 258. Եւ իւրաքանչիւր ոք ծննդեամբ յառաջ եկեալ առնու զնոյն *պատկերին* շնորհ ի ծագմանէն աստուծոյ. և լնուն զնոյն թիւ որքանութեան զոր ետես աստուած նախքան զլինինլն աշխարհի որպէս ասէ առաքեալն: - 258. Զորօրինակ՝ արուեստաւոր ոք կամիցի դրօշել ի քարեայ *պատկեր*, նախ նկարէ՛ ի միտս իւր զձև *պատկերին*. և ապա հատանէ զքարն և տաշէ՛ և դրօշմէ՛ զկերպն ըստ այնմ նմանութեանն որ էր ի միտս ձևացեալ: - 258. Իսկ բարոյականն այս ինչ է. զի *զպատկերն* արարչական և զառաջին կեանս դրախտին կորուսաք, և զանասնեղէն *պատկերն* և զերկրորդ և զախտաւոր կեանս ընտրեցաք. յիրաւի շրջեցաւ ի մեզ և լինելութիւն հոգւոյն: - 258. Գիտելի՛ է, զի յերից է *պատկերին* գեղեցկութիւն որով նմանի ի նախատիպն: - 271. Եւ որպէս *զպատկեր* թագաւորին նկարեն թագիւ և ծիրանեաւ և այլովն՝ և անուանեն *զպատկերն* թագաւոր: - 271. Այսպէս իսկապէս թագաւորն ամենայն աշխարհի՝ ստեղծեաց զմարդն ըստ *պատկերի* իւրոյ: - 271. Եւ ըստ այսմ բազում եղանակաւ ասի մարդն *պատկեր* աստուծոյ: - 271. Քսանևե, ասէ լուսաւորիչն մեր, թէ ձև մարդոյ երևեցաւ ի ստեղծանելն, զոր առնելոց

էր զնոյն մարմին յետոյ ժամանակի. և ի նոյն *պատկերն* արար զմարդն: - 272. Երեսուներորդ, մի՛ է *պատկերն* մարդ. և մի սկզբնատիպն աստուած: - 272. Որո՞վ զանազանի *պատկեր* և նմանութիւն: - 272. Զանազանի *պատկեր* և նմանութիւն, որպէս մարդն և կենդանին. զի ամենայն մարդ ասի կենդանի. այլ ո՛չ ամենայն կենդանի մարդ: - 272. Նոյնպէս և ամենայն *պատկեր* ի հարկէ՛ ասի նմանութիւն. այլ ո՛չ ամենայն նմանութիւն է *պատկեր:* - 272. Զի ի վերայ նմանութեան իր ինչ յաւելու *պատկերն*՝ որ է՛ նոյնութիւնն, և ապա՛ է պատկեր. զի պատկերն հոմանուն է: - 272. Զի ի վերայ նմանութեան իր ինչ յաւելու պատկերն՝ որ է՛ նոյնութիւնն, և ապա՛ է *պատկեր*. զի *պատկերն* հոմանուն է: - 272. Եւ է՛ որ նոյնութեամբ է *պատկեր*. և է՛ որ նմանութեամբ: - 272. Ա՛րդ՝ նոյնութեամբ *պատկեր* ասի միածին բանն՝ հօր...: - 72. Զի ո՛չ է ըստ նմանութեան *պատկեր*. այլ ըստ նոյնութեան բնութեանն: - 272. Իսկ մարդն ասի *պատկեր* աստուծոյ ըստ նմանութեանն. վասն զի ո՛չ ունի զնոյն էութիւն. այլ զնմանութիւնն աստուծոյ: - 273. Զորօրինակ՝ որդի թագաւորի *պատկե՛ր* է թագաւորին. զի բնութենակից է նմա: - 273. Իսկ դրամն և տախտակն ուր գրեալ է *պատկեր* թագաւորին՝ միայն նման է թագաւորին ըստ ձևոյն. այլ ո՛չ ըստ բնութեանն: - 273. Եւ դարձեալ՝ որպէս ձու հաւի և ձու քարեայ՝ նման ասին միմեանց, այլ ո՛չ *պատկեր*. զի ո՛չ են ի միմեանց ելեալ. և ո՛չ զնոյն էութիւն ունին: - 273. Դարձեալ՝ *պատկերն* ի կերպարանն լինի առեալ. և նմանն ի յորակն կամ ի քանակն: - 273. Մեք ո՞րպէս *պատկեր* և որպէս նման եմք աստուծոյ: - 273. Ոմանք ասեն եթէ *պատկեր* աստուծոյ հօր՝ է՛ որդի, և նման հոգին սուրբ: - 273. Այսպէս ասեն թէ՝ մարդն կազմեալ է ի *պատկեր* որդւոյ, և ըստ նմանութեան հոգւոյն սրբոյ: - 273. Եւ այս չէ՛ ընդունելի. զի մարդն երրորդութեանն է *պատկեր* եղեալ որպէս ցուցաւ. և ո՛չ միայն որդւոյ և հոգւոյն սրբոյ: - 273. Իսկ այլք ասեն թէ՝ *պատկեր* եմք աստուծոյ, և նման յարացոյց նախագաղափարին: - 273. Եւ այլք ասեն եթէ՝ *պատկեր* եղաք այժմ, այլ նման լինելոց եմք ի հանդերձեալն...: - 273. Եւ այս ևս ո՛չ է ընդունելի. զի սոցա պատասխանի տայ սուրբն կիւրեղ ի գիրս պարապմանց թէ՝ որ ասաց *զպատկերն*, իմանամք զնմանութիւնն ի *պատկերին* որպէս ցուցաւ ի վերոյ. զի ամենայն *պատկեր* ի հարկէ նմա՛ն է: - 273. Եւ այլք ասեն թէ՝ մարդն ո՛չ է *պատկեր* աստուծոյ. այլ *պատկեր* *պատկերի*. զի որդի է հօր *պատկեր*, և մարդն որդւոյն. վասն այն ասաց նման և *պատկերի:* - 273. Եւ զայս սուտ առնէ սուրբն կիւրեղ եթէ՝ որդի է ճշմարիտ *պատկեր* հօր. և մարդն եղեալն է ի *պատկեր* որդւոյ: - 273. Ապա ուրեմն և մարդն եղեալ է ի *պատկեր* հօր: - 273. Եւ դարձեալ ասեն թէ՝ հոգին է *պատկեր* աստուծոյ ըստ զօրութեանցն. զի ունի միտք և իմացումն և կամք: - 273. Դարձեալ՝ ըստ երից բնական զօրութեանց հոգւոյն *պատկեր* եմք աստուծոյ. այլ սրբութեամբ արդարութեամբ և առաքինութեամբ նման եմք աստուծոյ: - 273. Դարձեալ՝ *պատկեր* է հոգիս մեր. զի բանն և շունչ կենդանութեանն ի նմանէ՛ յառաջ գայ: - 273. Դարձեալ՝ *պատկեր* եմք աստուծոյ, զի ճանաչեմք զճշմարտութիւնն: - 273. Դարձեալ՝ ասեմք եթէ գ կերպիւ մարդն իմանի *պատկեր*. այսինքն բնական, շնորհաց, և փառաց: - 273. Բնական *պատկեր* է, որով իմանամք և կարեմք սիրել զաստուած. և այս հասարա՛կ է բարեաց և չարաց: - 273-274. Իսկ *պատկեր* շնորհաց և փառաց է, կատարելապէս ճանաչել և սիրել զաստուած. և այս է նմանութիւնն զոր կատարեալքն ունին աստ և ի վերին գաւառին: - 274. Զի թէ ո՛չ էր ասացեալ ընդ *պատկերին* զնմանն լինիլ...: - 274. Դարձեալ՝ մա՛րդն է ի *պատկեր* աստուծոյ եղեալ առաւել քան զհրեշտակս գ կերպիւ, ներքոյ և արտաքոյ. զորս ո՛չ ունին հրեշտակք: - 275. Զի *պատկերն* աստուծոյ վերստին նորոգեցաւ ի նմա: - 288. Եւ երէց է աստուած քան զաշխարհս. և անդրանիկն զաստուծոյ *պատկերն* ունի. զի հայր և խնամածո՛ւ է այլ հարազատ եղբարցն: - 308. Նոյնպէս և սատանայ ատէ՛ր զմարդկային բնութիւնս զի ի *պատկերն* աստուծոյ արարաւ. և հրէայքն ատէին զքրիստոս. զի վկայեաց հայր թէ դա՛ է որդի իմ սիրելի: - 313. Վեցերորդ՝ զի լիցի և *պատկեր* քրիստոսի որ անմեղութեամբ դատապարտեցաւ, և յառաջին փառսն դարձոյց զնախաստեղծն ծննդօք իւրովք: - 325. Նախ՝ թագաւորութեամբն ունէր *զպատկեր* փառացն ադամայ: - 327. Իններորդ՝ յոբայ մարմինն նորոգեցաւ յետոյ. և տէր մեր խաչիւն նորոգեաց *զպատկերն* ադամայ և զծննդոց նորա յարութեամբն իւրով: - 327. Եւ զի ո՛չ նկարեցաւ ի *պատկեր* կռոց և ո՛չ պաշտեցաւ մորենին. վասն այն տէր երևեցաւ ի նմա: - 330. Երրորդ՝ կամեցաւ զմարդն ի *պատկեր* իւր՝ երկրորդ ստեղծմանն աշխարհի գործակից և մասնակից լինիլ. վասն որոյ հրամայեաց ի նոցանէ առնուլ զնիւթ կազմելոյն: - 342. Խոյրն, վարշամակն. և Միթրն և թիթեղն ոսկի, *պատկերք* սրբոցն նկարեալ. և երկոքին Բազպանն, փոխանակ անդրավարտեաց: - 348. Նա՛խ՝ զի յետին *պատկեր* է: - 350. Երկրորդ՝ որպէս բնութիւնս մեր բարի՛ էր *պատկեր* եղեալ բարւոյն. և մեք կամօք մեր ախտացուցաք չար ածելով ի ներքս...: - 408.

Յինգերորդ՝ և մի՛ ժողովուրդն առցէ ի նշխարացն և *պատկեր* կազմեսցէ: - 411. Չորրորդ՝ *պատկեր* կռոց ո՛չ ձևացաւ անգծելի գոլով յերկաթոյ: - 415. Վեցերորդ՝ և *զպատկերս* կռոց երկաթով գործէին: - 415. Երրորդ՝ ի յեղծանիլ *պատկերին* աստուծոյ որ վասն փառացն աստուծոյ ստեղծաւ...: - 416. Վեցերորդ՝ տգեղանայ աստուածեղէն *պատկերն:* - 424. Յայս միտս ի կենդանագիր կուսին՝ ի ձախոյ գիրկս լինի փրկչական *պատկերն*. նոյնպէս և առ ի խաչին ի յաջակողմն կացեալ: - 441. Իսկ մեր վարդապետք ասեն որպէս մեծն ներսէս, թէ ի **զ**երորդ աւուր արարաւ առաջին ադամն ի *պատկեր* տիրական: - 467. Իսկ նորն ադամ նոյն ի **զ** դարուն յա՛յց եւ և խնդրեաց զկորուսեալ *պատկերն* ի թիւ խորհրդաւոր կատարեալ վեցերորդին: - 467. Յինգերորդ՝ բանն *պատկեր* է հօր էական. և մարդն *պատկեր* նմանութեան. վասն այն բանն աստուծոյ եղև ի *պատկեր* մարդոյ: - 468. Զի՞նչ է որ ի փրկչական *պատկերն* գիր ի ձեռն և խաչ ի գլուխն նկարեն: - 481. Վասն այն ի փրկչական *պատկերն* նկարեալ է ի մին ձեռն գիր և ի միւսն խաչ: - 482. Որ այսպիսի էր *պատկեր* աւուրն. յաւուր **ե** շաբաթոջ երեկոյին ի չորեքտասան լուսնին զգառն զենին և ելին յայգ ուրբաթի **ժե** ամսեանն. և ի կիրակէ անցին ընդ ծովն որ էր նիսանի **ժէ**: - 513. Պատասխանեմք թէ՝ նման է այնմ որ ասեն թէ՝ բան աստուած է *պատկեր* հօր, և մարդն ի *պատկեր* բանին. ապա մարդն ո՛չ է *պատկեր* աստուծոյ, այլ *պատկեր պատկերի:* - 530. Որպէս գրեալ է ի գիրս պարապմանց այսպէս. եթէ մարդն *պատկեր* է բանին՝ և բանն է աստուած. ապա և մարդն է *պատկեր* աստուծոյ: - 530. Երկրորդ՝ ի *պատկեր* երից անձնաւորութեանցն սոքա են յեկեղեցի: - 535. Ի նիկիայ յաղագս *զպատկերս* անարգելոյ: - 544. Եւ նզովեցին զչպատուօղսն *պատկերաց:* - 544. Անարգե՛մք զհոգիս որ է՛ *պատկեր* աստուծոյ. և պատուեմք զմարմինս որ *պատկեր* է անասնոյ: - 564. Դարձեալ, բարկութեամբ *զպատկերն* աստուծոյ կորուսանեմք ի մեզ. և հոգին սուրբ փախչի ի բարկացեալ հոգւոյ. զի խաղաղութիւն է տեղի նորա: - 570. Եւ վասն այն սիրեմք զընկերն, զի ստեղծուած և *պատկեր* աստուծոյ է: - 571. Գիտելի է, որպէս *պատկեր* աստուածութեանն կայանայ ի մի էութիւն և յերիս անձինս: - 577. Այսպէս և *պատկեր* վերստին ստեղծմանն ի մեզ կայանայ ի միութիւն շնորհին և յերիս ունակութիւնս: - 577. Գթութիւն է գութ ցուցանել առ ընկերն և սիրել զնա. վասն զի *պատկեր* աստուծոյ է: - 582. Երրորդ՝ զի միշտ անդրանիկ ծնանի և ո՛չ կրտսեր. զի *պատկեր* քրիստոսի ստանամք որ է՛ անդրանիկ հօր: - 590. Դարձեալ՝ ջուր զաղտս լուանայ. զծարաւս շիջուցանէ. *զպատկերս* ցուցանէ: - 591. Այսպէս շնորհք հոգւոյն սրբոյ ի մկրտութեանն զաղտս մեղաց լուանայ. զծարաւ հոգւոյն բանիւն աստուծոյ շիջուցանէ. և զկորուսեալ *պատկերն* աստուծոյ դարձուցանէ: - 591. Նշանակէ՛ *զպատկերն* ոսկի **կ** կանգուն երկայն և **զ** լայն: - 637. Մովսէս քերթօղն զծննդեանն, և զմեծացուսցէքն, և զտեառնընդառաջին, և զփոխման առաջին *պատկերն:* - 637. Զզորս ըստ *պատկերին*, գրիգոր մագիստրոսն: - 637. ...և զհոգւոյ գալստեան **դ** *պատկերն*...: - 637. ...և զվարդավառի **բ** *պատկերն*, և զփոխման **բ** *պատկերն*, զհրեշտակապետացն, և զեօթանասնիցն, զղևոնդեանցն...: - 637. Զորս ըստ *պատկերի* քում: - 639. Գրիգոր մագիսրոսն ի տարօն եկեղեցի է շինեալ. և ծախիւք *պատկեր* բերեալ և անդ եդեալ: - 639. Եւ կենդանագիրն՝ *պատկեր* տիրամօ՛րն է: - 639. Այլ և *պատկերք* քարոզչացն: - 645. Նա՛խ՝ պատուեմք զմարդն որ է՛ *պատկեր* աստուծոյ...: - 677. ...որ այս եղև սկիզբն պարկեշտութեան յորժամ զսիրելի զաւակաց *պատկերս* արարին և պաշտեցին: - 677. Եւ տացէ երկիր պագանել *պատկերի* իւրոյն: - 707. Իսկ վաթսուննն զբաբելօնի *պատկերն* **կ** կանգուն երկայն, և **զ** լայն. յորում ընդարձակեցաւ կռամոլութիւն: - 708. Նա՛խ՝ զի շնորհն աստուածային *պատկերին* որ համանգամայն կամեցաւ զբոլոր բնութիւնս ըստ հրեշտակացն օրինակի մուծանել ի կեանս...: - 716. Զոր օրինակ մի *պատկերն* դրոշմի ի զանազան մոմս. և ի հալիլ մոմոյն դրոշմ *պատկերին* ժողովի և մնայ ի մատանւոջն: - 732. Եւ այնպէս յաղթէ զնիւթականս զայս հուր, որպէս այս զնկարեալն *պատկեր* հրոյ: - 752. Ա՛րդ՝ առաջնոյն ասեմք թէ՝ ի *պատկեր* արարչին ինքնիշխան տէրութեամբ և անմեղութեամբ կազմեցաւ առաջինն մարդ: - 776. Իսկ մարդասիրին աստուծոյ տեսեալ արտագունեալ *զպատկեր* իւր, կամեցաւ նորոգել զնա: - 776. Զի որպէս բան *պատկերին*, այսպէս և բան շնորհացն եռակի. զի միապէս սոքա եղծանին մեղօք, և նմանապէս արծարծին մաքրութեամբ առ որ ոք և իցէ: - 782

**ՊԱՏԿԵՐԱԳՈՐԾ +** Եւ կամ որպէս *պատկերագործ* մինչ զոտն և զձեռն նկարեն՝ ո՛չ երևի պատկեր մարդոյ. այլ ոտից և ձեռաց: - 255

**ՊԱՏԿԵՐԱԿԻՑ +** Ապա ուրեմն գործ նախախնամութեան է զիւրաքանչիւր ոգի յառաջ ածել. և նախատպին *պատկերակից* առնել: - 258. Զի թէ ո՛չ էր ասացեալ ընդ պատկերին զնմանն լինիլ,

ամենայն ոք պատճառէր, և զմարդն պաշտելով անկանէր ի կռապաշտութիւն. վասն որոյ ասաց զնմանն, թէ յորժամ տեսցեն *պատկերակից* աստուծոյ զմարդն բանականութեամբ անմահութեամբ և այլովքն որ ինչ է ի հոգիս, իմանայցեն և զզանազանութիւնն աստուծոյ: - 274

**ՊԱՏԿԵՐԱՊԷՍ** - ...ըստ որում որ էջ հոգին սուրբ յորովայն անարատ կուսին և մաքրեաց զնա, և կազմեաց ի նմանէ զարիւնն. և սրբեաց և օծեաց զնա միաւորելով *պատկերապէս:* - 475

**ՊԱՏԿԵՐԱՑՈՅՑ** - Երևի ապա թէ ճշմարիտ են *պատկերացոյցքն*, որ զբարս մարդոյն յայտնեն: - 246

**ՊԱՏԿԵՐԱՑՈՒՑՈՒԹԻՒՆ** - Չորեքտասաներորդ՝ *Պատկերացուցութիւն* մարդոյն ըստ մասին: - 227

**ՊԱՏԿԵՐԵՄ +** Սակայն կերպն և կերպարանն տարորոշին. որպէս գաղափարն և *պատկերեալն:* - 236

**ՊԱՏԿՈՒԹԻՒՆ +** Սակայն շարադրի միակն *պատկութեամբ*, և անշարադրելի՛ է ինքնութեամբ: - 26

**ՊԱՏՃԱՌ(Ք) +** Առաջին *պատճառն* աստուած՝ եդ զզօրութիւն իւր յաստեղս. և նոքա ազդե՛ն ի մեզ, և դարձուցանեն զմեզ ըստ իւրեանց շարժութեանն ի չար կամ ի բարի: - 7. Ջի ո՛չ այլ ինչ է բախտն, եթէ ոչ զօրութիւն աստեղաց. զոր առեալ յառաջին *պատճառէն*՝ հա՛րկ առնեն ի վերայ մեր: - 7-8. Որպէս արեգակն զի ո՛չ այրէ որ է հեռաւոր *պատճառ*. այլ հուրն ի նմանէ առեալ զջերմութիւն ի մերձ գոլով այրէ՛. որպէս յա՛յտ է ի հայելւոջն, որ առեալ զնշոյլս յարեգականէն՝ այրէ՛. ա՛յսպէս և բանս մեր ի հարկէ նոցա լինի՝ զոր ստորասեմք կամ բացասեմք: - 8. Ասեմք առ այս, եթէ ամենայն իր զինչ և իցէ ի ներկայս՝ գիտեմք զնա ի յէութեան իւրում. իսկ ի հանդերձեալն ո՛չ գիտեմք ի յէութեան իւրում. սակայն գիտեմք զնա ի *պատճառ* իւր: - 9. Կամ է ի հարկաւոր *պատճառ* է. զի անխափան լինիցի. որպէս մարդ մեռանելո՛ց է: - 9. Կամ է՛ ի ներգործական *պատճառն*. որ ունիցի խափան ինչ և արգելումն...: - 9-10. Կամ է՛ ի ներընդունակ *պատճառն* իւր. որ հաւասար է ի լինիլն և յոչ լինիլն. որպէս ելանել ի զբօսանս, կամ ո՛չ. լինիլ անձրև, կամ ո՛չ: - 10. Եւ որովհետև ծանեաք զայս, արդ պատասխանեմք առարկութեանցն, եթէ որքան Է՛ ի հարկաւոր *պատճառ* է՛, լինի բացորոշապէս բանն ճշմարիտ...: - 10. Եւ թէ է ի *պատճառն* ներգործական՝ որ ունի արգելումն, է՛ որպէս անէծք, կամ օրհնութիւնք, կամ աղօթք. և մանկանն յերկար ապրիլ. կամ լինիլ երաժիշտ: - 10. Իսկ թէ է ի *պատճառն* ներընդունական, յայտնի՛ է որ հաւասար ունի զգոլն և զո՛չ գոլն որպէս ասացաւ: - 10. Ամենայն ինչ որ լինի՝ ունի *պատճառ*. և ամենայն *պատճառ* ի հարկէ է՛ նախքան զպատճառելին. ապա թէ հարկաւոր *պատճառս* այս ո՛չ է բանն մեր որպէս ցուցաւ, է՛ ուրեմն զօրութիւնն աստեղաց ի շարժմանէ նոցա ազդեցեալ: - 10. Ասեմք առ այս, եթէ՝ ամենայն ինչ որ լինի՝ ունի *պատճառ*. և նախ է *պատճառն* քան զպատճառելին. այլ ամենայն *պատճառ* ո՛չ է հարկաւոր. այլ գո՛յ և ներընդունակ *պատճառ*. ապա ուրեմն ո՛չ է հարկաւոր *պատճառ* շարժումն աստեղաց: - 10. Եւ թէ հետևեսցի՝ ոչ որ գործեաց զգեղեցիկս և ըզզարշելիս, այլ որ *պատճառն* է և հարկ՝ գովեսցի և պարսաւեսցի. այսինքն բախտն և ճակատագիրն: - 11. Մանաւանդ թէ առ առաջին *պատճառն* վերանայ այս անիրաւութիւն...: - 12. Ասեմք առ այս, մոլորականքն ո՛չ եթէ զի ունին ներհակ շարժումն վասն այն կոչին մոլորականք, կամ *պատճառք* են չարեաց, այլ զի մեք մոլորիմք ի շարժումն նոցա. զի ունին հասարակ շարժումն, և ունին յատուկ շարժումն: - 12. Եւ շարժումն նոցա ո՛չ *պատճառէ* զչար և զբարիս մարդկան. այլ են *պատճառք* աւուրց և ժամանակաց և եղանակաց. ծնանելոյ և աճելոյ. և նշան ապազայից որպէս ասացաք. այլ նշանն ո՛չ է *պատճառ* չար լինելոյ ումեք կամ բարի: - 12. Ջորօրինակ՝ ի կենդանեաց բազումք նշանակեն զլինելոց իրաց, և ո՛չ են նոքա *պատճառք* լինելոյ չարեացն կամ բարեաց: - 12. Այլ կառավարի երբեք ի կամս նախախնամութեան առաջին *պատճառին*. որպէս ասէ սուրբն գրիգոր նիւսացին ի գիրս որ յաղագս բնութեան մարդոյն: - 13. Ասելով թէ *պատճառ* ամենայնի՝ բարեաց և չարեաց մերոց ո՛չ մեք եմք, այլ է՛ առաջին *պատճառն* աստուած. որք փախչելով յառաջ ասացեալ բախտէ՛ և ճակատագրէ՛ աստեղացն, փոխանակ նոցա յառաջին *պատճառն* վերագրեն զիարկն. որպէս զի մի՛ ասիցեն երկու սկիզբն ըստ մանիքոսի: - 13. Այլ մեք դասք ուղղափառաց, հետևօղք ճշմարտասիրութեան, ընդդիմանամք այսմ ասելով թէ աստուած ո՛չ է *պատճառ* չարեաց. այլ միա՛յն բարեաց: - 13. Եւ այս վասն բազում *պատճառի:* - 13. Ա՛յլ արդ՝ աստուած *պատճառ* էութեան է և ո՛չ ոչ էութեան, ապա ուրեմն չարն ո՛չ է յաստուծոյ: - 13. Այլ արդ՝ աստուած *պատճառ* է ունակութեան, և ո՛չ պակասութեան. ուրեմն չարն ո՛չ է յաստուծոյ: - 13. Ապա ուրեմն աստուած *պատճառ* է ճշմարտութեան. և ո՛չ ստութեան: - 13. Վեցերորդ՝ թէ չարն է յաստուծոյ, երևի թէ աստուած *պատճառ* է չարեաց: - 14. Այլ արդ՝ ամենայն *պատճառ* առաւել է քան զպատճառելին. եթէ բարեաց և եթէ չարեաց. ապա անհնարին հերձուած է ասել զչարն յաստուծոյ: - 14. Եւ արդ՝ բաւական է այսչափ որպէս ցուցաւ, թէ աստուած ո՛չ է *պատճառ* չարեաց, այլ

բարեաց միայն: - 15. Այլ արդ աստուած է *պատճառ* ամենեցուն և հարկաւոր. ապա ուրեմն ներգործութիւն նորին է հարկաւոր: - 15. Ասեմք առ այս նախ՝ եթէ կրկին է *պատճառ*. հուպ և հեռի: - 15. Այլ արդ հուպ *պատճառն* է՝ հարկաւոր, և ներգործութիւն իւր. իսկ հեռին ո՛չ է հարկաւոր որպէս ասացաւ ի վերոյ: - 15. Այլ արդ՝ աստուած է ամենեցուն ո՛չ հուպ *պատճառ*, այլ հեռի. վասն որոյ ո՛չ հարկաւոր ներգործէ: - 15. Դարձեալ ասեմք թէ՝ աստուած ո՛չ է *պատճառ*. ստեղծուածոցս ի հարկէ. այլ ըստ կամաց որով առնէ. զի ոմանք դիպին ի հարկէ, և ոմանք ո՛չ ի հարկէ: - 15. Իսկ ի տեսութիւն մարդոյ է՛ առաջին և վերջին. զի զանցեալն տեսանէ յիշմամբ, և զներկայն իմացմամբ. և զիանդերձեալն ի *պատճառն* իւր ըստ ժամանակին փոփոխման որպէս ասացաք: - 15. Զորօրինակ՝ արուեստաւոր ոք կազմէ սուր ի *պատճառս* բարւոյ. այլ որ նորգործեաց չար՝ նա եղև չարին *պատճառ:* - 16. Նոյնպէս և աստուած է արարողական *պատճառ* կամացն. այլ ներգործական *պատճառ* է չար՝ կամքս մեր: - 16. Դարձեալ, անձնիշխան կամքն է՛ յաստուծոյ. և է՛ յոչընչէ եղեալ. այլ ա՛րդ՝ անձնիշխան կամքն ըստ այնմ՝ որ յաստուծոյ է եղեալ՝ ո՛չ է *պատճառ* չարի. այլ ըստ այնմ որ յոչընչէ՝ և ցանկայ ոչընչի. այսինքն չարի. վասն այսորիկ մեղքն և չարն ո՛չ են յաստուծոյ. այլ յոչընչէ՝ որ է՛ սկիզբն նոցա: - 16. Երրորդ՝ զի աստուած լինէր *պատճառ* չարեաց մերոց: - 20. Դարձեալ՝ ամենայն ինչ որ յէից է՝ սկիզբն ունի և *պատճառ*. իսկ չարն ո՛չ ունի սկիզբն և ո՛չ *պատճառ*. վասն որոյ ո՛չ է յէից: - 22. Եւ այսպիսի չարս ո՛չ է է. և ո՛չ ի յէսս. և ո՛չ սկիզբն ունի կամ *պատճառ*. և ո՛չ ինքն սկիզբն այլոց կամ *պատճառ*. ա՛յս է ինքնաչարն: - 22. Եւ բարին մի է և ի միո՛յ *պատճառ* է որէ աստուած. թէպէտ առ մեզ ի բազումս բազմանայ: - 23. Իսկ չարն բազում է և ի բազում *պատճառաց:* - 23. Նմանապէս և ո՛չ սկիզբն ունի և ո՛չ *պատճառ:* - 23. Սկիզբն և *պատճառ*՝էութեա՛ն ասեմք ունիլ: - 23. Դարձեալ՝ չափ և սահման ի վերջին եզր էութեան նկատէ, և սկիզբն և *պատճառ* ի յառաջինն: - 23. Երկրորդ՝ զի աստուած անսահման է՝ և սահմանէ՛ զմեզ. անսկիզբն է՞ և սկզբնաւորէ զմեզ. և *պատճառ* և այլն ամենայն: - 24. Առաջին *պատճառ* զայս դնէ աստուածաբանն գրիգոր: - 24. Նախ՝ ի *պատճառէ՛:* - 25. Նախ ի *պատճառէ*, զի ամենայն պատճառելեաց խնդրի պատճառս. և այնպէս *պատճառի* միւս *պատճառ*. և այսպէս բացաքայլութեամբ յանհունս ո՛չ է գիտութիւն: - 25. Արդ՝ պիտո՛յ է անպատճառ *պատճառ* բոլորից պատճառաւորաց, որ նա ինքն է աստուած: - 25. Եւ *զպատճառ* ծածկութեան հոգւոյն: - 30. Զորոց *պատճառս* մլորութեանն **ը** են ասացեալ հետեւօղք ուղղափառութեան: - 31. Հինգերորդ՝ զի նոցա *պատճառ* երևի սատանայ մոլորութեամբն: - 33. ...սոքա ընդդէմ նմին որոշեն զբանն ի մարմնոյն. զի մի՛ իցէ աստուած մարդացեալ ըստ նոցա՝ և մարմինն աստուած. և *պատճառս* հայթայթելով պատրեն զմարդիկ: - 35. Զի թէ կամաւ, կամա՛ցն ես որդի և ոչ հօր. թէ այդպէս է, բարձեր *զպատճառն* քո զիայր. բարձար և դու ի տեսակաց մարդկան: - 36. Դարձեալ ասի մեծ ըստ *պատճառին*, և հաւասար ըստ բնութեանն: - 39. Դարձեալ ո՛չ ասի անպատճառ *պատճառն* քան զպատճառելին մեծ. զի և որդի նոյն *պատճառի* հօր փառաց և մեծութեանն է հաղորդ: - 39. Արդ քանզի աստուած առանց *պատճառի* է աստուած. և թէ ոչ՝ ո՞ է *պատճառ* աստուածանալոյն: - 41. Եւ թէ գոյր երիցագոյն, լինէր *պատճառն* և գերագոյն քան զաստուած. իսկ ստեղծանելն երևի *պատճառաւ*. այսինքն վասն փրկութեան մարդկան: - 41. Պատասխանեմք, ո՛վ յանդուգն մեկնիչ դու. յետ այնորիկ զինչ վաղճան իցէ թագաւորութեանն նորա. ո՛վ ընկեսցէ և յի՛նչ *պատճառս*. և ո՞չ լուար ի հրեշտակէն, «թագաւորութեան նորա վախճան մի՛ լիցի»: - 41-42. Իսկ վասն չարչարանաց հնազանդութեանն քրիստոսի բազում *պատճառս* դնէ յայսմ վայրի աստուածաբանն գրիգորիոս: - 42. Առաջին *պատճառն*, զի յինչիրս և մերձենայր չարչարանօքն՝ ծախէ՛ր զչարչարանքն իմ: - 42. Իսկ ուր ուրէք զի զգեստ անւանի մարմինն յաղագս **բ** իմն *պատճառաց:* - 43. Այսքան *պատճառս* եցոյց չարչարանքն փրկչին յայսմ տեղւոջ: - 43. Եւ *պատաճառն* է այս. զի թէպէտ մի է բնութիւն ծնողաց և ծնիցելոց, բայց ոչ ունին զմի կամս. զի հատեալ բաժանեցաւ որդին ի հօրէն: - 45. Սոյնպէս և զգիտութիւն մեծագունիս ի *պատճառն* ի հայր վերաբերէ ի պատիւ ծնողին: - 48. Պատասխանեմք՝ Նախ՝ առ մակեդոնացիս որք զորդի խոստովանին աստուած՝ թէ ասացէ՛ք *զպատճառ* **բ** աստւածոց ձեր: - 54. Զի լիցի քո *պատճառն* ի կողմանէս մեր՝ պատասխանի քեզ: - 54. Իսկ *զպատճառ* ծածկութեան հոգւոյն: - 55. Յաղագս երից *պատճառաց* ուրանան զմիաւորութիւնն ի մարդեղութիւն բանին: - 76. Իսկ թէ յայնցանէ փախչիք իբր յայտնապէս որոշումն՝ և այլիմն *պատճառաւ* որպէս գառնենեաւ ծածկէք զգայլենիս ձեր: - 89. Սկիզբն և *պատճառ:* - 101. *Պատճառ* կորստեան նոցա: - 102. Վասն կրկին *պատճառի:* - 103. Երրորդ՝ Հայր անպատճառ է և *պատճառ:* - 105. Որդի յանպատճառէն և *պատճառ:* - 105. Հոգի յանպատճառէն և ո՛չ *պատճառ:* - 105. Հոգին ո՛չ ունի որդի և

ո՛չ հոգի. այլ *պատճառ* զհայր: - 105. Այլ և այսպիսի **ե** ասեն զեղանակ նախկնից. այսինքն՝ ժամանակաւ. և բնութեամբ. և դաստիւ. և պատւով. և *պատճառաւ:* - 109. Յասացելոցս ո՛չ ինչ է վայելչական աստուծոյ. բայց միայն ըստ *պատճառին:* - 109. Ա՛րդ՝ զի հայր *պատճա՛ռ* է որդւոյ ծննդեան՝ և հոգւոյ բղխման, վասն որոյ հայր նախադասի. իսկ ընդ նմա որդի. ո՛չ որպէս ոմանք կարծեն որդի *պատճառ* է հոգւոյ բղխման, այլ **գ** է ուղիղ տեսութիւնն: - 109. Նախ՝ զի հայր *պատճառ* է հոգւոյ բղխման՝ և որդւոյ առման. զի հոգին սուրբ բղխէ՝ ի հօրէ՝ և առնու յորդւոյ: - 109. Զի՞նչ է որ ասեն վասն աստուծոյ թէ՝ է՛ սկիզբն և *պատճառ:* - 110. Ի դէմս *պատճառին* նոյն է սկիզբն և *պատճառ:* - 110. Նախ՝ առ համաբունսն՝ հայր սկիզբն է որդւոյ և հոգւոյն սրբոյ. և *պատճառ* այլ ամենայն արարածոց: - 110. Երկրորդ՝ սկիզբն է յարացուցի. և *պատճառ* էից. պատկեր և նմանութիւն նորին յարացուցի: - 110. Երրորդ՝ սկիզբն իմանալեաց. և *պատճառ* զգալեաց. որ են յաւիտենականք և ժամանակեայք: - 110. Չորրորդ՝ սկիզբն է առաջնոցն. և *պատճառ* վերջնոցս. որք միջնորդութեամբ գոյանան. որպէս ի տարերաց կամ ի ծնողաց: - 110. Հինգերորդ՝ սկիզբն էութեան. և *պատճառ* կենաց և շնորհաց և այլոց: - 110. Վեցերորդ՝ սկիզբն է ներգործութեան. և *պատճառ* կատարման. զի ի նմանէ սկսեալք՝ ի նա՛ կատարիմք: - 111. Ի յէից էակն. որ է նախագոյ *պատճառ* ամենայնի: - 111. Վասն է՞ր ասի նախագո՛յ է առաջին *պատճառն:* - 111. Եւ գիտելի է, զի յարացուցիս և նախասահմանութեանս՝ արարողական *պատճառ* է աստուած. և նիւթական *պատճառ* իրն այն որ է նախասահմանի. և տեսական *պատճառ* է՛ կարգն. զի նախ տըւեալ լինի շնորհքն ատ. եւ ապա փառքն ի հանդերձեալն. և կատարողական *պատճառ*՝ զի լինիցիմք սուրբք և անբիծք: - 112. Դարձեալ անեղ ասի աստուած՝ իբր *պատճառ* անեղից. և նախ քան զամենայն անեղ. և կատարումն. և բովանդակութիւն ամենայն անեղի: - 113. Իսկ զի ի *պատճառէ*՛ են՝ այսու յատկացեալ են ի հօրէ. զի հայր անպատճառ և անսկիզբն է: - 114. Այլ արդ՝ որդի և հոգի ըստ որում ի *պատճառէն* սկիզբն ունին զհայր. և ըստ որում՝ նախ քան զյաւիտեանս՝ անսկիզբն են ընդ հօր: - 114. Եւ այս վասն երեք *պատճառի:* - 115. Երրորդ՝ *պատճառ* է յաւիտենից. և ժամանակաց. և աւուրց. որպէս լոյս. իմաստութիւն և կեանք կոչի. զի *պատճա՛ռ* է սոցա: - 115. Եւ գիտելի է՝ զի աստուած կոչի յաւիտեան անսկիզբն և անվախճան. և է՛ *պատճառ* պարունակողացն յաւիտենին. որ ո՛չ սկիզբն ունի և ո՛չ կատարած: - 116. Այլ՝ կոչի աստուած յաւիտեան. և միշտ. և ժամանակ. զի *պատճառ* է սոցա որպէս ասացաւ ի վերոյ: - 116. Այսու հաւասա՛ր են, զի ի միոյ կենդանական *պատճառէ*՛ են սկսեալք: - 117. Երկրորդ՝ իմանալին անընդմիջաբա՛ր է ի *պատճառէն*. իսկ զգալին միջնորդիւ տարերց: - 117. Դարձեալ՝ տեսանէ աստուած ըստ *պատճառի*. զի ամենեցուն է *պատճառ*. և ըստ պարունակութեան, որ զամենայն առ ինքն ունի. և ըստ կատարման, որ ամենեցուն է վախճան և կատարումն: - 118. Իսկ մեք սոցա ամենայնի զընդդէմսն տեսանեմք. և ա՛յս է *պատճառն:* - 118. Նախ՝ հայելով ի կերպարանս և ի նմանութիւնս որ է՛ կարգաւորութիւն արարածոց. և սոքօք ի յարացոյցն սոցա ելանել, և ի նմանէ դարձեալ ի նախատիպ յարացուցին ելանել. և այնպէս տեսանել թէ է՛ աստուած *պատճառ* ամենայնի: - 119. Եւ այս վասն երեք *պատճառի:* - 120. Եւ զի յետ մահու և յարութեան ո՛չ գոն այսոքիկ *պատճառք*՝ անմոռանալի մնայ իմացումն: - 120. Հինգերորդ՝ միտքն տեսանէ որպէս ներգործական *պատճառ* և արհեստաւոր. և զգայութիւնն որպէս գործիական *պատճառ* և միջնորդ: - 121. Վասն բազում *պատճառի:* - 121. Երկրորդն է պատճառաբանական. որ ի պատճառելեացս՝ այսինքն յարարածոցս զգեղեցիկն տեսեալ, *զպատճառն* և զարարիչն վերակոչեմք և անւանեմք: - 122. Եւ է սա՛ երկրորդ. զի ի *պատճառէ*՛ ստեղծման էիցս՝ աստուածաբանութիւնս այս յառաջագայի: - 122. Ապա ուրեմն մի և նոյն է վասն **բ** *պատճառի:* - 124. Այսպէս և մարգարէիւք՝ և վարդապետօք՝ և հրաշիւք՝ և զանազան *պատճառօք:* - 127. Նախ՝ որպէս *պատճառ*՝ յառաջածու՝ և ծնօղ: - 128. Եւ այսմ է՛ կրկին *պատճառ* լսողին: - 131. Իսկ առողջ լսելիք և տկար՝ *պատճառի* ի համակարգս. և ի հաւասարն բնութեամբ...: - 131. Զի՞նչ է *պատճառ*՝ որ արտաբերեալ բանս մեր միաւորեալ է ընդ ձայնի. և բացակայքն զձայնն լսեն՝ և զբանն ո՛չ: - 131. Այլ վասն բազում *պատճառի* աննման նմանութեամբ գրեցին: - 131. Նախ՝ զաթոռքն. և զհետ զքերօբէքն. և զհետ զսերօբէքն. և այս վասն **գ** *պատճառի*: - 135. Ասեմք թէ վասն **գ** *պատճառի:* - 136. Ա՛յս է *պատճառն*, զի որ առաջին է և վերին՝ ունի զերկրորդն և զներքինն: - 136. Ասեմք թէ վասն երեք *պատճառի:* - 137. Երրորդ *պատճառ*. զի զօրութիւնք միջին են դասակարգեալ բոլորից. ի նոցունց դասուց և երիցն: - 137. Վասն տասն *պատճառի:* - 139. Վասն երկրորդ մի՞ է թէ բազում, ասեմք եթէ՝ ի սկիզբն մի է ըստ էութեան ի միոյ *պատճառէ*՛ յառաջ եկեալ. և ի բազումս բազմացեալ ըստ որակութեան. որպէս է արփեան և ըստ

աստիճանաց: - 140. Եւ դարձեալ՝ զբազումքս միաւորէ՛ ինքեամբ՝ առ *պատճառն* իւր. որպէս լոյս արեւու ի բազում տեսութիւնս: - 140. Նախ՝ զի ամենեցուն սկիզբն է և *պատճառ*, գիտէ զսկսեալսն ի նմանէ: - 141. Վասն **դ** *պատճառի* այնպէս որսայ և խաբէ զմարդիկ: - 146. Զի՞նչ էր յանցումն և *պատճառ* կորստեան նոցա: - 147. Եւ զնայելոյն *պատճառն* իրինոս մեկնէ թէ՝ զմարդոյն լինիլն ետես այնպէս փառաւոր...: - 147-148. Այլ զուղիղ *պատճառն* բացայայտէ՛ եսայի մարգարէն: - 148. Մի է աշխարհ. և չունի զգայարանք. և թէ ուր էր աստուած. և ուր էր աշխարհ. և յի՞նչ *պատճառի* ստեղծաւ: - 154. Վասն բազում *պատճառի:* - 158. Ասեմք թէ վասն **բ** *պատճառի:* - 161. Զի՞նչ է *պատճառն* աղաչեմ: - 162. Զի յատուկ է առաջին *պատճառին* որ է՛ աստուած...: - 62. Իսկ հասարակութիւն է Նախ՝ զի երկուց սկզբանցն մի և նո՛յն է *պատճառ* ներգործական. որ է՛ արուեստաւորն: - 163. Երրորդ՝ և թէպէտ իցեն բազում արբանեակք շինուածոյն, այլ միոն է արհեստաւորն և *պատճառ:* - 164. Նոյնպէս թէ և իցեն հրեշտակք արբանեկեալք ի ստեղծումն գոյից, սակայն միոն է աստուած *պատճառ* ամենայն գոյից: - 164. Ասեմք առ այս եթէ՝ ո՛չ վասն ասացեալ *պատճառիցդ* արգելի քահանայն ի գործոյն: - 167. Այլ ա՛յս է *պատճառն* իսկապէս: - 167. Եւ ուսեալք զայս, ընկա՛լ և այժմ զլուծումն խնդրոյն. եթէ լինելութիւն աշխարհի ի նախագաղափար տեսութիւնն աստուծոյ ո՛չ է զօրութեամբ՝ այլ ներգործութեամբ վասն բազում *պատճառի:* - 168. Երկրորդ՝ սկիզբն և *պատճա՛ռ* է գոյն. զի գոլովն գոյացուցանէ. և աստուած՝ ամենեցուն: - 171. Եւ այս վասն բազում *պատճառի:* - 177. Զի՞նչ է *պատճառ* ստեղծման աշխարհիս: - 179. Վասն **Ե** *պատճառի:* - 181. Զի՞նչ է *պատճառ* շարժութեան երկնից: - 182. Կրկին է այսմ *պատճառ*. այսինքն բնական և բարոյական: - 182. Եւ բնականն Նախ այսպէս. զի օդն որ ի մէջէ մտեալ և փեռեկեալ զներքին և զվերին կիսագունդն, նա՛ է *պատճառ* շարժութեան երկնից: - 182. Այս բնական *պատճառն:* - 182. Առաջին *պատճառ*, զի երկինքն է պարզ մարմին. զի ո՛չ է ի չորից տարերց. այլ **Ե**երորդ էութիւն է: - 182. Երկոտասաներորդ՝ *պատճառ* է ծննդոց: - 186. Եւ այս վասն **բ** *պատճառի:* - 187. Եւ այս հաւանելի՛ երևի վասն կրկին *պատճառի:* - 188. Վարդապետք ասեն թէ վասն բազում *պատճառի:* - 192. Այս է *պատճառն*. զի ի սկզբանէ տիւն առաջանայր գիշերոյն. զի ադամ ի լուսոյ շնորհացն անկաւ ի խաւար մեղաց: - 194. Երկրորդ՝ *պատճառն:* - 194. Զի է՛ *պատճառ* լուսոյ արեգակն. և *պատճառ* խաւարի ստուեր երկրի: - 194. Այսմ բազում են *պատճառք:* - 207. Բազումք դնեն այսմ *պատճառ:* - 208. Վասն **դ** *պատճառի:* - 209. Վասն **գ** *պատճառի:* - 211. Այս երկուքս բնական *պատճառ:* - 213. Կրկին է այսմ *պատճառ:* - 214. Ասեմք թէ՝ ամենայն մարմնական կենդանիք ի չորից տարերաց են եղեալ. և յայտ է ի բազում *պատճառաց:* - 214. Վասն երեք *պատճառի:* - 217. Իսկ որք այժմ ապստամբք եղեն՝ վասն **բ** *պատճառի:* - 220. Պտո՛ւղ էր զգալի և կերակրելի. որպէս կենաց պտուղն անմահութեան էր *պատճառ*. և այլ ամենայն պտուղքն լիութեան: - 223. Նոյնպէս և նա գիտութեան էր *պատճառ* բարւոյ և չարի որպէս ասէ սուրբն գրիգոր նիւսացին: - 223. Եւ այլք ասեն թէ՝ *պատճա՛ռ* էր բարւոյ և չարի՝ ո՛չ ըստ ինքեան, այլ օրինօքն: - 223. Զի թէ հնազանդեալ էր օրինացն, լինէր բարւոյ *պատճառ*. և ո՛չ հնազանդեալ՝ եղև չարի *պատճառ:* - 223. Քսանևե՝ Թէ խառնին սերմն կենդանեաց. և *պատճառ* յղացմանն: - 228. Ասեմք վասն բազում *պատճառի:* - 229. Վեցերորդ՝ զի տեսցէ ադամ թէ յապականացու հողոյ անապական մարմին կազմեցաւ վասն փառաց. և յորժամ կորոյս մեղօքն եղև ապականացու, ինքն իցէ *պատճառ* ապականութեան իւրոյ: - 229. Եւ վասն բազում *պատճառի* յետոյ ստեղծաւ մարդս: - 230. Ա՛րդ՝ վասն այսր և այլ ևս քան զայս *պատճառաց* ի վերջո՛յ արարաւ մարդն ամենայն գոյից: - 231. Վասն բազում *պատճառի:* - 232. Եւ այսմ կրկին է *պատճառ*. բնական և բարոյական: - 234. Այսմ դնի *պատճառ* մարմնաւոր և հոգևոր: - 234. Եւ ասեմք այսմ *պատճառ* բնական և բանական: - 236. Այսմ գոյ բնական և բարոյական *պատճառ:* - 243. Իսկ բարոյական *պատճառ:* - 243. Ասեմք թէ ո՛չ են ճշմարիտ վասն **Ե** *պատճառի:* - 246. Այսմ ասեն **գ** *պատճառ:* - 251. Զի այսոքիկ ի կողմանէ մարմնո՛յն են *պատճառք:* - 251. Եւ այսմ *պատճառ* անհա՛ս է մտաց մարդկան. միայն անքննին դատաստանին աստուծոյ է տալի. և անհետազօտելի ճանապարհաց նորին. որև սակաւիկ մի յառաջ ասացաւ: - 252. Զի որք զհոգի յառաջ ասեն գոյանալ՝ զայս դնեն *պատճառ*, եթէ յէակքս իմանալիքն յառաջ ստեղծան քան զզգալիքս. ապա և ի մարդոյն էութիւն հոգին յառաջ է քան զմարմինն: - 252. Եւ այս ո՛չ ժամանակաւ յետոյ ըստ երից *պատճառաց:* - 254. Եւ այս վասն երեք *պատճառի:* - 256. Այլ հատումն նիւթո՛յն է և ո՛չ հոգւոյն վասն **գ** *պատճառաց:* - 257. Արդ է՛ այսմ կրկին *պատճառ*. նախ բնական, և երկրորդ բարոյական: - 258. Եւ այս վասն **բ** *պատճառի:* - 259. *Պատճառ* յապաղելոյ և փութալոյ սերմնականին զօրութեան **գ** են: - 261. Եւ այլոց տեղին է *պատճառ*, բերրի և անբերրի գոլով:

- 261. Եւ էգն հոգևորի յետ **ծ** աւուրն՝ որպէս ասացաք *զպատճառն* վասն տեղւոյն ցրտութեան որ է՛ ձախ կողմն արգանդին. որ ցուրտ գոլով վասն փայծաղանն՝ յապաղէ՛ զկազմուած նիւթոյն ի կրկնապատիկ ժամանակս **ծ** աւուրց: - 261. Այս է *պատճառն*. զի ոմանք յապաղեն. և ոմանք փութով տան զպտուղն որպէս ասացաք: - 263. Այսմ ասեն վարդապետք բազում *պատճառս:* - 266. Ասեմք թէ ո՛չ լինի վասն **բ** *պատճառի:* - 267. Եւ ա՛յս է *պատճառն*. զի լոյս հաւատոյն հեղումն է յաստուծոյ առ իմացումն մարդոյ. և ըստ որում իմացումն է մեր՝ իմաստութիւն կոչի: - 269. Վասն բազում *պատճառի:* - 276. Եւ վասն կրկին *պատճառի* է տկար: - 276. Վասն այսր *պատճառի* կոչեաց զանուն կնոջ իւրոյ կեանս. զի աճումն է և ծնունդն և մայր ամենայն կենդանեաց: - 276. Եւ այսպէս **ը** դիմօ՛ք է թշնամութիւն մեր ընդ միմեանս. և ամենայնին *պատճառ* սատանայ եղև, որ բնութեանս է թշնամի: - 278. Եօթներորդ՝ զի զաստուած ասաց *պատճառ*. եթէ կինս զոր ետուր՝ սա՛ ետ ինձ ուտել: - 279. Եւ զգեստ լինի վասն **ժ** *պատճառի:* - 281. Դարձեալ սիրեցաւ յաստուծոյ, զի առաջին մարտիրոս սա՛ եղև. թէպէտ թոյլ ետ իջանել ի դժոխս, զի ի *պատճառս* նորա խնդրեսցին այլքն. որպէս ի *պատճառս* ղովտայ զերծան սոդոմայեցիքն աբրահամաւ: - 287. Առաջին *պատճառ*, զի մի՛ և այլոք համարձակեսցի: - 288. Իսկ զի **բ** սոքա մտին, այս վասն **ե** *պատճառի:* - 289. Ա՛յս է եղեալ *պատճառ* փոխմանն ենովքայ և եղիայի: - 290. Եւ ա՛յս է *պատճառ* յերկարելոյ և կարճելոյ կենաց. այսինքն արդարութիւնն կամ մեղքն որպէս ցուցաւ: - 292. Եւ այս վասն **գ** *պատճառի:* - 292. Նա՛խ՝ եթէ գիտէ՞ր մարդ զօր մահուն, ո՛չ շինէր և ո՛չ տնկէր և ոչ ծնանէր զաւակ. և լինէր *պատճառ* աւերման: - 292. Նոյն *պատճառ* է և ո՛չ գիտելոյ զկատարած կենցաղոյս: - 292. Առաջին *պատճառ*, զի ընդ ինքեան մարդկայինս բնութիւն այլայլո՛տ է և ցաւօք. և յորժամ աստուած նս բազմացուցանէ, ո՞վ կարէ զաղէտն պատմել: - 292. Նա՛խ՝ զի իմաստութեան են *պատճառք*. զի տեսանելով զսոսա՛ զարարչութիւնն աստուծոյ ի միտ ածեմք: - 295. Եւ այս վասն բազում *պատճառի:* - 295. Նոյնդ է *պատճառն* որպէս կնոջ զենեալն ո՛չ ուտի: - 296. Եւ զի մի՛ մարդիկ ի *պատճառս* նորա մեղս գործեսցեն. վասն որոյ ո՛չ կարէին տեսանել զտապանն: - 296. Ո՛չ երկանուն է և ո՛չ այլ ինչ. այլ իրինոս ասէ՛ *զպատճառն* և դժուա՛ր է հասկանալոյ: - 300. Վասն **դ** *պատճառի:* - 302. Նա՛խ՝ զի ի *պատճառս* ղովտայ փրկեսցի սոդոմ ի գերչացն: - 302. Երկրորդ՝ զի գեղեցիկ էր՝ զի մի ի *պատճառս* նորա սպանցեն զղովտ: - 303. Եւ այս վասն բազում *պատճառի:* - 315. Տասներորդ՝ ի փորձութեան լեառն *զպատճառն* ամենայն անիծից կործանեաց. և զառաջին անէծս յօրհնութիւն փոխեաց: - 320. Այլ ասեմ թէ՝ ի կարգի արդարո՛ցն են նոքա վասն **գ** *պատճառի:* - 322. Վասն **դ** *պատճառի:* - 324. Վասն երրորդին ասէր յոբ զբարի և չար գործոց հատուցմունքն լինիլ առհասարակ յետո՛յ ի հանդերձեալն. զի աստ են մեղաւորք և հնացեալք ի մեծութեան. և ներէ՛ նոցա աստուած վասն կրկին *պատճառի:* - 324. Իսկ արդարք աստ ի նեղութեան կան վասն կրկին *պատճառի:* - 324. Վասն **զ** *պատճառի:* - 325. Վասն **զ** *պատճառի:* - 325. Եւ այս վասն կրկին *պատճառի:* - 325. Վասն **դ** *պատճառի:* - 326. Վասն **գ** *պատճառի:* - 326. Զոր թէ ընկենու ոք, լինի երկրաքարշ մարդ և մեղաւոր. և մինչ զղջացեալ դարձեալ ըմբռնէ յետոյ, լինի *պատճառ* կանգնելոյ և փրկութեան: - 332. Ութերորդ՝ խաչն փրկական նախ էր մահու գործիք. զոր առեալ ի ձեռն քրիստոս, և եղև կենաց *պատճառ:* - 332. Այսմ պատասխանէ՛ իմաստունն ի սիրեցէքն և դնէ **դ** *պատճառ:* - 333. Եւ այն նոցա մեղք ո՛չ եղև վասն **բ** *պատճառի:* - 337. Չորս *պատճառս* ասէ իմաստունն ի սիրեցէքն: - 339. Վասն բազում *պատճառի:* - 342. Ա՛յս է *պատճառ* խորտակելոյ տախտակին. և ո՛չ որպէս ասեն ոմանք թէ գիրն ջնջեալ էր: - 350. Եւ մարդս որ վերջին է՝ սա՛ միա՛յն ծանեաւ զառաջին *պատճառն:* - 350. Վասն բազում *պատճառի* մեծահրաշ սքանչելիքս եղև առ մովսէս: - 352. Վասն **բ** *պատճառի:* - 355. Է՛ և երրորդ *պատճառ*. զխոզն ուտէին յեգիպտոս, և զարջառ և զոչխար պաշտէին. վասն որոյ հրամայեաց զաստուածս նոցա զենուլ զի չեն աստուածք. և ի խոզենւոյն հրաժարիլ ամենևին: - 355. Ա՛րդ՝ բացայայտեսցի՛ *պատճառն:* - 365. Եւ յաղագս երից *պատճառաց* **ը** օր տօնեմք գալստեան սուրբ հոգւոյն: - 373. Վասն **գ** *պատճառի:* - 379. Վասն կրկին *պատճառի:* - 387. Վասն երկու *պատճառի:* - 388. Զայն ցուցանէ որ *պատճառաւ* իրիք կամ պոռնկութեամբ կամ այլ ինչ յորժամ բաժանին, առանց ամուսնութեան մնասցեն թէ երկուքն են բաժանմանն պատճառ, մինչև հաշտեսցին: - 401. Եւ թէ մինն է *պատճառ*՝ որ և իցէ թէ այրն և թէ կինն, առանց ամուսութեան մնասցէ. և միւսն զուգեսցի այլոյ որ չէր *պատճառ:* - 401. Մովսէսին *պատճառն* վասն խստասրտութեան նոցա է որպէս տէրն ասաց. զի մի՛ սպանումն լիցի: - 401. Իսկ որ զարձակեալն առնուին, և յառաջին բաժանեալն ո՛չ տային, վասն երկիւղի առն և կնոջ էր, զի մի՛ լիցին *պատճառ* բաժանման: - 401. Այլ որ մարդն առնոյր բազում կանայս՝ և կինն ո՛չ, ա՛յս է *պատճառն:* - 401. Իսկ ի

գործ ածել զստրմտութիւն՝ լինի վասն **դ** *պատճառի*: - 408. Եւ վասն է *պատճառի* պատժէ աստուած զմարդն և զինչսն: - 415. Չորրորդ՝ զի լիցին նոքա *պատճառ* գայթակղութեան նոցա, և խոչ ընդ ակն: - 416. Երկրորդ՝ զի մի՛ ի *պատճառս* նորա չարիս գործեսցեն...: - 425. **Եւ ա՛յս է *պատճառն*. զի ի դատաստան քահանային քննել՝ այլ ո՛չ քննի ի դատաստանին քրիստոսի. «զի զոր լուծանէք՝ լուծեալ լիցի» ասէ**...: - 433. Իսկ մեղքն դաւթի յիշատակեցաւ վասն երկու *պատճառի*: - 433. Երեսունն**ը**, **ե** նկանակն և սուրն. այսինքն *պատճառ* կենաց և մահու անարժանից և արժանաւորաց: - 437. Այլ և դաւիթ եգիտ զսաւուղ և զզօրսն նորա ի քուն և ո՛չ վնասեաց. այլ զզէնն էառ. և տէրն ո՛չ կամի զմահ որք ննջեն ի մեղս. այլ *զպատճառ* մեղացն հանէ: - 437. Եւ ա՛յս է *պատճառն*, զի յաջ կողմ արգանդի կրէ զորդին. վասն որոյ յաջ կողմն նորա նստի: - 441. Այլ և «դշխոյն հարաւոյ դատապարտէ՛ զիրէայսն» վասն **ժ** *պատճառի*: - 442. «Եւ առաւել քան զսողոմոնէ աստ» վասն **ժ** *պատճառի*: - 442. Իններորդ, Բանն մարմին եղև **ժ** *պատճառաւ*: - 454. Քսանն**գ**, Վասն տօնի ծննդեանն ի վեցն յունվարի **ժե** *պատճառաւ*: - 454. Քսանն**դ**, Վասն թլփատութեան տն **ժ** *պատճառաւ*: - 454. Քսանն**ե**, Վասն մկրտութեանն քրիստոսի **ժ** *պատճառաւ*: - 454. Երեսուն**բ**, Վասն գալստեան սուրբ Յոգւոյն յետ խաչին, **ժ** *պատճառաւ*: - 455. Վասն բազում *պատճառաց*: - 461. Զի գալ հոգւոյն սրբոյ *պատճա՛ռ* էր կրկին ներգործութեան. այսինքն սրբութեան արմատոյ մեղաց. և պտղաբերութեան կուսածին զաւակին. ծնանիլ և կոյս մնալ յետ ծննդեանն: - 463. Բազում *պատճառաւ* եկեղեցի սուրբ խոստովանի աստուածածին զկոյսն: - 466. Ութերորդ՝ զի լիցի *պատճառ* փրկութեան որ եղև *պատճառ* գլորման: - 468. Այս քան վասն բանին մարդեղութեան, զի բազում են *պատճառք* ասացեալ վարդապետաց. զոր մեք զսակաւն եդաք աստ: - 468. Ասեմք թէ ո՛չ՝ վասն **ե** *պատճառի*: - 479. Այլ և եղև այր, զի որպէս ծնօղն աստուածածին ազգի կանանց, և ի նմանէ ծնեալն աստուած՝ արանց միանգամայն և հանուրց լիցի փրկութեան *պատճառ*: - 480. Արդ զգիրն ադամայ պարտուց՝ տէրն որդի եղև նմա և անմեղ մահուամբն տարածեալ զձեռս ի խաչին պատառեաց ասելով, նա մեղաւ և մեռաւ. ես զինչ մեղայ. դո՛ւ ես *պատճառն*: - 482. Եւ զինչ և իցէ *պատճառաւ* զկարգեալն առաքելոցն փոխեցին զծնունդն և զտեառնընդառաջին տօնն: - 482. Այլ պատշա՛ճ էր թլփատութիւն նորա վասն բազում *պատճառի*: - 485. Չորրորդ՝ զի *պատճառ* ամենայն սրբութեան ինքն էր, պա՛րտ էր զգործս սրբարար յանձն իւր կրել: - 485. Այլ ասեն վարդապետք բազում *պատճառս*: - 486. Եւ նախ առաջին *պատճառ*, զի «ո՛չ արար մեղս» մարգարէն վկայեաց. և «մարմին նորա ո՛չ ետես զապականութիւն» միւս մարգարէն կնքեաց: - 496. Երրորդ *պատճառ*, կամեցաւ բանն աստուած ազատել զմեզ ի մեղաց և յապականութեանց: - 497. Եւ *պատճառն* ասացաւ ի վերոյ, զոր ինչ ինքն եդ զպատիժ՝ նմանեաւն եբարձ. և զորս յանձնիշխան կամաց մարդոյն և ի բանսարկուէն արկածք, զայնոսիկ հակառակաւն ելոյծ տէր մեր յիսուս քրիստոս: - 498. Երկրորդ՝ եթէ սկզբնաչարն սատանայ է ամենայն մեղաց *պատճառ* և ո՛չ տանջի մինչ ի կատարած. նաև ո՛չ մարդիկ: - 507. Երկրորդ՝ *պատճառ* պարտաւորութեան մեղաւորաց էր ադամ. և նա ազատեցաւ. ապա ուրեմն ամենայն պատճառելիքն ազատեցին: - 507. Ասեմք թէ՝ ո՛չ կարեն վասն երկու *պատճառի*: - 508. Նմանապէս և աստ յայսմ աւուր շաբաթու որ ի կիրակէ յարութեան տօնեմք, այժմ յինն ժամուն ի վեր նախատօնակ առնեմք յարութեանն քրիստոսի. և այս վասն բազում *պատճառի*: - 509. Եւ պատճառե՛ն *զպատճառս* մեղաց գործօղքն անօրէնութեանց: - 510. Ասեմք թէ և այդ ևս է սուտ *պատճառ*. զի հրէից նախ զատիկն էր և ապա բաղարջակերքն պահք: - 510. Եւ ա՛յս է *պատճառն*. վասն զի տունկն յարմատն է հաստատեալ. և ձուկն ի ջուրն. և կենդանիք ի շունչ և յարիւն: - 511. Յինգերորդ՝ *պատճառ* յարութեան մերոյ է յարութիւնն քրիստոսի: - 512. Բազում *պատճառս* ասեն վարդապետք: - 519. Վասն վեցից *պատճառաց*: - 520. Վարդապետք ասեն թէ վասն է *պատճառի*: - 521. Նա՛խ՝ զի չարչարանքն քրիստոսի *պատճառ* եղև պարգևաց սուրբ հոգւոյն, պարտ էր նախկին գոլ. որպէս ամենայն *պատճառ* նա՛խ է քան զպատճառելին: - 521. Դարձեալ կարէ ասիլ Ութերորդ *պատճառս*, առ ի ցուցանել թէ հոգին ո՛չ ումեք առատապէս պարգևի, եթէ ոչ յիսուս ի սիրտ նորա յատկապէս փառաւորեսցի: - 522. Զօրս զայս պատուեն խսրայէլացիքն վասն երից *պատճառաց*: - 523. Նաև մեք յաղագս երից *պատճառաց* պատուեմք զօրս զայս: - 524. Վասն երից *պատճառաց*: - 524. Յետ այսորիկ հարցանելի՛ է ի նոր օրինաց և յեկեղեցւոյ կարգաւորապէս ըստ մարդեղութեան բանին յարմարեալ. իբր պատճառելիք առ *պատճառ* նորին հետևեալ և շարադասեալ: - 528. Եւ *պատճառ* սոցա այն էր, զի քրիստոսի մի բնութիւն ասէին. և ինքեանք սահմանեցին **բ** բնութիւն. **բ** գործք. և **բ** կամք: - 544. Եւ ա՛յս էր *պատճառն* հայոց անդ ի ձեռնադրութիւն գնալոյն: - 548. Ա՛յս էր *պատճառ*

գնալոյն ի կեսարիա և ի հռօմ: - 549. Եւ ա՛յս է *պատճառն* որ ոմանք յեօթանասնիցն ասեն. զի եօթանասուն աշակերտացն գլուխ և վարդապետ էր. որպէս պետրոս երկոտասանիցն. և առաջինքն ամենայն ուրեք յետնոցն անուամբ կոչեին. այս է ստոյգ պատճառն: - 549. Բայց նախ զայս ասասցուք. զի մեղք մտացն կատարեալ մեղք է վասն բազում *պատճառաց:* - 556. Վասն որոյ յետոյ տրտմի և նեղի. ատէ՛ *զպատճառ* մեղացն և դառնայ ինքեան. որպէս ամոնի եղև: - 558. Եւ վասն **ե** *պատճառի:* - 560. Եւ է՛ հպարտութիւնն առաւել մեղք քան զամենայն վասն բազում *պատճառի:* - 561. Զի՞նչ է *պատճառն* որ սրտմտութիւն և ցանկութիւն և այլն ի յանբան կենդանիսդ գործ է. իսկ ի մեզ ախտ և մեղք: - 563. Եւ այս վասն **բ** *պատճառի:* - 563. Երկրորդ *պատճառ*, զի այսոսիկ անասունքն գործեն ըստ բնական կարգին. իսկ մեք ի հակառակն փոխեմք: - 564. Ոմանք բազում եղանակս ասեն. այսինքն *Պատճառաւ* մեծ. որպէս մեղք արուսեկին: - 565. Երրորդ՝ զի չունէին *պատճառս* հայհոյութեան հոգւոյն որպէս զորդոյ. զի տեսանէին մարմին զգեցեալ, ուտել և ըմպել, տքնիլ և ննջել: - 566. Հինգերորդ՝ նման սատանային լինին որք ուրանան *զպատճառն* գոյութեան հոգոց իւրեանց...: - 566. Որոյ *պատճառ* է, զի ո՛չ ի սերմանէ՝ այլ ի մաքուր արենէ կուսին էառ մարմին: - 568. Եւ որպէս հաւատն է ի հանճարն, նոյնպէս յոյսն և սէրն են ի կամքն վասն **բ** *պատճառի:* - 572. Եւ *պատճառ* յուսոյն նախ է շնորհն աստուծոյ. և ապա արդիւնքն մեր: - 573. Եւ վասն չորից *պատճառաց* լաւագոյն է սիրել քան զսիրիլ: - 576. Դարձեալ կոչին անբանք. զի ո՛չ գիտեն *զպատճառն:* - 581. Դարձեալ կոչին յանձնառականք. որ ի պատուիրելոյ ումեք զոյ ողջախոհ. այլ *զպատճառն* ո՛չ գիտէ. նաև ո՛չ հետևին միմեանց: - 582. Եւ գիտեն *զպատճառն* թէ վասն է՞ր է ողջախոհ...: - 582. Վարդապետք դնեն բազում *պատճառս:* - 587. Դարձեալ՝ է և այլ *պատճառ*. զի կարգին ընդ դէմ երից մեղացն և ընդ դէմ չորեքկին պատժոցն: - 587. Ասեմք թէ ո՛չ է պարտ կրկին մկրտել զմկրտեալն վասն **դ** *պատճառի:* - 590. Այս է ուղիղ *պատճառն*...: - 596. Պատահմունք և որակն մնան ի հացն և ի գինին. իսկ գոյացութիւնն փոխարկի ի մարմին և արիւնն քրիստոսի վասն **դ** *պատճառի:* - 597. Վասն **գ** *պատճառի:* - 598. Զի թէ յօրինեալ հացէն այլոցն ամենեցուն ցամա՛ք էր տուեալ և նորա թաց, *պատճառ* լինէր մատնութեանն յուդայի. և յիրաւի: - 599. Եւ թէ աստ *պատճառ* իմն դնեն...: - 600. Եւ ա՛յս է *պատճառն*. զի անջրելի՛ է հրամանքն աստուծոյ...: - 602. Ասեն վարդապետք թէ՝ զմի անգամ խոստովանեալն բարի հաւատով և կատարեալ զղջմամբ՝ ո՛չ է պարտ կրկնել. եթէ ոչ վասն չորից *պատճառաց:* - 603. Իսկ թէ զերծանի ի մահուանէ, փութով առողջութեան *պատճառ* լինի...: - 604. ...զի **բազում արգելմունք գոն պսակին. որպէս ազգակցութիւնն հոգևոր կամ մարմնաւոր. կամ տկարութիւն բնութեանն. կամ պոռնկութիւնն. կամ այսահարութիւնն. կամ ծառայութիւնն. կամ բռնութեամբն**. կամ այլ ինչ այսպիսի *պատճառ.* որով բաժանին այրն և կինն: - 610. Մին կին է միոյ առն օրինադրեալ և ո՛չ աւելի, յաղագս բազում *պատճառի:* - 612. Վասն բազում *պատճառի:* - 615. **Նոյն *պատճառաւ* զմեռեալս յեկեղեցին ո՛չ թաղեմք**: - 617. Եւ այս է *պատճառն*, զի աստուած ետ մեզ միտք և բան և ձայնի գործիք և մարմնոյ մասունք և ինչք. վասն որոյ յամենայնէ՛ նուիրելի՛ է աստուծոյ: - 619. Այսմ բազում են *պատճառք:* - 619. Այլ թէպէտ առանձնականն կամաւո՛ր է, սակայն ի վերայ վանականաց որք են աբեղայք և կրօնաւորք, հարկաւո՛ր է վասն դ *պատճառի:* - 623. Եւ ա՛յս է *պատճառն*, զի քահանայն է՛ ի դէմս քրիստոսի, և եպիսկոպոսն հօր աստուծոյ. և խաղաղութիւնն է՛ հոգին սուրբ որ ի հօրէ առաքեցաւ...: - 625. Եւ յորժամ քահանայն ասէ զխաղաղութիւնն՝ ա՛յս է *պատճառն*, զի քահանայն է՛ միջնորդ առ աստուած և առ մարդիկ. - 625. Եւ վասն բազում *պատճառի* պարտ է գոհանալ: - 626. Չորրորդ, զի բարեաց *պատճառ* զաստուած իմանամք և ի նա՛ վերաբերեմք: - 626. Դարձեալ և այլ *պատճառ:* - 630. Իսկ որ այժմ աբեղայք ո՛չ բանան զգլուխս յամենայն աղօթս, այս է *պատճառն*...: - 635. Եւ որ ամէն շարականի սկիզբն ի մարգարէից դնեմք, այս է *պատճառն,* զի զհինն և զնորս ի միասին խառնեմք: - 636. Եւ ա՛յս է *պատճառն*, զի մի տան շարականի **դ** տուն սաղմոսի պիտոյ է յերկու դասս. և մին շարականն **ժբ** տամբ աւարտի: - 636. Նոյնդ է և մեծացուսցէին *պատճառն:* - 636. Դարձեալ այլ իմն *պատճառ*. որոց շարականաց փառքն և այժմն ի միասին է...: - 636. Զի ծաղիկն դիւրաւ թափի յամէն փոքր *պատճառէ*. յանձրևոյ և ի հողմոյ և ի սաստիկ որոտոյ. վասն այն պտուղն կորնչի: - 638. Եւ այս է *պատճառն*, զի կիրակին տէրունի թարգմանի. և օր է ստեղծման աշխարհի, և յարութեանն քրիստոսի, և միւս անգամ գալստեանն: - 642. Նաև *պատճառին*. թէ խրատական է. թէ աւաղական. թէ սպառնական. թէ ողոքական. թէ ըղձական. և այլ այսպիսիք: - 643. Եւ այս վասն երեք *պատճառի:* - 643. Վասն բազում *պատճառի:* - 647. Նո՛յնդ է *պատճառ* և վասն յիսներեկին. զի յաղուհացն զշաբաթ և զկիրակէ

պահեաց...: - 649. Եօթներորդ հոգոյն գալստեան. որպէս ասացաւ *պատճառն* ի վերոյ ի **իա** գլուխն, **ծա** համարն: - 649. Նոյնդ է *պատճառն* որ պատարագ ո՛չ մատուցանեմք. զի անարժա՛ն եմք: - 651. Եւ զայս դնեն *պատճառ* թէ՝ ի ժամանակս ինչ՝ զօրք հեծելոց նոցա ո՛չ հասին ի բարեկենդանն...: - 651. Այսպէս և այս կարգաւո՛ր է և ուղիղ վասն բազում *պատճառի:* - 662. Այս փոքրիշատէ *պատճառ* իմաստից ծեր լիցի...: - 663. Եւ տայ աստուած զմեծութիւն վասն **դ** *պատճառի:* - 664. Եւ լինի այս ևս վասն չորից *պատճառաց:* - 664. Եւ լինի հիւանդութիւն ի չորից իմն *պատճառաց:* - 665. ...իբր թէ նա՛ է առաւել *պատճառ* հիւանդութեան: - 665. Յերկար ոգէվարք լինի յերից *պատճառաց:* - 668. ...և զի՞նչ է *պատճառ* օծմանն: - 672. Եւ զի օծանի վասն բազում *պատճառի:* - 672. Իսկ վեցերորդ *պատճառ* վասն հասարակաց ամենայն մարդկան, զի ի հողոյ սկսաւ, դարձեալ ի հող վախճանի մարմինն...: - 678. Եւ այս վասն երկու *պատճառի:* - 679. ...վասն այսոցիկ *պատճառի* կրկին գամք ի գերեզմանս: - 680. Իսկ թէ զի՞նչ է *պատճառ* ոչ երևելոյն...: - 686. Որոյ *պատճառ* է, զի դատապարտութիւնն ադամայ բարձաւ քրիստոսիւ. և չարաց տանջանքն է՛ ի դատաստանին: - 690. Եւ դնէ երեք *պատճառ:* - 691. Ասեմք ըստ սրբոյն անդրէի մեկնչի՝ եթէ սուրբքն զաշխարհի վախճան խնդրեցին. որոց ցուցանէ *զպատճառս* երկայն մտելոյն...: - 696. Ո՞րք են որ ասեն քաւարան հրոյ. և զի՞նչ է *պատճառն:* - 698. Եւ վասն **դ** *պատճառի* ո՛չ ասեմք քաւարան հրոյ: - 698. Ահա՛ ժամանակ ընդունելի. ահա՛ օր փրկութեան. մի և մի իւիք տայցէք *պատճառս*. զի մի՛ արատեսցի պաշտօնն: - 698. Եւ այն զի *պատճառ* մեղաց առաւել մարմինն՝ քան թէ հոգին լինի: - 699. Ասեմք առ այս թէ ոչ. վասն **բ** *պատճառի:* - 704. Իսկ տէրն մեր անմեղ մարմնովն դատապարտեաց զնա իբր *զպատճառ* մեղաց...: - 705. Երկրորդ, զի հոգին մարդոյ անմա՛հ է վասն **բ** *պատճառի:* - 715. Եւ այս վասն բազում *պատճառի:* - 716. Որոյ *պատճառ* է, զի մարմին կերեալ մարդոյն է իւրն նիւթ գոյացական և սոցա եղև նիւթ պատահական: - 719. Ասեմք այսմ կրկին *պատճառ:* - 719. Եւ վասն **գ** *պատճառի* զայս օրինակ առնու: - 720. Ասի այսմ բազում *պատճառ*. բնական և բարոյական. և նախ բնական: - 723. Եւ ա՛յս է *պատճառ* յարութեանն. զի ամենայն մարդիկ առնուցուն զվարձ կամ զպատիժ. կամ վասն իւրեանց գործոց, կամ վասն սկզբնականին: - 724. Որոյ *պատճառ* է, զի մարդն հոգւով և մարմնո՛վ է կատարեալ: - 725. Եւ ա՛յս է *պատճառն*. զի աստուած ի սկզբան զբնութիւնն ադամայ անթերի ստեղծ. նոյնպէս ի վերջին օրն անթերի պիտի նորոգէ: - 726. Զի՞նչ է *պատճառն* որ **գ** մարմինք միայն մնան ի կատարածի: - 727. Իսկ այլ ամենայն մարմինք շնչաւոր և անշունչ, տունկք և կենդանիք ամենայն ապականին վասն **գ** *պատճառի:* - 727. Երրորդ *պատճառ*, ասեն իմաստունքն թէ ծնունդք կենդանեաց և բուսոց լինին ի շարժմանէ երկնային մարմնոց. իսկ ի կատարածի խափանի շարժումն նոցա. վասն այն անբան կենդանիք և տունկք խափանին: - 727. Նորոգին արարածք վասն կրկին *պատճառի:* - 727. Վասն երկու *պատճառի:* - 731. Եւ այս վասն կրկին *պատճառի:* - 732. Եւ զոր օրինակ փայտն գիտութեան *պատճառ* մահու եղև. պատասխանեալ դեղն ցաւոց: - 734. Վասն բազում *պատճառի* ասէ: - 735. Հինգերորդ, զի որդին ծնաւ ի կուսէն և յերկրի շրջեցաւ և քարոզեաց և չարչարանօք փրկեաց և *պատճառ* եղև ընդհանուր յարութեան բնութեանս մերոյ...: - 735. Եւ այս վասն **գ** *պատճառի:* - 738. Զի անարժանքն զաստուածութիւնն քրիստոսի ո՛չ տեսանեն վասն կրկին *պատճառի:* - 740. Իսկ զմարդկութիւնն քրիստոսի տեսանեն, նաև զխոցուածն, վասն **բ** *պատճառի:* - 740. Փոփոխումն գրոյն *պատճառի* ի չորից: - 742. Ուստի երևի **զ** ժամս ի յարութենէն մինչ ի վճիռ հատուցման և կորստեան չարաց չորեքկին. այսինքն գործոց չարաց և պատժոց նոցին. *պատճառաց* դիւաց և հետևելոց մարդկան: - 748. Այլ ի *պատճառս* տալ իմաստից. որով ո՛չ յագեսցի ակն ի տեսոյ. ի գլուխ գոլոյ իմաստնոյ. մանաւանդ և ի շահ օգտի բանասէր մտաց միեղէն եղբարց: - 773. Իսկ թէ նա որ սկիզբն կորստեան ամենեցուն մեզ եղև և *պատճառ* ամենայն մեղաւորաց՝ ապրեցաւ շնորհօքն քրիստոսի...: - 775. Նախ խնդրելի է թէ վասն ի՞նչ *պատճառի* նախահօրն յանցանաց պատժապարտ եղեն և որդիքն: - 776. Նա՛խ՝ որպէս ի վերոյ ասացաւ. զի թէ ադամ որ սկիզբն և *պատճառ* էր մեղաւորաց՝ ազատեցաւ. ապա ուրեմն և որդիքն որ վասն յանցանաց նորա՝ ազատեսցին: - 776. ...զի սկզբնաչար և *պատճառ* ամենայն մեղաց սատանայ է. այլ ադամ այնչափ՝ զի առաջին եղև մեղանչական ի նմանէ: - 777. Այսպէս սատանայ է մեղադրելի իբր *պատճառ* և գտակ չարեաց մարդկայինս բնութեան և ո՛չ ադամ: - 777. Եւ է՛ շնորհ յատուկ ընտրութեամբն աստուծոյ, որ *պատճառ* է՛ զփառս զանազան ներգործութեամբ. և է՛ սա՛ ան՚ի բաց դնելի անզեղջ խոստմամբ ի կողմանէ տուողին. որպէս է՛ առ մեզ շնորհք աւազանին: - 783. Իսկ թէ իցէ հաւատ դիւաց, գո՛յ մտածել տղայական կարծեօք՝ թէ անկումն նոցա եղև հաւատոց *պատճառ* է որ է՛ սուտ: - 784

**ՊԱՏՃԱՌԱԲԱՆԱԿԱՆ +** Երկրորդ՝ *պատճառաբանական:* - 122. Երկրորդն է *պատճառաբանական*. որ ի պատճառելեացս՝ այսինքն յարարածոցս զգեղեցիկն տեսեալ, զպատճառն և զարարիչն վերակոչեմք և անուանեմք: - 122. Եւ այսպէս է տպաւորականն և *պատճառաբանականն:* - 123. Եւ երկրորդն որ է *պատճառաբանականն*՝ առաւել է քան զառաջինն. զի յաղագս աստուածային անուա՛նցն է քննութիւն: - 123

**ՊԱՏՃԱՌԱԿԱՆ +** Եւ *պատճառականքն*. որպէս բարի. իմաստուն. և այլն: - 106

**ՊԱՏՃԱՌԱՒՈՐ +** Արդ՝ պիտո՛յ է անպատճառ պատճառ բոլորից *պատճառաւորաց*, որ նա ինքն է աստուած: - 25. Այլ ի դէմս *պատճառաւորացն* ունի զանազանութիւն: - 110

**ՊԱՏՃԱՌԵԼԻ** - Ամենայն ինչ որ լինի՝ ունի պատճառ. և ամենայն պատճառ ի հարկէ է՛ նախքան *զպատճառելին*. ապա թէ հարկաւոր պատճառս այս ո՛չ է բանն մեր որպէս ցուցաւ, է՛ ուրեմն զորութիւնն աստեղաց ի շարժմանէ նոցա ազդեցեալ: - 10. Ասեմք առ այս, եթէ՝ ամենայն ինչ որ լինի՝ ունի պատճառ. և նախ է պատճառն քան *զպատճառելին*. այլ ամենայն պատճառ ո՛չ է հարկաւոր. այլ գո՛յ և ներընդունակ պատճառ. ապա ուրեմն ո՛չ է հարկաւոր պատճառ շարժումն աստեղաց: - 10. Այլ արդ՝ ամենայն պատճառ առաւել է քան *զպատճառելին*. եթէ բարեաց և եթէ չարեաց. ապա անհնարին հերձուած է ասել զչարն յաստուծոյ: - 14. Դարձեալ ո՛չ ասի անպատճառ պատճառն քան *զպատճառելին* մեծ. զի և որդի նոյն պատճառի հօր փառաց և մեծութեանն է հաղորդ: - 39. Երկրորդն է պատճառաբանական. որ ի *պատճառելեացս*՝ այսինքն յարարածոցս զգեղեցիկն տեսեալ, զպատճառն և զարարիչն վերակոչեմք և անուանեմք: - 122. Երկրորդ՝ պատճառ պարտաւորութեան մեղաւորաց էր ադամ. և նա ազատեցաւ. ապա ուրեմն ամենայն *պատճառելիքն* ազատեսցին: - 507. Նա՛խ՝ զի չարչարանքն քրիստոսի պատճառ եղև պարգևաց սուրբ հոգւոյն, պարտ էր նախկին գոլ. որպէս ամենայն պատճառ նա՛խ է քան *զպատճառելին:* - 521. Յետ այսորիկ հարցանելի՛ է ի նոր օրինաց և յեկեղեցւոյ կարգաւորապէս ընդ մարդեղութեան բանին յարմարեալ. իբր *պատճառելիք* առ պատճառ նորին հետևեալ և շարադասեալ: - 528

**ՊԱՏՃԱՌԵՄ, ՊԱՏՃԱՌԻՄ +** Դարձեալ ասեն, թէ ամենայն ստորնային մարմինք՝ կառավարին վերնային մարմնովք. որպէս յա՛յտ է ի չորս եղանակս տարւոյն. այլև ծնունդ և աճումն՝ և բոյսք և պտուղք՝ ի շարժմանէ նոցա *պատճառին*. և շարժումն նոցա է՛ հարկաւոր. ապա ուրեմն ամենայն ինչ լինի ի հարկէ: - 10. Նա՛խ՝ եթէ ուշիմ և ապուշ և այլն ըստ կարգի, սոքա եթէ ի մարմնոյն խառնուածոյ *պատճառին*՝ և եթէ բնական որակութեամբ հոգւոյն՝ նման և աննման գոլ, առանց ներգործելոյ ո՛չ չար են և ո՛չ բարի. ո՛չ գով. և ո՛չ պարսաւ հետևի. որպէս և ո՛չ բնական բարուց անաւնոց: - 19. Երկրորդ և ոչ վասն յետին յանցանացն կռապաշտութեան եպերեմք զիմաստութիւն նորա և ո՛չ ընդունիմք. թէպէտ և հնա՛ր է *պատճառել* թէ այնքան իմաստութիւնն, զնա ո՛չ պահեաց հաճոյ մնալ աստուծոյ: - 40. Նախ *պատճառեն*՝ զի ասի հոգի քրիստոսի: - 61. Այլ բաժանմամբ բնութեանցն՝ բաժանին և անձինքն ի քրիստոս. թէպէտ *պատճառելով* անձն մի համբաւեն: - 88. Երկրորդ՝ որ ինքն ո՛չ է բարի, այլ *պատճառէ*՛ զա՛յլ բարի. որպէս դառն դեղն զառողջութիւնն: - 160. Եւ այսպէս խնդրի ապաշխարանքն. որ *պատճառէ*՛ զյաւիտենական կեանքն: - 160. Երրորդ՝ որ է՛ ինքն բարի, և *պատճառէ*՛ զայլ բարի. զորօրինակ՝ որպէս քաղցր դեղն *պատճառէ*՛ զառողջութիւն: - 160. Եւ այսպէս են մարմնաւոր բարիք. որպէս ոսկի և այլ ինչ. որ ի ձեռն ողորմութեան *պատճառէ*՛ զհանդերձեալ բարիսն: - 160. Չորրորդ՝ որ ինքն ո՛չ է բարի, և ո՛չ *պատճառէ* զբարի. բայց թէ պատահմամբ: - 160. Որպէս թոյնք իժից, զի են իւրեանք բնութեամբ չար և *պատճառե՛ն* զչար. բայց պատահեցաւ ոմանց՝ դեղ լինիլ: - 160. Եւ ըստ ա՛յսմ կերպի է փորձութիւնն բարի. զի բնութեամբ չար է. և *պատճառէ*՛ զչար մեղքն. բայց պատահեցաւ ոմանց զի յաղթեցին փորձութեանց և ընտրիք երևեցան: - 160. Եւ այս ո՛չ *պատճառի* ի տկարութենէ շնորհացն որ միշտ նոյնպէս է նախ և յետոյ. այլ ի տկարութենէ անձինն շրջելոյ: - 166. *Պատճառելով*՝ եթէ միաւորեալ ասեմք զբնութիւնսն, շփոթումն լինի: - 176. Ուստի *պատճառի* լինելութիւն էիցս միշտ և անխափան. որպէս ասի ի գիրս աշխարհաց: - 181. Դարձեալ՝ կէտ երկրիս անշարժ է ի մէջն. և *պատճառէ*՛ զշարժութիւնն երկնի: - 182. Որպէս կարակնին կէտ անշա՛րժ է, և *պատճառէ* զբոլորակ ծիրն: - 182. Ութերորդ՝ *պատճառէ*՛ զհաստատութիւն միջոցիս: - 184. Քսանբ՝ զծիածանն *պատճառէ* յամպս: - 207. Նա՛խ՝ ըստ փիլիսոփայիցն ներքին մասունքն հոգւոյն *պատճառե՛ն* զարտաքին մասունս մարմնոյն. և ըստ պղատոնի՝ հոգին եռամասնեայ գոլով՝ բան և ցասումն և ցանկութիւն: - 232. Զի դ հիւթն ներքին անդամոց՝ ի ձեռն սրտին *պատճառե՛ն* զդ հիւթն արտաքին: - 243. Զի թէ ո՛չ էր ասացեալ

ընդ պատկերին զնմանն լինիլ, ամենայն որ *պատճառէր*, և զմարդն պաշտելով անկանէր ի կռապաշտութիւն...: - 274. Առաջին իսկապէս թշնամի մարդկան ազգի սատանայ է. իսկ ալ թշնամիք ի նմանէ՛ *պատճառեցան:* - 277. Որպէս կայեն յորժամ սպան զաբէլ, *պատճառեաց* ծնողացն եթէ զնորա պատարագն ընկալաւ աստուած և վերացոյց ի դրախտն: - 290. Որոյ *պատճառէ,* զի անուն վասն այլո՛ց է որ ճանաչեմք զայլս: - 312. Հինգերորդ՝ զի մի՛ *պատճառեսցեն* չգիտելն: - 402. Իսկ *պատճառելն* թէ «նիստ յերիքով և ի բեթէլ՝» փորձէ՛ զաշակերտն: - 445. Նա՛խ՝ զի սկզբնական արդարութեամբ ծնաւ. և *պատճառի* անսերմն յղացումն: - 473. Զոր ի ժողովն քաղկեդոնի հաստատեցին զսոյն տօն ի **իե**ն դեկտեմբերի. *պատճառելով* թէ՝ ի հռօմ դարձի արեգական տօն կատարէին. և փոխեաց զայն պետրոս տօնել արեգականն արդարութեան: - 482. Եւ *պատճառե՛ն* զպատճառս մեղաց գործօղքն անօրէնութեանց: - 510. Դարձեալ *պատճառեն* թէ՝ յորժամ զնկանակն և զձուկն աճեցոյց քրիստոս՝ մե՛րձ էր զատիկն: - 510. Դարձեալ *պատճառե՛ն* թէ՝ յետ յարութեանն եկեր ձուկն ընդ աշակերտսն. յորում կրակեաղ կայծականց տեսին և ձուկն խորովեալ և հաց. և օրն էր չորեքշաբաթի. և ի **ե** շաբաթի համբարձաւ: - 511. Եւ այն զի խափանեցաւ գործ մարմնոյն, ի ժամանակէն կամ ի տեղւոյն կամ ի դիմացն *պատճառեցաւ*: - 556. Յաջ շարժումն է արծաթսիրութիւն. զի զբարիս *պատճառելով* ժողովէ ...: - 560. ...և զայս *պատճառէ՛* զօրեղ իշխանութիւն քահանային և ջրոյ առաւելութիւնն: - 590. Երկրորդ՝ զի կուսութեամբ ծնանի առանց ապականութեան. և զայս *պատճառէ՛* հոգին սուրբ և նիւթ ջրոյն զի հեղո՛ւկ է: - 590. Որոյ *պատճառէ*, զի կին երաշխաւոր և վկայ ո՛չ կարէ լինիլ, վասն որոյ և ո՛չ կնքահայր կարէ լինիլ: - 591. ...զի որք կամին զմարմինն քրիստոսի ապականացու ասել՝ խմոր և ջուր խառնեն. թէպէտ այլ և այլ *պատճառեն:* - 596-597. Եւ թէ *պատճառեն* զբանն սողոմոնին, «կերիցեն սիրելիք իմ և արբցեն նազելիք իմ» ասէ: - 600. Որոյ *պատճառէ*. զի հոգին եռամասնեա՛յ է. այսինքն բան՝ ցասումն՝ և ցանկութիւն...: - 611. Մեծութիւն մարդոյ *պատճառի՛* ի չորից: - 664. Նոյնպէս և հոգին *պատճառէ՛* զմարմինն՝ թէ յորմէ հետէ բաժանեցայ ի նմանէ՝ ո՛չ մեղանչեցի: - 691. ...*պատճառեն* գործոց իւրեանց հնարս. իբր թէ ակամայ զերծանիցին ի տանջանաց: - 701. Եւ բաւականութիւն է զարդուցն *պատճառի* յերից մասանց հոգւոյն և ի չորս տարերաց մարմնոյն: - 721-722. ...զի ծուխն ի հրոյն *պատճառէ* զլալ աչաց. և ցուրտն զկրճել ատամանց: - 752. Եւ նոքա որք բազում համբաւեն դժոխս, մի ասեն գոլ արքայութիւն. *պատճառելով* եթէ՝ բարին մի է և չարն բազում: - 758. Հասարա՛կ է և բնութեան իր, զի ամենայն ինչ նախնի մարդոյն բնութեամբ է ի մեզ և հասարակ իր. և առ յանդիմանութիւն դժկամակ երևեցան նախնիքն մեր. ուստի *պատճառեցին* զմիմեանս: - 774. Եւ յարամնայութիւն կնքոյն *պատճառէ՛* ոմանց գերագոյն պատիւս. և ոմանց խստագոյն պատիժս. ըստ բազում գանից առակի ասիցն: - 783. Իսկ հոսումն արտասուաց, *պատճառի՛* ի ներքուստ, և արտաքուստ յիմեքէ՛ ինչ: - 786

**ՊԱՏՄԱԲԱՆՈՒԹԻՒՆ +** Սակայն զառձեռն պատրաստ դիցուք ի իմն եղանակաւ *պատմաբանութեամբ:* - 304

**ՊԱՏՄԱԳԻՐ +** Եւ զայլ ամենայն որպիսութիւն չար ժողովոյն քաղկեդոնի գտցես ի *պատմագիրս* միխայէլի: - 543. Եւ սոկրատ *պատմագիրն* ասէ թէ՝ մեծն իգնատիոս աստուածազգեացն ետես երկնային զօրս. և լուաւ ի նոցանէ...: - 631

**ՊԱՏՄԵՄ +** Մանաւանդ թէ՝ որպէս վասն նեռինն յառաջագոյն *պատմեցաւ* եկեղեցոյ՝ զի զգուշասցին: - 35. Առ չորրորդն եթէ՝ «յիմմէ անտի առնուցու». այսինքն յիմ սկզբնէն առնու և *պատմէ* ձեզ: - 61. Երրորդ՝ խօսքն *պատմէ՛* զգիտութիւն բանին և զմտացն: - 66. Նոյնպէս հոգին սուրբ *պատմէ* և ուսուցանէ զգիտութիւն հօր և որդւոյ: - 66. Ա՛րդ՝ ի մարդկանէ ո՛չ ոք ետես զաստուած, և որդի կուսին ո՛չ ետես որպէս դուդ ասես. սո՛ւտ է ապա և պատմութիւնն զոր ինչ ուսոյց մեզ. զի ո՛չ է տեսեալ և *պատմէ*. ահա անդունդք հայհոյութեան. զոր ի կարգիս լռե՛մ: - 96. Եւ վասն գերագոյն զգայութեան *պատմէ՛* դաւիթ...: - 118. Որպէս *պատմի* ի դատաւորքն. յորժամ գեդէոն զփողսն հնչեցոյց, այլազգիքն ինքեանք զինքեանս ի սուր մաշեցին ի գիշերի: - 238. Առաջին պատճառ, զի ընդ ինքեան մարդկայինս բնութիւն այլայլո՛տ է և ցաւօք. և յորժամ աստուած ևս բազմացուցանէ, ո՞վ կարէ զաղէտն *պատմել:* - 292. Եւ տէր մեր զգալուստ հոգւոյն և զկատարած աշխարհի *պատմեաց*, և յանձնեաց զկոյս տաճար իւր ի կոյսն յօհաննէս: - 329. ...և թուեցան ընդ ղևտացիս որպէս *պատմէ* մնացորդացն գիրք: - 330. Առաջին, երեքօրեայ սրբութեամբ յիսներեկի աւուրն ելից յեգիպտոսէ. որ ընկալաւ զտասնբանեան օրէնս և *պատմեաց* ժողովրդեանն: - 352. Դարձեալ՝ քաղեբ և յեսու. հին և նոր կտակարանք. որք զիանդերձեալսն մեզ *պատմեն*. և զյաղթելն անմարմին թշնամւոյն: - 380. Իսկ այլ տասունքն

իմաստասիրաց բանքն. որպէս պղատոնին. արիստոտէլին. պիթագորին և այլք. որք միայն զաստեա՛ցս *պատմեն* մեզ: - 380. Եւ երազահանն, որ ի գիշերի տեսանէ զդևս և մարգարէութիւն *պատմէ* զի պատրեսցէ: - 388. Դարձեալ՝ զաստուածայինս ամենայն՝ ո՛չ կարեմ քննել. այլ զոր ինչ յայտնէ՝ *պատմեմ* ձեզ: - 405. Որպէս և այլ ուր ասէ՝ «զոսկր նորա մի՛ բեկանէք». այլ զդիւրալուրն *պատմեցէք:* - 405. Եւ զդիւրահասն *պատմեմք* այլոց: - 406. Երրորդ՝ վասն կատարածի և վերջին օրհնութեանն *պատմէ*. արդարոց զպատիւ, և մեղաւորաց զտանջանս: - 407. Վհուկ կինն ո՞րպէս յարոյց զսամուէլ. կամ ո՞րպէս զառաջիկայն *պատմէր:* - 428. Բե՛ր տեսցուք և զորպիսութիւն խօսիցն, որ թուի թէ ճշմարիտ զապագայն *պատմեն* դևք: - 430. Երրորդ՝ զի նոր բան ինչ ո՛չ *պատմեաց*. այլ զոր ինչ ուսաւ ի սաւուղայ՝ երկրորդեաց նմա: - 430. Նոյնպէս և դևք ի նրբութենէ տեսութեան իւրեանց՝ կամ ի լսելոյ՝ խաբեն, զառաջիկայն *պատմելով:* - 430. Չորրորդ՝ նա՛ վասն քարի և փայտի *պատմէր*. և քրիստոս վասն արքայութեանն: - 442. Որոց առաջինն *պատմէ՛* զսաւուղայ թագաւորելն: - 450. Եւ յովսէփ արդարն էր ի թագաւորական ցեղէն. որպէս *պատմէ՛* աստուածախօսութիւնն Մատթէոս և Ղուկաս: - 460. Եօթներորդ՝ բանին էր պատշաճ *պատմել* զհօրէ. և երևիլ մեզ. որպէս ներտրամադրեալ բանն յառաջ գայ և լինի բարբառ և գրեալ ի քարտիսի, երևի և շօշափի: - 468. Եւ զերկրորդն ղուկաս *պատմէ՛* վաղ քաջ ընդ առաւօտն. և տեսին արք երկու լուսազգեացք. և զվէմն թաւալեալ: - 515. Իսկ զերրորդն մարկոս *պատմէ՛* առաւօտուն և յարևագալն յետ ղուկասու. և տեսին երիտասարդ մի ի ներքս ի գերեզմանն ընդ աջմէ նստեալ: - 515. Եւ զչորրորդն յօհաննէս *պատմէ* միա՛յն զմագդաղենացին. և տեսեալ երկու հրեշտակս ի սնարս և յոտս նստեալ: - 515. Եւ սոյնպէս շաղփաղփ երևէին բանք նոցա. և տեսիլքն սակայն ամենայնք՝ զմի և զնոյն յարութիւնն *պատմէին:* - 515. Եւ այս հարցանելի է, զի թէ մագդաղենացին ընդ առաջին կանայսն եկն զոր մատթէոս *պատմէ* և համբուրեցին զոտն յիսուսի...: - 515. Այս է, զի յորժամ ի մէջ գիշերին հրամայեաց հրեշտակն գնալ և *պատմել* աշակերտացն, ա՛յլ կանայքն որ ընդ նմայն էին՝ գնացին...: - 515. Իսկ յովսէփ և եզնակ եկեալք ի հայս *պատմեցին* զամենայն ստուգութեամբ: - 543. Ասեմք թէ՝ արիւնն է՛ ի խորհուրդ հաղորդութեանն. ջուրն ի մկրտութեանն. որով մահ տեառն *պատմի* ըստ առաքելոյ...: - 596. ...այսպէս *պատմէ* Մատթէոս և Մարկոս. իսկ Ղուկաս և Յոհաննէս յետ ընթրեա՛ցն նշանակեն զթացեալ պատառն: - 599. Իսկ մեծացուսցէն ի կիրակէի, զբնաւ տնօրէնութիւնն *պատմէ*. զի թէ ոչ էր ծնեալ՝ և ո՛չ էր խաչեալ. և ո՛չ յարուցեալ. և ո՛չ զմեզ փրկեալ: - 628. Իսկ երկրորդն, որ երկինք *պատմեն* զփառս աստուծոյ, զայնմ որ դատէ՛ զհակառակն մեր. զի յերկինս է ողորմութիւն նորա: - 629. Զբանս զայս՝ մարգարէն ի դէմս հօր ասէ. զի յայնժամ միայն զհայր *պատմէին:* - 632. Ասեմք նա՛խ՝ թէ մարգարէքն իբր յառաջասաց՝ *պատմեցին* զմարդեղութիւն բանին և զփրկութիւն մարդկան: - 643. ...զի սուրբ գիրք կամ զառաջինսն *պատմեն*. որպէս մովսէսին. կամ զվերջինսն կանխաճառեն. որպէս եսայեայն և այլոցն: - 643. ...կամ մովսէս որ *պատմեաց* զօրէնսն աստուծոյ...: - 644. ...նա զձեռն ի վեր առեալ գոհանայ զաստուծոյ. նմանապէս թէ *պատմի* վասն վախճանի ուրուք: - 659. Իսկ չարացն ոչ ինչ գիտեն. այլ զոր հրեշտակք կամ դևք նոցա *պատմեն:* - 685. Պատասխանեն վարդապետք թէ՝ որպէս մովսէս թանձրամիտ ժողովրդեանն իէլի *պատմէր* զլինելութիւն արարածոց ի **զ** օրս...: - 717. Վեցերորդ՝ գալարին երկինք՝ *պատմելով* զփառս աստուծոյ. և հաստատութիւնդ զարդար դատաստան նորա յարարածս իւր: - 729. Որք տեսչութեամբն աստուծոյ՝ ի մեռելոցն զառհաւատաչեայն ընկալան յարութեան, թէ զիա՞րդ ոչ ունէին ի մտի զանտի կենացն ծանօթութիւն. *պատմել* մեզ խնդրի: - 774. Եւ զանազան տեսութիւնք վարդապետաց չեն ընդ դէմ միմեանց. այլ զորօրինակ ոմն զական պատւականութիւն, և այլ ոմն զբնութեան, և կէսք զասդողութեան, և ոմանք զորակացն գեղեցկութեանց, *պատմեն* զմի և զնոյն ական իր: - 781-782

**ՊԱՏՄՈՂ +** Չորրորդ՝ զի *պատմօղ* է մտացն: - 49. Տասներորդ՝ զի որպէս բանն թարգման և *պատմօղ* է մտացն, այսպէս և որդի հօր: - 49. Այլ և բոլոր ամենայն տնօրէնութեանցն *պատմօղ*. վասն այն յամենայն օր ի տօնս, ի պահս, և յուտիս, ի շաբաթս, և ի կիրակէ, զնա՛ ընթեռնումք: - 644. ...զի *պատմօղ* և կատարումն են տնօրէնութեանցն քրիստոսի: - 646

**ՊԱՏՄՈՂԱԲԱՐ +** Ասեմք եթէ՝ ո՛չ ասաց զայս հրաման տալով. այլ *պատմողաբար:* - 496

**ՊԱՏՄՈՒԹԻՒՆ +** Այս է զի ի լուր *պատմութեանց* նախնեացն՝ կամ ի կարգէ՛ իրաց՝ կամ ի տեսս զգալեաց՝ ի ծանօթս գամք աստուծոյն ճշմարտի. յորմէ հաւատն լուսափայլեսցի: - 25. Ա՛րդ՝ ի մարդկանէ ո՛չ ոք ետես զաստուած, և որդի կուսին ո՛չ ետես որպէս դուդ ասես. սո՛ւտ է ապա և

*պատմութիւնն* զոր ինչ ուսոյց մեզ. զի ո՛չ է տեսեալ և պատմէ. ահա անդունդք հայհոյութեան. զոր ի կարգիս լռե՛մ: - 96. Յինգերորդ՝ նշանակէ զչորեսին աւետարանիչքն. մարդն զՄատթէոս՝ զմարդեղութիւն բանին ցուցեալ առիւծն զՄարկոս՝ արիաբա՛ր աւետարանեալ. «և էր ընդ գազանսն» ասէ. եզն զՂուկաս՝ յերկարածիգ *պատմութեամբ*. և եզն պարարակ կոչեցեալ. արծուին զՅօհաննէս՝ ի վերուստ զբանն աւետարանեալ: - 132-133. Այս է յորժամ ընթեռնումք յերկար *զպատմութիւնն* և լսեմք. իբրու թէ տեսանեմք աչօք. և մտօք վայելեմք: - 192. Ո՛չ թէ քան զտարրական հուրն ի վե՛ր է անցեալ. այլ զի լուսինն և արեգակն միշտ ի հարաւոյ կողմանէ ի ստորոտէ լերինն ելանեն. և ի հիւսիսոյ կողմն լերինն միշտ գիշեր լինի. որպէս աղէքսանդրու *պատմութիւնն* ասէ. և ի գլուխն միշտ լոյս. և ի հարաւոյ կողմն տիւ և գիշեր: - 222. Եւ թէ՝ քանի՞ ամաց *պատմութիւն* է **ե** գիրքն մովսէսի: - 285. Այլ որ ստոյգն է ասեն թէ՝ մովսէս գրեաց որպէս *պատմութիւն*, և սողոմոն ստիքսեաց որպէս զիւր բանսն. յետոյ գրեաց և եզրաս հոգւովն աստուծոյ երբ ծախեցան գրեանքն ի հրէից: - 321. Եւ այլն ամենայն բանք և գործք յոբայ ի տիպ օրինակի էր նորն ադամայ չարչարանաց թաղման և յարութեան որպէս յա՛յտ է ի գիրս *պատմութեան* նորա: - 327. Քանի՛ ամաց *պատմութիւն* է **ե** գիրքս մովսէսի: - 411. Ըստ եօթանասնից **վչլ** ամաց *պատմութիւն* է: - 411. Երկրորդ՝ զի իջցէ ի գերեզման և մի՛ տեսցէ զչարիքն որ ի ձեռն նաբուգոդոնոսորայ գալո՛ց էր ի վերայ երուսաղէմի. որպէս յայտ է ի *պատմութիւնն:* - 446. Եւ այսպէս է յայտնի *պատմութիւնս:* - 460. Եւ **լզ** բիւրս սպանին յուղղափառաց դասուց. որպէս յա՛յտ է ի *պատմութիւնս* սրբոյն միխայէլի: - 547. Եւ սուրբն բարսեղ կեսարացի այսպէս բաշխէր ժողովրդեանն. որպէս գրեալ է ի *պատմութեան* նորին յունվարի **ա**: - 599. ...զի հայրն աբրահամ առեալ հուր և սուր, և յետ երից աւուրց տեսին զտեղին ի հեռաստանէ որպէս ասէ *պատմութիւնն:* - 681. Այլ և *պատմութիւնք* և մեկնութիւնք սրբոց՝ նորին հոգւոյն են որք ուսուցանեն մեզ զնոյնս: - 778

**ՊԱՏՄՈՒՃԱՆ +** Չորրորդ՝ լուսեղէն *պատմուճան:* - 278. Ի լուսաւոր *պատմուճանէն*, յորժամ կերին ի պտղոյն և ծանեան զի մերկ էին և արարին սփածանելիս: - 279. Երրորդ՝ զմաշկեղէն *պատմուճանն* մերկանալ. այսինքն զխորհուրդս մարմնեղէնս և զմեռելոտիս: - 281. Եւ այս ևս գիտելի է, զի տէրն մեզ կոչի զգեստ փրկութեան և *պատմուճան* ուրախութեան ի ձեռն մկրտութեան...: - 318. Վասն այնորիկ ե կրկին *պատմուճան* զգենու եպիսկոպոսն: - 607. Զգեստ է նոցա, *պատմուճան* հոլանի և առանց գօտոյ...: - 608. Զգեստ է նոցա *պատմուճան* հոլանի և անգօտի: - 608

**ՊԱՏՇԱՃ +** Երրորդ՝ ըստ ո՛չ *պատշաճի*. որպէս ո՛չ կարեն պահել որդիք առագաստի մինչ ընդ նոսա իցէ փեսայն որ է քրիստոս: - 44. Եւ թէ բան իմանաս՝ և ոչ պահքն *պատշաճ* էր սրբեցելոցն բանիւն. ըստ այնմ՝ «դուք սուրբ էք վասն բանին զոր խօսեցայ ընդ ձեզ». զի պահքն զոչ սուրբն սրբէ. իսկ նոքա զի սուրբք էին ոչ *պատշաճ* պահքն. վասն այն ո՛չ կարէին: - 44. Թուի թէ և այս յոչ *պատշաճէն* ասի զի վնասեալք էին հաւատովք՝ ո՛չ էր *պատշաճ* անել նոցա նշանս: - 44. Այլ ա՛յս է հոգւոյն բարեխօսելն, զի յորժամ կամք յաղօթս՝ ո՛չ գիտեմք *զպատշաճն* խնդրել. ապա հոգին անմռունչ տայ մեզ իմաստ *զպատշաճն* աղօթել: - 48. Արդ՝ Նա՛խ՝ բան աստուծոյ՝ և հոգի աստուծոյ՝ ո՛չ *պատշաճի* արարածոյ. այլ միայն աստուծոյ: - 55. Ա՛րդ՝ որ ոք կամեսցի ի նոյնն ելանել և առ քրիստոս լինիլ, *պատշա՛ճ* է ի վերջնագունէն սկիզբն առնել որպէս սանդղօք: - 280. **Ասեմք թէ ո՛չ էր *պատշաճ* մեզ գիտել զօր մահուն, և ո՛չ զվախճան աշխարհի. վասն որոյ արգե՛լ տէրն եթէ «ո՛չ է ձեզ գիտել զժամս և զժամանակս»:** - 292. Վեցերորդ՝ դարձուցանել զմարդն յորդէգրութիւն աստուծոյ՝ բնական որդւոյն էր *պատշաճ*. վասն որոյ որդին աստուծոյ որդի մարդոյ եղև զի զմեզ արասցէ որդիս աստուծոյ: - 468. Եօթներորդ՝ բանին էր *պատշաճ* պատմել զհօրէ. և երևիլ մեզ. որպէս ներտրամադրեալ բանն յառաջ գայ և լինի բարբառ և գրեալ ի քարտիսի, երևի և շօշափի: - 468. Ապա ուրեմն *պատշա՛ճ* էր նիւթ մարմնոյն քրիստոսի մաքուր արիւնն կուսին...: - 470. Այլ *պատշա՛ճ* էր թլփատութիւն նորա վասն բազում պատճառի: - 485. Ինննժ՝ *պատշա՛ճ* էր ի մէջ գիշերի յառնել. զի ի նոյն ժամն սկսանի արեգակն բարձրանալ, և յառաւօտն ծագէ՛ առ մեզ: - 515. Եւ նմա՛ *պատշաճ* է կարդալ զմարգարէքն և զհին օրէնքն յեկեղեցին: - 606. Իսկ կցորդ և սկիզբն, այն մին տունն է խորհրդաւոր ըստ *պատշաճի* աւուրն: - 643. ...ընդ որում անպատշա՛ճ էր լինիլ խօսակից և զուստն ո՛չ գիտել. այլ *պատշա՛ճ* էր որդւոյ վասն մարմնով երևելոյն: - 735

**ՊԱՏՇԱՃԱՊԷՍ +** Յայտ է յաշխարհակազմութեանն. ըստ որում իւրաքանչիւրքն *պատշաճապէս* ներգործեցան: - 780

**ՊԱՏՇԱՃԱՒՈՐ +** Երկրորդ՝ գործ բնութեան է՛ հարկաւոր. իսկ գործ կամացն *պատշաճաւոր:* - 156. Իսկ որ հասարակն է սոցա և *պատշաճաւոր*, ունին զնոյն հասարակութիւն բուսոց ի նոյն ժամանակս:

- 261. Եօթներորդիւն կատարել զկեանս մեր *պատշաճաւոր* վախճանաւ: - 492. Ասի և վախճան. զի ուղղէ՛ զգործս և ածէ՛ ի *պատշաճաւոր* վախճանն: - 575

**ՊԱՏՇԱՃԱՒՈՐԵԼ** - Երկրորդ՝ ի կողմանէ ընդունողաց առաքելոցն. զի *պատշաճաւորեցան* հոգւոյն սրբոյ. զի փորձիւ գիտէին զվարդապետութիւնն քրիստոսի, զմահն և զյարութիւնն և զայլն: - 521-522

**ՊԱՏՇԱՃԵՄ +** Երկրորդ՝ պաշտօն որ յաստուած վերաբերի՝ միայն աստուծոյ *պատշաճի*...: - 57. Հինգերորդ՝ յարուցանել՝ միայն աստուծոյ *պատշաճի*...: - 57. Եօթներորդ՝ աստուածային փառքն՝ աստուծոյ միայն *պատշաճի*...: - 71. Այլ թերևս ասիցէ ոք եթէ՝ վերոյ ասացեալ գործառնութիւնքս *պատշաճին* քրիստոսի վասն բնութեան բանին, և ո՛չ վասն մարմնոյն: - 72. Ութերորդ՝ ելանելն յերկինս *պատշաճի* մարմնոյն քրիստոսի. որպէս ի տեսս առաքելոցն վերացաւ յերկինս. և իջանելն՝ բանին որպէս ասացաւ: - 73. Նախ՝ զի պետութիւնք *պատշաճին* առ հայր. և հրեշտակապետքն առ որդի իբր յերկուց միացեալ. և հրեշտակքն ի դէմս հոգւոյն իբր նախ եկաւորեալք յամենայն ուրեք, և ապա յորդի և ի հայր բնակեալ: - 136. Ա՛րդ՝ բնութեան նոցա *պատշաճի* բարձրագոյն տեղիք որ է երկինքն յորում ստեղծան. զի թէ կացեալ էին կատարելոց էին անդ: - 146. Այլ մեղացն *պատշաճի* ստորին տեղիք որ է դժոխքն: - 147. Ստորոգութիւնս *պատշաճի* եղական գոյիցս իսկութեամբ. որ ի նիւթոյ և ի տեսակէ՝ ի գոյացութեանց և ի պատահմանց են ժողովեալ: - 171. Իսկ անեղ և պարզ էութեանն *պատշաճի* միայն նմանապէս համեմատութեամբ. զի է կոչի աստուած...: - 171. Ապա ուրեմն բոլորակ ձևն *պատշա՛ճէ* երկնից: - 182. Ապա ուրեմն բոլորակ ձևն որ կատարեալ է՝ *պատշաճի* կատարեալ մամնոյ երկնից: - 183. Տասներորդ՝ և որ վեհագոյնն է. զի ապարանք և հանգիստ է միայն աստուծոյ *պատշաճեալ:* - 184. Դարձեալ՝ իմաստութիւնն *պատշաճի* հօր ըստ կարողութեան. և գիտութիւնն որդոյ իբր բան. և հանճարն հոգւոյն բղխման: - 270. Արդ բիւրն *պատշաճի* յաւիտենին աստուծոյ, որ պարունակէ՛ զմշտնջենաւորն որ են հրեշտակք: - 291. Ձի օր՝ ժամանակիս այս *պատշաճի*. և շաբաթ՝ մահուն հանգիստն. և ամիս՝ մինչ ի յարութեանն: - 399. իմացեալ լինի ըստ չորրորդ եղանակին անփոփոխ ճշմարտութիւնն. իսկ այն ո՛չ *պատշաճի:* - 457. Իսկ ըստ տնօրէնութեանն քրիստոսի՝ *պատշաճի* և երրորդ եղանակն: - 457. Իսկ հաւասարապէս *պատշաճի* բոլոր բանական եղելոցս ըստ տեղւոյն դիպման: - 457. Եւ աստ գիտելի՛ է, զի **գ** ինչ միայն յատուկ է մարդացելոյն քրիստոսի. և ո՛չ այլ ումեք *պատշաճի* մարդկայինս ազգի: - 473. Պահքն վասն հոգւոյն *պատշաճի*. և Ուտիքն մարմնոյն. իսկ Նաւակատիքն վասն խառնեալ շնչոյն: - 510. Սակայն վարդապետք եկեղեցւոյ *պատշաճե՛ն* զստեղծանելն հօր. իսկ զտրոհելն որդոյ. և զզարդարելն հոգւոյն սրբոյ: - 522. Ութերորդ, զի թէ զզենումն կենդանեաց ո՛չ ունին հրաման զենուլ ազգ կանանց որ է՛ խտրութիւն մարմնաւոր սրբութեանց. զիա՞րդ *պատշաճի* տալ հրաման կանանց ազգի մերձենալ ի կարգ հոգևոր սրբութեան: - 589. Վասն որոյ երից սոցա *պատշաճի* թագն ոսկեղէն: - 712

**ՊԱՏՇԱՃՈՒԹԻՒՆ +** Եւ դու այսպէս ընկալ և հաստատեա՛ ի քեզ. և լեր միացեալ ամենայն դիմօք և խաղալեօք ի համայնից զլուխն միշտ *պաշտամունքեամբ* ի քրիստոս: - 76

**ՊԱՏՈՒԱԿԱՆ +** Չորրորդ՝ զի թէ *պատուական* նիւթով երևէին որպէս արեգակն՝ հուր՝ ոսկի՝ և ակն. գիտէաք թէ զնոյն բնութիւն ունին, և ո՛չ այլ ինչ գերիվերոյ: - 132. **Վասն զարդու գործոց իւրոց. որպէս նկարիչ զքուխ գոյնն ի ներքոյ դնէ՝ զի սպիտակն և այլ *պատուականքն* երևեսցին**: - 149. **Եւ որքան *պատուական* է ճանաչումն՝ այնքան մեծ է սխալումն:** - 150. Եօթներորդ՝ ներգործութեամբն *պատուական* է քան զօրութեամբն. և թէ գոյր զօրութեամբ, լինէր ինքն ինքեան *պատուական* և անպատիւ որ է՛ անյարմար: - 168-169. Ուստի յա՛յտ է՝ զի երեկոյ շաբաթուն որ կոչի կիրակմուտ՝ *պատուակա՛ն* է քան զմիւս գիշերն որ զհետագայ կիրակէին: - 194. Եւ քան զժամանակն ո՛չ է ինչ *պատուական*. ոչ ինչ հաստատ. ոչ ինչ անցական և հոսական. ոչ ինչ աննմնացական. ոչ ինչ այլայլական և փոփոխական: - 198-199. Դարձեալ՝ ոչ ինչ *պատուական* քան զժամանակ. զի զինչ և իցէ յաշխարհի՝ երկու մասունքն կարե՛ն համանգամայն գոլ ի միասին բաց ի ժամանակէ և ի հաստակէ՛. զի ժամանակին **բ** մասն անհնա՛ր է համանգամայն գոլ ի միասին. զի և **բ** պահք ո՛չ կարեն համանգամայն գոլ: - 199. Վեցերորդ՝ զի *պատուական* ակն և մարգարիտ և ազնիւ ոսկի ի ծովս գտանի: - 207. Վարդապետք ասեն թէ ո՛չ ամենայն առաջին *պատուական* է, և ո՛չ ամենայն յետին անարգ: - 230. Որպէս առաջին է կառքն և յետո՛յ կառավարն. և առաջին է նաւն, և ապա նաւավարն. և *պատուական* է մարդն քան զնաւն և զկառքն: - 230. Այսպէս և մարդն թէպէտ յետոյ ստեղծաւ, մեծ և *պատուակա՛ն* է քան զամենայն երևելի արարածս: - 230. Նա՛խ՝ զի մեծ և *պատուական* ասի մարդն: - 230. Եւ այս առինչ է. զի մեծն ցուցանէ զփոքրն. և

*պատուականն* զանապատիւն: - 230. Երկրորդ՝ *պատուական* մասն մարդոյն գլուխն է. վասն որոյ զվերինն և զառաջինն ընկալաւ տեղի: - 232. Ի հինգ զգայութիւնսն ո՞րն է *պատուական:* - 235. **Իսկ ի սոցանէ *պատուական* է տեսանելիքն**: - 235. Նախ եթէ վասն մարմնո՛յն եղև հոգի զի շարժեսցէ զնա. ապա անա՛րգ է հոգին քան զմարմին որ վասն նորա եղեալն է. և մեծ և *պատուական* է մարմին քան զհոգի: - 253. Դարձեալ՝ մա՛րդն է *պատուական* քան զամենայն մարմնական ստեղծուածս: - 275. Ութերորդ՝ նախկին է ժամանակս, և երկրորդ հանդերձեալն. և կեանք ժամանակիս խոտեալ է և անարգ. և հանդերձեալն *պատուական* է և ընտիր: - 310. Երկրորդ՝ զի մի ոք որ կատարէ զօրէնս, *պատուակա՛ն* է աստուծոյ քան զամենայն աշխարհս. վասն այն ըստ մինն խօսի: - 340. **Երկրորդ՝ օրինաւոր ամուսնութիւնն *պատուական* է վասն որդեծնութեան. այլ ո՛չ է նա՛ առաքինութիւն. որպէս կուսութիւն՝ պահք՝ և աղօթք:** - 356. Երկրորդ՝ զի մի՛ անբանքն՝ աստուծոյ *պատուականք* երևեսցին քան զբանականքս: - 416. Եւ նիւթն ոսկի և արծաթ և պղինձ և երկաթ. այլ և խունկն և *պատուական* ակունքն ի հեթանոսա՛ց էր: - 440. **Ոսկի անբիծ հաւատն. և ակն վարք *պատուական*. և խունկ աղօթից**: - 441. Եւ զայս հրոյ իմանի որ առ գալստեամբն քրիստոսի ոմանց մաքրութիւն ներելեսցն լինիլ և առաւել պայծառանալ. որք ոսկի և արծաթ և ականս *պատուականս* շինեցին: - 488. Այլ սոքա ամենայնքն նախկին և *պատուականք* են. այսինքն քահանայ քան զսարկաւագ. և բանական քան զգայական. և ներգործութեամբ քան զօրութեամբ. այսպէս արծակելն քան զկապելն: - 541. Դարձեալ՝ յայտնապէս ասել ո՛չ է հարկ՝ է ամենայն բազում *պատուական* է քան զմին. զի սհա՛ գոյացութիւնն մի է և պատահումն բազում. և արեգակն մի է և աստեղք բազում. և գլուխն մի է և անդամք բազում: - 551. Որ և *պատուական* է վարդապետն քան զաշակերտն. և զօրավարն քան զզօրս. և կառավարն քան զկառն և այլն: - 551. Նմանապէս և ազգս հայոց թէպէտ մի է, կարէ՛ *պատուական* գոլ բազմաց: - 551. Եւ լաւ է մի ակն *պատուական* քան զբազում քարինս անպիտան: - 551. Իսկ թէ հարկաւոր ժամանակ հանդիպի *զպատուական* մասունքն միայն. և կամ զերեսս միայն բաւական է լուանալ: - 588. Վեցերորդ, զի թէ կինն կարէ մկրտել ի հարկաւոր ժամանակի, սուրբն գրիգոր լուսաւորիչն քանի ևս առաւել *պատուական* էր քան զմի կին...: - 589. ...պարտ է զբանիւ *պատուականն* հիմն դնել. որ է՛ երեքսրբեանն...: - 634. ...և զգործով *պատուականն* աւարտ ի վերայ բերել. որ է սուրբ մարմին և արիւնն փրկչական: - 634. ...զի ծառ խաչին *պատուակա՛ն* է առ աստուած և առ մարդիկ. և փառք քրիստոսի է խաչն և կատարումն ամենայն տնօրէնութեանցն: - 634. Աղիւսանման ակն *պատուական:* - 639. Տեսանէր ժողովուրդն ուր կայր աստուած, և ընդ ոտիւքն իբր զգործած աղիւս շափիւղայ. որ է՛ ակն *պատուական*. և աղիւսն խաչածն է: - 639. Չորրորդ, զի մա՛սն է հոգւոյն և հանդերձեալ կենացն. պա՛րտ է *զպատուականն* որոշել քան զմարմնոյս: - 657. Եւ այն զի նախապատիւ է *պատուականն* քան զանարգն: - 662. Վեցերորդ՝ **ամենայն *պատուական* իր՝ ի բարձր տեղւո՛ջէ.** որպէս գլուխն զի *պատուական* մասն է. և լուսաւորքն և երկին քան զերկիրս: - 662. Իսկ որ ասեն՝ նախապատիւ է *պատուականն* քան զանարգն: - 663. Այլ ես ասեմ, ատելութեան և անարգանա՛ց էր ցոյցք, եթէ *զպատուականն* էր տուեալ նախ՝ անտի փոխեալ: - 663. Զի արդարոյն մահ՝ *պատուակա՛ն* է առաջի տեառն որպէս ասէ մարգարէն...: - 669. ...և ողջունեն առ հասարակ և պատեալ դնեն զմարմինն ի տան *պատուականի:* - 672. Իսկ դնել զմարմինն ի տան *պատուականի* որ է՛ գերեզմանն...: - 674. ...**և պահեմք զմարմինն իբր զգանձ *պատուական:*** - 677. *Պատուական* ակունք՝ գործքն բարի: - 702. Դարձեալ՝ ոսկի է հաւատն և դաւանութիւնն անապական. և Արծաթ՝ անաղտ մաքրութիւնն ի մեղաց. և *Պատուական* ակունք՝ զանազան առաքինութիւնք: - 702. Ակն *պատուական* գործք մարմնոյն. պահք, աղօթք, ողորմութիւն, և այլն: - 702. *Պատուական* ակունք սէրն առ աստուած և առ ընկերն. ուստի ամենայն բարեգործութիւնք կատարին: - 702. **Նոյնպէս և մարմինք մարդկան մերկ թաղին՝ այլ մերկ ո՛չ յառնեն. բայց գեղեցիկ յոյժ և *պատուական* զգեստով զարդարեալ**: - 721

**ՊԱՏՈՒԱԿԱՆՈՒԹԻՒՆ +** Այլ և ունի յատուկ *պատուականութիւն* և ունկն՝ զոր ո՛չ ունի ակն: - 235. Եւ այս ամենայն *պատուականութիւն* է ծերոյն: - 378. Երբեմն արքայութիւն կոչի՝ վասն *պատուականութեանն:* - 757. Եւ զանազան տեսութիւնք վարդապետաց չեն ընդ դէմ միմեանց. այլ զորօրինակ ումն զական *պատուականութիւն*, և այլ ումն զբնութեան, և կէսք զաստղողութեան, և ոմանք զորակացն գեղեցկութեանց, պատմեն զմի և զնոյն ական իր: - 781-782

**ՊԱՏՈՒԱՆԴԱՆ +** Եօթներորդ՝ գլուխն և *պատուանդանն* նշանակէ՛ միաւորեալ զաստուածութիւնն և զմարդկութիւնն քրիստոսի. որ խաչեալն է ի նմա: - 493. Թևէ՛ ի թև և *Պատուանդանն* նոճի. և Տախտակ

վերնագրին ծիթենի: - 494. Այսպէս. **բ** ոտիցն. **բ** ծեռացն. **ա** ուսոյն վերայ. **ա** խաչին թևին. **ա** պիղատոսի տախտակին. **բ** այն տախտակին որ *պատուանդան* էր և ոտքն ի վերայ բևեռեալ: - 495

**ՊԱՏՈՒԱՐ +** Եւ արտաքին սրահին *պատուարն* ի մէջ ունելով զխորանն յամենայն կողմանց **ճ** կանգուն երկայն ի հիւսիսոյ և ի հարաւոյ կողմն: - 343

**ՊԱՏՈՒԱՒՈՐ +** Վասն որոյ պա՛րտ էր լինիլ նոցա նախ որ փոքունք և անպատիւք են, զի երևեսցի մեծն և *պատուաւորն* այսինքն մարդն: - 230. Վեցերորդ՝ զի ո՛չ *պատուաւորքն* մեծարեին, և ո՛չ անարգք անպատուեին. այլ ընդդիմակն սոցա. զի ո՛չ կարէին ճանաչել զտէրն և զծառայն. զազատն և զանազատն: - 238. Եւ որք աստ պատուով են, փոխին և լինին անդ անարգ. և անպատիւքն *պատուաւորք:* - 310. Ասեմք թէ՝ զի մի՛ սովորեսցին և *զպատուաւորս* և զբռնաւորս և զայլս քաղեսցեն: - 617

**ՊԱՏՈՒԵՄ +** Ո՛չ է ըստ չարափառացն ասել ուղղակի՝ թէ նախանձու կամ վասն փառաց որպէս ասեն, զի անգիտութեամբն *պատուեսցի*. ընդունա՛յն է կարծիքս այս. ասել զոր չէ՛ արժան անախտ և պարզ բնութեանն աստուծոյ: - 24. Իսկ թէ զմինն, հարցանեմ ձեզ՝ զո՞րն *պատուէք.* և կամ զո՞րն անարգէք: - 90. Զի եթէ զաստուածային բնութիւնն *պատուէք*, հա՛րկ է ձեզ զմարդկայինն անարգել՝ և իրէական խտրութեամբ մոլիլ, որք ասէին՝ «դու մարդ ես՝ և զանձն քո աստուած առնես»: - 90. Իսկ ի ներքուստ ի վեր՝ ի բազմութենէ առ մինն ընթանայ. որպէս խորհրդական աստուածաբանութիւնն արտաքոյ թողեալ զբազումութիւն էից և ի մինն ընթացեալ, որ ամենեւին անքանութիւն է և անիմացութիւն. անճառելի. անիմանալի. և լռութեամբ *պատուի* յամենայն արարածոց: - 123. Չորրորդ՝ *պատուեցաւ* յարութեամբն քրիստոսի. և իջմամբ հոգւոյն սրբոյ ի դասս առաքելոցն: - 193. Ուսաք յիմաստնոց թէ՝ ի բաժանիլ լեզուաց **հբ** տանուտերանց, և ի գնալն յիւրաքանչիւր տեղիս ի հեռու կամ ի մօտաւոր աշխարհս. զօրն զայն տարեմուտս կարգեցին. և ուսուցին որդւոց իւրեանց *պատուել* զօրն զայն տրօք ընչից: - 200. Նախ՝ զի թէ ապականացու էր որպէս երկիրս այս, վասն է՞ր զմարդն *պատուելով* ի դրախտն եդ աստուած: - 222. Այլ մեզ զոր գիրք սուրբք լռեալ են՝ լռութեամբ *պատուեսցի*. և մի՛ մտացածին բանիւք վտարանդեալ ի գուբ կորըստեան անկցուք: - 226. Որպէս ասեն զշամիրամէ թէ՝ յորժամ սպանաւ արա ի պատերազմին, զայլ ոմն նման նորին *պատուեաց* և ասաց թէ աստուածքն յարուցին: - 238. Վեցերորդ՝ ո՛չ առնու ի գլխոյն և ո՛չ յոտիցն. այլ ի միջացն. զի խրատէ՛ զմարդիկ ո՛չ հաւասար գլխոյն *պատուել* զկինն, և ո՛չ անարգել իբրև զոտք. այլ միջակ պատուով չափաւորել զնա: - 276. Իսկ թէ ոք հարցանէ թէ զի՞նչ էր սոցա առաքինութիւնն որ այսպէս *պատուեցան:* - 289. Նա՛խ՝ զի յանդրանիկ տեսուիթիւնս իւր ընտրեաց զնուս յառաջ քան զլինիլն աշխարհի, և յետոյ զնոյն անդրանիկսն *պատուեաց:* - 309. Հինգերորդ՝ զի ունի զվերոյ ասացեալն խորհուրդ տասնեակ թւով. վասն որոյ յիրաւի անդրանիկն *պատուեալ* լինէր թէ ի հոգևորն և թէ ի մարմնաւորն: - 310. Զա՛յս նշանակէ զանդրանիկն խոստել և զրկտսերն *պատուել:* - 310. Այս քան ըստ խորհրդոյ որ անդրանիկքն խոտեին, և կրտսերքն *պատուեին:* - 311. Զի՞նչ է որ որդիքն յոբայ *պատուէին* զօր ծննդեան իւրեանց ի միասին ժողովիլով: - 321. Նա՛խ՝ **որպէս հասարակ շինականք ի ծննդեան զաւակաց զմին օրն *պատուեն* աղարուք կոչելով**: - 321. Երրորդ, վասն վերջնոցն լաւութեան ընտրեցան և խոտանքն. որպէս զհող զքար և զխեցցէ մորքն *պատուեմք* վասն ոսկւոյ և արծաթոյ և մարգարտին: - 398. Հինգերորդ, նա՛ փոքր և կրտսեր եղբարցն. և տէր մեր երկրորդ ադամ. և փոքրիկ կոչեցաւ քան զիրեշտակս և առաւել *պատուեցաւ:* - 435. Քանզի, սաւուղ փոխանակ *պատուելոյ* խորհէր դաւիթ չարիս. և որդիքն սաւուղայ որդւոյն դաւիթ փոխանակ երկրպագելոյ...: - 436. Երրորդիւն *պատուեալ* զծնօղս: - 492. Երրորդ վասն այն արգել, զի ցուցանէ թէ յոյժ *պատուեցաւ* մարմինն այն և ո՛չ է համարձակելի որպէս յառաջն մաքսաւորք և պոռնիկք մերձենային: - 517. Զօրս զայս *պատուեն* իէլացիքն վասն երից պատճառաց: - 523. Նաև մեք յաղագս երից պատճառաց *պատուեմք* զօրս զայս: - 524. Եւ նզովեցին *զչպատուողսն* պատկերաց: - 544. Անարգե՛մք զիոգիս որ է՛ պատկեր աստուծոյ. և *պատուեմք* զմարմինս որ պատկեր է անասնոյ: - 564. Հինքն ի խորհուրդ եօթնից կենցաղոյ դարույս՝ զեօթն առաւել *պատուէին:* - 626. Դարձեալ մայրն ընդ որդւոյն *պատուեմք:* - 634. Լուսաւորիչն գրիգոր ի հռօմայ գահիցն *պատուեցաւ:* - 639. Երկրորդ, զի ուսցուք այսպէս զամենայն ինչս մեր հաղորդել ի պէտս կարօտելոց. և զմիմեանս մեծարել և *պատուել* սիրով: - 655. Նա՛խ՝ *պատուեմք* զմարդն որ է՛ պատկեր աստուծոյ...: - 677. Տասներորդ, որպէս հատն սերմանեալ և բուսեալ և չարչարեալ և ընդ հուր անցեալ՝ ապա՛ ի սեղան եդեալ *պատուեսցի:* - 721. Եւ սոքա երբեմն հաւասարին. որպէս յորժամ արդարապէս հատուցէ բարեաց և չարաց. և միտեն յարաժամ անվախճան *պատուէ* և պատժէ: - 746. Այլ և յորժամ ի վեր քան

զչափն *պատուէ* զուրբս, և ի վայր քան զչափն պատժէ զմեղաւորս: - 746. Կամ լինէիր *պատուեալ* որպէս զյովսէփ. որում երկրպագէին եգիպտացիքն որպէս աստուծոյ: - 761. Եւ *պատուեալ* երկակի զարդու. և պարգևեալ և խոստացեալ պատուիրանօք: - 776

**ՊԱՏՈՒԷՐ +** Եւ *պատուէրն* ըստ կամաց: - 277. Երրորդ՝ զի չէին առեալ *զպատուէրս* որ ծնանէր զերկիւղ և զգուշութիւն. որ ի պակասումն զգուշութեան ամօ՛թն է: - 278. Եւ *պատուէրն* է խրատ սիրելեաց և որդւոց: - 340. Երկրորդ՝ օրէնքն է հարկի. և *պատուէրն* կամաց: - 340. Վեցերորդ՝ զի նա՛ զպարգևս երկրային խոստանայր առնողացն *զպատուէրս*. և քրիստոս զերկնայինն: - 442

**ՊԱՏՈՒԻՐԱՆ +** Նա՛խ՝ զի ամենայն մեղք յանցումն է *պատուիրանացն* աստուծոյ: - 33. Դարձեալ՝ փորձիչս այս փառասիրութեամբ յառաջեաց առ քրիստոս. ուստի և ի բանից իւրոց երևի թէ ամենայն *պատուիրանացն* պահպանօղ եմ. զոր տէրն պակաս լինել յանդիմանեաց: - 47. Եւ ասաց ինքն պահողացն *զպատուիրանս*, «ես և հայր առ նա եկեսցուք՝ և օթևանս առ նմա արասցուք»: - 71. Իսկ **ժ** եղջիւրն է **ժ** *պատուիրանին* յանցումն, որով պատերազմի ընդ մարդկան: - 151. Եւ է՛ իմանալի լոյս՝ որպէս հրեշտակք՝ և հոգի մարդոյ. և *պատուիրանն* աստուծոյ. զի «*պատուիրանք* տեառն լոյս են» ասէ մարգարէն: - 185. Երեսուն**գ**՝ Զի՞նչ *պատուիրանն*. և մահու մեռանիլն: - 228. Որո՞վ զանազնին օրէնքն և *պատուիրանք* և հրամանք: - 277. Իսկ *պատուիրանքն*՝ բարեկամի առ բարեկամս քաղցրութեամբ. որպէս հօր առ որդիս. և եղբօր առ եղբարս: - 277. Եօթներորդ՝ թշնամի եղև գործն մեր. որ նա՛ ի մեղս փոխեաց անցանելով *զպատուիրանն:* - 277. Իններորդ՝ սէր և գութ աստուծոյ ի վերայ մարդոյն հնազանդութեամբ *պատուիրանին* որ գայր առ նա՛: - 279. Իններորդ՝ խորհրդակից ունել ո՛չ զթունարկու օձն. այսինքն զարկածք չարին. այլ *զպատուիրանս* աստուծոյ որ ի գիրս սուրբս: - 281. Զի պահելով *զպատուիրանն* ի կատարեալ անմահութիւնն ժամանէր յերկինս. իսկ անցանելովն փոխեցաւ ի մահ և անկաւ յերկիր: - 282. Եւ այլք ասեն ընդդէմ այսմ, եթէ յետ **ռ** ամին ի դրախտէն փոխիլոց էին յարքայութիւնն թէ պահէին *զպատուիրանն*. և յորժամ ելին ի դրախտէն՝ ի նոյն թիւն ո՛չ հասին: - 290. Իսկ այժմ ամենայն ոք ի գրեալսն ուսանի *զպատուիրանս* աստուծոյ և ո՛չ ի հարց իւրեանց: - 291. Երրորդ՝ ըստ առաքինութեան ի *պատուիրանէն* տեառն յղացեալք, և ծնանիմք առաքինութեամբ զփրկութիւն հոգւոյ...: - 308. Եւ կապ *պատուիրանացն* աստուծոյ: - 317. ...**ժ**՝ *պատուիրանացն* աստուծոյ հեղգութիւն գործէ: - 322. Ութերորդ, մովսէս **խ** օր ի մէջ ամպոյն կալով էառ *զպատուիրանսն:* - 328. Իսկ օրէնքն և *պատուիրանքն* այնպէս զանազանին: - 340. Երկրորդ՝ սերմն բանին *պատուիրանացն* որ ո՛չ կենդանանայ: - 368-369. Աստ զսէրն աստուծոյ ասէ. զսէր ընկերին ո՞ւր ասէ որ ասաց փրկիչն, «յայս **բ** *պատուիրանս* ամենայն օրէնք կախեալ կան»: - 396. Եւ ի սոցանէ ողորմութեան և արդարութեան գործ. որ է՛ օրհնութիւն և անէծք ի մի *պատուիրանն* աստուծոյ տրամակայեալ: - 403. Երկրորդ՝ հրէայքն ի գերութեան կախեցին զկտակարանքն ի յուռեաց, և ո՛չ հաւատային կենաց. որ ասէր կտակարանքն պահել *զպատուիրանս* աստուծոյ և կեալ: - 405. Եւ թէ պահեալ էր *զպատուիրանն* յաւիտեան անծերանելի էր կացեալ: - 411. Եւ յանցանելն *զպատուիրանն*՝ կործանեցաւ ի կորուստն ապականութեան: - 467. Եւ թէ պահեալ էր *զպատուիրանն* աստուծոյ՝ լինէր գիր կենաց դպրութեան: - 481. Զի յամենայն մեղս երևի հպարտութիւն այսպէս. զի ամենայն մեղք խոտումն է *պատուիրանացն* աստուծոյ, և խոտորումն զհետ հեշտութեան մարմնոյ...: - 562. Զի **ժ** *պատուիրանքն* և **է** մահու չափ մեղքն են ըստ գոյացութեան մեղք. որպէս մի՛ շնարն և մի՛ գողանարն և մի սպանաներն և մի՛ սուտ վկայերն: - 565. Ա՛րդ՝ ի սոցանէ մասն ինչ աղօթակա՛ն է և մասն ինչ հրաման. վասն զի մասն ինչ եկեղեցւոյ կանոնաց մեղանչեմք, և մասն ինչ և մասն ինչ *պատուիրանացն* աստուծոյ: - 602. Աստ աւետարանն. և ի մեզ գրեալ *պատուիրանքն:* - 614. ...թէ *զպատուիրանս* նորա պահեմ, և զայն կեանքն տայ: - 664. Վեցերորդ՝ ճանապարհ կոչի օրինացն և *պատուիրանաց*...: - 666. Իսկ գիրք կենաց է գիրքն քրիստոս. ի յորում ամենեքեան իբրև ի գիրս ընթերցցին թէ զինչ ի *պատուիրանաց* նորա արարին: - 742. Երկրորդ, *պատուիրանն* աստուծոյ և օրէնքն է վկայ պահողացն և անարգողացն զնա: - 743. Եւ վասն այն ասի արքայութիւնն աստուծոյ, զի *պատուիրանօքն* որ յաւետարանն կամ յայլ գիրս սուրբս գտանին, պահողացն արքայութեանն մուտ բացեալ լինի. և ներքին մարդս ամրացեալ հաստատի: - 754. Ասեմք առ այս, եթէ առաջին կեանքն դրախտին ո՛չ զայն իմանան վարդապետք զոր ունէրն ադամ. այլ զոր խոստացաւն ադամայ եթէ պահեալ էր *զպատուիրանն*. որ նոյն ինքն է արքայութիւնն երկնից ի տեղի անկելոց հրեշտակացն: - 758. Եւ պատուեալ երկակի զարդու. և պարգևեալ և խոստացեալ *պատուիրանօք:* - 776

**ՊԱՏՈՒԻՐԵՄ +** Չորեքտասաներորդ՝ սէ՛ր է աստուած և աղբիւր սիրոյ. և մեզ *պատուիրեաց* սիրել զմիմեանս: - 272. Եւ ուրեք զսէր և քաղցրութիւն՝ *պատուիրել* ասէ. որպէս ադամայ *պատուիրեաց:* - 277. Եւ քրիստոս առաքեալ զինքն ի հօրէ քարոզէր, և հաւատալ ի հայր պատուիրէր: - 328. Ի յայս միտս և տէրն աշակերտացն *պատուիրեաց* մի՛ ազանել կօշիկս: - 331. Քսանևը՝ զոր ինչ *պատուիրեաց* մովսէս՝ զնոյն և արար յեսու: - 419. Եւ զոր *պատուիրեաց* հայր՝ զնոյն և արար որդի: - 419. Դարձեալ կոչին յանձնառականք. որ ի *պատուիրելոյ* ումեք գոյ ողջախոհ. այլ զպատճառն ո՛չ գիտէ. նաև ո՛չ հետևին միմեանց: - 582. ...**իսկ կանանց ազգին *պատուիրէ՛* առաքեալն ի ժամ աղօթիցն շուք դնել գլխոյն վասն հրեշտակաց. այսինքն վասն քահանայից որ հրեշտակք կոչին ի գրոց**...: - 590. Վասն որոյ *պատուիրեաց* «գա՛յ գիշեր յորում ո՛չ կարէք գործել»: - 780

**ՊԱՏՈՒՀԱՆ +** Երեսունևմի, գիշերի ընդ *պատուհանն* ել, թողեալ զպատանսն յանկողնի. և տէրն ի գիշերի յարուցեալ եթող զկտաւն ի գերեզմանին կնքեալ: - 436-437. Որ և պահապանքն շրջապատեալ. որ և զհանդերձն պատատեալ յանկողնի, և լերդ այծեաց և մազ ի սնարսն. և ի գիշերի իջեալ ընդ *պատուհանն* և ելեալ առ սամուէլ զերծաւ ի ծեռաց նոցա: - 513. Որպէս թէ ոք ի *պատուհան* ինչ ցուցանէ զինքն յաշխարհի, և վաղվաղակի ի մահ դառնայ: - 592

**ՊԱՏՈՒՀԱՍ +** Յիսունևդ, Վասն է *պատուհասին*. և տասանորդաց: - 284. Դարձեալ՝ խառնակիլ լեզուին ա՛յն է որ ընդ *պատուհասն* զբարութիւնն խառնեաց. զի թէպէտ բաժանումն լեզուաց *պատուհաս* երևի, այլ պիտանի՛ է: - 297. Եւ ահե՛դ է *պատուհաս* ամենայն մեղաւորաց ի տեառնէ ...: - 315. Չորրորդ՝ խնայեաց զնոսա իբր ի մարդիկ զի զղջացեն փոքր խրատովն և ի մեծ *պատուհասէն* զերծանիցին. այլ նոքա խստացան մինչև զամենայնն կրեցին: - 333. Ութերորդ՝ զի թէ թողցեն զվայելչութիւն խորանիս այս և այլոց հետևեսցին, անպատասխանի լիցին ի *պատուհասն*...: - 342. Նա՛խ՝ էպատիկ՝ զբազո՛ւմն նշանակէ. իբր թէ ըստ բազում մեղաց մերոց բազում և առաւել է *պատուհասն*: - 376. Տասներորդ, որպէս ասէ փիլոն՝ նշանակ հեշտ ցանկութեան է օձն. որ և զցանկացօղ ժողովուրդն սատակէր. ըստ ախտին իւրեանց նմանեցոյց *զպատուհասն:* - 387. Նոյնպէս և հանդերձեալ *պատուհասն* բարի է և արդարութիւն: - 408. Եօթնևժ, Սատակումն մահուն. որ յերից զմինն խնդրեաց *պատուհաս:* - 413. Վասն է՞ր յերից *պատուհասից* զմինն խնդրեաց: - 434. Եւ ընդ նոյն ճանապարհին ոչ դառնալ, զանդառնալի *պատուհասն:* - 442. Վասն որոյ ասաց՝ «դժուարինս խնդրեցեր». այսինքն *զպատուհաս* ժողովրդեանն: - 445. Աչն զշնորհս արդարոց. ահեակն *զպատուհաս* մեղաւորացն: - 493. Իսկ զմիջին *պատուհասն* եդ աստուած ի վերայ զմահն: - 496. Որպէս բազում անգամ ի ժամանակս պատժոց մեղաց՝ և արդարք ընդ մեղաւորացն կրեն *զպատուհասն:* - 507. **Եւ ընդ ասելն «մեղայ», անցոյց աստուած զմեղքն. այսինքն անցաւ և փոխեցաւ յաւիտենից *պատուհասն* ի ժամանակեայն**...: - 602. Եւ ի ձեռն հրեշտակի բազում *պատուհաս* և հարուած կրէ աստ մարմինս...: - 682. ...այլ ի սիրտս ամենեցուն խորհուրդ ամբարշտացն *պատուհասից* կերպարանի. իսկ պատիժն յետ արդար դատաստանին: - 703

**ՊԱՏՈՒՀԱՍԵՄ +** Եւ ասեն՝ զգործս ջրհեղեղին ունիմք՝ երկնչիմք զի *պատուհասէ* զմեզ: - 296. Չորրորդ՝ նոր չարիս գործեցին, խիստ և առաւել *պատուհասեցան*. որպէս և կայեն. զի նշան լիցին աշխարհի ահի՛ և երկիւղի: - 303. Զի բարերարե՛ն և *պատուհասե՛ն*. զոմանս պահելով ի խաղաղութեան: - 345. Իսկ մովսէս ո՛չ բնութեամբ՝ այլ անուամբ և գործով. զի բարի առնէր և *պատուհասէր:* - 350. Ապա թէ որդիք և թոռունք չօգտին ի ներելոյն, յայնժամ *պատուհասէ՛* և ջնջէ զյիշատակ չար ազգին: - 351. Երբ զերեք հասակի մեղսն ներէ աստուած՝ և թէ ի չորրորդն ո՛չ զղջանայ, յայնժամ *պատուհասէ՛:* - 351. Իսկ դադան քրէական մեղանչեաց որ է՛ յանցումն ի թագաւոր. զոր անհնարին *պատուհասին*. գոյիւք և ազգօք ջնջին: - 381. Զի ո՞ր ոք և յանցանէ՝ *պատուհասի*. եթէ հրեշտակք, և եթէ սուրբք ի մարդկանէ: - 386. Նա՛խ՝ զի մարդն տէ՛ր է և թագաւոր. և անասունքն ծառայ ընդ անցաւոր տէրանց. և ծառայքն *պատուհասին*. որպէս առ ջրհեղեղաւն: - 416

**ՊԱՏՍՊԱՐԱՆ +** Երրորդ՝ *պատսպարանք* լինին: - 212. Զոր մարդիկ բանականութեամբ և արւեստիւք ստացան զզէնս զանազանս ի յերկաթոյ ի *պատսպարանս* ինքեանց: - 216-217

**ՊԱՏՐԱՆՔ +** Ապա ուրեմն յորդհութիւնն և յանունն խոստովանին միութիւն ի *պատրանս* պարզամտաց. և զճշմարիտ միութիւնն ուրանան և փախչին: - 82. Երրորդ՝ ի *պատրանաց* թշնամւոյն մոռանայ զբարի բանս: - 120. Եւ այս վասն այնորիկ՝ զի չարախօսէ՛ր զմարդիկ եթէ ինքնայօժար կամօք և բնութեամբ մեղան և ո՛չ ի *պատրանաց* իմոց. որպէս չարախօսէր զյոբայ եթէ՝ «միթէ ձրի՞ պաշտէ յոբ

զտէր»: - 153. Երրորդ՝ զի ո՛չ գիտէին զանդրանիկն ժամանակաւ, և ո՛չ զկրտսերն. և լինէր փոփոխումն վիճակաց նոցին. որպէս յակոբ էառ զանդրանկութիւնն եսաւայ. և եփրեմ զմանասէին. թէ և սոքա տեսչութեամբն աստուծոյ. այլ նոքա ի *պատրանաց* լինէին: - 238. Բայց անյա՛յտ էր գրեալն. մինչ խաչիւ և չարչարանօք զգիրն *պատրանաց* նախաստեղծիցն պատառեաց, և ապա՛ զայս գիր ետ յայտնապէս: - 481. Թէպէտ այսօր վասն *պատրանաց* մարդկան և փոխելոյ զտօնս՝ ոչ ինչ ուտեն զնաւակատեաց որ է ծուկն. զոր միշտ զքառասնորդ պահքս պղծեալ են ձկամբ և արբեցութեամբ: - 509. Դարձեալ զանազանին. զի գործ մեղացն է յայլմէ՛ առ մեզ՝ կամ ի մէնջ առ այլս. այսինքն ի *պատրանաց* բանսարկուին և ի չարաց ոմանց առ մեզ. և ի մէնջ առ ընկերակիցս մեր: - 569. Եւ վասն նեռին և *պատրանաց* նորա: - 660. ...զի նուազեսցին դժնդակութիւնք և *պատրանք* մարդկան և սատանայի: - 709

**ՊԱՏՐԱՍՏ +** Սակայն զառձեռն *պատրաստ* դիցուք ի իմն եղանակաւ պատմաբանութեամբ: - 304. Երրորդ՝ զի առ ձեռն *պատրա՛ստ* գտանէր: - 415. Եւ գիտելի է, զի մարդ որ ի մեղք անկանի և իմանայ զինքն որ մեղք գործեաց, և ունի_զխոստովանահայրն *պատրաստ* ուղղափառ և գիտուն, ի յա՛յն պահն պարտի խոստովանիլ: - 601. ...և քաղաքացիքն նախ զարդարեն զինքեանս և զփողոցն և կան *պատրաստ:* - 646. ...միշտ ի մտի ունելով. և *պատրաստ* տանելով սահմանեալ ժամանակին: - 673. Իսկ զբնակութիւն փառացն այլ ուր *պատրաստ* ասէ և ոչ տուեալ: - 695. Երրորդ զի *պատրաստ* և գօտևորեալ: - 730

***ՊԱՏՐԱՍՏ ԼԻՆԵԼ +*** Նա՛խ՝ զի ամենայն ոք *պատրաստ լիցի* մահուան աւուրն և յանկարծակի գալստեանն քրիստոսի...: - 292. ...քանզի խաղաղարարն է առանց հակառակութեան մարմնոյ՝ աշխարհի՝ և սատանայի. յա՛յտ է զի *լինիցի պատրաստ* ի յաղթել զփորձութիւն մահու: - 586. Այլ և տեսցուք զվկայութիւնս հակառակացն և յարմարեսցուք զպատասխանիսն, զի առ ձեռն *պատրաստ լիցի:* - 695

**ՊԱՏՐԱՍՏԵՄ +** Ասեմք առ այս թէպէտ ունին զօրութիւնս, բայց այլ և այլ կերպիւ. զի բոյսք որք յերկրի են դարմանիչք և բժշկութիւնք մարմնոց. այլ երկնային աստեղքն են արարիչք լուսոյ և ժամանակաց. և ի նշանս ապագայից. զի յամենայն ուստեք տեսեալ *պատրաստեսցին* մարդիկք. որպէս ասէ գիր, եղիցին լուսատու լինիլ երկրի. ի ժամանակս և ի նշանս: - 12. Երրորդ՝ անկումն նոցա է՛ր ակնկալութիւն տանջանցն. և զայս մինչ ի քրիստոս ո՛չ գիտացին *զպատրաստեալ* տանջանս իւրեանց...: - 153. Իսկ թէ կամիս ուսանիլ թէ զի՞նչ է նիւթ պսակին. որ ինչ առ աստուածութեան իւրում մեծութիւն գտանի, զա՛յն *պատրաստեաց* սիրելեաց իւրոց. զոր ո՛չ կարեմ զմտաւ ածել. կամ վայրապար լսելեօք լսել: - 161. ...ի մէջ նեղութեանց լինելով՝ յանցեալ մեղացն զղջանամք և սրբիմք. և յապագայն զգուշութեամբ պարսպիմք. և ի ներկայն՝ արի՛ և կա՛զմ *պատրաստիմք:* - 162. Որպէս մրջիւն նախ քան զլինիլն անձրևի՝ զկերակուրն *պատրաստէ:* - 218. Կարգաւոր էր նախ *պատրաստել* զարքունիս որ է երկինք և երկիր. և զգահոյս որ է՛ դրախտն. և զսպասաւորքն որ են կենդանիքն. և զմեծութիւնս տնկոց և բուսոց. մանաւանդ ոսկւոյ և արծաթոյ և ականց ի սիրտ երկրի գանձել. և ապա՛ թագաւորին բնակիլ: - 230. Հինգերորդ՝ զորօրինակ մեծատուն ոմն զոք ի ճաշ կոչիցէ, նախ *պատրաստէ՛* զամենայն պէտս կերակրոց և ըմպելեաց. և ապա՛ մեծարէ՛ զկոչնականսն: - 230. Ի պատիւ մեծարեաց զմարդն. և նա՛խ՝ *պատրաստեաց* պէտս զանազան կերակրոց և ըմպելեաց...: - 230. Եւ զկրկնակի կենաց վայելումն ըստ խառնեալ էութեան իւրոյ. զի թէ զաստուածայինսն բերցէ յինքեան ըստ որում ի պատկերն եղև, վերափոխեսցի անմահ կենօք ի *պատրաստեալն* ժառանգութիւն: - 231. Զի կազմողական զօրութիւնն որ է՛ ի նիւթն՝ ազդումն առեալ յարարչադիր հրամանէն, նախ կազմէ՛ և *պատրաստէ՛* զնիւթն առ ի յընդունելոյ զտնկականն. և ապա զզգայականն. յետ որոյ զբանականն ի ծագմանէն աստուծոյ: - 254. Եւ այս կազմողական զօրութեանն է որ նախ *պատրաստէ՛* զնիւթ առ կեանքն. և ապա ի զգայութիւնն. և ապա ի բանաւորութիւնն: - 255. Արդ՝ տնկական զօրութիւնն բնականապէս՝ է նիւթն. որով կազմի և *պատրաստի* նիւթն առ տեսակս ազգի իւրեանց: - 262. Եւ այս ցոյցք յուսո՛յ է վասն հանդերձելոյն հոգալ և *պատրաստել:* - 289. Երկրորդ՝ ըստ ախորժակաց նոցա *պատրաստէր*. զի գիտասցեն թէ զկամս նոցա կատարէ՛ աստուած: - 339. Չորրորդ՝ զի գիտասցեն թէ գոյնք և համք զանազան կերակրոց և պտղոց ո՛չ իւրովի *պատրաստին,* այլ ի շնորհացն աստուծոյ: - 339. Իններորդ՝ զի մերձեալ տեսանէ զօր մահուն և զթշնամին առաջի աչացն որով *պատրաստի:* - 378. Հինգերորդ՝ յառաջ տապանակն գնայր և դիտէր հանգիստ. և զհետ վէմն տայր ջուր. զի այժմ զհանգիստ *պատրաստէ՛*, և յետոյ զվայելչութիւն տայ: - 385. Նոյնպէս որ *պատրաստեաց* սիրելեաց զփառս, և զտանջանս չարեաց, անգիտելի՛ է այժմու կենացս: -

406. Երրորդն երևի յորժամ աստուած արդարացուցանէ զմեղաւորն. յորժամ *պատրաստէ՛* զինքն առ շնորհն գործելով զբարին: - 459. Սակայն ըստ ներգործութեան մեծագոյն է սրբութիւն մկրտութեանն. զի տպաւորէ զկնիքն. այլ և բանայ զդուռն արքայութեան. այլ և *պատրաստէ՛* զմարդն առ ի խորհուրդս ամենայն. զոր ո՛չ ներգործեն ա՛յլ երկոքին եզական շնորհքն: - 462. Այսպէս գերազա՛նց է քան զամենայն շնորհք հեղեալ ի ստեղծուածս. այս է գերագոյն շնորհք. որ *պատրաստեաց* զկոյսն առ մայրութիւն աստուծոյ: - 463. Յաղագս որոյ *պատրաստեաց* նիւթ արեան, կազմեալ զօրութեամբ հոգւոյն. որով լինիցի ճշմարիտ մայր քրիստոսի: - 470-471. Չորրորդ՝ զի *պատրաստեսցէ* մեզ տեղի. ըստ որում ասէր, «երթամ և *պատրաստե՛մ* ձեզ տեղի»: - 519. Ի յասացելոցս յառաջագոյն այս ինչ հաւաքի, եթէ ունակութիւնք մարդկային առաքինութեանց նախկնաբար *պատրաստե՛ն* ի վարժումն գործնական կենացն. իսկ ունակութիւնք պարգևացն *պատրաստե՛ն* ի վարժումն տեսական կենացն: - 586. Այլ ունակութիւնք երանութեանցս *պատրաստե՛ն* առ կատարելութիւն երկոցունց: - 586. Դարձեալ՝ է են խորհուրդք որ *պատրաստեն* զմեզ ընդունիլ զեօթն առաքինութիւնս: - 587. Որոյ գործն է սպասաւորել քահանային ի խորհուրդ եկեղեցւոյն. զսկիհն *պատրաստել*, զաւետարանն կարդալ ի բեմն: - 606. որ մարդն զինքն յառաջ *պատրաստէ՛* և ապա՛ աղօթէ ...: - 620. ...այսինքն միտն ի մարմինն. **բ** ի միտքն. **գ** ի կամքն. յորժամ սոքա *պատրաստին*, ապա՛ աղօթքն ընդունելի լինի աստուծոյ: - 620. Այսպէս հոգևոր սակաւ ինչ այսօր ուրախանամք և *պատրաստեմք* զմեզ: - 646. Եւ զայն աշխարհն տեսութեամբ և իմացմամբ միշտ յաւիտեան. անվախճան *պատրաստէ՛* զիանգիստ և զերանութիւն նոցա: - 647. ...զոր միշտ և յաւիտեան *պատրաստէ՛* և կազմէ՛ աստուած: - 647. ... և ապա տանջի ընդ սատանայի ի հուրն յաւիտենական որ *պատրաստեալ* է նոցա: - 667. ...որով իմանան արդարքն թէ այնպիսի փառս *պատրաստեալ* է նոցա. և յուսով վայելեն մինչև օր դատաստանին: - 697. Եւ երիւք *պատրաստի* մարդ ի գողոյ: - 730. Երկրորդ կոչի հնձան արքայութիւնն երկնից. ուր ժողովին պսակք և փառք զանազան հանգստեան սրբոց զոր *պատրաստեալ* է աստուած սիրելեաց իւրոց ըստ առաքելոյ: - 748-749. Զոր ակն ո՛չ ետես, և ունկն ո՛չ լուաւ, և ի սիրտ մարդոյ ո՛չ անկաւ, զա՛յն է *պատրաստեալ* աստուած սիրելեաց իւրոց: - 761. Եւ է՛ հասարակ շնորհ, հաւանութեամբ անձնիշխան կամաց՝ *պատրաստել* զինքն առ ի փրկութիւն օգնականութեամբ շնորհին: - 783

**ՊԱՏՐԱՍՏՈՒԹԻՒՆ +** Զի երեք են ի թողութիւնն. այսինքն թողօղ. և այն որում թողու. և *պատրաստութիւն* նորին: - 567. Դարձեալ՝ *պատրաստութեանն* ի թողութիւն պարտի լինիլ կրկին. այսինքն ճանաչումն ճշմարտին՝ և սէր բարւոյն: - 567

**ՊԱՏՐԵԼ +** Ապա ուրեմն չարն ո՛չ է յաստուծոյ այլ ի մէնջ՝ կամ ի նենգութիւնէ թշնամւոյն որ *պատրէ՛* զմեզ: - 19. ...սոքա ընդդէմ նմին որոշեն զբանն ի մարմնոյն. զի մի՛ իցէ աստուած մարդացեալ ըստ նոցա՝ և մարմինն աստուած. և պատճառս հայթայթելով *պատրեն* զմարդիկ: - 35. Տասներորդ՝ ներռն քարոզութեամբ *պատրէ*՝ և ուրական սքանչելեօք. և այլն. և սոքա քաղցրաբանութեամբ և օրհնութեամբ *պատրեն* զմիտս անմեղաց. և հրեշտակ լուսոյ կերպարանին որպէս հայրն իւրեանց սատանայ. և ամենայնն ուրական միայն և ո՛չ ճշմարտութեամբ. և բոլոր դիտումն նոցա է՛ *պատրել* զմարդիկ և հանել ի հաւատոց. և լնուլ զորովայնս. և զկանայս շեղջակուտեալս մեղօք յինքեանս գրաւել: - 35. Մեք ո՛չ *պատրիմք*. և ո՛չ հաւանիմք նոցա: - 83. Անմարմին՝ զի յաւկասցի. և լոյս՝ զի *պատրեսցէ*. և անմահ՝ զի տանջեսցի միշտ: - 147. Այլ և զնախնիքն մեր *պատրեաց* և չարացոյց: - 148. Նոյնպէս և յաւերժահասունք՝ զի միշտ *պատրեն* զմարդիկ ուրախութեամբ: - 150. Իսկ զոմանս կորուսանէ և *պատրէ՛*. որ է՛ երրորդ մասն կորուսելոցն: - 152. Երկոտասաներորդ՝ զի սուրբքն բանիւ մեզ ուսուցանեն՝ նեղութեան և փորձանաց համբերել. *պատրին* ինքեանք գործով կատարել զնոյն. զի հաւատարիմ լիցին բանք նոցա: - 159. Երկրորդ՝ դարձեալ նոյն ինքն սատանա՛յ է օձն. որ փոխեցաւ ի բարեկամի ձև. և *պատրեաց* զնախաստեղծսն: - 332. Եւ երազահանն, որ ի գիշերի տեսանէ զդևս և մարգարէութիւն պատմէ զի *պատրեսցէ*: - 388. Եւ նստելն յաթոռ՝ *պատրեաց* զաքայար: - 413. Իսկ նստիլն ի յաթոռ՝ ասէր *պատրել* զաքայար, թոյլ տալն է աստուծոյ որ մարդ իւր կամօքն հաւանի չարին և պատժի: - 444. Ո՞րպէս *պատրէ* զմարդիկ: - 708. Նա՛խ՝ *պատրեսցէ* զեկեղեցականս խորամանկ քարոզութեամբ...: - 708. Երկրորդ՝ սուտ սքանչելեօք և կախարդութեամբ *պատրեսցէ* զկրօնաւորս: - 708. Երրորդ՝ առատ պարգևաց տրօք *պատրեսցէ* զմեծամեծս և զագահս: - 708. Չորրորդ՝ զռամիկս և զմարմնասէրս ահիւ և տանջանօք *պատրեսցէ:* - 708

**ՊԱՏՐԻԱՐԳ +** Եւ *Պատրիարգունք* էին անդ, Արիստակէս հայոց: - 542. Եւ *Պատրիարգունք* էին անդ,

Ներսէս հայոց. Կիւրեղ երուսաղէմի. Դամասոս հռօմայ. Նեքտառիոս կոստանդնուպօլսի: - 542. Եւ *Պատրիարգունք* էին անդ, Սահակ հայոց՝ թղթով միաբանեալ: - 542. Եւ պետրոս անտիոքու *պատրիարգն* և սուրբն պարսամ գրեցին ի հայք և զգուշացուցին. և նզովեցին զհաւանեալսն մարկիանոսի: - 543. Եւ *պատրիարգունք* էին անդ, Գէորգէոս կոստանդնուպօլսի. Թէոփիլոս անտիոքու. Պետրոս աղէքսանդրի: - 543. Եւ *պատրիարգունք* էին անդ, եղիա երուսաղէմի: - 544. Եւ թէ ոք ասիցէ, ի կեսարիայ ձեռնադրեցաւ ի ղևոնդիէ *պատրիարգէ:* - 548. Եւ այսպէս ղևոնդիոս ձեռնադրեալ ի նմանէ *պատրիարգ*. յորմէ ձեռնադրեցաւ լուսաւորիչն մեր: - 548. Եւ ի լեառն ծիթենեաց հանեալ զնոսա և օրհնեալ՝ արար զնոսա Կաթողիկոսունս և *Պատրիարգունս*, զամենայն շնորհելով նոցա լիով: - 607. Իսկ ըստ եկեղեցւոյն յունաց, Առաջին դասք են *Պատրիարգունքն*. որ թարգմանին հայրապետ...: - 607. Եւ գ արքեպիսկոպոսք ունին իշխանութիւն ձեռնադրել *զպատրիարգսն:* - 607

**ՊԱՏՐԻԱՐԳԱՐԱՆ +** Եւ բաժանեալ զսուրբ տեղիս տնօրինական, եւտուն զսուրբ յակոբն *պատրիարգարան*, և զգողգոթայն, և զսուրբ կարապետն և զսնարսն. և արկեալ վիճակս ի վերայ յարութեանն՝ անկաւ հայոց. և տրտմեցան ոմանք յազգէ նոցա: - 548

**ՊԱՏՐՈՒԱԿ +** Պատասխանեմք այսմ եթէ սո՛ւտ են ասացեալքդ. և *պատրուակին* ճշմարտութեամբ. սակայն յայտնի՛ է իմաստնոց: - 8. Վեցերորդ՝ է՛ *պատրուակ* մեղացն. զի ոմանք չար գործով ի բաց մերժեն յինքեանց զլոյս արեգականն արդարութեանն...: - 32. Եւ այլք թէ՝ *պատրուակ* գոն ի խինծս արգանդի բնաւորեալ. յիւրաքանչիւր աւուրս հնգից՝ մին մին քակտին երկամբք. և ապա՛ արձակի ծնունդն: - 785

**ՊԱՏՐՈՒԱԿԵՄ +** Այլ և յայտնեաց զճածուկ *պատրուակեալ* խօսս նորա: - 47. Եւ ծառ գիտութեանն *զպատրուակեալ* բարիս մարմնական: - 222. Եւ է՛ միւս բարի խառնակն և *պատրուակեալն*. որպէս է աշխարհական բարին. զի գունով և երևելեաւ բարի է, այլ ի ներքոյ ծածկեալ չա՛ր է. յայսմանէ հրաժարէ՛ զմեզ ոչ մերձենալ: - 224

**ՊԱՐ +** Չորեքտասաներորդ, Դարձ տապանակին **է** դաս *պարուք:* - 412. Այն է՝ յորժամ դաւիթ զտապանակ ուխտին հանէր յերուսաղէմ, **է** դաս *պարուց* որք են քահանայից դասք. և սրինգ. և փողք. և քնար. և այլն: - 645. Ո՞րպիսի լիցի օրն այն, մինչ քեզ մարիամ մայր տեառն ընդ առաջ ելանէ հանդերձ *պարուք* կուսանաց: - 764

***ՊԱՐ ԱՌՆՈՒԼ +*** Զի յառաւօտն մին խնկարկի ի տէր եթէ շրթունքն. և այն ևս գ անգամ *պար առեալ*. և մի յօրհնութիւնն ևս գ անգամ. և մի ի փառք ի բարձունսն ևս գ անգամ: - 618

**ՊԱՐԱԳԱՅ +** Այլ ասեն վարդապետք եթէ՝ ի համբարձմանն քրիստոսի ընդ իրս տեսանելի է որք են *պարագայք* համբարձմանն: - 520. Իսկ անթողլի մեղաց զ են *պարագայք*. այսինքն յուսահատութիւն. յանդգնութիւն. մարտնչիլ զճշմարտութիւնն ճանաչելոյ. նախանձ ընդ դէմ եղբայրական սիրոյն. խստասրտութիւն և անզղջութիւն մինչ իսպառ: - 567. Քանակաւ. Օրինակաւ. Որքանութեամբ. *Պարագայիւ*. և Բաղդատութեամբ: - 777. ...իսկ *Պարագայիւ*, զի նա ակամայ և տգիտութեամբ. ուստի ո՛չ ունելով զգիտութիւն բարւոյ և չարի: - 777

**ՊԱՐԱԳՐԵԼԻ** - Նմանապէս՝ անպարագրելի և *պարագրելի:* - 75. Եւ ո՛չ ասի *պարագրելի* վասն մարմնոյն. այլ անպարագրելի մարմնովն: - 78. Նոյնպէս տեղիք մարմնոյն պարունակօղ՝ զմինն *պարագրելի*, և զմիւսն անպարագրելի: - 87

**ՊԱՐԱԳՐԵՄ +** Այլ՝ անժամանակ է. զի ո՛չ է ընդ ժամանակաւ. այլ՝ ընդ յաւիտենիւ. և ժամանակն ի յաւիտեանն *պարագրի:* - 114. Զի աստուած *պարագրէ* զյաւիտեանն. որպէս յաւիտեանն զժամանակն. և ասի աստուած մշտնջենաւոր. զի ո՛չ ունի վախճան: - 114. Էութիւն և բնութիւն՝ և անձն՝ և *պարագրօղ*՝ և տեղի: - 154. Քանի՞ի՞նչ է *պարագրօղ* մարմնոյ: - 174. Տեղին է *պարագրօղ* մարմնոյ. զի ամենայն մարմին տեղեաւ *պարագրի*. և ամենայն տեղի է ի պատահական սեռէ: - 174. Եւ գիտելի է՝ զզանազանութիւն սոցա. զի հոգին է ի մարմինն կալմամբ և սահմանեալ. այլ ո՛չ *պարագրեալ*. իսկ հրեշտակն ո՛չ կալմամբ ի մարմին և ոչ *պարագրեալ*. այլ սահմանեալ: - 174. Իսկ աստուած արտաքոյ է սոցա. զի ո՛չ է սահմանեալ և ո՛չ *պարագրեալ* և ո՛չ կալեալ յիմեքէ. ո՛չ իմացմամբ և ո՛չ տեղեաւ կամ մարմնով: - 174

**ՊԱՐԱՆՈՑ +** Երկրորդ՝ *պարանոցն:* - 241. Նա՛խ՝ խելապատակն սկիզբն է ջլացն. որ միայնաբար ընդ ուղեղս *պարանոցին* անցանէ. և բաժանի ի թիկունս, ի ձեռս, և յա՛յլ մարմինս: - 244. Փառքն՝ *պարանոց:* - 250. Յանգիստն ի *պարանոցն:* - 250. Եւ խաչն զոր եբարձ ի լուծ *պարանոցին:* - 594

**ՊԱՐԱՊ +** Զայս և այլ սոյնպիսիս բազմօրինակ ստուերագրութեամբ առ ճշմարտութիւն իրին. իսկութեամբ ոչ գոլ անհնարին երկասիրացդ ի սոյն դեգերմամբ զոր ի *պարապ* ժամու քննութեան: - 306

***ՊԱՐԱՊՈՎ +*** Եւ այլք գոն յոլովք. զի յորժամ *պարապով* ոք քննիցէ գտանէ: - 553. Եւ այլք բազումք գոն *պարապով* տեսանելք: - 554

**ՊԱՐԱՊԵԼ +** Յինգերորդ՝ զի մտօք յաստուածային խոկումն էին վերացեալ, և զգայարանօք ընդ գործս հրաշիցն. և ոչ էին *պարապեալ* քննութեան անձին...: - 278. Որով յա՛յտ է՝ զի ի կէս աւուրն որ է **ժբ** ժամն՝ աղօթելի՛ է մեզ յամենայն օր. և զկէսն այլ՝ մարմնական հոգոց *պարապիլ*. գործոյ աշխատութեան՝ ննջելոյ՝ կամ այլ ինչ իրաց: - 623. Պղինձ հնչօղ ձայնն ի յերգս աստուծոյ *պարապեալ:* - 645

**ՊԱՐԱՊՈՒՄՆ +** Իսկ սոքա և զհրեշտակս ընդ մեզ դասեն. որպէս յայտ է «ի գիրս *պարապմանցն*» Կիւրեղի: - 34. Եւ այս ևս ո՛չ է ընդունելի. զի սոցա պատասխանի տայ սուրբն կիւրեղ «ի գիրս *պարապմանց*» թէ՝ որ ասաց զպատկերն, իմանամք զնմանութիւնն ի պատկերին որպէս ցուցաւ ի վերոյ. զի ամենայն պատկեր ի հարկէ նմա՛ն է: - 273. Երկրորդ՝ զի ասէ սուրբն կիւրեղ «ի գիրս *պարապմանց*»՝ եթէ «վասն այսորիկ յերեկոյն լուծանեմք զշաբաթն, իբր ի վաղ առաւօտու յարուցեալ քրիստոսի»: - 509. Որպէս գրեալ է «ի գիրս *պարապմանց*» այսպէս. եթէ մարդն պատկեր է բանին՝ և բանն է աստուած. ապա և մարդն է պատկեր աստուծոյ: - 530. Այլ դաւանութիւն նոցա այս է. որպէս զի մի՛ լիցի ըստ նոցա աստուած մարդացեալ. կամ մերս բնութիւն ընդ աստուածութեանն միաւորեալ. որպէս ընդարձակապէս ցուցանէ աստուածաբանն կիւրեղ «ի գիրս *պարապմանց*»: - 552. Արդ՝ առաջին վկայութիւն, ասէ սուրբն կիւրեղ «ի գիրս *պարապմանց*» ի հարցմունս տիբերեայ եթէ՝ հատուցմունքն հետևին դատաստանին. և դատաստանն գալստեան դատաւորին ի կատարածի: - 691. Պատասխանեմք առ այս որպէս ասէ սուրբն կիւրեղ «ի գիրս *պարապմանց*» եթէ առակ օրինակ են սոքա արդարոց և մեղաւորաց որ այսպէս լինելոց է ի կատարածի: - 695

**ՊԱՐԱՐԱԿ +** Յինգերորդ՝ նշանակէ զչորեսին աւետարանիչքն. մարդն զՄատթէոս՝ զմարդեղութիւն բանին ցուցեալ. առիւծն զՄարկոս՝ արիաբա՛ր աւետարանեալ. «և էր ընդ գազանսն» ասէ. եզն զՂուկաս՝ յերկարածիգ պատմութեամբ. և եզն *պարարակ* կոչեցեալ. արծուին զՅօհաննէս՝ ի վերուստ զբանն աւետարանեալ: - 132-133. Եւ քրիստոս կոչեցաւ եզն *պարարակ* զօրաւոր և արդիւնարար: - 361. Եւ նա՛ ծնաւ զեզն *պարարակ*. որ ողջակէզ եղև արտաքոյ քաղաքին ի դէմս տաճարին: - 383. Իններորդ, գեթէոն՝ այն որ զգօղն ետես ի վերայ գեղման, զհօր իւրոյ զեզն *պարարակ* հրամանաւ հրեշտակին ի մէջ գիշերին պատարագեալ. և զանտառն և զսեղանն բահաղու կործանեալ և զերծեալ ի ձեռաց նոցա. որ էր օրինակ փրկչին. զի նա՛ է եզն *պարարակ* պատարագեալ. և ի մէջ գիշերի զբագինսն դժոխոց կործանեալ և յարուցեալ և ապրեալ ի մահու: - 513. Դարձեալ՝ մատաղն ստուեր և օրինա՛կ է ճշմարիտ պատարագին քրիստոսի որ գառն աստուծոյ և եզն *պարարակ* կոչեցաւ...: - 657. Երրորդ, զի օրինակն նմանեսցի ճշմարտութեանն. որ *պարարա՛կ* էր աստուածութեամբն և կատարեալ մարմնով: - 657

**ՊԱՐԱՐԵԼ +** Գիտելի է, զի հոմանուն է արքայութեան կոչումն. և չորիւք եղանակօք ասի: Արքայութիւն աստուծոյ կոչի որդի վերին արքային: Արքայութիւն ասի և եկեղեցի սուրբ: Արքայութիւն կոչի և աստուածային գիրք: Արքայութիւն ասի և կեանքն յաւիտենից... Յերրորդումն *պարարեալք:* - 755

**ՊԱՐԱՐՈՒՆ +** Եւ ի ճաշակելեաց և շօշափելեաց, շօշափման բանի և ճաշակման *պարարուն*. և ուրախութեան նարդոս և կերակուր անմահութեան: - 771

**ՊԱՐԱՐՏ +** Չորրորդ՝ զի զանարատսն և *զպարարտսն* մատուցանէր յօրինակ անարատ գառինն քրիստոսի. և ճարպաւորն՝ լուսոյ աստուածութեանն: - 286. Ութերորդ՝ որպէս իջեալքն յեգիպտոս ընդ հարաւ մտին ի գեսեմ ի *պարարտ* երկիր: - 315. Եւ բաց յայսցանէ և արտաքոյ սոցա, Լեառն *պարարտ* կոչի սուրբ Երրորդութիւնն ի մարգարէէն: - 320. Եւ **բ** ձիթենիքն՝ **բ** կտակարանք իւղալիցք և *պարարտք:* - 347. Ճարպն, զլուսաւոր և *զպարարտ* առաքինութիւնն: - 360. Չորրորդ՝ մարմին կենդանեաց որ առաւել *պարարտ* է քան զամենայն. վասն այն ի մսոյ հատանին պարկեշտք. զի մի՛ առաւել գիրասցին և գազանասցին: - 407. Իսկ արգաւանդ և *պարարտ* երկիր՝ սիրտ հաւատացելոց: - 757

**ՊԱՐԱՐՏԱՆԱԼ +** Սոքա ո՛չ պահեն զճարպն որ մասն է օդոյ *պարարտացեալ:* - 242. Չորրորդ՝ զի վայելէ՛ր իսկ նմա որպէս զհատ ցորենոյ թաղեալ յաղբիւսն՝ այսինքն յերկիր. և *պարարտացեալ* հասցէ ի հունձս պտղաբերութեան: - 323

**ՊԱՐԱՐՏՈՒԹԻՒՆ +** Քանի՞ են *պարարտութեան* աստիճանք և նիւթ լուսոյ: - 285. Իննևժ, յովսէփ

ստացաւ ոսկի և զարծաթ և զերկիրն եգիպտացւոց՝ փարաւոնի. այսինքն զզէնս սատանայի. զի փարթամութիւնն մեծ զէն է սատանայի որովք գործէ՛ զամենայն պղծութիւնս. որպէս երկիրն սոդոմայ *պարարտութեամբ* գործէր զմեղս: - 314. Ո՞ր քան են *պարարտութեան* աստիճանք: - 407. Իսկ ձիթենին *զպարարտութիւն* օծման ջերմեռանդ և ողորմած սրտին: - 519

**ՊԱՐԳԵՒ +** Ուստի յա՛յտ է թէ սերմանեաց ի բնութիւնս զբարին, և օրէնս եդ բարւոյ. այլ և խրատ և յորդորումն և *պարգևս* բարեաց: - 17. Հինգերորդ՝ է՛ ո՛չ խնդրել զօգնութիւնն աստուծոյ ի հաւատալն. զի հաւատն ո՛չ է բնական. զի ըստ այսմ միապէս լինէր ամենեցուն. այլ ի բարութէն աստուծոյ ծրի *պարգևքէ:* - 32. Վասն որոյ որ հե՛ղգ է ի խնդրել *զպարգևս* զայս, ո՛չ կարէ հաւատալ: - 32. Եւ թէ ըստ մարդկութեանն իմանաս, մի՛ կարծիցես *պարգև* և շնորհ զտալս զայս. զի այն նեստորին է: - 46. Երկրորդ՝ զի թէ նա՛ շնորհիւ ունի զորդիութիւնն և ո՛չ էապէս, ապա ուրեմն մասամբ և ըստ կարգի ունի՝ և ո՛չ զլրումն աստուածութեանն. զի շնորհին է մասնաւո՛ր *պարգև:* - 66. Անհաւասա՛ր է *պարգևն* ըստ հնչման ձայնի: - 102. Երրորդ՝ բազմանայ ի յէութիւն եղելոցս. և բազմապատկի ի կեանս. ի շնորհս. և յայլ *պարգևս:* - 110. Վասն է՞ր զանազանապէս տայ աստուած *զպարգևս* և ո՛չ հաւասար. որպէս առաւել տայ հրեշտակաց՝ և սակաւ մարդկան. և նըւազ կենդանեաց և տնկոց և անշնչից: - 130. Երրորդ՝ է՛ գործ նախախնամութեան. զի ըստ **ընտանի կարողութեան իւրեանց՝ համեմատապէս *զպարգևս* ընկալցին. զի մի վնասեսցին փոքունքն մեծամեծօք. և թերի մնասցին մեծամեծքն սակաւուք:** - 130. Իսկ թէ ո՞րպէս ի մի և նոյն պարզ *պարգևացն* զանազանապէս ընկալցին...: - 131. Իսկ առողջ լսելիք և տկար՝ պատճառի ի համակարգս. և ի հաւասարն բնութեամբ. որք իմացմամբ և սիրով և ներգործութեամբ առաւել կամ նըւազ են. ուստի առաւել կամ նըւազ *պարգևս* ընդունին: - 131. Եւ աստ երևումն և խրատ ուղղութեան. պատիժ կամ *պարգևք* բարութեան: - 133. Երբեմն զզանազան *պարգևս* հոգւոյն՝ զոր յաւազանէն տայ մարգարէութիւն քահանայութիւն՝ լեզւաց գիտութիւն...: - 140. Դարձեալ՝ որպէս ասեն իմաստունք՝ թէ քան զամենայն *պարգևք* գերագո՛յն է իմաստութիւնն յաստուծոյ առ մարդիկ իջեալ. այսինքն քան զկեանս և զառողջութիւն, և քան զմեծութիւն և զայլսն: - 178. Եւ յետ յարութեանն ընդունի զպտուղ. որ է՛ *պարգևք* խոստմանց անվախճան կենացն: - 213. Եօթներորդ՝ զի փչեաց ի նա զշնորհաց հոգին զանազան *պարգևաց*, այժմ զքահանայութեան շնորհին երևեցոյց ի նա՛: - 219. Երեսունն**զ**՝ Երկոտասան *պարգևն* զոր կորոյս ադամ: - 228. Այլ է՛ նա՛խ էացեալ ի բանն աստուծոյ, և համանգամայն ընդ մարմնոյն երևեալ ի *պարգևաց* այնմ նախատես բանի: - 260. Երկոտասան *պարգևք՛* էին ի դրախտին զոր կորոյս ադամ: - 278. Զայս **բժ**ան *պարգևս* էհան ի մէնջ նա: - 279. Եօթն ազգ բարեգործութեան տեսակ երևի աստ ի հաբէլ. վասն որոյ և է *պարգևաց* արժանացաւ: - 286. Իսկ զփոխարէն *պարգևսն* զոր ընկալաւ, Վասն առաջնոյն՝ զի ասէ գիր, «հայեցաւ», այսինքն հաճեցաւ աստուած ի հաբէլ: - 286. Նմանապէս և որք նոր իմն բարեաց սկիզբն լինիցին՝ առաւելապէս *պարգևաց* արժանասցին: - 288. Երրորդ՝ ծնաւ իսահակ ո՛չ բնականապէս ըստ բնութեան կարգի. զի անցեալ էին զաւուրբք. այլ էր աստուծոյ *պարգև:* - 304. Իսկ մեզ հոգևորապէս ետ *պարգև* զբնակութիւնս երկնից...: - 306. Եւ *պարգևացն* երկիր՝ վերինն երուսաղէմի. այսպէս: - 314. Նա՛խ ցուցնէ զառատութիւն *պարգևացն* աստուծոյ, որ ո՛չ զուգակշիռ գործոցն հատուցանէ, այլ բազմապատիկ և հազարաւոր: - 351. Հնգետասաներորդ, նոցայն քահանայապետ մովսէս և ահարօն ո՛չ կարացին մտանել յերկիրն *պարգևաց*. իսկ քահանայապետն մեր էանց ընդ երկինս երկնից...: - 355. Նա՛խ՝ զի է էր պատարագն. վասն զի մատոյց է զուարակ. և է խոյ. վասն որոյ ընկալաւ *պարգևս* է բանից մարգարէութեան: - 387. Եւ սոքա բաժանեալ մեզ զերկիրն *պարգևաց*. այսինքն աստ զնոր օրէնքն, և անդ զվերինն երուսաղէմ: - 391. Չորրորդ՝ մարմնով զօրինակն ետես, և ապա՛ հոգւով զճշմարիտ երկիրն *պարգևաց:* - 395. Զի *պարգևօք* և ողորմութեամբ աստուած մարդացաւ և փրկեաց զմեզ: - 402. Նա՛խ՝ ի *պարգևաց* բանականաց. որպէս հրեշտակաց և հոգւոյս մեր: - 406. Երկրորդ՝ զներքինս օրհնեմք, և աստուծոյ բարութեանցն կցորդեմք. ողորմութեան, *պարգևաց*, կամ այլ ինչ շնորհաց. և այսու եղանակաւ օրհնեմք զքահանայս. զժողովուրդս. զմեռեալս և զկենդանիս: - 406. Երրորդ՝ ի խոստմունքն շնորհակալութիւն, և ի *պարգևն* գոհութիւն: - 406. Էառ և զերկիրն *պարգևաց*. զոր խոստացաւ աստուած աբրահամու իսահակայ և յակոբայ: - 414. Եւ այս գիտելի է, զի **գ** *պարգևք* էր ժողովրդեանն. այսինքն Ամպն, Վէմն, և Մանանայն: - 415. Եւ նոյնպէս ամենայն հաւատացեալք մկրտին. և զնոյն շնորհք *պարգևաց* ընդունին: - 421. Երկրորդ՝ կոչի դաւիթ որ է՛ սիրեցեալ և բաւական ձեռօք. և տէր մեր սիրեցեալ ի հօրէ և ի մարդկանէ իբր զորդիս մի եղջերոյ. և նա՛ է բաւական յամենայն գործս և ի

*պարգևս:* - 435. Այլ և օրհնութիւն բաշխեաց յաւարէն ամենայն ծանօթից. և տէրն առեալ աւար բաշխեաց *պարգևս* որդւոց մարդկան: - 437. Վեցերորդ՝ զի նա՛ *զպարգևս* երկրային խոստանայր առնողացն զպատուէրս. և քրիստոս զերկնայինն: - 442. Վեցեկի *պարգևք* ետ հոգին սուրբ: - 455. Եւ է՛ ողորմութիւն նորա ծրի շնորհօք և *պարգևօք*. իսկ արդարութիւնն տուրք փոխարէնք և հատուցումն: - 457. Եւ վասն մահուան որդւոյ՝ հայր աստուած ետ զհոգին սուրբ *պարգևս* մարդկան: - 492. Եւ զի ա՛յլ է կամաւոր մահն ի հարկաւորէն. ուստի յա՛յտ է զի հարկաւոր մահն է՛ պատիժ. և կամաւորն պսակ և *պարգև:* - 497. Որպէս յօրինակէն տեսանի. որ թէպէտ առ հասարակ ելին յեգիպտոսէ յանապատն, այլ ոմանք մտին յերկիրն *պարգևաց:* - 508. ...և ո՛չ մի հոգի եթող ի դժոխս. այլ զամենայն ազատեաց յարուցեալ ի մեռելոց. և բաշխեաց *պարգևս* որդւոց մարդկան: - 514. Վեցերորդ, ոմանք ասեն թէ *պարգևս* խնդրէր հոգևորական. վասն այն ասէ ելանեմ առ հայր իմ և իջանէ հոգին և լնու զծեզ ծրի *պարգևօք*. այժմ յաղագս այդորիկ մի՛ մերձենար: - 517. Ութերորդ՝ ետ *պարգևս* որդւոց մարդկան. զի «ամենայն պարգևք ի վերուստ են» յոր համբարձաւ քրիստոս: - 520. Նա՛խ՝ զի չարչարանքն քրիստոսի պատճառ եղև *պարգևաց* սուրբ հոգւոյն, պարտ էր նախկին գոլ. որպէս ամենայն պատճառ նա՛խ է քան զպատճառելին: - 521. Նոյնպէս պա՛րտ էր զսերմն հաւատոյ ընդունել նոցա քրիստոսիւ, և ապա փոքր փոքր աճմամբ հասանիլ *պարգևաց* հոգւոյն, և պտղաբերել և զայլսն: - 521. Եօթներորդ՝ պարտ էր մեծութեան այսմ *պարգևի* յայտնի լինի գ կերպիւ: - 521. Նա՛խ՝ ի կողմանէ պարգևողին. զի յորժամ քրիստոս նստեալ լինէր ըստ մարմնոյ ընդ աջմէ հօր իբր զթագաւոր փառաց յաթոռ թագաւորութեան իւրոյ, յայնժամ մեծագոյն լինէր *պարգևք* հոգւոյն տուեալ ի փառաւոր քրիստոսէ աստուծոյ: - 521. Իններորդ՝ որպէս թագաւորք նախ հաշտին ընդ մահապարտս և ապա՛ *պարգևաց* արժանի առնեն: - 522. Այսպէս նախ եկն քրիստոս և խաչիւ և մահուամբ հաշտեցոյց զհայր, և ապա՛ հայր աստուած առաքեաց զհոգին սուրբ *պարգև* մարդկան: - 522. Եւ զի *պարգև* խաչին է հոգին սուրբ, նմին իրի յիշատակեալ զհոգին սուրբ՝ խաչիւ դրոշմեմք զդէմս մեր: - 522. Նա՛խ՝ զի յայսմ աւուր էջ հոգին սուրբ յառաքեալսն. և լուծաւ ասացեալն թէ «մի բնակեսցէ հոգի իմ ի մարդիկդ այդ յաւիտեան». և ետ առաքելոցն *պարգևս* և շնորհս զօրութեան: - 524. Քանի՞ ազգ *պարգև* ետ հոգի սուրբ՝ առաքելոցն: - 524. Գլխաւորագոյն վեցեկի *պարգևօք* լցոյց զնոսա: - 524. Եւ ազգիս հայոց առանձին *պարգևք:* - 525. Վեշտասաներորդ՝ *զպարգևս* տուեալ ի նմանէ ո՛չ օտարացուցանէ: - 576. Եւ զի դժուարին է հոգւոյ մարդոյ կարգաւորել զինքն և սրբել ի մեղաց. վասն այսորիկ օգնութիւն տայ աստուած հոգւոյ մարդոյ զեօթն *պարգևս* հոգւոյն սրբոյ: - 582. Վասն է՞ր են է *պարգև* քրիստոս այսորիկ: - 583. Այս քան վասն *պարգևաց* Յոգւոյն: - 583. Եւ որպէս ի թուումն *պարգևացն* է՛ կարգ արհեստական. զի նախ դնին արժանաւորագոյնքն: - 583. Ի յասացելոցս յառաջագոյն այս ինչ հաւաքի, եթէ ունակութիւնք մարդկային առաքինութեանց նախկնաբար պատրաստե՛ն ի վարժումն գործնական կենացն. իսկ ունակութիւնք *պարգևացն* պատրաստե՛ն ի վարժումն տեսական կենացն: - 586. ...զի *պարգևք* հոգւոյն ո՛չ արհամարհողաց և չկամողացն լինի տուեալ. այլ հաւատով խնդրողացն. ըստ որում թէ «ամենայն որ խնդրէ առնու» և այլն: - 588. Իւղ անոյշ յանուն յիսուսի հեղեալ ի վերայ քոյ կնիք երկնաւոր *պարգևաց:* - 593. Եւ են է կարգ ըստ է *պարգևաց* հոգւոյն սրբոյ: - 606. ...և նա վերընծայէ առ աստուած զօրհնութիւնն, և զխաղաղութիւնն բերէ մեզ *պարգև:* - 625. ...որպէս ընծայէ՛ զաղօթս մեր աստուծոյ, նոյնպէս և ի նմանէ առնու և տայ մեզ զշնորհս և *զպարգևս* հաշտութեան: - 625. Նա՛խ՝ զի հոգին սուրբ *պարգևք* է խաչին քրիստոսի. այլ և ի վերնատունն լուսեղէն խաչիւ հանգեաւ յառաքեալսն: - 625. Գոհութիւնն վասն անցելոյն յաղագս առաւել *պարգևացն* է: - 626. Նա՛խ՝ զի գոհութիւնն *պարգև՛* է օրհնաւոր ի բարեա՛ց մասնէ. - 626. Վեցերորդ, գոհութիւնն փոխարէ՛ն է ամենայն *պարգևացն* աստուծոյ: - 626. Նա՛խ՝ զի կրկին *պարգևս* ետ մեզ. այսինքն հոգևոր և մարմնաւոր...: - 655. ...նախ զառեալ *պարգևսն* հատուցանէ...: - 655. Իսկ անարժանքն որ ունէին զսիրտն յեգիպտոս, սատակեցան յանապատին և ո՛չ մտին յերկիրն *պարգևաց:* - 682. Եւս յայտնի, աստեացս ամենայնի կատարումն է՛ ի հանդերձեալն. այսինքն մեղաց և արդարութեան. պատժի և *պարգևի*. կապելոյ և արձակելոյ: - 704. Երրորդ՝ առատ *պարգևաց* տրօք պատրեսցէ զմեծամեծս և զազախս...: - 708. Ութերորդ՝ հնձան կոչի և աւազանն սուրբ. զի ի նմա ճմլին և կորնչին ամենայն մեղք մեր. «լուացեալ արեամբ խաղողոյ զհանդերձս մեր» և զարդարեալ պէս պէս *պարգևօք* շնորհաց հոգւոյն: - 749. Այսպէս և քրիստոս քան զամենայն սուրբս *զպարգևս* ունի առատագոյնս. որում հոգին ո՛չ տուաւ չափով: - 755. Յաւարտ և ի կատարումն Փառաց *Պարգևաց* Բանին և Շնորհաց Նորին Յոգւոյ: - 771. Եւ պիտանեացն՝ փառս

վերընծայել այնմ, որ փառաւորեալն է ի *պարգևս* իւր. իսկ զանպիտանսն ներել մերոյ փոքր ընկալ անօթոյ և դանդաղկոտ փութոյ: - 772-773. Զի այսպէս ուսաք ի սրբազան վեհէն մերմէ ըստ սրբոցն աւանդութեանց. թէ ամենայն իր որ բնութեան է *պարգև*, ան'ի բաց դնելի՛ է ի նմանէ: - 782. Ամենայն իր բնութեան՝ գոյացական՛ն է նորին. և ամենայն *պարգևք* այսինքն շնորհք պատահական է ի զարդ նմին. յաղագս որոյ ո՛չ բառնին գոյացականքն. որպէս անմահութիւն դիւի և բան մարդոյ: - 782. Այլ զբանիս խրթնութիւն առնէ կոչմանցն անորոշութիւն. զի կոչի շնորհ իջեալն *պարգև*. որպէս մարգարէութիւնն: - 783. Են և այլ շնորհք մասնականք *պարգևաց* հոգւոյն. որպէս բան իմաստութեան և այլն: - 783

**ՊԱՐԳԵՒԱԿԱՆ +** Երրորդ՝ *պարգևականն*. որպէս մարգարէիցն երևակայութեամբ, կամ ի ձեռն մարմնոյ զգայութեանց: - 24

**ՊԱՐԳԵՒԱՏՈՒ +** Իսկ հոգին սուրբ միշտ շնորհաբաշխ և *պարգևատու:* - 566

**ՊԱՐԳԵՒԵՄ +** Այլ և՝ տալ՝ և *պարգևել*՝ և շնորհել: - 105. Այս է զի հոգին սուրբ որդւով *պարգևի* ամենայն արարածոց յերկինս և երկրի: - 125. Մարդն՝ զի այրացեալ աստուած. և արծըւին՝ զի հոգին ի վերուստ *պարգևեալ:* - 132. Վասն առաջնոյն գիտելի՛ է, զի ամենայն շնորհ բղխո՛ւմն է և ճառագայթ, յանեղական լուսոյն իջեալ առ էակս ամենայն իմանալի և զգալի. և զարդարէ՛ զսոսա ըստ նմանութեան այնմ *պարգևեալ* շնորհի. եթէ ըստ բնութեան՝ և եթէ անձնական. ի հրեշտակս և ի մարդիկս: - 140. Չորրորդ՝ զի յետ փորձութեան աստուած զպսակն *պարգևէ*. և յետ փորձութեանն սատանայ, ընդ իւր ի կորուստն յաւիտենական սպանանէ: - 161. Երրորդ՝ զի հրամայէ՛ տէրն, «յաշխարհի աստ նեղութիւն ունիցիք». որով անդորրութիւն *պարգևի* ձեզ: - 161. Իսկ բանականս մարդ ո՛չ ամենևին նախախնամութեամբ է. զի հոգին ո՛չ ի ծնողաց, այլ ի շնորհացն աստուծոյ *պարգևի:* - 257. Եւ ստեղծմամբ զի ըստ գոյութեան իւրոյ շնորհօքն աստուծոյ նո՛ր *պարգևեցաւ* ընդ լինելութեան մարմնոյ: - 258. Այսպէս և հոգի ըստ կամաց խընամողին յետոյ *պարգևեալ* ըստ թուոյ ծննդեան իւրաքանչիւր մարդոյ որպէս ինքն գիտէ: - 260-261. Այլ անճառ երանութիւնն և առաքինութիւնն է աստուծոյ գեղեցկութիւնն զոր մեզ *պարգևեաց*. այսինքն մաքրութիւն, անախտութիւն, և ի չարէն օտարութիւն ասէ նիւսացին սուրբ գրիգոր: - 271. Վեցերորդ՝ նուիրեաց մելքիսեդեկ զպատարագն և ընկալաւ զտասանորդն. որպէս քրիստոս *պարգևէ*՛ հաւատացելոց զշնորհս, և առնու զտասնեակս զկատարեալ և զբարի գործս. կամ զտասն բանեան օրէնս ժ զգայարանօք: - 301. Զսոյն և մեզ *պարգևեաց* ծնանիլ ի ջրոյ, և ի հրոյ, և ի հոգւոյ, և յարութեամբն մարմնոյ. իսկ ի մօրէ՛ բնականապէս: - 329. Երրորդ, ի ձեռն հրեշտակաց *պարգևի:* - 338. Չորրորդ՝ յօրինակ դրախտին ադամայ՝ որ ծրի տուաւ և ո՛չ պահեաց. վասն այն որդւոց նորա գործով և աշխատութեամբ *պարգևէ:* - 350. Հինգերորդ՝ ի խորհուրդ սրբութեան. զառաջինն *պարգևէ*՛ աւազանաւն. և յետ մեղանչելոյն ապաշխարութեամբ և վաստակօք *պարգևէ*՛ զնոյնն: - 350. Նշանակ եօթնարփեան հոգւոյն ընկալեալ անկարօտաբար իբր ի գլուխ տէր մեր, և *պարգևեալ* անդամոց իւրոց: - 422. Երրորդ՝ այնու ցուցանի և *պարգևի* մեզ Բարձրութիւն յուսոյ: - 493. Վասն է՞ր նախ քան զխաչն և զհամբարձումն ոչ *պարգևեցաւ* հոգին սուրբ երևելի նշանօք: - 521. Հինգերորդ՝ զի գիտացեն թէ քրիստոսիւ *պարգևեցաւ*. թէ յառաջագոյն էին ընկալեալ, պարզապէս յաստուծոյ կարծէին զտուչութիւն հոգւոյն և ո՛չ ի քրիստոսէ: - 521. Նա՛խ՝ ի կողմանէ *պարգևողին*. զի յորժամ քրիստոս նստեալ լինէր ըստ մարմնոյ ընդ աջմէ հօր իբր զթագաւոր փառաց յաթոռ թագաւորութեան իւրոյ, յայնժամ մեծագոյն լինէր պարգևք հոգւոյն տուեալ ի փառաւոր քրիստոսէ աստուծոյ: - 521. Դարձեալ կարէ ասիլ Ութերորդ պատճառս, առ ի ցուցանել թէ հոգին ո՛չ ունեք առատապէս *պարգևի*, եթէ ոչ յիսուս ի սիրտ նորա յատկապէս փառաւորեսցի: - 522. Եւ որոց *պարգևի* մասնաւոր այս շնորհ, թէ և ո՛չ բոլորապէս ըստ նոցայն: - 537. Իսկ ազգիս Հայոց ի յաստուծոյ առանձնական բարութիւն *պարգևեալ* այսորիկ: - 555. Երկրորդ՝ հաշտեցոյց զհայր աստուած ընդ արարածս, և զհոգին սուրբ *պարգևեաց:* - 585. և Դարձեալ՝ որպէս յետ ամենայն տնօրէնութեանցն ել առ հայր և *պարգևեաց* զհոգին սուրբ: - 634. Եւ դարձեալ՝ ի յարքայութիւնն երկնից այսպէս ըստ իւրաքանչիւր չափու և արժանեաց կարգաւորապէս *պարգևէ* աստուած զիմաստութիւնն. և ո՛չ անկարգ. կամ զրկելով. կամ աչաղելով: - 656. զի քահանայապետն զհայր նշանակէ. և իւղն զքրիստոս. և անուշահոտն զհոգին սուրբ որ քրիստոսիւ *պարգևեցաւ* մեզ: - 672. Եւ յետոյ զերծուսցէ ի դժոխոց և *պարգևեսցէ* զարքայութիւնն երկնից ա՛մէն: - 675. Որ փոխանակ մահացու փայտին գիտութեան զյաւիտենից կեանքն մեզ *պարգևեաց*...: - 768. Եւ պատուեալ երկակի զարդու. և *պարգևեալ* և խոստացեալ պատուիրանօք: - 776. Իսկ յանցանել նորա՝ կորոյս զամենայն. ո՛չ միայն զխոստացեալն,

այլ և *զպարզևեալն.* զի ըստ որում յանմեղութենէն մեղանչական գտաւ, այսպէս մահու և ապականութեան գրաւեցաւ: - 776. Իսկ շնորհք նորոյս հաստատ և անփոփոխ ի ճշմարիտ քահանայապետէն անփոխանցելի *պարգևեալ:* - 783

**ՊԱՐԳԵՒՈՒՄՆ** - Կամ թէ ոստք փայտիս այսորիկ ասին եօթանքս այսոքիկ. այսինքն՝ քրիստոսի ծնունդն, մկրտութիւնն, չարչարանքն, ի դժոխս իջումն, յարութիւն, յերկինս համբարձումն, և հոգւոյն սրբոյ *պարգևումն:* - 755

**ՊԱՐԶ +** Նախ թէ՝ երկնային մարմինքն ո՛չ են ի չորից տարրաց. այլ են հինգերորդ տարր կամ էութիւն ըստ արիստոտէլի. և որք են ի *պարզ* տարրէ միայն ո՛չ հակակային միմեանց: - 12. Այլ թէ գործ և կամք կրկին յաստուած, ո՛չ է *պարզ* մի. այլ բաղադրեալ. որ է անտեղի: - 14. Վեշտասաներորդ՝ զի թէ չարն է յաստուծոյ որպէս բարին, և երկուցն սկիզբն է աստուած, և արդ՝ եթէ միևնոյն է սկիզբն երկուցն, անկարելի է ներհակացն ի միասին ունիլ մի սկիզբն. զի լինէր սկիզբն այն ո՛չ *պարզ*. այլ երկատեսակ...: - 14. Որպէս արեգակն զամենայն լուսաւորէ, այլ *պարզ* նիւթն լուսաւորի և թանձրն ո՛չ: - 20. Երկրորդ՝ երկեակն բաղադրեալ է, իսկ միակն *պարզ*. այլ ամենայն բաղադրեալ ի *պարզէ*՛ է: - 20. Ապա ուրեմն ո՛չ է երկեակն սկիզբն որ է՛ բաղադրեալ. այլ միակն որ է՛ *պարզ:* - 20. Երկրորդ, ասեմք եթէ՝ չարն կրկին իմանի. է՛ որ ինքնաչա՛ր է. որ *պարզ* և ամենևիմբ չարն է. և արտաքոյ բարւոյ և էութեան է. որ ո՛չ ուրեք է. և ո՛չ երբեք. և ո՛չ էր. և ո՛չ է. և ո՛չ լինիլ կարօղ է. որ է ո՛չ ինչ: - 22. Այսպէս և բարին՝ է՛ որ *պարզ* և միեղէն բարի է. որպէս աստուած. զի անփոփոխ և միշտ բարի է. զի էութեամբ բարի է. և բարին էութիւն է աստուծոյ: - 22. Չարն ո՛չ է է, և ո՛չ գոյ. որո՞վ զանազանի ի *պարզ* ոչ է էն. որէ՛ ամենևիմբ ոչինչ: - 23. Ո՛չ է ըստ չարափառացն ասել ուղղակի՝ թէ նախանձու կամ վասն փառաց որպէս ասեն, զի անգիտութեամբն պատուեցի. ընդունա՛յն է կարծիքս այս. ասել զոր չէ՛ արժան անախտ և *պարզ* բնութեանն աստուծոյ: - 24. Իսկ հնազանդիլն որդւոյ հօր, ո՛չ թէ այժմ անհնազանդ է վասն հակառակութեան. զի այս աւազակա՛ցն է. և անհնա՛ր է ասել զմի և զնոյն էութիւնն ինքն ինքեան հնազանդ և անհնազանդ ըստ այնմ որ բան է. այսինքն *զպարզ* աստուածութիւնն: - 42. Երրորդ վանկն, ոչ են և ո՛չ ասին ի յէքս, ոչ եղեալքն ո՛չ ասին. և ո՛չ գունտն քառանկիւնի. կամ մարդս *պարզ:* - 55. Իններորդ՝ թէ արարիչ է աստուած՝ և բան իւր և հոգին արարած, ապա և ինքն ո՛չ է *պարզ* և մէկին՝ այլ բաղադրեալ և ի բազմաց գոյացեալ: - 56. Դարձեալ՝ որպէս բացբարձութեամբն ասի հայր աստուած՝ անսկիզբն և անվախճան. ունելով զայս և զայն ի *պարզ* միութեան իւրում. և ո՛չ է **բ** անձն կամ **բ** բնութիւն: - 77. Ո՛չ ասի *պարզ* և սոսկ մարդ. վասն մարդկային կերպին: - 79. Երկրորդ՝ զի *պա՛րզ* է և ո՛չ բաղադրեալ: - 109. Նախ՝ *պարզ* ոչ էն. որ է ոչ ուրեք և ոչ երբեք. որ ո՛չէր և ո՛չէ և ո՛չ լինի. որպէս ոչ ինչն: - 111. Նախ՝ զի յարացոյցն *պարզ* է՝ և երկրպագելի՝ և անապական՝ և անփոփոխ: - 112. Իսկ տարերքն ո՛չեն *պարզ*. և ո՛չ երկրպագելի. և ո՛չ անապական. և ո՛չ անփոփոխ: - 112. Յարացոյցն մի է և *պարզ*. ըստ այնմ որ մի է էութիւնն աստուծոյ, և մի տեսութիւն, և մի ճշմարտութիւն: - 112. Թէպէտ առ մեզ տեսանի անսկիզբն յառաջին կողմն, և անվախճանն ի վերջինն. այլ ի նա ո՛չէ առաջին և վերջին. զի *պա՛րզ* և միեղէ՛ն է: - 115. Դարձեալ՝ զնիւթեղէնսն աննիւթապէս տեսանէ. և զբաղադրեալսն *պարզ*. և զժամանակեայսն յաւիտենական. և զբազումս և զբաժանեալս միեղէն և անբաժան: - 118. Աստուածատեսա՛կ է նոցա տեսութիւնն. այսինքն *պարզ* և միեղէն և գերամբարձ: - 119. *Պարզ* և միեղէն, զի զնիւթաւորքս և զբաժանեալքս միով և *պարզ* տեսանեն: - 119. Վասն որոյ միեղէն տեսանեն և *պարզ*. որպէս զծագումն լուսոյ առանց ճանապարհորդութեան լուսաւորեալ. և միշտ բարձրանան տեսութեամբ: - 119. Այսու հաւասար է, զի *պա՛րզ* է և միեղէն և բարձրագոյն տեսութիւն որպէս ասացաք: - 119. Իսկ շնորհականն է ընդդէմ այսոցիկ. զի *պարզ* և միեղէն իմացմամբ բարձրանայ յաստուածային գիտութիւնն. և այնպէս ի զարմացման լինի տեսութեամբ նորին: - 120. Երրորդ՝ *պա՛րզ* է նոցա տեսութիւնն. և մերս բաղադրեալ և նիւթական: - 120. Նոյն *պարզ* և աստուածային բանն է ճշմարտութիւնն. որ ո՛չ ունի ինչ ստութիւն և հակառակ իւր: - 121. Իսկ թէ ո՞րպէս ի մի և նոյն *պարզ* պարգևացն զանազանապէս ընկալցին...: - 131. *Պարզ* են իմացմամբ: - 140. Եւ կարօտի սա **բ** իրաց. այսինքն զի զգայութիւնն առո՛ղջ իցէ, և զգալի առաջի եղեալ իրն յստա՛կ. ապա թափանցէ՛ յինքն ի սոցանէ՛ *պա՛րզ* տեսութիւն. ապա թե ո՛չ՝ ո՛չ կարէ միտքն յստակապէս տեսանել սոքօք: - 143. *Պա՛րզ* է աստուած. յորս և բնութեամբ միաւորութիւն: - 154. Նախ՝ զի *պարզ* ներգործութիւն է աստուած. զի եթէ գոյ ինչ զօրութեամբ նախատեսութիւնն աստուծոյ՝ ապա բաղադրեա՛լ է և ոչ *պարզ* ներգործութիւն: - 168. Իսկ աստուած է *պարզ* գոյացութիւն և անշարադիր. ըստ որում, ի լոյս բաղդատի: - 170. Իսկ անեղ

և *պարզ* էութեանն պատշաճի միայն նմանապէս համեմատութեամբ. զի է կոչի աստուած…: - 171. Իսկ Գոյացութիւն կոչի աստուած, ո՛չ ըստ որում ներհակ պատահմանց է ընդունական որպէս մեք. այլ ըստ որում բաժանի ընդդէմ պատահմանց. որ է՛ միայն *պարզ* գոյացութիւն որպէս ասացուք: - 171. Տասներորդ՝ գոյն բաժանի ընդդէմ պատահմանց միայն *պարզ* գոյացութիւն: - 171. Եւ *պարզ* գոյացութիւն է միայն անեղ գոյին ի մէջ ամենայն եղելոց: - 171. Ո՞րպէս է զի աստուած *պարզ* է և աննիւթ, զնիւթականքս յառաջ էած. զի այս է կարգն որ նիւթն ի նիւթոյ, և աննիւթն յաննիւթոյ յառաջագայի: - 175. Աննիւթ է աստուած և *պարզ* էութիւն ըստ երկու եղանակի: - 175. Զի աննիւթ և *պա՛րզ* էութիւն է աստուած. և յառաջ էած յոչընչէ զաննիւթ էութիւնքս. այսինքն զգոյացութիւն, զքանակ, զորակ, և զայլսն. և իւրով զօրութեամբն ի միասին ժողովեալ կազմեաց մարմնական նիւթ: - 175. Առաջին պատճառ, զի երկինքն է *պարզ* մարմին. զի ո՛չ է ի չորից տարերց. այլ եերորդ էութիւն է: - 182. Եւ բոլորակ ձևն *պա՛րզ* է քան զամենայն ձև. զի եռանկիւնին յերից գծից բաղկանայ, և քառանկիւնին ի քառից. նոյնպէս և այլքն: - 182. Ապա ուրեմն *պարզ* էութեան երկնից պարտ է ունել *զպարզ* ձև որ է բոլորակն: - 182. Չորրորդ՝ զի *պարզ* և վճիտ է ըստ էութեան: - 184. Այլ եերորդ էութիւնն է *պարզ* և հաւասար. առաւել և նուազ ո՛չ ընդունի: - 188. Ասեմք եթէ յա՛յտ է ապա որ անօթ լուսաւորացն տարրական է. թէ ոմն *պարզ* է և ոմն թանձր: - 188. Դարձեալ քան զժամանակն ոչ ինչ այլայլի. քանզի մերթ ցուրտ է և մերթ ջերմն. ամպ և *պարզ:* - 199. Անըմբռնելի՛: *Պարզ:* Կարօ՛ղ: - 202. Իսկ այլք ասեն, թէ ի *պարզոյ* լինի, նշա՛ն է խոնաւի. և թէ ի խոնաւ՝ նշա՛ն է *պարզի:* - 203. Եւ Մէգն՝ այն է, որ մնաց յանձրևահոս ամպոց. վասն այնորիկ մէգն նշա՛ն է *պարզոյ:* - 204. Իսկ Ցօ՛ղ է գիճութիւն ի *պարզոյ* իջեալ. զոր աստեղք ի գիշերի քարշեն ի վեր. և ընդ ծագել առաւօտուն՝ յետ ի յերկիր անկեալ մանրամասն շիթ: - 204. Երկրորդ՝ զի ամպ և մէգն խառնէ՛ *զպարզ* օդն և խաւարէ՛: - 206. Երկրորդ՝ ասէ արիստոտէլ՝ թէ ջերմութիւն լուսաւորացդ և տարրական հրոյն և օդոյն մտանեն ի ծովն և քարշեն ի նմանէ զքաղցր և *զպարզ* հիւթն. և մնացեալն լինի դառն և աղի: - 208. Եւ օրինակ տայ զկերակուրն որ ի ստամոքսն եփի. և գոլոշիկքն ի գլուխն ելանէ և *պարզ* ջուրն ի լեարդն. իսկ մնացեալ թանձրն լինի դառն և աղի: - 208. Երկրորդ՝ զի վերին մասն օդոյն *պա՛րզ* է. և ներքին մասն մերձեալ ի յերկիր՝ թանձրանայ ի չորութեանց նորին. և ջերմութիւնն խառնեալ ընդ այն՝ առաւել շող լինի: - 211. Երկրորդն մարմին *պարզ:* - 221. Մինն *պարզ* և զուտ բարին ներքոյ և արտաքոյ. որպէս առաքինութիւն. և հոգևոր գործն. յայսպիսիքս հրամայէ՛ մեզ մերձենալ: - 224. Նմանապէս և արարիչն. այլ նա՛ *պարզ* և ի վեր քան զձեռակերտս յարացուցին: - 236-237. Իսկ *պարզն* և մաքուրն մնայ ի յուղեղն ի փափկոց խելացն: - 242. Նմանապէս և զմիջին դուռն բանայ, և *զպարզ* կերակուրն ի լեարդն յուղարկէ. և նա ներկէ յարիւն և բաժանէ: - 242. Եւ դարձեալ *պարզ* և յայտնի, այսպէս ասէ սուրբն գրիգոր նիւսացին եթէ, բանականին շնորհ ընդ լրումն մարդկութեանս թա՛փ էանց ի տեսութիւնն աստուծոյ՝ որքանութիւնն և որպիսութիւնն…: - 258. Իններորդ, խմորունն խառնեալ, և անխմորն անխա՛ռն է և *պարզ* որ է սրբութիւն սրտին: - 356. Չորրորդ՝ ի կենդանեաց. որպէս ճարպն առաւել քան զայլսն *պարզ* և լուսաւոր: - 407. *Պարզն* բաղադրեալ: - 470. Իսկ աստուածայինն անեղ էութիւն ամենևին *պարզ* և մաքուր առաւել քան զիմացականն բնութիւն եղական իմն գոյութեամբ. թէ և ո՛չ են միաւորական մարմնոյ: - 479. Այլ ես ասեմ թէ յեօթանց անտի երկուքն *պարզ* հոգեկան են. այսինքն հպարտութիւն և նախանձ: - 559. Իսկ երկուքն *պարզ* մարմնական. այսինքն որկորստութիւնն և բղջախոհութիւնն: - 559. Ապա ուրեմն թէպէտ և սակաւ խառնի ջուրն, բնութիւնք գինւոյն և ջրոյն ապականեցան. զի ո՛չ անապակ գինի է և ո՛չ *պարզ* ջուր: - 595-596. Յոլաթևն և սաւառնեալ, արծակ և *պարզ* բոլորակաձևն է: - 638. Ասեմք եթէ՝ զորօրինակ սնդիկ լուծեալ և ի հող խառնեալ գնդապէս և փոշիացեալ. յորժամ ի մի վայր ժողովես՝ թողու զփոշիսն ի յորս խառնեալ է և *պարզ* միայն սնդիկն ժողովի: - 719. Գիտելի՛ է, զի ոմանք հերձուածօղք մոլորեցան վասն յարութեան մեռելոց և ասացին թէ մարմինն ո՛չ բաղկանայ ի չորից տարերց. այլ լինի *պարզ:* - 720. Եւ ջուրքն այնպէս *պարզ* լինին որպէս զպլօր: - 728. Իսկ *պարզ* տարերքն գնդաձև դադարին ի տեղիս իւրեանց յաւիտեան: - 728. Բարւոք ասացաւ յարարչէն. զի թէ և բնութիւն թարց երևակայութեան, և արհեստ հանդերձ երևակայութեամբ, սակայն կամք արարչական ետ նոցա բնական և բանական կարողութիւն. և ոչ ինչ վայրապար կազմեն զտեսակ գոյացական և զտեսակ պատահական. խնդրելով ոմն *պարզ* նիւթ. և ոմն տեսակացեալ: - 786

**ՊԱՐԶԱԲԱՐ +** Պատասխանեմք թէ՝ ո՛չ ասէ *պարզաբար* ամենայն, այլ կարգէ՛ զհետն թէ՝ ամենայն որ ինչ եղև. թէ եղեալ ցուցանես զհոգին, և ես հաւատամ թէ ի ձեռն որդւո՛յ է եղեալ: - 53. Իսկ թէ ո՛չ,

այլ *պարզաբար* աստուածածին խոստովանիս ընդ մեզ, ապա՛ և զծնեալն ի նմանէ խոստովանեա՛ աստուած մարմնացեալ և մարդացեալ: - 79. Արդ՝ երկոքին ծայրքն՝ այսինքն մեղքն և ապականութիւնն են *պարզաբար* և ամենևիմբ չար անուամբ և իրօք...: - 496. Իսկ մահն ո՛չ է *պարզաբար* չար. այլ շարամանեալ ընդ բարւոյ անուամբ և իրօք: - 496. ...վասն այն ո՛չ կոչին ճշմարիտ մարգարէ *պարզաբար*. այլ բաղադրեալ. որպէս մարգարէ բահաղու. կամ մարգարէ բարձանց կամ անտառին: - 536. Զորօրինակ՝ մեռեալ մարդ ո՛չ ասի *պարզաբար* մարդ, նոյնպէս և այս. որպէս ցուցաւ ի թագաւորութեանցն **իզ** գլուխն. **ժբ** համարն: - 536. Իսկ կշիռ արդարութեան՝ *պարզաբար* զհատուցումն արդարութեան նշանակէ: - 745. Այլ *պարզաբար* զնոյն ինքն կեանք դրախտին ի յարութեանն ո՛չ է իմանալ: - 758

**ՊԱՐԶԱԳՈՅՆ +** Ա՛րդ՝ տեսութիւն գրոց սրբոց մի և նոյն ելով՝ առ բազումս բազմանայ. որպէս մի և նոյն *պարզագոյն* ջուր՝ իւրաքանչիւր բնութիւնս տնկոց: - 93

**ՊԱՐԶԱԹԵԻ** - Ոմանք *պարզաթևք* են. որպէս ճանճք: - 215

**ՊԱՐԶԱՄԻՏ +** Ապա ուրեմն յորդիութիւնն և յանունն խոստովանին միութիւն ի պատրանս *պարզամտաց*. և զճշմարիտ միութիւնն ուրանան և փախչին: - 82. Երրորդ՝ զի պա՛րտ էր քրիստոսի հովուել *զպարզամիտ* աշակերտսն որպէս հաւ զձագս, և մայր զմանկունսն. և թէ ի սկզբանէ զհոգին ընկալեալ էին՝ ո՛չ էր պիտոյ հովուել զնոսա: - 521. Ա՛րդ՝ քարշէ զչարսն տրօք. զբարիսն տանջանօք. *զպարզամիտսն* քաղցրութեամբ և սքանչելեօք: - 708

**ՊԱՐԶԱՄՏՈՒԹԻՒՆ +** Նախ՝ վասն *պարզամտութեանն*. զի որպէս տղայք ո՛չ ամաչեն անծածուկ ունելով զմասունս. նոյնպէս և նոքա: - 278. Ո՛չ էր պարտ *պարզամտութեամբ* խաբիլ. պարտ էր հարցանել զնա թէ մարգարէ՞ է թէ ոչ: - 443

**ՊԱՐԶԱՊԷՍ +** Արդ՝ որ *պարզապէս* մի բնութիւն ասեն բանին և մարմնոյն՝ կատարեալ ամբարշտութիւն է: - 81. Իսկ նախանձն աստուծոյ *պարզապէս* միայն ունի սիրել և զայլս և ո՛չ ատել. զի նախանձն աստուծոյ՝ սիրոյ առաւելութիւնն է. որպէս բոցն հրոյ: - 128. Իսկ թէ ոմանք գո՛ւ ասեն **Ժ** դասք և զմինն անկեալ, ո՛չ *պարզապէս*, այլ կրկին է իմացումն: - 134. Երկրորդ՝ հրեշտակն *պարզապէս* իմանայ. և հոգին շարախառնի ընդ իրին: - 141. Այլ և *պարզապէս* ըստ չորից տարերց տնկականին՝ **գ** զօրութիւնք և **ե** զգայութիւնք՝ լինի **բժ**ան: - 263. Երկրորդ՝ զի ողորմութիւն է բացարձակ և *պարզապես* բարի. իսկ արդարութիւնն է խառնել բարի. ըստ որում հատուցանէ բարեացն բարիս, և չարեացն տանջանս: - 458. Հինգերորդ՝ զի գիտասցեն թէ քրիստոսիւ պարգևեցաւ. թէ յառաջագոյն էին ընկալեալ, *պարզապէս* յաստուծոյ կարծէին զտուչութիւն հոգւոյն և ո՛չ ի քրիստոսէ: - 521. Այս է մին եղանակ է պորտից *պարզապէս:* - 611

**ՊԱՐԶԵՄ +** Իսկ այլք ասեն, թէ ի պարզոյ լինի, նշա՛ն է խոնաւի. և թէ ի խոնաւ՝ նշա՛ն է *պարզի:* - 203. Ջուրք ծո՛վուց ընդ մէջ երկրի անցանեն և *պարզին* ի ժանկոյն և ի դառնութեանցն. զի երկիր և աւազք զդառնութիւնն յինքեանս քարշեն, և մնայ քաղցր ջուրն: - 208. Ա՛րդ՝ վերջին հրովն յորում վառին երկինք և երկիր, ըստ նիւթոյ մասին *պարզի*. այլ ըստ ապականութեան մնայ անփոփոխ: - 225. Ութերորդ՝ զի տեսիլ աչացն առաւել *պարզեսցէ* զլեզու նորա փոխանակ ճարտարութեան լեզուին: - 352. ...և ոմն լեզուն *պարզեալ* խնդրէ ի մօրէն...: - 620. Երրորդ զի *պարզի* հալեալ մոմ. այսպէս սևութիւն և թանձրութիւն երկրի ի դժոխս ժողովին և մարմինք մարդկան յերեսս երկրի: - 728. Արդ ի *պարզիլ* օդոյդ որպէս ցուցաւ երևի լոյս արփւոյն անարգել: - 729. Այլ և *պարզէ՛* զնոսա որպէս ասացաւ: - 731

**ՊԱՐԶՄՏՈՒԹԻՒՆ+** Հինգերորդ՝ ընդ հերձուածողաց և սատանայի մի՛ *պարզմտութեամբ*՝ այլ հնարիւք խօսեսցի: - 218

**ՊԱՐԶՈՒԹԻՒՆ +** Նոյնպէս է *պարզութիւնն* անփոփոխութիւնն՝ և այլն: - 140. Զայս արիստոտէլ նշան *պարզութեան* ասէ: - 203. Չորիւք *պարզութեամբ* վերանայ իմացումն մեր: - 251. Նախ ցուցանէ զխոհեմութիւն բարուց որ ընդունելի է աստուծոյ և մարդոյ. այլ *պարզութիւնն* է՛ պատարագ: - 356. Եւ վասն *պարզութեան* երկրի վկայէ՛ դաւիթ, «լերինք որպէս մոմ հալին»: - 728. Որպէս յա՛յտ է ի ծխոյ և ի փոշւոյ և յայլոց. ընդ դէմ գոլոյ *պարզութեանցն* լուսոյ՝ ի ներքս մտեալ զկծեցուցանէ զնա: - 786-787

**ՊԱՐԹԵԻ +** Արդ սկսեալ առ դարեհիւ ի **կե** ոլոմպիադին՝ դադարեցին ի **ճձզ** ոլոմպիադին առ հիւրկանոսիւ քահանայապետիւ, որ գերեցաւ ի *պարթևաց:* - 449

**ՊԱՐԻՍՊ +** Առակի են նման, որպէս թէ ոք որ նախ *զպարիսպ* քաղաքին ինչ իցէ գիտենայ, և

*զպարսպէն* ասէ ո՛չ գիտեմ: - 48. Եւ զի պահապանք առ *պարիսպս* կացուցանին: - 196. Իններորդ՝ *պարիսպ* լինին շուրջանակի ջուրք. ի թշնամեաց ի գազանաց՝ և ի գողոց պահելով: - 207-208. Եւ թանձրութիւն *պարսպին* **ղ** կանգուն: - 297. Եւ սահման կոչէ զլեզուս որ բաժանէ՛ ի միմեանց զազգս և զազինս. որպէս որք *պարըսպով* և նշանիւ սահման դնեն և զանդս բաժանեն: - 298. Եւ յետ **ե** ամսոյ՝ նաբուզարդան դահճապետն հրձիգ արար զերուսաղէմ և զտաճարն և զտուն թագաւորացն. և *զպարիսպն* կործանեաց. և զսիւնսն պղնձի և զաւազանն և զամենայն կահ պղնձի և արծաթի տարաւ ի բաբիլօն: - 447. Եւ յետ եօթանասուն ամի շինւածոյ տաճարին՝ ապա արձակեալ նէեմի շինէ *զպարիսպն* երուսաղէմի ի **լբ** ամին արտաշէսի. որպէս ասէ գիրքն եզրի: - 448. Եւ այսպէս յետ աւերածոյն և գերութեանն նախ տաճարն շինեցաւ, և յետոյ *պարիսպն* կանգնեցաւ: - 448. Եւ յորժամ զղջանամք ի մեղաց՝ նախ խոստովանութեամբ շինեմք զտաճար սրբութեան մերոյ. և ապաշխարութեամբն որ է՛ փոխարէնքն՝ կանգնեմք *զպարիսպն* եօթնիւք զգայութեամբք: - 448. ...իսկ երրորդն նէեմի և եզր դպիր՝ կանգնեցին *զպարիսպն* և զդրունսն. նշանակեն զառաքեալսն զհայրապետսն և զվարդապետսն. որք օրհնօք պարսպեն զեկեղեցի, և հանապազ ուսուցանեն զդպրութիւն: - 449. Չորրորդ՝ զի շինօղ և հաստատօղ եկեղեցւոյ առաքեալքն են. և ծեռնտու նիւթոց մարգարէքն. եզր և *պարիսպ* վարդապետք: - 535. Ո՛չ ամրոց, ո՛չ *պարիսպ* կամ զօրք կամ այլ ինչ: - 538. ...այլ ապաշխարութիւնն ցանկ է և *պարիսպ* ապագային զի մի՛ ևս գործեսցէ: - 602. Այլ և զեօթն օր շրջեցան տապանակաւն, և կործանեցաւ *պարիսպն* երիքովի: - 626. ...և յեօթներորդ օրն ի եօթն նուագին բարձրաձայն փողովք հնչեցին քահանայքն. և ժողովուրդն բարձրաձայն աղաղակեաց. յորմէ կործանեցաւ եօթնապատեան *պարիսպն* երիքովի: - 627. Նոյն սարասիւք այժմ ի ձեռն փրկչին մերոյ յիսուսի՝ տապանակաւ խաչին և աղօթիւք սուրբ եկեղեցւոյս՝ բարձրացեալ *պարիսպն* չարութեան եօթնից զգայութեանց մեղաց որոշօղ ի մէջ մեր և աստուծոյ, կործանեսցի ի սպառ: - 627. Այլ զապաշխարանքն դնէ կանոնքն, զի ցանկ և *պարիսպ* է մեղաւորին. - 701. Չորրորդ պակասութիւն է՝ զի այժմ է՛ մարմին մեր թանձր և կոպիտ. այլ յայնժամ բառնի այս ի մարմնոյ և լինի անօսր և թափանցիկ. զոր ոչ *պարիսպ* կամ բանտ ըմբռնել կարիցէ: - 722

**ՊԱՐԾԱՆՔ +** Եւ ի գալն յերկիրս հայոց, ետուն նմա օգնական զիւղն օծման զոր քրիստոս օրհնեալ էր. և զգեղարդն. և այլոց ազգաց չկա՛յ այս *պարծանքս*. զի մեր մեռոնս հանապազ և միշտ զնոյն շնորհ ունի: - 549. Ողջ լեր ի տէր ի *պարծանս* մեր: - 558. Զի խաչն պսակ և փառք է քրիստոսի և *պարծանք* քրիստոնէից և ո՛չ նախատինք...: - 632. Նախ ի *պարծանս* հաւատացելոց զի բերկրեսցին երկրպագուք խաչին: - 732

**ՊԱՐԾԻՄ +** Զհաւատս ուրացեալ, և գիտութեամբ *պարծեցեալ:* - 34. Այլ թէ գիր չունէր մեր ազգս, տե՛ս զի յաստուծոյ տուաւ մեզ գիր, որպէս մովսէսիւ իսրայէլի. և այլ ո՞ր ազգ *պարծի* այսու: - 549. Քսաներորդ, յամենայն տեղւոջ իւր սիրելեաւն *պարծի:* - 576

**ՊԱՐԿԵՇՏ +** Չորրորդ՝ ըստ բարուցն տեսանէ ոք. զի ա՛յլ է երազ արի մարդոյ, և այլ երկչոտին. ա՛յլ գիճասիրին, և այլ *պարկեշտին:* - 268. Չորրորդ՝ մարմին կենդանեաց որ առաւել պարարտ է քան զամենայն. վասն այն ի մսոյ հատանին *պարկեշտք*. զի մի՛ առաւել գիրասցին և գազանասցին: - 407. Նա՛խ՝ զի *պարկեշտ* և զգա՛ստ էր: - 439. Համեստութիւն է որով *զպարկեշտ* ամօթխածութիւնն ստանայ և զնազելի պատկառանս: - 581

**ՊԱՐԿԵՇՏՈՒԹԻՒՆ +** Եւ զորս ես աստ *պարկեշտութեամբ* լռեմ, յընթանրական թղթին յօհաննէս ի նեռն առակէ ասելով. «արդէն իսկ նեռինք եկեալք են. զի ամենայն որ ուրանայ թէ յիսուս չէ՛ Քրիստոսն՝ նա իսկ է նեռն»: - 34. Իսկ փայտն. մարմնոյ ցամաքութիւն և *պարկեշտութիւն*. որ առաւել բորբոքէ զպատարագն: - 360. ...զնոյն և ամենայն հեթանոսք առնեն. իսկ թէ ի հեթանոսս այսպիսի *պարկեշտութիւն* պարտ էր առնել, քանի՞ ևս առաւել յեկեղեցիս պարտ է լինիլ. որ է ճշմարիտ կարգաւորութիւն և սրբութեան օրէնք: - 589. ...զի *պարկեշտութեամբ* լիցի կերակուրն...: - 655. ...որ այս եղև սկիզբն *պարկեշտութեան* յորժամ զսիրելի զաւակաց պատկերս արարին և պաշտեցին: - 677

**ՊԱՐՈՆԱՑԻ** - Իսկ վրացն Ախալծիլ, որ ստուգաբանի Ախացայ. այսինքն թէ մեծ *պարոնացի*. Սեթալի. որ է՛ սոնթեցի: - 201

**ՊԱՐՈՒԿ +** Յորժամ *պարուկաւ* այսինքն հացմամբ ասի. որպէս ասելն, ո՞չ քեզ ասացի զայդ. ահա՛ եղև ստորասութիւն. իբր թէ՝ ասացի՛: - 787

**ՊԱՐՈՒՆԱԿ +** Վասն որոյ *պարունակ* բանիւ կոչին էութիւնք, զօրութիւնք, և այլն: - 137

**ՊԱՐՈՒՆԱԿԱՁԵՒ** - Եօթներորդ՝ զի *պարունակածն* է կողն. ի նշանակել, զի կինն պարունակիչ և հաւաքիչ է տան առն և ընչից: - 276.

**ՊԱՐՈՒՆԱԿԵՄ +** Առաջին է՛ անգիտանալ զտկարութիւն և զփոքրկութիւն մարդկային մտաց. կարծեն թէ՝ ամենայնի *պարունակօ՛ղ* է, և ո՛չ ունի սահման: - 31. Զի թէ ի ժամանակի, ո՞ էր այն որ *պարունակէր* զժամանակս: - 37. Այլ այնպէս ասաց առ ի ցուցանել զանչափ յաւիտենական աստուածութիւնն՝ որ ըստ ինքեան *պարունակէ* զամենայն ժամանակս...: - 65. Նոյնպէս տեղիք մարմնոյն *պարունակօղ*՝ զմինն պարագրելի, և զմիւսն անպարագրելի: - 87. Եւ ի ներքոյ սոցա *պարունակին* ամենայն ճանաչելիք: - 97. Դարձեալ՝ որ զամենայն ստեղծ՝ հայր կոչի. և որ զամենայն *պարունակէ*՛ զի մի՛ լուծցին՝ որդի. և որ շնչելով կենագործէ և զարդարէ զամենայն՝ հոգի սուրբ յորջորջի: - 108. Երրորդ՝ թիւն ընդ գիտութեամբ մեր է. իսկ աստուած ընդ գիտութեամբ մեր ո՛չ *պարունակի* որպէս ասացաք...: - 110. Ապա յա՛յտ է զի հին աւուրցն նշանակէ նախ քան զժամանակ և զյաւիտեան. և բարձրագոյն և արարիչ ժամանակի և յաւիտենի. և *պարունակօղ* յաւիտենի. որպէս յաւիտեանն ժամանակի: - 115. Յաւիտեանս Յաւիտենից. որ է՛ սկզբնական և յարածգական. զի նա *պարունակէ* զերեք յաւիտեանն. որ ո՛չ սկիզբն ունի և ո՛չ կատարած: - 116. Եւ գիտելի է՝ զի աստուած կոչի յաւիտեան անսկիզբն և անվախճան. և է՛ պատճառ *պարունակողացն* յաւիտենին. որ ո՛չ սկիզբն ունի և ո՛չ կատարած: - 116. Այլ զայս ստեղծեալ յաւիտեանս ասեմք ոչ սկիզբն ունիլ և ո՛չ կատարած. զի *պարունակօղ* է ա՛յլ յաւիտենից որք ունին սկիզբն կամ կատարած. այլ ինքն *պարունակի* յանստեղծ յաւիտենէն որ է՛ աստուած: - 116. Երկրորդ՝ յաւիտեանն *պարունակէ* զմիշտն. և միշտն զժամանակն. և ժամանակն յերկուցն *պարունակի:* - 116. Երրորդ՝ տեղի ասի և հասումն մտաց. ըստ որում *պարունակէ*՛ իմացմամբ զէութիւն իմացեալ իրին: - 172. Այլ և ո՛չ տեղի պատահական. որպէս աստ և անդ. զի ոչէ ի տեղոջ իմիք *պարունակեալ*. և ո՛չ բացեայ ի տեղւոջէ իմիք զատեալ. զի նա՛ է ամենցուն տեղի: - 172. Ասէ զայս, զի բնութեամբ անբովանդակելի է. և ոչ տեղեաւ ըմբռնի. մինչ զի ինքն զամենայն տեղիս *պարունակէ*. յորում կեամք և շարժիմք և եմք: - 180. Երկրորդ՝ զի բոլորակ ձևն *պարունակօ՛ղ* է. և երկինքն զամենայն *պարունակեալ* ունի ի ծոց իւր: - 182. Նորոգէ՛: *Պարունակէ*՛. և Լուսաւորէ՛: - 202. Եւ զի *պարունակէ*՛ յինքն զդժոխս: - 211. Եւ զի բիւրն *պարունակէ*՛ զհազարն. և նա՛ զհարիւրն. և նա՛ զտասն: - 291. Արդ բիւրն պատշաճի յաւիտենին աստուծոյ, որ *պարունակէ*՛ զմշտնջենաւորն որ են հրեշտակք: - 291. Եւ տարին անդ՝ յաւիտեանն է և միշտն. որ *պարունակէ*՛ զժամանակս: - 399. Քանզի *պարունակէ* զողջութիւնն ընդ ասելն «ողջոյն»: - 464. Եւ էր ի վերջոյ քան զզաւակն. փոքրագոյն քան *զպարունակեալն* յինքեան: - 469. Նախ՝ որպէս սահմանն *պարունակէ*՛ զընդհանուր սահմանեալսն որպէս սահման մարդոյ զմարդ: - 538. ՚Ի հրոյ ագահութիւն և բարկութիւն. զի *պարունակօ՛ղ* է և ջերմ: - 560. Եւ այլ սահմանք զոր դնեն վարդապետք՝ *պարունակեալ* են ի սահմանն պօղոսի. զի վարդապետաց սահմանն մեկնութիւն և յայտնութիւն է սահմանին պօղոսի: - 571-572. Առ աստիճանս այս *պարունակի* է խորհուրդ եկեղեցւոյ. որ է՛ Մկրտութիւնն. Դրոշմն. Պատարագն. Ապաշխարութիւնն. Կարգ քահանայութեանն. Պսակն. և Օծումն: - 573. Զի նա *պարունակէ*՛ զառաքինութիւնս որ կարգեն զմարդ առ ընկերն. որպէս ուղղութիւնն և առատաբաշխութիւնն: - 578. Աղքատութիւն հոգւոյ է՛ հրաժարիլն յաշխարհէ. այսինքն ի սիրոյ մարմնական հեշտութեանց և ի փարթամութեանց և ի պատուոյ. քանզի զերիսս զայս *պարունակէ* սէր աշխարհիս: - 583. Զի արդարութիւն որ ասէ աստ՝ *պարունակէ*՛ զհաւատն զյոյսն և զսէրն. որք անընդմիջաբար միաւորեն զմեզ ընդ աստուծոյ: - 584. Յաղորդութիւնն է խորհուրդ՝ յորում *պարունակի* քրիստոս ի ներքոյ ձևի հացի և գինւոյ. և յերկոքին մասունքն է բոլոր քրիստոս: - 594. Վճիռ որ վասն բարեացն է՝ *պարունակէ*՛ յինքն է մասունս օրհնութեան: - 740

**ՊԱՐՈՒՆԱԿԻՉ** - Եօթներորդ՝ զի պարունակածն է կողն. ի նշանակել, զի կինն *պարունակիչ* և հաւաքիչ է տան առն և ընչից: - 276. Վասն այն ասի արդարութիւնն ուղղութիւն կամաց. զի ո՛չ միայն է առանձնական զօրութիւն կամ առաքինութիւն. այլ և հասարակ և *պարունակիչ* ուղղութեան հոգւոյն: - 579

**ՊԱՐՈՒՆԱԿՈՒԹԻՒՆ +** Ըստ որում ասէ՝ «արքայութիւն քո արքայութիւն ամենայն յաւիտենից». այսինքն *պարունակութիւն* ամենայն յաւիտենից: - 115. Դարձեալ՝ տեսանէ աստուած ըստ պատճառի. զի ամենեցուն է պատճառ. և ըստ *պարունակութեան*, որ զամենայն առ ինքն ունի. և ըստ կատարման, որ ամենեցուն է վաղճան և կատարումն: - 118. Իններորդ՝ զի մշտակա՛յ է ի *պարունակութիւնս* իւր. այսինքն զի ո՛չ ունի այլայլումն և փոփոխումն ըստ անարգ շարժութեան երկրի: - 184

**ՊԱՐՈՒՏԱԿ +** Նախ՝ զի լպրծի՛ միտք մեր և մոռանայ զբանն. զի հով և գէջ է *պարուտակն* և ուղեղ գլխոյն: - 120. Իսկ արտասուքն աղի և ջրատեսակ. զի բարեխառնեսցէ մինն զջերմութիւն հրոյ, և միւսն՝ զի մի՛ նեխիցին *պարուտակք* աչաց. շրջապատեալ երակացն լուսոյ: - 786

**ՊԱՐՈՒՐԵՄ +** Ուստի և վեհագոյն իմացութեանն էից սերովբէն զքօղեալ զերեսս և զոտս մարդեղութեանն խորհրդոյն *պարուրեալ:* - 456

**ՊԱՐՍ +** Եօթնեժ, անդ միով քարամբ էհար. և աստ մի բանիւ բերանոյ ի *պարսէ՛* լեզուին: - 436. Զոր և անբաւ բազմութեամբ ասպատակեալ աւերեաց զաշխարհս հայոց, *պարսից*, վրաց, և զամենայն արևելեայս: - 788

**ՊԱՐՍԱՒ +** Դարձեալ թէ ի հարկէ՛ է՝ ո՛չ հետևի գով և *պարսաւ* ոմանց. զի սոքա կամաւորա՛ցն են և ո՛չ ակամայիցն: - 11. Նա՛խ՝ եթէ ուշիմ և ապուշ և այլն ըստ կարգի, սոքա եթէ ի մարմնոյն խառնուածոյ պատճառին՝ և եթէ բնական որակութեամբ հոգւոյն՝ նման և աննման գոլ, առանց ներգործելոյ ո՛չ չար են և ո՛չ բարի. ո՛չ գով. և ո՛չ *պարսաւ* հետևի. որպէս և ո՛չ բնական բարուց անաւնոց: - 19. Տասներորդ՝ գործ բութեան ո՛չ ինչ ունի մեղք. զի ըստ բնութեան գործելով ոչ ոք մեղանչէ ասէ փիլիսոփայն. իսկ կամացն գործ՝ մեղանչական է. վասն որոյ կամաւորին գով և *պարսաւ* հետևի: - 156

**ՊԱՐՍԱՒԵԼԻ** - Վեցերորդ՝ զի ո՛չ բոգրծքն լինէին գովելի, և ո՛չ չարքն *պարսաւելի:* - 20. Առաջինն է՛ գովելի սէր. վերջինն *պարսաւելի:* - 143. Իսկ միջինն որ է՛ բնականն՝ ո՛չ գովելի և ո՛չ *պարսաւելի:* - 143

**ՊԱՐՍԱՒԵՄ +** Եւ թէ հետևեսցի՝ ոչ որ գործեաց զգեղեցիկս և ըզգարշելիս, այլ որ պատճառն է և հարկ՝ գովեսցի և *պարսաւեսցի*. այսինքն բախտն և ճակատագիրն: - 11. Նոյնպէս թէ զարուեստն լաւ առնէ՝ գովի. և թէ վատթար՝ *պարսաւի:* - 250. Եւ նա՛խ՝ զի ո՛չ ճանաչեաց վիուկն զսաւուղ աստի՛ յայտ է, զի գովեաց զնա՛ և *պարսաւեաց*...: - 428

**ՊԱՐՍԱՔԱՐ +** Չորեքտասաներորդ, ցպով և *պարսաքարով* եւ ընդ դէմ գողիաթու. և տէր մեր խաչիւ որ վէմ կոչեցաւ, և ի ձայն բարձր աղաղակեաց և արձակեաց զհոգին: - 436

**ՊԱՐՍԻԿ +** Եւ է՛ առաջին և վերջին մոլորակացն Երևակն. զոր *պարսիկք* զօհալ կոչեն. ցուրտ է և չոր. **բ** ամ և կէս յամէ ի կենդանակերպն. և յերեսուն ամն վճարէ՛ զամենայն: - 189. Որպէս ասեն տօմարագէտք, Խոյն գլուխն որ է՛ *պարսիկք*. և այլն: - 241. Պերճական *պարսիկն*. և համեղ հայոյն. որ բոլորապէս կարօ՛ղ է զամենայն լեզու ուղղակի ուսանիլ: - 297. Իսկ որ զդպրութիւն գիտէ և գրով վարի՝ **բժ**ան ազգ է. այսինքն Եբրայացիք. Քաղդէացիք. Ասորիք. *Պարսիկք*. Մարք. Հնդիկք.: Փիւնիկեցիք: - 299. Պերճական *պարսիկն:* - 299. Զի ասեն թէ՝ յորայ հէճուպն ի *պարսիկս* փախեաւ, և անդ զրոյց ետ որ գրեցին իւրեանց գրովն. և սողոմոն բերել ետ և սրբագրեաց: - 320. Ուստի բազմացեալ լցին զարևելս ի պալի. յորմէ թագաւորք *պարսից* և հայոց արշակունիք կոչեցեալ: - 330. *Պարսիկ* բառ է՝ ներքոյ հողոյ: - 678

**ՊԱՐՍՊԵՄ +** Եւ զի եդեր զկամքն միջոց, ի բա՛ց *պարսպեցար* յողորմութեանց նորին առ իւր արարածքս. զի եդեր ա՛յլ ինն զկամիլն և զկամքն: - 36. Դարձեալ՝ յառաջինսն տիրէ աստուած իբր մեծութիւն. ի յերկրորդսն կառավարէ իբր զօրութիւն. ի յերրորդսն *պարսպէ՛* իբր փրկութիւն: - 135. ...ի մէջ նեղութեանց լինելով՝ յանցեալ մեղացն զղջմամբ և սրբիմք. և յապագայն զգուշութեամբ *պարսպիմք*. և ի ներկայն՝ արի՛ և կա՛զմ պատրաստիմք: - 162. ...իսկ երրորդն նէեմի և եզր դպիր՝ կանգնեցին զպարիսպն և զդրունսն. նշանակեն զառաքեալսն զհայրապետսն և զվարդապետսն. որք օրինօք *պարսպեն* զեկեղեցի, և հանապազ ուսուցանեն զդպրութիւն: - 449. Ամրութեամբ *պարսպեալ:* - 456. Արդ ահա ա՛յսոքիկ են ծառ կենաց ի յերկինս և յերկրի տնկեալ. փոխանակ ծառոյն կենաց ի դրախտին եդեմայ. յորմէ հրաժարեցոյց և *պարսպեաց* բոցեղէն սրովն զճանապարհ նորին: - 771

**ՊԱՐՏ +** Կամ *զպարտս* յոչ պարտականէն խնդրէին. որպէս ա՛յժմ անիրաւք զայլ ոք այլոյ գրաւ առնուն: - 238. Չորրորդ՝ մահու մեռանիլ այն է, որ հոգւով և մարմնով տրտմին. և անմահ չարչարին. որպէս մեղաւորք յայս կեանս և յետ մահու. զի որ մեռանի մարմնով՝ *զպարտս* վճարէ. և որ տրտմի հոգւով՝ անմահ մահանայ: - 277. Որով և որդիքս վասն *պարտուց* հօր՝ արտաքոյ մնացաք: - 280. Եւ թեթևացնէ՛ *զպարտս* մեղաց. որպէս արար ողորմութիւն միածին բանն աստուած յիշելոյ զառաջին արդարսն...: - 351. Եւ թէ ոք ասիցէ՝ վասն է՞ր *զպարտսին* ադամայ մեք ունիմք: - 351. Երրորդ, այն առանց գթութեան հատուցանէր պատիժս *պարտուց*. իսկ տեառն մերոյ շնորհիւ և ողորմութեամբ...: - 354. Վեցերորդ՝ այլ և ի թողութեան ամն ուսուսցէ թողուլ *զպարտիս* բանից և գործոց մերոց պարտապանաց: - 372. Երկու զուարակ, որ քրիստոս զենաւ վասն ադամայ և եւայի *պարտուցն*: - 373.

...եկեղեցի սուրբ՝ պատարագաւ և աղօթիւք և ողորմութեամբ հատուցանէ՛ *զպարտս* նոցա և ազատին: - 392. Այլ աստ ասէ սուրբն եփրեմ եթէ՝ խրատն դաւթի եղև հատուցումն մեղացն. այլ և *պարտք* բարեաց առ աստուած ի ցոյց օրինի ամենայն ապաշխարողաց: - 434. Այլ զայն ասէ՝ թէ յամենայն ազգս արանց գտաւ այր մի քրիստոս, ազատ ի *պարտուց* սկզբնականին. և ի կանանց և ո՛չ մի: - 440. Երկրորդ՝ զի երկրորդ ադամ եղև *զպարտիս* նորին վճարելով, պարտ էր ի կերպս ադամայ երևիլ: - 480. Արդ զգիրն ադամայ *պարտուց*՝ տէրն որդի եղև նմա և անմեղ մահուամբն տարածեալ զձեռս ի խաչին պատառեաց ասելով, նա մեղաւ և մեռաւ. ես զինչ մեղայ. դո՛ւ ես պատճառն: - 482. Եւ չարչարանքն քրիստոսի երկու իրս ներգործեաց. նախ *զպարտիս* մեղաց վճարեաց. երկրորդ զդրունս երկնից եբաց: - 503. Նախ՝ վասն վճարման *պարտուցն* լուծան կապանք դժոխոցն...: - 503-504. Նախ ասեմք եթէ՝ առաջին դժոխք հոգւոցն ո՛չ էր վասն ներգործական մեղացն հասարակ. այլ վասն *պարտուցն* ադամայ: - 506. Այլ ա՛րդ՝ եթէ դժոխքն այն ոչ է աւերեալ. ապա քրիստոս ի յառաջին *պարտուցն* ո՛չ է ազատեալ զմեզ: - 506. Վեցերորդ՝ թէ զմասն դժոխոց աւերեաց, և զմասն մահու եբարձ, և զմասն անիծից, և զմասն *պարտուց* և զայլսն: - 506. Նոյնպէս և հոգի մարդոյ զկնի մահու ո՛չ կարէ արդարանալ ըստ ինքեան. բայց թէ ի ձեռս այլոց վճարի *պարտ* նոցա և հասանին ողորմութեան: - 508. Երկրորդ՝ հասարակն վճարէ՛ *զպարտս*. և առանձնականն նիւթէ՛ զպսակ: - 623. ...պա՛րտ է վասն ամենեցուն աղօթել և *զպարտս* նոցա վճարել: - 655. ...զի և նա թողցէ մեզ *զպարտս* մեր: - 676. Նա՛խ՝ զի *զպարտս* դատապարտութեանն վճարեն...: - 677. ...զի *զպարտս* նոցա մեք հատուցանեմք...: - 683. Եւ ո՛չ է ի դէպ թէ հոգին ըստ ինքեան վճարէ *զպարտս* մարմնոյն. ապա ո՛չ է անդ քաւարան: - 699. ...եկեղեցի սուրբ և աղօթք քահանայից հատուցանէ *զպարտս* նոցա և քաւէ...: - 701. Ճանապարհ կեանս այս. և ոսոխ մարմինն. և դատաւոր միտքն. դահիճ խիղճ մտացն որ չարչարէ՛ զհոգին և ոչ ազատէ մինչև զամենայն *պարտսն* վճարեսցէ ապաշխարութեամբ: - 704. Արդ՝ քրիստոս զպատիժ նախահօրն կրեաց և զբնութեանս *զպարտն* վճարեաց: - 776

***ՊԱՐՏ է +*** Նախ՝ եթէ չար հիւանդութիւնն և այլն ի հարկէ՛ է, ապա ամենեցուն նոյնպէս *պարտ էր* գոլ...: - 11. Եւ յայսցանէ *պա՛րտ է* իմանալ թէ է՛ արարիչ սոցա: - 26. Վասն որոյ *պա՛րտ է* խնդրել ստէպ...: - 32. Երկուց կողմանցն ևս *պարտ է* փախչիլ: - 37. Առաջին՝ զի թէ աստուած էր անծնելութիւնն, *պա՛րտ էր* ունել և անծնելութեանն ստեղծուած ինչ. և զի ոչ ունի, և ո՛չ ոք ասէ ի հեթանոսացն այսպիսի բան. այլ ամենքն խոստովանին թէ աստուած է աստուած. և ո՛չ անծնելութիւն աստուած: - 38. Եւ դարձեալ՝ ըստ ձեզ *պարտ էր* ասել. թէ՝ ես ի միասին հօր, և մասն հօր ի յիս: - 39. Ա՛րդ՝ եթէ հոգին ելանէ յորդւոյ, *պարտ է* զի ելցէ յորդւոյ ի հայր. կամ ի միւս անձն: - 63. Եւ *պարտ է* գիտել, զի որպէս սեռ ի տեսակս ո՛չ կարէ բաժանիլ: - 87. Այլ հրեշտակ ո՛չ *էր պարտ* ստեղծանել փոխանակ նոցա: - 149. Երկրորդ՝ զի *պա՛րտ էր* տեսանել այլոցն զմեղս նոցա և զպատիժ և մնալ ի բարին: - 149. Արդ ներքին է՝ որ ի փափկութեանց և ի հեշտութեանց փորձի բնութիւնս մեր և այլայլի ի զանազան տեսակս մեղաց. զոր *պա՛րտ է* հանապազ աստուածային խնամոյն՝ զի մի՛ թողցէ յայսպիսի փորձութիւնս զմեզ ընկղմիլ: - 160. Վասն այսորիկ ո՛չ *է պարտ* խնդրել զփորձութիւնն և ո՛չ զարգելումն. այլ զյաղթութիւնն: - 160. Մանաւանդ թէ իւրաքանչիւր տարերք **բ** ծայրք որակութեանց ունին. զմինն գոյացական և զմիւսն պատահական. ըստ այսմ *պա՛րտ է* ասել քեզ մետասան բնութիւն քրիստոսի: - 176. Ապա ուրեմն պարզ էութեան երկնից *պարտ է* ունել զպարզ ձև որ է բոլորակն: - 182. Ապա ուրեմն *պա՛րտ է* զի ունիցի զձև բոլորակ: - 182. Եւ զայս գիտել *պարտ է*. զի մեծն ներսէս զհաստատութիւնն՝ արփի ասէ և եթեր կոչէ. զոր արտաքինքն եերորդ տարր ասացին որ ո՛չ երևի մեզ: - 184. Վասն այն *պա՛րտ է* զժամանակ կենցաղոյս ի բարին ծախել. զի զառաջին ժամանակն ո՛չ ոք կարէ վերստին ստանալ: - 199. Երկրորդ՝ զի երկիր չո՛ր է և ցամաք, *պարտ էր* լինիլ բազմութեան ջուրց. զի խառնեսցի ընդ երկիր և ծննդականս արասցէ: - 207. Զի՞նչ իմաստութիւն օձին որոյ *պարտ է* մեզ նմանիլ: - 218. Եւ զայսոսիկ *պա՛րտ է* բանասէր անձանց ի միտ առնուլ: - 218. Ութերորդ՝ օրինակ՝ զի գլուխ օձին է չար խորհուրդն որ մտանէ ի մեզ. *պա՛րտ է* սպանանել զնա: - 219. Յինգերորդ՝ օգնական ետ զկենդանիքդ մարդոյն. որպէս ծառայք տեառնն. անուամբ *պարտ էր* ճանաչել զնոսա: - 219. Նա՛խ՝ *պարտ է* գիտել թէ վասն դրախտին **գ** է կարծիք վարդապետաց: - 221. Իսկ զբանն ներսէսի՝ ա՛յսպէս *պարտ է* իմանալ: - 222. Եւ թէ ասեն, հրեշտակք յանէից գոյացան և ո՛չ ի միմեանց. իսկ մարդկան ազգ *պա՛րտ էր* ի միո՛յն ծնանիլ: - 226. Զի որ քան եմք ի մարմնի՝ միշտ *պարտ է* երկնչիլ ի պատժոյ ի գլորելոյ ի մահու և այլոցն: - 229. Վասն որոյ *պա՛րտ էր* լինիլ նոցա նախ որ փոքունք և անպատիւք են, զի երևեսցի մեծն և պատուաւորն այսինքն

մարդն: - 230. Եւ այս իսկ է գործն, այսինքն վայելել հոգւով յիմանալիսն, և մարմնով ի զգալիսս. *պարտ էր* նախ գոյանալ նոցա, և ապա՛ գործողին և վայելողին: - 231. Վասն առաջնոյն *պա՛րտ է* գիտել, զի առաւել հասարակն հեռի՛ է և մեծագոյն. և առաւել յատուկն մերձ է մեզ և նուազագոյն: - 235. Վասն որոյ ո՛չ *է պարտ* ենթադատել զմարդ վատն այսպիսի նշանաց երևման: - 246. Սակայն և ո՛չ *է պարտ* զանց առնել զիմաստս փիլիսոփայիցն: - 246. Այլ զայն ինչ հարցումն որ զմարդն ի հերձուածոյ ի զատ տանի՝ *պա՛րտ է* հարցանել. որպէս յառաջիկայդ հարցումն է սակաւ մի: - 251. Այլ ա՛րդ ի յանբանսն ո՛չ է առաքինութիւն որով սրբի ի մեղաց. ապա *պարտ է* զի փոխեսցի ի ներքինն իւր որ է՛ տունկն. և նման կենդանւոյն զի աճէ՛: - 252. Երկրորդ՝ զի մի գոյութիւն է մարդն բաղադրեալ ի հոգւոյ և ի մարմնոյ. ոչ *է պարտ* **ք** լինիլ սկիզբն. այլ մի էութեանն մի է սկիզբն: - 253-254. Երրորդ՝ զի զօրութեամբ է նիւթն *պա՛րտ է* ծածուկ գոլ, զի ներգործութեամբ երևեսցի: - 256. Այլ ի մարդն ո՛չ *է պարտ* ասել **գ** հոգի. այլ մի հոգի և **գ** զօրութիւն: - 259. Նոյնպէս և ի զգայականս ո՛չ *է պարտ* ասել **բ** հոգի. այլ **բ** զօրութիւն: - 259. Իսկ զտնկականն ի տունկն ո՛չ *է պարտ* ասել զօրութիւն. այլ հոգի է տնկական: - 259. Եւ թէ ասիցէ ոք, **դ** տարերքն են հիմն ամենայն նիւթոյ, *պարտ էր* լնուլ զ**դ** թիւն: - 262. Եւ ա՛րդ՝ հեռանալոյ մեզ ի դրախտէն կենաց վերջին ամուսնութիւնն եղև. զա՛յն նախ *պա՛րտ է* թողուլ, և ապա՛ յերկրաւոր հոգւոց և տառապանաց հեռանալ: - 281. Եւ այլ ևս. նոքա չունէին օրէնք գրաւոր, *պա՛րտ էր* նոցա յերկար կեալ և ի բնական օրէնս կրթել զծնունդս և զազգս իւրեանց: - 291. Ոմանք ի վերայ մարդոյս մեկնեն զտապանն և յիրաւի. զի տապանն ունէր զբոլոր աշխարհս. և մարդն մասն է աշխարհի. *պա՛րտ է* զի մասն նմանեսցի բոլորին: - 293. Հինգերորդ՝ արեամբն ազգակիցեն մարդ և անասուն. վասն որոյ ո՛չ *է պարտ* մարդոյ զիարազատն իւր ուտել: - 295. Եօթներորդ՝ արիւնն հուրն է՝ և շունչն օդն. *պա՛րտ է* հանել զբ տարրն. իսկ մնացեալն ջուր է և հող՝ ուտելի է: - 295. Եւ միապէս է մեր և կենդանեաց. վասն որոյ ո՛չ *է պարտ* զսկիզբն գոյացութեան մերոյ ուտել: - 295. Եւ մեզ *պա՛րտ է* իմանալ զչար խորհուրդ խորամանկին ի զանազան հնարս, և պատասխանել ի սուրբ գրոց. որպէս յայտ է ի գիրս Նագրեայ: - 323. Զի որ ի լեառն սուրբ առ աստուած մերձենայ, ո՛չ *է պարտ* յանկողինս կնոջ հեշտանալ...: - 331. Դարձեալ՝ ամենայն որ ի լեառն աստիճանէ բարձրանայ որպէս զմովսէս և կամ այլ ինչ, *պա՛րտ է* սրբութեամբ պաշտել: - 331. Եւ *պա՛րտ է* զաղտեղութիւնն հանել և սրբել...: - 331. Նոյնպէս և նշխարք մարմնոյն բոլոր. առ ի նշանակել թէ բոլոր *պարտ է* ունել հաւատ կերողացն: - 339. Եւ թէ ոք ասիցէ, *պա՛րտ է* ջուր խառնել ի խորհուրդն որպէս և մովսէս: - 341. Ասեմք եթէ՝ ո՛չ *է պարտ:* - 341. Եւ յայտ է զի յետ մկրտութեանն *պա՛րտ է* հաղորդել, և նոքա ո՛չ առնեն որպէս ցուցաւ: - 341. Իններորդ՝ ի ի նմանէ՛ լինէր երևումն և աստուածախօսութիւն որպէս նախ ի յերկնէ. *պա՛րտ էր* երկնազարդ լինիլ: - 342. Երկրորդ, զիպարտացեալ փառքն նշանակէ. զոր ո՛չ *է պարտ* խառնել ի բարիս: - 356. Նա՛խ՝ զի խմորն զհին չարութիւնն ցուցանէ. որ նախ հրաժարիլ *պարտէ*, և ապա՛ զբարիս գործել: - 356. Այլ որք յամառելով յօրինակն՝ ա՛ղ խառնեն ի խորհուրդն, *պա՛րտ է* նոցա խառնել և ձէթ և մուրկ և խունկ և միս գառին. կամ զանգեալ ի կասկարայս, կամ օծեալ ի տապակի, զի զօրինակն կատարեսցեն. և հեռասցին ի ճշմարտութենէն: - 357. Գիտել *պա՛րտ է*, զի ամենայն պատարագ հին օրինացն նախ ի յերկուս բաժանի: - 357. Ա՛րդ Առաջինն՝ *պա՛րտ է* զի լիցի զենօղն արու՝ աշխարհական՝ և հաւատացեալ: - 365. Ապա *պա՛րտ է* զի այրն հեղցէ զարիւնն և բաժանեսցէ զգլուխ կենդանւոյն: - 365. Նա՛խ՝ զի բոլոր զգայարանքն են ի գլուխն. *պա՛րտ է* բաժանել զնոսա: - 366. Նա՛խ՝ *պարտ* է զի լիցի օրհնեալ աղիւ. որ է՛ նշանակ իմաստութեան և սրբութեան: - 366. *Պա՛րտ է* տալ զսոսա ի քահանայսն որպէս կարգեաց մեծն մովսէս ի հինն, և սուրբն գրիգոր ի նորս: - 367. *Պա՛րտ է* զմեզ սրբութեամբ արժանապէս տաճար և զգեստ և անդամս պահել նմա: - 368. Զի *պա՛րտ է* անպարտ գոլ բոլորովին. զի քրիստոս կատարեալ անարա՛տ է աստուածութեամբ և մարդկութեամբ: - 370. Կարդացմունք. քարոզք. ներբողեանք և այլք. որ ըստ տօնից առաւելուլ *պարտ է* զնոսա: - 375. Երրորդ՝ արծաթ զբանն նշանակէ. որոյ *չէ՛ պարտ* վասն իրաւանց և քարոզութեան արծաթ առնուլ: - 375. Դարձեալ, քահանայութիւնն կա՛րգ է հրեշտակաց. *պա՛րտ է* սրբութեամբ պահել: - 381. Վասն որոյ և *պա՛րտ է* և նմա՛ խոստովանիլ որպէս է՛ ի կանոնս հարցն: - 384. Զի գողացեալ մեղքն միայն խոստովանելով ոչ քաւի. այլ հատուցանել *պարտ է* զգողօնքն. կամ ի տէրն, կամ յազգականս նորա. կամ ի քահանայն. զի միջնո՛րդ է մեռելոց և կենդանեաց: - 384. Նոյնպէս այժմ ի նորս *պարտ է* խոստովանիլ վասն կանոնաց եկեղեցւոյ. և զգողօնսն վճարել կամ ի տէրն, կամ ի քահանայս, կամ յաղքատս: - 384. Վասն որոյ *պա՛րտ է* ընդ հրամանաւն կալ նոցա՝ յորմէ և առ որ զկապակցութիւն ունիմք եօթանցն ասացեալ: - 389. Գլուխն

նշանա՛կ է մտաց. զոր *չէ պարտ* յաւելուլ՝ և ո՛չ պակասել. որպէս մուրճ ո՛չ գործէր ի սեղանն զի մի՛ պղծեսցի: - 390. Այն է որ թէ ի մասանց հոգւոյն և մարմնոյն այսինքն բանիւ՝ ցասմամբ՝ և ցանկութեամբ, կամ աչօք կամ լսելեօք կամ այլ ինչ գործով մեղանչէ դարձեալ, ուխտն ո՛չ եղև ամբողջ. դարձեալ նո՛ր *պարտ է* ապաշխարել: - 390. Ի յաւարէ *պա՞րտ է* յեկեղեցիս մատուցանել կամ մատաղել, թէ ոչ: - 390. Ի գողունից կամ յաւազակաց ո՛չ *է պարտ* զի պիղծ է: - 390. Նշանակէ՛ որ *չէ՛ պարտ* կռուիլ մեզ ընդ ամենայն մարդկան. թէ չար թէ բարի. զի ա՛զգ են մեր և որդիք ադամայ: - 393. Վեցերորդ՝ միտք բանիս այս է, որ *պա՛րտ է* կատարեալ սիրով սիրել զաստուած: - 396. Երրորդ՝ ի չարեաց հեռանալ *պարտ է*, և ապա ի բարին մերձիլ: - 403. Եւ *պա՛րտ է* մեզ հանապազ զքրիստոս առաջի աչաց տեսանել ի խաչ վասն մեր և հաւատալ. և չարչարակից լինիլ նմա յամենայն ժամ: - 405. Երկրորդ՝ զի աստուած էր կոչեցեալ, ո՛չ *էր պարտ* պակասիլ զգայութեանցն: - 411. Նա՛խ՝ զի *պա՛րտ էր* ուսով բառնալ զտապանակն որպէս հրամայեաց աստուած. և նոքա սայլիւ բերէին որպէս այլազգիքն: - 431. Եւ այս գիտելի է, զի ամենայն խոստովանելոց թէ կատարեալ թէ անկատար, *պա՛րտ է* կարգել զապաշխարութիւն. այսինքն զհատուցումն փոխարինաց: - 432. Ապա ուրեմն *պա՛րտ է* ամենայն մարդոյ ըստ կարգի և որպիսութեան լուծ կարգել: - 432. Ասեմք թէ՝ մեզ *պա՛րտ է* ի մտի պահել և ի լեզուի զմեղս. և ցաւիլ և հոգալ հանապազ վասն անցեալ մեղացն և չգործելոյ բարեացն: - 433. Ո՛չ *էր պարտ* պարզամտութեամբ խաբիլ. *պարտ էր* հարցանել զնա թէ մարգարէ՞ է թէ ոչ: - 443. Յօրինակ ամենայն մարդոյ. զի *պա՛րտ է* ստուգել զամենայն բան. և ո՛չ դիւրապատիր լինիլ և թողուլ զհրամանն աստուծոյ: - 443. Նա՛խ՝ զի ուսուսցէ, եթէ մի անգամն ո՛չ լսի՝ *պա՛րտ է* անձանձիր աղօթել. որպէս այրին որ ժտելովն էառ: - 444. Ո՞ր քան առաւել մերս անկրթութեան մտօք և իրօք *պարտ էր* հրաժարիլ և ի բաց փախչիլ որպէս խռիւ ի հրոյ և զաչացու ի լուսոյ: - 456. Նա՛խ՝ զի աստուած էր որ ծնանէր. *պարտ էր* զի աւետաւորն հրեշտակ աստուծոյ լինէր: - 463. Երրորդ՝ զի նորոգումն որ լինելոց էր ծննդեամբ կուսին՝ ո՛չ միայն մարդկան էր, այլ և հրեշտակաց. *պարտ էր* հրեշտակին սպասաւորել կուսին: - 463. Նոյնպէս *պա՛րտ է* ամենայն մարդոյ յորժամ լսիցէ զբանն, նախ խորհիլ և հարցանել, և ապա՛ հաւանիլ: - 465. Զոր *պարտ է* մեզ զնոյն առնել: - 466. Զի մարդն ցանկացաւ գիտութեանն աստուծոյ որ է յատուկ որդւոյ՝ և անկաւ. նոյնպէս նովին գիտութեամբն *պարտ էր* և կանգնիլ: - 468. Այլ և իմաստութեանն հօր *պարտ էր* նորոգել զխնդրող իմաստութեանն որ է մարդն: - 468. *Պարտ* ուրեմն *էր* բանին կենաց ելանել յայնմ անդամոց, որ պատերազմի՛ ընդ մահու: - 469. Երկրորդ՝ զի երկրորդ ադամ եղև զպարտիս նորին վճարելով, *պարտ էր* ի կերպս ադամայ երևիլ: - 480. Երրորդ՝ զի արուն զօրաւո՛ր է քան զէգն. և նախաստեղծքն գլորեալ էին վասն հեշտութեան իւրեանց. *պա՛րտ էր* արու լինիլ և կանգնել զնոսա: - 480. Ո՞ր քան ևս քահանայապետին որ զերկոտասան օր *պարտ էր* խնկօք պաշտել ի մէջ տաճարին ի ժամ աղօթիցն. թէպէտ ի սուրբն սրբոց միանգամ ի տարւոջն: - 483-484. Երրորդ՝ զի զկարգեալ օրէնսն յինքենէ՛ *պա՛րտ էր* անձամբ կատարել. զի հաւատասցի թէ ի նմանէ՛ են կարգեալ: - 485. Չորրորդ՝ զի պատճառ ամենայն սրբութեան ինքն էր, *պա՛րտ էր* զգործս սրբարար յանձն իւր կրել: - 485. Վեցերորդն է մերկացումն մարմնոյն. ի նշան խոստովանութեան մերոյ որ *պարտ է* լինիլ մերկապարանոց: - 489. Գիտել *պա՛րտ է*, զի առ հասարակ մահն, հարկաւոր կիրք է մարդկայինս բնութեան. զի ամենայն որ ծնանի՝ մեռանի: - 495. Վասն որոյ նա՛խ ցուցանել *պա՛րտ է* թէ ո՛չ նոյն է մահ և ապականութիւն: - 498. ...վասն զի շնորհաց և ազատութեան էր ժամանակն. *պա՛րտ էր* մեղաւորացն ընդ արդարոցն վայելել ի շնորհին: - 507. Եւ դարձեալ որ ուղիղն է, որպէս մարմնով տեսին ի յերկրի, նոյնպէս և հոգւով ի դժոխս *պարտ էր* հոգւոցն հաւատալ ի հոգին քրիստոսի և ազատիլ: - 507-508. Նա՛խ այսպէս, եթէ ի վերնատունն քրիստոս ծունկն եկեր. *պա՛րտ է* ի նմին աւուր ծունկն ուտել: - 510. Ապա թէ ի լոյս կիրակէին էր յարութիւնն, *պա՛րտ էր* յառաւօտին առնել պատարագ և ո՛չ յերեկոյին: - 514. Եւ է՛ այսպէս. զի անուամբ բոլորին *պարտ է* իմանալ զմասնաւորն. զի առաջին օրն անկատա՛ր է. նոյնպէս և երկրորդն անկատա՛ր է և մասն. այլ միջինն կատարեալ է: - 516. Նա՛խ՝ զի չարչարանքն քրիստոսի պատճառ եղև պարգևաց սուրբ հոգւոյն, *պարտ էր* նախկին գոլ. որպէս ամենայն պատճառ նա՛խ է քան զպատճառելին: - 521. **Երրորդ՝ զի *պա՛րտ էր* քրիստոսի հովուել զպարզամիտ աշակերտսն որպէս հաւ զձագս, և մայր զմանկունսն. և թէ ի սկզբանէ զհոգին ընկալեալ էին՝ ո՛չ էր պիտոյ հովուել զնոսա:** - 521. **Նոյնպէս *պա՛րտ էր* զսերմն հաւատոյ ընդունել նոցա քրիստոսիւ, և ապա փոքր փոքր աճմամբ հասանիլ պարգևաց հոգւոյն, և պտղաբերել և զայլսն**: - 521. Եօթներորդ՝ *պարտ էր* մեծութեան այսմ պարգևի յայտնի լինի **գ** կերպիւ: - 521. Այսպէս *պարտ էր* յառաջագոյն հօր յայտնի լինիլ և ապա՛ որդոյ

և հոգւոյն սրբոյ: - 522. Որ նշանակէ՛ թէ ի յայտնութենէն աստուծոյ և ի շարժմանէ հոգւոյն սրբոյ *պարտ է* ներգործել զայդ իշխանութիւն: - 539. Եւ այսպէս հանապազ օրհնել *պարտ է* զաստուած...: - 539-540. Եւ թէ ոք ասիցէ, յայտնեա՛ ապա զո՞րս *պարտ է* կապել կամ արձակել: - 540. Եւ թէ ոք ասիցէ, երևի ապա թէ ո՛չ *է պարտ* հնազանդիլ առաքելոյն պետրոսի և աթոռոյ նորա: - 547. Ա՛րդ՝ զի՞նչ կամիս որ հնազանդիմք պետրոսի. ուրանա՞լ *պարտ է* զքրիստոս որ լինիմք հնազանդ պետրոսի, եթէ եղծանել զպահքն, թէ զամենայն պիղծ կերակուր ուտել...: - 548. Եւ զայս վասն է՞ր յերկարել ինձ. զի ցուցանիցի թէ ո՛չ *է պարտ* միոյն ճշմարտի բազում ստոց հետևիլ: - 551. Բայց *պարտ է* այնոցիկ որք ո՛չ գիտեն՝ և կամ թէ կամաւ տգիտանան՝ ցուցանել զմիաբանութիւն ազգիս հայոց առ այլ քրիստոնեայսն. զի գիտացեալ յամօթ լիցին յաղթեալք ի ճշմարտութենէն: - 553. Իսկ վասն ջրոյն զի՞նչ *պարտ է* ասել. զի յոյնք թերի ցուցանեն զլատինացւոց խառնումն, ինքեանց կրկին խառնմամբն. և զայն խորհուրդ առեալ: - 554. Այլ արդ՝ զղջանալ և խոստովանիլ *պարտ է* զիպարտութիւն՝ զնախանձ՝ զատելութիւն՝ և զայլն, և ապա՛ թողութիւն գտանել: - 556. Վասն որոյ զգուշանալ *պարտ է* սրտին սրբութեան քան զմարմնոյն: - 558. Զսէրն որ առ աստուած *պարտ* էաք, փոխե՞մք առ երկրաւորս և ի մեղս: - 564. Ատել *պարտ էր* զմեղս. այժմ ատեմք զարդարութիւն: - 564. Խորխտալ *պարտ էր* առ չարսն և ո՛չ հնազանդիլ. այժմ անհնազանդիմք օրհնացն աստուծոյ և ամբարիւաճիմք առ ընկերս: - 564. Զգուշանալ *պա՛րտ է* յամբարտաւանութենէ, զի զիրեշտակս կարաց խաբել. և զիրեշտակն սատանայ դարձոյց: - 569. Զգուշանալ *պարտ է* ի բարկութենէ. և առաւել ի ժամ դատաստանին. զի մարդ բարկացեալ ո՛չ ճանաչէ զճշմարտութիւնն: - 570. ...զի զկերակուրն ի հարկաւոր ժամանակին *պարտ է* ուտել. այսինքն որ քաղցեալ լինի. այլ ո՛չ յամենայն ժամ որ յագեալ լինի: - 570. Եւ այլ վարդապետք ասեն, սիրել *պարտ է* նախ զայն որ ի վերո՛յ է քան զմեզ. այսինքն զաստուած. և ապա՛ զմեզ. յետ որոյ զընկերն. և ապա՛ զմարմինս մեր. և ի նոյն աստիճանս զմարմին ընկերին. զի մարմինն երկրորդ է հոգւոյն: - 576. Զո՞ր թշնամիս *պարտ է* սիրել: - 577. Զթշնամիսն մեր *պա՛րտ է* սիրել և աղօթել վասն նոցա. և զթշնամիսն աստուծոյ ատել...: - 577. Անձին թշնամւոյն *պա՛րտ է* բարի առնել. իսկ թշնամւոյն եկեղեցւոյ՝ ո՛չ առնել բարի և ո՛չ չար: - 577. Դարձեալ՝ *պարտ է* սիրել զմարմնոյ թշնամիս մեր: - 577. Խոհեմ մարդն ո՛չ պարտի վաղվաղել ի գործ զինչ և է՛. այլ *պա՛րտ է* նա՛խ խորհիլ որ ո՛չ խաբի: - 579-580. Եւ յայնմ ծնական բանիցն ո՛չ *է պարտ* ի բաց թողուլ. և ո՛չ այլ բան ի ներս խառնել: - 588. Իսկ զէութիւն բանին որ է՛ յանուն Յօր և Որդւոյ և Յոգւոյն սրբոյ՝ ասելն մի՛անգամ *պարտ է* ասել և ո՛չ կրկնել տգիտաբար: - 588. Իսկ լուանալն *պարտ է* լինիլ ի մարմինն բոլոր: - 588. ...զնոյն և ամենայն հեթանոսք առնեն. իսկ թէ ի հեթանոսս այսպիսի պարկեշտութիւն *պարտ էր* առնել, քանի՞ ևս առաւել յեկեղեցիս *պարտ է* լինիլ. որ է ճշմարիտ կարգաւորութիւն և սրբութեան օրէնք: - 589. Իններորդ, զի մկրտութիւնն է գործ քահանայութեան. և քահանայութիւնն է ազատ և ո՛չ ընդ ումեք հարկի ներքոյ. իսկ կինն ծառայ և ոտք է առն. վասն այսր հարկի ո՛չ *է պարտ* ծառային առնել զգործ տեառն...: - 589. Զմի անգամ մկրտեալն *պա՞րտ է* կրկին անգամ մկրտել թէ ոչ: - 590. Ասեմք թէ ո՛չ *է պարտ* կրկին մկրտել զմկրտեալն վասն դ պատճառի: - 590. Զզաւակս այլազգեաց մկրտել *պարտ է*. զի թէ մեռանի ազատեալ է ի սկզբնական մեղաց և ի պատժոց դժոխոց: - 591. Այլ կնքահայր ո՛չ *է պարտ* առնել զայլազգին. զի ո՛չ ունի զհաւատն սուրբ, և ո՛չ է հրաժարեալ ի սատանայէ. վասն որոյ ո՛չ կարէ լեզու լինիլ տղային կամ երաշխաւոր...: - 591. Եւ ոչ այս միայն այլ և ի ժամ մկրտութեանն ո՛չ *է պարտ* մնալ կնոջ յեկեղեցւոջն: - 591. *Պարտ է* զի իւրաքանչիւր ոք ծնցի մկրտութեամբն քրիստոսի. զի սրբեսցի և ազատեսցի ի մահու: - 592. Ո՛չ է օգուտ. զի չև ևս ծնաւ երկրորդ ադամ. զի նախ *պա՛րտ էր* ըստ մարմնոյ ծնանիլ. և ապա ըստ հոգւոյ վերստին ծնունդ: - 592-593. Դարձեալ՝ մելքիսեդեկ հաց և գինի մատոյց պատարագ աբրահամու և ո՛չ ջուր. որ նշանակէր զճշմարիտ պատարագն քրիստոսի. ապա ուրեմն ո՛չ *է պարտ* խառնել ջուր: - 595. Որք ասեն՝ *պա՛րտ է* յամենայն աւուր ջերմ հաց հանել ի սեղանն և անապական բաժակ. զի անապական արեամբն քրիստոսի փրկեցաք: - 595. Եւ այսպէս *պարտ է* կամ զօրհնեալն դարձեալ օրհնել որ է սուտ. կամ ամենայն հացն ո՛չ է օրհնեալ այլ մինն: - 597. ...վասն որոյ *պա՛րտ է* աչօք տեսանել զզգալիսն, և մտօք հայիլ յիմանալին և երանիլ: - 597. Եւ *պա՛րտ է* որ ապաշխարանքն լինի առ ոտս քահանային: - 601. Եւ *պա՛րտ է* ի շրջակայքն նայիլ. - 601. Իսկ յորժամ մեղաւորն խոստովանի, *պա՛րտ է* հայիլ քահանային թէ կրօնաւո՞ր է թէ աշխարհական: - 601. ...զի *պարտ է* նմանեաւն զնմանն բժշկել: - 602. Զխոստովանեալ մեղքն *պա՞րտ է* կրկնել թէ ոչ: - 603. Ասեն վարդապետք թէ՝ զմի անգամ խոստովանեալն բարի հաւատով և կատարեալ զղջմամբ՝ ո՛չ *է պարտ* կրկնել. եթէ ոչ վասն չորից

պատճառաց: - 603. ...զի *պարտ է* զոր ի մտի ունի` զբոլորն միոյ քահանայի խոստովանիլ: - 603. Չորրորդ` եթէ անփոյթ արար և մոռացաւ զկարգեալ ապաշխարութիւն փոխարինացն, *պա՛րտ է* կրկին խոստովանիլ...: - 603. Եւ թէ ոք ասիցէ, *պա՛րտ է* զի ձեռն քահանային մերձեսցի ի զգայարանսն: - 605. ...վասն որոյ ո՛չ *է պարտ* բաժանել զօրինաւոր պսակն որքան կենդանի իցեն: - 611. Իններորդ սրբենք, զի բնակելոցս ի սմա և պաշտօնէիցս *պա՛րտ է* սուրբ լինի զի մի՛ պղծեսցեն զսրբութիւնսն: - 615. *Պա՛րտ է* ամենայն որ աղօթէ, զայսոսիկ ի միտ պահել և ապա՛ աղօթել. վասն որոյ ի սկիզբն գրեցի զխրատս: - 620. Երկրորդ` վասն զի քահանայք եմք` *պա՛րտ է* հասարակ աղօթել. և զի աբեղայք` *պա՛րտ է* առանձնակի աղօթել: - 623. Երրորդ` զի ունիմք զբնութիւնս հասարակ` *պա՛րտ է* հասարակ աղօթել. և զի ունիմք անձն և դէմք յատուկ` *պա՛րտ է* առանձնակի աղօթել: - 623. Չորրորդ` վասն հասարակ և յայտնի մեղաց` *պա՛րտ է* հասարակ և յայտնի աղօթել...: - 623. ...և վասն առանձին գլորման` *պարտ է* առանձնակի աղօթել և ապաշխարել: - 623. Այլ որք ո՛չ ժամանեն` *պա՛րտ է* յամենայն աւուր կրկին անգամ աղօթել. այսինքն յայգն և յերեկոյն: - 623. Խաղաղութիւն ամենեցո՞ւն *պարտ է* ասել, թէ ընդ ամենեսեան: - 625. Ապա ուրեմն *պա՛րտ է* ասել` «խաղաղութիւն ամենեցուն». քան` «ընդ ամենեսեան»: - 625. Ապա ուրեմն *պա՛րտ է* յորժամ յիշատակեմք զհոգին սուրբ ամենայն ուրեք` խաչակնքել զդէմս և երկրպագել: - 625. Եւ վասն բազում պատճառի *պարտ է* գոհանալ: - 626. Բայց դարձեալ տեսանել *պարտ է* զկանոնագլուխս ընդ կանոնացն կարգաւորեալ: - 629. *պարտ է* զբանիւ պատուականն հիմն դնել. որ է՛ երեքսրբեանն...: - 634. Զի ի **դ** տեղւոջս յայս` *պա՛րտ է* ժողովրդեանն զգլուխս բանալ: - 635. Բայց կին մարդոյ ո՛չ *է պարտ* բանալ զգլուխն, այլ առաւել ծածկել յեկեղեցւոջ: - 635. ...զի աբեղութիւնն կրօնաւորութիւն է. և կրօնաւորին *պարտ է* զամենայն զգայարանս ծածուկ պահել: - 635. Այլ ի պատարագն *պարտ է* բանալ զգլուխս որ պատարագիչն է ամենայն ոք որ և իցէ. թէ քահանայ և թէ եպիսկոպոս և կամ ա՛յլ ոք: - 635. Նախ աստուածածնի՞ *պարտ է* ասել շարական. թէ խաչի: - 642. Այլ և կարդացողին *պա՛րտ է* նմանեցուցանել զիւր խօսքն ասողին գրոց: - 643. Երրորդ, աստուածահայր կոչեցաւ, *պա՛րտ է* առաւել զինչս հօրն ծախել ի տունս եկեղեցւոյ: - 643. Որպէս ժողովուրդն գնաց մերձ ի լեառնն, և մեզ *պա՛րտ է* յոտաց կալ և յառաջ գնալ և լսել: - 644. Ապա *պա՛րտ է* քեզ ի փոքր կարգն ուտել զամենայն աւուրս և զմեծն պահել: - 651. ...նախ *պա՛րտ է* զհոգին կերակրել և ապա՛ զմարմինն: - 654. ...*պա՛րտ է* վասն ամենեցուն աղօթել և զպարտս նոցա վճարել: - 655. Վասն այն ընդ քրիստոնէի՛ց *պարտ է* բաժանել զհացն...: - 655. Զայս սովորութեամբ առնեն զոր *չէ՛ պարտ*. զի յուսահատութեան է նշան և հեթանոսաց գործ: - 656. ...վասն այն *պա՛րտ է* զընտիրն և զգէրն մատուցանել: - 657. Չորրորդ, զի մա՛սն է հոգւոյն և հանդերձեալ կենացն. *պա՛րտ է* զպատուականն որոշել քան զմարմնոյս: - 657. Դարձեալ` չորիւք յատկութեամբ մատաղին *պա՛րտ է* զանձինս մեր պատարագել: - 658. ...և մեզ *պա՛րտ է* սրբութիւն սրտի և վարուց...: - 658. Երկրորդ, որպէս կենդանւոյն աղ, նոյնպէս ի կեանս մեր հանապազ *պա՛րտ է* ի լեզուս ունել զօրհնութիւն և զփառս աստուծոյ: - 658. Երրորդ, որպէս ողջակէզ նորին, և մեզ *պա՛րտ է* զանազան փորձանաց և նեղութեան զանձինս մատուցանել սիրովն աստուծոյ: - 658. ...զի առաջին աղօթք յամենայն կարգադրութիւնս` գոհանամք *պարտ է* դնել. բայց առաւել ի կնքելն` և ի թաղել մեռելոյն: - 659. *Պա՞րտ է* բժշկական դեղով վարիլ հիւանդաց, թէ ոչ: - 665. Եւ բժշկութիւնն` ո՛չ ի դեղն, այլ յաստուած յուսալ *պարտ է*. որ դեղով և առանց դեղոյ կարո՛ղ է բժշկել: - 665. Ա՛րդ` եթէ ըստ բնականին է հիւանդութիւնն, *պա՛րտ է* բժշկական դեղով առողջանալ...: - 665. ...իսկ թէ յայլ երիցն է, նայիլ *պարտ է* առ ինքն թէ ո՞ր յանցանք առաւել զօրացեալ է յինքն, զայն պակասեցուցանել...: - 665. Եւ զի ո՛չ գիտեմք զոսա՞ *պա՛րտ է* զգուշութեամբ լինիլ: - 668. Արժանաւոր է թէ անարժան` *պա՞րտ է* կատարել զկարգն թէ ոչ: - 674. Ասեմք թէ այո՛ *պա՛րտ է* ամենեցուն կատարել: - 674. Նոյնպէս և մեզ շնորհացն այնմ *պարտ է* հնազանդիլ և կատարել զկարգն: - 674. Նոյնպէս և ամենայն աշխարհականաց *պա՛րտ է* կատարել զկարգս իւրեանց...: - 674. Իսկ չափաւոր արտասուել *պարտ է* ամենայն մարդոյ ի տեսանել զմեռեալն. - 676. Զի վասն յանցանացն ադամայ անիծաւ երկիր ի գործս նորա. զսուրբ մարմինն քրիստոնէի *չէ՛ պարտ* դնել յանսուրբ հող...: - 676. Նա՛խ` զի յետս դառնամք մահուամբ, այսինքն ի դրախտն և ի մայր մեր, *պա՛րտ է* զի նախ ոտքն ընթասցի: - 676. ...նոյնպէս յերկրորդ օրն *պարտ է* գալ կանանց նախ ի գերեզմանն, և ապա արանց. և հոգևոր տեսութեամբ ուրախանալ: - 680. Զգերեզմանս յորո՞ւմ աւուր *պարտ է* օրհնել: - 684. Ա՛րդ` եթէ մարմինն ևս գործեաց զմեղս, *պա՛րտ է* և նմա կրել պատիժ...: - 699. Եւ սոքա *պարտ է* զի լիցին հաւատով: - 702. ...այլ *պա՛րտ է* զի յարիցէ և մարմինն և ի միասին առցեն զհատուցումն բարեաց կամ

չարեաց: - 715. Այլ արդ՝ յանմահութենէ հոգւոյն *պա՛րտ է* զի լինիցի և մարմինն անմահապէս շարժեալ ի նմանէ...: - 715. ...և ո՛չ *էր պարտ* մասին փոփոխիլ առանց բոլորին...: - 717. *Պարտ է* ապա զի ամենայն մարմինք մարդկան համանգամայն յարիցեն ի յաւուրն վերջին: - 717. Ապա ուրեմն *պա՛րտ է* զի ամենայնքն յարիցեն ի մեռելոց...: - 724. Եւ որպէս հոգին ունի զզօրութիւն իւր անպակաս. նոյնպէս և անդամք մարմնոյն *պարտ է* լինիլ անպակաս զի իցէ կատարեալ մարդ: - 725. Նա՛խ՝ զի ապականեցան տարերք վասն յանցանաց մարդոյն, *պա՛րտ է* զի ընդ մարդոյն նորոգեսցին և նոքա: - 727. Նոյնպէս և մեզ *պա՛րտ է* լինիլ արթուն ի մեղաց...: - 730. Երկրորդ, *պա՛րտ է* զի կատարեսցին գրեալքն ի մարգարէից. - 735. ...վասն որոյ նմա՛ *պարտ էր* դատաւոր լինիլ և հատուցանել ըստ գործոց հաւատացելոց և անհաւատից: - 735. ...ապա *պա՛րտ է* ի նա՛ ընկենուլ զդատաստան չարչարողացն մերոց և հալածողաց. և ուրախութեամբ տանիլ զլըլկանս. և մի՛ մեզէն վրէժխնդիր լինիլ մեզ...: - 735. Նա՛խ՝ զի տեղիք դատաստանին *պա՛րտ է* զի ի հասարակ վայրի լիցի և եէմ է՛ մէջ աշխարհի: - 738. Որք որպէս գիրք յայնժամ բացեալք եղիցին. քանզի վարդապետութիւնք նոցա և օրինակք՝ ամենեցունց յայտնեսցին. ի յորս ամենեքեան իբրև ի գիրս տեսցեն թէ զի՞նչ *պարտ էր* առնել կամ խոտել ինքեանց: - 742. Եւ *պա՛րտ է* գիտել զի ի միոյ սեռէ բարութեանցն աստուծոյ՝ յառաջե՛ն առ մեզ ողորմութիւն և արդարութիւն. կրկին տեսակ կամ գործք կամ զօրութիւն...: - 745. Վասն եօթներորդին, որք զմեղս խոստովան լինին ո՛չ կամեցան զորս առնել ո՛չ *էր պարտ.* վասն այնորիկ անդանօր ամենեցուն մերկացեալ և բացեալ յաւիտեան յամօթ լինին: - 752-753. Արդ՝ եթէ արքայութիւնն երկնից մի է, այլ փառքն գ. *պա՛րտ է* ապա զի լիցի և դժոխքն գ, որ է՛ սուտ: - 758. Առաւել *պարտ էր* մարդկան վաստակիլ միայն՝ զի կարասցեն գոլ ի միում աւուր ընդ երանելի սրբուհւոյ աստուածածին կուսին. քան բազում վաստակիլ վասն յաւիտենական փառացն: - 763. Եւ յիրաւի այս. զի այն ոք որ առնէ զոր ինչ ոչ *է պարտ*, յիրաւապէս կրեսցէ զոր ինչ *պա՛րտն է*. զի մեղքն է առնել, իսկ պատիժն է՛ կրել: - 776

**ՊԱՐՏԱԿԱՆ +** Կամ զպարտս յոչ *պարտականէն* խնդրէին. որպէս ա՛յժմ անիրաւք զայլ ոք այլոյ գրաւ առնուն: - 238. Ասեմք թէ՝ ի վերնատունն զհինն կատարեաց մինչ զմարմինն բաշխեաց և նոր օրէնս եդ. և մեք հնոյն ո՛չ եմք *պարտական:* - 510. Եւ կոչի մահացու, զի *պարտական* առնէ զմարդն յաւիտենից մահուն: - 567. Երրորդ՝ յորժամ սիրեմք *պարտական* առնեմք զայլս. և յորժամ սիրիմք *պարտական* լինիմք այլոց: - 576. Սիրել զսիրելիս *պարտական* է ամենայն ոք. այլ սիրել զթշնամիս է՛ առաւել արդիւնաւոր: - 577. Տղայն իւր կամաւն ո՛չ գործէ. վասն է՞ր է *պարտական* մեղացն ադամայ: - 591. Եօթներորդ, զի զաստուած կրկին ևս *պարտական* առնէ ի տալ: - 626. և ապա դարձեալ *պարտական* առնէ: - 655

**ՊԱՐՏԱՊԱՆ +** Բազում ողորմ առ բազմապարտ դարձեալսն ի մեղաց. որպէս *պարտապանն* բիւր քանքարոյ: - 351. Վեցերորդ՝ այլ և ի թողութեան ամն ուսուցէ թողուլ զպարտիս բանից և գործոց մերոց *պարտապանաց:* - 372. Եւ զի *պարտապանք* եղեն արեանն և վճարելո՛ց էին: - 490. Չորրորդն *պարտապան* գոհութեան վասն էից փոփոխման. և ոմանց ամօթ պատկառանաց: - 630

**ՊԱՐՏԱՒ** - Իսկ Յինգերորդ ժողովն եղև ի վիճակս գրիգորիսի. ի մայրաքաղաքն աղուանից *պարտաւ:* - 545

**ՊԱՐՏԱՒՈՐ +** Նմանապէս այն որ աւէ եղբօր իւրում մօրոս, *պարտաւոր* լիցի ատեհի դատաստանի և գեհենի խղճի մտացն: - 704. Եօթներորդ, քրիստոս ո՛չ է *պարտաւոր* յայնցանէ վասն որոյ դատէ՛ զայլս. զի «ո՛չ արար մեղս և ո՛չ գտաւ նենգութիւն ի բերան նորա»: - 735

**ՊԱՐՏԱՒՈՐԵՄ +** *Պարտաւորեցան* ըստ մարդապաշտութեամբ ո՛չ միայն երկրաւորքս՝ այլ և երկնայինքն: - 67. Իսկ թէ ըստ մարմնոյն շեղեսցի՝ ի մահ *պարտաւորեսցի* և տնկեցի ի մարմնաւոր տեղիս. որպէս և եղև իսկ: - 231. Երկրորդ՝ զի սուրբ գիրն ո՛չ *պարտաւորէ* զնա իբրև զմահապարտ: - 443

**ՊԱՐՏԱՒՈՐՈՒԹԻՒՆ +** Երկրորդ՝ պատճառ *պարտաւորութեան* մեղաւորաց էր ադամ. և նա ազատեցաւ. ապա ուրեմն ամենայն պատճառելիքն ազատեսցին: - 507

**ՊԱՐՏԵՄ +** Այլ դատաւորին *պարտէ* ունիլ անհուն գիտութիւն...: - 100. Այսպէս *պարտէ* սրտիւ հաւատալ. և բերանով խոստովանիլ...: - 101

**ՊԱՐՏԷԶ +** Նախ անարգեցաւ ի *պարտէզն* զկնի արեան քրտանցն յորում մատնեցաւ ի յուդայէ. և իբրև աւազակ ըմբռնեցաւ և կապեցաւ: - 492. Եւ ոմանք ասեն թէ՝ երկու են մագդաղենացիքն. մինն գնաց և ի ճանապարհին ետես զտէրն. և միւսն եկաց և ի *պարտիզին* ետես: - 515

**ՊԱՐՏԻՄ +** Որև ըստ այսմ *պարտին* նոքա ուրանալ և զանհատ բնութիւնս մարդկութեան նորին.

զիմի՛ հասարակ մարդկութիւնս միաւորեսցի: - 76. Իններորդ՝ նախատակադիրն քրիստոս է փրկիչն ամենեցուն. և ամենայն սուրբք զինուո՛րք նորա. *պարտին* և զինւորքն զօրավարին նմանիլ և նախատակիլ...: - 159. Իսկ առաքեալն վասն արտաքին փորձութեանցն ասէ. որ ի հալածչաց հասանէ ի վերայ մեր. յորում ուրախանալ *պարտիմք*. զի որքան յաճախէ փորձութիւնն, ա՛յնքան առաւելու և պսակն: - 160. Վարդապետք ասեն թէ ամենայն երկինք ի հարկէ *պարտին* ունել զբոլորակ ձև: - 182. Երրորդ՝ զմեռելութիւն ախտից. զի *պարտիմք* մեռուցանել ի մեզ զմարմնական ախտն: - 281. Տասներորդ՝ ի ցուցանել թէ կաղանալ *պարտիմք* աշխարհի, և ապա ի հանդէսն աստուծոյ մտանել: - 311. Իննևժ, մովսէս տարածմամբ ձեռացն զամաղէկ *պարտէր:* - 329. Եւ որք *պարտին* աստ, նոքա և յետ մահու և յարութեանն. զորս կորուսցէ փրկիչն մեր յիսուս: - 394. Ութերորդ՝ զի թէ հաւատան աւետարանին և ոչ ստեն լ ամաց գալ քրիստոսի ի մկրտութիւն, ի հարկէ՛ *պա՛րտին* կատարել և զմկրտութիւնն ի նոյն ի տօնի ծննդեանն իւրեանց ի դեկտեմբերի իե որ իցեն ամենևիմբ սուտ: - 484. Հինգերորդ՝ նշանակէ՛ զչորս առաքինութիւնս ի յորս *պարտի* տարածիլ ներքին մարդս մեր...: - 493. Նոյնպէս և զամենայն օրհնելիս իմա՛. արժանաւորքն օրհնել *պարտին*. և զարժանաւորս. և արժանապէս: - 540. Այլ որ այսպէս իրաւամբք կապեսցի՝ հնազանդիլ *պարտի* կապողին որպէս յաստուծոյ շարժեալ: - 540. Ապա ուրեմն *պարտին* ամենայն ազգք քրիստոնէից սորա հետևիլ: - 550. Դարձեալ՝ պատրաստութեանն ի թողութիւն *պարտի* լինիլ կրկին. այսինքն ճանաչումն ճշմարտին՝ և սէր բարւոյն: - 567. Աստուծոյ *պարտիմք* զերկիւղն և զպատկառանքն: - 579. Խոհեմ մարդն ո՛չ *պարտի* վաղվաղել ի գործ զինչ և է՛. այլ պա՛րտ է նա՛խ խորհիլ որ ո՛չ խաբի: - 579-580. Նոյնպէս **գ** կերպիւ *պարտիմք* ապաշխարել: - 601. Եւ գիտելի է, զի մարդ որ ի մեղք անկանի և իմանայ զինքն որ մեղք գործեաց, և ունի զխոստովանահայրն պատրաստ ուղղափառ և գիտուն, ի յա՛յն պահն *պարտի* խոստովանիլ: - 601. ...*պա՛րտիմք* կրկնակի օրհնել զարարիչն: - 655. Զի որք ընկալան զշնորհսն, *պա՛րտին* նոքա ընչիւք իւրեանց զեկեղեցւոյն լոյսն վառել զաւուրս ութն: - 684. Այլ և *պա՛րտի* ապաշխարութիւնն կամաւ գոլ. իսկ ի քաւարանն հարկիւ տանջի: - 699. Իսկ որք զբանն մարմնով անապական խոստովանի, *պա՛րտին* և զխաչն աստուածընկալ անապական խոստովանիլ: - 733. Տասներորդ, քրիստոս գլուխ է մեր և մեք անդամք. և զի քրիստոս է դատաւոր՝ *պարտիմք* մեք զմիմեանս մեծարել և սիրել...: - 735. Երկրորդ, զի դատաստանն *պա՛րտի* յայտնի լինի. այլ՝ արդ՝ եէմ է՛ առաւել յայտնի վասն փրկութեանն որ անդ կատարեցաւ: - 738. Կանո՛ն է իմաստասիրաց, զի իր որ բնութեամբ լինի, բոլոր տեսակին *պարտի* գոլ: - 773. Դարձեալ՝ մարմին քրիստոսի խորհրդապէս է՛ եկեղեցի. և *պա՛րտին* չարչարակցիլ նորին՝ հետևելով նմին: - 781

**ՊԱՐՓԱԿԵՄ +** Երրորդ՝ զի ճշմարտութեամբ են *պարփակեալ:* - 139. Երրորդ՝ զի *պարփակէ*. այսինքն ժողովէ և որոշէ զբանն: - 177

**ՊԵԾԵՆԵԿ** - Եւ այս են **իբ** լեզուքն: ...*Պեծենեկք:* - 298

**ՊԵՄՈՆԱՑԻ** - Եւ այս են **իբ** լեզուքն: ...*Պեմոնացիք:* - 298

**ՊԵՆՏԱԿՈՍՏԷ +** Եւ ի մեզ հոգւոյն գալստեան ի *պենտակոստէն:* - 373. Որ և այժմ յոյնք և ասորիք *պենտակոստ* կոչեն որ թարգմանի **ե** երրորդ և ո՛չ **է** երրորդ: - 524. Եւ *պենտակոստէ* գալուստ հոգւոյն և կատարումն խոստմանց և լրումն աւետեաց: - 524. Եւ *զպէնտակոստէին*, և զվարդավառին, և զսուրբ գրիգորին և զյովհաննուն, և զմարգարէիցն, և զվարդանանցն, և զառաքելոցն, և թագաւորացն, և զանտօնին: - 637. Իսկ մեր վարդապետք ասեն ի կիրակէի *պենտակոստէին* ի նոյն ժամն գիշերոյն...: - 714

**ՊԵՏ +** *Պետր* ուղղեցին: - 456. Եւ վէմն եկեղեցւոյ և *պետ* պետական գնդին՝ խուսափէր: - 456. Եւ քահանայապետ ասէ զնա՝ որ պատարագէ և մկրտէ և դրոշմէ. զի նա՛ է *պետ* և աւագ ի կատարմունս խորհրդոյն: - 594. *Պետաց,* Քահանայից, և Սարկաւագից: - 614. Եւ այսպէս ասէ առաքեալն եթէ՝ մերկութեամբ մարմնոյն մերկեաց զիշխանս և *զպետս* խայտառակեաց: - 705. ...վասն զի գաբրիէլ հրեշտակապետաց դասուն է *պետ*...: - 713. Որպէս և ոմն ի *Պետաց* մերային ազգաց՝ զհաւատն դրուատեաց ասելով, Հաւատ ի հօրէ սկսեալ յորդի և ի հոգի վերաբերի: - 769. Գիր քոյոյ վսեմամիտ խոհեմութեանդ ո՛վ արփիածին հարազատ, և վերնոյն սիօնի նազելի զաւակ Գէորգէոս Ռաբունեայ *պետ:* - 773. Յաղագս այսմ զանազան են տեսութիւնք հարց պետաց: - 781

**ՊԵՏԱԿԱՆ +** Եւ վէմն եկեղեցւոյ և պետ *պետական* գնդին՝ խուսափէր: - 456

**ՊԵՏՈՒԹԻՒՆ +** Չորեքտասաներորդ՝ ասէ պօղոս յեփեսացւոցն թէ՝ հայր կացոյց զքրիստոս յերկնաւորս ի վերայ ամենայն իշխանութեանց. և *պետութեանց*. և զօրութեանց. և ամենայն

անուանելոց. ո՛չ միայն յաշխարհիս այլ և ի հանդերձելումն: - 97. Ապա ո՞րպէս է գլուխ նա ամենայն իշխանութեանց և *պետութեանց* և ուսուցիչ: - 99. Երրորդն՝ *Պետութիւնք*, Հրեշտակապետք, և Հրեշտակք: - 134. Թէպէտ և զայս կարգ փոխեն ոմանք և զզօրութիւնն և *զպետութիւնն* աւանդեն որ մեզ ո՛չ է հետևելի. այլ սրբոյն դիոնիսեայ որպէս ասացաք: - 135. Նախ *պետութիւնք*. և ապա հրեշտակապետք. և վերջին հրեշտակք. և այս կարգ այսպէս ուղղակի՛ է: - 136. Նախ՝ զի *պետութիւնք* պատշաճին առ հայր. և հրեշտակապետքն առ որդի իբր յերկուց միացեալ. և հրեշտակքն ի դէմս հոգւոյն իբր նախ եկաւորեալք յամենայն ուրեք, և ապա յորդի և ի հայր բնակեալ: - 136. Երրորդ՝ *պետութեանցն:* - 144

**ՊԵՏՐՈՍ** - *Զպետրոս* գլուխ եղեալ, և զդաւանումն նորին կոխեն: - 34. Այլ հոգին սուրբ էր որ խօսէր ընդ մարգարէսն. որպէս ասէ *պետրոս* ի կաթողիկէքն, «Ո՛չ թէ ըստ կամաց մարդկան տըւան մարգարէութիւն, այլ ի հոգւոյն սրբոյ կրեալք խօսեցան մարդիկ յաստուծոյ»: - 58. Իննևտասներորդ՝ ասէ *պետրոս* ի գործքն, «ա՛նանիա՝ ընդէ՞ր էլից սատանայ զսիրտ քո ստել քեզ հոգւոյն սրբոյ»: - 59. Եւ առ *պետրոս* ասէր, «ազա՛տ են որդիքն»: - 67. Նաև աշակերտքն. որպէս *պետրոս* որ դաւանեաց զքրիստոս որդի աստուծոյ: - 68. Եւ *պետրոս* ասէ ի դաւանութիւնն՝ «դու ես քրիստոս որդի աստուծոյ»: - 73. Որպէս թէ մարմինն *պետրոսի* խոցի կամ տանջի, ասեմք թէ *պետրոս* խոցեցաւ և *պետրոս* տանջեցաւ: - 74. Եւ դու *պետրոս*՝ մարդ կենդանի բանաւոր մահկանացու մտաց և հանճարոյ ընդունակ: - 74. Անձն է անհատն և մասնականն որպէս *պետրոս:* - 86. Եւ ո՛չ աննմանամասնաբար. որպէս *պետրոս*՝ յոտս և ի ձեռս և ի գլուխս. զի նոքա ո՛չ միմեանց և ո՛չ բոլորին համանունաբար ասին: - 88. Եօթնևտասներորդ՝ ասէ *պետրոս* ի հարցանել ցնա, «տէր՝ դու զամենայն գիտես. և զամենայն իսկ ճանաչես. և եթէ սիրեմ զքեզ»: - 98. Իսկ թէ զամենայն ճանաչէ՝ և զսէրն *պետրոսի*, ապա ո՛չ է պակաս գիտութիւն նորա: - 98. Զի ո՛չ է որպէս *պետրոս*՝ և պօղոս՝ և յոհաննէս՝ երեք մարդ և մի բնութիւն. այլ մի է անհատութեամբ. ունելով երիս յատկութիւնս դիմաց: - 107. Ապա յա՛յտ է զի ա՛յլ է կարգ շնորհականին, և այլ է կարգ բնականին. զի բնականք ներքինք զվերնոցն բոլորապէս ունին և կոչին. այլ ո՛չ անդրադարձեալ. որպէս անհատն զտեսակն և զսեռն բոլորապէս ունի և կոչի. զի *պետրոս* մարդ է և կենդանի և կոչի. այլ կենդանին մարդ՝ կամ մարդն *պետրոս* ո՛չ է և ո՛չ ասի: - 136. Իսկ անձն է զանազանեալ հանդերձ բացորոշ յատկութեամբ. որպէս *պետրոս:* - 174. Գոյացութիւն որ սկիզբն է ամենեցուն և նախասեռ. և ի նմանէ զուգաբաժանեալ մարմինն. և շնչաւորն. և զգայունն. և կենդանին. և բանաւորն. և մարդն. ո՞չ ապաքէն բնութիւն են սոքա այլևայլ. և ժողովեալ գոյացուցանեն զմի անհատն *պետրոս* անշփոթ միութեամբ: - 176. Եւ զի անշփո՛թ են սոքա յատկութեամբ՝ յայտ է. ուստի ասեմք, *պետրոս* մա՛րդ է և բանաւոր և կենդանի և զգայուն և շնչաւոր և մարմին և գոյացութիւն: - 176. Եւ ժողովեալ սոքա լինին մի բնութիւն *պետրոսին:* - 176. Եւ ո՛չ ասեմք *զպետրոսն* այլ և այլ բնութիւն ըստ այլևայլութեան սոցա որ ի *պետրոսն:* - 176. Այլ մի է *պետրոսն* ըստ անձին անհատ գոլոյն. և մի է բնութիւն *պետրոսին* ըստ միաւորութեան բանին. իսկ սոքա օրինակ՝ և նա՛ ճշմարտութիւն: - 176. Եւ տեսակիւ, որպէս *պետրոս* և պօղոս: - 236. Իններորդ՝ զի և ի հոգևորն՝ փոքունք զմեծամեծաց անուանս կոչէին ինքեանց ի մոլորումն մարդկան. որպէս սիմոն կախարդն ասէր զինքենէ՛ թէ քրիստոսն իցէ. մինչև յանդիմանեցաւ ի *պետրոսէ:* - 238. Եւ զհետ տեառն *պետրոս* և յովհաննէս մինչ ի սրահ քահանայապետին: - 306. Եւ կամ ի հաւասարէն. որպէս *պետրոս*. կամ ի վերջնոցն որպէս հիւսն: - 312. Նեփթաղիմ է և *Պետրոս:* - 348. Որոց առաջին Յակոբայ: Երկու *պետրոսի:* Երեք յոհաննու: - 450. Եւ քարոզութիւնն *պետրոսի* առաքելոյ: - 451. Զոր ի ժողովն քաղկեդոնի հաստատեցին զսոյն տօն ի **ի**են դեկտեմբերի. պատճառելով թէ՝ ի հռօմ դարձի արեգական տօն կատարէին. և փոխեաց զայն *պետրոս* տօնել արեգականն արդարութեան: - 482. Եւ են որ զանձն. որպէս *պետրոս:* - 487. Երկրորդ՝ կապեալ ածաւ ի տունն աննայի. և ի ծառայէն ապտակեցաւ. և *պետրոս* **գ** անգամ ուրացաւ: - 492. Զի *պետրոս* քարոզեալ ասէ հոգւոցն որ ի բազում ժամս կատարի: - 495. Որպէս դաւիթ ասէ յառաջագոյն. և *պետրոս* զնոյն ի գիրս գործոց երկրորդէ՛ «մարմին նորա ո՛չ ետես զապականութիւն». ապա ուրեմն անապակա՛ն է մարմինն սուրբ: - 499. Որպէս ասէ *պետրոս* «երթեալ քարոզեաց հոգւոցն ապստամբելոց. յորժամ ներէր նոցա աստուծոյ երկայնմտութիւնն»: - 503. Երրորդ՝ զի ասէ *պետրոս* ի կաթողիկէն «երթեալ քարոզեաց երբեմն ապստամբելոցն». այլ ապստամբ՝ մեղաւո՛րքն էին և ո՛չ մարգարէքն: - 506. Վեցերորդ՝ ասէ *պետրոս* «որք ի կապանսդ էք ելէք և որք ի խաւարի յայտնեցարուք». այլ արդարքն ո՛չ ունէին զկապանս մեղաց և ոչ զխաւար նախնական, այլ մեղաւորքն: - 507. Երրորդ՝ համարձակութիւն

քարոզութեան առանց երկիւղի խօսիլ զբանն առաջի ազգաց և ազանց և թագաւորաց. որպէս *պետրոս* ի միում ժամու զերեք հազարսն հաւատացոյց: - 524. Իններորդ, Թէ ո՞րպէս է *պետրոս* գլուխ: - 525. Երկրորդ հիմն՝ դաւանութիւնն *պետրոսի* է. և դաւանօղքն շինածք. և քրիստոս շինօղ: - 531. Որպէս սեռիւ մի են ամենայն կենդանիք. և տեսակաւ ամենայն մարդ. և անհատիւ մի որպէս *պետրոս:* - 533. Սոքա են **բ** սուրքն բաւական որ ասաց *պետրոս* «են աստ **բ** սուրք»: - 538. Յայս միտս տէրն յորժամ խոստացաւ տալ զիշխանութիւնս *պետրոսի*՝ ասէ «մարմին և արիւն ո՛չ յայտնեաց քեզ. այլ հայրն իմ որ յերկինս է »: - 539. Ըստ այսմ կարգի նախ կապելն է և ապա արձակելն. որպէս ասաց *պետրոսի:* - 541. ...և զթէոդորիտոս եդին գլուխ ժողովոյն վասն մարդահաճութեան թագուհւոյն և թագաւորին. և զդէոսկորոս հայրապետն աղէքսանդրու, և *զպետրոս* անտիոքու, և զտիմոթէոս և զանատօլ, և զայլս բազումս խոտեցին. և վկայեցին նոքա ճշմարտութեան: - 543. Եւ *պետրոս* անտիոքու պատրիարգն և սուրբն պարսամ գրեցին ի հայք և զգուշացուցին. և նզովեցին զհաւանեալսն մարկիանոսի: - 543. Եւ պատրիարգունք էին անդ, Գէորգէոս կոստանդնուպօլսի. Թէոփիլոս անտիոքու. *Պետրոս* աղէքսանդրի: - 543. *Պետրոս* գլուխ է առաքելոցն. որպէս գրէ դիոնէսիոս ի **գ** գլուխն եկեղեցական քահանայապետութեան: - 546. Եւ ո՛չ ոք գնաց առ *պետրոս* ի հռօմ. և ո՛չ *պետրոս* յայլ վիճակս ձեռնադրեաց զոք: - 546. Եւ թէ ոք ասիցէ, յորժամ համակարգ են իշխանութեամբ ամենայն երկոտասանքն, ապա ո՞րպէս է գլուխ առաքելոցն *պետրոս:* - 546. Ասեմք թէ՝ *պետրոս* գլուխ է առաքելոցն՝ ո՛չ որպէս եպիսկոպոսն քահանայից. կամ կաթողիկոսն եպիսկոպոսաց: - 546. Առ երկրորդն ասեմք թէ, ընդ ուրացութիւնն *պետրոսի*՝ սիրտ ամենայն առաքելոցն տրտմեցան և կոտորեցան. և ի զղջումն նորա ամենեքեան հաստատեցան վերստին: - 547. Եւ թէ ոք ասիցէ, երևի ապա թէ ո՛չ է պարտ հնազանդիլ առաքելոյն *պետրոսի* և աթոռոյ նորա: - 547. Առաքելոյն *պետրոսի* հնազա՛նդ եմք որպէս քրիստոսի. նաև պօղոսի և ամենայն առաքելոցն և աշակերտացն ամենեցուն և հետևողաց նորա և աթոռոց նոցա: - 547. Ա՛րդ՝ զի՞նչ կամիս որ հնազանդիմք *պետրոսի*. ուրանա՞լ պարտ է զքրիստոս որ լինիմք հնազանդ *պետրոսի*, եթէ եղծանել զպահքն, թէ զամենայն պիղծ կերակուր ուտել...: - 548. ...թէ զերկու քորս **բ** եղբարցն տալ. կամ զսանին քոյրն միւս եղբօրն. որպէս քո սուտ *պետրոսին* կանոն է, և ո՛չ ճշմարիտ *պետրոսին*. և զայլն լռեմ իբրև զամօթալի: - 548. «Ղէբէոս որ անուանեցաւ թադէոս». յայտ է ի քրիստոսէ զանունն փոխեալ. որպէս *զպետրոսին* և զորդւոցն որոտման: - 549. Եւ ա՛յս է պատճառն որ ոմանք յեօթանասնիցն ասեն. զի եօթանասուն աշակերտացն գլուխ և վարդապետ էր. որպէս *պետրոս* երկոտասանիցն. և առաջինքն ամենայն ուրեք յետնոցն անուամբ կոչեին. այս է ստոյգ պատճառն: - 549. Զայս և առ *պետրոս* տէրն ասաց. «թերեհաւատ ընդէ՞ր երկմտեցեր»: -557. Ասաց զայս *պետրոս* առաքեալ: - 573. Եւ առաքեալն *պետրոս* ասէ, «ո՛չ ապականացու արծաթով և ոսկւով գնեցայք, այլ անապական արեամբն քրիստոսի»: - 595. Համբոյր աւետարանին, կոչելն միայն *զպետրոս* յանուանէ: - 628. Այլ և *պետրոս* անտիոքայ և տիմօթէոս աղէքսանդրու հրամանաւ յուստիանոսի կայսեր՝ հաստատեցին ի սուրբ աստուածն խաչեցար ասել: - 631. Զհանգստեանն, և զմարտիրոսացն, *պետրոս* գետադարձն: - 637. Կամ որպէս յետ յարութեանն *պետրոս* նախ ետես զքրիստոս...: - 644. Դարձեալ՝ **գ** տաղաւարն՝ որպէս ասաց *պետրոս*, գուշակէ՛ զերեք յիսուսն: - 653. Երկրորդ, ասէ *պետրոս* ի կաթողիկէն՝ «գիտէ տէր զաստուածապաշտս փրկել ի փորձութենէ»: - 698. Երրորդ, ասեն բոլոր աշխարհ նորոգի հրով. որպէս ասէ *պետրոս*...: - 701. Զի հուր մեծ ընթանայ ի գալստեանն քրիստոսի. և վառեսցին երկինք և երկիր հրովն այն, որպէս ասէ *պետրոս:* - 727-728. Եւ *պետրոս* «եկեսցէ օր տեառն իբրև զգող» ասէ: - 730. Եւ *պետրոս* և որդիքն զեբեթեայ յորժամ լուան ի հօրէ «դա՛ է որդի իմ սիրելի դմա լւարուք», ապա և նոքա վկայեցին, և խաչեցաւ քրիստոս: - 742. Եօթներորդ՝ զի ասէ *պետրոս*, «որք ի կապանսդ էք ելէք. և որք ի խաւարի՝ յայտնեցարո՛ւք»: - 777

**ՊԵՐԻՏՈՍ** - *Պերիտոս*. ա՛յս՝ պա՛ն է նոխազոտն: - 201

**ՊԵՐՃ +** Երրորդ՝ զի *պերճ* է. այսինքն անահ: - 315. Ութևժ, չո՛րս են որք հզօրք են և *պերճ* շրջին ասէ սողոմոն. այսինքն աքաղաղ, և նոխազ, և թագաւոր հրապարակախօս, և առիւծ՝ որ ո՛չ դարձուցանէ թիկունս յանասնոց: - 316

**ՊԵՐՃԱԿԱՆ +** *Պերճական* պարսիկն. և համեղ հայոյն. որ բոլորապէս կարօ՛ղ է զամենայն լեզու ուղղակի ուսանիլ: - 297. Իսկ գեղեցկախօսութիւն լեզուաց, ..*Պերճական* պարսիկն: - 299

**ՊԵՍՊԷՍ +** Նաև մարդկան չարեաց թոյլ տալ. զի կամ ընտրեսցեն զբարիս՝ կամ յետոյ զղջասցին. և

այլ *պէսպէս* նախախնամութեամբ որպէս ինքն գիտէ աստուած՝ ներէ՛ չարեաց. որպէս տեսանելոց եմք յառաջիկայսդ: - 17. Զի՞նչ է զօր տէրն հրամայէ աղօթել՝ «մի՛ տար զմեզ ի փորձութիւն». և առաքեալն յակոբոս՝ ուրախ լինիլ ասէ՝ «յորժամ ի *պէս պէս* փորձութեան մէջ անկանիցիք»: - 160. ...իսկ Կախարդն՝ որ անօթ ինչ թաղէ ի հող. կապս, կամ մոմ, կամ երկաթ, և *պէս պէս* ժժանօք յարմարե՛ն զարուեստն: - 388. Նախ նշանակէ *զպէս պէս* զօրութիւնս քրիստոսի. որ երբեմն զբարձրագոյնս ներգործէր և երբեմն զնուաստագոյնս երևեցուցանէր յինքեան: - 493. Ութերորդ՝ հնձան կոչի և աւազանն սուրբ. զի ի նմա ճմլին և կորնչին ամենայն մեղք մեր. «լուացեալ արեամբ խաղողոյ զհանդերձս մեր» և զարդարեալ *պէս պէս* պարգևօք շնորհաց հոգւոյն: - 749. Երբեմն դրախտ՝ վասն *պէս պէս* և զանազան բարեացն: - 757

**ՊԷՏ(Ք) +** Երկրորդ՝ զի յընդդիմաբաժանեալ տեսակս՝ ո՛չ ունի *պէտս* մինն միւսոյն առ ի բաղկանալ: - 87. *Պէտք* են գազանք և սողունք. և զի գազանք ուժեղք են: - 155. Իսկ որ զերկրաւորքս ըստ կարգի, ամենագութ մարդասիրութեանն է երևումն. ո՞րպէս խնամով *զպէտս* մարդկան յայնքան աւուրս կատարեաց: - 192. Ութերորդ՝ զի նաւք ի վերայ ջուրց ընթանան փութով. և *զպէտս* միմեանց լնուն: - 207. Չորրորդ՝ ցոյցք է ամենահրաշ խնամոց արարչին. որ զհոսանուտ ջուրս ներքին՝ ի մէջ լերանց ի վե՛ր հանէ ի *պէտս* կենդանեաց որ ա՛նդ են. այլ և յոռոգումն ուր գետք ոչ ելանեն: - 209. Զի՞նչ *պէտս* են բարձրագոյն լերինքն: - 211. Չորրորդ՝ ի *պէտս* բուսոց և բժշկական խոտոց...: - 211. Յի՞նչ *պէտս* են այնչափ բազմութիւնք բուսոց և ծառոց: - 212. Նա՛խ՝ *պէտք* են բժշկութեան դեղոց և առողջարա՛րք են: - 212. Երկրորդ՝ *պէտք* են ի համ. ի հոտ. ի գոյն. և յայլս: - 212. Երրորդ՝ *պէտք* են իմաստութեանց. զի առակ օրինակի առնումք զնոսա ի դէպ ժամու: - 212. Այլ և ի *պէտս* շինութեան աշխարհի: - 212. Հինգերորդ՝ զորօրինակ մեծատուն ոմն զոք ի ճաշ կոչիցէ, նախ պատրաստէ՛ զամենայն *պէտս* կերակրոց և ըմպելեաց. և ապա՛ մեծարէ՛ զկոչնականսն: - 230. Ի պատիւ մեծարեաց զմարդն. և նա՛խ՝ պատրաստեաց *պէտս* զանազան կերակրոց և ըմպելեաց որպէս ասացաք...: - 230. Եւ որպէս սակաւ մասն ոտիցն ի յերկի՛ր է հպեալ և կոխէ, նոյնպէս և մեզ սակաւ *պէտս* մարմնոյ...: - 233. Դարձեալ՝ նախախնամութեանն է այսպէս կարգեալ. զի մարդս ունի դայեակ և սնուցօղ, *պէտս* ունի խնամարկութեան զի հասցէ ի չափ հասակի: - 267. ...որպէս ասաց մովսէսի թէ՝ «լո՛յծ զկօշիկս քո». և ո՛չ կերակրոյ հացի ունէին *պէտք*. այլ բանն աստուծոյ կերակրէր զնոսա որպէս ասացաւ...: - 397. Նա՛խ՝ ոմանք ասեն թէ մարդկօրէն կամէր իմանալ զնա և հարցանել վասն խաչին և դժոխոց և յարութեանն. իսկ այս կատարեալ մտաց *պէտք* էին և շա՛տ ժամու: - 517. Մինն կամէր լնուլ *զպէտս* իւր և անգիտութեամբ անկաւ յորովայնամոլութիւն. և մինն յօժարութեամբ և փափագանօք անկաւ: - 565. Երկրորդ, զի ուսցուք այսպէս զամենայն ինչս մեր հաղորդել ի *պէտս* կարօտելոց. և զմիմեանս մեծարել և պատուել սիրով: - 655. Եւ թէ ոք ասիցէ, անմեղ տղայքն զի՞նչ *պէտք* ունին առաւել թաղման: - 674. Ասեմք թէ՝ անմեղ տղայոցն առաւել *պէտք* են...: - 674-675. Ապա ուրեմն ամենեցուն առ հասարակ *պէտք* են քահանայական կատարմունք և նուէրք. գալ ի գերեզմանն և այլն ամենայն: - 675. Եւ թէ ոք ասիցէ, բազում անդամք են կենդանականք, որպէս սիրտն լեարդն թոքն և այլքն որք ի յարութեանն ո՛չ են *պէտք*. զի ո՛չ է հարկ կենդանութիւն մարդկան: - 725. որպէս ստինքն զի ո՛չ է *պէտք* կաթին, այլ առնէ վասն կատարելութեան և գեղեցկութեան մարդոյն: - 725. Իսկ ամենայն զգայական կենդանւոյ թէպէտ իգին ըստինք գոն վասն զծնունդս կերակրելոյ. սակայն և արուացն գոյ նոյն մասն անդամոց կազմեալ յարարչէն. և այն յի՞նչ *պէտս* լինի. խնդրել արժան է: - 785. Իսկ ստինք յատկապէս գործի՛ է բնութեան ի *պէտս* սննդեան այնոցիկ ծննդոց զօրէն սերմանեաց երկրի...: - 786

**ՊԻԹԱԳՈՐ** - Իսկ այլ տասունքն իմաստասիրաց բանքն. որպէս պղատոնին. արիստոտէլին. *պիթագորին* և այլք. որք միայն զաստեա՛ցս պատմեն մեզ: - 380

**ՊԻՀՌՈՆԱՑԻ** - Եւ իմաստակ կոչին՝ որք միոյ արհեստի են գլուխ. որպէս քերականութեան. ճարտասանութեան. աստղաբաշխութեան. և այլք. որպէս *պիհռոնացիք* ակադիմեանքն. որք հակառակ կոչին: - 269

**ՊԻՂԱՏՈՍ** - Իսկ դիւականն ընդդէմ այսմ՝ վասն մոլորութեան զանազան երևմունս ցուցանէ աղտեղութեան. և կամ զբարին խափանել ջանայ. որպէս ի չարչարանս տեառն վասն կնոջն *պիղատոսի* ընթերցեալ լինի. և որպէս գրէ սուրբն Նազիհոս: - 268. Եւ տէր մեր ի նոյն այրին յազգէ նոցին ըմբռնեալ. և ի զինաւորս *պիղատոսի* մատնեալ: - 423. Չորրորդ՝ թլփատեցին զնա հրէայքն՝ ի չարչարանս՝ սրով խաչին. և զայս զինուորքն *պիղատոսի:* - 486. Չորրորդ՝ յապարանս *պիղատոսի*. և մատնեցաւ որպէս չարագործ: - 492. Վեցերորդ՝ ածաւ վերստին առ *պիղատոս*. և անդ խնդրեցին ի խաչ

հանել. և զկնի ծաղեալ. և թուք ընկալեալ. և ի խաչ դատապարտեցաւ: - 492. Արդ զապարանքն *պիղատոսի* իբր զնի տեղի առեալ. թէպէտ կրկնեալ եղև. և խաչելութեանն տեղի լինի **գ**. և գերեզմանն յորում հանգեաւ է: - 493. Այսպէս. **բ** ոտիցն. **բ** ձեռացն. **ա** ուսոյն վերայ. **ա** խաչին թևին. **ա** *պիղատոսի* տախտակին. **բ** այն տախտակին որ պատուանդան էր և ոտքն ի վերայ բևեռեալ: - 495

**ՊԻՂԾ +** Ըստ այսմ օրինակի և նոր հերձուածօղք քաղկեդոնիկք նեռին կարապետք. հետևօղք նեստորի անիծելոյ՝ և լևոնի *պղծոյ:* - 34. Եօթներորդ՝ զի ո՛չ կարէին ընտրել և խոտել զչարն և զբարին, և զսուրբն և զանսուրբն ի մարդկանէ, թէ գործ սորին է այս կամ այն. այլ անմեղութեամբ յարակցեին *պղծոյն,* և զխեղդ ոգւոց նորա ընդունէին: - 238. Զի թէ ի սուրբ մարդ յարի՝ սրբի. և թէ ի *պիղծ*՝ պղծի: - 250. Հինգերորդ, վասն մեղաց պատարագ, ի մեռելոտի կամ ի *պիղծ* ինչ մերձեցեալ. ոչխարով և թռչնով և նաշիով առանց իւղոյ և խնկոյ քաւէին: - 358. Բնութեամբ ամենայն ինչ սուրբ է. և *պիղծ* ոչ ինչ է յարարածս աստուծոյ: - 364. Որպէս նախ քան զօրէնս, բնական քննութեամբ ընտրէին մարդիկ. կամ զանճոռնի մեծն, կամ զամենևին փոքրն, կամ զգարշն տեսութեամբ, կամ զվնասակարն, ուտելոյ *պիղծ* ասէին զսոսա: - 364. Եւ զոր ուտէին և դիւաց զոհէին՝ *պիղծ* ասաց. որպէս զխո՛զ, զճագա՛ր, և զնապաստակ: - 364. Եւ լիրբն առանց ամօթոյ որ է՛ լերկն և չարն *պիղծ* է: - 364. Նոյնպէս ի թռչունսն, կռաշուրթն և մսակերն նոքա են, որ պատառեն զընկերս՝ *պիղծ* են: - 365. Եւ տե՛ս, զի անսուրբ կենդանին սատակեալ և սուրբ կենդանին սատակեալ միապէս *պիղծք* են: - 365. Նոյնպէս քրիստոնեայն որ մեղօք մեռանի՝ և անհաւատն միապէս *պիղծ* են առաջի աստուծոյ: - 365. **Զի էգն, և չէզոտքն, և անկատարն, և անհաւատն, և արիւնահեղն, և կարգաւոր, սոքա վեցեքեան ո՛չ կարեն զենուլ զի *պիղծ* է զենն նոցա:** - 365. Եւ լիցի սուրբ ըստ նշանակութեան օրինացն. զի անսուրբն և *պիղծն* ո՛չ է զենլի: - 365. Ապա թէ պակա՛ս է ի սոցանէ՝ *պիղծ* է և խոտան և ո՛չ է ուտելի զենեալն: - 365. Եւ անհաւատն սպանեալ է զհոգին մեղօք. և կամ ունի զգործ իգական՝ *պիղծ* է: - 366. Եւ նշան սրբոյն և *պղծոյն* ըստ օրինացն ասացաւ ի վերոյ: - 366. Որ նշանակէ՛ սերմն զգործն. որ քանի ի մեզ է՝ ո՛չ է *պիղծ.* և յորժամ գործի՝ պղծէ՛: - 369. Նախ ինքն գործն *պիղծ* է. և պղծէ՛ զգործօղն. և պղծէ՛ զմերձեցեալսն ի նա՛: - 369. Ի գողունից կամ յաւազակաց ո՛չ է պարտ զի *պիղծ* է: - 390. Իսկ **է** ի յայն խորհուրդն, զի որ ի *պիղծ* մերձենայր՝ **է** օր արտաքոյ բանակին կալով յերրորդ և յէերորդ օրն սրբէր, և ապա՛ մտանէր. վասն որոյ **գ** օրէք և **է** օրէք կատարեմք: - 391. Եօթներորդ՝ որպէս ինքն *պիղծ* է, և իւրքն ամենայն *պիղծ* են. վասն որոյ ընդ նմին կորնչին: - 416. Զի *պղծոցն* ամենայն ինչ *պիղծ* է. որպէս *պիղծ* կենդանւոյն շան՝ մորթ և մազ և միս և այլն: - 416. Նոյնպէս և հաց *պիղծ* կոչի խմորունն և հասարակացն: - 427. Եւ զի *պիղծ* և գարշելի էր զոհք կռոցն և կերակուրք հեթանոսաց: - 443. Եւ տես, զի վրէժխնդիրն օրինացն մովսէսի՝ նախ ի՛նքն լուծանէր զօրէնս. զի ագռաւն *պիղծ* էր օրինացն: - 443. Այլ *պիղծ* ագռաւքն ի խորհուրդ հեթանոսաց անցեալ զյորդանան և սրբեալ աւազանաւն: - 443. Ա՛րդ՝ զի՞նչ կամիս որ հնազանդիմք պետրոսի. ուրանա՞լ պարտ է զքրիստոս որ լինիմք հնազանդ պետրոսի, եթէ եղծանել զպահքն, թէ զամենայն *պիղծ* կերակուր ուտել...: - 548. Ո՞չ ապաքէն մովսէս ի հինն որոշեաց զսուրբս և անսուրբս. մանաւանդ թէ յաւուրս նոյի գոյր ընտրութիւնս. այսպէս ցուցաւ և մեզ պահելի իբր զբնական օրէնս. այլ սոցա ոչինչ է *պիղծ* ի կենդանեաց: - 552. *Զպիղծ* կենդանիս ո՛չ խաբել. և զհեղձուցեալսն ուտել. և այլ բազում ինչ: - 553. Իսկ յորժամ սուրբ հոգին ելանէ, *պիղծ* հոգին այսինքն սատանայ բանկէ՛ ի նա: - 570. Վասն այն խոտեալ է և *պիղծ* յամենայն օրէնս: - 612. Հինգերորդ, **է** օրեայ սրբութիւնք բորոտացն և կալ արտաքոյ բանակին՝ ի *պիղծ* մերձեցեալք: - 653. Նախ այն է՝ որ հրամայէր մովսէս *պղծոցն* լուանալ զմարմինն և ողողել զհանդերձն և արտաքոյ կալ մինչև յերեկոյ: - 653. Հինգերորդ, քրիստոնէից մարմինք սրբութեամբ տաճա՛ր են աստուծոյ, յոր *պիղծ* ոչ ինչ մտանէ: - 654. Իսկ խոտելոցն գիր, դպիր է *պիղծ* հոգին դիւական. և չար կամքն իւրեանց և խորհուրդն և հեշտութիւն մարմնոյն մելան. և ըստ գործոց առաւել և նւազ գրեն ի գիրն դատապարտութեան: - 741

**ՊԻՆԴ (տեքստում նաև՝ ՊԻՆՏ) +** Հալէ՛ *զպինդն:* - 202. Այսինքն զթոյլն պնդէ՛. որպէս զծու. և *զպինդն* հալէ՛. որպէս զերկաթ: - 202. Երկրորդ՝ ըստ կարգի տարերց. թիկունքն թանձր և *պինտ*՝ է՛ երկիր: - 234. Նախ՝ մազն ի վերոյ. և մորթն. և միսն. վերին ոսկրն. և ներքին *պինտ* ոսկրն. խելապատակ մաշկն. և ուղեղն: - 239. Նախ՝ զի զգայարանքն *պինտ* է: - 251

***ՊԻՆԴ ՈՒՆԵԼ +*** Եւ մեք զնոյն դաւանութիւնն *պինդ կալցուք* անշարժ յուսով ի կենաս և ի մահ և յետ մահու. և նորին խոստացեալ բարեացն արժանի լիցուք ի քրիստոս յիսուս ի տէր մեր: - 101

**ՊԻՆՋ (ՊԻՆՉ) +** Դարձեալ **բժան** դրունք է ի մարդն որ են այսոքիկ. երկու աչք. **բ** ականջք. **բ** *պինչք*, բերանն. և պորտն. **բ** ստինք. ջրհեղն. և արտաքնոցն: - 241. Եւ ի մեզ **բժան** անդամք մարմնոյ. և **բժան** դրունք զգայութեանց. որպէս **բ** աչք. ականջք. *պինչք.* բերան. և այլն: - 614

**ՊԻՍԱԿ +** Ոմանք *զպիսակն* ասեն: - 287. Նա՛խ՝ զի բորն *պիսակ*՝ մեռելութիւն է մարմնոյ. և մեղքն հոգոյ: - 366

**ՊԻՏԱԿ +** Արդ՝ ես վերջին ծնունդս եկեղեցւոյ և տրուպս բանասիրաց, Գրիգոր *պիտակ* անուն խնդրող բանին. բացայայտեցի զբանս Յարցմանց ի լուսաւոր բանից վարդապետաց եկեղեցւոյ: - 772

**ՊԻՏԱԿԱՊԷՍ +** Եւ միւսն որ է՛ հայր՝ նմա իսկապէս, և մեզ *պիտակապէս:* - 43

**ՊԻՏԱՆԱՑՈՒ +** Իսկ մայրք անպտուղք՝ են *պիտանացու* ի վեց իրս: - 212

**ՊԻՏԱՆԻ +** Զայս և տէրն ադիւ օրինակեաց. յորժամ անհամի՝ ո՛չ ինչ է *պիտանի* հրամայէ: - 166. Եւ են ոմանք որ զքև հաւատոյ և զքեփ բարեաց գործոց ունին. և *պիտանիք* են աստուծոյ: - 215. Ի սոցանէ **դ** հարկաւո՛րք են. և **դ** *պիտանիք* և **բ** վայելչականք: - 281. Դարձեալ՝ խառնակիլ լեզուին ա՛յն է որ ընդ պատուհասն զբարութիւնն խառնեաց. զի թէպէտ բաժանումն լեզուաց պատուհաս երևի, այլ *պիտանի՛* է: - 297. Դարձեալ՝ *պիտանի* է ի ստուգաբանութիւնս բանի. զի թէ ոք զամենայն լեզուս գիտիցէ, ոչ ինչ բառի կարօտանայ: - 297. Զի թէ լինիցի քարեայ սուր, որպէս գայլախազ, որով սպանեա աքէլ. ո՛չ է *պիտանի:* - 366. Եւ թէ լիցի երկաթ և ո՛չ սուր, և ո՛չ է *պիտանի*. որպէս բոլոր երկաթն թէ հարցէ զկենդանին և սպանցէ, ո՛չ է ուտելի, զի թէպէտ զարիւնն հանէ, այլ ո՛չ համանգամայն զշունչն և զջերմութիւնն: - 366. Վերջնոյն ի *պիտանեաց:* - 375. Նա՛խ՝ զի յայնմ ժամու միա՛յն էր *պիտանի* մինչ յանապա՛տն էին: - 379. Երկրորդ՝ զի միայն ժամու և աղօթից էր *պիտանի* խորանն այն, և ո՛չ այլ ինչ իրաց: - 379. Էառ զքարինսն յօրինակ աշակերտաց կրթութեանն որ լինի ապա՛ *պիտանի:* - 415. *Պիտանի* է ապա խոստովանիլ՝ քան օծանիլ: - 604. Այլ *զպիտանիս* եկեղեցւոյ և վարդապետաց ոգէշահ խնդիր հաւատոյ միա՛յն հոգ տարեալ: - 772. Բովանդակեալ ոչ զամենայն որ ամենեցունց է գիտելի. այլ զբանս բազումս որ բազմա՛ց է *պիտանի* և խնդրելի: - 772. Եւ *պիտանեացն* փառս վերընծայել այնմ, որ փառաւորեալն է ի պարգևս իւր. իսկ զանպիտանսն ներել մերոյ փոքր ընկալ անօթոյ և դանդաղկոտ փութոյ: - 772-773

**ՊԻՏԱՆՈՒԹԻՒՆ +** Բազում ինչ է *պիտանութիւն* բուսոց: - 212

**ՊԻՏԻ +** Տես և համեմատեա՛ առ աստուած թէ *պիտի:* - 124. Եւ վասն առաջին օծին ի **ժգ** գլուխ համարոյն տես թէ *պիտի:* - 387

**ՊԻՏՈՅ +** Արդ՝ *պիտո՛յ* է անպատճառ պատճառ բոլորից պատճառաւորաց, որ նա ինքն է աստուած: - 25. Իսկ թէ և նա՛ սկսեալ՝ *պիտո՛յ* է և նման սկիզբն: - 25. Եւ զնոյն բանն աստուած մարմնացեալ. և շրջեալ ի վերայ երկրի. զի յայնմ օրինակին արար և որդի *պիտոյ* էր լինիլ և չորս աշխարհք: - 45-46. Եւ զի ստուգեցաք թէ ի հարկէ *պիտոյ* է էութեան՝ զի լիցի կամ արարիչ կամ արարած: - 52. Վեցերորդ՝ զի թէ մեք շնորհիւ՝ որդեգրեալքս կերպանամք առ ճշմարիտ և բնութեամբ որդին, և թէ և նա՛ է ըստ մեզ շնորհիւ, *պիտո՛յ* է նմա վերնագոյն բնութեամբ որդի մարմնացեալ ի յոր կերպասցի և սա՛ ի նմանութիւն նորա շնորհօք որդի: - 67. Երրորդ՝ զի որպէս իմաստութեամբ արար, ըստ այնմ «աստուած իմաստութեամբ հիմունս էարկ երկրի». այսպէս իմաստութեամբ և նախախնամէ՛ զբոլորն՝ և զի իւրաքանչիւրսն ըստ իւրում *պիտոյից* զանազանապէս: - 157. Յինգերորդ՝ զի գործ արարչութեան է մի միայն առնելն. իսկ գործ խնամելոյն է՛ առնել և թոյլ տալ երբեմն երբեմն ըստ *պիտոյից* բարեգործութեան: - 158. Զայնի *պիտո՛յ* է **բ** ինչ: - 216. Վասն բազում *պիտոյից* որ գոյ ի նոսա: - 217. Չորրորդ՝ զի թէ լինէր անդ ախտական ծնունդ որպէս ի յերկրի, կարօտանայր մարդն ամենայն *պիտոյից* զաւակին: - 225. Երկրորդ՝ զի իշխան և զօրաւո՛ր է մարդն. *պիտո՛յ* է զի լինիցի զօր և իշխեցեալ. և ապա՛ իշխանն և զօրաւորն. ապա թէ ո՛չ՝ ո՞ւմ լիցի իշխան և զօրավար: - 230. Եւ տէրն ասէ՝ «ոգի առաւե՛լ է քան զկերակուր. և մարմին քան զհանդերձ». զի սոքա վասն *պիտոյից* հոգւոյ և մարմնոյ եղեն: - 253. Զի զամենայն կենդանեաց սերմն կրելոյ էր՝ *պիտո՛յ* էր մեծ տուն: - 293. Սոքա երկոքինս *պիտո՛յ* են ամենայն մարդոյ ի մարտ թշնամւոյն: - 323. Իսկ վերջին խորհուրդ է, յորժամ վասն հարկաւոր *պիտոյից* կերակրոյ և հանդերձի՝ յերկրաւորս հպիմք: - 331. Երկրորդ՝ զի սուրբ գործոցն սուրբ *պիտոյ* էր և զգեստ: - 347. Չորրորդ՝ զէնն. զի լիցի սուր երկաթոյ և ո՛չ այլ ինչ գործի. զի թէ լիցի երկաթ և ոչ սուր, և թէ սուր և ոչ երկաթ, ո՛չ է *պիտոյ:* - 365. Երրորդ՝ եցոյց յայտնապէս զպատերազմն առաջի այսոց օդոցս. վասն այն *պիտոյ* էր հեծեալք: - 445. Քրիստոս վասն մեր սպասաւոր եղաւ

թլփատութեան. և ո՛չ վասն *պիտոյից* նորա: - 485. Այլ արդ՝ մեռեալքն ո՛չ են ի դէմ յանդիման տեսութեան. վասն որոյ *պիտո՛յ* էր նոցա հաւատ: - 507. Այլ *պիտո՛յ* է բնական **գ** տիւ և **գ** գիշեր գոլ ի սիրտ երկրի որպէս ասաց քրիստոս: - 516. Երրորդ՝ զի պա՛րտ էր քրիստոսի հովուել զպարզամիտ աշակերտսն որպէս հաւ զձագս, և_մայր զմանկունսն. և թէ ի սկզբանէ զհոգին ընկալեալ էին՝ ո՛չ էր *պիտոյ* հովուել զնոսա: - 521. Իսկ աստուածաբանն ասէ, ուր *պիտոյ* էր՝ յամենայն լեզուս խօսիլ կարէին. զի լիցի շնորհքն խօսողաց և ո՛չ թէ լսողաց: - 525. Նա՛խ յաղագս շնորհին և ճշմարտութեան. և մարգարէք վասն ստուերին և օրինակին. և վարդապետք ըստ չափոյ *պիտոյից* նոցին: - 535. Ապա ուրեմն և ի ճշմարտութիւնն ո՛չ է *պիտոյ* ջուր: - 595. Եւ ա՛յս է պատճառն, զի մի տան շարականի **դ** տուն սաղմոսի *պիտոյ* է յերկու դասս. և մին շարականն **ժբ** տամբ աւարտի: - 636. Յինգերորդ՝ մարդոյս *պիտոյ* էր ժամանակաւ աճումն. զի թուով առցէ զկատարումն վերջին ընտրելոյն: - 662. Նա՛խ՝ յանպատրաստութենէ կամ ի պակասութենէ հարկաւոր *պիտոյից*. կամ յարտաքին ստահակութենէ օդոց: - 665. Եւ անապատ է՛ կայանք հոգւոցն անկարօտ մարմնական *պիտոյից:* - 682. Երրորդն ի տգիտա՛ց է ասացեալ. զի կայանք մարմնաւոր՝ անմարմին հոգւոց ո՛չ է *պիտոյ:* - 687. ապա *պիտոյ* է և ա՛յլ կեանս զի հատուցի բարեացն բարի և չարացն չար. և այս ո՛չ լինի եթէ ոչ իցէ յարութիւն: - 715. Ասեմք, թէպէտ այնպիսի անդամքն ո՛չ են *պիտոյ* ի յարութեանն, սակայն յառնեն վասն կատարելութեան և գեղեցկութեան...: - 725. Եւ դարձեալ՝ ուր գիշեր ոչ է՝ ոչ են *պիտոյ* անդ լուսին և աստեղք: - 728. Այլ և որք ի մի խնամս վայելեցին յաստուծոյ. յարև և յանձրև. և ի մի տեղիք բնակեցան և մի *պիտոյիւք* շատացան. և նոքա զտուօղն ո՛չ ճանաչեցին: - 738. Նա՛խ՝ զի յերի՛ց է մարդն. հոգի մարմին և շունչ գոյացեալ. ի քակտումն սոցա գ վկա՛յ է *պիտոյ:* - 742. Չորրորդ, զի երեք են դատելիքն. մին դատաւորն, և **բ** դատախազքն. *պիտո՛յ* է այսինքն **գ** վկայք: - 742. Իսկ զի և արուի թէպէտ ո՛չ նոյն *պիտոյիւք*. սակայն ո՛չ ընդ վայր կազմեցաւ. ի լրումն **բժ**ան դրանց անդամոց. ի ներքս մուծանելոյ և արտաքս հոսելոյ զպակաս և զաւելորդս ինչ. անվնաս կելով կենդանւոյն: - 786

**ՊԻՏՈՅԱՆԱՄ +** Եթէ ըստ մեզ կարծէք զծնունդն, *պիտոյանայ* երկուորիս և գործիս հօր. լիցի և այրութիւն և իգութիւն յաստուած. և լիցին որդիք երկորեակք էրէց և կրտսեր: - 52. Յօրինակ մարդկան՝ որ մարզին և կրթին, և ապա՛ *պիտոյանան* աստուծոյ և մարդկան: - 208. Այլ այժմ ի ձեռն արուեստից ստացեալ զզէնս, յորժամ *պիտոյանայ*՝ առնու և ի գործ ածէ. և յորժամ կամի՝ ի բաց դնէ և հանգչի: - 217. Եւ *պիտոյանայր* լեզու երկայն և շրթունք ստուար, զի ժողովեսցէ զկերակուր. և յայնժամ ո՛չ կարէր սպասաւորել բանի որպէս ա՛յժմ: - 233

**ՊԼՂԱՄ +** Եւ զի *պլղամ* և սպիտակ հիւթք տիրեն: - 197

**ՊԼՕՐ +** Քսանևա՝ սառնու որպէս *զպլօր:* - 207. Եւ ջուրքն այնպէս պարզ լինին որպէս *զպլօր:* - 728

**ՊԼՕՐԵԱՅ** - Եւ երկրորդն է լուսաւոր զօրութեամբ թափանցանց. գոլով ջրեղէն կամ *պլօրեայ* ըստ ոմանց: - 787

**ՊՂԱՏՈՆ** - Այլ վարդապետք եկեղեցւոյ ասեն ըստ *պղատոնի* եթէ՝ լոյսն խզումն է ի տարրական հրոյ, որ յառաջին օրն գոյացաւ: - 188. Նա՛խ՝ ըստ փիլիսոփայիցն ներքին մասունքն հոգւոյն պատճառե՛ն զարտաքին մասունս մարմնոյն. և ըստ *պղատոնի*՝ հոգին եռամասնեայ գոլով՝ բան և ցասումն և ցանկութիւն: - 232. Դարձեալ՝ ասէ *պղատոն*, եթէ մարդն որ ունի զնմանութիւն անասնոց ինչ՝ հետևի և բարուց նոցին: - 248. Եւ որք զայս ասեն՝ հետևին մոլորութեանցն *պղատոնի* մարմնափոխփոխութեանցն. որ ասէ քաղաք ի յերկինս. և հոգիքն անդ ժողովեալ իբրև զզօր և զդասս: - 252. Եւ **է** ամեայ ուսումն ստանայ. վասն որոյ մինչև յեօթն ամն երեխայ կոչի. զի **գ** մասունք են հոգւոյն. բան. ցասումն. և ցանկութիւն. ըստ *պղատոնի:* - 264. Իմաստասէր իմանամք զայնս՝ որք ըստ արտաքին փիլիսոփայիցն կրթութեան են վարժեալք. որպէս *պղատոն*, արիստոտէլ, և այլքն: - 269. Իսկ այլ տասունքն իմաստասիրաց բանքն. որպէս *պղատոնին*. արիստոտէլին. պիթագորին և այլք. որք միայն զաստեա՛ցս պատմեն մեզ: - 380. Երկրորդ ի կրթութենէ ուսմանց. որ արտաքուստ կրթութեամբ ստանայ. որպէս *պղատոնին* և այլոցն: - 537. ...նման է *պղատոնի* մարմնափոխութեանցն. որ ի բանական մարդոյն ի զգայականն, և անտի ի տունկն ասեն...: - 687

**ՊՂԵՐԳ +** Իսկ աշունն, և մինչ ի **թ** ժամս աւուրն, և սեաւ մաղձն, և ալևորն, ըստ նմանութեան երկրի ցուրտ և չոր գոլով՝ ծոյլ և *պղերգ* գոլով ամենայն ուսմանց և գործոց: - 266

**ՊՂԵՐԳՈՒԹԻՒՆ +** Ոչ ինչ *պղերգութիւն* լռեցուսցէ: - 765

**ՊՂԻ** - Այլ որ **ճճ** ամաւ յառաջ եկին ի հայք՝ ասորիք արք քաջաբանք, և կամեցան սերմանել

զաղանդն նեստորի. որք նզովեալ որոշեցան. բայց ոմանք ընկալեալ էին և թարգմանեալ ի նոցանէ գիրս սուտս, Զգօրտոսակ. Զկիրակոսակ. *Զպղի* տեսիլն: - 545

**ՊՂԻՆՁ +** Վաքսունգ, *Պղնձի* օձն. և թէ զի՞նչ եղև: - 285. Չորրորդ՝ զի **բ** արձան կանգնեաց *պղնձի* և խեցի և արար գիր. և զոր ինչ աղամ անունս եդ իրաց, զամենայն գրեաց ի նոսա. զի մի՛ այլայլեսցին ի գնչուտ և ի լեզուատ արանց: - 289. Զի թէ նախ ջրով ապականեսցի *պղնձի* սիւնն մնասցէ. և թէ հրով՝ աղիւսն: - 289. Եւ այլքն *պղինձ* արծաթապատ. որպէս սիմքուֆտ, և կամ ոսկի: - 343. Ամենայն նիւթ ոսկւոյն **իթ** տաղանդ. և արծաթոյն **ճ** տաղանդ. և *պղնձոյն* **ի** տաղանդ: - 343. Եւ *զպղինձն* ի բուրվառացն կորխեանց **մծ** իցն. յորմէ արար զնուարտանն ծածկոյթ *պղնձի* սեղանոյն. նշան յանդգնութեան նոցա: - 344. Իսկ կասկարա՛յ է պուտուկ *պղնձի:* - 357. Եւ յօշելն զանդամս **բժ**ան մասն ընդ ցեղիցն. և զոտս և զփորն լուանալն. և ողջակիզել ի վերայ *պղնձի* սեղանոյն: - 358. Եօթներորդ՝ երկին երկաթի և երկիր *պղնձի*. իբր չորացեալ երաշտութեամբ որպէս եղիայիւ: - 376. Կամ չողորմել կսկծողաց. իբր *պղնձի* մարմին զգեցողաց: - 376. Իսկ մովսէս հրամանաւն աստուծոյ արար *պղնձի* օձ. և բարձրացոյց ի դուռն խորանին. և որ հայէր ի նա՝ ապրէր ի թունից օձիցն: - 386. Երրորդ՝ հակառակատիպ տեսանի. զի անդ օձն *պղնձի* զմարդ թշնամիս իւր կեցուցանէր և զօձսն սատակէր. և տէր մեր զմարդիկ ազգակից իւր կեցուցանէր, և զթշնամին սատանայ հալածէր: - 386. Չորրորդ՝ *պղինձն* ոսկետեսակ. և տեառն մարմինն աստուածատեսակ փառօք և ներգործութեամբ: - 386. Հինգերորդ՝ անփուտ է *պղինձն.* և անապական մարմինն քրիստոսի: - 386. Զի՞նչ եղև օձն *պղնձի:* - 387. Եւ օձն *պղնձի* ո՛չ է անիծեալ: - 400. Եւ նիւթն ոսկի և արծաթ և *պղինձ* և երկաթ. այլ և խունկն և պատուական ակունքն ի հեթանոսա՛ց էր: - 440. Եւ յետ **ե** ամսոյ՝ նաբուզարդան դահճապետն հրծիգ արար զերուսաղէմ և զտաճարն և զտունն թագաւորացն. և զպարիսպն կործանեաց. և զսիւնսն *պղնձի* և զաւազանն և զամենայն կահ *պղնձի* և արծաթի տարաւ ի բաբիլօն: - 447. Եւ կամ աննիւթ ինչ և անկերպ՝ ընդ նիւթական կերպարանաց ձևացեալ. յորում իւրաքանչիւրոցն էութիւնք անշփոթաբար երևին. որպէս *պղինձ* գնդացեալ. կամ բուէացեալ: - 476. Եւ կամ որպէս հուր ընդ գնդացելոյն ձևացեալ *պղնձոյ:* - 476. Եւ ձողն յորում՝ օձն *պղնձի* բարձրացաւ: - 494. Վեցերորդ՝ ամուրն սատանայի է ներքին դժոխքն. ուր են դրունք *պղնձիք* և նիգք երկաթիք. որ է՛ մեղքն մեծամեծք և յուսահատութիւնք. և ա՛յն էր ամրոց նորա: - 506. *Պղինձ* հնչօղ ձայնն ի յերգս աստուծոյ պարապեալ: - 645. Իսկ Երրորդն արքայութիւն, գուշակի յաւազանն *պղնձի*. զոր հրամայեաց մովսէս առնել ի հայելեացն կանանց որ նստէին առաջի դրան խորանին. յորում լւանային որդիքն ահարօնի նախ քան զմտանելն ի սուրբն սրբոց: - 756. Աւազան *պղնձի*՝ բանք են աստուածայինք: - 756. Եւ վասն այնորիկ *պղնձի,* զի ընդ դէմ ախտիցն յաղթի՝ հզօրս առնեն: - 756. Զաւազանն *պղնձի* ի հայելեաց կանանց կազմեաց. այսինքն զբանն աստուածային՝ ի սրբոցն հաստատեաց օրինօք: - 756

**ՊՂԾԵՄ +** Նոյնպէս և հերձուածօղք *պղծեն* զտաճարն աստուծոյ և զհաւատն սուրբ՝ որով քրիստոս ի մեզ բնակի, և մեք ի նա՛: - 35. Զի թէ ի սուրբ մարդ յարի՝ սրբի. և թէ ի պիղծ՝ *պղծի:* - 250. Նա՛խ ցուցանէ՛ թէ՝ ձեռքդ այդ գրեսցէ օրէնս որով սրբին պահօղք, և *պղծին* ո՛չ պահօղք: - 332. Երկրորդ՝ յօրինակ ժողովրդեանն իէլի. զի սրբութեամբ էջ յեգիպտոս և *պղծեցաւ* ի գործոց նոցա. մինչև սրբեցաւ յամպն և ի ծովն. և ճաշակեաց զմանանայն: - 333. Երկրորդ, բորն *պղծէ՛* զմարմինն. և մեղքն զհոգին: - 367. Եւ տե՛ս, զի սերմն ի մեզ ո՛չ *պղծէ* զմեզ, այլ ի հոսիլն *պղծէ* զդ դէմս: - 369. Որ նշանակէ՛ սերմն զգործն. որ քանի ի մեզ է՝ ո՛չ է պիղծ. և յորժամ գործի՝ *պղծէ՛:* - 369. Նախ ինքն գործն պիղծ է. և *պղծէ՛* զգործօղն. և *պղծէ՛* զմերձեցեալսն ի նա՛: - 369. Նոյնպէս և արիւն դաշտանւոյն *պղծէ՛* զչորս դէմս. որպէս հոսումն արուին և բղխումն իգին: - 369. Ապա թէ ոչ՝ *պղծեն* յորս մերձանան: - 370. Յորժամ սուրբ էր մոխիր երնջոցն, վասն է՞ր զմերձեցեալսն *պղծէր:* - 384. Վասն այն սրսկօղ ջրոյն *պղծէր*, և սրսկեալն սրբէր: - 384. Գլուխն նշանա՛կ է մտաց. զոր չէ պարտ յաւելուլ՝ և ո՛չ պակասել. որպէս մուրճ ո՛չ գործէր ի սեղանն զի մի՛ *պղծեսցի:* - 390. Եւ թէ մեռանի ոք ի տուն ուխտաւորին, *պղծեցաւ* ուխտն. և անհամար լիցին առաջին աւուրքն, և նո՛ր սկսցի: - 390. Եւ հայրազեղծն որ հարկանէր զծնօղ, զանիծից փայտէ կախէին, և ի նոյն օր ի գերեզման իջուցանէին զի մի՛ *պղծեսցին:* - 400. Թէպէտ այսօր վասն պատրանաց մարդկան և փոխելոյ զտօնս՝ ոչ ինչ ուտեն զնաւակատեաց որ է ծուկն. զոր միշտ զքառասնորդ պահքս *պղծեալ* են ձկամբ և արբեցութեամբ: - 509. Ասեմք, եթէ որք ի հաւատս ունին թիւրութիւն. որպէս հերձուածօղք և վնասիչք եկեղեցւոյ. և որք ի զազիր վարս *պղծեալ* են գործովք և վնասեն զինքեանս. և անզեղջք են առ երկոսին. յետ մի անգամ և երկիցս խրատելոյ, որոշեսցին

յեկեղեցւոյ և պատժեսցին: - 540. Զի պողքէր քոյր թագաւորին թէոդոսի ի կուսանաց վանս էր. և *պղծեցաւ* պոռնկութեամբ ի մարկիանոսէ. և ապա՛ եղև կին նմա. և ասեն թէ ի նեստորէ՛ էր մկրտեալ: - 542. Դարձեալ ևս յայտնի. որ խորհրդովն է *պղծեալ*՝ ո՛չ կարծէ զինքն մեղանչական գոլ. այլ ի գործ մարմնոյն իմանայ զչարիս իւր զղջա՛յ և ապաշխարէ: - 558. Բոլորովիմբ մարդ ի ձեռն մկրտութեանն ներքուստ և արտաքուստ սրբի. բայց դարձեալ սերմն նորա ի ձեռն մարմնոյն ցանկութեանն *պղծի*: - 592. Յաւատն է՛ զի ո՛չ ոք ի յերկուցն *պղծեսցի* օտար անկողնով. որպէս այն որ թողու զհաւատն և ուրանայ բանիւ...: - 610. ...զշաղկապ հաւատոյն հատանէ և հաւատովն *պղծի*: - 610. Նոյնպէս որ օտար անկողնով *պղծէ* զշաղկապ պսակին, որոշի յօրհնութենէն և *պղծի* անկողինն սուրբ: - 610. Իններորդ սրբեմք, զի բնակելոցս ի սմա և պաշտօնէիցս պա՛րտ է սուրբ լինի զի մի՛ *պղծեսցեն* զսրբութիւնսն: - 615. Եւ այն զի *պղծեալ* տաճարի կարդամք. կամ զշարժեալ սեղանն հաստատեմք: - 615. Եւ օրն յորում *պղծեցաւ*, սրբութեամբ պահեսցէ զնա մինչ ցմահ իւր. և ապա՛ հաղորդեսցի: - 652

**ՊՂԾՈՒԹԻՒՆ +** Յինգերորդ՝ նա *պղծութիւն* կոչի տաճարին: - 35. Իննեւ, յովսէփ ստացաւ ոսկի և զարծաթ և զերկիրն եգիպտացւոց՝ փարաւոնի. այսինքն զզէնս սատանայի. զի փարթամութիւնն մեծ զէն է սատանայի որովք գործէ՛ զամենայն *պղծութիւնս*. որպէս երկիրն սոդոմայ պարարտութեամբ գործէր զմեղս: - 314. Զի տէրն *պղծութիւն* կոչէ զնա և սուտ քրիստոսս: - 707

**ՊՂՏՈՐԵՄ +** Իսկ հօրն ամենևին ո՛չ *պղտորեցան* խորհուրդք. և ո՛չ տրտմեցան սիրտք. և ո՛չ տխրեցան դէմք: - 304

**ՊՂՏՈՐՈՒՄՆ +** Ութերորդ՝ զի է՛ առանց *պղտորման*. այսինքն ծեան, կամ անձրևաց, խորշակի, և ցրտոյ: - 184

**ՊՃՂՆԱՒՈՐ +** *Պճղնաւորն* կապոյտ բոլորապատ՝ երկինքն է: - 348. Եւ բաց յայսցանէ **բ** ակն յանդիմանութեան զոր անդամանդեայ կոչէին, և էր ի *պճղնաւոր* զգեստին ի վերայ ուսոց քահանայապետին յորժամ մտանէր ի սուրբն սրբոց երիցս ի տարւոջն, ի տօնի զատկին և յիսներորդացն և ի քաւութեանն: - 349. Երկրորդ՝ Արքեպիսկոպոսք. որ թարգմանին եպիսկոպոսապետք. և սքեմ նոցա քականօթ և *պճղնաւոր*. և փիլոն. և ի վերայ նորա եմիփորոն դ կրկին խաչիւ շուրջ զիւրև: - 607. ...այն է, որ հրամայեաց աստուած ահարոնի զգենուլ *զպճղնաւորն* և զվակասն և զխոյրն և զայլն, և ելանել առ ժողովուրդն: - 636

**ՊՃՆՈՂ +** Թէ կրօնաւոր է՝ հարցանէ թէ ծոյլ եղեա՞լ է յաղօթքն. կամ անհնազանդ. թէ բղջախոհ. թէ յատուկ իրք ունօղ. թէ *պճնօղ*. թէ որոնօղ լաւ կերակրոց և ըմպելեաց. թէ քնափ և թէ կռւօղ: - 601

**ՊՆԴԱԳՈՅՆ +** Երրորդ՝ *զպնդագոյնն*, որպէս ոսկր կամ եղջիւր՝ ո՛չ ուտեմք: - 296

**ՊՆԴԱԿԱԶՄ +** Նա՛խ՝ ի *պընդակազմ* մարմնոյն դժուարաւ լուծանին տարերքն: - 668

**ՊՆԴԵՄ (տեքստում նաև՝ ՊՆՏԵՄ) +** Ուստի հեշտութիւն և աւանդութիւն յիրաւի խառնեալ ընդ միմեանս, և հակառակասիրութիւն և ինքնահաճութիւն յառաջ եկեալ, որով զինեալ *պնդին* ընդդէմ ուղղութեան. զի կարծեն զինքեանս ճշմարիտ գոլ քան զայլսն: - 33. *Պնդէ*՛ զքոյլն: - 202. Այսինքն զքոյլն *պնդէ*՛. որպէս զձու. և զպինդն հալէ՛. որպէս զերկաթ: - 202. Նմանապէս *պնդի* և լուծանի. վասն զի ցո՛ւրտ է և զէջ: - 202. Արևն *պնդէ*՛ և լուսինն թուլացնէ. և յայնմանէ գոյանայ համն և հոտն և այլն: - 213. Եւ թէ ոք *պնդեսցէ* զօրինակ և զորպիսութիւն անմեղութեան ծննդեանն: - 226. Ասեն բժիշկք թէ, **բճխը** ոսկր է մարդոյն. ջլօք *պնտեալ* և կապեալ ի մի մարմին. և է՛ այսպէս: - 243. Նախ ասեն ոմանք, եթէ ուղեղ գլխոյ անբանիցն ընդ խելապատակին ունի չորութիւն և հովութիւն. և ջիլքն ի նմանէ յառաջեալ յանդամս մարմնոյն՝ փութապէս *պնդէ*՛ և տայ շարժիլ: - 266. Իսկ մարդոյն ուղեղն գէճ է և հով. զի նկարեսցէ յինքն զիմացումն մտացն. և ջիլքն յառաջեալ ի նման վասն գիճութեան ո՛չ կարէ *պնդել* զանդամսն. վասն որոյ ո՛չ կանգնի և ոչ գնայ: - 266. Տասներորդ՝ որպէս կողն զզօրութիւնն քարշէ՛ և տայ ի թիկունքն և *պնդէ*՛ զնա. այսպէս կինն զփառս և զինչս առն յինքն քարշելով թանձրացուցանէ և *պնդէ*՛ զինքն: - 276. Գօտին զօրութիւն նշանակէ որ էր ի մէջքն. այլ և ի յաղօթս կայր և գօտեաւ *պնդեալ* էր: - 311. Նոյնպէս վասն երկրորդին գիտելի է, զի որպէս զփայտ թիւրութեամբ *պնդեալ*՝ դժուարին է ուղղել. նոյնպէս զչար սովորութիւն մարդկան դժուարին է փոփոխել: - 531. Իսկ թէ մարմնական խնդրես զխառնումն ջրոյ և *պնդիս* ի հակառակն, ասեմք քեզ թէ ո՛չ միայն ջրոյ, այլ և կաթին և մեղր և գինւոյ ասէ խառնումն ի խառնարանն...: - 596. Այլ և գօտով *պնդել* զմէջս որ են բարի գործք: - 730. Երրորդ՝ արմաւենին ուշ բերէ պտուղն. և մայրն յետոյ *պնդի*. և փառք արդարոցն է՛ ի կատարած աշխարհի. և *պնդիլն* անմահութեամբ: - 765

**ՊՆԴՈՒԹԻՒՆ +** Երրորդ՝ զի փափուկ ջիլք և նեարք՝ յերեսացն գան և առնեն զգայարանս. և հաստն ի թիկունքն սփռի վասն ուժոյ և *պնդութեան* և շարժութեան: - 234. Չորրորդ՝ *զպնդութեամբ* կապիլն ի սէրն կրկին: - 713. Չորրորդ ի *պնդութենէն* թափանցիկ լինի. այսպէս և երկիր իբրև զապակի: - 728

**ՊՇՆՈՒՄ +** Չորրորդ՝ զի ընդ ծառս դրախտին և յանթառամ ծաղիկս և ի բազմապատիկ պտուղսն *պշուցեալ* էին, ո՛չ զերկնչիլն գիտէին և ո՛չ զամաչելն: - 278

**ՊՈԼՈՔՈՆՈՍ** - Եւ *զպոլորոնիս* աշակերտաց բազմաց վարդապետ. և ծեր, որ զմեռեալս յարուցանէր սքանչելեօք: - 544

**ՊՈՂՔԷՐ** - Զի *պողքէր* քոյր թագաւորին թէոդոսի ի կուսանաց վանս էր. և պղծեցաւ պոռնկութեամբ ի մարկիանոսէ. և ապա՛ եղև կին նմա. և ասեն թէ ի նեստորէ՛ էր մկրտեալ: - 542

**ՊՈՂՈՒԱՏ** - Որպէս բան ի ձայն՝ և բան ի գիր՝ և լոյս յօդ՝ և տեսութիւն յակն՝ և հուր յերկաթ՝ և մուխ ի *պողուատ:* - 769-770

**ՊՈՅՏՆ +** Ծաղիկ զմռնեաց. նմանէ *պոյտն* ծաղկի. և Կինամոն. արմա՛տ է խոտոյ ի տմորիս հայոց. և Խնկեղէգն. որ յարմատս ո՛չ ամենայն եղեգան լինի. և Յիրիկ. խէ՛ժ է ծառոց: - 349

**ՊՈՌՆԻԿ +** Եւ զի այս այսպէս է, յորում *պոռնիկն* է՝ անկա՛ր է լինիլ ոչ պոռնկեալ. և ապականեալն կոյս: - 165. **Դարձեալ ասեմք, թէ կոյսն և *պոռնիկն*՝ առաքինութեան և չարութեան են տեսակք, և ներհա՛կք են առաքինութիւն և չարութիւն. զի փոփոխեն զմիմեանս. ըստ այնմ և թողութեան հանդիպին**: - 165. Եւ եթէ ոք ասիցէ, եթէ *պոռնիկն* դարձեալ ի կարգ քահանայութեան ոչ մտանէ, ապա չեղև իսկապէս թողութիւն: - 165. Եւ թէ ոք ասիցէ, ընդէ՞ր այլ մեղուցեալն զղջացեալ մտանէ ի կարգ, որպէս հպարտն և ագահն և *պոռնիկն* ո՞չ: - 166. **Իսկ պոռնկութեան չափաւորն և անչափն մեղք են. որպէս մի՛ անգամ կոյսն ապականեալ՝ և մի՛ անգամ պոռնկեալ՝ կոչի *պոռնիկ* և ապականեալ**: - 166. Եւ թէ ոք ասիցէ, երևի ապա թէ քահանայագործութիւն *պոռնկին* ո՛չ լինի կատարեալ. վասն այն արգիլեալ է ի գործոյն: - 167. Չորրորդ՝ յովսէփ փոխանակ *պոռնիկ* կնոջն էառ զասանէթ կոյս գեղեցիկ: - 313. Վեցերրորդ՝ ո՛չ յաղթեաց *պոռնիկ* կինն ողջախոհին յովսեփայ: - 313. Եւ որպէս ովսէէ ո՛չ է *պոռնիկ*՝ և ո՛չ սամուէլ մարդասպան զի հրամանաւ աստուծոյ էր: - 389. Վասն է՞ր է որ մին կին թէ բազում այր առնէ՝ *պոռնիկ* է. և թէ այրն բազում կանայս առնէր, չէր *պոռնիկ* որպէս ի հինն օրէնս: - 401. *Պոռնիկն* ըստ այսմ որ շնացօղ է թէ կին և թէ այր՝ քարկոծէ՛ր օրէնքն: - 401. Ապրեցոյց զռահաբ *պոռնիկն* ի դէմս հեթանոսաց եկեղեցւոյ: - 414. Իննաժ, էջ ի գազայ ի տուն *պոռնկի:* - 423. Զօծումն մարմնական ընկալաւ ի *պոռնիկ* կնոջէն յորժամ եբեկ զշիշ իւղոյն ի գլուխ նորա ի տան սիմոնի: - 474. Եւ նշանն րախաբ *պոռնկի:* - 494. Երրորդ վասն այն արգել, զի ցուցանէ թէ յոյժ պատուեցաւ մարմինն այն և ո՛չ է համարձակելի որպէս յառաջն մաքսաւորք և *պոռնիկք* մերձենային: - 517. Իններորդ՝ զի ամենայն ոք որ առ *պոռնիկն* երթայ՝ գիտէ ճշմարտութեամբ թէ վրիպեցաւ ի ճշմարիտ արդարութենէն: - 562. Եւ կինն *պոռնիկ* արտասուօքն թանայր զոտս յիսուսի: - 619. *Պոռնիկն* սակաւ մի արտասուօք դարձաւ խաղաղութեամբ: - 745

**ՊՈՌՆԿԱՏՈՒՆ +** Ութերորդ՝ արին սամփսոն որ օրինա՛կ էր ամենազօր տեառն մերոյ, էջ ի գազա ի տիպ աշխարհի. և օթեցաւ ի *պոռնկատունն* յօրինակ դժոխոցն. յորում պաշարեցին զքաղաքն այլազգիքն: - 513. Յինգերորդ ըստ ուրին. թէ ուր գործեն զմեղքն. կամ ի վանք, կամ յեկեղեցի որ է տուն աստուծոյ. կամ ի գեօղ, կամ ի քաղաք, կամ ի *պոռնկատուն:* - 565

**ՊՈՌՆԿԻՄ +** Եւ զի այս այսպէս է, յորում պոռնիկն է՝ անկա՛ր է լինիլ ոչ *պոռնկեալ*. և ապականեալն կոյս: - 165. Նոյնպէս և քահանայն *պոռնկեալ*՝ ո՛չ լինի քահանայ: - 166. Իսկ պոռնկութեան չափաւորն և անչափն մեղք են. որպէս մի՛ անգամ կոյսն ապականեալ՝ և մի՛ անգամ *պոռնկեալ*՝ կոչի պոռնիկ և ապականեալ: - 166. Ուստի յա՛յտ է զի էրէցն երկրորդ ամուսնութեամբն ո՛չ կարէ քահանայագործել. յիրաւի և ապա *պոռնկեալն* էրէց կամ աբեղայ՝ ո՛չ կարէ քահանայագործել. զի ուխտազա՛նց է: - 167. Եւ ցանկութեանն են այլքն. զի ցանկայ ագահել. և որկորստել. և *պոռնկիլ:* - 559. Երրորդ՝ զի շղթայք մեղաց այսպէս ունին զկարգն. զի նախ որկորստութեամբ լնու զորովայնն. և յետ այնորիկ պոռնկութեամբ թափէ՛ զնա. և ապա՛ արծաթ ժողովէ զի լնու զորովայնն և *պոռնկի*...: -561

**ՊՈՌՆԿՈՐԴԻ +** Իններորդն Յեփթայի *պոռնկորդի* գաղայադու ամս **զ**: - 420

**ՊՈՌՆԿՈՒԹԻՒՆ +** Այլ նոքա ամենեքեան ա՛զգ են դիւաց. և ըստ զանազան գործոյն՝ զանազան անուան հանդիպեցան. որպէս դևն *պոռնկութեան*, և հպարտութեան, և բէէզզեբիւղ, բեհմովթ, և այլն: - 150. Եւ գործ *պոռնկութեանն* է ունակութեանն պակասութիւն. վասն որոյ ո՛չ հակադարձին: - 165. Իսկ գործ *պոռնկութեանն* զկնիք կուսութեանն շրջէ և զբնութիւնն ապականէ...: - 165. Դարձեալ ասեմք թէ՝

ամենայն մեղաց մտածումն՝ զղջո՛ւմն է նորին. իսկ *պոռնկութեան* մտածումն՝ վերստին նորոգո՛ւմն է ախտին: - 166. Իսկ *պոռնկութեան* չափաւորն և անչափն մեղք են. որպէս մի՛ անգամ կոյսն ապականեալ՝ և մի՛ անգամ պոռնկեալ՝ կոչի պոռնիկ և ապականեալ: - 166. Ա՛րդ՝ զայս քան մեծագոյն պատիւ և խորհուրդ անդրանկութեանն անարգեաց եսաւ ընդ *պոռնկութեան*. և վաճառեաց ընդ կերակրոյ: - 309. Նոյնպէս և ծնունդք սուրբ աւազանին որք են անդրանիկք և անդամք քրիստոսի եղեալք, ագահութեամբ և *պոռնկութեամբ* կորուսանեն զշնորհն երկնաւոր. և ո՛չ լան և ո՛չ զղջան որպէս եսաւ: - 309. Նա՛խ՝ զի հրամանաւն աստուծոյ էր. որպէս *պոռնկութիւնն* ովսէի և սպանութիւնն փենեհէսի ո՛չ էր մեղք: - 337. Եւ որպէս կնոջ ընդ հրամանս առնն իւրոյ յանցանել *պոռնկութենէ*, նոյնպէս և զաւակաց, և ծառայից, և աշակերտաց, և հնազանդելոց, և ժողովրդոց. նոյնպէս և հոգիս մեր ելեալ ի հրամանացն աստուծոյ՝ *պոռնկութիւն* է նմա. եթէ ըստ գործոց. եթէ ըստ հաւատոց: - 389. Այլ ընդ դևս պատերազմիլ միշտ. զի որոց դիւաց թէ յաղթէ մարդ, թէ հպարտութեան և թէ *պոռնկութեան*, զնոցա տեղիքն ժառանգէ յերկինս: - 393. Զայն ցուցանէ որ պատճառաւ իրիք կամ *պոռնկութեամբ* կամ այլ ինչ յորժամ բաժանին, առանց ամուսնութեան մնասցեն թէ երկուքն են բաժանմանն պատճառ, մինչև հաշտեսցին: - 401. Ասա՛ թէ՝ չափաւորն ընդունելի է. այլ անչափն *պոռնկութիւն* և ագահութիւն. իսկ կուսութիւն և աղքատութիւն որ չափ առաւելու՝ այնչափ գեղեցկանայ: - 404. Զի պողքէր քոյր թագաւորին թէոդոսի ի կուսանաց վանս էր. և պղծեցաւ *պոռնկութեամբ* ի մարկիանոսէ. և ապա՛ եղև կին նմա. և ասեն թէ ի նեստորէ՛ էր մկրտեալ: - 542. Ո՞չ ապաքէն առաքեալքն եդին զչորսս զայս. խորշիլ յարենէ և ի զոհից ի հեղձուցելոյ և ի *պոռնկութենէ:* - 552. Այլ ա՛րդ՝ հեղձուցեալն՝ սուրբ և կերակրելի է նոցա. և *պոռնկութիւնն* անխտիր յորժամ կանգնեն զգլորեալն: - 552. Երկրորդ *պոռնկութիւն:* - 560. Ի ջրոյ *պոռնկութիւն* և փառասիրութիւն. որ գէճ է և թոյլ. և փառասէրն յայլոյ բանս մեղկի և թուլանայ: - 560. *Պոռնկութիւնն* ջրոյ: - 560. Զի որկորստութիւն է ճաշակելեաց. և *Պոռնկութիւն* շօշափելեաց: - 560. Իսկ յետ և յահեակ որկորստութիւն և *պոռնկութիւն*. զի յետս դարձումն է ի ճշմարիտ բարւոյն, և զհետ ընթերցումն է առ ահեակ և սուտ բարիս: - 560. ...զի անկարգ յօժարի ի կերակուրն. և թէ է ի պահպանութիւն տեսակին, լինի բղջախոհութիւն. զի անկարգ յօժարի ի *պոռնկութիւն:* - 561. Երկրորդ՝ զի մանկունս հասակաւ նախ որկորստութիւնն տիրէ, և ապա՛ յերիտասարդութեանն *պոռնկութիւնն* զօրանայ: - 561. Երրորդ՝ զի շղթայք մեղաց այսպէս ունին զկարգն. զի նախ որկորստութեամբ լնու զորովայնն. և յետ այնորիկ *պոռնկութեամբ* թափէ՛ զնա. և ապա՛ արծաթ ժողովէ զի լնու զորովայնն և պոռնկի...: - 561. Ութերորդ՝ զի ամենայն տեսակք ախտիցն ի՛ր մի երևեցուցանեն մեզ. որպէս գողութիւն զինչս, և *պոռնկութիւն* զհեշտութիւն. իսկ հպարտութեանն ո՛չ գոյ ամենևին ակնկալութիւն: - 562. Նոյնպէս զցանկութիւնն ի շնութիւն և ի *պոռնկութիւն* յաւելու հանապազ. զոր անասունք յիւրեանց ժամանակին ունին զխառնումն: - 564. Երրորդ, ըստ քանակին այսպէս. զի ոմն մի գործեաց *զպոռնկութիւն*, և ոմն **ռ**: - 565. Եւ զի ո՛չ է որպէս մահացուն մեծ կամ փոքր. որպէս շնութիւն մեծ է քան *զպոռնկութիւն*. և մարդասպանութիւն քան զգողութիւն: - 568. Իսկ պսակն է՛ ի խորհուրդ ողջախոհութեան. զի ողջախոհ ամուսնութեամբ զսպեսցէ առ ինքն զբղջախոհ ցանկութիւնն. և արգելցի ի շնութենէ և ի *պոռնկութենէ*. վասն որոյ է են խորհուրդք եկեղեցւոյ: - 587. Վտանգ գո՞յ ինչ զաւակաց թէ ոչ արդար ամուսնութեամբ այլ ի *պոռնկութենէ* ծնանին: - 593. ...զի բազում արգելմունք գոն պսակին. որպէս ազգակցութիւնն հոգևոր կամ մարմնաւոր. կամ տկարութիւն բնութեանն. կամ *պոռնկութիւնն*. կամ այսահարութիւնն. կամ ծառայութիւնն. կամ բռնութեամբն. կամ այլ ինչ այսպիսի պատճառ. որով բաժանին այրն և կինն: - 610. ...և ո՛չ է աստուածային հրաման, այլ առաքելական ներումն ի դեղ անժուժկալութեան. զի մի՛ ի *պոռնկութեան* անդունդս կործանեսցին: - 613. Իսկ որ երրորդ կրկնի, ի *պոռնկութեան* սակի գրի ի կանոնս սրբոց հարց: - 613. Վասն է՞ր *պոռնկութիւն* այժմ արգելեալ է: - 613. Իսկ *պոռնկութիւնն* ի բնական օրէնս և ի գրաւորն և ի նորս խոտեալ է: - 613. Վասն չորրորդին, որք աստ ժահահոտ նեխութեամբ *պոռնկութեանն* քաղցրապէս փափկանային. արդարապէս անդ դառնապէս տանջին: - 752

**ՊՈՐՏ +** Դարձեալ **բժ**ան դրունք է ի մարդն որ են այսոքիկ. երկու աչք. **բ** ականջք. **բ** պինչք, բերանն. և *պորտն*. **բ** ստինք. ջրհեղն. և արտաքնոցն: - 241. Եւ յետ այնորիկ յեօթներորդէ՛ աւուրն սկսանի արիւնածուծ լինիլ յարգանդէ մօրն ընդ *պորտն*. որպէս դըդում և ծմերուկ ընդ կոթն: - 261. Իններորդ՝ մանուկն յարգանդի ո՛չ հացիւ կեայ. այլ հրամանաւն աստուծոյ կերակրի ընդ *պորտն* զինն ամիս. որպէս տնկականք, և որպէս նոյ ի տապանն. մինչ ելանէ յարգանդէ...: - 397. ...և ապա ստեամբք

կերակրէ զնա մայր իւր բանիւն աստուծոյ. զոր ասեն յաշխարհի, եթէ զմին դուռն փակէ աստուած, նա զերկուքն բանայ. զի յորժամ զմին դուռն *պորտին* փակեցաւ, **բ** ստինքն բացան: - 397. Երեսունևն**գ**, Ո՞րն է **է** ազգն զոր *պորտ* կոչեմք: - 526. Ո՞րն է **է** ազգն զոր **է** *պորտ* կոչեմք: - 611. Այս է մին եղանակ **է** *պորտից* պարզապէս: - 611.

**ՊՈՐՓԻՐ (ՊՈՐՓԻՐՈՍ)** - Զի թէ ասես միաւորական, ահա՛ արարեր դու զանձն բնութիւն. զի բնութիւն է միարար ըստ *պորփիւրի*, տեսակին կցորդութեամբ բազում մարդիկ մու: - 86. Եօթն են անհատողութիւնք անձին որպէս ասէ *պորփիւր*...: - 87. Դարձեալ՝ թէպէտ ըստ *պորփիւրոսի*՝ մասն բոլորին հետևի. որպէս անհատն տեսակին. և տեսակն սեռին: - 550. Որ *պորփիւր* օրինակէ՛ զմատանին աստուծոյ. թէ մի է և ի վերայ բազմաց բերի և ի բազումս և ո՛չ ի բազմաց է: - 769

**ՊՈՒՏՈՒԿ +** Յաղողականն է՝ յորժամ ի ջերմութենէն եփի կերակուրն և հալի որպէս ապուր ի *պտկի*. և հալի ամենայն կերակուրն մինչև ի **գ** ժամն. և է՛ որ պակաս և աւելի. վասն առողջ և տկար մարմնոյն: - 242. Իսկ կասկարա՛յ է *պուտուկ* պղնձի: - 357. Իսկ ի ներքուստ, ի լինիլ տրտմութեանց՝ խուճապեալ մարմնոյն հոսի մաղձ դառն ի ստամոքս որովայնի. և վերացեալ գոլորշեաց նորա զօրէն շոգոլեաց *պուտկի* առ խելապատակս գլխոյ. և ծանրացեալ անտի թորի՛ առ բիբն ասացեալական. չոր գոլով և աղէգոյն ի սևատեսա՛կն մաղձոյ: - 787

**ՊՌՕՍԽՈՒՄԷ +** Զի՞նչ է յայլ լեզուաց Ովսաննայ. *Պռօսխումէ*. և այլն: - 644. ...և *Պռօսխումէն* յունա՛ց է. որ է՛ «ի վե՛ր նայեցէք»: - 645

**ՊՍԱԿ +** Այս է յղացմամբ յարգանդի և ծննդեամբ. և քարոզութեամբ. և մահւամբ. և յարութեամբն և համբարձմամբն առ հայր՝ իբր *զպսակ* տարւոյ կատարեալ բնութեամբ մեր՝ ի ներքին կողմն վարագուրին մտեալ: - 126. Զի զորս քրտամբք և աշխատութեամբ յաղթէ՝ զնոյն *պսակն* ի գլուխն իւր դնէ: - 152. Նոյնպէս և առ մեզ՝ որք մրցին և ջանան ընդ դէմ բանսարկուին և մեռուցանեն զէ գլուխ նորա՝ նոքա զնոյն *պսակն* ժուժկալութեամբ և առաքինութեամբ ընդունին ի գլուխս իւրեանց յիւրաքանչիւրոցն զորս կոխեն և յաղթահարեն...: - 152. Ութերորդ՝ թոյլ տալով սրբոց չարչարիլ՝ վասն *պսակացն* առաւելութեան է. զի կենցաղս այս հանդէ՛ս է նահատակութեան. և ըստ չափոյ համբերութեան՝ առցէ զյաղթանակն. որպէս սրբոյն ստեփաննոսի. զի ունէր զսարկաւագութեան և զառաքելութեան պատիւն, ընկալաւ և զմարտիրոսութեան *պսակն* ի քարկոծումն իւր...: - 159. Իսկ առաքեալն վասն արտաքին փորձութեանցն ասէ. որ ի հալածչաց հասանէ ի վերայ մեր. յորում ուրախանալ պարտիմք. զի որքան յաճախէ փորձութիւնն, ա՛յնքան առաւելու և *պսակն:* - 160. Չորրորդ՝ զի յետ փորձութեան աստուած *զպսակն* պարգևէ. և յետ փորձութեանն սատանայ, ընդ իւր ի կորուստն յաւիտենական սպանանէ: - 161. Երկրորդ՝ զի արդարութեամբ տացէ *զպսակն* կամ զտանջանքն. թէ յաղթեն և թէ յաղթին: - 161. Ա՛րդ՝ *պսակ* օրինութեան դնի յեկեղեցին, և մանկարարութիւն ո՛չ: - 225. Նոյնպէս և ի դրախտն եղև *պսակ* օրինութեան, և մանկարարութիւն ո՛չ: - 225. Եւ առաջին է վաստակն քան *զպսակն:* - 230. Վասն որոյ յայսմ հասակի տիոց հրաման է յեկեղեցւոյ *պսակ* դնել այսպիսի մանկանց: - 265. Երրորդ՝ զի թէ և դառնային մերձ ի մահ, ամենայնքն ընդ ապաշխարութեամբ մեռանէին. և ո՛չ ոք արդարութեան *պսակին* արժանաւորէր: - 292. Եւ կապ ամուսնութեան որպէս *պսակն* օրհնութեան: - 317. Եօթներորդ՝ զի նոր իմն չնաշխարհիկ կազմեաց. նոր ժողովրդեանն և նոր օրինացն, իցէ և նո՛ր տաճար հռչակեալ ընդ ծով և ընդ ցամաք. որպէս *պսակ* և փառք արդարոցն է՛ զոր ակն ո՛չ ետես և ունկն ո՛չ լուաւ. նոյնպէս և սա՛ ի զգալիս անհաս ի մտաց մարդկան: - 342. ...և **բ** Ակունք ուսոյն՝ կրկին կիսագունդք երկնից. ունելով **զզ** կենդանակերպս. և Վակաս լանջացն **բժ**ան ակամբք նոյն կենդանակերպք ի լանջս երկնից Միթրն՝ *պսակ* քահանայապետութեան. և Թիթեղն՝ մտաց թեթևութեան: - 348. Փակեաց թէ ամենևին ո՛չ բաժանի օրինեալ *պսակն* մինչ ի մահ: - 401. Զի որպէս քահանային օծումն ի հոգւոյն ո՛չ բաժանի յաւիտեան, և *պսակի* օրհնութիւնն որ ի մարմինն է՝ ո՛չ բաժանի մինչ ի մահ ի մարմնոյն: - 401. Զի ըստ սրբոյն եփրեմի՝ ապաշխարութիւնն է վճարք մեղաց և նիւթ *պսակաց:* - 413. Եւ տէր մեր զզարդ և *զպսակ* անկելոցն խոստացաւ մեզ և ետ: - 422. Երրորդ՝ զի փառք և *պսակ* է արդարոց և կատարեալ խոստովանողաց: - 432. Եւ գիտելի՛ է, զի ապաշխարութիւն աստի կենացս՝ է՛ հատուցումն և *պսակ* բարեաց...: - 434. ...և տէրն մարտեաւ ընդ բելիարայ և յաղթեաց մահու. և քակեաց զդժոխս. էառ աւար զգերեալսն և էհան յարքայութիւնն երկնից. տալով նոցա զանթառամ *պսակն:* - 438. Իններորդ՝ զի մի՛ երևեսցի տէրն հակառակ օրինացն որ գովէր *զպսակն:* - 461. Յինգերորդ՝ զփշեղէն *պսակն* որ ի խաչին ի գլուխն էր՝ նշանակէ՛: - 481. Ութերորդն է թագիլն

փշեղէն *պսակօր*. ի նշան փառաւորութեան մերոյ: - 489. Եւ զի ա՛յլ է կամաւոր մահն ի հարկաւորէն. ուստի յա՛յտ է զի հարկաւոր մահն է՛ պատիժ. և կամաւորն *պսակ* և պարգև: - 497. Երեսունն**ե**, *Պսակի* և նշանի. և կատարումն ի *պսակն*. և շաղկապ *պսակին:* - 526. Մի կոչի եկեղեցի՝ ո՛չ տեղեաւ մի. այլ միով հաւատով և յուսով կոչմանն. և միոյ մօր և մի որովայնի ծնունդ աւազանին. և մի կերակուր որ է տեսութիւն աստուածային գրոց. և մի մարմին և արիւն փրկական. և մի գլուխ և *պսակ* և զգեստ ունիմք զքրիստոս: - 533. Իսկ փառք և *պսակք* հետևին յուսոյն և սիրոյն: - 572. Առ աստիճանս այս պարունակի է խորհուրդ եկեղեցւոյ. որ է՛ Մկրտութիւնն. Դրոշմն. Պատարագն. Ապաշխարութիւնն. Կարգ քահանայութեանն. *Պսակն*. և Օծումն: - 573. Նոյնպէս և այժմ սրբոց և երանելեաց յոյսն է հանդերձ ստուգութեամբ տեսութեանն. զի դեռևս հանդերձեալ է նոցա մարմնոցն յարութիւն. և փառք և *պսակքն* ըստ իրին: - 574. Եօթներորդ *պսակն:* - 587. Եօթներորդ *պսակն*. որ է՛ խորհուրդ նոր զինուորս ի ներս մուծանելոյ ի ձեռն մարմնաւոր ծննդեան: - 587. Իսկ *պսակն* է՛ ի խորհուրդ ողջախոհութեան. զի ողջախոհ ամուսնութեամբ զսպեսցէ առ ինքն զբղջախոհ ցանկութիւնն. և արգելցի ի շնութենէ և ի պոռնկութենէ. վասն որոյ է են խորհուրդք եկեղեցւոյ: - 587. *Պսակն* ընդ դէմ ցանկութեան. զոր բարեխառնէ՛ և անմեղադրելի առնէ: - 588. Եւ հաղորդելն, որպէս անդամ ի գլուխն յօդէ. զի ամենայն կատարմանց կատարումն հաղորդութիւնն է. այսինքն կարգին՝ *պսակին*՝ խոստովանութեան՝ մկրտութեան՝ և այլն: - 594. Զի՞նչ է *պսակն:* - 609. ***Պսակն*** **է խորհուրդ մեծ. որով օրհնութիւնն աստուծոյ կատարեալ լինի**...: - 609. Դարձեալ՝ ***պսակն*** **է զուգաւորութիւն արուի և իգի. ունելով անբաժանելի կենցաղավարութիւն**: - 609. **Եւ այս աճման սկիզբն *պսակն* է. որ միանայ հարսն ընդ փեսային. և լինի ըստ սահմանադրութեանն աստուծոյ ծննդագործութիւն**: - 609. Որով լինի *պսակս* այս դաշն և կապ ի մէջ առն և կնոջն. որով լինի անքակ միութիւն: - 609. Եւ այս միութիւնս լինի ի ձեռն *պսակին:* - 609. Եւ այս լինի ի ձեռն *պսակին* որ տուեալ լինի ի ձեռն խորհրդոյ: - 609. **Եւ գիտելի է, զի *պսակն* սկսանի ի նշանադրութիւնն**...: - 609. ...զի երկուց կամաց հաւանումն հաստատէ՛ *զպսակն:* - 609. Իսկ կատարի *պսակն* օրհնութեամբ քահանային. և մարմնական զուգաւորութեամբն: - 609. **Նոյնպէս և նշանն *պսակին* ծաղիկն է**: - 609. Իսկ հաւանումն երկուց կամացն՝ հաստատութիւն է *պսակին:* - 610. **Զի բռնութեամբ և առանց հաւանելոյ միմեանց՝ այսինքն փեսային և հարսին՝ ո՛չ հաստատի *պսակն:*** - 610. Զայս ունի խորհուրդ, որ հարսն և փեսայն յառաջ քան *զպսակն* տեսանեն զմիմեանս. և հաւանին սրտիւք և կամօք և ապա՛ պսակին: - 610. Իսկ ի կատարումն *պսակին*՝ նախ է՛ օրհնութիւն քահանային, և ապա՛ մարմնական զուգաւորութիւնն: - 610. Այս է օրհնութիւն *պսակին:* - 610. Ա՛րդ՝ բարի *պսակն* եռակի է. այսինքն հաւատն. զաւակն. և խորհուրդն: - 610. **Նոյնպէս որ օտար անկողնով պղծէ զշաղկապ *պսակին*, որոշի յօրհնութենէն և պղծի անկողինն սուրբ:** - 610. Իսկ զաւակն, զի ծնցի և սնուցանի ի պաշտօնն աստուծոյ. զի վասն ծննդեան զաւակին է հրաման *պսակին:* - 610. ...**զի բազում արգելմունք գոն *պսակին*. որպէս ազգակցութիւնն հոգևոր կամ մարմնաւոր. կամ տկարութիւն բնութեանն. կամ պոռնկութիւնն. կամ այսահարութիւնն. կամ ծառայութիւնն. կամ բռնութեամբն. կամ այլ ինչ այսպիսի պատճառ. որով բաժանին այրն և կինն**: - 610. Այլ ո՛չ է պարտ բաժանել *զպսակն* զայն որ օրինօք լինի պսակեալ. ըստ այնմ «զոր աստուած զուգեաց՝ մարդ մի՛ մեկնեսցէ»: - 610. Սակայն ի մահն արձակի և քակի շաղկապ *պսակին:* - 610. Եւ կրկին է շաղկապ *պսակին*...: - 610. ...վասն որոյ ո՛չ է պարտ բաժանել զօրինաւոր *պսակն* որքան կենդանի իցեն: - 611. Եօթներորդ՝ զի *պսակ* եկեղեցւոյ և փառք է՛ սուրբ խաչն տէրունական. որպէս ի գլուխն է կանգնեալ: - 616. Երկրորդ՝ հասարակն վճարէ՛ զպարտս. և առանձնականն նիւթէ՛ *զպսակ:* - 623. Զի խաչն *պսակ* և փառք է քրիստոսի և պարծանք քրիստոնէից և ո՛չ նախատինք...: - 632. Այլ և յամենայն խորհուրդս. այսինքն ի կնքելն, և ի պատարագելն, ի կարգն, ի *պսակն*, և յայլն: - 643. ...և վաղն զտօն *պսակաց* և փառաց նոցա: - 647. Նոյնպէս և հոգւոցն ելեալ ի մարմնոց՝ այլ միջոց և արգելումն կամ խափան *պսակացն* չկայ: - 648. Ասեմք թէ՝ այժմ ի հանգիստ գործո՛ցն են, և յայնժամ փոխին ի հանգիստ փառաց և *պսակաց:* - 648. Ութև**ժ**, **իդ** Երիցունքն. և սպիտակ զգեստն. *պսակն* և քնարն: - 660. Արդ՝ ըստ կարգի՝ սերմանքն յառաջ են քան զարդիւնսն. և նահատակքն քան *զպսակն*. վասն որոյ որք աստ փորձ գտանին, անդ առցեն *զպսակն* կենաց: - 662-663. Եւ մահն սկիզբն է *պսակացն*. և յարութիւնն կատարումն...: - 667. Դարձեալ՝ աստ խոստմունքն է *պսակաց*...: - 667. ...և յարութիւնն է կատարումն *պսակաց* և երանութեանց: - 667. Բարեաց՝ զի քաւեսցին փոշետեսակ յանցանք ինչ. և կամ զի *պսակքն* բազմասցին: - 668. Յորժամ սրբազան և մաքուր հոգին հասանէ ի վախճան՝ ուրախութեամբ ցնծայ իբր

ի հանդիսից զերծեալ և ի *պսակն* ընթացեալ. և որպէս յանփոփոխ կեանքն հետևեալ: - 668. ...յայնժամ յայտնի և մերձակայ տեսանէ զամենայն փառս և *զպսակ* զոր ընդունելոց են նոքա ի յարութեանն աւուր...: - 668. Այսպէս է վախճան մաքուր և սուրբ հոգւոցն. ուրախութեամբ ընթացեալ ի *պսակն* և զերծեալ ի բանտէ խաւարային մարմնոյ: - 669. Երկրորդ, զի թէ արժանաւոր է՝ յաւելցի *պսակն*. և թէ անարժան՝ թեթևասցին տանջանքն: - 674. ...զի քահանայական աղօթիւք և պատարագօք կամ առաւելուն *պսակքն*, կամ ջնջին մեղք նոցա: - 674. Իսկ պաշտօնք և ողորմութիւնք և պատարագք լինին նոցա առիթ *պսակաց:* - 675. Ութերորդ, զ *պսակ* տայ աստուած արդարոցն. մին զկուսութեան. և մի զողջախոհութեան. և միւս զապաշխարութեան...: - 675. ...վասն որոյ երիցս աղաչեմք. զի *պսակացս* այսուցիկ արժանաւորեսցէ: - 675. Նոյնպէս և յայլ խորհրդոց կատարմունքն. կնքոյ, *պսակի*, և այլոցն, լուսացուէ և խնկոց գին: - 684. Այլ ըստ *պսակացն* որ մարմնով կատարին՝ և վասն ընկերացն որ ժողովին՝ պակաս է նոցա. զոր ի կատարածի լինելո՛ց է ի գալուստն քրիստոսի...: - 686. Դարձեալ՝ մի ասի կայանք երկուցն վասն միոյ ակնկալութեան. զի արդարքն ակնունին *պսակաց*, և մեղաւորքն տանջանաց: - 689. Ապա զի՞նչ էր արկանելիքն սպիտակ, և *պսակն* ոսկեղէն որպէս ասէ տեսիլն: - 690. Նախ ասեմ, եթէ հանդերձ սպիտակ և *պսակք* և աթոռք և այլն ամենայն զոր ետես ի տեսիլն՝ ո՛չ ներկային. այլ հանդերձելոյն էր տեսութիւն որ ինչ լինելոց է ի կատարածի. - 690. Երկրորդ, ասէ սուրբն դիոնէսիոս ի ննջեցելոց կատարմանց գլուխն՝ եթէ մաքրելոց հոգին հասեալ ի վախճան՝ յայտնի և մերձակայ տեսանէ զամենայն փառս և *զպսակ* զոր ընդունելո՛ց են նոքա ի յարութեան աւուրն: - 691. Ապա ուրեմն ի գալ փեսային լինի *պսակ* և հարսանիսս այս հոգևորապէս: - 693. Ապա հոգին առանց մարմնոյ ո՛չ ունի ներգործութեամբ ինչ վարձ կամ *պսակ:* - 694. Ասեմք եթէ՝ անդրանիկ և կատարեալ ո՛չ վասն *պսակացն* ասէ որ դեռ առնելո՛յ են: - 695. Նոյնպէս և լուսեղէն *պսակքն* որ իջանէր ի վերայ նոցա՝ յայտնապէս ցուցումն է իմանալի *պսակացն:* - 697. Ասեմք եթէ՝ ծայնիւն և *պսակաւն* եցոյց մարդկան և լսեցոյց ի յաչս և ի յականջս թէ զայնպիսի կեանս վիճակեցին նոքա որք սուրբք են ի մարդկանէ...: - 697. Դարձեալ ասեն, զի՞նչ է փառքն և *պսակ* արդարոցն, եթէ ոչ տեսութիւնն աստուծոյ զոր ունին հոգիքն: - 697. ...այս է փառք և *պսակ* սրբոցն: - 697. Նա՛խ՝ զի առաքեալն զանազանեաց զտեսանելն յետ մահու՝ և *զպսակն* ի յարութեանն: - 697. Երկրորդ՝ զի տեսութիւնն հաւատոյն է փոխարէն զոր հոգին ընկալաւ. և *պսակն* գործոյն է զոր մարմնով առնու: - 697. ...մինչ ի յարութիւնն առցէ բոլորիւ բոլորապէս զփառս և *զպսակս* զանվախճան տեսութիւնն աստուծոյ: - 705. Եւ ոսկեղէն *պսակն* զթագաւորելն ընդ քրիստոսի որպէս ցուցաւ: - 712. Եւ թէ որո՞ց ոմանց լիցի ոսկեղէն *պսակն*...: - 712. Այլ և որպէս հրեշտակք զանազանին. նոյնպէս և ի յարութեանն փառօք և *պսակաւն:* - 725. Այլ և որպէս նախաստեղծքն ի դրախտին ո՛չ ամաչէին. նոյնպէս և սուրբք ի յարութեանն. զի ծածկեալ են ի ներքուստ հոգւոյն լուսաւորութեամբն, և արտաքուստ *պսակաւն* և փառօք: - 726. Երկրորդ կոչի հնձան արքայութիւնն երկնից. ուր ժողովին *պսակք* և փառք զանազան հանգստեան սրբոց զոր պատրաստեալ է աստուած սիրելեաց իւրոց ըստ առաքելոյ: - 748-749. Այլ զայս ո՛չ իմանան հասարակ կարծիք. զի արքայութիւնն երկնից մի է. այլ փառք և *պսակքն* են զանազանք առաւել և նուազ: - 758. Եւ թէպէտ մի իցէ արքայութիւն սրբոց, սակայն զանազանեսցին փառօք և *պսակաւ* և հանգստեամբ: - 760. Եօթն զարդ հարսին որպէս ցուցաւ. և օծիտք յաւիտենիցն կենացն. *պսակք* և արկանելիք, ասացան մեզ փոքրիշատէ յառաջագոյն ի բանից սրբոց: - 761

**ՊՍԱԿԵՄ +** Եօթն խոյրն զդիւական ներգործութիւնսն նշանակէ. որովք յաղթէ՛ զմարդ և *պսակի:* - 152. Իսկ թէ կամիս ուսանիլ թէ զի՞նչ է նիւթ *պսակին*. որ ինչ առ աստուածութեան իւրում մեծութիւն գտանի, զա՛յն պատրաստեաց սիրելեաց իւրոց. զոր ո՛չ կարեմ զմտաւ ածել. կամ վայրապար լսելեօք լսել: - 161. Վեցերորդ՝ հարւածս կրեալ յոր ի բոլոր մարմինն. և տէր մեր ի ծեռս և յոտս և ի կողս. որ և փշով *պսակեալ* ապտակեալ և գան հարեալ: - 327. Վեցերորդ՝ աստ ի հանդիսից սխալէ. և յետոյ ի յընթացից. և ի յարութեանն յաղթանակաց *պսակէն:* - 394. Եւ երիտասարդ հասակով յաւուր յարութեանն *պսակեսցին:* - 422. Նոյնպէս և հնազանդեալքն արծակման՝ կրկին *պսակեսցին:* - 540. ...այլ ապաշխարութիւնն ամբարէ՛ զբարիս ի հոգին զի *պսակեսցի:* - 602. Զայս ունի խորհուրդ, որ հարսն և փեսայն յառաջ քան զպսակն տեսանեն զմիմեանս. և հաւանին սրտիւք և կամօք և ապա՛ *պսակին:* - 610. Եւ ապա՛ ընթերցմունք յիշատակ սրբոցն որք աստ նահատակեցան և անդ *պսակեալք* թագաւորե՛ն ընդ քրիստոսի: - 628. Եօթներորդ՝ աստ հանդէս մարտի է, և անդ յաղթանակ *պսակի:* - 662. Նա՛խ՝ զի համընթա՛ցք են ասէ ի վաստակն. այսինքն հոգին և մարմինն. ի միասին և հանգիցեն և

*պսակեսցին:* - 668-669. ...զի նոքա ո՛չ չար են գործեալ և ո՛չ բարի. ո՛չ տանջին և ո՛չ *պսակին*...: - 675. ...զի ի յարութեանն ի միասին *պսակեսցին* և փառաւորեսցին: - 677. Եւ զբարիսն՝ զի *պսակելոց* են: - 684. Այսինքն մի՛ առաջինքն առանց մեր վերջնոցս, և մի՛ հոգիքն առանց մարմնոյս *պսակեսցին:* - 692. Այսպէս հոգին նախ տեսութեամբն ուրախանայ և փառաւորի, և ապա՛ մարմնովն կատարեալ *պսակի:* - 696. ...զի լաւագոյն համարեցաւ աստուած մի՛ առանց մեր *պսակիլ:* - 696. ...և էր կոյս ըստ որում պահեաց զմաքրութիւնն. վասն որոյ նմանակիցք նորին՝ թագիւ *պսակին* ընդ նմին: - 712. ...այլ արդ եթէ հոգին առանց մարմնոյ *պսակի* կամ պատժի՝ ո՛չ է արդար դատաստան...: - 715. ...վասն որոյ հուր գայ առաջի քրիստոսի. զի զոմանս տանջէ այրելովն, և զոմանս *պսակէ*՛ լուսովն...: - 731. Տասներորդ, զի *պսակէ*՛ զսուրբս իւր և փառաւորի ի մէջ նոցա...: - 737. Չորրորդ՝ ի վախճանի յորժամ հնազանդին նմա ամենայն և *պսակէ* զսուրբս իւր, ուրախ եղիցի տէր յարարածս իւր: - 748

**ՊՏՂԱԲԵՐ +** Դարձեալ *պտղաբեր* ծառ՝ ունի պտուղ և ծաղիկ և հոտ անոյշ: - 212. Որք *պտղաբե՛րք* են և ծննդականք բարեաց՝ հեզութեամբ նուիրին աստուծոյ: - 358. Այլ և նուէրք սրբութեանն տունս, անդաստանս *պտղաբերս*, անասունս, և այլ մասնաւոր նուէրք: - 359

**ՊՏՂԱԲԵՐԻՄ +** Եւ զոր օրինակ՝ տունկ ի յերկրի տնկեալ՝ նախ դալարի. և յորժամ հաստատի ծաղկի. և յորժամ ևս հաստատի՝ ապա *պտղաբերի:* - 255. Այսպէս և հոգին ընդ անկատար նիւթոյն ունի զկերակրիլն. և յորժամ հաստատի զգայութեամբն ծաղկի. և յևս հաստատիլն՝ բանականութեամբ *պտղաբերի* ի վերին խնամոցն որպէս պտուղն այն յարեգակնէ՛: - 255. Եւ թէ զարմաւենւոյ ասեն ի խ ամս *պտղաբերիլ:* - 263. Սակայն և նա՛ է ի թիւս յայս. այսինքն զի երիցս պատկելով երեքտասանն՝ լինի **լթ**. և ի քառասներորդումն *պտղաբերի:* - 263. Չորրորդ, քրիստոնէական ժողովուրդն դալարացեալ ի մեղաց. շառաւիղեալ ծննդօք. ծաղկեալ հաւատով և *պտղաբերեալ:* - 382. Նա՛խ՝ որպէս կանուխ անձրևն բուսուցանէ և անագանն սնուցանէ և *պտղաբերէ՛:* - 393. Նոյնպէս պա՛րտ էր զսերմն հաւատոյ ընդունել նոցա քրիստոսիւ, և ապա փոքր փոքր աճմամբ հասանիլ պարգևաց հոգւոյն, և *պտղաբերել* և զայլսն: - 521. Ասեմք թէ՝ որպէս ծառն որ նախ ծաղկի և ապա՛ *պտղաբերի:* - 609. Երրորդ հնձան է իւրաքանչիւր սիրտ և անձինք արդարոց. որ հաստատեալ է հաւատով յորթն ճշմարիտ և *պտղաբերէ*՛ զողկոյզ բարեաց. և չարչարանօք ճմլէ՛ յինքեան զուրախարարն գինի հրեշտակաց և մարդկան. և այսոքիկ բարեա՛ցն են հնձան: - 749. Սա է հատն ցորենոյ որ անկեալ յերկիր՝ բազում պտուղս աշխարհի *պտղաբերեաց*...: - 755. Եօթներորդ, որ ի տղայութեանն հասակէ՛ կան յաստուած-պաշտութիւն, իբր զխոտս դալարի *պտղաբերեն* զհարիւրաւորն: - 757. Եւ յերկոտասան ամիսս, զի յետ մեղանացն վերստին *պտղաբերի* ապաշխարութեամբ: - 765. Իններորդ՝ վասն պտղոյն յամրութեան. զի ասեն թէ ո՛չ կարէ *պտղաբերել* մինչ ի հարիւր ամն: - 766. Դարձեալ **բժ**ան պտուղք են **բժ**ան առաքեալքն. որք յամս և յամիսս տնօրէնութեանն *պտղաբերեցան:* - 768. Դարձեալ, ծառ կենա՛ց է աստուածածին կոյսն մարիամ բղխեալ յարմատոյն յեսսեայ. երկնուղէշ զարգացմամբ մշտասաղարթ կուսութեամբ ծաղկեալ և պայծառացեալ հոգւոյն սրբոյ եկաւորութեամբն. և *պտղաբերեալ* մեզ անմահ պտուղ զբանն մարմնացեալ. յորմէ վայելեալք երկնաւորք և երկրաւորք ի շնորհաց նորին զյաւիտենից կեանսն ժառանգեցաք: - 768. Եւ որպէս զկենդանարար ջուր զընդունակս իւր դալարացուցեալ. ծաղկեալ յաստիս և *պտղաբերեալ* ի հանդերձեալսն. - 768. Այլ և տերև է մշտասաղարթ գիտութիւն հաւատոյն. ծաղկեալ դաւանութեամբ և *պտղաբերեալ* գործով առաքինութեան: - 769. Զի ամենայն բոյս բարեգործութեան ի սերմանց հաւատոյն բուսանի և *պտղաբերի:* - 769. Որպէս ծառ մերկացեալ ի պտղոյ՝ այլ ո՛չ ըստ ունակութեանց. և նովին ունակութեամբ վերստին *պտղաբերի* ինքն: - 782-783

**ՊՏՂԱԲԵՐՈՒԹԻՒՆ +** Երրորդն *պտղաբերութեան:* - 210. Չորրորդ՝ զի վայելէ՛ր իսկ նմա որպէս զհատ ցորենոյ թաղեալ յաղբիւսն՝ այսինքն յերկիր. և պարարտացեալ հասցէ ի հունձս *պտղաբերութեան:* - 323. Զի գալ հոգւոյն սրբոյ պատճա՛ռ էր կրկին ներգործութեան. այսինքն սրբութեան արմատոյ մեղաց. և *պտղաբերութեան* կուսածին զաւակին. ծնանիլ և կոյս մնալ յետ ծննդեանն: - 463. Զի էր *պտղաբերութիւն* առանց ապականութեան կնքոյ: - 469

**ՊՏՂԱԾՆՈՒԹԻՒՆ +** Երրորդ՝ ի յեղծանիլ պատկերին աստուծոյ որ վասն փառացն աստուծոյ ստեղծաւ, ընդ նմին եղծան և ապականեցան այլ արարածք որ վասն փառաց մարդոյն ստեղծան. որ ո՛չ միայն անասունք, այլ և հող և ջուր և օդ երկրին կորուսանեն *զպտղածնութիւն*. որպէս սոդոմայեցոցն: - 416

**ՊՏՂԱԿՆ +** Երրորդ՝ *պտղակն* ելուստ ի պտղոյն. որ բիծ ունի ի միտքն: - 370

**ՊՏՂԱԿՈՐՈՅՍ +** Ձտարւոյն ոստն ջարդեն ի վերայ բնոյն. և որ աճէ՛ զայն քաղեն և հիւսեն. *Պտղակորոյս* որպէս ծիթենի: - 638

**ՊՏՂԱՏՈՒ +** Ոչխար տարեկան. և պատարագելի. և զգօն և հեզ. և *պտղատու* զկաթն և ասր և ծնունդ: - 361

**ՊՏՂԱՒԷՏԵՄ +** Եւ թէ այս և թէ այն, դու ընկա՛լ զխնդիր մտաց քոց առանց ամենայն երկբայութեանց. իբր ի միոյ կենեղուտ աղբերէ կենաց ուռճալրացեալ և *պտղաւէտեալ:* - 772

**ՊՏՂԱՒԷՏՈՒԹԻՒՆ +** Որ և յարազուարճ բարերջանկութեամբ լի և ամենազան քաղցրորակ *պտղաւէտութեամբ* տնկեցիս ծառ բարձրաբերձ յընթացս հոգւոյն ի մէջ եկեղեցւոյ տանս թորգոմեան ազգիս հայկազնեան: - 558

**ՊՏՈՒՂ +** Դարձեալ ասեն, թէ ամենայն ստորնային մարմինք՝ կառավարին վերնային մարմնովք. որպէս յա՛յտ է ի չորս եղանակս տարւոյն. այլև ծնունդ և աճումն՝ և բոյսք և *պտուղք*՝ ի շարժմանէ նոցա պատճառին. և շարժումն նոցա է՛ հարկաւոր. ապա ուրեմն ամենայն ինչ լինի ի հարկէ: - 10. Դարձեալ ասեն հակառակօղքն, թէ բոյսք և ծաղիկք և *պտուղք* երկրի ունին զօրութիւն ազդողական. իսկ աստեղք երկնից ո՞չ ունիցին: - 12. Բայց կամեցաւ և յայտնեաց զինքն որդի և զհայր՝ ի ձեռն նշանաց աշակերտաց իւրոց. որպէս ի *պտղոյն* ծառն երևի: - 96. Վասն բուսուց և տնկոց՝ և կանաչութեան նոցա. և ծաղկի, և *պտղոյ*, և համոյ, և հոտոյ նոցա: - 155. Վասն լուսոյ դրախտին. և զի անպական է դրախտն և *պտուղ* նորին: - 155. Զի՞նչ էր *պտուղն* ադամայ, և գիտութիւն բարւոյ և չարի: - 155. Անծորելի են *պտուղքն:* - 155. Եւ զի արտաքս գան ծաղիկք և *պտուղք* և տերևք: - 197. Եւ զի հասանին *պտուղք:* - 197. Եւ զի երկիր և ծառք ի *պտղոց* կողոպտին: - 197. Եւ զի մայր է *պտղոց:* - 211. Դարձեալ պտղաբեր ծառ՝ ունի *պտուղ* և ծաղիկ և հոտ անոյշ: - 212. Նշանակեն զնոսա՝ որք ունին *զպտուղս* բարի գործոց. և զծաղիկն հաւատոյ. և զհոտ գիտութեան՝ ամենայն մարդկան անոյշ: - 212. Վասն է՞ր նա՛խ ծաղիկն և ապա *պտուղն* երևի: - 212. Նախաշաւի՛ղ է ծաղիկն *պտղոյն:* - 212. Եւ *պտուղն* ջրոյն՝ որ յետոյ հասանի: - 212. Եւ յետ յարութեանն ընդունի *զպտուղ*. որ է՛ պարգևք խոստմանց անվախճան կենացն: - 213. Քանի՞ են ազգ *պտղոց:* - 213. Ամենայն *պտուղք* ի չորս բաժանին: - 213. Վասն է՞ր մարդս սպիտակի, և *պտուղքն* կարմրին ի հասանիլն: - 213. Իսկ *պտուղք* զկարգ տարերա՛ցն բերէ որպէս ցուցաւ. ի հողոյն սկսեալ և առ հուրն դադարեալ: - 213. Եւ այդպէս *պտուղքն* բոլորապէս կատարին: - 213. Յայն՝ զի փայտ դրախտին անփուտ է. և տերևն անփտելի. և *պտուղն* անծորելի. և ծաղիկն անթառամելի. և աստուծոյ տնկեալ ձեռօք իւր. տեղի անապական ձեռագործին ադամայ: - 223. Եւ թէ տկարանաս ի զօրութիւնն աստուծոյ՝ առ մե՛զ ևս գոն քեզ հաստատութեան նշան՝ անփուտ փայտ. և անթառամ ծաղիկ. և մշտականաչ սաղարթ. և անթափ *պտուղ:* - 223. *Պտուղն* որ հատանի և ծասկի և ի մարմին փոխարկի. ո՞րպէս է անապական: - 223. *Պտուղքն* դրախտին շօշափելիք են և կերակրելիք. հատանի և ծասկի և փոփոխի ըստ պատահական որակացն. և անապական մնայ ըստ գոյացութեանն և ներգործութեանն ի կերօղն: - 223. Դարձեալ՝ փայտն կենաց ունէր կերակրելի՛ *պտուղ:* - 223. Ա՛րդ՝ զի՞նչ ասես վասն կենաց *պտղոյն*. եթէ կերակրելի է և հատանելի, ո՞րպէս է կենաց *պտուղ:* - 223. Ա՛րդ՝ որպէս կենաց *պտուղն* կերակրելի է և կենսունակ, նոյնպէս ամենայն *պտուղքն* կերակրելիք էին և անապականք: - 223. Զի՞նչ էր *պտուղն* գիտութեան բարւոյ և չարի: - 223. *Պտո՛ւղ* էր զգալի և կերակրելի. որպէս կենաց *պտուղն* անմահութեան էր պատճառ. և այլ ամենայն *պտուղքն* լիութեան: - 223. Դարձեալ ասեն ոմանք, նախ քան զուտելն ի *պտղոյն*՝ գիտէր ադամ զբարին փորձիւ, և զչարն գիտութեամբ. իսկ յորժամ եկեր՝ գիտաց զչարն փորձիւ, և զբարին գիտութեամբ. այն է գիտութիւն բարւոյ և չարի: - 223. Զի՞նչ էր *պտուղն* որ կերաւ ադամ: - 224. Այսպէս երևի թէ և դրախտին *պտուղն* նորն զհինն փոխէ՛: - 224. Եթէ յամենայն ամի նորն զհինն փոխէ, այս լինի կամ թափիլ *պտղոյն* ի ծառոյն. և կամ մնալ հինն ընդ նորոյն: - 224. Ա՛րդ՝ եթէ մնայ հինն ընդ նորոյն հանապազ. նա՛ ծանրանայ. և ո՛չ կարէ զայն քան ամաց բազմութիւն *պտղոցն* կրել, և այսպէս լինին ամենայն ծառքն կոտորեալ և ապականեալ...: - 224. Ապա ուրեմն համաձայնելի է մեզ փիլոնի իմաստնոյ. որ անծորելի է ասէ *պտուղն* և անթափ տերևն: - 224. Ո՞րպէս է, կերակրելի՝ թէ անծորելի է *պտուղն:* - 224. Վեցերորդ՝ սեաւ *պտուղն*. զի մի՛ վնասեսցէ զտեսութիւնն սպիտակն: - 239. Այսպէս և հոգին ընդ անկատար նիւթոյն ունի զկերակրիլն. և յորժամ հաստատի զգայութեամբն ծաղկի. և յևս հաստատիլն՝ բանականութեամբ պտղաբերի ի վերին խնամոցն որպէս *պտուղն* այն յարեգակնէ՛: - 255. Որպէս լերինք ցուրտ գոլով՝ *զպտուղս* ո՛չ հասուցանեն որպէս ի դաշտի: - 261. Վասն որոյ ըստ թուոյ

զօրութեան իւրոյ որ է՛ սնանիլն աճիլն և ծնանելն, յերեք ամիսս ծնանի *զպտուղս*. որպէս ցորեան և այլքն: - 262. Նա՛և այսու թըւով տունկք երից ամաց տան *զպտուղս:* - 262. Այս է պատճառն. զի ոմանք յապաղեն. և ոմանք փութով տան *զպտուղն* որպէս ասացաք: - 263. Նմանապէս ծառք և տունկք՝ որ յետ երից ամաց կամ չորից ցուցանեն *զպտուղս*՝ յայսմ թըւոյ ո՛չ ելանեն արտաքս: - 263. Չորրորդ՝ զի ընդ ծառս դրախտին և յանթառամ ծաղիկս և ի բազմապատիկ *պտուղսն* պչուցեալ էին, ո՛չ զերկնչիլն գիտէին և ո՛չ զամաչելն: - 278. Ի լուսաւոր պատմուճանէն, յորժամ կերին ի *պտղոյն* և ծանեան զի մերկ էին և արարին սփածանելիս: - 279. Չորրորդ՝ զի եկեր ի *պտղոյն:* - 279. Ասեմք եթէ՝ զոր ինչ ի յարութեանն աւուր լինելոց է սրբոցն, զսկիզբն անդանօր սերմանեաց ի նախնի մարդն ադամ. զի թէ յիւրում ժամանակին կերեալ էին ի կենաց *պտղոյն*, լինէին կատարեալ անմահք. և փոխեին յարքայութիւնն: - 282. Երկրորդ՝ զի խոնարհ և հնազանդ էր յամենայնի. ուստի մնաց եղբօրն պատարագի. որ իւրն գ ամսով յառա՛ջ էր հասեալ քան զեղբօրն. այսինքն ծնունդ ոչխարացն քան *զպտուղ* երկրին...: - 286. Չորրորդ՝ զի *պտուղ* ո՛չ եկեր. որով նա ուտելովն զրկեցաւ կենաց. և այսպիսիքս յերկինս հանեն զմարդն: - 290. Չորրորդ՝ զի գիտացեն թէ գոյնք և համք զանազան կերակրոց և *պտղոց* ո՛չ իւրովի պատրաստին, այլ ի շնորհացն աստուծոյ: - 339. Եւ *պտղի* ձիթով որպէս զվարդէջուր եփեալ: - 349. Իսկ այն որ զմեղրովն *պտուղն* նուիրէին քահանայից, բայց ի սեղանն ոչ: - 356. և Ոչխար զգօն և հեզ. ունելով *պտուղ* ասր և կաթն և ծնունդ: - 358. Զի նորահաս *պտուղ* եղև յարութեամբն մեռելոց, և նստելով ընդ աջմէ հօր: - 361. Եւ վասն ուխտի, խաչի, և եկեղեցւոյ: *Պտուղս:* Շօթ: Նաշիհ: Զէթ: Մոմ: Խունկ. և այլն: - 362. Երրորդ՝ պտղակն ելուստ ի *պտղոյն*. որ բիծ ունի ի միտքն: - 370. Երրորդ՝ չտալ երկրի զբոյս. և ո՛չ ծառոց *պտուղ:* - 376. Վասն է՞ր խնդրեաց տասանորդս ի *պտղոց* և յանասնոց: - 376. Եւ գ *պտուղն*, ողկոյզ. նուռն. և թուզ: - 381. Իսկ ծաղկեալ գաւազանն չորս ինչ յաւելու. Դալարի. Շառաւիղ. Ծաղիկ. և *Պտուղն* ընկուզ: - 382. Երրորդ, սուրբ խաչն աստուածընկալ դալար զօրութեամբ. շառաւիղ թևն. *պտուղ* քրիստոս ծաղկեալ արեամբ և ջրով: - 382. Չինգերորդ, ըստ փիլոնի գաւազանն է իմաստութիւնն. դալարեալ մտօք և ծաղկեալ ուսմամբն. և *պտուղ*՝ ուսուցմամբ աշակերտաց: - 382. Նոյնպէս առաջին օրէնքն շարժեաց զնոսա ի բուսանիլ. և երկրորդն յաճումն և ի *պտուղ:* - 393. Երկրորդ՝ ի բուսոց և ի *պտղոց*. որպէս ձէթ և այլք: - 407. Երկրորդ՝ ի *պտղոյ*. որպէս ձէթ: - 407. Նա՛խ եթէ՝ բնութեամբ բարի է աստուած և ո՛չ ունի բարկութիւն. զի ծառ բարի *պտուղ* չար ո՛չ առնէ. այլ մեք գործովք մեր զայրացուցանեմք զնա և արկանեմք ի բարի կամս նորա բարկութիւն: - 408. Նշանակէ զադամայինս մարմին ի կերակրոյ *պտղոյն* հաւասարեալ անբանից՝ ընդ բեռամբ մեղաց: - 423. Նա՛խ՝ զի որդի է յեսսեայ. որ է՛ *պտուղ* կղզւոյ. և տէրն մեր եղև *պտուղ* մարհամու ցամաքեալ ի խոնաւութեանց կենցաղոյս: - 435. Այրին նշանակէ զտարերս աշխարհի. զի այրի եղեն յանիծից *պտղոյն*. և կամ թէ բնութիւնն իւրեանց շարժէ ի լինիլ: - 444. Երրորդ՝ ցուցանէ *զպտուղ* դրախտին նոյնպէս գոլ առանց յաւելուածոյ և առանց նուազելոյ. թէպէտ կերակրիւր: - 444. Այսինքն երդումն աբրահամու և դաւթի՝ մարդ լինիլ բանին ի վերայ երկրի ի *պտղոյ* յորովայնէ նորա. և նստել յաթոռ հօր նորա. և ի նմանէ օրհնիլ ամենայն ազգաց: - 457. Նա՛խ՝ զի աստուած էր ողջոյնառաքն. որ խօսէր զկոյսն ի հարսնութիւն կուսութեան, կուսաբեր լինիլ *պտղովն:* - 464. Ա՛րդ՝ Կիպարին զանուշահոտ վարս նշանակէ. և Արմաւենին *զպտուղ* արդարութեանն: - 495. Եւ խորհուրդ նաւատակեաց ի դրախտին աւանդեցաւ յամենայն *պտղոյ* ուտել և ի միոյն ոչ: - 510. Եւ որ խոտէ և ունդ և պտուղ՝ է՛ կերակուր *պահոց*. զի անզգայ է և անշարժ տեղւոջէ ի տեղի և անշունչ: - 510. Տնկականք՝ այսինքն բոյսք և *պտուղք* յորմէ և հատցին թէ ի մարդոյ և թէ յայլ կենդանեաց՝ կերակրելիք են: - 511. Իններորդ, ասէ «մի՛ մերձենար», զի մարմինն այն *պտուղ* էր կանուխ դժոխոցն. և ինքն տէր մեր իբրև քահանայ նոր յամենայն ձեռաց պահէր զգուշութեամբ, զի պահեսցէ զնա ի ձեռինն որ կարօ՛ղ է ընդունել զայնպիսի պատարագն: - 517-518. ...զի և մշակն յետ սերմանելոյն իսկոյն ո՛չ հնձէ. այլ համբերէ մինչ ի հասումն *պտղոյն:* - 520. Վեցերորդ՝ որպէս սերմանելն նա՛խ է քան *զպտուղն* և զհունձն: - 521. Եւ որպէս անչափ են սպեղանիք և դեղք բժշկականք մարմնոյ ի բազում և զանազան ծաղիկս խոտոյ և յարմատս, ի տերևս ի *պտուղս*. և յայլսն. զի սոքա յայտնեն զբազմութիւն հիւանդութեանց մարմնոյ: - 531. Եւ ոմանք ոչ ինչ համարին զյանցանս մտաց. և ո՛չ դնեն ի կարգս մեղաց. օրինակ տալով իբր զդատարկ սեղան ոչ ինչ կերակրել. և իբր *զպտուղ* ծառոց տեսութեամբ միայն վայելել: - 555. Ուստի ծառ չար *պտուղ* չար առնէ: - 556. Նաև ասեն թէ՝ վասն փառաց աստուածանալոյն մեղանչեաց ադամ. և վասն նախանձու առն՝ կինն նախ եկեր *զպտուղն:* - 561. Այս է ծառն չար որ

*պտուղ* չար բերէ. և յետոյ հատանի. և ի հուրն յաւիտենից արկանի: - 570. Երրորդ՝ հաւատն է որպէս արմատ ծառոյն որ է հայր. յոյսն ստեղունքն որ է որդի. սէրն հոգին սուրբ որ է՛ ծաղիկ և *պտուղ* ըստ դիոնիսեայ: - 577. Եւ յառաջին արտորէիցն *պտղոց* տալով նոցա ուտել զոր քահանայքն ուտէին՝ արար զնոսա Քահանայս: - 607. Զի ծաղիկն դիւրաւ թափի յամէն փոքր պատճառէ. յանձրևոյ և ի հողմոյ և ի սաստիկ որոտոյ. վասն այն *պտուղն* կորնչի: - 638. Դարձեալ՝ ենովքայ չուտելն ի *պտղոյ* զամենայն ժամանակս իւր զերկու հարիւր ամ: - 652. Երրորդ, չորեքշաբաթն ի խորհուրդ խաբէութեան նայի. յորում ասաց օձն ուտել ի *պտղոյն*...: - 653. ...և ուրբաթն՝ զի ադամ եկեր ի *պտղոյն*, և մեք պահեմք զնոսա: - 653. Քառասունևդ, Կենաց ծառն և երկոտասան *պտուղ* նորա: - 661. Աստ զանազան ցաւոց՝ և զանազան դեղս կազմեաց արարիչն աստուած. որպէս յարմատս ի ծաղիկս ի *պտուղս* և յայլսն: - 665. Է և ա՛յլ իմն տեսութիւն վերագոյն. զի արարողութիւն սըգոյս ցուցանէ զառաջին անկումն մեր ի լուսեղէն կենացն ի խաւար աշխարհ տրտմութեամբ և ցաւօք մահու մեռեալք և ի հող դարձեալք. և այս ի ճաշակմանէ *պտղոյն:* - 670. ...իբր թէ այսպիսի սղալումն ի ճաշակելոյ *պտղոյն* եղև. որ ձեռօք հատեալ եդ ի բերանն: - 670. Եւ երթայ առ իւր տէրն հեշտութեամբ. և անդէն վաղվաղակի իբրև երևմամբ և տեսութեամբ իմն շահի *զպտուղն* առաջիկայ երանութեանց: - 691. Ասեմք եթէ՝ պատիժ չարեաց *պտուղ* է մեղաց: - 701. Եւ ի խոստովանիլ մեղաց՝ լուծանի և *պտուղն* չար: - 701. Եւ *զպտուղս* զգայութեանց ջրով հասուցաք. եթէ բարի և եթէ չար: - 714. ...վասն որոյ ինքն եղև *պտուղ* ննջեցելոց: - 716. Յինգերորդ, նախ ծաղկի և ապա՛ առնու *զպտուղն* յետոյ...: - 721. ...զի ծաղիկն կարապե՛տ է *պտղոյն*...: - 721. ...իսկ հոգիք սրբոցն նախ ծաղկին բնական պայծառութեամբն իւրեանց որպէս ցուցաւ ի վերոյ, և ապա՛ յետոյ արդեամբք *պտղոյն* կատարին ի հանդերձեալ կեանքն: - 721. Եւ զի *զպտուղ* իւր տացէ ի ժամանակի իւրում: - 755. Սա է հատն ցորենոյ որ անկեալ յերկիր՝ բազում *պտուղս* աշխարհի պտղաբերեաց...: - 755. Զոր ընկալեալ զսերմն հրամանաց աստուծոյ, և բուսուցեալ ի մեզ՝ տամք *պտուղ* **լ, կ, և ճ**: - 757. Որ է՛ *պտուղ* առաքինութեան ըստ մարմնոյ և հոգւոյ և մտաց մերոց: - 757. Եւ որք ի ծերութեանն գան յուղղութիւն, որպէս զսէզ դալարին, և տան *պտուղ* զերեսնաւորն: - 757-758. Իններորդ, և որք նախ քան զօրէնս՝ զերեսնաւորն. և որք ընդ օրինօքն՝ զկաւորն. և որք ընդ շնորհօքս, զհարիւրաւորն տացեն *պտուղ:* - 758. Զի՞նչ է ծառն կենաց և *պտուղն* երկոտասան զոր աւէ տեսիլն: - 765. Ունելով տերև զգիտութիւն սուրբ գրոց. և զծաղիկ հաւատոյ՝ և *զպտուղ* բարեաց գործոց: - 765. Եւ տերև գիտութիւն հոգւոյն. և ծաղիկ ծագումն բանին. և *պտուղ* արդեանցն հօր: - 765. և Երկոտասան *պտուղ*, զի ո՛չ խափանէ զնոսա ձմեռն մեղաց: - 765. Դարձեալ՝ տերև զկանաչագեղ կեանս. և ծաղկեալ առաքինութեամբ. և *պտուղ* արդեանցն հանապազորդ: - 765. Նա՛խ՝ զի արմաւենին ի բարձր դնէ *զպտուղս*. և արդարքն յերկինս գանձեն զառաքինութիւն...: - 765. Երրորդ՝ արմաւենին ուշ բերէ *պտուղն*. և մայրն յետոյ պնդի. և փառք արդարոցն է՛ ի կատարած աշխարհի. և պնդիլն անմահութեամբ: - 765. Իններորդ՝ վասն *պտղոյն* յամրութեան. զի ասեն թէ ո՛չ կարէ պտղաբերել մինչ ի հարիւր ամն: - 766. Տասներորդ՝ վասն *պտղոյն* քաղցրութեան. ըստ այնմ «ամենայն խրատ ի ներկայս յիմարութիւն թուի. բայց ի հանդերձելումն եղիցի *պտուղ* խաղաղութեան»: - 766. Իսկ երկոտասան *պտուղ* ընտրելոցն ի հանդերձեալն այս ինչ է: - 766. Սոքա են **բժ**ան *պտուղք* փայտին կենաց: - 767. Ունելով տերև և ծաղիկ և *պտուղ*. այսինքն մաքրել, լուսաւորել, և կատարեալս առնել ըստ մեծին դիոնիսի: - 767. Եւ երկոտասան *պտուղ* ըստ **բժ**ան գնդիցն ասացեալ ի տնէ: - 767. Այլ և ծաղիկ՝ զպայծառ և զանուշահոտ վարս առաքինութեան. և *պտուղ*՝ արդիւնքն ըստ գործոց. յորմէ փրկութիւն եղև ամենայն աշխարհի և վայելչութիւն արքայութեանն երկնից: - 768. Դարձեալ **բժ**ան *պտուղք* են **բժ**ան առաքեալքն. որք յամս և յամիսս տնօրէնութեանն պտղաբերեցան: - 768. Տալով մեզ զանմահական *պտուղն* կենաց զտէր մեր յիսուս քրիստոս: - 768. Եւ երկոտասան *պտուղ* յերկոտասան ամիսս, զի ո՛չ երբէք նուազի անմահական *պտուղն* փայտին կենաց: - 768. Դարձեալ, ծառ կենաց և անմահական *պտուղ*՝ մարմին և արիւնն սուրբ. յորմէ ճաշակեալ հանապազ՝ անմահ կենացն վիճակէ զմեզ...: - 768. Դարձեալ, ծառ կենաց է աւետարանն սուրբ տնկեալ ի մէջ եկեղեցւոյ դրախտին. բերելով *պտուղ* կենաց զիմաստութիւնն երկնաւոր. որ կեանս տայ ճաշակողացն զնա. և միշտ շնորհս բժշկութեան և թողութեան մեղաց: - 768. Դարձեալ, ծառ կենա՛ց է աստուածածին կոյսն մարիամ բղխեալ յարմատոյն յեսսեայ. երկնուղէշ զարգացմամբ մշտասաղարթ կուսութեամբ ծաղկեալ և պայծառացեալ հոգւոյն սրբոյ եկաւորութեամբն. և պտղաբերեալ մեզ անմահ *պտուղ* զբանն մարմնացեալ. յորմէ վայելեալք երկնաւորք և երկրաւորք ի շնորհաց նորին զյաւիտենից կեանսն

ժառանգեցաք: - 768. ...որպէս ծաղկեալ գաւազանն ահարօնի նշանակէր զխրատ իմաստութեանն. որով զարդարեալ տայ *զպտուղ* լուսաւոր նիւթոյ կերակուր ոգւոյ: - 768. Դարձեալ՝ ծառ կենաց և տունկ երկնային՝ է՛ հաւատն կենդանարար. որոյ արմատն է հայր, և ստեղունք որդի. ծաղիկ և *պտուղ* հոգին սուրբ: - 768-769. Իսկ երկոտասան *պտուղն* իցէ երկոտասան աստիճանք հաւատոյն. որ ի սրտի և ի լեզուս առանց խափանման հանապազ դաւանի և արտաբերի: - 768. Այսօր վերստին հրամայեաց հաւատացելոց իւրոց ճաշակել ի *պտղոյն* կենաց. և մնալ յաւիտեան և անմահ կենդանութեամբ ի քրիստոս յիսուս ի տէր մեր: - 771. Զոր և ես զօրէն մշակաց բազմահաւաք *պտղոց*. կամ փունջ մի անուշահոտ բազմերանգ ծաղկանց. կամ չնչին թռչնոյ զխորիսխ մեղու. կամ որպէս զլոմայս այրւոյն տառապեալ գոյիւ: - 772. Որպէս ծառ մերկացեալ ի *պտղոյ*՝ այլ ո՛չ ըստ ունակութեանց. և նովին ունակութեամբ վերստին պտղաբերի ինքն: - 782-783

**ՊՐԱԿ +** Ծանի՛ր, զի վասն չարչարանաց ասացեալ է ի վերոյ ի **ժա** *պրակն* աստուածաբանին գրիգորի ընդ դէմ արիոսի: - 489. Եւ պատիժ սկզբնականին էր դժոխքն առաջին. և ներգործելոց՝ վերջինն. «որում հաստատեաց օր մի՝ յորում դատելո՛ց է զամենայն». որպէս ասէ պօղոս ի *պրակս* առաքելոցն: - 507

**ՊՐՈՊԱՏԻԿԷ** - իսկ Աննա ամուսնացաւ ի գալիլեայ ընդ յովակիմայ. և ծնաւ զաստուածածինն մարիամ ի *պրոպատիկէ* ի տունն յովակիմայ. և անտի տարեալ եղև ի տաճարն տեառն: - 460

**ՊՕՂ** - Որպէս եղիայի. *պօղի* և անտոնի. և մերոյ լուսաւորչին Գրիգորի: - 220

**ՊՕՂԻՏԻԱՆՈՍ** - Եւ պատրիարգունք էին անդ ...*Պօղիտիանոս* աղէքսանդրու: - 544

**ՊՕՂՈՍ (առաքյալ)** - Դարձեալ *պօղոս* հաւասարէ, «որ ի կերպարանս աստուծոյ էր, ոչինչ յափշտակութիւն համարեցաւ զլինիլն հաւասար աստուծոյ»: - 39. Եւ *պօղոս* ի կողոսացւոցն ասէ, զորդի «անդրանիկ ամէն արարածոց»: - 41. Նաև որք ի ճգունս նահատակին. որպէս *պօղոս*՝ անտօն՝ և այլքն: - 50. Եւ որոշօղ. «որոշեցէք *զպօղոս* և զբառնաբաս»: - 52. *Պօղոս* ասէ՝ «որ ներգործեաց զայս ի մեզ աստուած է. որև էօծ զմեզ և կնքեաց»: - 56. Խաղաղութիւն է և որդի ըստ *պօղոսի*, «նա՛ է խաղաղութիւն մեր որ արար զերկոսեանն մի. և արար խաղաղութիւն արեամբ խաչին իւր»: - 56. Լոյս է և հոգին սուրբ. ասէ *պօղոս*՝ «զհոգին մի՛ շիջուցանէք»: - 57. Տէր է և որդի ըստ *պօղոսի*, «մեզ մի՞ է տէր յիսուս քրիստոս»: - 57. Տէր է և հոգին սուրբ. «զի տէր հոգին է ասէ *պօղոս*»: - 57. Իսկ *պօղոս* յառաջին կորնթացւոցն ասէ, «ո՛չ գիտէք եթէ մարմինք ձեր տաճա՛ր են հոգւոյն սրբոյ»: - 57. Այլ ի փիլիպպեցւոցն ասէ *պօղոս*, «թլփատութիւն մեք իսկ եմք որք զհոգին աստուծոյ պաշտեմք»: - 57. Այլ զօրութիւնս այս վերաբերի ի հոգին սուրբ. որպէս ասէ *պօղոս* ի հռոմայեցւոցն, «հոգի այնորիկ որ յարոյց զյիսուս ի մեռելոց. և կենդանացուսցէ զմահկանացու մարմինս ձեր»:- 57. Այլ յառաջին կորնթացւոցն ասէ *պօղոս*՝ «հոգին է որ քննէ զամենայն և զխորս աստուծոյ»: - 57. Իսկ *պօղոս* զբանս զայս վերաբերէ ի հոգին սուրբ ի գործքն ասելով՝ «բարւո՛ք խօսեցաւ հոգին սուրբ ի ձեռն եսայեայ առ հարսն մեր ասելով, լըւիջիք և մի՛ իմասջիք»: - 58. Այլ *պօղոս* ի հռոմայեցւոցն ասէ, «հոգին սուրբ բարեխօս լինի ի հեծութիւնս անմռունչս»: - 59. Երկրորդ՝ և *պօղոս* ի հռոմայեցւոցն ասէ, «հոգի այնորիկ որ յարոյց զյիսուս»: - 64. Եւ *պօղոս* վասն որդւոյ ասէ, «որ կրէ զամենայն բանիւ զօրութեան իւրոյ»: - 71. Իսկ *պօղոս* զզաւակն զայն զքրիստոս ասէ ի հռոմայեցւոցն թէ՝ «քրիստոս է ի հարցն ըստ մարմնոյն աստուած օրհնեալ յաւիտեան»: - 73. Երեքտասաներորդ՝ *պօղոս* յեբրայեցւոցն ասէ, «ի մտանելն իմում յաշխարհս՝ մարմին հաստատեցեր ինձ»: - 73. Չորեքտասաներորդ՝ *պօղոս* ասէ ի փիլիպպեցւոցն «որ ի կերպարանս աստուծոյ էր՝ զկերպարանս ծառայի էառ. ի նմանութիւն մարդկան եղև». և այլն: - 73. Այլ զխաչեալն քրիստոս՝ տէր փառաց կոչէ *պօղոս* յառաջին կորնթացւոցն. «թէ էին ծանուցեալ ասէ ո՛չ արդեօք զտէրն փառաց ի խաչ հանէին»: - 74. Այլ խոստովանիմք զբանն աստուած՝ ոչ մասամբ, այլ լրութեամբ իւր մարմնացեալ և մարդացեալ ըստ *պօղոսի* թէ՝ «ի նմա՛ բնակէ ամենայն լրումն աստուածութեանն մարմնապէս»: - 76. Երանելին *պօղոս*՝ զխորհուրդն աստուածպաշտութեան յայտնի և մեծ ասէ. ըստ որում երևեցաւ բանն մարմնով. բնաւին ապա բաժանելն ի մարմնոյն ամբարշտութիւն է և իմացմամբ և բանիւ: - 93. Նախ՝ անօթն ընտրութեան առաքեալն *պօղոս* գրէ հաւատացելոցս. «քրիստոս աստուծոյ զօրութիւն. և աստուծոյ իմաստութիւն»: - 96. Չորեքտասաներորդ՝ ասէ *պօղոս* յեփեսացւոցն թէ՝ հայր կացոյց զքրիստոս յերկնաւորս ի վերայ ամենայն իշխանութեանց. և պետութեանց. և զօրութեանց. և ամենայն անուանելոց. ո՛չ միայն յաշխարհիս այլ և ի հանդերձելումն: - 97. Քսաներորդ՝ առաքեալն *պօղոս* և աւետարանիչն յօհաննէս վկայեն հանդերձելոյն թէ՝ «տեսանելոց եմք զնա որպէս և էն. և ճանաչեմք զնա

որպէս նայն ծանեաւ զիս»: - 99. Նոյնպէս և էութիւնն աստուծոյ ի յէքս բազմացեալ. և աստուած անունն ի բազում աստուածս. և մնացեալ նոյն մի աստուած ըստ *պօղոսի*, «մեզ մի է աստուած հայր յորմէ ամենայն»: - 106. Զի ո՛չ է որպէս պետրոս՝ և *պօղոս*՝ և յօհաննէս՝ երեք մարդ և մի բնութիւն. այլ մի է անհատութեամբ. ունելով երիս յատկութիւնս դիմաց: - 107. Երբեմն նախասահմանութիւն ըստ *պօղոսի*՝ «սահմանելոյ որդոյն աստուծոյ». և թէ՝ նախ սահմանեաց զմեզ աստուած ի կամս իւր իբր անփոփոխելի սահմանադրութիւն: - 112. Զորօրինակ՝ թափումն ի զգայութեանց թմրիլ՝ կամ ընդարմանալ ասի. այսպէս թափումն ի մտաց՝ զարմանալ ասի. ըստ *պօղոսի* որ յափշտակեցաւ. և ըստ դաւթի որ զարմացաւ. կամ ըստ ադամայ որ թմրեցաւ: - 127. *Պօղոս* առաքեալն ասէ, «Զի՞նչ է լայնութիւն՝ երկայնութիւն՝ խորութիւն՝ և բարձրութիւն աստուծոյ»: - 129. Այլ թէ ըստ կարգին իմասցիս՝ հետևիմք առաջասացեալ սրբոյն դիոնիսեայ. որպէս աւանդեցաւ նմա յառաքելոյն *պօղոսէ* յափշտակելոյն յերրորդ երկինս: - 135. Զի *պօղոս* յերրորդ թուղթն կորնթացւոց ասէ թէ, «անօրէն իշխանն աստուածանալ կամեցաւ»: - 147. Նախ՝ յորժամ սերօբէն ասէր սուրբ, և միւսն երկրորդէր զնոյն. և սա՛ լռեաց զփառաբանութիւն ընկերին երկրորդել աստուծոյ, թէ փառքն ի վերայ իւր անկանի և աստուածանայ որպէս ասաց *պօղոս:* - 147. Զի ասէ աստուածաբանն՝ «յաստուած մերձենայաք և աստուած լինէաք» այսմ որ քրիստոսի գալովս եղև, զոր և յեկեղեցւոյ ուսան հրեշտակք ըստ *պօղոսի:* - 147. Երրորդ՝ որպէս *պօղոսի* տուաւ խայթ մարմնոյն զի մի՛ զ՚ի վերուստ առեալ շնորհն և զօրութիւն՝ հպարտութեամբ լքանիցէ. ասէ՝ «շա՛տ է քեզ շնորհ իմ պօ՛ղ է, զի զօրութիւն իմ ի տկարութեան քում կատարի»: - 158. Ըստ որում ասէ *պօղոս*՝ «զոր ակն ո՛չ ետես և ունկն ո՛չ լուաւ» և այլն: - 161. Եւ *պօղոս* յափշտակեցաւ յայս երրորդ երկինս: - 183. Որպէս դանիէլ առիւծուցն յաղթեաց. և *պօղոս* իժին. և բազում ճգնաւորաց որք անապատս էին՝ գազանք և անասունք սպասաւորէին նոցա: - 220. Վասն է՞ր *պօղոս* զդրախտն երրորդ երկին կոչէ: - 221. Յաղագս որոյ երրորդ երկին կոչէ *պօղոս* զդրախտն: - 221. Եւ տեսակիւ, որպէս պետրոս և *պօղոս:* - 236. Իսկ իմաստութիւն միայն քրիստոս ասի ըստ *պօղոսի*. «քրիստոս՝ աստուծոյ զօրութիւն և աստուծոյ իմաստութիւն»: - 269. «Եւ անդրանիկն մեր և առաջին քահանայապետն եմուտ ի ներքին կողմն վարագուրին» ասէ *պօղոս:* - 301. Եւ *պօղոս* վասն տեառն ասէ, «հնազանդ եղև հօր՝ մահու չափ և մահու խաչի»: - 305. Զերկրորդն մխիթարեցաւ առաքելաւն *պօղոսիւ* որ էր որդի նմին: - 312. Զորս *պօղոս*՝ յընտանի և ի վայրենի ձիթենիս առակէ՛ ի թուղթն հռօմց: - 347. Դա՛ն է և *Պօղոս:* - 348. Այն է որ յետ տարոյն երևեցաւ *պօղոսի:* - 369. Նա՛խ՝ զի յորժամ ճշմարիտ սրբութիւնն գայցէ, հաւանեսցին որ է՛ արիւնն քրիստոսի. որպէս ասէ *պօղոս*՝ «եթէ արիւն ցլուցն և նոխազացն և մոխիր երնջոցն սրբէ՛ր զպղծեալսն քանի՞ առաւել արիւնն յիսուսի»: - 383. Եւ յայտնի նշան մոլորութեան նոցա ա՛յս է, զի այնպիսեացն կատարօղք վատթարք են գործովք և մոլի. և առ դևս տանին զմարդիկք բռնութեամբ. ըստ այնմ որ ասէ *պօղոս*, «մինչ հեթանոսքն էիք՝ առ կուռս անմռունչս ո՞րպէս երթայիք և գայիք»: - 389. Հինգերորդ այս է, որպէս ասէ *պօղոս* «թագաւորեաց մահ յադամայ մինչև ցմովսէս». զի որ ընդ ադամայ մարտեաւ և յաղթեաց. աստ նկուն եղեալ յաղթահարեցաւ: - 410. Եւ այսմ վկայէ՛ *պօղոս* ի գործքն եթէ՝ յետոյ յեսուայ իշխեցին դատաւորք մինչ ի սաւուղ ամս չորեք հարիւր և յիսուն՝ այսպէս: - 420. Եւ չորեքտասան թուղթք *պօղոսի*. որ լինի **իդ**: - 450. Որպէս գրէ *պօղոս* գաղատացւոց «ո՛չ արդարանայ մարդ ի գործոց օրինաց. այլ ի հաւատոցն քրիստոսի»: - 467. Վեցերորդ ծնունդ՝ շնորհօք ի սիրտս հաւատացելոց ըստ *պօղոսի*, «եթէ փորձ ինչ ունիք զքրիստոսի, որ ինև ընդ ձեզ խօսի»: - 471. Երկրորդ մկրտութիւն ջրովն և ամպովն առ մովսէսիւ ըստ *պօղոսի* «հարքն մեր յամպն և ի ծովն մկրտեցան». զի օրինա՛կ էր ամպն հոգւոյ, և ծովն ջրոյ: - 488. Եւ պատիժ սկզբնականին էր դժոխքն առաջին. և ներգործելոց՝ վերջինն. «որում հաստատեաց օր մի՝ յորում դատել՛ոց է զամենայն». որպէս ասէ *պօղոս* ի պրակս առաքելոցն: - 507. Որպէս ասէ *պօղոս* «սրտիւ հաւատալ յարդարութիւն» վասն առաջնոյն. «և բերանով խոստովանիլ զփրկութիւն» վասն երկրորդին: - 508. Ասեմք թէ՝ *պօղոս* մարմին ասէ և դու ջուր ասես. «ա՛յլ մարմին ձկանց և ա՛յլ թռչնոց և ա՛յլ գազանաց»: - 511. Զայն խնդրէ *պօղոս* յաշակերտացն. «զի ինձ տացի բան ի բանալ բերանոյ»: - 523. Այլ և հանդերձելոյն զի է շաբաթէ ի յարութենէն քրիստոսի. զորմէ ասէ *պողոս* «զատիկ մեր զենաւ քրիստոս»: - 524. Եւ *պօղոս* ասէ զայս, առընթեր դնելով առաքելոց և մարգարէից զվարդապետս: - 528. Չորրորդ՝ եկեղեցի է անդրանկացն վերինն սիոնի որ է հօգիք սրբոցն ժողովեալ. զոր *պողոս* եկեղեցի կոչէ զորդիս արդարոց կատարելոցն: - 534. Առաքելոյն պետրոսի հնազա՛նդ եմք որպէս քրիստոսի. նաև *պօղոսի* և ամենայն առաքելոցն և աշակերտացն ամենեցուն և հետևողաց նորա և աթոռոց նոցա: - 547. Իններորդ՝ զի թէ հաւատն և յոյսն և սէրն՝ աստուածային առաքինութիւնք են և լաւագոյն քան զամենայն առաքինութիւնս. ըստ որում ասէ

*պօղոս* «սոքա երեքեան և մեծ քան զսոսա սէրն է»: - 557. Զհաւատն սահմանէ՛ *պօղոս* յեբրայեցւոցն, «հաւատն է յուսացելոց իրացն հաստատութիւն. և յանդիմանութիւն որոց ոչն երևին»: - 571. Եւ այլ սահմանք զոր դնեն վարդապետք՝ պարունակեալ են ի սահմանն *պօղոսի*. զի վարդապետաց սահմանն մեկնութիւն և յայտնութիւն է սահմանին *պօղոսի:* - 571-572. Երկրորդ, զի յարքայութիւնն յերկնից՝ հետևի պայծառ տեսութիւնն հաւատոյն. ըստ *պօղոսի*, «ա՛յժմ տեսանեմք օրինակաւ, այլ յայնժամ դէմ յանդիմանս»: - 572. Իսկ յոյսն որ էր ի սուրբն ստեփաննոս յորժամ ետես զերկինս բացեալ, և ի *պօղոս* յորժամ ասաց «գիտեմ յո՞ հաւատացեալն եմ, և յոյսն որ էր ի յադամ նախքան զմեղանչելն էին հանդերձ ստուգութեամբ տեսութեանն»: - 574. Երկրորդ ի խոտորումն երկրաւորաց. որպէս ասէ *պօղոս* «մովսէս ուրացաւ կոչիլ որդի դստերն փարաւոնի. լաւ համարեցաւ զչարչարիլն», և այլն: - 580-581. Յայս միտս հայելով *պօղոս* ասէ՝ «Պատուակա՛ն է ամուսնութիւն և սուրբ անկողինք» ըստ օրինացն աստուծոյ: - 609. Եւ կանոնն սահման կոչի. որպէս թուղթն *պօղոսի:* - 631. Իսկ առաքեալն *պօղոս* ի դէմս հոգւոյն ասէ ի գործքն. «բարւոք խօսեցաւ հոգին սուրբ ի ձեռն եսայեայ մարգարէի»: - 632-633. Զի «որ ծածկեալ գլխով աղօթէ՝ յամօթ առնէ զգլուխն քրիստոս» ասէ *պօղոս* կորնթացւոցն: - 635. Նոյնպէս և *պօղոս* հրէից և հեթանոսաց վարդապետ: - 644. Չորրորդ նախախնամութեամբ. զի մի՛ հպարտասցին. որպէս խէթն առաքելոյն *պօղոսի:* - 665. ...ըստ *պօղոսի*՝ «արարածք ազատին ի ծառայութենէ ապականութեան»: - 678. Եւ այն է եկեղեցիք անդրանկաց կատարելոց յերկինս որպէս ասէ *պօղոս:* - 688. Եւ այն է քաղաք աստուծոյ և վերին երուսաղէմ՝ և եկեղեցիք արդարոց ըստ *պօղոսի:* - 688. Մետասաներորդ, նոյն *պօղոս* ասէ ի գործս «հաստատեաց օր մի յորում դատելոց է զամենայն»: - 692. Դարձեալ ասեն զբանն *պօղոսի*, «ցանկամ ելանել ի մարմնոյս և մտանել առ աստուած»: - 695. Դարձեալ ասեն, «յոյս տեսանելի չէ յոյս» ըստ *պօղոսի:* - 695. Եւ *պօղոս*՝ մարդ անօրէն և ապստամբ և որդի կորստեան ասէ: - 707. Եւ ի նորս առաքեալն *պօղոս* բազում ուրէք գրէ զյարութիւնն...: -715. ...որպէս ասէ *պօղոս* ի կորնթացւոցն «գիտեմք եթէ քրիստոս յարուցեալ է ի մեռելոց. այսուհետև ո՛չ մեռանի և մահ նմա ոչ ևս տիրէ»: - 716. Ապա զի՞նչ որ ասէ *պօղոս*, «մեք որ կենդանւոյն մնացեալ իցեմք՝ ո՛չ ժամանեմք ննջեցելոցն»: - 717. Առաքեալն *պօղոս* ո՛չ զայն ասէ թէ յապաղելով լինի յարութիւնն, այլ զկարգն ցուցանէ ոչ ժամանել ննջեցելոցն: - 717. ...որպէս ասէ *պօղոս* յեբրայեցիսն, «աստուծոյ վասն մեր լաւագոյն համարեալ զի մի՛ առանց մեր կատարեսցին»: - 717. Եւ բերեն վկայ զբանն *պօղոսի* որ ասէ, «սերմանի մարմին շնչաւոր, և յառնէ մարմին հոգևոր»: - 720. Այլ բանն *պօղոսի* ո՛չ է այսպէս թէ մարմինն էութեամբ հոգի լինի. այլ նման հոգւոյ. զի անմահ լինի որպէս հոգի և անկարօտ կերակրոյ: - 720. ...որպէս վասն յարութեանն ասէ *պօղոս* ի կորնթացւոցն, «ա՛յլ մարմինք երկնաւորաց և ա՛յլ մարմինք երկրաւորաց»: - 720. Դարձեալ գիտելի է, զի *պօղոս* ի կորնթացոցն զհատ սերման՝ օրինակ տայ յարութեան մարդկան և ասէ. «ա՛նմիտ՝ դու զոր սերմանես ո՛չ կենդանանայ թէ ոչ մեռանի»: - 720. Որպէս ասէ *պօղոս* ի նոյն գլուխն եթէ՝ «պա՛րտ է ապականացուիս այսմիկ զգենուլ զանապականութիւն, և մահկանացուիս զանմահութիւն»: - 721. ...որպէս ասէ *պօղոս* «սերմանի ապականութեամբ և յառնէ առանց ապականութեան»: - 722. ...որպէս ասէ *պօղոս*՝ «սերմանի տկարութեամբ և յառնէ զօրութեամբ»: - 722. ...որպէս ասէ *պօղոս*՝ «սերմանի մարմին շնչաւոր և յառնէ մարմին հոգևոր»: - 722. Ասեմք թէ ոչ. որպէս ասէ *պօղոս* «ամենեքեան ննջեսցուք, այլ ո՛չ ամենեքեան նորոգեսցուք»: - 723. Եւ *պօղոս* ասէ՝ «ամենեցուն յանդիման լինիլ կայ առաջի աստուծոյ, զի ընկալցի իւրաքանչիւր ոք իւրով մարմնովն զոր ինչ գործեաց. եթէ բարի, և եթէ չար»: - 724. Ա՛յս է զոր *պօղոս* մեկնէ, թէ «ամենայն լեզու խոստովան լիցի տէր զյիսուս»: - 730. ...որպէս ասէ *պօղոս*, «ինքն տէր հրամանաւ ի ձայն հրեշտակապետի և ի փող աստուծոյ իջանէ յերկնից»: - 730. Դիոնէսիոս զհաւատն տիպ ասէ. և Աղէքսանդրոս կնիք. և *Պօղոս* աներևոյթ իրաց երես. և Յօհան ոսկէբերանն՝ լոյս անյայտ իրաց: - 769. Զայս *պօղոս* վահան կոչէ: - 770. Երկրորդ, զի դժոխքն այն պատիժ բնութեանս էր և ո՛չ առանձին գործոց. զի հաստատեաց օր մի յորում դատելո՛ց է զամենայն ըստ *պօղոսի:* - 776. Իսկ մեծն ներսէս ասէ, պակասութիւնն այն է, որ կիրք չարչարանացն քրիստոսի թուով և տեսակաւ պակա՛ս էր յառաքեալն *պօղոս*. այսինքն խաչն, բևեռքն, և այլն. և զայն էլից քարոզութեամբն իւր ի մարմինս եկեղեցւոյ: - 781

**ՊՕՂՈՍ ԻՇԽԱՆ** - Եւ յօհաննէս զսա օդո՛յ դասէ. վասն այն նոյն անուամբն՝ *պօղոս իշխան* օդոյս կոչէ. կամ զի յօդս են բնակեալ և իշխեն մարդկան: - 150

**ՊՕՂՔԵՐ** - Այլ զչար և զաստուածուրաց ժողովն քաղկեդոնի որ ի ձեռն մարկիանոսի և անիծելոյն *պօղքերի*՝ ո՛չ ընդունիմք. և զընդունօղսն նզովեմք: - 547

# Ջ

**ՋԱԽԵՄ, ՋԱՂԽԵՄ +** Երեսունգ, սամփսոն զսրունս և զերանս թշնամեաց՝ և յետոյ զգլուխն *ջախէր:* - 424

**ՋԱԽՋԱԽԵՄ +** Զայսմ վիշապէ՛ ասէ՝ զգլուխ վիշապին փրկիչն *ջախջախեաց* ի յորդանան. այն է որ զամենայն ջուրս ծովուն յակնակապիճս իւր ընդունէր: - 151. Իմաստութեան օձին նմանիլ. և թէ զգլուխն *ջախջախեսցի*. և թէ թոյնքն ի գլուխն է: - 155. Վասն է՞ր զօձին գլուխն *ջախջախեն:* - 218. Հինգերորդ՝ մասն. որ է՛ գլխոյն հատումն ուր ամենայն զգայութիւնքն են. և թէ այլ ինչ մասն հատցի՝ կամ գլուխն *ջախջախեսցի*՝ ո՛չ է ուտելի: - 365. Եւ թէ գլուխն *ջախջախի*, ո՛չ է ուտելի. զի ո՛չ հատաւ պարանոցն. ի հեղձուցելո՛ց կարգի է: - 366. Եւ զօրութեամբ խաչելոյն գլուխ չարին *ջախջախի*. և սրբին անդամք մեր: - 424. Զգլուխ վիշապին *ջախջախեաց:* - 454. Զգլուխն ի յորդանան *ջախջախեաց*. և զտուտն ի գերեզմանն և ի դժոխս: - 488-489. Եւ այժմ մեք ջրով մկրտութեանն *ջախջախեմք* զգլուխն. այսինքն զսկզբնական մեղքն: - 489. Զի զգլուխ վիշապին ի ջուրսն յորդանանու *ջախջախեաց* ըստ յոքայ որ է մեղքն...: - 705. Հինգերորդ, որպէս տուտն *ջախջախեալ* վիշապին շարժի: - 706

**ՋԱՀ +** Եւ ի վերայ տեառն *ջահիւք* և սուսերօք եկին ըմբռնել ըստ աւետարանին: - 306. Եւ գունդն *ջահ*՝ տէր մեր, որ լուսաւորէ՛ զհաւատացեալս իւր: - 347. Սոքա ամենայնքն զբերանս մտաց բացեալ ունին առ մինն և ճշմարիտ *ջահն* քրիստոս: - 347. Երեքտասաներորդն ի դանա որդի մանովէի Սամփսոն. որ կալաւ յ աղուէս, և կապեաց ի նոսա *ջահս*. և այրեաց զանդաստանս այլազգեացն: - 420. Եւ *ջահք* վառեալ. ըստ որում ասէր «ես լոյս աշխարհի եկի»: - 431. Այսմ պատասխանէ պայծառ *ջահն* եկեղեցւոյ սուրբն յոհան ոսկեբերանն...: - 467. Առաջին միաւորութիւն ստոյգ և ճշմարիտ՝ հոմանիւթ մասնաւորաբար որոշեցելոց. որոց ոչ ինչ տարանիւթ ընդ մէջ երևի. որպէս երկուց *ջահից* լուցելոց միաւորութիւն լուսոյն: - 476

**ՋԱՀԱՎԱՌ +** Չորրորդ կարգ է *Ջահավառքն*. այսինքն դպրութիւն առնել և մոմեղէնս վառել ի սեղանն: - 606

**ՋԱՀԱՒՈՐԵՄ +** Վեցերորդ՝ զի աստեղօ՛ք է *ջահաւորեալ*: - 184

**ՋԱՀԸՆԿԱԼ +** Եւ որք զաշտանակն՝ *ջահընկա՛լք* են: - 379. Չորրորդն՝ որք կիսակատար դարձեալք են ի մեղաց. և զսոսա լուսաւորէ *ջահընկալն*: - 608. Երրորդն ասեն եթէ՝ **բ** ազգն զեթսոնի և **բ** գունդն մերարեայ՝ զչորս փոքրիկ աստիճանս ունէին ի խորանն. զպահպանութիւնն մինչ ի *ջահընկալն* որ զաշտանակն բառնային. և որդիքն կահաթու էին բարձրագոյնք: - 609. Չորրորդ ասեն եթէ՝ **դ** աստիճանք ըստ չորից տարերացդ կարգաւորին: Դռնապանն երկրի: Ընթերցօղն ջրոյ: Երդմնեցօղն օդոյ և *Ջահընկալն* հրոյ: - 609

**ՋԱՀԸՆԿԱԼՈՒԹԻՒՆ +** Վասն է՞ր մինչ ի չորրորդ կարգն փոքրիկ *ջահընկալութեանն* կարեն ամուսնանալ, և յայնմ հետէ ոչ: - 609

**ՋԱՅԼԱՄՆ +** *Ջայլամն* որ է՛ ըշտռտուրմուղն, կեղծաւորքն են և անպիտանքն գործոյ. և այլքն նմանապէս: - 365

**ՋԱՆ +** Նաև անբարիշտ կամք նորա դարձել է յատելութիւն և ի նախանձ մարդոյն. զի ամենայն *ջանիւ* նկրտի ի կործանումն նորա բազմադիմի փորձութեամբ: - 146. Երրորդ՝ ստեղծան նոքա՝ զի ի նոցա՛ *ջանից* ընթերցմանց և բարեաց գործոց օրինակ առցուք. որպէս են մրջմունք և սարդք, և այլք այսպիսիք: - 217. Եօթներորդ՝ վասն բարձրութեանն ի *ջանուց* մշակաց. զի որ քան առաւել բրի ի ներքոյ երկիրն և քարինս դնի, այն քան առաւել բարձրանայ: - 766. Եւ ապա ի սէր և անձնուկ ժտելոյ նորին, ապաստանեալ ի նոյն որ զօրացոյց զտկարս, ծեռն ի գործ արկեալ աւարտեցաւ բազում միջոցաւ. և փախստեամբ ի տեղիս. և մեծ *ջանիւ* փութացեալ: - 772

**ՋԱՆԱՄ +** Նոյնպէս և առ մեզ՝ որք մրցին և *ջանան* ընդ դէմ բանսարկուին...: - 152. Հինգերորդ՝ զի մարդն գլուխ է ամենայն կենդանեաց, զնա սպանանել *ջանայ:* - 218. Եւ զի զկենդանին սպանանել *ջանայ*, ինքն յամէն կենդանւոյ սպանանի: - 219. Իսկ դիւականն ընդդէմ այսմ՝ վասն մոլորութեան զանազան երևմունս ցուցանէ աղտեղութեան. և կամ զբարին խափանել *ջանայ*...: - 268. Երկրորդ՝ զիոգին մովսէսի ո՛չ կարէր յափշտակել սատանայ, փոխանակ հոգւոյն զմարմինն *ջանայր* յափշտակել. և վիճէր ընդ հրեշտակին թէ իմ է...: - 410. Երեքտասաներորդ՝ *ջանայ* հաճոյանալ նմա: - 575. Զի որ խոկայ առանց հաւատոյ՝ այնպէս է իբր թէ *ջանայ* ոք տեսանել զարեգակն առանց աչաց: - 702. Զսիրտ իւր հպարտացուցէ որպէս ասէ դանիէլ. «յարիցէ ընդ դէմ իշխանաց իշխանին». այսինքն ընդ դէմ աստուծոյ. և *ջանայ* փոխել զօրէնս և զկրօնս: - 707

**ՋԱՏԱԳՈՎ +** Երրորդ՝ կամքն կանգնեալ է մոլար ընթացից *ջատագով:* - 251. Վրէժխնդրութիւն է *ջատագով* լինիլ. որով բռնութիւն և անիրաւութիւն և ամենայն վնասակար ի բաց մերժի: - 579

**ՋԱՐԴԵՄ +** Ջտարւոյն ոստն *ջարդեն* ի վերայ բնոյն. և որ աճէ՛ զայն քաղեն և հիւսեն. Պտղակորոյս որպէս ծիթենի: - 638

**ՋԵՌՈՒՑԱՆԵՄ +** Ապա յա՛յտ է զանազանութիւն սոցա, զի ոմն զօրութիւն հարկաւոր է և ներգործութեամբ և անփոփոխ և միշտ. որպէս հրոյ *ջեռուցանել*, և արեգական լուսաւորել: - 168. Իսկ մշտնջենաւոր էակն միայն մին ունի զօրութիւն որ է առինքն ներգործութեամբ. որպէս հրոյ *ջեռուցանելն*. և արեգական լոյսն. և հրեշտակին անապականութիւնն: - 173

**ՋԵՌՈՒՑԻՉ +** Եւ սերոբէն որ է՛ *ջեռուցիչ*՝ ի դէմս հոգւոյն սրբոյ. զի նա՛ է հուր սիրոյ զոր էարկ տէր մեր յերկիր: - 135

**ՋԵՐՄ +** Ջորօրինակ՝ իրն ի ներկայս որ է նիւթ ներընդունակ՝ ունի կրկին զօրութիւն. որպէս հանդերձն կարէ՛ պատառիլ, և կարէ՛ ո՛չ պատառիլ. և ջուրն կարէ *ջերմն* գոլ, և կարէ՛ ո՛չ գոլ. և մինն ի նոցանէ՛ լինի ներգործութեամբ որն և հանդիպի: - 9. Ներհական. որպէս *ջերմ* և ցուրտ: - 21. Եւ ո՛չ որպէս ներհականք. որպէս *ջերմ* և ցուրտ. սպիտակ և սեաւ. զի սոքա որակութիւնք են. իսկ բարին էութիւն է, և չարն ո՛չ է էութիւն: - 21. Եւ թէ ոք ասիցէ, *ջերմն* ապականէ՛ զցուրտ՝ և ինքն մնայ. սոյնպէս և չարն: - 22. Ասեմք առ այս եթէ՝ *ջերմն* ապականէ զցուրտ՝ և ինքն մնայ ի յենթակայն. զի էութիւն է և որակ: - 22. Նոյնպէս իմանալի արեգակն քրիստոս ի հայրական ծոցոյ անհա՛ս է բնութեամբ՝ և ի սրբոյ կուսէն իբր ի յարևելից ծագեալ. և *ջերմ* սիրով ի մարդկային ազգս որպէս յարևմուտս խոնարհեալ. և զսառուցեալ բնութիւնս պատեալ. և ի գերեզմանէն ի բարձունս դարձեալ յարևելս առ հայր ամբարձեալ: - 126. Վասն *ջերմ* ջուրց. և աղբերաց ի ծմերայնի. և զի ի լերինս բղխեն: - 155. Իսկ ներհական հակակայքն և այլքն կարեն փոփոխիլ ի միմեանս. որպէս չարն և բարին. *ջերմն* և ցուրտն: - 165. Եւ ո՛չ միայն այս. այլ և **դ** բնութիւն է չորից տարերաց մարմնոյն. *ջերմ* և ցուրտ. չոր և գէճ: - 176. Օդ *ջերմ* է և գէճ: - 181. Յուրն չո՛ր է և *ջերմ*: - 181. Եւ այսպէս *ջերմ* և ցուրտ, չոր և գէճ, թշնամիք են անհաշտելիք. և լինին միաւորեալք դարձեալ ծայրիւքն և մնան սիրելիք անքակտելիք այսպէս: - 181. Եօթներորդ՝ զի *ջերմ* է զօրութեամբ: - 186. Զի Խոյն և Առիւծն և Աղեղնաւորն, ունին զբնութիւն հրոյ *ջերմ* և չոր: - 189. Իսկ Եկաւորն և Կշիռն և Ջրհոսն, ունին զբնութիւն օդոյ *ջերմ* և գէջ: - 189. Երկրորդ՝ Լուսնթագն. զոր մուշթարի կոչեն. *ջե՛րմ* է և գէճ. մին ամ յամէ՛ ի կենդանակերպն. և ի **ժբ** ամն պատէ՛ զամենայն: - 189. Երրորդ՝ Յրա՛տն. զոր մարեխ անւանեն. *ջերմ* է և չոր. **խ** օր յամէ՛ ի կենդանակերպն. և ի **ժզ** ամիսն պատէ՛ զամենայն: - 189. Չորրորդ Արեգակն. զոր շամս կոչեն *ջե՛րմ* է և լուսաւոր. **լ** օր և **ժ** ժամ և կէս յամէ՛ ի կենդանակերպն. և ի բոլոր տարին վճարէ՛: - 189. Յինգերորդ Լուսաբերն. որ է՛ արուսեակն. զոր կոչեն զոհրա. *ջե՛րմ* է և խոնաւ. **յխը** օրն կատարէ՛, զընթացսն. և այլք ասեն թէ ի **զ** ամիսն: - 189. Եւ զի *ջերմ* է: - 196. Եւ զի *ջերմ* է և գէջ ժամանակաւ: - 197. Եւ զի *ջերմ* և ցուրտն բարեխառնին: - 197. Եւ զի տենտ և *ջերմ* յաւելուն: - 197. Նա՛խ՝ զի ամառն կարի՛ *ջերմ* է և չոր՝ չորացուցանէ՛. և ձմեռն խիստ ցուրտ՝ սառուցանէ՛ զսերմն: - 197. Իսկ գարուն և աշուն է՛ միջակ և *ջերմ* և գէջ՝ բուսուցանէ: - 197. Զի չորութիւն և ցրտութիւն հակառա՛կ է ծննդեան. և *ջերմ* և գէջն օգնական: - 197. Դարձեալ քան զժամանակն ոչ ինչ այլայլի. քանզի մերթ ցուրտ է և մերթ *ջերմն*. ամպ և պարզ: - 199. Եւ զի *ջերմ* է: Յաղորդական: Ներգործական: - 202. Զի հուրն կրկին որակ ունի. *ջերմ* և չոր: - 202. Եւ դարձեալ՝ զի ի գոլորշեաց է բաղկացեալ՝ արտաքին մասն հով է և գէջ, և ներքինն *ջերմ* և չոր. վասն որոյ զարտաքինսն պահէ՛, և զներքինսն ապականէ: - 204. Իսկ Կարկուտն ծնանի ի յամենևիմբ *ջերմ* ամպոյ, զօրութեամբ արեգականն ի վեր քարշեալ: - 205. Եւ են *ջերմ*, հալե՛ն զսառսն: - 205. Վեշտասաներորդ՝ ներընդունակ է *ջերմոյ* և ցրտոյ: - 207. Վասն է՞ր աղբերք ի ձմերայնի *ջերմն* բղխեն, և յամարայնի ցուրտ: - 208. Վասն որոյ բղխեն *ջերմ* և ցուրտ: - 209. Զի արեգակն արու է զի *ջերմ* է. և լուսինն էգ՝ զի հով և գէջ է: - 213. Վեցերորդ՝ ըստ այլոց. զի բոլոր թանձր մարմինն է՛ հողոյ. և ամենայն հիւթք և մաղձք է՛ ջրոյ. թոքն է՛ օդոյն. և սիրտն է՛ հրոյն *ջերմ* գոլով: - 215. Եւ հուրն է ի սիրտն. զի սիրտն *ջե՛րմ* է և նման է հրոյ. լայն է տակն և բարակ ծայրքն: - 232. Վեցերորդն երիկամունքն որ է տուն սերման. *ջերմ* և գէջ. և տանուտէր ունի զզօհրայն. որ է լուսաբերն: - 241. Իսկ սիրտն զի առաւել *ջերմ* է՝ հալէ՛ զճարպն: - 241. Եւ է՛ բնութիւն ոսկերաց ցուրտ և չոր. զի խոնաւն և լոյծն ի ցամաք և ի ցուրտ մածնու և լինի ոսկր. որպէս *ջերմն* և խոնաւն լինի միս: - 244. Զի արիւնն կերակրէ՛. և ջիլն զգայութիւն տայ. և շնչերակն *զջերմ* կենդանութիւնն բոլոր մարմնոյն: - 244. Յնդկացւոցն մորուս ո՛չ բուսանի վասն սաստիկ *ջերմոյն:* - 245. Այլ և լինի յաւելի ի

հրոյն ներգործութեանց սեաւ գոյն. որպէս հնդկայինն ի *ջերմոյ* արևուն լինի սեաւ գունով: - 245. Թէ ժամանակն ցուրտ է կամ *ջերմ*. և երկիրն գէջ կամ չոր. և սերմն հոտեալ կամ աղանձեալ. և սերմանօղ ո՛չ լինի կամ ոչ սերմանէ. վասն որոյ ո՛չ բուսանի: - 256. Այլ արդ՝ գիճութիւն ջրոյ *գջերմ* և զչորն վնասէ՛, և ջերմութիւն հրոյ զգէջն, և լինի անպտուղ: - 256. Դարձեալ՝ *ջերմ* և գէջ չափաւորեալ է ի նիւթն այն. և որ արտաքուստ մտանէ՝ անչափութեամբն վնասեսցէ՛ զսերմնական զօրութիւնն ընդ նիւթոյն: - 256. Ոմանք ըստ ազգի և տեսակի իւրեանց հով և *ջերմ* չոր և գէջ գոլով, փութով կամ յապաղելով բուսանին: - 261. Ոմանց ժամանակն ցուրտ և *ջերմ:* - 261. Յեղանակս գարնան, և յառաւօտուն մինչև յերեք ժամս, և հիւթոյ արեան, և մանկութեան հասակն ի տղայութենէ ծննդեան և աճման՝ ունին զնմանութիւն օդոյ *ջերմ* և գէջ գոլով: - 266. Իսկ ամառն, և մինչ ի **զ** ժամս աւուրն, և խարտեաշ մաղձն, և երիտասարդն՝ ըստ նմանութեան տարրական հրոյ *ջերմ* և չոր գոլով. վասն որոյ առաւել բարկացօղ և ցանկասէր լինի: - 266. Երրորդ՝ ըստ հիւթին յաւելլածոյ՝ և պակասութեան մաղձիցն՝ ի ներքուստ կամ յարտաքուստ, *ջերմ* և ցուրտ և այլն, զնորին նմանն և զկերպարանն առնու առ ինքն: - 268. Իններորդ՝ արիւնն և շունչն է սկիզբն գոյացութեան մերոյ. զի արիւնն փոխի ի սաղմն, և *ջերմ* օդով խառնի ի հով և ի գէճն, և լինի աճումն և սնունդ մարմնոյ: - 295. Ուր եկեալ աբրահամ, և նա՛ ել ընդ առաջ նորա *ջերմ* բաղարջ հացով և գինեաւ օրինակ տէրունեան խորհրդոյն: - 300. Եւ թէպէտ ելաց՝ ո՛չ եգիտ դարձեալ. զի ո՛չ էր բոլոր սրտիւ և *ջերմ* սիրով: - 309. Նոյնպէս և սուրբքն *ջերմ* սիրովն աստուծոյ ժողովին ի կայանս հոգւոցն ի տեղւոջ լուսոյ և հանգստեան: - 315. Դարձեալ՝ զի անապակա՛ն է հաւատն եկեղեցւոյ, և հաստատ յոյսն, և *ջերմ* սէրն առ քրիստոս: - 347. Զոպայն *ջերմ*, յոյսն: - 368. Երկրորդ՝ գիրութիւնն հալի ի *ջերմ* ցանկութենէն և հոսի: - 368. Զի ասեմք՝ տե՛ս զհամն և զհոտն. տե՛ս զբանդ. տե՛ս թէ *ջե՞րմ* է կամ ծանր: - 407. Իսկ հակառակաւն՝ որպէս *ջերմ* զցուրտ, և գէճ զչորն արտաքսէ: - 497. բայց մագդաղենացին *ջե՛րմ* էր ի սէրն քրիստոսի՝ եկաց զի ա՛յլ ինչ լուիցէ կամ տեսցէ: - 515. Դարձեալ՝ որ ոք մերձ է ի ճշմարտութիւնն՝ նա՛ առաւե՛լ է ճշմարիտ. որպէս որք մերձ են լուսոյն և ջերմութեան՝ առաւել լոյս են և *ջերմ:* - 550. Երկրորդ՝ կրկին ջուրն, *ջերմ* և ցուրտ: - 553. Ի հրոյ ագահութիւն և բարկութիւն. զի պարունակօ՛ղ է և *ջերմ:* - 560. Դարձեալ՝ կատարեալ սէր է, յորժամ է ունակութեամբ մեծ. ներքին շարժմամբն ուղիղ. արտաքին գործքն ժիր. արմատովն հաստատեալ. *ջերմ* եռանդութեամբն խոհեմ. և քաղցրութեամբն մխիթարական: - 576. Սրբութիւն սրտին է որով պայծառանայ և մաքրի սիրտն առ ի տեսանել զաստուած. և առ ի սիրել յոյժ *ջերմ* եռանդապէս: - 585. Որք ասեն՝ պա՛րտ է յամենայն աւուր *ջերմ* հաց հանել ի սեղանն և անապական բաժակ. զի անապական արեամբն քրիստոսի փրկեցաք: - 595. Չորրորդ՝ զի *ջե՛րմ* է արտասուքն և զսառուցումն հալէ և ջերմացուցանէ զսէրն: - 619. Հինգերորդ, յաղագս *ջերմ* սիրոյն առ աստուած՝ ո՛չ բաւական համարեցաւ միայն լեզուաւ երգել աստուծոյ. - 641. Դարձեալ՝ սիրտք մեր բուրվա՛ռ է. և աղօթքն խունկ. և հուրն *ջերմ* սէրն նիւթ բուրվառին: - 645. Ըստ մարմնոյն *ջերմ* և սպիտակ: - 664. Հիւանդութիւն է անչափակցութիւն տարերց մարմնոյ. որ առաւելու և նուազէ՛. *ջերմ* և ցուրտ, խոնաւ և ցամաք: - 665. ...զի արտասուքն *ջերմ* ջուր է և սրբարար - 676. ...ըստ սողոմոնի «փայտն յոր անկցի ի նոյն կացցէ. թէ ի հարաւ» որ է՛ *ջերմ* սէրն աստուծոյ և լոյս. «և թէ ի հիւսիս». որ է՛ ցուրտ՝ ատելութիւն աստուծոյ՝ և խաւար: - 704. *Զջերմ* սէրն հուրն ցուցանէ. թէ առ աստուած և թէ ի մարմինն: - 714. Հրեղէն ծով ասացեալ են ի հարաւ. վասն այն *ջերմ* է ասեն մասն այն: - 731. Նա՛խ՝ զի խոնարհ և ցա՛ծ է կողմն հարաւոյ. և լուսաւորքն ա՛նդ շրջին. և աջ կողմ է աշխարհի. վասն այն *ջերմ* է: - 731. Իսկ ի կատարածի ցրտացեալ լինին մարդիկ ի սիրոյն աստուծոյ իբր ծերացեալ աշխարհի. վասն այն *ջերմ* հրով պատժեսցին: - 731

**ՋԵՐՄԱՅԻՆ +** Զի սրտին արիւնն և լեարդն և լեղին որք *ջերմայինք* են՝ ի յաջոյ կողմն են մարդոյն: - 243

**ՋԵՐՄԱՆԱՄ +** Եւ թէ ոք ասիցէ, որովհետև ներգործութիւնքն բնութեանց հետևին, որպէս հուրն միշտ այրէ, և ջուրն ցրտանայ և *ջերմանայ*. ապա ճշմարիտ երևի բանն դամասկացւոյն՝ եթէ է՛ ի քրիստոս կրկին ներգործութիւն. որպէս և կրկին բնութիւն: - 174. Նոյնպէս և ջուր թէպէտ *ջերմանայ*, ո՛չ թեթևանայ: - 202. Իսկ Զիւնն ծնանի ի *ջերմացեալ* ամպս ի մէջ երկուց ներհակ հողմոց: - 205. Ուստի՞ *ջերմանան* աղբիւրք ջերմուկք: - 208. Արդ՝ յորժամ աղբիւրք ջրոյ՝ մերձին յերակն հրոյ որ է՛ ծծումբն, *ջերմանան* խիստ կամ թոյլ. մերձ կամ հեռի անցանելովն: - 208. Եւ **զխ** ամ շինեցին յամառն և ձմեռն ըստ բարեխառնութեան տեղւոյն. մինչև հասին յործկուտ օդն թանձրացեալ ի գոլորշեաց և *ջերմացեալ* յարևուն: - 297. ...**զդ**՝ անդամալոյծ միակողմանց բժշկութիւն. **էդ**՝ բորոտից սրբութիւն. **ըդ**՝ բոլոր մարմնոյն հիւանդաց և *ջերմացելոց* առողջութիւն. **թդ**՝ զդևսն հանէր. **ժդ**՝ զմեռեալսն յարուցանէր: - 328.

Նա՛խ նշանակէ՛, զի ի սիրոյն աստուծոյ ցրտացեալք էին և ի սէր սնոտեացս *ջերմացեալք:* - 334. Եւ յիրաւի նախ ջրով. զի յայնժամ *ջերմացեալ* էին մարդիկ ի ցանկութիւն մեղաց, վասն որոյ ջրով պատժեցան: - 731

**ՋԵՐՄԱՑՈՒՑԱՆԵՄ** - Ութերորդ՝ որք առեալ զօդ դարձեալ արտաքս փչեն ներհակ իմն գործով. այսինքն *ջերմացուցանեն* և զովացուցանեն. վառեն և շիջուցանեն: - 523. Չորրորդ՝ զի ջե՛րմ է արտասուքն և զսառուցումն հալէ և *ջերմացուցանէ* զսէրն: - 619

**ՋԵՐՄԵՌԱՆԴ, ՋԵՐՄԵՌԱՆԴՆ +** Իսկ ձիթենին զպարարտութիւն օծման *ջերմեռանդ* և ողորմած սրտին: - 519. Նա՛խ՝ նշանակէ՛ ի մեզ *զջերմեռանդ* բորբոք այրեցման սրտին. որ ի բա՛ց հանէ զօձիսն և արտաււէ...: - 670

**ՋԵՐՄՈՒԹԻՒՆ +** Որպէս արեգակն զի ո՛չ այրէ որ է հեռաւոր պատճառ. այլ հուրն ի նմանէ առեալ *զջերմութիւն* ի մերձ գոլով այրէ՛...: - 8. Նա՛խ, զի ըստ սոցա ոչինչ է զանազանութիւն մշտնջենաւորացն և փոփոխականացն. որք են երկնայինք և երկրաւորք. զի նոքա միա՛յն են ի հարկէ, որք միշտ նոյնպէս ունին. որպէս հրեշտակք անմահք. և լուսաւորք երկնից. և *ջերմութիւն* հրոյ: - 8. Զի ի վերայ մշտնջենաւորացն բացորոշակի յերեք ժամանակս՝ այսինքն յանցեալն ի ներկայն և յապագայն՝ մինն ճշմարիտ է և մինն սուտ. որպէս հրոյ *ջերմութիւնն* և արեգական լոյսն: - 9. Եւ միշտ բղխէ՛ *զջերմութիւնն* յօրինակ բղխման հոգւոյն անսպառապէս: - 37-38. Եւ նոյն ինքն հուրն է՛ օրինակ հօր. զի անհնա՛ր է լինել առանց լուսոյ և *ջերմութեան*. զի էութիւն են հրոյն: - 38. Ապա՛ տամք զհուրն օրինակ. զի ունի զլոյսն ծնունդ՝ և *զջերմութիւնն* բղխումն: - 53. Որպէս տեսանեմք ի բոլորակս արեգականն և մի ասեմք զարեգակն. իսկ թէ հայիմք ի լոյսն և ի *ջերութիւնն* զ իմանամք: - 54. Դարձեալ հոգին սուրբ բղխէ ի հօրէ իբր *ջերմութիւն* ի հրոյ: - 64. Ա՛րդ՝ տեսանեմք *զջերմութիւնն* զի ո՛չ բղխէ ի լուսոյ, այլ միայն ի հրոյ: - 64. Եւ որպէս հուրն ունի յէութեան իւրում՝ լոյս և *ջերմութիւն:* - 75. Իսկ շօշափելիքն զգայ *զջերմութիւնն* և տեսանելիքն զլոյսն միայն ի միում էութեան: - 75. Եւ մի է հուր և լոյս և *ջերմութիւն* իւր: - 107. Զի յաւիտենական բղխէ ի հօրէ առ որդի. և նովաւ առ մեզ գայ. որպէս *ջերմութիւն* ճառագայթիւ արեգականն: - 108. Եւ զանազանին, Նախ՝ զի տնկականն միայն ի *ջերմութենէ* հրո՛յ է: - 117. Իսկ զգայականն ի *ջերմութենէ* և ի շնչոյ օդոյ: - 117. Եօթներորդ՝ *ջերմութիւնն* ընդ դեղին լուսո՛յն է: - 125. Եօթնժերորդ՝ հաւասա՛ր է լուսով և *ջերմութեամբ*. զի ուր հասանի լոյսն անդ և *ջերմութիւնն:* - 127. Իսկ դևք փոխեն զերևակայութիւնն. որպէս տապ *ջերմութեանն:* - 133. Այլ ասիցէ ոք, թէ բազում ինչ գոն ի յայլս գոյացութիւն և ի յայլս պատահումն. որպէս *ջերմութիւն* ի հուրն գոյացութենէ, և ի անորակ մարմինն պատահումն. և տերևն ըստ ինքեան գոյացութիւն է, և ի ծառն պատահումն. այսպէս և մազն: - 169. Պատասխանեմք առ այս եթէ՝ առանց *ջերմութեան* անձև և անկերպ է անորակ մարմինն. իսկ տերևն զա՛րդ է ծառոյն. և մազն մարմնոյն: - 170. Եւ օդ *ջերմութեամբ* ընդ հուր. և հուր չորութեամբ ընդ երկիր: - 181. Իններորդ՝ տա՛յ երկրի զօր ունակացեալ է. որպէս զանձրև. զլոյս. *զջերմութիւն*. և զաստղողութիւն: - 184. Իններորդ՝ հաւասար ունի *զջերմութիւն* և զլոյս: - 186. Ութևժերորդ՝ լուսով և *ջերմութեամբ* մե՛րձ է յամենայնսն. և բոլորակութեամբ հեռի: - 186. Զի՞նչ է որ ասէ մեծն իգնատիոս վասն արեգական՝ թէ յամենայն օր ի բաց դնէ զլոյսն և *զջերմութիւն*, և միւս անգամ յարփոյն առնու: - 186. Երկրորդ՝ յա՛յտ է զի ունին *ջերմութիւն* և ցրտութիւն. չորութիւն և գիճութիւն. որ յայտնապէս տարրական է որակութիւն: - 188. Եւ զի *ջերմութեամբ* և չորութեամբ ցամաքի երկիր: - 197. և Յրոտից, ըստ դրութեան է. զի հո՛ւր է ոտիցն որ այրէ՛ ներքուստ ի վեր *ջերմութիւն* արեգականն: - 201. Վասն որոյ *ջերմութեամբ* զցրտութիւն լուծանէ որ յերկաթն և ի սառն. և չորութեամբ զհիւթն մերժէ որ ի ձու հաւի և յայլսն: - 202. Դարձեալ ասեմք թէ՝ ծանրութիւն փայտին գիճութիւնն է և ցրտութիւնն. և հուրն *ջերմութեամբ* և չորութեամբ զսոսա կորոյս: - 202. Շանթքն լինի ի մէջ գոլորշեացն որ ի մէջ ամպոյն. և *ջերմութեամբն* չորացեալ. քանզի հո՛ւր է քարացեալ: - 204. Եւ վասն առաւել և նըւազ *ջերմութեանն*, է՛ որ ի դուրս պատառիլն շիջանի: - 204. Եւ վասն առաւել և ազդու զօրութեան և *ջերմութեան* զգոյացութիւն կենդանեաց և մարդկան առ որս դիպի ապականէ՛. և պատահմունքն քանակ և որակ մնան: - 204. Եւ ըստ չափու թանձրութեանն պատառեալ բեկանի, և ի վայր բերմամբ գնդի ի *ջերմութենէ* օդոյն, և լինի կարկուտ: - 205. Նա՛խ՝ զի ամպն յերկրէ ելեալ խափանէ՛ զլոյս և *զջերմութիւն* արեգական: - 206. Նախ՝ վասն զի մի՛ *ջերմութիւն* լուսաւորացդ կիզցէ զերկիր և վնասեսցէ: - 207. Երկրորդ՝ ասէ արիստոտէլ՝ թէ *ջերմութիւն* լուսաւորացդ և տարրական հրոյն և օդոյն մտանեն ի ծովն և քարշեն ի նմանէ զքաղցր և զպարզ հիւթն. և մնացեալն լինի դառն և աղի: - 208. Նա՛խ՝ զի ի ձմեռն *ջերմութիւնն* ի սիրտ երկրի

ժողովի. և յամառն ի վեր յերես սփռի: - 208-209. Զորօրինակ՝ յորժամ մարդն մեռանի՝ *ջերմութիւնն* ի սիրտն ժողովի և ապա քաղի: - 209. Նախ՝ զի շնչմունք հողմոց ի բարձունս են, և զբարձանց *ջերմութիւնն* բարեխառնեն: - 211. Երկրորդ՝ զի վերին մասն օդոյն պա՛րզ է. և ներքին մասն մերձեալ ի յերկիր՝ թանձրանայ ի չորութեանց նորին. և *ջերմութիւնն* խառնեալ ընդ այն՝ առաւել շող լինի: - 211. Երրորդ՝ անդ մէկին է *ջերմութիւն* և աստ կրկին. զի հասեալ ի գոգ երկրի, մակադարձութեամբ ժողովին առ նա և լինի շող: - 211. Եւ *ջերմութիւն* արևուն և գիճութիւն լուսնին՝ առնեն զգոյնն կարմիր: - 213. Երկրորդ՝ զի *ջերմութիւն* լուսաւորացն սնուցանէ և զառ ի վեր քարշէ՛: - 214. Զի զգայ *զջերմութիւն* հրոյն. և զցրտութիւն՝ որ է ջրոյն. և զխոնաւութիւն որ է օդոյն. և չորութիւն հողոյն: - 215. Եւ օդն է ի թոքն. զի հանապազ ի շարժութեան կայ և փչէ՛ ընդ դէմ *ջերմութեան* սրտին: - 232. Հինգերորդ՝ սպիտակ ճրագուն. զի հո՛վ է բնութեամբ *զջերմութիւն* աչացն բարեխառնէ. նա և գեղեցկացուցանէ՛: - 239. Եւ յո՛ր մասն մարմնոյն գիճութիւն և *ջերմութիւն* առաւել լինի, անդ մազ բուսանի: - 240. Եւ ուր *ջերմութիւնն* շատ է, մազն ո՛չ սպիտակի. որպէս արտևանունքն աչացն և յայլ տեղիս: - 240. Եւ աղի ջուրն է՛ ի յաչքն. զի *զջերմութիւնն* բարեխառնէ՛: - 240. Երկրորդն ուղեղ գլխոյն է. հով է և գէճ ընդ դէմ սրտին *ջերմութեանն* և չորութեանն. զի բարեխառնեսցէ՛ զնոսա. և իւր տանուտէր լուսինն է: - 241. Հալողականն է՝ յորժամ ի *ջերմութենէն* եփի կերակուրն և հալի որպէս ապուր ի պտկի. և հալի ամենայն կերակուրն մինչև ի **զ** ժամն. և է՛ որ պակաս և աւելի. վասն առողջ և տկար մարմնոյն: - 242. Եւ յայս կողմս ունի **դ** երակ առանց արեան լի *ջերմութեամբ*. և բաժանի ամենայն երակ՝ յերեսունք երակս. որ լինի ամէնն **ճիը** երակ: - 244. Եւ սոքօք սփռի *ջերմութիւնն* և կենդանութիւնն ի բոլոր մարմինն: - 244. Վեցերորդ՝ զի զգործն կենդանւոյ տեսանեմք ի նա որ է՛ *ջերմութիւն*, շարժութիւն, և ներգործութիւն. որ երևի ի կազմելն զիիւթն: - 256. Ասեմք թէ՝ ամենայն սերմն ունի *զջերմութիւն* և զգիճութիւն ամոքեալ յինքեան: - 256. Այլ արդ՝ գիճութիւն ջրոյ զջերմ և զչորն վնասէ՛, և *ջերմութիւն* հրոյ զգէջն, և լինի անպտուղ: - 256. Եւ նախ սիրտն կազմի քան զայլ անդամսն. զի *ջերմութիւն* սերմանն ի մէջն ժողովի և կազմէ՛ զսիրտն: - 261. Եւ որպէս սիրտն նա՛խ գոյանայ, նոյնպէս և յետո՛յ մեռանի վասն *ջերմութեան* նորին: - 261. Այսպէս և արու մանկանն յաջ կողմն բեղնաւորեալ՝ վասն *ջերմութեան* լերդին և լեղւոյն՝ փութով կատարի անդամօք: - 261. Կամ ըստ ազգի իւրեանց, և կամ ըստ տեղւոյն և ժամանակին ցրտութեան և *ջերմութեան* և այլն: - 263. Կենդանական, որպէս *ջերմութեան* և շնչոյ: - 318. Երրորդ՝ ընտրութիւն է ի զենումն. զի բաժանեսցի նախ արիւնն, և ընդ նմա՛ շունչն և բնական *ջերմութիւնն*: - 366. Զի թէ նախ բնական *ջերմութիւնն* պակասի, այս լինի բնական մահ. ո՛չ է ուտելի: - 366. Եւ թէ լիցի երկաթ և ո՛չ սուր, և ո՛չ է պիտանի. որպէս բոլոր երկաթն թէ հարցէ զկենդանին և սպանցէ, ո՛չ է ուտելի, զի թէպէտ զարիւնն հանէ, այլ ո՛չ համանգամայն զշունչն և *զջերմութիւնն*: - 366. Երրորդ՝ *զջերմութիւն* սրտին զովացուցանէ օդ: - 523. Դարձեալ՝ որ ոք մերձ է ի ճշմարտութիւնն՝ նա՛ առաւե՛լ է ճշմարիտ. որպէս որք մերձ են լուսոյն և *ջերմութեան* առաւել լոյս են և ջերմ: - 550. Այս ո՛չ եթէ բաժանմամբ. այլ նկատմամբ ի յատկութիւնս անձանց. ըստ որում սկիզբն է հայր. և փրկութիւն է որդին. և *ջերմութիւն* հոգին: - 577. Քաղց է ըստ մարմնոյ՝ թերութիւն ստամոքսի. իսկ ծարաւ՝ տապութիւն *ջերմութեանն:* - 584. Եւ դարձեալ՝ որպէս զանազան սերմանիք ցորեան կորեակ և այլք՝ հասարակ ի մի վայր սերմանին. և հասարակ ջրով և *ջերմութեամբ* սնանին. և ի յազգս իւրեանց կատարին. ցորեանն ի ցորեանն և այլն: - 719. Այլ համահասակ քանակաւ ո՛չ. զի աստ ոմն մեծ լինի և ոմն փոքր ի *ջերմութենէն* որ անհաւասա՛ր է ի նոսա. նոյնպէս և անդ: - 726. Դարձեալ՝ էութիւնն մնայ, այլ ներգործութիւնն պակասի՝ այսպէս. զի *ջերմութիւն* հրոյն և ցրտութիւն ջրոյն և փոփոխմունք օդոյդ որպէս ամպք և այլն, և սևութիւն երկրի...: - 728. Ա՛րդ՝ ի նախասացելոցս հաւաքեա՛. զի լինիցի անդ *Ջերմութիւն* հրոյ: - 751. Ոչ բաժանեալ կամ հատեալ ի հօրէ և ի հոգւոյն. որպէս ո՛չ *ջերմութիւն* ի հրոյ կամ ի լուսոյ. կամ նկարագիր յէութենէ: - 770. Եւ դարձեալ՝ զորօրինակ, լոյսն և *ջերմութիւն* են էութիւն նորին զուգասփիւռ. այլ երբեմն մինն ծածուկ, և երբեմն երկոքին յայտնիք, և ընդ դէմ սորա: - 779. Եւ որպէս այլքն այլ ինչ, և սա՛ զծխատեսակ *ջերմութիւն* սրտի ընդ ցնցուղս ծայրից արտաքարշելով ի կրկին կողմանէ որպէս ասեն բժիշկք: - 786. Իսկ արտասուքն աղի և ջրատեսակ. զի բարեխառնեսցէ մինն *զջերմութիւն* հրոյ, և միւսն՝ զի մի՛ նեխիցին պարուտակք աչաց. շրջապատեալ երակացն լուսոյ: - 786

**ՋԵՐՄՈՒԿ +** Ուստի՞ ջերմանան աղբիւրք *ջերմուկք:* - 208

**ՋԻԼ +** Եւ յոչ էից՝ զի սակաւ հիւթն այն՝ ո՛չ կայր միս և ոսկր և *ջիլ*. կամ մորթ: - 37. Դարձեալ՝ ա՛յլ է բնութիւն մարմնոյն. ա՛յլ ոսկերացն. և ա՛յլ է *ջիլն* և երակն և մորթն և մազն և իւրաքանչիւր մաղձքն. ըստ

այսմ ապա ասա՛ և բազում բնութիւնս քրիստոսի: - 176. Նեարդք և *ջիլք* և արիւնն հրոյ: - 215. Երկոտասաներորդ՝ Զօդուածք և *ջիլք* և երակք ի մարդն: - 227. Գլխոյն հերն որպէս արմատ. և *ջիլք* և ոտք՝ որպէս ոստք ըստ ծևոյ աշխարհի: - 233. Երրորդ՝ զի փափուկ *ջիլք* և նեարք՝ յերեսացն գան և առնեն զգայարանս. և հաստն ի թիկունքն սփռի վասն ուժոյ և պնդութեան և շարժութեան: - 234. Որ է՛ մազն. և մորթն. և միսն. և արիւնն. և *ջիլն*. և ոսկրն. և ուղեղն ի մէջն: - 240. Զի ուղեղն ի մէջն սնուցանէ զոսկրն. և *ջիլն* կապէ՛ առ միմեանս զի մի քակտեսցին ոսկերքն. և արիւնն կերակո՛ւր է նոցա: - 240. Ստամոքն *ջիլ* է և միս: - 242. Միսն տաք է և *ջիլն* հով. զի *ջիլն* ձկտի յորժամ յագենայ. և կծկի յորժամ քաղցենայ: - 242. Ասեն բժիշկք թէ, **բճխը** ոսկր է մարդոյն. *ջլօք* պնտեալ և կապեալ ի մի մարմին. և է՛ այսպէս: - 243. Ոմանք ասեն, **ծէ** գլխաւոր *ջլօքն* որ կապին սոքա՝ լինին **յկե** զօդուածք: - 243-244. Նա՛խ՝ խելապատակն սկիզբն է *ջլացն*. որ միայնաբար ընդ ուղուղս պարանոցին անցանէ. և բաժանի ի թիկունս, ի ձեռս, և յա՛յլ մարմինս: - 244. Եւ նոյն *ջիլն* կապէ՛ և շարապնդէ՛ զամենայն յօդուածս ոսկերացն: - 244. Զայս **դ** յատկութիւնս ունի *ջիլն*: - 244. Եւ ցուրտ և լոյծն խառնեալ՝ լինի *ջիլ*. որպէս ցուրտ և խոնաւն փողք: - 244. Եւ *ջիլքն* բաժանին **գճխը** թուով: - 244. Եւ **ծէ** գլխաւոր *ջիլքն*, և մին բուն *ջիլն*. որ լինի բովանդակն **յկզ** *ջիլք:* - 244. Եւ գիտելի է, զի հետևին միմեանց երեքեան սոքա. այսինքն *ջիլն*. և շնչերակն. և արեան երակն: - 244. Զի արիւնն կերակրէ՛. և *ջիլն* զգայութիւն տայ. և շնչերակն զջերմ կենդանութիւնն բոլոր մարմնոյն: - 244. Նախ ասեն ոմանք, եթէ ուղեղ գլխոյ անբանիցն ընդ խելապատակին ունի չորութիւն և հովութիւն. և *ջիլքն* ի նմանէ յառաջեալ յանդամս մարմնոյն՝ փութապէս պնդէ՛ և տայ շարժիլ: - 266. Իսկ մարդոյն ուղեղն գէճ է և հով. զի նկարեսցէ յինքն զիմացումն մտացն. և *ջիլքն* յառաջեալ ի նման վասն գիճութեան ո՛չ կարէ պնդել զանդամսն. վասն որոյ ո՛չ կանգնի և ոչ գնայ: - 266. Այլ և ոսկր միս *ջիլ* և մորթ՝ մի անդամ շարադրեն: - 476. Երրորդ՝ ի գլխո՛յն իջանեն կենդանութիւնք և զօրութիւնք և առողջութիւնք և շարժութիւնք ի բոլոր անդամս ի ձեռն *ջլոյն:* - 532. Այլ և մարմին և ոսկր և *ջիլք* և այլն քակտին և ի հող լուծանին: - 667

**ՋԼԱՊԻՆԴ (տեքստում՝ ՋԼԱՊԻՆՏ) +** Իսկ զի կէսք քարց և անմորուք լինին, զի *ջլապինտ* է մորթ երեսացն որպէս զթաթ ձեռաց. վասն որոյ մազ ո՛չ բուսանի: - 245

**ՋՀՈՒՏ -** Քանզի ասէ թէ՝ *ջհուտն* թարքմանի խոստովանօղ. քանզի խոստովանօղքն մեսիային փրկեսցին: - 28

**ՋՂՋԻԿԱՆ (տ. ՉՂՋԻԿԱՆ) +** Եւ ոմանք մաշկաթևք. որպէս *ջղջիկանք:* - 215-216

**ՋՆՋԵԼԻ -** Եւ այս ևս կրկին է գիր և դպրութիւն. մին անջինջ և յաւիտենից որ առ աստուած. և միւսն ժամանակեայ և *ջնջելի* որ առ մեզ. զոր մեր գործօք և կամօք գրեմք և ջնջեմք. թէ զչար թէ զբարի: - 481. Եւ միւս գիր է գործոց փոփոխական և *ջնջելի* ըստ ժամանակիս: - 741

**ՋՆՋԵՄ +** Մինն է արդարութեան այժմու կենացս, որ է փոփոխական. յորմէ կարէ՛ ոք *ջընջիլ:* - 18. Եւ միւսն է յաւիտենական նախասահմանումն աստուծոյ. յորմէ ո՛չ ոք կարէ *ջընջիլ:* - 18. Այլ մի ասեմք զներգործութիւնսն վասն մի միութենէն ներգործելոյ. որպէս մի ձեռն կտրէ՛ և կարէ՛. գրէ՛ և *ջնջէ:* - 85. Երկրորդ՝ զի յետոյ *ջնջեցա՛ւ* նախատեսիլն: - 164. Ութերորդ՝ ի շնչել հողմոյ՝ դիւրաւ *ջնջի* ամպն: - 206. Տասներորդ՝ յորժամ *ջնջի* ամպն, վերըստին պայծառանայ օդն յառաջին մաքրութիւնն իւր: - 206. Չորրորդ՝ զի մի՛ *ջնջեսցի* ի հրոյ կամ ի ջրոյ ի քարի՛ գրեաց: - 349. Ա՛յս է պատճառ խորտակելոյ տախտակին. և ո՛չ որպէս ասեն ոմանք թէ գիրն *ջնջեալ* էր: - 350. Ապա թէ որդիք և թոռունք չօգտին ի ներելոյն, յայնժամ պատուհասէ՛ և *ջնջէ* զյիշատակ չար ազգին: - 351. Դարձեալ՝ աստուած յառաջնումն ծննդեան յորժամ զյանցաւորս ըստ բնական մեղացն՝ ջրհեղեղաւն *ջնջեաց*. յերկրորդումն ծննդեան յորժամ զյանցաւորս ի կռապաշտութիւն՝ կարմիր ծովովն ընկղմեաց. յերրորդումն ծննդեան տուժեաց, յորժամ զյանցաւորս գրաւորական օրինացն պատերազմօք սատակեաց: - 351. Տասներորդ, սրբի բորն դեղով. *ջնջի* և մեղքն ապաշխարութեամբ: - 367. Իսկ դադան քրէական մեղանչեաց որ է՛ յանցումն ի թագաւոր. զոր անհնարին պատուհասին. գոյիւք և ազգօք *ջնջին:* - 381. Եւ տէր մեր զխորհրդոց և զգործոց՝ և յետոյ զպատիժն մեղաց *ջնջէր:* - 424. Ասեմ թէ ոչ, զի կատարեալ խոստովանութիւնն թողու զմեղս, բառնայ զպատիժն, և *ջնջէ՛* զյիշատակ մեղացն. մինչ զի ո՛չ երևի ի դատաստանին աստուծոյ: - 432. Այլ շնորհք նորոյս կարողութեամբ արդարացուցանէ զմարդ այնպէս, մինչ զի սպիք մեղացն *ջնջին* և յիշատակութիւնն ծածկի: - 433. Այլ ի դատաստանն քննութեան *ջնջեալ* է զոր ինչ մեք ի մտի ունիմք. որպէս ասացաւ ի վերոյ: - 433. Կրկին է գիր. այսինքն կենաց և մահու. զի բարի գործովք գրիմք ի դպրութիւնն կենաց. և մեղօք գրիմք ի գիրն մահու և դատապարտութեան. որպէս ասեմք թէ զձեռագիր

յանցանաց քոց *ջնջեսցէ* աստուած: - 481. Եւ այս ևս կրկին է գիր և դպրութիւն. մին անջինջ և յաւիտենից որ առ աստուած. և միւսն ժամանակեայ և ջնջելի որ առ մեզ. զոր մեր գործօք և կամօք գրեմք և *ջնջեմք*. թէ զչար թէ զբարի: - 481. Եւ յորժամ հաւատան ի քրիստոս և մկրտին, *ջնջի* գիր նոցա և անէծքն: - 482. Զոր օրինակ հուրն հալէ զոսկին և բոցն *ջնջէ* ի նմանէ զժանգն: - 497. Այսպէս և քրիստոս զմահ կրեաց և ի բաց *ջնջեաց* զմեղս և զապականութիւն ի մերմէ բնութենէս: - 497. Վասն է՞ր արտասուքն լուանայ և *ջնջէ* զմեղս առաւել...: - 619. ...զի քահանայական աղօթիւք և պատարագօք կամ առաւելուն պսակքն, կամ *ջնջին* մեղք նոցա: - 674. Եւ այս գիտելի է, զի անուն նեռին *ջնջեալ* և կորուսեալ է ի սուրբ գրոց. վասն այն զանազանապէս կոչեն զնա՛: - 707. Վեց հարիւրն զամս նոյի. որ էր ռ ամաց և ջրհեղեղով *ջնջեցան* ապստամբքն: - 707-708

**ՋՆՋՈՒՄՆ +** Այլ և ի վերայ ա՛յնր՝ ունէր և զերրորդն սրբութիւն. որ կուսութեան իւրոյ էր յատկական. *ջնջումն* ի սկզբնական և յարմատոյ մեղաց: - 463. Ութերորդ ի կատարածի. այն որ ո՛չ ի փրկութիւն, այլ ամենայն չարութեան *ջնջումն* առնելով տանջանօք որ է հուրն անշիջանելի: - 488

**ՋՈՐԻ +** Երկրորդ՝ յայլմէ այլք. որպէս *ջորիք*. և յարեգակնէ և յերկրէ գորտք և մկունք: - 53. Իսկ ի ձիոյ և յիշոյ լինի *ջորի*. զի ընտակերք են և միաժամք ծնանին: - 267

**ՋՈՐՈՋ** - Եւ տէր մեր յերկրի մարդացաւ, և յերկինս թագաւորեաց. իսկ նստիլն ի վերայ *ջորոջ*, որ է խաչն. զի վիրք զխաչն ջուարի կոչեն: - 441

**ՋՈՒԱՐԻ** - Եւ տէր մեր յերկրի մարդացաւ, և յերկինս թագաւորեաց. իսկ նստիլն ի վերայ ջորոջ, որ է խաչն. զի վիրք զխաչն *ջուարի* կոչեն: - 441

**ՋՈՒԽՏ** - Եւ յորժամ թիւն երկրորդ լինի որ է՛ *ջուխտ*...: - 641

**ՋՈՒՐ +** Զորօրինակ՝ իրն ի ներկայս որ է նիւթ ներընդունակ՝ ունի կրկին զօրութիւն. որպէս հանդերձն կարէ՛ պատառիլ, և կարէ՛ ո՛չ պատառիլ. և *ջուրն* կարէ ջերմն գոլ, և կարէ՛ ո՛չ գոլ. և մինն ի նոցանէ՛ լինի ներգործութեամբ որն և հանդիպի: - 9. Նախ՝ թէ ըստ այդմ բանի հա՛րկ է ապա և քեզ *ջուր* լինիլ և *զջուրն* գիտել. և քար լինիլ և զքարն ճանաչել, և զայլսն նոյնպէս: - 17. Նախ՝ զհաստատութիւն երկրի և զգնացս *ջուրց:* - 26. Երկրորդ՝ զի ի *ջուրն* հանգստեան սնուցանէ. այսինքն է աւազանին մկրտութեամբն ի հոգի սուրբ: - 49. Տասներորդ՝ ըստ մեզ ի *ջուրս* աւազանին իջումն հոգւոյն: - 50. Եւ առաքեալն զհոգին և *զջուր* և զարիւնն ասէ գ վկայք քրիստոսի: - 54. Պատասխանեմք եթէ՝ հոգի աստուծոյ ոմանք զօդս ասեն. որոյ բնական տեղի իւր է՛ ի վերայ *ջուրց:* - 60. Եւ կամ բանն բնութեամբ մարմնոյ թանձրացեալ որպէս *ջուր* սառուցեալ: - 82. Ա՛րդ՝ տեսութիւն գրոց սրբոց մի և նոյն ելով՝ առ բազումս բազմանայ. որպէս մի և նոյն պարզագոյն *ջուր*՝ իւրաքանչիւր բնութիւնս տնկոց: - 93. Իսկ կողմնաւոր՝ որպէս փոխանցեալքն ի միմեանց. որդի ի հօրէ՛. և լօղակք ի *ջրոյ:* - 142. Հրեշտակք ի վերոյ *ջրո՛յ* են. բայց ի ներքոյ հաստատութեան խնամածուք կարգեալ են աշխարհի և մարդկան: - 150. Եւ որք ի *ջուրս* և ի ծնունդս կանանց՝ ա՛լք կոչեցան. զի զէջ ախտիւն զհոգիս կորուսանեն. և ի ծնունդս՝ զմարմինս և զհոգին: - 150. Զայսմ վիշապէ՛ ասէ՝ զգլուխ վիշապին փրկիչն ջախջախեաց ի յորդանան. այն է որ զամենայն *ջուրս* ծովուն յակնակապիճս իւր ընդունէր: - 151. Յերկինս են լուսաւորքն. և վասն գոյութեանց նոցա. և գնան հրեղէնք ընդ *ջուրս:* - 154. Յատկութիւնք *ջուրց* ութն թուով. և զի բազում են *ջուրք*. և դառն է ծով և աղի: - 155. Վասն ջերմ *ջուրց*. և աղբերաց ի ձմերայնի. և զի ի լերինս բղխեն: - 155. Վասն նշանակութեան *ջուրց* **ժբ** թուով: - 155. Իսկ միւս զօրութիւնն որ կարելի է՝ և ներընդունի զգոլն և զչգոլն՝ և երբեմն՝ ասի ի վերայ փոփոխական բնութեանց. որպէս հանդերձն կարէ՛ պատառիլ և ո՛չ պատառիլ. և *ջուրն* կարէ՛ ցրտացուցանել և ո՛չ ցրտացուցանել: - 168. Եւ թէ ոք ասիցէ, որովհետև ներգործութիւնքն բնութեանց հետևին, որպէս հուրն միշտ այրէ, և *ջուրն* ցրտանայ և ջերմանայ. ապա ճշմարիտ երևի բանն դամասկացւոյն՝ եթէ է՛ ի քրիստոս կրկին ներգործութիւն. որպէս և կրկին բնութիւն: - 174. Չորս են տարերք. հող և *ջուր*. օդ և հուր: - 180. Զի առանց հողոյ շօշափումն ո՛չ լինի. և ո՛չ առանց *ջրոյ* կալումն և մածումն. և ո՛չ առանց օդոյ շարժումն. և ո՛չ առանց հրոյ երևումն: - 180. Եւ դիրք տարերացդ է այսպէս Որ երկիրն ծանր է քան *զջուր*՝ ի ներքո՛յ է: - 180. Եւ *ջուրն* քան զօդ. և օդն ծա՛նր է քան զհուր. զի սակաւ ինչ գիճութիւն ունի: - 180. Եւ *ջուր* գէճ է և ցուրտ: - 181. Զի *ջուր* ցրտութեամբ ընդ երկի՛ր է կապեալ. և գիճութեամբ ընդ օդ: - 181. Նախ այսպէս ասեն եթէ՝ տարերքն գնդաձև պատեալ են զմիմեանս և ամրացեալ. զի բոլորակ հուրն պատեալ է զօդ. և օդ *զջուր*. և ի մէջ *ջրոյն* երկիր է՛ հաստատեալ: - 181. Որպէս զձու հաւի. դեղնուցն ի մէջ *ջրոյն*. և մզղնա տեսակն ի խեճեպոյն է ամրացեալ: - 181. Նմանապէս և հոմանուն է հաստատութիւնն ի ներքոյ *ջրոյ*. այսինքն

ըերրորդ կամարն. և օդս առ մեզ որ ունի *զջուրս* ամպով հաստատեալ: - 184. Զի՞նչ է որ ասէ սուրբն բարսեղ, գնան հրեղէնք ընդ *ջուրս* և ո՛չ շիջանին: - 188. Հրեղէն զլուսաւորսն ասէ. և *ջուր* զվերին կամարն ջրեղէն: - 188. Եւ զի ո՛չ շիջանին հրամանաւ արարչին. ի միջի գոլով երկուց ներհակացն օդեղէնն երկին. որպէս ստորին տարերքս հուր և *ջուր* միջնորդ օդիւն կապակցեալ: - 188. Իսկ Խեցգետինն և Կարիճն և Ձուկն, ունին զբնութիւն *ջրոյ* ցուրտ և գէճ: - 189. Զորօրինակ՝ լիտր մին շաքար ի լիտր մին *ջուր* անկեալ, նոյն մին լիտր մնայ կշռեալ: - 202. Նոյնպէս և *ջուր* թէպէտ ջերմանայ, ո՛չ թեթևանայ: - 202. Շարժումն է *ջուրց* և արեան երակաց: - 203. Սպիտակն *ջրոյն:* - 203. Փայլակն լինի ի շիջեալ հրոյն *ջրով* ամպոյն և հողմով որ ի մէջն է, վերստին արծարծի և արտաքս բացափայլէ: - 203. Այլ Ամպն լինի, յորժամ զօրութեամբ արեգականն ի վեր քարշին գոլորշիքն ի *ջուրց* և ի գէջ տեղեաց: - 204. Իսկ Մառախուղն է մթագոյն գոլորշի անծննդական *ջուրց*. քան զօդ թա՛նձր է, և քան զամպ նօսր: - 204. Իսկ Անձրևն է *ջուր* իջեալ ի թօթափման է ամպոց. թանձրացելոց ի խոնաւութեանց: - 205. Եւ սառուցեալ ի ներհակ հողմոյն, համանգամայն ընդ փոխիլն ի *ջուր:* - 205. Իններորդ՝ դառն *ջուրն* ի մէջ ամպոյն փոխի քաղցր և ախորժելի: - 206. Չորրորդ՝ զի ի *ջրոյ* կազմեցաւ երկինք երկնից: - 207. Չորեքտասաներորդ՝ *ջուրն* օդով ի վեր ընթանայ, և հողմով անձրևի՛ յերկիր: - 207. Վասն է՞ր այնչափ բազմութիւնք *ջուրց* եղեն: - 207. Երկրորդ՝ զի երկիր չո՛ր է և ցամաք, պարտ էր լինիլ բազմութեան *ջուրց*. զի խառնեսցի ընդ երկիր և ծննդականս արասցէ: - 207. Երրորդ՝ զի ամենայն տեղիս գտցի *ջուր*. ի լերինս և ի դաշտս, և արբցեն կենդանիք: - 207. Հինգերորդ՝ զի բազմազան կենդանիք ի *ջուրս* զտեղի կալցեն: - 207. Ութերորդ՝ զի նաւք ի վերայ *ջուրց* ընթանան փութով. և զպէտս միմեանց լնուն: - 207. Իններորդ՝ պարիսպ լինին շուրջանակի *ջուրք*. ի թշնամեաց ի գազանաց՝ և ի գողոց պահելով: - 207-208. Այս ամենայն և առաւել քան զայս օգտութիւն է ի բազմութեանց *ջուրց:* - 208. Եւ այլք ասեն թէ՝ բազում աղբիւրք բղխեն ի ծովն. որպէս մեռայի *ջուրն*, և փոխեն զծովն ի դառն: - 208. Եւ օրինակ տայ զկերակուրն որ ի ստամոքսն եփի. և գոլոշիկքն ի գլուխն ելանէ և պարզ *ջուրն* ի լեարդն. իսկ մնացեալ թանձրն լինի դառն և աղի: - 208. *Ջուրք* ծովուն աղի են. վասն է՞ր աղբերք և գետք որ առ մեզ բղխեն՝ քաղցր են: - 208. *Ջուրք* ծո՛վուց ընդ մէջ երկրի անցանեն և պարզին ի ժանկոյն և ի դառնութեանցն. զի երկիր և աւազք զդառնութիւնն յինքեանս քարշեն, և մնայ քաղցր *ջուրն:* - 208. Որպէս ի մէջ երկրի գոն երակք *ջրոց*, նոյնպէս և հողմոց, ուստի ի վեր փչեն: - 208. Արդ՝ յորժամ աղբիւրք *ջրոյ*՝ մերձին յերակն հրոյ որ է՛ ծծումբն, ջերմանան խիստ կամ թոյլ. մերձ կամ հեռի անցանելովն: - 208. Նախ՝ ասեն ոմանք թէ՝ որքան բարձր է ի վերայ երկրի հողն, նոյնքան ծո՛ծո՛ր է ի ներքին կողմն. վասն որոյ *ջուրք* ծովուն դիւրաւ ելանեն: - 209. Երկրորդ՝ զի ամենայն ուրեք հողն ընդ *ջրոյն* խա՛ռն է. և յա՛յտ է ի ջրհոս. և *ջուրն* այն որ բարձրացեալ է ընդ հողոյն՝ իջանէ ի խոնարհ և բղխէ աղբիւր: - 209. Երրորդ՝ զի *ջուրք* ծովուն բա՛րձր է քան զերկիր. վասն որոյ հա՛րկ առնէ և ի վե՛ր մղէ և ապա՛ հեղու յերկիր. զորօրինակ մարդիկք ի բարձրագոյն լերանց իջուցանեն *զջուրն*, և ըստ նոյն չափոյ ի միւս կողմն ի վեր հանեն սակաւ ինչ պակաս: - 209. Չորրորդ՝ ցոյցք է ամենահրաշ խնամոց արարչին. որ զհոսանուտ *ջուրս* ներքին՝ ի մէջ լերանց ի վե՛ր հանէ ի պէտս կենդանեաց որ ա՛նդ են. այլ և յոռոգումն ուր գետք ոչ ելանեն: - 209. *Ջուր* **բժ**ան կերպիւ ասի: - 209. Նա՛խ՝ զի երկու իր է. այսինքն հող և *ջուր*. որ ընտանի՛ է նմա: - 210. Երրորդ՝ զի կրէ՛ *զջուր* ի մէջ իւր, և յեզերս, և ի վերայ երեսացն: - 210. Ոմանք ի *ջրո՛յ* ասեն զկանաչն. և յորժամ պակասի *ջուրն*՝ չորանան և սպիտակին: - 212. Ոմանք ասեն թէ յօդոյն է. զի օդն կապոյտ է՝ խառնի ընդ *ջրոյն* և լինի կանանչ: - 212. *Ջրոյն*՝ սպիտակն: - 212. Եւ պտուղն *ջրոյն*՝ որ յետոյ հասանի: - 212. Եւ համն *ջրոյն* յետ այնորիկ: - 213. Զի տղայութիւնն օդո՛յ է. և միջին հասակն հրոյ և հողոյ. և վերջինն *ջրոյ*. վասն այն սպիտակի. որպէս ցուցանի յառաջիկայդ **ժզ** գլուխն՝ **իգ** համարն: - 213. Յորժամ արար աստուած զմարդն ի հողոյ, նաև զանասունքն և զգազանքն ի հողոյ. նոյնպէս զլողակս և զթռչունս ի *ջրոյ:* - 214. Ապա ուրեմն երևի թէ ի մին տարրէ գոյացան ի հողոյ կամ ի *ջրոյ:* - 214. Երկրորդ՝ զի ի հողն կան **գ** տարերքն ամբարեալք. որպէս երևին ուր ուրէք երակ հրոյ և երակ հողմոյ և երակ *ջրոյ:* - 214. Նոյնպէս և ի *ջուրն* կան այլ գն. հողմն երևի ի գոլորշիքն. և հուրն և հողն՝ կայծն ի վայր անկեալ քար լինի: - 214. Ապա ուրեմն յերկրէ կամ ի *ջրոյ* գոյացեալքն ի չորս տարերաց եղեն: - 214. Երրորդ՝ զի ինքն երկիրն ունի զթանձրութիւն որ հողոյն է. և զմածումն որ է՛ *ջրոյն*. և զշարժումն որ է հողմոյն. և զերևիլն որ է հրոյն: - 214-215. Նոյնպէս և *ջուրն* ունի զսոսա. զի շօշափելի՛ է՝ և մածեալ՝ և շարժի՝ և երևի: - 215. Ճաշակելիքն *ջրոյն*՝ ի վերոյ քան զնա: - 215. և Սպիտակն որ է մաղասն ի բոլոր մարմին և կամ յերիկամունքն՝ է՛ *ջրոյն:* - 215. Վեցերորդ՝ ըստ այլոց. զի բոլոր թանձր մարմինն է՛ հողոյ. և ամենայն

հիւթք և մաղձք է՛ *ջրոյ*. թոքն է՛ օդոյն. և սիրտն է՛ հրոյն ջերմ գոլով: - 215. Փափկութիւնն *ջրոյ*: - 215. Զի զգայ զջերմութիւն հրոյն. և զցրտութիւն՝ որ է *ջրոյն*. և զխոնաւութիւն որ է օդոյն. և չորութիւն հողոյն: - 215. Այլ յայտնապէս կենդանութիւնն է օդոյն և հրոյն. և նիւթ մարմնոյն է՛ *ջրոյն* և հողոյն: - 215. Նոյնպէս և ջրայինքն զշունչ *ջրոյ:* - 215. Եւ մի և նոյն է. զի շունչ կենդանեաց է թանձր մասն օդոյս՝ խառնեալ ընդ *ջրոյ*. և շունչ նոցա է անօսր մասն *ջրոյ*՝ խառնեալ ընդ օդոյ: - 215. Ասեն թէ **ռ** ազգ է. **ռ** ի ցամաքի թռչնովք. և ն ի *ջուրս:* - 216. Չորրորդ՝ զթոյնսն լուանայ և ապա՛ *ջուր* ըմպէ: - 218. Ծառք դրախտին ո՞րպէս ըմպեն *ջուր*, թէ անապականք են: - 224. Նոյնպէս և տունկք դրախտին ըմպեն *զջուր* գետոյն որ ոռոգանէ՛ զդրախտն: - 225. Յերկրորդ օրն՝ ի միջին տարրէ՛ *ջրոյն* զծկունս և զթռչունս: - 227. Իններորդ՝ Չորս է հողմ և *ջուր* և մարդս: - 227. Չորրորդ՝ այլ և դիրք տարերաց, հողն է ի ներքոյ. և ապա *ջուրն* և օդն և հուրն: - 232. Եւ *ջուրն* **դ** հիւթք. այսինքն արիւնն. պալղամն. սեաւ և խարտեաշ մաղձն: - 232. Վասն որոյ գլուխն է՛ ի վերոյ. և խռչափողն որ ունի զտուր և զառն՝ օդո՛յդ է նման. և ի ներքոյ այլ մարմինք և հիւթ արեան և *ջրոյ*՝ երկրիս է օրինակ: - 232-233. Եւ փորոտիքն կակուղ՝ *ջուրն:* - 234. Եւ ծուկն ի *ջուրն*՝ փոր ի վեր շրջի: - 234. Սպիտակն *ջրոյ:* - 234. Զի շօշափելիքն ի ներքո՛յ է որպէս երկիր. և ճաշակելիքն ի վերոյ որպէս *ջուր*. լսելիքն յօդն է. և տեսանելիքն հուրն ի վերոյ: - 235. Եւ այն զի մերձ է բերանոյն. և զի հոտն և համն ազգակից են միմեանց. ի *ջրոյ* գոլով երկուցն. վասն այն զգայարանք նոցա առ միմեանս են մերձեցեալ: - 235. Յորժամ ծերանայ մարդն, և սպիտակ *ջուրն* որ է պալղամն առաւելու, յայնժամ մազն ընդ սպիտակ *ջուրն* ի դուրս անցանէ և սպիտակի՛: - 240. Իսկ **դ** *ջուրն* որ է ի մարդն՝ ըստ չորս տարերացդ է: - 240. Եւ աղի *ջուրն* է՛ ի յաչքն. զի զջերմութիւնն բարեխառնէ՛: - 240. Եւ դառն *ջուրն* է ի յականջն առ ի պահապան դրանն: - 240. Եւ քաղցր *ջուրն* է ի բերանն վասն առնելոյ զճաշակ համոցն: - 240. Եւ հոտած *ջուրն* ի մէջքն է վասն գոյութեան ծննդեանն: - 240. *Ջուրն* որ ի բերանն գայ՝ ի լերդէն ծնանի: - 242. Եւ մինչ ի խռչափողն արիւն գայ, և անդ ի սպիտակ *ջուր* փոխի: - 242. Որպէս *ջուրն* ի մէջ ամպոյն փրփրի և լինի սպիտակ ձիւն: - 242. Վասն է՞ր մի *ջուրն* ի բերանն քաղցր լինի, և յաչքն աղի. յունչն հոտեալ. և յականջն դառն: - 243. Ի լերդէն *ջուր* բերանոյն քաղցր. զի զամենայն համս առցէ: - 243. Յաչքն աղի *ջուրն*, զի տեսցէ զկսկիծ անձինն և այլոց, և արտասուեսցէ: - 243. Այլ արդ՝ գիճութիւն *ջրոյ* զջերմ և զչորն վնասէ՛, և ջերմութիւն հրոյ զգէջն, և լինի անպտուղ: - 256. Իսկ ձմեռն, և յինն ժամէն մինչև յերեկոյ և բոլոր գիշերն, և սպիտակաթոյր հիւր պլղամին, և ծեր մարդ, ըստ նմանութեան *ջրոյ* ցուրտ և գէջ գոլով. վասն որոյ սպիտակի և ցրտանայ և պակասի զօրութեամբ: - 266. Դարձեալ՝ ամենայն իր առաւել ունի զօրութիւն ի տեսակս իւր՝ քան ի յայլս. որպէս *ջուր* առաւել զօրաւոր է ի գետս՝ քան ի յերկիր խառնեալ. և տնկականն առաւել է ի տունկս՝ քան յանասունս: - 266. Երկրորդ՝ զոր ախորժակն ունի զկարօտութիւն՝ զա՛յն տեսանէ. որպէս քաղցեալն զկերակուր. և ծարաւն *զջուր:* - 268. Եւ զարիւնն խառնեաց ի *ջուրն:* - 283. Վաթսուն, Մոխիր երնջոցն. և սրբութեան *ջուրն:* - 285. Այլք զդողդոճալն ասեն. որ և հաց և *ջուր* չկարէր ի բերանն տանել: - 287. Եւ մարգարէացաւ եթէ վասն մեղաց մարդկան երկիր կրկին ապականի *ջրով* և հրով: - 289. Զի թէ նախ *ջրով* ապականեսցի պղնձի սիւնն մնասցէ. և թէ հրով՝ աղիւսն: - 289. Եւ **ժե** նրբեցոյց ի մի կանգուն, զի *ջուրն* վիժեսցի: - 293. Այլ և եկեղեցի սուրբ շինեալ ի քրիստոսէ հոգևոր տապան մեզ ի մէջ ծովու աշխարհիս՝ որ զհոգիս մեր փրկէ ի *ջուրց* մեղաց: - 293. Բոլոր տարի մի. զի այսպէս ասէ գիրն թէ՝ **ճծ** օր բարձրացաւ *ջուրն*. և յետոյ **ճծ** օր ցածուցաւ. որ լինի **ժ** ամիս: - 294. Ոմանք ասեն թէ խեղդեցաւ ի *ջուրն*. և ընդ բերանն յղացեալ էր զուգակիցն: - 294. Եօթներորդ՝ արիւնն հուրն է՝ և շունչն օդն. պա՛րտ է հանել զ**բ** տարրն. իսկ մնացեալն *ջուր* է և հող՝ ուտելի է: - 295. Ութերորդ՝ հուրն և օդն առաւել է յարիւնն զի առնօղք են. և յայտ է ի խառնումն միութեանց. զի հուրն մածուցանէ՛, և *ջուրն* և հողն մածնուն, և օդն սնուցանէ. վասն այն զարարօղն և զսնուցանօղն ո՛չ ուտեմք: - 295. Զենուլ ձկանն այն է՝ որ ի *ջրոյն* հանեն. զի զշունչ *ջրոյ* ունի և ո՛չ զշունչ օդոյ: - 296. Թրծեալ աղիւսն ընդ դէմ հրոյ, և կուպրն ընդ դէմ *ջրոյ:* - 296. Եւ բարձրացուցին զ**ժ** ամսոյ ճանապարհ ընդ ելն և ընդ էջն. որչափ բարձրացաւ *ջուրն* **ճծ** օր, և **ճծ** օր դարձեալ իջաւ: - 296-297. Երկրորդ՝ մկրտութիւն *ջրոյն*: - 309. Եւ զայս յայտնեսն կրկին վտակքն բղխեալ արիւն և *ջուր:* - 316. Եօթնևժ, և ի յառնել առիւծուն սարսին ամենայն կենդանիք որդիք *ջուրց:* - 316. Վեցերորդ, մովսէս զդառն *ջուրն* քաղցրացոյց և զգետն յարիւն դարձոյց: - 328. Եւ տէրն *զջուրն* ի գինի փոխեաց և զգինին յարիւնն իւր սուրբ: - 328. Յնգետասաներորդ, նա՛ ի վիմէն *ջուր* բղխեցոյց: - 329. Վեշտասաներորդ, մովսէս ետ զթլփատութիւնն և զլուացումն *ջրոյ:* - 329. Քսաներորդ, մովսէս **դ** ծնունդ ընկալաւ. ի մօրէ և ի *ջրոյ*՝ ի հրոյ և ի վիմէ: - 329.

Նոյնպէս և տէր ի հօրէ և ի մօրէ. պայծառութեամբն ի թաբօր. մկրտութեամբն ի *ջրոյ*. և յարութեամբն ի գերեզմանէ՛: - 329. Զսոյն և մեզ պարգևեաց ծնանիլ ի *ջրոյ*, և ի հրոյ, և ի հոգւոյ, և յարութեամբն մարմնոյ. իսկ ի մօրէ՛ բնականապէս: - 329. Երրորդ՝ յօրինակ հեթանոսաց որք զազրացեալ էին մեղօք մինչև *ջրով* աւազանին սրբեցան և ճաշակեցին զմանանայն կենաց ի յերկնից իջեալ: - 333. Եօթներորդ՝ որպէս *ջուր* էր բնութեամբ մի՝ և եղև արիւն: - 333. Զի արժանաւորացն *ջուր* էր իէլացւոցն. և անարժանիցն արիւն եգիպտացւոցն: - 333. Երկրորդ՝ իբր թէ տղայքն զորս ի *ջուրն* հեղձուին՝ կենդանացեալ տանջեն զնոսա: - 334. Եօթներորդ՝ կարկուտն հրախառն. զի **բ** հակառակն միաբանեալ *ջուր* և հուր ի կորուստ ամբարշտացն և ո՛չ ապականէին զմիմեանս: - 334. Յինգերորդ՝ ևս առաւել զզաւակս նոցա ի *ջուրսն* հեղձուցին: - 335. Զի՞նչ է որ զկէս արեան պատարագին խառնեաց ի *ջուր* և ցանեաց ի ժողովուրդն. և զկէսն էարկ շուրջ զսեղանովն: - 341. Եւ թէ ոք ասիցէ, պա՛րտ է *ջուր* խառնել ի խորհուրդն որպէս և մովսէս: - 341. Նա՛խ՝ զի մովսէս յայտնապէս զկէս արեանն անապական եհեղ զսեղանովն որ նշանակէր զանապական խորհուրդ արեանն. և զկէսն խառնեաց ի *ջուր* որպէս ցուցաւ ի խորհուրդ մկրտութեան և հաղորդութեանն խառնեալ: - 341. Երկրորդ՝ զի նախ *ջուրն* էր ի խառնարանն և եհե՛ղ զարիւնն ի վերայ որ է՛ ցոյց մկրտութեանն: - 341. Իսկ սոքա նախ հեղուն զարիւնն և յետո՛յ *զջուրն:* - 341. Երրորդ՝ նախ զխառնեալ *ջուրն* ցանեաց ի վերայ ժողովրդեանն որ էր մկրտութիւնն. և սոքա ճաշակեն *զջուրն* և զարիւնն: - 341. Բնական որակ տարերացն Սևն է՛ երկրի. և Սպիտակն *ջրոյ*. Կարմիրն օդոյ. և Դեղինն հրոյ: - 342. Ծիրանին *ջրոյ*. զի կոնքիլոսն որ ներկէ՛ զծիրանին՝ ի *ջրո՛յ* է. և Բեհեզն սպիտակ՝ երկրի. զի վուշն յերկրէ լինի: - 342. *Ջուր* և ջրեղէնքն: - 342. Երրորդ այսպէս. ի լուսնոյդ ի վայր տարրական հուրն և որ ի նմա երեւոյթք լուսոյ. օդն և թռչունք. *ջուր* և լօղականք. երկիր և բոյսք. մարդ և անասունք: - 343. Չորրորդ՝ զի մի՛ ջնջեսցի ի հրոյ կամ ի *ջրոյ* ի քարի՛ գրեաց: - 349. Եւ **գ** ըստ շնորհաց. որպէս ի *ջրոյ*, ի հրոյ, և ի վիմէ. ի տիպ տեառն մերոյ որպէս ասացաւ: - 353. Փորոտին զծածուկ խորհուրդն. զոր լուանալ հրամայէ՛ *ջրով*. այսինքն խոհականաւն զգարշելի մտածմունս սրբել: - 360. Կամ ջրայինն որ ո՛չ ունի զարիւն շնչոյ, այլ զարիւն *ջրոյ*, ո՛չ զենի. զի զենումն նոցա հանումն ի *ջրոյն* է: - 366. *Ջրով* լուանալ, խոստովանութեամբն է: - 367. Կենդանի *ջուրն* սրբութիւն ապաշխարութեանն: - 368. *Ջուրն* աւազանն որ մաքրեաց զմեզ յադամայ մեղացն: - 368. Եւ ի սոցանէ ո՛ր և իցէ, արտա՛քս է յեկեղեցւոյ և ի սրբութեանց, օր մի կամ բ կամ աւելի. և սրբի խոստովանութեան *ջրովն:* - 368. Զի իրն փոխեցաւ ի ճշմարտութիւն, և խորհուրդն մնաց նոյն. որպէս *ջուրն* և խունկն. իւղն և նաշիհն: - 369. Երրորդ, սուրբ խաչն աստուածընկալ դալար զօրութեամբ. շառաւիղ թևն. պտուղ քրիստոս ծաղկեալ արեամբ և *ջրով:* - 382. Նա՛խ՝ զի հուր աստուածութեանն կիզոյր զնա՛. որպէս *ջուր* ի մէջ ապակոյ ի տապոյ արևուն պակասի: - 383. Դարձեալ՝ մոխիր և *ջուրն* նշանակէր զարտասուս և զխոնարհութիւն ապաշխարութեան որով սրբիմք: - 383. Վասն այն սրսկօղ *ջրոյն* պղծէր, և սրսկեալն սրբէր: - 384. Երեք *ջուր* սրբութեանն զի՞նչ է ի նորս: - 384. Առաջին՝ *ջուր* աւազանին որ լուանայր զմարմինն, է՛ *ջուր* սրբոյ աւազանին մերոյ: - 384. Երկրորդ՝ ողողելոյ զհանդերձն, է՛ *ջուր* խոստովանութեանն և թողութեան մեղաց: - 384. Երրորդ՝ *ջուր* սրսկման զոպային, է՛ տարածումն աջոյն՝ և օրհնութիւնն ժողովոյն ի շնորհաց սուրբ հոգւոյն: - 384. Առաջին *ջուրն* սրբէ զսկզբնական մեղքն: - 384. Չորրորդ՝ նա՛խ օրէնքն և ապա *ջուրն*. զի նախ հոգւով խնամէ՛ և յետոյ մարմնով: - 385. Յինգերորդ՝ յառաջ տապանակն գնայր և դիտէր հանգիստ. և զհետ վէմն տայր *ջուր*. զի այժմ զհանգիստ պատրաստէ՛, և յետոյ զվայելչութիւն տայ: - 385. Իսկ ի *ջուր*, Նա՛խ՝ զի *ջուր* բղխեաց ի լուացումն և յարբուցումն. որպէս ի կողից փրկչին *ջուր* և արիւն: - 386. Երկրորդ, կարծէին թէ մովսէ՛ս տայ *զջուրն:* - 386. Դիւթ է՝ որ ձեռօք և նիւթո՛վ գործէ. որպէս գարի, և ալիւր, և աւազ, և *ջուր*, և քար. և այն որ թզով չափէ, և այլն ամենայն: - 388. Այլ բանն աստուծոյ ի ծովէ լորամարգ ի վիմէն *ջուր* և յօդոյ մանանայիւ կերակրեաց զնոսա. զի ամենակա՛ր է զօրութիւնն աստուծոյ: - 397. *Զջուրն* ի գինի փոխեաց: - 399. Եւ *ջուրն* բեթլէհէմի: - 413. Քսանն**ղ**, Վասն եղիայի զոր ագռաւն կերակրեաց. և գնաց ի հեղեղատն. և նուաղեցաւ *ջուրն:* - 413. Եւ յետ մահուանն մարիամու նուազեաց *ջուրն*. յորում եհար բարկութեամբ զվէմն: - 415. Երրորդ՝ ի յեղծանիլ պատկերին աստուծոյ որ վասն փառացն աստուծոյ ստեղծաւ, ընդ նմին եղծան և ապականեցան այլ արարածք որ վասն փառաց մարդոյն ստեղծան. որ ո՛չ միայն անասունք, այլ և հող և *ջուր* և օդ երկրին կորուսանեն զպտղածնութիւն. որպէս սոդոմայեցոցն: - 416. Որ ի *ջուր* ըմպելն ընտրեաց զզօրսն. և թաքուցեալ սափորօք զվառեալ լապտերսն, և էհար **յ** արամբք **ըզճի** հազարսն: - 420. Եւ ի նո՛յն ծնօտէ՛ եհան *ջուր* և էարբ: - 420.

Քանանէ, ծնօտն զարիւնն հոսէր այլազգեաց, և յինքենէ հով *ջուր* բղխէր: - 423. Եւ *ջրովն* շիջուցանէ զհուրն նախաստեղծ կողին: - 423. Երեսունևմի, *ջուրն* կակուղ եւ ի կարծր ծնօտէն յորժամ խնդրեցաւ: - 424. Զի՞նչ էր կարօտիլն դաւթի *ջրոյն* բեթլէհէմի: - 434. Նա՛խ՝ որպէս գեղէոն *ջրովն* փորձեաց զհաւատս զօրացն. նոյնպէս և դաւիթ: - 434. Երրորդ՝ *ջուր* բեթլէհէմի է՛ տէր մեր. որ զծարաւս մեր զովացոյց: - 434. Որ և դաւիթ տեառն նուիրեաց *զջուրն* զայն: - 434. Դաւիթ ծարաւեալ *ջրոյն* բեթլէհէմի ծնիցելոյն ի կուսէ. և ծարաւեալ տէրն ի խաչին փրկութեան մարդկան ազգի: - 438. Բերին **գ** արք ի *ջրոյն* բեթլէհէմի. և **գ** աւետարանիչքն զծնունդն քրիստոսի: - 438. Եւ հաց ոչ ուտել և *ջուր* ոչ ըմպել. զի անընդունելի՛ էր մարմին և արիւն զոհիցն: - 442-443. Վասն է՞ր նւազեցաւ *ջուրն:* - 443. *Ջուրն* նուազեաց և կերակուրն արգելաւ, զի ողորմեսցի իսրայէլի: - 443. Նա՛խ՝ զի այնպէս ծալեսցի *ջուրն:* - 445. Զի՞նչ է նոր կուժն և աղն, որով բժշկեցան *ջուրքն:* - 445. Զի ի խորհուրդ մկրտութեանն ի յառնուլ *ջուր*, հոգին սուրբ և զօրութիւն բարձրելոյն և ողջոյն հօրն ի ձեռն հրեշտակին որ հերքէր զմեղս ըստ մկրտութեան: - 462. Եւ այնք որ էութիւն ընդ էութիւն միաւորին՝ են որք շփոթմամբ միաւորին. որպէս *ջուր* ընդ գինի. և դ տարերք: - 475. Եւ երկուց *ջուրց:* - 476. Երրորդ առ այսոքիւք՝ միաւորութիւն անուանեմք և զխառնուածս երկուց նայից ըստ զանազան որակութեանց. յորում ո՛չ ոք ի խառնեցելոցն զիւր ծայրագոյն որակութիւնն սեռաբար կարօղ է պահել. այլ շփոթեալ անկանի ի ծայրագոյն որակութենէն. որպէս *զջուրց* և զգինեացն խառնուած, և զմեղերաց: - 476. Երրորդ՝ ի կանայ *զջուրն* ի գինի փոխելոյ: - 484. Զի յառաջին ամին *ջուր* բղխեաց ի սեան մատրանն: - 485. Երկրորդ՝ զի խորտակեսցէ զգլուխ վիշապին ի *ջուրն:* - 486. Երրորդ՝ զի լուասցէ զմեղս. և զհինն ադամ թաղեսցէ ի *ջուրն:* - 486. Չորրորդ՝ զի սրբեսցէ զմկրտիչն և *զջուրն:* - 486. Հինգերորդ՝ զի զօրացուսցէ *զջուրն* վերստին ծնանել զմեզ: - 486. Երկրորդ «ի յորդանան». որ ստեղծօղն է տարերաց՝ եդ զինքն ի ներքոյ խոնարհ տարեր *ջրոյն:* - 487. Չորրորդ «մկրտիլ ի նմանէ». այսինքն աղբիւրն ի յառուն. լիութիւնն ի կաթիլ մի *ջրոյն*. մաքուրն ի կաւոյն սրբիլ. և արեգականս արեգակն՝ ի ճրագէն լուսաւորիլ: - 487. ...իսկ քրիստոս ո՛չ ունէր զմեղս. վայն այն վաղվաղակի ել ի *ջրոյն*. և նշանակէ ի մեզ զշնորհաց հեղումն. որ մկրտեալն ազատի ի մեղաց և իսկոյն ելանէ յառաքինութիւնս: - 487. Մկրտեալն քրիստոս. որ սրբեաց *ջզուրն* և զօրացոյց վերստին ծնանիլ զմեզ: - 487. Նիւթն *ջուրն* է. որ առաւել յարմարի մկրտութեան քան զայլ ամենայն հեղուկ նիւթ: - 487. Երկրորդ մկրտութիւն *ջրովն* և ամպովն առ մովսէսիւ ըստ պօղոսի «հարքն մեր յամպն և ի ծովն մկրտեցան». զի օրինա՛կ էր ամպն հոգւոյ, և ծովն *ջրոյ:* - 488. Երրորդ՝ օրինակն. զի ամենայն անսուրբ *ջրով* լուացեալ սրբիւր. և ողողեալ զհանդերձս այնպէս մտանէր ի բանակն. և յաւազանն խոստովանութեան *ջրովն:* - 488. Չորրորդ՝ մկրտութիւնն յովհաննու որ մկրտէր ի յապաշխարութիւն. զի կարասցեն ընդունել զհոգւով մկրտութիւնն. վասն այն յառաջէ՛ր և սրբէ՛ր *ջրովն:* - 488. Հինգերորդ՝ մկրտութիւն տեառն այն որ ինքն մկրտեցաւ. այլ մկրտիմք և մեք զկատարեալ մկրտութիւն տն *ջրով* և հոգւով: - 488. Զոր մկրտութեամբն իւր քրիստոս սրբեաց *զջուրն*, և արար սրբութեան նիւթ և կենաց: - 489. Եւ այժմ մեք *ջրով* մկրտութեանն ջախջախեմք զգլուխն. այսինքն զսկզբնական մեղքն: - 489. Զագահութիւնն՝ բազմաբաշխութիւնն. որ ետ զմարմին իւր ի կերակուր և զարիւնն իւր ըմպելի. զհոգին ի գին. *զջուր* կողին ի լուացումն. զհանդերձն՝ խաչողացն. զմարմինն՝ աշակերտացն. և զմայրն՝ յոհաննու: - 489. Չորրորդն է՛ ելումն արեան և *ջրոյն* ի լուացումն և յարբումն մեր: - 489. Վեցերորդ՝ *ջուր* և արիւն բղխեաց ի կողէն: - 490. Նա՛խ՝ զի ծանիցի թէ սոցա արարիչ է անարգեալն. վասն այն լուսեղէնք և օդեղէնք և օդն խաւարեցան. *ջուր* ի կողիցն բղխեաց. և երկիր շարժեցաւ: - 490. Այլ և խաչաձև ընթանայ նաւ ի վերայ *ջուրց* յորժամ լարէ հողմ զարմիոնն. կամ տարածեալ թևօք հասանին ի նաւահանգիստն: - 494. Այլ և նոյեան տապանն ի վերայ *ջուրց:* - 494. Եւ փայտն որ քաղցրացոյց *զջուրն* ի մեռայն. և ի վիմէն *ջուր* բղխեցոյց: - 494. Ել *ջուր* և արիւն: - 495. Ասեմք, զի ո՛չ ունին շունչ օդոյ այլ շունչ *ջրոյ*. և հանեալ ի *ջրոյն* պակասի շունչն. որպէս ասացաւ ի վերոյ ի **ժը** գլուխն ի **զ** համարն: - 511. Եւ ա՛յս է պատճառն. վասն զի տունկն յարմատն է հաստատեալ. և ձուկն ի *ջուրն*. և կենդանիք ի շունչ և յարիւն: - 511. Նա՛և բազում տեսակք են ի *ջուրս* և ի յօդս. որպէս չղջիկանն առանց արեան է կե՛ր զամենայն: - 511. Եօթներորդ ասեն, *ջո՛ւր* է ձուկն: - 511. Ասեմք թէ՝ պօղոս մարմին ասէ և դու *ջուր* ասես...: - 511. ...իսկ մարմինն յերեսուն ժամուն ի գերեզմանէն յարեաւ. զի երեսնամեայ մկրտեցաւ մարմնով և ել ի *ջրոյն:* - 516. Եւ թէ արտաքոյ կանոնա՛ց է *ջուրն:* - 526. Նոյնպէս և շինեալն օրհնութեամբ. զի լուանամք նախ *ջրով* և ապա՛ գինւով: - 533. Զորօրինակ, արեգական լոյսն տկար աչաց վնասիչ է և ո՛չ օգուտ. և *ջուր* չորացեալ տնկոյ: - 540. Եւ անապական

պատարագեմ զքրիստոս որպէս կանոնքն է առաքելոցն և կղեմայ. և դու ապականես *ջրով* և զայլն որպէս յառաջիկայդ ասացի: - 548. Երկրորդ՝ կրկին *ջուրն*, ջերմ և ցուրտ: - 553. Իսկ վասն *ջրոյն* զի՞նչ պարտ է ասել. զի յոյնք թերի ցուցանեն զլատինացւոց խառնումն, ինքեանց կրկին խառնմամբն. և զայն խորհուրդ առեալ: - 554. Բարկութիւնն ցասմանն. իսկ Ծուլութիւնն է հոգւոյն. Ագահութիւնն հրոյն. Որկրամոլութիւնն օդոյն. և Բղջախոհութիւնն *ջրոյն:* - 559. Ի *ջրոյ* պոռնկութիւն և փառասիրութիւն. որ գէճ է և թոյլ. և փառասէրն յայլոյ բանս մեղկի և թուլանայ: - 560. Պոռնկութիւնն *ջրոյ:* - 560. Յոգւոյ և ի *ջրոյ* փառասիրութիւնն: - 560. Եւ թէ այր մարդ ոչ լինի և տղայն մերձ ի մեռանիլ լինի, կինն կարէ՛ մկրտել թէ գիտէ զձև բանին զոր քրիստոս ուսոյց «յանուն Հօր և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ». ցանէ՛ *զջուրն* և ասէ՝ մկրտեալ լինի: - 588-589. ...և ապա՛ էջ հոգին ի մկրտեալն նորա. զիա՞րդ ի ձեռն կնոջ լինի տուեալ շնորհք հոգւոյն լուացմամբ *ջրոյն:* - 589. ...և զայս պատճառէ՛ զօրեղ իշխանութիւն քահանային և *ջրոյ* առաւելութիւնն: - 590. Երկրորդ՝ զի կուսութեամբ ծնանի առանց ապականութեան. և զայս պատճառէ՛ հոգին սուրբ և նիւթ *ջրոյն* զի հեղո՛ւկ է: - 590. Վասն է՞ր ի *ջուր* մկրտիմք: - 591. Զի *ջուր* հակառակ է հրոյ. և զի՞նչ է մեղք, եթէ ոչ հուր. որպէս յոգւոջ բարկութիւն. և ի մարմնի ցանկութիւն. ուստի յայտ է զի հրով տանջանաց պատժի. և աստ զի հուրն շիջցի ի *ջուր* մկրտիմք: - 591. Դարձեալ՝ *ջուր* զաղտս լուանայ. զծարաւս շիջուցանէ. զպատկերս ցուցանէ: - 591. Այսպէս *ջրովն* մկրտիմք ի քրիստոս և որդիք աստուծոյ կոչիմք. և իւղովն ի շնորհք հոգւոյն սրբոյ միաւորիմք: - 593. Այլ նարօտն կարմիր և սպիտակ մանեալ՝ զարիւն և *զջուր* կողին քրիստոսի: - 594. Այլ գիտելի է, զի ոմանք հետևօղք չար աղանդոյն քաղկեդոնի մոլորեալք ի ճշմարտութենէն՝ *ջուր* խառնեն յանապական բաժակ արեանն քրիստոսի: - 594. Նա՛խ՝ է՛ վկայութիւն անդուստ իսկ թշնամեացն. քանզի ասէ ալպերտն ի յառաջին գիրքն **ժա** համարին, թէ հոգի ասեմ սրբութեան. արիւն փրկութեան. և *ջուր* լուացման: - 594. Եւ ի չորրորդ գիրքն ի ի համարն ասէ, ետ զմարմինն ի կերակուր. զարիւնն ըմպել. զհոգին ի գին. *զջուրն* կողին ի լւացումն: - 594. Եւ ի նոյն ճառն ուր թուէ **ը** քաղցրութիւնս չարչարանցն քրիստոսի, զչորրորդն ասէ՝ ելումն արեան և *ջրոյն* ի լուացումն մեր: - 594-595. Երկրորդ ունիմք վկայութիւն ի քրիստոսէ յորժամ ետ զարիւնն ի տեսակ գինւոյն՝ ասաց, «ո՛չ արբից ի բերոյ որթոյ մինչև արբից զդա նոր արքայութեան հօր իմոյ». և *ջուրն* ո՛չ է բեր որթոյ: - 595. Եւ թէ՝ «գինի ուրախ առնէ». և *ջուր* ո՛չ յիշէ: - 595. Եւ յակոբ ի յօրհնելն զյուդա ի դէմս քրիստոսի ասէ՝ «կապեսցէ զորթոյ զյաւանակն. և լուասցէ գինեաւ զպատմուճանն իւր». և *ջուր* ո՛չ յիշէ: - 595. Այլ և մարգարէն մովսէս դնէր յերեսաց սեղանն գառ մի խորովեալ. և հաց և գինի և չորրորդ մասն դորակի հանապազորդ. և *ջուր* ո՛չ դնէր: - 595. Ապա ուրեմն և ի ճշմարտութիւնն ո՛չ է պիտոյ *ջուր:* - 595. Դարձեալ՝ մելքիսեդեկ հաց և գինի մատոյց պատարագ աբրահամու և ո՛չ *ջուր*. որ նշանակէր զճշմարիտ պատարագն քրիստոսի. ապա ուրեմն ո՛չ է պարտ խառնել *ջուր*: - 595. Դարձեալ՝ ի նորս աւետարանն ասէ «էառ զբաժակն ի ձեռն, օրհնեաց և ասէ, ա՛յս է արիւն իմ». և *ջուր* ո՛չ յիշէ: - 595. Եւ որ *ջուր* խառնէ՝ նզովեալ եղիցի ասեն: - 595. Սոքա զխորհուրդ պատարագին ասացին և *ջուր* ո՛չ յիշեն: - 595. Նա՛խ՝ զի *ջուրն* և արիւնն որիշ բղխեաց և ո՛չ խառնեալ. ապա յա՛յտ է թէ որիշ է խորհուրդ *ջրոյն* և որիշ արեանն: - 595. Երկրորդ՝ զի թէ խառն բղխեաց ըստ քեզ վասն այն ի պատարագն *ջուր* խառնես, ապա և ի *ջուրն* գինի խառնեա և այնպէս մկրտեա՛: - 595. Ապա թէ ոչ՝ *ջուրն* է ի մկրտութիւն, և անապական արիւնն ի հաղորդութիւն: - 595. Զի առաւել յարմա՛ր է անապակ բաժակն անապական արեանն քրիստոսի, քան թէ խառնեալն ի *ջրոյ* և ապականեալն: - 595. Եւ թէ ասիցեն հակառակքն մեր, ո՛չ ապականի գինին զի սակաւ է *ջուրն:* - 595. ...զի մին կաթ *ջուրն* և մին սափորն հաւասար են բնութեամբ: - 595. Ապա ուրեմն թէպէտ և սակաւ խառնի *ջուրն*, բնութիւնք գինւոյն և *ջրոյն* ապականեցան. զի ո՛չ անապակ գինի է և ո՛չ պարզ *ջուր*: - 595-596. Եւ թէ ոք ասիցէ, առանց *ջրոյ* գինի ո՛չ ըմպեն յերուսաղէմ: - 596. Ասեմք առ այս, թէ յառաջ խառնումն *ջրոյն* ո՛չ է ըստ խորհրդոյն. որպէս և ո՛չ առ մեզ, թէ վաճառօղն խառնեսցէ *ջուր*. այլ քրիստոս ո՛չ խառնեաց: - 596. Եւ թէ ասեն՝ զեկեղեցին կու նշանակէ *ջուրն* այն: - 596. Ասեմք թէ՝ եկեղեցին սիրով և հաւատով է միացեալ ընդ հաղորդութիւնն քրիստոսի և ո՛չ *ջրով:* - 596. Եւ թէ ասեն՝ հաղորդութիւնն նշանա՛կ է մահուն քրիստոսի յորմէ ել արիւն և *ջուր:* - 596. Ասեմք թէ՝ արիւնն է՛ ի խորհուրդ հաղորդութեանն. *ջուրն* ի մկրտութեանն...: - 596. Եւ թէ ասեն՝ *ջուրն* կրկին յատկութիւն ունի. այսինքն զովացնէ և լուանայ: - 596. Ասեմք թէ՝ խառնումն ո՛չ *զջրոյ* և գինւոյ ասէ, այլ խառնել զայն ասէ որ արկանի գինին ի խառնարանն: - 596. Իսկ թէ մարմնական խնդրես զխառնումն *ջրոյ* և պնդիս ի հակառակն, ասեմք քեզ թէ ո՛չ միայն ջրոյ, այլ և կաթին և մեղեր և գինւոյ ասէ խառնումն ի

խառնարանն...: - 596. Իսկ թէ մարմնական խնդրես զխառնումն ջրոյ և պնդիս ի հակառակն, ասեմք քեզ թէ ո՛չ միայն ջրոյ, այլ և կաթին և մեղեր և գինւոյ ասէ խառնումն ի խառնարանն...: - 596. Այլ և առաքեալքն և հետևողք նոցա հարքն սուրբք՝ ո՛չ գիտէին զխառնարանն. և դու ուսար և խառնես ջուր և ընդ անիծիւք նոցա մնաս որպէս ցուցաւ ի վերոյ: - 596. Այլ և զայս հարցանեմք ձեզ. ո՞ր բան է որ զջուրն ի խորհուրդ կատարէ: - 596. Իսկ ջուրն մնաց սոսկ ջուր և անկատար: - 596. Ապա վասն է՞ր ոմանք ջուր խառնեն և խմոր: - 596. ...զի որք կամին զմարմինն քրիստոսի ապականացու ասել՝ խմոր և ջուր խառնեն. թէպէտ այլ և այլ պատճառեն: - 596-597. Ոմանք ասեն թէ ի ջուր եթաց և լուաց յօրհնութենէն. և այս ո՛չ է ընդունելի կարծիս: - 599. այլ ո՛չ յօրհնեալ հացէն և ի գինւոյն. այլ էառ ի սեղանոյն հաց և եթաց ի ջուր ինչ կամ ի սոսկ գինի՝ և եա: - 599. Ասեմք թէ՝ և զայս ունիմք ծածկապէս. որպէս այն որ ի ջուր աւազանին խաչանման մեռոնն խառնի...: - 605. ...նախ վասն ա՛յս խորհրդոյս է. և երկրորդ՝ զի մկրտութիւնս մեր ո՛չ ի ջուրն յովաննու, այլ ի մահն քրիստոսի է: - 605. Ընթերցօղն ջրոյ: - 609. Տասներորդ, սա՛ սրբի ջրով և օծանի, և ապա՛ է եկեղեցի: - 614. Իսկ մարդս եկեղեցի, մկրտի ջրով և դրոշմի սուրբ մեռոնաւ...: - 614. Նա՛խ՝ զի վասն յանցանաց մարդոյն ադամայ դատապարտեցան տարերք. հող, ջուր, և այլն...: - 615. Երրորդ՝ զի մովսէս ի կանգնել զխորանն օրինակի՝ արեամբ նոխազաց և ջրով և իւղովն էօծ և սրբեաց: - 615. Նոյնպէս և մեք ի ճշմարտութիւնս՝ ջրով և գինով և սուրբ մեռոնաւն օծանեմք: - 615. Ա՛րդ՝ ջուր և գինին և մեռոնն նշանակեն ի մեզ զջուր սրբութեան աւազանին. և մեռոնն որով օծաք և դրոշմեցաք. և ապա ճաշակմամբ մեղսաքաւիչ արեանն կատարեցաք: - 615. Դարձեալ՝ խոստովանութեան ջրովն սրբիմք...: - 615. Եւ տապանն նշանակէ՛ զեկեղեցի. որք ի ձայն ժամահարին ժողովին և ապրին ի ջուրց հեղեղաց մեղաց: - 618. Երրորդ՝ զի ջուր արտասուացն զհուր մեղացն շիջուցանէ: - 619. Ջրոյն կենդանեաց: - 640. Երկրորդ՝ յօրէնսն ջրոյ: - 640. Նոյի ջրով: - 640. Երկրորդն ի մկրտիլն ջրով: - 640. Որ ի հարսանիսն զջուրն ի գինի փոխեաց և օրհնեաց: - 655. Դեկ նաւին ի ջուրս բեկեալ թուի. և ցաւոտ գլխոյ լերինք շարժեալ: - 662. Երկրորդ, ցուցանէ թէ՝ որպէս ի մկրտութիւնն նախ օծաւ և ապա թաղեցաւ ի ջուր...: - 672. ...զի արտասուքն ջերմ ջուր է և սրբարար...: - 676. Եւ յայս միտս նախ օրհնեմք ըզջուրն և ապա մկրտեմք զերեխայն: - 676. Այլ և ամենայն աշխարհ տաճա՛ր է աստուծոյ. թէ ի դաշտի թէ յագարակի թէ ի տղմի. կամ ի ջուր սուզի, կամ ի գազանաց գիշատի, կամ ի ծկանց կլցի, արդարութեան ոչ ինչ վնասէ: - 678. Եւ զի պահէ՛ ո՛չ ուտիլ ի գազանէ, և ո՛չ ցրուիլ ի ջրոյ. և ո՛չ հոսիլ ի հողմոյ, և յայլոցն պահէ: - 678. Դարձեալ՝ որպէս զսերմանիս թաղեալ յերկրի՝ դարձեալ ջրով ոռոգանեմք...: - 680. ...այսօր հոգևոր ջրով դարձեալ ոռոգանեմք, զի բուսցի ի գարնանաշարժ յարութեանն: - 680. Մանանայ նոցա բանն աստուծոյ. և ջուր հոգին սուրբ: - 682. Ասեմք նախ՝ եթէ մարգարէն դաւիթ վասն բոլոր աշխարհի ասէ որ ջրով և հրով անցանի. և ապա հանգիստ յաւիտենական լինի...: - 701. ...ուստի յայտ է զի քաւարանն ջուր ո՛չ է: - 701. Դարձեալ ասեմք եթէ ջուր զմկրտութիւնն ասէ, և հուր զխոստովանութիւնն մեղաց: - 701. Զի զգլուխ վիշապին ի ջուրսն յորդանանու ջախջախեաց ըստ յոբայ որ է մեղքն...: - 705. Դարձեալ՝ որ հրոյ է վերակացու, ի վերայ նորին հարկանէ. և որ օդոյ և ջրոյ և երկրի, ի վերայ իւրաքանչիւր տարերաց գոչէ՛: -714. Երկրորդ, զի չո՛րք են սկզբունք աշխարհի. երկինք որ է՛ երկուր. հուր և օդ. և երկիր որ է՛ բ իր. հող և ջուր: - 714. Եւ զպտուղս զգայութեանց ջրով հասուցաք. եթէ բարի և եթէ չար: - 714. Եւ դարձեալ՝ որպէս զանազան սերմանիք ցորեան կորեակ և այլք՝ հասարակ ի մի վայր սերմանին. և հասարակ ջրով և ջերմութեամբ սնանին. և ի յազգս իւրեանց կատարին. ցորեանն ի ցորեանն և այլն: - 719. Եւ ջուրքն այնպէս պարզ լինին որպէս զպլօր: - 728. Դարձեալ՝ էութիւնն մնայ, այլ ներգործութիւնն պակասի՝ այսպէս. զի ջերմութիւն հրոյն և ցրտութիւն ջրոյն և փոփոխմունք օդոյդ որպէս ամպք և այլն, և սևութիւն երկրի...: - 728. Նա՛խ՝ զի աշխարհս ջրով և հրով ապականեսցի ըստ մարգարէութեանն ենովքայ: - 731. Եւ յիրաւի նախ ջրով. զի յայնժամ ջերմացեալ էին մարդիկ ի ցանկութիւն մեղաց, վասն որոյ ջրով պատժեցան: - 731. Վեցերորդ՝ զի գործ աստուծոյ է ի նւաստ և ի փոքր ինչ իր զմեծամեծսն ներգործել. որպէս կաւովն զկուրին աչքն եբաց, և ի վիմէն ջուր բղխեցոյց բժան. և այլ բազումս: - 733-734. Զի որպէս ձկունք ի ջուրս, այնպէս նոքա կան ի հուր: - 752. Ուղղակի ուրեմն փայտս այս ասի գոլ տնկեալ մերձ յընթացս ջրոց. զի ի նմանութիւն մարմնոյ մեղաց երևեցաւ. և զամենայն նուաստութիւնս մեր յինքն ընկալաւ: - 755. Եւ քանզի մովսէս որ ջրային կամ ի ջրոյ հանեալ թարգմանի. թէպէտ երբեմն զօրէնս և երբեմն զտէրն նշանակէ. այլ աստ ոչ զօրէնս, այլ զտէրն գուշակէ՛. որ ի ջրոց մարդկայինս բնութեան ընկալեալ եղև: - 756. Սոքա՛ են հոսանք ջրոցն լիութեան. զորոց յերգս գտանի սիրելոյ. որ

ի խորութիւնն հայեցեալ աղաւնւոյն, ի գալստենէ բազային զգուշանայ: - 756. Սա՛ է *ջուրն* յաղեալ. որ զդառնութիւն *ջուրցն* այնոցիկ որք գտանին ի մեռայն՝ քաղցրացոյց: - 756. Նոյնպէս և *ջուրն* որ հպեցաւ ի մարմին փրկչին, և ծնաւ զմարդիկ որդիս աստուծոյ, նորոգեսցի և պայծառասցի քան զամենայն տեսիլս գեղեցկագոյն ականց: - 759. Զի նւազունք են ամենայն փափկութիւնք որ լինին յաշխարհի մինչև ցօրն դատաստանի, բաղդատեալ առ այն քաղցրութիւն. որպէս կաթիլ մի *ջրոյ* առ համեմատութիւն ընդ հանուր ծովու: - 762. Ի ծովուց *ջուրց* ի չորից նաւաց հազիւ մինն կորնչի. և ի ծովու այսմ աշխարհի ի չորից նաւաց հազիւ մինն ի նաւահանգիստ փրկութեան հասանէ: - 764. Նա՛խ՝ ծառն կենաց են հաւատացելոց անձինքն տնկեալք ի վտակս հոգւոյն՝ *ջրով* աւազանին. հետևեալ ի մշտնջենաւոր կեանս: - 765. Եւ որպէս զկենդանարար *ջուր* զընդունակս իւր դալարացուցեալ. ծաղկեալ յաստիս և պտղաբերեալ ի հանդերձեալն...: - 768. Նմանապէս և հիմունք երկրի *ջուրք* տատանեցան. այսպէս և սիւնք ասացեալն օդոյ դողային. և լուսաճեմքն խաւարեին: - 788

**ՋՐԱԾԻՆ +** Նմանապէս և մեծն ի մարգարէս աստուածախօսն մովսէս որ աստուած կոչեցաւ փարաւոնի. իշխելով տարերցս փոփոխման, որ *ջրածինն* էր՝ եղև վիմածին և կայծակնածին. որում լուսաւորեցան երեսք: - 288. Վեցերորդ ըստ մտաց, զի մովսէս *ջրածին* լսի. զի որք ո՛չ ծնանին աւազանաւ, ընդ մահու իշխանութեամբ են: - 409

**ՋՐԱՅԻՆ +** Եւ զաստեղսն և զշունն *ջրային*. և երկրային և երկնային: - 54. Իսկ որպէս հոմանուն ձայն, զի հաւասարապէս հաղորդի որոց կոչինն. որպէս խոյ երկնային և երկրային և *ջրային*. զի ո՛չ առաւել և ո՛չ նըւազ կոչին. այլ հաւասարապէս: - 89. Վասն *ջրայնոց* և թռչնոց և սողնոց. և թէ քանի՞ ազգեն կենդանեաց: - 155. Եւ թէ ոք ասիցէ՝ զշունչն ո՛չ ունին *ջրայինքն:* - 215. Նոյնպէս և *ջրայինքն* զշունչ ջրոյ: - 215. Վասն է՞ր է՝ զի *ջրայինքն* և սողունքն ձայն ո՛չ ունին: - 216. Եւ թագաւոր *ջրայնոցն* Լևիաթանն: - 216. Զի որպէս այլասե՛ռք են ցամաքայինք և *ջրայինք.* նոյնպէս և այլատեսա՛կ են կենդանութեամբ. և այլատեսա՛կ է զենումն նոցա: - 296. Կամ *ջրայինն* որ ո՛չ ունի զարիւն շնչոյ, այլ զարիւն ջրոյ, ո՛չ զենի. զի զենումն նոցա հանումն ի ջրոյն է: - 366. Ի հինգերորդ օր արարչութեանն ի խորհուրդ մկրտութեան *ջրային* կենդանիք և թռչունք յօդս ելին: - 638. Եւ քանզի մովսէս որ *ջրային* կամ ի ջրոյ հանեալ թարգմանի. թէպէտ երբեմն զօրէնս և երբեմն զտէրն նշանակէ. այլ աստ ոչ զօրէնս, այլ զտէրն գուշակէ՛. որ ի ջուրց մարդկայինս բնութեան ընկալեալ եղև: - 756

**ՋՐԱՍՈՅԶ +** Եւ որպէս փարաւօն վասն հեղցուցեալ մանկանցն՝ *ջրասոյզ* կորեաւ. և յառաջ քան զայս՝ **Ժ** հարուածովք պատժեցան: - 288

**ՋՐԱՏԵՍԱԿ +** Նոյնպէս ընդ ներքին դուռն զաւելորդն արտաքս վտարէ ընդ աղիսն. և յայսմանէ *ջրատեսակն* ընդ ցնցուղ քաղրթին ի փալաբուշտն իջանէ և լինի մէզ: - 242. Իսկ արտասուքն աղի և *ջրատեսակ*. զի բարեխառնեսցէ մինն զջերմութիւն հրոյ, և միւսն՝ զի մի՛ նեխիցին պարուտակք աչաց. շրջապատեալ երակացն լուսոյ: - 786

**ՋՐԱՐԲ +** Անունք Նախահարցն: ...Սէթ *ջրարբ*. կամ մոռացումն չարի: - 299

**ՋՐԱՐԲԻ +** Եօթներորդ, ոմանք *ջրարբիք* և ոմանք անջրդիք: - 721. ...*ջրարբիք* են հաւատով և յուսով մեռեալքն. և հանապազ յեկեղեցի սուրբ յիշատակութիւն նոցա կատարի...: - 721

**ՋՐԳՈՂԻՄ +** Զի նման է *ջրգողեալ* հիւանդի. որ որքան աւելի խմէ, առաւել ծարաւի: - 570

**ՋՐԵՂԷՆ +** Երկրորդ՝ *ջրեղէն:* - 183. Հրեղէն զլուսաւորսն ասէ. և ջուր զվերին կամարն *ջրեղէն:* - 188. Դարձեալ՝ հրեշտակք հրեղէնք գոլով՝ ընդ *ջրեղէն* կամարն գնալով ո՛չ շիջանին: - 188. Երկրորդն *ջրեղէն* և օդեղէն: - 221. յԵրկրորդ օրն, հաստատութիւնն և *ջրեղէն* կամարն. և ծովք. և ցամաք երկիր: - 226. Ջուր և *ջրեղէնքն:* - 342. Չորրորդ՝ է մոլորակաց գօտիք. և **ը** հաստատութիւնն. և *ջրեղէն* և լուսեղէն երկինքն: - 343. Եւ երկրորդն է լուսաւոր զօրութեամբ թափանցանց. գոլով *ջրեղէն* կամ պլօրեայ ըստ ոմանց: - 787

**ՋՐՀԵՂ +** Դարձեալ **բժ**ան դրունք է ի մարդն որ են այսոքիկ. երկու աչք. **բ** ականջք. **բ** պինչք, բերանն. և պորտն. **բ** ստինք. *ջրհեղն*. և արտաքնոցն: - 241. Եւ ի *ջրհեղէն* յաբրահամ, ամք **թճխբ**: - 453

**ՋՐՀԵՂԵՂ +** Երկրորդ՝ զի *ջրհեղեղն* համաշխարհական՝ անդ սկսաւ՝ և դարձեալ դադարեաց: - 196. Զի որպէս *ջրհեղեղն* ո՛չ եմուտ ի դրախտն զի ո՛չ էր ապականեալ մեղօք: - 225. Երկրորդ՝ զմին յառաջ քան *զջրհեղեղն*, և զմիւսն յետոյ. զի ցուցցէ թէ յերկուսին ժամանակս ընտրեալքն հաճոյ եղեն աստուծոյ: - 289. Եւ ասեն՝ զգործս *ջրհեղեղին* ունիմք՝ երկնչիմք զի պատուհասէ զմեզ: - 296. Ապա՛ ասեն՝ շինեսցուք բարձր աշտարակ զի մի՛ *ջրհեղեղն* զմեզ կորուսցէ: - 296. Եւ յետ **եճ** և **իե** ամաց

*ջրհեղեղին* էր սկիզբն շինուածոյ ամբարտակին ի աշխարհին բաբելօնի ի դաշտին քաղանէ: - 297. Դարձեալ՝ աստուած յառաջնումն ծննդեան յորժամ զյանցաւորս ըստ բնական մեղացն՝ *ջրհեղեղաւն* ջնջեաց. յերկրորդումն ծննդեան յորժամ զյանցաւորս ի կռապաշտութիւն՝ կարմիր ծովովն ընկղմեաց. յերրորդումն ծննդեան տուժեաց, յորժամ զյանցաւորս գրաւորական օրինացն պատերազմօք սատակեաց: - 351. Նա՛խ՝ զի մարդն տէ՛ր է և թագաւոր. և անասունքն ծառայ ընդ անցաւոր տէրանց. և ծառայքն պատուհասին. որպէս առ *ջրհեղեղաւն:* - 416. Եւ յադամայ ի *ջրհեղեղն* ամք՝ **ամխբ**: - 453. Առաջին մկրտութիւն *ջրհեղեղն*. որ եբարձ հատանելով զմեղս յաշխարհէ: - 488. Վեց հարիւրն զամս նոյի. որ էր ո ամաց և *ջրհեղեղով* ջնջեցան ապստամբքն: - 707-708. Իսկ զոր ինչ շնորհօք լինի ոք ստացեալ, կարէ՛ և մերկանալ. որպէս ադամ զեռակի շնորհն. և առ *ջրհեղեղաւն*...: - 782. Զի թէ կորուսեալ էր, այսինքն բարձեալ ամենևին յազգէն ադամայ, ուստի՞ գոյր որդւոց նորա. կամ ո՞րպէս առ *ջրհեղեղաւն* բառնիւր բարձեալն: - 782

**ՋՐՀՈՍ +** Իսկ Եկաւորն և Կշիռն և *Ջրհոսն*, ունին զբնութիւն օդոյ ջերմ և գէջ: - 189. Եւ յայծեղջիւրն ի *ջրհոսն* և ի ձուկն՝ առնէ զձմեռն. որ առաւելու գիշերն քան զտիւ **զ** ժամ. զի լինի գիշերն **ժե** ժամ. և տիւն ինն ժամ. որպէս յամառն տիւն է **ժե** ժամ. և գիշերն **թ** ժամ: - 190. Երկրորդ՝ զի ամենայն ուրեք հողն ընդ ջրոյն խա՛ռն է. և յա՛յտ է ի *ջրհոս*. և ջուրն այն որ բարձրացեալ է ընդ հողոյն՝ իջանէ ի խոնարհ և բղխէ աղբիւր: - 209

**ՋՐՀՈՐ +** Եւ զիա՞րդ բաժակաւ լրումն հանդիպեսցի կենդանաբուղխ *ջրհորոյ:* - 93. Եօթներորդ՝ որպէս փեսաւէրն իսահակայ եղիազար խօսեցաւ զհարսն ի վերայ *ջրհորոյն:* - 305. Նա՛խ՝ որպէս յակոբ պատարագ մատոյց ի *ջրհորն* երդման զվերջինն և ապա ել յերկրէն: - 314. Նուազիլ՝ ո՛չ ասեմ զամենևին պակասիլն. զի առ *ջրհորաւն* մեծի անյայտ եղև վէմն. և յելսն յորդանանու մանանայն ո՛չ գտաւ: - 415

**ՋՐՕՐՀՆԷՔ** - Իսկ զկանոն *ջրօրհնէից*՝ սրբոյն բարսղի է արարեալ յեօթն ամի հայրապետութեան իւրոյ յեէմ. զի անդ հանդիպեցաւ: - 658

# Ռ

**ՌԱԲՈՒԻԱ** - Անունք Կանանց Նախապետացն: ...Արփաքսաթայն *ռաբուիա՛:* - 299

**ՌԱԳԱՒ** - Անունք Կանանց Նախապետացն: ...*Ռագաւայն* սուրա՛: - 299

**ՌԱԳՈՒէԼ** - Այսպէս. աբրահամ. իսահակ. եսաւ. *ռագուէլ*. զարեհ. Յոբ: - 320. Եւ սեփովրա դուստր էր *ռագուէլի*, և քոյր յոթորայ. յազգէ աբրահամու **ե** երորդ այսպէս: - 330. Սեփովրա էր դուստր *ռագուէլի* քրմի՝ որդոյ դեդանայ. որդւոյ յեկտանայ. որդւոյ աբրահամու ի քետուրայ կնոջէ: - 330

**ՌԱՅԱԲ** - *Ռահաբ*՝ որ ծնաւ զբոյոս ի սաղմանա՛յ: - 300. Ապրեցոյց *զռահաբ* պոռնիկն ի դէմս հեթանոսաց եկեղեցւոյ: - 414. Եօթներորդ՝ *ռահաբ* եթող զկուռս և զբազում հոմանիս. և ցանկացաւ յեսուայ: - 417. Երկոտասաներորդ՝ նա՛ ապրեցոյց *զռահաբ* կարմիր նշանաւ: - 418. Չորեքտասաներորդ՝ նա քարկոծեաց զաքար ազգականօք. և *զռահաբ* փոխանակեաց իւր ազգօքն: - 418. Եւ սաղմոն էառ *զռահաբ* իւր կին զոր յերիքովէ՛: - 452

**ՌԱՄԻԿ +** Յինգերորդ՝ ի նմին իրացն յայտնի է՝ զի *ռամիկ* ժողովուրդն ի տօնի քաւութեանն երեքօրեայ սրբութեամբ մերձենային առ դուռն տաճարին: - 483. Չորրորդ՝ *զռամիկս* և զմարմնասէրս աիիւ և տանջանօք պատրեսցէ...: - 708

**ՌԱՄՏԵՍԱՑ** - Ապա ուրեմն ի ժամանակիս յայս ընկե՛ր են սաւուղայ որք սակաւ մի կարծեօք հաւանին երազոց կամ վիճակաց և *ռամտեսաց* և այլոցն: - 429

**ՌԱՊԵՏ (ՅԱՋԱՐԱՊԵՏ)** - Ոմանք ասեն եթէ՝ մովսէս զդատաւորսն ի **դ** բաժանեաց ամենայն ժողովրդեանն. որ էր **ժ**ապետ. յիսնապետ. **ճ**ապետ. և *ռապետ:* - 609

**ՌԱՓՍԱԿԱՅ** - Գիշերի սատակեցան զօրքն *ռափսակայ*. և վասն յովսիայ զի հարաւ և մեռաւ: - 413. Վասն է՞ր ի գիշերի սատակեցան զօրքն *ռափսակայ:* - 446. Չորեքտասաներորդ՝ այլ և ի գիշերի հրեշտակն տեառն էհան զզօրսն *ռափսակայ*. որ պաշարեալ էին զէմ և փրկեաց զնոսա...: - 514

**ՌԱՔէԼ** - Անունք Կանանց Նախապետացն: ...Յակոբայն *ռաքէլ* և լիա՛: - 299

**ՌԱՔՈՍ** - Որ էած ապտակ քրիստոսի՝ մաղքո՛ս էր անունն: Որ եթուք՝ ոչքոր: ...Որ զլեղին եբեր՝ *ռաքոս:* - 495

**ՌԱՖԱՅԷԼ** - Երրորդքն պահպանեն զիւրաքանչիւր անձինս, որպէս *ռաֆայէլ:* - 136. Երրորդ՝ *ռաֆայէլ*. որ է՛ բժշկութիւն: - 144

**ՌԵԲԵԿԱ** - Անունք Կանանց Նախապետացն: ...Իսահակայն *ռեբեկա՛:* - 299

**ՌԵՔԱԲ** - Զոր աւետարանիչն *ռեքաբ* կոչէ: - 452

**ՌԻԿՈՅ(Ք)** - Եւ այս են **իբ** լեզուքն: ...*Ռիկոյք:* - 298

**ՌԻՇՏ +** Որ արագ ընթանայ և զսպէ զինքն՝ և զերեսն կորակնէ՛ և զբոլոր մարմինն կծկէ՛, երկնչո՛տ է և *ռիշտ* և աղուեսաբարոյ: - 247

**ՌՈԲՈՎԱՄ, ՐՈԲՈՎԱՄ** - Զի՞նչ էր նշանք սամեայ մարգարէի առ սեղանն րոբովամու: - 442. Թագաւորք յուդայ նստան յերուսաղէմ. *Ռոբովամ*. Աբիա. Ասափ. և այլ թագաւորք **իբ**: - 446. Առաջին *րոբովամ* որդին նաբատայ. և այլք ընդ նմա թագաւորք **ի**: - 446. Զի ի *րոբովամէ՛* որ զերինջսն գործեաց՝ վեց եօթանասուն ամ է մինչև զգերութիւնն սակաւ ինչ պակաս. վասն որոյ եօթանասուն ամ շաբաթեցոյց զնոսա ի գերութեան: - 448. Սողոմոն ամաց երկոտասան ծնաւ *զռոբովամ:* - 452. Իսամարիայ **ժ** ազգին տիրէ՛ *րոբովամ* որդին նաբատայ. որք կոչեցան թագաւորք իսրայէլի չարք և ո՛չ բարիք: - 452. Իսկ յերուսաղէմ թագաւորէ՛ *ռոբովամ* որդի Սողոմոնի: - 452. *Ռոբովամ* թագաւորէ՛ յերուսաղէմ ամս **ժէ**: - 452

**ՌՈՃԻԿ +** Տասներորդ՝ յովսէփ *ռոճիկս* տայր նոցա. ա՛յս է զգեստս կատարեալ և կերակուրս: - 315

**ՌՈՄԵԼԱՅ** - ...և փակէի արքայի որդւոյ *ռոմելայ*. և գերեաց զնեփթաղիմ և զգալիլեա. և Զգաղայաթ **զ** ցեղիւքն իսրայէլի. և տարաւ յերկիրն ասորեստանեայց: - 447

**ՌՈՄԵԼՈՍ** - Յօր անունն *ռոմելոս* ասեն. զմին ձեռն և զոտն երկայն և մինն կարճ. զմի ակն խաժ, և զմիւսն սև: - 706

**ՌՈՒԲԷՆ** - *Ռուբէն* օրհնի, զի ապաշխարեաց: - 285. Եւ թէ՝ կեցցէ *ռուբէն:* - 285. *Ռուբէ՛ն* է և Փիլիպպոս: - 348. *Ռուբէն*. Շմաւոն. և Գադ. **ժե** բիւր և ռնծ զօրք նոցա: - 378. Եւ դադան և աբիրօն որդիք *ռուբենի*՝ զիշխանութիւնն խնդրէին զի անդրանիկք էին: - 381. *Զռուբէն* անէծ յակոբ. մովսէս վասն է՞ր օրհնէ: - 409. Նա՛խ՝ վասն ցեղին *ռուբէնի* ասի. փոխելով զանէծքն ի յօրհնութիւն: - 409

**ՌՈՒԲԷՆԵԱՆՍ** - Որ օրհնեաց զզինուորեալ *ռուբէնեանն* և արձակեաց ի տեղիս իւրեանց...: - 419

**ՌՈՒՆԳՆ +** Չէ՛ զարմանք հրաշիցն աստուծոյ. որպէս ամենայն *ռնգունք* զհոտն զգան, և աչք զգոյնն կրէ յինքն, և անծօրելի և անպակա՛ս են յենթակայէն: - 224. Կամարաւնքն՝ թէ ի վերոյ շարակցեսցին՝ սակաւիմա՛ստ է. թէ վայր ի *յռնգունսն* հասցէ, սրամիտ է: - 246. Երկայն *ռունգն* թեթևամիտ է: - 246. Եւ որոց ձայն *յռնգունսն* հնչէ, ստաբանք են և չարախնդացք: - 247. Խունկ *յռնգունքն*, զանուշահոտ վարս նշանակէ: - 671

**ՌՈՒՍ** - Եւ այս են **հք** լեզուքն: ...*Ռուսք:* - 298

# Ս

**ՍԱ +** Նա՛խ, զի ըստ *սոցա* ոչինչ է զանազանութիւն մշտնջենաւորացն և փոփոխականացն…: - 8. Այլ և *սորա* ո՛չ զանազանին ի միմեանց, որպէս բանական և անբան. եթէ է ամենայն ի հարկէ: - 8. Եւ զի լինին և են *սորա*՝ յա՛յտ է յայտնագոյն, զի ո՛չ կարեն ոչ գոլ: - 8. Եւ զի ո՛չ կարեն ոչ գոլ, անկա՛ր է *սոցա* ոչ գոլ: - 8. Աստ ուրեմն ի հարկէ՛ երևեցաւ թէ գոն և են *սորա* ասացեալքս, այսինքն գործ բնութեան և գործ կամաց և գործ պատահմանց. և ո՛չ ոք ուրաստ լինի վասն *սոցա:* - 8. Որպէս յորժամ ասեմք, վաղիւն լինի արև, կամ ո՛չ լինի. լինի անձրև, կամ ո՛չ լինի. ի հարկէ մինն ճշմարիտ է ի *սոցանէ:* - 8. Դարձեալ՝ թէ ի հարկէ է՝ ապա բարձեա՛լ են ամենայն սկզբունք բարոյական առաքինութեանց. այսինքն խոհեմութեան. արիութեան. ողջախոհութեան. և արդարութեան. զի *սորա* ստացեալ լինին առ ոմանս՝ և ո՛չ ի հարկէ: - 11. Դարձեալ թէ ի հարկէ՛ է՝ ո՛չ հետևի գով և պարսաւ ոմանց. զի *սորա* կամաւորա՛ցն են և ո՛չ ակամայիցն: - 11. Նա՛խ՝ եթէ ուշիմ և ապուշ և այլն ըստ կարգի, *սորա* եթէ ի մարմնոյն խառնուածոյ պատճառին՝ և եթէ բնական որակութեամբ հոգւոյն՝ նման և աննման գոլ, առանց ներգործելոյ ո՛չ չար են և ո՛չ բարի. ո՛չ գով. և ո՛չ պարսաւ հետևի. որպէս և ո՛չ բնական բարուց անաւնոց: - 19. Դարձեալ ասեմք թէ՝ ըստ ինքեան *սորա* ոչ են չար. այլ բարի. որպէս տգէտն ի մեղաց. և բարկութիւնն ընդդէմ չարեաց. և ցանկացօղն բարեաց. զի ըստ բնութեան գործելով ոչ ոք մեղանչէ ասէ փիլիսոփայն: - 19. Դարձեալ ասեմք թէ՝ *սորա* ո՛չ են բնութիւնք ի հոգին. այլ որակութիւնք զանազանք և աննմանութիւնք. որպէս պատկերք երեսացն: - 19. Այլ արդ՝ եդ աստուած *զսոսա* բնական որակութիւնս ի մասունս հոգւոյն…: - 19. Տասներորդ՝ զի սուտ լինէին ամենայն օրէնք բնական՝ գրական և աւետարանական. զի *սորա* ամենքն խրատեն զմեզ խոտորիլ ի չարէ՝ և առնել զբարի. և այլն ամենայն: - 20. Եւ ո՛չ որպէս ներհականք. որպէս ջերմ և ցուրտ. սպիտակ և սեաւ. զի *սորա* որակութիւնք են. իսկ բարին էութիւն է, և չարն ո՛չ է էութիւն: - 21. Զի ո՛չ նա այսմ և ո՛չ *սա* այնմ կարէ միակ գոլ. վասն որոյ հա՛րկ է գոլ այնպիսի միակ՝ որ և ամենայն բազմութեան և միակաց է՛ միակ. որ է աստուած: - 26. Արդ՝ կռապաշտն և հերձուածօղն հաւասա՛ր են յամբարիշտ գոլն. զի որպէս շուն դառնայ ի փսխած իւր. այսինքն զի նա ո՛չ ունէր, և *սա*՛ ուրացաւ և դարձաւ անդրէն: - 33. Վասն ճանաչման իւրոյ աստուած կազմեաց կրկին կերպիւ օրինակս. այսինքն իմանալի և զգալի. որպէս հոգին, միտքն, և նմանք *սոցա*. կամ արեգակն, լոյս, և նմանք նոցա: - 24. Եւ յայտնագոյն պա՛րտ է իմանալ թէ է՛ արարիչ *սոցա:* - 26. Իններորդ՝ զիա՞րդ մի և **գ** ասէք. և պատասխանիք *սոցա* ամենեցուն: - 30. Իսկ *սորա* անզեղջ մնան որպէս սատանայ՝ զինքեանս ուղիղ կարծելով: - 33. Այլ *սորա* ինքեանց և բազմաց. այսինքն հօտին քրիստոսի. «յափշտակելով ի նմանէ և ինքեանց առնելով» ասէ սուրբն կիւրեղ. և յետոյ գրով աւանդեցին զչար աղանդն այլոց չար յիշատակ և ի կորուստ անձանց իւրեանց: - 33. Իսկ *սոցա* մարդեղութիւն բանին: - 33. Իսկ *սորա* և զիրեշտակս ընդ մեզ դասեն. որպէս յայտ է ի գիրս պարապմանցն Կիւրեղի: - 34. Եւ *սորա* զմիայն տէրն ուրացեալ՝ քրիստոսամարտ լեզուաւ զանձինս կորուսանեն: - 34. Եւ *սորա* սոսկ մարդ դաւանին, և աստուած ասեն միայն կոչմամբ և անձամբ: - 34. Եւ *սորա* ուրանան զերրորդութիւն անձանցն ի միում բնութեան: - 34. Եւ *սորա* մարդադաւան ուրացօղք խաչին և կրօնից նորոց: - 34. Եւ *սորա* գիտութեամբ յանձինս իւրեանց անարգեցին…: - 34. Եւ այս վասն բազում բաղդատութեան կոչին *սորա* նեռն: - 34. Չորրորդ՝ նա սուտ քրիստոս և սուտ մարգարէ կոչի. և *սորա* սուտ քահանայք՝ և սուտ վարդապետք՝ և սուտ առաքեալք կոչին: - 35. Վեցերորդ՝ հակառակէ քրիստոսի՝ և քրիստոնէից. և *սորա* հակառակին սուրբ եկեղեցւոյ և ուղղափառ հաւատոյ. և զոր բանն աստուած առեալ զմարդկայինս բնութիւն միաւորեաց ընդ իւրում աստուածութեանն՝ *սորա* ընդդէմ նմին որոշեն զբանն ի մարմնոյն…: - 35. Եօթներորդ՝ զնա փոքր եղջիւր կոչէ դանիէլ. խեթկի և մեծամեծս բարբառելով. և *սորա* խեթկեն զեկեղեցի. և բանան զհայհոյիչ բերանս իւրեանց յերկինս, և զլեզուս ածէին զերկրաւ: - 35. Իններորդ՝ նա՛ ի տաճարին նստի և ուսուցանէ. և *սորա* ի ներքս ի յեկեղեցի. զկերպարանս բարեպաշտի ունելով արտաքոյ՝ ծածկեալ են գառնենեաւ զգայլենիս: - 35. Տասներորդ՝ նեռն քարոզութեամբ պատրէ՝ և ուրական սքանչելեց. և այլն. և *սորա* քաղցրաբանութեամբ և օրհնութեամբ պատրեն զմիտս անմեղաց…: - 35. Եւ այլս բազում բաղդատութիւն գոլով հերձւածողի և նեռինն. և զորս տէրն գնեաց՝ *սորա* ուրացեալք՝ ածեն ի վերայ անձանց զերագահասն կորուստ: - 35. Նոյնպէս և վասն *սոցա* յառաջագոյն ասացաւ յառաքելոց և ի վարդապետաց. զի մի՛ յանգէտս խոտորեսցին ընդ նոսա: - 35. Տասներորդ՝ առարկութիւն

արիանոսացն՝ Պարտէ ասեն թագաւորել *սմա* մինչև ի ժամանակաց փոփոխումն ըստ առաքելոյն: - 41. Վեցերորդ՝ որ փոխին այլք յայլոց բնութենէ վասն առատութեան բնութեանն. որպէս կարպասածին ճճին ունի *սա* ծնունդ սերմամբ իւր զնմանն. և ունի ելումն զկերպասն: - 53. Են և ասին ի յէքս, մարդ, հրեշտակ, երկինք, երկիր. և որ ի մէջ *սոցա* է՛ և ասի: - 55. Եւ թէ նոքա արարածք են, որպէ՞ս արար *զսոսա* անբան և անկենդան: - 55. Նախ՝ զի խօսքն որ է արտաբերեալ բանն, նոյն *սա*՛ է ներտրամադրեալն բան: - 62. Վեցերորդ՝ զի թէ մեք շնորհիւ՝ որդեգրեալքս կերպանամք առ ճշմարիտ և բնութեամբ որդին, և թէ և նա՛ է ըստ մեզ շնորհիւ, պիտո՛յ է նմա վերնագոյն բնութեամբ որդի մարմնացեալ ի յոր կերպասցի և *սա*՛ի նմանութիւն նորա շնորհօք որդի: - 67. Զի *սա* ընդ դէմ վասն մի բնութեանն ասէ որ յերրորդութիւնն է և ի անօրէնութիւնն բանին. *սոքա* զընդդէմն վասն բաժանմանն իմանան: - 80. Իսկ որք յետ միաւորութեանն՝ **բ** բնութիւնս խոստովանին, և *սոքա* են **բ** դասք: - 82. Եւ *սոքա* էութեամբ և բնութեամբ ո՛չ խոստովանին զմիութիւնն. այլ՝ անձամբ միայն: - 82. Ա՛րդ՝ *սոքա* զանունն մի ասեն, և յանունն միաւորեն զ**բ** էութիւնսն. այսինքն զաստուածն և զմարդն. և ասեն մի անձն. մի որդի. մի քրիստոս. և այլն: - 82. Այսպէս *սոքա* կոչմամբ և ձայնիւ միաւորեն, և իրօք և բնութեամբ բաժանեն և որոշեն: - 82. Եւ *սոքա* կամ շփոթեալ խոստովանին. որպէս եւտիքէս և այլքն: - 82. Յորոց թէ մի ի *սոցանէ* գտցի ումեք, որոշեսցէ՝ ի միմեանց: - 87. Ա՛րդ՝ ցուցցուք՝ զի զվեցեքինն *սոցա* բաժանեն երկաբնակքն: - 87. Բե՛ր յարմարեսցուք այժմ զերիս եղանակս *սոցա*՝ միաւորութեան փրկչին ուղղակի իմն տեսութեամբ. որ ո՛չ ախորժելի է այլոց: - 89. Ի յերից *սոցա* զո՞րն ասէք մի քրիստոս. զաստուածային անձն ըստ ինքեա՞ն, եթէ զաստուածային բնութիւնն: - 89. Իսկ *սա* ասէ միանգամայն. այսինքն է համանգամայն հակադարձին առ միմեանս և հետևին միմեանց: - 91. Դարձեալ՝ որպէս ձեռն և ոտն մարդոյ ո՛չ է մարդ, նոյնպէս և ձեռն քրիստոսի ո՛չ է քրիստոս. և ոտն և այլ մասունքն ո՛չ են քրիստոս. ապա և բոլոր մարմինն ո՛չ է քրիստոս. և հոգին ո՛չ է քրիստոս. ապա թէ *սոքա* չեն քրիստոս, և բանն ըստ ինքեան ո՛չ է քրիստոս: - 91. Երևի ապա զի աստուծոյ ո՛չ ասեն զմասունքն, այսինքն զձեռն և զոտն. ապա ըստ նոցա և մարմինն չէ աստուծոյ մարմին. և արիւնն չէ աստուծոյ. և հոգին չէ աստուծոյ. այլ ամենեքեան *սոքա* մարդո՛յ են: - 91. Իսկ թէ ասես միայնաբար աստուած է մարմինն՝ և աստուած է հոգին. այսու ո՛չ լինիս բազմաստուած. զի մի՛ է աստուածութիւնն ի *սոսա* միաւորեալ էութեամբ և գոյացութեամբ: - 93. Սակայն նա բնութեամբ և էութեամբ միացաւ. և *սոքա* շնորհօք և ժամանակաւ: - 95. Նա աստուած օծաւ. և *սոքա* մարգարէ կամ այլինչ: - 95. Իսկ *սոքա* յաստուծոյ և գթութեամբ սիրոյ: - 95. Եւ ի ներքոյ *սոցա* պարունակին ամենայն ճանաչելիք: - 97. Եւ թերևս ասիցէ երկաբնակն թէ՝ *սոքա* ամենեքեան անձինն վերաբերին քրիստոսի և ո՛չ մարդկութեանն: - 98. Եւ է դարձեալ անգիտութիւն՝ յորժամ զմիտս տարածեմք յամենայն եղեալս և զնա ոչ գտանեմք, ժողովեմք ի մինն որ արտաքոյ է *սոցա*. և այնպէս անգիտութեամբ ճանաչի աստուած: - 103. *Սոքա* երկոտասանք և այլ անթիւք ի կարգ *սոցա:* - 105. Եւ յատուկ՝ զի որոշեալ և բաժանեալ է յարարածոց. և ո՛չ մի է ըստ *սոսա*. ո՛չ մասն է արարածոց և ո՛չ բոլոր: - 106. Նոյնպէս և ի միոյն աստուծոյ իջեալ յարարածս ընդարձակի տեսութիւն մեր. և ի *սոցանէ* ի նա դարձեալ նեղի: - 110. Երրորդ ասի անեղ այն՝ որ ի յումե՛ք է, և ի յումեք ո՛չէ. որպէս հրեշտակք յաւիտենի եղեալ, և ի ժամանակի անեղ. *սա* կարօտ և անկարօտ երկոցունց. այսինքն սկզբան և կատարման: - 113. Չորրորդ՝ ասի անեղ՝ որպէս ոչ ուրեք և ո՛չ երբեքն. այսինքն է ոչինչն. *սա* կարօ՛տ է ամենևին սկզբան և կատարման: - 113. Երրորդ՝ պատճառ է յաւիտենից. և ժամանակաց. և աւուրց. որպէս լոյս. իմաստութիւն և կեանք կոչի. զի պատճա՛ռ է *սոցա:* - 115. Չորրորդ՝ որ սկիզբն ունի և կատարած. և թէպէտ հասարակ *սոքա* յաւիտեանք կոչին, այլ ունին յատուկ անունս: - 115. Կոչին և հոմանուն *սոցա* յաւիտեան. որպէս իւրաքանչիւր դարք: - 115. Այլ իսկապէս *սոքա* են ասացեալքս: - 116. Այլ՝ կոչի աստուած յաւիտեան. և միշտ. և ժամանակ. զի պատճառ է *սոցա* որպէս ասացաւ ի վերոյ: - 116. Եւ զայլ զանազանութիւն *սոցա* կատարելապէս ուսցուք յառաջիկայսդ: - 117. Իսկ մեք *սոցա* ամենայնի զընդդէմսն տեսանեմք. և ա՛յս է պատճառն: - 118. Նախ՝ հայելով ի կերպարանս և ի նմանութիւնս որ է՛ կարգաւորութիւն արարածոց. և *սոքօք* ի յարացոյցն *սոցա* ելանել, և ի նմանէ դարձեալ ի նախատիպ յարացուցին ելանել. և այնպէս տեսանել թէ է՛ աստուած պատճառ ամենայնի: - 119. Եւ է *սա*՛ առաջին. զի զոր նա՛խ է քան զյաւիտեանս և զժամանակս՝ աստուածաբանէ՛ և քննէ՛: - 122. Եւ է *սա*՛ երկրորդ. զի ի պատճառէ՛ ստեղծման էիցս՝ աստուածաբանութիւնս այս յառաջագայի: - 122. Եւ է *սա*՛ երրորդ ըստ կարգի. զի յերևելեաց և ի մարմնականաց աստուածաբանութիւնս այս յառաջագայի: - 122. *Սա*՛ կոչի խորհրդական

աստուածաբանութիւն: - 123. Եւ իւրաքանչիւր *սոցա* երկատի, որ լինին չորս ըստ աստուածաբանին գրիգորի այսպէս: - 123. Ի յաստուածութիւնն՝ *սորա* առաջին և վերջին ո՛չ ասին. զի համանգամայն զօրութիւնք են ի յաստուածութիւնն: - 128. Դարձեալ՝ և առ տնօրէնութիւն Բանին տեսանին *սորա* չորեքկին: - 129. Եւ յետ *սորա* անմիտ զգայականն է. վասն որոյ ո՛չ է իմացական այլոյ: - 130. Ոմանք մերձ են էութեամբ արարչին. և ոմանք հեռի. որպէս իմացականքն քան զբանականս. և *սա*՛ քան զկենդանիս...: - 131. Տասներորդ՝ զի ի *սոցանէ*՛ իմանամք զաննման նմանն: - 132. Ա՛յսպէս, զի *սորա* ունին սրտմտութիւն և ցանկութիւն: - 132. Եւ *սորա* կոչին անբանք և անզգայք ըստ պակասութեան: - 132. Առիւծն զցասումն. Եզն զցանկութիւնն. Արծըւին զարդարութիւնն բարձրագոյն *սոցա* թռուցելոյ: - 132. Առիւծն գազանաց. և Մարդն ամենայն կենդանեաց. և Նստեալն ի վերայ *սոցա* Թագաւոր թագաւորաց: - 132. Իսկ հրեշտակք փոխեն *զսոսա* և զիմացականն վասն բարւոյ. զոր դւք ո՛չ կարեն փոխել: - 133. Վասն որոյ այսպէս ասեն զկարգ դասուցն. և *սոցա* տարածայնութիւն զհամահաւասարութիւն դասուցն նշանակեն: - 135. Այսպէս, Նախ՝ զի մաքրել և լուսաւորել և կատարելագործել հասարակ է ի *սոսա:* - 138. Վասն առաջնոյն գիտելի՛ է, զի ամենայն շնորի բղխո՛ւմն է և ճառագայթ, յանեղական լուսոյն իջեալ առ էակս ամենայն իմանալի և զգալի. և զարդարէ՛ *զսոսա* ըստ նմանութեան այնմ պարգևեալ շնորհի. եթէ ըստ բնութեան՝ և եթէ անձնական. ի հրեշտակս և ի մարդիկս: - 140. Եւ է՛ յորժամ իմացումն ի յիշողութիւնն ի տրամախոհութիւնն և յայլս բաժանի, և նոքօք իմանայ և տեսանէ զաստուած. և այս ևս է կատարեալ տեսութիւն. և կոչի *սա* բնական տեսութիւն: - 142. Իսկ որ զգայարանօքն տեսանէ, այսինքն աչօքն զգոյնն, ականջօքն զձայնն, և այլն. կոչի *սա* զգայական տեսութիւն: - 142. Եւ կարօտի *սա* **բ** իրաց. այսինքն զի զգայութիւնն առո՛ղջ իցէ, և զգալի առաջի եղեալ իրն յստա՛կ. ապա թափանցէ՛ յինքն ի *սոցանէ*՛ պա՛րզ տեսութիւն. ապա թե ո՛չ՝ ո՛չ կարէ միտքն յստակապէս տեսանել *սորօք:* - 143. Նախ՝ յորժամ սերօբէն ասէր սուրբ, և միւսն երկրորդէր զնոյն. և *սա*՛ լռեաց զփառաբանութիւն ընկերին երկրորդել աստուծոյ, թէ փառքն ի վերայ իւր անկանի և աստուածանայ որպէս ասաց պօղոս: - 147. Եւ ոմանք ասեն թէ՝ ընդ պատիւ մարդոյն նախանձեցաւ և ի խորհուրդ եմուտ թէ *սորա* կատարումն ի՞նչ լինի, և ո՛չ կարաց հասու լինիլ: - 147. Եւ յօհաննէս *զսա* օդո՛յ դասէ. վասն այն նոյն անուամբն՝ պօղոս իշխան օդոյս կոչէ. կամ զի յօդս են բնակեալ և իշխեն մարդկան: - 150. *Զսա*՛ հրեղէն ասէ: - 151. Զի **գ** գլխոյն կրկին է եղջիւր. որ է հպարտութիւն՝ նախանձ՝ և բարկութիւն. զի *սորօք* յաջ և յահեակ պատերազմի. և առ ընտիրս և առ խոտանս գտանին բազում ուրեք երեքին ախտքս այսոքիկ: 151-152. Առ այնոսիկ որք ասեն՝ անկա՛ր է աստուծոյ առնել զաշխարհս ոչ ինչ. մինչ զի ո՛չ երևիլ սկիզբն լինելութեան *սորա:* - 162. Իսկ որ ասէ, մինչ զի ո՛չ երևիլ սկիզբն լինելութեան *սորա:* - 163. Իսկ աստուած անկարօ՛տ է *սոցա:* - 164. Ասելի է թէ՝ կոյսն և ապականեալն են հակակայք ըստ ունակութեան և պակասութեան. որպէս երեսք և կուրութիւն. որոց ի լինիլն համահետևին երեքին *սորա*. այսինքն ժամանակն, և մասն, և նոյն: - 165. Եւ *սորա* են արգելք անդրադարձութեան *սոցա:* - 165. Եւ յայտնի եղեալ որպիսութիւն *սոցա* ի միտ առ. զի անհաւատն այժմ եկեալ ի հաւատս կարէ՛ լինիլ և քահանայ. իսկ չար հաւատացեալն ո՛չ կարէ լինիլ քահանայ: - 166. Ապա յա՛յտ է զանազանութիւն *սոցա*...: - 168. Իսկ աստուածայինն է ընդդէմ *սոցա*. զի է բանաւոր և է միշտ ներգործական որպէս ասացաւ: - 173. Քանակաւն և որակաւն. զի *սորօք* անհատ գոյացութիւնն երևի: - 174. Եւ գիտելի է՝ զզանազանութիւն *սոցա*...: - 174. Իսկ աստուած արտաքոյ է *սոցա*. զի ո՛չ է սահմանեալ և ո՛չ պարագրեալ և ո՛չ կալեալ յիմեքէ. ո՛չ իմացմամբ և ո՛չ տեղեաւ կամ մարմնով: - 174. Արդ *սորա* ըստ ինքեան անմարմին են. այսինքն գոյացութիւնն. քանակն. որակն. և այլքն: - 175. Եւ ուստի՞ է յայտ ասիցէ ոք. այսինքն զի բանն անմարմին է որ բաժանէ *զսոսա*...: - 175. Եւ մարմնով ո՛չ բաժանին *սորա*. թէպէտ և մանր փոշի լինին՝ ունին զքանակն զորակն և զայլն. զի անմեկնելի որոշմունք են գոյացութիւն և պատահմունք: - 175. Արդ՝ եթէ անմարմին բանիւ բաժանին *սորա*, յա՛յտ է թէ անմարմին են և բաժանեալքն: - 175. Եւ որովհետև ծանեաք զի անմարմին են *սորա*, յա՛յտ է զի բաժանումն սոցա քակէ՛ զնիւթն ի մարմնոյ. ապա ուրեմն ի մի վայր ժողովումն՝ ծնանի զնիւթական մարմինն: - 175. Եւ որովհետև ծանեաք զի անմարմին են սոքա, յա՛յտ է զի բաժանումն *սոցա* քակէ՛ զնիւթն ի մարմնոյ. ապա ուրեմն ի մի վայր ժողովումն՝ ծնանի զնիւթական մարմինն: - 175. Այլ ունին *սորա* բազում զարմանալի տեսութիւնս: - 175. Նախ՝ զի *սորա* անմարմինք են ըստ ինքեան. այսինքն քանակ, որակ, և այլքն...: - 175. Երկրորդ՝ զի իր մարմնական են և ի մարմնի էանան *սորա*՝ և ո՛չ են մարմին. այլ անմարմին էութիւն որպէս ասացաք: - 175. Երրորդ՝ ի ժողովիլն *սոցա* լինի մարմնական

էութիւն. և յորոշելն կորնչի մարմինն: - 175. Որպէս տունն ի ժողովիլ փայտից և որմոց՝ շինի. և ի ցրուիլն *սոցա* կորնչի տունն: - 175. Չորրորդ՝ զի իւրաքանչիւր *սորա* առանձին սահման ունին և բնութիւն...: - 175. Հինգերորդ՝ զի առանձին բնութեամբ *սորա* ի մի էութիւն ժողովեալ խառնին...: - 176. Զի ուղղաձևութեան ուսուցիչք ի բաժանմանէ ի միութիւն եկեալ խոստովանին զքրիստոս. և *սորա* ի միութենէ ի բաժանումն որոշեն: - 176. Ապա ընդէ՞ր *սորա*՝ գոյացութիւն, որակ, քանակ, և այլքն, եղական գոլով ո՛չ շփոթին ի մի բնութիւն խառնեալ: - 176. Գոյացութիւն որ սկիզբն է ամենեցուն և նախասեռ. և ի նմանէ զուգաբաժանեալ մարմինն. և շնչաւորն. և զգայունն. և կենդանին. և բանաւորն. և մարդն. ո՞չ ապաքէն բնութիւն են *սորա* այլևայլ. և ժողովեալ գոյացուցանեն զմի անհատն պետրոս անշփոթ միութեամբ: - 176. Եւ զի անշփո՛թ են *սորա* յատկութեամբ՝ յայտ է. ուստի ասեմք, պետրոս մա՛րդ է և բանաւոր և կենդանի և զգայուն և շնչաւոր և մարմին և գոյացութիւն: - 176. Եւ ժողովեալ *սորա* լինին մի բնութիւն պետրոսին: - 176. Եւ ո՛չ ասեմք զպետրոսն այլ և այլ բնութիւն ըստ այլևայլութեան *սոցա* որ ի պետրոսն: - 176. Այլ մի է պետրոսն ըստ անձին անհատ գոլոյն. և մի է բնութիւն պետրոսին ըստ միաւորութեան բանին. իսկ *սորա* օրինակ՝ և նա՛ ճշմարտութիւն: - 176. Զորոյ զբացայայտութիւն *սորա* այսպէս իմասցուք: - 177. Առհասարակ *զսոսա* ունի այբն ըստ այնմ որ է՛ գիր: - 177. Նախ՝ զի առ ինչք են *սորա*. ծնունդն զծնօղն ցուցանէ. և արարածն զարարիչն: - 179. Եւ այլապէս ո՛չ կարէր լինիլ. զի ամենայն ինչ ի *սմա*՛ կատարեալ գոյ. և ոչինչ է պակաս ի *սմանէ:* - 179. Արդ ամենայն ինչ որ զգալի է՝ ի ներքս ի *սմա*՛ է. ծա՛յն. գո՛յն. հո՛տ. հա՛մ. ծա՛նր և թեթև. և ո՛չ ինչ է արտաքոյ *սորա*. յաղագս որոյ և ո՛չ զգայարանաց կարօտի: - 179. Զի ըստ իմաստ նոյն է՛ աստուած ամենայն ուրէք և ո՛չ ուրէք. ոչ ի տեղւոջ իմիք՝ և ո՛չ բացեայ ի տեղւոջէ իմիք. այլ վերոյ *սորա*, և ներքոյ *սորա*. ի մէջ *սորա*, և արտաքոյ *սորա:* - 180. Եւ զի ո՛չ է ի տեղւոջ աստի յայտ է, զի տեղին է վերին և ներքին և միջին. և արտաքոյ աշխարհիս ո՛չ երևին *սորա:* - 180. Եւ երկիրս անշարժ է տեղեաւ, ետ *սմա* ապականիլ երեսօք. զի տեսեալ մարդիկ եղական և ծառայ իմասցեն զնոսա. և մի աստուածս կարծեսցեն և մոլորեսցին. որպէս ասէ նիւսացին ի գիրս կազմութեան: - 182. Այլ կոչի *սա*՛ հրեղէն, զի է՛ ի հրոյ: - 183. *Սորա* հնգեքին կոչին երկինք. զի զյատկութիւնս երկնից ունին. և *սորօք* լինին հնգետասան երկինք: - 183. Եւ է մոլորականքն ընդ *սոսա* գնալով խոնարհին և բարձրանան: - 189. Զի *սորա* են դարագլուխք զ դարուց. և էերորդն հանգիստ: - 193. Եւ դարձեալ այսպէս զանազանին *սորա* երեքեան աւուրք. այսինքն առաջին օր ստեղծման. և միջին մինչ ի կատարած. և վերջին օր յարութեան: - 193. Եւ է՛ զանազանութիւն *սոցա* կրկին: - 194. Եւ *սորա* երեք եղանակքս օրինակ են այսմ կենցաղոյս. և ձմեռն հանդերձելոյն որպէս ասացաւ: - 198. Բայց *սորա* և յոյնք իւրեանց ամսամտօք ո՛չ վարին. այլ ծառայաբար զհետ երթան այլոց: - 201. Դարձեալ ասեմք թէ՝ ծանրութիւն փայտին գիճութիւնն է և ցրտութիւնն. և հուրն ջերմութեամբ և չորութեամբ *զսոսա* կորոյս: - 202. Նոյն և *սա*՛ գոլորշի՛ է վերացեալ հողմոց. և մերձեցեալ ի հուռն՝ վառի՛ ի նմանէ. և բռնութեամբ հողմոյն վարեալ երևի իբրև զթռիչ աստղ և փութով շիջանի: - 203. Եւ ի *սմանէ* լինին մառախուղ՝ և սառնամանեաց տեսակ, այլ և ամպք և ձիւնաբեր և կարկուտք: - 204. *Սա*՛ ոչ դառնայ ի ամպ կամ ի անձրև. այլ մղի ի վայր կոյս և մնայ մերձ երկրի: - 204. *Սորա* վերընձիւղեն զծաղիկս. և ծնանին զամպս. և առնեն անձրևս և ամբոխմունս: - 205. Եւ ի *սոցանէ* թրասկիայն առնէ զձիւն և զկարկուտ: - 205. Որ մերձ ի հիւսիս է, Արգէստէս կոչի. կազմէ *սա* զամպս: - 205. Երրորդ՝ *զսա*՛ քրիստոս ի գինի փոխեաց: - 207. Եւ ի *սոցա* խառնուածոցն լինի ա՛յլ զանազան գոյնք: - 212. Նոյնպէս և ջուրն ունի *զսոսա*. զի շօշափելի՛ է՝ և մածեալ՝ և շարժի՝ և երևի: - 215. Եւ *սորա* հաւասարապէս երևին յամենայն կենդանիս: - 215. Նշանակեն *սորա* զչորս դասս մարդկան: - 215. Եւ են որք գործս ունին և ոչ հաւատս. որպէս կեղծաւորքն. նմանապէս և *սորա* անպիտանք են աստուծոյ: - 215. Արդ՝ ցամաքային կենդանիքն զերկոսին *զսոսա*՛ ունին. վասն որոյ ձայն արձակեն: - 216. *Սորա* ի գլուխս նոցա նստին: - 216. Եւ *սորա* են գլխաւորագոյնքն: - 227. Տասներորդ՝ մէջ և կապ ամենայն գոյիցս մա՛րդն է կազմեալ. զի ամենայն արարածք ի բ դէմս որոշին. այսինքն մինն յիմանալի և միւսն զգալի. և *սորա* եղեն յառաջագոյն: - 231. Երեքն ի *սոցանէ* գռեհիկք են. որ է շօշափելիք. ճաշակելիք. հոտոտելիք. զի խառնելովն ի զգալի իրն ճանաչեն: - 235. Իսկ ի *սոցանէ* պատւական է տեսանելիքն: - 235. Եւ պակասեալ ի *սոցանէ* մարմնոյն, ցուցանի կերպարան ի գոյէ ի քանակէ և յորակէ և ի տեղւոյ շարակցեալ. որպէս յա՛յտ է ի հայելւոջ: - 236. Եւ պակասեալ ի *սմանէ* տեղին, լինի տիպ ի քանակէ և ի ձևոյ բաղկացեալ. որպէս յա՛յտ է ի մոմն տպացեալ: - 236. Եւ նուազեալ ի *սմանէ* քանակին, լինի նման և աննմանն ցուցեալ. որպէս յա՛յտ է ի տառն գրեալ. զի նման

և աննմանն ուրոյն են որակի: - 236. Նա՛խ ցուցանի զի մի է արարիչ *սոցա*, և բազում արարածք. յաղագս որոյ նմանին և զանազանին: - 237. Զի արարիչն *սոցա* մի է բնութեամբ. և ըստ բնութեան հաւասար, և անձամբ յատուկ: - 237. Եւ թէ ոք ասիցէ՝ աստուած զամենայն ինչ բարի՛ է ստեղծեալ, և *սորա* չար երևին: - 237. Ասեմք թէ՝ *սորա* ի մասնաւոր հոգւոյն բարի են բնաւորեալ նախանձ ցանկութիւն և այլն...: - 237. Երրորդ՝ զի ո՛չ գիտէին զանդրանիկն ժամանակաւ, և ո՛չ զկրտսերն. և լինէր փոփոխումն վիճակաց նոցին. որպէս յակոբ էառ զանդրանկութիւնն եսաւայ. և եփրեմ զմանասէին. թէ և *սորա* տեսչութեամբն աստուծոյ. այլ նոքա ի պատրանաց լինէին: - 238. Վեցերորդ՝ զի ո՛չ պատւաւորքն մեծարեին, և ո՛չ անարգք անպատուեին. այլ ընդդիմակն *սոցա.* զի ո՛չ կարէին ճանաչել զտէրն և զծառայն. զազատն և զանազատն: - 238. Եւ գլխաւո՛ր անդամք են *սորա*...: - 241. *Սորա* ո՛չ պահեն զճարպն որ մասն է օդոյ պարարտացեալ: - 242. Եւ ծախ կողքն **ը**. որ լինին *սորա* **խ**: - 243. Ոմանք ասեն, **ժէ** գլխաւոր ջլօքն որ կապին *սորա*՝ լինին **յկե** զօդուածք: - 243-244. Գիտելի է, զի **գ** սկզբունք են *սոցա:* - 244. Եւ *սորօք* սփռի ջերմութիւնն և կենդանութիւնն ի բոլոր մարմինն: - 244. Եւ *սորա* ցուցանեն զցաւ և զառողջութիւն մարդոյն: - 244. Այլ երեքն ի *սոցանէ* մեծամեծք են: - 244. Ի *սոցանէ* երակ կտրէ մարդն ի բազկացն: - 244. Եւ գիտելի է, զի հետևին միմեանց երեքեան *սորա*. այսինքն ջիլն. և շնչերակն. և արեան երակն: - 244. Երրորդ՝ զի բանականութեամբ կարեն սանձիլ *սորա*, յորժամ կամեսցին: - 246. Եւ ի *սոցանէ* ոմանք են բանականք, և ոմանք անբանականք: - 248. Եւ տեսականն և գործնականն զարդարիչք են *սոցա:* - 248. Եւ *սորա* **ե ե** զօրութիւնս ունին. Մտացն. Իմաստութիւն. Տեսողութիւն. Ուսողութիւն. Անմոռացութիւն: - 248. Եւ *սորա* առնեն զմարդն կատարեալ պատկեր աստուծոյ: - 248. Զի թէպէտ ըստ ներգործութեանն բաժանին երբեմն ի բաժանելի մարմնոյն՝ զի առանց մարմնոյն ո՛չ կարեն ներգործել *սորօք*, այլ անբաժանելի մնան ըստ էութեանն ի հոգին. որպէս ցուցանելոց եմք յառաջիկայսդ: - 249. Եւ որքան *սորա* առաւելուն, առաւել ծկտի ներգործութիւն իմացականին: - 251. Եւ *սորա* երկոքեանս խոտելի են եկեղեցւոյ: - 252. Եւ տէրն ասէ՝ «ոգի առաւե՛լ է քան զկերակուր. և մարմին քան զհանդերձ». զի *սորա* վասն պիտոյից հոգւոյ և մարմնոյ եղեն: - 253. Նախ՝ զի նիւթն այն ունի առ ինքն բնական զկենդանութիւն տնկականին. և տնկականն մա՛սն է զգայականին. և զգայականն բանականին. և *սորա* ո՛չ որոշին ի բոլորէն. զի մի են էութեամբ ի մարդն թէպէտ ա՛յլ են ներգործութեամբ: - 254. Եւ դարձեալ՝ որպէս հատն ցորենոյ ունի առ ինքն զօրութեամբ զխոտն և զծաղիկն և զհասկն. և *սորա* համանգամա՛յն են ի հատն այն զօրութեամբ. որ յետ ժամանակաւ ըստ դասի երևին: - 255. Նախ տնկականն. և ապա զգայականն. և ուր *սորա* երևին ի հրամանէն աստուծոյ, երևի և անդ բանականն: - 255. Պատասխանեմք եթէ՝ ոմանք յարմատս ունին զսերմն. ոմանք ի ծայրքն. կէսք ի տերևն. այլք ի կեղևն. թէպէտ և *սոցա* սերմնական զօրութիւնն է՛ ի մէջն, այլ առաւել կենդանւոյն: - 256. Ծանիր և զայս. զի բազում զարմանագործութիւն գոյ ի *սմա:* - 256. Թէպէտ յայլ և այլ ժամանակս երևին *սորա*. այլ մի են էութեամբ: - 259. Եւ որպէս տեսանին՝ այլ և այլ հոգիք են *սորա* յայլ և այլ տեսակս: - 259. Իսկ թէ *զսոսա* **գ** տեսակս ասես, կամ զօրութիւնս, կամ մասունս բանական հոգւոյն, մի՛ է տեսութիւնն: - 259. Այսպէս և *սորա* գոն ի մարդն, այլ մի է հոգի մարդոյ և ո՛չ երեք: - 259. Եւ զորօրինակ՝ մի է բոլորն մասամբ իւրով. այսպէս մի է բոլոր հոգի, և *սորա* մասունք նորա: - 259. Այսպէս և զգայականն և տնկականն մասունք են բանականին՝ նախ եդեալ ի մարմինն. և յորժամ բանականն հեղի ի մարմինն, յայնժամ և *սորա* հեղին ընդ նմա. զի զօրութիւնք և մասունք են նորա ըստ օրինակի նախասացեալ երրորդ թուոյն: - 259-260. Ասեմք առ այս, եթէ և յետ մահուան ո՛չ բաժանին *սորա* ի հոգւոյն ըստ էութեան. զի մի է էութիւն *սոցա*. այլ ըստ ներգործութեան. զի ո՛չ է մարմին՝ ո՛չ կարէ ներգործել: - 260. Այլ հակադարձեալ *սորա* ըստ կարգի և ըստ դասու՝ յառա՛ջ է տնկականն քան զզգայականն...: - 260. Եւ թէ զտեսութիւնս զայս կարծես էութիւն հոգւոյ ըստ որում է հոգի, ապա ո՛չ միայն ետես զհոգի, այլ և զմարմին՝ և զիւրաքանչիւրոց ընտրութիւն, և զհամար հերաց և զթիւն աստեղաց. և *սորա* յետո՛յ են գոյացեալ ըստ կամաց տեսողին: - 260. Իսկ որ հասարակն է *սոցա* և պատշաճաւոր, ունին զնոյն հասարակութիւն բուսոց ի նոյն ժամանակս: - 261. Եւ ա՛յս է բարձր հասակն և կատարեալ. զի ի *սմա* պապ կարէ լինիլ մարդն երեսն ամենի: - 265. Նա՛խ՝ ըստ առաջ եդելոյն. զի առաջ եդեալք *սորա* են աստուածայինքն և իմանալիք. իսկ նոցայն՝ մարմնականք և զգալիք: - 269. Ի *սոցանէ* ոմանք ըստ հոգւոյն միա՛յն են. և ոմանք ըստ հոգւոյն և մարմնոյն: - 272. Եւ այս ևս ո՛չ է ընդունելի. զի *սոցա* պատասխանի տայ սուրբն կիւրեղ ի գիրս պարապմանց...: - 273. Ութերորդ՝ թշնամիք եղեն կիրք պատժոցն. այսինքն մահ՝ ապականութիւն՝ տանջանք՝ հիւանդութիւնք՝

սով՝ և ծարաւ՝ և այլն ամենայն *սրա* ի կրիցն են: - 277. Եօթներորդ՝ զի զաստուած ասաց պատճառ. եթէ կինս զոր ետուր՝ *սա*՛ ետ ինձ ուտել: - 279. Այլ կամ իբր զիրեշտակս, կամ որպէս ի միոյ լուսոյ բազումք, կամ կուսութեամբ ծնունդ. որպէս սուրբ կոյսն մարիամ աստուածածին սրբութեամբ և կուսութեամբ ծնեալ փոխեաց զկարգ բնութեան ծննդեանս որ ի սերմանէ առն և կնոջ. զի *սա*՛ ծնունդ միայն ի մօրէ՛: - 280. Ի *սոցանէ* **դ** հարկաւո՛րք են. և **դ** պիտանիք և **բ** վայելչականք: - 281. Վեցերորդ՝ ի *սոցանէ* երևի և գործ արդարութեան...: - 286. Եւ *սրա* ամենեքեան վասն **է**երորդին են որ է՛ սէրն. զոր ունէր կատարելապէս առ աստուած: - 286. Դարձեալ սիրեցաւ յաստուծոյ, զի առաջին մարտիրոս *սա*՛ եղև...: - 287. Իսկ զի **բ** *սրա* մտին, այս վասն ե պատճառի: - 289. Իսկ թէ ոք հարցանէ թէ զի՞նչ էր *սոցա* առաքինութիւնն որ այսպէս պատուեցան: - 289. Դարձեալ ըստ եփրեմի հինգերորդ՝ զի սուրբ էր սրտիւ. և Վեցերորդ՝ զի միամիտ էր կամօք. և *սրա* առնեն զմարդն մերձակայ աստուծոյ: - 290. Եւ *սրա* անգիտելի են մեզ: - 290. *Սա*՛ ունի զձև նմանութեան տապանին վեցակողմ և կաթողիկէ, և դուռն ի կողմանէ: - 294. Ի *սմա*՛ ժողովեալ գազանաբարոյ և հանդարտ մարդկան ո՛չ մեղանչելով միմեանց: - 294. Նախ՝ զի *սա*՛ այրարատ լսի: - 294. Նա՛խ՝ զի իմաստութեան են պատճառք. զի տեսանելով *զսոսա*՞ զարարչութիւնն աստուծոյ ի միտ ածեմք: - 295. Եւ **բ** գետն ի բանն և ի հոգին սուրբ որ բղխեն ի հօրէ. զի հրաւիրակք են մեզ՝ յակն տանելով ուստի բղխեն *սրա:* - 295. Իսկ զչորրորդ մասն որ արտաքո՛յ է *սոցա*՝ ուտեմք: - 296. Եւ որպէս է **է** գործիք ձայնին, որ է՛ թոքն. խռչափողն. մակալեզուն. բերանն. լեզուն. ատամունքն. և շրթունքն. և *սրա* միաբանին ի խօսքն: - 296. Նմանապէս և զայս սահման լեզուի ո՛չ ոք կարէ փոփոխել. ո՛չ բռնաւոր և ո՛չ իշխան. բայց միայն աստուած որ եդ *զսա:* - 298. Եւ *սրա* բաժանին ի **դ**: - 306. Եւ *սրա* որ երևինս մեզ կրտսեր և վերջին, փոխեին և լինէին նախկին և առաջին ըստ նախընտրութեանն աստուծոյ: - 310. Ա՛րդ՝ ո՛չ ասէ թէ ի ներքոյ քոյ. զի *զսոսա* կոխեալ էր քրիստոս: - 316. Այլ ոտք զհաւատացեալ անդամս իւր ասէ. զի *սրա*՛ վեցեքին թշնամիքս կոխան լինին հաւատացելոց ի կատարածի: - 317. Եւ այսպէս զանազանին *սրա.* մարմին մեր զգեստ է գոյացական. և հանդերձն պատահական: - 318. Եւ այսպէս օրհնութիւն *սոցա* ընդ տեղւոյն իւրեանց կայ և մնայ մշտնջենաւոր յիշատակութեամբ: - 320. Եւ բաց յայսցանէ և արտաքոյ *սոցա*, Լեառն պարարտ կոչի սուրբ Երրորդութիւնն ի մարգարէէն: - 320. Եւ *սոցին* նման այլ սպասք և արծաթք և մեծութիւնք: - 321. *Սրա* երկոքինս պիտո՛յ են ամենայն մարդոյ ի մարտ թշնամւոյն: - 323. Մանանայն թարգմանի՝ «զի՞նչ *սա»:* - 338. Զոր տեսեալ ժողովրդեանն նոր՝ ասէին ցմիմեանս, զինչ է *սա*. և կոչեցաւ մանանայ: - 338. Նա՛խ՝ զի կոչի «զի՞նչ *սա*՛», զի ամենայն հարցանելոյ լուծումն գոյ և պատասխանի. - 338. *Սրա* աստուածայինք են. վասն որոյ նախագիծք եղեն: - 340. *Սրա* մարդկայինք են և առ ընկերն և յանցումն: - 340. Իսկ *սրա* նախ հեղուն զարիւնն և յետո՛յ զջուրն: - 341. Երրորդ՝ նախ զխառնեալ ջուրն ցանեաց ի վերայ ժողովրդեանն որ էր մկրտութիւնն. և *սրա* ճաշակեն զջուրն և զարիւնն: - 341. Աhա՛ յայտնապէս այլ է ձև արարողութեան *սոցա* ի յօրինակէն: - 341. ...իցէ և նո՛ր տաճար հռչակեալ ընդ ծով և ընդ ցամաք. որպէս պսակ և փառք արդարոցն է՛ զոր ակն ո՛չ ետես և ունկն ո՛չ լուաւ. նոյնպէս և *սա*՛ ի զգալիսս անհաս ի մտաց մարդկան: - 342. Տասներորդ՝ օրինա՛կ էր խորանի եկեղեցւոյ. զի նա՛ ստւե՛ր էր և *սա*՛ ճշմարտութիւն. վասն որոյ գեղեցկազարդ կազմեցաւ: - 342. *Սրա*՛ են ի սրբութիւն սրբոցն որ է՛ լուսեղէն երկինքն բնակարան անմարմին զօրացն: - 345. Երեմիա և աշակերտն՝ տարան ի գիշերի զտապանակն և որ առ նմայն էին՝ ի լեառն սինա. և անդ կնքեցին ի վիմին անուամբն աստուծոյ ասելով, ո՛չ ոք բացցէ *զսա*՛ թէ ոչ մովսէս որ եբերն. և ո՛չ ոք բացցէ՝ թէ ոչ ահարոն: - 345. *Սրա* ամենայնքն զբերանս մտաց բացեալ ունին առ մինն և ճշմարիտ ջահն քրիստոս: - 347. Իբր թէ *զսոսա* ի վե՛ր բարձրացուցի և ի սէր սրտի իմում ունիմ: - 348. Այլ և զպատահումն *սոցա* ի սրտի իմում կրեմ: - 348. Եւ *սովաւ* օծէին զթագաւորս և քահանայս: - 349. Եւ մարդս որ վերջին է՝ *սա*՛ միա՛յն ծանեաւ զառաջին պատճառն: - 350. *Սա*՛ փոխեալ ի նորս նշանակէ՛ զմարմնաւոր նուէրքս. որպէս պահք աղօթք, ողորմութիւն: - 357. *Սրա* նշանակեն զնահատակսն որք բազում վշտաց և փորձանաց համբերեցին: - 357. Ի *սոցանէ* ափով չափ դնէր քահանայն ի սեղան ողջակիզացն ի հոտ անուշից տեառն: - 357-358. Եւ ի *սմանէ* առցեն ասէ զհաս իրաւանցն. և զմնացեալսն եփեսցեն ի սուրբ տեղւոջ և կերիցեն քահանայքն զեօթն օր: - 359. *Սրա* **բժ**ան ազգ նուէրք գլխաւոր պատարագք կարգեալ ի մեծէն մովսիսէ՛: - 359. Նա՛խ՝ ցուցանէ թէ *սա*՛ անմեղ է՝ վասն իմ մեղացս մեռանի. զոր ձեռօք ի *սա*՛ տամ զմեղս: - 359. Ա՛րդ՝ երեքեան *սրա:* - 362. Որպէս նախ քան զօրէնս, բնական քննութեամբ ընտրէին մարդիկ. կամ զանճոռնի մեծն, կամ զամենևին փոքրն, կամ զգարշն տեսութեամբ, կամ զվնասակարն, ուտելոյ

պիղծ ասէին *զսիսա:* - 364. Զի էգն, և չէ զոտքն, և անկատարն, և անհաւատն, և արիւնահեղն, և կարգաւոր, *սորա* վեցեքեան ո՛չ կարեն զենուլ զի պիղծ է զենն նոցա: - 365. Եւ այսպէս վեցեքին *սորօք* ընտրեսցի սուրբ զենումն: - 365. Ապա թէ պակա՛ս է ի *սոցանէ*՝ պիղծ է և խոտան և ո՛չ է ուտելի զենեալն: - 365. Պա՛րտ է տալ *զսիսա* ի քահանայսն որպէս կարգեաց մեծն մովսէս ի հինն, և սուրբն գրիգոր ի նորս: - 367. Որ յետ խոստովանութեան դառնայ ի նոյն մեղս, իբր շուն դառնայ ի փըսխած իւր. և *սա՛* ևս այրի հրով. զի զառաջինն ևս խնդրեսցեն ասէ առաքեալն: - 367. Եւ ի *սոցանէ* ո՛ր և իցէ, արտա՛քս է յեկեղեցւոյ և ի սրբութեանց, օր մի կամ **բ** կամ աւելի. և սրբի խոստովանութեան ջրովն: - 368. Եւ տես, զի *սորա* երեքեան տօնքս, այսինքն ամսամուտն, և պասքայն, և յիսներեակն, հաւասար ունին զմատուցմունքն տօնից: - 373. Զի կենդուրածինքն լցին զարևելս. և իմնայէլացիքն զհարաւ. եսաւացիք զհիւսիս և զարևմուտս. և *սորա* ո՛չ անկան ընդ թուով: - 377. Զի պահքն և աղօթքն խո՛յ է աստուծոյ. և ողորմութիւնն տուգանք. և ամենայն ապաշխարութիւն *սորօք* կատարի: - 384. Եւ բաւականութիւն *սոցա* է այսպէս. զի եմք մարմին հոգի և միտք գոյացեալ. և ունիմք կարիս և ինչս և շնորհք և կրօնք: - 389. Շնորհքն է զարդ հոգւոյն և կրօնքն մտաց. և կամքն իշխան և կառավար *սոցա:* - 389. Եւ *սորա* բաժանեալ մեզ զերկիրն պարգևաց. այսինքն աստ զնոր օրէնքն, և անդ զվերինն երուսաղէմ: - 391. Եւ *սա՛* բղխէ զկաթն և զմեղր. որ է՛ քաղցրութիւն և թողութիւն մեղաց. նոյնպէս և զ**ժ** բանեան օրէնս: - 395. Եւ ի *սոցանէ* ողորմութեան և արդարութեան գործ. որ է՛ օրհնութիւն և անէծք ի մի պատուիրանն աստուծոյ տրամակայեալ: - 403. Եւ **է** երորդն սատակիլն և կորուստ. զի կեանքս **զ** շարժմամբ է, և մահն **է** երորդ արտաքոյ *սորա:* - 404. Ա՛րդ՝ *սորա* համաձայն ի մի կորուստ հոգւոյ դիմեն առ մարդն: - 404. Երրորդ, ի խնամելոյ զմարդ և զանասունն՝ ցուցանի թէ նա՛ է արարիչ որ խնամէ՛ և դարմանէ՛ *զսիսա՛:* - 406. Եւ երկոքին *սորա* առ մեզ եկեալ, յորժամ չարաց բարի առնէ, ողորմութիւն է: - 408. *Սա՛* սպան զսիսարա և զաբէն ի ձորն կիսոնի. և այլազգիքն ամս է: - 420. *Սա՛* ետես զգեղմն իմանալի յորժամ ծեծէր զցորեանն ի կալն: - 420. *Սա՛* սպան զովրէբն, զզէբն, զզեբէէ, զսաղմանա, և զայլսն: - 420. *Սա՛* է որ զդուստր իւր աստուծոյ զոհեաց: - 420. *Սորա* որդիք լ և դստերք լ: - 420. Ի *սորա* երեք ամին ըլիոն առաւ: - 420. *Սորա՛* էին **խ** որդիք, և **լ** թոռունք: - 420. *Սա՛* դատեաց զիսրայէլ ամս **ի**: - 420. Եւ յետ *սորա* հեղի քահանայ յազգէ ի թամարայ դատեաց զիսրայէլ ամս **խ**: - 420. Եւ տէր մեր ի սպանօղ մարմնոյս որ է՛ պատառօղ հոգւոյս, սպանելով *զսա՛* գտանէր զքաղցր կեանս տալ որդւոց մարդկան ազգի: - 422. Ապա ուրեմն յա՛յտ է *սորօք* երկոտասան գլխով թէ վհուկն ո՛չ գիտէր զառաջիկայն: - 428. Զի *սա՛* ի կանոնաց թեթևացեալ է որպէս յառաջիկայդ ցուցանի ի խոստովանութեան ճառն: - 432. Եւ *սորա* պատերազմօղք. թո՛ղ զայլ խառնիճաղանճն: - 434. Եւ *սորա* են հարճք որ կարեն ի բաց հանիլ ի ժառանգութենէ. զի սէրն է կապ և լար շարոցին որ ո՛չ թողու ցրւիլ: - 440. *Սորա* ըստ իրին ո՛չ առաւելուն և ո՛չ նւազին. թէպէտ հաղորդեալքն առաւելուն և նւազին ըստ ունակութեան: - 444. Եւ եղև քոյր *սորա* եղիսաբեթ կին ահարօնի քահանայի. յորմէ ծնաւ նաբաթ և աբիուդ. եղիազար և իթամար քահանայք: - 452. Եւ *սա՛* շինէ զբեթլէհէմ քաղաք ի գետինս յուդայի: - 452. *Սա* երեսնամեայ թագաւորեաց ամս **խ**. կեցեալ ամս **հ**: - 452. *Սա՛* ի **դ** ամի թագաւորութեան իւրում կազմէ՛ զհանդերձանս տաճարին. և զեօթն ամ կատարեաց: - 452. *Սա՛* յերկոտասան ամին թագաւորէ՛ ամս **խ**. կեցեալ ամս **ծբ**: - 452. Որք կոչեցան թագաւորք յուդայ. և ոմանք ի *սոցանէ* բարիք: - 452. *Սա՛* բորոտեցաւ համարձակեալ ի տաճարն խնկարկել: - 452. Եղիակիմ որ և յովակիմ ամս **ժբ**. ի *սորա* **ժ** ամին նաբուգոդոնոսոր զիրէաստան հնազանդեաց. և հարկ առեալ յեղիակիմայ գնաց: - 453. Եւ երկոքին *սորա* բարի են յաստուծոյ իջեալ: - 457. Եւ են *սորա* կրկին զօրութիւնք. արարչական և արքունական. ըստ փիլոնի որպէս կրկին ձեռք մարդոյ աջ և ահեակ: - 457. ...զի զնոսա փառաւորէ ի վեր քան զարժանն. և *զսիսա* պատժէ սակաւ քան զարժանն. այսոքիկ ողորմութեանն են: - 459. Զի օծեալք *սորա* էին քահանայք և թագաւորք. յորոց և բազումք մարգարէք եղեն: - 461. Երրորդ՝ շնորհք կուսութեան. որ և *սա՛* է յատկական եղանակ. որպէս սրբոյ կուսին: - 462. Որո՞վ զանազանին *սորա:* - 462. Զանազանին *սորա* ներգործութեամբ իւրեանց: - 462. Եւ ոմանք յաւելուն այլ ևս զամօթ՝ զտրտմութիւն՝ և զցաւս մարմնական. որ և *սորա* ընդ նոսա են: - 474. Տասներորդ գերագոյն *սոցա*՝ ըստ բնութեան միաւորութեան. որպէս բանին աստուծոյ ընդ մարդկութիւնս: - 474. Իսկ միաւորութիւնն որ է շաղկապաւ, և *սա՛* բաժանի յերիս: - 476. Իսկ շաղադրեալն միաւորութիւն՝ և *սա՛* բաժանի յերիս...: - 476. Նոյնպէս ասի այս անուն մարդ չարչարեալ և մեռեալ. որ և յատուկ մարմնո՛յ են *սորա:* - 478. Եւ են որք զանձն և զբնութիւնն նշանակեն. որպէս դա՛, *սա՛*, նա՛: - 487. Նա՛խ՝ զի ծանիցի թէ *սոցա* արարիչ է

անարգեալն. վասն այն լուսեղէնք և օդեղէնք և օդն խաւարեցան. ջուր ի կողիցն բղխեաց. և երկիր շարժեցաւ: - 490. Եւ *սորա* բաժանին ի **դ**: - 491. Եւ ասին *սորա* բնականք, զի նախ քան զյանցանելն ի դրախտին՝ բնաւորապէս գոյին առ ադամ: - 496. Եւ *սորա* են անանգոսնելի կիրք: - 496. Ես *սորա* այսպէս զանազանին դարձեալ՝ մեղքն է առաջին ծայր. սկսեալ յանձնիշխան կամացն ադամայ: - 496. Դարձեալ՝ եթէ առհասարակ *սորա*՝ կերակուր՝ արիւն և խոցուածք և մահ՝ ապականութիւնք են որպէս դու ասես, և փրկութիւն աշխարհի *սորօք* ներգործեցաւ. այսինքն չարչարանօք՝ մահուամբ և խոցուածովքն: - 503. Իմաստունք զտեղին յերկուս բաժանեն. ի վերին և ի ներքին. զի *սորա* են հակակայք և առինչք միմեանց. իսկ միջին տեղի ո՛չ է...: - 505. Իսկ նաւակատեաց կերակուր այն է՝ որ միջակ է *սոցա* երկոցունց...: - 510. Եւ տե՛ս և ի միտ առ. զի *սորա* ի մի կարգի՛ են եղեալ. այսինքն ծունկն և ծու և կաթն. և որ ուտէ զմինն՝ կերիցէ և զմիւսն: - 510. Եւ *սորա* ամենայն ստուգե՛ն զյարութիւն նորա թէ ո՛չ է գողացեալ. զի գողն ո՛չ ծալէր զվարշամակն և զկտաւն զմռեալ: - 517. Յինգերորդ զատիկ *սա* ինքն է հոգւոյն իջումն ի վերնատունն: - 524. Զորօրինակ, յորժամ վկայեսցէ թագաւորն ներտրամադրեալ բանիւն ի վերայ գրեալ բանին իւրոյ եթէ՝ ստուգապէս *սա*՛ է իմ գիր և բան: - 531. ...*սորա* յայտնեն զբազմութիւն հիւանդութեանց մարմնոյ: - 531. Նոյնպէս և անչափութիւն բանից և խրատուց հարց և իմաստնոց գիրք սուրբք՝ հին և նոր կտակարանք ցուցանեն զանչափ հիւանդութիւն հոգւոյ. զի *սորօք* առողջասցին: - 531. Եւ նմանին *սորա:* - 533. Երկրորդ՝ ի պատկեր երից անձնաւորութեանցն *սորա* են յեկեղեցի: - 535. Ի հաղորդութիւն *սոցա* կայանայ ամենայն ուրեք առաքելութիւն: - 535. Իսկ վերնագոյն *սոցա*. աստուած յաստուծոյ առաքեալ: - 535. *Սա* իմաստուն է և հեզ. ուսի՛ր ի *սմանէ:* - 537. Եւ *սա* բարի՛ է. ուսո՛ *զսա:* - 537. *Սա* յիմա՛ր է ո՛չ գիտէ զտկարութիւն իւր որպէս չար հիւանդ. զարթո՛ *զսա:* - 537. *Սորա* են **բ** սուրքն բաւական որ ասաց պետրոս «են աստ **բ** սուրք»: - 538. Եւ *սորա* են սուր երկսայրիք տուեալ ի ձեռս քահանայից զինուորաց քրիստոսի. զի յաջ և յահեակ հարցեն. այսինքն զսատանայ և զչարսն ի մարդկանէ որք հակառակին բարեաց: - 538-539. Եւ արտաքոյ *սոցա* անկատար է օրհնելն կամ արձակելն: - 540. Եւ բաց յայսցանէ և արտաքոյ *սոցա*, ո՛չ օրհնին և ո՛չ անիծանին. ո՛չ կապին և ո՛չ արձակին: - 540. Այլ *սորա* ամենայնքն նախկին և պատւականք են. այսինքն քահանայ քան զսարկաւագ. և բանական քան զգայական. և ներգործութեամբ քան զօրութեամբ. այսպէս արձակելն քան զկապելն: - 541. Եւ պատճառ *սոցա* այն էր, զի քրիստոսի մի բնութիւն ասէին. և ինքեանք սահմանեցին **բ** բնութիւն. **բ** գործք. և **բ** կամք: - 544. Եւ չորրորդն ի *սոցանէ* եղև յաթոռ վիճակի սրբոյն գրիգորի հանուրց: - 544. *Սորա* է սիւնք և է խարիսխք են եկեղեցւոյ գլուխ կարգեալք ընդ բոլոր տիեզերս որպէս ասացաւ: - 549. Եւ *սորա* որիշ են յամենայն ազգաց: - 550. Ահա՛ *սորա* ընդհանրականք են և ո՛չ են ճշմարիտ. այլ սուտ: - 550. Ահա՛ *սորա* առանձնականք և ճշմարիտք. որպէս ասի ըստ իմաստասիրացն: - 550. Ապա ուրեմն պարտին ամենայն ազգք քրիստոնէից *սորա* հետևիլ: - 550. Եւ որ *սոցա* առաւել մերձ է և անշարժ մնացեալ՝ է ազգս հայոց: - 550. Եւ զի ճշմարիտ վկայք են *սորա*, և տէր մեր առ կուրացեալ հրէայսն զսոյն կացոյց վկայ...: - 551-552. Ո՞չ ապաքէն մովսէս ի հինն որոշեաց զսուրբս և անսուրբս. մանաւանդ թէ յաւուրս նոյի գոյր ընտրութիւնս. այսպէս ցուցաւ և մեզ պահելի իբր զբնական օրէնս. այլ *սոցա* ոչինչ է պիղծ ի կենդանեաց: - 552. Վասն զի *սորա* պատարագ մատուցանեն ի նախատօնակ ծննդեանն և յարութեանն. և լատինք ո՛չ: - 554. Զի և *սա*՛ մի է ի խորհրդականաց տօնից կենարարին մերոյ: - 554. Եւ երկոքին *սորա* անօրէնութիւնք են: - 555. Ա՛րդ՝ ի *սոցանէ* ո՞րք իցէ ճշմարիտ. և կամ հակառակք են միմեանց թէ ոչ, լուծանել աղաչեմ: - 555. Եւ *սորա* մտօք և ո՛չ մարմնով կատարին. որպէս յայտ է ի բանսարկուն սատանայ որ յանցեաւ հպարտութեամբ և նախանձով: - 556. Եւ զանազանութիւն *սոցա* է՛ ի մեղս մեղուցելոյն: - 556. Եւ *սորա* են ի միտս. ըստ այնմ «սիրեսցես զտէր աստուած քո յամենայն սրտէ և ի մտաց քոց»: - 557. Ապա անհաւատութիւն և յուսահատութիւն և ատելութիւն է՛ ի միտս. և *սորա* մեծ են քան զամենայն չարիս որպէս ուսուցանեն գիրք սուրբք: - 557. Նախ ասեմք թէ՝ համաձա՛յն են միմեանց. զի և *սա* ևագրիոս է ասէ. զի տրտմութիւն և ձանձրութիւն մի երևին. զի տրտմութիւն ի պակասութենէ բարւոյն լինի, իսկ ձանձրութիւն յաւելուածոյ բարւոյն: - 559. Եւ դարձեալ՝ զոր նոքա նախանձ ասեն՝ *սա*՛ ամբարհաւա՛ճ ասէ. որ է՛ փառասէր: - 559. Այլ *սոցա* երեցունց հաւասար է հոգւոյն և մարմնոյն բարկութիւն. և առաւել մարմնոյն ծուլութիւն. և առաւել հոգւոյն ագահութիւն: - 559. Ի վեր շարժումն է հպարտութիւն և փառասիրութիւն. զի յատուկ է *սոցա* ի վերամբարձումն: - 560. ...ապա՛ ի պակասիլն *սոցա* տրտմի. և թէ ոք հակառակի՝ բարկանայ ընդ դէմ նոցա. ապա յամենայնէ ձանձրանայ:

- 561. Իսկ փառասիրութիւն և հպարտութիւն ո՛չ են այսց կարգաց. այլ յորժամ զվեցեքին *սորա* յաղթէ, ապա՛ փառասիրի և հպարտանայ: - 561. Նա՛խ՝ զի որ կամաւ և գիտութեամբ մեղանչէ, առաւել է քան զակամայն և զտգիտութեան. զի թէպէտ և *սորա* մեղք են, այլ պատիժն նուազ. որպէս անասնոյն քան զմարդոյն: - 563. *Սորա* ի յանբանսն ո՛չ միայն գո՛րծ են, այլ և պահպանօղ նոցա: - 563. Թիւ *սոցա* առեալ լինի այսպէս: - 567. Գիտացեալք զայս՝ այժմ տեսցուք զզանազանութիւն *սոցա:* - 567. Նա՛խ՝ զի սկզբնականն հարկիւ և ակամայ տիրէ. իսկ *սորա* ըստ կամաց: - 568. Երկրորդ՝ զի սկզբնականն բնութեանն հետևի. իսկ *սորա* անձին: - 568. Դարձեալ զանազանին *սորա*. զի մեղք խորհրդոյն կայանայ յերիս. ի տեսանելն, ի հաւանիլն, և ի կամիլն: - 568. Եւ *սորա* այսպէս զանազանին: - 568. Դարձեալ զանազանին *սորա* ըստ սեռին. զի գործ մեղացն է ի սեռս առնելոյն. և պատիժն ի սեռս կրելոյն. և ունակութիւն ի սեռս ունելոյն: - 569. *Սա*՛ է սնուցօղ ամենայն մեղաց, մայր դատարակաբանութեան: - 570. Եւ *սորա* երեքեան կոչին աստուածային առաքինութիւնք: - 571. Եւ *սորա* կոչին մարդկային առաքինութիւնք: - 571. Նա՛խ՝ աստուածային ասին՝ զի երեքին *սորա* յաստուած վերաբերին: - 571. Որ անհնազանդ է բանին, որպէս տնկականն. հալելն և աճիլն և այլն. և *սորա* ոչ կարեն լինիլ ենթակայ առաքինութեանց: - 572. Իսկ երկրորդ սեռն հնազանդ բանին՝ ցասումն և ցանկութիւնն. և *սորա* ո՛չ կարեն լինիլ ենթակայ իմանալի առաքինութեանց: - 572. Եւ *սա* բաժանի յերկուս. այս է յիմացումն և ի կամքն: - 572. Որ է՛ հաւատ՝ յոյս՝ սէր. և *սորա* երեքեան հեղո՛ւմն են յաստուածային շնորհացն ի բանական ոգիս. որով ուղղիմք յերկնային կեանս: - 577. Եւ այսպէս հաւասարութիւն ունին *սորա:* - 577. Եւ գո՛րծ է *սորա*՝ որ ինքն նենգութիւն ո՛չ առնէ մարդոյ, և ո՛չ յայլ մարդոյ խաբի: - 579. Զի *սորօք* մարդկան հոգիք կարգաւորին և ո՛չ այլ կենդանեաց: - 581. Նա՛խ՝ զի *սորօք* արտաքսեսցին է մոլորութիւնքն որպէս ասացաւ: - 583. *Սորա* ամենեքեան երանելիք ասին. զի որդիք աստուծոյ կոչեսցին: - 585. *Սորա* զխորհուրդ պատարագին ասացին և ջուր ո՛չ յիշեն: - 595. Եւ դու խառնես *զսոսա* ի խորհուրդ պատարագին. զի իցես ուղղակի մեկնիչ և գրոյն հետևօղ: - 596. Նախ՝ զի մեք զգայարանօք՝ միջնորդութեամբ պատահմանցն հասանիմք ի գոյացութիւնն. զի անմեկնելի որոշմունք են ի գոյացութեանց *սորա:* - 597. Չորրորդ՝ զի *սովաւ* իմասցուք զմարդեղութիւն բանին կրկին կերպիւ: - 598. Ա՛րդ՝ ի *սոցանէ* մասն ինչ աղօթակա՛ն է և մասն ինչ հրաման. վասն զի մասն ինչ եկեղեցւոյ կանոնաց մեղանչեմք, և մասն ինչ և մասն ինչ պատուիրանացն աստուծոյ: - 602. ...այլք *սորա* ընդ ապաշխարութեան պատժոց են և ոչ հաղորդին...: - 602. *Սա*՛ առնու զխաղաղութեան ողջոյնն և տայ ժողովրդեանն: - 606. Եպիսկոպոսն և քահանայն, *զսոսա* ի մի կարգ թուէ ի դէմս վերնագոյն դասուց երկնաւորաց. որք են Աթոռք. Քերովբէք. և Սերովբէք: - 608. Երկրորդ ուրացօղք. և *սոցա* քարոզէ՛ ընթերցօղն: - 608. Չորրորդն՝ որք կիսակատար դարձեալք են ի մեղաց. և *զսոսա* լուսաւորէ ջահընկալն: - 608. Եւ *սորա* լինին է ազգ ըստ մեծին Ներսէսի: - 611. Չորրորդ, *սա*՛ կոչի տաճար աստուծոյ և բնակարան...: - 614. Հինգերորդ, ի *սմա*՛ երկոտասան քարինք հիմնարկեալք. և **բժ**ան լուսանցոյց ի խորհուրդ մարգարէիցն և առաքելոցն...: - 614. Վեցերորդ, ի *սմա*՛ կրկին դրունք ի հարաւ և յարևմուտս. որ նշանակէ՛ զդուռն ողորմութեան և զդուռն արդարութեան աստուծոյ, հարաւոյն և արևմտիցն: - 614. Եօթներորդ, ի *սմա*՛ է խորհուրդ եկեղեցւոյ ներգործի. և ի մեզ կատարի և կրի: - 614. Ութերորդ, *սմա* անուն կոչի եկեղեցի. այսինքն զոր կամիս լիցի. և դուստր սիօնի: - 614. Այլ և *սա*՛ մայր կոչի հոգևոր ծննդոցս. և մեք մայր և ծնօղ հոգևոր զաւակացս բարեաց: - 614. Իններորդ, ըստ մասին ի *սմա* խաչն փրկական: - 614. Ի *սմա* սեղան սրբութեան. և ի մեզ սիրտ սուրբ սեղան նուիրանաց: - 614. Տասներորդ, *սա*՛ սրբի ջրով և օծանի, և ապա՛ է եկեղեցի: - 614. Եւ *սա*՛ յայսպիսի նիւթոց է շինեալ: - 615. Երկրորդ՝ զի նիւթ *սորա* է՛ ի քարանց արտաքին և ի փայտից որ կոխան է եղեալ անասնոց և անսրբոց...: - 615. Ութերորդ՝ սրբեմք զեկեղեցիս, զի լիցի սրբութիւն սրբոց. զի որք մերձեսցին ի *սա*՛ սրբեսցին: - 615. Իններորդ սրբեմք, զի բնակելոցս ի *սմա* և պաշտօնէիցս պա՛րտ է սուրբ լինի զի մի՛ պղծեսցեն զսրբութիւնսն: - 615. ...այսինքն մին ի մարմինն. **բ** ի միտքն. **գ** ի կամքն. յորժամ *սորա* պատրաստին, ապա՛ աղօթքն ընդունելի լինի աստուծոյ: - 620. Եւ դարձեալ՝ չորեքնիւթեա՛յ է բնութիւն մարմնոյս մերոյ և *սորօք* յանցանեմք...: - 622. Եւ *սորօք* զամենայն բարի և զչար գործէ մարդ. վասն որոյ ի ցերեկն **ե** անգամ աղօթեմք: - 622. ...վասն որոյ **բժ**ան ժամու աղօթիւք զթողութիւն խնդրեմք *սոցա:* - 624. *Սորա* աւելորդք և խո՛րթք են ի տգիտաց ասացեալ: - 634. *Սորա* քաղկեդոնին են. որք բաժանեն զբանն ի մարմնոյն. և զխաչեալն՝ մարդ սոսկ և տկար և մահկանացու խոստովանին: - 635. Այլ և զկարգն յարութեան՝ *սորա*՛ է ասացեալ մեծն վարդան ի տեսութիւն անթառամ ծաղկին: - 637. ...և

հարցանէին՝ զի՞նչ և ո՞վ է *սա:* - 638. Եւ տեղեակքն ասէին, *սա*՛ է որ ի մորենւոջն և ի ծովուն զքանչելիսն արար: - 638. Եւ յետ *սորա* թովնաս երաժիշտ՝ այլակերպ յօրինէր գործի...: - 640. Իսկ յետ *սորա*՝ Սինիգրէս արար զառաջին ձայնն, ի հիւսնականէ՛ գտեալ արուեստից: - 640. ...ապա՛ Սոփէկղիդէս եղբայր *սոցա* եգիտ զերրորդ ձայնն ի հոսանաց...: - 640. ...ապա Պապիանոս քեռորդի *սոցա*՝ արար զչորրորդ ձայնն ի ծփանաց ծովու: - 640. Նա՛խ՝ զի սաղմոսն երգ լսի. և ի հինքն յամենայն ժամ *զսա*՛ երգէին ի տաճարին...: - 643. ...և զայլ մարգարէսն ի շաբաթն ընթեռնուին. վասն այն միշտ *սա*՛ երգի յեկեղեցի: - 643. Երկրորդ, *սա*՛ զամենայն գրելոց զօրութիւնս յինքն ունի...: - 643. Երկրորդ, զի ի *սմա* հանգեաւ աստուած ի գործոց իւրոց ի բարութիւնն: - 647. Եւ դարձեալ՝ առաջաւոր կոչի, զի *սա*՛ է առաջին շաբաթ մեծի պահոց աղուհացիցն...: - 650. Ձի յառաջն *զսոսա* լուծանէին որք յառաջաւորացն ի վեր պահէին **ի** օր: - 651. Արար *սա*՛ զգիշերոյն քարոզքն. և զնոցունց **դ** աղօթքն: - 659. Եւ առաջին կանոնին՝ տէր տուրընջան. և որ այլ զհետ *սոցա* աղօթք և փոխք նոցունց: - 659. ...ո՛չ էր յարմար թէ ապականացուն յանապական տեղիս բնակեսցի. մինչև *սա* ևս յանապականութիւն վերափոխեսցի: - 662. Երրորդ զիիւանդութիւնն. զի տեսեալ *զսոսա*՝ գիտասցուք զմահն մերձեալ: - 665. ...ընդդիմակն *սոցա* յաւելու. և ի մահն լնանի և դադարի ամենայն: - 666. Եւ զի ո՛չ գիտեմք *զսոսա*՞ պա՛րտ է զգուշութեամբ լինիլ: - 668. զի *սորա* բարեաց և չարեաց են հատուցմունք: - 675. որպէս ասեն ոմանք. վասն *սոցա* երեք հանգստեան տամք և աւետարան ընթեռնումք: - 675. ...վասն *սոցա* թողութիւն խնդրեմք: - 675. Չինգերորդ, զի **գ** է հասակ մարդոյս. մանկութեան երիտասարդութեան և ծերութեան յորում փոփոխիմք վարուք. վասն *սոցա* **գ** հանգիստ դնեմք: - 675. Եւ զանազանին *սորա:* - 679. Նա՛խ՝ զի ի *սմանէ* ելանեմք, և ի նմանէ ո՛չ: - 679. Երրորդ՝ զի **գ** են տեսակք հոգւոց. տնկական, զգայական, բանական. և *սորօք* մեղանչեմք: - 681. Եւ ո՞ր ի *սոցանէ* ընտրելի է ճշմարիտն: - 687. ...և ի տնկոցն յերկինս վերափոխիլ. և *սորա* ի հուրն ասեն մտեալ և անտի յերկինս վերափոխեալ: - 687. Եւ *սորա* այսպէս: - 687. *Սոցա* համաձայնին ընդհանուր ամենայն վարդապետք գոլ ի յերկնային խորանս անմարմնոց ի զանազան օթևանս լուսոյ: - 688. Իսկ թէ ո՞ւր իցեն *սորա* երկոքեանս, տեսիլն յօհաննու յայտնապէս ցուցանէ. սրբոց խորանս ասէ զվերինն սիօն և զհրեշտակացն դասս: - 688. ...և *սորա* ո՛չ գան ի դատաստան. այլ ի դատել զհրեշտակս և զմարդիկ ըստ առաքելոյ: - 688. Պատասխանեմք առ այս որպէս ասէ սուրբն կիւրեղ ի գիրս պարապմանց եթէ առակ օրինակ են *սորա* արդարոց և մեղաւորաց որ այսպէս լինելոց է ի կատարածի: - 695. ...զի նա քաւեալ է և *սա* ոչ. մինչև մարմինն ևս տանջեսցի և քաւեսցի. որ է՛ անպատշաճ երկոքինն: - 699. Եւ *սորա* պարտ է զի լիցին հաւատով: - 702. Չորրորդ, *սորա* իւրաքանչիւր հոգւոցն ասեն ընդ բաժանիլն. և ոսկեբերանն ի վերջին օրն համընթաց այրեցումն: - 703. *զսոսա* ասեն հրէայքն ելանել ի կատարածի և գալ յերուսաղէմ: - 708. Եւ ընդ դէմ *սմա* կրկին է անկումն որ է՛ մահ. վասն զի կրկին է մարդն. այսինքն հոգի և մարմին: - 710. Երկրորդ՝ բաժանիլ հոգւոյ ի մարմնոյ. և *սորա* կոչին առաջին մահ: - 710. Չորրորդ, տանջանքն յաւիտենից մահ է մշտնջենաւոր. և *սորա* կոչին երկրորդ մահ: - 710. Վասն որոյ երից *սոցա* պատշաճի թագն ոսկեղէն: - 712. Եւ որպէս զմարմինս մեր ընդունին յաւանդ, նոյնպէս և զգործս մեր խնդրէ ի *սոցանէ* և յառաջ բերեն: - 714. Որոյ պատճառ է, զի մարմին կերեալ մարդոյն է իւրն նիւթ գոյացական և *սոցա* եղև նիւթ պատահական: - 719. Եւ նշանս այս անքակտելի՛ է ի հոգւոյն և ի մարմնոյն խառնեալ. և յորժամ բաժանի հոգին՝ *սա* ո՛չ բաժանի ի հոգւոյն և ո՛չ լուծանի ընդ մարմնոյն: - 719. Եւ *սորա* ուղղին ի յարութեանն. զի գո՛րծ է կարող զօրութեանն աստուծոյ և ո՛չ տկար բնութեան: - 725. Սակայն իւրաքանչիւր ոք անսխալ անդամօք իւրովք յառնէ. այլ ո՛չ երևի թէ *սա* այր է և նա կին. այն ծեր և այն տղայ. զի որպէս հրեշտակք են յերկինս: - 726. Եւ են ինչ որ պատահմամբ անցանեն և էութեամբ մնան. որպէս երկնային մարմինք և **դ** տարերքս և մարդոյս մարմին. *սորա* պատահմամբ անցանեն և գոյացութեամբ մնան: - 727. ...պակասին *սորա* և ժողովին ի ներքոյ երկրի և լինին տանջանարանք մեղաւորաց որպէս ասէ սուրբն բասիլիոս: - 728. Եւ ա՛յս է տարաձայնութիւն *սոցա*. զի ոմանք ապականացու ասեն զխաչն տէրունական առարկելով կրկին կերպիւ: - 732. Այսպէս և այս ո՛չ է ըստ բնութեան կարգի. զի նոյն բանն աստուած ի *սա*՛ է միաւորեալ անբաժանապէս: - 733. Երկրորդ՝ զի աստուած զամենայն արարածս կրէ բանիւ զօրութեան իւրոյ ասէ առաքեալն և ի նոյնութեան պահէ. և *սորա* պահին առանց միաւորութեան էութեան նորա: - 733. Ա՛րդ՝ *սորա* անապականք են յայնմ հետէ և առ յապայ որ օրինակք են. ապա ուրեմն և ճշմարտութիւնն անապական է որ է խաչն աստուածընկալ: - 733. Արդ՝ եթէ ապականացո՛ւ էր *սա,* ո՛չ երկնչէին ի *սմանէ* դևք. որպէս և ո՛չ յանասնոց և յանշնչից. ապա ուրեմն անապական է խաչն: -

734. ....երկոքեան *սրա* կարի յոյժ վայելեն դատաւորի. այսինքն իմաստութիւն և անմեղութիւն. վասն որոյ քրիստոս լինի դատաւոր: - 735. Ա՛րդ՝ ի վերայ երից *սոցա* բազմեալ է տէր մեր յիսուս քրիստոս ո՛չ միայն յերկրի, այլ և յերկինս...: - 736. Ուր ինքն տէրն խաչեցաւ և յարեաւ. և *սրա* ամենեքեան ծոր յովսափաթու կոչին, որ յերկու ծորի մէջն է յերուսաղէմ: - 737. *Սրա*՛ են **բ** գիր չարեաց և բարեաց. մահու և կենաց: - 741. Իսկ ընդ դէմ *սոցա* լինի անփոփոխ գիրն: - 742. Նա՛խ՝ զի յերի՛ց է մարդն. հոգի մարմին և շունչ գոյացեալ. ի քակտումն *սոցա* **գ** վկա՛յ է պիտոյ: - 742. Եւ *սրա* արտաքո՛յ են ամենևիմբ երկնաւոր դատաւորին: - 744. Եւ *սրա* երբեմն հաւասարին. որպէս յորժամ արդարապէս հատուցէ բարեաց և չարաց. և միտեն յարաժամ անվախճան պատուէ և պատժէ: - 746. Եւ այսպէս երեքին *սրա* կոչին չարացն հնձան: - 748. Եւ *սրա* համեմատին պատժոց դժոխոցն: - 751. Եւ ասի *սա* նման փայտին կենաց որ է՛ ի մէջ դրախտին. այսինքն քրիստոս՝ որ է՛ ի մէջ եկեղեցոյս կարգեալ: - 755. *Սա* է հատն ցորենոյ որ անկեալ յերկիր՝ բազում պտուղս աշխարհի պտղաբերեաց...: - 755. *Սա*՛է մայր մեր եկեղեցի որ հոգևոր որդիս աստուծոյ օրըստօրէ ծնանի. որ հասեալ ժառանգութեանն. ի բաց տանելով զաղախինն և զորդի նորա: - 756. *Սա*՛ է ծորն այն յորում լսելի եղև հնչումն տապարին և ա՛յլ գործեաց: - 756. *Սրա*՛ են հոսանք ջուրցն լիութեան. զորոց յերգս գտանի սիրելոյ. որ ի խորութիւնն հայեցեալ աղաւնւոյն, ի գալստենէ բազային զգուշանայ: - 756. *Սա*՛ է ջուրն յաղեալ. որ զդառնութիւն ջուրցն այնոցիկ որք գտանին ի մեռային՝ քաղցրացոյց: - 756. *Սա*՛է յարկն այն, յոր մարգարէն մտանել ստուգեալ ասէր, «մտից ի տուն քո. երկիր պագից ի տաճար սուրբ քո»: - 757. Այլ թէ ի *սոցանէ* մի մի ուրուք տուեալ լինէր, փոխանակ թագաւորութեան համարէր. իսկ թէ *սրօք* ամենեքումբք վայելեսցէ, գերագոյն բոլոր աշխարհի լինէր: - 761. Ա՛րդ՝ *սրա* ամենայնքին մասնաւոր և փոփոխական են և հակառակաւ...: - 762. *Սրա* են **բժ**ան պտուղք փայտին կենաց: - 767. Եւ թէ ի թիկանց նետք մուխք սատանայի, *սովաւ* զգուշացիր և անքոյդ մնաս: - 770. Ա՛րդ՝ է՛ ինչ ի *սմա* հաւաքեալ ի լուսաւոր բանից վարդապետաց սրբոց ըստ գրոյն կամ իմացուածոյն: - 772. Այլ և վարժապետին իմոյ և մեծ հռետորի հայոց, Յոհաննու Որոտնեցւոյ, եղիցի ի *սմա* յիշատակ մաղթանաց մասին օրհնութեան. և վիճակ ժառանգութեան սրբոցն ի լոյս: - 773. Եւ գլխաւորի՛ *սա*՛ կրկին եօթեամբք կարգաւոր հարցմամբք: - 773. Եւ այսպէս յարմարին *սրա* երից որպիսութեանց մերոց: - 774. Ապա բնաւորապէս ընդ դէմ գոյ երից որպիսութեանց *սա*՛ մեզ չորրորդ գոլով. ոչ ունել ինչ ի մտի. մոռանալով միշտ. ո՛չ գիտել և ո՛չ յիշել ինչ զանտի կենաց: - 775. Եւ այն զի՞նչ իցէ, զի *սա* միշտ մի և նոյնպէս մնայ...: - 778. Զորօրինակ, քարոզեցաւ նինուէի կործանումն. և նախագուշակ եղև եզեկիայի մահ. և ո՛չ մի ի *սոցանէ* կատարեցաւ: - 779. Եւ դարձեալ՝ զորօրինակ, լոյսն և ջերմութիւն են էութիւն նորին զուգասփիւռ. այլ երբեմն մինն ծածուկ, և երբեմն երկոքին յայտնիք, և ընդ դէմ *սրա:* - 779. Իսկ դժոխայինքն թէ և զզջան կամ խոստովանին, արտաքոյ *սոցա*՛է ...: - 780. Զի որպէս բան պատկերին, այսպէս և բան շնորհացն եռակի. զի միապէս *սրա* եղծանին մեղօք...: - 782. Եւ է՛ շնորհ յատուկ ընրութեամբն աստուծոյ, որ պատճառ է՛ զփառս զանազան ներգործութեամբ. և է՛ *սա*՛ ան՚ի բաց դնելի անզեղջ խոստմամբ ի կողմանէ տուողին. որպէս է՛ առ մեզ շնորհք աւազանին: - 783. Որոց սկիզբն է հաւատն առ մկրտութեամբն. և կատարումն հայի առ գործն. և *սրա* փոփոխականք են ըստ քանքարացն յարգելոյ և պակասելոյ: - 783. Նախ բնական առարկութեամբ ըստ փիլիսոփայիցն հասողութեան. և *սա*՛ կոչի գիտութիւն: - 784. Երրորդ, ներգործութեամբ ի տեսութիւնս աչաց. *սրա* կոչին հաւատ անտեսակ: - 784. Եւ են մի քան զմի առաւել գերագոյն *սրա* և վարձատրելիք: - 785. Արդ որպէս յամենայն ժամանակս *սրօք* գան ի հաւատս ուղղութեան...: - 785. Եւ որպէս այլքն այլ ինչ, և *սա*՛ գծխատեսակ ջերմութիւն սրտի ընդ ցնցուղս ծայրից արտաքարշելով ի կրկին կողմանէ որպէս ասեն բժիշկք: - 786. Այս է՝ զիրատեսակն յերակս աչաց. և զօդատեսակն լսելեաց. և զայլսն նմանապէս. և զմաքրագոյնն *սոցա* ի խելս ի զգուշութիւն զգայութեանց: - 786. Եւ վտարին աւելորդք *սոցա:* - 786. Եւ ըստ այլ կերպի փոփոխին *սրա* ի միմեանս և լինի ստորասութիւնն բացասութիւն, և բացասութիւնն ստորասութիւն: - 787. Եւ սիւնք *սրա* տարր օդոյ ըստ նիւսացոյ: - 788

**ՍԱԲԱ +** Զայս բան եհարց դշխոյն *սաբայ*՝ առ իմաստնացեալն յաստուծոյ սողոմոն: - 179. ...իսկ ցօղ իմաստութիւնն որ տուաւ նմա յաստուծոյ. և թագաւորք արաբայ և *սաբայ*, ընծայաբերքն նմա: - 421. Քսանգ, **տիկինն *սաբայ* որ կոչիւր նսա, ցանկացաւ իմաստութեանն սողոմոնի:** - 441

**ՍԱԲԱՒՈՎԹ +** Յիշխանականնն. որպէս Տէր *սաբաւօթ*. Թագաւոր ամենակալ: - 49. Է՛ ուրեմն ասել, եթէ ոչ տեառն *սաբաւովք*, այսինքն զօրութեանց, թողեալ էր մեզ սերմն առաքելօք և մարգարէիւք և այլովք սրբովք և վարդապետութեամբ աւետարանին, համերք և ի մեղս լինէաք խստացեալք: - 755

**ՍԱԲԵԿ +** Որպէս զխոյն ի ծառոյն *սաբեկայ*. և զլորամարգն ի ծովէն. և զսատերն ի բերանոյ ձկանն հրաշագործեաց: - 326. Եւ այլք այսպէս մեկնեն թէ՝ ամենայն անիծեալ կախեալ կայցէ զփայտէ. այլ ո՛չ ամենայն կախեալ զփայտէ՝ անիծեալ է. որպէս խոյն ի *սաբեկայ* կախեալ ո՛չ է անիծեալ: - 400. Այլ և ծառն *սաբեկայ* ուր խոյն կախեցաւ: - 494

**ՍԱԲԵՓԹԱ** - Եւ վասն այն գնաց ի *սաբեփթա* յայլազգիս. զի և զնոցա նեղութիւնն տեսցէ. որք չէին անցեալ զօրինօքն մովսէսի: - 443-444

**ՍԱԲԷԻ** - Ընդվզեալ *սաբէի* և կորուսեալ ի կնոջէ. և սատանայի կործանեալ յիմաստուն կուսէ: - 438

**ՍԱԲԷԼ** - Արդ՝ յաջ և յահեակ խոտորին հերձուածօղք. որպէս *սաբէլ* յաջ խոտորեալ՝ ի մի բնութիւն և ի մի անձն ժողովեաց զերրորդութիւնն սուրբ: - 80. Իսկ եկեղեցի սուրբ՝ ընդ դէմ արիոսի մի բնութիւն խոստովանի. և ընդ դէմ *սաբէլի* գ անձինք: - 81

**ՍԱԳ +** Երրորդ՝ յայլոց նոյնք. որպէս զձու կաքաւի և *սագի* թխէ՛ հաւ. և նոյն կաքաւ, և *սագ* ելանէ: - 53

**ՍԱԳԱՇԷՆ +** Ինքն նմա՛ն էր կոթողի, կամ *սագաշէն* եկեղեցւոյ: - 293. Իսկ ձև խորանին, որպէս *սագաշէն* եկեղեցոյ: - 343

**ՍԱԴԱՅԷԼ +** Եւ ցուցցէ թէ իշխան և գլուխ էր *սադայէլ* իւրոյ դասուցն: - 148

**ՍԱԴՈՎԿ** - *Սադովկ* և աբիաթար. աննա և կայիափա. որ և աղջիկն հետազօտեալ: - 438. Ի *սադովկայ* առաջին ամին՝ Աղէքսանդր մակեդոնացի: - 453

**ՍԱԴՈՒԿԵՑԻՔ +** Ոմանք որպէս *սադուկեցիք* ո՛չ գոլ իմանան: - 51. Եօթներորդ, խմորն զաղանդ *սադուկեցւոցն* և փարիսեցւոցն առակեաց տէրն: - 356. Եւ այսմ հետևի աղանդն *սադուկեցւոց* որ ասէին չիք յարութիւն: - 694. Որոյ ընդ դէմ է աւետարանն որ առ *սադուկեցիսն* հրամայէ տէր...: - 710. Ապա թէ ո՛չ, լիցի աղանդն կերինթոսի և *սադուկեցւոցն*. որք մարմնաւոր ասէին զարքայութիւնն: - 758-759

**ՍԱԿ +** Իսկ որ երրորդ կրկնի, ի պոռնկութեան *սակի* գրի ի կանոնս սրբոց հարց: - 613

**ՍԱԿԱՅՆ +** Պատասխանեմք այսմ եթէ սո՛ւտ են ասացեալքդ. և պատրւակին ճշմարտութեամբ. *սակայն* յայտնի՛ է իմաստնոց: - 8. Ասեմք առ այս, եթէ ամենայն իր զինչ և իցէ ի ներկայս՝ գիտեմք զնա ի յէութեան իւրում. իսկ ի հանդերձեալսն ո՛չ գիտեմք ի յէութեան իւրում. *սակայն* գիտեմք զնա ի պատճառ իւր: - 9. *Սակայն* բե՛ր զառարկութիւնս նոցա տեսցուք. և զեղծումն նոցին յարմարեսցուք: - 15. Նախ՝ թէպէտ աստուած տեսանէ զամենայն նախատեսութեամբ և ո՛չ ինչէ արտաքոյ տեսութեանն աստուծոյ, *սակայն* տեսանէ զոմանս ի հարկէ՝ և զոմանս ի ներընդունակութիւնէ լինիլ: - 15. Դարձեալ ասեմք՝ թէպէտ տեսանէ աստուած զամենայն նախքան զլինիլն իւրեանց, *սակայն* տեսութիւնն աստուծոյ ո՛չ հարկ է ի վերայ նոցա լինիլ չար կամ բարի: - 15-16. Նախ՝ եթէ աղքատութիւն և մեծութիւն տիրելն և ծառայելն, է՛ յաստուծոյ. *սակայն* ոմանց կամելով՝ և ոմանց ներելով և թոյլ տալով. այսինքն զբարի մեծատունս և զաղքատս կամելով առնէ. և զչարսն ներելով և թոյլ տալով առնէ: - 19. *Սակայն* շարադրի միակն պատկութեամբ, և անշարադրելի՛ է ինքնութեամբ: - 26. Պատասխանեմք եթէ՝ թէպէտ հոգին ունի զբնութիւնն ի հօրէ՝ *սակայն* ո՛չ ծննդեամբ որպէս որդի, այլ բղխմամբ...: - 60. Ա՛րդ՝ զհոգին սուրբ ի յորդւոյ ո՛չ ասեմք. *սակայն* զնա հոգի որդւոյ անուանեմք: - 65. *Սակայն* բա՛նն մարմին եղև. և ո՛չ հայր և հոգի: - 75. Ահա՛ այս ի կարճոյ բացայայտութիւն ծածկեալ ամբարշտութեանց, որք բ բնութիւնս սահմանեն ի վերայ միոյն քրիստոսի. թէպէտ անձն մի համբաւեն համաձայն մեզ, *սակայն* որոշմամբ բնութեանց լինին տարաձայն մեզ և եկեղեցեացն աստուծոյ: - 90. Երրորդ՝ զի ո՛չ է նման առ մեզ և առ նա մասն և բոլորն. զի թէպէտ մասունք մարդոյ՝ ո՛չ ունին զկոչմունս բոլորին, *սակայն* մասունք մարմնոյն քրիստոսի՝ կոչին և ունին զբոլորին էութիւն: - 92. *Սակայն* աշակերտացն է ուղղութեան՝ ո՛չ յանձնէ խօսիլ. այլ նախնեացն սրբոց հետևիլ և նոքօք ուղղել: - 93. *Սակայն* նա բնութեամբ և էութեամբ միացաւ. և սոքա շնորհօք և ժամանակաւ: - 95. *Սակայն* զի թէ էն ըստ որում է աստուած՝ կրկին կերպիւ տեսանի. այսինքն գիտութեամբ և անգիտութեամբ. դնելով և բացաբառնալով այսպէս: - 119. *Սակայն* ըստ մեր իմացմանս հասարակ է բարին քան զսէրն. զի ասեմք՝ սէրն բարի է. ազնիւն բարի է. և այլն. որպէս ասեմք՝ մարդն կենդանի է. ձին կենդանի է. և այլն: - 128-129. *Սակայն* զչար խորհուրդն ո՛չ կարէ ածել ի ներքս որ միայն հաւանութեամբն է չար: - 145. Նոյնպէս թէ և իցեն հրեշտակք արբանեկեալք ի ստեղծումն գոյից, *սակայն* մինն է աստուած պատճառ ամենայն գոյից: - 164. Ասեմք առ այս Նա՛խ՝ եթէ թողութիւնն է ի զղջումն. և կարգն է ի յանձն ապականեալ. ապա ուրեմն իրաւի թէպէտ զթողութիւն ընկալաւ զղջմամբն, *սակայն* ի կարգն ո՛չ մտանէ ապականեալ և շրջեալ անձամբ և բնութեամբ, զորօրինակ բեկեալ և կցեալ անօթ՝ ո՛չ թւի ի կարգ անարատիցն: - 166. Դարձեալ ասեմք, թէպէտ

զթողութիւն ընկալաւ իսկապէս, և զպատիժս կրեաց հատուցմամբն, *սակայն* մնաց կնիք ապականութեանն ի յանձն որպէս ասացաք: - 166. Եւ թէպէտ ի յէութիւնս իւրեանց յետոյ, *սակայն* ի նախագաղափար տեսութիւնն աստուծոյ, գոյին յառաջ քան ըզլինիլն իւրեանց էութեամբ, և յետոյ եղեն ըստ նոյն նմանութեան: - 172. Եւ դարձեալ է՛ ոչ էակ՝ որ թէպէտ ներգործութեամբ ո՛չ է, *սակայն* զօրութեամբ ունի զգոլն. և յայսպիսի յոչնչէ եղեն արարածք ամենայն. ապա ուրեմն յայտնի է հարցումնդ: - 173. Եւ թէպէտ այսպէս ասացաւ, *սակայն* գոյացաբար է՛ աստուած յիմանալի երկինս. և կարողաբար ամենայն ուրէք: - 180. Կարծեմ թէ և քեզ ծանր թուի հարցումնս այս. *սակայն* մտաւորաբար լո՛ւր: - 180. Այլ ժամանակն է առաջին շարժումն երկնից, *սակայն* ո՛չ չափէ զնա. այլ չափէ՛ զտարրականս և զներգործութիւնս մեր յորում ո՛չ է: - 198. *Սակայն* կերպն և կերպարանն տարորոշին. որպէս գաղափարն և պատկերեալն: - 236. *Սակայն* և ո՛չ է պարտ զանց առնել զիմաստս փիլիսոփայիցն: - 246. *Սակայն* և նա՛ է ի թիւս յայս. այսինքն զի երիցս պատկելով երեքտասանն՝ լինի լթ. և ի քառասներորդումն պտղաբերի: - 263. *Սակայն* ա՛յլ եղանակաւ է քան զասացեալս բնաբանաբար ի մէնջ: - 270. Վեցերորդ՝ զի թէպէտ ի ձեռագործ հանդերձից մե՛րկ էին, *սակայն* ի լուսոյ շնորհաց զարդարեա՛լ էին: - 278. Ո՛չ կերին. զի թէպէտ ժողովեաց, *սակայն* ո՛չ կերին. այլ շնորհօքն աստուծոյ կացին որպէս մանուկն յարգանդի մօրն ապրի: - 294. *Սակայն* ա՛յլ եղանակաւ է այս, և ա՛յլ այն: - 302. *Սակայն* զառձեռն պատրաստ դիցուք ի իմն եղանակաւ պատմաբանութեամբ: - 304. *Սակայն* հաճելին մեր՝ ընդունելի է աստուծոյ. զառաւել սէրն նշանակէ. զի որ ինչ մեզ անպիտան է, և աստուծոյ անպիտան է: - 371. *Սակայն* հանդերձեալն և սիրտ մարդոյն՝ միայն աստուծոյ է գիտելի և ոչ այլ ումեք որպէս ասացաւ ի սկիզբն գրոցս: - 430. *Սակայն* բարի՛ է քան զայն որ ամենևին ո՛չ խոստովանի: - 432. Եւ թէպէտ աստուած արդար է և ողորմած, *սակայն* յատկագոյն ասի ողորմած քան արդար: - 459. Զի թէպէտ փակեալ էր օրէնքն խառնիլ երկուց ցեղիցն ընդ միմեանս, *սակայն* ղևտացւոցն ո՛չ գոյր ժառանգութիւն և բաժին, խառնեին երբեմն ընդ թագաւորական ազգն յուդայ: - 461. *Սակայն* արմատ մեղացն որ է՛ ցանկութիւնն և դիւրասահութիւնն ի մեղանչելն՝ մնայ. որպէս յա՛յտ է ի մկրտեալսն որք կարեն մեղանչել: - 462. ***Սակայն* ըստ ներգործութեան մեծագոյն է սրբութիւն մկրտութեանն. զի տպաւորէ զկնիքն. այլ և բանայ զդուռն արքայութեան. այլ և պատրաստէ՛ զմարդն առ ի խորհուրդս ամենայն. զոր ո՛չ ներգործեն ա՛յլ երկոքին եզական շնորհքն:** - 462. Եւ զի հոգին է ևս ի հօրէ, *սակայն* բղխումն է և ո՛չ ծնունդ որպէս ցուցաւ ի վերոյ: - 472. Զի **բժ**ան օրն թէպէտ պակաս է ի թիւս տարւոյն, *սակայն* սկիզբն է տարւոյն: - 484. Զի թէպէտ սատանայ էր գերեալ զմարդն, *սակայն* ի գերութիւն նմա հա՛յր մատնեաց յորժամ պատժեաց զնա: - 492. Այլ *սակայն* բնախօս քննութեամբ ցուցցուք բազմազան եղանակաւ: - 498. Իսկ աւելորդ ծորումն թէպէտ անանգոսնելի՛ է, *սակայն* ակամայ է. և զակամայն ո՛չ կրեաց քրիստոս: - 502. Եւ սոյնպէս շաղփաղփ երևէին բանք նոցա. և տեսիլքն *սակայն* ամենայնք՝ զմի և զնոյն յարութիւնն պատմէին: - 515. *Սակայն* վարդապետք եկեղեցւոյ պատշաճե՛ն զստեղծանելն հօր. իսկ զտրոհելն որդոյ. և զզարդարելն հոգւոյն սրբոյ: - 522. *Սակայն* մի և նոյն բանն բազմանայ ի բազումս...: - 529. Եւ մի և նոյն բանն է ներտրամադրեալն ի սրտի. զի ըստ բան գոլոյն ո՛չ զանազանի. *սակայն* ըստ որպիսութեան որակին. զի էր անմարմին ի սրտի՝ և այժմ մարմնացաւ ի քարտիսի: - 529. *Սակայն* տեսցուք զի ըստ փիլիսոփային մի ասի գ եղանակաւ: - 533. **Երկրորդ, մի անուն՝ և նշանակեալքն բազումք. որպէս խոյ է յերկինս և յերկրի և ի ծովս. նոյնպէս մի կոչի եկեղեցի կենդանի մարդն և շինեալն ի քարանց և եկեղեցին անդրանկացն յերկինս. *սակայն* զանազա՛ն են որպիսութեամբ:** - 533. *Սակայն* կարգ գոյ ի մէջ նոցա և պատիւ և հնազանդութիւն և սէր. այլ իշխանութեամբ համահաւասարք են: - 547. ***Սակայն* ըստ արիստոտէլի սեռն և տեսակն անհատին հետևին. զի են երկրորդ գոյացութիւն**: - 550. Եւ այսոքիկ թէպէտ և ոմանց ո՛չ թուեսցին որպէս փոքր կարծեցեալք. *սակայն* աւանդութիւն և ո՛չ հաւատ: - 554. Այլ դու ո՛վ այրդ աստուծոյ մաքրամիտ և ճգնազգեաց միայնաւոր սուրբ հայրդ սահակ, թէ և զիջանես եղբայրական սիրով խնդրել բանս ի մէնջ. *սակայն* կարօղ ես և զթերին լնուլ և զյաւելորդն կշռել. և զմեզ օգտեցուցանել ի ներգոյէ՛ քոյին պայծառամիտ սրբութեան սրտի: - 558. Ա՛րդ՝ մեղանչելն մարդոյ այնպէս է որ զակն խփեաց ի լուսոյն և խաւարեցաւ. *սակայն* լոյսն ծագէ՛ դեռևս ի վերայ աչացն և սակաւ փայլէ ի ներքս. և յորժամ բանայ վաղվաղակի լոյս տեսանէ: - 562. ...այսինքն չարութեամբն յորժամ կամքն կարէ՛ և գիտէ ընդ դէմ կալ չարի իմն, *սակայն* վասն չարութեան ընտրէ զայն: - 566. Ա՛րդ՝ թէպէտ հոգին ո՛չ լինի սերեալ ի հօրէն որպէս մարմինն, *սակայն* սկզբնական մեղքն անցանէ ի հոգւոյն յաղագս ի հոգիս զիետ եկելոցն

միջնորդութեամբ մարմնոյն ցանկութեամբ ծնելոյն: - 567. *Սակայն* ներկայ է ըստ ճանաչման տեսութեանն: - 574. *սակայն* ըստ ներքնոյն առաւել նմանեցուցանէ խաղաղութիւնն: - 585. *Սակայն* ազատի ի կանոնական հրամանաց: - 603. *Սակայն* ի մահն արծակի և քակի շաղկապ պսակին: - 610. Այլ թէպէտ առանձնականն կամաւո՛ր է, *սակայն* ի վերայ վանականաց որք են աբեղայք և կրօնաւորք, հարկաւո՛ր է վասն **դ** պատճառի: - 623. *Սակայն* այլ է մահ մեղաւորին, և ա՛յլ արդարոյն: - 669. ...զայն աղերսեն նմա. *սակայն* ըստ հաճոյութեան կամացն աստուծոյ խնդրեն և ո՛չ զիակառակն: - 685. Այլ *սակայն* զհատուցումն գործոց և զտանջանս յաւիտենական ո՛չ են առեալ այժմ...: - 691. *Սակայն* զփառսն չև ևս են ընկալեալ մինչև ի սքանչելի երկրորդն գալուստ. այսպէս մեծն անդրէաս: - 696. Արդ այսօրիկ փրկին արդեամբք հիման հաւատոյն. *սակայն* այնպէս որպէս թէ ի հուր: - 702. *Սակայն* ի յղութեանն իջանէ չար հոգին ի յորովայն մօրն. և նմա զօրութեամբն և ներգործութեամբն ծնանի մանուկն և սնանի և հասանէ յերիտասարդութիւն. - 706. ...և ասասցեն՝ թէպէտ մեռաւ իշխանն մեր, *սակայն* մեք ունիմք անհոգութիւն և խաղաղութիւն: - 709. *Սակայն* հաստատի յարութիւնն բնական քննութեամբ և սուրբ գրոց վկայութեամբ: - 714. Ասեմք, թէպէտ այնպիսի անդամքն ո՛չ են պիտոյ ի յարութեանն, *սակայն* յառնեն վասն կատարելութեան և գեղեցկութեան. - 725. *Սակայն* իւրաքանչիւր ոք անսխալ անդամօք իւրովք յառնէ. այլ ո՛չ երևի թէ սա այր է և նա կին. այն ծեր և այն տղայ. զի որպէս հրեշտակք են յերկինս: - 726. *Սակայն* երևելի աթոռ ի յօդոյդ կազմեալ հաւատացեալ լինի. զի ամենայն ոք տեսցէ նստեալ: - 736. Եւ թէպէտ մի իցէ արքայութիւն սրբոց, *սակայն* զանազանեսցին փառօք և պսակաւ և հանգստեամբ: - 760. Եւ թէպէտ գերազանցեալ են այսօրիկ փառք քան որք այժմ ունին յերկրի. այլ *սակայն* օրինակաւ սակաւ ինչ բացայայտութիւն առցուք: - 761. Երրորդ անդուստ՝ զի իբրև նոքա որ այն քան տկարքն էին՝ *սակայն* յա՛յնպիսի թշնամին այն քան յաղթութիւնս գործեցին ըստ յոբայ: - 765. Իսկ ամենայն զգայական կենդանւոյ թէպէտ իգին ըստիճք գոն վասն զծնունդս կերակրելոյ. *սակայն* և արուացն գոյ նոյն մասն անդամոց կազմեալ յարարչէն. և այն յի՞նչ պէտս լինի. խնդրել արժան է: - 785. Բարւոք ասացաւ յարարչէն. զի թէ և բնութիւն թարց երևակայութեան, և արհեստ հանդերձ երևակայութեամբ, *սակայն* կամք արարչական ետ նոցա բնական և բանական կարողութիւն...: - 786. Իսկ զի և արուի թէպէտ ո՛չ նոյն պիտոյիւք. *սակայն* ո՛չ ընդ վայր կազմեցաւ. ի լրումն **բժ**ան դրանց անդամոց. ի ներքս մուծանելոյ և արտաքս հոսելոյ զպակաս և զաւելորդս ինչ. անվնաս կելով կենդանւոյն: - 786. *Սակայն* առաջինն է ուղիղ: - 788

**ՍԱԿԱՒ +** Զորօրինակ ո՛չ է անզգուշագոյն յառել ի բոլորակս արեգական՝ զի շրտնու և ի *սակաւուն* զոր ունի...: - 24. Եւ յոչ էից՝ զի *սակաւ* հիւթն այն՝ ո՛չ կայր միս և ոսկր և ջիլ. կամ մորթ: - 37. Եօթներորդ՝ զի չարչարանօքն իւրովք յուսադրեաց զմեզ, զի մի՛ յետ տկարութեանս և *սակաւ* չարչարանաց ի փորձողէն՝ կասեսցուք ի նահատակութեանց. այլ օրինակ դիցուք զչարչարիլն նորա մեզ և համբերեսցուք որպէս ասէ: - 43. Է՛ և այլ բազում միտք վասն բանին. զոր մեք *զսակաւն* գրեցաք: - 49. Ահա *զսակաւ* ընծայ կարճառօտութիւն բանիս ընկալ ի քում ընդարձակութեան գանձարանի սրտի՝ երիցագոյն հարազա՛տդ Գէորգի է: - 95. Վասն է՞ր զանազանապէս տայ աստուած զպարգևս և ո՛չ հաւասար. որպէս առաւել տայ հրեշտակաց՝ և *սակաւ* մարդկան. և նըւազ կենդանեաց և տնկոց և անշնչից: - 130. Հնգետասաներորդ՝ ասէ սուրբն դիոնէսիոս՝ թէ վասն այն տայ աստուած սրբոցն նեղութիւնս և փորձութիւնս, զի նեղութիւնն սիրելի և փափագելի՛ է նոցա. և յայնժամ ուրախանան սուրբքն, յորժամ ի մարմնական հեշտութեանց հեռանան. և արիանան ի փորձութիւնս. և *սակաւ* նեղութեամբ ժամանեն ի մեծ հանգիստն: - 159-160. Ասեմք առ այս. Նախ՝ եթէ նոր եկելոցն ի հաւատս՝ *սակաւ* դնէին կանոնս...: - 166. Մերձ եկեալ ի նոյն կենդանակերպն՝ *սակաւ* լոյսն առնու ի նմանէ յարևելից կողմանէ. թէպէտ մեզ ի յարևմտիցն երևի. այլ նմա՛ արևելից մասն է որ զլոյսն առնու: - 187. Վեցերորդ Փայլածուն. զոր օտարիտ կոչեն. միշտ շրջի ընդ արեգականն. և *սակաւ* հեռանայ ի նմանէ. զընթացս իւր կատարէ՛ **յլը** աւուրս. **ժ** օր պակաս քան զլուսաբերն. և այլք թէ **գ** ամիս: - 189. Նախ՝ զի իմանալիքն մշտնջենաւո՛րք են, ի *սակաւ* վայրկենի կատարեցան: - 192. Երրորդ՝ ամպն ի *սակաւ* ժամանակս աճէ՛ և բազմանայ: - 206. Չորրորդ՝ ի գլուխ մարդոյն *սակաւ* է հողն և օդն բազում. վասն այն ի վերո՛յ է: - 233. Եւ որպէս *սակաւ* մասն ոտիցն ի յերկի՛ր է հպեալ և կոխէ, նոյնպէս և մեզ *սակաւ* պէտս մարմնոյ...: - 233. Եւ բնակա՛ն է, զի յանկատարէն ի կատարեալն ելանէ. որպէս աստիճանաւ ի գլուխ սանդղոյն. և ի *սակաւուն* ի բազումս. այսպէս և հոգի: - 258. Թիւ կենաց մարդոյ չափեա՞լ է՝ թէ պատահմամբ յերկար և *սակաւ* ապրին: - 291. Եւ ի *սակաւ* զօրութենէն նախքան զյարութիւնն

չարչարէին դևքն...: - 316. ...և յայնցանէ աճեցոյց տէր զինչս և զանասունս նորա. որպէս յանապատին *զսակաւն* աճեցոյց նկանակ, և զբազումսն կերակրեաց: - 326. Եւ դարձեալ՝ զի բազմացն շատ տացէ զբաժին երկրին, և *սակաւուցն* փոքր: - 392. Նա՛խ՝ զի միայն մասին աշխարհի և *սակաւո՛ւց* էր տէր իսկ քրիստոս ամենայնի: - 442. Զայս հատուցանել ի վեր քան զարժանն. և պատժել *սակաւ* քան զարժանն: - 459. զի զնոսա փառաւորէ ի վեր քան զարժանն. և զսոսա պատժէ *սակաւ* քան զարժանն. այսոքիկ ողորմութեանն են: - 459. Այս քան վասն բանին մարդեղութեան, զի բազում են պատճառք ասացեալ վարդապետաց. զոր մեք *զսակաւն* եդաք աստ: - 468. Եօթներորդ՝ նա՛ միա՛յն է միշտ և անդադար ծնունդ. զի ո՛չ *սակաւ* ի ժամանակի, և ո՛չ ի ժամանակի դադարի. այլ որպէս լոյս ի հրոյ միշտ և անհատապէս ծնանի: - 472. զՇարականսն ո՞վ է ասացեալ. Եւ *սակաւ* լուծումն նոցին: - 527. Ապա ուրեմն կատարեալ մեղք է մտաց մեղքն. զի զոմանս առաւել պատժէ, և զոմանս *սակաւ:* - 556. Ա՛րդ՝ մեղանչելն մարդոյ այնպէս է որ զակն խփեաց ի լուսոյն և խաւարեցաւ. սակայն լոյսն ծագէ՛ դեռևս ի վերայ աչացն և *սակաւ* փայլէ ի ներքս. և յորժամ բանայ վաղվաղակի լոյս տեսանէ: - 562. Այնպէս մարդ մեղօք զրկի ի շնորհաց լուսոյն. այլ լոյս խնամոցն աստուծոյ չէ հեռացեալ և *սակաւ* փայլէ ի ներքս ի տրտնջականն...: - 562-563. Չորրորդ՝ որք միայն զորդւոյ ասեն բան՝ *սակաւ* պատիժն...: - 566. Եւ թէ ասիցեն հակառակքն մեր, ո՛չ ապականի գինին զի *սակաւ* է ջուրն: - 595. Ասեմք, թէպէտ նիւթն *սակաւ* է այլ բնութիւնն հաւասա՛ր է ...: - 595. Ապա ուրեմն թէպէտ և *սակաւ* խառնի ջուրն, բնութիւնք գինւոյն և ջրոյն ապականեցան. զի ո՛չ անապակ գինի է և ո՛չ պարզ ջուր: - 595-596. Ասեմք թէ՝ *սակաւ* հեշտութիւն կապեցաւ յամուսնութիւնն...: - 613. Եւ յաչացն ի յերեսն *սակաւ*. որ արտասուքն ելանէ. բայց *սակաւ* ճանապարհս այս յաղթէ՛ զայն բազում տարւոյ ճանապարհն: - 620. ...և զայն *սակաւ* բարին վճարէ՛ աստ, որ ի դատաստանին ակն բարւոյ այլ ո՛չ ունիցին...: - 664. Իսկ չորրորդն և հինգերորդն ընդունելի են. և *սակաւ* զանազանին...: - 687. ...զի որք զպատիժ այսմ կենացս ակն ունին առնուլ՝ երկնչին ի չարեաց կամ *սակաւ* առնեն...: - 698. Եւ յետ *սակաւուց* ի նոյն գլուխն ի վերայ այնմ բանի թէ՝ «կինն փախեաւ յանապատ զի կերակրեսցի անդ» ասէ ...: - 703. Եւ յետ *սակաւուց* ի նոյն գլուխն ասէ, թէ ո՛չ զգայապէս լինի տեսիլ հրեշտակի...: - 703. Եւ բաւական է *սակաւս* ի բազմաց սուրբ գրոց վկայութիւն եթէ գոյ ճշմարտապէս յարութիւն մարդկան: - 716. ...այլ *սակաւ* հիւթն այն որ ի սկզբանէ՛ գոյացութեան մերոյ ի ծնողացն է՛ ընկալեալ: - 718. Երկրորդ՝ զի ժամանակ կենցաղոյս համեմատեալ յաւիտենին՝ փո՛քր է և *սակաւ:* - 730. Երրորդ՝ զի ժամանակ մարդոյ մինչ ի վախճան իւր փոքր է և *սակաւ:* - 730. Այսպէս ի միտելն *սակաւ* ի չարն՝ յաղթահարեաց արդարութիւնն: - 745. Զի թէ և *սակաւ* ժամ լինի մնացեալ ի կենացն որ քան աւազակին ի յելս շնչոյն. և նա՛ յառաջ քան զամենայն արդարս եմուտ ի դրախտն աստուծոյ ընդ տեառն: - 758. Որպէս ասեն վարդապետք, ի վերջին ծովէն սպանիու մինչև ի հնդիկս *սակաւ* աւուրց բացատ գոյ թէ վարեսցէ հողմ զնաւն: - 763. Այլ և զերջանիկ գաղափարօղսդ մաղթեմ. որք ընդօրինակէք զգիր հարցմանցս այսորիկ, գրել և *զսակաւ* յիշատակս այսոցիկ: - 773. Զի զնոսա փառաւորէ՛ ի վեր քան զարժանն, և զնոսա դատապարտէ՛ *սակաւ* քան զարժանն. և է՛ այս ողորմութիւն: - 779

***ՍԱԿԱՒ ԻՆՉ, ՍԱԿԱՒ ՄԻ, ՍԱԿԱՒՈՒՔ +*** Ասեմք թէ՝ զբանս զայս ասէ մարգաէն վասն խաղաղութեան որ եղև *սակաւ մի* յառաջ քան զգալուստն քրիստոսի՝ և ի բոլոր ժամանակս քրիստոսի, և յետ նորա **խ** ամ մինչև ապստամբեցին հրէայքն հռօմայեցւոց տէրութեանն: - 27. Իսկ յատկութիւն և որոշումն դիմաց՝ *սակաւ ինչ* է...: - 104. Եւ աստուած յայտնի է ի բանականքս իմացմամբ և պատկերաւ. այլ ի կենդանիս և ի բոյսս և ի գոյսս *սակաւ ինչ* նմանութեամբ: - 109-110. Երրորդ՝ է՛ գործ նախախնամութեան. զի ըստ ընտանի կարողութեան իւրեանց՝ համեմատապէս զպարգևս ընկալցին. զի մի վնասեսցին փոքունքն մեծամեծօք. և թերի մնացին մեծամեծքն *սակաւուք:* - 130. Որպէս եղև առ մարիամ բորոտութիւն վասն բանբասելոյն զմովսէս. որ աստ *սակաւ ինչ* տանջեցաւ...: - 159. Եւ ջուրն քան զօդ. և օդն ծա՛նր է քան զհուր. զի *սակաւ ինչ* գիճութիւն ունի: - 180. Երրորդ՝ զի ջուրք ծովուն բա՛րձր է քան զերկիր. վասն որոյ հա՛րկ առնէ և ի վե՛ր մղէ և ապա՛ հեղու յերկիր. զորօրինակ մարդիկք ի բարձրագոյն լերանց իջուցանեն զջուրն, և ըստ նոյն չափոյ ի միւս կողմն ի վեր հանեն *սակաւ ինչ* պակաս: - 209. Թէ լինի *սակաւ մի* մեղուշագոյն, արդարամիտ է և քաջ ուշիմ: - 246. Շուրթն կախեալ *սակաւ մի*, տարտա՛մ է. զի յէշ և ի ծիս նմանի: - 247. Այլ զայն ինչ հարցումն որ զմարդն ի հերձւածոյ ի զատ տանի՝ պա՛րտ է հարցանել. որպէս յառաջիկայդ հարցումն է *սակաւ մի:* - 251. Ապա ուրեմն ի ժամանակիս յայս ընկե՛ր են սաւուղայ որք *սակաւ մի* կարծեօք հաւանին երազոց կամ վիճակաց և

ռամտեսաց և այլոցն: - 429. Զի ի րոբովամէ՛ որ զերինջսն գործեաց՝ վեց եօթանասուն ամ է մինչև զգերութիւնն *սակաւ ինչ* պակաս...: - 48. Նա՛խ՝ զի երևելի էր և ո՛չ անարգ ոք. որ և *սակաւ ինչ* յառաջ փառօք եմուտ ի քաղաքն: - 490. Եւ զայսոսիկ գտցես ի սկիզբն նախերգանի գրոյս *սակաւուք:* - 537. Առաջինն է *սակաւ ինչ* միայն յանցուած տեսութեան ըստ բնաւորական մտածութեան նորա առ ամենայն իրս: - 558. ...որ *սակաւ մի* խրատեցաւ ի ձեռն աբիսողոմայ: - 602. Իսկ ի նորս առ մեզ, *Սակաւ ինչ* հոգացեալ զեօթնիցս, այլ ութերորդին փոյթ տարեալ դարուց աւանդապահք եկեղեցոյ, կարգեցին ութն կանոնս ըը գուբղայիւ: - 627. Եւ այլն ասացեալ է *սակաւուք:* - 629. Այսպէս հոգևոր *սակաւ ինչ* այսօր ուրախանամք և պատրաստեմք զմեզ: - 646. Այս է խորհուրդն. զի երեկոյս նշանակէ՛ զկեանս զայս որ տնօրէնութեամբ փրկչին *սակաւ ինչ* տեսօղ եղաք հաւատով: - 646. Եւ նոյն քան ուտիք. *սակաւ ինչ* աւելի կամ նուազ: - 650. Զի՞նչ է խորհուրդ բարեկենդանին որ յամենայն տեղիս ի վանորայս և յանապատս ներե՛ն *սակաւ ինչ* ի չափաւոր վայելս: - 657. Զի գնելն լինի *սակաւ մի* ժամանակ. այլ ստացուածն է՛ յաւիտենական: - 744. Պոռնիկն *սակաւ մի* արտասուօք դարձաւ խաղաղութեամբ: - 745. Եւ թէպէտ գերազանցեալ են այսոքիկ փառք քան որք այժմ ունին յերկրի. այլ սակայն օրինակաւ *սակաւ ինչ* բացայայտութիւն առցուք: - 761. Այլ և ի դռան Կլայիս *սակաւ ինչ* դանդաղեալ, մինն փրկեալ և միւսն գերեալ: - 789

***ՍԱԿԱՒ ՍԱԿԱՒ +*** Եւ մանաւանդ զի բնութիւնն յանկարծակի ո՛չ կարէ ներգործել. այլ *սակաւ սակաւ* հետևելով յանկատարէն ելանէ ի կատարեալն: - 255. Եւ դարձեալ՝ որ քան մերձիմք կատարածի, այնքան մերձենամք ի ցաւս դժոխոցն. որպէս յերիկունն *սակաւ սակաւ* առաւելու խաւարն և ցուրտ: - 293.

**ՍԱԿԱՒԱՄԻՏ +** Կամարաւոնքն՝ թէ ի վերոյ շարակցեսցին՝ *սակաւիմա՛ստ* է. թէ վայր ի յռնգունսն հասցէ, սրամիտ է: - 246

**ՍԱԿԱՒԱԲԱՆ +** Գիտելի է՝ զի առաջին աստուածաբանութիւնն նեղագոյն է և *սակաւաբան*. որ է տպաւորականն: - 123

**ՍԱԿԱՒԱԿԵԱՑ +** Դարձեալ, թէ է՛ հարկ՝ անիրաւք են և ինքեանք աստեղքն. զի ոմանց բարիս գրեն, և ոմանց չարիս. զոմանս մեծատունս և զոմանս աղքատս. հեշտ կեանս և դժւարս. երկարակեացս և *սակաւակեացս*. բազում անգամ անարժանիցն բարիս խոստանան, և արժանեացն չարիս: - 12. Եւ *սակաւակեացքն* փութով. որպէս նարին խոտն, մանուշակն, և այլն: - 214. Ընդէ՞ր է զի նախահարքն յերկարակեացք էին, և մեք *սակաւակեացք*: - 291. **Իսկ ի վերջին դարս որ է՛ լուսնին՝ *սակաւակեացք* են մարդիկք. զի նա՛ ի լ օրն վճարէ զբոլոր ընթացս իւր**: - 291

**ՍԱԿԱՒԻԿ, ՍԱԿԱՒԻԿ ՄԻ +** Եւ ո՛չ ուրեք երբեք միտք ուղղափառաց բաժանմամբ տեսանէ. ո՛չ զբնութիւնս և ո՛չ զկամս և ո՛չ ներգործութիւնս որ յառաջն հարցափորձեցաք *սակաւիկ:* - 174. Եւ այսմ պատճառ անհա՛ս է մտաց մարդկան. միայն անքննին դատաստանին աստուծոյ է տալի. և անհետազօտելի ճանապարհաց նորին. որև *սակաւիկ մի* յառաջ ասացաւ: - 252. Այս քան վասն մեղաց *սակաւիկ:* - 570. Եւ զորօրինակ՝ ի ստորոտ լերին հասեալ զգրաստի բեռինս առեալ՝ թողումք յարօտս *սակաւիկ մի:* - 657

**ՍԱԿՍ +** Եւ մի է, և անմարմին է, և անբաւազօ՛ր է, և անեղ է. յայն *սակս* և անվախճան է ...: - 26. Պատասխանեմք, այն որ ասի հոգի քրիստոսի, և թէ՝ փչեաց, և թէ՝ առաքեաց, յայն *սակս* ասացան, զի ծաւալումն հոգւոյն սրբոյ յաղագս մարդկան՝ գալստեամբն քրիստոսի եղև: - 61. Ապա վասն է՞ր *սակս* ժամանակեայ մեղաց՝ յաւիտեան պատժէ աստուած: - 744

**ՍԱՀԱԿ** - Եւ Պատրիարգունք էին անդ, *Սահակ* հայոց՝ թղթով միաբանեալ: - 542. Եւ վերստին հաստատեցին զկարգեալսն սրբոյն գրիգորի և ներսէսի և *սահակայ* և մաշտոցի: - 544. Այլ հրամանաւ մեծի թագաւորին ուստիանեայ ժողովեցան յունաց և հռոմոց և հայոց և վրաց և աղուանից եպիսկոպոսունք. և կաթողիկոսն հայոց *սահակ*...: - 544. ...որ եզր եղև հաւատոյ ուղղութեան. և հրամանաւ հերակլի հաւանեցաւ ժողովոյն քաղկեդոնի. կացեալ **զ** կաթողիկոսք նոյն աղանդովն որ են այսոքիկ. Եզր. Մովսէս. Անաստաս. Իսրայէլ. *Սահակ*. Եղիա: - 545. Այլ դու ո՛վ այրդ աստուծոյ մաքրամիտ և ճգնազգեաց միայնաւոր սուրբ հայրդ *սահակ*, թէ և զիջանես եղբայրական սիրով խնդրել բանս ի մէնջ. սակայն կարօղ ես և զթերին լնուլ և զյաւելորդն կշռել. և զմեզ օգտեցուցանել ի ներգոյէ՛ քոյին պայծառամիտ սրբութեան սրտի: - 558. Զխաչին և զեկեղեցոյ, *սահակն* որ գնաց ընդ դէմ տաճկաց: - 637. ...յորժամ այս ամենայն հաստատեալ նորոգեցաւ հրամանաւ սրբոյն սահակայ

պարթևի ի փառս քրիստոսի. ձեռամբ իմով մովսիսի գրչի *սահակայ:* - 659. Հինգերորդ, զի և նախահարցն քարեայ էր գերեզմանն. աբրահամու. *սահակայ*. և յակոբայ. նոյնպէս և գերեզման տն. և կափարիչ վեմն...: - 679

**ՍԱՀՄԱՆ +** Նոյնպէս չափ և *սահման* բնութեա՛ն է: - 23. Դարձեալ՝ չափ և *սահման* ի վերջին եզր էութեան նկատէ, և սկիզբն և պատճառ ի յառաջինն: - 23. Եւ զայլ ամենայն բնախօսութիւն յաղագս բարւոյ և չարի՝ գտցես ի Դիոնէսիոսի ի չորս գլուխն յաստուածային անուանսն. և ի ստորոգութիւնսն ի հակակայից ճառն. և ի *սահմանս* դաւթի...: - 24. Առաջին է՛ անգիտանալ զտկարութիւն և զփոքրկութիւն մարդկային մտաց. կարծեն թէ՝ ամենայնի պարունակօ՛ղ է, և ո՛չ ունի *սահման:* - 31. Դարձեալ՝ զի յիմարութիւն և իմաստութիւն են ի նոյն և ի մի բնութիւն մարդոյն, և ո՛չ ասին հակառակ միմեանց. այլ միապէս ունի յիմարն զիմաստնոյն բնութիւն և *զսահման:* - 38. Անանուն անուանելի է աստուած. զի անունն *սահմա՛ն* է. և *սահմանն* յայտնիչ բնութեանն: - 49. Հինգերորդ՝ զի բանն է *սահման*. և որպէս յայտնիչ է *սահմանն* սահմանելոյն, այսպէս և որդի սահմանէ՛ զէութիւն հօր...: - 49. Եւ ապա՛ զադամ, զի ունի զսէթ ծնունդ՝ և զևա ո՛չ ծնունդ. այլ հատումն ի նոյն բնութենէ. և ընդ միով *սահմանաւ* գոլ ծնողին և հատմանն և ծնիցելոյն: - 53. Ուստի յա՛յտ է ի *սահմանէն*. ամենայն մարդ կենդանի բանաւոր մահկանացու մտաց և հանճարոյ ընդունակ: - 74. Նախ՝ զի սքանչելեօք է. որոյ *սահմանն* անգիտելի է, և ի վեր քան զբնութիւն: - 77. Ապա եթէ էութիւն է և գոյացութիւն որպէս ի *սահմանն* արտադրի...: - 86. Իսկ թէ բաժանական է անձն՝ որպէս յա՛յտ է ի *սահմանէն* անհաղորդելի կայացութիւն: - 86. Եւ *սահման* միոյն է այս. մի է որ յինքեան անբաժանելի է, և յայլմէ բաժանեալ: - 110. Նոյնպէս կարգ և *սահման* ընդհանուր եղեալ լուսաւորեցին զամենեսեան: - 126. Ասեմք առ այս եթէ՝ զինչէն՝ անուամբ կամ *սահմանաւ* ճանաչի. և անունն յայտնի՛ է ըստ ինքեան: - 140. Երկրորդ՝ տեղի լսի *սահման*. ըստ որում բովանդակէ՛ զբնութիւն իրին: - 172. Չորրորդ՝ զի իւրաքանչիւր սոքա առանձին *սահման* ունին և բնութիւն. և ո՛չ միաբանին ընդ միմեանս և ո՛չ ընդ մարմնի. այսինքն քանակն որակն. և ծանրութիւնն. և այլքն: - 175. Նախ՝ զի մարմին է բարձր. որ և ի *սահմանս* իւր նախադրի: - 184. Երկրորդ՝ բաժանիչք և *սահմանք* են երկրի: - 211. Երկրորդ՝ անունն *սահմա՛ն* է կարճառօտ յայտնիչ բնութեան ենթակայ իրին որպէս ասէ իմաստունն: - 219. Եւ ա՛յս է *սահմանն* ազգաց որպէս ասէ մարգարէն, «յորժամ բաժանեաց բարձրեալն զազգս ամենայն, կացոյց *սահմանս* հեթանոսաց». այսինքն զլեզուս զանազան. «ըստ թուոյ հրեշտակացն աստուծոյ». այսինքն ըստ թուոյ **հ** ազգապետացն: - 297. **Եւ *սահման* կոչէ զլեզուս որ բաժանէ՛ ի միմեանց զազգս և զազինս. որպէս որք պարսպով և նշանիւ *սահման* դնեն և զանդս բաժանեն:** - 298. Եւ դարձեալ՝ որպէս *սահմանն* զտեսակս ազգացն նշանակէ. նոյնպէս և լեզուն զիւրաքանչիւր ազգս ցուցանէ: - 298. Եւ դարձեալ՝ զի անփոփոխելի է *սահմանն*. որպէս *սահման* մարդոյն և ձիոյն և այլոցն: - 298. Նմանապէս և զայս *սահման* լեզուի ո՛չ ոք կարէ փոփոխել. ո՛չ բռնաւոր և ո՛չ իշխան. բայց միայն աստուած որ եդ զսա: - 298. Նա՛խ՝ զի օրէնքն կանոն և *սահմա՛ն* է առնելեաց և ոչ առնելեաց: - 340. Նա՛խ՝ զի ամենայն իր որ ընտի՛ր է՝ չա՛փ ունի և *սահման*. և ո՛չ շփոթումն. վասն այն կանգնաւ չափէ զնոսա: - 344. Վիճակ *սահմանն* է. որ նախ քան զյաւիտեանս սահմանեաց հայր զփրկութիւն մարդկան: - 369. Զի՞նչ է ուխտ, և զի՞նչ է *սահման:* - 389. Ուխտն բանիւն է, և *սահմանն* գործով: - 389. Դարձեալ՝ ուխտն յապա՛յն է, և *սահմանն* ի ներկայն: - 389. Եւ դարձեալ՝ ուխտելն է բարիս առնել. և *սահմանն* չար ո՛չ առնել: - 389. Քսաներորդ, *Սահմանք* առ հասարակ մեղաց: - 526. Եւ թէ զի՞նչ է *սահման* հաւատոյ. և ի յո՞ր մասն է հոգւոյն: - 526. Քսան**գ**, Վասն սիրոյ և *սահմանի* նորա և նշանաց նորա, և աստիճանացն և այլոցն: - 526. Քսան**ե**, Մարդկային առաքինութեանցն *սահման:* - 526. Իսկ մեկնութեամբ կոչի *սահման:* - 538. Նախ՝ որպէս *սահմանն* պարունակէ՛ զընդհանուր սահմանեալսն որպէս *սահման* մարդոյ զմարդ: - 538. Երկրորդ՝ որպէս *սահմանն* բաժանէ՛ զմարդն ի ձիոյ: - 538. Երրորդ՝ որպէս որք ելեալ ի *սահմանէն* ո՛չ են ի նոյն տեսակն: - 538. Նախ՝ զի *սահմանն* բնութեան է. իսկ կանոնն անձին: - 538. Երկրորդ *սահմանն* գոյացութիւն է. իսկ կանոնն պատահումն: - 538. Երրորդ՝ *սահմանն* իրին է. իսկ կանոնն գործոյն: - 538. Եւ վասն ուխտի և *սահմանի* ասացաւ ի վերոյ ի **իբ** գլուխն, **կե** համարն: - 538. Ժողովեալ բազում եպիսկոպոսաց յամենայն կողմանց. և իշխանաց և մեծամեծաց հայոց. կարգեցին *սահմանս* կանոնականս **իբ** գլխով. և պայծառացուցին զեկեղեցի սուրբ: - 545. Ազգ առ ազգ բաժանեալ լինի գաւառաւ և լեզւաւ և կանոնական *սահմանաւ* որ են աւանդութիւնք և հաւատք եկեղեցւոյ: - 552. Եւ բաժանումն յաւէտ զքան գաւառաւ և լեզուաւ՝ կանոնական *սահմանաւն* ասացեալ լինի...: - 552. Եւ յայսոսիկ միաբանութիւնս

որ ըստ կանոնի՝ յաւէտ միաբանութիւն զայս է իմանալ՝ որ ըստ բոլորին օրինադրութեանց *սահմանաց* կամ ըստ գլխաւորագունիցն լինիցի...: - 552. Այսինքն է, զազգս քրիստոնէից տեսանեմք զի ո՛չ ըստ անուանն և զմիութիւն կանոնական *սահմանի* ունել: - 553. Եւ այսպէս բազում ունելով իւրաքանչիւր ոք *սահմանս* առանձին, միայն հայք նախատեալ լինին որպէս ո՛չ ունել միաբանութիւն ընդ այլս ի քրիստոնէից. այլ առանձին միայնաբար ընթանալ. և այսու որպէս հակառակ եպերեալ: - 553. Զի՞նչ է *սահման* հաւատոյն: - 571. Եւ գիտելի է, զի *սահման* առաքելոյն կատարեալ է: - 571. Եւ այլ *սահմանք* զոր դնեն վարդապետք՝ պարունակեալ են ի *սահմանն* պօղոսի. զի վարդապետաց *սահմանն* մեկնութիւն և յայտնութիւն է *սահմանին* պօղոսի: - 571-572. Զի՞նչ է *սահմանն* յուսոյ: - 573. *Սահմանք* առաքինութեան բազում են: - 578. Եւ կանոնն *սահման* կոչի. որպէս թուղթն պօղոսի: - 631. Քսաներորդ, Վասն յարութեան մարմնոյ. և *սահմանի* նորա: - 660. Իսկ **իդ** թիւն ո՛չ եթէ *սահման* և կէտ է. այլ սովորութիւն է գրոց փոքր թուով զբազումսն ցուցանել: - 711. Պատասխանեն վարդապետք և դնեն **գ** *սահմանս:* - 716. Եւ այս **բ** *սահմանս* յայտնի են ըստ ինքեան: - 716. Եւ այս *սահմանս* կատարեալ է: - 716. Թէ զի՞նչ է ասելն ի *սահման* հաստատութեանն, մասամբ ինչ զօրութեամբ և մասամբ ինչ ներգործութեամբ: - 787. Տե՛ս զառաջին և զերկրորդ *սահմանն* երկնից: - 787

**ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹԻՒՆ +** Երբեմն նախասահմանութիւն ըստ պօղոսի՝ «սահմանելոյ որդոյն աստուծոյ». և թէ՝ նախ սահմանեաց զմեզ աստուած ի կամս իւր իբր անփոփոխելի *սահմանադրութիւն:* - 112. Եւ բաժանումն յաւէտ զքան գաւառաւ և լեզուաւ՝ կանոնական սահմանաւն ասացեալ լինի. այսպէս և առ միաբանութիւնս է իմանալ. առաւել միաբանութիւն ասել զորս կանոնական *սահմանադրութեամբ* է, քան որ գաւառաւ և լեզուաւ: - 552. Եւ այս ածման սկիզբն պակսն է. որ միանայ հարսն ընդ փեսային. և լինի ըստ *սահմանադրութեանն* աստուծոյ ծննդագործութիւն: - 609

**ՍԱՀՄԱՆԱԿԱՆ +** Չորս. այսինքն *սահմանական*. բաժանական. ապացուցական. և վերլուծական: - 537

**ՍԱՀՄԱՆԵԼԻ -** Իսկ զմիւսն գործակից՝ զօրութեամբ անսահմանելի. զի իւր ասեն արար գործակից. իսկ բնութեամբ *սահմանելի*. զի արարած է: - 51. Իսկ զմիւսն զօրութեամբ և բնութեամբ *սահմանելի*. զի արարած և պաշտօնեայ և ծառա՛յ է ասեն: - 51

**ՍԱՀՄԱՆԵՄ +** Երկրորդ՝ զի աստուած անսահման է՝ և *սահմանէ՛* զմեզ. անսկիզբն է՝ և սկզբնաւորէ զմեզ. և պատճառ և այլն ամենայն: - 24. Հինգերորդ՝ զի բանն է սահման. և որպէս յայտնիչ է սահմանն *սահմանելոյն*, այսպէս և որդի *սահմանէ՛* զէութիւն հօր...: - 49. Վեցերորդ՝ զի *սահմանէ՛* զորքանութիւն հօր: - 49. Ահա՛ այս ի կարճոյ բացայայտութիւն ծածկեալ ամբարշտութեանց, որք **բ** բնութիւնս *սահմանեն* ի վերայ միոյն քրիստոսի...: - 90. Երբեմն նախասահմանութիւն ըստ պօղոսի՝ «*սահմանելոյ* որդոյն աստուծոյ». և թէ՝ նախ *սահմանեաց* զմեզ աստուած ի կամս իւր իբր անփոփոխելի սահմանադրութիւն: - 112. Եւ գիտելի է՝ զզանազանութիւն սոցա. զի հոգին է ի մարմինն կալմամբ և *սահմանեալ*. այլ ո՛չ պարագրեալ. իսկ հրեշտակն ո՛չ կալմամբ ի մարմին և ոչ պարագրեալ. այլ *սահմանեալ:* - 174. Իսկ աստուած արտաքոյ է սոցա. զի ո՛չ է *սահմանեալ* և ո՛չ պարագրեալ և ո՛չ կալեալ յիմեքէ. ո՛չ իմացմամբ և ո՛չ տեղեաւ կամ մարմնով: - 174. Եւ դարձեալ՝ արք իմաստունք *սահմանեն* զտունս իւրեանց ի գալ ծմերան: - 200. Նոյնպէս և անունն *սահմանէ* կարճառօտ՝ յայտնիչ բնութեան իրին. որպէս մինչ ասեմք մարդ, քար, յայտնեցաւ բնութիւնն: - 311. Վիճակ սահմանն է. որ նախ քան զյաւիտեանս *սահմանեաց* հայր զփրկութիւն մարդկան: - 369. Նախ՝ որպէս սահմանն պարունակէ՛ զընդհանուր *սահմանեալսն* որպէս սահման մարդոյ զմարդ: - 538. Եւ պատճառ սոցա այն էր, զի քրիստոսի մի բնութիւն ասէին. և ինքեանք *սահմանեցին* **բ** բնութիւն. **բ** գործք. և **բ** կամք: - 544. Եւ վասն այն աթոռ *սահմանեցին:* - 548. Զի այսպէս *սահմանեցին* թէ ինքնակալ թագաւոր մի և ինքնագլուխ հայրապետ մի նստցի ի հայս. և թագաւոր մի ինքնակալ՝ և ինքնագլուխ հայրապետ մի ի հռօմ. և ի վերայ միմեանց դիցեն զանձինս ի մահ. և սոսկալի գրով եղեն միմեանց եղբարք. թացեալ զգրիչն յահաւոր խորհուրդն: - 548. Եւ *սահմանեալ* զտեղիսն՝ կախեաց կանթեղս յանուն ազգացս: - 549. Զհաւատն *սահմանէ՛* պօղոս յեբրայեցւոցն, «հաւատն է յուսացելոց իրացն հաստատութիւն. և յանդիմանութիւն որոց ոչն երևին»: - 571. Եւ ոսկէբերանն *սահմանէ*՝ «հաւատն է սրբազան կրօնից հիմն»: - 571. Իսկ սուրբն եպիփան *սահմանէ*՝ «հաւատն է կամաւոր և ստոյգ նախաճաշակումն յայնմ ճշմարտութենէ որ ո՛չ է յայտնեալ»: - 571. Եւ մեծն դիոնէսիոս ի գիրս աստուածային անուանց *սահմանէ* թէ՝ «հաւատն է հաստատ կայումն հաւատացելոց. որ զարդարս կացուցանէ ի ճշմարտութիւնն և զճշմարտութիւնն ի նոսա»: - 571. Սէրն ըստ առաքելոյ այսպէս *սահմանի*. «Սէրն է վախճան պատուիրանաց ի սուրբ սրտէ և ի բարի խղճէ մտաց

և յանկեղծաւոր հաւատոց»: - 574. Եւ ըստ ներգործութեանն *սահմանի* քառակի: - 575. միշտ ի մտի ունելով. և պատրաստ տանելով *սահմանեալ* ժամանակին: - 673. **Այլ թէ ասեն՝ հաղորդադրամ, կամ խոստովանադրամ, խո՛րթ է. յագահութեանց երիցանց *սահմանեալ* և ո՛չ ըստ կանոնաց որպէս այլքն:** - 684. Եւ այսպէս *սահմանի* եթէ յարութիւն է այնմ որ անկաւ մարմնաւոր մահուամբ՝ վերստին յառնել անմահութեամբ ի կեանս յաւիտենականս: - 716

**ՍԱՀՄԱՆԻՉ +** Իսկ չարն անսահման է ըստ ինքեան, և ո՛չ է *սահմանիչ* այլոց: - 24

**ՍԱՀՄԱՆՕՐԷՆ +** Իսկ *սահմանօրէն*, հանճարն կարծիք է կապեալ ընդ ուղիղ խորհրդոյ: - 270. Մեղքն *սահմանօրէն* այս է: - 569

**ՍԱՀՄԻ +** Եօթն արու. Նաւասարդի. Յոռի. *Սահմի*. և այլն: - 200. *Սահմի*. զի գնայ հարաւայինն, և գայ հիւսասայինն: - 200

**ՍԱՂԱ** - Անունք Կանանց Նահապետացն: ...*Սաղային* սուքա՛: - 299. Յօրն անունն մելքի, և մօրն *սաղա*. և քաղաքին սաղիմ: - 300. Իսկ ըստ Լսեբեայ, **վպթ** ա՛մ է. զկայնան **ճի** ամ ի ներս առեալ, որ է՛ որդի արփաքսաթայ՝ և հայր *սաղայի*. զոր յիշէ աւետարանն, և ո՛չ յիշէ մովսէս: - 337. Վասն զի զկայնան որդի արփաքսաթայ և հայր *սաղայի* **ճ** և **ի** ամ ի թիւ առնու: - 411

**ՍԱՂԱԹԻԷԼ** - Իսկ ըստ ազգաբանութեանն Մատթէի, ծնանի յեքոնիա *զսաղաթիէլ* ամաց **ծզ**: - 453

**ՍԱՂԱՐԹ +** Եւ թէ տկարանաս ի զօրութիւնն աստուծոյ՝ առ մե՛զ ևս գոն քեզ հաստատութեան նշան՝ անփուտ փայտ. և անթառամ ծաղիկ. և մշտականաչ *սաղարթ*. և անթափ պտուղ: - 223

**ՍԱՂԱՒԱՐՏ +** Փակեղն և վարշամակն ի գլուխն, որպէս *սաղաւարտ:* - 674

**ՍԱՂԻՄ** - Երրորդ՝ զի թագաւոր էր *սաղիմայ*. որ է՛ խաղաղութեան: - 50. Յօրն անունն մելքի, և մօրն սաղա. և քաղաքին *սաղիմ:* - 300. Նոյնպէս և մելքիսեդեկ թագաւոր էր *սաղիմայ*. որպէս և անունն յայտնէ. մելքի՝ որ է՛ թագաւոր: - 300. Զի մելքի՝ որ է թագաւոր. և սեդեկ՝ արդար. և *սաղիմն* խաղաղութիւն թարգմանի: - 301. Չորրորդ՝ ըստ անուանակոչութեանն. զի մելքի՝ որ է՛ թագաւոր. և թագաւորէր *սաղիմայ:* - 301-302. Վեցերորդ՝ զի *սաղիմայ* ասէ՝ որ է՛ երրուսաղէմ. և թարգմանի խաղաղութիւն: - 302

**ՍԱՂՄԱՆԱ** - Ռահաբ՝ որ ծնաւ զբոյոս ի *սաղմանա՛յ:* - 300. Սա՛ սպան զովրէբն, զզէբն, զզեբէէ, *զսաղմանա*, և զայլսն: - 420

**ՍԱՂՄԱՆԱՍԱՐ** - Եւ դարձեալ՝ յետ աւելի քան զերեսուն ամ ի զերորդ ամին եզեկիայ արքայի յուդայ՝ եել *սաղմանասար* արքայ ասորեստանեայց ի վերայ սամարիայ...: - 447. Եւ ի պահպանութիւն աշխարհին հրէից՝ առաքեաց *սաղմանասար* յերկրէն ասորւոց պանդուխտս որ բնակեցան ի սամարիայ և սամարացիք կոչեցան: - 447. Կիւրոս յառաջին ամի թագաւորութեանն իւրոյ՝ արձակեաց **ե** բիւր զգերիսն յերուսաղէմ, *սաղմանասար* իշխանաւն. զի շինեսցեն զտաճարն: - 448. Դարձեալ՝ յերիս ժամանակս ազատեցան ի բաբիլօնէ՛. այսինքն կիւրոսիւ *սաղմանասարաւ*. դարեհիւ զօրաբաբէլ. արտաշէսիւ եզր դպիր և նէեմի: - 448. Ի **ժա** ամին աքազու գերեցաւ իսրայէլ ի *սաղմանասարայ:* - 453

**ՍԱՂՄՆ +** Իններորդ՝ արիւնն և շունչն է սկիզբն գոյացութեան մերոյ. զի արիւնն փոխի ի *սաղմն*, և ջերմ օդով խառնի ի հով և ի գէճն, և լինի աճումն և սնունդ մարմնոյ: - 295. Չորրորդ՝ աբրահամուն *սաղմիւ* և ախտիւ ծնեալ: - 301. Եւ թէ ասեն՝ ի՛նքն նկարէ *զսաղմնս:* - 404. Ասա՛ թէ՝ զամենայն *սաղմն* նկարէ՛ աստուած. և զանասնոց և զգազանաց: - 404

**ՍԱՂՄՈՆ** - Նայասօն ամաց **խդ**՝ ծնաւ *զսաղմոն:* - 452. *Սաղմոն* ամաց **լե**՝ ծնաւ զբոյոս: - 452. Եւ էր *սաղմոն* իշխան ցեղին յուդայ յորժամ անցոյց զժողովուրդն ընդ յորդանան յեսու: - 452. Եւ *սաղմոն* էառ զռահաբ իւր կին զոր յերիքովէ՛: - 452

**ՍԱՂՄՈՍ +** Ասեմք եթէ՝ գոգ և մազօգն՝ հոգևորապէս իմացեալ լինին ամենայն հալածօղք եկեղեցւոյ. զորս սատակեսցէ՛ տէր յիսուս զամենեսեան որպէս ասէ *սաղմոսն*՝ «որպէս զանօթ բրտի փշրեսցես զնոսա»: - 28. Դարձեալ ի վերայ *սաղմոսին* որ ասէ, «զարթիր փառք իմ»...: - 28. Այլ և ատելութիւնն դարձուցանէ զմիտս բազմաց ի հաւատոցն. որպէս ատելութիւն և նախանձ փարիսեցւոցն՝ ո՛չ տային թոյլ հաւատալ ի քրիստոս. թէպէտ տեսանէին զամենայն նշանսն զորս առնէր. որպէս ասէ *սաղմոսն*, «ատեցին զիս ի տարապարտուց»: - 32. Նախ այսպէս. ո՛չ ունեք սրբի տաճար, բայց միայն աստուծոյ. որպէս ասէ *սաղմոսն*, «տէր ի տաճար սուրբ իւրում»: - 57. Երկոտասաներորդ՝ ուսուցանել զմիտս մարդոյն ի ներքս՝ միայն աստուծոյ է ըստ *սաղմոսին*...: - 58. Երրորդ՝ «աստուած դատաւոր արդար» ասէ *սաղմոսն*. և վասն քրիստոսի ասէ յօհաննու աւետարանն, ո՛չ եթէ հայր դատէ

զոք, այլ զամենայն դատաստան ետ որդւոյ իւրում: - 70-71. Եւ օգտութիւն փորձանաց գրեալ է ի *սաղմոսն*, յայն բան գի՛տ և կարդա՛: - 162. Յաղագս Առաջնոյն ասի ի *սաղմոսին*, «Տեառն է երկիր լրիւ իւրով»: -210. Եւ այլ ևս. ի վերայ *սաղմոսին* «մերձեցաւ անձն իմ ի հող» ասէ մեկնիչն, այժմ ծերացեալ է բնութիւնս՝ վասն որոյ փութայ ի հող: - 291. Զի՞նչ է որ բնաբանն ի բնագիրն ուրիշ է, և ի *սաղմոսն* ուրիշ: - 407. Չորրորդ՝ դաւիք ասէ «իջցէ՛ որպէս զանձրև ի վերայ գեղմամն». և եբրայեցիք զայս *սաղմոսս* ի սողոմոն ասեն...: - 421. Զի բանիւ *սաղմոս* երգեաց. և արդեամբ յաթոռ թագաւորութեան հաստատեցաւ: - 434. Որպէս ասէ ի յիսներորդ *սաղմոսին*, «հոգւով պետութեամբ քով հաստատեա՛ զիս»: - 434. Եւ ոմանք **զռ** գիրք ասեն որպէս առակն և ժողովօղն. և **եռ** օրհնութիւնս որպէս երգ երգոցն. որպէս դաւթի **ճծ** *սաղմոսն:* - 441. Երեք գիրք Մակաբայեցւոց: *Սաղմոսն:* Սողոմոնի **դ** գիրք: - 450. Եւ բերէ՛ վկայ զբանն *սաղմոսին* «փրկեցեր զանձն իմ ի դժոխոց ներքնոց»: - 504. Վասն զի ոմանք՝ որպէս մեծն ներսէս ի մեկնութիւն *սաղմոսին* որ ասէ «**է** անգամ յաւուր օրհնեցից զքեզ», ասէ թէ՝ յերեկոյի շաբաթուն է յարութիւնն քրիստոսի յորում լուսանայր կիրակէն...: - 512. Քառասունևե, Կանոն գլուխ և այլ կարգ. *սաղմոս*. և անբիծք: - 527. Քառասուննիննն, Գրոց կարդալն. և *Սաղմոս* կցորդ. Որբի. և Ալէլուն. և Տէր ողորմեայն: - 527. Սոյնպէս և դաւթին մարգարէութիւն՝ մտաց լուսաւորութեամբն երգէր զամենայն *սաղմոսն* ի հոգւոյն սրբոյ: - 537. Եւ այս է երեքկին. այսինքն թողութեան. ըստ *սաղմոսին* «ի քեզ տէր յուսացայ մի՛ ամաչեցից յաւիտեան»: - 574. Չորրորդ փրկէ ի թշնամեաց ըստ *սաղմոսին* «որ փրկես զյուսացեալս ի քեզ»: - 574. Երկրորդ խոհեմութիւն. և այս է չափաւորութեամբ բանից. որպէս ասէ յառակս. «որ հանդա՛րտ է շրթամբք, է՛ խոհեմագոյն». և *սաղմոսն* «դի՛ր տէր պահապան բերանոյ իմոյ. զդուռն ամուր շրթանց իմոց», և այլն: - 580. Դարձեալ՝ արիութիւնն կայանայ ի **ե**. այսինքն Նա՛խ ի ձեռնարկումն բարձրագունից. որպէս ասէ *սաղմոս* «քաջալերացարո՛ւք և զօրասցին սիրտք ձեր»: - 580. Յայս իմաստութենէս ասէ *սաղմոսն* «ճաշակեցէք և տեսէք զի քա՛ղցր է տէր»: - 582. Եւ զո՛րծ է նոցա ալէլուիայ և մեսեդի ասել և *սաղմոս:* - 608. Յինգերորդ՝ որք բոլորովիմբ զղջացեալք և թողեալք զմեղս՝ գործեն զբարիս. զնոսա հովուէ՛ դպիրն *սաղմոսիւք* և ալէլուիւք: - 608. ...վասն որոյ յայսմ ժամու սկիզբն է աղօթից բոլոր աւուրն. յորում ասեմք զտէր եթէ շրթունքն և զայլ *սաղմոսսն* ի դէմս հօր աստուծոյ: - 621. Իսկ եկեսցէն ունի *սաղմոսս* **թ** փոխ բոլոր. պահապան **թ** ժամուց հանապազորդ գիշերոյն: - 622. Նոյնպէս և մեր զընծայս *սաղմոսից* և զայլ երգոց տամք ի քահանայս...: - 624. Արդ *սաղմոս* երգօղքն տան ի սարկաւագն. և սարկաւագն ի քահանայն. և նա՛ մատուցանէ աստուծոյ զօրհնութիւնն. որպէս առաջին դասք քերօբէիցն: - 624. Նոյնպէս **է** էր կանոնք *սաղմոսին*. և **է է** գուբղայք կանոնացն: - 626. Եւ կրկին տուն *սաղմոսին*, զի հոգի և մարմին եղև բանն: - 628. Իսկ *սաղմոսն* մանկացելոցն մկրտութեամբ հրամայէ որդիացելոցն օրհնել զհայրն երկնաւոր. որում փառք յաւիտեանս ամէն: - 629. Ո՞ր է առաջին *սաղմոսն:* - 630. Իսկ վերջին *սաղմոս*, բարձր առնեմ զքեզ աստուած իմ և թագաւոր իմ: - 630. Եւ ի վերջին գուբղայսն ո՛չ ասեմք որ ա՛յլ մարգարէից է. և ալէլուն միայն *սաղմոսին* է: - 630. Ո՞վ է կարգեալ *զսաղմոսս:* - 631. Ապա ի ժողովն եփեսոսի վերստին հաստատեցին զփառք ի բարձունսն ի *սաղմոսէն* յաւետարանէն...: - 635. ...որպէս յա՛յտ է ի *սաղմոսն* ասափայ և կորխայ և այլոցն...: - 636. ...որք դաս առ դաս երգէին *զսաղմոսն* դաւթի. նոյնպէս և յեկեղեցի կարգեցաւ: - 636. Այլ գիտելի՛ է, թէ *սաղմոսն* շարականաց որ **բժ**ան տուն է՝ զփառքն և զայժմն ի միասին երգեմք. որպէս զօրհնութիւնն, հարցն, ողորմեայն, տէր յերկնիցն: - 636. Եւ ա՛յս է պատճառն, զի մի տան շարականի **դ** տուն *սաղմոսի* պիտոյ է յերկու դասս. և մին շարականն **ժբ** տամք աւարտի: - 636. Եւ որ *սաղմոսն* **ը** տուն է՝ կամ ա՛յլ նուազ, զփառքն և զայժմն վերջին տան շարականին տամք: - 636. Այլ և վեց փոխ է *սաղմոսն* այն և վաքսուն տուն: - 637. Զի՞նչ է նախ *սաղմոսն* և ապա՛ մարգարէ կամ առաքեալ: - 643. ...և նմա *սաղմոսն* էր ի տաճարին. և ապա՛ այլոցն զկնի: - 643. Եւ բոլոր *սաղմոսն*՝ այն մին տանն համաձայնք և վկայք. վասն այն ասի *սաղմոս* կցորդ: - 643. Այլ և այս գիտելի՛ է, զի *սաղմոսն* յարաժամ երգի. յառաւօտն, ի ճաշոյն, և յերեկոյն: - 643. Նա՛խ՝ զի *սաղմոսն* երգ լսի. և ի հինքն յամենայն ժամ զսա՛ երգէին ի տաճարին...: - 643. Իսկ *սաղմոսն* զամենայն յինքն ունի. զանցելոյն զներկայիս և զապագային...: - 643. Իսկ *սաղմոս* տունն է երգ մարդկան. այսինքն է զի հրեշտակք և մարդիկ միաբանեալ օրհնեմք զաստուած փրկիչն մեր որ խօսի ընդ մեզ: - 644. Ուստի յա՛յտ է՝ զի ուր և ալէլու ասեմք, *սաղմոս* տուն զոյ ընդ նմա: - 644. կամ ա ա տուն *սաղմոս* ասեն...: - 655. Եւ լինիցի յանդուգն. զի ո՛չ համարի պատժիլ ի յաստուծոյ. զի յապաղէ դատաստանն. ըստ *սաղմոսին* «բարձեալ են իրաւունք յերեսաց նորա»: - 707. Ասեմք առ այս, եթէ բան *սաղմոսին* այսպէս

մեկնի: - 724. Առաջինն է առողջութիւն առանց հիւանդութեան. *սաղմոսն* «բժշկէ՛ զամենայն հիւանդութիւնս քո»: - 766. Երկրորդն է մանկութիւն անծերանելի. *սաղմոսն* «նորոգեսցի որպէս արծուի մանկութիւն»: - 766. *Սաղմոսն*, «յագեցայց յերևիլ երեսաց փառաց քոց». և եսայի, «ո՛չ քաղցեսցին և ո՛չ ծարաւեսցին յայնմ հետէ»: - 766. Ութերորդն է խաղաղութիւն առանց խռովութեան. *սաղմոսն* «ո՛ եդ զսահմանս քո ի խաղաղութիւն»: - 767

**ՍԱՂՄՈՍԱՍԱՑ +** Իններորդ՝ Փսալտք. որ են *սաղմոսասացք:* - 608

**ՍԱՂՄՈՍԱՐԱՆ +** Առանց գործեացն երգ ասի. և գործեօքն *սաղմոսարան:* - 641

**ՍԱՂՄՈՍԱՔԱՂ +** ...որպէս և մեք ի *սաղմոսաքաղ* փոխերն չեմք ասեր. և այս այլ ի *սաղմոսաքաղի* հաշիւն է: - 630

**ՍԱՂՄՈՍԵՄ +** Եւ ի մեզ **է** են ձայնական գործիք որով *սաղմոսեմք:* - 431. Զի՞նչ է յորժամ երկուքն *սաղմոսեն*, և զօրհնութիւնն այլո՛ց տան: - 624. Առաջին՝ քահանայք. և միջին՝ սարկաւագունք. և վերջին են *սաղմոսօղք:* - 624. Նմանապէս և յեկեղեցի՝ ոմանք *սաղմոսեն*. և սարկաւագն ի տիպ հրեշտակին տայ զօրհնեայն ի քահանայն որ է՛ տիպ քրիստոսի...: - 625

**ՍԱՄԱՐԱՑԻ +** Եւ այս են **իբ** լեզուքն: ...*Սամարացիք:* - 298. Եօթներորդ Թովլայ յիսաքարու *սամարացի* ամս **իդ**: - 420. Եւ ի պահպանութիւն աշխարհին հրէից՝ առաքեաց սաղմանասար յերկրէն ասորւոց պանդուխտս որ բնակեցան ի սամարիայ և *սամարացիք* կոչեցան: - 447. Յետոյ վասն գազանաց երկրին՝ հնազանդեցաւ գրոյն մովսէսի. և ծածկեցին զաստուածս իւրեանց ի լերին սոմորոն. և անդ երկիր պագին *սամարացիք:* - 447

**ՍԱՄԱՐԻԱ** - Եւ թագաւորք իսրայէլի ի *սամարիա:* - 446. Եւ դարձեալ՝ յետ աւելի քան զերեսուն ամ ի **զ**երորդ ամին եզեկիայ արքայի յուդայ՝ եկ սաղմանասար արքայ ասորեստանեայց ի վերայ *սամարիայ*...: - 447. Եւ ի պահպանութիւն աշխարհին հրէից՝ առաքեաց սաղմանասար յերկրէն ասորւոց պանդուխտս որ բնակեցան ի *սամարիայ* և սամարացիք կոչեցան: - 447

**ՍԱՄԱՐՈՒՅԻ +** Այլ և *սամարուհի* կնոջն լուսինա՛ էր անունն: - 495

**ՍԱՄԵԱՅ** - Զի՞նչ էր նշանք *սամեայ* մարգարէի առ սեղանն րոբովամու: - 442

**ՍԱՄԷԳԱՐ** - Երրորդն *Սամէգար*. որդի անաթայ. որ մաճիւն **ո** այր եսպան՝ ամս **դ**. և Դեբովրա ամս **ե** ընդ այլազգեացն: - 420

**ՍԱՄՈՍՏԱՑԻ ՊՕՂՈՍ** - Ոմանք՝ որպէս նեստոր. և *սամոստացին պօղոս*. և դիոթորոս: - 82. Իսկ թէ ա՛յլ է բանին և այլ է մարմնոյն, ապա բաժանե՛ս զմարդկութիւնն ի յանձնէն. և ասես **բ** անձն. և երկու բնութիւն. ըստ նեստորի առաջնորդին քոյ. և *պօղոսի սամոստացւոյ*. որ մինչև ցայժմ ծածուկ է իր նեստորեան, և այժմ յայտնեցեր զքեզ: - 98

**ՍԱՄՈՒԷԼ** - Որպէս ասէ յառաջին թագաւորութեանցն, «և ո՛չ ևս յաւելին այլազգիքն ի վերայ սահմանացն իսրայէլի». այսինքն յաւուրս *սամուէլի*. քանզի յետ մահուան նորա ելին ի վերայ իսրայէլի: - 27. Վհուկն ա՛յն է, որ ի վիհաց և յանդնդոց մեռեալս կերպարանեն. դք ի կերպս մարդկան երևին. զոր դևակոչ ասեն և հազիմաք. և Նշանագէտ, որ ի գերեզմանս ննջէ և նշանաւոր մարդ կերպարանէ. որպէս *զսամուէլ* սաւուղայ երևեցոյց հարցուկ կինն: - 388. Եւ որպէս ովսէէ ո՛չ է պոռնիկ՝ և ո՛չ *սամուէլ* մարդասպան զի հրամանաւ աստուծոյ էր: - 389. Զոր եօթանասունքն ի ասեն. իսկ *սամուէլ* և սաւուղ ամս **խ**: - 420. Այն որ ուսանո՛ց է, որպէս վակաս քահանային. և որպէս մայրն *սամուէլի* արար: - 425. Վհուկ կինն ո՞րպէս յարոյց *զսամուէլ*. կամ ո՞րպէս զառաջիկայն պատմէր: - 428. Եօթներորդ՝ զի թէ ճշմարտապէս *սամուէլ* յառնէր, ո՛չ կամէր կինն. զի կորուսիչ էր նոցա. այլ գիտէր որ նմանութիւնն էր *սամուէլի*: - 428. Ապա յա՛յտ է թէ՝ որպէս սաւուղ խաբէր զկինն, նոյնպէս և կինն խաբէր զսաւուղ նմանութեամբն *սամուէլի*: - 428. Տասներորդ՝ աստուածս տեսի ասէ, զի զսաւուղ և *զսամուէլ* ետես: - 428. Եւ թէ նա՛ յարուցանէր, ընդէ՞ր երկու եհան. զի նա՛ միայն *զսամուէլ* խնդրէր: - 428. Մետասաներորդ՝ ընդէ՞ր ոչ ծանեաւ թէ *սամուէլ* է...: - 428. Երկրորդ՝ ուստի՞ ճանաչեաց թէ *սամուէլ* է. զի ահա՛ կինն ասաց. այլ որպէս կինն երևեցոյց զձևն, նոյնպէս կարծեաց և սաւուղ: - 429. Ա՛րդ՝ թէ աստուած ծածկեաց և *սամուէլ* յայտնէր հակառակ աստուծոյ, ահա՛ զի բարկացուցանէր զնա. ապա յա՛յտ է զի սո՛ւտ է և ո՛չ *սամուէլ*: - 429. Ա՛րդ՝ թէ ճշմարիտ յարոյց կինն *զսամուէլ*. սաւուղ ո՛չ երկնչէր ի մահու...: - 429. Նա՛խ՝ եթէ ճշմարիտ յարեաւ *սամուէլ*, ընդէ՞ր ոչ եհար զվհուկն և սատակեաց. և ընդէ՞ր ոչ յանդիմանեաց զսաւուղ եկեալ առ վհուկն: - 429. Երրորդ՝ ընդէ՞ր ինքն ո՛չ ասաց թէ ե՛ս եմ *սամուէլ*. այլ նոքա նմանեցուցին: - 429. Ապա յայտ ուրեմն է զի սուտ երևումն էր *սամուէլի* ձևացեալ: - 429.

Երկրորդ՝ զի սուտ խօսեցաւ աստ. զի թէ *սամուէլ* էր՝ ո՛չ ուսանէր ի սաւուղայ. և դևն յերկրէ ո՛չ ելանէ: - 430. Չորրորդ՝ զի թէ *սամուէլ* էր որ ասաց թէ՝ տէր հեռացաւ ի քէն, և այս ո՛չ է մարգարէութիւն. զի կրկնեաց զիւր բանն. և թէ ո՛չ էր *սամուէլ*, այլ զանունն ընկալաւ և ինքն դև էր, սուտ խօսեցաւ ապա: - 430. Թէ հրամայական էր և վճիռ եհատ, ապա աստուած էր և ո՛չ մարգարէ. սուտ ասաց զգոլն *սամուէլ*: - 430. Իսկ թէ այլ ինչ էր՝ և բարբառն և տեսիլն *սամուէլի*, սուտ է և ո՛չ ճշմարիտ: - 430. Արդ եթէ *սամուէլ* յարեաւ և մեռաւ և կամ կինն, նա՛ ճշմարիտ եղիցի բանն. ապա թէ կինն ոչ մեռաւ և սաւուղ մեռաւ, սուտ խօսեցաւ: - 430. Ութերորդ, ի ձեռն *սամուէլի* և իւղով օծաւ. և տէր մեր ի հօրէ օծաւ և հոգւով սրբով: - 435. Երեսունբ, յետոյ առ *սամուէլ* ի նաւաթ գնացեալ և հոգի աստուծոյ խաղացեալ. և տէր մեր առ հայր ի յերկինս ելեալ, և յառաքեալսն զհոգին առաքեալ: - 437. Ասեմք եթէ՝ մովսէս արիւն եհեղ. և յեսու բազում. և *սամուէլ*. և ո՛չ մեղանչեցին: - 439. Նա՛խ՝ զի վրէժխնդիր եղև օրինացն աստուծոյ. որպէս փենէհէզ սպան զզամբրի և զքասբի. և *սամուէլ* զագագ: - 444. Որ և պահապանքն շրջապատեալ. որ և զհանդերձն պատատեալ յանկողնի, և լերդ այծեաց և մազ ի սնարսն. և ի գիշերի իջեալ ընդ պատուհանն և ելեալ առ *սամուէլ* զերծաւ ի ձեռաց նոցա: - 513. Եւ *սամուէլ* ասէ «լա՛ւ է հնազանդութիւն քան զպատարագ»: - 658

**ՍԱՄՓՍՈՆ** - Եւ ի գլուխն սուր ո՛չ ելցէ որպէս *սամփսոնին:* - 390. Եօթներորդ՝ Բաղդատութիւն *սամփսոնի* և տեառն լե գլխով: - 412. Երեքտասաներորդն ի դանա որդի մանովէի *Սամփսոն*. որ կալաւ յ աղուէսս, և կապեաց ի նոսա ջահս. և այրեաց զանդաստանս այլազգեացն: - 420. Արին *Սամփսոն* բազում բաղդատութեամբ խորհուրդ և օրինա՛կ է Տեառն մերոյ ամենազօր փրկողին: - 421. Նա՛խ՝ ըստ անուանն. զի *սամփսոն* արեգակն կամ փրկութիւն լսի: - 421. Երկրորդ՝ աւետեօք հրեշտակին ծնաւ *սամփսոն* ի յամուլ մօրէն: - 422. Չորրորդ՝ *սամփսոն* ուխտաւոր յորովայնէ: - 422. Հինգերորդ՝ օրինեալ ի տեառնէ մանուկն *սամփսոն*, և հոգւով զօրութեամբ շրջէր: - 422. Վեցերորդ՝ եօթնագիսեա՛ն էր *սամփսոն:* - 422. Եօթներորդ՝ *սամփսոն* զառիւծն արիութեամբ սատակեալ: - 422. Տասներորդ՝ *սամփսոն* յայլազգեաց հաճեցաւ առնուլ կին: - 422. Ութևժ, ել կինն ի *սամփսոնէ* և եղև հացերիցուն. վասն որոյ և տուժեցան հրով: - 422-423. Քսաներորդ, *սամփսոն* ի մէջ գիշերի զփակեալ դուռսն կորզեաց և էհան ի լեառն: - 423. Քսանևմի, զարմանալեօքն զօր արար՝ զանձն իւր ապրեցոյց *սամփսոն:* - 423. Քսանև**դ**, *սամփսոն* երիցս է կապօք փործեցաւ ի կնոջէն: - 423. Քսանև**ը**, մի և նոյն ծնօտն զոգիս մերկանայր այլազգեացն, և *զսամփսոնին* արկանէր ի մարմինն: - 423. Երեսուներորդ, ի տեառնէ յաջողեալ զօրութեամբ ծնօտին, և նովաւ զօրացեալ մեծ ծարաւն *սամփսոնի:* - 423. Երեսուն**գ**, *սամփսոն* զսրունս և զերանս թշնամեաց՝ և յետոյ զգլուխն ջախէր: - 424. Երեսուն**ե**, *սամփսոն* ի մահն առաւել սատակեաց քան ի կեանս: - 424. Գիտելի՛ է, զի որպէս զօրութեամբն *սամփսոնի*՝ տեառն զօրութիւնն նկարեցաւ: - 424. Զի *սամփսոն* ի ժամ գերծելոյ գլխոյն թմրեալ ի ծունկս թալիլայ խոնարհէր. նոյնպէս և ամենայն մեղք զօր գործէ մարդ, և առաւել զէճ ցանկութիւն, անարգէ զմարդ: - 424. Երկոտասաներորդ՝ զերկանս սպասու մարմնոյ գործեսցէ միշտ և ի նոյն մեռանի որպէս *սամփսոն:* - 424. Ութերորդ՝ արին *սամփսոն* որ օրինա՛կ էր ամենազօր տեառն մերոյ, էջ ի գազա ի տիպ աշխարհի. և օթեցաւ ի պոռնկատունն յօրինակ դժոխոցն. յորում պաշարեցին զքաղաքն այլազգիքն: - 513. Կամ լինէիր ուժեղ որպէս *սամփսոն*. որ զհազար այր ծնօտիւ իշոյն եսպան: - 761

**ՍԱՅԼ +** Զորօրինակ՝ արուեստաւոր ոք մինչ գործէ *զսայլ*, և ի հեռուստ տեսանէ ոք զօր նա՛ գործէ, այլ ո՛չ տեսութիւնն հարկեաց *զսայլն* լինիլ այնպէս. այլ կամք արւեստաւորին: - 16. Իսկ արիստոտէլ ի վերայ երկուց բևեռացն ասէ շարժիլ երկնի որպէս անիւ *սայլին* ի վերայ սռնոյ: - 182. Չորրորդ՝ *սայլիւք* իջին, և նշանօք և արուեստիւք ելին: - 314. Այլ և նււէրք **բժ**ան իշխանացն *սայլս* և եզինս: - 359. Իսկ *սայլն* կրկին կտակքն. որ միշտ հոլովին առ մեզ: - 426. Նա՛խ՝ զի պա՛րտ էր ուսով բառնալ զտապանակն որպէս հրամայեաց աստուած. և նոքա *սայլիւ* բերէին որպէս այլազգիքն: - 431

**ՍԱՆ +** ...թէ զերկու քորս **բ** եղբարցն տալ. կամ *զսանին* քոյրն միւս եղբօրն. որպէս քո սուտ պետրոսին կանոն է, և ո՛չ ճշմարիտ պետրոսին. և զայլն լռեմ իբրև զամօթալի: - 548

**ՍԱՆԱՄԱՅՐ +** Զի կնքահայրն և *սանամայրն* ծնունդ մի. և նոցա զաւակն **բ**. և նոցա թոռն **գ**. և չորսն որ է՛ թոռին թոռն՝ լինին խնամիք: - 611

**ՍԱՆԴԱՐԱՄԵՏ +** Եւ դարձեալ, ի կատարածի՝ կենդանեաց և մեռելոց է խոստովանիլ զօր *սանդարամետ* կոչէ: - 785

**ՍԱՆԴԱՐԱՄԵՏԱԿԱՆ +** Եւ ո՞րպէս երկիր պազանեն նմա երկնաւորք և երկրաւորք և

*սանդարամետականք*. և ամենայն լեզու խոստովան լիցի թէ տէր է յիսուս քրիստոս ի փառս աստուծոյ հօր: - 99

**ՍԱՆԴՈՒՂՔ +** Եւ բնակա՛ն է, զի յանկատարէն ի կատարեալն ելանէ. որպէս աստիճանաւ ի գլուխ *սանդղոյն*. և ի սակաւուն ի բազումս. այսպէս և հոգի: - 258. Մ՛րդ՝ որ ոք կամեսցի ի նոյնն ելանել և առ քրիստոս լինիլ, պատշա՛ճ է ի վերջնագունէն սկիզբն առնել որպէս *սանդղօք:* - 280. *Սանդուխք* ելողութեան ի յերկինս: - 474. Այլ և *սանդուղքն* յակոբայ և տէր հաստատեալ ի նմա: - 494. Այլ և ցուպն յակոբայ անցեալ ընդ յորդանան. և *սանդուղքն* ասացեալ: - 494

**ՍԱՆՁ +** Երկրորդ՝ զի ամենայն մեղք զերկիւղն աստուծոյ *սանձ* ունի. որով և զղջանայ: - 33

**ՍԱՆՁԱՀԱՐԵՄ +** Եւ ողջախոհութիւնն ո՛չ *սանձահարէ* զանպատեհ շարժմունս: - 579

**ՍԱՆՁԵՄ +** Երրորդ՝ զի բանականութեամբ կարեն *սանձիլ* սոքա, յորժամ կամեսցին: - 246. Հինգերորդ՝ զի կարէ՛ մարդ ներհակ սովորութեամբ պահօք և աղօթիւք և կրթութեամբ մարմնոյ *սանձել* յինքեան զայսպիսիս նշանաց գործ: - 246

**ՍԱՊԱՏ +** ...ոմն երթայ ի *սապատն* և հաց առնու...: - 620

**ՍԱՊԱՏՈՂՆ +** Եօթներորդ՝ *սապատողն*. կուզն. կամ ելուստ ի թիկունքն. որ ո՛չ կրէ զբեռն քահանայութեան հպարտութեամբ: - 370

**ՍԱՊԷՍ +** *Սապէս* և քրիստոս ըստ մարմնոյ որդի է աբրահամու ըստ մատթէոսի: - 304

**ՍԱՊՈՆ +** Որպէս ասելն գաւազան, աւազան, *սապոն*, ամէն, և կամ ա՛յլ ինչ: - 297

**ՍԱՌԱ** - Տասներկու՝ Բաղդատութիւն երից ծնողաց և ծննդոց. այսինքն *սառայի*, և մարիամու սրբոյն, և եկեղեցւոյ: - 283. Աբրահամուն *սառա՛:* - 299. Երկրորդն է վարիլն *սառայի* ի տուն փարաւօնի: - 304. Վեցերորդ՝ զի ի ծեռս ետ զհագար աղախինն չարչարել *սառայի*. ուստի զերծեալ փախեաւ և հարցաւ ի հրեշտակէն: - 304. Իններորդ՝ վարիլն *սառայի* ի տունն աբիմելիքայ: - 304. Եւ զի ո՛չ ասաց *սառայի* զիրն. զի մի՛ մայրական աղետիւ խափա՛ն լիցի գործոյն: - 304. Չորրորդ՝ զի իսահակ էր անդրանիկ որդի և միածին *սառայի:* - 304. Ութերորդ՝ զի էառ իսահակ զհարսն և ուրախացաւ ի տան մօրն իւրում *սառայի*. որ զվեց ամ փրկեալ գոյր և ո՛չ ոք մտեալ: - 305. Նախ՝ ամուլ է *սառա*. և մարիամ կոյս. և եկեղեցի ամուլ և կոյս: - 307. Երկրորդ՝ *սառա* ամլութեամբ ծնաւ զիսահակ. և մարիամ կուսութեամբ զէմմանուէլ. և եկեղեցի միշտ կուսութեամբ ծնանի զծնունդս աւազանին: - 307. Երրորդ՝ *սառա* կոչի առաքինութիւն. և մարիամ լուսաւորութիւն. և եկեղեցի ժողովք հաւատացելոց՝ գործով ունի զառաքինութիւն և զլոյս հաւատոյ: - 307. Չորրորդ՝ *սառա* օրինակ և ծնունդ իւր. մարիամ ճշմարտութիւն և ծնեալն իւր. և եկեղեցի համանմանութիւն և զաւակք իւր: - 307. Հինգերորդ՝ աւետեօք երից արանցն ծնաւ *սառա*. և աւետեօք հրեշտակին մարիամ. և աւետեօք մարգարէին եկեղեցի: - 307. Վեցերորդ՝ ուրախութեամբ յղացաւ *սառա*....: - 307. Իններորդ՝ միամա՛յր է որդի *սառայի*. միածին է և որդի կուսին. մի ծնանիմք և մեք յաւազանէն: - 307. Տասներորդ՝ բազմամա՛յր եղև *սառա* ըստ նահապետացն. բազմամա՛յր է և կոյսն ըստ հաւատացելոցն. բազմամա՛յր է և եկեղեցի ըստ վերածնելոցն...: - 307. Դարձեալ՝ նո՛ր էր ծնունդ *սառայի* և ո՛չ ըստ օրինաց կարգի: - 307. Նաև վասն անարգանաց մօրն իւրեանց *սառայի:* - 336. Եւ ո՛չ ի հաւանելն յամր որպէս *սառա:* - 465. Եւ վասն աւազանին ծննդեանն ասացեալ է առ *սառայ* ի **ժթ** գլուխն, ի **ժր** համարն: - 591. Իսկ Երկրորդն արքայութիւն, նշանակի յազատն *սառա.* որ ո՛չ ուժգնութեամբ մարմնոյն, այլ միայն շնորհօքն աստուծոյ ծնաւ: - 756

**ՍԱՌԱՅԱԾԻՆ +** Իսկ *զսառայածինն* հրամայէ՛ թուել որպէս զաստեղս: - 377

**ՍԱՌՆ +** Եւ զի *սառն* և ծիւն տարածի: - 197. Վասն որոյ ջերմութեամբ զցրտութիւն լուծանէ որ յերկաթն և ի *սառն*. և չորութեամբ զհիւթն մերժէ որ ի ծու հաւի և յայլսն: - 202. Եւ են ջերմ, հալե՛ն *զսառսն:* - 205. Երկրորդ՝ անտանելի ցուրտ. յոր եթէ հրեղէն լեառն անկանէր՝ *սառն* դառնայր. վասն այս երկուցս ասի՝ լալ աչաց և կրճել ատամանց. - 752

**ՍԱՌՆԱՄԱՆԻՔ +** Եւ ի սմանէ լինին մառախուղ՝ և *սառնամանեաց* տեսակ, այլ և ամպք և ծիւնաբեր և կարկուտք: - 204. Հինգերորդ՝ յամպոյն իջանեն *սառնամանիք* ծիւն և կարկուտ: - 206. Զի տանջանարանք կազմեն, *սառնամանիք* ցուցանեն, հուր բորբոքեն: - 703. Իսկ հիւսիս բա՛րձր է. և լուսաւորքն հեռու. և է ծախ կողմն աշխարհի. վասն այն ցուրտ է և *սառնամանիք:* - 731

**ՍԱՌՆԱՍԱՌՈՅՑ +** «Ի բարձունս հիւսիսոյ». այսինքն ի վերայ ցուրտ և *սառնասառոյց* չարութեան իւրոյ: - 148

**ՍԱՌՆԱՏԵՍԱԿ +** Երրորդ՝ *սառնատեսակ*. զի թափա՛նց է խաչ նշխարին. և ի մեզ լուսաւոր միտք: - 339

**ՍԱՌՆՈՒՄ +** Եւ կամ բանն բնութեամբ մարմնոյ թանձրացեալ որպէս ջուր *սառուցեալ:* - 82. Նոյնպէս իմանալի արեգակն քրիստոս ի հայրական ծոցոյ անհա՛ս է բնութեամբ՝ և ի սրբոյ կուսէն իբր ի յարևելից ծագեալ. և ջերմ սիրով ի մարդկային ազգս որպէս յարևմուտս խոնարհեալ. և *զսառուցեալ* բնութիւնս պատեալ. և ի գերեզմանէն ի բարձունս դարձեալ յարևելս առ հայր ամբարձեալ: - 126. Եւ *սառուցեալ* ի ներհակ հողմոյն, համանգամայն ընդ փոխիլն ի ջուր: - 205. Քանզի՝ *սառնու* որպէս զպլօր: - 207. Այլ ո՛չ ասեմք զբանն ի բնութիւնն իւր *սառուցեալ*, կամ զմարմինն ի յերկնից բերեալ: - 501. *Զսառուցեալսն* ի հաւատս բորբոքեն. և զվառեալսն չարութեամբ՝ շիջուցանեն. որպէս զելիմաս և զսիմոն: - 523

**ՍԱՌՈՒՑԱՆԵՄ +** Նա՛խ՝ զի ամառն կարի՛ ջերմ է և չոր՝ չորացուցանէ՛. և ձմեռն խիստ ցուրտ՝ *սառուցանէ՛* զսերմն: - 197

**ՍԱՌՈՒՑՈՒՄՆ -** Չորրորդ՝ զի ջե՛րմ է արտասուքն և *զսառուցումն* հալէ և ջերմացուցանէ զսէրն: - 619

**ՍԱՍԱՆՈՒՄՆ +** Որև կործանմամբն իւրով չարչարեաց զվերին դասքն սրտմտութեամբ, և զներքին դասքն *սասանմամբ*, և զհամականսն ընդ ինքեան քարշեաց: - 148

**ՍԱՍՏ +** Նա՛խ՝ զի մի՛ արհամարհիցեմք *զսաստն*. իբր թէ սոսկ բանք են: - 408. իսկ յորժամ սպասաւորեաց հրեշտակապետն՝ զտիրական անունն ի *սաստ* կոչելով. յայնժամ ամպ ինչ լուսաւոր ծագեալ ի տեղւոջն, շիջոյց զերևումն չարին: - 410. Տասներորդ՝ ի սկզբանէ հայհոյիչ աստուածամարտ էր սատանայ. և վասն այն զմարդիկ կորուսանէր մեղօք. որում զվճիռն և *զսաստն* տէրն ետ, և դատապարտեաց զմեղս ի մարմնի իւրում. և եբարձ մահուամբն զմահ, և որ զիշխանութիւն մահուն ունէր: - 410. Եւ զի հեղի ո՛չ խրատէր զնոսա *սաստիւ* և տանջանօք. վասն որոյ և ինքն պատժեցաւ և մեռաւ. և քահանայութիւնն յազգէ նորա փոխեցաւ յաւուրս սողոմոնի: - 425. Եւ դարձեալ՝ աջն զփրկութիւն մարդկան. ահեակն *զսաստ* դիւացն: - 493. Կամ զինչ անհնարին *սաստ*, եթէ ոք խոտեսցէ զսուրբ հոգւոյն խօսեցեալս ի գիրս սուրբս. ընտրելով զոմն յարուցեալ ի մեռելոց. կնքելով առակաւոր բանին, «զի թէ սուրբ գրոց ոչ լուիցեն, և ո՛չ թէ ի մեռելոց ոք յարիցէ և հաւատասցեն»: - 775

**ՍԱՍՏԵՄ +** Զբոչունս ըմբռնել. ի վերայ ծովու գնալ. դիւաց *սաստել*. ձեռօք առ այլս խօսիլ: - 275. Փեգովրայ տեղի՛ էր կռոց. և դևքն չտային թոյլ թաղել զմարմինն, մինչև *սաստեաց* միքայէլ հրեշտակապետն ասելով, «*սաստեսցէ*՛ ի քեզ տէր». որպէս յա՛յտ է ի կաթուղիկէից վերջին թուղթն: - 409. Երրորդ՝ վախճանեալ մովսէս ի լերինն, և միքայէլ փոխադրէր զմարմինն. սկսաւ սատանայ հայհոյել զսուրբն և սպանօղ անւանել վասն հարկանելոյն զեգիպտացին. վասն որոյ *սաստեաց* նմա հրեշտակապետն: - 410. ...մինչ աւանդօղ հրեշտակն *սաստեսցէ* ի նոսա...: - 669

**ՍԱՍՏԻԿ +** Եօթներորդ՝ զի լինի ամպ որ ո՛չ որոտայ և ո՛չ կայծ է վասն *սաստիկ* խստութեանն: - 206. Եօթներորդ՝ զի *սաստիկ* է: - 207. Յնդկացւոցն մորուս ո՛չ բուսանի վասն *սաստիկ* ջերմոյն: - 245. Զի փափուկ է հելլենացին. և *սաստիկ* հռոմայեցին: - 297. Իսկ գեղեցկախօսութիւն լեզուաց, ...*Սաստիկ* Յռոմայեցին: - 299. Նա՛խ՝ զի **գ** ամ սովն, և **գ** ամիս սուրն՝ *սաստիկ* էր քան զերեք աւուր մահն: - 434. Եւ յետ **բ** ամի՝ դարձեալ եւ յերուսաղէմ, և **թ** ամ պաշարեաց զքաղաքն ի սով *սաստիկ:* - 447. Եօթներորդ՝ զի *սաստիկ* է. զի ամենայն ոք ի հարկէ զաչս խփէ որ հանապազ տեսանեմք զլոյս: - 522. Եւ քաղց արդարութեան է *սաստիկ* տենչումն արդարութեան. կամ ծայրագոյն բարւոյն: - 584. Զի ծաղիկն դիւրաւ թափի յամէն փոքր պատճառէ. յանձրևոյ և ի հողմոյ և ի *սաստիկ* որոտոյ. վասն այն պտուղն կորնչի: - 638

**ՍԱՍՏԿԱԳԻՆ +** *Սաստկագին* գոչմամբ. և ահագնատեսիլ սուսերամերկ կորովալից նետողաց. որ պատեալ պահեալ պաշարէին զմեզ: - 789

**ՍԱՍՏԿԱՆԱՄ +** Այլ և ամենայն տարերք խռովեսցին. մրրիկ ձմերան և ցրտոյ՝ հրախառն յամենայն ուրէք *սաստկացեալ*...: - 735

**ՍԱՍՏԿԱՍԱՐՍՈՒՌՆ -** Ոչ ինչ ընդհատ բերելով ի մեզ զօրինակ մեծի *սաստկասարսուռն* ատենի: - 788

**ՍԱՍՏԿՈՒԹԻՒՆ +** Դարձեալ, զի է անգամ էր *սաստկութիւն* սովոյն, է անգամ աղօթիւք եբաց: - 444

**ՍԱՏԱԿԵՄ +** Ասեմք եթէ՝ գոգ և մագօգն՝ հոգևորապէս իմացեալ լինին ամենայն հալածօղք եկեղեցւոյ. զորս *սատակեսցէ*՛ տէր յիսուս զամենեսեան...: - 28. Այլ և յորժամ *սատակեցաւ* յուլիանոս, զժողովեալ ինչսն սուրբն բարսեղ բաժանեաց ժողովրդեանն. նոր տարի անուանեալ ի կեսարիայ: -

200. Նա՛խ՝ զի օձն ի յայն մասնէն *սատակի:* - 218. Եւ որպէս ընդ գլխոյն պատերազմեցաւ, գլուխն *սատակեցաւ:* - 219. Զանէծքն ո՛չ յինքենէ ասաց զի մի՛ *սատակեսցի.* այլ յերկիր ետ որ է՛ զէն մահու և չարչարիչ՝ և գերեզման յետոյ: - 287. Կամ որպէս ասեն թէ՝ ներսէս անուն արուեստաւոր տապանին՝ շինեաց իւր տուն ի վերոյ կողմանէ. և զի ո՛չ էր հրամանաւն աստուծոյ՝ *սատակեցաւ* նա՛ անդ, և զնորա գէշն ուտէր ագռաւն: - 294. Որպէս յորժամ լցան մեղք ամուր հացւոցն ի չորրորդ դարուն՝ *սատակեցան* ի ձեռն յեսուայ: - 351. Դարձեալ՝ աստուած յառաջնումն ծննդեան յորժամ զյանցաւորս ըստ բնական մեղացն՝ ջրհեղեղաւն ջնջեաց. յերկրորդումն ծննդեան յորժամ զյանցաւորս ի կռապաշտութիւն՝ կարմիր ծովովն ընկղմեաց. յերրորդումն ծննդեան տուժեաց, յորժամ զյանցաւորս գրաւորական օրինացն պատերազմօք *սատակեաց:* - 351. Եւ տե՛ս, զի անսուրբ կենդանին *սատակեալ* և սուրբ կենդանին *սատակեալ* միապէս պիղծք են: - 365. Բայց յենքեանց *սատակեալն*՝ և գազանաբեկն՝ և գիշատեալն ի հաւուց՝ մի՛ ուտիցի: - 366. Դարձեալ՝ զղջմամբ *սատակի* չար խորհուրդն. և ապա՛ խոստովանիմք լեզուաւ. և զնոսա փոխեալ գործե՛մք զբարիս: - 380. Զի՞նչ է որ զակամայ մեղուցեալն քաւէր պատարագօք. և զկամաւոր յանցաւորն *սատակել* տայր ժողովրդեանն: - 385. Երկրորդ, ըստ փիլոնի, օձն ցանկութեան է օրինակ, որ զցանկացօղ ժողովուրդն *սատակէր*. ի յախտս իւրեանց նմանեցոյց զպատիժն: - 386. Երրորդ՝ հակառակատիպ տեսանի. զի անդ օձն պղնձի զմարդ թշնամիս իւր կեցուցանէր և զօձսն *սատակէր*. և տէր մեր զմարդիկ ազգակից իւր կեցուցանէր, և զթշնամին սատանայ հալածէր: - 386. Տասներորդ, որպէս ասէ փիլոն՝ նշանակ հեշտ ցանկութեան է օձն. որ և զցանկացօղ ժողովուրդն *սատակէր*. ըստ ախտին իւրեանց նմանեցոյց զպատուհասն: - 387. Նա՛խ՝ զի բարկացեալ՝ զէշն կամէր սպանանել սրով. թէ գոյր ի ձեռին ընդէ՞ր բանիւ ոչ *սատակէր:* - 388. Երրորդ՝ զառաջինն հարցն ետ որ *սատակեցան*. զերկրորդն որդւոցն տայ, զի մի՛ լիցին չար և դառնացօղ որպէս հարքն իւրեանց: - 393. Եւ զի զայս ամենայն վկայութիւնս նշանի տեսին աչօք և լսեցին ականջօք և ո՛չ հաւատացին. վասն այն վրէժ խնդրեաց աստուած ի նոցանէ. *սատակեցան* և ցրուեցան...: - 400. Անիծեալն՝ *սատակեալ* և սպանեալ ասի. որ է մեկնեալ և հեռացեալ ի կենաց աստուծոյ...: - 403. Եւ **է** երրորդն *սատակիլն* և կորուստ. զի կեանքս **զ** շարժմամբ է, և մահն **է** երրորդ արտաքոյ սորա: - 404. Գիշերի *սատակեցան* զօրքն ռափսակայ. և վասն յովսիայ զի հարաւ և մեռաւ: - 413. Իսկ յետ մահուան ահարօնի նուազեաց մանանայն. յորում տրտնջէին և յօձից *սատակեցան:* - 415. Եւ գիտելի՛ է, զի անցեալ ընդ յորդանան՝ *սատակեցին* զորդիսն ենակիմայ. և ապա՛ ժառանգեցին զերկիրն: - 419. Դարձեալ անցեալ ընդ ապաշխարութիւն և *սատակեալ* զորդիսն բելիարայ, ապա՛ ժառանգեսցեն զարքայութիւնն երկնից ի փառս քրիստոսի աստուծոյ մերոյ: - 419. Եօթներորդ՝ սամփսոն զառիւծն արիութեամբ *սատակեալ:* - 422. Եւ տէրն զոսոխն մեր սատանայ իբր զառիւծ պատառօղ՝ տարածմամբ ձեռաց ի խաչին *սատակեաց:* - 422. Երեսուններ**ե**, սամփսոն ի մահն առաւել *սատակեաց* քան ի կեանս: - 424. Նա՛խ՝ եթէ ճշմարիտ յարեաւ սամուէլ, ընդէ՞ր ոչ եհար զվիուկն և *սատակեաց.* և ընդէ՞ր ոչ յանդիմանեաց զսաւուղ եկեալ առ վիուկն: - 429. Եւ այն զի յառաւօտէն մինչ յերեք ժամն՝ հռ *սատակեցաւ* ըստ արդարութեան վճռին: - 435. Այլ ա՛յս է ճշմարիտն. զի պատերազմ և խռովութիւն էր յաւուրս դաւթի մինչ *սատակեաց* զնոսա. և որդի նորա ի խաղաղութեան ժամու շինեաց զտաճարն: - 439-440. Եւ տէր զչարագործս և զհերձուածօղս *սատակէ՛:* - 441. Վասն է՞ր ի գիշերի *սատակեցան* զօրքն ռափսակայ: - 446. Եւ որպէս օձ յայգւոյ ծաղկէն մեռանի, նոյնպէս նախանձոտն *սատակի* ի տեսանել զբարի ընկերին: - 569. Կամ ի խիստ պատժէ անզղջից չարաց՝ իսկոյն *սատակին:* - 668. Իսկ անարժանքն որ ունէին զսիրտն յեգիպտոս, *սատակեցան* յանապատին և ո՛չ մտին յերկիրն պարգևաց: - 682. Եւ *սատակեալ* վիշապին տուտն է նեռն. որ ի վերջին ժամանակս քարշէ զերրորդ մասն աստեղաց. - 706. Եթէ ինքեամբ՝ եթէ ի ձեռն միքայէլի. ի մէջ վրանի և յաթոռն իւր *սատակեսցի*. և գլորեսցի մարմինն ակներև ժողովրդեան իւրոյ...: - 709. Եւ խոստովանութեամբ մեղաց *սատակին* և նոքա: - 753

**ՍԱՏԱԿՈՒՄՆ +** Չորրորդ՝ *սատակումն* անասնոց ի գազանաց: - 376. Անդրանկաց *սատակումն* եգիպտոսի, նշանակէ՛ զանկումն սատանայի յերկնից. և փոխանակ նոցա ընտրեալ և կոչեալ որդի անդրանիկ զիսրայէլ. և զնոսա փոխարկեալ առնու զօծելոց դասս քրիստոնէից ի տեղի նոցա: - 380. Զի թէ անիծեալ էր, յորժամ ժողովուրդն անկաւ ի *սատակումն* ի բելբէքովր, ասէին թէ ի նորա անիծիցն եղև: - 388. Եւ դարձեալ՝ ոչ ինչ շնորհ ունէր բան նորա. զի այնքան օրհնեաց զժողովուրդն, ընդէ՞ր ոչ դարձաւ մահն և *սատակումն:* - 388. Եւ անէծքն *սատակումն*. ըստ այնմ «որք անիծանեն՝ սատակեսցին

ի նմանէ»: - 388. *Սատակումն* մահուն. որ յերից զմինն խնդրեաց պատուհաս: - 413. Վեցերորդ՝ զի թէ լինի անկարօտ գող և զրկօղ, ընդ տեառն իւրոյ կորուսանէ և զինչսն. որպէս աքարն որ ունէր բազում ստացւածս, և գողացաւ ի նզովիցն երիքովի. տեսին ամենայն ժողովուրդն և ցասեան ի վերայ նորա և իրաւունս ետուն *սատակմանն:* - 416. Զի թշնամեաց տեառն *սատակումն* արդարութիւն էր նոցա: - 439. Երրորդն հրոյ սպառնալիք և *սատակումն*. և դարձեալ աւետեաց հրաւէր: - 630. Չորրորդ, արծակէ՛ զսատանայ, զի տեսցէ զիւր ժամանակ տանջանացն մերձեալ. և մոլի որպէս գազան մերձ ի *սատակումն*. և շուն կատաղեալ: - 706. Եւ մինչդեռ ասասցեն զայս, յանկարծակի եկեսցէ ի վերայ նոցա *սատակումն* որպէս յաւուրսն նոյի ըստ հրամանի փրկչին: - 709

**ՍԱՏԱՆԱՅ +** Ութերորդ՝ եթէ չարն է յաստուծոյ, ո՛չ պատժէ *զսատանայ* որ չարացաւ. և ո՛չ զչարս ի մարդկանէ, այլ ահա՛ պատժէ՛. չար ուրեմն ո՛չ է յաստուծոյ: - 14. Հնգետասաներորդ՝ թէ չարն է յաստուծոյ՝ և սկիզբն ամենայնի է աստուած, որև չարեաց ըստ նոցա, ապա ո՛չ է սկզբնաչար առաջին գտակն չարեաց *սատանայ*. որպէս նոքայն բարբանջեն: - 14. Եօթներորդ ասեն, թէ յաստուծոյ չէ չարն, վասն էր ներէ *սատանայի*, և չար մարդկան: - 17. Զի նախախնամութեամբ բազում բարիս յառաջած է ի չարէ. որպէս *սատանայի* թոյլ տայ, զի փորձեսցին բարիքն և յաւելցին պսակքն: - 17. Զի որպէս *սատանայ* ամբարտաւանութեամբն ընդդէմ աստուծոյ՝ զրկեցաւ ի լուսոյն, նոյնպէս և հպարտն զրկեցաւ ի շնորհացն ըստ երեմիայ: - 32. Իսկ սոքա անզեղջ մնան որպէս *սատանայ*՝ զինքեանս ուղիղ կարծելով: - 33. Հինգերորդ՝ զի նոցա պատճառ երևի *սատանայ* մոլորութեամբն: - 33. Տասներորդ՝ նեռն քարոզութեամբ պատրէ՝ և ուրւական սքանչելեօք. և այլն. և սոքա քաղցրաբանութեամբ և օրհնութեամբ պատրեն զմիտս անմեղաց. և հրեշտակ լուսոյ կերպարանին որպէս հայրն իւրեանց *սատանա...:* - 35. Եւ որպէս նեռնն ազդումն է *սատանայի*՝ որպէս առաքեալն ասէ. և նոքա յազդմանէ *սատանայի*՝ խորհին և խօսին զանազան հերձուածս ըստ չար խորհրդոց նորա: - 35. Զի արդարութիւն արար քրիստոս բնութեանս մերոյ գերեալ ի *սատանայէ՛:* - 50. Արդ կամ ստեաց զաւետարանն, կամ սուտ լեր ի բանս քո ըստ նմանութեան հօր քոյ *սատանայի:* - 97. Ո՞րքան է անկումն *սատանայի:* - 102. Իսկ այլն՝ *սատանա՛յ* է ապստամբ վիշապն որ գերեաց զմարդիկ:- 128. Իսկ բանիւ գործոյ խօսի աստուած ընդ դիւին. նա՛և հրեշտակք ընդ *սատանայի*. որպէս որոտ և կայծակունք հրոյ ի վերայ նոցա...: - 145. Վասն որոյ ասի *սատանայ*՝ գտակ և հայր չարեաց: - 148. Նախ՝ զչար խորհուրդն *սատանայի* առարկէ՛: - 148. Վասն է՞ր *սատանայի* մեղքն է անթողլի: - 150. Ո՞րքան է անկումն *սատանայի:* - 152. Զանկումն *սատանայի* եռակի՛ է իմանալ. առաջին՝ և միջին և վերջին: - 152. Զոր եկեալ տէրն անմեղ և անապական մարմնովն նահանջեաց զմեղս, և զարդարութիւն սփռեաց ի վերայ մարդկան. և դատապարտեաց *զսատանայ* իբր զդաւաճանօղ մարդկան և կռխան արար ի ներքոյ մարդկան: - 153. Զի յետ քրիստոսի դադարեաց *սատանայ* զհոգիսն ի դժոխս տանելոյ որպէս ասէ սուրբն եպիփան: - 153. Եօթներորդ՝ թոյլ տուեալ լինի և ոմանց անկանիլ ի մեղս ինչ. զի ի հպարտութենէն զոր ունէր վասն առաքինութեան՝ խոնարհեսցի և անկցի առաջի տեառն խոստովանութեամբ. և ընկալցի զթողութիւն. որ նախ համասե՛ռ էր *սատանայի:* - 159. Ասեն ոմանք թէ փորձութիւնն երեք է. այսինքն ի մարդկանէ՛, ի *սատանայէ՛*, և յաստուծոյ: - 160. Իսկ *սատանայ* փորձէ՝ զի ի չար ընկեսցէ: - 160. Նոյնպէս և *սատանայ* աներևոյթ մօտ՝ ի մարդն երթալ. թէ ամուր է հաւատն և կամքն՝ ո՛չ կենայ անդ, յուսահատի և թողու: - 161. Եւ այսու զանազանի փորձութիւնն աստուծոյ և *սատանայի*, Նախ՝ որպէս ասացաք՝ աստուած փորձէ՛ զի յայտնեսցէ զբարութիւնն. և *սատանայ* փորձէ զի հանցէ ի բարւոյն: - 161. Երկրորդ՝ աստուած փորձէ և տայ զհամբերութիւնն. և *սատանայ* ընդ փորձութեանն առնէ զձանձրութիւն: - 161. Երրորդ՝ աստուած փորձէ՛ և տայ զելն՝ զի մի՛ յուսահատեսցի. և *սատանայ* փորձէ և ձանձրացուցանէ զի ընկեղմեսցին: - 161. Չորրորդ՝ զի յետ փորձութեան աստուած զպսակն պարգևէ. և յետ փորձութեանն *սատանայ*, ընդ իւր ի կորուստն յաւիտենական սպանանէ: - 161. Հինգերորդ՝ զանազանութիւն՝ զի *սատանայ* ի փորձելն ո՛չ գիտէ զառաջիկայն թէ յաղթէ և թէ յաղթի. և եթէ էր տեղեակ՝ ո՛չ մրցէր ընդ կատարելոցն որք յաղթահարեն զնա. որպէս ընդ ստեփաննոսի, անտօնի, և այլոցն, որք յաղթեցին *սատանայի:* - 161. Երրորդ՝ զթշնամին *սատանայ* և զչարն փախուցանէ: - 185. Վեցերորդ՝ զբարեկամ հրեշտակս՝ և զթշնամին *սատանայ* ցուցանէ՛: - 185. Վեցերորդ՝ յորում մարդ *սատանայ* լինի: - 210. Երկիր որով մարդ *սատանայ* եղանի, է՛ տանջանք դժոխոցն: - 210. Հինգերորդ՝ ընդ հերձուածողաց և *սատանայի* մի՛ պարզմտութեամբ՝ այլ հնարիւք խօսեսցի: - 218. Դարձեալ ի հողոյ ստեղծ ի նախատինս *սատանայի*.

զի յամօթ լիցի յորժամ տկարս այս և կաւեղէնս ի փառսն մտանէր յորմէ նա՛ որ փառաւորն էր անկաւ: - 229. Եւ սոյնպէս մարդն առաւելու ի չարն. ի բանականէն և ի կամացն և ի թունիցն *սատանայի* չարացեալ որպէս ցուցաւ ի սկիզբն գրոցս: - 237-238. Առաջին իսկապէս թշնամի մարդկան ազգի *սատանայ* է. իսկ ալ թշնամիք ի նմանէ՛ պատճառեցան: - 277. Եւ այսպէս **ը** դիմօ՛ք է թշնամութիւն մեր ընդ միմեանս. և ամենայնին պատճառ *սատանայ* եղև, որ բնութեանս է թշնամի: - 278. Դարձեալ որպէս ասէ առակն՝ «**է** չարիք են ի սիրտ թշնամւոյն» որ է *սատանայի* և մարդոյ: - 287. Եւ *սատանային* յայտնի են է չար խորհուրդքն որ կոչին գլխաւոր մեղք: - 287. Հինգերորդ՝ մահ և բռնութիւն *սատանայի* տիրեալ էր մարդկան. ի հաւատ կործանման նոցա անմահացոյց զենովք և վերացոյց զեղիա: - 289. Այս է զոր արարն դարձեալ մարդկայինս ազգի զրկելոցս ի *սատանայէ՛:* - 302. Իսկ *սատանայ* փորձէ՛ զի խաբեսցէ որպէս զնախահայրն: - 304. Իսկ մեզ հոգևորապէս ետ պարգև զբնակութիւնս երկնից. ուստի մերժեցաւ հակառակորդն մեր *սատանայ*...: - 306. Ութերորդ՝ ըստ մեղաց. զի սերմ առեալք ի *սատանայէ՛* յղանամք զցաւս և ծնանիմք զանօրէնութիւն: - 308. Նոյնպէս և *սատանայ* ատէ՛ր զմարդկային բնութիւնս զի ի պատկերն աստուծոյ արարաւ. և հրէայքն ատէին զքրիստոս. զի վկայեաց հայր թէ դա՛ է որդի իմ սիրելի: - 313. Ինննժ, յովսէփ ստացաւ ոսկի և զարծաթ և զերկիրն եգիպտացւոց՝ փարաւոնի. այսինքն զզէնս *սատանայի*. զի փարթամութիւնն մեծ զէն է *սատանայի* որովք գործէ՛ զամենայն պղծութիւնս. որպէս երկիրն սոդոմայ պարարտութեամբ գործէր զմեղս: - 314. Նոյնպէս և քրիստոս զզէն և զզօրութիւն *սատանայի* եբարձ որ էր մեղքն և մահ դժոխոցն: - 314. Եւ յանւանէն և ի նշանացն քրիստոսի փաղչի շողոքորթն *սատանայ:* - 316. Նախ՝ *սատանայ* և անհաւատք աստուածութեան նորա. և մեղք և դժոխք հոգւոյ են թշնամիք. մահ և ապականութիւն մարմնոյն: - 316. Աղքատ և տնանկ զմարդկային բնութիւնս ասէ. որ հարստահարեցաւ և զրկեցաւ ի *սատանայէ՛:* - 317. Որ ի փորձութիւնն *սատանայի* յաղթօղ երևեալ: - 321. Դարձեալ գիտելի՛ է, զի յոր կրկնելով զբանսն՝ ուղղէ՛ր զբարեկամսն և ընկրկէ՛ր *զսատանայ*. զի այսպէս ամենայն ոք կարէ՛ յաղթել *սատանայի* յորժամ զընկերն ուղղէ ի բանս կամ ի գործս կամ ի հաւատս և յայլսն. յայնժամ *սատանայ* թիւրի և հեռանայ: - 323. Այլ յորժամ զընկերն թիւրեմք չար յաղթութեամբ, յայնժամ *սատանայ* ուղղի և ուրախանայ: - 323. Դարձեալ՝ **բ** իրօք յաղթեաց յոբ զսատանայ. գոհութեամբ բանի՝ և համբերութեամբ գործոյն: - 323. Դարձեալ՝ յաղթեաց *զսատանայ* այնու, զի իմացաւ զչար հնարսն նորա և պատասխանէր զընդ դէմ. որպէս կնոջն և բարեկամացն և որք զգուժն բերէին. զի գիտէր ի բանսարկուէն լինիլ: - 323. Իսկ ի հոգւոյ մարդոյն **բ** իր հեռացուցանեն զդևսն. այսինքն խոնարհութեամբ և ճշմարտութեամբ. վասն զի զերկուքս զայս ո՛չ ունի *սատանայ*. և ամենևին փախչի և ատէ՛ զխոնարհութիւն և զճշմարտութիւն: - 324. Նախ՝ ուղղութիւն ընկերաց. **բ** գոհութիւն և համբերութիւն. **գ**՝ իմանալ զչար խորհուրդն *սատանայի*. **դ**՝ աղօթք և պահք. **ե**՝ խոնարհութիւն և ճշմարտութիւն. որ գերագոյն է ամենայն զինուց և իսպառ կորուսանէ զչար որ մայրն է ստութեան և հպարտութեան: - 324. Վասն առաջնոյն, զի գիտէր զնոսա շարժեալ ի չարասիրէն. և յաղթելով զնոսա յաղթեաց զբանսարկուն *սատանայ:* - 324. Զի և մեզ օրինակ տացէ այսպէս արիութեամբ յաղթել *սատանայի:* - 324. Եւ այսպէս ամենայն ուրեք հնարի *սատանայ* զի և զբանբասեալն և կամ զբանբասօղսն կորուսցէ: - 325. Վասն է՞ր թոյլ ետ սատանայի *մարտնչիլ* ընդ յոբայ: - 325. Չորրորդ՝ զի ախոյեան լիցի և յաղթեսցէ զհպարտացեալն *սատանայ:* - 325. Երրորդ՝ զի մի հպարտասցի յետ յաղթութեանն *սատանայի*, խօսեցաւ աստուած և յաղթեաց բանիւ. զի տեսցէ զտկարութիւն իւր և խոնարհեսցի: - 325. Եւ քրիստոս գառն ճշմարիտ զենաւ և ազատեաց զմեզ ի սատանայէ՛: - 328. Եւ տէրն բազկատարած ի խաչին *զսատանայ* կործանէր: - 329. Եւ փրկիչն միա՛յն էջ ի դժոխս, և ազատեաց զամենայն հոգիսն ի հրահալոց տանջանացն *սատանայի:* - 329. Նա՛խ՝ նշանակէ զնոյն ինքն սկզբնաչարն *սատանայ*. որ էր յերկինս գաւազան ուղղութեան և ընկեցեալ եղև օ՛ձ: - 332. Երկրորդ՝ դարձեալ նոյն ինքն *սատանա՛յ* է օձն. որ փոխեցաւ ի բարեկամի ձև. և պատրեաց զնախաստեղծսն: - 332. Երրորդ, զի կործնչելոց էին անդրանիկ ծնունդքն *սատանայի*. որ էր հպարտութիւնն և կռապաշտութիւն. զի խոնարհութեամբ էր գալուստն քրիստոսի և ի մի աստուածպաշտութիւն հրաւիրեաց և կորոյս զպաշտօնն դիւական: - 334. Եւ որպէս *սատանայ* հրեշտակ լուսոյ կերպարանի որ չէ իսկ: - 335. Թևն առաքինութիւն է որով զերծանի մարդ յորոգայթից *սատանայի*. և թեփն ծածկոյթ ամօթոյն. սուրբ են: - 364. Անդրանկաց սատակումն եգիպտոսի, նշանակէ՛ զանկումն *սատանայի* յերկնից...: - 380. Երկրորդ՝ զի պահապան է յառաջին և վերջին թշնամեաց որ է *սատանայ* և մեղքն: - 385. Երրորդ՝ հակառակատիպ տեսանի. զի անդ օձն պղնձի

զմարդ թշնամիս իւր կեցուցանէր և զօձսն սատակէր. և տէր մեր զմարդիկ ազգակից իւր կեցուցանէր, և զթշնամին *սատանայ* հալածէր: - 386. Իններորդ՝ զի ինքն *սատանայ* ունի բնութիւն և մեղք և պատիժ. բնութեամբ աստ զինի. և մեղօք յետոյ. և յարութեանն պատժակից իւր առնելով: - 394. Երրորդ՝ վասն հասարակ յարութեանն. զորմէ լուաւ *սատանայ* և բեկաւ ողն նորա: - 409. Չորրորդ, մահ՝ այսինքն *սատանայ* որ յաղթեաց ադամայ. իսկ մարմնոյն մովսէսի ո՛չ կարաց յաղթել հրեշտակային օգնականութեամբն. որպէս ասի յառաջիկայդ: - 409. Նախ ասեն թէ զնիւթն աստուած կարծեցին, *սատանայ* խաբէր թէ ի՛մ է այս մարմինս իբրև տեառն նիւթոյ...: - 409-410. Երկրորդ՝ զհոգին մովսէսի ո՛չ կարէր յափշտակել *սատանայ*, փոխանակ հոգւոյն զմարմինն ջանայր յափշտակել. և վիճէր ընդ հրեշտակին թէ իմ է...: - 410. Երրորդ՝ վախճանեալ մովսէս ի լերինն, և միքայէլ փոխադրէր զմարմինն. սկսաւ *սատանայ* հայհոյել զսուրբն և սպանօղ անւանել վասն հարկանելոյն զեգիպտացին. վասն որոյ սաստեաց նմա հրեշտակապետն: - 410. Վեցերորդ՝ ի թաղումն մովսէսի միքայէլ սպասաւորեաց. որում *սատանայ* հակառակ կայր ներողութեամբն աստուծոյ: - 410. Զայս նշանակէ թէ՝ յետ ելանելոյ հոգւոյ ի մարմնոյ և գնալոյ ի վերին շաւիղն, հակառակ կայ *սատանայ* և չար զօրութիւնքն ընդ նմա...: - 410. Եօթներորդ՝ ոմանք մարմին մովսէսի զօրէնսն ասեն. զոր ի բերելն հակառակէր *սատանայ*, խոստան և անարժան գոլ ժողովրդեանն. վասն որոյ միքայէլ վերակացու ժողովրդեանն հալածէր զնա: - 410. Իններորդ՝ ի ժամ այլակերպութեան տեառն ի բերել հրեշտակապետին զմովսէս, ասէ *սատանայ* ցհրեշտակն, ստեաց աստուած զմովսէս մուծանել յերկիրն ուր երդուաւ ո՛չ մտանել նմա: - 410. Տասներորդ՝ ի սկզբանէ հայհոյիչ աստուածամարտ էր *սատանայ*...: - 410. Եւ տէր մեր զառաքեալս ընդ ծագս. որք համբաւեցին մեզ զյաղթութիւնն *սատանայի* և դժոխոց: - 417. Եւ տէր մեր զգլխաւորն *սատանայի* բևեռեաց ընդ խաչափայտին: - 418. Եւ տէրն զոսոխն մեր *սատանայ* իբր զառիւծ պատառօղ՝ տարածմամբ ձեռաց ի խաչին սատակեաց: - 422. Այլ և զապականութիւն և զդժոխս. մարմնով և հոգւով կործանէր զամուրն *սատանայի:* - 424. Երեքտասաներորդ, եհար զգողիաթ զնախատիչն իլի. և տէրն *զսատանայ* նախատիչ մարդկան ազգի: - 436. Վեշտասաներորդ, դարձեալ **խ** օր արձանացաւ գողիաթ և զտէրն **խ** օր փորձեաց *սատանայ:* - 436. Ընդվզեալ սաբէի և կորուսեալ ի կնոջէ. և *սատանայի* կործանեալ յիմաստուն կուսէ: - 438. Արդ աղեղն և նետն ի վերայ եդեալ՝ նշանակէ՛ զխաչն փրկական ընդ դէմ իմանալի ասորւոյն *սատանայի:* - 446. Եւ դարձեալ ի տիպ քրիստոսի որ ի գիշերի եհար *զսատանայ* և ազատեաց զհոգիսն ի դժոխոցն: - 446. Եօթներորդ՝ զի ծնունդն քրիստոսի թաքուցեալ լինի ի *սատանայէ՛:* - 461. Զի որպէս *սատանայ* օձիւն խօսեցաւ առ կոյսն եւա, այսպէս տէր մեր հրեշտակիւն առ կոյսն մարիամ: - 463. Երրորդ՝ փրկեաց ի բռնն ծառայութենէ *սատանայի*...: - 473. Զայս որպէս ձեռին գիր ունէր *սատանայ*, և նովաւ չարչարէր զմարդիկ՝ թէ աստուած ասաց մի ուտել և դու կերեր և մեռար. իմ ի՞նչ մեղք է: - 481. Երրորդ ձեռագիր քրիստոնէիցս առ աւազանաւն. որ հրաժարիմք ի *սատանայէ՛* և դաւանիմք զքրիստոս: - 482. Զազգս մարդկան *սատանայ* էր գերեալ. վասն է՞ր քրիստոս զգին արեանն ի հայր ետ: - 492. Զի թէպէտ *սատանայ* էր գերեալ զմարդն, սակայն ի գերութիւն նմա հա՛յր մատնեաց յորժամ պատժեաց զնա: - 492. Յիրաւի ապա տէր մեր զգին արեանն ի հայր ետ. թէպէտ *սատանայ* էր գերեալ և չարչարէր զմարդիկ: - 492. Եւ զապականութիւնն հետևեցոյց բանսարկուն *սատանայ:* - 496. Չորրորդ՝ որպէս անիրաւութեամբ կապեաց *սատանայ* զհոգիս մարդկան. արդարութեամբն ազատեսցէ քրիստոս զնոսա: - 503. Յայնժամ փախուցեալ *սատանայ* իբր զապստամբ ծառայ. և մտեալ յորջն դժոխոց կարծէր ամրանալ անդ և ունել զհոգիսն: - 503. Ուր արկեալ էր *սատանայ* զաթոռ իւրոյ իշխանութեանն. և անդ արգելեալ բանտէ՛ր զհոգիսն որ յադամայ. մինչ ի գնալ անդ անմահ թագաւորին մերոյ և աստուծոյ յիսուսի քրիստոսի: - 504. Դժոխքն այն յորում նախ քան զքրիստոս հոգիսն արգելոյր *սատանայ*՝ աւերեցաւ յաւիտեան: - 504. Այլ հուրն յաւիտենից՝ է՛ այժմ դժոխք *սատանայի* և մեղաւորաց: - 504. Վեցերորդ՝ ամուրն *սատանայի* է ներքին դժոխքն. ուր են դրունք պղնձիք և նիգք երկաթիք. որ է՛ մեղքն մեծամեծք և յուսահատութիւնք. և ա՛յն էր ամրոց նորա: - 506. Երկրորդ՝ զի դժոխքն այն էր բուռն զօրութիւնն *սատանայի*. և քրիստոս կապեաց զհզօրն ըստ աւետարանին. ապա ուրեմն քրիստոս աւերեաց զդժոխս: - 506. Երկրորդ՝ եթէ սկզբնաչարն *սատանայ* է ամենայն մեղաց պատճառ և ո՛չ տանջի մինչ ի կատարած. նաև ո՛չ մարդիկ: - 507. Նոյնպէս և քրիստոս ի մէջ գիշերի եհար *զսատանայ* և կապեաց: - 512. Եօթներորդ՝ դարձեալ յաւուր կիրակէի էանց մովսէս ընդ ծովն կարմիր. և ընկղմեցաւ փարաւոն ի տիպ յարութեանն քրիստոսի և կորստեան *սատանայի:* - 512-513. Ա՛րդ՝ ներքին այրն

նշանակէ՛ զդժոխս. և արտաքիննն զգերեզմանն. և սաւուղն *զսատանայ* որ ըմբռնեալ էր զմարդիկ: - 513. ...և զաւարն ժողովեցին ի տիպ խորհրդոյն քրիստոսի. որ ի գիշերի եհար զզօրութիւնն *սատանայի* և յառաւօտուն ցուցեալ զինքն աշակերտաց իւրոց և զյարուցեալսն ընդ իւր: - 514. Ամաղէկ նշանակէ *զսատանայ* որ գերեաց զհոգիս մարդկան հրէից և հեթանոսաց...: - 514. Յնգետասաներորդ, Մեղքն *սատանայի* անթողլի է: - 526. Եւ սոքա են սուր երկսայրիք տուեալ ի ձեռս քահանայից զինուորաց քրիստոսի. զի յաջ և յահեակ հարցեն. այսինքն *զսատանայ* և զչարսն ի մարդկանէ որք հակառակին բարեաց: - 538-539. Իսկ կապելն ի դէմս մեղացն է և մեղսասիրաց. որպէս տէր մեր բևեռեաց զմեղս և *զսատանայ* ընդ խաչափայտին: - 540. Եւ սոքա մտօք և ո՛չ մարմնով կատարին. որպէս յայտ է ի բանսարկուն *սատանայ* որ յանցեաւ հպարտութեամբ և նախանձով: - 556. Զի *սատանայ* հպարտացաւ յերկինս և նախանձեցաւ ընդ մարդոյն. իսկ այլքն ամենայն մարմնականք են ասեն: - 559. Զի առաջին մեղք հպարտութիւնն է որով *սատանայ* մեղանչեաց յերկինս և անկաւ. և ապա նախանձն զոր ընդ մարդոյն արարին: - 561. Նա՛խ՝ զի ամենայն մեղք կամ ընդ դէմ իւր մարմնոյ է, կամ ընկերին. իսկ հպարտութիւնն է մեղանչումն ընդ դէմ աստուծոյ. որպէս *սատանայի:* - 561. Վասն է՞ր *սատանայի* մեղքն մեծ է և անթողլի քան զմարդոյ: - 562. Այսպէս մեղանչէ *սատանայ* և մարդ. զի զլոյսն աստուծոյ անձնիշխան կամօք և իմացմամբ մերժէ՝ և սիրէ զխաւար: - 562. Իսկ մեղանչելն *սատանայի* այնպէս է որ ընդ դէմ արեգականն հայի և զլոյսն կորուսանէ և խաւարի: - 563. Նոյնպէս և *սատանայ* ընդ դէմ աստուծոյ հպարտացաւ...: - 563. Յայնժամ լոյս իմացականին կորեաւ և շիջաւ ի *սատանայէ՛*. և լոյս շնորհացն ո՛չ ներգործեաց ի նա. և ի նոյն սերտեալ հաստատեցաւ անզղջապէս. վասն որոյ մեծ են մեղք *սատանայի* և թողութեան ո՛չ հանդիպի: - 563. Յինգերորդ՝ նման *սատանային* լինին որք ուրանան զպատճառն գոյութեան հոգոց իւրեանց. յիրաւի ապա որպէս *սատանայ* ո՛չ ունի թողութիւն ի կեանս յայս և ո՛չ ի հանդերձեալն և գործ ունէի նմին: - 566. Զգուշանալ պա՛րտ է յամբարտաւանութենէ, զի զիրեշտակս կարաց խաբել. և զիրեշտակն *սատանայ* դարձոյց: - 569. Զի *սատանայ* այլ մեղք ո՛չ գործեաց, քան թէ խորհեցաւ զյատուկ բարձրանալն իւր...: - 569. Իսկ յորժամ սուրբ հոգին ելանէ, պիղծ հոգին այսինքն *սատանայ* բանկէ՛ ի նա: - 570. Խաղաղութիւն է ի կայումն առաքինութեան. յորում է հեշտութիւն ի յաստուած առանց հասարակութեան մարմնոյ՝ աշխարհի՝ և *սատանայի:* - 585. Այս է՝ զմեղքն՝ զկամքն չար՝ և *զսատանայ*՝ որ խռովարարք էին եբարձ ի միջոյ. և արար խաղաղութիւն յերկինս և յերկրի: - 585. քանզի խաղաղարարն է առանց հակառակութեան մարմնոյ՝ աշխարհի՝ և *սատանայի*. յա՛յտ է զի լինիցի պատրաստ ի յաղթել զփործութիւն մահու: - 586. Երկրորդն դրոշմն. որ է՛ պատերազմողացն ընդ դէմ թշնամոյն *սատանայի:* - 587. Այլ կնքահայր ո՛չ է պարտ առնել զայլազգին. զի ո՛չ ունի զհաւատն սուրբ, և ո՛չ է հրաժարեալ ի *սատանայէ*. վասն որոյ ո՛չ կարէ լեզու լինիլ տղային կամ երաշխաւոր. - 591. Որոց գործն ա՛յն է, երդմնեցուցանել զդիւահարն՝ և զերեխայն՝ հրաժարիլ ի *սատանայէ:* - 606. Այլ և **ը** խորհրդով պատերազմն *սատանայի*. որպէս գրէ սուրբն եւագրիոս: - 627. Նա՛խ՝ երեխայքն ուխտեցին հրաժարիլ ի *սատանայէ՛*. և ի մեծի զատկին մկրտելովն իսրայէլ. և ապա ուխտ ապաշխարութեան պահոցն. և յարութեանն տեսանել զքրիստոս. աստ և անդ: - 629. Վեցտասաներորդ, **ռ** ամ կապելոյն *սատանայի:* - 660. ...և ապա տանջի ընդ *սատանայի* ի հուրն յաւիտենական որ պատրաստեալ է նոցա: - 667. Արդ եգիպտոս նշանակէ՛ զաշխարհս որ է՛ հալոց չարութեան և տեղի ծառայութեան մեղաց և *սատանայի* որ է՛ փարաւօն: - 682. Իսկ հոգիք հաւատացելոց որք ոչ գնացին այսպէս զհետ նորա, այլ ընկալան ի ներգործութեանցն *սատանայի* և ի կրից աշխարհի. - 688. Զնոսա ասել գոլ առ **ը** երորդ կամարն երկնից. ամբարձեալ յիշխանութենէ *սատանայի* որք ի յօդս և ի տարերս միայն իշխեն: - 688. Իսկ արմաւենիքն զյաղթութիւնն նշանակեն. որք յաղթեցին ցանկութեանց մարմնոյ և *սատանայի:* - 690. Զի՞նչ է կապիլն *սատանայի* **ռ** ամ: - 705. Ա՛յն է որ *սատանայ* խաբէութեամբ և բռնութեամբ զօրացեալ էր և իշխան եղեալ ի վերայ մարդկան. ի կեանս զանազան չարեօք և կռոց պաշտմամբ...: - 705. ...և պատարագաւ խաչին հաշտեցոյց զհայր. և իջմամբ ի դժոխս կապեաց զհզօրն *սատանայ* և արձակեաց զկապեալ հոգիսն. - 705. Եւ բևեռմամբ ձեռացն բևեռեաց ընդ խաչափայտին *զսատանայ* և զմեղս մեր: - 705. Այլ և վասն կապելոյն *սատանայի* գրեալ է ի **թ** գլուխն ի **իզ** համարն ի վերոյ: - 706. Եւ ոմանք յետ զ**ռ** ամին զեօթներորդն որ վախճանն է՝ յարութիւն ասեն միայն սրբոցն և կապիլ *սատանայի:* - 706. Երրորդ, ներելով արձակէ *զսատանայ* որով փորձին ընտրեալքն որպէս ցորեան ի շտեմարանս արքայութեան...: - 706. Չորրորդ, արձակէ՛ *զսատանայ*, զի տեսցէ զիւր ժամանակ տանջանացն մերձեալ. և մոլի որպէս գազան մերձ ի

սատակումն. և շուն կատաղեալ: - 706. ...վասն որոյ ասի որդի *սատանայի:* - 706. Զի զօգ նոքա են որովք *սատանայ* գաղտնաբա՛ր հալածէ զիւաւատացեալս: - 708. Իսկ այլք ասեն, զօգ ասին հեթանոսք. և մազօգ *սատանայ:* - 708. ...զի նուազեսցին դժնդակութիւնք և պատրանք մարդկան և *սատանայի:* - 709. Զյաղթութիւն նոցա ցուցանէ. որք յաղթեցին ցանկութեանց մարմնոյ աշխարհի և *սատանայի:* - 712. Բայց եօթն զարդքն զոր ունին սուրբքն որք են հարսունք քրիստոսի` ո՛չ ունին անսուրբքն որք են հարսունք *սատանայի:* - 723. Չինգերորդ, զի դիցէ զբշնամիս իւր ի ներքոյ ոտից իւրոց. այսինքն կորուսցէ զնեռն և *զսատանայ* և զամենայն զայթակղութիւն մարդկան` զմեղս և զմահ...: - 737. Նմանապէս և չարեացն վկայ` ոսոխն մեր *սատանայ* և գործակիցքն. և խիղճ մտացս որով տանջիմք միշտ: - 743. Երրորդ, զի ի կշիռ արդարութեան դատեաց ի մէջ իրէից և հեթանոսաց. մարդկան ազգի և *սատանայի:* - 746. Իսկ կշռողականն է զոյգ արդարութեամբ կշռել. որպէս յորժամ ողորմելով միոյն` պատժէ՛ զընդդիմակն նորին. որպէս փրկեցաւ իսրայէլ և պատժեցաւ եգիպտոս. և յազատիլ բնութեան մարդոյս` պատժեցաւ *սատանայ:* - 747. Զի այսպէս ասեն վարդապետք` թէ յորժամ յղանայ որ ի միտս իւր զխորհուրդ մեղացն, ի *սատանայէ՛* սերմն առեալ որպէս կին յառնէ. և ի ծնանիլ մեղացն` ծնանին և որդունքն ի հրեղէն ծովն որ է՛ ի հարաւ: - 753. Եւ թէ ի թիկանց նետք մուխք *սատանայի*, սովաւ զգուշացիր և անքոյդ մնաս: - 770. Երրորդ, զի թէ *սատանայ* որ գտա՛կն է ամենայն չարեաց` դեռևս ո՛չ տանջի յաւիտենից...: - 776. Իններորդ, զի բռնութիւն *սատանայի* էր կապեալ զնոսա. և տէր մեր կապեաց զնա ընդ խաչափայտին. որ նա ինքն էր դրունք դժոխոց. ապա ուրեմն արձակեցան անտի: - 777. ...զի սկզբնաչար և պատճառ ամենայն մեղաց *սատանայ* է. այլ ադամ այնչափ` զի առաջին եղև մեղանչական ի նմանէ: - 777. Այսպէս *սատանայ* է մեղադրելի իբր պատճառ և գտակ չարեաց մարդկայինս բնութեան և ո՛չ ադամ: - 777

**ՍԱՏԱՆԱՅԱԳԻՏ** - Երկրորդ` զի *սատանայագիտ* էր քնար և տաւիղ...: - 641

**ՍԱՏԱՐ +** Այլ ա՛յս է ճշմարիտն, զի ամենայն բարեկամքն որ ժողովեցան յետոյ և մխիթարեցին զնա՛, իւրաքանչիւրքն բերին մէն մի որոջ ոչխարի և դ դրամ ոսկի անգիր ընծայեցին նմա ի *սատար* խրախութեանն...: - 326

**ՍԱՏԵՐ +** Որպէս զխոյն ի ծառոյն սաբեկայ. և զլորամարգն ի ծովէն. և *զսատերն* ի բերանոյ ձկանն հրաշագործեաց: - 326. Սիկղն և *սատերն* և երկդրամեանն մի են. ի դանկ է. և մի դանկն բ գարւոյ կշիռ է: - 343

**ՍԱՏԻԷԼ** - Իսկ բանսարկուն *սատիէլ*` զմի յերից մասանցն զչորրորդն քարշեաց ընդ ինքեան և կործանեաց յերկիր...: - 152

**ՍԱՏՆԱՏՈՒՐ** - Ոմանք դ ասեն. և անւանս թուեն, Ատուր, Թատուր, Գատուր, *Սատնատուր:* - 495

**ՍԱՐԱՍ +** Դարձեալ` ըստ նոյն *սարասի*` բանն աստուած ունի ծնունդ ի հօրէ նախ քան զյաւիտեանս. և ունի ծնունդ ի մօրէ ի յետին ժամանակիս. և ո՛չ ասի երկածին. այլ` միշտ միածին. այսպէս նոյն բանն ունի զբնութիւն աստուծոյ ի հօրէ. ունի և զբնութիւն մարդոյ ի մօրէ՛. և ո՛չ ասի բ բնութիւն. այլ մի բնութիւն վասն միաւորութեանն: - 77. Նոյն *սարասիւք* այժմ ի ձեռն փրկչին մերոյ յիսուսի` տապանակաւ խաչին և աղօթիւք սուրբ եկեղեցւոյս` բարձրացեալ պարիսպն չարութեան եօթնից զգայութեանց մեղաց որոշօղ ի մէջ մեր և աստուծոյ, կործանեսցի ի սպառ: - 627

**ՍԱՐԳԻՍ** - Եւ պատրիարգունք էին անդ, ...*Զսարգիս* յեւպրամիու: - 543

**ՍԱՐԴ +** Իսկ գործ բնութեամբ է` զի բնութիւնն առաջնորդէ՛ գործոյն. որպէս հուր բնութեամբ այրէ, և *սարդն* բնութեամբ գործէ: - 173. Երրորդ` ստեղծան նոքա` զի ի նոցա՛ ջանից ընթերցմանց և բարեաց գործոց օրինակ առցուք. որպէս են մրջմունք և *սարդք*, և այլք այսպիսիք: - 217

**ՍԱՐԴԻՈՆ +** *Սարդիոն*. շիկագոյն արիւնատեսիլ. գտանի ի բաբիլօն. և թափանց է և դեղ առողջութեան: - 348

**ՍԱՐԿԱՒԱԳ +** Զոր և այժմ օրինա՛կ է առ մեզ *սարկաւագն*. զոր հոգի կոչէին վասն հոգևորապէս խօսելոյն: - 59. Որև այժմ ի յեկեղեցի ի նոյն խորհուրդ` սերոբէին պատկեր որ է քշոցն` ի ձեռն *սարկաւագին* աւանդի` որ է՛ մաքրօղն. և երրորդ կարգ յետ քահանային և քահանայապետին: - 135. Իսկ քահանայն կամ *սարկաւագն* ո՛չ ունի զվերնոցն և ո՛չ կոչի: - 136. Եւ միջինն *սարկաւագաց* և դպրաց: - 294. Եւ *սարկաւագունք* և սպասաւորք միջին: - 343. Ապա յա՛յտ է զի և ո՛չ այլ կարգաւորք զենցեն կենդանիս. որք են *սարկաւագունք* և այլք. զի անարիւն զենմանն կարգեալ են սպասաւորք: - 366. Որք են քահանայապետք, քահանայք, և *սարկաւագունք:* - 379. Այսինքն *սարկաւագունք*, դպիրք,

և գղերիկոսքն: - 379. Զի որք զերեսաց հացն ի սեղանն բառնային՝ *սարկաւագունք* են: - 379. Եւ *սարկաւագն* սպիտակ զգեստուք հովանի որպէս դաւիթ: - 431. Կրկին իշխանութիւն է զոր ունի քահանայն. զի կապելն որոշելն է. *սարկաւագին* որ որոշէ՛ զանմաքուրն յեկեղեցւոյ: - 538. Նա՛խ՝ թէ անկարգաբար կապէ. որպէս քահանայ զեպիսկոպոս կամ զկաթողիկոսս. կամ *սարկաւագ* զքահանայ. այս ո՛չ կատարի: - 539. Զորօրինակ՝ նախ լինի *սարկաւագ*, և ապա քահանայ: - 541. Այլ սոքա ամենայնքն նախկին և պատւականք են. այսինքն քահանայ քան *զսարկաւագ*. և բանական քան զգայական. և ներգործութեամբ քան զօրութեամբ. այսպէս արձակելն քան զկապելն: - 541. Չորրորդ՝ հրաման տալ աւագ *սարկաւագաց* կին առնուլ և քահանայ լինիլ: - 553. Չորրորդ, զի թէ ի ձեռն փիլիպպոսի առաքելոյ որ էր մի յեօթանց անտի *սարկաւագացն* ո՛չ եղև իջեալ հոգին ի վերայ ներքինւոյն մինչև յափշտակեցաւ յազովտոս...: - 589. Քահանայ էր թէ *սարկաւագ*: - 601. ...և զաման գինւոյն և զնշխարն տանիլ առ աւագ *սարկաւագն*. և զիանդերձ սեղանոյն լուանալ: - 606. Վեցերորդ Աւագ *սարկաւագն*: - 606. Եւ զայս կարգս առաքեալքն կացուցին. յորժամ է *սարկաւագունս* կարգեցին ի սպասաւորութիւն: - 606. Եւ ի տօն զատկին որ արար խարազան չուանեայ և եհան զվաճառականսն, ցուցաւ *սարկաւագի* գործ նորա: - 606-607. Իսկ ի թաբօր լերինն ծայնիւ հայրական և հովանեաւ հոգւոյն եղև քահանայ. ցուցեալ մովսէս և եղիա *սարկաւագունք* յաջմէ և յահեկէ: - 607. Դպիրք եղեն առաքեալքն սպասաւորելով ժողովրդեանն հրամանաւ. և *Սարկաւագունք*՝ օծանելով զհիւանդս. հրաման տալով նոցա իւղ օրհնել յիւրմէ: - 607. Վեցերորդ՝ *Սարկաւագունք*: - 608. Երկրորդն *Սարկաւագն* և Դպիրն և Գղերիկոսն. զայսոսիկ հոմանունամբ պաշտօնեայ կոչէ: - 608. Վասն է՞ր **ե** կարգ է մինչ ի *սարկաւագն*. և նա՛ **զ**երորդ: - 608. Այսպէս ասէ սուրբն դիոնէսիոս եթէ՝ մաքրելիք են **ե** դասք. յորոց վերայ իշխէ *սարկաւագն* և գործէ՛ զմաքրականսն: - 608. Իսկ զերորդ՝ *սարկաւագն* ի վերայ ամենեցուն առ հասարակ հրամայէ՛...: - 608. Պետաց, Քահանայից, և *Սարկաւագից*: - 614. Իսկ և ի ճաշոյն պատարագն **գ** անգամ. մին քահանայն. և **բ** *սարկաւագն*: - 618. Առաջին՝ քահանայք. և միջին՝ *սարկաւագունք*. և վերջին են սաղմոսօղք: - 624. Արդ սաղմոս երգօղքն տան ի սարկաւագն. և *սարկաւագն* ի քահանայն. և նա՛ մատուցանէ աստուծոյ զօրհնութիւնն. որպէս առաջին դասք քերօբէիցն: - 624. Նմանապէս և յեկեղեցի՝ ոմանք սաղմոսե՛ն. և *սարկաւագն* ի տիպ հրեշտակին տայ զօրհնեայն ի քահանայն որ է՛ տիպ քրիստոսի...: - 625. Վասն է՞ր *սարկաւագն* զամենայն քարոզի վերջքն յաղօթից ձևս փոխէ ասելով՝ կեցո՛ և ողորմեա՛: - 625-626. *Սարկաւագն* է՛ քարոզ և ուսուցիչ մեր ի դէմս հոգւոյն և ի դէմս առաքելոցն...: - 626. Զի՞նչ է որ զառաւօտու քարոզն՝ այսինքն զերկրպագեմքն, և զՊատարագին գոհութիւնն, և յերեկոյն զՅասեալքս ի ժամն, աղօթից ձևով ասէ *սարկաւագն*: - 626. *Սարկաւագն* քարոզօ՛ղ է մեզ և հրաւիրօղ յաղօթս...: - 626. Իսկ *սարկաւագն* յորժամ քարոզէ՛ կամ խնկարկէ կամ ընթեռնու: - 635. Եւ զղևոնդեանց մանկունքն **դծ**, *սարկաւագ* վարդապետն որ ի հաղբատ: - 638. Ընթերցօղ *սարկաւագն*, որ է՛ հրեշտակն միջնորդ...: - 644. Յայս միտս *սարկաւագն* նախ առաջի քահանային ընթեռնու իբր ի նմանէ՛ ուսեալ...: - 644. Եւ ինքն դաւիթ հանդերձեալ և հոլանեալ երգէր զտաւիղն որպէս *սարկաւագունք*...: - 645. ...այսինքն թէ եպիսկոպոս իցէ՝ եպիսկոպոսք. և թէ քահանայ՝ և թէ *սարկաւագ*. նմանապէս և աշխարհականք զաշխարականս: - 674

**ՍԱՐԿԱՒԱԳՈՒԹԻՒՆ +** **Ութերորդ՝ թոյլ տալով սրբոց չարչարիլ՝ վասն պսակացն առաւելութեան է. զի կենցաղս այս հանդէ՛ս է նահատակութեան. և ըստ չափոյ համբերութեան՝ առցէ զյաղթանակն.** որպէս սրբոյն ստեփաննոսի. զի ունէր *զսարկաւագութեան* և զառաքելութեան պատիւն, ընկալաւ և զմարտիրոսութեան պսակն ի քարկոծումն իւր...: - 159. Եւ յառնուլ զաստիճան *սարկաւագութեան* ո՛չ տան հրաման կին առնուլ հայք և լատինք և յոյնք. բայց ասորիք ո՛չ: - 554

**ՍԱՐՄԱՏ** - Եւ այս են **հբ** լեզուքն: ...*Սարմատք*: - 298.

**ՍԱՐՍԱՓԵԼԻ +** Յորժամ *զսարսափելի* գլուխն յովհաննու մկրտչին՝ բերին ի մէջ բազմականացն հերովդէի...: - 656

**ՍԱՐՍԵՄ +** Չորեքտասաներորդ՝ ի գոչմանէ առիւծուն *սարսին* այլ կենդանիք և արիւն միզեն: - 316. Եւ ի գոչել տեառն մերոյ ի վերայ խաչին՝ *սարսեցին* դժոխայինքն ահաբեկեալ ի կենաց: - 316. Եօթնև, և ի յառնել առիւծուն *սարսին* ամենայն կենդանիք որդիք ջուրց: - 316. Եւ ի յառնել տեառն մերոյ ի գերեզմանէն՝ *սարսեցին* ամենայն թշնամիք նորա որդիք անդնդոց: - 316. ...ամենեքեան *սարսեցին* և լռեցին: - 656. Յա՛յտ ուրեմն է յասացելոցս, զի դևք ո՛չ ունին հաւատս վարձաւոր. այլ ունին գիտութիւն

նրբահայեաց որով *սարսին* յառաջ քան զտանջանս: - 784. Երկրորդ հմտութեամբ ժամանակին. որով իմանան զներկայս և զապառնիս և յառաջեն քան զգործս. որով աղաչէին, «գիտեմք զքեզ». ո՛չ հաւատոյն գիտութեամբ. այլ հմտութեամբ տանջանաց. որով *սարսեին* և ասէին «մի՛ տանջեր զմեզ»: - 784

**ՍԱՐՍՌԵԼԻ +** ...և այնպէս դառնացեալ տրտմութեամբ և *սարսռելի* երկիւղիւ յուսահատեալ մնան...: - 669.

**ՍԱՐՏՆՈՒՄ +** Որք հերձեալ ըստ ինքեան *սարտուցան* ի կենաց. և զիերձուած կորստեան ուսուցին բազմաց: - 31

**ՍԱՒԱՌՆԻՄ +** Յոլաթևն և *սաւառնեալ*, արձակ և պարզ բոլորակաձևն է: - 638

**ՍԱՒՈՒՂ** - Եւ որպէս երգովն դաւիթի դադարէ՛ր այսն չարութեան ի *սաւուղայ*, նոյնպէս և այժմ: - 150. Վասն որոյ նախ տուաւ թագաւորութիւնն բենիամենի որ էր *սաւուղ:* - 338. Որ և *զՍաւուղ* ազատեաց ի մեղաց. և զայլ խաչօղսն որք հաւատացին ի նա՛: - 369. Վհուկն ա՛յն է, որ ի վհաց և յանդնդոց մեռեալս կերպարանեն. դևք ի կերպս մարդկան երևին. զոր դևակոչ ասեն և հազիմաթ. և Նշանագէտ, որ ի գերեզմանս ննջէ և նշանաւոր մարդ կերպարանէ. որպէս զսամուէլ *սաւուղայ* երևեցոյց հարցուկ կինն: - 388. Տասներորդ, Բաղդատութիւն *սաւուղայ* և տեառն **ժ** գլխով: - 412. Աքար զարմեան և *սաւուղ* կիսեան և յուդա սիմոնեան մեղայ ասելով ո՛չ արդարացան: - 415. Եւ այսմ վկայէ՛ պօղոս ի գործքն եթէ՝ յետոյ յեսուայ իշխեցին դատաւորք մինչ ի *սաւուղ* ամս չորեք հարիւր և յիսուն՝ այսպէս: - 420. Զի **նժ** ամք դատաւորացն, և **խ** ամ հեղեայն մինչ ի *սաւուղ*. որ լինի **նծ** ամ: - 420. Զոր եօթանասունքն ի ասեն. իսկ սամուէլ և *սաւուղ* ամս **խ**: - 420. Առաջին դատաւորքն մինչ ի *սաւուղ:* - 421. *Սաւուղ* առաջին թագաւոր, բաղդատի ի տէր մեր: - 426. Նա՛խ՝ որպէս *սաւուղ* ի խնդիր իշոյ ել և թագաւորութիւն եգիտ. և տէր մեր մարդկան ազգի որ հաւասարեաց անբանից, և թագաւորեաց մեզ: - 426. Եօթներորդ՝ կոչի *սաւուղ*, որ է՛ ընտրեալ հայեցումն. և տէր մեր հայեցումն և ակնկալութիւն է ամենայն արարածոց: - 427. Նա՛խ՝ զի բաժանեցաւ թագաւորութիւնն ի *սաւուղայ:* - 427. Երկրորդ՝ զի դաւիթ որ հատանէր զլօդկին *սաւուղի*, նա՛ թագաւորէ՛: - 427. Վասն է՞ր եհարց թէ՝ ո՞յր որդի է դաւիթ. զի կապարճակիր և ծանօ՛թ էր *սաւուղի:* - 427. Կամ զի աքիմելէք **գճ** քահանայիւք սպանաւ ի *սաւուղայ*. և աբիաթար փախեաւ առ դաւիթ և ընդ նմա՛ էր զամենայն աւուրս թագաւորութեան նորա. և յանուանէ զնա՛ յիշէ: - 427. Եւ այս ցուցանի ի *սաւուղայ*. որ այլակերպեալ գնաց առ վհուկն և ասէ՝ «հա՛ն ինձ զսամուէլ»: - 428. Երրորդ՝ զի զօրհասն իւր ո՛չ գիտէր. ապա և ո՛չ զայլոցն կարէր գիտել. զի ասաց՝ «կամիս զիս կորուսանել». որ ո՛չ կորեաւ ի *սաւուղայ:* - 428. Չորրորդ՝ զի երդմամբն *սաւուղայ* ապա՛ հաստատեցաւ: - 428. Հինգերորդ՝ զի որպէս զկանխագէտ ոչ ասաց *սաւուղայ* թէ դու ո՞վ ես որ զիս փրկես ի *սաւուղայ:* - 428. Վեցերորդ՝ զի եհարց ի *սաւուղ* թէ «զո՞ խնդրես». և թէ զառաջիկայն գիտէր, զներկայ միտքն ընդէ՛ր ո՛չ գիտաց: - 428. Ութերորդ՝ զի ճչեաց թէ ընդէ՞ր խաբեցեր զիս, դու *սաւո՛ւղ* ես: - 428. Ապա յա՛յտ է թէ՝ որպէս *սաւուղ* խաբէր զկինն, նոյնպէս և կինն խաբէր *զսաւուղ* նմանութեամբն սամուէլի: - 428. Իններորդ՝ զիա՞րդ զարհուրեցաւ կինն յետ երդմանն, և անկաւ յերեսս մինչ քաջալերեաց *սաւուղ* և եհարց: - 428. Տասներորդ՝ աստուածս տեսի ասէ, զի *զսաւուղ* և զսամուէլ ետես: - 428. Զի թէ գիտէր զստոյգ մահն *սաւուղայ*՝ ո՛չ կաշառէր զնա: - 428. Այժմ տեսցուք զբանսն *սաւուղայ:* - 429. Երկրորդ՝ ուստի՞ ճանաչեաց թէ սամուէլ է. զի ահա՛ կինն ասաց. այլ որպէս կինն երևեցոյց զձևն, նոյնպէս կարծեաց և *սաւուղ*: - 429. Ա՛րդ՝ թէ ճշմարիտ յարոյց կինն զսամուէլ. *սաւուղ* ո՛չ երկնչէր ի մահու. զի և զնա՛ յարուցանէր. և թէ երկեաւ, ապա սուտ էր կենդանութիւն մեռելոյն: - 429. Վեցերորդ՝ զի թէ հաւատացեալ էր *սաւուղ* ո՛չ երթայր ի պատերազմ. այլ խոյս տայր և փախչէր: - 429. Ապա ուրեմն ի ժամանակիս յայս ընկե՛ր են *սաւուղայ* որք սակաւ մի կարծեօք հաւանին երազոց կամ վիճակաց և ռամտեսաց և այլոցն: - 429. Նա՛խ՝ եթէ ճշմարիտ յարեաւ սամուէլ, ընդէ՞ր ոչ եհար զվհուկն և սատակեաց. և ընդէ՞ր ոչ յանդիմանեաց *զսաւուղ* եկեալ առ վհուկն: - 429. Երկրորդ՝ ընդէ՞ր ոչ երևեցաւ *սաւուղայ*. այլ միայն կնոջն որպէս ասացաւ ի վերոյ: - 429. Հինգերորդ՝ ընդէ՞ր հակառակ աստուծոյ և այլ մարգարէից զծածուկն *սաւուղի* յայտնէր: - 429. Երկրորդ՝ զի սուտ խօսեցաւ աստ. զի թէ սամուէլ էր՝ ո՛չ ուսանէր ի *սաւուղայ*. և դնն յերկրէ ո՛չ ելանէ: - 430. Երրորդ՝ զի նոր բան ինչ ո՛չ պատմեաց. այլ զոր ինչ ուսաւ ի *սաւուղայ*՝ երկրորդեաց նմա: - 430. Հինգերորդ՝ բանն որ ասաց *սաւուղայ*, կամ հրամայական էր, կամ մարգարէութիւն: - 430. Արդ եթէ սամուէլ յարեաւ և մեռաւ և կամ կինն, նա՛ ճշմարիտ եղիցի բանն. ապա թէ կինն ոչ մեռաւ և *սաւուղ* մեռաւ, սուտ խօսեցաւ: - 430. Վեցերորդ, խոտեցաւ *սաւուղ* և ընտրեցաւ դաւիթ. խոտեցաւ հին օրէնքն, և ընտրեցաւ նորս: - 435. Քսանևդ, դաւիթ

հալածեցաւ ի *սաւուղայ*. և որդի նորա յորդւոց նորա: - 436. Քսանն**ե**, այսն չար խեղդէ՛ր *զսաւուղ*. և նոյն այսն զորդիսն *սաւուղայ* յաւուրս տեառն: - 436. Քսանն**զ**, դաւիթ դիւրէ՛ր *սաւուղայ*. և որդի նորա որդւոց նորա: - 436. Քսանն**է**, *սաւուղ* փոխանակ պատուելոյ խորհէր դաւթի չարիս. և որդիքն *սաւուղայ* որդւոյն դաւթի փոխանակ երկրպագելոյ, ասէին «եկա՛յք արկցուք փայտ ի հաց մարմնոյ նորա, և ջնջեսցուք զյիշատակս նորա»: - 436. Քսանն**ը**, ձգեաց *սաւուղ* զգեղարդն դաւթի, եհար զորմն և ապրեցաւ դաւիթ. և որդիքն *սաւուղայ* հարկանել ետուն զկողս տեառն և ո՛չ վնասեցին աստուածութեան նորա: - 436. Քսանն**թ**, հարեալ որմն վկայեաց թէ սպանօ՛ղ է դաւթի *սաւուղ*. և չարչարեալ և մեռեալ մարմինն վկայէ՛ թէ աստուածասպա՛նք են հրէայքն: - 436. Երեսուներորդ, կացոյց *սաւուղ* պահապան դաւթի. և կացուցին պահապան գերեզմանին քրիստոսի: - 436. Քառասուներորդ, *սաւուղ* բազում անգամ խնդրէր զդաւիթ և ո՛չ կարէր ըմբռնել. և որդիքն *սաւուղայ* զտէրն. զի ո՛չ էր հասեալ ժամ նորա: - 437. Այլ և դաւիթ եգիտ *զսաւուղ* և զզօրսն նորա ի քուն և ո՛չ վնասեաց. այլ զզէնն էառ. և տէրն ո՛չ կամի զմահ որք ննջեն ի մեղս. այլ զպատճառ մեղացն հանէ: - 437. Դաւիթ բարի արար չարին *սաւուղայ*. և որդի դաւթի չարչարողացն զնա: - 437. Դաւիթ ելեալ ի բարձր տեղի աղաղակեաց առ *սաւուղ*՝ «ո՞ւր է գեղարդն քո». և տէր մեր ել ի յերկինս աղաղակեաց «ո՞ւր է մահ յաղթութիւն քո»: - 437. Դաւիթ չորս ամ բնակեցաւ ի գէթ մինչ մեռաւ *սաւուղ*. և տէր մեր յեգիպտոս՝ մինչ մեռաւ հերովդէս: - 437. Կոտորեաց *սաւուղ* զքահանայս վասն դաւթի. և հերովդէս զմանկունսն բեթլէհէմի: - 437. Դաւիթ հալածեալ ի *սաւուղայ* և յաբիսողոմայ. և տէր մեր յանհաւատից և հերձուածողաց: - 438. Որոց առաջինն պատմէ՛ *զսաւուղայ* թագաւորելն: - 450. Տասներորդ՝ յաւուր միում այսահարեալ *սաւուղ*՝ կամէր նիզակաւն բևեռել զդաւիթ յորմն. յորմէ զերծեալ ապրեցաւ և գնաց ի տունն: - 513. Այսպէս և որդիքն *սաւուղայ* հարեալ նախանձու բևեռեցին զտէրն և խոցեցին նիզակաւ. և պահէին զգերեզմանն: - 513. Մետասաներորդ՝ փախստեայ դաւիթ բնակէր ի ներքնումն այրի. և *սաւուղ* ննջեաց յարտաքին այրին: - 513. Եւ ի գիշերին էհատ դաւիթ զդրօշակն *սաւուղի*. և յառաւօտուն աղաղակեաց առ նա: - 513. Ա՛րդ՝ ներքին այրն նշանակէ՛ զդժոխս. և արտաքինն զգերեզմանն. և *սաւուղն* զսատանայ որ ըմբռնեալ էր զմարդիկ: - 513. Երկոտասաներորդ՝ դարձեալ *սաւուղ* կամէր պաշարել զդաւիթ. և եկն զօրօքն իւր և ննջեաց ի դաշտի...: - 514. ...զի իւր սրովն խոցեսցէ զինքն և հալածեսցէ որպէս ի *սաւուղայ:* - 641. Որպէս *զսաւուղայ* ասեն՝ էշ կորուսեալ և թագաւորութիւն գտեալ: - 762

**ՍԱՓԻՐԱՅ +** Եւ շնչաւոր մարդոյ յիմարութիւն է հոգին. որ և պատժեաց զանանիա և *զսափիրայ:* - 523. Այսպէս և առեալք զհոգին սուրբ բղխեն. ոմանց ի մահ և ոմանց ի կեանս. որպէս առ տաբիթայն և առ *սափիրային:* - 523

**ՍԱՓՈՐ +** Յիրէն՝ որպէս *սափոր*. երկին. երկիր. գազան. անասուն: - 220. Եւ մանանայն յանապատին կերակրելի էր. և մնաց անապական ի մէջ *սափորին:* - 223. Եւ որպէս ալիւրն ի *սափորն* և իւղն ի սրուակն կերակրելի՛ էր, և ոչ նուազէր առ եղիայիւ: - 224. Որպէս մարմինն ադամայ յերկրէ է և անապական. և մանանայն յօդոյ և անապական. և յա՛յտ է ի մէջ *սափորին:* - 225. Եւ յա՛յտ է՝ զի ի մէջ *սափորին* մնաց անապական: - 339. Զի՞նչ էր խորհուրդ մանանային ի մէջ *սափորին:* - 339. Դարձեալ՝ ոսկի *սափորն* է՛ անապական կոյսն. և մանանայն բանն աստուած հոգւով և մարմնով միացեալ յարգանդի աստուածածին կուսին: - 340. Հինգերորդ՝ որ *զսափորն* և զայլ գործիսն ի վերայ դնէին: - 364. Որպէս *սափորն* կոյսն էր, և գաւազանն խաչն, նոյնպէս վէմն քրիստոս: - 386. Որ ի ջուր ըմպելն ընտրեաց զզօրսն. և թաքուցեալ *սափորօք* զվառեալ լապտերսն, և էհար յ արամբք **ըզճի** հազարսն: - 420. Ութերորդ՝ մանանայն յանապատի էր օրինակ անապական մարմնոյ փրկչին. և է՛ անապական մինչև ցայսօր ի մէջ ոսկի *սափորին*. ապա ուրեմն ճշմարիտ մարմինն քրիստոսի էր անապական ի կուսական արգանդէ աստուածածին կուսին: - 499. ...զի մին կաթ ջուրն և մին *սափորն* հաւասար են բնութեամբ: - 595

**ՍԳԱՄ +** Վասն է՞ր **լ** օր *սըգացին:* - 411. Երկրորդ՝ զփոփոխելի կեանքս *սգան*. և յուսով հանդերձեալ յարութեանն դադարին ի սգոյ և ուրախանան: - 411. Երրորդ՝ զի երեսունն **գ ժ** է. զի **ժ** զգայարանքն մարմնոյ և հոգոյ և մտաց՝ քակտի. վասն որոյ **լ** օր *սգան:* - 411. Սուգն զնախանձն. զի որ *սգայ* վասն մեղաց այլոց, ո՛չ նախանձի ընդ նոսա: - 583. Սուգն է *սգալ* վասն մեղաց և ատել զնա մինչ զի եղծանել զնոսա: - 583. Իսկ *սգալ* վասն չարին, զի փախիցուք ի նմանէ: - 583. Այլ *սգալ* վասն յատուկ ինչ չարի, է՛ իւրաքանչիւր առաքինութեան. զի իւրաքանչիւր առաքինութիւն *սըգայ* վասն ներհակին: - 583. Եւ սոյնպէս զկարօտութիւն և զպակասութիւն ախորժակացս նշանակէ. որ քան ի միտ ածեմք և *սգամք:* - 670

**ՍԵԱՒ +** Եւ ո՛չ որպէս ներհականք. որպէս ջերմ և ցուրտ. սպիտակ և *սեաւ*. զի սոքա որակութիւնք են. իսկ բարին էութիւն է, և չարն ո՛չ է էութիւն: - 21. Դարձեալ առարկեն, եթէ աստուած է հայր՝ և անծին է բնութեամբ, և որդի ծնեալ է, ապա ուրեմն ո՛չ է որդի աստուած. զի ծնելութիւն և անծնելութիւն հակառա՛կ են միմեանց. որպէս *սեաւ* սպիտակի կամ լոյս խաւարի: - 38. Եւ զի շարժին կենդանիք ի յղացումն, և *սեաւ* մաղցք առաւելուն ի մեզ: - 197. Եւ զի որակութեամբ *սեա՛ւ* է: - 211. *Սեաւ* մաղձն որ է փայծեղն՝ է՛ հողոյն: - 215. Եւ ջուրն **դ** հիւթք. այսինքն արիւնն. պալղամն. *սեաւ* և խարտեաշ մաղձն: - 232. Վեցերորդ՝ *սեաւ* պտուղն. զի մի՛ վնասեսցէ զտեսութիւնն սպիտակն: - 239. Արդ եթէ ի խարտեաշ մաղձէն ի լեարդն է մնացեալ, լերդին համն ի լեղւոյն առնու և բերանն լեղի դառնայ. իսկ եթէ ի *սեաւ* մաղձէն է մնացեալ ի լեարդն. բերանն թթո՛ւ դառնայ...: - 242-243. Այսպէս ի *սեաւ* մաղձէն լինի արտասուքն աղի, զի մի՛ հոտեսցի ակն որպէս ցուցաւ նախ: - 243. Նոյնպէս և ի տրտմիլն սևանայ վասն *սեաւ* մաղձոյն որ տայ ի յերեսն: - 245. Վասն է՞ր մին մարդն *սեաւ* լինի և մինն սպիտակ, կամ շէկ, և այլն: - 245. Զի թէ հուրն աւելի է, լինի շէկ գունով. և թէ օդն՝ լինի կարմիր. իսկ ջուրն առնէ սպիտակ. և հողն *սեաւ* գունով: - 245. Այլ և լինի յաւելի ի հրոյն ներգործութեանց *սեաւ* գոյն. որպէս հնդկայինն ի ջերմոյ արևուն լինի *սեաւ* գունով: - 245. Եւ ոմանք ասեն՝ թէ *սեաւ* մաղձն առնէ տրտմութիւն և սրտմտութիւն...: - 245. Իսկ աշունն, և մինչ ի **թ** ժամս աւուրն, և *սեաւ* մաղձն, և ալևորն, ըստ նմանութեան երկրի ցուրտ և չոր գոլով՝ ծոյլ և պղերգ գոլով ամենայն ուսմանց և գործոց: - 266. Կապոյտն օդոյն է գոյն. զի թէ ա՛յլ գոյն էր, վնասիչ և խափանիչ լինէր տեսութեանց. որպէս սպիտակ կամ *սեաւ*. այլ կապոյտն է ի հեշտութիւն տեսութեանց: - 342. Ութերորդ, զի որակ եկրի խաւար է և *սեաւ*. և ո՛չ է պայծառ որպէս այլքն...: - 678

**ՍԵԲԻՈՍ** - ...ոմանք ընկալեալ էին և թարգմանեալ ի նոցանէ գիրս սուտս, Զգօրտոսակ. Զկիրակոսակ. Զպղի տեսիլն: Զադամայ ապաշխարութիւնն: Եւ զդիաթեկ զմանկութեան տեառն: Եւ *զսեբիոս*...: - 545

**ՍԵԴԵԿ +** Երկրորդ՝ *սեդեկ*՝ որ է արդարութիւն: - 50. Զի մելքի՝ որ է թագաւոր. և *սեդեկ*՝ արդար. և սաղիմն խաղաղութիւն թարգմանի: - 301. Հինգերորդ՝ որ ասի *սեդեկ*. այսինքն արդար: - 302. Տևեալ ամս **ն**. մինչ ի *սեդեկիա* որ գերեցաւ ի բաբիլօն. և հրձիգ եղև տաճարն և երուսաղէմ: - 446. Եւ ըմբռնեաց *զսեդեկիա* արքա յուդայ, և փորեալ զաչսն տարաւ ի բաբիլօն: - 447. Արդ յերեքտասան ամէ՛ ովսիա մինչև ցմետասան ամն *սեդեկիայ* որ վերջին գերեցաւ՝ լինի **խ** ամ. և նաբուգոդոնոսորայն **ի** ամ. և որդւոց և թոռանց նորին **ժ** ամ. որ կատարի **հ** ամ մինչև յառաջին ամն կիւրոսի որ արձակեաց զգերիսն: - 447. Դարձեալ՝ ի վերջին գերութենէն *սեդեկիայ* մինչ ի դարեհի **բ** ամն կատարի **հ** ամ. որ արձակեաց զզօրաբաբէլ: - 447. Մատթանի որ և *սեդեկիա* ամս **ժա**: - 453. Յերկոտասան ամին *սեդեկիայ*՝ նաբուգոդոնոսոր քաղդէացի էառ զերուսաղէմ և զտաճարն հրձիգ առնէ: - 453. Երրորդ, դիւական. որպէս կռոց սուտ մարգարէքն. *սեդեկիայն* և այլոց բազմաց. որ այժմ երևին ի պատասխանիս կախարդաց. նաև հաւկռիչք և գարէդիւթք. որք են բնաւ սուտք և ոչինչք: - 536

**ՍԵԹԱԼԻ** - Իսկ վրացն Ախալծիլ, որ ստուգաբանի Ախացայ. այսինքն թէ մեծ պարոնացի. *Սեթալի*. որ է՛ սոնթեցի: - 201

**ՍԵԼԼԱ** - Զի ասեն թէ՝ այր և երիտասարդն զոր սպան ղամեք և էառ զկանայս նոցա. ադդա և *սելլա*, նոքա եղբա՛րք էին ենովքայ արդարոյ: - 290

**ՍԵԼԻՆ +** Զզօհալն Կռօնոսի. Զմուշթարին Դիոսի. Զմառեխն Արէսի. Զարեգակն Իլիոսի. կամ Զևսիլոսի. Զօհրայն. Ափրոդիտեայ. Զօտարիտն Երմեսի. Զլուսինն *Սելինի:* - 190

**ՍԵԼՈՎ** - Տասներորդ՝ ի *սելով* օծաւ և յերուսաղէմ թագաւորեաց: - 441

**ՍԵՀՈՆ** - Եւ զ**ե** թագաւորսն մադիամու՝ և *զսեհոն*՝ և զովգ՝ յայնկոյս յորդանանու: - 414

**ՍԵՂԱՆ +** Եւ զի *սեղան* է ամենալիր. յորմէ կերակրիմք ամենայնքն: - 211. Իններորդ՝ զի մայր մեր հողն է. և *սեղան* և տեղիք և գերեզման. թէպէտ և այլ տարերքն են մեզ ազգականք. այլ մեք ի մօրէ՛ ծնանիմք: - 229. Եւ **ժ** էր բովանդակ ամենայն *սեղանքն:* - 284. Զի յորժամ աբրահամ *սեղան* կանգնեաց, եցոյց զքահանայութիւն: - 300. Վեշտասաներորդ՝ որպէս կապեցաւ իսահակ ոտիւք և ձեռօք ի վերայ *սեղանոյն:* - 306. Եւ տէրն բևեռեցաւ ի վերայ *սեղանոյ* խաչին: - 306. Եւ հողմ կործանեաց զտունն և սպան զորդիսն ի *սեղանի:* - 321. Զի՞նչ է որ զկէս արեան պատարագին խառնեաց ի ջուր և ցանեաց ի ժողովուրդն. և զկէսն էարկ շուրջ *զսեղանովն:* - 341. Եւ այն որ շուրջ *զսեղանովն*, նշանակէ՛ զքահանայս. որ մերձ *սեղանոյն* որ է՛ քրիստոս՝ միշտ սպասաւորե՛ն և պատերազմին արեամբ չափ ընդ ախտս և ընդ

դևս: - 341. Նա՛խ՝ զի մովսէս յայտնապէս զկէս արեանն անապական եհեղ *զսեղանովն* որ նշանակէր զանապական խորհուրդ արեանն. և զկէսն խառնեաց ի ջուր որպէս ցուցաւ ի խորհուրդ մկրտութեան և հաղորդութեանն խառնեալ: - 341. Եւ զպղինձն ի բուրվառացն կորխեանց **մծ** իցն. յորմէ արար զնուարտանն ծածկոյթ պղնձի *սեղանոյն*. նշան յանդգնութեան նոցա: - 344. Եւ զխաչն հրաշագործ՝ զկենսատու մանանայն. և բուրվառ զխունկս աղօթից. վէմն *սեղանն* սուրբ. և քերովբէք քշոցքն **բ**: - 345. Նա՛խ՝ *սեղան* երեւաց հացին և գառին ի հիւսիսոյ կողմն: - 346. Երկրորդ՝ *սեղան* խնկոցն ի մէջն: - 346. Նոյնպէս և *սեղան* խնկոց և երեւացն ցուցանէ զհոգիս սրբոց ելեալ ի մարմնոց և մտեալ դէմ յանդիման երեւացն աստուծոյ: - 346. Նա՛խ՝ *սեղան* անփուտ՝ է՛ անմահ հոգիք: - 346. Վասն է՞ր մեղր ո՛չ ելանէր ի *սեղանն:* - 355. Իսկ այն որ զմեղրովն պտուղն նուիրէին քահանայից, բայց ի *սեղանն* ոչ: - 356. Վասն է՞ր յերեւաց *սեղանն* հաց և գինի և գառն դնէին. և մեք զգառն ո՛չ դնեմք: - 357. Ի սոցանէ ափով չափ դնէր քահանայն ի *սեղան* ողջակիզացն ի հոտ անուշից տեառն: - 357-358. Եւ յօշելն զանդամս **բժ**ան մասն ըստ ցեղիցն. և զոտս և զփորն լուանալն. և ողջակիզել ի վերայ պղնձի *սեղանոյն:* - 358. Չորրորդ՝ վասն փրկութեան ի հիւանդութենէ կամ ի պատերազմէ՛ փրկեալք, մատուցեն ասէ պատարագ և նւէրս ընծայեսցեն ի *սեղանն* ի հոտ անուշից: - 358. Այս ի վերայ երեւաց *սեղանոյն* ի սրբութիւնն: - 359. Եւ այլ **բժ**ան հաց ի վերայ առաջաւոր *սեղանոյն* **զ** **զ** հաց զոր սրբութեան հաց կոչէին շաբաթէ ի շաբաթ եդեալ: - 359. Եւ զարիւնն հեղուլ շուրջ *զսեղանովն*. որ է կենդանութեան նշանակ: - 360. Եւ մատամբ յարենէն մերձեալ յեղջիւր *սեղանոյն:* - 360. Ի խնկոց *սեղանն* քաւէ՛ր արիւնն. զի զաղօթս սրբոցն բարեխօս ունիմք ընդ խորհրդաւոր արեանն: - 360. Եւ միայն յողջակէզ. ի խաչ *սեղանոյն* ի հոտ անուշից հօր և հոգւոյն սրբոյ: - 361. Եւ միւսն ի *սեղանն* ի հոտ անուշից: - 362. Նշանակէ՛ զպատարագիլն քրիստոսի ի *սեղան* խաչին ի հոտ անուշից հօր և հոգւոյն: - 362. Երրորդ, երկրորդ *սեղան* է սիրտ քահանային. որպէս *սեղանն* զողջակէզն մաքրէ՛, նոյնպէս իշխանութիւն քահանային: - 363. Ի հինգ տեղւոջ ի հինն հուր էջ յերկնից ի վերայ *սեղանոյն* և հոտոտեցաւ ի հոտ անուշից: - 363. Նա՛խ ի *սեղանն* աբրահամու. և ապա՛ մովսիսին և ապա՛ դաւթին ի կալն ուռնայի. և ապա՛ ի տաճարին սողոմոնի. յետոյ ի *սեղանն* եղիայի: - 363. Զայն խորհուրդն պահեմք ի վերայ նոր *սեղանոյս:* - 363. Կամ թէ հպարտացան յիջաջել հրոյն ի վերայ *սեղանոյն:* - 364. Քանի՞ *սեղան* էր ի խորանին: - 364. Երրորդ՝ որ զմիսն ի վերայ յօշէին և ի մեծ *սեղանն* հանէին: - 364. Չորրորդ՝ որով զճարպն ի *սեղանն* հանէին: - 364. Իսկ ի ներսն, **ա**՝ հացին երեւաց և գառին. **բ**՝ խնկոցն. **գ**՝ շօթին և զհացին. **դ**՝ մին ա՛յլ **զ** հացին. զի **ժբ** հաց էր. և **բ** *սեղան:* - 364. Նա՛խ՝ գառն հանապազորդ. և նուէրք յերեւաց *սեղանն* և յողջակիզաց: - 372. Զի որք զերեւաց հացն ի *սեղանն* բառնային՝ սարկաւագունք են: - 379. Նախ գերծու զհերն. և զոր ուխտիւն աճէ՝ զայն ի *սեղանն* հանել ի կատարումն ուխտին: - 389. Գլուխն նշանա՛կ է մտաց. զոր չէ պարտ յաւելուլ՝ և ո՛չ պակասել. որպէս մուրճ ո՛չ գործէր ի *սեղանն* զի մի՛ պղծեսցի: - 390. Երրորդ՝ զի ի փշրանաց *սեղանոյն* և հեթանոսք կերակրեսցին: - 402. Նմանապէս և **բժ**ան քարինքն հանեալ ի ցամաք և կանգնեալ *սեղան* հաւատացեալքն են. որք ի ձեռն **բժ**ան առաքելոցն հաւատացին և ելին ի մեղաց. և եղեն սրբութեան *սեղան* աստուծոյ **բժ**ան անդամօք և **բժ**ան առաքելովք: - 415. Իններորդ՝ հանեալ ի գետոյն **բժ**ան վէմս շինեաց *սեղան*. և նոյն թուով խորասուզեալ ընկղմեաց: - 418. Եւ տէր մեր զհաւատացեալս իւր հանեալ ի մեղաց շինեաց *սեղան* և եկեղեցի սուրբ. և զմեղս երկոտասան անդամոցն ընկղմեալ կորոյս: - 418. Երկրորդ՝ նշանակէր զքաղաքն երուսաղէմ. զի միայն ա՛նդ եղև մարգարէութիւն և օրէնքն. և *սեղան* աստուծոյ ի սիօն: - 421. Եւ յետոյ յամենայն աշխարհ եկեղեցի աստուծոյ և օրէնք և *սեղան* աստուծոյ կանգնեցան, և երուսաղէմ ցամաքեցաւ: - 421. Եւ այն որ վիճա՛կն է՝ ծիրանեգոյն հանդե՛րձ է. որ *զսեղան* հացին և զխնկոցն ծածկէին. և տեսութիւն կամ փրկութիւն թարգմանի: - 425. Յայս միտս ի բերել ընծային ի *սեղանն* է դասք քահանայից կան ի սպասու. և երգեն եղանակաւ. և քշոց և բուրվառ և զանգակ հնչէ: - 431. Նա՛խ՝ նշանակէ՛ *զսեղան* խաչին քրիստոսի. որ յերեք ժամուն մինչև ի **զ** ժամն խաչեցաւ և հաշտեցաւ աստուած: - 435. Դաւիթ կանգնեաց *սեղան* և դարձոյց զսուր հրեշտակին. և տէր մեր *զսեղան* խաչին զենմամբ պատարագին ի փրկանս և ի կեանս աշխարհի: - 438. Զի՞նչ էր նշանք սամեայ մարգարէի առ *սեղանն* րոբովամու: - 442. *Սեղանոյն* պատառիլն նշանակէր զկործանումն *սեղանոյն* դիցն: - 442. Ոմանք ասեն թէ ի տաճարէն յերեւաց *սեղանոյն* ընդ առաւօտն և յերեկոյն բերէին ագռաւքն: - 443. *Սեղան* ողջակիզացն, և *սեղան* սրբութեանցն և *սեղան* խնկոցն. ամենայն քառակուսի նշանա՛կ են քառաթև խաչին յիսուսի: - 494. Իններորդ, գեթէօն՝ այն որ զցօղն ետես ի վերայ գեղման, զհօր իւրոյ զեզն պարարակ հրամանաւ հրեշտակին ի մէջ գիշերին պատարագեալ. և զանտառն և

*զսեղանն* բահաղու կործանեալ և զերծեալ ի ձեռաց նոցա...: - 513. Յիսուննդ, *Սեղան* օրհնելն. և աղուհաց կտրել: - 527. Երրորդ՝ զբոլոր հաց պատարագին ո՛չ հանել ի *սեղանն*. այլ մասն ինչ: - 553. Եւ ոմանք ոչ ինչ համարին զյանցանս մտաց. և ո՛չ դնեն ի կարգս մեղաց. օրինակ տալով իբր զդատարկ *սեղան* ոչ ինչ կերակրել. և իբր զպտուղ ծառոց տեսութեամբ միայն վայելել: - 555. Այս ըստ հակառակասիրութեան նոցա ասի. այլ ըստ ուղղութեան՝ քահանայն ունի իշխանութիւն զեօթն խորհուրդ եկեղեցւոյ կատարել. և եպիսկոպոսն առաւել ունի. զի միայն տայ զկարգն, եկեղեցի օրհնէ և *սեղան:* - 594. Այլ և մարգարէն մովսէս դնէր յերեսաց *սեղանն* գառ մի խորովեալ. և հաց և գինի և չորրորդ մասն դորակի հանապազորդ. և ջուր ո՛չ դնէր: - 595. Որք ասեն՝ պա՛րտ է յամենայն աւուր ջերմ հաց հանել ի *սեղանն* և անապական բաժակ. զի անապական արեամբն քրիստոսի փրկեցաք: - 595. Նա՛խ՝ զի քրիստոս մի հաց էառ ի ձեռն ի *սեղանոյն* և օրհնեաց. նոյնպէս և զմի գինի: - 597. Չորրորդ՝ ի յօրինակն մի հաց և մի գառն խորովեալ լինէր. որ ընդ մասին գինւոյ դնէին յերեսաց *սեղանն:* - 597. Ոմանք ասեն թէ ի հասարակ ընթրիսն յորժամ բազմեցան՝ ի հասարակ *սեղանոյն* թացեալ զպատառն ետ յուդայի...: - 599. ...այլ ո՛չ յօրհնեալ հացէն և ի գինւոյն. այլ էառ ի *սեղանոյն* հաց և եթաց ի ջուր ինչ կամ ի սոսկ գինի՝ և ետ: - 599. Ապա յա՛յտ է զի ո՛չ ի մարմնոյ և ո՛չ յարենէն էր թացեալ պատառն. այլ ի այլ ինչ կերակրոյ ի *սեղանոյն* առեալ թացեալ և տուեալ. զի ցուցցէ զմատնիչն: - 599. Չորրորդ կարգ է Ջահավառքն. այսինքն դպրութիւն առնել և մոմեղէնս վառել ի *սեղանն:* - 606. Հինգերորդ՝ Կիսասարկաւագն. որոյ գործն է զսկիհն և զմաղըզմայն առ *սեղանն* տանիլ...: - 606. ...և զաման գինւոյն և զնշխարն տանիլ առ աւագ սարկաւագն. և զհանդերձ *սեղանոյն* լուանալ: - 606. Որոյ գործ է զխորհուրդ մարմնոյ և արեանն ի վերայ *սեղանոյն* օրհնել: - 606. Ի սմա *սեղան* սրբութեան. և ի մեզ սիրտ սուրբ *սեղան* նուիրանաց: - 614. Յայս միտս ի վերայ *սեղանոյն* խունկ վառեմք. որպէս ասացաւ ի վերոյ **իա** գլուխն, **խգ** համարն: - 615. Եւ այն զի պղծեալ տաճարի կարդամք. կամ զշարժեալ *սեղանն* հաստատեմք: - 615. Վեցերորդ՝ զի նոյն է խորհուրդն որ անդ ի վերայ խաչին պատարագեցաւ, և այժմ յեկեղեցի սուրբ ի խաչ *սեղանին:* - 616. ...յորժամ դնէին զառաւօտու պատարագն ի *սեղանն*. նոյնպէս յերեկոյն ի դնել պատարագին և ի վառել աշտանակին լուսոյ: - 618. Չորրորդ և ուղիղ, որպէս ասէ տեսիլն հրեշտակք առնուին զխունկս որ է՛ աղօթք սրբոցն, և նուիրէին ի *սեղանն* ոսկի որ է՛ քրիստոս. և ի նմանէ բուրէր ծուխն առ հայր: - 625. Զի՞նչ է օրհնութիւն *սեղանոյն:* - 654. Նոյնպէս և մեք յետ *սեղանոյն* օրհնեմք զաստուած: - 655. Երրորդ, զի այսպէս հաղորդ լինիմք վերին *սեղանոյն* որ է արքայութիւնն երկնից: - 655. Նոյնպէս թէ քահանայ իցէ՝ կարգիւն պատեն և դնեն ի վերայ բեմին. առաջի *սեղանոյն:* - 671. Դարձեալ՝ դնեն զքահանայս առաջի *սեղանոյն* ի վերայ բեմին, և զկրօնաւորս ի մէջ եկեղեցւոյն, և զաշխարհականս առ դուռն, նշանակէ զզանազան տեղիս: - 672. Երկրորդ զքահանայս հին և նոր. որ գնեն զպատարագս ուխտից ի *սեղանն:* - 713. Տասներորդ, որպէս հատն սերմանեալ և բուսեալ և չարչարեալ և ընդ հուր անցեալ՝ ապա՛ ի *սեղան* եդեալ պատուեցի: - 721. Կամ ոսկի՝ արծաթ՝ ականս. զի արդարքն առաւել պայծառանան և ապա՛ բազմին ի *սեղան* հօրն երկնաւորի պաշտելովն ի քրիստոսէ: - 721. Եւ *սեղանն* սուրբ է զգեստուք զարդարեալ ծածկի: - 721. Դարձեալ, ձորն յովսափաթու կոչի ձոր դատաստանի. այսինքն է կալն ուռնայի, ուր դաւթի խոստացաւ անդ առնել դատաստան. յորժամ *սեղան* շինեաց և պատարագեաց զեզինսն և բարձաւ մահն: - 737. Զի ծուխ խնկոցն ի վերայ *սեղանոյն*, Նախ նշանակէ՛ *սեղանն* զքրիստոս. և ծուխն զաղօթս սրբոցն. զոր արծարծէ՛ հօր ի հոտ անուշից: - 749

**ՍԵՂԲԵՍՏՐՈՍ** - Եւ Պատրիարգունք էին անդ. ...*Սեղբեստրոս* հռօմայ: - 542

**ՍԵՂՄԱՆԱՄ +** Եւ վասն բարձր գիճութեանն՝ ի տե՛ս գայ. և *սեղմացեալ* ի վերայ միմեանց լինի ամպ: - 204

**ՍԵՂՄԵՄ +** Եւ վօռէասն *սեղմէ՛* զամպս և արգիլէ զանձրևս: - 205

**ՍԵՄ** - Իսկ իար, որ է՛ նոյ արդար. Սիւան, *սեմ*. Թամուզ. թարա. Ապ, աբրահամ: - 200. Եւ իշխանք վերակացուք գործոյն՝ Լամսուր ի *սեմա՛յ* ազգէն: - 297. *Սեմ* կատարեալ: - 299. *Սեմայն* դեգեկ ալիփաթա: - 299. Զի՞նչ է որ եփրեմ ի գիրս կցորդաց ասէ, Մելքիսեդեկ՝ որ նա՛ ինքն է *սեմ:* - 300. Նոյ օրհնեաց *զսեմ*, և *սեմայ* որդի ո՛չ գոյր նման իւր որ օրհնէր զնա: - 300. Աբրահամ որդի էր ի տանէն *սեմայ*՝ արժանի օրհնութեան: - 300. Բայց *սեմ* չէ՛ր կենդանի որ օրհնէր զնա՛. և թարայ չէր օրհնօղ: - 300. Մելքիսեդեկ զնորա դէմն առեալ՝ զնորա գործն էլից. օրհնեաց զաբրահամ՝ և *սեմ* կոչեցաւ: - 300. Եւ ի մէջ գիշերի զարթեաւ և զդրունս փակեալ նգօքն և *սեմօր* եհան յուսն և ել ի լեառն: - 513

**ՍԵՆԵԱԿ +** Որդիքն ահարօնի՝ են սուրբքն. որք նախ քան զվերափոխիլն ի *սենեակ* վերին արքային, աստուածայնովքն բանիւք յամենայն հպարտութենէ մեղաց մաքրին: - 756

**ՍԵՊՀԱԿԱՆ +** Այս է մեկնութիւնն թէ՝ հաւասարն աստուծոյ՝ յափշտակութիւն և զրկումն չհամարէր իւր զծառայի կերպարանս առնուլ. զի ո՛չ ունէր յայլմէ կասկած խլելոյ զփառսն. զի ի՛ւրն է *սեպհական:* - 39. Այլ որպէս բանին *սեպհական* է և բնութեամբ և ո՛չ ստացմամբ, այսպէս իմացիր և մարմնոյն վասն անճառ միաւորութեան բանին զի իւր է մարմինն. վասն այն ոչ ինչ բանին է՝ ասի մարմնոյն: - 46. Ա՛րդ եթէ է՛ այլ որդի և եղև աթոռակից հօր, ուրեմն ի բաց էհան զբանն ի նստելոյն ընդ աջմէ հօր որ է *սեփհական* նմա և վայելուչ հօր՝ լինիլ աթոռակից և գահակից: - 67. Եւ *սեպհական* քաղաք է հայոց կեսարիա: - 548. զԹադէոս. և զԲարդուղիմէոս. և զՅուդայ յակոբեան. որ կայ ի յորմի. որ *սեպհական* քաղաք է հայոց: - 549

**ՍԵՊՀԱԿԱՆԵՄ +** Երկրորդ՝ զի ոչ հարազատ որդին *սեպհականէր* զժառանգութիւնս հօր. այլ օտարն ի մեծութիւն հասանէր, և իւրն չքաւորութեամբ տառապէր: - 238

**ՍԵՊՏԵՄԲԵՐ +** Առնեն ի *սեպտեմբերի* **իէ** զպապանձումն զաքարիային. և ի նմին աւուր զյղութիւնն եղիսաբեթի: - 483. Այլ մեզ այսպէս իմանալի է. զի թշրինի մէկն նուիրեալ օր սուրբ տեառն կոչեցի ասացաւ. որ է՛ *սեպտեմբերի* **ժը**: - 483. Եւ լինի *սեպտեմբերի* **իէ**, և թշրինի **ժ**: - 483. Մետասաներորդ՝ յա՛յտ է յամիսս նոցա. զի առաջին ամիս *սեպտեմբե՛ր* է նոցա. և վասն ծննդեանն քրիստոսի՝ փոխեցին և եդին զյունվար առաջին ամիս: - 484. ...և կանգնեաց զխաչն փրկական ի սուրբ գողգոթայ ի *սեպտեմբերի* **ժդ**ն...: - 617

**ՍԵՌ +** Եւ լինէր բարին և չարն ի *սեռէ* աստուծոյ, որ է անհնարին: - 14. Ութ են եղանակք բաժանման ըստ փիլիսոփային. այսինքն Որպէս *սեռ* ի տեսակս. Տեսակ յանհատս: - 87. Եւ պարտէ գիտել, զի որպէս *սեռ* ի տեսակս ո՛չ կարէ բաժանիլ: - 87. Նախ՝ զի յընդդիմաբաժանեալ տեսակս *սեռի*՝ ո՛չ գոյ առաջին և վերջին. որպէս բաժանի կենդանին ի բանականն և յանբանն. և ո՛չ է ասել թէ՝ բանականն յառաջ է քան զանբանն. այլ զոյգ և համայնք են: - 87. Այլ և ո՛չ որպէս էութիւն ի պատահումն. զի մարդկութիւնն քրիստոսի է ի *սեռէ* գոյացութեան, և ո՛չ ի *սեռէ* պատահման: - 88. Եւ որպէս ասէ փիլիսոփայն՝ երեք են յասացելոցդ իսկապէս եղանակք բաժանման. այսինքն Որպէս *սեռ* ի տեսակս. Որպէս բոլոր ի մասունս. Որպէս համանուն ձայն: - 89. Նախ՝ որպէս *սեռ* ի տեսակս բոլորապէս տեսանի և ո՛չ մասամբ. այս է՝ զի գոյացութիւնն որ է *սեռ*՝ բոլոր է ի մարմինն և յանմարմինն. և կենդանին բոլոր ի բանականն և բոլոր յանբանն: - 89. Նախ՝ որպէս սեռ ի տեսակս բոլորապէս տեսանի և ո՛չ մասամբ. այս է՝ զի գոյացութիւնն որ է *սեռ*՝ բոլոր է ի մարմինն և յանմարմինն. և կենդանին բոլոր ի բանականն և բոլոր յանբանն: - 89. Երկրորդ՝ որպէս անբաժանելի մնայ *սե՛ռ* ի տեսակս. և բանն աստուած անբաժանելի՛ է միաւորեալ ի մարդկութիւնն իւր: - 89. Ա՛յս որպէս *սեռ* ի տեսակս: - 89. Ընդէ՞ր մայր ո՛չ կոչի յիգական *սեռէ:* - 109. Չորրորդ՝ բազմանայ ի *սեռս* և ի տեսակս. և բազմապատկի դարձեալ ի տեսակս և յանհատս նոցա: - 110. Որ է անհատ՝ տեսակ՝ և *սեռ:* - 111. Զի որքան ի վերուստ ի վայր իջանէ՝ ի բազումս բաժանի. որպէս ի *սեռէ* ի տեսակս և յանհատս իջեալ բազմանայ: - 123. Երրորդ՝ զի արարածք՝ են ի գոյացական *սեռէ*, և ո՛չ ի պատահական. զիարդ լինին պատահումն ի յարարիչն: - 169. Ի *սեռս* էականութեան գոյացութիւն նախապատիւ է քան զպատահումն. և զի նախապատիւ է աստուած ամենայն գոյից, վասն որոյ գոյացութիւն է և ո՛չ պատահումն: - 170. Տեղին է պարագրող մարմնոյ. զի ամենայն մարմին տեղեաւ պարագրի. և ամենայն տեղի է ի պատահական *սեռէ:* - 174. Եւ գիտելի է, զի **գ** են իր գոյացական. *Սեռ*. Տեսակ. և Անհատ: - 220. Զանուանս գլխաւորացն որպէս *սեռ*՝ աստուած կոչեաց. որպէս երկին. երկիր. լոյս. և այլն: - 220. Եւ ապա թէ՝ յորմէ՞ *սեռէ* է օտարութիւնն: - 235. Ըստ այսմ ապացուցի. զի բնութիւնն ի *սեռո՛ւմն* է և ի տարբերութեան ուստի բաղկանայ. և անձն ի բնութիւնն է յորմէ կայանայ. և դէմքն ի յանձնէ՛. և կերպարանն ի դիմաց. և պատկերն ի կերպարանաց. և տիպն ի պատկերաց. և որակ տպաւորեալ ի պատահմանց: - 235. Առաջին և առաւել գոյացութիւն՝ է՛ անհատ անձն և դէմն. և Երկրորդ և նուազ՝ տեսակն և *սեռ*՝ և այլքն ըստ կարգի: - 235. Վասն զի անձն է մեզ առաջին հիմն և ի ներքոյ եդեալ. յորմէ և առ որ ժողովին տեսակն և *սեռն* և սեռականագոյն *սեռք:* - 236. Իսկ երկրորդն թէ յորմէ՞ *սեռէ* է օտարն և աննմանն՝ գիտելի է, զի դէմն և կերպն ի չորից *սեռից* գոյանայ. ի գոյէ՝ ի քանակէ՝ յորակէ և ի տեղւոյ: - 236. Ապա ուրեմն յա՛յտ է զի աննմանն և օտարն են ի *սեռի* որակութեան և յատուկ ձևոյ որակի: - 236. Երկրորդ՝ զի ունին նոյնութիւն *սեռի* և տեսակի և անհատի: - 236. *Սեռիւ* նոյն, որպէս եզն և ձի: - 236. *Սեռիւ*, որպէս բանական և անբան: - 236. Այլ

գիտելի է, զի դ *սեռիւր* որոշի կապ բանականացս. այսինքն հոգեկան և մարմնական և միջակօրէն: - 317. Եւ դարձեալ՝ դ են *սեռք* մեղանչելոյ. այսինքն խորհուրդ, խօսք, գործ, և յամառութիւն ի մեղս: - 351. Նա՛խ՝ ի *սեռս* իւր ներելի և փոքր. որպէս դատարկաբանելն և մոռսն: - 385. Այսպէս և նիւսացին գրիգոր՝ գործ ստեղծման և գործ նախախնամութեան բաժանէ ի *սեռէ՛* ողորմութեան և արդարութեանն աստուծոյ: - 457. Եւ են որք անշփոթ միաւորին. որպէս հուր և երկաթ. հոգի և մարմին. *սեռ* ի տեսակս. և տեսակ յանհատս: - 475. Այլ մեք եղբարք ուղեկիցք իմ և դաւանակիցք եղիցուք. շինեալք և հաստատեալք ի վերայ հաւատոյ հիման. անշարժ խարսխեալք ի վերայ յուսոյն քրիստոսի, *սեռն* և յստակ կատարեալ սիրով սուրբ հոգւոյն: - 503. Այս է կամ *սեռիւ*. կամ տեսակաւ. կամ անհատիւ: - 533. Որպէս *սեռիւ* մի են ամենայն կենդանիք. և տեսակաւ ամենայն մարդ. և անհատիւ մի որպէս պետրոս: - 533. Ա՛րդ՝ մի է ամենայն ընդհանուր եկեղեցիք որ է բոլոր քրիստոնեայք ըստ հաւատոյն և կոչմանն յուսոյն որպէս *սեռիւ:* - 533. Դարձեալ՝ թէպէտ ըստ պորփիւրոսի՝ մասն բոլորին հետևի. որպէս անհատն տեսակին. և տեսակն *սեռին:* - 550. Սակայն ըստ արիստոտէլի *սեռն* և տեսակն անհատին հետևին. զի են երկրորդ գոյացութիւն: - 550. Դարձեալ զանազանին սոքա ըստ *սեռին*. զի գործ մեղացն է ի *սեռս* առնելոյն. և պատիժն ի *սեռս* կրելոյն. և ունակութիւն ի *սեռս* ունելոյն: - 569. Արիստոտէլ գ *սեռս* զօրութեան ասէ հոգւոյն. այսինքն է մինն անհնազանդ բանին. և մինն հնազանդ. և մինն բան էութեամբ: - 572. Իսկ երկրորդ *սեռն* հնազանդ բանին՝ ցասումն և ցանկութիւնն. և սոքա ո՛չ կարեն լինիլ ենթակայ իմանալի առաքինութեանց: - 572. Իսկ երրորդ *սեռն* որ է նոյն ինքն բանն որ է՛ ենթակայ աստուածային առաքինութեանց: - 572. Եւ պա՛րտ է գիտել զի ի միոյ *սեռէ* բարութեանցն աստուծոյ՝ յառաջե՛ն առ մեզ ողորմութիւն և արդարութիւն. կրկին տեսակ կամ գործք կամ զօրութիւն. որպէս ի մեզ երկոքին ձեռք մարմնոյ. և որպէս իմացումն և կամք հոգւոյ: - 745. Նոյնպէս և հատուցի առաւել և նուազ և հաւասար. ո՛չ միայն ըստ *սեռի* գործոց, այլ և ըստ տեսակի և քանակի և որակութեանց նմին: - 746. Զի ըստ *սեռի* հատուցանի բարեացն բարի և չարացն չար: - 746. Յիմանալեացն *սեռից* և ի զգալեացս տոհմից: - 771. Եւ այս աղտ անզերծ տարակուսից շրջապատեալ զմեզ շրջագայութեամբ տօմարի հայկազեան *սեռից*, հարիւրից կրկնակի՛ քառից և վեցեա՛կ վեցից: - 789

**ՍԵՌԱԲԱՐ +** Միաւորութիւնն *սեռաբար* տրամատի յերիս. ի յանշաղկապն և ի շաղկապեալն և ի շաղադրեալն: - 475. Երրորդ առ այսորքիւք՝ միաւորութիւն անուանեմք և զխառնուածս երկուց նայից ըստ զանազան որակութեանց. յորում ո՛չ ոք ի խառնեցելոցն զիւր ծայրագոյն որակութիւնն *սեռաբար* կարօղ է պահել. այլ շփոթեալ անկանի ի ծայրագոյն որակութենէն. որպէս զջուրց և զգինեացն խառնուած, և զմեղերաց: - 476

**ՍԵՌԱԿԱՆ +** Ապա ուրեմն համանգամայն ի միասին լինին երկու հակակայք. այսինքն ուղղական և հոլովական. զի ասելն աստուած ուղղական է. և աստուծոյ՝ *սեռական* հոլով: - 92. *Սեռական*, որպէս կենդանին: - 318. Օրէնք *սեռական* գ է. բնական. գրաւորական. աւետարանական: - 528

**ՍԵՌԱԿԱՆԱԳՈՅՆ +** Վասն զի անձն է մեզ առաջին հիմն և ի ներքոյ եղեալ. յորմէ և առ որ ժողովին տեսակն և սեռն և *սեռականագոյն* սեռք: - 236

**ՍԵՌՆ +** Եօթնևժերորդ՝ զի թէ չարն և բարին ունին մի սկիզբն, որպէս ընդդիմաբաժանեալ տեսակքն *զսեռն:* - 14. Եւ դարձեալ՝ որպէս ամենայն գիծ բոլորակին՝ ի միջին կէտն միաւորին առ միմեանս. և հեռացեալք ի միջին կէտէն բաժանին ի միմեանց. և զորօրինակ՝ մի է *սեռն*՝ և ի բազում տեսակս բազմանայ: - 112. Ապա յա՛յտ է զի ա՛յլ է կարգ շնորհականին, և այլ է կարգ բնականին. զի բնականք ներքինք զվերնոցն բոլորապէս ունին և կոչին. այլ ո՛չ անդրադարձեալ. որպէս անհատն զտեսակն և *զսեռն* բոլորապէս ունի և կոչի. զի պետրոս մարդ է և կենդանի և կոչի. այլ կենդանին մարդ՝ կամ մարդն պետրոս ո՛չ է և ո՛չ ասի: - 136. Չորրորդ՝ տուտն նշանակէ *զսեռն*. որ ի վերջին ժամանակս բռնանայ և քարշէ՛ զերրորդ մասն աստեղաց: - 152

**ՍԵՐԵՄ +** Եւ ի քրիստոս բազմութիւն ամենայն հաւատացելոց *սերեալք* անդամք յանդամոց նորա և մարմինք ի մարմնոյ նորա ծննդեամբ ի նմանէ աւազանաւն: - 306. Ա՛րդ՝ թէպէտ հոգին ո՛չ լինի *սերեալ* ի հօրէն որպէս մարմինն, սակայն սկզբնական մեղքն անցանէ ի հոգւոյն յադամայ ի հոգիս զհետ եկելոցն միջնորդութեամբ մարմնոյն ցանկութեամբ ծնելոյն: - 567. Զի որպէս ի մեղանչել հոգւոյն ապականեցաւ մարմինն ադամայ և եղև դիւրասասի առ վավաշոտ ցանկութիւնն. այսպէս և *սերեալ* մարմինն քարշելով ընդ ինքեան զապականութիւնն՝ աղտեղացուցանէ զհոգին: - 567

**ՍԵՐՄԱՆԵՄ +** Ուստի յա՛յտ է թէ *սերմանեաց* ի բնութիւնս զքարին, և օրէնս եդ բարւոյ. այլ և խրատ

և յորդորումն և պարզևս բարեաց: - 17. Զի ինքնագիտ չարութեամբ նախ ինքն չարացաւ որ ասի գտակ. և ապա զայլս չարացոյց որ ասի մայր. որպէս սկիզբն և *սերմանօղ* չարեաց ի յայլս: - 148. Վասն այն ի նորանալն առաւել զօրաւոր և ազդո՛ւ է *սերմանելոյ* և այլոց: - 187. Իսկ ամառն նորին նման. զի հունձք է և կատարած գործոց բարեաց. և ո՛չ ժամանակ *սերմանելոյ* կամ բուսանելոյ: - 198. Քսանեգ՝ *Սերմանելոյ* և ծնանելոյ: - 228. Երկրորդ՝ պակասութիւն *սերմանողին:* - 256. Թէ ժամանակն ցուրտ է կամ ջերմ. և երկիրն գէջ կամ չոր. և սերմն հոտեալ կամ աղանձեալ. և *սերմանօղ* ո՛չ լինի կամ ոչ *սերմանէ*. վասն որոյ ո՛չ բուսանի: - 256. Ասեմք եթէ՝ զոր ինչ ի յարութեանն աւուր լինելոց է սրբոցն, զսկիզբն անդանօր *սերմանեաց* ի նախնի մարդն ադամ. զի թէ յիւրում ժամանակին կերեալ էին ի կենաց պտղոյն, լինէին կատարեալ անմահք. և փոխեին յարքայութիւնն: - 282. Զի ո՛չ յառնէ կամ ի *սերմանէ* այլ կուսական ծնունդ: - 305. Քարողքն *սերմանեցին*: - 456. ...զի և մշակն յետ *սերմանելոյն* իսկոյն ո՛չ հնձէ. այլ համբերէ մինչ ի հասումն պտղոյն: - 520. Վեցերորդ՝ որպէս *սերմանելն* նա՛խ է քան զպտուղն և զհունձն: - 521. Երբեմն ժամանակաց, ուր ուրէք մտանէին հերձուածօղք և *սերմանէին* զորոմն աղանդոց: - 544. Այլ որ ճճ ամաւ յառաջ եկին ի հայք՝ ասորիք արք քաջաբանք, և կամեցան *սերմանել* զաղանդն նեստորի...: - 545. Դարձեալ, զի ամենայն մեղք նախ ի խորհուրդն *սերմանի* և ապա բուսանի և աճէ գործելովն: - 559. Զոր օրինակ ցորեան մերկ *սերմանի* և խոտօք և պատենօք բուսանի: - 592. Ոչ ինչ ամենևին՝ թէ ընկալցին զմկրտութիւնն. որպէս և ոչ ցորենոյն է վտանգ թէ գողունի իցէ և *սերմանի* ի ձեռն գողի: - 593. Դարձեալ՝ մարգարէքն *սերմանեցին*. և առաքեալքն հնձեցին: - 643. Որպէս մշակն յորժամ *սերմանէ*, ո՛չ ի գործն՝ այլ յաստուած ապաւինի: - 665. Սերմն բարի են սուրբք և ընտրեալք զոր *սերմանեաց* աստուած յեկեղեցի: - 693. Այս կեանքս է *սերմանելոյ*, և անդ հնձելոյ և ժողովելոյ: - 704. Եւ դարձեալ՝ որպէս զանազան սերմանիք ցորեան կորեակ և այլք՝ հասարակ ի մի վայր *սերմանին*. և հասարակ ջրով և ջերմութեամբ սնանին. և ի յազգս իւրեանց կատարին. ցորեանն ի ցորեանն և այլն: - 719. Նա՛խ՝ զի որպէս նախ *սերմանի* և ապա բուսանի. այսպէս և մարդն նախ մեռանի և ապա՛ կենդանանայ...: - 720. Երրորդ, որպէս նոյն հատն *սերմանեալ* նոյն հատն բուսանի ըստ ազգի իւրում...: - 720. Չորրորդ, յայլ և այլ ժամանակս *սերմանին* և ի մի ժամանակ կատարի...: - 720-721. Տասներորդ, որպէս հատն *սերմանեալ* և բուսեալ և չարչարեալ և ընդ հուր անցեալ՝ ապա՛ ի սեղան եղեալ պատուեցի: - 721. Դարձեալ որպէս հատն մերկ *սերմանի* և մերկ ո՛չ բուսանի. այլ զարդարեալ խոտով և տերևով եօթն թուով: - 721. Եւ զի ժամանա՛կ է լինելոյ և ժամանակ քակելոյ, յայլում ժամու և ո՛չ ի նոյնն *սերմանի* և հնձի: - 780. Իսկ ստինք յատկապէս գործի՛ է բնութեան ի պէտս սննդեան այնոցիկ ծննդոց զօրէն *սերմանեաց* երկրի. յորմէ հիւթոյ արեանն գոյացելոյ, ընդ ագուգայս երակաց արտագունեալ որակօք կաթն փոխակերպեալ: - 786

**ՍԵՐՄՆ կմ ՍԵՐՄ +** Վասն *սերմանց* որ ի չորս եղանակս: - 154. Եւ զի բուսանին և աճին ամենայն *սերմանիք:* - 197. Վասն է՞ր յամառն և ի ձմեռն ոչ բուսանին *սերմանիք:* - 197. Նա՛խ՝ զի ամառն կարի՛ ջերմ է և չոր՝ չորացուցանէ՛. և ձմեռն խիստ ցուրտ՝ սառուցանէ՛ *զսերմն:* - 197. Իսկ գարուն և աշուն հաւասար արդարութիւն է տուընջեան և գիշերոյ. վասն որոյ բուսանին *սերմանիք:* - 198. Ասեն սուրբք, եթէ զորօրինակ աստուածածին կոյսն մարիամ կուսութեամբ ծնաւ առանց *սերման* կատարեալ և ճշմարիտ: - 226. Նոյնպէս և ի դրախտին կարէին ծնանիլ կուսութեամբ և առանց *սերման*. կատարեալ մարդ ի բնութենէն ադամայ: - 226. Քսանեւ՝ Թէ խառնին *սերմն* կենդանեաց. և պատճառ յղացմանն: - 228. Վեցերորդն երիկամունքն որ է տուն *սերման*. ջերմ և գէջ. և տանուտէր ունի զզօրայն. որ է լուսաբերն: - 241. Այլ ի կողմանէ հոգւոյն՝ զօրութեամբ ո՛չ է ի *սերմն* այն ըստ ինքնութեան բոլորին. այլ ըստ ինքնութեան մասին. որ է տնկականն և զգայականն: - 255. Եւ թէ ոք ասիցէ, յորժամ ունի զկենդանութիւն *սերմն* այն՝ ընդէ՞ր ի վիժումն մեռանի: - 256. Նա՛խ՝ թէ խանգարեալ իցէ *սերմն:* - 256. Երրորդ՝ անպատշաճ տեղիք *սերմանն:* - 256. Զայս և ի վերայ *սերման* հատո՛յ է իմանալ: - 256. Թէ ժամանակն ցուրտ է կամ ջերմ. և երկիրն գէջ կամ չոր. և *սերմն* հոտեալ կամ աղանձեալ. և սերմանօղ ո՛չ լինի կամ ոչ սերմանէ. վասն որոյ ո՛չ բուսանի: - 256. Ասեմք թէ՝ ամենայն *սերմն* ունի զջերմութիւն և զգիճութիւն ամոքեալ յինքեան: - 256. Եւ թէ ոք հարցանէ, ընդէ՞ր է զի ամենայն *սերմն* ի մէջն է: - 256. Պատասխանեմք եթէ՝ ոմանք յարմատս ունին *զսերմն*. ոմանք ի ծայրսն. կէսք ի տերևն. այլք ի կեղևն...: - 256. Այսինքն. ազգն՝ տեղին՝ և ժամանակն. որպէս ի *սերմանս* բուսո՛ց է տեսանել: - 261. Զի սերմնական զօրութիւնն որ է՛ ի նիւթն այն՝ իսկ ընդ խառնիլ *սերմանցն* յարգանդի, զուգապէս ցուցանէ զտնկականն: - 261. Ի մածնուլն արւական և իգական *սերմանցն* լինի որպէս պանիր մինչև ի զ օրն...:

- 261. **Եւ նախ սիրտն կազմի քան զայլ անդամսն. զի ջերմութիւն** *սերմանն* **ի մէջն ժողովի և կազմէ՛ զսիրտն**: - 261. Նա՛խ՝ զի բանականի և անբանի *սերմ* ո՛չ խառնին ի միմեանս: - 267. Այսպէս և զամենայն հակառակ տեսակս իմասցիս ոչ խառնիլ *սերմանբ* նոցա: - 267. ...սուրբ կոյսն մարիամ աստուածածին սրբութեամբ և կուսութեամբ ծնեալ փոխեաց զկարգ բնութեան ծննդեանս որ ի *սերմանէ* առն և կնոջ. զի սա՛ ծնունդ միայն ի մօրէ՛: - 280. Զի զանմահութեան և զանապականութեան սկիզբն և *զսերմն* ընկալաւ ադամ: - 282. Զի զամենայն կենդանեաց *սերմն* կրելոյ էր՝ պիտո՛յ էր մեծ տուն: - 293. Ութերորդ՝ ըստ մեղաց. զի *սերմ* առեալք ի սատանայէ՛ յղանամք զցաւս և ծնանիմք զանօրէնութիւն: - 308. Հինգերորդ՝ ի լերինն մասեայ յորժամ ել նոյ ի տապանէն՝ օրհնեաց աստուած զնա՛ և զորդիսն նորա ասէ գիրն. և հայր և *սերմ* արար մարդկան ազգի: - 319-320. Եւ չէզոտքն, զի չունի արիւն *սերման*, ո՛չ հեղցէ զարիւն կենդանւոյ: - 365. Նա՛խ՝ զի ո՛չ ունի կատարեալ զօրութիւն *սերման:* - 365. Երկրորդ՝ *սերմն* բանին պատւիրանացն որ ո՛չ կենդանանայ: - 368-369. Եւ տե՛ս, զի *սերմն* ի մեզ ո՛չ պղծէ զմեզ, այլ ի հոսիլն պղծէ զդ դէմս: - 369. Որ նշանակէ՛ *սերմն* զգործն. որ քանի ի մեզ է՝ ո՛չ է պիղծ. և յորժամ գործի՝ պղծէ՛: - 369. Զի յղացումն տն ո՛չ եղև ի *սերմանէ* առն: - 470. Այլ և ո՛չ կանանցական *սերմն* եղև նիւթ մարմնոյն քրիստոսի: - 470. Հինգերորդ՝ ապականութիւն մեր մարմնոցս է՛ ի *սերմանէ* հօր ի ձեռն կնոջ խառնեալ. իսկ մարմին բանին ո՛չ է ի *սերմանէ* հօր և մօր. այլ ի կուսական արգանդէ և յանապական արենէ բեղնաւորեալ որպէս ցուցաւ ի վերոյ ի սոյն գլուխ ի ժ համարն. ապա ուրեմն անապակա՛ն է մարմին բանին աստուծոյ: - 499. Կամ որպէս ասեն ոմանք թէ երկու յաւազոյ և մի ի *սերմանէ*՛ գոյանան մարմինք ծկանցն: - 510. Նոյնպէս պա՛րտ էր *զսերմն* հաւատոյ ընդունել նոցա քրիստոսիւ, և ապա փոքր փոքր աճմամբ հասանիլ պարգևաց հոգւոյն, և պտղաբերել և զայլսն: - 521. Նաև զամենայն գլխաւոր մեղս ընդ հզօր խորհուրդ ասէ սուրբն եւագրիոս. վասն զի նախ ի խորհուրդն տնկի ամենայն *սերմն* մեղաց. և ապա ի մարմինն բուսանի և աճէ: - 557. Եւ զայս առնէ միտքն իբրև մշակ. որ առեալ *զսերմն* և բազմաբեղունս աճեցուցանէ. այսպէս և միտքն խորհելով զչարն՝ զայսոսիկ ախտս առաւելու ի մեզ: - 564. Որպէս անպտուղ երկիր կորուսանէ զբարի *սերմանս* և փուշ բուսուցանէ. նոյնպէս և մեք զբարի *սերմանս* որ եդ ի մեզ աստուած ի չարն փոխարկեմք: - 564. Որոյ պատճառ է, զի ո՛չ ի *սերմանէ*՝ այլ ի մաքուր արենէ կուսին էառ մարմին: - 568. Վասն զի յանմաքուր *սերմանէ* յղացեալ լինի զաւակն. զի «ո՞վ կարէ առնել սուրբ զյղացեալն յանսուրբ *սերմանէ*» ասէ: - 592. Յորժամ բոլորովիմբ մարդն ի ձեռն մկրտութեանն սրբի, *սերմն* նորա ո՞րպէս է անսուրբ: - 592. Բոլորովիմբ մարդ ի ձեռն մկրտութեանն ներքուստ և արտաքուստ սրբի. բայց դարձեալ *սերմն* նորա ի ձեռն մարմնոյն ցանկութեանն պղծի: - 592. Եւ երկրորդ, ընդ դէմ օրինացն աստուծոյ կորուսանի բեղմնաւորիլն վասն յաճախ *սերմանցն:* - 613. Զի առանց կոփելոյ էր առաջին տախտակն աստուածագիծ. և կոյսն առանց *սերման* յղացաւ: - 639. Քսանգ, Օրինակ *սերմանց.* և զարդ հարսինն: - 660. Արդ՝ ըստ կարգի՝ *սերմանքն* յառաջ են քան զարդիւնսն. և նախատակքն քան զպսակն. վասն որոյ որք աստ փորձ գտանին, անդ առցեն զպսակն կենաց: - 662-663. ...որպէս *սերմանիքն* թաղեալ կենդանանան և բուսանին. նոյնպէս և մարդոյս մարմին: - 677. Դարձեալ՝ որպէս *զսերմանիս* թաղեալ յերկրի՝ դարձեալ ջրով ոռոգանեմք...: - 680. ...նոյնպէս զբանական *սերմս* զայս երէկ թաղեցաք ի հող...: - 680. *Սերմն* բարի են սուրբք և ընտրեալք զոր սերմանեաց աստուած յեկեղեցի: - 693. Եւ այլ վարդապետք ասեն եթէ, նեռն յղանայ ի *սերմանէ* և ծնցի ի բոզէ՛: - 706. Եւ որպէս կարելի է քեզ ի քում ափիդ *զսերմանս* զանազանել, և զեդեալն ի շտեմարանս քո յիւրաքանչիւր անկեան յառաջ բերել, - 718. Թէ զձուկն զայն որ եկեր զմարմին մարդոյ՝ ուտէ մարդ, և յայնմ *սերմանէ* ծնանի զա՛յլ մարդ. ի յորո՞յ մարմին յարիցէ: - 718. Նմանապէս և կողն որ առաւ յադամայ և շինեցաւ կին, ո՛չ յառնէ ի յադամ, այլ ի յևա. որոյ հիմն կազմութեան եղև փոխանակ *սերման:* - 719. Իսկ վիժեալն ի յարգանդէ ըստ որում է *սերմ* կամ արիւն մօրն՝ ի մա՛յրն յարիցէ: - 719. Եւ դարձեալ՝ որպէս զանազան *սերմանիք* ցորեան կորեակ և այլք՝ հասարակ ի մի վայր սերմանին. և հասարակ ջրով և ջերմութեամբ սնանին. և ի յազգս իւրեանց կատարին. ցորեանն ի ցորեանն և այլն: - 719. Դարձեալ գիտելի է, զի պօղոս ի կորնթացոցն զհատ *սերման*՝ օրինակ տայ յարութեան մարդկան և ասէ. «ա՛նմիտ՝ դու զոր սերմանես ո՛չ կենդանանայ թէ ոչ մեռանի»: - 720. Ութերորդ, բարի և չար *սերմանիքն* ի միասին բուսանին և մնան մինչ ի հունձս. մանաւանդ մինչ ի կալն ըստ առակի տեառն...: - 721. Իններորդ, ամենայն *սերմանիք* բուսեալք՝ ի մի հասակ այսինքն ի կատարելութեանն իւրեանց ժամանեն ի հունձս. - 721. Զի այսպէս ասեն վարդապետք՝ թէ յորժամ յղանայ ոք ի միտս իւր զխորհուրդ մեղացն, ի սատանայէ՛ *սերմն* առեալ

որպէս կին յառնէ. և ի ծնանիլ մեղացն՝ ծնանին և որդունքն ի հրեղէն ծովն որ է՛ ի հարաւ: - 753. Է՛ ուրեմն ասել, եթէ ոչ տեառն սաբաւովթ, այսինքն զօրութեանց, թողեալ էր մեզ *սերմն* առաքելօք և մարգարէիւք և այլովք սրբովք և վարդապետութեամբ աւետարանին, համերք և ի մեռս լինէաք խստացեալք: - 755. Նա՛խ՝ *սերմ* է բանք և քարոզք աւետարանին: - 757. Զոր ընկալեալ *զսերմն* հրամանաց աստուծոյ, և բուսուցեալ ի մեզ՝ տամք պտուղ **լ, կ, և ճ**: - 757. Զի ամենայն բոյս բարեգործութեան ի *սերմանց* հաւատոյն բուսանի և պտղաբերի: - 769

**ՍԵՐՄՆԱԿԱԹ +** Քառասունևէ, *Սերմնակաթին* և դաշտանւոյն: - 284. Վասն *սերմնակաթին* սրբութեան **բ** հաւ: - 359. ...և Դարձեալ ասեն, բնական մեղքն խտրութեան մնաց ի գրաւորն, նոյնպէս ի նորս. որպէս *սերմնակաթն* և դաշտանին. այլ պատիժն փոխեցաւ հինն ի նորս: - 369

**ՍԵՐՄՆԱԿԱՆ +** Նա՛խ՝ զի *սերմնական* զօրութիւնն է ի մէջն բնաւորեալ. ուստի բոլորապէս և հաւասար տայ շարժիլ տնկոյն: - 213. Պատասխանեմք եթէ, *սերմնական* զօրութիւնն որ է՛ ի մեզ, նոյն է սկիզբն գոյութեան մարդոյ: - 254. Եւ թէ որպէս, ասելի է թէ, ի *սերմնական* զօրութիւնն տեսանի երկու իր: - 254. Դարձեալ՝ ջերմ և գէջ չափաւորեալ է ի նիւթն այն. և որ արտաքուստ մտանէ՝ անչափութեամբն վնասեսցէ՛ *զսերմնական* զօրութիւնն ընդ նիւթոյն: - 256. Պատասխանեմք եթէ՝ ոմանք յարմատս ունին զսերմն. ոմանք ի ծայրքն. կէսք ի տերևն. այլք ի կեղևն. թէպէտ և սոցա *սերմնական* զօրութիւնն է՛ ի մէջն, այլ առաւել կենդանւոյն: - 256. Պատճառ յապաղելոյ և փութալոյ *սերմնականին* զօրութեան **գ** են: - 261. Զի *սերմնական* զօրութիւնն որ է՛ ի նիւթն այն՝ իսկ ընդ խառնիլ սերմանցն յարգանդի, զուգապէս ցուցանէ զտնկականն: - 261. Զի ամենայն նիւթ *սերմնականի* է՛ ի չորից տարերց. և ունի զկազմողականն զօրութիւն. որով լինի տնկականն: - 262

**ՍԵՐՄՆՕՐՀՆԷՔ** - Ի **բ** ամի թագաւորութեանն, առաքեաց սուրբն իսահակ և ետ բերել *զսերմնօրհնէքն* զկալոյ և զհնձանին...: - 658

**ՍԵՐՈՎԲԷ (տեքստում՝ ՍԵՐՕԲԷ) +** Ասեմք եթէ՝ ինն դասք յերիս երրեակս որոշեալ թըւոց. որոց Առաջինն է Աթոռք. Քերօբէք. և *Սերօբէք:* - 134. Իններորդ՝ յերիս որոշեալ դասս. որպէս *սերօբէք*՝ քերօբէք՝ և աթոռք: - 134. Ի յառաջին կարգ քահանայապետութեանն՝ *սերօբէ՞ն* է առաջին դաս՝ թէ աթոռքն: - 135. Ասեմք եթէ՝ նոքա երեքեան դասքն՝ այսինքն աթոռք՝ քերօբէք՝ և *սերօբէք*՝ միակարգ միապատիւ և գերազանց էութիւնք են. զի անընդմիջաբար յաստուծոյ ամենայն լուսափայլութիւնք իմաստք և շնորհք ի նոսա հեղանին համակարգապէս. և ապա նոքօք յայլ ամենայն գոյս երկնաւոր և երկրաւոր: - 135. Նախ՝ զաթոռքն. և զհետ զքերօբէքն. և զհետ *զսերօբէքն*. և այս վասն **գ** պատճառի: - 135. Նախ՝ զի զաթոռն մերձ նստողին տեսին եզէկիէլ և եսայի, և շուրջ զքերօբէքն և *զսերօբէքն:* - 135. Եւ *սերօբէն* որ է՛ ջեռուցիչ՝ ի դէմս հոգւոյն սրբոյ. զի նա՛ է հուր սիրոյ զոր էարկ տէր մեր յերկիր: - 135. Երրորդ՝ զի *սերօբէն* մաքրական լսի և հրաբերձ...: - 135. Որև այժմ ի յեկեղեցի ի նոյն խորհուրդ՝ *սերօբէին* պատկեր որ է քշոցն՝ ի ձեռն սարկաւագին աւանդի՝ որ է՛ մաքրօղն...: - 135. Այլ ոմանք *զսերօբէն* ասեն վերին: - 135. Նախ՝ զի *սերօբէն* խոկայ զբարութիւնն աստուծոյ. և քերօբէն զճշմարտութիւնն. և աթոռք զուղղութիւնն: - 135. Երկրորդ՝ զի *սերօբէն* բորբոքէ ի սէրն որ է անմիջոց կապ...: - 135. Տասներորդ՝ յատուկ առանձնապէս տըպաւորութիւնք խորհրդական. որպէս քերօբէքն բազմաչեայք և ընդ թևեանք. և *սերօբէքն* սրբաբան՝ ընդ աթոռոցն քառակերպեան: - 138. Եօթներորդ՝ *սերօբէիցն:* - 144. Նախ՝ յորժամ *սերօբէն* ասէր սուրբ, և միւսն երկրորդէր զնոյն. և սա՛ լռեաց զփառաբանութիւն ընկերին երկրորդել աստուծոյ, թէ փառքն ի վերայ իւր անկանի և աստուածանայ որպէս ասաց պօղոս: - 147. Եւ տէրն ո՛չ ի ձեռս հրեշտակաց *սերօբէից* և քերովբէից, և ո՛չ միջնորդութեամբ մարդկան ընտրելոց նահապետաց մարգարէից առաքելոց կամ մարտիրոսաց: - 302. Զի աթոռք՝ քերովբէք՝ *սերովբէք*՝ հաւասարապատիւք են՝ մի համարի դասս. և վեցն զկնի նոցա: - 380. Ուստի և վեհագոյն իմացութեանց էից *սերովբէն* զքօղեալ զերեսս և զոտս մարդեղութեան խորհրդոյն պարուրեալ: - 456. Ասեմք առ այս, թէ որպէս ի մէջ *սերովբէից* և քերովբէից և աթոռոց ո՛չ ասի վերնագոյն և նուաստագոյն, զի համակա՛րգ են և շուրջ զաստուծով: - 547. Եպիսկոպոսն և քահանայն, զսոսա ի մի կարգ թուէ ի դէմս վերնագոյն դասուց երկնաւորաց. որք են Աթոռք. Քերովբէք. և *Սերովբէք:* - 608. Զի՞նչ է որ ա՛յլ ազգք ի դէմս Երրորդութեանն ասեն. և վկայ ածեն *զսերովբէսն* **գ** սուրբ և մի տէր ասելովն: - 632. Վասն որոյ զոր *սերովբէքն* երից դիմացն երգէին, աստ աւետարանիչն ի դէմս բանին ասաց: - 633. Յոլաթևեան *սերովբէն:* - 638. Նմանապէս և քշոցն՝ վեցթևեան *սերովբէքն:* - 645. Զքահանայս ընդ *սերովբէից* և քերովբէից յառաջին դասս վերինն զուարթնոցն: - 672. ...որպէս յա՛յտ է

ի *սերովբէսն* որ ի ներքոյ փառաց աթոռոյն, այսինքն է խաչին. թևասքօղեալ զերեքսրբեանն վերաձայնէին: - 734

**ՍԵՐՈՒՄՆ +** Վեցերորդ՝ որ փոխին այլք յայլոց բնութենէ վասն առատութեան բնութեանն. որպէս կարպասածին ճճին ունի սա ծնունդ *սերմամբ* իւր զննանն. և ունի ելումն զկերպասն: - 53. Եւ **բ** երակ երիկամանցն լի *սերմամբ:* - 244

**ՍԵՐՈՒՔ** - Անունք Կանանց Նախապետացն: ...*Սերուքայն* մելքա՛: - 299

**ՍԵՐՏ +** Այս բարիս ի հրեշտակս անփոփոխ և *սերտ* է. իսկ ի մեզ փոփոխական է: - 23. իսկ յետ յարութեան *սերտ* և անքակտելի սիրով միաւորիմք...: - 667. Հինգերորդ զի կա՛րծր է. ցուցանէ զկարծր և *զսերտ* առաքինութիւն նոցա առանց քակտելոյ: - 712

**ՍԵՐՏԵՄ +** Նա՛խ՝ լերինք և բլուրք մշտնջենաւորք կոչին հրեշտակացն դասք բարձրացեալք յերկինս և անշարժութեամբ *սերտեալք*...: - 319. Յայնժամ լոյս իմացականին կորեաւ և շիջաւ ի սատանայէ՛. և լոյս շնորհացն ո՛չ ներգործեաց ի նա. և ի նոյն *սերտեալ* հաստատեցաւ անզղջապէս. վասն որոյ մեծ են մեղք սատանայի և թողութեան ո՛չ հանդիպի: - 563

**ՍԵՐՏՈՒԹԻՒՆ +** Զի յայս ճշմարտութենէս լոյս հաւատոյն ծագեալ ի միտս հաւատացելոց, անփոփոխ *սերտութեամբ* հաստատէ՛ զհաւատացեալս ի ճշմարտութիւնն. և զճշմարտութիւնն ի նոսա: - 121. ...զոր ի յարութեանն աւուր զանփոփոխ *սերտութիւնն*ստասցի: - 667. Երրորդ, զի մարմինն փոխեսցի ի հող մինչև հոգին յանապական և յանփոփոխ *սերտութիւնն* կայասցի...: - 677. ...իսկ ի յարութեանն անփոփոխ *սերտութեամբ* հաստատի ասէ սուրբն դիոնէսիոս. վասն որոյ անփոփոխ և անմահ միաւորի ընդ մարմնոյ: - 723

**ՍԵՒ +** *Սևն* հողոյն: - 203. Դեղնի երեսն և կարմրի. և մին մարդն *սև*, և մին սպիտակ լինի. և շէկ և ծիծաղկոտ և այլն: - 227. *Սևն* երկրի: - 234. Գոյնն միջակ ի մէջ սպիտակին և *սևին* ցուցանէ զուշիմն և զքարեբարոյն: - 247. Բնական որակ տարերացն *Սևն* է՛ երկրի. և Սպիտակն ջրոյ. Կարմիրն օդոյ. և Դեղինն հրոյ: - 342. Իսկ պատահումն ընդ պատահման միշտ շփոթմամբ միաւորին. որպէս գոյն ի *սևէ* և ի սպիտակէ՛: - 475. Դարձեալ՝ նշանակէ՛ յետ մեռելոյն զփոխումն ուրախութեան մեր ի սուգ և ի մերկութիւն. և ի *սև* հանդերձս. ի խաւար տունս և այլն: - 670. Յօր անունն ռոմելոս ասեն. զմին ծեռն և զոտն երկայն և մինն կարճ. զմի ակն խաժ, և զմիւսն *սև:* - 706. Եւ երևի որպէս բլուր մեծամարմինք նոցա յաչս իւրեանց. *սև* և աղտեղի և չարչարելի. զի կրեն անչափ չարչարանս և ցանկան մահու և ո՛չ մեռանին...: - 723

**ՍԵՒԱՄՈՐԹ** - *Սևամորթն* զխորամանկն յայտնէ: - 247

**ՍԵՒԱՆԱՄ +** Վասն որոյ ի հրոյն ոմն *սևանայ*. որպէս խաղող. և կէսք կարմրին և դեղնին. որպէս բոյսք՝ և տերևք չորացեալ ի հրոյ: - 213. Նոյնպէս և ի տրտմիլն *սևանայ* վասն սեաւ մաղձոյն որ տայ ի յերեսն: - 245. Այսպէս. զի թէ *սևանա՛յր*, մահ գուշակէր: - 349

**ՍԵՒԱՏԵՍԱԿ +** Իսկ ի ներքուստ, ի լինիլ տրտմութեանց՝ խուճապեալ մարմնոյն հոսի մաղձ դառն ի ստամոքս որովայնի. և վերացեալ գոլորշեաց նորա զօրէն շոգոլեաց պուտկի առ խելապատակս գլխոյ. և ծանրացեալ անտի թորի՛ առ բիբն ասացեալական. չոր գոլով և աղէգոյն ի *սևատեսա՛կն* մաղձոյ: - 787

**ՍԵՒԵՌԵՄ +** Ապա ուրեմն ևս առաւել խաչն մնայ անապական զի էութիւն աստուծոյ է ի նմա. այսինքն բանն աստուած մարմնովն որ է՛ *սևեռեալ* ի նմա: - 733

**ՍԵՒՈՒԹԻՒՆ +** Եւ որպէս հուր յերկաթ միաւորեալ բառնայ ի նմանէ զցրտութիւնն և *զսևութիւնն* և մնայ ծանրութիւնն, - 100. Երկրի՝ *սևութիւնն:* - 212. Այսպէս և *սևութիւն* երկրին և դեղնութիւն հրոյն խառնի և առնէ զկանանչն: - 212. Պատահական, որպէս *սևութիւն* ագռաւու: - 318. Երկրորդ պակասութիւն է մարմնոյն՝ *սևութիւն* և աղտեղութիւն. և բաժանի այս ի մարմնոյն և զարդարի լուսով որպէս զարեգակն: - 722. Դարձեալ՝ էութիւնն մնայ, այլ ներգործութիւնն պակասի՝ այսպէս. զի ջերմութիւն հրոյն և ցրտութիւն ջրոյն և փոփոխմունք օդոյդ որպէս ամպք և այլն, և *սևութիւն* երկրի...: - 728. Երրորդ զի պարզի հալեալ մոմ. այսպէս *սևութիւն* և թանձրութիւն երկրի ի դժոխս ժողովին և մարմինք մարդկան յերեսս երկրի: - 728. Առ այս ասեմք, թէպէտ է՛ ամենայն իր բնութեամբ նա՛ և հասարակ. որպէս և *սևութիւն* ագռաւու. այլ ո՛չ անդրադարձեալ. զի է՛ ինչ բնութեամբ, այլ ո՛չ հասարակ. որպէս կնտութիւն մարդոյ: - 774

**ՍԵՓՈՒՎՐԱ** - ...և էառ *զսեփովրա* կին. և ծնաւ **բ** որդիս. զգերսամ և զեղիազար...: - 330. Եւ *սեփովրա*

դուստր էր ռագուէլի, և քոյր յոթորայ. յազգէ աբրահամու **ե** երորդ այսպէս: - 330. *Սեփովրա* էր դուստր ռագուէլի քրմի՝ որդոյ դեդանայ. որդւոյ յեկտանայ. որդւոյ աբրահամու ի քետուրայ կնոջէ: - 330

**ՍէՁ +** Եւ որք ի ծերութեանն գան յուղղութիւն, որպէս *զսէզ* դալարին, և տան պտուղ զերեսնաւորն: - 757-758

**ՍէԹ** - Եւ ապա՛ զադամ, զի ունի *զսէք* ծնունդ՝ և զևա ո՛չ ծնունդ. այլ հատումն ի նոյն բնութենէ. և ընդ միով սահմանաւ գոլ ծնողին և հատմանն և ծնիցելոյն: - 53. ...ադամ յառաջ էած յինքենէ *զսէք* և զևա. զմինն ծնունդ և զմիւսն ո՛չ ծնունդ. և ունին երեքեանն զմի և զնոյն բնութիւն մարդոյ: - 60. *Սէք* ջրարբ. կամ մոռացումն չարի: - 299. Անունք Կանանց Նահապետացն: ...*Սեթայն* ազերա՛: - 299. Վասն է՞ր զանդրանիկն խոտէր և զկրտսերն ընտրէր. որպէս կայեն խոտեցաւ և *սէք* ընտրեցաւ: - 309

**ՍէՆ** - Զի *սէՆ* յունա՛ց է, և շան՝ ասորի. և մի և նոյն է տեսութիւնն որ ասէ, անգոսնեաց, և անգուշնեաց: - 407

**ՍէՐ +** Այլ արդ՝ է քրիստոս ամենայն՝ *սիրով* յօդեալ են ի միմեանս՝ և բարեկարգեալք: - 21. Այսմ տեսութեանս որք արժանաւորին, նոքա երանին և անքակ միանան ի *սէր* նորին որպէս հրեշտակք: - 24. Վասն այն կամեցաւ աստուած զի ի տեսանելն զնա՝ անի բաց դնելի *սիրով* միացուք ընդ նմա: - 24. Ութերորդ՝ է՛ անկարգ ախորժակն. որ քարշէ՛ զմիտսն առ ներհակս հաւատոյն. այսինքն է երկիւղն՝ *սէրն* և ատելութիւնն: - 32. Նաև *սէր* աշխարհիս և փառաց՝ ո՛չ ետ թոյլ հաւատալ...: - 32. Զի *սէր* ընչիցն է աչք ագահացն. և *սէր* հեշտութեանցն է՛ աչք հեշտասիրացն: - 32. *Զսէր* քարոզեն, և զդաւ նենգութեամբ կայենի նիւթեն: - 34. Վեցերորդ՝ զի պահանջէ՛ ի սիրողաց իւրոց միշտ զայն խորհիլ. զի որպէս ինքն վասն *սիրոյ* զանձն իւր եդ ի վերայ մեր, և մեք վասն *սիրոյ* նորա փոխարէն դիցուք ի վերայ նորա: - 43. Իսկ սոքա յաստուծոյ և գթութեամբ *սիրոյ:* - 95. Ա՛րդ՝ եթէ զբոլորն ցուցանել նշան է *սիրոյ* հօր, ապա թէ ո՛չ ինչ ցուցանէ ատէ՛ զորդի: - 97. Իսկ թէ զամենայն ճանաչէ՝ և *զսէրն* պետրոսի, ապա ո՛չ է պակաս գիտութիւն նորա: - 98. Եւ դարձեալ՝ քննութեամբ մտաց ո՛չ լինի հասեալ անհասանելին. այլ հաւատով լինի իմացեալ. և յուսով ըմբռնեալ. և *սիրով* միաւորեալ: - 101. Վասն *սէ՞ր* կոչեմք Երրորդութիւն. և Յայր. և Որդի. և Յոգի սուրբ: - 101. *Սէր* և Սիրելի և Բարի է Աստուած: - 102. *Սէրն* և գութն: - 102. Դարձեալ՝ աստուածային առաքինութիւնք այսո՛ւ թւով են. այսինքն հաւատ. յոյս. *սէր:* - 105. Եւ *սէր* առ աստուած բանիւն բորբոքեցաւ...: - 125. Նոյնպէս իմանալի արեգակն քրիստոս ի հայրական ծոցոյ անհա՛ս է բնութեամբ՝ և ի սրբոյ կուսէն իբր ի յարևելից ծագեալ. և ջերմ *սիրով* ի մարդկային ազգս որպէս յարևմուտս խոնարհեալ. և զսառուցեալ բնութիւնս պատեալ. և ի գերեզմանէն ի բարձունս դարձեալ յարևելս առ հայր ամբարձեալ: - 126. Եւ ի *սէր* աստուածային շարժեալք՝ ոմանք յիմաստասիրութիւն. այլք ի ճգնութիւնս. ի կուսութիւն. և ի զանազան առաքինութիւնս: - 126. Իսկ զարմացումն լինի ի *սիրոյ* առ սիրելին. զի զմիտս զկեանս և զամենայն ինչ թողու սիրողն՝ և սիրելւոյն համարի: - 127. Այսպէս վասն գերազանց *սիրոյն* զոր ունի աստուած առ էսս՝ զարմանալ ասի. այսինքն արտաքս ելանել՝ թափիլ և հեղուլ ի յէսս. և միաւորիլ անփոխաբուն բնութեամբ: - 127. Այլ *սէրն* և փափագն ասի նախանձ զաստուծոյ: - 128. Իսկ նախանձն աստուծոյ պարզապէս միայն ունի սիրել և զայլս և ո՛չ ատել. զի նախանձն աստուծոյ՝ *սիրոյ* առաւելութիւնն է. որպէս բոցն հրոյ: - 128. Դարձեալ՝ նախանձո՛տ է և նախանձելի. այսինքն նախանձո՛տ է իբր զսիրեցօղ. և նախանձելի իբր զսիրելի. զի շարժէ՛ զմեզ ի *սէր* իւր: - 128. Դարձեալ՝ ինքնանախա՛նձ է. զի ո՛չ յայլմէ շարժի ի *սէր* որպէս մեք. այլ յինքենէ՛ շարժի ի սիրել և ի սիրիլ: - 128. Ո՞րպէս կոչի աստուած սիրօղ՝ և *սէր* և սիրելի: - 128. Զայս ոմանք ի վերայ սուրբ Երրորդութեանն մեկնեն այսպէս. սիրօղ է հայր. սիրելի որդի. և *սէր* հոգին սուրբ: - 128. Երկրորդ՝ զի էութիւնն աստուծոյ *սէ՛ր* է. և շարժի՛ սիրել զմեզ. և շարժէ՛ զմեզ սիրել զինքն: - 128. Եւ կոչի *սէր*, զի շարժէ՛ զմեզ. և յառաջածու զօրութիւն է. և երևեցուցիչ. և միաւորիչ. զի այսոքիկ *սիրոյ* ներգործութիւնք են. վասն այն կոչի *սէր:* - 128. Չորրորդ՝ սիրօղ՝ որպէս սկիզբն մեր. և *սէր*՝ որպէս հաստատութիւն. և սիրելի՝ որպէս կատարումն: - 128. Նմանապէս և *սէրն*. և ազնիւն. և իմաստութիւնն. և այլն: - 128. Բարի՞ն է առաջին յաստուած, թէ *սէրն:* - 128. Սակայն ըստ մեր իմացմանս հասարակ է բարին քան *զսէրն*. զի ասեմք՝ *սէրն* բարի է. ազնիւն բարի է. և այլն. որպէս ասեմք՝ մարդն կենդանի է. ձին կենդանի է. և այլն: - 128-129. **Այլ ի ստեղծումն էիցս՝ *սէրն* առաջին է քան զբարին. զի ի *սիրո՛յ* շարժեցաւ յառաջ բարերարել և խնամել:** - 129. Այլք ասեն թէ՝ է՛ ի յաստուած լայնութիւն *սիրոյ*, որով յետս դարձուցանէ զմեզ ի մոլորութեանց վասն առաւել *սիրոյն:* - 129. Այսինքն երկայնութիւն *սիրոյն* մինչ ի կատարած անվախճան: - 129. Իսկ առողջ լսելիք և տկար՝ պատճառի ի համակարգս. և ի

հաւասարն բնութեամբ. որք իմացմամբ և *սիրով* և ներգործութեամբ առաւել կամ նըւազ են. ուստի առաւել կամ նըւազ պարգևս ընդունին: - 131. Իսկ նոցա՛յն է արիութիւն և *սէր* առ աստուած: - 132. Եւ սերոբէն որ է՛ ջեռուցիչ՝ ի դէմս հոգւոյն սրբոյ. զի նա՛ է հուր *սիրոյ* զոր էարկ տէր մեր յերկիր: - 135. **Երկրորդ՝ զի սերոբէն բորբոքէ ի *սէրն* որ է անմիջոց կապ. և քերոբէն ի ճանաչումն ճշմարտութեան. և աթոռքն ի յուղղութիւնն. և նոքա են վերակացուք դատաստանի իրաւանց**: - 135. Եօթներորդ՝ զի երանեալք են ի *սէրն* և ի տեսութիւնն աստուծոյ: - 137. Երբեմն զհաւատն և *զսէրն* կոչէ. ըստ այնմ թէ՝ «գործակից եմք շնորհացդ ծերոց». այսինքն հաւատոց. և թէ՝ «նախանձաւոր լերուք շնորհացն որ լաւն են» այսինքն է *սէրն:* - 140. *Սէրն* ո՞րքան շարժի: - 143. Նմանապէս և *սէրն* է միատեսակ և բազմատեսակ: - 143. Միատեսակ է՝ յորժամ ըստ ինքեան ժողովէ յամենայն զգայարանաց, և բոլոր և միեղէն *սիրով* հպի յաստուած. և է՛ այս գերակատար *սէր:* - 143. Եթէ զգայութեամբ և մարմնով սիրեսցես զաստուած՝ լինի կատարեալ *սէր:* - 143. Եւ եթէ զգայութեամբ սիրեսցես զմարմնականս՝ լինի անկատար *սէր:* - 143. Այս է զանազանութիւն *սիրոյ*. գերակատար. կատարեալ, և անկատար: - 143. Առաջինն է հաճոյական *սէր:* - 143. Առաջինն է՛ գովելի *սէր*. վերջինն պարսաւելի: - 143. Ա՛րդ՝ ներքնագոյն *սիրովն* խնամէ աստուած զարարածս. և առաջին դասք հրեշտակաց զվերջինսն. և հարք զորդիս. և վարդապետք զաշակերտս. և իշխանք զիշխեցեալս. տեարք զծառայս. և այս *սիրովս* շարունակին ընդ նոսա: - 143. Իսկ վերնագոյն *սիրով* սիրեն արարածք զարարիչն. և վերջին հրեշտակք զառաջինսն. և որդիք զհարս. և նւազք զմեծամեծս. և այս *սիրովս* միաւորին ընդ նոսա: - 143. Իսկ հաւասար *սիրով* սիրէ մարդ զմարդ. և ընկեր զընկեր. այլ և մարդ զհրեշտակս. և հրեշտակք զմարդիկ. և զհաւասար արարածք են: - 143. Այլ և մարդ զկենդանիս և զանկենդանս. զի համասեռ գոյեղէնք են. և այս *սիրովս* շաղկապին առ իրեարս: - 143. Իսկ *սէր* և գութ՝ ա՛յսպէս զանազանին: - 144. Նախ՝ զի գութն բնական է, և *սէրն* ստացական: - 144. **Երկրորդ՝ գութն անբան է, և *սէրն* բանական**: - 144. Երրորդ՝ գութն առ ընտանիս է, և *սէրն* առ օտարս: - 144. Եւ զի՝ գութն յատուկ տեսանի յանբան կենդանիսն, և *սէրն* յատուկ է առ աստուած: - 144. Իսկ մարդս զի յերկուց է գոյացեալ՝ ունի զգութ բնական՝ և *զսէրն* աստուածական: - 144. Յոգնորն այն է՝ զի անկաւ անձնիշխան կամօք ի բարւոյն ի չարն, ի լուսոյն ի խաւարն, ի գիտութենէն յանգիտութիւն, յանմեղութենէն ի մեղս, յերանութենէն ի թշուառութիւն, ի *սիրոյն* յատելութիւն: - 146. Երրորդ՝ զի ի *սիրոյն* աստուծոյ զրկեսցէ զմեզ. զի կարասցէ յաղթել: - 146. Տասներորդ՝ զանկեղծ *սէրն* նշանակէ զոր ունին առ քրիստոս, փոխանակ չարչարանաց նորա չարչարանս կրել. և ի *սիրոյ* նորա ոչ մեկնիլ...: - 159. Չորրորդ՝ զի ասէ ոսկեբերանն՝ «անկեղծ *սիրոյ* կապանք է առատութիւն նեղութեանն». զի կեղծաւոր և անկեղծ *սէրն* առ աստուած փորձութեամբն երևի: - 162. Երկրորդ՝ վասն ատելութեան. զի բարձաք *զսէրն:* - 177. Վասն այնորիկ զօրութեամբ *սիրոյն* շարժի առ աստուած ի միջին կէտ իւր. զի գերազանցապէս հեշտասցի ի նա՛: - 249. *Սէրն* ի թոքն: - 250. Դարձեալ ըստ այսմ կարգ ի իմաստութիւն է հաւատն. գիտութիւն յոյսն. հանճար *սէրն:* - 270. Չորեքտասաներորդ՝ *սէ՛ր* է աստուած և աղբիւր *սիրոյ*. և մեզ պատուիրեաց սիրել զմիմեանս: - 272. Իններորդ՝ զի որպէս կողից երեսն որ ի փորն նայի՝ կոկ գոլով և մզղնատեսակ. իսկ մէջն փուչ և մրրախառն. այսպէս *սէրն* զոր ցուցանէ առ այրն, նօսր առ ի ցոյցս՝ և երեսս միայն ունի. իսկ ի սիրտն զմրուր դառնութեան: - 276. Եւ ուրեք *զսէր* և քաղցրութիւն՝ պատուիրել ասէ. որպէս ադամայ պատուիրեաց: - 277. Երրորդ՝ ի նշանակել *զսէր* և զհնազանդութիւն մարդոյն: - 277. Իններորդ՝ *սէր* և գութ աստուծոյ ի վերայ մարդոյն հնազանդութեամբ պատուիրանին որ գայր առ նա՛: - 279. Եօթանասուն, Վասն *սիրոյ* աստուծոյ լո՛ւր իսրայէլ: - 285. Եւ սոքա ամենեքեան վասն էերորդին են որ է՛ *սէրն*. զոր ունէր կատարելապէս առ աստուած: - 286. Այլ ազա՛տ գոլով յայսցանէ՝ վասն առաւել *սիրոյն* աստուծոյ տա՛յ զորդին իւր ի զենումն: - 304. Որոյ փոխանակ հայր աստուած ետ զորդին իւր վասն գերազանց *սիրոյն* ի փրկութիւն աշխարհի: - 304. Մետասաներորդ՝ որպէս իսահակաւ յայտնեցաւ կատարեալ *սէրն* աբրահամու առ աստուած...: - 305. Այսպէս և *սէրն* աստուծոյ առաւել ցուցաւ ի ձեռն որդւոյն: - 305. Եւ թէպէտ ելաց՝ ո՛չ եգիտ դարձեալ. զի ո՛չ էր բոլոր սրտիւ և ջերմ *սիրով:* - 309. Իններորդ՝ ի յանդիմանութիւն բնութեան մերոյ. զի մի՛ կարծեսցէ թէ առաքինութեամբն և *սիրովն* առ աստուած՝ հաւասարիլ կարէ՛ *սիրոյն* աստուծոյ որ առ մեզ. այլ կաղ գտանի: - 311. Նոյնպէս և սուրբքն ջերմ *սիրովն* աստուծոյ ժողովին ի կայանս հոգւոցն ի տեղւոջ լուսոյ և հանգստեան: - 315. Եւ կապ *սիրոյ:* - 317. Որպէս հաւատով և *սիրով* և երկիւղիւ և օրինօք նորա: - 318. Դարձեալ՝ նա՛ զգենու զմեզ *սիրով*, և մեք զգենումք զնա հաւատով և յուսով: - 319. Նա՛խ նշանակէ՛, զի ի *սիրոյն* աստուծոյ

ցրտացեալք էին և ի *սէր* սնոտեացս ջերմացեալք: - 334. Դարձեալ երիցս երևին է, զի աստ ի մարմնի հաւատով տեսանեմք զքրիստոս. և յետ մահու յուսով ի հոգիս մեր. և յետ յարութեանն *սիրով* միաւորիմք ի նա՛: - 341. Դարձեալ՝ զի անապական է հաւատն եկեղեցւոյ, և հաստատ յոյսն, և ջերմ *սէրն* առ քրիստոս: - 347. Իբր թէ զոսսա ի վե՛ր բարձրացուցի և ի սէր *սրտի* հիմում ունիմ: - 348. Դարձեալ՝ զուքն բնական և ներքին *սէրն* է. և ողորմութիւնն երկրորդ և արտաքին...: - 350-351. Դարձեալ՝ զուքն բովանդակ և կատարեալ *սէրն* է. և ողորմութիւնն մասնաւոր. զի ողորմութիւն ի զքո՛յն յառաջի և սփռի ի մեզ: - 351. Իններորդ՝ անդ խոստացաւ. և աստ յայտնեաց աստուած *զսէրն* իւր ի մեզ: - 353. Ողջակիզիլն ի հոտ անուշից. ի համոյս աստուծոյ իրով *սիրոյն* աստուծոյ: - 360. Եւ ապա՛ սիրտ սուրբ և գեղեցիկ ստանալ ի հաւատս և խորովիլ ի *սէրն* աստուծոյ: - 360. Կարմիրն, *սէրն:* - 368. Այլ և հաւատն և յոյս և *սէր* որպէս ցուցաւ: - 368. Սակայն հաճելին մեր՝ ընդունելի է աստուծոյ. զառաւել *սէրն* նշանակէ. զի որ ինչ մեզ անպիտան է, և աստուծոյ անպիտան է: - 371. Դարձեալ՝ այն որ մի քան զմի առաւել են չափով դորակին, նշանակէ՛ զհաւատն և զյոյսն և *զսէրն* առաւել: - 375. Զի ի կեանս յայս հաւատով նուիրիմք. և յետ մահու յուսով. և յետ յարութեան կատարեալ *սիրով* ընդ քրիստոս միաւորիմք: - 375. Եօթներորդ՝ զի ազատեալ է յախտից. և յախտաւոր *սիրոյ* աշխարհիս: - 378. Զի **ծ** ամն յոբելեան է և ազատութեան. որ ազատի մարդ յախտից և յախտաւոր *սիրոյ* աշխարհի՝ և առ աստուած դառնայ: - 378. Երկրորդ՝ *զսէրն* որ առ աստուած: - 383. Դարձեալ՝ զերեք տեսակ *սիրոյն* ցուցանէ. մարմնով և հոգւով և մտօք սիրել զաստուած: - 396. Զի մարմնովն է երկիւղական *սէրն*...: - 396. Իսկ ճշմարիտն աստուած զայս ո՛չ խնդրէ. այլ երկիւղ խնդրէ ի տըղայոց որով խորշին ի չարէ. և *սէր* ի սրտէ փոխանակ անասնոց. և խաղաղութիւն առ ընկերս և օտարս...: - 396. Վեցերորդ՝ միտք բանիս այս է, որ պա՛րտ է կատարեալ *սիրով* սիրել զաստուած: - 396. Եւ է՛ յատկութիւն կատարեալ *սիրոյ* **դ**: - 396. Զի որ յետոյ սիրէ և փոխարինօք և մասնաւոր և երբէք, անկատար *սէր* է և մարմնական: - 396. Աստ *զսէրն* աստուծոյ ասէ. *զսէր* ընկերին ո՞ւր ասէ որ ասաց փրկիչն...: - 396. Ա՛րդ՝ նախ վասն հարցն *սիրոյ* զզաւակսն նոցա ընտրեաց աստուած: - 398. Այլ *զսէրն* աստուծոյ և *զսէր* ընկերին ոչ: - 440. Եւ սոքա են հարճք որ կարեն ի բաց հանիլ ի ժառանգութենէ. զի *սէրն* է կապ և լար շարոցին որ ո՛չ թողու ցրւիլ: - 440. Վեցերորդ՝ զի զփառս եթող և *զսէր* բարեկամաց: - 442. Եւ արդարութիւն է առ գործս և առ *սէրն:* - 458. Հինգերորդն զմեծագոյն *սէրն:* - 465. Տասներորդ՝ զի *սէր* հօր երևեցի առ մեզ...: - 468. Զի են որ միաւորեալքն էութիւնք են և շաղկապն պատահումն. որպէս երկուք ոմանք անջատեալք ի միմեանց՝ պատահմամբ *սիրոյ* շաղկապին: - 476. Իսկ բանին աստուծոյ քաջ *սիրով* եռացումն ընդ մարմնոյ անբաժ և անորիշ գործեաց միաւորութիւն: - 478. Վեցերորդ՝ ի յանմարմին բնութիւնն ո՛չ կոչէր իգական. այլ արական որդի. իսկ թէ ի մարդեղութիւնն լինէր իգական, փոփոխումն էր դիմացն և *սերիցն:* - 480. Զնախանձն՝ տարածումն բազկացն. որ նշանակէ՛ զգիրկս արկանելն *սիրով:* - 489. Հայր մատնեաց զնա՛ վասն *սիրոյ*. և Որդի մատնեաց զանձն իւր վասն փրկութեան մերոյ. իսկ յուդա մատնեաց վասն ագահութեան: - 491. Լայնութիւն հոգևոր *սիրոյ:* - 493. Հինգերորդ՝ նշանակէ՛ զչորս առաքինութիւնս ի յորս պարտի տարածիլ ներքին մարդս մեր. այսինքն վերին մասն նշանակէ *զսէրն*. ներքինն զխոնարհութիւնն. աջն զհնազանդութիւնն. ահեակն զհամբերութիւնն: - 493. Այլ մեք եղբարք ուղեկիցք իմ և դաւանակիցք եղիցուք. շինեալք և հաստատեալք ի վերայ հաւատոյ հիման. անշարժ խարսխեալք ի վերայ յուսոյն քրիստոսի, սեռն և յստակ կատարեալ *սիրով* սուրբ հոգւոյն: - 503. ...բայց մագդաղենացին ջե՛րմ էր ի *սէրն* քրիստոսի՝ եկաց զի ա՛յլ ինչ լուիցէ կամ տեսցէ: - 515. Տասներորդ, զի ցուցցէ թէ թշնամեաց նորա ո՛չ է իշխանութիւն բուռն հարկանել զնմանէ. իսկ բարեկամաց նորա գոյ իշխանութիւն այլով իւիք մերձենալ ի նա. այսինքն *սիրով* և երկիւղիւ յայնմիկ զոր ուտեն զնա: - 518. Հինգերորդ՝ զանբաժանելի միացումն ի *սէրն* քրիստոսի. զի որ ի խաչին թողին և փախեան, յետ իջման հոգւոյն՝ ամենեքեան վասն անուան նորա չարչարեցան և մեռան...: - 524-525. Քանզ, Վասն *սիրոյ* և սահմանի նորա և նշանաց նորա, և աստիճանացն և այլոցն: - 526. Նա՛խ՝ վասն կատարեալ *սիրոյն* քրիստոսի որպէս փեսայի և հարսին: - 534. Երկրորդ վասն առաւել *սիրոյն:* - 546. Սակայն կարգ գոյ ի մէջ նոցա և պատիւ և հնազանդութիւն և *սէր*. այլ իշխանութեամբ համահաւասարք են: - 547. Առ երրորդն ասեմք թէ՝ երիցս հարցումն *սիրոյն* և արաժելն զոչխարսն՝ վասն երից ուրացութեանցն էր բժշկութիւն. զի ո՛ր մասն որ խոցի՝ նորին է բժշկական դեղն դնելի՝ և ո՛չ առողջից: - 547. Ասեմք առ այս՝ թէ լուսաւորիչն գնաց ի հռոմ ո՛չ վասն ձեռնադրութեան, այլ վասն *սիրոյ* և միաբանութեան երկուց ազգաց և ուղղափառ թագաւորացն տրդատայ և կոստանդիանոսի: - 548. Զի

հոգի է աստուած. և յիմացական միտս և ի հոգիս բնակէ. և չէ՛ օգուտ մարմնոյն սրբութիւն յորժամ միտքն զբաղեալ է ի չարիս. զի հեռանայ ի *սիրոյն* աստուծոյ և ի բնակութեանց նորա...: - 558. Այլ դու ո՛վ այրդ աստուծոյ մաքրամիտ և ճգնազգեաց միայնաւոր սուրբ հայրդ սահակ, թէ և զիջանես եղբայրական *սիրով* խնդրել բանս ի մէնջ. սակայն կարօղ ես և զթերին լնուլ և զյաւելորդն կշռել. և զմեզ օգտեցուցանել ի ներգոյէ՛ քոյին պայծառամիտ սրբութեան սրտի: - 558. Հինգերորդ՝ զի յամենայն մեղս գտանի հպարտութիւն. զի որպէս առանց *սիրոյ* այլ առաքինութիւնք ոչ ինչ են, նոյնպէս առ հպարտութեան ամենայն մոլութիւնք ոչ ինչ են: - 562. *Զսէրն* որ առ աստուած պարտ էաք, փոխե՞մք առ երկրաւորս և ի մեղս: - 564. **Իսկ անթողլի մեղաց զ են պարագայք. այսինքն յուսահատութիւն. յանդգնութիւն. մարտնչիլ զճշմարտութիւնն ճանաչելոյ. նախանձ ընդ դէմ եղբայրական *սիրոյն*. խստասրտութիւն և անզղջութիւն մինչ իսպառ:** - 567. Դարձեալ՝ պատրաստութեանն ի թողութիւն պարտի լինիլ կրկին. այսինքն ճանաչումն ճշմարտին՝ և *սէր* բարւոյն: - 567. Ընդ դէմ առաջնոյն է՛ մարտնչիլ զճշմարտութիւնն ճանաչելոյ. և ընդ դէմ երկրորդին՝ նախանձն ընդ դէմ եղբայրական *սիրոյն:* - 567. Հաւատ: Յոյս: *Սէր:* - 571. Հաւատն և յոյսն և *սէրն* վասն է՞ր կոչին աստուածայինք: - 571. *Սիրովն* ցանկամք վերնային բարւոյն: - 571. Յուսովն ըմբռնի. և *Սիրովն* միաւորի աստուած: - 571. *Սիրովն* սիրեմք զնա զի ինքն ինքեամբ բարի է: - 571. Եւ որպէս հաւատն է ի հանճարն, նոյնպէս յոյսն և *սէրն* են ի կամքն վասն **բ** պատճառի: - 572. Եւ զի յառաջ եղեալ հաւատոյն է՛ ճշմարիտն. վասն այն հաւատն է՛ յիմացումն որպէս ի ենթակայս. և յառաջ եղեալ յուսոյն և *սիրոյն* է բարին, վասն այն յոյսն և *սէրն* են ի կամքն որպէս ի յենթակայս: - 572. Իսկ փառք և պսակք հետևին յուսոյն և *սիրոյն:* - 572. Ապա ուրեմն հաւատն է յիմացումն. և յոյսն և *սէրն* ի կամքն: - 572. Զի՞նչ է *սէրն:* - 574. Եւ գիտելի է, զի եռակի՛ է *սէրն*. բնական. բարոյական. և շնորհական: - 575. Բնական *սէրն* է առ ինքն: - 575. Դարձեալ զանազանութիւն է ի մէջ *սիրոյ* աստուծոյ և ընկերին: - 575. Արդ յորժամ ասեմք կրկին *զսէրն*, այսինքն աստուծոյ և ընկերին. կրկինս այս ո՛չ է ըստ ունակութեանցն. այլ ըստ ներգործութեանցն: - 575. Զի միով ունակութեամբ *սիրոյ* սիրի աստուած և ընկերն: - 575. *Սէրն* զբազում իրս նշանակէ: - 575. Երբեմն զնշանակ *սիրոյն*. ըստ այսմ որ ասէ՝ «մեծագոյն *սէր* ո՛չ ոք ունիցի». այսինքն մեծ նշան *սիրոյ:* - 575. Երբեմն առեալ լինի վասն եռանդեան *սիրոյն*...: - 575. Դարձեալ՝ *սէրն* է սկիզբն բարեաց. զի յաստուծոյ է. և է՛ մէջ բարեաց. զի ըստ աստուծոյ է. և է՛ վախճան բարեաց. զի վասն աստուծոյ է: - 575. Կամ այլ ազգ. *սէրն* է սկիզբն գործոց բարեաց, զի շարժէ՛ առ այն. որպէս ասեն վարդապետք՝ *սէրն* գործէ՛ մեծամեծս թէ է՛. և թէ դադարէ ի գործելոյն՝ ո՛չ է *սէր:* - 575. Զի՞նչ է նշանք *սիրոյ:* - 575. Եւ կարելի է որ ոք կամեսցի՝ զայսոսիկ գլուխս ի *սէրն* աստուծոյ ուղղել: - 576. Զի՞նչ է աստիճանք *սիրոյն:* - 576. Նա՛խ՝ անկատար *սէր* է մարմնոյն: - 576. Կամ անկատար *սիրով* զմեզ. և կատարեալ զընկերն. և կատարելագոյն զաստուած: - 576. Դարձեալ՝ անկատար *սէր* է ծառայական երկիւղն վասն պատժոյն: - 576. Եւ գերակատարն որդիական *սէր* վասն բնութեամբ բարւոյն: - 576. Եւ այլք **դ** դնեն աստիճանք *սիրոյ:* - 576. Նախ՝ յորժամ սիրեմ զիս վասն իմ. *սէրս* այս ո՛չ է բարի: - 576. Երրորդ՝ յորժամ սիրեմ զաստուած վասն ինքեան զի բարի է. և *սէրս* այս բարի է: - 576. Զի՞նչ է նշան կատարեալ *Սիրոյ:* - 576. **Դարձեալ՝ կատարեալ *սէր* է, յորժամ է ունակութեամբ մեծ. ներքին շարժմամբն ուղիղ. արտաքին գործքն ժիր. արմատովն հաստատեալ. ջերմ եռանդութեամբն խոհեմ. և քաղցրութեամբն մխիթարական**: - 576. Զի՞նչ է կարգ *Սիրոյն:* - 576. Կարգ *սիրոյն* ասացաւ ի վերոյ յաստուածաբանութիւնն դիոնիսեայ ի **թ** գլուխն, ի **ժզ** համարն: - 576. Ուստի՞ ուսանիմք *զսէր* ընկերին: - 577. Ո՞րն է առաւել, *սէր* ընկերի՞ն՝ թէ թշնամւոյն: - 577. Երրորդ՝ է՛ յայտնագոյն նշան *սիրոյ*. զի է՛ ընդ դէմ շարժման բնութեանն: - 577. Այս քան վասն *Սիրոյ:* - 577. Որո՞վ զանազանի հաւատ յոյս և *սէր:* - 577. Որ է՛ հաւատ՝ յոյս՝ *սէր*. և սոքա երեքեան հեղո՛ւմն են յաստուածային շնորհացն ի բանական ոգիս. որով ուղղիմք յերկնային կեանս: - 577. Նա՛խ որպէս ասէ սուրբն եւագրիոս՝ հաւատն ի հայր, յոյսն առ որդի, *սէրն* ի հոգին սուրբ: - 577. **Երկրորդ՝ հաւատն է հիմն. յոյսն որմ. *սէրն* շինուածք**: - 577. Երրորդ՝ հաւատն է որպէս արմատ ծառոյն որ է հայր. յոյսն ստեղունքն որ է որդի. *սէրն* հոգին սուրբ որ է՛ ծաղիկ և պտուղ ըստ դիոնիսեայ: - 577. Չորրորդ՝ հաւատն է յանցեալն և ի հանդերձեալն որպէս ասացաւ. յոյսն միայն ի հանդերձեալն. և *սէրն* ի ներկայն որ է միշտն: - 577. *Սէրն* առ ճշմարտութիւնն և գեղեցկութիւնն: - 578. Եւ զայս փոխեն ոմանք այսպէս. *զսէրն* առ բարութիւնն. զյոյսն ի բարձրութիւնն. և զհաւատն առ ճշմարտութիւնն: - 578. Եօթներորդ՝ հաւատովն համբերեմք. յուսովն հաստատիմք. *սիրովն* զօրանամք. և զայս ասէ նագրիոս: - 578. Ութերորդ՝ հաւատն տեսանէ. յոյսն ըմբռնէ. *սէրն*

միաւորէ՛: - 578. Իններորդ ըստ հոգւոյն մասանց. հաւատն է ի բանն. յոյսն ի ցասումն. *սէրն* ի ցանկութիւնն: - 578. Այս վասն համանման գործոց նոցա այսպէս կարգի որ են ի նոսա. այլ յոյսն և *սէրն* են ի կամքն: - 578. Յաւասարին *գսէր* և զխաղաղութիւն: - 579. **Աղքատութիւն հոգւոյ է՛ հրաժարիլն յաշխարհէ. այսինքն ի *սիրոյ* մարմնական հեշտութեանց և ի փարթամութեանց և ի պատուոյ. քանզի զերիսս զայս պարունակէ *սէր* աշխարհիս:** - 583. Ըստ այնմ որ յետս դարձուցանէ ի սիրեցելոյն է՛ միայն *սիրոյն:* - 583. Զի արդարութիւն որ ասէ աստ՝ պարունակէ՛ զհաւատն զյոյսն և *զսէրն*. որք անընդմիջաբար միաւորեն զմեզ ընդ աստուծոյ: - 584. Դարձեալ խաղաղութիւն, *սիրով* առ հոմացեղսն կալ մնալ: - 585. Որ է հաւատն՝ յոյս՝ *սէր*. խոհեմութիւն և այլն: - 587. Յաղորդութիւնն է՛ խորհուրդ *սիրոյ*. զի *սիրով* միաւորիմք և յօդիմք ի գլուխն քրիստոս. մարմին ի մարմնոյ նորա և անդամ յանդամոց նորա: - 587. Ասեմք թէ՝ եկեղեցին *սիրով* և հաւատով է միացեալ ընդ հաղորդութիւնն քրիստոսի և ո՛չ ջրով: - 596. Զի է՛ շաղկապ հոգևոր. այսինքն սրտիցն. և է՛ շաղկապ մարմնաւոր՝ խառնմամբ *սերիցն:* - 610. ...զի *սէրն* սփռեսցի և տարածեսցի ի բազում ազգս: - 612. Չորրորդ՝ զի ջե՛րմ է արտասուքն և զսառուցումն հալէ և ջերմացուցանէ *զսէրն:* - 619. Որ կամաւ խաչեցար վասն մեր, նոյն *սիրովն* ողորմեա՛ մեզ: - 632. ...զնորահրաշն, զնայեա՛ *սիրովն*...: - 637. Յինգերորդ, յաղագս ջերմ *սիրոյն* առ աստուած՝ ո՛չ բաւական համարեցաւ միայն լեզուաւ երգել աստուծոյ...: - 641. Դարձեալ՝ սիրտք մեր բուրվա՛ռ է. և աղօթքն խունկ. և հուրն ջերմ *սէրն* նիւթ բուրվառին: - 645. Երկրորդ, զի ուսցուք այսպէս զամենայն ինչս մեր հաղորդել ի պէտս կարօտելոց. և զմիմեանս մեծարել և պատուել *սիրով:* - 655. Երրորդ, որպէս ողջակէզ նորին, և մեզ պա՛րտ է զանազան փորձանաց և նեղութեան զանձինս մատուցանել *սիրովն* աստուծոյ: - 658. Եւ դարձեալ՝ աստ հաւատոյն է. իսկ յետ մահու յուսոյն. և ի յարութեանն *սիրոյն:* - 667. ...այլ ունիմք թերևս փոփոխումն յուսոյ և *սիրոյ*. - 667. ...իսկ յետ յարութեան սերտ և անքակտելի *սիրով* միաւորիմք. - 667. Չորրորդ՝ *զսէր* և զհաշտութիւն նշանակէ զոր ունիմք առ նա...: - 673. զի որպէս հոգևոր *սիրով* կեցաք. նոյնպէս *սիրով* բաժանիմք. և թէ իցէ քէն ինչ, զայն շնորհմեք միմեանց: - 673. ...և յարութիւնն միանալ *սիրով* ընդ փեսային քրիստոսի և մտանել յառագաստն ընդ իմաստուն կուսիցն: - 681. Եւ են յիմացումն և յուշի. որպէս ասէ առաքեալն թադէոս. և յոյս նոցա լի է անմահութեամբ. և *սիրով* առ աստուած միացեալ: - 685. Արդ այժմ ի մկրտութիւնն հաւատն նշան դնի հարսին. և յետ մահու յուսով կոչի ի հարսանիս. և յետ յարութեանն *սիրով* միաւորի ընդ փեսային: - 693. Պատւական ակունք *սէրն* առ աստուած և առ ընկերն. ուստի ամենայն բարեգործութիւնք կատարին: - 702. Իսկ որք շինեն փայտ, այսինքն զբորբոքեալ *սէր* ժամանակաւորացս: - 702. Երկրորդ՝ զի պատկանեալ են և համաշունչ յերգն աստուածային՝ և ի *սէրն* առ միմեանս և առ աստուած: - 713. Չորրորդ՝ զպնդութեամբ կապիլն ի *սէրն* կրկին: - 713. Զջերմ *սէրն* հուրն ցուցանէ. թէ առ աստուած և թէ ի մարմինն: - 714. Իսկ ի կատարածի ցրտացեալ լինին մարդիկ ի *սիրոյն* աստուծոյ իբր ծերացեալ աշխարհի. վասն այն ջերմ հրով պատժեսցին: - 731. Իսկ անդ հաւասարի կշիռն ըստ յուսոյ, և միտէ՛ ողորմութիւնն ըստ *սիրոյ:* - 746. Դարձեալ՝ առաջինն է ի կամքն. երկրորդն ի *սէրն*. երրորդն ի գործն: - 747. Երկրորդ, նշանակէ՛ զճածուկ *սէր* սրտին. որպէս ծուխն զհուր: - 749. Այլ և մանաւանդ վասն աստուծոյ ընդ ծառայս իւր *սիրով* միաւորութեանն: - 757. Երկրորդ, հաւատն երեսնաւոր. և յոյսն վաթսունաւոր. և *սէրն* կատարեալ հարիւրաւոր: - 757. Երրորդ յաղագս սիրելութեան ընկերացն այնոցիկ. զի այն քան եղիցի *սէր* ի մէջ նոցա, մինչ զի զուրախութիւնս նոցա ինքեանց համարեսցեն: - 764. Վասն մեծի *սիրոյն* ժառանգութիւնն այն ամենեցուն մի է իւրաքանչիւր ումեք բոլորն և ո՛չ մասնաւորն: - 764. Այս հաւատ մեծ յուսով. և կատարի *սիրով:* - 770. Թէ ի բերան պատերազմի յել անմահին և ի մուտ մահկանացուին. դիցես պահապան բերանոյդ. լար կարմիր շրթանցդ. այսինքն հաւատով *սիրով* զօրացեալ. և ո՛չ բաժանիլ ի քնասիրութիւն և յարծաթսիրութիւն. յառաքինասիրութիւն. և յախտասիրութիւն. յընկերսիրութիւն և յարատսիրութիւն: - 770-771. Եւ ապա ի *սէր* և անձուկ ժտելոյ նորին, ապաստանեալ ի նոյն որ զօրացոյց զտկարս, ձեռն ի գործ արկեալ աւարտեցաւ բազում միջոցաւ. և փախստեամբ ի տեղիս. և մեծ ջանիւ փութացեալ: - 772. Որ և աղաչեմ զբարեմիտ հանդիպօղսդ՝ եղբայրական *սիրով* հաւանիլ. զպակասն լնուլ և զաւելիսն կշռել: - 772. ...մարմնով մեռելոցն անթիւ օճիրս ստախօսութեան գործէր. զանտի կենաց զյարութեան յուսոյ և զհատուցմանց ըստ գործոց՝ բառնալով. զերկիւղ դժոխոց և *զսէր* արքայութեան. և զամենայն ինչ որ նմանէ այսմ հոգևոր բարութեան: - 775. Ո՛չ ըստ բաւական բանի առեալ զլուծումն. այլ ըստ կարի տկարութեան արտայայտումն. մանաւանդ հարկեալ ի *սիրոյ* քումդ եղբայրական խնդրոյ: - 788.

Սպառիլ *սիրոյ* և հատումն յուսոյ. բազմանալ անօրէնութեանց և տիրել անզղջութեանց: - 789. Եւ մաղթե՛մ եղբայրական *սիրով*, ըստ բնածին բարեբոյս բարուցդ ածխոյժ մտօք ուղղապէս որոնել. զթերին լնլով և զաւելորդն կշռել: - 789

**ՍԻԲԱՅ** - Դաւիթ երիցս սուգ էառ մեռելոյ. և տէրն ի վերայ երուսաղէմի և ի գերեզմանն ղազարու և մերձ ի խաչն: ...Երկու յաւանակն *սիբայի*. էշն և յաւանակն յիսուսի: - 438

**ՍԻԳԱՃԵՄ** - Եւ դարձեալ՝ ըստ սողոմոնի **գ** են *սիգաճեմք*. առիւծ՝ և նոխազ՝ և աքաղաղ: - 54

**ՍԻԴՈՆ +** Եւ որպէս եղիա որ կապեաց զերկինս և փախեաւ ի *սիդոն*. նոյն նմա հրամայեաց աստուած բանալ զերկինս. նմանապէս և այս: - 542

**ՍԻԿԻՄԱՑԻ** - Եւ տե՛ս, զի և զղևի՛ օրհնեաց. վասն զի ապաշխարեաց ի յարենէ *սիկիմացւոց* ի յարիւն եղբարցն որթապաշտից: - 409

**ՍԻԿՂ +** *Սիկղն* և սատերն և երկդրամեանն մի են. ի դանկ է. և մի դանկն **բ** գարւոյ կշիռ է: - 343. Այլ և երկդրամեանն անդրանկաց **ե** *սիկղ*: - 359

**ՍԻՂՈՒԲԱՅ +** Իսկ որ գերակատար իմացումն է և ըստ բնականին տեսութիւն՝ անկարօ՛տ է գրոց և *սիղոբայից*: - 143

**ՍԻՄԱ** - Զաքարիա *Սիմա* եղիա Մովսէս տաւղօք երգէին: - 641

**ՍԻՄԷԻ** - Եւ ո՛չ ետ պատասխանի *սիմէի* որ նախատէրն զնա՛: - 413. Եւ հրամայեաց սպանանել զյովաբ և *զսիմէի*: - 413. Դաւիթ ընդէ՞ր ոչ ետ պատասխանի անարգանացն *սիմէի*: - 433. Չորրորդ՝ զոր ծածկեաց նաթան՝ յայտնեաց *սիմէի* և եղից: - 433. Հինգերորդ՝ բանիւ և արդեամբ սպան զուրիա, և նոյնպէս վճարի. բանիւ նախատէ *սիմէի*, և արդեամբ աբիսողոմ: - 433. Անարգէ՛ *սիմէի* զդաւիթ...: - 438. Այլ և դաւիթ անյիշաչար եղև *սիմէի* նախատչի. և տէրն խաչողաց իւրոց աղօթէր: - 438. Վասն է՞ր հրամայեաց սպանանել զյովաբ և *զսիմէի* զի երդուեալ էր նմա: - 439. Երդուաւ *սիմէի* **դ** դիմօք: - 439. Այլ որ հրամայեցաւ *սիմէի* ոչ ելանել յերուսաղէմէ. և յորժամ ել մեռաւ: - 439. Չորեքտասաներորդ՝ զյովաբ սպանօղ և *զսիմէի* նախատիչ սպան սողոմոն: - 441. Եւ տե՛ս, զի *սիմէի* որքան յամեաց ի քաղաքն ըստ հրամանի սողոմոնի ո՛չ մեռաւ զերիս ամս: - 540

**ՍԻՄԷՕՆ** - Վեցերորդ՝ *սիմէօնի* զգուելն: - 471. Դարձեալ՝ մահն խառնեա՛լ է ընդ բարւոյ. և ապականութիւնն ամենևին չար. որպէս ցուցաւ ի գիրս քառասնօրեայ գալստեանն և մահուն *սիմէօնի*. ապա յա՛յտ է թէ ա՛յլ է մահ և ա՛յլ ապականութիւն: - 498. Եօթներորդ՝ ժողովն *սիմէօնի* աղուանից կաթողիկոսի և հայոց կաթողիկոսի տէր եղիայի: - 545. Զոր յառաջին ամին յորժամ նստաւ կաթողիկոս տէր *սիմէոնի*, ի ձեռն տէր եղիայի մեծահանդէս ժողովմամբ պայծառացոյց զեկեղեցի կանոնական հաստատութեամբ ի փառս քրիստոսի աստուծոյ մերոյ օրհնելոյն յաւիտեանս ամէն: - 545

**ՍԻՄՈՆ** - Զօծումն մարմնական ընկալաւ ի պոռնիկ կնոջէն յորժամ եբեկ զշիշ իւղոյն ի գլուխ նորա ի տան *սիմոնի*: - 474. Զսառուցեալսն ի հաւատս բորբոքեն. և զվառեալսն չարութեամբ՝ շիջուցանեն. որպէս զելիմաս և *զսիմոն*: - 523. Եթէ վարձատրելի է ասիցէ ոք, ապա զիա՞րդ որք ի հարկէ հաւատացին ո՛չ վարձատրեցան. որպէս դևքն ի հալածիլ. և որդիքն սկևեայ. և *սիմոն* կախարդն. և այլք նման սոցին: - 783. Իսկ *սիմոնի* և այլոցն՝ փորձիւ և թերութեամբ է հաւանութիւն: - 785

***ՍԻՄՈՆ ԿԱԽԱՐԴ*** - Իններորդ՝ զի և ի հոգևորն՝ փոքունք զմեծամեծաց անուանս կոչէին ինքեանց ի մոլորումն մարդկան. որպէս *սիմոն կախարդն* ասէր զինքենէ՛ թէ քրիստոսն իցէ. մինչև յանդիմանեցաւ ի պետրոսէ: - 238

**ՍԻՄՈՆԵԱՆ +** Աքար զարմեան և սաւուղ կիսեան և յուդա *սիմոնեան* մեղայ ասելով ո՛չ արդարացան: - 415

**ՍԻՄՔՈՒՖՏ** - Եւ այլքն պղինձ արծաթապատ. որպէս *սիմքուֆտ*, և կամ ոսկի: - 343

**ՍԻՆԱ** - Նախ՝ զի սովո՛ր է աստուած երևիլ ամպօք. որպէս ի *սինա* և ի թաբօր...: - 326. Իններորդ, նորա լուսաւորեցան երեսքն ի *սինա*: - 328. Վասն է՞ր այնպէս ահագին երևմամբ և որոտմամբ երևեցաւ աստուած ի *սինա*: - 341. Ի խորհուրդ օրհնացն. յորժամ էջ տէր ի *սինա*, փող և որոտ, հուր և ծուխ և այլն: - 644. Վեցերորդ, զի ահագին փառօք գայցէ փողով մեծաւ և անպախաղաց որոտմամբ և շարժմամբ և հրով բորբոքելոյ որպէս ի *սինայ*: - 737

***ՍԻՆԱ ԼԵԱՌՆ կմ ԼԵԱՌՆ ՍԻՆԱ*** - Երրորդ՝ բազում աստուածախօսութիւնք ի նմա եղեն. յելանելն նոյի ի տապանէն. և առ աբրահամ. և առ մովսէս ի *սինա լեառն*. և տուչութիւն օրհնացն ի կիրակէ եղև: - 193. Երեմիա և աշակերտն՝ տարան ի գիշերի զտապանակն և որ առ նմայն էին՝ ի *լեառն սինա*. և անդ

կնքեցին ի վիմին անուամբն աստուծոյ ասելով, ո՛չ ոք բացցէ զսա՞ թէ ոչ մովսէս որ եբերն. և ո՛չ ոք բացցէ՝ թէ ոչ ահարոն: - 345. Իսկ մեք **խ** զմովսէսին պահեմք որ ի *լեառն սինա*, և յեսու արտաքոյ միգին: - 363. Նա՛խ՝ զի յայսմ աւուր երևեցաւ աստուած մովսէսի ի *սինա լեռինն:* - 523-524. Երկրորդ՝ ի *լեառն սինա* թէ անասուն մերձենայր քարկոծ լինէր: - 617. Եւ գրակալք և բեմն, *լեառն սինա* անմատոյց բազմաց: - 644. Երկրորդ երևելի ձայնն հրեշտակապետին. որպէս ձայնն փողոյ ի *սինա լերինն*. և ազդումն զօրութեանն քրիստոսի: - 713

**ՍԻՆԻԳՐԷՍ** - Իսկ յետ սորա՝ *Սինիգրէս* արար զառաջին ձայնն, ի հիւսնականէ՛ գտեալ արուեստից: - 640

**ՍԻՈՆ** - Եւ տէր *սիոն* հայոց կաթողիկոսն անդր հասեալ բազում եպիսկոպոսօք և մեծամեծ ազատօք հայոց և իշխանօք նոցին. ընդ դէմ աղանդոց ա՛յնր ժամանակի, և թուլութեան կարգաւորաց եկեղեցւոյ, և բռնութեան իշխանաց: - 545

**ՍԻՈՎՆ** - Եւ վերջոյ ի հիւսիս. որ ցուցանէ զշնորհին որ ի հինն *սիովնէ* հնչեաց յեկեղեցիս հեթանոսաց...: - 674

**ՍԻՍԱՐԱ** - Սա՛ սպան *զսիսարա* և զաբէն ի ձորն կիսոնի. և այլազգիքն ամս է: - 420. Այլ և ցիցն ի ձեռին յայելի զոր վարսեաց ընդ ծամելիսն *սիսարայ:* - 494

**ՍԻՐԱԼԻ +** Ո՛չ իբր կարօտի բազմաց բաշխողի. կամ փորձողի փորձոյ *սիրալի:* - 773

**ՍԻՐԱԼԻՐ +** Զի թերևս վասն ձեր *սիրալիր* մաղթանացդ՝ գտայց ողորմութիւն յամէնողորմ փրկչէն մերմէ: - 773

**ՍԻՐԱԿԱՆ +** Առաջին՝ կոչումն *սիրական* որ ասէ «եկա՛յք»: - 740

**ՍԻՐԱՔ** - Իններորդ հարցումն հակառակորդաց՝ որ ասէ *սիրաք՝* «ես ի բերանոյ բարձրելոյն ելի անդրանիկ ամենայն ստեղծուածոց»: - 41. Վեցերորդ՝ ստեղծանելն՝ միայն աստուծոյ է. այլ *սիրաք* ասէ զաստուծոյ թէ՝ «նա՛ ստեղծ զիմաստութիւն հոգւովն սրբով»: - 57. *Սիրաք*. և Յոբն. որ լինի **լ**: - 450. Իսկ *Սիրաք* և Իմաստութիւնն և Յուդիդն և Տուբիդն և Տուբիայն և Մակաբայեցիքն և Կտակքն և այլք, չեն յայսմ համարի: - 451. Եւ սկիզբն ամենայն մեղաց ամբարտանութիւնն է որպէս ասէ *սիրաք:* - 569. Այլ և վկայէ՛ *սիրաք* զի զղջացաւ ադամ...: - 778

**ՍԻՐԵԼԻ +** Երկրորդ՝ վկայէ՛ *սիրելի* աշակերտն յօհաննէս, «զաստուած ո՛չ ոք ետես. բայց միածին որդին նա՛ պատմեաց մեզ»: - 96. Սէր և *Սիրելի* և Բարի է Աստուած: - 102. Ութերորդ՝ *սիրելեաց* և ատելեաց ընտրութիւն շնորհէ: - 126. Իսկ զարմացումն լինի ի սիրոյ առ *սիրելին*. զի զմիտս զկեանս և զամենայն ինչ թողու սիրողն՝ և *սիրելւոյն* համարի: - 127. Դարձեալ՝ նախանձո՛տ է և նախանձելի. այսինքն նախանձո՛տ է իբր զսիրեցող. և նախանձելի իբր *զսիրելի*. զի շարժէ՛ զմեզ ի սէր իւր: - 128. Ո՞րպէս կոչի աստուած սիրող՝ և սէր և *սիրելի:* - 128. Զայս ոմանք ի վերայ սուրբ Երրորդութեանն մեկնեն այսպէս. սիրող է հայր. *սիրելի* որդի. և սէր հոգին սուրբ: - 128. Եւ է՛ ինքն բարի և գեղեցիկ, կոչի *սիրելի:* - 128. Չորրորդ՝ սիրող՝ որպէս սկիզբն մեր. և սէր՝ որպէս հաստատութիւն. և *սիրելի*՝ որպէս կատարումն: - 128. Մետասաներորդ՝ որպէս հայրն զորդին գան հարու զի զգաստացեալ մի՛ զրկեսցի ի ժառանգութենէ հայրենեացն. այսպէս և աստուած զսուրբս և *զսիրելիս* իւր խրատէ՛: - 159. Յնգետասաներորդ՝ ասէ սուրբն դիոնէսիոս՝ թէ վասն այն տայ աստուած սրբոցն նեղութիւնս և փորձութիւնս, զի նեղութիւնն *սիրելի* և փափագելի՛ է նոցա. և յայնժամ ուրախանան սուրբքն, յորժամ ի մարմնական հեշտութեանց հեռանան. և արիանան ի փորձութիւնս. և սակաւ նեղութեամբ ժամանեն ի մեծ հանգիստն: - 159-160. Իսկ թէ կամիս ուսանիլ թէ զի՞նչ է նիւթ պսակին. որ ինչ առ աստուածութեան իւրում մեծութիւն գտանի, զա՛յն պատրաստեաց *սիրելեաց* իւրոց. զոր ո՛չ կարեմ զմտաւ ածել. կամ վայրապար լսելեօք լսել: - 161. Զայս և սովո՛ր են առնել մարդիկք առ մերձաւորս և *սիրելիս* անընդմիջաբար խօսին. և առ հեռաւորս կամ ատելիս գրով կամ միջնորդով: - 177. Եւ այսպէս ջերմ և ցուրտ, չոր և գէճ, թշնամիք են անհաշտելիք. և լինին միաւորեալք դարձեալ ծայրիւքն և մնան *սիրելիք* անքակտելիք այսպէս: - 181. Եւ ա՛յս է՝ թշնամիք անհաշտելիք. և *սիրելիք* անքակտելիք: - 181. Չորրորդ՝ զի յերեսա՛ցն ճանաչեմք *զսիրելիս*. վասն որոյ առաւել ցանկալի է: - 234. Ութերորդ՝ զի ո՛չ երևէր բարեկամն և թշնամին. *սիրելին* և ատելին. և լինէին բազում սպանութիւնք և աւերք. զի ոչ զգուշանային միմեանց: - 238. *Սիրելի* ասելով՝ առաւե՛լ շարժէ զգութ ծնողին: - 304. Նոյնպէս և սատանայ ատէ՛ր զմարդկային բնութիւնս զի ի պատկերն աստուծոյ արարաւ. և հրէայքն ատէին զքրիստոս. զի վկայեաց հայր թէ դա՛ է որդի իմ *սիրելի:* - 313. Նոյնպէս և քրիստոս աստ ի գնալն հոգւոց և ի գալստեանն աւուր՝ ընդ առաջ ելանէ սրբոցն և համբուրէ *զսիրելիս* իւր, որպէս հայրն երկնաւոր ի

դարձ անառակին: - 315. Եւ նախ կոչիւր յոբաբ, որ է՛ *սիրելի* աստուծոյ. և կոչեցաւ յոբ, որ է՛ հայր. զի հա՛յր եղև համբերութեան: - 320. Եւ պատուէրն է խրատ *սիրելեաց* և որդւոց: - 340. Նոյնպէս որ պատրաստեաց *սիրելեաց* զփառս, և զտանջանս չարեաց, անգիտելի՛ է այժմու կենացս: - 406. Չինգերորդ՝ զի ցուցանէ թէ՝ որ ի *սիրելին* իւր դաւիթ ոչ խնայեաց, նոյնպէս և զամենայն մեղաւորս յանդիմանէ՛: - 432. Առաջին, զի կոչեցաւ յաստուծոյ սիրեցեալ *սիրելի:* - 440. Նաև յանձեռագործ խորանն հրաւիրէր *զսիրելիս* իւր: - 442. Երրորդ՝ զի ի մէջ ծանօթից էր և *սիրելեաց:* - 490. ...դաւիթ ...յաւարէ աստի բաշխեաց ամենայն *սիրելեաց* իւրոց: - 514. Եւ էր *սիրելի* փլաքիանոսի. և լևոնի. և թէոդորիտոսի զորս նզովեցին յեփեսոս. և վասն նոցա վրէժխնդրութեանն արարին ժողով ուզ եպիսկոպոսաց. և ընկալան զթուղթն լևոնի. և զնզովեալն յեփեսոս զփլաքիանոս ընկալան...: - 542-543. Չորրորդ՝ խորհուրդ մեղացն ճշմարիտ և բարի ցուցանէ զգործն և *սիրելի* և հեշտ. վասն որոյ յօժարի և եռայ ի կատարումն: - 558. Նա՛խ՝ զի *սիրելին* յօժարութեամբ լսէ սիրելոյն: - 575. Իննե՛ւ զամենայն ինչ *սիրելւոյն* իւրն համարի. և զիւրն *սիրելւոյն:* - 576. Քսաներորդ, յամենայն տեղւոջ իւր *սիրելեաւն* պարծի: - 576. Քսանևք, որք հայհոյեն *զսիրելին* խոյս տայ ի նոցանէ: - 576. Սիրել *զսիրելիս* պարտական է ամենայն ոք. այլ սիրել զթշնամիս է՛ առաւել արդիւնաւոր: - 577. Արիութիւն է զօրութիւն իմն որով հեշտութեամբ տանի ամենայնի վասն *սիրելի* իրաց: - 580. ...այլ *սիրելիք* են բարի գործօք առ հասարակ հաւատացեալքն. և նազելիք կուսութեամբ ծգնեալքն և մարտիրոսքն: - 600. Չինգերորդ, ընտիրն յա՛չս մեր *սիրելի*՛ է. որպէս իսահակ աբրահամու: - 657. Դարձեալ՝ ցուցանէ՝ իբր թէ *սիրելոյն* որ մեռաւ՝ կցորդիմք և չարչարեմք զմարմինս. մերկանալով, ի սով և ի ծարաւ, ի մութն և ի հող որպէս նա ի գերեզմանի եղև: - 670. Եօթներորդ՝ զի *սիրելի* և համբուրելի է նշխարքն սուրբ որ ի քրիստոս միացաւ և օծաւ, և քրիստոսի եղև բաժին: - 673. Իններորդ, զի մի՛ պաշտեսցեն զդիս մեռեալ *սիրելեաց* իւրեանց...: - 677. ...որ այս եղև սկիզբն պարկեշտութեան յորժամ *զսիրելի* զաւակաց պատկերս արարին և պաշտեցին: - 677. Երկրորդ, զի *սիրելիք* նոցա որք անդ ժողովին, տօնեն և յիշեն զնոսա աղօթիւք առ աստուած: - 678. Չոգիքն աղօթե՞ն վասն *սիրելեաց* իւրեանց, թէ ոչ: - 685. Արդարքն վասն իւրեանց *սիրելեացն* միշտ աղօթեն զի ազատեսցին ի փորձանաց և ուղղեսցին ի մոլորութեանց և ընկեր փառաց նոցա լինիցին: - 685. Արդ եթէ *սիրելիքն* աստուծոյ որք զարիւնս իւրեանց հեղին վասն քրիստոսի՝ ոչ առնուն զվարձս իւրեանց, նմանապէս և ամենայն ազգ մարդկան: - 694. Այլ ի գալուստն քրիստոսի Առաջին փառք է՝ զի փառաւոր երևեսցի *սիրելեաց* իւրոց, յայտնեալ զաստուածութեան փառս միաւորեալ ի մարմնի. որպէս երևեցաւ ի թաբօր: - 736. Չոգին սուրբ բերանով *սիրելեաց* և թշնամեաց յառաջագոյն օրհնեաց զարժանաւորս...: - 740. Երկրորդ կոչի հնձան արքայութիւնն երկնից. ուր ժողովին պսակք և փառք զանազան հանգստեան սրբոց զոր պատրաստեալ է աստուած *սիրելեաց* իւրոց ըստ առաքելոյ: - 748-749. *Սիրելին* ի մէջ դստերաց: - 756. Որ բանիւքս այսոքիւք հարսն ասէ զինքն պահեալ *սիրելոյն:* - 756. Սոքա՛ են հոսանք ջուրցն լիութեան. զորոց յերգս գտանի *սիրելոյ*. որ ի խորութիւնն հայեցեալ աղաւնւոյն, ի գալստեանէ բազային զգուշանայ: - 756. Զոր ակն ո՛չ ետես, և ունկն ո՛չ լուաւ, և ի սիրտ մարդոյ ո՛չ անկաւ, զա՛յն է պատրաստեալ աստուած *սիրելեաց* իւրոց: - 761. Էր և տեսանել աստ աղիողորմ տեսիլ. միայն արտասուալի դիմօք և կականաբարձ հառաչմամբ. ազգք և *սիրելիք*. ծնօղք և եղբարք: - 789

**ՍԻՐԵԼՈՒԹԻՒՆ +** Եւ որոշի դէմք *սիրելութեանն* յերկուս. ի յինքն և ի յայլս: - 143. Դարձեալ՝ մարդո՛յն է յատուկ ունել զամենայն *սիրելութիւն* առ ամենայն ազգս. առ վերինս և առ ներքինս և առ միջինս: - 274. Չնգետասաներորդ՝ քարշէ՛ և զայլս ի *սիրելութիւն* նորա: - 576. Իսկ հոգին՝ Զիմաստութիւն. *Զսիրելութիւն*. Զմիաբանութիւն. Զիշխանութիւն. Զպատիւ. Զանհոգութիւն. և Զուրախութիւն: - 761. Կամ *սիրելութիւն* որպէս դաւթի և յովնաթանու. զոր սիրեաց որպէս զհոգի իւր: - 761. Երրորդ յաղագս *սիրելութեան* ընկերացն այնոցիկ. զի այն քան եղիցի սէր ի մէջ նոցա, մինչ զի զուրախութիւնս նոցա ինքեանց համարեսցեն: - 764

**ՍԻՐԵՄ +** Եօթներորդ՝ եթէ չարն է յաստուծոյ, ապա *սիրէ* զչարն. և եթէ *սիրէ* զչարն, *սիրէ* և զչարագործս որք *սիրեցին* զչար: - 14. Դարձեալ ասեմք թէ՝ աստուած ստեղծ զկամքն նաև զիրեշտակս և զմարդիկ բարի. և կամի զբարին և բռնադատէ՛ *սիրել* զբարին: - 17. Դարձեալ՝ բնականապէս ամենայն նախանձ ունի *սիրել* զինքն, և ատել զայլս: - 128. Իսկ նախանձն աստուծոյ պարզապէս միայն ունի *սիրել* և զայլս և ո՛չ ատել. զի նախանձն աստուծոյ՝ սիրոյ առաւելութիւնն է. որպէս բոցն հրոյ: - 128. Դարձեալ՝ նախանձո՛տ է և նախանձելի. այսինքն նախանձո՛տ է իբր *զսիրեցող*. և

նախանձելի իբր զսիրելի. զի շարժէ՛ զմեզ ի սէր իւր: - 128. Դարձեալ՝ ինքնանախա՛նձ է. զի ո՛չ յայլմէ շարժի ի սէր որպէս մեք. այլ յինքենէ՛ շարժի ի *սիրել* և ի *սիրիլ:* - 128. Երկրորդ՝ զի էութիւնն աստուծոյ սէ՛ր է. և շարժի՛ *սիրել* զմեզ. և շարժէ՛ զմեզ *սիրել* զինքն: - 128. Չորրորդ՝ զի զբարին *սիրեցին:* - 139. Բոլո՛ր է՝ յորժամ զիմացումն մտաց յամենայն եղելոց առ ինքն ժողովէ՛, և այնպէս բոլորովիմբ յաստուած հպի և միանայ. և ա՛յս է ի բոլոր սրտէ և ի բոլոր մտաց *սիրել* զաստուած. և զայս ունին ընտրեալքն մարգարէք և առաքեալք: - 142. Եթէ զգայութեամբ և մարմնով *սիրեսցես* զաստուած՝ լինի կատարեալ սէր: - 143. Եւ եթէ զգայութեամբ *սիրեսցես* զմարմնականս՝ լինի անկատար սէր: - 143. Ի յինքն՝ զի իւրաքանչիւր ոք *սիրէ* զինքն և կամի զգոլն իւր: - 143. Իսկ վերնագոյն սիրով *սիրեն* արարածք զարարիչն. և վերջին հրեշտակք զառաջինսն. և որդիք զհարս. և նւազք զմեծամեծս. և այս սիրովս միաւորին ընդ նոսա: - 143. Իսկ հաւասար սիրով *սիրէ* մարդ զմարդ. և ընկեր զընկեր. այլ և մարդ զհրեշտակս. և հրեշտակք զմարդիկ. և զհաւասար արարածք են: - 143. Զամենայն հրեշտակս բարի արար աստուած, այլ ո՛չ ծայրագոյն բարիս. այլ միջակս. որ է ի մէջ անփոփոխ և փոփոխական բարւոյն. այնպէս՝ զի թէ դառնային և *սիրէին* զայն՝ որ ի վեր քան զինքեանս, ելանէին յորպիսութիւն շնորհաց և փառաց. որպէս այժմ են հրեշտակք բարիք: - 146. Նմանապէս և այն. յորժամ զամենայն ինչ թողումք և ի լոյս ճրագին նայիմք. զի ազգական է իւր՝ զայն *սիրէ* և տեսանէ: - 239. Ի նոյն խոկալով *սիրել* զնա՛ և ատել զհեշտութիւն զգայութեանցս: - 269. Երեքտասաներորդ՝ ճշմարտի գիտօղ և սիրօղ է աստուած. և միայն մարդս է ի զգալիս որ ճշմարիտն գիտէ և *սիրէ:* - 272. Չորեքտասաներորդ՝ սէ՛ր է աստուած և աղբիւր սիրոյ. և մեզ պատուիրեաց *սիրել* զմիմեանս: - 272. Եւ նման աստուծոյ, զի *սիրեմք* զբարութիւն որպէս ասացաւ ի վերոյ: - 273. Բնական պատկեր է, որով իմանամք և կարեմք *սիրել* զաստուած. և այս հասարա՛կ է բարեաց և չարաց: - 273-274. Իսկ պատկեր շնորհաց և փառաց է, կատարելապէս ճանաչել և *սիրել* զաստուած. և այս է նմանութիւնն զոր կատարեալքն ունին աստ և ի վերին գաւառին: - 274. Իսկ անասունք *սիրեն* միայն զսննդակիցս իւրեանց: - 274. Եօթանասունք, Վասն է՞ր զազգն հրէից միայն *սիրեաց:* - 285. Վասն էերորդին, ա՛յն քան *սիրեցաւ* յաստուծոյ, մինչ զի յետ մահուանն վրէժ խնդիր եղև արեան նորա...: - 287. Դարձեալ *սիրեցաւ* յաստուծոյ, զի առաջին մարտիրոս սա՛ եղև. թէպէտ թոյլ ետ իջանել ի դժոխս, զի ի պատճառս նորա խնդրեսցին այլքն. որպէս ի պատճառս ղովտայ զերծան սոդոմայեցիքն աբրահամաւ: - 287. Երկրորդ՝ ատէին եղբարքն զյովսէփ, և հայրն *սիրէր:* - 313. Նա՛խ՝ հաւատով ճանաչելն է զերրորդութիւնն մի բնութիւն, և ապա գործով *սիրել* զնա. որպէս նախ ուսանիլն է և ապա առնել: - 396. Այլ և զգայութիւնք և միտք և խորհուրդք. ասէ՝ ամենայն մասամբքն *սիրեա՛* զաստուած: - 396. Եւ դարձեալ՝ հոգւովդ և բոլոր մարմնով և բոլոր մտօք *սիրեա* և ո՛չ մասամբ: - 396. Դարձեալ՝ զերեք տեսակ սիրոյն ցուցանէ. մարմնով և հոգւով և մտօք *սիրել* զաստուած: - 396. Եւ մտօքն յօժարութեամբ *սիրել* և յորդիութիւն նորա ելանել: - 396. Վեցերորդ՝ միտք բանիս այս է, որ պա՛րտ է կատարեալ սիրով *սիրել* զաստուած: - 396. Առաջինն՝ նախ *սիրել*. և առանց փոխարինաց: - 396. Եւ երկրորդ՝ բոլոր *սիրել* և միշտ *սիրել:* - 396. Զի որ յետոյ *սիրէ* և փոխարինօք և մասնաւոր և երբէք, անկատար սէր է և մարմնական: - 396. Եօթներորդ՝ *սիրի* աստուած բոլորով սրտիւ, այսինքն անմոլար իմացմամբ: - 396. Վասն է՞ր հասարակաց արարիչն զազգս հրէից միայն *սիրեաց* այնպիսի օրինօք՝ նշանօք՝ և այլն...: - 398. Ակնառութիւն ո՛չ է աստուծոյ. զնախնիքն *սիրեաց* աստուած, զի արժանիք էին. և եցոյց նոցա զինքն. և զխոստումն աւետեաց ուխտեաց նոցա մարդ լինիլ ի զաւակէ նոցա յետոյ: - 398. Երկրորդ՝ բարոյական. զի մին կնօջ ի բազում արանց ո՛չ երևի հարազատ զաւակն. իսկ մի այր ի բազում կանանց կարէ՛ ծնանիլ հարազատ մանկունս և *սիրել* զնոսա: - 401. Եւ եկեղեցի եթող զպաշտօնս իւր և զչարիս՝ և *սիրեաց* զքրիստոս: - 417. Երկրորդ՝ կոչի դաւիթ որ է՛ *սիրեցեալ* և բաւական ձեռօք. և տէր մեր *սիրեցեալ* ի հօրէ և ի մարդկանէ իբր զորդիս մի եղջերոյ. և նա՛ է բաւական յամենայն գործս և ի պարգևս: - 435. Առաջին, զի կոչեցաւ յաստուծոյ *սիրեցեալ* սիրելի: - 440. Զի փառասէրն զիւր փառքն և զիւր բարին *սիրէ*. և զայլոց փառք և զբարիս յաչաղէ և ատէ: - 559. Այսպէս մեղանչէ սատանայ և մարդ. զի զլոյսն աստուծոյ անձնիշխան կամօք և իմացմամբ մերժէ՝ և *սիրէ* զխաւար: - 562. Սիրովն *սիրեմք* զնա զի ինքն ինքեամբ բարի է: - 571. Եւ վասն այն *սիրեմք* զընկերն, զի ստեղծուած և պատկեր աստուծոյ է: - 571. Զի զաստուած *սիրեմք* ի յինքն և վասն ինքեան. այլ զընկերն ի յաստուած և վասն աստուծոյ: - 575. Զի միով ունակութեամբ սիրոյ *սիրի* աստուած և ընկերն: - 575. Նա՛խ՝ զի սիրելին յօժարութեամբ լսէ *սիրելոյն:* - 575. Մետասաներորդ՝ *սիրէ՛* զոր ինչ նա: - 575. Նախ՝ յորժամ *սիրեմ* զիս վասն իմ. սէրս այս ո՛չ է բարի: - 576. Երկրորդ՝ յորժամ *սիրեմ* զաստուած

վասն իմ. այս է վարձկականն: - 576. Երրորդ՝ յորժամ *սիրեմ* զաստուած վասն ինքեան զի բարի է. և սէրս այս բարի է: - 576. Չորրորդ՝ յորժամ *սիրեմ* զիս վասն աստուծոյ. և այս ևս է լաւագոյն. զի ո՛չ խնդրէ մարդ զիւրն, այլ զաստուծոյն միայն: - 576. Երեք. այսինքն զի բոլոր սրտիւ *սիրէ* և միշտ *սիրէ* և առանց փոխարինաց *սիրէ*. որպէս ասացաւ յերկրորդ օրէնքն: - 576. Եւ այլ վարդապետք ասեն, *սիրել* պարտ է նախ զայն որ ի վերո՛յ է քան զմեզ. այսինքն զաստուած. և ապա՛ զմեզ. յետ որոյ զընկերն. և ապա՛ զմարմինս մեր. և ի նոյն աստիճանս զմարմին ընկերին. զի մարմինն երկրորդ է հոգւոյն: - 576. Եւ այլք ասեն՝ նախ *սիրելոյ* է աստուած. երկրորդ ծնօղքն. յետոյ որդիքն. ապա՛ ընտանիքն. վերջոյ թշնամիքն: - 576. Եւ վասն չորից պատճառաց լաւագոյն է *սիրել* քան *զսիրիլ:* - 576. Նա՛խ՝ զոր ինչ սիրեմք *գիտեմք*. այլ թէ *սիրիմք* ո՛չ գիտեմք: - 576. Երկրորդ՝ զոր *սիրեմք*՝ է՛ յատուկ առաքինութիւն մեր. այլ թէ *սիրիմք*՝ է՛ առաքինութիւն այլոց: - 576. Երկրորդ՝ զոր սիրեմք՝ է՛ յատուկ առաքինութիւն մեր. այլ թէ *սիրիմք*՝ է՛ առաքինութիւն այլոց: - 576. Երրորդ՝ յորժամ *սիրեմք* պարտական առնեմք զայլս. և յորժամ *սիրիմք* պարտական լինիմք այլոց: - 576. Չորրորդ՝ յորժամ *սիրեմք* շահիմք մեզ. այլ յորժամ *սիրիմք*՝ ա՛յլք շահին ինքեանց: - 577. Երրորդ՝ ի ստեղծուածոց. զի ամենայն նման *սիրէ* զնմանն իւր. և խնդայ ընդ նմանին: - 577. Ի հինն ասաց *սիրել* զընկերն, և ի նորս յաւել *սիրել* զթշնամին: - 577. *Սիրել* զսիրելիս պարտական է ամենայն ոք. այլ *սիրել* զթշնամիս է՛ առաւել արդիւնաւոր: - 577. Զո՞ր թշնամիս պարտ է *սիրել:* - 577. Զթշնամիսն մեր պա՛րտ է *սիրել* և աղօթել վասն նոցա. և զթշնամիսն աստուծոյ ատել...: - 577. Դարձեալ՝ պարտ է *սիրել* զմարմնոյ թշնամիս մեր: - 577. Զի հաւատովն հաւանիմք աստուծոյ. յուսովն ապաստանիմք ի յաստուած, և *սիրեմք* զաստուած: - 578. Գթութիւն է գութ ցուցանել առ ընկերն և *սիրել* զնա. վասն զի պատկեր աստուծոյ է: - 582. Երկիւղ է հոգևորապէս փախուստ ի չարէն. զի մի՛ կորուսանիցէ զայն զոր *սիրէ:* - 582. Ըստ այնմ որ յետս դարձուցանէ ի *սիրեցելոյն* է՛ միայն սիրոյն: - 583. Սրբութիւն սրտին է որով պայծառանայ և մաքրի սիրտն առ ի տեսանել զաստուած. և առ ի *սիրել* յոյժ ջերմ եռանդապէս: - 585. Նա՛խ՝ զի միայն զհեշտ ցանկութիւնն *սիրեն* հանապազ. ինքն և գործակիցն իւր: - 613. ...նոքա *սիրեն* զտէր. և զօրացեալ ի նմանէ՝ կոխեն զանմարմին թշնամին. որպէս ժողովուրդն զփարաւօն: - 629. որ ի դատաստանին պատասխանի չունենայ թէ ինձ զի՞նչ տուեր որ զքեզ *սիրէի:* - 664. Երրորդ, զլաւ մարդն աղքատացնէ և փորձէ, թէ վասն ընչի՞ցն *սիրէր* զաստուած՝ թէ յաղքատութեանն այլ նոյնպէս է. որպէս յոբայն: - 664. Իսկ մեղաւորքն ի ձախմէ. այսինքն վայր ի յերկիր ծանրացեալ մեղօքն. որպէս կապար ի յերկիր հակեալ. ուր բոլորով սրտիւ *սիրեցին* զնա: - 738. Վասն վեցերորդին, որք զխաւար մեղաց աստէն *սիրեցին* և առ լոյսն քրիստոս գալ ո՛չ կամեցան. վասն այնորիկ ահագին խաւարաւ անդ նըսեմանան: - 752. Կամ սիրելութիւն որպէս դաւթի և յովնաթանու. զոր *սիրեաց* որպէս զհոգի իւր: - 761

**ՍԻՐԵՑԷՔՆ** - Որպէս ասէ *սիրեցէքն*, «անհաւատութեանն յիշատակ եղև արձան աղի. որպէս սոդոմայեցիքն չարութեան գործոցն»: - 303. Այսմ պատասխանէ՛ իմաստունն ի *սիրեցէքն* և դնէ **դ** պատճառ: - 333. Չորս պատճառս ասէ իմաստունն ի *սիրեցէքն:* - 339. Իններորդ՝ ասէ *սիրեցէքն* «խնայեաց ի նոսա աստուած՝ մարդիկ գոլով և ստեղծուած նմա. զի փոքր պատուհասիւն զղջացին և ի յաւիտենական մեծ պատժոցն զերծանիցին»: - 417. Եւ արդարութիւնն է մշտնջենաւոր. որպէս ասէ *սիրեցէքն:* - 579

**ՍԻՐՈՂ +** Վեցերրորդ՝ զի պահանջէ՛ ի *սիրողաց* իւրոց միշտ զայն խորհիլ. զի որպէս ինքն վասն սիրոյ զանձն իւր եդ ի վերայ մեր, և մեք վասն սիրոյ նորա փոխարէն դիցուք ի վերայ նորա: - 43. Իսկ թէ զմարդն ասես նստեալ, ահա՛ զբանն զրկեցեր յաթոռակցութենէ հօր՝ ո՛վ *սիրողդ* առանձնութեան: - 70. Իսկ զարմացումն լինի ի սիրոյ առ սիրելին. զի զմիտս զկեանս և զամենայն ինչ թողու *սիրողն* և սիրելւոյն համարի: - 127. Ո՞րպէս կոչի աստուած *սիրող*՝ և սէր և սիրելի: - 128. Զայս ոմանք ի վերայ սուրբ Երրորդութեանն մեկնեն այսպէս. *սիրող* է հայր. սիրելի որդի. և սէր հոգին սուրբ: - 128. Երրորդ՝ զի ինքն ինքեա՛մբ է յառաջածու, վասն որոյ կոչի *սիրող:* - 128. Չորրորդ՝ *սիրող*՝ որպէս սկիզբն մեր. և սէր՝ որպէս հաստատութիւն. և սիրելի՝ որպէս կատարումն: - 128. Երեքտասաներորդ՝ ճշմարտի գիտող և *սիրող* է աստուած. և միայն մարդս է ի զգալիս որ ճշմարիտն գիտէ և սիրէ: - 272

**ՍԻՐՏ +** Եօթներորդ՝ քննել *զսիրտս* աստուծոյ՝ ո՛չ է ստեղծուածոյ ումեք...: - 57. Վեշտասաներորդ՝ գիտել զգաղտնիս *սրտից*՝ միայն աստուծոյ է...: - 58. Այսպէս և հոգւոյն բարեխօսելն է. զի ինքն ծագէ ի *սիրտս* մեր զբարեխօսն լինիլ յաղօթս. այսինքն զայն խնդրել որ ինչ ի փառս աստուծոյ է: - 59. Ահա զսակաւ ընծայ կարճառօտութիւն բանիս ընկալ ի քում ընդարձակութեան գանձարանի *սրտի*՝

երիցագոյն հարազա՛տդ Գէորգի է: - 95. Այլ որ զայլոց *սիրտս* գիտէ՝ ապա առաւել զիւրն գիտէ: - 97. Այսպէս պարտէ *սրտիւ* հաւատալ. և բերանով խոստովանիլ...: - 101. Եւ ըստ չափոյ ընդունողաց ծնանի քրիստոս ի *սիրտս* մեր: - 125. Ա՛յլ է բանն՝ և ա՛յլ է ձայնն. զի բանն անմարմին ծնունդն է մտաց. և ձայնն է՛ շարժումն օդոյ ի ձայնական գործեաց ի յօդս բախեալ. իսկ ի *սրտի* միաւորին նոքա՝ այսինքն բանն և ձայնն...: - 131. Բոլո՛ր է՝ յորժամ զիմացումն մտաց յամենայն եղելոց առ ինքն ժողովէ՛, և այնպէս բոլորովիմբ յաստուած հպի և միանայ. և ա՛յս է ի բոլոր *սրտէ* և ի բոլոր մտաց սիրել զաստուած. և զայս ունին ընտրեալքն մարգարէք և առաքեալք: - 142. Դարձեալ՝ հոգին խօսի ընդ դիւին, զի զբաղձանք *սրտին* տպաւորէ ի զգայութիւնսն: - 145. Հինգերորդ՝ ցնծութիւն է աչաց և *սրտից:* - 196. Հովացուցանէ՛ *զսիրտս:* - 203. Նա՛խ՝ զի ի ձմեռն ջերմութիւնն ի *սիրտ* երկրի ժողովի. և յամառն ի վեր յերես սփռի: - 208-209. Ջորօրինակ՝ յորժամ մարդն մեռանի՝ ջերմութիւնն ի *սիրտն* ժողովի և ապա քաղի: - 209. Այլ և գազանաբար *սրտիւ:* - 212. Վեցերորդ՝ ըստ այլոց. զի բոլոր թանձր մարմինն է՛ հողոյ. և ամենայն հիւթք և մաղձք է՛ ջրոյ. թոքն է՛ օդոյն. և *սիրտն* է՛ հրոյն ջերմ գոլով: - 215. Կարգաւոր էր նախ պատրաստել զարքունիս որ է երկինք և երկիր. և զգահոյս որ է՛ դրախտն. և զսպասաւորքն որ են կենդանիքն. և զմեծութիւնս տնկոց և բուսոց. մանաւանդ ոսկւոյ և արծաթոյ և ականց ի *սիրտ* երկրի գանձել. և ապա՛ թագաւորին բնակիլ: - 230. Եւ օդն է ի թոքն. զի հանապազ ի շարժութեան կայ և փչէ՛ ընդ դէմ ջերմութեան *սրտին:* - 232. Եւ հուրն է ի *սիրտն*. զի *սիրտն* ջե՛րմ է և նման է հրոյ. լայն է տակն և բարակ ծայրքն: - 232. Այսպէս և գլուխն ի մարմինն է՛ վերջին մասն. որ է՛ գործիք բանին. և *սիրտն* ի մէջն. և երիկամունքն վերջին: - 232. Երրորդ՝ զի երեսն հայելի է *սրտին*. և նորա փոփոխմամբն զխորհուրդն ճանաչեմք. որպէս ի տխրիլն և ի զուարճանալն և յայլն...: - 234. Առաջինն *սիրտն* է՛ թագաւոր անձինն. տա՛ք է և չոր. և իւր տանուտէր արեգակն է: - 241. Երկրորդն ուղեղ գլխոյն է. հով է և գէճ ընդ դէմ *սրտին* ջերմութեանն և չորութեանն. զի բարեխառնեսցէ՛ զնոսա. և իւր տանուտէր լուսինն է: - 241. Վասն է՞ր երիկամունքն ճարպով պատեալ է, և *սիրտն* և լեարդն ոչ: - 241. Իսկ *սիրտն* զի առաւել ջերմ է՝ հալէ՛ զճարպն: - 241. Ջդառնութիւնն ի լեղին. և զիոտածն յերիկամունքն. և զմրուրն և զթթուն ի փայծեղն. և զքաղցր արիւնն ի *սիրտն*. և *սիրտն* երակովն և շնչովն բաժանէ ի բոլոր մարմինն: - 242. Զի **դ** հիւթն ներքին անդամոց՝ ի ձեռն *սրտին* պատճառե՛ն զ**դ** հիւթն արտաքին: - 243. Զի *սրտին* արիւնն և լեարդն և լեղին որք ջերմայինք են՝ ի յաջոյ կողմն են մարդոյն: - 243. Իսկ *սիրտն* սկիզբն է շնչերակացն: - 244. Զի *սիրտն* ունի **բ** տուն. ի յաջ կողմն իւր զարիւնն ժողովեալ որ առնու ի լերդէն: - 244. *Սիրտն* իշխա՛ն է անձինն. յորժամ երկնչի՝ զարիւնն առ ինքն ժողովէ իբր զօրք առ թագաւորն. և մնայ մորթն բնական գունովն դեղին: - 245. Եւ յորժամ զանազան շրջի, չարիք գոն ի *սիրտն:* - 246. Կոկոն աչքն՝ անհաստա՛տ է *սրտիւք:* - 246. Արիւնն *սիրտ:* - 250. Խորհուրդն ի *սիրտն:* - 250. Երկրորդ՝ բոյս մեղաց և հոգ կենցաղոյս ի *սիրտն* բազո՛ւմ է: - 251. Եւ նախ *սիրտն* կազմի քան զայլ անդամսն. զի ջերմութիւն սերմանն ի մէջն ժողովի և կազմէ՛ *զսիրտն:* - 261. Եւ դարձեալ *սիրտն* է ի մէջ բոլոր անդամոցն որպէս կէտ կարակնին: - 261. Եւ որպէս *սիրտն* նա՛խ գոյանայ, նոյնպէս և յետո՛յ մեռանի վասն ջերմութեան նորին: - 261. Դարձեալ՝ մարդո՛յն է ընդունակ լինիլ ուսմանց և լինիլ հեզ և խոնարհ *սրտիւ:* - 275. Դարձեալ՝ մարդն միա՛յն է ծիծաղական. և փառաւորիլ վասն ուրախութեան *սրտին:* - 275. Իններորդ՝ զի **որպէս կողից երեսն որ ի փորն նայի՝ կոկ գոլով և մզղնատեսակ. իսկ մէջն փուչ և մրրախառն. այսպէս սէրն զոր ցուցանէ առ այրն, նօսր առ ի ցոյցս՝ և երեսս միայն ունի. իսկ ի *սիրտն* զմրուր դառնութեան**: - 276. Քանանէ, Վասն կախարդացն. և խօսից դիւացն. և խստութեան *սրտին*. և կողոպտելն զեգիպտացիսն: - 283. Նա՛խ զի *սիրտ* սուրբ և աննենգ ունէր. ուստի յա՛յտ է յանմեղութեամբ գնալոյն ընդ եղբօրն ի դաշտն: - 286. Դարձեալ ըստ եփրեմի հինգերորդ՝ զի սուրբ էր *սրտիւ*. և Վեցերորդ՝ զի միամիտ էր կամօք. և սոքա առնեն զմարդն մերձակայ աստուծոյ: - 290. Կամ լեարդն ի ներքոյ. *սիրտն* ի մէջն. և թոքն թեթև ի վերոյ: - 293. Իսկ հօրն ամենևին ո՛չ պղտորեցան խորհուրդք. և ո՛չ տրտմեցան *սիրտք*. և ո՛չ տխրեցան դէմք: - 304. Եւ թէպէտ ելաց՝ ո՛չ եգիտ դարձեալ. զի ո՛չ էր բոլոր *սրտիւ* և ջերմ սիրով: - 309. Եւ թէ լան և զղջան բոլոր *սրտիւ* ի ձեռն ապաշխարութեան, գտանեն վերստին զշնորհն անդրանկութեան, և հասանին թողութեան մեղաց: - 309. *Սիրտ* զանմահ աստուածութիւնն ասէ որ ո՛չ ննջէ և ոչ ի քուն երթայ պահապանն իսրայէլի: - 316. Եւ քրիստոս զիրէայսն ցուեաց, և ի *սիրտ* հեթանոսաց նոր ժողովրդեանն աւանդեաց զօրէնսն: - 328. Երկրորդ՝ կարկուտն զիպարտ և զհայհոյիչ բանս նոցա խայտառակէ, և հուրն զբարկութիւն *սրտին* զոր ունէին առ որդիսն իէլի: - 334. Ջառաջիկայն և զմիտս մարդկան ո՛չ ոք գիտէ. ո՛չ հրեշտակք և ո՛չ դևք և ո՛չ մարդիկք. բայց միայն աստուած որ քննէ

*զսիրտս* և զերիկամունս: - 336. Երկրորդ ա՛յն է` որ յորժամ լինի կամքն մարդոյն չար և խիստ ի ծածուկ, և զայն յայտնէ՛ աստուած. որպէս Նաբուգոդոնոսորայ. որ ունէր *սիրտ* գազանի` ի կերպարանս գազանաց փոխեցաւ: - 336. Երրորդ, զի մեր ախորժակացս հետագայ և աստուծոյն. զի յորժամ ի բարին լինիմք` օգնէ՛. և ի չարն թո՛յլ տայ. ա՛յն է խստացուցանելն *զսիրտ* մարդոյ: - 336. Երրորդ` զի հաւատ մեռելոյն յանդիմանէր զթերեհաւատ կենդանիսն որք *սրտիւք* յեգիպտոս դառնային: - 338. Երկու ծիթենիք` երկոքին բանքն *սրտի* և բերանոյ: - 347. Լուսնաձև Վահանն ի վերայ թիկանցն և *սրտին* և կրկին տախտակ դատաստանին յուսն, եմիփորո՛նն է: - 348. Խաչաձև ապարօշն ի վերայ *սրտին*, եմիփորոնն պատեալ: - 348. Այլ և զպատահումն սոցա ի *սրտի* իմում կրեմ: - 348. Հինգերորդ, զզայրացումն *սրտին* ցուցանէ: - 356. Իններորդ, խմորումն խառնեալ, և անխմորն անխա՛ռն է և պարզ որ է սրբութիւն *սրտին:* - 356. Աջոյ երին. յաջողակ բարի գործն. և Երբուծն դօշն է. որ ունի *զսիրտն:* - 360. Եւ ապա՛ *սիրտ* սուրբ և գեղեցիկ ստանալ ի հաւատս և խորովիլ ի սէրն աստուծոյ: - 360. Եւ միւսն, որ զմարմին մեր պատարագեմք միշտ. *սիրտ* սուրբ և հոգի խոնարհ ունելով. զոր աստուած ո՛չ արհամարհէ: - 363. Երրորդ, երկրորդ սեղան է *սիրտ* քահանային. որպէս սեղանն զողջակէզն մաքրէ՛, նոյնպէս իշխանութիւն քահանային: - 363. Ի ներքուստ` *սիրտն* և երիկամունքն և լերդաբոյթն ընդ ճարպին ճենճերեալ ի հոտ անուշից. որպէս հրամայեաց մովսէս: - 367. Եւ արտաքոյ` կուրծքն քահանայապետին, որ է՛ բնակարան *սրտին:* - 367. Այսպէս և մեք խոնարհ մտօք և ուրախ *սրտիւք* տօնեմք զտօն պահոցն: - 373. Իսկ *սիրտ*` զհոգին ասէ. որ ծածուկ է. և տեղիք խորհրդոց. և մի է. և կենդանութիւն մարմնոյն: - 396. Իսկ ճշմարիտն աստուած զայս ո՛չ խնդրէ. այլ երկիւղ խնդրէ ի տղայոց որով խորշին ի չարէ. և սէր ի *սրտէ* փոխանակ անասնոց. և խաղաղութիւն առ ընկերս և օտարս...: - 396. Եօթներորդ` սիրի աստուած բոլորով *սրտիւ*, այսինքն անմոլար իմացմամբ: - 396. Զի հանապազ քօղ երեսացն մովսէսի առագա՛ստ է ի վերայ *սրտից* նոցա. և ոչ իմանան զտեսութիւն բանին. վասն որոյ ո՛չ հաւատան: - 405. Իսկ առ մեզ Նախ ծածուկ ներտրամադրեալն բան. զի աստուած քննէ *զսիրտս:* - 406. Ութերորդ` զի զկարծր *սիրտ* նոցա թլփատեսցէ օրինօքն ի վէմն գրեալ: - 415. Տասներորդ` և նորս թլփատութիւն *սրտի*`վէմն քրիստոս լինելոց էր. որ կարծրացաւ աստուածութեամբն. և էարկ սուր յերկիր և բաժին: - 415. Եւ տէր մեր զնորս հեթանոսաց անջինջ գրեալ օրէնս ի *սրտի:* - 417. Եւ տէր մեր վիմով հաւատոյն *զսիրտս* քրիստոնէից: - 418. Եւ յետ այնորիկ իջանէ ի սուրբ *սիրտ* հաւատացելոց: - 421. Նա՛խ` զի խաբի ի մեղաց և յայտնէ՛ զծածուկս *սրտին:* - 424. Սակայն հանդերձեալն և *սիրտ* մարդոյն` միայն աստուծոյ է գիտելի և ոչ այլ ումեք որպէս ասացաւ ի սկիզբն գրոցս: - 430. Զի զա՛յ զղջումն և խոստովանութիւն` որ զմեղքն բառնայ և զպատիժն ընդ նմին. որպէս հատեալ տունն` չորանան ճիւղքն. որ բոլորով *սրտիւ* զղջայ և խոստովանի և այլ ո՛չ գործէ: - 432. Գտի զդաւիթ այր ըստ *սրտի* իմում, որ արասցէ զամենայն կամս իմ: - 435. Այսինքն որպէս *սիրտ* իմ առնէ՛ զիրաւունս և զարդարութիւն: - 435. Ուստի տէր տէր տայ ինձ լեզու խրատու և *սիրտ* ի ժամու: - 456. Նա՛խ` ասի ողորմութիւն, իբր թէ որոշիչ թշուառութեան *սրտին:* - 459. Երկրորդ` թուլացուցանէ զխստութիւն *սրտին:* - 459. Երրորդ ասի ողորմութիւն, իբր թէ զարմանալի իմն քաղցրութեամբ ոռոգել *զսիրտս:* - 459. Երրորդ` համակ հանապազորդ ներգործական դարձումն բոլոր մարդոյն առ աստուած. որով մարդն աստուածային քաղցրութեամբն զմայլի. որպէս հրեշտակք ի բոլոր *սրտէ*` յամենայն անձնէ և յամենայն զօրութենէ միշտ ներգործաբար դիմեն առ աստուած. և յիւրաքանչիւրսն ճառագայթի՛ ի նմա՛ աստուած: - 462. Եւ զմայլեալ ի բոլոր *սրտէ* և յամենայն անձնէ և ի զօրութենէ միշտ ներգործապէս դիմեալ առ աստուած հաստատեցաւ: - 463. Իսկ զգիր քրիստոնէից զոր յետ աւազանին մեղանչեմք և գրեմք զյանցանս, զայն պատառէ ապաշխարութիւնն. որ է՛ զղջումն *սրտի* և խոստովանութիւն լեզուի և հատուցումն գործոց մարմնոյ: - 482. Եւ որպէս զմարմնաւոր թլփատութիւնն աւանդեաց աբրահամու, նոյնպէս զհոգևորն որ է՛ թլփատութիւն *սրտի*` հրամայեաց ի ձեռն մովսէսի...: - 486. Եւ ի ձայնէն վէմք պատառեալ և երկիր շարժեալ, տեղի ետուն իջանել ի նոսա՛. և քարացեալ *սիրտ* նոցա ո՛չ շարժեցաւ: - 490. Եւ գերեզմանք բացան. զի կարօ՛տ էին ննջեցեալքն նմա. և նոքա փակեցին ըզգերեզմանս *սրտից* իւրեանց: - 490. Նախ` խորհրդաբար. ի **Ե** շաբաթոջ աւուրն յերեկոյն թաղեցաւ ի *սիրտ* առաքելոցն ճաշակմամբ մարմնոյն. և յերեկոյի կիրակէին տեսին զտէրն յորժամ դրօքն փակելովք եմուտ առ նոսա: - 516. Այլ պիտո՛յ է բնական **Գ** տիւ և **Գ** գիշեր գոլ ի *սիրտ* երկրի որպէս ասաց քրիստոս: - 516. Իսկ ծիթենին զպարարտութիւն օծման ջերմեռանդ և ողորմած *սրտին:* - 519. Դարձեալ կարէ ասիլ Ութերորդ պատճառս, առ ի ցուցանել թէ հոգին ո՛չ ումեք առատապէս պարգևի, եթէ ոչ յիսուս ի *սիրտ* նորա յատկապէս փառաւորեսցի: - 522.

Երրորդ՝ զջերմութիւն *սրտին* զովացուցանէ օդ: - 523. Երրորդ՝ զի անդ ո՛չ կարէր արդարանալ զի հիւանդ էր *սիրտն*, ետ նոր օրէնս ի *սիրտս* մեր որ կարօ՛ղ է արդարացուցնել զժողովուրդս և զիեթանոսս: - 524. Եւ մի և նոյն բանն է ներտրամադրեալն ի *սրտի*. զի ըստ բան գոլոյն ո՛չ զանազանի. սակայն ըստ որպիսութեան որակին. զի էր անմարմին ի սրտի՝ և այժմ մարմնացաւ ի քարտիսի: - 529. Եւ մի և նոյն բանն է ներտրամադրեալն ի սրտի. զի ըստ բան գոլոյն ո՛չ զանազանի. սակայն ըստ որպիսութեան որակին. զի էր անմարմին ի *սրտի*՝ և այժմ մարմնացաւ ի քարտիսի: - 529. Առ երկրորդն ասեմք թէ, ընդ ուրացութիւնն պետրոսի՝ *սիրտ* ամենայն առաքելոցն տրտմեցան և կոտորեցան. և ի զղջումն նորա ամենեքեան հաստատեցան վերստին: - 547. Եւ *սրտիւ* հաւատալ արդարութիւն է ասէ առաքեալն: - 557. Վասն որոյ զգուշանալ պարտ է *սրտին* սրբութեան քան զմարմնոյն: - 558. Այլ դու ո՛վ այրդ աստուծոյ մաքրամիտ և ճգնազգեաց միայնաւոր սուրբ հայրդ սահակ, թէ և զիջանես եղբայրական սիրով խնդրել բանս ի մէնջ. սակայն կարող ես և զթերին լնուլ և զյաւելորդն կշռել. և զմեզ օգտեցուցանել ի ներգոյէ՛ քոյին պայծառամիտ սրբութեան *սրտի:* - 558. Զի *սրտիւն* ապրին մարմնակեր գազանք. և հեշտ ցանկութեամբ բազմածին կենդանիք աճեն. և երկչոտութեամբ ապրին նապաստակք և տկարք ի հզօրից...: - 563. Դարձեալ՝ ըստ ենթակային բաժանի մեղքն յերիս. այսինքն ի մեղք *սրտին*. ի մեղք բերանոյն. և ի մեղք մարմնոյն: - 568. Մեղք *սրտին* է մեղք խորհրդոցն: - 568. Երեք. այսինքն զի բոլոր *սրտիւ* սիրէ և միշտ սիրէ և առանց փոխարինաց սիրէ. որպէս ասացաւ յերկրորդ օրէնքն: - 576. Նախ խոհեմութիւն *սրտին*. և այս ի կարգաւորել զներկայն, ի միտ ածել զանցեալն, և նախատես լինիլ ապագային...: - 580. Տուեալ յաստուծոյ ընդ դէմ խստութեան *սրտին:* - 582. այսինքն Աղքատութիւն հոգւոյ. Սուգ. Հեզութիւն. Քաղց արդարութեան. Ողորմածութիւն. Սրբութիւն *սրտի*. և Խաղաղութիւն: - 583. Սրբութիւն *սրտին* զորկրամոլութիւնն. զի սրբութիւն *սրտին* ո՛չ ծառայէ որովայնին ըստ օրինակի անբան անասնոց: - 583. Սրբութիւն *սրտին* է որով պայծառանայ և մաքրի սիրտն առ ի տեսանել զաստուած. և առ ի սիրել յոյժ ջերմ եռանդապէս: - 585. Սրբութիւն սրտին է որով պայծառանայ և մաքրի *սիրտն* առ ի տեսանել զաստուած. և առ ի սիրել յոյժ ջերմ եռանդապէս: - 585. Ա՛րդ՝ առեալ լինի աստ սրբութիւն *սրտին* ո՛չ վասն առաքինութեան, այլ վասն որպիսութեան իմն մաքրեալ հոգւոյն: - 585. Եւ գիտելի է, զի որ ի ճակատն և ի *սիրտն* և ի թիկնամէջն օծանէ, այն դրո՛շմ է. և որ զհինգ զգայութիւնսն օծանէ՝ այն ի խորհուրդ օծմանն է ծածկապէս: - 593. Եւ ապաշխարութիւնն գ բաժին ունի. այսինքն զղջումն *սրտի*. խոստովանութիւն բերանոյ. և ապաշխարութիւն գործով: - 601. Եւ է՛ խոստովանութիւն որ զարմատ մեղացն քակէ՛ ի *սրտէն* և զղջացեալ ի մեղաց, հաստա՛տ է ի կամս և ի միտս այլ ո՛չ մեղանչել...: - 603. Զի ատելութիւն մեղաց զղջումն է *սրտին*. և խոստովանի բերանով. և զամօթն կրէ փոխանակ պատժոյն: - 603. ...հաստատի հաւանութեամբ *սրտիցն* յորժամ յայտնեն բանիւ...: - 609. Զայս ունի խորհուրդ, որ հարսն և փեսայն յառաջ քան զպսակն տեսանեն զմիմեանս. և հաւանին *սրտիւք* և կամօք և ապա՛ պսակին: - 610. Զի է՛ շաղկապ հոգևոր. այսինքն *սրտիցն*. և է՛ շաղկապ մարմնաւոր՝ խառնմամբ սերիցն: - 610. Ի սմա սեղան սրբութեան. և ի մեզ *սիրտ* սուրբ սեղան նուիրանաց: - 614. Նա՛խ՝ զի ի դառն մաղձոյն հոսի յորովայնն ի ներքոյ *սրտին* և կսկծեցուցանէ զսրտակրանքն...: - 619. ...որ պատեալ է ի ներքոյ *զսիրտն*...: - 619. Արդ որպէս ի *սրտէն* յառաջ գայ հեշտութիւն մեղաց, շնութիւն՝ ագահութիւն՝ և այլն. որպէս աւետարանն հրամայէ: - 619. Նոյնպէս ի *սրտէն* ելանէ կսկիծ արտասուաց. և զհեշտութիւն նորա քաւէ՛: - 619. Իսկ չորրորդն, ողորմելիքս չորեքնիւթեայ բնութեամբ յուսասցուք ի տէր և երկիր պագցուք նմա. և այնու հաստատեսցին *սիրտք* մեր ի տէր: - 629. Դարձեալ՝ *սիրտք* մեր բուրվա՛ռ է. և աղօթքն խունկ. և հուրն ջերմ սէրն նիւթ բուրվառին: - 645. ...և մեզ պա՛րտ է սրբութիւն *սրտի* և վարուց...: - 658. ...զի պատարագ աստուծոյ *սիրտ* սուրբ և հոգի խոնարհ զոր աստուած ո՛չ արհամարհէ: - 658. Որպէս լեզուն մտաց՝ և ձեռքն *սրտին* է գործի. նոյնպէս ունկն կամա՛ց է. հնազանդութեան և կամ ոչ: - 658. ...յորժամ ի գլխաւորագոյն անդամքն դիպին. այսինքն ի *սիրտն*, կամ ի լեարդն, կամ ի խելապատակն: - 668. Նա՛խ՝ նշանակէ՛ ի մեզ զջերմեռանդ բորբոք այրեցման *սրտին*. որ ի բա՛ց հանէ զօձիսն և արտասուէ...: - 670. ...իբր թէ *սիրտն* ցանկացաւ...: - 670. Երրորդ, զի խաչաձև դնի մարմինն ի հանգիստն. որ և ձեռքն խաչանմա՛ն է ի վերայ *սրտին:* - 677. Եօթներորդ, զի մի՛ յարաժամ տեսցեն կենդանիքն և մորմոքեսցին *սիրտք* նոցա: - 677. Իսկ անարժանքն որ ունէին *զսիրտն* յեգիպտոս, սատակեցան յանապատին և ո՛չ մտին յերկիրն պարգևաց: - 682. Այլ յորժամ *սիրտն* կապեալ է ի մեղս աշխարհի և ոչ կարաց ապաշխարութեամբ քաւել, ո՛չ մտանէ յարքայութիւնն երկնից: - 683. Դարձեալ, Արծաթ մաքրութիւն *սրտի* և խորհրդոյն: - 702. ...այլ ի *սիրտս*

ամենեցուն խորհուրդ ամբարշտացն պատուհասից կերպարանի. իսկ պատիժն յետ արդար դատաստանին: - 703. *Ձսիրտ* իւր հպարտացուցէ...: - 707. Ընդ երևիլ նեռինն և թագաւորելն յերուսաղէմ, եկեսցեն ենովք և եղիա որպէս ասէ մաղաքիա և դարձուսցեն *զսիրտս* հարց յորդիս...: - 709. Եւ թէ ոք ասիցէ, բազում անդամք են կենդանականք, որպէս *սիրտն* լեարդն թոքն և այլքն որք ի յարութեանն ո՛չ են պէտք. զի ո՛չ է հարկ կենդանութիւն մարդկան: - 725. Իսկ մեղաւորքն ի ձախմէ. այսինքն վայր ի յերկիր ծանրացեալ մեղօքն. որպէս կապար ի յերկիր հակեալ. ուր բոլորով *սրտիւ* սիրեցին զնա: - 738. Եօթներորդ, այլ և **գ** է գործիք բանին. խելքն որ ծնանի. *սիրտն* որ խորհի. լեզուն որ խօսի: - 742. Նախ՝ կոչի *սիրտ* և անձինք մեղաւորաց, ուր ժողովին ամենայն գործք չար որ է՛ խաղող դառնութեան. և ունակացեալ պահէ յինքեան. և հեշտութեամբն ճմլէ հանապազ և արբենայ մեղացն գինով: - 748. Երրորդ հնձան է իւրաքանչիւր *սիրտ* և անձինք արդարոց...: - 748. Երկրորդ, նշանակէ՛ զծածուկ սէր *սրտին*. որպէս ծուխն զհուր: - 749. Իսկ արգաւանդ և պարարտ երկիր՝ *սիրտ* հաւատացելոց: - 757. Զոր ակն ո՛չ ետես, և ունկն ո՛չ լուաւ, և ի *սիրտ* մարդոյ ո՛չ անկաւ, զա՛յն է պատրաստեալ աստուած սիրելեաց իւրոց: - 761. Եւ թէ լինէիր կամօք փարթամ որպէս սողոմոն. որում ո՛չ անխայեաց զոր ինչ ցանկացաւ ի *սրտի:* - 761. Կամ միաբանութիւն որպէս առաքելոցն. որոց էր *սիրտ* և անձն մի: - 761. Իսկ երկոտասան պտուղն իցէ երկոտասան աստիճանք հաւատոյն. որ ի *սրտի* և ի լեզուս առանց խափանման հանապազ դաւանի և արտաբերի: - 768. Ելս ի *սրտի* դնելով ի սուրբն սրբոց մտանել այսու լուսով առաջնորդեալք: - 769. Դարձեալ, յերես անկեալ արտասուալի դիմօք հողս և փոշի՝ սուրբ գարշապարաց ձերոց, աղերսեմ ի խորոց *սրտէ* զհարազատ գութ հարց և եղբարց մեր հոգևորաց: - 773. Որք դարձուսցեն *զսիրտ* հարց յորդիս ըստ մաղաքիայի. այսինքն ուսուցանեն զհաւատն փրկչին զոր հարքն ունէին. և է՛ վարձաւորելի և կարի քաջ. և թէ այսպէս և թէ այն՝ քրիստոս քարոզի: - 785. Եւ որպէս այլքն այլ ինչ, և սա՛ զծխատեսակ ջերմութիւն *սրտի* ընդ ցնցուղս ծայրից արտաքարշելով ի կրկին կողմանէ որպէս ասեն բժիշկք: - 786

**ՍԻՒԱՆ** - Իսկ իար, որ է՛ նոյ արդար. *Սիւան*, սեմ. Թամուզ. թարա. Ապ, աբրահամ: - 200

**ՍԻՒՆ +** Ոսկերքն ի ներքոյ *սիւն* է մարմնոյն, և մորթն ծածկո՛յթ է մսոյն և այլոցն: - 240. Երրորդ՝ կին, իբր թէ կող մի. որ է՛ զօրութիւն *սիւն:* - 276. Եւ *սիւն* լուսոյն: - 283. Զի թէ նախ ջրով ապականեսցի պղնձի *սիւնն* մնասցէ. և թէ հրով՝ աղիւսն: - 289. Եւ փոխանակ *սիւն* ամպոյ՝ հոգին հովանաւոր և աւետարանին լոյս ծագեաց հոգւոցն: - 329. Եւ յերեկունն լոյս ծագեաց հոգւոց որպէս *սիւն* լուսոյն իսրայէլի: - 337. Զի՞նչ էր *սիւն* լուսոյն: - 338. Այլ թէ հարցանեն զորքանութիւն *սիւնիցն*. **ծ** *սիւն* ի մէջ խորանին. և **թ** *սիւն* վարագուրացն. և մի թափանց ի մէջն յարևելից յարևմուտս. որ լինի **կ**. և **ձ** սփռիչ. և **խ** նիգք. և ամենայնն ոսկեպատ. որ բովանդակն լինի **ճձ** ի ներքս: - 343. Եւ յարտաքին սրահին **h** *սիւնք* արծաթապատք. և յամէն *սիւն* **բ** խարիսխք և խոյակք յերկոքին ծայրքն: - 343. *Սիւնք*՝ իշխանքն. և Խոյակք՝ քահանայքն: - 343. Երեսունևն**դ**, նա՛ զ**բ** *սիւնսն* շարժէր և զտունն կործանէր: - 424. Եւ յետ **ե** ամսոյ՝ նաբուզարդան դահճապետն հրձիգ արար զէմ և զտաճարն և զտուն թագաւորացն. և զպարիսպն կործանեաց. և *զսիւնսն* պղնձի և զաւազանն և զամենայն կահ պղնձի և արծաթի տարաւ ի բաբիլօն: - 447. Զի յառաջին ամին ջուր բղխեաց ի *սեան* մատրանն: - 485. Յերկրորդ ամին աստուածածինն տպացաւ ի *սեանն*, և քառասնօրեայ մանուկն յիսուս ի գիրկն. և խաչ ծիրանի յերկոսին ձեռինն: - 485. Եւ յերեկոյին լոյս ծագեաց հոգւոցն. որպէս *սիւն* լուսոյն իսրայէլի: - 513. Սոքա **է** *սիւնք* և **է** խարիսխք են եկեղեցւոյ գլուխ կարգեալք ընդ բոլոր տիեզերս որպէս ասացաւ: - 549. Ապա յա՛յտ է յասացելոցս թէ՝ քրիստոս երևեսցի արդարոցն քաղցրատես, և մեղաւորացն դառնակերպ. որ նշանակեցաւ ի *սիւն* ամպոյն ի տուէ և ի հուրն ի գիշերի: - 741. Թէ ասելն ումեմն ի սրբոցն, թէ աշխարհի *սիւնք* դողային: - 788. Զի՞նչ է *սիւնքն* աշխարհիս որ դողային ի յարութեանն քրիստոսի ի մեռելոց: - 788. Ոչ այլ ինչ գոլով *սիւն* աշխարհի զգալապէս, բայց միայն բազմութիւն լերանց և քարանց: - 788. Զի որպէս *սիւն* տան, և ոսկերք մարմնոյ, և բրգունք աշտարակի: - 788. Այլ և ոմանք ասեն և է գոլ *սեանց* ընդ շինեալ տունն ի սողոմոնէ. կանգնեալ *սիւնս* է մարմնապէս. թէպէտ ա՛յլ է իմացումն հոգէպէս: - 788. Եւ *սիւնք* սորա տարր օդոյ ըստ նիւսացոյ: - 788. Նմանապէս և հիմունք երկրի ջուրք տատանեցան. այսպէս և *սիւնք* ասացեալն օդոյ դողային. և լուսաճեմքն խաւարեհին: - 788

**ՍԻՒՆԱԿԵԱՑ +** Եւ սուրբն սիմէոն *սիւնակեացն* այրեաց զթուղթն դաւանութեանն քաղկեդոնի՝ զոր գրեալ էր թագաւորն մարկիանոս աղաչանօք առ նա՛. և նզովեաց զթղտատարն որ էր թէոդորիտոս գլուխ ժողովոյն: - 543

**ՍԻՒՆԵԱՑ ՆԱՀԱՆԳ** - Ա՛րդ՝ եղև զրաւ բանիս, ի շրջագայութեան Յայկազեան Տօնարի, պխզ թուի, Ընդ հովանեաւ երկնահանգէտ մեծարագոյ ուխտի *Սիւնեաց նահանգի:* - 772

**ՍԻՒՆՅՈԴՈՍ +** Այսոցիկ սուրբ հարց և *սիւնհոդոսաց* հնազա՛նդ եմք. և զնոցա կանոնքն ունիմք և զդաւանութիւն, և պահեմք մինչև յեւս շնչոյ մերոյ: - 547

**ՍԻՕՆ** - Ոմանք *զսիօն* ասեն, և այլք զեդոմ, և այլք զարաբիա. որ և անդ ասեն և այլք զգերեզման նորա լինիլ: - 327. Իսկ որ ի խորանէն բերին մովսէս և ահարոն զգաւազանն ծաղկեալ. զի ի *սիօնէ՛* ելցէ օրէնք. որ է՛ յեկեղեցւոյ ամենայն իշխանութիւն: - 382. Երկրորդ՝ նշանակէր զքաղաքն երուսաղէմ. զի միայն ա՛նդ եղև մարգարէութիւն և օրէնքն. և սեղան աստուծոյ ի *սիօն:* - 421. Վարդապետականն՝ մանկանց եկեղեցւոյ. զի յամէ օգտեալ վարդապետք՝ զգուշացուցանեն զմանկունս *սիօնի* սրբոյ: - 528. Չորրորդ՝ եկեղեցի է անդրանկացն վերինն *սիոնի* որ է հոգիք սրբոցն ժողովեալ. զոր պօղոս եկեղեցի կոչէ զորդիս արդարոց կատարելոցն: - 534. Ութերորդ, սմա անուն կոչի եկեղեցի. այսինքն զոր կամիս լիցի. և դուստր *սիօնի:* - 614. ...սրբոյն կիւրղի է արարեալ ի դուռն սրբոյն *սիօնի*. ի **իա** ամի հայրապետութեան իւրոյ: - 658. Իսկ թէ ո՞ւր իցեն սոքա երկոքեանս, տեսիլն յօհաննու յայտնապէս ցուցանէ. սրբոց խորանս ասէ զվերինն *սիօն* և զհրեշտակացն դասս: - 688. Ի յայս միտս ի ստորինս եկեղեցի այժմ կրկին են դասք պաշտամանց. որ և նոյնպէս է լինելոց ի վերնումն *սիօնի* յեկեղեցիս անդրանկաց: - 760. Երկրորդ՝ ծառ կենաց են բնակիչք վերնոյն *սիօնի*. տնկեալք յաղբիւրն կենաց որ իջանէ յաթոռոյն աստուծոյ ի մէջ նոցա. ունելով զանմահ կեանս յաւիտենից: - 765. Գիր քոյոյ վսեմամիտ խոհեմութեանդ ո՛վ արփիածին հարազատ, և վերնոյն *սիօնի* նազելի զաւակ Գէորգէոս Ռաբունեայ պետ: - 773

**ՍԼԱՆԱՄ +** ...զի առաջնովն հոգիքն *սլանան* յերկնից: - 713

**ՍԼԱՑՈՒՄՆ +** Զի հա՛յր ասէ զնա մարգարէն՝ հանդերձեալ աշխարհին աստեղափայլ պայծառացելոցն լուսաճաճանչ *սլացմամբ:* - 306

**ՍԽԱԼ +** Ասեմք եթէ՝ *սխա՛լ* են և երկոքին դասքն: - 725

**ՍԽԱԼԱԿԱՆ +** Իններորդ՝ մարդս *սխալակա՛ն* է ի գործն. իսկ աստուած առանց սխալման: - 157

**ՍԽԱԼԱՆՔ +** Առաջին *սխալանք* նոցա է այս: - 66. Ասեմք թէ որ ունին զհաւատ սուրբ երրորդութեանն և անկան ի *սխալանս* աշխարհի...: - 683. Յաւանեացն տեառն շնորհք, և *սխալանացն* տկա՛րս անօթոյ: - 789

**ՍԽԱԼԵՄ +** Իսկ «երրորդ մասն», ասէ սուրբն մեթոդէոս եթէ՝ զապստամբ հրեշտակս ասէ որք զթիւ երկնաւոր դասուցն *սխալեցին*. զի մինչ ո՛չ էին կործանեալ՝ **դ** կարգ էին իւրաքանչիւր դասուցն. որպէս յա՛յտ է ի չորեքկերպեան կենդանեացն: - 152. Վեցերորդ՝ աստ ի հանդիսից *սխալէ*. և յետոյ ի յընթացից. և ի յարութեանն յաղթանակաց պսակէն: - 394. Եւ է՛ որ զմեղքն թողու՝ և զպատիժն կրէ. որք յայլմէ բռնաբա՛ր խոստովանին և պատահմամբ, և դարձեալ *սխալին*. այսպիսեաց մեղքն միայն թողլի: - 432. Դարձեալ՝ կրկին է կեանք. այսինքն ժամանակեայս և հանդերձեալն. և յերկոքինս *սխալեցաք* մեք...: - 680. Իսկ արդարքն և մեղաւորքն միջակք՝ որք առին զօրէնսն և ըստ օրինացն գործեցին զբարիս. կամ *սխալեցին*...: - 687. Ասեմք եթէ՝ *սխալին* ի յիմացումն առակին: - 697. Երրորդ՝ ուղղի մոլորութիւնն որ է՛ խանգարումն անդամոցն ի միմեանս *սխալեալ* ըստ բնութեան տկարութեանն: - 725. Յաւատացեալ արդարք. որք ըստ օրինաց հնոյն կամ նորոյս գործեցին զարդարութիւն. կամ որք *սխալեցին* և ապաշխարեցին զմեղս զղջմամբ խոստովանութեամբ պահօք աղօթիւք ողորմութեամբ և այլովք: - 739. Եւ թէ յառաջուստ զգայութեանց, զհաւատն ընդ դէմ դիցես և ո՛չ *սխալիս:* - 770

**ՍԽԱԼՈՒՄՆ +** Եւ որքան պատւական է ճանաչումն՝ այնքան մեծ է *սխալումն:* - 150. Իններորդ՝ մարդս սխալակա՛ն է ի գործն. իսկ աստուած առանց *սխալման:* - 157. ...իբր թէ այսպիսի *սղալումն* ի ճաշակելոյ պտղոյն եղև. որ ծեռօք հատեալ եղ ի բերանն: - 670

**ՍԿԱՅ +** Վեցերորդ՝ *սկայքն* անխտիր ուտէին թէ մեռեալ և թէ հեղձուցեալ. վասն որոյ զի որոշեսցէ ի նոցանէ՝ ասէ արեամբ շնչոյ մի՛ ուտիցէք: - 295

**ՍԿԱՒԱՌԱԿ +** Այլ թացեալ պատառն այսպէս էր. զի ի *սկաւառակն* ընդ վարդապետին փութացաւ մատնիչն տանիլ զծեռն լիրբ դիմօք և արհամարհեալ մտօք: - 599

**ՍԿԵՒԵԱՅ** - Եթէ վարձատրելի է ասիցէ ոք, ապա զիա՞րդ որք ի հարկէ հաւատացին ո՛չ վարձատրեցան. որպէս դևքն ի հալածիլ. և որդիքն *սկեւեայ*. և սիմոն կախարդն. և այլք նման սոցին: - 783. Եւ ո՛չ այս միայն, այլ և ի կոչմանն զօրութենէ առ որդւովքն *սկևեայ* հալածեին նոքա: - 784

**ՍԿԶԲՆԱԲԱՐ +** Քանզի ծնունդ *սկզբնաբար* ի հօրէ՛ ելանէ: - 109. Այլ ի մարմինն նիւթօրէն և *սկզբնաբար*. իսկ ի հոգին տեսակաբար և իբր նենթակայոջ: - 567

**ՍԿԶԲՆԱԿԱՆ +** Երկրորդն *սկզբնական* յաւիտեան: - 115. Յաւիտեանս Յաւիտենից. որ է՛ *սկզբնական* և յարածգական. զի նա պարունակէ զերեք յաւիտեանն. որ ո՛չ սկիզբն ունի և ո՛չ կատարած: - 116. Ասեմք եթէ՝ կրկին է մեղք. բնութեան և անձին. որ է *սկզբնական* և ներգործական: - 351. Ո՛չ *զսկզբնականն*, զի յարգանդէ՛ սրբեցաւ: - 383. Առաջին ջուրն սրբէ *զսկզբնական* մեղքն: - 384. Եւ տէր մեր *զսկզբնական* և զներգործական մեղսն: - 424. Հինգերորդ՝ զընթացս մեղաց և զգործն որ է *սկզբնական* և ներգործական մեղք, և զգլուխն որ է՛ մահ և ապականութիւն, խորտակեաց քրիստոս...: - 426. Այլ զայն ասէ՝ թէ յամենայն ազգս արանց գտաւ այր մի քրիստոս, ազատ ի պարտուց *սկզբնականին*. և ի կանանց և ո՛չ մի: - 440. Դարձեալ՝ մեղք *սկզբնական* խառնեցաւ ի յաճումն հիւթին. և յետոյ մահ և ապականութիւն: - 445. Երրորդ՝ սրբութիւն յատկական. որպէս սրբոյ կուսին, բառնայ *զսկզբնական* մեղս և զարմատն և դիւրասահութիւն մեղանչելոյն մահու չափ և ներելապէս: - 462. Այլ և ի վերայ ա՛յնր՝ ունէր և զերրորդն սրբութիւն. որ կուսութեան իւրոյ էր յատկական. ջնջումն ի *սկզբնական* և յարմատոյ մեղաց: - 463. Վասն որոյ սրբեսցէ *զսկզբնականն* մեղք՝ յարգանդէ կուսական հոգւով սրբութեան ծնաւ: - 469. Երրորդ՝ զի մի՛ իցէ ի ներքոյ *սկզբնական* մեղաց: - 470. Նա՛խ՝ զի *սկզբնական* արդարութեամբ ծնաւ. և պատճառի անսերմն յղացումն: - 473. ...իսկ մեք ո՛չ ի գործոց, այլ ի հաւատոցն քրիստոսի ընկալաք *զսկզբնական* արդարութիւնն և զներգործութիւն մարմնոյ և զսրբութիւն մտաց: - 473. Զի ո՛չ *սկզբնական* և ո՛չ ներգործական մեղս ինչ ունէր: - 485. Եւ *սկզբնական* մեղքն գէճ ցանկութեամբն տարածի: - 489. Եւ այժմ մեք ջրով մկրտութեանն ջախջախեմք զգլուխն. այսինքն *զսկզբնական* մեղքն: - 489. Դրունք և նիգք յետուստ են. այսինքն կամ *սկզբնական* և ներգործական մեղօք կապեաց յետոյ, կամ մեղօք և յուսահատութեամբ: - 504. Իսկ վերջին դժոխք որ կոչի անջրդի գուբ, նոցա՛ է որք ո՛չ ունին չար և ո՛չ բարի. որպէս մանկունք անմկրտեալք. ո՛չ տանջին զի չեն մեղանչեալ. և ո՛չ հանգչին զի չեն արդարացեալ. այլ վասն *սկզբնականին* մնան յանջրդի գուբն խաւարին: - 505. Նախ ասեմք, եթէ դժոխքն է պատիժ մեղաց. և կրկին է մեղք. այսինքն *սկզբնական* և ներգործական: - 507. Եւ պատիժ *սկզբնականին* էր դժոխքն առաջին. և ներգործելոց՝ վերջինն...: - 507. Մեղք անունն մի է, և բոլորապէս յերիս տեսակս որոշի. այսինքն ի *սկզբնականն*, և ի մահացուն, և ի ներելին: - 567. Ա՛րդ՝ թէպէտ հոգին ո՛չ լինի սերեալ ի հօրէն որպէս մարմինն, սակայն *սկզբնական* մեղքն անցանէ ի հոգւոյն յադամայ ի հոգիս զհետ եկելոցն միջնորդութեամբ մարմնոյն ցանկութեամբ ծնելոյն: - 567. Եւ յա՛յտ է՝ զի *սկզբնական* մեղքն է՛ ի մարմինն և ի հոգին: - 567. Ա՛րդ՝ մեղք *սկզբնականին* չորիւք զանազանի յայլոցն...: - 567. Նա՛խ ըստ միութեան. զի մի է մեղքն *սկզբնական* և ո՛չ բաժանի. որպէս մահացուն է. և ներելին **գ**: - 567. Երկրորդ ըստ հասարակութեան. զի հասարակաբար ո՞ ոք որ հաղորդի բնութեանս՝ հաղորդի և *սկզբնականին:* - 568. Այլ կոյսն մարիամ աստուածածին՝ էր ազատ ի մահացուէն և ի ներելւոյն. բայց ո՛չ ի *սկզբնականէն*. զոր հոգւովն սրբով մաքրեցաւ: - 568. Բայց միայն փրկչին մեր քրիստոս էր ազատ ի *սկզբնականէն:* - 568. Երրորդն ըստ հաւասարութեան. զի *սկզբնականն* հաւասարապէս է ամենայն մարդկան: - 568. Նա՛խ՝ զի *սկզբնականն* հարկիւ և ակամայ տիրէ. իսկ սոքա ըստ կամաց: - 568. Երկրորդ՝ զի *սկզբնականն* բնութեանն հետևի. իսկ սոքա անձին: - 568. Մկրտութիւնն է ընդ դէմ *սկզբնական* մեղացն: - 587. Երկրորդ՝ զի մկրտութիւնն է ընդ դէմ *սկզբնական* մեղաց. և *սկզբնական* մեղքն մի է և ո՛չ կրկին: - 590. Զզաւակս այլազգեաց մկրտել պարտ է. զի թէ մեռանի ազատեալ է ի *սկզբնական* մեղաց և ի պատժոց դժոխոց: - 591. *Սկզբնական* մեղն որ յադամայ հետէ: - 591. Մեղքն ադամայ այն է որ զարդարութիւն կորոյս. և մեղօք և ցանկութեամբ ծնաւ զորդին. և այն մեղքն *սկզբնական* կոչի. և ո՛չ թողցի եթէ ոչ ի մահն քրիստոսի մկրտեսցի: - 591. Եւ վասն այն ամենայն ոք ունի *զսկզբնական* մեղքն. - 591. և առանց ցանկութեան մեղաց ո՛չ ոք կարէ ծնանիլ. բայց միայն տէր մեր որ առանց ցանկութեան ի կուսական արգանդէ ծնաւ՝ ո՛չ ունէր զմեղս *սկզբնական:* - 592. Զի տանջանք իրոյն ներգործական մեղա՛ցն է և ո՛չ *սկզբնականին* պատիժ: - 593. ...որք ունին ըզիին օրէնս և ո՛չ զնորս. այլ ի ներքոյ մնացեալ *սկզբնական* մեղաց՝ նոքա ի տանջանս ընթանան: - 678. Ոչ մկրտեալքն կամ չարքն ո՞չ ունին տանջանս վասն *սկզբնական* կամ ներգործական մեղաց: - 690. Իսկ այլք զերեք տեսակ մեղացն. այսինքն *սկզբնականն* որ է խոտ. և ներելին եղէգն. և մահացուն փայտ: - 702. Եւ զորօրինակ զկնի մկրտութեանն *սկզբնական* մեղքն ոչ երևի. նոյնպէս զկնի ապաշխարութեան ներգործական մեղքն

ծածկի և կորնչի...: - 714. Զի թէ *սկզբնական* նիւթն միայն յառնէ, մարմին մարդոյ ամենևին փոքրիկ և անկատար լինի: - 718. Նոյնպէս և նիւթն *սկզբնական* ո՛չ յառնէ ի ծնօղս որ աւելորդ արտահոսումն է նոցա. այլ յառնէ ի ծնեալ մարմինն որոյ հիմն է շինուածոյն: - 719. Եւ ա՛յս է պատճառ յարութեանն. զի ամենայն մարդիկ առնուցուն զվարձ կամ զպատիժ. կամ վասն իւրեանց գործոց, կամ վասն *սկզբնականին:* - 724. Եւ այսպէս քարշեալ եղև ի մեզ *սկզբնականն* մեղք՝ յանհնազանդութենէ հոգոյն և ի ցանկութենէ մարմնոյն. անցեալ ի ծնունդս նորա նիւթապէս ի մարմինս, և տեսակաբար ի հոգիս: - 776. իսկ Բաղդատութեամբ. որպէս է *սկզբնականն* առ ներգործականն մեղք. այսպէս ադամայն առ որդւոցն նորա: - 777. Եւ այլ ևս. որպէս ասացաւ կրկին է մեղքն. *սկզբնական* և ներգործական: - 777

**ՍԿԶԲՆԱՉԱՐ +** Յնգետասաներորդ՝ թէ չարն է յաստուծոյ՝ և սկիզբն ամենայնի է աստուած, որև չարեաց ըստ նոցա, ապա ո՛չ է *սկզբնաչար* առաջին գտակն չարեաց սատանայ. որպէս նոքայն բարբանջեն: - 14. Նա՛խ՝ նշանակէ զնոյն ինքն *սկզբնաչարն* սատանայ. որ էր յերկինս գաւազան ուղղութեան և ընկեցեալ եղև օ՛ձ: - 332. Երկրորդ՝ եթէ *սկզբնաչարն* սատանայ է ամենայն մեղաց պատճառ և ո՛չ տանջի մինչ ի կատարած. նաև ո՛չ մարդիկ: - 507. ...զի *սկզբնաչար* և պատճառ ամենայն մեղաց սատանայ է. այլ ադամ այնչափ՝ զի առաջին եղև մեղանչական ի նմանէ: - 777

**ՍԿԶԲՆԱՊԵՏԱԳՈՅՆ +** Ոմանք ասացին *զսկզբնապետագոյն* տարերքն. ուստի եղեն ամենայն մարմնական էութիւնք: - 112. Երրորդ՝ այսպէս մեկնեն, եթէ հին աւուրց զնախնի ժամանակս նշանակէ. և մանուկն զնախնի թիւն. զի միակն սկիզբն է ամենայն թըւոց. և որ մեծ է միակին՝ *սկզբնապետագո՛յն* է քան զհեռագոյնն: - 115

**ՍԿԶԲՆԱՊԷՍ** - Զի մեղքն ադամայ թէպէտ *սկզբնապէս* առհասարակ բնութիւնս տարածեցաւ. այլ ո՛չ առաւել քան զայլոցն եղև. այսինքն որդւոցն նորա...: - 777

**ՍԿԶԲՆԱՏԻՊ +** Երեսուներորդ, մի՛ է պատկերն մարդ. և մի *սկզբնատիպն* աստուած: - 272

**ՍԿԶԲՆԱՒՈՐ +** Դարձեալ հարցանեմ, յանսկզբնէ՞ն բղխէ հոգին, թէ ի *սկզբնաւորէն*. զի որ յանսկզբնէն յառաջ գայ, է՛ անեղ և անվախճան. որպէս որդի և հոգի յանսկիզբն հօրէ: - 63. Իսկ թէ յանսկզբնէն և ի *սկզբնաւորէն* յառաջ գայ հոգին, լինի անեղ և եղական որ է մակեդոնեան և ծանր հայհոյութիւն: - 63. Յինգերորդ՝ բազմանայ ի նախկինս և ի *սկզբնաւորս*. և բազմապատկի յածանցեալս ի նոցանէ և յառաջ եկեալս: - 110. Այսպէս անժամանակն զժամանակեայս. անմարմինն զմարմնաւորս. անփոփոխն զփոփոխելիս. անսկիզբն *զսկզբնաւորքն*. և զայլսն նմանապէս: - 113. Զի հայր անսկիզբն՝ յինքենէ՛ սկսեալ որդւով և հոգւով՝ արար սկիզբն *սկզբնաւորացս*...: - 114. Ապա ուրեմն յա՛յտ է թէ՝ որպէս յանեղէն եղականքս, և յանսկզբնէն *սկզբնաւորքս* եղեն: - 114. Եւ թէ գոյր ինչ այսպիսի զօրութիւն ի նա, լինէր վախճանաւոր և նա. և թէ էր վախճանաւոր, և էր *սկզբնաւոր*՝ որ է՛ անպատշաճ: - 169

**ՍԿԶԲՆԱՒՈՐԵՄ +** Երկրորդ՝ զի աստուած անսահման է՝ և սահմանէ՛ զմեզ. անսկիզբն է՞ և *սկզբնաւորէ* զմեզ. և պատճառ և այլն ամենայն: - 24. Երկրորդ ի սկզբանէ, զի իր ինչ ինքն ինքեան սկիզբն և սկսեալ անկար է գոլ. ուստի հա՛րկ է ամենայն *սկզբնաւորաց* գոլ սկիզբն: - 25. Յինգերորդին պատասխանեմք, եթէ փառաւորէ հոգի զորդի՝ ասես ի նմանէ *սկզբնաւորեալ:* - 61. Եւ ի նմանէ են արուեստք և գիտութիւնք *սկզբնաւորեալք*. զի «առանց նորա եղև և ոչինչ» ասէ աւետարանիչն: - 237

**ՍԿԶԲՆԱՒՈՐՈՒԹԻՒՆ** - Նա՛խ՝ զի արարածոց *սկզբնաւորութիւն* ի նմա՛ եղև: - 196

**ՍԿԻԶԲՆ +** Դարձեալ եթէ է՛ հարկ, ապա ո՛չ էր անձնիշխան կամք, այլ արդ՝ եթէ ունիմք կամք և է՛ *սկիզբն* գործոյն ի մեզ և առ մեզ, ապա ուրեմն ո՛չ է հարկ որոյ *սկիզբն* յայլմէ՛ է: - 11. Դարձեալ՝ թէ ի հարկէ է՝ ապա բարձեա՛լ են ամենայն *սկզբունք* բարոյական առաքինութեանց...: - 11. ...մի՛ ասիցեն երկու *սկիզբն* ըստ մանիքոսի: - 13. Յնգետասաներորդ՝ թէ չարն է յաստուծոյ՝ և *սկիզբն* ամենայնի է աստուած, որև չարեաց ըստ նոցա, ապա ո՛չ է սկզբնաչար առաջին գտակն չարեաց սատանայ. որպէս նոքայն բարբանջեն: - 14. Վեշտասաներորդ՝ զի թէ չարն է յաստուծոյ որպէս բարին, և երկուցն *սկիզբն* է աստուած, և արդ՝ եթէ միևնոյն է *սկիզբն* երկուցն, անկարելի է ներհակացն ի միասին ունիլ մի *սկիզբն*. զի լինէր *սկիզբն* այն ո՛չ պարզ. այլ երկատեսակ. և ո՛չ միեղէն՝ այլ բաժանեալ և այլայլեալ. նաև լինէր ինքն ինքեան հակառակ, և յառաջ եկելոցն ի նմանէ: - 14. Եւ եթէ երկուցն **բ** է *սկիզբն*, և այսպէս ի յաստուած երևի երկու *սկիզբն*, կամ երկու անսկիզբն ըստ մանիքոսի: - 14. Եօթնևժերորդ՝ զի թէ չարն և բարին ունին մի *սկիզբն*, որպէս ընդդիմաբաժանեալ տեսակքն զսեռն: - 14. Չորրորդ ասեն՝ թէ չարն ո՛չ է յաստուծոյ, ապա երևի թէ այլ ոմն է չարի *սկիզբն*, և այլ ոմն բարւոյ. և լինի **բ** *սկիզբն* բարի և չար ըստ մանիքոսի: - 16. Ա՛րդ՝ թէպէտ չարն ո՛չ է յաստուծոյ, այսու ո՛չ լինին երկու աստուածք. կամ **բ**

*սկիզբն*. զի չարն ո՛չընչութիւն է. և ո՛չնչին *սկիզբն* ո՛չ է աստուած. զի աստուած *սկիզբն* էութեցէ: - 16. Այլ և ո՛չ **բ** *սկիզբն*. զի գործունեայք չարին սկսեալք են: - 16. Ուրեմն ո՛չ են **բ** *սկիզբն:* - 16. ...մեղքն և չարն ո՛չ են յաստուծոյ. այլ յոչնչէ՝ որ է՛ *սկիզբն* նոցա: - 16. Նախ եթէ՝ ունիմք անձնիշխան կամք. և տէ՛ր եմք գործոց մերոց. առնել և ո՛չ առնել. այլ երբեմն *սկիզբն* ի մէնջէ, և կատարումն ի նախախնամութիւնն աստուծոյ: - 17. Երբեմն *ըսկիզբն* յաստուծոյ, և կատարումն առ մեզ: - 17. Եւ երբեմն երկոքինն յաստուծոյ. այսինքն *սկիզբն* և կատարումն: - 17. Այլ արդ որ *սկիզբն* և կատարումն է յաստուծոյ, աստուածային է ներգործութիւն. և սքանչելեաց իր: - 17. Իսկ *սկիզբն* և կատարումն ի մեզ, որպէս նախածանօթ ընտրեալքն յառաջ քան զլինիլն աշխարհի. որ այժմ բարի գործովք կատարեսցին ըստ նախասահմանելոյն իւրեանց: - 18. Իսկ որ *սկիզբն* ի մէնջ՝ և կատարումն ի խնամոցն աստուծոյ, այսինքն յորժամ սկսանիմք զբարին՝ և նա՛ աւարտէ՛ ի բարին: - 18. Իսկ ընդդէմ մանիքեցւոցն՝ որք ասեն **բ** *սկիզբն*, չար՝ և բարի. այսպէս հանդիպեսցուք և պատասխանեսցուք ի կարճոյ: - 20. Նախ՝ երկեակն ո՛չ կարէ *սկիզբն* լինիլ. զի ի թիւ՝ երկեակն ի միակէն բաղկանայ: - 20. Ապա ուրեմն ո՛չ է երկեակն *սկիզբն* որ է՛ բաղադրեալ. այլ միակն որ է՛ պարզ: - 20. Երրորդ՝ թէ լինէին երկու *սկիզբն* հակառակ միմեանց, մի զմիոյ ստեղծուածս ապականէին. և ո՛չ լինէին արարածք ինչ: - 20-21. Չորրորդ՝ դարձեալ թէ լինէին երկու *սկիզբն* և հակառակ, մարտնչէին ընդ միմեանս՝ և ընդ սկսեալս իւրեանց. և ոչ ինչ մնայր ի խաղաղութեան: - 21. Հինգերորդ՝ թէ է **բ** *սկիզբն* և հակառակ, սկսեալքն ի նոցանէ անկարգ լինէին և հակառակ: - 21. Եօթներորդ դարձեալ՝ թէ էին **բ** *սկիզբն* լինէր այս կամ համանգամայն. կամ մի յետոյ միոյ: - 21. Եւ եթէ է մի զկնի միոյն, յայտ ուրեմն է թէ նախկինն է *սկիզբն:* - 21. Ութերորդ՝ թէ են **բ** *սկիզբն*, կամ իշխեն ի վերայ միմեանց, կամ ո՛չ իշխեն: - 21. Իններորդ՝ թէ են **բ** *սկիզբն* չար և բարի, կամ հաղորդին միմեանց՝ կամ ոչ: - 21. Եթէ ոչ հաղորդին, մինն է ի նոցանէ էակ. և այնպէս ո՛չ երկու *սկիզբն:* - 21. Իսկ թէ հաղորդին, ո՛չ կարէ լինիլ չար. զի չարն բարւոյն պակասութիւնէ. և սոյնպէս մի է *սկիզբն:* - 21. Տասներորդ՝ **բ** *սկիզբն* գերագոյն բարին. և ծայրագոյն չարն՝ կամ ըստ ինքեանց կայանան, կամ ո՛չ: - 21. Եթէ ո՛չ կայանան, ո՛չ են *սկիզբն:* - 21. Նախ՝ եթէ չարն ո՛չ է էութիւն, և ո՛չ ի յէս. և ո՛չ ի յէից. և ո՛չ *սկիզբն* էից: - 22. Դարձեալ՝ ամենայն ինչ որ յէից է՝ *սկիզբն* ունի և պատճառ. իսկ չարն ո՛չ ունի *սկիզբն* և ո՛չ պատճառ. վասն որոյ ո՛չ է յէից: - 22. Այլ և ո՛չ *սկիզբն* է էից. զի ի չարէն բարի ո՛չ լիցի: - 22. Եւ այսպիսի չարս ո՛չ է է. և ո՛չ ի յէսս. և ո՛չ *սկիզբն* ունի կամ պատճառ. և ո՛չ ինքն *սկիզբն* այլոց կամ պատճառ. ա՛յս է ինքնաչարն: - 22. Նմանապէս և ո՛չ *սկիզբն* ունի և ո՛չ պատճառ: - 23. *Սկիզբն* և պատճառ՝ էութեա՛ն ասեմք ունիլ: - 23. Դարձեալ՝ չափ և սահման ի վերջին եզր էութեան նկատէ, և *սկիզբն* և պատճառ ի յառաջինն: - 23. Երկրորդ ի սկզբանէ, զի իր ինչ ինքն ինքեան *սկիզբն* և սկսեալ անկար է գոլ. ուստի հա՛րկ է ամենայն սկզբնաւորաց գոլ սկիզբն: - 25. Ա՛րդ՝ եթէ *սկիզբն* այն անսկիզբն է, գտաք զխնդրելին: - 25. Իսկ թէ և նա՛ սկսեալ՝ պիտո՛յ է և նման *սկիզբն:* - 25. Եւ այս կամ յանբաւս ելեալ, կամ գտեալ զանսկիզբն *սկիզբն*, որ է աստուած: - 25. Ըստ որում ոմն ի բնախօս արանց նկատմամբ առաջնորդականին՝ վարաքնեաց ի *սկիզբն* առաջին՝ թէ է՛ ոմն որ շարժէ՛ զերկնային մարմին: - 26. Ութերորդ՝ զնա օ՛ծ դարանակալ ասէ ի ճանապարհի. և սոքա առաջին օձին նմանեալ՝ հրապուրեն զբազումս. և արտաքսեն ի դրախտէ եկեղեցւոյ. և թոյնք իժից ի ներքոյ շրթանց ունելով և խայթոց՝ զի առորս մերձենան, ի *յսկիզբն* բանից կամ ի վերջն՝ մահացուցանեն զհոգիս...: - 35. Զի ասեմք թէ՝ որդի է ծնունդ հօր ի *սկզբանն:* - 37. Եւ ի *սկզբանն* ասելով, ո՛չ յետոյ քան զհայր գոլ: - 37. Եւ թէ յոչ ժամանակի, և զի՞նչ էր նոյն ինքն ժամանակն որ գոյացաւ ի *սկիզբն* լինելութեանն: - 37. Թէ դադարեցաւ, ամենայնն հարկիւ է և *սկիզբն* ունի: - 37. Ապա ուրեմն ծնունդն նախքան զամենայն բլուրս՝ էր ի *սկզբանն* ի բնութենէ հօր. իսկ ստեղծումն վասն մարմնալոյն. զի իւր է մարմինն: - 41. Եւ որպէս թէ զկատարած աւուրն ոք գիտենայ, և *զսկիզբն* գիշերոյն ասէ չգիտել: - 48. Երկրորդ հարցանեմ եթէ, յերրորդութիւնն մի է *սկիզբն* թէ **բ**: - 62. Զի թէ մի է *սկիզբն*, սո՛ւտ է նոցա ասելն զհոգին ի հօրէ և յորդւոյ բղխեալ: - 62. Իսկ եթէ **բ** են *սկզբունք*, յա՛յտ է թէ **բ** են ներգործութիւնք: - 62. Զոր օրինակ՝ Աղբիւր բղխեալ առ մեզ հոգին սուրբ ա՛րդ *սկիզբն* աղբերն շարժի ի ծովէ՛. և հասանէ յակն. և յակնէն առ մեզ բղխէ: - 65. Ա՛րդ՝ *սկիզբն* յառաջ շարժութեան հոգւոյն է՛ հայր...: - 65. Եւ թէ մերկ բանին, հետևիս գոյութեան *սկիզբն* ի մօրէն գոլ և ո՛չ յաստուծոյ հօրէ: - 68. Երկոտասաներորդ՝ այն որ *սկիզբն* յաշխարհի ունի՝ և ո՛չ է յառաջ քան զլինիլն իւր յաշխարհի՝ ո՛չ ասի գալ յաշխարհս: - 73. Այլ մարմին և հոգին քրիստոսի *զսկիզբն* յաշխարհի ունին...: - 73. Այլ զի զանձնաւոր բնութիւն և զանհատն ասեմք մարմնացեալ. զի *սկիզբն* միաւորութեանն է ի բնութիւնն, և կատարումն կայացեալ ի յանձն, յիմարա՛ց

ուրեմն և ափշելոց է խնդիր նոցա: - 76. Որք ասեն *զսկիզբն* բանին ի կուսէն առեալ. և ո՛չ նախ քան զյաւիտեանս ի հօրէ ծնեալ: - 82. Միաւորութիւնն քրիստոսի ունի *սկիզբն*. և մէջ. և կատարումն: - 84. *Սկիզբն* յերկուց բնութեանց. և մէջ՝ որ է՛ միաւորութիւնն մի բնութիւն. և եզր և կատարումն՝ մի անձն: - 84. Ծանիր և զայս. զի՝ մի բնութիւն ասեմք քրիստոսի՝ վասն կատարմանն և ո՛չ *սկզբանն*. և մի գործ ասեմք վասն *սկզբանն* և ո՛չ վասն կատարման գործոյն: - 85. Իսկ զկամքն իմասցիս մի՝ վասն կամելոյն և վասն միաւորելոյն որ է *սկիզբն* և կատարումն: - 85. *Սկիզբն* և պատճառ: - 101. Եւ բանականութեան *սկիզբն* և կատարումն: - 101. Հինգերորդ՝ որպէս միա՛կ է հայր. զի *սկիզբն* է ամենայն թւոց. և երկեակ որդի. և երրեակ հոգի ըստ աստուածաբանին: - 105. Ըստ այսմ ապա և բազմութիւն արարածոցս միո՛յ են հաղորդեալ. մի *սկզբան*. մի աստուծոյ. և մի խնամողի: - 106. Երկրորդ՝ բանն աստուած նախկին է և *սկիզբն* արարածոց. զի նովաւ եղեն ամենայնքն: - 107. Նախ՝ զի գ թիւն կատարեալ է. զի ունի *սկիզբն*. և մէջ և կատարումն: - 107. Երկրորդ՝ մինն *սկիզբն* է, և երկուքն ի միոյն: - 107. Նոյնպէս հայր *սկիզբն* է. և որդի և հոգի ի միոյ *սկզբնէ:* - 107. Զի նա՛ է աղբիւր և *սկիզբն* յորմէ բղխեն ամենայն: - 108. Հինգերորդ՝ մի կոչի. որպէս միակն *սկիզբն* է թւոց և ո՛չ թիւ. և աստուած սկիզբն է արարածոց և ո՛չ արարած: - 109. Հինգերորդ՝ մի կոչի. որպէս միակն սկիզբն է թւոց և ո՛չ թիւ. և աստուած *սկիզբն* է արարածոց և ո՛չ արարած: - 109. Զի է՛ մի՝ որ *սկիզբն* է թւոյ. և այսպէս մի ո՛չ ասի աստուծոյ. զի այս քանա՛կ է. և պատահումն ո՛չ գոյ յաստուած: - 110. Զի՞նչ է որ ասեն վասն աստուծոյ թէ՝ է՛ *սկիզբն* և պատճառ: - 110. Ի դէմս պատճառին՝ նոյն է *սկիզբն* և պատճառ: - 110. Նախ՝ առ համաբունսն՝ հայր *սկիզբն* է որդւոյ և հոգւոյն սրբոյ. և պատճառ այլ ամենայն արարածոց: - 110. Երկրորդ՝ *սկիզբն* է յարացուցի. և պատճառ էից. պատկեր և նմանութիւն նորին յարացուցի: - 110. Երրորդ՝ *սկիզբն* իմանալեաց. և պատճառ զգալեաց. որ են յաւիտենականք և ժամանակեայք: - 110. Չորրորդ՝ *սկիզբն* է առաջնոցն. և պատճառ վերջնոցս. որք միջնորդութեամբ գոյանան. որպէս ի տարերաց կամ ի ծնողաց: - 110. Հինգերորդ՝ *սկիզբն* էութեան. և պատճառ կենաց և շնորհաց և այլոց: - 110. Վեցերորդ՝ *սկիզբն* է ներգործութեան. և պատճառ կատարման. զի ի նմանէ սկսեալք՝ ի նա՛ կատարիմք: - 111. Եւ ի *սկիզբնէ*. որ է յարացոյցն և նախագաղափարն: - 111. Մին՝ զի նա՛խ է քան զամենայն գոյ. թէ *սկիզբն* և թէ էութիւն: - 111. Երկրորդ՝ զի նա՛ է *սկիզբն*՝ և մէջ՝ և վախճան: - 111. Որպէս նախ քան զլինիլն մեր՝ էր *սկիզբն* մեր. և այժմ է՛ նոյն *սկիզբն*. և յետոյ ի կատարածի անփոփոխելի մնայ ի *սկիզբն* գոլոյ: - 112. Վասն որոյ երբեմն կոչի *սկիզբն*. և մեք սկսեալք ի նմանէ: - 112. Այսպէս ի մի և ի նոյն *սկիզբն* որ է՛ յարացոյցն՝ զբազում սկսեալքս ըստ յարացուցին: - 112. Նախ ասի անեղ՝ որ դեռ չէ՛ եղեալ. որպէս այն որ ի հանդերձեալն լինի. որ կարօտ է *սկզբան:* - 113. Երկրորդ՝ ասի անեղ այն՝ որ ո՛չէ եղեալ ի կատարումն. զի ունի *սկիզբն*՝ և կարօ՛տ է կատարման: - 113. Երրորդ ասի անեղ այն՝ որ ի յումե՛ք է, և ի յումեք ո՛չէ. որպէս հրեշտակք յաւիտենի եղեալ, և ի ժամանակի անեղ. սա կարօտ և անկարօտ երկոցունց. այսինքն *սկզբան* և կատարման: - 113. Չորրորդ՝ ասի անեղ՝ որպէս ոչ ուրեք և ո՛չ երբեքն. այսինքն է ոչինչն. սա կարօ՛տ է ամենևին *սկզբան* և կատարման: - 113. Այլ արդ՝ որդի և հոգի ըստ որում ի պատճառէն՝ *սկիզբն* ունին զհայր. և ըստ որում՝ նախ քան զյաւիտեանս՝ անսկիզբն են ընդ հօր: - 114. Զի հայր անսկիզբն՝ յինքենէ՛ սկսեալ որդւով և հոգւով՝ արար *սկիզբն* սկզբնաւորացս...: - 114. Նմանապէս և յաւիտենական. զի ո՛չ ունի *սկիզբն* և ո՛չ վախճան: - 114. Ասին և մշտնջենաւորք. զի ունին *սկիզբն*, այլ ո՛չ վախճան: - 114. Նախ՝ նշանակէ ծերն՝ զի *սկիզբն* է ամենայնի: - 115. Երրորդ՝ այսպէս մեկնեն, եթէ հին աւուրց զնախնի ժամանակս նշանակէ. և մանուկն զնախնի թիւն. զի միակն *սկիզբն* է ամենայն թըւոց. և որ մերձ է միակին՝ սկզբնապետագո՛յն է քան զհեռագոյնն: - 115. Նախ՝ որ ոչ *սկիզբն* ունի և ո՛չ կատարած: - 115. Երկրորդ՝ որ ո՛չ *սկիզբն* ունի, այլ կատարած: - 115. Երրորդ՝ որ *սկիզբն* ունի, այլ ո՛չ կատարած: - 115. Չորրորդ՝ որ *սկիզբն* ունի և կատարած. և թէպէտ հասարակ սոքա յաւիտեանք կոչին, այլ ունին յատուկ անունս: - 115. Յաւիտեանս Յաւիտենից. որ է՛ սկզբնական և յարաձգական. զի նա պարունակէ զերեք յաւիտեանն. որ ո՛չ *սկիզբն* ունի և ո՛չ կատարած: - 116. Եւ գիտելի է՝ զի աստուած կոչի յաւիտեան անսկիզբն և անվախճան. և է՛ պատճառ պարունակողացն յաւիտենին. որ ո՛չ *սկիզբն* ունի և ո՛չ կատարած: - 116. Այլ զայս ստեղծեալ յաւիտեանս ասեմք ոչ *սկիզբն* ունիլ և ո՛չ կատարած. զի պարունակօղ է ա՛յլ յաւիտենից որք ունին *սկիզբն* կամ կատարած. այլ ինքն պարունակի յանստեղծ յաւիտենէն որ է՛ աստուած: - 116. Նախ՝ զի յաւիտեանն ո՛չ ունի *սկիզբն* և ո՛չ վախճան: - 116. Եւ միշտն ունի *սկիզբն*, այլ ո՛չ վախճան: - 116. Եւ ժամանակն ունի *սկիզբն* և վախճան: - 116. Յաւիտենական է՝ որ ո՛չ *սկիզբն* ունի, և ո՛չ կատարած. որպէս աստուած: - 116. Եւ

մշտնջենաւոր՝ որ ունի *սկիզբն* և ո՛չ կատարած. որպէս հրեշտակք. և հոգի մարդոյ: - 116. Եւ ժամանակեայ՝ որ ունի *սկիզբն* և կատարած. որպէս զգայականք. և տնկականք: - 116-117. Զի՞նչ է բանականութեան *սկիզբն* և կատարումն: - 121. Դարձեալ՝ գործնականին *սկիզբն* կամքն է. և տեսականին իմացական զօրութիւն մտացն: - 121. Զի՝ մի արեգակն *սկիզբն* է **բ** լուսոյն. այսինքն դեղնին և սպիտակին: - 124. Եւ յատկութիւն արեգականն յայտնի է, զի *սկիզբն* է **բ** լուսոյն: - 124. Նոյնպէս հայր է *սկիզբն* որդւոյ ծննդեան. և հոգւոյն բղխման: - 124. Նախ՝ զի ի միոյ *սկզբնէ* են: - 125. Զի որպէս ո՛չէ *սկիզբն* աստուածութեան նորա, և ո՛չ վախճան մարդկութեան նորա: - 126. Չորրորդ՝ սիրօղ՝ որպէս *սկիզբն* մեր. և սէր՝ որպէս հաստատութիւն. և սիրելի՝ որպէս կատարումն: - 128. Այսպէս բարին է *սկիզբն* մեր. և մէջ. և վախճան: - 128. Ապա ուրեմն բարին *սկիզբն* է մեր և վախճան: - 128. Երկրորդ՝ ես եմ *սկիզբն* և կատարած ամենայնի. զի ի բանէն աստուծոյ եղեն ամենեքեան և ի նոյն բանն վախճանին: - 129. Երրորդ՝ ես եմ *սկիզբն* արարչութեամբ, և կատարումն նախախնամութեամբ ամենայն գոյից: - 129. Չորրորդ՝ և զի *սկիզբն* է և վախճան, նոյն ինքն է անսկիզբն և անվախճան: - 129. Հինգերորդ՝ անսկիզբն աստուածութեամբն. և անվախճան մարդկութեամբն. զի որպէս ո՛չ է *սկիզբն* աստուածութեանն, և ո՛չ վախճան մարդկութեանն: - 129. Վեցերորդ՝ *սկիզբն* եկեղեցւոյ որպէս հիմն. և վախճան որպէս գլուխ և կատարումն: - 129. Եօթներորդ՝ *սկիզբն* և վախճան գիտութեամբն ասի. զի *զսկիզբն* էից և զկատարածն ի ներքոյ իւր ամենահաս գիտութեանն բովանդակեալ ունի: - 129-130. Ութերորդ՝ *սկիզբն* է խոստմանցն, և կատարումն արդեանցն: - 130. Իններորդ՝ *սկիզբն* է շնորհաց որպէս այժմ. և կատարումն փառաց ի հանդերձեալն: - 130. Տասներորդ՝ *սկիզբն* է օրինացն, և կատարումն ճշմարտութեանն. որպէս հնոյն և նորոյս: - 130. Արծւին երագընթաց մարկոս. ի հոգւոյն մարգարէութենէն արարեալ *սկիզբն:* - 133. Զորօրինակ գիտութիւն մարդկան ի *սկիզբն* և ի մէջն և յեզերն՝ նախ զտգիտութիւն փարատէ՛, և ապա՛ զմիտս լուսաւորէ՛ և կատարէ: - 139. Վասն երկրորդ մի՞ է թէ բազում, ասեմք եթէ՝ ի *սկիզբն* մի է ըստ էութեան ի միոյ պատճառէ՛ յառաջ եկեալ. և ի բազումս բազմացեալ ըստ որակութեան. որպէս **է** արփեան և ըստ աստիճանաց: - 140. Նախ՝ զի ամենեցուն *սկիզբն* է և պատճառ, գիտէ զսկսեալսն ի նմանէ: - 141. Երրորդ՝ զի ամենեցուն կատարումն է և բովանդակութիւն. ապա այսպէս գիտէ զամենեսեան. ըստ որում *սկիզբն* է և կատարումն, յամենայնսն թափանցեալ է և ունի: - 141-142. Եւ ըստ որում մի է *սկիզբն* և կատարումն և թափանցումն. վասն որոյ միով և ինքեամբ գիտէ զբազումս. և ո՛չ որպէս մեք բազմօք զբազումս: - 142. Իսկ կողմնաւոր՝ ի խնամելոցն առ աստուած դարձողապէս միացումն յառաջին *սկիզբն:* - 142. Եօթներորդ՝ բարաքիէլ. *սկիզբն* աստուածայնոյ: - 144. Զի ինքնագիտ չարութեամբ նախ ինքն չարացաւ որ ասի գտակ. և ապա զայլս չարացոյց որ ասի մայր. որպէս *սկիզբն* և սերմանօղ չարեաց ի յայլս: - 148. Իսկ «առաւօտի», զի ի *սկիզբն* ստեղծման աշխարհի ընդ բաժանիլ ի մէջ լուսոյն և խաւարին՝ յայնժամ միայն ծագեցին յառաջին օրն յանկարծակի և անկան յերկնից. թէպէտ ոմանք յերկրորդ օրն ասեն: - 148. Դարձեալ՝ առաւօտ կոչի վախճան աշխարհիս որ *սկիզբն* է աներէկ աւուրն: - 148. Տեղական անկումն եղև դիւաց ի *սկիզբն* ստեղծման իւրեանց վասն ամբարտաւանութեան և մախանաց ընդդէմ արարչին փառաց...: - 153. Ո՞ր է *սկիզբն* աւուր. և բաժանումն լուսոյ և խաւարի: - 154. ...բե՛ր սկսցուք *զսկիզբն* արարչութեան եղելոց մինչ ի վախճան կատարման այժմոյս՝ ըստ կարգի հին և նոր կտակարանաց հետևեալ: - 156. Երկոտասաներորդ՝ կատարած գործոյ մարդոյ ի *սկիզբն* անգիտելի է. իսկ աստուծոյն ի *սկիզբն* կատարածն գիտելի է նմա: - 157. Երրորդ՝ զի առնելն ի *սկիզբն* նայի ստեղծեալ իրին զի լինիցի. և նախախնամելն ի կատարածն զի մի՛ կորիցէ: - 158. Առ այնոսիկ որք ասեն՝ անկա՛ր է աստուծոյ առնել զաշխարհս ոչ ինչ. մինչ զի ո՛չ երևիլ *սկիզբն* լինելութեան սորա: - 162. Եւ միշտ ներգործութեամբ է. զի ո՛չ կարօտի *սկզբան* և կատարածի զօրութեամբ գոլ. ապա ուրեմն անսկիզբն է և անվախճան: - 162. Իսկ որ ասէ, մինչ զի ո՛չ երևիլ *սկիզբն* լինելութեան սորա: - 163. Գիտելի է, զի կրկին է *սկիզբն* լինելութեան աշխարհի: - 163. Առաջին է նախագաղափար տեսութիւն արարչին. որպէս նախ քան զժամանակ անսկիզբն յաւիտենիւ. և Երկրորդ *սկիզբն* է ի ժամանակի լինելութեան իւրոյ: - 163. Արդ՝ տաճարիս այս է՛ կրկին *սկիզբն*. նախ միտքն շինողին, և յետոյ *սկիզբն* և կատարումն շինւածոյն: - 163. Երկրորդ զանազանութիւն՝ զի նախկին *սկիզբն* համանգամա՛յն է ի միտքն. և երկրորդ *սկիզբն* նա՛խ է՝ և կատարումն յետոյ: - 163. Երրորդ զանազանութիւն՝ զի թէ շինի տաճարն և թէ ոչ՝ առաջին *սկիզբն* որ ի միտքն մնայ՝ նոյն ո՛չ առաւելու և ո՛չ նուազէ: - 163. Չորրորդ զանազանութիւն՝ զի առաջին *սկիզբն* զօրութեամբ է տաճարին. և երկրորդն ներգործութեամբ: - 163.

Իսկ հասարակութիւն է Նախ՝ զի երկուց *սկզբանցն* մի և նո՛յն է պատճառ ներգործական. որ է՛ արուեստաւորն: - 163. Նախ՝ զի որպէս շինօղ տաճարին *զսկիզբն* և զկատարումն ետես. այսպէս և արարիչն աստուած ի կրկին *սկիզբն* գործոյն զկատարումն աշխարհի ետես: - 163. Չորրորդ՝ և որպէս որք մերձն են զառաջին *սկիզբն* ո՛չ տեսանեն որ ի միտս շինողին: - 164. Արդ այս չափ համեմատութիւն է ի նախկին *սկիզբն*. նախագաղափար տեսութեանն աստուծոյ. և ո՛չ յերկրորդ *սկիզբն* ի գործ արարչութեան: - 164. Եւ որովհետև գիտացեալ եղև այս, ապա յա՛յտ է թէ անկա՛ր է ոչ երևիլ *սկիզբն* լինելութեան աշխարհի. ըստ այնմ որ էր ի նախագաղափար տեսութիւնն աստուծոյ: - 164-165. Այլ և ո՛չ ըստ այնմ որ է՛ *սկիզբն* գոյացութեան աշխարհի. զի անփոփոխ կամօք կամեցաւ և արար ի գոյութիւն. և անկա՛ր է փոխիլ կամացն անեղին և առնել յանգոյութիւն զեղեալս էութիւն: - 165. Այլ կոչի է, ըստ այնմ որ միշտ է՛, ո՛չ ունելով *սկիզբն* և ո՛չ վախճան. այլ ինքն է ամենեցուն *սկիզբն* և վախճան...: - 171. Երկրորդ՝ *սկիզբն* և պատճա՛ռ է գոյն. զի գոլովն գոյացուցանէ. և աստուած՝ ամենեցուն: - 171. Եւ ո՛չ թիւ պատահական կամ բան տարալուծական. այլ մի երրեակ. և երրեակ մի. ըստ որում *սկիզբն* է թուոց՝ և ո՛չ թիւ. և բաժանեալ յա՛յլ էակաց: - 171. Իսկ Երբ ո՛չ ասի աստուծոյ. զի անժամանա՛կ է և ո՛չ ունի փոփոխումն. այլ ասի յաւիտենական. ըստ որում բոլորն համանգամա՛յն է և կատարեալ. զի ոչ կարօտի *սկզբան* և վախճանի. որպէս ժամանակն. և ո՛չ միայն *սկզբան* որպէս մշտնջենաւորն. այլ անսկիզբն է և անվախճան. վասն որոյ կոչի յաւիտենական: - 172. Գոյացութիւն որ *սկիզբն* է ամենեցուն և նախասեռ...: - 176. Երկրորդ՝ զի առաջին և *սկիզբն* է թուոց. որպէս միակն թիւ բազմանայ և խառնի յայլս, այսինքն՝ ի **ժ**. ի **ճ**. ի **ռ**. և ի բիւրն. և ի միութենէն իւրմէ ո՛չ որոշի: - 178. Նախ զի է ծնօղ և *սկիզբն* ամենայն գրոյ և իմաստութեան. որպէս հայր աստուած բոլորից: - 178. Եւ այբն է մայր և *սկիզբն* իմաստութեանս այս: - 178. Արդ *սկիզբն* ժամանակի ո՛չ է ժամանակ. վասն այն ո՛չ ցուցանի թէ ե՞րբ եղև: - 180. Այլ և ո՛չ աներբ. զի ի *սկիզբն* ժամանակի եղև: - 180. Երկրորդ՝ զի ո՛չ երևի ի նմա *սկիզբն* և ո՛չ կատարած: - 182. Երկրորդ՝ ասեն թէ՝ ի *սկիզբն* աշխարհիս արար զբնութիւնն յանկարծակի. այլ բնութիւնն յամելով և ըստ կարգի յանկատարութենէ ելանէ ի կատարումն: - 192. Նախ՝ զի *սկիզբն* և առաջին է ամենայն աւուրց. զի նա կրկնելով առնէ զայլ աւուրս որպէս ասացաւ: - 193. Նա՛խ՝ զի վախճա՛ն է և *սկիզբն:* - 193. Վախճան է ժամանակի. և *սկիզբն* յաւիտենին և մշտնջենաւորականացն: - 193. Ո՞ր է *սկիզբն* աւուր: - 194. Զի հրէայք և ասորիք՝ զերեկո՛յն դնեն *սկիզբն* բնական աւուր. ասելով՝ «եղև երեկոյ և եղև վաղորդայն օր մի»: - 194. Իսկ ա՛յժմ քրիստոնէիցս կրկին է *սկիզբն* բնական աւուր. այսինքն մէջ գիշերն, և առաւօտն: - 194. Նա՛խ՝ առաւօտն և երեկոյն. և է՛ առաւօտն վախճան գիշերոյ՝ և *սկիզբն* տունջեան: - 194. Եւ երեկոյն է վախճան տունջեան, և *սկիզբն* գիշերոյ: - 194. Նա՛խ՝ զի *սկիզբն* է տուընջեան, և վախճան գիշերոյ: - 196. Նա՛խ՝ զի վախճա՛ն է տուընջեան, և *սկիզբն* գիշերոյ: - 196. Վեցերորդ՝ մուտն նիսանայ. որ է *սկիզբն* տարւոյ եբրայեցւոցն. և կազմութիւն մարդոյ ի սկզբանն: - 196. Վեցերորդ՝ մուտն նիսանայ. որ է սկիզբն տարւոյ եբրայեցւոցն. և կազմութիւն մարդոյ ի *սկզբանն:* - 196. Նա՛խ՝ զի *սկիզբն* է տարւոյ. յորժամ արեգակն ի խոյն մտանէ: - 197. Եւ դարձեալ՝ գարնան եղանակն *սկիզբն* է ստեղծման աշխարհի և բուսոց և ամենայն ծննդոց...: - 198. Նաւասարդի. Նոր ասի. այսինքն *սկիզբն* տարւոյ: - 200. Ի նշանակել՝ զի մահու մարդոյն՝ *սկիզբն* օձն եղև: - 219. Իններորդ՝ զի ի *սկիզբն* ստեղծման արարածոց՝ եղեն իմանալի բանականքն ընդ լուսոյն գոյացեալ: - 231. Եւ սոյնպէս մարդն առաւելու ի չարն. ի բանականէն և ի կամացն և ի թունիցն սատանայի չարացեալ որպէս ցուցաւ ի *սկիզբն* գրոցս: - 237-238. Գիտելի է, զի **գ** *սկզբունք* են սոցա: - 244. Նա՛խ՝ խելապատակն *սկիզբն* է ջլացն. որ միայնաբար ընդ ուղուղս պարանոցին անցանէ. և բաժանի ի թիկունս, ի ձեռս, և յա՛յլ մարմինս: - 244. Իսկ սիրտն *սկիզբն* է շնչերակացն: - 244. Իսկ լեարդն է *սկիզբն* արեան երակացն. որ ելանէ ի լերդէն **է** երակ լի արեամբ: - 244. Իսկ բանն *սկիզբն* առեալ ի խոկմանէն, զտեղի առնու ի բարին: - 248. Այլ և ի *սկիզբն* գրոցս ցուցաւ յերեք համարն: - 252. Երկրորդ՝ զի մի գոյութիւն է մարդն բաղադրեալ ի հոգւոյ և ի մարմնոյ. ոչ է պարտ **բ** լինիլ *սկիզբն*. այլ մի էութեանն մի է *սկիզբն:* - 253-254. Այլ ի միասին համանգամայն ստեղծեալ. ո՛չ ժամանակաւ յառաջ և յետոյ, և ո՛չ բնութեամբ. այլ մի է *սկիզբն* միոյ գոյութեան մարդոյն: - 254. Եւ թէ ոք ասիցէ, զի՞նչ է այն մի *սկիզբն* գոյութեան մարդոյ: - 254. Պատասխանեմք եթէ, սերմնական զօրութիւնն որ է՛ ի մեզ, նոյն է *սկիզբն* գոյութեան մարդոյ: - 254. Զի է՛ *սկիզբն* նիւթական մարմնոյ կազմուածոյն. և է՛ *սկիզբն* ծննդեան հոգւոյ: - 254. Եւ այսպէս մի է *սկիզբն* միոյ գոյութեան մարդոյն: - 254. Եօթներորդ՝ զի մի գոլով *սկիզբն* ենթակային և կենդանութեանն որպէս ասացաք: - 256. Ասեմք առ այս թէ, օն ի բա՛ց տար ի մտաց քոց

զհեթանոսական կարծիս. զի ո՛չ է հոգի յառաջ քան զմարմին. և ո՛չ մարմին նախ քան զհոգի որպէս ի *սկիզբն* ասացաք: - 260. Եւ այսպէս միջին հասակս կատարեալ, ծգի մինչև ի **խզ** ամն. որ է **դ ժզ**. և վեցն կատարեալ թիւ է. և աստ տիրէ ալիք և *սկիզբն* լինի ծերութեան մինչև ի **հբ** ամն. յորում է ծայրք կենաց ըստ դաւթի, և թիւ երկոտասան վեցից խորհրդաւոր: - 265. Այլ *սկիզբն* և վախճան ո՛չ տեսանի մեզ. բայց միայն եղեալ արարածքս: - 268. Դարձեալ՝ հանճարն է ի *սկիզբն*. իմաստութիւնն ի մէջն. գիտութիւնն ի կատարումն: - 270. Ա՛րդ՝ որ ոք կամեսցի ի նոյնն ելանել և առ քրիստոս լինիլ, պատշա՛ճ է ի վերջնագունէն *սկիզբն* առնել որպէս սանդղօք: - 280. Ասեմք եթէ՝ զոր ինչ ի յարութեանն աւուր լինելոց է սրբոցն, *զսկիզբն* անդանօր սերմանեաց ի նախնի մարդն ադամ...: - 282. Զի զանմահութեան և զանապականութեան *սկիզբն* և զսերմն ընկալաւ ադամ: - 282. Նմանապէս և որք նոր իմն բարեաց *սկիզբն* լինիցին՝ առաւելապէս պարգևաց արժանասցին: - 288. ...ապրեցաւ ինքն և տունն իւր. և երկրորդ *սկիզբն* եղև մարդկութեանն և աշխարհի շինութեան: - 288. Իններորդ՝ արիւնն և շունչն է *սկիզբն* գոյացութեան մերոյ...: - 295. Եւ միապէս է մեր և կենդանեաց. վասն որոյ ո՛չ է պարտ *զսկիզբն* գոյացութեան մերոյ ուտել: - 295. Եւ յետ **եճ** և **իե** ամաց ջրհեղեղին էր *սկիզբն* շինուածոյ ամբարտակին ի աշխարհին բաբելոնի ի դաշտին քաղանէ: - 297. Եօթնն**ժ**, որպէս իսահակ արձակեցաւ յետ երից աւուրց, զի ի կամս հօրն յօրէ յայնմանէ էր մեռեալ՝ ուստի *սկիզբն* եղև ճանապարհին: - 306. Տասներորդ՝ վերջին և կատարեալ ծնունդ յարութեանն. զի մահ մարմնոյս է՛ *սկիզբն* և յղացումն յարութեան: - 308. Երկրորդ՝ էրն զվախճան անցելոյն ցուցանէ, և եղիցին *զսկիզբն* հանդերձելոյն: - 312. Զի էն՝ անսկիզբն և անվախճան ընդ դէմ է ժամանակին որ *սկիզբն* ունի և վախճան: - 312. Եւ ընդ դէմ է մշտնջենաւորին որ ունի *սկիզբն* և ո՛չ վախճան: - 312. Եւ ընդ դէմ է յարածգականին որ ունի վախճան և ո՛չ *սկիզբն:* - 312. Երկրորդ, բոլո՛ր իր է. ո՛չ *սկիզբն* է և ո՛չ կատարած: - 338. Որպէս հոգի մեր *սկիզբն* ունին, այլ ո՛չ վախճան: - 344. Վեցերորդ, այն *սկիզբն*. և աստ մէջ. և անդ եզր և կատարումն: - 355. Զի միջնո՛ց է մարմնոյն, և *սկիզբն* է կենդանւոյն, և կատարած կենաց: - 360. Որպէս նոքա ի *սկիզբն* քաւութեան պահօք խոնարհեցուցանէին զանձինս: - 373. Նա՛խ՝ ցուցանէ թէ քրիստոս է առաջին և վերջին. այսինքն *սկիզբն* և կատարումն եկեղեցւոյ. ո՛չ միայն աստուածութեամբն, այլ և մարդկութեամբն: - 385. Իսկ տարի՛ է յաւիտենական փառքն. որոյ *սկիզբն* խնամոցէ՛ նախ քան զլինիլն աշխարհի. և կատարումն անվախճան փառքն: - 399. Եւ է՛ *սկիզբն* օրհնութեան մերոյ աւազանն...: - 403. Չորրորդ՝ մարմնաւոր մահն վախճան է մարմնոյ կենաց և *սկիզբն* հոգևորին. վասն այն օրհնէ: - 408-409. Զոր յիշէ աւետարանն ղուկասու, և մնացորդացն գիրք. և ո՛չ յիշէ մովսէս. զի *զսկիզբն* կռապաշտութեան ի նմանէ՛ ասեն լինիլ: - 411. Զի *սկիզբն* մեղաց՝ հիմն է դժոխոց. և կատարումն՝ դուռն. և յամելն՝ փակ: - 418. Եւ տէր մեր լրումն աւետեաց ուխտին նախահարցն. և նախ քան *զսկիզբն* աշխարհի ուխտի աւետեաց մարդկան փրկանաց: - 422. Սակայն հանդերձեալն և սիրտ մարդոյն՝ միայն աստուծոյ է գիտելի և ոչ այլ ումեք որպէս ասացաւ ի *սկիզբն* գրոցս: - 430. Քառասուն ամ թագաւորեաց դաւիթ, որ է չորիցս **ժ**. և *սկիզբն* և կատարումն ամենայնի է՛ տէր մեր: - 437. Ա՛րդ՝ *սկիզբն* գերութեանն խրայէլի յաւուրս ոզիայ արքայի յուդայ: - 446. Զանսկիզբն *սկզբան* ի սկզբանէ՛ գոյին, և զանճառելի թաքնութեան և անհաս խորութեան յառաջ ճանապարհ ի մեզ միածին բանին: - 456. Երրորդ՝ գործ ողորմութեանն է ի *սկիզբն* ստեղծման աշխարհի...: - 458. Նա՛խ՝ զի գործ ողորմութեանն է ի *սկիզբն* աշխարհի՝ և ի մէջն. և ի կատարումն յարութեամբ մարդկան որպէս ցուցաւ ի վերոյ: - 458. ...եթէ զոր օրինակ բժիշկք՝ ո՛չ ի *սկիզբն* ցաւոց և ո՛չ ամենևին անազան տան զդեղ հիւանդին. զի անօգուտ է և վնասիչ. այլ ի դիպօղ ժամու յորում առողջասցի: - 467. Նա՛խ՝ անպատշա՛ճ էր թէ հայր էր մարմնացեալ. զի հայր անսկիզբն է. և յայնժամ ո՛չ ոք լինէր առանց *սկզբան:* - 468. Հինգերորդ՝ զի սրբեսցէ զբոլոր բնութիւնս մեր ի մեղաց. ի *սկիզբն* ի մէջն և ի կատարումն: - 469. Դարձեալ ի *սկիզբն* յղութեան անդ բանական հոգւով գիտաց զամենայն միաւորեալ ընդ բանին: - 470. Եւ յիսուս անունն՝ են վեց գիր. որ կարեն լինիլ *սկիզբն* այսպիսի ասութեանց. այսինքն Յարազուարճութիւն տրտմեցելոց: - 474. Զի որպէս ո՛չ գոյ *սկիզբն* աստուածութեան նորա, այսպէս և ոչ կատարումն մարդկութեան և աստուածութեան նորա: - 478. Ութերորդ՝ *սկիզբն* մարդկութեանս ա՛յրն է. և կինն ի նմանէ. վասն որոյ այր եղև, զի զբոլորս լինէր առեալ և փրկեալ: - 480. Եւ թշրինի **ժե**՝ *սկիզբն* տօնի տաղաւարահարաց, որ է՛ հոկտեմբերի **բ**. և անտի մինչև ի **իբ**ն թշրինի՝ և ի հոկտեմբերի **թ** կատարումն տօնին: - 483. Զի **բժ**ան օրն թէպէտ պակաս է ի թիւս տարւոյն, սակայն *սկիզբն* է տարւոյն: - 484. Ա՛րդ՝ զիհնն զամենայն կատարեաց և վճարեաց. և ապա՛ նորոյս *սկիզբն* էարկ մկրտութեան և շնորհաց: - 485. Զի իցէ ինքն

*սկիզբն* և կատարումն ո՛չ միայն ըստ աստուածութեանն, այլ և ըստ մարդկութեանն: - 485. Այլ և **դ** *սկզբունք* տարրական ամենայն մարմնոց: - 494. Զի որ վախճա՛ն է կենաց, նոյն և *սկիզբն* կենաց. այսինքն վախճան ժամանակին, և *սկիզբն* մշտնջենաւորին: - 496. Եւ ունի մահն կրկին յատկութիւն որ ընդ դէմ է երկուց ծայրիցն. այսինքն զի է՛ վախճան կենաց՝ և է՛ *սկիզբն* կենաց: - 497. *Սկիզբն* կենաց՝ ըստ այնմ որ վախճա՛ն է կենաց՝ վախճա՛ն է մեղաց: - 497. Եւ ըստ այնմ որ *սկիզբն* է կենաց՝ ընդ դէմ է ապականութեանց: - 497. Եւ բնական աւուր *սկիզբն* է ծագումն լուսոյն. և շնորհականին ի մէջ գիշերն: - 508. Հինգերորդ վկայ, զի ի բոլոր տարին յերեկոյի շաբաթուն կիրակմուտ անուանեն ամենայն ազգք. նոյնպէս և մեք յամենայն շաբաթս յերեկոյին «լոյս զուարթ» ասեմք, և «սուրբ աստուած որ յարեար». ի յայս շաբաթի աւուրս *սկիզբն* առեալ: - 509. Նա՛խ՝ զի մատթէոս զերեկոյի շաբաթուն և զլուսանալ միաշաբաթին յիշէ. այսինքն *զսկիզբն* և զվախճան գիշերին...: - 512. Քսաներորդ, յա՛յտ է յա՛յսմանէ՝ որ նախ քան զքրիստոս՝ էր *սկիզբն* աւուր ծագումն լուսոյն. իսկ յետ յարութեանն քրիստոսի եղև *սկիզբն* աւուրն ի մէջ գիշերի. զի այժմ ի խաւարէ՛ ի լոյս ճանապարհորդիմք: - 515. Նա՛խ՝ զի իցէ *սկիզբն* ամենայն մարմնոյն. և զի իցէ յէութենէ նորին: - 532. «Եւ գլուխ քրիստոսի աստուած հայր». զի *սկիզբն* է որդոյ և էակից նմա: - 532. Եւ զայսոսիկ գտցես ի *սկիզբն* նախերգանի գրոյս սակաւուք: - 537. *Զսկիզբսն* պահոցն լուծանել: - 553. Վեցերորդ՝ *սկիզբն* և արմատ ամենայն մեղաց զմիտս ասաց տէրն...: - 556. Եւ *սկիզբն* ամենայն մեղաց ամբարտաւանութիւնն է որպէս ասէ սիրաք: - 569. Դարձեալ՝ սէրն է *սկիզբն* բարեաց. զի յաստուծոյ է. և է՛ մէջ բարեաց. զի ըստ աստուծոյ է. և է՛ վախճան բարեաց. զի վասն աստուծոյ է: - 575. Կամ այլ ազգ. սէրն է *սկիզբն* գործոց բարեաց, զի շարժէ՛ առ այն. որպէս ասեն վարդապետք՝ սէրն գործէ՛ մեծամեծս թէ է՛. և թէ դադարէ ի գործելոյն՝ ո՛չ է սէր: - 575. Այս ո՛չ եթէ բաժանմամբ. այլ նկատմամբ ի յատկութիւնս անձանց. ըստ որում *սկիզբն* է հայր. և փրկութիւն է որդին. և ջերմութիւն հոգին: - 577. Երկրորդ, զի այս խորհրդոյ նշանակ ի *սկզբան* արարածոց աստուած ադամայ ետ և ո՛չ կնոջն. յորժամ էած զկենդանիսն առ ադամ զի անունս դիցէ նոցա: - 589. Ասեմք թէ՝ որպէս մահն է վախճան կենցաղոյս և *սկիզբն* հանդերձելոյն: - 605. Եւ այս աճման *սկիզբն* պսակն է. որ միանայ հարսն ընդ փեսային. և լինի ըստ սահմանադրութեանն աստուծոյ ծննդագործութիւն: - 609. Իսկ ի նորս փոխեցաւ ի հոգևոր օրհնութիւն և ծնունդ. և զմարմնաւորն ի *սկզբան* չափաւորն կապեաց. որպէս ադամ և եւա: - 613. Պա՛րտ է ամենայն որ աղօթէ, զայսոսիկ ի միտ պահել և ապա՛ աղօթել. վասն որոյ ի *սկիզբն* գրեցի զխրատս: - 620. Եւ էր առաջին ժամն նոցա երեկոյին. վասն զի *սկիզբն* աւուրն զերեկոյն ասէին...: - 621. ...վասն որոյ յայսմ ժամու *սկիզբն* է աղօթից բոլոր աւուրն. յորում ասեմք զտէր եթէ շրթունքն և զայլ սաղմոսսն ի դէմս հօր աստուծոյ: - 621. Եւ դարձեալ՝ մինն *սկիզբն* և վախճան է գիշերոյ. և միւսն տըւընջեան: - 623. Վասն է՞ր ի *սկիզբն* ժամուն ասեմք «Օրհնեա այս անուն» և ո՛չ թէ հրամայեա՛ կամ աղօթեա՛: - 624. Դարձեալ՝ *սկիզբն* աղօթիցն է՛ առ հայր. և մէջն որ է՛ խաղաղութիւնն առ հոգին սուրբ. որպէս ասացաւ ի վերոյ...: - 633. Վասն է՞ր զերեքսրբեանն որ է սուրբ աստուածն՝ յառաւօտուն և յերեկոյին ժամն ի վերջքն երգեմք. և ի պատարագին ի *սկիզբն:* - 634. Եւ որ ամէն շարականի *սկիզբն* ի մարգարէից դնեմք, այս է պատճառն, զի զհինն և ըզնորս ի միասին խառնեմք: - 636. Դարձեալ՝ զի *զսկիզբն* մարգարէքն եդին, և առաքեալքն զշինուածն: - 636. Իսկ կցորդ և *սկիզբն*, այն մին տունն է խորհրդաւոր ըստ պատշաճի աւուրն: - 643. Եւ ադամայ ներգոյի *սկիզբն:* - 645. *Զսկիզբն* պահոցն մեծի՝ կիրակէն է...: - 651. Եւ զայս ունին *սկիզբն* և հիմն պահոց ամենայն ազգ քրիստոնէից զոր նոքա լուծանեն: - 651. ...և է՛ *սկիզբն* ի չորեքշաբաթի, և աւարտն ի յուրբաթի: - 651. Եւ զփոքր կարգն մեծն կիւրեղ երուսաղէմի հայրապետն. է՛ *սկիզբն* **բ** շաբաթի, և աւարտն ի **ե** շաբաթի: - 651. Եւ նս՝ եղիայի և մովսէսի քառասնիցն, *սկիզբն* է առաջին շաբաթն. և կատարումն տօնն ղազարու: - 651. Իսկ տեառն մերոյ քառասնիցն *սկիզբն* է երկրորդ շաբաթն, և կատարումն չարչարանք մեծի ուրբաթուն: - 651. Եւ ո՛չ միայն լուծանեն *զսկիզբն* մեծի պահոցն, այլ և զամենայն չորեքշաբաթս որ յառաքելո՛ցն է կանոնեալ, լուծանեն ի բոլոր տարին, և լինին ընդ անիծիւք նոցին: - 652. Եւ ոմանք երեքկին օրհնեն. ի *սկիզբն*. ի մէջն, և յետ կերակրոյն: - 655. Երանելին մովսէս խորենացի՝ որ էր գրիչ սրբոյն սահակայ պարթևի, յետ **ճժ** ամի սրբոյն գրիգորի՝ եղև *սկիզբն* թարգմանութեան ի հայոց լեզու: - 658. Եւ մահն *սկիզբն* է պսակացն. և յարութիւնն կատարումն...: - 667. ...իսկ մահն *սկիզբն* է և ճանապարհ...: - 667. Չորրորդ, որպէս այն *սկիզբն* էր հանդիսին և աստ կատարումն...: - 672. ...որ այս եղև *սկիզբն* պարկեշտութեան յորժամ զսիրելի զաւակաց պատկերս արարին և պաշտեցին: - 677. Նա՛խ՝ զի **գ** թիւն խորհրդաւոր է. որ ունի *սկիզբն* և

մէջ և կատարումն: - 681. Եւ գիտելի է, զի հիմն և *սկիզբն* անդ եկեղեցւոյն եղև տէր մեր յիսուս քրիստոս յարուցեալ ի մեռելոց. և ընդ ինքեան հանեալ և վերացուցեալ զհոգիս սրբոց նահապետաց և մարգարէից: - 688. Եւ *սկիզբն* անդ ժողովելոյ՝ ի յարձակելն քրիստոսի առ ժամանակեայ զհոգիսն անարժանից՝ անդ մնացին և անտի դարձցին մեղաւորք անդրէն ի դժոխս ըստ մարգարէին: - 688. ...այլ *սկիզբն* է ի մահն, և կատարումն ի յարութեանն որպէս ասացաւ: - 697. Վեցերորդ, զի մահն *սկիզբն* է անփոփոխ կենացն. զի ո՛չ կարէ փոխիլ ի մեղաց յարդարութիւն...: - 699. Երկրորդ, զի չո՛րք են *սկզբունք* աշխարհի. երկինք որ է՛ երկուք. հուր և օդ. և երկիր որ է՛ **բ** իր. հող և ջուր: - 714. Թէպէտ բան յարութեան է ի մասնէ հաւատոյ, որպէս *սկիզբն* աշխարհի և վախճան...: - 714. Եւ ի նոյն կէտ լրմանն որ է՛ վախճան ժամանակի և *սկիզբն* յաւիտենի՝ լինի վերառութիւն համայնից մարդկան որպէս գրէ առաքեալն կորնթացւոց...: - 716. Այն նիւթն զոր ի ծնողացն ունիմք՝ բոլոր առնէ. զի *սկիզբն* է գոյացութեան մեր...: - 718. Այսպէս և հողն ուստի շինեցաւ ադամ, ո՛չ մնայ ի տարերս. այլ յառնէ ի յադամ որ *սկիզբն* եղև գոյութեան նմա: - 719. Եւ ա՛յս է պատճառն. զի աստուած ի *սկզբան* զբնութիւնն ադամայ անթերի ստեղծ. նոյնպէս ի վերջին օրն անթերի պիտի նորոգէ: - 726. ...որպէս ասացաւ ի *սկիզբն* գրոցս երեք համարն: - 741. Յաւատն *սկիզբն* աստ. և անդ զօրութիւն գործոյ: - 769. Եւ առաւօտ ասեն *զսկիզբն* աւուրն. որպէս առաւօտ արեգականն գալոյ: - 769. Զի հասարակա՛ց է ամենայն մարդոյ կատարելոց և անկատարից, զի ի յանդիմանութիւն յանդիմանելեացն առհասարակ դժկամա՛կ երևի ի *սկիզբն*. թէպէտ ընտրողութեամբ լաւին ընդունին զխրատն: - 774. Իսկ թէ նա որ *սկիզբն* կորստեան ամենեցուն մեզ եղև և պատճառ ամենայն մեղաւորաց՝ ապրեցաւ շնորհօքն քրիստոսի...: - 775. Նա՛խ՝ որպէս ի վերոյ ասացաւ. զի թէ ադամ որ *սկիզբն* և պատճառ էր մեղաւորաց՝ ազատեցաւ. ապա ուրեմն և որդիքն որ վասն յանցանաց նորա՝ ազատեսցին: - 776. Որոց *սկիզբն* է հաւատն առ մկրտութեամբն. և կատարումն հայի առ գործն. և սոքա փոփոխականք են ըստ քանքարացն յարգելոյ և պակասելոյ: - 783

***Ի ՍԿԶԲԱՆԷ +*** Զի կամ լսիցեն ի նախնեացն թէ *ի սկզբանէ՛* արար աստուած զերկինս և զերկիր: - 25. Երկրորդ՝ *ի սկզբանէ:* - 25. Երկրորդ *ի սկզբանէ*, զի իր ինչ ինքն ինքեան սկիզբն և սկսեալ անկար է գոլ. ուստի հա՛րկ է ամենայն սկզբնաւորաց գոլ սկիզբն: - 25. Վեցերորդ՝ բանն աստուած անմարմին է և *ի սկզբանէ*...: - 73. Առիւծն թագաւորական՝ նշանակէ՛ զյոհաննէս. *ի սկզբանէ՛* զբանն աստուած և թագաւոր յաւիտենից ցուցեալ: - 133. Եւ այս ևս գիտելի է, զի որպէս հրեղէն երկինն հոմանուն է, այսինքն լուսեղէնն որ *ի սկզբանէ* ստեղծաւ. և բոլորակ հրոյն: - 184. Եւ գիտելի է, զի *ի սկզբանէ* աշխարհիս մինչ ի քրիստոս լո՛յսն առաջանայր գիշերոյն. իսկ յետ քրիստոսի մինչ ի վախճան՝ գիշե՛րն առաջանայ լուսոյն: - 194. Այս է պատճառն. զի *ի սկզբանէ* տիւն առաջանայր գիշերոյն. զի ադամ ի լուսոյ շնորհացն անկաւ ի խաւար մեղաց: - 194. Երրորդ՝ կոչին ծերք. զի ծե՛րք են և *ի սկզբանէ՛* եղեալք յարարչադիր հրամանէն...: - 214. Յառաջին օրն եղև առաջին երկինքն *ի սկզբանէ:* - 221. Եւ ոչ նոր, զի մի և նոյն *ի սկզբանէ* հրամանն արարչադիր առանց տկարութեան ներգործէ մինչ ի կատարած. և ըստ իւրաքանչիւր հոգւոյ՝ նոր հրաման ստեղծանելոյ ո՛չ արձակի: - 257. Աչք տեառն *ի սկզբանէ* տնօրէնութեանն և մինչև ցկատարումն տարւոյն ի վերայ նորա: - 398. Տասներորդ՝ *ի սկզբանէ* հայհոյիչ աստուածամարտ էր սատանայ. և վասն այն զմարդիկ կորուսանէր մեղօք. որում զվճիռն և զաստն տէրն ետ, և դատապարտեաց զմեղս ի մարմնի իւրում. և եբարձ մահուամբն զմահ, և որ զիշխանութիւն մահուն ունէր: - 410. Միանգամայն *ի սկզբանէ* գրոց արարածոցն ժողովին **Ե** գլխոյն՝ անուանք արարչին: - 412. Զանսկիզբն սկզբան *ի սկզբանէ՛* գոյին, և զանճառելի թաքնութեան և անհաս խորութեան յառաջ ճանապարհ ի մեզ միածին բանին: - 456. Դարձեալ *ի սկզբանէն* ցուցցուք. մահն պատիժ է յարարչէն եդեալ. և ապականութիւնն ի բանսարկուէն արկեալ հետևանք մահուն: - 498. Երրորդ՝ զի պա՛րտ էր քրիստոսի հովուել զպարզամիտ աշակերտսն որպէս հաւ զձագս, և մայր զմանկունսն. և թէ *ի սկզբանէ* զհոգին ընկալեալ էին՝ ո՛չ էր պիտոյ հովուել զնոսա: - 521. Դարձեալ՝ յերկրի ի կատարմանէ, և յերկինս *ի սկզբանէ* իշխանութեանն. եթէ կապելն և եթէ արձակելն: - 541. Յասարակ, որպէս *ի սկզբանէ* մինչև ցաւարտումն առ Երրորդութիւնն սուրբ աղերսեմք: - 633. ...այլ սակաւ հիւթն այն որ *ի սկզբանէ՛* գոյացութեան մերոյ ի ծնողացն է՛ ընկալեալ: - 718. Խնամք մարդասիրութեանն աստուծոյ որ զամենայն յամենայնի տընօրինէ՛, արգել զայս. զի մի՛ ունիցին ինչ ի մտի յարուցեալքն ի մեռելոց. ապա թէ ոչ, որ *ի սկզբանէ* բարէատեացն էր և մարդասպան, բազում և զանազան երևոյթս...: - 775

**ՍԿԻՀ +** Վասն այն զնշխարն ի կողմն հիւսիսոյ դնեմք և *զսկիհն* ի հարաւ որպէս անդ: - 346.

Հինգերորդ՝ Կիսասարկաւագն. որոյ գործն է *զսկիհն* և զմաղզմայն առ սեղանն տանիլ. - 606. Որոյ գործն է սպասաւորել քահանային ի խորհուրդ եկեղեցւոյն. *զսկիհն* պատրաստել, զաւետարանն կարդալ ի բեմն: - 606. Իսկ վասն հիմնարկութեան սուրբ տաճարի և ժամահար օրհնելոյ. *սկիհ* և մաղզմայ. և զգիրք. և զկնունք առնելոյ. և խաչօրհնելոյ. և զքառասնորդաց **զ** ժամուց զքարոզքն և զաղօթսն, յորհան մանդակունին է արարեալ...: - 659

**ՍԿԻՒԹԱՑԻ** - Եւ այս են **իբ** լեզուքն: ...*Սկիւթացիք:* - 298. Իսկ զսքեմայ կարգն՝ սուրբն դիոդորոս եպիսկոպոս պամփիւլացոց քաղաքի. յառաջին ամի իւրոյ. հրամանաւ մեծին անտօնի և **բ** թեբայեցոցն. և **բ** *սկիւթացւոց* լերինն: - 659

**ՍԿԻՒՌԱՑԻ ԳՐԻԳՈՐ** - Այլ և ի մերոց վարդապետաց *սկիւռացին գրիգոր* ի փոխումն աստուածածին կուսին: - 687

**ՍԿՍԱՆԻՄ +** Այլ և ո՛չ **բ** սկիզբն. զի գործունեայք չարին *սկսեալք* են: - 16. Իսկ որ սկիզբն ի մէնջ՝ և կատարումն ի խնամոցն աստուծոյ, այսինքն յորժամ *սկսանիմք* զբարին՝ և նա՛ աւարտէ՛ ի բարին: - 18. Եւ թէ *սկսանիմք* զչար, և նա փոխէ ի բարին ըստ բարի խնամոցն իւրոց: - 18. Չորրորդ՝ դարձեալ թէ լինէին երկու սկիզբն և հակառակ, մարտնչէին ընդ միմեանս՝ և ընդ *սկսեալս* իւրեանց. և ոչ ինչ մնայր ի խաղաղութեան: - 21. Հինգերորդ՝ թէ է բ սկիզբն և հակառակ, *սկսեալքն* ի նոցանէ անկարգ լինէին և հակառակ: - 21. Երկրորդ ի սկզբանէ, զի իր ինչ ինքն ինքեան սկիզբն և *սկսեալ* անկար է գոլ. ուստի հա՛րկ է ամենայն սկզբնաւորաց գոլ սկիզբն: - 25. Իսկ թէ և նա՛ *սկսեալ*՝ պիտո՛յ է և նման սկիզբն: - 25. Զի թէ պատասխանեմք թէ ո՛չ է հարկ թէ *սկսեալն* ամենայն իրօք և դադարեսցի. որպէս հրեշտակք և հոգիք մարդկան. զի են *սկսեալք* և ո՛չ դադարին. է՛ այս պատասխանի, այլ ո՛չ բաւական: - 37. Առ երրորդն ասեմք, եթէ՝ «հոգին առաքեցաւ ի յորդւոյ», ի նմանէ՛ ասի *սկսեալ*, Ապա առաքեցաւ որդի ի հօրէ և ի հոգւոյն, ի նոցանէ ասի *սկսեալ:* - 61. Իսկ թէ ի *սկսելոյն* յառաջ գայ, է՛ եղեալ և արարեալ. որպէս արարածք ամենայն որդւով և հոգւով եղեն: - 63. Եւ որպէս մշտնջենաւոր որդի ի հօրէ *սկսեալ* և անվախճան. որպէս ժամանակ հոգի ի հօրէ *սկսեալ* և յորդի դադարեալ: - 105. Ո՛չ ասեմ ժամանակ. զի արարիչ է ժամանակաց և յաւիտեանց. և որպէս ո՛չ ի ժամանակի *սկսեալ*, և ո՛չ ի ժամանակի դադարի: - 105. Վեցերորդ՝ սկիզբն է ներգործութեան. և պատճառ կատարման. զի ի նմանէ *սկսեալք*՝ ի նա՛ կատարիմք: - 111. Վասն որոյ երբեմն կոչի սկիզբն. և մեք *սկսեալք* ի նմանէ: - 112. Այսպէս ի մի և ի նոյն սկիզբն որ է՛ յարացոյցն՝ զբազում *սկսեալքս* ըստ յարացուցին: - 112. Զի հայր անսկիզբն՝ յինքենէ՛ *սկսեալ* որդւով և հոգւով՝ արար սկիզբն սկզբնաւորացս...: - 114. Իսկ հրեշտակք և հոգիք և աշխարհ՝ կոչին յաւիտենականք. զի հաղո՛րդ են յաւիտենին. այնմ որ *սկսեալ* է և անվախճան: - 116. Իսկ հրեշտակք *սկսեալ* և անվախճան որպէս ասացաք: - 117. Անմահութեամբ հաւասարք են. զի *սկսեալք* են և անվախճան: - 117. Այսու հաւասա՛ր են, զի ի միոյ կենդանական պատճառէ՛ են *սկսեալք:* - 117. Իսկ հրեշտակք ո՛չ յինքենէ՛, այլ յաստուծոյ *սկսեալ* և անվախճան. զի առանց մոռացութեան ունին: - 120. Որպէս գործնականն որ է բարոյականն՝ *սկսեալ* է ի բարւոյն աստուծոյ. և կատարի առ բարին: - 121. Այսպէս և տեսականն որ է բանականն՝ *սկսեալ* է ի ճշմարտութենէն որ է՛ բանն աստուծոյ, և կատարի առ նոյն ճշմարտութիւնն: - 121. Նախ՝ զի ամենեցուն սկիզբն է և պատճառ, գիտէ *զսկսեալսն* ի նմանէ: - 141. Իսկ առ հրեշտակս բոլոր շարժումն է ի նոյնէ ի նոյն. որպէս անիւն զոր ետես եզեկիէլ. այսինքն ի նոյն աստուծոյ են *սկսեալք*, և ի նոյն անվախճանապէս մնան: - 142. ...բե՛ր *սկսցուք* զսկիզբն արարչութեան եղելոց մինչ ի վախճան կատարման այժմոյս՝ ըստ կարգի հին և նոր կտակարանաց հետևեալ: - 156. Վասն որոյ տօն առաջին աւուրն ի մէջ գիշերի *սկսանի*. և մեծամեծ տօնքն յերեկօրեայ որպէս ասեմք զշաբաթի երեկոյն կիրակմուտ: - 194. Երկրորդ՝ զի ջրհեղեղն համաշխարհական՝ անդ *սկսաւ*՝ և դարձեալ դադարեաց: - 196. Իսկ պտուղք զկարգ տարերա՛ցն բերէ որպէս ցուցաւ. ի հողոյն *սկսեալ* և առ հուրն դադարեալ: - 213. Դարձեալ ըստ կարգիս հարցանեմ թէ յո՞րժամ, և ի քանի՞ս *սկսանի* ներգործել տնկականն և զգայականն և բանականն: - 261. **Եւ յետ այնորիկ յեօթներորդէ՛ աւուրն *սկսանի* արիւնածուծ լինիլ յարգանդէ մօրն ընդ պորտն. որպէս դդում և ձմերուկ ընդ կոթն:** - 261. Իսկ քաղելով գործելն, զի *սկսեալ* բնութիւնս մեր ի գլխոյն լայնանայ ի թիկունքն՝ և նրբի ի կրունկն, և բոլորեալ դարձեալ կատարի ի գլուխն: - 293. Եւ *սկսան* շինել հաստահիմն լայնամիջոց. աստիճանաձև ելիւք և իջիւք: - 296. Եւ թէ մեռանի ոք ի տուն ուխտաւորին, պղծեցաւ ուխտն. և անհամար լիցին առաջին աւուրքն, և նո՛ր *սկսցի:* - 390. Երրորդ՝ զի *սկսեալ* ի մարմնաւորն, վախճանի ի հոգևորն: - 408. **Երրորդ՝ վախճանեալ մովսէս ի լերինն, և միքայէլ փոխադրէր զմարմինն. *սկսաւ***

**սատանայ հայհոյել զսուրբն և սպանօղ անուանել վասն հարկանելոյն զեգիպտացին. վասն որոյ սաստեաց նմա հրեշտակապետն**: - 410. Արդ *սկսեալ* առ դարեհիւ ի **կե** ոլոմպիադին՝ դադարեցին ի **ճձզ** ոլոմպիադին առ հիւրկանոսիւ քահանայապետիւ, որ գերեցաւ ի պարթևաց: - 449. Եւ գործ արդարութեան ի վախճանի. զի արդարապէս ամենայն որ *սկսանի* կատարի. և որ շարժի դադարի: - 458. Եւ գործ արդարութեանն *սկսաւ* ի վախճանի աշխարհի: - 458. Նա՛խ՝ զի նա ի հօրէ՛ է *սկսեալ*. և եղեալքս ի հօրէ: - 472. Իսկ բանն աստուած է՛ անսկզբնաբար ի հօրէ. և յետոյ *սկսեալ* ի կուսէ: - 478. Յառաջագոյն ամենայն ազգք քրիստոնէից *սկսեալ* յառաքելոցն այսպէս տօնէին. ի վեցն յունվարի զծնունդն, և ի նմին աւուր զմկրտութիւնն ըստ աւետարանին վկայութեան: - 482. Եւ սոքա այսպէս զանազանին դարձեալ՝ մեղքն է առաջին ծայր. *սկսեալ* յանձնիշխան կամացն ադամայ: - 496. Նոյնպէս և ադամայ ասաց աստուած՝ ի հողոյ *սկսար* և ի հող կամիս դադարիլ: - 497. Եւ շնորհականն հոգևոր. ուր *սկսանին* ամենայն տօնք սրբոց **գ** ժամով յառաջ քան զբնական օրն: - 508. Իսկ զտէրունական տօնս երեկօրեայ յիննն ժամ է աւուրն *սկսանեմք*. որ է՛ **թ** ժամաւ յառաջ քան զհասարակաց տօնս: - 508-509. Եւ բոլորն **ժե** ժամու յառաջ ի միւս աւուրն՝ *սկսեալ* նախատօնակ առնեմք. և զայս յամենայն ուրեք: - 509. Իննե**ժ**՝ պատշա՛ճ էր ի մէջ գիշերի յառնել. զի ի նոյն ժամն *սկսանի* արեգակն բարձրանալ, և յառաւօտն ծագէ՛ առ մեզ: - 515. Եւ ի յայս միտս զտօն ամենայն սրբոց մարտիրոսաց ի մէջ գիշերի *սկսանեմք* **գ** ժամով յառաջ քան զծագումն լուսոյն հասարակ աւուր: - 515. Զի յղացեալ էր ի գերեզմանին թադէոսի. և սնաւ անդ՝ ուր առաքեալն *սկսաւ* քահանայագործել. և փոխեաց յինքն զշնորհս նորա անդր եղեալ եպիսկոպոս: - 548. Ծուլութիւն է հեղգութիւն հոգւոյ ոչ *սկսիլ* ի բարին. կամ տաղտկանալ ի *սկսեալ* բարւոյ և ո՛չ կատարել: - 570. Եւ գիտելի է, զի պսակն *սկսանի* ի նշանադրութիւնն, - 609. Զի սուրբ աստուածն անդ հաստատեցաւ. որպէս և փառք ի բարձունքն. *սկսեալ* ի հրեշտակացն ի ծնունդ քրիստոսի. և յերեք սուրբ ժողովնս եղև կատարեալ: - 635. Կարգաւոր է զի ո՛ր դաս որ *սկսանի* զերգն, նոյնն աւարտէ փառօք. թէ այս՝ թէ այն: - 636. ...վասն որոյ ի մէջ գիշերոյ ի վեր *սկսանի* տօն նահատակութեան նոցա: - 647. Նախ՝ զի ի շաբաթի *սկսաւ* հանգիստն և երանութիւն սրբոցն. յաւուր որում հանգեաւ աստուած ի գործոց: - 647. ...և ի է օրն *սկսաւ* զիմանալի աշխարհն որ սրբոցն է հանգիստ: - 647. Վասն այն տէր ամենակալն ի մեծ կարգն *սկսանի:* - 651. Վասն որոյ ի թագաւորութեանցն *սկսանի* ընթերցուածն. որպէս յա՛յտ է ի մեկնութիւն նորին: - 651. Իսկ վախճանեալն կատարեալ լսի. որպէս թէ ոք *սկսանի* երթալ ի ճանապարհ կամ ի գործ ինչ և ի յաւարտիլն կատարած ասի: - 666. Իսկ վեցերորդ պատճառ վասն հասարակաց ամենայն մարդկան, զի ի հողոյ *սկսաւ*, դարձեալ ի հող վախճանի մարմինն...: - 678. Որպէս և ոմն ի Պետաց մերային ազգաց՝ զհաւատն դրուատեաց ասելով, Յաւատ ի հօրէ *սկսեալ* յորդի և ի հոգի վերաբերի: - 769

**ՍԿՍՈՒԱԾ +** Իսկ *սկսուածն* ընդ երգոյն խառնեալ, Նախ նշանակէ՛ թէ զմարգարէից և զառաքելոցն բանս ի միասին խառնեալ ունի նորս եկեղեցի: - 627

**ՍԿՍՈՒՄՆ +** Իսկ հրեշտակն բնութեամբ և *սկսմամբ:* - 138

**ՍՂԱՆԱՄ +** Եւ սողունք կոչին, կամ զի սողալով գնան. կամ *սղացեալ* են ոտիւք. կամ զի սո՛ւղ են ձայնիւ: - 216

**ՍՂՈՒԹԻՒՆ +** Եւ զի անգործութիւն է մարդկան, և ամենայն կենդանեաց *սղութիւն* և տխրութիւն: - 197

**ՍՄԲԱԿ +** Կամ *սմբակ*. որպէս ձիոյ: - 216. Զի թէ մարդն ունէր զբնութեամբ զէնս, որպէս թէ եղջիւր ի գլուխն. և սուր զատամունսն. ճիրանունք ի ձեռս. և *սմբակ* կամ կճղակ ոտիւք. և զայլսն, Նախ՝ զի գազանադէմ և դժւարատես լինէր ամենեցուն: - 217

**ՍՆԱՆԻՄ +** Դարձեալ ասեն թէ՝ և մարմինք մարդկան են ստորնայինք. և *սնանին* և աճին շարժմամբ աստեղացն: - 10. Չորրորդ՝ զի մի իցէ նեղասիրտ և տառապեալ բարուք տեսանելով զինքն ի չքաւորութեան ստեղծեալ. այլ տեսցէ զամենայն կատարեալ. զի արձակ և առատ բարուք *սնանիցի* և վայելեսցէ: - 230. Վասն որոյ ըստ թուոյ զօրութեան իւրոյ որ է՛ *սնանիլն* աճիլն և ծնանելն, յերեք ամիսս ծնանի զպտուղս. որպէս ցորեան և այլքն: - 262. Եւ մելքիսեդեկին յերկրէ ծնեալ և յերկինս *սնեալ*, որ առաւել յարմարի ճշմարտութեանն ի յերկնից իջեալ և ի կուսէ ծնեալ: - 301. Ի նոյն խորհուրդ նոր մանկունք յարգանդի մօր եկեղեցոյ *սնանին:* - 363. Եւ սուրբն գրիգոր անդ ծնաւ և *սնաւ:* - 548. Զի յղացեալ էր ի գերեզմանին թադէոսի. և *սնաւ* անդ՝ ուր առաքեալն սկսաւ քահանայագործել. և փոխեաց յինքն զշնորհս նորա անդր եղեալ եպիսկոպոս: - 548. Սակայն ի յղութեանն իջանէ չար հոգին ի յորովայն մօրն. և նմա զօրութեամբն և ներգործութեամբն ծնանի մանուկն և *սնանի* և հասանէ

յերիտասարդութիւն. - 706. Եւ դարձեալ՝ որպէս զանազան սերմանիք ցորեան կորեակ և այլք՝ հասարակ ի մի վայր սերմանին. և հասարակ ջրով և ջերմութեամբ *սնանին*. և ի յազգս իւրեանց կատարին. ցորեանն ի ցորեանն և այլն: - 719

**ՍՆԱՐ(Ք) +** Որ և պահապանքն շրջապատեալ. որ և զհանդերձն պատատեալ յանկողնի, և լերդ այծեաց և մազ ի *սնարսն*. և ի գիշերի իջեալ ընդ պատուհանն և ելեալ առ սամուէլ զերծաւ ի ձեռաց նոցա: - 513. ...և դաւիթ մտեալ և առեալ զսուրն ի *սնարից* նորա. և ելեալ ի գիշերի ի լեառն աղաղակեաց առ նա «ո՞ւր է սուր քո»: - 514. Եւ զչորրորդն յոհաննէս պատմէ միա՛յն զմագդաղենացին. և տեսեալ երկու հրեշտակս ի *սնարս* և յոտս նստեալ: - 515. Եւ բաժանեալ զսուրբ տեղիս տնօրինական, ետուն զսուրբ յակոբն պատրիարգարան, և զգողգոթայն, և զսուրբ կարապետն և *զսնարսն*. և արկեալ վիճակս ի վերայ յարութեանն՝ անկաւ հայոց. և տրտմեցան ոմանք յազգէ նոցա: - 548. Դարձեալ, ի տիպ պահապան հրեշտակին որ նստէր մի ի *սնարից* և մի յանոտից տեառն գերեզմանին...: - 679

**ՍՆԱՓԱՌ +** Չորրորդ՝ որ ո՛չ գիտէ. և գիտէ որ ոչ գիտէ, բայց *սնափառ* հպարտութեամբն լըլկի և յանդգնի խօսիլ զոր ո՛չ գիտէ: - 537

**ՍՆԴԻԿ +** Ասեմք եթէ՝ զորօրինակ *սընդիկ* լուծեալ և ի հող խառնեալ գնդապէս և փոշիացեալ. յորժամ ի մի վայր ժողովես՝ թողու զփոշիսն ի յորս խառնեալ է և պարզ միայն *սնդիկն* ժողովի: - 719

**ՍՆՆԴԱԿԱՆ +** Իսկ տնկականն ունի երիս զօրութիւնս. այսինքն զկերակրականն որ է՛ *սննդականն*. զաճողականն և զծննդականն: - 262. Իսկ ժուժկալութիւնն առ շօշափելիսն ըստ ծննդական զօրութեանն. ի յորում դնէ զեղանակն. զի առաւել յօժարի մարդն ի գոլ անհատութիւնն *սննդականաւն*, և ի գոլ տեսակին ծննդականաւն. և յօժարութիւնքս այս՝ զսպին զգաստութեամբ և ժուժկալութեամբ: - 581

**ՍՆՆԴԱԿԻՑ +** Իսկ անասունք սիրեն միայն *զսննդակիցս* իւրեանց: - 274

**ՍՆՈՏԻ +** Նա՛խ նշանակէ՛, զի ի սիրոյն աստուծոյ ցրտացեալք էին և ի սէր *սնոտեացս* ջերմացեալք: - 334. Եւ նոցա մանանայ յերկնից ետ և տրտնջէին և *սնոտի*՛ հաց կոչէին: - 386. Եօթներորդ, զի մկրտելն է գործ քահանայի. և քահանայութիւնն է սպասաւորութիւն աստուծոյ. իսկ զայս սպասաւորութիւն աստուծոյ և ո՛չ կռապաշտքն ունէին սովորութիւն *սնոտի* կռոցն ի ձեռն կանանցն մատուցանել զպատարագն. - 589. Յիրաւի ապա ըստ այսմ օրինակի՝ որք ի մշտնջենաւորէն փոխանցին առ երազ *սնոտեաց*, ոչ ունիցին ինչ ի մտի. թէ և անդրադարձեալ աստի անդ մնասցէ յիշատակութիւն որպէս ասացաւ: - 775

**ՍՆՈՒՆԴ +** Ասեմք առ այս, թէ *սնունդ* և աճումն մարմնոց, տնկանին է և ոչ աստեղաց. թէպէտ օգնեալ լինի ի նոցանէ: - 10. Իմանալի է իմացօղն. իսկ իմացական իմացեալն. զի իմացականն *սնունդ* և յառաջ եղեալ է իմանալւոյն: - 130. Տնկոց *սնո՛ւնդ* է: - 186. *Սննդեան*. աճելոյ. խնամելոյ. և այլոցն. և այսոքիկ ո՛չ են ի դրախտին. և ոչ զգեստ մարմնական: - 225. Դարձեալ՝ զկարգ յղացման յարգանդին պահէ՛ աստ և ի ծննդեանն. այսինքն *զսննդեան* և զգայութեան և զբանի ներգործութիւնս այսպէս: - 266-267. Իններորդ՝ արիւնն և շունչն է սկիզբն գոյացութեան մերոյ. զի արիւնն փոխի ի սաղմն, և ջերմ օդով խառնի ի հով և ի գէճն, և լինի աճումն և *սնունդ* մարմնոյ: - 295. Եւ լինի տեռատես, յորժամ մանուկ ո՛չ լինի յարգանդին և ի ստինսն զի *սնո՛ւնդ* է մանկանն: - 369. Երկրորդ՝ զի գ օր են ամենայն աւուրք մարդոյ. այսինքն օր ծննդեանն. օր *սննդեանն*. և օր մահուանն: - 681. Եւ ծնունդն ի քորազին. և *սնունդն* ի բեթսայիդայ. և թագաւորեալ ի քիւզանդիայ: - 706. Եւ որ քան գործեմք զմեղս, այնքան բազմանայ ծնունդն նոցա. և ծուլութիւն և հեշտութիւն մեր *սնունդ* է նոցա: - 753. Իսկ ստինք յատկապէս գործի՛ է բնութեան ի պէտս *սննդեան* այնոցիկ ծննդոց զօրէն սերմանեաց երկրի. յորմէ հիւթոյ արեանն գոյացելոյ, ընդ ազուգայս երակաց արտագունեալ որակօք կաթն փոխակերպեալ: - 786

**ՍՆՈՒՑԱՆԵՄ +** Երկրորդ՝ զի ի ջուրն հանգստեան *սնուցանէ*. այսինքն է աւազանին մկրտութեամբն ի հոգի սուրբ: - 49. Ի յերրորդսն *սնուցանէ* իբր ազդօղ: - 136. Եւ այլք ասացին թէ՝ ունի բնական լոյս՝ և առնու զլոյս յարևէ. և այսպէս խառնի բ լոյսն ի նմա՛. և *սնուցանէ* զորս յերկրի: - 187. Երկրորդ՝ զի ջերմութիւն լուսաւորացն *սնուցանէ* և զառ ի վեր քարշէ՛: - 214. Ձի ուղեղն ի մէջն *սնուցանէ* զոսկրն. և ջիլն կապէ՛ առ միմեանս զի մի քակտեսցին ոսկերքն. և արիւնն կերակո՛ւր է նոցա: - 240. Ութերորդ՝ հուրն և օդն առաւել է յարիւնն զի առնօղք են. և յայտ է ի խառնումն միութեանց. զի հուրն մաձուցանէ՛, և ջուրն և հողն մաձնուն, և օդն *սնուցանէ*. վասն այն զարարօղն և զսնուցանօղն ո՛չ ուտեմք: - 295. Ի մանկութենէ կռոց նուիրեցաւ, և հրեշտակ աստուծոյ յափշտակեալ *սընոյց* զնա յանապատի մինչև

հասոյց ի կատարումն: - 300. Նա՛խ՝ զի հայր նոցա բարեպաշտութեամբ *սնուցանէր* զնոսա. և վկայեցաւ առ աստուած արդար գոլ: - 322. Նա՛խ՝ որպէս կանուխ անձրևն բուսուցանէ և անագանն *սնուցանէ* և պտղաբերէ՛: - 393. Երրորդ՝ որպէս զստնդիայի մանուկն է ամ խրատէ՛ դայեակն. այսպէս ժողովուրդն որ եւ յերկրէն իւրեանց, երկիրն բաբիլացւոց ի ամ ի գիրկս իւր դայեկեաց զնոսա և *սնոյց*. զի յետ դարձին յերկիրն իւրեանց՝ զբարիս գործեցեն: - 448. Իսկ զաւակն, զի ծնցի և *սնուցանի* ի պաշտօնն աստուծոյ. զի վասն ծննդեան զաւակին է հրաման պսակին: - 610

**ՍՆՈՒՑԱՆՈՂ, ՍՆՈՒՑԻՉ, ՍՆՈՒՑՈՂ (ՍՆՈՒՑԱՆՕՂ, ՍՆՈՒՑՕՂ) +** Եւ զի դաստիարակ և *սնուցանօղ* է մեր: - 211. Դարձեալ՝ նախախնամութեանն է այսպէս կարգեալ. զի մարդս ունի դայեակ և *սնուցօղ*, պէտս ունի խնամարկութեան զի հասցէ ի չափ հասակի: - 267. Ութերորդ՝ հուրն և օդն առաւել է յարիւնն զի առնօղք են. և յայտ է ի խառնումն միութեանց. զի հուրն մածուցանէ՛, և ջուրն և հողն մածնուն, և օդն սնուցանէ. վասն այն զարարօղն և *զսնուցանօղն* ո՛չ ունեմք: - 295. Նա՛խ՝ զի մի՛ *սնուցիչն* լիցի եփիչ նորա: - 399. Ի խրատ՝ զի *սնուցօղն* մի լիցի չարչարօղ. և բանն օրհնութեան մի՛ անիծեսցէ զոք: - 399. Սա՛ է *սնուցօղ* ամենայն մեղաց, մայր դատարակաբանութեան: - 570

**ՍՆՈՒՑՈՂԱԿԱՆ +** Ասեն զայս՝ անընտել գոլ *սնուցողականին*, յապաղելով աւելի պահէ: - 785

**ՍՆՔՆՈՏ** - Վեցերորդ՝ երքունոտն. *սնքնոտն*. անբո՛ւժն է: - 371

**ՍՈԴՈՄ** - Ութերորդ՝ որպէս և աբրահամ ճաշակեաց զպատարագն մելքիսեդեկի և ո՛չ հաղորդեցաւ ընչիցն *սոդոմայ:* - 301. Վասն է՞ր ղովտ ի *սոդոմ* բնակեցաւ: - 302. Նա՛խ՝ զի ի պատճառս ղովտայ փրկեսցի *սոդոմ* ի գերչացն: - 302. Չորրորդ՝ զի յորժամ փրկեսցի ղովտ ի *սոդոմայ*, զօրութիւն աստուծոյ յայտնի լիցի: - 302. Վասն է՞ր *սոդոմ* հրով այրեցաւ: - 302. Չորրորդ՝ ո՛չ առնուլն յընչիցն *սոդոմայ* յաւարէ՛ անտի: - 304. Իննեծ, յովսէփ ստացաւ ոսկի և զարծաթ և զերկիրն եգիպտացւոց՝ փարաւոնի. այսինքն զզէնս սատանայի. զի փարթամութիւնն մեծ զէն է սատանայի որովք գործէ՛ զամենայն պղծութիւնս. որպէս երկիրն *սոդոմայ* պարարտութեամբ գործէր զմեղս: - 314. Չորրորդ՝ զի և անասունքն գործակից լինին մեղացն. վասն որոյ ընդ մարդոյն կորնչին. որպէս ի *սոդոմ:* - 416. *Սոդոմն* համր՝ և գոմորն խիստ թարգմանի: - 755

**ՍՈԴՈՄԱՅԵՑԻ** - Դարձեալ սիրեցաւ յաստուծոյ, զի առաջին մարտիրոս սա՛ եղև. թէպէտ թոյլ ետ իջանել ի դժոխս, զի ի պատճառս նորա խնդրեսցին այլքն. որպէս ի պատճառս ղովտայ զերծան *սոդոմայեցիքն* աբրահամաւ: - 287. Որպէս *սոդոմայեցիքն* վասն արտօրէն գործոցն՝ արտօրէն իջմամբ հրոյ պատժեցան: - 288. Վեցերորդ՝ պատժեաց *զսոդոմայեցիսն* մարմնով, զի թեթևասցին տանջանք նոցա հոգւով: - 303. Երրորդ՝ ի յեղծանիլ պատկերին աստուծոյ որ վասն փառացն աստուծոյ ստեղծաւ, ընդ նմին եղծան և ապականեցան այլ արարածք որ վասն փառաց մարդոյն ստեղծան. որ ո՛չ միայն անասունք, այլ և հող և ջուր և օդ երկրին կորուսանեն զպտղածնութիւն. որպէս *սոդոմայեցոցն:* - 416

**ՍՈԴՈՎՄ** - Տասներորդ՝ Վասն ղովտայ և կնոջն. և *սոդովմայ:* - 283

**ՍՈԿՐԱՏ** - Եւ *սոկրատ* պատմագիրն ասէ թէ՝ մեծն իգնատիոս աստուածազգեացն ետես երկնային զօրս. և լուաւ ի նոցանէ...: - 631

**ՍՈՂԱՄ +** Եւ սողունք կոչին, կամ զի *սողալով* գնան. կամ սղացեալ են ոտիւք. կամ զի սո՛ւղ են ձայնիւ: - 216. Եւ զի նախանձեցաւ ընդ մարդոյն, ի լանջս և յորովայնս *սողայ:* - 219. Ի գործոյն, որպէս սողուն ի *սողալոյն*. ի շողոքորթելոյն շունն. ի հեզոյն եզն. յառնելոյն առիւծ: - 220. Այն է, որ բովանդակ մարմինն այնպէս խոցոտեալ էր կեղով՝ և լուծեալ ի շարաւ և ի թարախ. որ ո՛չ կարէր յոտին կալ կամ *սողալ* ուրեք. և ո՛չ ընբռնիւր յայլմէ: - 322-323

**ՍՈՂՈՄԻ** - Դաւթի գ արք անուանիք, և աբեսեա չորրորդ ընդ նոսա. գ աւետարանիչքն, և յոհաննէս որդի *սողոմեայ:* - 438. Մարիամ ամուսնացաւ ի բեթլէհէմ և ծնաւ *զսողոմի* զմանկաբարձն յիսուսի. ո՛չ որ մայր եղև որդւոցն զեբեթեայ. զի այն. սողովմէ դուստր է յովսեփայ աստուածահօրն...: - 460. Եւ այսպէս *սողոմի* և եղիսաբեթ և մարիամ աստուածածինն գ քերց դստերք էին: - 460

**ՍՈՂՈՄՈՆ** - Ութերորդ հարցումն արիանոսացն, զի ասէ *սօղօմոն* «տէր ստացաւ զիս ի սկիզբն ճանապարհաց իւրոց յամենայն գործս իւր». և զի յառաջ էր քան զմարմնական ծնունդն քրիստոսի բազում ամօք. ապա ուրեմն զառաջին լինելութիւնն ասէ ստեղծուած քան զամենայն եղելոց ասեն: - 40. Եւ դարձեալ՝ ըստ *սողոմոնի* գ են սիգաճեմք. առիւծ՝ և նոխազ՝ և աքաղաղ: - 54. Ընթացք աստուածպաշտութեան՝ զմիջինն ուսուցանեն մեզ գիրք սուրբք. որպէս ասէ *սողոմոն*, «զճանապարհ արքունի գնասցես. մի՛ յաջ խոտորեսցիս, և մի՛ յահեակ»: - 80. Իսկ *սողոմոն* ասէ, «ի մոլորիլ

ժողովրդոց՝ բեկումն հզօրաց»: - 147. Եւ *սողոմոն* ասէ՝ «թէ աղաչէ զքեզ թշնամին՝ մի՛ հաւատար նմա. զի է չարիք գոն ի սիրտ նորա». որ է՛ հպարտութիւն, նախանձ, և այլն: - 151. Զայս բան եհարց դշխոյն սաբայ՝ առ իմաստնացեալն յաստուծոյ *սողոմոն:* - 179. Որպէս ասէ *սողոմոն*, «ո՛վ վատ՝ ե՛րթ առ մրջիւնն և ուսիր ի նմանէ»: - 217. Եւ զայս իմաստութիւնս տէրն հաւատ կոչէ. և յօհաննէս լոյս. և *սողոմոն* իմաստութիւն: - 269. Երկրորդ՝ շնորհիւ ընկալեալք որպէս բեսէլիէլ. եղիաբ ուրիեանց. և *սողոմոն:* - 269. Վասն երրորդին՝ զբերկրումն սրտին և զզուարթութիւն դիմացն ըստ *սողոմոնի*. «սրտի բերկրեցելոյ երեսք զուարթք»: - 286. Բերսաբէ՝ որ ծնաւ *զսողոմոն* ի դաւթայ: - 300. Ութնժ, չո՛րս են որք հզօրք են և պերճ շրջին ասէ *սողոմոն*. այսինքն աքաղաղ, և նոխազ, և թագաւոր հրապարակախօս, և առիւծ՝ որ ո՛չ դարձուցանէ թիկունս յանասնոց: - 316. Եւ այլք թէ՝ *սողոմոն*. զի չափաւո՛ր է բանքն տնատեալ հանգոյն բանիցն *սողոմոնի:* - 320. Զի ասեն թէ՝ յոբայ հէճուպն ի պարսիկս փախեաւ, և անդ զրոյց ետ որ գրեցին իւրեանց գրովն. և *սողոմոն* բերել ետ և սրբագրեաց: - 320. **Այլ որ ստոյգն է ասեն թէ՝ մովսէս գրեաց որպէս պատմութիւն, և *սողոմոն* ստիքսեաց որպէս զիւր բանսն. յետոյ գրեաց և եզրաս հոգւովն աստուծոյ երբ ծախեցան գրեանքն ի հրէից:** - 321. Նա՛խ ի սեղանն աբրահամու. և ապա՛ մովսիսին և ապա՛ դաւթին ի կալն ուռնայի. և ապա՛ ի տաճարին *սողոմոնի*. յետոյ ի սեղանն եղիայի: - 363. Քսանևմի, Բաղդատութիւն *սողոմոնի* և տեառն **լ** գլխով: - 413. Քսանբ, Դշխոյն հարաւոյ. և առաւել քան *զսողոմոն*. **ժժ** գլխով: - 413. Եւ ապա ըստ կարգի թագաւորք. Դաւիթ. *Սողոմոն*. և այլք մինչ ի գերութիւնն: - 421. Չորրորդ՝ դաւիթ ասէ «իջցէ՛ որպէս զանձրև ի վերայ գեղման»« և եբրայեցիք զայս սաղմոսս ի *սողոմոն* ասեն...: - 421. Այլ ո՛չ այսպէս. զի ե՞րբ եկաց և մնաց ընդ արև, կամ յառաջ քան զլուսին *սողոմոն*. այլ տէրն նորա: - 421. Եւ զի հեղի ո՛չ խրատէր զնոսա սաստիւ և տանջանօք. վասն որոյ և ինքն պատժեցաւ և մեռաւ. և քահանայութիւնն յազգէ նորա փոխեցաւ յաւուրս *սողոմոնի:* - 425. Եւ ինչ ոչ գոյր ի հրէիցն, բայց միայն *սողոմոն*. որոյ հրամանաւն շինեցաւ ի տիպ հեթանոսաց եկեղեցւոյ զոր շինելոց էր տէր մեր: - 440. Ասեն թէ՝ **ռ** կին էր *սողոմոնի*. **է ճ** տիկնայք, և **գ ճ** հարճք. և նոցա **ռ** պահապան. իսկ ի փորձելն խաբեաց զիազար կանայսն. և ի յարանցն մին ո՛չ խաբեցաւ. այս առասպե՛լ է: - 440. Երկրորդ՝ աւետեաց դաւթի *զսողոմոն* որդի: - 440. Երրորդ՝ *սողոմոն* խաղաղութիւն թարգմանի: - 440. Վեցերորդ՝ օրինակն *սողոմոն*՝ և ճշմարտութիւնն քրիստոս՝ կարդաց հայր զաստուած: - 440. Իններորդ՝ երիցս ուխտ երդմանն *սողոմոնի:* - 441. Չորեքտասաներորդ՝ զյովաբ սպանօղ և զսիմէի նախատիչ սպան *սողոմոն:* - 441. Հնգետասաներորդ՝ ընդ աջմէ բազմեցաւ մայրն *սողոմոնի:* - 441. Վեշտասաներորդ՝ **բժ**ան գործակալք *սողոմոնի:* - 441. Եօթնևժ, **գռ** առակս և **եռ** օրհնութիւնս ասի *սողոմոնի* բովանդակն: - 441. Քսանգ, տիկինն սաբայ որ կոչիւր նըսա, ցանկացաւ իմաստութեանն *սողոմոնի:* - 441. Քսանևե, երանեաց զկանայս և զծառայս *սողոմոնի:* - 441. Քսանևթ, ցանկացան ամենայն թագաւորք տեսանել *զսողոմոն:* - 442. Տասներորդ՝ զի *սողոմոն* ի քարանց ձեռագործաց կազմէր տաճար աստուծոյ. իսկ քրիստոս զբանական հոգիս մարդկան շինէր օթևան սուրբ երրորդութեանն: - 442. Այս քան համառօտ վասն *սողոմոնի:* - 442. Երրորդն *զսողոմոնի:* - 450. Երեք գիրք Մակաբայեցւոց: Սաղմոսն: *Սողոմոնի* **դ** գիրք: - 450. Դաւիթ ամաց **ծը**՝ ծնաւ *զսողոմոն:* - 452. *Սողոմոն* ամաց երկոտասան ծնաւ զռոբովամ: - 452. Յետ *սողոմոնի* յերկուս բաժանեցաւ թագաւորութիւնն իսրայէլի: - 452. Իսկ յերուսաղէմ թագաւորէ՛ ռոբովամ որդի *Սողոմոնի:* - 452. Եւ յելիցն ի *սողոմոն*՝ **նձ**: - 453. Մատթէոս ի *սողոմոնէ*՛ իջանէ առ յովսէփ, և Ղուկաս ի նաթանայ: - 460. Դարձեալ վասն յովսեփայ գիտելի է. զի ի ցեղէն *սողոմոնի* որդւոյն դաւթի՝ մատթան առեալ կին, ծնաւ զյակոբ: - 460. Յակոբ ի ցեղէն *սողոմոնի* որդի մատթանայ. և Ելի ի ցեղէն նաթանայ որդի մելքեայ: - 460. Իսկ յակոբ որ էր յազգէն *սողոմոնի*՝ առեալ զկին եղբօրն ըստ օրինացն զի յարուսցէ զաւակ եղբօրն. և ծնաւ զյովսէփ: - 460. Եւ այսպէս յովսէփ բնութեամբ որդի էր յակոբայ և ի ցեղէն *սողոմոնի*. և օրինօք որդի էր ելեայ որ ի նաթանայ: - 460. Դարձեալ՝ առ հասարակ կարծիք, կոչի ներքին դժոխք յատակ դժոխոցն. որպէս ասէ *սողոմոն* «մեղր կաթի ի շրթանց պոռնկի. և կատարածն հայի յատակս դժոխոց»: - 505. Ութերորդ՝ զի ընդ փայլիլն փախչի. այսպէս և «հոգին սուրբ փախչի ի նենգութենէ. և յանձն չար՝ արուեստ իմաստութեան ո՛չ բնակէ» ասէ *սողոմոն:* - 522-523. Նա՛խ՝ երազօք. որպէս *սողոմոնի:* - 536. Ըստ *սողոմոնի* «որպէս թռչուն ի բունոյ թռեալ և ի բոյնն դարձեալ դադարի, այնպէս են և անէծք անզգամի»: - 539. Եւ տե՛ս, զի սիմէի որքան յամեաց ի քաղաքն ըստ հրամանի *սողոմոնի* ո՛չ մեռաւ զերիս ամս: - 540. Եւ յորժամ ել արտաքոյ քաղաքին թողեալ զկապանս *սողոմոնի*՝ սպանաւ: - 540. Որ և *սողոմոն* անճողոպրելի քարոզէ ամենայն մարդկային մտաց. եթէ «ո՞ պարծեսցի միտս

սուրբ ունել»: - 558. Ասեմք առ այս, եթէ բանն *սողոմոնի* ո՛չ թէ զրկէ՛ զոմանս յարեանն հաղորդութենէ...: - 600. Չորրորդ՝ զի *սողոմոն* յորժամ շինեաց զտաճարն՝ յաղօթս եկաց և նոյնպէս օրհնեաց և օծ. որպէս մովսէս...: - 615. Եւ ի **Ե** դարն մովսէսի և *սողոմոնի* արարուածքն: - 638. ...որպէս խրատէ՛ *սողոմոն*. «տո՛ւր բաժինս յեօթանց՝ այլև յութիցս»: - 658. ...և հոգին երթայ առ աստուած որ ետ զնա ասէ *սողոմոն:* - 667. «Զի հոգիք արդարոց ի ձեռին աստուծոյ են. և ո՛չ մերձեսցի ի նոսա չար». որպէս ասէ *սողոմոն*. և են ի խաղաղութեան: - 689. Դարձեալ ասեն զբանն *սողոմոնի*, «մարմինն դառնայ ի հող, և հոգին երթայ առ աստուած որ ետ զնա»: - 695. ...ըստ *սողոմոնի* «փայտն յոր անկցի ի նոյն կացցէ. թէ ի հարաւ» որ է՛ ջերմ սէրն աստուծոյ և լոյս. «և թէ ի հիւսիս». որ է՛ ցուրտ՝ ատելութիւն աստուծոյ՝ և խաւար: - 704. Եօթներորդ՝ զի *սողոմոն* ասէ «օրհնեալ է փայտն որով լինի արդարութիւն» որ է՛ խաչն փրկչական: - 734. Ուր *սողոմոն* զտաճարն շինեաց: - 737. Երկրորդ՝ ի ստեղծումն յարարչութեան բոլորից՝ ուրախ եղև տէր յարարածս իւր և յորդիս մարդկան ըստ *սողոմոնի:* - 748. Եւ թէ լինէիր կամօք փարթամ որպէս *սողոմոն*. որում ո՛չ անխայեաց զոր ինչ ցանկացաւ ի սրտի: - 761. Դարձեալ և այսոքիւք, թէ լինէիր իմաստուն որպէս *զսողոմոն*. որում ո՛չ գտաւ հանգոյն նման ի վերայ երկրի: - 761. Որ փոխանակ մահացու փայտին գիտութեան զյաւիտենից կեանքն մեզ պարգևեաց. ըստ *սողոմոնի* «փայտ կենաց է ամենեցուն, որ պատսպարին ի նա»: - 768. Այլ և ոմանք ասեն և է գոլ սեանց ընդ շինեալ տունն ի *սողոմոնէ*. կանգնեալ սիւնս է մարմնապէս. թէպէտ ա՛յլ է իմացումն հոգէպէս: - 788

**ՍՈՂՈՍԿԻՄ +** Եւ որք ծուլանան, *սողոսկեալ* անկանին յերկիր ընդ մարմին մարդոյ շաղապատեալ: - 252

**ՍՈՂՈՎՄԷ** - Մարիամ անունանացաւ ի բեթլէհէմ և ծնաւ զսողոմի զմանկաբարձն յիսուսի. ո՛չ որ մայր եղև որդւոցն զեբեթեայ. զի այն. *սողովմէ* դուստր է յովսեփայ աստուածահօրն...: - 460

**ՍՈՂՈՒՆ +** Երկրորդ՝ զօրաւոր մասն է տուտն *սողնոց*. ցուցանէ զբռնութեամբ քարշելն ընդ ինքեան: - 152. Վասն ջրայնոց և թռչնոց և *սողնոց*. և թէ քանի՞ ազգեն կենդանեաց: - 155. Պէտք են գազանք և *սողունք*. և զի գազանք ուժեղք են: - 155. Վասն է՞ր է՝ զի ջրայինքն և *սողունքն* ձայն ո՛չ ունին: - 216. Եւ *սողունք* որք պակա՛ս են ի ձայնական գործեաց, սո՛ւղ են և ձայնից: - 216. Եւ *սողունք* կոչին, կամ զի սողալով գնան. կամ սղացեալ են ոտիւք. կամ զի սո՛ւղ են ձայնիւ: - 216. Եւ *սողնոց* Օձն արքայեկ. զոր իժ և քարբ ասեն: - 216. Երրորդ՝ մորթ. որպէս *սողնոց:* - 216. Ի գործոյն, որպէս *սողուն* ի սողալոյն. ի շողոքորթելոյն շունն. ի հեզոյն եզն. յառնելոյն առիւծ: - 220. Եւ ի լեղւոյն ականջին դառն. պահապան *սողնոց:* - 243. Նախ՝ զի անմտացան նոքա, և զճանճս և *զսողունս* և զգետս և զանասունս պաշտէին...: - 333. *Սողունք*՝ որովայնամոլքն են: - 365. Իսկ ահագին, Նա՛խ՝ զի թշնամիք էին շուրջանակի. և գազանք և *սողունք*. և ծով. և ամայի. և անպարիսպ: - 393

**ՍՈՄՆԱՍ** - Եւ հայրապետր էին անդ, ...*Սոմնաս* անտիոքայ: - 543

**ՍՈՄՆԱՑԻ** - Երկրորդ՝ զի ո՛չ հաւատաց *սոմնացին* նմա: - 445

**ՍՈՄՈՐՈՆ** - Յետոյ վասն գազանաց երկրին՝ հնազանդեցաւ գրոյն մովսէսի. և ծածկեցին զաստուածս իւրեանց ի լերին *սոմորոն*. և անդ երկիր պագին սամարացիք: - 447

**ՍՈՅՆ +** *Սմին* նման է զոր ասէ մարգարէն յաղագս քրիստոսի, «ո՛չ մեղք իմ և ո՛չ յանցանք»: - 46. Եւ կամ թէ՝ մկրտիմք յանուն հօր՝ և որդւոյ **բ** բնութեանցն՝ և հոգւոյն սրբոյ. և որ *սոցին* նման: - 90. Նոյնպէս և ասելն՝ Երրորդութիւն. *սովին* թւով բացայայտի: - 105. *Սմին* նման և տէր մեր ընտրեաց զառաքեալս և նոքօք կոչեաց զիաւատացեալս: - 127. ...ի *սոյն* ժամանակս առաւել բուսանին և նորոգին ամենեքեան: - 198. Եօթներորդ՝ զի ո՛չ կարէին ընտրել և խոտել զչարն և զբարին, և զսուրբն և զանսուրբն ի մարդկանէ, թէ գործ *սորին* է այս կամ այն. այլ անմեղութեամբ յարակցեին պղծոյն, և զխեղդ ոգւոց նորա ընդունէին: - 238. Եւ թէպէտ կարելի՛ է ըստ բազմազան եղանակաց այս կարգ համեմատութեան ի *սոյն* խնամով աշխատասիրաց: - 304. Զայս և այլ սոյնպիսիս բազմօրինակ ստուերագրութեամբ առ ճշմարտութիւն իրին. իսկութեամբ ոչ գոլ անհնարին երկասիրացդ ի *սոյն* դեգերմամբ զոր ի պարապ ժամու քննութեան: - 306. Երկրորդ՝ և արդարք առնեն ընդ դէմ *սմին* ի յամօք չարին...: - 321. *Զսոյն* և մեզ պարգևեաց ծնանիլ ի ջրոյ, և ի հրոյ, և ի հոգւոյ, և յարութեանբն մարմնոյ. իսկ ի մօրէ՛ բնականապէս: - 329. Վասն որոյ ի *սոյն* ժամանակի առաւելու որոտ կայծակ և կարկուտ զգալապէս՝ յիշատակ սքանչելեացն աստուծոյ: - 341. Եւ *սմին* համաձայնի վանական վարդապետն մեր ասելով, չորս տարր է մարդոյ և **դ** ծնունդ: - 353. Եւ որ հասարակն, և *սմա*՛ մարմնոյն և հոգւոյն ո՛չ խտրի. զի եղբայր յեղբօրէ օգնեալ՝ զմիմեանց բառնան զտկարութիւն: - 370. Տասներորդ՝ այն քան գերազանցեաց պատիւ կուսին, զի այնմ որ մարգարէք գուշակէին զլինելոցն. ի *սմա* ընդ խօսից հրեշտակին եղև կատարումն: - 464. Զոր

ի ժողովն քաղկեդոնի հաստատեցին *զսոյն* տօն ի **իեն** դեկտեմբերի. պատճառելով թէ՝ ի հռօմ դարձի արեգական տօն կատարէին. և փոխեաց զայն պետրոս տօնել արեգականն արդարութեան: - 482. Այլ և *զսոյն* նշանակէ գաւազանն եղիսէի: - 494. ...ցուցաւ ի վերոյ ի *սոյն* գլուխ ի **ժ** համարն...: - 499. Ասեմք առ այս, եթէ անմարմին իր անկատար ո՛չ լինի. զի *սոյն* բան աւետարանիս նոյն կատարեալ բանն է աստուծոյ որ ի մարմնի է միացեալ. և նախ քան զյաւիտեանս ծնեալ: - 529. Եւ զի ճշմարիտ վկայք են սոքա, և տէր մեր առ կուրացեալ հրէայսն *զսոյն* կացոյց վկայ...: - 551-552. Երրորդ՝ հպարտութիւն և նախանձ և *սոցին* նմանքն մեղք են: - 556. Թէպէտ բազում ուրէք *զսոյն* բանս ի դաւանութիւն երից անձանց և միոյ բնութեանն խոստովանիմք: - 633. Վասն որոյ ի *սոյն* աւուրքս կատարին արդիւնք ննջեցելոցն և յիշատակութիւնք նոցա այսու խորհրդով: - 683. Իսկ ի հանդերձեալն Առաջին ոստխ է *սոյն* խիղճ մտացն. զորմէ ասէ դանիէլ, «դպրութիւնք բացան»: - 743. Անդ տիւ և գիշեր ժամանակի և մասանց *սորին* ո՛չ է. զի անցեալ է ժամանակն և մնացեալ է յաւիտեանն: - 750. Եթէ վարձատրելի է ասիցէ ոք, ապա զիա՞րդ որք ի հարկէ հաւատացին ո՛չ վարձատրեցան. որպէս դևքն ի հալածիլ. և որդիքն սկեւեայ. և սիմոն կախարդն. և այլք նման *սոցին:* - 783. Եւ զայս ո՛չ շաբաթու և աւուրց սպառեալ. այլ ամսոց երից *սորին* յերկարեալ. և գործելոց վրէժ ո՛չ կշիռ հատուցեալ: - 789

**ՍՈՅՆՊԷՍ +** Իսկ թէ հաղորդին, ո՛չ կարէ լինիլ չար. զի չարն բարւոյն պակասութիւնէ. և *սոյնպէս* մի է սկիզբն: - 21. Եւ թէ ոք ասիցէ, ջերմն ապականէ՛ զցուրտ՝ և ինքն մնայ. *սոյնպէս* և չարն: - 22. *Սոյնպէս* և զգիտութիւն մեծագունիս ի պատճառն ի հայր վերաբերէ ի պատիւ ծնողին: - 48. Պատասխանեմք թէ ցո՛յց մեզ *սոյնպէս* աստուած երեք անձինք ի մի բնութիւն. և ես ցուցանեմ զմինն ծնունդ և զմիւսն ո՛չ ծնունդ: - 53. Յորոց երկուց աստուածաբանիցս իմանի մեզ *սոյնպէս:* - 79. Վասն է՞ր աստուածաբան մարգարէքն զտեսիլ երկնայնոցն *սոյնպէս* անարգ կերպիւ տպաւորեցին. որպէս առիւծ. և եզն. աքռք. և կառք. և այլն: - 131. Եւ *սոյնպէս* խօսի ընդ արթունս և ընդ ննջեալս: - 145. Եւ *սոյնպէս* ածէ ի ներքս զչար խորհուրդսն թէ ի յարթնութեան թէ ի ննջման: - 145. ...զամբարտաւանութեան ախտս սփռեաց առ ամենայն մարդիկ. որպէս զադամ ցանկութեամբ աստուածանալոյն յերկիր ընկէց. *սոյնպէս* և զայլս: - 148. Իսկ ամպք և հողմունք ի յօդոյն են. որպէս քարինք և երկաթք յերկրէ. *սոյնպէս* աղբիւրք և գետք ի ծովէ՛: - 227. Եւ *սոյնպէս* մարդն առաւելու ի չարն. ի բանականէն և ի կամացն և ի թունիցն սատանայի չարացեալ որպէս ցուցաւ ի սկիզբն գրոցս: - 237-238. Եւ թէ ոք ասիցէ՝ յորժամ *սոյնպէս* չարք էին՝ զնոցա բանքն ընդէ՞ր գրեաց հոգին սուրբ: - 325. *Սոյնպէս* բարեկամք յոբայ թէպէտ շարժեալք էին ի բանսարկուէն, այլ աստուծոյ հոգւովն զօգտակարսն բարբառէին. վասն այն գրեցան բանք նոցա ի սուրբ գիրս: - 325. Որք **է** ամ ասեն զփորձանսն՝ *սոյնպէս* թուեն. զի յետ փորձանացն ասէ գիրն **ճհ** ամ. և յառաջ քան զփորձն **հ** ամ. և **ը** ամ փորձանացն և դարձին: - 326-327. Եւ որք **լը** ասեն զփորձանսն՝ *սոյնպէս* թուեն. յետ հարուածոցն եկաց յոբ **բ** եօթանասուն. այսինքն **ճխ** ամ: - 327. Եօթն ազգ *սոյնպէս:* - 330. *Սոյնպէս* և ամենայն մեղաւորաց կրկին է հատուցումն. այսինքն հոգւով և մարմնով. կամ աստ և ի հանդերձեալն: - 335. Դարձեալ գիտելի է, որք զքրիստոս բաժանեն յերկուս բնութիւնս. և յերկուս գործս *սոյնպէս*. զմինն աստուած՝ և զմիւսն մարդ. հզօր և տկար. և գործ մարդոյ և գործ աստուծոյ. որպէս աղանդն քաղկեդոնի: - 350. Իններորդ՝ ի յօրինակ արդարոցն լուսոյն. որ ո՛չ կարօտին արտաքին լուսոյ, *սոյնպէս* և մովսէս ո՛չ կարօտէր. զի ո՛չ բնական էր լոյսն. զի աչք բնական տեսութիւն ունի, այլ ո՛չ թէ լոյս: - 352. Եւ *սոյնպէս* զանազանի: - 352. *Սոյնպէս* և շնորհք ապաշխարութեան նորոյս առաւե՛լ է քան զհնոյն. զի առանց գործոց հատուցման ո՛չ կարէին արդարանալ. իսկ աստ շնորհօք թողութեանն միայն, կարէ՛ արդարանալ: - 433. Որ լինի **ծ**, պակաս մի. *սոյնպէս* թւեալ: - 450. Եւ *սոյնպէս* և քրիստոս եղև երկուց զարմիցն մի քահանայ և թագաւոր ճշմարիտ և մշտնջենաւոր քահանայ և թագաւոր յաւիտեան: - 461. Եւ *սոյնպէս* շաղփաղփ երևէին բանք նոցա. և տեսիլքն սակայն ամենայնք՝ զմի և զնոյն յարութիւնն պատմէին: - 515. Երրորդ *սոյնպէս* ասեն, ընդ տիւն և ընդ գիշերն **գ**. որ է՛ ուրբաթն, և շաբաթի գիշերն, և շաբաթի օրն. և յերեկօրեայ յարութիւնն: - 516. Չորրորդ *սոյնպէս* ասեն. ուրբաթն և իւր գիշերն որ չարչարեցաւ. և շաբաթն և իւր գիշերն որ թաղեցաւ. կիրակէ և իւր գիշերն որ յարեաւ. յորում ժամու և իցէ: - 516. *Սոյնպէս* և աստ յառաջագոյն ասէ վասն վերանալոյն իւրոյ: - 518. Եւ դարձեալ՝ որպէս զայլ կանայսն արար աւետաւորս յարութեան իւրոյ. *սոյնպէս* և զմագդաղենացին վերանալոյն առ հայր: - 518. *Սոյնպէս* և դաւթին մարգարէութիւն՝ մտաց լուսաւորութեամբն երգէր զամենայն սաղմոսն ի հոգւոյն սրբոյ: - 537. Եւ *սոյնպէս* զկարօտութիւն և զպակասութիւն ախորժակացս նշանակէ. որ քան ի միտ ածեմք և սգամք: - 670

**ՍՈՅՆՊԻՍԻ +** Այսք և այլ *սոյնպիսիք*՝ հաւասարութեան են ցոյցք ընդ հօր: - 39. Նոյնպէս և զաղաղակն և զարտասուսն՝ զերկիւղն՝ զտրտմութիւնն՝ զաղօթելն՝ և զայլ *սոյնպիսին* ի դիմաց մերոց իմացիս: - 42. Այսոքիկ և այլ *սոյնպիսիք* յայտնապէս աստուած ցուցանեն զիօգին: - 55. Եւ դարձեալ՝ առաքօղ և ո՛չ առաքեալ. առաքեալ և առաքօղ. առաքեալ և ո՛չ առաքօղ. և այլք *սոյնպիսիք* աստ յարմարին: - 105. Եւ *սոյնպիսիք* աստ յարմարին: - 105. Ո՛ր ըստ որում շարժօղ զգայութեանցս որ առ մեզ՝ կոչին որակք՝ գոյն, և համ, և *սոյնպիսիք:* - 171. Կամ խաբէութիւն. որպէս աղուեսուց. զայս և *զսոյնպիսիս* ունին կենդանիք բնութեամբ ի խնամս ինքեանց: - 216. Դարձեալ հոգին ունի զօրութիւնս ոմանս անխառն ընդ մարմնոյն. որպէս բանն՝ կամքն՝ և *սոյնպիսիք:* - 249. Իսկ զոմանս ունի ո՛չ հասարակ ընդ անասնոց. որպէս բանն. իմացումն. և կամքն. և *սոյնպիսիք:* - 249. Է՛ և ներքին և վերին վայր. մարմին և անմարմին. և այլք *սոյնպիսիք* տարբերութիւնք են բնութեան և ո՛չ թշնամիք: - 278. Զայս և այլ *սոյնպիսիս* բազմօրինակ ստուերագրութեամբ առ ճշմարտութիւն իրին. խիկութեամբ ոչ գոլ անհնարին երկասիրացդ ի սոյն դեգերմամբ զոր ի պարապ ժամու քննութեան: - 306. Նա՛խ՝ երկրագործք, այգէգործք, հովիւք, և *սոյնպիսիք:* - 375. Այլ արդ լուծումն պահոցս այսոցիկ օրէնք է նոցա. նաև ի ձուկն և ի ձէթ և յայլ *սոյնպիսիս:* - 552. Նա՛խ՝ թէ ո՛չ գիտէ զկերպ աղօթիցն, կամ ծունր կրկնել, կամ զձեռն տարածել. և *սոյնպիսիք* ո՛չ մեղք են և ո՛չ արդարութիւն: - 620. Եւ թէ՝ դատաստանն աստուծոյ է՛ միաձև բազմաձև և ամենաձև. և այլ *սոյնպիսիք* եթէ բերեն վկայութիւն. և թէ մտացածին բանիւ հաւանութիւն տան: - 705

**ՍՈՆԹԵՑԻ -** Իսկ վրացն Ախալծիլ, որ ստուգաբանի Ախացայ. այսինքն թէ մեծ պարոնացի. Սեթալի. որ է՛ *սոնթեցի:* - 201

**ՍՈՍԻՆՉ (տեքստում՝ ՍՈՍԻՆԾ) +** Եւ են որ էութիւնք են և էութեամբ շաղկապին. որպէս երկոքին նիւթք *սոսընծով* կամ երկաթով: - 476

**ՍՈՍԿ +** Եւ սոքա *սոսկ* մարդ դաւանին, և աստուած ասեն միայն կոչմամբ և անձամբ: - 34. Ոմանք *սոսկ* մարդ ասելով բաժանեն զաստուածութիւնն **բ** բնութիւն, **բ** կամք, և բաժանեալ գործ, և այլն: - 35. Չորեքտասաներորդ՝ զի թէ մահուամբ չարչարանօք նորա փրկեցաք մեք ամենեքեան՝ և այն է *սոսկ* մարդոյ փրկութիւն մեր: - 67. Իսկ թէ միայն ի մարդոյն բնութիւնն, ահա տակաւին ևս անկատա՛ր ես. զի ի *սոսկ* մարդոյն մահ մկրտեցար: - 69. Իսկ թէ առանձնապէս մարդոյն, զիա՞րդ *սոսկ* մարդ իւրովի մեռանի, և իշխանութեամբ իւրով դարձեալ յառնէ: - 70. Ուստի ո՛չ ասի քրիստոս *սոսկ* մարդն, կամ մերկ աստուածն. այլ որպէս ցուցաւ յերկուց միաւորութիւնն: - 75. Ո՛չ ասի պարզ և *սոսկ* մարդ. վասն մարդկային կերպին: - 79. Այլ և մի բնութիւն ասեն՝ որք միայն *սոսկ* մարդ խոստովանին զքրիստոս, և ո՛չ աստուած մարդացեալ: - 82. Իսկ անձն առանց բնութեան՝ միայն անուն է *սոսկ*. որպէս որդի՝ կամ քրիստոս՝ կամ յիսուս: - 82. Այլ արդ՝ մարդկային բնութիւնն յաստուածութեանն տեսանի, և աստուածային ի մարդկութեանն, եթէ ի միութիւն բնութեանն, և եթէ ի միութիւն անձինն. զի ո՛չ *սոսկ* մարդ է քրիստոս և ո՛չ մերկ աստուած. այլ աստուած մարդացեալ: - 87-88. Զի եթէ զմարդկայինն ասէք քրիստոս, ահա՛ առանձնապէս որոշեցիք զնա ըստ նեստորի. և *սոսկ* մարդ ասէք զքրիստոս: - 89. Որ ասես *սոսկ* մարդ գոլ զքրիստոս. և տգէտ և տկար. և ապականացու մարմին. և անկեալ ընդ կարեօք մարդկան: - 98. Եւ արդ՝ տգէտն զտգիտութիւն ո՛չ կարէ բառնալ. և ո՛չ մեղաւորն զմեղս. և ո՛չ ապականացուն զապականութիւն. և ո՛չ *սոսկ* մարդ զմարդ կարէ փրկել. զի սո՛ւտ է փրկութիւն մարդոյ: - 99. Ա՛րդ՝ ո՛չէ ի յաստուած անձնաւոր էութիւն. որպէս Երրորդական անձինքն. և ո՛չ բաժանեալ ի նմանէ. որպէս հրեշտակաց դասքն. և ո՛չ որպէս *սոսկ* մտածութիւն ի տեսութիւնն աստուծոյ: - 112. Զի առ աստուած՝ ո՛չէ *սոսկ* տեսութիւն արտաքոյ...: - 112. Չորրորդ՝ զի շինուածն ի միտս զօրութեամբ է և *սոսկ* մտածմունք: - 164. Իսկ առ աստուած ներգործութեամբ. զօրութեամբ և *սոսկ* մտածմունք ո՛չ բնաւ: - 164. Նոքա ո՛չ հաւասար մովսէսի ներեն զքրիստոս աստուած. զի մովսէս աստուած կոչեցաւ. և զնա մարդ խոստովանին *սոսկ:* - 350. Նա՛խ՝ զի մի՛ արհամարհիցեմք զաստն. իբր թէ *սոսկ* բանք են: - 408. Եւ նեստոր կամէր զմարմինն որոշել և *սոսկ* մարդ դաւանել: - 475. Նոյնպէս և յորոշելն ըստ ոմանց զաստուածն և զմարդ՝ ո՛չ է քրիստոս. այլ մարդ *սոսկ* կամ մերկ աստուած: - 477. Այսպէս թէ ուրեք մարդ միայն անուանի քրիստոս «զճշմարտութիւն խօսեալ». և կամ՝ «աստուած կնքեալ». ո՛չ ինչ ուրէք վնասէ զմիաւորութիւնն իբր մարդ *սոսկ* կամ աստուած միայն. այլ աստուած համանգամայն և մարդ խոստովանի միացեալ: - 477. Վեցերորդ ըստ երբին. այսինքն թէ ե՞րբ գործեն զմեղքն. ի տղայութեա՞ն, թէ ի ծերութեան որ մեծ մեղք է. ի *սո՞սկ* աւուրս, թէ ի տէրունական տօնս. զի որ ի տօնս մեղք գործէ, առաւել պատժի քան զմիւսն: - 565. Իսկ ջուրն մնաց *սոսկ* ջուր և անկատար: - 596. ...այլ

ո՛չ յօրինեալ հացէն և ի գինւոյն. այլ էառ ի սեղանոյն հաց և եթաց ի ջուր ինչ կամ ի *սուկ* գինի՝ և ետ: - 599. ...զի յայտնապէս զարիւնն ո՛չ տայր, և ծածկապէս զմարմինն. զի յօրինեալ մարմնոյն ո՛չ տայր. այլ *սուկ* հաց որ ի բեմն: - 599. Նա՛խ՝ եթէ ո՛չ զմարմինն տան ժողովրդեանն. այլ *սուկ* հաց և գինի. զի մարմին քրիստոսի այն միճն է որ օրհնեցաւ որպէս ցուցաւ ի վերոյ: - 600. ...զի *սուկ* հաց տաս և ո՛չ զօրհնեալն: - 600. Եւ այս է մեկնութիւնն. թէպէտ հրէայքն որպէս յանցաւոր մարդ սպանին՝ սուրբ աստուած և ո՛չ *սուկ* մարդ: - 632. Յայտնապէս բաժանեն զխաչեալն քրիստոս և *սուկ* մարդ խոստովանին: - 633. Սոքա քաղկեդոնին են. որք բաժանեն զբանն ի մարմնոյն. և զխաչեալն՝ մարդ *սուկ* և տկար և մահկանացու խոստովանին: - 635. Ուստի ասացաւ թէ մահու մեռցիս. ոչ *սուկ*. այլ զկրկնակի նշանակելով մահ. այսինքն զմեռանիլն մարմնով և զպատժիլն հոգւով: - 776

**ՍՈՍԿԱԼԻ +** Զի այսպէս սահմանեցին՝ թէ ինքնակալ թագաւոր մի և ինքնագլուխ հայրապետ մի նստցի ի հայս. և թագաւոր մի ինքնակալ՝ և ինքնագլուխ հայրապետ մի ի հռոմ. և ի վերայ միմեանց դիցեն զանձինս ի մահ. և *սոսկալի* գրով եղեն միմեանց եղբարք. թացեալ զգրիչն յահաւոր խորհուրդն: - 548. ...զի նովին երկիւղիւն կան և սպասեն *սոսկալի* աւուրն այն...: - 673

**ՍՈՎ +** Այլ է՛ նշան փոխելոյ թագաւորաց. պատերազմի. և *սովոյ*. կամ այլ ինչ խռովութեան երկրի: - 203. Զի վարդապետք ասեն եթէ՝ կերակուր գազանաց այլ կենդանիք են. վասն որոյ խնամքն աստուծոյ ետ նոցա առաւել հնարս և զօրութիւնս, զի կարասցեն ըմբռնել. զայլ կենդանիս և մի՛ ի *սովոյ* մեռցին: - 218. Ութերորդ՝ թշնամիք եղեն կիրք պատժոցն. այսինքն մահ՝ ապականութիւն՝ տանջանք՝ հիւանդութիւնք՝ *սով*՝ և ծարաւ՝ և այլն ամենայն սոքա ի կրիցն են: - 277. Նոյնպէս և քրիստոս եկն առ եղբարս իւր որ էին որդիք դաւթի և աբրահամու և առաջնորդք ժողովրդեանն. և յուդա վաճառեց զնա. և տէր եղև կենդանեաց և մեռելոց և կերակրիչ. զի ազատեաց զհոգիսն ի *սովոյ* դժոխոցն: - 313. Եօթներորդ՝ *սովն* ուտել զմարմին զաւակաց. և գերութիւն ի թշնամեաց: - 376. Երրորդ՝ զի առցեն մասնաւոր զառհաւատչեայ հանդերձելոյն. տանջելով աստ ի *սով*, ի սուր, և ի գերութիւն: - 408. Նա՛խ՝ զի **գ** ամ *սովն*, և **գ** ամիս սուրն՝ սաստիկ էր քան զերեք աւուր մահն: - 434. Երկրորդ՝ զի *սովն* և սուրն զբարի և զչար ի միասին պատժէ. այլ մահն ընտրութեամբն աստուծոյ է. և ժողովի ի վերայ յանցաւորացն. ուստի յա՛յտ է զի դաւիթ ո՛չ էր յանցաւոր ո՛չ պատժեցաւ: - 435. Դարձեալ, զի **է** անգամ էր սաստկութիւն *սովոյն*, **է** անգամ աղօթիւք եբաց: - 444. Զի **յգ** ամ և կէսն՝ **է** անգամ *սով* լինի: - 444. Եւ յետ **բ** ամի՝ դարձեալ ել յերուսաղէմ, և **թ** ամ պաշարեաց զքաղաքն ի *սով* սաստիկ: - 447. Դարձեալ՝ ցուցանէ՝ իբր թէ սիրելոյն որ մեռաւ՝ կցորդիմք և չարչարեմք զմարմինս. մերկանալով, ի *սով* և ի ծարաւ, ի մուքն և ի հող որպէս նա ի գերեզմանի եղև: - 670. Ոմանք հրով կիսայրեաց տոչորեալք. և այլք ի *սովոյ* գազանաբեկ վտանգեալք: - 788. Եւ առ այս եկն *սով* քաջ՝ զուգակշիռ հասարակութեանց մեծատանց և աղքատաց: - 789

**ՍՈՎԱՄԱՀ +** Զի ունօղքն բարեկեցիկ կենօք, և ոչ նոյնպիսիքն *սովամահ* տուայտեալք: - 789

**ՍՈՎԻՄ +** Նա՛խ՝ զի հեզութեամբ և քաղցրութեամբ մեծարեաց զնա զի մի՛ *սովեսցի* և մեռցի: - 443

**ՍՈՎԻԷ -** Եմրան: Յեկտան: Մադան: Մադիան յորմէ մադիանացիք: Եսբոկ: *Սովիւէ*: - 330. Առաջինն մարիամ. երկրորդն *սովիէ*. երրորդն աննա: - 460. *Սովիէ* ի նոյն բեթլէհէմ ծնաւ զեղիսաբեթ մայր մկրտչին...: - 460

**ՍՈՎՈՐ +** Զայս և *սովո՛ր* են առնել մարդիկք առ մերձաւորս և սիրելիս անընդմիջաբար խօսին. և առ հեռաւորս կամ ատելիս գրով կամ միջնորդով: - 177. Եւ մարդիկ *սովո՛ր* են զհիւանդս և զաղճատս վատ ասել: - 251. Նախ՝ զի *սովո՛ր* է աստուած երևիլ ամպօք. որպէս ի սինա և ի թաբօր...: - 326. Վեցերորդ՝ *սովո՛ր* էին զտաճարս կռոցն զարդարել. վասն որոյ առաւել քան զնոսա զարդարէ՛ զխորանն: - 342. Նա՛խ՝ զի *սովոր* էին յեգիպտոս կռո՛ց զոհել, զայն նուէրքն ի յինքն ընկալաւ: - 355. Բաղաամ մո՛գ էր և կախարդ. և *սովո՛ր* էր ընդ դևս խօսիլ. վասն որոյ յառաջեաց աստուած և խօսեցաւ: - 387. Երկրորդ՝ ի դիմաց տեառն ասէ դաւիթ. «ի մէջ գիշերի յառնէի խոստովան լինիլ առ տէր». որում *սովո՛ր* էր յայլ աւուրս ընդ առաւօտն կալ յաղօթս, և կիրակէն ի մէջ գիշերի: - 512. Մեծութիւն այսմ ուրախութեան կարէ՛ զմտաւ ածիլ յայնմանէ, զոր *սովո՛ր* են ծնօղք յորժամ որդիք նոցա լինին եպիսկոպոսունք կամ թագաւորք: - 763

**ՍՈՎՈՐԱԲԱՐ +** Եւ այսպէս *սովորաբար* խօսիմք, թէ յուրբաթի կէս օրն ելեալ ոք ի տեղւոջէ՛ մինչև գայ առ մեզ ի լոյս կիրակէին կամ ընդ առաւօտն, ասեմք թէ **գ** օր է ճանապարհին. նոյնպէս և յարութիւնն քրիստոսի: - 516

**ՍՈՎՈՐԱՊԷՍ** - Ասեմք եթէ ժամանակն ի շարժմանէ՛ լուսաւորա՛ցն է. ըստ գնացից նոցա զառաջիկայն ասեն *սովորապէս:* - 430

**ՍՈՎՈՐԵՑՈՒՑԱՆԵՄ +** Երրորդ՝ ի վախճանն. զի յովհաննուն ունէր կարգեալ առ մկրտութիւնն քրիստոսի. զի յա՛յն *սովորեցուցանէր* զժողովուրդն որ էր կատարեալ մկրտութիւն: - 488

**ՍՈՎՈՐԻՄ +** Երկրորդ՝ զի մարդիկք բազում ամս յաճախէին ի մեղս յուսով վերջին ապաշխարութեանն. և յետոյ *սովորեալ* ի մեղս ո՛չ կարէին դառնալ...: - 292. Յետ այսորիկ երկրորդ միաւորութիւն *սովորեցար* կոչել թէպէտ և ո՛չ իսկապէս՝ և զանհամանիւթից ոմանց. և կամ զիամանիւթից մարմնոց յարադրութիւն. որոց ընդ մէջ է մակերևութիւն միայն: - 476. Հինգերորդ՝ միաւորութիւն *սովորեցար* կոչել յորժամ նիւթ ինչ աննիւթով կերպարանեալ տեսանի տեսակաւ: - 476. Այլ և մեղք մարմնոյն՝ ի հեշտանալն, ի *սովորիլն*, և ի կապիլն առ մեղս: - 568. Ասեմք թէ՝ զի մի՛ *սովորեսցին* և զպատուաւորս և զբռնաւորս և զայլս թաղեսցեն: - 617. Եւ զայս *սովորեցաք* քրիստոնեից ազգս...: - 655. Եւ զայս ա՛յլ ազգք ո՛չ ունին. այլ ի մէնջ են *սովորեալ:* - 656

**ՍՈՎՈՐՈՒԹԻՒՆ +** Մետասաներորդ՝ զի հայրենի՛ է եղեալ աւանդութիւնն, և *սովորութիւնն* ստացական բնութիւնն: - 33. Զի *սովորութիւն* է սուրբ գրոց՝ աստուծոյ համարել զոր ինչ գո՛րծ է ի մարդիկ: - 59. Հնգետասաներորդն *սովորութեան:* - 195. Հնգետասաներորդ՝ ասի օրէնքն օր ըստ *սովորութեան*...: - 195. Հինգերորդ՝ զի կարէ՛ մարդ ներիակ *սովորութեամբ* պահօք և աղօթիւք և կրթութեամբ մարմնոյ սանձել յինքեան զայսպիսիս նշանաց գործ: - 246. Որպէս *սովորութիւն* է մարդոյ որ վատացն ասէ, ե՛ս արարի զայդ բանդ որ զքեզ ի քո կամն թողի և ո՛չ խրատեցի: - 336. Այլ զանբան պատարագն ուսան հեթանոսք և կռոց մատուցին. և այն *սովորութեամբն* խորայէլ մատոյց աստուծոյ զանբան կենդանիս մինչ եկն քրիստոս և եղև ինքն բանաւոր պատարագ, և զնոյնս աւանդեաց մեզ: - 362. Երրորդ՝ զի մի՛ ժողովուրդն կանգնեսցէ արձան ի վերայ նորա ըստ *սովորութեան* երկրին: - 411. Երկրորդ՝ զի մի՛ *սովորութեամբ* գիտասցէ և զայլ կոյսս: - 439. Դարձեալ ասեմք, փոփոխումն և աճումն հասակին ո՛չ եթէ ապականութեան էր ցոյցք. այլ զի զճշմարիտ մարդեղութիւնն հաստատեսցէ ընտել *սովորութեամբ* մեր որ ի տղայութենէ զարգանամք: - 501. Ապա թէ ոչ՝ նա՛ որ զադամ երեսնամեայ ստեղծ, կարէ՛ր և նոյն հասակաւն ծնանիլ. այլ այն ո՛չ լինէր ըստ *սովորութեան* մեր որպէս ցուցաւ ի վերոյ: - 501. Նոյնպէս վասն երկրորդին գիտելի է, զի որպէս զփայտ թիւրութեամբ պնդեալ՝ դժուարին է ուղղել. նոյնպէս զչար *սովորութիւն* մարդկան դժուարին է փոփոխել: - 531. Չորրորդ, գռեհիկ. զոր *սովորութեամբ* լռեալ ասեն՝ ծմեռն գայ, և զկնի այնորիկ գարուն ամառն և աշուն: - 536. Եօթներորդ, զի մկրտելն է գործ քահանայի. և քահանայութիւնն է սպասաւորութիւն աստուծոյ. իսկ զայս սպասաւորութիւն աստուծոյ և ո՛չ կռապաշտքն ունէին *սովորութիւն* սնոտի կռոցն ի ձեռն կանանցն մատուցանել զպատարագն...: - 589. Դարձեալ՝ խառնելն զմիաւորելն նշանակէ զարեան ընդ մարմնոյն որպէս մեր է *սովորութիւն:* - 596. Նա՛խ որպէս *սովորութիւն* է մարդկան որք զաղերսն ընծայեն ի դրունս մեծամեծացն, և նոքա՛ մատուցանեն թագաւորին: - 624. Զոր առ հնովքն էր *սովորութիւնս* այս, և յետոյ նուազեցաւ: - 631. Եւ յետ յարութեանն այն *սովորութեամբն* ծանեան զնա...: - 655. Հեթանոսաց *սովորութիւն* էր որ զինչս մեռելոյն ընդ նմա՛ դնէին ի գերեզմանն...: - 656. Զայս *սովորութեամբ* առնեն զոր չէ՛ պարտ. զի յուսահատութեան է նշան և հեթանոսաց գործ: - 656. Երրորդն ի դուռն գերեզմանին. վասն որոյ այժմ *սովորութեամբ* երիցս անգամ դնեն զդագաղն ի ճանապարհի: - 675. Իսկ **իդ** թիւն ո՛չ եթէ սահման և կէտ է. այլ *սովորութիւն* է գրոց փոքր թուով զբազումսն ցուցանել: - 711. Եւ այս ո՛չ միայն փութանցիկ գոլոյ վասն, կամ ներիակաբար հատուցման որպէս *սովորութիւն* է. այլ զի ո՛չ ինչ կարեն տանիլ ընդ ինքեանս. բայց միայն նշխարիս ինչ յիշատակութեան ուրուական տեսլեան: - 775. Եւ նոյն ինքն տէրն բոլորից վկայ քարոզութեան զգործս կատարէր. զի *սովորութիւն* է մարդկան քան զլուր լսելեաց տեսութեան աչաց հաւանիլ: - 785

**ՍՈՎՓԱՐ** - Ոմանք ասեն թէ՝ բարեկամքն իւր որ էին յազգէն եսաւայ ելիփազ. *սովփար*. և բաղդատ. որք եկին մխիթարել զնա ի վշտացն...: - 320

**ՍՈՒԳ +** Զարթիր, ի *սուգ* տալով մեզ զմուրքէ, և զեսթեր: - 28. Զի թէ մարմնապէս տեսանես. ուրախութեան էր ժամանակն գալստեան և ո՛չ *սգոյ* որ է պահք և ապաշխարանքն: - 44. Ասի և բօթ. այսինքն *սուգ* և տրտմութիւն վասն ելիցն ի դրախտէն...: - 200. Նոյնպէս և Աշխարի կոչէ. այսինքն աշխար. և *սուգ*. և տրտմութեան հովիտ: - 210. Եօթներորդ՝ վասն նշանակելոյ *զսուգ* կամ զուրախութիւն: - 281. Իսկ մաշկն որ է՛ մորթ մեռելոյ, նշանակէ՛ նախ *զսուգ* և զտրտմութիւն վասն

մեղաց: - 281. Երեսուն օր *սուգն:* - 285. Վասն նոցա լայր անմխիթար *սգով*, զի ո՛չ եղև մայր նահատակացն: - 312. Ա՛րդ՝ զայս գ. *սգոյս* մխիթարեցաւ յետոյ: - 312. Եւ ուխտաւորն ի տուն *սգոյ* ո՛չ երթայ. այն է որ ի մեղքն այլ ո՛չ դառնայ. և ո՛չ ընդ մեղսասէր գործակիցս: - 390. Արդ *սուգն* օր ընդ տարւոյ երեսուն օր էր: - 411. Երկրորդ՝ զփոփոխելի կեանքս սգան. և յուսով հանդերձեալ յարութեանն դադարին ի *սգոյ* և ուրախանան: - 411. Ա՛րդ՝ յորժամ կենդանի էր դառնութեամբ և *սգով* իջոյց ի գերեզման. այժմ մեռելո՛յն երկրպագէ: - 429. Քսաննէ, Վասն ինն երանութեանցն. Աղքատութեան. *Սգոյ*. և Տրտմութեան. և այլոցն կարգաւ: - 526. Եւ սուրբն դուկիոս սքանչելագործ և մարգարէաշնորհ, գրեաց առ մարկիանոս, թէ *սուգ* զգեցուցեր առաքելոց և մարգարէից. զի քակտեցեր զնոցա շինուածն. և արգելաւ հոգին սուրբ յօրհնելոյ զպատարագն և զաւազան մկրտութեան: - 543. ...այսինքն Աղքատութիւն հոգւոյ. *Սուգ*. Հեզութիւն. Քաղց արդարութեան. Ողորմածութիւն. Սրբութիւն սրտի. և Խաղաղութիւն: - 583. *Սուգն* զնախանձն. զի որ սգայ վասն մեղաց այլոց, ո՛չ նախանձի ընդ նոսա: - 583. *Սուգն* է սըգալ վասն մեղաց և ատել զնա մինչ զի եղծանել զնոսա: - 583. Վեցերորդ՝ արտասուքն զզղջումն և *զսուգն* նշանակէ՛ զոր ունիմք վասն մեղաց: - 619. ...զի օրն այն ուրախութիւն է արդարոց. և կործանումն ամբարշտաց. որպէս երգն այն ուրախութիւն է, և *սուգ*՝ եգիպտոսի: - 630. Իսկ պահքն *սուգ* է և ապաշխարութիւն վասն յանցանաց նախաստեղծիցն...: - 650. Զի արտա՛քս եմք որպէս ադամ ի դրախտէն՝ և ի *սուգ* մտեալ: - 650-651. Չորրորդ յայտնի և հաստատուն, որ ամենայն ազգ քրիստոնէից պահեն զչորեքշաբաթն և զուրբաթն վասն խաչելութեանն որ *սո՛ւգ* է և պահք: - 652. Երկրորդ, յետ ելիցն ի դրախտին **ե** օր *սուգ* պահեաց անսուաղ...: - 653. ...զոր նշանակէ **դ** թիւն. և ուրբաթն *սուգ* և բօթ լսի՝ պահելի՛ է: - 653. Երրորդ, աղուհացքն այսմ կենաց խորհուրդ, որ եմք ի *սուգ* վասն մեղաց...: - 654. ...և յինունքն յարութեան խորհուրդ. զի ո՛չ է *սուգ* և ո՛չ տրտմութիւն և ո՛չ ցաւք: - 654. ո՛չ պահեմք *սուգ* մինչ վերասցի և ապա՛ պահեմք. որպէս աւետարանն ասէ: - 654. ...որ ամենայնիւ ընդ դէմն փոխի ուտելն և ըմպելն ի ծոմ և ի ծարաւ. ծաղրն ի *սուգ*. հեշտութիւնն ի տքնութիւն. և ի չարչարանս և այլն: - 657. Զի՞նչ նշանակէ *սուգն* և կոծն և հանդերձին պատառելն: - 670. Դարձեալ՝ նշանակէ՛ յետ մեռելոյն զփոխումն ուրախութեան մեր ի *սուգ* և ի մերկութիւն. և ի սև հանդերձս. ի խաւար տունս և այլն: - 670. Է և ա՛յլ իմն տեսութիւն վերագոյն. զի արարողութիւն *սգոյս* ցուցանէ զառաջին անկումն մեր ի լուսեղէն կենացն ի խաւար աշխարհ տրտմութեամբ և ցաւօք մահու մեռեալք և ի հող դարձեալք. և այս ի ճաշակմանէ պտղոյն: - 670. ...վասն այն հող ի գլուխ արկանէ մարդ ի ժամ *սգոյ*. այլ և ի վերայ մեռելոյն: - 670. Նոյնպէս և *սուգն* ի վերայ մեռելոյ զնոյնն նշանակէ: - 670. Այլ և նշանակէ *սուգն* զտեառն մերկութիւնն ի խաչին...: - 670. Ասեմք թէ՝ մարգարէն ուսուցանէ մեզ զչափ *սգոյ* մինչ յերեկոյն, և յառաւօտուն ուրախանալ...: - 680. Յորոց յա՛յտ է թէ՝ որք աստի կենօքս ի *սուգ* տրտմութեան անցուցանին զի ուրախութեան հասցեն: - 775. Զի առ հասարակ ամենայն տարերք ըստ իւրեանց կերպի կրեցին զայլայլութիւն *սգոյ*, չարչարակիցք գոլով արարչին իւրեանց: - 788. Եւ այսպէս տրտմեալ *սգով* և թախծեալ մտօք ընձայեցի տըխեղծ մատամբ զխունձախոյ նուէրս բանի, իբր զլոմայս այրւոյն՝ քումդ գանձարանի: - 789

***ՍՈՒԳ ԱՌՆՈՒԼ +*** Դաւիթ երիցս *սուգ էառ* մեռելոյ. և տէրն ի վերայ երուսաղէմի և ի գերեզմանն ղազարու և մերձ ի խաչն: - 438

**ՍՈՒԶԵՄ +** Ուքևժ, զքագաւորս նոցա կախեաց յերկճղի փայտէ. և յերիկոյն ի գուբն *սուզեաց:* - 418. Այլ և ամենայն աշխարհ տաճա՛ր է աստուծոյ. թէ ի դաշտի թէ յագարակի թէ ի տղմի. կամ ի ջուր *սուզի*, կամ ի գազանաց գիշատի, կամ ի ձկանց կլցի, արդարութեան ոչ ինչ վնասէ: - 678

**ՍՈՒԿԵՍՈՍ** - Զնոյն և սուրբն կիւրեղ գրէ առ *սուկեսոս* թղթին, «Մի ասեմք զքրիստոս աստուած մարդացեալ, և մի զբնութիւն նորա»: - 83

**ՍՈՒՂ +** Նոյնպէս և այբն խառնի ի թաւ և ի լերկ, ի *սուղ* և յերկար, և միաբանի ընդ նոսա, և ի մի բնութենէ իւրմէ ո՛չ որոշի կամ այլայլի: - 178. Եւ զի *սուղ* ծիրս ընթանայ: - 197. Եւ սողունք որք պակա՛ս են ի ձայնական գործեաց, *սո՛ւղ* են և ձայնից: - 216. Եւ սողունք կոչին, կամ զի սողալով գնան. կամ սղացեալ են ոտիւք. կամ զի *սո՛ւղ* են ձայնիւ: - 216. Ժամ դատաստանին ո՞ր քան է. յերկա՞ր թէ *սուղ:* - 747

***ՍՈՒՂ ԻՆՉ +*** Վասն որոյ և մեր համաձայն գոլով ուղղափառաց հարցն սրբոց՝ դիցուք *սուղ ինչ* յառարկութեանց նոցա, և ընդ նմին զպատասխանիս: - 35. Եւ էր արտեմոնս այս զկնի առաքելոցն **ըճ** ամաւ *սուղ ինչ* պակաս: - 482

**ՍՈՒՍԵՐ +** Եւ արդ զինչ զարմանք էր թէ յայնպիսի խաղաղութեան ծուլէին *զսուսերս* իւրեանց ի

խոփս: - 27. Եւ ի վերայ տեառն ջահիւք և *սուսերօք* եկին ըմբռնել ըստ աւետարանին: - 306. Քսանևզ, *սուսեր* եղև ծնօտն և աղբիւր ծարաւոյն: - 423

**ՍՈՒՍԵՐԱՄԵՐԿ +** Սաստկագին գոչմամբ. և ահագնատեսիլ *սուսերամերկ* կորովալից նետողաց. որ պատեալ պահեալ պաշարէին զմեզ: - 789

**ՍՈՒՏ +** Երրորդ՝ եթէ զոր ինչ ասէաք և ճշմարիտ էր, յայնժամ բանս մեր ո՛չ հետևէր իրացն. այլ իրն բանիցն հետևէր. որ է՛ յայտնապէս *սուտ*...: - 8-9. Ասեմք թէ՝ այո՛ ի հարկէ մինն ճշմարիտ է. և մինն *սուտ*. այլ զանազանապէս ըստ իրին: - 9. Զի ի վերայ մշտնջենաւորացն բացորոշակի յերեք ժամանակս՝ այսինքն յանցեալն ի ներկայն և յապագայն՝ մինն ճշմարիտ է և մինն *սուտ*. որպէս հրոյ ջերմութիւնն և արեգական լոյսն: - 9. Իսկ *սուտն* չար է, և չարն *սուտ*: - 13. Ա՛րդ՝ առաջնովն ճանաչեմք զլոյս. և երկրորդիւն զխաւարն. և առաջնովն ճանաչեմք զճշմարիտն. և երկրորդիւ *զսուտն*: - 17. Տասներորդ՝ զի *սուտ* լինէին ամենայն օրէնք բնական՝ գրական և աւետարանական. զի սոքա ամենքն խրատեն զմեզ խոտորիլ ի չարէ՝ և առնել զբարի. և այլն ամենայն: - 20. Եւ ո՛չ են որպէս ստորասութիւնք և բացասութիւնք, որ միայն ի բա՛նն են հակակայք. որպէս ճշմարիտ, և *սուտ*. այլ չար և բարի՝ ի բանս և ի գործս պատահին: - 21. Իսկ եզր աստ ցուցանէ զնոսա *սուտս* և ապաշնորհս...: - 28. Չորրորդ՝ նա *սուտ* քրիստոս և *սուտ* մարգարէ կոչի. և սոքա *սուտ* քահանայք՝ և *սուտ* վարդապետք՝ և *սուտ* առաքեալք կոչին: - 35. Եւ թէ արար հայր առանց որդւոյ, անիմա՛ստ արար. զի որդի է իմաստութիւն հօր ըստ առաքելոյ. և կամ այլ իմն իմաստութեամբ որ է՛ *սուտ* ամենևին: - 46. Իսկ մի և ճշմարիտ ասելովն՝ յատկացնէ՛ ի բազում և ի *սուտ* աստուածոց հեթանոսաց որ անուամբ միա՛յն են: - 47. Զի թէ մի է սկիզբն, *սո՛ւտ* է նոցա ասելն զհոգին ի հօրէ և յորդւոյ բղխեալ: - 62. Իսկ եթէ զոչ բղխեալն բղխէ, ահա ի հօրէ ո՛չ ասէք զբղխումն, այլ միայն յորդոյ. որ է *սուտ*: - 63. Ապա ո՛չ եղև աստուծով, այլ մարդով. զոր *սո՛ւտ* առնէ մարգարէն զփրկութիւն մարդոյ: - 67. Եւ այսպիսի կարծիքս *սո՛ւտ* է: - 80. Եւ զփառս բանին զրկելով՝ ետուք մարդոյն. և եղէք մարդապաշտք, և մարդոյ մարմնակերք. և ի մարդ մկրտեալք. և *սուտ* է փրկութիւն մարդոյ մարգարէն կնքեաց: - 90. Ա՛րդ՝ ի մարդկանէ ո՛չ ոք ետես զաստուած, և որդի կուսին ո՛չ ետես որպէս դուդ ասես. *սո՛ւտ* է ապա և պատմութիւնն զոր ինչ ուսոյց մեզ. զի ո՛չ է տեսեալ և պատմէ. ահա անդունդք հայհոյութեան. զոր ի կարգիս լռե՛մ: - 96. Ապա ուրեմն մարդկութիւնն *սուտ* խոստովանի...: - 96. Արդ կամ ստեաց զաւետարանն, կամ *սուտ* լեր ի բանս քո ըստ նմանութեան հօր քոյ սատանայի: - 97. Արդ՝ եթէ բոլոր աստուածութիւնն ի քրիստոս էացեալ է մարմնապէս, և ծածկէ զգիտութիւնն ի նմանէ, այս լինի կամ ոչ աստուած մարմնացեալ և մարդացեալ կամ զէութիւնն տըւեալ և ի գիտութենէն զրկեալ որ է *սուտ*: - 98. Եւ արդ՝ տգէտն զտգիտութիւն ո՛չ կարէ բառնալ. և ո՛չ մեղաւորն զմեղս. և ո՛չ ապականացուն զապականութիւն. և ո՛չ սոսկ մարդ զմարդ կարէ փրկել. զի *սո՛ւտ* է փրկութիւն մարդոյ: - 99. Ա՛րդ՝ եթէ՝ ի յարութեանն հասարակ արդարք տեսանեն զաստուած դէմ յանդիման որպէս և է, և քրիստոս ո՛չ կարէ տեսանել, փո՛քր լինի գիտութեամբ քան զմարդ որ է *սուտ*: - 99. Գիտելի է, զի չարչարանք մտացն է *սուտն*՝ և տարակոյսն՝ և աննմանն: - 104. Դարձեալ՝ ճշմարիտն փոխի երբեմն ի *սուտն*. որպէս իմաստասիրաց բանքն: - 121. Ո՛չ են յաւերժահասունք որպէս ոմանք կարծեն թէ յերկուց տարերց այսինքն ի հրոյ և յօդոյ են բանական կենդանիք և ունին ծնունդ և մահ. *սուտ* է այսպիսի կարծիքս և ընդունայն և հակառակ սուրբ գրոց...: - 150. Ապա թէ ոչ՝ մշտնջենաւորն լինի փոփոխական որ *սուտ* է: - 168. Չորրորդ՝ զօրութիւն և ներգործութիւն են հակակա՛յ իրերաց. ապա թէ է զօրութեամբ և ներգործութեամբ՝ գո՛յ ինքն ինքեան հակակայ որ է բնաւ *սուտ*: - 168. Եւ թէ գոյր ինչ զօրութեամբ ի նա՛, և նա՛ լինէր ընդ եղելոցս ի ժամանակի որ է *սուտ*: - 169. Եւ զի երկատեսա՛կ էր բանն՝ այսինքն *սուտ* և ճշմարիտ, լեզուն երկճղի եղև: - 219. Եւ *սուտ* առաքեալք զճշմարտիցն կերպանային. և այն զի ո՛չ ունէին զնոյն տիպ. իսկ թէ ունիցին զնոյն տիպ՝ ո՞րչափ ևս: - 238. Եւ եթէ այս *սուտ* է հա՛րկ է ասել քեզ կամ մնալ ի թուփն, կամ փոխիլ յանէն և անգոյանալ որպէս ցուցաւ: - 253. Երրորդ՝ իմաստութիւն ասի և բանական քննութիւն. որք բանիցն տեղեկացեալ ընտրեն զստոյգն ի *ստոյն*: - 269. Եւ զայս *սուտ* առնէ սուրբն կիւրեղ եթէ՝ որդի է ճշմարիտ պատկեր հօր. և մարդն եղեալն է ի պատկեր որդւոյ: - 273. Եւ այս երկոքեանս *սո՛ւտ* են. և ո՛չ են ընդունելի մեզ: - 290. Վասն երկրորդին հակառակէր ընդ նոսա, զի մի՛ *սուտ* լիցի վկայութիւն աստուծոյ ի վերայ նորա...: - 324. Նա՛խ՝ զի թէպէտ ի դէմս յոբայ *սուտ* էր խօսք նոցա, այլ ի դէմս ամենայն մեղաւորաց ճշմարի՛տ է: - 325. Դարձեալ որպէս իշովն բաղամու զօգուտն խօսեցաւ, և զլեզու *սուտ* մարգարէին շարժեաց յանիծիցն յօրհնութիւնս: - 325. Երրորդ՝ զի աստուծոյ վկայութիւնն ի *սուտ* ելցէ վասն նորա: - 325. Երկրորդ՝ զի գաւազանն մովսէսի մի

վիշապ եղեալ կլանէր զբազում վիշապս նոցա որ և հե՛տն միանգամայն ո՛չ երևէր. ընդէ՞ր ապա և նոցայն ո՛չ եկուլ զմովսէսին. քանզի *սո՛ւտ* էր: - 335. Ապա ուրեմն *սո՛ւտ* են ազգն յունաց և ասորւոց որ խմոր դնեն ի խորհուրդն: - 356. Երկոտասաներորդ, Թէ *սուտ* են վհուկք: - 412. Այլ որպէս յարուցեալն նմանութիւն է և ո՛չ իսկութիւն, նոյնպէս և խօսքն *սուտ* է և ո՛չ ճշմարիտ: - 428. Նա՛խ՝ զի ո՛չ ետես զնա. այլ միայն կինն. ապա յա՛յտ է զի *սուտ* նմանութիւնն էր: - 429. Ա՛րդ՝ թէ աստուած ծածկեաց և սամուէլ յայտնէր հակառակ աստուծոյ, ահա՛ զի բարկացուցանէր զնա. ապա յա՛յտ է զի *սո՛ւտ* է և ո՛չ սամուէլ: - 429. Ա՛րդ՝ թէ ճշմարիտ յարոյց կինն զսամուէլ. սաւուղ ո՛չ երկնչէր ի մահու. զի և զնա՛ յարուցանէր. և թէ երկեաւ, ապա *սուտ* էր կենդանութիւն մեռելոյն: - 429. Ապա յա՛յտ է զի ի մէջ կարծեաց էր նա. զի թէ *սուտ* համարէր զվհուկն, ո՛չ երկնչէր ի մահու. և թէ ճշմարիտ՝ ո՛չ երթայր ի պատերազմ: - 429. Ութերորդ՝ ընդէ՞ր *սուտ* խօսեցաւ: - 429. Ապա յայտ ուրեմն է զի *սուտ* երևումն էր սամուէլի ձևացեալ: - 429. Երկրորդ՝ զի *սուտ* խօսեցաւ աստ. զի թէ սամուէլ էր՝ ո՛չ ուսանէր ի սաւուղայ. և դնն յերկրէ ո՛չ ելանէ: - 430. Չորրորդ՝ զի թէ սամուէլ էր որ ասաց թէ՝ տէր հեռացաւ ի քէն, և այս ո՛չ է մարգարէութիւն. զի կրկնեաց զիւր բանն. և թէ ո՛չ էր սամուէլ, այլ զանունն ընկալաւ և ինքն դև էր, *սուտ* խօսեցաւ ապա: - 430. Թէ հրամայական էր և վճիռ եհատ, ապա աստուած էր և ո՛չ մարգարէ. *սուտ* ասաց զգոլն սամուէլ: - 430. Իսկ թէ մարգարէութիւն էր և զլինելոցն ասէր, ապա ո՛չ էր աստուած. *սուտ* կոչեցաւ անունն ի վերայ: - 430. Իսկ թէ այլ ինչ էր՝ և բարբառն և տեսիլն սամուէլի, *սուտ* է և ո՛չ ճշմարիտ: - 430. Արդ եթէ սամուէլ յարեաւ և մեռաւ և կամ կինն, նա՛ ճշմարիտ եղիցի բանն. ապա թէ կինն ոչ մեռաւ և սաւուղ մեռաւ, *սուտ* խօսեցաւ: - 430. Ութերորդ՝ որպէս *սուտ* էր յարութիւնն, նոյնպէս *սուտ* է և խօսքն և կերպարանօք: - 430. Ապա յայսմ ամենայն է յա՛յտ է՝ զի ոչ ինչ գիտեն զառաջիկայն դևք. և ո՛չ իմանան զներկայական խորհուրդս. և ո՛չ յառնեն մեռեալք. այլ *սուտ* կերպարանին: - 430. Կամ *սուտ* լիցի բան մարգարէին: - 443. Եւ շուրջ զնովաւ հրեշտակք ամենայն ոչ հաւանեցան. զի նոքա զամենայնն ճշմարիտ խօսին. և բարի առնեն մարդկան. և յապաշխարութիւնն խնդան. իսկ *սուտ* խօսիլն և չար առնելն և ի վիշտս ուրախանալ՝ դիւա՛ցն է որ են չար հոգիքն: - 444. Ապա թէ ոչ՝ *սուտ* լինի վկայութիւն աւետարանին թէ «էին երկոքին արդարք առաջի աստուծոյ»: - 484. Ութերորդ՝ զի թէ հաւատան աւետարանին և ոչ ստեն **լ** ամաց գալ քրիստոսի ի մկրտութիւն, ի հարկէ՛ պա՛րտին կատարել և զմկրտութիւնն ի նոյն ի տօնի ծննդեանն իւրեանց ի դեկտեմբերի **իե** որ իցեն ամենևիմբ *սուտ:* - 484. Վասն *ստոյն* մեռանի ճշմարտութիւնն: - 491. Ապա ուրեմն *սուտ* երևի ապականացու ասելդ ձեր: - 500. Եւ զի *սուտ* է ապականացու ասելն, ճշմարի՛տ եղիցի անապական խոստովանիլն: - 500. ...զի վերնոյն ներքին է, և ներքնոյն վերին. ապա *սո՛ւտ* է ասելդ թէ գոյ ներքին և վերին և միջին դժոխք: - 505. Ասեմք թէ և այդ ևս է *սուտ* պատճառ. զի հրէից նախ զատիկն էր և ապա բաղարջակերքն պահք: - 510. Ասեմք թէ՝ կրկին *սուտ* և նոր աւետարան: - 511. Եւ կրկին *սուտ*. զի ուր զձուկն կերին՝ ի գալիլեայ յեզր տիբերիայ ծովուն էր **դ** աւուր ճանապարհ հեռի յերուսաղէմէ՛ և ի լեռնէն ձիթենեաց ուստի համբարձաւ քրիստոս: - 511. Ապա ուրեմն *սուտ* ասեն թէ ի չորեքշաբաթի ձուկն եկեր: - 511. Երկրորդ՝ զի թէ ճանաչիցէ զհեռաւորն միջնորդութեամբ բարի հոգւոյն. զի թէ յայտնէ միջնորդութեամբ չար հոգւոյն՝ ո՛չ է մարգարէ. այլ *ստոցն* ծանօթութիւն...: - 536. Երրորդ, դիւական. որպէս կռոց *սուտ* մարգարէքն. սեդեկիայն և այլոց բազմաց. որ այժմ երևին ի պատասխանիս կախարդաց. նաև հաւկռիչք և գարէդիւթք. որք են բնաւ սուտք և ոչինչք: - 536. Երրորդ, դիւական. որպէս կռոց սուտ մարգարէքն. սեդեկիայն և այլոց բազմաց. որ այժմ երևին ի պատասխանիս կախարդաց. նաև հաւկռիչք և գարէդիւթք. որք են բնաւ *սուտք* և ոչինչք: - 536. Այլ որ **ճծ** ամաւ յառաջ եկին ի հայք՝ ասորիք արք քաջաբանք, և կամեցան սերմանել զաղանդն նեստորի. որք նզովեալ որոշեցան. բայց ոմանք ընկալեալ էին և թարգմանեալ ի նոցանէ գիրս *սուտս*...: - 545. ...թէ զերկու քորս **բ** եղբարցն տալ. կամ զսանին քոյրն միւս եղբօրն. որպէս քո *սուտ* պետրոսին կանոն է, և ո՛չ ճշմարիտ պետրոսին. և զայլն լռեմ իբրև զամօթալի: - 548. Նա՛խ՝ թէ ո՛չ ամենայն ուրէք է ընդհանրականքն ճշմարտիք. և ո՛չ ամենայն ուրեք առանձնականքն *սուտք:* - 550. Ահա՛ սոքա ընդհանրականք են և ո՛չ են ճշմարիտ. այլ *սուտ:* - 550. Դարձեալ՝ ճշմարիտն մի է և *սուտն* բազում. և բարին մի է և չարն բազում. և առաքինութիւնն մի է և մոլորութիւնն բազում: - 550. Դարձեալ՝ զուտ է և անխառն իսկապէս ճշմարիտն քան զխառնեալն ի *ստէ:* - 550. Այլ ա՛րդ՝ յամենայն ազգաց ելին հերձուածօղք որ է *սուտ*. և խառնեցան ընդ ճշմարտութեանն: - 550-551. Եւ զայս վասն է՞ր յերկարել ինձ. զի ցուցանիցի թէ ո՛չ է պարտ միոյն ճշմարտի բազում *ստոց* հետևիլ: - 551. Իսկ գործն զհակառակն նմին *սուտ* երևեցնէ զխորհուրդն և չար

ցուցանէ զգործն և զագրալի: - 558. Իսկ յետ և յահեակ որկորստութիւն և պոռնկութիւն. զի յետս դարձումն է ի ճշմարիտ բարւոյն, և զհետ ընթերցումն է առ ահեակ և *սուտ* բարիս: - 560. Այն է որ գիտէ ճշմարիտն և առնէ *զսուտն*. և այս յերեք դէմս որոշի: - 564. Զի **ժ** պատուիրանքն և **է** մահու չափ մեղքն են ըստ գոյացութեան մեղք. որպէս մի՛ շնարն և մի՛ գողանարն և մի սպանաներն և մի՛ *սուտ* վկայերն: - 565. Եւ թէ **ք** մարդ գործեն զմեղս զայսոսիկ, սպանանելն մեծ է քան *զսուտ* վկայելն. և այլն նմանապէս: - 565. Եւ մեղք լեզուին՝ ի *սուտն*, ի զուրն, և յանիրաւելն: - 568. Զի *սուտ* է բառնալն զոր ունի: - 568. Են և այլ բազում վկայութիւնք ի գրոց սրբոց որ զայսպիսի հերձուածս *սուտ* և ընդունայն երևեցուցանեն: - 590. Որ և այսպիսի կարծիքս *սո՛ւտ* է բազում վկայութեամբ: - 594. Եւ այսպէս պարտ է կամ զօրհնեալն դարձեալ օրհնել որ է *սուտ*. կամ ամենայն հացն ո՛չ է օրհնեալ այլ մինն: - 597. Ապա և ո՛չ աղօթք և պաշտօն քահանայից կամ տուրք կամ պատարագք է օգուտ հոգւոյն ըստ քեզ որ է բնաւ *սուտ* և չար հերձւած: - 605. *Սուտ* են բնաւ և մոլորումն է նոցա այն և անօրէնութիւն: - 651. ...ապա *սո՛ւտ* են որք անդ ասեն փրկութիւն և քաւարան: - 698. Զի տէրն պղծութիւն կոչէ զնա և *սուտ* քրիստոս: - 707. Երկրորդ՝ *սուտ* սքանչելեօք և կախարդութեամբ պատրեսցէ զկրօնաւորս...: - 708. ...զի *սուտ* բարեբաստութեամբ նոցա զայլս խաբեսցէ: - 708. *Սո՛ւտ* է այս և չէ՛ ընդունելի որպէս ցուցանելոց եմք: - 729. Երրորդ, յատեան դատաստանի **դ** խնդրին վկայք. զի մինն կարէ՛ ոք խաբել և *սուտ* վկայել. այլ զերկու և զերեքն ո՛չ: - 742. Հինգերորդ, զի ճշմարիտն և *սուտն* ի մէջ երկուցն երևին. այսինքն դատաւորին և ոտոխացն: - 742. Արդ՝ եթէ արքայութիւնն երկնից մի է, այլ փառքն **գ**. պա՛րտ է ապա զի լիցի և դժոխքն **գ**, որ է՛ *սուտ:* - 758. Իսկ թէ իցէ հաւատ դիւաց, գո՛յ մտածել տղայական կարծեօք՝ թէ անկումն նոցա եղև հաւատոց պատճառ է որ է՛ *սուտ:* - 784. Եւ ևս. կրկնեալ *սուտք* համազգիք ճշմարիտ. բաղարկոցի ըստ ասիցդ վերոյ: - 787

***ՍՈՒՏ ԱՌՆԵԼ +*** Երկրորդ՝ զի կամէին *սուտ առնել* զվկայութիւնն աստուծոյ վասն յոբայ. թէ այր արդար և անարատ է: - 324. Իսկ յոբ *սուտ առնէ* զնոսա զամենայն ասելով՝ «քանզի գիտեմ որ կենդանի է որ լուծանելոցն է զիս յարուցանել զմորթ իմ որ կրեաց զայս ամենայն»: - 720

**ՍՈՒՏԱԿ +** *Սուտակ*՝ որ է՛ լիգրոնն. զոր ո՛չ գիտէ ոք զուստն. նման է կապուտակ աւազոյ. ոմանք ասեն յամազունից բերաւ ի կանանց աշխարհէն: - 348

**ՍՈՒՏԱԿԱՍՊԱՍՈՒԹԻՒՆ +** Անդ եղիցի ճշմարիտ փառք, ուր ո՛չ ոք գովեսցէ մոլորութեամբ. և ո՛չ գովեսցի ոք *սուտակասպասութեամբ:* - 765

**ՍՈՒՏԱՄԵՌՈՒԿ +** Ասեն թէ մին աչքն կո՛յր էր. և խոցեաց թէ *սրտամեռուկ* չլինի: - 495

**ՍՈՒՏԱՆՈՒՆ +** Է՛ և ա՛յլ իմն տեսութիւն բանիս. զի կամի՛ զպաշտօնս մեր որոշել ի կռոց զոհիցն. զի *սուտանուն* դիքն խնդրէին ուստերս և դստերս և արջառս և ոչխարս զոհել և սպանումն օտարաց: - 396

**ՍՈՒՐ +** Զորօրինակ՝ արուեստաւոր ոք կազմէ *սուր* ի պատճառս բարւոյ. այլ որ նորգործեաց չար՝ նա եղև չարին պատճառ: - 16. Իսկ թէ ոք ընդդիմանալ ասելով, որպէս հրացեալ *սուրն* կտրէ և այրէ՛, այսպէս և կրկին ներգործութիւնք են ի քրիստոս: - 85. Երրորդ՝ զի բոլորակն *սո՛ւր* է ի շարժումն. և երկինքն սրագո՛յն է ի շարժումն, որ ի շրջիլն իւրում շօշափէ՛ զերկիր ի մի կէտ: - 182. Եւ բազումք տեսանեն *զսուրն* ի մէջ պատենիցն հալեալ, և պատեանքն անխանձ մնացեալ: - 204. Զի թէ մարդն ունէր զբնութեամբ զէնս, որպէս թէ եղջիւր ի գլուխն. և *սուր* զատամունսն. ճիրանունք ի ձեռս. և սմբակ կամ կճղակ ոտիւք. և զայլսն, Նախ՝ զի գազանադէմ և դժւարատես լինէր ամենեցուն: - 217. Որպէս պատմի ի դատաւորքն. յորժամ գեդէոն զփողսն հնչեցոյց, այլազգիքն ինքեանք զինքեանս ի *սուր* մաշեցին ի գիշերի: - 238. Չորրորդ՝ թշնամիք եղեն հրեշտակք մարդկան. որք պահէին *սրով* զճանապարի ծառոյն: - 277. Չորեքտասաներորդ՝ իսահակ *սրով* և հրով եղև կատարեալ ի զենումն: - 306. Եւ այսպէս ամենայն սպասաւորք նորա և ծառայքն որք *սրով* և հրով վախճանեցան: - 322. Չորրորդ՝ զէնն. զի լիցի *սուր* երկաթոյ և ո՛չ այլ ինչ գործի. զի թէ լիցի երկաթ և ոչ *սուր*, և թէ *սուր* և ոչ երկաթ, ո՛չ է պիտոյ: - 365. Չորրորդ՝ ընտրելի է զէնն որ է՛ գործիք. զի լիցի *սուր* երկաթոյ. զի երկա՛թն է գործի բաժանման: - 366. Զի թէ լինիցի քարեայ *սուր*, որպէս գայլախազ, որով սպանաւ աբէլ. ո՛չ է պիտանի: - 366. Եւ թէ լիցի երկաթ և ո՛չ *սուր*, և ո՛չ է պիտանի. որպէս բոլոր երկաթն թէ հարցէ զկենդանին և սպանցէ, ո՛չ է ուտելի, զի թէպէտ զարիւնն հանէ, այլ ո՛չ համանգամայն զշունչն և զջերմութիւնն: - 366. Հինգերորդ՝ *սուր* և փախուստ ի թշնամեաց: - 376. Նա՛խ՝ զի բարկացեալ՝ զէշն կամէր սպանանել *սրով*. թէ գոյր ի ձեռին ընդէ՞ր բանիւ ոչ սատակէր: - 388. Եւ ի գլուխն *սուր* ո՛չ ելցէ որպէս սամփսոնին: - 390. Երրորդ՝ զի առցեն մասնաւոր զառհաւատչեայ հանդերձելոյն. տանջելով

աստ ի սով, ի սուր, և ի գերութիւն: - 408. Նա՛խ՝ դարձաւ գետն, զի ա՛հ և երկիւղ լիցի քանանացւոցն. և մի՛ հակառակեսցին յեսուայ և անկցին ի սուր նորա: - 414. Տասներորդ՝ և նորս թլփատութիւն սրտի՝ վէմն քրիստոս լինելոց էր. որ կարծրացաւ աստուածութեամբն. և էարկ սուր յերկիր և բաժին: - 415. Եւ տէր մեր զապաւինեալ հեթանոս կորզեաց ի սրոյ յաւիտենական մահուն: - 418. Եւ վասն այսմ ի սուր անկան ծոյլ քահանայքն ոփնի և փենեհէզ. և լա ի դասուց անկան և տապանակն գերի առաւ: - 425. Վասն որոյ ասաց դաւիթ, ամենայն որ մարտնչի սրով ընդ կաղս և ընդ կոյրս որպէս ասացին յեբուսացիքն, նա՛ ատելի՛ է անձին դաւթի. և խնայեաց ի նոսա և փրկեաց: - 431. Երկրորդ՝ զի կրկին էր պատիժն. սուր ի տանն, և խայտառակութիւն կանանցն: - 432. Ա՛րդ՝ զի ասաց մեղայ՝ ապրեցաւ ի սրոյ մահու: - 432. Երկրորդ՝ զի զսուր պատժոյն նա կրեաց: - 433. Երկրորդ՝ որպէս թուեաց դովեկ զքահանայսն զի մի՛ զերծանիցեն ի սրոյն. նոյնպէս և այս վասն քահանայիցն վրէժխնդրութեան էր. զի կամեցաւ ժողովուրդն փրկել զնոսա: - 434. Նա՛խ՝ զի գ ամ սովն, և գ ամիս սուրն՝ սաստիկ էր քան զերեք աւուր մահն: - 434. Երկրորդ՝ զի սովն և սուրն զբարի և զչար ի միասին պատժէ. այլ մահն ընտրութեամբն աստուծոյ է. և ժողովի ի վերայ յանցաւորացն. ուստի յա՛յտ է զի դաւիթ ո՛չ էր յանցաւոր ո՛չ պատժեցաւ: - 435. Եւ մինչ ընթացաւ ի կալն ոռնայի և գնեաց զեզինսն և ողջակիզեաց, եհաս ի գ ժամն. որ յառաջն դադարեալ էր սուրն: - 435. Տե՛ս, զի յորժամ կոտորեաց զհռսն՝ ասացաւ հրեշտակին արգելուլ զսուրն: - 435. Եւ տես, զի պաշտմամբ և պատարագաւ յետս դառնայ բարկութեան սուրն: - 435. Իննէժ, սրովն գողիաթու սպան զնա. և տէր մեր սրով մահուան սպան զիշխանն մահու: - 436. Երեսունեզ, պահեցաւ սուրն գողիաթու ի խորանն. և խաչն փրկական ի յեկեղեցի: - 437. Երեսունեը, ե նկանակն և սուրն. այսինքն պատճառ կենաց և մահու անարժանից և արժանաւորաց: - 437. Դաւիթ կանգնեաց սեղան և դարձոյց զսուր հրեշտակին. և տէր մեր զսեղան խաչին զենմամբ պատարագին ի փրկանս և ի կեանս աշխարհի: - 438. Նա՛խ՝ զի մի՛ զարհուրեսցի եեմ տեսեալ զսուրն որ կոտորեաց զնոսա: - 446. Երրորդ՝ զի մի՛ կարծեսցեն թէ յինքեանց անկան սրով. այլ ի հրեշտակէն: - 446. Թլփատի և այժմ եկեղեցի իւր չորեքկին սրով: - 454. Նա՛խ՝ թլփատեաց զնա հայրն ի ծնունդն՝ աղքատութեան սրովն: - 486. Երկրորդ՝ թլփատեցին զնա իւրքն յաւուրն ը երորդի՝ օրինաց սրովն: - 486. Երրորդ՝ թլփատեաց ինքն զինքն յամենայն կեանս իւր՝ խոնարհութեան սրովն: - 486. Չորրորդ՝ թլփատեցին զնա հրէայքն՝ ի չարչարանս՝ սրով խաչին. և զայս զինուորքն պիղատոսի: - 486. ...և դաւիթ մտեալ և առեալ զսուրն ի սնարից նորա. և ելեալ ի գիշերի ի լեառն աղաղակեաց առ նա «ո՞ւր է սուր քո»: - 514. Զի տեղիք զիշխանութիւն նորա և զսուր ո՛չ արգելունն: - 538. Սոքա են բ սուրքն բաւական որ ասաց պետրոս «են աստ բ սուրք»: - 538. Եւ սոքա են սուր երկսայրիք տուեալ ի ձեռս քահանայից զինուորաց քրիստոսի...: - 538-539. Երրորդ՝ զհրեշտակս ընդ մարդիկ. և զհրեղէն սուրն և զքշնամութիւն եբարձ: - 585. ...ի իւր սրովն խոցեսցէ զինքն և հալածեսցէ որպէս ի սաւուղայ: - 641. ...զի հայրն աբրահամ առեալ հուր և սուր, և յետ երից աւուրց տեսին զտեղին ի հեռաստանէ որպէս ասէ պատմութիւնն: - 681. Արդ հայրն աբրահամ նշանակէ՛ զհայր աստուած. և հուր և սուր՝ տանջանարանք որ հանդիպին ի ճանապարհի օդոյդ: - 681-682. Արդ ահա ա՛յսոքիկ են ծառ կենաց ի յերկինս և յերկրի տնկեալ. փոխանակ ծառոյն կենաց ի դրախտին եդեմայ. յորմէ հրաժարեցոյց և պարսպեաց բոցեղէն սրովն զճանապարհ նորին: - 771

**ՍՈՒՐ (ածական) +** Երրորդ՝ զի բանս մեր ծայնիւ յամենայն լսելիս անցանէ և թղթով յամենայն տեղիս ընթանայ. և բանն աստուծոյ սո՛ւր է և հատու և ընդ ամենայն է քրիստոս անցանէ թափանցաբար: - 121. Իմա՛ ինձ և ա՛յլ նա՝ սո՛ւր ես մտօք և բաժանասէր: - 176. Վերընթաց: Վերածօղ: Մշտաշարժ: Ինքնաշարժ: Շարժօղ: Անփոփոխ: Սո՛ւր: Զգո՛յշ: Անշե՛ղ: Անթոյլ: Անպարունակ: Թափանցիկ: Աներևոյթ: - 202

**ՍՈՒՐԱ** - Անունք Կանանց Նախապետացն: ...Ռազաւայն սուրա՛: - 299

**ՍՈՒՐԲ +** Արդ՝ թէ ինն ամսով յառաջ թագաւորեալ էր թագաւորն չար, ապա ուրեմն ի ժամանակս Օգոստոս կայսեր ծնաւ քրիստոս. զոր և վկայէ՛ աւետարանն սուրբ: - 29. Մետասաներորդ՝ Թէ հոգին սուրբ աստուած է՝ ի գլխով: - 30. Նոյնպէս ո՛չ կարէ իմանալ յորժամ ի սուրբ գրոց և ի սքանչելեաց և ի բանից սուրբ վարդապետաց՝ դարձուցանէ զմիտքն...: - 31. Նա՛խ՝ զի գո՛րծ է նեռինն ուրանալ զաստուած, որպէս իւր անունն յայտնէ. ա՛յսպէս և հերձուածօղն ուրանայ զաստուածութիւն որդւոյ. կամ զհոգւոյն սրբոյ...: - 34. Նոյնպէս և հերձուածօղք պղծեն զտաճարն աստուծոյ և զհաւատն սուրբ՝ որով քրիստոս ի մեզ բնակի, և մեք ի նա՛: - 35. Ով արիանոսք՝ զի թէ որպէս զմեզ զորդի շնորհօք ասէք և

արարած, մեք զի եմք շնորհօք որդիք՝ ունիմք ընդ մեզ և ընդ հայր շաղկապ. իբր թէ զլար զհոգին *սուրբ:* - 39. Զի որպէս առաջին նա՛ ծնաւ անսերմն ի կուսէ և ի հոգւոյն *սրբոյ*, այսպէս և մեք յետ նորա ի ձեռն հոգւոյն *սրբոյ* ծնանիմք ի կոյս աւազանէն: - 41. Եւ թէ բան իմանաս՝ և ոչ պահքն պատշաճ էր *սրբեցելոցն* բանիւն. ըստ այնմ՝ «դուք *սուրբ* էք վասն բանին զոր խօսեցայ ընդ ձեզ». զի պահքն զոչ *սուրբն* սրբէ. իսկ նոքա զի *սուրբք* էին ոչ պատշաճ պահքն. վասն այն ո՛չ կարէին: - 44. Ապա այս աղաչանքս զոր ինչ առնեմք ի ծագմանէ հոգւոյն *սրբոյ*, բարեխօսել ասի հոգոյն *սրբոյ:* - 48. Եւ քարոզչօք՝ այսինքն հրեշտակօք կամ վարդապետօք կամ գրոց *սրբոց* գիտութեամբ, փութայ զկեալն մեր: - 48. Երկրորդ՝ զի ի ջուրն հանգստեան սնուցանէ. այսինքն է աւազանին մկրտութեամբն ի հոգի *սուրբ:* - 49. Արարիչ է հայր. արարիչ է և որդի. արարիչ է և հոգին *սուրբ*...: - 56. Կնքէ և հոգին *սուրբ* ...: - 56. Մեծ է հայր. մեծ է և որդի. անբովանդակելի է և հոգին *սուրբ*...: - 56. «Իմաստութեան նորա ո՛չ գոյ բաւ». այսինքն հոգւոյն *սրբոյ:* - 56. Խաղաղութիւն է և հոգին *սուրբ:* - 56. Աղբիւր է հոգին *սուրբ*. քանզի մեք ամենայնքին զնոյն հոգի արբաք: - 57. Լոյս է և հոգին *սուրբ*. ասէ պօղոս՝ «զհոգին մի՛ շիջուցանէք»: - 57. Տէր է և հոգին *սուրբ*...: - 57. Բարի՛ է և հոգին *սուրբ*...: - 57. Նախ այսպէս. ո՛չ ունեք *սրբի* տաճար, բայց միայն աստուծոյ. որպէս ասէ սաղմոսն, «տէր ի տաճար *սուրբ* իւրում»: - 57. Ապա ուրեմն հոգին *սուրբ* է՛ աստուած: - 57. Այլ զօրութիւնս այս վերաբերի ի հոգին *սուրբ*...: - 57. Իսկ պօղոս զբանս զայս վերաբերէ ի հոգին *սուրբ* ի գործքն ասելով՝ «բարւո՛ք խօսեցաւ հոգին *սուրբ* ի ձեռն եսայեայ առ հարսն մեր ասելով, լըւիջիք և մի՛ իմասջիք»: - 58. Ապա ուրեմն աստուած է հոգին *սուրբ:* - 58. Այլ հոգին *սուրբ* էր որ խօսէր ընդ մարգարէսն...: - 58. Այլ այս է յատուկ հոգւոյն *սրբոյ*...: - 58. Այլ այս վերաբերի առ հոգին *սուրբ*...: - 58. Այլ հոգին *սուրբ* մի և նոյն՝ հաղորդի ամենայն հաւատացելոց...: - 59. Ապա ուրեմն հոգին *սուրբ* աստուած է: - 59. Եւ թէ ասիցէ հակառակօղն, եթէ՝ վերոգրեալ գործառնութիւնքս համարին հոգւոյն *սրբոյ* ո՛չ որպէս աստուծոյ, այլ որպէս պաշտօնէի: - 59. Նաև ի կանոն երից *սուրբ* ժողովոցն՝ ընդ բանիւ արգելեալք կան նոքա՝ որ ա՛յլ կերպիւ քարոզեն և այլ կերպիւ ուսուցանեն քան զոր նոքա ուսուցանեն: - 64. Եւ մեք համաձայնեալ *սուրբ* և ուղղափառ վարդապետութեանցս, այսպէս դաւանիմք և խոստովանիմք զՀոգին *սուրբ* աստուած բղխումն ի հօրէ աստուծոյ...: - 65. Ապա ուրեմն և ո՛չ զհոգին *սուրբ:* - 60. Նոյնպէս՝ թէ ասի տրտմութիւն հոգւոյն. զի որպէս տրտմեալն հեռանա՛յ ի տրտմեցուցողէն, այսպէս և հոգին *սուրբ* հեռանայ ի մեղաւորէն: - 60. Հինգերորդ ասեն, եթէ հոգին *սուրբ* առնու զբնութիւնն ի հօրէ՝ լինի որդի նորին. զի այն կոչի որդի որ ունի զբնութիւնն ի հօրէ ի նոյն տեսակէ: - 60. Այսպէս և հոգին *սուրբ* էառ յաւիտենականապէս զէութիւնն ի հօրէ բղխմամբ, և որդի ծննդեամբ: - 60. Ապա ուրեմն հոգին *սուրբ* է հաւասար աստուած ընդ հօր և ընդ որդւոյ. արարչակից և մշտնջենաւորակից և փառակից: - 60. Եօթներորդ՝ եթէ մասն աստուծոյ կոչի հոգին *սուրբ*. և աջ և բազուկ է որդին. ապա ուրեմն և ի նմանէ՛ է: - 61. Պատասխանեմք, այն որ ասի հոգի քրիստոսի, և թէ՝ փչեաց, և թէ՝ առաքեաց, յայն սակս ասացան, զի ծաւալումն հոգւոյն *սրբոյ* յաղագս մարդկան՝ գալստեամբն քրիստոսի եղև: - 61. Եւ զի մատն աստուծոյ ասի հոգին *սուրբ:* - 62. Նախ՝ որպէս մատն է յէութենէ մարմնոյն, այսպէս և հոգին *սուրբ* է յէութենէն աստուծոյ: - 62. Երկրորդ՝ զի որպէս մատամբ գրեմք կամ գործեմք զամենայն գործս, այսպէս և հոգին *սուրբ* գրէր ի մարգարէսն...: - 62. Ութերորդին ասեմք՝ եթէ օրինակաւ խօսից իմանալ զհոգին *սուրբ*՝ ունի ինչ ուղղութիւն և ունի ինչ թիւրութիւն: - 62. Ուղիղ է, զի որպէս խօսքն թարքման է մտաց և բանի, այսպէս և հոգին *սուրբ*՝ հօր և որդւոյ...: - 62. Եւ զի հոգին *սուրբ* է միայն ի հօրէ բղխումն, տեսցուք զայս Նախ՝ ի հարցմանէ: - 62. Դարձեալ հարցանեմ, հոգին *սուրբ* մասն ինչ բղխէ ի հօրէ և մասն յորդւո՞յ, թէ բոլորն ի հօրէ՝ և բոլորն յորդւոյ: - 63. Ապա ուրեմն յանսկզբնական հօրէ միայն բղխէ անեղ և անվախճան հոգին *սուրբ:* - 63. Դարձեալ՝ հոգին *սուրբ* ելանէ իբրև զարտաշնչեալ և բղխեալ: - 63. Դարձեալ՝ հոգին *սուրբ* է ի հօրէ որպէս կամք ի մտաց. և որդի որպէս իմացումն: - 64. Դարձեալ հոգին *սուրբ* բղխէ ի հօրէ իբր ջերմութիւն ի հրոյ: - 64. Նոյնպէս հոգին *սուրբ* ոչ բղխէ յորդւոյ, այլ միայն ի հօրէ: - 64. Դարձեալ՝ հոգին *սուրբ* բղխէ ի հօրէ՛ որպէս հոտ ծաղկի կամ խնծորի: - 64. Եւ անդ ասի ի հաւատամքն եթէ՝ հոգին *սուրբ* որ ի հօրէ. և ո՛չ յիշի որդի: - 64. Եօթներորդ՝ վկայ դամասկացին որ ասէ. որ և նա ևս քաղկեդոնիկ է. եթէ յայտնապէս զհոգին *սուրբ* ի հօրէ՛ ասեմք. և զնա հոգի հօր անուանեմք: - 64-65. Ա՛րդ՝ զհոգին *սուրբ* ի յորդւոյ ո՛չ ասեմք. սակայն զնա հոգի որդւոյ անուանեմք: - 65. Դարձեալ՝ յորժամ ասի, թէ լսիցէ «ի հօրէ», և կամ «առնուցու», մի՛ իմասցի այնու թէ բղխումն հոգւոյն *սրբոյ* տակաւին ապառնի էր. զի յաւիտենակա՛ն էր: - 65. Զի որպէս այժմ կարեմք ասել ճշմարտապէս թէ հոգին *սուրբ* ելանէ ի հօրէ. և վասն ապառնւոյն կարեմք ասել թէ հոգին

*սուրբ* ո՛չ ելանէ յորդւոյ. մինչ այլ ո՛չ ևս ելանէ. և ո՛չ այնպէս էառ զգոյացութիւն և զճշմարտութիւն իւր՝ զի ո՛չ ևս երբեք առցէ: - 65. Ապա ուրեմն որդի և հոգին *սուրբ* ի հօրէ ելանեն իբր բ շառաւիղ. և ըստ այսմ ո՛չ ելանէ մի ի միւսոյն: - 65. Եւ մեք համաձայնեալ սուրբ և ուղղափառ վարդապետութեանցս, այսպէս դաւանիմք և խոստովանիմք զՅոգին *սուրբ* աստուած բղխումն ի հօրէ աստուծոյ...: - 65. Զոր օրինակ՝ Աղբիւր բղխեալ առ մեզ հոգին *սուրբ* ա՛րդ սկիզբն աղբերն շարժի ի ծովէ՛. և հասանէ յակն. և յակնէն առ մեզ բղխէ: - 65. Դարձեալ՝ հոգին *սուրբ* ելանէ ի հօրէ և առաքի յորդւոյ. և ինքնիշխան կամօք շնչէ զշնորհս իւր յորս կամի և որքան: - 66. Եւ գիտելի է, զի որպէս բան կոչի որդին աստուծոյ, նոյնպէս խօսք կոչի հոգին *սուրբ*...: - 66. Նախ՝ զի խօսքն է ի մտացն յառաջ եկեալ, որպէս ներտրամադրեալ բանն ծնեալ. և հոգին *սուրբ* ի հօրէ բղխեալ. որպէս բանն ծնեալ: - 66. Երկրորդ՝ խօսքն ունի զիմաստ բանին և զմտացն. և հոգին *սուրբ* զիմաստութիւն հօր և որդւոյ: - 66. Նոյնպէս հոգին *սուրբ* պատմէ և ուսուցանէ զգիտութիւն հօր և որդւոյ: - 66. Չորրորդ՝ խօսքն նոյն է բնութեամբ ընդ բանին և մտացն. և հոգին *սուրբ* նոյն է բնութեամբ ընդ հօր և որդւոյ: - 66. Հինգերորդ՝ որպէս այլ է անձն՝ այլ է խօսքն՝ և այլ միտքն. նոյնպէս ա՛յլ է անձն հօր, և ա՛յլ բանին, և ա՛յլ հոգւոյն *սրբոյ:* - 66. Եւ վասն հոգւոյն *սրբոյ* այսքան: - 66 Եօթներորդ՝ էջ հոգին *սուրբ* ի վերայ քրիստոսի և հանգեաւ ի վերայ նորա: - 69. Ո՛վ բաժանօղդ՝ որոյ որդւոյ ասես սրբիլ հոգւովն *սրբով:* - 69. Ա՛րդ մկրտիմք հաւատացեալքս որպէս ի հայր և ի հոգին *սուրբ*՝ այսպէս և յորդին մարմնացեալ մի տէր մի քրիստոս: - 69. Ապա ուրեմն աստուած է քրիստոս հաւասար հօր և հոգւոյն *սրբոյ:* - 72. Ծածուկ և զանխո՛ւլ է աստուածաբանութեան տեսութիւն հասարակ մտաց. և հազիւ ճանաչի կիրթ խորհրդոց՝ և նուրբ քննութեանց *սրբոց:* - 81. Նոքա ի կիսաէշ նման զտնօրէնութիւնն *սուրբ* համբաւեն. և կամ առ աչօք և ունայնութեամբ. որպէս մանիքեցւոցն, և կամ եւտիքի կարծի: - 81. Եւ այսոքիկ նզովեալք են ի հոգւոյն *սրբոյ* ի ժողովն եփեսոսի և այլոցն. և եղիցին ի նզովս սուրբ եկեղեցւոյ: - 82. Այլ հաստատեալ կամք ի վերայ *սրբոցն* դաւանութեանց: - 84. Եթէ երկուքն, հարկ է ասել ձեզ՝ փառք հօր՝ և որդւոյ երկու բնութեանցն՝ և հոգւոյն *սրբոյ:* - 90. Եւ կամ թէ՝ մկրտիմք յանուն հօր՝ և որդւոյ բ բնութեանցն՝ և հոգւոյն *սրբոյ*. և որ սոցին նման: - 90. Սակայն աշակերտացն է ուղղութեան՝ ո՛չ յանձնէ խօսիլ. այլ նախնեացն *սրբոց* հետևիլ և նոքօք ուղղել: - 93. Ապա ուրեմն հոգին քրիստոսի ունի զամենայն ճանաչումն լցեալ հոգւովն *սրբով:* - 97. Ա՛րդ՝ ամենայն մարդկան՝ մարգարէից և *սրբոց*՝ հրեշտակք ուսուցանեն. և նոքա ի քրիստոս է՛ ուսանին: - 98. Քսաներորդ երրորդ՝ ասաց տէրն վասն հոգւոյն *սրբոյ*, «աշխարհս ո՛չ տեսանէ զնա, և ո՛չ ճանաչէ. բայց դուք ճանաչէք. զի առ ձեզ բնակեսցի»: - 99. Երեսներորդ՝ զի վարդապետք *սուրբք* օրինակ տան մարդեղութեանն քրիստոսի, որպէս լոյս ընդ օդ՝ և հուր ընդ երկաթ միաւորեալ: - 100. Որով և ընդ Որում Հօր և Հոգւոյն *սրբոյ* փառք և պատիւ և իշխանութիւն յամենայն գոյից անբաւ յաւիտենիւ ամէն: - 101. Իսկ *սուրբ* գիտութիւնն ընդ դէմ այսմ լուսաւորէ՛ զմիտս և ուղղէ՛. և ընդարձակէ զտեսութիւնն և թեթեւացնէ առ վերինն. և ժողովէ ի մինն. և կատարէ զպատկերն: - 104. Ա՛րդ՝ ասեմք զհայր աստուած. և զորդի աստուած. և զհոգի աստուած. ապա կարե՞մք ասել զհայր երրորդութիւն. և զորդի երրորդութիւն. և զհոգին *սուրբ:* - 108. Դարձեալ՝ որ զամենայն ստեղծ՝ հայր կոչի. և որ զամենայն պարունակէ՛ զի մի՛ լուծցին՝ որդի. և որ շնչելով կենագործէ և զարդարէ զամենայն՝ հոգի *սուրբ* յորջորջի: - 108. Հոգին *սուրբ* ընդէ՞ր ո՛չ կոչի որդի: - 109. Նախ՝ զի հայր պատճառ է հոգւոյ բղխման՝ և որդւոյ առման. զի հոգին *սուրբ* բղխէ՝ ի հօրէ՝ և առնու յորդւոյ: - 109. Նախ՝ զի մի անձն հօր բազմացաւ ի յանձն որդւոյ. և բազմապատկի ի յանձն հոգւոյն *սրբոյ:* - 110. Նախ՝ առ համաբունսն՝ հայր սկիզբն է որդւոյ և հոգւոյն *սրբոյ*. և պատճառ այլ ամենայն արարածոց: - 110. Եւ գիտելի է, զի յարացուցիս և նախասահմանութեանս՝ արարողական պատճառ է աստուած. և նիւթական պատճառ իրն այն որ է նախասահմանի. և տեսական պատճառ է՛ կարգն. զի նախ տըւեալ լինի շնորհքն աստ. եւ ապա փառքն ի հանդերձեալն. և կատարողական պատճառ՝ զի լինիցիմք *սուրբք* և անբիծք: - 112. Այսպէս և փառս տամք հօր և որդւոյ և հոգւոյն *սրբոյ:* - 116. Այս է զի հոգին *սուրբ* որդւով պարգևի ամենայն արարածոց յերկինս և երկրի: - 125. Համաձայնին միմեանց *սուրբ* վարդապետք. զի դիոնէսիոս ինն դասս ասէ հրեշտակաց. այլ առաջին դասքն անընդմիջաբա՛ր են յաստուածային իմացումն, համապատիւք և համափառք: - 134. Եւ սերօբէն որ է՛ ջեռուցիչ՝ ի դէմս հոգւոյն *սրբոյ*. զի նա՛ է հուր սիրոյ զոր էարկ տէր մեր յերկիր: - 135. Ա՛րդ՝ որ քան սրբութեամբ և իմացմամբ աստուածատեսակ լինին՝ աստուածք կոչին. եթէ հրեշտակք և եթէ արք *սուրբք* որպէս մովսէս: - 137. Քահանապետութիւնն ըստ այնմ որ կա՛րգ է՝ մի և նոյն է ի մարդիկ՝ ի հրեշտակս՝ և յաստուածպետութիւնն *սուրբ:* - 138. Շնորհն երբեմն ի տեղի ողջունի

դնի. ըստ այնմ թէ՝ «շնո՛րհք ընդ ձեզ և խաղաղութիւն». որով հոգին *սուրբ* տուեալ լինի: - 139. Երրորդ՝ մարդկան սրբութիւն է ի յաղտոյ. իսկ հրեշտակք *սուրբ* են առանց աղտոյ: - 139. Իսկ որ ի յայլս՝ որոշի յերիս. այսինքն ի վերնագոյնն, որպէս յաստուած՝ ի հրեշտակս և ի *սուրբս:* - 143. Եւ ասեն, *սուրբ* *սուրբ* *սուրբ* տէր զօրութեանց. որպէս լըւաւ եսայի: - 144. Այսքան վասն *սրբոց* հրեշտակաց: - 145. Նախ՝ յորժամ սեռօբէն ասէր *սուրբ*...: - 147. Դարձեալ՝ ոմանք են յերկնից և յերկինս. որպէս հրեշտակէ *սուրբք:* - 151. Եւ ոմանք ո՛չ յերկնից բայց յերկինս. որպէս ի մարդկանք *սուրբք:* - 151. Բաղդատութիւն ամպոյ և մեղաց. ամպոյ և սուրբ կուսին. և յատկութիւնք փայլման ի հոգին *սուրբ:* - 155. Ութերորդ՝ թոյլ տալով *սրբոց* չարչարիլ՝ վասն պսակացն առաւելութեան է...: - 159. Իններորդ՝ նախատակադիրն քրիստոս է փրկիչն ամենեցուն. և ամենայն *սուրբք* զհնու՛րք նորա...: - 159. Մետասաներորդ՝ որպէս հայրն զորդին գան հարու զի զգաստացեալ մի՛ զրկեսցի ի ժառանգութենէ հայրենեացն. այսպէս և աստուած *զսուրբս* և զսիրելիս իւր խրատէ՛: - 159. Երկոտասաներորդ՝ զի *սուրբքն* բանիւ մեզ ուսուցանեն՝ նեղութեան և փորձանաց համբերել. պատրին ինքեանք գործով կատարել զնոյն. զի հաւատարիմ լիցին բանք նոցա: - 159. Հնգետասաներորդ՝ ասէ սուրբն դիոնէսիոս՝ թէ վասն այն տայ աստուած *սրբոցն* նեղութիւնս և փորձութիւնս, զի նեղութիւնն սիրելի և փափագելի՛ է նոցա. և յայնժամ ուրախանան *սուրբքն*, յորժամ ի մարմնական հեշտութեանց հեռանան. և արիանան ի փորձութիւնս. և սակաւ նեղութեամբ ժամանեն ի մեծ հանգիստն: - 159-160. Եւ այսպէս աբրահամ և յոբ և այլք *սուրբք* փորձութեամբն երևեցան, և գտան արդար և սուրբ և անարատ: - 161. Եւ այսպէս աբրահամ և յոբ և այլք սուրբք փորձութեամբն երևեցան, և գտան արդար և *սուրբ* և անարատ: - 161. Զոր *սուրբ* հայրապետք փոխեցին զանուանս նոցա և եդին բոլոր շաբաթուն եօթն աւուրցն: - 190. Չորրորդ՝ պատուեցաւ յարութեամբն քրիստոսի. և իջմամբ հոգւոյն *սրբոյ* ի դասս առաքելոցն: - 193. Նախ՝ որպէս ասացաւ ի վերոյ՝ երեք տեսութիւն *սրբոցն* է **գ** իրին. այսինքն զգայութեան. երևակայութեան. և իմացման: - 221. Երրորդն է հոգւոց և մարմնոց *սրբոց:* - 221. Զայս այսեն *սուրբ* վարդապետք եթէ՝ որպէս հրեշտակք աճեցին յերկինս, նոյնպէս և մարդկան ազգ ի դրախտին: - 226. Ասեն *սուրբք*, որպէս ի միոյ լուսոյ բազում լոյսք վառին: - 226. Ասեն *սուրբք*, եթէ զորօրինակ աստուածածին կոյսն մարիամ կուսութեամբ ծնաւ առանց սերման կատարեալ և ճշմարիտ: - 226. Եւ ի յարութեանն մեր՝ այսպէս լինին ամենայն մարմինք *սրբոց:* - 228. Եւ ևս, զի **գ** դէմք Երրորդութեանն *սուրբ*՝ նոյն և նման գոն միմեանց: - 237. Եօթներորդ՝ զի ո՛չ կարէին ընտրել և խոտել զչարն և զբարին, և *զսուրբն* և զանսուրբն ի մարդկանէ, թէ գործ սորին է այս կամ այն. այլ անմեղութեամբ յարակցեին պղծոյն, և զխեղդ ոգւոց նորա ընդունէին: - 238. Զի թէ ի *սուրբ* մարդ յարի՝ սրբի. և թէ ի պիղծ՝ պղծի: - 250. Ոմանք ասեն եթէ պատկեր աստուծոյ հօր՝ է՛ որդի, և նման հոգին *սուրբ:* - 273. Այսպէս ասեն թէ՝ մարդն կազմեալ է ի պատկեր որդւոյ, և ըստ նմանութեան հոգւոյն *սրբոյ:* - 273. Եւ այս չէ՛ ընդունելի. զի մարդն երրորդութեանն է պատկեր եղեալ որպէս ցուցաւ. և ո՛չ միայն որդւոյ և հոգւոյն *սրբոյ:* - 273. Տե՛ս, զի յայտնապէս ցուցանէ *սուրբն*, զի թէ պահպանութեամբ կացեալ էին ի դրախտին, ո՛չ ևս ամուսնութեամբ լինէր աճումն: - 280. Ասեմք եթէ՝ զոր ինչ ի յարութեանն աւուր լինելոց է *սրբոցն*..: - 282. Քառասունն**դ**, Նշան կենդանեաց *սրբոց:* - 284. Նա՛խ զի սիրտ *սուրբ* և աննենգ ունէր. ուստի յա՛յտ է յանմեղութեամբ գնալոյն ընդ եղբօրն ի դաշտն: - 286. Դարձեալ ըստ եփրեմի հինգերորդ՝ զի *սուրբ* էր սրտիւ. և Վեցերորդ՝ զի միամիտ էր կամօք. և սոքա առնեն զմարդն մերձակայ աստուծոյ: - 290. Եւ կերակուրն մի ամենեցուն առհասարակ մարմին և արիւնն *սուրբ:* - 294. Եւ **բ** գետն ի բանն և ի հոգին *սուրբ* որ բղխեն ի հօրէ. զի հրաւիրակք են մեզ՝ յակն տանելով ուստի բղխեն սոքա: - 295. Նոյնպէս ի կենդանեաց *զսուրբն* և անսուրբն ընտրեմք: - 295. Նոյնպէս և ի *սուրբ* կենդանիս ի **դ** մասնէն զմինն ուտեմք: - 296. Հայր առ որդի և հոգի *սուրբ* ասաց, որովք արար զմարդն մի ազգ և մի լեզու: - 297. Երկրորդ՝ հոգեկան. որ յաւազանէն ծնանիմք ի հոգւոյն *սրբոյ*. այսինքն յղացեալք ի բանէն հաւատոյ՝ ծնանիմք յորդիս աստուծոյ: - 308. Նոյնպէս և ծնունդք *սուրբ* աւազանին որք են անդրանիկք և անդամք քրիստոսի եղեալք, ագահութեամբ և պոռնկութեամբ կորուսանեն զշնորհին երկնաւոր. և ո՛չ լան և ո՛չ զղջան որպէս եսաւ: - 309. Նոյնպէս և տէր մեր փոխանակ շնացօղ ազգին հրէից ընկալաւ զեկեղեցի կոյս՝ և *սուրբ* ժողովուրդ իւր: - 313. Նոյնպէս և *սրբոցն* միտք լուսաւորին յաջոյն քրիստոսի. զոր աստ շանմանդաղ տեսանէին զփառս, անդ յայտնապէս տեսցեն: - 314. Նոյնպէս և *սուրբքն* ջերմ սիրովն աստուծոյ ժողովին ի կայանս հոգւոցն ի տեղւոջ լուսոյ և հանգստեան: - 315. Նոյնպէս և քրիստոս աստ ի գնալն հոգւոց և ի գալստեանն աւուր՝ ընդ առաջ ելանէ *սրբոցն* և համբուրէ զսիրելիս իւր, որպէս

հայրն երկնաւոր ի դարձ անառակին: - 315. Եւ թէ ոք ասիցէ՝ յորժամ սոյնպէս չարք էին՝ զնոցա բանքն ընդէ՞ր գրեաց հոգին *սուրբ:* - 325. Եւ տէրն զջուրն ի գինի փոխեաց և զգինին յարիւնն իւր *սուրբ:* - 328. Եւ տէր մեր զհոգին *սուրբ* յառաքեալսն. «հուր եկի արկանել» ասէ: - 329. այլ չոր ծաղկն դալարիւր. այսինքն թէ ի զանգուածոյն ադամայ ունէր ինչ փոշետեսակ՝ սրբեցաւ հրով հոգւոյն *սրբոյ:* - 331. Զի որ ի լեառն *սուրբ* առ աստուած մերձենայ, ո՛չ է պարտ յանկողինս կնոջ հեշտանալ...: - 331. Վեցերորդ՝ գետն նշանակէ՛ զբանն աստուած, որ հաղորդիլով ի մեզ՝ եղև մարմին և արիւն. և ետ մեզ ըմպելի զարիւն իւր *սուրբ*. և կերակուր զմարմինն: - 333. Նմանապէս և հոգին *սուրբ* ի գիշեր կենցաղոյս լուսով աւետարանին առաջնորդէ՛ մինչև հասուցանէ յայգն հանդերձեալ աւուր ի ցօղաւոր ամպն որ է՛ բանն մարմնացեալ. որ է հովանի և հանգիստ ամենայն *սրբոց:* - 338. Նա՛խ՝ զի հրեշտակացեալ *սրբոց* է կերակուր: - 338. Իսկ առ մեզ **ժ** մասունք և **գ** կիցն, զի **ժ**՝ *սուրբ* և նւէ՛ր է աստուծոյ: - 340. Եւ զխաչն հրաշագործ՝ զկենսատու մանանայն. և բուրվառ զխունկս աղօթից. վէմն սեղանն *սուրբ*. և քերովբէք քշոցքն **բ**: - 345. Նոյնպէս և սեղան խնկոց և երեսացն ցուցանէ զհոգիս *սրբոց* ելեալ ի մարմնոց և մտեալ դէմ յանդիման երեսացն աստուծոյ: - 346. Եւ **է** ճրագն՝ **է** արփեան շնորհք հոգւոյն *սրբոյ:* - 347. Երկրորդ՝ զի *սուրբ* գործոցն *սուրբ* պիտոյ էր և զգեստ: - 347. Խոյրն, վարշամակն. և Միթրն և թիթեղն ոսկի, պատկերք *սրբոցն* նկարեալ. և երկոքին Բազպանն, փոխանակ անդրավարտեաց: - 348. Եօթներորդ, անդ ի հօրէ. և աստ ի մարմնացեալն բան է. և անդ ի հոգւոյն *սրբոյ:* - 355. Չորրորդ՝ ի բազում անսուրբ հրաց առնու մեղուն. ի *սուրբ* հրացէ նւէրքն աստուծոյ: - 356. Եւ զմնացեալ նշխարսն ուտէին. քահանայքն և արուք նոցա ի *սուրբ* տեղւոջ: - 358. Որպէս այժմ մին նշխարն ի հաղորդութիւն *սուրբ* մարմնոյն, և զայլ նշխարքն արժանացեալք արհիւթեամբ ճաշակեն: - 358. Եւ ի սմանէ առցեն ասէ զհաս իրաւանցն. և զմնացեալն եփեսցեն ի *սուրբ* տեղւոջ և կերիցեն քահանայքն զեօթն օր: - 359. Ի խնկոց սեղանն քաւէ՛ր արիւնն. զի զաղօթս *սրբոցն* բարեխօս ունիմք ընդ խորհրդաւոր արեանն: - 360. Եւ ապա՛ սիրտ *սուրբ* և գեղեցիկ ստանալ ի հաւատս և խորովիլ ի սէրն աստուծոյ: - 360. Եւ միայն յողջակէզ. ի խաչ սեղանոյն ի հոտ անուշից հօր և հոգւոյն *սրբոյ:* - 361. Եւ իւղով զանգեալ և օծեալն, զի իւղով աստուածութեամբն օծաւ. այլ և զհոգին *սուրբ* ընկալաւ ի յորդանան: - 361. Դարձեալ՝ իւղով զանգեալ բաղարջն և նոյն չափ իւղովն որ չափ մասն գինւոյն. այն է՝ զի ըստ օրհնութեան բանին աստուծոյ՝ և հոգին *սուրբ* իջանէ ի հացն և ի բաժակն և կատարէ՛ մարմին և արիւն քրիստոսի: - 361. Եւ միւսն, որ զմարմին մեր պատարագեմք միշտ. սիրտ *սուրբ* և հոգի խոնարհ ունելով. զոր աստուած ո՛չ արհամարհէ: - 363. Այլ և պահեն զեօթն օր *սուրբ* զգեստիւն: - 363. Զի՞նչ էր *սուրբ* և անսուրբ կենդանին: - 364. Բնութեամբ ամենայն ինչ *սուրբ* է. և պիղծ ոչ ինչ է յարարածս աստուծոյ: - 364. Այլ ըստ գործո՛ց նոցա զանազանին *սուրբն* և անսուրբն: - 364. Եւ այսպէս ըստ բարուց մարդկան ընտրէր նոյ ի *սրբոցն* է. և յանսրբոցն **բ**. որպէս ասացաւ ի վերոյ **ժզ** գլուխն ի **զ** համարն: - 364. Դարձեալ՝ զոր ինչ յեգիպտոս աստուած պաշտէին՝ *սուրբ* հրամայեաց. որպէս զանասունս: - 364. Դարձեալ՝ որպէս ծառա՛յ են կենդանիք և սպասաւոր մարդկան. նոյնպէս և յօրինակ ընտրութեան մարդկան ընտրեցան *զսուրբս* և զանսուրբս նշանակելով այսպէս: - 364. Որոճօղն՝ քննօղ իմաստութեան. և կճղակն ուղիղ վարք հոգւոյ և մարմնոյ. *սուրբ* են: - 364. Թևն առաքինութիւն է որով զերծանի մարդ յորոգայթից սատանայի. և թեփն ծածկոյթ ամօթոյն. *սուրբ* են: - 364. Եւ ընտակերքն *սուրբ* են: - 365. Եւ տե՛ս, զի անսուրբ կենդանին սատակեալ և *սուրբ* կենդանին սատակեալ միապէս պիղծք են: - 365. Եւ լիցի *սուրբ* ըստ նշանակութեան օրինացն. զի անսուրբն և պիղծն ո՛չ է զենլի: - 365. Եւ այսպէս վեցեքին սոքօք ընտրեսցի *սուրբ* զենումն: - 365. Երկրորդ՝ զի իցէ կենդանին *սուրբ*. զի անսուրբն ո՛չ զենանի և ո՛չ է ուտելի: - 366. Եւ նշան *սրբոյն* և պղծոյն ըստ օրինացն ասացաւ ի վերոյ: - 366. Կրկին հաւն կենդանի *սուրբ*՝ նշանակէ՛ զհոգւոյ և զմարմնոյ կենդանութիւն ի ձեռն ապաշխարութեան: - 368. Դարձեալ՝ կրկին հաւն նշանակէ՛ զքրիստոս. Փայտն, զխաչն. և Կարմիր արիւնն. զի աստուծոյ է արիւն. և Զոպայն, զհոգին *սուրբ:* - 368. Ցուցանէ թէ՝ մինչ ի մեղս իցեն քահանայքն՝ ո՛չ զհասն կերիցեն և ո՛չ ի *սուրբ* խորհուրդն մերձեսցին: - 370. Որ է՛ ի մեզ յամենայն աւուր պատարագն *սուրբ*. այլ և առաւօտուն և երեկոյին աղօթքն հանապազորդ: - 372. Իսկ **է** գառն անարատ, **է** զգայարանքն *սուրբ:* - 373. Նոյնպէս և մեք ի յառնուլ զհոգին *սուրբ* պահո՛ք տօնեմք: - 373. Երրորդ՝ *զսուրբս* որոց տօնեմք: - 374. Այլ և նաշիհ մարմին *սուրբ*. և գինի արիւնն. և իւղ օծումն աստուածութեանն. որպէս ասացաւ ի վերոյ: - 374. Երրորդ՝ նշանա՛կ են *սրբոցն* տօնից: - 374. Ամոլք հաւատոյ առաքեալքն *սուրբք*. և Խոյք հայրապետացն դասք: - 374. Գինին՝ մարտիրոսքն *սուրբք*. և Իւղն՝ լուսատու վարդապետքն

ուղղափառք: - 374. Խունկն՝ աղօթք *սրբոց* և այլքն: - 374. Այլ և ուղղիցին **դ** տուն է կիսամասնեայ. ընդ *սրբոյ* խաչեցարին հզօր և անմահ գառինն եղեալ: - 375. Եւ **ժ** թիւ կատարեալ նուէր և *սուրբ* է աստուծոյ. յաղագս որոյ թագաւորք երկրի զընծայս ի մարդկանէ՛ հնազանդելոց **թ թ** խնդրեն...: - 376. Կարմիր երինջն նշանակէ՛ զկոյսն *սուրբ:* - 383. Յորժամ *սուրբ* էր մոխիր երնջոցն, վասն է՞ր զմերձեցեալն պղծէր: - 384. Առաջին՝ ջուր աւազանին որ լուանայր զմարմինն, է՛ ջուր *սրբոյ* աւազանին մերոյ: - 384. Երրորդ, հոգին *սուրբ* որ քրիստոսիւ ծաւալեցաւ: - 386. Չորրորդ, կրկին հարկանելն, զի ոմանց տայ և ոմանց արգելու. այսինքն *սրբոց* և անսրբոց: - 386. Ութերորդ՝ զի թէ փրկիչն տկարացաւ զի մարդ եղև, քանի՞ առաւել *սուրբքն:* - 386. Զի ո՞ր ոք և յանցանէ՝ պատուհասի. եթէ հրեշտակք, և եթէ *սուրբք* ի մարդկանէ: - 386. Յորում և զմեզ թուեսցէ ի թիւ *սրբոց* իւրոց անջինջ դպրութեամբ. և Նմա փառք յաւիտեանս ամէն: - 392. Երկրորդ՝ նշանակէ՛ զհոգիս *սրբոց*. որ տեսանեն զփառս, այլ ի յարութեանն առնուն: - 394. Չորրորդ՝ հաց ի յերկնից իջեալ մանանայն կենարար. և բանն աստուծոյ նոյն ինքն տէրն մեր. որպէս ասաց առ փործիչն թէ՝ ինև կերակրին ամենայն *սուրբք* և ո՛չ հացիւ: - 397. Հինգերորդ՝ նոյն ինքն մարմինն *սուրբ* ո՛չ թէ հացիւ միայն կայր որպէս հասարակ մարդ. այլ բանիւն կենդանի ի նմա՛ միացեալ: - 397. Վեցերորդ՝ ո՛չ միայն հաց է հաղորդութիւնն. այլ հոգւովն *սրբով* օրհնեալ և միաւորեալ ի բանն աստուած, որով անմահ կենդանութիւն տայ ճաշակողացն: - 397. Այլ և մարգարէքն և առաքեալքն և բազում *սուրբք* և արդարք յազգէ նոցա եղեն: - 398. Նոցա անձ հովանի, և մեզ հոգին *սուրբ:* - 398. Չորրորդ՝ խորհրդական. զի մի է քրիստոս փեսայ. և զեկեղեցիս հրէից և հեթանոսաց ընկալաւ իւր հարսն *սուրբ:* - 401. Դարձեալ՝ օրէնքս յայտնի էր զոր ուսոյց. և աւետարանն ծածկեալ, զոր հոգին *սուրբ* յայտնէ որ քննէ զխորս աստուծոյ: - 405. Այսպէս և օրհնութիւն մարդկան որ գերագոյն է քան զմեզ, շնորհակալութիւն է և գոհութիւն. որպէս *սրբոց* կամ թագաւորաց և այլն: - 406. Եւ այսու եղանակաւ օրհնեմք զհրեշտակս, *զսուրբս*, զխաչ, և զայլն: - 406. Եւ զի բարկութիւն ո՛չ է ի յաստուած, ա՛յսպէս ասեն վարդապետք *սուրբք:* - 408. Երրորդ՝ վախճանեալ մովսէս ի լերինն, և միքայէլ փոխադրէր զմարմինն. սկսաւ սատանայ հայհոյել *զսուրբն* և սպանօղ անուանել վասն հարկանելոյն զեգիպտացին. վասն որոյ սաստեաց նմա հրեշտակապետն: - 410. Մետասաներորդ՝ *Զսուրբ* հացն եկեր դաւիթ: - 412. Նոյնպէս և *սրբոյն* ամենայն ինչ *սուրբ* է. որպէս ոչխարին մազն և միսն և այլն: - 416. Եւ յետ այնորիկ իջանէ ի *սուրբ* սիրտ հաւատացելոց: - 421. Վասն է՞ր կոչի հաց *սուրբ:* - 427. Երկրորդ՝ զի ի *սուրբ* տեղոջ խորանին է: - 427. Երրորդ՝ և *սրբոց* կերակուր: - 427. Նա՛խ՝ *սուրբ* էին մանկունքն: - 427. Եօթներորդ՝ զի ո՛չ կարէր շինել զտաճարն *սուրբ:* - 433. Ութերորդ, ի ձեռն սամուէլի և իւղով օծաւ. և տէր մեր ի հօրէ օծաւ և հոգւով *սրբով:* - 435. Երեսունևէ, զհաց սրբութեանն բաշխեաց մանկանցն. և տէրն զհացն *սուրբ* և երկնային հաւատացելոց: - 437. Եւ ամենայն *սուրբք* ի մարդկանէ զքրիստոս. որպէս ասէ «բազումք ցանկացան տեսանել և լսել զոր դուքդ տեսանէք և լսէք»: - 442. Յորում աւուր օրէնքն տւաւ, և հոգին *սուրբ* էջ: - 455. Վեցեկի պարգևք են հոգին *սուրբ:* - 455. Եւ ողորմութիւն և շնորհք հոգին *սուրբ*. ըստ որում «շնորհք և ողորմութիւնն աստուծոյ առ ձեզ»: - 457. Եւ արդարութիւն հոգին *սուրբ*. ըստ որում «եկեալ յանդիմանեսցէ զաշխարհս վասն արդարութեան և դատաստանի»: - 458. Զի ի խորհուրդ մկրտութեանն ի յառնուլ ջուր, հոգին *սուրբ* և զօրութիւն բարձրելոյն և ողջոյն հօրն ի ձեռն հրեշտակին որ հերքէր զմեղս ըստ մկրտութեան: - 462. Զի գալ հոգւոյն *սրբոյ* պատճա՛ռ էր կրկին ներգործութեան...: - 463. Աստուածածին է և ծնօղն *սուրբ:* - 466. Երկրորդ՝ զի թէ հոգին *սուրբ* էր մարմնացեալ, յայնժամ լինէին **բ** որդիք: - 468. Նոյնպէս և հոգին *սուրբ* լինէր որդի և հոգի: - 468. Եւ այս ո՛չ զհետ իրերաց. այլ համանգամայն յանկարծօրէն ի վայրկեան ժամու զօրութեամբ հոգւոյն *սրբոյ*. որոյ յանկարծօրէն է ներգործելն աստուծոյ: - 470. Այլ և *սուրբ* յամենայն մեղաց. և լի ամենայն շնորհօք և առաքինութեամբ...: - 470. Եւ այլ ամենայն նմանապէս ասացեալ *սրբոց:* - 470. Նա՛խ՝ զի կազմեսցի զօրութեամբ բարձրելոյն ի հոգւոյն *սրբոյ* և ո՛չ նպաստութեամբ մարդոյ: - 470. Երրորդն ի միտս *սրբոցն:* - 471. Չորրորդ եղանակն որ կատարումն է այլոցն՝ ի կնօջէ առանց առն. որպէս ծնունդն քրիստոսի զօրութեամբ հոգւոյն *սրբոյ:* - 471. Իրաւունք *սրբոց:* - 474. Եւ զօծումն քահանայութեան ի թաբօր լերինն. ուր և հոգին *սուրբ* անձ հովանի եղեալ. և հայր հաճութեամբ վկայեալ: - 474. Իսկ զօծումն հոգւոյն *սրբոյ*՝ յորժամ էջ աղաւնակերպ ի վերայ նորա: - 474. Օծօղն է հայր. և Օծումն որպէս իւղ հոգին *սուրբ*. և Օծեալն բանն մարմնացեալ: - 475. Այլ մեք այսպէս խոստովանիմք. եթէ օծաւ բանն աստուած ի հոգւոյն *սրբոյ* յորժամ յղացաւ մերովս կերպիւ յորովայնի...: - 475. ...ըստ որում որ էջ հոգին *սուրբ* յորովայն անարատ կուսին և մաքրեաց զնա, և

կազմեաց ի նմանէ զարիւնն. և սրբեաց և օծեաց զնա միաւորելով պատկերապէս: - 475. Այսպէս միաւորութեամբ բանն աստուած օծաւ և սրբեցաւ ի հօրէ, ի ձեռն հոգւոյն *սրբոյ* գործակցութեամբ: - 475. Իսկ բանն աստուած մարդացեալ՝ էութեամբ է առ հայր. պահպանութեամբ ի բոլոր էակքս. շնորհօք յամենայն *սուրբս*. և բնութեամբ ի մարմնի միաւորեալ: - 478. Եւ ա՛յն է յայտնութիւնն որ հայր վկայեաց ի վերայ որդւոյն, և հոգին *սուրբ* աղաւնակերպ իջմամբ: - 482. Եւ յա՛յսմանէ յա՛յտ է, զի *սուրբքն* զծնունդն և զյայտնութիւնն ի միասին տօնէին. և յետոյ բաժանեցին ոմանք վասն բեթլէհէմի և յորդանանու: - 482. Այլ մեզ այսպէս իմանալի է. զի թշրինի մէկն նուիրեալ օր *սուրբ* տեառն կոչեսցի ասացաւ. որ է՛ սեպտեմբերի **ժը**: - 483. Զոր ունի զայս աւանդ այժմ *սուրբ* և ուղիղ աւանդապահ եկեղեցիս հայաստանեայց ըստ վկայութեանս որ եղաւ: - 484. Մկրտութիւնն քրիստոսի ո՛չ վասն կարօտութեան էր. զի ամենամաքուր և *սուրբ* է բնութեամբ և սրբիչ ամենայնի: - 486. Երրորդն որ ասէ «էջ հոգին ի վերայ նորա». ցուցանէ թէ մկրտութեամբն լինիմք տաճար հոգոյն *սրբոյ:* - 487. Յոգին *սուրբ* աղաւնակերպ. իսկ Դիտաւորութիւնն հետևիլն ձայնին առ որ մկրտի: - 487. Եւ դարձեալ՝ հաճութիւնն է հանգուցեալ կամքն. այսինքն հոգւովն *սրբով* հանգեայ ի յորդի առեցեալ մարմնովն: - 488. Այն է որ հրեղէն լեզուաւ սփռեաց յառաքեալսն զշնորհս հոգւոյն *սրբոյ:* - 488. Եւ վասն մահուան որդւոյ՝ հայր աստուած ետ զհոգին *սուրբ* պարգևս մարդկան: - 492. Աւհեակն ողջախոհ և *սուրբ* ունել կեանս յանձին: - 493. Ապա ուրեմն օտա՛ր արկածք էր ապականութիւնն, վասն այն ո՛չ կրեաց ի *սուրբ* մարմին իւր անապական: - 497. Նախ որպէս ասացաւ՝ ապականութիւնն ծունդ է մեղաց՝ և մեղքն չա՛ր է. և մեղք ո՛չ կրեաց *սուրբ* մարմինն քրիստոսի. ապա ուրեմն անապակա՛ն է: - 498. Իններորդ՝ խորհրդական մարմինն *սուրբ* զոր բաշխեաց ի վերնատունն՝ էր անապական և կենարար...: - 499. Տասներորդ՝ ամենայն *սուրբ* վարդապետք ուղղափառաց որպէս եփրեմ՝ ոսկէբերանն՝ կիւրեղ՝ աթանաս՝ և այլք, անապական գրեն և խոստովանին զմարմինն *սուրբ:* - 499. Մետասաներորդ՝ և սուրբ գիրք ի հոգւոյն *սրբոյ* խօսեցեալք վկայեն: - 499. Որպէս դաւիթ ասէ յառաջագոյն. և պետրոս զնոյն ի գիրս գործոց երկրորդէ՛ «մարմին նորա ո՛չ ետես զապականութիւն». ապա ուրեմն անապակա՛ն է մարմինն *սուրբ:* - 499. Եւ շնորհականն հոգևոր. ուր սկսանին ամենայն տօնք *սրբոց* **գ** ժամով յառաջ քան զբնական օրն: - 508. Եւ տէրն ի գիշերի ելեալ ի գերեզմանէն բաժանեաց և էառ զհոգիս մարդկան ի նմանէ. և արար իւր հանդերձ *զսուրբ* ժողովուրդ իւր: - 513-514. Եւ ի յայս միտս զտօն ամենայն *սրբոց* մարտիրոսաց ի մէջ գիշերի սկսանեմք **գ** ժամով յառաջ քան զծագումն լուսոյն հասարակ աւուր: - 515. Իսկ թռչիլ ամենայն *սրբոց* ի ձեռն սպասաւորութեան հրեշտակաց: - 519. Վեցերորդ՝ զի զհոգին *սուրբ* առաքեսցէ մեզ...: - 519. Վասն է՞ր նախ քան զխաչն և զհամբարձումն ոչ պարգևեցաւ հոգին *սուրբ* երևելի նշանօք: - 521. Երկրորդ՝ ի կողմանէ ընդունողաց առաքելոցն. զի պատշաճաւորեցան հոգոյն *սրբոյ*...: - 521-522. Երրորդ՝ ի կողմանէ հոգւոյն *սրբոյ*. զի առաւել հռչակելի և փառաւոր եղև այսպէս...: - 522. Զի ո՛չ միայն համարի մեծ և փառաւոր զաստուածություն նորա, այլ և զաղքատութիւնն և զանարգանս և զմահն. և յայնժամ արժանասցի առատապէս ընդունել զհոգին *սուրբ:* - 522. Այսպէս նախ եկն քրիստոս և խաչիւ և մահուամբ հաշտեցոյց զհայր, և ապա՛ հայր աստուած առաքեաց զհոգին *սուրբ* պարգև մարդկան: - 522. Եւ զի պարգև խաչին է հոգին *սուրբ*, նմին իրի յիշատակեալ զհոգին *սուրբ*՝խաչիւ դրոշմեմք զդէմս մեր: - 522. Սակայն վարդապետք եկեղեցւոյ պատշաճե՛ն զստեղծանելն հօր. իսկ զտրոհելն որդոյ. և զզարդարելն հոգւոյն *սրբոյ:* - 522. Այսպէս պարտ էր յառաջագոյն հօր յայտնի լինիլ և ապա՛ որդոյ և հոգւոյն *սրբոյ:* - 522. Վասն է՞ր փայլական նմանեցուցանէ զիջումն հոգւոյն *սրբոյ:* - 522. Նա՛խ՝ զի յանկարծակի՛ փայլէ. նոյնպէս և հոգին *սուրբ* յանկարծակի էջ: - 522. Երկրորդ՝ զի ի կերպ հրոյ փայլէ. այսպէս և հոգին *սուրբ* հրեղէն լեզուօք: - 522. Չորրորդ՝ զի փայլատակեալն անբաժանելի մնայ յինքենէ. այսպէս և շնորհք հոգոյն *սրբոյ* անբաժանելի գոլով բաժանեցաւ յառաքեալսն: - 522. Իսկ հոգին *սուրբ* երագ էջ յառաքեալսն. զոր արեգակն քրիստոս բազում ամօք յերկարեալ մարմնով ել յերկինս: - 522. Եւ հոգին *սուրբ* ի քրիստոսէ էջ յառաքեալսն. և նա՛ է իմաստութիւն հօր: - 523. Եւ հոգին *սուրբ* բղխէ ի հօրէ՝ և առնու յորդւոյ զիմաստութիւն և բաշխէ՛ յարարածս բոլոր: - 523. Վասն որոյ նմանեցաւ իջումն հոգւոյն *սրբոյ* փայլական: - 523. Զբերան մտացն ասէ. այսինքն է՛ յօժարութիւն հոգւոյն որ առնու զհոգին *սուրբ*...: - 523. Եւ հոգին *սուրբ* կենդանութիւն է ներքին մարդոյն...: - 523. Եւ հոգին *սուրբ* բազմաբա՛շխ է և անպակաս հեղումն ի վերայ մարմնոյ: - 523. Այսպէս և առեալք զհոգին *սուրբ* բղխեն. ոմանց ի մահ և ոմանց ի կեանս. որպէս առ տաբիթայն և առ սափիրային: - 523. Նոյնպէս և հոգին *սուրբ*. ըստ այնմ, «հոգին հօր իմոյ խօսեսցի ի ձեզ»: - 523.

Նա՛խ՝ զի յայսմ աւուր էջ հոգին *սուրբ* յառաքեալսն...: - 524. Երկրորդ՝ և յայսմ աւուր տըւաւ մեզ նոր օրէնս և քարոզութիւն *սուրբ* աւետարանին: - 524. Վասն է՞ր յորում աւուր տըւան օրէնքն՝ ի նմին աւուր և առաքելոց տուաւ հոգին *սուրբ:* - 524. Քանի՞ ազգ պարգև ետ հոգի *սուրբ*՝ առաքելոցն: - 524. Դարձեալ՝ զի հայր մարմնով ո՛չ երևեցաւ որպէս բանն մարմնացեալ. կամ որպէս հոգին *սուրբ* աղաւնակերպ և հրաձև: - 525. Վասն է՞ր ի յորդանան աղաւնակերպ էջ հոգին *սուրբ*, և ի վերնատունն հրեղէն լեզուաւ: - 525. Վարդապետականն՝ մանկանց եկեղեցւոյ. զի յամէ օգտեալ վարդապետք՝ զգուշացուցանեն զմանկունս սիօնի *սրբոյ:* - 528. Որպէս խօսեցաւ հոգին *սուրբ* ի մարգարէսն. և հոգին *սուրբ* աստուած է ճշմարիտ. ապա և խօսեցեալքն ի հոգւոյն *սրբոյ* ճշմարիտ խօսք է աստուծոյ: - 530. Ա՛րդ՝ յորժամ ամենայն ինչ նոյն է սուրբ Երրորդութեանն, որով յա՛յտ է՝ թէ հայր խօսի, և թէ որդի, և թէ հոգին *սուրբ*, մի և նոյն բանիւն խօսին. ապա ուրեմն ո՛չ է անյարմար եթէ հայր նոյն բանիւն վկայեսցէ ի վերայ որդւոյ. զի որդի և հայր նշանակէ զյատկութիւն անձանցն: - 530-531. Չորրորդ՝ եկեղեցի է անդրանկացն վերինն սիոնի որ է հոգիք *սրբոցն* ժողովեալ. զոր պօղոս եկեղեցի կոչէ զորդիս արդարոց կատարելոցն: - 534. Ձեռք՝ քահանայք գործիք *սուրբ* խորհրդոցն: - 534. Նա՛խ՝ մարգարէքն զհայր ծանուցին. ապա՛ առաքեալքն զորդի. և ապա՛ վարդապետք զհոգին *սուրբ:* - 535. ...և առաքեալքն ձեռն դնելովն միայն՝ տային զհոգին *սուրբ*. և ի լեզուս խօսէին. և մարգարէանային ընդունօղքն. իսկ վարդապետք *սուրբք*՝ քարոզութեան նոցին հետևօղք և որդիք ծնողացն՝ երրորդ կարգին յետ նոցա: - 535. Սոյնպէս և դաւթին մարգարէութիւն՝ մտաց լուսաւորութեամբն երգէր զամենայն սաղմոսն ի հոգւոյն *սրբոյ:* - 537. Եւ յորժամ առաքելոցն ետ՝ նախ փչեաց ի նոսա զհոգին *սուրբ*, և ապա ետ իշխանութիւն կապելոյ և արձակելոյ: - 539. Որ նշանակէ՛ թէ ի յայտնութենէն աստուծոյ և ի շարժմանէ հոգւոյն *սրբոյ* պարտ է ներգործել զայդ իշխանութիւն: - 539. Եւ թէ ոք ասիցէ, աստուած վերնագոյն է և հանապազ օրհնեմք զնա, և այլ *զսուրբս* նորա: - 539. Վերինն որ առ աստուած և առ *սուրբս*, երբեմն յայտնութիւն լսի. երբեմն գոհութիւն և բարեբանութիւն. երբեմն մաղթանք և աղաչանք: - 539. Նոյնպէս և առ *սուրբս* օրհնութիւնն: - 540. Նոյնպէս և որք անբիծ են հաւատովք և *սուրբ* գործովք. և կամ որք զղջացեալ յետս դառնան ի մեղաց և ի հերձւածողաց. նոցա՛ է արձակումն և օրհնութիւնն: - 540. Եւ արձակելն ի դէմս շնորհացն է և *սրբոց:* - 540. Տիմոթէոս աղէքսանդրու. Մելիտոս անտիոքայ. **ծծ** հարք ընդ դէմ մակեդոնի հայհոյչի հոգւոյն *սրբոյ:* - 542. Եւ գրեցին ապաշխարութեամբ խոստովանութիւն. և եդին ի տապանին դադայ՝ յեկեղեցւոջ *սուրբ* վկային դեմետրեայ: - 543. Եւ սուրբն դուկիոս սքանչելագործ և մարգարէաշնորհ, գրեաց առ մարկիանոս, թէ սուգ զգեցուցեր առաքելոց և մարգարէից. զի քակտեցեր զնոցա շինւածն. և արգելաւ հոգին *սուրբ* յօրհնելոյ զպատարագն և զաւազան մկրտութեան: - 543. ...և հաստատեցին զկանոնսն երից *սուրբ* ժողովոյն որ ի նիկիայ՝ ի կոստանդնուպօլիս՝ և յեփեսոս: - 544. Եւ նզովեցին զաղանդն մարկիանու և զարտեմոնի, և զտումարն լևոնի. և միաբանեցան ի մի հաւատս *սուրբ* առաքելոցն. և ի կանոնս *սուրբ* ժողովոյն ինչ պետք էին յաւելին գլուխս **թ** ի զգուշութիւն եկեղեցւոյ: - 544. Չորրորդ՝ մեծ և արժանաւոր ժողովն եղև ի մանազկերտ. ի **ծիղ** թուականին. հրամանաւ և արդեամբք գիտնաւոր և մեծ իմաստասիրին *սրբոյն* յոհաննու կաթողիկոսին հայոց օձնեցւոյ: - 545. Մինչ եկաց երկրորդ լուսաւորիչն հայոց և կրկին կիւրղոս *սուրբ* իմաստասէրն յոհան. և լուսաւորեաց զեկեղեցի: - 545. Երրորդ՝ զի յետ համբարձմանն յորժամ էջ հոգին *սուրբ*, արար զնոսա կաթողիկոսունս առ հասարակ: - 546. Որպէս և քրիստոս արար. որ քան մարմնով ընդ առաքեալսն էր՝ եպիսկոպոսունս արար զնոսա. և յետ համբառնալոյն՝ հոգւովն *սրբով* արար զնոսա կաթողիկոսունս: - 546. Եւ երից *սուրբ* ժողովոցն: - 547. Եւ բաժանեալ *զսուրբ* տեղիս տընօրինական, ետուն զսուրբ յակոբն պատրիարգարան, և զգողգոթայն, և զսուրբ կարապետն և զնարսն. և արկեալ վիճակս ի վերայ յարութեանն՝ անկաւ հայոց. և տրտմեցան ոմանք յազգէ նոցա: - 548. Այլ և ի *սրբոց* հռիփսիմեանց գալոյն յայտնի է: - 549. Եւ կենսաբուղխ *սուրբ* աւետարանն զթադէոս առաքեալն մեր յերկոտասանիցն ասէ: - 549. Այլ ա՛րդ՝ ճշմարտութիւն է առաքելական կանոնքն և հայրապետականն և երից *սուրբ* ժողովոցն: - 550. Այլ ա՛րդ՝ հեղձուցեալն՝ *սուրբ* և կերակրելի է նոցա. և պոռնկութիւնն անխտիր յորժամ կանգնեն զգլորեալն: - 552. Ո՞չ ապաքէն մովսէս ի հինն որոշեաց *զսուրբս* և անսուրբս. մանաւանդ թէ յաւուրս նոյի գոյր ընտրութիւնս. այսպէս ցուցաւ և մեզ պահելի իբր զբնական օրէնս. այլ սոցա ոչինչ է պիղծ ի կենդանեաց: - 552. Չորրորդ՝ զտօն *սրբոցն* յառաջիկայն անցուցանել օր: - 553-554. Ութերորդ յընդդիմակէն. զի թէ յաղօթելն միայն մտօք և *սուրբ* պահել զմիտս առաքինութիւն է կատարեալ ըստ առաքելոյ թէ՝ «սաղմոս ասացից մտօք» և

այլն: - 557. Այլ դու ո՛վ այրդ աստուծոյ մաքրամիտ և ճգնազգեաց միայնաւոր *սուրբ* հայրդ սահակ, թէ և զիջանես եղբայրական սիրով խնդրել բանս ի մէնջ. սակայն կարող ես և զքերին լնուլ և զյաւելորդն կշռել. և զմեզ օգտեցուցանել ի ներգոյէ՛ քոյին պայծառամիտ սրբութեան սրտի: - 558. Երրորդ՝ զի զայլ մեղս մեղսասէրքն գործեն. իսկ զհպարտութիւնն *սուրբք* և ընտիրք. որպէս հրեշտակք յերկինս: - 562. Զի՞նչ է մեղքն ընդ դէմ հոգւոյն *սրբոյ* որ ո՛չ թողցի: - 566. Այլ յատկապէս ըստ երից դիմացն, որ տկարութեամբ մեղանչէ՝ է՛ ընդ դէմ հօր. և տգիտութեամբն ընդ դէմ որդւոյ. և չարութեամբն ընդ դէմ հոգւոյն *սրբոյ*...: - 566. Ա՛րդ՝ մեղքն որ ընդ դէմ հոգւոյն *սրբոյ*՝ մանաւանդ ելանէ ի չար կամաց անձնիշխանականին. և ուղղակի մարտնչի ընդ դէմ շնորհաց հոգւոյն *սրբոյ*. և յիրաւի անթողլի՛ է: - 566. Նա՛խ առ հրէայսն. որ գիտէին զհոգին *սուրբ*՝ շնորհաց բաշխօղ. ուստի ելից հոգին զբէսէլիէլ ճարտարապետ. և զեօթնարփեան շնորհս թուէ եսայի...: - 566. Իսկ հոգին *սուրբ* միշտ շնորհաբաշխ և պարգևատու: - 566. Տասներորդ՝ վասն հոգեմարտին մակեդոնի որ հայհոյէր զհոգին *սուրբ* նուազ ասելով քան զհայր և զորդի, ո՛չ թողցի նմա: - 566. Այլ կոյսն մարիամ աստուածածին՝ էր ազատ ի մահացուէն և ի ներելւոյն. բայց ո՛չ ի սկզբնականէն. զոր հոգւովն *սրբով* մաքրեցաւ: - 568. Դարձեալ, բարկութեամբ զպատկերն աստուծոյ կորուսանեմք ի մեզ. և հոգին *սուրբ* փախչի ի բարկացեալ հոգւոյ. զի խաղաղութիւն է տեղի նորա: - 570. Ա՛յս է որ զմարդն յաստուծոյ հեռացնէ. զի *սուրբքն* միա՛յն տեսանեն զաստուած: - 570. Չորրորդ՝ զհոգին *սուրբ* աստուած. որ ասէ «հաւատամք ի հոգին *սուրբ*»: - 573. Առաջինն հաւատալ զորդին աստուծոյ յղացեալ ի հոգւոյն *սրբոյ:* - 573. Նոյնպէս և այժմ *սրբոց* և երանելեաց յոյսն է հանդերձ ստուգութեամբ տեսութեանն. զի դեռևս հանդերձեալ է նոցա մարմնոցն յարութիւն. և փառք և պսակքն ըստ իրին: - 574. Եւ այժմ յոյս մեր է՛ կրկին. նախ առ *սուրբս* վասն օժանդակութեան և բարեխօսութեան: - 574. Նա՛խ որպէս ասէ սուրբն եւագրիոս՝ հաւատն ի հայր, յոյսն առ որդի, սէրն ի հոգին *սուրբ:* - 577. Երրորդ՝ հաւատն է որպէս արմատ ծառոյն որ է հայր. յոյսն ստեղունքն որ է որդի. սէրն հոգին *սուրբ* որ է՛ ծաղիկ և պտուղ ըստ դիոնիսեայ: - 577. Եւ զի դժուարին է հոգւոյ մարդոյ կարգաւորել զինքն և սրբել ի մեղաց. վասն այսորիկ օգնութիւն տայ աստուած հոգւոյ մարդոյ զեօթն պարգևս հոգւոյն *սրբոյ:* - 582. Երկրորդ՝ հաշտեցոյց զհայր աստուած ընդ արարածս, և զհոգին *սուրբ* պարգևեաց: - 585. ...բայց թէ ազատեալ լիցի տեառն կամօք. որպէս նեսիմոնս այն. իսկ թէ զայր որ ընդ ծառայութեամբ է՝ ո՛չ հրամայեցին հայրապետքն *սուրբք* գալ ի յաստիճան եկեղեցւոյ...: - 589. Եւ գիտելի է, զի ի ծնունդ *սուրբ* աւազանին երևի ե զարմանալի գործ որ ո՛չ է ի մարմնաւոր ծնունդս: - 590. Երկրորդ՝ զի կուսութեամբ ծնանի առանց ապականութեան. և զայս պատճառէ՛ հոգին *սուրբ* և նիւթ ջրոյն զի հեղո՛ւկ է: - 590. Այլ կնքահայր ո՛չ է պարտ առնել զայլազգին. զի ո՛չ ունի զհաւատն *սուրբ*, և ո՛չ է հրաժարեալ ի սատանայէ. վասն որոյ ո՛չ կարէ լեզու լինիլ տղային կամ երաշխաւոր...: - 591. Այսպէս շնորհք հոգւոյն *սրբոյ* ի մկրտութեանն զաղտս մեղաց լուանայ. զծարաւ հոգւոյն բանիւն աստուծոյ շիջուցանէ. և զկորուսեալ պատկերն աստուծոյ դարձուցանէ: - 591. Որ տուեալ լինի ի մկրտութիւնն հոգի *սուրբ* որով մեղքն քաւեալ լինի: - 593. Եւ դնէ զայս քահանայն *սուրբ* մեռոնաւն ի ճակատ նուիրելւոյն ասելով այսպէս. ըստ այլազգաց եկեղեցեաց. թէ ի ներքոյ ձևիս այս ես կու նշանեմ զքեզ նշանաւ խաչի...: - 593. Զի՞նչ նշանակէ մեռոնաւն *սուրբ* օծանել: - 593. Զայն ցուցանէ թէ յորժամ մկրտեցաւ քրիստոս՝ հոգին *սուրբ* էջ ի վերայ նորա...: - 593. Այսպէս ջրովն մկրտիմք ի քրիստոս և որդիք աստուծոյ կոչիմք. և իւղովն ի շնորհք հոգւոյն *սրբոյ* միաւորիմք: - 593. Որ էր խորհուրդ անմահ գառինն. և հացն և գինին մարմին և արիւնն *սուրբ:* - 595. Եւ երբեմն հացն նշանակէ զմարմինն *սուրբ*, և արիւնն զանմահ կենդանութիւնն: - 598. Ա՛րդ՝ միաւորել *զսուրբ* խորհուրդն ո՛չ է նորագիւտ ինչ եկամուտ մեզ ինքեանց: - 598. Եւ թէ հրէա ոմն ետես զի հում միս արիւնաթաթախ տայր ժողովրդեանն. և զղջացաւ անկաւ յոտս *սրբոյն* և մկրտեցաւ: - 599. ...զի որք արժանի են մարմնոյն, արժանի են և արեանն *սրբոյ*...: - 600. Այս *սուրբ* օծմամբս և իւր գթութեամբն աստուած թողու քեզ զոր մեղանչեցեր տեսլեամբդ. նոյնպէս ասէ և այլ զգայութեանցն: - 604. Եւ վասն այն զանազան իւղ ո՛չ ունիմք, բայց միայն զմեռոնն *սուրբ*...: - 605. Այլ ի մեծի **ե** շաբաթին օրհնեմք իւղ, զի մի՛ մեռոնն *սուրբ* ի հասարակաց ոտս մերձեսցի: - 605. Եւ են **է** կարգ ըստ **է** պարգևաց հոգւոյն *սրբոյ:* - 606. Եւ *սուրբ* ժողովուրդն՝ և երեխայն որ դեռևս մկրտի, զայսոսիկ նւիրեալք կոչէ: - 608. Նոյնպէս որ օտար անկողնով պղծէ զշաղկապ պսակին, որոշի յօրհնութենէն և պղծի անկողինն *սուրբ:* - 610. Ի սմա սեղան սրբութեան. և ի մեզ սիրտ *սուրբ* սեղան նուիրանաց: - 614. Աստ լոյսն վառեալ. և ի մեզ լոյս խղճի մտաց. և հոգին *սուրբ* անշէջ...: - 614. Իսկ մարդս եկեղեցի, մկրտի ջրով և դրոշմի *սուրբ* մեռոնաւ...: -

614. Նոյնպէս և մեք ի ճշմարտութիւնս՝ ջրով և գինով և *սուրբ* մեռոնաւն օծանեմք: - 615. Հինգերորդ, օրհնեմք զեկեղեցիս, զի օրհնութիւն վերնատանն ուր տէրն պատարագեաց, և հոգին *սուրբ* էջ յառաքեալսն...: - 615. Եօթներորդ՝ զի աստուած *սուրբ* է որ բնակէ ի տաճարն: - 615. Իններորդ սրբեմք, զի բնակելոցս ի սմա և պաշտօնէիցս պա՛րտ է *սուրբ* լինի զի մի՛ պղծեսցեն զսրբութիւնսն: - 615. ...և կանգնեաց զխաչն փրկական ի *սուրբ* գողգոթայ ի սեպտեմբերի **ժդ**ն...: - 617. Եւ թէ ոք ասիցէ, *զսրբոց* մարմինս ընդէ՞ր արգելումք: - 617. Երկրորդ, զի և ի տաճարն հին՝ ո՛չ թաղեցին *զսուրբս.* այլ ի գերեզմանատունս. նոյնպէս և առաւել սրբութեամբ պահելի է զնոր տաճարս: - 617. Երրորդ՝ զի մարմինք *սրբոց* ի գաւիթս պահին և ո՛չ յեկեղեցի. յօրինակ հոգւոց նոցա որք են ի պահեստ հոգւոյն ի տեղւոջ լուսոյ և հանգստեան: - 617. Եւ *սուրբքն* աղօթիւք խնդրեն յաստուծոյ և առնուն: - 620. Երրորդ ժամն արևագալին առ հոգին *սուրբ*. այս **գ** ժամս ի գիշերի կատարին: - 621. Իսկ չորրորդ ժամն՝ ցերեկին երրորդ ժամուն առաջին ողորմեայն է ի դէմ հոգւոյն *սրբոյ.* որ յերրորդ ժամու էջ յառաքեալսն: - 622. Ութերորդ՝ խաղաղականն է յետ երեկոյին ժամուն առ հոգին *սուրբ*. յորում ժամու հոգին քրիստոսի էջ ի դժոխս և խաղաղացոյց զնոսա: - 622. Չորրորդ և ուղիղ, որպէս ասէ տեսիլն հրեշտակք առնուին զխունկս որ է՛ աղօթք *սրբոցն*, և նուիրէին ի սեղանն ոսկի որ է՛ քրիստոս. և ի նմանէ բուրէր ծուխն առ հայր: - 625. Եւ ա՛յս է պատճառն, զի քահանայն է՛ ի դէմս քրիստոսի, և եպիսկոպոսն հօր աստուծոյ. և խաղաղութիւնն է՛ հոգին *սուրբ* որ ի հօրէ առաքեցաւ...: - 625. Զի ընդ ամենեսեանն՝ զանձն նշանակէ. իսկ ամենեցունն՝ զշնորհս հոգոյն *սրբոյ* ցուցանէ: - 625. Եւ առաւել յարմարէ քահանային զշնորհս հոգւոյն *սրբոյ* բաշխել, քան թէ զանձն: - 625. Իսկ ամենեցունն՝ զմիշտն և զանբաժանելի հոգին *սուրբ:* - 625. Նա՛խ՝ զի հոգին *սուրբ* պարգևք է խաչին քրիստոսի. այլ և ի վերնատունն լուսեղէն խաչիւ հանգեաւ յառաքեալսն: - 625. Ապա ուրեմն պա՛րտ է յորժամ յիշատակեմք զհոգին *սուրբ* ամենայն ուրեք՝ խաչակնքել զդէմս և երկրպագել: - 625. Դարձեալ՝ ա՛յլ է քարոզն առ մեզ, և ա՛յլ է աղօթքն առ աստուած, և ա՛յլ է մաղթանքն առ *սուրբս,* և ա՛յլ է գոհութիւնն: - 626. Եւ ապա՛ ընթերցմունք յիշատակ *սրբոցն* որք աստ նախատակեցան և անդ պսակեալք թագաւորե՛ն ընդ քրիստոսի: - 628. Նոյնպէս խունկն ի տօնս *սրբոց:* - 628. զի առաջին փոխն է ի դէմս հօր. և միջինն առ որդի. և վերջինն առ հոգին *սուրբ:* - 628. *Զսուրբն* աստուածն ո՞վ է ասացեալ: - 631. Ապա ի բացեայ կացեալ և զձեռս համբարձեալ ասէ, Սուրբ աստուած *Սուրբ* և հզօր *Սուրբ* և անմահ որ խաչեցար վասն մեր ողորմեա՛ մեզ: - 631. Եւ զայս երիցս ասացեալ՝ էջ մարմինն *սուրբ* ի վերայ բազկացն յովսեփայ: - 631. Թէպէտ մեռար մարմնով և եդար ի գերեզմանի՝ *սուրբ* և անմահ և անապական ես: - 632. Զի՞նչ է որ ա՛յլ ազգք ի դէմս Երրորդութեանն ասեն. և վկայ ածեն զսերովբէսն **գ** *սուրբ* և մի տէր ասելովն: - 632. Յաղագս որոյ եկեղեցի սուրբ ուսեալ յաւետարանչէն և ի *սրբոց* հայրապետացն, երգեմք զերեքսրբեանն ի դէմս որդւոյ: - 633. ...յորժամ ասեն՝ *սուրբ* աստուած հայր, *սուրբ* և հզօր բան, *սուրբ* և անմահ հոգի...: - 633. Եւ ապա՛ իբր զկնիք զբաշխումն շնորհաց ի հոգւոյն *սրբոյ* աղերսեմք: - 633. Դարձեալ՝ սկիզբն աղօթիցն է՛ առ հայր. և մէջն որ է՛ խաղաղութիւնն առ հոգին *սուրբ*. որպէս ասացաւ ի վերոյ...: - 633. Դարձեալ՝ առաջին ողորմեայն է՛ առ հոգին *սուրբ*. վասն այն ասեմք օրհնեալ հոգիդ *սուրբ* աստուած ճշմարիտ զառաջինն: - 633. ...և զգործով պատւականն աւարտ ի վերայ բերել. որ է *սուրբ* մարմին և արիւնն փրկչական: - 634. Դարձեալ՝ որպէս յետ ամենայն տնօրէնութեանցն ել առ հայր և պարգևեաց զհոգին *սուրբ:* - 634. Նոյնպէս յետ ամենայն խորհրդական աղօթից՝ առ հայր ամբառնամք և աղերսեմք զհոգին *սուրբ* բաշխել մեզ...: - 634. Տա՛սն է. ինն ի դէմս քրիստոսի. և մինն ի հոգին *սուրբ* ի հոգէգալուստն: - 634. Զի սուրբ աստուածն անդ հաստատեցաւ. որպէս և փառք ի բարձունքն. սկսեալ ի հրեշտակացն ի ծնունդ քրիստոսի. և յերեք *սուրբ* ժողովնս եղև կատարեալ: - 635. Եւ դարձեալ թէ՝ այսպէս *սուրբ* ունիմք զմիտս և զհոգիս մեր: - 635. Այլ և այսպէս **բ** որմունք լինելոց են ի հանդերձեալն. այսինքն է մին հրեշտակաց և միւսն մարդկան *սրբոց* յաւիտենից փառաբանիչք: - 636. Դարձեալ՝ ի հանդերձեալն յորժամ խառնին հրեշտակք և մարդիկք ի լնուլ զտեղի անկելոց՝ կուսանաց *սրբոց:* - 636. Շաբաթ մեծամեծ տօն *սրբոց*. որք են ի հանգիստն երկնից...: - 642. Իսկ թէ *սրբոց,* Նա՛խ մարգարէից. և ապա՛ առաքելոց. և հայրապետաց. և մարտիրոսաց: - 642. ...վասն որոյ թէ ոք սրբութեամբ երգէ՝ լցցի շնորհօք հոգւոյն *սրբոյ:* - 643. Նա՛խ՝ որպէս ասեն ոմանք՝ Բուրվառն նշանակէ զմարդկութիւնն քրիստոսի. և Հուրն զաստուածութիւնն. Ծխումն զբուրումն հոգւոյն *սրբոյ:* - 645. Զի՞նչ է նախատօնակն որ յերեկոյն *սուրբ* զգեստիւ խաչիւ և աւետարանաւ և լոյս վառեալ համաձայն պաշտեմք: - 646. Դարձեալ՝ կրկին է տօն. մինն տէրունական, և միւսն հասարակ *սրբոց:* - 646. Իսկ

հասարակ *սրբոցն* նախատօնակ ո՛չ է այսօր: - 647. Եւ ա՛յս է խորհուրդն. զի որ քան են *սուրբք* ի յերկրի կենդանի, ո՛չ տօնեմք նոցա մինչ ի հանդէս նահատակութեան են...: - 647. Իսկ գլխաւորագոյն *սրբոցն*, որպէս յաւագ տօներն և յայլս, որ առնեմք նախատօնակ որպէս ի տօնս տէրունականս: - 647. Վասն է՞ր ի շաբաթի օր տօնեմք *սրբոցն:* - 647. Նախ՝ զի ի շաբաթի սկսաւ հանգիստն և երանութիւն *սրբոցն*. յաւուր որում հանգեաւ աստուած ի գործոց: - 647. ...և ի **է** օրն սկսաւ զիմանալի աշխարհն որ *սրբոցն* է հանգիստ: - 647. Եւ տես թէ ո՞ր քան և ո՞րպիսի անիմանալի և անճառելի երանութիւն է *սրբոցն*...: - 647. ...նոյնպէս և *սուրբքն* ի գործոց իւրեանց հանգչին: - 647. ...որ նշանակէր զհանգիստ և զվարս *սրբոցն:* - 647. Նոյնպէս և *սուրբքն*՝ քրիստոսի չարչարակիցք եղեն. և զպակասութիւն չարչարանացն քրիստոսի ի մարմինս իւրեանց կրեցին...: - 648. ...վասն որոյ տէրն քրիստոս մարմնով ի գերեզմանի հանգեաւ. և *սուրբքն* հոգւով առ աստուած յերկինս: - 648. ...նոյնպէս և *սուրբքն* ակնունին յետ **գ** դարուց վճարման կենցաղոյս ժառանգել զհանգիստն յաւիտենական...: - 648. Վեցերորդ՝ յետ ուրբաթուն չարչարանաց՝ ի շաբաթի օր տօնեմք *սրբոցն*...: - 648. Եօթներորդ՝ շաբաթի օր տօնեմք *սրբոցն* և պատարագ մատչի ըստ նիկիական կանոնին...: - 648. Նոյնպէս և *սուրբք* որ ա՛յժմ են ի հանգիստ՝ ի կիրակէ գալստեանն ի կատարեալ փառս և ի հանգիստ մշտնջենաւոր փոխին. ի հանգչելոյ ի հանգիստ. ի փառաց ի փառս: - 648. ...նոյնպէս և *սուրբքն* ամենայն ի գործոց իւրեանց հանգչին և փառաւորին և սպասեն գալստեանն քրիստոսի և հատուցման վարձուցն: - 648. Յաղագս որոյ ի շաբաթի աւուր տօնեմք մեծամեծ *սրբոց:* - 648. Դարձեալ՝ որ քան եմք ի պահքն՝ ընդ ապաշխարութեամբ եմք և ո՛չ եմք արժանի տօնել *սրբոց*...: - 650. ...այլ յորժամ ապաշխարութեամբ քաւեմք՝ տօնեմք. եթէ տէրունական և եթէ *սրբոց:* - 650. Երրորդ, եօթնօրեայ ժողովիլ կենդանեացն առ դուռն տապանին անսուաղ մինչև տեղեաց անձրևն. և **է է** կենդանիք *սուրբք:* - 653. Իսկ ճշմարտութիւնն ի մեզ, վասն **ե** զգայարանացս սրբութեան. որով մեղանչեմք՝ սրբիմք պահօք և ապա՛ *սրբոցն* ի բարեխօս մեզ: - 653. Նոյնպէս *զսուրբ* կերակուրն դարձեալ սրբելի է անուամբն աստուծոյ...: - 654. Նա՛խ՝ զի այսու՝ խաչին քրիստոսի հաղորդեսցուք. և *սուրբ* հացին զօր ի վերնատունն բաժանեաց: - 655. Նա՛խ՝ որպէս ի *սուրբ* կենդանեաց է պատարագն...: - 658. ...զի պատարագ աստուծոյ սիրտ *սուրբ* և հոգի խոնարհ զօր աստուած ո՛չ արհամարհէ: - 658. ...սրբոյն կիւրղի է արարեալ ի դուռն *սրբոյն* սիօնի. ի իա ամի հայրապետութեան իւրոյ: - 658. Իսկ վասն հիմնարկութեան *սուրբ* տաճարի և ժամահար օրհնելոյ. սկիհ և մաղզմայ. և զգիրք. և զկնունք առնելոյ. և խաչօրհնելոյ. և զքառասնորդաց **գ** ժամուց զքարոզքն և զաղօթսն, յոհան մանդակունին է արարեալ...: - 659. Որդի *սուրբ*՝ ցո՛յց մեզ զերեսս քո: - 659. Յոգի *սուրբ*՝ սրբութեամբ քո սրբեա՛ զմեզ: - 659. Այսպէս և ի յարութեանն *սուրբք* զայսպիսի փոփոխմունս ո՛չ ունին...: - 663. ...և այն մին մեղքն վճարի և այն կենացն *սուրբ* և արժանաւոր ժառանգորդ լինի: - 664. ...այս է, զի *սրբոցն* ամենայն աւուրքն լի՛ են բարի գործովք: - 666. Ա՛րդ՝ եթէ ի հասարակ ժողովրդենէ իցէ ննջեցեալն, հանեն զհին հանդերձն և պատե՛ն *սուրբ* կտաւովք և զգլուխն փակեղամբ և վարշամակօք, և օդ յոտս: - 671. Օծցեն *սուրբ* իւղովն և ողջունեն և տանին ի հանգիստն: - 671. Եւ դարձեալ, ի հոգևորն մերկ եկն և *սուրբ* հանդերձիւ զգեցեալ գնաց: - 671. ...և զմարմինն՝ *սուրբ* իւղով օծանեմք: - 672. ...զի քահանայապետն զհայր նշանակէ. և իւղն զքրիստոս. և անուշահոտն զհոգին *սուրբ* որ քրիստոսիւ պարգևեցաւ մեզ: - 672. Վեցերորդ, զբոլոր մարդոյն յարութիւնն և զբոլորին փրկութիւնն և զսրբութիւնն նշանակէ որ է՛ հոգին և մարմինն. վասն այն հոգւոյ նորա աղօթիւք սրբութիւն և փրկութիւն խնդրեմք, և զմարմինն՝ *սուրբ* իւղով օծանեմք: - 672. Եօթներորդ, ցուցանէ թէ հոգին *սուրբ* և քրիստոս հանգուցեալ է ի նշխարս *սրբոց*. որպէս ի կեանքն՝ նոյնպէս և ի մահն: - 672. Եօթներորդ՝ զի սիրելի և համբուրելի է նշխարքն *սուրբ* որ ի քրիստոս միացաւ և օծաւ, և քրիստոսի եղև բաժին: - 673. Տասներորդ՝ զի այսպէս ողջունի և հոգին անդ որպէս մարմինն աստ. նախ յաստուածպետութենէն, և ապա ի համակարգ հոգւոց *սրբոց:* - 673. Այսպէս է կարգ կատարման ննջեցելոց *սրբոց* քահանայից և կրօնաւորաց և առ հասարակ ժողովրդոց: - 674. Եօթներորդ, զի **գ** են հանգիստ և վարձք *սրբոցն*. որպէս ասէ տէրն. **ճ, կ**, և **լ**...: - 675. ...ուր *սուրբք* ամենայն սպասեն մեծի հարսանեաց գալստեանն փրկչին: - 675. Զի վասն յանցանացն ադամայ անիծաւ երկիր ի գործս նորա. *զսուրբ* մարմինն քրիստոնէի չէ՛ պարտ դնել յանսուրբ հող...: - 676. Այս վասն *սրբոց* մարմնոց: - 678. Նա՛խ՝ զի ի *սրբոցն* որ ա՛նդ են թաղեալ՝ օգնութիւնս ընդունին գերեզմանակիցք նոցա: - 678. Չարքն ի *սուրբ* տեղիս թաղեալ օգո՞ւտ է նոցա: - 678. ...նոյնպէս և *սուրբքն* հոգևոր հա՛րսն են քրիստոսի...: - 681. ...և յորժամ բացին զգերեզմանն, գտին թափուր ի *սուրբ*

մարմնոյն...: - 681. Որք են անուշահոտ հոգիք *սրբոցն* հանդէպ երեսացն քրիստոսի ի տեղւոջ մշտնջենաւոր լուսոյն: - 682. Եւ մկրտութեանն շնորհք և դաւանութիւնն *սուրբ*՝ հովանի և լուսատու լինի հոգւոյն: - 682. Մանանայ նոցա բանն աստուծոյ. և ջուր հոգին *սուրբ:* - 682. Դարձեալ, ի կիրակէ յարութեանն քրիստոսի տօնեմք. և յերկուշաբաթին՝ նոցա *սրբոցն* որք ընդ քրիստոսի յարեան և մտին ի քաղաքն *սուրբ:* - 684. Այլ զտեսութիւն *սրբոցն* առաւելու լոյսն շնորհաց և մաքրութեան. և ազատումն ի թանձրութեանց մարմնոյն: - 685. Ասեն ոմանք թէ՝ *սրբոց* հոգիքն յարաժամ երևին յորժամ կամին և որոց կամին: - 685. Այլ մեծն ներսէս ասէ թէ՝ *սուրբքն* ի ձեռն պահապան՝ հրեշտակացն երևին. թէ յերազս թէ յարթնութեան. և օգնեն մեզ. և խօսին. և լսեն զաղօթս մեր: - 685. Վարդապետք *սուրբք*՝ զպահեստ հոգւոց յերիս փոփոխմունս գիտեն. այսինքն նախ քան զքրիստոս. և յետ քրիստոսի. և յետ դատելոյն: - 686. Եւ *սուրբքն* կալիստրատոս վկայն ի ճառս իւր: - 687. Իսկ թէ ո՞ւր իցեն սոքա երկոքեանս, տեսիլն յօհաննու յայտնապէս ցուցանէ. *սրբոց* խորանս ասէ զվերինն սիօն և զհրեշտակացն դասս: - 688. Ուր ետես զիդ երիցունսն շուրջ զաթոռովն աստուծոյ. և զբազմութիւն հոգւոց *սրբոց* յամենայն ազգաց ժողովեալ անդ: - 688. Ո՜ հա՛յրդ ես որոց ի վեր քան զերկինս. այսինքն հոգւոց *սրբոց* կատարելոցն որ ի վերեն քան զդասս հրեշտակաց մեծ քրիստոսի որպէս քահանայք առ քահանայապետ, և անդամք առ գլուխն. և որդիք առ հայր: - 688. Եւ գիտելի է, զի հիմն և սկիզբն անդ եկեղեցւոյն եղև տէր մեր յիսուս քրիստոս յարուցեալ ի մեռելոց. և ընդ ինքեան հանեալ և վերացուցեալ զհոգիս *սրբոց* նահապետաց և մարգարէից: - 688. Անդ ժողովեցան առաքեալք և վկայք *սուրբք* և կատարեալք մինչ ի միւսանգամ գալուստն...: - 688. Այլ հոգիք *սրբոցն* ելանեն յերկինս որ անապա՛տն է չարաց...: - 689. Եւ այժմ հոգիք *սրբոց* առնուն զփառս գործոց ըստ ինքեան. զի հանգչին և ուրախանան ի գործս իւրեանց...: - 689. ...որպէս վասն նեռինն և դատաստանին ետես. նոյնպէս և զհատուցումն *սրբոց:* - 690. Զի հոգիք *սրբոցն* ո՛չ են առանց մխիթարութեան. այլ հանգչին և ուրախանան ի գործս իւրեանց և յուսով փառացն հատուցման...: - 690. Նա՛խ՝ զի աներևո՛յթ են ի մէնջ. այլ և ի մտացն աստուծոյ. ի հրեշտակաց և ի *սրբոց* մոռացեալ: - 690. ...որպէս յա՛յտ է յառաջիկայդ ի զանազան վկայութեանց վարդապետաց *սրբոց* և ի հին և ի նոր աստուածաշունչ կտակաց: - 691. ...այսինքն զի վերստին գալն քրիստոսի լինի, և ապա *սրբոցն* տանիլ առ ինքն: - 692. Սերմն բարի են *սուրբք* և ընտրեալք զոր սերմանեաց աստուած յեկեղեցի: - 693. ...և աղաղակէին բարձր ձայնիւ՝ մինչ յե՞րբ տէր *սուրբ* և ճշմարիտ ո՛չ դատես և առնուս զվրէժ արեան մերոյ: - 694. Ասեմք ըստ *սրբոյն* անդրէի մեկնչի՝ եթէ *սուրբքն* զաշխարհի վախճան խնդրեցին. որոց ցուցանէ զպատճառս երկայն մտելոյն...: - 696. Ասեմք եթէ՝ ձայնիւն և պսակաւն եցոյց մարդկան և լսեցոյց ի յաչս և ի յականջս թէ զայնպիսի կեանս վիճակեցին նոքա որք *սուրբք* են ի մարդկանէ...: - 697. ...այս է փառք և պսակ *սրբոցն:* - 697. Ասեմք նախ՝ եթէ երկինք և երկիր մարմին գոլով նորոգին մարմնական հրով. իսկ հոգին զի է՛ անմարմին՝ նորոգի շնորհօքն քրիստոսի և հոգւովն *սրբով:* - 701. Դարձեալ, Ոսկի է հաւատն *սուրբ*. և Արծաթ յոյսն պայծառ: - 702. Դարձեալ ասեմք, թէ *սուրբքն* ոսկեբերան ըստ չորից հակառակի՛ և ստէ՛ զնոսա: - 702. ...և ապա տացի *սրբոցն* վերին տաճարին բնակութիւնն: - 703. Տեսէք եղբարք *զսրբոց* վարդապետաց բանսն զի ո՛չ գոյ անդ քաւարան հրոյ: - 703. Ասեմք նախ՝ եթէ *սուրբքն* ոսկեբերան մեկնէ զբանս զայս աստի դատաւորաց և հատուցմանց այսպէս: - 704. Եւ ոմանք յետ զռ ամին զեօթներորդն որ վախճանն է՝ յարութիւն ասեն միայն *սրբոցն* և կապիլ սատանայի: - 706. Իսկ որոգինէս զհազարամեայ արքայութիւն *սրբոցն:* - 706. ...և *սուրբքն* ելեալք ի մարմնոյ և յաղթեալք թշնամոյն՝ թագաւորեն ընդ քրիստոսի որպէս ցուցանի յառաջիկայդ: - 706. ...նոյնպէս և *սուրբք* ժամանակին այնորիկ լինիցին զօրեղագոյն քան զամենայն յառաջագոյն մարտիրոսսն: - 708. Նոքա՛ են **բ** ծիթենիք. այսինքն օծեալ հոգւով *սրբով:* - 709. Եւ յետ այնորիկ ոչ առ ժամայն գայցէ տէր ի դատաստան. այլ տացի խաղաղութիւն աւուրս **խե**. առ ի հանգիստ *սրբոցն* և ի յապաշխարութիւն թիւրելոցն: - 709. ...եթէ *սուրբք* որ աստ չարչարեցան, յառնեն յառաջագոյն և փափկանան մարմնով **ռ** ամ. և ապա հասարակ յարութիւնն ամենայն մարդկան: - 710. Ցուցանեն այսորիկ զկատարեալ և զառաւել հանգիստ *սրբոցն* այժմ յուսով և յետ մահու հոգւով թագաւորեալ ընդ քրիստոսի. և ապա յետ յարութեանն հոգւով և մարմնով ո՛չ **ռ** ամօք. այլ անվախճան կենօք...: - 710. Նոյնպէս և *սուրբքն* այժմ թագաւորե՛ն և տիրեն ի վերայ ախտից, և յետոյ ի վերայ դիւաց, և ապա ի վերայ մահու: - 711. Նոյնպէս և *սուրբք* ընդ քրիստոսի յաւիտեանս թագաւորեն...: - 711. Այլ քրիստոսի երկիր պագանեն ամենայն երկնաւորք և երկրաւորք և ամենայն հոգիք *սրբոց:* - 711. Նոյնպէս և զօրք հրեշտակաց և մարդիկ երկիր պագանեն *սրբոց*. վասն

որոյ թագաւոր թագաւորաց են և տէր տէրանց. - 711. Նա՛խ՝ որպէս **բժ**ան գունդ հրեշտակացն և չորք կենդանիքն զբոլոր երկնային զօրսն նշանակեն, նոյնպէս և **իդ** երիցունքն զբոլոր դասս *սրբոցն*: - 711. Եւ զի սպիտակ հանդերձն արդարութիւն *սրբոցն* է...: - 712. Եւ ունի բեհեզն վեց յատկութիւնս որ նշանակէ զվայելչութիւն հոգւոց *սրբոցն* ելեալք ի մարմնոյ: - 712. Նա՛խ՝ զի բեհեզն է՛ անօսր. ցուցանէ զանօսր էութիւն և զմտածութիւն *սրբոցն* առանց թանձրութեան մարմնոյ: - 712. Երրորդ զի *սուրբ* է. ցուցանէ զմաքրութիւն նոցա առանց աղտեղութեան: - 712. Վեցերորդ զի կրթելով առնու զսպիտակ գոյնն. նոյնպէս և *սուրբքն* ի կեանս յայս կրթելով չարչարեցան, և ապա՛ այն կենացն արժանի գտան: - 712. Բուրվառն ոսկի և խունկն՝ այսինքն զի զաղօթս երկրաւորաց *սուրբքն* և հրեշտակք մատուցանեն քրիստոսի: - 713. Երրորդ զնահապետս և *սուրբս*: - 713. Նա՛խ՝ զի կոչեսցէ յերկնէ զհոգիս *սրբոց* և յերկրէ զմարմինս...: - 714. ...ըստ որում երեքօրեայ յարեաւ ի գերեզմանէն անապական մարմնով. և զբազումս յարոյց ընդ իւր և մտին ի քաղաքն *սուրբ*...: - 716. ...իսկ հոգիք *սրբոցն* նախ ծաղկին բնական պայծառութեամբն իւրեանց որպէս ցուցաւ ի վերոյ, և ապա՛ յետոյ արդեամբք պտղոյն կատարին ի հանդերձեալ կեանքն: - 721. Եւ սեղանն *սուրբ* է զգեստուք զարդարեալ ծածկի: - 721. Նոյնպէս մարմին *սրբոցն* ընդ ամենայն երկինս անցանէ զօրութեամբն աստուծոյ մինչև ի հրեղէն երկինս...: - 722. Վասն այսորիկ ասեն վարդապետք թէ՝ *սրբոցն* և անսրբոց **բ** իրք հաւասարա՛կ է. այսինքն յարութիւնն զի առհասարակ յառնեն. և անմահութիւնն զի առհասարակ անմահ և անապական մարմնով յառնեն: - 723. Բայց եօթն զարդքն զոր ունին *սուրբքն* որք են հարսունք քրիստոսի՝ ո՛չ ունին անսուրբքն որք են հարսունք սատանայի: - 723. Այլ և որպէս նախաստեղծքն ի դրախտին ո՛չ ամաչէին. նոյնպէս և *սուրբք* ի յարութեանն...: - 726. ...այլ ա՛յս է՝ զի իւրաքանչիւր մարմինք *սրբոց* պայծառասցին էպատիկ քան զարեգակն. որպէս տն մերոյ ի թաբօր լերինն. և **թ** դասուց հրեշտակաց լոյսն յերկիր ծաւալին. զի զօրութիւնք երկնից շարժեսցին: - 728. Նա՛խ՝ այն է գալարիլն երկնի, զի եթերն որպէս մագաղաթ ծալեալ նուազի և նսեմանայ վասն առաւել ճառագայթից լուսաւորացն հրեշտակաց և *սրբոցն* յերկնէ երևեալ: - 729. Չորրորդ, զի փառօք հօր և հրեշտակաց *սրբոց*: - 730. ...յիրաւի է ուրեմն որում անիրաւութիւնն եղև առնել դատաստան վասն վրիժու. թէպէտ նմա հայր և հոգին *սուրբ* գործակից լինին: - 735. Նմանապէս և **բժ**ան աթոռք առաքելոցն *սրբոց* ի յօդոյդ լուսեղէն: - 736. Տասներորդ, զի պսակէ՛ *զսուրբս* իւր և փառաւորի ի մէջ նոցա...: - 737. Նստի քրիստոս ի բարձրագոյն աթոռ ի վերայ օդոյդ, և *սուրբքն* ընդ աջմէ. այսինքն ի վեր ի փառս ընդ նմա ի վերայ օդոյդ. հաւատոյ և գործոյ թևօ՛քն բարձրացեալ իբր զարծուի: - 738. Երրորդ, հաւաստի արդարութեամբ. և այսպէս ամենայն *սուրբք* և հրեշտակք դատեսցեն զնոսա որք ի նոյն շաւիղն յանցաւոր գտան: - 738. Յոգին *սուրբ* բերանով սիրելեաց և թշնամեաց յառաջագոյն օրհնեաց զարժանաւորս...: - 740. Երրորդ՝ կենդանի են դևք. և մեռեալ՝ մարդիկ. որս դատէ՛ աստուած և *սուրբք* ամենայն: - 740. Զարդարս ո՞րպէս դատեն *սուրբք*: - 740. Արդ՝ ա՛յս գիր գործոց մերոց գրեալ ի հոգի և ի մարմին մեր որպէս ի մագաղաթի՝ դատաւորն ընթեռնու ի տես և ի լուր հրեշտակաց և *սրբոց*: - 741. Մանաւանդ թէ՝ հոգին *սուրբ* գրօղ դպիր. և ուղղութիւնն գրիչ գործիք. և որք զմելանն առատ տամք և զմագաղաթն, *զսուրբ* գործս անկեղծաւոր և զբանս աղօթից օրհնաւոր, ա՛յնքան առաւել գրիմք ի գիրն կենաց: - 741. Կենդանի՝ հոգի և մարմին մեր. և *սուրբք* և հրեշտակք և հոգին *սուրբ* գրիչ: - 743. Այլ և յորժամ ի վեր քան զչափն պատուէ *զսուրբս*, և ի վայր քան զչափն պատժէ զմեղաւորս: - 746. Չորրորդ՝ ի վախճանի յորժամ հնազանդին նմա ամենայն և պսակէ *զսուրբս* իւր, ուրախ եղիցի տէր յարարածս իւր: - 748. Նախ կոչի հնձան նախածանօթ տեսութիւնն աստուծոյ. ուր ընտրէ՛ և ժողովէ՛ *զսուրբս* իւր յառաջ քան զլինիլն իւրեանց. - 748. Երկրորդ կոչի հնձան արքայութիւնն երկնից. ուր ժողովին պսակք և փառք զանազան հանգստեան *սրբոց* զոր պատրաստեալ է աստուած սիրելեաց իւրոց ըստ առաքելոյ: - 748-749. Ութերորդ՝ հնձան կոչի և աւազանն *սուրբ*...: - 749. Տասներորդ, ասի հնձան և կտակարանքն *սուրբ*. ուր հին և նոր իմաստութիւն ժողովեցաւ ի խառնարանին գինւոյ. յորմէ բաժակէ՛ արբին առաքեալքն ի *սուրբ* վերնատունն. և արբուցին ամենայն տիեզերաց...: - 749. Մետասաներորդ, հնձան կոչի և հաւատն *սուրբ*. զի ի նա՛ հաւաքի ամենայն բան և գործք մեր. և ճմլեալ այսինքն քննեալ՝ լինի գինի ուրախարար աստուծոյ և հրեշտակաց: - 749. Զի ծուխ խնկոցն ի վերայ սեղանոյն, Նախ նշանակէ՛ սեղանն զքրիստոս. և ծուխն զաղօթս *սրբոցն*. զոր արծարծէ՛ հօր ի հոտ անուշից: - 749. Երկրորդ՝ տիւ է իմանալ զկեանս *սրբոցն* ի յերկինս. իսկ գիշեր զտանջանս գարշելեացն ի դժոխս: - 750. Այսպէս և քրիստոս քան զամենայն *սուրբս* զպարգևս ունի առատագոյնս. որում հոգին ո՛չ տուաւ չափով: - 755. Է՛ ուրեմն ասել,

եթէ ոչ տեառն սաբաւովթ, այսինքն զօրութեանց, թողեալ էր մեզ սերմն առաքելօք և մարգարէիւք և այլովք *սրբովք* և վարդապետութեամբ աւետարանին, համերք և ի մեղս լինէաք խստացեալք: - 755. Կամ թէ ոստք փայտիս այսորիկ ասին եօթանքս այսոքիկ. այսինքն՝ քրիստոսի ծնունդն, մկրտութիւնն, չարչարանքն, ի դժոխս իջումն, յարութիւն, յերկինս համբարձումն, և հոգւոյն *սրբոյ* պարգևումն: - 755. Յորս իբրև յոստս թռչունք երկնից՝ այսինքն *սուրբքն* հանգուցեալ են և բունի՛ն: - 755. Որք վասն այնորիկ ասին աւազան, զի *զսուրբս* բարեպաշտ բանիւք առատաբանս առնեն: - 756. Ջաւազանն պղնձի ի հայելեաց կանանց կազմեաց. այսինքն զբանն աստուածային՝ ի *սրբոցն* հաստատեաց օրինօք: - 756. Որդիքն ահարօնի՝ են *սուրբքն.* որք նախ քան զվերափոխիլն ի սենեակ վերին արքային, աստուածայնովքն բանիւք յամենայն հպարտութենէ մեղաց մաքրին: - 756. Տասներորդ, այլ և ի ժամանակս յայս առցեն *սուրբք* զերեսնաւորն. այսինքն զխնդութիւնն ի միտս: - 758. Դարձեալ, հոգիք *սրբոց* ա՛յժմ են ի յերկինս և առ երկինս որպէս ցուցաւ. և յայնմ աւուր փառաց ի փառս բարձրանալ հաւատացեալ լինի: - 759. Նմին նման և մեք յուսացուք արժանաւորիլ տեսութեանն քրիստոսի. զի թէ և ի դժոխս իցեմք՝ ա՛յն է արքայութիւն մեր. և ո՛չ թէ յերկրի կամ յայլում տեղւոջ ըստ *սրբոյն* ոսկէբերանի: - 759. Այլ և արդեամբք *սրբոց* ոռոգեցաւ, լիցի որպէս զդրախտ աստուծոյ անուշահոտ ծաղկօք և մանուշակօք և մարդօք զարդարեալ և գեղեցկացեալ: - 759. Ասեմք թէ կրկին. այսինքն արքայութիւնն երկնից՝ հրեշտակաց և հրեշտակացելոց *սրբոց:* - 760. Եւ թէպէտ մի իցէ արքայութիւն *սրբոց*, սակայն զանազանեսցին փառօք և պսակաւ և հանգստեամբ: - 760. Ա՛րդ՝ ի տեղի անկելոց հրեշտակացն՝ ըստ թւոյ նոցա խառնելո՛ց են դասք կուսանաց *սրբոց:* - 760. Վասն է՞ր լոյս արեգականն ո՛չ լուսաւորէ *զսուրբս:* - 760. Նախ վասն անկարօտութեան. զի *սուրբքն* իմանալի լոյս ունին զքրիստոս. և ո՛չ են կարօտ զգալի լուսոյ: - 760. Զի՞նչ իցէ ուրախութիւն *սրբոցն* և փառք: - 761. Եօթն զարդ հարսին որպէս ցուցաւ. և օժիտք յաւիտենիցն կենացն. պսակք և արկանելիք, ասացան մեզ փոքրիշատէ յառաջագոյն ի բանից *սրբոց:* - 761. Երկրորդ վասն ազնուական ընկերութեանցն. յորում եղիցի երանելի կոյսն. և հրեշտակք և *սուրբք* և սրբուհիք. և ամենայն թագաւորք և թագուհիք եղիցին: - 763. Այսպէս ի վեցից կողմանէ եղիցի ուրախութիւն *սրբոցն*. որ եղև հաւաքեալ ի վարդապետաց *սրբոց:* - 765. Ի գնացս հոգւոյն զօրացեալ, զի ըստ տըննօրէնութեանն խորհրդոյ միշտ հոգւով *սրբով* ներգործէր. ունելով տերև զաշխարհակեցոյց վարդապետութիւնն: - 768. Դարձեալ, ծառ կենաց և աննահական պտուղ՝ մարմին և արիւնն *սուրբ*. յորմէ ճաշակեալ հանապազ՝ անմահ կենացն վիճակէ զմեզ...: - 768. Դարձեալ, ծառ կենաց է աւետարանն *սուրբ* տնկեալ ի մէջ եկեղեցւոյ դրախտին...: - 768. Դարձեալ, ծառ կենա՛ց է աստուածածին կոյսն մարիամ բղխեալ յարմատոյն յեսսեայ. երկնուղէշ զարգացմամբ մշտասաղարթ կուսութեամբ ծաղկեալ և պայծառացեալ հոգւոյն *սրբոյ* եկաւորութեամբն...: - 768. Դարձեալ՝ ծառ կենաց և տունկ երկնային՝ է՛ հաւատն կենդանարար. որոյ արմատն է հայր, և ստեղունք որդի. ծաղիկ և պտուղ հոգին *սուրբ:* - 768-769. Զի քև գեղեցկագոյն ի գերեզմանէն յարութեան քո հասից. և անդատապարտ եղէց յատենի քոյ առաջի հօր և հոգւոյդ *սրբոյ:* - 771. Որով և ընդ որում հօր միանգամայն և հոգւոյն *սրբոյ* վայելէ փառք և պատիւ և իշխանութիւն և զօրութիւն. այժմ և միշտ և յաւիտենից յաւիտեանս Ամէն: - 771. Առաքելական աթոռոյ *սուրբ* առաքելոյս. և այլ շրջակայ հրեշտակաբնակ *սուրբ* Մենաստանեայց: - 772. Ա՛րդ՝ է՛ ինչ ի սմա հաւաքեալ ի լուսաւոր բանից վարդապետաց *սրբոց* ըստ գրոյն կամ իմացուածոյն: - 772. Դարձեալ, յերես անկեալ արտասուալի դիմօք հողս և փոշի՝ *սուրբ* գարշապարաց ձերոց, աղերսեմ ի խորոց սրտէ զհարազատ գութ հարց և եղբարց մեր հոգևորաց: - 773. Այլ և վարժապետին իմոյ և մեծ հռետորի հայոց, Յոհաննու Որոտնեցւոյ, եղիցի ի սմա յիշատակ մաղթանաց մասին օրհնութեան. և վիճակ ժառանգութեան *սրբոցն* ի լոյս: - 773. Այլ և պատմութիւնք և մեկնութիւնք *սրբոց*՝ նորին հոգւոյն են որք ուսուցանեն մեզ զնոյնս: - 778. Խօսք կոչի հոգին *սուրբ*...: - 799. Զի որպէս քրիստոս չարչարանօքն փրկեաց զեկեղեցի և հարսնացոյց, նոյն և առաքեալն քարոզութեամբ իբր զկոյս մի *սուրբ* յանդիման արար փեսային քրիստոսի: - 781. Զի այսպէս ուսաք ի սրբազան վեհէն մերմէ ըստ *սրբոցն* աւանդութեանց. թէ ամենայն իր որ բնութեան է պարգև, ան՛ի բաց դնելի՛ է ի նմանէ: - 782. Արդ որպէս յամենայն ժամանակս սոքօք գան ի հաւատս ուղղութեան և է՛ վարձատրելի. այսպէս և ի վերջին ժամանակս որք յետ նեռինն՝ ո՛չ միայն ի հարկէ սքանչելեաց, այլ և ի լրոյ քարոզչաց երկուցն վկայից իջելոց *սրբոց:* - 785. Թէ ասելն ումեմն ի *սրբոցն*, թէ աշխարհի սիւնք դողային: - 788

***ՍՈՒՐԲՆ ՍՐԲՈՑ*** - Եւ բաց յայսցանէ **բ** ակն յանդիմանութեան զոր անդամանդեայ կոչէին, և էր ի պճղնաւոր զգեստին ի վերայ ուսոց քահանայապետին յորժամ մտանէր ի *սուրբն սրբոց* երիցս ի

տարուջն, ի տօնի զատկին և յիսներորդացն և ի քաւութեանն: - 349. Նա՛խ՝ հինն օրինակ էր և նորս ճշմարտութիւն. և հանդերձեալն առաւել ճշմարտութիւն որպէս *սուրբ սրբոց:* - 355. Այլ որ ուղիղն է, մովսէս յամենայն ժամ մտանէր ի *սուրբն սրբոց*. և ահարօն մի՛ անգամ ի տարուջն. և քահանայքն ո՛չ մտանէին: - 364. Բաց ի քաւութենէն որ ի *սուրբն սրբոց*՝ ի ներս և ի դուրս ժ էր բովանդակն: - 364. Իսկ մովսէս և ահարօն և ա՛յլ քահանայք յարնելից կուսէ ուր *սուրբն սրբոց* էր պաշտէին: - 379. Եւ որք *զսուրբն սրբոց*՝ քահանայապետք և քահանայք: - 379. Եւ թշրինի ժ միշտ առաջին օր քաւութեան. յորում մտանէր քահանայապետն ի *սուրբն սրբոց:* - 483. Ո՞ր քան ևս քահանայապետին որ զերկոտասան օր պարտ էր խնկօք պաշտել ի մէջ տաճարին ի ժամ աղօթիցն. թէպէտ ի *սուրբն սրբոց* միանգամ ի տարուջն: - 483-484. Այսինքն *սուրբն սրբոց* որ է արքայութիւնն երկնից. ուր աստուածութիւնն է բնակեալ. և քերովբէիւք սպասաւորեալ: - 682. ...և ապա յետ յարութեանն ի կատարածի միանգամայն մտանեմք ի *սուրբն սրբոց* որ է արքայութիւնն երկնից: - 682. Իսկ Երրորդն արքայութիւն, գուշակի յաւազանն պղնձի. զոր հրամայեաց մովսէս առնել ի հայելեացն կանանց որ նստէին առաջի դրան խորանին. յորում լւանային որդիքն ահարօնի նախ քան զմտանելն ի *սուրբն սրբոց:* - 756. Եւս ի սրտի դնելով ի *սուրբն սրբոց* մտանել այսու լուսով առաջնորդեալք: - 769

***ՍՈՒՐԲ ԱԹԱՆԱՍ*** - Որպէս *սուրբն աթանաս* գրէ՛ ընդ դէմ արիոսի այսպէս: - 83. *Սուրբն աթանաս* և կիւրեղ և այլք՝ զհոգւոյ և զմարմնոյ միաւորութիւնս ասեն բանին մարմնացելոյ: - 477. Երկրորդ՝ ի քրիստոս բնութեանցն միացելոց մի ասել բնութիւն ըստ *սրբոյն աթանասի* և կիւրեղի: - 554. Այլ *սուրբն աթանաս* որ զխորհուրդ պատարագին աւանդեաց՝ այսպէս ուսոյց: - 599. Եւ *սուրբն աթանաս* ի պատարագն ասէ. «սուրբ սուրբ սուրբ տէր զօրութեանց. լի են երկինք և երկիր փառօք քո»: - 632

***ՍՈՒՐԲ ԱՍՏՈՒԱԾ*** - Հինգերորդ վկայ, զի ի բոլոր տարին յերեկոյի շաբաթուն կիրակմուտ անուանեն ամենայն ազգք. նոյնպէս և մեք յամենայն շաբաթս յերեկոյին լոյս զուարթ ասեմք, և *սուրբ աստուած* որ յարեար. ի յայս շաբաթի աւուրս սկիզբն առեալ: - 509. Ապա ի բացեայ կացեալ և զձեռս համբարձեալ ասէ, *Սուրբ աստուած* Սուրբ և հզօր Սուրբ և անմահ որ խաչեցար վասն մեր ողորմեա՛ մեզ: - 631. ...և կարգեաց յեկեղեցիս անտիոքայ յառաւօտն և յերեկոյն *զսուրբ աստուածն* խաչեցար ասել: - 631. Եւ յօհան ոսկէբերանն կարգեաց յաւուրն երիցս անգամ *սուրբ աստուած* ասել: - 631. Եւ *զսուրբ աստուածն* խաչեցար. և այսպէս գրէ՝ եսայի ետես զքրիստոս նստեալ յաթոռ որ է խաչն. և երգէին զերեքսրբեանն: - 631. Վասն որոյ ի սրբոյն կիւրղէ կարգեալ ասեմք *զսուրբ աստուածն* ի դէմս որդւոյ: - 631. Այլ և պետրոս անտիոքայ և տիմօթէոս աղէքսանդրու հրամանաւ յուստիանոսի կայսեր՝ հաստատեցին ի *սուրբ աստուածն* խաչեցար ասել: - 631. Նաև ի հայք ի ժողովն դվնայ հաստատեցին ի *սուրբն աստուածն* խաչեցար ասել ստուգապէս: - 631. Կղեմայ՝ «հանապազ յաղօթս մեր ասեմք *սուրբ աստուած*, սուրբ և հզօր, սուրբ և անմահ որ խաչեցար վասն մեր ողորմեա՛ մեզ»: - 631. Իսիդորոս, «յարակայ ձայնիւ գոչեմք *սուրբ աստուած*, սուրբ և հզօր, սուրբ և անմահ որ խաչեցար վասն մեր ողորմեա՛ մեզ»: - 631. Այլ և ասորիք ասեն ըստ մեզ *զսուրբ աստուածն* որ խաչեցար՝ մինչև ցայսօր: - 632. Եւ այս է մեկնութիւնն. թէպէտ հրէայքն որպէս յանցաւոր մարդ սպանին՝ *սուրբ աստուած* և ո՛չ սոսկ մարդ: - 632. Եւ վկայ այսոցիկ ի մամեստիայ գտեալ քարն. յորում գրեալ էր յունարէն գրով, «*սուրբ աստուած* սուրբ և հզօր սուրբ և անմահ որ խաչեցար վասն մեր ողորմեա՛ մեզ»: - 632. Երկրորդ, զի յայսպէս ասել *սուրբ աստուած* սուրբ և հզօր սուրբ և անմահ քրիստոս որ խաչեցար վասն մեր ողորմեա՛ մեզ: - 633. Երկրորդն առ հայր. վասն որոյ աղերսեմք՝ օրհնեալ հայր *սուրբ աստուած* ճշմարիտ ի միջինն: - 633. Երրորդն առ որդի. վասն որոյ ասեմք՝ օրհնեալ որդիդ *սուրբ աստուած* ճշմարիտ: - 633. Վասն է՞ր զերեքսրբեանն որ է *սուրբ աստուածն*՝ յառաւօտուն և յերեկոյին ժամն ի վերջքն երգեմք. և ի պատարագին ի սկիզբն: - 634. Քանի՞ է *սուրբ աստուածն* ի բոլոր տարին: - 634. Երկրորդ, զի յայսպէս ասել *սուրբ աստուած սուրբ* և հզօր *սուրբ* և անմահ քրիստոս որ խաչեցար վասն մեր ողորմեա՛ մեզ: - 633. Զի *սուրբ աստուածն* անդ հաստատեցաւ. որպէս և փառք ի բարձունսն. սկսեալ ի հրեշտակացն ի ծնունդ քրիստոսի. և յերեք սուրբ ժողովսն եղև կատարեալ: - 635. Վասն է՞ր *զսուրբ աստուածն* բաց գլխով երգեմք: - 635

***ՍՈՒՐԲ ԱՍՏՈՒԱԾԱԾԻՆ*** - Դարձեալ՝ տապանակն է՛ ի խորհուրդ *սուրբ աստուածածնին:* - 345. Նոյնպէս և կոյսն *սուրբ աստուածածին* է վասն աստուածացեալ մարմնոյն: - 466

***ՍՈՒՐԲ ԱՐԻՍՏԱԿԷՍ*** - Եւ փոխանորդ իւր նստոյց յաթոռ *զսուրբն արիստակէս* համանման նորին առաքինութեամբ, և որդի ըստ մարմնոյ. և ապա՛ գնաց ի հռօմ: - 548

***ՍՈՒՐԲ ԲԱՍԻԼԻՈՍ*** - պակասին սոքա և ժողովին ի ներքոյ երկրի և լինին տանջանարանք մեղաւորաց որպէս ասէ *սուրբն բասիլիոս:* - 728

***ՍՈՒՐԲ ԲԱՐՍԵՂ*** - Վարդապետք ասեն. որպէս *սուրբն բարսեղ*՝ թէ որպէս երկբերանի քսա՛կ է լուսինն. ընդ մինն ելանէ և ի վերի թիկունքն ժողովի և պակասի ի մէնջ լոյսն. և ի միւսն ի ներքս մտանէ և լուսաւորէ՛ զմեզ: - 187. Զի՞նչ է որ ասէ *սուրբն բարսեղ*, գնան հրեղէնք ընդ ջուրս և ո՛չ շիջանին: - 188. Այլ և յորժամ սատակեցաւ յուլիանոս, զժողովեալ ինչսն *սուրբն բարսեղ* բաժանեաց ժողովրդեանն. նոր տարի անուանեալ ի կեսարիայ: - 200. Չորեքտասաներորդ՝ ըստ մեծին գրիգորի աստուածաբանի և *սրբոյն բարսղի* կեսարացւոյ որպէս ասացաւ ի վերոյ: - 484. Մեծն աթանաս և յոհան ոսկեբարանն և *սուրբն բարսեղ* և մերն լուսաւորիչ: - 595. Եւ *սուրբն բարսեղ* կեսարացի այսպէս բաշխէր ժողովրդեանն. որպէս գրեալ է ի պատմութեան նորին յունվարի **ա**: - 599. Իսկ զկանոն ջրօրհնէից՝ *սրբոյն բարսղի* է արարեալ յեօթն ամի հայրապետութեան իւրոյ յէմ. զի անդ հանդիպեցաւ: - 658

***ՍՈՒՐԲ ԳԻՐ*** - Առ որս ասեմք եթէ՝ բանս այս «ամենայն» ո՛չ այնպէս նեղագոյն առեալ լինի ի *սուրբ գիրս*՝ որպէս առ փիլիսոփայսն: - 27. Ասեմք եթէ՝ *սուրբ գիր* խօսի բազում անգամ առակաւ...: - 27. Տասներորդ՝ յայտնի՛ է ի *սուրբ գրոց* թէ աստուած է որ խօսեցաւ մարգարէիւքն...: - 58. Այլ այժմ տեսցուք ի *սուրբ գրոց* զվկայութիւնսն մակեդոնի, և յարմարեսցուք զպատասխանիս նոցա: - 59. Զի սովորութիւն է *սուրբ գրոց*՝ աստուծոյ համարել զոր ինչ գո՛րծ է ի մարդիկ: - 59. Եւ հաստատութիւն՝ *սուրբ գրոց* վկայութիւնք, և բանք վարդապետաց, և կանոնք օրինաց: - 96. Խոստովանեալ յերկնաւորաց և յերկրաւորաց. և հաստատեալ *սուրբ գրոց* վկայութեամբ որպէս ցուցաւ: - 101. Այլ վերին մասամբ ծայրիւ իմացութեան ձկտի յաստուածայինսն՝ հաւատոյն լուսով և վկայութեամբ *սուրբ գրոց* հաստատել: - 103. Ո՛չ են յաւերժահասունք որպէս ոմանք կարծեն թէ յերկուց տարերց այսինքն ի հրոյ և յօդոյ են բանական կենդանիք և ունին ծնունդ և մահ. սուտ է այսպիսի կարծիքս և ընդդունայն և հակառակ *սուրբ գրոց*. զի բանական կենդանի և մահկանացու՝ մարդս միա՛յն է որոյ յարութիւն և դատաստան գոյ: - 150. Դարձեալ՝ հանճարն է ի գիրս արտաքին. իմաստութիւնն ի *սուրբ գիրս*. գիտութիւնն ի մեկնութիւն նոցին: - 270. Դարձեալ՝ ի *սուրբ գիրս* է՛ ուրեք որ զբարերարելն աստուծոյ նշանակէ՞ հրամայել ասէ: - 277. Ութսունք, Վասն անուանց արարչին ի *սուրբ գիրս:* - 285. Եւ մեզ պա՛րտ է իմանալ զչար խորհուրդ խորամանկին ի զանազան հնարս, և պատասխանել ի *սուրբ գրոց*. որպէս յայտ է ի գիրս նագրեայ: - 323. Սոյնպէս բարեկամք յոբայ թէպէտ շարժեալք էին ի բանսարկուէն, այլ աստուծոյ հոգւովն զօգտակարսն բարբառէին. վասն այն գրեցան բանք նոցա ի *սուրբ գիրս:* - 325. *Սուրբ գիրն* ասէ՝ «տէր աճեցոյց և օրհնեաց զյոբ». և անպատշաճ է զուստին քննել. զի ամենակարո՛ղ է: - 326. Երկրորդ՝ զի *սուրբ գործոցն* սուրբ պիտոյ էր և զգեստ: - 347. Դարձեալ՝ ի *սուրբ գիրս* զդժուարն և զծածուկն մի՛ քննէք: - 405. Երեսունք, *Սուրբ գիրք* ամէնն քանի՞ տուն է: - 413. Երկրորդ՝ զի *սուրբ գիրն* ո՛չ պարտաւորէ զնա իբրև զմահապարտ: - 443. Վեցերորդ՝ գիտութիւն *սուրբ գրոց:* - 444. Յաւատարիմ բառս՝ որ ի *սուրբ գիրս*՝ ըստ չորից եղանակաց իմասցի: - 457. Երկու երևի ի *սուրբ գիրս* երկխօսութիւն: - 465. Այլ և ծանիր. զի է բան յիշէ *սուրբ գիրք* զոր խօսեցաւ աստուածածին կոյսն: - 465. Այլ արդ՝ *սուրբ գիրք* վկայեն, և ճշմարիտ հաւատն բռնադատէ՛ աստուած խոստովանիլ զծնեալն ի կուսէն. ապա ուրեմն և ծնօղն է՛ աստուածածին: - 466. Զի որ ասի մահ, նոյն և նինջ կոչի ի *սուրբ գիրս*...: - 496. Մետասաներորդ՝ և *սուրբ գիրք* ի հոգւոյն սրբոյ խօսեցեալք վկայեն: - 499. Դարձեալ ասեմք, ներքին դժոխք է հոգւոցն. և վերին՝ գերեզման մարմնոցն. և նա կոչի դժոխք ի *սուրբ գիրս*...: - 505. Ա՛րդ՝ նոքա որք զայս ասեն՝ երիւք հակառակին *սուրբ գրոց:* - 505. Եւ այս քան ի վկայութեանց *սուրբ գրոց:* - 514. Երկրորդ, մի է՝ թէ բազում բանն աստուծոյ և *սուրբ գրոց:* - 525. Են և այլ բազում վկայութիւնք ի *գրոց սրբոց* որ զայսպիսի հերձուածս սուտ և ընդունայն երևեցուցանեն: - 590. Մեք այսպէս լուաք ի *սուրբ գրոց* թէ՝ անարժան ուտելն առնէ յուդա. և ո՛չ թէ միաւորութեամբ զմարմին և զարիւնն ճաշակել: - 598. ...զի *սուրբ գիրք* կամ զառաջինսն պատմեն. որպէս մովսէսին. կամ զվերջինսն կանխաճառեն. որպէս եսայեայն և այլոցն: - 643. Նա՛խ՝ զի ընդ դէմ է *սուրբ գրոց* և ուղղափառ վարդապետաց որպէս ցուցանի յառաջիկայդ: - 698. Երկրորդ, զի ի *սուրբ գրոց* ածեն վկայութիւնս և մեկնեն ըստ կամաց իւրեանց...: - 701. Եւ այս գիտելի է, զի անուն նեռին ջնջեալ և կորուսեալ է ի *սուրբ գրոց*. վասն այն զանազանապէս կոչեն զնա՛: - 707. Սակայն հաստատի յարութիւնն բնական քննութեամբ և *սուրբ գրոց* վկայութեամբ: - 714. Իսկ վկայութեամբ *սուրբ գրոցս*, որպէս ասաց աստուած ցնոյ...: - 715. Եւ բաւական է սակաւս ի բազմաց *սուրբ գրոց* վկայութիւն եթէ

գոյ ճշմարտապէս յարութիւն մարդկան: - 716. Արդ ցուցցուք թէ ճշմարիտ անապական է սուրբ խաչն բնական քննութեամբ և *սուրբ գրոց* վկայութեամբ: - 733. Եւ զի ուղիղ է դատաստանն աստուծոյ՝ յա՛յտ է ի վկայութեանց *սուրբ գրոց:* - 743. Եւ այլն ամենայն որ լսի ի *սուրբ գիրս*՝ անդ կատարեսցի: - 762. Ունելով տերև զգիտութիւն *սուրբ գրոց.* և զծաղիկ հաւատոյ՝ և զպտուղ բարեաց գործոց: - 765. Այսպէս և ենքադատութիւնք *սուրբ գրոց* ոմն այսպէս և ոմն այն: - 782. Երկրորդ, վկայութեամբ *սուրբ գրոց* և քարոզութեամբ բանից: - 784

***ՍՈՒՐԲ ԳՐԻԳՈՐ*** - Պա՛րտ է տալ զսուսա ի քահանայսն որպէս կարգեաց մեծն մովսէս ի հինն, և *սուրբն գրիգոր* ի նորս: - 367. Իսկ հայաստանեայ քրիստոս որպէս ուսան ի *սրբոյն գրիգորէ*՛ անփոփոխ կացին ի նմին: - 482. Եւ չորրորդն ի սոցանէ եղև յաթոռ վիճակի *սրբոյն գրիգորի* հանուրց: - 544. Եւ վերստին հաստատեցին զկարգեալսն *սրբոյն գրիգորի* և ներսէսի և սահակայ և մաշտոցի: - 544. Ասեմք թէ՝ *սուրբն գրիգոր* ի կեսարիայ ձեռնադրեցաւ ո՛չ յայլմէ առաքելոյ, այլ ի սրբոյն թադէոսէ՛. որոյ էր վիճակս հայոց: - 548. Եւ *սուրբն գրիգոր* անդ ծնաւ և սնաւ: - 548. Ապա հե՞զն յամենայնի *սուրբն գրիգոր* ետ նոցա՝ զի նոքա շինեսցեն ընդարձակ. զի դեռ չէր շինեալ: - 549. Երկրորդ՝ *սրբոյն Գրիգորի* որ վասն շինութեան եկեղեցւոյ տեսիլն: - 555. ...այլ առաքեաց առ *սուրբն գրիգոր* և խնդրեաց քահանայս մկրտել զնոսա: - 589. Եւ զպէնտակոստէին, և զվարդավառին, և *զսուրբ գրիգորին* և զյովհաննուն, և զմարգարէիցն, և զվարդանանցն, և զառաքելոցն, և թագաւորացն, և զանտօնին: - 637. Վասն է՞ր ասեմք պահք սուրբ սարգսի և *սուրբ գրիգորի* և սուրբ յակոբայ և այլոց: - 650. Երանելին մովսէս խորենացի՝ որ էր գրիչ սրբոյն սահակայ պարթևի, յետ **ճԺ** ամի *սրբոյն գրիգորի*՝ եղև սկիզբն թարգմանութեան ի հայոց լեզու: - 658. ...զոր արարեալ էր *սուրբն գրիգոր* աստուածաբանն յեօթն ամի հայրապետութեան իւրոյ: - 658. Որ **Ժ** թիւ էր ի *սրբոյն գրիգորէ* յետ **ճԺա** ամի անցանելոյ. - 659. Եւ նոյն զքահանայքաղէքն, որ ունի է աւետարան. և զաշխարհական թաղումն, ի յայրարատ գաւառի ի վաղարշապատ քաղաքի ի վկայարանս սրբոյն հռիփսիմի. յետ **ճԺա** ամի *սրբոյն գրիգորի*. զի մինչև ցայն հնովն վարեին: - 659. ...որ **Ժդ** թիւ էր ի *սրբոյն գրիգորէ:* - 659

***ՍՈՒՐԲ ԳՐԻԳՈՐ ԱՍՏՈՒԱԾԱԲԱՆ*** - Ութերորդ վկայութիւն, զի ասէ *սուրբն գրիգոր աստուածաբանն* թէ՝ «որդի և հոգին սուրբ են իբրև զկրկին շառաւիղ, որք մինչ առ մեզ առաքեցին զպայծառութիւնց իւրեանց»: - 65. Դարձեալ՝ որպէս մի է բնութիւն բանին մարդացելոյ ըստ սրբոյն կիւրղի, մի է և ներգործութիւնն ըստ *սրբոյ աստուածաբանին գրիգորի* և դիոնէսիոսի: - 174

***ՍՈՒՐԲ ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՒՈՐԻՉ*** - Վեցերորդ, զի թէ կինն կարէ մկրտել ի հարկաւոր ժամանակի, *սուրբն գրիգոր լուսաւորիչն* քանի ևս առաւել պատւական էր քան զմի կին. - 589. Իսկ վասն գրակարդացի և նկարեալ եկեղեցւոյ. և վասն զնշխարս ի հանգիստ փոխելոյ. այս ամենայն յիշատակ է մեզ ի *սրբոյն գրիգորէ՛ լուսաւորչէն* մերմէ: - 659

***ՍՈՒՐԲ ԳՐԻԳՈՐ ՆԻՒՍԱՑԻ*** - Այլ կառավարի երբեք ի կամս նախախնամութեան առաջին պատճառին. որպէս ասէ *սուրբն գրիգոր նիւսացին* ի գիրս որ յաղագս բնութեան մարդոյն: - 13. Նոյնպէս և նա գիտութեան էր պատճառ բարւոյ և չարի որպէս ասէ *սուրբն գրիգոր նիւսացին*: - 223. Վեցերորդ՝ զի ասէ *սուրբն գրիգոր նիւսացին* ի գիրս կազմութեան եթէ առաջին կեանք դրախտին էր կուսութիւն և անապականութիւն և հրեշտակաց նմանութիւն. և յետ յարութեանն վերըստին դառնամք յառաջին կեանս դրախտին. յանապականութիւն և ի հրեշտակաց հաւասարութիւն: - 225-226. Զոր ընդ դերևս հանէ *սուրբն գրիգոր նիւսացին* ի գիրս կազմութեան այսպէս եթէ, որք զհոգին յառաջ ասեն գոյանալ քան զմարմին. և վասն մեղաց եղեալ ի մարմին մարդոյ. որ է՛ համանման բանականութեամբ. և է՛ իներքոյ երկնային կենաց՝ զի մարմնաւո՛ր է: - 252. Եւ դարձեալ պարզ և յայտնի, այսպէս ասէ *սուրբն գրիգոր նիւսացին* եթէ, բանականին շնորհ ընդ լրումն մարդկութեանս թա՛փ էանց ի տեսութիւնն աստուծոյ՝ որքանութիւնն և որպիսութիւնն...: - 258. Այլ անճառ երանութիւնն և առաքինութիւնն է աստուծոյ գեղեցկութիւնն զոր մեզ պարգևեաց. այսինքն մաքրութիւն, անախտութիւն, և ի չարէն օտարութիւն ասէ *նիւսացին սուրբ գրիգոր:* - 271. Իսկ *սուրբն գրիգոր նիւսացին* գեղեցիկ իմն կարգաւ մեկնէ՛: - 274. Բայց *սուրբն գրիգոր նիւսացին* **Ժ** աստիճան դնէ անկման մարդոյն ի դրախտէն ի գիրս կուսութեան: - 280. ...զի անկումն նոցա մահ է նոցա որպէս ասէ *սուրբն գրիգոր նիւսացին:* - 667

***ՍՈՒՐԲ ԳՐԻԳՈՐԻՍ*** - Եւ երրորդն յաթոռս աղուանից *սրբոյն գրիգորիսի* շառաւիղի նորին հսկողի: - 544

***ՍՈՒՐԲ ԳՈՂԳՈԹԱ*** - Եւ **ծ** ամն՝ որ առ որդւով նորին կոստանդեաւ յերկնից լուսափայլեալ ի լեռնէն ձիթենեաց մինչև ի *սուրբ գողգոթա:* - 294

***ՍՈՒՐԲ ԴԻՈՍԿՈՐՈՍ ԱՂԷՔՍԱՆԴՐԱՑԻ*** - Եւ գլուխ ժողովոյն էր *սուրբն Դէոսկորոս աղէքսանդրացի:* - 542

***ՍՈՒՐԲ ԴԻՈԴՈՐՈՍ*** - Իսկ զաքեմայ կարգն՝ *սուրբն դիոդորոս* եպիսկոպոս պամփիլացոց քաղաքի. յառաջին ամի իւրոյ. հրամանաւ մեծին անտոնի և **բ** թեբայեցոցն. և **բ** սկիւթացւոց լերինն: - 659

***ՍՈՒՐԲ ԴԻՈՆԵՍԻՈՍ*** - Դարձեալ ասէ *սուրբն դիոնէսիոս*՝ ի չորրորդ թուղթն. «յիսուս՝ որ անդրանիկ է քան զամենայն, ընդ ամենայն մարդկան էապէս շարակարգեալ. որպէս նոյն ըստ բոլորութեան ճշմարտապէս մարդ եղեալ»: - 83. Որպէս ասէ *սուրբն դիոնէսիոս* եթէ՝ «ո՛չ ըստ աստուծոյ զաստուածայինսն գործեալ. և ո՛չ ըստ մարդոյ զմարդկայինսն»: - 85. Դարձեալ՝ հասարակն և յատուկն աստուածային՝ բազմազանապէս ասի ի *սրբոյն դիոնիսեայ:* - 105. Որպէս ասէ *սուրբն դիոնէսիոս* յաստուածային անուանսն **բ** գլուխն, «զի միայն աղբիւր գերագոյ աստուածութեանն է հայր. և ո՛չ հակադարձին առ միմեանս»: - 106. *Սուրբն դիոնէսիոս* ասէ, «եռակի է ձև ամենայն մարմնոց». այսինքն լայնութիւն. երկայնութիւն. խորութիւն: - 129. Իսկ թէ ո՞րպէս ի մի և նոյն պարզ պարգևացն զանազանապէս ընկալցին, ասէ *սուրբն դիոնէսիոս*՝ «ըստ հնչման ձայնի»: - 131. Նախ՝ ըստ *սրբոյն դիոնէսիոսի* որ ինն ասէ գոլ զդասս կարգապետութեան նոցա: - 134. Այլ թէ ըստ կարգին իմացիս՝ հետևիմք առաջասացեալ *սրբոյն դիոնիսեայ*. որպէս աւանդեցաւ նմա յառաքելոյն պօղոսէ յափշտակելոյն յերրորդ երկինս: - 135. Յէպէտ և զայս կարգ փոխեն ոմանք և զզօրութիւնն և զպետութիւնն աւանդեն որ մեզ ո՛չ է հետևելի. այլ *սրբոյն դիոնիսեայ* որպէս ասացաք: - 135. Զի գիտեմք զդոսա ինն գոլ դասս ըստ *սրբոյն դիոնիսեայ*. և երիս երրեակս որոշեալ ի դէմս Երրորդութեանն: - 141. Իսկ շարժումն է եռակի ըստ *սրբոյն դիոնիսեայ*. այսինքն բոլոր՝ ուղղակի՝ և կողմնաւոր: - 142. Իսկ ի նոյն ինքն՝ առաջին է նախախնամութիւնն առ աստուած, և ապա՛ ստեղծումն. զի վասն նախախնամական բարութեանն կամեցաւ ստեղծանել զեղեալքս. որպէս ասէ *սուրբն դիոնէսիոս* ի **դ** գլուխն որ յաղագս երկնայնոցն քահանայապետութեանց: - 157-158. Յնգետասաներորդ՝ ասէ *սուրբն դիոնէսիոս*՝ թէ վասն այն տայ աստուած սրբոցն նեղութիւնս և փորձութիւնս, զի նեղութիւնն սիրելի և փափագելի՛ է նոցա...: - 159-160. Իսկ գործ պոռնկութեանն զկնիք կուսութեանն շրջէ և զբնութիւնն ապականէ. որպէս ասէ *սուրբն դիոնէսիոս* յերկրորդ ճառն որ յաղագս երկնայնոց քահանայեապետութեանց...: - 165. Որպէս դիմոփիլոս կիսասարկաւագ զքահանայ ոմն արտաքսեաց յեկեղեցւոյ. զոր յանդիմանէ՛ *սուրբն դիոնէսիոս* յութերորդ թուղթն իւր: - 539. Ասեմք թէ՝ առնեմք ըստ ազգին յունաց. որ որպէս քահանայն պատարագէ և մկրտէ, նոյնպէս և դրոշմէ ըստ *սրբոյն դիոնիսեայ:* - 594. Դարձեալ՝ խառնումն է աստուծոյ իմաստութեանն ընդ մարդկան. որ բանիւն խառնեալ միաւորեցաւ. որպէս ասէ *սուրբն դիոնէսիոս:* - 596. ...որպէս գրէ *սուրբն դիոնէսիոս* ի թուղթն տիտոսի: - 596. Այսպէս ասէ *սուրբն դիոնէսիոս* եթէ՝ մաքրելիք են **ե** դասք. յորոց վերայ իշխէ սարկաւագն և գործէ՛ զմաքրականն: - 608. ...որպէս ասէ *սուրբն դիոնէսիոս* եթէ՝ հոգին և մարմինն առցէն ի բոլոր յարութեանն: - 667. ...որպէս ասէ *սուրբն դիոնէսիոս:* - 668. Զայս ասէ *սուրբն դիոնէսիոս:* - 669. Եւ տանին առ աւագ երէցն զոր քահանայապետ կոչէ *սուրբն դիոնէսիոս*...: - 671. Եւ զհասարակ ժողովուրդն ի դասս հրեշտակաց ըստ *սրբոյն դիոնիսեայ:* - 672. Երկրորդ, ասէ *սուրբն դիոնէսիոս* ի ննջեցելոց կատարմանց գլուխն՝ եթէ մաքրելոց հոգին հասեալ ի վախճան՝ յայտնի և մերձակայ տեսանէ զամենայն փառս և զպսակ զոր ընդունելո՛ց են նոքա ի յարութեան աւուրն: - 691. Եւ այս է որպէս ասէ *սուրբն դիոնէսիոս,* «աստ մաքրի, յետ մահու լուսաւորի, և ի յարութեան կատարելագործի ի փառս ամենասուրբ Երրորդութեանն ամէն»: - 705. իսկ ի յարութեանն անփոփոխ սերտութեամբ հաստատի ասէ *սուրբն դիոնէսիոս*. վասն որոյ անփոփոխ և անմահ միաւորի ընդ մարմնոյ: - 723. Եւ քրիստոս աստուծոյ զօրութիւն և աստուծոյ իմաստութիւն ի հօրէ ըստ *սրբոյն դիոնիսեայ:* - 770

***ՍՈՒՐԲ ԵԿԵՂԵՑԻ կամ ԵԿԵՂԵՑԻ ՍՈՒՐԲ*** - Վեցերորդ՝ հակառակէ քրիստոսի՝ և քրիստոնէից. և սոքա հակառակին *սուրբ եկեղեցւոյ* և ուղղափառ հաւատոյ. և զոր բանն աստուած առեալ զմարդկայինս բնութիւն միաւորեաց ընդ իւրում աստուածութեանն՝ սոքա ընդդէմ նմին որոշեն զբանն ի մարմնոյն. զի մի՛ իցէ աստուած մարդացեալ ըստ նոցա՝ և մարմինն աստուած. և պատճառս հայթայթելով պատրեն զմարդիկ: - 35. Զորս նզովեալ որոշէ՛ *սուրբ եկեղեցի:* - 68. Իսկ *եկեղեցի սուրբ*՝ ընդ դէմ արիոսի մի բնութիւն խոստովանի. և ընդ դէմ սաբէլի գ անձինք: - 81. Զորս զայսպիսի խորհօղսն նզովէ՛ *եկեղեցի սուրբ:* - 82. Եւ այսոքիկ նզովեալք են ի հոգւոյն սրբոյ ի ժողովն եփեսոսի և այլոցն. և եղիցին ի նզովս *սուրբ եկեղեցւոյ:* - 82. Եւ կամ զմի բնութիւնն ուրացեալ. և կամ առ աչօք ասացեալ. զորս նզովէ՛ *սուրբ*

*եկեղեցի* աստուծոյ: - 82. Երրորդ՝ *եկեղեցի սուրբ* օրինա՛կ է դրախտին: - 225. Այլ և *եկեղեցի սուրբ* շինեալ ի քրիստոսէ հոգևոր տապան մեզ ի մէջ ծովու աշխարհիս՝ որ զհոգիս մեր փրկէ ի ջուրց մեղաց: - 293. Իսկ երեսունՆ, մինչ ի մեծն թէոդոս. որ եբարձ զամենայն մեհեանս կռոցն և բարձրացաւ սուրբ խաչն ի գլուխս գմբեթարդ *սուրբ եկեղեցեաց:* - 294. Երկրորդ՝ կոչի զգեստ նմա արտաքին և փոփոխական՝ հաւատացեալ անդամք քրիստոսի՝ *եկեղեցի սուրբ*...: - 318. Այսպէս կոչի և զգեստ մարմնոյն. զի արտաքին զգեստն որպէս ծիրանին թագաւորի ա՛յլ է ի զգեցողէն և պատահական նմա և փոփոխական. այսպէս զգեստ ո՛չ ասի մարմին նորա. այլ *եկեղեցի սուրբ* որպէս ասացաւ: - 319. Դարձեալ՝ տապանակն է *եկեղեցի սուրբ* անփուտ ի մեղաց գիճութեանց: - 345. Դարձեալ՝ աշտանակն նշանակէ՛ *զեկեղեցի սուրբ:* - 347. Դարձեալ, *եկեղեցի սուրբ*՝ է՛ քաղաք ապաստանի. և քահանայապետ ի նմա՛ պատարագն. յոր մտեալ աղօթեմք և թողութիւն գտանեմք: - 392. ...*եկեղեցի սուրբ*՝ պատարագաւ և աղօթիւք և ողորմութեամբ հատուցանէ՛ զպարտս նոցա և ազատին: - 392. Չորրորդ՝ այժմ տեսանեն աչօք *զեկեղեցի սուրբ* որ զկախեալ ի նոցանէ՝ աստուած հաւատայ զնոյն մեռեալ և կենդանի, և ո՛չ հաւատան: - 405. Եւ տէր մեր զհաւատացեալս իւր հանեալ ի մեղաց շինեաց սեղան և *եկեղեցի սուրբ*. և զմեղս երկոտասան անդամոցն ընկղմեալ կորոյս: - 418. Խօսեցաւ օրինօք նախ և նշանեաց *զեկեղեցի սուրբ* հարսն երկնաւորին: - 422. Նա՛խ՝ զի կոյսն սուրբ՝ նշանակեսցէ *զսուրբ եկեղեցի* խօսեցեալ քրիստոսի որ նմանապէս է կոյս: - 461. Բազում պատճառաւ *եկեղեցի սուրբ* խոստովանի աստուածածին զկոյսն: - 466. *Եկեղեցի սուրբ* նոր ժողովուրդ կոչեցաւ աստուծոյ. զի հաւատով արդարացաք և եղաք ժողովուրդք և ո՛չ ըստ հնոյն օրինօք: - 528. Նոյնպէս քրիստոս է փառք և ցնծութիւն, բան և իմաստութիւն *եկեղեցւոյ սրբոյ:* - 532. Եւ ժողովեին հարքն սուրբք խլիչք ապականութեան, և սրբէին *զեկեղեցի սուրբ:* - 544. Ժողովեալ բազում եպիսկոպոսաց յամենայն կողմանց. և իշխանաց և մեծամեծաց հայոց. կարգեցին սահմանս կանոնականս **իբ** գլխով. և պայծառացուցին *զեկեղեցի սուրբ:* - 545. Եւ դարձեալ տամ զքեզ ի խորհուրդ *սուրբ եկեղեցոյ*. զոր ինչ գործեսցես, եղիցի քեզ ի բարեգործութիւն և ի փառս հանդերձեալ կենացն ամէն: - 602. Եւ ապա՛ միաւորի ընդ *եկեղեցի սուրբ* ի ժառանգութիւն արաքայութեանն: - 610. Զի թէպէտ և *եկեղեցի սուրբ* կարէ՛ բաժանել վասն արգելմանցն...: - 610. Եւ *եկեղեցի սուրբ*. հարսն անախտ. և դշխոյ անարատ ընդ աջմէ փեսային քրիստոսի: - 614. ...նոյն օրհնութիւնն իջցէ ի *սուրբ եկեղեցիս:* - 615. Իսկ արմտիք և արդիւնք մեր խաչիւն ժողովեցան *յեկեղեցի սուրբ:* - 616. Իսկ հինգերորդն ի նորոյս. զի խաչիւն քրիստոսի գնեցաւ և ազատեցաւ *եկեղեցի սուրբ:* - 616. Վեցերորդ՝ զի նոյն է խորհուրդն որ անդ ի վերայ խաչին պատարագեցաւ, և այժմ *յեկեղեցի սուրբ* ի խաչ սեղանին: - 616. Նոյն սարասիւք այժմ ի ձեռն փրկչին մերոյ յիսուսի՝ տապանակաւ խաչին և աղօթիւք *սուրբ եկեղեցւոյս*՝ բարձրացեալ պարիսպն չարութեան եօթնից զգայութեանց մեղաց որոշօղ ի մէջ մեր և աստուծոյ, կործանեսցի ի սպառ: - 627. Եւ տեառն մերոյ *սուրբ եկեղեցի*. և վերջինն օրն է յաւիտենից: - 629. Յաղագս որոյ *եկեղեցի սուրբ* ուսեալ յաւետարանչէն և ի սրբոց հայրապետացն, երգեմք զերեքսրբեանն ի դէմս որդւոյ: - 633. ...*եկեղեցի սուրբ* և աղօթք քահանայից հատուցանէ զպարտս նոցա և քաւէ...: - 701. Այլ հրէայքն յայնժամ դարձցին ի հաւատս քրիստոսի. և *եկեղեցի սուրբ* խաղաղութեամբ հանգիցէ մինչ ի կատարած աշխարհի...: - 709. ...ջրարբիք են հաւատով և յուսով մեռեալքն. և հանապազ *յեկեղեցի սուրբ* յիշատակութիւն նոցա կատարի...: - 721. Եօթներորդ կոչի հնձան *եկեղեցի սուրբ*. ուր ամենայն առաքինութիւնք մեր ժողովին. ու ճմլէ ապաշխարութեամբ և բաշխէ՛ զգինի շնորհաց. - 749. Արքայութիւն ասի և *եկեղեցի սուրբ:* - 754

***ՍՈՒՐԲ ԵՊԻՓԱՆ*** - Վասն է՛ր դիոնէսիոս ինն դասս հրեշտակաց ասէ. և իրինոս և *սուրբն եպիփան* **է** երկինք և **է** դասք ասեն: - 134. Զի յետ քրիստոսի դադարեաց սատանայ զհոգիսն ի դժոխս տանելոյ որպէս ասէ *սուրբն եպիփան:* - 153. Եւ ա՛յսպէս մեկնեն զանուանս **բժ**ան ականցն *սուրբն Եպիփան* և մեծն Անդրէաս ի գիրս տեսլեանն Յոհաննու: - 349. Ա՛րդ՝ որպէս կենդանեաց շնորհեաց զթողութիւն, նոյնպէս և հոգւոցն առ հասարակ ազատութիւն. որպէս ասէ *սուրբն եպիփան*...: - 507. Իսկ *սուրբն եպիփան* սահմանէ՝ «հաւատն է կամաւոր և ստոյգ նախաճաշակումն յայնմ ճշմարտութենէ որ ո՛չ է յայտնեալ»: - 571. Չորրորդ, ասէ *սուրբն եպիփան* ի հաւատոց գիրն, եթէ որպէս հոգին միայն դատի ըստ բանի հերձուածողացն զի կարէ՛ ասել մարմնոյն եղեալ զյանցանքն: - 691

***ՍՈՒՐԲ ԵՐՐՈՐԴՈՒԹԻՒՆ կամ ԵՐՐՈՐԴՈՒԹԻՒՆ ՍՈՒՐԲ*** - Արդ՝ յաջ և յահեակ խոտորին հերձւածօղք. որպէս սաբէլ յաջ խոտորեալ՝ ի մի բնութիւն և ի մի անձն ժողովեաց *զԵրրորդութիւնն սուրբ:* - 80. Ա՛րդ՝

միութիւն *սուրբ Երրորդութեանն* բազում է և յայտնի: - 104. Երրորդ՝ հասարա՛կ է ի *յԵրրորդութիւնն* միութիւնն *սուրբ*. զի մի է հայր. մի որդի. մի հոգի: - 106. Ըստ որում մինն ի *սուրբ Երրորդութենէն* բանն աստուած հաղորդեցաւ բնութեան մերում անքակ միութեամբ. և եղև աստուածն կատարեալ՝ մարդ կատարեալ: - 106. Նախ՝ զի մինն ի *սուրբ Երրորդութենէն* մարդացաւ: - 106. Այսպէս է միութիւնք և որոշմունք որ է հասարակ և յատուկ ի *սուրբ Երրորդութիւնն:* - 106. Չորրորդ՝ զի երեքն զնոյն բնութիւն ունի զերիցն. նոյնպէս *Երրորդութիւնն սուրբ* նո՛յն է բնութեամբ: - 107. Իսկ ի *սուրբ Երրորդութիւնն* մինն պակաս չունի քան զերկուքն. և ո՛չ երկուքն աւելի քան զմինն. զի հայր ունի զամենայն լիութիւն որդւոյ և հոգւոյ: - 108. Իսկ ի *սուրբ Երրորդութիւնն* հայր կատարեալ. որդի կատարեալ. հոգի կատարեալ. և կատարեալն ո՛չ յաւելու և ո՛չ նըւազի: - 108. Իսկ *սուրբ Երրորդութիւնն* անփոփոխելի է. զի հայր ծնաւ զորդի և բղխեաց զհոգին. և ո՛չ փոխեցաւ ի գոլոյն հայր: - 108. Իսկ ի *սուրբ Երրորդութիւնն* անբաժանելի՛ է հայր ի յորդւոյ և ի հոգւոյ. որդի ի հօրէ և ի հոգւոյ. և հոգի ի հօրէ և յորդւոյ: - 108. Համագոյ և միասնական *սուրբ Երրորդութեանն* ո՛չ է առաջին և վերջին. ո՛չ մեծ և փոքր. և ո՛չ երէց և կրտսեր: - 109. Առաջինն որ է տըպաւորական աստուածաբանութիւն՝ է՛ ի դէմս *սուրբ Երրորդութեանն* և մի աստուածութեանն. թէ ո՞րպէս է մի. ո՞րպէս երրեակ. և ծնօղ. և ծնունդ. և բղխումն. և վասն մարդեղութեանն քրիստոսի: - 122. Իսկ աստ այլապէս բաղդատի արեգակն *սրբոյ Երրորդութեանն* ըստ այսմ օրինակի: - 124. Զայս ոմանք ի վերայ *սուրբ Երրորդութեանն* մեկնեն այսպէս. սիրօղ է հայր. սիրելի որդի. և սէր հոգին սուրբ: - 128. Երրորդն իմանալի. յորում *Երրորդութիւնն սուրբ* ի նոցանէ դեմ յանդիման նկատի: - 180. Եւ է՛ անեղական լոյս՝ *Երրորդութիւնն սուրբ:* - 185. Եւ երկրորդ՝ զի **գ** բարեխօս ունիմք առ *Երրորդութիւնն սուրբ:* - 295. Եւ բաց յայսցանէ և արտաքոյ սոցա, Լեառն պարարտ կոչի *սուրբ Երրորդութիւնն* ի մարգարէէն: - 320. Նախ գիտելի է, զի **գ** նշան տայ մովսէս ի դէմս *սրբոյ Երրորդութեանն:* - 332. Եւ **գ** չափն զիաւատն մեր որ ի *սուրբ Երրորդութիւնն* է նշանակէ՛: - 340. Այլ իմանալեացն դասք վկայք են Նա՛խ՝ զի ի դրունս են *սուրբ Երրորդութեանն* և տեսօ՛ղք են անճառելի փառացն: - 345. Զի աթոռք և քերովբէք շուրջ են զավ. և անըՆդմիջաբար ուսեալք ի *սուրբ Երրորդութենէն*, որ ուսուցանեն զներքինսն: - 345. Երկրորդ, դէպ յարնելս, յանուն *սրբոյ Երրորդութեանն*. զի ցուցցի թէ վասն որո՞յ է: - 366. Նա՛խ՝ **գ** օրն հաւատն է *յԵրրորդութիւնն սուրբ.* և ապա՛ սրբութիւն գործոց **է է** զգայութեամբ: - 384. Տասներորդ՝ զի սողոմոն ի քարանց ձեռագործաց կազմէր տաճար աստուծոյ. իսկ քրիստոս զբանական հոգիս մարդկան շինէր օթևան *սուրբ երրորդութեանն:* - 442. Տեսակն է կոչումն *սուրբ Երրորդութեանն* որ եղև անդ: - 487. Նախ զայս ասեմք թէ՝ համաբուն և համապատիւ է *Երրորդութիւնն սուրբ*. զի միոյն փառքն երիցն է և երիցն միոյն: - 525. Ասեմք առ այս, թէ *յԵրրորդութիւնն սուրբ* մի է բանն և իմաստութիւնն և բնութիւն և կեանք և ներգործութիւն և այլն ամենայն. բաց յառանձնութենէն որ է ծնօղ ծնեալ և բղխեալ: - 530. Ա՛րդ՝ յորժամ ամենայն ինչ նոյն է *սուրբ Երրորդութեանն*, որով յա՛յտ է՝ թէ հայր խօսի, և թէ որդի, և թէ հոգին սուրբ, մի և նոյն բանիւն խօսին. ապա ուրեմն ո՛չ է անյարմար եթէ հայր նոյն բանիւն վկայեսցէ ի վերայ որդւոյ. զի որդի և հայր նշանակէ զյատկութիւն անձանցն: - 530-531. Չորրորդ՝ զի մկրտութիւնն է անքակտելի կնիք ի հոգին. որպէս կարգն և դրոշմն. վասն որոյ ո՛չ կրկնին որք յանուն *սուրբ Երրորդութեանն* մկրտեցան: - 590. Եւ այնք որ ո՛չ խոստովանին զմիասնական *սուրբ Երրորդութիւնն*, մկրտելի է զմկրտեալն ի նոցանէ ի փառս ամենասուրբ Երրորդութեանն: - 590. Եւ «աստուած քաւեա՛ զիս զմեղաւորս» առ *Երրորդութիւնն սուրբ*. որպէս տէրն ուսոյց մաքսաւորին: - 621. Այլ **գ** թագաւորքն պահոց, և **գ** տուն յուտիքն, ի դէմս *սուրբ Երրորդութեանն:* - 628. Իսկ տէր երկնիցն, ընդ հրեշտակս օրհնաբանել *զսուրբ Երրորդութիւնն*...: - 628. Երրորդ՝ զի չորրորդութիւն մուծանեն *յԵրրորդութիւնն սուրբ*...: - 633. Հասարակ, որպէս ի սկզբանէ մինչև ցաւարտումն առ *Երրորդութիւնն սուրբ* աղերսեմք: - 633. ...այսպէս և հոգին զմայլի տեսութեամբ *սուրբ Երրորդութեանն*...: - 672. ...այլ նախ օրհնել և սրբել անուամբ *սուրբ Երրորդութեանն:* - 676. Երիցս կնքելն զգերեզմանն, Նախ ի խորհուրդ *սուրբ Երրորդութեանն:* - 679. Ասեմք թէ որ ունին զհաւատ *սուրբ Երրորդութեանն* և անկան ի սխալանս աշխարհի...: - 683. Եւ ամիսն **գ** տասամբ բաղկանայ. զոր ի հաւատ *սուրբ Երրորդութեանն* և **ժ** բանեան օրինացն յանցաւոր գտաք: - 683. ...զոր վասն յոյժ ժտելոյն՝ յարուցեալ միտքն տացէ զխոստովանութիւն հաւատոյ *սուրբ Երրորդութեանն*. զոր յերիս նկանակս յառակեաց: - 697. Նախ ի նոյն առ ինքն ի դէմս *սրբոյ Երրորդութեանն*. հասարակ գոլ ամենայնիւ. աստուածութեամբ բնութեամբ կամօք և այլն: - 746. Նախ յերանելի *սուրբ երրորդութենէն:* - 762. Հաւատ ի միասնական *սուրբ*

*Երրորդութիւնն:* - 769. Օրինակ. Աստուած մատանի. և միտք մոմ. և հաւատն տիպ ի մատանոյն. այս է *սուրբ Երրորդութիւնն:* - 769

***ՍՈՒՐԲ ԵՒԱԳՐԻՈՍ*** - Իսկ դիւականն ընդդէմ այսմ՝ վասն մոլորութեան զանազան երևմունս ցուցանէ աղտեղութեան. և կամ զբարին խափանել ջանայ. որպէս ի չարչարանս տեառն վասն կնոջն պիղատոսի ընթերցեալ լինի. և որպէս գրէ *սուրբն Եւագրիոս:* - 268. Երրորդ վկայ զի ասէ *սուրբն եւագրիոս.* «պահքն քո ի մեծի շաբաթուն մինչև գթ ժամն լիցի»: - 509. Յորում զորոգինէի գրեալսն խոտեցին. և *զսուրբն եւագրիոս* միայնակեաց՝ և զհրաշալի այրն աստուծոյ զդիդիմոս՝ նզովեցին: - 543. Նաև զամենայն գլխաւոր մեղս ընդ հզօր խորհուրդ ասէ *սուրբն եւագրիոս*. վասն զի նախ ի խորհուրդն տնկի ամենայն սերմն մեղաց. և ապա ի մարմինն բուսանի և աճէ: - 557. Իսկ *սուրբն Եւագրիոս* ը ասէ զխորհուրդս հզօրս. այս է: - 560. Նա՛խ որպէս ասէ *սուրբն եւագրիոս*՝ հաւատն ի հայր, յոյսն առ որդի, սէրն ի հոգին սուրբ: - 577. Իսկ որ մարմնական խնդութիւնն է և դիւական՝ ընդ դէմ այսմ ամենայնի. և ի վախճանի տրտմութիւն հետևի որպէս ասէ *սուրբն եւագրիոս:* - 584. Հինգերորդ, զի «զոհութիւնն ընդ բարի գործս խառնեալ՝ կրկին պարսպիւք ամրանամբ» ասէ *սուրբն եւագրիոս:* - 626. Այլ և ը խորհրդով պատերազմն սատանայի. որպէս գրէ *սուրբն եւագրիոս:* - 627. Երրորդ, զի ասէ *սուրբն եւագրիոս*, թէ «պահեա՛ զօր չորեքշաբաթի և ուրբաթի յամենայն շաբաթս»: - 652. Վասն այն ասէ *սուրբն Եւագրիոս* առ միայնակեացս թէ «գինի ամենևին մի՛ ըմպիցես»: - 656. ...որպէս *սուրբ եւագրիոս* ի լուսաւոր պատերազմն ասէ՝ «յորժամ սատանայ ի հուր գեհենին կապեսցի ի քէն, և զյետին նաքարակիտն պահանջեսցեն»: -704

***ՍՈՒՐԲ ԵՓՐԵՄ*** - Իսկ *սուրբն եփրեմ* ասէ, մետասան թիւ գտանի ի մէջ երից աւուրցն՝ ստեղծման լուսնին: - 191. Զի ըստ *սրբոյն եփրեմի*՝ ապաշխարութիւնն է վճարք մեղաց և նիւթ պսակաց: - 413. Այլ *սուրբն եփրեմ*՝ զշրջանս երկնից կացեալ ասէ ընդ լուսաւորացն: - 416. Այսպէս *սուրբն եփրեմ:* - 424. Այլ աստ ասէ *սուրբն եփրեմ* եթէ՝ խրատն դաւթի եղև հատուցումն մեղացն. այլ և պարտք բարեաց առ աստուած ի ցոյց օրինի ամենայն ապաշխարողաց: - 434. Այլ *սուրբն եփրեմ* ասէ ոչ: - 443

***ՍՈՒՐԲ ԵՓՐԵՄ ԽՈՐ ԱՍՈՐԻ*** - ...զոր արարեալ է *սրբոյն եփրեմի խորին ասորւոյ* ի նիկոմիդացոց քաղաքին: - 658-659

***ՍՈՒՐԲ ԹԱԴԷՈՍ*** - Ասեմք թէ՝ սուրբն գրիգոր ի կեսարիայ ձեռնադրեցաւ ո՛չ յայլմէ առաքելոյ, այլ ի *սրբոյն թադէոսէ*. որոյ էր վիճակս հայոց: - 548

***ՍՈՒՐԲ ԻՍԱՀԱԿ*** - Ի բ ամի թագաւորութեանն, առաքեաց *սուրբն իսահակ* և ետ բերել զսերմնօրինէքն զկալոյ և զհնձանին...: - 658

***ՍՈՒՐԲ ԻՐԻՆՈՍ*** - Որպէս ասէ *սուրբն իրինոս* զբանս յուստիանոսի, թէ բարուք ասաց վկայն յուստիանոս եթէ՝ «մինչ ի գալուստն քրիստոսի ո՛չ իշխէր հայհոյել զաստուած, զի յո՛յս ունէր դառնալոյ ի փառս. այլ յորժամ լուաւ զպարտութիւն իւր և զարտաքսիլն ի փառաց, ապա քարացաւ ի չարութեան իմաստութեան սիրտ նորա. և անամօթաբար հայհոյէր զնա և մատնիւր յաւիտենից տանջանացն»: - 153. Այլ որք ուղիղ դատեցան վարդապետք եկեղեցւոյ ըստ տեսլեանն յօհաննու. որպէս մեծն անդրէաս և համախոհք նմին *սուրբն իրինոս*, եպիփան, և բասիլիոս: - 687

***ՍՈՒՐԲ ԼՈՒՍԱՒՈՐԻՉ*** - Եւ այս ի խնդրոյ *սրբոյ լուսաւորչին* մերոյ ի պատիւ ազգիս հայոց: - 509. Եւ *սուրբ լուսաւորիչն* զոր ի ժամանակին այնմիկ էր՝ զա՛յն կարգեաց ի մերս եկեղեցի. և ունիմք հաստատապէս: - 599

***ՍՈՒՐԲ ԼՈՒՍԱՒՈՐԻՉ ԳՐԻԳՈՐ*** - Եւ ի հայք վասն *սուրբ լուսաւորչին գրիգորի:* - 549. Իսկ մերս դաւանութիւն ամենայնիւ նոյնն եկաց մնաց զոր ունէր նախ ի *սրբոյն գրիգորէ՛ լուսաւորչէ* և ի նմանեաց նորա: - 551

***ՍՈՒՐԲ ԽԱՉ կամ ԽԱՉՆ ՍՈՒՐԲ*** - Դարձեալ՝ տապանն չորեքկուսի՝ է՛ *սուրբ խաչն* քառակուսի. որ ժողովէ՛ յերկրպագութիւն իւր յամենայն ազգաց և լեզուաց: - 294. Իսկ երեսունն, մինչ ի մեծն թէոդոս. որ եբարձ զամենայն մեհեանս կռոցն և բարձրացաւ *սուրբ խաչն* ի գլուխս գմբեթարդ սուրբ եկեղեցեաց: - 294. Եւ տօն *սրբոյ խաչին*. զի արմտեաց և արդեանց մերոց ժողովումն է *սուրբ խաչն* փրկչական: - 341. Եւ խաչիւն քաւեաց զմեզ. վասն որոյ *սուրբ խաչ* կոչի: - 345. Եւ նշանակէ՛ ի մեզ զտօն *սրբոյ խաչին*. զի նա՛ է քաւութիւն մեր: - 373. Երրորդ, *սուրբ խաչն* աստուածընկալ դալար զօրութեամբ. շառաւիղ թևն. պտուղ քրիստոս ծաղկեալ արեամբ և ջրով: - 382. Այս քան ըստ նշանակութեան *սրբոյ Խաչին:* - 494. Եօթներորդ՝ զի պսակ եկեղեցւոյ և փառք է՛ *սուրբ խաչն*

տէրունական. որպէս ի գլուխն է կանգնեալ: - 616. Վասն որոյ և մեք միշտ ի նոյն քանիս ամսոյն *սուրբ խաչին* և եկեղեցւոյ տօն կատարեմք: - 617. Տասներորդ խաչի **դ** տօնն. զոր ի *սուրբ խաչին* է. և երևմանն. և վարագայ խաչին. և խաչգիւտն: - 649. այսինքն յորժամ զճառագայթ բազում նշանացս առ ինքն ժողովէ *խաչն սուրբ*՝ յայնժամ ամենայն կարծիք լուծանին: - 732. Եւ **դ** օր ի *սուրբ խաչին* կարգն: - 649. Արդ ցուցցուք թէ ճշմարիտ անապական է *սուրբ խաչն* բնական քննութեամբ և սուրբ գրոց վկայութեամբ: - 733. Արդ՝ որոյ գործն յաւիտենական է, և նոյն ինքն անապական է ասէ փիլիսոփայն. ապա ուրեմն անապական է *սուրբ խաչն:* - 734. Արդ որ մայրն է կենդանութեան, նա անապական է. այսինքն է *սուրբ խաչն:* - 734. Ապա ուրեմն անապակա՛ն է *սուրբ խաչն:* - 734. Հինգերորդ՝ ծառ կենաց է փրկական փայտն կենդանարար *սուրբ խաչին:* - 768

***ՍՈՒՐԲ ԿԱՐԱՊԵՏ*** - Եւ բաժանեալ զսուրբ տեղիս տնօրինական, ետուն զսուրբ յակոբն պատրիարգարան, և զգողգոթայն, և *զսուրբ կարապետն* և զսնարսն. և արկեալ վիճակս ի վերայ յարութեանն՝ անկաւ հայոց. և տրտմեցան ոմանք յազգէ նոցա: - 548. Իսկ վասն քահանայօրհնէիցն, սուրբն սահա՛կ է արարեալ. յառաջին ամի եպիսկոպոսութեան իւրոյ. ի նաւասարդի ամսեանն որ օր մի էր. և յիշատակ *սուրբ կարապետին* արար զքահանայօրհնէքն: - 659

***ՍՈՒՐԲ ԿԻՊՐԻԱՆՈՍ*** - Եւ թէ ոք ասիցէ, ապա զիա՞րդ նոր եկեալքն ի հաւատս՝ թողեալք զկուռս և զամենայն չար՝ լինէին քահանայք և եպիսկոպոսունք. որպէս *սուրբն կիպրիանոս:* - 166

***ՍՈՒՐԲ ԿԻՊՐԻԱՆՈՍ ԿԱՐԳԵԴՈՆԱՑԻ*** - Իսկ զկարգ մայրօրհնէից՝ *սուրբն կիպրիանոս կարգեդոնացի:* - 658

***ՍՈՒՐԲ ԿԻՒՐԵՂ*** - Այլ սոքա ինքեանց և բազմաց. այսինքն հօտին քրիստոսի. «յափշտակելով ի նմանէ և ինքեանց առնելով» ասէ *սուրբն կիւրեղ*. և յետոյ գրով աւանդեցին զչար աղանդն այլոց չար յիշատակ և ի կորուստ անձանց իւրեանց: - 33. Վասն այն ասէ *սուրբն կիւրեղ* թէ «յետ անճառ միաւորութեանն որ ոք որոշումն դիցէ մարդկութեանն և աստուածութեանն՝ նզովեալ եղիցի»: - 46. Իսկ *սուրբն կիւրեղ* ընդ դէմ նեստորի զինէր...: - 79. Վասն որոյ ասէ *սուրբն կիւրեղ* եթէ՝ ո՛չ մարդն աստուածացաւ, այլ աստուած բանն էջ յարգանդ կուսին և առեալ հոգի և մարմին ի նմանէ՝ աստուածն մարդ եղև. ըստ այնմ թէ՝ «բանն մարմին եղև»: - 79. Եւ *սուրբն կիւրեղ* և աթանաս ասեն, «մի՛ է բնութիւն բանին աստուծոյ մարմնացելոյ»: - 79. *Սուրբն կիւրեղ* ընդդէմ նեստորի՝ որ **բ** բնութիւն բաժանեալ ասէր քրիստոսի՝ ասաց, մի բնութիւն միաւորեալ աստուած մարմնացեալ և մարդացեալ: - 79-80. Զնոյն և *սուրբն կիւրեղ* գրէ առ սուկեսոս թղթին, «Մի ասեմք զքրիստոս աստուած մարդացեալ, և մի զբնութիւն նորա»: - 83. Զի՞նչ զոր ասէ *սուրբն կիւրեղ* ամենայն ուրեք՝ «համանգամայն աստուած և մարդ»: - 90. Ասէ *սուրբն կիւրեղ* ընդ դէմ նոցա թէ՝ «համանգամայն՝» այսինքն բոլորովիմբ աստուած և բոլորովիմբ մարդ: - 90. Իսկ *սուրբն կիւրեղ* մի ասէ վասն անձինն, և նոյն ասէ վասն բութեանն: - 91. Եւ դարձեալ՝ քրիստոսն անուն զմիաւորութիւնն նշանակէ երկուց բնութեանց. ըստ որում աստուածութիւնն էօծ զմարդկութիւնն. որպէս ասէ աստուածաբանն և *սուրբն կիւրեղ:* - 95. Դարձեալ՝ որպէս մի է բնութիւն բանին մարդացելոյ ըստ *սրբոյն կիւրղի*, մի է և ներգործութիւնն ըստ սրբոյ աստուածաբանին գրիգորի և դիոնէսիոսի: - 174. Եւ այս ևս ո՛չ է ընդունելի. զի սոցա պատասխանի տայ *սուրբն կիւրեղ* ի գիրս պարապմանց թէ՝ որ ասաց զպատկերն, իմանամք զնմանութիւնն ի պատկերին որպէս ցուցաւ ի վերոյ. զի ամենայն պատկեր ի հարկէ նմա՛ն է: - 273. Եւ զայս սուտ առնէ *սուրբն կիւրեղ* եթէ՝ որդի է ճշմարիտ պատկեր հօր. և մարդն եղեալն է ի պատկեր որդւոյ: - 273. Դարձեալ ըստ *սրբոյն կիւրղի*՝ տապանա՛կ է տէրն մեր յիսուս քրիստոս. և անփուտ փայտն անապական մարմինն: - 345. *Սուրբն* աթանաս և *կիւրեղ* և այլք՝ զհոգւոյ և զմարմնոյ միաւորութիւնս ասեն բանին մարմնացելոյ: - 477. Եւ «մի է բութիւն բանին աստուծոյ մարմնացելոյ» ասէ *սուրբն կիւրեղ:* - 477. Եւ «մի է բութիւն բանին աստուծոյ մարմնացելոյ» ասէ *սուրբն կիւրեղ:* - 477. Երկրորդ՝ զի ասէ *սուրբն կիւրեղ* ի գիրս պարապմանց՝ եթէ «վասն այսորիկ յերեկոյն լուծանեմք զշաբաթն, իբր ի վաղ առաւօտու յարուցեալ քրիստոսի»: - 509. Ասեմք թէ՝ վաղ առաւօտն և խոր երեկոյն զմէջ գիշերն նշանակեն. որպէս ասէ *սուրբն կիւրեղ* եթէ՝ «վաղ առաւօտն և խոր գիշերն ի մի և ի նո՛յն ընթանան ժամանակ»: - 515. Եւ այս է *սրբոյն կիւրղի* որ յերուսաղէմ: - 572. Եւ *սուրբն կիւրեղ* աղէքսանդրու հայրապետն ի ժողովն եփեսոսի ասաց զմիածին որդի ժամամուտն: - 631. Վասն որոյ ի *սրբոյն կիւրղէ* կարգեալ ասեմք զսուրբ աստուածն ի դէմս որդւոյ: - 631. Եւ *սուրբն կիւրեղ* ասաց ի ժողովն եփեսոսի. զմիածին որդին ձայնիւ ընդ դէմ նեստորի: - 632. ...*սրբոյն կիւրղի* է արարեալ ի դուռն սրբոյն սիօնի. ի **խա** ամի հայրապետութեան իւրոյ: - 658. Եւ որպէս

ասէ *սուրբն կիւրեղ*...: - 670. Արդ՝ առաջին վկայութիւն, ասէ *սուրբն կիւրեղ* ի գիրս պարապմանց ի հարցմունս տիբերեայ եթէ՝ հատուցմունքն հետևին դատաստանին. և դատաստանն գալստեան դատաւորին ի կատարածի: - 691. Պատասխանեմք առ այս որպէս ասէ *սուրբն կիւրեղ* ի գիրս պարապմանց եթէ առակ օրինակ են սոքա արդարոց և մեղաւորաց որ այսպէս լինելոց է ի կատարածի: - 695. Այլ թէ ոչ գոյ դատաստան, նաև ոչ յարութիւն մարմնոյ. և ոչ հատուցումն գործոյ. ապա և ո՛չ գալուստն քրիստոսի որպէս ասէ *սուրբն կիւրեղ:* - 700

***ՍՈՒՐԲ ԿՈՅՍ կամ ԿՈՅՍ ՍՈՒՐԲ*** - Եւ նա՛խ եկաւորի հոգին ամենայն ուրեք. որպէս ի մարգարէսն և ի *կոյսն սուրբ*, և ապա՛ բանն մարմնացաւ. և յետոյ հոգին սուրբ էջ յառաքեալսն և յեկեղեցի մնաց: - 125. Նոյնպէս իմանալի արեգակն քրիստոս ի հայրական ծոցոյ անհա՛ս է բնութեամբ՝ և ի *սրբոյ կուսէն* իբր ի յարևելից ծագեալ. և ջերմ սիրով ի մարդկային ազգս որպէս յարևմուտս խոնարհեալ. և զսառուցեալ բնութիւնս պատեալ. և ի գերեզմանէն ի բարձունս դարձեալ յարևելս առ հայր ամբարձեալ: - 126. Բաղդատութիւն ամպոյ և մեղաց. ամպոյ և *սուրբ կուսին*. և յատկութիւնք փայլման ի հոգին սուրբ: - 155. Դարձեալ՝ աշտանակ *կոյսն սուրբ:* - 347. Վասն է՞ր խօսեցեալ եղև առն *կոյսն սուրբ:* - 461. Նա՛խ՝ զի *կոյսն սուրբ*՝ նշանակեսցէ զսուրբ եկեղեցի խօսեցեալ քրիստոսի որ նմանապէս է կոյս: - 461. Երրորդ՝ շնորհք կուսութեան. որ և սա՛ է յատկական եղանակ. որպէս *սրբոյ կուսին:* - 462. Երրորդ՝ սրբութիւն յատկական. որպէս *սրբոյ կուսին*, բառնայ զսկզբնական մեղս և զարմատն և դիւրասահութիւն մեղանչելոյն մահու չափ և ներելապէս: - 462. Ա՛րդ՝ ունէր *սուրբ կոյսն* զհասարակ շնորհացն մկրտութիւն: - 462. Չորրորդ՝ զի անկասկած լիցի ամենևին և անկարծ ի չարեաց զատուցեալ *սուրբ կոյսն*. ի ձեռն հրեշտակին աւետարանել զյղութիւնն. և ո՛չ ի ձեռն մարդոյ: - 463. Արդ եթէ որդին աստուծոյ եղեալ է կնոջ որդի, ապա ուրեմն *կոյսն սուրբ* մայր է որդոյն աստուծոյ և աստուածածին: - 466. Եւ նոյն է տէրն և աստուածն գոլ. ապա ուրեմն *կոյսն սուրբ* մայր է տն և աստուծոյ: - 466. Առաջին վասն պատգամաց. որպէս գաբրիէլ առ *կոյսն սուրբ:* - 535. Բայց միայն զի խաբէութեամբ աստուածածին ասացին *զկոյսն սուրբ:* - 543. Եւ որպէս հրեշտակապետն գաբրիէլ, նախ ետ զաւետիս *սրբոյ կուսին*, և նա՛ խորհէր ի միտս...: - 610

***ՍՈՒՐԲ ՄԱՐԻԱՄ կմ ՄԱՐԻԱՄ ՍՈՒՐԲ*** - Տասներկու՝ Բաղդատութիւն երից ծնողաց և ծննդոց. այսինքն սառայի, և *մարիամու սրբոյն*, և եկեղեցւոյ: - 283

***ՍՈՒՐԲ ԿՈՅՍ ՄԱՐԻԱՄ*** - ...իսկ ի կատարել զգործ ողորմութեանն՝ ո՛չ ինչ պահանջի, եթէ ոչ կամքն նորա, որպէս երևեցաւ ի մարդեղութիւն բանին աստուծոյ ի *սրբոյ կուսէն մարիամայ:* - 459

***ՍՈՒՐԲ ԿՈՅՍ ՄԱՐԻԱՄ ԱՍՏՈՒԱԾԱԾԻՆ*** - Այլ կամ իբր զիրեշտակս, կամ որպէս ի միոյ լուսոյ բազումք, կամ կուսութեամբ ծնունդ. որպէս *սուրբ կոյսն մարիամ աստուածածին* սրբութեամբ և կուսութեամբ ծնեալ փոխեաց զկարգ բնութեան ծննդեանս որ ի սերմանէ առն և կնոջ. զի սա՛ ծնունդ միայն ի մօրէ՛: - 280

***ՍՈՒՐԲ ՀԱՅՐ(Ք) կամ ՀԱՅՐ(Ք) ՍՈՒՐԲ*** - Վասն որոյ և մեք համաձայն գոլով ուղղափառաց *հարցն սրբոց*՝ դիցուք սուղ ինչ յառարկութեանց նոցա, և ընդ նմին զպատասխանիս: - 35. Երրորդ՝ զի ո՛չ մի որդի և տէր յիսուս քրիստոս խոստովանին որպէս ասեն առաքեալքն և *հարքն սուրբք:* - 66. Եւ երևեալ մարմնովն մի բնութիւն տեսակացեալ և մի անձնաւորութիւն. մի տէր. մի որդի. ըստ *սուրբ հարցն* ուղղափառութեան: - 76. Այլ հետևիմք *հարցն սրբոց*, որք առանց կարծեաց և խոտորմանց՝ զմիաւորութիւնն քրիստոսի անշա՛րժ պահեն: - 83. Եւ որպէս *սուրբ հարքն* ասացին՝ մի է բնութիւն բանին աստուծոյ մարմնացելոյ: - 83. Յաղագս այսորիկ կանոնեցին *սուրբ հարքն* վասն այնպիսեացն ո՛չ կատարել դարձեալ զկարգ քահանայութեան: - 165. Նոյնպէս և զայս եդին *սուրբ հարքն* ի նիկիայ: - 166. Ապա ուրեմն ստուգապէս և յիրաւի՛ է կանոնեալ *սուրբ հարցն*, զի զայնպիսին արգելցեն ի սպասաւորութենէ խորհրդոյն: - 167. Վասն որոյ խոստովանիմք ընդ *սրբոց հարցն* վասն միաւորութեանն մի բնութիւն աստուծոյ բանին մարդացելոյ: - 176. Պատասխանեմք առ այս եթէ՝ փչումն ո՛չ զբանական հոգին ասեն *սուրբ հարքն*. զի մարդ ասելով զհոգի և զմարմին նշանակեաց. և զմարմինն զի ի նիւթո՛յ է՝ ի հողոյ ասաց. այսինքն ի **դ** տարերաց որ է՛ ի հողն. և զհոգին ո՛չ նշանակեաց թէ ուստի՞ է. զի յանէից է ստեղծումն նորա: - 253. Եւ մինչ ի **կ** ա՛մն գործեն զքահանայութիւնն որպէս *սուրբ հա՛րցն* է կանոնեալ: - 379. Առաջին ժողովն եղև ի նիկիայ *սրբոց հարց*. զկնի **յժը**՝ կամ **յլ** ամի ծննդեանն քրիստոսի. և ի **ի** ամի թագաւորութեանն կոստանդիանոսի: - 542. Ընդ դէմ արիոսի կատաղելոյ **յժը** *հարք սուրբք:* - 542. Եւ ժողովեին *հարքն սուրբք* խլիչք ապականութեան, և սրբէին զեկեղեցի սուրբ: - 544. Որ

ի նիկիայ յաւուրս մեծին կոստանդիանոսի ընդ դէմ արիոսի ժողովեցան *հարքն սուրբ*` **յժը**: - 547. Այսցիկ *սուրբ հարց* և սիւնհոդոսաց հնազա՛նդ եմք. և զնոցա կանոնքն ունիմք և զդաւանութիւն, և պահեմք մինչև յելս շնչոյ մերոյ: - 547. Զի ա՛նդ բաժանեցին զբանն ի մարմնոյ. և պատառեցին զկանոն *սուրբ հարցն:* - 547. Այլ և առաքեալքն և հետևօղք նոցա *հարքն սուրբք*`ո՛չ գիտէին զխառնարանն. և դու ուսար և խառնես ջուր և ընդ անիծիւք նոցա մնաս որպէս ցուցաւ ի վերոյ: - 596. Ա՛րդ` հասարակ կանոնք այսպէս եդին *հարքն սուրբք*...: - 611. Իսկ որ երրորդ կրկնի, ի պոռնկութեան սակի գրի ի կանոնս *սրբոց հարց:* - 613. Եւ տե՛ս` զի ամենայն ուրէք զհոգին *սուրբ հօր* աղերսեմք. զի ի հօրէ՛ բղխէ: - 633. Ա՛րդ` ա՛յս քան են կարգեալ *սուրբ հարքն:* - 634. Առաջին և երկրորդն` ծննդեան և մկրտութեանն. զոր ի միասին տօնեմք ըստ կանոնաց *սուրբ հարցն* և տն եղբօրն յակոբայ: - 649. Եւ յորժամ յետոյ *սուրբ հարքն* զմիջին երկոքին շաբաթս բարեկենդանացուցին...: - 650. *Յայր սուրբ*`ուսո՛ մեզ զբան քո: - 659. Եւ այլևս յարմար տեղւոյս այսպէս իմանի. զի *սուրբ հարքն* առաջինք պակաս ունէին զչարչարանս. վասն որոյ ո՛չ կարէին փրկիլ. իսկ քրիստոս եղեալ ըստ մարմնոյ որդի նոցա, զպակասութիւն հարցն չարչարանաց յիւրումն մարմնի էլից: - 781

***ՍՈՒՐԲ ՅՈԳԻ*** - Դարձեալ` անեղն և անսկիզբն աստուած հայր` յինքենէ յառաջ քան զյաւիտեանս ծնաւ և բղխեաց զանեղակից որդին` և *զսուրբ հոգին:* - 114.Նախ` զի տէրութիւնն ակնարկէ՛ առ հայր. և զօրութիւնն առ որդին. և իշխանութիւնն առ իշխանակից *սուրբ հոգին:* - 135. Իսկ լեառն հողեղէն բնութեանս մերում, կամաւ հօր վկայելով ի վերայ նորա` և հաճութեամբ *սուրբ հոգւոյն* աղաւնակերպ իջմամբ, և անքակտելի միացեալ բանիւն եղև լեառն մածեալ մշտնջենաւոր և անեզր յաւիտենիւ բարձրացեալ օրհնութեամբ և առաւելեալ: - 320. Երրորդ` ի գուշակ *սուրբ հոգւոյն* որ այնպէս որոտմամբ և հրեղէն լեզուօք էջ յառաքեալսն: - 341. Եւ **բ** ծիթենիք` զօրութիւն հօր, և *սուրբ հոգին* հովանացեալ ի վերայ նորա: - 347. Եւ յաղագս երից պատճառաց **ը** օր տօնեմք գալստեան *սուրբ հոգւոյն:* - 373. Եւ այժմ, օրհնեալք եղերուք ի շնորհաց *սուրբ հոգւոյն* ասեմք: - 380. Երրորդ` ջուր սրսկման զոպային, է՛ տարածումն աջոյն` և օրհնութիւնն ժողովոյն ի շնորհաց *սուրբ հոգւոյն:* - 384. Ութերորդ` աստ յեկեղեցւոյ ամօթ. և անդ ի *սրբոց հոգւոց*. և յարութեանն առաջի աստուծոյ և հրեշտակաց ոտխ լինելով: - 394. Երեսունք, Վասն գալստեան *սուրբ Յոգւոյն* յետ խաչին, **ծ** պատճառաւ: - 455. Այլ մեք եղբարք ուղեկիցք իմ և դաւանակիցք եղիցուք. շինեալք և հաստատեալք ի վերայ հաւատոյ հիման. անշարժ խարսխեալք ի վերայ յուսոյն քրիստոսի, սեռն և յստակ կատարեալ սիրով *սուրբ հոգւոյն:* - 503. Այլ և աթոռակիցն գոլ հօր և *սուրբ հոգւոյն:* - 521. Նա՛խ` զի չարչարանքն քրիստոսի պատճառ եղև պարգևաց *սուրբ հոգւոյն*, պարտ էր նախկին գոլ. որպէս ամենայն պատճառ նա՛խ է քան զպատճառելին: - 521. Եւ *սուրբ հոգին* զչարութիւնն վարէ՛ և սրբեալ բարեգործէ՛ զհոգին: - 523. Նախ այն է` որ զորդի ընդ հօր և *սուրբ հոգւոյն* փառաւորեմք և օրհնեմք **գ** անձինք ի միում բնութեան. և ո՛չ որպէս հինքն հրէական օրհնութիւնս. որք ո՛չ օրհնէին զորդի և զհոգի: - 528. Իսկ հինգերորդ մարգարէութիւն է հոգևոր և աստուածային գիտութեամբ. զոր յայտնութեամբ *սուրբ հոգւոյն* ուսեալք խօսին առ ի զգուշութիւն մարդկան ի հոգևոր շինուածս: - 536. Որում փառք և զօրութիւն ընդ Յօր իւրում և *սուրբ Յոգւոյն* ամէն: - 555. Իսկ յորժամ *սուրբ հոգին* ելանէ, պիղծ հոգին այսինքն սատանայ բանկէ՛ ի նա: - 570. Ութերորդ վասն *սուրբ հոգւոյն* որ է՛ հաւասար հօր և որդւոյ: - 572. Դրոշմն է՛ խորհուրդ յուսոյ. զի յուսալով ի զօրութիւն *սուրբ հոգւոյն* կարողանամք ընդ դէմ թշնամւոյն: - 587. Այսպէս է վախճան մաքուր և *սուրբ հոգւոցն*. ուրախութեամբ ընթացեալ ի պսակն և զերծեալ ի բանտէ խաւարային մարմնոյ: - 669. Եւ յետ այնորիկ ի հարաւ. զի հարաւով հողմոյ *սուրբ հոգւոյն*` արար մեզ գարուն հոգևոր ազգի հաւատացելոցս...: - 673. Դարձեալ` ի մարդոյ ի հայր և յորդի և ի *սուրբ հոգին:* - 769. Կամ զինչ անհնարին սաստ, եթէ ոք խոտեսցէ *զսուրբ հոգւոյն* խօսեցեալս ի գիրս սուրբս...: - 775

***ՍՈՒՐԲ ՅՌԻՓՍԻՄԷ*** - Եւ նոյն զքահանայթաղէքն, որ ունի է աւետարան. և զաշխարհական թաղումն, ի յայրարատ գաւառի ի վաղարշապատ քաղաքի ի վկայարանս *սրբոյն հռիփսիմի*. յետ **ճժա** ամի սրբոյն գրիգորի. զի մինչև ցայն հնովն վարեին: - 659

***ՍՈՒՐԲ ՂՈՒԿԻՈՍ*** - Եւ *սուրբն ղուկիոս* սքանչելագործ և մարգարէաշնորհ, գրեաց առ մարկիանոս, թէ սուգ զգեցուցեր առաքելոց և մարգարէից. զի քակտեցեր զնոցա շինուածն. և արգելաւ հոգին սուրբ յօրհնելոյ զպատարագն և զաւազան մկրտութեան: - 543

***ՍՈՒՐԲ ՄԱԿԱՐ*** - Եւ յառաջին ամին յօստոս էր հայրապետ յերուսաղէմ. իսկ յերկրորդն *սուրբն մակար:* - 485

***ՍՈՒՐԲ ՄԵԹՈԴԷՈՍ*** - Իսկ «երրորդ մասն», ասէ *<u>սուրբն մեթոդէոս</u>* եթէ՝ զապստամբ հրեշտակս ասէ որք զթիւ երկնաւոր դասուցն սխալեցին. զի մինչ ո՛չ էին կործանեալ՝ **դ** կարգ էին իւրաքանչիւր դասուցն. որպէս յա՛յտ է ի չորեքկերպեան կենդանեացն: - 152

***ՍՈՒՐԲ ՄԻԽԱՅԷԼ*** - Եւ **լզ** բիւրս սպանին յուղղափառաց դասուց. որպէս յա՛յտ է ի պատմութիւնս *<u>սրբոյն միխայէլի</u>:* - 547

***ՍՈՒՐԲ ՅԱԿՈԲ*** - Եւ բաժանեալ զսուրբ տեղիս տըննօրինական, ետուն *<u>զսուրբ յակոբն</u>* պատրիարգարան, և զգողգոթայն, և զսուրբ կարապետն և զնշարսն. և արկեալ վիճակս ի վերայ յարութեանն՝ անկաւ հայոց. և տրտմեցան ոմանք յազգէ նոցա: - 548. և յոմանց լուաք թէ *<u>զսուրբ յակոբին</u>* այլ: - 637. Վասն է՞ր ասեմք պահք սուրբ սարգսի և սուրբ գրիգորի և *<u>սուրբ յակոբայ</u>* և այլոց: - 650

***ՍՈՒՐԲ ՅԱԿՈԲ ՄԾԲՆԱՅ ՀԱՅՐԱՊԵՏ*** - Երրորդ՝ նշանն *<u>սրբոյն յակոբայ մծբնայ հայրապետին</u>*. և գեօղն արկուռի՝ ուր տնկեաց այգի. և քաղաքն նախիջևան, ուր ինքն նոյ հանգուցեալ է ի տապանի: - 295

***ՍՈՒՐԲ ՅԱՐՈՒԹԻՒՆ*** - Տասներորդ՝ զի դշխոյն հեղինէ որ շինեաց *<u>զսուրբ յարութիւնն</u>* յերուսաղէմ...: - 617

***ՍՈՒՐԲ ՅՈՀԱՆ*** - Այսպէս սրբեաց զեկեղեցի յամենայն աղանդոյ *<u>սուրբն յոհան</u>*. որոյ յիշատակն օրհնութեամբ եղիցի ամէն: - 545

***ՍՈՒՐԲ ՅՈՀԱՆ ՈՍԿԵԲԵՐԱՆ*** - Այսմ պատասխանէ պայծառ ջահն եկեղեցւոյ *<u>սուրբն յոհան ոսկեբերանն</u>*...: - 467

***ՍՈՒՐԲ ՅՈՀԱՆ ՕՁՆԵՑԻ*** - Եւ *<u>սուրբն յոհան օձնեցին</u>* զեզր կաթողիկոսին և զայլոցն որք թիւրեալք էին զկնի քաղկեդոնի: - 541. Այսպէս ասէ մեծ իմաստասէրն և երկրորդ աւետարանիչն մեր և կաթողիկոսն *<u>սուրբ յոհան յօձնեայ</u>* թէ՝ պատարագին ժամն խորհուրդ է խաչին քրիստոսի. - 634

***ՍՈՒՐԲ ՅՈՍՏՈՍ*** - Իսկ վասն տեառնականին և աղօրհնէիցն, *<u>սուրբն յոստո՛ս</u>* է արարեալ. որ չորրորդ եպիսկոպոս էր յերուսաղէմ յառաքելոյն յակոբայ: - 659

***ՍՈՒՐԲ ՅՌԵԹԷՈՍ*** - Դարձեալ *<u>սուրբն յռեթէոս</u>* յերկրորդ գլուխ աստուածային անուանցն ասէ, «զի և բնութեամբ ի չափ եկն յաղագս մարդասիրութեան. և ճշմարտապէս էացաւ և ա՛յր եղև գերագոյնն աստուած»: - 83. Դարձեալ՝ *<u>սուրբն յռեթէոս</u>* ասէ, «ուստի վասն զի մինչև ըստ բնութեան սակս մարդասիրութեան եկն. և ճշմարտապէս գոյացաւ այր»: - 84

***ՍՈՒՐԲ ՆԵՐՍԷՍ*** - Այսպէս *<u>սուրբն ներսէս</u>:* - 270. Նա՛խ՝ որպէս ասաց *<u>սուրբն ներսէս</u>*՝ քրիստոսի բնութեամբ է հայր՝ և մեզ շնորհօք: - 518. «Ներհակաբար տալով զոր աստ ընկալան» ասէ *<u>սուրբն ներսէս</u>:* - 695

***ՍՈՒՐԲ ՆԻՒՍԱՑԻ*** - Իսկ *<u>սուրբն նիւսացին</u>* ասէ թէ՝ կրկին է բարին: - 224. Իսկ բնական երազն բաժանի ի չորս ըստ *<u>սրբոյն նիւսացւոյ</u>* ի գիրս կազմութեան: - 268. Հնգետասաներորդ՝ ի մէջ գիշերի՛ է յարութիւնն. որպէս ասէ ոսկէբերանն ի յարութեան ճառին, և *<u>սուրբն նիւսացին</u>*, և բարսեղ կեսարացին, և գրիգոր սկևռացին, և այլք...: - 514

***ՍՈՒՐԲ ՊԱՐՍԱՄ*** - Եւ պետրոս անտիոքու պատրիարգն և *<u>սուրբն պարսամ</u>* գրեցին ի հայք և զգուշացուցին. և նզովեցին զհաւանեալսն մարկիանոսի: - 543

***ՍՈՒՐԲ ՍԱՀԱԿ*** - Նա՛խ՝ մեծն մեսրոպ զկարգն ապաշխարութեան. և *<u>սուրբն սահակ</u>* զաւագ շաբաթեանն: - 637. Իսկ խոսրով թարգմանիչ եբեր ի հայս. որ գնացեալ էր յերուսաղէմ հրամանաւ *<u>սրբոյն սահակայ</u>:* - 658. Եւ ղազար թարգման եբեր ի հայս՝ ի **ծգ** ամի թարգմանութեան *<u>սրբոյն սահակայ</u>* առն աստուծոյ որ էր նախանձախնդիր կարգաց եկեղեցոյ: - 659. Յերկրորդ ամէ՛ *<u>սրբոյն սահակայ</u>* մինչև ի **ծգ** ամն նորին՝ կատարեցան ի փառս քրիստոսի աստուծոյ մերոյ: - 659. Իսկ վասն քահանայօրհնէիցն, *<u>սուրբն սահա՛կ</u>* է արարեալ. յառաջին ամի եպիսկոպոսութեան իւրոյ. ի նաւասարդի ամսեանն որ օր մի էր. և յիշատակ սուրբ կարապետին արար զքահանայօրհնէքն: - 659

***ՍՈՒՐԲ ՍԱՀԱԿ ՊԱՐԹԵՒ*** - Երանելին մովսէս խորենացի՝ որ էր գրիչ *<u>սրբոյն սահակայ պարթևի</u>*, յետ **ճժ** ամի սրբոյն գրիգորի՝ եղև սկիզբն թարգմանութեան ի հայոց լեզու: - 658. ...յորժամ այս ամենայն հաստատեալ նորոգեցաւ հրամանաւ *<u>սրբոյն սահակայ պարթևի</u>* ի փառս քրիստոսի. ձեռամբ իմով մովսիսի գրչի սահակայ: - 659

***ՍՈՒՐԲ ՍԱՐԳԻՍ*** - Զշարականս ո՞վ է ասացեալ: ...Եւ զոր նախ իմացն, զ'ի յանսահման ծովէն, և զթարգմանչաց օրհնութիւնն, և *<u>զսուրբ սարգսի</u>* օրհնութիւնն, վարդան վարդապետն: - 638. Վասն է՞ր ասեմք պահք *<u>սուրբ սարգսի</u>* և սուրբ գրիգորի և սուրբ յակոբայ և այլոց: - 650

***ՍՈՒՐԲ ՍԻՄԷՈՆ*** - Եւ *<u>սուրբն սիմէոն</u>* սիւնակեացն այրեաց զթուղթն դաւանութեանն քաղկեդոնի՝

զոր գրեալ էր թագաւորն մարկիանոս աղաչանօք առ նա՛. և նզովեաց զքղտատարն որ էր քէոդորիտոս գլուխ ժողովոյն: - 543

***ՍՈՒՐԲ ՍՏԵՓԱՆՆՈՍ*** - Ութերորդ՝ թոյլ տալով սրբոց չարչարիլ՝ վասն պսակացն առաւելութեան է. զի կենցաղս այս հանդէ՛ս է նահատակութեան. և ըստ չափոյ համբերութեան՝ առցէ զյաղթանակն. որպէս *սրբոյն ստեփաննոսի*. զի ունէր զսարկաւագութեան և զառաքելութեան պատիւն, ընկալաւ և զմարտիրոսութեան պսակն ի քարկոծումն իւր...: - 159. Այսպէս և ի նորս *սուրբն ստեփաննոս* որ եղև առաջին մարտիրոս և վկայ քրիստոսի՝ հեղլով զարիւն իւր. տեսանէր բացեալ զերկինս և զյիսուս ընդ աջմէ աստուծոյ: - 288. Ոմանք ասեն թէ՝ միշտ միջնորդութեամբ հրեշտակաց երևի աստուած. որպէս *սուրբն ստեփաննոս* ասէր «ոյք առիք զօրէնս ի հրամանս հրեշտակաց»: - 330. Իսկ որ ասէ *սուրբն ստեփաննոս* «յիսուս կայ ընդ աջմէ աստուծոյ», կալն նշանակէ իբր պատերազմակից և յօգնականութիւն գալ որք նահատակին վասն անուան նորա: - 521. Իսկ յոյսն որ էր ի *սուրբն ստեփաննոս* յորժամ ետես զերկինս բացեալ...: - 574

***ՍՈՒՐԲ ՍՏԵՓԱՆՆՈՍ ՍԻՒՆԵԱՑ*** - Այլ *սուրբն ստեփաննոս սիւնեաց*, և մեծն ներսէս, վասն պատուոյ՝ նախ զխաչի տունն են ասացեալ, և ապա՛ զաստուածածնին: - 642

**ՍՈՒՔԱ** - Անունք Կանանց Նախապետացն: ...Սաղային *սուքա՛*: - 299

**ՍՈՓԷԿՂԻԴԷՍ** - ...ապա՛ *Սոփէկղիդէս* եղբայր սոցա եգիտ զերրորդ ձայնն ի հոսանաց...: - 640

**ՍՈՓՈՆԻԱ** - Ո՞ր քան են և ո՞րք գիրք սուրբք հին և նոր կտակարանք: ...*Սոփոնիա*. որ լինի **խ**: - 450

**ՍՊԱՆԱՆԵՄ +** Նախ՝ զի ուրախ լինի ի վերայ *սպանելոցն* յինքենէ: - 151. Չորրորդ՝ զի յետ փորձութեան աստուած զպսակն պարգևէ. և յետ փորձութեանն սատանայ, ընդ իւր ի կորուստն յաւիտենական *սպանանէ*: - 161. Այսպէս յեգիպտոս հուրն որ ընդ կարկտին իջանէր, վասն ազդու զօրութեանն՝ զկենդանիսն *սպանանէր*, և մարմինքն ամբո՛ղջ մնային: - 204. Հինգերորդ՝ զի մարդն գլուխ է ամենայն կենդանեաց, զնա *սպանանել* ջանայ: - 218. Ութերորդ՝ օրինակ՝ զի գլուխ օձին է չար խորհուրդն որ մտանէ ի մեզ. պա՛րտ է *սպանանել* զնա: - 219. Եւ զի զկենդանին *սպանանել* ջանայ, ինքն յամէն կենդանւոյ *սպանանի*: - 219. Հինգերորդ՝ զի թէ ոք գողանայր և *սպանանէր*, զանմեղն դատապարտէին. և լինէր ամենևին անօրէնութիւն: - 238. Որպէս ասեն զշամիրամէ թէ՝ յորժամ *սպանաւ* արա ի պատերազմին, զայլ ոմն նման նորին պատուեաց և ասաց թէ աստուածքն յարուցին: - 238. Չորրորդ՝ *սպանանելն*: - 287. Եօթներորդ՝ նշանն որ եդաւ *չսպանանել* զնա: - 287. Եւ այս ևս գիտելի է, զի զվերանալն եղիայի ետես եղիսէ, զի մի՛ ասիցեն թէ *սպանաւ* յեզաբէլէ՛: - 290. Նոյնպէս և զփոխումն ենովքայ տեսին եղբարքն ուստերքն և դստերք նորա. զի մի՛ ասիցեն թէ *սպա՛ն* զնա՛ կուրացեալն ղամեք թոռն կայենի: - 290. Զի ասեն թէ՝ այր և երիտասարդն զոր *սպան* ղամեք և էառ զկանայս նոցա. ադդա և սելլա, նոքա եղբա՛րք էին ենովքայ արդարոյ: - 290. Վասն որոյ փութացաւ աստուած և փոխեաց զէնօք, զի մի՛ *սպանցեն* և ասիցեն թէ փոխեցաւ յերկինս: - 290. Որպէս կայեն յորժամ *սպան* զաբէլ, պատճառեաց ծնողացն եթէ զնորա պատարագն ընկալաւ աստուած և վերացոյց ի դրախտն: - 290. Եւ դարձեալ՝ այլազգին զհոգին իւր *սպանեալ* է մեղօք. և մեռելոյ զենեալն ո՛չ ուտի. որպէս ի քարէ անկեալն կամ ի կարկատէ՛ հարեալն ո՛չ ուտի: - 296. Երկրորդ՝ զի գեղեցիկ էր՝ զի մի ի պատճառս նորա *սպանցեն* զղովտ: - 303. Չորրորդ՝ զի խղճասցէ եսաւ և մի *սպանցէ*: - 311. Եւ հողմ կործանեաց զտունն և *սպան* զորդիսն ի սեղանի: - 321. ...զոր *եսպան* մովսէս և փախեաւ ի մադիամ...: - 330. Հինգերորդ՝ **ե** միշտ է և առ միշտ. որպէս մի՛ *սպանաներն*. և մի՛ գողանարն և այլն: - 340. *Սպանանել*՝ է՛ զենուլն. և մորթելն՝ քերթե՛լն է: - 358. Եւ առաջին տեառն *սպանանել*. որ զծածուկս տեսանէ և ո՛չ կեղծիւք ինչ: - 360. Եւ անհաւատն *սպանեալ* է զհոգին մեղօք. և կամ ունի զգործ իգական՝ պիղծ է: - 366. Զի թէ լինիցի քարեայ սուր, որպէս գայլախազ, որով *սպանաւ* աբէլ. ո՛չ է պիտանի: - 366. Եւ թէ լիցի երկաթ և ո՛չ սուր, և ո՛չ է պիտանի. որպէս բոլոր երկաթն թէ հարցէ զկենդանին և *սպանցէ*, ո՛չ է ուտելի, զի թէպէտ զարիւնն հանէ, այլ ո՛չ համանգամայն զշունչն և զջերմութիւնն: - 366. Եօթներորդ՝ օձն մեռեալ *սպանանէր* զօձսն. և զհարեալսն կեցուցանէր. և տէրն մեր մեռեալ մարմնովն զմեղս մեռուցանէր, և կենդանի աստուածութեամբն զմարդիկ կենագործէր: - 387. Նա՛խ՝ զի բարկացեալ՝ զէշն կամէր *սպանանել* սրով. թէ գոյր ի ձեռին ընդէ՞ր բանիւ ոչ սատակէր: - 388. Երկրորդ՝ զի գործունեայք և հաւանօղքն այնպիսեացն պատժեսցին. որպէս ի յերկրորդ օրէնքն հրամայէ՛ *սպանանել* այնպիսիսն. իսկ հաստատունքն ի հաւատս՝ վարձս առցեն ի հաւատոց իւրեանց: - 388-389. Զի գործ արդարութեան է *սպանանել* զքշնամիս. նոյնպէս և աւարն արդարութեան մասն է: - 390. Անիծեալն՝ սատակեալ և

*սպանեալ* ասի. որ է մեկնեալ և հեռացեալ ի կենաց աստուծոյ...: - 403. Եւ հրամայեաց *սպանանել* զյովաբ և զսիմէի: - 413. Զմարգարէն *սպան* առիւծն: - 413. Քսանն**ե**՝ յեսու նախ *սպան* զթագաւորս, և զքաղաքս նոցա աւերեաց: - 419. Քսան**զ**՝ նա՛ *սպան* զթագաւորս և զիսկայսն քանանու. և զոմանս եթող ի փորձ ընտրելոց: - 419. Երրորդն Սամէգար. որդի անաթայ. որ մաճիւն ո այր *եսպան*՝ ամս **դ**. և Դեբովրա ամս **ե** ընդ այլազգեացն: - 420. Սա՛ *սպան* զսիսարա և զաբէն ի ծորն կիսոնի. և այլազգիքն ամս **է**: - 420. Սա՛ *սպան* զովրէբն, զզէբն, զզեբէէ, զսաղմանա, և զայլսն: - 420. Եւ տէր մեր ի սպանօղ մարմնոյս որ է՛ պատառօղ հոգւոյս, *սպանելով* զսա՛ գտանէր զքաղցր կեանս տալ որդւոց մարդկան ազգի: - 422. Երկրորդ՝ զի կամէր զա՛զգն հարցանել թէ յուդայի ցեղէն և փարիսէ՞ն իցէ, զի *սպանցէ* զնա: - 427. Երրորդ՝ ի նախատինս զօրաց իւրոց. զի հովիւ մանուկն և որդի յեսսեայ *սպան* զգողիաթ. և նոքա իշխանք և մեծամեծք ո՛չ կարացին: - 427. Կամ զի աքիմելէք **գճ** քահանայիւք *սպանաւ* ի սաւուղայ. և աբիաթար փախեաւ առ դաւիթ և ընդ նմա՛ էր զամենայն աւուրս թագաւորութեան նորա. և յանուանէ զնա՛ յիշէ: - 427. Երկրորդ՝ զի ճշմարիտ էր նախատինք. զի *սպան* զուրիա: - 433. Հինգերորդ՝ բանիւ և արդեամբ *սպան* զուրիա, և նոյնպէս վճարի. բանիւ նախատէ սիմէի, և արդեամբ աբիսողոմ: - 433. Երրորդ՝ որք թուեցան ընդ աբիսողոմայ և *սպանանէին* զդաւիթ, այս նոցա վրէժն է: - 434. Իննն**ժ**, սրովն գողիաթու *սպան* զնա. և տէր մեր սրով մահուան *սպան* զիշխանն մահու: - 436. Վաթսուներորդ, մարտեաւ ընդ ադրիազարու և *սպան* զնա և քակեաց զկառս նորա, և զթագն եդ ի գլուխ իւր...: - 438. Վասն է՞ր հրամայեաց *սպանանել* զյովաբ և զսիմէի զի երդուեալ էր նմա: - 439. Նա՛խ՝ զի ինքն ո՛չ *սպանցէ:* - 439. Երրորդ՝ զի աբեսեանքն ո՛չ *սպանցեն:* - 439. Իսկ այժմ ուխտէ՛ *սպանանել*. զի ըստ օրինացն զգործ արդարութեանն գործեսցէ: - 439. Երեքտասաներորդ՝ զառաջին մեղքն եթող զադոնիայ, և յերկրորդին *սպան:* - 441. Չորեքտասաներորդ՝ զյովաբ սպանօղ և զսիմէի նախատիչ *սպան* սողոմոն: - 441. Վասն է՞ր զմարգարէն *սպան* առիւծն. զի նա խաբեցաւ ի ծեր մարգարէէն: - 443. Զի մի՛ *սպանցեն* զեղիայ յայնժամ: - 443. Նա՛խ՝ զի վրէժխնդիր եղև օրինացն աստուծոյ. որպէս փենէհէզ *սպան* զզամբրի և զքասբի. և սամուէլ զագագ: - 444. Դարձեալ՝ զարդարութիւն գործէր զի հաշտեսցի աստուած. վասն որոյ ինքնին *սպան* զամենայն. այս զութ**ճ** յիսունսն, փոխանակ մարգարէիցն աստուծոյ զոր *եսպան* եզաբէլ: - 444. Եւ յետ այնորիկ *սպանցի* օծեալն. և իրաւունք ո՛չ իցեն ի նմա. և քաղաք և սրբութիւն ապականեսցի: - 449. Եւ յայնմ ժամանակի ասէ՝ *սպանցի* օծեալն, յորում քահանայքն և իրաւունք ո՛չ իցեն. այսինքն թագաւոր և դատաւոր: - 449. Եւ յորժամ ել արտաքոյ քաղաքին թողեալ զկապանս սողոմոնի՝ *սպանաւ:* - 540. Եւ **լզ** բիւրս *սպանին* յուղղափառաց դասուց. որպէս յա՛յտ է ի պատմութիւնս սրբոյն միխայէլի: - 547. Զի **ժ** պատուիրանքն և է մահու չափ մեղքն են ըստ գոյացութեան մեղք. որպէս մի՛ շնարն և մի՛ գողանարն և մի *սպանաներն* և մի՛ սուտ վկայերն: - 565. Եւ թէ **բ** մարդ գործեն զմեղս զայսոսիկ, *սպանանելն* մեծ է քան զսուտ վկայելն. և այլն նմանապէս: - 565. Եւ այս է մեկնութիւնն. թէպէտ հրէայքն որպէս յանցաւոր մարդ *սպանին*՝ սուրբ աստուած և ո՛չ սոսկ մարդ: - 632. Զի զամենայն ոք միանգամ *սպանանեն* և ո՛չ **բ**: - 701. Որ և յետ այնորիկ *սպանցին* ի նեռնէն յերուսաղէմ. և անկեալ լիցին մարմինք նոցա ի հրապարակս զերիս տիւս և զերիս գիշերս: - 709. Եւ յետ այսորիկ ի լեառն ձիթենեաց ուստի համբարձաւ քրիստոս՝ տէր իշխանութեամբ իւրով *սպանցէ* զնեռն: - 709. Ութերորդ, զի որ զնա՛ խաչեցին և *սպանին*, տեսցեն յայնժամ և իմասցեն թէ աստուածասպանք եղեն...: - 735. Յօրէնքն հրամայեցաւ **բ** և **գ** վկայք *սպաննելոյն* և ամենայն բանի: - 742. Կամ լինէիր ուժեղ որպէս սամփսոն. որ զհազար այր ծնօտիւ իշոյն *եսպան:* - 761

**ՍՊԱՆԴ +** Իսկ յորժամ մեղաւոր հոգին հասանէ ի վախճան, տրտմութեամբ և ակամայ իբրև զանասուն ի *սպանդ* վարեալ...: - 669

**ՍՊԱՆԴԻԱՑԻ** - Եւ այս են **իբ** լեզուքն: ...*Սպանդիացիր:* - 298

**ՍՊԱՆԻԱ** - Որպէս ասեն վարդապետք, ի վերջին ծովէն *սպանիու* մինչև ի հնդիկս սակաւ աւուրց բացատ գոյ թէ վարեսցէ հողմ զնաւն: - 763

**ՍՊԱՆԻԱՑԻ** - Իսկ որ զդպրութիւն գիտէ և գրով վարի՝ **բժ**ան ազգ է... Հռոմայեցիք որ են *սպանիացիք:* - 299

**ՍՊԱՆՈՂ (տեքստում՝ ՍՊԱՆՕՂ) +** Եւ տէրն զիհն կտակն որ խստութիւն էր և *սպանօղ*՝ ընդ նորոյս խառնելով. որ հոգւով է և կեցուցանօղ: - 126. Հինգերորդ՝ զի առաջին *սպանօղ* եղև: - 287. Զի ակամայ *սպանօղք* զերծանիցին անդ մինչ քահանայն կենդանի իցէ. և յորժամ մեռանիցի քահանայն, ապա գնասցեն ի տեղիս իւրեանց: - 392. Դարձեալ՝ ակամայ *սպանօղն* ցուցանէ զզղջացեալն ի մեղաց: -

392. Նա՛խ՝ զի ո՛չ տանջիւր ակամայ *սպանօղն:* - 392. Երրորդ՝ վախճանեալ մովսէս ի լերինն, և միքայէլ փոխադրէր զմարմինն. սկսաւ սատանայ հայհոյել զսուրբն և *սպանօղ* անւանել վասն հարկանելոյն զեգիպտացին. վասն որոյ սաստեաց նմա հրեշտակապետն: - 410. Եւ տէր մեր ի *սպանօղ* մարմնոյս որ է՛ պատառօղ հոգւոյս, սպանելով զսա՛ գտանէր զքաղցր կեանս տալ որդւոց մարդկան ազգի: - 422. Քսանևք, հարեալ որմն վկայեաց թէ *սպանօ՛ղ* է դաւթի սաւուղ. և չարչարեալ և մեռեալ մարմինն վկայէ՛ թէ աստուածասպա՛նք են հրէայքն: - 436. Չորեքտասաներորդ՝ զյովաբ *սպանօղ* և զսիմէի նախատիչ սպան սողոմոն: - 441. Յետ որոյ *սպանօղք* նոցա լուիցեն այսպիսի բարբառ, «Եղիա՛ և Ենո՛վք ելէք աստ»: - 709. Վասն որոյ *սպանօղք* որդւոյ՝ հօր և հոգւոյ թշնամիք են: - 770

**ՍՊԱՆՈՒԹԻՒՆ +** Ութերորդ՝ զի ո՛չ երևէր բարեկամն և թշնամին. սիրելին և ատելին. և լինէին բազում *սպանութիւնք* և աւերք. զի ոչ զգուշանային միմեանց: - 238. Նա՛խ՝ զի հրամանաւն աստուծոյ էր. որպէս պոռնկութիւնն ովսէի և *սպանութիւնն* փենեհէսի ո՛չ էր մեղք: - 337

**ՍՊԱՆՈՒՄՆ +** Եւ տէրն մեր քրիստոս ի մանկակոտոր *սպանմանէն* հերովդէի: - 328. Է՛ և ա՛յլ իմն տեսութիւն բանիս. զի կամի՛ զպաշտօնս մեր որոշել ի կռոց զոհիցն. զի սուտանուն դիքն խնդրէին ուստերս և դստերս և արջառս և ոչխարս զոհել և *սպանումն* օտարաց: - 396. Եւ այս վասն խստասրտութեան նոցա զի մի՛ *սպանումն* լիցի: - 400. Մովսէսին պատճառն վասն խստասրտութեան նոցա է որպէս տէրն ասաց. զի մի՛ *սպանումն* լիցի: - 401. Հինգերորդ՝ երկաթն *սպանմա՛ն* է գործի քանանացւոցն: - 415. Իններորդ՝ *սպանմանն* աբէլի գործիք եղև որպէս ասեն. ուստի գայլախազ կոչեցաւ. զի սրբեսցի դրոշմաւն: - 415. Երկրորդ զօրացուցանէ. որպէս յա՛յտ է ի մակաբայեցւոցն զկնոջէն որ ունէր է որդիս՝ ածեալ ի *սպանումն* ի միումն աւուր տեսեալ. և տանէր այնմ՝ յուսովն որ առ աստուած. նոյնպէս և ամենայն դասք մարտիրոսացն յուսով զօրացան: - 574

**ՍՊԱՌԱԶԻՆԻՄ +** Իսկ կնկուղ ի գլուխ կրօնաւորաց և օդ յոտս և գօտի ընդ մէջ. *զսպառազինիլն* և զարիութեամբ ընթանալն ի պատերազմ: - 671

**ՍՊԱՌԵՄ +** Նա՛խ՝ մորենին է՛ նշանակ ժողովրդեանն իսրայէլի յեգիպտոս, որ վառեալ տանջիւր և ո՛չ *սպառիւր*. այլ առաւելոյր օրհնութեամբն աստուծոյ: - 331. *Սպառիլ* սիրոյ և հատումն յուսոյ. բազմանալ անօրէնութեանց և տիրել անզղջութեանց: - 789. Եւ զայս ո՛չ շաբաթու և աւուրց *սպառեալ*. այլ ամսոց երից սորին յերկարեալ. և գործելոց վրէժ ո՛չ կշիռ հատուցեալ: - 789

**ՍՊԱՌՆԱԼԻՔ +** Դարձեալ թե ի հարկէ՛ է ոչ լինին օգուտ խրատք և *սպառնալիք* և ուսմունք. որովք բազումք յորդորին ի բարիս, և հեռանան ի չարեաց կենցաղոյս: - 11. Չորրորդ՝ որոտն և մրրիկն յամպոյն՝ *զսպառնալիս* բարեկամացն նշանակէ: - 326. Երկրորդ՝ առաւել ի *սպառնալեա՛ց* երկնչի ոք, քան ի խոստմանց: - 403. Չորրորդ յայտ է յայսցանէ, զի բարկութիւն *սպառնալեացն* բարի՛ է և դարձուցանօղ: - 408. Եւ *սպառնալիքն* աստուծոյ և մարդկան ո՛չ են նման. զի մարդոյս դատարկ բան է. իսկ *սպառնալիքն* աստուծոյ՝ է՛ բան զարհուրական. յորմէ լսօղքն զերծանին, և անլուրքն ըմբռնին ի նոյն: - 408. ...և նոքա զամենայն ինչ ծածկապէս տեղեկացան. զի ժողովեալքն ի քաղկեդոն ակն առին թագաւորին և կնոջ իւրոյ. և զարհուրեցան ի *սպառնալեացն*. և զնեստորի կարծիսն հաստատեցին. զերկու բնութիւնսն. և զբ կամսն. և զբ ներգործութիւնսն: - 543. Երրորդն հրոյ *սպառնալիք* և սատակումն. և դարձեալ աւետեաց հրաւէր: - 630. Իսկ ծուխն յերեսացն աստուծոյ, Նախ նշանակէ զահագին *սպառնալիք* բարկութեան տանջանացն. որպէս նա՛խ է ծուխն քան զհուր, և *սպառնալիքն* քան զտանջանս: - 749

**ՍՊԱՌՆԱԿԱՆ +** Իսկ գեղեցկախօսութիւն լեզուաց, ...*Սպառնական* հոնին. և ճճուօղ հնդիկն: - 297. *Սպառնական* հոնին: - 299. Նաև պատճառին. թէ խրատական է. թէ աւաղական. թէ *սպառնական*. թէ ողոքական. թէ ըղձական. և այլ այսպիսիք: - 643

**ՍՊԱՌՆԱՄ +** ...ըստ որում մեզ ասաց, բարկանայք բանիւ, և մի՛ մեղանչէք գործով. նոյնպէս բարկութիւնն աստուծոյ՝ *սպառնա՛լն* է. և սրտմտիլն գործն: - 408. Ուստի յա՛յտ է, զի յորժամ ի *սպառնալն* դառնամք ի մեղաց, ո՛չ սրտմտի նա: - 408

**ՍՊԱՍ +** Վեցերորդ՝ զի հնազանդեալք են ի *սպաս* կամացն աստուծոյ: - 137. Եւ սոցին նման այլ *սպասք* և արծաթք և մեծութիւնք: - 321. Երկոտասաներորդ՝ զերկանս *սպասու* մարմնոյ գործեսցէ միշտ և ի նոյն մեռանի որպէս սամփսոն: - 424. Յայս միտս ի բերել ընծային ի սեղանն՝ է դասք քահանայից կան ի *սպասու*. և երգեն եղանակաւ. և քշոց և բուրվառ և զանգակ հնչէ: - 431. Իսկ մատռւակն յոտն կացեալ, նշանակէ՛ զծառայն ի գործ *սպասու:* - 656

**ՍՊԱՍԱՒՈՐ +** Եւ գիտեմք հաւաստի թէ որդի էր. զի հրեշտա՛կ անուանէ զնա գիրն. և զի հայր երբէք հրեշտակ ո՛չ կոչեցաւ՝ այլ որդի ըստ եսայեայ մարգարէի, որ «հրեշտակ մեծի խորհրդոյ» կոչէ զորդի. որ եղև մեծ խորհրդոյս *սպասաւոր*. այսինքն փրկութեան մերոյ՝ մարդանալովն իւր: - 40. Եւ *սպասաւորն* քան զթագաւորն առաջին հանդիպի: - 230. Կարգաւոր էր նախ պատրաստել զարքունիս որ է երկինք և երկիր. և զգահոյս որ է՛ դրախտն. և *զսպասաւորքն* որ են կենդանիքն. և զմեծութիւնս տնկոց և բուսոց. մանաւանդ ոսկւոյ և արծաթոյ և ականց ի սիրտ երկրի գանձել. և ապա՛ թագաւորին բնակիլ: - 230. Եւ այսպէս ամենայն *սպասաւորք* նորա և ծառայքն որք սրով և հրով վախճանեցան: - 322. Նա՛խ՝ զուժ լծոց եզանցն՝ և *սպասաւորացն* մահ. և զուժկան ձևանայր դև մի ի կերպարանս ծառայիցն յոբայ: - 322. Եւ այսպէս **է** էին հարուածքն. այսինքն **ա**՝ եզինքն. **բ**՝ էշքն. **գ**՝ ուղտքն. **դ**՝ անասնոց մահն. **ե**՝ *սպասաւորաց* նոցին. **զ**՝ զաւակաց մահն. **է**՝ մարմնոյն հարուածքն: - 322. Եւ սարկաւագունք և *սպասաւորք* միջին: - 343. Դարձեալ՝ որպէս ծառա՛յ են կենդանիք և *սպասաւոր* մարդկան. նոյնպէս և յօրինակ ընտրութեան մարդկան ընտրեցան զուարբս և զանսուրբս նշանակելով այսպէս: - 364. Ապա յա՛յտ է զի և ո՛չ այլ կարգաւորք զենցեն կենդանիս. որք են սարկաւագունք և այլք. զի անարիւն զենմանն կարգեալ են *սպասաւորք:* - 366. Երկրորդ՝ զի պատարագն զոր մատուցանէին անարատք էին. նոյնպէս և *սպասաւորքն* լիցին: - 370. Նա՛խ՝ զի անարժան լինին *սպասաւորքն*. որպէս ոփնի և փենէհէզ որդիքն հեղեայ: - 425. Քրիստոս վասն մեր *սպասաւոր* եղաւ թլփատութեան. և ո՛չ վասն պիտոյից նորա: - 485. Երրորդ «առ յովհաննէս». այսինքն տէրն առ ծառայն, թագաւորն առ *սպասաւորն*, արեգակն առ արուսեակն: - 487. Մկրտօղն էր յովհաննէս. որպէս *սպասաւոր* քահանայքն: - 487. Յինգերորդ՝ համբարձաւ զուարճութեամբ. որ վերաբերի առ նոսա որք փրկեցան ի դժոխոցն և ընդ նմա ելին յերկինս. զի **բ** բանակօք ել յերկինս այսինքն *սպասաւոր* հրեշտակք և մարդկան փրկելովք: - 520. Չորրորդ, Վասն *սպասաւորաց* եկեղեցւոյ. Առաքելութեան Մարգարէութեան և Վարդապետության առ հասարակ: - 525. Այս քան վասն նախկին *սպասաւորաց* եկեղեցւոյ. այսինքն Առաքելոց Մարգարէից և Վարդապետաց: - 537. Եւ այլ քահանայքն ընկերակիցք և *սպասաւորք* են խորհրդոյն: - 594. Եւ *սպասաւոր* այսմ խորհրդոյ միայն քահանայն լինի: - 594. Իսկ ի սրբութիւն սրբոցն մերկանալ զայն և զգեստ *սպասաւորի* զգենուլ միայն սպիտակ կտաւի և խնկարկել անդ: - 636. ...զի **է** աստիճանաց եղև *սպասաւոր*...: - 674. Եւ **բ** ծառայքն՝ *սպասաւոր* հրեշտակքն: - 682. Երկրորդ՝ երկինք զհրեշտակս ասէ որ ի վայր գլորեալ խոնարհին ամենայն դասք. աթոռք կազմեալ, և *սպասաւորք* շրջապատեալ: - 729

**ՍՊԱՍԱՒՈՐԱԿԱՆ +** Իններորդ՝ ոմանք մեծամեծ իրողութեանց են միջնորդք ուղղութեան, և այլք նւաստից *սպասաւորական:* - 138

**ՍՊԱՍԱՒՈՐԵՄ +** Որպէս դանիէլ առիւծուցն յաղթեաց. և պօղոս իժին. և բազում ճգնաւորաց որք անապատս էին՝ գազանք և անասունք *սպասաւորէին* նոցա: - 220. Իններորդ՝ ի վեր է գլուխն, զի լեզուն և ձեռն *սպասաւորեսցեն* բանի և գործոց: - 233. Եւ պիտոյանայր լեզու երկայն և շրթունք ստուար, զի ժողովեսցէ զկերակուր. և յայնժամ ո՛չ կարէր *սպասաւորել* բանի որպէս ա՛յժմ: - 233. Եւ այն որ շուրջ զսեղանովն, նշանակէ՛ զքահանայս. որ մերձ սեղանոյն որ է՛ քրիստոս՝ միշտ *սպասաւորե՛ն* և պատերազմին արեամբ չափ ընդ ախտս և ընդ դևս: - 341. ...իսկ յորժամ *սպասաւորեաց* հրեշտակապետն՝ զտիրական անունն ի սաստ կոչելով. յայնժամ անպ ինչ լուսաւոր ծագեալ ի տեղւոջն, շիջոյց զերևումն չարին: - 410. Վեցերորդ՝ ի թաղումն մովսէսի միքայէլ *սպասաւորեաց*. որում սատանայ հակառակ կայր ներողութեամբն աստուծոյ: - 410. Եւ վասն տեառն ասէ «հրեշտակք մերձեալ զօրացուցանէին զնա». որ է՛ *սպաւորեալ* բարեբանէին: - 418. Յետևեալք *սպասաւորեցին:* - 456. Երրորդ՝ զի նորոգումն որ լինելոց էր ծննդեամբ կուսին՝ ո՛չ միայն մարդկան էր, այլ և հրեշտակաց. պարտ էր հրեշտակին *սպասաւորել* կուսին: - 463. Իսկ փոխումն՝ աստուածամօրն կուսի. որ որդին յատկապէս *սպասաւորէ* մօրն: - 519. Գթութիւն է արենակցաց և բարեկամաց *սպասաւորել* ստէպ: - 579. Վեցերորդ կարգն. որ է՛ *սպասաւորելոցն* այսմ խորհրդոց որք են յեկեղեցի քահանայք և այլք: - 587. Կարգն է՛ ի խորհուրդ խոհեմութեան և գիտութեան. զի իմաստութեամբ և գիտութեամբ *սպասաւորեսցէ* խորհրդոցն և խրատեալ ուսուսցէ զժողովուրդն: - 587. Որոյ գործն է *սպասաւորել* քահանային ի խորհուրդ եկեղեցոյն. զսկիհն պատրաստել, զաւետարանն կարդալ ի բեմն: - 606. Դպիրք եղեն առաքեալքն *սպասաւորելով* ժողովրդեանն հրամանաւ. և Սարկաւագունք՝ օծանելով զհիւանդս. հրաման տալով նոցա իւղ օրհնել յիւրմէ: - 607. Այսինքն սուրբն սրբոց որ է արքայութիւնն երկնից. ուր

աստուածութիւնն է բնակեալ. և քերովբէիւք *սպասաւորեալ:* - 682. Երկրորդ, զի առնեն զվարձս վաստակոցն զոր *սպասաւորեցին* մարդկան: - 727. Իններորդ՝ զի դևք հալածական լինին ի զօրութենէ աստուածեան նշանին. և հրեշտակք *սպասաւորեն* նմա...: - 734

**ՍՊԱՍԱՒՈՐՈՒԹԻՆ +** Նախ զի փրկական է խորհուրդն ամենեցուն. այլ անարժան մերձեցեալն կործնչի. յիրաւի արգելցի ի *սպասաւորութենէն:* - 167. Ապա ուրեմն ստուգապէս և յիրաւի՛ է կանոնեալ սուրբ հարցն, զի զայնպիսին արգելցեն ի *սպասաւորութենէ* խորհրդոյն: - 167. Երրորդ՝ իմացի ի տեղի հնազանդապէս *սպասաւորութեան*...: - 457. Վեցերորդ՝ զի կոյսն լինէր սփոփեալ և կազդուրեալ *սպասաւորութեամբ* առնն: - 461. Իսկ թռչիլ ամենայն սրբոց ի ծեռն *սպասաւորութեան* հրեշտակաց: - 519. Կրօնաւորութիւնն է աստուծոյ պաշտօն և առանձնակի *սպասաւորութիւն* մատուցանել: - 579. Եօթներորդ, զի մկրտելն է գործ քահանայի. և քահանայութիւնն է *սպասաւորութիւն* աստուծոյ. իսկ զայս *սպասաւորութիւն* աստուծոյ և ո՛չ կռապաշտքն ունէին սովորութիւն սնոտի կռոցն ի ծեռն կանանցն մատուցանել զպատարագն. - 589. Կարգն է կարողութիւն զոր ետ եպիսկոպոսն այնմ զոր ի կարգն ընկալաւ և ի *սպասաւորութիւն* խորհրդոյ եկեղեցւոյ: - 606. Եւ զայս կարգս առաքեալքն կացուցին. յորժամ է սարկաւագունս կարգեցին ի *սպասաւորութիւն:* - 606

**ՍՊԱՍԵԼ +** Որ և մովսէս եկեալ ի թաբօր վկայէր նմա, և աղերսէր ելանել ի խաչ և բանալ զդուռն արքայութեան. որում մարգարէքն *սպասէին:* - 411. Երկրորդ՝ զի տացէ օրինակ համբերութեան մերոյ, զի *սպասեսցուք* վարձուն ի հանդերձեալն. և ո՛չ խսկոյն վաղափոյթ լինիլ առնուլ այժմու կենօք...: - 520. ...նոյնպէս և սուրբքն ամենայն ի գործոց իւրեանց հանգչին և փառաւորին և *սպասեն* գալստեանն քրիստոսի և հատուցման վարձուցն: - 648. Այլ կան և *սպասեն* մեծի հարսանեացն քրիստոսի և կատարածի աւուր...: - 669. ...զի նովին երկիւղիւն կան և *սպասեն* սոսկալի աւուրն այն...: - 673. ...ուր սուրբք ամենայն *սպասեն* մեծի հարսանեաց գալստեանն փրկչին: - 675. Եւ երկու կատարումն. մի զմկրտութիւնն. և մի զյարութիւնն որում *սպասեալ* ակն ունիմք: - 769

**ՍՊԱՐԱՊԵՏ +** Զի որդիքն և *սպարապետն* կազմէին զպատերազմն: - 429. Ամինադաբ ամաց **խե**՝ ծնանի զնայասօն. և էր ասէ ամինադաբ *սպարապետ* զօրուն յուդայի ի հանել մովսէսի զորդիսն իսրայէլի յեգիպտոսէ: - 452. Ժողովեալ **խ** եպիսկոպոսաց և բազում վարդապետաց և ժողովրդոց. կողմնակալք և մարզպանք, մեծամեծօրն հայոց, և *սպարապետն* վարդան ազգայնօրն իւր: - 544

**ՍՊԵՂԱՆԻ +** *Սպեղանեաւ*, յորժամ երեսք նորա թքով մածեցան: - 491. Եւ որպէս անչափ են *սպեղանիք* և դեղք բժշկականք մարմնոյ ի բազում և զանազան ծաղկս խոտոյ և յարմատս, ի տերևս ի պտուղս. և յայլսն. զի սոքա յայտնեն զբազմութիւն հիւանդութեանց մարմնոյ: - 531

**ՍՊԻ +** Իսկ այլք ուղղակի՛ ասեն՝ թէ անմոլար աստեղքն ամրացեալ են ի հաստատութեանն որպէս *սպի* ի վերայ մարմնոյ, և ընդ նմա շարժին: - 189. Իսկ թէ մարդ լինի շանադէմք, և այն ո՛չ է ի խառնուածոյ շանց, այլ նշան է հայրենեաց, կամ *սպի* անձանց: - 267. Իններորդ, բորն **գ** ազգ է. *սպին* սպիտակ շիտ. և պալար միատարր. և պաղպաջ շիտ աստ և անդ. որ է՛ մտաց և հոգւոյ և մարմնոյ մեղքն: - 367. Այլ շնորհիք նորոյս կարողութեամբ արդարացուցանէ զմարդ այնպէս, մինչ զի *սպիք* մեղացն ջնջին և յիշատակութիւնն ծածկի: - 433. Եւ ո՛չ միայն խաչն, այլ և ամենայն գործիք չարչարանացն. այսինքն բևեռքն գեղարդն և այլք. որք բերին առաջի դատաւորին. և ի մարմին նորա երևին *սպիք* խոցուածոց նորա...: - 732

**ՍՊԻՏԱԿ +** Ութևժերորդ՝ զի թէ չարնէ յաստուծոյ, այս լինի կամ հակակայութեամբ յառաջ եկեալ. որպէս *սպիտակն* յո՛չ *սպիտակէն*. կամ բաղդատութեամբ. որպէս կենդանին ի կենդանւոյ: - 14. Եւ ո՛չ որպէս ներհականք. որպէս ջերմ և ցուրտ. *սպիտակ* և սեաւ. զի սոքա որակութիւնք են. իսկ բարին էութիւն է, և չարն ո՛չ է էութիւն: - 21. Դարձեալ առարկեն, եթէ աստուած է հայր՝ և անծին է բնութեամբ, և որդի ծնեալ է, ապա ուրեմն ո՛չ է որդի աստուած. զի ծնելութիւն և անծնելութիւն հակառա՛կ են միմեանց. որպէս սեաւ *սպիտակի* կամ լոյս խաւարի: - 38. Եւ կարծեօքն տպաւորէ զնմանութիւնս և ի բացեայ. որպէս *սպիտակ:* - 103. Որպէս մի է արեգակն և *սպիտակ* և դեղին լոյս իւր: - 107. Զի՝ մի արեգակն սկիզբն է **բ** լուսոյն. այսինքն դեղնին և *սպիտակին:* - 124. Եւ հոգւոյն պատկեր՝ լոյսն *սպիտակ:* - 124. Նախ՝ զի դեղին լոյսն ծնանայ ընդ երթս կամ ընդ լուսանցս մտեալ, իսկ *սպիտակն* ոչ: - 125. Երրորդ՝ դեղին լոյսն ստուեր ունի՝ և *սպիտակն* ո՛չ: - 125. Վեցերորդ՝ դեղինն զառաքինութիւն մարմնոյն. և *սպիտակն* զանմեղութիւն հոգւոյն: - 125. Ութերորդ՝ *սպիտակ* լոյսն առաւել թափանցիկ է. որպէս ընդ ամպս և յայլ նիւթս: - 125. Իններորդ՝ ի դեղին լուսոյն տեսանեմք *զսպիտակ* լոյսն: - 125. Տասներորդ՝ նախընթաց և յետամնա՛ց է

*սպիտակ* լոյսն. որպէս յառաւօտս և յերեկոյս տեսանի: - 125. Վասն զարդու գործոց իւրոց. որպէս նկարիչ զքուխ գոյնն ի ներքոյ դնէ՝ զի *սպիտակն* և այլ պատւականքն երևեսցին: - 149. Եւ զի պլղամ և *սպիտակ* հիւթք տիրեն: - 197. *Սպիտակն* ջրոյն: - 203. Մնացեալ ա՛մպ է շուրջ զաստեղօքն. որ քարշէ յինքն *զսպիտակ* լոյս մոլորակացն և լուսաւորի: - 203. Ջրոյն՝ *սպիտակն:* - 212. և *Սպիտակն* որ է մաղասն ի բոլոր մարմին և կամ յերիկամունքն՝ է՛ ջրոյն: - 215. Դեղնի երեսն և կարմրի. և մին մարդն սև, և մին *սպիտակ* լինի. և շէկ և ծիծաղկոտ և այլն: - 227. *Սպիտակն* ջրոյ: - 234. Հինգերորդ՝ *սպիտակ* ճրագուն. զի հո՛վ է բնութեամբ զջերմութիւն աչացն բարեխառնէ. նա և գեղեցկացուցանէ՛: - 239. Վեցերորդ՝ սեաւ պտուղն. զի մի՛ վնասեսցէ զտեսութիւնն *սպիտակն:* - 239. Յորժամ ծերանայ մարդն, և *սպիտակ* ջուրն որ է պալղամն առաւելու, յայնժամ մազն ըստ *սպիտակ* ջուրն ի դուրս անցանէ և սպիտակի՛: - 240. Եւ մինչ ի խռչափողն արիւն գայ, և անդ ի *սպիտակ* ջուր փոխի: - 242. Որպէս ջուրն ի մէջ ամպոյն փրփրի և լինի *սպիտակ* ձիւն: - 242. Եւ որպէս արիւն հոսմանն ի մէջ երակացն փոխի և լինի *սպիտակ* կաթն, և ժողովի ի ստինսն: - 242. Վասն է՞ր մին մարդն սեաւ լինի և մինն *սպիտակ*, կամ շէկ, և այլն: - 245. Զի թէ հուրն աւելի է, լինի շէկ գունով. և թէ օդն՝ լինի կարմիր. իսկ ջուրն առնէ *սպիտակ*. և հողն սեաւ գունով: - 245. Եղունկն *սպիտակ* տափակ կակուղ և նօսր, կարմրագոյն և փայլուն, ուժե՛ղ է: - 247. Գոյնն *սպիտակ* և դեղին՝ պակաս ուժ է: - 247. Գոյնն *սպիտակ* և կարմիր՝ ուժեղ է և սրտային: - 247. Գոյնն միջակ ի մէջ *սպիտակին* և սևին՝ ցուցանէ զուշիմն և զբարեբարոյն: - 247. Նոյնպէս և քրիստոս իմաստութեամբն իւրով կերակրէ՛ զնոսա և զգեցուցանէ որպէս իդ երիցանցն, որ տուաւ նոցա արկանելիս *սպիտակս*. այս է շնորհին մաքրութեան զոր ընկալան ի քրիստոսէ: - 315. Եւ էր ինքն բոլոր և *սպիտակ* նման գնծի. և քաղցր որպէս զմեղր: - 338. Երկրորդ՝ *սպիտակ*. և նոյնպէս նշխարն. զի անաղտ և մաքուրս գործեն: - 339. Բնական որակ տարերացն Սևն է՛ երկրի. և *Սպիտակն* ջրոյ. Կարմիրն օդոյ. և Դեղինն հրոյ: - 342. Կապոյտն օդոյն է գոյն. զի թէ ա՛յլ գոյն էր, վնասիչ և խափանիչ լինէր տեսութեանց. որպէս *սպիտակ* կամ սեաւ. այլ կապոյտն է ի հեշտութիւն տեսութեանց: - 342. Ծիրանին ջրոյ. զի կոնքիլոսն որ ներկէ՛ զծիրանին՝ ի ջրո՛յ է. և Բեհեզն *սպիտակ*՝ երկրի. զի վուշն յերկրէ լինի: - 342. Զի հանդերձն *սպիտակ*՝ շապիքն է և Կապոյտ վտաւակն՝ նափորտն: - 348. **Իններորդ, բորն գ ազգ է. սպին *սպիտակ* շիտ. և պալար միատարր. և պաղպաջ շիտ աստ և անդ. որ է՛ մտաց և հոգւոյ և մարմնոյ մեղքն**: - 367. Եւ սարկաւագն *սպիտակ* զգեստուք հովանի որպէս դաւիթ: - 431. Իսկ պատահումն ըստ պատահման միշտ շփոթմամբ միաւորին. որպէս գոյն ի սևէ և ի *սպիտակէ՛:* - 475. Հինգերորդ՝ ածաւ առ հերովդէս. և ի հրէից յոյժ չարախօսեալ. և *սպիտակ* հանդերձ զգեցեալ առ ի նախատինս: - 492. **Այլ նարօտն կարմիր և *սպիտակ* մանեալ՝ զարիւն և զջուր կողին քրիստոսի:** - 594. Իսկ ի սրբութիւն սրբոցն մերկանալ զայն և զգեստ սպասաւորի զգենուլ միայն *սպիտակ* կտաւի և խնկարկել անդ: - 636. Այն է որ տուաւ նոցա արկանելիս *սպիտակս*...: - 648. Եւ *սպիտակ* արկանելիքն և այլն: - 660. Ուբեժ, **իդ** երիցունքն. և *սպիտակ* զգեստն. պսակն և քնարն: - 660. Ըստ մարմնոյն ջերմ և *սպիտակ:* - 664. Ապա զի՞նչ էր արկանելիքն *սպիտակ,* և պսակն ոսկեղէն որպէս ասէ տեսիլն: - 690. Նախ ասեմ, եթէ հանդերձ *սպիտակ* և պսակք և աթոռք և այլն ամենայն զոր ետես ի տեսիլն՝ ո՛չ ներկային. այլ հանդերձելոյն էր տեսութիւն որ ինչ լինելոց է ի կատարածի...: - 690. Դարձեալ ասեմք, թէպէտ զներկայն ետես, *սպիտակ* հանդերձն ո՛չ ցուցանէ զփառս հատուցման. այլ զփառս և զհանգիստ գործոց: - 690. ...որպէս ասէ մեկնիչն տեսլեան. եթէ *սպիտակ* հանդերձն շնորհացն քրիստոսի մաքրութիւնն է. որ սրբութիւն մեղաց մերոց արար քրիստոս. յոր ամենայնքն վայելեցաք. զի յորժամ սրբի հոգին, բնական ունի զպայծառութիւնն: - 690. Այլ արկանելիք *սպիտակ*՝ զծաղկեալ նոցա առաքինութեանն երևեցուցանէ զպայծառութիւն յետ ի թանձրութենէ մարմնոյս փոխելոյն. զոր զգեցեալ են նախ քան զխոստացեալ զփառսն...: - 696. Ասէ մեկնիչն, *սպիտակ* հանդերձն զոր զգեցեալ էին՝ շնորհացն քրիստոսի մաքրութիւնն է. յորմէ ամենեքեան վայելեցաք որպէս ասէ առաքեալն...: - 696. Զի՞նչ է *սպիտակ* հանդերձն: - 712. Եւ զի *սպիտակ* հանդերձն արդարութիւն սրբոցն է...: - 712. Երկրորդ զի *սպիտա՛կ* է. նշանակէ՛ զպայծառ առաքինութիւն նոցա: - 712. Վեցերորդ զի կրթելով առնու *զսպիտակ* գոյնն. նոյնպէս և սուրբքն ի կեանս յայս կրթելով չարչարեցան, և ապա՛ այն կենացն արժանի գտան: - 712

**ՍՊԻՏԱԿԱԳՈՅՆ +** Եւ գործեալ լինի փրփրատեսակ և *սպիտակագոյն:* - 205

**ՍՊԻՏԱԿԱԹՈՅՐ +** Իսկ ձմեռն, և յինն ժամէն մինչև յերեկոյ և բոլոր գիշերն, և *սպիտակաթոյր* հիւր պլղամին, և ծեր մարդ, ըստ նմանութեան ջրոյ ցուրտ և գէջ գոլով. վասն որոյ սպիտակի և ցրտանայ և պակասի զօրութեամբ: - 266

**ՍՊԻՏԱԿԻՄ +** Ոմանք ի ջրո՛յ ասեն զկանաչն. և յորժամ պակասի ջուրն՝ չորանան և *սպիտակին:* - 212. Վասն է՞ր մարդս *սպիտակի*, և պտուղքն կարմրին ի հասանիլն: - 213. Մարդս զկարգ եղանակացդ բերէ յինքն. վասն այն ի վերջին փոխիլն *սպիտակի:* - 213. Զի տղայութիւնն օդո՛յ է. և միջին հասակն հրոյ և հողոյ. և վերջինն ջրոյ. վասն այն *սպիտակի*. որպէս ցուցանի յառաջիկայդ **ժզ** գլուխն՝ **իգ** համարն: - 213. Եւ ուր ջերմութիւնն շատ է, մազն ո՛չ *սպիտակի*. որպէս արտևանունքն աչացն և յայլ տեղիս: - 240. Եւ *սպիտակի* մազն ի պալղամէն և ի մաղասէն: - 240. Յորժամ ծերանայ մարդն, և սպիտակ ջուրն որ է պալղամն առաւելու, յայնժամ մազն ընդ սպիտակ ջուրն ի դուրս անցանէ և *սպիտակի՛:* - 240. Իսկ ձմեռն, և յինն ժամէն մինչև յերեկոյ և բոլոր գիշերն, և սպիտակաթոյր հիւր պլղամին, և ծեր մարդ, ըստ նմանութեան ջրոյ ցուրտ և գէջ գոլով. վասն որոյ *սպիտակի* և ցրտանայ և պակասի զօրութեամբ: - 266. Եւ թէ *սպիտակէ՛ր*, խաղաղութեան էր նշան: - 349. Վասն որոյ և յաւուրս զաքարիայի հօրն յովհաննու յորժամ յամեաց ի տաճարին և ել, ակնունէր ժողովուրդն տեսանել զա՛կնն և տե՛սին լուսափայլ *սպիտակացեալ* իբրև զձիւն. և լի՛ եղեն խնդութեամբ. զի երկնաւոր արքայութեան նշոյլքն պայծառացուցին զակն: - 349

**ՍՊԻՏԱԿՈՒԹԻՒՆ +** Նախ *զսպիտակութիւն* ալեացն: - 665

**ՍՌՆԻ** - Իսկ արիստոտէլ ի վերայ երկուց բևեռացն ասէ շարժիլ երկնի որպէս անիւ սայլին ի վերայ *սռնոյ:* - 182

**ՍՏԱԲԱՆ +** Եւ որոց ձայն յռնգունսն հնչէ, *ստաբանք* են և չարախնդացք: - 247

**ՍՏԱԴԻՈՆ +** Զոր ոմանք **լ** *ստադիոն* ասեն զբարձրութիւնն և զլայնութիւնն շուրջանակի խդռ քայլք. այսինքն **խդ** մղոն ձգեալ ասի: - 297

**ՍՏԱԽՕՍՈՒԹԻՒՆ +** Իսկ վարդապետք ուղղաձևութեան՝ յանդիմանեալ զերկոսին կողմանց *ստախօսութիւն*, ո՛չ զհոգի յառաջ քան զմարմին ասեն ստեղծեալ, և ո՛չ զմարմին քան զհոգի: - 254. ...մարմնով մեռելոցն անթիւ օճիրս *ստախօսութեան* գործէր. զանտի կենաց զյարութեան յուսոյ և զհատուցմանց ըստ գործոց՝ բառնալով. զերկիւղ դժոխոց և զսէր արքայութեան. և զամենայն ինչ որ նմանէ այսմ հոգևոր բարութեան: - 775

**ՍՏԱՀԱԿՈՒԹԻՒՆ +** Նա՛խ՝ յանպատրաստութենէ կամ ի պակասութենէ հարկաւոր պիտոյից. կամ յարտաքին *ստահակութենէ* օդոց: - 665

**ՍՏԱՄՈՔՍ +** Եւ օրինակ տայ զկերակուրն որ ի *ստամոքսն* եփի. և գոլոշիկքն ի գլուխն ելանէ և պարզ ջուրն ի լեարդն. իսկ մնացեալ թանձրն լինի դառն և աղի: - 208. Մետասաներորդ՝ Վասն *ստամոքսին*. բերանն դառն և աղի՛ փոխի. և աջ կողմն ուժո՛վ է: - 227. *Ստամոքսն* ջիլ է և միս: - 242. Եւ ունի *ստամոքսն* **դ** զօրութիւնս. որ է՛ քարշողական. ունական. հալողական. վտարական: - 242. Ագահութիւնն ի *ստամոքսն:* - 250. Եւ վերնատունն՝ *ստամոքսն:* - 293. Զի որպէս *ստամոքսն* զկերակուրն հալէ, նոյնպէս և քահանայն զմեղքն: - 363. Քաղց է ըստ մարմնոյ՝ թերութիւն *ստամոքսի*. իսկ ծարաւ՝ տապութիւն ջերմութեանն: - 584. Ի *ստամոքս* որովայնի. և ի լեարդս, և ի յուղեղս գլխոյն: - 786. Իսկ ի ներքուստ, ի լինիլ տրտմութեանց՝ խուճապեալ մարմնոյն հոսի մաղձ դառն ի *ստամոքս* որովայնի. և վերացեալ գոլորշեաց նորա զօրէն շոգոլեաց պուտկի առ խելապատակս գլխոյ. և ծանրացեալ անտի թորի՛ առ բիբն ասացեալ ական. չոր գոլով և աղէգոյն ի սևատեսա՛կն մաղձոյ: - 787

**ՍՏԱՆԱՄ +** Դարձեալ՝ թէ ի հարկէ է՝ ապա բարձեա՛լ են ամենայն սկզբունք բարոյական առաքինութեանց. այսինքն խոհեմութեան. արիութեան. ողջախոհութեան. և արդարութեան. զի սոքա *ստացեալ* լինին առ ոմանս՝ և ո՛չ ի հարկէ: - 11. Ութերորդ՝ Տէր *ստացաւ* զիս, և պատասխանիք նոցա **դ** գլխով: - 29. Նա՛և մասն զբոլորին կոչմունքն *ստանայ:* - 92. Իսկ գանձն և աղբիւրն իմաստութեան երկնի և երկրի՝ ո՛րպէս լինի կարօտ գիտութեան կամ *ստացեալ* յայլմէ: - 98. Զի զոր ինչ բնութեամբ ունէին դևք՝ եթող ի նոսա աստուած յետ յանցմանն. և զոր ինչ երանութեամբ *ստանալոց* էին՝ զրկեցան: - 147. Վասն այն պա՛րտ է զժամանակ կենցաղոյս ի բարին ծախել. զի զառաջին ժամանակն ո՛չ ոք կարէ վերստին *ստանալ:* - 199. Դարձեալ՝ քան զժամանակ ոչ ինչ հասարակ. զի ժամանակ յամենեցունց հասարակ *ստացեալ* լինի. և հասարակապէս անցանէ: - 199. Չորրորդ՝ որ յաւիտեան *ստացեալ* լինի: - 210. Երկիր որ յաւիտեան *ստացեալ* լինի, է՛ գաւառն երկնաւոր: - 210. Զոր մարդիկ բանականութեամբ և արուեստիւք *ստացան* զզէնս զանազանս ի յերկաթոյ ի պատսպարանս ինքեանց: - 216-217. Այլ այժմ ի ձեռն արուեստից *ստացեալ* զզէնս, յորժամ պիտոյանայ՝ առնու և ի գործ ածէ. և յորժամ կամի՝ ի բաց դնէ և հանգչի: - 217. Հինգերորդ՝ զի ի նոցանէ *ստանամբ* զդեղս բժշկութեան

մարմնոց: - 217. Եւ որպէս սակաւ մասն ոտիցն ի յերկի՛ր է հպեալ և կոխէ, նոյնպէս և մեզ սակաւ պէտս մարմնոյ. այսինքն զգեստուց և կերակրոց ի յերկրէ *ստանամք*. և զանչափն և զաւելորդն կոխեմք և անցանեմք...: - 233. Եւ **է** ամեայ ուսումն *ստանայ*. վասն որոյ մինչև յեօթն ամն երեխայ կոչի. զի **գ** մասունք են հոգւոյն. բան. ցասումն. և ցանկութիւն. ըստ պղատոնի: - 264. Դարձեալ՝ մարդոյս միա՛յն է լինիլ յերկրէ՝ և յերկինս. և առաքինութեամբ վարձս *ստանալ:* - 275. Երկրորդ՝ զի առանձնակի կեանս *ստացաւ* **քճ** ամ: - 290. Երրորդ՝ զի նա՛խ բանայ զարգանդ ծնողին և գայ ի կեանս. որ և **ե** օր աւելի *ստանայ* զկեանս յարգանդի: - 310. Երկրորդ՝ զի **խ** քաղաք առին ի բենիամենէ՛ յուդայի ցեղքն վասն շնութեան կնոջն պատահելոյ. և կոտորեցին զնոսա առ հասարակ **իեռ** արս. և մնաց վեց հարիւր այր զոր յետոյ *ստացան* ժառանգութիւն իւրեանց. որպէս յա՛յտ է ի դատաւորաց վերջքն: - 312. Որ յերուսաղէմէ՛ մինչ ի լիւրիկէ որ է՛ եզր աշխարհի՝ էլից զաւետարանն. և *ստացաւ* ժառանգութիւն նմին: - 312-313. Իննևժ, յովսէփ *ստացաւ* ոսկի և զարծաթ և զերկիրն եգիպտացւոց՝ փարաւոնի...: - 314. Տասներորդ՝ զի որ զայնպիսի լոյսն յինքն ընկալաւ, զամօթ առականացն ադամայ ո՛չ *ստացաւ:* - 352. ...և Դարձեալ՝ տէրն բնութեամբ ունէր զլոյսն. և նա՛ արտաքուստ *ստացաւ*...: - 352. Եւ ապա՛ սիրտ սուրբ և գեղեցիկ *ստանալ* ի հաւատս և խորովիլ ի սէրն աստուծոյ: - 360. Անմարթ էր թողուլ զժողովուրդն ի դրան տաճարին և մերձիլ յանկողինս. և ըստ օրինացն **զ**օրեայ սրբութիւն *ստանալ*. որ անհնա՛ր է ամենևին. թէպէտ ասեն՝ գոյր ա՛յլ քահանայապետ որ զկարգ պաշտամանն կատարէր: - 484. Ներքինն զարի և ժուժկալ վարս համբերութեամբ *ստանալ* զհոգիս: - 493. Երկրորդ ի կրթութենէ ուսմանց. որ արտաքուստ կրթութեամբ *ստանայ*. որպէս պղատոնին և այլոցն: - 537. Իսկ անձնականն ո՛չ. զի ներգործութեամբ է *ստացեալ* զայնոսիկ: - 568. Առաջինն *ստանայ* զժամանակաւորս: - 580. Յամեստութիւն է որով զպարկեշտ ամօթխածութիւնն *ստանայ* և զնազելի պատկառանս: - 581. Իսկ վեցերորդ կոչին մակստացականք. այսինքն ի վեր *ստացեալ* աշխատութեամբ. որք հետևին միմեանց իբրև զչարս շղթայից: - 582. Երրորդ՝ զի միշտ անդրանիկ ծնանի և ո՛չ կրտսեր. զի պատկեր քրիստոսի *ստանամք* որ է՛ անդրանիկ հօր: - 590. ...զոր ի յարութեանն աւուր զանփոփոխ սերտութիւնն *ստասցի:* - 667. Յինգերորդ, մարմինն ի հող դնի, մինչև ապականացու տարերք զանապականութիւն *ստասցին*...: - 677-678. Եւ այլք ոմանք վեցերորդ կարծիս *ստացեալ* ասեն զբուն կատարեալ բարեաց հոգիսն ժողովեալ ի հրեշտակացն դասս...: - 687. Նախ ի տեսանելն զերեսս աստուածային որ է անճառելի ցնծութիւն. որպէս ասեն վարդապետք, այն է ճշմարիտ և միայն ուրախութիւն, և ո՛չ յաղագս ստեղծուածոյ, այլ ի ստեղծողին լինի. զոր իբրև *ստանայցես*, ո՛չ ոք բարձցէ ի քէն: - 762. Իսկ զոր ինչ շնորհօք լինի ոք *ստացեալ*, կարէ՛ և մերկանալ. որպէս ադամ զեռակի շնորհն...: - 782

**ՍՏԱՇԽՆ +** Նմանապէս և խունկ ծխելոյ **դ** էր: ...*Ստաշխն*. և Քաղբան. Եղունգն. և Կնդրուկ: - 349

**ՍՏԱՑԱԿԱՆ +** Մետասաներորդ՝ զի հայրենի՛ է եղեալ աւանդութիւնն, և սովորութիւնն *ստացական* բնութիւնն: - 33. Նախ՝ զի գութն բնական է, և սէրն *ստացական:* - 144. Իսկ գիտութիւն է *ստացականն:* - 270. Եօթներորդ՝ նշանակէ թէ բնական և անփոփոխ ո՛չ է անդրանկութիւնն. այլ *ստացական* և փոփոխական: - 310. Այլ և **է** խորհուրդ եկեղեցւոյ, և **է** զօրութիւնք հոգւոյս. չորսն *ստացական*, և **գ**ն աստուածային առաքինութիւնք: - 347. Ա՛րդ՝ տգիտութիւնն բնակա՛ն է մարդոյ. փոփոխումն *ստացական*. և հիւանդութիւնն դիւական: - 531

**ՍՏԱՑՈՒԱԾ +** Կայնան *ստացուած* ընտրեալ օրհնեալ աստուած: - 299. Ուստի՞ աճեցին *ստացւածքն* յորքայ: - 326. Եւ աստ գիտելի՛ է, զի յետ փործանացն կրկին եղեն *ստացւածքն* նորա: - 326. Յինգերորդ՝ հանգիստն կատարեալ հոգւով և մարմնով. որ է՛ փողոց հնչմունք. ազատութիւն յապականութեանց. ամ թողութեան և իւրաքանչիւր ուրուք ի *ստացուածս* իւր դարձումն. որ է՛ գործոց հատուցումն: - 372. Վեցերորդ՝ զի թէ լինի անկարօտ գող և զրկօղ, ընդ տեառն իւրոյ կորուսանէ և զինչսն. որպէս աքարն որ ունէր բազում *ստացւածս*, և գողացաւ ի նզովիցն երիքովի. տեսին ամենայն ժողովուրդն և ցասեան ի վերայ նորա և իրաւունս ետուն սատակմանն: - 416. Զի գնելն լինի սակաւ մի ժամանակ. այլ *ստացուածն* է՛ յաւիտենական: - 744

**ՍՏԱՑՈՒՄՆ -** Այլ որպէս բանին սեպհական է և բնութեամբ և ո՛չ *ստացմամբ*, այսպէս իմացիր և մարմնոյն վասն անճառ միաւորութեան բանին զի իւր է մարմինն. վասն այն ոչ ինչ բանին է՝ ասի մարմնոյն: - 46. Իսկ մարդս ո՛չ բնութեամբ, այլ յետոյ *ստացմամբ* և ունակութեամբ: - 138. Եւ յայսցանէ յայտէ, զի յետ յարութեանն ի վերինն գաւառ ոչ գոյ յոյս. զի է՛ անդ երանութիւն, որ է *ստացումն* ամենայն բարեաց. բոլորն համանգամայն և կատարեալ. և ոչ ինչ է ապառնի յոր յուսացեալ լինի: - 574

**ՍՏԳՏԱՆՔ +** Չորրորդ՝ տեսեալ զմովսէս առաւել փառաւորեալ, և յետ վախճանին թոյլ ետ ներողութիւնն աստուծոյ ժպրհիլ բանսարկուին *ստգտանօր* մեղաց. զի մի՛ տացեն նմա զգերազանց պատիւն աստուած կարծելով: - 410

**ՍՏԵՂԾԱՆԵՄ +** Դարձեալ ասեն ըստ փիլիսոփային թէ՝ ո՛չ աստուած՝ և ո՛չ բնութիւնն՝ և ո՛չ արհեստ՝ վայրապար իրս երբեք *ստեղծանեն*. ապա թէ աստեղքն ո՛չ ունին զօրութիւն ազդելոյ՝ վայրապա՛ր են *ստեղծեալք* յարարչէն: - 13. Երկրորդ՝ ասեմք եթէ և ոչ աստեղք վայրապար են *ստեղծեալ*...: - 13. Հինգերորդ, ասեն թէ՝ գործունեայք չարին են յաստուծոյ որպէս կամքն. ապա և չարն է յաստուծոյ. զի նա՛ *ստեղծ* զկամքն: - 16. Նախ թէ աստուած *ստեղծ* զկամքն բարի. և զբարին եդ առաջի կամիլ...: - 6. Դարձեալ ասեմք թէ՝ աստուած *ստեղծ* զկամքն նաև զհրեշտակս և զմարդիկ բարի. և կամի զբարին և բռնադատէ՛ սիրել զբարին: - 17. Ապա թէ զայս ո՛չ առնէ, անձնիշխան կամօք հետևի չարին և ո՛չ ի բնուէ, զոր աստուած բարի է *ստեղծեալ:* - 19. Ապա ուրեմն և զոմն չար և զոմն բարի *ստեղծանէ:* - 19. Եւ դարձեալ՝ արարա՛ծ է ըստ այլոց. «որպէս կամեցաւ և արար տէր». և Դարձեալ՝ զկամքն ի տեղի մօ՛ր *ստեղծանեն:* - 36. Երրորդ՝ զի է՛ հնար առնուլ ի վերայ մարմնական իմաստութեանց՝ և արհեստից հանճարաց՝ և բնականին ներգործութեանց ի բնութիւն իրին յառաջ ածելով զէութիւնն. թէ ասեմք զիմաստութիւնս զայս *ստեղծեալ* նախկին...: - 40. Եւ թէ գոյր երիցագոյն, լինէր պատճառն և գերագոյն քան զաստուած. իսկ *ստեղծանելն* երևի պատճառաւ. այսինքն վասն փրկութեան մարդկան: - 41. Իսկ ի ստեղծումն է ընդդէմ այսմ. քանզի *ստեղծօղն* ո՛չ այլայլի, այլ ստեղծուածն: - 41. Արդ ասի որդին ծնեալ և *ստեղծեալ*. զի ի ստեղծմանէն իմանի անփոփոխութիւն հօրն. և ի ծննդենէն միութիւն բնութեանն հօր և որդւոյ: - 41. Այլ ասի անդրանիկ՝ զի նա՛ էառ ի հօրէ զայն՝ որով *ստեղծան* ամենայնքն: - 41. Մեզ ճշմարտապէս *ստեղծօղ*՝ որպէս և նմա ո՛չ բանին՝ այլ երևելոյն: - 43-44. Եւ յայսցանէ էն առաւել է. զի Աստուածն յաստ էած զմեզ, և կամ *ստեղծօղ*, և կամ ճանաչօղ լսի: - 49. Էառ փրկիչն զամենայն, զի փրկեսցէ զամենայն. բաց ի մեղաց. զի մեղքն եկամուտ է և ո՛չ է ի բնութենէս. զի բնութիւնս անմեղ *ստեղծաւ* յաստուծոյ: - 50. Եւ ո՛չ այս կարէ լինիլ ի յերկուցն հատումն. այսինքն զի լիցի յաստուծոյ և արարածէն՝ և լինիլ մի էութիւն. որպէս ո՛չ է էութիւն եղջերուաքաղն որ յեղջերէ՛ և ի քաղէ *ստեղծանի*. ապա ուրեմն ո՛չ լինի էութիւն յարարչէն և յարարածէն: - 52. Վեցերորդ՝ *ստեղծանելն* միայն աստուծոյ է ...: - 57. Վեշտասաներորդ՝ մանաւանդ զի յոյժ անվայելուչ է կարգել զծառայն ընդ տեառն՝ և զստեղծուածն ընդ *ստեղծողին*՝ յորժամ ա՛յլ է բնութեամբ: - 67. Նախ այսպէս. գործ աստուծոյ՝ *ստեղծանելն* է ...: - 70. Եւ ի ծնէ զաչս կուրին *ստեղծեաց:* - 70. Իսկ միւսն մա՛րդ էր բնութեամբ յարարեալ և *ստեղծեալ* բնութենէ. և խառնելով ընդ բանին՝ եղև առեալն որպէս առօղն զո՛յգ և հաւասար աստուած...: - 79. Այլ աստուածային բնութիւնն յառաջ է քան զմարդկայինն. որք *ստեղծողի* և *ստեղծուածոյ:* - 87. Այսպէս *ստեղծանել*՝ և որոշել՝ և զարդարել: - 105. Դարձեալ՝ որ զամենայն *ստեղծ*՝ հայր կոչի. և որ զամենայն պարունակէ՛ զի մի՛ լուծցին՝ որդի. և որ շնչելով կենագործէ և զարդարէ զամենայն՝ հոգի սուրբ յորջորջի: - 108. Այլ զայս *ստեղծեալ* յաւիտեանս ասեմք ոչ սկիզբն ունիլ և ո՛չ կատարած...: - 116. Իսկ բացբարձականքն՝ ո՛չ զէութիւն կամ զփառս աստուծոյ բառնայ, այլ զոր յետ էութեանն աստուծոյ է և ի նմանէ *ստեղծեալ*՝ և զխոնարհութիւնսն բառնայ: - 124. Ա՛րդ՝ բնութեան նոցա պատշաճի բարձրագոյն տեղիք որ է երկինքն յորում *ստեղծան*. զի թէ կացեալ էին կատարելոց էին անդ: - 146. Ո՛չ մի ժամանակս կատարեալ. քանզի «ի ճշմարտութեան ո՛չ եկաց» ասէ տէրն. այլ վաղվաղակի իբրև *ստեղծաւ*՝ անկաւ և ո՛չ յամեաց. և ո՛չ ի յաւիտենական քաղցրութենէն ճաշակեաց. վասն որոյ ո՛չ երանեցաւ և ո՛չ մնաց ի բարութեան: - 147. Ընդէ՞ր այլ հրեշտակք ո՛չ *ստեղծ* փոխանակ նոցա: - 149. Այլ հրեշտակ ո՛չ էր պարտ *ստեղծանել* փոխանակ նոցա: - 149. Ամենայն հրեշտակք զուգապէս *ստեղծան* յաստուծոյ. և ո՛չ մի ի միոյ. որպէս մարդ ի մարդոյ ծնանի: - 149. Վասն է՞ր ո՛չ *ստեղծ* զնոսա այնպէս զի մի՛ կարիցեն մեղանչել: - 149. Եւ զի նախագէ՛տ էր աստուած՝ ընդէ՞ր *ստեղծ* զնոսա որ այնպիսիք եղեն: - 149. Մի է աշխարհ. և չունի զգայարանք. և թէ ուր էր աստուած. և ուր էր աշխարհ. և յի՞նչ պատճառի *ստեղծաւ:* - 154. Թէ ի **գ** օրն *ստեղծան* ամենայն: - 154. Հնգետասաներորդ՝ զի մարդ յետ *ստեղծանելոյն* ո՛չ է ընդ *ստեղծուածս* իւր. իսկ աստուած յետ *ստեղծանելոյն*՝ միշտ է՛ ընդ *ստեղծուածս* իւր նախախնամութեամբ...: - 157. Առաջին՝ զի արարչութիւն է յոչէից *ստեղծանել*. իսկ նախախնամութիւն է զեղեալն ի նոյնութեան պահել: - 157. Երկրորդ՝ զի առաջին է *ստեղծանելն* և ապա՛ նախախնամելն. այս ի յեղեալ իրն: - 157. Իսկ ի նոյն ինքն՝ առաջին է նախախնամութիւնն առ աստուած, և ապա՛ ստեղծումն. զի վասն նախախնամական բարութեանն կամեցաւ *ստեղծանել*

զեղեալքս...: - 157-158. Երրորդ՝ զի առնելն ի սկիզբն նայի *ստեղծեալ* իրին զի լինիցի. և նախախնամելն ի կատարածն զի մի՛ կորիցէ: - 158. Եւ ա՛յլ է *ստեղծանելն* ի յոչնչէ. և այլ է խնամել *զստեղծեալ* իրն որպէս ասացաք: - 172. Իսկ մեք ասեմք յոչնչէ *ստեղծեալ* աստուծոյ զարարածս: - 173. Ընդէ՞ր մի աշխարհ *ստեղծ*, և ո՛չ **բ**, կամ այլևս: - 179. Եւ այս ևս գիտելի է, զի որպէս հրեղէն երկինն հոմանուն է, այսինքն լուսեղէնն որ ի սկզբանէ *ստեղծաւ*. և բոլորակ հրոյն: - 184. Զի լուսինն ընդ երեկս երևացաւ և մեռասանօրեայ *ստեղծաւ:* - 191. Եւ վասն այն *ստեղծաւ* մեռասանօրեայ, զի յաւուր ուրբաթի յորում ադամ *ստեղծանիւր*, լինէր լուսինն բոլոր և **ժդ**օրեայ: - 191. Վասն է՞ր զերկնայինսն կատարեալ *ստեղծ* աստուած, և զերկրաւորքս ըստ կարգի յաւուրս վեց: - 192. Երրորդ՝ որ զերկնայինսն կատարեալ *ստեղծ*, ամենակարող զօրութեանն է ցոյցք: - 192. Ապա թէ ոչ՝ ի յակնարկել կամացն՝ բիւրապատիկ կարող էր աստուած *ստեղծանել* քան զայս աշխարհս: - 192. Նոյնպէս և նշանակէ՛ զհրեշտակաց բնութիւնն, որ նախ *ստեղծան* անկատար ճանաչմամբ և գիտութեամբ...: - 192. Ութերորդ՝ նշանակէ վեց թիւն որ է՛ կատարեալ՝ թէ բոլոր կատարելութիւն աշխարհիս ի յաստուծոյ է *ստեղծեալ*. երկինք և երկիր՝ և ամենայն ինչ: - 192-193. Իններորդ՝ ի վեց օրն *ստեղծեալ* աշխարհ. նշանակէ՛ **զզ** դարս. որով մնայ աշխարհ: - 193. Նա՛խ՝ զի բղխումն ցուցանէ զկատարեալն. որ ամենայն ինչ կատարեալ և լի *ստեղծան* յարարչէն: - 212. Չորրորդ՝ ցուցանեն *զստեղծօղն* իւրեանց յերկինս գոլ. վասն այն ի վե՛ր ճեպին: - 214. *Ստե՞ղծ* աստուած հոգաբարձութեամբ զճանճս և զմժեղս և զայլսն, թէ ի գոյի՞ց պատահեցան: - 217. Ասեն վարդապետք թէ՝ ա՛յն չափ հոգս տարաւ աստուած ի *ստեղծանել* զճանճս և զմրջմունս որքան հրեշտակաց: - 217. Երրորդ՝ *ստեղծան* նոքա՝ զի ի նոցա՛ ջանից ընթերցմանց և բարեաց գործոց օրինակ առցուք. որպէս են մրջմունք և սարդք, և այլք այսպիսիք: - 217. Գազանք և օձք և այլ կենդանիք որք վնասակա՛րք են՝ վասն է՞ր *ստեղծան:* - 217. Նա՛խ՝ ի փառս աստուծոյ *ստեղծան*. զի յորժամ զզանազան կերպարանս նոցա տեսանեմք, փառս տամք արարչին: - 217. Իսկ եթէ ոք հարցանէ, ապա վասն է՞ր *ստեղծան* ծննդական անդամքն յորժամ ո՛չ ծնանէին ի դրախտին: - 226. Եղև՞ բացատ ժամանակի ի *ստեղծանելն:* - 227. Ի քթթելական՝ որքան վաղվաղակի կարես բանալ զակն՝ զբոլորն համանգամայն *ստեղծ:* - 227. Յերկրորդն՝ զհոգևոր *ստեղծւածսն* որոշեաց ի մարմնաւորէն: - 227. Առաջին՝ Թէ ի հողոյ *ստեղծաւ:* - 227. Երեսունք՝ Զկինն ի կողէն *ստեղծ:* - 228. Վասն է՞ր մարդն ի հողոյ *ստեղծաւ:* - 229. Երրորդ՝ հողն վերջին է ի տարերս. զի գիտասցէ զշնորհս աստուծոյ՝ որ այսպէս առաջին և պատկեր աստուծոյ *ստեղծաւ:* - 229. Տասներորդ՝ զի յայսմանէ հաստատեսցի ի մեզ հաւատ յարութեանն. որպէս զառաջինն ի հողոյ *ստեղծ* զմեզ, դարձեալ ի յարութեանն ի նոյն հողոյն լուծեալ և փոշիացեալ՝ յարուցանէ աստուած: - 229. Եւ դարձեալ՝ զի հաստատեսցի ի մեզ հաւատ մարդեղութեանն քրիստոսի. թէ որպէս ի յապականացու հողոյն *ստեղծ* ադամայ մարմին անապական: - 229. **Դարձեալ ի հողոյ *ստեղծ* ի նախատինս սատանայի. զի յամօթ լիցի յորժամ տկարս այս և կաւեղէնս ի փառսն մտանէր յորմէ նա՛ որ փառաւորն էր անկաւ**: - 229. Այսպէս և մարդն թէպէտ յետոյ *ստեղծաւ*, մեծ և պատուակա՛ն է քան զամենայն երևելի արարածս: - 230. Եւ վասն բազում պատճառի յետոյ *ստեղծաւ* մարդս: - 230. Երրորդ՝ կամեցաւ աստուած՝ թագաւոր *ստեղծանել* զմարդն...: - 230. Չորրորդ՝ զի մի իցէ նեղասիրտ և տառապեալ բարուք տեսանելով զինքն ի չքաւորութեան *ստեղծեալ*. այլ տեսցէ զամենայն կատարեալ. զի արձակ և առատ բարուք սնանիցի և վայելեսցէ: - 230. Այսինքն տնկական. և զգայական. և բանական. և զի յանկատարէն ելանեմք ի կատարեալն. վասն որոյ նախ *ստեղծաւ* տնկականն ոգի, և ապա՛ զգայականն, և ապա՛ բանականն որ է կատարեալ մարդն: - 231. Վասն որոյ յետոյ մարդն *ստեղծաւ* յերկուցն խառնեալ յիմանալւոյն և ի զգալոյն ի մի էութիւն: - 231. Եւ որպէս մարմնոյն պատկերք նման և աննման են իրերաց. նոյնպէս և հոգին ըստ միոյ բնութեան *ստեղծեալք* նման և աննմանք են իրերաց: - 237. Եւ թէ ոք ասիցէ՝ աստուած զամենայն ինչ բարի՛ է *ստեղծեալ*, և սոքա չար երևին: - 237. Զի որք զհոգի յառաջ ասեն գոյանալ՝ զայս դնեն պատճառ, եթէ յէակքս իմանալիքն յառաջ *ստեղծան* քան զզգալիքս. ապա և ի մարդոյն էութիւն հոգին յառաջ է քան զմարմինն: - 252. Եւ այժմ պատասխանեսցուք այնմ որ ասեն՝ յարարածքս զիմանալիս յառաջ *ստեղծեալ* քան զզգալիս: - 253. Իսկ որ ի **զ** օրն ասեմք *ստեղծեալ* զարարածս, այս զկարգ և զդասն նշանակէ մի քան զմի յետոյ. այլ ստեղծումն համանգամայն եղև: - 253. Այսպէս եթէ հոգի յետո՛յ *ստեղծաւ* վասն մարմնոյն, անա՛րգ է քան զմարմին: - 253. Իսկ վարդապետք ուղղաձևութեան՝ յանդիմանեալ զերկոսին կողմանց ստախօսութիւն, ո՛չ զհոգի յառաջ քան զմարմին ասեն *ստեղծեալ*, և ո՛չ զմարմին քան զհոգի: - 254. Այլ ի միասին համանգամայն *ստեղծեալ*. ո՛չ

ժամանակաւ յառաջ և յետոյ, և ո՛չ բնութեամբ. այլ մի է սկիզբն միոյ գոյութեան մարդոյն: - 254. Եւ թէ ոք ասիցէ, զի՞նչ է այս որ յետ խ, կամ ծ աւուր *ստեղծանի* բանական հոգին: - 254. Ասեմք առ այս. զի թէպէտ ա՛յլ է գործ ստեղծման և ա՛յլ նախախնամութեան. զի *ստեղծանելն* է առնել իր ինչ ի յոչնչէ. և նախախնամելն՝ զեղեալն փոխանորդութեամբ ի նոյն տեսակն պահել: - 257. Ո՛չ է հին, զի ըստ իւրաքանչիւր մարմնոյ համանգամայն *ստեղծանի* հոգին: - 257. Եւ ոչ նոր, զի մի և նոյն ի սկզբանէ հրամանն արարչադիր առանց տկարութեան ներգործէ մինչ ի կատարած. և ըստ իւրաքանչիւր հոգւոյ՝ նոր հրաման *ստեղծանելոյ* ո՛չ արծակի: - 257. Իսկ հինգ օրեայ անդրանկանն յետոյ լինիլ՝ բերէ՛ զնմանութիւն նախնի մարդոյն. որ յետ **Ե** աւուր *ստեղծաւ:* - 264. Որ յայսմ թուոջ և նախահայրն ադամ *ստեղծաւ:* - 265. Զի իմաստութիւնն է ճանաչումն աստուծոյ բացարձակապէս. իսկ հանճարն է ճանաչումն համեմատաբար. այսինքն համեմատելով զստեղծուածս առ *ստեղծօղն:* - 270. Այսպէս իսկապէս թագաւորն ամենայն աշխարհի՝ *ստեղծեաց* զմարդն ըստ պատկերի իւրոյ: - 271. Քսանն**Ե**, ասէ լուսաւորիչն մեր, թէ ծև մարդոյ երևեցաւ ի *ստեղծանելն*, զոր առնելոց էր զնոյն մարմին յետոյ ժամանակի. և ի նոյն պատկերն արար զմարդն: - 272. Քսանն**Բ**, բարի և բարեսէր է աստուած. նոյնպէս և զմարդն բարի և բարեսէր *ստեղծ:* - 272. Նա՛խ՝ զի խոստովանեալ է յամենեցունց որ ո՛չ է հաստելի. այսինքն ո՛չ *ստեղծեալ:* - 274. Եւ զի ո՛չ է *ստեղծեալ*, և ո՛չ է յեղեալ ի չգոյէ ի գոյ. ապա ուրեմն անեղ է: - 274. Վասն է՞ր զկինն ի կողէն *ստեղծ* և ո՛չ ի հողոյ: - 276. Նա՛խ՝ զի հրամանքն է *ստեղծողի* առ ստեղծուածս: - 277. Երկրորդ՝ ցուցանէ զինքն տէր և *ստեղծօղ* մարդոյն: - 277. Այլ մորթ մաշկեղէն *ստեղծեաց* և զգեցոյց նմա փոխանակ լուսեղէն զարդուն. զմեռելութիւն նորա նշանակելով: - 280. Մաշկն է կենդանական մորթ. զոր *ստեղծեաց* աստուած և զգեցոյց զադամ և զևա: - 281. Չորրորդ՝ զի ի *ստեղծանելն* զմարդն աստուած ո՛չ վկայեաց թէ բարի է որպէս ա՛յլ ամենայն ստեղծուածոցն: - 325. Նա՛խ՝ նշանակէ զադամ. որ անմեղ և յստակ *ստեղծաւ*, և ի մեղանչելն եղև արիւն զազրալի, և մարմին անհոգի: - 333. Երրորդ, քաղցր է և փափագելի. զի զամենայն ինչ որ բարի է ի ստեղծուածս՝ օրինակ տամք *ստեղծողին:* - 338. Չորրորդ՝ ինքն անկարօտ գոլով *ստեղծեաց* զարարածս. և բարձեալ կրէ՛ զամենայն բանիւ. և նոյն ինքն հրամայէ՛ խորան կազմել: - 342. Երկրորդ՝ զի յետոյ *ստեղծաւ*: - 350. Երկրորդ՝ նշանակէ զմահ և զյարութիւն մեր. որ լ ամեայ յառնեմք. որպէս ադամ **Լ** ամեայ *ստեղծաւ:* - 411. Որ ի կաւոյ աչք *ստեղծ*. և մեռեալս յարոյց. և զանշունչ նկանակս աճեցոյց. զոր ոչ արար մովսէս: - 411. Երրորդ՝ ի յեղծանիլ պատկերին աստուծոյ որ վասն փառացն աստուծոյ *ստեղծաւ*, ընդ նմին եղծան և ապականեցան այլ արարածք որ վասն փառաց մարդոյն *ստեղծան*. որ ո՛չ միայն անասունք, այլ և հող և ջուր և օդ երկրին կորուսանեն զպտղածնութիւն. որպէս սոդոմայեցոցն: - 416. Երրորդ՝ զի ո՛չ ինչ յորոց *ստեղծ* աստուած գարշի բնակիլ. մանաւանդ յարգանդի զարդարեալ կուսութեամբ. զի զոր *ստեղծ* ձեռօք, բնակէ՛ ի տան ձեռագործի իւրոյ: - 469. Ստեղծուածն *զստեղծօղն:* - 469. Իսկ ըստ կոչման, որպէս քրիստոնեայք. մկրտեալք. ծառայք. և *ստեղծեալք:* - 476. Երկրորդ «ի յորդանան». որ *ստեղծօղն* է տարերաց՝ եդ զինքն ի ներքոյ խոնարհ տարեր ջրոյն: - 487. Եօթներորդ՝ ի տարրական հողոյ *ստեղծեաց* աստուած ադամայ անապական մարմին և եդ ի դրախտին. որ մեղօք յանցեալ՝ եղև ապականացու: - 499. Ասեմք եթէ, բանն մարմնացաւ ի կուսէն. և կոյսն էր ի բնութենէն ադամայ ի հողոյ *ստեղծեալ:* - 501. Ապա թէ ոչ՝ նա՛ որ զադամ երեսնամեայ *ստեղծ*, կարէ՛ր և նոյն հասակաւն ծնանիլ. այլ այն ո՛չ լինէր ըստ սովորութեան մեր որպէս ցուցաւ ի վերոյ: - 501. Երկրորդ՝ զի ադամ ի միջակ լուծն կշռոց այսինքն յանձնիշխանութիւնն *ստեղծաւ*...: - 503. Եւ ադամ երեսնամեայ *ստեղծաւ:* - 516. Սակայն վարդապետք եկեղեցւոյ պատշաճե՛ն *զստեղծանելն* հօր. իսկ զտրոհելն որդոյ. և զզարդարելն հոգւոյն սրբոյ: - 522. Դարձեալ՝ հաւատովն հաւատամք՝ որ միայն իւր բարութեամբն զմեզ *ստեղծեաց* և վերստին փրկեաց և ո՛չ ի հարկէ: - 571. Իսկ **Բ** շաբաթին հրեշտակաց. զի յառաջնում աւուրն ընդ լուսոյն *ստեղծան:* - 642. Նախ արարչութեանն շաբաթ՝ էր սրբութիւն և պահք մինչև *ստեղծաւ* ադամ և ելոյծ զպահքն: - 653. Եւ դարձեալ՝ հոգի և մարմին զոյգ և ի միասին *ստեղծան* և ծնան ի մարմնաւոր կեանքս...: - 669. Երրորդ, զի զոյգ և ի միասին *ստեղծան* և ծնան ի մարմնաւոր կեանքն հոգին և մարմինն...: - 691. Չորրորդ, զի ամենայն մարմինք մարդկան միանգամայն *ստեղծան* ի կողմանէ առաջին նիւթոյն...: - 717. Հինգերորդ, *ստեղծաւ* մարդն հաւասար հրեշտակաց. և յորժամ մեղանչեաց՝ անասնոց հաւասարեցաւ ըստ դաւթի և ընդ նոսա ապականացաւ և պատժեցաւ...: - 724. Եւ ա՛յս է պատճառն. զի աստուած ի սկզբան զբնութիւնն ադամայ անթերի *ստեղծ*. նոյնպէս ի վերջին օրն անթերի պիտի նորոգէ: - 726. ...և յայս թիւս *ստեղծաւ* ադամ որ է երեսնամեայ: - 726. Երկրորդ՝ զի

կենդանիք և բոյսք *ստեղծան* վասն մարմնաւոր կենդանութեան մարդկան...: - 727. Վասն զի երկին որ շարժի՝ յօր դատաստանին դադարի և հաստատի յայն կարգն յոր նա՛խ *ստեղծան*. արեգակն յարևելս և լուսինն յարևմուտս: - 727. Երրորդ, զի որդի է՛ նման հօր. իսկ հրեշտակք և մարդիկ շփոթեցին յինքեանս զնմանութիւնն յոր *ստեղծան*...: - 735. Նախ ի տեսանելն զերեսս աստուածային որ է անճառելի ցնծութիւն. որպէս ասեն վարդապետք, այն է ճշմարիտ և միայն ուրախութիւն, և ո՛չ յաղագս ստեղծուածոյ, այլ ի *ստեղծողին* լինի. զոր իբրև ստանայցես, ո՛չ ոք բարձցէ ի քէն: - 762. ...և ամենայն որ ինչ փափկութիւն գտանիցի՝ աշխատութիւն. մինչ զի բարութիւնն աստուծոյ յանհունս գերազանցէ՛ քան զամենայն *ստեղծեալ* բարութիւնս: - 762. Մինչ զի այս քան գտանիցին հեշտութիւնք ի մասնական ստեղծուածոյս, որ քան գտցին ի *ստեղծօղն* յայն: - 762. Զի որպէս կարողութիւնն աստուծոյ երևի ի *ստեղծանելն* և ողորմութիւնն ի բարերարելն, այսպէս և արդարութիւնն ի հատուցանելն: - 778. Զի արարիչն և բնութիւնն և արուեստն ոչ ինչ ծրի և վայրապար *ստեղծանեն* ըստ իմաստասիրին: - 785

**ՍՏԵՂԾԻՉ +** Ո՛չ ասի հողեղէն և երկրեղէն վասն հողեղէն մարմնոյն. այլ միշտ յերկնից մարմնով իւրով. և *ստեղծիչ* հողեղինաց և երկրաւորաց: - 78. Վասն որոյ ասէր՝ մինն աստուած էր բնութեամբ բանն. աստուած արարիչ և *ստեղծիչ*: - 79. Այս է *զստեղծիչն* որ արար յոչէից: - 656

**ՍՏԵՂԾՈՒԱԾ +** Դարձեալ ասեմք թէ՝ աստուած ո՛չ է պատճառ. *ստեղծուածոցս* ի հարկէ. այլ ըստ կամաց որով առնէ. զի ոմանք դիպին ի հարկէ, և ոմանք ո՛չ ի հարկէ: - 15. Երրորդ՝ թէ լինէին երկու սկիզբն հակառակ միմեանց, մի զմիոյ *ստեղծուածս* ապականէին. և ո՛չ լինէին արարածք ինչ: - 20-21. Առաջին՝ զի թէ աստուած էր անծնելութիւնն, պա՛րտ էր ունել և անծնելութեանն *ստեղծուած* ինչ...: - 38. ...առաջին լինելութիւնն ասէ *ստեղծուած* քան զամենայն եղելոց ասեն: - 40. Արդ *ստեղծուած* ասի իմաստութիւնն ըստ խոնարհ ծննդեանն. և ծնունդ ըստ առաջնումն անհասանելոյն: - 41. Իսկ ի ստեղծումն է ընդդէմ այսմ. քանզի ստեղծօղն ո՛չ այլայլի, այլ *ստեղծուածն*: - 41. Առ որս ասեմք՝ թէ որդի ո՛չ ասի անդրանիկ վասն գոլոյն ի կարգէ *ստեղծուածոց*, զի ո՛չ ոք *ստեղծուած*՝ էառ զբնութիւն աստուծոյ որպէս որդին: - 41. Եւ զի աստուած է՝ ո՛չ կարէ ասիլ *ստեղծուած* կամ արարած կամ պաշտօնեայ կամ ծառայ: - 52. Եօթներորդ՝ քննել զսիրտս աստուծոյ՝ ո՛չ է *ստեղծուածոյ* ումեք...: - 57. Ութևտասներորդ՝ ո՛չ ոք իմանալի *ստեղծուած* և մասնաւոր՝ կարէ հաղորդիլ բազմաց: - 59. Երրորդ ասեն, շարժիլն *ստեղծուածո՛յ* է: - 60. Իսկ շարժմունքս այս ո՛չ ցուցանեն զաստուած *ստեղծուած*: - 60. Վեշտասաներորդ՝ մանաւանդ զի յոյժ անվայելուչ է կարգել զծառայն ընդ տեառն՝ և *զստեղծուածն* ընդ ստեղծողին՝ յորժամ ա՛յլ է բնութեամբ: - 67. Զի իմաստութիւնն է ճանաչումն աստուծոյ բացարձակապէս. իսկ հանճարն է ճանաչումն համեմատաբար. այսինքն համեմատելով *զստեղծուածս* առ ստեղծօղն: - 270. Դարձեալ՝ մա՛րդն ունի հասարակութիւն ինչ ամենայն *ստեղծուածոց*: - 275. Դարձեալ՝ մէջ և ե՛զր է ամենայն *ստեղծուածոց* որպէս ասացաւ ի վերոյ: - 275. Դարձեալ՝ մա՛րդն է պատւական քան զամենայն մարմնական *ստեղծուածս*: - 275. Եւ որպէս աստուած իշխա՛ն է ամենայն *ստեղծուածոց*. և մարդն իշխա՛ն է ամենայն մարմնաւորաց: - 275. Նա՛խ՝ զի հրամանքն է ստեղծողի առ *ստեղծուածս*: - 277. Չորրորդ՝ զի ի ստեղծանելն զմարդն աստուած ո՛չ վկայեաց թէ բարի է որպէս ա՛յլ ամենայն *ստեղծուածոցն*: - 325. Երրորդ, քաղցր է և փափագելի. զի զամենայն ինչ որ բարի է ի *ստեղծուածս*՝ օրինակ տամք ստեղծողին: - 338. Այսպէս գերազա՛նց է քան զամենայն շնորհք հեղեալ ի *ստեղծուածս*. այս է գերագոյն շնորհք. որ պատրաստեաց զկոյսն առ մայրութիւն աստուծոյ: - 463. Ա՛րդ՝ սքանչելիք էին ի մայրն քրիստոսի որպէս ասեն վարդապետք: ...*Ստեղծուածն* զստեղծօղն: - 469. Եւ զայսոսիկ կատարեաց քրիստոս. զի *ստեղծուած* էր ինքեան: - 496. Եւ վասն այն սիրեմք զընկերն, զի *ստեղծուած* և պատկեր աստուծոյ է: - 571. Երրորդ՝ ի *ստեղծուածոց*. զի ամենայն նման սիրէ զնմանն իւր. և խնդայ ընդ նմանին: - 577. Բարձումն յուսոյ և ամենայն փրկութեան Նաև գոլն իսկ որում տենչան ամենայն *ստեղծուածք*՝ է՛ նոցա պատիժ. վասն զի խնդրեսցեն զմահ և ո՛չ գտանիցեն: - 751. Նախ ի տեսանելն զերեսս աստուածային որ է անճառելի ցնծութիւն. որպէս ասեն վարդապետք, այն է ճշմարիտ և միայն ուրախութիւն, և ո՛չ յաղագս *ստեղծուածոյ*, այլ ի ստեղծողին լինի. զոր իբրև ստանայցես, ո՛չ ոք բարձցէ ի քէն: - 762. Մինչ զի այս քան գտանիցին հեշտութիւնք ի մասնական *ստեղծուածոյս*, որ քան գտցին ի ստեղծօղն յայն: - 762

**ՍՏԵՂԾՈՒՄՆ +** Այսպէս ի բնական *ստեղծումն* հոգւոյն՝ ոմն խոհեմ և ոմն անզգամ. ցանկասէր՝ և ողջախոհ. բարեբարոյ՝ և չարաբարոյ լինին: - 19. Զոր հայր մեր է ըստ *ստեղծմանն* և հանդերձելոյ աշխարհին: - 39. Ապա ուրեմն ծնունդն նախքան զամենայն բլուրս՝ էր ի սկզբանն ի բնութենէ հօր. իսկ

*ստեղծումն* վասն մարմնալոյն. զի իւր է մարմինն: - 41. Իսկ ի *ստեղծումն* է ընդդէմ այսմ. քանզի ստեղծօղն ո՛չ այլայլի, այլ ստեղծուածն: - 41. Արդ ասի որդին ծնեալ և ստեղծեալ. զի ի *ստեղծմանէն* իմանի անփոփոխութիւն հօրն. և ի ծննդենէն միութիւն բնութեանն հօր և որդւոյ: - 41. Եւ է սա՛ երկրորդ. զի ի պատճառէ՛ *ստեղծման* էիցս՝ աստուածաբանութիւնս այս յառաջագայի: - 122. Այլ ի *ստեղծումն* էիցս՝ սէրն առաջին է քան զբարին. զի ի սիրո՛յ շարժեցաւ յառաջ բարերարել և խնամել: - 129. Վեցերորդ՝ զի թէպէտ անա՛րգ են՝ ունին զբարի գոյն *ստեղծմամբ* և նախախնամութեամբ: - 132. Իսկ «առաւօտի», զի ի սկիզբն *ստեղծման* աշխարհի ընդ բաժանիլ ի մէջ լուսոյն և խաւարին՝ յայնժամ միայն ծագեցին յառաջին օրն յանկարծակի և անկան յերկնից. թէպէտ ոմանք յերկրորդ օրն ասեն: - 148. Տեղական անկումն եղև դիւաց ի սկիզբն *ստեղծման* իւրեանց վասն ամբարտաւանութեան և մախանաց ընդդէմ արարչին փառաց. ուստի անկաւ յերկնից ի դասուց հրեշտակաց և ի փառաց իւրեանց որպէս ասացաւ յառաջագոյն: - 153. *Ստեղծումն* էից: - 154. Իսկ ի նոյն ինքն՝ առաջին է նախախնամութիւնն առ աստուած, և ապա՛ *ստեղծումն*...: - 157-158. Նոյնպէս թէ և իցեն հրեշտակք արբանեկեալք ի *ստեղծումն* գոյից, սակայն մինն է աստուած պատճառ ամենայն գոյից: - 164. Դարձեալ առնելն է գործ *ստեղծման*. իսկ կրելն գործ նախախնամութեան: - 172. Զի՞նչ է պատճառ *ստեղծման* աշխարհիս: - 179. Իսկ սուրբն եփրեմ ասէ, մետասան թիւ գտանի ի մէջ երից աւուրցն՝ *ստեղծման* լուսնին: - 191. Իսկ **ե** օր աւելեացն՝ է՛ **ե** օր Արարաչութեանն նախքան *զստեղծումն* ադամայ: - 191. Եւ դարձեալ այսպէս զանազանին սոքա երեքեան աւուրք. այսինքն առաջին օր *ստեղծման*. և միջին մինչ ի կատարած. և վերջին օր յարութեան: - 193. Եւ դարձեալ՝ գարնան եղանակն սկիզբն է *ստեղծման* աշխարհի և բուսուց և ամենայն ծննդոց. վասն որոյ ի սոյն ժամանակս առաւել բուսանին և նորոգին ամենեքեան: - 198. Երկրորդ՝ բղխումն զհամանգամայն *ստեղծումն* ցուցանէ: - 212. Իններորդ՝ զի ի սկիզբն *ստեղծման* արարածոց՝ եղեն իմանալի բանականքն ընդ լուսոյն գոյացեալ: - 231. Իսկ որ ի **զ** օրն ասեմք ստեղծեալ զարարածս, այս զկարգ և զդասն նշանակէ մի քան զմի յետոյ. այլ *ստեղծումն* համանգամայն եղև: - 253. Պատասխանեմք առ այս եթէ՝ փչումն ո՛չ զբանական հոգին ասեն սուրբ հարքն. զի մարդ ասելով զհոգի և զմարմին նշանակեաց. և զմարմինն զի ի նիւթո՛յ է՝ ի հողոյ ասաց. այսինքն ի **դ** տարերաց որ է՛ ի հողն. և զհոգին ո՛չ նշանակեաց թէ ուստի՞ է. զի յանէից է *ստեղծումն* նորա: - 253. Եւ թէ ասիցէ ոք. արդ յայտնեա՛, նախախնամութեա՞մբ է լինելութիւն հոգւոյ, թէ *ստեղծմամբ:* - 257. Ասեմք առ այս. զի թէպէտ ա՛յլ է գործ *ստեղծման* և ա՛յլ նախախնամութեան. զի սեղծանելն է առնել իր ինչ ի յոչընչէ. և նախախնամելն՝ զեղեալն փոխանորդութեամբ ի նոյն տեսակն պահել: - 257. Եւ ո՛չ ամենևին *ստեղծմամբ*. զի մարմինն նախախնամութեամբ փոխանորդի: - 257. Դարձեալ՝ ո՛չ հեռի է ի նախախնամութեանց, և ո՛չ հեռի ի *ստեղծմանց*. այլ է՛ ի մէջն: - 257. Զի նախախնամութեամբ ունի զտնկականն և զզգայականն. և *ստեղծմամբ* զբանական հոգին զպատկերն աստուծոյ: - 257. Եւ դարձեալ՝ նոյն ինքն բանական հոգին ո՛չ նոր *ստեղծումն* է և ո՛չ հին: - 257. Ապա ուրեմն բանական հոգին նախախնամութեամբ է և *ստեղծմամբ:* - 258. Եւ *ստեղծմամբ* զի ըստ գոյութեան իւրոյ շնորհօքն աստուծոյ նո՛ր պարգևեցաւ ընդ լինելութեան մարմնոյ: - 258. Ոմն նախախնամութեամբ. որպէս տնկականն և զգայականն. և ոմն *ստեղծմամբ*. որպէս բանականն: - 258. Ութերորդ՝ մաշկեղէն հանդերձն. ո՛չ ըստ ոմանց թէ մորթ մարմնոյս, զի ունէր զայս ի *ստեղծմանէն:* - 280. Եւ ներքին և վերին կողմամբն լինի **զ** կողմ. առաջին **զ**օրեայ *ստեղծմանն* նշանակ: - 293. Երկրորդ՝ հրեշտակք անդրանիկք են քան զմարդ *ստեղծմամբ*...: - 310. Երրորդ՝ կամեցաւ զմարդն ի պատկեր իւր՝ երկրորդ *ստեղծմանն* աշխարհի գործակից և մասնակից լինիլ. վասն որոյ հրամայեաց ի նոցանէ առնուլ զնիւթ կազմելոյն: - 342. Եւ որ ո՛չ եթող զոք մերձ. զի ո՛չ ոք լինի գործակից յարութեան մերոյ. որպէս և ո՛չ *ստեղծմանն:* - 444. Այսպէս և նիւսացին գրիգոր՝ գործ *ստեղծման* և գործ նախախնամութեան բաժանէ ի սեռէ՛ ողորմութեան և արդարութեանն աստուծոյ: - 457. Երրորդ՝ գործ ողորմութեանն է ի սկիզբն *ստեղծման* աշխարհի...: - 458. Որպէս ի *ստեղծումն* ասացաւ: - 522. Այսպէս և պատկեր վերստին *ստեղծմանն* ի մեզ կայանայ ի միութիւն շնորհին և յերիս ունակութիւնս: - 577. Առաջին ձայն՝ աստուծոյ, ի *ստեղծումն* զմարդն ի հողոյ: - 640. Եւ այս է պատճառն, զի կիրակին տէրունի թարգմանի. և օր է *ստեղծման* աշխարհի, և յարութեանն քրիստոսի, և միւս անգամ գալստեանն: - 642. Երկրորդ, հայի՛ առ ի մի և նոյն բարերար կամացն յառաջ եկեալ գործքն. աստուածային՝ արարչական՝ և արքունական. որ է գործ *ստեղծման* և նախախնամութեան: - 746. Երկրորդ՝ ի *ստեղծումն* յարարչութեան բոլորից՝ ուրախ եղև տէր յարարածս իւր և յորդիս մարդկան ըստ սողոմոնի: - 748

**ՍՏԵՂՆ +** Վեշտասաներորդ՝ մէջ գոլով աստեղացն և լուսաւորէ. որպէս միջին *ստեղն* եօթնաջահեանն լուսոյ: - 126. Իսկ Չորրորդն զի ունի ծև, **գ** *ստեղն* ի մի խառնալ: - 178. Երկրորդ՝ առաջին *ստեղն* է հայր. ոչ յումեքէ. միջինն որդի ծնունդ ի հօրէ. վերջինն հոգի բղխումն ի հօրէ և ելումն յորդւոյ. զի որդւովն երևի. և հարք հաւասար աստուածութեամբ և արարչութեամբ: - 178. ...ծառն ծռեալ ունի զգլուխն ի վայր, և զոտսն ի վեր. կամ թէ ծռեա՛լ ունի զոտս և *զստեղունս* յայս կոյս և յայն կոյս: - 214. Զի տրտմութիւն արտասուաց ընդ մահուանն բարձաւ. իսկ ամօթ և ցաւք մարմնոյ՝ ընդ մեղացն բարձան. որպէս ի հատանիլ արմատոյ՝ չորանան *ստեղունքն:* - 474. Երրորդ՝ հաւատն է որպէս արմատ ծառոյն որ է հայր. յոյսն *ստեղունքն* որ է որդի. սէրն հոգին սուրբ որ է՛ ծաղիկ և պտուղ ըստ դիոնիսեայ: - 577. ...որպէս թէ ոք հատանէ զարմատն՝ չորանան և *ստեղունքն:* - 604. Այլ և **բ** *ստեղիք*. մինն աւագ կողմին. և միւսն վերջին: - 639. Եւ թէոփիլեանք ոմանք կոչեցեալք, արարին զերկու *ստեղունս* ասացեալ. և այսպէս աւարտեցաւ **ժ** ձայնքն: - 640. Դարձեալ՝ ծառ կենաց և տունկ երկնային՝ է՛ հաւատն կենդանարար. որոյ արմատն է հայր, և *ստեղունք* որդի. ծաղիկ և պտուղ հոգին սուրբ: - 768-769. Եւ արմատ ծառոյն գոսացեալ՝ չորանան և յառաջ եկեալ *ստեղունքն:* - 776

**ՍՏԵՄ +** Իսկ ի վերայ փոփոխականացս ո՛չ նմանապէս. զի յանցեալ ժամանակս և ի ներկայս բացորոշակի մինն ճշմարիտ է և մինն *ստէ՛*. որպէս ասեմք՝ երէկ անձրև էր, կամ ո՛չ էր. այսօր անձրև է, կամ ո՛չ է: - 9. Եւ այլք ո՛չ հաշտեն և ո՛չ անպատւեն. զի զկարգն յաւիտենին ո՛չ *ստեն* որպէս ասացաք: - 51. Ապա թէ ո՛չ՝ *ստեցար* դու ինքնին ի բանից քոց. զի հոգին անեղ է: - 53. Իսկ թէ մարդ աստուածացեալ, *ստէ՛* ուրեմն առաքեալն՝ ի լրութենէն ունայնութիւն ասացեալ. զի այս ընդդէմ նորին ի նըւաստութենէ ի բարձրութիւնս ելանէ: - 68. *Ստեաց* ուրեմն և հայր՝ կոչելով իւր որդի զոր ի զաւակէն Դաւթի: - 69. Զի թէ զբնութեամբն ասես, *ստեա՛ց* ուրեմն առաքեալն և աւետարանն. որք զքրիստոս ասեն յարուցեալ և համբարձեալ և նստեալ ընդ աջմէ հօր: - 70. Արդ կամ *ստեաց* զաւետարանն, կամ սուտ լեր ի բանս քո ըստ նմանութեան հօր քոյ սատանայի: - 97. Եօթներորդ՝ զի *ստեաց* աստուծոյ ի հարցանելն վասն զղջման: - 287. Իններորդ՝ ի ժամ այլակերպութեան տեառն ի բերել հրեշտակապետին զմովսէս, ասէ սատանայ ցհրեշտակն, *ստեաց* աստուած զմովսէս մուծանել յերկիրն ուր երդուաւ ո՛չ մտանել նմա: - 410. Երկոտասաներորդ՝ ընդէ՞ր յետոյ *ստեաց* և կինն զտեսիլն զի եղեն զորքն իւր զդիեցիկ: - 428. Ութերորդ՝ զի թէ հաւատան աւետարանին և ոչ *ստեն* **լ** ամաց գալ քրիստոսի ի մկրտութիւն, ի հարկէ՛ պա՛րտին կատարել և զմկրտութիւնն ի նոյն ի տօնի ծննդեանն իւրեանց ի դեկտեմբերի **իե** որ իցեն ամենևիմբ սուտ: - 484. Դարձեալ ասեմք, թէ սուրբն ոսկեբերան ըստ չորից հակառակի՛ և *ստէ՛* զնոսա: - 702

**ՍՏԵՓԱՆՆՈՍ** - Յինգերորդ՝ զանազանութիւն՝ զի սատանայ ի փորձելն ո՛չ գիտէ զառաջիկայն թէ յաղթէ և թէ յաղթի. և եթէ էր տեղեակ՝ ո՛չ մրցէր ընդ կատարելոցն որք յաղթահարեն զնա. որպէս ընդ *ստեփաննոսի*, անտօնի, և այլոցն, որք յաղթեցին սատանայի: - 161. Զմակարիոս յանտիոքու. և զաշակերտն իւր *զստեփաննոս:* - 544. Ասեն եթէ՝ *սեփաննոս* ոմն երաժիշտ զամենայն ձայնս գոյից բաժանեաց **իզ**...: - 640. Եւ *ստեփաննոսս* այս՝ արար գործիք իզ որիշ որիշ. և նոքօք երգէր: - 640

**ՍՏԵՓԱՆՆՈՍ ՍԻՒՆԵՑԻ** - Ջշարականս ո՞վ է ասացեալ: ...Զաւագ օրհնութիւնքն զեօթն ձայնիցն, *ստեփաննոս սիւնեցին:* - 637. Ջշարականս ո՞վ է ասացեալ: ...Եւ զսրբութիւն սրբոցն խաչի, *ստեփաննոս սիւնեցին:* - 638

**ՍՏԷՊ +** Վասն որոյ պա՛րտ է խնդրել *ստէպ*. ըստ այնմ, «հաւատա՛մ օգնեա՛ անհաւատութեանս իմում»: - 32. Գթութիւն է արենակցաց և բարեկամաց սպասաւորել *ստէպ:* - 579

**ՍՏԻՆ(Ք) +** Դարձեալ **բժ**ան դրունք է ի մարդն որ են այսոքիկ. երկու աչք. **բ** ականջք. **բ** պինչք, բերանն. և պորտն. **բ** *ստինք*. ջրհեղն. և արտաքնոցն: - 241. Եւ որպէս արիւն հոսմանն ի մէջ երակացն փոխի և լինի սպիտակ կաթն, և ժողովի ի *ստինսն:* - 242. Եւ կին մարդոյն **ը** երակ աւելի՛ է. **դ** երակ ծննդական մասին. և **դ** երակ երկու *ստեանցն:* - 244. Եւ լինի տեռատես, յորժամ մանուկ ո՛չ լինի յարգանդին և ի *ստինսն* զի սնո՛ւնդ է մանկանն: - 369. ...և ապա *ստեամբք* կերակրէ զնա մայր իւր բանիւն աստուծոյ. զոր ասեն յաշխարհի, եթէ զմին դուռն փակէ աստուած, նա զերկուքն բանայ. զի յորժամ զմին դուռն պորտին փակեցաւ, **բ** *ստինքն* բացան: - 397. ...որպէս *ստինքն* զի ո՛չ է պէտք կաթին, այլ առնէ վասն կատարելութեան և գեղեցկութեան մարդոյն: - 725. Իսկ ամենայն զգայական կենդանւոյ թէպէտ իգին *ստինք* գոն վասն զծնունդս կերակրելոյ. սակայն և արուացն գոյ նոյն մասն անդամոց կազմեալ յարարչէն. և այն յի՞նչ պէտս լինի. խնդրել արժան է: - 785. Իսկ *ստինք* յատկապէս

գործի՛ է բնութեան ի պէտս սննդեան այնոցիկ ծննդոց զօրէն սերմանեաց երկրի. յորմէ հիւթոյ արեանն գոյացելոյ, ըստ ագուգայս երակաց արտագունեալ որակօք կաթն փոխակերպեալ: - 786. Զի թէ ոչ գոյր *ըստինք* առն, ապա և ո՛չ կնոջն առեալ ի նմանէ: - 786. Իսկ որքանութիւն *ըստեանն* կենդանեաց, բերէ՛ զօրինակ որքանութեան կարելոյ ծնանիլ յանոցիկ տեսակացեալ: - 786

**ՍՏԻՊԵՄ +** Իններորդ՝ զի նոցա բանականն է մոլորեալ. և ո՛չ ցասումն և ցանկութիւնն. յորոց վերայ բանն բռնադատէ խղճիւն, և *ստիպէ* զնոսա յուղղութիւն. այլ ինքն կառավարն խոհեմութիւնն մոլորեալ ո՛չ ուղղի: - 32

**ՍՏԻՔՍԵՄ +** Այլ որ ստոյգն է ասեն թէ՝ մովսէս գրեաց որպէս պատմութիւն, և սողոմոն *ստիքսեաց* որպէս զիւր բանսն. յետոյ գրեաց և եզրաս հոգւովն աստուծոյ երբ ծախեցան գրեանքն ի հրէից: - 321

**ՍՏՆԴԵԱՅ +** Երրորդ՝ որպէս *ստնդիայի* մանուկն **է** ամ խրատէ՛ դայեակն. այսպէս ժողովուրդն որ եւ յերկրէն իւրեանց, երկիրն բաբիլացւոց **h** ամ ի գիրկս իւր դայեկեաց զնոսա և սնոյց. զի յետ դարձին յերկիրն իւրեանց՝ զբարիս գործեսցեն: - 448

**ՍՏՈՅԳ +** Արդ փորձէ մարդ՝ զի *զստո՛յգն* գիտեսցէ: - 160. Իսկ թէ ըստ պատուոյ իմանաս, նա՛խ է ներկայն. զի է՛ *ստոյգ* և ճշմարիտ. և ապա՛ անցեալն. և յետոյ ապառնին. և այսպէս շարադասեն քերթողքն: - 198. Երրորդ՝ իմաստութիւն ասի և բանական քննութիւն. որք բանիցն տեղեկացեալ ընտրեն *զստոյգն* ի ստոյն: - 269. Այլ որ *ստոյգն* է ասեն թէ՝ մովսէս գրեաց որպէս պատմութիւն, և սողոմոն ստիքսեաց որպէս զիւր բանսն. յետոյ գրեաց և եզրաս հոգւովն աստուծոյ երբ ծախեցան գրեանքն ի հրէից: - 321. Նա՛խ՝ որ *ստոյգ* չարութեամբ լինի մեղքն. այսինքն կամաւ և գիտութեամբ և կարողութեամբ, անթողելի՛ է: - 385. Զի թէ գիտէր *զստոյգ* մահն սաւուղայ՝ ո՛չ կաշառէր զնա: - 428. Առաջին միաւորութիւն *ստոյգ* և ճշմարիտ՝ հոմանիք մասնաւորաբար որոշեցելոց. որոց ոչ ինչ տարանիւթ ընդ մէջ երևի. որպէս երկուց ջահից լուցելոց միաւորութիւն լուսոյն: - 476. Այս է *ստոյգ* և ճշմարիտ միաւորութիւն: - 476. Որ *ստոյգ* նոյն ծննդեան օրն իմանի. ապա թէ ոչ՝ պարտ էր ասել թէ «յիսուս էր ամաց իբրև **լ** և միոյ. սկսեալ ի ծննդենէն եկն ի մկրտութիւն»: - 484. Եւ ա՛յս է պատճառն որ ոմանք յեօթանասնիցն ասեն. զի եօթանասուն աշակերտացն գլուխ և վարդապետ էր. որպէս պետրոս երկոտասանիցն. և առաջինքն ամենայն ուրեք յետնոցն անուամբ կոչեին. այս է *ստոյգ* պատճառն: - 549. Յոյսն է *ստոյգ* ակնկալութիւն հանդերձեալ երանութեանն. յառաջ եկեալ ի շնորհացն աստուծոյ և ի յատուկ արդեանցն: - 573. Ապաստանութիւն է որով հոգին ի մեծ և ի համեստ իրս *ստոյգ* յուսովն հաստատի յինքեան: - 580

**ՍՏՈՐԱԴԱՍԵՄ +** Եւ գիտեն զպատճառն թէ վասն է՞ր **է** ողջախոհ. այսինքն զի յանառակ կենաց ժլատութիւնք լինին. և նա ի հարկէ արի գոյ զախտն *ստորադասելով*. այնպիսին և խոհեմ գոյ գիտելով թէ վասն մարմնական հեշտախտութեանց լինի անիրաւութիւն: - 582. Եւ երկաք՝ բանն որ կոտորէ՛ զախտ *ստորադասեալ:* - 645

**ՍՏՈՐԱՍԱԿԱՆ +** Որո՞վ զանազանին կրկին տախտակքն: ...Երրորդ՝ **ե** *ստորասական* է. և **ե** բացասական: - 340

**ՍՏՈՐԱՍԵՄ +** Որպէս արեգակն զի ո՛չ այրէ որ է հեռաւոր պատճառ. այլ հուրն ի նմանէ առեալ զջերմութիւն ի մերձ գոլով այրէ՛. որպէս յա՛յտ է ի հայելւոջն, որ առեալ զնշոյլս յարեգականէն՝ այրէ՛. ա՛յսպէս և բանս մեր ի հարկէ նոցա լինի՝ զոր *ստորասեմք* կամ բացասեմք: - 8

**ՍՏՈՐԱՍՈՒՉԵՄ +** Զի որոց բազում աւանդեցաւ. առաւել ինչ պահանջեցաւ. և փքացելոց հպարտութեամբ՝ *ստորասուզեալ* մակբերկութեամբ: - 789

**ՍՏՈՐԱՍՈՒԹԻՒՆ +** Իսկ բանին արիստոտէլի՝ թէ ի հակասութեանց մի կողմն ճշմարիտ է, այսինքն կամ *ստորասութիւնն* կամ բացասութիւնն: - 9. Յակասական. որպէս *ստորասութիւն* և բացասութիւն: - 21. Եւ ո՛չ են որպէս *ստորասութիւնք* և բացասութիւնք, որ միայն ի բա՛նն են հակակայք. որպէս ճշմարիտ, և սուտ. այլ չար և բարի՝ ի բանս և ի գործս պատահին: - 21. Ա՛յս է աստուածաբանութիւնն դրութեամբ և բացբարձմամբ. որ է՛ *ստորասութեամբ* և բացասութեամբ. և ճառելի և անճառելի: - 123. Այսպէս և ոչն. որպէս անդ՝ ուր ասէ արիստոտէլ՝ «ո՛չ մարդ» որ է անորոշելի անուն. և «ո՛չ նստի» որ է՛ բացասութիւն. և ա՛յլ է անորիշ անունն. և այլ բացասութիւն *ստորասութեան:* - 124. Ընդ այսմ և որ ի ծէնջ արկեալ եղև. թէ վասն է՞ր է զի երկու բացասութիւն լինի մի *ստորասութիւն*. իսկ **բ** *ստորասութիւն* ո՛չ կազմէ մի բացասութիւն: - 787. Իսկ *ստորասութիւն* ընդ դէմ այսմ հաստատօղ ամենայնի: - 787. Յա՛յտ է զի ի բառնիլ ոչէին՝ էութիւն հաստատի բացասութեամբ կրկին. իսկ *ստորասութեամբ* նոյն մնայ:

- 787. Եւ Ես. բացասութիւն ինքն ինքեան քակտիչ բացատրի կրկնելովն. իսկ *ստորասութիւն* ո՛չ: - 787. Եւ ըստ այլ կերպի փոփոխին սոքա ի միմեանս և լինի *ստորասութիւնն* բացասութիւն, և բացասութիւնն *ստորասութիւն:* - 787. Յորժամ պարուկաւ այսինքն հացմամբ ասի. որպէս ասելն, ո՞չ քեզ ասացի զայդ. ահա՛ եղև *ստորասութիւն*. իբր թէ՝ ասացի՛: - 787

**ՍՏՈՐԵԻ +** Իսկ դևք զանհաստատսն մտօք՝ ի *ստորևս* քարշեն և յերկիր կործանեն զերկրաւորս խորհելով. և ընդ ինքեան ի յատակս դժոխոց մերժեն: - 152. Երրորդ՝ *ստորևն* կից, և վերևն բացատ: - 178. Որպէս յարելով զինքն յերկրաւորս՝ լինի *ստորև* քան զաշխարհս: - 274. Եւ թէ ցանկայ *ստորև* հեշտալեաց, և այս լինի կրկին. թէ հեշտալին այն է ի պահպանութիւն անհատին, լինի որկորստութիւն...: - 561

**ՍՏՈՐԻՆ +** Քանզի դևք ո՛չ են ի վերին մասն օդոյն, զի մի խնդասցեն լուսովն. և ո՛չ ի *ստորին* մասն, զի մի՛ առաւել վնասեսցեն զմարդիկ: - 146. Այլ մեղացն պատշաճի *ստորին* տեղիք որ է դժոխքն: - 147. Եւ զի ո՛չ շիջանին հրամանաւ արարչին. ի միջի գոլով երկուց ներհակացն օդեղէնն երկին. որպէս *ստորին* տարերքս հուր և ջուր միջնորդ օդիւն կապակցեալ: - 188. Եւ զի *ստորին* է այլ տարերաց և խտեալ: - 211. Երկրորդ՝ բոլորովին նուաճումն *ստորին* մասանց բանականին: - 462. Դարձեալ զվերին և *զստորին* պաշտօնեայս: - 636

***ՍՏՈՐԻՆՔ +*** Զի որ խոնարհեցաւ բանն ի մարմին՝ նո՛յն բարձրացաւ մարմնով. և որ էջն ի *ստորինս* երկիր, նո՛յն է որ ելն ի վերոյ քան զամենայն երկինս. և որ ունայնացաւ՝ նո՛յն ելից զամենայն: - 94. Եւ ա՛յսպէս խօսին միայն վերինքն առ *ստորինս*. զի հաղորդեսցեն զնոսա աստուածային յայտնութեանցն: - 145. **Իբր զի հոմանուն է եկեղեցի և ունի դ նշանակութիւնս. որ է՛ *ստորինս*. և վերինն եկեղեցի. և շինեալք ի մէնջ. և հաւատն ժողովարան մեր:** - 534. Ի յայս միտս ի *ստորինս* եկեղեցի այժմ կրկին են դասք պաշտամանց. որ և նոյնպէս է լինելոց ի վերնումն սիօնի յեկեղեցիս անդրանկաց: - 760

**ՍՏՈՐՆԱԳՈՅՆ +** Դարձեալ՝ մարդեղութեամբն տէրն եղև ծառայ: ...Վեհագոյնն *ստորնագոյն:* - 470

**ՍՏՈՐՆԱՅԻՆ +** Դարձեալ ասեն, թէ ամենայն *ստորնային* մարմինք՝ կառավարին վերնային մարմնովք...: - 10. Առ այս ասեմք, թէպէտ *ստորնային* մարմինք կառավարին վերնային մարմնովք, այլ մարդկային ներգործութիւնք կառավարին անձնիշխան կամօք. և անձնիշխան կամքն ո՛չ նըւաճի ի ներքոյ երկնային մարմնոց: - 10. Դարձեալ ասեն թէ՝ և մարմինք մարդկան են *ստորնայինք*. և սնանին և աճին շարժմամբ աստեղացն: - 10. Չորրորդ՝ զի երկինքն է կատարեալ մարմին. զի ազդէ՛ յամենայն *ստորնային* մարմինս խնամելով զնոսա: - 182

**ՍՏՈՐՈԳՈՒԹԻՒՆ +** Եւ զայլ ամենայն բնախօսութիւն յաղագս բարւոյ և չարի՝ գտցես ի Դիոնէսիոսի ի չորս գլուխն յաստուածային անուանսն. և ի *ստորոգութիւնսն* ի հակակայից ճառն. և ի սահմանս դաւթի ի վերջն որ է «ամենայն չար տանջելի»: - 24. Տասն *ստորոգութիւնքն* այսպէս ուղղին: - 154. Յորժամ պատահումն ոչ գոյ յաստուած որպէս ասացեր, զժ *ստորոգութիւնս* որպէս ուղղեսցուք առ նա: - 171. *Ստորոգութիւնս* պատշաճի եղական գոյիցս իսկութեամբ. որ ի նիւթոյ և ի տեսակէ՝ ի գոյացութեանց և ի պատահմանց են ժողովեալ: - 171. Այլ ես հաւանիմ որք ասեն ժ գոլ զմեծութիւն մեղաց. և այն համեմատի ընդ ժ *ստորոգութիւնն:* - 565

**ՍՏՈՐՈՏ +** Յատկութիւնք երկրի. և վասն լերանց. և ի *ստորոտս* լերին շո՛ղ լինի: - 155. Վասն է՞ր ի *ստորոտս* լերանց առաւել շող լինի քան ի գլուխն որ մե՛րձ է արեգական: - 211. Ո՛չ թէ քան զտարրական հուրն ի վե՛ր է անցեալ. այլ զի լուսինն և արեգակն միշտ ի հարաւոյ կողմանէ ի *ստորոտէ* լերինն ելանեն. և ի հիւսիսոյ կողմն լերինն միշտ գիշեր լինի. որպէս աղէքսանդրու պատմութիւնն ասէ. և ի գլուխն միշտ լոյս. և ի հարաւոյ կողմն տիւ և գիշեր: - 222. Եւ զորօրինակ՝ ի *ստորոտ* լերին հասեալ զգրաստի բեռինս առեալ՝ թողումք յարօտս սակաւիկ մի: - 657

**ՍՏՈՒԱՐ +** Եւ պիտոյանայր լեզու երկայն և շրթունք *ստուար*, զի ժողովեսցէ զկերակուր. և յայնժամ ո՛չ կարէր սպասաւորել բանի որպէս ա՛յժմ: - 233. Մատունքն փոքր և *ստուար*, համարձա՛կ է: - 247. Ոտք *ստուար* և կարճ, յոյժ տկարի է: - 247. Ձերն շէկ և *ստուար*, ո՛չ է խելամուտ: - 248

**ՍՏՈՒԳԱԲԱՆԵՄ +** Զի չարչարանքն այսպէս *ստուգաբանի*, նախագործեցեալ չարին չար հատուցմունք: - 42. Իսկ վրացն Ախալծիլ, որ *ստուգաբանի* Ախացայ. այսինքն թէ մեծ պարոնացի. Սեթալի. որ է՛ սոնթեցի: - 201. Ճար՝ զկատարումն ասէ. և *ստուգաբանի*՝ անճար և անխափան լինի կատարումն նորին: - 270. Մատաղն *ստուգաբանի* մատո՛ աղ: - 657. Այլ *ստուգաբանի* թէ՝ աստի շարժիմ, կամ շինիմ...: - 678

**ՍՏՈՒԳԱԲԱՆՈՒԹԻՒՆ +** Դարձեալ՝ պիտանի է ի *ստուգաբանութիւնս* բանի. զի թէ ոք զամենայն լեզուս գիտիցէ, ոչ ինչ բառի կարօտանայ: - 297. *Ստուգաբանութեամբ* կոչի կանոնն քանոն. այսինքն ուղղութիւն և կարգ և օրէնք: - 538

**ՍՏՈՒԳԱԳՈՅՆ +** Նախ՝ ի շարժմանէ՛ երկնային մարմնոց. զի միշտ նոյնպէս և անդադար շարժին. առնելով զօր և զամիս՝ և զեղանակս՝ և զտարի՝ *ստուգագոյն* չափով առանց յաւելուածոյ և պակասութեան: - 181

**ՍՏՈՒԳԱՊԷՍ +** Ապա ուրեմն *ստուգապէս* և յիրաւի՛ է կանոնեալ սուրբ հարցն, զի զայնպիսին արգելցեն ի սպասաւորութենէ խորհրդոյն: - 167. Եւ *ստուգապէս* ամենայնդ՝ են ի վերայ եղանակացդ այսպէս: - 200. Նա՛խ՝ զի որպէս խահակ է՛ *ստուգապէս* որդի աբրահամու: - 304. Է՛ և այլ իմն պայծառ տեսութիւն այսմ բանի. զի զգեստ և տաճար կոչի մարմինն *ստուգապէս* ո՛չ աստուածութեանն քրիստոսի՝ որ ո՛չ բաժանեցաւ ի մարմնոյն ոչ ի մահ և ո՛չ ի գերեզմանն: - 319. Զորօրինակ, յորժամ վկայեսցէ թագաւորն ներտրամադրեալ բանիւն ի վերայ գրեալ բանին իւրոյ եթէ՝ *ստուգապէս* սա՛ է իմ գիր և բան: - 531. Իսկ որք ելեալք են ի մարմնոյ, յոյս նոցա է՛ հանդերձ ստուգութեամբ գիտութեան. զի *ստուգապէս* գիտեն զլինելոց հատուցումն: - 574. Նաև ի հայք ի ժողովն դվնայ հաստատեցին ի սուրբն աստուածն խաչեցար ասել *ստուգապէս:* - 631

**ՍՏՈՒԳԵՄ +** Եւ զի *ստուգեցար* թէ ի հարկէ պիտոյ է էութեան՝ զի լիցի կամ արարիչ կամ արարած: - 52. Զի և ներկայ ժամանակս որ յայտնի երևի, այսպէս անյայտ և անկայուն է. զի ո՛չ ոք կարէ զվայրկեան ժամանակի մի *ստուգել*...: - 199. Յօրինակ ամենայն մարդոյ. զի պա՛րտ է *ստուգել* զամենայն բան. և ո՛չ դիւրապատիր լինիլ և թողուլ զիրամանն աստուծոյ: - 443. Եւ սոքա ամենայն *ստուգե՛ն* զյարութիւն նորա թէ ո՛չ է գողացեալ. զի գողն ո՛չ ծալէր զվարշամակն և զկտաւն զմռեալ: - 517. Սա՛ է յարկն այն, յոր մարգարէն մտանել *ստուգեալ* ասէր, «մտից ի տուն քո. երկիր պագից ի տաճար սուրբ քո»: - 757. Միովն *ստուգէ՛* զաստուածութիւնն. և միովն հաստատէ՛ զմարդն կատարեալ. և երկրորդիւն անքակ և անշփոթ և անբաժան զմիութիւնն յայտնէ: - 770

**ՍՏՈՒԳԻՒ +** Այլ որ *ստուգիւ* տեսութիւն է բանս, յերկինս ասել զողորմութիւն, զառաւել մեծութիւնն նշանակէ: - 458

**ՍՏՈՒԳՈՒԹԻՒՆ +** Բանին և պայծառախօսութիւն՝ ի խելքն ծագէ... *Ստուգութիւնն* որ է ճարտարախօսութիւնն՝ ի փայծեղն: - 250. Եւ տէրն մեր ներէ՛ մեղաւորաց աստ ի կեանս և յետ մահու գիշերի. և ի ծագել լուսոյ յարութեանն՝ *ստուգութեամբ* դատապարտէ՛: - 418. Իսկ յովսէփ և եզնակ եկեալք ի հայս պատմեցին զամենայն *ստուգութեամբ:* - 543. *Ստուգութիւն* աստ ոչ զապացուցականն ասէ. այլ *զստուգութիւն* կարծեացն: - 573. Այլ և զանազանի յոյսն. զի որք են ի ճանապարհ աստի կենաց, յոյս նոցա է՛ հանդերձ *ստուգութեամբ* կարծեաց որպէս ասացաւ: - 574. Իսկ որք ելեալք են ի մարմնոյ, յոյս նոցա է՛ հանդերձ *ստուգութեամբ* գիտութեան. զի ստուգապէս գիտեն զլինելոց հատուցումն: - 574. Նոյնպէս և այժմ սրբոց և երանելեաց յոյսն է հանդերձ *ստուգութեամբ* տեսութեանն. զի դեռևս հանդերձեալ է նոցա մարմնոցն յարութիւն. և փառք և պսակքն ըստ իրին: - 574. Եւ դարձեալ ասեմք, թէ աստի կենացն յոյս է՛ հանդերձ *ստուգութեամբ* կարծեաց...: - 696. ...և յետ մահու յոյս նոցա է՛ հանդերձ *ստուգութեամբ* գիտութեանն. և կամ տեսութեանն...: - 696

**ՍՏՈՒԵՐ +** Եւ *ստուերն* մարմնոյ. և ո՛չ մարմինն՝ *ստուերին:* - 9. Զորօրինակ՝ անհնա՛ր է յառաջ ընթանալով կոխել *զստուերն:* - 25. Երրորդ՝ դեղին լոյսն *ստուեր* ունի՝ և սպիտակն ո՛չ: - 125. Զի ընդ ժամանակաւ եմուտ և *զստուեր* օրինացն կատարեաց: - 125. Եւ ոմանք *զստուեր* երկրի ասեն: - 187. *Ստուեր* երկրի ընդ մէջ անցեալ արեգական՝ խաւարէ՛ զլուսինն: - 187. Զի է՛ պատճառ լուսոյ արեգակն. և պատճառ խաւարի *ստուեր* երկրի: - 194. Եւ զի *ստուեր* երկրի է որ ընդ մեզ և ընդ արեգակն դնի: - 196. Եւ զի նուազին *ստուերք:* - 197. Զի որպէս *ստուերն* ո՛չ է մարդ, այլ նմանութիւն մարդոյ: - 335. Տասներորդ՝ օրինա՛կ էր խորանի եկեղեցւոյ. զի նա՛ *ստուե՛ր* էր և սա՛ ճշմարտութիւն. վասն որոյ գեղեցկազարդ կազմեցաւ: - 342. Նա՛խ՝ զի հինն *ստուեր* և օրինա՛կ էր. իսկ նորս էութիւն և ճշմարտութիւն: - 353. Տասներորդ, նոքա յօրինա՛կն էին և ի *ստուերն*...: - 354-355. Երկրորդ՝ ի յօրինակ նորոյս պատարագի ընկալաւ. զի անդ *ստուերն* է. և աստ ճշմարտութիւն: - 355. Ա՛յսպէս փոխեցաւ *ստուերն* ի լոյս, և օրինակն ի ճշմարտութիւն: - 369. ...եթէ քրիստոս յարեաւ ի մէջ գիշերի. զի այց արասցէ մարդկան ազգի. և զանկեալքս ի խաւարի և ի *ստուերս* մահու՝ ի լոյս գիտութեան և շնորհաց յարուսցէ: - 514. Նա՛խ յաղագս շնորհին և ճշմարտութեան. և մարգարէք վասն *ստուերին* և օրինակին. և վարդապետք ըստ չափոյ պիտոյից նոցին: - 535. Եւ դարձեալ՝ զի այն անհաստա՛տ էր որպէս *ստուեր*. և դու խիկապէս: - 639. Դարձեալ՝ մատաղն *ստուեր* և օրինա՛կ է ճշմարիտ պատարագին քրիստոսի որ

գառն աստուծոյ և եզն պարարակ կոչեցաւ...: - 657. Դարձեալ զոր օրինակ բազում *ստուերք* ի մեծ *ստուերն* միաւորին: - 732. Եթէ ի խելս և ի խորհուրդ ցնորութիւնք և զայրուք ուռուցանիցեն խայթեալք. բժշկեսցիս հաւատով. ըստ մարգարէին հիացեալ՝ *ստուերս* և ունայնս դնելով զամենայն անցաւորս: - 770. Եւ ո՛չ է տարադէպ ցոյցք ականն արփիաւորի, զի ի միջօրեայ ժամու փոփոխումն մարմնոյ ևական արձակէ՛ *ստուեր* կամ լոյս. այլ ինքն միշտ լոյս գոլով ո՛չ փոփոխի: - 779

**ՍՏՈՒԵՐԱԳՐԵՄ +** Որ և այս երևի ի հինն *ստուերագրեալ* թէ ոք խնդրեսցէ: - 373

**ՍՏՈՒԵՐԱԳՐՈՒԹԻՒՆ +** Զայս և այլ սոյնպիսիս բազմօրինակ *ստուերագրութեամբ* առ ճշմարտութիւն իրին. իսկութեամբ ոչ գոլ անհնարին երկասիրացդ ի սոյն դեգերմամբ զոր ի պարապ ժամու քննութեան: - 306

**ՍՏՈՒԵՐԱԿԱՆ +** Եօթնեժ՝ ի մէջ գիշերի յարեաւ, զի զօրէնս *ստուերական* ի լոյս ճշմարտութեան փոխեսցէ: - 514

**ՍՏՈՒԵՐԱԿԵՐՊ +** Յինգերորդ՝ և որպէս ընդ աղօտ ինչ նմանութեամբ ծանօթանամք ի գործն արարչութեան. այսպէս և *ստուերակերպ* նմանութեամբ ի ծանօթս գամք գործոյ նախախնամութեանն. այսինքն առնելոյն և թոյլ տալոյն: - 157

**ՍՏՈՒԵՐԱԿԵՐՊՈՒԹԻՒՆ +** Բազմօրինակ մասամբք և բազմադիմի *ստուերակերպութեամբ:* - 456

**ՍՏՈՒԵՐԱՆԱՄ +** Եւ **ե**երորդ՝ ո՛չ ևս թզենեաւ՝ այսինքն դառն վարուք *ստուերանալ*. զի տերև թզենւոյն դա՛ռն է և փշոտ ըստ մեղացն առակի: - 281. Եւ զա՛յն է իմանալ թօթափիլ լուսաւորացն. զի յառաւել լուսոյ նոցա՝ ծածկին և *ստուերանան* նոքա: - 760

**ՍՏՈՒԵՐԱՊԷՍ +** Եօթներորդ՝ *ստուերապէս* նշանակէր զազատութիւնն որ եղև մեզ ի ձեռն քրիստոսի. որ ազատեաց յօրինացն դժւարութեանց, և ի մեղացն, զթողութիւն շնորհելով: - 372

**ՍՏՈՒԹԻՒՆ +** Ապա ուրեմն աստուած պատճառ է ճշմարտութեան. և ո՛չ *ստութեան:* - 13. Վասն այն հերձւածօղքն ո՛չ դառնան, զի ո՛չ կարեն ճանաչել *զստութիւնն* իւրեանց: - 32. Ի յայս տարակուսանքս՝ որ է *ստութիւն* յերկուց կողմանց, բառնի էութիւն հօր. և լինի արարած որդի: - 36. Եւ թէ զմիայն ճշմարիտն՝ հօր միայն տաս, կորուսեր ապա զորդի *ստութեամբ* և մահուամբ և խաւարաւ և այլովն: - 47. Նոյն պարզ և աստուածային բանն է ճշմարտութիւնն. որ ո՛չ ունի ինչ *ստութիւն* և հակառակ իւր: - 121. Նախ՝ ուղղութիւն ընկերաց. **բ** գոհութիւն և համբերութիւն. **գ**՝ իմանալ զչար խորհուրդն սատանայի. **դ**՝ աղօթք և պահք. **ե**՝ խոնարհութիւն և ճշմարտութիւն. որ գերագոյն է ամենայն զինուց և իսպառ կորուսանէ զչար որ մայրն է *ստութեան* և հպարտութեան: - 324. Տասներորդ, անզգամութիւն և *ստութիւն* է խմորն ըստ առաքելոյ որ ասէ, «տօնեսցուք մի՛ ի խմորն հին անզգամութեան, այլ անխմորն ստուգութեան»: - 356. Վասն այն մնաց ի մեզ ճշմարտութիւնն իսկապէս և անխառն ի *սրտութենէ:* - 551. Եւ կրկնեալ ճշմարիտն նոյն մնայ. զի անփոփո՛խ է *ստութեան:* - 787

**ՍՏՐՋԱՆՔ +** Իսկ գործ մեղացն բերէ յինքն զտրտմութիւն, *զստրջանք*, զապաշաւ, և զերկիւղ: - 557

**ՍՐԱԳՈՅՆ +** Երրորդ՝ զի բոլորակն սո՛ւր է ի շարժումն. և երկինքն *սրագո՛յն* է ի շարժումն, որ ի շրջիլն իւրում շօշափէ՛ զերկիր ի մի կէտ: - 182

**ՍՐԱԽՈՂԽՈՂ +** Ոմանք ի գերութիւն վարեալք արք և կանայք. և կէսք առաթուր դիաթաւալ *սրախողխող* գալարեալ. առհասարակ քահանայք և աշխարհականք գէշ անկեալ դիակամբ անթաղ ընկեցեալք: - 788

**ՍՐԱՀ +** Յինգերորդ՝ զի տեսցուք և իմասցուք թէ արտաքին *սրահն* երկնից այսպէս է զարդարուն. քանի՞ առաւել ներքին կողմն սրբութեան իմանալեացն դասուց: - 188. Եւ զհետ տեառն պետրոս և յովհաննէս մինչ ի *սրահ* քահանայապետին: - 306. Եւ արտաքին *սրահին* պատւարն ի մէջ ունելով զխորանն յամենայն կողմանց **ճ** կանգուն երկայն ի հիւսիսոյ և ի հարաւոյ կողմն: - 343. Եւ սրբութիւն սրբոցն ի յարևելք. զի երուսաղէմ՝ կողմ արևելից է նոցա. և սրբութիւնն ի մէջն. և *սրահն* յարևմուտս. որպէս մերս եկեղեցի: - 343. Եւ արտաքին *սրահն*՝ երկիրս մարմնաւոր տեղի: - 343. Եւ մարմինս արտաքին *սրահն:* - 343. Եւ հասարակ ժողովուրդք արտաքին *սրահն:* - 343. Եւ յարտաքին *սրահն* **հ** սիւնք արծաթապատք. և յամէն սիւն **բ** խարիսխք և խոյակք յերկոքին ծայրքն: - 343. Իսկ վերին և արտաքին *սրահն* ուր զենմունք և պատարագն մատչէին, է՛ մարմնական աշխարհս այս...: - 682

**ՍՐԱՄԻՏ +** Կամարաւունքն՝ թէ ի վերոյ շարակցեսցին՝ սակաւիմա՛ստ է. թէ վայր ի յռնգունսն հասցէ, *սրամիտ* է: - 246.

**ՍՐԲԱԲԱՆ +** Տասներորդ՝ յատուկ առանձնապէս տըպաւորութիւնք խորհրդական. որպէս քերօբէքն բազմաչեայք և ընդ թևեանք. և սերօբէքն *սրբաբան* ընդ աթոռոցն քառակերպեան: - 138

**ՍՐԲԱԲԱՆԵՄ +** Այսքան յընդհանուր վարդապետաց վասն միութեան և որոշման *սրբաբանեալ:* - 105

**ՍՐԲԱԳԻՐ +** Որ է՛ օրէնք. Մարգարէք. *Սրբագիրք:* - 451. Եւ երրորդ ժողովումն *Սրբագիրք:* - 451

**ՍՐԲԱԳՐԵԼ** - Զի ասեն թէ՝ յոբայ հէճուպն ի պարսիկս փախեաւ, և անդ զրոյց ետ որ գրեցին իւրեանց գրովն. և սողոմոն բերել ետ և *սրբագրեաց:* - 320

**ՍՐԲԱԶԱՆ +** Եւ այսպէս ուսաք ի *սրբազան* առաջնորդէն մերմէ: - 75. Յորժամ *սրբազան* և մաքուր հոգին հասանէ ի վախճան՝ ուրախութեամբ ցնծայ իբր ի հանդիսից զերծեալ և ի պսակն ընթացեալ. և որպէս յանփոփոխ կեանքն հետևեալ: - 668. Եւ ոմանք յորոց *սրբազան* առաջնորդն մեր, պակասութիւն ասաց գոլ զորս յետոյ կրեցին անդամք նորա. այսինքն ըզհատումն մասանց. այրումն հրոյ. և այլ իմն բազմազան տանջանս. յորմէ թուով պակասեաց ի քրիստոս և յաւելաւ անդամս իւր: - 781. Զի այսպէս ուսաք ի *սրբազան* վեհէն մերմէ ըստ սրբոցն աւանդութեանց. թէ ամենայն իր որ բնութեան է պարգև, ան՚ի բաց դնելի՛ է ի նմանէ: - 782

**ՍՐԲԱՊԷՍ +** Այլ և զայս *սրբապէս* և մի՛ անարժանութեամբ. զի ասէ նոցա «ընդէ՞ր բնաւ պատմես զարդարութիւն իմ» և այլն: - 540

**ՍՐԲԱՍԷՐ +** ...և վասն ներգործականին զուրբաթն. որով *սրբասէր* լեալ հասցուք առ ճշմարիտն և առ բարին ի ձեռն աստուծոյ: - 654

**ՍՐԲԱՐԱՐ +** Չորրորդ՝ զի պատճառ ամենայն սրբութեան ինքն էր, պա՛րտ էր զգործս *սրբարար* յանձն իւր կրել: - 485. ...զի արտասուքն ջերմ ջուր է և *սրբարար*...: - 676

**ՍՐԲԵԼԻ** - Նոյնպէս զուրբ կերակուրն դարձեալ *սրբելի* է անուամբն աստուծոյ...: - 654

**ՍՐԲԵՄ +** Ուստի յա՛յտ է մեծութիւն յանցանացն. քանզի ի հինն զինչև մեղանչէր ոք մեծ կամ փոքր՝ պատարագաւն *սրբէր*. թռչնօք և անասնօք: - 33. ...պահքն զոչ սուրբն *սրբէ*...: - 44. Եւ թէ էր այսպէս՝ հետևէր ապա հօր զի արարեալ իցէ ա՛յլ աշխարհ. և հանդերձեալ. և շրջեալ յաշխարհի. *սրբեալ* զախտաժէտս. մեռեալս յարուցեալ. և ի վերայ ծովու գնացեալ: - 45. Իսկ մարդ, զի *սրբեսցէ* ինքեամբ զմեզ՝ եղև ամենայն յաղագս ամենայնի. այսինքն հոգի և միտք և մարմին. զի յորոց հասարակաց եղև մահ, լիցի և կեանք: - 50. Իսկ թէ էր երբեմն առանց հոգւոյ, անկենդա՛ն էր և անսուրբ. և զիա՞րդ կենդանացուցանօղ էր և *սրբօղ:* - 51. Երրորդ՝ *սրբել* զմարդիկ՝ միայն աստուծոյ է...: - 57. Զի թէ զաստուծոյն միայն՝ անկար ի յարիոսին. զի զբանն առանձին քրիստոս ասացեր. այսինքն օծեալ և *սրբեալ* ի հօրէ. յորմէ իմանի պակաս գոլ քան զհայր: - 68-69. Ո՛վ բաժանօղ՝ որոյ որդւոյ ասես *սրբիլ* հոգւովն սրբով: - 69. Իսկ թէ զոր ի զաւակէն դաւթի առանձին, զիա՞րդ եթէ ինքն շնորհօք է *սրբեալ*՝ *սրբեսցէ* տիրաբար զառ ի նա՛յն հաւատացեալս: - 69. Հնգետասաներորդ՝ տաճար միայն աստուծոյ *սրբի*...: - 71. Այլ ա՛րդ՝ կարէ *սրբել* զանհուն մեղս...: - 100. Դարձեալ՝ առ հրեշտակս մի և նոյն իմացումն աստուածային՝ է՛ սրբութիւն՝ լուսաւորութիւն՝ և կատարումն նոցա. զի աստուածային գիտութիւնն *սրբէ* յառաջին տգիտութենէն և լուսաւորէ՛ զնոսա, և կատարին նոյն հանճարովն: - 139. ...ի մէջ նեղութեանց լինելով՝ յանցեալ մեղացն զղջանամք և *սրբիմք*. և յապագայն զգուշութեամբ պարսպիմք. և ի ներկայն՝ արի՛ և կա՛զմ պատրաստիմք: - 162. Զի որպէս հուր զժանգ արծաթոյ՝ և խարտոց զժանգ երկաթոյ, նոյնպէս և նեղութիւն *սրբէ* զմեղս մարդոյ: - 162. Դարձեալ ասեմք թէ ո՛չ միապէս է մեղքն նախ քան զշնորհքն և յետ շնորհացն. զի առաջինն անգիտութեամբ էր, և վերջինն գիտութեամբ. և առաջինն հաւատովք *սրբի*, և վերջինս ապաշխարութեամբ և սրբութեամբ: - 166. Հինգերորդ՝ զի անձերանալի՛ է երկիր. ըստ որում շարժմամբ թօթափի երկիր ի ներքին պատահմանց. և հեղեղօք ողողի և *սրբի* յարտաքին պատահմանց: - 181. *Սրբէ*՛ զհոտ: - 202. Մետասաներորդ՝ երբեմն զաշխարհս *սրբեաց:* - 207. Երկրորդ՝ զի զփոշին *սրբէ* որ ի յօդոյս նստի յաչքն. որպէս մեք ձեռօք *սրբեմք* զերեսս հայելւոյ: - 239. Զի թէ ի սուրբ մարդ յարի՝ *սրբի*. և թէ ի պիղծ՝ պղծի: - 250. Այլ ա՛րդ ի յանբանսն ո՛չ է առաքինութիւն որով *սրբի* ի մեղաց. ապա պարտ է զի փոխեսցի ի ներքինն իւր որ է՛ տունկն. և նման կենդանւոյն զի աճէ՛: - 252. Այլ արդ՝ ի տունկն ո՛չ կարէ *սրբիլ*. այլ անկանի յանշունչն, որ ներքո՛յ է տնկոյն, և նման նորա զի մարմին է: - 252. Քառասունևզ, Վասն բորոտից. և նշանակութեանն և *սրբելոյն:* - 284. Եւ յերրորդ օրն *սրբիլ:* - 285. Վասն է՞ր յոբ յետ խրախութեանն ժ պատարագաւ *սրբէր* զորդիսն. և մի զուարակ վասն մտաց մեղացն մատուցանէր: - 322. Վասն այն յոբ ժ պատարագաւ *սրբէ՛ր* զժ մասնաւոր մեղսն որ գտանին յարբեցութեան. և մին զուարակն ի սրբութիւն վասն ակամայ և խորհրդոյ մեղացն: - 322. Երկրորդ՝ զի ամենայն աւուր պատարագաւ *սրբէ՛ր* զնոսա: - 322. Իսկ այնմ որ ասեն թէ յարբեցութեան մեռան, պատասխանեմք եթէ՝ զմեղս յամենայն աւուր արիւն պատարագացն *սրբէ՛ր*.

իսկ զայնմ աւուր՝ արիւնն իւրեանց: - 322. Նոյնպէս և խեցեաւ *սրբէր* զքարախն: - 323. Երկրորդ՝ խեցեաւն *սրբէր* զամանն խեցեղէն, զի թրծեալ էր զօրութամբն աստուծոյ: - 323. Չորրորդ՝ զի խեցեաւ *սրբէր* զմարմինն, և աղօթիւք զմիտս և զհոգին: - 323. Նա՛ կեղ և մուն յարուցանէր ի մարմին նոցա. և քրիստոս զբոր և զցաւս *սրբէր* ի մարմնոցն: - 328. Եւ տէրն եկեղեցւոյ հեթանոսաց՝ և *սրբեաց* զնա՛: - 329. այլ չոր ծաղկն դալարիւր. այսինքն թէ ի զանգուածոյն ադամայ ունէր ինչ փոշետեսակ՝ *սրբեցաւ* հրով հոգւոյն սրբոյ: - 331. Եւ պա՛րտ է զաղտեղութիւնն հանել և *սրբել*...: - 331. Նա՛խ ցուցանէ՛ թէ՝ ձեռքդ այդ գրեսցէ օրէնս որով *սրբին* պահօղք, և պղծին ո՛չ պահօղք: - 332. Երկրորդ՝ յօրինակ ժողովրդեանն խրայէլի. զի սրբութեամբ էջ յեգիպտոս և պղծեցաւ ի գործոց նոցա. մինչև *սրբեցաւ* յամպն և ի ծովն. և ճաշակեաց զմանանայն: - 333. Երրորդ՝ յօրինակ հեթանոսաց որք զազրացեալ էին մեղօք մինչև ջրով աւազանին *սրբեցան* և ճաշակեցին զմանանայն կենաց ի յերկնից իջեալ: - 333. Տասներորդ՝ **գ** ափկիցն. երրորդութեանն հաւատով *սրբել* զ**ժ** զգայարանս հոգւոյ և մարմնոյ: - 339. Նշանակէ զժողովուրդն որք *սրբին* աւազանաւն և խառնին ի հաղորդութիւն արեանն քրիստոսի: - 341. Եւ արտաքոյ ոսկեպատ, զի արտաքին գործովք *սրբեցան:* - 346. Գառն՝ որդիք քրիստոնէի. և Ուլն՝ որդիք հեթանոսի յորժամ գան յեկեղեցին *սրբին* և նւիրին աստուծոյ: - 358. Բորոտից *սրբիլն* **բ** հաւ. զմինն զենուլ և զմինն յարիւն թաթաւել և թողուլ. և գառն և տատրակ և աղաւնի: - 359. Անգամ անդամ յօշելն. զերկոտասան անդամոց *սրբելն* և հատանել ի մեղաց: - 360. Փորոտին զծածուկ խորհուրդն. զոր լուանալ հրամայէ՛ ջրով. այսինքն խոհականաւն զգարշելի մտածմունս *սրբել:* - 360. Կենդանեաց զենմունքն զի յանունն աստուծոյ էր՝ *սրբէր* զմարդ. վասն է՞ր ապա ոչ *սրբեին* կռապաշտքն. զի և նոքա յաստուծոյ անունն զոհէին և խնկէին: - 361. Ո՛չ միայն զի յանունն աստուծոյ, այլ զի օրինա՛կ էին նորոյս պատարագի. և խորհրդովն քրիստոսի *սրբեցան:* - 361. Եւ թէ ոք ասիցէ, ո՞րն է խորհուրդն քրիստոսի որով *սրբիւր* հէլ ի մեղաց: - 361. Չորրորդ յայտ է՝ զի նուէրքն աստուծոյ՝ սրբութիւն է. և որ ոք մերձենայ ի նա՞ *սրբի:* - 363. Նա՛խ՝ զմեղքն *սրբել* ի մարդոյ. և ապա՛ ընծայել աստուծոյ: - 363. Տասներորդ, *սրբի* բորն դեղով. ջնջի և մեղքն ապաշխարութեամբ: - 367. Չորրորդ, թէ լուացեալ փոխէ զգոյնն, պատառէ՛ և *սրբի:* - 367. Այսինքն յորժամ խոստովանին և փոխին յապաշխարութեան վարս, պատառեն զմեղս և *սրբին* ի գործեցեալ մեղացն: - 367. Զի՞նչ է **բ** հաւն ի *սրբիլ* բորոտին. մին զենեալ, և միւսն արեամբն թաթաւեալ և ի բաց թողեալ: - 368. Եւ ի սոցանէ ո՛ր և իցէ, արտա՛քս է յեկեղեցւոյ և ի սրբութեանց, օր մի կամ **բ** կամ աւելի. և *սրբի* խոստովանութեան ջրովն: - 368. Եւ նոյնպէս խոստովանութեամբ *սրբի:* - 369. Եւ դարձեալ՝ զի *սրբեսցի* արդն բեղնաւորելոյ: - 369. Եւ ո՛չ *սրբին* մինչև զղջասցին և խոստովանեսցին զմեղսն: - 370. Վասն է՞ր կորխեանքն *սրբեցան* հոգւով. և դադանեանքն կենդանի ի գերեզման իջեալ տանջեցան: - 381. Եւ այլք ասեն թէ՝ կորխեանքն այրեցան մարմնով, վասն այն հոգւով *սրբեցան*. և բուրվառք նոցա *սրբեցան:* - 381-382. Իսկ դադան կենդանի էջ ի դժոխս՝ ո՛չ *սրբեցաւ*. և ախտիւք իւր անսուրբ ընկղմեցաւ: - 382. Եւ թէպէտ զարհուրելի բանս յերկարեաց ի խրատս, ո՛չ լուան. վասն որոյ ո՛չ *սրբեցան:* - 382. Ո՛չ զսկզբնականն, զի յարգանդէ՛ *սրբեցաւ:* - 383. Եւ խաչօղքն անսուրբք էին մինչ յերեւեսյանալ օրինացն հնոյն և ծագել նորոյն. մինչև *սրբեցան* աւազանաւն և խոստովան եղեն զքրիստոս: - 383. Վասն է՞ր մոխրով *սրբէին:* - 383. Դարձեալ՝ մոխիր և ջուրն՝ նշանակէր զարտասուս և զխոնարհութիւն ապաշխարութեան որով *սրբիմք:* - 383. Վասն այն սրսկօղ ջրոյն պղծէր, և սրսկեալն *սրբէր:* - 384. Այսպէս ի նորս խոստովանօղն *սրբի*. և ընդունօղն աղտեղի: - 384. Առաջին ջուրն *սրբէ* զսկզբնական մեղքն: - 384. Զի՞նչ էր յերրորդ օրն *սրբիլ*. և յեօթն *սրբիլ*. և թէ յերրորդն ոչ *սրբեսցի*, և մի՛ յեօթն *սրբեսցի:* - 384. Ութերորդ՝ հինգպատ օծին է՛ **ե** զգայութիւնս մեր. զոր էառ տէրն և *սրբեաց* զմեզ: - 387. Եւ ա՛յս է գերծուլն, զառաջին գործեալ մեղքն *սրբել* խոստովանութեամբ. և զապաշխարութեան գործն մատուցանել աստուծոյ: - 389. Իսկ **է** ի յայն խորհուրդն, զի որ ի պիղծ մերձենայր՝ **է** օր արտաքոյ բանակին կալով յերրորդ և յ**է**երորդ օրն *սրբէր*, և ապա՛ մտանէր. վասն որոյ **գ** օրէք և **է** օրէք կատարեմք: - 391. Ասա՛ թէ՝ քահանայիցն հրամայեաց ի բաց կալ յամուսնութենէ յորժամ մտանէին ի տաճարն և ի խորանն. և յորժամ լսէին զօրէնս աստուծոյ **գ**օրեայ *սրբեցան:* - 404. Այլ և քարինք բազումք էին ի վեր և ի վայր՝ բաց ի յունաց յոր անցանէին. որ կրթեալ և *սրբեալ* էին: - 415. Իններորդ՝ սպանմանն աբէլի գործիք եղև որպէս ասեն. ուստի գայլախազ կոչեցաւ. զի *սրբեսցի* դրոշմաւն: - 415. Եւ զյիսուս փրկիչն՝ հայր *սրբեաց* և առաքեաց. որ և ի յորդանան վկայեաց «դա՛ է որդի իմ սիրելի, դմա՛ լուարուք»: - 417. Եւ տէր մեր էա՛ռ զնոյն և *սրբեաց* և նովաւ զամենայն հրաշագործեաց: - 423. Եւ զօրութեամբ խաչելոյն գլուխ չարին ջախջախի. և *սրբին*

անդամք մեր: - 424. Երրորդ՝ զի ո՛չ էր քահանայ. վասն որոյ յետոյ ասէր դաւիթ ցքահանայսն, դո՛ւք ղևտացիքդ *սրբեցէք* և բարձէք զտապանակն. զի մի՛ լիցուք որպէս զոզիա: - 431. Եւ որպէս շնորհք մկրտութեան առաւել է քան զբլփատութիւն նոցա, զի զմեղս *սրբէ* և զարքայութիւնն բանայ: - 433. ...նստի յերկինս և հայի յանդունդս. և հայելով ի հիւանդս բուժէր, և զմեղաւորս *սրբէր:* - 436. Այլ պիղծ ազռաւքն ի խորհուրդ հեթանոսաց անցեալ զյորդանան և *սրբեալ* աւազանաւն: - 443. Նա՛խ՝ սրբութիւն հասարակ. որպէս շնորհք մկրտութեան և խոստովանութեան. զի որք անցանեն ընդ նա՞ *սրբին:* - 462. Երկրորդ՝ շնորհք եզական. որպէս *սրբեալքն* յարգանդէ երեմիաս և յովհաննէս մկրտիչ...: - 462. Նաև ունէր զշնորհս սրբութեան արգանդին. զի յորովայնէ՛ *սրբեցաւ* յարգանդէ: - 462. Հինգերորդ՝ զի *սրբեսցէ* զբոլոր բնութիւնս մեր ի մեղաց. ի սկիզբն ի մէջն և ի կատարումն: - 469. Վասն որոյ *սրբեսցէ* զսկզբնականն մեղք՝ յարգանդէ կուսական հոգւով սրբութեան ծնաւ: - 469. Այլ և ո՛չ յառաջ քան զյղանալն օծաւ. զի *սրբիլ* և առաքիլ և իջանել յերկնից ո՛չ այլ ինչ է, եթէ ոչ մարմին լինիլ և մարմնով երևիլ բանին: - 475. ...ըստ որում որ էջ հոգին սուրբ յորովայն անարատ կուսին և մաքրեաց զնա, և կազմեաց ի նմանէ զարիւնն. և *սրբեաց* և օծեաց զնա միաւորելով պատկերապէս: - 475. Այսպէս միաւորութեամբ բանն աստուած օծաւ և *սրբեցաւ* ի հօրէ, ի ձեռն հոգւոյն սրբոյ գործակցութեամբ: - 475. Զի անսերմն յղութեամբ և ի *սրբեալ* յարենէ կուսին գոյացաւ մարդ: - 485. Չորրորդ՝ զի *սրբեսցէ* զմկրտիչն և զջուրն: - 486. Չորրորդ «մկրտիլ ի նմանէ». այսինքն աղբիւրն ի յառուն. լիութիւնն ի կաթիլ մի ջրոյն. մաքուրն ի կաւոյն *սրբիլ*. և արեգականս արեգակն՝ ի ճրագէն լուսաւորիլ: - 487. Մկրտեալն քրիստոս. որ *սրբեաց* ջզուրն և զօրացոյց վերստին ծնանիլ զմեզ: - 487. Երրորդ՝ օրինակն. զի ամենայն անսուրբ ջրով լուացեալ *սրբիւր*. և ողողեալ զհանդերձս այնպէս մտանէր ի բանակն. և յաւազանն խոստովանութեան ջրովն: - 488. Չորրորդ՝ մկրտութիւնն յովհաննու որ մկրտէր ի յապաշխարութիւն. զի կարասցեն ընդունել զհոգւով մկրտութիւնն. վասն այն յառաջէ՛ր և *սրբէ՛ր* ջրովն: - 488. Զոր մկրտութեամբն իւր քրիստոս *սրբեաց* զջուրն, և արար սրբութեան նիւթ և կենաց: - 489. Եւ **խ** օր յօդս զի **լգ** օր զօդս *սրբեսցէ* ի ճենճերից կռոց. և **է** օրն ի խորհուրդ **է** աստեղեան խորանացն ի կայանս հոգւոցն: - 520-521. Եւ սուրբ հոգին զչարութիւնն վարէ՛ և *սրբեալ* բարեգործէ՛ զհոգին: - 523. Եւ ժողովեին հարքն սուրբք խլիչք ապականութեան, և *սրբէին* զեկեղեցի սուրբ: - 544. Այսպէս *սրբեաց* զեկեղեցի յամենայն աղանդոյ սուրբն յոհան. որոյ յիշատակն օրհնութեամբ եղիցի ամէն: - 545. Զի մահացուն ո՛չ էր ի յերեմիայ և ի յովհաննէս որք *սրբեցան* յորովայնէ. թէպէտ ո՛չ զերծանեին ի ներելւոյն: - 568. Եւ զի դժուարին է հոգւոյ մարդոյ կարգաւորել զինքն և *սրբել* ի մեղաց. վասն այսորիկ օգնութիւն տայ աստուած հոգւոյ մարդոյ զեօթն պարգևս հոգւոյն սրբոյ: - 582. Օծումն է՛ խորհուրդ ի լրումն արդարութեան. զի ելեաք ի պատերազմէ՛ զփոշին և զքիրտն *սրբեմք*. որպէս ելեալքն ի մարմնական պատերազմէ՛: - 587. Բայց գիտելի է, զի գործ մկրտութեանն է *սրբել* զհոգիս յամենայն մեղաց զոր ունիցի...: - 590. Որդի քրիստոնէին զիա՞րդ լինի մեղաւոր յորժամ *սրբեալ* է հայրն մկրտութեամբ: - 592. Յորժամ բոլորովիմբ մարդն ի ձեռն մկրտութեանն *սրբի*, սերմն նորա ո՞րպէս է անսուրբ: - 592. Բոլորովիմբ մարդ ի ձեռն մկրտութեանն ներքուստ և արտաքուստ *սրբի*. բայց դարձեալ սերմն նորա ի ձեռն մարմնոյն ցանկութեանն պղծի: - 592. Պարտ է զի իւրաքանչիւր ոք ծնցի մկրտութեամբն քրիստոսի. զի *սրբեսցի* և ազատեսցի ի մահու: - 592. Դարձեալ՝ խոստովանութիւնն *սրբէ՛* զմեղս որ ո՛չ տանջի...: - 602. Դարձեալ՝ խոստովանութիւնն *սրբէ* զանցեալ մեղս...: - 602. Դարձեալ՝ օծումն հիւանդաց ո՛չ *սրբէ* զմահու չափ մեղս. այլ զներելիս: - 604. Իսկ խոստովանութիւնն զմահու չափն և զներելին *սրբէ*...: - 604. Դարձեալ՝ մահու չափ մեղքն բանիւ *սրբի* ի ձեռն քահանային...: - 604. ...այսպէս և ներելին *սրբի* բանիւ քահանային և աղօթիւք: - 604. Ապա ուրեմն բան քահանային՝ անուամբն աստուծոյ *սրբէ* զներելիսն: - 605. Եւ ձեռն քահանային է՛ օծեալ և *սրբեալ* մեռոնաւն...: - 605. Այսպէս բազմապատիկ թողութիւն շնորհէ քահանայականն կարգ՝ ձեռնդնելով և բանիւ շնորհաց *սրբելով:* - 605. Նոյնպէս և օծումնս այս է՛ վերջին որ զփոշետեսակ և զներելի մեղսն *սրբէ:* - 605. Տասներորդ, սա՛ *սրբի* ջրով և օծանի, և ապա՛ է եկեղեցի: - 614. Վասն որոյ նոյն աստուածային բանիւն օրհնեմք և *սրբեմք* յառաջին անծիցն: - 615. ...վասն որոյ օրհնեմք և *սրբեմք:* - 615. Երրորդ՝ զի մովսէս ի կանգնել զխորանն օրհնակի՝ արեամբ նոխազաց և ջրով և իւղովն էօծ և *սրբեաց:* - 615. Ութերորդ՝ *սրբեմք* զեկեղեցիս, զի լիցի սրբութիւն սրբոց. զի որք մերձեսցին ի սա՛ սրբեսցին: - 615. Ութերորդ՝ սրբեմք զեկեղեցիս, զի լիցի սրբութիւն սրբոց. զի որք մերձեսցին ի սա՛ *սրբեսցին:* - 615. Իններորդ *սրբեմք*, զի բնակելոցս ի սմա և պաշտօնէիցս պա՛րտ է սուրբ լինի զի մի՛ պղծեսցեն զսրբութիւնսն: -

615. Տասներորդ՝ *սրբեմք* և օծանեմք զեկեղեցիս յօրինակ մեր...: - 615. Դարձեալ՝ խոստովանութեան ջրովն *սրբիմք*...: - 615. Իսկ ճշմարտութիւնն ի մեզ, վասն **ե** զգայարանացս սրբութեան. որով մեղանչեմք՝ *սրբիմք* պահօք և ապա՛ սրբոցն ի բարեխօս մեզ: - 653. ...վասն տեսականին *սրբեմք* զչորեքշաբաթն...: - 654. ...զի թէ աղտեղութիւն ինչ լինի խառնեալ արտաքուստ ի կալ կամ ի հնձան, *սրբեսցին* խղճմտանք մեր: - 654. ...զի զանհամութիւնս մեր համեմեաց և զնեխեալ վէրս *սրբեաց:* - 657. Հոգի սուրբ՝ սրբութեամբ քո *սրբեա՛* զմեզ: - 659. ...այլ նախ օրհնել և *սրբել* անուամբ սուրբ Երրորդութեանն: - 676. Զի աղօթիւք և զանազան մաքրութեամբ *սրբեմք* զմեզ, - 682. ...յորժամ *սրբի* հոգին, բնական ունի զպայծառութիւնն: - 690. ...քանզի յորժամ *սրբի* հոգին՝ բնական ունի զպայծառութիւնն: - 696. Զի յորժամ *սրբի* հոգին ի մեղաց, բնական ունի զպայծառութիւնն: - 712. Նոյնպէս *սրբին* ամենայն տիեզերք. զի երեսք երկրի այնպէս պայծառանայ որպէս զհայելի: - 728. Զի զօդս *սրբէ* ի մեղաց դիւաց և ճենճերաց. և զերկիր ի մարդկային մեղաց: - 731. Ա՛րդ՝ եթէ ա՛յժմ են յերկինս և յայնժամն ի *սրբեալ* երկիր, զի՞նչ է փառաց փառքն: - 759. Իսկ եթէ բաղդատելով ոք ասիցէ, թէ ի մարմնի գոլով ապաշխարեալ *սրբեցաւ* նա ի ներգործականէն իւրմէ մեղաց. և այս ո՛չ ուրէք երևի ցոյցք ի գիրս սուրբս: - 775-776. Զորօրինակ, ժանգ հայելւոյ ո՛չ զընդունականութիւնն բառնայ, այլ զտեսութիւնն. և յետ *սրբելոյն*, նոյն ծածկեալն երևի ի նմա: - 782

**ՍՐԲԻՉ +** Մկրտութիւնն քրիստոսի ո՛չ վասն կարօտութեան էր. զի ամենամաքուր և սուրբ է բնութեամբ և *սրբիչ* ամենայնի: - 486. Իսկ հուրն կրկին ունի յատկութիւն. որ է լոյս և *սրբիչ* հաւատացելոց. պատիժ և այրիչ անհաւատից: - 525

**ՍՐԲՈՒԹԻՒՆ +** Ըստ կարգաւորս շնալ կանանց՝ *սրբութիւն* նոցա համբաւեն: - 34. Բայց է և այլ իմն տեսութիւն խորին և գեղեցիկ. զի նա՛ վասն *սրբութեան* չարչարեցաւ. և որ ոք ևս չարչարեսցի վասն *սրբութեան*՝ մի և նոյն է դիտաւորութիւն երկուցն. յայնժամ օգնեսցէ նմա. այսինքն միաւորեսցի ընդ նա՛ *սրբութեամբն*, և եղիցի աստուած ամէն յամէնի. այսինքն կատարեսցէ զնա աստուածս առնելովն. և եղիցին աստուածք ամենքն: - 43. Զի թէ ասես զառ ի յաստուծոյ հօրէ բանն, ահա կարգեցեր զնա ընդ եղեալքս կարօտ *սրբութեան* և շնորհօք որդիութեան: - 69. Եօթնևժերորդ՝ ամենևիմբ *սրբութեամբ* արդարութիւն միայն աստուծոյ է...: - 72. Ա՛րդ՝ որ քան *սրբութեամբ* և իմացմամբ աստուածատեսակ լինին՝ աստուածք կոչին. եթէ հրեշտակք և եթէ արք սուրբք որպէս մովսէս: - 137. Երրորդ՝ մարդկան *սրբութիւն* է ի յաղտոյ. իսկ հրեշտակք սուրբ են առանց աղտոյ: - 139. Դարձեալ՝ առ հրեշտակս մի և նոյն իմացումն աստուածային՝ է՛ *սրբութիւն* լուսաւորութիւն՝ և կատարումն նոցա...: - 139. Դարձեալ ասեմք թէ ո՛չ միապէս է մեղքն նախ քան զշնորհքն և յետ շնորհացն. զի առաջինն անգիտութեամբ էր, և վերջինն գիտութեամբ. և առաջինն հաւատովք սրբի, և վերջինս ապաշխարութեամբ և *սրբութեամբ:* - 166. Իսկ ապաշխարութիւնն կրկին. զի կնիք ո՛չ է. և վերջին է *սրբութիւն:* - 166. Հինգերորդ՝ զի տեսցուք և իմասցուք թէ արտաքին սրահն երկնից այսպէս է զարդարուն. քանի՞ առաւել ներքին կողմն *սրբութեան* իմանալեացն դասուց: - 188. Դարձեալ՝ ըստ երից բնական զօրութեանց հոգւոյն պատկեր եմք աստուծոյ. այլ *սրբութեամբ* արդարութեամբ և առաքինութեամբ նման եմք աստուծոյ: - 273. Այլ կամ իբր զհրեշտակս, կամ որպէս ի միոյ լուսոյ բազումք, կամ կուսութեամբ ծնունդ. որպէս սուրբ կոյսն մարիամ աստուածածին *սրբութեամբ* և կուսութեամբ ծնեալ փոխեաց զկարգ բնութեան ծննդեանս որ ի սերմանէ առն և կնոջ. զի սա՛ ծնունդ միայն ի մօրէ՛: - 280. Վաթսուն, Մոխիր երնջոցն. և *սրբութեան* ջուրն: - 285. Նա՛խ՝ զի աստուծոյ է մարմին՝ կոչի տաճար իբր կարօղ *սրբութեանց*. և դարձեալ զի անշփոթ է միաւորեալ՝ կոչի տաճար: - 319. Եւ յամենայն աւուր ըստ թուոյ նոցա **ժ** զոհ մատուցանէր, և զուարակ մի վասն *սրբութեան* մտաց: - 321. Երկրորդ՝ ի *սրբութիւն* **ժ** զգայութեանց նոցա: - 322. Վասն այն յոբ **ժ** պատարագաւ սրբէ՛ր զ**ժ** մասնաւոր մեղսն որ գտանին յարբեցութեան. և մին զուարակն ի *սրբութիւն* վասն ակամայ և խորհրդոյ մեղացն: - 322. ...զ**դ**՝ անդամալոյծ միակողմանց բժշկութիւն. է**դ**՝ բորոտից *սրբութիւն*. ը**դ**՝ բոլոր մարմնոյն հիւանդաց և ջերմացելոց առողջութիւն. թ**դ**՝ զդևսն հանէր. ժ**դ**՝ զմեռեալսն յարուցանէր: - 328. Դարձեալ՝ ամենայն որ ի լեառն աստիճանէ բարձրանայ որպէս զմովսէս և կամ այլ ինչ, պա՛րտ է *սրբութեամբ* պաշտել: - 331. Երկրորդ՝ յօրինակ ժողովրդեանն իսրայէլի. զի *սրբութեամբ* էջ յեգիպտոս և պղծեցաւ ի գործոց նոցա. մինչև սրբեցաւ յանպն և ի ծովն. և ճաշակեաց զմանանայն: - 333. Չորրորդ՝ յօրինակ նոցա որք ի *սրբութեանց* ի մեղս դառնան և լինին մարմին և արիւն...: - 333. Այսպէս և մարմին և արիւնն քրիստոսի՝ արժանաւորացն կեանք է և *սրբութիւն*. և անարժանիցն մահ և ապականութիւն: - 334. Եւ սրբութիւն սրբոցն ի յարևելք. զի երուսաղէմ՝ կողմ արևելից է նոցա. և

*սրբութիւնն* ի մէջն. և սրահին յարևմուտս. որպէս մերս եկեղեցի: - 343. Եւ *սրբութիւն* է՛ երկինքն յոր ընթանան լուսաւորք: - 343. Եւ հոգին *սրբութիւնն:* - 343. Այսպէս յետ **ծ** աւուրց տւաւ օրէնքն. և **ձ** օր պահքն երեքօրեայ *սրբութիւն:* - 344. Զի՞նչ կայր ի *սրբութեան* մէջն: - 346. Հինգերորդ՝ աշտանակն ի մէջ *սրբութեանն* տայր լոյս. և լուսաւորքն ի յերկրի: - 346. Նա՛խ՝ զի տղա՛յք էին և ի տե՛սն զուարճանային. որպէս խորանն և ա՛յլ *սրբութիւնք.* նոյնպէս և զգեստք քահանայութեան: - 347. Երրորդ՝ զի երևելի *սրբութիւն* մարմնոյն՝ զաներևոյթ *սրբութիւն* հոգւոյն նշանակէր: - 347. Հինգերորդ՝ ի խորհուրդ *սրբութեան*. զառաջինն պարգևէ՛ աւազանաւն. և յետ մեղանչելոյն ապաշխարութեամբ և վաստակօք պարգևէ՛ զնոյնն: - 350. Առաջին, երեքօրեայ *սրբութեամբ* յիսներեկի աւուրն ելից յեգիպտոսէ. որ ընկալաւ զտասնաբանեան օրէնս և պատմեաց ժողովրդեանն: - 352. Իններորդ, նոքա ծառայաբար մատուցանէին. ուստի յա՛յտ է զի ո՛չ կարէին նստիլ ի *սրբութիւնսն* կամ ի քաւութիւնսն. իսկ քահանայապետն մեր տիրապէս և աստուածաբար նստեալ ի յերկինս ընդ աջմէ աստուծոյ...: - 354. Իններորդ, խմորունն խառնեալ, և անխմորն անխա՛ռն է և պարզ որ է *սրբութիւն* սրտին: - 356. Եւ յանկենդանս, որպէս նաշիհ՝ իւղ և այլն յաղագս զգայարանաց *սրբութեան:* - 357. Եւ ըստ միտս, զի առաքինութիւնն է ի փառս աստուծոյ. այլ և ի պատիւ և ի գովութիւն մարդկան. զի բազումք հաղորդին *սրբութեան* նորա: - 358. Վեցերորդ, վասն յանցանաց ի նուէրս *սրբութեանցն*, և կամ յօրէնս աստուծոյ, և կամ յընկերս վնասու...: - 358. Այս ի վերայ երեսաց սեղանոյն ի *սրբութիւնն:* - 359. Եւ այլ **բժ**ան հաց ի վերայ առաջաւոր սեղանոյն **գ գ** հաց զոր *սրբութեան* հաց կոչէին շաբաթէ ի շաբաթ եդեալ: - 359. Վասն սերմնակաթին *սրբութեան* **բ** հաւ: - 359. Այլ և նուէրք *սրբութեանն* տունս, անդաստանս պտղաբերս, անասունս, և այլ մասնաւոր նուէրք: - 359. Այլ և ունիմք զբանաւոր պատարագս՝ զհոգի և զմարմին մեր *սրբութեամբ* փոխանակեալ նմա: - 362. Դարձեալ՝ կրկին ողջակէզն. մին վասն մեղաց. և միւսն վասն *սրբութեան:* - 362. Եւ ողջակէզ *սրբութեան* է՝ յետ ապաշխարութեան զբարիս գործել. և զբովանդակ զհոգի և զմարմին մեր նուիրել աստուծոյ: - 362. Յորժամ զգործ քահանայի ունիցին՝ ո՛չ է մեղք. այլ *սրբութիւն:* - 363. Չորրորդ յայտ է՝ զի նուէրքն աստուծոյ՝ *սրբութիւն* է. և որ ոք մերձենայ ի նա՛ սրբի: - 363. Վեցերորդ, թիթեղն ցուցանէր ի ճակատն գրեալ *սրբութիւն* տեառն նուիրեալ. զի նէրք քահանային *սրբութիւն* է: - 363. Այս նոցա՛ է որք *սրբութեամբ* ունիցին զքահանայութիւնն: - 363. Նա՛խ՝ պարտ է զի լիցի օրհնեալ աղիւ. որ է՛ նշանակ իմաստութեան և *սրբութեան:* - 366. Պա՛րտ է զմեզ *սրբութեամբ* արժանապէս տաճար և զգեստ և անդամս պահել նմա: - 368. Կենդանի ջուրն՝ *սրբութիւն* ապաշխարութեանն: - 368. Եւ միւս հաւն թաթաւեալ յարիւն, հոգին կենդանի. որ կարեկից լինի մարմնոյն և *զսրբութիւն* նորա հանէ՛ յուսով ի դաշտն որ է՛ յերկինս: - 368. Այս էր *սրբութիւն* բորոտին մարմնոյ. և ի մեզ հոգւոյ: - 368. Եւ ի սոցանէ ո՛ր և իցէ, արտա՛քս է յեկեղեցւոյ և ի *սրբութեանց*, օր մի կամ **բ** կամ աւելի. և սրբի խոստովանութեան ջրովն: - 368. Նոյնպէս և ի նորս պահեսցի **է**օրեայ *սրբութիւն* դաշտանի: - 369. Ոմանք ասեն՝ գործ մեղաց մնաց նոյն. այլ գործ *սրբութեանն* փոխեցաւ ի հոգևորն: - 369. Երեք ազգ ծածկոց *սրբութեանց:* - 379. Դարձեալ, քահանայութիւնն կա՛րգ է հրեշտակաց. պա՛րտ է *սրբութեամբ* պահել: - 381. Նա՛խ՝ զի յորժամ ճշմարիտ *սրբութիւնն* գայցէ, հաւանեսցին որ է՛ արիւնն քրիստոսի...: - 383. Երինջն ըստ իրաւանցն ունէր զմեղս ժողովրդեանն. և խորհրդովն քրիստոսի՝ *սրբութիւն* գործէր: - 384. Երեք ջուր *սրբութեանն* զի՞նչ է ի նորս: - 384. Նա՛խ՝ **գ** օրն հաւատն է յերրորդութիւնն սուրբ. և ապա՛ *սրբութիւն* գործոց է **է** զգայութեամբ: - 384. Զի ասեն եթէ՝ **խ** օր էր պայմանն ադամայ. յետ **խ** աւուր ուտէր ասեն՝ ի փայտէն գիտութեան և *սրբութեամբ* որդիս ծնանէր. և ապա՛ ուտէր ի կենաց փայտէն և վերափոխեր. և այլ բազում բանս տողե՛ն: - 391. Ո՛չ միայն հրէի կամ հեթանոսի, այլ որք նուիրեն նմա զիւրատս ամբողջ *սրբութեամբ*՝ արժանի լինին շնորհացն նորա: - 398. Նմանապէս և **բժ**ան քարինքն հանեալ ի ցամաք և կանգնեալ սեղան՝ հաւատացեալքն են. որք ի ձեռն **բժ**ան առաքելոցն հաւատացին և ելին ի մեղաց. և եղեն *սրբութեան* սեղան աստուծոյ **բժ**ան անդամօք և **բժ**ան առաքելովք: - 415. Վասն է՞ր աւերէ՛ աստուած *զսրբութիւնս* և վարէ՛ գերի. որպէս զտապանակն յայլազգիս և զտաճարն: - 425. Երրորդ՝ զխիստ բարկութիւնն նշանակէ որ յիւր *սրբութիւնն* ո՛չ խնայէ վասն մեղաց մարդկան: - 425. Չորրորդ՝ ցուցանէ թէ որ ի *սրբութիւնն* իւր ո՛չ խնայէ, և ո՛չ ի ձեզ յանցաւորքդ թէ ոչ դառնայք: - 425. Վասն այն և ի նորս զխաչ և *զսրբութիւն* և զեկեղեցի և զայլն տայ ի ձեռս այլազգեաց: - 425. Իսկ դարձումն ի յետ, յեօթն դարուց կենցաղոյս դարձեալ ուստի ելին ժողովին ամենայն *սրբութիւնք:* - 426. Վասն է՞ր ի *սրբութեան* հացն համարձակեցաւ դաւիթ: - 427. Երեսունևէ, զհաց *սրբութեանն* բաշխեաց մանկանցն. և տէրն զհացն սուրբ և երկնային հաւատացելոց: - 437. Եւ յետ գերութեանն իսրայէլի անցեալ ամք **ճլե**, ել արքայն բաբիլացւոց նաբուգոդոնոսոր ի վերայ

երուսաղէմի. ի **ժ** ամի թագաւորութեանն յովակիմայ. և էառ հարկ ի նմանէ. և զմեծ մասն *սրբութեանց* տաճարին աւերեաց: - 447. Ի տիպ խորհրդոյ օրինակի մերոյս տաճարի գերեալ ի մեղաց և աւերեալ տաճար *սրբութեանս* եօթնիւք զգայութեամբք: - 448. Եւ յորժամ զղջանամք ի մեղաց՝ նախ խոստովանութեամբ շինեմք զտաճար *սրբութեան* մերոյ. և ապաշխարութեամբն որ է՛ փոխարէնքն՝ կանգնեմք զպարիսպն եօթնիւք զգայութեամբք: - 448. Եւ յետ այնորիկ սպանցի օծեալն. և իրաւունք ո՛չ իցեն ի նմա. և քաղաք և *սրբութիւն* ապականեսցի: - 449. Չորրորդ, Վասն *սրբութեան* Կուսին զանազան կերպիւ: - 454. Զի՞նչ է *սրբութիւն* կուսին որ ասէ մարգարէն՝ «սուրբ է տաճար քո սքանչելի արդարութեամբ»: - 462. *Սրբութիւնն* ի **դ** բաժանի: - 462. Նա՛խ՝ *սրբութիւն* հասարակ. որպէս շնորհք մկրտութեան և խոստովանութեան. զի որք անցանեն ընդ նա՛ սրբին: - 462. Չորրորդ՝ հրեշտակական *սրբութիւնն*. որ է երկնային և հաստատագոյն և անդրդուելի *սրբութիւն:* - 462. Առաջին որ է հասարակաց *սրբութիւն* մկրտութեան, մերժէ՛ զմեղս և տայ զշնորհս: - 462. Երկրորդ՝ *սրբութիւն* արգանդին մերժէ՛ զմեղս և հերքէ՛ զդիւրասահութիւն մեղանչելոյն մահու չափ. որպէս երեմիային և յովհաննուն: - 462. Երրորդ՝ *սրբութիւն* յատկական. որպէս սրբոյ կուսին, բառնայ զսկզբնական մեղս և զարմատն և դիւրասահութիւն մեղանչելոյն մահու չափ և ներելապէս: - 462. Եւ գիտելի է, զի թէպէտ մեծագո՛յն է ըստ ինքեան *սրբութիւն* արգանդին քան *զսրբութիւն* մկրտութեանն. այնու, զի բառնայ զդիւրասահութիւն մեղանչելոյն: - 462. **Սակայն ըստ ներգործութեան մեծագոյն է *սրբութիւն* մկրտութեանն. զի տպաւորէ զկնիքն. այլ և բանայ զդուռն արքայութեան. այլ և պատրաստէ՛ զմարդն առ ի խորհուրդս ամենայն. զոր ո՛չ ներգործեն ա՛յլ երկոքին եզական շնորհքն:** - 462. Իսկ չորրորդ *սրբութիւնն* լիակատար շնորհաց ի վերին գաւառն որ է՛ հրեշտակային՝ գերազանցէ՛ զամենեքումբք: - 462. Նաև ունէր զշնորհս *սրբութեան* արգանդին. զի յորովայնէ՛ սրբեցաւ յարգանդէ: - 462. Այլ և ի վերայ ա՛յնր՝ ունէր և զերրորդն *սրբութիւն*. որ կուսութեան իւրոյ էր յատկական. ջնջումն ի սկզբնական և յարմատոյ մեղաց: - 463. Զի գալ հոգւոյն սրբոյ պատճա՛ռ էր կրկին ներգործութեան. այսինքն *սրբութեան* արմատոյ մեղաց. և պտղաբերութեան կուսածին զաւակին. ծնանիլ և կոյս մնալ յետ ծննդեանն: - 463. Իսկ զչորրորդ *սրբութիւնն* որ է՛ միաւորութիւն բանականին առ աստուած, և միշտ ներգործապէս դիմել առ աստուած որպէս հրեշտակք. ընկալաւ աստուածածին կոյսն ի յղանալն զորդին աստուծոյ: - 463. Ապա յա՛յտ է որպիսութիւն *սրբութեան* կուսին: - 463. Վասն որոյ սրբեսցէ զսկզբնականն մեղք՝ յարգանդէ կուսական հոգւով *սրբութեան* ծնաւ: - 469. Երկրորդ՝ անդրանիկ է *սրբութեամբ*. որ ո՛չ արար մեղս. և արդարացոյց զմեզ: - 473. ...իսկ մեք ո՛չ ի գործոց, այլ ի հաւատոցն քրիստոսի ընկալաք զսկզբնական արդարութիւնն և զներգործութիւն մարմնոյ և *զսրբութիւն* մտաց: - 473. *Սրբութիւն* երանելեաց: - 474. Յինգերորդ՝ ի նմին իրացն յայտնի է՝ զի ռամիկ ժողովուրդն ի տօնի քաւութեանն երեքօրեայ *սրբութեամբ* մերձենային առ դուռն տաճարին: - 483. Անմարթ էր թողուլ զժողովուրդն ի դրան տաճարին և մերձիլ յանկողինս. և ըստ օրինացն զօրեայ *սրբութիւն* ստանալ. որ անհնա՛ր է ամենևին. թէպէտ ասեն՝ գոյր ա՛յլ քահանայապետ որ զկարգ պաշտամանն կատարէր: - 484. Չորրորդ՝ զի պատճառ ամենայն *սրբութեան* ինքն էր, պա՛րտ էր զգործս սրբարար յանձն իւր կրել: - 485. Նա՛խ՝ զի զմերն յանձն էառ *սրբութիւն*. որպէս զայլսն ամենայն տընօրէնութիւն: - 486. Զոր մկրտութեամբն իւր քրիստոս սրբեաց զջուրն, և արար *սրբութեան* նիւթ և կենաց: - 489. Սեղան ողջակիզացն, և սեղան *սրբութեանցն* և սեղան խնկոցն. ամենայն քառակուսի նշանա՛կ են քառաթև խաչին յիսուսի: - 494. և Դարձեալ ասեմք թէ յանապատին հրամայեցաւ զսպել ի *սրբութիւն* մանանային որ օրինա՛կ էր ճշմարիտ մանանային մարմնոյն *սրբութեան:* - 502. Երկոտասաներորդ, «մի՛ մերձենար», եցոյց թէ՝ որք յետ յարութեանն և վերանալոյն յերկինս կամին մերձենալ ի մարմին նորա առաքինութեամբ և *սրբութեամբ*, զախտս հոգւոց ի բա՛ց ընկեսցեն և մի ունայնապէս մերձեսցին ի նա: - 518. Իններորդ վասն *սրբութեան*. ըստ կայծականն մարգարէին: - 536. Ասեմք առ այս, թէ ձեռնադրեալն իցէ անարժան՝ ո՛չ առնու շնորհս. այլ դատապարտի ինքն և ձեռնադրօղն. զի *սրբութիւն* շանց ետ: - 540. Որպէս մինչ անարժան քահանայն պատարագէ, այլքն հաղորդին *սրբութեան*. այլ ինքն դատապարտի: - 540. Իսկ անօրէնութիւն է մեզ լուծումն պահոց աւանդեալ յառաքելոց անտի զերեք յիսունս և զչորեքշաբաթի և զուրբաթ. և զայլ շաբաթապահս ի նիկիական ժողովոյն *սրբութեամբ* պահել: - 552. Վասն որոյ զգուշանալ պարտ է սրտին *սրբութեան* քան զմարմնոյն: - 558. Զի հոգի է աստուած. և յիմացական միտս և ի հոգիս բնակէ. և չէ՛ օգուտ մարմնոյն *սրբութիւն* յորժամ միտքն զբաղեալ է ի չարիս. զի հեռանայ ի սիրոյն աստուծոյ և ի բնակութեանց նորա....: - 558. Այլ դու ո՛վ այրդ աստուծոյ մաքրամիտ և ճգնազգեաց միայնաւոր սուրբ հայրդ սահակ, թէ

և զիջանես եղբայրական սիրով խնդրել բանս ի մէնջ. սակայն կարող ես և զթերին լնուլ և զյաւելորդն կշռել. և զմեզ օգտեցուցանել ի ներգոյէ՛ քոյին պայծառամիտ *սրբութեան* սրտի: - 558. ...այսինքն Աղքատութիւն հոգւոյ. Սուգ. Հեզութիւն. Քաղց արդարութեան. Ողորմածութիւն. *Սրբութիւն* սրտի. և Խաղաղութիւն: - 583. *Սրբութիւն* սրտին զօրկրամոլութիւնն. զի սրբութիւն սրտին ո՛չ ծառայէ որովայնին ըստ օրինակի անբան անասնոց: - 583. Սրբութիւն սրտին զօրկրամոլութիւնն. զի *սրբութիւն* սրտին ո՛չ ծառայէ որովայնին ըստ օրինակի անբան անասնոց: - 583. *Սրբութիւն* սրտին է որով պայծառանայ և մաքրի սիրտն առ ի տեսանել զաստուած. և առ ի սիրել յոյժ ջերմ եռանդապէս: - 585. Ա՛րդ՝ առեալ լինի աստ *սրբութիւն* սրտին ո՛չ վասն առաքինութեան, այլ վասն որպիսութեան իմն մաքրեալ հոգւոյն: - 585. ...զնոյն և ամենայն հեթանոսք առնեն. իսկ թէ ի հեթանոսս այսպիսի պարկեշտութիւն պարտ էր առնել, քանի՞ ևս առաւել յեկեղեցիս պարտ է լինիլ. որ է ճշմարիտ կարգաւորութիւն և *սրբութեան* օրէնք: - 589. Ութերորդ, զի թէ զզենումն կենդանեաց ո՛չ ունին հրաման զենուլ ազգ կանանց որ է՛ խտրութիւն մարմնաւոր *սրբութեանց*. զիա՞րդ պատշաճի տալ հրաման կանանց ազգի մերձենալ ի կարգ հոգևոր *սրբութեան:* - 589. Նա՛խ՝ է՛ վկայութիւն անդուստ իսկ թշնամեացն. քանզի ասէ ալպերտն ի յառաջին գիրքն **ժա** համարին, թէ հոգի ասեմ *սրբութեան*. արիւն փրկութեան. և ջուր լուացման: - 594. Երկրորդ՝ զի մեք կարասցուք մերձենալ ի *սրբութիւնն*, վասն այն մնան պատահմունքն...: - 597. ...և այսպիսիքս, որպէս նոքա որք մերձ ի զատիկն խոստովանին և *սրբութեանց* արժանաւորին: - 603. ...և տայ զշնորհս *սրբութեան* առ որ մերձենայ: - 605. Իսկ այժմ որ բաժա՛ն է՝ բաժանմամբ հասանէ ի նա ամենայն *սրբութիւն:* - 605. Ի սմա սեղան *սրբութեան*. և ի մեզ սիրտ սուրբ սեղան նուիրանաց: - 614. Վեցերորդ օրհնեմք, զի բաժանեսցի յայլ աշխարհական տանց որք ո՛չ ունին զօծումն *սրբութեան:* - 615. Իններորդ սրբեմք, զի բնակելոցս ի սմա և պաշտօնէիցս պա՛րտ է սուրբ լինի զի մի՛ պղծեսցեն *զսրբութիւնսն:* - 615. Ա՛րդ՝ ջուր և գինին և մեռոնն նշանակեն ի մեզ զջուր *սրբութեան* աւազանին. և մեռոնն որով օծաք և դրոշմեցաք. և ապա ճաշակմամբ մեղսաքաւիչ արեանն կատարեցաք: - 615. Զի յորժամ մեղօք ինչ *սրբութիւնս* մեր ապականի, կամ շարժի ոք ի հաւատոյ, վերստին կարէ՛ հաստատիլ ի հաւատս, և դարձեալ կրկնել զխոստովանութիւն և զապաշխարութիւն: - 615. Եւ լինիլ ի յառաջին *սրբութեանն* տաճար և բնակարան հոգւոյն աստուծոյ: - 615. Երկրորդ, զի և ի տաճարն հին՝ ո՛չ թաղեցին զսուրբս. այլ ի գերեզմանատունս. նոյնպէս և առաւել *սրբութեամբ* պահելի է զնոր տաճարս: - 617. Եւ է սրսկումն արեան. վասն եօթնից զգայարանացս *սրբութեան:* - 626. Համբարձումն ծեռաց *սրբութեամբ* աւետարանին, նշանակ գործոց բարեաց որով փառաւորի աստուած: - 628. Եւ յամենայն օր **դ** անգամ ասեմք ի *սրբութիւն* մեր հոգւոյ և մարմնոյ և մտաց: - 632. Նոյնպէս և ի տեսս *սրբութեանցն:* - 635. ...վասն որոյ թէ ոք *սրբութեամբ* երգէ՝ լցցի շնորհօք հոգւոյն սրբոյ: - 643. Վասն որոյ *զսրբութիւնն* զխաչն և զաւետարանս ի դուրս բերեմք. - 646. Եւ ապա ի գիշերին դնին *սրբութիւնքն* ի վերայ բազմոցին մինչև յառաւօտն անշարժապէս որպէս ասացաք: - 647. Վասն որոյ յերեկոյն նոյնպէս *զսրբութիւնսն* արտաքս բերեմք...: - 647. Եւ օրն յորում պղծեցաւ, *սրբութեամբ* պահեսցէ զնա մինչ ցմահ իւր. և ապա՛ հաղորդեսցի: - 652. Նախ արարչութեանն շաբաթ՝ էր *սրբութիւն* և պահք մինչև ստեղծաւ ադամ և ելոյծ զպահքն: - 653. Հինգերորդ, **է** օրեայ *սրբութիւնք* բորոտացն և կալ արտաքոյ բանակին՝ ի պիղծ մերձեցեալք: - 653. Այլև **է** օր տաղաւարահարացն նշանակէ՛ *զսրբութիւն* պահոց շաբաթոյս. - 653. Իսկ ճշմարտութիւնն ի մեզ, վասն **ե** զգայարանացս *սրբութեան*. որով մեղանչեմք՝ սրբիմք պահօք և ապա՛ սրբոցն ի բարեխօս մեզ: - 653. Եօթներորդ, ի դէմս հոգւոյ և մարմնոյ մերոյ *սրբութեամբ* պահեմք երկու ի շաբաթուն: - 653. Իններորդ, ընկալաք կրկին օրէնս հին և նոր. վասն որոյ **բ** աւուրս *սրբութեամբ* պահեմք: - 654. Հինգերորդ, քրիստոնէից մարմինք *սրբութեամբ* տաճա՛ր են աստուծոյ, յոր պիղծ ոչ ինչ մտանէ: - 654. ...և մեզ պա՛րտ է *սրբութիւն* սրտի և վարուց...: - 658. Հոգի սուրբ՝ *սրբութեամբ* քո սրբեա՛ զմեզ: - 659. Վեցերորդ, զբոլոր մարդոյն յարութիւնն և զբոլորին փրկութիւնն և *զսրբութիւնն* նշանակէ որ է՛ հոգին և մարմինն...: - 672. ...վասն այն հոգւոյ նորա աղօթիւք *սրբութիւն* և փրկութիւն խնդրեմք...: - 672. Հինգերորդ՝ փափագիմք մասնակից նորա լինիլ *սրբութեան* և փառաց: - 673. Եւ ապա՛ ի յարևմուտս. զի նստի ընդ արևմուտս որ է՛ մարդկային *սրբութիւնս*. և փառաց աթոռն քահանայութեան աստիճանս...: - 673. ...և Անդրիավարտիս ըստ հնոյն, զի ի *սրբութիւն* մտանէ: - 674. Եւ միջին *սրբութին* է կայանք հոգւոցն. ուր աշտանակն լուսոյ և խունկն և հաց երեսացն: - 682. ...որպէս ասէ մեկնիչն տեսլեան. եթէ սպիտակ հանդերձն շնորհացն քրիստոսի մաքրութիւնն է. որ *սրբութիւն* մեղաց մերոց արար քրիստոս. յոր ամենայնքն վայելեցաք. զի յորժամ սրբի հոգին, բնական ունի զպայծառութիւնն: - 690. ...բայց ըստ

վերերևութեանն ցուցանէ *զսրբութիւն*. զի դիւրաւ խաբեսցէ: - 707. Նմանապէս և հուրն որով հրեղէն լեզուօք երևեցաւ *սրբութեան* հոգին, բաժանեսցի այրեցումն և մշտափայլ լուսով փայլեսցի որպէս զարփին և որպէս զարեգակն: - 759-760. Այսպէս և ժանգ յանցանաց մկրտելոց և քահանայից՝ բառնայ զգործ՝ կամ զնշանակութիւն շնորհացն. իսկ յետ *սրբութեան* զղջմամբ՝ զիա՞րդ կրկնի ունակացեալն ի նմա՛: - 782

***ՍՐԲՈՒԹԻՒՆ ՍՐԲՈՑ*** - Եւ *սրբութիւն սրբոցն* ի յարևելք. զի երուսաղէմ՝ կողմ արևելից է նոցա. և սրբութիւնն ի մէջն. և սրահին յարևմուտս. որպէս մերս եկեղեցի: - 343. *Սրբութիւն սրբոցն* լուսեղէն երկինքն և անջրպետ հաստատութիւնդ: - 343. Չորրորդ՝ իմացումն մեր *սրբութիւն սրբոց:* - 343. Սոքա՛ են ի *սրբութիւն սրբոցն* որ է՛ լուսեղէն երկինքն բնակարան անմարմին զօրացն: - 345. Եւ *սրբութիւնն սրբոցն* է՛ ներքին կողմ վարագուրին: - 345. Ա՛յս խորհուրդ է տապանակին որ ի *սրբութիւն սրբոցն:* - 345. Ութերորդ՝ սրբեմք զեկեղեցիս, զի լիցի *սրբութիւն սրբոց*. զի որք մերձեսցին ի սա՛ սրբեսցին: - 615. Իսկ ի *սրբութիւն սրբոցն* մերկանալ զայն և զգեստ սպասաւորի զգենուլ միայն սպիտակ կտաւի և խնկարկել անդ: - 636. Աշարականս ո՞վ է ասացեալ: ...Եւ *զսրբութիւն սրբոցն* խաչի, ստեփաննոս սիւնեցին: - 638

**ՍՐԲՈՒՅԻ +** Ա՛րդ՝ *սրբուհի* կոյսն ի ողջոյն հրեշտակապետին երիս իրս արար: - 465. Իսկ հաւանական պատասխանիք *սրբուհւոյ* կուսին մարիամու են **դ** բանք: - 465. Այլ *սրբուհի* աստուածածինն մայր է որդւոյ և կոյս անապական: - 480. Որ և զուստիանէ *սրբուհի* կոյսն մա՛յր արար կանանց հաւատաւորաց: - 658. Երկրորդ վասն ազնուական ընկերութեանցն. յորում եղիցի երանելի կոյսն. և հրեշտակք և սուրբք և *սրբուհիք*. և ամենայն թագաւորք և թագուհիք եղիցին: - 763. Առաւել պարտ էր մարդկան վաստակիլ միայն՝ զի կարասցեն գոլ ի միում աւուր ընդ երանելի *սրբուհւոյ* աստուածածին կուսին. քան բազում վաստակիլ վասն յաւիտենական փառացն: - 763

**ՍՐԸՆԹԱՑ +** Յինգերորդ՝ թեթև և *սրընթաց:* - 184. *Սրընթա՛ց* է: - 186. Եւ որ զօղն աւելի ունի, է՛ թեթևամիտ և *սրընթաց* և ծիծաղկոտ: - 245

**ՍՐԻՆԳ +** Եօթն դաս պարուց էին. որոց երեքն բերանով երգէին. այսինքն նուագն և *սրինգն* և փողքն: - 431. Այն է՝ յորժամ դաւիթ զտապանակ ուխտին հանէր յերուսաղէմ, **է** դաս պարուց որք են քահանայից դասք. և *սրինկ*. և փողք. և քնար. և այլն: - 645

**ՍՐՈՎԲԷԱԿԱՆ +** Զի ի կիրակէ և ի տէրունական տօնս ո՛չ կարօտիմք բարեխօսի. այլ երգս *սրովբէականս* նուագեմք: - 627

**ՍՐՈՒԱԿ +** Եւ որպէս ալիւրն ի սափորն և իւղն ի *սրուակն* կերակրելի՛ էր, և ոչ նուազէր առ եղիայիւ: - 224

**ՍՐՈՒՆՔ + ժա**՝ *սրունքն:* - 241. *Սրունքն* **բ** ոսկր. և Թաթք ոտիցն **լդ** ոսկր: - 243. Երեսունն**գ**, սամփսոն *զսրունս* և զերանս թշնամեաց՝ և յետոյ զգլուխն ջախէր: - 424

**ՍՐՍԿԵՄ +** Վասն այն *սրսկօղ* ջրոյն պղծէր, և *սրսկեալն* սրբէր: - 384

**ՍՐՍԿՈՒՄՆ +** Երրորդ՝ ջուր *սրսկման* զոպային, է՛ տարածումն աջոյն՝ և օրհնութիւնն ժողովոյն ի շնորհաց սուրբ հոգւոյն: - 384. Եւ է *սրսկումն* արեան. վասն եօթնից զգայարանացս սրբութեան: - 626

**ՍՐՏԱԿՐԱՆՔ** - Նա՛խ՝ զի ի դառն մաղձոյն հոսի յորովայնն ի ներքոյ սրտին և կսկծեցուցանէ *զսրտակրանքն*...: - 619

**ՍՐՏԱՄՏՕՂ** - Չորրորդ՝ զի խորհխտ է և *սրտամտօղ:* - 315

**ՍՐՏԱՅԻՆ** - Գոյնն սպիտակ և կարմիր՝ ուժեղ է և *սրտային:* - 247

**ՍՐՏՄՏԱԿԱՆ +** Դարձեալ ունի զ**ե** զգայութիւնս, և զշարժականն՝ և զշնչականն՝ և *զսրտմտականն* և զցանկականն, որ լինի հնն: - 263

**ՍՐՏՄՏԻՄ +** Եւ թէ ո՞րպէս ասեմք ննջել զարթնուլ *սրտմտիլ* կամ տրտմիլ աստուծոյ: - 122. ...իսկ աստուած անա՛խտ է՝ ձևանայ բարկացեալ և *սրտմտեալ*. զի զմեզ դարձուսցէ յառաջին բարին: - 408. ...ըստ որում մեզ ասաց, բարկանայք բանիւ, և մի՛ մեղանչէք գործով. նոյնպէս բարկութիւնն աստուծոյ՝ սպառնա՛լն է. և *սրտմտիլն* գործն: - 408. Չորրորդ յա՛յտ է, զի թէպէտ *սրտմտի*՝ ո՛չ յինքենէ. այլ մե՛ք հարկանե՛մք զնա ի գործն, անդարձ լինելով մեր: - 408. Ուստի յա՛յտ է, զի յորժամ ի սպառնալն դառնամք ի մեղաց, ո՛չ *սրտմտի* նա: - 408

**ՍՐՏՄՏՈՒԹԻՒՆ +** Ա՛յսպէս, զի սոքա ունին *սրտմտութիւն* և ցանկութիւն: - 132. Որև կործանմամբն իւրով չարչարեաց զվերին դասքն *սրտմտութեամբ*, և զներքին դասքն սասանմամբ, և զիամակամսն ընդ ինքեան քարշեաց: - 148. Եւ ոմանք ասեն՝ թէ սեաւ մաղձն առնէ տրտմութիւն և *սրտմտութիւն*. և

խարտէշն զբարկութիւն և զմախանք. արիւնն արի և վայրաբեր. և պաղդամն ծոյլ և քնափ: - 245. Իսկ ի գործ ածել *զստրմտութիւն* լինի վասն **դ** պատճառի: - 408. Եւ *սրտմտութիւնն* բարի՛ է և խրատ: - 408. Զի՞նչ է պատճառն որ *սրտմտութիւն* և ցանկութիւն և այլն ի յանբան կենդանիսդ գործ է. իսկ ի մեզ ախտ և մեղք: - 563. Նա՛խ՝ զի զտրտմութեան դնն զծանծրութեան զկարճմտութեան *զսրտմտութիւն* և զոխն հանէ՛ ի հոգւոյն: - 584. ...այլ *սրտմտութեամբ* տանջանաց արդէն իսկ դատապարտելոց ըստ աւետարանին ձայնի: - 688-689. Նա՛խ՝ տեսանեն զմարդկութիւնն զի երկիցեն. և մի՛ զաստուածութիւնն զի մի՛ խնդասցեն. զի *սրտմտութեամբ* հայի ի մեղաւորս. - 741. Թէ զիա՞րդ և որ ի ծիծաղելոյն արտաասուքն քաղցր. և ի *սրտմտութենէն* աղի: - 786

**ՍՐՏՈՏ** - Եւ թէ լանջքն միայն է մազեղ, *սրտո՛տ* է: - 247

**ՍՓԱԾԱՆԵԼԻ +** Ի լուսաւոր պատմուճանէն, յորժամ կերին ի պտղոյն և ծանեան զի մերկ էին և արարին *սփածանելիս:* - 279

**ՍՓԱԾԱՆԵՄ +** Զայս գործս արար քրիստոս յորժամ *սփածաւ* զղենջեակ և լուաց զոտս աշակերտացն: - 606

**ՍՓՈՓԵՄ +** Վեցերորդ՝ զի կոյսն լինէր *սփոփեալ* և կազդուրեալ սպասաւորութեամբ առնն: - 461. Եւ թէ ձախողակի վրիպութիւնք ամփոփե՛ն տրտմականօք, ի հաւատն *սփոփեսցիս* և մի անկցիս յուսահատեալ: - 770

**ՍՓՌԵՄ +** Դարձեալ անդրանիկ է ըստ շնորհաց հոգւոյն զոր ընկալաւ ո՛չ վասն կարօտութեան՝ զի լիապէս ունէր այլ զի գլուխ էր մեր՝ ընկալաւ՝ զի յանդամս իւր *սփռեսցէ:* - 41. ...զամբարտաւանութեան ախտս *սփռեաց* առ ամենայն մարդիկ. որպէս զադամ ցանկութեամբ աստուածանալոյն յերկիր ընկէց. սոյնպէս և զայլս: - 148. Զոր եկեալ տէրն անմեղ և անապական մարմնովն նահանջեաց զմեղս, և զարդարութիւն *սփռեաց* ի վերայ մարդկան. և դատապարտեաց զսատանայ իբր զդաւաճանօղ մարդկան և կոխան արար ի ներքոյ մարդկան: - 153. Նա՛խ՝ զի ի ձմեռն ջերմութիւնն ի սիրտ երկրի ժողովի. և յամառն ի վեր յերես *սփռի:* - 208-209. Երրորդ՝ զի փափուկ ջիլք և նեարք՝ յերեսացն գան և առնեն զգայարանս. և հաստն ի թիկունքն *սփռի* վասն ուժոյ և պնդութեան և շարժութեան: - 234. Վեցերորդ՝ զի ցանկական երակք ա՛նդ են *սփռեալ:* - 234. Եւ սոքօք *սփռի* ջերմութիւնն և կենդանութիւնն ի բոլոր մարմինն: - 244. Նոյնպէս յորժամ ամաչէ՝ զարիւնն *սփռէ* ի մարմինն, և քօղ արկանէ վասն ամօթոյն. յայնժամ յարենէն շառագունի մորթ երեսացն: - 245. Է՛ ի բոլորակն, և է՛ յամենայնսն *սփռեալ:* - 342. Դարձեալ՝ գուբն բովանդակ և կատարեալ սէրն է. և ողորմութիւնն մասնաւոր. զի ողորմութիւն ի գթո՛յն յառաջի և *սփռի* ի մեզ: - 351. Երկրորդ՝ զի մի՛ զատեսցին ի ժողովրդենէն. այլ ի քաղաքս ապաստանաց *սփռեսցին* և ուսուսցեն զնոսա: - 417. Այն է որ հրեղէն լեզուաւ *սփռեաց* յառաքեալսն զշնորհս հոգւոյն սրբոյ: - 488. Նա՛խ՝ զի խորհրդոյն չարն ի բոլոր հոգի և ի մարմինն *սփռի* որպէս թոյնք օձից: - 557. ...զի սէրն *սփռեսցի* և տարածեսցի ի բազում ազգս: - 612. ...զի լոյսն անմարմին *սփռիւր* ի յերկինս և լուսաւորէր մինչև ցերեկոյ...: - 681. Յաւատ ի տնօրէնութենէն որդւոյ ի մարդիկ *սփռի:* - 769

**ՍՓՌԻՉ +** Այլ թէ հարցանեն զորքանութիւն սիւնիցն. **ծ** սիւն ի մէջ խորանին. և **թ** սիւն վարագուրացն. և մի թափանց ի մէջն յարնելից յարնմուտս. որ լինի **կ**. և **ձ** *սփռիչ*. և **խ** նիզք. և ամենայնն ոսկեպատ. որ բովանդակն լինի **ճձ** ի ներքս: - 343

**ՍՔԱՆՉԵԼԱԳՈՐԾ +** Եւ սուրբն ղուկիոս *սքանչելագործ* և մարգարէաշնորհ, գրեաց առ մարկիանոս, թէ սուգ զգեցուցեր առաքելոց և մարգարէից. զի քակտեցեր զնոցա շինուածն. և արգելաւ հոգին սուրբ յօրհնելոյ զպատարագն և զաւազան մկրտութեան: - 543

**ՍՔԱՆՉԵԼԱԳՈՐԾԵՄ +** Իններորդ՝ *սքանչելագործելն* միայն աստուծոյ է. ըստ այնմ, «դու ես աստուած որ առնես սքանչելիս»: - 71

**ՍՔԱՆՉԵԼԱՊԷՍ +** Զոր օրինակ ո՛չ էր բնութեանս անսերմ յղանալ և կուսութեամբ ծնանիլ, զոր բանն աստուած *սքանչելապէս* ներգործեաց: - 733

**ՍՔԱՆՉԵԼԻ +** Այլ արդ որ սկիզբն և կատարումն է յաստուծոյ, աստուածային է ներգործութիւն. և *սքանչելեաց* իր: - 17. Տասներորդ՝ նեռն քարոզութեամբ պատրէ՝ և ուրական *սքանչելեաց*. և այլն. և սոքա քաղցրաբանութեամբ և օրհնութեամբ պատրեն զմիտս անմեղաց...: - 35. Եւ որդի հոգւովն կատարէր զամենայն գործս *սքանչելեաց:* - 62. Նախ՝ զի *սքանչելեօր* է. որոյ սահմանն անգիտելի է, և ի վեր քան զբնութիւն: - 77. Երկրորդքն՝ զօրացուցանեն՝ ի գործս *սքանչելեաց* և հոգևոր պատերազմաց: - 136. Տասնևե՝ Գօտէմարտիլն յակոբայ. և անուանն *սքանչելի*. և հռաքէլ լայր զորդիս իւր: - 283. Եւ յարութիւնն

է՛ *սրանչելեօք* և ըստ կարգի: - 314. Այլ *սրանչելին* յոր՝ էր նախքան զօրէնս՝ և գրեցաւ յետ օրինացն: - 321. Իսկ քրիստոս խնամարկեալ իւրոցն **ծ** *սրանչելեօք* ի մարմինս նոցա բժշկէր զիէլացիսն: - 328. Եւ յա՛յտ է աստի, զի *սրանչելիքն* քրիստոսի՝ շնորիք մարդասիրութեան է առաւել քան զմովսէսին: - 328. Եւ ի ձեռն խաչին ներգործին ամենայն *սրանչելիք* որպէս ի ձեռն գաւազանին մովսէսի: - 332. Է՛ որ զէութիւնն փոխէ. որպէս մովսէս զգետն յարիւն դարձոյց և զգաւազանն յօձ. և այս կոչի *սրանչելիք:* - 335. Առ նոսա՝ զի անմոռաց մնասցէ յիշատակ *սրանչելեացն:* - 339-340. Վասն որոյ ի սոյն ժամանակի առաւելու որոտ կայծակ և կարկուտ զգալապէս՝ յիշատակ *սրանչելեացն* աստուծոյ: - 341. Վասն բազում պատճառի մեծահրաշ *սրանչելիքս* եղև առ մովսէս: - 352. Երրորդ, զի ո՛չ միայն մերձաւորք, այլ և հեռաւորք մինչ ի յակն տեսցեն *զսրանչելիսն:* - 414. Վեցերորդ՝ մեծ *սրանչելիք* էր որ յետ դարձաւ, քան զցամաքիլն: - 414. Եւ հաւատարիմ է այս. զի առ յեսու *սրանչելիքն* լինէր ի կամարն երկնից. և մի տիւն՝ ժամս **լզ**: - 416. Այսինքն թէ՝ ունի զմարգարէութեանն, և *զսրանչելեացն* խնդրէ: - 445. Կամ զգործոց և զարդեանցն խնդրէ. որ է՛ *սրանչելեաց* և պատժոցն. որպէս եղիա: - 445. Նոյնպէս և ամենայն խաչի զօրութիւնն քրիստոս է. ի ձեռս արժանաւոր և կատարեալ հաւատոց առնէ *սրանչելիս*. իսկ ոչ նոյնպիսեացն ծածկէ զզօրութիւնն: - 445. Եւ *սրանչելիք* յղութեանն և նշանացն քրիստոսի: - 454. *Սրանչելիք* հրաշակերտեցին: - 456. Տասներորդ, յա՛յտ է ի *սրանչելեաց* ծննդեանն. զի անսերմն յղացումն. և անապական ծնունդ. և անխախտ կուսութիւն: - 466. Զի՞նչ է *սրանչելիք* յղութեանն: - 469. Ա՛րդ՝ *սրանչելիք* էին ի մայրն քրիստոսի որպէս ասեն վարդապետք: - 469. Այլ և ի զաւակն էին բազում *սրանչելիք:* - 469. Եւ այն ևս *սրանչելիք*, որ ի փոքրագոյն մարմինն ընկալեալ եղև հոգի բանական, և տեսակաւորեալ որպէս քառասնօրեայ մանուկ յարգանդի: - 470. Եւ աւուրք պաշտամանն էր երկոտասան. **ե** օր քաւութեանն վասն որթոյն յանապատին. և **է** օր տաղաւարահարացն ի յիշատակ խորանաւ բնակելոյն յանապատին ամս **խ**. և այլ *սրանչելեացն* զոր գործեցաւ անդ: - 483. Յորում աւուր նշանք *սրանչելեաց* եղեն: - 485. Երրորդ՝ ի կողմանէ հոգւոյն սրբոյ. զի առաւել հռչակելի և փառաւոր եղև այսպէս. զի ընկալեալ զհոգին՝ վաղվաղակի *սրանչելիս* առնէին վկայելով քրիստոսի. և զառաքեալսն առատապէս լցուցանելով, և նոքա զայլսն: - 522. Երկրորդ՝ *սրանչելեաց* կարողութիւն: - 524. Եւ զպօղոքոնոս աշակերտաց բազմաց վարդապետ. և ծեր, որ զմեռեալս յարուցանէր *սրանչելեօք:* - 544. Եւ տեղեակքն ասէին, սա՛ է որ ի մորենւոջն և ի ծովուն *զսրանչելիսն* արար: - 638. Այսպէս թէպէտ քրիստոնէից հոգիքն որ անարժանք են՝ ի ձեռն հրեշտակին ժամանեն ի կայանս հոգւոցն այսպիսի *սրանչելեօք:* - 682-683. Սակայն զփառսն չև ևս են ընկալեալ մինչև ի *սրանչելի* երկրորդն գալուստ. այսպէս մեծն անդրէաս: - 696. Զի այս ո՛չ է ի կարգէ դատաստանին. այլ ի *սրանչելեաց* միածնին. որպէս արեգական խաւարիլն, և գերեզմանաց բանիլն, և այլն: - 697. Ա՛րդ՝ քարշէ զչարսն տրոք. զբարիսն տանջանօք. զպարզամիտսն քարոզութեամբ և *սրանչելեօք:* - 708. Երկրորդ՝ սուտ *սրանչելեօք* և կախարդութեամբ պատրեսցէ զկրօնաւորս…: - 708. Վեցերորդ, զի յարութիւնն է գործ *սրանչելեացն* աստուծոյ և ո՛չ բնութեան. զի բութիւնն հունաւորեալ է զօրութեամբ յերկար ժամանակս գործէ: - 717. Իսկ զի նիւթ խաչին մնայ ըստ ոմանց՝ այս ո՛չ է ըստ բնութեան կարգի, այլ *սրանչելեաց* հարկի որպէս ցուցանի յառաջիկայդ: - 727. Նախ դիմակայութեամբ եթէ՝ ո՛չ է ըստ օրինի բնութեան անապական մնալ նմա, այլ *սրանչելիք* աստուածային: - 733. Երրորդ ուրախութիւնն եղիցի ի տեսութենէ միաւորութեան մարդկային բնութեանն առ աստուածայինն. քանզի *սրանչելի* ուրախութիւն լինիցի ընտրելոցն, յորժամ ճանաչիցեն թէ եղբայր նոցա ըստ մարմնոյ՝ ճշմարիտ աստուած է: - 763. Շող յաստուծոյ ծագեալ հաւատ. զերկնից կախեալ լար իմն լուսեղէն. զորմէ բուռն հարեալ ձեռն զձեռամբ փոփոխեալ. ի ծովու *սրանչելեաց* յերկինս և յօդս վերանալ: - 769. Նոր և *սրանչելի* խառնմամբ միացեալ բնութեամբ: - 769. Ա՛րդ՝ եթէ ի կատարածի ի հարկէ *սրանչելեացն* հաւատալ վարձատրելի՞ է թէ ոչ: - 783. Արդ որպէս յամենայն ժամանակս սոքօք գան ի հաւատս ուղղութեան և է՛ վարձատրելի. այսպէս և ի վերջին ժամանակս որք յետ նեռինն՝ ո՛չ միայն ի հարկէ *սրանչելեաց*, այլ և ի լրոյ քարոզչաց երկուցն վկայից իջելոց սրբոց: - 785. Եւ բազում ուրէք որք ընդ արեգակամբս խորհրդածուք էին, ի լուր բանից և ի տես *սրանչելեաց* աճին յուղղութիւն: - 785

**ՍՔԵՄ +** Երկրորդ՝ Արքեպիսկոպոսք. որ թարգմանին եպիսկոպոսապետք. և *սքեմ* նոցա քականօթ և պճղնաւոր. և փիլոն. և ի վերայ նորա եմիփորոն **դ** կրկին խաչիւ շուրջ զիւրև: - 607. Երրորդ՝ Մետրապօլիտք. որք են մայրաքաղաքացիք. և ունին *սքեմ* զնոյն. բայց եմիփորոն **գ** կրկին: - 607. Եւ ունին զնոյն *սքեմ*. բայց եմիփորոն կրկին: - 607. Եւ *սքեմ* նոցա զահեակ ուսովն: - 608. Իսկ *զսքեմայ* կարգն՝ սուրբն դիոդորոս եպիսկոպոս պամփիլացոց քաղաքի. յառաջին ամի իւրոյ. հրամանաւ մեծին անտօնի և **բ** թեբայեցոցն. և **բ** սկիւթացւոց լերինն: - 659

# Վ

**ՎԱԽ +** Եւ որպէս թէ բազումք զմիմեանց զմիոջէ կախեալք *զվախէ´.* և եթէ ոք խզեսցէ զառաջնոյն զկապ, միապէս անկանին. թէպէտ մինն առաջին: - 777

**ՎԱԽՃԱՆ (ՎԱՂՃԱՆ) +** Պատասխանեմք, ո՛վ յանդուգն մեկնիչ դու..., զինչ *վաղճան* իցէ թագաւորութեանն նորա. ո՛վ ընկեսցէ և յի՛նչ պատճառս. և ո՞չ լուար ի հրեշտակէն, «թագաւորութեան նորա *վախճան* մի՛ լիցի»: - 41-42. Երկրորդ՝ զի նա՛ է սկիզբն՝ և մէջ՝ և *վախճան:* - 111. Զի աստուած պարագրէ զյաւիտեանն. որպէս յաւիտեանն զժամանակն. և ասի աստուած մշտնջենաւոր. զի ո՛չ ունի *վախճան:* - 114. Նմանապէս և յաւիտենական. զի ո՛չ ունի սկիզբն և ո՛չ *վախճան:* - 114. Ասին և մշտնջենաւորք. զի ունին սկիզբն, այլ ո՛չ *վախճան:* - 114. Նախ՝ զի յաւիտեանն ո՛չ ունի սկիզբն և ո՛չ *վախճան:* - 116. Եւ միշտն ունի սկիզբն, այլ ո՛չ *վախճան:* - 116. Եւ ժամանակն ունի սկիզբն և *վախճան:* - 116. Դարձեալ՝ տեսանէ աստուած ըստ պատճառի. զի ամենեցուն է պատճառ. և ըստ պարունակութեան, որ զամենայն առ ինքն ունի. և ըստ կատարման, որ ամենեցուն է *վաղճան* և կատարումն: - 118. Զի որպէս ո՛չէ սկիզբն աստուածութեան նորա, և ո՛չ *վախճան* մարդկութեան նորա: - 126. Այսպէս բարին է սկիզբն մեր. և մէջ. և *վախճան:* - 128. Ապա ուրեմն բարին սկիզբն է մեր և *վախճան:* - 128. Չորրորդ՝ և զի սկիզբն է և *վախճան*, նոյն ինքն է անսկիզբն և անվախճան: - 129. Հինգերորդ՝ անսկիզբն աստուածութեամբն. և անվախճան մարդկութեամբն. զի որպէս ո՛չ է սկիզբն աստուածութեանն, և ո՛չ *վախճան* մարդկութեանն: - 129. Վեցերորդ՝ սկիզբն եկեղեցւոյ որպէս հիմն. և *վախճան* որպէս գլուխ և կատարումն: - 129. Եօթներորդ՝ սկիզբն և *վախճան* գիտութեամբն ասի. զի զսկիզբն էից և զկատարածն ի ներքոյ իւր ամենահաս գիտութեանն բովանդակեալ ունի: - 129-130. Դարձեալ՝ առաւօտ կոչի *վախճան* աշխարհիս որ սկիզբն է աներէկ աւուրն: - 148. Եւ աստ ասէ իրինոս՝ զի թէ յաւիտենական է հուրն, զիա՞րդ *վախճան* ածեն տանջանաց յաւիտենից ունայնախոհքն...: - 153. ...բե՛ր սկսեսցուք զսկիզբն արարչութեան եղելոց մինչ ի *վախճան* կատարման այժմույս՝ ըստ կարգի հին և նոր կտակարանաց հետևեալ: - 156. Այլ կոչի է, ըստ այնմ որ միշտ է՛, ո՛չ ունելով սկիզբն և ո՛չ *վախճան*. այլ ինքն է ամենեցուն սկիզբն և *վախճան*. որպէս ասէր՝ «ես եմ ալֆա և օմեգա»: -171. Իսկ Երբ ո՛չ ասի աստուծոյ. զի անժամանա՛կ է և ո՛չ ունի փոփոխումն. այլ ասի յաւիտենական. ըստ որում բոլորն համանգամա՛յն է և կատարեալ. զի ոչ կարօտի սկզբան և *վախճանի*. որպէս ժամանակն. և ո՛չ միայն սկզբան որպէս մշտնջենաւորն. այլ անսկիզբն է և անվախճան. վասն որոյ կոչի յաւիտենական: - 172. Այլ կատարումն լուսնի է ի *վախճանի* աշխարհի. յորժամ արեգակն և լուսին խաւարեսցին որպէս ասէ աւետարանն: - 192. Նա՛խ՝ զի *վախճա՛ն* է և սկիզբն: - 193. *Վախճան* է ժամանակի. և սկիզբն յաւիտենին և մշտնջենաւորականացն: - 193. Եւ գիտելի է, զի ի սկզբանէ աշխարհիս մինչ ի քրիստոս լո՛յսն առաջանայր գիշերոյն. իսկ յետ քրիստոսի մինչ ի *վախճան* գիշե՛րն առաջանայ լուսոյն: - 194. Նա՛խ՝ առաւօտն և երեկոյն. և է՛ առաւօտն *վախճան* գիշերոյ՝ և սկիզբն տունջեան: - 194. Եւ երեկոյն է *վախճան* տունջեան, և սկիզբն գիշերոյ: - 194. Նա՛խ՝ զի սկիզբն է տուընջեան, և *վախճան* գիշերոյ: - 196. Նա՛խ՝ զի *վախճա՛ն* է տուընջեան, և սկիզբն գիշերոյ: - 196. Եւ ի *վախճանի* եղև զգալի բանականն իբրև մատնահար և կնիք արարածոց...: - 231. Այլ սկիզբն և *վախճան* ո՛չ տեսանի մեզ. բայց միայն եղեալ արարածքս: - 268. Վեցերորդ՝ զի յառաջ քան զիւր *վախճանն* ետես զմահ կնոջն և զորդւոյն: - 279. Ասեմք թէ ո՛չ էր պատշաճ մեզ գիտել զօր մահուն, և ո՛չ *զվախճան* աշխարհի...: - 292. Իններորդ՝ ըստ փոփոխման ասի. զի յղացեալ ունիմք զմահ անդըստին. և ի *վախճան* մերձեալ հասանէ երկն ցաւոց. և բաժանեալ հոգին ծնանի ի մահ: - 308. Երկրորդ՝ էրն *զվախճան* անցելոյն ցուցանէ, և եղիցին զսկիզբն հանդերձելոյն: - 312. Զի էն՝ անսկիզբն և անվախճան ընդ դէմ է ժամանակին որ սկիզբն ունի և *վախճան:* - 312. Եւ ընդ դէմ է մշտնջենաւորին որ ունի սկիզբն և ո՛չ *վախճան:* - 312. Եւ ընդ դէմ է յարաձգականին որ ունի *վախճան* և ո՛չ սկիզբն: - 312. Որպէս հոգի մեր սկիզբն ունին, այլ ո՛չ *վախճան:* - 344. Հինգերորդ՝ զի նուազեա՛լ են ամք կենացն և մերձեալ ի *վախճան:* - 377. Վասն է՞ր մերձ ի *վախճանն* հարք և առաջնորդք օրհնեն զմնացորդս. որպէս մովսէս և յակոբ և այլ նահապետք: - 408. Չորրորդ՝ մարմնաւոր մահն *վախճան* է մարմնոյ կենաց և սկիզբն հոգևորին. վասն այն օրհնէ: - 408-409. Հինգերորդ՝ ցուցանէ թէ մարմնաւոր օրհնացն *վախճան* հոգևոր և օրհնութիւնն է որ եղև քրիստոսիւ: - 409. ...զայս նշանակէ կտակ և օրհնութիւնն ի *վախճանի:* - 409. Չորրորդ՝ տեսեալ զմովսէս առաւել փառաւորեալ, և յետ *վախճանին* թոյլ ետ ներողութիւնն աստուծոյ ժպրհիլ բանսարկուին ստգտանօք մեղաց...: - 410. Թագաւորեաց նախ **է** ամ ի վերայ յուդայ, և ապա ամենայն

իէլի. և տէր մեր յեօթն դարոյս թագաւորէ՛ հաւատացելոց, և ի *վախճանի* ամենայնի...: - 437. Եւ քրիստոսի *վախճան* ո՛չ գոյ ասէ հրեշտակն: - 441. Զի ի նո՛յն ամն լինի *վախճանն* և թագաւորելն: - 443. Եւ գործ արդարութեան ի *վախճանի*. զի արդարապէս ամենայն որ սկսանի կատարի. և որ շարժի դադարի: - 458. Եւ գործ արդարութեանն սկսաւ ի *վախճանի* աշխարհի: - 458. Երրորդ՝ ի *վախճանն*. զի յովհաննուն ունէր կարգեալ առ մկրտութիւնն քրիստոսի. զի յա՛յն սովորեցուցանէր զժողովուրդն որ էր կատարեալ մկրտութիւն: - 488. Եօթներորդիւն կատարել զկեանս մեր պատշաճաւոր *վախճանաւ:* - 492. Զի որ *վախճա՛ն* է կենաց, նոյն և սկիզբն կենաց. այսինքն *վախճան* ժամանակին, և սկիզբն մշտնջենաւորին: - 496. Զի որ վախճա՛ն է կենաց, նոյն և սկիզբն կենաց. այսինքն *վախճան* ժամանակին, և սկիզբն մշտնջենաւորին: - 496. Եւ ունի մահն կրկին յատկութիւն որ ընդ դէմ է երկուց ծայրիցն. այսինքն զի է՛ *վախճան* կենաց՝ և է՛ սկիզբն կենաց: - 497. Սկիզբն կենաց՝ ըստ այնմ որ *վախճա՛ն* է կենաց՝ *վախճա՛ն* է մեղաց: - 497. Նա՛խ՝ զի մատթէոս զերեկոյի շաբաթուն և զլուսանալ միաշաբաթին յիշէ. այսինքն զսկիզբն և *զվախճան* գիշերին...: - 512. Երրորդ՝ յերկոտասանից առաքելոցն երիցն ի հայս քարոզութիւնն և *վախճան:* - 555. Սէրն ըստ առաքելոյ այսպէս սահմանի. «Սէրն է *վախճան* պատուիրանաց ի սուրբ սրտէ և ի բարի խղճէ մտաց և յանկեղծաւոր հաւատոց»: - 574. Դարձեալ՝ սէրն է սկիզբն բարեաց. զի յաստուծոյ է. և է՛ մէջ բարեաց. զի ըստ աստուծոյ է. և է՛ *վախճան* բարեաց. զի վասն աստուծոյ է: - 575. Ասի և *վախճան*. զի ուղղէ՛ զգործս և ածէ՛ ի պատշաճաւոր *վախճանն:* - 575. Իսկ որ մարմնական խնդութիւնն է և դիւական՝ ընդ դէմ այսմ ամենայնի. և ի *վախճանի* տրտմութիւն հետևի որպէս ասէ սուրբն եւագրիոս: - 584. Զի ի վերոյ խաղաղութեան ո՛չ է այլ առաքինութիւն. զի խաղաղութիւնն է *վախճան* և կատարումն ամենայն առաքինութեանց: - 586. Զի ի վերոյ խաղաղութեան ո՛չ է այլ առաքինութիւն. զի խաղաղութիւնն է *վախճան* և կատարումն ամենայն առաքինութեանց: - 586. Ասեմք թէ՝ որպէս մահն է *վախճան* կենցաղոյս և սկիզբն հանդերձելոյն: - 605. Եւ դարձեալ՝ մինն սկիզբն և *վախճան* է գիշերոյ. և միւսն տւընջեան: - 623. Դարձեալ՝ ի *վախճանի* ի միջոյ առաքելոց և մարգարէից խօսեալ և դատեալ: - 646. ...նա զձեռն ի վեր առեալ գոհանայ զաստուծոյ. նմանապէս թէ պատմի վասն *վախճանի* ուրուք: - 659. Ի *վախճան* մերձեցեալքն տեսանե՞ն զանտի կենացն ինչ՝ թէ ոչ: - 668. Յորժամ սրբազան և մաքուր հոգին հասանէ ի *վախճան* ուրախութեամբ ցնծայ իբր ի հանդիսից զերծեալ և ի պսակն ընթացեալ. և որպէս յանփոփոխ կեանքն հետևեալ: - 668. Այսպէս է *վախճան* մաքուր և սուրբ հոգւոցն. ուրախութեամբ ընթացեալ ի պսակն և զերծեալ ի բանտէ խաւարային մարմնոյ: - 669. Իսկ յորժամ մեղաւոր հոգին հասանէ ի *վախճան*, տրտմութեամբ և ակամայ իբրև զանասուն ի սպանդ վարեալ...: - 669. ...ցուցանէ թէ ի նոյն հանդէսն ճանեցաւ և *վախճան* կատարման ընկալաւ: - 672. Երկրորդ, ասէ սուրբն դիոնէսիոս ի ննջեցելոց կատարմանց գլուխն՝ եթէ մաքրելոց հոգին հասեալ ի *վախճան* յայտնի և մերձակայ տեսանէ զամենայն փառս և զպսակ զոր ընդունելո՛ց են նոքա ի յարութեան աւուրն: - 691. Ասեմք ըստ սրբոյն անդրէի մեկնչի՝ եթէ սուրբքն զաշխարհի *վախճան* խնդրեցին. որոց ցուցանէ զպատճառս երկայն մտելոյն...: - 696. Զիա՞րդ *վախճան* ածեն տանջանաց ունայնախոհքն. թէրևս կարծելով թէ ի հուրն մաքրեսցին. զոր մի՛ լիցի աշակերտաց ճշմարտութեանն խորհիլ: - 703. Եւ ոմանք յետ զռ ամին զեօթներորդն որ *վախճանն* է՝ յարութիւն ասեն միայն սրբոցն և կապիլ սատանայի: - 706. Թէպէտ բան յարութեան է ի մասնէ հաւատոյ, որպէս սկիզբն աշխարհի և *վախճան*...: - 714. Եւ ի նոյն կէտ լրմանն որ է՛ *վախճան* ժամանակի և սկիզբն յաւիտենի՝ լինի վերառութիւն համայնից մարդկան որպէս գրէ առաքեալն կորնթացւոց. - 716. Երրորդ՝ զի ժամանակ մարդոյ մինչ ի *վախճան* իւր փոքր է և սակաւ: - 730. Չորրորդ՝ ի *վախճանի* յորժամ հնազանդին նմա ամենայն և պսակէ զսուրբս իւր, ուրախ եղիցի տէր յարարածս իւր: - 748. Եւ վասն այն կոչի եկեղեցի արքայութիւն, զի որ ի ներկայիս եկեղեցւոյ արքայութիւն առնէ և գործէ՛, ունի *զվախճան* մեծի փառաց: - 754

**ՎԱԽՃԱՆԱԿԱՆ +** Զի ո՛չ վայելէ անկատարից *զվախճանական* կատարումն առնուլ. եթէ ոչ նախ իւր յատուկ կատարելութեամբն կատարեսցի...: - 693-694

**ՎԱԽՃԱՆԱՒՈՐ +** Եւ թէ գոյր ինչ այսպիսի զօրութիւն ի նա, լինէր *վախճանաւոր* և նա. և թէ էր *վախճանաւոր*, և էր սկզբնաւոր՝ որ է՛ անպատշաճ: - 169

**ՎԱԽՃԱՆԻՄ +** Երկրորդ՝ ես եմ սկիզբն և կատարած ամենայնի. զի ի բանէն աստուծոյ եղեն ամենեքեան և ի նոյն բանն *վախճանին:* - 129. Երկրորդ՝ ցուցանէ զաշխարհ. որ էր նախ քան զլինիլն ի նախանկար տեսութիւն արարչին՝ և ապա եղև, յետոյ *վախճանի:* - 268. Եւ այսպէս ամենայն սպասաւորք նորա և ծառայքն որք սրով և հրով *վախճանեցան:* - 322. Քանանէ, մովսէս ի *վախճանիլն*

իւր՝ կտակ գրեաց զլինելոցն, և զեկեղեցին յանձնեաց ի կոյսն յեսու: - 329. Եւ փոխմանն, ի *վախճանիլն* մարիամու՝ քուերն ահարոնի յանապատին: - 374. Երրորդ՝ զի սկսեալ ի մարմնաւորն, *վախճանի* ի հոգևորն: - 408. Եւ զարծանն վկայութեան կանգնեաց ի տիպ հաւատոյն որ ի քրիստոս, և *վախճանեցաւ:* - 419. Եւ յեօթներորդ երեկոյի *վախճանին*, ծանիցեն և հրեայք զմարդեղութիւն բանին: - 422. Մատնեաց զչարս ի գերութիւն. զի ա՛նդ *վախճանեսցին*, և արդար ծնունդք նոցա դարձցին ի տեղիս իւրեանց: - 448. Իսկ վեցերորդ պատճառ վասն հասարակաց ամենայն մարդկան, զի ի հողոյ սկսաւ, դարձեալ ի հող *վախճանի* մարմինն...: - 678

***ՎԱԽՃԱՆԵԱԼ +*** Նոյնպէս և յղանալն հանդերձեալ է, և *վախճանեալ* անցեալն, որ ո՛չ երևին. այլ միայն ծնեալն երևի որ է՛ ներկայ: - 267-268. Չորրորդ՝ զի *վախճանեալ* էր յակոբ: - 409. Յորոց յայսցանէ յա՛յտ է, զի եթէ ապաշխարեալ լինի արգելեալն. կամ *վախճանեալ* է կապօղն. այլ ոք որ գերագոյն է կամ հաւասար կապողին, կարէ՛ արձակել զնա՛: - 409. Երրորդ՝ *վախճանեալ* մովսէս ի լերինն, և միքայէլ փոխադրէր զմարմինն...: - 410. Յետ *վախճանելոյն* Մովսէսի՝ առաջնորդեաց ժողովրդեանն փոխանորդ նորին Յեսու որդի նաւեայ. ի ցեղէն եփրեմի: - 414. Առաջին ժողովն եղև ի տանս թորգոմայ յարնելից կողմանս. զկնի է երորդ ամի *վախճանելոյ* մեծին սահակայ: - 544. Իսկ *վախճանեալն* կատարեալ լսի. որպէս թէ ոք սկսանի երթալ ի ճանապարհ կամ ի գործ ինչ և ի յաւարտիլն կատարած ասի: - 666. Այսպէս և նոքա կատարեցին զճանապարհ կենցաղոյս և զքարեաց գործոց. վասն որոյ *վախճանեալ* կոչին: - 666

**ՎԱԿԱՍ +** *Վակասն* ուրա՛րն է. և Տախտակ ականցն՝ կոնքեռն: - 348. ...և **բ** Ակունք ուսոյն՝ կրկին կիսագունդք երկնից. ունելով **զզ** կենդանակերպս. և *Վակաս* լանջացն **բժ**ան ականբք նոյն կենդանակերպք ի լանջս երկնից Միթրն՝ պսակ քահանայապետութեան. և Թիթեղն՝ մտաց թեթևութեան: - 348. Այն որ ուսանո՛ց է, որպէս *վակաս* քահանային. և որպէս մայրն սամուէլի արար: - 425. ...այն է, որ հրամայեաց աստուած ահարոնի զգենուլ զպճղնաւորն և *զվակասն* և զխոյրն և զայլն, և ելանել առ ժողովուրդն: - 636

**ՎԱՀԱՆ +** Լուսնաձև *Վահանն* ի վերայ թիկանցն և սրտին՝ և կրկին տախտակ դատաստանին յուսն, եմիփորո՛նն է: - 348. Զայս պօղոս *վահան* կոչէ: - 770

**ՎԱՀԱՆԱԿ +** Պճղնաւորն կապոյտ բոլորապատ՝ երկինքն է..., **բ** *Վահանակն* լուսաւորքն մեծ. և **բ** Ակունք ուսոյն՝ կրկին կիսագունդք երկնից...: - 348

**ՎԱՂ +** Եւ զերկրորդն ղուկաս պատմէ՛ *վաղ* քաջ ընդ առաւօտն. և տեսին արք երկու լուսազգեացք. և զվէմն թաւալեալ: - 515. Ասեմք թէ՝ *վաղ* առաւօտն և խոր երեկոյն զմէջ գիշերն նշանակեն...: - 515. Իսկ *վաղն* որ է՛ կատարեալ տօն...: - 646. Այլ տօն նոցա է *վաղն* ի մէջ գիշերոյ ի վեր: - 647. ...և *վաղն* զտօն պսակաց և փառաց նոցա: - 647

**ՎԱՂԱԽՕՍ** - Եւ աքաղաղ *վաղախօս* լինի: - 218

**ՎԱՂԱՄԱՀ +** Յեսու անէծ զերիքով և զշինօղս նորա. և անէծքն այն առնէր անզաւակ և *վաղամահ:* - 445

**ՎԱՂԱՐՇԱՊԱՏ** - Եւ նոյն զքահանայթաղէքն, որ ունի է աւետարան. և զաշխարհական թաղումն, ի յայրարատ գաւառի ի *վաղարշապատ* քաղաքի ի վկայարանս սրբոյն հռիփսիմի. յետ **ճժա** ամի սրբոյն գրիգորի. զի մինչև ցայն հնովն վարեին: - 659

**ՎԱՂԱՓՈՅԹ** - Երկրորդ՝ զի տացէ օրինակ համբերութեան մերոյ, զի սպասեսցուք վարձուն ի հանդերձեալն. և ո՛չ իսկոյն *վաղափոյթ* լինիլ առնուլ այժմու կենօք...: - 520

**ՎԱՂԻՒ +** Որպէս յորժամ ասեմք, *վաղիւն* լինի արև, կամ ո՛չ լինի. լինի անձրև, կամ ո՛չ լինի. ի հարկէ մինն ճշմարիտ է ի սոցանէ: - 8. Իսկ ի *վաղիւն* ո՛չ գիտեմք թէ անձրև է թէ ոչ...: - 9. Իսկ թէ զանազանապէս իմանաս զժամանակն, նախ է՛ անցեալն որպէս երէկ. և ապա ներկայն որպէս այսօր. և յետոյ ապառնին որպէս *վաղիւ:* - 198. Երրորդ՝ կապեալ ածաւ ի տունն կայիափայ. և անդ զթուքն կալաւ յերեսն. և մինչ ի *վաղիւն* հսկեաց: - 492. Երեքտասաներորդ՝ ամաղեկացիք գերեցին զկողմն հրէաստանի և զայլազգիս. և դաւիթ զհետ մտեալ յետ **գ** աւուր և հարեալ ի գիշերի և ի *վաղիւն* մինչ յերեկոյ...: - 514. Եւ դարձեալ ասեմք թէ՝ ամենայն հացն օրհնեցաւ այսօր. *վաղիւն* զիա՞րդ օրհնեն: - 597. Ասեմք թէ՝ ամենայն նշխարքն որ ի բեմն և ի խորհրդանոցն օրհնեցաւ այսօր, զնոյնն ի *վաղիւն* առնոյք և օրհնէք: - 599. Ա՛րդ՝ ի տօնս տէրունականս նախատօնական առնեմք յերեկոյս. և ի *վաղիւն* զկատարեալ տօնն: - 646

**ՎԱՂՈՐԴԵԱՆ +** Նա՛խ՝ աղօթիցն ժամ. ո՛չ միայն յերեկոյս և ի *վաղորդեան* ի հասարակն կամ է անգամ աւուր ըստ մարգարէին: - 779

**ՎԱՂՎԱՂԱԿԻ +** Ո՛չ մի ժամանակս կատարեալ. քանզի «ի ճշմարտութեան ո՛չ եկաց» ասէ տէրն. այլ

*վաղվաղակի* իբրև ստեղծաւ՝ անկաւ և ո՛չ յամեաց. և ո՛չ ի յաւիտենական քաղցրութենէն ճաշակեաց. վասն որոյ ո՛չ երանեցաւ և ո՛չ մնաց ի բարութեան: - 147. Ի քթթելական՝ որքան *վաղվաղակի* կարես բանալ զակն՝ զբոլորն համանգամայն ստեղծ: - 227. Նա՛խ՝ զի ո՛չ եհարց զաստուած. այլ *վաղվաղեաց* ի պատերազմ: - 446. ...իսկ քրիստոս ո՛չ ունէր զմեղս. վայն այն *վաղվաղակի* ել ի ջրոյն. և նշանակէ ի մեզ զշնորհաց հեղումն. որ մկրտեալն ազատի ի մեղաց և իսկոյն ելանէ յառաքինութիւնս: - 487. Երրորդ՝ ի կողմանէ հոգւոյն սրբոյ. զի առաւել հռչակելի և փառաւոր եղև այսպէս. զի ընկալեալ զհոգին՝ *վաղվաղակի* սքանչելիս առնէին վկայելով քրիստոսի. և զառաքեալսն առատապէս լցուցանելով, և նոքա զայլսն: - 522. Ա՛րդ՝ մեղանչելն մարդոյ այնպէս է որ զակն խփեաց ի լուսոյն և խաւարեցաւ. սակայն լոյսն ծագէ՛ դեռևս ի վերայ աչացն և սակաւ փայլէ ի ներքս. և յորժամ բանայ *վաղվաղակի* լոյս տեսանէ: - 562. և յորժամ դառնայ ի մեղաց, *վաղվաղակի* շնորհաց լուսոյն արժանի լինի: - 563. Որպէս թէ ոք ի պատուհան ինչ ցուցանէ զինքն յաշխարհի, և *վաղվաղակի* ի մահ դառնայ: - 592. Եւ երթայ առ իւր տէրն հեշտութեամբ. և անդէն *վաղվաղակի* իբրև երևմամբ և տեսութեամբ իմն շահի զպտուղն առաջիկայ երանութեանց: - 691

**ՎԱՂՎԱՂԵՄ +** Խոհեմ մարդն ո՛չ պարտի *վաղվաղել* ի գործ զինչ և է՛. այլ պա՛րտ է նա՛խ խորհիլ որ ո՛չ խաբի: - 579-580

**ՎԱՂՎԱՂՈՒԿ +** Այլ և ծանիր, զի յընտրողութիւնն ոչ էր *վաղվաղուկ* որպէս եւա: - 465

**ՎԱՃԱՌ +** Նա՛խ ասեն թէ՝ արծաթն նիւթ *վաճառո՛յ* է. և այնու շահի. և ո՛չ տոկոսեօք: - 375. Երրորդ՝ որ գլուխն և շահ. որպէս ի *վաճառս:* - 375

**ՎԱՃԱՌԱԿԱՆ +** Եւ նոյն այս որ շահ և գլուխ խնդրի, բաժանի յերեք: Նա՛խ՝ երկրագործք, այգէգործք, հովիւք, և սոյնպիսիք: Երկրորդ՝ արուեստաւորք, և մշակք, և վարձկանք: Երրորդ՝ *վաճառականք:* - 375. Եւ ի տօն զատկին որ արար խարազան չուանեայ և եհան *զվաճառականսն*, ցուցաւ սարկաւագի գործ նորա: - 606-607

**ՎԱՃԱՌԱՆՈՑ +** Ձորօրինակ, քահանայ ոք ի *վաճառանոցն* ի բազում հացս և ի գինիս ասասցէ «ա՛յս է մարմին իմ և արիւն իմ» ո՛չ կատարի. զի ոչ ունի զդիտաւորութիւնն. նոյնպէս և աստ: - 539

**ՎԱՃԱՌԵՄ +** Զի՞նչ է անդրանկութեան խորհուրդն զոր եսաւ *վաճառեաց:* - 308. Ա՛րդ՝ զայս քան մեծագոյն պատիւ և խորհուրդ անդրանկութեանն անարգեաց եսաւ ընդ պոռնկութեան. և *վաճառեաց* ընդ կերակրոյ: - 309. Որպէս *վաճառեաց* եսաւ և գնեաց յակոբ զանդրանկութիւն նորա: - 310. Տասներորդ՝ հայրն առաքեաց զյովսէփ առ եղբարսն որ էին հովիւք և երիցունք տեսանել զնոսա. և բանիւն յուդայի *վաճառեցաւ* և եղև տէր երկրին և կերակրիչ: - 313. Նոյնպէս և քրիստոս եկն առ եղբարս իւր որ էին որդիք դաւթի և աբրահամու և առաջնորդք ժողովրդեանն. և յուդա *վաճառեց* զնա. և տէր եղև կենդանեաց և մեռելոց և կերակրիչ. զի ազատեաց զհոգիսն ի սովոյ դժոխոցն: - 313. Մետասաներորդ՝ յովսէփ **ժե** ամաց *վաճառեցաւ* **լ** դահեկանի որպէս ասէ ի կտակն: - 313. Եւ տէրն մեր կրկին թուով ամաց. զի աստուած և մարդ էր *վաճառեցաւ* **լ** արծաթոյ: - 313. Այս ագահութիւնս *վաճառեաց* զքրիստոս: - 570. Ասեմք առ այս, թէ յառաջ խառնումն ջրոյն ո՛չ է ըստ խորհրդոյն. որպէս և ո՛չ առ մեզ, թէ *վաճառօղն* խառնեսցէ ջուր. այլ քրիստոս ո՛չ խառնեաց: - 596. Եւ զայս գործս արար քրիստոս յորժամ եհան զգնօղս և *զվաճառօղս* ի տաճարէն: - 606. Վասն է՞ր ի տաճարին զճարպն *վաճառէին*, և յեկեղեցիս մոմ: - 617. Նա՛խ՝ զոմանս աղքատ առնէ աստուած, զի զարքայութիւնն մեծատանց *վաճառեսցեն:* - 664

**ՎԱ՛Յ +** Եւ *վա՛յ* ասեմ որովայնամոլ ազգացն որք զամենայն պահքս լուծանեն ի ձուկն անխտիր. որոց աստուած որովայնք իւրեանց է և փառք ամօթն ըստ առաքելոյ: - 510. զի վասն բոլոր ժողովրդեանն մին էր զուարակ. և վասն միայն քահանայապետին մին. և զշնացեալ դուստր քահանային այրէին. և զժողովրդեանն քարկոծէին. և *վա՜յ* ինձ զի անձամբ զանձն իմ դատապարտեմ: - 563. Եւ *վա՛յ* է թշնամեացն աստուծոյ. որք զշիթսն զայնս յերկրի լիզեն և զաղբիւրն քաղցրութեան արհամարհեն: - 762

**ՎԱՅԵԼ +** Չորրորդ՝ ի ցուցանել զարդար վճիռ հատուցմանն. պահողացն՝ *զվայելս* դրախտին և զանմահ կեանս. և ոչ պահողացն՝ զարտաքսիլն և զմահու մեռանիլն: - 277. Որ իսկապէս մեզ *վայել* է քրիստոս եկեալ և դժոխք աւերեալ և արքայութիւնն բացեալ: - 358-359. Զի՞նչ է խորհուրդ բարեկենդանին որ յամենայն տեղիս ի վանորայս և յանապատս ներե՛ն սակաւ ինչ ի չափաւոր *վայելս:* - 657

**ՎԱՅԵԼԵՄ +** Վեցերորդ՝ կամեցաւ աստուած զի մեք բանիւ և տեսութեամբ *վայելիցեմք* ի գործս արարչին: - 192. Այս է յորժամ ընթեռնումք յերկար զպատմութիւնն և լսեմք. իբրու թէ տեսանեմք աչօք.

և մտօք *վայելեմք:* - 192. Եւ դարձեալ ի գարունն բուսանին բոյսք. և յամառն կատարին. և յաշունն ժողովին. և ի ձմեռն *վայելեն*. և յիւրաքանչիւր ժամանակս՝ իւր գործն առաւելու: - 198. Չորրորդ՝ զի նոյն ինքն դրախտն և տունկն է իմանալի և զգալի. որպէս *վայելօղ* մարդն էր իմանալի և զգալի: - 222. Չորրորդ՝ զի մի իցէ նեղասիրտ և տառապեալ բարուք տեսանելով զինքն ի չքաւորութեան ստեղծեալ. այլ տեսցէ զամենայն կատարեալ. զի արձակ և առատ բարուք սնանիցի և *վայելեսցէ:* - 230. Եւ այս իսկ է գործն, այսինքն *վայելել* հոգւով յիմանալիսն, և մարմնով ի զգալիսս. պարտ էր նախ գոյանալ նոցա, և ապա՛ գործողին և *վայելողին:* - 231. Չորրորդ՝ զի *վայելէ՛ր* իսկ նմա որպէս զհատ ցորենոյ թաղեալ յաղբիւսն՝ այսինքն յերկիր. և պարարտացեալ հասցէ ի հունձս պտղաբերութեան: - 323. Նա՛խ՝ զի և հեթանոսք *վայելեսցեն* յողորմութեանցն: - 402. Երկրորդ՝ զի այն քան բազմութիւնք հաւատացելոց կորնչելո՛ց էին, որ ո՛չ *վայելէր* ամէնիմաստ գիտութեանն աստուծոյ: - 467. Նա՛խ՝ զի ո՛չ *վայելէր* մաքրութեան կուսին: - 470. ...վասն զի շնորհաց և ազատութեան էր ժամանակն. պա՛րտ էր մեղաւորացն ընդ արդարոցն *վայելել* ի շնորհին: - 507. Եւ ոմանք ոչ ինչ համարին զյանցանս մտաց. և ո՛չ դնեն ի կարգս մեղաց. օրինակ տալով իբր զդատարկ սեղան ոչ ինչ կերակրել. և իբր զպտուղ ծառոց տեսութեամբ միայն *վայելել:* - 555. Ապա ուրեմն ո՛չ *վայելէ* ասել թէ ե՛ս կու մկրտեմ: - 588. Իսկ քեզ *վայելէն*, զարարչութեանն ունի խորհուրդ. այլ և զտնօրէնութեանն և զկատարածին...: - 644. Ջի մի՛ միայն ողորմութեամբ՝ այլ և արդարութեամբ *վայելեսցուք:* - 663. Դարձեալ՝ հանգիստ է, զոր մինչև ցայժմ ժողովէր արդարութեամբ, այժմ կամի *վայելել:* - 679. Նա՛խ՝ որպէս մեք ի կիրակէ ուրախացաք և *վայելեցաք* ի շնորհաց յարութեանն քրիստոսի, ի միւս օրն և զնոսա մասնաւորեմք: - 684. ...որպէս ասէ մեկնիչն տեսլեան. եթէ սպիտակ հանդերձն շնորհացն քրիստոսի մաքրութիւնն է. որ սրբութիւն մեղաց մերոց արար քրիստոս. յոր ամենայնքն *վայելեցաք*...: - 690. Ջի ո՛չ *վայելէ* անկատարից զվախճանական կատարումն առնուլ. եթէ ոչ նախ իւր յատուկ կատարելութեամբն կատարեսցի...: - 693-694. Ասէ մեկնիչն, սպիտակ հանդերձն զոր զգեցեալ էին՝ շնորհացն քրիստոսի մաքրութիւնն է. յորմէ ամենեքեան *վայելեցաք* որպէս ասէ առաքեալն...: - 696. ...որով իմանան արդարքն թէ այնպիսի փառս պատրաստեալ է նոցա. և յուսով *վայելեն* մինչև օր դատաստանին: - 697. ...և ըստ իւրաքանչիւրոցն տեսանէ զփառս և յուսով *վայելէ* ...: - 705. Պայծառ հանդերձն զոր զգեցեալ են՝ շնորհացն քրիստոսի մաքրութիւնն է յոր ամենայնքն *վայելեցաք*...: - 712. Եւ որպէս այժմ հոգով և մարմնով զմահկանացու կեանս *վայելեաց,* նոյնպէս և յայնժամ հոգւով և մարմնով զանմահ կեանս ժառանգեսցէ. վասն այն յառնէ: - 724. ...և երկոքեան սոքա կարի յոյժ *վայելեն* դատաւորի. այսինքն իմաստութիւն և անմեղութիւն. վասն որոյ քրիստոս լինի դատաւոր: - 735. Այլ և որք ի մի խնամս *վայելեցին* յաստուծոյ. յարև և յանձրև. և ի մի տեղիք բնակեցան և մի պիտոյիւք շատացան. և նոքա զտուօղն ո՛չ ճանաչեցին: - 738. Այլ թէ ի սոցանէ մի մի ուրուք տուեալ լինէր, փոխանակ թագաւորութեան համարէր. իսկ թէ սոքօք ամենեքումբք *վայելեսցէ*, գերագոյն բոլոր աշխարհի լինէր: - 761. Դարձեալ, ծառ կենա՛ց է աստուածածին կոյսն մարիամ բղխեալ յարմատոյն յեսսեայ. երկնուղէշ զարգացմամբ մշտասաղարթ կուսութեամբ ծաղկեալ և պայծառացեալ հոգւոյն սրբոյ եկաւորութեամբն. և պտղաբերեալ մեզ անմահ պտուղ զբանն մարմնացեալ. յորմէ *վայելեալք* երկնաւորք և երկրաւորք ի շնորհաց նորին զյաւիտենից կեանսն ժառանգեցաք: - 768. Որով և ընդ որում հօր միանգամայն և հոգւոյն սրբոյ *վայելէ* փառք և պատիւ և իշխանութիւն և զօրութիւն. այժմ և միշտ և յաւիտենից յաւիտեանս Ամէն: - 771

**ՎԱՅԵԼՈՒՄՆ +** Եւ զկրկնակի կենաց *վայելումն* ըստ խառնեալ էութեան իւրոյ. զի թէ զաստուածայինսն բերցէ յինքեան ըստ որում ի պատկերն եղև, վերափոխեսցի անմահ կենօք ի պատրաստեալն ժառանգութիւն: - 231. Եւ երեկոյն, զի և անդ յետ աստեացս *վայելմունք* մեր քրիստոս է: - 346. Իսկ տեարքն բազմեալ ի հանգիստ *վայելման:* - 656. Դարձեալ, արքայութիւնն երկնից երբեմն կոչի ընթրիս՝ վասն անճառ բարեացն *վայելման:* - 757

**ՎԱՅԵԼՈՒՉ +** Ա՛րդ եթէ է՛ այլ որդի և եղև աթոռակից հօր, ուրեմն ի բաց էհան զբանն ի նստելոյն ընդ աջմէ հօր որ է սեփհական նմա և *վայելուչ* հօր՝ լինիլ աթոռակից և գահակից: - 67. Դարձեալ *վայելո՛ւչ* էր փրկութեան մեր լինիլ ի ձեռն փայտի. որ ցուցանէ զփայտն կենաց ի մէջ դրախտին: - 494. Երրորդ ի *վայելուչ* ընկերակցութենէն: - 762

**ՎԱՅԵԼՉԱԿԱՆ +** Յասացելոցս ո՛չ ինչ է *վայելչական* աստուծոյ. բայց միայն ըստ պատճառին: - 109. Ջի ապականեալ մարդն ապականեցաւ դրախտին էր *վայելչական:* - 222. Ի սոցանէ **դ** հարկաւո՛րք են. և **դ** պիտանիք և **բ** *վայելչականք:* - 281. Իսկ գոյացական մարմինն քրիստոսի կոչի զգեստ

*վայելչական*...: - 319. Արդ՝ առաջինն և վերջինն *վայելչակա՛ն* է յոքայ և աստուծոյ. իսկ միջին երկուքն բարեկամացն յոքայ, և չար բանսարկուին յարմարի: - 323. Չորրորդ՝ ի խորհուրդ *վայելչական* մարմնոյ ճշմարիտ քահանայապետին մերոյ քրիստոսի: - 347. Վասն որոյ հայրապետք եկեղեցւոյ լա՛ւ համարեցան *զվայելչականն* բառնալ որ ո՛չ ի լինիլն յաւելուած առնէ...: - 604. ...զի որպէս չարչարանացն հաղորդեցաւ, նոյնպէս և *վայելչականացն* նմա: - 691

**ՎԱՅԵԼՉԱՊԷՍ +** Իսկ ըստ միութեան յոյժ *վայելչապէս:* - 94. *Վայելչապէս* արժանաւորեաց աստուած զպատիւն անդրանկաց: - 309

**ՎԱՅԵԼՉՈՒԹԻՒՆ +** Եւ այլք ասեն այսպէս հակառակիլ ընդ աստուծոյ, յորժամ ետես զինքն փառօք և *վայելչութեամբ* քան զամենայն դասս գերազանցեալ, կամեցաւ մեծ լինիլ ի վերայ ամենայնի և հաւասար աստուծոյ: - 149. Եօթներորդ՝ *վայելչութիւն* անաշխատ փափկութեան դրախտին: - 278. Ութերորդ՝ զի թէ թողեցեն *զվայելչութիւն* խորանիս այս և այլոց հետևեսցին, անպատասխանի լիցին ի պատուհասն...: - 342. Հինգերորդ՝ յառաջ տապանակն գնայր և դիտէր հանգիստ. և զհետ վէմն տայր ջուր. զի այժմ զհանգիստ պատրաստէ՛, և յետոյ *զվայելչութիւն* տայ: - 385. Չորրորդ՝ ի գլխո՛յն է տեսողութիւն և լուր և *վայելչութիւնք* համոց և հոտոց: - 532. Ասեմք ըստ նիւսացւոյն գրիգորի, թէ յոյս նոցա ո՛չ է տանջանք, այլ *վայելչութիւն* է նոցա...: - 695. Եւ ունի բեհեզն վեց յատկութիւնս որ նշանակէ *զվայելչութիւն* հոգւոց սրբոցն ելեալք ի մարմնոյ: - 712. Այլ և ծաղիկ՝ զպայծառ և զանուշահոտ վարս առաքինութեան. և պտուղ՝ արդիւնքն ըստ գործոց. յորմէ փրկութիւն եղև ամենայն աշխարհի և *վայելչութիւն* արքայութեանն երկնից: - 768. Նոյն է *վայելչութիւն* հանապազորդեան: - 768

**ՎԱՅՐ +** Իսկ վասն չարչարանաց հնազանդութեանն քրիստոսի բազում պատճառս դնէ յայսմ *վայրի* աստուածաբանն գրիգորիոս: - 42. Նախ՝ զի հովիւն ի դալար *վայրի* բնակեցուցանէ. այսինքն ի վայրենացեալ գրոց սրբոց գիտութիւնն: - 49. Զի որքան ի վերուստ ի *վայր* իջանէ՝ ի բազումս բաժանի. որպէս ի սեռէ ի տեսակս և յանհատս իջեալ բազմանայ: - 123. Եւ այլք ասեն թէ՝ ի տէրութեանց դասուն ի *վայր* ի ներքոյ քերօբէիցն յամենայն դասուցն անկան դասու միոյ չափ: - 150. Իսկ պատահական տեղի է, յորում նեստեալ ոք՝ կարէ՛ թողուլ զայն և լինիլ յայլ տեղւոջ. որպէս ի վեր կամ ի *վայր:* - 174. Եւ որովհետև ծանեաք զի անմարմինն են սոքա, յա՛յտ է զի բաժանումն սոցա քակէ՛ զնիւթն ի մարմնոյ. ապա ուրեմն ի մի *վայր* ժողովումն՝ ծնանի զնիւթական մարմինն: - 175. Արդ՝ ներքին հողմն ի վեր ձգէ զերկիր. և վերին հողմն ի *վայր*. և այսպէս ի մէջն հաստատ մնայ երկիր: - 181-182. Երրորդ՝ ծանրութիւն երկրիս ի *վայր* հակէ. և բռնութիւն հողմոյ ի վեր: - 182. Հինգերորդ՝ երկինքն թեթև է ի վեր քարշէ. և երկիրս ծանր ի *վայր* հակէ. և այսպէս մի զմի հաստատուն պահեն: - 182. Հինգերորդ՝ երկինք կոչի և դրախտն. զի բա՛րձր է և լուսաւոր և անմահութեան է *վայր*...: - 183. Եօթներորդ՝ զի է անդորր *վայր*. այսինքն հաւասար ընդարձակ և դաշտաձև գոլով: - 184. Սա՛ ոչ դառնայ ի ամպ կամ ի անձրև. այլ մղի ի *վայր* կոյս և մնայ մերձ երկրի: - 204. Զի մարդն ունի զգլուխն ի վեր որպէս երկինքն. և զոտքն *ի վայր* որպէս երկիրս. վասն որոյ ամենայն ծորմունք բնականապէս զառիվա՛յր հոսին. իսկ ծառն ծռեալ ունի զգլուխն ի *վայր*, և զոտսն ի վեր. կամ թէ ծռեա՛լ ունի զոտս և զստեղունս յայս կոյս և յայն կոյս: - 214. Նմանապէս և կոչին փայտ. զի ի փտելոյ և յապականելոյ գոյանան այսպէս. յորժամ բորբոսի երկիր՝ նա՛ զարմատն ի *վայր* արձակէ և զբոյսն ի վեր: - 214. Նոյնպէս և ի ջուրն կան այլ զն. հողմն երևի ի գոլորշիքն. և հուրն և հողն՝ կայծն ի *վայր* անկեալ քար լինի: - 214. Եւ դրախտն է բարձր տեղեաւ. և լուսաւոր. և անապական *վայր:* - 221. Ուստի միջակ գոլով ըստ էութեան՝ և ի միջակ *վայրս* դրախտին բնակեալ: - 231. Երրորդ՝ մարդն նման է բոլոր աշխարհիս. և ի մասունս աշխարհի՝ երկինքն է վերին և բարձր. և տարերք ի ներքին *վայրս:* - 232. Իսկ այլ կենդանեացն հողն բազում է. վասն որոյ ծանրացեալ ի *վա՛յր* հակէ: - 233. Գլուխն որպէս երկինք ի վերոյ. և ոտքն որպէս երկիր ի ներքոյ. զի ծանրութիւնք և ծորմունք ամենայն ի *վայր* հոսեսցին: - 233. Եօթներորդ՝ վասն զգայութեանցն, որ ամենեքին յառաջ հեղուն յուղեղէն, և ազատապէս տեսանեն և իմանան. զի թէ գլուխն և ուղիղն ի *վա՛յր* էր քարշեալ և կորացեալ՝ ո՛չ կարէր ուղղակի զգալ և իմանալ. որպէս այլ կենդանիք: - 233. Եւ ապա՝ զաւելորդ ծորումն ի գլխոյն ի *վայր* հոսեցէ: - 235. Զինչ է յորժամ մարդ ի վեր նայի հեշտանայ աչքն. և յորժամ ի *վայր*՝ դժուարի: - 239. Կամարաւոնքն՝ թէ ի վերոյ շարակցեսցին՝ սակաւիմա՛ստ է. թէ *վայր* ի յոնգունսն հասցէ, սրամիտ է: - 246. Զի մանունքն յամսօրէից և ի *վայր*, ի շաբաթս և յաւուրս և ի ժամս ըստ նոյն թուոյ կարեն զնմանն ծնանիլ. և առաւելքն առաւելեալ ամօք կրկին կամ երեքկին որպէս ասացաք: - 264. Է՛ և ներքին և վերին *վայր*. մարմին և անմարմին. և այլք սոյնպիսիք տարբերութիւնք են բնութեան և ո՛չ թշնամիք: - 278. Եւ երրորդ զբարձրանալն ի ներքին *վայրէ* ի բարձր տեղիս: - 289.

Եւ վեցակողմն, զի մարմինն եռակի տարրո՛շ է. ունի վեր և *վայր*. յետ և առաջք. աջ և ահեակ: - 293. Այսինքն մարդիկք որ անբան տրտմութեամբ և անմիտ ցանկութեամբ ի *վայր* գտան քան զանասունս: - 316. Զպատիժն որ է *վայրն* միապէս գնէ: - 324. Երկրորդ եղանակ՝ **է** գոտիք. և **ը**՝ անմոլարքն. **թ**՝ լուսնոյդ ի *վայր*. և **ժ** բանն աստուծոյ որ վարէ՛ զարարածս: - 343. Երրորդ այսպէս. ի լուսնոյդ ի *վայր* տարրական հուրն և որ ի նմա երեւոյթք լուսոյ. օդն և թռչունք. ջուր և լօղականք. երկիր և բոյսք. մարդ և անասունք: - 343. Դարձեալ, տասն են մասունք զգալի արարածոց. այսինքն՝ **է** մոլորական գունդք. և **ը**՝ անմոլարքն. և իններորդ ի լուսոյդ ի *վայր*. և մարդս **ժ** երորդ ի վերայ նոցա. որ է՛ բանական և բաժին աստուծոյ: - 376. Նայիլն վերուստ ի *վա՛յր* է ...: - 407. Հինգերորդ՝ զի մի՛ ընդ դառնալն ի *վայր*՝ ողողեսցէ զներքին կողմ եզերաց գետոյն: - 414. Այլ և քարինք բազումք էին ի վեր և ի *վայր*՝ բաց ի յունաց յոր անցանէին. որ կրթեալ և սրբեալ էին: - 415. Ասեն վարդապետք թէ Բունն կիպարի էր վերուստ ի *վայր*. և Խոտորնակն արմատենի: - 494. Զոր օրինակ ի բարձր ուստէք քար հոլովեսցի, և որ մօտն կացցէ ասէ ցնա՝ երթալ ունիս մինչ ի ներքին *վայր* տեղիս և ապա դադարիս: - 497. Ի գիրս բենետիքտոսի հարցեալ եղև թէ ո՞ւր են դժոխքն. և տուաւ պատասխանի թէ՝ յանկեան և յեզր ծովուն ի ներքոյ երկրի ի խաւարչուտ *վայրս:* - 504. Չորրորդ՝ վեց են շարժութիւնք մարմնոյ. այսինքն վեր և *վայր*. յաջ և յահեակ. յառաջ և յետ: - 560. Ի *վայր* շարժումն է տրտմութիւն և ծանծրութիւն. որ է՛ ծուլութիւն. զի մինն ծանրանայ և ո՛չ գործէ զբարիս. և միւսն տրտմի և պակասի: - 560. Արդ մարմնոյ ազգն բաժանի յերեք դէմս. ի վեր, ի *վայր*, և ի կողմն: - 611. Իսկ ի *վայր* ի խոնարհ...: - 611. Երկրորդ՝ մեղքն ի հոգւոյն և ի մարմնոյն ի վեր ելանէ. իսկ արտասուքն վերուստ ի *վայր* հոսի և կորուսանէ՛ զնա: - 619. Այս քան մինչև ցայս *վայր*՝ վասն այժմոյս, և կարգաց եկեղեցւոյ...: - 659. ...վասն որոյ որպէս ի մկրտութիւնն ուղիղ մկրտիմք գլուխ ի վեր և ոչ ի *վայր* որպէս արհոսեանք: - 676. ...առաւել աստուծոյ է կարելի զհոգիս յերկնից և զմարմինս ի տարերաց ի մի *վայր* ժողովել և յարուցանել: - 718. Ասեմք եթէ՝ զորօրինակ սնդիկ լուծեալ և ի հող խառնեալ գնդապէս և փոշիացեալ. յորժամ ի մի *վայր* ժողովես՝ թողու զփոշիսն ի յորս խառնեալ է և պարզ միայն սնդիկն ժողովի: - 719. Եւ դարձեալ՝ որպէս զանազան սերմանիք ցորեան կորեակ և այլք՝ հասարակ ի մի *վայր* սերմանին...: - 719. Երկրորդ՝ երկինք զհրեշտակս ասէ որ ի *վայր* գլորեալ խոնարհին ամենայն դասք. աթոռք կազմեալ, և սպասաւորք շրջապատեալ: - 729. Դարձեալ, զի յարևելս բազմեալ դատաւորն. և աջակողմեանքն լինին ի վերայ օդոյ ի կողմն հիւսիսոյ. և ձախակողմեանքն *վայր* ի յերկրի ի կողմն հարաւոյ. - 731. Նա՛խ՝ զի տեղիք դատաստանին պա՛րտ է զի ի հասարակ *վայրի* լիցի և եձ է՛ մէջ աշխարհի: - 738. Իսկ մեղաւորքն ի ձախմէ. այսինքն *վայր* ի յերկիր ծանրացեալ մեղօքն. որպէս կապար ի յերկիր հակեալ. ուր բոլորով սրտիւ սիրեցին զնա: - 738. Այլ և յորժամ ի վեր քան զչափն պատուէ զուրբս, և ի *վայր* քան զչափն պատժէ զմեղաւորս: - 746

***ԸՆԴ ՎԱՅՐ +*** Ութերորդ՝ *ընդ վա՛յր* էին ուսմունք և յորդորմունք ի բարիս. որովք փախչիմք ի չարէն, և հասանիմք բարւոյն: - 20. Իսկ զի և արուի թէպէտ ո՛չ նոյն պիտոյիւք. սակայն ո՛չ *ընդ վայր* կազմեցաւ. ի լրումն **բժ**ան դրանց անդամոց. ի ներքս մուծանելոյ և արտաքս հոսելոյ զպակաս և զաւելորդս ինչ. անվնաս կելով կենդանւոյն: - 786

**ՎԱՅՐԱԲԱՆԵԼ** - Իսկ ներելին թէպէտ որոշի յերիս տեսակս ըստ մեծութեան և նւաղութեան. այլ մանրամասնաբար յանթիւս ելանէ. որպէս ծիծաղիլ. *վայրաբանել*. և այլն: - 568

**ՎԱՅՐԱԲԵՐ +** Եւ ոմանք ասեն՝ թէ սեաւ մաղձն առնէ տրտմութիւն և սրտմտութիւն. և խարտէշն զբարկութիւն և զմախանք. արիւնն արի և *վայրաբեր*. և պաղդամն ծոյլ և քնափ: - 245

**ՎԱՅՐԱԿՈՐ** - Մատունքն մած և *վայրակոր*, ագա՛հ է և չարաբարոյ: - 247

**ՎԱՅՐԱՊԱՐ +** Դարձեալ ասեն ըստ փիլիսոփային թէ՝ ո՛չ աստուած՝ և ո՛չ բնութիւնն՝ և ո՛չ արհեստ՝ *վայրապար* իրս երբեք ստեղծանեն. ապա թէ աստեղքն ո՛չ ունին զօրութիւն ազդելոյ՝ *վայրապա՛ր* են ստեղծեալք յարարչէն: - 13. Երկրորդ՝ ասեմք եթէ և ոչ աստեղք *վայրապար* են ստեղծեալ...: - 13. Իսկ թէ կամիս ուսանիլ թէ զի՞նչ է նիւթ պսակին. որ ինչ առ աստուածութեան իւրում մեծութիւն գտանի, զա՛յն պատրաստեաց սիրելեաց իւրոց. զոր ո՛չ կարեմ զմտաւ ածել. կամ *վայրապար* լսելեօք լսել: - 161. Զի արարիչն և բնութիւնն և արուեստն ոչ ինչ ծրի և *վայրապար* ստեղծանեն ըստ իմաստասիրին: - 785. ...ոչ ինչ *վայրապար* կազմեն զտեսակ գոյացական և զտեսակ պատահական. խնդրելով ոմն պարզ նիւթ. և ոմն տեսակացեալ: - 786

**ՎԱՅՐ ԲԵՐԵԼ +** Եւ թա՛նձր ծանրութեամբն ի *վայր բերեալ*՝ կոչի կայծակ. և լինի յամառնային

եղանակս: - 204. Վասն այն մասնկունքն նորա ո՛չ խստանան. այլ անգայտացեալ ի *վա՛յր բերի* և կոչի ձիւն: - 205

**ՎԱՅՐ ԲԵՐՈՒՄՆ +** Եւ ըստ չափու թանձրութեանն պատառեալ բեկանի, և ի *վայր բերմամբ* գնդի ի ջերմութենէ օդոյն, և լինի կարկուտ: - 205

**ՎԱՅՐԵՆԱՆԱԼ +** Նախ՝ զի հովիւն ի դալար վայրի բնակեցուցանէ. այսինքն ի *վայրենացեալ* գրոց սրբոց գիտութիւնն: - 49

**ՎԱՅՐԵՆԻ +** Իններորդ՝ զի նշանակեալքն՝ վայրիք գազանք՝ հրեղէնք՝ և թեւաւորք երևէին. ցուցանելով թէ արտաքոյ և հեռի՛ են յերևելեացս բնութեանց. և անընտելք և *վայրենիք:* - 132. Զորս պօղոս՝ յընտանի և ի *վայրենի* ձիթենիս առակէ՛ ի թուղթն հռոմոց: - 347

**ՎԱՅՐԻ +** Իններորդ՝ զի նշանակեալքն՝ *վայրիք* գազանք՝ հրեղէնք՝ և թեւաւորք երևէին. ցուցանելով թէ արտաքոյ և հեռի՛ են յերևելեացս բնութեանց. և անընտելք և վայրենիք: - 132. Ո՞րպէս գիտեմք թէ մարդն իշխան է ի վերայ անասնոց. զի ահա՛ բազումք անհնազանդք են. որպէս *վայրիք* և գազանք և այլք: - 220. Այլ թէ լինին մարդակերպ կենդանիք, *վայրիք* են և գազանք. և ո՛չ ի խառնուածոյ մարդոյ: - 267. Հինգերորդ՝ զի և *վայրի* անասնոց և գազանաց բաժին լիցի ի վաստակն մեր. զի նոցա է երկիրս այս և տեղիք ուր մեք բնակեցաք: - 372

**ՎԱՅՐԿԵԱՆ, ՎԱՅՐԿԵՆԻ +** Նախ՝ զի իմանալիքն մշտնջենաւո՛րք են, ի սակաւ *վայրկենի* կատարեցան: - 192. Զի և ներկայ ժամանակս որ յայտնի երևի, այսպէս անյայտ և անկայուն է. զի ո՛չ ոք կարէ *զվայրկեան* ժամանակի մի ստուգել...: - 199. Եւ այս ո՛չ զհետ իրերաց. այլ համանգամայն յանկարծօրէն ի *վայրկեան* ժամու զօրութեամբ հոգւոյն սրբոյ. որոյ յանկարծօրէն է ներգործելն աստուծոյ: - 470. Եւ ա՛յս ի *վայրկեան* ժամու որպէս ասացաւ ի վերոյ: - 471. Իսկ աստուած անհուն է զօրութեամբ՝ յանկարծակի ի նոյն կէտ *վայրկեան* ժամանակի յարուցանէ: - 717. Դարձեալ խոցումն ի *վայրկեան* ժամանակս, ածէ՛ զմահ յաւիտենական: - 744. Յարութիւն մարդկան ի *վայրկեան* ժամանակի և յանկարծակի լինի որպէս ցուցաւ ի վերոյ...: - 747

**ՎԱՆԱԿԱՆ +** Եւ սմին համաձայնի *վանական* վարդապետն մեր ասելով, չորս տարր է մարդոյ և **դ** ծնունդ: - 353. Այլ թէպէտ առանձնականն կամաւո՛ր է, սակայն ի վերայ *վանականաց* որք են աբեղայք և կրօնաւորք, հարկաւո՛ր է վասն **դ** պատճառի: - 623

**ՎԱՆԵՄ +** Իսկ չորն ի ցրումն *վանելով* արտաքս հոսմանէն հո՛դմ եղև: - 205. Եւ տէրն մեր կանգնեաց զխաչն ի գողգոթայ մինչև յերեկոյ և *վանեաց* զթշնամին մեր: - 418. Եւ տէր մեր մարմնով զպատերազմն *վանեալ*. և նոյն մարմնով մեզ կեանս բղխեալ: - 423

**ՎԱՆՈՐԱՅ(Ք) +** Հինգերորդ դասք՝ Քահանայք. որք ի քաղաքի լինին, և որք ի *վանորայս*, և ի գեօղս երիցունք: - 608. Զի՞նչ է խորհուրդ բարեկենդանին որ յամենայն տեղիս ի *վանորայս* և յանապատս ներե՛ն սակաւ ինչ ի չափաւոր վայելս: - 657

**ՎԱՆԿ +** Երրորդ *վանկն*, ոչ են և ո՛չ ասին ի յէքս, ոչ եղեալքն ո՛չ ասին. և ո՛չ գունտն քառանկիւնի. կամ մարդս պարզ: - 55. Եւ որպէս գիծն կոչեցեալ այբ՝ ի բազումս *վանգս* բաժանեալ. և մնացեալ մի: - 106. Չորրորդ՝ *վանկն* կամ փաղառութիւնն: - 177

**ՎԱՆՔ +** Զի պողէր քոյր թագաւորին թէոդոսի ի կուսանաց *վանս* էր. և պղծեցաւ պոռնկութեամբ ի մարկիանոսէ. և ապա՛ եղև կին նմա. և ասեն թէ ի նեստորէ՛ էր մկրտեալ: - 542. Հինգերորդ ըստ ուրին. թէ ուր գործեն զմեղքն. կամ ի *վանք*, կամ յեկեղեցի որ է տուն աստուծոյ. կամ ի գեօղ, կամ ի քաղաք, կամ ի պոռնկատուն: - 565

**ՎԱՉԱԳԱՆ ԱՐՔԱՅ** - Վեցերորդ ժողով եղև յամս *վաչագանայ արքայի* աղուանից: - 545

**ՎԱՌ +** Այլ և *վառ* ունիլ զճրագ մտաց մերոց և նայիլ զտունս մտաց մերոց և նայիլ զտունս մեր...: - 730

**ՎԱՌ (շարականի տեսակ)** - Զշարականս ո՞վ է ասացեալ: ...Եւ *զվառին* ներսէս կլայեցին: - 637

**ՎԱՌ (ձայնի տեսակ)** - Եւ ապա՛ քինոսփէնէս հմուտ ձայնից գազանաց և թռչնոց, զատուցանէ՛ զկողմն առաջին ձայնին: Ապա՛ աքիլեւս, զատուցանէ՛ զկողմն երկրորդ ձայնին որ կոչի աւագ կողմն: Եւ զերրորդ ձայնին որ կոչի *վառ:* - 640

**ՎԱՌ (եկեղեցական տերմին)** - ...նոյնպէս յորժամ ի գերեզման դնեն զմարմինն, իբր յաշխարհի ծովէ ելեալ *զվառն* խոնարհեցուցանեն: - 676. ...զոր նշանակէ մանր վարշամակ *վառին:* - 676. Այսու խորհրդով բարձրացուցանեմք զխաչն ի վերայ *վառի*. և ժամահար զկնի: - 732. Յօրինակ լուսեղէն ամպոյն *վառն*, և փոքր վարշամակն ցոլմունք լուսոյն: - 732

**ՎԱՌԵՄ +** Զի աստուած առնէ զբորբոքումն ախորժակին. որպէս հուր որ *վառէ՛* զփայտ: - 133-134.

Երրորդն՝ է վերին մասն օդոյն. և կոչի եթերային երկին. զի մերձ ի տարրեղէն հուրն է. և *վառի* ի նմանէ. զոր թռիչ աստեղաց կոչեմք: - 183. Ո՛չ է աստղ. այլ գոլորշի *վառեալ* ի տարրական հրոյն յորժամ մերձի ի նա՛: - 203. Նոյն և սա՛ գոլորշի՛ է վերացեալ հողմոց. և մերձեցեալ ի հուռն՝ *վառի*՛ ի նմանէ. և բռնութեամբ հողմոյն վարեալ երևի իբրև զթռիչ աստղ և փութով շիջանի: - 203. **Արդ՝ վերջին հրովն յորում *վառին* երկինք և երկիր, ըստ նիւթոյ մասին պարզի. այլ ըստ ապականութեան մնայ անփոփոխ**: - 225. Ասեն սուրբք, որպէս ի միոյ լուսոյ բազում լոյսք *վառին:* - 226. Ի պատիւ մեծարեաց զմարդն. և նա՛խ՝ պատրաստեաց պէտս զանազան կերակրոց և ըմպելեաց որպէս ասացաք. և *վառեաց* զճրագ լուսաւորացն. և զգեղեցիկ ձայն երգեցողաց թռչնոց. և զզուարճութիւն զանազան ծաղկանց. և ապա՛ զմարդն ի պատիւ էած...: - 230. Զի՞նչ էր մորենին *վառեալ:* - 330. Նա՛խ՝ մորենին է՛ նշանակ ժողովրդեանն իսրայէլի յեգիպտոս, որ *վառեալ* տանջիւր և ո՛չ սպառիւր. այլ առաւելոյր օրհնութեամբն աստուծոյ: - 331. Եւ ճրագ *վառեալ* ի նմանէ՝ ծնեալն է արփեան լուսով: - 347. Կարկեհան՝ որ կայծ կոչի. հրագո՛յն է. գտանի յափրիկէ. ի գիշերի որպէս հուր *վառի:* - 348. Զի՞նչ է որ յանկիւնս եկեղեցւոյն խունկ *վառեմք:* - 363. Որ ի ջուր ըմպելն ընտրեաց զզօրսն. և թաքուցեալ սափորօք *զվառեալ* լապտերսն, և էհար յ արամբք **ըզճի** հազարսն: - 420. Ութերորդ՝ որք առեալ զօդ դարձեալ արտաքս փչեն ներհակ իմն գործով. այսինքն ջերմացուցանեն և զովացուցանեն. *վառեն* և շիջուցանեն: - 523. Զսառուցեալսն ի հաւատս բորբոքեն. և *զվառեալսն* չարութեամբ՝ շիջուցանեն. որպէս զելիմաս և զսիմոն: - 523. Չորրորդ կարգ է Զահավառքն. այսինքն դպրութիւն առնել և մոմեղէնս *վառել* ի սեղանն: - 606. Աստ լոյսն *վառեալ*. և ի մեզ լոյս խղճի մտաց. և հոգին սուրբ անշէջ...: - 614. Յայս միտս ի վերայ սեղանոյն խունկ *վառեմք*. որպէս ասացաւ ի վերոյ **իա** գլուխն, **խգ** համարն: - 615. ...վասն որոյ յանարիւն կենդանւոյ զլոյսն *վառեմք*. զի կենդանին այն անարիւն է յորմէ մոմն գոյանայ: - 617. ...յորժամ դնէին զառաւօտու պատարագն ի սեղանն. նոյնպէս յերեկոյն ի դնել պատարագին և ի *վառել* աշտանակին լուսոյ: - 618. ...և իւրաքանչիւր ոք լոյս և հուր *վառեալ*՝ նմա՛ նըւիրէին զպաշտօնն իբր արարչի...: - 638. Զի՞նչ է աւետարանին, Ո՞րթի. և մոմ *վառեմք*. և բուրվառ շարժեմք: - 644. Եւ ղամպարն *վառեալ*՝ հուրն: - 644. Զի՞նչ է նախատօնակն որ յերեկոյն սուրբ զգեստիւ խաչիւ և աւետարանաւ և լոյս *վառեալ* համաձայն պաշտեմք: - 646. Եւ զմեզ ի լոյս էած, նշանակեն *վառեալ* մոմեղէնքն: - 646. Վասն որոյ *վառեալ* մոմեղինիւ ի միասին համաձայն պաշտեմք: - 647. Զի որք ընկալան զշնորհսն, պա՛րտին նոքա ընչիւք իւրեանց զեկեղեցւոյն լոյսն *վառել* զաւուրս ութն: - 684. Զի հուր մեծ ընթանայ ի գալստեանն քրիստոսի. և *վառեսցին* երկինք և երկիր հրովն այն, որպէս ասէ պետրոս: - 727-728. Նա՛խ՝ զի մագաղաթն ի հուր մերձեալ գալարի. նոյնպէս և երկնայինքն յայնժամ խոնարհին յորժամ երկին և երկիր *վառեսցին* հրով: - 729. Երկրորդ զի *վառեալ* զճրագն: - 730. ...և *վառեսցեն* զերկինս որ է՛ օդն. և զերկիր և զլերինս և զդաշտս և զբոյսս և զկենդանիս. և զժանկս մեղաց որպէս ասէ աստուածաբանն գրիգոր: - 731. Զի նախընթաց հուրն գայ յարևելից և *վառէ*՛ զերկիր և զտարերքս, և կանգնի յարևմուտս: - 731. Առաջին՝ հուր *վառեալ.* այնպէս, որ թէ բոլորովին ծովք ի վերայ հեղցին՝ ո՛չ շիջանիցի: - 752. Վասն առաջնոյն, որք աստ հրով ցանկութեանցն *վառեցան*, արդարապէս բորբոքին: - 752

**ՎԱՌԵՄ (զինեմ) +** Օդ կամ կօշիկ յոտս, կուռ *վառեալ* զինու ընդ դէմ օդային թշնամւոյն: - 674

**ՎԱՌԵՄ (զարդարեմ) +** Իսկ խաչն *վառել* և ժամահարն յառաջ. նշանակէ՛ զվերջին գոչումն փողոյ հրեշտակապետին: - 676. Եւ այն որ ի վերայ *վառին* նիւթեղէն զգեստէ, զի գայցէ խաչն ի վերայ լուսեղէն ամպոյ. յօդս բարձրացեալ և ցոլացեալ...: - 676

**ՎԱՍՆ +** ...ո՛չ ոք ուրաստ լինի *վասն* սոցա: - 8. Եւ այս *վասն* բազում պատճառի: - 13. Դարձեալ, թոյլ տալ և ներել չարեաց՝ *վասն* բարւոյ է: - 17. *Վասն* ճանաչման իւրոյ աստուած կազմեաց կրկին կերպիւ օրինակս...: - 24. Չորրորդ՝ առանձնակի տեսութեան՝ միայն իմացմանն՝ *վասն* առանձնակի արժանաւորութեան. որպէս մովսէսին: - 24. Ո՛չ է ըստ չարափառացն ասել ուղղակի՝ թէ նախանձու կամ *վասն* փառաց...: - 24. Եւ *վասն* առաւել բարութեանն արար ի պատկեր իւր և նման զմարդն: - 24. *Վասն* առաջնոյն ասէ, «Ո՞չ լըւայք և ո՞չ պատմեցաւ ձեզ թէ ե՛ս հաստատեցի զհիմունս երկրի»: - 25. *Վասն* երկրորդին ասէ, «Ո՞չ իմանայք և ո՞չ գիտացիք»: - 25. *Վասն* երրորդին ասէ, «Ամբարձէք ի բարձունս զաչս ձեր և տեսէք, որ տայ զիշխանս յո՛չ իշխել»: - 25. Արդ՝ առաջին ի լրոյ՝ Յիւրմէ *վասն* իւր. և յայլմէ *վասն* իւր: - 25. Յիւրմէ *վասն* իւր, ըստ որում «ես տէր աստուած առաջին և առ յապայ». և Յայլմէ վասն իւր, «ուստի հաւատալ պարտ է թէ է՛ աստուած»: - 25. *Վասն* առաջնոյն ասէ դաւիթ...: - 26. *Վասն* երկրորդին ասէ յառակսն...: - 26. *Վասն* երրորդին ասէ դաւիթ...: - 26. Եւ *վասն* չորրորդին ասէ դաւիթ...: - 26. *Վասն* առաջնոյն ասէ եսայի...: - 26. Եւ *վասն* երկրորդին ասէ ...: - 26. *Վասն* երրորդին ասէ

ժողովօղն...: - 26. *Վասն* չորրորդին ասէ դաւիթ...: - 26. Նախ՝ ի բանէն եսայեայ որ ասէ, «եղիցի յաւուրս յետինս յայտնի լեառն տեառն». խօսի *վասն* գալստեան մէսիային: - 27. Ասեմք թէ՝ զբանս զայս ասէ մարգաէն *վասն* խաղաղութեան որ եղև սակաւ մի յառաջ քան զգալուստն քրիստոսի՝ և ի բոլոր ժամանակս քրիստոսի, և յետ նորա **խ** ամ մինչև ապստամբեցին հրէայքն հռոմայեցւոց տէրութեանն: - 27. Չորրորդ առարկեն, ասէ եսայի *վասն* ժամանակի գալստեան մէսիային...: - 27. *Վասն* առաջնոյն ասէ ...: - 28. Եւ *վասն* նորա ասաց աստուած աբրահամու՝ թէ ի չորրորդ ծնունդն ազատեսցին ամենայն զաւակք քո: - 29. Այլ և զամս ծննդեանն քրիստոսի՝ և *վասն* եօթներորդացն դանիէլի՝ գտցես ի չորրորդ թագաւորութեանց վերջքն ի **Լ** համարն. զոր ընդդէմ հրէից գտցես բան: - 29. Տասներորդ՝ Թագաւորել մինչև ի ժամանակս ասեն. և *վասն* հնազանդութեանն: - 29. Քսաներորդ՝ Անգիտութիւնն որդւոյ *վասն* կատարածի ժամուն: - 29. Տասներորդ՝ Վկայութիւնք *վասն* համագոյ Երրորդութեանն տասն գլխով: - 30. Հնգետասաներորդ՝ Հարցումն երկաբնակացն առ մեզ **Ժ** թւով. և անդ *վասն* մի կամաց՝ և մի գործոց՝ և կրից: - 30. Եւ այնպիսիքն տրամաբանել ո՛չ կարեն *վասն* հոգևորին...: - 32. Եւ որպէս ասեն վարդապետք՝ քան զամենայն մեղս ծանրագոյն գոլ զպաշտօն կռոցն *վասն* երկուց: - 33. Այլ առաւել վատթար և՛ս է *վասն* վեցից: - 33. Եւ այս *վասն* բազում բաղդատութեան կոչին սոքա նեռն: - 34. Մանաւանդ թէ՝ որպէս *վասն* նեռինն յառաջագոյն պատմեցաւ եկեղեցոյ՝ զի զգուշասցին: - 35. Նոյնպէս և *վասն* սոցա յառաջագոյն ասացաւ յառաքելոց և ի վարդապետաց. զի մի՛ յանգէտս խոտորեսցին ընդ նոսա: - 35. ...ծառայի կերպիւ շրջէր *վասն* տնօրէնութեան...: - 40. Երկրորդ և ոչ *վասն* յետին յանցանացն կռապաշտութեան եպերեմք զիմաստութիւն նորա և ո՛չ ընդունիմք...: - 40. Եւ թէ գոյր երիցագոյն, լինէր պատճառն և գերագոյն քան զաստուած. իսկ ստեղծանելն երևի պատճառաւ. այսինքն *վասն* փրկութեան մարդկան: - 41. Ապա ուրեմն ծնունդն նախքան զամենայն բլուրս՝ էր ի սկզբանն ի բնութենէ հօր. իսկ ստեղծումն *վասն* մարմնալոյն. զի իւր է մարմինն: - 41. Առ որս ասեմք՝ թէ որդի ո՛չ ասի անդրանիկ *վասն* գոլոյն ի կարգէ ստեղծուածոց...: - 41. Դարձեալ անդրանիկ է ըստ շնորհաց հոգւոյն զոր ընկալաւ ո՛չ *վասն* կարօտութեան՝ զի լիապէս ունէր այլ զի գլուխ էր մեր՝ ընկալաւ՝ զի յանդամս իւր սփռեսցէ: - 41. Իսկ հնազանդիլն որդւոյ հօր, ո՛չ թէ այժմ անհնազանդ է *վասն* հակառակութեան...: - 42. Այլ որ եղև փոխանակ հնոյն նոր անդամ. և նզովք կոչեցաւ *վասն* իմ և մեղք այն որ ո՛չ արար զմեղս, և ելոյծ զանէծս և եբարձ զմեղս: - 42. Եւ այս *վասն* միութեան բնութեան և կամաց հօր և որդւոյ: - 42. Այլ զի մեք թողեալք և անտես եղեալք յաստուծոյ *վասն* յանցանացն, զդէմս մեր տպաւորէ՛ յինքեան. բնութենակից գոլով մեր և գլուխ անդամոցս: - 42. Իսկ *վասն* չարչարանաց հնազանդութեանն քրիստոսի բազում պատճառս դնէ յայսմ վայրի աստուածաբանն գրիգորիոս: - 42. Վեցերրորդ՝ զի պահանջէ՛ ի սիրողաց իւրոց միշտ զայն խորհիլ. զի որպէս ինքն *վասն* սիրոյ զանձն իւր եդ ի վերայ մեր, և մեք *վասն* սիրոյ նորա փոխարէն դիցուք ի վերայ նորա: - 43. Բայց է և այլ իմն տեսութիւն խորին և գեղեցիկ. զի նա՛ *վասն* սրբութեան չարչարեցաւ. և որ ոք ևս չարչարեսցի *վասն* սրբութեան՝ մի և նոյն է դիտաւորութիւն երկուցն...: - 43. Նախ՝ ոչ կարել *վասն* նուազութեան զօրութեան ժամանակի և դիմի. որպէս ո՛չ կարէ մանուկ կռուիլ՝ և կորիւն տեսանել: - 44. Չորրորդ՝ *վասն* ոչ ախորժողաց՝ իբր ոչ կարաց անդ նշանս առնել *վասն* անհաւատութեանց նոցա: - 44. Եւ այս ո՛չ թէ ոչ կարութիւն է նմա, այլ *վասն* առաւել կարողութեանն է: - 44. Այլ որպէս բանին սեպհական է և բնութեամբ և ո՛չ ստացմամբ, այսպէս իմացիր և մարմնոյն *վասն* անճառ միաւորութեան բանին զի իւր է մարմինն. վասն այն ոչ ինչ բանին է՝ ասի մարմնոյն: - 46. Զի նա գլուխ է մեր՝ և մեք անդամք. յորժամ տեսանէ զմեզ ի մեղս՝ հոգա՛յ և ցաւի *վասն* մեր: - 48. Իսկ զանգիտութիւնն որդւոյ *վասն* ժամուն և աւուրն թէ բերցեն ընդդէմ մեր հակառակօղքն՝ և այնպէս նուազ ասիցեն զորդի: - 48. Ութերորդ՝ ասի բան *վասն* հաստատելոյ զամենայն...: - 49. Որք և ո՛չ զգիրս գիտէին, *վասն* ճգնութեանցն աստուածունսոյցք եղեն: - 50. Իսկ այլք արարած *վասն* ո՛չ յայտնելոյ ի գիրս աստուած զհոգին: - 51. Վեցերորդ՝ որ փոխին այլք յայլոց բնութենէ *վասն* առատութեան բնութեանն. որպէս կարպասածին ճճին ունի սա ծնունդ սերմամբ իւր զնմանն. և ունի ելումն զկերպասն: - 53. *Վասն* հոգւոյն են ի գիրս սուրբս՝ զի ո՛չ են և ասին ի յէքս. որպէս եղջերուաքաղն, յարալէզն, յուշկապարիկն: - 55. Եւ *վասն* հոգւոյն ասացեալ է՝ «հոգի տեառն ելից զտիեզերս»: - 56. Նախ՝ ասէ մակեդոն եթէ աղօթել և բարեխօսել ո՛չ յարմարի աստուծոյ. զի եթէ զքրիստոսէ՛ ասի՝ *վասն* մարդկութեանն է: - 59. Զոր և այժմ օրինա՛կ է առ մեզ սարկաւագն. զոր հոգի կոչէին *վասն* հոգևորապէս խօսելոյն: - 59. ...այս ո՛չ *վասն* փոքրկութեան, այլ *վասն* միութեան կամացն: - 60. Այս ո՛չ թէ ունիլ զկիրս նշանակէ յաստուած, այլ զպատիժ *վասն* գործոյ յանցաւորացն: - 60. Եւ դարձեալ, զի ամենայն ինչ որ հօր է՝ այն որդւոյ է որպէս ասէ տէր. ապա ուրեմն հոգի հօր՝ հոգի

է որդւոյ *վասն* միոյ էութեանն: - 61. Երրորդ վկայ մարգարէքն. որպէս ասէ դաւիթ *վասն* հոգւոյն՝ «ի քէն է տէր աղբիւր կենդանութեան». և ո՛չ թէ ի ձէնջ: - 64. Զի որպէս այժմ կարեմք ասել ճշմարտապէս թէ հոգին սուրբ ելանէ ի հօրէ. և *վասն* ապառնւոյն կարեմք ասել թէ հոգին սուրբ ո՛չ ելանէ յորդւոյ...: - 65. Եւ *վասն* հոգւոյն սրբոյ այսքան: - 66 Ա՛րդ եթէ երկրպագելի և աստուած՝ և այս *վասն* բնակութեան աստուծոյ, ապա ուրեմն եղեալ առ ժամայն աստուած և օտար ըստ բնութեան: - 67. Տասներորդ՝ զի թէ նա *վասն* բնակութեանն երկրպագելի է և աստուած, ո՛չ միայն եղիցի նա՛ աստուած, այլև ամենայն երկնաւորք և երկրաւորքս. որք բնակեալ ունին զաստուած և կոչին անւամբ աստուածք: - 67. Երկոտասաներորդ՝ զի թէ *վասն* բնակութեան նորա՝ է մարմին նորա ուտելի որպէս ինքն ասաց՝ «մարմին իմ ճշմարիտ կերակուր է». կերօղքն եղիցին գազանք մարդակերք. և ո՛չ մարմնոյ և արեան որդւոյն աստուծոյ: - 67. Երեքտասաներորդ՝ զի թէ *վասն* բնակարան գոլոյ՝ մարմին նորա է կենդանարար: - 67. Իսկ թէ առանձնապէս զմարդոյն, զիա՞րդ իցէ կենդանարար մարմինն մարդոյ. կամ ո՞րպէս առաքեցաւ նա ի հօրէ. զիա՞րդ իցէ և կենդանի *վասն* հօր: - 69. Եւ առաքեալն ասէ *վասն* քրիստոսի, «փոխակերպիմք ի նոյն նորոգութիւն, յորժամ նորոգեսցէ զմարմին խոնարհութեան մերոյ ըստ նմանութեան մարմնոյ փառաց իւրոց»: - 71. Եւ պօղոս *վասն* որդւոյ ասէ, «որ կրէ զամենայն բանիւ զօրութեան իւրոյ»: - 71. Այլ թերևս ասիցէ ոք եթէ՝ վերոյ ասացեալ գործառնութիւնքս պատշաճին քրիստոսի *վասն* բնութեան բանին, և ո՛չ *վասն* մարմնոյն: - 72. Այլ *վասն* մարմնոյն ասէ յօհաննէս՝ «ես եմ հացն կենաց որ յերկնից իջի»: - 73. Այլ մարմին և հոգին քրիստոսի զսկիզբն յաշխարհի ունին. այլ *վասն* միաւորեալ մարմնոյն ասէ բանն աստուած...: - 73. Իննևտասներորդ՝ թէպէտ մարդիկ ոմանք կոչին տէր *վասն* ունելոյ իշխանութիւն ինչ...: - 74. Քսաներորդ՝ որպէս բարձրագոյնքն կարեն ասիլ մարմնոյն *վասն* միութեանն՝ որպէս աստուած, յարութիւն, և կեանք յաւիտենական: - 74. Այսպէս և խոնարհագոյնքն են աստուծոյ բանին *վասն* միաւորութեանն. որպէս մարդ ծնանիլ ի կուսէ՛ ժամանակեայ. խաչիլ և մեռանիլ...: - 74. Այս *վասն* հասարակ բնութեանն: - 74. Իսկ *վասն* անբաժան էութեանն ծանի՛ր և զայդ օրինակաւ: - 74. ...այսպէս նոյն բանն ունի զբնութիւն աստուծոյ ի հօրէ. ունի և զբնութիւն մարդոյ ի մօրէ՛. և ո՛չ ասի **բ** բնութիւն. այլ մի բնութիւն *վասն* միաւորութեանն: - 77. Այլ և ոչ ասի անկատար և փոքր *վասն* աճման հասակին: - 78. Եւ ո՛չ ասի ժամանակեայ *վասն* մարմնոյն. այլ մշտնջենաւոր և յաւիտենական մարմնով: - 78. Ո՛չ ասի հողեղէն և երկրեղէն *վասն* հողեղէն մարմնոյն. այլ միշտ յերկնից մարմնով իւրով. և ստեղծիչ հողեղինաց և երկրաւորաց: - 78. Եւ ո՛չ ասի շնչաւոր *վասն* շնչաւոր մարմնոյն. այլ ամենևին հոգևոր: - 78. Եւ ո՛չ ասի ծառայ *վասն* ծառայական մարմնոյն. այլ միշտ տէր և ազատ: - 78. Եւ ո՛չ ասի անիծեալ *վասն* անիծից մարմնոյն. այլ ամենևին օրհնութիւն մարմնովն: - 78. Եւ ո՛չ ասի մեղաւոր *վասն* առնլոյ զմեղաւոր մարմինս. այլ միշտ անմեղ մարմնով իւրով: - 78. Եւ ո՛չ ասի տգէտ և տկար *վասն* մարմնոյն. այլ ամենագէտ և ամենազոր մարմնովն: - 78. Եւ ո՛չ ասի ապականացու *վասն* առնլոյ յապականացւացս մարմին. այլ միշտ անապական մարմնովն: - 78. Եւ ո՛չ ասի մահկանացու *վասն* մարմնոյն. այլ միշտ անմահ և կենդանարար մարմնովն: - 78. Եւ ո՛չ ասի պարագրելի *վասն* մարմնոյն. այլ անպարագրելի մարմնովն: - 78. Ո՛չ ասի պարզ_և սոսկ մարդ. *վասն* մարդկային կերպին: - 79. Եւ հաստատեալ այսու եթէ՝ հոգին և մարմինն է միաւորեալ ընդ բանին աստուծոյ, կարգէ՛ և զայն. բայց որդիք ասէ ո՛չ **բ**. և ո՛չ աստուածք. զայս *վասն* դիմաց միաւորութեանն ասէ: - 80. Զի սա ընդ դէմ *վասն* մի բնութեանն ասէ որ յերրորդութիւնն է և ի անօրէնութիւնն բանին. սոքա զընդդէմն *վասն* բաժանմանն իմանան: - 80. Այլ մի ասեմք զներգործութիւնսն *վասն* մի միութենէն ներգործելոյ. որպէս մի ձեռն կտրէ՛ և կարէ՛. գրէ՛ և ջնջէ՛: - 85. Ծանիր և զայս. զի՝ մի բնութիւն ասեմք քրիստոսի՝ *վասն* կատարմանն և ո՛չ սկզբանն. և մի գործ ասեմք *վասն* սկզբանն և ո՛չ *վասն* կատարման գործոյն: - 85. Իսկ զկամքն իմասցիս մի՝ *վասն* կամելոյն և *վասն* միաւորելոյն որ է սկիզբն և կատարումն: - 85. Իսկ սուրբն կիւրեղ մի ասէ *վասն* անձինն, և նոյն ասէ *վասն* բութեանն: - 91. Զի ասեմք զմարմինն քրիստոսի *վասն* միաւորութեանն աստուած՝ և աստուծոյ մարմին: - 92. Եւ ասես՝ *վասն* չարչարանացն խոնարհութեան՝ առաւել զնա բարձրացոյց աստուած: - 94. Իսկ թէ ասի ուրեք՝ ի հոգւոյն և ի հօրէ օծանիլ նմա, *վասն* տնօրէնութեանն խորհրդոյ ասին: - 95. Եւ այսպէս բազում է ի գիրս հարցմանցս *վասն* միաւորութեան բանին և մարմնոյն ընդ դէմ նեստորի և երկաբնականց. որ բաւական լուծումն է բանիս: - 95. Քսաներորդ երրորդ՝ ասաց տէրն *վասն* հոգւոյն սրբոյ, «աշխարհս ո՛չ տեսանէ զնա, և ո՛չ ճանաչէ. բայց դուք ճանաչէք. զի առ ձեզ բնակեսցի»: - 99. ...ասեն վարդապետք *վասն* հրեշտակաց թէ ունին առաւօտեան և երեկոյին ճանաչումն: - 99. *Վասն* սէ՞ր կոչեմք Երրորդութիւն. և Հայր. և Որդի. և Հոգի սուրբ: - 101. *Վասն* էի. և ոչ էի. և նախագոյի. և էր. և է. և եղիցի: - 101. *Վասն*

յարացուցի. մի է. և բազում: - 101. *Վասն* անեղութեան. և եղելութեան: - 101. *Վասն* յաւիտենից: - 101. *Վասն* կենաց. և զանազանութեան աստուծոյ. և հրեշտակաց և մարդկան. և կենդանեաց: - 101. *Վասն* տեսութեան աստուծոյ. և հրեշտակաց. և մարդկան: - 101. *Վասն* թէ բան ունի աստուած: - 101. Եւ *վասն* ճշմարտութեան. և հաւատոյ: - 101. *Վասն* զարմացմանն աստուծոյ. և նախանձուն: - 102. *Վասն* չորեքկերպեան կենդանեացն: - 102. *Վասն* խօսից հրեշտակաց: - 102. Այսինքն *վասն* հրեշտակաց: - 102. *Վասն* անկման դիւացն. և հակառակութեան նոցա. և լոյս կերպարանին: - 102. *Վասն* կրկին պատճառի: - 103. Նախ՝ զի մի՛ կարծեսցի հայր տկար *վասն* ծերութեան: - 105. Եւ որդի տգէտ *վասն* մանկութեան: - 105. Եւ հոգին զայրացօղ *վասն* հնչման: - 105. Այսքան *վասն* որոշման յատկութեանց: - 105. Այսքան յընդհանուր վարդապետաց *վասն* միութեան և որոշման սրբաբանեալ: - 105. Զի՞նչ է որ ասեն *վասն* աստուծոյ թէ՝ է՛ սկիզբն և պատճառ: - 110. *Վասն* երից: - 111. *Վասն* երից: - 111. Եւ այս *վասն* երեք պատճառի: - 115. Եւ *վասն* օրինացն մովսէսի ասէ օրէնքն, «յաւիտենական լիցի». որ նշանակէ զբազում ժամանակս: - 115-116. Եւ *վասն* գերագոյն զգայութեան պատմէ՛ դաւիթ...: - 18. Եւ այս *վասն* երեք պատճառի: - 120. *Վասն* բազում պատճառի: - 121. Առաջինն որ է տպաւորական աստուածաբանութիւն՝ է՛ ի դէմս սուրբ Երրորդութեանն և մի աստուածութեանն. թէ ո՞րպէս է մի. ո՞րպէս երրեակ. և ծնօղ. և ծնունդ. և բղխումն. և *վասն* մարդեղութեանն քրիստոսի: - 122. Ապա ուրեմն մի և նոյն է *վասն* **բ** պատճառի: - 124. Եւ այս *վասն* բազում յատկութեան: - 125. Այսպէս *վասն* գերազանց սիրոյն զոր ունի աստուած առ էսս՝ զարմանալ ասի. այսինքն արտաքս ելանել՝ թափիլ և հեղուլ ի յէսս. և միաւորիլ անփոխաբուն բնութեամբ: - 127. Այլք ասեն թէ՝ է՛ ի յաստուած լայնութիւն սիրոյ, որով յետս դարձուցանէ զմեզ ի մոլորութեանց *վասն* առաւել սիրոյն: - 129. Երկայնութիւն է համբերութիւնն. որով տանի զչարսն. և *վասն* ապաշխարութեան անտես առնէ զմեղս: - 129. Այլ *վասն* բազում պատճառի աննման նմանութեամբ գրեցին: - 131. Իսկ հրեշտակք փոխեն զսոսա և զիմացականն *վասն* բարւոյ. զոր դևք ո՛չ կարեն փոխել: - 133. Այլ *վասն* առանձնութեան դասուցն՝ է՛ կարգ ի նոսա, որպէս դիոնէսիոս կարգէ՛: - 135. Նախ՝ զաթոռքն. և զհետ զքերօբէքն. և զհետ զսերօբէքն. և այս *վասն* **գ** պատճառի: - 135. Ասեմք թէ *վասն* **գ** պատճառի: - 136. Ասեմք թէ *վասն* երեք պատճառի: - 137. *Վասն* տասն պատճառի: - 139. *Վասն* առաջնոյն գիտելի՛ է, զի ամենայն շնորհ բղխո՛ւմն է և ճառագայթ, յանեղական լուսոյն իջեալ առ էակս ամենայն իմանալի և զգալի. և զարդարէ՛ զսոսա ըստ նմանութեան այնմ պարգևեալ շնորհի. եթէ ըստ բնութեան՝ և եթէ անձնական. ի հրեշտակս և ի մարդիկս: - 140. *Վասն* երկրորդ մի՞ է թէ բազում, ասեմք եթէ՝ ի սկիզբն մի է ըստ էութեան ի միոյ պատճառէ՛ յառաջ եկեալ. և ի բազումս բազմացեալ ըստ որակութեան. որպէս է արփեան և ըստ աստիճանաց: - 140. *Վասն* երրորդին անչա՞փ է թէ չափաւոր՝ գիտելի՛ է, զի անչա՛փ է շնորհն ըստ իւրում ինքնութեան. այլ չափաւորի՛ ըստ տւողին կամաց և ըստ ընդունողին կարեաց. որպէս բան մարդոյ ի լսելիս: - 140. Այսքան *վասն* սրբոց հրեշտակաց: - 145. *Վասն* **դ** պատճառի այնպէս որսայ և խաբէ զմարդիկ: - 146. *Վասն* արդարութեան. զի արդարապէս վարձս ընդունիցին: - 149. *Վասն* զարդու գործոց իւրոց. որպէս նըկարիչ զթուխ գոյնն ի ներքոյ դնէ՝ զի սպիտակն և այլ պատուականքն երևեսցին: - 149. Երրորդ՝ *վասն* գոյացութեան իւրոյ որ անկաւ ի հրեղէն դասուցն: - 151. «Աստեղս» զհրեշտակս կոչէ *վասն* բարձրութեան և պայծառ լուսոյն որպէս հրեշտակք ի յերկինս: - 152. Տեղական անկումն եղև դիւաց ի սկիզբն ստեղծման իւրեանց *վասն* ամբարտաւանութեան և մախանաց ընդդէմ արարչին փառաց...: - 153. Զոր ի տեսիլն անտօնի խոստովանէին զբանս զայս մեկնելով ի վերայ ինքեանց. այս *վասն* առաջնոյն: - 153. Եւ *վասն* երկրորդին ինքն տէրն ասէ՝ կապեալ զհզօրն և զտուն նորա աւար հարեալ որ է՛ դժոխքն...: - 153. Այսքան *վասն* դիւաց: - 153. Արարչութիւն և նախախնամութիւն. յորում և *վասն* փործութեանց զանազան: - 154. Աշխարհ ո՛չ լինի ոչէ. և ո՛չ ապականեալն կոյս. և *վասն* թողութեան. յորս նախագաղափար տեսութիւնն աստուծոյ: - 154. *Վասն* գրոյ և իմաստից. և մեկնութիւն այբին: - 154. *Վասն* յատկութեան երկնից. և զի հոմանուն է արփին՝ և եթերն՝ և այլն: - 154. *Վասն* լուսոյ և բարութեան նորին: - 154. *Վասն* լուսնի՝ և յատկութեան նորին: - 154. Յերկինս են լուսաւորքն. և *վասն* գոյութեանց նոցա. և գնան հրեղէնք ընդ ջուրս: - 154. *Վասն* սերմանց որ ի չորս եղանակս: - 154. *Վասն* ժամանակի. և թէ ո՞ր մասն է առաջին: - 154. *Վասն* ջերմ ջուրց. և աղբերաց ի ձմերայնի. և զի ի լերինս բղխեն: - 155. *Վասն* նշանակութեան ջուրց **ժբ** թուով: - 155. *Վասն* երկրի՝ և նշանակութեան նորին: - 155. Յատկութիւնք երկրի. և *վասն* լերանց. և ի ստորոտս լերին շո՛ղ լինի: - 155. *Վասն* բուսուց և տնկոց՝ և կանաչութեան նոցա. և ծաղկի, և պտղոյ, և համոյ, և հոտոյ նոցա: - 155. *Վասն* ծառոյ՝ և ձևոյ և անուան նոցին. և զի բոյսք փութով աճեն քան զծառս: - 155. *Վասն* ջրայնոց և թռչնոց և սողնոց. և թէ քանի՞

ազգեն կենդանեաց: - 155. *Վասն* իշխանութեանն ադամայ. և այժմ ապստամբ են: - 155. *Վասն* դրախտին զի երկին կոչի և իմանալի տունկ: - 155. *Վասն* լուսոյ դրախտին. և զի անպական է դրախտն և պտուղ նորին: - 155. Իսկ ի նոյն ինքն՝ առաջին է նախախնամութիւնն առ աստուած, և ապա՛ ստեղծումն. զի *վասն* նախախնամական բարութեանն կամեցաւ ստեղծանել զեղեալքս. որպէս ասէ սուրբն դիոնէսիոս ի **դ** գլուխն որ յաղագս երկնայնոցն քահանայապետութեանց: - 157-158. Որպէս արդարոց անկանիլ ի փորձութիւնս և զանազան վնասս *վասն* օգտութեան իւր՝ և կամ այլոց: - 158. *Վասն* բազում պատճառի: - 158. Չորրորդ՝ թոյլ տայ փորձութեան արդարոց ի յուղղութիւն այլոց. որպէս ղազարոյն և մեծատանն. զի տեսանելով զղազարոս՝ և լսելով *վասն* մեծատանն՝ զարհուրիմք և գամք յուղղութիւն: - 158. Վեցերորդ՝ թողեալ լինին ոմանք չարչարեալ առ ի նախանձ այլոց. զի պատիւ չարչարելոցն յայտնի լիցի *վասն* հանդերձեալ յուսոյն...: - 158. Եօթներորդ՝ թոյլ տուեալ լինի և ոմանց անկանիլ ի մեղս ինչ. զի ի հպարտութենէն զոր ունէր *վասն* առաքինութեան՝ խոնարհեսցի և անկցի առաջի տեառն խոստովանութեամբ. և ընկալցի զթողութիւն. որ նախ համասե՛ռ էր սատանայի: - 159. Ութերորդ՝ թոյլ տալով սրբոց չարչարիլ՝ *վասն* պսակացն առաւելութեան է ...: - 159. Որպէս եղև առ մարիամ բորոտութիւն *վասն* բանբասելոյն զմովսէս. որ աստ սակաւ ինչ տանջեցաւ, զի մի՛ ելցէ յերկնից ժառանգութենէն: - 159. Իսկ առաքեալն *վասն* արտաքին փորձութեանցն ասէ..: - 160. Նախ է՛ բարի՝ որ ինքն *վասն* իւր խնդրի. որպէս առողջութիւն: - 160. Ասեմք թէ *վասն* **բ** պատճառի: - 161. Եւ նախ *վասն* առաջնոյն ցուցցուք բնականապէս և բարոյականապէս: - 162. Նոյնպէս *վասն* առաւել բարի կամացն ո՛չ կամի և ո՛չ կարէ առնել զաշխարհս ո՛չ է: - 163. Իսկ *վասն* երկրորդ հարցմանն թէ՝ անկա՛ր է կուսի ապականելոյ լինի կոյս: - 165. Յաղագս այսորիկ կանոնեցին սուրբ հարքն *վասն* այնպիսեացն ո՛չ կատարել դարձեալ զկարգ քահանայութեան: - 165. Ասեմք առ այս եթէ՝ ո՛չ *վասն* ասացեալ պատճառիցդ արգելի քահանայն ի գործոյն: - 167. Եւ ունեալք զայս, ընկա՛լ և այժմ զլուծումն խնդրոյն. եթէ լինելութիւն աշխարհի ի նախագաղափար տեսութիւնն աստուծոյ ո՛չ է զօրութեամբ՝ այլ ներգործութեամբ *վասն* բազում պատճառի: - 168. Վասն որոյ խոստովանիմք ընդ սրբոց հարցն *վասն* միաւորութեանն մի բնութիւն աստուծոյ բանին մարդացելոյ: - 176. Եւ այս *վասն* բազում պատճառի: - 177. Նախ *վասն* հեռաւորութեանն որ մեզօք հեռացաք յաստուծոյ: - 177. Երկրորդ՝ *վասն* ատելութեան. զի բարձաք զսէրն: - 177. Երրորդ՝ *վասն* տկարութեան և մոռացութեան մերոյ: - 177. Եւ զայլ յերկար քննութիւն տարերաց՝ գտցես ի գիրս նիւսացւոյն որ *վասն* բնութեան մարդոյ: - 181. *Վասն* **ե** պատճառի: - 181. Հինգերորդ՝ երկին կոչի ամենասուրբ Երրորդութիւնն *վասն* լուսաւորութեան և անհաս բարձրութեանն յամենայն եղելոց որպէս ասացաւ: - 184. Այլ *վասն* հրեղէն երկնիցն ասէր ելանել և հաւասարիլ նմա: - 184. Զի՞նչ է որ ասէ մեծն իգնատիոս *վասն* արեգական՝ թէ յամենայն օր ի բաց դնէ զլոյսն և զջերմութիւն, և միւս անգամ յարփոյն առնու: - 186. Եւ այս *վասն* **բ** պատճառի: - 187. Եւ այս հաւանելի՛ երևի *վասն* կրկին պատճառի: - 188. Յարեգական օրն կոչեցին կիրակէ. որ է՛ տէրունական *վասն* յարութեան տեառն: - 190. Վարդապետք ասեն թէ *վասն* բազում պատճառի: - 192. Ութերորդ՝ փրկչին մերոյ և աստուծոյ աւետեաց. որ ծնաւ մարմնով *վասն* մեր: - 196. Ասի և բօթ. այսինքն սուգ և տրտմութիւն *վասն* ելիցն ի դրախտէն...: - 200. Եւ *վասն* առաւել և նըւազ ջերմութեանն, է՛ որ ի դուրս պատառիլն շիջանի: - 204. Եւ *վասն* առաւել և ազդու զօրութեան և ջերմութեան՝ զգոյացութիւն կենդանեաց և մարդկան առ որս դիպի ապականէ՛. և պատահմունքն քանակ և որակ մնան: - 204. Այսպէս յեգիպտոս հուրն որ ընդ կարկտին իջանէր, *վասն* ազդու զօրութեանն՝ զկենդանիսն սպանանէր, և մարմինքն ամբո՛ղջ մնային: - 204. Եւ *վասն* բարձր գիճութեանն՝ ի տե՛ս գայ. և սեղմացեալ ի վերայ միմեանց լինի ամպ: - 204. Եւ կամ հո՛ղմ է արտաքս թիւրեալ ի ճանապարհէ՛ իւրմէ. և ի խոռոչս երկրի մտեալ. և *վասն* թանձրութեան երկրին շարժէ զնա մինչև գտանէ ելս և ապա՛ դադարի: - 206. Եօթներորդ՝ զի լինի ամպ որ ո՛չ որոտայ և ո՛չ կայծ է *վասն* սաստիկ խստութեանն: - 206. Այսքան *վասն* օդոյ և հրոյ տարերց: - 207. Նախ՝ *վասն* զի մի՛ ջերմութիւն լուսաւորացդ կիզցէ զերկիր և վնասեսցէ: - 207. *Վասն* **դ** պատճառի: - 209. *Վասն* **գ** պատճառի: - 211. Նախ՝ զի ծառայք են միշտ *վասն* այլոց. որպէս մարդս միշտ տէր է. և անասունքն տէր և ծառայք...: - 214. Իններորդ՝ նոյն ինքն մարմին կենդանւոյն է՛ շօշափելի և է՛ կալեալ և մածեալ. և շարժի և երևի. որպէս ասացաք *վասն* հողոյն: - 215. *Վասն* երեք պատճառի: - 217. **Այլ այժմ *վասն* զգեստուց պահեմք զոչխարս. և *վասն* կերակրոյ զեզինս. և *վասն* բեռին զէշս. և *վասն* բառնալոյ զմեզ զձիս. և *վասն* զքշնամիս հալածելոյ զշունս. և *վասն* զթռչունս ըմբռնելոյ զբազէս. և զայլսն նմանապէս:** - 217. Երկրորդ՝ *վասն* հպարտութեան մարդոյն. զի յորժամ խայթեսցեն զնա՝ ծանիցէ զտկարութիւն իւր...: - 217. *Վասն*

բազում պիտոյից որ գոյ ի նոսա: - 217. Կրկին են *վասն* այսմ կարծիք: - 218. Այլ և գիտելի է, զի ամենայն կենդանեաց բնականապէս հնարք ետ աստուած *վասն* օգտի նոցա և փրկութեան: - 218. Այսքան *վասն* օծին: - 219. Իսկ որք այժմ ապստամբք եղեն՝ *վասն* **բ** պատճառի: - 220. Այսքան *վասն* կենդանեաց: - 220. Նա՛խ՝ պարտ է գիտել թէ *վասն* դրախտին **գ** է կարծիք վարդապետաց: - 221. Իսկ այլք ասեն թէ՝ *վասն* առաւել բարձրութեանն՝ լոյս արեգականն ո՛չ երբէք հեռանայ ի նմանէ ...: - 222. Ա՛րդ՝ զի՞նչ ասես *վասն* կենաց պտղոյն. եթէ կերակրելի է և հատանելի, ո՞րպէս է կենաց պտուղ: - 223. Ութերորդ՝ *Վասն* գլխոյն և մազին: - 227. Մետասաներորդ՝ *Վասն* ստամոքսին. բերանն դառն և աղի՛ փոխի. և աջ կողմն ուժո՛վ է: - 227. Հնգետասաներորդ՝ *Վասն* զօրութեան հոգւոյն **ժթ** թուով: - 227. Քսաներորդ՝ *Վասն* էութեան հոգոյն լուծումն հակառակ բանից. և ճշմարտութեանն հաստատութիւն զանազան հարցմամբ: - 228. Քսանև**զ**՝ *Վասն* երազոց: - 228. Քսանև**ը**՝ *Վասն* բոլոր մարդոյն: - 228. Եւ *վասն* թշնամութեան: - 228. Եւ *վասն* զգեստուց մարդկան: - 228. Այսքան *վասն* մարդոյս կազմութեան: - 228. Ասեմք *վասն* բազում պատճառի: - 229. Վեցերորդ՝ զի տեսցէ ադամ թէ յապականացու հողոյս անապական մարմին կազմեցաւ *վասն* փառաց. և յորժամ կորոյս մեղօքն եղև ապականացու, ինքն իցէ պատճառ ապականութեան իւրոյ: - 229. Եւ *վասն* բազում պատճառի յետոյ ստեղծաւ մարդս: - 230. Վեցերորդ՝ որք վասն որոց եղեն. զի ի գոյիցն ոմանք են *վասն* ինքեանց. իսկ այլ *վասն* այլոց և ոմանք ինքեանց և այլոց: - 230. Որպէս բոյսք *վասն* անասնոց. այսինքն է՛ այլոցն. ուստի անասունք կերակրիլով ծառայեն մարդոյն: - 230. Յաղագս որոյ նախ եղեալքն՝ են *վասն* վերջնոցն. որպէս բոյսք անասնոց, և անասունք *վասն* մարդոյն: - 230. Ա՛րդ՝ *վասն* այսր և այլ ևս քան զայս պատճառաց ի վերջո՛յ արարաւ մարդն ամենայն գոյից: - 231. *Վասն* բազում պատճառի: - 232. Եօթներորդ՝ *վասն* զգայութեանցն, որ ամենեքին յառաջ հեղուն յուղեղէն, և ազատապէս տեսանեն և իմանան...: - 233. Ութերորդ՝ *վասն* արտաքին զգայութեանցն որ են ի գլուխն. զի այլ կենդանիք միայն հեշտանան կերակրով և ցանկութեամբ. իսկ մարդն հեշտանայ առաւել գեղեցկութեամբ զգալեացս...: - 233. Երրորդ՝ զի փափուկ ջիլք և նեարք՝ յերեսացն գան և առնեն զգայարանս. և հաստն ի թիկունքն սփռի *վասն* ուժոյ և պնդութեան և շարժութեան: - 234. Նա՛խ՝ *վասն* առաջին փչմանն յերեսս մարդոյն: - 234. Եւ ապա *զվասն* էրն խնդրել: - 235. *Վասն* առաջնոյն պա՛րտ է գիտել, զի առաւել հասարակն հեռի՛ է և մեծագոյն. և առաւել յատուկն մերձ է մեզ և նւազագոյն: - 235. Ասեմք թէ՝ սոքա ի մասնաւոր հոգւոյն բարի են բնաւորեալ նախանձ ցանկութիւն և այլն. և *վասն* բարւո՛յ են եղեալ. այլ մարդն կամօք իւրովք փոխէ՛ զբնական բարին ի չարն: - 237. Զոր այսպէս ասելոց եմք յառաջիկայդ *վասն* չորից եղանակաց տարւոյն և աւուրն բնութեան: - 240. Եւ քաղցր ջուրն է ի բերանն *վասն* առնելոյ զճաշակ համոցն: - 240. Եւ հոտած ջուրն ի մէջքն է *վասն* գոյութեան ծննդեանն: - 240. Հալողականն է՝ յորժամ ի ջերմութենէն եփի կերակուրն և հալի որպէս ապուր ի պտկի. և հալի ամենայն կերակուրն մինչև ի **զ** ժամն. և է՛ որ պակաս և աւելի. *վասն* առողջ և տկար մարմնոյն: - 242. Հնդկացւոցն մորթս ո՛չ բուսանի *վասն* սաստիկ ջերմոյն: - 245. Եւ հիւսիսայնոցն ո՛չ բուսանի *վասն* խիստ ցրտոյն. և միջերկրայքս *վասն* բարեխառնութեանն մորթս ունին: - 245. Նոյնպէս յորժամ ամաչէ՝ զարիւնն սփռէ ի մարմինն, և քօղ արկանէ *վասն* ամօթոյն. յայնժամ յարենէն շառագունի մորթ երեսացն: - 245. Նոյնպէս և ի տրտմիլն սևանայ *վասն* սեաւ մաղձոյն որ տայ ի յերեսն: - 245. Ասեմք թէ ո՛չ են ճշմարիտ *վասն* **ե** պատճառի: - 246. Այսքան *վասն* մարմնոյն: - 248. *Վասն* չորից: - 251. Խնդրեմ ուսանիլ *վասն* բոլոր էութեան հոգւոյն թէ ո՞րպէս կամ զի՞նչ եղանակաւ գոյանայ: - 252. *Վասն* ոգւոյն մարդոյ զանազա՛ն են կարծիք արտաքին իմաստնոց և վարդապետաց եկեղեցւոյ: - 252. Զոր ընդ դերևս հանէ սուրբն գրիգոր նիւսացին ի գիրս կազմութեան այսպէս եթէ, որք զհոգին յառաջ ասեն գոյանալ քան զմարմին. և *վասն* մեղաց եդեալ ի մարմին մարդոյ. որ է՛ համանման բանականութեամբ. և է՛ իներքոյ երկնային կենաց՝ զի մարմնաւո՛ր է: - 252. Ասեմք առ այս եթէ որպէս դու օրէնս եդեր փոխանցիլ ի բարձրագունէն ի նւաստագոյն կեանս *վասն* մեղաց: - 252-253. Նախ եթէ *վասն* մարմնո՛յն եղև հոգի զի շարժեսցէ զնա. ապա անա՛րգ է հոգին քան զմարմին որ *վասն* նորա եղեալն է. և մեծ և պատուական է մարմին քան զհոգի: - 253. Եւ ասի զմարդոյն թէ *վասն* նորա է ամենայն. այսինքն անասունք և բոյսք. և անա՛րգ է բոյս քան զանասուն. և անասուն քան զմարդ: - 253. Այսպէս եթէ հոգի յետո՛յ ստեղծաւ *վասն* մարմնոյն, անա՛րգ է քան զմարմին: - 253. Եւ այս *վասն* երեք պատճառի: - 256. Նախ *վասն* ի մէջն գոլով հաւասարապէս հուպ յամենայն մասանցն զօրութիւն առնլոյ: - 256. Այլ հատումն նիւթո՛յն է և ո՛չ հոգւոյն *վասն* **գ** պատճառաց: - 257. Եւ այս *վասն* **բ** պատճառի: - 259. Այլ հակադարձեալ սոքա ըստ կարգի և ըստ դասու՝ յառա՛ջ է տնկականն քան զզգայականն, և նա՛ քան զբանականն ի յերևումն. այլ

էութեամբ համանգամայն են. որպէս անդ ուրեմն ասացաք *վասն* հոգւոյ և մարմնոյ: - 260. Այսպէս իմա՛ և աստ *վասն* հոգւոյ և զօրութեանց նորա: - 260. Եւ որպէս սիրտն նա՛խ գոյանայ, նոյնպէս և յետո՛յ մեռանի *վասն* ջերմութեան նորին: - 261. Եւ էգն հոգևորի յետ **ծ** աւուրն՝ որպէս ասացաք զպատճառն *վասն* տեղւոյն ցրտութեան որ է՛ ձախ կողմն արգանդին. որ ցուրտ գոլով *վասն* փայծաղանն՝ յապաղէ՛ զկազմուած նիւթոյն ի կրկնապատիկ ժամանակս **ծ** աւուրց: - 261. Այսպէս և արու մանկանն յաջ կողմն բեղմնաւորեալ՝ *վասն* ջերմութեան լերդին և լեղւոյն՝ փութով կատարի անդամօք: - 261. Տնկական. զգայական. և բանական. վասն որոյ **է** ամսեայ ծնեալն ապրի և շնորհալի լինի *վասն* շնորհալի թուոյ եօթներորդին: - 263. Եւ *վասն* տնկական և զգայական մասին՝ կազմողական զօրութիւնն այլ ևս աճեցուցեալ զմարմինն **բ** ամ և դադարեալ յերեսներորդին, լինի ժամանեալ ի չափ հասակի կատարմանն քրիստոսի, յորում մկրտեցաւ տէրն մեր: - 265. Իսկ մարդոյն ուղեղն գէճ է և հով. զի նկարեսցէ յինքն զիմացումն մտացն. և ջիլքն յառաջեալ ի նման *վասն* գիճութեան ո՛չ կարէ պնդել զանդամսն. վասն որոյ ո՛չ կանգնի և ոչ գնայ: - 266. Ասեմք թէ ո՛չ լինի *վասն* **բ** պատճառի: - 267. Երկրորդ՝ *վասն* ժամանակին. զի մարդն յինն ամիսն կատարէ զանդամս, և արջն երեք: - 267. Որ ի խորհրդական միտսն *վասն* օգտի զլինելոցն ցուցանէր: - 268. Իսկ դիւականն ընդդէմ այսմ՝ *վասն* մոլորութեան զանազան երևմունս ցուցանէ աղտեղութեան. և կամ զբարին խափանել ջանայ. որպէս ի չարչարանս տեառն *վասն* կնոջն պիղատոսի ընթերցեալ լինի. և որպէս գրէ սուրբն Նազիոս: - 268. Նա՛խ՝ զի մնացորդք գործոց և խորհրդոց կերպարանին ի յիշատակարանս հոգոյն զոր ինչ գործեաց ի անցելումն, կամ խորհեցաւ *վասն* հանդերձելոյն: - 268. Այս քան *վասն* երազոյ: - 268. Քսանևը, վասն որոյ ամենայն. այսինքն յաստուծոյ. և *վասն* մարդոյն է ամենայն աշխարհ եղեալ: - 272. Բայց *վասն* կամացն աստուծոյ մշտնջենաւոր մնան հրեշտակք և հոգիք մարդկան: - 274. Դարձեալ՝ մարդո՛յն է ամաչել *վասն* անարժան գործոյ: - 274. Դարձեալ՝ մարդն միա՛յն է ծիծաղական. և փառաւորիլ *վասն* ուրախութեան սրտին: - 275. Դարձեալ՝ մարդո՛յն է թողութիւն մեղաց *վասն* մարմնոյն՝ զոր ոչ ունին հրեշտակք: - 275. Դարձեալ՝ մարդո՛յն է յարութիւն կենաց. և դատաստանի *վասն* հոգւոյն՝ զոր ո՛չ ունին այլ կենդանիք: - 275. *Վասն* բազում պատճառի: - 276. Եւ *վասն* կրկին պատճառի է տկար: - 276. *Վասն* այսր պատճառի կոչեաց զանուն կնոջ իւրոյ կեանս. զի աճումն է և ծնունդն և մայր ամենայն կենդանեաց: - 276. Նախ՝ *վասն* պարզամտութեանն. զի որպէս տղայք ո՛չ ամաչեն անծածուկ ունելով զմասունս. նոյնպէս և նոքա: - 278. Երկրորդ՝ *վասն* անմեղութեանն. զի ամօթն յետ մեղա՛ցն է: - 278. Որով և որդիքս *վասն* պարտուց հօր՝ արտաքոյ մնացաք: - 280. Երկրորդ՝ հեշտութիւն խօսակցիլ ընդ օձին. և վասն այն կամեցաւ լսել, զի հեշտացաւ *վասն* փառաց աստուածանալոյն: - 280. Եւ զգեստ լինի *վասն* **ժ** պատճառի: - 281. Նախ *վասն* ամօթո՛յ: - 281. Երկրորդ՝ *վասն* ցրտոյ: - 281. Երրորդ՝ *վասն* տօթոյ: - 281. Չորրորդ՝ *վասն* զցանկութիւնն զսպելոյ: - 281. Հինգերորդ՝ *վասն* զինուց և պահպանութեան: - 281. Վեցերորդ՝ *վասն* որոշելոյ զդէմսն: - 281. Եօթներորդ՝ *վասն* նշանակելոյ զսուգ կամ զուրախութիւն: - 281. Ութերորդ՝ *վասն* գործոյ: - 281. Իններորդ՝ *վասն* զարդու: - 281. Տասներորդ՝ *վասն* խենէշութեան: - 281. Իսկ մաշկն որ է՛ մորթ մեռելոյ, նշանակէ՛ նախ զսուգ և զտրտմութիւն *վասն* մեղաց: - 281. Առաջին հարցումն *Վասն* աբէլի և կայենի, և պատարագաց նոցա: - 283. Երկրորդ՝ *Վասն* ենովսայ. և ենովքայ վերափոխելոյն: - 283. Երրորդ՝ *Վասն* կենաց նահապետացն և կենաց մեր՝ չափեալ թուով: - 283. Չորրորդ՝ *Վասն* չգիտելոյ մեր զօր մահուն. և *վասն* ցաւագին կենացս: - 283. Հինգերորդ՝ *Վասն* նոյեան տապանին. և եկեղեցւոյ: - 283. Վեցերորդ՝ *Վասն* զենման կենդանեաց: - 283. Եօթներորդ՝ *Վասն* աշտարակին. և բաժանման լեզւացն **իբ**: - 283. Տասներորդ՝ *Վասն* ղովտայ և կնոջն. և սոդովմայ: - 283. Տասնև**ա**՝ *Վասն* աբրահամու. և փորձանացն: - 283. Տասնև**դ**՝ *Վասն* անդրանկութեանն խորհրդոյ: - 283. Քսան**բ**, *Վասն* յոբայ զանազան հարցմունք: - 283. Քսանև**դ**, *Վասն* մորենւոյն. և Որէ՛նն անուն: - 283. Քսանև**ե**, *Վասն* նշանացն: - 283. Քսանև**զ**, *Վասն* **ժ** հարուածոցն. և թէ վասն է՞ր այն քան տանջեցան: - 283. Քսանև**է**, *Վասն* կախարդացն. և խօսից դիւացն. և խստութեան սրտին. և կողոպտելն զեգիպտացիսն: - 283. Երեսունևմի, *Վասն* խորանին առ հասարակ: - 283. Երեսուն**բ**, *Վասն* տապանակին և խորհրդոց նորին. և այժմ ո՞ւր է տապանակն: - 284. Եւ *վասն* ողորմութեան և գթութեան ի **ռ** ազգս: - 284. Եւ *վասն* անխմոր և անմեղր զոհից. և *վասն* աղի: - 284. Քառասուն**բ**, *Վասն* նորոյս պատարագաց: - 284. Քառասունև**ե**, *վասն* զենման կենդանեաց: - 284. Քառասունև**զ**, *Վասն* բորոտից. և նշանակութեանն և սրբելոյն: - 284. Եւ ո՞րպէս օրէնք յաւիտենից. և *վասն* **բ** նոխազացն: - 284. Յիսուն, *Վասն* զանազան շաբաթուց. որ նշանակէ՛ զհանգիստն մեր: - 284. Յիսունև**դ**, *Վասն* է պատուհասին. և տասանորդաց: - 284. Եւ աստ *վասն* անդրանկացն: - 284.

Յիսունևթ, *Վասն* կորխեանցն. և ծաղկեալ գաւազանին: - 284. Վաթսուննդ, *Վասն* բաղամ մոգին. նզովք և անէծք: - 285. Եւ աստ *վասն* դիւթից: - 285. Վաթսուննե, *Վասն* ուխտաւորաց որ միս չուտէին և ո՛չ գինի: - 285. Վաթսուննզ, *Վասն* աւարաց բաժանելոյ: - 285. Եօթանասուն, *Վասն* սիրոյ աստուծոյ լո՛ւր իսրայէլ: - 285. Եւ *վասն* աւագ օրհնութեանն վերջին: - 285. Եօթանասուննբ, *Վասն* վերջին կտակացն: - 285. Ութսունբ, *Վասն* անուանց արարչին ի սուրբ գիրս: - 285. Յետ ելիցն ադամայ ի դրախտէն կենաց, հարցանելի է *վասն* նախահարցն ըստ կարգի: - 286. Եւ սոքա ամենեքեան *վասն* էերորդին են որ է՛ սէրն. զոր ունէր կատարելապէս առ աստուած: - 286. Իսկ զփոխարէն պարգևսն զոր ընկալաւ, *Վասն* առաջնոյն՝ զի ասէ գիր, «հայեցաւ», այսինքն հաճեցաւ աստուած ի հաբէլ: - 286. *Վասն* երկրորդին՝ զի ասէ՝ «և ի պատարագս նորա». այսինքն զի ընկալաւ ի հոտ անուշից: - 286. *Վասն* չորրորդին՝ զի առաջին եղև քահանայ ի տիպ ճշմարիտ քահանայապետին քրիստոսի: - 286. *Վասն* եերորդին՝ զի զանդրանկութեան օրհնութիւնն ընկալաւ որպէս յակոբ զեսաւայն: - 286. *Վասն* վեցերորդին՝ արդար վկայեցաւ յամէներանեան բերանոյն...: - 286. *Վասն* էերորդին, ա՛յն քան սիրեցաւ յաստուծոյ, մինչ զի յետ մահուանն վրէժ խնդիր եղև արեան նորա...: - 287. Եօթներորդ՝ զի ստեաց աստուծոյ ի հարցանելն *վասն* զղջման: - 287. Որպէս սոդոմայեցիքն *վասն* արտօրէն գործոցն՝ արտօրէն իջմամբ հրոյ պատժեցան: - 288. Եւ որպէս փարաւոն *վասն* հեղցուցեալ մանկանցն՝ ջրասոյզ կորեաւ. և յառաջ քան զայս՝ **ժ** հարուածովք պատժեցան: - 288. Եւ որպէս կորխ դադան և աբիրոն *վասն* հակառակութեանցն ընդ մովսէս և ահարոն՝ հրով և բացմամբ երկրի դատապարտեցան: - 288. Որպէս ենովս որ յուսացաւ կոչել զանուն տեառն աստուծոյ. այսինքն յուսացաւ զհանդերձեալ կեանսն որ աներևոյթն էր. և *վասն* իւրաքանչիւր գործոց գոլ հատուցումն. և կոչեաց զանունն աստուծոյ ի յօգնականութիւն: - 288. Եւ ենովք *վասն* անպտուղ կալոյն և զգայարանացն ծածկութեան, վերափոխեալ եղև: - 288. Եւ նոյ՝ *վասն* կուսութեան սրբութեանն զշ ամն, և *վասն* արդար գոլոյն...: - 288. Նորն աբրահամ *վասն* աներկբայ հաւատոյն արդարացաւ...: - 288. Երրորդ՝ յուսացաւ կոչել զանուն տեառն աստուծոյ ի յօգնութիւն. զոր մարդիկ յուսահատեալ էին եթէ *վասն* մեղաց մերոց եթող զմեզ աստուած ի ձեռաց...: - 289. Եւ մարգարէացաւ եթէ *վասն* մեղաց մարդկան երկիր կրկին ապականի ջրով և հրով: - 289. Եւ այս ցոյցք յուսո՛յ է *վասն* հանդերձելոյն հոգալ և պատրաստել: - 289. Իսկ զի **բ** սոքա մտին, այս *վասն* **ե** պատճառի: - 289. Զի *վասն* առաջնոյն ասեն վարդապետք, եթէ ադամ ո՛չ եկաց ի դրախտին **ռ** ամ, կամ աւելի և կամ պակաս, այլ մի օր. մանաւանդ **է** ժամ: - 290. Եւ *վասն* երկրորդին ասեն, եթէ կարծեօ՛ք է՝ թէ համանգամա՞յն փոխիլոց էին, թէ մի զհետ միոյ: - 290. Նաև յեգիպտոս **դճ** ամ խոստացաւ ծառայութեան. և զերեսուն ամն յաւել *վասն* մեղաց ժողովրդեանն: - 292. Եւ երբեմն կարճէ՛ ի կենաց որպէս առ նոյիւ. զի **ճի** ամ խոստացաւ նոցա, և զի ամն կարճեաց *վասն* չարեաց նոցա: - 292. Եւ այս *վասն* **գ** պատճառի: - 292. Եւ այս *վասն* բազում պատճառի: - 295. Զորս հրեշտակս կոչէ ո՛չ *վասն* առաքինութեան, այլ զի պատգամաբերք և թարգմանք եղեն աստուծոյ իմաստութեանն առ մեզ ի ձեռն լեզուաց գիտութեանն: - 297. Եւ երրորդ՝ զի մի՛ *վասն* աշտարակին ի նոյն տեղին մնասցեն՝ և աշխարհ ամենայն աւերակ կացցէ: - 298. *Վասն* քրիստոսի և մելքիսեդեկի, ասացեալ է և յայլ ուրեք ի վերոյ ի գիրս աստուածաբանութեան **ե** գլուխն՝ **ի** համարքն: - 302. *Վասն* **դ** պատճառի: - 302. Զի *վասն* մեղաց տանջիւր ինքն՝ և առաւելոյր ի բարին: - 302. Չորրորդ՝ *վասն* անհաւատութեան եղև քար. զի ո՛չ հաւատաց հրեշտակացն: - 303. Այլ ազա՛տ գոլով յայսցանէ՝ *վասն* առաւել սիրոյն աստուծոյ տա՛յ զորդին իւր ի զենումն: - 304. Որոյ փոխանակ հայր աստուած ետ զորդին իւր *վասն* գերազանց սիրոյն ի փրկութիւն աշխարհի: - 304. Ութևժ, որպէս *վասն* իսահակայ եղև ձայն յերկնից...: - 306. Եւ *վասն* տեառն եղև ձայն...: - 306. Որոյ պատճառէ, զի անուն *վասն* այլո՛ց է որ ճանաչեմք զայլս: - 312. Երկրորդ՝ զի **խ** քաղաք առին ի բենիամենէ՛ յուդայի ցեղքն *վասն* շնութեան կնոջն պատահելոյ. և կոտորեցին զնոսա առ հասարակ **իեռ** արս. և մնաց վեց հարիւր այր զոր յետոյ ստացան ժառանգութիւն իւրեանց. որպէս յա՛յտ է ի դատաւորաց վերջքն: - 312. *Վասն* նոցա լայր անմխիթար սգով, զի ո՛չ եղև մայր նահատակացն: - 312. Զերրորդն՝ զի բազում եղեն յազգէ նորա մարտիրոսք *վասն* քրիստոսի յետոյ: - 313. Եւ այս *վասն* բազում պատճառի: - 315. Զի վկայէ՛ աստուած *վասն* նորա...: - 321. Եւ յամենայն աւուր ըստ թուոյ նոցա **ժ** զոհ մատուցանէր, և զուարակ մի *վասն* սրբութեան մտաց: - 321. Եւ ըստ նմանութեանն քրիստոսի մի զուարակ. որ *վասն* մեղաց մերոց մեռաւ: - 322. Վասն այն յոբ **ժ** պատարագաւ սրբէ՛ր զ**ժ** մասնաւոր մեղսն որ գտանին յարբեցութեան. և մին զուարակն ի սրբութիւն *վասն* ակամայ և խորհրդոյ մեղացն: - 322. Այլ ասեմ թէ՝ ի կարգի արդարո՛ցն են նոքա *վասն* **գ** պատճառի: - 322. *Վասն* **դ** պատճառի: - 324. Երկրորդ՝ զի կամէին սուտ առնել

զվկայութիւնն աստուծոյ *վասն* յոբայ. թէ այր արդար և անարատ է: - 324. Չորրորդ՝ կամէին զինքեանս արդա՛ր ցուցանել, և յանցաւոր զյոբ. և *վասն* այսմ կարգէին ընդ յոբայ: - 324. *Վասն* առաջնոյն, զի գիտէր զնոսա շարժեալ ի չարասիրէն. և յաղթելով զնոսա յաղթեաց զբանսարկուն սատանայ: - 324. *Վասն* երկրորդին հակառակէր ընդ նոսա, զի մի՛ սուտ լիցի վկայութիւն աստուծոյ ի վերայ նորա. զի և մեք ուսցուք՝ *վասն* վկայութեանն աստուծոյ այնչափ նախատինս յանձն առնուլ և ո՛չ ուրանալ. որպէս վկայից դասքն նահատակեցան: - 324. *Վասն* երրորդին ասէր յոբ զբարի և չար գործոց հատուցմունքն լինիլ առհասարակ յետո՛յ ի հանդերձեալն. զի աստ են մեղաւորք և հնացեալք ի մեծութեան. և ներէ՛ նոցա աստուած *վասն* կրկին պատճառի: - 324. Իսկ արդարք աստ ի նեղութեան կան *վասն* կրկին պատճառի: - 324. Երրորդ՝ զի աստուծոյ վկայութիւնն ի սուտ ելցէ *վասն* նորա: - 325. Չորրորդ՝ զի և բանբասօղքն պատիժս կրեսցեն *վասն* նախատելոյն զնա: - 325. *Վասն* **գ** պատճառի: - 325. *Վասն* **գ** պատճառի: - 325. Երկրորդ՝ զի լուծցէ զտարակոյսն որ *վասն* դատաստանին աստուծոյ թէ՝ անգիտելի՛ է մարդկան: - 325. Եւ այս *վասն* կրկին պատճառի: - 325. Վեցերորդ՝ խօսեցաւ աստուած՝ և զամենայն անճառելի գիտութիւնս *վասն* արարածոց ուսոյց նմա. զոր ոչ գիտէին մարդիկ զլինելութիւն երկնի և երկրի և ծովու և կենդանեաց: - 326. *Վասն* **դ** պատճառի: - 326. *Վասն* **գ** պատճառի: - 326. Երկրորդ՝ առաջին վկայութիւնն *վասն* արդար գործոցն. կրկինն *վասն* համբերութեան նորին: - 326. Երրորդ՝ խոնարհեցաւ յոբ ի պատւոյն. և տէր մեր էջ ի յերկիր և *վասն* մեր աղքատացաւ: - 327. Այսքան ի կարճոյ *վասն* յոբայ: - 327. Քսաներորդ, նա՛ *վասն* հակառակօղ ժողովրդեանն աղօթէր առ աստուած: - 329. Իսկ վերջին խորհուրդ է, յորժամ *վասն* հարկաւոր պիտոյից կերակրոյ և հանդերձի՝ յերկրաւորս հպիմք: - 331. Նա՛խ՝ զի իրաւո՛ւնք արար *վասն* վարձու կաւագործութեանն որ էր առ նոսա: - 336. Նաև *վասն* անարգանաց մօրն իւրեանց սառայի: - 336. Երկրորդ, զի ագա՛հք էին, և *վասն* զարդուն ելցեն յեգիպտոսէ՛: - 336. Եւ այն նոցա մեղք ո՛չ եղև *վասն* **բ** պատճառի: - 337. Ասեմք թէ՝ նեխեցաւ *վասն* թերահաւատութեան և ագահութեան ժողովրդեանն: - 339. *Վասն* բազում պատճառի: - 342. Այս քան *վասն* խորանին: - 344. Այսքան *վասն* աշտանակին: - 347. Զորօրինակ թագաւոր ոք յորժամ լսէ՛ զգոյժ որդւոյ իւրոյ մեռելոյ, խորտակէ՛ զթագն, և զամենայն ինչ որ *վասն* նորա՛ է: - 349-350. Ապա ուրեմն յերրորդ և ի չորրորդ ազգն հատուցանէ աստուած զմեղս՝ յորժամ *վասն* գործեաց զյամառեալն ի մեղս պատժէ՛: - 351. *Վասն* բազում պատճառի մեծահրաշ սքանչելիքս եղև առ մովսէս: - 352. Մին *վասն* օրինաց տախտակին: - 352. Եւ մին *վասն* ահարօնի հաշտութեանն ելանել կրկին ի լեառնն: - 352-353. Մին *վասն* հաւատոյ օրինաց. և մին *վասն* հոգւոյս իբր ահարօնի. և մին *վասն* մարմնոյս որպէս ժողովրդեանն: - 353. Հինգերորդ, նոքա մատուցանէին պատարագ նախ *վասն* իւրեանց, և ապա՛ *վասն* ժողովրդեանն անգիտութեան. իսկ տէրն մեր ո՛չ արար մեղս ըստ մարգարէին. այն անմեղն *վասն* մեղաւորաց պատարագեցաւ...: - 354. Վեցերորդ, նոքա հանապազ մատուցանէին *վասն* հանապազ յանցմանն ի բազմօրինակ մեղս...: - 354. Երեքտասաներորդ, նոքա փոփոխականք էին *վասն* մահու արգել լինելոյ. իսկ տէր մեր անփոփոխ և յաւիտեան է քահանայ. *վասն* յաւիտեան և անմահ գոլոյն: - 355. *Վասն* **բ** պատճառի: - 355. Երկրորդ՝ օրինաւոր ամուսնութիւնն պատուական է *վասն* որդեծնութեան. այլ ո՛չ է նա՛ առաքինութիւն. որպէս կուսութիւն՝ պահք՝ և աղօթք: - 356. Իսկ որ *վասն* մեղաց նաշիհ իւղ և խունկ ոչ դնէին. զի տրտմութիւն և խաւար է մեղքն, և գարշ հոտ գայ ի խղճմտանացն մինչև ապաշխարեսցէ: - 357. Երկրորդ՝ *վասն* անգիտութեան և ակամայիցն զուարակ մի քահանային. և զուարակ մի՝ բոլոր ժողովրդեանն ի տօնի քաւութեանն: - 358. Երրորդ՝ *վասն* անգիտութեան և ակամայի իշխանին և իւրաքանչիւր անձին նոխազ յայծից և ալոջ ի քաւութիւն նոցա: - 358. Չորրորդ՝ *վասն* փրկութեան ի հիւանդութենէ կամ ի պատերազմէ՛ փրկեալք, մատուսցեն ասէ պատարագ և նւէրս ընծայեսցեն ի սեղանն ի հոտ անուշից: - 358. Հինգերորդ, *վասն* մեղաց պատարագ, ի մեռելոտի կամ ի պիղծ ինչ մերձեցեալ. ոչխարով և թռչնով և նաշիհով առանց իւղոյ և խնկոյ քաւէին: - 358. Վեցերորդ, *վասն* յանցանաց ի նուէրս սրբութեանցն, և կամ յօրէնս աստուծոյ, և կամ յընկերս վնասու...: - 358. Ութերորդ, *վասն* գոհութեան. հեռաւորն եկեալ կամ բարւոյ յաջողեալ: - 358. Իններորդ, պատարագ ուխտի. որ ո՛չ *վասն* երախտեաց ինչ, այլ իւր կամաւ ուխտեալ. որ յերկրորդ օրն ևս ուտէին զմիսն: - 359. *Վասն* սերմնակաթին սրբութեան **բ** հաւ: - 359. Նա՛խ՝ ցուցանէ թէ սա՛ անմեղ է՝ *վասն* իմ մեղացս մեռանի. զոր ձեռօք ի սա՛ տամ զմեղս: - 359. Երկրորդ՝ ցուցանէ զանմեղ մահն քրիստոսի *վասն* մեր մեռեալ. զոր մատամբ ցուցանէին խաչօղքն թէ խաչեսցի դա՛: - 359. Այլ ի կողմ հիւսիսոյ զողջակէզս և *զվասն* մեղացն: - 360. Այսինքն զամենայն յաջողուածս հոգևոր և մարմնաւոր, և զմասն անմահութեան կենաց յուսոյն, ո՛չ *վասն* մեր արժանաւորութեան համարել. այլ

բարութեան և ողորմութեանն աստուծոյ: - 360. Եւ մին *վասն* մեղաց. զի կերակուր ետ զմարմինն և զարիւնն իւր: - 361. Նա՛ է ողջակէզ և փրկութիւն և գոհութիւն, և *վասն* մեղաց և յանցանաց. և յամենայն նիւրաց կատարումն և գլուխ նա՛ է: - 362. Այլ և ունիմք զմարմնաւոր պատարագս զօրինակին. զենմունք *վասն* կենդանեաց և մեռելոց: - 362. Եւ *վասն* կենաց. և *վասն* փրկութեան: - 362. Եւ *վասն* ուխտի, խաչի, և եկեղեցւոյ: Պտուղս: Շօթ: Նաշիհ: Ձէթ: Մոմ: Խունկ. և այլն: - 362. Եւ դարձեալ՝ առաջինն քրիստոս պատարագի *վասն* մեր: - 362. Միջինն մեք *վասն* քրիստոսի: - 362. Վերջինն ինչքն *վասն* մեր: - 362. Դարձեալ՝ կրկին է ողջակէզն. մին *վասն* մեղաց որ է՛ կամաւոր. և միւսն յանցանաց որ է՛ ակամայն: - 362. Դարձեալ՝ կրկին ողջակէզն. մին *վասն* մեղաց. և միւսն *վասն* սրբութեան: - 362. *Վասն* մեղա՛ց է՝ որ խոստովանութեամբ արտաքոյ ելեալ ի մեղաց և ապաշխարութեամբ քաւեմք զմեզ ներքին խորհրդով և արտաքին գործով: - 362. Եւ քահանայքն հպարտացան և օտար հրով խնկարկեցին ի ներքս վարագուրին, *վասն* այն պատժեցան ի խրատ այլոց: - 364. Վեցերորդ՝ դիտաւորութիւնն խնդրի. յաղագս ո՞յր իցէ զենումն. կենդանեա՞ց թէ մեռելոց. *վասն* աստուծո՞յ թէ *վասն* մարդկան: - 365. Վեցերորդ՝ դիտաւորութիւնն խնդրի թէ վասն որո՞յ է զենումն. զի թէ *վասն* աստուծոյ է կամ հոգւոյ, հասարակա՛ց է. իսկ թէ *վասն* մարդկան և կենդանեաց, կամեցողա՛ց է: - 366. Ապա յա՛յտ է թէ որ *վասն* աստուծոյ լիցի զենումն...: - 366. Ջենեալ հաւն, մարմինն մեռեալ *վասն* մեղաց: - 368. Եւ նոխազն *վասն* մեղաց մերոց: - 369. Եւ զկենդանին ներկեալ՝ և կարմիր կապեալ ի պարանոցն, ցուցանէր զմեռանիլն աստուծոյ *վասն* մեր: - 369. *Վասն* երից: - 370. Երկու զուարակ, որ քրիստոս զենաւ *վասն* ադամայ և եւայի պարտուցն: - 373. Այլ և *վասն* հին և նոր ժողովրդեանս թողութեան: - 373. Այլ և *վասն* հոգւոյ և մարմնոյ փրկութեան: - 373. Երրորդ՝ արծաթ զբանն նշանակէ. որոյ չէ՛ պարտ *վասն* իրաւանց և քարոզութեան արծաթ առնուլ: - 375. *Վասն* **գ** պատճառի: - 379. Վասն զի մարմնոյ զինուորն **ի** ամեայ էր. զ**ե** ամն յաւել ի հոգևոր զինուորսն *վասն* **ե** զգայութեանցն: - 379. Կարօտն է՛ *վասն* իւր պակասութեանն: - 381. Այլք ասեն *վասն* դադանեանցն թէ՝ հոգիք նոցա մարմնով ի տանջանս կային...: - 382. Նոյնպէս այժմ ի նորս պարտ է խոստովանիլ *վասն* կանոնաց եկեղեցւոյ. և զգողօնսն վճարել կամ ի տէրն, կամ ի քահանայս, կամ յաղքատս: - 384. Իսկ կրկին պատարագն. մին *վասն* բոլոր ժողովրդեանն, և մին *վասն* անձին ակամայիցն. ցուցանէ զկրկին խոստովանութիւնն. մին յայտնի առհասարակ եկեղեցոյն. և միւսն ծածուկ առանձին մեղաց: - 385. Երրորդ, տրտմեալ էր *վասն* մահուն մարիամու: - 386. Չորրորդ՝ *վասն* անհաւատութեան նոցա: - 386. Եւ դարձեալ *վասն* օձին տե՛ս ի հարուածն եգիպտոսի **ի ի** գլուխ համարոյն: - 387. Եւ *վասն* առաջին օձին ի **ժգ** գլուխ համարոյն տես թէ պիտի: - 387. *Վասն* կրկին պատճառի: - 387. *Վասն* երկու պատճառի: - 388. Եւ *վասն* կախարդաց գրեալ է ի վերոյ ի **ի** գլուխն **իէ** համարն: - 389. Ուխտաւոր է որ ապաշխարէ *վասն* մեղաց: - 389. Ջայն ցուցանէ, զի մեռանիլն քահանային՝ ազատութիւն էր նոցա, յօրինակ քրիստոսի. յորժամ մեռաւ *վասն* աշխարհի, ազատեցան մահապարտքն: - 392. Իսկ յետ մահու ա՛յնոցիկ հոգւոց որք զղջան կամ խոստովանին զմեղս, քաղաք ապաստանի է նոցա ի կայանս հոգւոցն տրտմութիւն և ցաւն *վասն* փոխարինաց մինչ մեռանի քահանայն մեծ. որ եկեղեցի սուրբ՝ պատարագաւ և աղօթիւք և ողորմութեամբ հատուցանէ՛ զպարտս նոցա և ազատին: - 392. Եւ հոգւովն վարձկականն *վասն* խոստացեալ բարեացն: - 396. Նա՛խ՝ *վասն* ժողովրդեանն ասէ, թէ ոչ միայն հացիւ կեայ մարդ. որպէս ասաց ադամայ ուտել զհաց քրտամբք: - 397. Ա՛րդ՝ նախ *վասն* հարցն սիրոյ զզաւակսն նոցա ընտրեաց աստուած: - 398. Երկրորդ՝ *վասն* մեծ բարութեանցն ի հեռաստանէ էարկ հիմն մարդեղութեան իւրոյ ի զաւակէ՛ նոցա լինիլ: - 398. Երրորդ, *վասն* վերջնոցն լաւութեան ընտրեցան և խոտանքն. որպէս զհող զքար և զխեցցէ մորթն պատւեմք *վասն* ոսկւոյ և արծաթոյ և մարգարտին: - 398. Նոյնպէս ազգն իէլի ընտրեցաւ *վասն* աստուածածին կուսին մարիամու: - 398. Ա՛րդ՝ ի նոյն օր զանիծեալ հայրազեղծն հանէին ի փայտն անիծից *վասն* հօրն: - 400. Եւ դնէին ի հող անիծից *վասն* մօրն: - 400. Եւ փոխանակ մօրն տարերք ամենայն. որ հեծեն և յոգոց հանեն *վասն* ապականութեան մեր ըստ առաքելոյ: - 400. Եւ անէծքս այս ո՛չ հասին ի նա *վասն* երից: - 400. Երկրորդ՝ զի անպա՛րտ էր անիծից՝ և *վասն* մեր եղև. որպէս անպարտական ոք ո՛չ անիծանի: - 400. Եւ այս *վասն* խստասրտութեան նոցա զի մի՛ սպանումն լիցի: - 400. Մովսէսին պատճառն *վասն* խստասրտութեան նոցա է որպէս տէրն ասաց. զի մի՛ սպանումն լիցի: - 401. Իսկ որ զարձակեալն առնուին, և յառաջին բաժանեալն ո՛չ տային, *վասն* երկիւղի առն և կնոջ էր, զի մի՛ լիցին պատճառ բաժանման: - 401. *Վասն* հեթանոսաց գրէ զօրէնս և ո՛չ հրէից զի առեալ էին: - 402. Թէպէտ ո՛չ կատարեմք զօրէնսն՝ ո՛չ եմք ընդ անիծիւք նորա *վասն* երից: - 403. Այլ և աղքատութեամբ. ուստի յա՛յտ է զի անէ՛ծ զգէեզի *վասն* ընչիցն նէեմանայ: - 404. Եւ *վասն* աւուրն ասաց՝

տիւ. և գիշեր զխաւարումն. և ընդ երեկս լոյս դարձեալ: - 405. Եւ պա՛րտ է մեզ հանապազ զքրիստոս առաջի աչաց տեսանել ի խաչ *վասն* մեր և հաւատալ. և չարչարակից լինիլ նմա յամենայն ժամ: - 405. Երրորդ՝ *վասն* կատարածի և վերջին օրհնութեանն պատմէ. արդարոց զպատիւ, և մեղաւորաց զտանջանս: - 407. Իսկ ի գործ ածել զստրմտութիւն՝ լինի *վասն* **դ** պատճառի: - 408. Նա՛խ՝ *վասն* ցեղին ռուբէնի ասի. փոխելով զանէծքն ի յօրհնութիւն: - 409. Երրորդ՝ *վասն* հասարակ յարութեանն. զորմէ լուաւ սատանայ և բեկաւ ողն նորա: - 409. Երրորդ՝ վախճանեալ մովսէս ի լերինն, և միքայէլ փոխադրէր զմարմինն. սկսաւ սատանայ հայհոյել զսուրբն և սպանօղ անուանել *վասն* հարկանելոյն զեգիպտացին. վասն որոյ սաստեաց նմա հրեշտակապետն: - 410. Առաջինն, *Վասն* բաժանման գետոյն: - 412. Եւ *վասն* աքարայ: - 412. *Վասն* դատաւորացն և ամաց նոցին: - 412. Հնգետասաներորդ՝ *Վասն* մեղացն դաւթի և թողութեան: - 412. *Վասն* ա՛յլ մարգարէից: - 413. *Վասն* եղիայի զոր ագռաւն կերակրեաց. և գնաց ի հեղեղատն. և նուաղեցաւ ջուրն: - 413. Գիշերի սատակեցան զօրքն ռափսակայ. և *վասն* յովսիայ զի հարաւ և մեռաւ: - 413. Նա՛խ՝ *վասն* օրհնութեանն յակոբայ. տալով զանդրանկութիւնն եփրեմի: - 414. Իսկ յետ մահուանն մովսէսի վերացաւ ամպն. և հրամայեցաւ ժողովրդեանն հեռու կալ կանգունս երկուց հազարաց *վասն* փառաց տապանակին և *վասն* զօրութեան նորա: - 415. Եւ *վասն* է պատճառի պատժէ աստուած զմարդն և զինչսն: - 415. Երրորդ՝ ի յեղծանիլ պատկերին աստուծոյ որ *վասն* փառացն աստուծոյ ստեղծաւ, ընդ նմին եղծան և ապականեցան այլ արարածք որ *վասն* փառաց մարդոյն ստեղծան...: - 416. Իսկ զփղշտացիսն եթող *վասն* ուխտին աբրահամու և աբիմելիքայ: - 417. Եւ *վասն* այսմ ի սուր անկան ծոյլ քահանայքն ոփնի և փենէհէզ. և **լա** ի դասուց անկան և տապանակն գերի առաւ: - 425. Որպէս և մովսէս զտախտակն աստուածագիծ խորտակեաց *վասն* յանցանաց ժողովրդեանն: - 425. Երրորդ՝ զխիստ բարկութիւնն նշանակէ որ յիւր սրբութիւնն ո՛չ խնայէ *վասն* մեղաց մարդկան: - 425. *Վասն* երից: - 427. Իսկ մեղքն դաւթի յիշատակեցաւ *վասն* երկու պատճառի: - 433. Երկրորդ՝ *վասն* տկարութեան օրինացն. զի ի հինն ո՛չ կարէր բառնալ զմեղս առանց մարմնական փոխարինաց և յիշատակութեանց: - 433. Ասեմք թէ՝ մեզ պա՛րտ է ի մտի պահել և ի լեզուի զմեղս. և ցաւիլ և հոգալ հանապազ *վասն* անցեալ մեղացն և չգործելոյ բարեացն: - 433. Երկրորդ՝ որպէս թուեաց դովեկ զքահանայսն զի մի՛ զերծանիցեն ի սրոյն. նոյնպէս և այս *վասն* քահանայիցն վրէժխնդրութեան էր. զի կամեցաւ ժողովուրդն փրկել զնոսա: - 434. Կոտորեաց սաւուղ զքահանայս *վասն* դաւթի. և հերովդէս զմանկունսն բեթլէհէմի: - 437. Խորհի ակիտոփէլ չար *վասն* դաւթի և խեղդի. և յուդա *վասն* տեառն խորհեցաւ և խեղդեցաւ: - 438. Քսանբ, նա՛ *վասն* օտարաց աղօթեաց: - 441. Եւ տէրն *վասն* հեթանոսաց աշխարհի: - 441. Չորրորդ՝ *վասն* իմաստութեան երկրին: - 442. Չորրորդ՝ նա՛ *վասն* քարի և փայտի պատմէր. և քրիստոս *վասն* արքայութեանն: - 442. Ութերորդ՝ զի և նա՛ *վասն* քրիստոսի մարգարէանայր: - 442. Այս քան համառօտ *վասն* սողոմոնի: - 442. Այս քան *վասն* Երրորդ թագաւորութեանց: - 444. Եւ այս՝ և պատերազմն *վասն* մովսիսեան մարմնոյն՝ ցուցանեն զպատերազմ հոգւոց յետ ելից մարմնոյն: - 445. Յետոյ *վասն* գազանաց երկրին՝ հնազանդեցաւ գրոյն մովսէսի. և ծածկեցին զաստուածս իւրեանց ի լերին սոմորոն. և անդ երկիր պագին սամարացիք: - 447. ...և նա՛ վկայեաց *վասն* գերութեան ժողովրդեանն. այլ *վասն* բարեպաշտութեան ովսիա ո՛չ գնաց գերի: - 447. Չչորքս զայս՝ Զոքոզիա և Զգոդողիա մայրն, և Զյովաս և Զամեսիա ո՛չ գրէ յազգահամարսն աւետարանիչն *վասն* լինելոյ դուստր և թոռունք եզաբելի: - 452. Չորրորդ, *Վասն* սրբութեան Կուսին զանազան կերպիւ: - 454. Հինգերորդ, *Վասն* աւետեաց հրեշտակին և ողջունին: - 454. Վեցերորդ, *Վասն* պատասխանւոյ Կուսին: - 454. Եւ *վասն* է բանից նորին: - 454. *Վասն* ժամանակաց և մարդեղութեանն: - 454. Ութևժ, *Վասն* անկատար հասակին: - 454. *Վասն* տօնի ծննդեանն ի վեցն յունվարի **ժե** պատճառաւ: - 454. *Վասն* թլփատութեան տեառն **ժ** պատճառաւ: - 454. *Վասն* մկրտութեանն քրիստոսի **ժ** պատճառաւ: - 454. *Վասն* խաչին և չարչարանացն: - 454. Եւ *վասն* պատարագաց խաչին: - 454. Եւ *վասն* կրից և մահու և ապականութեան բանք: - 455. *Վասն* անապականութեան մարմնոյն քրիստոսի բազմազան վկայութեամբք: - 455. *Վասն* դժոխոցն: - 455. Եւ *վասն* ծկան բանք: - 455. *Վասն* յարութեանն քրիստոսի: - 455. *Վասն* մարիամանցն և վարշամակին: - 455. *Վասն* համբարձմանն տեառն: - 455. *Վասն* գալստեան սուրբ Հոգւոյն յետ խաչին, **ժ** պատճառաւ: - 455. Որ և նովաւ զնորայս *վասն* նորա խօսեսցուք. և ի գովեստ մեծութեան փառաց նորին յանկեսցուք: - 456. Դարձեալ *վասն* յովսեփայ գիտելի է. զի ի ցեղէն սողոմոնի որդւոյն դաւթի՝ մատթան առեալ կին, ծնաւ զյակոբ: - 460. *Վասն* բազում պատճառաց: - 461. *Վասն* **ե** պատճառի: - 463. Վեցերորդ, մայր մարդոյ ասի կինն որ ծնաւ զմանուկ. թէպէտ հոգին ո՛չ է ի մօրէն. այլ *վասն* միաւորեալ

մարմնոյն մարդածին կոչի: - 466. Նոյնպէս և կոյսն սուրբ աստուածածին է *վասն* աստուածացեալ մարմնոյն: - 466. Իններորդ՝ *վասն* հաստատ ժառանգութեան խոստացելոյն. զի մի՛ ասիցէ ոք ցհայր, տէր դու ունիս որդի և ժառանգ: - 468. Այս քան *վասն* բանին մարդեղութեան, զի բազում են պատճառք ասացեալ վարդապետաց. զոր մեք զսակաւն եդաք աստ: - 468. Դարձեալ *վասն* նշանացն քրիստոսի ասեն վարդապետք այսպէս: - 471. Հինգերորդ՝ օծումն քահանայից. *վասն* միջնորդութեան: - 474. Վեցերորդ՝ օծումն թագաւորաց. *վասն* տէրութեան: - 474. Այս քան *վասն* Օծման փոքրիշատէ: - 475. Այս քան *վասն* միաւորութեան: - 476. Իսկ բանն աստուած միաւորեալ մարմնովն կրեալ զմերս *վասն* մեր. անկրելի գոլով ըստ իւրում բնութեանն: - 479. *Վասն* **դ** պատճառի: - 479. Երրորդ՝ զի արուն զօրաւո՛ր է քան զէգն. և նախաստեղծքն գլորեալ էին *վասն* հեշտութեան իւրեանց. պա՛րտ էր արու լինիլ և կանգնել զնոսա: - 480. Եւ յա՛յսմանէ յա՛յտ է, զի սուրբքն զծնունդն և զյայտնութիւնն ի միասին տօնէին. և յետոյ բաժանեցին ոմանք *վասն* բեթլէհէմի և յորդանանու: - 482. Եւ այլք *վասն* արտեմոնի. զի նա՛ փոխեաց զծնունդն ի դեկտեմբերի **իե**: - 482. Եւ աւուրք պաշտամանն էր երկոտասան. **ե** օր քաւութեանն *վասն* որթոյն յանապատին. և **է** օր տաղաւարահարացն ի յիշատակ խորանաւ բնակելոյն յանապատին ամս **խ**. և այլ սքանչելեացն զոր գործեցաւ անդ: - 483. Մետասաներորդ՝ յա՛յտ է յամիսս նոցա. զի առաջին ամիս սեպտեմբե՛ր է նոցա. և *վասն* ծննդեանն քրիստոսի՝ փոխեցին և եդին զյունվար առաջին ամիս: - 484. Հնգետասաներորդ՝ յա՛յտ է յայսմանէ. զի *վասն* տօնի տեառնընդառաջին առաքեաց յուստիանոս կայսրն յերուսաղէմ զօրս բազում երիցս անգամ...: - 484-485. Քրիստոս *վասն* մեր սպասաւոր եղաւ թլփատութեան. և ո՛չ *վասն* պիտոյից նորա: - 485. Այլ պատշա՛ճ էր թլփատութիւն նորա *վասն* բազում պատճառի: - 485. Նա՛խ՝ զի որ բանն մարդ եղև՝ ո՛չ գարշի յեդեալ օրինացն իւրոց զի *վասն* մարդկան եդ: - 485. Մկրտութիւնն քրիստոսի ո՛չ *վասն* կարօտութեան էր. զի ամենամաքուր և սուրբ է բնութեամբ և սրբիչ ամենայնի: - 486. Եօթներորդ՝ արեամբ և վկայութեամբ. զոր և ինքն քրիստոս մկրտեցաւ *վասն* մեր իբրև յոյժ գովելի և երանելի այս մկրտութիւնս քան զառաջինսն: - 488. Ծանի՛ր, զի *վասն* չարչարանաց ասացեալ է ի վերոյ ի **ժա** պրակն աստուածաբանին գրիգորի ընդ դէմ արիոսի: - 489. Իսկ այժմ *վասն* խաչին նախ գիտելի է, զի չարչարանքն քրիստոսի ընդ դէմ է և բարձօղ է մոլորութեանց մեղաց: - 489. Վեցերորդ՝ զի անարգանա՛ց մահ էր խաչն. զայս ամենայն կրեալ *վասն* մեր: - 491. Այլ և ասեն վարդապետք, *Վասն* ամբարշտին՝ ծաղի՛ գթութիւնն: - 491. *Վասն* յիմարին՝ ծաղր լինի իմաստութիւնն: - 491. *Վասն* ստոյն մեռանի ճշմարտութիւնն: - 491. *Վասն* անօրինին դատապարտի արդարութիւնն: - 491. *Վասն* անողորմին տանջի ողորմութիւնն: - 491. *Վասն* թշուառականին ի բաց մերժի երջանկութիւնն: - 491. *Վասն* մեռելոյ մեռանի կեանքն: - 491. Եւ *վասն* մերոյ հիւանդութեան՝ քրիստոս էառ զդեղն և բժշկեաց զմեզ: - 491. Հայր մատնեաց զնա՛ *վասն* սիրոյ. և Որդի մատնեաց զանձն իւր *վասն* փրկութեան մերոյ. իսկ յուդա մատնեաց *վասն* ագահութեան: - 491. Զի զանմեղ մարմինն իւր կամաւ պատարագեաց *վասն* մեր: - 492. Եւ *վասն* անմեղ մահուն՝ հաշտեցաւ հայր աստուած ընդ մարդկան: - 492. Եւ *վասն* մահուան որդւոյ՝ հայր աստուած ետ զհոգին սուրբ պարգևս մարդկան: - 492. Դարձեալ՝ մահն ի յադամ պատիժ ինքեան էր. իսկ ի քրիստոս պատիժ այլոց. իսկ ի մեզ պատիժ ինքեան և այլոց. այսինքն զի *վասն* մեր և *վասն* ադամա՛յ կրեմք զմահն: - 496. Ապա ուրեմն կարելի՛ է ասել չարչարելի և մահկանացու *վասն* մեր. այլ անապական և անմեղ մարմին: - 500. Նախ՝ *վասն* վճարման պարտուցն լուծան կապանք դժոխոցն...: - 503-504. Երկրորդ՝ զի *վասն* բացման դրանց երկնից՝ լոյս ծագեաց ի բանտին...: - 504. Դժոխ՝ զդժուար զնեղ և զանձուկն նշանակէ. և կոչի բազմաւոր, Նախ *վասն* բազում կրիցն. ուր լալ աչացն է և կրճել ատամանց և խաւար ներքին և արտաքին և այլն: - 505. Երկրորդ՝ *վասն* բազում մասանցն. որք կրեն զտանջանս մարմնոյ մասամբ և զգայութեամբ. և հոգւոյ զօրութեամբ և մտաց իմացմամբ: - 505. Իսկ վերջին դժոխք որ կոչի անջրդի գուբ, նոցա՛ է որք ո՛չ ունին չար և ո՛չ բարի. որպէս մանկունք անմկրտեալք. ո՛չ տանջին զի չեն մեղանչեալ. և ո՛չ հանգչին զի չեն արդարացեալ. այլ *վասն* սկզբնականին մնան յանջրդի գուբն խաւարին: - 505. Նախ ասեմք եթէ՝ առաջին դժոխք հոգւոցն ո՛չ էր *վասն* ներգործական մեղացն հասարակ. այլ *վասն* պարտուցն ադամայ: - 506. Չորրորդ՝ անէծք առաջին մարդոյն՝ եղև տանջանք և դատապարտութիւն մարդոյն. և քրիստոս գնեաց զմեզ յանիծից օրինաց եղեալ *վասն* մեր անէծք. ապա ուրեմն քրիստոս աւերեաց զդժոխս: - 506. Ասեմք եթէ՝ խափանի հաւատն ի հանդերձեալն *վասն* դէմ յանդիման տեսութեանն: - 507. Ասեմք թէ՝ ո՛չ կարեն *վասն* երկու պատճառի: - 508. Որք հաւատացին՝ յաւիտենից փրկեցան. և որք ոչ՝ ժամանակեայ. *վասն* իջման որդւոյն աստուծոյ ի դժոխս: - 508. Այս քան *վասն* դժոխոց: - 508.

Նմանապէս և աստ յայսմ աւուր շաբաթու որ ի կիրակէ յարութեան տօնեմք, այժմ յինն ժամուն ի վեր նախատօնակ առնեմք յարութեանն քրիստոսի. և այս *վասն* բազում պատճառի: - 509. Թէպէտ այսօր *վասն* պատրանաց մարդկան և փոխելոյ զտօնս` ոչ ինչ ուտեն զնաւակատեաց որ է ծուկն. զոր միշտ զքառասնորդ պահքս պղծեալ են ձկամբ և արբեցութեամբ: - 509. Պահքն *վասն* հոգւոյն պատշաճի. և Ուտիքն մարմնոյն. իսկ Նաւակատիքն *վասն* խառնեալ շնչոյն: - 510. Եւ *վասն* այս չափ ազգակցութեան` քոյր աստուածամօրն կոչեցաւ: - 517. Նա՛խ` ոմանք ասեն թէ մարդկօրէն կամէր իմանալ զնա և հարցանել *վասն* խաչին և դժոխոց և յարութեանն. իսկ այս կատարեալ մտաց պէտք էին և շա՛տ ժամու: - 517. Եօթներորդ, կամ թէ եգիտ ի նա երկեւան ինչ թերութեան *վասն* յարութեանն. իբր զի աւէ յայսմ գիշերի մերձեցայք յոտս իմ և ո՛չ հաւատացեր. վասն այն կրկին անգամ ո՛չ հրամայէ մերձենալ: - 517. Իսկ ասելն «չև՛ ևս ելեալ եմ առ հայր իմ», ցուցանէ թէ որպէս նախ զչարչարանսն և զյարութիւնն ասաց *վասն* չարչարանաց և յարութեանն: - 518. Սոյնպէս և աստ յառաջագոյն աւէ *վասն* վերանալոյն իւրոյ: - 518. Դարձեալ, հայր է քրիստոսի ըստ էութեանն. և աստուած *վասն* միաւորութեանն. զի հա՛յր միաւորեաց զբանն ի մարմնի...: - 518. Եւ *վասն* յարութեանն քրիստոսի այս քան: - 518. Երկրորդ` առ ի բարեխօսել *վասն* մարդկան հաւատացելոց: - 519. Զի զանպարտ արիւնն իւր ցուցանէ հօր. և զխոցուած բևեռացն զոր *վասն* մեր ընկալաւ: - 519. Երրորդ` ամբարձեալ ձեռօք վերանայր յերկինս *վասն* երկուց. նախ` զի զինքն ընծայեսցէ հօրն. երկրորդ` զի զթշնամիսն հարկանիցէ զօրաւոր ձեռամբ բարձրացեալ: - 520. *Վասն* վեցից պատճառաց: - 520. Երրորդ` *վասն* մխիթարութեան աշակերտացն. զի **խ** օր մխիթարեսցէ զնոսա փոխանակ **խ** ժամուն որ տրտմեցան ի մահն քրիստոսի...: - 520. Իսկ որ աւէ սուրբն ստեփաննոս «յիսուս կայ ընդ աջմէ աստուծոյ», կալն նշանակէ իբր պատերազմակից և յօգնականութիւն գալ որք նահատակին *վասն* անուան նորա: - 521. Այս քան *վասն* համբարձմանն քրիստոսի: - 521. Վարդապետք ասեն թէ *վասն* է պատճառի: - 521. Չորրորդ` զի աշակերտքն զտկարութիւնս իւրեանց փորձիւ ճանաչեսցեն և գիտասցեն թէ ոչ *վասն* իւրեանց արժանաւորութեանն ընտրեցան...: - 521. Զօրս զայս պատուեն իսրաէլացիքն *վասն* երից պատճառաց: - 523. *Վասն* երից պատճառաց: - 524. Հինգերորդ` զանբաժանելի միացումն ի սէրն քրիստոսի. զի որ ի խաչին թողին և փախեան, յետ իջման հոգւոյն` ամենեքեան *վասն* անուան նորա չարչարեցան և մեռան...: - 524-525. Այսքան *վասն* Մարդեղութեան Փրկչին: - 525. Առաջին *վասն* օրինաց և նոր օրհնութեան: - 525. *Վասն* սպասաւորաց եկեղեցւոյ. Առաքելութեան Մարգարէութեան և Վարդապետության առ հասարակ: - 525. *Վասն* կրկին իշխանութեանց և կանոնաց: - 525. *Վասն* կապելոյ և արձակելոյ: - 525. Եւ *վասն* **դ** աթոռոց: - 525. *Վասն* մեղաց և անօրէնութեան: - 525. Եւ *վասն* յանցանաց մտաց: - 525. *Վասն* մարդկան մեղաց: - 526. *Վասն* մեծութեան մեղաց: - 526. *Վասն* աստուածային առաքինութեանց: - 526. Եւ *վասն* աստիճանաց նորին: - 526. *Վասն* յուսոյ և ներգործութեանց նորին: - 526. *Վասն* սիրոյ և սահմանի նորա և նշանաց նորա, և աստիճանացն և այլոցն: - 526. Եւ կարգաւ *վասն* Արդարութեան. և Խոհեմութեան. Արիութեան. և Ողջախոհութեան: - 526. Քսանևզ, *Վասն* **է** արփեան շնորհաց: - 526. *Վասն* ինն երանութեանցն. Աղքատութեան. Սգոյ. և Տրտմութեան. և այլոցն կարգաւ: - 526. *Վասն* մկրտութեան: - 526. *Վասն* դրոշմին և ա՛յլ կատարմանցն: - 526. *Վասն* հաղորդութեան: - 526. Եւ *վասն* միաւորութեան. և թացեալ պատառացն. և թէ ո՛չ տան ժողովրդեանն յօրինեալ մարմնոյն քրիստոսի: - 526. *Վասն* ապաշխարութեան և արձակման մեղաց: - 526. *Վասն* առանձնակի եկեղեցւոյս մեր կարգաւ. և զի՞նչպէս բաղդատի եկեղեցին` մարդն` և շինեալն: - 526. *Վասն* ժամահարին. և խնկոցն: - 527. *Վասն* աղօթից և արտասուաց: - 527. *Վասն* շաբաթի տօնից. և ութօրէք. և փոխմունք ժամատեղաց: - 527. *Վասն* պահոց բոլոր տարւոյն. և Առաջաւոր պահքն: - 527. Եւ *վասն* չորեքշաբաթի է: - 527. *Վասն* երից: - 531. Նախ *վասն* տգիտութեան. **բ** *վասն* փոփոխման. **գ** *վասն* հիւանդութեան: - 531. *Վասն* առաջնոյն գիտելի է, զի դիւրին է զգազանս ընտելացնել, քան զտգէտ անձն ի գիտութիւն ածել: - 531. Նոյնպէս *վասն* երկրորդին գիտելի է, զի որպէս զփայտ թիւրութեամբ պնդեալ` դժուարին է ուղղել. նոյնպէս զչար սովորութիւն մարդկան դժուարին է փոփոխել: - 531. *Վասն* երրորդին գիտելի է, զի գոյ հիւանդութիւն մարմնոյ, գոյ և հիւանդութիւն հոգւոյ: - 531. Եւ *վասն* հիւանդութեան ասասցի յառաջիկայդ ի **լզ** գլուխն ի **բ** համարն գիտ: - 531. Իսկ *վասն* շինուածոց ասացեալ է յառաջիկայդ ի **լե** գլուխն, ի **լէ** համարն: - 532. Եւ այս *վասն* բազում յատկութեանց գլխոյ: - 532. Այս քան *վասն* հիման և գլխոյ եկեղեցւոյ: - 532. Յարսն կոչի *վասն* երից: - 534. Նա՛խ` *վասն* կատարեալ սիրոյն քրիստոսի որպէս փեսայի և հարսին: - 534. Երկրորդ` *վասն* գերազանց և ծայրագոյն միաւորութեանն քրիստոսի ընդ եկեղեցի: - 534. Երրորդ` *վասն*

ծննդական գոլոյն բարեաց: - 534. Իսկ և որդի կոչի *վասն* երից: - 534. Երրորդ` *վասն* արիական գործոցն: - 534. Որպէս և առ մեզ է. զի կին որդւոյն դուստր կոչի հօրն *վասն* մի մարմնոյն: - 534. Իսկ մայրն է եկեղեցի *վասն* անդամոցն քրիստոսի: - 534. Եւ կին *վասն* գոլոյն որում փեսայ կոչի: - 534. Նա՛խ յաղագս շնորհին և ճշմարտութեան. և մարգարէք *վասն* ստուերին և օրինակին. և վարդապետք ըստ չափոյ պիտոյից նոցին: - 535. Առաջին *վասն* պատգամաց. որպէս գաբրիէլ առ կոյսն սուրբ: - 535. Իններորդ *վասն* սրբութեան. ըստ կայծականն մարգարէին: - 536. Տասներորդ *վասն* տեսութեան մեկնութեանն. որպէս առ դանիէլին: - 536. Այս քան *վասն* նախկին սպասաւորաց եկեղեցւոյ. այսինքն Առաքելոց Մարգարէից և Վարդապետաց: - 537. Իշխանութիւնք ամենայն ի վերուստ յաստուծոյ են իջեալ առ ի մարդիկ *վասն* կարգաւորելոյ զնոսա...: - 537. Եւ մարմնաւոր իշխան զթագաւորս և զբռնակալս. զի մարմնապէս կառավարեսցեն զմարդիկ և խրատեսցեն *վասն* մեղաց: - 538. Եւ *վասն* ուխտի և սահմանի ասացաւ ի վերոյ ի **իբ** գլուխն, **կե** համարն: - 538. Երրորդ` *վասն* ախտի. այսինքն փառաց կամ մախանաց. կամ ագահութեան ընչից. կամ այլ ինչ այսպիսեացս. ո՛չ կատարին կապանքն: - 539. Որպէս թէ զվերնագոյնն կամ զանարժանս կամ *վասն* ախտի ինչ օրհնել կամ ձեռնադրել. այլ զոր հոգին յայտնեսցէ զարժանիսն` նմա՛ կատարի: - 539. Եւ թէ ոք ասիցէ, թէ *վասն* ուխտի կամ ագահութեան զանարժանս ձեռնադրեն` ո՞չ կատարի: - 540. Եւ էր սիրելի փլաբիանոսի. և լեոնի. և թէոդորիտոսի զորս նզովեցին յեփեսոս. և *վասն* նոցա վրէժխնդրութեանն արարին ժողով **ուզ** եպիսկոպոսաց. և ընկալան զթուղթն լեոնի. և զնզովեալն յեփեսոս զփլաբիանոս ընկալան...: - 542-543. ...և զթէոդորիտոս եդին գլուխ ժողովոյն *վասն* մարդահաճութեան թագուհւոյն և թագաւորին. և զդէոսկորոս հայրապետն աղէքսանդրու, և զպետրոս անտիոքու, և զտիմոթէոս և զանատօլ, և զայլս բազումս խոտեցին. և վկայեցին նոքա ճշմարտութեան: - 543. Եւ գլուխ կոչի *վասն* երից: - 546. Նա՛խ` *վասն* դաւանութեանն նախկին: - 546. Երկրորդ *վասն* առաւել սիրոյն: - 546. Երրորդ *վասն* ծերութեանն: - 546. Առ երրորդն ասեմք թէ` երիցս հարցումն սիրոյն և արածելն զոչխարսն` *վասն* երից ուրացութեանցն էր բժշկութիւն. զի ո՛ր մասն որ խոցի` նորին է բժշկական դեղն դնելի` և ո՛չ առողջից: - 547. Ասեմք առ այս` թէ լուսաւորիչն գնաց ի հռօմ ո՛չ *վասն* ձեռնադրութեան, այլ *վասն* սիրոյ և միաբանութեան երկուց ազգաց և ուղղափառ թագաւորացն տրդատայ և կոստանդիանոսի: - 548. Զի **դ** գլխաւորագոյն աթոռք կարգեցան ընդ բոլոր տիեզերս *վասն* չորից աւետարանչացն: - 549. Յանտիոք *վասն* մատթէոսի: - 549. Յաղէքսանդրիայ *վասն* մարկոսի: - 549. Ի հռօմ *վասն* ղուկասի: - 549. Յեփեսոս *վասն* յոհաննու: - 549. Յերուսաղէմ *վասն* գերեզմանին քրիստոսի: - 549. Եւ ի կիպրոս *վասն* գերեզմանին ղազարու: - 549. Եւ ի հայք *վասն* սուրբ լուսաւորչին գրիգորի: - 549. Երրորդ` *վասն* ննջեցելոց ի յանբանից զենուլ և տալ ողորմութիւն աղքատաց: - 553. Որպէս և ո՛չ բարկանայ *վասն* պայծառակերպութեանն իւրաքանչիւր ոք յայլում ժամու տօնել: - 554. Իսկ *վասն* ջրոյն զի՞նչ պարտ է ասել. զի յոյնք թերի ցուցանեն զլատինացւոց խառնումն, ինքեանց կրկին խառնմամբն. և զայն խորհուրդ առեալ: - 554. Երկրորդ` սրբոյն Գրիգորի որ *վասն* շինութեան եկեղեցւոյ տեսիլն: - 555. Եւ բերէին զպատարագն որպէս *վասն* մեղաց` նոյնպէս և *վասն* յանցանաց: - 555. Բայց նախ զայս ասասցուք. զի մեղք մտացն կատարեալ մեղք է *վասն* բազում պատճառաց: - 556. Իսկ խորհուրդ ասէ *վասն* դիւաց. զի անմարմին է դևն: - 559. Եւ *վասն* **ե** պատճառի: - 560. Յառաջ շարժումն է բարկութիւն. զի *վասն* չարեաց ասէ բարեկամ: - 560. Նաև ասեն թէ` *վասն* փառաց աստուածանալոյն մեղանչեաց ադամ. և *վասն* նախանձու առն` կինն նախ եկեր զպտուղն: - 561. Իսկ եւագրիոս առաջին դնէ զորկորստութիւն *վասն* երից: - 561. Եւ է՛ հպարտութիւնն առաւել մեղք քան զամենայն *վասն* բազում պատճառի: - 561. *Վասն* բանին և անձնիշխան կամացն. զի անձնիշխան կամք անասնոց ո՛չ է. այլ բանականին: - 563. ...զի *վասն* բոլոր ժողովրդեանն մին էր զուարակ. և *վասն* միայն քահանայապետին մին. և զշնացեալ դուստր քահանային այրէին. և զժողովրդեանն քարկոծէին. և վա՜յ ինձ զի անձամբ զանձն իմ դատապարտեմ: - 563. Եւ այս *վասն* **բ** պատճառի: - 563. ...այսինքն չարութեամբն յորժամ կամքն կարէ՛ և գիտէ ընդ դէմ կալ չարի իմն, սակայն *վասն* չարութեան ընտրէ զայն: - 566. Տասներորդ` *վասն* հոգեմարտին մակեդոնի որ հայհոյէր զհոգին սուրբ նուազ ասելով քան զհայր և զորդի, ո՛չ թողցի նմա: - 566. Նաև ի յայն որում թողեալ լինի` **բ** ինչ պահանջի. այսինքն ցաւ *վասն* գործելոցն, և մտադիւրութիւն *վասն* ոչ գործելոցն...: - 567. Զի թէպէտ անպատեհ է ասել զբարկութիւնն առ աստուած զի անփոփոխելի քաղցրութիւն է. այլ կամքն որով մեղաւորքն *վասն* չար գործոցն տանջեալ լինին` բարկութիւն ասի աստուծոյ: - 569. Այս քան *վասն* մեղաց սակաւիկ: - 570. Եւ որպէս հաւատն է ի հանճարն, նոյնպէս յոյսն և սէրն են ի կամքն *վասն* **բ** պատճառի: - 572. Նա՛խ *վասն* աստուածութեանն

հօր: - 572. Երկրորդ *վասն* առաջին ծննդեանն քրիստոսի որ ի հօրէ: - 572. Երրորդ *վասն* մարմնով ծննդեանն ի կուսէն: - 572. Չորրորդ *վասն* չարչարանաց փրկչին: - 572. Հինգերորդ *վասն* թաղմանն ի գերեզմանի: - 572. Վեցերորդ *վասն* յարութեանն ի մեռելոց: - 572. Եօթներորդ *վասն* միւսանգամ գալստեանն: - 572. Ութերորդ *վասն* սուրբ հոգւոյն որ է՛ հաւասար հօր և որդւոյ: - 572. Իններորդ *վասն* հոգւոց մարդկան: - 572. Տասներորդ *վասն* մարմնոց ի մեռելոց յարութեան: - 572. Երրորդն՝ որդին աստուծոյ *վասն* մեր չարչարեալ և մեռեալ: - 573. Զի հաւատն է *վասն* անցելոցն և հանդերձելոց: - 574. Իսկ յոյսն *վասն* հանդերձելոյն միայն: - 574. Եւ այժմ յոյս մեր է՛ կրկին. նախ առ սուրբս *վասն* օժանդակութեան և բարեխօսութեան: - 574. Երկրորդ առ աստուած *վասն* յատուկ իշխանութեանն: - 574. Այս քան *վասն* Յուսոյ: - 574. Զի զաստուած սիրեմք ի յինքն և *վասն* ինքեան. այլ զընկերն ի յաստուած և *վասն* աստուծոյ: - 575. Երբեմն առեալ լինի *վասն* եռանդեան սիրոյն...: - 575. Դարձեալ՝ սէրն է սկիզբն բարեաց. զի յաստուծոյ է. և է՛ մէջ բարեաց. զի ըստ աստուծոյ է. և է՛ վախճան բարեաց. զի *վասն* աստուծոյ է: - 575. Դարձեալ՝ անկատար սէր է ծառայական երկիւղն *վասն* պատժոյն: - 576. Եւ կատարեալ՝ վարձկականն *վասն* պատուոյն: - 576. Եւ գերակատարն որդիական սէր *վասն* բնութեամբ բարւոյն: - 576. Նախ՝ յորժամ սիրեմ զիս *վասն* իմ. սէրս այս ո՛չ է բարի: - 576. Երկրորդ՝ յորժամ սիրեմ զաստուած *վասն* իմ. այս է վարձկականն: - 576. Երրորդ՝ յորժամ սիրեմ զաստուած *վասն* ինքեան զի բարի է. և սէրս այս բարի է: - 576. Չորրորդ՝ յորժամ սիրեմ զիս *վասն* աստուծոյ. և այս ևս է լաւագոյն. զի ո՛չ խնդրէ մարդ զիւրն, այլ զաստուծոյն միայն: - 576. Եւ *վասն* չորից պատճառաց լաւագոյն է սիրել քան զսիրիլ: - 576. Զթշնամիսն մեր պա՛րտ է սիրել և աղօթել *վասն* նոցա. և զթշնամիսն աստուծոյ ատել...: - 577. Այս քան *վասն* Սիրոյ: - 577. Այս *վասն* համանման գործոց նոցա այսպէս կարգի որ են ի նոսա. այլ յոյսն և սէրն են ի կամքն: - 578. Այս քան *վասն* Աստուածային Առաքինութեանց: - 578. Այս քան *վասն* արդարութեան: - 579. *Վասն* այս հրամայեաց քրիստոս «եղերուք խորագէտք իբրև զօձս և միամիտք որպէս զաղաւնիս»: - 579. Եւ ասացեալ է *վասն* հանճարոյ և գիտութեան ի վերոյ. ի **Ե** հատորն ի **ԻԷ** համարն: - 580. Այս քան *վասն* Խոհեմութեան: - 580. Արիութիւն է զօրութիւն իմն որով հեշտութեամբ տանի ամենայնի *վասն* սիրելի իրաց: - 580. Համբերութիւն է կամաւոր և միշտ տեսողութիւն մեծամեծ և դժուարին իրաց *վասն* օգտութեան և համեստութեան: - 580. Այս քան *վասն* Արիութեան: - 581. Այս քան *վասն* ողջախոհութեան: - 581. Եւ գիտեն զպատճառն թէ վասն է՞ր է ողջախոհ. այսինքն զի յանառակ կենաց ժլատութիւնք լինին. և նա ի հարկէ արի գոյ զախտն ստորադասելով. այնպիսին և խոհեմ գոյ գիտելով թէ *վասն* մարմնական հեշտախտութեանց լինի անիրաւութիւն: - 582. Այս քան *վասն* պարգևաց Հոգւոյն: - 583. Սուգն զնախանձն. զի որ սգայ *վասն* մեղաց այլոց, ո՛չ նախանձի ընդ նոսա: - 583. Սուգն է սըգալ *վասն* մեղաց և ատել զնա մինչ զի եղծանել զնոսա: - 583. Իսկ սգալ *վասն* չարին, զի փախիցուք ի նմանէ: - 583. Այլ սգալ *վասն* յատուկ ինչ չարի, է՛ իւրաքանչիւր առաքինութեան. զի իւրաքանչիւր առաքինութիւն սգայ *վասն* ներհակին: - 583. Նա՛խ՝ զի ի հոգին է. **բ**՝ զի *վասն* հոգւոյն տրտմի և ցաւի. **գ**՝ արտասուս հոսէ. **դ**՝ զմահ զդատաստան և զտանջանս ի միտ ածէ...: - 584. Իսկ ընդ դէմ այսմ, դիւական տրտմութիւնն ի մարմինն է և *վասն* մարմնոյն. և զարտասուս ցամաքեցնէ. և տրտմի և ամբոխի. և հետևի նմա ոխ և ատելութիւն. այլ և մահ ևս գործէ որպէս ասէ առաքեալն: - 584. ...**զ**՝ աղօթել *վասն* փրկութեան ընկերին...: - 585. Ա՛րդ՝ առեալ լինի աստ սրբութիւն սրտին ո՛չ *վասն* առաքինութեան, այլ *վասն* որպիսութեան իմն մաքրեալ հոգւոյն: - 585. Առաքինութիւնս այս ցուցանէ թէ համբերել հալածանաց *վասն* արդարութեան՝ կապակցեալ է ընդ խաղաղութիւնն. - 586. Զի տանելն մահու *վասն* քրիստոսի՝ է՛ նոյն աստիճան ըստ խաղաղութեանն: - 586. Հինգերորդ, զի թէ գո՛յր հնար կնոջ *վասն* հարկին առնել զգործ քահանայի, ընդէ՛ր ոչ կարաց նունի կոյսն մկրտել զոք ի վրաց յորժամ դարձոյց յաստուածգիտութիւն. - 589. ...կինն ծառայ և ոտք է առն. *վասն* այսր հարկի ո՛չ է պարտ ծառային առնել զգործ տեառն...: - 589. ...իսկ կանանց ազգին պատուիրէ՛ առաքեալն ի ժամ աղօթիցն շուք դնել գլխոյն *վասն* հրեշտակաց. այսինքն *վասն* քահանայից որ հրեշտակք կոչին ի գրոց...: - 590. Ասեմք թէ ո՛չ է պարտ կրկին մկրտել զմկրտեալն *վասն* **դ** պատճառի: - 590. Եւ *վասն* աւազանին ծննդեանն ասացեալ է առ սառայ ի **ժթ** գլուխն, ի **ժբ** համարն: - 591. Ո՛չ ումեք մեղք յայլմէ խնդրի. այլ ամենայն մարդ *վասն* իւր մեղացն պատժի: - 591. Ա՛րդ մկրտեալն ի քրիստոս՝ *վասն* հոգևոր հօրն ազատի ի հոգևոր պատժոյն. և *վասն* մարմնաւոր հօրն կրէ՛ զմարմնաւոր պատիժն: - 592. ...և այնուհետև ո՛չ *վասն* այլոց, այլ *վասն* ինքեանց մեղացն պատժին իւրաքանչիւրքն: - 593. Այս քան *վասն* մկրտութեան: - 593. Պատահմունք և որակն մնան ի հացն և ի գինին. իսկ գոյացութիւնն փոխարկի ի մարմին և արիւնն քրիստոսի *վասն* **դ**

պատճառի: - 597. *Վասն* **գ** պատճառի: - 598. Իսկ *վասն* թացեալ պատառին զանազան են կարծիք: - 599. Այս քան *վասն* հաղորդութեան: - 600. Ապաշխարութիւնն է ցաւիլ *վասն* մեղացն զոր գործեաց. - 601. ...և պատժէ զինքն *վասն* չարին զոր արարեալ լինի: - 601. Դարձեալ ապաշխարութիւն է *վասն* անցեալ չարեացն լալ. և լալովն վերստին այլ ո՛չ առնել: - 601. Իսկ յորժամ քահանայն լաւ քննէ զխղճմտանքն ժողովրդեանն. խորհի *վասն* ապաշխարութեանն թէ ո՞րպէս կարէ ապաշխարել...: - 601. ...*վասն* անցեալ մեղացն ցաւի. և խոստանայ այլ ո՛չ մեղանչել զանցեալ մեղքն: - 602. Ասեն վարդապետք թէ՝ զմի անգամ խոստովանեալն բարի հաւատով և կատարեալ զղջմամբ՝ ո՛չ է պարտ կրկնել. եթէ ոչ *վասն* չորից պատճառաց: - 603. Եւ *վասն* ներելեացն թողութեան ասացաւ ի թուոց **իբ** գլուխն, **կա** համարն: - 603. Այս քան ի կարճոյ *վասն* ապաշխարութեան: - 603. ...նախ *վասն* ա՛յս խորհրդոյս է. և երկրորդ՝ զի մկրտութիւնս մեր ո՛չ ի ջուրն յովաննու, այլ ի մահն քրիստոսի է: - 605. ...և է՛ առաջին *վասն* նոր պատերազմին որ առաջի կայ: - 605. Այս քան *վասն* Օծման: - 605. ...և օրհնել ծէթ կնքոյ *վասն* յաւելուածոյն. արկանելով յառաքելական ծիթոյն. զոր օրհնէ եկեղեցի յաւելուածով: - 607. Իսկ զաւակն, զի ծնցի և սնուցանի ի պաշտօնն աստուծոյ. զի *վասն* ծննդեան զաւակին է հրաման պսակին: - 610. Զի թէպէտ և եկեղեցի սուրբ կարէ՛ բաժանել *վասն* արգելմանցն...: - 610. Վեցերորդ, զի և առաջին ծնօղքն և հարք թէպէտ աւելի կին առնուին *վասն* զաւակաց, այլ հարսանիսն կրկնեալ ո՛չ ընթերցեալ լինի: - 612. Նա՛խ՝ զի արք *վասն* նորա ի զազիր տեղիսն խոնարհեսցին...: - 613. Եւ հեշտութիւնն է *վասն* որդէծնութեան, և որդէծնութիւնն *վասն* հեշտութեան, կամ ի պաշտօնն աստուծոյ: - 613. Ա՛րդ՝ նահապետքն առնուին բազում կանայս *վասն* որդէծնութեան և լրման մարմնաւոր օրհնութեանն: - 613. Եւ երկրորդ, ընդ դէմ օրինացն աստուծոյ կորուսանի բեղնաւորիլն *վասն* յաճախ սերմանցն: - 613. *Վասն* բազում պատճառի: - 615. Նա՛խ՝ զի *վասն* յանցանաց մարդոյն ադամայ դատապարտեցան տարերք. հող, ջուր, և այլն...: - 615. Նա՛խ՝ զի զմի օր նոցա տօնեմք. և **է** յաւելեալ *վասն* **է** զգայարանաց. և *վասն* եօթնեկի մեղաց քաւութեան: - 616. Երրորդ, *վասն* է կենցաղոյս՝ և ըստ հանդերձելումն **ը** օր տօնեմք: - 616. Վեցերորդ՝ արտասուքն զզղջումն և զուգն նշանակէ՛ զոր ունիմք *վասն* մեղաց: - 619. Եւ ի հիւթոյն յայնմանէ ելեալ ի գլուխն լինի արտօսր քաղցր *վասն* քաղցրութեան լերդին: - 619. ...և հիւթն ելեալ ի գլուխն լինի արտասուքն դառն *վասն* լեղւոյն: - 620. ...և երեսն լսնանայ *վասն* դեղնութեանն. և կապուտի ընդ կարմիրն խառնելով: - 620. Այլ գիտելի է, զի **գ** է արտասուքն հոգևոր. մին *վասն* մեղաց. որ է՛ ապաշխարութիւն: - 620. Երկրորդ *վասն* ընկերին. որ է՛ ողորմութիւն և առաքինութիւն: - 620. Երրորդ *վասն* արքայութեան. որ է՛ երանութիւն...: - 620. Եւ **դ** փոխն *վասն* չորեքնիւթեայ բնութեանս. և *վասն* **դ** պահու գիշերոյն...: - 621. Որդորմեայն ի դէմս հօր որ առաքեաց զորդին ի խաչ. և պատարագն ի դէմս որդւոյ որ խաչեցաւ *վասն* մեր: - 622. Այլ թէպէտ առանձնականն կամաւո՛ր է, սակայն ի վերայ վանականաց որք են աբեղայք և կրօնաւորք, հարկաւո՛ր է *վասն* **դ** պատճառի: - 623. Չորրորդ՝ *վասն* հասարակ և յայտնի մեղաց՝ պա՛րտ է հասարակ և յայտնի աղօթել...: - 623. ...և *վասն* առանձին գլորման՝ պարտ է առանձնակի աղօթել և ապաշխարել: - 623. Եւ դարձեալ՝ *վասն* ելից մեր և մտից. որ է՛ մահ և կեանք: - 623. և Չորրորդ՝ *վասն* այսմ աշխարհիս և հենդերձելոյն առանձնակի աղօթեմք փրկիլ ի փորձանաց: - 623. Այս *վասն* առանձին աղօթից: - 624. Այլ *վասն* առաջնոյն՝ գոհանամք, զի հասոյց զմեզ ի ժամս այս աղօթից: - 624. *Վասն* երկրորդին՝ յայտնեմք զփառս և զմեծութիւն նորա: - 624. *Վասն* երրորդին՝ վկայե՛մք և կցորդիմք բարութեան նորա և երանութեան: - 624. Այլ աղօթքն *վասն* հանդերձելոյն է: - 626. Գոհութիւնն *վասն* անցելոյն յաղագս առաւել պարգևացն է: - 626. Այլ և *վասն* գոհութեան գիտելի է...: - 626. Եւ *վասն* բազում պատճառի պարտ է գոհանալ: - 626. Եւ **է** սրսկումն արեան. *վասն* եօթնից զգայարանացս սրբութեան: - 626. Զի անուշահոտ վարուք հաճոյ եղեն աստուծոյ. և բուրմամբ աղօթից բարեխօսե՛ն *վասն* մեր: - 628. Եղիցի անունն, *վասն* ադամայ նուազ ձայնիւ: - 628. Իսկ ողորմեայն է՛ որպէս հարցն *վասն* յանցանացն ադամայ: - 628. Եւ ի գուճ կալն, *վասն* կործանման մեղացն: - 628. Եւ երեքսրբեանն, գառն անմահ զենեալ *վասն* մեր: - 629. Չորրորդն պարտապան գոհութեան *վասն* էից փոփոխման. և ոմանց ամօթ պատկառանաց: - 630. Այս քան *վասն* կանոնագլխոցն: - 630. Անբիծքն *վասն* մեղաց պատարա՛գ է. նոյնպէս և յիսներորդ ողորմեայն *վասն* մեղաց է ալէլու ո՛չ ասի: - 630. Զի այսպէս ասէ նեքտառիոս հայրապետն հռօմայ թէ՝ չէր հնար իջուցանել զմարմինն տեառն ի խաչէն *վասն* փայլատակմանցն ի խոցուածոյն: - 631. Ապա ի բացեայ կացեալ և զձեռս համբարձեալ ասէ, Սուրբ աստուած Սուրբ և հզօր Սուրբ և անմահ որ խաչեցար *վասն* մեր ողորմեա՛ մեզ: - 631. Եւ վկայէ՛ մեզ աւետարանիչն յօհաննէս. զի ասէ՝ եսայի ետես զփառս նորա և խօսեցաւ *վասն* նորա...: - 632. Որ կամաւ խաչեցար *վասն* մեր,

նոյն սիրովն ողորմեա՛ մեզ: - 632. Այսպէս հանապազ յիշատակեմք զերախտիս նորա որ *վասն* մեր խաչեցաւ: - 632. Երկրորդ, զի յայսպէս ասել սուրբ աստուած սուրբ և հզօր սուրբ և անմահ քրիստոս որ խաչեցար *վասն* մեր ողորմեա՛ մեզ: - 633. Որպէս ասացաք՝ *վասն* գերապատուութեան կատարումն և աւարտ ամենայն աղօթից զայն երգեմք: - 634. *Վասն* քրիստոսի ասէ որ եղև մեզ զօրութիւն յազգէ դաւթի: - 638. Եւ ոմանք ասեն **ը** ձայն *վասն* ութ ձայնաւոր գրոց. և **ժ** ձայն ըստ **ժ** առոգանութեանցն: - 640. Այլ սուրբն ստեփաննոս սիւնեաց, և մեծն ներսէս, *վասն* պատուոյ՝ նախ զխաչի տունն են ասացեալ, և ապա՛ զաստուածածնին: - 642. Եւ այս *վասն* երեք պատճառի: - 643. *Վասն* բազում պատճառի: - 647. Նո՛յնդ է պատճառ և *վասն* յիսներեկին. զի յաղուհացն զշաբաթ և զկիրակէ պահեաց... - 649. Իսկ պահքն սուգ է և ապաշխարութիւն *վասն* յանցանաց նախաստեղծիցն...: - 650. ...որպէս չորեքշաբաթն *վասն* նայի, և ուրբաթն *վասն* ադամայ... - 650. ...և այլ պահք ամենայն *վասն* ներգործեալ մեղաց մերոց: - 650. Զի ընդ ապաշխարութեամբ եմք *վասն* յանցանաց մեր...: - 650. ...այլ *վասն* յարութեանն քրիստոսի բուն բարեկենդան կարգեցաւ...: - 651. Չորրորդ յայտնի և հաստատուն, որ ամենայն ազգ քրիստոնէից պահեն զչորեքշաբաթն և զուրբաթն *վասն* խաչելութեանն որ սո՛ւգ է և պահք: - 652. Ահա՛ ա՛յս է կանոնք *վասն* պահոց չորեքշաբաթի և ուրբաթի: - 652. Ուստի՞ ունիմք վկայութիւն *վասն* պահոց: - 652. Իսկ *վասն* քառասնից պահոց, Նախ մովսէս պահեաց կրկին **խ** ի լերինն. և յեսու ընդ նմա: - 652. Իսկ ճշմարտութիւնն ի մեզ, *վասն* **ե** զգայարանացս սրբութեան. որով մեղանչեմք՝ սրբիմք պահօք և ապա՛ սրբոցն ի բարեխօս մեզ: - 653. ...*վասն* տեսականին սրբեմք զչորեքշաբաթն...: - 654. ...և *վասն* ներգործականին զուրբաթն. որով սրբասէր լեալ հասցուք առ ճշմարիտն և առ բարին ի ձեռն աստուծոյ: - 654. Երկրորդ, զի **ծ** օր պահեցաք *վասն* հոգւոյն...: - 654. ...և **ծ** օր ուտեմք *վասն* մարմնոյն: - 654. Երրորդ, աղուհացքն այսմ կենաց խորհուրդ, որ եմք ի սուգ *վասն* մեղաց...: - 654. Այս քան *վասն* Աղօթից և Կարգաց եկեղեցւոյ և Պահոց: - 654. Իսկ *վասն* ողորմութեան ասացաւ ի վերոյ **լ** գլուխն յառաջին համարն: - 654. ...պա՛րտ է *վասն* ամենեցուն աղօթել և զպարտս նոցա վճարել: - 655. Նա՛խ՝ զի բաժանիցուք յայնցանէ որք զգինի մեղաց ըմպեն. և *վասն* մեղաց արբենան և շռայլին: - 656. Յայսմանէ է առեալ հրաման *վասն* բարեկենդանի: - 657. Իսկ զկամքն տալ աստուծոյ հաճո՛յ է քան զպատարագ՝ *վասն* չորից: - 658. Չորրորդ՝ զի այս՝ է՛ խօսուն և բանաւոր պատարագ և այն անբան զենումն զոր խօսեցաւ *վասն* հնոյն...: - 658. ...իսկ այս ընտրեցաւ *վասն* նորոյս և ճշմարտութեան: - 658. Այս քան *վասն* մատաղի: - 658. Իսկ *վասն* ագապս առնելոյ որ է՛ ոգէհանգիստ. և *վասն* քահանայաթաղին որ է՛ **ժը** աւետարան...: - 658. Իսկ *վասն* տեառնականին և աղօրհնէիցն, սուրբն յուստո՛ս է արարեալ. որ չորրորդ եպիսկոպոս էր յերուսաղէմ յառաքելոյն յակոբայ: - 659. Իսկ *վասն* գրակարդացի և նկարեալ եկեղեցւոյ. և *վասն* զնշխարս ի հանգիստ փոխելոյ. այս ամենայն յիշատակ է մեզ ի սրբոյն գրիգորէ՛ լուսաւորչէն մերմէ: - 659. Իսկ *վասն* քահանայօրհնէիցն, սուրբն սահա՛կ է արարեալ. յառաջին ամի եպիսկոպոսութեան իւրոյ. ի նաւասարդի ամսեանն որ օր մի էր. և յիշատակ սուրբ կարապետին արար զքահանայօրհնէքն: - 659. *Վասն* ի վերուստ: - 659. *Վասն* ի գիշերի. և այլն: - 659. Իսկ *վասն* հիմնարկութեան սուրբ տաճարի և ժամահար օրհնելոյ. սկիհ և մաղզմայ. և զգիրք. և զկնունք առնելոյ. և խաչօրհնելոյ. և զքառասնորդաց **գ** ժամուց զքարոզքն և զաղօթսն, յոհան մանդակունին է արարեալ...: - 659. ...նա զձեռն ի վեր առեալ գոհանայ զաստուծոյ. նմանապէս թէ պատմի *վասն* վախճանի ուրուք: - 659. Այս քան մինչև ցայս վայր՝ *վասն* այժմույս, և կարգաց եկեղեցւոյ...: - 659. Երկրորդ՝ *Վասն* է փոփոխման մարդոյն: - 660. Երրորդ՝ *Վասն* ճանապարհաց. և պակասելոյ: - 660. Եւ *վասն* մահու և ոգէվարի թէ զի՞նչ լինելոց է: - 660. Չորրորդ՝ *Վասն* ոգւոյ. և կարգ կատարելոյ. և պատանաց, և այլն: - 660. Վեցերորդ՝ *Վասն* գերեզմանին. և ի հող թաղելն. և Կոչումն գերեզմանին: - 660. Եօթներորդ՝ *Վասն* երկրորդ աւուրն. այցալացքն ի **ժ** միտս: - 660. Ութերորդ՝ *Վասն* երեք աւուրն **ժ** միտք: - 660. Իններորդ, *Վասն* **է** օրէիցն. և մեռելոցն. և գերեզման օրհնելն. և տուն օրհնել: - 660. Տասներորդ, *Վասն* բաժանման հոգւոցն թէ ճանաչե՞ն զմիմեանս. և գիտե՞ն զմեզ. և աղօթե՞ն ի վերայ մեր: - 660. Եւ *վասն* նեռին և պատրանաց նորա: - 660. *Վասն* առաջին յարութեանն հոգևոր: - 660. *Վասն* փողոյն գոչման: - 660. *Վասն* յարութեան մարմնոյ. և սահմանի նորա: - 660. Համանգամայն յառնեմք. և *վասն* կերակրոյ. և կերեալ մարդոյ ի գազանաց: - 660. *Վասն* հասակացն: - 661. *Վասն* գալստեան. և նշանացն նորին. և կատարածի հրոյն: - 661. *Վասն* աթոռոյ և փառաց նստելոյն: - 661. Ուղիղ է դատաստանն աստուծոյ. և յաւիտեան տանջէ. և *վասն* կշռոց դատաստանին: - 661. *Վասն* հնձանաց. և դժոխոց. և ծխոյ. և անվախճան է հուրն. և անհանգիստ տանջանքն: - 661. *Վասն* արքայութեան բան յերկար: - 661. Քառասունք**բ**, *Վասն* բնակութեան անտի: -

661. *Վասն* ուրախութեան և փառաց նոցա: - 661. Եւ *վասն* հաւատոյ բան: - 661. Յետ այսորիկ հարցանելի՛ է *վասն* հանդերձելոյն: - 662. Այսպէս և այս կարգաւո՛ր է և ուղիղ *վասն* բազում պատճառի: - 662. Այլ *վասն* ողջութեան և հիւանդութեան՝ մեծութեան և աղքատութեան՝ այժմ ասասցի: - 664. Եւ տայ աստուած զմեծութիւն *վասն* **դ** պատճառի: - 664. Երկրորդ, որք կամաւ աղքատանան *վասն* քրիստոսի: - 664. Եւ լինի այս ևս *վասն* չորից պատճառաց: - 664. Երրորդ, զլաւ մարդն աղքատացնէ և փորձէ, թէ *վասն* ընչի՞ցն սիրէր զաստուած՝ թէ յաղքատութեանն այլ նոյնպէս է. որպէս յոբայն: - 664. Դարձեալ՝ *վասն* հիվանդութեան գիտելի է, զի է ի մէջ մահու և կենաց: - 665. Եւ *վասն* **յ** երկարութեան կենաց, և *վասն* ո՛չ գիտելոյ զօր մահուն և զկատարածի, ասացեալ է ի վերն առ նահապետսն ի **դ** համարն: - 665. Գտցես և *վասն* մահու առ խաչելութեանն քրիստոսի ի **լ** գլուխն ի **իզ** համարն: - 668. Եւ զի օծանի *վասն* բազում պատճառի: - 672. ...որպէս ասեն ոմանք. *վասն* սոցա երեք հանգստեան տամք և աւետարան ընթեռնումք: - 675. ...*վասն* սոցա թողութիւն խնդրեմք: - 675. Հինգերորդ, զի **գ** է հասակ մարդոյս. մանկութեան երիտասարդութեան և ծերութեան յորում փոփոխիմք վարուք. *վասն* սոցա **գ** հանգիստ դնեմք: - 675. Իններորդ, *վասն* **գ** գոչման փողոյն երիցս ընթեռնումք զաւետարանն: - 675. Նա՛խ՝ արտասւեմք զբնութիւնս մեր թէ *վասն* մեղաց յո՞րպիսի կենաց դրախտին ի մահ անկաւ և ի հող դարձաւ: - 676. Զի *վասն* յանցանացն ադամայ անիծաւ երկիր ի գործս նորա. զսուրբ մարմինն քրիստոնէի չէ՛ պարտ դնել յանսուրբ հող...: - 676. Այս *վասն* սրբոց մարմնոց: - 678. Իսկ վեցերորդ պատճառ *վասն* հասարակաց ամենայն մարդկան, զի ի հողոյ սկսաւ, դարձեալ ի հող վախճանի մարմինն...: - 678. Իսկ տապանաքարն, Նա՛խ՝ զի մի՛ գործեսցի երկիրն այն յայլ ինչ գործ, կամ քակտեսցի *վասն* այլ մեռելոյ: - 679. Եւ այս *վասն* երկու պատճառի: - 679. Այսոքիկ այս քան *վասն* կարգ կատարելոյ առաջին աւուրն: - 679. Դարձեալ՝ երէկ *վասն* մեռելոյն կսկծոյ կոծ մեծ արարաք. և այն դժուարութիւն էր աստուծոյ...: - 680. ...զի մեղքն առնելն է, և պատիժն կրելն. յերեկեան օրն *վասն* մեղաց խնդրեցաք. այսօր *վասն* պատժոց: - 680. ...*վասն* այսցիկ պատճառի կրկին գամք ի գերեզմանս: - 680. ..և յէութեանս միշտ փոփոխիմք *վասն* կարօտութեան...: - 681. Նա՛խ՝ որպէս ասացաւ ի քահանայաթաղն *վասն* **է** շնորհաց հոգւոյն, և **է** խորհրդոց եկեղեցւոյ, և **է** առաքինութեանց, և **է** գլխաւորագոյն մեղաց, և **է** զգայարանօք մեղանչեմք, և **է** փոփոխմամբ հասակի...: - 683. ...և *վասն* եօթնից աստիճանաց, և եօթն աստեղան խորանացն, եօթօրէք կատարեմք: - 683. Յետ մարմնոյ կատարմանց՝ հարցանեմ և *վասն* բաժանեալ հոգւոց: - 685. Հոգիք արդարոցն զամենայն գիտեն զոր ինչ *վասն* նոցա գործեմք. և *վասն* մեր բարեխօսե՛ն և կատարե՛ն զխնդիրս: - 685. Հոգիքն աղօթե՞ն *վասն* սիրելեաց իւրեանց, թէ ոչ: - 685. Արդարքն *վասն* իւրեանց սիրելեացն միշտ աղօթեն զի ազատեսցին ի փորձանաց և ուղղեսցին ի մոլորութեանց և ընկեր փառաց նոցա լինիցին: - 685. Իսկ մեծատունն *վասն* եղբարցն աղօթէր, զի մի՛ տանջանքն իւր առաւելասցի *վասն* նոցա: - 685. Դարձեալ աղօթքն՝ չարչարանքն և բարի գործքն է նոցա, զոր *վասն* քրիստոսի կրեցին. - 685. Այլ ըստ պսակացն որ մարմնով կատարին՝ և *վասն* ընկերացն որ ժողովին՝ պակաս է նոցա. զոր ի կատարածի լինելո՛ց է ի գալուստն քրիստոսի...: - 686. Առաջինն *վասն* պատժոյն ադամայ: - 686. Երկրորդն *վասն* շնորհացն քրիստոսի: - 686. Երրորդն *վասն* իւրաքանչիւր գործոցն առանձնակի: - 686. Նա՛խ՝ *վասն* նորընծայ հաւատացելոցն. անկիրթ գոլով կատարեալ տեսութեանց...: - 687. Իսկ «գերեզմանք տունք նոցա»՝ *վասն* մարմնոյն ասէ: - 687. Եւ *վասն* այսմ տեղւոյ ասէ տեսիլն՝ «մահ և դժոխք ետուն զիւրեանց մեռեալս»...: - 689. Մատռուակն ուրա՛խ էր. և խոհագործն տրտում *վասն* ցուցման երազոյն: - 689. Դարձեալ՝ մի ասի կայանք երկուցն *վասն* միոյ ակնկալութեան. զի արդարքն ակնունին պսակաց, և մեղաւորքն տանջանաց: - 689. Ապա թէ ոչ՝ ո՛չ կարէ մեղաւոր հոգին ելանել յերկինս. ուստի և հրեշտակք *վասն* մեղաց անկան. և մարդն ի դրախտէն: - 689. ...որպէս *վասն* նեռինն և դատաստանին ետես. նոյնպէս և զհատուցումն սրբոց: - 690. Ոչ մկրտեալքն կամ չարքն ո՞չ ունին տանջանս *վասն* սկզբնական կամ ներգործական մեղաց: - 690. Վասն այսորիկ արդար դատաւորն զհոգի և զմարմին ի միասին յարուցանէ և դատէ՛. եթէ *վասն* մեղաց ի տանջանս և եթէ *վասն* արդարութեան յարքայութիւնն երկնից: - 691. Եւ թէ մասն մարդոյն որ է հոգին՝ տանջի այժմ *վասն* մեղաց և մարմինն հանգչի, այս ո՛չ է ուղիղ, նոյնպէս և զփառսն: - 694. ...զի յարութիւն *վասն* հատուցման գործոցն է: - 694. Արդ եթէ սիրելիքն աստուծոյ որք զարիւնս իւրեանց հեղին *վասն* քրիստոսի՝ ոչ առնուն զվարձս իւրեանց, նմանապէս և ամենայն ազգ մարդկան: - 694. Ասեմք եթէ՝ անդրանիկ և կատարեալ ո՛չ *վասն* պսակացն ասէ որ դեռ առնելո՛յ են: - 695. Ասեմք եթէ՝ այսմ պատասխանի ասացաւ յառաջագոյն. զի ո՛չ ուղղակի իմանան *վասն* առակին...: - 696. ...զոր *վասն* յոյժ ժտելոյն՝ յարուցեալ միտքն տացէ

զխոստովանութիւն հաւատոյ սուրբ Երրորդութեանն. զոր յերիս նկանակս յառակեաց: - 697. Յայտ ուրեմն է թէ ո՛չ է առակս *վասն* հաստուցման արդարոց: - 697. Եւ *վասն* **դ** պատճառի ո՛չ ասեմք քաւարան հրոյ: - 698. ...զի *վասն* անտի քաւարանին աստ ո՛չ պահեն և ո՛չ աղօթեն. և անդ ի դժոխս մատնին: - 698. *Վասն* **բ** իրաց: - 701. Նա՛խ՝ *վասն* հեշտ ցանկութեան իւրեանց զոր ոչ կամին ելանել անտի...: - 701. Երկրորդ, ասեն խնդրէ արդարութիւնն աստուծոյ՝ զի *վասն* մեղաց պատիժ տացի. որպէս յօրէնս մարդկային պատժին յանցաւորք...: - 701. Ասեմք նախ՝ եթէ մարգարէն դաւիթ *վասն* բոլոր աշխարհի ասէ որ ջրով և հրով անցանի. և ապա հանգիստ յաւիտենական լինի...: - 701. Ահա՛ յայտնապէս զփայտ զխոտ և զեղէգն զոր նոքա *վասն* քաւարանին ասեն...: - 703. ...մաղաքիա *վասն* մեծամեծ մեղացն ասէ: - 703. Ասեմք նախ՝ եթէ գնալ առ քրիստոս՝ *վասն* յարութեանն ասէ և զվերջին հուրն...: - 703. ...որպէս և ամենայն աղօթք մեր *վասն* կատարածի և յարութեանն է, նոյնպէս և այս: - 703. Դարձեալ՝ թէպէտ *վասն* հոգւոյն ասեմք որպէս այս, և տեսիլ անտօնին, և այլոց, այն ո՛չ է բերքաթուր. այլ պատերազմ դիւաց. որպէս աստ մարմնով, նոյնպէս և յետ մահու առ հոգիսն. - 703. ...այլ ասէ՝ «սաստեսցէ՛ ի ձեզ տէր». որպէս միքայէլ *վասն* մովսիսեան մարմնոյն...: - 703-704. Ասեմք առ այս թէ ոչ. *վասն* **բ** պատճառի: - 704. Այլ և *վասն* դժոխոց ասացաւ ի վերոյ ի մարդեղութեան ճառն. ասի և յառաջիկայդ ի կատարածի: - 705. Այլ և *վասն* կապելոյն սատանայի գրեալ է ի **թ** գլուխն ի **իզ** համարն ի վերոյ: - 706. Եւ *վասն* հրեղէն վիշապին և տտան նմին ասացաւ ի վերոյ **թ** գլուխն **իե** համարն: - 706. Եւ այս նախ *վասն* գերազանց գործոյ երից մասանց հոգւոյն: - 712. Այս քան *վասն* հոգեւոր և առաջին յարութեանն: - 713. Երկրորդ, զի հոգին մարդոյ անմա՛հ է *վասն* **բ** պատճառի: - 715. Եւ այս *վասն* բազում պատճառի: - 716. Եւ տէրն *վասն* կերակրոյն ո՛չ ասաց թէ ի մարմին մարդոյն ո՛չ հաւասարի. այլ զայն թէ՝ դառնութիւն և ծանրութիւնն արտաքս ելանէ...: - 718. Գիտելի՛ է, զի ոմանք հերձուածօղք մոլորեցան *վասն* յարութեան մեռելոց և ասացին թէ մարմինն ո՛չ բաղկանայ ի չորից տարերց. այլ լինի պարզ: - 720. Եւ *վասն* **գ** պատճառի զայս օրինակ առնու: - 720. Եւ ա՛յս է պատճառ յարութեանն. զի ամենայն մարդիկ առնուցուն զվարձ կամ զպատիժ. կամ *վասն* իւրեանց գործոց, կամ *վասն* սկզբնականին: - 724. Այլ արդ՝ երեխայքն որ յառաջ քան զմկրտիլն մեռանին, *վասն* ադամայ մեղացն պատժին: - 724. Ասեմք, թէպէտ այնպիսի անդամքն ո՛չ են պիտոյ ի յարութեանն, սակայն յառնեն *վասն* կատարելութեան և գեղեցկութեան. - 725. ...որպէս ստինքն զի ո՛չ է պէտք կաթին, այլ առնէ *վասն* կատարելութեան և գեղեցկութեան մարդոյն: - 725. Երկրորդ *վասն* մեծացն գործոց...: - 726. Իսկ այլ ամենայն մարմինք շնչաւոր և անշունչ, տունկք և կենդանիք ամենայն ապականին *վասն* **գ** պատճառի: - 727. Երկրորդ՝ զի կենդանիք և բոյսք ստեղծան *վասն* մարմնաւոր կենդանութեան մարդկան...: - 727. Նորոգին արարածք *վասն* կրկին պատճառի: - 727. Նա՛խ՝ զի ապականեցան տարերք *վասն* յանցանաց մարդոյն, պա՛րտ է զի ընդ մարդոյն նորոգեսցին և նոքա: - 727. Եւ *վասն* պարզութեան երկրի վկայէ՛ դաւիթ, «լերինք որպէս մոմ հալին»: - 728. Նա՛խ՝ այն է գալարիլն երկնի, զի եթերն որպէս մագաղաթ ծալեալ նուազի և նսեմանայ *վասն* առաւել ճառագայթից լուսաւորացն հրեշտակաց և սրբոցն յերկնէ երևեալ: - 729. Երրորդ՝ դարձեալ զերկնային զօրութեանց վշտանալն ցուցանէ ի վերայ կործանելոցն. զի *վասն* իմ գալարին և ընդ իմ կործանումն՝ տրտմութիւն զգենուն: - 729. *Վասն* երկու պատճառի: - 731. Եւ այս *վասն* կրկին պատճառի: - 732. Իսկ *վասն* խաչին ասէ «փայտ կենաց է ամենեցուն»: - 734. *Վասն* բազում պատճառի ասէ: - 735. ...յիրաւի է ուրեմն որում անիրաւութիւնն եղև առնել դատաստան *վասն* վրիժու. թէպէտ նմա հայր և հոգին սուրբ գործակից լինին: - 735. ...ընդ որում անպատշա՛ճ էր լինիլ խօսակից և զուստն ո՛չ գիտել. այլ պատշա՛ճ էր որդւոյ *վասն* մարմնով երևելոյն: - 735. Եւ մի՛ *վասն* անարգանաց եղբօրն որոշիլ ի գլխոյն և ի դատաստան մահու մատնիլ: - 735. *Վասն* աթոռոց երիս իր գիտեմք: - 736. *Վասն* առաջնոյ աթոռոյն ասէ մարգարէն «աստուած նստաւ յաթոռ սրբութեան իւրոյ»: - 736. *Վասն* երկրորդին ասէ մարգարէն «աթոռ քո աստուած յաւիտեանս յաւիտենից. գաւազան ուղղութեան գաւազան արքայութեան քո»: - 736. *Վասն* երրորդին ասէ մարգարէն «յիրաւունս և արդարութիւն ուղղեալ է աթոռ նորա»: - 736. Այժմ կա՛լ ասի և մարտնչիլ *վասն* հարսին եկեղեցւոյ: - 736. ...և *վասն* հոգւոյն ասէ դաւիթ՝ «առաքես զհոգի քո և ստանաս զնոսա և նորոգես զերեսս երկրի»: - 737. Այսքան *վասն* փառաց աթոռոյն: - 737. Եւ այս *վասն* **գ** պատճառի: - 738. Երկրորդ, զի դատաստանն պա՛րտի յայտնի լինի. այլ՝ արդ՝ երուսաղէմ է՛ առաւել յայտնի *վասն* փրկութեանն որ անդ կատարեցաւ: - 738. Վճիռ որ *վասն* բարեացն է՝ պարունակէ՛ յինքն է մասունս օրհնութեան: - 740. Զի անարժանքն զաստուածութիւնն քրիստոսի ո՛չ տեսանեն *վասն* կրկին պատճառի: - 740. Իսկ զմարդկութիւնն քրիստոսի տեսանեն, նաև զխոցուածն, *վասն* **բ** պատճառի: -

740. Երկրորդ՝ տեսանեն և կսկծին. զի ո՛չ հաւատացին ի խաչեալն *վասն* մեր: - 741. Իսկ յայսպիսի տեսութենէս ո՛չ ուրախանան, այլ տրտմին. և այս *վասն* նախանձու նոցա ընդ բարեբաստութիւնս այլոց: - 741. Ի թաբօր մովսէս և եղիա վկայէին *վասն* մահու նորա: - 742. Զի դատաւորք երկրի *վասն* չորից թիւրեն զդատաստանս: - 744. Նախ *վասն* տգիտութեան: - 744. Երկրորդ *վասն* երկիւղի: - 744. Երրորդ *վասն* ակնառութեան: - 744. Չորրորդ *վասն* կաշառաց: - 744. Ապա ուրեմն յիրաւի և արդարապէս հատուցանէ աստուած չար փոխանակ չարեաց. այսինքն պատիժ *վասն* անիրաւութեան նոցա. զի արդար է աստուած: - 744. Դարձեալ՝ առաջինն *վասն* չարաց. երկրորդն *վասն* բարեաց. երրորդն *վասն* չարաց և բարեաց: - 747. *Վասն* չորից: - 750. Երկրորդ *վասն* ժամանակին. զի փոխեալ է ի յաւիտեան: - 750. *Վասն* չորից անհանգիստ տանջին մեղաւորքն յաւիտեան. որպէս տեսանի ի մարմնաւոր տանջանացս: - 750. Նախ *վասն* մարդոյս. զի մին մեղացն կրկին հատուցանի աստ հոգւով և մարմնով. իսկ եօթնպատիկն է՛ ի հուրն յաւիտենից: - 750. ...դիւացն եօթնեկի է հատուցումն *վասն* եօթնեկի յանցանաց նոցա. և եօթն գլխաւորագոյն մեղացն: 750. *Վասն* երկրորդին ասէ տէր, «դատաւորն մատնեսցէ դահճի, և արկանիցի ի բանտ և ո՛չ ելանիցէ անտի». զի ո՛չ է հատուցումն մեղաց և ո՛չ զրաւ տանջանաց: - 751. *Վասն* երրորդին ասէ առակն. «կռանք հարկանիցեն զմարմինս ամբարշտաց»: - 751. *Վասն* չորրորդին ասէ տեսիլն «որ քան մնաց ի հեշտութիւնն, այնքան տուք նմա տանջանս»: - 751. Երկրորդ՝ անտանելի ցուրտ. յոր եթէ հրեղէն լեառն անկանէր՝ սառն դառնայր. *վասն* այս երկուցս ասի՝ լալ աչաց և կրճել ատամանց...: - 752. *Վասն* առաջնոյն, որք աստ հրով ցանկութեանցն վառեցան, արդարապէս բորբոքին: - 752. *Վասն* երկրորդին, որք ցրտիւ չարութեան աստ կարծրացան, արդարապէս անդ տանջողական ցրտիւ կրճտեն զատամունս իւրեանց: - 752. *Վասն* երրորդին, զի նախանձ և ատելութիւն աստէն որպէս որդունք խածատեցին զընկերս. արժանապէս որդունքն անդ խածատեն զնոսա: - 752. *Վասն* չորրորդին, որք աստ ժահահոտ նեխութեամբ պոռնկութեանն քաղցրապէս փափկանային. արդարապէս անդ դառնապէս տանջին: - 752. *Վասն* հինգերորդին, որք աստէն զխրատս ընդունել ո՛չ կամեցան և ընդ մարդկան տանջիլ ո՛չ արժանացան...: - 752. *Վասն* վեցերորդին, որք զխաւար մեղաց աստէն սիրեցին և առ լոյսն քրիստոս գալ ո՛չ կամեցան...: - 752. *Վասն* եօթներորդին, որք զմեղս խոստովան լինիլ ո՛չ կամեցան զորս առնել ո՛չ էր պարտ...: - 752-753. *Վասն* ութերորդին, որք աստ ի տեսանելոյ զբարիս և ի լսելոյ խոյս տային. արդարապէս ահագին տեսլեամբ և լսելեօք թշւառապէս զարհուրին ընդ իւրաքանչիւրոցն: - 753. *Վասն* իններորդին, որք աստ իւրաքանչիւր մեղօք գոյին շաղախեալք. արդարապէս ունին զիւրաքանչիւր անդամս կապանօք կաշկանդեալս. և ցանկան մեռանիլ և փախիցէ մահ ի նոցանէ: - 753. Ո՞չ խնդրեն յաստուծոյ *վասն* նոցա: - 754. Մինչ ի յօրն դատաստանի աղօթեն արդարք *վասն* մեղաւորաց. այլ յետ այնորիկ *վասն* դատապարտելոցն ո՛չ խնդրեն ինչ. զի ընդ դէմ աստուծոյ գոլ իմանան *վասն* նոցա զխնդիրն: - 754. Իսկ *վասն* տեղեաց դժոխոցն ասացեալ է ի վեր անդր **լ** գլուխն, **իը** համարն: - 754. Այսքան *վասն* մեղաւորացն և տանջանաց նոցա: - 754. Դարձեալ, արքայութիւնն երկնից երբեմն կոչի ընթրիս՝ *վասն* անճառ բարեացն վայելման: - 757. Երբեմն արքայութիւն կոչի՝ *վասն* պատուականութեանն: - 757. Երբեմն դրախտ՝ *վասն* պէս պէս և զանազան բարեացն: - 757. Երբեմն գոգ աբրահամու, *վասն* ընդ հօրն հաւատոյ որդւոցն հանգչելոյ: - 757. Երբեմն փեսայ և հարսանիք, *վասն* անտրտում ուրախութեանն: - 757. Այլ և մանաւանդ *վասն* աստուծոյ ընդ ծառայս իւր սիրով միաւորութեանն: - 757. Նմանապէս իմասցի և *վասն* մի դժոխոցն՝ գոլ զանազան տանջանք և տանջանարանք: - 760. *Վասն* երից: - 760. Նախ *վասն* անկարօտութեան. զի սուրբքն իմանալի լոյս ունին զքրիստոս. և ո՛չ են կարօտ զգալի լուսոյ: - 760. Երկրորդ *վասն* տեղւոյն. զի վերինն երուսաղէմ է՛ ի բարձունս քան զարեգակն. վասն որոյ ո՛չ լուսաւորէ զնոսա: - 760. Երրորդ *վասն* պայծառութեանն. զի մարմինք արդարոցն առաւել լուսաւոր են քան զարեգակն...: - 760. Երկրորդ *վասն* տեղւոյն մաքրութեան: - 763. Երրորդ *վասն* տեղւոյն ընդարձակութեան: - 763. Այս *վասն* տեղւոյն: - 763. Դարձեալ *վասն* ընկերութեանն լիցի եռակի ուրախութիւն: - 763. Երկրորդ *վասն* ազնուական ընկերութեանցն. յորում եղիցի երանելի կոյսն. և հրեշտակք և սուրբք և սրբուհիք. և ամենայն թագաւորք և թագուհիք եղիցին: - 763. Առաւել պարտ էր մարդկան վաստակիլ միայն՝ զի կարասցեն գոլ ի միում աւուր ընդ երանելի սրբուհւոյ աստուածածին կուսին. քան բազում վաստակիլ *վասն* յաւիտենական փառացն: - 763. *Վասն* մեծի սիրոյն՝ ժառանգութիւնն այն ամենեցուն մի է իւրաքանչիւր ումեք բոլորն և ո՛չ մասնաւորն: - 764. Այս *վասն* ընկերացն: - 764. Չորրորդ *վասն* մարմնոյ փառաւորութեան քառակի լիցի ուրախութիւնն: - 764. Նա՛խ *վասն* մարմնոյն գեղեցկութեան: - 764.

Երկրորդ *վասն* նորին նրբութեանն: - 764. Երրորդ *վասն* նորին թեթևութեանն: - 764. Չորրորդ *վասն* նորին անչարչարութեանն. որպէս ասացաւ նախ, և այժմ ի կարճոյ: - 764. Այս *վասն* փառաց մարմնոյն: - 764. Հինգերորդ *վասն* դժոխոցն եռակի հանդիպեսցի ընտրելոց ուրախութիւն: - 764. Վեցերորդ և վերջին՝ *վասն* աշխարհի՝ ընտրելոցն հանդիպի եռակի ուրախութիւն: - 764. Չորրորդ՝ *վասն* արմատոյն խոշորութեան. և խոշորութիւնն է **բ** կերպիւ. մին *վասն* մտացն մտածութեան...: - 765-766. Եօթներորդ՝ *վասն* բարձրութեանն ի ջանուց մշակաց. զի որ քան առաւել բրի ի ներքոյ երկիրն և քարինս դնի, այն քան առաւել բարձրանայ: - 766. Ութերորդ՝ *վասն* վարսին գեղեցկութեանն. և *վասն* արդարոցն ասէ. «թուեցան յաչս անզգամաց թէ չարչարեցան. բայց նոքա են ի խաղաղութեան»: - 766. Իններորդ՝ *վասն* պտղոյն յամրութեան. զի ասեն թէ ո՛չ կարէ պտղաբերել մինչ ի հարիւր ամն: - 766. Այսպէս *վասն* երկնային և իմանալի տնկոցն որ կոչին ծառ կենաց. ունելով յինքեան զկեանս և բաշխելով այլոց ամենեցուն զխնամս: - 767. Եւ *վասն* իմոյ տկարութեան և ժամանակիս վրդովման զխնդիրն յապաղէի: - 772. Զի թերևս *վասն* ծեր սիրալիր մաղթանացդ՝ գտայց ողորմութիւն յամէնողորմ փրկչէն մերմէ: - 773. *Վասն* բազում վկայութեանցն որ առեալ է ի գիրս յայս, զի անտարակոյս լիցի: - 773. Եւ այս ո՛չ միայն փութանցիկ գոլոյ *վասն*, կամ ներհակաբար հատուցման որպէս սովորութիւն է. այլ զի ո՛չ ինչ կարեն տանիլ ընդ ինքեանս. բայց միայն նշխարհս ինչ յիշատակութեան ուրուական տեսլեան: - 775. Նախ խնդրելի է թէ *վասն* ի՞նչ պատճառի նախահօրն յանցանաց պատժապարտ եղեն և որդիքն: - 776. ...որդիքն որ *վասն* յանցանաց նորա՝ ազատեսցին: - 776. Որ և ամենայն վերոյ գրեալքդ առակք, անառակին, մոլորելոյն, կորուսելոյն և այլն ևս, այսպէս ուղղին. այսինքն նմա՛, *վասն* նմա՛, որպէս նմա՛: - 778. Ապա ուրեմն ողորմութեամբ և արդարութեամբ ազատեցաւ նախահայրն յաւիտեան. իսկ այլքն առ ժամանակ մի ողորմութեամբ *վասն* նորա որպէս ասացաւ: - 778. Վասն որոյ չարչարանքն քրիստոսի ասի պակասութիւն *վասն* հարցն. ասի և կատարեալ առ ինքեան: - 781. Ասեմք նա՛խ՝ եթէ ամենայն շնորհ զինչ և իցէ տուեալ բնութեան, ո՛չ քակտի ի նմանէ. թէպէտ ծածկի երբեմն *վասն* մեղաց: - 782. Դարձեալ, ամենայն շնորհք առ ո ոք և իցէ՝ բառնի *վասն* մեղաց. ո՛չ ըստ ունակութեան՝ այլ ըստ ներգործութեան կամ նշանակութեան: - 782. Զի որպէս բառնի *վասն* մեղաց, նոյնպէս տացի *վասն* զղջմանն: - 783. Իսկ եթէ ոչ են վարձատրելի, ապա զիա՞րդ *վասն* նոցա անհնազանդութեանն անհնազանդ կոչի և ինքն որդի հօր: - 784. Թէ *վասն* զի՞նչ հարկի ամենայն անդրանիկ **ե** օր աւելի կայ առ ծնողին: - 785. Իսկ ամենայն զգայական կենդանւոյ թէպէտ իգին ըստինք գոն *վասն* զծնունդս կերակրելոյ. սակայն և արուացն գոյ նոյն մասն անդամոց կազմեալ յարարչէն. և այն յի՞նչ պէտս լինի. խնդրել արժան է: - 785. Նոյնպէս և երբեմն յուզել ուրախութեանց. ի փեռեկեալ թոքոյ ի կոտորումն շնչոյն, ի թաղանթէ՛ որ առ լերդաւն՝ հիւթ ինչ ծաւալի առ նոյն ասացեալ տեղի. ելեալ գոլորշեացն նմանապէս առաջնոյն. և լինի քաղցրագոյն արտօսր. *վասն* ասացեալ հիւթոյն ի քաղցրորակն անօթոյ: - 787

***ՎԱՍՆ Է՞Ր +*** Դարձեալ, թէ է հարկ, *վասն է՞ր* աղօթք և պատարագք և ողորմութիւնք և այլն՝ դարձուցանեն զմերձեալ չարիսն, և փոխեն ի բարիս: - 11. Եօթներորդ ասեն, թէ յաստուծոյ չէ չարն, *վասն էր* ներէ սատանայի, և չար մարդկան: - 17. Եօթներորդ՝ *Վասն է՞ր* ուրանան քաղկեդոնիկք զբնութեամբ միաւորութիւնն: - 30. *Վասն է՞ր* քաղկեդոնիկքն և նեստորականքն ուրանան զբնութեամբ միաւորութիւնն. այլ անձամբ միայն և յատկութեամբ ասեն: - 76. *Վասն է՛ր* է բնութիւնն աստուծոյ անգիտելի: - 103. *Վասն է՞ր* ասեմք Երրորդութիւն: - 107. *Վասն է՞ր* հայր կոչի: - 108. *Վասն է՞ր* կոչի որդի: - 108. *Վասն է՞ր* հոգի: - 108. *Վասն է՞ր* յորժամ փառս տամք, նախ՝ հօր, ընդ նմին որդոյ, և ապա հոգւոյն: - 109. *Վասն է՞ր* ասի նախագո՛յ է առաջին պատճառն: - 111. *Վասն է՞ր* կոչեմք զնա էր. և է՛. և եղիցի. ըստ այսմ. «ես եմ որ էն». և «ի սկզբանէ էր բանն». և եղիցի աստուած ամենայն յամենայնի: - 111. *Վասն է՞ր* կոչի աստուած հին աւուրց ըստ դանիէլի: - 114. *Վասն է՞ր* է զի աստուած զանգործս և զոչէսն տեսանէ. իսկ մեք զեղեալսն և զգործեալսն: - 118. *Վասն է՞ր* ասեմք աստուծոյ բան ունիլ...: - 121. *Վասն է՞ր* մարմինն ոտք կոչի քրիստոսի: - 130. *Վասն է՞ր* զանազանապէս տայ աստուած զպարգևս և ո՛չ հաւասար. որպէս առաւել տայ հրեշտակաց՝ և սակաւ մարդկան. և նըւազ կենդանեաց և տնկոց և անշնչից: - 130. *Վասն է՞ր* աստուածաբան մարգարէքն զտեսիլ երկնայնոցն սոյնպէս անարգ կերպիւ տպաւորեցին. որպէս առիւծ. և եզն. աթոռք. և կառք. և այլն: - 131. *Վասն է՛ր* դիոնէսիոս ինն դասս հրեշտակաց ասէ. և իրինոս և սուրբն եպիփան **է** երկինք և **է** դասք ասեն: - 134. *Վասն է՞ր* ապա ամենայն դասք հաւասար հրեշտակք կոչին...: - 136. Եւ թէ ոք ասիցէ, *վասն էր* մարդիկք հրեշտակք կոչին. նաև հրեշտակք աստուած՝ որ վերնոցն են կոչմունք: - 136. *Վասն է՞ր* հրեշտակք մաքուր և ազատ են յամենայն չարեաց: - 139. *Վասն է՞ր* մարդս կարօտացաւ գրոյ: - 143. *Վասն է՞ր* է հակառակ մարդոյ: -

146. *Վասն է՞ր* այժմ լուսով կերպարանին: - 147. *Վասն է՞ր* ո՛չ ստեղծ զնոսա այնպէս զի մի՛ կարիցեն մեղանչել: - 149. Իշխանք օդոյ *վասն է՞ր* կոչին: - 150. *Վասն է՞ր* սատանայի մեղքն է անթողլի: - 150. *Վասն է՞ր* թոյլ տայ աստուած արդարոց անկանիլ ի փորձութիւն: - 158. Եւ թէ ոք ասիցէ՝ յորժամ գիտէ՛ աստուած զկատարածն, *վասն է՞ր* տայ ի փորձանս: - 161. Եւ թէ ոք ասիցէ՝ ապա *վասն է՞ր* զթողութիւն գտանէ զղջացեալն: - 165. Արդ եթէ ոչ է կատարեալ պատարագն, *վասն է՞ր* դատապարտէ զոչ արժանիսն: - 167. Գոյացութիւն և պատահումն անմեկնելի որոշմունք են. *վասն է՞ր* ի յաստուած միայն գոյացութիւն է և ո՛չ պատահումն: - 170. Եւ զի յայտ եղև այս, ծանուցի և այն, թէ *վասն է՞ր* աստուած միայն գոյացութիւն է և ո՛չ պատահումն: - 170. *Վասն է՞ր* աստուած գրով խօսի ընդ մեզ որպէս մովսէսի և այլոցն: - 177. Իսկ թէ *վասն է՞ր* մարդս ալփաբէտից կարօտացաւ, գրեա՛լ է ի հրեշտակաց **ժե** համարն: - 177. *Վասն է՞ր* առաջին գիրքն մովսէսի՝ Ծնունդ կոչի և Արարած: - 179. *Վասն է՞ր* չորս են տարերք: - 180. *Վասն է՞ր* իմաստասէրքն զտարրեղէնքս անապական և անվախճան ասեն: - 181. *Վասն է՞ր* զլուսաւորս ի յերկինս եդ աստուած: - 188. *Վասն է՞ր* կոչի Տարի: - 190. *Վասն է՞ր* զերկնայինսն կատարեալ ստեղծ աստուած, և զերկրաւորքս ըստ կարգի յաւուրս վեց: - 192. *Վասն է՞ր* ասէ գիրն՝ «եղև օր մի». և ո՛չ թէ՝ առաջին. և այլն ըստ կարգի: - 193. *Վասն է՞ր* յամառն և ի ձմեռն ոչ բուսանին սերմանիք: - 197. *Վասն է՞ր* հուրն հակառակ գործէ: - 202. *Վասն է՞ր* այնչափ բազմութիւնք ջուրց եղեն: - 207. *Վասն է՞ր* ծովք աղի և դա՛ռն են: - 208. Ջուրք ծովուն աղի են. *վասն է՞ր* աղբերք և գետք որ առ մեզ բղխեն՝ քաղցր են: - 208. *Վասն է՞ր* աղբերք ի ձմերայնի ջերմն բղխեն, և յամարայնի ցուրտ: - 208. *Վասն է՞ր* ի լերինս բղխեն աղբերք առաւել քան ի դաշտս: - 209. *Վասն է՞ր* կոչի երկիր: - 210. *Վասն է՞ր* ի ստորոտս լերանց առաւել շող լինի քան ի գլուխն որ մե՛րձ է արեգական: - 211. *Վասն է՞ր* ասէ՝ «բղխեսցէ երկիր զբոյսս և զծառս»: - 212. *Վասն է՞ր* ամենայն բոյսք կանաչ լինին գունով: - 212. *Վասն է՞ր* նա՛խ ծաղիկն և ապա պտուղն երևի: - 212. *Վասն է՞ր* մարդս սպիտակի, և պտուղքն կարմրին ի հասանիլն: - 213. *Վասն է՞ր* ամենայն տունկք բոլորաձև բուսանին: - 213. *Վասն է՞ր* ամենայն բոյսք զձևն զառ ի վեր ունին: - 213. *Վասն է՛ր* բոյսք փութով աճին և դալարին քան զտունկ և զծառ: - 214. *Վասն է՞ր* կոչին ծառ: - 214. *Վասն է՞ր* է՝ զի ջրայինքն և սողունքն ձայն ո՛չ ունին: - 216. *Վասն է՞ր* է զի մարդս ո՛չ ունի զբնութեամբ զէնս. կամ զծածկոյթ: - 217. Գազանք և օձք և այլ կենդանիք որք վնասակա՛րք են՝ *վասն է՞ր* ստեղծան: - 217. *Վասն է՞ր* գազանք հնարաւոր և ուժեղք են քան զանասուն: - 218. *Վասն է՞ր* զօձին գլուխն ջախջախեն: - 218. *Վասն է՞ր* զթոյնք մահուն ի գլուխն ունի: - 219. *Վասն է՞ր* ադամ անուանս եդ ամենայն կենդանեաց և այլոցն: - 219. *Վասն է՞ր* պօղոս զդրախտն երրորդ երկին կոչէ: - 221. Նա՛խ՝ զի թէ ապականացու էր որպէս երկիրս այս, *վասն է՞ր* զմարդն պատուելով ի դրախտն եդ աստուած: - 222. Երկրորդ՝ և յորժամ մարդն ապականեցաւ մեղօք, *վասն է՛ր* ի դրախտէն հանէր զնա: - 222. Իսկ եթէ ոք հարցանէ, ապա *վասն է՞ր* ստեղծան ծննդական անդամքն յորժամ ո՛չ ծնանէին ի դրախտին: - 226. Քսանևք՝ *Վասն է՞ր* մարդն ինն ամիս, և այլ կենդանիք աւելի և պակաս կան յարգանդի: - 228. *Վասն է՞ր* մարդն ի հողոյ ստեղծաւ: - 229. *Վասն է՞ր* մարդն յետոյ արարաւ: - 230. *Վասն է՞ր* մարդն աշխարհ կոչի...: - 231. *Վասն է՞ր* մարդոյս ձևն ուղիղ. գլուխն ի վերայ. և այլ անդամքն ի ներքոյ: - 232. *Վասն է՞ր* դէմք մեր ի մի կողմանէ է. և միւսն թիկունք: - 234. *Վասն է՞ր* դէմք երեսացն առաւել ցանկալի է: - 234. *Վասն է՞ր* մասնկանցն դիրք՝ աչքն՝ ի վերոյ է եդեալ. և ականջն ի կողմանէ. և հոտոտելիքն զառ ի վայր. և այլն ըստ կարգի: - 235. *Վասն է՞ր* է զի ամենայն անհատք ի մարդկանէ համատիպք են միմեանց. և օտարք իրերաց. զի նմանք են, և աննմանք որակութեամբ և ձևով: - 235. Իսկ երրորդն թէ *վասն է՞ր* յամենայն իրս երևի նման և աննման. որպէս ի շնչաւորս և յանշունչս. ի կենդանիս և յանկենդանս և յայլսն ամենայն: - 236. *Վասն է՞ր* տեսանելն հաստա՛տ է քան զլսելն: - 239. *Վասն է՞ր* բիբն հանապազ թարթէ՛ և քթթէ զաչքն: - 239. *Վասն է՞ր* երիկամունքն ճարպով պատեալ է, և սիրտն և լեարդն ոչ: - 241. *Վասն է՞ր* բերանն մարդոյն երբեմն քաղցր լինի. երբեմն դառն. և թթու. և այլ ինչ: - 242. *Վասն է՞ր* մի ջուրն ի բերանն քաղցր լինի, և յաչքն աղի. յունչն հոտեալ. և յականջն դառն: - 243. *Վասն է՞ր* մարդոյն աջ կողմն ուժով է քան զձախն: - 243. *Վասն է՞ր* թաթարին մորուս ո՛չ բուսանի: - 245. *Վասն է՞ր* մարդ յորժամ երկնչի դեղնի, և յամաչելն շառագունի: - 245. *Վասն է՞ր* մին մարդն սեաւ լինի և մինն սպիտակ, կամ շէկ, և այլն: - 245. *Վասն է՞ր* տղայն առաւել ուսանի քան զմեծն: - 251. *Վասն է՞ր* մին տղայն ուշիմ և մտացի լինի. և մինն ապուշ և բռնամիտ: - 251. Եւ թէ ոք ասիցէ, *վասն է՞ր* նախ զտնկականն տայ և ապա զբանական հոգին: - 258. Եւ թէ *վասն է՞ր* ասիցէ ոք՝ ոմն յետ **գ** աւուր՝ և ոմն ի **ի** և ոմն ի **խ**: - 261. Իսկ թէ *վասն է՞ր* ասիցէ ոք՝ յղացեալ մնան յարգանդի՝ մարդն ինն ամիս, և այլ կենդանիք աւելի և կամ պակաս: - 262. Ուսեալք և զայս, բե՛ր տեսցուք և զմարդոյն թէ *վասն է՞ր* յինն

ամիսս ծնանի: - 263. Կարգաւո՛ր է և աստ հարցանել թէ *վասն է՞ր* անասունք յերրորդ ամին կարեն զնմանն ծնանիլ, և մարդն ի չորեքտասանն: - 264. Ապա ուրեմն յա՛յտ է թէ *վասն է՞ր* մարդն ի չորեքտասան ամն կարէ ծնանիլ: - 266. *Վասն է՞ր* զկինն ի կողէն ստեղծ և ո՛չ ի հողոյ: - 276. Իսկ թէ *վասն է՞ր* օրէնս ետ մարդոյն: - 277. *Վասն է՞ր* ոչ ամաչէին ադամ և կինն: - 278. Վասն **ծ** հարուածոցն. և թէ *վասն է՞ր* այն քան տանջեցան: - 283. Երեսունևը, *Վասն է՞ր* խնդրեաց յանբանից պատարագ: - 284. Եւ *վասն է՞ր* առաջին օրէնքն մարմնական էր: - 285. Եօթանասունք, *Վասն է՞ր* զազգն հրէից միայն սիրեաց: - 285. Իսկ թէ *վասն է՞ր* այսպիսի դառն պատժեցաւ: - 288. *Վասն է՞ր* նահապետքն ի **ռ** ամն ո՛չ հասին. այլ **թճ**, աւելի և կամ պակաս ապրեցան: - 290. *Վասն է՞ր* այնչափ ի մէջ ցաւոց և տրտմութեան եմք առաւել քան զառաջինսն: - 292. Այլազգւոյ զենեալն *վասն է՞ր* ոչ ուտի: - 296. *Վասն է՞ր* քահանայի զենեալն ո՛չ ուտի: - 296. *Վասն է՞ր* ղովտ ի սոդոմ բնակեցաւ: - 302. *Վասն է՞ր* սոդոմ հրով այրեցաւ: - 302. Կինն ղովտայ *վասն է՞ր* յաղ և ոչ յայլ ինչ նիւթ փոխեցաւ: - 303. *Վասն է՞ր* զանդրանիկն խոտէր և զկրտսերն ընտրէր. որպէս կայեն խոտեցաւ և սէթ ընտրեցաւ: - 309. *Վասն է՞ր* գօտէմարտեցաւ ընդ յակոբայ և կաղացոյց: - 311. Իսկ թէ *վասն է՞ր* կաղացոյց: - 311. Իսկ թէ *վասն է՞ր* ոչ ասաց զանունն նմա: - 311. *Վասն է՞ր* զգեստ կոչի մարմինն փրկական: - 318. *Վասն է՞ր* յոբ յետ խրախութեանն **ծ** պատարագաւ սրբէր զորդիսն. և մի զուարակ վասն մտաց մեղացն մատուցանէր: - 322. *Վասն է՞ր* յոբ նստաւ յաղբիւսն: - 322. Եւ թէ որ ասիցէ՝ ունէր զայս յոբ. *վասն է՞ր* մերժեցաւ ի նա: - 324. *Վասն է՞ր* այնչափ հակառակեցան բարեկամքն ընդ յոբայ: - 324. *Վասն է՞ր* այնչափ դիմամարտս յարուցանէր բանսարկուն ի վերայ յոբայ. որպէս զկինն և զբարեկամսն և զծառայքն և զայլսն: - 325. *Վասն է՞ր* թոյլ ետ սատանայի մարտնչիլ ընդ յոբայ: - 325. *Վասն է՞ր* աստուած խօսեցաւ ընդ յոբայ: - 325. *Վասն է՞ր* յամպոյ և ի մրրկէ՛ խօսեցաւ: - 326. *Վասն է՞ր* կրկին վկայեաց յոբայ: - 326. *Վասն է՞ր* հրով երևէր: - 330. *Վասն է՞ր* հրեշտակ կոչէ ...: - 330. *Վասն է՞ր* տկար զեռնօք տանջեաց զեգիպտոս, և ո՛չ առիւծ կամ արջ կամ այլ ինչ հրաշունչ կենդանեօք: - 333. *Վասն է՞ր* **ժ** հարուածովք էհար: - 335. *Վասն է՞ր* հրամայեաց խաբել և կողոպտել զեգիպտացիսն: - 336. *Վասն է՞ր* ի զանազան համս փոխէր մանանայն: - 339. Եւ թէ ոք ասիցէ, *վասն է՞ր* յառաջին օրն նեխեցաւ, և յամենայն օր հալէր: - 339. *Վասն է՞ր* եզական դնէ զօրէնս իբր առ մի դէմս ասելով՝ «մի՛ սպանաներ և այլն»: - 340. *Վասն է՞ր* այնպէս ահագին երևմամբ և որոտմամբ երևեցաւ աստուած ի սինա: - 341. *Վասն է՞ր* հրամայեաց ի զանազան նիւթոց հրաշալի խորան շինել և այլն: - 342. *Վասն է՞ր* զաշտանակն եդ ի հարաւ: - 346. *Վասն է՞ր* այնպէս զարդարուն զգեստ հրամայեաց: - 347. *Վասն է՞ր* կրկին քարեղէն տախտակս: - 349. *Վասն է՞ր* խորտակեաց: - 349. Եւ թէ ոք ասիցէ՝ *վասն է՞ր* զպարտիսն ադամայ մեք ունիմք: - 351. *Վասն է՞ր* լուսաւորեցան երեսքն մովսէսի: - 352. *Վասն է՞ր* խնդրեաց աստուած յանբանից պատարագ արեամբ: - 355. *Վասն է՞ր* մեղր ո՛չ ելանէր ի սեղանն: - 355. Հին պատարագն *վասն է՞ր* աղիւ կատարէր և նորս ոչ: - 356. *Վասն է՞ր* յերեսաց սեղանն հաց և գինի և գառն դնէին. և մեք զգառն ո՛չ դնեմք: - 357. Կենդանեաց զենմունքն զի յանունն աստուծոյ էր՝ սրբէր զմարդ. *վասն է՞ր* ապա ոչ սրբեին կռապաշտքն. զի և նոքա յաստուծոյ անունն զոհէին և խնկէին: - 361. *Վասն է՞ր* զերեքեան պատարագս ունիմք մեք: - 362. Ահարոն և որդիքն **է** օր մնացին ի խորանն. *վասն է՞ր* մեք **խ**: - 363. *Վասն է՞ր* այրեցան նաբաթ և աբիուդ որդիքն ահարոնի: - 364. *Վասն է՞ր* զմարմնոյ արատս խարէին: - 370. *Վասն է՞ր* զպատարագն անարատ ընտրէին: - 370. *Վասն է՞ր* այնչափ շաբաթս հրամայէ՛ պահել: - 371. *Վասն է՞ր* խնդրեաց տասանորդս ի պտղոց և յանասնոց: - 376. *Վասն է՞ր* աստուած հրամայեաց թւել զորդիս աբրահամու: - 377. Ձծերս *վասն է՞ր* ո՛չ թուէ: - 377. *Վասն է՞ր* կոչեցաւ վրան ժամու: - 379. *Վասն է՞ր* **իե** ամեայն լինէր քահանայ: - 379. Տասն հարւածք էր եգիպտոսի, *վասն է՞ր* միայն զանդրանկաց փոխարէնն խնդրէ: - 380. *Վասն է՞ր* կորխեանքն. և դադանեանքն ընկղմեցան: - 381. *Վասն է՞ր* կորխեանքն սրբեցան հոգւով. և դադանեանքն կենդանի ի գերեզման իջեալ տանջեցան: - 381. *Վասն է՞ր* զնշան ընտրութեան ի բուրվառս և ի գաւազանս տայ: - 382. *Վասն է՞ր* մոխրով սրբէին: - 383. Յորժամ սուրբ էր մոխիր երնջոցն, *վասն է՞ր* զմերձեցեալն պղծէր: - 384. *Վասն է՞ր* յորժամ զգողացեալն խոստովանի ասէ՝ և խոյ մի աստուծոյ նուիրէ՛: - 384. *Վասն է՞ր* տապանակն յառաջ ընթանայր և վէմն զհետ բանակին: - 385. *Վասն է՞ր* բարկութեամբ եհար: - 386. *Վասն է՞ր* օձիւ հարկանէր ժողովուրդն: - 386. Բաղաամ *վասն է՞ր* է բան մարգարէացաւ: - 387. *Վասն է՞ր* զաստուած ետես: - 387. *Վասն է՞ր* խօսեցաւ էշն: - 388. *Վասն է՞ր* ասէ մի եթար, և յետոյ ասէ ե՛րթ և մի՛ անիծաներ: - 388. *Վասն է՞ր* թոյլ տայ աստուած լինիլ այսոցիկ նշանաց: - 388. Եւ աստ հարցանեմ ի վերջոյ. *վասն է՞ր* կրկին անգամ թւեաց զժողովուրդն: - 392. *Վասն է՞ր* գրեաց երկրորդ օրէնք: - 393. *Վասն է՞ր* յայս **գ** տեղիս պատերազմին դևք: - 394. *Վասն է՞ր* առաջին

մարմնակա՛ն էր օրէնք և օրհնութիւն, և վերջինս հոգևոր ամենայն: - 395. *Վասն է՞ր* հասարակաց արարիչն զազգս հրէից միայն սիրեաց այնպիսի օրինօք՝ նշանօք...: - 398. *Վասն է՞ր* է որ մին կին թէ բազում այր առնէ՝ պոռնիկ է. և թէ այրն բազում կանայս առնէր, չէր պոռնիկ որպէս ի հինն օրէնս: - 401. *Վասն է՞ր* հրամայեաց գրել զօրէնս ի յանցս յորդանանու: - 402. *Վասն է՞ր* նախ զանէծս և ապա զօրհնութիւնն դնէ: - 403. *Վասն է՞ր* կոչի աւագ օրհնութիւն. զի յակոբ ևս օրհնեաց զորդիսն. նոյնպէս և իսահակ. և այլն: - 407. *Վասն է՞ր* մերձ ի վախճանն հարք և առաջնորդք օրհնեն զմնացորդս. որպէս մովսէս և յակոբ և այլ նահապետք: - 408. Զռուբէն անէծ յակոբ. մովսէս *վասն է՞ր* օրհնէ: - 409. *Վասն է՞ր* ո՛չ գիտեն զգերեզմանն մովսէսի: - 411. *Վասն է՞ր* **լ** օր սգացին: - 411. *Վասն է՞ր* ո՛չ թարշամեցան ծնօտքն մովսէսի: - 411. *Վասն է՞ր* յետ մովսէսի եղև զօրավար յեսու: - 414. *Վասն է՞ր* ո՛չ միայն բաժանեցաւ գետն, այլ և յետս դարձաւ: - 414. *Վասն է՞ր* գայլախազիւ թլփատեաց և ո՛չ երկաթով: - 415. *Վասն է՞ր* զաքար ընտանեօք և անասնօք պատժեաց: - 415. *Վասն է՞ր* զլուսաւորսն: - 416. *Վասն է՞ր* ոչ կոտորեաց զամենայն թշնամիսն: - 416. *Վասն է՞ր* ոչ ետ ղևեայ ցեղին բաժին: - 417. *Վասն է՞ր* աւերէ՛ աստուած զսրբութիւնս և վարէ՛ գերի. որպէս զտապանակն յայլազգիս և զտաճարն: - 425. *Վասն է՞ր* կործանեցաւ դագովն առաջի տապանակին: - 425. *Վասն է՞ր* եհարց թէ՝ ո՞յր որդի է դաւիթ. զի կապարճակիր և ծանօ՛թ էր սաւուղի: - 427. *Վասն է՞ր* կոչի հաց սուրբ: - 427. *Վասն է՞ր* ի սրբութեան հացն համարձակեցաւ դաւիթ: - 427. *Վասն է՞ր* բուն գիրքն աքիմելէք ասէ, և աւետարանն աբիաթար: - 427. *Վասն է՞ր* մեռաւ ոզիա: - 431. *Վասն է՞ր* յանդիմանեաց աստուած զդաւիթ ի ձեռն նաթան մարգարէի: - 432. Յորժամ մեղայ ասաց՝ *վասն է՞ր* ոչ եբարձ զպատիժն. զի ահա՛ խայտառակեցան կանայք նորա: - 432. Առաջին զաւակն բերսաբէի *վասն է՞ր* մեռաւ: - 433. *Վասն է՞ր* հրամայեաց թուել և մահ ածել ժողովրդեանն: - 434. *Վասն է՞ր* յերից պատուհասից զմինն խնդրեաց: - 434. *Վասն է՞ր* ցրտացաւ ի ծերութեանն դաւիթ: - 439. *Վասն է՞ր* ոչ գիտաց զաբիսակ: - 439. *Վասն է՞ր* հրամայեաց սպանանել զյովաբ և զսիմէի զի երդւեալ էր նմա: - 439. *Վասն է՞ր* հրամայեցաւ դաւթի ո՛չ շինել զտաճարն: - 439. *Վասն է՞ր* զմարգարէն սպան առիւծն. զի նա խաբեցաւ ի ծեր մարգարէէն: - 443. *Վասն է՞ր* թիւ մի պակաս լինի թագաւորացն: - 443. *Վասն է՞ր* գնաց ի հեղեղատն: - 443. *Վասն է՞ր* նւազեցաւ ջուրն: - 443. *Վասն է՞ր* զմարգարէսն բահաղու կոտորեաց: - 444. *Վասն է՞ր* **է** անգամ աղօթեաց: - 444. Ցուպն եղիսէի օրինակ էր խաչին. *վասն է՞ր* ոչ յարոյց զմեռեալն: - 445. *Վասն է՞ր* ի գիշերի սատակեցան զօրքն ռափսակայ: - 446. *Վասն է՞ր* հարաւ ովսիայ յորժամ խոստացաւ խաղաղութեամբ ննջել: - 446. *Վասն է՞ր* **ի** ամ եդ զվճիռ գերւոյն բաբիլօնի ի ձեռն երեմիայի: - 448. *Վասն է՞ր* նախ դատաւորք և ապա թագաւորք և ապա քահանայք առաջնորդեցին մինչ ի տէր մեր յիսուս քրիստոս: - 449. Եւ *վասն է՞ր* յետ **խ** աւուր համբարձաւ. և նստելոյն ընդ աջմէ: - 455. *Վասն է՞ր* հօր ո՛չ տօնեմք որպէս քրիստոսի և հոգւոյն: - 455. *Վասն է՞ր* ի յորդանան աղաւնակերպ էջ, և ի վերնատունն հրով: - 455. *Վասն է՞ր* խօսեցեալ եղև առն կոյսն սուրբ: - 461. *Վասն է՞ր* հրեշտակապետն գաբրիէլ աւետեաց կուսին, և ո՛չ մարդ ոք: - 463. *Վասն է՞ր* ասեմք աստուածածին զկոյսն: - 466. *Վասն է՞ր* ոչ յառաջ և ո՛չ յետոյ մարդացաւ: - 467. *Վասն է՞ր* բա՛նն մարմին եղև. և ո՛չ հայր կամ որդի: - 468. *Վասն է՞ր* ծնաւ յարգանդէ: - 469. *Վասն է՞ր* ոչ կատարեալ հասակաւ ծնաւ քրիստոս որպէս զադամ: - 479. *Վասն է՞ր* քրիստոս արու ծնաւ: - 480. *Վասն է՞ր* ազգս հայոց զտօն ծննդեանն քրիստոսի և մկրտութեան ի միում աւուր կատարեմք: - 482. Քրիստոս *վասն է՞ր* թլփատեցաւ: - 485. *Վասն է՞ր* մկրտեցաւ քրիստոս: - 486. *Վասն է՞ր* եղեն այս հրաշք: - 490. *Վասն է՞ր* կամեցաւ ի փայտի բարձրանալ և մեռանիլ: - 491. Զազգս մարդկան սատանայ էր գերեալ. *վասն է՞ր* քրիստոս զգին արեանն ի հայր ետ: - 492. Եւ թէ ոք ասիցէ, ապա և ի մահու ազատեաց զմեզ, *վասն է՞ր* կրեաց զմահ: - 497. Եւ թէպէտ ասացաւ ճշմարիտն թէ անապակա՛ն է մարմինն տն, այլ այժմ դիցուք զբանս նոցա թէ *վասն է՞ր* ասեն ապականացու. և յարմարեսցուք զպատասխանիսն: - 500. *Վասն է՞ր* հոգւովն էջ ի դժոխս տէրն մեր քրիստոս: - 503. Ապա *վասն է՞ր* յերուսաղէմ ասեն զդժոխքն՝ թէ է՛ այր դիւահոտ և ձայն աղաղակի և չարչարանք և այրեցումն չարաչար դիւաց լսելի լինի: - 504. *Վասն է՞ր* ասի դժոխք բազմաւորական. և ոչ դժոխ միաւորական: - 505. *Վասն է՞ր* յերեկոյի շաբաթուն լուծանեմք: - 508. *Վասն է՞ր* ի նաւակատիսս ձուկն ուտի և միսն ոչ: - 509. *Վասն է՞ր* ոչ ետ թոյլ մերձենալ մարիամու. և այն զի ի ճանապարհին կալան զոտս նորա և համբուրեցին ա՛յլ կանայք: - 517. *Վասն է՞ր* համբարձաւ քրիստոս: - 519. *Վասն է՞ր* յորժամ յարեաւ իսկոյն ո՛չ համբարձաւ այլ յետ **խ** աւուր: - 520. *Վասն է՞ր* նախ քան զխաչն և զհամբարձումն ոչ պարգևեցաւ հոգին սուրբ երևելի նշանօք: - 521. *Վասն է՞ր* փայլական նմանեցուցանէ զիջումն հոգւոյն սրբոյ: - 522. *Վասն է՞ր* յորում աւուր տըւան օրէնքն՝ ի նմին աւուր և առաքելոց տուաւ հոգին սուրբ: -

524. Յօր աստուծոյ *վասն է՞ր* ոչ տօնեմք որպէս քրիստոսի և հոգւոյն սրբոյ: - 525. *Վասն է՞ր* ի յորդանան աղաւնակերպ էջ հոգին սուրբ, և ի վերնատունն հրեղէն լեզուաւ: - 525. Եւ թէ *վասն է՞ր* այնչափ գիրք և բանք գրեցան: - 525. Եւ թէ *վասն է՞ր* է ապաշխարութիւն: - 526. Եւ *վասն է՞ր* ի հին օրէնս յիւրեանց ազգէն առնուին և ի նորս ոչ: - 526. Երեսունն**ը**, *Վասն է՞ր* օրհնեմք զեկեղեցիս: - 526. *Վասն է՞ր* այսչափ ամենայն գիրք և բանք և խրատք գրեալ եղեն: - 531. Եւ թէ *վասն է՞ր* է **գ** հիմն հաւատոյ: - 531. *Վասն է՞ր* երբեմն իգական հարսն և դուստր կոչի եկեղեցի. և երբեմն արական որդի: - 534. Յորո՞ւմ ամի եղեն ժողովքն. և ո՞ւր. և *վասն է՛ր:* - 542. Եւ զայս *վասն է՞ր* յերկարել ինձ. զի ցուցանիցի թէ ո՛չ է պարտ միոյն ճշմարտի բազում ստոց հետևիլ: - 551. *Վասն է՞ր* Նագրիոս ընդ խորհուրդ ասէ մեղաց, և այլ վարդապետք է ասեն զմահու չափ մեղսն: - 559. Եւ յա՛յտ է թէ *վասն է՞ր* են **ը** խորհուրդք: - 561. *Վասն է՞ր* ա՛յլ վարդապետք առաջին մեղք ասեն զհպարտութիւնն. իսկ Նագրիոս զորկորստութիւնն: - 561. *Վասն է՞ր* սատանայի մեղքն մեծ է և անթողլի քան զմարդոյ: - 562. *Վասն է՞ր* զի մարդոյս գործ և անասնոցն հասարա՛կ են, և մարդոյս միա՛յն է մեղք: - 563. Յաւատն և յոյսն և սէրն *վասն է՞ր* կոչին աստուածայինք: - 571. Այս թէ *վասն է՞ր* կոչին աստուածայինք: - 571. *Վասն է՞ր* զանազան անուամբ կոչին չորեքին առաքինութիւնքս այս: - 581. Եւ գիտեն զպատճառն թէ *վասն է՞ր* է ողջախոհ...: - 582. *Վասն է՞ր* են **է** պարգև քրիստոս այսորիկ: - 583. *Վասն է՞ր* **է** են խորհուրդք եկեղեցւոյ: - 587. Այս թէ *վասն է՞ր* **է** են: - 588. *Վասն է՞ր* ի ջուր մկրտիմք: - 591. Տղայն իւր կամաւն ո՛չ գործէ. *վասն է՞ր* **է** պարտական մեղացն ադամայ: - 591. Թէ մեղք հօրն ի մկրտութեանն թողեալ լինի, *վասն էր* մկրտին որք ի նոցանէ ծնանին: - 592. Թէ մկրտութիւնն ազատէ՛ ի պատժոց, *վասն է՞ր* մեռանի մկրտեալն: - 592. Ապա *վասն է՞ր* ոմանք ջուր խառնեն և խմոր: - 596. *Վասն է՞ր* միաւորեմք զխորհուրդ մարմնոյ և արեանն: - 598. Եթէ խոստովանութեամբ թողլի մեղքն, *վասն է՞ր* դնի ապաշխարանքն: - 602. *Վասն է՞ր* **ե** կարգ է մինչ ի սարկաւագն. և նա՛ **զ**երորդ: - 608. *Վասն է՞ր* մինչ ի չորրորդ կարգն փոքրիկ ջահընկալութեանն կարեն ամուսնանալ, և յայնմ հետէ ոչ: - 609. Իսկ թէ *վասն է՞ր* դնի նշան: - 609. *Վասն է՞ր* ի հին օրէնս եդաւ յիւր ազգէն առնուլ հարսն, և ի նորս յօտար ազգէ: - 612. *Վասն է՞ր* պոռնկութիւն այժմ արգելեալ է: - 613. *Վասն է՞ր* օրհնեմք զեկեղեցի: - 615. *Վասն է՞ր* հինքն **բժ**ան օր նաւակատիս կատարէին որ է՛ նորոգումն խորանի տաճարին: - 616. *Վասն է՞ր* խաչի և եկեղեցւոյ ի միասին տօնեմք: - 616. *Վասն է՞ր* ի տաճարին զճարպն վաճառէին, և յեկեղեցիս մոմ: - 617. *Վասն է՞ր* ոչխար յեկեղեցին ո՛չ մտանէ: - 617. *Վասն է՞ր* արտասուքն լուանայ և ջնջէ զմեղս առաւել...: - 619. Այլ և տարակո՛յս է թէ՝ *վասն է՞ր* տրտմութեան արտասուքն դառն է, և ուրախութեան քաղցր: - 619. *Վասն է՞ր* ի սկիզբն ժամուն ասեմք «Օրհնեա այս անուն» և ո՛չ թէ հրամայեա՛ կամ աղօթեա՛: - 624. *Վասն է՞ր* ընդ խաղաղութեանն խաչակնքեմք: - 625. *Վասն է՞ր* զամենայն աղօթից վերջքն ի քրիստոս աւարտեմք: - 625. *Վասն է՞ր* սարկաւագն զամենայն քարոզի վերջքն յաղօթից ձևս փոխէ ասելով՝ կեցո՛ և ողորմեա՛: - 625-626. *Վասն է՞ր* ի պատարագի ժամն ո՛չ ասեմք զփառաւորեալն: - 634. *Վասն է՞ր* զերեքսրբեանն որ է սուրբ աստուածն՝ յառաւօտուն և յերեկոյին ժամն ի վերջքն երգեմք. և ի պատարագին ի սկիզբն: - 634. *Վասն է՞ր* ի վերջոյ զհայր մեր յերկինս աղօթեմք: - 634. *Վասն է՞ր* զսուրբ աստուածն բաց գլխով երգեմք: - 635. *Վասն է՞ր* երբեմն զփառքն և զայժմն ի միասին երգեմք. և երբեմն ո՛չ: - 636. Զամէն շարական կրկին ասեմք, *վասն է՞ր* զհարցն երեքկին ասեմք: - 637. *Վասն է՞ր* **ը** են ձայնք: - 639. *Վասն է՞ր* ձայն և քնար խառնէր դաւիթ ի յերգս հոգւոյն: - 641. *Վասն է՞ր* ի բուն բարեկենդանն զձայնն ի վերջ փոխեմք: - 641. *Վասն է՞ր* ի շաբաթի օր տօնեմք սրբոցն: - 647. *Վասն է՞ր* ութօրէք միայն ծննդեանն է և յարութեանն առանց պահոց չորեքշաբաթի և ուրբաթի: - 649. Պահք օրն *վասն է՞ր* ո՛չ տօնեմք: - 650. *Վասն է՞ր* ասեմք պահք սուրբ սարգսի և սուրբ գրիգորի և սուրբ յակոբայ և այլոց: - 650. *Վասն է՞ր* առաջաւորաց պահքն առանց ընթերցւածո՛ց է: - 650. *Վասն է՞ր* յաղուհացս հանգստեան ո՛չ ասեմք: - 650. *Վասն է՞ր* ազգն Ֆռանկաց զերկու օր պահոցն լուծանէ: - 651. Առաջին՝ *Վասն է՞ր* աստուած նախ զայս կեանքս, և ապա զհանդերձեալն տայ: - 660. *Վասն է՞ր* է զի աստուած նախ զայս՝ և ապա զայն կեանքն տայ մարդոյս: - 662. *Վասն է՞ր* ոմանք մեծատունք են և ոմանք աղքատք: - 664. *Վասն է՞ր* զքահանայս միայն օծանեմք...: - 672. Իսկ թէ *վասն է՞ր* օրհնեն զհողն՝ այս է: - 676. *Վասն է՞ր* զոտքն յառաջ տանիմք մեռելոյն: - 676. *Վասն է՞ր* թաղեմք զմեռեալս: - 677. *Վասն է՞ր* ի հող թաղեմք և ո՛չ յայլ տարերս: - 677. *Վասն է՞ր* կոչի գերեզմանն դժոխք...: - 679. Ապա *վասն է՞ր* ասեն քաւարան: - 701. *Վասն է՞ր* յետոյ արձակէ՛ զկապեալն: - 706. *Վասն է՞ր* փողն ի յերկինս և յերկրի գոչէ ...: - 714. *Վասն է՞ր* ի վերջին ժամանակս յառնեմք համանգամայն: - 716. Ապա *վասն է՞ր* եզեկիէլ յերկար ժամանակս նշանակէ զյարութիւնն...: - 717. Եւ թէ *վասն է՞ր* ոչ գիտեմք զկատարած

աշխարհի և զկենաց մեր, գրեալ է ի վեր անդ առ նախապետսն ի **ժը** գլուխն ի **դ** համարն: - 718. *Վասն է՞ր* ի յարութեան անմահ և անապական մնամք: - 723. Զի թէ նսեմ երկիրս լուսաւորի, լուսաւորքն *վասն է՛ր* խաւարին: - 728. *Վասն է՞ր* մազաղաթ ասէ և ո՛չ այլ ինչ: - 729. *Վասն է՞ր* ասի հրեղէն ծովն ի հարաւ: - 731. *Վասն է՞ր* հրով գայ քրիստոս: - 731. *Վասն է՞ր* հայր ո՛չ դատէ, այլ զամենայն դատաստան ետ որդւոյ ասէ: - 735. Ապա *վասն է՞ր* սակս ժամանակեայ մեղաց՝ յաւիտեան պատժէ աստուած: - 744. *Վասն է՞ր* է հուրն անվախճան: - 750. Մարգարէն եսայի կրկին ասէ զհատուցումն մեղաց. նոյնպէս և ի տեսիլն. և *վասն էր* դաւիթ եօթնպատիկ ասէ հատուցանել ի ծոց նոցա: - 750. *Վասն է՞ր* այն քան թշուառութիւնս կրեն: - 752. Եւ արդ՝ ի յաւարտիլ դատաստանին յորժամ ասէ եկա՛յք, *վասն է՞ր* իջանեն յերկիր, կամ ի դրախտն բնակին: - 759. *Վասն է՞ր* լոյս արեգականն ո՛չ լուսաւորէ զսուրբս: - 760. Իսկ թէ *վասն է՞ր:* - 777. Ապա *վասն է՞ր* ասէ առաքեալս «զպակասութիւն չարչարանաց»: - 780. Իսկ առ լուծումն խնդրոյս թէ *վասն է՞ր* արդեօք առ նորս շնորհ՝ որպէս աւազանին և կարգին ո՛չ բառնի ընդ բառնիլ շաղկապին. իսկ առ հնովն բարձաւ. որպէս յա՛յտ է ի վերոյ ասիցդ ադամայ և յայլոցն: - 782. Յորում թէ *վասն է՞ր* իննամսեայ ծնանին, կամ յաւուր **խ** շնչաբերին, և որպիսութիւնք նոցա: - 785. Առ այսոքիւք, թէ արտասուքն որ յաչացն հեղու, ընդէ՞ր աղի գոլով, Ո՛չ միայն *զվասն էրն* խնդրեմ. այլ և զորպէսն դառնալ նմա աղի ընդ երակս աչաց: - 786. Ընդ այսմ և որ ի ծէնջ արկեալ եղև. թէ *վասն է՞ր* է զի երկու բացասութիւն լինի մի ստորասութիւն. իսկ **բ** ստորասութիւն ո՛չ կազմէ մի բացասութիւն: - 787.

***ՎԱՍՆ ԱՅՆ +*** Ասեմք առ այս, մոլորականքն ո՛չ եթէ զի ունին ներհակ շարժումն *վասն այն* կոչին մոլորականք...: - 12. *Վասն այն* կամեցաւ աստուած զի ի տեսանելն զնա՝ անհբաց դնելի սիրով միացուք ընդ նմա: - 24. *Վասն այն* ո՛չ կարեն իմանալ...: - 31. *Վասն այն* հերձուածօղքն ո՛չ դառնան, զի ո՛չ կարեն ճանաչել զստութիւնն իւրեանց: - 32. *Վասն այն* հերձուածօղն ո՛չ կարէ ուղղիլ: - 33. ...նոքա զի սուրբք էին ոչ պատշաճ պահքն. *վասն այն* ո՛չ կարէին: - 44. Չորրորդ՝ այսու առաւել զմիակամութիւն ցուցանէ. զի մի՛ է կամք իւր և հօրն. *վասն այն* ո՛չ կարէ առանց հօր. զի ո՛չ է որդւոյ այլ կամք զի զոր ինչ կամեսցի բաց ի հօրէ արասցէ: - 45. ...*վասն այն* ո՛չ կարէ որդի առնել ինչ յանձնէ իւրմէ թարց հօր որպէս ասացաք: - 45. Տե՛ս՝ զի ի մի բնութիւն օտարութիւն ո՛չ ասի. *վասն այն* է աստուծոյ կամքն մի և ներգործութիւնքն մի. զի բնութիւնն մի է: - 45. Այլ որպէս բանին սեպհական է և բնութեամբ և ո՛չ ստացմամբ, այսպէս իմացիր և մարմնոյն վասն անճառ միաւորութեան բանին զի իւր է մարմինն. *վասն այն* ոչ ինչ բանին է՝ ասի մարմնոյն: - 46. *Վասն այն* տէրն ընկրկեաց զօրինականն թէ միայն ծայրագոյն բարի է՛ աստուած. և ի մարդկանէ ո՛չ ոք ունի զայս: - 47. *Վասն այն* հեզն յամենայնի արհամարհեաց զփառամոլ միտս նորա խոնարհ պատասխանեօք: - 47. Իսկ յատկութիւն և որոշումն դիմաց՝ սակաւ ինչ է. *վասն այն* թըւով տեսանի: - 104. Եւ զի անձամբ յատկացեալք են և բնութեամբ մի. *վասն այն* Երրորդութիւն ո՛չ ասի միոյ անձին. այլ աստուած կամ աստուածութիւն ըստ միութեան բնութեանն: - 108. Եւ կոչի սէր, զի շարժէ՛ զմեզ. և յառաջածու զօրութիւն է. և երևեցուցիչ. և միաւորիչ. զի այսոքիկ սիրոյ ներգործութիւնք են. *վասն այն* կոչի սէր: - 128. Նմանապէս և նըւազ ձայնն այն՝ փոխո՛ւմն է առաջին ձայնին. *վասն այն* լսէ զձայնն՝ և ո՛չ զբանն: - 131. *Վասն այն* իրհնոս զնոսա ի մին դասակարգութիւն ասէ: - 134. *Վասն այն* աշխարհ ամենայն այժմ ի չարի կայ, և խաւարեալ զանազան մեղօք: - 139. *Վասն այն* թէ քրիստոս զմի հրեշտակի բնութիւն ընդունէր՝ զնա միա՛յն փրկէր և այլքն արտաքոյ մնային փրկութեան: - 149. Եւ յոհաննէս զսա օդո՛յ դասէ. *վասն այն* նոյն անուամբն՝ պօղոս իշխան օդոյս կոչէ. կամ զի յօդս են բնակեալ և իշխեն մարդկան: - 150. Հնգետասաներորդ՝ ասէ սուրբն դիոնէսիոս՝ թէ *վասն այն* տայ աստուած սրբոցն նեղութիւնս և փորձութիւնս...: - 159-160. Դարձեալ այսպէս մեկնեն եթէ՝ փորձութիւնն ըստ ինքեան ո՛չ է բարի. այլ պատահմամբ լինի բարի. յորժամ համբերութիւնն մերձ դնի և յաղթիցէ. իսկ յորժամ համբերութիւն ոչ լիցի, ըստ ինքեան չար և վատ է փորձութիւնն. *վասն այն* տէրն արգելուլ հրամայէ: - 160. Ասեմք առ այս Նախ՝ եթէ կամքն և կարն ի մեզ անհաւասա՛րք են. *վասն այն* զոր ինչ կամիմք՝ ո՛չ կարեմք. և զոր կարեմք՝ զա՛յն կամիմք: - 163. Ապա յա՛յտ է զի զչարն և զմեղս ո՛չ կամի, *վասն այն* ո՛չ կարէ: - 163. Եւ թէ ոք ասիցէ, երևի ապա թէ քահանայագործութիւն պոռնկին ո՛չ լինի կատարեալ. *վասն այն* արգիլեալ է ի գործոյն: - 167. Արդ սկիզբն ժամանակի ո՛չ է ժամանակ. *վասն այն* ո՛չ ցուցանի թէ ե՞րբ եղև: - 180. *Վասն այն* ի նորանալն առաւել զօրաւոր և ազդո՛ւ է սերմանելոյ և այլոց: - 187. Եւ *վասն այն* ստեղծաւ մետասանօրեայ, զի յաւուր ուրբաթի յորում ադամ ստեղծանիւր, լինէր լուսինն բոլոր և **ժդ**օրեայ: - 191. *Վասն այն* ձեռն և ձայն և բան և թիւ և կարգ աւուրցն եղան: - 192. *Վասն այն* մասնկունքն նորա ո՛չ խստանան. այլ

անգայտացեալ ի վա՛յր բերի և կոչի ծիւն: - 205. Իսկ աշուն զնմանութիւն գարնան ունի. *վասն այն* և նա՛ բուսուցանէ: - 198. Իսկ ձմեռն է կատարած և վերջք կենցաղոյս. *վասն այն* բոյսք և ծնունդք դադարին և չորանան: - 198. *Վասն այն* պա՛րտ է զժամանակ կենցաղոյս ի բարին ծախել. զի զառաջին ժամանակն ո՛չ ոք կարէ վերստին ստանալ: - 199. Զի ի չորս տարրէ՛ է գոյացեալ. և ունի զաճումն հողոյն. *վասն այն* նախ աճէ ենթակայ մարմինն: - 213. Մարդս զկարգ եղանակացդ բերէ յինքն. *վասն այն* ի վերջին փոխիլն սպիտակի: - 213. Զի տղայութիւնն օդո՛յ է. և միջին հասակն հրոյ և հողոյ. և վերջինն ջրոյ. *վասն այն* սպիտակի. որպէս ցուցանի յառաջիկայդ **ժզ** գլուխն՝ **իգ** համարն: - 213. Երրորդ՝ զի կարօ՛տ է երկնային մարմնոցն. *վասն այն* ի վե՛ր ընթանայ: - 214. Չորրորդ՝ ցուցանեն զստեղծօղն իւրեանց յերկինս գոլ. *վասն այն* ի վե՛ր ճեպին: - 214. Եւ նոյնպէս զգայական մարմինք ի փտելոյ և յապականութենէ գոյանան. *վասն այն* և դարձեալ ապականին: - 214. Այլ իմաստունք ասեն եթէ՝ կերակուր անասնոցն խո՛տ է անզօր. *վասն այն* նոքա ապուշք և անզօրք լինին: - 218. Իսկ գազանացն միս է՛ զօրեղ. *վասն այն* ի խելս նոցա առաւել յարմարի և ուժովացնէ՛ զնոսա: - 218. Իսկ մարդոյս հնարք և իմաստութիւնն բանականութեամբ է. *վասն այն* բազում է ի նոսա հնարք. և առաւել և նուազ, և ո՛չ հաւասարք: - 218. Ոմանք թուզ ասեն. թէ ի նոյն ժամն որ կերաւ և մերկացաւ՝ և կարեաց ի տերևոյ նորա. և վկայ բերեն թէ՝ *վասն այն* անէծ զթզենին յերուսաղէմ: - 224. Ութերորդ՝ հողն ի յերկրէ առեալ, զի երկիւղալից է մարմինս մեր. *վասն այն* կոչի երկիր...: - 229. Զի նմա՛ն է մարդն բոլոր աշխարհի *վասն այն* աշխարհ կոչի: - 231. Չորրորդ՝ ի գլուխ մարդոյն սակաւ է հողն և օդն բազում. *վասն այն* ի վերո՛յ է: - 233. Եւ այն զի մեծ է բերանոյն. և զի հոտն և համն ազգակից են միմեանց. ի ջրոյ գոլով երկուցն. *վասն այն* զգայարանք նոցա առ միմեանս են մերձեցեալ: - 235. Զի աչաց լոյսն հուր է. և հուրն վերընթա՛ց է. *վասն այն* ի բնականսն նայելով հեշտանայ, և ի բռնութեամբն դժուարի և զարհուրի: - 239. *Վասն այն* յորժամ մարդն տկարանայ՝ և այրեցած արիւնն աւելնայ, մազն ծորի՛ և երկայնանայ: - 240. Յորժամ պալղամն շատանայ ի մարդն, մազն նօսրանայ. *վասն այն* մարդն ի ծերութեանն լինի ճաղատ: - 240. *Վասն այն* յորժամ ննջէ մարդն ի վերայ ձախ կողմանն, շուտո՛վ հալի կերակուրն քան ի վերայ աջ կողմանն: - 242. Եւ փայծեղն և թոքն ցրտայինք ի ձախ կողմն են. *վասն այն* աջն զօրեղ է և ձախն տկար: - 243. Երկրորդ՝ զի թէ այլ և այլ էր հոգի, ի յայլ հոգւոյ տեղիս ո՛չ բնակէր այլ հոգի որպէս յայլո՛յ կաղապար. և ա՛յլ դրօշած ի յա՛յլ կնիք. այլ մի է. *վասն այն* որ յետոյ երևի, յառաջնոյն խառնուածն կարէ՛ բնակիլ: - 259. Զիմաստութիւնն հոմանուն է և ի բազում տեսակս որոշի. և բնաւքն ամենայն՝ մտա՛ցն են ներգործութիւն. *վասն այն* կոչի իմաստութիւն որ է իմացութիւն: - 269. Եւ այլք ասեն թէ՝ մարդն ո՛չ է պատկեր աստուծոյ. այլ պատկեր պատկերի. զի որդի է հօր պատկեր, և մարդն որդւոյն. *վասն այն* ասաց նման և պատկերի: - 273. Նա՛խ՝ զդարձումն յետս աստուածային փառացն. և *վասն այն* շրջեցաւ ի զբօսանս դրախտին: - 280. Երկրորդ՝ հեշտութիւն խօսակցիլ ընդ օձին. և *վասն այն* կամեցաւ լսել, զի հեշտացաւ վասն փառաց աստուածանալոյն: - 280. Չորրորդ՝ ամօթն. «բացան ասէ աչք երկոցունցն, և տեսին զի մերկ էին». և *վասն այն* արարին ի թզենւոյն ծածկոյթ: - 280. *Վասն այն* արդարադատն աստուած է պատիժս եդ. ի վերայ կայենի. վասն զի է չարութեամբ յանցեաւ: - 287. Այլ ադամ յերեկո՛յն ել ի դրախտէն. և ո՛չ կատարեաց զօրն բոլոր. *վասն այն* նախնիքն ո՛չ կատարեն զհազար ամն բոլոր: - 290. Երրորդ՝ **թ** դաս հրեշտակաց է յերկինս. և **ժ**երրորդն մարդն կատարումն թւոյ նոցա. *վասն այն* ի կեանս այս ո՛չ հասանեն ի **ռ** թիւն կատարեալ. զի աստ ո՛չ լինի կատարումն դասուցն այլ ի հանդերձեալն: - 291. *Վասն այն* նահապետքն զհարիւրն պատկե՛ն որ է՛ ժամանակեան. և ի հազարն ո՛չ հասանին որ մշտնջենաւորն է: - 291. Դարձեալ՝ գիտութիւն կատարածի խափանէ՛ զվարձս հաւատոյ. զի վարձքն ի հաւա՛տն է և ո՛չ ի գիտութիւնն. *վասն այն* հաւատով ակն ունիմք կատարածի և ո՛չ գիտութեամբ: - 292. Նախ՝ զի արիւնն և շունչն կենդանութիւնն է որ է աստուծոյ բաժին. *վասն այն* արիւնն ո՛չ է ուտելի: - 295. Չորրորդ՝ ի յարութեանն խնդրի ամենայն արիւն մարդոյ և ժողովի. *վասն այն* այժմ ո՛չ է ուտելի: - 295. Ութերորդ՝ հուրն և օդն առաւել է յարիւնն զի առնօղք են. և յայտ է ի խառնումն միութեանց. զի հուրն մածուցանէ՛, և ջուրն և հողն մածնուն, և օդն սնուցանէ. *վասն այն* զարարօղն և զսնուցանօղն ո՛չ ուտեմք: - 295. Զի արիւն և շունչն արակա՛ն է որպէս ցուցաւ. *վասն այն* ա՛յրն հանէ զնոսա. և կինն չէ տուեալ արիւն՝ ո՞րպէս հանէ: - 296. Եւ մինչ զգիրն յառաջ կալան թէ այսո՛ւ փորձիմք, այլ ո՛չ ոք գիտաց կարդալ՝ բաց յեբրայեցւոցն. *վասն այն* ասի եբեր, թէ զառաջին լեզուն նա՛ եբեր: - 299. Ապա յա՛յտ է՝ զի աստուած ինքն ինքեան նախկին և վերջին՝ հաւասար կամ անհաւասար ո՛չ ասի. *վասն այն* իւր անուն ո՛չ դնէ: - 312. *Վասն այն* յոբ **ժ** պատարագաւ սրբէ՛ր զ**ժ** մասնաւոր մեղսն որ գտանին յարբեցութեան. և մին զուարակն ի

սրբութիւն վասն ակամայ և խորհրդոյ մեղացն: - 322. Չորրորդ՝ կեղծաւորութիւն է և խաբէութիւն գովելն զչարն և զանիրաւն. *վասն այն* ո՛չ ասաց բարեկամացն բարիս՝ զի չարք էին: - 325. Սոյնպէս բարեկամք յոբայ թէպէտ շարժեալք էին ի բանսարկուէն, այլ աստուծոյ հոգւովն զօգտակարսն բարբառէին. *վասն այն* գրեցան բանք նոցա ի սուրբ գիրս: - 325. Հինգերորդ՝ ըստ առաջին կարգին դարձեալ ասացին բարեկամքն յոբայ՝ թէ հաճո՛յ ես աստուծոյ՝ լուիցէ և խօսեսցի աստուած. *վասն այն* առաջի նոցա խօսեցաւ և վկայեաց: - 326. Եւ զի ո՛չ նկարեցաւ ի պատկեր կռոց և ո՛չ պաշտեցաւ մորենին. *վասն այն* տէր երևեցաւ ի նմա: - 330. Նախ՝ զի անմտացան նոքա, և զճանճս և զսողունս և զգետս և զանասունս պաշտէին. *վասն այն* նոքօ՛ք տանջեաց զնոսա...: - 333. Այսպէս հինգ եղանակաւ չարաչար ատեցին զհիւրսն. *վասն այն* կրկին կրեցին զհատուցումն վրիժուց **ժ** հարուածովք: - 335. Երկրորդ՝ զի մի ոք որ կատարէ զօրէնս, պատուակա՛ն է աստուծոյ քան զամենայն աշխարհս. *վասն այն* ընդ մինն խօսի: - 340. Հինգերորդ՝ տղա՛յ էր ժողովուրդն, և զուարճանային ի տեսութիւնն. *վասն այն* զանազան գունով զարդարեաց: - 342. Նա՛խ՝ զի ամենայն իր որ ընտի՛ր է՝ չա՛փ ունի և սահման. և ո՛չ շփոթումն. *վասն այն* կանգնաւ չափէ զնոսա: - 344. *Վասն այն* զնշխարն ի կողմն հիւսիսոյ դնեմք և զսկիհն ի հարաւ որպէս անդ: - 346. *Վասն այն* ա՛ստ ի հաստատութեան երկնից ասեն զկայանս հոգւոցն մինչ ի կատարած յարութեան մարմնոց: - 346. Հինգերորդ՝ կրկին օրէնքն հոգւոյ և մարմնոյ. *վասն այն* կրկին էր տախտակն: - 349. Վեցերորդ՝ կրկին տալոց էր օրէնք հին և նոր. *վասն այն* կրկին գրեաց: - 349. Չորրորդ՝ յօրինակ դրախտին ադամայ՝ որ ծրի տուաւ և ո՛չ պահեաց. *վասն այն* որդւոց նորա գործով և աշխատութեամբ պարգևէ: - 350. Ա՛րդ՝ բնութիւնս մեր ի յադամ ապականեցաւ մեղօք. *վասն այն* որպէս նա՛ պատժեցաւ, նոյնպէս և մեք պատժիմք: - 351. Ութերորդ, ապականութիւն է խմորն. *վասն այն* տէրն զանապական մարմինն իւր բաղարջով աւանդեաց: - 356. Եւ քահանայքն հպարտացան և օտար հրով խնկարկեցին ի ներքս վարագուրին, *վասն այն* պատժեցան ի խրատ այլոց: - 364. Հինգերորդ՝ տաղաւարահարքն. որ է՛ եկեղեցւոյ տօն. *վասն այն* զխաչին և զեկեղեցւոյն ի միասին տօնեմք: - 372. Զի վարդավառին ա՛յն է, յորժամ կրկին խ պահեաց մովսէս ի լեառն և լուսաւորեցան երեսքն. *վասն այն* զկնի երկու յիսնակացն տօնեմք: - 373-374. Ա՛րդ՝ *վասն այն* ո՛չ խնդրի շահ արծաթոյ, զի փո՛խ է տուեալ: - 375. Ի խոստման աւետիսն ծե՛ր էր աբրահամ, և կինն ամուլ. զի մի՛ անյուսացին ի բնութիւնն նայելով. այլ ի բանն աստուծոյ որ ամենազօ՛ր է. *վասն այն* ասացաւ անթիւ լինիլ զաւակացն. և եղև այնպէս: - 377. *Վասն այն* աղերսէ մարգարէն զտէր, «մի ընկենուր զիս տէր ի ժամանակս ծերութեան. ի պակասիլ զօրութեան իմոյ մի՛ թողուր զիս»: - 377. Արդ քահանայութիւնն երկնային է. *վասն այն* կորխ յերկնից հրովն այրեցաւ: - 381. Ոմանք ասեն թէ՝ դադան քրէական մեղանչեաց. *վասն այն* դառն տանջեցաւ: - 381. Եւ այլք ասեն թէ՝ կորխեանքն այրեցան մարմնով, *վասն այն* հոգւով սրբեցան. և բուրվառք նոցա սրբեցան: - 381-382. *Վասն այն* սրսկօղ ջրոյն պղծէր, և սրսկեալն սրբէր: - 384. Եւ տե՛ս զշնորհս խոստովանութեան. *վասն այն* որ զղջացաւ և յայտնեաց, ի հնգէն զմին տայ տուգանք: - 384. Զի **խ** *վասն այն* կատարեմք, որ առաջինքն զննջեցեալքն **խ** օր լային անմխիթար. որպէս զնահապետն յակոբ լացին **խ** օր: - 391. **Եւ որպէս ննջեցեալն քնով՝ ո՛չ տեսանէ զինքն. և որպէս յաւելի կերակրոյ խնուն զգայարանքն. նոյնպէս ագահութիւն և փարթամութիւն և հպարտութիւն մոռանալ տայ զինքն. *վասն այն* ասեն թէ՝ ինքեանց գիտակքն իմաստունք են:** - 397-398. Ըստ մարմնոյ յա՛յտ է զի երկիրն եգիպտացւոց դա՛շտ է. *վասն այն* նեղոս գետն արբուցանէ զնա՛: - 398. Եւ զի զայս ամենայն վկայութիւնս նշանի տեսին աչօք և լսեցին ականջօք և ո՛չ հաւատացին. *վասն այն* վրէժ խնդրեաց աստուած ի նոցանէ ...: - 400. Այլ ի կուսանս հանգչի. որք հրեշտակաց նմանք եղեն կուսութեամբ. *վասն այն* ասեն աստուած բնակեալ է յերկինս ուր կուսանք են հրեշտակք. և ո՛չ յերկրի ուր ամուսնացեալք են: - 404. *Վասն այն* յաստուծոյ օրհնեմք զնոսա և գոհանամք: - 406. Չորրորդ՝ մարմին կենդանեաց որ առաւել պարարտ է քան զամենայն. *վասն այն* ի մսոյ հատանին պարկեշտք. զի մի՛ առաւել գիրասցին և գազանասցին: - 407. Երկրորդ՝ զի միայն մովսէս կոչեցաւ աստուած. և ո՛չ անուամբ միայն, այլ և գործով իշխէր ի վերայ տարերաց ի վեր և ի խոնարհ. *վասն այն* աւագ օրհնութիւն կոչի: - 407. Չորրորդ՝ մարմնաւոր մահն վախճան է մարմնոյ կենաց և սկիզբն հոգևորին. *վասն այն* օրհնէ: - 408-409. Տասներորդ՝ ի սկզբանէ հայհոյիչ աստուածամարտ էր սատանայ. և *վասն այն* զմարդիկ կորուսանէր մեղօք...: - 410. *Վասն այն* և ի նորս զխաչ և զսրբութիւն և զեկեղեցի և զայլն տայ ի ձեռս այլազգեաց: - 425. Կամ զի աղքատասէ՛ր էր դաւիթ և բազումք շրջէին ընդ նմա, *վասն այն* յեփուսացիքն նախանձեցան: - 431. Եւ *վասն այն* գնաց ի սաբեփթա յայլազգիս. զի և զնոցա նեղութիւնն տեսցէ. որք չէին անցեալ զօրինօքն մովսէսի: - 443-444.

Երրորդ՝ եցոյց յայտնապէս զպատերազմն առաջի այսոց օդոցս. *վասն այն* պիտոյ էր հեծեալք: - 445. Այսպէս և յովակիմ ի յուդայէ՛ էր և ունէր զաննա զդուստր մատթանայ ի ցեղէն ղևեայ. *վասն այն* ազգական մարիամու զեղիսաբեթ ասէր գաբրիէլ: - 461. Եւ *վասն այն* խառնեցան բ ցեղքն. զի ծնեալն ի նոցանէ քրիստոս ըստ մարմնոյ, թագաւոր և քահանայ լինէր: - 461. Նա՛խ՝ աստուածածին *վասն այն* ասեմք, զի ծնեալն ի նմանէ աստուած է: - 466. Չորրորդ՝ միտք և հոգին ո՛չ երևին. և բանն երևի և ի դուրս գայ. և մարդիկք տեսանեն և գրեն. *վասն այն* բանն մարմնացաւ, և ո՛չ հայր կամ հոգին: - 468. Հինգերորդ՝ բանն պատկեր է հօր էական. և մարդն պատկեր նմանութեան. *վասն այն* բանն աստուծոյ եղև ի պատկեր մարդոյ: - 468. Ա՛րդ՝ փեսայ և գլուխ և ժառանգ արուն է և ո՛չ էգն. *վասն այն* արու ծնաւ քրիստոս: - 480. Երրորդ՝ եթէ քահանայ է և թագաւոր. *վասն այն* ընդ թագին և խա՛չն նկարի: - 481. Չորրորդ՝ զի կամաւ հնազանդեցաւ խաչի և չարչարանաց. *վասն այն* ի գլուխն է նկարեալ: - 481. *Վասն այն* ի փրկչական պատկերն նկարեալ է ի մին ձեռն գիր և ի միւսն խաչ: - 482. ...իսկ քրիստոս ո՛չ ունէր զմեղս. *վասն այն* վաղվաղակի ել ի ջրոյն. և նշանակէ ի մեզ զշնորհաց հեղումն. որ մկրտեալն ազատի ի մեղաց և իսկոյն ելանէ յառաքինութիւնս: - 487. Չորրորդ՝ մկրտութիւնն յովհաննու որ մկրտէր ի յապաշխարութիւն. զի կարասցեն ընդունել զհոգւով մկրտութիւնն. *վասն այն* յառաջէ՛ր և սրբէ՛ր ջրովն: - 488. Նա՛խ՝ զի ծանիցի թէ սոցա արարիչ է անարգեալն. *վասն այն* լուսեղէնք և օդեղէնք և օդն խաւարեցան. ջուր ի կողիցն բղխեաց. և երկիր շարժեցաւ: - 490. Ապա ուրեմն օտա՛ր արկածք էր ապականութիւնն, *վասն այն* ո՛չ կրեաց ի սուրբ մարմին իւր անապական: - 497. Եւ *վասն այն* աստուած եղև զի յառաջին փառս և որպիսութիւնն զմեզ հանցէ: - 500. Այլ զի բան ի յերկնից իջեալ միացաւ ի մարմնի. *վասն այն* և մարմնոյն ասէր «ա՛յս է հացն ի յերկնից իջեալ»: - 501. Զի որպէս յեսու աւերեաց զերիքով և անէծ զի մի՛ շինեսցի. նոյնպէս և զդժոխքն աւերեաց քրիստոս և անէծ զշինօղսն չար գործօք. *վասն այն* ասէ «երթա՛յք յինէն անիծեալք ի հուրն յաւիտենից»: - 504. Յերեկոյի շաբաթոյն ո՛չ *վասն այն* լուծանեմք թէ յարութիւնն քրիստոսի ի շաբաթի աւուրն է. ո՞չ. քա՛ւ և մի՛ լիցի: - 508. Իսկ ձուկն կենդանի՛ է կատարեալ զգայարանօք և շարժմամբ. այլ ձտուր և առ շնչոյ ո՛չ ունի. *վասն այն* պակա՛ս է: - 510. Հինգերորդ ասեն, զձուկն ո՛չ զենումք *վասն այն* ի պահոց ուտեմք: - 511. Եվ դարձեալ՝ զձու և զկաթն *վասն այն* ո՛չ ուտես զի արիւն ունին. և դարձեալ դու ասես թէ արիւն ո՛չ ունին: - 511. *Վասն այն* յերկարեցի, թէ ոք հակառակի՝ այսպէս պատասխանեսցես նոցա. և զեղկելի անձն իմ յիշեսցես ի տէր ուղղակից եղբայր իմ ի քրիստոս: - 511. Երրորդ *վասն այն* արգել, զի ցուցանէ թէ յոյժ պատուեցաւ մարմինն այն և ո՛չ է համարձակելի որպէս յառաջն մաքսաւորք և պոռնիկք մերձենային: - 517. Վեցերորդ, ոմանք ասեն թէ պարգևս խնդրէր հոգևորական. *վասն այն* ասէ ելանեմ առ հայր իմ և իջանէ հոգին և լնու զձեզ ձրի պարգևօք. այժմ յաղագս այդորիկ մի՛ մերձենար: - 517. Եօթներորդ, կամ թէ եգիտ ի նա երկեւան ինչ թերութեան վասն յարութեանն. իբր զի ասէ յայսմ գիշերի մերձեցայք յոտս իմ և ո՛չ հաւատացեր. *վասն այն* կրկին անգամ ո՛չ հրամայէ մերձենալ: - 517. *Վասն այն* ո՛չ ետ մարիամու մերձենալ. այլ պահեաց զնա բազկին այնմիկ որ նստոյց զնա ընդ աջմէ իւրմէ: - 518. *Վասն այն* եհան զաշակերտսն արտաքոյ քաղաքին բեթանիոյ: - 519. ...*վասն այն* ո՛չ կոչին ճշմարիտ մարգարէ պարզաբար. այլ բաղադրեալ. որպէս մարգարէ բահաղու. կամ մարգարէ բարձանց կամ անտառին: - 536. Եւ *վասն այն* աթոռ սահմանեցին: - 548. Եւ *վասն այն* այլազգ ո՛չ հաւատան. զի յառաջն չկայր մինչ ի նա՛. և առաւել *վասն այն* անուանեցաւ լուսաւորիչ: - 549. *Վասն այն* մնաց ի մեզ ճշմարտութիւնն իսկապէս և անխառն ի ստութենէ: - 551. ***Վասն այն* այլ վարդապետք կոչեն զայս ախտ՝ ծուլութիւն. զի ծուլութիւնն յերկու իրաց երևի. մին որ յետս դառնայ ի հոգևոր բարւոյն և ծանրանայ ի գործելն. այսինքն պահել՝ աղօթել և այլն. և ըստ այսմ կոչի տրտմութիւն**: - 559. *Վասն այն* առաջին է ամբարտաւանութիւն, և ընդ նմա նախանձն, և այլքն ըստ կարգի: - 561. Այսպէս ապա գիտելի է, զի և հրեշտակք *վասն այն* մեղանչեն որ են բանականք և անձնիշխանք: - 563. որպէս առաւել է մեղք հրեշտակին քան զմարդոյն. *վասն այն* մին քահանայի մեղք՝ որ չափ բոլոր ժողովրդեանն է. ուստի յա՛յտ է ի պատարագէ հնոյն...: - 563. Եւ զի ո՛չ թողու զմեղս՝ անհաշտ լինի. *վասն այն* մեղքն անջինջ և անթողլի մնայ: - 566. Եւ այսու նախաստեղծքն մահու մեռան. և *վասն այս* մեղացսէ որ մեք ևս մեռանիմք...: - 570. Եւ *վասն այն* սիրեմք զընկերն, զի ստեղծուած և պատկեր աստուծոյ է: - 571. Եւ զի յառաջ եդեալ հաւատոյն է՛ ճշմարիտն. *վասն այն* հաւատն է՛ յիմացումն որպէս ի ենթակայս. և յառաջ եդեալ յուսոյն և սիրոյն է բարին, *վասն այն* յոյսն և սէրն են ի կամքն որպէս ի յենթակայս: - 572. *Վասն այն* ասի արդարութիւնն ուղղութիւն կամաց. զի ո՛չ միայն է առանձնական զօրութիւն կամ առաքինութիւն. այլ և հասարակ և պարունակիչ ուղղութեան հոգւոյն: - 579. Եւ վերջինս այս *վասն այն*

ասի գործ ողորմութեան, զի կակուղ և խոնարհ պատասխանին խորտակէ՛ զբարկութիւն ընկերին և շահի՛ զնա: - 585. Արդ փոքրիկ տղայն ո՛չ *վասն այն* տանջի թէ ադամ եթող զայն. այլ զի ինքն զարդարութիւնն զայն ո՛չ ունի *վասն այն* տանջի: - 591. Եւ *վասն այն* ամենայն ոք ունի զսկզբնական մեղքն. - 591. Եւ *վասն այն* է գրեալ՝ յերրորդ կամ ի չորրորդ ազգս մեղաց վրէժ խնդրեսցի. յորժամ հայրն և որդին և թոռունքն զնոյն մեղս գործեսցեն: - 593. Երկրորդ՝ զի թէ խառն բղխեաց ըստ քեզ *վասն այն* ի պատարագն ջուր խառնես, ապա և ի ջուրն գինի խառնեա և այնպէս մկրտեա՛: - 595. Երկրորդ՝ զի մեք կարասցուք մերժենալ ի սրբութիւնն, *վասն այն* մնան պատահմունքն...: - 597. *Վասն այն* ի դիմաց եկեղեցւոյ աղօթքն է, և ի դիմաց աստուծոյ իշխանութեամբ արձակումն: - 602. Եւ *վասն այն* զանազան իւղ ո՛չ ունիմք, բայց միայն զմեռոնն սուրբ...: - 605. *Վասն այն* մինչ յայս ամուսնանալ կարեն. և ի հինգն ելեալ վերագոյն դասուց՝ ո՛չ ամուսնանան: - 609. *Վասն այն* խոտեալ է և պիղծ յամենայն օրէնս: - 612. Իսկ մեր քաւութեան տօն խաչն է. և տաղաւարահարն եկեղեցին. *վասն այն* զխաչի և եկեղեցւոյ ի միասին տօնեմք: - 616. *Վասն այն* զարտասուքն ի յաչքն է եդեալ...: - 619. Նոյնպէս և երկրորդն որ ասէ ոչ նախանձիլ ընդ չարս որ են անզգամք. և զի ո՛չ գոյր նոցա աստ փոխարէն մեղաց. *վասն այն* հրովն յաւիտենից այրեսցէ զնոսա: - 629. Դարձեալ՝ առաջին ողորմեայն է՛ առ հոգին սուրբ. *վասն այն* ասեմք օրհնեալ հոգիդ սուրբ աստուած ճշմարիտ զառաջինն: - 633. Իսկ յառաւօտն և յերեկոյն պատարագ ո՛չ մատչի. *վասն այն* ամենայն աղօթից և պաշտմանց կատարումն և աւարտ զխաչէն ճառեմք...: - 634. Զի ծաղիկն դիւրաւ թափի յամէն փոքր պատճառէ. յանձրևոյ և ի հողմոյ և ի սաստիկ որոտոյ. *վասն այն* պտուղն կորնչի: - 638. *Վասն այն* և տեղեաւ փոխեմք. զմարգարէսն ի մէջ եկեղեցւոյն, և զառաքեալսն մերձ բեմին ընթեռնումք: - 643. Եւ բոլոր սաղմոսն՝ այն մին տանն համաձայնք և վկայք. *վասն այն* ասի սաղմոս կցորդ: - 643. ...և զայլ մարգարէսն ի շաբաթն ընթեռնուին. *վասն այն* միշտ սա՛ երգի յեկեղեցի: - 643. Այլ և յարութիւնն կատարումն է տնօրէնութեանցն. *վասն այն* զեսայի ընթեռնումք: - 644. Այլ և բոլոր ամենայն տնօրէնութեանցն պատմօղ. *վասն այն* յամենայն օր ի տօնս, ի պահս, և յուտիս, ի շաբաթս, և ի կիրակէ, զնա՛ ընթեռնումք: - 644. ...և *վասն այն* առաջաւոր և առաջապահք կոչի և առանց գրոյ: - 650. *Վասն այն* տէր ամենակալն ի մեծ կարգն սկսանի: - 651. *Վասն այն* ընդ քրիստոնէի՛ց պարտ է բաժանել զհացն...: - 655. *Վասն այն* ասէ սուրբն Նազրիոս առ միայնակեացս թէ «գինի ամենևին մի՛ ըմպիցես»: - 656. *Վասն այն* նախքան զըմպելն օրհնեմք. և յետ ըմպելոյն դարձեալ շնորհակալեմք. - 656. ...*վասն այն* պա՛րտ է զընտիրն և զգէրն մատուցանել: - 657. ...*վասն այն* հող ի գլուխ արկանէ մարդ ի ժամ սգոյ. այլ և ի վերայ մեռելոյն: - 670. ...*վասն այն* հոգւոյ նորա աղօթիւք սրբութիւն և փրկութիւն խնդրեմք...: - 672. ...*վասն այն* նա՛ մեզ ողջոյն տայ բոլոր եկեղեցւոյս...: - 673. Եւ այս զանազան կարծիքս *վասն այն* է, զի գիրք սուրբք չե՛ն յայտնի բացայայտեալ զնոսա: - 687. Եւ այս գիտելի է, զի անուն նեռին ջնջեալ և կորուսեալ է ի սուրբ գրոց. *վասն այն* զանազանապէս կոչեն զնա՛: - 707. *Վասն այն* հոգիք մեղաւորաց լինին ի խաւարն անգիտութեան. և ի տրտմութիւն յաւիտենական. և որոշեալք յաստուծոյ: - 723. Եւ որպէս այժմ հոգով և մարմնով զմահկանացու կեանս վայելեաց, նոյնպէս և յայնժամ հոգւով և մարմնով զանմահ կեանս ժառանգեսցէ. *վասն այն* յառնէ: - 724. Երրորդ պատճառ, ասեն իմաստունքն թէ ծնունդք կենդանեաց և բուսոց լինին ի շարժմանէ երկնային մարմնոց. իսկ ի կատարածի խափանի շարժումն նոցա. *վասն այն* անբան կենդանիք և տունկք խափանին: - 727. Յրեղէն ծով ասացեալ են ի հարաւ. *վասն այն* ջերմ է ասեն մասն այն: - 731. Նա՛խ՝ զի խոնարհ և ցա՛ծ է կողմն հարաւոյ. և լուսաւորքն ա՛նդ շրջին. և աջ կողմ է աշխարհի. *վասն այն* ջերմ է: - 731. Իսկ հիւսիս բա՛րձր է. և լուսաւորքն հեռու. և է ձախ կողմն աշխարհի. *վասն այն* ցուրտ է և սառնամանիք: - 731. Իսկ ի կատարածի ցրտացեալ լինին մարդիկ ի սիրոյն աստուծոյ իբր ծերացեալ աշխարհի. *վասն այն* ջերմ հրով պատժեսցին: - 731. Դարձեալ՝ նիւթ հրոյն որ աղտ մեղաց, է՛ յաւիտենական. *վասն այն* յաւիտեան տանջէ զնոսա: - 744. Դարձեալ հինգերորդ, մեղքն որոշէ ի յաւիտենական կենացն. *վասն այն* անկանի ի մահն յաւիտենական: - 744. Եւ *վասն այն* ասի արքայութիւն, զի նովաւ յերկնաւորսն հանդերձեալ եմք թագաւորել: - 754. Եւ *վասն այն* կոչի եկեղեցի արքայութիւն, զի որ ի ներկայիս եկեղեցւոյ արքայութիւն առնէ և գործէ՛, ունի զվախճան մեծի փառաց: - 754. Եւ *վասն այն* ասի արքայութիւնն աստուծոյ, զի պատուիրանօքն որ յաւետարանն կամ յայլ գիրս սուրբս գտանին, պահողացն արքայութեանն մուտ բացեալ լինի. և ներքին մարդս ամրացեալ հաստատի: - 754. Եւ *վասն այն* ասի արքայութիւն, զի ամենայն երանութեանց և փառաց է՛ կատարումն և ծայրագոյն մեծութիւն: - 754

***ՎԱՍՆ ՈՐՈՅ +*** Այլ արդ՝ աստուած է ամենեցուն ո՛չ հուպ պատճառ, այլ հեռի. *վասն որոյ* ո՛չ

հարկաւոր ներգործէ: - 15. Երրորդ՝ ասեն թէ կամքն աստուծոյ ո՛չ է ընդունայն. և ո՛չ ոք կայ ընդդէմ կամացն աստուծոյ. *վասն որոյ* զորինչ կամի՝ այնպէս առնէ. զոմն չար և զոմն բարի: - 16. Դարձեալ՝ ամենայն ինչ որ յէից է՝ սկիզբն ունի և պատճառ. իսկ չարն ո՛չ ունի սկիզբն և ո՛չ պատճառ. *վասն որոյ* ո՛չ է յէից: - 22. Իսկ չարն արտաքո՛յ է էութեան և բնութեան. *վասն որոյ* անբաւ է և անպատճառ: - 23. Իսկ չարն ոչնչութիւն է. և ո՛չ ունի առաջք և վերջք. *վասն որոյ* անչափ է չարն և անպատճառ, որպես ի վերոյ ցուցաւ: - 23. Զի ո՛չ նա այսմ և ո՛չ սա այնմ կարէ միակ գոլ. *վասն որոյ* հա՛րկ է գոլ այնպիսի միակ՝ որ և ամենայն բազմութեան և միակաց է՛ միակ. որ է աստուած: - 26. *Վասն որոյ* պա՛րտ է խնդրել ստէպ...: - 32. *Վասն որոյ* որ հե՛ղգ է ի խնդրել զպարգևս զայս, ո՛չ կարէ հաւատալ: - 32. *Վասն որոյ* ո՛չ հաւանին ուղղութեան վարդապետաց: - 33. *Վասն որոյ* և մեք համաձայն գոլով ուղղափառաց հարցն սրբոց՝ դիցուք սուղ ինչ յառարկութեանց նոցա, և ընդ նմին զպատասխանիս: - 35. *Վասն որոյ* հոգի քրիստոսի անուանի: - 61. *Վասն որոյ* հարկաւորիմ ցուցանել նոյն քան գլխով եթէ աստուած է քրիստոս և ըստ մարմնոյն միութեան մարմնացեալ և մարդացեալ աստուած: - 72. *Վասն որոյ* աստուածային բնութեամբն մարդ է քրիստոս. և մարդկային բնութեամբն աստուած: - 75. *Վասն որոյ* ասէր՝ մինն աստուած էր բնութեամբ բանն. աստուած արարիչ և ստեղծիչ: - 79. *Վասն որոյ* ասէ սուրբն կիւրեղ եթէ՝ ո՛չ մարդն աստուածացաւ, այլ աստուած բանն էջ յարգանդ կուսին և առեալ հոգի և մարմին ի նմանէ՝ աստուածն մարդ եղև...: - 79. *Վասն որոյ* ասէ՝ ընդ դէմ ասացելոցս խոնարհութեանց՝ Աստուած զնա առաւել բարձրացոյց: - 94. *Վասն որոյ* հրէայք գայթակղեցան և հեթանոսք յիմարեցան...: - 95. Չորրորդ՝ բանն գերագոյն է յիմանալիսն. և մարդն գերագոյն է ի զգալիսս. *վասն որոյ* մարդ եղև: - 107. *Վասն որոյ* մարդ եղև, զի զբոլորն յինքենէ զյառաջ եկեալն յինքն միաւորեսցէ: - 107. Ա՛րդ՝ զի հայր պատճա՛ռ է որդւոյ ծննդեան՝ և հոգւոյ բղխման, *վասն որոյ* հայր նախադասի. իսկ ընդ նմա որդի. ո՛չ որպէս ոմանք կարծեն որդի պատճառ է հոգւոյ բղխման, այլ զ է ուղիղ տեսութիւնն: - 109. Զի անդրանիկ է էն անուն՝ քան զամենայն բարի և ազնիւ և այլն. *վասն որոյ* ասաց մովսէսի՝ «ես եմ որ էնն»: - 111. *Վասն որոյ* երբեմն կոչի սկիզբն. և մեք սկսեալք ի նմանէ: - 112. Եւ զի անեղ է գիտութեամբ, *վասն որոյ* անփոփոխ է: - 113. *Վասն որոյ* ընդ կորուստ այսպիսի մասանց՝ և գիտութիւն մտաց մեր կորնչի: - 117. Իսկ միտքն աստուծոյ ի վեր է քան զժամանակ. *վասն որոյ* ներկայաբար զանցեալն և զհանդերձեալն տեսանէ: - 117. Իմաստութիւնն աստուծոյ անեղ է. *վասն որոյ* զանեղսն որ ո՛չ են եղեալ՝ չափէ՛: - 118. Իսկ մերս եղական է. *վասն որոյ* զեղեալսն չափէ: - 118. *Վասն որոյ* միեղէն տեսանեն և պարզ. որպէս զծագումն լուսոյ առանց ճանապարհորդութեան լուսաւորեալ. և միշտ բարձրանան տեսութեամբ: - 119. *Վասն որոյ* հիացական կոչի անունն աստուծոյ: - 127. *Վասն որոյ* էջ ի դժոխս՝ և կորզեաց զհոգիսն ի բերանոյ գազանին: - 128. Երրորդ՝ զի ինքն ինքեա՛մբ է յառաջածու, *վասն որոյ* կոչի սիրօղ: - 128. Եւ յետ սորա անմիտ զգայականն է. *վասն որոյ* ո՛չ է իմացական այլոյ: - 130. *Վասն որոյ* այսպէս ասեն զկարգ դասուցն. և սոցա տարածայնութիւն զհամահաւասարութիւն դասուցն նշանակեն: - 135. *Վասն որոյ* պարունակ բանիւ կոչին էութիւնք, զօրութիւնք, և այլն: - 137. Երկրորդ՝ զի առանձնաւորութիւն է զօրութեանց, այսինքն արիութիւն յաստուածայինսն և անշարժ գոլն և զօրացուցանելն. և զայս առ հասարակ ունին. *վասն որոյ* առ հասարակ զօրութիւնք կոչին: - 137. Նախ՝ զի հրեշտակն միեղէն և բոլոր իմանայ. իսկ հոգին բան բան և մասնաւոր. *վասն որոյ* բանական կոչի: - 141. *Վասն որոյ* ասէ **ոք** հազարաց և բիւրք բիւրուց, ո՛չ զորքանն նշանակէ, այլ զանբաւն: - 141. Զի թիւ մեր նիւթեղէն և տկա՛ր և չափաւո՛ր է. *վասն որոյ* զանբաւութիւն նոցա ո՛չ կարէ չափել. ուստի յայտ է՝ զի և ո՛չ զթիւ մեր կարեմք գիտել: - 141. Եւ ըստ որում մի է սկիզբն և կատարումն և թափանցումն. *վասն որոյ* միով և ինքեամբ գիտէ զբազումս. և ո՛չ որպէս մեք բազմօք զբազումս: - 142. *Վասն որոյ* գրով և բանիւ՝ այսինքն ընթերցմամբ և լսելով ժողովեմք զգիտութիւն: - 143. *Վասն որոյ* ասի սատանայ՝ գտակ և հայր չարեաց: - 148. *Վասն որոյ* անկաւ և կորեաւ: - 149. *Վասն որոյ* ընդ նմա և իշխանք նորա անկան և ի տանջանս մատնեցան: - 149. Զի աստուած փոխանակ ապաշխարութեան զմահն կամեցաւ. և հրեշտակք անմահք են. *վասն որոյ* առանց փրկութեան մնացին: - 149. Տասներորդ՝ գործ բութեան ո՛չ ինչ ունի մեղք. զի ըստ բնութեան գործելով ոչ ոք մեղանչէ ասէ փիլիսոփայն. իսկ կամացն գործ՝ մեղանչական է. *վասն որոյ* կամաւորին գով և պարսաւ հետևի: - 156. *Վասն որոյ* արար զաշխարհս գործ մշտնջենաւոր. և մշտնջենաւոր հարկաւո՛ր է. և հարկաւորն ի գոլն կարէ, և ի չգոլն անկա՛ր: - 162. *Վասն որոյ* կամեցաւ և արար ի գոյութիւն. այժմ ո՛չ կամի և ո՛չ փոխէ յանգոյութիւն: - 162-163. Իսկ առ աստուած կամքն և կարն հաւասա՛րք գոն. *վասն որոյ* հակադարձին ի միմեանս. զի զոր ինչ կամի՝ կարէ՛. և զոր կարէ՝ զնոյն և կամի՛: - 163. Եւ զի օրինակն ունի նմանութիւն և ունի աննմանութիւն. *վասն*

*որոյ* կոչի օրինակ: - 163. *Վասն որոյ* կարէ կոյսն ապականիլ. և անկա՛ր է ապականեալն լինիլ կոյս: - 165. *Վասն որոյ* անկարելին ո՛չ հակադարձի առ կարելին: - 165. Նա՛խ՝ եթէ թողութիւնն է հետևեալ և կայացեալ ի զղջումն. և զղջումն է ի կամքն. և կամքն է ի կարելեացն. *վասն որոյ* ներընդունի զթողութիւն ի ձեռն զղջման: - 165. Եւ գործ պոռնկութեանն է ունակութեանն պակասութիւն. *վասն որոյ* ո՛չ հակադարձին: - 165. Գիտելի՛ է, զի հոմ անուն է զօրութիւնն. այսինքն կարութիւնն. և հոմանունն մա՛յր է մոլորութեան. *վասն որոյ* որոշելի է զնոսա: - 167. Ի սեռս էականութեան գոյացութիւն նախապատիւ է քան զպատահումն. և զի նախապատիւ է աստուած ամենայն գոյից, *վասն որոյ* գոյացութիւն է և ո՛չ պատահումն: - 170. Եւ զի յաստուած ո՛չ գոյ առաւել և նուազ. *վասն որոյ* միայն գոյացութիւն է և ո՛չ ունի պատահումն: - 171. ...որպէս ժամանակն. և ո՛չ միայն սկզբան որպէս մշտնջենաւորն. այլ անսկիզբն է և անվախճան. *վասն որոյ* կոչի յաւիտենական: - 172. *Վասն որոյ* խոստովանիմք ընդ սրբոց հարցն վասն միաւորութեանն մի բնութիւն աստուծոյ բանին մարդացելոյ: - 176. Դարձեալ տանի զժամանակեայ կեանս մեր. *վասն որոյ* կոչի տարի: - 190. *Վասն որոյ* տօն առաջին աւուրն ի մէջ գիշերի սկսանի. և մեծամեծ տօնքն յերեկօրեայ որպէս ասեմք զշաբաթի երեկոյն կիրակմուտ: - 194. *Վասն որոյ* գիշերն յառաջէ՛ տուընջեան մինչ ի կատարած: - 194. Չորեքտասաներորդն է՛ օր տուընջեան. *վասն որոյ* ասէ՝ «ընդէ՞ր կայք զօրս ցերեկ դատարկ»: - 195. Իսկ գարուն և աշուն հաւասար արդարութիւն է տուընջեան և գիշերոյ. *վասն որոյ* բուսանին սերմանիք: - 198. Եւ դարձեալ՝ գարնան եղանակն սկիզբն է ստեղծման աշխարհի և բուսուց և ամենայն ծննդոց. *վասն որոյ* ի սոյն ժամանակս առաւել բուսանին և նորոգին ամենեքեան: - 198. *Վասն որոյ* ջերմութեամբ զցրտութիւն լուծանէ որ յերկաթն և ի սառն. և չորութեամբ զհիւթն մերժէ որ ի ձու հաւի և յայլսն: - 202. Իսկ ծանրութիւն երկաթոյն բնական է. *վասն որոյ* ո՛չ կորնչի: - 202. Այլ ձայնն յա՛մր հասանէ ի լսելիս քան զփայլակն. *վասն որոյ* յետո՛յ լսի: - 204. Իսկ հուրս առ մեզ որ կապեալ է ի նիւթ՝ տկա՛րն ունի զայրելն. *վասն որոյ* նախ զքանակն և զորակն ապականէ, և ապա զգոյացութիւն իրին: - 204. Եւ դարձեալ՝ զի ի գուլորշեաց է բաղկացեալ՝ արտաքին մասն հով է և գէջ, և ներքինն ջերմ և չոր. *վասն որոյ* զարտաքինսն պահէ՛, և զներքինսն ապականէ: - 204. Նախ՝ զի թեթև է ամպն այն. *վասն որոյ* յոյժ բարձրացեալ է: - 206. *Վասն որոյ* բղխեն ջերմ և ցուրտ: - 209. Նախ՝ ասեն ոմանք թէ՝ որքան բարձր է ի վերայ երկրի հողն, նոյնքան ծոծո՛ր է ի ներքին կողմն. *վասն որոյ* ջուրք ծովուն դիւրաւ ելանեն: - 209. Երրորդ՝ զի ջուրք ծովուն բա՛րձր է քան զերկիր. *վասն որոյ* հա՛րկ առնէ և ի վե՛ր մղէ և ապա՛ հեղու յերկիր. զորօրինակ մարդիկք ի բարձրագոյն լերանց իջուցանեն զջուրն, և ըստ նոյն չափոյ ի միւս կողմն ի վեր հանեն սակաւ ինչ պակաս: - 209. Իսկ ի դաշտս ո՛չ է հողմ. *վասն որոյ* առաւել շողէ: - 211. *Վասն որոյ* ի հրոյն ոմն սևանայ. որպէս խաղող. և կէսք կարմրին և դեղնին. որպէս բոյսք՝ և տերևք չորացեալ ի հրոյ: - 213. Դարձեալ՝ զի տնկականն վերափչո՛ւմն է օդոյն հանդերձ խոնաւութեամբն երկրի. *վասն որոյ* բոլորաձև արտաքս գայ և լինի ծառ: - 213. Զի մարդն ունի զգլուխն ի վեր որպէս երկինքն. և զոտքն ի վայր որպէս երկիրս. *վասն որոյ* ամենայն ծորմունք բնականապէս զառիվա՛յր հոսին. իսկ ծառն ծռեալ ունի զգլուխն ի վայր, և զոտսն ի վեր. կամ թէ ծռեա՛լ ունի զոտս և զստեղունս յայս կոյս և յայն կոյս: - 214. Արդ՝ ցամաքային կենդանիքն զերկոսին զսոսա՛ ունին. *վասն որոյ* ձայն արձակեն: - 216. Զի վարդապետք ասեն եթէ՝ կերակուր գազանաց այլ կենդանիք են. *վասն որոյ* խնամքն աստուծոյ ետ նոցա առաւել հնարս և զօրութիւնս, զի կարասցեն ըմբռնել. զայլ կենդանիս և մի՛ ի սովոյ մեռցին: - 218. Չորրորդ՝ զի ցուցցէ անձնիշխան գոլ զմարդն, *վասն որոյ* հրամայէ՛ նմա զի զոր ինչ և կամեսցի՝ անուն դնիցէ: - 219. Ա՛րդ՝ դրախտն ո՛չ զգայութեամբ և ո՛չ երևակայութեամբ՝ այլ իմացմամբ տեսանի. *վասն որոյ* երրորդ երկին կոչի: - 221. Ասեմք թէ՝ կանխագէ՛տ է աստուած. և նախ ծանեաւ զի ո՛չ կարէին աճիլ անմեղութեամբ ի դրախտին որպէս զհրեշտակս. *վասն որոյ* կազմեաց նոցա մարմին, զի յերկրի անասնապէս աճեսցին: - 226. *Վասն որոյ* պա՛րտ էր լինիլ նոցա նախ որ փոքունք և անպատիւք են, զի երևեսցի մեծն և պատուաւորն այսինքն մարդն: - 230. Վեցերորդ՝ որք *վասն որոց* եղեն. զի ի գոյիցն ոմանք են վասն ինքեանց. իսկ այլ վասն այլոց և ոմանք ինքեանց և այլոց: - 230. Այսինքն տնկական. և զգայական. և բանական. և զի յանկատարէն ելանեմք ի կատարեալն. *վասն որոյ* նախ ստեղծաւ տնկականն ոգի, և ապա՛ զգայականն, և ապա՛ բանականն որ է կատարեալ մարդն: - 231. *Վասն որոյ* յետոյ մարդն ստեղծաւ յերկուցն խառնեալ յիմանալւոյն և ի զգալոյն ի մի էութիւն: - 231. Երկրորդ՝ պատուական մասն մարդոյն գլուխն է. *վասն որոյ* զվերինն և զառաջինն ընկալաւ տեղի: - 232. *Վասն որոյ* գլուխն է՛ ի վերոյ. և խռչափողն որ ունի զտուր և զառն՝ օդո՛յդ է նման. և ի ներքոյ այլ մարմինք և հիւթ արեան և ջրոյ՝ երկրիս է օրինակ: - 232-233. Իսկ այլ

կենդանեացն հողն բազում է. *վասն որոյ* ծանրացեալ ի վա՛յր հակէ: - 233. Հինգերորդ՝ զի մարդն իշխան և տէր է ամենայն կենդանեաց. *վասն որոյ* ամենայն կենդանիք գլխակո՛ր են իբրև զծառայ և հնազանդ. և մարդն ուղղաձև իբրև ազատ և թագաւոր: - 233. Տասներորդ՝ զի կիրք մարմնոյն հեղուն ի հոգին. որպէս յորժամ մարմինն ննջէ՝ և հոգին թմրի և անգործ մնայ. *վասն որոյ* արարաւ ձնն ուղիղ...: - 233. Իսկ բարոյականն, Նա՛խ՝ զի յերեսն փչեաց զշունչ կենդանի. *վասն որոյ* յերեսն ունի զգայարանս մարմնոյ: - 234. Երկրորդ՝ զի արարաւ մարդն ի պատկեր աստուծոյ, *վասն որոյ* պատկե՛րն է ցանկալի: - 234. Չորրորդ՝ զի յերեսա՛ցն ճանաչեմք զսիրելիս. *վասն որոյ* առաւել ցանկալի է: - 234. Եւ որպէս այս, նոյնպէս ի հոգևորն. *վասն որոյ* մովսէս ցանկայր տեսանել զերեսս աստուծոյ: - 234. Եւ բնական, Նա՛խ այսպէս. զի ամենայն իր մարմնական ի նոյն տարերաց են բաղկացեալ. *վասն որոյ* ունին նմանութիւն առ միմեանս: - 236. *Վասն որոյ* գտանի յամենայն իրս նման և աննման ըստ որում յէից և յոչ էից են հաստատեալք: - 237. Իսկ զի կէսք քարց և անմորուք լինին, զի ջլապինտ է մորթ երեսացն որպէս զթաթ ձեռաց. *վասն որոյ* մազ ո՛չ բուսանի: - 245. *Վասն որոյ* ո՛չ է պարտ ենթադատել զմարդ վատն այսպիսի նշանաց երևման: - 246. *Վասն որոյ* զխրատ և զուսումն ո՛չ լսեն մեծամեծք: - 251. Այլ արդ ի մարմնի առաւել մեղանչէ քան յերկնային կեանս. *վասն որոյ* անկանի ի զգայական մարմին որպէս ասեն՝ որ ներքո՛յ է մարդոյն՝ և համանման ախտիւք զի զգայակա՛ն է: - 252. Թէ ժամանակն ցուրտ է կամ ջերմ. և երկիրն գէջ կամ չոր. և սերմն հոտեալ կամ աղանձեալ. և սերմանօղ ո՛չ լինի կամ ոչ սերմանէ. *վասն որոյ* ո՛չ բուսանի: - 256. Նա՛խ՝ զի անմարմին է հոգին. *վասն որոյ* ո՛չ հատանի. ո՛չ տընկականն. ո՛չ զգայականն. և ո՛չ բանականն: - 257. *Վասն որոյ* ըստ թուոյ զօրութեան իւրոյ որ է՛ սնանիլն աճիլն և ծնանելն, յերեք ամիսս ծնանի զպտուղս. որպէս ցորեան և այլքն: - 262. *Վասն որոյ* բոյսք առ հասարակ յերեք ամիսս ծնանին, և ի չորրորդումն կատարին յաւելեալ ի վերայ զկազմողական զօրութիւնն: - 262. Որև յաւելեալ իր ինչ զգայական՝ լինի **զ**. *վասն որոյ* առ հասարակ ի **զ** ամիսս ծնանին. և ա՛յլք ի **զ** շաբաթս. և կէսք ի **զ** օրս: - 263. Այլ և զգայականին յաւելեալ շնչականն և շարժականն և ցասմնականն ընդ ցանկականին՝ լինի **թ**. *վասն որոյ* ոմանք յինն ամիսս ծնանին կամ ի **ժ**: - 263. *Վասն որոյ* ոմանք յ**բժ**ան ամիսս ծնանին որպէս ձի: - 263. Այլ և յաւելեալ ի վերայ զշարժականն և զշնչականն և զցասմնականն և զցանկականն, ընդ նմին և զկազմողական նիւթն և զտնկականն, որ լինի **ժը**. *վասն որոյ* ոմանք ի տարին և կէսն ծնանին որպէս ուղտ: - 263. Արդ՝ որպէս ասացաք՝ մարմինն է ի **դ** տարերաց. և ունի **ե** զգայութիւն. *վասն որոյ* յինն ամիսս հաստատի անդամօք և ապա ծնանի: - 263. Դարձեալ տնկականն ունի **գ** զօրութիւն, և **ա** զնիւթն, և **ե** զգայութիւնս, որ լինի **թ**. *վասն որոյ* **թ** ամսեայ ծնանի: - 263. Տնկական. զգայական. և բանական. *վասն որոյ* **է** ամսեայ ծնեալն ապրի և շնորհալի լինի վասն շնորհալի թուոյ եօթներորդին: - 263. Դարձեալ **թ** խառնուա՛ծ է չորից տարերց ըստ կրկին քառից որակաց առաւել և նուազ, և իններորդն հաւասար է որ է ի մարդն. *վասն որոյ* ինն ամսեայ ծնանի: - 264. *Վասն որոյ* յեօթն ամիսս ատամնն բուսանի տղայոց. և յեօթն ամն դարձեալ փոխի: - 264. Եւ **է** ամեայ ուսումն ստանայ. *վասն որոյ* մինչև յեօթն ամն երեխայ կոչի. զի **գ** մասունք են հոգւոյն. բան. ցասումն. և ցանկութիւն. ըստ պղատոնի: - 264. *Վասն որոյ* յայսմ հասակի տիոց հրաման է յեկեղեցւոյ պսակ դնել այսպիսի մանկանց: - 265. Եւ մտանէ ի կարգ զինուորաց. *վասն որոյ* մովսէս **ի ի** ամենիցն ի վեր թուէր զզինուորսն: - 265. *Վասն որոյ* յայսմանէ և յառաջ հաստատի մարդ ի հանճարս բանակրութեան և ի տեսութիւն իմացման մինչև ի **խթ** ամն որ է եօթնիցս եօթն: - 265. Զի **ժ** ի չորից ծնանի. և չորսն տարրական է. *վասն որոյ* ի նմա կարէ մարդ ծնանիլ զնմանն իւր: - 265. *Վասն որոյ* ի մանկութեանն անկա՛ր է զնմանն ծնանիլ: - 266. Իսկ ամառն, և մինչ ի **զ** ժամս աւուրն, և խարտեաշ մաղձն, և երիտասարդն՝ ըստ նմանութեան տարրական հրոյ ջերմ և չոր գոլով. *վասն որոյ* առաւել բարկացօղ և ցանկասէր լինի: - 266. Իսկ ձմեռն, և յինն ժամէն մինչև յերեկոյ և բոլոր գիշերն, և սպիտակաթոյր հիւր պլղամին, և ծեր մարդ, ըստ նմանութեան ջրոյ ցուրտ և գէջ գոլով. *վասն որոյ* սպիտակի և ցրտանայ և պակասի զօրութեամբ: - 266. Իսկ մարդոյն ուղեղն գէճ է և հով. զի նկարեսցէ յինքն զիմացումն մտացն. և ջիլքն յառաջեալ ի նման վասն գիճութեան ո՛չ կարէ պնդել զանդամսն. *վասն որոյ* ո՛չ կանգնի և ոչ գնայ: - 266. Ուստի յա՛յտ է՝ զի այծեամն առաւել է տեսանելեաւ. և շուն հոտոտելեաւ. և այլն նմանապէս. *վասն որոյ* փութով շարժին և կանգնին քան զմարդն: - 266. Իսկ անասնոցն ո՛չ է դաստիարակ արտաքուստ. *վասն որոյ* բնութիւնն խնամէ զնոսա ի ներքուստ: - 267. Քսանև**ը**, *վասն որոյ* ամենայն. այսինքն յաստուծոյ. և վասն մարդոյն է ամենայն աշխարհ եղեալ: - 272. Զի թէ ո՛չ էր ասացեալ ընդ պատկերին զնմանն լինիլ, ամենայն ոք պատճառէր, և զմարդն պաշտելով անկանէր ի կռապաշտութիւն. *վասն որոյ* ասաց զնմանն, թէ յորժամ տեսցեն պատկերակից աստուծոյ

զմարդն բանականութեամբ անմահութեամբ և այլովքն որ ինչ է ի հոգիս, իմանայցեն և զզանազանութիւնն աստուծոյ: - 274. *Վասն որոյ* չարքն անամօթ կոչին. իբր թողեալ զպատիւ մարդոյն՝ և անասնոցն նմանեալ: - 274. Որպէս ասէ աստուածաբանն թէ՝ ոչ ինչ էր ծածկոյթ ի մէջ նոցա և աստուծոյ. իսկ յետ մեղացն փոխեցան այսոքիկ. *վասն որոյ* մաշկեղէն հանդերձին ցուցմամբն նշանակէ՛ զմարմինս: - 282. Եօթն ազգ բարեգործութեան տեսակ երևի աստ ի հաբէլ. *վասն որոյ* և **է** պարգևաց արժանացաւ: - 286. Դարձեալ **է** յանցանօք մեղաւ կայեն. *վասն որոյ* և եօթնիցս պատժեցաւ: - 287. *Վասն որոյ* վկայեցաւ ենովս որ է մարդ: - 288. *Վասն որոյ* փութացաւ աստուած և փոխեաց զէնօք, զի մի՛ սպանցեն և ասիցեն թէ փոխեցաւ յերկինս: - 290. Եւ այլ ևս. ի վերայ սաղմոսին «մերձեցաւ անձն իմ ի հող» ասէ մեկնիչն, այժմ ծերացեալ է բնութիւնս՝ *վասն որոյ* փութայ ի հող: - 291. Իսկ ի նախնիքն տղայ և առոյգ էր բնութիւնս՝ *վասն որոյ* յերկար ապրէին: - 291. Ասեմք թէ ո՛չ էր պատշաճ մեզ գիտել զօր մահուն, և ո՛չ զվախճան աշխարհի. *վասն որոյ* արգե՛լ տէրն եթէ «ո՛չ է ձեզ գիտել զժամս և զժամանակս»: - 292. Երրորդ՝ արիւնն կենդանի է և խօսի տեսութեամբն որպէս հաբէլին. *վասն որոյ* անուտելի է: - 295. Հինգերորդ՝ արեամբն ազգակիցեն մարդ և անասուն. *վասն որոյ* ո՛չ է պարտ մարդոյ զհարազատն իւր ուտել: - 295. Վեցերորդ՝ սկայքն անխտիր ուտէին թէ մեռեալ և թէ հեղձուցեալ. *վասն որոյ* զի որոշեսցէ ի նոցանէ՝ ասէ արեամբ շնչոյ մի՛ ուտիցէք: - 295. Եւ միապէս է մեր և կենդանեաց. *վասն որոյ* ո՛չ է պարտ զսկիզբն գոյացութեան մերոյ ուտել: - 295. Եւ զի մի՛ մարդիկ ի պատճառս նորա մեղս գործեսցեն. *վասն որոյ* ո՛չ կարէին տեսանել զտապանն: - 296. *Վասն որոյ* օրհնութեամբ ցրուեաց զնոսա ի վերայ երկրի...: - 98. Եւ անդանօր լինի անմահ և անապական ծնունդ և որդիք յարութեան. զի մեռանիլ ո՛չ ևս կարեն ասէ. վասն զի յանմահ զօրութենէն աստուծոյ ծնանիմք, և յանապական տարրեղէն նիւթոց. *վասն որոյ* անմահ և անապական կայանան: - 308. Եօթներորդ՝ անդրանիկք են իշխանք հոգևորք, վերակացուք և խնամողք այլ հոգւոցն. որպէս քահանայք, ուսուցիչք, և այլք. *վասն որոյ* երիցունք կոչին: - 309. Հինգերորդ՝ զի ունի զվերոյ ասացեալն խորհուրդ տասնեակ թւով. *վասն որոյ* յիրաւի անդրանիկն պատւեալ լինէր թէ ի հոգևորն և թէ ի մարմնաւորն: - 310. Երրորդ՝ ի յառնելն զարարածս լերամբք և բլրօք. զի լերինք և բլուրք, հիմունք և բրգունք են աշխարհի. *վասն որոյ* օրհնեցան անշարժապէս...: - 319. *Վասն որոյ* ի ծննդեան աւուրն ժողովին և օրհնեն զաստուած և մարմնով ուրախանան. որպէս յոբայ ուստերքն և դստերքն միաբանեալ գային և ուրախ լինէին գիրն: - 321. *Վասն որոյ* ի յընչիցն պատարագ մատուցանելով և աղքատս կերակրելով գոհանան զաստուծոյ: - 321. *Վասն որոյ* այսօր ժողովեալ փառս և պատիւս տամք աստուծոյն մերոյ որ յաւիտեան զփառաւորիչս իւր փառաւորէ՛: - 321-322. *Վասն որոյ* նստաւ յաղբիւսն փողոցին անհնարին հարուածովք: - 323. Նախ՝ զի ունէր զամենայն առաքինութիւնս և համբերեաց նախատողացն. *վասն որոյ* խօսեցաւ աստուած և մխիթարեաց զնա: - 325. Նախ ցուցանէ թէ՝ զազիր են գործօք և բորոտեալ մեղօք. *վասն որոյ* գարշ կենդանեօք ապականէր զնոսա: - 334. Չորրորդ՝ շանաճանճն. զի շնաբարոյք էին և մոլէին յառնականայս շնութեամբ. զի շանն է ոչ զուգակցիլ որպէս զայլ կենդանիս. *վասն որոյ* ի շանց ելեալ թունալից ճանճք խայթէին զնոսա: - 334. Նա՛խ զի զանդրանիկ որդիսն աստուծոյ տանջեցին և մեռուցին. *վասն որոյ* անդրանիկք նոցա մահացան...: - 334. Երկրորդ՝ զի զանդրանիկ խորհուրդն աստուածպաշտութեան կորուսին յանձինս իւրեանց. *վասն որոյ* անդրանիկք նոցա մահացան և ապականեցան: - 334. *Վասն որոյ* **Ժ** հարուածովք տանջեցան: - 335. *Վասն որոյ* նախ տուաւ թագաւորութիւնն բենիամենի որ էր սաւուղ: - 338. Սոքա աստուածայինք են. *վասն որոյ* նախագիծք եղեն: - 340. *Վասն որոյ* ի սոյն ժամանակի առաւելու որոտ կայծակ և կարկուտ զգալապէս՝ յիշատակ սքանչելեացն աստուծոյ: - 341. *Վասն որոյ* յետ մկրտութեանն հաղորդեմք զկնքեալն: - 341. Նա՛խ՝ հրամայեաց աստուած գրել զլինելութիւն աշխարհի. և ձևացոյց ի միտսն մովսէսի. զի մի՛ մոռասցին հանգամանքն. *վասն որոյ* զգալի խորան հրամայէ կազմել: - 342. Երրորդ՝ կամեցաւ զմարդն ի պատկեր իւր՝ երկրորդ ստեղծմանն աշխարհի գործակից և մասնակից լինիլ. *վասն որոյ* հրամայեաց ի նոցանէ առնուլ զնիւթ կազմելոյն: - 342. Վեցերորդ՝ սովո՛ր էին զտաճարս կռոցն զարդարել. *վասն որոյ* առաւել քան զնոսա զարդարէ՛ զխորանն: - 342. Տասներորդ՝ օրինա՛կ էր խորանի եկեղեցւոյ. զի նա՛ ստուե՛ր էր և սա՛ ճշմարտութիւն. *վասն որոյ* գեղեցկազարդ կազմեցաւ: - 342. Եւ խաչիւն քաւեաց զմեզ. *վասն որոյ* սուրբ խաչ կոչի: - 345. *Վասն որոյ* և յաւուրս զաքարիայի հօրն յովհաննու յորժամ յամեաց ի տաճարին և ել, ակնունէր ժողովուրդն տեսանել զա՛կնն և տե՛սին լուսափայլ սպիտակացեալ իբրև գձիւն. և լի՛ եղեն խնդութեամբ. զի երկնաւոր արքայութեան նշոյլքն պայծառացուցին զակն: - 349. Է՛ և երրորդ պատճառ. զխոզն ուտէին յեգիպտոս, և զարջառ և զոչխար

պաշտէին. *վասն որոյ* հրամայեաց զաստուածս նոցա զենուլ զի չեն աստուածք. և ի խոզենւոյն հրաժարիլ ամենևին: - 355. Ա՛րդ՝ ի ճշմարտութիւնն ո՛չ է օրինակ. *վասն որոյ* ո՛չ խառնի աղ: - 356. Վեցերորդ՝ դիտաւորութիւնն խնդրի թէ *վասն որո՞յ* է զենումն. զի թէ վասն աստուծոյ է կամ հոգւոյ, հասարակա՛ց է. իսկ թէ վասն մարդկան և կենդանեաց, կամեցողա՛ց է: - 366. Երկրորդ, դէպ յարնելս, յանուն սրբոյ Երրորդութեանն. զի ցուցցի թէ *վասն որո՞յ* է: - 366. Ասեմք նախ եթէ՝ ծնունդն և յարութիւնն մարմնաւոր էր. *վասն որոյ* մարմնապէս տօնեմք: - 373. *Վասն որոյ* ի միասին տօնեմք խաչի և եկեղեցւոյ. որպէս ասացաւ ի **լե** գլուխն, **լը** համարն: - 373. Երկրորդ՝ զի արծաթն անծին է. *վասն որոյ* ո՛չ է շահ: - 375. Իսկ իշխանութիւնն երկրաւոր, *վասն որոյ* բացաւ երկիր և եկուլ զդադան: - 381. Եւ թէպէտ զարհուրելի բանս յերկարեաց ի խրատս, ո՛չ լուան. *վասն որոյ* ո՛չ սրբեցան: - 382. *Վասն որոյ* և պա՛րտ է և նմա՛ խոստովանիլ որպէս է՛ ի կանոնս հարցն: - 384. *Վասն որոյ* բարկացաւ աստուած և լարս առանց բժշկութեան արձակեաց ի նոսա: - 386. Նա՛խ՝ զի է էր պատարագն. վասն զի մատոյց **է** զուարակ. և **է** խոյ. *վասն որոյ* ընկալաւ պարգևս **է** բանից մարգարէութեան: - 387. Բաղաամ մո՛գ էր և կախարդ. և սովո՛ր էր ընդ դևս խօսիլ. *վասն որոյ* յառաջեաց աստուած և խօսեցաւ: - 387. *Վասն որոյ* պա՛րտ է ընդ հրամանաւն կալ նոցա՝ յորմէ և առ որ զկապակցութիւն ունիմք եօթանցն ասացեալ: - 389. Այլ ոմանք **է** օր ասեն յամել ի **է** գօտիս. *վասն որոյ* **է** օրէք առնեն: - 391. Իսկ **է** ի յայն խորհուրդն, զի որ ի պիղծ մերձենայր՝ **է** օր արտաքոյ բանակին կալով յերրորդ և յէերորդ օրն սրբէր, և ապա՛ մտանէր. *վասն որոյ* **գ** օրէք և **է** օրէք կատարեմք: - 391. ...*վասն որոյ* յայսմանէ ասեն ոմանք թէ՝ **գ** ամ կամ **խ** օր յամեաց ադամ ի դրախտին. որպէս ժողովուրդն ի յանապատին. կամ որպէս մովսէս ի լեառն: - 397. Այլ տե՛ս յայտնապէս, զի զայսպիսի նշան վկայութեան ո՛չ ունէին յուդաս և դևդաս. և ո՛չ նեռն ունելոց է դերաքրիստոսն. *վասն որոյ* ո՛չ են մարգարէ, այլ մոլորեցուցիչք և չարք: - 400. Զի հանապազ քող երեսացն մովսէսի առագա՛ստ է ի վերայ սրտից նոցա. և ոչ իմանան զտեսութիւն բանին. *վասն որոյ* ո՛չ հաւատան: - 405. Իսկ շմաւոն ո՛չ էր ապաշխարեալ, *վասն որոյ* ո՛չ օրհնեաց: - 409. Երրորդ՝ վախճանեալ մովսէս ի լերինն, և միքայէլ փոխադրէր զմարմինն. սկսաւ սատանայ հայհոյել զսուրբն և սպանօղ անւանել վասն հարկանելոյն զեգիպտացին. *վասն որոյ* սաստեաց նմա հրեշտակապետն: - 410. Եօթներորդ՝ ոմանք մարմին մովսէսի զօրէնսն ասեն. զոր ի բերելն հակառակէր սատանայ, խոտան և անարժան գոլ ժողովրդեանն. *վասն որոյ* միքայէլ վերակացու ժողովրդեանն հալածէր զնա: - 410. *Վասն որոյ* ամպ ծածկեաց զնա: - 411. Երրորդ՝ զի երեսունն **գ ժ** է. զի **ժ** զգայարանքն մարմնոյ և հոգոյ և մտաց՝ քակտի. *վասն որոյ* **լ** օր սգան: - 411. Չորրորդ՝ զի և անասունքն գործակից լինին մեղացն. *վասն որոյ* ընդ մարդոյն կորնչին. որպէս ի սոդոմ: - 416. Եօթներորդ՝ որպէս ինքն պիղծ է, և իւրքն ամենայն պիղծ են. *վասն որոյ* ընդ նմին կորնչին: - 416. Ութևժ, եւ կինն ի սամփսոնէ և եղև հացերիցուն. *վասն որոյ* և տուժեցան հրով: - 422-423. Եւ զի հեղի ո՛չ խրատէր զնոսա սաստիւ և տանջանօք. *վասն որոյ* և ինքն պատժեցաւ և մեռաւ. և քահանայութիւնն յազգէ նորա փոխեցաւ յաւուրս սողոմոնի: - 425. Երկրորդ՝ զի ժողովուրդն ոտիւք գայր, և զձեռս տարածէր, և զգլուխսն խոնարհեալ երկիր պագանէին. *վասն որոյ* հատան այնպիսի մասունքն: - 426. *Վասն որոյ* ասաց դաւիթ, ամենայն որ մարտնչի սրով ընդ կաղս և ընդ կոյրս որպէս ասացին յեբուսացիքն, նա՛ ատելի՛ է անձին դաւթի. և խնայեաց ի նոսա և փրկեաց: - 431. Երրորդ՝ զի ո՛չ էր քահանայ. *վասն որոյ* յետոյ ասէր դաւիթ ցքահանայսն, դո՛ւք ղևտացիքդ սրբեցէք և բարձէք զտապանակն. զի մի՛ լիցուք որպէս զոզիա: - 431. Այլ զի ծերութեան որդի էր յեսսեայ, *վասն որոյ* ի ծերութեանն ցրտացաւ: - 439. Եւ ա՛յս է պատճառն, զի յաջ կողմ արգանդի կրէ զորդին. *վասն որոյ* յաջ կողմն նորա նստի: - 441. Իսկ որդին աջ և բազուկ է հօր, *վասն որոյ* աջմէ հօր նստի: - 441. Դարձեալ՝ զարդարութիւն գործէր զի հաշտեսցի աստուած. *վասն որոյ* ինքնին սպան զամենայն. այս զութճ յիսունսն, փոխանակ մարգարէիցն աստուծոյ զոր եսպան եզաբէլ: - 444. Զի ի րոբովամէ՛ որ զերինջսն գործեաց՝ վեց եօթանասուն ամ է մինչև զգերութիւնն սակաւ ինչ պակաս. *վասն որոյ* եօթանասուն ամ շաբաթեցոյց զնոսա ի գերութեան: - 448. Զի որպէս ադամ յաստուածանալն փութացաւ, և բանն աստուած ի մարդանալն փութացաւ. *վասն որոյ* ամք թուոց զանազան են եղեալ...: - 451. ...իսկ եբրայեցիք զամենայն շաբաթսն ո՛չ թուէին ի համարն. *վասն որոյ* նուազի՛ նոցայն: - 451. Վեցերորդ՝ դարձուցանել զմարդն յորդէգրութիւն աստուծոյ՝ բնական որդւոյն էր պատշաճ. *վասն որոյ* որդին աստուծոյ որդի մարդոյ եղև զի զմեզ արասցէ որդիս աստուծոյ: - 468. Նա՛խ՝ զի ո՛չ լինէր այն որդի ըստ բնութեան ծնողին. որպէս և ո՛չ եւա ադամայ. *վասն որոյ* յարգանդէ ծննդեամբ եղև որդի կուսին: - 469. *Վասն որոյ* սրբեսցէ զսկզբնականն մեղք՝ յարգանդէ կուսական հոգւով սրբութեան ծնաւ: - 469. Երկրորդ՝ զի ներգործութեամբ մասն՝ ո՛չ

լինի զօրութեամբ բոլոր. *վասն որոյ* ոչ է նիւթ ծննդեան: - 470. *Վասն որոյ* կոչի Օծեալ և Քրիստոս: - 474. Ասեմք եթէ՝ ապացոյցն ո՛չ ամենայն իրօք է նման. ապա թէ ոչ՝ լինէր նոյնն. *վասն որոյ* նոյնքանաբար տեսանի աննմանութիւն օրինակին առ ճշմարտութիւնն: - 478. Ութերորդ՝ սկիզբն մարդկութեանս ա՛յրն է. և կինն ի նմանէ. *վասն որոյ* այր եղև, զի զբոլորս լինէր առեալ և փրկեալ: - 480. Իսկ տէրն մեր էր անդրանիկ ի հօրէ և անդրանիկ ի մօրէ. և անդրանիկ շնորհաց և արդարութեան. և անդրանիկ յարութեան մեռելոց. *վասն որոյ* անդրանկապէս ընկալաւ զօրէնս թլփատութեան: - 486. Երկրորդ՝ զմահ կրեաց. զի ինքն եդ զմահն պատիժ ի վերայ մեր. իսկ զմեղքն և զապականութիւն՝ բանսարկուն և ադամ արկին ի բնութիւնս. *վասն որոյ* զոր ինքն ոչ եդ՝ ո՛չ կրեաց մարմնով իւրով: - 496. *Վասն որոյ* նա՛խ ցուցանել պա՛րտ է թէ ո՛չ նոյն է մահ և ապականութիւն: - 498. Երկրորդ՝ ապականութիւն և մեղք ո՛չ է գործ արարչի. այլ մեղանչականին ադամայ և արկածք բանսարկուին. *վասն որոյ* տէրն զարկուածս բանսարկուին ո՛չ հպեցոյց ի մարմինն իւր. ապա ուրեմն անապակա՛ն է մարմինն տեառն: - 498-499. Երրորդ՝ ապականութիւնն ներգործէ՛ հակառակ արարչին. զի արարիչն յանգոյից գոյացուցանէ, իսկ ապականութիւնն զգոյսս ի յանգոյութիւն տարալուծէ և այլայլէ՛. *վասն որոյ* անապակա՛ն է մարմին արարչին: - 499. Նա՛խ՝ զի ցուցցէ *վասն որոյ* մարդ եղև և մեռաւ զի ազատեսցէ զհոգիսն: - 503. *Վասն որոյ* զնոյնս գործեաց ի դժոխս: - 503. Այլ արդ՝ մեռեալքն ո՛չ են ի դէմ յանդիման տեսութեան. *վասն որոյ* պիտո՛յ էր նոցա հաւատ: - 507. Ութևժ՝ ի մէջ գիշերի է յարութիւն փրկչին, *վասն որոյ* յերեկոյն մերձ ի մուտս գիշերոյն ճրագալոյց առնեմք և պատարագ որպէս ի ծննդեանն: - 514. Երրորդ՝ առ ի ամբաստանել *վասն որոյ* ընդունայն վաստակեցաւ...: - 519. *Վասն որոյ* նմանեցաւ իջումն հոգւոյն սրբոյ փայլական: - 523. *Վասն որոյ* նոր օրհնութիւն նորածին աստուծոյ և տն մատուցանեմք նոր ժողովուրդքս աստուծոյ: - 528. Այլ վերնագոյն է քահանայն. *վասն որոյ* ունի զկրկինն: - 538. Այսպէս լիցի ամենայն անհնազանդ կապեալ. *վասն որոյ* այնպիսին կրկին ունի պատիժ: - 540. *Վասն որոյ* ի վերնատունն յորժամ փչեաց յառաքեալսն՝ նախ ետ զարձակելն և ապա զկապելն: - 541. *Վասն որոյ* զայս **գ** ժողովքս տիեզերական և միմեանց համաձայն ընդունիմք. այլ զքաղկեդոնին ո՛չ ընդունիմք. զի ընդ դէմ է առաջնոցն և կաքտումն դաւանութեան տօնից կարգաց և կանոնաց ամենայնիւ: - 541. *Վասն որոյ* և տէրն **բժ**ան թիւ ընտրեաց առաքելոցն, և ետ **բժ**ան աթոռ դատողական: - 546. *Վասն որոյ* և տէրն յորժամ ասաց զցանկութիւնն շնութիւն, յաւել ի վերայ թէ՝ «ի սրտի իւրում». զի մի՛ կարծեսցի մարմնական շնութիւն, այլ հոգէկան և մտաւոր. ապա ուրեմն կատարեալ է մեղք մտացն: - 556. Չորրորդ՝ խորհուրդ մեղացն ճշմարիտ և բարի ցուցանէ զգործն և սիրելի և հեշտ. *վասն որոյ* յօժարի և եռայ ի կատարումն: - 558. *Վասն որոյ* յետոյ տրտմի և նեղի. ատէ՛ զպատճառ մեղացն և դառնայ ինքեան. որպէս ամոնի եղև: - 558. *Վասն որոյ* ասէ առաքեալն «լաւ է ամուսնանալ քան զջեռնուլ»: - 558. *Վասն որոյ* զգուշանալ պարտ է սրտին սրբութեան քան զմարմնոյն: - 558. *Վասն որոյ* աղօթէ՛ մարգարէն «ի գաղտնեաց իմոց սուրբ արա զիս տէ՛ր. և յօտարէն պահեա՛ զծառայս քո»: - 558. *Վասն որոյ* **է** են մեղք գլխաւորք: - 559. Յայնժամ լոյս իմացականին կորեաւ և շիջաւ ի սատանայէ՛. և լոյս շնորհացն ո՛չ ներգործեաց ի նա. և ի նոյն սերտեալ հաստատեցաւ անզղջապէս. *վասն որոյ* մեծ են մեղք սատանայի և թողութեան ո՛չ հանդիպի: - 563. *Վասն որոյ* թէպէտ գործն նոյն է, այլ բանն և կամքն ո՛չ է նոյն: - 563. Այսպէս և զայլն ամենայն յաւելու անչափութեամբ. *վասն որոյ* ախտ և մեղք կոչին առ մեզ: - 564. Ա՛րդ՝ **դ** են գիտութեամբ մեղանչելն. *վասն որոյ*՝ ասէ յոհաննէս, «թէ անգիտութեամբ մեղուցիք, թողո՛ւ ձեզ աստուած. ապա թէ գիտացեալ զնա և այնպէս մեղանչէք, և զառաջինն ևս խնդրեսցէ»: - 564. *Վասն որոյ* անկանի մարդ ի բարկութիւնն աստուծոյ: - 569. *Վասն որոյ* ասաց արիստոտէլ աղէքսանդրու, յապաղեա՛ ի վրէժխնդրութիւնն մինչև անցցէ բարկութիւն: - 570. ...և հետևի նմա կեանք և խնդութիւն հոգևոր. *վասն որոյ* ասէ առաքեալն «ուրա՛խ լերուք ի տէր. դարձեալ ասեմ ուրախ լերուք ի տէր»: - 584. **Իսկ պսակն է՛ ի խորհուրդ ողջախոհութեան. զի ողջախոհ ամուսնութեամբ զսպեսցէ առ ինքն զբղջախոհ ցանկութիւնն. և արգելցի ի շնութենէ և ի պոռնկութենէ. *վասն որոյ* է են խորհուրդք եկեղեցւոյ**: - 587. Չորրորդ՝ զի մկրտութիւնն է անքակտելի կնիք ի հոգին. որպէս կարգն և դրոշմն. *վասն որոյ* ո՛չ կրկնին որք յանուն սուրբ Երրորդութեանն մկրտեցան: - 590. **Այլ կնքահայր ո՛չ է պարտ առնել զայլազգին. զի ո՛չ ունի զհաւատն սուրբ, և ո՛չ է հրաժարեալ ի սատանայէ. *վասն որոյ* ո՛չ կարէ լեզու լինիլ տղային կամ երաշխաւոր**...: - 591. Որոյ պատճառէ, զի կին երաշխաւոր և վկայ ո՛չ կարէ լինիլ, *վասն որոյ* և ո՛չ կնքահայր կարէ լինիլ: - 591. ...*վասն որոյ* անխմոր հացիւ և անապական բաժակաւ կատարեմք զխորհուրդ մարմնոյ և արեան նորա: - 597. ...*վասն որոյ* պա՛րտ է աչօք տեսանել զզգալիսն, և մտօք

հայիլ յիմանալին և երանիլ: - 597. *Վասն որոյ* ճաշակեմք զմարմինն և զարիւնն աստուծոյ և ո՛չ մարդոյ. և ճաշակելով լինիմք աստուած ըստ կարողութեան և ո՛չ թէ լինիմք մարդ: - 598. *Վասն որոյ* հայրապետք եկեղեցւոյ լա՛ւ համարեցան զվայելչականն բառնալ որ ո՛չ ի լինիլն յաւելուած առնէ...: - 604. *Վասն որոյ* նախ քահանայն օրհնէ հոգևորապէս, և ապա մարմնաւորապէս զուգակցին: - 610. ...*վասն որոյ* ո՛չ է պարտ բաժանել զօրհնաւոր պսակն որքան կենդանի իցեն: - 611. ...*վասն որոյ* երբ յերեք ազգն ժամանէ վճարին **գ** մասունքն: - 612. *Վասն որոյ* յօտար ազգէ լինին խնամիք. և յօտարէն հոգևոր որդիք: - 612. *Վասն որոյ* նոյն աստուածային բանիւն օրհնեմք և սրբեմք յառաջին անծիցն: - 615. ...*վասն որոյ* օրհնեմք և սրբեմք: - 615. ...*վասն որոյ* փառքն աստուծոյ լցին զտաճարն. և հուր էջ ի պատարագն: - 615. *Վասն որոյ* և մեք միշտ ի նոյն քանիս ամսոյն սուրբ խաչին և եկեղեցւոյ տօն կատարեմք: - 617. Պատարագն ի հնումն անբան կենդանիքն էին. *վասն որոյ* և զճարպս նոցա լուցանէին ի տաճարին: - 617. ...*վասն որոյ* յանարիւն կենդանւոյ զլոյսն վառեմք. զի կենդանին այն անարիւն է յորմէ մոմն գոյանայ: - 617. Եւ եկեղեցի է լեառն անմատոյց. *վասն որոյ* անասունք և անարժանք ո՛չ մտանեն: - 617. Իսկ յեկեղեցի ճշմարիտ գառն պատարագի. *վասն որոյ* զօրհնակն արգելումք: - 617. Եւ այս է պատճառն, զի աստուած ետ մեզ միտք և բան և ձայնի գործիք և մարմնոյ մասունք և ինչք. *վասն որոյ* յամենայնէ՛ նուիրելի՛ է աստուծոյ: - 619. ...զի տեսանելով զպակասութիւն մեր՝ արտասուեմք և լամք. *վասն որոյ* առնումք զթողութիւն...: - 619. Պա՛րտ է ամենայն որ աղօթէ, զայսոսիկ ի միտ պահել և ապա՛ աղօթել. *վասն որոյ* ի սկիզբն գրեցի զխրատս: - 620. ...*վասն որոյ* յայսմ ժամու սկիզբն է աղօթից բոլոր աւուրն. յորում ասեմք զտէր եթէ շրթունքն և զայլ սաղմոսսն ի դէմս հօր աստուծոյ: - 621. *վասն որոյ* **դ** անգամ աղօթեմք ի գիշերի ի դէմս մարմնոյ մերոյ: - 622. Եւ սոքօք զամենայն բարի և զչար գործէ մարդ. *վասն որոյ* ի ցերեկն **ե** անգամ աղօթեմք: - 622. Նա՛խ՝ զի յերի՛ց եմք գոյացեալ ի մարմնոյ, ի հոգւոյ, և ի մտաց, որպէս ասեն ոմանք. *վասն որոյ* **գ** առանձնական աղօթս մատուցանեմք: - 623. ...*վասն որոյ* երիցս աղօթեմք առանձնակի: - 623. ...*վասն որոյ* **բժ**ան ժամու աղօթիւք զթողութիւն խնդրեմք սոցա: - 624. *Վասն որոյ* քահանայն աղերսէ՛ զեպիսկոպոսն, և նա՛ տայ զխաղաղութիւնն: - 625. ...*վասն որոյ* յորժամ հրաւիրէ՛ զմեզ՝ ուսուցանէ այսպէս աղօթել: - 626. ...*վասն որոյ* մեզ լեզու լինի և ի դէմս մեր գոհանայ զաստուծոյ ըստ իւրաքանչիւր ժամու. այսինքն յառաւօտն, ի հասարակ օրն, և յերեկոյն. զի գոհացումն է և ո՛չ աղօթք: - 626. *Վասն որոյ* եօթնից էր շաբաթումն նոցա աւուրց ամսոց: - 626. ...*վասն որոյ* ի գիշերի կենցաղոյս լուսաւորէ զհոգիս յետս ընկրկելով զթշնամիս: - 629. *Վասն որոյ* ի սրբոյն կիւրղէ կարգեալ ասեմք զսուրբ աստուածն ի դէմս որդւոյ: - 631. *Վասն որոյ* զոր սերովբէքն երից դիմացն երգէին, աստ աւետարանիչն ի դէմս բանին ասաց: - 633. Երկրորդն առ հայր. *վասն որոյ* աղերսեմք՝ օրհնեալ հայր սուրբ աստուած ճշմարիտ ի միջինն: - 633. Երրորդն առ որդի. *վասն որոյ* ասեմք՝ օրհնեալ որդիդ սուրբ աստուած ճշմարիտ: - 633. *վասն որոյ* խառնէ՛ զձայնս նոցա ի բանս իւր և մատուցանէ աստուծոյ: - 641. *Վասն որոյ* տէրունի՛ է տօնելի միշտ: - 642. ...*վասն որոյ* յերկրորդ օրն յառաջ քան զամենայն նոցա տօնեմք: - 642. ...*վասն որոյ* նախ հրաւիրէ՛ զայլս ի մեծարանս և վկայս որդւոյ իւրոյ: - 643. ...*վասն որոյ* թէ ոք սրբութեամբ երգէ՝ լցցի շնորհօք հոգւոյն սրբոյ: - 643. ...*վասն որոյ* ի կիրակէի երգեմք: - 644. *Վասն որոյ* ի պատարագն յիշատակի եբրայեցին և յունացն: - 645. ...*վասն որոյ* նոքա միշտ մերձին գրակալին յորժամ ընթեռնուն: - 646. *Վասն որոյ* զսրբութիւնն զխաչն և զաւետարանս ի դուրս բերեմք...: - 646. ...*վասն որոյ* ի մէջ գիշերոյ ի վեր սկսանի տօն նախատակութեան նոցա: - 647. ...*վասն որոյ* յերեկոյս տօնեմք զտօն կատարման ելից նոցա ի յերկրէ ...: - 647. *Վասն որոյ* յերեկոյն նոյնպէս զսրբութիւնսն արտաքս բերեմք...: - 647. *Վասն որոյ* վառեալ մոմեղինիւ ի միասին համաձայն պաշտեմք: - 647. ...*վասն որոյ* տէրն քրիստոս մարմնով ի գերեզմանի հանգեաւ. և սուրբքն հոգւով առ աստուած յերկինս: - 648. ...*վասն որոյ* զուրբաթ և զչորեքշաբաթ լուծանէ այնմ փոխանակ: - 649. *Վասն որոյ* կարգեցին առաքեալքն և հարքն՝ **ճձ** օր պահք. և նոյնչափ ուտիք: - 649. *Վասն որոյ* յորժամ տօնեմք հոգւով՝ ուրախանամք մարմնով: - 650. ...*վասն որոյ* պահքն յանուն նոցա կոչի: - 650. ...*վասն որոյ* թեթև է ընթերցուածովք: - 651. *Վասն որոյ* ի թագաւորութեանցն սկսանի ընթերցուածն. որպէս յա՛յտ է ի մեկնութիւն նորին: - 651. ...*վասն որոյ* պահեմք զչորեքշաբաթն. և ուրբաթն խաչելութեանն քրիստոսի. զի կցորդեսցուք խաչին: - 653. Իններորդ, ընկալաք կրկին օրէնս հին և նոր. *վասն որոյ* **բ** աւուրս սրբութեամբ պահեմք: - 654. *Վասն որոյ* յետ համբարձմանն պահելի է զ**դ**շաբաթ և զուրբաթ. և կամ զինն օր մինչ ի հոգւոյ գալուստն: - 654. ...որպէս նոքա որ զդեղ մահու խառնեն. *վասն որոյ* նշանաւ խաչին կնքեմք զնոսա, զի փախիցեն դևքն: - 654. ...*վասն որոյ* կրկին օրհնեմք: - 655. *Վասն*

*որոյ* ընպելի եղև քրիստոնէիցս և օրհնութեան բաժակ: - 655. Եւ զի ո՛չ գոյ ժամանակ, *վասն որոյ* և ո՛չ ծնունդ: - 662. *Վասն որոյ* յերկրի աստ բազմանան թուով. և ապա՛ միահաղոյն մտցեն անդ որպէս բազմութիւնք հրեշտակաց: - 662. Արդ՝ ըստ կարգի՝ սերմանքն յառաջ են քան զարդիւնսն. և նախատակքն քան զպսակն. *վասն որոյ* որք աստ փորձ գտանին, անդ առցեն զպսակն կենաց: - 662-663. *Վասն որոյ* բռունք յափշտակեն. և բազում նեղութեամբ մտանեն: - 663. *Վասն որոյ* յայսցանէ տան զտարացոյցս ամենայն ուրէք: - 664. Այսպէս և նոքա կատարեցին զճանապարհ կենցաղոյս և զբարեաց գործոց. *վասն որոյ* վախճանեալ կոչին: - 666. *Վասն որոյ* ո՛չ ուտեմք...: - 670. *Վասն որոյ* ասեմք՝ «օգնութիւն է մեզ յանուանէ տեառն»: - 673. ...*վասն որոյ* ասեմք «երանի ազգի որոյ տէր աստուած յակոբայ օգնական է նմա»: - 673. ...*վասն որոյ* ասեմք «անդ պատրաստեաց տէր զօրհնութիւն»: - 673. ...*վասն որոյ* ասեմք «օրհնեսցէ զմեզ տէր ի սիօնէ»: - 674. Երրորդն ի դուռն գերեզմանին. *վասն որոյ* այժմ սովորութեամբ երիցս անգամ դնեն զդագաղն ի ճանապարհի: - 675. ...*վասն որոյ* երեք անգամ թողութիւն խնդրեմք: - 675. ...*վասն որոյ* երիցս հանգիստ դնեմք: - 675. ...*վասն որոյ* երիցս հանգիստ դնեմք...: - 675. ...*վասն որոյ* երիցս աղաչեմք. զի պսակացս այսոցիկ արժանաւորեսցէ: - 675. ...*վասն որոյ* երիցս խնդրեմք զի այժմ բաժանեալ հոգին խաղաղութեամբ ժամանեսցէ յօթևանս լուսոյ...: - 675. ...*վասն որոյ* որպէս ի մկրտութիւնն ուղիղ մկրտիմք գլուխ ի վեր և ոչ ի վայր որպէս արիոսեանք: - 676. ...*վասն որոյ* թաղեմք զնոսա: - 677. ...*վասն որոյ* թաղեմք զնոսա: - 677. ...*վասն որոյ* ի հող թաղեմք: - 678. ...*վասն որոյ* խաչակնքեալ ասեմք «անշարժ եղիցի»: - 679. ...*վասն որոյ* այսօր թեթևացեալ գամք ի գերեզմանն և գոհանամք զաստուծոյ: - 680. ...*վասն որոյ* կրկին գամք և թողութիւն խնդրեմք: - 680. ...*վասն որոյ* կրկին անգամ աղօթեմք: - 680. ...*վասն որոյ* կրկին անգամ ի կրկին մեղաց և ի կրկին կապանաց արձակումն խնդրեմք: - 680. ...իսկ մարդ զերեքեանն ունի. *վասն որոյ* երեքօրեայ յիշատակ կատարեմք: - 681. ...*վասն որոյ* գ օր յիշատակ կատարեմք և գամք ի գերեզմանն: - 681. ...*վասն որոյ* նշանաւոր աւուրքս այս յիշատակեմք զննջեցեալսն: - 683. *Վասն որոյ* ի սոյն աւուրքս կատարին արդիւնք ննջեցելոցն և յիշատակութիւնք նոցա այսու խորհրդով: - 683. *Վասն որոյ* խաչիւ և աւետարանաւ աւետեմք ննջեցելոցն զմեծ օր աւետեաց նոցա և կնքեմք զգերեզմանն: - 684. ...*վասն որոյ* զնոյն խաչն և զաւետարանն տարեալ ի տուն՝ օրհնեմք զբնակութիւնս մեր: - 684. ...*վասն որոյ* իւրաքանչիւր ոք ի բանից վկայութեանց ինչ զկարծիս իւր հաստատէ՛: - 687. Այրն ի տարաշխարհ գնաց քրիստոսէ. որ մարմնով համբարձաւ յերկինս. զի յատուկ տեղի մարմնոյ երկիրս է. *վասն որոյ* ի տարաշխարհ գնալ ասէ յերկինս: - 692-693. Եւ զի դժւարաւ խլին չարքն առանց վնասելոյ բարեաց, *վասն որոյ* թոյլ ետ մինչ ի ժամանակի հնձոցն: - 693. Եւ ապա ասեմք, եթէ աստուած յամենայն տեղիս է. *վասն որոյ* կայանք հոգւոցն ուր և իցէ առ աստուած է: - 695. Նաև մշակ ասելն, զի հոգին առանց մարմնոյն ո՛չ ինչ է աշխատեալ. *վասն որոյ* և զվարձն հոգւոյն և մարմնոյն տայ: - 696. ...*վասն որոյ* ասի որդի սատանայի: - 706. Նոյնպէս և զօրք հրեշտակաց և մարդիկ երկիր պագանեն սրբոց. *վասն որոյ* թագաւոր թագաւորաց են և տէր տէրանց. - 711. *Վասն որոյ* երից սոցա պատշաճի թագն ոսկեղէն: - 712. ...և էր կոյս ըստ որում պահեաց զմաքրութիւնն. *վասն որոյ* նմանակիցք նորին՝ թագիւ պսակին ընդ նմին: - 712. ...*վասն որոյ* ինքն եղև պտուղ ննջեցելոց: - 716. Զի այժմ հոգիս փոփոխական է. որպէս խորհրդով կամօք և այլն. *վասն որոյ* զմիաւորութիւնն ընդ մարմնոյ փոփոխական ունի...: - 723. ...իսկ ի յարութեանն անփոփոխ սերտութեամբ հաստատի ասէ սուրբն դիոնէսիոս. *վասն որոյ* անփոփոխ և անմահ միաւորի ընդ մարմնոյ: - 723. Երկրորդ, այժմ մարմինս մեր յապականացու հողոյ է և տարերց. *վասն որոյ* և ապականի դարձեալ...: - 723. ...*վասն որոյ* յանապական տարերց կազմի անապական մարմին: - 723. Երրորդ, այժմ ի ժամանակի եմք եղեալք. և ժամանակն փոփոխական է. *վասն որոյ* ընդ ժամանակին փոփոխիմք և մեք: - 723. Չորրորդ, այժմ ի ծնողաց ապականացու ծնանիմք. *վասն որոյ* և ապականիմք: - 723. ...*վասն որոյ* ի յարութեան՝ հրեշտակաց հաւասար յարուցանէ անմահ և առանց կարօտութեան...: - 24. Եւ յայնժամ ո՛չ լինի մեղք. *վասն որոյ* և ո՛չ մահ...: - 724. Իններորդ, հոգին և մարմինն են մի անձն մարդոյ. *վասն որոյ* փոխակրեն ի միմեանց զբարիս և զչարիս: - 724. Տասներորդ, գործք մարդոյ անցաւոր է որպէս ինքն. իսկ հատուցմունքն աստուծոյ մշտնջենաւոր որպէս նոյն ինքն. *վասն որոյ* յարուցանէ անմահ, զի հատուսցէ ոմանց զփառս և ոմանց զտանջանս անմահ մարմնով: - 724. Դարձեալ՝ երկրորդն ադամ յայս թիւս յարեաւ ի մեռելոց. *վասն որոյ* և մեք ամենեքեան յայնմ թուի յառնեմք...: - 726. Իսկ մարմին մարդոյս թէպէտ ապականացո՛ւ է, այլ ի կողմանէ հոգւոյն անապակա՛ն է. *վասն որոյ* անապական մնան: - 727. *Վասն որոյ* տէրն գողոյ նմանեցուցանէ զմահն օրհասական: - 730. Եւ յիրաւի նախ ջրով. զի յայնժամ ջերմացեալ էին մարդիկ ի ցանկութիւն մեղաց, *վասն որոյ* ջրով

պատժեցան: - 731. ...*վասն որոյ* հուր գայ առաջի քրիստոսի. զի զոմանս տանջէ այրելովն, և զոմանս պսակէ՛ լուսովն...: - 731. ...*վասն որոյ* նմա՛ պարտ էր դատաւոր լինիլ և հատուցանել ըստ գործոց հաւատացելոց և անհաւատից: - 735. ...զի ի նմա՛ է ծածկեալ ամենայն գանձք իմաստութեան և գիտութեանն աստուծոյ. *վասն որոյ* իմաստութիւնն քննէ և դատէ: - 735. Եօթներորդ, քրիստոս ո՛չ է պարտաւոր յայնցանէ *վասն որոյ* դատէ՛ զայլս. զի «ո՛չ արար մեղս և ո՛չ գտաւ նենգութիւն ի բերան նորա»: - 735. ...և երկոքեան սոքա կարի յոյժ վայելեն դատաւորի. այսինքն իմաստութիւն և անմեղութիւն. *վասն որոյ* քրիստոս լինի դատաւոր: - 735. Ոմանք ո՛չ դատին այլ դատապարտին որպէս բուն չարքն և յայտնի մեղաւորքն. *վասն որոց* ասէ մարգարէն, «ո՛չ յարիցեն ամբարիշտք ի դատաստան»: - 738-739. Դարձեալ՝ մեղանչեն ընդ դէմ յաւիտենականին աստուծոյ. *վասն որոյ* յաւիտեան պատժ զնոսա: - 744. Չորրորդ, զի նա՛ արդարութեամբ հատուցանէ ի կատարածի. *վասն որոյ* կոչի կշիռք արդարութեան: - 746. Այլ զի մի՛ իրողութիւն դատաստանին և յարութեան ուրուական և առ աչօք թուեսցի ընդհանուր ամենայն մարդկան, *վասն որոյ* ասեն վարդապետք ի յարութենէն մինչ ի գալուստն և քննութիւնն և հրով նորոգիլն և այլն՝ յերկարի միջոցաւ որքան ժամս **գ**: - 747. *Վասն որոյ* ի կամս ապաստան ներեսցուք հաւանել ճշմարտութեանն: - 759. Երկրորդ վասն տեղւոյն. զի վերինն երուսաղէմ է՛ ի բարձունս քան զարեգակն. *վասն որոյ* ո՛չ լուսաւորէ զնոսա: - 760. *Վասն որոյ* սպանօղք որդւոյ՝ հօր և հոգւոյ թշնամիք են: - 770. *Վասն որոյ* առհասարակ դժկամակ թուի. մինչ ընտրեսցեն ի միմեանց. զի ինքեանց գիտակքն իմաստունք են: - 774. *Վասն որոյ* յանդիմանեալք առհասարակ դժկամակ լինին: - 774. Դարձեալ՝ ծածկութիւն յանցանաց՝ է՛ բնականապէս մեզ ի ներքոյ անտի. իսկ յանդիմանութիւն է ծածկելոց յայտ արարողութիւն. *վասն որոյ* ամենքեան դժկամակ երևին: - 774. *Վասն որոյ* կրկին է և պատիժն. զառաջինն ի նախնւոյն հասեալ. և ապա յետոյ յօր մի հաստատեալ ըստ առաքելոյ: - 777. *Վասն որոյ* պատուիրեաց «գա՛յ գիշեր յորում ո՛չ կարէք գործել»: - 780. Այլ զանազանի. զի դևք ամենևին ո՛չ ունին զղջումն և ոչ կարեն. *վասն որոյ* ո՛չ հանդիպին թողութեան. իսկ մեղաւորքն ունին զղջումն այլ ո՛չ կարէ վարձաւորիլ: - 780. Եւ յայսցանէ երևի չորս ինչ հարկաւոր զղջման. այսինքն է որպիսութիւնն, ժամանակն, յորմէ, *վասն որոյ*: - 780. *Վասն որոյն*, որ է՛ դիտաւորութիւն թողութեան: - 780. Իսկ դժոխայինքն թէ և զղջան կամ խոստովանին, արտաքոյ սոցա՛ է. *վասն որոյ* ո՛չ հանդիպին թողութեան...: - 780. Եւ այլևս յարմար տեղւոյս այսպէս իմանի. զի սուրբ հարքն առաջինք պակաս ունէին զչարչարանս. *վասն որոյ* ո՛չ կարէին փրկիլ. իսկ քրիստոս եղեալ ըստ մարմնոյ որդի նոցա, զպակասութիւն հարցն չարչարանաց յիւրումն մարմնի էլից: - 781. *Վասն որոյ* չարչարանքն քրիստոսի ասի պակասութիւն վասն հարցն. ասի և կատարեալ առ ինքեան: - 781. Եւ այլքն ո՛չ են կնիք. այլ զարդ պակասութեանց նորին. *վասն որոյ* և փոփոխականք են: - 783. Երրորդ, զի հաւատն է լուսաւորութիւն մտաց հեղեալ յաստուծոյ ի ճանաչել զհոգևոր բարիսն. իսկ դևք ո՛չ ունին զլոյս մտաց և ո՛չ զհեղումն շնորհաց. *վասն որոյ* ո՛չ ճանաչեն զհոգևոր բարիս: - 784

***ՎԱՍՆ ԱՅԴՈՐԻԿ, ԱՅՆՈՐԻԿ, ԱՅՍՈՐԻԿ +*** Դարձեալ, անձնիշխան կամքն է՛ յաստուծոյ. և է՛ յոչընչէ եղեալ. այլ ա՛րդ՝ անձնիշխան կամքն ըստ այնմ՝ որ յաստուծոյ է եղեալ՝ ո՛չ է պատճառ չարի. այլ ըստ այնմ որ յոչնչէ՝ և ցանկայ ոչընչի. այսինքն չարի. *վասն այսորիկ* մեղքն և չարն ո՛չ են յաստուծոյ. այլ յոչնչէ՝ որ է՛ սկիզբն նոցա: - 16. *Վասն այնորիկ* ո՛չ երևի ճշմարիտ նոցա...: - 31. Եւ այս *վասն այնորիկ*՝ զի չարախօսէ՛ր զմարդիկ...: - 153. *Վասն այսորիկ* ո՛չ է պարտ խնդրել զփորձութիւնն և ո՛չ զարգելումն. այլ զյաղթութիւնն: - 160. *Վասն այնորիկ* յորժամ զիրս հոսականս և շարժունս չափէ՛, հա՛րկ է զի ի նոսին հոսեսցի...: - 199. Եւ Մէգն՝ այն է, որ մնաց յանձրևահոս ամպոց. *վասն այնորիկ* մէգն նշա՛ն է պարզոյ: - 204. *Վասն այսորիկ* կատարեալ իմաստութիւնն յերկուս բաժանի. ի տեսականն և ի գործնականն. այս ըստ դաւթի: - 248. *Վասն այնորիկ* զօրութեամբ սիրոյն շարժի առ աստուած ի միջին կէտ իւր. զի գերազանցապէս հեշտասցի ի նա՛: - 249. *Վասն այսորիկ* հիմն հաւատոյն և գլուխ՝ է երեք ամենայն հաւատացելոց: - 532. Եւ զի դժուարին է հոգւոյ մարդոյ կարգաւորել զինքն և սրբել ի մեղաց. *վասն այսորիկ* օգնութիւն տայ աստուած հոգւոյ մարդոյ զեօթն պարգևս հոգւոյն սրբոյ: - 582. *Վասն այսորիկ* ասեն վարդապետք թէ **ը** են երանութիւնքն ըստ էութեանն. այլ է միայն ըստ զանազանութեան աստիճանացն: - 586. *Վասն այնորիկ* **ե** կրկին պատմուճան զգենու եպիսկոպոսն: - 607. *Վասն այսորիկ* արդար դատաւորն զհոգի և զմարմին ի միասին յարուցանէ և դատէ՛. եթէ վասն մեղաց ի տանջանս և եթէ վասն արդարութեան յարքայութիւնն երկնից: - 691. Զի թէպէտ անդ ո՛չ է փառք, այլ և ո՛չ տանջանք և չարչարանք գոյ. *վասն այսորիկ* առ աստուած ասէ որք են ի պահեստ հոգւոցն: - 695. *Վասն այսորիկ* ասեն վարդապետք թէ՝ սրբոցն և անսրբոց **բ** իրք հասարա՛կ է. այսինքն յարութիւնն զի առհասարակ

յառնեն. և անմահութիւնն զի առհասարակ անմահ և անապական մարմնով յառնեն: - 723. ...իսկ մարդիկ ի յարութեանն ո՛չ են կարօտ կերակրոյ զի անմա՛հ են. *վասն այնորիկ* նոքա ո՛չ յառնեն: - 727. Վասն հինգերորդին, որք աստէն զխրատս ընդունել ո՛չ կամեցան և ընդ մարդկան տանջիլ ո՛չ արժանացան. *վասն յանորիկ* արդարապէս անդ՝ անդադար հարկանին ուռամբ: - 752. Վասն վեցերորդին, որք զխաւար մեղաց աստէն սիրեցին և առ լոյսն քրիստոս գալ ո՛չ կամեցան. *վասն այնորիկ* ահագին խաւարաւ անդ նսեմանան: - 752. Վասն եօթներորդին, որք զմեղս խոստովան լինիլ ո՛չ կամեցան զորս առնել ո՛չ էր պարտ. *վասն այնորիկ* անդանօր ամենեցուն մերկացեալ և բացեալ յաւիտեան յամօթ լինին: - 752-753. Եւ դարձեալ այնպէս միաւորեալք են ընդ աստուծոյ, որ դատաստանն աստուծոյ ամենայն իրօք հաճոյ թուի նոցա. *վասն այսորիկ* այնոքիւք ուրախ լինին: - 754. Որք *վասն այնորիկ* ասին աւազան, զի զուրբս բարեպաշտ բանիւք առատաբանս առնեն: - 756. Եւ *վասն այնորիկ* պղնձի, զի ընդ դէմ ախտիցն յաղթի՝ հզօրս առնեն: - 756. Նախ *վասն այնորիկ*՝ զի ի դժոխոցն զերծան: - 764

***ՎԱՍՆ ԶԻ +*** *Վասն զի* խղճմտութեամբ յանցաւորին ճանապարհն ո՛չ է թիւր. այլ ինքն թիւրի յուղիղ ճանապարհէն: - 33. Իսկ «աստուած աստուած իմ ընդէ՞ր թողեր զիս», ո՛չ թէ յինքենէ՛ թողաւ և կամ ի հօրէ. որպէս թէ երկեաւ ի չարչարանացն. *վասն զի* կամաւ եկն և ո՛չ հարկիւ: - 42. Լո՛յս է հայր. *վասն զի* աստուած լուսոյ ասի: - 57. Զի միաւորեալն ո՛չ բաժանի. *վասն զի* միութիւնն եբա՛րձ զերկուութիւնն: - 83. *Վասն զի* հայր առաքեաց զբանն: - 94. *Վասն զի* իմաստունք մաքառին ընդ դէմ հաւատոց. և քննութեամբ մտաց ո՛չ կարեն հասանիլ. և զրկին ի փրկութենէ իւրեանց: - 96. *Վասն զի* հայր ո՛չ ունի հայր. այլ ունի որդի և հոգի: - 105. Եւ երրորդն որ է նշանակաւ, ա՛յլ առաւել և ընդարձակ և բազմաբա՛ն է. *վասն զի* խառնի ի զգալիսս. որ բազո՛ւմ է և բաժանեալ: - 123. *Վասն զի* ի դևն երիս իրս նկատելի է. այսինքն բնութիւնն՝ գործն՝ և մեղքն: - 146. Հինգերորդ՝ զի հոգևոր բնութիւնն միանգամ միայն է շրջելի. *վասն զի* բոլորովին շրջէ զինքն՝ զոր ո՛չ առնէ մարդն. զի մարմինն միշտ մարտնչի ընդ հոգին. որպէս յառաջիկայդ ասի **լբ** գլուխն: - 151. Զորօրինակ՝ որպէս տղայ որ տեսանիցէ ցից ի յորմում, երթայ ի մօտ. թէ ամո՛ւր է՝ թողու. *վասն զի* ո՛չ կարէ հանել. և երթայ առ միւսն. թէ շարժի՝ ի մօտ կենայ մինչև հանէ՛: - 160-161. Եւ *վասն զի* բնութիւնն հարկաւոր է և նո՛յն առ ամենայնսն յաղագս որոյ ամենայնքն ի հարկէ զնո՛յն գործեն: - 173. *Վասն զի* ի մէջ գիշերի ծնաւ քրիստոս. և ի մէջ գիշերի յարեաւ ի գերեզմանէն: - 194. *Վասն զի* առաջին շարժունն զայլս չափէ՛, և զինքն ո՛չ չափէ: - 198. Նմանապէս պնդի և լուծանի. *վասն զի* ցո՛ւրտ է և գէջ: - 202. Եւ զի բնութեամբ ունին յայտ է, զի ամենայն տեսակն զմի և զնոյն ունի հնարս. *վասն զի* մի բնութենէ ի նոսա: - 218. *Վասն զի* բնական լուսաւո՛ր է օդս որ ի մէջ դրախտին: - 222. Այլք ասեն թէ՝ խնծո՛ր. *վասն զի* բազում անգամ ի յերգսն խնծոր յիշի: - 224. Հինգերորդ՝ նախ քան զյանցանելն՝ էին ադամ և կինն մերկ և ո՛չ ամաչէին. *վասն զի* ո՛չ ունէին ցանկութիւն հեշտութեան: - 225. *Վասն զի* անձն է մեզ առաջին հիմն և ի ներքոյ եդեալ. յորմէ և առ որ ժողովին տեսակն և սեռն և սեռականագոյն սեռք: - 236. Ա՛րդ՝ *վասն զի* գոն յամենայն իրս նոյնութիւն և այլութիւն որպէս ցուցաւ...: - 236. Տասներորդ՝ զի և բանականս մարդ՝ քան զանբան կենդանիս տգէտ լինէր. *վասն զի* ամենայն կենդանի ունի բնական ճանաչումն իւրոց և օտարաց...: - 238-239. *Վասն զի* յաստուծոյ. առին և կոչեցան իմաստունք: - 269. Զոր օրինակ ո՛չ ասի մարդ մարդոյ նման գոլ ըստ մարդկութեան. *վասն զի* նոյնութիւն է և ոչ նմանութիւն. բայց ասի նման մարդ մարդոյ ըստ երեսացն և գունոյն և ձևոյն նմանութեան: - 272. Իսկ մարդն ասի պատկեր աստուծոյ ըստ նմանութեանն. *վասն զի* ո՛չ ունի զնոյն էութիւն. այլ զնմանութիւնն աստուծոյ: - 273. Վասն այն արդարադատն աստուած է պատիժս եդ. ի վերայ կայենի. *վասն զի* է չարութեամբ յանցեաւ: - 287. Եւ անդանօր լինի անմահ և անապական ծնունդ և որդիք յարութեան. զի մեռանիլ ո՛չ ևս կարեն աւէ. *վասն զի* յանմահ զօրութենէն աստուծոյ ծնանիմք, և յանապական տարրեղէն նիւթոց. վասն որոյ անմահ և անապական կայանան: - 308. **Իսկ ի հոգւոյ մարդոյն բ իր հեռացուցանեն զդևսն. այսինքն խոնարհութեամբ և ճշմարտութեամբ. *վասն զի* զերկուքս զայս ո՛չ ունի սատանայ. և ամենևին փախչի և ատէ՛ զխոնարհութիւն և զճշմարտութիւն**: - 324. *Վասն զի* կարկուտն բեկանիւր և հուրն այրէր զբեկեալն: - 334. *Վասն զի* **ե** տանջանօք չարչարեաց զիէլ, կրկին ընկալաւ զհատուցումն: - 335. *Վասն զի* կրկին է գործ քահանային: - 363. *Վասն զի* մարմնոյ զինուորն **ի** ամեայ էր. զ**ե** ամն յաւել ի հոգևոր զինուորսն վասն **ե** զգայութեանցն: - 379. Նա՛խ՝ զի **է** էր պատարագն. *վասն զի* մատոյց **է** զուարակ. և **է** խոյ. վասն որոյ ընկալաւ պարգևս **է** բանից մարգարէութեան: - 387. Եւ տե՛ս, զի և զղևի՛ օրհնեաց. *վասն զի* ապաշխարեաց ի յարենէ սիկիմացւոց ի յարիւն եղբարցն որթապաշտից: - 409. *Վասն զի* զկայնան

որդի արփաքսաթայ և հայր սաղայի **ճ** և **ի** ամ ի թիւ առնու: - 411. Եւ *վասն զի* նաթան շարժեաց ի զղջումն՝ զկէս պատժոյն կրեաց: - 432. ...*վասն զի* շնորհաց և ազատութեան էր ժամանակն. պա՛րտ էր մեղաւորացն ընդ արդարոցն վայելել ի շնորհին: - 507. *Վասն զի* բոլոր մարդն երիւք է կայացեալ. որ է հոգի և մարմին, և ի մէջ երկուցն շունչն է խառնեալ: - 510. Եւ ա՛յս է պատճառն. *վասն զի* տունկն յարմատն է հաստատեալ. և ձուկն ի ջուրն. և կենդանիք ի շունչ և յարիւն: - 511. *Վասն զի* գերեզմանն կնքեալ էր և յարեաւ: - 512. Երրորդ՝ *վասն զի* օրինա՛կ է **է** աւուրցն ի յորս երկիր հիմնեցաւ. նաև **է** դարու կենցաղոյս: - 524. Այլ ա՛րդ՝ կրկին է իշխանութիւն. այսինքն հոգևոր և մարմնաւոր. *վասն զի* կրկին է մարդն. հոգի և մարմին: - 537. Այսպէս ասեմք, զի որ ըստ ինքեան է ճշմարիտ և ըստ ինքեան բարի՝ առաւել է. և որ ըստ պատահման է ճշմարիտ կամ բարի՝ նուա՛զ է. *վասն զի* ըստ ինքեանն գոյացութեամբ և հարկաւո՛ր է. այսինքն անփոփոխ և միշտ: - 550. *Վասն զի* սոքա պատարագ մատուցանեն ի նախատօնակ ծննդեանն և յարութեանն. և լատինք ո՛չ: - 554. *Վասն զի* արեգակն արդարության քրիստոս հայրական փառօք և աստուածագումար դասուք և կարապետեալ աստուածային նշանն անտի գալոց է...: - 555. *Վասն զի* յերից գոյացեալ է մարդն. ի մտաց ի հոգւոյ և ի մարմնոյ: - 556. Նաև զամենայն գլխաւոր մեղս ընդ հզօր խորհուրդ ասէ սուրբն եւագրիոս. *վասն զի* նախ ի խորհուրդն տնկի ամենայն սերմն մեղաց. և ապա ի մարմինն բուսանի և աճէ: - 557. Գթութիւն է գութ ցուցանել առ ընկերն և սիրել զնա. *վասն զի* պատկեր աստուծոյ է: - 582. *Վասն զի* յանմաքուր սերմանէ յղացեալ լինի զաւակն. զի «ո՞վ կարէ առնել սուրբ զյղացեալն յանսուրբ սերմանէ» ասէ: - 592. ...*վասն զի* աղբիւր արեանն բաժանեալ ի մարմնոյն՝ դարձեալ միաւորեցաւ առ ինքն և ժողովեցաւ ի մարմինն իւր և ո՛չ ցրուեցաւ ա՛յլ արտաքոյ: - 598. Ա՛րդ՝ ի սոցանէ մասն ինչ աղօթակա՛ն է և մասն ինչ հրաման. *վասն զի* մասն ինչ եկեղեցւոյ կանոնաց մեղանչեմք, և մասն ինչ և մասն ինչ պատուիրանացն աստուծոյ: - 602. ...*վասն զի* ունիմք զմարմին և հոգի և օրէնք: - 611. ...*վասն զի* բանից և կամա՛ց են զաւակք: - 612. *Վասն զի* մարմինն ի չորից տարերց է. և ի **դ** ծնունդս փոխին **դ** արիւնք տարրականք ըստ այսմ օրինակի: - 612. Եւ էր առաջին ժամն նոցա երեկոյին. *վասն զի* սկիզբն աւուրն զերեկոյն ասէին...: - 621. Եւ է՛ առաջին ժամ աղօթիցն ի մէջ գիշերի. *վասն զի* ի մէջ գիշերի յարեաւ քրիստոս. և ի մէջ գիշերի հասարակ յարութիւն մեր...: - 621. *Վասն զի* **դ** պահ է գիշերն: - 622. Նա՛խ՝ *վասն զի* հոգին եռամասնեայ է. բան, ցասումն, և ցանկութիւն. և ունի իմացումն և կամք: - 622. Երկրորդ՝ *վասն զի* քահանայք եմք՝ պա՛րտ է հասարակ աղօթել. և զի աբեղայք՝ պա՛րտ է առանձնակի աղօթել: - 623. *Վասն զի* հարցն երից մանկանցն է երգ: - 637. ...*վասն զի* ի մէջ մարգարէիցն աստուածաբան կոչեցաւ...: - 644. Իսկ չար հոգիքն ճանաչեն այն քան զչարս՝ *վասն զի* ըստ արժանեաց իւրոց տանջելոց են: - 685. Եւ *վասն զի* մի օր է հատուցումն և ոչ յամենայն օր ասացաւ ի վերոյ: - 698. Եւ ընդ դէմ սմա կրկին է անկումն որ է՛ մահ. *վասն զի* կրկին է մարդն. այսինքն հոգի և մարմին: - 710. ...*վասն զի* չորիցս գոչէր փողն ազդարար ի չուել բանակին իսրայէլի: - 713. ...*վասն զի* գաբրիէլ հրեշտակապետաց դասուն է պետ...: - 713. *Վասն զի* մարդն յայսմ աշխարհի եօթն պակասութիւն ունի. **գ** հոգւոյ և **դ** մարմնոյ...: - 722. *Վասն զի* երկին որ շարժի՝ յօր դատաստանին դադարի և հաստատի յայն կարգն յոր նա՛խ ստեղծան. արեգակն յարևելս և լուսինն յարևմուտս: - 727. Իսկ երկրորդին այսպէս պատասխանեսցուք ընդդիմայարակայութեամբ. զի մարդոյ մարմին ապականի. *վասն զի* քակտի ի նմանէ կենդանացուցիչ նորին հոգին...: - 733. Բարձումն յուսոյ և ամենայն փրկութեան Նաև գոլն իսկ որում տենչան ամենայն ստեղծուածք՝ է՛ նոցա պատիժ. *վասն զի* խնդրեսցեն զնահ և ո՛չ գտանիցեն: - 751. *Վասն զի* զընկերակցութիւն **թ** դասուց հրեշտակաց ապախտ արարին, արդարապէս **թ** տանջանս կրել արժանանան: - 752. Այսպէս և ի նաւորդսն զկնի վշտաց նաւաբեկութեանն ցնծան յոյժ. *վասն զի* երկեա՛ն յոյժ: - 765

**ՎԱՍՏԱԿ +** Եւ առաջին է *վաստակն* քան զպսակն: - 230. Երրորդ՝ գործելն *վաստակաւ:* - 287. Իսկ վարդապետք ասեն թէ՝ չեմք նման առաջնոցն ո՛չ ամօք և ո՛չ *վաստակօք:* - 291. Երկրորդ՝ զի անյագ և ամենակե՛ր է մարախն. և ի յայլոց *վաստակս* մտեալ կորուսանէ: - 334. Նոյնպէս և նոքա կախարդութեամբն իւրեանց ի *վաստակս* որդւոցն իսրայէլի: - 334. Հինգերորդ՝ ի խորհուրդ սրբութեան. զառաջինն պարգևէ՛ աւազանաւն. և յետ մեղանչելոյն ապաշխարութեամբ և *վաստակօք* պարգևէ՛ զնոյնն: - 350. Երրորդ՝ մեղրն ո՛չ է *վաստակ*. ի մեր աշխատանա՛ց է նուիրելի աստուծոյ: - 356. Ցին, որ զայլոց *վաստակս* ուտէ: - 365. Հինգերորդ՝ զի և վայրի անասնոց և գազանաց բաժին լիցի ի *վաստակն* մեր. զի նոցա է երկիրս այս և տեղիք ուր մեք բնակեցաք: - 372. Երկրորդ, քաղց և ծարաւ և առանց *վաստակոց:* - 393. Իններորդ՝ և զեծցին յընդունայն *վաստակոց* կռոցն որ ոչ օգտէին. զի

ունայնութիւն լսի գեբաղն: - 402. Քսանք, աղուեսօք այրեաց *զվաստակս* այլազգեացն: - 423. Նա՛խ՝ զի հանգիցէ ի *վաստակոցն* զոր լգ ամ վաստակեցաւ ի վերայ երկրի: - 519. Նա՛խ՝ զի համընթա՛ցք են ասէ ի *վաստակն*. այսինքն հոգին և մարմինն. ի միասին և հանգիցեն և պսակեսցին: - 668-669. Յոգիք արդարոցն ճանաչեն զմիմեանս անուամբ և ծննդեամբ և գործով *վաստակոցն*. որք զարդիւնսն միշտ մերձ տեսանեն: - 685. Նա՛խ՝ զի համընթացք են ասէ ի *վաստակն:* - 691. ...բայց վարձ հատուցման ո՛չ կարէ ընդունիլ առանց մարմնոյն. զի ո՛չ միայն հոգւոյն է *վաստակն*, այլ և մարմնոյն: - 691. Երկրորդ, զի առնեն զվարձս *վաստակոցն* զոր սպասաւորեցին մարդկան: - 727

**ՎԱՍՏԱԿԱՍԷՐ +** եզն *վաստակասէր*. որպէս դուկաս ընդարձակ զցեղ ազգատոհմին տեառն ցուցեալ: - 133

**ՎԱՍՏԱԿԵՄ +** Այսինքն երկնչելովն՝ զերկիւղն իմ. քաղցիւն՝ զքաղցն. *վաստակելովն* զքիրտն. նմանապէս և զայլսն իմացիս: - 42. Կիրք՝ *վաստակիլն* ի ճանապարհին: - 85. Իւր ձեռօքն ցանէր և որթ *վաստակէր* իւր բաւական: - 300. Երկրորդ՝ քաղց և ծարաւ մեղաւորաց. և առանց *վաստակելոյ* և գործելոյ: - 393. Եւ աստուած անաշխատ գործէ՛ և ո՛չ *վաստակի:* - 395. Չորրորդ՝ զի ուտելով և ըմպելով անփոյթ առնէին զուխտաւորս ի հեռուստ եկեալ քառասնօրեայ ճանկամբ և այլ ուխտիւ. և յանձրև և յարև և ի ցուրտ *վաստակէին:* - 425. Այլ և հանգիստն աշխատելոց՝ *վաստակի:* - 470. Նա՛խ՝ զի հանգիցէ ի վաստակոցն զոր լգ ամ *վաստակեցաւ* ի վերայ երկրի: - 519. Եւ ա՛յս է խորհուրդն, զի որ *վաստակի* յերգս՝ նա՛ տացէ զփառս արժանապէս: - 636. Աստ *վաստակիլ* և անդ հանգչիլ: - 704. Չորրորդ, նշանակէ՛ զքիւ աւուրցն ժամուց յորում նոքա *վաստակեցին* և զարդարեցան: - 711. Առաւել պարտ էր մարդկան *վաստակիլ* միայն՝ զի կարասցեն գոլ ի միում աւուր ընդ երանելի սրբուհւոյ աստուածածին կուսին. քան բազում *վաստակիլ* վասն յաւիտենական փառացն: - 763

**ՎԱՏ +** Այլ արդ՝ եդ աստուած զսոսա բնական որակութիւնս ի մասունս հոգւոյն. եդ և զանձնիշխան կամքն տէր և իշխան իներքս ի հոգին. զի կառավարէ և առաջնորդէ՛ հոգւոյն. *զվատ* որակն ի բարին ուղղել, և զբարին ի նոյնն պահել և առաւելուլ. զի այս է գործ անձնիշխանին: - 19. Դարձեալ այսպէս մեկնեն եթէ՝ փորձութիւնն ըստ ինքեան ո՛չ է բարի. այլ պատահմամբ լինի բարի. յորժամ համբերութիւնն մերձ դնի և յաղթիցէ. իսկ յորժամ համբերութիւն ոչ լիցի, ըստ ինքեան չար և *վատ* է փորձութիւնն. վասն այն տէրն արգելուլ հրամայէ: - 160. Արի մարդոց է աւուրքս և ո՛չ թուլից և *վատաց:* - 201. Ոմանք զդառնութիւնն. այլք զհոտն *վատ*. և կէսք զվնասս մահու. և այլք այլ ինչ: - 217. Այս երկու երակս թէ տաք է և չոր, մարդն ի մօտն աղէկ տեսնու՝ և ի հեռուն *վատ*. որպէս տղայն: - 239. Եւ թէ այս երակս հո՛վ է և գէջ, ի հեռուն աղէկ տեսնու և ի մօտն *վատ*. որպէս ծեր մարդն: - 239. Վասն որոյ ո՛չ է պարտ ենթադատել զմարդ *վատն* այսպիսի նշանաց երևման: - 246. Զի՞նչ է *վատն:* - 251. Տէրն յաւետարանին զչարն և *զվատն* մին ասէ: - 251. Եւ մարդիկ սովո՛ր են զհիւանդս և զաղճատս *վատ* ասել: - 251. Արդ յա՛յտ է թէ որ գործ չառնէ հոգևոր կամ մարմնաւոր՝ *վա՛տ* ասի: - 251. Որպէս սովորութիւն է մարդոյ որ *վատացն* ասէ, ե՛ս արարի զայդ բանդ որ զքեզ ի քո կամդ թողի և ո՛չ խրատեցի: - 336. Երրորդ, և *վա՛տ* մարդոյ տայ մեծութիւն. - 664. ...որպէս հրովն փորձի ոսկին թէ լաւ է թէ *վատ*...: - 664

**ՎԱՏԱԲԱԽՏՈՒԹԻՒՆ +** Չորրորդ, զի ո՛չ լինի ի դիպուածոց ինչ. որպէս սղից ոմանց պատահին բարեբախտութիւն, կամ *վատաբախտութիւն*. ա՛րդ՝ թէ է՛ ամենայն ի հարկէ, ո՛չ լինին վերոյ ասացեալքս: - 8. Դարձեալ ասեն, թէ բազում ինչ հանդիպի արտաքոյ կամաց մերոց. որպէս չար հիւանդութիւն. *վատաբախտութիւն*. մահ. և այլն, ապա ուրեմն նոքա ի հարկէ բախտի և ճակատագրի: - 11. Չորրորդ՝ *վատաբախտութեան:* - 209

**ՎԱՏԱԽԱՌՆՈՒԹԻՒՆ +** Ասեմք առ այս, թէպէտ խառնւածք մարմնոյն լինին ի շարժմանէ՛ աստեղացն, այլ բազումք անձնիշխան կամօք նըւաճեն *զվատախառնութիւն* մարմնոյն, և գործեն զբարիս: - 10

**ՎԱՏԱՅԱՄԱԲԱՒ -** Չորրորդ՝ զի մի՛ *վատահամբաւ* լիցի ընդ ծնանիլն իբր ոչ ունելով այր: - 461

**ՎԱՏԱՍԻՐՏ +** Բերանն փոքր՝ պատկանի կանանց: Նաև կնատ *վատասրտաց:* - 247

**ՎԱՏԵՄ +** Կամ առողջ որպէս զմովսէս. որում ո՛չ *վատեցին* աչքն և ո՛չ շարժեցաւ ատամն: - 761

**ՎԱՏԹԱՐ +** Այլ առաւել *վատթար* ե՛ս է վասն վեցից: - 33. Ուսուցանեն թիւր հաւատս, և գործս *վատթարս:* - 35. Եւ այսուհետև *վատթարաց* հերքիչք եղաք: - 126. Նոյնպէս թէ զարունստն լաւ առնէ՝ գովի. և թէ *վատթար*՝պարսաւի: - 250. Այլ ա՛րդ եթէ փոխի ի տնկոյն ի մարդն, *վատթա՛ր* է մարդոյն կեանք քան զտնկոյն. ուստի ի մեծագունէն ի նւաստն փոխեցաւ: - 253. Վեցերորդ՝ զի անկասկած լիցուք ի *վատթար* երկիւղէ. յորում երկիւղազգածք չարչարին ըմբռնեալք ի մեղս: - 281. Նա՛խ՝ զի *վատթա՛ր* է

դառնալ և ծուլութիւն: - 303. Այլ և որ խահակայ *վատքարր* և խոտելիք եղեն: - 303. Եւ յայտնի նշան մոլորութեան նոցա ա՛յս է, զի այնպիսեացն կատարողք *վատքարր* են գործովք և մոլի. և առ դևս տանին զմարդիկք բռնութեամբ...: - 389. Ութերորդ՝ յօրինակ փրկչին յիսուսի, որ զբռնութիւն թշնամւոյն խորտակեաց և զխաբէութիւնն եթող. զի փորձեցին ընտրեալքն և խոտեցին *վատքարրն:* - 417. Տարորոշումն խառնեալ տարերց. և լաւին և *վատքարին*. զոմանս պահել և զոմանս վտարել: - 786

**ՎԱՏՈԻԺ +** Թխակն *վատո՛ւժ* է և ազահ: - 246. Մանրաքայլն և արագն՝ չարաբարոյ և *վատուժ* ասեն լինիլ: - 247

**ՎԱՐԱԳ** - Տասներորդ խաչի **դ** տօնն. զոր ի սուրբ խաչին է. և երևմանն. և *վարագայ* խաչին. և խաչգիւտն: - 649

**ՎԱՐԱԳՈՅՐ +** Այսպէս և քահանայապետն մեր միայն եմուտ ի ներքին կողմն *վարագուրին:* - 50. Այս է յղացմամբ յարգանդի և ծննդեամբ. և քարոզութեամբ. և մահուամբ. և յարութեամբն և համբարձմամբն առ հայր՝ իբր զպսակ տարւոյ կատարեալ բնութեամբ մեր՝ ի ներքին կողմն *վարագուրին* մտեալ: - 126. Ութերորդ՝ զի խորանն առաջին և երկրորդ և երրորդ՝ *վարագո՛յր* էր. և ծածկէին զմիմեանս և յայտնէին. այսպէս առաջին խորանն է աստուածայինքն. և երկրորդն հրեշտակացն. և երրորդն մերս՝ *վարագուրիւք* ծածկեալ՝ որ յայտնեն զմիմեանս: - 132. Եւ *վարագոյր*՝ օ՛դդ: - 343. Այլ թէ հարցանեն զորքանութիւն սիւնիցն. **ծ** սիւն ի մէջ խորանին. և **թ** սիւն *վարագուրացն*. և մի թափանց ի մէջն յարևելից յարևմուտս. որ լինի **կ**. և **ձ** սփռիչ. և **խ** նիգք. և ամենայնն ոսկեպատ. որ բովանդակն լինի **ճձ** ի ներքս: - 343. Եւ սրբութիւնն սրբոցն է՛ ներքին կողմ *վարագուրին:* - 345. Ութերորդ, նոքա մատուցանէին ի ձեռագործ խորանսն որ ի մովսիսէ՛ կանգնեցաւ, իսկ տէրն մեր անցեալ ի ներքին կողմն *վարագուրին*...: - 354. Եւ ցանեալ է անգամ ի *վարագոյրն*. որ է՛ քաւութիւն **է** զգայարանցս ի **է** զօրութեանց հոգւոյն. **է** խորհրդով եկեղեցւոյ. առ **է** դար կենցաղոյս: - 360. Եւ քահանայքն հպարտացան և օտար հրով խնկարկեցին ի ներքս *վարագուրին*, վասն այն պատժեցան ի խրատ այլոց: - 364. Յայս միտս զքահանայից թաղումն *վարագուրաւ* ծածկեմք: - 411. Չորրորդ՝ *վարագոյրն* հերձաւ: - 490. Եւ *վարագոյրն* պատառեցաւ. զի յանարգանս փեսային պատառեաց հարսն զքօղն. և կողն աղբիւրացաւ. և նոքա ո՛չ արտասուեցին: - 490. Իսկ զտեղի համբարձմանն քրիստոսի միտք ո՛չ կարէ ցուցանել. զի ի լոյս անմատոյց է բնակեալ և ի ներքին կողմն *վարագուրին* ըստ առաքելոյն: - 519. Եւ *վարագոյր* ծածկոյթն, որպէս ի թաղումն մովսէսի անպն ծածկեաց...: - 674

**ՎԱՐԱՁ +** Ոմանք զէն ունին զատամունսն. որպէս շունք և *վարազք:* - 216

**ՎԱՐԱՆԵՄ +** *Վարանեցայ* ի տարակոյսս. մեկնեա՛ զբանդ: - 81

**ՎԱՐԴ +** Եւ ո՛չ այս միայն, այլ և բոյսք և տունկք ունին բնութեամբ զէնս պահապան ինքեանց: Որպէս փուշք *վարդից*. և քիսք հասկից. և խայթոցն աղնճին: - 217

**ՎԱՐԴԱՆ (սպարապետն)** - Ժողովեալ **խ** եպիսկոպոսաց և բազում վարդապետաց և ժողովրդոց. կողմնակալք և մարզպանք, մեծամեծօքն հայոց, և սպարապետն *վարդան* ազգայնօքն իւր: - 544

**ՎԱՐԴԱՆ (մեկնիչն, վարդապետն)** - Ութերորդ՝ **գ** անձինք կատարեալք. և թէ մինն պակասիցէ՝ ո՛չ է կատարեալ աստուած. և մարդս երրորդությամբ է կատարեալ. հոգւով և մարմնով և բանիւ. և թէ մինն պակասիցէ՝ անկատա՛ր է մարդն ասէ վարդապետն *վարդան:* - 271. Հինգերորդ, ի նորս **զ** ազգ է որպէս ասէ մեկնիչն *վարդան* այսպէս: - 611. Եւ զոր նախ իմացն, զ'ի յանսահման ծովէն, և զքարգմանչաց օրհնութիւնն, և զսուրբ սարգսի օրհնութիւնն, *վարդան* վարդապետն: - 638. Այլ և ոմանք ի մէնջ որպէս վարդապետն *վարդան* և այլք ասեն գոլ ի միում տեղւոջ զամենայն հոգիս...: - 686

**ՎԱՐԴԱՆԱՆՔ** - Եւ զպէնտակոստէին, և զվարդավառին, և զսուրբ գրիգորին և զյովհաննուն, և զմարգարէիցն, և *զվարդանանցն*, և զառաքելոցն, և թագաւորացն, և զանտօնին: - 637

**ՎԱՐԴԱՊԵՏ +** Արդ՝ ըստ ուղղափառ *վարդապետաց* եկեղեցւոյ: - 24. Որոց պատասխանեն *վարդապետք* եկեղեցւոյ...: - 27. Նոյնպէս ո՛չ կարէ իմանալ յորժամ ի սուրբ գրոց և ի սքանչելեաց և ի բանից սուրբ *վարդապետաց*՝ դարձուցանէ զմիտքն...: - 31. Եւ զոր ինչ տեսանէ աչք արծըւին՝ ո՛չ կարէ տեսանել աչք մարդոյ. այնպէս բթամիտն ո՛չ իմանայ, զոր իմանայ նրբահայեացն և ուսեալն յաստուծոյ. զոր եդ աստուած ուսուցիչ այլոց. որպէս մարգարէքն, և առաքեալքն, և *վարդապետք:* - 31. Եւ այնպիսիքն տրամաբանել ո՛չ կարեն վասն հոգւոյին. որպէս ի ծնէ կոյրն վասն գունոց, քանզի ասեն *վարդապետք*՝ աստուած լոյս է ո՛չ մարմնոց, այլ մտաց. զոր թէ ոք ո՛չ տեսանէ՝ կո՛յր է: - 32. Վասն որոյ ո՛չ հաւանին ուղղութեան *վարդապետաց:* - 33. Եւ որպէս ասեն *վարդապետք*՝ քան զամենայն մեղս ծանրագոյն գոլ զպաշտօն կռոցն վասն երկուց: - 33. Չորրորդ՝ նա սուտ քրիստոս և սուտ մարգարէ

կոչի. և սոքա սուտ քահանայք՝ և սուտ *վարդապետք*՝ և սուտ առաքեալք կոչին: - 35. Նոյնպէս և վասն սոցա յառաջագոյն ասացաւ յառաքելոց և ի *վարդապետաց*. զի մի՛ յանգէտս խոտորեսցին ընդ նոսա: - 35. Իսկ այլ *վարդապետք* ասեն թէ՝ բանիւս այսու՝ ցուցանի կերպ աստուածային ծննդեանն. քանզի ի ծնունդն՝ ծնեալն առնու զբնութիւն ծնողին որ է՛ կատարելութիւն: - 41. Եկն առ յիսուս ասելով՝ «*վարդապետ* բարի». զի լսիցէ՝ աշակերտ բարի: - 47. Եւ քարոզչօք՝ այսինքն հրեշտակօք կամ *վարդապետօք* կամ գրոց սրբոց գիտութեամբ, փութայ զկեալն մեր: - 48. Եւ հաստատութիւն՝ սուրբ գրոց վկայութիւնք, և բանք *վարդապետաց*, և կանոնք օրինաց: - 96. Քսաներորդ չորրորդ՝ ասեն *վարդապետք* վասն հրեշտակաց թէ ունին առաւօտեան և երեկոյին ճանաչումն: - 99. Երեսներորդ՝ զի *վարդապետք* սուրբք օրինակ տան մարդեղութեանն քրիստոսի, որպէս լոյս ընդ օդ՝ և հուր ընդ երկաթ միաւորեալ: - 100. Այսքան յընդհանուր *վարդապետաց* վասն միութեան և որոշման սրբաբանեալ: - 105. Այսպէս և մարգարէիւք՝ և *վարդապետօք*՝ և հրաշիւք՝ և զանազան պատճառօք: - 127. Համաձայնին միմեանց սուրբ *վարդապետք*...: - 134. Ա՛րդ՝ ներքնագոյն սիրովն խնամէ աստուած զարարածս. և առաջին դասք հրեշտակաց զվերջինսն. և հարք զորդիս. և *վարդապետք* զաշակերտս. և իշխանք զիշխեցեալս. տեարք զծառայս. և այս սիրովս շարունակին ընդ նոսա: - 143. Ո՞րպէս ասեն *վարդապետք*՝ երեքկին է բանն. մտաց. բերանոյ, և գործոյ: - 144. Նախ՝ զի ասեն *վարդապետք* թէ ո՛չ ունեք խրատու մեղանչեաց, և ո՛չ ունեք օգնութեամբ նորոգեսցի: - 150. *Վարդապետք* ասեն թէ ամենայն երկինք ի հարկէ պարտին ունել զբոլորակ ձև: - 182. *Վարդապետք* ասեն. որպէս սուրբն բարսեղ՝ թէ որպէս երկբերանի քսա՛կ է լուսինն. ընդ մինն ելանէ և ի վերի թիկունքն ժողովի և պակասի ի մէնջ լոյսն. և ի միւսն ի ներքս մտանէ և լուսաւորէ՛ զմեզ: - 187. Այլ *վարդապետք* եկեղեցւոյ ասեն ըստ պղատոնի եթէ՝ լոյսն խզումն է ի տարրական հրոյ, որ յառաջին օրն գոյացաւ: - 188. *Վարդապետք* ասեն թէ վասն բազում պատճառի: - 192. Դարձեալ ասեն *վարդապետք* թէ՝ ժամանակն է չափումն իրաց մարմնականաց: - 198. Ասեն *վարդապետք* թէ՝ ա՛յն չափ հոգս տարաւ աստուած ի ստեղծանել զճանճս և զմրջմունս որքան հրեշտակաց: - 217. Նա՛խ՝ *վարդապետաց*, և ապա՛ իմաստասիրաց: - 218. Զի *վարդապետք* ասեն եթէ՝ կերակուր գազանաց այլ կենդանիք են...: - 218. Նա՛խ՝ պարտ է գիտել թէ վասն դրախտին **գ** է կարծիք *վարդապետաց*: - 221. Եւ բազում *վարդապետք* ի մէնջ և յօտարաց այսմ համաձայնին: - 221. Զայս այսեն սուրբ *վարդապետք* եթէ՝ որպէս հրեշտակք աճեցին յերկինս, նոյնպէս և մարդկան ազգ ի դրախտին: - 226. *Վարդապետք* ասեն թէ ո՛չ ամենայն առաջին պատուական է, և ո՛չ ամենայն յետին անարգ: - 230. Եւ ա՛յս է բացադարձութիւն իմացմանն. զոր ի բազում տեղիս ասեն *վարդապետք*: - 251. Վասն ոգւոյն մարդոյ զանազա՛ն են կարծիք արտաքին իմաստնոց և *վարդապետաց* եկեղեցւոյ: - 252. Իսկ *վարդապետք* ուղղաձնութեան՝ յանդիմանեալ զերկոսին կողմանց ստախօսութիւն, ո՛չ զհոգի յառաջ քան զմարմին ասեն ստեղծեալ, և ո՛չ զմարմին քան զհոգի: - 254. Այսմ ասեն *վարդապետք* բազում պատճառս: - 266. Է և ա՛յլ ուրեք զանազանութիւն հանճարոյ և իմաստից ի յայլ *վարդապետաց* ասացեալ: - 270. Այսպէս ասեն *վարդապետք*: - 279. Ասեն *վարդապետք* եթէ՝ եղիային յայտնի է: - 289. Զի վասն առաջնոյն ասեն *վարդապետք*, եթէ ադամ ո՛չ եկաց ի դրախտին **ռ** ամ, կամ աւելի և կամ պակաս, այլ մի օր. մանաւանդ **է** ժամ: - 290. Իսկ *վարդապետք* ասեն թէ՝ չեմք նման առաջնոցն ո՛չ ամօք և ո՛չ վաստակօք: - 291. Ասեն *վարդապետք* եթէ հողմն հնչեաց և ցրուեաց զաշտարակն. զի մի՛ փլուցեալ վնասեսցէ զմարդիկ: - 298. Առ այս կրկին են բանք *վարդապետաց*: - 330. Ընդ որովք նահապետք, *վարդապետք*, և թագաւորք: - 347. Եւ սմին համաձայնի վանական *վարդապետն* մեր ասելով, չորս տարր է մարդոյ և **դ** ծնունդ: - 353. Գինին՝ մարտիրոսքն սուրբք. և Իւղն՝ լուսատու *վարդապետքն* ուղղափառք: - 374. Ի յայս միտս *զվարդապետաց* զաւազան յեկեղեցւոյ ի դուրս բերեմք զարդարեալ: - 382. Չորրորդ՝ աշակերտք *վարդապետաց* և դատաւորաց: - 389. Եւ զի բարկութիւն ո՛չ է ի յաստուած, ա՛յսպէս ասեն *վարդապետք* սուրբք: - 408. Եւ առ այս յարմարեն բազում տեսութիւնս *վարդապետք* եկեղեցւոյ: - 409. իսկ երրորդն նէեմի և եզր դպիր՝ կանգնեցին զպարիսպն և զդրունսն. նշանակեն զառաքեալսն զհայրապետսն և *զվարդապետսն*. որք օրինօք պարսպեն զեկեղեցի, և հանապազ ուսուցանեն զդպրութիւն: - 449. Իսկ այլ *վարդապետք* ասեն թէ՝ արդարութիւնն աստուծոյ երեք կերպիւ առեալ լինի: - 458. Իսկ ա՛յլ *վարդապետք* ասեն, թէ ետ զբնական օրէնս որպէս նոյի և յառաջ քան զնա: - 467. Իսկ մեր *վարդապետք* ասեն որպէս մեծն ներսէս, թէ ի զերրորդ աւուր արարաւ առաջին ադամն ի պատկեր տիրական: - 467. Այս քան վասն բանին մարդեղութեան, զի բազում են պատճառք ասացեալ *վարդապետաց*. զոր մեք ըզսակաւն եդաք աստ: - 468. Ա՛րդ՝ սքանչելիք էին ի մայրն քրիստոսի որպէս

ասեն *վարդապետր:* - 469. Դարձեալ վասն նշանացն քրիստոսի ասեն *վարդապետր* այսպէս: - 471. Իսկ *վարդապետր* եկեղեցւոյ բովանդակեալ զամենայն` **զ** եղանակաւ ասեն զծնունդն քրիստոսի: - 471. Բայց *վարդապետր* ասեն զմիաւորութիւնն **ե** եղանակաւ: - 476. Ասեն *վարդապետր* եթէ` որպէս մարգարէքն և առաքեալքն զխօսեցեալ բանս իւրեանց ի ձեռս ունին իբր պատգամաբեր յաստուծոյ առ մարդիկ: - 481. Զի *վարդապետր* ի **դ** բաժանեն զբլփատութիւնն քրիստոսի: - 486. Այլ ասեն *վարդապետր* բազում պատճառս: - 486. Ութ են ասացեալ *վարդապետր:* - 488. Այլ և ասեն *վարդապետր*, Վասն ամբարշտին` ձաղի´ գթութիւնն: - 491. Ասեն *վարդապետր* թէ Բունն կիպարի էր վերուստ ի վայր. և Խոտորնակն արմաւենի: - 494. Տասներորդ` ամենայն սուրբ *վարդապետր* ուղղափառաց որպէս եփրեմ` ոսկէբերանն` կիւրեղ` աթանաս` և այլք, անապական գրեն և խոստովանին զմարմինն սուրբ: - 499. Այլ զայսոսիկ ո´չ ընդունին ուղղափառ *վարդապետր:* - 504. Զի **բ** օր ասացեալ է ի *վարդապետաց*. մին բնական օր և միւսն շնորհական: - 508. Երկրորդ` զի *վարդապետր* եկեղեցւոյ ո´չ համաձայնին յարութեան ժամուն: - 512. Իսկ ա´յլ *վարդապետր* ընդ արշալոյսն առաւօտուն ասեն յարուցեալ ըստ մարկոսի և այլ աւետարանչացն: - 512. Բազում պատճառս ասեն *վարդապետր:* - 519. Այլ ասեն *վարդապետր* եթէ` ի համբարձմանն քրիստոսի ընդ իրս տեսանելի է որք են պարագայք համբարձմանն: - 520. *Վարդապետր* ասեն թէ վասն է պատճառի: - 521. Սակայն *վարդապետր* եկեղեցւոյ պատշաճե´ն զստեղծանելն հօր. իսկ զտրոհելն որդոյ. և զզարդարելն հոգւոյն սրբոյ: - 522. Վարդապետականն` մանկանց եկեղեցւոյ. զի յամէ օգտեալ *վարդապետր*` զգուշացուցանեն զմանկունս սիօնի սրբոյ: - 528. Եւ պօղոս ասէ զայս, առընթեր դնելով առաքելոց և մարգարէից *զվարդապետս:* - 528. Ատամունք` *վարդապետր* և մեկնիչք և ծասկիչք հոգևոր կերակրոյն: - 534. Իսկ գրապան` *վարդապետր* և քահանայք պահապանք ժողովրդեանն. որք բոլորակի զգեստ կոչեցան քրիստոսի: - 534. Երրորդ` *զվարդապետս:* - 535. Նա´խ` մարգարէքն զհայր ծանուցին. ապա´ առաքեալքն զորդի. և ապա´ *վարդապետր* զհոգին սուրբ: - 535. Ի դէմս հօր` մարգարէքն. ի դէմս որդւոյ` առաքեալքն. ի դէմս հոգւոյն` քննիչ *վարդապետր*...: - 535. Երրորդ` մարգարէք որպէս խորհեցեալն բան. առաքեալք որպէս խօսեցեալն. և *վարդապետր* որպէս գրեալն: - 535. Նա´խ յաղագս շնորհին և ճշմարտութեան. և մարգարէք վասն ստուերին և օրինակին. և *վարդապետր* ըստ չափոյ պիտոյից նոցին: - 535. ...առաքեալքն ձեռն դնելովն միայն` տային զհոգին սուրբ. և ի լեզուս խօսէին. և մարգարէանային ընդունօղքն. իսկ *վարդապետր* սուրբք` քարոզութեան նոցին հետևօղք և որդիք ծնողացն` երրորդ կարգին յետ նոցա: - 535. Երրորդ` զի առաքեալք ինքնաք տեսք եղեն քրիստոսի. և մարգարէք միջոցաւ ի բացեայ. և *վարդապետր* յետոյ նոցա: - 535. Չորրորդ` զի շինօղ և հաստատօղ եկեղեցւոյ առաքեալքն են. և ձեռնտու նիւթոց մարգարէքն. եզր և պարիսպ *վարդապետր:* - 535. Յինգերորդ` առաջին առաքեալքն իբր կատարումն բանից. երկրորդ մարգարէք նախաձայնք նոցին. երրորդ *վարդապետր* մեկնիչք և թարգմանք երկուցն քարոզութեանց: - 535. Այս քան վասն նախկին սպասաւորաց եկեղեցւոյ. այսինքն Առաքելոց Մարգարէից և *Վարդապետաց:* - 537. Եւ զպօղոսնոս աշակերտաց բազմաց *վարդապետ*. և ծեր, որ զմեռեալս յարուցանէր սքանչելեօք: - 544. Ժողովեալ **խ** եպիսկոպոսաց և բազում *վարդապետաց* և ժողովրդոց. կողմնակալք և մարզպանք, մեծամեծօքն հայոց, և սպարապետն վարդան ազգայնօքն իւր: - 544. Երրորդ ժողովն է դվնայ, ի չորրորդ ամի թագաւորութեանն կոստանդեայ հռոմոց. հրամանաւ մեծի կաթողիկոսին հայոց ներսէսի շինողի. և այլ **է** և **ժ** եպիսկոպոսաց` և *վարդապետաց* բազմաց և իշխանաց...: - 544. Եւ ա´յս է պատճառն որ ոմանք յեօթանասնիցն ասեն. զի եօթանասուն աշակերտացն գլուխ և *վարդապետ* էր. որպէս պետրոս երկոտասանիցն. և առաջինքն ամենայն ուրեք յետնոցն անուամբ կոչեին. այս է ստոյգ պատճառն: - 549. Որ և պատուական է *վարդապետն* քան զաշակերտն. և զօրավարն քան զզօրս. և կառավարն քան զկառն և այլն: - 551. Դարձեալ ասեն *վարդապետր* եթէ` խորհրդոցն մեղք` որ ընտրէ և կամաւ հեշտանայ, առաւել չար է քան զգործոցն ըստ պատահմանն: - 557. Վասն է՞ր նագրիոս ընդ խորհուրդ ասէ մեղաց, և այլ *վարդապետր* է ասեն զմահու չափ մեղսն: - 559. Վասն այն այլ *վարդապետր* կոչեն զայս ախտ` ծուլութիւն...: - 559. Դարձեալ ասեմք թէ` այլ *վարդապետր* **է** ասեն զմեղս, զի **դ** տարերք են մարմնոյն, և **գ** զօրութիւնք հոգւոյն. այսինքն բան, ցասումն, և ցանկութիւն: - 559. Յինգերորդ` որպէս ասեն այլ *վարդապետր*, թէ լինելութիւն մեղաց է յանկարգութենէ կամաց. և անկարգութիւն կամացն է կրկին...: - 560. Վասն է՞ր ա´յլ *վարդապետր* առաջին մեղք ասեն զհպարտութիւնն. իսկ նագրիոս զորկորստութիւնն: - 561. Եւ այլ սահմանք զոր դնեն *վարդապետր*` պարունակեալ են ի սահմանն պօղոսի. զի *վարդապետաց* սահմանն մեկնութիւն և յայտնութիւն է սահմանին պօղոսի: - 571-572. Կամ

այլ ազգ. սէրն է սկիզբն գործոց բարեաց, զի շարժէ՛ առ այն. որպէս ասեն *վարդապետք*՝ սէրն գործէ՛ մեծամեծս թէ է՛. և թէ դադարէ ի գործելոյն՝ ո՛չ է սէր: - 575. Եւ այլ *վարդապետք* ասեն, սիրել պարտ է նախ զայն որ ի վերո՛յ է քան զմեզ. այսինքն զաստուած. և ապա՛ զմեզ. յետ որոյ զընկերն. և ապա՛ զմարմինս մեր. և ի նոյն աստիճանս զմարմին ընկերին. զի մարմինն երկրորդ է հոգւոյն: - 576. Դարձեալ ասեն *վարդապետք* թէ, Իմաստութեամբն եմք հասունք: - 583. Վասն այսորիկ ասեն *վարդապետք* թէ **ը** են երանութիւնքն ըստ էութեանն. այլ է միայն ըստ զանազանութեան աստիճանացն: - 586. Զի ասեն *վարդապետք* թէ որպիսի իւրաքանչիւր ոք ծածկեալ իցէ յինքեան. փո՛րձ է տուեալ նախատինքն: - 586. *Վարդապետք* դնեն բազում պատճառս: - 587. Այլ թացեալ պատառն այսպէս էր. զի ի սկաւառակն ընդ *վարդապետին* փութացաւ մատնիչն տանիլ զձեռն լիրբ դիմօք և արհամարհեալ մտօք: - 599. ...և ա՛յսպէս մեկնեն առ հասարակ *վարդապետք* եկեղեցւոյ. - 599. ...այսպէս և օգոստինոս *վարդապետն* Ֆռանկաց ի խորհրդոց գիրս **ծա** համարն ասէ, թէ յառաջագոյն բաշխեաց զխորհուրդ մարմնոյ և արեանն և տուեալ յուդայի: - 599. Ասեն *վարդապետք* եթէ՝ խոստովանութիւնն է հնարք, և է՛ հրաման: - 603. Ասեն *վարդապետք* թէ՝ զմի անգամ խոստովանեալն բարի հաւատով և կատարեալ զղջմամբ՝ ո՛չ է պարտ կրկնել. եթէ ոչ վասն չորից պատճառաց: - 603. Ասեն *վարդապետք* թէ՝ ի լուր ուրախութեան հեշտանայ լեարդն և տարածեալ լայնանայ. և այնպէս շունչն ելեալ յորդ ընդ շնչերակսն և առնէ զծաղրն: - 619. Դարձեալ և ըստ մերոց *վարդապետաց*, առաջին կանոնին **ը** երորդ գուբղայն օրհնութիւն՝ ի հանդերձելումն ակնարկէ...: - 630. Եւ զոր նախ իմացն, զ'ի յանսահման ծովէն, և զթարգմանչաց օրհնութիւնն, և զսուրբ սարգսի օրհնութիւնն, վարդան *վարդապետն:* - 638. Եւ զղևոնդեանց մանկունքն **դծ**, սարկաւագ *վարդապետն* որ ի հաղբատ: - 638. Նոյնպէս և պօղոս հրէից և հեթանոսաց *վարդապետ:* - 644. Ասեն *վարդապետք*, որպէս միաւորութիւն նոցա կեանք է, նոյնպէս և որոշումն նոցա մահ: - 667. Այս է ուղղափառ *վարդապետաց:* - 667. Եւ այս բազում ուրէք ասացեալ է ի *վարդապետաց:* - 668. *Վարդապետք* սուրբք՝ զպահեստ հոգւոց յերիս փոփոխմունս գիտեն. այսինքն նախ քան զքրիստոս. և յետ քրիստոսի. և յետ դատելոյն: - 686. Այլ մեր *վարդապետք* յերկինս և ի ներքոյ երկնից ասեն. որպէս և կալիստրատոս վկայն առ **ը** երորդ կամարաւն ուր են լուսաւորք և եթերային լոյսն: - 686. Այլ և ոմանք ի մէնջ որպէս *վարդապետն* վարդան և այլք ասեն գոլ ի միում տեղւոջ զամենայն հոգիս...: - 686. Այլ որք ուղիղ դատեցան *վարդապետք* եկեղեցւոյ ըստ տեսլեանն յօհաննու. որպէս մեծն անդրէաս և համախոհք նմին սուրբն իրինոս, եպիփան, և բասիլիոս: - 687. Այլ և ի մերոց *վարդապետաց* սկիւռացին գրիգոր ի փոխումն աստուածածին կուսին: - 687. Սոցա համաձայնին ընդհանուր ամենայն *վարդապետք* գոլ ի յերկնային խորանս անմարմնոց ի զանազան օթևանս լուսոյ: - 688. ...որպէս յա՛յտ է յառաջիկայդ ի զանազան վկայութեանց *վարդապետաց* սրբոց և ի հին և ի նոր աստուածաշունչ կտակաց: - 691. Ընդհանուր ամենայն *վարդապետք* ուղղափառաց համաձայնեալ աստուածեղէն գրոց՝ ո՛չ ասեն քաւարան հրոյ: - 698. Այլ միայն *վարդապետք* Ֆռանկաց տարաձայնեալ ամենեցունց համաբաւեն զբերքաթուրն: - 698. Նա՛խ՝ զի ընդ դէմ է սուրբ գրոց և ուղղափառ *վարդապետաց* որպէս ցուցանի յառաջիկայդ: - 698. Եւ այլ *վարդապետք* փայտ խոտ և եղէգն զներելի մեղս ասեն. և առաւել և նուազ և միջակ: - 702. Դարձեալ մեր *վարդապետք* ասեն, որպէս ի տեսլեան մեկնիչն **լդ** գլուխն ասէ այսպէս: - 703. Տեսէք եղբարք զսրբոց *վարդապետաց* բանսն զի ո՛չ գոյ անդ քաւարան հրոյ: - 703. Դարձեալ ասեմք թէ՝ այլ *վարդապետք* մեկնեն ի դատաստանին օրն...: - 704. Եւ այլ *վարդապետք* ասեն եթէ, նեռն յղանայ ի սերմանէ և ծնցի ի բոզէ՛: - 706. և ընդ դէմ խօսեսցի աւետարանին և արգելուցու զուղղափառ *վարդապետս* զի մի՛ քարոզեսցեն: - 708. Զոր *վարդապետք* եկեղեցւոյ այսպէս իմանան եթէ՝ կրկին է յարութիւն. այսինքն կեանք: - 710. Պատասխանեն *վարդապետք* եթէ երից ոմանց. այսինքն կուսանաց. և մարտիրոսաց. և *վարդապետաց:* - 712. Զի գերազանց գո՛րծ է բանին ուսուցանելն զճշմարտութիւնն. և զայս ունին *վարդապետքն:* - 712. Դարձեալ, զի քրիստոս էր *վարդապետ* ըստ որում զճշմարտութիւնն քարոզեաց...: - 712. Իսկ մեր *վարդապետք* ասեն ի կիրակէի պենտակոստէին ի նոյն ժամն գիշերոյն...: - 714. Պատասխանեն *վարդապետք* և դնեն **գ** սահմանս: - 716. Պատասխանեն *վարդապետք* թէ՝ որպէս մովսէս թանձրամիտ ժողովրդեանն իէլի պատմէր զլինելութիւն արարածոց ի **զ** օրս...: - 717. Երկրորդ՝ զի և *վարդապետն* իւր ետ օրինակ զհատն ցորենոյ: - 720. Եւ զարդարեալ լինի է զարդուք. այսինքն **գ** հոգւոյն և **դ** մարմնոյն որպէս ասեն *վարդապետք:* - 721. Վասն այսորիկ ասեն *վարդապետք* թէ՝ սրբոցն և անսրբոց **բ** իրք հասարա՛կ է. այսինքն յարութիւնն զի առհասարակ յառնեն. և անմահութիւնն զի առհասարակ անմահ և անապական մարմնով յառնեն: - 723. Ասեն *վարդապետք* թէ ամենայն մարդ

յառնէ՛: - 724. Ասեն *վարդապետք* թէ՝ բոլոր ամենայն անդամօք յառնեն անքերի: - 725. *Վարդապետք* ասեն թէ՝ ամենեքեան կատարեալ հասակաւ յառնեն և մի թուով երեսնամեայ: - 726. Ասեն *վարդապետք*՝ եթէ են ինչ որ էութեամբ և պատահմամբ անցանեն. որպէս կենդանիք և տունկք և որ ինչ ի չորից տարերաց են գոյացեալք: - 727. Ասեն *վարդապետք* թէ արդարապէ՛ս պատժի մեղաւորն յաւիտեան: - 744. Այլ զի մի՛ իրողութիւն դատաստանին և յարութեան ուրուական և առ աչօք թուեցի ընդհանուր ամենայն մարդկան, վասն որոյ ասեն *վարդապետք* ի յարութենէն մինչ ի գալուստն և քննութիւնն և հրով նորոգիլն և այլն՝ յերկարի միջոցաւ որքան ժամս զ: - 747. Զի այսպէս ասեն *վարդապետք*՝ թէ յորժամ յղանայ ոք ի միտս իւր զխորհուրդ մեղացն, ի սատանայէ՛ սերմն առեալ որպէս կին յառնէ. և ի ծնանիլ մեղացն՝ ծնանին և որդունքն ի հրեղէն ծովն որ է՛ ի հարաւ: - 753. Ո՞րպէս ասեն *վարդապետք* թէ յառաջին կեանս դրախտին ելանելոց եմք: - 758. Ասեմք առ այս, եթէ առաջին կեանքն դրախտին ո՛չ զայն իմանան *վարդապետք* զոր ունէրն ադամ. այլ զոր խոստացաւն ադամայ եթէ պահեալ էր զպատուիրանն. որ նոյն ինքն է արքայութիւնն երկնից ի տեղի անկելոց հրեշտակացն: - 758. Այլ քանզի *վարդապետաց* մերոց և մեծաց է ասացեալ բանքն՝ ո՛չ ընդդիմանամք: - 759. Դարձեալ որպէս ասեն *վարդապետք*, եօթն յատկապէս փառս ունին մարմինք, և եօթն հոգիք: - 761. Նախ ի տեսանելն զերեսս աստուածային որ է անճառելի ցնծութիւն. որպէս ասեն *վարդապետք*, այն է ճշմարիտ և միայն ուրախութիւն, և ո՛չ յաղագս ստեղծուածոյ, այլ ի ստեղծողին լինի. զոր իբրև ստանայցես, ո՛չ ոք բարձցէ ի քէն: - 762. Որպէս ասեն *վարդապետք*, լցեալ առ ժամայն ամենայն անոյշ և քաղցր ուրախութեամբ, տեսանեն զմարդն մարդկան արարիչ: - 763. Որպէս ասեն *վարդապետք*, ի վերջին ծովէն սպանիու մինչև ի հնդիկս սակաւ աւուրց բացատ գոյ թէ վարեսցէ հողմ զնաւն: - 763. Որպէս ասեն *վարդապետք*, այնքան եղիցի երջանկութիւն, ուր ոչ ինչ եղիցի չար, և ոչ ինչ ծածկեսցի բարի: - 765. Այսպէս ի վեցից կողմանէ եղիցի ուրախութիւն սրբոցն. որ եղև հաւաքեալ ի *վարդապետաց* սրբոց: - 765. Որպէս ասեն *վարդապետք*, յագեալ ցանկասցուք, զի մի՛ յագեցումն ծնսի զտաղտկութիւն. ցանկացեալ յագեսցուք, զի մի՛ ծանծրութեամբ իցէ ցանկութիւնն: - 766. Արդ՝ ես վերջին ծնունդս եկեղեցւոյ և տրուպս բանասիրաց, Գրիգոր պիտակ անուն խնդրող բանին. բացայայտեցի զբանս Յարցմանց ի լուսաւոր բանից *վարդապետաց* եկեղեցւոյ: - 772. Այլ զպիտանիս եկեղեցւոյ և *վարդապետաց* ոգէշահ խնդիր հաւատոյ միա՛յն հոգ տարեալ: - 772. Ա՛րդ՝ է՛ ինչ ի սմա հաւաքեալ ի լուսաւոր բանից *վարդապետաց* սրբոց ըստ գրոյն կամ իմացուածոյն: - 772. Իսկ ընդունելութեան ժամանակ գ են ասացեալ *վարդապետք*: - 779. Եւ զանազան տեսութիւնք *վարդապետաց* չեն ընդ դէմ միմեանց. այլ զորօրինակ ոմն զական պատականութիւն, և այլ ոմն զբնութեան, և կէսք զաստուածութեան, և ոմանք զորակացն գեղեցկութեանց, պատմեն զմի և զնոյնական իր: - 781-782

***ԱԼՊԵՐԱ ՎԱՐԴԱՊԵՏՆ*** - Քսանևըերորդ՝ ասէ *ալպերա վարդապետն* ծեր թէ՝ «քրիստոս էր համանգամայն ճանապարհորդ և ըմբռնօղ ի կէտ յղութեանն իւրոյ»: - 100

***ԻՍԻԴՈՐՈՍ ՎԱՐԴԱՊԵՏՆ*** - Քսանևիններորդ՝ ասէ *իսիդորոս վարդապետն* նոցա թէ՝ «Երրորդութիւնն ինքեան միայն է ծանուցեալ՝ և առեցեալ մարդոյն»: - 100

***ԹՈՒՄԱ ՎԱՐԴԱՊԵՏՆ*** - Եւ *թումա վարդապետն* իւրեանց ասէ՝ «հոգին քրիստոսի ճանաչէ զամենայն անհունս»: - 100

***ՕԳՈՍՏԻՆՈՍ ՎԱՐԴԱՊԵՏՆ*** - Եւ *օգոստինոս վարդապետ* նոցա ասէ ի գիրս Երրորդութեանն, «ըմբռնել զաստուածային էութիւնն՝ պատկանի որդւոյն աստուծոյ ըստ բնութեանն. և որդւոյն մարդոյ՝ ըստ շնորհաց միաւորութեանն»: - 100

**ՎԱՐԴԱՊԵՏԱԿԱՆ +** Եւ բաց յայսցանէ գ այլ մասնական կամ տեսական ասա. այսինքն բարոյական. բանական. *վարդապետական*: - 528. *Վարդապետականն* մանկանց եկեղեցւոյ. զի յամէ օգտեալ վարդապետք՝ զգուշացուցանեն զմանկունս սիօնի սրբոյ: - 528

**ՎԱՐԴԱՊԵՏԵՄ +** Ութերորդ՝ **բժան** ամեայ *վարդապետելն*: - 471. Բարոյականն՝ նոյի, որ ի բարուց *վարդապետեալ* բնակէր ի յանապատ և պահէր զկուսութիւն **եճ** ամ: - 528

**ՎԱՐԴԱՊԵՏՈՒԹԻՒՆ +** Եւ մեք համաձայնեալ սուրբ և ուղղափառ *վարդապետութեանցս*, այսպէս դաւանիմք և խոստովանիմք զՅոգին սուրբ աստուած բղխումն ի հօրէ աստուծոյ...: - 65. Այլ և այլ *վարդապետութիւնք* ընդ դէմ այլ և այլ հերձուածո՛ց են, և ո՛չ ընդ դէմ միմեանց: - 79. Եւ ապա ի բարձր հանէ *վարդապետութիւն* զբնութեանցն միաւորութիւն. ասէ՝ այլ և այլ յորոց փրկիչն. եթէ ոչ՝ նո՛յն է

երևելին և աներևոյթն. անժամանակն և ընդ ժամանակաւն: - 80. Եւ ի նմանէ լուսաւորեալք՝ պայծառացուցանեն *վարդապետութեամբքն* իւրեանց զերկու ժողովուրդս որք ի հրէից և որք ի հեթանոսաց օծեցան մկրտութեամբն: - 347. Երկրորդ՝ ի կողմանէ ընդունողաց առաքելոցն. զի պատշաճաւորեցան հոգոյն սրբոյ. զի փործիւ գիտէին *զվարդապետութիւնն* քրիստոսի, զմահն և զյարութիւնն և զալյլն: - 521-522. Չորրորդ, Վասն սպասաւորաց եկեղեցւոյ. Առաքելութեան Մարգարէութեան և *Վարդապետությանն* առ հասարակ: - 525. Քանի՞ է *վարդապետութեան* եղանակ: - 537. Զի *վարդապետութեանն* իւրեանց և օրինակացն հետևօղս լեալ ցուցանեն. և արքայութեանն արժանաւորս վկայեն: - 740. Որք որպէս գիրք յայնժամ բացեալք եղիցին. քանզի *վարդապետութիւնք* նոցա և օրինակք՝ ամենեցունց յայտնեսցին. ի յորս ամենեքեան իբրև ի գիրս տեսցեն թէ զի՞նչ պարտ էր առնել կամ խոտել ինքեանց: - 742. Է՛ ուրենն ասել, եթէ ոչ տն սաքաւովք, այսինքն զօրութեանց, թողեալ էր մեզ սերմն առաքելօք և մարգարէիւք և այլովք սրբովք և *վարդապետութեամբ* աւետարանին, համերք և ի մեղս լինէաք խստացեալք: - 755. Ի գնացս հոգւոյն զօրացեալ, զի ըստ տնօրէնութեանն խորհրդոյ միշտ հոգւով սրբով ներգործէր. ունելով տերև զաշխարհակեցոյց *վարդապետութիւնն:* - 768

**ՎԱՐԴԱՎԱՌ +** Իսկ *զվարդավառին* և զփոխմանն տօն՝ ի նորո՛յս է աւանդեալ. որպէս ողոգոմեանն, և քառասնօրեայ գալստեանն: - 373. Զի *վարդավառին* ա՛յն է, յորժամ կրկին **խ** պահեաց մովսէս ի լեառն և լուսաւորեցան երեսքն. վասն այն զկնի երկու յիսնակացն տօնեմք: - 373-374. Եւ զպէնտակոստէին, և *զվարդավառին*, և զսուրբ գրիգորին և զյովհաննուն, և զմարգարէիցն, և զվարդանանցն, և զառաքելոցն, և թագաւորացն, և զանտօնին: - 637. ...և *զվարդավառի* **բ** պատկերն, և զփոխման **բ** պատկերն, զիրեշտակապետացն, և զեօթանասնիցն, զղևոնդեանցն...: - 637. Նախ ասել աւետեաց, և ապա՛ ծննդեան. և գալստեան. և խաչի. և յարութեան. և համբարձման. և հոգւոյ գալստեան. և *վարդավառի*. և փոխման: - 642. Եւ միւն զմովսիսին. որ է՛ *վարդավառին:* - 653

**ՎԱՐԴԵՆԻ +** Եւ զորօրինակ յաշնայնոյ զժնիկն խլեմք և *զվարդենին* տնկեմք...: - 714. ...ի գարունն ո՛չ թէ դժնիկն խլեալ բուսանի, այլ տնկեալ *վարդենին*. եթէ արմատն ոչ մնայ դժնկին: - 714

**ՎԱՐԴԷՋՈՒՐ +** Եւ պտղի ծիթով որպէս *զվարդէջուր* եփեալ: - 349

**ՎԱՐԵՄ, ՎԱՐԻՄ +** Դարձեալ, թէ ամենայն ինչ ի հարկէ՛ է մարդոյ և անասնոյ, ապա ոչինչ զանազանի բանականն և անբանն. զի բանականն իմացմամբ և կամօք *վարի*. և անբանն ի բնութենէ՛ հարկի որպէս ասացաք: - 11. Ոլոմպիաթն չորրորդ ամ է. զոր հայք նահանջ ասեն. և Ընդիքտիոնն **ժե** ամ է. որով հռոմք *վարին:* - 191. Բայց սոքա և յոյնք իւրեանց ամսամտօք ո՛չ *վարին*. այլ ծառայաբար զհետ երբան այլոց: - 201. Զնաւս *վարէ՛:* - 202. Նոյն և սա՛ գոլորշի՛ է վերացեալ հողմոց. և մերձեցեալ ի հուռն՝ վառի՛ ի նմանէ. և բռնութեամբ հողմոյն *վարեալ* երևի իբրև զքռիչ աստղ և փուքով շիջանի: - 203. Երրորդ՝ որով առ ժամանակեայ կեանքս *վարի:* - 210. Չորրորդ՝ զի քրտամբ և աշխատութեամբ *վարեցաւ:* - 279. Կանգունն գիրկն է մարդոյ. և այլք **ը** թիզ ասեն. զոր այժմ Ֆռանկք *վարին:* - 293. Իսկ որ զդպրութիւն գիտէ և գրով *վարի*՝ **բժան** ազգ է. այսինքն Եբրայեցիք. Քաղդէացիք. Ասորիք. Պարսիկք. Մարք. Յնդիկք.: Փիւնիկեցիք: - 299. Երկրորդն է *վարիլն* սառայի ի տուն փարաւօնի: - 304. Իններորդ՝ *վարիլն* սառայի ի տունն աբիմելիքայ: - 304. Երկրորդ եղանակ՝ **է** գօտիք. և **ը**՝ անմոլարքն. **թ**՝ լուսնոյդ ի վայր. և **ժ** բանն աստուծոյ որ *վարէ*՛ զարարածս: - 343. Իսկ զօծումն մարտի՝ յորժամ *վարեցաւ* ի հոգւոյն յանապատ և յաղթեաց հակառակին: - 474. Եւ սուրբ հոգին զչարութիւնն *վարէ*՛ և սրբեալ բարեգործէ՛ զհոգին: - 523. Եւ այն որ **բ** ծայնիցն մի է մեսեդին. զի դարն ադամայ և ենովքայ միապէս բնական օրինօքն *վարեին:* - 629. Եւ նոյն զքահանայթաղէքն, որ ունի **է** աւետարան. և զաշխարհական թաղումն, ի յայրարատ գաւառի ի վաղարշապատ քաղաքի ի վկայարանս սրբոյն հռիփսիմի. յետ **ճժա** ամի սրբոյն գրիգորի. զի մինչև ցայն հնովն *վարեին:* - 659. Պա՞րտ է բժշկական դեղով *վարիլ* հիւանդաց, թէ ոչ: - 665. Իսկ յորժամ մեղաւոր հոգին հասանէ ի վախճան, տրտմութեամբ և ակամայ իբրև զանասուն ի սպանդ *վարեալ*...: - 669. Այլ որպէս ի միասին *վարեցին* զայս կեանս հոգին և մարմինն, նոյնպէս և զայն կեանս ընդունիցին: - 694. Ոմանք ի *վարել* և ի նաւել և յայլ ինչ գործս: - 714. Որպէս ասեն վարդապետք, ի վերջին ծովէն սպանիու մինչև ի հնդիկս սակաւ աւուրց բացատ զոյ թէ *վարեսցէ* հողմ զնաւն: - 763. Երեք գլխօք *վարէ*՛ զընթացս մարդկութեանն: - 770

**ՎԱՐԺԱՊԵՏ +** Այլ և *վարժապետին* իմոյ և մեծ հռետորի հայոց, Յոհաննու Որոտնեցւոյ, եղիցի ի սմա յիշատակ մաղթանաց մասին օրհնութեան. և վիճակ ժառանգութեան սրբոցն ի լոյս: - 773

**ՎԱՐԺԱՐԱՆ +** Երկրորդ՝ զի ծածուկ համբերութիւն նորա յայտնի լիցի. և ամենեցուն *վարժարան* եղիցի: - 325. Զի նա՛ ծնաւ զմեզ ըստ բանի՝ բազմաջան երկօք. կրթեալ ի մամուլս *վարժարանի* և ի յոյսն կենդանի: - 773

**ՎԱՐԺԵՄ +** Իմաստասէր իմանամք զայնս՝ որք ըստ արտաքին փիլիսոփայիցն կրթութեան են *վարժեալք*. որպէս պղատոն, արիստոտէլ, և այլքն: - 269. Եօթներորդ՝ ըստ ուսման. որպէս աշակերտք ծնունդք կոչին *վարժողաց*. եթէ ի մարմնականս. և եթէ ի հոգեկանս...: - 308. Դարձեալ՝ *վարժէ*՛ զնա զօտեաւն՝ պատերազմիլ ընդ մեղս և ընդ մեղսասէր մարդիկ որ կամին զանմեղն քարշել արտաքոյ օրինացն աստուծոյ: - 311. Նշանակէ՛ զմանկունս ընդ ձեռամբ խրատու *վարժեալ* և կրթեալ: - 357

**ՎԱՐԺՈՒՄՆ +** Ի յասացելոցս յառաջագոյն այս ինչ հաւաքի, եթէ ունակութիւնք մարդկային առաքինութեանց նախկնաբար պատրաստե՛ն ի *վարժումն* գործնական կենացն. իսկ ունակութիւնք պարզևացն պատրաստե՛ն ի *վարժումն* տեսական կենացն: - 586

**ՎԱՐԿ +** Եօթներորդ՝ երկաթն շինականա՛ց է գործի և երկրագործաց՝ անարժան *վարկաւ:* - 415

**ՎԱՐԿԱՆԻՄ +** Այլ *վարկանին* ոմանք զթիւ կազմութեան աւուրց պակաս գոլոյ նախնւոյն մարդոյ. զորոյ զտիպ յինքն նկարելով և այժմ անդրանիկն ծնունդ՝ յապաղելով գայ աշխարհ: - 785

**ՎԱՐՁ +** Նախ՝ զի ընդունայն լինէին խոստմունքն. բարեացն *վարձս* և չարեացն պատիժս: - 20. Երրորդ՝ զի կամեցաւ աստուած ո՛չ միայն ողորմութեամբ՝ այլև ըստ արդարութեան, *վարձս* նահատակութեան տացէ ըստ գործոցն համբերութեան: - 25. Զի եթէ *վարձ* նահատակութեան են այդոքիկ, ո՞ւր իցեն շնորհք: - 94. Իսկ հաւատոյն *վարձս* ընդունի և փառս: - 122. Վասն արդարութեան. զի արդարապէս *վարձս* ընդունիցին: - 149. Զի թէ այնպիսիք էին որ ո՛չ կարէին մեղանչել՝ իբր կապեալք լինէին և բռնադատեալք, և *վարձս* ո՛չ առնուին: - 149. Եւ զի առնուն մշակք *զվարձս:* - 196. Դարձեալ՝ մարդոյս միա՛յն է լինիլ յերկրէ՝ և յերկինս. և առաքինութեամբ *վարձս* ըստանալ: - 275. Զոր օրինակ *վարձ* մշակացն է՛ մինչև յերեկոյն. այլ թէ հիւանդութիւն կամ այլ ինչ դիպի, հանէ՛ ի *վարձուն* և ի մշակութեանցն: - 291. Դարձեալ՝ գիտութիւն կատարածի խափանէ՛ *զվարձս* հաւատոյ. զի *վարձքն* ի հաւա՛տն է և ո՛չ ի գիտութիւնն. վասն այն հաւատով ակն ունիմք կատարածի և ո՛չ գիտութեամբ: - 292. Նոյնպէս և մարմնական կապովն, զի ազգակից է մեզ և փեսայ հոգևոր. և ցանկամք նմա ակն ունելով *վարձուցն* հատուցման: - 318. Նա՛խ՝ զի առաւելասցին *վարձք* նորա: - 325. Նա՛խ՝ զի իրաւո՛ւնք արար վասն *վարձու* կաւագործութեանն որ էր առ նոսա: - 336. Զի՞նչ է որ հրամայէ՛ զարծաթ ի *վարձու* ո՛չ տալ: - 375. Երկրորդ՝ զի գործունեայք և հաւանօղքն այնպիսեացն պատժեսցին. որպէս ի յերկրորդ օրէնքն հրամայէ՛ սպանանել այնպիսիսն. իսկ հաստատունքն ի հաւատս՝ *վարձս* առցեն ի հաւատոց իւրեանց: - 388-389. Նա՛խ՝ զի երկիւղ ծառայիցն է, և *վարձ* մշակաց: - 403. Նա՛ և ս գերազանցեալ քան զիրեշտակս այսու, զի նոքա ի գոյացական *վարձս* ո՛չ աճիլ կարեն և ո՛չ նուազիլ. իսկ երանուհի կոյսն կարէր յառաջանալ յարդիւնս և ո՛չ նուազիլ: - 463. Երկրորդ՝ զի տացէ օրինակ համբերութեան մերոյ, զի սպասեսցուք *վարձուն* ի հանդերձեալն. և ո՛չ իսկոյն վաղափոյթ լինիլ առնուլ այժմու կենօք...: - 520. Ասեմք թէ՝ ոչ ինչ է այս նախատինք մեզ. զի հեթանոսք յետոյ հաւատացին և լաւագոյնք են քան զիրէայս. և վերջին մշակքն ընդ առաջինսն առին *զվարձս.* և որք նախանձեցան կորեան: - 549. Նա՛խ՝ զի նո՛յն *վարձն* խոստացեալ լինի և նմա. այսինքն արքայութիւնն երկնից: - 586. Տե՛ս զի բազում ասէ *զվարձս* բամբասանաց ոռչափ նախատիցին: - 586. Եօթներորդ, յերկինս ասելով՝ ցուցանէ յետ աստեա՛ցս *զվարձն* և ո՛չ ի մարմնի: - 586. Իններորդ, յերկինս է. ապա աստուած է տուօղն *վարձուց:* - 586. Իսկ կամօքն, յորժամ կամօք առնէ զաղօթքն՝ *վարձք* առնու: - 620. Յորժամ յոչ կամայ՝ ո՛չ *վարձք* և ո՛չ մեղք: - 620. նոյնպէս և սուրբքն ամենայն ի գործոց իւրեանց հանգչին և փառաւորին և սպասեն գալստեանն քրիստոսի և հատուցման *վարձուցն:* - 648. Եօթներորդ, զի **գ** են հանգիստ և *վարձք* սրբոցն. որպէս ասէ տէրն. **ճ, կ**, և **լ**...: - 675. Երկրորդ՝ ի հաւատն եղեն ապաստան. որոյ *վարձքն* հետևի. և ո՛չ ի քննութիւն մտաց...: - 687. ...բայց *վարձ* հատուցման ո՛չ կարէ ընդունիլ առանց մարմնոյն. զի ո՛չ միայն հոգւոյն է վաստակն, այլ և մարմնոյն: - 691. ...որպէս թէ այժմ ակն ունին և մնան գալստեանն քրիստոսի և *վարձուց* հատուցման: - 691. Ապա ուրեմն հոգին ո՛չ կարէ առնուլ զկատարեալ *վարձս* կամ զտանջանս: - 694. Ապա հոգին առանց մարմնոյ ո՛չ ունի ներգործութեամբ ինչ *վարձ* կամ պսակ: - 694. Քսանևէ, զի թէ ամենայն ոք առնու այժմ *զվարձս* կամ զտանջանս, ապա ո՛չ գոյ յարութիւն...: - 694. Արդ եթէ սիրելիքն աստուծոյ որք զարիւնս իւրեանց հեղին վասն քրիստոսի՝ ոչ առնուն *զվարձս* իւրեանց, նմանապէս և ամենայն ազգ մարդկան: - 694. ...և կոչելն զմահն ասէ. և *վարձ*՝ իսկոյն

զփոխարէնն: - 696. Նաև մշակ ասելն, զի հոգին առանց մարմնոյն ո՛չ ինչ է աշխատեալ. վասն որոյ և *զվարձն* հոգւոյն և մարմնոյն տայ: - 696. Նաև *զվարձն* համանգամայն եռ մշակացն: - 696. Եւ ասեն թէ մանկունք ի յանկողնի՝ են արդարքն ընդ քրիստոսի. և մէջ գիշերն է այս կեանքս. ապա ուրեմն առեալ են *զվարձս:* - 696-697. Երրորդ, զի որ քան յապաղէ՛ ժամանակն, այն քան *վարձք* հաւատոյն աճէ՛...: - 717. ...զի հաւատն *վարձք* ո՛չ ունի թէ վկայութեամբ հաստատի: - 717. Եւ ա՛յս է պատճառ յարութեանն. զի ամենայն մարդիկ առնուցուն *զվարձ* կամ զպատիժ. կամ վասն իւրեանց գործոց, կամ վասն սկզբնականին: - 724. Եւ որք մկրտեալ մեռանին, առնուն *վարձ* ի խորհրդոյ եկեղեցւոյ և ի չարչարանացն քրիստոսի յոր մկրտեցան: - 724. Երկրորդ, զի առնեն *զվարձս* վաստակոցն զոր սպասաւորեցին մարդկան: - 727. Եւ ո՞ւր արդեօք իցէ հաւատոյն *վարձ:* - 775. Եթէ յարդեան ժամանակիս հաւատարիմ է, զի որ ոք և իցէ յանցաւոր, եթէ զղջասցի և ատեսցէ զմեղս ըստ մարգարէին՝ խոստովանութեամբքն առնու զմաքրութիւն և *զվարձս* ապաշխարութեան: - 778. Իսկ թէ որ ի կեանս յայս զղջասցին ատելով զմեղս և խոստովանին, առցեն *զվարձս* ապաշխարութեան որ է՛ թողութիւն մեղաց. առանց երկբայութեան է այս: - 780. Իսկ որք զմի քանքար հաւատոյ կամ զմկրտութեանն շնորհի ի բաց կորուսանեն, ո՛չ զկնիքն խորհրդապէս, այլ զարժանն *վարձու* իրողապէս: - 783

**ՎԱՐՁԱՏՐԵԼԻ** - Ա՛րդ՝ եթէ ի կատարածի ի հարկէ սքանչելեացն հաւատալ *վարձատրելի*՞ է թէ ոչ: - 783. Եթէ *վարձատրելի* է ասիցէ ոք, ապա զիա՞րդ որք ի հարկէ հաւատացին ո՛չ վարձատրեցան. որպէս դևքն ի հալածիլ. և որդիքն սկեւեայ. և սիմոն կախարդն. և այլք նման սոցին: - 783. Իսկ եթէ ոչ են *վարձատրելի*, ապա զիա՞րդ վասն նոցա անհնազանդութեանն անհնազանդ կոչի և ինքն որդի հօր: - 784. Իսկ հաւատ ուղղակի և *վարձատրելի*՝ է՛ մարդկայինս ազգի ի ճանապարհի աստի կենաց. և չորիւք բացակատարի: - 784. Եւ են մի քան զմի առաւել գերագոյն սոքա և *վարձատրելիք:* - 785. Արդ որպէս յամենայն ժամանակս սոքօք գան ի հաւատս ուղղութեան և է՛ *վարձատրելի*. այսպէս և ի վերջին ժամանակս որք յետ նեռինն՝ ո՛չ միայն ի հարկէ սքանչելեաց, այլ և ի լրոյ քարոզչաց երկուցն վկայից իջելոց սրբոց: - 785

**ՎԱՐՁԱՏՐԵՄ +** Երկրորդ, զի հաստատուն մնասցեն հաւատացեալքն և *վարձատրեսցին:* - 336. Երրորդ՝ զի *վարձատրեսցուր* հաւատով. այլ հաւատն ի յանէրևոյթն է որ է՛ գոյացութիւննն...: - 597. Եթէ վարձատրելի է ասիցէ ոք, ապա զիա՞րդ որք ի հարկէ հաւատացին ո՛չ *վարձատրեցան*. որպէս դևքն ի հալածիլ. և որդիքն սկեւեայ. և սիմոն կախարդն. և այլք նման սոցին: - 783. Եթէ վարձատրելի է ասիցէ ոք, ապա զիա՞րդ որք ի հարկէ հաւատացին ո՛չ *վարձատրեցան*. որպէս դևքն ի հալածիլ. և որդիքն սկեւեայ. և սիմոն կախարդն. և այլք նման սոցին: - 783

**ՎԱՐՁԱՒՈՐ +** Յա՛յտ ուրեմն է յասացելոցս, զի դևք ո՛չ ունին հաւատս *վարձաւոր*. այլ ունին գիտութիւն նրբահայեաց որով սարսին յառաջ քան զտանջանս: - 784. Արդ ծունր կենդանեաց *վարձաւո՛ր* է. և մեռելոցն ո՛չ: - 785

**ՎԱՐՁԱՒՈՐԵԼԻ** - Որք դարձուցեն զսիրտ հարց յորդիս ըստ մաղաքիայի. այսինքն ուսուցանեն զհաւատն փրկչին զոր հարքն ունէին. և է՛ *վարձաւորելի* և կարի քաջ. և թէ այսպէս և թէ այն՝ քրիստոսի քարոզի: - 785

**ՎԱՐՁԱՒՈՐԻՄ +** Այլ զանազանի. զի դևք ամենևին ո՛չ ունին զղջումն և ոչ կարեն. վասն որոյ ո՛չ հանդիպին թողութեան. իսկ մեղաւորն ունի զղջումն այլ ո՛չ կարէ *վարձաւորիլ:* - 780

**ՎԱՐՁԿԱԿԱՆ** - Եւ հոգւովն *վարձկականն* վասն խոստացեալ բարեացն: - 396. Եւ կատարեալ՝ *վարձկականն* վասն պատուոյն: - 576. Երկրորդ՝ յորժամ սիրեմ զաստուած վասն իմ. այս է *վարձկականն:* - 576

**ՎԱՐՁԿԱՆ +** Եւ կապ կարեաց որպէս *վարձկանաց:* - 317. Երկրորդ՝ արուեստաւորք, և մշակք, և *վարձկանք:* - 375. Միջինն *վարձկանաց:* - 381. Երրորդ՝ ծառայք և *վարձկանք* հրամանաւ տէրանց: - 389

**ՎԱՐՇԱՄԱԿ +** Խոյրն, *վարշամակն*. և Միթրն և թիթեղն ոսկի, պատկերք սրբոցն նկարեալ. և երկոքին Բազպանն, փոխանակ անդրավարտեաց: - 348. Վասն մարիամանցն և *վարշամակին:* - 455. Զի՞նչ է *վարշամակն* ծալեալ և կտաւն ո՛չ: - 517. Ծալեալ *վարշամակն* նշանակէ զաստուածութիւնն որ գլուխ է. և կտաւն զմարդկութիւնն: - 517. Եւ սոքա ամենայն ստուգե՛ն զյարութիւն նորա թէ ո՛չ է գողացեալ. զի գողն ո՛չ ծալէր *զվարշամակն* և զկտաւն զըմռեալ: - 517. Ա՛րդ՝ եթէ ի հասարակ ժողովրդենէ իցէ ննջեցեալն, հանեն զհին հանդերձն և պատե՛ն սուրբ կտաւովք և զգլուխն փակեղամբ

և *վարշամակօր*, և օդ յոտս: - 671. Փակեղն և *վարշամակն* ի գլուխն, որպէս սաղաւարտ: - 674. ...զոր նշանակէ մանր *վարշամակ* վառին: - 676. Յօրինակ լուսեղէն ամպոյն վառն, և փոքր *վարշամակն* ցոլմունք լուսոյն: - 732

**ՎԱՐՍ(Ք) +** Ութերորդ՝ քերօբէիցն. որ են *վարսք* հրեղէնք: - 144. Ա՛րդ՝ Կիպարին զանուշահոտ *վարս* նշանակէ. և Արմաւենին զպտուղ արդարութեանն: - 495. Եւ գիտելի է, զի յետ օծանելոյն զգեցուցանեն զհանդերձս պայծառ. որ զլուսաւոր *վարս* և զպայծառ հաւատս և զանմեղութիւնն նշանակէ: - 594. Խունկ յռնգունքն, զանուշահոտ *վարս* նշանակէ: - 671

**ՎԱՐՍԵՄ +** Այլ և ցիցն ի ձեռին յայտելի զոր *վարսեաց* ընդ ծամելիսն սիսարայ: - 494

**ՎԱՐՔ +** Եւ եերորդ՝ ո՛չ ևս թզենեաւ՝ այսինքն դառն *վարուք* ստուերանալ. զի տերև թզենւոյն դա՛ռն է և փշոտ ըստ մեղացն առակի: - 281. Զի տղայ մանուկ երթեալ ո՛չ ոք գիտէր զնա. և ո՛չ նա զոք ճանաչէր զի քանանացի՛ էր և աննման *վարուց* նոցա: - 300. Իսկ աստեղք՝ ծնունդքն իսահակայ պայծառ *վարուք* և երկնընթացք որպէս մարգարէքն՝ քահանայքն՝ և ընտրեալ թագաւորք՝ և այլքն: - 303. Երկրորդ՝ նահապետք և մարգարէք կոչին լերինք և բլուրք մշտնջենաւոր *վարուք* և անշարժ աստուածապաշտութեամբ: - 319. Եւ անապական *վարուք* ոսկէզարդեալ ունի յինքեան զերկուս կտակս: - 345. Գլուխ՝ զմիտքն նշանակէ. և Ոտք *զվարքն:* - 360. Որոճօղն՝ քննօղ իմաստութեան. և կճղակն ուղիղ *վարք* հոգւոյ և մարմնոյ. սուրբ են: - 364. Այսինքն յորժամ խոստովանին և փոխին յապաշխարութեան *վարս*, պատառեն զմեղս և սրբին ի գործեցեալ մեղացն: - 367. Ութերորդ՝ ոտնաբեկ. յընթացս *վարուց:* - 370. Եւ կէսն զնոսա, որք ունին թերութիւն ինչ ի հաւատս կամ ի *վարս* ինչ և յուսմունս: - 391. Ոսկի անբիծ հաւատն. և ակն *վարք* պատուական. և խունկ աղօթից: - 441. Եօթներորդ՝ առաքինութեան *վարք:* - 444. Ներքինն զարի և ժուժկալ *վարս* համբերութեամբ ստանալ զհոգիս: - 493. Նախ յերկրի՝ արդեամբք բարի *վարուց:* - 520. Ասեմք, եթէ որք ի հաւատս ունին թիւրութիւն. որպէս հերձուածօղք և վնասիչք եկեղեցւոյ. և որք ի զազիր *վարս* պղծեալ են գործովք և վնասեն զինքեանս. և անզեղջք են առ երկոսին. յետ մի անգամ և երկիցս խրատելոյ, որոշեսցին յեկեղեցւոյ և պատժեսցին: - 540. Զի անուշահոտ *վարուք* հաճոյ եղեն աստուծոյ. և բուրմամբ աղօթից բարեխօսե՛ն վասն մեր: - 628. Իսկ ի պահս ո՛չ խունկ և ո՛չ օրհնութիւն. զի ընդ ապաշխարութեամբ եմք, ո՛չ իշխեմք գոհանալ և ո՛չ ունիմք անուշահոտ *վարս:* - 628. Արծաթ՝ մաքուր *վարքն:* - 645. ...որ նշանակէր զհանգիստ և *զվարս* սրբոցն: - 647. ...և մեզ պա՛րտ է սրբութիւն սրտի և *վարուց*...: - 658. ...ցուցանէ թէ անուշահոտ *վարուք* և խրատու աւետարանին ընթացաւ զկեանս իւր: - 674. Հինգերորդ, զի **գ** է հասակ մարդոյս. մանկութեան երիտասարդութեան և ծերութեան յորում փոփոխիմք *վարուք*. վասն սոցա **գ** հանգիստ դնեմք: - 675. ...այսինքն ո՛չ դառնայ յայժմու *վարս* աշխարհի և ո՛չ ապաշխարել կարէ ասէ մեկնիչն: - 699. Այլ և ծաղիկ՝ զպայծառ և զանուշահոտ *վարս* առաքինութեան. և պտուղ՝ արդիւնքն ըստ գործոց. յորմէ փրկութիւն եղև ամենայն աշխարհի և վայելչութիւն արքայութեանն երկնից: - 768

**ՎԱՒԱՇՈՏ կմ ՎԱՎԱՇՈՏ +** Նախ ասեմք թէ՝ թագաւոր էր այր կերօղ և արբեցօղ և *վաւաշոտ*. զի՞նչ իցէ ի համար բան նորա. թէպէտ կարի ասել ո՛չ կարեմք: - 40. Զի որպէս ի մեղանչել հոգւոյն ապականեցաւ մարմինն ադամայ և եղև դիւրասահ առ *վավաշոտ* ցանկութիւնն. այսպէս և սերեալ մարմինն քարշելով ընդ ինքեան զապականութիւնն՝ աղտեղացուցանէ զհոգին: - 567

**ՎԱՎԱՇՈՏՈՒԹԻՒՆ +** Բղջախոհութիւն է ցանկութիւն յամենայն ժամ լնուլ *զվավաշոտութիւնն:* - 570

**ՎԵՀ +** Զի այսպէս ուսաք ի սրբազան *վեհէն* մերմէ ըստ սրբոցն աւանդութեանց. թէ ամենայն իր որ բնութեան է պարզև, ան'ի բաց դնելի՛ է ի նմանէ: - 782

**ՎԵՀԱԳՈՅՆ +** Տասներորդ՝ և որ *վեհագոյնն* է. զի ապարանք և հանգիստ է միայն աստուծոյ պատշաճեալ: - 184. Ուստի և *վեհագոյն* իմացութեանց էից սերովբէն զքօղեալ զերեսս և զոտս մարդեղութեան խորհրդոյն պարուրեալ: - 456. *Վեհագոյնն* ստորնագոյն: - 470. Երկրորդ, որպէս չորք կենդանիքն *զվեհագոյնս* և զնախամեծարս երկնայնոցն ցուցանեն. նոյնպէս և **իդ** երիցունքն զնախամեծարս ընտրելոցն մարդկան...: - 711. ...որք աստիճանաւ *վեհագոյնք* են քան զհասարակաց արդարս. որպէս աբէլ, և առաքեալքն. և մարգարէքն. և այլք: - 711. Երրորդ, որպէս **իդ**ն բազում է քան զչորսն. նոյնպէս կարծի *վեհագոյնքն* ի մարդկանէ բազում գոլ քան *զվեհագոյնս* երկնայնոցն: - 711. Ոչ ունիմք *վեհագոյն* քան զհաւատն. տիպ աստուծոյ ճշմարտի դրոշմեալ ի մեզ ի բնէ. մեր հրահանգ և զարդ: - 769. Որում Գոհացողական Օրհնութիւն. և Բարեբանօղ Փառատրութիւն. Յամենայն գոյեղէն բնութեանց. ի *վեհագունից* մինչ ի հուսկ յետինս: - 771

**ՎԵՍԴԻԱՑԻ** - Եւ այս են **իբ** լեզուքն: ...*Վեսդիացիք:* - 298

**ՎԵՐ, Ի ՎԵՐ +** Սիա և այսու *ի վեր* է նա. զի յէակցէ հոգւոյ իւրմէ՝ և ի բնութեամբ հօրէ: - 95. Ո՞չ ապաքէն *ի վեր* ասեմք զմարդն անուն կենդանի մարդոյն՝ քան թէ գրեցելոյն: - 95. Երկրորդ՝ որպէս աչք հայելով *ի վեր*՝ հեշտանայ զի վերընթա՛ց է լոյսն: - 104. Իսկ ի ներքուստ *ի վեր*՝ ի բազմութենէ առ միննն ընթանայ. որպէս խորհրդական աստուածաբանութիւնն արտաքոյ թողեալ զբազումութիւն էից և ի միննն ընթացեալ, որ ամենեւին անբանութիւն է և անիմացութիւն. անճառելի. անիմանալի. և լռութեամբ պատուի յամենայն արարածոց: - 123. Իսկ պատահական տեղի է, յորում նեստեալ ոք՝ կարէ՛ թողուլ զայն և լինիլ յայլ տեղւոջ. որպէս *ի վեր* կամ ի վայր: - 174. Արդ՝ ներքին հողմն *ի վեր* ձգէ զերկիր. և վերին հողմն ի վայր. և այսպէս ի մէջն հաստատ մնայ երկիր: - 181-182. Երրորդ՝ ծանրութիւն երկրիս ի վայր հակէ. և բռնութիւն հողմոյ *ի վեր:* - 182. Յինգերորդ՝ երկինքն թեթև է *ի վեր* քարշէ. և երկիրս ծանր ի վայր հակէ. և այսպէս մի զմի հաստատուն պահեն: - 182. Վարդապետք ասեն. որպէս սուրբն բարսեղ՝ թէ որպէս երկբերանի քսա՛կ է լուսինն. ընդ միննն ելանէ և *ի վերի* թիկունքն ժողովի և պակասի ի մէնջ լոյսն. և ի միւսն ի ներքս մտանէ և լուսաւորէ՛ զմեզ: - 187. Չորրորդ՝ զի *ի վեր* տեսցուք աչօք. և մտօք զվերինն խորհիմք...: -188. ...և Յրոտից, ըստ դրութեան է. զի հո՛ւր է ոտիցն որ այրէ՛ ներքուստ *ի վեր* ջերմութիւն արեգականն: - 201. Ի վերուստ բախէ՛ և ի *վե՛ր* բարձրացուցանէ: - 202. Իսկ Ցօ՛ղ է գիճութիւն ի պարզոյ իջեալ. զոր աստեղք ի գիշերի քարշեն *ի վեր*. և ընդ ծագել առաւօտուն՝ յետ ի յերկիր անկեալ մանրամասն շիթ: - 204. Չորեքտասաներորդ՝ ջուրն օդով *ի վեր* ընթանայ, և հողմով անձրևի՛ յերկիր: - 207. Որպէս ի մէջ երկրի գոն երակք ջրոց, նոյնպէս և հողմոց, ուստի *ի վեր* փչեն: - 208. Նա՛խ՝ զի ի ձմեռն ջերմութիւնն ի սիրտ երկրի ժողովի. և յամառն *ի վեր* յերես սփռի: - 208-209. Երրորդ՝ զի ջուրք ծովուն բա՛րձր է քան զերկիր. վասն որոյ հա՛րկ առնէ և *ի վե՛ր* մղէ և ապա՛ հեղու յերկիր. զորօրինակ մարդիկք ի բարձրագոյն լերանց իջուցանեն զջուրն, և ըստ նոյն չափոյ ի միւս կողմն *ի վեր* հանեն սակաւ ինչ պակաս: - 209. Չորրորդ՝ ցոյցք է ամենահրաշ խնամոց արարչին. որ զհոսանուտ ջուրս ներքին՝ ի մէջ լերանց *ի վե՛ր* հանէ ի պէտս կենդանեաց որ ա՛նդ են. այլ և յոռոգումն ուր գետք ոչ ելանեն: - 209. Նա՛խ՝ զի օդն վերընթա՛ց է և քարշէ՛ *ի վեր* և աճէ: - 213. Երրորդ՝ զի կարօ՛տ է երկնային մարմնոցն. վասն այն *ի վե՛ր* ընթանայ: - 214. Չորրորդ՝ ցուցանեն զստեղծօղն իւրեանց յերկինս գոլ. վասն այն *ի վե՛ր* ճեպին: - 214. Զի մարդն ունի զգլուխն *ի վեր* որպէս երկինքն. և զոտքն ի վայր որպէս երկիրս. վասն որոյ ամենայն ծորմունք բնականապէս զառիվա՛յր հոսին. իսկ ծառն ծռեալ ունի զգլուխն ի վայր, և զոտսն *ի վեր*. կամ թէ ծռեա՛լ ունի զոտս և զստեղունս յայս կոյս և յայն կոյս: - 214. Նմանապէս և կոչին փայտ. զի ի փտելոյ և յապականելոյ գոյանան այսպէս. յորժամ բորբոսի երկիր՝ նա՛ զարմատն ի վայր արձակէ և զբոյսն *ի վեր:* - 214. Ո՛չ թէ քան զտարրական հուրն *ի վե՛ր* է անցեալ. այլ զի լուսինն և արեգակն միշտ ի հարաւոյ կողմանէ ի ստորոտէ լերինն ելանեն. և ի հիւսիսոյ կողմն լերինն միշտ գիշեր լինի. որպէս աղէքսանդրու պատմութիւնն ասէ. և ի գլուխն միշտ լոյս. և ի հարաւոյ կողմն տիւ և գիշեր: - 222. Եօթներորդ՝ Տես աչացն հաստատէ՛ զլուրն. և *ի վեր* նայիլն հեշտանայ: - 227. Իսկ մարդս ուղիղ *ի վեր:* - 233. Իններորդ՝ *ի վեր* է գլուխն, զի լեզուն և ձեռն սպասաւորեսցեն բանի և գործոց: - 233. Տասներորդ՝ զի կիրք մարմնոյն հեղուն ի հոգին. որպէս յորժամ մարմինն ննջէ՝ և հոգին թմրի և անգործ մնայ. վասն որոյ արարաւ ձևն ուղիղ, զի միտքն ընդ նմա՛ ուղղեսցի *ի վեր* առ աստուած...: -233. Այլ և ի միտ ածցուք զփառս երկնային կենաց ուստի անկաք, և անդ դիմելոց եմք. զի տեսութիւն մտացն զհոգին ընդ ինքեան *ի վեր* տանի...: - 233. Եւ ձուկն ի ջուրն՝ փոր *ի վեր* շրջի: - 234. Զինչ է յորժամ մարդ *ի վեր* նայի հեշտանայ աչքն. և յորժամ ի վայր՝ դժուարի: - 239. Եւ ի **իա** աւուրցն *ի վեր*՝ երևեալ շնչոյն ձևակերպէ՛ զկերպ մարդոյ մինչ ի **խ** օր արու մանկան...: - 261. Եւ այսպէս ի ներքուստ *ի վեր* կրկնեալ եօթնից որ է չորեքտասան, կատարի ցանկական մասամբն և կարէ՛ զնմանն ծնանիլ և կոչի մանուկ: - 264-265. Եւ մտանէ ի կարգ զինուորաց. վասն որոյ մովսէս **ի ի** ամենիցն *ի վեր* թուէր զզինուորսն: - 265. Երրորդ՝ զի ո՛չ հայէր *ի վեր*. երկաթի կապիճս եդեալ ի գլուխն: - 290. Եւ վեցակողմն, զի մարմինն եռակի տարրո՛շ է. ունի *վեր* և վայր. յետ և առաջք. աջ և ահեակ: - 293. Վեցերորդ հարուածն է՛ կեղն և խաղաւարտն. զի քերքեշէ՛ր զմորթն, և *ի վեր* եռացեալ լինէր խաղաւարտն. և մորմոքէր զմարմինս նոցա: - 334. Եւ կաւագործութիւնն խստացաւ ի մովսիսի **իբ** ամէն *ի վեր*. որ լինի **ծթ** ամ խիստ ծառայութիւն նոցա: - 337. Իբր թէ զսուսա *ի վե՛ր* բարձրացուցի և ի սէր սրտի իմում ունիմ: - 348. Իսկ այլք ի **դ** բաժանեն ըստ չորից տարերաց և **դ** պահու գիշերոյն. որպէս ասացաւ *ի վերն* **ժզ** գլուխն **իզ** համարն: - 378. Յայիլն ներքուստ *ի վեր*. ըստ այնմ «հայեցայ ի բարձունս»: - 407. Երկրորդ՝ զի միայն մովսէս կոչեցաւ աստուած. և ո՛չ անուամբ միայն, այլ և գործով իշխէր ի վերայ տարերաց *ի վեր* և ի խոնարհ. վասն այն աւագ օրհնութիւն

կոչի: - 407. Նմանապէս և աստ յայսմ աւուր շաբաթու որ ի կիրակէ յարութեան տօնեմք, այժմ յինն ժամուն *ի վեր* նախատօնակ առնեմք յարութեանն քրիստոսի. և այս վասն բազում պատճառի: - 509. Եւ որ ոք ո՛չ խոստովանի զքրիստոս աստուած, զտօն նորա ըստ հասարակ մարտիրոսացն առնէ ի մէջ գիշերոյն *ի վեր:* - 509. Չորրորդ՝ վեց են շարժութիւնք մարմնոյ. այսինքն *վեր* և վայր. յաջ և յահեակ. յառաջ և յետ: - 560. *Ի վեր* շարժումն է հպարտութիւն և փառասիրութիւն. զի յատուկ է սոցա ի վերամբարձումն: - 560. Իսկ վեցերորդ կոչին մակստացականք. այսինքն *ի վեր* ստացեալ աշխատութեամբ. որք հետևին միմեանց իբրև զչարս շղթայից: - 582. Արդ մարմնոյ ազգն բաժանի յերեք դէմս. *ի վեր*, ի վայր, և ի կողմն: - 611. *Ի վերն* այսպէս: - 611. Երկրորդ՝ մեղքն ի հոգւոյն և ի մարմնոյն *ի վեր* ելանէ. իսկ արտասուքն վերուստ ի վայր հոսի և կորուսանէ՛ զնա: - 619. Ո՛չ միայն զգլուխս բանամք, այլ և զձեռս համբառնամք *ի վեր*. որպէս և յովսէփ ասաց: - 635. ...և Պռօսխումէն՝ յունա՛ց է. որ է՛ ի *վե՛ր* նայեցէք: - 645. Այլ տօն նոցա է վաղն ի մէջ գիշերոյ *ի վեր:* - 647. ...վասն որոյ ի մէջ գիշերոյ *ի վեր* սկսանի տօն նախատակութեան նոցա: - 647. Զի յառաջն զսոսա լուծանէին որք յառաջաւորացն *ի վեր* պահէին **ի** օր: - 651. ...նա զձեռն *ի վեր* առեալ գոհանայ զաստուծոյ. նմանապէս թէ պատմի վասն վախճանի ուրուք: - 659. Եւ վասն յերկարութեան կենաց, և վասն ո՛չ գիտելոյ զօր մահուն և զկատարածի, ասացեալ է *ի վերն* առ նախապետսն ի **դ** համարն: - 665. ...վասն որոյ որպէս ի մկրտութիւնն ուղիղ մկրտիմք գլուխ *ի վեր* և ոչ ի վայր որպէս արիոսեանք: - 676. Իսկ *ի վեր* կոյս ունել զերեսս մեռելոյն...: - 676. Նա՛խ՝ նշանակէ զակնարկութիւնն *ի վեր* առ աստուած ունիլ: - 676. Կրկին ասեն զշաւիղս ընթացից հոգւոց. այսինքն մինն *ի վեր* յերկինս, և միւսն ի ներքոյ երկնից: - 688. Եւ թէ վասն է՞ր ոչ գիտեմք զկատարած աշխարհի և զկենաց մեր, գրեալ է *ի վեր* անդ առ նախապետսն ի **ժը** գլուխն ի **դ** համարն: - 718. Նստի քրիստոս ի բարձրագոյն աթոռ ի վերայ օդոյդ, և սուրբքն ընդ աջմէ. այսինքն *ի վեր* ի փառս ընդ նմա ի վերայ օդոյդ. հաւատոյ և գործոյ քաջո՛քն բարձրացեալ իբր զարծուի: - 738. Դարձեալ որպէս *ի վեր* անդր ի հրեշտակացն՝ բանն յերիս որոշեցաւ. այսինքն է՛ բան մտաց և բան լեզուի և բան գործոյ: - 739. Ոտք *ի վեր* ուղղեալք, և ի տանջանս ամենայն ուստէք ծկտեալք: - 753. Իսկ վասն տեղեաց դժոխոցն ասացեալ է *ի վեր* անդր **լ** գլուխն, **իը** համարն: - 754. Դարձեալ *ի վեր* յառաջին բանն մեր երթիցուք որ էր ծառ կենաց ի մէջ դրախտին: - 767

***Ի ՎԵՐ ՔԱՆ, Ի ՎԵՐ Է ՔԱՆ +*** Նախ՝ զի սքանչելեօք է. որոյ սահմանն անգիտելի է, և *ի վեր բան* զբնութիւն: - 77. Նախ զնիւթն զմի բնութիւն նիւթական որպէս մարդ. և զմիւսն բնութիւն աննիւթ որպէս զաստուած. զՁնն՝ զմինն քանակութեամբ և որակութեամբ տարբերեալ որպէս մարդոյ. և զմիւսն *ի վեր բան* զկերպ և զձև որպէս աստուծոյ: - 87. Իսկ *ի վերն բան* զամենայն անուն. թէպէտ և անուանեին և յետու՝ և օծեալք բազումք ի հինն և ի նորս: - 95. Այն որ նըւաստացոյց զինքն ի յունայնութիւն մարդկան, եղև ի կերպ ծառայի՝ և գործով և կրիւք և նմանութեամբ մարդկան. և կերպարանօք գտաւ մարդ. զի *ի վեր էր բան* զմարդ՝ և քան զկերպարան մարդոյ: - 93. Եւ վերին խոկմամբ՝ որ *ի վե՛ր է բան* զմեզ՝ ըստ կարողութեան լուսաւորիմք ճառել զանճառէն: - 103. Յայտ ուրեմն է, զի որ *ի վեր է բան* զէութիւն, *ի վե՛ր է բան* զգիտութիւն: - 103. Երրորդ՝ թիւն ընդ գիտութեամբ մեր է. իսկ աստուած ընդ գիտութեամբ մեր ո՛չ պարունակի որպէս ասացաք.ապա ուրեմն *ի վեր է բան* զմի և զմիակ: - 110. Իսկ միտքն աստուծոյ *ի վեր է բան* զժամանակ. վասն որոյ ներկայաբար զանցեալն և զհանդերձեալն տեսանէ: - 117. Վեցերորդ՝ այն է՛ արւեստ ըստ բնութեան կարգի. և այս նշան *ի վեր բան* զբնութիւն: - 133. Զամենայն հրեշտակս բարի արար աստուած, այլ ո՛չ ծայրագոյն բարիս. այլ միջակս. որ է ի մէջ անփոփոխ և փոփոխական բարւոյն. այնպէս՝ զի թէ դառնային և սիրէին զայն՝ որ *ի վեր բան* զինքեանս, ելանէին յորպիսութիւն շնորհաց և փառաց. որպէս այժմ են հրեշտակք բարիք: - 146. Նմանապէս և արարիչն. այլ նա՛ պարզ և *ի վեր բան* զձեռակերտս յարացուցին: - 236-237. Երկոտասաներորդ՝ անճառ և անպատո՛ւմ է աստուած. և հոգւոյն միացումն ի մարմնի *ի վեր է բան* զբան: - 272. Դարձեալ՝ մա՛րդն ամբառնայ զինքն իմացականաւն *ի վեր բան* զաշխարհս: - 274. Իններորդ՝ և մարմնական որդի էր դաւթի ըստ կարգի հասարակ մարդկան. իսկ քրիստոս ակնկալութեան և աւետեաց և *ի վեր բան* զկարգ բնութեան աստուած մարդացեալ: - 442. Զայս հատուցանել *ի վեր բան* զարժանն. և պատժել սակաւ քան զարժանն: - 459. զի զնոսա փառաւորէ *ի վեր բան* զարժանն. և զսոսա պատժէ սակաւ քան զարժանն. այսորիկ ողորմութեանն են: - 459. Երրորդ՝ զի մի՛ իցէ ըստ հասարակաց կարգի. այլ *ի վեր բան* զբնութիւն որպէս ասացաւ: - 470. Այլ տեղի փոխման կուսին *ի վե՛ր է բան* զամենայն դասս հրեշտակաց: - 519. այսինքն է որ *ի վեր բան* զիրամայեալ օրէնսն կատարեցին զգործս. որպէս առաքեալքն, մարգարէքն, մարտիրոսքն, կուսանքն, և այլքն: - 687. Ո՞ հա՛յրդ ես որոց *ի վեր բան*

զերկինս. այսինքն հոգւոց սրբոց կատարելոցն որ *ի վերեն թան* զդասս հրեշտակաց մեծ քրիստոսի որպէս քահանայք առ քահանայապետ, և անդամք առ գլուխն. և որդիք առ հայր: - 688. Որք *ի վեր քան* զօրէնս գործեցին. որպէս առաքեալք, մարգարէք, մարտիրոսք, կուսանք, և այլք: - 739. Այլ և յորժամ *ի վեր քան* զչափն պատուէ զուրբս, և ի վայր քան զչափն պատժէ զմեղաւորս: - 746. Իսկ որք տեսչութեամբն աստուծոյ ընկալան զթերակատարն յարութիւն, *ի վե՛ր է քան* զբնութիւն. զի «ոգի որ ելանէ՝ այլ ոչ դառնայ» մինչ նորոգին վերստին: - 775. Զի զնոսա փառաւորէ՛ *ի վեր քան* զարժանն, և զնոսա դատապարտէ՛ սակաւ քան զարժանն. և է՛ այս ողորմութիւն: - 779

***Ի ՎԵՐ ԵՒ Ի ՎԱՅՐ*** + Այլ և քարինք բազումք էին *ի վեր և ի վայր*՝ բաց ի յունաց յոր անցանէին. որ կրթեալ և սրբեալ էին: - 415

**ՎԵՐԱԲԵՐԵՄ +** Զի մեք որ ի նեղութիւնս և ի փորձութիւնս ժուժկալեմք աղաչանօք. իսկ մեր մաղթանքն նմա՛ *վերաբերի:* - 48. Սոյնպէս և զգիտութիւն մեծագունիս ի պատճառն ի հայր *վերաբերէ* ի պատիւ ծնողին: - 48. Երկրորդ՝ պաշտօն որ յաստուած *վերաբերի*՝ միայն աստուծոյ պատշաճի...: - 57. Այլ զօրութիւնս այս *վերաբերի* ի հոգին սուրբ...: - 57. Իսկ պօղոս զբանս զայս *վերաբերէ* ի հոգին սուրբ...: - 58. Այլ այս *վերաբերի* առ հոգին սուրբ...: - 58. Եւ թերևս ասիցէ երկաբնակն թէ՝ սոքա ամենեքեան անձինն *վերաբերին* քրիստոսի և ո՛չ մարդկութեանն: - 98. Երկրորդ՝ զի աթոռքն *վերաբերին* ի դէմս հօր...: - 135. Կամ ի յերկրի պատառմանէն ուժգին *վերաբերեալք* լինին: - 206. Յամբարձումն *վերաբերի* առ քրիստոս յատուկ զօրութեամբն իւր: - 519. Յինգերորդ՝ համբարձաւ զուարճութեամբ. որ *վերաբերի* առ նոսա որք փրկեցան ի դժոխոցն...: - 520. Վեցերորդ՝ համբարձաւ ձայնիւ փողով ըստ դաւթի. և այս *վերաբերի* յառաքեալսն...: - 520. Նա՛խ՝ աստուածային ասին՝ զի երեքին սոքա յաստուած *վերաբերին:* - 571. Յորոց եօթն *վերաբերին* առ աստուածութիւնն. և եօթն ի մարդեղութիւնն քրիստոսի: - 572. Եւ այս երեք վերջին աստիճանքս *վերաբերին* առ աստուածութիւնն: - 573. Չորրորդ, զի բարեաց պատճառ զաստուած իմանամք և ի նա՛ *վերաբերեմք:* - 626. Վեցերորդն է անչարչարութիւնն. առ որ անմահութիւնն *վերաբերի*...: - 767. Որպէս և ոմն ի Պետաց մերային ազգաց՝ զհաւատն դրուատեաց ասելով, Յաւատ ի հօրէ սկսեալ յորդի և ի հոգի *վերաբերի:* - 769

**ՎԵՐԱԳՈՅՆ +** և Տեսանելիքն հրոյն՝ *վերագոյն* ամենեցուն: - 215. Եւ ի համբառնալն կալան հրաման *վերագոյն*. առաքելով զնոսա ընդ տիեզերս: - 607. Վասն այն մինչ յայս ամուսնանալ կարեն. և ի հինգն ելեալ *վերագոյն* դասուց՝ ո՛չ ամուսնանան: - 609. Է և ա՛յլ իմն տեսութիւն *վերագոյն*. զի արարողութիւն սրգոյս ցուցանէ զառաջին անկումն մեր ի լուսեղէն կենացն ի խաւար աշխարհ տրտմութեամբ և ցաւօք մահու մեռեալք և ի հող դարձեալք. և այս ի ճաշակմանէ պտղոյն: - 670. Երկրորդ, միտք հոգոյն և մարմնոյն. զորմէ ասէ ի մատթէոսն՝ «լե՛ր իրաւախոհ ընդ ոսոխի քում վաղագոյն մինչ դեռ իցես ընդ նմա ի ճանապարհին» որպէս ցուցաւ *վերագոյն:* - 743

**ՎԵՐԱԳՐԵՄ +** Իսկ որք զբախտ և զճակատագիր *վերագրեն* մարդկան, և զամենայն ինչ մեր ի հարկէ ասեն, այսինքն ի զօրութէ աստեղացն - 10. Ասելով թէ պատճառ ամենայնի՝ բարեաց և չարեաց մերոց ո՛չ մեք եմք, այլ է՛ առաջին պատճառն աստուած. որք փախչելով յառաջ ասացեալ բախտէ՛ և ճակատագրէ՛ աստեղացն, փոխանակ նոցա յառաջին պատճառն *վերագրեն* զհարկն. որպէս զի մի՛ ասիցեն երկու սկիզբն ըստ մանիքոսի: - 13. Այսպէս և զանհնազանդութիւնս մեր. զոր ոմանք ուրացութեամբ և կէսք ախտիւ՝ իւրն *վերագրէ* գլուխ գոլով անհնազանդ անդամոցն: - 42

**ՎԵՐԱԴԻՐ +** Օր, ամիս, և տարի և շաբաթ, և ժամք, *վերադիր*, և բոլոպէք, ոլոմպիադ, և այլն: - 154. Իսկ *վերադիրն* լինի ի պակաս ընթացից լուսնոյն ըստ այսմ օրինակի: - 191. Զոր յամենայն ամի **ժա** թիւ ի վերայ լուսնոյն դնեմք, զի հաւասարեսցի արեգականն, և կոչեմք *վերադիր:* - 191. Ա՛յդ է *վերադիրն:* - 191. Եւ ա՛յն է որ յամենայն ամի յաւելումք ի *վերադիրն:* - 191. Եւ դարձեալ՝ յորժամ *վերադիրն* լինի **լ**. և **է** երեակն է ի միասին ի միում ամի. ասի այն կատարումն լուսնի. այսինքն մասանց թուոյն, և ո՛չ իրին: - 192

**ՎԵՐԱԾԵՄ +** Վերընթաց: *Վերածօղ:* Մշտաշարժ: Ինքնաշարժ: Շարժօղ: Անփոփոխ: Սո՛ւր: Զգո՛յշ: Անշե՛ղ: Անթոյլ: Անպարունակ: Թափանցիկ: Աներևոյթ: - 202. Նաև փայտն որով զերկաթն ի յորդանանէ՛ *վերածեաց:* - 494.

**ՎԵՐԱԾՆԵՄ +** Տասներորդ՝ բազմամա՛յր եղև սառա ըստ նախապետացն. բազմամա՛յր է և կոյսն ըստ հաւատացելոցն. բազմամա՛յր է և եկեղեցի ըստ *վերածնելոցն*. «զի բազումք են որդիք սկնդկիդ առաւել քան զարամբւոյն» ասէ: - 307

**ՎԵՐԱԿԱՑՈՒ +** Երկրորդ՝ զի սէրօբէն բորբոքէ ի սէրն որ է անմիջոց կապ. և քերօբէն ի ճանաչումն ճշմարտութեան. և աթոռքն ի յուղղութիւնն. և նոքա են *վերակացուք* դատաստանի իրաւանց: - 135. Ասեն

աստեղագէտք եթէ՝ **է** դարուց կեցաղոյս *վերակացուք* են **է** աստեղքն որք կոչին մոլորակք: - 291. Եւ իշխանք *վերակացուք* գործոյն՝ Լամսուր ի սեմա՛յ ազգէն: - 297. Եօթներորդ՝ անդրանիկք են իշխանք հոգևորք, *վերակացուք* և խնամողք այլ հոգւոցն. որպէս քահանայք, ուսուցիչք, և այլք. վասն որոյ երիցունք կոչին: - 309. Ութերորդ՝ անդրանիկք են ըստ մարմնոյ *վերակացուք* և տեարք. որպէս թագաւորք, և իշխանք. նոյն և առաջին ծնունդք ելեալ յարգանդէ՛: - 309. Եօթներորդ՝ ոմանք մարմին մովսէսի զօրէնսն ասեն. զոր ի բերելն հակառակէր սատանայ, խոտան և անարժան գոլ ժողովրդեանն. վասն որոյ միքայէլ *վերակացու* ժողովրդեանն հալածէր զնա: - 410. Նաև *վերակացուք* նոցա **գռ** և **զճ**: - 440. Զի հրեշտակապետն հրեշտակօք իւրովք *վերակացո՛ւ* է ազգի. - 713. Դարձեալ՝ որ հրոյ է *վերակացու*, ի վերայ նորին հարկանէ. և որ օդոյ և ջրոյ և երկրի, ի վերայ իւրաքանչիւր տարերաց գոչէ՛: -714

**ՎԵՐԱԿՈՉԵՄ +** Երկրորդն է պատճառաբանական. որ ի պատճառելեացս՝ այսինքն յարարածոցս զգեղեցիկն տեսեալ, զպատճառն և զարարիչն *վերակոչեմք* և անւանեմք: - 122

**ՎԵՐԱԶԱՅՆԵՄ +** ...որպէս յա՛յտ է ի սերովբէսն որ ի ներքոյ փառաց աթոռոյն, այսինքն է խաչին. թևասքօղեալ զերեքսրբեանն *վերաձայնէին:* - 734

**ՎԵՐԱՄԲԱՐՁ կմ ՎԵՐՀԱՄԲԱՐՁ +** Վիզն *վերամբարձ* յանդուգն է և ապստամբ: - 247. Ուսքն բարակ և *վերամբարձ*, դարանակա՛լ է: - 247

**ՎԵՐԱՄԲԱՐՁՈՒՄՆ** - Ի վեր շարժումն է հպարտութիւն և փառասիրութիւն. զի յատուկ է սոցա ի *վերամբարձումն:* - 560

**ՎԵՐԱՅ, Ի ՎԵՐԱՅ +** Զի ո՛չ այլ ինչ է բախտն, եթէ ոչ զօրութիւն աստեղաց. զոր առեալ յառաջին պատճառէն՝ հա՛րկ առնեն *ի վերայ* մեր: - 7-8. Երկրորդ՝ զի թէ ի ներկայս ասեմք *ի վերայ* քարի թէ լինիցի փայտ. ո՛չ լինի այնպէս...: - 8. Զի *ի վերայ* մշտնջենաւորացն բացորոշակի յերեք ժամանակս՝ այսինքն յանցեալն ի ներկայն և յապագայն՝ մինն ճշմարիտ է և մինն սուտ...: - 9. Իսկ *ի վերայ* փոփոխականացս ո՛չ նմանապէս. զի յանցեալ ժամանակս և ի ներկայս բացորոշակի մինն ճշմարիտ է և մինն ստէ՛...: - 9. Դարձեալ ասեմք՝ թէպէտ տեսանէ աստուած զամենայն նախքան զլինիլն իւրեանց, սակայն տեսութիւնն աստուծոյ ո՛չ հարկ է *ի վերայ* նոցա լինիլ չար կամ բարի: - 15-16. Նո՛յնպէս և տեսութիւնն աստուծոյ ո՛չ հարկէ *ի վերայ* մեր գործ զբարի կամ զչար. այլ կամք մեր: - 16. Ութերորդ՝ թէ են **բ** սկիզբն, կամ իշխեն *ի վերայ* միմեանց, կամ ո՛չ իշխեն: - 21. Զբացբարձականսն *ի վերայ* աստուծոյ՝ որպէս անճառ և անսահման՝ ո՛չ ըստ պակասութեան կոչեմք, այլ ըստ գերազանցութեան: - 24. Դարձեալ *ի վերայ* սաղմոսին որ ասէ, «զարթիր փառք իմ». ասէ մեկնիչն և աւանդութիւն հրէիցն թէ՝ խօսի աստ *ի վերայ* չորից թագաւորացն որք հալածեցին զիսրայէլ: - 28. Քսաներորդ՝ Յարցմունք երկաբնակացն *ի վերայ* մարդեղութեան բանին: - 30. Իններորդ՝ զի նոցա բանականն է մոլորեալ. և ո՛չ ցասումն և ցանկութիւնն. յորոց *վերայ* բանն բռնադատէ խղճիւն...: - 32. Եւ այլս բազում բաղդատութիւն գոլով հերձւածողի և նեռինն. և զորս տէրն գնեաց՝ սոքա ուրացեալք՝ ածեն *ի վերայ* անձանց զերագահասն կորուստ: - 35. Բայց հարցմունքս այս կարէ՛ ասիլ *ի վերայ* մեր. զի ասիմք՝ յէից եղեալ և յոչ էից: - 37. Երրորդ՝ զի է՛ հնար առնուլ *ի վերայ* մարմնական իմաստութեանց...: - 40. Վեցերրորդ՝ զի պահանջէ՛ ի սիրողաց իւրոց միշտ զայն խորհիլ. զի որպէս ինքն վասն սիրոյ զանձն իւր եդ *ի վերայ* մեր, և մեք վասն սիրոյ նորա փոխարէն դիցուք *ի վերայ* նորա: - 43. Եւ ինքն աստուած *ի վերայ* ամենայնին՝ միաւորութեամբ գլխոյն ընդ անդամոցն: - 43. Իսկ բանն աստուած է՛ ծնեալ ի հօրէ՝ այլ ո՛չ բաժանեալ. որպէս ո՛չ բաժանի բան՝ ի մտաց. թէպէտ ի բազում լսելիք մտանէ. և թէ *ի վերայ* քարտիսի մարմին զգենու: - 45. Եւ թէ էր այսպէս՝ հետևէր ապա հօր զի արարեալ իցէ ա՛յլ աշխարհ. և հանդերձեալ. և շրջեալ յաշխարհի. սրբեալ զախտաժէտս. մեռեալս յարուցեալ. և *ի վերայ* ծովու գնացեալ: - 45. Եւ զնոյն բանն աստուած մարմնացեալ. և շրջեալ *ի վերայ* երկրի. զի յայնմ օրինակին արար և որդի պիտոյ էր լինիլ և չորս աշխարհք: - 45-46. Իսկ յորժամ զյայլումն լսեն՝ արձակին *ի վերայ* մեր ասելով, եթէ յայլո՛ւմ է՝ պատահումն է ի հայր որպէս զօրութիւնս առ մեզ...: - 52. Պատասխանեմք եթէ՝ հոգի աստուծոյ ոմանք զօդս ասեն. որոյ բնական տեղի իւր է՛ *ի վերայ* ջուրց: - 60. Դարձեալ՝ շարժումն ո՛չ միայն ասի *ի վերայ* հոգւոյն սրբոյ, այլ և հօր և որդւոյ...: - 60. Զկատարեալն *ի վերայ* անձի՞նն ասէք, թէ *ի վերայ* բնութեանն: - 68. Զի թէ *ի վերայ* բնութեանն, **բ** կատարելութիւն մուծիք յԵրրորդութիւնն. զի Երրորդութիւնն մի բնութիւն է կատարեալ. և մի բնութիւն մարդոյ: - 68. Իսկ թէ *ի վերայ* անձինն, ահա զԵրրորդութիւնն չորրորդութիւն արարիք որպէս ասացաւ: - 68. Եօթներորդ՝ էջ հոգին սուրբ *ի վերայ* քրիստոսի և հանգեաւ *ի վերայ* նորա: - 69. Այլ հաստատեալ կամք *ի վերայ* սրբոցն դաւանութեանց: - 84. Ահա՛ այս ի կարճոյ բացայայտութիւն ծածկեալ ամբարշտութեանց, որք **բ** բնութիւնս սահմանեն *ի*

*վերայ* միոյն քրիստոսի...: - 90. Եւ դարձեալ՝ զի մի՛ կարծի միայն յանմարմնութեանն պատկեր հօր, *ի վերայ* էած և ի լինելութեանն հաւասար աստուծոյ գոլ նովին մարմնովն առանց յափշտակութեան: - 93. Եւ *ի վերայ* բերէ զբածրագոյնսն: - 94. Եօթներորդ՝ զի *ի վերայ* բերէ, «և ում որդին կամիցի յայտնել»: - 96. Չորեքտասաներորդ՝ ասէ պօղոս յեփեսացւոցն թէ՝ հայր կացոյց զքրիստոս յերկնաւորս *ի վերայ* ամենայն իշխանութեանց...: - 97. Երկրորդ՝ միտք զգոյացութիւն իրին տեսանէ որ է ի ներքոյ եղեալ. և զգայութիւն զպատահմունքն *ի վերայ* եկեալ. որպէս որա՛կ քանա՛կ և այլն: - 120. Զայս ոմանք *ի վերայ* սուրբ Երրորդութեանն մեկնեն այսպէս. սիրօղ է հայր. սիրելի որդի. և սէր հոգին սուրբ: - 128. Երկրորդ՝ ցուցանէ զնստեալն *ի վերայ*՝ տէր գոլ երկնի և երկրի և ծովու: - 132. Առիւծն գազանաց. և Մարդն ամենայն կենդանեաց. և Նստեալն *ի վերայ* սոցա Թագաւոր թագաւորաց: - 132. Դարձեալ, զի **ժ**երորդն աստուածպետութիւնն. և կատարումն *ի վերայ* ամենեցուն: - 134. Այլ *ի վերայ* այսմ հարցաքննելի՛ է երիս իրս: - 140. Իսկ բանիւ գործոյ խօսի աստուած ընդ դիւին. նա՛և հրեշտակք ընդ սատանայի. որպէս որոտ և կայծակունք հրոյ *ի վերայ* նոցա...: - 145. Որև մերձ ի կատարածն դարձեալ յառնելոց է *ի վերայ* մարդկան ի ձեռն նեռինն: - 148. «Ի բարձունս հիւսիսոյ». այսինքն *ի վերայ* ցուրտ և սառնասառոյց չարութեան իւրոյ: - 148. Ամպ՝ զբարձրութիւնն նշանակէ *ի վերայ* այլոց. և Դարձեալ՝ ամպ զմարգարէսն. իբր հրամանատո՛ւ լինիլ մարգարէիցն: - 148. Եւ դարձեալ, զի ամպով և հողմով ասի շարժիլ աստուծոյ. և այսու լինիլ նման այսինքն *ի վերայ* ամպոց և հողմոց և հրեշտակաց շրջելով: - 148-149. Եւ այլք ասեն այսպէս հակառակիլ ընդ աստուծոյ, յորժամ ետես զինքն փառօք և վայելչութեամբ քան զամենայն դասս գերազանցեալ, կամեցաւ մեծ լինիլ *ի վերայ* ամենայնի և հաւասար աստուծոյ: - 149. Նախ՝ զի ուրախ լինի *ի վերայ* սպանելոցն յինքենէ: - 151. Զոր եկեալ տէրն անմեղ և անապական մարմնովն նահանջեաց զմեղս, և զարդարութիւն սփռեաց *ի վերայ* մարդկան. և դատապարտեաց զսատանայ իբր զդաւաճանօղ մարդկան և կոխան արար ի ներքոյ մարդկան: - 153. Զոր ի տեսիլն անտօնի խոստովանէին զբանս զայս մեկնելով *ի վերայ* ինքեանց. այս վասն առաջնոյն: - 153. Իսկ առաքեալն վասն արտաքին փորձութեանցն ասէ. որ ի հալածչաց հասանէ *ի վերայ* մեր. յորում ուրախանալ պարտիմք. զի որքան յաճախէ փորձութիւնն, ա՛յնքան առաւելու և պսակն: - 160. Իսկ միւս զօրութիւնն որ կարելի է՝ և ներընդունի զգուլն և զչգուլն՝ և երբեմն՝ ասի *ի վերայ* փոփոխական բնութեանց. որպէս հանդերձն կարէ՛ պատառիլ և ո՛չ պատառիլ. և ջուրն կարէ՛ ցրտացուցանել և ո՛չ ցրտացուցանել: - 168. Եւ զայսպիսի զօրութիւնս ո՛չ երբէք ասեմք *ի վերայ* աստուծոյ. զի մշտնջենաւոր էութիւն է. և ոչ ընդունի զգուլն և զչգուլն: - 168. Այլ և *ի վերայ* այսոցիկ: - 178. Երրորդ՝ զի արարած լսելով՝ մի՛ կարծեսցես օտար ի նմանէ զեղեալքս, կոչէ՛ ծնունդ. և յորժամ ծնունդ լըւիցես, մի՛ կարծեսցես յէութենէն աստուծոյ զեղեալքս՝ *ի վերայ* բերէ արարած: - 179. Չորրորդ՝ հաւասարակշիռ է երկիրս բոլորակի. և յամենայն կողմանէ ծանրութիւնն ի մէջն ժողովի. և այսպէս ինքն *ի վերայ* իւր հաստատեալ է: - 182. Իսկ արիստոտէլ *ի վերայ* երկուց բևեռացն ասէ շարժիլ երկնի որպէս անիւ սայլին *ի վերայ* սռնոյ: - 182. Իսկ այլք ուղղակի՛ ասեն՝ թէ անմոլար աստեղքն ամրացեալ են ի հաստատութեանն որպէս սպի *ի վերայ* մարմնոյ, և ընդ նմա շարժին: - 189. Զոր յամենայն ամի **ժա** թիւ *ի վերայ* լուսնոյն դնեմք, զի հաւասարեսցի արեգականն, և կոչեմք վերադիր: - 191. Իսկ հայոցս է՛ *ի վերայ* հայկին ըստ տասն ծննդոցն: - 200. Եւ **բ** *ի վերայ* եղանակացդ. Մարգաց. և Յրոտից: - 200. Եւ ստուգապէս ամենայնդ՝ են *ի վերայ* եղանակացդ այսպէս: - 200. Եւ դարձեալ՝ ա՛յժմ է եղանակ նաւելոյ *ի վերայ* ովկիանու: - 200. Իսկ յունացն՝ *ի վերայ* դիցն անուանցն է: - 201. Իսկ հռօմայեցւոցն *ի վերայ* նախնեա՛ցն է: - 201. Եւ վասն բարձր գիճութեանն՝ ի տե՛ս գայ. և սեղմացեալ *ի վերայ* միմեանց լինի ամպ: - 204. Իսկ Եղեա՛մն է նոյն ցօղն թերասառոյց *ի վերայ* երկրի: - 205. Ութերորդ՝ զի նաւք *ի վերայ* ջուրց ընթանան փութով. և զպէտս միմեանց լնուն: - 207. Եւ կէսք ասեն թէ՝ երկրի բնութիւնն աղտաղտուկ է և շօր՝ որ ծովն *ի վերայէ*. և որ առ եզերսն են՝ զնոսա լուանան անձրևք և խառնեն ի ծովն: - 208. Նախ՝ ասեն ոմանք թէ՝ որքան բարձր է *ի վերայ* երկրի հողն, նոյնքան ծօծո՛ր է ի ներքին կողմն. վասն որոյ ջուրք ծովուն դիւրաւ ելանեն: - 209. Երրորդ՝ զի կրէ՛ զջուր ի մէջ իւր, և յեզերս, և *ի վերայ* երեսացն: - 210. Ո՞րպէս գիտեմք թէ մարդն իշխան է *ի վերայ* անասնոց. զի ահա՛ բազումք անհնազանդք են. որպէս վայրիք և գազանք և այլք: - 220. Երկրորդ՝ զի ցոր քան իշխէր ինքն *ի վերայ* անասնական մասանց իւրոց որպէս ասացաք, իշխէր և *ի վերայ* արտաքին անասնոց և գազանաց...: - 220. Վասն է՞ր մարդոյս ձևն ուղիղ. գլուխն *ի վերայ*. և այլ անդամքն ի ներքոյ: - 232. Իսկ միայնացեալ որակ ի ձևոյն, երևի աննման. զի նմանն *ի վերայ* որակութեան ասի. որպէս ծանրութիւն: - 236. Վասն այն յորժամ ննջէ մարդն *ի վերայ* ձախ կողմանն, շուտո՛վ հալի կերակուրն քան *ի վերայ* աջ կողմանն: - 242. Ունկն կողմանեալ *ի վերայ*

գլխոյն՝ ծո՛յլ է: - 246. Զայս և *ի վերայ* սերման հատո՛յ է իմանալ: - 256. Վասն որոյ բոյսք առ հասարակ յերեք ամիսս ծնանին, և ի չորրորդումն կատարին յաւելեալ *ի վերայ* զկազմողական զօրութիւնն: - 262. Այլ և յաւելեալ *ի վերայ* զշարժականն և զշնչականն և զցասմնականն և զցանկականն, ընդ նմին և զկազմողական նիւթն և զտնկականն, որ լինի **ժը**. վասն որոյ ոմանք ի տարին և կէսն ծնանին որպէս ուղտ: - 263. **Խնդրեմ և զայս ուսանիլ թէ ընդէ՞ր է՝ զի մարդս կատարեալ կենդանի է քան զանասունս. և յորժամ ծնանին նոքա ահա՛ ի նոյն ժամն կանգնին յոտից *վերայ* և գնան, և այլն. իսկ մարդն ոչ**: - 266. Նա՛խ՝ զի խորհրդական միտքն կարգաւոր և առանց տարակուսանաց տեսանէ. իսկ երազն անկարգ և տարակուսանօք և զանհնարն տեսանէ որպէս *ի վերայ* օդոյ թռչիլ, և ի ծովու գնալն, և աղքատաց թագաւորել, և այլն: - 268. Երրորդ՝ ի գաւազանն և ի մատանին. զի *ի վերայ* իշխանաց և իշխեցելո՛ց է հաստատեալ և յեցեալ: - 271. Զի իր ինչ յաւելու մարդն *ի վերայ* կենդանւոյն, որ է՛ բանականն: - 272. Զի *ի վերայ* նմանութեան իր ինչ յաւելու պատկերն՝ որ է՛ նոյնութիւնն, և ապա՛ է պատկեր. զի պատկերն հոմանուն է: - 272. Զթռչունս ըմբռնել. *ի վերայ* ծովու գնալ. դիւաց սաստել. ձեռօք առ այլս խօսիլ: - 275. Դարձեալ՝ օրէնքն և հրամանն հա՛րկ է *ի վերայ*: - 277. Իններորդ՝ սէր և գութ աստուծոյ *ի վերայ* մարդոյն հնազանդութեամբ պատուիրանին որ գայր առ նա՛: - 279. Տասներորդ՝ թագաւորութիւն *ի վերայ* ամենայն ձեռակերտաց: - 279. Զի յանապական կուսէ ծնաւ եցոյց զանընդդիմահարութիւնն և զանօսրութիւնն. և գնալով *ի վերայ* ծովուն, զթեթևութիւնն և զերագութիւնն. իսկ զպայծառութիւնն յայլակերպիլն: - 282. Վասն այն արդարադատն աստուած է պատիժս եդ. *ի վերայ* կայենի. վասն զի է չարութեամբ յանցեաւ: - 287. Եւ այլ ևս. *ի վերայ* սաղմոսին «մերձեցաւ անձն իմ ի հող» ասէ մեկնիչն, այժմ ծերացեալ է բնութիւնս՝ վասն որոյ փութայ ի հող: - 291. Ոմանք *ի վերայ* մարդոյս մեկնեն զտապանն և յիրաւի. զի տապանն ունէր զբոլոր աշխարհս. և մարդն մասն է աշխարհի. պա՛րտ է զի մասն նմանեսցի բոլորին: - 293. Վասն որոյ օրհնութեամբ ցրուեաց զնոսա *ի վերայ* երկրի, զի աճեսցին և բազմասցին և լցցեն զերկիր ծննդօք և շինութեամբ և բարեգործութեամբ ի փառս ամենասուրբ Երրորդութեանն ամէն: - 298. Եօթներորդ՝ որպէս փեսաւէրն իսահակայ եղիազար խօսեցաւ զհարսն *ի վերայ* ջրհորոյն: - 305. Եւ մերոյն փեսային քրիստոսի՝ յովհաննէս *ի վերայ* յորդանանու խօսեցաւ զհարսնացեալ եկեղեցի: - 305. Եւ *ի վերայ* տեառն ջահիւք և սուսերօք եկին ըմբռնել ըստ աւետարանին: - 306. Հնգետասաներորդ՝ որպէս *ի վերայ* իսահակայ եդեալ եղև փայտ պատարագին մինչ ի տեղի զենմանն: - 306. Վեշտասաներորդ՝ որպէս կապեցաւ իսահակ ոտիւք և ձեռօք *ի վերայ* սեղանոյն: - 306. Եւ տէրն բևեռեցաւ *ի վերայ* սեղանոյ խաչին: - 306. Եւ տէր մեր ի *վերայ* թշնամւոյն: - 315. Իններորդ՝ ահագին է *ի վերայ* գազանաց: - 315. Եւ տէր մեր *ի վերայ* չարաց: - 315. Եւ ի գոչել տեառն մերոյ *ի վերայ* խաչին՝ սարսեցին դժոխայինքն ահաբեկեալ ի կենաց: - 316. Նոյնպէս և ի կատարածի ահագին գոչէ *ի վերայ* մեղաւորաց...: - 316. Եւ տէր մեր ճոխ ի մէջ նոցա. զի բարձր և գերագոյն եղև *ի վերայ* մեղաց: - 316. Նա՛խ՝ նշանակէ՛ զպատասխանին. զի պատասխանին կրկին է *ի վերայ* հարցմանն: - 323. Վասն երկրորդին հակառակէր ընդ նոսա, զի մի՛ սուտ լիցի վկայութիւն աստուծոյ *ի վերայ* նորա...: - 324. Վասն է՞ր այնչափ դիմամարտս յարուցանէր բանսարկուն *ի վերայ* յոբայ. որպէս զկինն և զբարեկամսն և զծառայքն և զայլսն: - 325. Ութերորդ՝ յոբ ո՛չ անիծանէր, այլ աղօթիւքն զբարեկամսն փրկէր. և տէր մեր *ի վերայ* խաչողացն աղօթէր: - 327. Եւ քրիստոս *ի վերայ* ծովուն ընթացաւ: - 328. Եւ տէրն յետ յարութեանն զխ օր *ի վերայ* օդոյդ: - 328. Երեսուներորդ, մովսէս ձեռն եդ *ի վերայ* եսուայ: - 330. Եւ տէրն եդ զձեռն *ի վերայ* առաքելոցն: - 330. Եւ յաւուր ուրբաթու խաւարեցաւ երկիր որպէս ամպն *ի վերայ* ժողովրդեանն: - 337. Խաչանիշ ձգեաց զգաւազանն *ի վերայ* ծովուն ընդ առաջ ասելով, Այհա՜. որ է՝ աստուած առաջի մեր: - 338. Նա՛խ՝ զի երևեսցի քաղցրութիւնն աստուծոյ *ի վերայ* իսրայէլի: - 339. Երկրորդ՝ զի նախ ջուրն էր ի խառնարանն և եհե՛ղ զարիւնն *ի վերայ* որ է՛ ցոյց մկրտութեանն: Երրորդ՝ նախ զխառնեալ ջուրն ցանեաց *ի վերայ* ժողովրդեանն որ էր մկրտութիւնն. և սոքա ճաշակեն զջուրն և զարիւնն: - 341. Նոյնպէս և քերովբէքն *ի վերայ* քաւութեանն հովանացեալ, և ի միջոյ նոցա աստուածախօսութիւնն: - 345. Եւ քաւութիւնն *ի վերայ*, զի նա՛ եղև քաւութիւն մեր: - 345. Եւ գունդ *ի վերայ* նորա, թագաւորութիւնն: - 346. Եւ ճրագ տէրն *ի վերայ* նորա: - 347. Եւ **է** բերանքն՝ **է** բանքն խօսեցեալք *ի վերայ* խաչին: - 347. Եւ **բ** ձիթենիք՝ զօրութիւն հօր, և սուրբ հոգին հովանացեալ *ի վերայ* նորա: - 347. Լուսնաձև Վահանն *ի վերայ* թիկանցն և սրտին՝ և կրկին տախտակ դատաստանին յուսն, եմիփորո՛նն է: - 348. Խաչաձև ապարօշն *ի վերայ* սրտին, եմիփորոնն պատեալ: - 348. Եւ բաց յայսցանէ **բ** ակն յանդիմանութեան զոր անդամանդեայ կոչէին, և էր ի պճղնաւոր զգեստին *ի վերայ* ուսոց քահանայապետին յորժամ մտանէր ի սուրբն սրբոց երիցս ի

տարւոջն, ի տօնի զատկին և յիսներորդացն և ի քաւութեանն: - 349. Եւ յօշելն զանդամս **բժ**ան մասն ընդ ցեղիցն. և զոտս և զփորն լուանալն. և ողջակիզել *ի վերայ* պղնձի սեղանոյն: - 358. Այս *ի վերայ* երեսաց սեղանոյն ի սրբութիւնն: - 359. Եւ այլ **բժ**ան հաց *ի վերայ* առաջաւոր սեղանոյն **զ զ** հաց զոր սրբութեան հաց կոչէին շաբաթէ ի շաբաթ եդեալ: - 359. Եւ որք անարժա՛ն են գործոյն, դնեն զմեղս *ի վերայ* մեղաց իւրեանց: - 363. Ի հինգ տեղւոջ ի հինն հուր էջ յերկնից *ի վերայ* սեղանոյն և հոտոտեցաւ ի հոտ անուշից: - 363. Զայն խորհուրդն պահեմք *ի վերայ* նոր սեղանոյս: - 363. Կամ թէ հպարտացան յիջաջել հրոյն *ի վերայ* սեղանոյն: - 364. Երրորդ՝ որ զմիսն *ի վերայ* յօշէին և ի մեծ սեղանն հանէին: - 364. Հինգերորդ՝ որ զսափորն և զայլ գործիսն *ի վերայ* դնէին: - 364. Եւ **Ե** երորդն՝ յորոյ *վերայ* խնկաղացն և նուիրանոցն և ճաշակն: - 364. Այլ և *ի վերայ* այսր, հիւանդն և գիժն: - 371. ...մարդս **Ժ** երորդ *ի վերայ* նոցա...: - 376. Դարձեալ՝ ուռն և լծակն՝ խաչն. և Ողկոյզն անապական ճմլեալ *ի վերայ* խաչին հնձանի. և եղև ուրախարար գինի տրտմեցելոցս մեզօք: - 381. Եւ զայրացաւ ի գերեզմանն ղազարու *ի վերայ* մահուն: - 387. Երկրորդ՝ զի եօթնիցս եղև արժանի տեսլեան Երրորդութեանն. կրկին անգամ զհայր ի գիշերի. և կրկին զորդին ի տիւն. և հոգի աստուծոյ *ի վերայ* նորա երկիցս անգամ. և մի անգամ զիրեշտակն ետես: - 387. Այլ և *ի վերայ* այսր ամենայնի անասելի բարութիւն. զարիւնն իւր ետ ի փրկութիւն մեզ. ուստի ի հնոյն արգելեաց զարիւն զենմանցն. մեզ զիւրն արիւն ետ ի ճաշակումն: - 398. Երկրորդ՝ զի ասէ «իբրև զիս». իբրևն օրինա՛կ է. որպէս մովսէս աստուած կոչեցաւ, և տէր մեր Էմմանուէլ. և զնա՛ հայր կնքեաց աստուած. և որպէս մովսէս իշխէր տարերաց, և տէր ի ծովուն գնայր, և *ի վերայ* օդոյն: - 399. Այլ այս անէծքս յայտնապէս *ի վերայ* հրէիցն է. որք ո՛չ կատարեն զօրէնս, և ո՛չ ունին զմկրտութիւնն քրիստոսի: - 403. Եւ *ի վերայ* այսր՝ կուսութեամբ ծնաւ մարդն ադամ ի հողոյ. և կուսութեամբ ծնանիմք յաւազանէն որդիս աստուծոյ. և կուսութեամբ ծնանիմք ի յարութեանն ի կեանս անմահ: - 404. Զի հանապազ քօղ երեսացն մովսէսի առագա՛ստ է *ի վերայ* սրտից նոցա. և ոչ իմանան զտեսութիւն բանին. վասն որոյ ո՛չ հաւատան: - 405. Երկրորդ՝ զի միայն մովսէս կոչեցաւ աստուած. և ո՛չ անուամբ միայն, այլ և գործով իշխէր *ի վերայ* տարերաց ի վեր և ի խոնարհ. վասն այն աւագ օրհնութիւն կոչի: - 407. Երրորդ՝ զի մի՛ ժողովուրդն կանգնեսցէ արձան *ի վերայ* նորա ըստ սովորութեան երկրին: - 411. Վեցերորդ՝ զի թէ լինի անկարօտ գող և զրկօղ, ընդ տեառն իւրոյ կորուսանէ և զինչսն. որպէս աքարն որ ունէր բազում ստացւածս, և գողացաւ ի նզովիցն երիքովի. տեսին ամենայն ժողովուրդն և ցասեան *ի վերայ* նորա և իրաւունս ետուն սատակմանն: - 416. Երրորդ՝ մովսէս զձեռն եդ *ի վերայ* եսուայ և կացոյց զնա՛ առաջնորդ: - 417. Երրորդ՝ գեղմն մարգարէքն, և ցօղ շնորհք մարգարէութեան *ի վերայ* նոցա: - 421. Վեցերորդ՝ դարձեալ տէր մեր յիսուս քրիստոս որ եղև զգեստ հաւատացելոց իւրոց. մկրտեցաւ ի յորդանան. և ձայն հօր վկայեաց. և աղաւնակերպ հոգին էջ *ի վերայ* նորա: - 421. ...երիս զօրութեամբ *ի վերայ* խաչին. որ է՛ ձայնիւն և մարմնովն և հոգւովն որ էջ ի դժոխս. կամ **գ** գոյացութեամբ. այսինքն աստուածութեանն և հոգւոյն և մարմնոյն: - 427. Հինգերորդ՝ զի անկաւ *ի վերայ* երեսաց: - 429. Իսկ թէ մարգարէութիւն էր և զլինելոցն ասէր, ապա ո՛չ էր աստուած. սուտ կոչեցաւ անունն *ի վերայ*: - 430. Երկրորդ՝ զի սովն և սուրն զբարի և զչար ի միասին պատժէ. այլ մահն ընտրութեամբն աստուծոյ է. և ժողովի *ի վերայ* յանցաւորացն. ուստի յա՛յտ է զի դաւիթ ո՛չ էր յանցաւոր ո՛չ պատժեցաւ: - 435. Իններորդ, խաղաց հոգին *ի վերայ* դաւթի. և աղաւնակերպ հոգին *ի վերայ* քրիստոսի: - 436. Երիցս օծաւ դաւիթ. և որդի նորա ի յարգանդի, և ի յորդանան, և *ի վերայ* խաչին արեամբ: - 437. Դաւիթ **լգ** ամ թագաւորեաց. և տէր մեր մարմնով *ի վերայ* երկրի: - 437. Թագաւորեաց նախ **է** ամ *ի վերայ* յուդայ...: - 437. Դաւիթ երիցս սուգ էառ մեռելոյ. և տէրն *ի վերայ* երուսաղէմի և ի գերեզմանն ղազարու և մերձ ի խաչն: - 438. Այլ և գոհացաւ ի վերջոյ *ի վերայ* ամենայն յաղթութեանցն. և տէր մեր *ի վերայ* ամենայն ներգործութեանցն. որ և ամենայն օրհնութիւնքն ի տէրն ակնարկէ. որ եղև գլուխ հեթանոսաց. յաղթեաց մահու և բարձրացաւ ի գերեզմանէ: - 438. Եւ տէր մեր յերկրի մարդացաւ, և յերկինս թագաւորեաց. իսկ նստիլն *ի վերայ* ջորոջ, որ է խաչն. զի վիրք զխաչն ջուարի կոչեն: - 441. Եւ տէրն զբազուկս *ի վերայ* խաչին: - 441. Տասներորդ՝ յորժամ եկն հեզութեամբ լսէր ի նմանէ. իսկ զայս ամենայն համեմատելով *ի վերայ* հրէիցն՝ յիրաւի ուրեմն դատապարտեսցէ զնոսա ի դատաստանի: - 442. Զի՞նչ է կծկիլին. և **է** անգամ յօրանչելն *ի վերայ* մեռեալ պատանոյն: - 446. Խաչանման տարածեցաւ *ի վերայ* մանկանն և կծկեցաւ. այսինքն փոքրկացաւ ի չափ մանկանն. և ապա յայտնապէս է անգամ յօրանչելով և կծկելով կենդանացոյց զնա: - 446. Իսկ ի հիւանդանալն՝ եղիսէոս եդ զձեռն *ի վերայ* ձեռաց արքային յովասու և զօրացոյց զնա ի պատերազմին ընդ դէմ ասորոցն փոխանակ լալոյն *ի վերայ* նորա: - 446. Արդ աղեղն և նետն *ի վերայ* եդեալ՝ նշանակէ՛ զխաչն

փրկական ընդ դէմ իմանալի ասորւոյն սատանայի: - 446. Երկրորդ՝ զի իջցէ ի գերեզման և մի՛ տեսցէ զչարիքն որ ի ձեռն նաբուգոդոնոսորայ գալո՛ց էր *ի վերայ* երուսաղէմի. որպէս յայտ է ի պատմութիւնն: - 446. Նախ փուա արքայ ասորեստանեայց ել *ի վերայ* իսրայէլի: - 446. Եւ յետ հնգետասան ամի յաւուրս աքազու՝ ել թագ ղաթփաղսար արքայ ասորեստանի ի *վերայ* իսրայէլի...: - 446-447. Եւ դարձեալ՝ յետ աւելի քան զերեսուն ամ ի **զ**երրորդ ամին եզեկիայ արքայի յուդայ՝ ել սաղմանասար արքայ ասորեստանեայց *ի վերայ* սամարիայ...: - 447. Եւ յետ գերութեանն իսրայէլի անցեալ ամք **ճլե**, ել արքայն բաբիլացւոց նաբուգոդոնոսոր *ի վերայ* երուսաղէմի. ի **ժ** ամի թագաւորութեանն յովակիմայ. և էառ հարկ ի նմանէ. և զմեծ մասն սրբութեանց տաճարին աւերեաց: - 447. Եւ եղև գերութիւնն բաբիլացւոց **հ** ամ *ի վերայ* յուդայ և ո՛չ *ի վերայ* իսրայէլի որպէս ասէր երեմիա: - 447. Եօթն բան խօսեցեալ *ի վերայ* խաչին: - 454. Այսինքն երդումն աբրահամու և դաւթի՝ մարդ լինիլ բանին *ի վերայ* երկրի ի պտղոյ յորովայնէ նորա. և նստել յաթոռ հօր նորա. և ի նմանէ օրհնիլ ամենայն ազգաց: - 457. Այլ և *ի վերայ* ա՛յնր՝ ունէր և զերրորդն սրբութիւն. որ կուսութեան իւրոյ էր յատկական. ջնջումն ի սկզբնական և յարմատոյ մեղաց: - 463. Եւ զօծումն թագաւորական՝ ի մարենայ քեռէն ղազարու. յորժամ նստաւ *ի վերայ* յաւանակին: - 474. Եւ զօծումն զօրութեան՝ յորժամ օծաւ արեամբ *ի վերայ* խաչին և քակեաց զամուրս հզօրին և էառ աւար: - 474. Իսկ զօծումն հոգւոյն սրբոյ՝ յորժամ էջ աղաւնակերպ *ի վերայ* նորա: - 474. Եւ ա՛յն է յայտնութիւնն որ հայր վկայեաց *ի վերայ* որդւոյն, և հոգին սուրբ աղաւնակերպ իջմամբ: - 482. Եւ այն էր զի զաքարիա *ի վերայ* բազկացն յովսեփու թլփատեաց զնա: - 486. Իսկ ձայնն հօր *ի վերայ* որդւոյն՝ ցուցանէ զգերազանցութիւնն քրիստոսի: - 487. Նա՛խ՝ քառադէմ կառքն եզեկիէլի, և տէր բազմեալ *ի վերայ:* - 494. Այլ և տապանն նոյի. և տապանակն մովսէսի և քաւութիւնն *ի վերայ:* - 494. Այլ և խաչաձև ընթանայ նաւ *ի վերայ* ջուրց յորժամ լարէ հողմ զարմիոնն. կամ տարածեալ թևօք հասանին ի նաւահանգիստն: - 494. Այլ և նոյեան տապանն *ի վերայ* ջուրց: - 494. Այլ և փայտն բարձեալ *ի վերայ* իշոյն իսահակայ: - 494. Այլ և բովանդակ ամենայն բևեռք **թ** էր *ի վերայ* խաչին: - 495. Այսպէս. **բ** ոտիցն. **բ** ձեռացն. **ա** ուսոյն *վերայ*. **ա** խաչին թևին. **ա** պիղատոսի տախտակին. **բ** այն տախտակին որ պատուանդան էր և ոտքն *ի վերայ* բևեռեալ: - 495. Իսկ զմիջին պատուիասն եդ աստուած *ի վերայ* զմահն: - 496. Երկրորդ՝ զմահ կրեաց. զի ինքն եդ զմահն պատիժ *ի վերայ* մեր. իսկ զմեղքն և զապականութիւն՝ բանսարկուն և ադամ արկին ի բնութիւնս. վասն որոյ զոր ինքն ոչ եդ՝ ո՛չ կրեաց մարմնով իւրով: - 496. Աւա՜ղ անբան մտահաճութեան նոցա. որք զմիայն տէրն ուրացեալ, ածեն *ի վերայ* ինքեանց զարագահասն կորուստ: - 503. Այլ մեք եղբարք ուղեկիցք իմ և դաւանակիցք եղիցուք. շինեալք և հաստատեալք *ի վերայ* հաւատոյ հիման. անշարժ խարսխեալք *ի վերայ* յուսոյն քրիստոսի, սեռն և յստակ կատարեալ սիրով սուրբ հոգւոյն: - 503. Հինգերորդ՝ **զադամաստեղծ ձեռս իւր տարածեաց տէրն *ի վերայ* խաչին. և արտաքս ընկէց զչար իշխանն. և կորզեաց զմարդիկ յիշխանութենէ նորա**: - 503. Հինգերորդ՝ որպէս մեղքն զամենեսին մեռոյց, և շնորհքն առաւել զամենեսին կեցոյց որ գերազօ՛րն է *ի վերայ* մեղաց: - 507. Եւ ապա՛ յետ յարութեանն իջեալ հրեշտակն թաւալեցոյց զկափարիչ վէմն և նստաւ *ի վերայ* նորա և աւետեաց իւղաբերիցն: - 512. Եւ յաւուր ուրբաթու խաւարեցաւ երկիր. որպէս ամպն *ի վերայ* ժողովրդեանն: - 513. Իններորդ, գեթէօն՝ այն որ զցօղն ետես *ի վերայ* գեղման...: - 513. Մատթէոս զառաջինն գրէ որ ի մէջ գիշերի եկին. և մի հրեշտակ տեսին. և զվէմն առաջի նոցա թաւալեցոյց և նստաւ *ի վերայ* նորա: - 515. Նա՛խ՝ զի հանգիցէ ի վաստակոցն զոր **լգ** ամ վաստակեցաւ *ի վերայ* երկրի: - 519. Ա՛րդ՝ եռակի՛ է համբարձումն քրիստոսի. որ է յերկրի, *ի վերայ* երկրի, ի վերոյ երկնից: - 520. *Ի վերայ* երկրի՝ ի խաչ բարձրացեալ: - 520. Եւ հոգին սուրբ բազմաբա՛շխ է և անպակաս հեղումն *ի վերայ* մարմնոյ: - 523. Երկրորդ՝ ի վերնատանն դասք առաքելոցն *ի վերայ* նոր հաղորդութեանն մարմնոյ և արեանն՝ նոր օրհնեցին զքրիստոս և ելին ի լեառն ձիթենեաց որպէս ասէ աւետարանն: - 528. Չորրորդ՝ այժմ մանկունք հաւատոյ ի յեկեղեցիս նոր օրհնութիւն տալով **գ** սրբեան ձայնիւ աստուածաբանե՛ն զխաչեալն քրիստոս. և օրհնեն *ի վերայ* արքայութեան աթոռոյ խաչին: - 529. Եւ թէ ոք ասիցէ, ո՞րպէս է մի բանն աստուծոյ. զի ահա՛ բանն մարմնացեալ էր. և հայր բանիւ վկայեաց *ի վերայ* որդւոյն. և անյարմար է ինքն ինքեան վկայել: - 530. Ա՛րդ՝ յորժամ ամենայն ինչ նոյն է սուրբ Երրորդութեանն, որով յա՛յտ է՝ թէ հայր խօսի, և թէ որդի, և թէ հոգին սուրբ, մի և նոյն բանիւն խօսին. ապա ուրեմն ո՛չ է անյարմար եթէ հայր նոյն բանիւն վկայեսցէ *ի վերայ* որդւոյ. զի որդի և հայր նշանակէ զյատկութիւն անձանցն: - 530-531. Ձորօրինակ, յորժամ վկայեսցէ թագաւորն ներտրամադրեալ բանիւն *ի վերայ* գրեալ բանին իւրոյ եթէ՝ ստուգապէս սա՛ է իմ գիր և բան: - 531. Ա՛յսպէս հայր վկայէ՛ *ի վերայ* որդւոյ: - 531. Երկրորդ՝ զի մերձ ի համբարձումն ձեռն

եղ *ի վերայ* նոցա և օրհնեաց զնոսա և արար զնոսա առ հասարակ եպիսկոպոսունս: - 546. Եւ վէմ դաւանութիւնն էր որ խոստովանեցաւ զքրիստոս որդի աստուծոյ կենդանւոյ. և *ի վերայ* այնմ դաւանութեան շինեցաւ եկեղեցի քրիստոնէից: - 547. Զի այսպէս սահմանեցին՝ թէ ինքնակալ թագաւոր մի և ինքնագլուխ հայրապետ մի նստցի ի հայս. և թագաւոր մի ինքնակալ՝ և ինքնագլուխ հայրապետ մի ի հռօմ. և *ի վերայ* միմեանց դիցեն զանձինս ի մահ. և սոսկալի գրով եղեն միմեանց եղբարք. թացեալ զգրիչն յահաւոր խորհուրդն: - 548. **Եւ բաժանեալ զսուրբ տեղիս տնօրինական, ետուն զսուրբ յակոբն պատրիարգարան, և զգողգոթայն, և զսուրբ կարապետն և զսնարսն. և արկեալ վիճակս *ի վերայ* յարութեանն՝ անկաւ հայոց. և տրտմեցան ոմանք յազգէ նոցա**: - 548. Ա՛րդ՝ մեղանչելն մարդոյ այնպէս է որ զակն խփեաց ի լուսոյն և խաւարեցաւ. սակայն լոյսն ծագէ՛ դեռևս *ի վերայ* աչացն և սակաւ փայլէ ի ներքս. և յորժամ բանայ վաղվաղակի լոյս տեսանէ: - 562. Չորրորդ, զի թէ ի ձեռն փիլիպպոսի առաքելոյ որ էր մի յեօթանց անտի սարկաւագացն ո՛չ եղև իջեալ հոգին *ի վերայ* ներքինւոյն մինչև յափշտակեցաւ յազովտոս - 589. Իւղ անոյշ յանուն յիսուսի հեղեալ *ի վերայ* քոյ կնիք երկնաւոր պարգևաց: - 593. Զայն ցուցանէ թէ յորժամ մկրտեցաւ քրիստոս՝ հոգին սուրբ էջ *ի վերայ* նորա...: - 593. Իսկ ձև այսմ խորհրդոյ *ի վերայ* հացին, «Ա՛յս է մարմին իմ»: - 594. Եւ *ի վերայ* բաժակին, «Ա՛յս է արիւն իմ նորոյ ուխտի ի քաւութիւն»: - 594. Որոյ գործ է զխորհուրդ մարմնոյ և արեանն *ի վերայ* սեղանոյն օրհնել: - 606. Եւ ունին զգեստ՝ նափորտ բազմախաչ. և *ի վերայ* եմիփորոն **ե** կրկին խաչիւ զարդարեալ: - 607. Երկրորդ՝ Արքեպիսկոպոսք. որ թարգմանին եպիսկոպոսապետք. և սքեմ նոցա քականօթ և պճղնաւոր. և փիլոն. և *ի վերայ* նորա եմիփորոն **դ** կրկին խաչիւ շուրջ զիւրև: - 607. Բազկուրար յահեակ բազուկն ուսովն ածեալ՝ և կապեալ *ի վերայ* արմնկանն ի կախ ունելով: - 608. Ապա թէ և զապաշխարօղքն ի թիւ կալցես, Կաթողիկոսն լինի **Ժ**երորդ. որպէս աստուած **Ժ**երորդ է *ի վերայ* **թ** դասուց հրեշտակաց: - 608. Այսպէս ասէ սուրբն դիոնէսիոս եթէ՝ մաքրելիք են **ե** դասք. յորոց *վերայ* իշխէ սարկաւագն և գործէ՛ զմաքրականն: - 608. Իսկ զերորդ՝ սարկաւագն *ի վերայ* ամենեցուն առ հասարակ հրամայէ...: - 608. Յայս միտս *ի վերայ* սեղանոյն խունկ վառեմք. որպէս ասացաւ ի վերոյ **իա** գլուխն, **խգ** համարն: - 615. Վեցերորդ՝ զի նոյն է խորհուրդն որ անդ *ի վերայ* խաչին պատարագեցաւ, և այժմ յեկեղեցի սուրբ ի խաչ սեղանին: - 616. ...և ապա՛ ի յերկրէ յարուցանէ զմարմինս. որպէս այն որ հրեշտակապետն նստեալ *ի վերայ* վիմին փողէր զյարութիւնն քրիստոսի: - 618. Այլ թէպէտ առանձնականն կամաւո՛ր է, սակայն *ի վերայ* վանականաց որք են աբեղայք և կրօնաւորք, հարկաւո՛ր է վասն **դ** պատճառի: - 623. Եւ զայս երիցս ասացեալ՝ էջ մարմինն սուրբ *ի վերայ* բազկացն յովսեփայ: - 631. Իսկ որք *ի վերայ* Երրորդութեանն ասեն՝ երեք վնաս կայ ի բանս նոցա: - 633. ...և զգործով պատուականն աւարտ *ի վերայ* բերել. որ է սուրբ մարմին և արիւնն փրկչական: - 634. Եւ դարձեալ՝ այսպէս էր քրիստոս *ի վերայ* խաչին...: - 635. Չորեքկերպեան կենդանիքն է՛ խաչն. և տեսեալն *ի վերայ* նորա՝ գառն որ բառնայ զմեղս աշխարհի: - 638. Զտարւոյն ոստն ջարդեն *ի վերայ* բնոյն. և որ աճէ՛ զայն քաղեն և հիւսեն. Պտղակորոյս որպէս ձիթենի: - 638. Նշնակութիւն է **գ** ազգ գրոյն *ի վերայ* խաչին. Եբրայեցի. Յունաց. և Դաղմատ: - 645. Որ և մովսէս նկարեաց զքերովբէսն հովանի ունել *ի վերայ* քաւութեանն: - 645. Դարձեալ՝ նշանակ խաչին. և քրիստոս *ի վերայ* նորա խաչիւն քարոզեալ: - 646. Յայս միտս այլ ազգք միշտ *ի վերայ* գրակալին պահեն զգիրս. զի արժա՛ն է միշտ ուսանիլ: - 646. Եւ ապա ի գիշերին դնին սրբութիւնքն *ի վերայ* բազմոցին մինչև յառաւօտն անշարժապէս որպէս ասացաք: - 647. և յետոյ զբաժին նոցա *ի վերայ* լնուին. նոյնպէս ի տունս և ի դուրս յորժամ յիշէին: - 656. Երկրորդ՝ ողջակէզ եղև *ի վերայ* խաչին: - 657. Տասներորդ, Վասն բաժանման հոգւոցն թէ ճանաչե՞ն զմիմեանս. և գիտե՞ն զմեզ. և աղօթե՞ն *ի վերայ* մեր: - 660. Նաև պաղատիտս թզոյ եդաւ *ի վերայ* վիրացն եզեկիայի և ողջացաւ: - 665. վասն այն հող ի գլուխ արկանէ մարդ ի ժամ սգոյ. այլ և *ի վերայ* մեռելոյն: - 670. Յայս միտս՝ յորժամ փոշիմանիմք *ի վերայ* բանի կամ տրտմիմք, ատամամբք զմատն խածանեմք...: - 670. Նոյնպէս և սուգն *ի վերայ* մեռելոյ զնոյնն նշանակէ: - 670. ...ապտակեալ. և նախատեալ. և բևեռեալ. և լուսաւորացն խաւարեալ. և այլն. զոր մեք *ի վերայ* մեռելոյն նշանակեմք: - 670-671. Կոչի կարգ, Նախ զի քրիստոնէից մին կարգ՝ ննջեցելոց կատարումն է *ի վերայ* **է** խորհրդոցս. ութերորդ խորհուրդ և կարգ. վասն ութերորդին կենաց: - 671. Նոյնպէս թէ քահանայ իցէ՝ կարգիւն պատեն և դնեն *ի վերայ* բեմին. առաջի սեղանոյն: - 671. Դարձեալ՝ դնեն զքահանայս առաջի սեղանոյն *ի վերայ* բեմին, և զկրօնաւորս ի մէջ եկեղեցւոյն, և զաշխարհականս առ դուռն, նշանակէ զզանազան տեղիս: - 672. Իսկ ի քահանայաթաղն՝ քահանայապետն հեղու զիւղն *ի վերայ* մարմնոյն. այսինքն ի ճակատն և ի ձեռն...: - 672. Նախ ի

բեթլէհէմ. և ապա՛ ի քեբրոն. և յետ եօթն ամաց *ի վերայ* ամենայն իսրայէլի օծաւ: - 673. Իններորդ՝ որպէս հոգին եղիայի էջ *ի վերայ* եղիսէի. - 673. Այլև զգրեալն ընդհանրական թողութիւն ի դիմաց նորա *ի վերայ* գերեզմանին ընթեռնուն: - 674. ...որպէս արտասուեաց քրիստոս *ի վերայ* ղազարու: - 676. Եւ այն որ *ի վերայ* վառին նիւթեղէն զգեստէ, զի գայցէ խաչն ի վերայ լուսեղէն ամպոյ. յօդս բարձրացեալ և ցոլացեալ...: - 676. Եւ այն որ ի վերայ վառին նիւթեղէն զգեստէ, զի գայցէ խաչն *ի վերայ* լուսեղէն ամպոյ. յօդս բարձրացեալ և ցոլացեալ...: - 676. Եւ յետ այնորիկ յիշեմք զպատիժ հրամանացն աստուծոյ որ կատարեցաւ *ի վերայ* նորա...: - 676. Երրորդ, զի խաչաձև դնի մարմինն ի հանգիստն. որ և ձեռքն խաչանմա՛ն է *ի վերայ* սրտին: - 677. ...զի կենդանիք բնակին *ի վերայ* յերկրի, և մեռեալք ի ներքոյ երկրի: - 677. Քսանևմի, և յառակս տնտեսին զոր կացոյց տէր *ի վերայ* ծառայիցն տալ կերակուր. զոր յետոյ տէրն եկեալ գտցէ այնպէս՝ երանի է ծառային այնմիկ. ապա թէ ոչ՝ ընդ մէջ կտրեսցէ: - 693. Նոյնպէս և լուսեղէն պսակքն որ իջանէր *ի վերայ* նոցա՝ յայտնապէս ցուցումն է իմանալի պսակացն: - 697. Ա՛րդ՝ որք կրեն զամօթն առաջի քահանային, ո՛չ կրկնի *ի վերայ* նոցա պատիժ: - 701. Եւ որ գործէ զբարիս առանց հաւատոյ, այն է որ առնէ շինած *ի վերայ* աւազոյ: - 702. ...մինչև կատարեսցին հարուածք բարկութեանն աստուծոյ *ի վերայ* երկրի. որով փորձին և արդարք և մեղաւորք...: - 703. Ա՛յն է որ սատանայ խաբէութեամբ և բռնութեամբ զօրացեալ էր և իշխան եղեալ *ի վերայ* մարդկան. ի կեանս զանազան չարեօք և կռոց պաշտմամբ...: - 705. Եւ մինչդեռ ասասցեն զայս, յանկարծակի եկեսցէ *ի վերայ* նոցա սատակումն որպէս յաւուրսն նոյի ըստ հրամանի փրկչին: - 709. Նոյնպէս և սուրբքն այժմ թագաւորե՛ն և տիրեն *ի վերայ* ախտից, և յետոյ *ի վերայ* դիւաց, և ապա *ի վերայ* մահու: - 711. Դարձեալ՝ որ հրոյ է վերակացու, *ի վերայ* նորին հարկանէ. և որ օդոյ և ջրոյ և երկրի, *ի վերայ* իւրաքանչիւր տարերաց գոչէ՛: -714. Ձթեթևութիւնն՝ *ի վերայ* ծովուն և յարտևան լերինն: - 722. Երրորդ՝ դարձեալ զերկնային զօրութեանց վշտանալն ցուցանէ *ի վերայ* կործանելոցն. զի վասն իմ գալարին և ընդ իմ կործանումն՝ տրտմութիւն զգենուն: - 729. Զի որպէս փայլակն ելանէ յարևելից *ի վերայ* լուսեղէն ամպոյ, և քառաձև լուսովն լնու զչորս կողմ աշխարհի և հաստատի ի գողգոթայ յորում խաչեցաւ տէրն: - 732. Այսու խորհրդով բարձրացուցանեմք զխաչն *ի վերայ* վառի. և ժամահար զկնի: - 732. Եւ այս ո՛չ թէ լոյս միայն է. զի զլոյսն ո՛չ ետ մեզ նշան. այլ զխաչն փայտեղէն յորոյ *վերայ* զձեռն իւր տարածեաց միածին բանն: - 734. Ա՛րդ՝ *ի վերայ* երից սոցա բազմեալ է տէր մեր յիսուս քրիստոս ո՛չ միայն յերկրի, այլ և յերկինս...: - 736. Եօթներորդ, զի ահագնակերպ երևի *ի վերայ* մեղաւորաց. մինչ ասիցեն լերանց թէ անկերուք *ի վերայ* մեր. և բլրոց թէ ծածկեցէք զմեզ յերեսաց բարկութեանն աստուծոյ որ նստի յաթոռ. որպէս ասէ տեսիլն: - 737. Զի ծո՛ր է յաշխարհս այս՝ և լեառն երկինքն. ի ծորն ապա լիցի դատաստանն. այսինքն յայսմ աշխարհի *ի վերայ* օդոյդ: - 737. Նստի քրիստոս ի բարձրագոյն աթոռ *ի վերայ* օդոյդ, և սուրբքն ընդ աջմէ. այսինքն ի վեր ի փառս ընդ նմա *ի վերայ* օդոյդ. հաւատոյ և գործոյ թևօ՛քն բարձրացեալ իբր զարծուի: - 738. Որով հետև *ի վերայ* երկրի և օդոյ է դատաստանն, հաւատալի՛ է և ձայնական խօսից: - 739. Յասարակական է, որպէս ածէ՛ անձրև *ի վերայ* չարաց և բարեաց և այլն: - 747. ...զի որպէս ի հնձանի ամբարեալ է ի գիտութիւնն աստուծոյ՝ մեղաւորացն պատիժ. որ հեղու *ի վերայ* նոցա...: - 748. Զի ծուխ խնկոցն *ի վերայ* սեղանոյն, Նախ նշանակէ՛ սեղանն զքրիստոս. և ծուխն զաղօթս սրբոցն. զոր արծարծէ՛ հօր ի հոտ անուշից: - 749. Երկրորդ՝ զտանջօղ բարկութիւնն զոր ածէ՛ *ի վերայ* մեղաւորաց: - 749. Առաջին՝ հուր վառեալ. այնպէս, որ թէ բոլորովին ծովք *ի վերայ* հեղցին՝ ո՛չ շիջանիցի: - 752. և Դարձեալ, դատաստանն վերջին լինելոց է *ի վերայ* երկրի ի յօդս: - 759. Դարձեալ և այսոքիւք, թէ լինէիր իմաստուն որպէս զօղոմոն. որում ո՛չ գտաւ հանգոյն նման *ի վերայ* երկրի: - 761. Ո՛չ է իշխանութիւն *ի վերայ* երկրի որ համեմատեսցի նմա որ եղև. զի ո՛չ յումեքէ երկնչիցի: - 765. Որ պորփիւր օրինակէ՛ զմատանին աստուծոյ. թէ մի է և *ի վերայ* բազմաց բերի և ի բազումս և ո՛չ ի բազմաց է: - 769. Եւ թէ ի ներքուստ շաղախմունք ապականութեան, *ի վերայ* հաւատոյն յեցցես և ո՛չ անկցիս: - 770

**ՎԵՐԱՆԱՄ +** Ութերորդ՝ ելանելն յերկինս պատշաճի մարմնոյն քրիստոսի. որպէս ի տեսս առաքելոցն *վերացաւ* յերկինս. և իջանելն՝ բանին որպէս ասացաւ: - 73. Յինգերորդ՝ թէ երկինքն ո՛չ էր բոլորակ՝ այլ քառանկիւնի կամ եռանկիւնի, յորժամ շարժէին անկիւնքն՝ յորմէ տեղւոջէ *վերանային* մնային առանց տեղւոյ. և տեղի անկեանցն առանց մարմնոյ: - 183. Նոյն և սա՛ գոլորշի՛ է *վերացեալ* հողմոց. և մերձեցեալ ի հուռն՝ վառի՛ ի նմանէ. և բռնութեամբ հողմոյն վարեալ երևի իբրև զթռիչ աստղ և փութով շիջանի: - 203. Գոլորշիք *վերացեալ* յերկրէ գէջ և չոր խառնեալ: - 203. Երկու գոլորշիք *վերանան* յերկրէ. մինն չոր և ծխատեսակ. և միւսն խոնաւ ի գէճ բնութեանց *վերացեալ:* - 204. Իմացական միտս մեր՝ առ անիմանալին

աստուած ո՞րպէս *վերանայ:* - 251. Չորիւք պարզութեամբ *վերանայ* իմացումն մեր: - 251. Յինգերորդ՝ զի մտօք յաստուածային խոկումն էին *վերացեալ*, և զգայարանօք ընդ գործս հրաշիցն. և ոչ էին պարապեալ քննութեան անձին...: - 278. Եւ այս ևս գիտելի է, զի *զվերանալն* եղիայի ետես եղիսէ, զի մի՛ ասիցեն թէ սպանեալ յեզաբէլէ՛: - 290. Եւ ամպն ընկալաւ զնա յաչաց նոցա և *վերացաւ* առ հայր: - 330. Երկոտասաներորդ, լուսաւորեցաւ՝ զի քող արկցէ երեսացն. որ օրինակէ՛ զիին կտակարանս. որ քօ՛ղ է արկեալ և առագաստ մտաց նոցա. մինչև դարձցին առ տէր հոգիքն որպէս զմովսէս. և ապա *վերասցի* քօղն և յայտնեսցի լոյս գիտութեան նոցա: - 352. Նախ՝ որպէս արեգակն եղև տեսութիւնն մովսէսի. զի յառաջ զարևմուտս տեսանէ. և *վերացեալ* զիիւսիս և զիարաւ. և ապա՛ զարևելս: - 394. Վեցերորդ՝ ի խորհուրդ քրիստոսի, որ օրհնեաց զաշակերտսն և *վերացաւ:* - 409. Զոր յայսմ օրէ և յառաջ՝ ասեն զամպ հովանին *վերացեալ* ի նոցանէ: - 410. Իսկ յետ մահուանն մովսէսի *վերացաւ* ամպն. և հրամայեցաւ ժողովրդեանն հեռու կալ կանգնուլս երկուց հազարաց վասն փառաց տապանակին և վասն զօրութեան նորա: - 415. Զի՞նչ է շարժմամբ *վերանալն* եղիայի: - 445. Նախ՝ թէ կամի՞ զիրաժարիլն. և երկրորդ՝ թէ գիտէ՞ *զվերանալն:* - 445. Եւ այս է նշանն, եթէ տեսցես *զվերանալն* իմ, ապա լինի՛ պատիժ նոցա. ապա թէ ոչ տեսցես՝ չեն արժանի պատժոց. այլ շնորհքն խնայէ՛ ի նոսա: - 445. Նա՛խ իբր զքագաւոր *վերացեալ* կառօք և զօրօք: - 445. Երկոտասաներորդ, «մի՛ մերձենար», եցոյց թէ՝ որք յետ յարութեանն և *վերանալոյն* յերկինս կամին մերձենալ ի մարմին նորա առաքինութեամբ և սրբութեամբ, զախտս հոգւոց ի բա՛ց ընկեսցեն և մի ունայնապէս մերձեսցին ի նա: - 518. Սոյնպէս և աստ յառաջագոյն ասէ վասն *վերանալոյն* իւրոյ: - 518. Եւ դարձեալ՝ որպէս զայլ կանայսն արար աւետաւորս յարութեան իւրոյ. սոյնպէս և զմագդաղենացին *վերանալոյն* առ հայր: - 518. Առաջինն է՝ զի ի տեսս աշակերտացն *վերացաւ*. այսինքն զի յորդորեսցէ զցանկութիւն գնալոյն առ նա: - 520. Երրորդ՝ ամբարձեալ ձեռօք *վերանայր* յերկինս վասն երկուց. նախ՝ զի զինքնն ընծայեսցէ հօրն. երկրորդ՝ զի զքշնամիսն հարկանիցէ զօրաւոր ձեռամբ բարձրացեալ: - 520. ...և ծխատեսակ հիւթն կսկծօղ *վերանայ* ի գլուխն և թափի՛ ընդ աչսն և լինի արտօսր: - 619. Ամպօք *վերանալ*. և փառք ընտրելոցն: - 640. ...ո՛չ պահեմք սուգ մինչ *վերասցի* և ապա՛ պահեմք. որպէս աւետարանն ասէ: - 654. ...և միովն ընդ առաջ քրիստոսի *վերանան:* - 713. Շող յաստուծոյ ծագեալ հաւատ. զերկնից կախեալ լար իմն լուսեղէն. զորմէ բուռն հարեալ ձեռն զձեռամբ փոփոխեալ. ի ծովու սքանչելեաց յերկինս և յօդս *վերանայ:* - 769. Իսկ ի ներքուստ, ի լինիլ տրտմութեանց՝ խուճապեալ մարմնոյն հոսի մաղձ դառն ի ստամոքս որովայնի. և *վերացեալ* գոլորշեաց նորա զօրէն շոգոլեաց պուտկի առ խելապատակս գլխոյ. և ծանրացեալ անտի թորի՛ առ բիբն ասացեալ ական. չոր գոլով և աղէգոյն ի սևատեսա՛կն մաղձոյ: - 787

**ՎԵՐԱՊԱՆԹԵՐ** - ...և Պանթեր ծնաւ *զվերապանթեր:* - 460. Եւ *վերապանթեր* ծնաւ զյովակիմ: - 460

**ՎԵՐԱՌԵՄ +** ...և ի դադարիլ ժամանակին՝ ի նոյն կէտն համանգամայն *վերառեցեալ* մտանեն ի կեանս առաջին ըստ խոստման բանին: - 716-717

**ՎԵՐԱՌՈՒԹԻՒՆ +** Եւ ի նոյն կէտ լրմանն որ է՛ վախճան ժամանակի և սկիզբն յաւիտենի՝ լինի *վերառութիւն* համայնից մարդկան որպէս գրէ առաքեալն կորնթացւոց...: - 716

**ՎԵՐԱՏԵՍՈՒՉ +** Այլ և եպիսկոպոսն *վերատեսուչ* և դէտ կոչի: - 534

**ՎԵՐԱՑՈՒՄՆ +** Քասանէզ, *Վերացումն* եղիայի շարժմամբ. և կառքն և հեծեալք տեսեալ: - 413. Եւ յետ այսորիկ ո՛չ այլ ինչ մնայ. այլ *վերացումն* հոգւոյն յերկինս: - 519

**ՎԵՐԱՑՈՒՑԱՆԵՄ +** Զձկունս ի թանձրագոյն մասն եթող, և զթռչունս յանօսրագոյն մասն որ է օդդ՝ *վերացոյց:* - 227. Ըստ իրին նշանակէր զշնորհաց հոգին, զոր ի մարմին եղելոցն *վերացոյց*. և ի վերնատունն դարձեալ փչեաց: - 282. Այլ ի յամօթ առաջին կարծեացն՝ փոխեաց զենովք և ի հաւատ վերջին յարութեանն՝ *վերացոյց* զեղիա: - 289. Յինգերորդ՝ մահ և բռնութիւն սատանայի տիրեալ էր մարդկան. ի հաւատ կործանման նոցա անմահացոյց զենովք և *վերացոյց* զեղիա: - 289. Նոյնպէս և *վերացուցանելն* զկարօղ զօրութիւն յայնմ որ *վերացոյցն:* - 289. Որպէս կայեն յորժամ սպան զաբէլ, պատճառեաց ծնողացն եթէ զնորա պատարագն ընկալաւ աստուած և *վերացոյց* ի դրախտն: - 290. Եւ գիտելի է, զի հիմն և սկիզբն անդ եկեղեցւոյն եղև տէր մեր յիսուս քրիստոս յարուցեալ ի մեռելոց. և ընդ ինքեան հանեալ և *վերացուցեալ* զհոգիս սրբոց նահապետաց և մարգարէից: - 688

**ՎԵՐԱՓՈԽԵՄ +** Զի ամենայն ճշմարիտ դաւանօղքն զքրիստոս աստուած խոստովանեցան. և ի նոյնն նահատակեցան. և առ ճշմարտութիւնն քրիստոս յերկրէ յերկինս *վերափոխեցան:* - 101. Եւ զկրկնակի կենաց վայելումն ըստ խառնեալ էութեան իւրոյ. զի թէ զաստուածայինսն բերցէ յինքեան ըստ որում ի պատկերն եղև, *վերափոխեսցի* անմահ կենօք ի պատրաստեալն ժառանգութիւն: - 231.

երկրորդ՝ Վասն ենովսայ. և ենովքայ *վերափոխելոյն:* - 283. Եւ ենովք վասն անպտուղ կալոյն և զգայարանացն ծածկութեան, *վերափոխեալ* եղև: - 288. Զի ասեն եթէ՝ **խ** օր էր պայմանն ադամայ. յետ **խ** աւուր ուտէր ասեն՝ ի փայտէն գիտութեան և սրբութեամբ որդիս ծնանէր. և ապա՛ ուտէր ի կենաց փայտէն և *վերափոխեր*. և այլ բազում բանս տողե՛ն: - 391. ...ո՛չ էր յարմար թէ ապականացուն յանապական տեղիս բնակեսցի. մինչև սա ևս յանապականութիւն *վերափոխեսցի:* - 662. ...զի *վերափոխեաց* զնա աստուած ի տեղի ուր ինքն գիտէ ...: - 681. ...և ի տնկոցն յերկինս *վերափոխիլ*. և սոքա ի հուրն ասեն մտեալ և անտի յերկինս *վերափոխեալ:* - 687. ...այլ յորժամ բոլոր արարածք ազատեսցին յապականութենէ ծառայութեան որպէս գրէ հռօմ յայնժամ և մարմինք մարդկան յանապականութիւն *վերափոխեսցին:* - 717. Որդիքն ահարօնի՝ են սուրբքն. որք նախ քան *զվերափոխիլն* ի սենեակ վերին արքային, աստուածայնովքն բանիւք յամենայն հպարտութենէ մեղաց մաքրին: - 756

**ՎԵՐԱՓՉՈՒՄՆ +** Դարձեալ՝ զի տնկականն *վերափչո՛ւմն* է օդոյն հանդերձ խոնաւութեամբն երկրի. վասն որոյ բոլորաձև արտաքս գայ և լինի ծառ: - 213

**ՎԵՐԵՐԵՒՈՅԹ +** ...նոյնպէս *վերերևոյթ* կերպարանքն նոյն է ըստ ձևին. այլ բնութիւնն միաւորեալ է ընդ բանին աստուծոյ և եղեալ աստուած: - 598

**ՎԵՐԵՐԵՒՈՒԹԻՒՆ +** ...բայց ըստ *վերերևութեանն* ցուցանէ զսրբութիւն. զի դիւրաւ խաբեսցէ: - 707

**ՎԵՐԵՒ** - Երրորդ՝ ստորևն կից, և *վերևն* բացատ: - 178

**ՎԵՐԸՆԹԱՑ +** Երկրորդ՝ որպէս աչք հայելով ի վեր՝ հեշտանայ զի *վերընթա՛ց* է լոյսն: - 104. *Վերընթաց:* Վերածօղ: Մշտաշարժ: Ինքնաշարժ: Շարժօղ: Անփոփոխ: Սո՛ւր: Զգո՛յշ: Անշե՛ղ: Անթոյլ: Անպարունակ: Թափանցիկ: Աներևոյթ: - 202. Նա՛խ՝ զի օդն *վերընթա՛ց* է և քարշէ՛ ի վեր և աճէ: - 213. Եւ հոտոտելիքն զառ ի վայր է, նա՛խ՝ զի հոտն *վերընթա՛ց* է՝ յինքն ընդունի: - 235. Զի աչաց լոյսն հուր է. և հուրն *վերընթա՛ց* է. վասն այն ի բնականսն նայելով հեշտանայ, և ի բռնութեամբն դժուարի և զարհուրի: - 239. Յօդոյ որկորստութիւն և հպարտութիւն. զի *վերընթա՛ց* է և քարշօղ: - 560

**ՎԵՐԸՆԾԱՅԵԼ +** Եւ այսպէս *վերընծայեն* աստուծոյ զօրհնաբանութիւնսն. վերջինքն տալով ի միջինսն. և միջինքն յառաջինսն. և յառաջինքն մատուցանեն աստուծոյ: - 624. և նա *վերընծայէ* առ աստուած զօրհնութիւնն, և զխաղաղութիւնն բերէ մեզ պարգև: - 625. Իսկ թէ զի՞նչ է յորժամ *վերընծայի* խորհուրդն պաշտմամբ և հնչմամբ ժամահարաց: - 645. Եւ պիտանեացն՝ փառս *վերընծայել* այնմ, որ փառաւորեալն է ի պարգևս իւր. իսկ զանպիտանսն ներել մերոյ փոքր ընկալ անօթոյ և դանդաղկոտ փութոյ: - 772-773

**ՎԵՐԸՆՁԻՒՂԵԼ +** Սոքա *վերընձիւղեն* զճաղիկս. և ծնանին զամպս. և առնեն անձրևս և ամբոխմունս: - 205

**ՎԵՐԻՆ +** Յնգետասաներորդ՝ ի համբառնալն յերկինս ասէին տարակուսեալ *վերին* զօրութիւնքն...: - 97. Այլ *վերին* մասամբ ծայրիւ իմացութեան ձկտի յաստուածայինսն՝ հաւատոյն լուսով և վկայութեամբ սուրբ գրոց հաստատել: - 103. Եւ *վերին* խոկմամբ՝ որ ի վե՛ր է քան զմեզ՝ ըստ կարողութեան լուսաւորիմք ճառել զանճառէն: - 103. Իսկ սուրբ գիտութիւնն ընդ դէմ այսմ լուսաւորէ՛ զմիտս և ուղղէ՛. և ընդարձակէ զտեսութիւնն և թեթեւացնէ առ *վերինն*. և ժողովէ ի մինն. և կատարէ զպատկերն: - 104. Եւ միտք *զվերինս* խորհելով հեշտանայ: - 104. Այսպէս բանն աստուած *զվերին* աշխարհին մշտնջենաւոր պահէ, և զներքինս ժամանակաւ չափելով պահէ՛ և խնամէ: - 125. Ծանիր զայս, զի աստուած է միայն իմացական և ո՛չ իմանալի. և հրեշտակք իմացական և իմանալի. զի իմացականք են *վերինքն*. և իմանալի ներքինքն: - 130. Իսկ՝ հոգի մարդոյ միայն իմանալի և ո՛չ իմացական. զի իմանան *զվերինսն*՝ իմանալի՛ են: - 130. Եօթներորդ ի մեզ, մարդն բանն. առհւծն ցասումն. եզն ցանկութիւնն. արծւին գիտութիւն բարձրաթռիչ *զվերինն* խորհիլ միշտ: - 133. Այլ ոմանք զսերոբէն ասեն *վերին:* - 135. Երրորդ՝ զի *վերինքն* զներքնոցն ունին բոլորապէս զամենայն. և ներքինքն *զվերնոցն* մասնաբար ըստ չափու իւրեանց. և քահանայապետն ունի զաստիճան ներքնոցն բոլորապէս. և ներքինք *զվերին* քահանայապետիցն մասնապէս: - 136. Ապա յա՛յտ է զի ա՛յլ է կարգ շնորհականին, և այլ է կարգ բնականին. զի բնականք ներքինք *զվերնոցն* բոլորապէս ունին և կոչին...: - 36. Իսկ ընդդէմ այսմ՝ քահանայապետն որ *վերին* է՝ ունի զքահանային և կոչի: - 136. Իսկ քահանայն կամ սարկաւագն ո՛չ ունի *զվերնոցն* և ո՛չ կոչի: - 136. Ա՛յս է պատճառն, զի որ առաջին է և *վերին*՝ ունի զերկրորդն և զներքինն: - 136. Եւ թէ ոք ասիցէ, վասն էր մարդիկք հրեշտակք կոչին. նաև հրեշտակք աստուած՝ որ *վերնոցն* են կոչմունք: - 136. Ասեմք նախ՝ եթէ որպէս ասացաք ներքինք *զվերնոցն*

մասնաւորապէս ունին. որպէս *վերինք* զներքնոցն բոլորաբա՛ր: - 137. Եւ արդ որպէս ցուցաւ՝ *վերինք* մինչ ի միջինս ունին բոլորապէս զներքնոցն. և ներքինքն մասնաւորաբար մինչ ի զօրութիւնսն՝ յաղագս առ հասարակ զօրութիւնք կոչին: - 137. Այլ ինքեանց *վերին* էութեանցն գիտելի է թիւ նոցա՝ շնորհեալ յամէնիմաստ գիտութենէն: - 141. Եւ ա՛յսպէս խօսին միայն *վերինքն* առ ստորինս. զի հաղորդեսցեն զնոսա աստուածային յայտնութեանցն: - 145. Քանզի դևք ո՛չ են ի *վերին* մասն օդոյն, զի մի խնդասցեն լուսովն. և ո՛չ ի ստորին մասն, զի մի՛ առաւել վնասեսցեն զմարդիկ: - 146. Որև կործանմամբն իւրով չարչարեաց *զվերին* դասքն սրտմտութեամբ, և զներքին դասքն սասանմամբ, և զհամակամսն ընդ ինքեան քարշեաց: - 148. Եւ զի ո՛չ է ի տեղւոջ աստի յայտ է, զի տեղին է *վերին* և ներքին և միջին. և արտաքոյ աշխարհիս ո՛չ երևին սոքա: - 180. Արդ՝ ներքին հողմն ի վեր ձգէ զերկիր. և *վերին* հողմն ի վայր. և այսպէս ի մէջն հաստատ մնայ երկիր: - 181-182. Եւ բնականն Նախ այսպէս. զի օդն որ ի մէջէ մտեալ և փեռեկեալ զներքին և *զվերին* կիսագունդն, նա՛ է պատճառ շարժութեան երկնից: - 182. Առաջինն է տարրական հրոյն *վերին* մասն. որ կոչի հրեղէն երկինք. հոմանուն առաջին երկնից: - 183. Երրորդն՝ է *վերին* մասն օդոյն. և կոչի եթերային երկին...: - 183. Երրորդ՝ աչք մեր որ է՛ լոյս՝ ի *վերին* մասն գլխոյս. և լուսաւորքն յերկինս. զի մերձաւոր նմանն զնմանն տեսցէ: - 188. Չորրորդ՝ զի ի վեր տեսցուք աչօք. և մտօք *զվերինն* խորհիմք...: - 188. Հրեղէն զլուսաւորսն ասէ. և ջուր *զվերին* կամարն ջրեղէն: - 188. *Վերին* եզրն կենդանակերպիցն է խեցգետինն. և ներքին՝ այծեղջիւրն: - 189. Եւ որքան ի *վերին* կիսագունդն տևէ՛, կոչի տիւ: - 190. Եւ այն որ կրկին լինի, ներքին պայծառն է տիպ յարեգակնէն. և *վերին* նուազն զտիպ ներքնոյն է ընկալեալ: - 203. Չորրորդ՝ զի տունկք և բոյսք ի ներքին հիւթոյ և ի *վերին* անձրևոյ միշտ դալար մնասցեն: - 207. Չորրորդն *վերնոցն* գաւառ: - 210. Երկրորդ՝ զի *վերին* մասն օդոյն պա՛րզ է...: - 211. Եւ որպէս զհուր՝ ներքին կողմն լայն է և *վերին* ծայրքն նուրբք: - 215. Իսկ այլք ասեն թէ՝ վասն առաւել բարձրութեանն՝ լոյս արեգականն ո՛չ երբէք հեռանայ ի նմանէ. թէպէտ ի ներքոյ երկրի անցանէ. որպէս լուսինն թէպէտ ի *վերին* կամարն լինի, զլոյսն առնու յարևէն որ ի ներքին կամարն: - 222. Զի ի *վերին* մասն օդոյն է մերձեցեալ...: - 222. Երկրորդ՝ պատուական մասն մարդոյն գլուխն է. վասն որոյ *զվերինն* և զառաջինն ընկալաւ տեղի: - 232. Զի այսպէս ի կազմուածոյ քո ուսցիս զբարեկարգութիւն և զպատիւ առ *վերինս* և առ ներքինս և առ հաւասարս: - 232. Երրորդ՝ մարդն նման է բոլոր աշխարհիս. և ի մասունս աշխարհի՝ երկինքն է *վերին* և բարձր. և տարերք ի ներքին վայրս: - 232. Նա՛խ՝ զի յառաջ եդեալ նմա՝ լո՛յսն է որ է *վերին* տարր. և լսելեացն օդն: - 235. Նախ՝ մազն ի վերոյ. և մորթն. և միսն. *վերին* ոսկրն. և ներքին պինտ ոսկրն. խելապատակ մաշկն. և ուղեղն: - 239. Ընդ *վերին* դուռն զգոլոշին ի խելապատա՛կն առաքէ: - 242. Ներքին կզակն և *վերին*. և **բ** քնատեղն մին ոսկր. և գագաթն: - 243. Եւ կոչին *վերին* երակն քալասիկ է. և միջինն ասայիկ է: - 244. Այսպէս և հոգին ընդ անկատար նիւթոյն ունի զկերակրիլն. և յորժամ հաստատի զգայութեամբն ծաղկի. և յևս հաստատիլն՝ բանականութեամբ պտղաբերի ի *վերին* խնամոցն որպէս պտուղն այն յարեգակնէ՛: - 255. Իսկ պատկեր շնորհաց և փառաց է, կատարելապէս ճանաչել և սիրել զաստուած. և այս է նմանութիւնն զոր կատարեալքն ունին աստ և ի *վերին* գաւառին: - 274. Դարձեալ՝ մարդո՛յն է յատուկ ունել զամենայն սիրելութիւն առ ամենայն ազգս. առ *վերինս* և առ ներքինս և առ միջինս: - 274. Է՛ և ներքին և *վերին* վայր. մարմին և անմարմին. և այլք սոյնպիսիք տարբերութիւնք են բնութեան և ո՛չ թշնամիք: - 278. Եւ ներքին և *վերին* կողմամբն լինի **գ** կողմ. առաջին **զ**օրեայ ստեղծմանն նշանակ: - 293. Ի ներքին տունն չորքոտանիք. և ի միջինն մարդն. և ի *վերինն* թռչունք: - 293. Եւ *վերինն* քահանայից բեմն տեղիք պատարագաց: - 294. Զի առաջին խորհուրդ է մեր, յորժամ միտքն առ աստուած ամբառնայ *զվերինն* խորհելով: - 331. Այլ ոմանք մնացեալք ի մարմնի, և բազումք ժամանեալք յօթևանս *վերին:* - 391. Նոյն և երկիրն վերինն երուսաղէմի յանեզրական ծովէ՝ յամպոյ հոգւոյն և շնորհացն իմաստութեան ոռոգի. *վերին* և ներքին դասք հրեշտակաց՝ և մարդկան: - 398-399. **Զայս նշանակէ թէ՝ յետ ելանելոյ հոգւոյ ի մարմնոյ և գնալոյ ի *վերին* շաւիղն, հակառակ կայ սատանայ և չար զօրութիւնքն ընդ նմա, տանիլ զհետ իւրեանց որ զչա՛րսն են գործեալ. և յարդարոցն յաղթին հրեշտակին օգնութեամբն. որպէս և անտօն ետես. զի իմացեալ և մեք զգուշասցուք այնմ:** - 410. Չորրորդ՝ զի մի՛ ծովացի *վերին* կողմ երկրին և վնասեսցին: - 414. Եւ բաշխեաց երկոտասան առաքելօքն աստ զնոր օրէնս, և անդ *զվերին* ժառանգութիւնն հաւատացելոց իւրոց: - 419. Երրորդ, նա՛ հովիւ հօտից. և տէր մեր հովիւ կոչեցաւ իմանալեացն *վերնոց* և մարդկան մոլորելոց: - 435. Իսկ չորրորդ սրբութիւնն լիակատար շնորհաց ի *վերին* գաւառն որ է՛ հրեշտակային՝ գերազանցէ՛ զամենեքումբք: - 462. Նա՛խ՝ զի չորեքտասա՛ն էր լուսինն եկն ի ներքին

կիսագնդէն ի *վերին* գունդն և ծգեցաւ առ արեգակն: - 490. Չորրորդ դարձեալ՝ **դ** թև խաչին նշանակէ զչորս բարերարութիւնս քրիստոսի. զի *վերին* մասն ցուցանէ զբացումն արքայութեանն երկնից. ներքինն զաւերումն դժոխոց. աջն զբաշխումն շնորհաց. ահեակն զթողութիւն մեղաց: - 493. Հինգերորդ՝ նշանակէ՛ զչորս առաքինութիւնս ի յորս պարտի տարածիլ ներքին մարդս մեր. այսինքն *վերին* մասն նշանակէ զսէրն. ներքինն զխոնարհութիւնն. աջն զհնազանդութիւնն. ահեակն զհամբերութիւնն: - 493. *Վերին* մասն միշտ *զվերինն* խորհիլ ուր քրիստոս նստի...: - 493. *Վերին* մասն զխոհեմ և զհամեստ բանս իբրև աղիւ համեմեալ: - 493. Քանանուհւոյն *վերինէ՛:* - 495. ...և մեղօք ծանրացեալ էջ ի ներքին կէտս դժոխոցն, և այլ ո՛չ կարէր բարձրանալ. մինչ ի *վերին* կիտէն բանն աստուած էջ ի ներքին կէտն. և ապա ել ադամ ի *վերին* կէտն երկնից: - 503. Ո՛րդ՝ թէ զոյ ներքին, զո՛յ և *վերին* և միջին դժոխք: - 505. Իմաստունք զտեղին յերկուս բաժանեն. ի *վերին* և ի ներքին. զի սոքա են հակակայք և առինչք միմեանց. իսկ միջին տեղի ո՛չ է...: - 505. ...զի *վերնոյն* ներքին է, և ներքնոյն *վերին*. ապա սո՛ւտ է ասելդ թէ զոյ ներքին և *վերին* և միջին դժոխք: - 505. Դարձեալ ասեմք, ներքին դժոխք է հոգւոցն. և *վերին*՝ գերեզման մարմնոցն...: - 505. Ասեմք ներքին դժոխք զհոգւոցն. և միջին զգերեզմանս. և *վերին* զմեղքն որ է՛ ի հոգիս: - 505. Նախ ասեն թէ ի չորրորդ դժոխքն գնաց որ է՛ *վերին* և ո՛չ ներքին: - 505-506. Առ առաջինն ասեմք, թէ քրիստոս ո՛չ ի *վերին*՝ այլ ի ներքին դժոխքն էջ: - 506. Չորրորդ՝ եկեղեցի է անդրանկացն *վերինն* սիոնի որ է հոգիք սրբոցն ժողովեալ. զոր պողոս եկեղեցի կոչէ զորդիս արդարոց կատարելոցն: - 534. Իբր զի հոմանուն է եկեղեցի և ունի դ նշանակութիւնս. որ է՛ ստորինս. և *վերինն* եկեղեցի. և շինեալք ի մէնջ. և հաւատն ժողովարան մեր: - 534. Եւ դարձեալ՝ գլուխ է քրիստոս. և հերք՝ որպէս դասք *վերին* զօրացն ի նմանէ՛ առ մեզ իջուցեալ զշնորհս: - 534. Ասեմք առ այս, թէ օրհնելն կրկին է. այսինքն առ *վերինս* և առ ներքինս: - 539. *Վերինն* որ առ աստուած և առ սուրբս, երբեմն յայտնութիւն լսի. երբեմն գոհութիւն և բարեբանութիւն. երբեմն մաղթանք և աղաչանք: - 539. Բանին զոլ զիպարտութիւն և զնախանձ առ ներքինս և առ *վերինս:* - 559. Ամպ մարգարէքն են կամ հրեշտակք. և աստեղք *վերին* դասքն: - 563. Իսկ անհրաւելն է բանիւ առ *վերինս* և առ ներքինս և առ հաւասարս: - 568. Եւ յայսցանէ յայտէ, զի յետ յարութեանն ի *վերինն* գաւառ ոչ զոյ յոյս...: - 574. Եւ երկրորդ՝ զի մնասցէ ի *վերին* գաւառն ըստ էութեանն և ըստ գործոյն. իսկ այլ առաքինութիւնքն թէպէտ մնան ըստ էութեանն, այլ ո՛չ ըստ գործոյն: - 579. Եւ զմբէթն *զվերինն* խորհիլ ուր քրիստոս նստի ընդ աջմէ աստուծոյ: - 614. Յայս միտս մեք ազգս քրիստոնէից յելս արևու և ի մուտս համաձայն *վերին* զուարթնոցն աղօթեմք առ աստուած: - 621. Դարձեալ *զվերին* և զստորին պաշտօնեայս: - 636. *Վերին* ազգայն միութիւնն: - 645. *Վերին* ազգայն իմացականն հոգի. և ներքին կառոյցն մարմնոյս բնութիւն: - 645. Ըմբռնելիքն ի *վերին* ծայրքն՝ է՛ յիշողականն ի մեզ: - 645. Երրորդ, զի այսպէս հաղորդ լինիմք *վերին* սեղանոյն որ է արքայութիւնն երկնից: - 655. Եւ ըստ աստիճանի՝ նախ ի ներքինն, և ապա ի *վերինն* ելք: - 662. ...և նովաւ արժանաւորիլ մեզ *վերնոյն* գաւառի ըստ անհաս իմաստութեանն իւրոյ: - 663. Երկրորդ ի թիւ ամացն. զի որքան յերկարեմք անցանելով, պակասի մասն *վերին* և յաւելու մասն ներքին...: - 666. Երրորդ, ի *վերին* տեսչութեանցն: - 668. Կամ ի *վերինն* խնամոցն. զի արդարքն դիւրաւ փոխեսցին ի կեանս: - 668. Ջքահանայս ընդ սերովբէից և քերովբէից յառաջին դասս *վերինն* զուարթնոցն: - 672. Իսկ *վերին* և արտաքին սրահն ուր զենմունք և պատարագն մատչէին, է՛ մարմնական աշխարհս այս...: - 682. Իսկ թէ ո՞ւր իցեն սոքա երկոքեանս, տեսիլն յոհաննու յայտնապէս ցուցանէ. սրբոց խորանս ասէ *զվերինն* սիօն և զհրեշտակացն դասս: - 688. ...և ապա տացի սրբոցն *վերին* տաճարին բնակութիւնն: - 703. Ջի *վերին* մարմինք երկինք և լուսաւորք ամենևին անապակա՛ն են. իսկ դ տարերք թէպէտ ըստ մասին ապականին, այլ ըստ բոլորին ո՛չ...: - 727. Ոմանք այսպէս կարծեն թէ՝ հաստատութիւնդ բարձցի ի միջոյ մինչ *վերին* երկինքն երևի: - 729. Այն է ծալիլ և գալարիլ օդոյդ երկնի. և ո՛չ թէ հաստատութիւնն *վերին* էութեամբ ի բաց բառնի ըստ ոմանց: - 729. Երրորդ զմեզ առ այլս դատակշռել. այսինքն առ *վերինս* և ներքինս և հաւասարս: - 745. Այլ նախ ասի միշտ տիւ ի *վերին* երես երկրի. ուր արեգակն և լուսին զկա՛յէ առեալ. իսկ ներքինն միշտ գիշեր և խաւար անփոփոխելի: - 750. Արքայութիւն աստուծոյ կոչի որդի *վերին* արքային: - 754. Որդիքն ահարօնի՝ են սուրբքն. որք նախ քան զվերափոխիլն ի սենեակ *վերին* արքային, աստուածայնովքն բանիւք յամենայն հպարտութենէ մեղաց մաքրին: - 756. Ի յայս միտս ի ստորինս եկեղեցի այժմ կրկին են դասք պաշտամանց. որ և նոյնպէս է լինելոց ի *վերնումն* սիօնի յեկեղեցիս անդրանկաց: - 760. Երկրորդ՝ ծառ կենաց են բնակիչք *վերնոյն* սիօնի. տնկեալք յաղբիւրն կենաց որ իջանէ յաթոռոյն աստուծոյ ի մէջ նոցա. ունելով զանմահ կեանս յաւիտենից: - 765. Եւ թէ յաջոյ

յաջուածոց խենեշութիւն մեղկէ, *վերնոյն* հեշտալեաց հաւատա՛ և ո՛չ խաբիս: - 770. Գիր քոյոյ վսեմամիտ խոհեմութեանդ ո՛վ արփիածին հարազատ, և *վերնոյն* սիօնի նազելի զաւակ Գէորգէոս Րաբունեայ պետ: - 773. Նա՛խ՝ զի ի *վերին* գաւառս ուստի էին դեք՝ ո՛չ գոյ հաւատ. այլ դէմ յանդիման տեսութիւն: - 784. Եւ կէտն արևմտից առ ելս. այնպէս ներքին և *վերին* կիսագունդն: - 788

***ՎԵՐԻՆ ԵՐՈՒՍԱՂԷՄ*** - Եւ քրիստոս թագաւորն *վերնոյն երուսաղէմի*՝ զնոյն խաղաղութիւն ետ առաքելոցն զոր ի ծննդեանն հրեշտակք երգէին: - 302. Եւ պարգևացն երկիր՝ *վերինն երուսաղէմի*. այսպէս: - 314. Ա՛յս է՝ եթէ ի դրախտին, եթէ այժմ յեկեղեցի, և թէ ի *վերինն երուսաղէմ:* - 360. Եւ սոքա բաժանեալ մեզ զերկիրն պարգևաց. այսինքն աստ զնոր օրէնքն, և անդ *զվերինն երուսաղէմ:* - 391. Նոյն և երկիրն *վերինն երուսաղէմի* յանեզրական ծովէ՝ յամպոյ հոգւոյն և շնորհացն իմաստութեան ոռոգի. վերին և ներքին դասք հրեշտակաց՝ և մարդկան: - 398-399. Դաւիթ էառ զէմ և շինեաց իւր տուն. և տէրն *զվերինն երուսաղէմ*, և ետ իւրայնոցն զխաղաղութիւն: - 438. Եւ շնորիք նոր օրինացս հայի յողորմութիւնն աստուծոյ և ի փառս *վերինն երուսաղէմի* որպէս ասացաւ ի վերոյ: - 439. Իսկ ութերորդն ի նեղութեան դարուն օրինել հոգւով. և գովել ի *վերինն երուսաղէմ*...: - 630. Երկրորդ, այլ և ցանկութիւն ի *վերինն երուսաղէմ* յերկինս: - 677. Եւ այն է քաղաք աստուծոյ և *վերին երուսաղէմ*՝ և եկեղեցիք արդարոց ըստ պօղոսի: - 688. Այլ և են ոմանք որ ասեն զերկիրս մաքրեալ երեսնաւոր. և զդրախտն վաթսունաւոր. և *զվերինն եէմ* հարիւրաւոր: - 758. Երկրորդ վասն տեղւոյն. զի *վերինն երուսաղէմ* է՛ ի բարձունս քան զարեգակն. վասն որոյ ո՛չ լուսաւորէ զնոսա: - 760

**ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ +** Քանի՞ է վարդապետութեան եղանակ: Չորս. այսինքն սահմանական. բաժանական. ապացուցական. և *վերլուծական:* - 537

**ՎԵՐՀԱՅԵՑՈՒՄՆ** - Անունք Նախահարցն: ...Յարեղ *վերհայեցումն* աստուծոյ: - 299

**ՎԵՐՆԱԳԻՐ +** Թէէ՛ ի թև և Պատուանդանն նոճի. և Տախտակ *վերնագրին* ծիթենի: - 494

**ՎԵՐՆԱԳՈՅՆ +** Վեցերորդ՝ զի թէ մեք շնորիիւ՝ որդեգրեալքս կերպանամք առ ճշմարիտ և բնութեամբ որդին, և թէ և նա՛ է ըստ մեզ շնորիիւ, պիտո՛յ է նմա *վերնագոյն* բնութեամբ որդի մարմնացեալ ի յոր կերպասցի և սա՛ ի նմանութիւն նորա շնորհօք որդի: - 67. Իսկ որ ի յայլս՝ որոշի յերիս. այսինքն ի *վերնագոյնն*, որպէս յաստուած՝ ի հրեշտակս և ի սուրբս: - 143. Իսկ *վերնագոյն* սիրով սիրեն արարածք զարարիչն. և վերջին հրեշտակք զառաջինսն. և որդիք զհարս. և նւազք զմեծամեծս. և այս սիրովս միաւորին ընդ նոսա: - 143. «Երկինք պատմեն զփառս աստուծոյ». որք են *վերնագոյն* դասքն. և հաստատութիւն զարարածս պատմէ և ո՛չ զփառս որպէս ցուցաւ: - 150. Նմանապէս և յայլ երիս յառաջնումն աւուր արար զլոյսն ժամանակեայ. զարեգակն և զլուսին և զաստեղս ի *վերնագոյն* տարրէ՛ հրոյն: - 227. Երկրորդ՝ ի յայտնութենէ *վերնագոյն* հրեշտակաց: - 336. Իսկ *վերնագոյն* սոցա. աստուած յաստուծոյ առաքեալ: - 535. Այլ *վերնագոյն* է քահանայն. վասն որոյ ունի զկրկինն: - 538. Որպէս թէ *զվերնագոյնն* կամ զանարժանս կամ վասն ախտի ինչ օրինել կամ ձեռնադրել. այլ զոր հոգին յայտնեսցէ զարժանիսն՝ նմա՛ կատարի: - 539. Եւ թէ ոք ասիցէ, աստուած *վերնագոյն* է և հանապազ օրինեմք զնա, և այլ զսուրբս նորա: - 539. Ասեմք առ այս, թէ որպէս ի մէջ սերովբէից և քերովբէից և աթոռոց ո՛չ ասի *վերնագոյն* և նուաստագոյն, զի համակա՛րգ են և շուրջ զաստուծով: - 547. Եպիսկոպոսն և քահանայն, զսոսա ի մի կարգ թուէ ի դէմս *վերնագոյն* դասուց երկնաւորաց. որք են Աթոռք. Քերովբէք. և Սերովբէք: - 608. Չորրորդ, հաւատն է՛ աստուածային առաքինութիւն. իսկ դևք զի են խստացեալ ի չար՝ ո՛չ ունին զղջումն որ է բարոյական. ապա և ոչ հաւատ որ է *վերնագոյն* և բարի կամաց խոկումն առ աստուած: - 784

**ՎԵՐՆԱԿԱՆ +** Այլ և Թ տէր ողորմեայն ի պատարագն. և Թ երեքսրբեանն, ի խորհուրդ Թ դասուց *վերնական* յերիս երրեակս որոշեալ: - 645

**ՎԵՐՆԱՅԻՆ +** Դարձեալ ասեն, թէ ամենայն ստորնային մարմինք՝ կառավարին *վերնային* մարմնովք. որպէս յա՛յտ է ի չորս եղանակս տարւոյն. այլև ծնունդ և աճումն՝ և բոյսք և պտուղք՝ ի շարժմանէ նոցա պատճառին. և շարժումն նոցա է՛ հարկաւոր. ապա ուրեմն ամենայն ինչ լինի ի հարկէ: - 10. Առ այս ասեմք, թէպէտ ստորնային մարմինք կառավարին *վերնային* մարմնովք, այլ մարդկային ներգործութիւնք կառավարին անձնիշխան կամօք. և անձնիշխան կամքն ո՛չ նըւաճի ի ներքոյ երկնային մարմնոց: - 10. Սիրովն ցանկամք *վերնային* բարւոյն: - 571

**ՎԵՐՆԱՏՈՒՆ +** Իններորդ՝ ի *վերնատունն:* - 50. Ըստ իրին նշանակէր զշնորհաց հոգին, զոր ի մարմին եղելոցն վերացոյց. և ի *վերնատունն* դարձեալ փչեաց: - 282. Եւ զանչարչարութիւնն ի *վերնատունն*. յորժամ զմարմինն իւր ուտել ետ աշակերտացն՝ անչարչարելի էր ներգործութեամբ և ոչ

թէ զօրութեամբ: - 282. Եւ *վերնատունն* ստամոքն: - 293. Եւ տէրն մի անգամ կատարեաց ի *վերնատունն* և ետ յառաքեալսն և ի մանկունս եկեղեցւոյ: - 329. Եւ ո՛չ միայն այս, այլ զեօթն օր անխմոր բաղարջ ուտէին ամենայն ժողովուրդն. և Աբրահամ և ղովտ բաղա՛րջ յօրինեցին զխորհուրդ փրկական մարմնոյ տեառն որ ի *վերնատունն* բաղարջով աւանդեաց: - 356. Ա՛յն է որ ի *վերնատունն* զմարմինն և զարիւնն իւր բաշխեաց յառաքեալսն: - 362. Եւ ապա՛ քահանայ ի *վերնատունն* և ի խաչին: - 450. Վասն է՞ր ի յորդանան աղաւնակերպ էջ, և ի *վերնատունն* հրով: - 455. Իններորդ՝ խորհրդական մարմինն սուրբ զոր բաշխեաց ի *վերնատունն* էր անապական և կենարար...: - 499. Նա՛խ այսպէս, եթէ ի *վերնատունն* քրիստոս ծունկն եկեր. պա՛րտ է ի նմին աւուր ծունկն ուտել: - 510. Ասեմք թէ՝ ի *վերնատունն* զհինն կատարեաց մինչ զմարմինն բաշխեաց և նոր օրէնս եդ. և մեք հնոյն ո՛չ եմք պարտական: - 510. Ապա թէ ոչ՝ և գառն կերաւ ի *վերնատանն*, կե՛ր և դու ի պահոցն: - 510. Յհինգերորդ զատիկ սա ինքն է հոգւոյն իջումն ի *վերնատունն:* - 524. Վասն է՞ր ի յորդանան աղաւնակերպ էջ հոգին սուրբ, և ի *վերնատունն* հրեղէն լեզուաւ: - 525. Երկրորդ՝ ի *վերնատանն* դասք առաքելոցն ի վերայ նոր հաղորդութեանն մարմնոյ և արեանն՝ նոր օրհնեցին զքրիստոս և ելին ի լեառն ձիթենեաց որպէս ասէ աւետարանն: - 528. Վասն որոյ ի *վերնատունն* յորժամ փչեաց յառաքեալսն՝ նախ ետ զարձակելն և ապա զկապելն: - 541. Յայս միտս և տէր մեր բաշխեաց զմարմինն և ետ առաքելոցն ի *վերնատունն:* - 600. Յհինգերորդ, օրհնեմք զեկեղեցիս, զի օրհնութիւն *վերնատանն* ուր տէրն պատարագեաց, և հոգին սուրբ էջ յառաքեալսն...: - 615. Աշխարհամատրանն. և յետ գալստեան Յոգւոյն կիրակէն. Տապանակին. Շողակաթին. և **դ** օր ի Խաչին տօնն. **բ** Գալստեանն. *Վերնատանն*. Եւ նոր կիրակէին: - 616. Նա՛խ՝ զի հոգին սուրբ պարգևք է խաչին քրիստոսի. այլ և ի *վերնատունն* լուսեղէն խաչիւ հանգեաւ յառաքեալսն: - 625. Եւ որ՝ քան զայս աւելի ասեն, որպէս տնօրինեցար. կամ ընծայեցար. կամ քո տէրութեամբդ. կամ որ եկիր ի բեթանիա. կամ ի *վերնատունն:* - 634. Երրորդն՝ ի *վերնատունն* հոգւով: - 640. Եւ զայս ուսաք ի քրիստոսէ. որ ի *վերնատունն* յետ ընթրեացն օրհնեցին և ելին ի լեառն ձիթենեաց: - 655. Նա՛խ՝ զի այսու՝ խաչին քրիստոսի հաղորդեսցուք. և սուրբ հացին զոր ի *վերնատունն* բաժանեաց: - 655. Այլ և ի *վերնատունն* զբաժակն օրհնեաց: - 655. Այն է որ յետ յարութեանն քրիստոս եմուտ ի *վերնատունն* և օրհնեաց զաշակերտսն: - 684. Զպայծառութիւնն՝ ի թաբօր լեառն. և Զանչարչարութիւնն ի յօրհնելն զմարմինն իւր և տալ աշակերտացն ի *վերնատունն* անչարչարելի էր մարմինն քրիստոսի ներգործութեամբ և ո՛չ զօրութեամբ: - 723. Տասներորդ, ասի հնձան և կտակարանքն սուրբ. ուր հին և նոր իմաստութիւն ժողովեցաւ ի խառնարանին գինւոյ. յորմէ բաժակէ՛ արբին առաքեալքն ի սուրբ *վերնատունն*. և արբուցին ամենայն տիեզերաց...: - 749

**ՎԵՐՈՅ +** Չորրորդ, զի ո՛չ լինի ի դիպուածոց ինչ. որպէս սղից ոմանց պատահին բարեբախտութիւն, կամ վատաբախտութիւն. ա՛րդ՝ թէ է՛ ամենայն ի հարկէ, ո՛չ լինին *վերոյ* ասացեալքս: - 8. Այլ թերևս ասիցէ ոք եթէ՝ *վերոյ* ասացեալ գործառնութիւնքս պատշաճին քրիստոսի վասն բնութեան բանին, և ո՛չ վասն մարմնոյն: - 72. Եւ թէ ոք ասիցէ, ամենայն *վերոյ* ասացեալքս գո՛ն և յամուսնացեալ երիցունս աշխարհի, և քահանայագործե՛ն: - 167. Բաղկացական է, որ ընդ մարմնոյ մասնկանցն գոյանայ ի ներս և ի դուրս. *վերոյ* և ներքոյ շուրջանակի. զի իւրաքանչիւր մասունք ի տեղին ունին զդրութիւնն. և կայացեալ ի բոլորն: - 174. Զի ըստ իմաստ նոյն է՛ աստուած ամենայն ուրէք և ո՛չ ուրէք. ոչ ի տեղւոջ իմիք՝ և ո՛չ բացեայ ի տեղւոջէ իմիք. այլ *վերոյ* սորա, և ներքոյ սորա. ի մէջ սորա, և արտաքոյ սորա: - 180. Երկրորդ՝ այսպէս. զի օդն հողմովն փեռեկէ՛ զհուրն ի **բ** կիսագունդս. *վերոյ* և ներքոյ: - 181. Զի բոյսք մանունք և չորքոտանիք մանունք կարեն ի նոյն ամի զնմանն ծնանիլ ըստ *վերոյ* ասացեալ երրեակ թւոյ ամսոյ, կամ կրկին վեցեկի: - 264. Յհինգերորդ՝ զի ունի *զվերոյ* ասացեալն խորհուրդ տասնեակ թւով. վասն որոյ յիրաւի անդրանիկն պատւեալ լինէր թէ ի հոգևորն և թէ ի մարմնաւորն: - 310. Եւ Իններորդ՝ Պապն. որ է՛ կաթողիկոս. գերագոյն *վերոյ* ասացելոցն: - 606. Որ և ոչ ժամանեաց ի կատար բանիս *վերոյ* ասացեալ խնդրողն: - 772. Եւ այս յայտ է բազում վկայութեամբ ի հարցմանցդ *վերոյ:* - 776. Եւ ևս. կրկնեալ սուտք համազգիք ճշմարիտ. բաղարկոցի ըստ ասիցդ *վերոյ:* - 787. Փեռեկելով զերկոսին կիսագունդս ներքոյ և *վերոյ* և ի միջի հաստատ կացելոյ երկրի: - 788

***Ի ՎԵՐՈՅ +*** Այլ արդ հուպ պատճառն է՝ հարկաւոր, և ներգործութիւն իւր. իսկ հեռին ո՛չ է հարկաւոր որպէս ասացաւ *ի վերոյ:* - 15. Իսկ «զեսաւն ատել և զյակոբ սիրելն» է՛ որպէս ցուցաւ *ի վերոյ*. զի զընտիրսն սիրէ և զխոտանսն անարգէ՛ նախատես ճանաչմամբն: - 20. Իսկ չարն ոչընչութիւն է. և ո՛չ ունի առաջք և վերջք. վասն որոյ անչափ է չարն և անպատճառ, որպես *ի վերոյ* ցուցաւ: - 23.

Իսկ այլ բազում օրինակ երրորդութեանն ասացաւ *ի վերոյ* յերեք համարն: - 53. Եւ *ի վերոյ* բանին աստուածաբանութիւն: - 103. Տասներորդ` որպէս միակն է ի ներքոյ տասնեկին և հարիւրեկին և հազարեկին և բիւրեկին, այսպէս և *ի վերոյ* նոցա՛ է: - 110. Այլ և *ի վերո՛յ* և գերազանց է ամենայն արարածոց: - 110. Այլ` կոչի աստուած յաւիտեան. և միշտ. և ժամանակ. զի պատճառ է սոցա որպէս ասացաւ *ի վերոյ:* - 116. Վեցերորդ` ժամանակն է ի ներքոյ երկնից. և միշտն *ի վերոյ* երկնից. և յաւիտեանն ի վերոյ քան զամենայն երկինս: - 116. Երկրորդ` զի խորհրդով և ծածո՛ւկ է. և ո՛չ առակաւ և նշանակաւ. որպէս այլ աստուածաբանութիւնքն որպէս ասացաւ *ի վերոյ:* - 123. Կամ ննջել և զարթնուլ. որ ո՛չէ ի յաստուած. այլ դնելով *ի վերոյ* ըստ ներգործութեանն տարացուցի: - 123. Նախ` զի որպէս արեգակն ունի մշտնջենաւոր զլոյսն` և առնէ *ի վերոյ* երկրի տիւ և գիշեր: - 125. Եւ են առաջինքն իմացականք. և վերջինքն իմանալիք. և միջինքն իմացականք և իմանալիք. որպէս ա՛յլ եղանակաւ ասացաւ *ի վերոյ:* - 134. Ապա յա՛յտ է` զի գիրն ներգործակա՛ն է իմացութեանցն որ ըստ ինքեանն զոր *ի վերոյ* ասացաք: - 143. Հրեշտակք *ի վերոյ* ջրո՛յ են. բայց ի ներքոյ հաստատութեան խնամածուք կարգեալ են աշխարհի և մարդկան: - 150. Ի փորձութեանց ծանեաք զշահն որ ասացաւ *ի վերոյ*...: - 161. Աղաչեմ զոր յիշեցաւ *ի վերոյ* բացայայտել, եթէ ի նախատեսութիւնն աստուծոյ աշխարհի զօրութեամբ ո՛չ ասի: - 167. Խնդրեմ և զայս որ ասացաւ *ի վերոյ* թէ պատահումն ո՛չ է յաստուած: - 169. Որպէս ասացաւ *ի վերոյ*, զխաւարումն լուսոյ` և զամիսս` լուսինն առնէ: - 190. Ժամանակն թէ ո՞րպէս բաժանի ի մշտնջենաւորն և յաւիտեանցն` ասացաւ *ի վերոյ* ի **ը** գլուխն` **ժբ** համարն: - 198. Տասներորդ` ամպն ո՛չ միայն զցօղ անձրևէ, այլ և ձիւն և կարկուտ և հրայրեցութիւն. որպէս ասացաւ *ի վերոյ:* - 206. Ճաշակելիքն ջրոյն` *ի վերոյ* քան զնա: - 215. Հոտոտելիքն և լսելիքն օդոյն` *ի վերոյ* նորա: - 215. Նախ` որպէս ասացաւ *ի վերոյ*` երեք տեսութիւն սրբոցն է **գ** իրին. այսինքն զգայութեան. երևակայութեան. և իմացման: - 221. Նա՛խ` որպէս ասացաւ *ի վերոյ*, հողն ունի զայլ **գ** տարերքն ի յինքն խառնեալ. յորժամ ի հողոյ ասէ` իմանալի զ**դ** տարերս: - 229. Նոյնպէս մարմինն է ի ներքոյ. և հիւթ արեանցն *ի վերոյ*. և ապա շունչն օդոյ և հուր լուսաւորացն *ի վերոյ:* - 232. Վասն որոյ գլուխն է՛ *ի վերոյ*...: - 232-233. Չորրորդ` ի գլուխ մարդոյն սակաւ է հողն և օդն բազում. վասն այն *ի վերո՛յ* է: - 233. Գլուխն որպէս երկինք *ի վերոյ*. և ոտքն որպէս երկիր ի ներքոյ. զի ծանրութիւնք և ծորմունք ամենայն ի վայր հոսեսցին: - 233. Վասն է՞ր մասնկանցն դիրք` աչքն` *ի վերոյ* է եդեալ. և ականջն ի կողմանէ. և հոտոտելիքն զառ ի վայր. և այլն ըստ կարգի: - 235. Զի շօշափելիքն ի ներքո՛յ է որպէս երկիր. և ճաշակելիքն *ի վերոյ* որպէս ջուր. լսելիքն յօդն է. և տեսանելիքն հուրն *ի վերոյ:* - 235. Եւ այն զի աչքն ի դէմքն է, և ականջն ի կողմանէ. զի աչքն ուղղակշիռ ի դէմն տեսանէ. և ականջն շուրջանակի յամենայն կողմանէ լսէ. *ի վերոյ* ի ներքոյ և այլն: - 235. Նա՛խ` յօնքն *ի վերոյ*` զքիրտն արգելէ՛: - 239. Նախ` մազն *ի վերոյ*. և մորթն. և միսն. վերին ոսկրն. և ներքին պինտ ոսկրն. խելապատակ մաշկն. և ուղեղն: - 239. Ունականն է` յորժամ ժողովէ զկերակուրն` ձկտի և լայնանայ և փակէ՛ զամենայն դրունսն որ ի ներքոյ և *ի վերոյ* և ի կողմանէ, զի մի՛ թափեսցի կերակուրն: - 242. Կամարաւունքն` թէ *ի վերոյ* շարակցեսցին` սակաւիմա՛ստ է. թէ վայր ի յռնգունսն հասցէ, սրամիտ է: - 246. Եւ զոմանս ունի խառնեալս ընդ մարմնոյ. որպէս է բնական զօրութիւն կենդանականն և շնչականն որպէս ասացաւ *ի վերոյ:* - 249. Եւ զանազանութիւն ներքին և արտաքին զգայութեանցն ասացաւ *ի վերոյ* յաղագս հրեշտակաց ի **ը** գլուխն, ի **ժզ** համարն: - 249. Ըստ բնականին այս է. զի ամենայն իր որ լինի` յանկատարութենէ ի կատարումն ելանէ, և ի զօրութենէ ի ներգործութիւն որպէս *ի վերոյ* ասացաւ: - 267. Եւ այս ևս չէ՛ ընդունելի. զի ցուցաւ *ի վերոյ* եթէ յարացոյցն նոյն ինքն աստուած է ամենեցուն: - 273. Եւ այս ևս ո՛չ է ընդունելի. զի սոցա պատասխանի տայ սուրբն կիւրեղ ի գիրս պարապմանց թէ` որ ասաց զպատկերն, իմանամք զնմանութիւնն ի պատկերին որպէս ցուցաւ *ի վերոյ*. զի ամենայն պատկեր ի հարկէ նմա՛ն է: - 273. Եւ նման աստուծոյ, զի սիրեմք զբարութիւն որպէս ասացաւ *ի վերոյ:* - 273. Իմանայ ընդ հրեշտակաց որպէս ասացաւ *ի վերոյ:* - 275. Դարձեալ` մէջ և ե՛զր է ամենայն ստեղծուածոց որպէս ասացաւ *ի վերոյ:* - 275. Եւ բաց յայսցանէ` բնական որակօք ներհա՛կք են միմեանց **դ** տարերքդ որպէս ցուցաւ *ի վերոյ:* - 278. Կամ լեարդն ի ներքոյ. սիրտն ի մէջն. և թոքն թեթև *ի վերոյ:* - 293. Դարձեալ` ցանկութիւնն ի ներքոյ. ցասմնականն ի մէջն. և բանն թռչուն *ի վերոյ:* - 293. **Կամ որպէս ասեն թէ` ներսէս անուն արուեստաւոր տապանին` շինեաց իւր տուն *ի վերոյ* կողմանէ. և զի ո՛չ էր հրամանաւն աստուծոյ` սատակեցաւ նա՛ անդ, և զնորա գէշն ուտէր ագռաւն:** - 294. Համեղական հայըն որ կարո՛ղ է զամենայն լեզուս յինքն ամփոփել և բոլոր խօսիլ. և այլքն ո՛չ` որպէս ասացաւ *ի վերոյ:* - 299. Նոյնպէս և տէրն մեր ետ հաւատացելոցն զկենարար մարմինն և արիւնն իւր. յորոց խնդրէ զգործս տասնաւոր.

այսինքն զկատարեալս. և զկատարումն **ժ** բանեան օրինացն. ի յորս է՛ մաքրութիւն **ժ** զգայարանացս որպէս *ի վերոյ* ասացաւ: - 302. Վասն քրիստոսի և մելքիսեդեկի, ասացեալ է և յայլ ուրեք *ի վերոյ* ի գիրս աստուածաբանութեան **ե** գլուխն՝ **ի** համարքն: - 302. Երրորդ՝ կոտորեալ մանկունքն բեթլէհէմի ո՛չ էին ի զաւակացն հռաքէլի որպէս ցուցաւ *ի վերոյ:* - 312. Եօթներորդ՝ զոհ՝ պատարագն որ ի նաշիոյ և յիւղոյ որպէս ասացաւ *ի վերոյ:* - 358. Եւ այսպէս ըստ բարուց մարդկան ընտրէր նոյ ի սրբոցն է. և յանսրբոցն **բ**. որպէս ասացաւ *ի վերոյ* **ժզ** գլուխն ի **զ** համարն: - 364. Եւ նշան սրբոյն և պղծոյն ըստ օրինացն ասացաւ *ի վերոյ:* - 366. Իսկ թէ ի հանդերձն յայտնի մեղանչեմք առանց ապաշխարութեան, լուցկի առնէ հրոյն որպէս ասացաւ *ի վերոյ:* - 368. Արիւն ուտելն՝ և հեղձուցանելն՝ և գազանաբեկն՝ մի էր մեղք՝ որպէս ասացաւ *ի վերոյ* **ժը** գլուխն ի **զ** համարն: - 371. Այլ և նաշիհ մարմին սուրբ. և գինի արիւնն. և իւղ օծումն աստուածութեանն. որպէս ասացաւ *ի վերոյ:* - 374. Եւ վասն կախարդաց գրեալ է *ի վերոյ* ի **ի** գլուխն **իէ** համարն: - 389. Զոր ա՛յլ մարգարէ ո՛չ արար. որպէս գրեալ է **ի ի** համարն *ի վերոյ:* - 399. Երկրորդ՝ ընդէ՞ր ոչ երևեցաւ սաւուղայ. այլ միայն կնոջն որպէս ասացաւ *ի վերոյ:* - 429. Այլ ի դատաստանն քննութեան ջնջեալ է զոր ինչ մեք ի մտի ունիմք. որպէս ասացաւ *ի վերոյ:* - 433. Եւ շնորհք նոր օրինացս հայի յողորմութիւնն աստուծոյ և ի փառս վերինն եէմի որպէս ասացաւ *ի վերոյ:* - 439. Եւ միանգամայն յադամայ ի ծնունդն քրիստոսի ամք **ռճղը.** ըստ եօթանասնիցն որպէս ասացաւ *ի վերոյ:* - 453. Նա՛խ՝ զի գործ ողորմութեանն է ի սկիզբն աշխարհի՝ և ի մէջն. և ի կատարումն յարութեամբ մարդկան որպէս ցուցաւ *ի վերոյ:* - 458. Եւ ա՛յս ի վայրկեան ժամու որպէս ասացաւ *ի վերոյ:* - 471. Է՛ և այլ եղանակ ծննդեան տն բաղդատութեամբ առ մովսէս ասացեալ *ի վերոյ* ի **ի** գլուխն, ի **իգ** համարն: - 472. Եւ զի հոգին է ևս ի հօրէ, սակայն բղխումն է և ո՛չ ծնունդ որպէս ցուցաւ *ի վերոյ:* - 472. Չորեքտասաներորդ՝ ըստ մեծին գրիգորի աստուածաբանի և սրբոյն բարսղի կեսարացւոյ որպէս ասացաւ *ի վերոյ:* - 484. Ծանի՛ր, զի վասն չարչարանաց ասացեալ է *ի վերոյ* ի **ժա** պրակն աստուածաբանին գրիգորի ընդ դէմ արիոսի: - 489. Ասեմք թէ՝ ո՛չ զհարկաւորն, այլ զկամաւոր մահն կրեաց որպէս ցուցաւ *ի վերոյ:* - 497. Դարձեալ ասեմք, մեղքն ապականութիւնն են առաջին և վերջին ծայրքն կրից. իսկ մահն միջին որպէս ցուցաւ *ի վերոյ:* - 497. Եւ պատճառն ասացաւ *ի վերոյ*...: - 498. Հինգերորդ՝ ապականութիւն մեր մարմնոցս է՛ ի սերմանէ հօր ի ձեռն կնոջ խառնեալ. իսկ մարմին բանին ո՛չ է ի սերմանէ հօր և մօր. այլ ի կուսական արգանդէ և յանապական արենէ բեղնաւորեալ որպէս ցուցաւ *ի վերոյ* ի սոյն գլուխ ի **ժ** համարն. ապա ուրեմն անապակա՛ն է մարմին բանին աստուծոյ: - 499. Ասեմք առ այս՝ եթէ ո՛չ են նման մահկանացու և ապականացու ասելն. զի ա՛յլ է մահ և ա՛յլ ապականութիւն որպէս ցուցաւ *ի վերոյ:* - 500. Ապա թէ ոչ՝ նա՛ որ զադամ երեսնամեայ ստեղծ, կարէ՛ր և նոյն հասակաւն ծնանիլ. այլ այն ո՛չ լինէր ըստ սովորութեան մեր որպէս ցուցաւ *ի վերոյ:* - 501. Եւ այս ցուցաւ **ե** գլխով *ի վերոյ* ի **իբ** գլուխն: - 502. Ասեմք, զի ո՛չ ունին շունչ օդոյ այլ շունչ ջրոյ. և հանեալ ի ջրոյն պակասի շունչն. որպէս ասացաւ *ի վերոյ* ի **ժը** գլուխն ի **զ** համարն: - 511. Եւ ըստ եկեղեցոյ ցուցաւ խտրութիւնն *ի վերոյ* ի **իա** գլուխն **խե** համարն: - 511. Ա՛րդ՝ եռակի՛ է համբարձումն քրիստոսի. որ է յերկրի, ի վերայ երկրի, *ի վերոյ* երկնից: - 520. *Ի վերոյ* երկնից՝ զուարճալի համբարձմամբ: - 520. Իսկ թէ **ը** օր տօնեմք, ասացեալ է *ի վերոյ* ի **իա** գլուխն, **ծա** համարն: - 525. Առաջին՝ ի բնական. որպէս երէոց, անասնոց, թռչնոց, և մրջմանց. որպէս ցուցաւ *ի վերոյ* ի **ժգ** գլուխն, **ծա** համարն: - 536. Այլ իմաստութիւն և հանճար զանազանեալ է *ի վերոյ* ի **ժզ** գլուխն, **իէ** համարն տես անդ: - 537. Եւ վասն ուխտի և սահմանի ասացաւ *ի վերոյ* ի **իբ** գլուխն, **կե** համարն: - 538. Իսկ առ ներքինս օրհնելն՝ իշխանութիւն և շնորհաց տալն թարգմանի. որ քահանայն կամ եպիսկոպոսն տայ. որպէս ցուցաւ *ի վերոյ* ի **իգ** գլուխն, **հե** համարն: - 540. Եւ թէ հաւատն առաւել է քան զգիտութիւն, ցուցաւ *ի վերոյ* յաստուածաբանութիւնն դիոնիսեայ ի **ժէ** համարն տես: - 573. Կարգ սիրոյն ասացաւ *ի վերոյ* յաստուածաբանութիւնն դիոնիսեայ ի **թ** գլուխն, ի **ժզ** համարն: - 576. Եւ ասացեալ է վասն հանճարոյ և գիտութեան *ի վերոյ*. ի **ե** հատորն ի **իէ** համարն: - 580. Դարձեալ կոչին և բարոյական և տնտեսական և քաղաքական առաքինութիւնք. որպէս ասացաւ *ի վերոյ* ի ճառս խոհեմութեան: - 582. Զի *ի վերոյ* խաղաղութեան ո՛չ է այլ առաքինութիւն. զի խաղաղութիւնն է վախճան և կատարումն ամենայն առաքինութեանց: - 586. Եւ ասացեալ են գոյացականք մկրտութեանն *ի վերոյ* ի մկրտութիւն տեառն ի **իե** համարն գտցես: - 590. Զի և տիրամայր կոյսն ո՛չ էր ի ժամ մկրտութեանն ընդ քրիստոսի ի յորդանան որպէս ասացաւ *ի վերոյ:* - 591. Այլ և առաքեալքն և հետևօղք նոցա հարքն սուրբք՝ ո՛չ գիտէին զխառնարանն. և դու ուսար և խառնես ջուր և ընդ անիծիւք նոցա մնաս որպէս ցուցաւ *ի վերոյ:* - 596. Իսկ զի անխմոր բաղարջով է խորհուրդն՝ ասացաւ *ի վերոյ* **իա** գլուխն **լը** համարն: - 597. Նա՛խ՝

եթէ ո՛չ զմարմինն տան ժողովրդեանն. այլ սոսկ հաց և գինի. զի մարմին քրիստոսի այն մինն է որ օրհնեցաւ որպէս ցուցաւ *ի վերոյ:* - 600. ...զոր ասացաք *ի վերոյ* թէ՝ զդրոշմն և զառաջին օծումն և զվերջին օծումն կատարեմք ի մկրտեալն: - 604. ...զի անխառնակ և անշփոթ երևեցի մադանալն բանին յազգէն յուդայ. որպէս ասացաւ *ի վերոյ* ի **լ** գլուխն, **դ** համարն: - 612. ...և ապա լինի եկեղեցի և ժողովուրդ քրիստոսի. որպէս ասացաւ *ի վերոյ* **լա** գլուխն, **գ** համարն: - 614. Յայս միտս ի վերայ սեղանոյն խունկ վառեմք. որպէս ասացաւ *ի վերոյ* **իա** գլուխն, **խգ** համարն: - 615. ...զի և մեք եկեղեցի կոչիմք որպէս ասացաք *ի վերոյ:* - 615. Երրորդ խոստովանութիւն և վկայութիւն է. իբր բարի՛ է. երջանի՛կ է. անմա՛հ է բնութեամբ և այլն. որպէս ասացաւ *ի վերոյ:* - 624. Եւ մեսեդի ճաշոյն և երեկոյեան, չորրորդ մասն դորակի գինւոյն. որպէս ասացաւ *ի վերոյ* ի **իա** գլուխն **ծբ** համարն: - 629. Դարձեալ՝ սկիզբն աղօթիցն է՛ առ հայր. և մէջն որ է՛ խաղաղութիւնն առ հոգին սուրբ. որպէս ասացաւ *ի վերոյ*...: - 633. Եօթներորդ հոգոյն գալստեան. որպէս ասացաւ պատճառն *ի վերոյ* ի **իա** գլուխն, **ծա** համարն: - 649. ...որպէս ասացաւ *ի վերոյ:* - 654. Իսկ վասն ողորմութեան ասացաւ *ի վերոյ* **լ** գլուխն յառաջին համարն: - 654. Եւ որպէս ասացաւ *ի վերոյ* **լե** գլուխն, **խդ** համարն: - 655. Արդ՝ ա՛յլ ամենայն փոփոխմունք ասացան *ի վերոյ* ի զանազան տեղիս: - 664. որպէս ցուցաւ *ի վերոյ* **լե** գլուխն ի կարգ աղօթիցն ի **խա** համարն: - 676. Իսկ թէ յեկեղեցիս ո՛չ թաղեմք՝ ասացաւ *ի վերոյ* **լե** գլուխն **լթ** համարն: - 678. Ոմն լի՛ է անմահութեամբ և խնդրութեամբ. և ոմն լի դառնութեամբ և յուսահատութեամբ. որպէս ասացաւ *ի վերոյ:* - 687. Արդ չև է եկեալ դատաւորն. և ոչ է եղեալ դատաստան. նա և ո՛չ հատուցումն. ո՛չ բարեաց և ո՛չ չարաց որպէս ասացաւ *ի վերոյ:* - 691. ...զոյգ և ի միասին մտցեն ի հոգևոր կեանքն որպէս ասացաւ *ի վերոյ:* - 691. որպէս ասացաւ *ի վերոյ* **լգ** գլուխն ի **իբ** համարն: - 696. Եւ վասն զի մի օր է հատուցումն և ոչ յամենայն օր ասացաւ *ի վերոյ:* - 698. Հինգերորդ, հոգի և մարմին ի միասին գործեն զմեղս որպէս ասացաւ *ի վերոյ*...: - 699. ...զի զգործ դատաստանին այժմ կատարէ՛ որպէս ցուցաւ *ի վերոյ:* - 700. ...որպէս ասացաւ *ի վերոյ* ի ճառս խոստովանութեան: - 701. Այլ և վասն դժոխոց ասացաւ *ի վերոյ* ի մարդեղութեան ճառն. ասի և յառաջիկայդ ի կատարածի: - 705. Այլ և վասն կապելոյն սատանայի գրեալ է ի **թ** գլուխն ի **իզ** համարն *ի վերոյ:* - 706. Եւ վասն հրեղէն վիշապին և տտան նմին ասացաւ *ի վերոյ* **թ** գլուխն **իե** համարն: - 706. ...որպէս ցուցաւ *ի վերոյ* ուր յաղագս անկման դիւաց ասացաւ: - 708. ...իսկ հոգիք սրբոցն նախ ծաղկին բնական պայծառութեամբն իւրեանց որպէս ցուցաւ *ի վերոյ*, և ապա՛ յետոյ արդեամբք պտղոյն կատարին ի հանդերձեալ կեանքն: - 721. Զի *ի վերոյ* կացցէ դատաւորն, և ի ներքոյ դժոխքն բացեալ: - 738. ...որպէս ասացաւ *ի վերոյ* յութերորդ հատոր գրոցս **լ** համարն: - 746. Յարութիւն մարդկան ի վայրկեան ժամանակի և յանկարծակի լինի որպէս ցուցաւ *ի վերոյ*. այլ զյերկարութիւն ժամու քննութեան դատաստանին, ոմանք ժամ մի ասեն. որքան եկաց ընդ ադամայ ի քննութիւն հարցմանց յետ յանցանաց նորին: - 747. Ոմանք որդն զխիղճ մտացն ասեն որպէս ցուցաւ *ի վերոյ:* - 753. Որպէս համեմատեցաւ *ի վերոյ* ի **ժթ** գլուխն, **ժբ** համարն: - 756. Իսկ չար՝ թէպէտ լինի ներգործութեամբ անձնիշխան կամօք, այլ բնութեամբ չար ո՛չ է ըստ ինքեան. զի ո՛չ է էութիւն այլ պակասութիւն բարւոյ. որպէս ցուցաւ *ի վերոյ* ի **ե** համարն: - 758. Դարձեալ ասեմք առաջին կեանք մասնաւոր, զոր նախ քան զյանցանելն ունէր. անկարօտութիւն. լուսաւորութիւն. անծերանելի հասակ. անմահ կեանք. և այլն որ ասացաւ *ի վերոյ* **ժէ** գլուխն **լզ** համարն: - 758. Եւ այնպէս մնացեն յաւիտեան որպէս ցուցաւ *ի վերոյ:* - 760. Այլ ի նոցանէ՛ անկաւ, որպէս ցուցաւ *ի վերոյ* **թ** գլուխն, **իբ** համարն: - 760. Եւ ըստ իմաստասիրին, յառաջ քան զմարմինն յորում է զանազանութիւն լուսոյ՝ է՛ միւսն *ի վերոյ* յորում է միակերպութիւն լուսոյ: - 763. Երրորդ բաղդատութեամբ այնորիկ՝ որ եղիցի *ի վերոյ* ինքեան. զի առ հոգի իւր կատարեալ կարիցէ ունել հնազանդութիւնս: - 764. Որով զամենայն ի խոնարհ թողեալ *ի վերոյ* անցանեմք անցաւորացս: - 769. Նա՛խ՝ որպէս *ի վերոյ* ասացաւ. զի թէ ադամ որ սկիզբն և պատճառ էր մեղաւորաց՝ ազատեցաւ. ապա ուրեմն և որդիքն որ վասն յանցանաց նորա՝ ազատեսցին: - 776. Իսկ առ լուծումն խնդրոյս թէ վասն է՞ր արդեօք առ նորս շնորհ՝ որպէս աւազանին և կարգին ո՛չ բառնի ընդ բառնիլ շաղկապին. իսկ առ հնովն բարձաւ. որպէս յա՛յտ է *ի վերոյ* ասիցդ ադամայ և յայլոցն: - 782. Եւ կատարեալն տեսութիւն խնդրեցաւ *ի վերոյ* ի **ժզ** գլուխն **իբ** համարն: - 785. Յորում ամի եղև ծռատոն զատկաց ազգի կոչեցեալ յունաց. *ի վերոյ* ասացեալն աւուր նորոյս տէրունեաց: - 789

***Ի ՎԵՐՈՅ ՔԱՆ +*** Զի որ խոնարհեցաւ բանն ի մարմին՝ նո՛յն բարձրացաւ մարմնով. և որ էջն ի ստորինս երկիր, նո՛յն է որ ելն *ի վերոյ քան* զամենայն երկինս. և որ ունայնացաւ՝ նո՛յն ելից զամենայն: - 94. Վեցերորդ՝ ժամանակն է ի ներքոյ երկնից. և միշտն ի վերոյ երկնից. և յաւիտեանն *ի վերոյ քան*

զամենայն երկինս: - 116. Եւ այլ վարդապետք ասեն, սիրել պարտ է նախ զայն որ *ի վերո՛յ է բան* զմեզ. այսինքն զաստուած. և ապա՛ զմեզ. յետ որոյ զընկերն. և ապա՛ զմարմինս մեր. և ի նոյն աստիճանս զմարմին ընկերին. զի մարմինն երկրորդ է հոգւոյն: - 576. Տասներորդ, **բ** են բանականաց տեսակ. մինս տարրական. և միւսն գերաշխարհիկ *ի վերոյ բան* զհինգերորդ էութիւնս երկնից...: - 654

**ՎԵՐՈՅ ԳՐԵԱԼ +** Եւ թէ ասիցէ հակառակօղն, եթէ՝ *վերոգրեալ* գործառնութիւնքս համարին հոգւոյն սրբոյ ո՛չ որպէս աստուծոյ, այլ որպէս պաշտօնէի: - 59. Եւ զամենայն մեղք ըստ կարգի *վերոյ գրելոց* խոստովանեսցի: - 601. Որ և ամենայն *վերոյ գրեալքդ* առակք, անառակին, մոլորելոյն, կորուսելոյն և այլն ևս, այսպէս ուղղին. այսինքն նմա՛, վասն նմա՛, որպէս նմա՛: - 778

**ՎԵՐՈՒՍՏ +** Երկրորդ՝ ըստ պատւոյն. զի այս երկնային և *վերուստ* իջեալ. իսկ այնոքիկ երկրաւոր և շնչաւոր որպէս ասէ առաքեալն: - 269. Նայիլն *վերուստ* ի վա՛յր է. որպէս ասէ՝ «նայեցարո՛ւք երկինք»: - 407. Ասեն վարդապետք թէ Բունն կիպարի էր *վերուստ* ի վայր. և Խոտորնակն արմաւենի: - 494. Երկրորդ՝ մեղքն ի հոգւոյն և ի մարմնոյն ի վեր ելանէ. իսկ արտասուքն *վերուստ* ի վայր հոսի և կորուսանէ՛ զնա: - 619

***Ի ՎԵՐՈՒՍՏ +*** Զի որքան *ի վերուստ* ի վայր իջանէ՝ ի բազումս բաժանի. որպէս ի սեռէ ի տեսակս և յանհատս իջեալ բազմանայ: - 123. Մարդն՝ զի այրացեալ աստուած. և արծուին՝ զի հոգին *ի վերուստ* պարգևեալ: - 132. Հինգերորդ՝ նշանակէ զչորեսին աւետարանիչքն. մարդն զՄատթէոս՝ զմարդեղութիւն բանին ցուցեալ առիւծն զՄարկոս՝ արիաբա՛ր աւետարանեալ. «և էր ընդ գազանսն» ասէ. եզն զՂուկաս՝ յերկարածիգ պատմութեամբ. և եզն պարարակ կոչեցեալ. արծուին ըզՅօհաննէս՝ *ի վերուստ* զբանն աւետարանեալ: - 132-133. Երրորդ՝ որպէս պօղոսի տուաւ խայթ մարմնոյն զի մի՛ զ'*ի վերուստ* առեալ շնորհին և զօրութիւն՝ հպարտութեամբ լքանիցէ...: - 158. *Ի վերուստ* բախէ՛ և ի վե՛ր բարձրացուցանէ: - 202. Իշխանութիւնք ամենայն *ի վերուստ* յաստուծոյ են իջեալ առ ի մարդիկ վասն կարգաւորելոյ զնոսա...: - 537. Վասն ի *վերուստ:* - 659. Նախ կոչելով զերկինս *ի վերուստ* որ են հոգիքն. և զերկիր որ են մարմինք: - 713

**ՎԵՐՋ +** Իսկ չարն ոչնչութիւն է. և ո՛չ ունի առաջք և *վերջք*. վասն որոյ անչափ է չարն և անպատճառ, որպես ի վերոյ ցուցաւ: - 23. Եւ զայլ ամենայն բնախօսութիւն յաղագս բարւոյ և չարի՝ գտցես ի Դիոնէսիոսի ի չորս գլուխն յաստուածային անուանսն. և ի ստորոգութիւնսն ի հակակայից ճառն. և ի սահմանս դաւթի ի *վերջն*...: - 24. Այլ և զամս ծննդեանն քրիստոսի՝ և վասն եօթներորդացն դանիէլի՝ գտցես ի չորրորդ քազաւորութեանց *վերջքն* ի **լ** համարն. զոր ընդդէմ հրէից գտցես բան: - 29. Ութերորդ՝ զնա օ՛ձ դարանակալ ասէ ի ճանապարհի. և սոքա առաջին օձին նմանեալ՝ հրապուրեն զբազումս. և արտաքսեն ի դրախտէ եկեղեցւոյ. և թոյնք իժից ի ներքոյ շրթանց ունելով և խայթոց՝ զի առորս մերձենան, ի յսկիզբն բանից կամ ի *վերջն*՝ մահացուցանեն զհոգիս. երկճղի ունելով լեզու նենգաւոր՝ չար և բարի, ծածուկ և յայտնի: - 35. Իսկ ձմեռն է կատարած և *վերջք* կենցաղոյս. վասն այն բոյսք և ծնունդք դադարին և չորանան: - 198. Երկրորդ՝ զի **խ** քաղաք առին ի բենիամենէ՛ յուդայի ցեղքն վասն շնութեան կնոջն պատահելոյ. և կոտորեցին զնոսա առ հասարակ իեռ արս. և մնաց վեց հարիւր այր զոր յետոյ ըստացան ժառանգութիւն իւրեանց. որպէս յա՛յտ է ի դատաւորաց *վերջքն:* - 312. Եւ թէ զի՞նչ է խորհուրդն, գտցես ի չորրորդ թագաւորութեանց *վերջքն* **իթ** գլուխն **լ** համարն: - 421. ...որ է *վերջք* և աւարտ ամենայն ժամուց բոլոր աւուրն: - 622. Վասն է՞ր զամենայն աղօթից *վերջքն* ի քրիստոս աւարտեմք: - 625. Վասն է՞ր սարկաւագն զամենայն քարոզի *վերջքն* յաղօթից ձևս փոխէ ասելով՝ կեցո՛ և ողորմեա՛: - 625-626. Վասն է՞ր զերեքսրբեանն որ է սուրբ աստուածն՝ յառաւօտուն և յերեկոյին ժամն ի *վերջքն* երգեմք. և ի պատարագին ի սկիզբն: - 634. Վասն է՞ր ի բուն բարեկենդանն զձայնն ի *վերջ* փոխեմք: - 641. ...կամ յառաջնոյն ի *վերջն* ընթանալ կարգաւ. կամ ի վերջնոյն յառաջքն: - 642

**ՎԵՐՋԱՆԱԼ +** «Զի թէ լոյսն վասն զգեստուն հալածեցաւ ի խաւարէն, խաւարն ո՞րչափ ևս». զի մեծ է նմա հալածիլն՝ քան թէ մեր *վերջանալն* թշուառութեամբ: - 43

**ՎԵՐՋԸՆԹԱՑ** - Նախընթաց, համընթաց, *վերջընթաց:* - 731. Եւ *վերջընթացն* է հրեղէն ծովն ի հարաւ. ուր առաքէ՛ զմեղաւորս ի հուրն յաւիտենից: - 731

**ՎԵՐՋԻՆ +** Զի ի տեսութիւնն աստուծոյ ո՛չ է առաջին և *վերջին*. այլ բոլորն համանգամայն և կատարեալ: - 15. Իսկ ի տեսութիւն մարդոյ է՛ առաջին և *վերջին*. զի զանցեալն տեսանէ յիշմամբ, և զներկայն իմացմամբ. և զհանդերձեալն ի պատճառն իւր ըստ ժամանակին փոփոխման որպէս ասացաք: - 15. Դարձեալ՝ չափ և սահման ի *վերջին* եզր էութեան նկատէ, և սկիզբն և պատճառ ի յառաջինն: - 23. Տասներորդ՝ Մեսիայն որ է՛ առաջին և *վերջին:* - 29. Իսկ էն՝ զմիշտ լինիլն ցուցանէ.

ըստ այնմ՝ «ես եմ ալֆա և օմեգա». այսինքն առաջին և *վերջին:* - 49. Իններորդ՝ ի *վերջին* աւուրն առաջնորդէ՛ ի փարախն: - 49. Զի թէ կարգաւոր, երբեմն մինն՝ և յետոյ միւսն. որ յառաջին բղխօղ է՝ նա՛ է բղխօղ. և ո՛չ *վերջինն:* - 63. Նախ՝ զի յընդդիմաբաժանեալ տեսակս սեռի՝ ո՛չ գոյ առաջին և *վերջին*. որպէս բաժանի կենդանին ի բանականն և յանբանն. և ո՛չ է ասել թէ՝ բանականն յառաջ է քան զանբանն. այլ զոյգ և համայնք են: - 87. Երկրորդ՝ ի հոմանունսն ո՛չ գոյ առաջին և *վերջին:* - 88. Այլ և նոյն կերպարանն հօր՝ խոնարհեցոյց զինքն ի մահ. որ կարի *վերջինն* էր: - 93. Այլ դատաւորին պարտէ ունիլ անհուն գիտութիւն. զի քննել կարասցէ զամենայն բնութիւն հրեշտակաց և մարդկան. և զամենայն գործս եղեալս և զլինելոցն. զխորհուրդս և զբանս բոլորից. զառաջինն՝ զմիջինն՝ և *վերջինն:* - 100. Եւ մարդն յետին է և *վերջին* ամենայն եղելոցն: - 107. Երկրորդ՝ Երրորդութիւնն ցուցանէ զհամագոյութիւն երիցն. զի ո՛չ է առաջին և *վերջին* ի նոսա. այլ՝ զո՛յգ և համանգամայն: - 107-108. Համագոյ և միասնական սուրբ Երրորդութեանն ո՛չ է առաջին և *վերջին*. ո՛չ մեծ և փոքր. և ո՛չ երէց և կրտսեր: - 109. Չորրորդ՝ սկիզբն է առաջնոցն. և պատճառ *վերջնոցս*. որք միջնորդութեամբ գոյանան. որպէս ի տարերաց կամ ի ծնողաց: - 110. Թէպէտ առ մեզ տեսանի անսկիզբն յառաջին կողմն, և անվախճանն ի *վերջինն*. այլ ի նա ո՛չէ առաջին և *վերջին*. զի պա՛րզ և միեղէ՛ն է: - 115. Զի առաջինքն խորհրդով և օրինակաւ՝ և *վերջինքս* իրօք և ճշմարտութեամբ լուսաւորեալք ի նմանէ: - 126. Ի յաստուածութիւնն՝ սոքա առաջին և *վերջին* ո՛չ ասին. զի համանգամայն զօրութիւնք են ի յաստուածութիւնն: - 128. Նախ ա՛յս է միտքն՝ որ այբն առաջին է և քէն *վերջին*. այսինքն ես եմ առաջին աստուածութեամբս. և ես եմ *վերջին* մարդկութեամբս. զի մարդն *վերջին* է արարածոց: - 129. Երկրորդ՝ զի ոտք *վերջին* է մասն. և ի *վերջին* ժամանակս երևեցաւ մարմնով քրիստոս: - 130. Որպէս ի դասս հրեշտակաց՝ առաջին երրեակ դասքն առաւել են փառօք քան զմիջինսն և *զվերջինսն:* - 131. Եւ են *վերջին* կարգաւորութիւնք: - 134. Եւ են առաջինքն իմացականք. և *վերջինքն* իմանալիք. և միջինքն իմացականք և իմանալիք. որպէս ա՛յլ եղանակաւ ասացաւ ի վերոյ: - 134. Երկրորդ՝ զի թիւ է կատարեալ. առաջին միջին և *վերջին:* - 134. Տասներորդ՝ յիւրաքանչիւր դասս դասապետն՝ և միջինն՝ և *վերջինն:* - 134. Իսկ *վերջինն* այսպէս կարգի: - 136. Նախ պետութիւնք. և ապա հրեշտակապետք. և *վերջին* հրեշտակք. և այս կարգ այսպէս ուղղակի՛ է: - 136. Իսկ հրեշտակն առնու՝ և տայ. զի առնու յառաջնոցն՝ և տայ ի *վերջինսն:* - 138. Նախ՝ զի առաջին դասքն անընդմիջաբար առնուն յաստուծոյ. իսկ միջինքն և *վերջինքն* միջնորդութեամբ: - 138. Առաջինն է՛ գովելի սէր. *վերջինն* պարսաւելի: - 143. Ա՛րդ՝ ներքնագոյն սիրովն խնամէ աստուած զարարածս. և առաջին դասք հրեշտակաց *զվերջինսն*. և հարք զորդիս. և վարդապետք զաշակերտս. և իշխանք զիշխեցեալս. տեարք զծառայս. և այս սիրովս շարունակին ընդ նոսա: - 143. Իսկ վերնագոյն սիրով սիրեն արարածք զարարիչն. և *վերջին* հրեշտակք զառաջինսն. և որդիք զհարս. և նւազք զմեծամեծս. և այս սիրովս միաւորին ընդ նոսա: - 143. Իսկ նիւսացին գրիգոր ի բնութեան գիրս՝ ի *վերջին* դասուց հրեշտակացն ասէ անկեալ: - 150. Իսկ «տուտն», Նախ՝ նշանակէ *զվերջին* հետեւեալսն ընդ նմա. զի նա առաջին ինքնագիտ էր ի չարն. և այլքն հետևեցան նմա: - 152. Չորրորդ՝ տուտն նշանակէ զսեռն. որ ի *վերջին* ժամանակս բռնանայ և քարշէ՛ զերրորդ մասն աստեղաց: - 152. Զանկումն սատանայի եռակի՛ է իմանալ. առաջին՝ և միջին և *վերջին:* - 152. Օր մի. և յատկութիւն միաշաբաթի, և *վերջին* աւուրն: - 154. Դարձեալ ասեմք թէ ո՛չ միապէս է մեղքն նախ քան զշնորհքն և յետ շնորհացն. զի առաջինն անգիտութեամբ էր, և *վերջինն* գիտութեամբ. և առաջինն հաւատովք սրբի, և *վերջինս* ապաշխարութեամբ և սրբութեամբ: - 166. Իսկ ապաշխարութիւնն կրկին. զի կնիք ո՛չ է. և *վերջին* է սրբութիւն: - 166. Ութերորդ՝ ներգործութեամբ բնութեամբ առաջին է՝ և ժամանակաւ *վերջին*. որպէս բոլոր եղեալքս: - 169. Իններորդ՝ և է ուրեք ժամանակաւ առաջին ներգործութեամբն՝ և *վերջին* զօրութեամբն. որպէս շարժման դադարիլն: - 169. Երկրորդ՝ առաջին ստեղն է հայր. ոչ յումեքէ. միջինն որդի ծնունդ ի հօրէ. *վերջինն* հոգի բղխումն ի հօրէ և ելումն յորդւոյ. զի որդւովն երևի. և հարթ հաւասար աստուածութեամբ և արարչութեամբ: - 178. Եւ է՛ առաջին և *վերջին* մոլորակացն Երևակն...: - 189. Իսկ երկրաւորքս ժամանակեայ. և ժամանակն կարգ ունի, առաջին՝ միջին՝ և *վերջին:* - 192. Հինգերորդ՝ այս մին օրս է որ կրկնելով կատարէ՛ զշաբաթ և զամիս և զտարի և զդարս կենցաղոյս, և հասանէ՛ ի *վերջին* օրն. որ է՛ մի օր աներեկ և անփոխանորդ: - 193. Զի՞նչ է յատկութիւն աւուրն *վերջին:* - 193. Եւ դարձեալ այսպէս զանազանին սոքա երեքեան աւուրք. այսինքն առաջին օր ստեղծման. և միջին մինչ ի կատարած. և *վերջին* օր յարութեան: - 193. Զի առաջին օրն եղև անառաւօտ. և *վերջինն* աներեկոյ. և միջինն ամենայն աւուրք ունին առաւօտ և երեկոյ: - 193. Մարդս զկարգ եղանակացդ բերէ յինքն. վասն այն ի *վերջին* փոխիլն սպիտակի: - 213.

Զի տղայութիւնն օդո՛յ է. և միջին հասակն հրոյ և հողոյ. և *վերջինն* ջրոյ. վասն այն սպիտակի. որպէս ցուցանի յառաջիկայդ **ժզ** գլուխն՝ **իզ** համարն: - 213. *Վերջին* հուրն ի կատարածի զդրախտն փոփոխէ՞ թէ ոչ: - 225. Նոյնպէս և *վերջին* հուրն նովին չափով հեղեղին ի նոյն տեղիսն ընթանայ: - 225. Ա՛րդ՝ *վերջին* հրովն յորում վառին երկինք և երկիր, ըստ նիւթոյ մասին պարզի. այլ ըստ ապականութեան մնայ անփոփոխ: - 225. Ա՛րդ՝ եթէ առաջին կեանքն էր ամուսնութեամբ և որդէծնութեամբ որպէս նոքա շաղակրատեն. ապա և ի *վերջին* յարութեանն նոյնպէս է՛ լինելոց: - 226. Իսկ յերրորդումն, զգազանս և զմարդն. ի *վերջին* տարրէ՛ այսինքն ի հողոյ կազմեաց: - 227. Երրորդ՝ հողն *վերջին* է ի տարերս. զի գիտասցէ զշնորհս աստուծոյ՝ որ այսպէս առաջին և պատկեր աստուծոյ ստեղծաւ: - 229. Յաղագս որոյ նախ եղեալքն՝ են վասն *վերջնոցն*. որպէս բոյսք անասնոց, և անասունք վասն մարդոյն: - 230. Եւ ցասումն միջին. և ցանկութիւնն *վերջին:* - 232. Այսպէս և գլուխն ի մարմինն է՛ *վերջին* մասն. որ է՛ գործիք բանին. և սիրտն ի մէջն. և երիկամունքն *վերջին:* - 232. Իսկ այլ անդամքն ըստ կարգի զմիջին և *զվերջին:* - 232. Ասեմք առ այս, թէ մի է հոգի հաւաստեաւ. և ո՛չ է ինքն ինքեան առաջին և *վերջին*. զի մի էութեան՝ առաջին և *վերջին* ո՛չ է. այլ ըստ ներգործութեան. զի ըստ առաջին և *վերջին* զօրութեանն՝ առաջին և *վերջին* ներգործէ: - 260. Եւ թէ ասիցէ ոք, երևի ապա թէ առաջին զօրութիւն հոգւոյն տնկականն է՝ և *վերջին* բանականն որ է՛ յոյժ անպատշաճ: - 260. Դարձեալ **թ** թիւն է երիցս երրեակ. և երեք թիւն է կատարեալ. ունելով առաջին միջին և *վերջին*. ի նմանութիւն **թ** դասուց հրեշտակաց: - 264. Եւ կամ որպէս ճանապարհորդք հեռացեալք ի տանէ՝ յորժամ դարձցին վերստին ի տունս իւրեանց, նախ թողուն *զվերջին* բնակետղն ուստի դիմեցինն երթալ: - 280. Եւ ա՛րդ՝ հեռանալոյ մեզ ի դրախտէն կենաց *վերջին* ամուսնութիւնն եղև. զա՛յն նախ պա՛րտ է թողուլ, և ապա՛ յերկրաւոր հոգւոց և տառապանաց հեռանալ: - 281. Եւ վասն աւագ օրհնութեանն *վերջին:* - 285. Եօթանասունն**թ**, Վասն *վերջին* կտակացն: - 285. Այլ ի յամօթ առաջին կարծեացն՝ փոխեաց զենովք և ի հաւատ *վերջին* յարութեանն՝ վերացոյց զեղիա: - 289. **Իսկ ի *վերջին* դարս որ է՛ լուսնին՝ սակաւակեացք են մարդիկք. զի նա՛ ի լ օրն վճարէ զբոլոր ընթացս իւր:** - 291. Երկրորդ՝ զի մարդիկք բազում ամս յաճախէին ի մեղս յուսով *վերջին* ապաշխարութեանն. և յետոյ սովորեալ ի մեղս ո՛չ կարէին դառնալ, ամենքին կորնչէին: - 292. Եւ տէրն *վերջին* ի լրումն օրհնին ի նոյն քանիսն եդեալ հրամանին. զի ո՛չ ելոյծ զօրէնսն, այլ էլից: - 305. Տասներորդ՝ *վերջին* և կատարեալ ծնունդ յարութեանն. զի մահ մարմնոյս է՛ սկիզբն և յղացումն յարութեան: - 308. Եւ սոքա որ երևինս մեզ կրտսեր և *վերջին*, փոխեին և լինէին նախկին և առաջին ըստ նախընտրութեանն աստուծոյ: - 310. Հինգերորդ՝ նշանակէ զկրկին ծնունդս մարդոյ. առաջինն մարմնաւոր և խոտելի. և *վերջինն* հոգևոր և ընտրելի: - 310. Զի որք կամին՝ լինին անդրանիկ գործովք իւրեանց. և որք ոչ կամին՝ փոխին և լինին անարգ և *վերջին:* - 310. Եւ կամ ի հաւասարէն. որպէս պետրոս. կամ ի *վերջնոցն* որպէս հիւսն: - 312. Ներգործական՝ որ ի *վերջնոցն:* - 312. Ապա յա՛յտ է՝ զի աստուած ինքն ինքեան նախկին և *վերջին* հաւասար կամ անհաւասար ո՛չ ասի. վասն այն իւր անուն ո՛չ դնէ: - 312. Այլ թէ *վերջինքս* կոչեմք նմա անուն աստուած՝ արարիչ՝ և այլն. ներգործութեանն է ցոյցք և ո՛չ թէ գոյացութեան կամ բնութեանն է յայտնութիւն: - 312. Նա՛խ՝ որպէս յակոբ պատարագ մատոյց ի ջրհորն երդման *զվերջինն* և ապա ել յերկրէն: - 314. Արդ՝ առաջինն և *վերջինն* վայելչակա՛ն է յոբայ և աստուծոյ. իսկ միջին երկուքն բարեկամացն յոբայ, և չար բանսարկուին յարմարի: - 323. Եւ հանել զկօշիկս յոտից, այսինքն ի *վերջին* խորհրդոց յերկրաւորս մերժեցեալ: - 331. Իսկ *վերջին* խորհուրդ է, յորժամ վասն հարկաւոր պիտոյից կերակրոյ և հանդերձի՝ յերկրաւորս հպիմք: - 331. Եւ *վերջինն* հրեշտակաց դասուն: - 343. Երկրորդ՝ զի բանն աստուած ծնունդ հօր՝ էառ զբնութիւն մարդոյս որ *վերջին* է յարարածս: - 347. Եւ մարդս որ *վերջին* է՝ սա՛ միա՛յն ծանեաւ զառաջին պատճառն: - 350. Ի չորրորդում ծննդեանն զմեղս դատապարտեսցէ յորժամ զարհամարհօղս աւետարանին՝ *վերջին* հրովն այրեսցէ: - 351-352. Դարձեալ՝ ծնանիմք *վերջին* հրով. և յառնեմք ի հողոյ յարութեամբ: - 353. *Վերջինն* մարմնաւոր: - 362. *Վերջինն* յընչիցն: - 362. *Վերջինն* ինչքն վասն մեր: - 362. *Վերջնոյն* ի պիտանեաց: - 375. *Վերջինն* գործ ժամանակեան: - 375. Հինգերորդ՝ թիւն զընտրութիւն՝ զդաս՝ և զկարգն ցուցանէ. զի գո՛յ ի նմա՛ առաջին միջին և *վերջին*. որպէս զինւորք. իսկ անթիւն խոտան և անկա՛րգ է. որպէս ծերք և տղայք: - 377. Եւ այլք **գ** բաժանեն. յառաջին. միջին. և *վերջին:* - 378. Եւ անտի մինչ ի ամն *վերջին* և ծեր: - 378. *Վերջինն* թշնամեաց: - 381. *Վերջինն* զներելին: - 384. Նա՛խ՝ ցուցանէ թէ քրիստոս է առաջին և *վերջին*. այսինքն սկիզբն և կատարումն եկեղեցւոյ. ո՛չ միայն աստուածութեամբն, այլ և մարդկութեամբն: - 385. Երկրորդ՝ զի պահապան է յառաջին և *վերջին* թշնամեաց որ է սատանայ և մեղքն: - 385. Տասներորդ՝ զի զքրիստոսի առաջին գալուստն նշանակէր տապանակն և տախտակն և

մանանայն և այլն. և *զվերջինն*՝ վէմն աղբիւրացեալ ի յաւիտենից կեանսն: - 385. Զի առաջին ընտրեալք և *վերջին* արդարք ի միասին ժառանգեսցեն զաւետիսն: - 391. Իսկ ի *վերջինն* գաւառ՝ կիսովն իմանին կուսանքն ընտրեալք. որք լնուն զթերութիւն անկեալ դասուն: - 391. Վասն է՞ր առաջին մարմնակա՛ն էր օրէնք և օրհնութիւն, և *վերջինս* հոգևոր ամենայն: - 395. Երրորդ, վասն *վերջնոցն* լաւութեան ընտրեցան և խոտանքն. որպէս զհող զքար և զխեցցէ մորթն պատւեմք վասն ոսկւոյ և արծաթոյ և մարգարտին: - 398. Այլ՝ արծակեալ կինն ո՛չ դառնայր յառաջին այրն վերստին. թէպէտ մեռանէր *վերջին* մարդն: - 400. Երրորդ՝ վասն կատարածի և *վերջին* օրհնութեանն պատմէ. արդարոց զպատիւ, և մեղաւորաց զտանջանս: - 407. Երկրորդ՝ զի *վերջին* խրատն և օրհնութիւնն մնացակա՛ն է: - 408. Փեգովրայ տեղի՛ էր կռոց. և դևքն չտային թոյլ թաղել զմարմինն, մինչև սաստեաց միքայէլ հրեշտակապետն ասելով, «սաստեսցէ՛ ի քեզ տէր». որպէս յա՛յտ է ի կաթուղիկէից *վերջին* թուղթն: - 409. Արդ յերեքտասան ամէ՛ ովսիա մինչև ցմետասան ամն սեդեկիայ որ *վերջին* գերեցաւ՝ լինի **խ** ամ. և նաբուգոդոնոսորայն **ի** ամ. և որդւոց և թոռանց նորին **ծ** ամ. որ կատարի **հ** ամ մինչև յառաջին ամն կիւրոսի որ արձակեաց զգերիսն: - 447. Դարձեալ՝ ի *վերջին* գերութենէն սեդեկիայ մինչ ի դարեհի **բ** ամն կատարի **հ** ամ. որ արձակեաց զզօրաբաբէլ: - 447. Դարձեալ՝ նշանակեն զերիս կոչմունս. մարգարէիւք և առաքելօք. և *զվերջինն* ի կատարածի հրեշտակօք: - 449. Եւ կտակքն *վերջին:* - 450. Եւ յուդայի *վերջին*. որ լինի **ծդ**: - 450. Իսկ թէ ամենևին հուսկ յետոյ անագան ի *վերջին* դարս, լինէր և այսպէս կրկին պակասութիւն: - 467. Իսկ ապականութիւնն *վերջին*. հետևեալ ի հնարից բանսարկուին: - 496. Դարձեալ ասեմք, մեղքն ապականութիւնն են առաջին և *վերջին* ծայրքն կրից. իսկ մահն միջին որպէս ցուցաւ ի վերոյ: - 497. Իսկ *վերջին* դժոխք որ կոչի անջրդի գուբ, նոցա՛ է որք ո՛չ ունին չար և ո՛չ բարի...: - 505. Եւ պատիժ սկզբնականին էր դժոխքն առաջին. և ներգործելոց՝ *վերջինն*...: - 507. Ա՛րդ՝ յարութիւնն մեր է՛ ի *վերջնումն* կիրակէն ի մէջ գիշերի...: - 512. Երեսունգ, *Վերջին* օծումն յերկա՛ր բանիւք: - 526. Նոյնպէս և աթոռակալքն որ ի չորս աթոռս, ա՛յլ զայլոյ վիճակեալ ո՛չ կարէ կապել և ո՛չ արձակել. նոյնպէս և ի նոյն աթոռն, *վերջինն* զառաջ նոյն ո՛չ կարէ փոխել կանոնս և զկարգ: - 541. Իսկ ի համակարգսն *վերջինն* զառաջ նոյն ընդէ՞ր ոչ փոխէ զկանոնսն: - 541. Ասեմք առ այս, եթէ համակարգ և համիշխանք են *վերջինն* ընդ առաջնոյն ի կարգել և ի յուղղել. այլ ո՛չ ի թիւրել և ի քակել. զի առաջնոյն աւանդապա՛հ է *վերջինն* նո՛յն մտօք և նո՛յն կամօք: - 541. Եւ դարձեալ՝ կարէ՛ *վերջինն* զառաջնոյն թիւրութիւնն ուղղել և զանիրաւ կապեալն արձակել. որպէս աստուածաբանն գրիգոր զարիանոսացն: - 541. Եւ թէ ոք ասիցէ, այս առաջնոյն. զի *վերջինն* կարէ՛ ուղղել. այլ ո՛չ կարէ թիւրել: - 541. Ասեմք թէ՝ ոչ ինչ է այս նախատինք մեզ. զի հեթանոսք յետոյ հաւատացին և լաւագոյնք են քան զհրէայս. և *վերջին* մշակքն ընդ առաջինսն առին զվարձս. և որք նախանձեցան կորեան: - 549. Եւ այս երեք *վերջին* աստիճանքս վերաբերին առ աստուածութիւնն: - 573. Եւ *վերջինս* այս վասն այն ասի գործ ողորմութեան, զի կակուղ և խոնարհ պատասխանին խորտակէ՛ զբարկութիւն ընկերին և շահի՛ զնա: - 585. Ա՛րդ՝ առաջինն ինքն առ ինքն խաղաղութիւն. և *վերջինն* ինքեան ընդ այլս խաղաղութիւն. և միջին երեքն, այլոյ ընդ ա՛յլ է խաղաղութիւն: - 586. Երկրորդ՝ զի փորձէ զայլսն ամենայն ի *վերջնոյն* մինչև ցառաջինն թէ ճշմարի՞տ իցեն արդեօք: - 586. Յինգերորդ *վերջին* օծումն: - 587. Յինգերորդ *վերջին* օծումն. որ է՛ ելելոցն ի կենցաղոյս և զերծելոցն ի պատերազմէ՛: - 587. Զի՞նչ է *վերջին* օծումն: - 604. *Վերջին* օծումն է խորհուրդ եկեղեցւոյ. որ տուեալ լինի հիւանդաց ի հոգէվարի օրն. յաչքն, յականջն, ի բերանն, ի ձեռքն, ի կուշտն, յոտից ներբանքն: - 604. ...զոր ասացաք ի վերոյ թէ՝ զդրոշմն և զառաջին օծումն և *զվերջին* օծումն կատարեմք ի մկրտեալն: - 604. Ասեմք թէ, ի հնարից չարին բարձին մարդիկք զխոստովանութիւնն որ հարկաւոր էր, յայն ապաւինեալ թէ՝ ի *վերջին* օրն օծանիմք ձիթով բալասամինաւ և արդարանամք: - 604. ...և ո՛չ ի բառնիլն ապականէ զկարգ եկեղեցւոյ. որ է *վերջին* օծումն...: - 604. Եւ թէ ոք ասիցէ, այս ննջեցելոց օծումս՝ *վերջի՞ն* օծումն է՝ թէ առաջին: - 605. Նոյնպէս և օծումնս այս է՛ *վերջին* որ զփոշետեսակ և զներելի մեղսն սրբէ...: - 605. Նա՛խ՝ մարգարէքն. երկրորդ առաքեալքն. երրորդ հրեշտակապետին *վերջին* փողն: - 618. Վեցերորդ ժամն է *վերջին* ողորմեայն. իններորդ ժամու աղօթն. յորում քրիստոս աւանդեաց զհոգին ի ձեռս հօր: - 622. Երրորդ, որպէս յերկինս յերիս երրեակս որոշին դասքն. այսինքն առաջին՝ աթոռոցն. միջին՝ տէրութեանցն. և *վերջին*՝ հրեշտակացն: - 624. Եւ այսպէս վերընծայեն աստուծոյ զօրհնաբանութիւնսն. *վերջինքն* տալով ի միջինսն. և միջինքն յառաջինսն. և յառաջինքն մատուցանեն աստուծոյ: - 624. Առաջին՝ քահանայք. և միջին՝ սարկաւագունք. և *վերջին* են սաղմոսօղք: - 624. Եւ *զվերջին* կանոնն ելք աստիճանաց. որ է՛ յաստեացս ի հանդերձեալն: - 627. Իսկ թագաւորքն առաջին և *վերջին*. զի կիրակին

է թագաւորելն աստուծոյ. այժմ առաջին, և զկնի *վերջին*. կամ աստ կամողացն միայն, և անդ կամողաց և ո՛չ կամողաց: - 627-628. ...զի առաջին փոխն է ի դէմս հօր. և միջինն առ որդի. և *վերջինն* առ հոգին սուրբ: - 628. Եւ տն մերոյ սուրբ եկեղեցի. և *վերջինն* օրն է յաւիտենից: - 629. Եւ որ նա՛խ է *վերջին* տունն ի մեսեդի կամ կցորդ. այն է զի քրիստոսիւ դարձաք յառաջինն և ի բարձրագոյնսն. ուստի ադամաւ խոնարհեցաք...: - 629. Իսկ *վերջին* սաղմոս, բարձր առնեմ զքեզ աստուած իմ և թագաւոր իմ: - 630. *Վերջին* և առաջին գուբղայն յանմեղութենէ ասացեալ. և միջինն յետ մեղանացն. այս ընդ իրեար միաւորեցաւ: - 630. Եւ ի *վերջին* գուբղայսն ո՛չ ասեմք որ ա՛յլ մարգարէից է. և ալէլուն միայն սաղմոսին է: - 630. Եւ որ սաղմոսն **ը** տուն է՝ կամ ա՛յլ նուազ, զփառքն և զայժմն *վերջին* տան շարականին տամք: - 636. Այլ և **բ** ստեղիք. մինն աւագ կողմին. և միւսն *վերջին:* - 639. Եւ առաջին և *վերջին*, առաջին և *վերջին* գալստեանն: - 640. Եւ դարձեալ՝ *վերջին* յարութիւնն և լիճն հրոյ: - 640. Ապա՛ նոմինոս, զատոյց զկողմն չորրորդ ձայնին. որ է՛ *վերջին:* - 640. Դարձեալ՝ ունի զխորհուրդ անկմանն ադամայ որ *վերջին* խօսեցաւ աստուած և եհան ի դրախտէն: - 641. Այլ և ունի զխորհուրդ *վերջին* աւուրն որ կատարա՛ծ է աշխարհի: - 641. ...կամ յառաջնոյն ի վերջն ընթանալ կարգաւ. կամ ի *վերջնոյն* յառաջքն: - 642. ...և զմարգարէսն ի չորրորդ ձայնս է ընթեռնլի. և ներբողեանն ի *վերջին* ձայնն: - 643. ...զի սուրբ գիրք կամ զառաջինսն պատմեն. որպէս մովսէսին. կամ *զվերջինսն* կանխաճառեն. որպէս եսայեայն և այլոցն: - 643. Երրորդ, զի կրկին օրհնեմք, առաջին օրհնութիւնն խնդրելն է, և *վերջինն* գոհանալն: - 655. Նախ՝ զի հաւասարութիւն ունիմք առ միմեանս. այլ և կարգ. որ է՛ առաջին միջին և *վերջին:* - 656. Եւ դարձեալ ճաշքն ցուցանեն յերիս հասակս զբարեգործսն. և ընթրիսն *զվերջին* հասակին յորում ննջեմք ի գերեզմանի: - 656. Հինգերորդ՝ մարդոյս պիտոյ էր ժամանակաւ աճումն. զի թուով առցէ զկատարումն *վերջին* ընտրելոյն: - 662. ...և նա դնէ յեկեղեցին մերձ առ դուռն որ նշանակէ զկայանք հոգւոցն յերկինս ի *վերջին* տեղւոջ մինչ ի յարութեանն օր: - 672. Եւ զկրօնաւորս ի *վերջին* դասս տէրութեանցն: - 672. Տասներորդ, նշանակէ *զվերջին* օծումն. զի ամենայն կարգ զոր մարմնոյն կատարեմք՝ հոգւոյն է և մարմնոյն որպէս ասացաք: - 673. Երկրորդ՝ *զվերջին* ողջոյնն տամք, զի ի հեռու ճանապարհ գնայ: - 673. Իսկ խաչն վառել և ժամահարն յառաջ. նշանակէ՛ *զվերջին* գոչումն փողոյ հրեշտակապետին: - 676. ...և այս առաւօտս է ի խորհուրդ յարութեան յառաւօտն *վերջին:* - 680. Իններորդ, **գ** տեղիք մարդկան նշանակեցաւ յեռայարկ խորանն մովսէսի. առաջին միջին և *վերջինն:* - 682. Այսինքն մի՛ առաջինքն առանց մեր *վերջնոցս*, և մի՛ հոգիքն առանց մարմնոյս պսակեսցին: - 692. Ապա ուրեմն մինչ ի *վերջին* օրն ո՛չ է բաժանումն արդարոց և մեղաւորաց: - 693. Չորրորդ, սոքա իւրաքանչիւր հոգւոցն ասեն ընդ բաժանիլն. և ոսկեբերանն ի *վերջին* օրն համընթաց այրեցումն: - 703. Ասեմք նախ՝ եթէ գնալ առ քրիստոս՝ վասն յարութեանն ասէ և *զվերջին* հուրն...: - 703. Եւ սատակեալ վիշապին տուտն է նեռն. որ ի *վերջին* ժամանակս քարշէ զերրորդ մասն աստեղաց...: - 706. ...և Դարձեալ նշանակէ զամենայն ապստամբութիւնս որ յառաջին, և միջին, և *վերջին* ժամանակս լինելոց է: - 707. ...այսինքն զի ուսուսցեն *վերջնոցն* զհաւատս փրկչին. յոր և նոքայն հաւատացին: - 709. *Վերջին* փող է հրեշտակացն որ կոչէ՛ ի դատաստան: - 713. *Վերջնովն* յարիցեն հոգւով և մարմնով: - 713. Այնպէս եղիցի և յարութիւնն մեր ի *վերջինն* աւուր: - 716. Վասն է՞ր ի *վերջին* ժամանակս յառնեմք համանգամայն: - 716. Պարտ է ապա զի ամենայն մարմինք մարդկան համանգամայն յարիցեն ի յաւուրն *վերջին:* - 717. Եւ ա՛յս է պատճառն. զի աստուած ի սկզբան զբնութիւնն ադամայ անթերի ստեղծ. նոյնպէս ի *վերջին* օրն անթերի պիտի նորոգէ: - 726. Նոյնպէս և լուսաւորքն ի *վերջին* ժամանակս ի կատարածի ծածկեսցին, և դարձեալ յա՛յլ իմն յազնուականութիւն փոխեսցին: - 728. Երկոտասաներորդ, հնձան կոչի և *վերջին* օր դատաստանին. զի անդ հաւաքին ամենայն բարիք և չարք և գործք նոցին. և չարքն ճմլեալ արտաքսին ի տանջանս, և բարիքն ի կեանս: - 749. ...և Դարձեալ, դատաստանն *վերջին* լինելոց է ի վերայ երկրի ի յօդս: - 759. Որպէս ասեն վարդապետք, ի *վերջին* ծովէն սպանիու մինչև ի հնդիկս սակաւ աւուրց բացատ գոյ թէ վարեսցէ հողմ զնաւն: - 763. Վեցերորդ և *վերջին*՝ վասն աշխարհի՝ ընտրելոցն հանդիպի եռակի ուրախութիւն: - 764. Արդ՝ ես *վերջին* ծնունդս եկեղեցւոյ և տրուպս բանասիրաց, Գրիգոր պիտակ անուն խնդրող բանին. բացայայտեցի զբանս Հարցմանց ի լուսաւոր բանից վարդապետաց եկեղեցւոյ: - 772. Զի առաջինն է անկատար. և միջին երկուքն կատարեալ. և *վերջինն* գերակատար: - 785. Արդ որպէս յամենայն ժամանակս սոքօք գան ի հաւատս ուղղութեան և է՛ վարձատրելի. այսպէս և ի *վերջին* ժամանակս որք յետ նեռինն՝ ո՛չ միայն ի հարկէ սքանչելեաց, այլ և ի լրոյ քարոզչաց երկուցն վկայից իջելոց սրբոց: - 785

**ՎԵՐՋՆԱԳՈՅՆ +** Ա՛րդ՝ որ ոք կամեսցի ի նոյնն ելանել և առ քրիստոս լինիլ, պատշա՛ճ է ի *վերջնագունէն* սկիզբն առնել որպէս սանդոք: - 280

**ՎԵՐՋՈՅ +** Ա՛րդ՝ վասն այսր և այլ ևս քան զայս պատճառաց ի *վերջո՛յ* արարաւ մարդն ամենայն գոյից: - 231. Եւ աստ հարցանեմ ի *վերջոյ*. վասն է՞ր կրկին անգամ թւեաց զժողովուրդն: - 392. Այլ և գոհացաւ ի *վերջոյ* ի վերայ ամենայն յաղթութեանցն. և տէր մեր ի վերայ ամենայն ներգործութեանցն. որ և ամենայն օրհնութիւնքն ի տէրն ակնարկէ. որ եղև գլուխ հեթանոսաց. յաղթեաց մահու և բարձրացաւ ի գերեզմանէ: - 438. Եւ էր *ի վերջոյ* քան զզաւակն. փոքրագոյն քան զպարունակեալն յինքեան: - 469. Եւ այլք ասեն՝ նախ սիրելոյ է աստուած. երկրորդ ծնօղքն. յետոյ որդիքն. ապա՛ ընտանիքն. *վերջոյ* թշնամիքն: - 576. Այսպէս և ի թիւ երանութեանցս է՛ կարգ բնական. զի արժանաւորքն ի *վերջո՛յ* դնին: - 583. Վասն է՞ր *ի վերջոյ* զհայր մեր յերկինս աղօթեմք: - 634. Եւ *վերջոյ* ի հիւսիս. որ ցուցանէ զշնորհն որ ի հինն սիովնէ հնչեաց յեկեղեցիս հեթանոսաց...: - 674

**ՎԵՐՍՏԻՆ +** Եւ զի զմեզ անապական գործեաց *վերստին* ծննդեամբն: - 78. Եւ զի նա հոգևոր ծնեալ՝ ծնաւ ըստ մարմնոյ. զի դու մարմնաւոր ծնեալ՝ ծնցիս *վերստին* ըստ հոգւոյ: - 107. Դարձեալ ասեմք թէ՝ ամենայն մեղաց մտածումն՝ զղջո՛ւմն է նորին. իսկ պոռնկութեան մտածումն՝ *վերստին* նորոգո՛ւմն է ախտին: - 166. Վասն այն պա՛րտ է զժամանակ կենցաղոյս ի բարին ծախել. զի զառաջին ժամանակն ո՛չ ոք կարէ *վերստին* ստանալ: - 199. Փայլակն լինի ի շիջեալ հրոյն ջրով ամպոյն և հողմով որ ի մէջն է, *վերստին* արծարծի և արտաքս բացափայլէ: - 203. Տասներորդ՝ յորժամ ջնջի ամպն, *վերըստին* պայծառանայ օդն յառաջին մաքրութիւնն իւր: - 206. Ուստի յա՛յտ է, որք *վերստին* յաղթեն ախտիցն որք յինքեանս, այսինքն ցասման և ցանկութեան. յաղթին և հնազանդին նոցա արտաքին գազանք և անասունք: - 220. Վեցերորդ՝ զի ասէ սուրբն գրիգոր նիւսացին ի գիրս կազմութեան եթէ առաջին կեանք դրախտին էր կուսութիւն և անապականութիւն և հրեշտակաց նմանութիւն. և յետ յարութեանն *վերստին* դառնամք յառաջին կեանս դրախտին. յանապականութիւն և ի հրեշտակաց հաւասարութիւն: - 225-226. Դարձեալ՝ դիւրաւ անկանի, և դժւարաւ *վերստին* յառնէ: - 275. Եւ կամ որպէս ճանապարհորդք հեռացեալք ի տանէ՞ յորժամ դարձցին *վերստին* ի տունս իւրեանց, նախ թողուն զվերջին բնակետղն ուստի դիմեցինն երթալ: - 280. Զի պատկերն աստուծոյ *վերստին* նորոգեցաւ ի նմա: - 288. Եւ տէրն զհարսնացեալ եկեղեցի եմոյծ *վերստին* ի դրախտն որ զվեց դարիւ արգելեալ էր և փակեալ: - 305. Եւ թէ լան և զղջան բոլոր սրտիւ ի ձեռն ապաշխարութեան, գտանեն *վերստին* զշնորհն անդրանկութեան, և հասանին թողութեան մեղաց: - 309. Չորրորդ՝ ի խորհուրդ յարութեան մերոյ, որ *վերստին* գոյացուցանէ ի խաւարէ՛ գերեզմանին և ի լոյս հանէ և ուրախութեամբ զարդարէ՛ և փառաւորէ՛: - 321. Այլ՝ արձակեալ կինն ո՛չ դառնայր յառաջին այրն *վերստին*. թէպէտ մեռանէր վերջին մարդն: - 400. Չորրորդ եղանակաւ ծնունդ ասի և մկրտութիւնն. զի օրհնադրեաց մեզ *վերստին* ծնունդ...: - 471. Հինգերորդ՝ զի զօրացուսցէ զջուրն *վերստին* ծնանել զմեզ: - 486. Մկրտեալն քրիստոս. որ սրբեաց ջզուրն և զօրացոյց *վերստին* ծնանիլ զմեզ: - 487. Վեցերորդ՝ ածաւ *վերստին* առ պիղատոս. և անդ խնդրեցին ի խաչ հանել. և զկնի ծաղեալ. և թուք ընկալեալ. և ի խաչ դատապարտեցաւ: - 492. Այսպէս մահն միայն հատանէ ի կենաց. և ապականութիւնն *վերստին* այլայլէ: - 498. Եւ *վերստին* հաստատեցին զկարգեալսն սրբոյն գրիգորի և ներսէսի և սահակայ և մաշտոցի: - 544. Առ երկրորդն ասեմք թէ, ընդ ուրացութիւնն պետրոսի՝ սիրտ ամենայն առաքելոցն տրտմեցան և կոտորեցան. և ի զղջումն նորա ամենեքեան հաստատեցան *վերստին:* - 547. Դարձեալ՝ հաւատովն հաւատամք՝ որ միայն իւր բարութեամբն զմեզ ստեղծեաց և *վերստին* փրկեաց և ո՛չ ի հարկէ: - 571. Այսպէս և պատկեր *վերստին* ստեղծմանն ի մեզ կայանայ ի միութիւն շնորհին և յերիս ունակութիւնս: - 577. Հանճարեղութիւն է նկատել զայնս որ են. և Նախատեսութիւն է տեսանել զլինելոցն. այլ Յիշողութիւնն է *վերստին* յիշել զեղեալսն: - 580. Երրորդն հաղորդութիւնն. որ է՛ *վերըստին* զօրացելոցն ի պատերազմի, և հոգևոր կերակուր: - 587. Չորրորդն ապաշխարութիւնն. որ է՛ *վերստին* կանգնելոցն, որք անկանին մեղօք և *վերստին* կանգնին ապաշխարութեան գործովք: - 587. Ո՛չ է օգուտ. զի չև ևս ծնաւ երկրորդ ադամ. զի նախ պա՛րտ էր ըստ մարմնոյ ծնանիլ. և ապա ըստ հոգւոյ *վերստին* ծնունդ: - 592-593. Դարձեալ ապաշխարութիւն է վասն անցեալ չարեացն լալ. և լալովն *վերստին* այլ ո՛չ առնել: - 601. ...զի մի՛ համարձակեսցին քահանայք և զձէթ օրհնելն *վերստին* մուծցեն յեկեղեցիս մեր: - 605. Զի յորժամ մեղօք ինչ սրբութիւնս մեր ապականի, կամ շարժի ոք ի հաւատոյ, *վերստին* կարէ՛ հաստատիլ ի հաւատս, և դարձեալ կրկնել զխոստովանութիւն և զապաշխարութիւն: - 615. Ապա ի ժողովն եփեսոսի *վերստին* հաստատեցին զփառք ի բարձունսն ի սաղմոսէն՝

յաւետարանէն՝ և ի մարգարէիցն...: - 635. ...այսինքն զի *վերստին* գալն քրիստոսի լինի, և ապա սրբոցն տանիլ առ ինքն: - 692. Ոմանք ասեն թէ՝ յարութիւն ո՛չ այլ ինչ է՝ քան թէ *վերստին* կենդանանալ: - 716. Եւ ոմանք ասեն՝ հոգոյ և մարմնոյ *վերստին* նորոգիլ: - 716. Այլ ոմանք ասեն թէ յարութիւն է այնմ որ անկաւ՝ *վերստին* յառնել ի կենդանութիւն յաւիտենական անմահ: - 716. Եւ այսպէս սահմանի եթէ յարութիւն է այնմ որ անկաւ մարմնաւոր մահուամբ՝ *վերստին* յառնել անմահութեամբ ի կեանս յաւիտենականս: - 716. Եւ յերկոտասան ամիսս, զի յետ մեղանացն *վերստին* պտղաբերի ապաշխարութեամբ: - 765. Այսօր *վերստին* հրամայեաց հաւատացելոց իւրոց ճաշակել ի պտղոյն կենաց. և մնալ յաւիտեան և անմահ կենդանութեամբ ի քրիստոս յիսուս ի տէր մեր: - 771. Ուստի յա՛յտ է զի ելեալ էին երբեմն և *վերըստին* դառնան ի նոյն: - 777. Եւ յայտ յուրացողացն է. զի ի դարձին *վերստին* ո՛չ մկրտեմք: - 782. Որպէս ծառ մերկացեալ ի պտղոյ՝ այլ ո՛չ ըստ ունակութեանց. և նովին ունակութեամբ *վերստին* պտղաբերի ինքն: - 782-783. Իսկ շնորհք նորոյս ի ձեռն քրիստոսի տուեալ՝ ո՛չ է փոփոխական. զի *վերստին* նորոգման է շնորհք և անապականութեան: - 783

**ՎԵՐ ՔԱՐՇԵՄ** - Այլ Ամպն լինի, յորժամ զօրութեամբ արեգականն ի *վեր քարշին* գոլորշիքն ի ջուրց և ի գէջ տեղեաց: - 204. Եւ դարձեալ ի *վեր քարշեալ* ժողովին ի ծայրս խոտոց. և ծանրացեալ կախին իբրև զմարգարիտս: - 204-205. Իսկ Կարկուտն ծնանի ի յամենևիմբ ջերմ ամպոյ, զօրութեամբ արեգականն ի *վեր քարշեալ:* - 205. Եւ զի քարշեն լուսաւորք զգոլորշին յերկրէ՝ յայտ է ի ցօղ առաւօտուն և յեղեամն. որ ի գիշերն ի *վեր քարշին*. և ընդ ծագել լուսոյն հատանին և յետս յերկիր անկանին. և յաւուրս ձմերան լինի եղեամն. և յամարան ցօղ: - 208

**ՎԵՑԱԿՈՂՄ** - Եւ *վեցակողմն*, զի մարմինն եռակի տարրո՛շ է. ունի վեր և վայր. յետ և առաջք. աջ և ահեակ: - 293. Սա՛ ունի զձև նմանութեան տապանին *վեցակողմ* և կաթողիկէ, և դուռն ի կողմանէ: - 294

**ՎԵՑԱՄԱՏՆ** - Երկրորդ՝ ուղղեսցին աւելիքն ի չափն. որպէս աւելո՛րդ եղունգաց հերաց և *վեցամատնից* և այլոցն. որք չափաւորին: - 725

**ՎԵՑՕՐԵԱՅ +** Այլ զի բազմաժամանակեայ է և յաւիտենից: ...*Վեցօրեայ* արարիչ: - 115. Կատարումն Յաղագս Արարածոց *Վեցօրէից:* - 155

**ՎԷՄ +** Եւ որք՝ ի *վէմս* իշխեն՝ քաջք կոչեցան: - 150. Վաթսունը, Տապանակն յառաջ գնայր և *վէմն* զհետ՝ որ էր քրիստոս: - 285. Հնգետասաներորդ, նա՛ ի *վիմէն* ջուր բղխեցոյց: - 329. Քսաներորդ, մովսէս **դ** ծնունդ ընկալաւ. ի մօրէ և ի ջրոյ՝ ի հրոյ և ի *վիմէ:* - 329. Եւ զխաչն հրաշագործ՝ զկենսատու մանանայն. և բուրվառ զխունկս աղօթից. *վէմն* սեղանն սուրբ. և քերովբէք քշոցքն **բ**: - 345. Երեմիա և աշակերտն՝ տարան ի գիշերի զտապանակն և որ առ նմայն էին՝ ի լեառն սինա. և անդ կնքեցին ի *վիմին* անուամբն աստուծոյ ասելով, ո՛չ ոք բացցէ զսա՞ թէ ոչ մովսէս որ եբերն. և ո՛չ ոք բացցէ՝ թէ ոչ ահարոն: - 345. Եօթներորդ՝ յօրինակ բանին մարդեղութեան գրեցաւ բանն ի տախտակի, և նա՛ կոչեցաւ *վէմ* կարծրացեալ աստուածութեամբն փոխանակ հողացելոյն ադամայ: - 349. Զի՞նչ է ի *վիմէն* ծնանիլն: - 353. Եւ **գ** ըստ շնորհաց. որպէս ի ջրոյ, ի հրոյ, և ի *վիմէ*. ի տիպ տեառն մերոյ որպէս ասացաւ: - 353. Վասն է՞ր տապանակն յառաջ ընթանայր և *վէմն* զհետ բանակին: - 385. Եւ *վէմն* էր քրիստոս ըստ առաքելոյ: - 385. Հինգերորդ՝ յառաջ տապանակն գնայր և դիտէր հանգիստ. և զհետ *վէմն* տայր ջուր. զի այժմ զհանգիստ պատրաստէ՛, և յետոյ զվայելչութիւն տայ: - 385. Իններորդ՝ նոքա գործովք արդարացան զոր նշանակէր օրէնքն. և մեք հաւատով՝ զոր նշանակէր *վէմն* յետոյ: - 385. Տասներորդ՝ զի զքրիստոսի առաջին գալուստն նշանակէր տապանակն և տախտակն և մանանայն և այլն. և զվերջինն՝ *վէմն* աղբիւրացեալ ի յաւիտենից կեանսն: - 385. *Վէմն* ո՞րպէս էր քրիստոս: - 386. Որպէս սափորն կոյսն էր, և գաւազանն խաչն, նոյնպէս *վէմն* քրիստոս: - 386. Եւ *վէմ* կոչի, Նա՛խ՝ զի ադամ հողացաւ մեղօք. և քրիստոս *վէմ* անմեղութեամբն: - 386. Հինգերորդ, զի գլուխ անկեան. և այս է *վէմն:* - 386. Այլ բանն աստուծոյ ի ծովէ լորամարգ ի *վիմէն* ջուր և յօդոյ մանանայիւ կերակրեաց զնոսա. զի ամենակա՛ր է զօրութիւնն աստուծոյ: - 397. *Վէմք* պատառեցան. և խաւարեցաւ լոյսն: - 399. Եւ այս գիտելի է, զի **գ** պարգևք էր ժողովրդեանն. այսինքն Ամպն, *Վէմն*, և Մանանայն: - 415. Եւ յետ մահուանն մարիամու նուազեաց ջուրն. յորում եհար բարկութեամբ *զվէմն:* - 415. Նուազիլ՝ ո՛չ ասեմ զամենևին պակասիլն. զի առ ջրհորաւն մեծի անյայտ եղև *վէմն*. և յելսն յորդանանու մանանայն ո՛չ գտաւ: - 415. Ութերորդ՝ զի զկարծր սիրտ նոցա թլփատեսցէ օրհնօքն ի *վէմն* գրեալ: - 415. Տասներորդ՝ և նորս թլփատութիւն սրտի՝ *վէմն* քրիստոս լինելոց էր. որ կարծրացաւ աստուածութեամբն. և էարկ սուր յերկիր և բաժին: - 415. Իններորդ՝ հանեալ ի գետոյն **բժ**ան *վէմս* շինեաց սեղան. և նոյն թուով խորասուզեալ ընկղմեաց: - 418. Եւ տէր մեր *վիմով* հաւատոյն զսիրտս քրիստոնէից: - 418.

Չորեքտասաներորդ, ցպով և պարսաքարով ել ընդ դէմ գողիաթու. և տէր մեր խաչիւ որ *վէմ* կոչեցաւ, և ի ձայն բարձր աղաղակեաց և արձակեաց զհոգին: - 436. Երեսունըն, դաւիթ քաքեաւ զօրեայ առ *վիմին*. և տէրն զօրեայ ի գերեզմանին: - 437. Եւ *վէմն* եկեղեցւոյ և պետ պետական գնդին՝ խուսափէր: - 456. Երկրորդ՝ զի *վէմն* առանց ձեռին հատաւ ի կուսական լեռնէն ըստ դանիէլի: - 470. Զի որպէս ի կուսական արգանդէ, նոյնպէս ծնաւ ի կոյս գերեզմանէ *վիմովն* կնքելով: - 471. Երկրորդ՝ *վէմք* պատառեցան: - 490. Եւ ի ձայնէն *վէմք* պատառեալ և երկիր շարժեալ, տեղի ետուն իջանել ի նոսա՛. և քարացեալ սիրտ նոցա ո՛չ շարժեցաւ: - 490. Եւ փայտն որ քաղցրացոյց զջուրն ի մեռայն. և ի *վիմէն* ջուր բղխեցոյց: - 494. Ոմանք դ ասեն. և այլք՝ բազումք. զի ի գերեզմանի ասեն տաճիլ. և յօդս. և ի ծովս. և ի *վէմս:* - 504. Եւ ապա՛ յետ յարութեանն իջեալ հրեշտակն թաւալեցոյց զկափարիչ *վէմն* և նստաւ ի վերայ նորա և աւետեաց իւղաբերիցն: - 512. Մատթէոս զառաջինն գրէ որ ի մէջ գիշերի եկին. և մի հրեշտակ տեսին. և *զվէմն* առաջի նոցա թաւալեցոյց և նստաւ ի վերայ նորա: - 515. Եւ զերկրորդն ղուկաս պատմէ՛ վաղ քաջ ընդ առաւօտն. և տեսին արք երկու լուսազգեացք. և *զվէմն* թաւալեալ: - 515. Եւ *վէմ* դաւանութիւնն էր որ խոստովանեցաւ զքրիստոս որդի աստուծոյ կենդանւոյ. և ի վերայ այնմ դաւանութեան շինեցաւ եկեղեցի քրիստոնէից: - 547. ...և ապա՛ ի յերկրէ յարուցանէ զմարմինս. որպէս այն որ հրեշտակապետն նստեալ ի վերայ *վիմին* փողէր զյարութիւնն քրիստոսի: - 618. Հինգերորդ, զի և նախահարցն քարեայ էր գերեզմանն. աբրահամու. սահակայ. և յակոբայ. նոյնպէս և գերեզման տն. և կափարիչ *վեմն*...: - 679. Ի գարնան եղանակի ի զատկի կիրակէին ի մէջ գիշերի յորում ժամու յարեաւ քրիստոս և հրեշտակն թաւալեցոյց *զվէմն* և գոչէր զյարութիւնն քրիստոսի...: - 714. Որպէս լոյս արեգակն անցանէ ընդ երկինս առանց ապականութեան. և որպէս քրիստոս յարեաւ մարմնով ի գերեզմանէն *վիմովն* կնքելով. և եմուտ առ աշակերտսն դրօքն փակելովք: - 722. Վեցերորդ՝ զի գործ աստուծոյ է ի նւաստ և ի փոքր ինչ իր զմեծամեծսն ներգործել. որպէս կաւովն զկուրին աչքն եբաց, և ի *վիմէն* ջուր բղխեցոյց ըժան. և այլ բազումս: - 733-734. Որպէս և բազում ուրէք յերգս գտանի. *վէմք* պատառեալ. երկիր շարժեալ առ խաչին քրիստոսի: - 788. Ա՛րդ՝ որպէս երկիր շարժեցաւ, *վէմք* պատառեցան: - 788

**ՎէՏ +** Տասներորդ՝ զի գեղեցիկ լինի ի տեսս աչաց երփն երփն գունով և *վէտս վէտս*. այսինքն ծալ ծալ ծիծաղի երեսօք: - 208

**ՎէՐ(Ք) +** Դարձեալ՝ աղն նշանակէ՛ զբանն աստուած. որ զանհամութիւնս մեր համեմեաց, և զնեխեալ *վէրքն* ապականութեան մերոյ ողջացոյց: - 356. Իսկ Աղ կոչեցաւ. զի զանհամութիւնս մեր համեմեաց, և *զվէրս* ողջացոյց: - 361. Նա՛խ՝ զի դիւրին է կսկիծ *վիրացն:* - 415. Իսկ աղն բանն աստուած խառնեալ ընդ մարդկութիւնս. որ բժշկեաց *զվէրս* մեր: - 445. Ասեմք, եթէ խոցուածն և արիւնն ցուցակ ապականութեան են, ապա և զայս խոցուածս եցոյց յետ յարութեանն. նաև ի կատարածի ցուցանելոյ է զամենայն խոցուածս *վիրացն*...: - 502-503. զի զանհամութիւնս մեր համեմեաց և զնեխեալ *վէրս* սրբեաց: - 657. Նաև պաղատիտս թզոյ եդաւ ի վերայ *վիրացն* եզեկիայի և ողջացաւ: - 665. Զի նովաւ զովացան ամենայն ազգք. և բժշկեցան *վէրք* հոգոց մարդկան: - 768

**ՎԻԶ +** *Վիզն* երկայն և բարակ՝ չարախորհուրդ է: - 247. *Վիզն* բոլոր՝ արի՛ է: - 247. Կարճ *վիզն*՝ համարձակ է: - 247. *Վիզն* վերամբարձ յանդուգն է և ապստամբ: - 247

**ՎԻԹԽԱՐԻ +** Եւ զազա՛ն է ձուկն և *վիթխարի* և խառնակեր քան զամենայն զազանս: - 511

**ՎԻԺԵԼ +** Եւ ժե նրբեցոյց ի մի կանգուն, զի ջուրն *վիժեսցի:* - 293. Իսկ *վիժեալն* ի յարգանդէ ըստ որում է սերմ կամ արիւն մօրն՝ ի մա՛յրն յարիցէ: - 719

**ՎԻԺՈՒՄՆ +** Եւ թէ ոք ասիցէ, յորժամ ունի զկենդանութիւն սերմն այն՝ ընդէ՞ր ի *վիժումն* մեռանի: - 256

**ՎԻՀ +** Ապա յա՛յտ է թէ՝ որ անկանի ընդ քար կամ ի *վիհ* և մեռցի, ո՛չ է ուտելի: - 366. Վհուկն ա՛յն է, որ ի *վհաց* և յանդնդոց մեռեալս կերպարանեն. դևք ի կերպս մարդկան երևին. զոր դևակոչ ասեն և հազիմաք. և Նշանագէտ, որ ի գերեզմանս ննջէ և նշանաւոր մարդ կերպարանէ. որպէս զսամուէլ սաւուղայ երևեցոյց հարցուկ կինն: - 388

**ՎԻՃԱԿ +** Երրորդ՝ զի ո՛չ գիտէին զանդրանիկն ժամանակաւ, և ո՛չ զկրտսերն. և լինէր փոփոխումն *վիճակաց* նոցին. որպէս յակոբ էառ զանդրանկութիւնն եսաւայ. և եփրեմ զմանասէին. թէ և սոքա տեսչութեամբն աստուծոյ. այլ նոքա ի պատրանաց լինէին: - 238. Այլ և ի տօնի քաւութեանն զուարակ մի և բ նոխազ *վիճակով*. մին տեառն և միւսն արձակման յանապատ: - 359. Զի՞նչ նշանակէր բ նոխազն *վիճակ* արկեալ: - 369. *Վիճակ* սահմանն է. որ նախ քան զյաւիտեանս սահմանեաց հայր զփրկութիւն մարդկան: - 369. Զի երկոտասան *վիճակացն* առաքեալք. և նախ քրիստոս ի մէջ նոցա: - 382.

Յնգետասաներորդ՝ յեսու ներեաց աքարայ զտիւն և զգիշերն մինչ լուսով առաւօտին *վիճակաւ* յանդիմանեցաւ: - 418. Եփուտն հոմանուն է. քանզի կոչի ուսանող. և կոչի *վիճակ:* - 425. Եւ այն որ *վիճա՛կն* է՝ ծիրանեգոյն հանդե՛րձ է. որ զսեղան հացին և զխնկոցն ծածկէին. և տեսութիւն կամ փրկութիւն թարգմանի: - 425. Ապա ուրեմն ի ժամանակիս յայս ընկե՛ր են սաւուղայ որք սակաւ մի կարծեօք հաւանին երազոց կամ *վիճակաց* և ռամտեսաց և այլոցն: - 429. Ասեմք առ այս, եթէ համակա՛րգ են քահանայք կամ եպիսկոպոսք որպէս առաքեալքն. այլ ունին *զվիճակ* և ժողովուրդ այլ և այլ: - 541. Զի եպիսկոպոսն փեսա՛յ է և *վիճակն* հարսն. նա՛ միա՛յն իշխէ: - 541. Եւ չորրորդն ի սոցանէ եղև յաթոռ *վիճակի* սրբոյն գրիգորի հանուրց: - 544. Իսկ Յինգերորդ ժողովն եղև ի *վիճակս* գրիգորիսի. ի մայրաքաղաքն աղուանից պարտաւ: - 545. Չորրորդ՝ յա՛յտ է, զի իւրաքանչիւր առաքեալ յիւր *վիճակն* ընթացեալ ձեռնադրեցին եպիսկոպոսունս: - 546. Եւ ո՛չ ոք գնաց առ պետրոս ի հռօմ. և ո՛չ պետրոս յայլ *վիճակս* ձեռնադրեաց զոք: - 546. Ասեմք թէ՝ սուրբն գրիգոր ի կեսարիայ ձեռնադրեցաւ ո՛չ յայլմէ առաքելոյ, այլ ի սրբոյն թադէոսէ՛. որոյ էր *վիճակս* հայոց: - 548. Եւ բաժանեալ զսուրբ տեղիս տընօրինական, ետուն զսուրբ յակոբն պատրիարգարան, և զգողգոթայն, և զսուրբ կարապետն և զնշարսն. և արկեալ *վիճակս* ի վերայ յարութեանն՝ անկաւ հայոց. և տրտմեցան ոմանք յազգէ նոցա: - 548. Եւ գո՛րծ է նոցա ձեռնադրել զարք եպիսկոպոսունս. որք են ընդ իւր *վիճակաւն* ի չորս բաժինս տիեզերաց: - 607. Այլ և վարժապետին իմոյ և մեծ հռետորի հայոց, Յոհաննու Որոտնեցւոյ, եղիցի ի սմա յիշատակ մաղթանաց մասին օրհնութեան. և *վիճակ* ժառանգութեան սրբոցն ի լոյս: - 773

**ՎԻՃԱԿԱՒՈՐ +** Եւ գո՛րծ է նոցա՝ ձեռնադրել զամենայն *վիճակաւորս* եկեղեցւոյն իւրեանց: - 607

**ՎԻՃԱԿԵՄ +** Նոյնպէս և դրախտն մասն է յապականացու երկրէ. և զանապականութիւն *վիճակեալ:* - 225. Նոյնպէս և աթոռակալքն որ ի չորս աթոռս, ա՛յլ զայլոյ *վիճակեալ* ո՛չ կարէ կապել և ո՛չ արձակել. նոյնպէս և ի նոյն աթոռն, վերջինն զառաջ նոյն ո՛չ կարէ փոխել կանոնս և զկարգ: - 541. Ասեմք եթէ՝ ձայնիւն և պսակաւն եցոյց մարդկան և լսեցոյց ի յաչս և ի յականջս թէ զայնպիսի կեանս *վիճակեցին* նոքա որք սուրբք են ի մարդկանէ...: - 697. Դարձեալ, ծառ կենաց և անմահական պտուղ՝ մարմին և արիւնն սուրբ. յորմէ ճաշակեալ հանապազ՝ անմահ կենացն *վիճակէ* զմեզ...: - 768

**ՎԻՃԻՄ +** Երկրորդ՝ զհոգին մովսէսի ո՛չ կարէր յափշտակել սատանայ, փոխանակ հոգւոյն զմարմինն ջանայր յափշտակել. և *վիճէր* ընդ հրեշտակին թէ իմ է...: - 410. Վեցերորդ վկայ նոյն ինքեանք ազգն Ֆռանկաց. որ յամենայն շաբաթ օր *վիճիլ* ասեն. և միս ո՛չ ուտեն ի խորհուրդ նաւակատեաց մեծի շաբաթուս: - 509. Մանաւանդ զկեղծաւորեալ *վիճիլս:* - 553

**ՎԻՄԱԾԻՆ +** Նմանապէս և մեծն ի մարգարէս աստուածախօսն մովսէս որ աստուած կոչեցաւ փարաւոնի. իշխելով տարերցս փոփոխման, որ ջրածինն էր՝ եղև *վիմածին* և կայծակնածին. որում լուսաւորեցան երեսք: - 288. այսպէս և քար տապանիս մեր լիցի. նշանակէ՛ զանապական յարութիւնն. որ *վիմածին* լինիմք և առանց ապականութեան որպէս քրիստոս. և ո՛չ հողածին ապականացու որպէս զառաջին ադամն: - 679

**ՎԻՇԱՊ +** Յրեղէն *վիշապն*. և տուտն նորա: - 102. Իսկ այլն՝ սատանա՛յ է ապստամբ *վիշապն* որ գերեաց զմարդիկ:- 128. Զի՞նչ է հրեղէն *վիշապն*. որպէս ասէ տեսիլն **լգ** գլուխն: - 151. Բանսարկո՛ւն է *վիշապն* որպէս ասէ յոբ՝ «եդեր շրուշակ ի քիմս նորա, և արարեր խաղալիկ հրեշտակաց»: - 151. Զայսմ *վիշապէ՛* ասէ՝ զգլուխ *վիշապին* փրկիչն ջախջախեաց ի յորդանան. այն է որ զամենայն ջուրս ծովուն յակնակապիճս իւր ընդունէր: - 151. Զի՞նչ է է խոյրն ի գլուխ *վիշապին:* - 152. Երրորդ՝ գլուխ *վիշապին* է մեղքն, և տուտն մահ և դժոխք: - 152. Եօթներորդ՝ օրինակ՝ զի քրիստոս զգլուխ *վիշապին* խորտակեաց: - 218-219. Երկրորդ՝ զի գաւազանն մովսէսի մի *վիշապ* եղեալ կլանէր զբազում *վիշապս* նոցա որ և հե՛տն միանգամայն ո՛չ երևէր. ընդէ՞ր ապա և նոցայն ո՛չ եկուլ զմովսէսին. քանզի սո՛ւտ էր: - 335. Զգլուխ *վիշապին* ջախջախեաց: - 454. Երկրորդ՝ զի խորտակեսցէ զգլուխ *վիշապին* ի ջուրն: - 486. Որ զադամ խաբեաց օ՛ձ էր. այժմ ի յորդանան *վիշապ:* - 488. Զի օձն ի բազում ժամանակս *վիշապ* լինի: - 488. Դարձեալ՝ օձն ի յերեսս երկրի, և *վիշապն* ի խորս և յանդունդս: - 488. Դարձեալ՝ *վիշապն* չարաթոյնք է քան զօձն: - 488. Դարձեալ՝ *վիշապն* ի յորդանան էր բունեալ...: - 489. որպէս փախեաւ կինն որ ծնաւ զմանուկն արու ի տեսիլն. և ո՛չ կարաց հրեղէն *վիշապն* հասանիլ: - 689. Դարձեալ և այլ իմն եղանակաւ կապեաց զհրեղէն *վիշապն:* - 705. Զի զգլուխ *վիշապին* ի ջուրսն յորդանանու ջախջախեաց ըստ յոբայ որ է մեղքն...: - 705. Յինգերորդ, որպէս տուտն ջախջախեալ *վիշապին* շարժի: - 706. Եւ սատակեալ *վիշապին* տուտն է նեռն. որ ի վերջին ժամանակս քարշէ զերրորդ մասն աստեղաց...: - 706. Եւ վասն հրեղէն *վիշապին* և տըտան նմին ասացաւ ի վերոյ **թ** գլուխն **իե** համարն:

- 706. Երրորդ՝ որդունք անմահք. այսինքն օձք, *միշապք*, տեսութեամբ և շաչմամբ ահագին: - 752. Ութերորդ՝ ահագին տեսիլն դիւաց և *միշապաց*. զոր ի կայծի կայծել հրոյն տեսանեն. և ողորմելի աղաղակ լալ ականացն և ոտնիար լինողացն: - 752

**ՎԻՇՏ +** Նա՛խ՝ զի ի ծնանիլն բենիամենի՝ մեռաւ մայրն և որդի *վշտաց* եղև նմա: - 312. Զառաջինն մխիթարեցաւ աստուածածին կուսիւն մարիամաւ. որ առանց երկանց և ցաւոց ծնաւ զմիածինն որդի, որ եբարձ զարտասուս *վշտաց* մօրն հռաքէլի: - 312. Եւ այսպէս մխիթարեցաւ յայս երից *վշտացս* տրտմութեանց: - 313. Ոմանք ասեն թէ՝ բարեկամքն իւր որ էին յազգէն եսաւայ ելիփազ. սովփար. և բաղդատ. որք եկին մխիթարել զնա ի *վշտացն*...: - 320. Ոմանք է ամ ասեն. ըստ որում ի վեցից *վշտաց* փրկեսցէ, և յեօթներորդին ո՛չ փորձեսցի չար: - 326. Ի խորհուրդ է դարու *վշտաց* կենցաղոյս. և յութներորդին ազատութիւն բնութեանս: - 326. Սոքա նշանակեն զնահատակսն որք բազում *վշտաց* և փորձանաց համբերեցին: - 357. Եւ շուրջ զնովաւ հրեշտակք ամենայն ոչ հաւանեցան. զի նոքա զամենայնն ճշմարիտ խօսին. և բարի առնեն մարդկան. և յապաշխարութիւնն խնդան. իսկ սուտ խօսիլն և չար առնելն և ի *միշտս* ուրախանալ՝ դիւա՛ցն է որ են չար հոգիքն: - 444. Ապա ուրեմն ի վեցից գլխաւոր *վշտաց* փրկեաց զմեզ: - 474. Երկրորդ, զի յամենայն կողմանց *միշտ* է: - 679. Եւ յետ նոցա ամենայն բազմութեանց ժողովելոց յամենայն ազգաց ասէ. որք եկին ի բազում *վշտաց* աշխարհի. այսինքն որք զանազան առաքինութեամբ և բազում նեղութեամբ մտին ի հանգիստն: - 760. *Զմիշտս* յայտ առնէ անցելոցն նուազութիւն և կորուսելոցն բազմութիւն: - 764. Եւ որ քան մեծ *միշտ* եղև ի պատերազմին, ա՛յն քան է մեծագոյն ուրախութիւն ի յաղթութենէն: - 765. Այսպէս և ի նաւորդսն զկնի *վշտաց* նաւաբեկութեանն ցնծան յոյժ. վասն զի երկեա՛ն յոյժ: - 765

**ՎԻՐԱՊ +** Եւ յորժամ մերն լուսաւորիչ ել ի *վիրապէն*, **ե** օր պահք կարգեաց և ապա՛ բժշկեաց ի հարուածոյն...: - 650. Առասպել մի՛ համարիր զայն որ ասեն թէ ի *վիրապն* հարկանի: - 713

**ՎԻՐԱՒՈՐԵՄ +** Վեցերորդ՝ զգուշանայ ի *վիրաւորելոյ* զնա: - 575. Եօթներորդ՝ թէ *վիրաւորեալ* է՝ հաշտեցուցանէ զնա: - 575

**ՎԻՐՔ** - Իսկ որ զդպրութիւն գիտէ և գրով վարի՝ **բժ**ան ազգ է. ...*Վիրք:* - 298. Իսկ *վիրք* և աղւանք ո՛չ կատարեալ գրով. այլ առեալ ի հայոց. որպէս ասորին և իսմայէլացին յեբրայեցւոցն: - 299. **Եւ տէր մեր յերկրի մարդացաւ, և յերկինս թագաւորեաց. իսկ նստիլն ի վերայ ջորոջ, որ է խաչն. զի *վիրք* զխաչն ջուարի կոչեն**: - 441.

**ՎԿԱՅ +** *Վկայ* անիրաւ զտեառնէ՛ հայհոյեն. և դա՛տ խռովութեան ի ժողովս մուծանեն: - 34. Եւ առաքեալն զհոգին և զջուր և զարիւնն ասէ **գ** *վկայք* քրիստոսի: - 54. Երրորդ *վկայ* մարգարէքն. որպէս ասէ դաւիթ վասն հոգւոյն՝ «ի քէն է տէր աղբիւր կենդանութեան». և ո՛չ թէ ի ծէնջ: - 64. Վեցերորդ *վկայ* ի ժողովոյն քաղկեդոնի զոր նոքա ընդունին և ո՛չ մեք. այսպէս է գրեալ թէ՝ որ ոք զհոգին ի հօրէ և յորդւոյ բղխումն ասիցէ՝ նզովեալ լիցի: - 64. Եօթներորդ՝ *վկայ* դամասկացին որ ասէ. որ և նա ևս քաղկեդոնիկ է. եթէ յայտնապէս զհոգին սուրբ ի հօրէ՛ ասեմք. և զնա հոգի հօր անուանեմք: - 64-65. Վեցերորդ՝ թողեալ լինին ոմանք չարչարեալ առ ի նախանձ այլոց. զի պատիւ չարչարելոցն յայտնի լիցի վասն համբերծեալ յուսոյն. որպէս *վկայիցն* եղև...: - 158. Իսկ որ զմարմին յառաջ ասեն քան զհոգի, *վկայ* ածելով զմովսէս որ ասէ եթէ՝ էառ զհողն և շինեաց մարմին. և յետոյ փչեաց ի նա զշունչն կենդանի, որ է կենդանարար հոգին: - 253. Այսպէս և ի նորս սուրբն ստեփաննոս որ եղև առաջին մարտիրոս և *վկայ* քրիստոսի՝ հեղլով զարիւն իւր. տեսանէր բացեալ զերկինս և զյիսուս ընդ աջմէ աստուծոյ: - 288. ...*վկայից* դասքն նահատակեցան: - 324. Այլ իմանալեացն դասք *վկայք* են Նա՛խ՝ զի ի դրունս են սուրբ Երրորդութեանն և տեսօ՛ղք են անճառելի փառացն: - 345. Երկրորդ՝ յորժամ յերկրի երևին, և պակնուն տեսօղքն երևմամբ նոցա, *վկայք* լինին փառաց ամենազօրին: - 345. Եւ *վկայ* ածեն զհամբարձումն քրիստոսի յետ **խ** աւուր: - 391. Եւ *վկայքն* հաստատեցին մեծ գոլ և ծածուկ՝ հրաշալի խորհուրդ միածնին փրկագործութեան երևումն առ մարդիկք: - 456. Երրորդ՝ զի յովսէփ *վկայ* լիցի ողջախոհութեան կուսին: - 461. Երրորդ *վկայ* զի ասէ սուրբն եւագրիոս. «պահքն քո ի մեծի շաբաթուն մինչև ց**թ** ժամն լիցի»: - 509. Չորրորդ *վկայ* լոյսն զգալի. որ յինն ժամուն ծագէ՛ ի գերեզմանէն ակներև ամենայն մարդկան: - 509. Հինգերորդ *վկայ*, զի ի բոլոր տարին յերեկոյի շաբաթուն կիրակմուտ անուանեն ամենայն ազգք...: - 509. Վեցերորդ *վկայ* նոյն ինքեանք ազգն Ֆռանկաց. որ յամենայն շաբաթ օր վիճիլ ասեն. և միս ո՛չ ուտեն ի խորհուրդ նաւակատեաց մեծի շաբաթուս: - 509. Զորօրինակ **բ** ոք ի դատախազից իւրաքանչիւրն զինքն կամի և կարծէ ճշմարիտ գոլ. այլ մերձ եկեալ դատաւորին՝ *վկայիւք* յայտնի ճշմարիտն: - 551. Այլ դատաւոր միտն կացուցեալ երկու *վկայ* զանբիծ հաւատս և

զօրէնս որ են հաւատք և գործք. զի առ ո՞ր և իցէ քրիստոս նա՛ է ճշմարիտ: - 551. Եւ զի ճշմարիտ *վկայք* են սոքա...: - 551-552. Ա՛րդ՝ բե՛ր ածցուք *զվկայս* առ դատաւոր միտս, և դատեսցուք ուղղութեամբ, այլ ո՛չ զրպարտութեամբ: - 552. Որոյ պատճառէ, զի կին երաշխաւոր և *վկայ* ո՛չ կարէ լինիլ, վասն որոյ և ո՛չ կնքահայր կարէ լինիլ: - 591. Երրորդ *վկայ* ունիմք զմարգարէս և զառաքեալս...: - 595. Եւ *վկա՛յ* մեզ յօհան աւետարանիչն որ ասէ՝ «Զայս ասաց եսայի զի ետես զփառս նորա և խօսեցաւ վասն նորա»: - 631. Եւ *վկայ* այսոցիկ ի մամեստիայ գտեալ քարն. յորում գրեալ էր յունարէն գրով, «սուրբ աստուած սուրբ և հզօր սուրբ և անմահ որ խաչեցար վասն մեր ողորմեա՛ մեզ»: - 632. Զի՞նչ է որ ա՛յլ ազգք ի դէմս Երրորդութեանն ասեն. և *վկայ* ածեն զսերովբէսն **գ** սուրբ և մի տէր ասելովն: - 632. Եւ ի **ե** շաբաթին՝ որ *վկայք* են քրիստոսի: - 642. ...վասն որոյ նախ հրաւիրէ՛ զայլս ի մեծարանս և *վկայս* որդւոյ իւրոյ: - 643. Եւ բոլոր սաղմոսն՝ այն մին տանն համաձայնք և *վկայք*. վասն այն ասի սաղմոս կցորդ: - 643. Երեսունևվեց, *Վկայքն* և ոսոխքն: - 661. Այլ մեր վարդապետք յերկինս և ի ներքոյ երկնից ասեն. որպէս և կալիստրատոս *վկայն* առ **ը** երորդ կամարաւն ուր են լուսաւորք և եթերային լոյսն: - 686. Եւ սուրբն կալիստրատոս *վկայն* ի ճառս իւր: - 687. Անդ ժողովեցան առաքեալք և *վկայք* սուրբք և կատարեալք մինչ ի միւսանգամ գալուստն...: - 688. Եւ հաւատարիմ *վկայ* ընդհանուր յարութեանն զգործս եցոյց. որ զղազար չորեքօրեայ ի գերեզմանէն յարոյց: - 716. Երրորդ ի *վկայիցն* զոր կարեմք փոփոխել այժմ: - 742. Նախ՝ զի անփոփոխ է յաւիտեանն. այլ և էութիւն մեր. այլ և *վկայքն:* - 742. Յօրէնքն հրամայեցաւ **բ** և **գ** *վկայք* սպաննելոյն և ամենայն բանի: - 742. Նա՛խ՝ զի յերի՛ց է մարդն. հոգի մարմին և շունչ գոյացեալ. ի քակտումն սոցա **գ** *վկա՛յ* է պիտոյ: - 742. Երրորդ, յատեան դատաստանի **դ** խնդրին *վկայք*. զի մինն կարէ՛ ոք խաբել և սուտ վկայել. այլ զերկու և զերեքն ո՛չ: - 742. Չորրորդ, զի երեք են դատելիքն. մին դատաւորն, և **բ** դատախազքն. պիտո՛յ է այսինքն **գ** *վկայք:* - 742. Ութերորդ, զի **գ** զգայութիւնքն հաստատ *վկայք* են. աչքն և ականջքն և ըմբռնելիքն: - 742. Իններորդ, զի բնական օրինացն **գ** են *վկայք.* բանն և գիրն և աւետարանն. որ տուաւ նահապետացն և մարգարէիցն և առաքելոցն: - 742-743. Տասներորդ, զի և յօրն դատաստանին լինին *վկայք* **բ**՝ երկինք և երկիր, և զօրք երկնից: - 743. Այլ և արդարութիւնն աստուծոյ, պահապան հրեշտակքն, և խիղճ մտացն իւր, են երեք *վկայք:* - 743. Դարձեալ՝ անդանօր բարեացն կրկին են *վկայք*. կենդանի և անկենդան: - 743. Ա՛յս է **բ** և **գ** *վկայքն:* - 743. Նմանապէս և չարեացն *վկայ*՝ ոսոխն մեր սատանայ և գործակիցքն. և խիղճ մտացս որով տանջիմք միշտ: - 743. Դարձեալ կրկին *վկայ* անդ...: - 743. Երկրորդ, պատուիրանն աստուծոյ և օրէնքն է *վկայ* պահողացն և անարգողացն զնա: - 743. Իսկ ըստ տեսակի, որպիսութիւն հատուցմանց ըստ հաւատոց և գործոց *վկայից* և կուսից: - 746. Արդ որպէս յամենայն ժամանակս սոքօք գան ի հաւատս ուղղութեան և է՛ վարձատրելի. այսպէս և ի վերջին ժամանակս որք յետ նեռինն՝ ո՛չ միայն ի հարկէ սքանչելեաց, այլ և ի լրոյ քարոզչաց երկուցն *վկայից* իջելոց սրբոց: - 785. Եւ նոյն ինքն տէրն բոլորից *վկայ* քարոզութեան զգործս կատարէր. զի սովորութիւն է մարդկան քան զլուր լսելեաց տեսութեան աչաց հաւանիլ: - 785

**ՎԿԱՅԱՐԱՆ +** Եւ նոյն զքահանայթաղէքն, որ ունի է աւետարան. և զաշխարհական թաղումն, ի յայրարատ գաւառի ի վաղարշապատ քաղաքի ի *վկայարանս* սրբոյն հռիփսիմի. յետ **ճժա** ամի սրբոյն գրիգորի. զի մինչև ցայն հնովն վարեին: - 659

**ՎԿԱՅ ԲԵՐԵԼ** - Ոմանք թուզ ասեն. թէ ի նոյն ժամն որ կերաւ և մերկացաւ՝ և կարեաց ի տերևոյ նորա. և *վկայ բերեն* թէ՝ վասն այն անէծ զթզենին յերուսաղէմ: - 224. Իսկ ոմանք յետ ծննդեանն ի կուսէն ասեն օծեալ զքրիստոս ի մկրտութեանն. *վկայ բերելով* «զյիսուս որ ի նազարեթէ, զոր էօծ աստուած հոգւով և զօրութեամբ»: - 475. Եւ *բերէ՛ վկայ* զբանն սաղմոսին «փրկեցեր զանձն իմ ի դժոխոց ներքնոց»: - 504

**ՎԿԱՅԵՄ +** Ասեմք առ այս, եթէ այսու *վկայե՛ս* և դու մեզ՝ թէ ո՛չ է հարկ...: - 13. Արդ՝ թէ ինն ամսով յառաջ թագաւորեալ էր թագաւորն չար, ապա ուրեմն ի ժամանակս Օգոստոս կայսեր ծնաւ քրիստոս. զոր և *վկայէ՛* աւետարանն սուրբ: - 29. Բայց ո՛չ ծնեալ ասեմք՝ և ո՛չ անծին. այլ արտաքս առաքեալ ի հօրէ. որպէս *վկայէ* քրիստոս թէ՝ «հոգին որ ի հօրէ՛ ելանէ». թերևս ճշմարիտ աստուածաբա՛ն իցէ քան զքեզ: - 52. Ութևժերորդ՝ ճշմարիտ միայն աստուած է. և զինքենէ՛ *վկայէր*, «ե՛ս եմ ճշմարտութիւն»: - 72. Երկրորդ՝ *վկայէ՛* սիրելի աշակերտն յօհաննէս, «զաստուած ո՛չ ոք ետես. բայց միածին որդին նա՛ պատմեաց մեզ»: - 96. Եւ մարգարէն *վկայէ՛* «ո՛չ արար մեղս»...: - 99. Քսանբերորդ՝ առաքեալն պօղոս և աւետարանիչն յօհաննէս *վկայեն* հանդերձելոյն թէ՝ «տեսանելոց եմք զնա որպէս և էն. և ճանաչեմք զնա որպէս նայն ծանեաւ զիս»: - 99. ...*վկայէ՛* և դաւիթ՝ «Երկինք պատմեն զփառս աստուծոյ». որք են

վերնագոյն դասքն. և հաստատութիւն զարարածս պատմէ և ո՛չ զփառս որպէս ցուցաւ: - 150. *Վկայէ՛* և մարգարէն, «աստուած մեր որ նստի յերկինս երկնից»: 184. Վասն որոյ *վկայեցաւ* ենովս որ է մարդ: - 288. ...*վկայէ՛* մովսէս, «Նո՛յ էր այր արդար կատարեալ յազգի անդ իւրում»...: - 288. Երկրորդ՝ զմելքիսեդեկ քահանայ առաջին *վկայէ՛* գիր ըստ մովսէսի, «թէ քահանայ էր աստուծոյ բարձրելոյ»: - 301. Նոյնպէս և սատանայ ատէ՛ր զմարդկային բնութիւնս զի ի պատկերն աստուծոյ արարաւ. և հրէայքն ատէին զքրիստոս. զի *վկայեաց* հայր թէ դա՛ է որդի իմ սիրելի: - 313. Իսկ լեառն հողեղէն բնութեանս մերում, կամաւ հօր *վկայելով* ի վերայ նորա՝ և հաճութեամբ սուրբ հոգւոյն աղաւնակերպ իջմամբ, և անքակտելի միացեալ բանիւն եղև լեառն մածեալ մշտնջենաւոր և անեզր յաւիտենիւ բարձրացեալ օրհնութեամբ և առաւելեալ: - 320. Զի *վկայէ՛* աստուած վասն նորա «էր աւէ այր ճշմարիտ՝ արդար՝ անարատ՝ աստուածապաշտ, և մեկնեալ յամենայն չարեաց»: - 321. Նա՛խ՝ զի հայր նոցա բարեպաշտութեամբ սնուցանէր զնոսա. և *վկայեցաւ* առ աստուած արդար գոլ: - 322. Չորրորդ՝ զի ի ստեղծանելն զմարդն աստուած ո՛չ *վկայեաց* թէ բարի է որպէս ա՛յլ ամենայն ստեղծուածոցն: - 325. Արդ զոր ադամայ ո՛չ *վկայեաց*, խօսեցաւ ընդ յակոբ և *վկայեաց* արդար և անարատ գոլ: - 325-326. Հինգերորդ՝ ըստ առաջին կարգին դարձեալ ասացին բարեկամքն յոբայ՝ թէ հաճո՛յ ես աստուծոյ՝ լուիցէ և խօսեսցի աստուած. վասն այն առաջի նոցա խօսեցաւ և *վկայեաց:* - 326. Վասն է՞ր կրկին *վկայեաց* յոբայ: - 326. Նախ՝ զի զառաջին վկայութիւնն յոբայ անմարմինքն իմացան. դարձեալ *վկայեաց*՝ զի լուիցեն մարդիկք: - 326. Չորրորդ՝ յոբ կրկին *վկայեալ* յաստուծոյ արդար և անարատ. և տէր մեր երկիցս *վկայեալ* ի հօրէ «դա՛ է որդի իմ ընտրեալ»: - 327. Դարձեալ՝ մորենին անարգ թուփ՝ նշանակէր զխոնարհութիւնն մովսէսի յոր հանգեաւ աստուած. որպէս *վկայէ՛* «հեզ է ծառայն իմ մովսէս»: - 331. Իսկ վկայութիւնն որ է՛ տախտակքն օրինաց. զի *վկայե՛ն* պահողացն բարիս. և ոչ պահողացն պատիժս: - 345. Որ և մովսէս եկեալ ի թաբօր *վկայէր* նմա, և աղերսէր ելանել ի խաչ և բանալ զդուռն արքայութեան. որում մարգարէքն սպասէին: - 411. Եւ զյիսուս փրկիչն՝ հայր սրբեաց և առաքեաց. որ և ի յորդանան *վկայեաց* «դա՛ է որդի իմ սիրելի, դմա՛ լուարուք»: - 417. Եւ այսմ *վկայէ՛* պօղոս ի գործքն եթէ՝ յետոյ յեսուայ իշխեցին դատաւորք մինչ ի սաւուղ ամս չորեք հարիւր և յիսուն՝ այսպէս: - 420. Վեցերորդ՝ դարձեալ տէր մեր յիսուս քրիստոս որ եղև զգեստ հաւատացելոց իւրոց. մկրտեցաւ ի յորդանան. և ձայն հօր *վկայեաց*. և աղաւնակերպ հոգին էջ ի վերայ նորա: - 421. Վեցերորդ՝ զնա *վկայէ՛* բարի և լաւ և անձնեայ ի մէջ իէլի. և տէր մեր բարի և ընտրեալ ի մէջ բիւրաւոր արարածոց: - 426-427. Քսանևք, հարեալ որմն *վկայեաց* թէ սպանօ՛ղ է դաւթի սաւուղ. և չարչարեալ և մեռեալ մարմինն *վկայէ՛* թէ աստուածասպա՛նք են հրէայքն: - 436. Եւ երիցս հայր *վկայեաց* որդւոյ: - 441. ...և նա՛ *վկայեաց* վասն գերութեան ժողովրդեանն. այլ վասն բարեպաշտութեան ովսիա ո՛չ գնաց գերի: - 447. Եւ զյովսէփ արդար *վկայէ* աւետարանն: - 460. Այլ ի ձեռն հրեշտակապետին *վկայեալ* և աւետեալ զհաւատարիմս ի գիտութիւն: - 464. Այլ արդ՝ սուրբ գիրք *վկայեն*, և ճշմարիտ հաւատն բռնադատէ՛ աստուած խոստովանիլ զծնեալն ի կուսէն. ապա ուրեմն և ծնօղն է՛ աստուածածին: - 466. Իսկ ամենայն մարդկան միտք հաստատեալ են ի խնամս չարի՝ *վկայէ՛* աստուած...: - 473. Եւ զօծումն քահանայութեան ի թաբօր լերինն. ուր և հոգին սուրբ ամպ հովանի եղեալ. և հայր հաճութեամբ *վկայեալ:* - 474. Հինգերորդ՝ դարձեալ այլք ասեն եթէ՝ մինչ յաբրահամ ո՛չ էր ալիք ծերութեան. զի զնմանէ՛ *վկայէ՛* գիր...: - 480. Եւ ա՛յն է յայտնութիւնն որ հայր *վկայեաց* ի վերայ ոդւոյն, և հոգին սուրբ աղաւնակերպ իջմամբ: - 482. Հայր *վկայեաց:* - 487. Եւ նախ առաջին պատճառ, զի «ո՛չ արար մեղս» մարգարէն *վկայեաց*. և «մարմին նորա ո՛չ ետես զապականութիւն» միւս մարգարէն կնքեաց: - 496. Իսկ զմահն կրեաց. որպէս և սոյն մարգարէ *վկայեաց* թէ՝ «ի մահ մատնեցաւ անձն նորա. և մեռաւ վասն մերոյ անօրէնութեան»: - 496. Մետասաներորդ՝ և սուրբ գիրք ի հոգւոյն սրբոյ խօսեցեալք *վկայեն:* - 499. Երրորդ՝ ի կողմանէ հոգւոյն սրբոյ. զի առաւել հռչակելի և փառաւոր եղև այսպէս. զի ընկալեալ զհոգին՝ վաղվաղակի սքանչելիս առնէին *վկայելով* քրիստոսի. և զառաքեալսն առատապէս լցուցանելով, և նոքա զայլսն: - 522. Եւ թէ ոք ասիցէ, ո՞րպէս է մի բանն աստուծոյ. զի ահա՛ բանն մարմնացեալ էր. և հայր բանիւ *վկայեաց* ի վերայ որդւոյն. և անյարմար է ինքն ինքեան *վկայել:* - 530. Ա՛րդ՝ յորժամ ամենայն ինչ նոյն է սուրբ Երրորդութեանն, որով յա՛յտ է՝ թէ հայր խօսի, և թէ որդի, և թէ հոգին սուրբ, մի և նոյն բանիւն խօսին. ապա ուրեմն ո՛չ է անյարմար եթէ հայր նոյն բանիւն *վկայեսցէ* ի վերայ որդւոյ. զի որդի և հայր նշանակէ զյատկութիւն անձանցն: - 530-531. Ա՛րդ՝ ո՛չ է անյարմար եթէ հայր անբաժանելի բանիւն *վկայեսցէ* բանին որ էր ի մարմնի: - 531. Զորօրինակ, յորժամ *վկայեսցէ* թագաւորն ներտրամադրեալ բանիւն ի վերայ գրեալ բանին իւրոյ եթէ՝ ստուգապէս սա՛ է իմ գիր և բան:

- 531. Ա՛յսպէս հայր *վկայէ՛* ի վերայ որդւոյ: - 531. ...և զքէոդորիտոս եղին գլուխ ժողովոյն վասն մարդահաճութեան թագուհւոյն և թագաւորին. և զդէոսկորոս հայրապետն աղէքսանդրու, և զպետրոս անտիոքու, և զտիմոթէոս և զանատօլ, և զայլս բազումս խոտեցին. և *վկայեցին* նոքա ճշմարտութեան: - 543. Եւ գրեցին ապաշխարութեամբ խոստովանութիւն. և եդին ի տապանին դադայ՝ յեկեղեցւոջ սուրբ *վկային* դեմետրեայ: - 543. Զի **ժ** պատուիրանքն և **է** մահու չափ մեղքն են ըստ գոյացութեան մեղք. որպէս մի՛ շնարն և մի՛ գողանարն և մի սպանաներն և մի՛ սուտ *վկայերն:* - 565. Եւ թէ **բ** մարդ գործեն զմեղս զայսոսիկ, սպանանելն մեծ է քան զսուտ *վկայելն*. և այլն նմանապէս: - 565. Վասն երրորդին՝ *վկայե՛մք* և կցորդիմք բարութեան նորա և երանութեան: - 624. Եւ *վկայէ՛* մեզ աւետարանիչն յօհաննէս. զի ասէ՝ եսայի ետես զփառս նորա և խօսեցաւ վասն նորա...: - 632. Խաւարեցոյց կնքեալ, այսինքն *վկայեաց* եցոյց թէ ոչ են աստուածք: - 639. Իսկ առաքեալքն իբր ականատեսք *վկայեցին:* - 643. Եւ յառա՛ջ է ասելն քան *զվկայելն:* - 643. Իսկ տանիլն ի **դ** անկիւնս եկեղեցւոյն, *վկայե՛ն* նմա թէ՝ չորեքին աւետարանչացն խրատու շուրջ եկն զեկեղեցեաւն...: - 673. ...այսինքն զի ոմանք փախչելով յանապատս զերծանին, և ոմանք արեամբ *վկայեալք* ապրին: - 706. Եւ վասն պարզութեան երկրի *վկայէ՛* դաւիթ, «լերինք որպէս մոմ հալին»: - 728. Նաև *վկայէ՛* մարգարէն «եղիցի երկիր նոր և երկին նոր» ապա յա՛յտ է զի ո՛չ ապականին և խաւարին...: - 728. Ա՛յս է գալարիլն նոցա, զի երկինք և երկիր տիւ և գիշեր միաբանեալ *վկայե՛ն* գործոց մարդկան: - 729. Եւ յորում ժամու և գործեն՝ *վկայե՛ն* տիւ և գիշեր...: - 729. Զի վարդապետութեանն իւրեանց և օրինակացն հետևօղս լեալ ցուցանեն. և արքայութեանն արժանաւորս *վկայեն:* - 740. Ի թաբօր մովսէս և եղիա *վկայէին* վասն մահու նորա: - 742. Եւ պետրոս և որդիքն զեբեթեայ յորժամ լուան ի հօրէ «դա՛ է որդի իմ սիրելի դմա լւարուք», ապա և նոքա *վկայեցին*, և խաչեցաւ քրիստոս: - 742. Երրորդ, յատեան դատաստանի **դ** խնդրին վկայք. զի մինն կարէ՛ ոք խաբել և սուտ *վկայել*. այլ զերկու և զերեքն ո՛չ: - 742. Զի բազում ուրէք *վկայէ՛* գիրն աստուածաշունչ, զնախահայրն մեր ադամ ազատեալ ի դժոխոցն: - 775. Այլ և *վկայէ՛* սիրաք զի զղջացաւ ադամ, ասելով «նա՛ զնախաստեղծ հայրն աշխարհի միայն հաստատեալ պահեաց և փրկեաց զնա՛ ի յանցանաց իւրոց»: - 778

**ՎԿԱՅՈՒԹԻՒՆ +** Եթէ ոք գիր ո՛չ գիտէ, և ո՛չ *զվկայութիւն* ընդունի սուրբ գրոց, որպէս ցուցանեմք նմա թէ է՛ աստուած: - 25. Տասներորդ՝ *Վկայութիւնք* վասն համագոյ Երրորդութեանն տասն գլխով: - 30. Չորեքտասաներորդ՝ Յոգին միայն ի հօրէ՛ է բղխումն՝ **ժ** հարցմամբ, և **զ** օրինակաւ, և **ը** *վկայութեամբ:* - 30. Այլ այժմ տեսցուք ի սուրբ գրոց *զվկայութիւնսն* մակեդոնի, և յարմարեսցուք զպատասխանիս նոցա: - 59. Եւ նախ *զվկայութիւնս* նոցա լուծցուք, և ապա զճշմարիտն արտադրեսցուք բան: - 61. Երրորդ՝ ի *վկայութեանց:* - 62. Եւ հաստատութիւն՝ սուրբ գրոց *վկայութիւնք*, և բանք վարդապետաց, և կանոնք օրինաց: - 96. Զոր կամիմ ի կարճոյ *վկայութեամբ* հաստատել: - 96. Եւ այժմ առ քեզ խօսեսցուք ըստ *վկայութեան* կարգիս ո՛վ նեստորական երկաբնակ և մարդադաւան որոշօղ քրիստոսի, և որոշեալ ի շնորհաց նորին: - 98. Խոստովանեալ յերկնաւորաց և յերկրաւորաց. և հաստատեալ սուրբ գրոց *վկայութեամբ* որպէս ցուցաւ: - 101. Այլ վերին մասամբ ծայրիւ իմացութեան ձկտի յաստուածայինսն՝ հաւատոյն լուսով և *վկայութեամբ* սուրբ գրոց հաստատել: - 103. Երկրորդ՝ զի կամէին սուտ առնել *զվկայութիւնն* աստուծոյ վասն յոբայ. թէ այր արդար և անարատ է: - 324. Վասն երկրորդին հակառակէր ընդ նոսա, զի մի՛ սուտ լիցի *վկայութիւն* աստուծոյ ի վերայ նորա. զի և մեք ուսցուք՝ վասն *վկայութեանն* աստուծոյ այնչափ նախատինս յանձն առնուլ և ո՛չ ուրանալ. որպէս վկայից դասքն նահատակեցան: - 324. Այսինքն նոքա կամէին որ զնոսա արդարս ասէր յոբ՝ և զինքն յանցաւոր՝ և ո՛չ ասաց. զի թէ զնոսա որք անիրաւք էին արդար ասէր՝ մեղանչէր ճշմարտութեանն. և թէ զինքն մեղաւոր ասէր՝ մեղանչէր *վկայութեանն* աստուծոյ: - 324. Երրորդ՝ զի աստուծոյ *վկայութիւնն* ի սուտ ելցէ վասն նորա: - 325. Նախ՝ զի զառաջին *վկայութիւնն* յոբայ անմարմինքն իմացան. դարձեալ վկայեաց՝ զի լուիցեն մարդիկք: - 326. Երկրորդ՝ առաջին *վկայութիւնն* վասն արդար գործոցն. կրկինն վասն համբերութեան նորին: - 326. Իսկ *վկայութիւնն* որ է՛ տախտակքն օրինաց. զի վկայե՛ն պահողացն բարիս. և ոչ պահողացն պատիժս: - 345. Երրորդ, դարձեալ **խ** պահեաց և էառ զկրկին տախտակն գրեալ մատամբն աստուծոյ իբրև զառաջինն, և եդ ի տապանակ *վկայութեանն:* - 352. Եւ զի զայս ամենայն *վկայութիւնս* նշանի տեսին աչօք և լսեցին ականջօք և ո՛չ հաւատացին...: - 400. Այլ տե՛ս յայտնապէս, զի զայսպիսի նշան *վկայութեան* ո՛չ ունէին յուդաս և դնդաս. և ո՛չ նեռն ունելոց է դերաքրիստոսն. վասն որոյ ո՛չ են մարգարէ, այլ մոլորեցուցիչք և չարք: - 400. Երկրորդ՝ խոստովանութիւն է և *վկայութիւն*. իբր թէ բարի ես բնութեամբ. երջանիկ. և այլն: - 406. Եւ զարձանն

*վկայութեան* կանգնեաց ի տիպ հաւատոյն որ ի քրիստոս, և վախճանեցաւ: - 419. Քսանևէ, Վասն անապականութեան մարմնոյն քրիստոսի բազմազան *վկայութեամբք:* - 455. Յորո՞ւմ ժամու յարեաւ ի մէջ գիշերի ի *վկայութեամբ:* - 455. Նա՛խ՝ վասն *վկայութեանն* որ ասաց եթէ՝ «որդի իմ ես դու, և ծնայ զքեզ»: - 480. Յառաջագոյն ամենայն ազգք քրիստոնէից սկսեալ յառաքելոցն այսպէս տօնէին. ի վեցն յունվարի զծնունդն, և ի նմին աւուր զմկրտութիւնն ըստ աւետարանին *վկայութեան:* - 482. Ա՛րդ՝ կարգեցին բազմազան *վկայութիւնս* զոր հաստատապէս տօնեմք զծնունդն քրիստոսի ի վեցն յունվարի: - 483. Ապա թէ ոչ՝ սուտ լինի *վկայութիւն* աւետարանին թէ «էին երկոքին արդարք առաջի աստուծոյ»: - 484. Զոր ունի զայս աւանդ այժմ սուրբ և ուղիղ աւանդապահ եկեղեցիս հայաստանեայց ըստ *վկայութեանս* որ եղաւ: - 484. Եօթներորդ՝ արեամբ և *վկայութեամբ*. զոր և ինքն քրիստոս մկրտեցաւ վասն մեր իբրև յոյժ գովելի և երանելի այս մկրտութիւնս քան զառաջինսն: - 488. Այլ որք ուղղաձևութեան են աշակերտք՝ ի մէջ գիշերի ասեն զժամ յարութեանն քրիստոսի ի գերեզմանէն. որոց հետևիմք և մեք և հաստատեմք բազում *վկայութեամբ* և օրինակաւ: - 512. Եւ այս քան ի *վկայութեանց* սուրբ գրոց: - 514. Յիսունգ, *Վկայութիւն* պահոցն մեծի. և շաբաթու. և չորեքշաբաթին. և զի յինանցն ո՛չ պահեմք: - 527. Ոմանք զյանցանս մտաց կատարեալ մեղս դնեն. բերելով *վկայութիւն* ի տեառնէ թէ՝ «շնացաւ ի սրտի իւրում»: - 555. են և այլ բազում *վկայութիւնք* ի գրոց սրբոց որ զայսպիսի հերձուածս սուտ և ընդունայն երևեցուցանեն: - 590. Որ և այսպիսի կարծիքս սո՛ւտ է բազում *վկայութեամբ:* - 594. Նա՛խ՝ է՛ *վկայութիւն* անդուստ իսկ թշնամեացն. քանզի ասէ ալպերտն ի յառաջին գիրքն **ժա** համարին, թէ հոգի ասեմ սրբութեան. արիւն փրկութեան. և ջուր լուացման: - 594. Չորրորդ *վկայութիւն* ի կանոնաց: - 595. Հինգերորդ *վկայութիւն* հայրապետացն որք զխորհուրդ պատարագին գրեցին: - 595. Վեցերորդ *վկայութիւն* ի բացմանէ կողին քրիստոսի: - 595. Եօթներորդ *վկայութիւն* ըստ իրացն: - 595. Երրորդ խոստովանութիւն և *վկայութիւն* է. իբր բարի՛ է. երջանի՛կ է. անմա՛հ է բնութեամբ և այլն. որպէս ասացաւ ի վերոյ: - 624. Ուստի՞ ունիմք *վկայութիւն* վասն պահոց: - 652. Երկոտասաներորդ, Թէ հատուցումն ըստ գործոց՝ է՛ ի կատարածի, **Լ** *վկայութեամբ:* - 660. Երեքտասաներորդ, *Վկայութիւնք* հակառակ ախթարմայիցն. և պատասխանիք նոցա **ժե** թուով: - 660. Հնգետասաներորդ, *Վկայութիւնք* քաւարանին, և լուծումն նոցա **ժ** թուով: - 660. ...որպէս ցուցանի յառաջիկայդ բազում *վկայութեամբ:* - 670. Նախ ասեն թէ՝ յաւուրսն յայնոսիկ յարեան մանկունքն յեփեսոս ի *վկայութիւն* առ հասարակ յարութեանն, զնոյն յիշատակեմք: - 684. ...վասն որոյ իւրաքանչիւր ոք ի բանից *վկայութեանց* ինչ զկարծիս իւր հաստատէ՛: - 687. ...որպէս յա՛յտ է յառաջիկայդ ի զանազան *վկայութեանց* վարդապետաց սրբոց և ի հին և ի նոր աստուածաշունչ կտակաց: - 691. Արդ՝ առաջին *վկայութիւն*, ասէ սուրբն կիւրեղ ի գիրս պարապմանց ի հարցմունս տիբերեայ եթէ՝ հատուցմունքն հետևին դատաստանին. և դատաստանն գալստեան դատաւորին ի կատարածի: - 691. Այլ և տեսցուք *զվկայութիւնս* հակառակացն և յարմարեսցուք զպատասխանիսն, զի առ ձեռն պատրաստ լիցի: - 695. Երկրորդ, զի ի սուրբ գրոց ածեն *վկայութիւնս* և մեկնեն ըստ կամաց իւրեանց. - 701. Եւ թէ՝ դատաստանն աստուծոյ է՛ միաձև բազմաձև և ամենաձև. և այլ սոյնպիսիք եթէ բերեն *վկայութիւն*. և թէ մտացածին բանիւ հաւանութիւն տան: - 705. Սակայն հաստատի յարութիւնն բնական քննութեամբ և սուրբ գրոց *վկայութեամբ:* - 714. Իսկ *վկայութեամբ* սուրբ գրոցս, որպէս ասաց աստուած ցնոյ...: - 715. Եւ բաւական է սակաւս ի բազմաց սուրբ գրոց *վկայութիւն* եթէ գոյ ճշմարտապէս յարութիւն մարդկան: - 716. ...զի հաւատն վարձք ո՛չ ունի թէ *վկայութեամբ* հաստատի: - 717. Եւ բերեն *վկայութիւն* թէ «ամենայն կերակուր ընդ բերան մտանէ և արտաքս երթայ»: - 718. Թէպէտ ո՛չ ունին բանք և ոչ խօսք, այլ ընդ ամենայն երկիր ել բարբառ *վկայութեան* նոցա. զի ամենայն տեղիք և ամենայն ժամանակք մարդկան առ նոսա է՛ յայտնի: - 729. Արդ ցուցցուք թէ ճշմարիտ անապական է սուրբ խաչն բնական քննութեամբ և սուրբ գրոց *վկայութեամբ:* - 733. Եւ զի ուղիղ է դատաստանն աստուծոյ՝ յա՛յտ է ի *վկայութեանց* սուրբ գրոց: - 743. Եւ այլ բազում *վկայութեամբ* կարէ՛ հաստատիլ եթէ մի է արքայութիւնն երկնից որ է կեանքն յաւիտենից: - 759. Վասն բազում *վկայութեանցն* որ առեալ է ի գիրս յայս, զի անտարակոյս լիցի: - 773. Եւ այս յայտ է բազում *վկայութեամբ* ի հարցմանցդ վերոյ: - 776. Երկրորդ, *վկայութեամբ* սուրբ գրոց և քարոզութեամբ բանից: - 784

**ՎՀԱՏԵՄ +** Երկրորդ՝ զի յետո՛յ եկեալ արդարքն *վհատեսցին:* - 325

**ՎՀՈՒԿ +** *Վհուկն* ա՛յն է, որ ի վհաց և յանդնդոց մեռեալս կերպարանեն. դևք ի կերպս մարդկան երևին. զոր դևակոչ ասեն և հազիմաթ. և Նշանագէտ, որ ի գերեզմանս ննջէ և նշանաւոր մարդ կերպարանէ. որպէս զսամուէլ սաւուղայ երևեցոյց հարցուկ կինն: - 388. Երկոտասաներորդ, Թէ սուտ

են *վհուկք:* - 412. *Վհուկ* կինն ո՞րպէս յարոյց զսամուէլ. կամ ո՞րպէս զառաջիկայն պատմէր: - 428. *Վհուկք* և դևք ո՛չ զառաջիկայն գիտեն և ո՛չ մեռեալս յարուցանեն: - 428. Եւ այս ցուցանի ի սաւուղայ. որ այլակերպեալ գնաց առ *վհուկն* և ասէ՝ «հա՛ն ինձ զսամուէլ»: - 428. Եւ նա՛խ՝ զի ո՛չ ճանաչեաց *վհուկն* զսաւուղ...: - 428. Երկրորդ՝ զի այն քան երկեա՛ւ ի մահու *վհուկն* այն, որ այլոց կեանս խոստանայր: - 428. Ապա ուրեմն յա՛յտ է սոքօք երկոտասան գլխով թէ *վհուկն* ո՛չ գիտէր զառաջիկայն: - 428. Ապա յա՛յտ է զի ի մէջ կարծեաց էր նա. զի թէ սուտ համարէր *զվհուկն*, ո՛չ երկնչէր ի մահու. և թէ ճշմարիտ՝ ո՛չ երթայր ի պատերազմ: - 429. Իսկ որ բոլորովին հաւանին՝ *վհո՛ւկ* են և արտաքսեալ յեկեղեցւոյ: - 429. Նա՛խ՝ եթէ ճշմարիտ յարեաւ սամուէլ, ընդէ՞ր ոչ եհար *զվհուկն* և սատակեաց. և ընդէ՞ր ոչ յանդիմանեաց զսաւուղ եկեալ առ *վհուկն:* - 429. Վեցերորդ՝ ընդէ՞ր ոչ քաջալերեաց զնա ասելով, եթէ մեռանիս՝ *վհուկդ* յարուցանէ՛ զքեզ որպէս զիս: - 429

**ՎՃԱՐ +** Զի ըստ սրբոյն եփրեմի՝ ապաշխարութիւնն է *վճարք* մեղաց և նիւթ պսակաց: - 413

**ՎՃԱՐԵՄ, ՎՃԱՐԻՄ +** Նոքա որք զբախտ և զճակատագիր և զհրամանն համբաւեն, ո՛չ ինչ ասեն ի կամաց մեր գործիլ. այլ զամենայն ի հարկէ՛ ասեն. զի զեղխաբար զկենցաղս *վճարեսցեն:* - 7. Եւ է՛ առաջին և վերջին մոլորակացն Երևակն. զոր պարսիկք զօհալ կոչեն. ցուրտ է և չոր. **բ** ամ և կէս յամէ ի կենդանակերպն. և յերեսուն ամն *վճարէ՛* զամենայն: - 189. Չորրորդ Արեգակն. զոր շամս կոչեն ջե՛րմ է և լուսաւոր. **լ** օր և **ժ** ժամ և կէս յամէ՛ ի կենդանակերպն. և ի բոլոր տարին *վճարէ՛:* - 189. Նա՛խ՝ զի տանի զերկոտասան կենդանակերպսն և *վճարէ:* - 190. Չորրորդ՝ մահու մեռանիլ այն է, որ հոգւով և մարմնով տրտմին. և անմահ չարչարին. որպէս մեղաւորք յայս կեանս և յետ մահու. զի որ մեռանի մարմնով՝ զպարտս *վճարէ*. և որ տրտմի հոգւով՝ անմահ մահանայ: - 277. Ա՛րդ՝ առաջին դարն որ էր երևակին՝ ընդ երկա՛ր ապրէին մարդիկքն. զի ունի երևակն յերկար ընթանալ զճանապարհն իւր. որ ի **լ** ամն *վճարէ* զկենդանակերպսն: - 291. Իսկ ի վերջին դարս որ է՛ լուսնին՝ սակաւակեացք են մարդիկք. զի նա՛ ի **լ** օրն *վճարէ* զբոլոր ընթացս իւր: - 291. Այլ ո՛չ թէ զհարց մեղքն որդիք *վճարեն:* - 351. Նոյնպէս այժմ ի նորս պարտ է խոստովանիլ վասն կանոնաց եկեղեցւոյ. և զգողօնսն *վճարել* կամ ի տէրն, կամ ի քահանայս, կամ յաղքատս: - 384. Եւ քահանայի մահն՝ պատարագն քրիստոսի է. մինչ *վճարեսցի* կանոն ապաշխարութեանն և ապա արժանասցին հաղորդելոյ: - 392. Նա՛խ՝ մովսէս նշանակէ՛ զհին օրէնքն. որ մինչ ի մկրտութիւնն եկն և *վճարեցաւ:* - 394. Հինգերորդ՝ բանիւ և արդեամբ սպան զուրիա, և նոյնպէս *վճարի*. բանիւ նախատէ սիմէի, և արդեամբ աբիսողոմ: - 433. Երկրորդ՝ զի երկրորդ ադամ եղև զպարտիս նորին *վճարելով*, պարտ էր ի կերպս ադամայ երևիլ: - 480. Ա՛րդ՝ զհինն զամենայն կատարեաց և *վճարեաց*. և ապա՛ նորոյս սկիզբն էարկ մկրտութեան և շնորհաց: - 485. Եւ զի պարտապանք եղեն արեանն և *վճարելո՛ց* էին: - 490. Եւ չարչարանքն քրիստոսի երկու իրս ներգործեաց. նախ զպարտիս մեղաց *վճարեաց*. երկրորդ զդրունս երկնից եբաց: - 503. Նոյնպէս և հոգի մարդոյ զկնի մահու ո՛չ կարէ արդարանալ ըստ ինքեան. բայց թէ ի ձեռս այլոց *վճարի* պարտ նոցա և հասանին ողորմութեան: - 508. ...աստուծոյ մնայ պատիժն զոր պահօք և աղօթիւք *վճարէ* որպէս ասեն ոմանք: - 602. ...վասն որոյ երբ յերեք ազգն ժամանէ *վճարին* **գ** մասունքն: - 612. Եւ աստ *վճարեցաւ* արիւնն և ազգն. յետ նոցա ի **ե** երրորդ ծնունդն խնամութիւն լինի: - 612. Երկրորդ՝ հասարակն *վճարէ՛* զպարտս. և առանձնականն նիւթէ՛ զպսակ: - 623. ...պա՛րտ է վասն ամենեցուն աղօթել և զպարտս նոցա *վճարել:* - 655. ...և զայն սակաւ բարին *վճարէ՛* աստ, որ ի դատաստանին ակն բարւոյ այլ ո՛չ ունիցին...: - 664. ...և այն մին մեղքն *վճարի* և այն կենացն սուրբ և արժանաւոր ժառանգորդ լինի: - 664. Նա՛խ՝ զի զպարտս դատապարտութեանն *վճարեն*...: - 677. Նաև ո՛չ դատաստան. զի ո՞ւմ լիցի դատաստան. զի ամենեցուն *վճարեալ* է: - 694. Եւ ո՛չ է ի դէպ թէ հոգին ըստ ինքեան *վճարէ* զպարտս մարմնոյն. ապա ո՛չ է անդ քաւարան: - 699. Ճանապարհ կեանս այս. և ոտխ մարմինն. և դատաւոր միտքն. դահիճ խիղճ մտացն որ չարչարէ՛ զհոգին և ոչ ազատէ մինչև զամենայն պարտսն *վճարեսցէ* ապաշխարութեամբ: - 704. ...զի թէ ոք աստ զպատիժ մեղաց ոչ կարասցէ *վճարել*, անդ *վճարեսցէ* և թողցի: - 704. Արդ՝ քրիստոս զպատիժ նախահօրն կրեաց և զբնութեանս զպարտն *վճարեաց:* - 776. Եւ ի վճարման պակասութեանց նոցա ասաց, «ամենայն ինչ կատարեալ է». այսինքն *վճարեալ:* - 781

**ՎՃԱՐՈՒՄՆ +** Նախ՝ վասն *վճարման* պարտուցն լուծան կապանք դժոխոցն...: - 503-504. Եւ ի *վճարմանն* ասեմք, փա՜ռք քեզ աստուած: - 644. ...նոյնպէս և սուրբքն ակնունին յետ **զ** դարուց *վճարման* կենցաղոյս ժառանգել զհանգիստն յաւիտենական...: - 648. Եւ ի *վճարման* պակասութեանց նոցա ասաց, «ամենայն ինչ կատարեալ է». այսինքն վճարեալ: - 781

**ՎՃԻՌ +** Չորրորդ՝ ի ցուցանել զարդար *վճիռ* հատուցմանն. պահողացն՝ զվայելս դրախտին և զանմահ կեանս. և ոչ պահողացն՝ զարտաքսիլն և զմահու մեռանիլն: - 277. Տասներորդ՝ ի սկզբանէ հայհոյիչ աստուածամարտ էր սատանայ. և վասն այն զմարդիկ կորուսանէր մեղօք. որում *զվճիռն* և զաստն տէրն ետ, և դատապարտեաց զմեղս ի մարմնի իւրում. և եբարձ մահուամբն զմահ, և որ զիշխանութիւն մահուն ունէր: - 410. Եւ այն զի յառաւօտէն մինչ յերեք ժամն՝ **հռ** սատակեցաւ ըստ արդարութեան *վճռին:* - 435. Այլ որ ուղիղն է՝ *զվճիռ* գերոյն **հ** ամ եդ երեմիա: - 447. Վասն է՞ր **հ** ամ եդ *զվճիռ* գերւոյն բաբիլօնի ի ձեռն երեմիայի: - 448. Նա՛խ՝ զի **հ** ա՛մ է *վճիռ* կենաց մարդոյս ըստ դաւթի: - 448. Եւ բանից դատաւորին և *վճռոցն:* - 661. ...յորում կրեսցէ *զվճիռս* անվճար պատժոյն յաւիտենից տանջանացն: - 669. Եւ որպէս **բժ**ան բիւր հրեշտակացն, և եօթանասնից եօթն թողուլն, և ամլոյն եօթն ծնանիլն ո՛չ է *վճիռ*, նոյնպէս և **իդ** երիցանցն: - 711. ...և ըստ *վճռի* դատաւորին իսկոյն քարշին ի տանջանս ի հրեղէն ծովն որ հուրն է յաւիտենից: - 731. Ութերորդ, ահագին է անդ դառնալի *վճռովն*...: - 737. Նոյնպէս ի միոյ *վճռէն*՝ եկա՛յք և գնացէ՛ք լսի: - 739. Զի՞նչ ցուցանէ *վճիռ* դատաստանին: - 740. *Վճիռ* որ վասն բարեացն է՝ պարունակէ՛ յինքն է մասունս օրհնութեան: - 740. Իսկ *վճիռն* որ ընդ դէմ չարեացն, ունի մասնունս **զ**: - 740. Ուստի երևի **զ** ժամս ի յարութենէն մինչ ի *վճիռ* հատուցման և կորստեան չարաց չորեքկին. այսինքն գործոց չարաց և պատժոց նոցին. պատճառաց դիւաց և հետևելոց մարդկան: - 748. Իսկ աստուած ո՛չ փոխեաց զխորհուրդն իւր որ էր յաւիտենական. այլ *վճիռն* որ հայտէր ի պատիժ արժանեաց նոցա: - 779

***ՎՃԻՌ ՀԱՏԱՆԵԼ +*** Իսկ յանմահութենէն, զի *վճիռ էհատ* ասելով «հող էիր և ի հող դարձիցս»: - 279. Թէ հրամայական էր և *վճիռ եհատ,* ապա աստուած էր և ո՛չ մարգարէ. սուտ ասաց զգոլն սամուէլ: - 430. Հինգերորդ՝ մահու մահն էր դժոխքն. զի մահ մարմնոյն՝ ապականութիւնն է, և մահ հոգւոյն՝ դժոխքն. ըստ որում *վճիռ հատաւ* ադամայ մահու մեռանիլ: - 506

**ՎՃԻՏ +** Չորրորդ՝ զի պարզ և *վճիտ* է ըստ էութեան: - 184

**ՎՆԱՍ +** Որպէս արդարոց անկանիլ ի փորձութիւնս և զանազան *վնասս* վասն օգտութեան իւր՝ և կամ այլոց: - 158. Ոմանք զդառնութիւնն. այլք զհոտն վատ. և կէսք *զվնասս* մահու. և այլք այլ ինչ: - 217. Այժմ տեսցուք թէ զի՞նչ է շահն աննման պատկերաց. զի բազում *վնաս* էր լինելոց թէ անհատք ո՛չ էին որոշեալ դիմօք: - 238. Նա՛խ՝ զի պահապա՛ն է նմա յարտաքին *վնասուց:* - 239. Եւ մի՛ աստ ընդ դէմ բերցի բանիս թէ՝ ամենայն մեծամեծք գութ ունին փոքունց. զի և այս նախախնամութեանն է. որ եդ ի բնութեանս խնամ տանիլ նոցա, մինչ ինքեանք ևս ի չափ հասակի եկեսցեն և զերծանիցեն ի *վնասուց:* - 267. Եւ աստ գիտելի՛ է, զի **դ** ազգ *վնա՛ս* է որ զարդարն մեղաւոր ասեն և զմեղաւորն արդար: - 324. Եւ ի գիշերն լոյս տայր նորա, և պահէր ի *վնասէ՛* լուսնոյն և առաջնորդէ՛ր: - 338. Վեցերորդ, վասն յանցանաց ի նուէրս սրբութեանցն, և կամ յօրէնս աստուծոյ, և կամ յընկերս *վնասու*...: - 358. Նոյնպէս և բանն աստուած թէ կարի իսկ յառաջին դարս էր մարմնացեալ, որպէս յաւուրս նոյի՝ աբրահամու և կամ մովսէսի՝ լինէր կրկին *վնաս:* - 467. Յանցումն ադամայ երիս *վնաս* էարկ ի բնութիւնս: - 491. Խորագիտութեամբ պահէ զինքն յայլ մարդոյ. և միամտութեամբն այլոց *վնաս* ո՛չ առնէ: - 579. Որպէս ո՛չ եղև *վնաս* յովսիայ որով հայրն թիւրէր: - 593. Իսկ որք ի վերայ Երրորդութեանն ասեն՝ երեք *վնաս* կայ ի բանս նոցա: - 633. Վեցերորդ, ընդ կերակուր և ըմպելիս մեր՝ դնն որ թշնամի է մեր բազում *վնասս* խառնէ ...: - 654

**ՎՆԱՍԱԿԱՐ +** Իններորդ՝ *զվնասակարս* հալածէ՛: - 126. Եւ զի *վնասակա՛ր* է աչաց: - 196. Գազանք և օձք և այլ կենդանիք որք *վնասակա՛րք* են՝ վասն է՞ր ստեղծան: - 217. Դարձեալ՝ զբանջարն ընտրելով ուտեմք. այս է զի *զվնասակարն* և զդառն և զժահահոտն ի բաց ձգեմք և զչորրորդ մասն ուտեմք: - 295. Երրորդ՝ թէ *վնասակա՛ր* է՝ խոտեմք: - 296. Որպէս նախ քան զօրէնս, բնական քննութեամբ ընտրէին մարդիկ. կամ զանճոռնի մեծն, կամ զամենևին փոքրն, կամ զգարշն տեսութեամբ, կամ *զվնասակարն*, ուտելոյ պիղծ ասէին զսոսա: - 364. Վրէժխնդրութիւն է ջատագով լինիլ. որով բռնութիւն և անիրաւութիւն և ամենայն *վնասակար* ի բաց մերժի: - 579. Զի որպէս հուրն դիզին *վնասակա՛ր* է, նոյնպէս մեղքն հոգւոյն: - 601. Եւ ապա ի պահապան մտից ի *վնասակար* զեռնոց: - 786

**ՎՆԱՍԵՄ +** Թուի թէ և այս յոչ պատշաճէն ասի զի *վնասեալք* էին հաւատովք՝ ո՛չ էր պատշաճ անել նոցա նշանս: - 44. Երրորդ՝ է՛ գործ նախախնամութեան. զի ըստ ընտանի կարողութեան իւրեանց՝ համեմատապէս զպարգևս ընկալցին. զի մի *վնասեսցին* փոքունքն մեծամեծօք. և թերի մնացին մեծամեծքն սակաւուք: - 130. Քանզի դնք ո՛չ են ի վերին մասն օդոյն, զի մի խնդասցեն լուսովն. և ո՛չ ի ստորին մասն, զի մի՛ առաւել *վնասեսցեն* զմարդիկ: - 146. Նախ՝ վասն զի մի՛ ջերմութիւն լուսաւորացդ

կիզցէ զերկիր և *վնասեսցէ:* - 207. Վեցերորդ՝ սեաւ պտուղն. զի մի՛ *վնասեսցէ* զտեսութիւնն սպիտակն: - 239. Եւ գլխաւո՛ր անդամք են սոքա. զի թէ յայլ անդամքն՝ այսինքն աչքն՝ ականջն՝ ձեռքն՝ և ոտքն՝ կամ այլն *վնասի*, մարդն ապրի: - 241. Ապա թէ յեօթանց ասացելոցս մինն *վնասի*, իսկոյն մեռանի մարդն: - 241. Այլ արդ՝ գիճութիւն ջրոյ զջերմ և զչորն *վնասէ՛*, և ջերմութիւն հրոյ զգէջն, և լինի անպտուղ: - 256. Դարձեալ՝ ջերմ և գէջ չափաւորեալ է ի նիւթն այն. և որ արտաքուստ մտանէ՝ անչափութեամբն *վնասեսցէ՛* զսերմնական զօրութիւնն ընդ նիւթոյն: - 256. Երկրորդ՝ ի մէջն գոլով՝ մի *վնասեսցի* յարտաքին պատահարից: - 256. Եւ նաւքն կո՛ւպրն է ներքոյ և արտաքոյ ծեփեալ զի մի՛ *վնասեսցի:* - 293. Ասեն վարդապետք եթէ հողմն հնչեաց և ցրուեաց զաշտարակն. զի մի՛ փլուցեալ *վնասեսցէ* զմարդիկ: - 298. Այլ ինքեանք լինին հուր և հողմ. զի «հրեշտակք լուսոյ կերպարանին» որպէս ասէ առաքեալն, առ ի *վնասել* մարդկան. որպէս ի վերայ տանն յոբայ արարին: - 321. Չորրորդ՝ զի մի՛ ծովացի վերին կողմ երկրին և *վնասեսցին:* - 414. Քսանևը, ձգեաց սաւուղ զգեղարդն դաւթի, եհար զորմն և ապրեցաւ դաւիթ. և որդիքն սաւուղայ հարկանել ետուն զկողս տեառն և ո՛չ *վնասեցին* աստուածութեան նորա: - 436. Այլ և դաւիթ եգիտ զսաւուղ և զզօրսն նորա ի քուն և ո՛չ *վնասեաց*. այլ զզէնն էառ. և տէրն ո՛չ կամի զմահ որք ննջեն ի մեղս. այլ զպատճառ մեղացն հանէ: - 437. ...ո՛չ ինչ ուրէք *վնասէ* զմիաւորութիւնն իբր մարդ սոսկ կամ աստուած միայն. այլ աստուած համանգամայն և մարդ խոստովանի միացեալ: - 477. Ասեմք, եթէ որք ի հաւատս ունին թիւրութիւն. որպէս հերձուածօղք և վնասիչք եկեղեցւոյ. և որք ի զազիր վարս պղծեալ են գործովք և *վնասեն* զինքեանս...: - 540. Այլ և ամենայն աշխարհ տաճա՛ր է աստուծոյ. թէ ի դաշտի թէ յագարակի թէ ի տղմի. կամ ի ջուր սուզի, կամ ի գազանաց գիշատի, կամ ի ձկանց կլցի, արդարութեան ոչ ինչ *վնասէ:* - 678. Եւ փարաւօն ընկղմեալ զօրօքն. զի ոչ ինչ կարեն *վնասել* չար դևքն՝ քրիստոնէից հոգւոց: - 682. Եւ զի դժւարաւ խլին չարքն առանց *վնասելոյ* բարեաց, վասն որոյ թոյլ ետ մինչ ի ժամանակի հնձոցն: - 693

**ՎՆԱՍԻՉ +** Կապոյտն օդոյն է գոյն. զի թէ ա՛յլ գոյն էր, *վնասիչ* և խափանիչ լինէր տեսութեանց. որպէս սպիտակ կամ սեաւ. այլ կապոյտն է ի հեշտութիւն տեսութեանց: - 342. եթէ զոր օրինակ բժիշկք՝ ո՛չ ի սկիզբն ցաւոց և ո՛չ ամենևին անագան տան ըղդեղ հիւանդին. զի անօգուտ է և *վնասիչ*. այլ ի դիպօղ ժամու յորում առողջացի: - 467. Զորօրինակ, արեգական լոյսն տկար աչաց *վնասիչ* է և ո՛չ օգուտ. և ջուր չորացեալ տնկոյ: - 540. Ասեմք, եթէ որք ի հաւատս ունին թիւրութիւն. որպէս հերձուածօղք և *վնասիչք* եկեղեցւոյ. և որք ի զազիր վարս պղծեալ են գործովք և վնասեն զինքեանս. և անզեղջք են առ երկոսին. յետ մի անգամ և երկիցս խրատելոյ, որոշեսցին յեկեղեցւոյ և պատժեսցին: - 540

**ՎՇՏԱԳԻՆ +** Երկրորդ այնու՝ զի ի նաւաբեկութենէ փրկեալք եղիցին. թէ նաւաբեկեալքն որ ի ծովէն ելանեն այնքան ուրախանան, ո՞րչափ ևս առաւել ուրախասցին որք զայս քան նաւաբեկութիւնս կրեալք ի *վշտագին* ծովէ այսմ աշխարհի զերծան: - 764

**ՎՇՏԱԼԻՑ +** Ո՜վ մեծի աղետիս և *վշտալից* տարակուսի. զի այսպիսիքս զմի միաւորութիւն տեառն ուրանան...: - 176

**ՎՇՏԱՆԱԼ +** Երրորդ՝ դարձեալ զերկնային զօրութեանց *վշտանալն* ցուցանէ ի վերայ կործանելոցն. զի վասն իմ գալարին և ընդ իմ կործանումն՝ տրտմութիւն զգենուն: - 729

**ՎՇՏԱՍՊԵԱՅ** - Եւ աստի թուեալ ի դարեհէ՛ որդւոյ *վշտասպեայ*, որ արձակեաց զզօրաբաբէլ. և յորոյ երկրորդ ամին շինէ զտաճարն: - 449

**ՎՈՒՇ +** Ծիրանին ջրոյ. զի կոնքիլոսն որ ներկէ՛ զծիրանին՝ ի ջրո՛յ է. և Բեհեզն սպիտակ՝ երկրի. զի *վուշն* յերկրէ լինի: - 342

**ՎՍԵՄԱՄԻՏ +** Գիր քոյոյ *վսեմամիտ* խոհեմութեանդ ո՛վ արփիածին հարազատ, և վերնոյն սիօնի նազելի զաւակ Գէորգէոս Ռաբունեայ պետ: - 773

**ՎՍՏԱՀԵԼ +** Յորժէ *վստահացեալ* կոչեն զնա նովին անուամբն: - 315

**ՎՏԱԿ +** Եւ զայս յայտնեն կրկին *վտակքն* բղխեալ արիւն և ջուր: - 316. Ո՛չ բնաւ, թէպէտ հայր տեսանէ զորդի կամ մայր զդուստր. և կամ զեղբայր և զայլս. ո՛չ միայն ո՛չ ցաւին, այլ ա՛յնպէս լինի հեշտալի, որպէս տեսանեմք զձկունս որ խաղան ի *վտակս:* - 754. Նա՛խ՝ ծառն կենաց են հաւատացելոց անձինքն տնկեալք ի *վտակս* հոգւոյն՝ ջրով աւազանին. հետևեալ ի մշտնջենաւոր կեանս: - 765

**ՎՏԱՆԳ +** Կամ *վտանգաւ*. որպէս տգիտութիւնն: - 565. *Վտանգ* զո՞յ ինչ զաւակաց թէ ոչ արդար ամուսնութեամբ այլ ի պոռնկութենէ ծնանին: - 593. Ոչ ինչ ամենևին՝ թէ ընկալցին զմկրտութիւնն. որպէս և ոչ ցորենոյն է *վտանգ* թէ գողունի իցէ և սերմանի ի ձեռն գողի: - 593. *Վտա՞նգ* են մեղք

ծնողացն որդոց. կամ որդոց մեղքն ծնողաց: - 593. *Վտանգ* ինչ է՞ արդարոյ՝ թէ ի յօրինեալ գերեզմանս ո՛չ թաղի: - 678. Ասեմք թէ ո՛չ. այլ առաւել *վտա՛նգ* է նոցա. զի ի բազում անգամ ի ծեռս դիւաց արտաքս ընկեցեալ լինին մարմինք նոցա: - 678

**ՎՏԱՆԳԵՄ +** Չորրորդ առ այն որ եղիցի ընդդէմ ինքեան. զի մի՛ յումեքէ կարիցէ *վտանգիլ:* - 764. Երրորդ այնու՝ զի մեղքն որ յոյժ *վտանգեաց* զմարդիկ, եղիցի փակեալ ի դժոխս զկնի աւուրն դատաստանի. զի եղիցի ի դժոխս իբր ի տեղւոջ իւրում. զի ո՛չ կարասցէ մնալ. ո՛չ յերկինս և ո՛չ յերկրի. այլ իջանէ ի դժոխս ներքինս: - 764. Ոմանք հրով կիսայրեաց տոչորեալք. և այլք ի սովոյ գազանաբեկ *վտանգեալք:* - 788

**ՎՏԱՐԱԿԱՆ +** Եւ ունիստամոքն դ զօրութիւնս. որ է՛ քարշողական. ունական. հալողական. *վտարական:* - 242. *Վտարականն* է՝ յորժամ եփի և հալի կերակուրն, բանա՛յ զդրունսն և բաժանէ զնոսա: - 242. Նմանապէս և կերակրականն ունի զօրութիւնս դ. որ է՛ քարշողականն. ունականն. հալողականն. և *վտարականն:* - 262

**ՎՏԱՐԱՆԴԵՄ +** Այլ մեզ զոր գիրք սուրբք լռեալ են՝ լռութեամբ պատուեսցի. և մի՛ մտացածին բանիւք *վտարանդեալ* ի զուր կորստեան անկցուք: - 226

**ՎՏԱՐԵՄ +** Նոյնպէս ընդ ներքին դուռն զաւելորդն արտաքս *վտարէ* ընդ աղիսն. և յայսմանէ ջրատեսակն ընդ ցնցուղ քաղրթին ի փալաբուշտն իջանէ և լինի մէզ: - 242. Զի քարշեն յերկրէ զհիւթ, և ունակացեալ պահեն, և հալեալ փոխեն յինքեանս. և *վտարեն* զաւելորդսն ի կեղև՝ ի տերև՝ և յայլսն: - 262. Տարրորշումն խառնեալ տարերց. և լաւին և վատթարին. զոմանս պահել և զոմանս *վտարել:* - 786. Եւ *վտարին* աւելորդք սոցա: - 786

**ՎՏԱՒԱԿ +** Զի հանդերձն սպիտակ՝ շապիքն է և Կապոյտ *վտաւակն* նափորտն: - 348

**ՎՐԱՆ +** Յիսուննզ, Բանակետղ ժողովրդեանն խաչածև. և *վրան* ժամուն ի միջի: - 284. Ութերորդ՝ զի թէ թողցեն զվայելչութիւն խորանիս այս և այլոց հետևեսցին, անպատասխանի լիցին ի պատուհասն. որպէս եթող զապերախտ ժողովուրդն և էառ *զվրանն* մողոքայ և զաստղն հռեմփայ ի դատապարտութիւն ինքեանց: - 342. Վասն է՞ր կոչեցաւ *վրան* ժամու: - 379. Եթէ ինքեամբ՝ եթէ ի ծեռն միքայէլի. ի մէջ *վրանի* և յաթոռն իւր սատակեսցի. և գլորեսցի մարմինն ակներև ժողովրդեան իւրոյ...: - 709

**ՎՐԱՑԻ +** Իսկ *վրացն* Ախալծիլ, որ ստուգաբանի Ախացայ. այսինքն թէ մեծ պարոնացի. Սեթալի. որ է՛ սոնթեցի: - 201. Եւ դեռևս ունին ազգն *վրաց*. զի գիթվորն մտեալ յեկեղեցի ազա՛տ են: - 392. Այլ հրամանաւ մեծի թագաւորին ուստիանեայ ժողովեցան յունաց և հռոմոց և հայոց և *վրաց* և աղուանից եպիսկոպոսունք. և կաթողիկոսն հայոց սահակ...: - 544. Յինգերորդ, զի թէ գո՛յր հնար կնոջ վասն հարկին առնել զգործ քահանայի, ընդէ՛ր ոչ կարաց նունի կոյսն մկրտել զոք ի *վրաց* յորժամ դարձոյց յաստուածգիտութիւն. - 589. Որպէս ազգն յունաց և *վրաց* և ասորւոց բարծեալ են զխոստովանութիւնն. որ անհնա՛ր է առանց խոստովանելոյ արդարանալ մարդոյ: - 604. Զոր և անբաւ բազմութեամբ ասպատակեալ աւերեաց զաշխարհս հայոց, պարսից, *վրաց*, և զամենայն արևելեայս: - 788

**ՎՐԴՈՎՈՒՄՆ +** Եւ որ մերծ յարևմուտս է՝ Լիւա՛ նոտոս. առնէ մառախուղ. մէգ. և *վրդովումն* յամպս: - 206. Եւ վասն իմոյ տկարութեան և ժամանակիս *վրդովման* զխնդիրն յապաղէի: - 772

**ՎՐԷԺ +** Եւ ապա զի ցուցցէ թէ՝ չար խորհրդոցն *վրէժ* խնդրութիւն կայ և պատիժ: - 148. Այսպէս հինգ եղանակաւ չարաչար ատեցին զհիւրսն. վասն այն կրկին կրեցին զհատուցումն *վրիժուց* ծ հարուածովք: - 335. Երրորդ՝ որք թուեցան ընդ աքիսողոմայ և սպանանէին զդաւիթ, այս նոցա *վրէժն* է: - 434. ...և աղաղակէին բարծր ծայնիւ՝ մինչ յե՞րբ տէր սուրբ և ճշմարիտ ո՛չ դատես և առնուս *զվրէժ* արեան մերոյ: - 694. ...յիրաւի է ուրեմն որում անիրաւութիւնն եղև առնել դատաստան վասն *վրիժու*. թէպէտ նմա հայր և հոգին սուրբ գործակից լինին: - 735. Եւ զայս ո՛չ շաբաթու և աւուրց սպառեալ. այլ ամսոց երից սորին յերկարեալ. և գործելոց *վրէժ* ո՛չ կշիռ հատուցեալ: - 789

**ՎՐԷԺԽՆԴԻՐ +** Եւ տես, զի *վրէժխնդիրն* օրինացն մովսէսի՝ նախ ի՛նքն լուծանէր զօրէնս. զի ագռաւն պիղծ էր օրինացն: - 443. ապա պա՛րտ է ի նա՛ ընկենուլ զդատաստան չարչարողացն մերոց և հալածողաց. և ուրախութեամբ տանիլ զլլկանս. և մի՛ մեզէն *վրէժխնդիր* լինիլ մեզ. - 735.

***ՎՐԷԺԽՆԴԻՐ ԵՂԱՆԻՄ*** - Վասն էերորդին, ա՛յն քան սիրեցաւ յաստուծոյ, մինչ զի յետ մահուանն *վրէժ խնդիր եղև* արեան նորա...: - 287. Նա՛խ՝ զի *վրէժխնդիր եղև* օրինացն աստուծոյ. որպէս փենէհէզ սպան զզամբրի և զքասբի. և սամուէլ զագագ: - 444.

***ՎՐԷԺ ԽՆԴՐԵԼ*** - Այսինքն մինչև գ ազգն ներեմ. կամ գ դարս. և ի չորրորդն ո՛չ դառնամ ի *վրէժ խնդրելոյ*. այլ հատուցանեմ զմեղս հարց յորդիս: - 351. Եւ զի զայս ամենայն վկայութիւնս նշանի

տեսին աչօք և լսեցին ականջօք և ո՛չ հաւատացին. վասն այն *վրէժ խնդրեաց* աստուած ի նոցանէ. սատակեցան և ցրուեցան...: - 400. Զի անդ որ գործէր զմեղս՝ և որ *վրէժ* ոչ *խնդրէր*՝ միապէս էր յանցանք: - 439. Եւ վասն այն է գրեալ՝ յերրորդ կամ ի չորրորդ ազգս մեղաց *վրէժ խնդրեսցի*. յորժամ հայրն և որդին և թոռունքն զնոյն մեղս գործեսցեն: - 593

**ՎՐԷԺԽՆԴՐՈՒԹԻՒՆ +** Երկրորդ՝ որպէս թուեաց դովեկ զքահանայսն զի մի՛ զերծանիցեն ի սրոյն. նոյնպէս և այս վասն քահանայիցն *վրէժխնդրութեան* էր. զի կամեցաւ ժողովուրդն փրկել զնոսա: - 434. Եւ էր սիրելի փիլաբիանոսի. և լևոնի. և թէոդորիտոսի զորս նզովեցին յեփեսոս. և վասն նոցա *վրէժխնդրութեանն* արարին ժողով **ռլզ** եպիսկոպոսաց. և ընկալան զթուղթն լևոնի. և զնզովեալսն յեփեսոս զփիլաբիանոս ընկալան...: - 542-543. Վասն որոյ ասաց արիստոտէլ աղէքսանդրու, յապաղեա՛ ի *վրէժխնդրութիւնն* մինչև անցցէ բարկութիւն: - 570. Եւ մասունք արդարութեան են **զ**. այսինքն կրօնաւորութիւն. գթութիւն. շնորհ. *վրէժխնդրութիւն*. պահպանութիւն. և ճշմարտութիւն: - 579. *Վրէժխնդրութիւն* է ջատագով լինիլ. որով բռնութիւն և անիրաւութիւն և ամենայն վնասակար ի բաց մերժի: - 579

**ՎՐԻՊԵՄ, ՎՐԻՊԻՄ +** Նա՛խ՝ զի յուսահատութեամբ *վրիպէին:* - 467. Իններորդ՝ զի ամենայն ոք որ առ պոռնիկն երթայ՝ գիտէ ճշմարտութեամբ թէ *վրիպեցաւ* ի ճշմարիտ արդարութենէն: - 562

**ՎՐԻՊՈՒԹԻՒՆ +** Եւ թէ ծախողակի *վրիպութիւնք* ամփոփե՛ն տրտմականօք, ի հաւատն սփոփեսցիս և մի անկցիս յուսահատեալ: - 770

**ՎՕՌԷԱՍ, ՎՕՌԷՍՔ, ՎԱՒՌԷՔ** - Իսկ Յիւսիսայինքն, *Վաւռէք* կոչին. որք են ցուրտ: - 205. Եւ *վօռէասն* սեղմէ՛ զամպս և արգիլէ զանձրևս: - 205 Յիւսիսայինք որք կոչին *Վօռէսք:* - 205 Այն որ մերձ յարևելս է, *Վօռէա՛ս* կոչի. նեղէ՛ զամպս, և կապէ՛ զանձրևս: - 205 - 206

# Տ

**ՏԱԲԻԹԱՅՆ** - Այսպէս և առեալք զհոգին սուրբ բղխեն. ոմանց ի մահ և ոմանց ի կեանս. որպէս առ *տաբիթայն* և առ սափիրային: - 523

**ՏԱԳՆԱՊԻՄ +** ...յորժամ զարհուրեալ *տագնապին* ամենայն մեղաւորք յահաւոր ատենին. և յանաչառ դատաստանին: - 630

**ՏԱԺԱՆԵԼԻ +** Վեցերորդ՝ մկրտութիւն որ ապաշխարութեան է և արտասուաց և յոյժ *տաժանելի:* - 488

**ՏԱԽՏԱԿ +** Իսկ դրամն և *տախտակն* ուր գրեալ է պատկեր թագաւորին՝ միայն նման է թագաւորին ըստ ձևոյն. այլ ո՛չ ըստ բնութեանն: - 273. Երեսունն**ե**, Քարեղէն *տախտակն*. և խորտակելն: - 284. Մետասաներորդ, մովսէս զառաջին *տախտակն* խորտակեաց և ի նորն գրեաց զօրէնսն: - 328. Որո՞վ զանազանին կրկին *տախտակքն:* - 340. Նա՛խ՝ զի **ե** բանն ի միում *տախտակի* էր աստուածային...: - 340. Իսկ վկայութիւնն որ է՛ *տախտակքն* օրինաց. զի վկայե՛ն պահողացն բարիս. և ոչ պահողացն պատիժս: - 345. Ի յորում **բ** *տախտակք* են գրեալ. հոգի և մարմին միաւորեալ բանիւն: - 345. Վասն՝ ուրա՛րն է. և *Տախտակ* ականցն՝ կոնքեռն: - 348. Լուսնաձև Վահանն ի վերայ թիկանցն և սրտին՝ և կրկին *տախտակ* դատաստանին յուսն, եմիփորո՛նն է: - 348. Վասն է՞ր կրկին քարեղէն *տախտակս:* - 349. Երկրորդ՝ զի ի *տախտակէն* խօսեսցի ընդ մովսէս: - 349. Հինգերորդ՝ կրկին օրէնքն հոգւոյ և մարմնոյ. վասն այն կրկին էր *տախտակն:* - 349. Եօթներորդ՝ յօրինակ բանին մարդեղութեան գրեցաւ բանն ի *տախտակի*, և նա՛ կոչեցաւ վէմ կարծրացեալ աստուածութեամբն փոխանակ հողացելոյն ադամայ: - 349. Ա՛յս է պատճառ խորտակելոյ *տախտակին*. և ո՛չ որպէս ասեն ոմանք թէ գիրն ջնջեալ էր: - 350. Եւ յետոյ ասելն դու կոփեա՛ քեզ *տախտակ:* - 350. Երրորդ՝ զի փառք *տախտակացն* մեծացի ի լոյս երեսացն: - 352. Երկրորդ, քառասնօրեայ պահելով էառ զ**բ** *տախտակս* և խորտակեաց: - 352. Երրորդ, դարձեալ **խ** պահեաց և էառ զկրկին *տախտակն* գրեալ մատամբն աստուծոյ իբրև զառաջինն, և եդ ի տապանակ վկայութեանն: - 352. Մին վասն օրինաց *տախտակին:* - 352. Տապանակն էր քրիստոս. և ունէր *զտախտակս* օրինացն: - 385. Տասներորդ՝ զի զքրիստոսի առաջին գալուստն նշանակէր տապանակն և *տախտակն* և մանանայն և այլն. և զվերջինն՝ վէմն աղբիւրացեալ ի յաւիտենից կեանսն: - 385. Իսկ խորտակեալ *տախտակն* մովսէսին և մնացեալն՝ նո՛ր օրէնս: - 395. Որպէս և մովսէս *զտախտակն* աստուածագիծ խորտակեաց վասն յանցանաց ժողովրդեանն: - 425. Թևէ՛ ի թև և Պատուանդանն նոճի. և *Տախտակ* վերնագրին ծիթենի: - 494. Այսպէս. **բ** ոտիցն. **բ** ձեռացն. **ա** ուսոյն վերայ. **ա** խաչին թևին. **ա** պիղատոսի *տախտակին*. **բ** այն *տախտակին* որ պատուանդան էր և ոտքն ի վերայ բևեռեալ: - 495. Զի առանց կոփելոյ էր առաջին *տախտակն* աստուածագիծ. և կոյսն առանց սերման յղացաւ: - 639. Իսկ մի *տախտակն* յերկուս բաժանեալ և հնգիւք փակեալ...: - 646. ...որ է կրկին *տախտակն* մովսէսի. յանձնառական և հրաժարական օրինօքն միաւորեալ: - 646. Դարձեալ՝ մի *տախտակն* է՛ մի և նոյն քարոզութիւնն առաքելական ի չորեք ծագեան տիեզերս տարածեալ: - 646. Չորրորդ յա՛յտ է յօրինակաց. զի գաւազանն ահարօնի որ ծաղկեցաւ՝ օրինա՛կ էր խաչին. և *տախտակքն* բանին. և ծառն կենաց որ ի մէջ դրախտին: - 733

**ՏԱԿ +** Եւ հուրն է ի սիրտն. զի սիրտն ջե՛րմ է և նման է հրոյ. լայն է *տակն* և բարակ ծայրքն: - 232

**ՏԱԿԱՒԻՆ, ՏԱԿԱՒԻՆ ԵԽՍ +** Դարձեալ՝ յորժամ ասի, թէ լսիցէ «ի հօրէ», և կամ «առնուցու», մի՛ իմասցի այնու թէ բղխումն հոգւոյն սրբոյ *տակաւին* ապառնի էր. զի յաւիտենակա՛ն էր: - 64. Իսկ թէ միայն ի մարդոյն բնութիւնն, ահա *տակաւին ևս* անկատա՛ր ես. զի ի սոսկ մարդոյն մահ մկրտեցար: - 69. ...իսկ հոգին բաժանեալ ի մարմնոյն *տակաւին* ո՛չ է կատարեալ իւր յատուկ կատարելութեամբն: - 694. Զի *տակաւին* է՛ իմանալ ընդ իսահակայ, և յակոբ ընդ եսաւայ ի նմին արգանդի: - 756

**ՏԱՂ +** Եւ մի ձայն է այլ ամենայն *տաղք* և երգք: - 639

**ՏԱՂԱՆԴ +** Հարիւր խարիսխք արծաթիք. և իւրաքանչիւրքն ի մի մի *տաղանդէ՛* կշռոյ: - 343. Ամենայն նիւթ ոսկւոյն **իթ** *տաղանդ*. և արծաթոյն **ճ** *տաղանդ*. և պղնձոյն **հ** *տաղանդ:* - 343. Եւ *տաղանդն* **ճիե** լիտր է: - 343. Եւ մանայէն թագաւորն իսրայէլի ետ նմա **դ** *տաղանդ* արծաթոյ և դարձաւ ի նմանէ: - 446. Եթէ ունեք տուեալ իցէ շնորհ հասարակ կամ յատուկ, որպէս մկրտութիւնն և հաւատքն. քանքար և *տաղանդ*. իշխան և առաջնորդ. մեծութիւն և ինչք. կեանք լոյս ամանակ և այլն ամենայն. այսու եղանակաւ կշռոյ հատուսցի: - 747

**ՏԱՂԱՒԱՐ +** Եւ որպէս ի *տաղաւարքն* կողերս՝ տերև՝ և ոստ մատուցանէին. զնոյն և քրիստոսի

մատուցին յաւուրն ողոգոմեան ի գալուստ նորին յերուսաղէմ: - 374. Եւ յինն ամիս ի *տաղաւար* արգանդի տարեալ զաստուած բանն: - 463. Դարձեալ՝ **գ** *տաղաւարն* որպէս ասաց պետրոս, գուշակէ՛ զերեք յիսունս: - 653. ...որովք լինիմք *տաղաւար* և բնակարան աստուծոյ: - 653

**ՏԱՂԱՒԱՐԱՀԱՐՔ +** Չինգերորդ՝ *տաղաւարահարքն*. որ է՛ եկեղեցւոյ տօն. վասն այն զխաչին և զեկեղեցւոյն ի միասին տօնեմք: - 372. Եօթներորդ՝ տօն *տաղաւարահարացն* որ նշանակէ՛ առ մեզ զտօնելն եկեղեցւոյ, ի բոլոր ամն **ը** օր կատարի: - 373. Զի՞նչ էր որ ի *տաղաւարահարքն* ըստ միոյ միոյ աւուրց մի մի զուարակ պակասէին ի տօնս. և յութերորդ օրն ի մինն յանգէին: - 374. Եւ քշրինի **ժե**՝ սկիզբն տօնի *տաղաւարահարաց*, որ է՛ հոկտեմբերի **բ**. և անտի մինչև ի **իբն** քշրինի՝ և ի հոկտեմբերի **թ** կատարումն տօնին: - 483. Եւ աւուրք պաշտամանն էր երկոտասան. **ե** օր քաւութեանն վասն որբոյն յանապատին. և **է** օր *տաղաւարահարացն* ի յիշատակ խորանաւ բնակելոյն յանապատին ամս **խ**. և այլ սքանչելեացն զոր գործեցաւ անդ: - 483. Եւ յամենայն ամի տօն քաւութեան և *տաղաւարահարացն:* - 616. Նա՛խ՝ զի ի հինն զտօն քաւութեան և *զտաղաւարահարացն* ի միասին տօնէին ի քշրինի **ժ**: - 616. Իսկ մեր քաւութեան տօն խաչն է. և *տաղաւարահարն* եկեղեցին. վասն այն զխաչի և եկեղեցւոյ ի միասին տօնեմք: - 616. Եւ ամաց **է** օր բաղարջակերք, և տօն *տաղաւարահարացն:* - 626. Այլև **է** օր *տաղաւարահարացն* նշանակէ՛ զսրբութիւն պահոց շաբաթոյ...: - 653

**ՏԱՂՏԿԱՆԱՄ +** Ծուլութիւն է հեղգութիւն հոգւոյ ոչ սկսիլ ի բարին. կամ *տաղտկանալ* ի սկսեալ բարւոյ և ո՛չ կատարել: - 570. Երրորդն է յագեցումն առանց *տաղտկանալոյ*...: - 766. Զի ոչ ինչ է արտաքս որում բաղձան. ոչ ինչ ի ներքս յորմէ *տաղտկանան:* - 767

**ՏԱՂՏԿՈՒԹԻՒՆ +** Որպէս ասեն վարդապետք, յագեալ ցանկացուք, զի մի՛ յագեցումն ծնսի *զտաղտկութիւն*. ցանկացեալ յագեցուք, զի մի՛ ծանծրութեամբ իցէ ցանկութիւնն: - 766

**ՏԱՃԱՐ +** Չինգերորդ՝ նա պղծութիւն կոչի *տաճարին:* - 35. Նոյնպէս և հերձւածօղք պղծեն *զտաճարն* աստուծոյ և զհաւատն սուրբ՝ որով քրիստոս ի մեզ բնակի, և մեք ի նա՛: - 35. Նախ այսպէս. ո՛չ ումեք սրբի *տաճար*, բայց միայն աստուծոյ...: - 57. Եւ դարձեալ ասէ թէ՝ «դուք *տաճար* աստուծոյ էք». ապա ուրեմն մեք *տաճար* աստուծոյ եմք: - 66. Մետասաներորդ՝ զի թէ է՛ ինքն բնակարան և *տաճար*, կազմէ և զմեզ բնակարան և *տաճար* իւր: - 67. Ապա ոչ եղիցի նա որպէս զաստուած ի *տաճարս* իւր. այլ որպէս *տաճար* ի *տաճար:* - 67. Չնգետասաներորդ՝ *տաճար* միայն աստուծոյ սրբի...: - 71. Զորօրինակ եթէ կամիցի ոք *տաճար* շինել. նախ ծևանայ ի միտքն և յետոյ շինէ *զտաճարն* ըստ այնմ ծևոյ: - 163. Արդ՝ *տաճարիս* այս է՛ կրկին սկիզբն. նախ միտքն շինողին, և յետոյ սկիզբն և կատարումն շինւածոյն: - 163. Երրորդ զանազանութիւն՝ զի թէ շինի *տաճարն* և թէ ոչ՝ առաջին սկիզբն որ ի միտքն մնայ՝ նոյն ո՛չ առաւելու և ո՛չ նուազէ: - 163. Չորրորդ զանազանութիւն՝ զի առաջին սկիզբն զօրութեամբ է *տաճարին*. և երկրորդն ներգործութեամբ: - 163. Երկրորդ՝ հասարակութիւն է, զի որպէս է նկարեալ ծևն, նոյնպէս և շինեալ *տաճարն* քանակութեամբ և որպիսութեամբ. և անդրադարձեալ ևս: - 163. Նախ՝ զի որպէս շինօղ *տաճարին* զսկիզբն և զկատարումն ետես. այսպէս և արարիչն աստուած ի կրկին սկիզբն գործոյն զկատարումն աշխարհի ետես: - 163. Նախ՝ զի զգոլն իւրեանց ունէին ի նախագաղափար տեսութիւնն աստուծոյ. թէպէտ յետո՛յ ընկալան գոյացութիւնս յինքեանս. որպէս *տաճար* ի միտս շինողին: - 170. Որպէս կրիտէս թագաւորն կրէատացւոց կախեաց ի մէջ *տաճարին* անդաման քարեայ ամենայն ուստէք ըմբռնեալ: - 180. Եւ առաջին է դուռն քան *զտաճարն:* - 230. Երիցս երևիլ ի *տաճարին:* - 283. Այսպէս ուղիղ իմացիր թէ ուրեք և *տաճար* կոչէ զմարմին. զի կրկին է *տաճարն:* - 319. Զի է՛ *տաճար* միաւորեալ. որպէս մարմինն մեր կոչի տաճար մեզ...: - 319. Եւ է՛ *տաճար* որոշեալ. որպէս արտաքին բնակարանք մեր: - 319. Նոյնպէս և տեառն մերոյ կոչի *տաճար* արտաքին բնակարան. որպէս կոյսն մարիամ, և հաւատացեալ ժողովուրդք, և շինուածք *տաճարաց:* - 319. Եւ կոչի *տաճար* մարմինն միաւորեալ ընդ բանին անքաժանելի: - 319. Նա՛խ՝ զի աստուծոյ է մարմին՝ կոչի *տաճար* իբր կարօղ սրբութեանց. և դարձեալ զի անշփոթ է միաւորեալ՝ կոչի *տաճար:* - 319. Այլ արտաքին *տաճար* որպէս բնակարան և որիշ ի նմանէ՝ ո՛չ է և ո՛չ ասի: - 319. Է՛ և այլ ինն պայծառ տեսութիւն այսմ բանի. զի զգեստ և *տաճար* կոչի մարմինն ստուգապէս ո՛չ աստուածութեանն քրիստոսի՝ որ ո՛չ բաժանեցաւ ի մարմնոյն ոչ ի մահ և ո՛չ ի գերեզմանն: - 319. Այլ կոչի *տաճար* և զգեստ բանական հոգւոյն մարմինն իւրական որպէս ամենայն մարդկան: - 319. Եւ տէր մեր զգալուստ հոգւոյն և զկատարած աշխարհի պատմեաց, և յանձնեաց զկոյս *տաճար* իւր ի կոյսն յօհաննէս: - 329. Վեցերորդ՝ սովո՛ր էին *զտաճարս* կռոցն զարդարել. վասն որոյ առաւել քան զնոսա զարդարէ՛

գխորանն: - 342. Եօթներորդ՝ զի նոր ինն չնաշխարհիկ կազմեաց. նոր ժողովրդեանն և նոր օրինացն, իցէ և նո՛ր *տաճար*...: - 342. Վասն որոյ և յաւուրս զաքարիայի հօրն յովհաննու յորժամ յամեաց ի *տաճարին* և ել, ակնունէր ժողովուրդն տեսանել զա՛կնն և տե՛սին լուսափայլ սպիտակացեալ իբրև զձիւն. և լի՛ եղեն խնդութեամբ. զի երկնաւոր արքայութեան նշոյլքն պայծառացուցին զակն: - 349. Նա՛խ՝ բերել ի դուռն խորանին և *տաճարին*. և ո՛չ ի բազում մեհեանս. զի ցուցցէ զմինն աստուած՝ և յանուն նորա ընծայել: - 359. Նա՛խ ի սեղանն աբրահամու. և ապա՛ մովսիսին և ապա՛ դաւթին ի կալն ուռնայի. և ապա՛ ի *տաճարին* սողոմոնի. յետոյ ի սեղանն եղիայի: - 363. Դարձեալ՝ մեք մարմին եմք քրիստոսի և անդամք նմա. նոյնպէս և զգեստ. այսպէս տուն և *տաճար*. մկրտութեամբ և հաւատով և բարի գործով: - 367. Պա՛րտ է զմեզ սրբութեամբ արժանապէս *տաճար* և զգեստ և անդամս պահել նմա: - 368. Եւ նա՛ ծնաւ զեզն պարարակ. որ ողջակէզ եղև արտաքոյ քաղաքին ի դէմս *տաճարին:* - 383. Ասա՛ թէ՝ քահանայիցն հրամայեաց ի բաց կալ յամուսնութենէ յորժամ մտանէին ի *տաճարն* և ի խորանն. և յորժամ լսէին զօրէնս աստուծոյ զօրեայ սրբեցան: - 404. Վասն է՞ր աւերէ՛ աստուած զսրբութիւնս և վարէ՛ գերի. որպէս զտապանակն յայլազգիս և *զտաճարն:* - 425. Որպէս յետոյ որդի նորա զկաղս և զկոյրս բժշկեաց ի *տաճարին:* - 431. Եօթներորդ՝ զի ո՛չ կարէր շինել *զտաճարն* սուրբ: - 433. Վասն է՞ր հրամայեցաւ դաւթի ո՛չ շինել *զտաճարն:* - 439. Այլ ա՛յս է ճշմարիտն. զի պատերազմ և խռովութիւն էր յաւուրս դաւթի մինչ սատակեաց զնոսա. և որդի նորա ի խաղաղութեան ժամու շինեաց *զտաճարն:* - 439-440. Զայս ցուցանէ թէ՝ որ քան ի խռովութեան եմք ընդ թշնամւոյն և յանձինս մեր՝ ո՛չ լինիմք *տաճար* աստուծոյ: - 440. Եւ այս ի տիպ փրկչին. զի որդին միածին շինեսցէ *զտաճար* բնութեան մերոյ մարդանալովն իւր: - 440. Եւ տե՛ս, զի ոչ ինչ էր հրէիցն ի *տաճարին:* - 440. Ութերորդ՝ նա՛ *տաճար* շինեաց: - 441. Եւ տէրն զեկեղեցի *տաճար* աստուծոյ կենդանոյ: - 441. Ութևժ, նա՛ հեթանոսացն տայր շինել *զտաճարն:* - 441. Տասներորդ՝ զի սողոմոն ի քարանց ծառագործաց կազմէր *տաճար* աստուծոյ. իսկ քրիստոս զբանական հոգիս մարդկան շինէր օթևան սուրբ երրորդութեանն: - 442. Ոմանք ասեն թէ ի *տաճարէն* յերեսաց սեղանոյն ընդ առաւօտն և յերեկոյն բերէին ագռաւքն: - 443. Տևեալ ամս **ն**. մինչ ի սեդեկիա որ գերեցաւ ի բաբիլօն. և հրձիգ եղև *տաճարն* և երուսաղէմ: - 446. Եւ յետ գերութեանն իսրայէլի անցեալ ամք **ճլե**, ել արքայն բաբիլացւոց նաբուգոդոնոսոր ի վերայ երուսաղէմի. ի **ժ** ամի թագաւորութեանն յովակիմայ. և էառ հարկ ի նմանէ. և զմեծ մասն սրբութեանց *տաճարին* աւերեաց: - 447. Եւ յետ **ե** ամսոյ՝ նաբուզարդան դահճապետն հրձիգ արար զերուսաղէմ և *զտաճարն* և զտունն թագաւորացն. և զպարիսպն կործանեաց. և զսիւնսն պղնձի և զաւազանն և զամենայն կահ պղնձի և արծաթի տարաւ ի բաբիլօն: - 447. Եւ յետ նոյն քան ամաց շինութեան *տաճարին* աւելի կամ պակաս, նա՛խ արձակեցաւ եզր դպիր. և յետ նորա նէեմի: - 447-448. Կիւրոս յառաջին ամի թագաւորութեանն իւրոյ՝ արձակեաց **ե** բիւր զգերիսն յերուսաղէմ, սաղմանասար իշխանաւն. զի շինեսցեն *զտաճարն:* - 448. Մինչ ի դարեհի **բ** ամն արձակեցաւ զօրաբաբէլ, և ի **դ** ամն շինեաց *զտաճարն:* - 448. Եւ յետ եօթանասուն ամի շինածոյ *տաճարին* ապա արձակեալ նէեմի շինէ զպարիսպն երուսաղէմի ի **լբ** ամին արտաշէսի. որպէս ասէ գիրքն եզրի: - 448. Եւ այսպէս յետ աւերածոյն և գերութեանն նախ *տաճարն* շինեցաւ, և յետոյ պարիսպն կանգնեցաւ: - 448. Ի տիպ խորհրդոյ օրինակի մերոյս *տաճարի* գերեալ ի մեղաց և աւերեալ *տաճար* սրբութեանս եօթնիւք զգայութեամբք: - 448. Եւ յորժամ զղջանամք ի մեղաց՝ նախ խոստովանութեամբ շինեմք *զտաճար* սրբութեան մերոյ. և ապաշխարութեամբն որ է՛ փոխարէնքն՝ կանգնեմք զպարիսպն եօթնիւք զգայութեամբք: - 448. Եւ եօթնից ժամանակաց փոփոխմամբ՝ **է** հասակաւ յեօթն դար կենցաղոյս՝ լինիմք *տաճար* և քաղաք քրիստոսի աստուծոյ մերոյ: - 448. Իսկ երկրորդն զօրաբաբէլ ի **զ** ամին կիւրոսի շինեցան *զտաճարն*...: - 449. Եւ աստի թուեալ ի դարեհէ՛ որդւոյ վշտասպեայ, որ արձածեաց զզօրաբաբէլ. և յորոյ երկրորդ ամին շինէ *զտաճարն:* - 449. Սա՛ ի **դ** ամի թագաւորութեան իւրում կազմէ՛ զհանդերձանս *տաճարին*. և զեօթն ամ կատարեաց: - 452. Ժողովին ի մովսիսէ՛ և յելիցն յեգիպտոսէ մինչև ցշինուած *տաճարին* ամք **դճձ**: - 452. Սա՛ բորոտեցաւ համարձակեալ ի *տաճարն* խնկարկել: - 452. Յերկոտասան ամին սեդեկիայ՝ նաբուգոդոնոսոր քաղդէացի էառ զերուսաղէմ և *զտաճարն* հրձիգ առնէ: - 453. Տևեաց *տաճարն* զամս **նխբ**: - 453. Եւ առնին ի նորոգմանէ *տաճարին* մինչև ի ծնունդն քրիստոսի ամք **շժը**: - 453. Եւ յառաջին շինուածէ՛ *տաճարին* ցերկրորդն՝ **շժբ**: - 453. ...իսկ Աննա ամուսնացաւ ի գալիլեայ ընդ յովակիմայ. և ծնաւ զաստուածածինն մարիամ ի պրոպատիկէ ի տունն յովակիմայ. և անտի տարեալ եղև ի *տաճարն* տեառն: - 460. Եւ գիտելի է, զի ի տաճարն **ժդ** ամաց էր: - 461. Յինգերորդ՝ բանալ դրանն ի գնալն

քառասնօրեայ ի *տաճարն:* - 471. Հինգերորդ՝ ի նմին իրացն յայտնի է՝ զի ռամիկ ժողովուրդն ի տօնի քաւութեանն երեքօրեայ սրբութեամբ մերձենային առ դուռն *տաճարին:* - 483. Ո՞ր քան ևս քահանայապետին որ զերկոտասան օր պարտ էր խնկօք պաշտել ի մէջ *տաճարին* ի ժամ աղօթիցն. թէպէտ ի սուրբն սրբոց միանգամ ի տարւոջն: - 483-484. Անմարթ էր թողուլ զժողովուրդն ի դրան *տաճարին* և մերձիլ յանկողինս...: - 484. ...զի զքառասնօրեայ գալուստն ի *տաճարն* ըստ ծննդեանն տօնեսցեն և ո՛չ ըստ յայտնութեանն. որ է՛ յունվարի վեցն. զոր մեք տօնեմք **խ** օր թուեալ մինչև ի **ժդ**ն փետրվարի: - 485. Երրորդն որ ասէ «էջ հոգին ի վերայ նորա». ցուցանէ թէ մկրտութեամբն լինիմք *տաճար* հոգոյն սրբոյ: - 487. Եւ հանապազ ի *տաճարին* գովէին և օրհնէին զաստուած նոր օրհնութեամբ...: - 528-529. Հիմն և շինուածն ցուցանեն եթէ *տաճարս* կամի շինել զմեզ աստուծոյ...: - 531. Նախ՝ զի երկոքեանն *տաճար* են աստուծոյ. այսինքն շինեալն և մարդն...: - 533. Այլ և այսու, զի մեք մկրտութեամբ և հաղորդութեամբն լինիմք *տաճար* աստուծոյ: - 533. Եւ զայս գործս արար քրիստոս յորժամ եհան զգնօղս և զվաճառօղս ի *տաճարէն:* - 606. Եւ զայս գործս արար քրիստոս յորժամ ի *տաճարին* ընթերցաւ զեսային ասելով «հոգի տեառն ի վերայ իմ. վասն որոյ և էօծ իսկ զիս»: - 606. Չորրորդ, սա՛ կոչի *տաճար* աստուծոյ և բնակարան...: - 614. Չորրորդ՝ զի սողոմոն յորժամ շինեաց *զտաճարն*՝ յաղօթս եկաց և նոյնպէս օրհնեաց և օծ. որպէս մովսէս...: - 615. ...վասն որոյ փառքն աստուծոյ լցին *զտաճարն*. և հուր էջ ի պատարագն: - 615. Եօթներորդ՝ զի աստուած սուրբ է որ բնակէ ի *տաճարն:* - 615. Նոյնպէս և եկեղեցին սրբի լինիլ *տաճար* սրբոյն աստուծոյ...: - 615. Եւ այն զի պղծեալ *տաճարի* կարդամբ. կամ զշարժեալ սեղանն հաստատեմք: - 615. Եւ լինիլ ի յառաջին սրբութեանն *տաճար* և բնակարան հոգւոյն աստուծոյ: - 615. Վասն է՞ր հինքն **բժ**ան օր նաւակատիս կատարէին որ է՛ նորոգումն խորանի *տաճարին:* - 616. Վասն է՞ր ի *տաճարին* զճարպն վաճառէին, և յեկեղեցիս մոմ: - 617. Պատարագն ի հնումն անբան կենդանիքն էին. վասն որոյ և զճարպս նոցա լուցանէին ի *տաճարին:* - 617. Երրորդ՝ ի հին *տաճարն* գառն էր պատարագ. որ էր օրինակ գառինն աստուծոյ: - 617. Չորրորդ՝ յօրինակ քրիստոսի որ խարազանաւ եհան ի *տաճարէն* զոչխարս և զարջառս. նոյնպէս և մեք արտաքսեմք: - 617. Երկրորդ, զի և ի *տաճարն* հին՝ ո՛չ թաղեցին զսուրբս. այլ ի գերեզմանատունս. նոյնպէս և առաւել սրբութեամբ պահելի է զնոր *տաճարս:* - 617. Երկու դասք էին երգիչք ի *տաճարին* զոր կարգեաց դաւիթ ընդ տիւ և ընդ գիշեր հանապազորդ պաշտօն **իդ** ժամուց...: - 636. Այլ և զընծայիլն ի *տաճարն*. յորում երգէին մանկունքն՝ ո՛վսաննայ. որպէս յողոգոմեանն: - 638. ...և նմա սաղմոսն էր ի *տաճարին*. և ապա՛ այլոցն զկնի: - 643. Նա՛խ՝ զի սաղմոսն երգ լսի. և ի հինքն յամենայն ժամ զսա՛ երգէին ի *տաճարին*...: - 643. Հինգերորդ, քրիստոնէից մարմինք սրբութեամբ *տաճա՛ր* են աստուծոյ, յոր պիղծ ոչ ինչ մտանէ: - 654. Իսկ վասն հիմնարկութեան սուրբ *տաճարի* և ժամահար օրհնելոյ. սկիհ և մաղզմայ. և զգիրք. և զկնունք առնելոյ. և խաչօրհնելոյ. և զքառասնորդաց **գ** ժամուց զքարոզքն և զաղօթսն, յոհան մանդակունին է արարեալ...: - 659. Այլ և ամենայն աշխարհ *տաճա՛ր* է աստուծոյ. թէ ի դաշտի թէ յագարակի թէ ի տղմի. կամ ի ջուր սուզի, կամ ի գազանաց գիշատի, կամ ի ձկանց կլցի, արդարութեան ոչ ինչ վնասէ: - 678. Ասեմք, շինուած *տաճար* և բնակութիւն երկնից զերանելի մարմինն ասէ: - 695. ...և ապա տացի սրբոցն վերին *տաճարին* բնակութիւնն: - 703. Նստցի ի *տաճարին* զոր շինեսցեն նմա հրէայքն. և ասասցէ թէ, յառաջ քան զիս ո՛չ ոք է ճշմարիտ քրիստոնեայ. այլ նեռինք են ամենայնքն: - 707. Ուր սողոմոն *զտաճարն* շինեաց: - 737. Նախ ցուցանէ զմեղս անհաւատիցն լցեալ *զտաճար* ներողութեանն աստուծոյ. զի լցեալ և յաղթահարի ողորմութիւնն յարդարութենէն: - 749

**ՏԱՃԻԿ +** Եւ այս են **իբ** լեզուքն: ...*Տաճիկք:* - 298. Զխաչին և զեկեղեցոյ, սահակն որ գնաց ընդ դէմ *տաճկաց:* - 637

**ՏԱՄ +** Մանաւանդ թէ առ առաջին պատճառն վերանայ այս անիրաւութիւն, որ *ետ* զօրութիւն աստեղացն այսպէս անիրաւ բաժանարար գոլ: - 12. Բայց նախախնամութիւնն աստուծոյ ճանաչէ զփրկեալսն, և *տայ* զկերպ փրկելոցն որով փրկին ընտրեալքն: - 18. Այլ զի արեգակն անբանապէս *տայ* զլոյսն. իսկ աստուած բանիւ և իմացմամբ ընտրէ զարժանիսն և փրկէ...: - 20. Երրորդ՝ զի կամեցաւ աստուած ո՛չ միայն ողորմութեամբ՝ այլև ըստ արդարութեան, վարձս նահատակութեան *տացէ* ըստ գործոցն համբերութեան: - 25. Եւ մի է, և անմարմին է, և անբաւազօ՛ր է, և անեղ է. յայն սակս և անվախճան է. և նա՛ է արարիչ ամենայն եղելոց. և նմա՛ է *տալի* պաշտօն: - 26. Վասն առաջնոյն ասէ՝ «զարթի՛ր փառք իմ». ի բաբիլօն *տալով* մեզ զմիսայէլ, զանանիա, և զազարիա: - 28. Զարթիր, ի սուգ

*տալով* մեզ զմուրքքէ, և զեսթեր: - 28. Զարթիր ի յոյնս, *տալով* մեզ զմակաբայեցիսն: - 28. Զարթիր ի հռօմ, *տալով* մեզ զմեսիայն: - 28. Յնգետասներորդ՝ *Տալն* որդւոյ զկեանս, զդատաստանս, և զայլն: - 29. Զի՞նչ է *տալն* որդւոյ զկեանս՝ կամ զդատաստան՝ կամ զիշխանութիւն հեթանոսաց և ամէն մարմնոյ: - 46. Թուի թէ նուազ է քան զհայր. զի ոչ ունէր և *տուաւ:* - 46. Դարձեալ ասէ թէ՝ *ետ* ինձ հայր, զի մի՛ հակառակ հօր կարծիցեն զորդի. որպէս կարծէին հրէայքն լուծանելով զշաբաթսն: - 46. Եւ թէ ըստ մարդկութեանն իմանաս, մի՛ կարծիցես պարգև և շնորհ *զտալս* զայս. զի այն նեստորին է: - 46. Զի ոչս այս բացբարձակա՛ն է. որպէս թէ ո՛չ չափով *տայ* աստուած զհոգին որդւոյ. այսինքն է՝ զի ոչ *տայ* և ո՛չ չափէ: - 46. Եւ թէ զմիայն ճշմարիտն՝ հօր միայն *տաս*, կորուսեր ապա զորդի ստութեամբ և մահուամբ և խաւարաւ և այլովն: - 47. Ըստ քում բանիդ աստ հօ՛ր *տաս* զաստուածութիւնն և բառնաս յորդւոյ. և ի մարգարէն՝ որդւոյ ասես զաստուածութիւնն և բառնաս ի հօրէ, ապա հա՛րկ է քեզ լինիլ անաստուած. զի միովն միւսոյն յաղթութիւն *տաս:* - 47. Այլ ա՛յս է հոգւոյն բարեխօսելն, զի յորժամ կամք յաղօթս՝ ո՛չ գիտեմք զպատշաճն խնդրել. ապա հոգին անմռունչ *տայ* մեզ իմաստ զպատշաճն աղօթել: - 48. Այլ ա՛յս է, Զի ճանաչէ՛ իբրև զաստուած. այլ իբրև զմարդ անգիտնայ. զի բացարձա՛կ է որդւոյն անունն. այսինքն անորոշակի. զի որոյ և *տացես* թէ բանին և թէ մարմնոյն՝ կարէ՛ ասիլ: - 48. Եւ քրիստոս խաղաղութիւն արար յերկինս և յերկրի. և զխաղաղութիւն իւր *ետ* մեզ: - 50. Վեցերորդ՝ իջումն ի յորդանան. զոր քրիստոս գլուխն մեր էառ և *ետ* ի յանգամքս: - 50. Եօթներորդ՝ նախ քան զխաչն, որ *ետ* զօրութիւն առաքելոցն: - 50. Իսկ որք բառնան զաստուածութիւնն ի միոյն՝ և ո՛չ երկոցունց *տան* զաստուածութիւնն, իմա՛, ըստ առաքելոյն զօրութիւն և իմաստութիւն է հօր որդի. և բան՝ ըստ աւետարանին յօհաննու: - 51. Եւ թէ արարած է՝ զիա՞րդ հաւատամք և կատարիմք. այսինքն յորժամ խնդրեմք և առնումք. զի ո՛չ *տան* մեզ զհայցւածքն որք են արարածք. որպէս անւամբ միայն աստւածք հեթանոսացն: - 52. Ասեն դարձեալ, օրինակ *տուր* զի լիցի ի նոյն բնութենէն մինն ծնունդ՝ և միւսն ո՛չ ծնունդ. և ապա՛ հաւատամք աստուած զհոգին: - 53. Ապա՛ *տամք* զհուրն օրինակ. զի ունի զլոյսն ծնունդ՝ և զջերմութիւնն բղխումն: - 53. Իսկ այլք՝ հոգի զհրեշտակական հոգին ասեն. որ *տուեալ* է առ ի պահպանութիւն մեզ. զի նա ուղղէ զմեզ ի բարիս, և զաղօթս մեր մատուցանէ աստուծոյ: - 59. Զի՝ զինչն *ետ* հայր որդւոյ, և ո՛չ զառինչն: - 61. Յինգերորդ՝ զի կանոն ընդհանուր ժողովոցն որ եղեն առ նոսա՝ բաւականաբար դաւանութիւն հաւատոյ *տուեալ* է: - 64. Ուստի մինն *տւօղ* և միւսն առօղ ըստ նոցայն. այս է բանն և մարդն: - 66. Իսկ թէ և նա շնորհիւ ունի զորդիութիւնն, զիա՛րդ կարէ *տալ* ումեք զոր հազիւն հարստացաւ: - 67. Երրորդ՝ «աստուած դատաւոր արդար» ասէ սաղմոսն. և վասն քրիստոսի ասէ յօհաննու աւետարանն, ո՛չ եթէ հայր դատէ զոք, այլ զամենայն դատաստան *ետ* որդւոյ իւրում: - 70-71. Ապա ուրեմն և ո՛չ էր յարութիւն և ո՛չ կենաց *տւօղ*, եթէ ո՛չ էր միաւորեալ ընդ կեանքն յաւիտենական: - 74. Զի՞նչ *տայ* իմանալ մի բնութիւն ասելն բանին և մարմնոյն: - 81. Եւ զփառս բանին զրկելով՝ *ետուր* մարդոյն. և եղէք մարդապաշտք, և մարդոյ մարմնակերք. և ի մարդ մկրտեալք. և սուտ է փրկութիւն մարդոյ մարգարէն կնքեաց: - 90. Շնորհեացն փոխանակ *տալոյն* է. «զամենայն ինչ *ետ* հայր իմ ասէ». և այլն: - 94. Յիրաւի՛ ապա և նմա ասի շնորհել և *տալ*. եթէ զանուն և եթէ զիր: - 94. Զի որպէս նւաստացաւ և եղև մարդ, նոյնպէս և շնորհք *տուաւ* նմա յաստուծոյ և ի մարդկանէ: - 94. Եւ այժմ զինեսցուք առ քեզ՝ քոյին բանիւ. որպէս դուդ ասես՝ շնորհօք *տուաւ* մարդոյն այն անուն օծութեան և որդիութեան և տէրութեան և իշխանութեան: - 94. Զի՞նչ իցէ *տուեալ*, յորժամ զկատարեալ գիտութիւնն ո՛չ *ետ:* - 96. Եւ թէ ասես բանին *ետ* և ո՛չ մարմնոյն: - 96. Ապա ուրեմն մարդկութիւնն սուտ խոստովանի «ամենայն ինչ *տըւաւ* ինձ». զի ո՛չ *ետ* զգիտութիւնն: - 96. Եւ կամ բանն զմարդկութիւնն իւր զրկեաց ի գիտութենէն և ո՛չ *ետ:* - 96. Արդ՝ եթէ բոլոր աստուածութիւնն ի քրիստոս էացեալ է մարմնապէս, և ծածկէ զգիտութիւնն ի նմանէ, այս լինի կամ ոչ աստուած մարմնացեալ և մարդացեալ կամ զէութիւնն *տըւեալ* և ի գիտութենէն զրկեալ որ է սուտ: - 98. Յորժամ ինքն ո՛չ ունի յաւիտենից կեանք, այլոց ո՞րպէս *տայ:* - 99. Երեսներորդ՝ զի վարդապետք սուրբք օրինակ *տան* մարդեղութեանն քրիստոսի, որպէս լոյս ընդ օդ՝ և հուր ընդ երկաթ միաւորեալ: - 100. Այլ և՝ *տալ*՝ և պարգևել՝ և շնորհել: - 105. Վասն է՞ր յորժամ փառս *տամք*, նախ՝ հօր, ընդ նմին որդոյ, և ապա հոգւոյն: - 109. Այսպէս և փառս *տամք* հօր և որդւոյ և հոգւոյն սրբոյ: - 116. Երկրորդ՝ ուրացականն ընդդէմ էութեան և փառացն աստուծոյ է. զի զէութիւն և զփառս աստուծոյ ուրանալ *տայ:* - 124. Զի ոմանց *տացի* և յաւելցի. և յոմանց բարձցի և պակասեսցի ըստ չափու ունակութեան ընդունողաց: - 127. Վասն է՞ր զանազանապէս *տայ* աստուած զպարգևս և ո՛չ հաւասար. որպէս առաւել *տայ* հրեշտակաց՝ և սակաւ մարդկան. և նւազ կենդանեաց և տնկոց և

անշնչից: - 130. Երկրորդ՝ զի աստուած միշտ *տայ* և ո՛չ առնու: - 138. Իսկ հրեշտակն առնու՝ և *տայ*. զի առնու յառաջնոցն՝ և *տայ* ի վերջինսն: - 138. Շնորհն երբեմն ի տեղի ողջունի դնի. ըստ այնմ թէ՝ «շնո՛րհք ընդ ձեզ և խաղաղութիւն». որով հոգին սուրբ *տըւեալ* լինի: - 139. Վասն երրորդին անչա՞փ է թէ չափաւոր՝ գիտելի՛ է, զի անչա՛փ է շնորհն ըստ իւրում ինքնութեան. այլ չափաւորի՛ ըստ *տւողին* կամաց և ըստ ընդունողին կարեաց. որպէս բան մարդոյ ի լսելիս: - 140. Եւ ասեն, *տւան* քեզ հեթանոսք ի ժառանգութիւն և յիշխանութիւն: - 144. Իսկ այլք ասեն թէ՝ հրեշտակն ո՛չ երևի ձևացեալ մարմնովն և ո՛չ խօսի ընդ մարդոյն. այլ՝ դնէ զնմանութիւն դիտաւորութեան ի յաչքն կամ ի յականջն մարդոյն. և անդ ընդունի հասարակ զգայութիւնն զտեսակս այնմիկ, և *տայ* յերևակայութիւնն և յիմացականն. այսպէս երևին հրեշտակք և խօսին ընդ մարդոյ: - 145. Եւ այլք թէ՝ լռեաց և ո՛չ *ետ* փառս աստուծոյ: - 147. Նոյնպէս և յառնել մարդոյն և յանուն դնելն կենդանեաց՝ փառս *ետուն* աստուծոյ. իսկ նա լռեաց: - 147. Ձլաւագոյն կայս զոր աստուած *տուեալ* էր նմա՝ կամեցաւ ակամայ յաստուծոյ հ՛ւր շորթել. և այլոցն բռնաբար տիրապետել և հրամայել: - 149. Այլ *ետ* նոցա անձնիշխան կամս...: - 149. Իսկ ոմանք ասեն զտեղի նորա ի հաստատութեան երկնից. և զի ո՛չ *ետուն* զփառս աստուծոյ անկան...: - 150. Յնգետասաներորդ՝ ասէ սուրբն դիոնէսիոս՝ թէ վասն այն *տայ* աստուած սրբոցն նեղութիւնս և փորձութիւնս, զի նեղութիւնն սիրելի և փափագելի՛ է նոցա...: - 159-160. Երկրորդ՝ աստուած փորձէ և *տայ* զհամբերութիւնն. և սատանայ ընդ փորձութեանն առնէ զձանձրութիւն: - 161. Ապա թէ զկամքն *երետ*՝ ուրախանայ և կենայ ի մօտն մինչև զմեղքն գործել տայ և հանէ ի բարւոյն: - 161. Երրորդ՝ աստուած փորձէ՛ և *տայ* զելն՝ զի մի՛ յուսահատեսցի. և սատանայ փորձէ և ձանձրացուցանէ զի ընկեղմեսցին: - 161. Իսկ աստուած գիտէ զառաջիկայն և այնպէս *տայ* ի փորձանս: - 161. Եւ թէ ոք ասիցէ՝ յորժամ գիտէ՛ աստուած զկատարածն, վասն է՞ր *տայ* ի փորձանս: - 161. Երկրորդ՝ զի արդարութեամբ *տացէ* զպսակն կամ զտանջանքն. թէ յաղթեն և թէ յաղթին: -161. Այլ և ըստ համարոյն՝ կնքէ՛ զինչս թագաւորաց. և *չտայ* գողանալ ծառայից. և զգողացեալն յայտնէ և յանդիմանէ: - 178. Եւ երկիրս անշարժ է տեղեաւ, *ետ* սմա ապականիլ երեսօք. զի տեսեալ մարդիկ եղական և ծառայ իմասցեն զնոսա. և մի աստուածս կարծեսցեն և մոլորեսցին. որպէս ասէ նիւսացին ի գիրս կազմութեան: - 182. Երկինքն անապական է բնութեամբ, աստուած *ետ* նմա շարժիլ: - 182. Իններորդ՝ *տա՛յ* երկրի զոր ունակացեալ է. որպէս զանձրև. զլոյս. զջերմութիւն. և զասդողութիւն: - 184. Տասներորդ՝ միշտ *տայ* և ո՛չ առնու: - 184. Ոմանց որակ գունոց *տայ*. որպէս խնծորոյ. և զոմանց բառնա՛յ. որպէս զմարդոյ: - 186-187. Եւ թէ ասեն՝ յանօթո՛յն է որ մինն առաւել լոյս *տայ* և մինն նուազ, և ո՛չ ի լուսոյն. որպէս յստա՛կ ապիկի առաւել լուսաւորէ: - 188. Վեցերորդ՝ զի և օդոյն զթռչունս *ետ* ի զարդ: - 207. Երկոտասաներորդ՝ ի կարմիր ծովուն ճանապարհ *ետ:* - 207. Եւ օրինակ *տայ* զկերակուրն որ ի ստամոքսն եփի...: - 208. Նա՛խ՝ զի սերմնական զօրութիւնն է ի մէջն բնաւորեալ. ուստի բոլորապէս և հաւասար *տայ* շարժիլ տնկոյն: - 213. Նա՛խ՝ ի փառս աստուծոյ ստեղծան. զի յորժամ զզանազան կերպարանս նոցա տեսանեմք, փառս *տամք* արարչին: - 217. Զի վարդապետք ասեն եթէ՝ կերակուր գազանաց այլ կենդանիք են. վասն որոյ խնամքն աստուծոյ *ետ* նոցա առաւել հնարս և զօրութիւնս, զի կարասցեն ըմբռնել. զայլ կենդանիս և մի՛ ի սովոյ մեռցին: - 218. Այլ և գիտելի է, զի ամենայն կենդանեաց բնականապէս հնարք *ետ* աստուած վասն օգտի նոցա և փրկութեան: - 218. Երրորդ՝ զի ադամայ *ետ* աստուած զբնական իմաստութիւնն առ ի ցուցանել զլաւագոյն ծնունդս բանին՝ հրամայէ՛ անունս դնել: - 219. Յինգերորդ՝ օգնական *ետ* զկենդանիքդ մարդոյն. որպէս ծառայք տեառնն. անուամբ պարտ էր ճանաչել զնոսա: - 219. Նա՛խ՝ զի յորժամ մարդն անհնազանդ եղև տեառն իւրոյ արարչին, յիրաւի անհնազանդք եղեն և մարդոյն անասունք *տւեալ* նմա ի ծառայութիւն: - 220. Երկրորդ՝ իմանալի՛ է, զի իմացումն և իմաստութիւն *տայ* մեզ յայլ իրս. որպէս ծառն կենաց զքրիստոս: - 222. Եւ թէ կեանս *տայ*՝ ո՞րպէս հատանի: - 223. Այլք ասեն թէ՝ խաղո՛ղ էր. կամ ցորեան. զի զգինին *ետ* գրաւական կենաց՝ և զհաց մարմնոյն: - 224. Եւ տեսանելն մնայ հաստատ, զոր ա՛յժմ իմանալ *տայ:* - 239. ...իսկ թէ յստակ արիւնն մնայ ի լեարդն, լերդին համն անոյշ լինի, և բերանոյն համն անուշ *տայ* և քաղցր: - 242-243. Եւ նա՛ *տայ* խաղալ և շարժիլ ոտից և ձեռաց և այլ մասանց անդամոցն: - 244. Զի արիւնն կերակրէ՛. և ջիլն զգայութիւն *տայ*. և շնչերակն զջերմ կենդանութիւնն բոլոր մարմնոյն: - 244. Նոյնպէս և ի տրտմիլն սևանայ վասն սեաւ մաղձոյն որ *տայ* ի յերեսն: - 245. Եւ այսմ պատճառ անհա՛ս է մտաց մարդկան. միայն անքննին դատաստանին աստուծոյ է *տալի*. և անհետազօտելի ճանապարհաց նորին. որև սակաւիկ մի յառաջ ասացաւ: - 252. Եւ դարձեալ՝ եթէ *տամք* զփչումն՝

բանական հոգւոյն ըստ ոմանց, և այսու յետո՛յ իմանալ զհոգին քան զմարմինն մեղանչումն է ճշմարտութեան ըստ **ե** եղանակի: - 253. Նմանապէս և արուեստաւորն աստուած նախանկար տեսութեամբն ունի ի միտս իւր նախքան զլինիլն մարդոյն՝ զորպիսիութիւնն. զորքանութիւնն. և զայլն. իսկ արուեստն որ է արարչադիր հրամանն, ազդէ՛ ի նիւթն. և զի անկատա՛ր է նիւթն, անկատար *տայ* և նմա հոգի զտնկականն: - 258. Եւ յև՛ս աճիլն՝ *տայ* զշնչականն: - 258. Եւ թէ ոք ասիցէ, վասն է՞ր նախ զտնկականն *տայ* և ապա զբանական հոգին: - 258. Նա՛և այսու թըւով տունկք երից ամաց *տան* զպտուղս: - 262. Այս է պատճառն. զի ոմանք յապաղեն. և ոմանք փութով *տան* զպտուղն որպէս ասացաք: - 263. Նախ ասեն ոմանք, եթէ ուղեղ գլխոյ անբանիցն ընդ խելապատակին ունի չորութիւն և հովութիւն. և ջիլքն ի նմանէ յառաջեալ յանդամս մարմնոյն՝ փութապէս պնդէ՛ և *տայ* շարժիլ: - 266. Տասներորդ՝ որպէս կողն զզօրութիւնն քարշէ՛ և *տայ* ի թիկունքն և պնդէ՛ զնա. այսպէս կինն զփառս և զինչս առն յինքն քարշելով թանձրացուցանէ և պնդէ՛ զինքն: - 276. Իսկ թէ վասն է՞ր օրէնս *ետ* մարդոյն: - 277. Ո՞ր է **է** շնորհքն ադամայ զոր *ետ* աստուած: - 279. Եօթներորդ՝ զի զաստուած ասաց պատճառ. եթէ կինս զոր *ետուր*՝ սա՛ *ետ* ինձ ուտել: - 279. Եւ թէ զի՞նչ կերին. և զի՞նչ *տայր* լոյս և վասն ագռաւուն: - 283. Եօթանասունևե, *Տայ* զօրէնս հեթանոսաց. և օրհնութիւն և անէծք. և բան ընդդէմ հրէիցն որք մարմնաւոր ունին զօրհնութիւնս: - 285. Չորրորդ՝ *չտալն* **զ** զօրութիւնն: - 287. Զանէծքն ո՛չ յինքենէ ասաց զի մի՛ սատակեսցի. այլ յերկիր *ետ* որ է՛ զէն մահու և չարչարիչ՝ և գերեզման յետոյ: - 287. Երկրորդ՝ զի զօրութիւնն որ քեզ *տուաւ* յաստուծոյ՝ չարաչար արկեր ի կիր: - 287. Երրորդ՝ ասէ *չտայ* զզօրութիւնն, զի մի՛ դադարեսցիս ի գործելոյ: - 287. Այլ մեղքն նուազէ՛ զկեանքն և ո՛չ *տայ* հասանիլ ի կէտ կոչմանն: - 291. Զի՞նչ *տայր* լոյս ի տապանին: - 294. Եւ այլք զնշխարս նախահօրն ադամայ ասեն. զի յաստուծոյ ձեռացն էր յօրինեալ՝ լո՛յս *տայր* նոցա: - 294. Զի արիւն և շունչն արակա՛ն է որպէս ցուցաւ. վասն այն ա՛յրն հանէ զնոսա. և կինն չէ *տուեալ* արիւն՝ ո՞րպէս հանէ: - 296. Եւ քրիստոս թագաւորն վերնոյն երուսաղէմէ մի՝ զնոյն խաղաղութիւն *ետ* առաքելոցն զոր ի ծննդեանն հրեշտակք երգէին: - 302. Իններորդ՝ զի զայս ո՛չ ի ձեռս ծառայից, այլ ինքնին ընդ առաջ ել աբրահամու և *ետ:* - 302. Տասներորդ՝ որպէս մելքիսեդեկ *ետ* զայն և ընկալաւ յաբրահամէ՛ զտասանորդսն: - 302. Նոյնպէս և տէրն մեր *ետ* հաւատացելոցն զկենարար մարմինն և արիւնն իւր. յորոց խնդրէ զգործս տասնաւոր. այսինքն զկատարեալս. և զկատարումն **ժ** բանեան օրինացն. ի յորս է՛ մաքրութիւն **ժ** զգայարանացս որպէս ի վերոյ ասացաւ: - 302. Վեցերորդ՝ զի ի ձեռս *ետ* զհագար աղախինն չարչարել սառայի. ուստի զերծեալ փախեաւ և հարցաւ ի հրեշտակէն: - 304. Այլ ազա՛տ գոլով յայսցանէ՝ վասն առաւել սիրոյն աստուծոյ *տա՛յ* զորդին իւր ի զենումն: - 304. Որոյ փոխանակ հայր աստուած *ետ* զորդին իւր վասն գերազանց սիրոյն ի փրկութիւն աշխարհի: - 304. Տասներորդ՝ և որպէս իսահակ նախասիրէր զանդրանիկն որդի, բայց յետոյ *ետ* զօրհնութիւնն նորին՝ որդւոյն կրսերոյ: - 305. Իսկ մեզ հոգևորապէս *ետ* պարգև զբնակութիւնս երկնից. ուստի մերժեցաւ հակառակորդն մեր սատանայ...: - 306. Հինգերորդ՝ անդրանիկն բաժին աստուծոյ է. որպէս եդ ի յօրէնսն զամենայն անդրանիկ մարդոյ և անասնոյ բաժին *տալ* աստուծոյ: - 309. Վեցերորդ՝ մարմինն երէց է ըստ կարգի քան զհոգին. և յա՛յտ է, զի որ քան կենդանի եմք՝ զերիցագոյն պատիւն մարմնոյն *տամք*...: - 310. Երկրորդ՝ զի զտասանորդն աստուծոյ խոստացեալ՝ եսաւայ *ետ:* - 311. Ութևժ, յերկրորդումն *ետ* յովսէփ ծանօթս եղբարցն: - 314. Եւ տէրն մեր յերկրորդ գալստեանն *տայ* ծանօթս հարուածովք տիգին և բևեռացն: - 314. Տասներորդ՝ յովսէփ ռոճիկս *տայր* նոցա. ա՛յս է զգեստս կատարեալ և կերակուրս: - 315. Նոյնպէս և քրիստոս իմաստութեամբն իւրով կերակրէ՛ զնոսա և զգեցուցանէ որպէս իդ երիցանցն, որ *տուաւ* նոցա արկանելիս սպիտակս. այս է շնորհին մաքրութեան զոր ընկալան ի քրիստոսէ: - 315. Երեքտասաներորդ՝ յորսոյ իւրոյ ինքն ուտէ և այլոց *տայ:* - 316. Եւ տէրն մեր որ զմարմինն և զարիւնն իւր *ետ* ամենայն աշխարհի. նախ ինքն եկեր, և ապա *ետ* առաքելոցն: - 316. Որպէս բժիշկք յորժամ հիւանդաց դեղ *տան*, նախ ինքեա՛նք զճաշակն առնուն զի հաւատարիմ լիցի: - 316. Առնէ դատաստան արդար, և կացուցէ զօդիսն յաջմէ և ասէ՝ «եկա՛յք օրհնեալքն հօր իմոյ», և *տայ* նոցա զկեանս յաւիտենից: - 317. Եւ զայծիսն ի ձախն և ասէ՝ «երթա՛յք յինէն ա՛նիծեալք», և *տայ* նոցա զտանջանս յաւիտենից: - 317. Զի ասեն թէ՝ յոբայ հէճուպն ի պարսիկս փախեաւ, և անդ զրոյց *ետ* որ գրեցին իւրեանց գրովն. և սողոմոն բերել *ետ* և սրբագրեաց: - 320. Երրորդ՝ ժողովին և գոհանան զաստուծոյ՝ որ յոչնչէ՛ գոյացոյց զմարդն, և յարգանդէ՛ խաւարին ի լոյս եբեր. և *ետ* մեզ ինչս մարմնական: - 321. Վասն որոյ այսօր ժողովեալ փառս և պատիւս *տամք* աստուծոյն մերոյ որ յաւիտեան զփառաւորիչս

իւր փառաւորէ՛: - 321-322. Զի և մեզ օրինակ *տացէ* այսպէս արիութեամբ յաղթել սատանայի: - 324. Այսինքն նախ՝ կուրաց տեսանել *տայր*...: - 328. ...**բդ**՝ խլից լսել *տայր*. **գդ**՝ համերց խօսիլ. **դդ**՝ ձեռաց շարժումն. եդ՝ կաղաց գնալ...: - 328. Երկոտասաներորդ, մովսէս **հ** ծերս ընտրեաց և *ետ* ի հոգւոյն: - 328. Չորեքտասաներորդ, մովսէս հաց զմանանայն *ետ* և լորամարգ ի ծովէ՛: - 329. Վեշտասաներորդ, մովսէս *ետ* զքլփատութիւնն և զլուացումն ջրոյ: - 329. Եօթնևժ, մովսէս մի անգամ պատարագեաց և *ետ* ցահարօն և ցորդիսն: - 329. Եւ տէրն մի անգամ կատարեաց ի վերնատունն և *ետ* յառաքեալսն և ի մանկունս եկեղեցւոյ: - 329. Որպէս մովսէս լուաւ զպատգամն և *ետ* ժողովրդեանն: - 330. Նախ գիտելի է, զի **գ** նշան *տայ* մովսէս ի դէմս սրբոյ Երրորդութեանն: - 332. Երրորդ՝ զի չափով և թուով և կշռով *տայ* աստուած զտանջանս մեղաց. թէպէտ մեզ անգիտելի՛ է: - 333. Հինգերորդ՝ նշանակէ թէ զարիւն տղայոցն չէ մոռացեալ աստուած զոր հեղձուցին ի գետն. զայն ըմպել *տայ* նոցա: - 333. Վեցերորդ՝ գետն նշանակէ՛ զբանն աստուած, որ հաղորդիլով ի մեզ՝ եղև մարմին և արիւն. և *ետ* մեզ ըմպելի զարիւն իւր սուրբ. և կերակուր զմարմինն: - 333. Վասն որոյ նախ *տուաւ* թագաւորութիւնն բենիամենի որ էր սաւուղ: - 338. Եւ ի գիշերն լոյս *տայր* նորա, և պահէր ի վնասէ՛ լուսնոյն և առաջնորդէ՛ր: - 338. Եւ զինչ և կամէին, զամենայն համս *տայր* ի բերան կերողացն: - 338. Եւ զի անապական՛ է գոյացութիւն հացին՝ աստի՛ յայտ է, զի կեանք և անմահութիւն *տայ* ճաշակողացն: - 339. Եւ զոսկին *ետուն* յապաշխարութիւն, որք *ետուն* զոսկի որթոյն: - 344. Այսպէս յետ **ծ** աւուրց *տւաւ* օրէնքն. և **ձ** օր պահքն երեքօրեայ սրբութիւն: - 344. Հինգերորդ՝ աշտանակն ի մէջ սրբութեանն *տայր* լոյս. և լուսաւորքն ի յերկրի: - 346. Վեցերորդ՝ կրկին *տալոց* էր օրէնք հին և նոր. վասն այն կրկին գրեաց: - 349. Չորրորդ՝ ի խորհուրդ հին օրինացն որ բարձաւ և նոր օրէնք *տւաւ:* - 350. Չորրորդ՝ յօրինակ դրախտին ադամայ՝ որ ձրի *տուաւ* և ո՛չ պահեաց. վասն այն որդւոց նորա գործով և աշխատութեամբ պարգևէ: - 350. Դարձեալ՝ տէրն այլոց *տայ* զլոյսն. և մովսէս ո՛չ կարէ: - 352. Եւ **խը** քաղաք ապաստանից *տալ* քահանայիցն: - 359. Նա՛խ՝ ցուցանէ թէ սա՛ անմեղ է՝ վասն իմ մեղացս մեռանի. զոր ձեռօք ի սա՛ *տամ* զմեղս: - 359. Ցուցանէ՛ զառաջին՝ զմիջին՝ և զյետին ժամանակս *տալ* աստուծոյ: - 360. Եւ մին վասն մեղաց. զի կերակուր *ետ* զմարմինն և զարիւնն իւր: - 361. Երկրորդ, զի ի նուիրացն աստուծոյ առնուն զբաժին քահանայքն և ո՛չ ի մարդոյ. և ամենայն ոք աստուծոյ *տայ* և ո՛չ մարդոյ: - 363. Չորրորդ՝ զի ա՛յրն *տայ* զարիւնն: - 365. Երրորդ՝ զի *տացի* մասն քահանայիցն աստուծոյ թ մասն: - 366. Եւ զմորթն որ է ծածկոյթ մեղաց՝ ի քահանայսն *տայ*...: - 367. Պա՛րտ է *տալ* զսոսա ի քահանայսն որպէս կարգեաց մեծն մովսէս ի հինն, և սուրբն գրիգոր ի նորս: - 367. Երրորդ՝ շնորհ ինչ *տուեալ* յաստուծոյ ի յօգուտ այլոց, ախտիւ ապականեն զնա՛: - 369. Նա՛խ՝ զի զկենդանութիւնն *տացեն* *տուողին* կենաց՝ բաժին: - 371. Երկրորդ՝ զի ողորմութիւն և մարդասիրութիւն ուսցին. *տալ* զբաժին աղքատաց և տնանկաց: - 371. Իսկ ի նորս՝ զկէս ընչիցն հրամայեցաւ *տալ* աղքատաց յաւտրնին. որ է՛ հաւասար հոգւոյն և մարմնոյն: - 372. Եւ քառասնօրեայ օրէնք *ետ* մովսէս եթէ՝ «արու անդրանիկ որ բանայ զարգանդ, տատրակ և աղաւնի նուիրել ի տաճար սրբութեան»: - 374. Զի՞նչ է որ հրամայէ՛ զարծաթ ի վարձու ո՛չ *տալ:* - 375. Ա՛րդ՝ վասն այն ո՛չ խնդրի շահ արծաթոյ, զի փո՛խ է *տուեալ:* - 375. Երրորդ՝ *չտալ* երկրի զբոյս. և ո՛չ ծառոց պտուղ: - 376. Երրորդ՝ որպէս ինքն զգալի աստեղս թըւէ՛ և յանուանէ՛ կոչէ, նոյնպէս և զիմանալի՛սն *ետ* թուել: - 377. Որպէս *ետ* առաքելոցն, Նոյնպէս և նոցա ի գիր նզովից զկապելն. և յօրհնութիւն ժողովրդեանն զարձակելն: - 379. Վասն է՞ր զնշան ընտրութեան ի բուրվառս և ի գաւազանս *տայ:* - 382. Եւ տե՛ս զշնորհս խոստովանութեան. վասն այն որ զղջացաւ և յայտնեաց, ի հնգէն զմին *տայ* տուգանք: - 384. Զի՞նչ է որ զակամայ մեղուցեալն քաւէր պատարագօք. և զկամաւոր յանցաւորն սատակել *տայր* ժողովրդեանն: - 385. Հինգերորդ՝ յառաջ տապանակն գնայր և դիտէր հանգիստ. և զհետ վէմն *տայր* ջուր. զի այժմ զհանգիստ պատրաստէ՛, և յետոյ զվայելչութիւն *տայ:* - 385. Չորրորդ, կրկին հարկանելն, զի ոմանց *տայ* և ոմանց արգելու. այսինքն սրբոց և անսրբոց: - 386. Երկրորդ, կարծէին թէ մովսէ՛ս *տայ* զջուրն: - 386. Նա՛խ՝ զի օձին հող *ետ* աստուած կերակուր և ո՛չ տրտնջեաց: - 386. Եւ նոցա մանանայ յերկնից *ետ* և տրտնջէին և սնոտի՛ հաց կոչէին: - 386. Երկրորդ՝ զի մի՛ չար խրատ *տացէ:* - 388. Եւ այսպէս բաժանեսցեն զաւարն. ի **ճէ**ն զմինն *տայցեն* քահանայապետին...: - 390. Վեց քաղաքաց հրամայեաց որոշել ապաստանի և *տալ* քահանայից. **գ** յերկիրն քանանու և **գ** յայնկոյս յորդանանու: - 392. Եւ դարձեալ՝ զի բազմացն շատ *տացէ* զբաժին երկրին, և սակաւուցն փոքր: - 392. Երկրորդ՝ զի առաջին օրէնքն անկատար մնացին. *ետ* զերկրորդն զի կատարեսցին: - 393. Երրորդ՝ զառաջինն հարցն *ետ* որ սատակեցան. զերկրորդն որդւոցն *տայ*, զի

մի՛ լիցին չար և դառնացօղ որպէս հարքն իւրեանց: - 393. Ըստ այնմ նախ զմարմնաւոր օրէնս *ետ,* և ապա զհոգևորն: - 395. Երկրորդ՝ զի **խ** ամ յանապատին հաց ո՛չ *ետ* նոցա. այլ մանանայ և զայլսն. զի բանիւն աստուծոյ կերակրեցան հոգւով. և ո՛չ մարմնական հացիւ: - 397. Վեցերորդ՝ ո՛չ միայն հաց է հաղորդութիւնն. այլ հոգւովն սրբով օրհնեալ և միաւորեալ ի բանն աստուած, որով անմահ կենդանութիւն *տայ* ճաշակողացն: - 397. Եւ որպէս ննջեցեալն քնով՝ ո՛չ տեսանէ զինքն. և որպէս յաւելի կերակրոյ խնուն զգայարանքն. նոյնպէս ագահութիւն և փարթամութիւն և հպարտութիւն մոռանալ *տայ* զինքն. վասն այն ասեն թէ՝ ինքեանց գիտակքն իմաստունք են: - 397-398. Այլ և ի վերայ այսր ամենայնի անասելի բարութիւն. զարիւնն իւր *ետ* ի փրկութիւն մեզ. ուստի ի հնոյն արգելեաց զարիւն զենմանցն. մեզ զիւրն արիւն *ետ* ի ճաշակումն: - 398. Երրորդ՝ զի ասէ՝ զպատգամն աստուծոյ ունի և ո՛չ զօտար աստուծոյ. և քրիստոս ասէր, «զոր լուայ ի հօրէ՝ պատմեմ ձեզ». և յանուն հօր եկն. և զհայր *ետ* փառաւորել միայն ճշմարիտ աստուած: - 399. Անառակ որդի որ անհնազանդ լինէր ծնողացն, օրէնքն քարկոծել *տայր:* - 400. Մովսէս օրէնս *ետ*՝ զի գիր *տացեն* մեկնելոյ զայր և զկին: - 400. Եւ որ զկին իւր արձակէ՝ նա՛ *տայ* նմա շնալ: - 401. Իսկ որ զարձակեալն առնուին, և յառաջին բաժանեալն ո՛չ *տային*, վասն երկիւղի առն և կնոջ էր, զի մի՛ լիցին պատճառ բաժանման: - 401. Եւ այս պատւիրանս՝ *տայ* պահողացն օրհնութիւնս. և ոչ պահողացն անէծս: - 403. Չորրորդ՝ ադամայ նախ զօրհնութիւն և ապա անէծք *ետ*. իսկ այժմ դարձուցեալ ի յօրհնութիւնն աւարտէ՛: - 403. Երկրորդ՝ զփայտէն կախիլով եբարձ զանէծսն և *ետ* մեզ օրհնութիւն: - 403. Ա՛րդ՝ զերկու օրհնութիւնս **բ** կտակօք բաշխեաց մարդկան. զմարմնոյ աճումն և ընչից՝ *ետ* հէլի. և զհոգւոյ աճումն կուսութեամբ և աղքատութեամբ՝ *ետ* քրիստոնէից: - 403. Չորրորդ՝ տեսեալ զմովսէս առաւել փառաւորեալ, և յետ վախճանին թոյլ ետ ներողութիւնն աստուծոյ ժպրհիլ բանսարկուին ստգտանօք մեղաց. զի մի՛ *տացեն* նմա զգերազանց պատիւն աստուած կարծելով: - 410. Տասներորդ՝ ի սկզբանէ հայհոյիչ աստուածամարտ էր սատանայ. և վասն այն զմարդիկ կորուսանէր մեղօք. որում զվճիռն և զսաստն տէրն *ետ,* և դատապարտեաց զմեղս ի մարմնի իւրում. և եբարձ մահուամբն զմահ, և որ զիշխանութիւն մահուն ունէր: - 410. Եւ ղևեայ ցեղին բաժին ո՛չ *ետ:* - 412. Նա՛խ՝ վասն օրհնութեանն յակոբայ. *տալով* զանդրանկութիւնն եփրեմի: - 414. Վեցերորդ՝ զի թէ լինի անկարօտ գող և զրկօղ, ընդ տեառն իւրոյ կորուսանէ և զինչսն. որպէս աքարն որ ունէր բազում ստացուածս, և գողացաւ ի նզովիցն երիքովի. տեսին ամենայն ժողովուրդն և ցասեան ի վերայ նորա և իրաւունս *ետուն* սատակմանն: - 416. Վասն է՞ր ոչ *ետ* ղևեայ ցեղին բաժին: - 417. Նա՛խ՝ զի տէր ինքն էր բաժին նոցա. և զամենայն իրաւունս ի քահանայսն *տային:* - 417. ...իսկ ցօղ իմաստութիւնն որ *տուաւ* նմա յաստուծոյ. և թագաւորք արաբայ և սաբայ, ընծայաբերքն նմա: - 421. Եւ տէր մեր ի սպանօղ մարմնոյս որ է՛ պատառօղ հոգւոյս, սպանելով զսա՛ գտանէր զքաղցր կեանս *տալ* որդւոց մարդկան ազգի: - 422. Իններորդ՝ *ետ* զխորհիսխ քաղցր հօր և մօր իւրոյ ի ճաշակ: - 422. Եւ տէր մեր զզարդ և զպսակ անկելոցն խոստացաւ մեզ և *ետ:* - 422. Քսանգ, նա՛ յազգէն յուդայ ըմբռնեալ և *տուեալ* յայլազգիս: - 423. Վասն այն և ի նորս զխաչ և զսրբութիւն և զեկեղեցի և զայլն *տայ* ի ձեռս այլազգեաց: - 425. Քսան**բ**, երկոքին դուստրն խօսեցաւ դաւթի, և կրտսերն *տւաւ*. և փեսային քրիստոսի կրկին խօսեցաւ եկեղեցի և նո՛րս *տուաւ:* - 436. Քսան**ե**, ձգեաց սաւուղ զգեղարդն դաւթի, եհար զորմն և ապրեցաւ դաւիթ. և որդիքն սաւուղայ հարկանել *ետուն* ըզկողս տեառն և ո՛չ վնասեցին աստուածութեան նորա: - 436. Դաւիթ էառ զերուսաղէմ և շինեաց իւր տուն. և տէրն զվերինն երուսաղէմ, և *ետ* իւրայնոցն զխաղաղութիւն: - 438. ...և տէրն մարտեաւ ընդ բելիարայ և յաղթեաց մահու. և քակեաց զդոժխս. էառ աւար զգերեալսն և էհան յարքայութիւնն երկնից. *տալով* նոցա զանթառամ պսակն: - 438. Եւ ծեր և հին աւուրցն հայր *ետ* զթագաւորութիւն որդւոյ: - 441. Ութև**ժ**, նա՛ հեթանոսացն *տայր* շինել զտաճարն: - 441. Քսանև**զ**, *ետ* գանձս և ընկալաւ զիմաստս և զաստուած գիտութիւն: - 441. Եւ տն մերոյ *տուաւ* ամենայն իշխանութիւն յերկինս և յերկրի: - 442. Հինգերորդ՝ քրիստոս *տուօ՛ղ* էր մարգարէութեանն. և նա՛ առնօղ ի քրիստոսէ: - 442. Եւ մանայէն թագաւորն հէլի *ետ* նմա դ տաղանդ արծաթոյ և դարձաւ ի նմանէ: - 446. Եւ զի ո՛չ *ետ* մերձենալ մարիամու: - 455. Յորում աւուր օրէնքն *տւաւ*, և հոգին սուրբ էջ: - 455. Վեցեկի պարգևք *ետ* հոգին սուրբ: - 455. Ուստի տէր տէր *տայ* ինձ լեզու խրատու և սիրտ ի ժամու: - 456. Այլ և քահանայքն ո՛չ յանցանէին զօրհնօքն և յօտար ազգէ *տային* նմա կին: - 460. Առաջին որ է հասարակաց սրբութիւն մկրտութեան, մերժէ՛ զմեղս և *տայ* զշնորհս: - 462. Նախ՝ թէ ո՞րպէս պատւով *ետ* զողջոյնն կուսին ասելով «ուրա՛խ լեր լի՛ շնորհօք»: - 464. ...եթէ զոր օրինակ բժիշկք՝ ո՛չ ի սկիզբն ցաւոց և ո՛չ ամենևին անազան *տան* զդեղ հիւանդին. զի

անօգուտ է և վնասիչ. այլ ի դիպօղ ժամու յորում առողջացի: - 467. Իսկ ա՛յլ վարդապետք ասեն, թէ *ետ* զբնական օրէնս որպէս նոյի և յառաջ քան զնա: - 467. Դարձեալ ի ձեռն կուսին՝ կենաց գիր *տուաւ* ազգի մարդկան տէր մեր յիսուս քրիստոս: - 481. Բայց անյա՛յտ էր գրեալն. մինչ խաչիւ և չարչարանօք զգիրն պատրանաց նախաստեղծիցն պատառեաց, և ապա՛ զայս գիր *ետ* յայտնապէս: - 481. Այլ զանազանին Նախ ի ձևն. զի մկրտութիւնն յոհաննու *տուեալ* լինէր յանուն այնմ որ գալոցն էր. իսկ քրիստոսին յանուն Երրորդութեանն: - 488. Զագահութիւնն՝ բազմաբաշխութիւնն. որ *ետ* զմարմին իւր ի կերակուր և զարիւնն իւր ըմպելի. զհոգին ի գին. զջուր կողին ի լուացումն. զհանդերձն՝ խաչողացն. զմարմինն՝ աշակերտացն. և զմայրն՝ յոհաննու: - 489. Յօշարակաւ մաճնաւն, յորժամ զմարմին և զարիւն իւր *ետ* աշակերտացն յետ ընթրեացն: - 491. Եւ վասն մահուան որդւոյ՝ հայր աստուած *ետ* զհոգին սուրբ պարգևս մարդկան: - 492. Զազգս մարդկան սատանայ էր գերեալ. վասն է՞ր քրիստոս զգին արեանն ի հայր *ետ:* - 492. Յիրաւի ապա տէր մեր զգին արեանն ի հայր *ետ*. թէպէտ սատանայ էր գերեալ և չարչարէր զմարդիկ: - 492. Զոր օրինակ՝ բժիշկն յորժամ հիւանդին զդեղն *տայ*, նախ ինքն ճաշակէ զի հաւատալի լիցի: - 497. Զորօրինակ՝ մի ոմն ծառ հատանէ, և այլ ոմն զհատեալն դարձեալ հերձու և բաժանէ՛ և *տայ* յայրումն: - 498. Վասն այն ո՛չ *ետ* մարիամու մերձենալ. այլ պահեաց զնա բազկին այնմիկ որ նստոյց զնա ընդ աջմէ իւրմէ: - 518. Հինգերորդ՝ զի *տացէ* մեզ համարձակութիւն յուսալոյ ի նոյն. այսինքն մտանել մարմնով ի յաւիտենական ժառանգութիւնն: - 519. Երկրորդ՝ զի *տացէ* օրինակ համբերութեան մերոյ, զի սպասեսցուք վարձուն ի հանդերձեալն. և ո՛չ իսկոյն վաղափոյթ լինիլ առնուլ այժմու կենօք...: - 520. Նա՛խ՝ ի կողմանէ պարգևողին. զի յորժամ քրիստոս նստեալ լինէր ըստ մարմնոյ ընդ աջմէ հօր իբր զթագաւոր փառաց յաթոռ թագաւորութեան իւրոյ, յայնժամ մեծագոյն լինէր պարգևք հոգւոյն *տուեալ* ի փառաւոր քրիստոսէ աստուծոյ: - 521. Այսպէս և մեք փառս *տամք* հօր և որդւոյ և հոգւոյն սրբոյ. այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից: - 522. Եօթներորդ՝ մեռեալ մարմին ո՛չ առնու և *տայ* զօդ: - 523. Երկրորդ՝ և յայսմ աւուր *տուաւ* նոցա օրէնք ի ձեռն մովսէսի: - 524. Երկրորդ՝ և յայսմ աւուր *տըւաւ* մեզ նոր օրէնս և քարոզութիւն սուրբ աւետարանին: - 524. Վասն է՞ր յորում աւուր *տըւան* օրէնքն՝ ի նմին աւուր և առաքելոց *տուաւ* հոգին սուրբ: - 524. Նախ՝ զի ցուցանէ թէ որ *ետ* զօրէնսն՝ նոյն առաքեաց և զհոգին և ի նոյն տիպն որոտ և փայլատակումն հողմ և հուր երևեալ որպէս անդ ի լերինն: - 524. Երրորդ՝ զի անդ ո՛չ կարէր արդարանալ զի հիւանդ էր սիրտն, *ետ* նոր օրէնս ի սիրտս մեր որ կարօ՛ղ է արդարացուցնել զժողովուրդս և զհեթանոսս: - 524. Քանի՞ ազգ պարգև *ետ* հոգի սուրբ՝ առաքելոցն: - 524. Եւ վասն միաւորութեան. և թացեալ պատառացն. և թէ ո՛չ *տան* ժողովրդեանն յօրինեալ մարմնոյն քրիստոսի: - 526. Ա՛րդ՝ ըստ կարգի՝ Բնականն՝ ադամայ *տուաւ:* - 528. Չորրորդ՝ այժմ մանկունք հաւատոյ ի յեկեղեցիս նոր օրհնութիւն *տալով* **գ** սրբեան ձայնիւ աստուածաբանե՛ն զխաչեալն քրիստոս. և օրհնեն ի վերայ արքայութեան աթոռոյ խաչին: - 529. ...այլ և մարգարէքն *տալ* զհոգին այլում ո՛չ կարէին...: - 535. ...և առաքեալքն ձեռն դնելովն միայն՝ *տային* զհոգին սուրբ. և ի լեզուս խօսէին. և մարգարէանային ընդունօղքն. իսկ վարդապետք սուրբք՝ քարոզութեան նոցին հետևօղք և որդիք ծնողացն՝ երրորդ կարգին յետ նոցա: - 535. Եւ սոքա են սուր երկսայրիք *տուեալ* ի ձեռս քահանայից զինուորաց քրիստոսի. զի յաջ և յահեակ հարցեն. այսինքն զսատանայ և զչարսն ի մարդկանէ որք հակառակին բարեաց: - 538-539. Յայս միտս տէրն յորժամ խոստացաւ *տալ* զիշխանութիւնս պետրոսի...: - 539. Եւ յորժամ առաքելոցն *ետ*՝ նախ փչեաց ի նոսա զհոգին սուրբ, և ապա *ետ* իշխանութիւն կապելոյ և արձակելոյ: - 539. Իսկ առ ներքինս օրհնելն՝ իշխանութիւն և շնորհաց *տալն* թարգմանի. որ քահանայն կամ եպիսկոպոսն *տայ*. որպէս ցուցաւ ի վերոյ ի իգ գլուխն, հե համարն: - 540. Ասեմք առ այս, թէ ձեռնադրեալն իցէ անարժան՝ ո՛չ առնու շնորհս. այլ դատապարտի ինքն և ձեռնադրօղն. զի սրբութիւն՝ շանց *ետ:* - 540. Վասն որոյ ի վերնատունն յորժամ փչեաց յառաքեալսն՝ նախ *ետ* զարձակելն և ապա զկապելն: - 541. Նախ՝ զի յետ յարութեանն հաւասար *ետ* զիշխանութիւնն...: - 546. Վասն որոյ և տէրն **բժ**ան թիւ ընտրեաց առաքելոցն, և *ետ* **բժ**ան աթոռ դատողական: - 546. Ո՛չ թէ յայնժամ *ետ*, այլ յայնժամ խոստացաւ և յետո՛յ *ետ*. որպէս խոստացաւ նստուցանել յերկոտասան աթոռ և յետոյ *ետ*. նոյնպէս և զայն: - 547. ...թէ զերկու քորս **բ** եղբարցն *տալ*. կամ զսանին քոյրն միւս եղբօրն. որպէս քո սուտ պետրոսին կանոն է, և ո՛չ ճշմարիտ պետրոսին. և զայլն լռեմ իբրև զամօթալի: - 548. Եւ բաժանեալ զսուրբ տեղիս տնօրինական, *ետուն* զսուրբ յակոբն պատրիարգարան, և զգողգոթայն, և զսուրբ կարապետն և զսնարսն. և արկեալ վիճակս ի վերայ

յարութեանն՝ անկաւ հայոց. և տրտմեցան ոմանք յազգէ նոցա: - 548. Ապա հե՞զն յամենայնի սուրբն գրիգոր *ետ* նոցա՝ զի նոքա շինեսցեն ընդարձակ. զի դեռ չէր շինեալ: - 549. Եւ ի գալն յերկիրս հայոց, *ետուն* նմա օգնական զիւղն օծման զոր քրիստոս օրհնեալ էր. և զգեղարդն. և այլոց ազգաց չկա՛յ այս պարծանքս. զի մեր մեռոնս հանապազ և միշտ զնոյն շնորհ ունի: - 549. Այլ թէ գիր չունէր մեր ազգս, տե՛ս զի յաստուծոյ *տուաւ* մեզ գիր, որպէս մովսէսիւ իէլի. և այլ ո՞ր ազգ պարծի այսու: - 549. Նա՛խ՝ ի բաժակէն ո՛չ *տալ* ժողովրդեանն: - 553. Երրորդ՝ վասն ննջեցելոց ի յանբանից զենուլ և *տալ* ողորմութիւն աղքատաց: - 553. Վեշտասաներորդ՝ զպարգևս *տուեալ* ի նմանէ ո՛չ օտարացուցանէ: - 576. Որոյ գործն այս է, զիւրաքանչիւր ուրուք յետ *տալ* զոր իւրեանն է: - 579. Եւ զի դժուարին է հոգւոյ մարդոյ կարգաւորել զինքն և սրբել ի մեղաց. վասն այսորիկ օգնութիւն *տալ* աստուած հոգւոյ մարդոյ զեօթն պարգևս հոգւոյն սրբոյ: - 582. Իմաստութիւն է որով ճանաչեմք զբարութիւնն աստուծոյ. որ *տուեալ* լինի ընդ դէմ յիմարութեան: - 582. Եւ այս *տուեալ* է յաստուծոյ ընդ դէմ նոցա որ հաստ և բութ ունին զիմացումն: - 582. Եւ այս *տուեալ* լինի յաստուծոյ ընդ դէմ երկիւղին որով նմանին քրիստոսի. զի ո՛չ երկնչէր ի բնական մահուանէն...: - 82. *Տուեալ* յաստուծոյ ընդ դէմ անգիտութեան: - 582. *Տուեալ* յաստուծոյ ընդ դէմ խստութեան սրտին: - 582. Որ *տուեալ* լինի մարդոյ ընդ դէմ ամբարտաւանութեան: - 582. Զի ասեն վարդապետք թէ որպիսի իւրաքանչիւր ոք ծածկեալ իցէ յինքեան. փո՛րձ է *տուեալ* նախատինքն: - 586. Իններորդ, յերկինս է. ապա աստուած է *տուօղն* վարձուց: - 586. Որ և ըստ այսմ կերպիս ո՛չ լինի *տուեալ* շնորհք հոգոյն ի մկրտողէն առ մկրտեալն...: - 588. ...զի պարգևք հոգւոյն ո՛չ արհամարհողաց և չկամողացն լինի *տուեալ*. այլ հաւատով խնդրողացն...: - 588. Այլ զայն ասացեալ յառաջն զձև բանիցն. որ և արժանաւորապէս *տուեալ* լինի շնորհք հոգւոյն: - 588. Երկրորդ, զի այս խորհրդոյ նշանակ ի սկզբան արարածոց աստուած ադամայ *ետ* և ո՛չ կնոջն. յորժամ էած զկենդանիսն առ ադամ զի անունս դիցէ նոցա: - 589. Երրորդ, զի թէ կայր հնար որ ի ձեռն կնոջն *տուեալ* լինէր շնորհք, աստուածածին կոյսն մարիամ ընդէ՛ր ոչ եղև մերձ մկրտութեան որդւոյն իւրոյ ի յորդանան: - 589. ...և ապա՛ էջ հոգին ի մկրտեալն նորա. զիա՞րդ ի ձեռն կնոջ լինի *տուեալ* շնորհք հոգւոյն լուացմամբ ջրոյն: - 589. Աստուած զարդարութիւն յամենայն մարդոյ խնդրէ զոր յառաջն *ետ*. և ադամ եթող զայն: - 591. Դրոշմն է հաստատութեան խորհուրդ. որ *տուեալ* լինի առ ի զօրացնել և քաջացնել զմարդն: - 593. Որ *տուեալ* լինի ի մկրտութիւնն հոգի սուրբ որով մեղքն քաւեալ լինի: - 593. Եւ թէ ոք ասիցէ, զդրոշմն ո՛չ ունիք. զի եպիսկոպոսն *տայ* որպէս ազգն Ֆռանկաց: - 594. Այս ըստ հակառակասիրութեան նոցա ասի. այլ ըստ ուղղութեան՝ քահանայն ունի իշխանութիւն զեօթն խորհուրդ եկեղեցւոյ կատարել. և եպիսկոպոսն առաւել ունի. զի միայն *տայ* զկարգն, եկեղեցի օրհնէ և սեղան: - 594. Եւ ի չորրորդ գիրքն ի ի համարն ասէ, *ետ* զմարմինն ի կերակուր. զարիւնն ըմպել. զհոգին ի գին. զջուրն կողին ի լւացումն: - 594. Երկրորդ ունիմք վկայութիւն ի քրիստոսէ յորժամ *ետ* զարիւնն ի տեսակ գինւոյն՝ ասաց, «ո՛չ արբից ի բերոյ որթոյ մինչև արբից զդա նոր արքայութեան հօր իմոյ». և ջուրն ո՛չ է բեր որթոյ: - 595. Ապա դուք բարւոք առնէք *չտալ* հաղորդ ժողովրդեանն զի մի՛ յուդա լիցին: - 598. Նա՛խ՝ զի արիւնն հեղուկ նիւթ է. կամ ո՛չ է *տալի* որպէս այլ ազգք, և զրկել զժողովուրդն ի փրկական արենէն: - 598. Եւ կամ միաւորեալ ընդ մարմնոյն և *տալ* ժողովրդեանն: - 598. Եւ թէ հրէա ոմն ետես զի հում միս արիւնաթաթախ *տայր* ժողովրդեանն. և զղջացաւ անկաւ յոտս սրբոյն և մկրտեցաւ: - 599. Ոմանք ասեն թէ ի հասարակ ընթրիսն յորժամ բազմեցան՝ ի հասարակ սեղանոյն թացեալ զպատառն *ետ* յուդայի...: - 599. ...այլ ո՛չ յօրհնեալ հացէն և ի գինւոյն. այլ էառ ի սեղանոյն հաց և եթաց ի ջուր ինչ կամ ի սոսկ գինի՝ և *ետ:* - 599. Զի թէ յօրհնեալ հացէն այլոցն ամենեցուն ցամա՛ք էր *տուեալ* և նորա թաց, պատճառ լինէր մատնութեանն յուդայի. և յիրաւի: - 599. Եւ զպատառն զայն զոր ի ձեռն ունէր քրիստոս՝ *ետ* ի նա...: - 599. ...այսպէս և օգոստինոս վարդապետն Ֆռանկաց ի խորհրդոց գիրս **ծա** համարն ասէ, թէ յառաջագոյն բաշխեաց զխորհուրդ մարմնոյ և արեանն և *տուեալ* յուդայի: - 599. Եւ այս է ճշմարիտն. քանզի յօրհնեալ հացէն որ բաշխեաց և *ետ* առաքելոցն, այլ ո՛չ մնաց: - 599. Ապա յա՛յտ է զի ո՛չ ի մարմնոյ և ո՛չ յարենէն էր թացեալ պատառն. այլ ի այլ ինչ կերակրոյ ի սեղանոյն առեալ թացեալ և *տուեալ*. զի ցուցցէ զմատնիչն: - 599. ...զի յայտնապէս զարիւնն ո՛չ *տայր*, և ծածկապէս զմարմինն. զի յօրհնեալ մարմնոյն ո՛չ *տայր*. այլ սոսկ հաց որ ի բեմն: - 599. Թէ օրհնեալ է՝ ընդէ՞ր օրհնէք և թէ ոչ էր օրհնեալ՝ ընդէ՞ր *տայր* ժողովրդեանն իբր օրհնեալ մարմին և մոլորեցնէք զնոսա: - 600. Եւ եղիցի թէ այս օրհնեալ է. զարիւնն ընդէ՞ր ոչ *տայր:* - 600. Նա՛խ՝ եթէ ո՛չ զմարմինն *տան* ժողովրդեանն. այլ սոսկ հաց և գինի. զի մարմին քրիստոսի այն

մինն է որ օրհնեցաւ որպէս ցուցաւ ի վերոյ: - 600. ...զի յայտնի զարիւնն *չտաս*. և ծածուկ զմարմինն...: - 600. ...զի սուկ հաց *տաս* և ո՛չ զօրհնեալն: - 600. Յայս միտս և տէր մեր բաշխեաց զմարմինն և *ետ* առաքելոցն ի վերնատունն: - 600. Որ և հարցանէր որդւոցն զեբեթեայ թէ՝ կարօ՞ղ էք ըմպել զբաժակն. այլ ո՛չ թէ միայն նոցա *ետ* և յայլ առաքելոցն արգել: - 600. ...*տայ* խրատ և զգուշացուցանէ ի մեղացն որ այլ չգործէ...: - 602. Եւ դարձեալ *տամ* զքեզ ի խորհուրդ սուրբ եկեղեցոյ. զոր ինչ գործեցես, եղիցի քեզ ի բարեգործութիւն և ի փառս հանդերձեալ կենացն ամէն: - 602. Վերջին օծումն է խորհուրդ եկեղեցւոյ. որ *տուեալ* լինի հիւանդաց ի հոգէվարի օրն. յաչքն, յականջն, ի բերանն, ի ձեռքն, ի կուշտն, յոտից ներբանքն: - 604. ...և *տայ* զշնորհս սրբութեան առ որ մերձենայ: - 605. Կարգն է կարողութիւն զոր *ետ* եպիսկոպոսն այնմ զոր ի կարգն ընկալաւ և ի սպասաւորութիւն խորհրդոյ եկեղեցւոյ: - 606. Սա՛ առնու զխաղաղութեան ողջոյնն և *տայ* ժողովրդեանն: - 606. Զի եպիսկոպոսունք *տան* հոգի քահանայից և զկապելոյ և զարձակելոյ իշխանութիւն: - 607. Եւ յառաջին արտորէիցն պտղոց *տալով* նոցա ուտել զոր քահանայքն ուտէին՝ արար զնոսա Քահանայս: - 607. Եւ ուր չիցէ եպիսկոպոս՝ եկեղեցի օրհնեն և խաչի կնիք *տան:* - 608. Եւ ապա ցեղին դնեայ՝ գաքսոնի և կահաթու և մերարեայ զա՛յլ աստիճանքն *ետ:* - 609. Եւ այս լինի ի ձեռն պսակին որ *տուեալ* լինի ի ձեռն խորհրդոյ: - 609. Եւ որպէս հրեշտակապետն գաբրիէլ, նախ *ետ* զաւետիս սրբոյ կուսին, և նա՛ խորհէր ի միտս...: - 610. Նա՛խ՝ զի մին կին *ետ* աստուած մին մարդոյն ադամայ՝ ի յօգնութիւն. նոյնպէս և ամենեցուն օրինադրեաց: - 612. Եւ այս է պատճառն, զի աստուած *ետ* մեզ միտք և բան և ձայնի գործիք և մարմնոյ մասունք և ինչք. վասն որոյ յամենայնէ՛ նուիրելի՛ է աստուծոյ: - 619. ...և միւսն երախայ և ո՛չ ունի լեզու, միայն լայ. և մայրն գթայ ի յարտասուքն և *տայ* կերակուր: - 620. ...միայն արտասուօք խնդրեմք յաստուծոյ զողորմութիւն. ի հարկէ գթայ և *տայ:* - 620. Զի՞նչ է յորժամ երկուքն սաղմոսե՛ն, և զօրհնութիւնն այլո՛ց *տան:* - 624. Նոյնպէս և մեք զնծայս սաղմոսից և զայլ երգոց *տամք* ի քահանայս...: - 624. Նոյնպէս և մեք զբանեղէն պատարագս մեր *տամք* ի քահանայս ընծայել աստուծոյ...: - 624. Եւ այսպէս վերընծայեն աստուծոյ զօրհնաբանութիւնսն. վերջինքն *տալով* ի միջինսն. և միջինքն յառաջինսն. և յառաջինքն մատուցանեն աստուծոյ: - 624. Արդ սաղմոս երգօղքն *տան* ի սարկաւագն. և սարկաւագն ի քահանայն. և նա՛ մատուցանէ աստուծոյ զօրհնութիւնն. որպէս առաջին դասք քերօբէիցն: - 624. Նմանապէս և յեկեղեցի՝ ոմանք սաղմոսե՛ն. և սարկաւագն ի տիպ հրեշտակին *տայ* զօրհնեայն ի քահանայն որ է՛ տիպ քրիստոսի. - 625. Զի՞նչ է որ քահանայն աղօթէ՛ և եպիսկոպոս զխաղաղութիւնն *տայ:* - 625. Վասն որոյ քահանայն աղերսէ՛ զեպիսկոպոսն, և նա՛ *տայ* զխաղաղութիւնն: - 625. ...որպէս ընծայէ՛ զաղօթս մեր աստուծոյ, նոյնպէս և ի նմանէ առնու և *տայ* մեզ զշնորհս և զպարգևս հաշտութեան: - 625. Եօթներորդ, զի զաստուած կրկին ևս պարտական առնէ ի *տալ:* - 626. Ապա՛ զկնի երից մանկանցն աղօթից որով քաւիմք ի մեղաց. ի փառս *տալն* ի բարձունս՝ անուշահոտ բուրմամբ նուիրեմք: - 628. Թէպէտ կամաւ տկարացար և *ետուր* զքեզ ի ձեռս խաչողացն՝ հզօ՛ր ես յամենայնի: - 632. Եւ ա՛յս է խորհուրդն, զի որ վաստակի յերգս՝ նա՛ *տացէ* զփառս արժանապէս: - 636. Եւ որ սաղմոսն **ը** տուն է՝ կամ ա՛յլ նուազ, զփառքն և զայժմն վերջին տան շարականին *տամք:* - 636. Զայս ամենայն ոմանք անանիայի *տան*. և ոմանք խորենացւոյն: - 637. ...և մեզ աւետիս *տայ* խոնարհիմամբ գլխոյն: - 644. Այն է որ *տուաւ* նոցա արկանելիս սպիտակս. - 648. ...և **լ** դրամ տուգանս *տացեն* յեկեղեցին: - 652. ...**ծ** դրամ յեկեղեցին *տացէ*. և **լ** դրամ յաղքատս. և ապա՛ հաղորդեսցի: - 652. Նա՛խ՝ որպէս աղուհացքն զշաբաթ և զկիրակի պահել *ետ*...: - 654. Նա՛խ՝ զի կրկին պարգևս *ետ* մեզ. այսինքն հոգևոր և մարմնաւոր...: - 655. Չորրորդ՝ անմահ կերակուր *ետ* զմարմին իւր: - 657. Յաղագս որոյ Նախ օրհնեալ աղ *տամք* կենդանւոյն: - 657. Իսկ զկամքն *տալ* աստուծոյ հաճո՛յ է քան զպատարագ՝ վասն չորից: - 658. Ի **բ** ամի թագաւորութեանն, առաքեաց սուրբն իսահակ և *ետ* բերել զսերմնօրհնէքն զկալոյ և զհնձանին...: - 658. Եւ եփրեմի ներբողեա՛նն այլ՝ ցոյց զա՛յս *տայ*. թէ դահիճն ետես ի բանտին որ այսպէս աղօթէր: - 659. Առաջին՝ Վասն է՞ր աստուած նախ զայս կեանքս, և ապա զհանդերձեալն *տայ:* - 660. Վասն է՞ր է զի աստուած նախ զայս՝ և ապա զայն կեանքն *տայ* մարդոյս: - 662. Արդ՝ նա՛խ մարմնոյս *ետ* զերկիր, և ապա հոգւոյն *տայ* զերկին: - 662. Արդ՝ եթէ նախ զայն էր *տուեալ*, այսպիսի իմն հանդիպէր. կամ մնալով անփոփոխ՝ զրկէր զերկիր: - 662. Մետասաներորդ, նախ *ետ* զայս կեանքս որ է՛ ցաւալից և բազմաչարչար...: - 663. Այլ ես ասեմ, ատելութեան և անարգանա՛ց էր ցոյցք, եթէ զպատուականն էր *տուեալ* նախ՝ անտի փոխեալ: - 663. Վասն որոյ յայսցանէ *տան* զտարացոյցս ամենայն ուրէք: - 664. Եւ *տայ* աստուած զմեծութիւն վասն **դ**

պատճառի: - 664. Նախ՝ զի թէ բարի է մարդն, ընտրէ՛ աստուած և *տայ* զմեծութիւնն որ կարօտելոց ի գո՛րծ ածէ...: - 664. Երկրորդ, թէ չար մարդ լինի, *տայ* աստուած զմեծութիւնն...: - 664. ...որ ի դատաստանին պատասխանի չունենայ թէ ինձ զի՞նչ *տուեր* որ զքեզ սիրէի: - 664. Երրորդ, և վա՛տ մարդոյ *տայ* մեծութիւն...: - 664. ...և ասէ ի միտս իւր՝ թէ ես անարժա՛ն եմ և զայս *ետ* ինձ աստուած...: - 664. ...թէ զպատուիրանս նորա պահեմ, և զայն կեանքն *տայ:* - 664. Չորրորդ, *տայ* մեծութիւն և նոցա. որք բազում չարիս՝ և մի մասն բարեաց ունին. - 664. Չորրորդ, որոց աստուած *տայ:* - 664. Երկրորդ, *տայ* զաղքատութիւնն և փորձէ զմարդն...: - 664. ...*տայ* նորա աստուած աղքատութիւն որ այնու չարչարի...: - 664. Երկրորդ, որ անզեղջ են ի մեղս՝ *տայ* աստուած զհիւանդութիւն ի խրատ ուղղութեան: - 665. Եւ թէպէտ մարդ ո՛չ գիտէ զօր մահուն իւրոյ, այլ երիս իրս *տուեալ* է աստուած ի զգուշութիւն մեզ և կարապետ մահուն: - 665. ...և հոգին երթայ առ աստուած որ *ետ* զնա ասէ սողոմոն: - 667. ...որպէս ասեն ոմանք. վասն սոցա երեք հանգստեան *տամբ* և աւետարան ընթեռնումք: - 675. Ութերորդ, **գ** պսակ *տայ* աստուած արդարոցն. մին զկուսութեան. և մի զողջախոհութեան. և միւս զապաշխարութեան...: - 675. ...պատժեաց զմարդն և *ետ* զնա ի կերակուր օձին...: - 678. Այլ և գանձարա՛ն է մարմնոյն. զի պահէ՛, և դարձեալ ի տէրն *տայ:* - 678-679. Դարձեալ՝ որպէս բժիշկք դեղ *տան* հիւանդաց՝ և ի միւս օրն դարձեալ հարցանեն...: - 680. ...և աւետիս յարութեան *տամբ* նոցա. և տեսեալ հոգով ուրախանամք: - 681. Քսանևմի, և յառակս տնտեսին զոր կացոյց տէր ի վերայ ծառայիցն *տալ* կերակուր...: - 693. Նոյնպէս և յառակս որ զքանքարն *ետ* և զմնասն. յետոյ եկն և արար խնդիր: - 693. Այս է ի միւսանգամ գալուստն. որք զարծաթ բանին շահեցան, *տալ* զփառս և զմուտն ուրախութեան. և որք ո՛չ՝ նոյնպէս զտանջանս: - 693. Իսկ զբնակութիւն փառացն այլ ուր պատրաստ ասէ և ոչ *տուեալ:* - 695. Նաև մշակ ասելն, զի հոգին առանց մարմնոյն ո՛չ ինչ է աշխատեալ. վասն որոյ և զվարձն հոգւոյն և մարմնոյն *տայ:* - 696. Նաև զվարձն համանգամայն *ետ* մշակացն: - 696. ...զոր վասն յոյժ ժտելոյն՝ յարուցեալ միտքն *տացէ* զխոստովանութիւն հաւատոյ սուրբ Երրորդութեանն. զոր յերիս նկանակս յառակեաց: - 697. Երրորդ, զահ դատաստանին որ ամենեցուն երկնչիլ *տայ* ի մեղաց...: - 698. Ահա՛ ժամանակ ընդունելի. ահա՛ օր փրկութեան. մի և մի իւիք *տայցէք* պատճառս. զի մի՛ արատեսցի պաշտօնն: - 698. Երկրորդ, ասեն խնդրէ արդարութիւնն աստուծոյ՝ զի վասն մեղաց պատիժ *տացի*. որպէս յօրէնս մարդկային պատժին յանցաւորք...: - 701. ...և ապա *տացի* սրբոցն վերին տաճարին բնակութիւնն: - 703. Եւ թէ՝ դատաստանն աստուծոյ է՛ միաձև բազմաձև և ամենաձև. և այլ սոյնպիսիք եթէ բերեն վկայութիւն. և թէ մտացածին բանիւ հաւանութիւն *տան:* - 705. Եւ մեզ *ետ* իշխանութիւն կոխել զօձս և զկարիճս որ տկարացեալ էր և կապեալ: - 706. Երկրորդ, կապելովն *ետ* նմա զառհաւատչեայն տանջանաց...: - 706. Մերն ներսէս անուն *տայ*՝ հռասիմ: - 706. Եւ *տացէ* երկիր պագանել պատկերի իւրոյն: - 707. Եւ զայս ի ճակատն և յաջոյ ձեռինն *տայ* դրոշմել: - 707. ...մինչ խօսիլ *տայ* բազնեաց, և լերանց գնալ, և ծառոց ծաղկիլ և չորանալ. և մեռելոց յառնել. և հրոյ իջանել յերկնից. և չար հոգւովն խօսիլ *տայ* այլ և այլ լեզուս: - 708. ...քանզի մեծամեծ և խստագոյն չարչարանս *տացէ* պաշտօնէիցն աստուծոյ: - 708. Եւ **բ** աշտանակք որ *տան* լոյս ամենեցուն: - 709. Եւ յետ այնորիկ ոչ առ ժամայն գայցէ տէր ի դատաստան. այլ *տացի* խաղաղութիւն աւուրս **խե**. առ ի հանգիստ սրբոցն և ի յապաշխարութիւն թիւրելոցն: - 709. ...և *տան* ի բաց զոր ունին յաւանդի: - 714. Ասեմք առ այս, եթէ մարմին մարդոյ բաժանեալ ի հոգւոյ, և հոգին գնացեալ ի կայանս հոգւոց առ աստուած որ *ետ* զնա՛. և մարմինն ի հող լուծեալ կամ յայլ տարերս...: - 718. Զպայծառութիւնն՝ ի թաբօր լեառն. և Զանչարչարութիւնն ի յօրհնելն զմարմինն իւր և *տալ* աշակերտացն ի վերնատունն՝ անչարչարելի էր մարմինն քրիստոսի ներգործութեամբ և ո՛չ զօրութեամբ: - 723. Նշան բազում *ետ* քրիստոս իւրոյ գալստեանն: - 730. Դարձեալ յուշ առնէ մարդոյ զչարչարանքն քրիստոսի. և խնդրեսցի ի նոցանէ մահն քրիստոսի իբր զգին որ *տուեալ* է նոցա, և նոքա յափշտակեցին զինքեանս ի նմանէ: - 732. Եւ այս ո՛չ թէ լոյս միայն է. զի զլոյսն ո՛չ *ետ* մեզ նշան. այլ զխաչն փայտեղէն յորոյ վերայ զձեռն իւր տարածեաց միածին բանն: - 734. Վասն է՞ր հայր ո՛չ դատէ, այլ զամենայն դատաստան *ետ* որդւոյ ասէ: - 735. ...և դանիէլ զհին աւուրցն ետես, և զի որդւոյ *տուաւ* իշխանութիւն դատաստան առնել: - 735. Իններորդ, փա՛ռք է զդատաստանն առնել. զի նմա *տւաւ* իշխանութիւն ասէ դանիէլ. և հայր ո՛չ զոք դատէ. այլ զամենայն ետ որդւոյ որպէս ցուցաւ: - 737. Իններորդ, փա՛ռք է զդատաստանն առնել. զի նմա տըւաւ իշխանութիւն ասէ դանիէլ. և հայր ո՛չ զոք դատէ. այլ զամենայն *ետ* որդւոյ որպէս ցուցաւ: - 737. Այլ և որք ի մի խնամս վայելեցին յաստուծոյ. յարև և յանձրև. և ի մի տեղիք բնակեցան և մի

պիտոյիւք շատացան. և նոքա *զտուօղն* ո՛չ ճանաչեցին: - 738. Մանաւանդ թէ՝ հոգին սուրբ գրօղ դպիր. և ուղղութիւնն գրիչ գործիք. և որք զմելանն առատ *տամբ* և զմագաղաթն, զսուրբ գործս անկեղծաւոր և զբանս աղօթից օրինաւոր, ա՛յնքան առաւել գրիմք ի գիրն կենաց: - 741. Իններորդ, զի բնական օրինացն զ են վկայք. բանն և գիրն և աւետարանն. որ *տուաւ* նախապետացն և մարգարէիցն և առաքելոցն: - 742-743. Չորրորդ, կշիռն նշանակէ՛ զգործս մարդկան. ըստ կշռոյ օրինացն հաւասարել և հատուցանել. եթէ ըստ բնականին կամ ըստ գրոյն և աւետարանին. որում շատ *տուաւ* առաւել պահանջել: - 747. Եթէ ումեք *տւեալ* իցէ շնորհ հասարակ կամ յատուկ, որպէս մկրտութիւնն և հաւատքն. քանքար և տաղանդ. իշխան և առաջնորդ. մեծութիւն և ինչք. կեանք լոյս ամանակ և այլն ամենայն. այսու եղանակաւ կշռոյ հատուցի: - 747. Իններորդ՝ կոչի հնձան և խաչն փրկական. յորում ողկոյզն անապական ճմլեցաւ և *ետ* մեզ ուրախարար գինի զանապական արիւնն իւր...: - 749. Այլ և այրի և ո՛չ *տայ* լոյս: - 752. Այսպէս և քրիստոս քան զամենայն սուրբս զպարզև ունի առատագոյնս. որում հոգին ո՛չ *տուաւ* չափով: - 755. Եւ զի զպտուղ իւր *տացէ* ի ժամանակի իւրում: - 755. Զոր ընկալեալ զսերմն հրամանաց աստուծոյ, և բուսուցեալ ի մեզ՝ *տամբ* պտուղ լ, կ, և ճ: - 757. Եւ որք ի ծերութեանն գան յուղղութիւն, որպէս զսէզ դալարին, և *տան* պտուղ զերեսնաւորն: - 757-758. Իններորդ, և որք նախ քան զօրէնս՝ զերեսնաւորն. և որք ընդ օրինօքն՝ զկաւորն. և որք ընդ շնորհօքս, զհարիւրաւորն *տացեն* պտուղ: - 758. Այլ թէ ի սոցանէ մի մի ուրուք *տուեալ* լինէր, փոխանակ թագաւորութեան համարէր. իսկ թէ սոքօք ամենեքումբք վայելեսցէ, գերագոյն բոլոր աշխարհի լինէր: - 761. *Տալով* մեզ զանմահական պտուղն կենաց զտէր մեր յիսուս քրիստոս: - 768. Դարձեալ, ծառ կենաց է աւետարանն սուրբ տնկեալ ի մէջ եկեղեցւոյ դրախտին. բերելով պտուղ կենաց զիմաստութիւնն երկնաւոր. որ կեանս *տայ* ճաշակողացն զնա. և միշտ շնորհս բժշկութեան և թողութեան մեղաց: - 768. ...որպէս ծաղկեալ գաւազանն ահարօնի նշանակէր զխրատ իմաստութեանն. որով զարդարեալ *տայ* զպտուղ լուսաւոր նիւթոյ կերակուր ոգւոյ: - 768. Տէրն զգանձն մատանեաւ դրոշմեալ *տայ* ի ծառայս. և մատանին ի ձեռին է. երբ խնդրէ՝ թերին յանդիմանի: - 769. Մեր գործքն և յաստուծոյ *տուեալ* բարին հաւատով կնքի. և պակասն յանդիմանի այժմ ի խղճէ մտաց որպէս ի գրոյ. և անդ ի դատաւորէն, որ չար ծառայ կոչէ: - 769. Այլ ի պատճառս *տալ* իմաստից. որով ո՛չ յագեսցի ակն ի տեսոյ. ի գլուխ գոլոյ իմաստնոյ. մանաւանդ և ի շահ օգտի բանաստր մտաց միեղէն եղբարց: - 773. Ասեմք նա՛խ՝ եթէ ամենայն շնորհ զինչ և իցէ *տուեալ* բնութեան, ո՛չ քակտի ի նմանէ. թէպէտ ծածկի երբեմն վասն մեղաց: - 782. Զի որպէս բառնի վասն մեղաց, նոյնպէս *տացի* վասն զղջմանն: - 783. Եւ է՛ շնորհ յատուկ ընրութեամբն աստուծոյ, որ պատճառ է՛ զփառս զանազան ներգործութեամբ. և է՛ սա՛ ան'ի բաց դնելի անզեղջ խոստմամբ ի կողմանէ *տուողին*. որպէս է՛ առ մեզ շնորհք աւազանին: - 783. Շնորհքն որ *տւաւ* ադամայ, փոփոխական էր ըստ նմա: - 783. Իսկ շնորհք նորոյս ի ձեռն քրիստոսի *տուեալ*՝ ո՛չ է փոփոխական. զի վերստին նորոգման է շնորհք և անապականութեան: - 783. Բարւոք ասացաւ յարարչէն. զի թէ և բնութիւն թարց երևակայութեան, և արհեստ հանդերձ երևակայութեամբ, սակայն կամք արարչական *ետ* նոցա բնական և բանական կարողութիւն...: - 786

**ՏԱՅԳԵՐԵՑԻ** - Եւ այս են **իբ** լեզուքն: ...*Տայգերեցիք:* - 298

**ՏԱՆԻՄ +** ...մի՛ կրիցեմք զկիրս զանկելոյ արուսեկին. որ ո՛չ կարացեալ *տանիլ* մեծութեան փառացն՝ զրկեցաւ և ի չափաւորէն: - 24. Եւ թէ հայր մեծ է քան զորդի, զիա՞րդ *տանի* փոքրն զմեծն: - 39. Եւ զի ո՛չ է հնար որպէս ասացի, ապա ուրեմն ո՛չ է մեծ հայր քան զորդի. զի ի միմեանց *տանին*, և ի միմեանց լնուն: - 39. Մետասաներորդ՝ ասէ ի յոհաննէս, «ե՛ս եմ ճանապարհ և ճշմարտութիւն». այսինքն՝ որ *տանիմ* առ հայր և ճշմարտութեամբ ցուցանեմ ձեզ: - 97. Արդ՝ եթէ ինքն ճշմարտութեամբ ո՛չ գիտէ, մեզ որպէս ցուցանէ. և թէ ինքն մոլորեալ է՝ զմեզ ո՞րպէս *տանի* առ հայր: - 97. Երկայնութիւն է համբերութիւնն. որով *տանի* զչարսն. և վասն ապաշխարութեան անտես առնէ զմեղս: - 129. Երկրորդ՝ բռնութեամբ զհոգիս ի տանջանս *տանելոյ* մինչ ի քրիստոս: - 153. Զի յետ քրիստոսի դադարեաց սատանայ զհոգիսն ի դժոխս *տանելոյ* որպէս ասէ սուրբն եպիփան: - 153. Տասներորդ՝ ըստ չափու և կարողութեան բաշխէ. որպէս ի կեանս յայսմիկ, և ի հանդերձեալն առաւել զի կարիցեմք *տանել:* - 185. Նա՛խ՝ զի *տանի* զերկոտասան կենդանակերպսն և վճարէ: - 190. Դարձեալ *տանի* զեղանակս. և զամիսս. զշաբաթս. և զաւուրս. զժամս. և զժամանակս: - 190. Դարձեալ *տանի* զժամանակեայ կեանս մեր. վասն որոյ կոչի տարի: - 190. Քսաննդ՝ զնաւս *տանի:* - 207. ...տեսութիւն մտացն զհոգին ընդ ինքեան ի վեր *տանի*...: - 233. Այլ զայն ինչ հարցումն որ զմարդն ի հերձւածոյ ի զատ *տանի*՝ պա՛րտ է

հարցանել. որպէս յառաջիկայդ հարցումն է սակաւ մի: - 251. Ասեմք առ այս թէ, օն ի բա՛ց *տար* ի մտաց քոց զիեթանոսական կարծիս. զի ո՛չ է հոգի յառաջ քան զմարմին. և ո՛չ մարմին նախ քան զհոգի որպէս ի սկիզբն ասացաք: - 260. Եւ մի՛ աստ ընդ դէմ բերցի բանիս թէ՝ ամենայն մեծամեծք գութ ունին փոքունց. զի և այս նախախնամութեանն է. որ եդ ի բնութեանս խնամ *տանիլ* նոցա, մինչ ինքեանք ևս ի չափ հասակի եկեսցեն և զերծանիցեն ի վնասուց: - 267. Այլք զդողդոճալն ասեն. որ և հաց և ջուր չկարէր ի բերանն *տանել:* - 287. Եւ **բ** գետն ի բանն և ի հոգին սուրբ որ բղխեն ի հօրէ. զի հրաւիրակք են մեզ՝ յակն *տանելով* ուստի բղխեն սոքա: - 295. Իսկ զի հրամայէ՛ երից աւուրց ճանապարհի *տանել*, զի մի՛ ապշեալ ինչ կարծեսցի: - 304. **Երեմիա և աշակերտն՝ *տարան* ի գիշերի զտապանակն և որ առ նմայն էին՝ ի լեառն սինա. և անդ կնքեցին ի վիմին անուամբն աստուծոյ ասելով, ո՛չ ոք բացցէ զսա՞ թէ ոչ մովսէս որ եբերն. և ո՛չ ոք բացցէ՝ թէ ոչ ահարոն**: - 345. Երկրորդ՝ զի աղ ո՛չ *տանի:* - 356. Եւ արիւնն, զմեղս մեր բարձեալ յինքեան և *տարեալ* ի դաշտն առ հայր յերկինս...: - 369. Եւ յայտնի նշան մոլորութեան նոցա ա՛յս է, զի այնպիսեացն կատարօղք վատթարք են գործովք և մոլի. և առ դևս *տանին* զմարդիկք բռնութեամբ...: - 389. Հինգերորդ՝ զի նոքա խնդրէին երևիլ մարմնով. զի ո՛չ կարէին *տանել* աստուածային հրոյն ի լերինն: - 399. Զայս նշանակէ թէ՝ յետ ելանելոյ հոգւոյ ի մարմնոյ և գնալոյ ի վերին շաւիղն, հակառակ կայ սատանայ և չար զօրութիւնքն ընդ նմա, *տանիլ* զհետ իւրեանց որ զչա՛րսն են գործեալ...: - 410. ...և փակէի արքայի որդւոյ ռոմելայ. և գերեաց զնեփթաղիմ և զգալիլեա. և Զգաղայաթ **զ** ցեղիւքն իսրայէլի. և *տարաւ* յերկիրն ասորեստանեայց: - 447. ...և երեք ամ պաշարեալ էառ զնա. և գերի վարեաց զթագաւորն ովսէէ որդի ելայ. և զ**ժ** ցեղն բովանդակ *տարաւ* յասորեստան: - 447. Եւ ըմբռնեաց զսեդեկիա արքա յուդայ, և փորեալ զաչսն *տարաւ* ի բաբիլօն: - 447. Եւ յետ **ե** ամսոյ՝ նաբուզարդան դահճապետն հրձիգ արար զերուսաղէմ և զտաճարն և զտուն թագաւորացն. և զպարիսպն կործանեաց. և զսիւնսն պղնձի և զաւազանն և զամենայն կահ պղնձի և արծաթի *տարաւ* ի բաբիլօն: - 447. ...իսկ Աննա ամուսնացաւ ի գալիլեայ ընդ յովակիմայ. և ծնաւ զաստուածածինն մարիամ ի պրոպատիկէ ի տունն յովակիմայ. և անտի *տարեալ* եղև ի տաճարն տեառն: - 460. Եւ յինն ամիս ի տաղաւար արգանդի *տարեալ* զաստուած բանն: - 463. Քանզի անդ *տարաւ* յինքեան աստղն զարեգակն: - 469. Այլ և ցուպն հովուական դաւթի. զոր *տարաւ* ընդ դէմ գողիաթու: - 494. Զի ապականութիւնն *տանի* յոչգոյութիւն. իսկ մահն առաջնորդէ՛ ի կեանս: - 497. Երկրորդ զօրացուցանէ. որպէս յա՛յտ է ի մակաբայեցւոցն զկնոջէն որ ունէր է որդիս՝ ածեալ ի սպանումն ի միումն աւուր տեսեալ. և *տանէր* այնմ՝ յուսովն որ առ աստուած. նոյնպէս և ամենայն դասք մարտիրոսացն յուսով զօրացան: - 574. Արիութիւն է զօրութիւն իմն որով հեշտութեամբ *տանի* ամենայնի վասն սիրելի իրաց: - 580. Զօրութիւն է ունել ինչ որով *տանի* չարչարանացն: - 582. Զի *տանելն* մահու վասն քրիստոսի՝ է՛ նոյն աստիճան ըստ խաղաղութեանն: - 586. Այլ թացեալ պատառն այսպէս էր. զի ի սկաւառակն ընդ վարդապետին փութացաւ մատնիչն *տանիլ* զձեռն լիրբ դիմօք և արհամարհեալ մտօք: - 599. Հինգերորդ՝ Կիսասարկաւագն. որոյ գործն է զսկիհն և զմաղզմայն առ սեղանն *տանիլ*...: - 606. ...և զաման գինւոյն և զնշխարն *տանիլ* առ աւագ սարկաւագն. և զհանդերձ սեղանոյն լուանալ: - 606. Իսկ ի նորս առ մեզ, Սակաւ ինչ հոգացեալ զեօթնիցս, այլ ութերորդին փոյթ *տարեալ* դարուց աւանդապահք եկեղեցոյ, կարգեցին ութն կանոնս **ըը** գուբղայիւ: - 627. Եւ *տանիլ* ի հանգիստ: - 660. ...և առեալ *տանի* ի կայանս հոգւոց...: - 669. Եւ *տանին* առ աւագ երէցն զոր քահանայապետ կոչէ սուրբն դիոնէսիոս...: - 671. Օծցեն սուրբ իւղովն և ողջունեն և *տանին* ի հանգիստն: - 671. Իսկ զի չորիցն բարձեալ *տանին*, նշանակէ որ **բ** հրեշտակք պահապանք ամբառնան զհոգին...: - 671. Եւ որպէս հրեշտակքն զհոգին ածեն առ աստուած, նոյնպէս և զմարմինն *տանին* առ քահանայապետն...: - 672. ...միշտ ի մտի ունելով. և պատրաստ *տանելով* սահմանեալ ժամանակին: - 673. Իսկ *տանիլն* ի **դ** անկիւնս եկեղեցւոյն, վկայե՛ն նմա թէ՝ չորեքին աւետարանչացն խրատու շուրջ եկն զեկեղեցեաւն...: - 673. Վասն է՞ր զոտքն յառաջ *տանիմք* մեռելոյն: - 676. Նոյնպէս ի գերեզմանն ուղղակի *տանիմք:* - 676. ...վասն որոյ զնոյն խաչն և զաւետարանն *տարեալ* ի տուն՝ օրհնեմք զբնակութիւնս մեր: - 684. ...այսինքն զի վերստին գալն քրիստոսի լինի, և ապա սրբոցն *տանիլ* առ ինքն: - 692. Եւ գերեզմանց գործ ցանկութեանն է *տանել* ողջախոհ կուսութեան. և զայս ունին կուսանքն: - 712. Եւ այսպէս հսկել և պահել զտունս մեր, զի մի՛ գող մահուն և կատարածի՝ գտեալ զմեզ անպատրաստ ի մեղս՝ *տանիցի* զհոգիս մեր ի տանջանս յաւիտենից: - 730. Որպէս յորժամ կայսր մտեալ ի քաղաք՝ թագ և այլ նշանք առաջի *տարցին*, որով գալուստ նորա ցուցանիցի: - 734. ...ապա

պա՛րտ է ի նա՛ ընկենուլ զդատաստան չարչարողացն մերոց և հալածողաց. և ուրախութեամբ *տանիլ* զըլկանս. և մի՛ մեզէն վրէժխնդիր լինիլ մեզ...: - 735. Սա՛ է մայր մեր եկեղեցի որ հոգևոր որդիս աստուծոյ օրըստօրէ ծնանի. որ հասեալ ժառանգութեանն. ի բաց *տանելով* զաղախինն և զորդի նորա: - 756. Իսկ Չորրորդն արքայութիւն` է՛ յաւիտենականն գաւառ. յորմէ ի ձեռն մեղաց առաջնոյ մարդոյն` *տարեալք* պանդխտիմք յայսմ տառապանաց գբի և ի տիղմ կաւոյ. անարգաբար դեգերեալք ի հովիտս արտասուաց. յանապատի կալով և ո՛չ ի ճանապարհի...: - 756. Եւ այս ո՛չ միայն փութանցիկ գոլոյ վասն, կամ ներհակաբար հատուցման որպէս սովորութիւն է. այլ զի ո՛չ ինչ կարեն *տանիլ* ընդ ինքեանս. բայց միայն նշխարիս ինչ յիշատակութեան ուրուական տեսլեան: - 775

**ՏԱՆՈՒՏԷՐ +** Ուսաք յիմաստնոց թէ` ի բաժանիլ լեզուաց **իբ** *տանուտերանց*, և ի գնալն յիւրաքանչիւր տեղիս ի հեռու կամ ի մօտաւոր աշխարհս. զօրն զայն տարեմուտս կարգեցին. և ուսուցին որդւոց իւրեանց պատուեալ զօրն զայն տրօք ընչից: - 200. Առաջինն սիրտն է՛ թագաւոր անձինն. տա՛ք է և չոր. և իւր *տանուտէր* արեգակն է: - 241. Երկրորդն ուղեղ գլխոյն է. հով է և գէճ ընդ դէմ սրտին ջերմութեանն և չորութեանն. զի բարեխառնեսցէ՛ զնոսա. և իւր *տանուտէր* լուսինն է: - 241. Երրորդն լեա՛րդն է, աղբիւր արեանն. տա՛ք է և գէճ` ունելով զբնութիւն մուշթարոյն, որ *տանուտէր* է նմա: - 241. Չորրորդն թո՛քն է. հո՛վ և գէճ. և է՛ տուն պլղամի. և ունի *տանուտէր* զլուսինն: - 241. Յինգերորդն փայծեղն է. որ է՛ ախոռ այրեցած արեանն. ցո՛ւրտ է և չոր. և ունի *տանուտէր* զզոհալն որ է երևակն ցուրտ և չոր գոլով: - 241. Վեցերորդն երիկամունքն որ է տուն սերման. ջերմ և գէջ. և *տանուտէր* ունի զզօհրայն. որ է լուսաբերն: - 241. Եօթներորդն է՛ լեղին. որ է խարտեաշ մաղձն. տա՛ք է և չոր. և *տանուտէր* ունի զմառեխն որ է հրատն: - 241. Նոյնպէս և **ի** *տանուտեարքն* միաբանեցան ի չարն: - 296. Արդ *տանուտէր* աստ կոչէ զաստուած, և այգի է եկեղեցի. և գաւառապետ կոչէ զքրիստոս. և առաւօտ յաբելէ առաջին արդարոյն. և երեկոյ օր դատաստանին յորժամ ընտրեալքն ամենայն ժողովին: - 692. Որոմն ընդ ցորենոյ ի *տանուտեառն* ագարակին: - 756

**ՏԱՆՋԱՆԱՐԱՆ +** Արդ հայրն աբրահամ նշանակէ՛ զհայր աստուած. և հուր և սուր` *տանջանարանք* որ հանդիպին ի ճանապարհ օդոյդ: - 681-682. Զի *տանջանարանք* կազմեն, սառնամանիք ցուցանեն, հուր բորբոքեն: - 703. պակասին սոքա և ժողովին ի ներքոյ երկրի և լինին *տանջանարանք* մեղաւորաց որպէս ասէ սուրբն բասիլիոս: - 728. Նմանապէս իմացի և վասն մի դժոխոցն` գոլ զանազան տանջանք և *տանջանարանք:* - 760. Եւ այլք ի բազմազան *տանջանարանս* մաշեալք: - 788

**ՏԱՆՋԱՆՔ +** Իսկ զչար ո՛չ կամի. և ո՛չ բռնադատէ ի չարն. այլ *տանջանս* և պատիժս եդ գործողացն զչար. ապա ուրեմն չարն ո՛չ է յաստուծոյ. և ո՛չ կամի զչար ուրուք: - 17. Իսկ յորժամ դառնամք ի մեղաց` յորդորէ՛ զմեզ ի ծածուկ իմաստիւքն իւրովք, ժուժկալ լինել ի փորձութիւնս և համբերել *տանջանաց* որով ինքն զփորձ էառ: - 48. Չորրորդ` զի ընդ ինքեան ի *տանջանս* քարշեսցէ: - 146. Վասն որոյ ընդ նմա և իշխանք նորա անկան և ի *տանջանս* մատնեցան: - 149. Երրորդ` անկումն նոցա է՛ր ակնկալութիւն *տանջանացն*. և զայս մինչ ի քրիստոս ո՛չ գիտացին զպատրաստեալ *տանջանս* իւրեանց...: - 153. Երկրորդ` բռնութեամբ զհոգիս ի *տանջանս* տանելոյ մինչ ի քրիստոս: - 153. Իսկ երրորդ անկումն *տանջանաց* յաւիտենական հրոյն...: - 153. Եւ աստ ասէ իրինոս` զի թէ յաւիտենական է հուրն, զիա՞րդ վախճան ածեն *տանջանաց* յաւիտենից ունայնախոհքն...: - 153. Երկրորդ` զի արդարութեամբ տացէ զպսակն կամ *զտանջանսն*. թէ յաղթեն և թէ յաղթին: - 161. Իններորդն *տանջանաց:* - 195. Երկիր որով մարդ սատանայ եղանի, է՛ *տանջանք* դժոխոցն: - 210. Ութերորդ` թշնամիք եղեն կիրք պատժոցն. այսինքն մահ` ապականութիւն` *տանջանք*` հիւանդութիւնք` սով` և ծարաւ` և այլն ամենայն սոքա ի կրիցն են: - 277. Վեցերորդ` պատժեաց զսոդոմայեցիսն մարմնով, զի թեթևասցին *տանջանք* նոցա հոգւով: - 303. Եւ զայծիսն ի ձախն և ասէ` «երթա՛յք յինէն ա՛նիծեալք», և տայ նոցա *զտանջանս* յաւիտենից: - 317. Յորոց փրկեսցէ զմեզ և զամենայն հաւատացեալս անուան իւրոյ ի յաւիտենական և յանել *տանջանաց* հրոյն. և մասնաւոր աջակողմեան դասուն և ժառանգ արքայութեանն երկնից կացուսցէ յիսուս քրիստոս տէր մեր. որ է օրհնեալ յաւիտեանս Ամէն: - 317. Եւ փրկիչն միա՛յն էջ ի դժոխս, և ազատեաց զամենայն հոգիսն ի հրահալոց *տանջանացն* սատանայի: - 329. Երրորդ` զի չափով և թուով և կշռով տայ աստուած *զտանջանս* մեղաց. թէպէտ մեզ անգիտելի՛ է: - 333. Վասն զի **ե** *տանջանօք* չարչարեաց զիսրայէլ, կրկին ընկալաւ զհատուցումն: - 335. Եւ ա՛յս է հինգ *տանջանքն:* - 335. Այլք ասեն վասն դադանեանցն թէ` հոգիք նոցա մարմնով ի *տանջանս* կային...: - 382. Չորրորդ` չարութեամբ աստ մեղօք տանջեն. և յետ մահու առհաւատչեայ մասնաւոր. և ի

յարութեանն յաւիտենական *տանջանօր*: - 394. Նոյնպէս որ պատրաստեաց սիրելեաց զփառս, և *զտանջանս* չարեաց, անգիտելի՛ է այժմու կենացս: - 406. Երրորդ՝ վասն կատարածի և վերջին օրհնութեանն պատմէ. արդարոց զպատիւ, և մեղաւորաց *զտանջանս*: - 407. Մետասաներորդ, կարճեաց զիշխանութիւն նոցա. զի նոքա կարճեսցին ի չարեացն և թեթևասցին *տանջանքն*: - 417. Եւ զի հեղի ո՛չ խրատէր զնոսա սաստիւ և *տանջանօք*. վասն որոյ և ինքն պատժեցաւ և մեռաւ. և քահանայութիւնն յազգէ նորա փոխեցաւ յաւուրս սողոմոնի: - 425. ...իսկ յետ յարութեանն *տանջանք* անվճար և առանց հատուցման...: - 434. Երկրորդ՝ զի ողորմութիւն է բացարձակ և պարզապես բարի. իսկ արդարութիւնն է խառնել բարի. ըստ որում հատուցանէ բարեացն բարիս, և չարեացն *տանջանս*: - 458. Ութերորդ ի կատարածի. այն որ ո՛չ ի փրկութիւն, այլ ամենայն չարութեան ջնջումն առնելով *տանջանօք* որ է հուրն անշիջանելի: - 488. Նոյնպէս ի մի դժոխքն տեղիք բազումք են և *տանջանք*: - 505. Երկրորդ՝ վասն բազում մասանցն. որք կրեն *զտանջանս* մարմնոյ մասամբ և զգայութեամբ. և հոգւոյ զօրութեամբ և մտաց իմացմամբ: - 505. Երրորդ՝ մեղքն էր դժոխք և *տանջանք* մեղաւորաց. և քրիստոս եբարձ զմեղս. ապա աւերեա՛ց զդժոխս: - 506. Չորրորդ՝ անէծք առաջին մարդոյն՝ եղև *տանջանք* և դատապարտութիւն մարդոյն. և քրիստոս գնեաց զմեզ յանիծից օրինաց եղեալ վասն մեր անէծք. ապա ուրեմն քրիստոս աւերեաց զդժոխս: - 506. Եւ դարձեալ՝ դարձցին մեղաւորք անդրէն ի դժոխս թէ ի նոյն տեղի ըստ ոմանց, կամ յայլ տեղի *տանջանաց* ընդ գործոց հատուցման: - 508. Եւ զի խիստ էր հայհոյութիւնք նոցա, խստագոյնս քարկոծեցան *տանջանօքն* յաւիտենից: - 566. Ութերորդ, ո՛չ ասաց՝ թէ խնդրեսցէ ապաշխարութեամբ՝ արգելից զգուշ և զողորմութիւն. այլ թէ՝ «ո՛չ թողցի». որով յա՛յտ է թէ առանց զղջման և *տանջանաց* ո՛չ թողցի: - 566. Նա՛խ՝ զի ի հոգին է. **բ**՝ զի վասն հոգւոյն տրտմի և ցաւի. **գ**՝ արտաասուս հոսէ. **դ**՝ զմահ զդատաստան և *զտանջանս* ի միտ ածէ՛. - 584. Զի ջուր հակառակ է հրոյ. և զի՞նչ է մեղք, եթէ ոչ հուր. որպէս յոգւոջ բարկութիւն. և ի մարմնի ցանկութիւն. ուստի յայտ է զի հրով *տանջանաց* պատժի. և աստ զի հուրն շիջցի ի ջուր մկրտիմք: - 591. Զի *տանջանք* հրոյն ներգործական մեղա՛ցն է և ո՛չ սկզբնականին պատիժ: - 593. Երեսունն**ը**, Վասն հնձանաց. և դժոխոց. և ծխոյ. և անվախճան է հուրն. և անհանգիստ *տանջանքն*: - 661. Երեսուն**թ**, Քանի՞ են թիւք *տանջանաց* անդ: - 661. Իսկ չարաց՝ առ հաւատչեայ *տանջանացն*. և կամ թեթևութիւն: - 668. Եւ ապա՛ զանտի հատուցումն իւր և *զտանջանս* գեհենին: - 669. ...յորում կրեսցէ զվճիռս անվճար պատժոյն յաւիտենից *տանջանացն*: - 669. Զի ի չար կենաց ի չար *տանջանս* ընթանայ: - 669. ...նոյնպէս և մեղաւորք ո՛չ են առեալ զկատարեալ *տանջանս* իւրեանց: - 669-670. ...զի անցեալ է ժամանակն ողորմութեան, և դատաւորն առ դուրս հասեալ՝ դնել ի *տանջանս* դժոխոց. որպէս աստ զմարմինն ի գերեզմանի: - 671. Երկրորդ, զի թէ արժանաւոր է՝ յաւելցի պսակն. և թէ անարժան՝ թեթևասցին *տանջանքն*: - 674. Իսկ ներքին դժոխք *զտանջանաց* տեղիքն ասէ մարգարէն...: - 679. Երկրորդ, զի աստ մի միա՛յն *տանջանք*, և անդ բազում և ազգի ազգի: - 679. Եւ զերծեալ իսահակ և խոյն զենեալ. զի հոգին զերծանի ի *տանջանացն* և մարմինն մեռանի: - 682. Եւ ի հեռուստ տեսեալ զտեղին, զի յետ կատարածի մարմնով առնելո՛ց են իւրաքանչիւր ոք զփառս կամ *զտանջանս*: - 682. Եւ ի հեռուստ տեսեալ զտեղին, զի յետ կատարածի մարմնով առնելո՛ց են իւրաքանչիւր ոք զփառս կամ *զտանջանս*: - 682. ...այլ խաւար մեղացն արգելու զտեսութիւնն. և չա՛ր է կարծիք նոցա, և երկիւղ *տանջանաց*: - 685. Իսկ մեծատունն վասն եղբարցն աղօթէր, զի մի՛ *տանջանքն* իւր առաւելասցի վասն նոցա: - 685. ...որք ունին զհին օրէնս և ո՛չ զնորս. այլ ի ներքոյ մնացեալ սկզբնական մեղաց՝ նոքա ի *տանջանս* ընթանան: - 678. ...այլ սրտմտութեամբ *տանջանաց* արդէն իսկ դատապարտելոց ըստ աւետարանին ձայնի: - 688-689. Դարձեալ՝ մի ասի կայանք երկուցն վասն միոյ ակնկալութեան. զի արդարքն ակնունին պսակաց, և մեղաւորքն *տանջանաց*: - 689. Յոգիք արդարոց կամ մեղաւորաց ունի՞ն այժմ զփառս կամ *զտանջանս* թէ ոչ: - 689. Նոյնպէս կրկին է և *տանջանք* չարաց. այսինքն *տանջանք* գործոց ըստ ինքեան, և *տանջանք* հատուցման, զի *զտանջանք* գործոցն կրեն յետ մահու. և *զտանջանք* հատուցման ի յարութեանն հոգւով և մարմնով: - 690. Ոչ մկրտեալքն կամ չարքն ո՞չ ունին *տանջանս* վասն սկզբնական կամ ներգործական մեղաց: - 690. Որք ո՛չ թլփատեցան ի հինն և ոչ մկրտեցան ի նորս, կամ չարք ի մարդկանէ, ունին զդատապարտութիւնն զոր զրկելոց են ի դատաստանին զանազան *տանջանս* և ո՛չ այժմ: - 690. Որոյ պատճառ է, զի դատապարտութիւնն ադամայ բարձաւ քրիստոսիւ. և չարաց *տանջանքն* է՛ ի դատաստանին: - 690. Ապա ուրեմն երկոքինն ո՛չ կրեն այժմ *զտանջանս*, այլ ի հանդերձեալն: - 690. Դժոխքն նշանակէ զդժուարին և զնեղ տեղիս որ

է՛ խորանն ծախակողմեան. ուր մեղաւորքն կրկին ունին *զտանջանս:* - 690. Երկրորդ, յանկնկալութենէ հատուցմանն կրեն *զտանջանս*. որ լինելոց է ի կատարածի: - 690. Այլ սակայն զհատուցումն գործոց և *զտանջանս* յաւիտենական ո՛չ են առեալ այժմ...: - 691. Վասն այսորիկ արդար դատաւորն զհոգի և զմարմին ի միասին յարուցանէ և դատէ՛. եթէ վասն մեղաց ի *տանջանս* և եթէ վասն արդարութեան յարքայութիւնն երկնից: - 691. Ապա ուրեմն մինչ ի դատաստան ընտրեալքն ո՛չ ունին կեանս, և ո՛չ մեղաւորքն *տանջանս:* - 693. Այս է ի միւսանգամ գալուստն. որք զարծաթ բանին շահեցան, տալ զփառս և զմուտն ուրախութեան. և որք ո՛չ՝ նոյնպէս *զտանջանս:* - 693. Եւ մինչ այս ոչ կատարի, ո՛չ առնուն արդարք զփառս, և ո՛չ մեղաւորք *զտանջանս:* - 693. Ապա ուրեմն հոգին ո՛չ կարէ առնուլ զկատարեալ վարձս կամ *զտանջանս:* - 694. Այլ յորժամ հոգին միաւորեսցի ընդ մարմնի և յերկուցն լինիցի անձն, յայնժամ կարէ՛ ունել ներգործութեամբ զփառս կամ *զտանջանս:* - 694. Քսանեէ, զի թէ ամենայն ոք առնու այժմ զվարձս կամ *զտանջանս*, ապա ո՛չ գոյ յարութիւն...: - 694. Նմանապէս հետևի զի մարմինն ո՛չ կրեսցէ *տանջանս*. զի ո՛չ յառնէ ըստ նոցա կարծեացն: - 694. Քսանևը, *տանջանք* և փառք այնմ կենաց յա՛յտ է զի ո՛չ է ժամանակեայ, այլ յաւիտենական: - 694. Ա՛րդ՝ եթէ արդարք այժմ առնուն զփառս և ի դատաստանին դարձեալ փոխիցին յայնմանէ, ապա ուրեմն ամենայն ինչ այն կենացն անցաւոր է և փոփոխական. այսինքն փառքն և *տանջանքն:* - 694. Եւ հետևի հազարամեայ արքայութիւնն որոգինի. նաև փոխիլն ի *տանջանաց:* - 694. Նմանապէս և մեղաւորքն անդ ի յարութեանն ի մէջ չարեաց և *տանջանաց:* - 694. Նախ ընդ դէմ բերեն զբան մեծատանն և զղազարու. որ մինն ի գոգն աբրահամու և միւսն ի *տանջանքն* էջ: - 695. Զի թէպէտ անդ ո՛չ է փառք, այլ և ո՛չ *տանջանք* և չարչարանք գոյ. վասն այսորիկ առ աստուած ասէ որք են ի պահեստ հոգւոցն: - 695. Ասեմք ըստ նիւսացւոյն գրիգորի, թէ յոյս նոցա ո՛չ է *տանջանք*, այլ վայելչութիւն է նոցա. - 695. Զի յորժամ ոմանք քաւին և մտցեն յարքայութիւնն, և ոմանք ի *տանջանս* յաւիտենից, ա՛յս է հատուցումն: - 698. Ապա ուրեմն որք աստ խոստովանութեամբ արձակին ի մեղաց, անդ ազատեալ են ի *տանջանաց:* - 699. Ութերորդ, ապաշխարութիւնն խնդրէ մարմնական *տանջանք* ի մարմնական գործիս: - 699. ...զի մինչև ցօրն ցայն ասեն զքաւարանն. այլ առ ժամայն ի փառս կամ ի *տանջանս:* - 700. Զի թէ յաւիտենից է, *տանջանք* է և ո՛չ քաւարան: - 700. Եւ զի ո՛չ գոյ ողորմութիւն անդ՝ յա՛յտ է ի յիմար կուսանացն. և ո՛չ զերծումն ի *տանջանաց*...: - 700. Իսկ թէ այժմ հոգւոյն եղեալ է դատաստան, և հատուցումն ըստ գործոց, և արդարոցն փառք և մեղաւորացն *տանջանք*. և յայնժամ մարմնոյն որպէս ասեն նոքա...: - 700. ...պատճառեն գործոց իւրեանց հնարս. իբր թէ ակամայ զերծանիցին ի *տանջանաց:* - 701. Նա՛խ՝ զի նոքա ժամանակեայ հուր ասեն և *տանջանք* հոգւոց. իսկ ոսկեբերանն մի հուր և *տանջանք* յաւիտենից: - 702. Զիա՞րդ վախճան ածեն *տանջանաց* ունայնախոհքն...: - 703. ...զի գիտասցուք թէ որպէս արդարոց փափկութիւնն է յաւիտենական, ա՛յսպէս և մեղուցելոց *տանջանքն:* - 703. Նա՛խ՝ զի արձակէ ի ժամանակեայ կապիցն և արկանէ ի յաւիտենից *տանջանս:* - 706. Երկրորդ, կապելովն ետ նմա զառհաւատչեայն *տանջանաց*...: - 706. ...և ելոյծ առաւելուլ չարեօք զի արդարապէս կրեսցէ զանվախճան *տանջանս:* - 706. Չորրորդ, արձակէ՛ զսատանայ, զի տեսցէ զիւր ժամանակ *տանջանացն* մերձեալ. և մոլի որպէս գազան մերձ ի սատակումն. և շուն կատաղեալ: - 706. Իսկ որք հաւանին նմա՝ կորնչին ի *տանջանսն* յաւիտենից: - 706. Ա՛րդ՝ քարշէ զչարսն տրօք. զբարիսն *տանջանօք*. զպարզամիտսն քարոզութեամբ և սքանչելեօք: - 708. Չորրորդ՝ զռամիկս և զմարմնասէրս ահիւ և *տանջանօք* պատրեսցէ. - 708. Չորրորդ, *տանջանքն* յաւիտենից մահ է մշտնջենաւոր. և սոքա կոչին երկրորդ մահ: - 710. Տասներորդ, գործք մարդոյ անցաւոր է որպէս ինքն. իսկ հատուցմունքն աստուծոյ մշտնջենաւոր որպէս նոյն ինքն. վասն որոյ յարուցանէ անմահ, զի հատուսցէ ոմանց զփառս և ոմանց *զտանջանս* անմահ մարմնով: - 724. Եւ այսպէս հսկել և պահել զտունս մեր, զի մի՛ գող մահուն և կատարածի՝ գտեալ զմեզ անպատրաստ ի մեղս՝ տանիցի զհոգիս մեր ի *տանջանս* յաւիտենից: - 730. և ընդ վճռի դատաւորին իսկոյն քարշին ի *տանջանս* ի հրեղէն ծովն որ հուրն է յաւիտենից: - 731. Եւ բանիւ գործոյ խօսի ընդ բուն չարս և ընդ դևս որք առաքին ի *տանջանս:* - 739. Չորրորդ՝ զդառնութիւն *տանջանացն* որ ասէ «հուրն»: - 740. Իսկ յետ դատաստանին և այս ևս՝ բարձցի ի նոցանէ առ ի *տանջանս* իւրեանց. յորժամ անարժան համարեսցին նաև ի տեսանելն զայն: - 741. Զի արտաքոյ երկնային քաղաքին եէմի է՛ *տանջանաց* տեղի, ուր մեղաւորքն ժողովին: - 748. Երկոտասաներորդ, հնձան կոչի և վերջին օր դատաստանին. զի անդ հաւաքին ամենայն բարիք և չարք և գործք նոցին. և չարքն ճմլեալ արտաքսին ի *տանջանս*, և բարիքն ի կեանս: - 749. Իսկ ծուխն յերեսացն աստուծոյ,

Նախ նշանակէ զահագին սպառնալիք բարկութեան *տանջանացն*. որպէս նա՛խ է ծուխն քան զհուր, և սպառնալիքն քան *զտանջանս:* - 749. Կամ ցուցանէ զչափով *տանջանս* մեղաւորացն. որք չափով աստ տանջին, չափով կրեն զհանդերձեալ պատիժն. զի ըստ պակասիլ ծխոյն՝ և հուրն նուազի: - 749. Վասն չորից անհանգիստ տանջին մեղաւորքն յաւիտեան. որպէս տեսանի ի մարմնաւոր *տանջանացս:* - 750. Նախ՝ զի կամ ննջելով հանգչին ի *տանջանացն*. իսկ անդ հատեալ է քուն յաչաց նոցա: - 750. Երրորդ՝ կամ գործիք *տանջանացն* նուազին. իսկ անդ հուրն է յաւիտենական որ ոչ պակասի: - 750. Ապա յա՛յտ է թէ ո՞րպէս է անհանգիստ *տանջանք* դատապարտելոցն: - 750. Երկրորդ՝ տիւ է իմանալ զկեանս սրբոցն ի յերկինս. իսկ գիշեր *զտանջանս* գարշելեացն ի դժոխս: - 750. Ո՞ր քան են *տանջանք* դժոխոցն: - 751. Որպիսութեան կրիցն չափ ո՛չ է անտի *տանջանացն*. զի բոլոր աստի նեղութիւնս համեմատեալ այնմ՝ է՛ որպէս կաթիլ մի ի ծովէ և կայծ մի ի հնոցէ: - 751. Որ են զանազան *տանջանք* զոր կրեն ամբարիշտքն անդ: - 751. Իսկ այլք ոմանք յատկապէս թ ասեն *զտանջանք* դժոխոցն: - 752. Վասն զի զընկերակցութիւն **թ** դասուց հրեշտակաց ապախտ արարին, արդարապէս **թ** *տանջանս* կրել արժանանան: - 752. Ոտք ի վեր ուղղեալք, և ի *տանջանս* ամենայն ուստէք ձկտեալք: - 753. Ո՛չ լինի. զի որդունքն այնք ո՛չ են զգայական կենդանիք. այլ հրեղէն *տանջանք* են զգայական մասինն: - 753. Տեսանե՞ն արդարքն զմեղաւորս յայնպիսի *տանջանս* թէ ոչ: - 754. Արդարքն տեսանեն զնոսա ի *տանջանս* և ուրախանան զի զերծան յայնմանէ. որպէս ցուցանի յառաջիկայդ: - 754. Այլ զկնի դատաստանին՝ բարիքն թէպէտ տեսցեն զչարսն ի *տանջանս*, բայց չարքն ո՛չ երբէք այնուհետև տեսցեն զբարիսն որպէս ցուցաւ: - 754. Ո՞չ ցաւին արդարքն ի տեսանելն զնոսա յայնպիսի *տանջանս:* - 754. Այսքան վասն մեղաւորացն և *տանջանաց* նոցա: - 754. Երթիցեն արդարքն ի կեանսն յաւիտենից. և մեղաւորքն ի *տանջանս* յաւիտենից: - 760. Նմանապէս իմասցի և վասն մի դժոխոցն՝ գոլ զանազան *տանջանք* և տանջանարանք: - 760. Եւ այնպիսի քաղցր է տեսութիւնն աստուծոյ, մինչ զի չարքն թէ կարէին՝ յօժարէին ի դժոխս կալ և զաստուած տեսանել. քան արտաքոյ *տանջանաց* լինիլ և զաստուած ո՛չ տեսանել: - 763. Նախ այնու՝ զի ի *տանջանաց* թշուառութեան այսմ տարագրութեան ազատեալք լիցին...: - 764. Եւ ոմանք յորոց սրբազան առաջնորդն մեր, պակասութիւն ասաց գոլ զորս յետոյ կրեցին անդամք նորա. այսինքն զհատումն մասանց. այրումն հրոյ. և այլ իմն բազմազան *տանջանս*. յորմէ թուով պակասեաց ի քրիստոս և յաւելաւ անդամս իւր: - 781. Յա՛յտ ուրեմն է յասացելոցս, զի դևք ո՛չ ունին հաւատս վարձաւոր. այլ ունին գիտութիւն նրբահայեաց որով սարսին յառաջ քան *զտանջանս:* - 784. Երկրորդ իմտութեամբ ժամանակին. որով իմանան զներկայս և զապառնիս և յառաջեն քան զգործս. որով աղաչէին, «գիտեմք զքեզ». ո՛չ հաւատոյն գիտութեամբ. այլ իմտութեամբ *տանջանաց*. որով սարսեին և ասէին «մի՛ տանջեր զմեզ»: - 784

**ՏԱՆՋԵՄ +** Որպէս թէ մարմինն պետրոսի խոցի կամ *տանջի*, ասեմք թէ պետրոս խոցեցաւ և պետրոս *տանջեցաւ*: - 74. Անմարմին՝ զի յատկասցի. և լոյս՝ զի պատրեսցէ. և անմահ՝ զի *տանջեսցի* միշտ: - 147. Երկրորդ՝ զմերձեցեալս յինքն՝ *տանջէ՛* և այրէ յաւիտենական հրովն: - 151. Որպէս եղև առ մարիամ բորոտութիւն վասն բանբասելոյն զմովսէս. որ աստ սակաւ ինչ *տանջեցաւ*, զի մի՛ ելցէ յերկնից ժառանգութենէն: - 159. Երկրորդ՝ վասն հպարտութեան մարդոյն. զի յորժամ խայթեսցեն զնա՝ ծանիցէ զտկարութիւն իւր. որ և զփարաւօն ո՛չ թէ առիւծք կամ առջք հարին, այլ ճանճք և մժղուկք *տանջեցին:* - 217. Քսանևզ, Վասն **ժ** հարուածոցն. և թէ վասն է՞ր այն քան *տանջեցան:* - 283. Երկրորդ՝ զի տեսցեն զբարի օրինակն, և յոչ օգտիլն՝ առաւել ևս *տանջեսցին:* - 302. Զի վասն մեղաց *տանջիւր* ինքն՝ և առաւելոյր ի բարին: - 302. Երրորդ, մովսէս **ժ** հարուածովք *տանջէր* զեգիպտացիսն: - 328. Զի նա խաւարաւ *տանջէր*, և քրիստոս զկոյր աչսն լուսաւորէր: - 328. Նա՛խ՝ մորենին է՛ նշանակ ժողովրդեանն իսրայէլի յեգիպտոս, որ վառեալ *տանջիւր* և ո՛չ սպառիւր. այլ առաւելոյր օրհնութեամբն աստուծոյ: - 331. Վասն է՞ր տկար զեռնօք *տանջեաց* զեգիպտոս, և ո՛չ առիւծ կամ արջ կամ այլ ինչ հրաշունչ կենդանեօք: - 333. Նախ՝ զի անմտացան նոքա, և զճանճս և զսողունս և զգետս և զանասունս պաշտէին. վասն այն նոքօ՛ք *տանջեաց* զնոսա...: - 333. Երկրորդ՝ իբր թէ տղայքն զորս ի ջուրն հեղձուին՝ կենդանացեալ *տանջեն* զնոսա: - 334. Նա՛խ զի զանդրանիկ որդիսն աստուծոյ *տանջեցին* և մեռուցին. վասն որոյ անդրանիկք նոցա մահացան...: - 334. Վասն որոյ **ժ** հարուածովք *տանջեցան:* - 335. Վասն է՞ր կորխեանքն սրբեցան հոգւով. և դադանեանքն կենդանի ի գերեզման իջեալ *տանջեցան:* - 381. Ոմանք ասեն թէ՝ դադան քրէական մեղանչեաց. վասն այն դառն *տանջեցաւ:* - 381. Նա՛խ՝ զի ո՛չ *տանջիւր* ակամայ սպանօղն: - 392. Չորրորդ՝ չարութեամբ աստ մեղօք *տանջեն*. և յետ մահու առհաւատչեայ

մասնաւոր. և ի յարութեանն յաւիտենական տանջանօք: - 394. Տասներորդ՝ ունի գ տեղիս. կրկին ուստի զրկեցաւ. և օդդ ուր անկաւ. և հուրն ուր *տանջի:* - 394. Երրորդ՝ զի առցեն մասնաւոր զառհաւատչեայ հանդերձելոյն. *տանջելով* աստ ի սով, ի սուր, և ի գերութիւն: - 408. Նա՛խ՝ զի գարշելի իրօք *տանջէր* զգարշելիսն: - 426. Երկրորդ՝ զի նմանեաւն *տանջեցան* որկորայք և չարք: - 426. Վասն անողորմին *տանջի* ողորմութիւնն: - 491. Որպէս մարմնական հուր զանմարմին հոգիսն և զդևսն *տանջէ*, նոյնպէս և տեղին ըմբռնէ: - 504. Եւ դարձեալ՝ որպէս աստուծոյ կարողութեանն է զանմարմին հոգին հրով *տանջել* և զմարմինն անմահ պահել ի հուրն: - 504. Ոմանք դ ասեն. և այլք՝ բազումք. զի ի գերեզմանի ասեն *տանջիլ*. և յօդս. և ի ծովս. և ի վէմս: - 504. Նոյնպէս մի հուր դժոխոցն զանազանապէս *տանջէ* զմեղաւորսն: - 505. Ուր և առաւել չարք և ամբարիշտք *տանջին*, և գլխաւորն դիւաց: - 505. Իսկ վերջին դժոխք որ կոչի անջրդի գուբ, նոցա՛ է որք ո՛չ ունին չար և ո՛չ բարի. որպէս մանկունք անմկրտեալք. ո՛չ *տանջին* զի չեն մեղանչեալ. և ո՛չ հանգչին զի չեն արդարացեալ. այլ վասն սկզբնականին մնան յանջրդի գուբն խաւարին: - 505. Երկրորդ՝ եթէ սկզբնաչարն սատանայ է ամենայն մեղաց պատճառ և ո՛չ *տանջի* մինչ ի կատարած. նաև ո՛չ մարդիկ: - 507. Իններորդ՝ յա՛յտ է յօրինակէն. զի եգիպտոս հալոց երկաթի կոչի. նշանակէ՛ զդժոխքն որ *տանջէր* զհոգիսն: - 507. Վեցերորդ՝ քրիստոս երբեմն բարերարէ՛ր և երբեմն *տանջէ՛ր:* - 566. Զի թէպէտ անպատեհ է ասել զբարկութիւնն առ աստուած զի անփոփոխելի քաղցրութիւն է. այլ կամքն որով մեղաւորքն վասն չար գործոցն *տանջեալ* լինին՝ բարկութիւն ասի աստուծոյ: - 569. Արդ փոքրիկ տղայն ո՛չ վասն այն *տանջի* թէ ադամ եթող զայն. այլ զի ինքն զարդարութիւնն զայն ո՛չ ունի վասն այն *տանջի:* - 591. Ապա ուրեմն յիրաւի՝ զի բնական արդարութիւն ի տղայն ո՛չ գտանի, յարդարութենէն աստուծոյ արդարապէս մերժի և ընդ անիրաւսն *տանջի:* - 591. Դարձեալ՝ խոստովանութիւնն սրբէ՛ զմեղս որ ո՛չ *տանջի*...: - 602. Երեսունևէ, Ուղիղ է դատաստանն աստուծոյ. և յաւիտեան *տանջէ*. և վասն կշռոց դատաստանին: - 661. Եւ ապա՛ ի կատարածի ի հուրն յաւիտենական *տանջին* ասէ տէր: - 667. ...և ապա *տանջի* ընդ սատանայի ի հուրն յաւիտենական որ պատրաստեալ է նոցա: - 667. ...զի նոքա ո՛չ չար են գործեալ և ո՛չ բարի. ո՛չ *տանջին* և ո՛չ պսակին...: - 675. Երրորդ, զի աստ միայն մարմինն, և անդ հոգին և մարմինն *տանջին:* - 679. Իսկ չար հոգիքն ճանաչեն այն քան զչարս՝ վասն զի ըստ արժանեաց իւրոց *տանջելոց* են: - 685. Այլք այլ իմն ասեն. իբր թէ իւրաքանչիւր մեղաւոր հոգի ի գերեզմանս իւրեանց կամ ի յերկրի *տանջին*...: - 686. Առաջին նման է այնմ որ ասեն զհոգին ընդ մարմնոյն ի հող լուծեալ կամ անդ *տանջեալ*...: - 687. Այլ թէպէտ մի է տեղեաւ, այլ արդարքն յուսով ուրա՛խ են, և մեղաւորքն *տանջին:* - 689. Նախ ի չար գործոց իւրեանց *տանջին* նոքա...: - 690. Եւ թէ մասն մարդոյն որ է հոգին՝ *տանջի* այժմ վասն մեղաց և մարմինն հանգչի, այս ո՛չ է ուղիղ, նոյնպէս և զփառսն: - 694. Այլ և պա՛րտի ապաշխարութիւնն կամաւ գոլ. իսկ ի քաւարանն հարկիւ *տանջի:* - 699. Իսկ արդ ի յարութեանն հա՛րկ է զի միանգամ *տանջեալ* հոգին՝ միւս ևս ընդ մարմնոյն *տանջեսցի* որ է՛ անհնար...: - 699. ...զի նա քաւեալ է և սա ոչ. մինչև մարմինն ևս *տանջեսցի* և քաւեսցի. որ է՛ անպատշաճ երկոքինն: - 699. ...և յետ մահու զհոգիսն ի դժոխս *տանջէր:* - 705. Նմանապէս և չարեացն վկայ՝ ոսոխն մեր սատանայ և գործակիցքն. և խիղճ մտացս որով *տանջիմք* միշտ: - 743. Դարձեալ՝ նիւթ հրոյն որ աղտ մեղաց, է՛ յաւիտենական. վասն այն յաւիտեան *տանջէ* զնոսա: - 744. Կամ ցուցանէ զչափով տանջանս մեղաւորացն. որք չափով աստ *տանջին*, չափով կրեն զհանդերձեալ պատիժն. զի ընդ պակասիլ ծխոյն՝ և հուրն նուազի: - 749. Երկրորդ՝ *զտանջօղ* բարկութիւնն զոր ածէ՛ ի վերայ մեղաւորաց: - 749. Իսկ որ ասէ «ծուխ նոցա ելցէ յաւիտեան», նախ կոչէ զներքին խորոց հառաչանս *տանջելոցն*. և երկրորդ զանընդմիջաբար այրեցումն հրոյն. որպէս նիւթ փայտի մերձեցեալ ի հուր: - 750. Վասն չորից անհանգիստ *տանջին* մեղաւորքն յաւիտեան. որպէս տեսանի ի մարմնաւոր տանջանացս: - 750. Չորրորդ՝ կամ *տանջօղն* դադարի. իսկ անդ հրամանն աստուծոյ է *տանջօղ* որ ո՛չ երբէք դադարի: - 750. Վասն չորրորդին, որք աստ ժահահոտ նեխութեամբ պոռնկութեանն քաղցրապէս փափկանային. արդարապէս անդ դառնապէս *տանջին:* - 752. Վասն հինգերորդին, որք աստէն զխրատս ընդունել ո՛չ կամեցան և ընդ մարդկան *տանջիլ* ո՛չ արժանացան. վասն յանորիկ արդարապէս անդ՝ անդադար հարկանին ուռամբ: - 752. Եւ անքուն ասին, զի անդադար *տանջեն:* - 753. Երկրորդ այնու՝ զի թշնամիք նոցա *տանջեսցին*...: - 764. Երրորդ, զի թէ սատանայ որ գտա՛կն է ամենայն չարեաց՝ դեռևս ո՛չ *տանջի* յաւիտենից. ըստ որում «մի՛ յառաջ քան զժամանակն *տանջեր* զմեզ». ապա և ո՛չ մարդկայինս ազգ: - 776

***ՏԱՆՋԵԼԻ +*** Վեց են նշանակութիւնք երկրի: ...Ի վեցերորդումն անվախճան *տանջելիք:* - 210

**ՏԱՆՋԻՉ +** Ապա ուրեմն ո՛չ գոյ քաւարան. և ո՛չ հուր ժամանակեայ *տանջիչ:* - 700

**ՏԱՆՋՈՂԱԿԱՆ +** Վասն երկրորդին, որք ցրտիւ չարութեան աստ կարծրացան, արդարապէս անդ *տանջողական* ցրտիւ կրճտեն զատամունս իւրեանց: - 752

**ՏԱՇԵՄ +** Զորօրինակ՝ արուեստաւոր ոք կամիցի դրօշել ի քարեայ պատկեր, նախ նկարէ՛ ի միտս իւր զձև պատկերին. և ապա հատանէ զքարն և *տաշէ՛* և դրօշմէ՛ զկերպն ըստ այնմ նմանութեանն որ էր ի միտս ծնացեալ: - 258

**ՏԱՇՏ +** Սոքա **բժ**ան ազգ նուէրք գլխաւոր պատարագք կարգեալ ի մեծէն մովսիսէ՛: Եւ բաց յայսցանէ մասնաւորք այս են: ...եւ *տաշտն* թաս: - 359

**ՏԱՊ +** Իսկ դևք փոխեն զերևակայութիւնն. որպէս *տապ* ջերմութեանն: - 133. Յրեշտա՛կ էր. որ ի տիւն հովանի լինէր ի *տապոյ* արևուն և ցուցանէր ամենայն աշխարհի զելս ժողովրդեանն: - 338. Նա՛խ՝ զի հուր աստուածութեանն կիզոյր զնա՛. որպէս ջուր ի մէջ ապակոյ ի *տապոյ* արևուն պակասի: - 383

**ՏԱՊԱԿ +** Այլ որք յամառելով յօրինակն՝ ա՛ղ խառնեն ի խորհուրդն, պա՛րտ է նոցա խառնել և ձէթ և մուրկ և խունկ և միս գառին. կամ զանգեալ ի կասկարայս, կամ օծեալ ի *տապակի*, զի զօրինակն կատարեսցեն. և հեռասցին ի ճշմարտութենէն: - 357. Եւ քաքար՝ պատա՛ռ պատառ կոտորեալ և ի *տապակի* եփեալ իւղով: - 357. Եւ յետոյ բաշխումն նշխարաց. որպէս դաւիթ բաշխեաց ամենայն իէլի բլիթ մի հաց, և պատառ մի ի *տապակէ՛* և ի կասկարայիցն: - 431

**ՏԱՊԱՆ +** Երրորդ՝ բազում աստուածախօսութիւնք ի նմա եղեն. յելանելն նոյի ի *տապանէն*. և առ աբրահամ. և առ մովսէս ի սինա լեառն. և տուչութիւն օրինացն ի կիրակէ եղև: - 193. Ո՞րպիսի էր *տապանին* ձև: - 293. Ոմանք ի վերայ մարդոյս մեկնեն *զտապանն* և յիրաւի. զի *տապանն* ունէր զբոլոր աշխարհս. և մարդն մասն է աշխարհի. պա՛րտ է զի մասն նմանեսցի բոլորին: - 293. Այլ և եկեղեցի սուրբ շինեալ ի քրիստոսէ հոգևոր *տապան* մեզ ի մէջ ծովու աշխարհիս՝ որ զհոգիս մեր փրկէ ի ջուրց մեղաց: - 293. Սա՛ ունի զձև նմանութեան *տապանին* վեցակողմ և կաթողիկէ, և դուռն ի կողմանէ: - 294. Դարձեալ՝ *տապանն* չորեքկուսի՝ է՛ սուրբ խաչն քառակուսի. որ ժողովէ՛ յերկրպագութիւն իւր յամենայն ազգաց և լեզուաց: - 294. Քանի՞ օր կացին ի *տապանին:* - 294. Եւ ի միւս տարին ի նոյն քանիս ամսոյն որ մտին ի նոյնն ելին ի *տապանէն:* - 294. Կերակուր կերի՞ն ի *տապանին*, թէ ոչ: - 294. Զի՞նչ տայր լոյս ի *տապանին:* - 294. Իսկ ի մերս *տապանի*՝ ա՛կն է լուսատու և միտքն: - 294. Կամ որպէս ասեն թէ՝ ներսէս անուն արուեստաւոր *տապանին* շինեաց իւր տուն ի վերոյ կողմանէ. և զի ո՛չ էր հրամանաւն աստուծոյ՝ սատակեցաւ նա՛ անդ, և զնորա գէշն ուտէր ագռաւն: - 294. Յո՞ր աշխարհի է *տապանն:* - 294. Երրորդ՝ նշանն սրբոյն յակոբայ մծբնայ հայրապետին. և գեօղն արկուռի՝ ուր տնկեաց այգի. և քաղաքն նախիջևան, ուր իջքն նոյ հանգուցեալ է ի *տապանի:* - 295. Չորրորդ՝ յա՛յտ է, զի աշխարհս հայոց **բ** գետով և *տապանաւն* առաւելու քան զբազումս: - 295. Զի որպէս *տապանաւն* պահեաց զտունն նոյի հայր աստուած, պահեսցէ և զմեզ: - 295. Եւ խնդրեցին *զտապանն* և զնա ոչ գտին. զի ո՛չ է հրաման տալ որ մարդն զարգանդ մօր իւրոյ տեսցէ: - 296. Եւ զի մի՛ մարդիկ ի պատճառս նորա մեղս գործեսցեն. վասն որոյ ո՛չ կարէին տեսանել *զտապանն:* - 296. Յինգերորդ՝ ի լերինն մասեայ յորժամ ել նոյ ի *տապանէն*՝ օրհնեաց աստուած զնա՛ և զորդիսն նորա ասէ գիրն. և հայր և սերմ արար մարդկան ազգի: - 319-320. Բազում է խորհուրդն. բայց նախ հրեշտակաց յարմարի ցոյցք *տապանին*. զի նոքա են անապական և անմահ: - 344. Իններորդ՝ մանուկն յարգանդի ո՛չ հացիւ կեայ. այլ հրամանաւն աստուծոյ կերակրի ընդ պորտն զինն ամիս. որպէս տնկականք, և որպէս նոյ ի *տապանն*. մինչ ելանէ յարգանդէ...: - 397. Այլ և *տապանն* նոյի. և տապանակն մովսէսի և քաւութիւնն ի վերայ: - 494. Ասեմք մեք, թէ արտածորումն մարմնոյ ո՛չ ունէր մարդն ադամ նախ քան զմեղանչելն ի դրախտին. որպէս նոյ ի *տապանին*. և մանուկն իննամսեայ յարգանդին: - 502. Աղաւնին աւետաբեր է շնորհաց. որպէս ի *տապանն* նոյի եբեր զշիւղ ձիթենւոյն. որ ցուցանէ զշնորհս մկրտելոցն: - 525. Եւ գրեցին ապաշխարութեամբ խոստովանութիւն. և եդին ի *տապանին* դադայ՝ յեկեղեցւոջ սուրբ վկային դեմետրեայ: - 543. Վեցերորդ՝ *տապանն* նոյի յարարատ ի լեառն մասիս: - 555. Ասի ի լրոյ եթէ՝ նոյ արար փայտէ՛ կոչնակ. և կոչեաց զկենդանիսն ի *տապանն:* - 618. Եւ *տապանն* նշանակէ՛ զեկեղեցի. որք ի ձայն ժամահարին ժողովին և ապրին ի ջուրց հեղեղաց մեղաց: - 618. Եւ դարձեալ՝ նոյ և ամենայն կենդանիքն ի *տապանն* կացին զբոլոր մի ամ և ոչ ինչ կերին. որպէս մանուկն յարգանդի: - 652. Երրորդ, եօթնօրեայ ժողովիլ կենդանեացն առ դուռն *տապանին* անսուաղ մինչև տեղեաց անձրևն. և **է է** կենդանիք սուրբք: - 653. ...այսպէս և քար *տապանիս* մեր լիցի. նշանակէ՛ զանապական յարութիւնն. որ վիմածին լինիմք և առանց ապականութեան որպէս քրիստոս. և ո՛չ հողածին ապականացու որպէս զառաջին ադամն: - 679. Նոյիւ՝ որ *զտապանն* կառավարեաց, ամուսնացելոցն: - 755

**ՏԱՊԱՆԱԿ +** Երեսունք, Վասն *տապանակին* և խորհրդոց նորին. և այժմ ո՞ւր է *տապանակն:* - 284. Եւ չուէին է բանակք. և *տապանակն* առաջի: - 284. Վաթսունք, *Տապանակն* յառաջ գնայր և վէմն զհետ՝ որ էր քրիստոս: - 285. Զի՞նչ է *տապանակին* չափն **բ** կանգուն և կէս երկայն: - 344. Դարձեալ՝ *տապանակն* է՛ ի խորհուրդ սուրբ աստուածածնին: - 345. Դարձեալ ըստ սրբոյն կիւրղի՝ *տապանա՛կ* է տէրն մեր յիսուս քրիստոս. և անփուտ փայտն անապական մարմինն: - 345. Դարձեալ *տապանակն* քառակուսի անփուտ՝ է՛ խաչն քառաթև անապական աստուածընկալ: - 345. Դարձեալ՝ *տապանակն* է եկեղեցի սուրբ անփուտ ի մեղաց գիճութեանց: - 345. Ա՛յս խորհուրդ է *տապանակին* որ ի սրբութիւն սրբոցն: - 345. Այժմ ո՞ւր է *տապանակն:* - 345. Երեմիա և աշակերտն՝ տարան ի գիշերի *զտապանակն* և որ առ նմայն էին՝ ի լեառն սինա. և անդ կնքեցին ի վիմին անուամբն աստուծոյ ասելով, ո՛չ ոք բացցէ զսա՞ թէ ոչ մովսէս որ եբերն. և ո՛չ ոք բացցէ՝ թէ ոչ ահարօն: - 345. Եւ որպէս ներքին *տապանակն* օրինակ ցուցաւ իմանալեացն: - 346. Երրորդ, դարձեալ **խ** պահեաց և էառ զկրկին տախտակն գրեալ մատամբն աստուծոյ իբրև զառաջինն, և եդ ի *տապանակ* վկայութեանն: - 352. Զի՞նչ ցուցանէր **գ** օր յառաջ գնալ *տապանակին* դիտեալ զհանգիստ: - 380. *Տապանակն* է՛ տէր մեր յիսուս քրիստոս. և նախընթա՛ց եղև մեզ ասելով՝ «երթամ և պատրաստեմ ձեզ տեղի»: - 380. Նախ *տապանակն*, և այլքն զկնի: - 380. Վասն է՞ր *տապանակն* յառաջ ընթանայր և վէմն զհետ բանակին: - 385. *Տապանակն* էր քրիստոս. և ունէր զտախտակս օրինացն: - 385. Հինգերորդ՝ յառաջ *տապանակն* գնայր և դիտէր հանգիստ. և զհետ վէմն տայր ջուր. զի այժմ զհանգիստ պատրաստէ՛, և յետոյ զվայելչութիւն տայ: - 385. Տասներորդ՝ զի զքրիստոսի առաջին գալուստն նշանակէր *տապանակն* և տախտակն և մանանայն և այլն. և զվերջինն՝ վէմն աղբիւրացեալ ի յաւիտենից կեանսն: - 385. Իններորդ, Գերեցաւ *տապանակն:* - 412. Չորեքտասաներորդ, Դարձ *տապանակին* **է** դաս պարուք: - 412. Իսկ յետ մահուանն մովսէսի վերացաւ ամպն. և հրամայեցաւ ժողովրդեանն հեռու կալ կանգունս երկուց հազարաց վասն փառաց *տապանակին* և վասն զօրութեան նորա: - 415. Ութերորդ՝ նա՛ *տապանակաւն* դարձոյց զգետն յետս: - 418. Իսկ թերափն է բոլորակ հանդերձ ծածկոյթ *տապանակին:* - 425. Եւ վասն այսմ ի սուր անկան ծոյլ քահանայքն ոփնի և փենէհէզ. և **լա** ի դասուց անկան և *տապանակն* գերի առաւ: - 425. Վասն է՞ր աւերէ՛ աստուած զսրբութիւնս և վարէ՛ գերի. որպէս *զտապանակն* յայլազգիս և զտաճարն: - 425. Վասն է՞ր կործանեցաւ դագովն առաջի *տապանակին:* - 425. Զի՞նչ է որ յետ եօթն ամսոյ դարձաւ *տապանակն:* - 426. Նա՛խ՝ զի պա՛րտ էր ուսով բառնալ *զտապանակն* որպէս հրամայեաց աստուած. և նոքա սայլիւ բերէին որպէս այլազգիքն: - 431. Երրորդ՝ զի ո՛չ էր քահանայ. վասն որոյ յետոյ ասէր դաւիթ ցքահանայսն, դո՛ւք ղևտացիքդ սրբեցէք և բարձէք *զտապանակն*. զի մի՛ լիցուք որպէս զոզիա: - 431. Այլ և տապանն նոյի. և *տապանակն* մովսէսի և քաւութիւնն ի վերայ: - 494. Աշխարհամատրանն. և յետ գալստեան Հոգւոյն կիրակէն. *Տապանակին*. Շողակաթին. և **դ** օր ի Խաչին տօնն. **բ** Գալստեանն. Վերնատանն. Եւ նոր կիրակէին: - 616. Այլ և զեօթն օր շրջեցան *տապանակաւն*, և կործանեցաւ պարիսպն երիքովի: - 626. Յօրինակ յեսուայ, որ *տապանակաւն* և քահանայիւք և ժողովրդովք զվեց օր շրջեցաւ լռութեամբ...: - 627. Նոյն սարասիւք այժմ ի ձեռն փրկչին մերոյ յիսուսի՝ *տապանակաւ* խաչին և աղօթիւք սուրբ եկեղեցւոյս՝ բարձրացեալ պարիսպն չարութեան եօթնից զգայութեանց մեղաց որոշօղ ի մէջ մեր և աստուծոյ, կործանեսցի ի սպառ: - 627. Այն է՝ յորժամ դաւիթ *զտապանակ* ուխտին հանէր յերուսաղէմ, **է** դաս պարուց որք են քահանայից դասք. և սրինկ. և փողք. և քնար. և այլն: - 645. Քանի՞ են ութօրեայ տօնք ի բոլոր տարին: ...*Տապանակին* և շողակաթին: - 649

**ՏԱՊԱՆԱՔԱՐ** - Իսկ *տապանաքարն*, Նա՛խ՝ զի մի՛ գործեսցի երկիրն այն յայլ ինչ գործ, կամ քակտեսցի վասն այլ մեռելոյ: - 679

**ՏԱՊԱՐ +** Սա՛ է ձորն այն յորում լսելի եղև հնչումն *տապարին* և ա՛յլ գործեաց: - 756

**ՏԱՊՈՒԹԻՒՆ** - Քաղց է ըստ մարմնոյ՝ թերութիւն ստամոքսի. իսկ ծարաւ՝ *տապութիւն* ջերմութեանն: - 584

**ՏԱՌ +** Երկրորդ՝ *տառն* որ է կոչումն գրոյն. որպէս ասեմք այբ: - 177. Եւ նուազեալ ի սմանէ քանակին, լինի նման և աննմանն ցուցեալ. որպէս յա՛յտ է ի *տառն* գրեալ. զի նման և աննմանն ուրոյն են որակի: - 236. Զի ի երկու *տառը* են Ալֆա փետացն եբրայեցւոց: - 451. Անտրամադրելի *տառիցն:* - 639. Հինգերորդ, ըստ համարոյ **իդ** *տառիցն* որովք իմաստնացան և ի գիտութիւն ճշմարտութեան հասին: - 711-712. Ըստ աստուածեղէն *տառից*՝ արարաւ էգն ի յարուէն ամենայնիւ նման նմա օգնական: - 786

**ՏԱՌԱՊԱՆՔ +** Եւ ա՛րդ՝ հեռանալոյ մեզ ի դրախտէն կենաց վերջին ամուսնութիւնն եղև. զա՛յն նախ

պա՛րտ է թողուլ, և ապա՛ յերկրաւոր հոգւոց և *տառապանաց* հեռանալ: - 281. Ղամեք *տառապանք:* - 299. Իսկ Չորրորդն արքայութիւն՝ է՛ յաւիտենականն գաւառ. յորմէ ի ձեռն մեղաց առաջնոյ մարդոյն՝ տարեալք պանդխտիմք յայսմ *տառապանաց* գքի և ի տիղմ կաւոյ. անարգաբար դեգերեալք ի հովիտս արտասուաց. յանապատի կալով և ո՛չ ի ճանապարհի...: - 756. Զի կա՛ք մի արտասուաց ի կաթիլ դուլէ ձե՛րդ մաղթանաց ցօղեսցի ի գերեզման հոգւոյ իմ *տառապանաց:* - 773

**ՏԱՌԱՊԵԱԼ +** Չորրորդ՝ զի մի իցէ նեղասիրտ և *տառապեալ* բարուք տեսանելով զինքն ի չքաւորութեան ստեղծեալ. այլ տեսցէ զամենայն կատարեալ. զի արձակ և առատ բարուք սնանիցի և վայելեսցէ: - 230. Զոր և ես զօրէն մշակաց բազմահաւաք պտղոց. կամ փունջ մի անուշահոտ բազմերանգ ծաղկանց. կամ չնչին թռչնոյ զխորիսխ մեղու. կամ որպէս զլոմայս այրւոյն *տառապեալ* գոյիւ: - 772

**ՏԱՌԱՊԻՄ +** Երկրորդ՝ զի ոչ հարազատ որդին սեպհականէր զժառանգութիւնս հօր. այլ օտարն ի մեծութիւն հասանէր, և իւրն չքաւորութեամբ *տառապէր:* - 238

**ՏԱՌԱՏԻՊ +** Եւ այն տխեղծ մատանց, *տառատիպ* գծաց. որ անհրաժեշտն է առարկողաց: - 93

**ՏԱՍԱՆՈՐԴ +** Եօթներորդ՝ զհայրապետն *տասանորդեաց:* - 50. Յիսուննդ, Վասն է պատուհասին. և *տասանորդաց:* - 284. Եւ անդ օրհնեալ զաբրահամ, և *տասանորդ* էառ յաւարէ՛ անտի: - 300. Վեցերորդ՝ նուիրեաց մելքիսեդեկ զպատարագն և ընկալաւ *զտասանորդն*. որպէս քրիստոս պարգևէ՛ հաւատացելոց զշնորհս, և առնու զտասնեակս զկատարեալ և զբարի գործս. կամ զտասն բանեան օրէնս **ժ** զգայարանօք: - 301. Երկրորդ՝ զի *զտասանորդն* աստուծոյ խոստացեալ՝ եսաւայ ետ: - 311. Նոյնպէս և առաւօտու երգն, և մեսեդի ճաշոյն, և *տասանորդ* նաշհոյն **ժ** զգայարանաց մարմնոյն ճընշելն: - 375. Վասն է՞ր խնդրեաց *տասանորդս* ի պտղոց և յանասնոց: - 376

**ՏԱՍՆԲԱՆԵԱՆ +** Զի՞նչ նշանակէր **ժ** փեղկ և ձև խորանին: ...*Տասն բանեան* օրէնքն: - 342. Առաջին, երեքօրեայ սրբութեամբ յիսներեկի աւուրն ելից յեգիպտոսէ. որ ընկալաւ *զտասնբանեան* օրէնս և պատմեաց ժողովրդեանն: - 352

**ՏԱՏԱՆԻՄ +** Վասն այն արդարադատն աստուած է պատիժս եդ. ի վերայ կայենի. ...Վեցերորդ՝ *տատանիլն:* - 287. Եւ *տատանեալ* իբրև զծով ալեկոծեալ միշտ խորհրդովն: - 287. Նմանապէս և հիմունք երկրի ջուրք *տատանեցան*. այսպէս և սիւնք ասացեալն օդոյ դողային. և լուսաճեմքն խաւարեին: - 788

**ՏԱՏԱՆՈՒՄՆ +** Չորրորդ՝ երկիր. այսինքն զի յերերման և ի *տատանմա՛ն* է ի մէջ փորձանաց: - 210

**ՏԱՏՐԱԿ +** Մետասաներորդ՝ ասեն թէ որպէս ի կենդանիս ուղտն խոհեմ՝ և *տատրակն* ողջախոհ է, և ա՛յլ կենդանիք են ապուշք և բղջախոհք: - 19. ...արագիլ արդար՝ կերակրէ զհիր ծնօղսն միայն. և *տատրակ* մենացեալ ի զուգակցէն, ո՛չ զուգի ընդ ա՛յլ *տատրակի:* - 238-239. *Տատրակ*՝ողջախոհքն են. և Աղաւնի՝ միամիտքն և աննենգքն: - 358. Ծնեալ կանանց *տատրակ* և աղաւնի: - 359. Բորոտից սրբիլն **բ** հաւ. զմինն զենուլ և զմինն յարիւն թաթաւել և թողուլ. և գառն և *տատրակ* և աղաւնի: - 359. *Տատրակ*, զի ողջախոհ և անմեղ էր...: - 361. Այլ և ի յանբան կենդանիս բնաւորեցաւ գոլ. որպէս ուղտ խոհեմ. և առիւծ արի. *տատրակ* ողջախոհ. և արագիլ արդար: - 581

**ՏԱՐԱԳՐԱԿԱՆ(Ք) +** Վեց են նշանակութիւնք երկրի: ...Առաջնումն եմք *տարագրականք:* - 210

**ՏԱՐԱԳՐԵՄ +** Զոր զայսպիսի չարութեան խնդիրս *տարագրէ՛* եկեղեցի ուղղափառաց: - 76

**ՏԱՐԱԳՐՈՒԹԻՒՆ +** Նախ այնու՝ զի ի տանջանաց թշուառութեան այսմ *տարագրութեան* ազատեալք լիցին. զի անցեալն ի մահուանէ ի կեանս՝ զկենացն ուրախութիւն կրկնապատկէ՛: - 764

**ՏԱՐԱԴԷՊ +** Եւ ո՛չ է *տարադէպ* ցոյցք ականն արփիաւորի, զի ի միջօրեայ ժամու փոփոխումն մարմնոյ և ական արձակէ՛ ստուեր կամ լոյս. այլ ինքն միշտ լոյս գոլով ո՛չ փոփոխի: - 779

**ՏԱՐԱԺԱՄ +** Այլ երուսաղէմ լեառն է և դաշտ, յանձրևոյ ոռոգի. իբր թէ խնամօքն աստուծոյ լինի անձրև աւելի և նուազ, ի ժամու և *տարաժամու* ըստ արժանեացն ձերոց: - 398. Յուցանէ թէ *տարաժամ* մահն ընտրութեամբ և կամօքն աստուծոյ լինի, և ո՛չ պատահմամբ որպէս ասեն ոմանք: - 435

**ՏԱՐԱԼՈՒԾԱԿԱՆ +** Եւ ո՛չ թիւ պատահական կամ բան *տարալուծական*. այլ մի երրեակ. և երրեակ մի. ըստ որում սկիզբն է թուոց՝ և ո՛չ թիւ. և բաժանեալ յա՛յլ էակաց: - 171

**ՏԱՐԱԾ(Ք) +** Երկրորդ դարձեալ՝ **բ** լոյսքն զփիւռ և *տարա՛ծք* են. զի աննմարմին են ծնունդ և բղխումն: - 125

**ՏԱՐԱԾԵՄ +** Եւ է դարձեալ անգիտութիւն՝ յորժամ զմիտս *տարածեմք* յամենայն եղեալս և զնա ոչ գտանեմք, ժողովեմք ի մինն որ արտաքոյ է սոցա. և այնպէս անգիտութեամբ ճանաչի աստուած: - 103.

Ուստի և նեղեալք՝ ի խնդիրս առ ի բարձունս զձեռս *տարածել* ըղձան: - 184. Եւ զի մերժի լոյսն, և *տարածի* խաւարն: - 196. Եւ զի սառն և ձիւն *տարածի:* - 197. Երկրորդ՝ զի ժողովուրդն ոտիւք գայր, և զձեռս *տարածէր*, և զգլուխսն խոնարհեալ երկիր պագանէին. վասն որոյ հատան այնպիսի մասունքն: - 426. Խաչանման *տարածեցաւ* ի վերայ մանկանն և կծկեցաւ. այսինքն փոքրկացաւ ի չափ մանկանն. և ապա յայտնապէս է անգամ յօրանջելով և կծկելով կենդանացոյց զնա: - 446. Արդ զգիրն ադամայ պարտուց՝ տէրն որդի եղև նմա և անմեղ մահուամբն *տարածեալ* զձեռս ի խաչին պատառեաց ասելով, նա մեղաւ և մեռաւ. ես զինչ մեղայ. դո՛ւ ես պատճառն: - 482. Եւ սկզբնական մեղքն զէճ ցանկութեամբն *տարածի:* - 489. Հինգերորդ՝ նշանակէ՛ զչորս առաքինութիւնս ի յորս պարտի *տարածիլ* ներքին մարդս մեր...: - 493. Այլ և խաչաձև թռչին օդապարիկ թռչունք. որ է տեսական միտք. զթև *տարածեալ* յերկոսին կողմանս: - 494. Այլ և խաչաձև ընթանայ նաւ ի վերայ ջուրց յորժամ լարէ հողմ զարմիռնն. կամ *տարածեալ* թևօք հասանին ի նաւահանգիստն: - 494. Երրորդ՝ ապականութիւնն ներգործէ՛ հակառակ արարչին. զի արարիչն յանգոյից գոյացուցանէ, իսկ ապականութիւնն զգոյսս ի յանգոյութիւն *տարալուծէ* և այլայլէ՛. վասն որոյ անապակա՛ն է մարմին արարչին: - 499. Հինգերորդ՝ զաղամաստեղծ ձեռս իւր *տարածեաց* տէրն ի վերայ խաչին. և արտաքս ընկէց զչար իշխանն. և կորզեաց զմարդիկ յիշխանութենէ նորա: - 503. զի սէրն սփռեսցի և *տարածեսցի* ի բազում ազգս: - 612. Ասեն վարդապետք թէ՝ ի լուր ուրախութեան հեշտանայ լեարդն և *տարածեալ* լայնանայ...: - 619. Նա՛խ՝ թէ ո՛չ գիտէ զկերպ աղօթիցն, կամ ծունր կրկնել, կամ զձեռն *տարածել*. և սոյնպիսիք ո՛չ մեղք են և ո՛չ արդարութիւն: - 620. ...և մեք բաց գլխով զձեռս *տարածեալ* զնորա նմանութիւնն բերեմք ի մեզ: - 635. Դարձեալ՝ մի տախտակն է՛ մի և նոյն քարոզութիւնն առաքելական ի չորեք ծագեան տիեզերս *տարածեալ:* - 646. Եւ այս ո՛չ թէ լոյս միայն է. զի զլոյսն ո՛չ ետ մեզ նշան. այլ զխաչն փայտեղէն յորոյ վերայ զձեռն իւր *տարածեաց* միածին բանն: - 734. Զի մեղքն ադամայ թէպէտ սկզբնապէս առհասարակ բնութիւնս *տարածեցաւ*. այլ ո՛չ առաւել քան զայլոցն եղև. այսինքն որդւոցն նորա...: - 777

**ՏԱՐԱԾՈՒՄՆ +** Իննեւ, մովսէս *տարածմամբ* ձեռացն զամաղէկ պարտէր: - 329. ...և Բեհեզն՝ լուսոյ *տարածումն* ի ներքոյ...: - 348. Երրորդ՝ ջուր սրսկման զոպային, է՛ *տարածումն* աջոյն՝ և օրհնութիւնն ժողովոյն ի շնորհաց սուրբ հոգւոյն: - 384. Եօթնե՛ յեսու կանգնեաց զգայիսոնն ի գայի, մինչ կոտորեցան թշնամիքն. որպէս մովսէս *տարածմամբ* ձեռաց զամաղէկ: - 418. Եւ տէրն զոսոխն մեր սատանայ իբր զառիւծ պատառօղ՝ *տարածմամբ* ձեռաց ի խաչին սատակեաց: - 422. Եւ *տարածումն* ի խաչին՝ զոմանս կանգնէր, և զայլսն գլորէր: - 423. Քանզի, *տարածմամբ* ձեռաց աղօթեաց: - 441. Զնախանձն՝ *տարածումն* բազկացն. որ նշանակէ՛ զգիրկս արկանելն սիրով: - 489. Երկրորդն է՛ *տարածումն* բազկացն ի գիրկ արկանել. և նշան ընդունելոյ զդարձեալսն ի մեղաց: - 489. Դարձեալ՝ *տարածումն* ձեռացն զմերժումն և զհերքումն թշնամւոյն, այլ և զիշխանութիւն նորա արտաքս ընկենու...: - 489. Այլ և *տարածումն* ձեռացն մովսէսի ընդ դէմ ամաղէկայ: - 494

**ՏԱՐԱԿՈՅՍ +** Վարանեցայ ի *տարակոյս*. մեկնեա՛ զբանդ: - 81. Գիտելի է, զի չարչարանք մտացն է սուտն՝ և *տարակոյսն* և անմանն: - 104. Երկրորդ՝ զի առաջինքն առանց տարակուսութեան առնուն զգիտութիւն. և այլքն նախ տարակուսին և ապա առնուն. զի այն որ առաջին դասն նախ էառ՝ *տարակո՛յս* է նոցա՝ մինչև իւքեանք ևս առցեն: - 138. Երկրորդ՝ զի լուծցէ *զտարակոյսն* որ վասն դատաստանին աստուծոյ թէ՝ անգիտելի՛ է մարդկան: - 325. Այլ և *տարակո՛յս* է թէ՝ վասն է՞ր տրտմութեան արտասուքն դառն է, և ուրախութեան քաղցր: - 619

**ՏԱՐԱԿՈՒՍԱՆՔ +** Եւ զոր ասեն՝ ա՛յս է *տարակուսանք:* - 36. Որ է *տարակուսանք* այս, եթէ գոյր ոմն մեծ քան զհայր՝ զի բռնադատեաց զնա՛: - 36. Ի յայս *տարակուսանքս*՝ որ է ստութիւն յերկուց կողմանց, բառնի էութիւն հօր. և լինի արարած որդի: - 36. Եթէ զաստուածային անձն և զնորին բնութիւնն ասէք մի քրիստոս, դեռևս կայք յառաջ ասացեալ *տարակուսանդ*. զի զաստուածային անձն և զբնութիւնն ասէք չարչարեալ և մեռեալ. զի քրիստոս խաչեցաւ և մեռաւ ըստ գրոց: - 89. Նա՛խ՝ զի խորհրդական միտքն կարգաւոր և առանց *տարակուսանաց* տեսանէ. իսկ երազն անկարգ և *տարակուսանօք* և զանհնարն տեսանէ որպէս ի վերայ օդոյ թռչիլ, և ի ծովու գնալն, և աղքատաց թագաւորել, և այլն: - 268. Նա՛խ՝ *տարակուսանք* մտաց և ցաւ աչաց. զի մոլորեսցին ի փախչիլն: - 376. Ապա ուրեմն յա՛յտ է լուծումն *տարակուսանացդ* ըստ կարգի. և ոչ որքն ի նոցանէ հակառակ զոն միմեանց որպէս ասացաւ: - 558. Եւ այս աղէտ անզերծ *տարակուսից* շրջապատեալ զմեզ շրջագայութեամբ տօմարի հայկազեան սեռից, հարիւրից կրկնակի՛ քառից և վեցեա՛կ վեցից: - 789

**ՏԱՐԱԿՈՒՍԵԼԻ -** *Տարակուսելի* է առ այս, զի թէ հա՛րկ է որոց բնութիւնքն մի գոլ՝ նոցա և կամքն և

ներգործութիւնն մի լինիլ. ընդէ՞ր ապա զի մարդկային բնութիւնս մի է և նոյն հօրն և որդւոյն՝ և ո՛չ է կամքն և գործքն մի: - 45

**ՏԱՐԱԿՈՒՍԻՄ +** Առ *տարակուսեալս* բարերարեա՛. աղաչեմ: - 93. Հնգետասաներորդ՝ ի համբառնալն յերկինս աստին *տարակուսեալ* վերին զօրութիւնքն, «Ո՞վ է սա որ դիմեալ գայ յերկրէ. գեղեցիկ պատմուճանաւ և բուռն զօրութեամբ»: - 97. Երկրորդ՝ զի բանականն մոլորի երբեմն ի ճշմարտութենէն և *տարակուսի*: - 122. Երկրորդ՝ զի առաջինքն առանց տարակուսութեան առնուն զգիտութիւն. և այլքն նախ *տարակուսին* և ապա առնուն. զի այն որ առաջին դասն նախ էառ՝ տարակո՛յս է նոցա՝ մինչև ինքեանք ևս առցեն: - 138. Դարձեալ՝ կամքն աստուծոյ անփոփոխ է. զի ո՛չ *տարակուսի* և ո՛չ զղջանայ. ապա թէ արար աստուած զաշխարհս ի գոյութիւն՝ այժմ առնէ յանգոյութիւն, երևի փոփոխումն անփոփոխելոյն. կամ զղջումն և երկբայութիւն. որ օտա՛ր է արարչականն կամաց: - 162. Ո՜վ մեծի աղետիս և վշտալից *տարակուսի*. զի այսպիսիքս զմի միաւորութիւն տեառն ուրանան...: - 176

**ՏԱՐԱԿՈՒՍՈՒԹԻՒՆ +** Երկրորդ՝ զի առաջինքն առանց *տարակուսութեան* առնուն զգիտութիւն...: - 138

**ՏԱՐԱՀԱՃԵԼԻ +** Այսքան առ երկրորդն՝ տա՛սն գլխով եղեալ հակաճառութեանց զպատասխանիսն. և բժան գլխով առհասարակ *տարահաճելիս*: - 13

**ՏԱՐԱԾԱՅՆ -** Ահա՛ այս ի կարճոյ բացայայտութիւն ծածկեալ ամբարշտութեանց, որք բ բնութիւնս սահմանեն ի վերայ միոյն քրիստոսի. թէպէտ անձն մի համբաւեն համաձայն մեզ, սակայն որոշմամբ բնութեանց լինին *տարածայն* մեզ և եկեղեցեացն աստուծոյ: - 90.

**ՏԱՐԱԾԱՅՆԵՄ, ՏԱՐԱԾԱՅՆԻՄ +** Այլ միայն վարդապետք Ֆռանկաց *տարաձայնեալ* ամենեցունց համաբաւեն զբերքաթուրն: - 698

**ՏԱՐԱԾԱՅՆՈՒԹԻՒՆ +** Վասն որոյ այսպէս ասեն զկարգ դասուցն. և սոցա *տարածայնութիւն* զհամահաւասարութիւն դասուցն նշանակեն: - 135. Եւ *տարածայնութիւն* թուոցդ յայնմանէ լինի, որ ծգ ամաւ յառաջեաց բանն աստուած ի մարդանալն քան զնշանակութիւնս մարգարէիցն: - 449. Եւ թէ ոք ասիցէ, ապա ուրեմն լա՛ւ է *տարածայնութիւն* քան զհամաձայնութիւն. և բաժանումն քան զմիութիւն: - 551. Ասեմք առ այս թէ՝ ո՛չ է հարկաւոր այս ամենայն ուրէք. զի գո՛յ և *տարածայնութիւն* բարի՝ քան զհամաձայնութիւն ընդ հերձուածօղս. և լաւ է բաժանումն ի չար ժողովոց՝ քան զմիաբանութիւն: - 551. Եւ ա՛յս է *տարածայնութիւն* սոցա. զի ոմանք ապականացու ասեն զխաչն տէրունական առարկելով կրկին կերպիւ: - 732

**ՏԱՐԱՆԻՒԹ -** Առաջին միաւորութիւն ստոյգ և ճշմարիտ՝ հոմանիւթ մասնաւորաբար որոշեցելոց. որոց ոչ ինչ *տարանիւթ* ընդ մէջ երևի. որպէս երկուց ջահից լուցելոց միաւորութիւն լուսոյն: - 476

**ՏԱՐԱՇԽԱՐՀ +** Այրն ի *տարաշխարհ* գնաց քրիստոսէ. որ մարմնով համբարձաւ յերկինս. զի յատուկ տեղի մարմնոյ երկիրս է. վասն որոյ ի *տարաշխարհ* գնալ ասէ յերկինս: - 692-693

**ՏԱՐԱՉԱՓՈՒԹԻՒՆ -** Ո՛չ ըստ *տարաչափութեան* քանակի ասեմք. այլ ըստ ամենազօր կարողութեան և անչափ անհասութեան ասեմք զնա մեծ: - 171

**ՏԱՐԱՏՈՍ -** Եւ պատրիարգունք էին անդ, ...*Տարատոս* կոստանդնուպօլսի: - 544

**ՏԱՐԱՑՈՅՑ +** Կամ ննջել և զարթնուլ. որ ո՛չէ ի յաստուած. այլ դնելով ի վերոյ ըստ ներգործութեանն *տարացուցի*: - 123. Վասն որոյ յայտնանէ տան *զտարացոյցս* ամենայն ուրէք: - 664

**ՏԱՐԲԵՐ +** Զորօրինակ՝ բնութեան յատուկն և անձին. զի բնութեան *տարբերն* հեռագոյն է և մեծ...: - 235

**ՏԱՐԲԵՐԵՄ +** Ապա և բաժանակա՛ն է ընդ մարդկային բնութեանն՝ և ո՛չ է միաւորեալ ընդ օտար *տարբերեալ* բնութիւն...: - 86. Նախ զնիւթն զմի բնութիւն նիւթական որպէս մարդ. և զմիւսն բնութիւն աննիւթ որպէս զաստուած. զՁնն՝ զմինն քանակութեամբ և որակութեամբ *տարբերեալ* որպէս մարդոյ. և զմիւսն ի վեր քան զկերպ և զձև որպէս աստուծոյ: - 87

**ՏԱՐԲԵՐՈՒԹԻՒՆ +** Այլ և մի բնութիւն ասաց եւտիքէս. շփոթեալ և խառնակեալ *զտարբերութեան* յատկութիւնս բնութեանցն: - 81. Թէ բնութեամբ միացան, ապա *տարբերութիւնք* բնութեանցն բարձան: - 85. Թէպէտ բնութեամբ միաւորին՝ *տարբերութիւնն* ո՛չ բառնի. զի *տարբերութեանցն* մնալ՝ խափանումն ո՛չ առնէ միաւորութեանն. որպէս հոգւոյ և մարմնոյ. ոսկւոյ և հրոյ. և ծանի՛ր՝ զի կրկին է *տարբերութիւն*. բաղկացական և բաժանական: - 85. Բաղկացական *տարբերութիւն* է՝ ուստի տեսակքն գոյանան. որպէս բանականն և մահկանացուն՝ զբնութիւն մարդոյն կատարեն: - 85. Ա՛րդ՝ դուք որ բ բնութիւնս ասէք քրիստոսի, զբաժանական *տարբերութիւնս* ասէք. և մեք մի խոստովանիմք

զբաղկացականս միաւորութիւն: - 85. Ըստ այսմ ապացուցի. զի բնութիւնն ի սեռ՛ւմն է և ի *տարբերութեան* ուստի բաղկանայ…: - 235. Եւ ըստ ա՛յսմ է *տարբերութիւնն* և յատուկ և պատահումն նոյն գոլ: - 236. Նմանապէս *տարբերութեամբ* յատկիւ և պատահմամբ. այլ են քննօղ մտաց: - 236. Է՛ և ներքին և վերին վայր. մարմին և անմարմին. և այլք սոյնպիսիք *տարբերութիւնք* են բնութեան և ո՛չ թշնամիք: - 278. Այլ երիւք *տարբերութեամբք:* - 472. Ութերորդ՝ նշանակէ՛ զչորս *տարբերութիւն* փրկելոցս նովաւ. այսինքն երկնաւորք և երկրաւորք, կենդանիք և մեռեալք: - 493. Ա՛րդ՝ մեզք սկզբնականին չորիւք զանազանի յայլոցն. այսինքն ի մահացուէն և ի ներելոյն. ըստ միութեան. ըստ հաստրակութեան. ըստ հաւասարութեան. ըստ որակի *տարբերութեան:* - 567. Չորրորդն ըստ *տարբերութեան* որակացն: - 568. **ՏԱՐԵԳԼՈՒԽ +** Յայս միտս ամսագլուխ և *տարեգլուխ* առնեմք: - 683

**ՏԱՐԵԿԱՆ +** Ոչխար *տարեկան*. և պատարագելի. և զգօն և հեզ. և պտղատու զկաթն և ասր և ծնունդ: - 361

**ՏԱՐԵՄՈՒՏ +** Երեսունևդ) *Տարեմուտն*, և անուանք ամսոց: - 154. Զի՞նչ է *տարեմուտն:* - 200. Ուսաք յիմաստնոց թէ՝ ի բաժանիլ լեզուաց **իբ** տանուտերանց, և ի գնալն յիւրաքանչիւր տեղիս ի հեռու կամ ի մօտաւոր աշխարհս. զօրն զայն *տարեմուտս* կարգեցին. և ուսուցին որդւոց իւրեանց պատուեալ զօրն զայն տրօք ընչից: - 200

**ՏԱՐԵՒՈՐ +** Երկոտասաներորդ, ոչխար *տարևոր* մեծի զատկին յեւսն եգիպտոսի, խորովեալ հրով. և բաղարջ ընդ եղեգի կերեալ: - 359. Եւ յետ հիւրկանեայ ո՛չ ևս ի քահանայից ազգէն կացին օծեալքն առաջնորդք. այլ աննշանք ոմանք ամսօրեայք և *տարևորք:* - 449

**ՏԱՐԷԲՈԼՈՐ (ՏԱՐԵԲՈԼՈՐ)** - Զի՞նչ է եօթնօրէքն և ամսագլուխն և *տարէբոլորն:* - 683. Իսկ ամսագլուխն և *տարեբոլորն* նոյնպէս յերեք դէմս է: - 683

**ՏԱՐԻ +** Դարձեալ ասեն, թէ ամենայն ստորնային մարմինք՝ կառավարին վերնային մարմնովք. որպէս յա՛յտ է ի չորս եղանակս *տարւոյն*…: - 10. Չորրորդ՝ արեգակն չորիւք եղանակօք կատարէ *զտարին:* - 125. Եւ տէր մեր չորիւք կատարեաց *զտարի* տնօրէնութեան իւրոյ: - 126. Այս է յղացմամբ յարգանդի և ծննդեամբ. և քարոզութեամբ. և մահուամբ. և յարութեամբն և համբարձմամբն առ հայր՝ իբր զպսակ *տարւոյ* կատարեալ բնութեամբ մեր՝ ի ներքին կողմն վարագուրին մտեալ: - 126. Մետասաներորդ՝ *զտարին* **դ** եղանակօք զարդարէ: - 126. Օր, ամիս, և *տարի* և շաբաթ, և ժամք, վերադիր, և րոպէք, ոլոմպիադ, և այլն: - 154. Նախ՝ ի շարժմանէ՛ երկնային մարմնոց. զի միշտ նոյնպէս և անդադար շարժին. առնելով զօր և զամիս՝ և զեղանակս՝ և *զտարի*՝ ստուգագոյն չափով առանց յաւելուածոյ և պակասութեան: - 181. Քսաներորդ՝ է՛ ի նշանս և ի ժամանակս և յաւուրս և ի *տարիս* որպէս ասէ գիրն: - 186. Չորրորդ Արեգակն. զոր շամս կոչեն ջե՛րմ է և լուսաւոր. **լ** օր և **ժ** ժամ և կէս յամէ՛ ի կենդանակերպն. և ի բոլոր *տարին* վճարէ՛: - 189. Ասացեալ մոլորակացս՝ զօր՝ և զամիս՝ և *զտարիս*՝ ո՛րն առնէ: - 190. Իսկ զօր՝ որ է տիւ և գիշեր. և զ**դ** եղանակս. և *զտարի*, արեգա՛կն կատարէ: - 190. Վասն է՞ր կոչի *Տարի:* - 190. Դարձեալ տանի զժամանակեայ կեանս մեր. վասն որոյ կոչի *տարի:* - 190. Եւ գիտելի է, զի օրն պատկեր է ամսոյն և *տարւոյն:* - 190. Զի *տարին* է՛ **յկե** օր: - 190. Եւ ի բոլոր *տարին* առնէ զ**ե** օր աւելեացն: - 190. Իսկ կէս մասն ի մեկ ամիսն՝ լինի կէս ժամ. և ի մեկ *տարին* **զ** ժամ. և ի **դ** *տարին* ժողովեալ՝ լինի օր մի **իդ** ժամ. և ա՛յն առնէ զնահանճն. և շարժէ՛ զտօնս և զեղանակս: - 190. Զի արեգական *տարին* է՛ **յկե** օր. և լուսնին *տարին* **յծդ** օր. **ժա** օր պակաս քան զարեգակն: - 191. Արդ յամենայն ամիս կէս օրն՝ ի բոլոր *տարին* լինի վեց օր պակաս լուսնոյն: - 191. Իսկ իննն**ժ**երեակն է, զի ընթանայ լուսինն ի *տարին* **յծդ** օր՝ և **ժթ** մասն. որ լինի ի **ժթ** ամին՝ **յկա** մասն: - 191. Յինգերորդ՝ այս մին օրս է որ կրկնելով կատարէ՛ զշաբաթ և զամիս և *զտարի* և զդարս կենցաղոյս, և հասանէ՛ ի վերջին օրն. որ է՛ մի օր աներեկ և անփոխանորդ: - 193. Ի չորեսին եղանակս *տարւոյն* Գարունն այսու ծոխանայ: - 196. Վեցերորդ՝ մուտն նիսանայ. որ է սկիզբն *տարւոյ* եբրայեցւոցն. և կազմութիւն մարդոյ ի սկզբանն: - 196. Նա՛խ՝ զի սկիզբն է *տարւոյ*. յորժամ արեգակն ի խոյն մտանէ: - 197. Քանզի եբրայեցիք և մակեդոնացիք՝ Զաւելեաց աւուրքն դնեն գլուխ *տարւոյ*. և ասեն օր առաջին. և **բ**. և **գ**. և **դ**. և **ե**. և վեցն մուտ Նիսան ամսոյ. որ թարգմանի կազմութիւն: - 200. Նաւասարդի. Նոր ասի. այսինքն սկիզբն *տարւոյ:* - 200. Բայց ասեն ոմանք թէ՝ յաւուրս մանասէի՝ Նումաս պումիլոս **բ** ամիս յաւել ի *տարին* հռօմոց. զի յառաջ քան զնա՝ **ժ** էր. և յաւել ի նոսա զյունվար և զփետրվար: - 201. Զոր այսպէս ասելոց եմք յառաջիկայդ վասն չորից եղանակաց *տարւոյն* և աւուրն բնութեան: - 240. Բոլոր *տարի* մի. զի այսպէս ասէ գիրն թէ՝ **ճծ** օր բարձրացաւ ջուրն. և յետոյ **ճծ** օր ցածուցաւ. որ լինի **ժ** ամիս: - 294. Եւ

գ եօթն է որ արձակեաց զաղաւնին որ լինի **իա**. և **ե** օր աւելեացն որ լինի *տարի* մի: - 294. Եւ ի միւս *տարին* ի նոյն քանիս ամսոյն որ մտին ի նոյնն ելին ի տապանէն: - 294. Զի՞նչ է երիցս երևիլ ի *տարին:* - 340. Լինի բովանդակն *տարի* մի: - 344. Որպէս **բժ**ան կենդանակերպք երկնից, և ամիսք *տարւոյն*. այլ և **բժ**ան առաքեալքն ի լանջսն յիսուսի: - 348. Եւ բաց յայյսանէ **բ** ակն յանդիմանութեան զոր անդամանդեայ կոչէին, և էր ի պճղնաւոր զգեստին ի վերայ ուսոց քահանայապետին յորժամ մտանէր ի սուրբն սրբոց երիցս ի *տարւոջն*, ի տօնի զատկին և յիսներորդացն և ի քաւութեանն: - 349. Եւ զոր ինչ լինելոց էր ի *տարին*, ի նոյն կերպարանս փոխեին և ակունքն: - 349. Այլ որ ուղիղն է, մովսէս յամենայն ժամ մտանէր ի սուրբն սրբոց. և ահարոն մի՛ անգամ ի *տարւոջն*. և քահանայքն ո՛չ մտանէին: - 364. Եւ ասեն յետ *տարւոյ* մի եկեալ նոխազն մաքրեալ յարենէն: - 369. Այն է որ յետ *տարոյն* երևեցաւ պօղոսի: - 369. Աչք տեառն ի սկզբանէ տնօրէնութեանն և մինչև ցկատարումն *տարւոյն* ի վերայ նորա: - 398. Եւ *տարին* անդ՝ յաւիտեանն է և միշտն. որ պարունակէ՛ զժամանակս: - 399. Իսկ *տարի*՛ է յաւիտենական փառքն. որոյ սկիզբն խնամոցէ՛ նախ քան զլինիլն աշխարհի. և կատարումն անվախճան փառքն: - 399. Արդ սուգն օր ընդ *տարւոյ* երեսուն օր էր: - 411. Ո՞ր քան ևս քահանայապետին որ զերկոտասան օր պարտ էր խնկօք պաշտել ի մէջ տաճարին ի ժամ աղօթիցն. թէպէտ ի սուրբն սրբոց միանգամ ի *տարւոջն:* - 483-484. Զի **բժ**ան օրն թէպէտ պակաս է ի թիւս *տարւոյն*, սակայն սկիզբն է *տարւոյն:* - 484. Հինգերորդ վկայ, զի ի բոլոր *տարին* յերեկոյի շաբաթուն կիրակմուտ անուանեն ամենայն ազգք...: - 509. Եւ զի **ե** են զգայարանք մեր որով մեղանչեմք, **ե** օր է նաւակատեաց ի բոլոր *տարին* ի քաւութիւն **ե** զգայութեանցս: - 510. Եւ զի **գ** է օր ի բոլոր *տարին*. կամ ամենևին պահք. կամ ուտիք. կամ միջակ. որպէս նաւակատիկք: - 510. Յիսունք, Վասն պահոց բոլոր *տարւոյն*. և Առաջաւոր պահքն: - 527. Երկոտասան ամիսք *տարւոյ:* - 546. Դարձեալ ասեն իմաստունք թէ՝ յերկնից յերկիր բազում *տարեն* ճանապարհ է: - 620. Եւ յայչացն ի յերեսն սակաւ. որ արտասուքն ելանէ. բայց սակաւ ճանապարհս այս յաղթէ՛ զայն բազում *տարւոյ* ճանապարհին: - 620. Քանի՞ է սուրբ աստուածն ի բոլոր *տարին:* - 634. *Զտարւոյն* ուտն ջարդեն ի վերայ բնոյն. և որ աճէ՛ զայն քաղեն և հիւսեն. Պտղակորոյս որպէս ծիթենի: - 638. ...և օրէնս եդ որ հանգչէր մարդ ի մարմնական գործոց յաւուրս և ի շաբաթս, յամիսս և ի *տարիս*...: - 647. Քանի՞ են ուխօրեայ տօնք ի բոլոր *տարին:* - 649. Քանի՞ են փոփոխմունք ժամատեղաց կարգաց ի բոլոր *տարին:* - 649. Ի *տարին* քանի՞ օր պահք է: - 649. Զի **կ** օր ուրբաթ և չորեքշաբաթի և **գ** քառասունք պա՛հք է ի բոլոր *տարին:* - 649. ...որ լինի **իզ** շաբաթ պահք ի *տարին:* - 650. Եւ ո՛չ միայն լուծանեն զսկիզբն մեծի պահոցն, այլ և զամենայն չորեքշաբաթս որ յառաքելո՛ցն է կանոնեալ, լուծանեն ի բոլոր *տարին*, և լինին ընդ անիծիւք նոցին: - 652. Նա՛խ՝ ի ժամանակս. զի **գ**, և **է**, և ամիսն, և *տարին* լինի **դ**. և **գ** օրն նախկին, որ է՛ եօթն: - 683. Այլ և յամիսն և ի *տարին* բոլորի: - 683. Ամիսն նշանակէ մինչ ի դատաստանն. և *տարին* զյարութիւնն յաւիտենից. - 683. Եւ *տարի*՛ է քրիստոս. և ամ տեառն ընդունելի. և **բժ**ան ամիսք առաքեալքն: - 683. Եւ ո՛չ որպէս շաղակրատեն ոմանք մտացածին բանիւ. թէ երեք օրն՝ կամ յեօթն՝ կամ յամիսն՝ և կամ ի *տարին* ելանեն ի քաւարանէն: - 683-684

***ՏԱՐԻ ԵՒ ԿԷՍ*** - Այլ և յաւելեալ ի վերայ զշարժականն և զշնչականն և զզասմնականն և զցանկականն, ընդ նմին և զկազմողական նիւթն և զտնկականն, որ լինի **ծը**. վասն որոյ ոմանք ի *տարին և կէսն* ծնանին որպէս ուղտ: - 263

**ՏԱՐՈՐՈՇ +** Եւ երկայն և կարճ՝ քանա՛կ է շարունակ. և **բ** ակն և ունկն *տարորո՛շ* է: - 236

**ՏԱՐՈՐՈՇԵԼ +** Զի անեղ է՛ գոլով՝ *տարորոշի* յանեղ ոչընչէն. և միշտ գոյ՝ ի հրեշտակաց. և ինքնակատարն՝ յայննանէ որ կարօ՛տ են սկզբան և կատարման: - 113. Զի յատուկ է առաջին պատճառին որ է՛ աստուած՝ ի հարկէ էակ գոլ՝ և միշտ ներգործութեամբ, և իսկապէս ներգործութեամբ. որովք *տարորոշի* յայյսանէ...: - 162. Տասներորդ՝ զի գոյք ամենայն *տարորոշին* երրակի: - 169. Իսկ Ունիլ ասի, իմաստութիւն և բան ունի և զարարածս. և ունի յատկութիւն որով *տարորոշի* յարարածոց: - 172. Եւ գոյացութիւն ասեմ, որով *տարորոշի* ընդդէմ ոչ գոյին. և որակութեամբ բացորոշի յանմարմին էութեանց. ուստի բաղկանայ մարմին գոյացութեամբ և որակութեամբ: - 175. Սակայն կերպն և կերպարանն *տարորոշին*. որպէս գաղափարն և պատկերեալն: - 236. Եւ իմաստութիւնս այս երիւք *տարորոշի* յայլ երիցն: - 269

**ՏԱՐՈՐՈՇՈՒՄՆ +** Նախ՝ *տարորոշումն* անձնական. և զի անձամբ յատկացեալք են ի միմեանց: - 137. *Տարորոշումն* խառնեալ տարերց. և լաւին և վատթարին. զոմանս պահել և զոմանս վտարել: - 786

**ՏԱՐՍԱՑԻ** - Եւ այս են **իբ** լեզուքն: ...*Տարսացիք:* - 298

**ՏԱՐՏԱՄ +** Շուրթն կախեալ սակաւ մի, *տարտա՛մ* է. զի յէշ և ի ձիս նմանի: - 247

**ՏԱՐՏԱՐՈՍ +** Այլոց հուր և խաւար և *տարտարոս*. լալ աչաց և կրճել ատամանց. և այլոց այլ իմն: - 760

**ՏԱՐՐ +** Նախ թէ՝ երկնային մարմինքն ո՛չ են ի չորից *տարրաց*. այլ են հինգերորդ *տարր* կամ էութիւն ըստ արիստոտէլի. և որք են ի պարզ *տարրէ* միայն ո՛չ հակակային միմեանց: - 12. Դարձեալ՝ յէից, զի մեք ի *տարերցս* եմք: - 37. Եւ յոչ էից, զի *տարերքն* այնք յոչ էից եղեն: - 37. Չորրորդ՝ սկիզբն է առաջնոցն. և պատճառ վերջնոցս. որք միջնորդութեամբ գոյանան. որպէս ի *տարերաց* կամ ի ծնողաց: - 110. Ոմանք ասացին զսկզբնապետագոյն *տարերքն*. ուստի եղեն ամենայն մարմնական էութիւնք: - 112. Իսկ *տարերքն* ո՛չեն պարզ. և ո՛չ երկրպագելի. և ո՛չ անապական. և ո՛չ անփոփոխ: - 112. Դարձեալ՝ յարացոյցն ո՛չ թանձրանայ որպէս *տարերք*. և ո՛չ որպէս նիւթ և տեսակ կերպանայ. և ո՛չ թէ յարացոյցն արար զմեզ: - 112. Երկրորդ՝ իմանալին անընդմիջաբա՛ր է ի պատճառէն. իսկ զգալին միջնորդիւ *տարերց:* - 117. Երեքտասաներորդ՝ ի ծնունդ և ի կեանս շարժէ *զտարերս:* - 126. Կատարեալ և գերակատար թիւք դոքա են առ մեզ. որ ի **դ** գլխաւորին ըստ չորից *տարերց:* - 141. Իսկ ուղիղ՝ որպէս ապականեալք փոխին յիւրաքանչիւր *տարերս:* - 142. Ո՛չ են յաւերժահասունք որպէս ոմանք կարծեն թէ յերկուց *տարերց* այսինքն ի հրոյ և յօդոյ են բանական կենդանիք...: - 150. Յասարակ *տարերք* թէ ո՞րպէս են անապականք: - 154. Ամենայն կենդանիք ի չորս *տարերաց* են: - 155. Ուստի *տարերք* և տարրեղէն մարմինք խառնեցան և յառաջ եկին ի մի և ի նոյն նիւթոյն: - 175. Եւ ո՛չ միայն այս. այլ և **դ** բնութիւն է չորից *տարերաց* մարմնոյն. ջերմ և ցուրտ. չոր և գէճ: - 176. Մանաւանդ թէ իւրաքանչիւր *տարերք* **բ** ծայրք որակութեանց ունին. զմինն գոյացական և զմիւսն պատահական. ըստ այսմ պա՛րտ է ասել քեզ մետասան բնութիւն քրիստոսի: - 176. Վասն է՞ր չորս են *տարերք:* - 180. Չորս են *տարերք*. հող և ջուր. օդ և հուր: - 180. Եւ դիրք *տարերացդ* է այսպէս Որ երկիրն ծանր է քան զջուր՝ ի ներքո՛յ է: - 180. Եւ իւրաքանչիւր *տարերք* ունին կրկին որակութիւնս. այսինքն գոյացական և պատահական: - 181. Եւ զայլ յերկար քննութիւն *տարերաց*՝ գտցես ի գիրս նիւսացւոյն որ վասն բնութեան մարդոյ: - 181. Երկրորդ՝ զի հաւասարութիւն և միաբանութիւն *տարերաց* անլուծանելի է. ըստ որում ներհակ որակօք հաւասարք են հակակայ. և միւսովն միաբանք: - 181. Երրորդ՝ ի լինելութեանց և յապականութեանց. զի անպակասք են. ըստ որում հատեալ ի *տարերաց*՝ լինելութիւն է ա՛յլ էակաց. և ապականութիւն նոցա լնու զհատումն *տարերաց:* - 181. Չորրորդ՝ զի մասն ապականի, այլ բոլորն կեայ. որպէս իւրաքանչիւր անհատ մարդոյ և ձիոյ մեռանի, այլ բոլորն մնայ. այսպէս և *տարերք:* - 181. Այսպէս ամենայն *տարերք* ո՛չ ծերանան և ոչ թուլանան: - 181. Նախ այսպէս ասեն եթէ՝ *տարերքն* գնդաձև պատեալ են զմիմեանս և ամրացեալ...: - 181. Առաջին պատճառ, զի երկինքն է պարզ մարմին. զի ո՛չ է ի չորից *տարերց*. այլ **ե**երորդ էութիւն է: - 182. Եւ զայս գիտել պարտ է. զի մեծն ներսէս զհաստատութիւնն՝ արփի ասէ և եթեր կոչէ. զոր արտաքինքն **ե**երորդ *տարր* ասացին որ ո՛չ երևի մեզ: - 184. Երկրորդ՝ լուսաւորքն ի հրոյ են. և տեղիք հրոյն է բարձրագոյն. որպէս *տարր* հրոյն: - 188. Եւ զի ո՛չ շիջանին հրամանաւ արարչին. ի միջի գոլով երկուց ներհակացն օդեղէնն երկին. որպէս ստորին *տարերս* հուր և ջուր միջնորդ օդիւն կապակցեալ: - 188. Ոմանք ասեն թէ **ե**երորդ էութիւն են արտաքոյ չորից *տարերաց* ըստ արիստոտէլի: - 188. Ասեմք թէ **բժ**ան կենդանակերպքն ունին զբնութիւն չորից *տարերաց:* - 189. Երկրորդ՝ զի ի նմա եղեն երկինք և երկիր. հրեշտակք և լոյսն և ա՛յլ *տարերք*. որ են **է** գործք արարչութեան: - 193. Եւ զանազան գոյնքն է՛ չորից *տարերցն* որք են յօդդ: - 203. Այսքան վասն օդոյ և հրոյ *տարերց:* - 207. Եւ զի ստորին է այլ *տարերաց* և խտեալ: - 211. Եւ զի շրջապատեալ է յայլ *տարերաց:* - 211. Զի ի չորս *տարրէ*՛ է գոյացեալ. և ունի զաճումն հողոյն. վասն այն նախ աճէ ենթակայ մարմինն: - 213. Իսկ պտուղք զկարգ *տարերա՛ցն* բերէ որպէս ցուցաւ. ի հողոյն սկսեալ և առ հուրն դադարեալ: - 213. Ապա ուրեմն երևի թէ ի մին *տարրէ* գոյացան ի հողոյ կամ ի ջրոյ: - 214. Ասեմք թէ՝ ամենայն մարմնական կենդանիք ի չորից *տարերաց* են եղեալ. և յայտ է ի բազում պատճառաց: - 214. Զերկիր ասելով, զայլ *տարերքն* ընդ նմա յիշէ և առնէ: - 214. Երկրորդ՝ զի ի հողն կան **գ** *տարերքն* ամբարեալք. որպէս երևին ուր ուրէք երակ հրոյ և երակ հողմոյ և երակ ջրոյ: - 214. Ապա ուրեմն յերկրէ կամ ի ջրոյ գոյացեալքն ի չորս *տարերաց* եղեն: - 214. Հինգերորդ՝ զի ունին կենդանիքդ **դ** մաղձ որ են. **դ** *տարերքն:* - 215. Ութերորդ՝ ի նոյն ինքն ի շօշափականն երևին **դ** *տարերքն:* - 215. Տասներորդ՝ զի **դ** ոտքն է նման չորից *տարերաց:* - 215. Ապա ուրեմն յա՛յտ է զի ամենայն կենդանիք ի չորից *տարերց* են: - 215. յԱռաջին աւուրն՝ **է** արարածք եղեն. հրեղէն երկինքն. և չորս *տարերք*. և լոյս. և հրեշտակք ընդ լուսոյն: - 226. Յերիս՝

*զտարերս*. և յերիս զայնոսիկ որք են ի ներքոյ *տարերց:* - 227. Նմանապէս և յայլ երիս յառաջնումն աւուր արար զլոյսն ժամանակեայ. զարեգակն և զլուսին և զաստեղս ի վերնագոյն *տարրէ՛* հրոյն: - 227. Յերկրորդ օրն՝ ի միջին *տարրէ՛* ջրոյն զձկունս և զթռչունս: - 227. Իսկ յերրորդումն, զգազանս և զմարդն. ի վերջին *տարրէ՛* այսինքն ի հողոյ կազմեաց: - 227. Եւ աստ **զ** շարժմունքն. և **գ** հասակ մարդոյս. և բաղդատութիւն **դ** *տարերց* և եղանակաց և ժամուց աւուրն: - 228. Նա՛խ՝ որպէս ասացաւ ի վերոյ, հողն ունի զայլ **գ** *տարերրն* ի յինքն խառնեալ. յորժամ ի հողոյ ասէ՝ իմանալի զ**դ** *տարերս:* - 229. Երրորդ՝ հողն վերջին է ի *տարերս*. զի գիտասցէ զշնորհս աստուծոյ՝ որ այսպէս առաջին և պատկեր աստուծոյ ստեղծաւ: - 229. Իններորդ՝ զի մայր մեր հողն է. և սեղան և տեղիք և գերեզման. թէպէտ և այլ *տարերրն* են մեզ ազգականք. այլ մեք ի մօրէ՛ ծնանիմք: - 229. Չորրորդ՝ այլ և դիրք *տարերաց*, հողն է ի ներքոյ. և ապա ջուրն և օդն և հուրն: - 232. Հինգերորդ՝ *տարր* հողոյն է ի մեզ ոսկերքն և բոլոր մարմինն: - 232. Երրորդ՝ մարդն նման է բոլոր աշխարհիս. և ի մասունս աշխարհի՝ երկինքն է վերին և բարձր. և *տարերք* ի ներքին վայրս: - 232. Երկրորդ՝ ըստ կարգի *տարերց*. թիկունքն թանձր և պինտ՝ է՛ երկիր: - 234. Եօթներորդ՝ ա՛նդ են ժողովեալ **դ** գոյնք *տարերաց*: - 234. Ըստ կարգի *տարերց* է և դիրք մասանցն: - 235. Նա՛խ՝ զի յառաջ եղեալ նմա՝ լո՛յսն է որ է վերին *տարր*. և լսելեացն օդն: - 235. Եւ բնական, Նա՛խ այսպէս. զի ամենայն իր մարմնական ի նոյն *տարերաց* են բաղկացեալ. վասն որոյ ունին նմանութիւն առ միմեանս: - 236. Իսկ **դ** ջուրն որ է ի մարդն՝ ըստ չորս *տարերացդ* է: - 240. Ի ժամ յղացմանն՝ եթէ ի ծնողացն՝ եթէ ի ժամանակէն՝ և եթէ յախտից՝ որ *տարր* և յաւելու ի խառնուածն, նոյն որակ գունով ծնանի զաւակն: - 245. Կամ ի խառնուածոյ *տարերացն* չարախառն և բարեխառն գոլ: - 251. Պատասխանեմք առ այս եթէ՝ փչումն ո՛չ զբանական հոգին ասեն սուրբ հարքն. զի մարդ ասելով զհոգի և զմարմին նշանակեաց. և զմարմինն զի ի նիւթո՛յ է՝ ի հողոյ ասաց. այսինքն ի **դ** *տարերաց* որ է՛ ի հողն. և զհոգին ո՛չ նշանակեաց թէ ուստի՞ է. զի յանէից է ստեղծումն նորա: - 253. Զի քսանն **դ ե** է. և կենդանին է ի չորից *տարերց*. ունելով զ**ե** զգայութիւնս: - 262. Զի վեցն որ է՛ կատարեալ թիւ, և նիւթն այն է՛ ի չորից *տարերց*, և ունի առ ինքն զկազմողական և զտնկական զօրութիւնն որ է **զ**: - 262. Կամ ըստ **դ** *տարերց* ունի զխառնումն երկուց նիւթոց, այսինքն արուական և իգական: - 262. Զի ամենայն նիւթ սերմնականի է՛ ի չորից *տարերց*. և ունի զկազմողականն զօրութիւն. որով լինի տնկականն: - 262. Եւ այլք ևս յաւելեալ. զի են ի չորից *տարերց*՝ **է** և **ը** ամիսս կատարին: - 262. Եւ թէ ասիցէ ոք, **դ** *տարերրն* են հիմն ամենայն նիւթոյ, պարտ էր լնուլ զ**դ** թիւն: - 262. Ասեմք թէպէտ նիւթն ի չորից *տարերց* է, այլ տնկականն զօրացեալ քան զնիւթն՝ ըստ իւրոյ մասանցն ծնանի. զի ծնանիլն տնկականին է. այլ և ունի *զտարերացն* թիւ. զի յամիսս չորս կատարի այն՝ որ յառաջ ծնաւ: - 262-263. Արդ՝ զգայականն է ի չորից *տարերց*. և ունի զտնկականն: - 263. Այլ և պարզապէս ըստ չորից *տարերց* տնկականին՝ **գ** զօրութիւնք և **ե** զգայութիւնք՝ լինի **բժ**ան: - 263. Արդ՝ որպէս ասացաք՝ մարմինն է ի **դ** *տարերաց*. և ունի **ե** զգայութիւն. վասն որոյ յինն ամիսս հաստատի անդամօք և ապա ծնանի: - 263. Դարձեալ մարմինն է ի **գ** *տարերց*. և ունի երիս տեսակս ոգւոց: - 263. Դարձել **դ** *տարր*, և տնկականն և զգայականն, և երեք մասունք հոգւոյն բան ցասումն և ցանկութիւն, որ լինի **թ**: - 264. Դարձեալ **թ** խառնուա՛ծ է չորից *տարերց* ըստ կրկին քառից որակաց առաւել և նուազ, և իններորդն հաւասար է որ է ի մարդն. վասն որոյ ինն ամսեայ ծնանի: - 264. Իսկ մարդոյն խորհուրդն ըստ չորից *տարերց* և երից զօրութեանց տնկականին եօթեամբ կատարի. թիւ շնորհալի և մշտակոյս ըստ աթենայ. զի ոչ ծնեալ լինի և ո՛չ զայլս ծնանի: - 264. Եւ դարձեալ ըստ չորից *տարերց* և եղանակաց և ժամուց աւուր և հիւթոց համեմատաբար փոփոխին և հասակ մարդկան: - 266. Եւ բաց յայսցանէ՝ բնական որակօք ներհա՛կք են միմեանց **դ** *տարերրդ* որպէս ցուցաւ ի վերոյ: - 278. Նա՛խ՝ **գ** մասունք հոգւոյն, բան՝ ցասումն՝ և ցանկութիւն. և **դ** *տարերաց* խառնուածն որովք մեղանչէ մարդ: - 287. **Նմանապէս և մեծն ի մարգարէս աստուածախօսն մովսէս որ աստուած կոչեցաւ փարաւոնի. իշխելով *տարերցս* փոփոխման, որ ջրածինն էր՝ եղև վիմածին և կայծակնածին. որում լուսաւորեցան երեսք**: - 288. Եօթներորդ՝ արիւնն հուրն է՝ և շունչն օդն. պա՛րտ է հանել զ**բ** *տարրն*. իսկ մնացեալն ջուր է և հող՝ ուտելի է: - 295. Կարե՞ն դք հուր իջուցանել և փոփոխել *զտարերս:* - 321. Ո՛չ կարեն դք *զտարերս* փոփոխել. և ո՛չ հուր և ո՛չ շանթս և ո՛չ այլ ինչ ի *տարերացս* առնել որպէս կարծեն ոմանք: - 321. Քսան**բ**, մովսէս աստուած կոչեցաւ և իշխէր *տարերաց:* - 329. Երկրորդ՝ զորպիսութիւն և զձև աշխարհիս ցուցանէր ի խորանն եռայարկեան ի չորից նիւթոց փոխանակ **դ** *տարերաց* յանապական և յապականացու բնակչաց: - 342. Բնական որակ *տարերացն* Սևն է՛ երկրի. և Սպիտակն ջրոյ. Կարմիրն օդոյ. և Դեղինն հրոյ: - 342. Այլ աստ զներգործական որակն ասէ *տարերաց:* - 342.

Չորրորդ՝ և բովանդակն **Ե** կանգուն, ցուցանէ թէ ո՛չ են նոքա ի չորից *տարերց*. այլ **Ե**երորդ էութիւն են. որպէս ասեն ոմանք. անմարմին անփոփոխ և անմահ. որ ո՛չ է տարրականացս: - 344. Իսկ հնոյն խորհուրդ, **դ** որակ նիւթոցն՝ **դ** *տարերացն*. և ոսկին անապական՝ երկնից: - 348. Եւ սմին համաձայնի վանական վարդապետն մեր ասելով, չորս *տարր* է մարդոյ և **դ** ծնունդ: - 353. Նա՛խ՝ զարիւնն հանել որ է՛ կենդանութիւն և աստուծոյ մասն. և զմնացեալն ուտել որ է *տարր* միայն: - 366. Նոյնպէս և ոտքն ըստ չորից *տարերց* ընթացից: - 367. Երրորդ՝ զի հանգիցէ երկիր և *տարերք* որ ի չար գործն մեր չարչարին. այլ և պահպանապետ հրեշտակք նոցա: - 372. Երրորդ՝ զի ծերոյն լուծեա՛լ են *տարերքն* ի միմեանց. և ապականեալ առողջութիւնն: - 377. Իսկ այլք ի **դ** բաժանեն ըստ չորից *տարերաց* և **դ** պահու գիշերոյն. որպէս ասացաւ ի վերն **ժզ** գլուխն **ից** համարն: - 378. Երկրորդ՝ զի ասէ «իբրև զիս». իբրև օրինա՛կ է. որպէս մովսէս աստուած կոչեցաւ, և տէր մեր էմմանուէլ. և զնա՛ հայր կնքեաց աստուած. և որպէս մովսէս իշխէր *տարերաց*, և տէր ի ծովուն գնայր, և ի վերայ օդոյն: - 399. Եւ փոխանակ մօրն *տարերք* ամենայն. որ հեծեն և յոգոց հանեն վասն ապականութեան մեր ըստ առաքելոյ: - 400. Երկրորդ՝ զի միայն մովսէս կոչեցաւ աստուած. և ո՛չ անուամբ միայն, այլ և գործով իշխէր ի վերայ *տարերաց* ի վեր և ի խոնարհ. վասն այն աւագ օրհնութիւն կոչի: - 407. Այրին նշանակէ *զտարերս* աշխարհի. զի այրի եղեն յանիծից պտղոյն. և կամ թէ բնութիւնն իւրեանց շարժէ ի լինիլ: - 444. Եւ այնք որ էութիւն ընդ էութիւն միաւորին՝ են որք շփոթմամբ միաւորին. որպէս ջուր ընդ գինի. և **դ** *տարերք:* - 475. Երկրորդ «ի յորդանան». որ ստեղծօղն է *տարերաց*՝ եդ զինքն ի ներքոյ խոնարհ *տարեր* ջրոյն: - 487. Այլ և պահապան չորից զգոյութեանց ըստ չորից *տարերաց:* - 493. Իսկ ապականութիւն այլայլութեամբն ի ներքս մտանէ, և զորոշեալն ի միմեանց՝ դարձեալ օգտէ՛ և այլայլէ՛. մինչ զմարմինն ի բուն *տարերս* լուծանէ, և զհոգին յաներևոյթ տեղիս: - 498. Դարձեալ ասեմք թէ՝ այլ վարդապետք է ասեն զմեղս, զի **դ** *տարերք* են մարմնոյն, և **գ** զօրութիւնք հոգւոյն. այսինքն բան, ցասումն, և ցանկութիւն: - 559. Նա՛խ՝ ըստ չորից *տարերց* այլ և այլ որակութեանց լինին ը խորհուրդ մեղաց: - 560. Երկրորդ դարձեալ՝ զի **դ** են *տարերք*. և **դ** ազդումն միաւորութեանց հոգւոյն յիւրաքանչիւր *տարերս* ըստ այսմ օրինակի: - 560. Եւ ըստ միաւորութեան հոգւոյն ի *տարերս*, Յոգւոյ և ի հրոյ բարկութիւնն: - 560. Չորրորդ ասեն եթէ՝ **դ** աստիճանք ըստ չորից *տարերացդ* կարգաւորին: - 609. Զի **դ** ազգակցութիւն մարմնական. զի մարմինն է ի չորից *տարերց:* - 611. Զի **դ** ծնունդ ի մէջն է ըստ չորից *տարերց* կատարման: - 611. Վասն զի մարմինն ի չորից *տարերց* է. և ի **դ** ծնունդս փոխին **դ** արիւնք տարրականք ըստ այսմ օրինակի: - 612. Նա՛խ՝ զի վասն յանցանաց մարդոյն ադամայ դատապարտեցան *տարերք*. հող, ջուր, և այլն...: - 615. Այլ և ութն ձայնք **դ** են ըստ չորից *տարերց*. այս է՝ առաջին, երկրորդ, երրորդ, չորրորդ: - 639. Եւ զի չորք են ձայնք բնականք ըստ չորից *տարերց*, ցուցցի հոգեպէս: - 640. Երկրի ձայն՝ *տարերց:* - 640. Երեք չուանն յեռեալ ի միմեանս մակդարձապէս, է՛ չորեքնիւթեայ բնութիւնս մեր ի *տարերց* խառնեալ. կամ շնչոյ մարմնոյ և հոգոյ խառնումն: - 645. Բոլորապէս **դ** է. այսինքն Նախ ըստ *տարերց* ի լինելութիւն և յապականութիւն: - 663. Յիւանդութիւն է անչափակցութիւն *տարերց* մարմնոյ. որ առաւելու և նուազէ՛. ջերմ և ցուրտ, խոնաւ և ցամաք: - 665. Նա՛խ՝ ի պնդակազմ մարմնոյն դժուարաւ լուծանին *տարերքն:* - 668. Վասն է՞ր ի հող թաղեմք և ո՛չ յայլ *տարերս:* - 677. Երկրորդ, զի հողն մա՛յր է մեր առաւել քան զայլ *տարերք*...: - 677. Յինգերորդ, մարմինն ի հող դնի, մինչև ապականացու *տարերք* զանապականութիւն ստասցին...: - 677-678. ...թէպէտ են և այլ *տարերք* զօրութեամբ ի հողն: - 678. Եօթներորդ, զի հողն ամենևին ներքին ծայրքն է ամենայն *տարերաց.* անդ դնի մարմինն: - 678. Զնոսա ասել գոլ առ **ը** երրորդ կամարն երկնից. ամբարձեալ յիշխանութենէ սատանայի որք ի յօդս և ի *տարերս* միայն իշխեն: - 688. Նոյնպէս և հոգիք արդարոց ո՛չ մնան ուրեք ընդ ներքոյ դատապարտեալ *տարերաց*...: - 689. Դարձեալ՝ որ հրոյ է վերակացու, ի վերայ նորին հարկանէ. և որ օդոյ և ջրոյ և երկրի, ի վերայ իւրաքանչիւր *տարերաց* գոչէ՛: -714. Այսպէս **դ** *տարերք* զչորեքին գործս մեր ընդ էութեանս ունին յաւանդի և յառաջ բերեն: - 714. Նա՛խ՝ զի ո՛չ է ի չորից *տարերց* ժողովեալ որ քակտելով մահանայ: - 715. Երկրորդ, մարդս մա՛սն է աշխարհի. զի մարմինն է ի չորից *տարերց*...: - 717. Ո՞րպէս ի հող լուծեալ և յա՛յլ *տարեր*, և ի գազանաց կերեալ, ժողովի մարմինն մեր: - 718. Ասեմք առ այս, եթէ մարմին մարդոյ բաժանեալ ի հոգւոյ, և հոգին գնացեալ ի կայանս հոգւոց առ աստուած որ ետ զնա՛. և մարմինն ի հող լուծեալ կամ յայլ *տարերս*...: - 718. ...և թէ ի գազանաց և ի թռչնոց և ի ձկանց կամ ի մարդոյ ուտի, և նոքա ևս ի *տարերս* լուծանին: - 718. Եւ *տարերք* ամենայն շտեմարանք են աստուծոյ. և տիեզերք ամենայն ի ձեռին նորա՛ են ըստ մարգարէին: - 718. ...առաւել աստուծոյ է կարելի զհոգիս յերկնից և զմարմինս ի *տարերաց* ի մի վայր ժողովել և

յարուցանել: - 718. Այսպէս և հողն ուստի շինեցաւ ադամ, ո՛չ մնայ ի *տարերս*. այլ յառնէ ի յադամ որ սկիզբն եղև գոյութեան նմա: - 719. Նոյնպէս հոգին բաժանեալ և մարմին լուծեալ ի հասարակ *տարրն*, այսու խառնեալ դրոշմիւս ճանաչեն զմիմեանս անսխալապէս: - 719. Ո՞րպէս ի հասարակ *տարրէ՛* մարմին մարդոյ անխառնապէս ժողովի: - 719. Այսպէս և ի մարմին մարդոյ ոչինչ խառնի ի հասարակ *տարերաց* ի յորս լուծաւ. այլ ինքն միայն գոյացութիւն մարմնոյն խառնեսցի ընդ հոգւոյն: - 719. Նմանապէս և մարմին մարդոյ առ հասարակ մեռանին և ի հող լուծանին և յայլ *տարերս*. և յորժամ յառնեն՝ ո՛չ ունին ի հասարակ *տարրէ* ընդ ինքեանս. և այս մարմին ի յայն մարմնոյ ոչ ինչ ունի խառնումն: - 719-720. Գիտելի՛ է, զի ոմանք հերձուածօղք մոլորեցան վասն յարութեան մեռելոց և ասացին թէ մարմինն ո՛չ բաղկանայ ի չորից *տարերց*. այլ լինի պարզ: - 720. Եւ բաւականութիւն է զարդուցն պատճառի յերից մասանց հոգւոյն և ի չորս *տարերաց* մարմնոյն: - 721-722. Երկրորդ, այժմ մարմինս մեր յապականացու հողոյ է և *տարերց*. վասն որոյ և ապականի դարձեալ. - 723. ...վասն որոյ յանապական *տարերց* կազմի անապական մարմին: - 723. Յանմարմնոցն հրեշտակք և դևք. և հոգիք մարդկան. իսկ ի մարմնոց երկնային մարմինք և **դ** *տարերք* և մարմինք մարդկան. և այլք ամենայնքն ապականին և յիւրաքանչիւր *տարերս* ժողովին: - 727. Զի վերին մարմինք երկինք և լուսաւորք ամենևին անապակա՛ն են. իսկ **դ** *տարերք* թէպէտ ըստ մասին ապականին, այլ ըստ բոլորին ո՛չ. - 727. Ասեն վարդապետք՝ եթէ են ինչ որ էութեամբ և պատահմամբ անցանեն. որպէս կենդանիք և տունկք և որ ինչ ի չորից *տարերաց* են գոյացեալք: - 727. Եւ են ինչ որ պատահմամբ անցանեն և էութեամբ մնան. որպէս երկնային մարմինք և **դ** *տարերքս* և մարդոյս մարմին. սոքա պատահմամբ անցանեն և գոյացութեամբ մնան: - 727. Եւ **դ** *տարերքդ* իւրաքանչիւր դադարին ի տեղի իւրեանց և բնաւ ո՛չ փոփոխին: - 727. Նա՛խ՝ զի ապականեցան *տարերք* վասն յանցանաց մարդոյն, պա՛րտ է զի ընդ մարդոյն նորոգեսցին և նոքա: - 727. Զի՞նչ որակ պակասի ի *տարերացդ* և զինչ մնայ: - 728. Իսկ պարզ *տարերքն* գնդաձև դադարին ի տեղիս իւրեանց յաւիտեան: - 728. Այսպէս իմասցիս և զայլ *տարերս:* - 728. Զի նախընթաց հուրն գայ յարևելից և վառէ՛ զերկիր և *զտարերս*, և կանգնի յարևմուտս: - 731. Նա՛խ՝ զի ամենայն որ ի չորից *տարերց* է՝ կրէ՛ զապականութիւն. արդ խաչն փա՛յտ է և ի չորից *տարերց*. ապա ուրեմն ապականի և նա՛: - 732. Այսպէս և **դ** *տարերք* ըստ ինքեանց անապականք են. զի մասնաւորքն ի նոցանէ ապականին և դարձեալ ի նոսա խառնին. և այսոքիկ ըստ կամացն աստուծոյ են կամ մշտապէս: - 733. Այլ և ամենայն *տարերք* խռովեսցին. մրրիկ ծմերան և ցրտոյ՝ հրախառն յամենայն ուրէք սաստկացեալ...: - 735. Երեքթելեան լարքն, հոգին եռամասնեայ և մարմինն ի չորս *տարերաց:* - 744-745. Տարորոշումն խառնեալ *տարերց.* և լաւին և վատթարին. զոմանս պահել և զոմանս վտարել: - 786. Եւ սիւնք սորա *տարր* օդոյ ըստ նիւսացոյ: - 788. Զի առ հասարակ ամենայն *տարերք* ըստ իւրեանց կերպի կրեցին զայլայլութիւն սգոյ, չարչարակիցք գոլով արարչին իւրեանց: - 788

**ՏԱՐՐԱԿԱՆ +** Եւ թէպէտ մարմինք մարդկան են *տարրականք*, այլ բարի և չար ներգործի ըստ կամաց և ո՛չ ըստ բանականութեան: - 10. Երկրորդ և թէպէտ իցեն *տարրականք* և ներհակ որակք՝ յիմիասին դիպիլն՝ ո՛չ միշտ հակակային իրերաց. այլ եթէ կամք խնամողին հրաման տացէ: - 12. Յաւասարին, Նախ՝ զի *տարրական* են: - 117. Առաջինն է *տարրական* հրոյն վերին մասն. որ կոչի հրեղէն երկինք. հոմանուն առաջին երկնից: - 183. Այսպէս և հոմանուն է եթերն. այսինքն եերորդ էութիւնն, և *տարրական* հուրն: - 184. Իշխէ՛ *տարրական* մարմնոց: - 186. Այլ վարդապետք եկեղեցւոյ ասեն ըստ պղատոնի եթէ՝ լոյսն խզումն է ի *տարրական* հրոյ, որ յառաջին օրն գոյացաւ: - 188. Ասեմք եթէ յա՛յտ է ապա որ անօթ լուսաւորացն *տարրական* է. թէ ոմն պարզ է և ոմն թանձր: - 188. Երկրորդ՝ յա՛յտ է զի ունին ջերմութիւն և ցրտութիւն. չորութիւն և գիճութիւն. որ յայտնապէս *տարրական* է որակութիւն: - 188. Այլ ժամանակն է առաջին շարժումն երկնից, սակայն ո՛չ չափէ զնա. այլ չափէ՛ *զտարրականս* և զներգործութիւնս մեր յորում ո՛չ է: - 198. Նա՛խ՝ զի *տարրակա՛ն* է հուր: - 202. Ո՛չ է աստղ. այլ գոլորշի վառեալ ի *տարրական* հրոյն յորժամ մերձի ի նա՛: - 203. Եւ ոմանք ասեն՝ ի *տարրական* հրոյն բաժանի կիզումն...: - 203. Երկրորդ՝ ասէ արիստոտէլ՝ թէ ջերմութիւն լուսաւորացդ և *տարրական* հրոյն և օդոյն մտանեն ի ծովն և քարշեն ի նմանէ զքաղցր և զպարզ հիւթն. և մնացեալն լինի դառն և աղի: - 208. Ո՛չ թէ քան *զտարրական* հուրն ի վե՛ր է անցեալ. այլ զի լուսինն և արեգակն միշտ ի հարաւոյ կողմանէ ի ստորոտէ լերինն ելանեն. և ի հիւսիսոյ կողմն լերինն միշտ գիշեր լինի...: - 222. Արդ՝ **ժ** թիւն կատարեալ է. և չորսն *տարրական* է ...: - 262. Զի **ժ** ի չորից ծնանի. և չորսն *տարրական* է. վասն որոյ ի նմա կարէ մարդ ծնանիլ զնմանն իւր: - 265. Իսկ ամառն, և մինչ ի **գ** ժամս

աւուրն, և խարտեաշ մաղձն, և երիտասարդն՝ ըստ նմանութեան *տարրական* հրոյ ջերմ և չոր գոլով. վասն որոյ առաւել բարկացօղ և ցանկասէր լինի: - 266. Երրորդ այսպէս. ի լուսնոյդ ի վայր *տարրական* հուրն և որ ի նմա երեւոյթք լուսոյ. օդն և թռչունք. ջուր և լօղականք. երկիր և բոյսք. մարդ և անասունք: - 343. Չորրորդ՝ և բովանդակն **ե** կանգուն, ցուցանէ թէ ո՛չ են նոքա ի չորից տարերց. այլ **ե**երորդ էութիւն են. որպէս ասեն ոմանք. անմարմին անփոփոխ և անմահ. որ ո՛չ է *տարրականացս:* - 344. Չորս կանգուն և կէս, ելեալ ի *տարրական* կենցաղոյս: - 346. Այլ և **դ** սկզբունք *տարրական* ամենայն մարմնոց: - 494. Այլ և խաչածն՛ է մարդ, գլուխ *տարրական* կենդանեաց: - 494. Եօթներորդ՝ ի *տարրական* հողոյ ստեղծեաց աստուած ադամայ անապական մարմին և եդ ի դրախտին. որ մեղօք յանցեալ՝ եղև ապականացու: - 499. Դարձեալ ասեն հակառակքն, եթէ անապական է մարմինն, ապա ո՛չ է *տարրական*...: - 500-501. Վասն զի մարմինն ի չորից տարերց է. և ի **դ** ծնունդս փոխին **դ** արիւնք *տարրականք* ըստ այսմ օրինակի: - 612. Տասներորդ, **բ** են բանականաց տեսակ. մինս *տարրական*. և միւսն գերաշխարհիկ ի_վերոյ քան զհինգերորդ էութիւնս երկնից...: - 654. Եւ գիտելի է, զի հրեշտակք ո՛չ ունին զայսպիսի փոփոխմունս. զի ո՛չ են *տարրականք*, և ո՛չ ընդ ժամանակաւ: - 663. Եւ ի կատարածի՝ *տարրական* հուրն և հրեղէն ծովն և ամենայն հուրք որ են յերկրի՝ ժողովեսցին ի միասին...: - 731

**ՏԱՐՐԵՂԷՆ +** Երկրորդ՝ ասեմք եթէ և ոչ աստեղք վայրապար են ստեղծեալ. զի կառավարք են *տարրեղէն* մարմնոց որպէս ասացաք...: - 13. Երկրորդ՝ զի որպէս մի արեգակն կոչի *տարրեղէն* ամանն լուսովն և հրովն: - 125. Ուստի տարերք և *տարրեղէն* մարմինք խառնեցան և յառաջ եկին ի մի և ի նոյն նիւթոյն: - 175. Վասն է՞ր իմաստասէրքն *զտարրեղէնս* անապական և անվախճան ասեն: - 181. Երրորդն՝ է վերին մասն օդոյն. և կոչի եթերային երկին. զի մերձ ի *տարրեղէն* հուրն է. և վառի ի նմանէ. զոր թռիչ աստեղաց կոչեմք: - 183. Եւ անդանօր լինի անմահ և անապական ծնունդ և որդիք յարութեան. զի մեռանիլ ո՛չ ևս կարեն աւէ. վասն զի յանմահ զօրութենէն աստուծոյ ծնանիմք, և յանապական *տարրեղէն* նիւթոց...: - 308. ...զի կամ իմանալիք են որպէս հրեշտակք. կամ զգալիք որպէս *տարրեղէնք*. և կամ յերկուց գոյացեալ որպէս մարդ. այսինքն ի հոգւոյ և մարմնոյ...: - 715

**ՏԱՐՓՈՒՄՆ +** ...և այս բառնի ի հոգւոյն և ընդունի ուրախութիւն և *տարփումն* հոգևոր առ աստուած...: - 722

**ՏԱՐՕՆ** - Գրիգոր մագիսրոսն ի *տարօն* եկեղեցի է շինեալ. և ծախիւք պատկեր բերեալ և անդ եդեալ: - 639

**ՏԱՒԻՂ +** Եւ չորսն ծեռօք. որ է *տաւիղն*, քնարն, թմբուկն, և ծնծղայք: - 431. Զաքարիա Սիմա Ելիա Մովսէս *տաւղօք* երգէին: - 641. Երկրորդ՝ զի սատանայագիտ էր քնար և *տաւիղ*...: - 641. Եւ ինքն դաւիթ հանդերձեալ և հոլանեալ երգէր *զտաւիղն* որպէս սարկաւագունք...: - 645

**ՏԱՓԱԿ** - Եւ գլուխն *տափակ*, նշանա՛կ է յանդգնութեան: - 246. Եղունգն սպիտակ *տափակ* կակուղ և նօսր, կարմրագոյն և փայլուն, ուժե՛ղ է: - 247

**ՏԱՔ +** Այս երկու երակս թէ *տաք* է և չոր, մարդն ի մօտն աղէկ տեսնու՝ և ի հեռուն վատ. որպէս տղայն: - 239. Արևելիցն *տա՛ք* է և գէջ որպէս ասեն բժիկք: - 240. Յարաւայինն *տա՛ք* է և չոր: - 240. Նախ՝ ի տղայութեան հասակն. յորժամ ծնանի տղայն՝ ունի զհողմն արևելից *տաք* և գէջ: - 240. Եւ յերիտասարդութեանն՝ լինի հողմն հարաւային *տաք* և չոր: - 240. Առաջինն սիրտն է՛ թագաւոր անձինն. *տա՛ք* է և չոր. և իւր տանուտէր արեգակն է: - 241. Երրորդն լեա՛րդն է, աղբիւր արեանն. *տա՛ք* է և գէճ՝ ունելով զբնութիւն մուշթարոյն, որ տանուտէր է նմա: - 241. Եօթներորդն է՛ լեղին. որ է խարտեաշ մաղձն. *տա՛ք* է և չոր. և տանուտէր ունի զմառեխն որ է հրատն: - 241. Միսն *տաք* է և ջիլն հով. զի ջիլն ձկտի յորժամ յագենայ. և կծկի յորժամ քաղցենայ: - 242. Եւ մինն զի *տաք* է՝ հալէ՛ զկերակուրն որ ի յինքն ժողովեալ: - 242

**ՏԲԷԹ** - Եւ անտի մինչև ի *տբէթի* **իա**՝ և յունվարի **զ**՝ կատարի **թ** ամիս և **ե** օր: - 483

**ՏԳԵՂ +** Զի որպէս խաչեալն ի ժամ խաչելութեանն *տգեղ* երևէր, և ի միւսանգամ գալստեանն փառօք հօր և ընդ ամպս: - 734. Այսպէս և խաչն իւր աստ *տգեղ* երևի, և ի կարապետութեանն իւրոյ արեգակնափայլ ճառագայթիւք: - 734

**ՏԳԵՂԱՆԱՄ +** Զի խաւարի միտքն. և մոլորի՛ իմացումն. և կապի ընդարձակ տեսութիւնն. և ծանրանայ թեթեւութիւնն. և անջատի ի բազումս. և *տգեղանայ* պատկերն: - 104. Վեցերորդ՝ *տգեղանայ* աստուածեղէն պատկերն: - 424

**ՏԳԵՂՈՒԹԻՒՆ +** Նոյնպէս և տգիտութիւնն մտա՛ցն է խաւար և մոլորութիւն. և կապ. և ծանրութիւն. և անջատօղ. և *տգեղութիւն:* 103-104. Դարձեալ՝ որպէս աչօք տեսանեմք զմարմնոյս մասունքն և *զտգեղութիւնն* զարդարեմք: - 397. *Տգեղութեամբ* որպէս յուդային: - 565. Յինգերորդն է գեղեցկութիւն առանց *տգեղութեան:* - 766

**ՏԳԷՏ +** Դարձեալ, ասեմք եթէ՝ առնէ՛ աստուած զոմն խոհեմ և զոմն *տգէտ*, զի նա՛ ի նմանէ՛ ուսցի: - 19. Դարձեալ ասեմք թէ՝ ըստ ինքեան սոքա ոչ են չար. այլ բարի. որպէս *տգէտն* ի մեղաց...: - 19. Իսկ ի յաստուած՝ զի ո՛չ է չար. և ո՛չ *տգէտ*. և ո՛չ անկար, և ո՛չ ասի: - 55. Եւ ո՛չ ասի *տգէտ* և տկար վասն մարմնոյն. այլ ամենագէտ և ամենազոր մարմնովն: - 78. Ա՛րդ՝ եթէ *տգէ՛տ* է որդին աստուծոյ հօր, և *տգէտ* որդւով խօսեցաւ ընդ մեզ. տգիտութեան եղիցի և օրէնքս նոր քան զհինն: - 96. Ա՛րդ՝ եթէ քրիստոս *տգէտ* է և նոքա զմիտս *տգիտի* ունէին. ո՞րպէս լինէին հազարապետք աստուծոյ խորհրդոցն. կամ հազարապետքն առաւել են քան զխորհուրդն աստուծոյ: - 96. Ա՛րդ՝ եթէ յայտնեաց զինքն աշակերտաց իւրոց. և մարդկութեան իւրոյ ո՛չ յայտնեաց, եղիցի ինքն *տգէտ* քան զաշակերտսն իւր. և կամ ոչ ինչ յայտնեաց զոր ինքն ո՛չ գիտաց: - 96-97. Ա՛րդ՝ եթէ բանն քրիստոսի բան մարդոյ է և *տգիտի*, ապա անցաւո՛ր է: - 98. Իսկ թէ աստուծոյ բան է և անանց, ո՛չ ուրեմն է *տգէտ* կամ նըւազ գիտութեամբ: - 98. Ա՛րդ՝ *տգէտն* ո՛չ ունի զբոլոր զամենայն իմաստութիւն և զգիտութիւնն զանձեալ: - 98. Որ ասես սոսկ մարդ գոլ զքրիստոս. և *տգէտ* և տկար. և ապականացու մարմին. և անկեալ ընդ կարեօք մարդկան: - 98. Քսանեմիերորդ՝ արդ՝ եթէ քրիստոս *տգէտ* ունէր միտս, և տկար հոգի, և ապականացու մարմին և եկն քրիստոս զի բարձցէ զտկարութիւնս մեր. և լուսաւորեսցէ որ նստէաք ի խաւարի. և նա՛ է գառն աստուծոյ որ բառնայ զմեղս աշխարհի և զապականութիւն: - 99. Եւ արդ՝ *տգէտն* զտգիտութիւն ո՛չ կարէ բառնալ. և ո՛չ մեղաւորն զմեղս. և ո՛չ ապականացուն զապականութիւն. և ո՛չ սոսկ մարդ զմարդ կարէ փրկել. զի սո՛ւտ է փրկութիւն մարդոյ: - 99. Եւ որդի *տգէտ* վասն մանկութեան: - 105. Տասներորդ՝ զի և բանականս մարդ՝ քան զանբան կենդանիս *տգէտ* լինէր...: - 238-239. Նոյնպէս և ի բանական որակութիւնս հոգւոյն՝ նման և աննման, հաւասար և անհաւասար բացատրեաց. այսինքն խոհեմ և *տգէտ*. հեզ և բարկացօղ. ողջախոհ և ցանկասէր. և այլ զանազան բարս բնական՝ մարդոյն: - 252. Եւ յանւանէն զօրացեալ էր մովսէս. և նոքա տկար և *տգէտ:* - 350. Վասն առաջնոյն գիտելի է, զի դիւրին է զգազանս ընտելացնել, քան *զտգէտ* անձն ի գիտութիւն ածել: - 531. Այնպիսին *տգէտ* և լիրբ է. փախի՛ր ի նմանէ: - 537. ...**գ**՝ ուսուցանել *զտգէտսն*...: - 585. Երկրորդ՝ թէ *տգէտ* լիցի քահանայն և ո՛չ կարէր ընտրել զծանրութիւն մեղացն և զանազանել: - 603. Իսկ մեք ո՛չ ոտք և ո՛չ լեզու ունիմք. այլ տհաս և *տգէտ*...: - 620. Սոքա աւելորդք և խո՛րթք են ի *տգիտաց* ասացեալ: - 634. Երրորդն ի *տգիտա՛ց* է ասացեալ. զի կայանք մարմնաւոր՝ անմարմին հոգւոց ո՛չ է պիտոյ: - 687

**ՏԳԻՏԱԲԱՐ +** Եւ թէ ասեն *տգիտաբար*, քակեն զնկարն. բառնի և էութիւն հօր: - 36. Իսկ զէութիւն բանին որ է՛ յանուն Յօր և Որդւոյ և Յոգւոյն սրբոյ՝ ասելն մի՛անգամ պարտ է ասել և ո՛չ կրկնել *տգիտաբար:* - 588

**ՏԳԻՏԱՆԱՄ +** Բայց պարտ է այնոցիկ որք ո՛չ գիտեն՝ և կամ թէ կամաւ *տգիտանան*՝ ցուցանել զմիաբանութիւն ազգիս հայոց առ այլ քրիստոնեայսն. զի գիտացեալ յամօթ լիցին յաղթեալք ի ճշմարտութենէն: - 553

**ՏԳԻՏՈՒԹԻՒՆ +** Ա՛րդ՝ քրիստոսն որ է օծեալ աստուածութեամբն, և նա աստուծոյ իմաստութիւն է. և ո՛չ ճանաչէ՛ զաստուած. *տգիտութեամբ* կորուսանէր զնա և որոյ է՛ իմաստութիւն: - 96. Ա՛րդ՝ եթէ տգէ՛տ է որդին աստուծոյ հօր, և տգէտ որդւով խօսեցաւ ընդ մեզ. *տգիտութեան* եղիցի և օրէնքս նոր քան զհինն: - 96. Եւ արդ՝ տգէտն *զտգիտութիւն* ո՛չ կարէ բառնալ. և ո՛չ մեղաւորն զմեղս. և ո՛չ ապականացուն զապականութիւն. և ո՛չ սոսկ մարդ զմարդ կարէ փրկել. զի սո՛ւտ է փրկութիւն մարդոյ: - 99. Ապա ուրեմն բարձօղն *տգիտութեանց* ո՛չ ունէր *տգիտութիւն*. և բարձօղն մեղաց և ապականութեանց՝ ո՛չ մեղք և ո՛չ ապականութիւն: - 99. Արդ՝ որպէս օդ լուսաւորեալ՝ ո՛չ ունի մասն խաւարի, Նո՛յնպէս հոգին քրիստոսի միաւորեալ ի բանն աստուած՝ ո՛չ ունի մասն *տգիտութեան:* - 100. Եւ *տգիտութիւնն* է խաւար մտաց: - 101. Եւ այսպիսի *տգիտութիւնս* խաւա՛ր է մտացն և կուրութիւն: - 103. *Տգիտութիւն* ո՞րպէս խաւար է մտացն: - 103. Նոյնպէս և *տգիտութիւնն* մտա՛ցն է խաւար և մոլորութիւն. և կապ. և ծանրութիւն. և անջատօղ. և տգեղութիւն: 103-104. Միտք մեր **բ** պակասութիւն ունի. այսինքն զմոռացումն և *զտգիտութիւն*. զի զանցեալն մոռանայ. և զապագայն ո՛չ գիտէ: - 117. Դարձեալ՝ առ հրեշտակս մի և նոյն իմացումն աստուածային՝ է՛ սրբութիւն՝ լուսաւորութիւն՝ և

կատարումն նոցա. զի աստուածային գիտութիւնն սրբէ յառաջին *տգիտութենէն* և լուսաւորէ՛ զնոսա, և կատարին նոյն հանճարովն: - 139. Զորօրինակ գիտութիւն մարդկան ի սկիզբն և ի մէջն և յեզերն՝ նախ *զտգիտութիւն* փարատէ՛, և ապա՛ զմիտս լուսաւորէ՛ և կատարէ: - 139. Չորրորդ՝ զի *զտգիտութիւն* իւր լուացէ, և ապա՛ զգիտութիւն ուսցի: - 218. Եօթներորդ՝ արևմուտք մեղք և *տգիտութիւնն* է. զոր թողեալ դառնամք առ աստուած ապաշխարութեամբ: - 395. Այսպէս և մարդկութիւնն միաւորեալ ընդ բանին՝ ո՛չ ունի *տգիտութիւն* ինչ մարդկային. այլ գիտէ զամենայն աստուածաբար: - 477. Նախ վասն *տգիտութեան*. **բ** վասն փոփոխման. **գ** վասն հիւանդութեան: - 531. Ա՛րդ՝ *տգիտութիւնն* բնակա՛ն է մարդոյ. փոփոխումն ստացական. և հիւանդութիւնն դիւական: - 531. Նա՛խ՝ զի որ կամաւ և գիտութեամբ մեղանչէ, առաւել է քան զակամայն և *զտգիտութեան*. զի թէպէտ և սոքա մեղք են, այլ պատիժն նւազ. որպէս անասնոյն քան զմարդոյն: - 563. Իսկ մահն՝ որ *տգիտութեամբ* մեղանչէ. թէպէտ ո՛չ գիտէ՝ հոգին մահանայ: - 564. Կամ վտանգաւ. որպէս *տգիտութիւնն:* - 565. Այլ յատկապէս ըստ երից դիմացն, որ տկարութեամբ մեղանչէ՝ է՛ ընդ դէմ հօր. և *տգիտութեամբն* ընդ դէմ որդւոյ. և չարութեամբն ընդ դէմ հոգւոյն սրբոյ...: - 566. Նախ ըստ իմացման՝ *տգիտութիւն* և գիտութիւն: - 663. Եւ ըստ մտացն իմաստութիւն և *տգիտութիւն:* - 664. Եւ զայս ասաց *տգիտութեամբ* զի կրկին յարութիւն մարմնական իմացաւ: - 710. Առաջին պակասութիւն է հոգւոյն իմացականին խաւարն և *տգիտութիւնն*. իսկ ի յարութեանն բառնի այս ի հոգւոյն և լինի լոյս պայծառ՝ և գիտութիւն աստուածային տեսութեանն. - 722. Նախ վասն *տգիտութեան:* - 744. Զի ո՛չ զգալի գիշեր և ո՛չ իմանալի. մեղաց կամ անհաւատութեան կամ *տգիտութեան* գտանի անդ: - 761. ...իսկ Պարագայիւ, զի նա ակամայ և *տգիտութեամբ*. ուստի ո՛չ ունելով զգիտութիւն բարւոյ և չարի: - 777. Այլ ո՛չ զամենայն պակասականքն կրեաց քրիստոս. որ է՛ հիւանդութիւն մարմնոյ և ապականութիւն. կամ մեղք հոգւոյ և *տգիտութիւն:* - 781

**ՏԵԱՌՆԱԿԱՆ +** Իսկ վասն *տեառնականին* և աղօրինէիցն, սուրբն յոստո՛ս է արարեալ. որ չորրորդ եպիսկոպոս էր յերուսաղէմ յառաքելոյն յակոբայ: - 659

**ՏԵԱՌՆ ԵՂԲԱՅՐ** - Առաջին և երկրորդն՝ ծննդեան և մկրտութեանն. զոր ի միասին տօնեմք ըստ կանոնաց սուրբ հարցն և *տեառն եղբօրն* յակոբայ: - 649. Զմեծ կարգն՝ է՛ կանոնեալ *տեառն եղբայրն* յակոբոս որ զընթերցուածն կարգեաց...: - 651

**ՏԵԱՌՆԸՆԴԱՌԱՋ +** Եւ զինչ և իցէ պատճառաւ զկարգեալն առաքելոցն փոխեցին զծնունդն և *զտեառնընդառաջին* տօնն: - 482. Եւ ի փետրվարի երկուքն *տեառնընդառաջ* կատարեն: - 483. Որ կատարի *տեառնընդառաջն* փետրվարի **ժդ**: - 483. Յնգետասաներորդ՝ յա՛յտ է յայսմանէ. զի վասն տօնի *տեառնընդառաջին* առաքեաց յուստիանոս կայսրն յերուսաղէմ զօրս բազում երիցս անգամ, - 484-485. Մովսէս քերթօղն զծննդեանն, և զմեծացուցէքն, և *զտեառնընդառաջին*, և զփոխման առաջին պատկերն: - 637

**ՏԵՂ +** Այլ և յեօթն *տեղ* մասնէ՛ բղխեաց արիւնն քրիստոսի: - 492. Ի քանի՞ *տեղ* յոյժ անարգեցաւ քրիստոս ի ժամ չարչարանացն: - 492. Յեօթն *տեղ* յոյժ անարգեցաւ: - 492. այսինքն յի՞նչ *տեղ* կամ յի՞նչ ժամանակ գործեաց զմեղքն: - 601. Այլ և դիրք՝ զնշանացի *տեղն* ցուցանէ: - 678

**ՏԵՂԱԿԱԼ +** Դարձեալ՝ մարդեղութեամբն տէրն եղև ծառայ: ...Անպարագրելին *տեղակալ:* - 470

**ՏԵՂԱԿԱՆ +** Անկումն դիւաց կրկին էր. այսինքն հոգեւոր և *տեղական:* - 146. Զի՞նչ է *տեղական* անկումն նոցա: - 146. Ա՛րդ՝ *տեղական* անկումն դիւին եղև կամ ի դժոխս՝ կամ ի յօդս աղջամղջին որ է՛ միջին կայարան օդոյն: - 146. Առաջինն է *տեղական:* - 152. *Տեղական* անկումն եղև դիւաց ի սկիզբն ստեղծման իւրեանց վասն ամբարտաւանութեան և մախանաց ընդդէմ արարչին փառաց. ուստի անկաւ յերկնից ի դասուց հրեշտակաց և ի փառաց իւրեանց որպէս ասացաւ յառաջագոյն: - 153

**ՏԵՂԱՏԱՐԱՓ +** Եւ որ մերձ ի հարաւ հնչէ, Եւրոս կոչի. գէ՛ճ է. և *տաղատարա՛փ* բերէ: - 205

**ՏԵՂԵԱԿ +** Յինգերորդ՝ զանազանութիւն՝ զի սատանայ ի փորձելն ո՛չ գիտէ զառաջիկայն թէ յաղթէ և թէ յաղթի. և եթէ էր *տեղեակ*՝ ո՛չ մրցէր ընդ կատարելոցն որք յաղթահարեն զնա. որպէս ընդ ստեփաննոսի, անտօնի, և այլոցն, որք յաղթեցին սատանայի: - 161. Եւ *տեղեակքն* ասէին, սա՛ է որ ի մորենւոջն և ի ծովուն զսքանչելիսն արար: - 638. Երկրորդ, աթոռակիցքն քրիստոսի. որպէս առաքեալքն և մարգարէք և կատարեալքն դատեն զմեղաւորս իբր *տեղեակք* օրինացն աստուծոյ: - 738

**ՏԵՂԵԱՄ +** Դարձեալ այլ զանազանութիւն *տեղեաւ:* - 519. Երրորդ, եօթնօրեայ ժողովիլ կենդանեացն առ դուռն տապանին անսուաղ մինչև *տեղեաց* անձրևն. և է է կենդանիք սուրբք: - 653

**ՏԵՂԵԿԱՆԱՄ +** Երրորդ՝ իմաստութիւն ասի և բանական քննութիւն. որք բանիցն *տեղեկացեալ*

ընտրեն զստոյգն ի ստոյն: - 269. և նոքա զամենայն ինչ ծածկապէս *տեղեկացան*. զի ժողովեալքն ի քաղկեդոն ակն առին թագաւորին և կնոջ իւրոյ. և զարհուրեցան ի սպառնալեացն. և զնեստորի կարծիսն հաստատեցին. զերկու բնութիւնսն. և զբ կամսն. և զբ ներգործութիւնսն: - 543

**ՏԵՂԻ +** Իններորդ՝ աւելորդք էին դժոխք և արքայութիւն. որք *տեղիք* են բարեաց և չարաց: - 20. Եւ ի նոյն *տեղւոջն* ասէ, «ամենայն այր իսրայէլ ասացին թէ՝ բարի՛ է խորհուրդ քուսեայ». միթէ ամենայն իէլ ասա՞ց զբանս զայս, ո՛չ: - 27. Եւ դարձեալ՝ արարա՛ծ է ըստ այլոց. «որպէս կամեցաւ և արար տէր». և Դարձեալ՝ զկամքն ի *տեղի* մօ՛ր ստեղծանեն: - 36. Իսկ զի ասէ՝ «առաքեցայ» ո՛չ թէ *տեղւոջէ* ի *տեղի*. որպէս մեք բովանդակեալքս ի մի *տեղի*. զի առաքիմք շարժմամբ ի միւսն: - 40. Այլ նա ընդ ամենայն է քրիստոս զօրութեամբ և էութեամբ թափանցեալ է. և ո՛չ է *տեղի* թափուր ի նմանէ...: - 40. Այսքան պատճառս եցոյց չարչարանքն փրկչին յայսմ *տեղւոջ:* - 43. Երկրորդ՝ զի բարձրաբերձ է *տեղեօք:* - 44. Պատասխանեմք եթէ՝ հոգի աստուծոյ ոմանք զօդս ասեն. որոյ բնական *տեղի* իւր է՛ ի վերայ ջուրց: - 60. Զի եթէ զոյգ և հաւասար, ո՛չ գոյ առ նոսա կատարեալ բղխօղ. զի երկոքինն ի մի բղխողի *տեղի* են: - 63. Եւ դարձեալ՝ զի հաներ զբանն ի կազէ Երրորդութեանն. շարադասելով զմարդն ի *տեղի* նորին: - 69. Դարձեալ՝ մի բնութիւն ասէ ապօղինար. որ զհոգի և զմիտս ուրացաւ. և միայն զմարմին ասէ առեալ, և ի *տեղի* հոգւոյ զբանն բնակեալ: - 81. Այլ և մեծն դիոնէսիոս ի բազում *տեղիս* միաւորեալ և մի բնութիւն խոստովանի բանին աստուծոյ մարդացելոյ: - 83. Նիւթն. ձևն. այսինքն է կերպն. Գաւառն. Ազգայինքն. ժամանակն. *Տեղին*. և յատուկ Անունն: - 87. Նոյնպէս *տեղիք* մարմնոյն պարունակօղ՝ զմինն պարագրելի, և զմիւսն անպարագրելի: - 87. Երրորդ՝ զի բանս մեր ձայնիւ յամենայն լսելիս անցանէ և թղթով յամենայն *տեղիս* ընթանայ. և բանն աստուծոյ սո՛ւր է և հատու և ընդ ամենայն է քրիստոս անցանէ թափանցաբար: - 121. Չորրորդ՝ և զի յամենայն *տեղիս* են: - 125. Շնորհն երբեմն ի *տեղի* ողջունի դնի. ըստ այնմ թէ՝ «շնո՛րհք ընդ ձեզ և խաղաղութիւն». որով հոգին սուրբ տըւեալ լինի: - 139. Երբեմն ի *տեղի* գոհութեան է. ըստ այնմ թէ՝ «շնո՛րհ ունիմ այնմիկ որ զօրացոյցն զիս»: - 139. Եւ ասեն՝ օրհնեալ փառք տեառն ի *տեղւոջ* իւրում: - 144. Ա՛րդ՝ բնութեան նոցա պատշաճի բարձրագոյն *տեղիք* որ է երկինքն յորում ստեղծան. զի թէ կացեալ էին կատարելոց էին անդ: - 146. Այլ մեղացն պատշաճի ստորին *տեղիք* որ է դժոխքն: - 147. Յասարակ կարծիք է թէ՝ ժերորդ դաս հրեշտակացն անկաւ, և մարդս զանկելոց *տեղին* լնու: - 150. Իսկ ոմանք ասեն *զտեղի* նորա ի հաստատութեան երկնից...: - 150. Էութիւն և բնութիւն՝ և անձն՝ և պարագրօղ՝ և *տեղի:* - 154. Եւ այլ բազում զանազանութիւն է գործոց մարդկան և աստուծոյ. զի մեք կարօտ եմք նիւթոյ. ժամանակի. *տեղւոյ*. օգնականի: - 164. Իսկ Ուր ոչ ասեմք *տեղի* աստուծոյ. զի *տեղի* որ է՛ բովանդակութիւն, եռաբա՛ր ասի: - 172. Նախ է *տեղի* մարմնական. որ ըստ իւրաքանչիւր մասնկանց մարմնոյն պատահի: - 172. Երկրորդ՝ *տեղի* լսի սահման. ըստ որում բովանդակէ՛ զբնութիւն իւրին: - 172. Երրորդ՝ *տեղի* ասի և հասումն մտաց. ըստ որում պարունակէ՛ իմացմամբ զէութիւն իմացեալ իրին: - 172. Այլ և ո՛չ *տեղի* պատահական. որպէս աստ և անդ. զի ոչէ ի *տեղոջ* իմիք պարունակեալ. և ո՛չ բացեայ ի *տեղւոջէ* իմիք զատեալ. զի նա՛ է ամենցուն *տեղի:* - 172. Այլ ասի *տեղի* կերպիւ ինչ, զի է՛ հայր ի յորդի. և որդի ի հայր. և հոգի ի հայր և յորդի. և անդրադարձեալ...: - 172. Իսկ Կալ՝ ո՛չ զկալն կամ զնստիլն մարմնապէս. այլ զհաստատիլն անշարժ էութեամբ. զի ո՛չ շարժի. ո՛չ բնութեամբ, ո՛չ կամաւ, և ո՛չ *տեղեաւ:* - 172. Այլ և ո՛չ *տեղեաւ*, զի անբովանդակելի՛ է: - 172. Յինգ. այսինքն Քանակն որ է չափն. Որակն. որ է գոյնն. ձևն. *տեղին*. զատութիւնն: - 174. Զի՞նչ է *տեղին:* - 174. *Տեղին* է պարագրօղ մարմնոյ. զի ամենայն մարմին *տեղեաւ* պարագրի. և ամենայն *տեղի* է ի պատահական սեռէ: - 174. Այլ է՛ բաղկացական մարմնոյ, և է՛ *տեղի* պատահական: - 174. Բաղկացական է, որ ընդ մարմնոյ մասնկանցն գոյանայ ի ներս և ի դուրս. վերոյ և ներքոյ շուրջանակի. զի իւրաքանչիւր մասունք ի *տեղին* ունին զդրութիւնն. և կայացեալ ի բոլորն: - 174. Իսկ պատահական *տեղի* է, յորում նեստեալ ոք՝ կարէ՛ թողուլ զայն և լինիլ յայլ *տեղւոջ*. որպէս ի վեր կամ ի վայր: - 174. Իսկ անմարմնոյն ո՛չ է *տեղի* մարմնական. որպէս աստուծոյ կամ հրեշտակաց. կամ հոգւոց. զի անպարագրելի են: - 174. Այլ և ո՛չ *տեղի* պատահական. թէպէտ ի նշան պատւոյ ասին յերկինս. այլ ոչ իբր ի մարմնական *տեղւոջ:* - 174. Իսկ աստուած արտաքոյ է սոցա. զի ո՛չ է սահմանեալ և ո՛չ պարագրեալ և ո՛չ կալեալ յիմեքէ. ո՛չ իմացմամբ և ո՛չ *տեղեաւ* կամ մարմնով: - 174. Ասէ զայս, զի բնութեամբ անբովանդակելի է. և ոչ *տեղեաւ* ըմբռնի. մինչ զի ինքն զամենայն *տեղիս* պարունակէ. յորում կեամք և շարժիմք և եմք: - 180. Զի ըստ իմաստ նոյն է՛ աստուած ամենայն ուրէք և ո՛չ ուրէք. ոչ ի *տեղւոջ* իմիք՝ և ո՛չ բացեայ ի *տեղւոջէ* իմիք. այլ վերոյ սորա, և ներքոյ սորա. ի մէջ

սորա, և արտաքոյ սորա: - 180. Ուր և երբ այսինքն *տեղի* և ժամանակ գո՞յ աշխարհիս թէ ոչ: - 180. Այլ և ո՛չ ունի *տեղի* մարմնական. և ոչ ի ժամանակի երեքմասնեան. այսինքն յանցեալն՝ ի ներկայս՝ կամ յապառնին: - 180. Եւ զի ո՛չ է ի *տեղւոջ* աստի յայտ է, զի *տեղին* է վերին և ներքին և միջին. և արտաքոյ աշխարհիս ո՛չ երևին սոքա: - 180. Եւ երկիրս անշարժ է *տեղեաւ*...: - 182. Հինգերորդ՝ թէ երկինքն ո՛չ էր բոլորակ՝ այլ քառանկիւնի կամ եռանկիւնի, յորժամ շարժէին անկիւնքն՝ յորմէ *տեղւոջէ* վերանային՝ մնային առանց *տեղւոյ*. և *տեղի* անկեանցն առանց մարմնոյ: - 183. Երկրորդ՝ լուսաւորքն ի հրոյ են. և *տեղիք* հրոյն է բարձրագոյն. որպէս տարր հրոյն: - 188. Չորրորդ՝ երկիրս այս *տեղիք* ուսմա՛ն է մեր՝ ըստ կարգի կատարեցան. զի մեք զամենայն ինչ ըստ կարգի ուսցուք. և մի՛ անկարգ և շփոթեալ: - 192. Երրորդ՝ *տեղիքն:* - 194. Իսկ *տեղիքն*, զի յա՛յս կիսագունդս լինի լոյս, և ի միւսն խաւար: - 194. Ուսաք յիմաստնոց թէ՝ ի բաժանիլ լեզուաց **իբ** տանուտերանց, և ի գնալն յիւրաքանչիւր *տեղիս* ի հեռու կամ ի մօտաւոր աշխարհս. զօրն զայն տարեմուտս կարգեցին. և ուսուցին որդւոց իւրեանց պատւեալ զօրն զայն տրօք ընչից: - 200. *Տեղի*՛ է հոտոց և համոց: - 202. *Տեղի*՛ է ազդմանց: - 203. Այլ Ամպն լինի, յորժամ զօրութեամբ արեգականն ի վեր քարշին գոլորշիքն ի ջուրց և ի գէջ *տեղեաց:* - 204. Քսաննե՝ զունայն *տեղիս* լնու: - 207. Երրորդ՝ զի ամենայն *տեղիս* գտցի ջուր. ի լերինս և ի դաշտս, և արբցեն կենդանիք: - 207. Հինգերորդ՝ զի բազմազան կենդանիք ի ջուրս *գտեղի* կալցեն: - 207. Եւ զի *տեղի* է ուսման արուեստից և առաքինութեանց և իմաստութեան հանճարոյ: - 211. Երրորդ՝ *տեղիք* են բարեխառն ի շող ժամու, և ամրո՛ցք ի խռովութեան աւուրս: - 211. Նա՛խ՝ զի զղէմսն ընտրեսցէ, այլ և *գտեղի* և զժամանակն, և ապա խօսեսցի: - 218. Եւ դրախտն է բարձր *տեղեաւ*. և լուսաւոր. և անապական վայր: - 221. Տասներորդ՝ Առաջինն է անշարժ բնութեամբ և *տեղեաւ:* - 221. Երրորդն անշարժ է *տեղեաւ* և տեսակաւ: - 221. Ա՛րդ՝ եթէ մարդն անապական էր՝ յապականացու *տեղւոջ* ո՛չ բնակէր. ապա թէ ոչ ի *տեղւոջէն* եղև ապականացու և ո՛չ ի գործոյն: - 223. Յայն՝ զի փայտ դրախտին անփուտ է. և տերևն անփտելի. և պտուղն անճօրելի. և ծաղիկն անթառամելի. և աստուծոյ տնկեալ ձեռօք իւր. *տեղի* անապական ձեռագործին ադամայ: - 223. Նոյնպէս և վերջին հուրն նովին չափով հեղեղին ի նոյն *տեղիսն* ընթանայ: - 225. Երկրորդ՝ զի դրախտն է *տեղիք* անապական. և ո՛չ լինէր ի մարդոյն ծորումն ինչ աղտեղութեան. և ոչ որպէս տնկոցն: - 225. Իններորդ՝ զի մայր մեր հողն է. և սեղան և *տեղիք* և գերեզման. թէպէտ և այլ տարերքն են մեզ ազգականք. այլ մեք ի մօրէ՛ ծնանիմք: - 229. Իսկ թէ ըստ մարմնոյն շեղեսցի՝ ի մահ պարտաւորեսցի և տնկեսցի ի մարմնաւոր *տեղիս*. որպէս և եղև իսկ: - 231. Երկրորդ՝ պատուական մասն մարդոյն գլուխն է. վասն որոյ զվերինն և զառաջինն ընկալաւ *տեղի:* - 232. Իսկ երկրորդն թէ յորմէ՞ սեռէ է օտարն և աննմանն՝ գիտելի է, զի դէմն և կերպն ի չորից սեռից գոյանայ. ի գոյէ՝ ի քանակէ՝ յորակէ և ի *տեղւոյ:* - 236. Եւ դիրքն ըստ կարգի՝ *տեղի* է: - 236. Եւ պակասեալ ի սոցանէ մարմնոյն, ցուցանի կերպարան ի գոյէ ի քանակէ և յորակէ և ի *տեղւոյ* շարակցեալ. որպէս յա՛յտ է ի հայելւոջ: - 236. Եւ նուազեալ յայսցանէ գոյնն՝ մնայ պատկեր ի քանակէ և ի ձևոյ և ի *տեղւոյ* երևեալ. որպէս յա՛յտ է ի մեռեալ մարդն: - 236. Եւ պակասեալ ի սմանէ *տեղին*, լինի տիպ ի քանակէ և ի ձևոյ բաղկացեալ. որպէս յա՛յտ է ի մոմն տպացեալ: - 236. Եւ ուր ջերմութիւնն շատ է, մազն ո՛չ սպիտակի. որպէս արտևանունքն աչացն և յայլ *տեղիս:* - 240. Իսկ բանն սկիզբն առեալ ի խոկմանէն, *գտեղի* առնու ի բարին: - 248. Եւ ա՛յս է բացադարձութիւն իմացմանն. զոր ի բազում *տեղիս* ասեն վարդապետք: - 251. Երրորդ՝ անպատշաճ *տեղիք* սերմանն: - 256. Երկրորդ՝ զի թէ այլ և այլ էր հոգի, ի յայլ հոգւոյ *տեղիս* ո՛չ բնակէր այլ հոգի որպէս յայլո՛յ կաղապար. և ա՛յլ դրօշած ի յա՛յլ կնիք. այլ մի է. վասն այն որ յետոյ երևի, յառաջնոյն խառնուածն կարէ՛ բնակիլ: - 259. Այսինքն. ազգն՝ *տեղին* և ժամանակն. որպէս ի սերմանս բուսո՛ց է տեսանել: - 261. Եւ այլոց *տեղին* է պատճառ, բերրի և անբերրի գոլով: - 261. Եւ էգն հոգևորի յետ **ծ** աւուրն՝ որպէս ասացաք զպատճառն վասն *տեղւոյն* ցրտութեան որ է՛ ձախ կողմն արգանդին...: - 261. Կամ ըստ ազգի իւրեանց, և կամ ըստ *տեղւոյն* և ժամանակին ցրտութեան և ջերմութեան և այլն: - 263. Եւ կամ ըստ ազգի իւրեանց և ըստ *տեղւոյն* և ժամանակին փութան և յապաղեն զծնունդն: - 263. Հինգերորդ՝ զի կողնէ աման և *տեղի* երիկամանց. յորմէ շարժի ցանկութիւնն. զի թէպէտ ո՛չ շարժէ զնա. այլ ազդումն ինչ ունի զնմանէ: - 276. Նաև ըստ երից դրութեանց *տեղեացն*. որ է՛ դրախտն. և աշխարհս այս. և հանդերձեալն: - 278. Եւ զի յերիս *տեղիս* պատերազմին դևք: - 285. Եւ մարմնաւոր երկին է և անմահութեան *տեղիք:* - 289. Եւ երկրորդ ի մահու և յանցաւոր *տեղեաց* յանմահ և յանանց *տեղիս:* - 289. Եւ երրորդ զբարձրանալն ի ներքին վայրէ ի բարձր *տեղիս:* - 289. Ներքնատունն՝ ժողովրդեանն *տեղիք:* - 294. Եւ վերինն քահանայից բեմն *տեղիք*

պատարագաց: - 294. Եւ էր թրծեալ աղիւսն ի *տեղի* քարի, և կուպրն ի *տեղի* շաղախի: - 296. Եւ զ**խ** ամ շինեցին յամառն և ձմեռն ըստ բարեխառնութեան *տեղւոյն*. մինչև հասին յործկուտ օդն թանձրացեալ ի գոլորշեաց և ջերմացեալ յարևուն: - 297. Եւ երրորդ՝ զի մի՛ վասն աշտարակին ի նոյն *տեղին* մնասցեն՝ և աշխարհ ամենայն աւերակ կացցէ: - 298. Տասներորդ՝ զի մելքիսեդեկ ո՛չ միայն պատարագաւն, այլ և անուամբ և *տեղեաւ* ևս օրինակ էր քրիստոսի: - 301. Յնգետասաներորդ՝ որպէս ի վերայ խահակայ եդեալ եղև փայտ պատարագին մինչ ի *տեղի* զենմանն: - 306. Եւ տէրն եբարձ ի յուս իւր զփայտ խաչին մինչ ի նոյն *տեղի* գողգոթային ուր զենանէր իսահակ: - 306. Երկրորդ՝ հրեշտակք անդրանիկք են քան զմարդ ստեղծմամբ. և յորժամ մեղան դևքն՝ խոտեցան և եղեն կրտսերք. և մարդն ել ի *տեղի* նոցա և եղև անդրանիկ: - 310. Նոյնպէս և սուրբքն ջերմ սիրովն աստուծոյ ժողովին ի կայանս հոգւոցն ի *տեղւոջ* լուսոյ և հանգստեան: - 315. Իննև**ժ**, ո՛չ յառնէ առիւծն ի *տեղւոջէն* մինչև հնազանդէ՛ զթշնամիս իւր: - 316. Եւ այսպէս օրհնութիւն սոցա ըստ *տեղւոյն* իւրեանց կայ և մնայ մշտնջենաւոր յիշատակութեամբ: - 320. Իրաւունքն է ընտրութիւն և հատուցումն դատաստանին այսպէս. զի դատաստանն է *տեղիք* քննութեան. և արդարութիւնն է գործ դատաստանին: - 340. Եւ արտաքին սրահն՝ երկիրս մարմնաւոր *տեղի:* - 343. Եւ զմնացեալ նշխարսն ուտէին. քահանայքն և արուք նոցա ի սուրբ *տեղւոջ:* - 358. Եւ ի սմանէ առցեն ասէ զհաս իրաւանցն. և զմնացեալն եփեսցեն ի սուրբ *տեղւոջ* և կերիցեն քահանայքն զեօթն օր: - 359. Եւ այն՝ զի զամենայն ճարպ և զամենայն արիւն ո՛չ ուտէին յամենայն *տեղիս* բնակութեան իւրեանց: - 360. Ի հինգ *տեղւոջ* ի հինն հուր էջ յերկնից ի վերայ սեղանոյն և հոտոտեցաւ ի հոտ անուշից: - 363. ...յայնժամ քակէ՛ զտունն մեր որ է՛ հոգի և մարմին. և արտաքոյ քաղաքին յանսուրբ *տեղիս* ընկենու որ է՛ դժոխքն արտաքոյ արքայութեանն, և անսուրբ *տեղի* մեղաց և մեղաւորաց. և անդ արտաքսէ զմեղաւորսն: - 368. Յինգերորդ՝ զի և վայրի անասնոց և գազանաց բաժին լիցի ի վաստակն մեր. զի նոցա է երկիրս այս և *տեղիք* ուր մեք բնակեցաք: - 372. Առ *տեղեաւն* նշանակէր զնուազութիւն աւուրցն տօնից ի պակասումն զուարակացն: - 374. Նա՛խ՝ զայս նշանակէ թէ ի **ժ** դասուց հրեշտակաց մինն անկաւ, և մարդիկ *զտեղի* և զթիւ անկելոցն լնուն: - 376. Այլ ա՛յս է ուղիղն. զի բովանդակն ամենայն **թ** դասք են հրեշտակաց. այլ անկեալքն ի նոցանէ՝ են ի չափ միոյ դասու. և մարդիկ զնոցա *տեղին* լնուն: - 376. Չորրորդ՝ զի յայտնեսցի թէ՝ ի մէջ ծառայութեանն յեգիպտոս այնքան բազմացոյց զնոսա խնամքն աստուծոյ. այսքան բազմութիւնս ի *տեղիս* իւրեանց խաղաղութեամբ բնակեալ՝ ո՞րքան անթիւ բազմասցին: - 377. Անդրանկաց սատակումն եգիպտոսի, նշանակէ՛ զանկումն սատանայի յերկնից. և փոխանակ նոցա ընտրեալ և կոչեալ որդի անդրանիկ զիսրայէլ. և զնոսա փոխարկեալ առնու զօծելոց դասս քրիստոնէից ի *տեղի* նոցա: - 380. Նա՛խ՝ առ *տեղեաւն* ցուցանէր յահարոնէ՛ լինիլ քահանայ. յորդիս և ի թոռունս յազգէ յազգ: - 382. Զի ակամայ սպանօղք զերծանիցին անդ մինչ քահանայն կենդանի իցէ. և յորժամ մեռանիցի քահանայն, ապա գնասցեն ի *տեղիս* իւրեանց: - 392. Այլ ընդ դևս պատերազմիլ միշտ. զի որոց դիւաց թէ յաղթէ մարդ, թէ հպարտութեան և թէ պոռնկութեան, զնոցա *տեղիքն* ժառանգէ յերկինս: - 393. Դարձեալ գիտելի է, զի յերիս նշանաւոր *տեղիս* եղև պատերազմ նոցա: - 393. Վասն է՞ր յայս **գ** *տեղիս* պատերազմին դևք: - 394. Տասներորդ՝ ունի **գ** *տեղիս*. կրկին ուստի զրկեցաւ. և օդդ ուր անկաւ. և հուրն ուր տանջի: - 394. Նոյնպէս յերեք *տեղւոջ* ոգորի. յերկրի՝ զի հանցէ յերկնից. և յօդդ՝ զի արգելցէ. և ի յարութեանն՝ զի ընկեսցէ ի հուրն: - 394. Իսկ սիրտ՝ զհոգին ասէ. որ ծածուկ է. և *տեղիք* խորհրդոց. և մի է. և կենդանութիւն մարմնոյն: - 396. Փեգովրայ *տեղի*՛ էր կռոց...: - 409. ...իսկ յորժամ սպասաւորեաց հրեշտակապետն՝ զտիրական անունն ի սաստ կոչելով. յայնժամ ամպ ինչ լուսաւոր ծագեալ ի *տեղւոջն*, շիջոյց զերևումն չարին: - 410. Եօթներորդ՝ ի յօրինակ բնութեանս դառնալոյ անդրէն ի *տեղիքն* մեր ուստի ելաք որք են հաւատացեալք: - 414. Եւ տէր մեր խաչիւն զբնութիւնս ի *տեղի* իւր: - 418. Որ օրհնեաց զզինուորեալ ռուբէնեանսն և արձակեաց ի *տեղիս* իւրեանց...: - 419. Եւ տէր մեր յեօթն *տեղւոջ* է ձաղանօք երիցս կապեալ: - 423. Երկրորդ՝ զի ի սուրբ *տեղոջ* խորանին է: - 427. Զի ամօթն և արտասուքն ի *տեղի* հատուցմա՛նց են խոստովանողին: - 432. Դաւիթ ելեալ ի բարձր *տեղի* աղաղակեաց...: - 437. Զի *զտեղին* յեբուսացւոցն գնեաց դաւիթ. և ճարտարապետն քիրամ տիւրացի էր որ շինեաց. և քիրամ արքայ զփայտն առաքեաց: - 440. Մատնեաց զչարս ի գերութիւն. զի ա՛նդ վախճանեսցին, և արդար ծնունդք նոցա դարձցին ի *տեղիս* իւրեանց: - 448. Եօթն *տեղիս* յոյժ անարգեցաւ: - 454. Երկրորդ՝ առեալ լինի ի *տեղի* միամտութեան, ըստ տնտեսին որ էր «հաւատարիմ և իմաստուն»: - 457. Երրորդ՝ իմացի ի *տեղի* հնազանդապէս

սպասաւորութեան...: - 457. Չորրորդն է ի *տեղի* անփոփոխ ճշմարտութեան...: - 457. Իսկ հաւասարապէս պատշաճի բոլոր բանական եղելոցս ըստ *տեղւոյն* դիպման: - 457. Եթէ աստուած մարդ եղև՝ ցուցաւ յայլում *տեղւոջ:* - 468. Այս դպրութիւնքս բանին ի կատարածի ըստ դանիէլի. որպէս գրեալ է աստ յայլում *տեղւոջ*՝ անդ տեսցես: - 481. Չորրորդ՝ զի յինն ժամէն մինչև յերեկոյ ի *տեղի* իւր դարձաւ: - 490. Երկրորդ՝ զի ի բարձր *տեղւոջ* էր ի թագաւորական քաղաքի: - 490. Երկրորդն ի *տեղին:* - 490. Եօթներորդ՝ ածաւ ի *տեղի* կառափելոյ և անդ խաչեցաւ: - 493. Արդ զապարանքն պիղատոսի իբր զմի *տեղի* առեալ. թէպէտ կրկնեալ եղև. և խաչելութեանն *տեղի* լինի **գ**. և գերեզմանն յորում հանգեաւ է: - 493. Զոր օրինակ ի բարձր ուստէք քար հոլովեսցի, և որ մօտն կացցէ ասէ ցնա՝ երթալ ունիս մինչ ի ներքին վայր *տեղիս* և ապա դադարիս: - 497. Իսկ ապականութիւն այլայլութեամբն ի ներքս մտանէ, և զորոշեալն ի միմեանց՝ դարձեալ օգտէ՛ և այլայլէ՛. մինչ զմարմինն ի բուն տարերս լուծանէ, և զհոգին յաներևոյթ *տեղիս:* - 498. Մարմնական *տեղին* զանմարմին հոգին ո՞րպէս արգիլէ: - 504. Որպէս մարմնական հուր զանմարմին հոգիսն և զդևսն տանջէ, նոյնպէս և *տեղին* ըմբռնէ: - 504. Նոյնպէս ի մի դժոխքն *տեղիք* բազումք են և տանջանք: - 505. Իմաստունք *զտեղին* յերկուս բաժանեն. ի վերին և ի ներքին. զի սոքա են հակակայք և առինչք միմեանց. իսկ միջին *տեղի* ո՛չ է...: - 505. Եւ դարձեալ՝ դարձցին մեղաւորք անդրէն ի դժոխս թէ ի նոյն *տեղի* ըստ ոմանց, կամ յայլ *տեղի* տանջանաց ընդ գործոց հատուցման: - 508. Եւ որ խոտէ և ունդ և պտուղ՝ է՛ կերակուր պահոց. զի անզգայ է և անշարժ *տեղւոջէ* ի *տեղի* և անշունչ: - 510. Եւ այսպէս սովորաբար խօսիմք, թէ յուրբաթի կէս օրն ելեալ ոք ի *տեղւոջէ*՛ մինչև գայ առ մեզ ի լոյս կիրակէին կամ ընդ առաւօտն, ասեմք թէ **գ** օր է ճանապարհին. նոյնպէս և յարութիւնն քրիստոսի: - 516. Այլ *տեղի* փոխման կուսին ի վե՛ր է քան զամենայն դասս հրեշտակաց: - 519. Իսկ *զտեղի* համբարձմանն քրիստոսի միտք ո՛չ կարէ ցուցանել. զի ի լոյս անմատոյց է բնակեալ և ի ներքին կողմն վարագուրին ըստ առաքելոյն: - 519. Այլ համբարձումն նշանակէ՛ ի միտս համայն բարձր քան զամենայն դասս իմանալեացն. զի նմա՛ երկրպագեն ամենայն երկնայինքն. և անդր քան *զտեղի* տիրամօրն. զի ի միածին որդւոյ իւրմէ խնդրէ զփրկութիւն մարդկան: - 519. Եւ տէր յորո՞ւմ *տեղւոջ* կատարեաց: - 526. **Մի կոչի եկեղեցի՝ ո՛չ *տեղեաւ* մի. այլ միով հաւատով և յուսով կոչմանն. և միոյ մօր և մի որովայնի ծնունդ աւազանին. և մի կերակուր որ է տեսութիւն աստուածային գրոց. և մի մարմին և արիւն փրկական. և մի գլուխ և պսակ և զգեստ ունիմք զքրիստոս:** - 533. Զի *տեղիք* զիշխանութիւն նորա և զսուր ո՛չ արգելուն: - 538. Եւ սահմանեալ *զտեղիսն*՝ կախեաց կանթեղս յանուն ազգացս: - 549. Եւ այն զի խափանեցաւ գործ մարմնոյն, ի ժամանակէն կամ ի *տեղւոյն* կամ ի դիմացն պատճառեցաւ: - 556. Դարձեալ, բարկութեամբ զպատկերն աստուծոյ կորուսանեմք ի մեզ. և հոգին սուրբ փախչի ի բարկացեալ հոգւոյ. զի խաղաղութիւն է *տեղի* նորա: - 570. Քսաներորդ, յամենայն *տեղւոջ* իւր սիրելեաւն պարծի: - 576. Նա՛խ՝ զի արք վասն նորա ի զազիր *տեղիսն* խոնարհեսցին. - 613. Երրորդ՝ զի մարմինք սրբոց ի գաւիթս պահին և ո՛չ յեկեղեցի. յօրինակ հոգւոց նոցա որք են ի պահեստ հոգւոյն ի *տեղւոջ* լուսոյ և հանգստեան: - 617. Զի ի **դ** *տեղւոջս* յայս՝ պա՛րտ է ժողովրդեանն զգլուխս բանալ: - 635. Դարձեալ՝ ի հանդերձեալն յորժամ խառնին հրեշտակք և մարդիկք ի լնուլ *զտեղի* անկելոց՝ կուսանաց սրբոց: - 636. Վասն այն և *տեղեաւ* փոխեմք. զմարգարէսն ի մէջ եկեղեցւոյն, և զառաքեալսն մերձ բեմին ընթեռնումք: - 643. Զի՞նչ է խորհուրդ բարեկենդանին որ յամենայն *տեղիս* ի վանորայս և յանապատս ներե՛ն սակաւ ինչ ի չափաւոր վայելս: - 657. ...ո՛չ էր յարմար թէ ապականացուն յանապական *տեղիս* բնակեսցի. մինչև սա ևս յանապականութիւն վերափոխեսցի: - 662. Երկրորդ՝ այն *տեղի* անմարմնո՛ց է ոչ կարէր մարդս մարմնով անդ բնակիլ...: - 662. Չորրորդ՝ այն *տեղիք* անփոփոխ է. և այս փոփոխական: - 662. Վեցերորդ՝ ամենայն պատուական իր՝ ի բարձր *տեղւո՛ջէ*. որպէս գլուխն զի պատուական մասն է. և լուսաւորքն և երկին քան զերկիրս: - 662. Արդ՝ ա՛յլ ամենայն փոփոխմունք ասացան ի վերոյ ի զանազան *տեղիս:* - 664. ...և նա դնէ յեկեղեցին մերձ առ դուռն որ նշանակէ զկայանք հոգւոցն յերկինս ի վերջին *տեղւոջ* մինչ ի յարութեանն օր: - 672. Դարձեալ՝ դնեն զքահանայս առաջի սեղանոյն ի վերայ բեմին, և զկրօնաւորս ի մէջ եկեղեցւոյն, և զաշխարհականս առ դուռն, նշանակէ զզանազան *տեղիս:* - 672. Տասներորդ, զի **գ** են *տեղիք*. այսինքն կայանք հոգւոցն և դժոխք և արքայութիւն...: - 675. Վեցերորդ, որպէս կենօք փոխեցաւ, նոյնպէս և *տեղեաւ* փոխեսցի...: - 677. Իններորդ, զի անշա՛րժ է երկիր *տեղեաւ*. զի կիբրկոն ասեն...: - 678. Եւ զի՞նչ է օգուտ ի յօրհնեալ *տեղիս* թաղելն: - 678. Չարքն ի սուրբ *տեղիս* թաղեալ օգո՞ւտ է նոցա: - 678. Իսկ ներքին դժոխք զտանջանաց *տեղիքն* ասէ

մարգարէն...: - 679. զի վերափոխեաց զնա աստուած ի *տեղի* ուր ինքն գիտէ...: - 681. Այսպէս և բաժանեալ հոգին ի մարմնոյ՝ ընթանայ յերկինս և ամփոփի ի *տեղւոջ* լուսոյ յօթևանս հոգւոց...: - 681. ...զի հայրն աբրահամ առեալ հուր և սուր, և յետ երից աւուրց տեսին *զտեղին* ի հեռաստանէ որպէս ասէ պատմութիւնն: - 681. Եւ ի հեռուստ տեսեալ *զտեղին*, զի յետ կատարածի մարմնով առնելո՛ց են իւրաքանչիւր ոք զփառս կամ զտանջանս: - 682. Իններորդ, **գ** *տեղիք* մարդկան նշանակեցաւ յեռայարկ խորանն մովսէսի. առաջին միջին և վերջինն: - 682. Որք են անուշահոտ հոգիք սրբոցն հանդէպ երեսացն քրիստոսի ի *տեղւոջ* մշտնջենաւոր լուսոյն: - 682. Արդ եգիպտոս նշանակէ՛ զաշխարհս որ է՛ հալոց չարութեան և *տեղի* ծառայութեան մեղաց և սատանայի որ է՛ փարաւօն: - 682. Այլ և ոմանք ի մէնջ որպէս վարդապետն վարդան և այլք ասեն գոլ ի միում *տեղւոջ* զամենայն հոգիս...: - 686. Իսկ ծախակողմեան խորան՝ է՛ ի յօդս յաներևոյթ *տեղիս*. ուր ժողովին հոգիք չարաց և մեղաւորաց. որք դատաստանաւն դատապարտին: - 688. Եւ վասն այսմ *տեղւոյ* ասէ տեսիլն՝ «մահ և դժոխք ետուն զիւրեանց մեռեալս»: - 689. Այլ թէպէտ մի է *տեղեաւ*, այլ արդարքն յուսով ուրա՛խ են, և մեղաւորքն տանջին: - 689. Դժոխքն նշանակէ զդժուարին և զնեղ *տեղիս* որ է՛ խորանն ծախակողմեան. ուր մեղաւորքն կրկին ունին զտանջանս: - 690. Զի՞նչ է աներևոյթ *տեղի* մեղաւորաց: - 690. Այրն ի տարաշխարհ գնաց քրիստոսէ. որ մարմնով համբարձաւ յերկինս. զի յատուկ *տեղի* մարմնոյ երկիրս է. վասն որոյ ի տարաշխարհ գնալ ասէ յերկինս: - 692-693. Եւ ապա ասեմք, եթէ աստուած յամենայն *տեղիս* է. վասն որոյ կայանք հոգւոցն ուր և իցէ առ աստուած է: - 695. Եւ **դ** տարերքդ իւրաքանչիւր դադարին ի *տեղի* իւրեանց և բնաւ ո՛չ փոփոխին: - 727. Եւ ըստ ոմանց կարծեաց զի *տեղիք* լիցին երեսնաւոր արդարոցն. որպէս ցուցանելոց եմք յառաջիկայդ: - 727. Իսկ պարզ տարերքն գնդաձև դադարին ի *տեղիս* իւրեանց յաւիտեան: - 728. Թէպէտ ո՛չ ունին բանք և ոչ խօսք, այլ ընդ ամենայն երկիր ել բարբառ վկայութեան նոցա. զի ամենայն *տեղիք* և ամենայն ժամանակք մարդկան առ նոսա է՛ յայտնի: - 729. Եւ յայլում *տեղւոջ* ասէ մարգարէն «մարտիցեն վասն նորա տիեզերք երկրի ընդ դէմ անզգամաց»: - 735. Նա՛խ՝ զի *տեղիք* դատաստանին ո՛չ է յերկինս ուր մեղաւորք ո՛չ կարեն ելանել: - 737. Այլ ի միջասահման *տեղւոջ* աշխարհի որ է՛ երկիրս: - 737. Նա՛խ՝ զի *տեղիք* դատաստանին պա՛րտ է զի ի հասարակ վայրի լիցի և երուսաղէմ է՛ մէջ աշխարհի: - 738. Երրորդ, յարմարի *տեղիքն* այն՝ դատաստանին աստուծոյ որ անդ լինելոց է. այսինքն գործ ողորմութեան և գործ արդարութեան...: - 738. Եւ այսպէս բաժանեսցին ի միմեանց *տեղեաւ* և փառօք. որպէս օդիք և այծիք յաջմէ և յահեկէ քրիստոսի: - 738. Այլ և որք ի մի խնամս վայելեցին յաստուծոյ. յարև և յանձրև. և ի մի *տեղիք* բնակեցան և մի պիտոյիւք շատացան. և նոքա զտուօղն ո՛չ ճանաչեցին: - 738. Վեցերորդ, զի **գ** է բանին *տեղիք*. մին՝ միտք դատաւորին. և **բ**՝ լսելիք դաւողացն: - 742. Զի արտաքոյ երկնային քաղաքին եէմի է՛ տանջանաց *տեղի*, ուր մեղաւորքն ժողովին: - 748. Իսկ վասն *տեղեաց* դժոխոցն ասացեալ է ի վեր անդր **լ** գլուխն, **իը** համարն: - 754. Ասեմք առ այս, եթէ առաջին կեանքն դրախտին ո՛չ զայն իմանան վարդապետք զոր ունէրն ադամ. այլ զոր խոստացաւն ադամայ եթէ պահեալ էր զպատուիրանն. որ նոյն ինքն է արքայութիւնն երկնից ի *տեղի* անկելոց հրեշտակացն: - 758. Նմին նման և մեք յուսասցուք արժանաւորիլ տեսութեանն քրիստոսի. զի թէ և ի դժոխս իցեմք՝ ա՛յն է արքայութիւն մեր. և ո՛չ թէ յերկրի կամ յայլում *տեղւոջ* ըստ սրբոյն ոսկէբերանի: - 759. Յետ յարութեանն ո՞ւր և ո՞ր քան իցէ *տեղիք* բնակութեան: - 760. Եւ դժոխքն *տեղիք* դիւաց և մարդկան չարաց: - 760. Եւ զայս կրկին *տեղիքս* ճշմարտութիւնն ցուցանէ: - 760. Յորոց փրկեսցէ զմեզ փրկիչն ամենայնի և առհասարակ զամենայն հաւատացեալս անուան իւրոյ. և կացուսցէ ի *տեղւոջ* լուսոյ և հանգստեան. Ամէն: - 760. Ապա զի՞նչ է *տեղիք* անկելոցն: - 760. Ա՛րդ՝ ի *տեղի* անկելոց հրեշտակացն՝ ըստ թուոյ նոցա խառնելո՛ց են դասք կուսանաց սրբոց: - 760. Երկրորդ վասն *տեղւոյն*. զի վերինն երուսաղէմ է՛ ի բարձունս քան զարեգակն. վասն որոյ ո՛չ լուսաւորէ զնոսա: - 760. Երկրորդ ի *տեղւոյն* բարձրութենէ: - 762. Երկրորդ՝ ի *տեղւոյն* բարձրութեան եռակի ուրախութիւն ընտրելոցն հանդիպեսցի: - 763. Նախ վասն պայծառութեան *տեղւոյն*. որպէս ասէ տեսիլն «գիշեր այլ մի՛ ևս եղիցի»: - 763. Երկրորդ վասն *տեղւոյն* մաքրութեան: - 763. Երրորդ վասն *տեղւոյն* ընդարձակութեան: - 763. Այս վասն *տեղւոյն:* - 763. Երրորդ այնու՝ զի մեղքն որ յոյժ վտանգեաց զմարդիկ, եղիցի փակեալ ի դժոխս զկնի աւուրն դատաստանի. զի եղիցի ի դժոխս իբր ի *տեղւոջ* իւրում. զի ո՛չ կարասցէ մնալ. ո՛չ յերկինս և ո՛չ յերկրի. այլ իջանէ ի դժոխս ներքինս: - 764. Եւ ապա ի սէր և անձուկ ժտելոյ նորին, ապաստանեալ ի նոյն որ զօրացոյց զտկարս, ձեռն ի գործ արկեալ աւարտեցաւ բազում միջոցաւ. և փախստեամբ ի *տեղիս*. և մեծ ջանիւ

փութացեալ: - 772. Գրեսցի յայսմ *տեղւոջ* և Յարցմունքն Գէորգեայ: - 773. Եւ այլևս յարմար *տեղւոյս* այսպէս իմանի. զի սուրբ հարքն առաջինք պակաս ունէին զչարչարանս. վասն որոյ ո՛չ կարէին փրկել. իսկ քրիստոս եղեալ ըստ մարմնոյ որդի նոցա, զպակասութիւն հարցն չարչարանաց յիւրումն մարմնի էլից: - 781. Նոյնպէս և երբեմն յուզել ուրախութեանց. ի փեռեկեալ թոքոյ ի կոտորումն շնչոյն, ի թաղանթէ՛ որ առ լերդաւն՝ հիւթ ինչ ծաւալի առ նոյն ասացեալ *տեղի*. ելեալ գոլորշեացն նմանապէս առաջնոյն. և լինի քաղցրագոյն արտօսր. վասն ասացեալ հիւթոյն ի քաղցրորակն անօթոյ: - 787. Եւ այս ի խռովութեան ժամու և յանձուկ *տեղւոջ:* - 788

***ՏԵՂԻ ՏԱԼ +*** Եւ ի ծայնէն վէմք պատառեալ և երկիր շարժեալ, *տեղի ետուն* իջանել ի նոսա՛. և քարացեալ սիրտ նոցա ո՛չ շարժեցաւ: - 490. Երկրորդ բաղդատութեամբ այնորիկ՝ որ եղիցի ի ներքոյ ինքեան. այսինքն զի ներքին մարմինք մարմնոյ փառաւորելոյ *տեղի՛ տան:* - 764

**ՏԵՆՏ +** Եւ զի *տենտ* և ջերմ յաւելուն: - 197

**ՏԵՆՉԱՄ +** Բարձումն յուսոյ և ամենայն փրկութեան Նաև գոլն իսկ որում *տենչան* ամենայն ստեղծուածք՝ է՛ նոցա պատիժ. վասն զի խնդրեսցեն զմահ և ո՛չ գտանիցեն: - 751

**ՏԵՆՉՈՒՄՆ +** Եւ քաղց արդարութեան է սաստիկ *տենչումն* արդարութեան. կամ ծայրագոյն բարւոյն: - 584. յայն ճանապարհ է օտարացեալք, զոր մարգարէն մեծաւ *տենչմամբ* հայցէր...: - 756-757

**ՏԵՌԱՏԵՍ +** Վասն սերմնականքին սրբութեան **բ** հաւ: ...Նոյն և *տեռատեսին:* - 359. Եւ լինի *տեռատես*, յորժամ մանուկ ո՛չ լինի յարգանդին և ի ստինսն զի սնո՛ւնդ է մանկանն: - 369. Որ էած ապտակ քրիստոսի՝ մաղքո՛ս էր անունն: ...*Տեռատեսին* փոտինա: - 495

**ՏԵՍ (տեսութիւն, տեսումն) +** Այս է զի ի լուր պատմութեանց նախնեացն՝ կամ ի կարգէ՛ իրաց՝ կամ ի *տեսս* զգալեաց՝ ի ծանօթս գամք աստուծոյն ճշմարտի. յորմէ հաւատն լուսափայլեսցի: - 25. Ութերորդ՝ ելանելն յերկինս պատշաճի մարմնոյն քրիստոսի. որպէս ի *տեսս* առաքելոցն վերացաւ յերկինս. և իջանելն՝ բանին որպէս ասացաւ: - 73. Եւ վասն բարձր գիճութեանն՝ ի *տե՛ս* գայ. և սեղմացեալ ի վերայ միմեանց լինի ամպ: - 204. Տասներորդ՝ զի գեղեցիկ լինի ի *տեսս* աչաց երփն երփն գունով և վէտս վէտս. այսինքն ծալ ծալ ծիծաղի երեսօք: - 208. Եօթներորդ՝ *Տես* աչացն հաստատէ՛ զլուրն. և ի վեր նայիլն հեշտանայ: - 227. Նա՛խ՝ զոր լւան զօրէնս ականջօք, տեսցեն և աչօք զի հաստա՛տ է *տեսն* քան զլուրն: - 349. Յմայն է՝ որ *զտեսս* աչաց կամ զձայն հմայէ՛. և զթռիչս և զկռիչս հաւուց. և զձայն կրակի և զաճառաց. և զդրան, կամ աքիս տեսեալ. կամ բէճ. կամ մուճակ. կամ այլ ինչ այսպիսի...: - 388. Զի *տես* աչացն հաստա՛տ է քան զլուր լսելեացն: - 509. Առաջինն է՝ զի ի *տեսս* աշակերտացն վերացաւ. այսինքն զի յորդորեսցէ զցանկութիւն գնալոյն առ նա: - 520. Երրորդ՝ զի առաքեալք ինմաք *տեսք* եղեն քրիստոսի. և մարգարէք միջոցաւ ի բացեայ. և վարդապետք յետոյ նոցա: - 535. Նոյնպէս և ի *տեսս* սրբութեանցն: - 635. Արդ՝ ա՛յս գիր գործոց մերոց գրեալ ի հոգի և ի մարմին մեր որպէս ի մագաղաթի՝ դատաւորն ընթեռնու ի *տես* և ի լուր հրեշտակաց և սրբոց: - 741. Այլ ի պատճառս տալ իմաստից. որով ո՛չ յագեսցի ակն ի *տեսոյ*. ի գլուխ գոլոյ իմաստնոյ. մանաւանդ և ի շահ օգտի բանասէր մտաց միեղէն եղբարց: - 773. Եւ բազում ուրէք որք ընդ արեգակամբս խորհրդածուք էին, ի լուր բանից և ի *տես* սքանչելեաց ածին յուղղութիւն: - 785

**ՏԵՍ (կերպարան, ձև) +** Նա՛խ՝ զի տղա՛յք էին և ի *տե՛սն* զուարճանային. որպէս խորանն և ա՛յլ սրբութիւնք. նոյնպէս և զգեստք քահանայութեան: - 347

**ՏԵՍԱԿ +** Եօթնևժերորդ՝ զի թէ չարն և բարին ունին մի սկիզբն, որպէս ընդդիմաբաժանեալ *տեսակքն* զսեռն: - 14. Դարձեալ ասեմք թէ՝ որպէս մեք ունիմք կրկին ճանաչումն իրաց, այսինքն զի զոմն ճանաչեմք ի յատուկ *տեսակն* իւր. և զոմն այլով *տեսակաւ:* - 17. Այսպէս զունակութիւնն ճանաչեմք իւր յատուկ *տեսակաւն*. և զպակասութիւնն այլով *տեսակաւ*. զի հակակայի ունակութեանն: - 17. Նմանապէս և աստուած միակ միջնորդութեամբ ճանաչէ զբարին ըստ ինքեան ի յատուկ *տեսակն* իւր...: - 17. Զի թէ կամաւ, կամա՛ցն ես որդի և ոչ հօր. թէ այդպէս է, բարձեր զպատճառն քո զհայր. բարձար և դու ի *տեսակաց* մարդկան: - 36. Ո՛չ թէ նոր իմն *տեսակ* և կամ նոր աշխարհ. այլ զեղելոցս նախախնամութիւնն. և ի նոյնութիւն կալն հայր կամի և որդի կատարէ՛. ոչ ծառայաբար և անուսումնապէս. այլ տիրաբար և հաճճարով: - 46. Եւ իմաստասէրքն զհոմանունսն որ ո՛չ էր ի նոյն *տեսակէ* կամ ի բնութենէ՝ թւակցէին: - 54. Յինգերորդ ասեն, եթէ հոգին սուրբ առնու զբնութիւնն ի հօրէ՝ լինի որդի նորին. զի այն կոչի որդի որ ունի զբնութիւնն ի հօրէ ի նոյն *տեսակէ:* - 60. Բաղկացական տարբերութիւն է՝ ուստի *տեսակքն* գոյանան...: - 85. Զի թէ ասես միաւորական, ահա՛ արարեր դու

զանձն բնութիւն. զի բնութիւն է միարար ըստ պորփիւրի, *տեսակին* կցորդութեամբ բազում մարդիկ մու: - 86. Ութ են եղանակք բաժանման ըստ փիլիսոփային. այսինքն Որպէս սեռ ի *տեսակս*...: - 87. Եւ պարտէ գիտել, զի որպէս սեռ ի *տեսակս* ո՛չ կարէ բաժանիլ: - 87. Նախ՝ զի յընդդիմաբաժանեալ *տեսակս* սեռի՝ ո՛չ գոյ առաջին և վերջին...: - 87. Երկրորդ՝ զի յընդդիմաբաժանեալ *տեսակս*՝ ո՛չ ունի պէտս մինն միւսոյն առ ի բաղկանալ: - 87. Երրորդ՝ զի յընդդիմաբաժանեալ *տեսակս*՝ ո՛չ ուրեք մինն ի միւսումն տեսանի. և ո՛չ անբանն ի բանականումն: - 87. Այլ և ո՛չ որպէս *տեսակ* յանհատս: - 88. Երրորդ՝ զի բաժանեալ անհատքն ունին զնոյն բնութիւն *տեսակին:* - 88. Ապա ուրեմն ո՛չ բաժանի մին քրիստոս որպէս *տեսակ* յանհատս: - 88. Եւ որպէս ասէ փիլիսոփայն՝ երեք են յասացելոցդ իսկապէս եղանակք բաժանման. այսինքն Որպէս սեռ ի *տեսակս*. Որպէս բոլոր ի մասունս. Որպէս համանուն ձայն: - 89. Նախ՝ որպէս սեռ ի *տեսակս* բոլորապէս տեսանի և ո՛չ մասամբ. այս է՝ զի գոյացութիւնն որ է սեռ՝ բոլոր է ի մարմինն և յանմարմինն. և կենդանին բոլոր ի բանականն և բոլոր յանբանն: - 89. Երկրորդ՝ որպէս անբաժանելի մնայ սե՛ռ ի *տեսակս*. և բանն աստուած անբաժանելի՛ է միաւորեալ ի մարդկութիւնն իւր: - 89. Ա՛յս որպէս սեռ ի *տեսակս:* - 89. Եւ ի միոյ աստուծոյ եղեն **Ժ** դասք հրեշտակաց ընդ մարդկան. և հարիւր գունդքն ըստ ոչխարաց առակին. և **Ռ** կենդանեաց *տեսակքն* որ յերկրի. և բիւր անկենդան բուսոց. և անթիւ գոյեղէնք: - 109. Չորրորդ՝ բազմանայ ի սեռս և ի *տեսակս*. և բազմապատկի դարձեալ ի *տեսակս* և յանհատս նոցա: - 110. Երրորդ՝ ասի ոչէ՝ նիւթն անորակ. որ ո՛չ ունի ձև և ո՛չ ունի *տեսակ* և ո՛չ որակ: - 111. Որ է անհատ՝ *տեսակ*՝ և սեռ: - 111. Դարձեալ՝ յարացոյցն ո՛չ թանձրանայ որպէս տարերք. և ո՛չ որպէս նիւթ և *տեսակ* կերպանայ. և ո՛չ թէ յարացոյցն արար զմեզ: - 112. Եւ դարձեալ՝ որպէս ամենայն գիծ բոլորակին՝ ի միջին կէտն միաւորին առ միմեանս. և հեռացեալք ի միջին կէտէն բաժանին ի միմեանց. և զորօրինակ՝ մի է սեռն՝ և ի բազում *տեսակս* բազմանայ: - 112. Զի որքան ի վերուստ ի վայր իջանէ՝ ի բազումս բաժանի. որպէս ի սեռէ ի *տեսակս* և յանհատս իջեալ բազմանայ: - 123. Յնգետասաներորդ՝ նա՛խ է *տեսակն* քան զնիւթն անի բաց դնելի: - 126. ...անհատն *զտեսակն* և զսեռն բոլորապէս ունի և կոչի...: - 136. ...և անդ ընդունի հասարակ զգայութիւնն *զտեսակս* այնմիկ, և տայ յերևակայութիւնն և յիմացականն. այսպէս երևին հրեշտակք և խօսին ընդ մարդոյ: - 145. Իսկ խօսի հրեշտակն ընդ դիւին՝ ցուցանելով նմա *զտեսակս* իմացման իւրոյ առանց լուսաւորութեան իմն: - 145. ...այսորիկ առնելոյն են *տեսակք:* - 158. Արդ ներքին է՝ որ ի փափկութեանց և ի հեշտութեանց փործի բնութիւնս մեր և այլայլի ի զանազան *տեսակս* մեղաց...: - 160. Դարձեալ ասեմք, թէ կոյսն և պոռնիկն՝ առաքինութեան և չարութեան են *տեսակք*, և ներհա՛կք են առաքինութիւն և չարութիւն...: - 165. Երրորդ՝ զի պատահումն ընդ գոյացութիւն խառնեալ՝ լինի բաղադրեալ. որպէս նիւթ և *տեսակ:* - 170. Ստորոգութիւնս պատշաճի եղական գոյիցս իսկութեամբ. որ ի նիւթոյ և ի *տեսակէ*՝ ի գոյացութեանց և ի պատահմանց են ժողովեալ: - 171. Եւ դարձեալ՝ է կոչի աստուած, զի նա միա՛յն է *տեսակ* առանց նիւթոյ. և գոյ առանց պատահման: - 171. Որպէս ի նիւթոյ և ի *տեսակէ* մարմին. և ի հոգւոյ և ի մարմնոյ կենդանին. և յարուէ՛ և իգէ ծնեալն. նոյնպէս ի ձայնաւորէ՛ և յանձայնէ՛ բանն ծնանի: - 177. Ապա ուրեմն ձայնաւոր գիրն է ձայն, և է *տեսակ*, և հոգի, և արու: - 177-178. Չորրորդ՝ զի ծնանիմք ի բարի կամացն աստուծոյ յառաջ գիտութեամբ նորին. և ապա գոյանամք արդեամբ և գոյացութեամբ ըստ իւրաքանչիւր *տեսակաց:* - 179. Երկրորդ՝ *զտեսակն* անիբաց դնելի ունի: - 186. Երրորդ՝ *տեսակն* յառաջ է քան զնիւթն: - 186. Ի բաց դնելն կրկին է. մին ըստ *տեսակի*, և միւսն ներգործութեամբ: - 186. Արդ՝ ըստ *տեսակի*՝ անիբաց դնելի՛ է լոյս արեգականն: - 186. Եւ ի սմանէ լինին մառախուլ՝ և սառնամանեաց *տեսակ*, այլ և ամպք և ծիւնաբեր և կարկուտք: - 204. Եւ զի բնութեամբ ունին յայտ է, զի ամենայն *տեսակն* զմի և զնոյն ունի հնարս. վասն զի մի բնութենէ ի նոսա: - 218. Չորրորդ՝ զի չէ՛ր բանաւոր, և բանից *տեսակով* խաբեաց զմարդն: - 218. Եւ գիտելի է, զի գ են իր գոյացական. Սեռ. *Տեսակ*. և Անհատ: - 220. Իսկ զընդհանուր *տեսակացն* ադամ. որպէս եզն. ձի. և այլն: - 220. Իններորդ՝ Առաջին երկինն անապական է ըստ *տեսակի:* - 221. Երրորդն անշարժ է տեղեաւ և *տեսակաւ:* - 221. Եօթներորդ՝ զի **գ** *տեսակ* հոգոց բացայայտեսցին. որ է՛ անկատար՝ և միջակ՝ և կատարեալ: - 231. Առաջին և առաւել գոյացութիւն՝ է՛ անհատ անձն և դէմն. և Երկրորդ և նուազ՝ *տեսակն* և սեռ՝ և այլքն ըստ կարգի: - 235. Վասն զի անձն է մեզ առաջին հիմն և ի ներքոյ եդեալ. յորմէ և առ որ ժողովին *տեսակն* և սեռն և սեռականագոյն սեռք: - 236. Երկրորդ՝ զի ունին նոյնութիւն սեռի և *տեսակի* և անհատի: - 236. Եւ *տեսակիւ*, որպէս պետրոս և պօղոս: - 236. Եւ անհատիւ, որպէս նիւթ և *տեսակ:* - 236. *Տեսակաւ*, որպէս մարդ և քար: - 236. Եւ թէ ոք ասիցէ, խառնուածոցն է այս, կամ

յատուկ *տեսակաց*. որպէս ծայնք և տերևք և կենդանիք չեն նման միմեանց: - 237. Ասեմք թէ՝ և *տեսակք* և խառնուածք մարմնոց են ի տեսչութենէ խնամոցն արարչին: - 237. Ասեմք առ այս. զի թէպէտ ա՛յլ է գործ ստեղծման և ա՛յլ նախախնամութեան. զի սեղծանելն է առնել իր ինչ ի յոչընչէ. և նախախնամելն՝ զեղեալն փոխանորդութեամբ ի նոյն *տեսակն* պահել: - 257. Այլ արդ՝ նախախնամութեամբ է տնկականն և զգայականն. որք փտելով և զնմանս ծնանելով պահեն զնոյն *տեսակն:* - 257. Եւ որպէս տեսանին՝ այլ և այլ հոգիք են սոքա յայլ և այլ *տեսակս:* - 259. Իսկ թէ զսոսա **գ** *տեսակս* ասես, կամ զօրութիւնս, կամ մասունս բանական հոգւոյն, մի՛ է տեսութիւնն: - 259. Ոմանք ըստ ազգի և *տեսակի* իւրեանց հով և ջերմ՝ չոր և գէջ գոլով, փութով կամ յապաղելով բուսանին: - 261. Եւ ծնանելովն պահի *տեսակն:* - 262. Արդ՝ տնկական զօրութիւնն բնականապէս՝ է նիւթն. որով կազմի և պատրաստի նիւթն առ *տեսակս* ազգի իւրեանց: - 262. Դարձեալ մարմինն է ի **գ** տարերց. և ունի երիս *տեսակս* ոգւոց: - 263. Դարձեալ՝ ամենայն իր առաւել ունի զօրութիւն ի *տեսակս* իւր՝ քան ի յայլս. որպէս ջուր առաւել զօրաւոր է ի գետս՝ քան ի յերկիր խառնեալ. և տնկականն առաւել է ի տունկս՝ քան յանասունս: - 266. Այսպէս և զամենայն հակառակ *տեսակս* իմասցիս ոչ խառնիլ սերմանք նոցա: - 267. Զիմաստութիւնն հոմանուն է և ի բազում *տեսակս* որոշի. և բնաւքն ամենայն՝ մտա՛ցն են ներգործութիւն. վասն այն կոչի իմաստութիւն որ է իմացութիւն: - 269. Տասներորդ՝ կին, իբր թէ կեանք. զի որպէս կենօք է տևել. նոյնպէս *տեսակ* մարդոյս ի ձեռն կնոջ ծննդեանն տևէ՛, և կայ մնայ մինչ ի կատարած: - 276. Տասնևինն՝ Կապելոյ *տեսակք:* - 283. Եօթն ազգ բարեգործութեան *տեսակ* երևի աստ ի հաբէլ. վասն որոյ և **է** պարգևաց արժանացաւ: - 286. Եւ դարձեալ՝ որպէս սահմանն *զտեսակս* ազգացն նշանակէ. նոյնպէս և լեզուն զիւրաքանչիւր ազգս ցուցանէ: - 298. Այլ մելքիսեդեկին էր նշանակ յաւիտենական պատարագին քրիստոսի ի *տեսակ* հացի և գինւոյ: - 301. Իսկ կապ մարմնական՝ և նա՛ բաժանի ի **դ** *տեսակս:* - 317. Եւ զանգոսնելիսն ո՛չ կրեաց. զի *տեսա՛կ* է մեղաց. և տէրն ո՛չ արար մեղս: - 383. Եւ **գ** քաղաք՝ **գ** *տեսակ* ապաշխարութեան: - 392. Դարձեալ՝ զերեք *տեսակ* սիրոյն ցուցանէ. մարմնով և հոգւով և մտօք սիրել զաստուած: - 396. Չորրորդ՝ մինն *տեսակին*, և միւսն անհատին էր պատիժ: - 426. Ա՛րդ՝ անշաղկապ միաւորութիւնն բաժանի յերիս *տեսակս:* - 475. Եւ են որք անշփոթ միաւորին. որպէս հուր և երկաթ. հոգի և մարմին. սեռ ի *տեսակս*. և *տեսակ* յանհատս: - 475. Հինգերորդ՝ միաւորութիւն սովորեցաք կոչել յորժամ նիւթ ինչ աննիւթով կերպարանեալ տեսանի *տեսակաւ:* - 476. Դարձեալ՝ ի մկրտութիւնն քրիստոսի նշանակին գոյացութիւնք մերոյս մկրտութեան. այսինքն Մկրտօղն, Մկրտեալն, Նիւթն, *Տեսակն*, և Դիտաւորութիւնն: - 487. *Տեսակն* է կոչումն սուրբ Երրորդութեանն որ եղև անդ: - 487. Իսկ եկամուտ կիրքն բաժանի յերիս *տեսակս:* - 496. Դարձեալ ասեն նոքա, եթէ մարմինն քրիստոսի փոփոխէր աճելովն որ *տեսա՛կ* է ապականութեան: - 501. Եւ ո՛չ զանգոսնելիսն կրեաց զի *տեսա՛կ* է մեղաց. ուրեմն ապա կրեաց զկամաւորն և զանանգոսնելիսն: - 502. Նա՛և բազում *տեսակք* են ի ջուրս և ի յօդս. որպէս չղջիկանն առանց արեան է կե՛ր զամենայն: - 511. Զի բազմանայ և ի միութեան մնայ. բովանդակի անբովանդակապէս. և բաժանի անբաժանապէս. որ է մի և նոյն *տեսակաւ* և գոյացութեամբ որպէս ցուցաւ: - 530. Այս է կամ սեռիւ. կամ *տեսակաւ*. կամ անհատիւ: - 533. Որպէս սեռիւ մի են ամենայն կենդանիք. և *տեսակաւ* ամենայն մարդ. և անհատիւ մի որպէս պետրոս: - 533. Եւ մի է ըստ խորհրդոյն՝ այսինքն մկրտութեամբ՝ պատարագելով՝ կարգիւ՝ և այլովն՝ որպէս *տեսակաւ*: - 533. Երրորդ՝ որպէս որք ելեալ ի սահմանէն՝ ո՛չ են ի նոյն *տեսակն:* - 538. Այլ կարէ յաւելուլ ի նոյն *տեսակն* ուղղութիւն և կարգ: - 541. Որպէս որք յեփեսոս՝ զնիկիականն ուղղութիւն ո՛չ քակեցին. այլ ի նոյն *տեսակ* նոր կանոնս կարգեցին ի հաւատս ուղիղ: - 541. Դարձեալ՝ թէպէտ ըստ պորփիւրոսի՝ մասն բոլորին հետևի. որպէս անհատն *տեսակին*. և *տեսակն* սեռին: - 550. Սակայն ըստ արիստոտէլի սեռն և *տեսակն* անհատին հետևին. զի են երկրորդ գոյացութիւն: - 550. Երկրորդ յա՛յտ է ի բաժանմանէ. զի յերիս բաժանի *տեսակ* մեղաց. այսինքն ի մտաւորն, ի բանաւորն, և ի մարմնաւորն: - 556. Ա՛րդ՝ մեղք մտացն թէպէտ ըստ բանականին և մարմնականին չէ կատարեալ, այլ ի *տեսակս* իւր կատարեալ է: - 556. Զորօրինակ՝ կանաչ բոյս՝ թէպէտ ի ցօղուն և ի հասկ՝ չէ՛ կատարեալ. այլ ի *տեսակս* իւր կատարեալ է: - 556. ...զի անկարգ յօժարի ի կերակուրն. և թէ է ի պահպանութիւն *տեսակին*, լինի բղջախոհութիւն. զի անկարգ յօժարի ի պոռնկութիւն: - 561. Ութերորդ՝ զի ամենայն *տեսակք* ախտիցն ի՛ր մի երևեցուցանեն մեզ. որպէս գողութիւն զինչս, և պոռնկութիւն զհեշտութիւն. իսկ հպարտութեանն ո՛չ գոյ ամենևին ակնկալութիւն: - 562. Նա՛խ՝ ըստ գոյացութեան և ըստ *տեսակին*. զի մարդն է *տեսակ* և *տեսակն* գոյացութիւն. ըստ գոյացութեանն այսպէս: - 565. Մեղք անունն մի է, և բոլորապէս յերիս

*տեսակս* որոշի. այսինքն ի սկզբնականն, և ի մահացուն, և ի ներելին: - 567. Իսկ ներելին թէպէտ որոշի յերիս *տեսակս* ըստ մեծութեան և նւաղութեան. այլ մանրամասնաբար յանթիւ ելանէ. որպէս ծիծաղիլ. վայրաբանել. և այլն: - 568. Այս բաժանումս է՛ ըստ *տեսակի* մեղաց: - 568. Այս քան ըստ *տեսակի* և ըստ նիւթոյ և ըստ կատարման զանազանութիւն մեղաց: - 569. Իսկ *տեսակ* ողջախոհութեան են **գ**. այսինքն զգաստութիւն. ժուժկալութիւն. և համեստութիւն: - 581. Իսկ ժուժկալութիւնն առ շօշափելիսն ըստ ծննդական զօրութեանն. ի յորում դնէ զեղանակն. զի առաւել յօժարի մարդն ի գոլ անհատութիւնն սննդականաւն, և ի գոլ *տեսակին* ծննդականաւն. և յօժարութիւնքս այս՝ զսպին զգաստութեամբ և ժուժկալութեամբ: - 581. Եւ խաղաղութեան *տեսակք* **գ** են: - 585. Երկրորդ ունիմք վկայութիւն ի քրիստոսէ յորժամ ետ զարիւնն ի *տեսակ* գինւոյն՝ ասաց, «ո՛չ արբից ի բերոյ որթոյ մինչև արբից զդա նոր արքայութեան հօր իմոյ». և ջուրն ո՛չ է բեր որթոյ: - 595. Երկրորդ՝ *տեսակ* հացին և գինւոյն: - 597. Նոյնպէս և ի *տեսակ* արեանն միաւորեալ այսորքիկ: - 600. Դարձեալ՝ թէ դու հաւատաս զարիւնն ի մարմինն կապեալ, մի՛ հաներ *զտեսակ* արեանն ի բենն. այլ նշխար միայն օրհնեա և լիցի մարմին և արիւն քրիստոսի: - 600. Տասներորդ, **բ** են բանականաց *տեսակ*. մինս տարրական. և միւսն գերաշխարհիկ ի վերոյ քան զհինգերորդ էութիւնս երկնից...: - 654. Երրորդ՝ զի **գ** են *տեսակք* հոգւոց. տնկական, զգայական, բանական. և սոքօք մեղանչեմք: - 681. Իսկ այլք զերեք *տեսակ* մեղացն. այսինքն սկզբնականն որ է խոտ. և ներելին եղէգն. և մահացուն փայտ: - 702. Թօթափիլ կամ խաւարիլ լուսաւորաց ո՛չ է իմանալ թէ ի կամարէ՛ երկնից անկանին կամ զգոյացական *տեսակն* փոխեն: - 728. Եւ պա՛րտ է գիտել զի ի միոյ սեռէ բարութեանցն աստուծոյ՝ յառաջե՛ն առ մեզ ողորմութիւն և արդարութիւն. կրկին *տեսակ* կամ գործ կամ զօրութիւն. որպէս ի մեզ երկրքին ձեռք մարմնոյ. և որպէս իմացումն և կամք հոգւոյ: - 745. Նոյնպէս և հատուսցի առաւել և նուազ և հաւասար. ո՛չ միայն ըստ սեռի գործոց, այլ և ըստ *տեսակի* և քանակի և որակութեանց նմին: - 746. Իսկ ըստ *տեսակի*, որպիսութիւն հատուցմանց ըստ հաւատոց և գործոց վկայից և կուսից: - 746. Կանո՛ն է իմաստասիրաց, զի իր որ բնութեամբ լինի, բոլոր *տեսակին* պարտի գոլ: - 773. Իսկ է՛ իր ինչ ի բոլոր *տեսակս* մարդկային բնաւորեալ, և ո՛չ է բնութեամբ. որպէս այս: - 773. Իսկ մեծն ներսէս ասէ, պակասութիւնն այն է, որ կիրք չարչարանացն քրիստոսի թուով և *տեսակաւ* պակա՛ս էր յառաքեալն պօղոս. այսինքն խաչն, բեւռքն, և այլն. և զայն էլից քարոզութեամբն իւր ի մարմինս եկեղեցւոյ: - 781. Բաւուք ասացաւ յարարչէն. զի թէ և բնութիւն թարց երևակայութեան, և արհեստ հանդերձ երևակայութեամբ, սակայն կամք արարչական ետ նոցա բնական և բանական կարողութիւն. և ոչ ինչ վայրապար կազմեն *զտեսակ* գոյացական և *զտեսակ* պատահական. խնդրելով ոմն պարզ նիւթ. և ոմն տեսակացեալ: - 786. Եւ զանազանեալքն ի գիրս անդամոց, զանազանին և ո՛չ նմանին գոյացական *տեսակօք*: - 786

**ՏԵՍԱԿԱԲԱՐ** - Այլ ի մարմինն նիւթօրէն և սկզբնաբար. իսկ ի հոգին *տեսակաբար* և իբր ներգործաբար: - 567. Եւ այսպէս քարշեալ եղև ի մեզ սկզբնականն մեղք՝ յանհնազանդութենէ հոգւոյն և ի ցանկութենէ մարմնոյն. անցեալ ի ծնունդս նորա նիւթապէս ի մարմինս, և *տեսակաբար* ի հոգիս: - 776

**ՏԵՍԱԿԱՆ +** Եւ գիտելի է, զի յարացուցիս և նախասահմանութեանս՝ արարողական պատճառ է աստուած. և նիւթական պատճառ իրն այն որ է նախասահմանի. և *տեսական* պատճառ է՛ կարգն...: - 112. Այսպէս և *տեսականն* որ է բանականն՝ սկսեալ է ի ճշմարտութենէն որ է՛ բանն աստուծոյ, և կատարի առ նոյն ճշմարտութիւնն: - 121. Դարձեալ՝ գործնականին սկիզբն կամքն է. և *տեսականին* իմացական զօրութիւն մտացն: - 121. Եւ *տեսականն* և գործնականն զարդարիչք են սոցա: - 248. Զի բանական մասունքն *տեսականաւն* զարդարի: - 248. Վասն այսորիկ կատարեալ իմաստութիւնն յերկուս բաժանի. ի *տեսականն* և ի գործնականն. այս ըստ դաւթի: - 248. *Տեսական*, որպէս մարդ: - 318. Այլ և խաչաձև թռչին օդապարիկ թռչունք. որ է *տեսական* միտք. զքև տարածեալ յերկոսին կողմանս: - 494. Եւ բաց յայտնանէ **գ** այլ մասնական կամ *տեսական* ասա. այսինքն բարոյական. բանական. վարդապետական: - 528. Երրորդ՝ ի կառավարել զգործնական և *զտեսական* կեանս. այսպէս աստուածային և մարդկային առաքինութիւնքն են որ ասացաւ: - 583. Ի յասացելոցս յառաջագոյն այս ինչ հաւաքի, եթէ ունակութիւնք մարդկային առաքինութեանց նախկնաբար պատրաստե՛ն ի վարժումն գործնական կենացն. իսկ ունակութիւնք պարգևացն պատրաստե՛ն ի վարժումն *տեսական* կենացն: - 586. Ութերորդ, զի ունիմք **բ** առաքինութիւն. այսինքն *տեսական* և գործական. - 654. ...վասն *տեսականին* սրբեմք զչորեքշաբաթն...: - 654

**ՏԵՍԱԿԱՆԱՄ +** Եւ երևեալ մարմնովն մի բնութիւն *տեսակացեալ* և մի անձնաւորութիւն. մի տէր. մի

որդի. ըստ սուրբ հարցն ուղղափառութեան: - 76. Ամենակատար և անշփոթ մարդանալովն ըստ մեզ մարդասիրապէս՝ ի բութիւնս մեր *տեսակացեալ*, և առ բաժանականս մեր անայլայլաբար ըստ բնութեան միոյ յառաջ եկեալ: - 477. ...կամք արարչական ետ նոցա բնական և բանական կարողութիւն. և ոչ ինչ վայրապար կազմեն զտեսակ գոյացական և զտեսակ պատահական. խնդրելով ոմն պարզ նիւթ. և ոմն *տեսակացեալ:* - 786. Իսկ որքանութիւն ստեանց կենդանեաց, բերէ՛ զօրինակ որքանութեան կարելոյ ծնանիլ յանոցիկ *տեսակացեալ:* - 786

**ՏԵՍԱԿԱՒՈՐԵԼ** - Եւ այն ևս սքանչելիք, որ ի փոքրագոյն մարմինն ընկալեալ եղև հոգի բանական, և *տեսակաւորեալ* որպէս քառասնօրեայ մանուկ յարգանդի: - 470. Ասի և մէջ. զի *տեսակաւորէ՛* զգործս: - 575. Չորրորդ, հեղմամբ շնորհաց. ըստ այնմ «մարմին և արիւն ո՛չ յայտնեաց, այլ հայրն իմ». և է այս *տեսակաւորեալ* հաւատ: - 784-785

**ՏԵՍԱՆԵԼԻ(Ք) +** Ա՛րդ՝ ի յերկրի *տեսանելի* է դ ինչ: - 26. Նոյնպէս և յերկինս *տեսանելի՛* է չորս ինչ: - 26. Իսկ շօշափելիքն զգայ զջերմութիւնն՝ և *տեսանելիքն* զլոյսն միայն ի միում էութեան: - 75. Զի ունի զգայարանք. այսինքն *տեսանելի՛ք*՝ լսելիք՝ և այլն: - 143. Իսկ խօսի դնն ընդ մարդոյ՝ կամ փոփոխելով զգոյութիւնն որպէս հրեշտակն կամ զպատկեր նմանութեանն ցուցանէ *տեսանելեացն*. և կամ տպաւորէ՛ յերևակայութիւնն: - 145. Երկրորդ՝ զի ի զատ ճողոպրի ի զգայութեանց. այսինքն ի *տեսանելեաց*, ի շօշափելեաց, և յայլոց, որ զնիւթականս զգան: - 175. Աշխարհս ընդէ՞ր ոչ ունի զգայարանք. այսինքն *տեսանելիք*. լսելիք. և այլն: - 179. ...և *Տեսանելիքն* հրոյն՝ վերագոյն ամենեցուն: - 215. Զի շօշափելիքն ի ներքո՛յ է որպէս երկիր. և ճաշակելիքն ի վերոյ որպէս ջուր. լսելիքն յօդն է. և *տեսանելիքն* հուրն ի վերոյ: - 235. Իսկ երկուքն իշխանականք. որ է՛ *տեսանելիքն* և լսելիքն. ի հեռաստանէ՛ զգան: - 235. Իսկ ի սոցանէ պատւական է *տեսանելիքն:* - 235. Որ և անդ բաժանի հրատեսակն ի *տեսանելիքն*. և ծխատեսակն ի մազ գլխոյն: - 242. Զի տրամախոհութիւնն ա՛յնպէս է առ իմացումն որպէս գոյնն առ *տեսանելիքն:* - 249. Եւ է՛ արտաքին զգայութիւնքն **ե**. որ է մասնական զգայութիւն. այսինքն է *տեսանելիքն*. լսելիքն. հոտոտելիքն. ճաշակելիքն. և շօշափելիքն: - 249. Ութերորդ՝ զխաբէութիւնս որ ճաշակելեօք և *տեսանելեօք* է՝ ի բաց մերժել, և զամենայն զգայութեանցս ընտրողութիւն: - 281. Իսկ աստ էութիւն հրեշտակին է կերպարանեալ մարմին *տեսանելի:* - 133. Այլ ասեն վարդապետք եթէ՝ ի համբարձմանն քրիստոսի ընդ իրս *տեսանելի* է որք են պարագայք համբարձմանն: - 520. Արծաթսիրութիւն *տեսանելեաց*. և Բարկութիւն լսելեաց: - 560. Իսկ համեստութիւնն կայանայ ի յասելիսն. այլ և ի *տեսանելիսն*. ի լսելիսն. ի հոտոտելիսն: - 581. Եւ **ե** արտաքին զգայութիւն. այսինքն *տեսանելիք*. լսելիք. հոտոտելիք. ճաշակելիք. և շօշափելիք: - 622. *Տեսանելի՛* է թէ՝ զի՞նչ արդեօք հցէ ոչ ունելն ի մտի որ է՛ մոռանալ. այսինքն զանցեալն ո՛չ յիշել. և զհանդերձեալն ոչ տեսանել. իսկ զներկայն ո՛չ գիտել: - 774

**ՏԵՍԱՆԵՄ +** ...երկնային աստեղքն են արարիչք լուսոյ և ժամանակաց. և ի նշանս ապագայից. զի յամենայն ուստեք *տեսեալ* պատրաստեսցին մարդիկք...: - 12. Սակայն բե՛ր զառարկութիւնս նոցա *տեսցուք*. և զեղծումն նոցին յարմարեսցուք: - 15. Երկրորդ՝ ասեն թէ աստուած նախքան զլինիլն մեր՝ ի նախատեսութիւնն իւր *ետես* զամենայն լինելոցն այնպէս. զչարն չար, և զբարին բարի: - 15. Ա՛րդ՝ հարկ է ամենեցունց զօլ այնպէս որպէս աստուած *ետես* և գիտաց. և գիտութիւնն աստուծոյ անպատիր է. ապա ուրեմն ամենայնն լինի ի հարկէ տեսութեանն աստուծոյ: - 15. Իսկ ի տեսութիւն մարդոյ է՛ առաջին և վերջին. զի զանցեալն *տեսանէ* յիշմամբ...: - 15. Զորօրինակ՝ թէ բազում մարդիկ անցանեն զճանապարհայն, և մերձ կացեալն *տեսանէ* նախ ըզմինն՝ և ապա զերկուսն՝ և որ զկնի: - 15. Իսկ թէ ոք ի բարձր աշտարակ կայցէ՝ *տեսանէ* զամենայն միահամուռ: - 15. Նախ՝ թէպէտ աստուած *տեսանէ* զամենայն նախատեսութեամբ և ո՛չ ինչէ արտաքոյ տեսութեանն աստուծոյ, սակայն *տեսանէ* զոմանս ի հարկէ՝ և զոմանս ի ներընդունակութիւնէ լինիլ: - 15. Դարձեալ ասեմք՝ թէպէտ *տեսանէ* աստուած զամենայն նախքան զլինիլն իւրեանց, սակայն տեսութիւնն աստուծոյ ո՛չ հարկ է ի վերայ նոցա լինիլ չար կամ բարի: - 15-16. Զորօրինակ՝ արուեստաւոր ոք մինչ գործէ զսայլ, և ի հեռուստ *տեսանէ* ոք զոր նա՛ գործէ...: - 16. Նաև մարդկան չարեաց թոյլ տալ. զի կամ ընտրեսցեն զբարիս՝ կամ յետոյ զղջասցին. և այլ պէսպէս նախախնամութեամբ որպէս ինքն գիտէ աստուած՝ ներէ՛ չարեաց. որպէս *տեսանելոց եմք* յառաջիկայսդ: - 17. Վասն այն կամեցաւ աստուած զի ի *տեսանելն* զնա՝ անի բաց դնելի սիրով միասցուք ընդ նմա: - 24. Չորրորդ՝ զի որք կապեալ եմք ի մարմնի՝ անհնա՛ր է անմարմնապէս *տեսանել* զնա: - 25. Եւ կամ առանց միջնորդութեան օդոյս *տեսանել* ինչ: - 25. Նմանապէս և մարդկան *տեսանել*

զաստուած առանց օրինակի և միջնորդի՝ անհնա՛ր է ի կեանս յայս: - 25. Երրորդ՝ ի *տեսանելեաց:* - 25. Եւ թէ ոչ՝ *տեսցեն* աչօք յերկինս և յերկիր: - 25. Երրորդ՝ ի միակէ, զի ամենայն բազմութիւն է ի միակէ՛. որպէս *տեսակն* յանհատէ. և գիծն ի կիտէ. և բազում թիւ է՛ ի միոյն: - 25. Երկրորդ ասէ նոյն եսայի եթէ՝ «եկեսցեն ի նա ամենայն ազգք». և զայս ո՛չ *տեսանեմք* եղեալ: - 27. Այլ ո՛չ ինչ յայսցանէ *տեսանեմք:* - 27. Նոյնպէս զիմանալի խորհուրդս և զգիտութիւնս զոր տկարանայ միտք, կարողանայ հաւատքն *տեսանել*. այլ ո՛չ ունի հաւատ՝ քան զտեսութիւն մտացն: - 31. ...բնութեամբ է մարդոյ ո՛չ *տեսանել* զյետոյս իւր. և ո՛չ առանց աչաց հայելոյ: - 31. Երրորդ՝ է՛ նրբութիւն իմանալեացն և բնութիւն իմացմանն. որպէս բժոտ աչքն ո՛չ *տեսանէ* զմազն ի հեռաստանէ: - 31. **Եւ զոր ինչ *տեսանէ* աչք արծուին՝ ո՛չ կարէ *տեսանել* աչք մարդոյ. այնպէս բթամիտն ո՛չ իմանայ, զոր իմանայ նրբահայեացն և ուսեալն յաստուծոյ. զոր եդ աստուած ուսուցիչ այլոց. որպէս մարգարէքն, և առաքեալքն, և վարդապետք**: - 31. **Եւ այնպիսիքն տրամաբանել ո՛չ կարեն վասն հոգևորին. որպէս ի ծնէ կոյրն վասն գունոց**, քանզի ասեն վարդապետք՝ աստուած լոյս է ո՛չ մարմնոց, այլ մտաց. զոր թէ ոք ո՛չ *տեսանէ*՝ կո՛յր է: - 32. Քանզի որպէս արեգակն ո՛չ *տեսանի*՝ եթէ ո՛չ լուսովն իւրով. այսպէս իմանալին աստուած ո՛չ *տեսանի*, եթէ ո՛չ լուսով շնորհաց հաւատոյն իւրոյ: - 32. Զի որպէս գիջակնութիւնն չտայ թոյլ *տեսանել* յստակ, այսպէս երկիւղն յետս քարշէ զբազումս ո՛չ հաւատալ ի քրիստոս...: - 32. Այլ և ատելութիւնն դարձուցանէ զմիտս բազմաց ի հաւատոցն. որպէս ատելութիւն և նախանձ փարիսեցւոցն՝ ո՛չ տային թոյլ հաւատալ ի քրիստոս. թէպէտ *տեսանէին* զամենայն նշանսն զորս առնէր...: - 32. Եւ որպէս աչք ո՛չ *տեսանէ* զպակասութիւնն իւր, նոյնպէս բանականն ո՛չ *տեսանէ* զմոլորութիւնն իւր: - 32. Պատասխանեմք թէ՝ մի՛ պատառեր զգիրս աստուածաշունչ. *տե՛ս* և զմեկնութիւն բանիդ թէ՝ «որ առաքեացն զիս հայր՝ ընդ իս է»: - 39. Որ *ետես* զիս՝ *ետես* զհայր իմ: - 39. Դարձեալ քննեսցուք ըստ մեզ. զի ո՛չ են հակառակ առաքելոյն բանն և աւետարանին, թէ հայր մեծ է քան զորդի. զի երկոքին նոյն ինքն աստուածութեանն իմանին. ըստ այնմ որ զմեր նուաստ և տկար բնութիւնս միացոյց ընդ իւրում աստուածութեանն, և անտեսանելին *տեսանիւր*՝ և ծառայի կերպիւ շրջէր վասն տնօրէնութեանն՝ ասի փոքր յայս միաւորութեանս քան զհայր. իսկ ըստ այնմ որ է՛ անճառ և նախքան զյաւիտեանս ծնունդ ի հօրէ՛, հաւասա՛ր է հօր և ոչ փոքր: - 40. *Տեսցուք* և զգործն յաղագս որոյ օծաւ...: - 41. Նախ՝ ոչ կարել վասն նուազութեան զօրութեան ժամանակի և դիմի. որպէս ո՛չ կարէ մանուկ կռուիլ՝ և կորիւն *տեսանել:* - 44. Զի թէ մարմնապէս *տեսանես*. ուրախութեան էր ժամանակն գալստեան և ո՛չ սգոյ որ է պահք և ապաշխարանքն: - 44. *Տե՛ս*՝ զի ի մի բնութիւն օտարութիւն ո՛չ ասի. վասն այն է աստուծոյ կամքն մի և ներգործութիւնքն մի. զի բնութիւնն մի է: - 45. Այլ աստուծոյն ո՛չ ըստ այսմ *տեսանի:* - 45. Զի նա գլուխ է մեր՝ և մեք անդամք. յորժամ *տեսանէ* զմեզ ի մեղս՝ հոգա՛յ և ցաւի վասն մեր: - 48. *Տե՛ս*՝ զի առանց որդւոյ անբան և տկա՛ր է հայր. ո՛չ կարէ լինիլ աստուած. ապա և ո՛չ հոգի: - 51. *Տե՛ս*՝ զի միովն բառնի երկուքն. և ասեմք թէ երեքն: - 51. Զի մեզ հոգին ըստ ինքեան գոյացութիւն, և յայլում *տեսանի*. այսինքն կատարեալ անձնաւորութիւն յէութիւն հօր: - 51. Բե՛ր նախ *տեսցուք* ըստ քո կարծեացդ թէ արարա՞ծ է հոգին: - 52. Որպէս *տեսանեմք* ի բոլորակս արեգականն և մի ասեմք զարեգակն. իսկ թէ հայիմք ի լոյսն և ի ջերութիւնն **գ** իմանամք: - 54. Այսպէս և աստուածութիւն մի *տեսանեմք* և անձինք երեք: - 54. *Տե՛ս*՝ զի այլ և այլեն բնութեամբ, և անուամբ թւակից առնէ: - 54. Այլ այժմ *տեսցուք* ի սուրբ գրոց զվկայութիւնսն մակեդոնի, և յարմարեսցուք զպատասխանիս նոցա: - 59. Եկեսցուք այժմ և *տեսցուք* զմոլորութիւնս նոցա՝ որք ասեն զհոգին սուրբ բղխումն ի հօրէ և յորդւոյ: - 61. *Տե՛ս*՝ փառաւորէ՛ և հայր զորդի որ սկիզբն է նորա...: - 61. Եւ զի հոգին սուրբ է միայն ի հօրէ բղխումն, *տեսցուք* զայս Նախ՝ ի հարցմանէ: - 62. Ա՛րդ՝ *տեսանեմք* զջերմութիւնն զի ո՛չ բղխէ ի լուսոյ, այլ միայն ի հրոյ: - 64. Եօթներորդ՝ զի թէ մեք որպէս և եմք ընդ լծով ծառայութեան՝ այսպէս և նա՛, զիա՞րդ յառակսն որ յաւետարանն՝ յետ ծառայիցն՝ որդի առաքի. զոր *տեսեալ* բաժանօղք այգւոյն ասեն՝ «սա՛ է ժառանգն և սպանին զնա»: - 67. Արդ՝ *տեսցուք* թէ ըստ որո՞յ եղանակի բաժանէք զմի անձն յերկուս բնութիւնս: - 87. Երրորդ՝ զի յընդդիմաբաժանեալ տեսակս՝ ո՛չ ուրեք մինն ի միւսումն *տեսանի*. և ո՛չ անբանն ի բանականումն: - 87. Այլ արդ՝ մարդկային բնութիւնն յաստուածութեանն *տեսանի*, և աստուածային ի մարդկութեանն, եթէ ի միութիւն բնութեանն, և եթէ ի միութիւն անձինն. զի ո՛չ սոսկ մարդ է քրիստոս և ո՛չ մերկ աստուած. այլ աստուած մարդացեալ: - 87-88. Ահա *տե՛ս* յայտնապէս. զի որք բաժանեն զմի քրիստոսն յերկուս բնութիւնս, ո՛չ պահեն զմիաւորութիւնն անբաժանելի: - 88. Նախ՝ որպէս սեռ ի տեսակս բոլորապէս *տեսանի* և ո՛չ մասամբ. այս է՝ զի գոյացութիւնն որ է սեռ՝ բոլոր է ի մարմինն և յանմարմինն. և կենդանին

բոլոր ի բանականն և բոլոր յանբանն: - 89. Որպէս ի նշխարս մարմնոյն է *տեսանել*. զի ի բոլորն է բոլոր քրիստոսն. և յիւրաքանչիւր մասունս է բոլոր քրիստոսն: - 92. Եւ *տես* ի հոմանունսն. որպէս ի կենդանի մարդն և գրեալն: - 95. Մարդեղութիւնն քրիստոսի՝ *տեսանէ՞* զաստուածութիւնն թէ ո՛չ: - 95. Այլ արդ՝ որ հարցնես թէ՝ մարդն քրիստոս *տեսանէ՞* զաստուած թէ ո՛չ. համաձայնիս հրէիցն. որք ասէին՝ «դու մարդ ես՝ և զանձն քո աստուած առնես»: - 95. Ա՛րդ՝ ի մարդկանէ ո՛չ ոք *ետես* զաստուած, և որդի կուսին ո՛չ *ետես* որպէս դուդ ասես. սո՛ւտ է ապա և պատմութիւնն զոր ինչ ուսոյց մեզ. զի ո՛չ է *տեսեալ* և պատմէ. ահա անդունդք հայհոյութեան. զոր ի կարգիս լռե՛մ: - 96. Այլ արդ՝ յերկնաւոր փառսն այն է գերագոյն՝ որ քան կատարեալ *տեսանէ* զաստուած: - 97. Ա՛րդ՝ եթէ՝ ի յարութեանն հասարակ արդարք *տեսանեն* զաստուած դէմ յանդիման որպէս և է, և քրիստոս ո՛չ կարէ *տեսանել*, փո՛քր լինի գիտութեամբ քան զմարդ որ է սուտ: - 99. Առաւօտի՝ որ *տեսանեն* զբանն աստուած, և առնուն գիտութիւն ի նմանէ: - 99. Եւ երեկոյի՝ որ *տեսանեն* զարարածս: - 99. Ա՛րդ՝ եթէ հրեշտակք *տեսանեն* զբանն աստուած՝ և առնուն գիտութիւն ի նմանէ, և մարդն քրիստոս ո՛չ *տեսանէ* որպէս ասես նեստո՛րդ, ապա քրիստոս փո՛քր է գիտութեամբ քան զհրեշտակս: - 99. Վեցերորդ՝ աչք հեշտանայ որքան առաւել *տեսանէ:* - 104. Տասներորդ՝ աչքն ի միշտ *տեսանելն* հեշտանայ: - 104. Իսկ յատկութիւն և որոշումն դիմաց՝ սակաւ ինչ է. վասն այն թըւով *տեսանի:* - 104. *Տե՛ս*՝ զի հոգին բղխումն է հօր անձամբ. և առումն յորդւոյ իմաստութեամբ. որպէս ցուցաւ ի վեց գլուխն ի **ժգ** համարն: - 105. Զի առ աստուած՝ ո՛չէ սոսկ տեսութիւն արտաքոյ. այլ յինքն *տեսանելով* զյարացոյցն. և զմեզ ի յարացոյցն մեր իբր լինիլ մեզ նախ ի յաստուած, և ապա ի յէութեան մերում. և ո՛չ որպէս փոփոխումն ինչ ի բարի կամացն: - 112. Այլ բազո՛ւմ է և զանազան ըստ պատկերի և նմանութեան յարացուցելոցս որք են բազումք. զի աստուած միով յարացուցիւ զբազումս *տեսանէ*. որպէս անմարմնութեամբն զմարմնաւորս *տեսանէ*. և յաւիտենիւ զժամանակեայս: - 112. Դարձեալ՝ գիտելի է, զի հին աւուրց և ծեր *ետես* դանիէլ. «հեր գլխոյ նորա սպիտակ իբրև զձիւն»: - 115. Թէպէտ առ մեզ *տեսանի* անսկիզբն յառաջին կողմն, և անվախճանն ի վերջինն. այլ ի նա ո՛չէ առաջին և վերջին. զի պա՛րզ և միեղէ՛ն է: - 115. Ո՞րպէս աստուած զանցեալն և զապագայն համանգամայն *տեսանէ* ներկայաբար. իսկ մեք ո՛չ: - 117. Իսկ միտքն աստուծոյ ի վեր է քան զժամանակ. վասն որոյ ներկայաբար զանցեալն և զհանդերձեալն *տեսանէ:* - 117. Վասն է՞ր է զի աստուած զանգործս և զոչէսն *տեսանէ*. իսկ մեք զեղեալն և զգործեալն: - 118. Ո՞րպէս *տեսանէ* աստուած զէքս. զի զգայութիւն ո՛չ ունի. որպէս մեք ներքին զգայութեամբ զիմանալիս՝ և արտաքին զգայութեամբ զերևելիս *տեսանեմք:* - 118. Ա՛րդ՝ աստուածայինն միտ չորիւք յատկութեամբ *տեսանի* այսպէս. համանգամայն. ներկայապէս կատարեալ. և անփոփոխ: - 118. Համանգամայն, այս է՝ զանցեալն և զհանդերձեալն իբր ներկայ *տեսանէ* և ներկայապէս. զի յինքն *տեսանէ* զամենայն. և ինքն ներկա՛յ է ինքեան: - 118. Եւ այս ամենայն ընդդէմ է տեսութեան մեր. զի մեք մասամբ *տեսանեմք*. և մի զկնի միոյ. և առաւել և պակաս գիտութեամբ. և ըստ իրին փոփոխմամբ: - 118. Իսկ մեր տեսութիւնս էութեանն հետևի. զի նախ իրն լինի, և ապա՛ մեք *տեսանեմք:* - 118. Զի աստուած նախ քան զգործն՝ և յառաջ քան զկամիլն՝ և նախ քան զէանալն *տեսանէ*...: - 118. Դարձեալ՝ *տեսանէ* աստուած ըստ պատճառի. զի ամենեցուն է պատճառ. և ըստ պարունակութեան, որ զամենայն առ ինքն ունի. և ըստ կատարման, որ ամենեցուն է վաղճան և կատարումն: - 118. Դարձեալ՝ զնիւթեղէնսն աննիւթապէս *տեսանէ*. և զբաղադրեալսն պարզ. և զժամանակեայսն յաւիտենական. և զբազումս և զբաժանեալս միեղէն և անբաժան: - 118. Իսկ մեք սոցա ամենայնի զընդդէմսն *տեսանեմք*. և ա՛յս է պատճառն: - 118. Զի աստուած ո՛չ արտաքոյ ինքեան ունի զտեսութիւնն. այլ ի ներքս միայն. զի զինքն ի յինքն *տեսանէ*՝ և զայլս ի յինքն...: - 118-119. Երկրորդ՝ զի զամենայն *տեսանէ*. այսինքն զարդարս և զմեղաւորս: - 119. Երրորդ՝ զի ամենայն գործսն *տեսանէ* ի ներս և ի դուրս. զմտաց և զբանից և զայլն: - 119. Չորրորդ՝ զի զանցեալն և զներկայն և զհանդերձեալն *տեսանէ:* - 119. Մեք ո՞րպէս *տեսանեմք* զաստուած. իմացմա՞մբ՝ թէ զգայութեամբ: - 119. Սակայն՝ զի թէ էն ըստ որում է աստուած՝ կրկին կերպիւ *տեսանի*. այսինքն գիտութեամբ և անգիտութեամբ. դնելով և բացաբառնալով այսպէս: - 119. Նախ՝ հայելով ի կերպարանս և ի նմանութիւնս որ է՛ կարգաւորութիւն արարածոց. և սոքօք ի յարացոյցն սոցա ելանել, և ի նմանէ դարձեալ ի նախատիպ յարացուցին ելանել. և այնպէս *տեսանել* թէ է՛ աստուած պատճառ ամենայնի: - 119. Դարձեալ՝ և այսպէս *տեսանի* աստուած. յորժամ միտք յամենայն եղելոց որոշեսցի. նաև յինքենէ՛ զի եղակա՛ն է. թողեալ զինքն միաւորեսցի յաստուածային ճառագայթն որ անքննելի լոյսն է և իմաստութիւնն: - 119. Պարզ և միեղէն, զի զնիւթաւորքս և զբաժանեալքս միով և պարզ

*տեսանեն:* - 119. Եւ գերամբարձ, զի ի բա՛րձր կոյս *տեսանեն* և ամբառնան և ոչ ի խոնարհ: - 119. Ա՛յս է՝ զի ի բանն աստուած *տեսանեն* զաստուած ի յինքն. և զեղեալքս ի յինքն: - 119. Վասն որոյ միեղէն *տեսանեն* և պարզ. որպէս զճագումն լուսոյ առանց ճանապարհորդութեան լուսաւորեալ. և միշտ բարձրանան տեսութեամբ: - 119. Եւ ա՛յս է նոցա առաւօտու և երեկոյի ճանաչումն, զի զաստուած *տեսանելով* նոր լինի նոցա ճանաչումն միշտ՝ որ է՛ առաւօտու: - 119. Եւ զեղեալքս ի յաստուած *տեսանելով* նոր լինի գիտութիւն արարածոց՝ որ է՛ երեկոյի: - 119. Զի ի մի և ի նոյն բանն աստուած *տեսանեն* զաստուած, և *տեսանեն* զեղեալքս ի յարացոյցն իւրեանց: - 120. Չորրորդ՝ միեղէն է նոցա տեսութիւնն և ի միոյ. իսկ մերս բազում և ի բազմաց. զի բաժանեալ զգայարանօք զբաժանեալ իրս *տեսանեմք:* - 120. Հինգերորդ՝ նոցա անմոռանալի՛ է տեսութիւնն. իսկ մերս հանդերձ մոռացմամբ. որքան զգայութեամբս *տեսանէ* միտքն: - 120. Նախ՝ զի միտք զանմարմինն *տեսանէ*, և զգայութիւն զմարմինն: - 120. Երկրորդ՝ միտք զգոյացութիւն իրին *տեսանէ* որ է ի ներքոյ եդեալ. և զգայութիւն զպատահմունքն ի վերայ եկեալ. որպէս որա՛կ քանա՛կ և այլն: - 120. Երրորդ՝ զգայութիւն զմասնաւո՛րն *տեսանէ*. որպէս այս ինչ մարդ որ է անհատ. և միտք զընդհանուրն իմանայ՝ որ է բնութիւն. որպէս մարդկութիւն: - 121. Չորրորդ՝ զգայութիւնն *տեսանէ* զմերձակա՛յն. որպէս ա՛ստ, և այժմ. և միտք զհեռաւորն և զանցեալն և զհանդերձեալն: - 121. Հինգերորդ՝ միտքն *տեսանէ* որպէս ներգործական պատճառ և արհեստաւոր. և զգայութիւնն որպէս գործիական պատճառ և միջնորդ: - 121. Երկրորդն է պատճառաբանական. որ ի պատճառելեացս՝ այսինքն յարարածոցս զգեղեցիկն *տեսեալ*, զպատճառն և զարարիչն վերակոչեմք և անուանեմք: - 122. Իսկ չորրորդն է խորհրդական աստուածաբանութիւն. յորժամ զամենայն զգալի և զիմանալի էութիւն արտաքոյ թողեալ, ի խորս ընթանամք մտօք և մտանեմք յամպն և ի մէգն ըստ մովսէսի. և ապա *տեսանեմք* զնա արտաքս որոշեալ յամենայն էից: - 122. Եւ այս է կարօտութիւն ամենայն ընտրելոց. այսինքն անհասին անհասապէս հասանիլ. և զանտեսն անտեսութեամբ *տեսանել:* - 123. Նախ՝ զի խորհրդով և հաւատով *տեսանի* և ո՛չ քննութեամբ մտաց: - 123. *Տես* և համեմատեա՛ առ աստուած թէ պիտի: - 124. Տասներորդ՝ նախընթաց և յետամնա՛ց է սպիտակ լոյսն. որպէս յառաւօտս և յերեկոյս *տեսանի:* - 125. Եւ տէր մեր հաւասար ողորմութեամբ և արդարութեամբ. զի որքան *տեսանեն* ողորմութեամբ՝ ձգտին առ շնորհն արդարութեան: - 127. Մեծ է տէր մեր և մեծ է զօրութեամբ. այլ քանակեալ մարմնով ի չափս մեր *տեսանի:* - 127. Նոյնպէս զլուսոյ և զհրոյ յատկութիւնս բաղդատել դիւրին է իմանալի լուսոյն ճշմարտի. որպէս գրեալ ի **ի** գլուխն՝ **լե** համարն *տե՛ս* անդ: - 127. Դարձեալ՝ և առ տրնօրէնութիւն Բանին *տեսանին* սոքա չորեքկին: - 129. Ա՛րդ՝ ասեմք նախ եթէ՝ ձայնն ծածկո՛յթ է բանին. յաղագս որոյ հեռաւորքն զծածկո՛յթն *տեսանեն*, և զծածկեալն ո՛չ: - 131. Նախ՝ զի նիւթեղէն միտք՝ միջնորդութեամբ նիւթո՛յ հասանէ յաննիւթն. որպէս *տեսեալ* զգիր՝ իմանամք զզօրութիւն նորա. և *տեսեալ* զորակ և զքանակ՝ իմանամք զգոյացութիւն իրին: - 131. Հինգերորդ՝ զի *տեսեալ* զանարգ կերպարանն՝ խնդրեմք զճշմարիտ իմացումն: - 132. Զի՞նչ է չորեքկերպեան կենդանիքն զոր *եստես* եզէկիէլ: - 132. Իսկ ասա աչքն զօրանայ ի *տեսանել* զերևեալ պատկերն կազմեալ ի յօդոյ: - 133. Նախ՝ զի զաթոռն մերձ նստողին *տեսին* եզէկիէլ և եսայի, և շուրջ զքերոբէքն և զսերոբէքն: - 135. Զի՞նչ է **ռք** հազարաց և բիւրք բիւրուցն զոր *եստես* դանիէլ: - 141. Իսկ առ հրեշտակս բոլոր շարժումն է ի նոյնէ ի նոյն. որպէս անիւն զոր *եստես* եզեկիէլ. այսինքն ի նոյն աստուծոյ են սկսեալք, և ի նոյն անվախճանապէս մնան: - 142. Նախ՝ զի ինքն ըստ ինքեան իմանայ և *տեսանէ:* - 142. Եւ է՛ յորժամ իմացումն ի յիշողութիւնն ի տրամախոհութիւնն և յայլս բաժանի, և նոքօք իմանայ և *տեսանէ* զաստուած...: - 142. Իսկ որ զգայարանօքն *տեսանէ*, այսինքն աչօքն զգոյնն, ականջօքն զձայնն, և այլն. կոչի սա զգայական տեսութիւն: - 142. Եւ կարօտի սա **բ** իրաց. այսինքն զի զգայութիւնն առո՛ղջ իցէ, և զգալի առաջի եդեալ իրն յստա՛կ. ապա թափանցէ՛ յինքն ի սոցանէ՛ պա՛րզ տեսութիւն. ապա թե ո՛չ՝ ո՛չ կարէ միտքն յստակապէս *տեսանել* սոքօք: - 143. Եւ զի՝ գութն յատուկ *տեսանի* յանբան կենդանիսն, և սէրն յատուկ է առ աստուած: - 144. Դարձեալ ունին հրեշտակք առաւօտեան և երեկոյին ճանաչումն. այսինքն զի *տեսանելով*. զբանն աստուած՝ կոչի առաւօտու ճանաչումն: - 145. Եւ ի բանն աստուած *տեսեալ* զարարածս՝ կոչի երեկոյին ճանաչումն: - 145. Նոյնպէս յերեւումն հրեշտակաց զոր միննն *տեսանէ*՝ այլ մերձակայքն ո՛չ *տեսանեն*. որպէս յա՛յտ է ի պատանեակն եղիսէի: - 145. Եւ թէպէտ լոյս կերպարանի այժմ, բայց *չտեսնու* զլոյս իւր. որպէս և ո՛չ մեք զմեր հոգւոյս: - 147. Եւ զնայելոյն պատճառն իրինոս մեկնէ թէ՝ զմարդոյն լինիլն *եստես* այնպէս փառաւոր և ի խորհուրդ եմուտ...: - 147-148. Եւ այլք ասեն այսպէս հակառակիլ ընդ աստուծոյ, յորժամ

*ետես* զինքն փառօք և վայելչութեամբ քան զամենայն դասս գերազանցեալ, կամեցաւ մեծ լինիլ ի վերայ ամենայնի և հաւասար աստուծոյ: - 149. Երկրորդ՝ զի պա՛րտ էր *տեսանել* այլոցն զմեղս նոցա և զպատիժ և մնալ ի բարին: - 149. Չորրորդ՝ թոյլ տայ փորձութեան արդարոց ի յուղղութիւն այլոց. որպէս ղազարոյն և մեծատանն. զի *տեսանելով* զղազարոս՝ և լսելով վասն մեծատանն՝ զարհուրիմք և գամք յուղղութիւն: - 158. Երեքտասաներորդ՝ զի տկար մարմնով անմարմին և զօրաւոր թշնամոյն յաղթեցեն. որով աստուած իսկապէս փառաւորի. *տեսանելով* զտկարն յաղթել զօրաւորին...: - 159. **Զորօրինակ՝ որպէս տղայ որ *տեսանիցէ* ցից ի յորմում, երթայ ի մօտ. թէ ամո՛ւր է՝ թողու. վասն զի ո՛չ կարէ հանել. և երթայ առ միւսն. թէ շարժի՝ ի մօտ կենայ մինչև հանէ**՛: - 160-161. Բե՛ր և զայն *տեսցուք:* - 163. Նախ՝ զի որպէս շինօղ տաճարին զսկիզբն և զկատարումն *ետես*. այսպէս և արարիչն աստուած ի կրկին սկիզբն գործոյն զկատարումն աշխարհի *ետես:* - 163. Չորրորդ՝ և որպէս որք մերձն են զառաջին սկիզբն ո՛չ *տեսանեն* որ ի միտս շինողին: - 164. Նոյնպէս և հրեշտակք ո՛չ *տեսանեն* զնախագաղափար տեսութիւնն որ լինելո՛ց էր յետոյ: - 164. Հինգերորդ՝ ի *տեսանել* զշինուածն՝ իմանամք զշինօղն: - 164. Եւ մեք ի *տեսանել* զարարածս՝ իմանամք զարարիչն...: - 164. Նախ՝ զի շինօղն էր յառաջ, և յետոյ *ետես* զշինուածն: - 164. Ութերորդ՝ զի բազմօք զբազումս *տեսանեմք*, կամ բազմօք զմի: - 164. Իսկ նախատեսութիւնն աստուծոյ միով զբազումս *տեսանէ*, և միով զմի: - 164. Իսկ աստուած *տեսանէ* զներքոյսն ի ներքուստ, և զարտաքոյսն ի ներքուստ. զի զամենայն առ ինքն և յինքն *տեսանէ*. և ոչ ինչ է արտաքոյ իւրեան: - 164. Տասներորդ՝ զի տեսութիւն մեր զէ՛սն *տեսանէ*. և զոչ էսն ո՛չ *տեսանէ:* - 164. Այլ տեսութիւնն աստուծոյ զոչ էսն *տեսանէ* և նախընտրէ ...: - 164. Զորօրինակ լոյսն որ միևնոյն է, այլ պայծառ՝ և բժոտեալ ակն ոչ միապէս *տեսանէ:* - 166. Այլ *տեսցուք* զայս և յօրինակս ճշմարտութեան. զի ադամ յետ միոյ յանցանացն ո՛չ մատոյց պատարագ զամենայն աւուրս կենաց իւրոց. այլ որդւո՛ցն հրամայէր մատուցանել: - 167. Այլ արդ՝ բնականին հետևելով *տեսցուք* զի՞նչ է գոյացութիւն և զի՞նչ պատահումն: - 170. Նախ զայս ասեմք թէ ամենայն ինչ հնարաւոր է աստուծոյ. զի կարէ՛ առնել զոր միտք մարդկան *տեսանէ*. և կարէ՛ զոր ո՛չ *տեսանէ:* - 173. Եւ ո՛չ ուրեք երբէք միտք ուղղափառաց բաժանմամբ *տեսանէ*. ո՛չ զբնութիւնս և ո՛չ զկամս և ո՛չ ներգործութիւնս որ յառաջն հարցափորձեցաք սակաւիկ: - 174. Նախ՝ զի սոքա անմարմինք են ըստ ինքեան. այսինքն քանակ, որակ, և այլքն. և յանմարմին էութիւնս ո՛չ *տեսանին*. որպէս ի հրեշտակս կամ ի հոգիս. զի նոքա ո՛չ ունին ձև. որակ. քանակ. և զայլսն: - 175. Եօթներորդ՝ ներքին իմաստքն ամենևին խոր և բարձրագոյն տեսութիւն. զոր ըստ ինքեան միայն իմացումն *տեսանէ* և ի դուրս արտաբերէ՛: - 177. Երկրորդ՝ զի ծեռամբ գրչի մտանէ ի բառ. և առանց բերանոյ բարբառի. և *տեսանի* աչաց. և լսի ականջաց. և ուսուցանէ զմիտս: - 177. Մին մարմնական. որ ի մէնջ *տեսանի:* - 180. Եւ երկիրս անշարժ է տեղեաւ, ետ սմա ապականիլ երեսօք. զի *տեսեալ* մարդիկ եղական և ծառայ իմասցեն զնոսա...: - 182. Երրորդ երկին՝ կատարեալ տեսութիւն իմացականին. որ դէմ յանդիման *տեսանէին* զաստուած. որպէս մովսէս և դաւիք: - 183. Երրորդ՝ աչք մեր որ է՛ լոյս՝ ի վերին մասն գլխոյս. և լուսաւորքն յերկինս. զի մերձաւոր նմանն զնմանն *տեսցէ:* - 188. Չորրորդ՝ զի ի վեր *տեսցուք* աչօք. և մտօք զվերինն խորհիմք...: - 188. Հինգերորդ՝ զի *տեսցուք* և իմասցուք թէ արտաքին սրահն երկնից այսպէս է զարդարուն. քանի՞ առաւել ներքին կողմն սրբութեան իմանալեացն դասուց: - 188. Զի *տեսեալ* մարդիկ զնոր և հին նորա՝ ասացին՝ մե՛զ ես օրինակ ծննդեան և մահուան. և կոչեցաւ ամիս: - 190. Այս է յորժամ ընթեռնումք յերկար զպատմութիւնն և լսեմք. իբրու թէ *տեսանեմք* աչօք. և մտօք վայելեմք: - 192. Նոյնպէս և նշանակէ՛ զհրեշտակաց բնութիւնն, որ նախ ստեղծան անկատար ճանաչմամբ և գիտութեամբ. այլ յորժամ երանեցան և *տեսին* զէութիւնն աստուծոյ անընդմիջաբար, յայնժամ կատարեցան ճանաչմամբ և գիտութեամբ: - 192. Եւ բազումք *տեսանեն* զսուրն ի մէջ պատենիցն հալեալ, և պատեանքն անխանձ մնացեալ: - 204. Առաջին՝ որպէս յերկինս նախ *տեսանին* աստեղք, և ապա բարութիւնք երկնից. այսպէս և ի բոյսս: - 213. *Տե՛ս*՝ ի չորից բաժանմանցդ միսն է ընտրելի, և զն խոտելիք են: - 215. Նա՛խ՝ ի փառս աստուծոյ ստեղծան. զի յորժամ զզանազան կերպարանս նոցա *տեսանեմք*, փառս տամք արարչին: - 217. Ա՛րդ՝ դրախտն ո՛չ զգայութեամբ և ո՛չ երևակայութեամբ՝ այլ իմացմամբ *տեսանի*. վասն որոյ երրորդ երկին կոչի: - 221. Նա՛խ՝ եթէ իմանալի է մեզ. զոր ո՛չ կարեմք այժմ զգալապէս *տեսանել:* - 222. Տղայն զմերձն *տեսանու*, և ծերն զհեռուն: - 227. Զի թէ զպատկերն աստուծոյ *տեսեալ* ի մեզ հպարտացուք, զհողն *տեսեալ* խոնարհեսցուք...: - 229. Վեցերորդ՝ զի *տեսցէ* ադամ թէ յապականացու հողոյ անապական մարմին կազմեցաւ վասն փառաց. և յորժամ կորոյս մեղօքն եղև

ապականացու, ինքն իցէ պատճառ ապականութեան իւրոյ: - 229. Չորրորդ՝ զի մի իցէ նեղասիրտ և տառապեալ բարուք *տեսանելով* զինքն ի չքաւորութեան ստեղծեալ. այլ *տեսցէ* զամենայն կատարեալ. զի արծակ և առատ բարուք սնանիցի և վայելեսցէ: - 230. Եօթներորդ՝ վասն զգայութեանցն, որ ամենեքին յառաջ հեղուն յուղեղէն, և ազատապէս *տեսանեն* և իմանան...: - 233. ...այլ կենդանիք միայն հեշտանան կերակրով և ցանկութեամբ. իսկ մարդն հեշտանայ առաւել գեղեցկութեամբ զգալեացս. յորժամ *տեսանէ* աչօքն զերկին և զերկիր. և ժողովէ՛ զճշմարիտ գիտութիւն նոցա և հեշտանայ: - 233. Երկրորդ՝ ցուցանէ յերկուց մասանց գոլ զբոլոր մարդն. և հոգոյն է զգալն և *տեսանել* և այլն: - 234. Եւ որպէս այս, նոյնպէս ի հոգւորն. վասն որոյ մովսէս ցանկայր *տեսանել* զերեսս աստուծոյ: - 234. Եւ այն զի աչքն ի դէմքն է, և ականջն ի կողմանէ. զի աչքն ուղղակշիռ ի դէմն *տեսանէ*. և ականջն շուրջանակի յամենայն կողմանէ լսէ. ի վերոյ ի ներքոյ և այլն: - 235. Երկրորդ՝ զի *տեսանելն* հաստա՛տ է քան զլուր ունկան: - 235. Այժմ *տեսցուք* թէ զի՞նչ է շահն աննման պատկերաց. զի բազում վնաս էր լինելոց թէ անհատք ո՛չ էին որոշեալ դիմօք: - 238. Վասն է՞ր *տեսանելն* հաստա՛տ է քան զլսելն: - 239. Երկրորդ՝ ցուցմամբ. զի *տեսանելն* զհաւատն նշանակէ որ է հաստատ. և լսելն զուսումն ճարտարութեան: - 239. Եւ *տեսանելն* մնայ հաստատ, զոր ա՛յժմ իմանալ տայ: - 239. Նմանապէս և այն. յորժամ զամենայն ինչ թողումք և ի լոյս ճրագին նայիմք. զի ազգական է իւր՝ զայն սիրէ և *տեսանէ:* - 239. Զի՞նչ է որ տղայն զմերձն աղէկ *տեսնու*. և ծերն զհեռուն: - 239. Այս երկու երակս թէ տաք է և չոր, մարդն ի մօտն աղէկ *տեսնու*՝ և ի հեռուն վատ. որպէս տղայն: - 239. Եւ թէ այս երակս հո՛վ է և գէջ, ի հեռուն աղէկ *տեսնու* և ի մօտն վատ. որպէս ծեր մարդն: - 239. Յաչքն աղի ջուրն, զի *տեսցէ* զկսկիծ անձինն և այլոց, և արտասուեսցէ: - 243. Եւ թէ որպէս, ասելի է թէ, ի սերմնական զօրութիւնն *տեսանի* երկու իր: - 254. Վեցերորդ՝ զի զգործն կենդանւոյ *տեսանեմք* ի նա որ է՛ ջերմութիւն, շարժութիւն, և ներգործութիւն. որ երևի ի կազմելն զիիւքն: - 256. Եւ իւրաքանչիւր ոք ծննդեամբ յառաջ եկեալ առնու զնոյն պատկերին շնորհ ի ծագմանէն աստուծոյ. և լնուն զնոյն թիւ որքանութեան զոր *ետես* աստուած նախքան զլինիլն աշխարհի որպէս ասէ առաքեալն: - 258. Եւ որպէս *տեսանին* այլ և այլ հոգիք են սոքա յայլ և այլ տեսակս: - 259. Այլ արդ՝ օրինակաւ *տեսցուք* զմիութիւն հոգւոյն: - 259. Եւ օրինակ այսմ դարձեալ *տե՛ս* զնշոյլս արեգականն. որ նախ երևի՝ և ապա արեգակն: - 260. Եւ թէ զտեսութիւնս զայս կարծես էութիւն հոգւոյ ըստ որում է հոգի, ապա ո՛չ միայն *ետես* զհոգի, այլ և զմարմին՝ և զիւրաքանչիւրոց ընտրութիւն, և զհամար հերաց և զթիւն աստեղաց. և սոքա յետո՛յ են գոյացեալ ըստ կամաց *տեսողին:* - 260. Այսինքն. ազգն՝ տեղին՝ և ժամանակն. որպէս ի սերմանս բուսո՛ց է *տեսանել:* - 261. Եւ արդ՝ ուսեալք զայս, մտցուք և ի ներքս բանիցս այսոցիկ և *տեսցուք:* - 261. Ուսեալք և զայս, բե՛ր *տեսցուք* և զմարդոյն թէ վասն է՞ր յինն ամիսս ծնանի: - 263. Եւ *տե՛ս*, զի **բ բ** են յաւելեալ թիւ ի չորեքտասան, յերեք հասակս փոփոխելով: - 265. Ուստի յա՛յտ է՝ զի այծեամն առաւել է *տեսանելեաւ*. և շուն հոտոտելեաւ. և այլն նմանապէս. վասն որոյ փութով շարժին և կանգնին քան զմարդն: - 266. Ի ծնանիլն նախ խնդրէ միայն կերակուր և աճէ՛. յետ որոյ *տեսանէ՛* կանգնի՛ և գնայ. յետ որոյ խօսի և իմանայ: - 267. Հինգերորդ՝ ի յուսումն խոնարհութեան մերոյ. զի *տեսանելով* զմեզ տկար քան զանասունս, մերկ և աղքատ ի մօրէ ծնեալ, խոնարհեալ զիջանիմք ի հնազանդութիւն արարչին. և զի մի՛ եկամուտ հպարտութեամբ կրեսցուք զանկումն արուսեկին: - 267. Այլ սկիզբն և վախճան ո՛չ *տեսանի* մեզ. բայց միայն եղեալ արարածքս: - 268. Խնդրեմ ուսանիլ թէ զի՞նչ է երազն որ *տեսանէ* մարդ: - 268. Երկրորդ՝ զոր ախորժակն ունի զկարօտութիւն՝ զա՛յն *տեսանէ*. որպէս քաղցեալն զկերակուր. և ծարաւն զջուր: - 268. Չորրորդ՝ ըստ բարուցն *տեսանէ* ոք. զի ա՛յլ է երազ արի մարդոյ, և այլ երկչոտին. ա՛յլ գիճասիրին, և այլ պարկեշտին: - 268. Իսկ զի բանական միտքն ո՛չ *տեսանէ* զերազն, այլ անբան մասն, որ է՛ տնկականն ի մեզ. նա՛ յածի յերազն. և ցուցանի այս ի կրկին իրաց: - 268. Նա՛խ՝ զի խորհրդական միտքն կարգաւոր և առանց տարակուսանաց *տեսանէ*. իսկ երազն անկարգ և տարակուսանօք և զանհնարն *տեսանէ* որպէս ի վերայ օդոյ թռչիլ, և ի ծովու գնալն, և աղքատաց թագաւորել, և այլն: - 268. Հինգերորդ՝ զի ամենայն *տեսանէ* և քննէ աստուած. այսպէս և մարդն ներքին և արտաքին զգայարանօք: - 271. Տասներորդ՝ մի և նոյն միտք է յաստուած որով զամենայն *տեսանէ* և զամենայն բարբառ լսէ. նոյնպէս և ի մարդս մի իմացումն է որ զանազան զգայարանօք իմանայ: - 271-272. Զի թէ ո՛չ էր ասացեալ ընդ պատկերին զնմանն լինիլ, ամենայն ոք պատճառէր, և զմարդն պաշտելով անկանէր ի կռապաշտութիւն. վասն որոյ ասաց զնմանն, թէ յորժամ *տեսցեն* պատկերակից աստուծոյ զմարդն բանականութեամբ անմահութեամբ և

այլովքն որ ինչ է ի հոգիս, իմանայցեն և զզանազանութիւնն աստուծոյ: - 274. Մարմնոյ` որով *տեսանէ* զաշխարհս: - 275. Մտաց` որով *տեսանէ* զիմանալիս: - 275. Յաւատոյ և խոկման` որով *տեսանէ* զաստուած: - 275. Նա՛խ` ի տեսութենէն, զի ո՛չ ևս յաւել *տեսանել* զերեսս աստուծոյ: - 279. Վեցերորդ` զի յառաջ քան զիւր վախճանն *ետես* զմահ կնոջն և զորդւոյն: - 279. *Տե՛ս*, զի յայտնապէս ցուցանէ սուրբն, զի թէ պահպանութեամբ կացեալ էին ի դրախտին, ո՛չ ևս ամուսնութեամբ լինէր աճումն: - 280. Վաթսունևք, Մովսէս *ետես* զերկիրն և ո՛չ եմուտ: - 285. Այսպէս և ի նորս սուրբն ստեփաննոս որ եղև առաջին մարտիրոս և վկայ քրիստոսի` հեղլով զարիւն իւր. *տեսանէր* բացեալ զերկինս և զյիսուս ընդ աջմէ աստուծոյ: - 288. Նա՛խ` զի յաներևոյթ կեանսն և ի հանդերձեալն յուսացաւ. և արհամարհեաց զերկրաւորս որ *տեսանի*. «զի յոյս *տեսանելի* չէ յոյս»: - 288-289. Եւ այս ևս գիտելի է, զի զվերանալն եղիայի *ետես* եղիսէ, զի մի՛ ասիցեն թէ սպանաւ յեզաբէլէ՛: - 290. Նոյնպէս և զփոխումն ենովքայ *տեսին* եղբարքն ուստերքն և դստերք նորա. զի մի՛ ասիցեն թէ սպա՛ն զնա՛ կուրացեալն ղամեք թոռն կայենի: - 290. Եւ թէ չունիս հաւատ զփտեալ փայտն *տե՛ս* ի գիշերի: - 294. Երկրորդ` զի ո՛չ ոք կարէ ելանել և *տեսանել:* - 294-295. Նա՛խ` զի իմաստութեան են պատճառք. զի *տեսանելով* զսոսա՞ զարարչութիւնն աստուծոյ ի միտ ածեմք: - 295. Եւ խնդրեցին զտապանն և զնա ոչ գտին. զի ո՛չ է հրաման տայ որ մարդն զարգանդ մօր իւրոյ *տեսցէ:* - 296. Եւ զի մի՛ մարդիկ ի պատճառս նորա մեղս գործեսցեն. վասն որոյ ո՛չ կարէին *տեսանել* զտապանն: - 296. Եւ ի հողմոյն յայնմանէ հոտ անուշութեան դրախտին բուրեաց ի նոսա. և տեսիլ իմանալի *տեսին*, և լուր իմանալի լուան. և յայնմանէ մոռացան զառաջինն. և որպէս ի քնոյ զարթուցեալք ո՛չ լսէին զլեզուս միմեանց: - 298. Երկրորդ` զի *տեսցեն* զբարի օրինակն, և յոչ օգտիլն` առաւել ևս տանջեսցին: - 302. Տասներորդ` հայրն առաքեաց զյովսէփ առ եղբարսն որ էին հովիւք և երիցունք *տեսանել* զնոսա. և բանիւն յուդայի վաճառեցաւ և եղև տէր երկրին և կերակրիչ: - 313. Նոյնպէս և սրբոցն միտք լուսաւորին յաջոյն քրիստոսի. զոր աստ շամանդաղ *տեսանէին* զփառս, անդ յայտնապէս *տեսցեն:* - 314. Երրորդ` զի մի հպարտացի յետ յաղթութեանն սատանայի, խօսեցաւ աստուած և յաղթեաց բանիւ. զի *տեսցէ* զտկարութիւն իւր և խոնարհեսցի: - 325. Այսինքն նախ` կուրաց *տեսանել* տայր...: - 328. Եւ այլն ասացաւ ի գոտէմարտիլն յակոբայ ի **ժե** համարն ա՛նդ *տեսցես:* - 332. Ձոր *տեսեալ* ժողովրդեանն նոր` ասէին ցմիմեանս, զինչ է սա. և կոչեցաւ մանանայ: - 338. Դարձեալ երիցս երևիլն է, զի աստ ի մարմնի հաւատով *տեսանեմք* զքրիստոս. և յետ մահու յուսով ի հոգիս մեր. և յետ յարութեանն սիրով միաւորիմք ի նա՛: - 341. Եօթներորդ` զի նոր իմն չնաշխարհիկ կազմեաց. նոր ժողովրդեանն և նոր օրինացն, իցէ և նո՛ր տաճար հռչակեալ ընդ ծով և ընդ ցամաք. որպէս պսակ և փառք արդարոցն է՛ զոր ակն ո՛չ *ետես* և ունկն ո՛չ լուսաւ. նոյնպէս և սա՛ ի զգալիսս անհաս ի մտաց մարդկան: - 342. Դարձեալ` զայս օրինակ *ետես* մարգարէն զաքարիա...: - 346. Վասն որոյ և յաւուրս զաքարիայի հօրն յովհաննու յորժամ յամեաց ի տաճարին և ել, ակնունէր ժողովուրդն *տեսանել* զա՛կնն և *տե՛սին* լուսափայլ սպիտակացեալ իբրև զձիւն. և լի՛ եղեն խնդութեամբ. զի երկնաւոր արքայութեան նշոյլքն պայծառացուցին զակն: - 349. Նա՛խ` զոր լւան զօրէնս ականջօք, *տեսցեն* և աչօք զի հաստա՛տ է տեսն քան զլուրն: - 349. Երրորդ` զի անարժանք էին մեռեալքն հոգւով` կենդանի բանին աստուծոյ *տեսանել* ա՛յն աչօքն որ *տեսին* զորթն. և համբուրել շրթամբք: - 350. Երես զիսկութիւն աստուածութեանն նշանակէ. զոր աստի կենօքս ո՛չ ոք կարէ *տեսանել*. որպէս զբոլորակ արեգականն. այլ ի հանդերձեալն *տեսանեն* ընտրեալք ըստ չափու: - 350. Իսկ յետոյքէ աստուծոյ, Նա՛խ` հաւատով *տեսանել:* - 350. Նա՛խ` զկերպն ադամայ որ ի դրախտին` երևեցոյց յինքեան. զոր *ետես* մահ և ընկէց զթագն իւր: - 352. Երկրորդ` զի դէմ յանդիման *ետես* զտէր և նշան լուսոյն մնաց ի տեսութիւնն: - 352. Երրորդ` զձայնն միայն լսեցին և զտեսիլն ո՛չ *տեսին*. և մեք լուաք և *տեսաք* և շօշափեցաք զբանն կենաց: - 353. Եւ առաջին տեառն սպանանել. որ զծածուկս *տեսանէ* և ո՛չ կեղծիւք ինչ: - 360. Եւ *տե՛ս*, զի անսուրբ կենդանին սատակեալ և սուրբ կենդանին սատակեալ միապէս պիղծք են: - 365. Եւ *տե՛ս*, զի սերմն ի մեզ ո՛չ պղծէ զմեզ, այլ ի հոսիլն պղծէ զդ դէմս: - 369. Եւ *տես*, զի սոքա երեքեան տօնքս, այսինքն ամսամուտն, և պասքայն, և յիսներեակն, հաւասար ունին զմատուցմունքն տօնից: - 373. Եւ յայսմանէ *տես* զժամանակ ծերութեանն անպատիւ գոլ: - 377. Չորրորդ` պակասեալ է զօրութեամբ *տեսանել* և լսել և այլն: - 377. Իններորդ` զի մերձեալ *տեսանէ* զօր մահուն և զթշնամին առաջի աչացն որով պատրաստի: - 378. Եւ *տե՛ս* զշնորհս խոստովանութեան. վասն այն որ զղջացաւ և յայտնեաց, ի հնգէն զմին տայ տուգանք: - 384. Երրորդ` հակառակատիպ *տեսանի*. զի անդ օձն պղնձի զմարդ թշնամիս իւր կեցուցանէր և զօձսն սատակէր. և տէր մեր զմարդիկ ազգակից իւր

կեցուցանէր, և զբշնամին սատանայ հալածէր: - 386. Եւ դարձեալ վասն օձին *տե՛ս* ի հարուածն եգիպտոսի ի ի գլուխ համարոյն: - 387. Եւ վասն առաջին օձին ի **ժգ** գլուխ համարոյն *տես* թէ պիտի: - 387. Երկրորդ՝ զի եօթնիցս եղև արժանի տեսլեան Երրորդութեանն. կրկին անգամ զհայր ի գիշերի. և կրկին զորդին ի տիւն. և հոգի աստուծոյ ի վերայ նորա երկիցս անգամ. և մի անգամ զհրեշտակն *ետես:* - 387. Եւ զի կրկին *ետես*, Նա՛խ՝ զի կրկին էր պատարագն. խոյ և զուարակ: - 387. Վասն է՞ր զաստուած *ետես:* - 387. Հինգերորդ, զի ուղղորդ և առանձին ընթանայր՝ *ետես* զաստուած: - 387. Նա՛խ՝ զի մի՛ հպարտասցի բաղաամ. զի և էշն *ետես* զհրեշտակն: - 388. Հմայն է՝ որ զտեսս աչաց կամ զձայն հմայէ՛. և զթռիչս և զկըռիչս հաւուց. և զձայն կրակի և զաճառաց. և զդրան, կամ աքիս *տեսեալ*. կամ բէճ. կամ մուճակ. կամ այլ ինչ այսպիսի...: - 388. Եւ երազահանն, որ ի գիշերի *տեսանէ* զդևս և մարգարէութիւն պատմէ զի պատրեսցէ: - 388. Զի՞նչ է որ մովսէս *ետես* զերկիրն և ո՛չ եմուտ: - 394. Երկրորդ՝ նշանակէ՛ զհոգիս սրբոց. որ *տեսանեն* զփառս, այլ ի յարութեանն առնուն: - 394. Զի՞նչ է որ մովսէս *ետես* նախ զծովն որ յարևմուտս, և զհիւսիս և զհարաւ, և ապա՛ զարևելս: - 394. Նախ՝ որպէս արեգակն եղև տեսութիւնն մովսէսի. զի յառաջ զարևմուտս *տեսանէ*. և վերացեալ զհիւսիս և զհարաւ. և ապա՛ զարևելս: - 394. Չորրորդ՝ մարմնով զօրինակն *ետես*, և ապա՛ հոգւով զճշմարիտ երկիրն պարգևաց: - 395. Վեցերորդ՝ նախ զկեանս զայս *տեսանեմք* որ է արևմուտք. և ապա յետ մահու զհանդերձեալն որ է՛ արևելք: - 395. Տասներորդ՝ ի կայանս հոգւոց նախ *տեսանի* պատիժն, և ապա փառքն: - 395. Նա՛խ՝ գիտելի է, զի աչք մարմնոյն զինքն ո՛չ *տեսանէ*, այլ զայլքն: - 397. Այլ միտքն *տեսանէ* զինքն և զայլս: - 397. Դարձեալ՝ որպէս աչօք *տեսանեմք* զմարմնոյս մասունքն և զտգեղութիւնն զարդարեմք: - 397. Նոյնպէս և մտօք զմասունսն հոգւոյս զբան՝ զցասումն՝ և զցանկութիւնն *տեսանել* և զարթարել: - 397. Եւ որպէս ննջեցեալն քնով՝ ո՛չ *տեսանէ* զինքն...: - 397-398. Դարձեալ՝ հայեա՛ց յանձն քո. և նախ զքեզ քննեա և *տե՛ս*, և ապա՛ զայլս: - 398. Եւ զի զայս ամենայն վկայութիւնս նշանի *տեսին* աչօք և լսեցին ականջօք և ո՛չ հաւատացին...: - 400. Այլ *տե՛ս* յայտնապէս...: - 400. Զորօրինակ՝ ճրագ ըզտեսօղս լուսաւորէ՛, և զտկարս խաւարէ՛. կամ որք ի ճրագ նային *տեսանեն* լոյս. և որք յետս դառնան խաւարին: - 403. Նա՛խ՝ զի ի խղճմտանք մարդոյն կախեալ է կեանքն արժանի մահու. և *տեսանէ*՛ միշտ և ո՛չ հաւատայ և դադարէ ի մեղաց: - 404. Չորրորդ՝ այժմ *տեսանեն* աչօք զեկեղեցի սուրբ որ զկախեալ ի նոցանէ՝ աստուած հաւատայ զնոյն մեռեալ և կենդանի, և ո՛չ հաւատան: - 405. Եւ պա՛րտ է մեզ հանապազ զքրիստոս առաջի աչաց *տեսանել* ի խաչ վասն մեր և հաւատալ. և չարչարակից լինիլ նմա յամենայն ժամ: - 405. Երկրորդ՝ ի յարարածոցս *տեսանի* արարիչն. զի երևելի արարածքս թարգմա՛ն են նորա: - 406. Ի հակառակէն *տեսցուք:* - 406. Զի՞նչ է նայիլ և հայիլ և *տեսանելն:* - 407. *Տեսանել*՝ զհաւասարս: - 407. ...իսկ *Տեսանելն* մարմնական. ըստ այնմ «*տես* աչօք քո»: - 407. Դարձեալ՝ Նայիլն և Հայիլն յատուկ տեսողութեանն է. իսկ *Տեսանելն* հասարակ զգայութեան: - 407. Զի ասեմք՝ *տե՛ս* զհամն և զհոտն. *տե՛ս* զբանդ. *տե՛ս* թէ ջե՞րմ է կամ ծանր: - 407. Եւ *տե՛ս*, զի և զղևի՛ օրհնեաց. վասն զի ապաշխարեաց ի յարենէ սիկիմացւոց ի յարիւն եղբարցն որթապաշտից: - 409. Չորրորդ՝ *տեսեալ* զմովսէս առաւել փառաւորեալ, և յետ վախճանին թոյլ ետ ներողութիւնն աստուծոյ ժպրհիլ բանսարկուին ստգտանօք մեղաց. զի մի՛ տացեն նմա զգերազանց պատիւն աստուած կարծելով: - 410. Զայս նշանակէ թէ՝ յետ ելանելոյ հոգւոյ ի մարմնոյ և գնալոյ ի վերին շաւիղն, հակառակ կայ սատանայ և չար զօրութիւնքն ընդ նմա, տանիլ զհետ իւրեանց որ զչա՛րսն են գործեալ. և յարդարոցն յաղթին հրեշտակին օգնութեամբն. որպէս և անտօն *ետես*. զի իմացեալ և մեք զգուշասցուք այնմ: - 410. Երկրորդ՝ և մի՛ փոքր կասցի օրէնքն, *տեսանելով* զլոյս երեսացն նւաղեալ: - 411. Նա՛խ՝ զի ընդ աստուծոյ խօսեցաւ և *ետես* և լուաւ զբանն: - 411. Քսանևզ, Վերացումն եղիայի շարժմամբ. և կառքն և հեծեալք *տեսեալ:* - 413. Երրորդ, զի ո՛չ միայն մերձաւորք, այլ և հեռաւորք մինչ ի յակն *տեսցեն* զսքանչելիսն: - 414. Վեցերորդ՝ զի թէ լինի անկարօտ գող և զրկօղ, ընդ տեառն իւրոյ կորուսանէ և զինչսն. որպէս աքարն որ ունէր բազում ստացւածս, և գողացաւ ի նզովիցն երիքովի. *տեսին* ամենայն ժողովուրդն և ցասեան ի վերայ նորա և իրաւունս ետուն սատակմանն: - 416. Երկրորդ՝ զի *տեսցեն* զտկարութիւն դիցն որք զլուսաւորսն պաշտէին: - 416. Վեշտասաներորդ՝ յեսու *ետես* զհրեշտակ աստուծոյ յօգնութիւն եկեալ: - 418. Սա՛ *ետես* զգեղմն իմանալի յորժամ ծեծէր զցորեանն ի կալն: - 420. *Ետես* զայս չափ մեղս առ աստուած ասէ՝ հեղի: - 425. Տասներորդ՝ աստուածս *տեսի* ասէ, զի զսաւուղ և զսամուէլ *ետես:* - 428. Այժմ *տեսցուք* զբանսն սաւուղայ: - 429. Նա՛խ՝ զի ո՛չ *ետես* զնա. այլ միայն կինն. ապա յա՛յտ է զի սուտ նմանութիւնն էր: - 429. Երրորդ՝ զի երկիր եպագ նմա զոր ո՛չ *տեսանէր:* -

429. *Տեսցուք* և այժմ զորպիսութիւն յարուցելոյն: - 429. Բե՛ր *տեսցուք* և զորպիսութիւն խօսիցն, որ թուի թէ ճշմարիտ զապագայն պատմեն դևք: - 430. Երրորդ՝ զի որք լսեցին զմեղսն դաւթի, *տեսցեն* և զզղջումն: - 432. Եւ այն զի դաւիթ միայն *ետես* զկոտորօղ հրեշտակն, զի միջնորդեսցէ: - 435. *Տե՛ս*, զի յորժամ կոտորեաց զիռսն՝ ասացաւ հրեշտակին արգելուլ զսուրն: - 435. Եւ *տես*, զի պաշտմամբ և պատարագաւ յետս դառնայ բարկութեան սուրն: - 435. Դաւիթ յետ յերկուց ամաց *ետես* զաբիսողոմ. և տէրն զմեղաւորս յետ ապաշխարութեան հոգւոյ և մարմնոյ. այլ և յետ աստեացս և մահու *տեսանէ* ի դատաստանին: - 438. Եւ *տե՛ս*, զի ոչ ինչ էր հրէիցն ի տաճարին: - 440. Քսանևք, ցանկացան ամենայն թագաւորք *տեսանել* զսողոմոն: - 442. Եւ *տես*, զի վրէժխնդիրն օրինացն մովսէսի՝ նախ ի՛նքն լուծանէր զօրէնս. զի ագռաւն պիղծ էր օրինացն: - 443. Եւ վասն այն գնաց ի սաբեփթա յայլազգիս. զի և զնոցա նեղութիւնն *տեսցէ*. որք չէին անցեալ զօրինօքն մովսէսի: - 443-444. Այլ և զառաւել գութն հեթանոսաց *տեսցէ*. որպէս յօնան զնինուէացւոցն ապաշխարութիւնս: - 444. Եւ այս է նշանն, եթէ *տեսցես* զվերանալն իմ, ապա լինի՛ պատիժ նոցա. ապա թէ ոչ *տեսցես*՝ չեն արժանի պատժոց. այլ շնորհքն խնայէ՛ ի նոսա: - 445. Նա՛խ՝ զի մի՛ զարհուրեսցի եէմ *տեսեալ* զսուրն որ կոտորեաց զնոսա: - 446. Երկրորդ՝ զի իջցէ ի գերեզման և մի՛ *տեսցէ* զչարիքն որ ի ձեռն նաբուգոդոնոսորայ գալո՛ց էր ի վերայ երուսաղէմի. որպէս յայտ է ի պատմութիւնն: - 446. Իսկ այլ ոմանք թուեն զեօթներորդն դանիէլի ի դարեհի որդւոյ արշուրեայ առաջին ամէն. յորում զտեսիլն *ետես* մարգարէն. մինչև ի ծնունդն քրիստոսի ամք **նձգ**: - 449. Եւ գիտելի է, զի բազմաեղանակ *տեսանի* գործ ողորմութեան և արդարութեանն աստուծոյ: - 457. Եւ այսպէս բազումս *տեսանի* ըստ մասին գործ ողորմութեան և արդարութեանն աստուծոյ: - 458. Այլ ո՛չ յարմարի բանս. զի և յերկինս *տեսանի* գործ արդարութեան առ հրեշտակս եղեալ. որք հպարտացեալ կործանեցան: - 458. Եւ *տե՛ս*, զի ամենայն բանք կուսին են կարճ: - 466. Չորրորդ՝ միտք և հոգին ո՛չ երևին. և բանն երևի և ի դուրս գայ. և մարդիկք *տեսանեն* և գրեն. վասն այն բանն մարմնացաւ, և ո՛չ հայր կամ հոգին: - 468. Անտեսանելին *տեսեալ:* - 470. Եւ *տե՛ս*, զի բնութեամբ միաւորեցաւ՝ իմանի քրիստոս. յայտ է զի յորոշելն ըստ ոմանց՝ ո՛չ ևս մնայ քրիստոս: - 474. Հինգերորդ՝ միաւորութիւն սովորեցաք կոչել յորժամ նիւթ ինչ աննիւթով կերպարանեալ *տեսանի* տեսակաւ: - 476. Ասեմք եթէ՝ ապացոյցն ո՛չ ամենայն իրօք է նման. ապա թէ ոչ՝ լինէր նոյնն. վասն որոյ նոյնքանաբար *տեսանի* աննմանութիւն օրինակին առ ճշմարտութիւնն: - 478. Հինգերորդ՝ զի հոգի միաւորեալ ընդ մարմնոյ՝ է՛ ի մարմնումն էութեամբ և ո՛չ այլ ուրեք թէ և մտօք բազումս *տեսանէ:* - 478. Իններորդ՝ զի ի հոգի՝ ի նմանամասունս և յաննմանամասունս այլ և ա՛յլ գործէ. ըստ որում ակն *տեսանէ* և ո՛չ լսէ. բերանն ճաշակէ՛ և ո՛չ հոտոտէ: - 479. Այս դպրութիւնքս բանին ի կատարածի ըստ դանիէլի. որպէս գրեալ է աստ յայլում տեղւոջ՝ անդ *տեսցես:* - 481. Երկրորդ՝ ի յանդիմանութիւն խաչողացն. զի լուսաւորքն *տեսեալ* զտէրն իւրեանց մերկացեալ, պատկառեցին և քօղ արկին զխաւարն: - 490. Եւ զի մի՛ *տեսցեն* անարժանքն: - 490. Եւ այլք ասեն՝ դրախտ զտեսութիւն աստուածութեանն կոչէ. զոր յետ աւանդելոյ հոգւոյն *ետես* աւազակն. և այս ուղիղ է. զի ո՛չ ասաց թէ՝ իցեմք, այլ թէ՝ իցես: - 495. Եւ ակամայքն հարկաւորք են և ծառայականք. և առ աստուած ակամայ կիրք ո՛չ *տեսանի:* - 501. Եւ դարձեալ որ ուղիղն է, որպէս մարմնով *տեսին* ի յերկրի, նոյնպէս և հոգւով ի դժոխս պարտ էր հոգւոցն հաւատալ ի հոգին քրիստոսի և ազատիլ: - 507-508. Իսկ հոգիքն ի դժոխս յորժամ *տեսին* զքրիստոս, այն էր ժամանակ փրկութեան նոցա և ընդունելոյ զողորմութիւն. յաղագս որոյ հաւատովք արդարացան նոքա միայն ի նոյն ժամն: - 508. Որպէս յօրինակէն *տեսանի*. որ թէպէտ առ հասարակ ելին յեգիպտոսէ յանապատն, այլ ոմանք մտին յերկիրն պարգևաց: - 508. *Տե՛ս* զի ի ժողովն եփեսոսի հասարակ ամենայն ազգ այսօր նաւակատիս առնէին մինչ ի ժողովն քաղկեդոնի ուր փոխեցան տօնք և պահք և դաւանութիւնք: - 509. Եւ *տե՛ս*, զի լուսաւորիչն կարգեաց զնաւակատիսս յայսմ աւուր...: - 509. Եւ որպէս յինն ժամու ուրբաթուն լոյս ծագեաց հոգւոցն ի դժոխս, նոյնպէս և յինն ժամու շաբաթուն լոյս ծագէ զճառագայթս իւր արեգակն արդարութեան քրիստոս. մինչ յառաւօտուն բոլորապէս *տեսանի* ինքն յարուցեալ ի մեռելոց: - 509. **Եւ *տե՛ս* և ի միտ առ. զի սոքա ի մի կարգի՛ են եղեալ. այսինքն ձուկն և ձու և կաթն. և որ ուտէ զմինն՝ կերիցէ և զմիւսն:** - 510. Դարձեալ պատճառե՛ն թէ՝ յետ յարութեանն եկեր ձուկն ընդ աշակերտսն. յորում կրակեաղ կայծականց *տեսին* և ձուկն խորովեալ և հաց. և օրն էր չորեքշաբաթի. և ի **ե** շաբաթի համբարձաւ: - 511. Իններորդ, գեթէօն՝ այն որ զցօղն *ետես* ի վերայ գեղման, զիօր իւրոյ զեզն պարարակ հրամանաւ հրեշտակին ի մէջ գիշերին պատարագեալ...: - 513. ...և յառաւօտին *տեսին* զայն ամենայն մարմին մեռեալ...: - 514. Իսկ թէ ոք ասիցէ, աւետարանն

ընդ արշալոյսն ասէ զգալ կանանցն և *տեսանել* զքրիստոս: - 515. Մատթէոս զառաջինն գրէ որ ի մէջ գիշերի եկին. և մի հրեշտակ *տեսին*. և զվէմն առաջի նոցա թաւալեցոյց և նստաւ ի վերայ նորա: - 515. Եւ զերկրորդն ղուկաս պատմէ՛ վաղ քաջ ընդ առաւօտն. և *տեսին* արք երկու լուսազգեացք. և զվէմն թաւալեալ: - 515. Իսկ զերրորդն մարկոս պատմէ՛ առաւօտուն և յարևագալն յետ ղուկասու. և *տեսին* երիտասարդ մի ի ներքս ի գերեզմանն ընդ աջմէ նստեալ: - 515. Եւ զչորրորդն յօհաննէս պատմէ միա՛յն զմագդաղենացին. և *տեսեալ* երկու հրեշտակս ի սնարս և յոտս նստեալ: - 515. ...բայց մագդաղենացին ջե՛րմ էր ի սէրն քրիստոսի՝ եկաց զի ա՛յլ ինչ լուիցէ կամ *տեսցէ:* - 515. Եւ ոմանք ասեն թէ՝ երկու են մագդաղենացիքն. մինն գնաց և ի ճանապարհին *ետես* զտէրն. և միւսն եկաց և ի պարտիզին *ետես:* - 515. Նախ՝ խորհրդաբար. ի **ե** շաբաթոջ աւուրն յերեկոյն թաղեցաւ ի սիրտ առաքելոցն ճաշակմամբ մարմնոյն...: - 516. Երկրորդ՝ զի անպն կալաւ զնա յաչաց նոցա. նշանակի թէ ի մահկանացու մարմինս ո՛չ կարեմք *տեսանել* ի բարձունս զքրիստոս: - 520. Եօթներորդ՝ զի սաստիկ է. զի ամենայն ոք ի հարկէ զաչս խփէ որ հանապազ *տեսանեմք* զլոյս: - 522. Այլ ընդ տեառն մերոյ բազումք խօսակիցք եղեն և *տեսին:* - 522. Երրորդ՝ ի լեառն ձիթենեաց *տեսին* զտէրն ելեալ յերկինս՝ երկրպագեցին նմա: - 528. Նոյնպէս քրիստոսիւ *տեսանեմք* զհայր աստուած, և առնեմք զկամս նորա. և կերպարիմք և զմայլիմք հոգէպէս: - 532. Սակայն *տեսցուք* զի ըստ փիլիսոփային մի ասի **գ** եղանակաւ: - 533. Երրորդ՝ երևակայութեամբ. որպէս եղիսէին ի *տեսանել* զզօրս հրեշտակացն, և մանկանն ո՛չ *տեսանել:* - 536. Այլ իմաստութիւն և հանճար զանազանեալ է ի վերոյ ի **ժզ** գլուխն, **իէ** համարն *տես* անդ: - 537. Եւ *տե՛ս*, զի սիմէի որքան յամեաց ի քաղաքն ըստ հրամանի սողոմոնի ո՛չ մեռաւ զերիս ամս: - 540. Այլ թէ գիր չունէր մեր ազգս, *տե՛ս* զի յաստուծոյ տուաւ մեզ գիր, որպէս մովսէսիւ իսրայէլի. և այլ ո՞ր ազգ պարծի այսու: - 549. Այսինքն է, զազգս քրիստոնէից *տեսանեմք* զի ո՛չ ըստ անուանն և զմիութիւն կանոնական սահմանի ունել: - 553. Եւ այլք բազումք գոն պարապով *տեսեալք:* - 554. Եւ ըստ այսմ միաբանութեան և զմէրս *տեսանեմք* եկեղեցի ունել եզով միաբանութիւն առ այլ քրիստոնեայս: - 554. *Տե՛ս* զի ո՛չ բանիւ և ո՛չ գործով էր, այլ միայն ի միտս ունէին և յանդիմանեցան ի տեառնէ: - 557. Որովք միշտ երանութեամբ զաստուած *տեսցես*. հայելով յօրէնս նորա ի տուէ և ի գիշերի: - 558. Ա՛րդ՝ մեղանչելն մարդոյ այնպէս է որ զակն խփեաց ի լուսոյն և խաւարեցաւ. սակայն լոյսն ծագէ՛ դեռևս ի վերայ աչացն և սակաւ փայլէ ի ներքս. և յորժամ բանայ վաղվաղակի լոյս *տեսանէ:* - 562. Իսկ կամաւոր մեղքն գրա՛ծ է ի հին օրէնքն **իբ** գլուխն *տես*: - 564. Երրորդ՝ զի չունէին պատճառս հայհոյութեան հոգւոյն որպէս զորդոյ. զի *տեսանէին* մարմին զգեցեալ, ուտել և ըմպել, տքնիլ և ննջել: - 566. Գիտացեալք զայս՝ այժմ *տեսցուք* զզանազանութիւն սոցա: - 567. Դարձեալ զանազանին սոքա. զի մեղք խորհրդոյն կայանայ յերիս. ի *տեսանելն*, ի հաւանիլն, և ի կամիլն: - 568. Եւ որպէս օձ յայգւոյ ծաղկէն մեռանի, նոյնպէս նախանձոտն սատակի ի *տեսանել* զբարի ընկերին: - 569. Ա՛յս է որ զմարդն յաստուծոյ հեռացնէ. զի սուրբքն միա՛յն *տեսանեն* զաստուած: - 570. Զի հաւատովն *տեսանի* ծայրագոյն բարին: - 571. Եւ թէ հաւատն առաւել է քան զգիտութիւն, ցուցաւ ի վերոյ յաստուածաբանութիւնն դիոնիսեայ ի **ժէ** համարն *տես:* - 573. Իսկ յոյսն որ էր ի սուրբն ստեփաննոս յորժամ *ետես* զերկինս բացեալ...: - 574. Երկրորդ զօրացուցանէ. որպէս յա՛յտ է ի մակաբայեցւոցն զկնոջէն որ ունէր է որդիս՝ ածեալ ի սպանումն ի միումն աւուր *տեսեալ*. և տանէր այնմ՝ յուսովն որ առ աստուած. նոյնպէս և ամենայն դասք մարտիրոսացն յուսով զօրացան: - 574. Ութերորդ՝ հաւատն *տեսանէ*. յոյսն ըմբռնէ. սէրն միաւորէ՛: - 578. Հանճարեղութիւն է նկատել զայնս որ են. և Նախատեսութիւն է *տեսանել* զլինելոցն. այլ Յիշողութիւնն է վերստին յիշել զեղեալսն: - 580. Սրբութիւն սրտին է որով պայծառանայ և մաքրի սիրտն առ ի *տեսանել* զաստուած. և առ ի սիրել յոյժ ջերմ եռանդապէս: - 585. *Տե՛ս* զի բազում ասէ զվարձս բամբասանաց որչափ նախատիցին: - 586. Հինգերորդ թէ առ աստուած հայիցին միշտ և զնա՛ *տեսանեն:* - 586. ...վասն որոյ պա՛րտ է աչօք *տեսանել* զզգալիսն, և մտօք հայիլ յիմանալին և երանիլ: - 597. Եւ թէ հրէա ոմն *ետես* զի հում միս արիւնաթաթախ տայր ժողովրդեանն. և զղջացաւ անկաւ յոտս սրբոյն և մկրտեցաւ: - 599. ...որպէս ասացաւ յառաջագոյն ի թագաւորութեանց **իէ** գլուխն. **ժե** համարն *տես:* - 603. ...այսինքն զի *տեսեալ* հաւանեսցին միմեանց: - 610. Զայս ունի խորհուրդ, որ հարսն և փեսայն յառաջ քան զպսակն *տեսանեն* զմիմեանս. և հաւանին սրտիւք և կամօք և ապա՛ պսակին: - 610. ...զի *տեսանելով* զպակասութիւն մեր՝ արտասուեմք և լամք. վասն որոյ առնումք զթողութիւն...: - 619. Նա՛խ՝ երեխայքն ուխտեցին հրաժարիլ ի սատանայէ՛. և ի մեծի զատկին մկրտելովն իսրայէլ. և ապա ուխտ ապաշխարութեան պահոցն. և յարութեանն *տեսանել* զքրիստոս. աստ և անդ: - 629. Բայց

դարձեալ *տեսանել* պարտ է զկանոնագլուխս ընդ կանոնացն կարգաւորեալ: - 629. Եւ սոկրատ պատմագիրն ասէ թէ՝ մեծն իգնատիոս աստուածազգեացն *ետես* երկնային զօրս. և լուաւ ի նոցանէ...: - 631. Եւ զսուրբ աստուածն խաչեցար. և այսպէս գրէ՝ եսայի *ետես* զքրիստոս նստեալ յաթոռ որ է խաչն. և երգէին զերեքսրբեանն: - 631. Եւ վկայէ՛ մեզ աւետարանիչն յօհաննէս. զի ասէ՝ եսայի *ետես* զփառս նորա և խօսեցաւ վասն նորա. - 632. Իսկ յատուկ, Նա՛խ՝ զերեքսրբեանն ի դէմս որդւոյ. զի նա՛ է առաջնորդ որով զհայր *տեսանեմք:* - 633. Եւ *տե՛ս*՝ զի ամենայն ուրէք զհոգին սուրբ հօր աղերսեմք. զի ի հօրէ՛ բղխէ: - 633. Չորեքկերպեան կենդանիքն է՛ խաչն. և *տեսեալն* ի վերայ նորա՝ գառն որ բառնայ զմեղս աշխարհի: - 638. *Տեսանէր* ժողովուրդն ուր կայր աստուած, և ընդ ոտիւքն իբր զգործած աղիւս շափիւղայ. որ է՛ ակն պատուական. և աղիւսն խաչաձև է: - 639. Դարձեալ՝ մարգարէքն ի հեռուստ *տեսին*. և առաքեալքն մերձ զբանն մարմնացեալ: - 643. Կամ որպէս յետ յարութեանն պետրոս նախ *ետես* զքրիստոս...: - 644. ...նշանակէ՛ զհանդերձեալն որ դէմ յանդիման *տեսանելոց* եմք զնա: - 646. Եւ *տես* թէ ո՞ր քան և ո՞րպիսի անիմանալի և անճառելի երանութիւն է սրբոցն...: - 647. ...որք *տեսին* զքրիստոս չարչարեալ...: - 648. Զի մերձ յինքեանս և յինքեան *տեսանեն* զփառս և զհանգիստ: - 648. Եւ եփրեմի ներբողեա՛նն այլ՝ ցոյց զա՛յս տայ. թէ դահիճն *ետես* ի բանտին որ այսպէս աղօթէր: - 659. Եւ *տեսանեն* արդարք զմեղաւորս: - 661. ...զի յորժամ *տեսցուք* զանցաւոր կեանս, իմասցուք զմեծութիւն պատւոյն ա՛յնր կենացն: - 663. Երրորդ զհիւանդութիւնն. զի *տեսեալ* զսոսա՝ գիտասցուք զմահն մերձեալ: - 665. Եւ *տե՛ս* զորպիսիութիւնն: - 667. ...իսկ յետ մահու հաստատուն յուսով *տեսանեմք* և ուրախանամք...: - 667. ...ի *տեսցուք* և ի միտ ածցուք զօր ելիցն մեր ի մարմնոյ: - 668. Ի վախճան մերձեցեալքն *տեսանե՞ն* զանտի կենացն ինչ՝ թէ ոչ: - 668. Եւ զոր այժմ մղտատեսակ և հեռու *տեսանէր*...: - 668. ...յայնժամ յայտնի և մերձակայ *տեսանէ* զամենայն փառս և զպսակ զոր ընդունելոց են նոքա ի յարութեանն աւուր...: - 668. Որպէս որք ի խաւար բանտից զերծանին և ազատեալք զլոյս *տեսանեն*. նոյնպէս և հոգին բաժանեալ ի մարմնոյ. և են ի լոյս և յերանութեան հանգիստն: - 669. ...յայնժամ *տեսանէ* ա՛յլ աչօք, այսինքն մտօքն: - 669. Եւ այնպէս յարաժամ *տեսանէ* զցաւս մերձ ինքեան և առ ինքն ի չար գործս իւր անբաժանելի ի նմանէ մինչ ի յարութեանն օր...: - 669. Եւ *տեսանեն* զպատիժս մերձ ինքեանց...: - 669. Այլ երկոքինն ունին ի հոգիս իւրեանց մերձ տեսեալ՝ զոր ի յարութեանն առնելո՛ց են կատարեալ անձամբ՝ հոգւով և մարմնով...: - 670. Իսկ չափաւոր արտասուել պարտ է ամենայն մարդոյ ի *տեսանել* զմեռեալն...: - 676. Երկրորդ, զի մի *տեսցուք* զգարշութիւն մարմնոյս...: - 677. Եօթներորդ, զի մի՛ յարաժամ *տեսցեն* կենդանիքն և մորմոքեսցին սիրտք նոցա: - 677. Ութերորդ, զի մի՛ դատարկասցին ի մարմնական գործոց միշտ *տեսանել* զմեռեալս: - 677. Եւ որպէս իւղաբեր կանայքն նախ եկին ի գերեզմանն և *տեսին* յարուցեալ զքրիստոս, և ապա առաքեալքն...: - 680. ...և *տեսին* յարուցեալ զքրիստոս...: - 681. ...և աւետիս յարութեան տամք նոցա. և *տեսեալ* հոգով ուրախանամք: - 681. ...զի հայրն աբրահամ առեալ հուր և սուր, և յետ երից աւուրց *տեսին* զտեղին ի հեռաստանէ որպէս ասէ պատմութիւնն: - 681. Եւ ի հեռուստ *տեսեալ* զտեղին, զի յետ կատարածի մարմնով առնելո՛ց են իւրաքանչիւր ոք զփառս կամ զտանջանս: - 682. Իսկ մեղաւորացն որ ի մարմնոյ արձակեալ, առաւել *տեսանեն* քան զայժմ...: - 685. Յոգիք արդարոցն ճանաչեն զմիմեանս անուամբ և ծննդեամբ և գործով վաստակոցն. որք զարդիւնսն միշտ մերձ *տեսանեն:* - 685. ...ասացեալ եմք ի հարցմունքն գէորգեայ յառաջիկայդ *տես* ի **բ** համարքն: - 686. Տեսութիւնն է աստուծոյ. որք ըստ բազմազան գործոց իւրեանց *տեսանեն*. և որպէս ի տան փառաւորին: - 686. Ուր *ետես* զիդ երիցունսն շուրջ զաթոռովն աստուծոյ. և զբազմութիւն հոգւոց սրբոց յամենայն ազգաց ժողովեալ անդ: - 688. Նախ ասեմ, եթէ հանդերձ սպիտակ և պսակք և աթոռք և այլն ամենայն զոր *ետես* ի տեսիլն՝ ո՛չ ներկային. այլ հանդերձելոյն էր տեսութիւն որ ինչ լինելոց է ի կատարածի...: - 690. ...որպէս վասն նեռինն և դատաստանին *ետես*. նոյնպէս և զհատուցումն սրբոց: - 690. Դարձեալ ասեմք, թէպէտ զներկայն *ետես*, սպիտակ հանդերձն ո՛չ ցուցանէ զփառս հատուցման. այլ զփառս և զհանգիստ գործոց: - 690. Երկրորդ, աներևոյթ են ի տեսութեանց իւրեանց. զի զրկեալ են ի լուսոյ շնորհաց որով երանութիւնքն *տեսանին:* - 690-691. Երկրորդ, ասէ սուրբն դիոնէսիոս ի ննջեցելոց կատարմանց գլուխն՝ եթէ մաքրելոց հոգին հասեալ ի վախճան՝ յայտնի և մերձակայ *տեսանէ* զամենայն փառս և զպսակ զոր ընդունելո՛ց են նոքա ի յարութեան աւուրն: - 691. Ա՛րդ՝ դարձեալ *տեսանելն* զմիւսանգամ գալուստն նշանակէ. որով ուրախ լիցին առանց տրտմութեան: - 692. Այլ և *տեսցուք* զվկայութիւնս հակառակացն և յարմարեսցուք զպատասխանիսն, զի առ ձեռն

պատրաստ լիցի: - 695. *Տես* **ժէ** գլուխն: - 696. Նա՛խ՝ զի առաքեալն զանազանեաց *զտեսանելն* յետ մահու՝ և զպսակն ի յարութեանն: - 697. ...իսկ միջակ արդարքն որ են ի կայանս հոգւոցն՝ և *զտեսանելն* պայծառապէս ընկալցին ի յարութեանն դէմ յանդիման որպէս և էն...: - 697-698.. Զի որ խոկայ առանց հաւատոյ՝ այնպէս է իբր թէ ջանայ ոք *տեսանել* զարեգակն առանց աչաց: - 702. *Տեսէք* եղբարք զսրբոց վարդապետաց բանսն զի ո՛չ գոյ անդ քաւարան հրոյ: - 703. ...և ըստ իւրաքանչիւրոցն *տեսանէ* զփառս և յուսով վայելէ...: - 705. Զի այժմ կարծեմք. և յետ մահու յայտնապէս *տեսանեմք* զամենայն. և յետ յարութեանն առնումք զամենայն: - 705. ...և յետ մահու մերձ ի յինքն և առ ինքն *տեսանէ* և ճանաչէ...: - 705. Չորրորդ, արձակէ՛ զսատանայ, զի *տեսցէ* զիւր ժամանակ տանջանացն մերձեալ. և մոլի որպէս գազան մերձ ի սատակումն. և շուն կատաղեալ: - 706. Եւ բնական քննութեամբ նախ այսպէս եթէ՝ *տեսանեմք* ի քաղաքական օրէնս զի գոյ դատաստան. այսինքն բարեացն պատիւ և չարացն պատիժ...: - 715. Այլ արդ ի կեանս յայս *տեսանեմք* զբազումս որ բարիքն ի նեղութեան են և չարքն ի հանգստեան. - 715. Նաև անդանօր *ետես* նախանձկար տեսչութեամբ զորքանութիւն մարդկան ըստ թւոյ: - 716. ...զի զաստուած դէմ յանդիման *տեսանէ* և զաստուածայինսն իմանայ: - 722. ...և դանիէլ զհին աւուրցն *ետես*, և զի որդւոյ տուաւ իշխանութիւն դատաստան առնել: - 735. Չորրորդ, հայր անտեսանելի՛ է և անմարմին. ըստ այնմ «զաստուած ոչ ոք *ետես* երբէք» և ո՛չ *տեսանել* կարող է. - 735. Ութերորդ, զի որ զնա՛ խաչեցին և սպանին, *տեսցեն* յայնժամ և իմասցեն թէ աստուածասպանք եղեն...: - 735. Ա՛յն է աթոռ՝ զոր մարգարէքն *տեսին:* - 736. Եւ եսայի *ետես* զտէր նստեալ յաթոռ բարձրութեան: - 736. Սակայն երևելի աթոռ ի յօդոյդ կազմեալ հաւատացեալ լինի. զի ամենայն ոք *տեսցէ* նստեալ: - 736. Եւ *տե՛ս* թէ ո՞րպէս անձուկ և ահագին է յամենայն կողմանէ մեղաւորացն: - 738. Զի անարժանքն զաստուածութիւնն քրիստոսի ո՛չ *տեսանեն* վասն կրկին պատճառի: - 740. Երկրորդ՝ զի ո՛չ ունին զլոյս շնորհացն որովք *տեսանի* աստուած. զի որք աստ ո՛չ տեսին հաւատով, և անդ ո՛չ տեսանեն իմացմամբ: - 740. Երկրորդ՝ զի ո՛չ ունին զլոյս շնորհացն որովք տեսանի աստուած. զի որք աստ ո՛չ *տեսին* հաւատով, և անդ ո՛չ *տեսանեն* իմացմամբ: - 740. Իսկ զմարդկութիւնն քրիստոսի *տեսանեն*, նաև զխոցուածն, վասն **բ** պատճառի: - 740. Նա՛խ՝ *տեսանեն* զմարդկութիւնն զի երկիցեն. և մի՛ զաստուածութիւնն զի մի՛ խնդասցեն. զի սրտմտութեամբ հայի ի մեղաւորս. - 741. Երկրորդ՝ *տեսանեն* և կսկծին. զի ո՛չ հաւատացին ի խաչեալն վասն մեր: - 741. Զփառս արդարոցն *տեսանե՞ն* մեղաւորքն թէ ոչ: - 741. Մինչև յօր դատաստանին *տեսանեն* մեղաւորք փառս արդարոց ընդհանրապէս՝ այլ ո՛չ մասնաւորաբար. զի *տեսանիցեն* զնոսա ի մեծ փառս՝ այլ ո՛չ ի յորպիսիս: - 741. Իսկ յետ դատաստանին և այս ևս՝ բարձցի ի նոցանէ առ ի տանջանս իւրեանց. յորժամ անարժան համարեսցին նաև ի *տեսանելն* զայն: - 741. Ապա յա՛յտ է զի *տեսանիմք* ի մէնջ և ի միմեանց և ի դատաւորէն աստուծոյ: - 741. Որք որպէս գիրք յայնժամ բացեալք եղիցին. քանզի վարդապետութիւնք նոցա և օրինակք՝ ամենեցունց յայտնեսցին. ի յորս ամենեքեան իբրև ի գիրս *տեսցեն* թէ զի՞նչ պարտ էր առնել կամ խոտել ինքեանց: - 742. Գիր ևս կենաց է տեսութիւնն աստուածային. ի յորում ամենեքեան զխիղճս մտաց իւրեանց իբրև զգրեալս *տեսցեն:* - 742. Եւ որպէս այս առ մեզ, նոյնպէս և զկշիռ իրաւանցն աստուծոյ է *տեսանել*...: - 745. Եւ *տե՛ս* յօրինակաց. զի չնչին գողութիւնն, զաքար իւր զարմիւքն քարկոծեաց. և կրկուտ քաղելն զայրին: - 745. Վասն չորից անհանգիստ տանջին մեղաւորքն յաւիտեան. որպէս *տեսանի* ի մարմնաւոր տանջանացս: - 750. Ութերորդ՝ ահագին տեսիլն դիւաց և վիշապաց. զոր ի կայծի կայծել հրոյն *տեսանեն*. և ողորմելի աղաղակ լալ ականացն և ոտնհար լինողացն: - 752. Վասն ութերորդին, որք աստ ի *տեսանելոյ* զբարիս և ի լսելոյ խոյս տային...: - 753. *Տեսանե՞ն* արդարքն զմեղաւորս յայնպիսի տանջանս թէ ոչ: - 754. Արդարքն *տեսանեն* զնոսա ի տանջանս և ուրախանան զի զերծան յայնմանէ. որպէս ցուցանի յառաջիկայդ: - 754. Այլ զկնի դատաստանին՝ բարիքն թէպէտ *տեսցեն* զչարսն ի տանջանս, բայց չարքն ո՛չ երբէք այնուհետև *տեսցեն* զբարիսն որպէս ցուցաւ: - 754. Ո՞չ ցաւին արդարքն ի *տեսանելն* զնոսա յայնպիսի տանջանս: - 754. Ո՛չ բնաւ, թէպէտ հայր *տեսանէ* զորդի կամ մայր զդուստր. և կամ զեղբայր և զայլս. ո՛չ միայն ո՛չ ցաւին, այլ ա՛յնպէս լինի հեշտալի, որպէս *տեսանեմք* զձկունս որ խաղան ի վտակս: - 754. Եւ դարձեալ՝ թէ *տեսանես* ուղղակի՝ ըստ ինքեան առաւել է բարին և բազում. զի է՛ բնութեամբ բարի որպէս աստուած. և ներգործութեամբ բարի որպէս արարածք ամենայն: - 758. Իբր ո՛չ այսպէս զոր երևի *տեսանելոց* եմք աստ: - 759. Զոր ակն ո՛չ *ետես*, և ունկն ո՛չ լուաւ, և ի սիրտ մարդոյ ո՛չ անկաւ, զա՛յն է պատրաստեալ աստուած սիրելեաց իւրոց: - 761. Նախ ի *տեսանելն* զերեսս աստուածային որ է

անճառելի ցնծութիւն...: - 762. Եւ այնպիսի քաղցր է տեսութիւնն աստուծոյ, մինչ զի չարքն թէ կարէին՝ յօժարէին ի դժոխս կալ և զաստուած *տեսանել*. քան արտաքոյ տանջանաց լինիլ և զաստուած ո՛չ *տեսանել:* - 763. Երկրորդ ուրախութիւնն լինիցի *տեսանելովն* զմարդկութիւնն քրիստոսի: - 763. Որպէս ասեն վարդապետք, լցեալ առ ժամայն ամենայն անոյշ և քաղցր ուրախութեամբ, *տեսանեն* զմարդն մարդկան արարիչ: - 763. Իսկ առաւօտ և երեկոյ այս է. զի *տեսեալ* ի բանն աստուծոյ բարձրագոյն և աստուածային իմաստ՝ առաւօտեա՛ն է ճանաչումն. իսկ ի նոյն բանն *տեսեալ* զգիտութիւն արարածոց՝ երեկոյեան ճանաչումն է համարեալ: - 767. Նոյնպէս հաւատն լոյս է որով *տեսանէ:* - 769. Այսպէս յընդդիմակէն *տե՛ս* և զայս. զի թէպէտ հասարակա՛ց է մարդոյ դժկամակ գոլ խրատու, այլ ո՛չ է բնութեամբ իր: - 774. Տեսանելի՛ է թէ՝ զի՞նչ արդեօք իցէ ոչ ունելն ի մտի որ է՛ մոռանալ. այսինքն զանցեալն ո՛չ յիշել. և զհանդերձեալն ոչ *տեսանել*. իսկ զներկայն ո՛չ գիտել: - 774. Եւ *տեսանել* զհատուցումն որ է՛ հանդերձեալն: - 774. Իսկ մարդասիրին աստուծոյ *տեսեալ* արտագունեալ զպատկեր իւր, կամեցաւ նորոգել զնա: - 776. ...իսկ Օրինակաւ, զի նմա ո՛չ գոյր օրինակ յանցաւորաց. իսկ նոքա *տեսին* զնա պատժեալ: - 777. Զի յորժամ ինքեանք փոխեցան, փոխեցաւ և ըստ նոցա պատիժն ասացեալ. այսպէս և ամենայն ուրէք *տեսցես:* - 779. Այսպէս բարւոք *տեսցես* ինձ յամենայն ուրէք ըստ ժամանակի զգործս յարմարեալ: - 780. Իսկ դաք ո՛չ *տեսանեն* զաստուած և են թշուառելիք: - 784. *Տե՛ս* զառաջին և զերկրորդ սահմանն երկնից: - 787. Էր և *տեսանել* աստ աղիողորմ տեսիլ. միայն արտասուալի դիմօք և կականաբարձ հառաչմամբ. ազգք և սիրելիք. ծնօղք և եղբարք: - 789

**ՏԵՍԱՆՈՂ կմ ՏԵՍՕՂ +** Այլ զի *տեսանօղքն* զարհուրեալք ի ճշմարիտ նշանիցն մովսէսի՝ առ աչօք թուէր թէ և կախարդքն այնպէս առնէին: - 335. Այլ իմանալեացն դասք վկայք են Նա՛խ՝ զի ի դրունս են սուրբ Երրորդութեանն և *տեսօ՛ղք* են անճառելի փառացն: - 345. Երկրորդ՝ յորժամ յերկրի երևին, և պակնուն *տեսօղքն* երևմամբ նոցա, վկայք լինին փառաց ամենազօրին: - 345. Զորօրինակ՝ ճրագ *զտեսօղս* լուսաւորէ՛, և զտկարս խաւարէ՛. կամ որք ի ճրագ նային տեսանեն լոյս. և որք յետս դառնան խաւարին: - 403. Երկրորդ՝ անցեալ ընդ լերամբ և ո՛չ գտեալ. մինչև առ *տեսանօղն* եկեալ. և տէր մեր էանց զլերինս հրեշտակաց և եկն ի մարգարէս. և նոքա աւետեցին զգիւտն գ օրեայ կորստեան իշոյն...: - 426. *Տեսանօղք* կանխաճառեցին: - 456. Չորրորդն ի դէմս *տեսողացն:* - 490. Իսկ ակն *տեսանօղ*՝ մարգարէքն. և առաքեալքն ինքնատեսք բանին աստուծոյ: - 534. Նոյնպէս և հինգերորդն, բարի՛ է աստուած և ողորմած *տեսողացն* զաստուած հնգիւք զօրութեամբ հոգւոյ...: - 629. Այս է խորհուրդն. զի երեկոյս նշանակէ՛ զկեանս զայս որ տնօրէնութեամբ փրկչին սակաւ ինչ *տեսօղ* եղաք հաւատով: - 646

**ՏԵՍԻԼ (յայտնութիւն) +** Վասն է՞ր աստուածաբան մարգարէքն *զտեսիլ* երկնայնոցն սոյնպէս անարգ կերպիւ տպաւորեցին. որպէս առիւծ. և եզն. աթոռք. և կառք. և այլն: - 131. Իսկ յօհաննու *տեսիլն* և մեղոթ ասէ թէ՝ «կամեցաւ զերրորդ մասն աստեղաց ընդ իւր քարշել»...: - 148. Որև ի մեկնութեան *տեսլեանն* յօհաննու ասէ՝ «զոմն ջրոյ և զոմն հրոյ»: - 150. Զի՞նչ է հրեղէն վիշապն. որպէս ասէ *տեսիլն* **լգ** գլուխն: - 151. ....որպէս ասէ ի *տեսիլն*, «որ ոք յաղթէ՞ ընկալցի զպսակն կենաց ի գլուխս իւր»: - 152. Իսկ բանսարկուն սատիէլ՝ զմի յերից մասանցն զչորրորդն քարշեաց ընդ ինքեան և կործանեաց յերկիր. որպէս ասէ *տեսիլն*...: - 152. Զոր ի *տեսիլն* անտօնի խոստովանէին զբանս զայս մեկնելով ի վերայ ինքեանց. այս վասն առաջնոյն: - 153. Երկրորդ երկին՝ երևակայութեան *տեսիլն* դարձեալ նոցա: - 183. Այն որ աստուածայինն է *տեսիլ* կոչի. որպէս Աբրահամուն. Յակոբայն. Յովսեփայն. և Դանիէլին: - 268. Եւ ի հողմոյն յայնմանէ հոտ անուշութեան դրախտին բուրեաց ի նոսա. և *տեսիլ* իմանալի տեսին...: - 298. Հինգերորդ՝ զի մի՛ երազ և առ աչօք համարեսցի *տեսիլն:* - 311. Եւ ա՛յսպէս մեկնեն զանուանս **բժ**ան ականցն սուրբն Եպիփան և մեծն Անդրէաս ի գիրս *տեսլեանն* Յոհաննու: - 349. Երկրորդ՝ զի եօթնիցս եղև արժանի *տեսլեան* Երրորդութեանն...: - 387. Ըստ լաբանու ի *տեսլեանն* **ա**: - 412. Երկոտասաներորդ՝ ընդէ՞ր յետոյ ստեաց և կինն *զտեսիլն* զի եղեն զորթն իւր զդիեցիկ: - 428. Իսկ թէ այլ ինչ էր՝ և բարբառն և *տեսիլն* սամուէլի, սուտ է և ո՛չ ճշմարիտ: - 430. Իսկ այլ ոմանք թուեն զեօթներորդն դանիէլի ի դարեհի որդւոյ արշուրեայ առաջին ամէն. յորում *զտեսիլն* ետես մարգարէն. մինչև ի ծնունդն քրիստոսի ամք **նձգ**: - 449. *Տեսիլն* յոհաննու, և Ննջումն էր ընդ եղբարսն: - 450. Դարձեալ ասեմք՝ թէ կանայքն իւղաբերք **դ** անգամ եկին ի գերեզմանն և այլ և այլ *տեսլեան* դիպեցան. և զիւրաքանչիւր դասուց **դ** աւետարանիչքն գրեն: - 515. Եւ սոյնպէս շաղփաղփ երևէին բանք նոցա. և *տեսիլքն* սակայն ամենայնք՝ զմի և զնոյն յարութիւնն պատմէին: - 515. Երկրորդ՝ *տեսլեամբ*. որպէս եսայեայ: - 536. Այլ որ **ճծ** ամաւ յառաջ եկին ի հայք՝ ասորիք արք քաջաբանք, և

կամեցան սերմանել զաղանդն նեստորի. որք նզովեալ որոշեցան. բայց ոմանք ընկալեալ էին և թարգմանեալ ի նոցանէ գիրս սուտս, Զգօրտոսակ. Զկիրակոսակ. Զպղի *տեսիլն:* - 545. Երկրորդ՝ սրբոյն Գրիգորի որ վասն շինութեան եկեղեցւոյ *տեսիլն:* - 555. Այս սուրբ օծմամբս և իւր գթութեամբն աստուած թողու քեզ զոր մեղանչեցեր *տեսլեամբդ*. նոյնպէս ասէ և այլ զգայութեանցն: - 604. Չորրորդ և ուղիղ, որպէս ասէ *տեսիլն* հրեշտակք առնուին զխունկս որ է՛ աղօթք սրբոցն, և նուիրէին ի սեղանն ոսկի որ է՛ քրիստոս. և ի նմանէ բուրէր ծուխն առ հայր: - 625. Կամ ի պատահման է երևելոյ ինչ *տեսլեան:* - 668. Այլ որք ուղիղ դատեցան վարդապետք եկեղեցւոյ ըստ *տեսլեանն* յօհաննու. որպէս մեծն անդրէաս և համախոհք նմին սուրբն իրինոս, եպիփան, և բասիլիոս: - 687. Իսկ թէ ո՞ւր իցեն սոքա երկոքեանս, *տեսիլն* յօհաննու յայտնապէս ցուցանէ. սրբոց խորանս ասէ զվերինն սիօն և զհրեշտակացն դասս: - 688. Եւ վասն այսմ տեղւոյ ասէ *տեսիլն* «մահ և դժոխք ետուն զիւրեանց մեռեալս»: - 689. ...որպէս փախեաւ կինն որ ծնաւ զմանուկն արու ի *տեսիլն*. և ո՛չ կարաց հրեղէն վիշապն հասանիլ: - 689. Ապա զի՞նչ էր արկանելիքն սպիտակ, և պսակն ոսկեղէն որպէս ասէ *տեսիլն:* - 690. Նախ ասեմ, եթէ հանդերձ սպիտակ և պսակք և աթոռք և այլն ամենայն զոր ետես ի *տեսիլն* ո՛չ ներկային. այլ հանդերձելոյն էր տեսութիւն որ ինչ լինելոց է ի կատարածի...: - 690. ...որպէս ասէ մեկնիչն *տեսլեան*. եթէ սպիտակ հանդերձն շնորհացն քրիստոսի մաքրութիւնն է. որ սրբութիւն մեղաց մերոց արար քրիստոս. յոր ամենայնքն վայելեցաք. զի յորժամ սրբի հոգին, բնական ունի զպայծառութիւնն: - 690. Ապա ո՞րպէս են ի դժոխս հոգիք մեղաւորաց որպէս ասէ *տեսիլն* եթէ «դժոխք ետ զմեռեալս իւր»: - 690. Առ երկրորդն ասեմք թէ՝ ի *տեսիլն* ո՛չ զհատուցումն ասէ, այլ զյայտնութիւն գիտութեանն...: - 697. Դարձեալ մեր վարդապետք ասեն, որպէս ի *տեսլեան* մեկնիչն **լդ** գլուխն ասէ այսպէս: - 703. Դարձեալ՝ թէպէտ վասն հոգւոյն ասեմք որպէս այս, և *տեսիլ* անտօնին, և այլոց, այն ո՛չ է բերքաթուր. այլ պատերազմ դիւաց. որպէս աստ մարմնով, նոյնպէս և յետ մահու առ հոգիսն...: - 703. Եւ զամենայնսն դրոշմէ՛ ի ճակատն և յաջոյ ձեռն. որպէս ասէ *տեսիլն* յօհաննու: - 707. *Տեսիլն* գազան: - 707. Եւ քարոզեսցեն զաւուրս **ռմ** և **կ**. այսինքն **գ** ամ և կէս. որպէս ասէ *տեսիլն:* - 709. ...որպէս ասէ *տեսիլն*. այս է յարութիւնն առաջին: - 710. Զի՞նչ է **իդ** երիցունքն զոր ասէ *տեսիլն:* - 711. ...ասէ նոյն *տեսիլն* **ծէ** գլուխն, «տուաւ հարսինն զգենուլ բեհեզս սպիտակս սուրբս և լուսափայլս». և բեհեզն է՛ արդարութիւն սրբոցն: - 712. Զի՞նչ է որ ասէ *տեսիլն*, «գա՛մ ես վաղվաղակի»: - 730. Եօթներորդ, զի ահագնակերպ երևի ի վերայ մեղաւորաց. մինչ ասիցեն լերանց թէ անկերուք ի վերայ մեր. և բլրոց թէ ծածկեցէք զմեզ յերեսաց բարկութեանն աստուծոյ որ նստի յաթոռ. որպէս ասէ *տեսիլն:* - 737. Երրորդ՝ կոչի հնձան դժոխքն. ուր ամբարիշտքն ժողովին և ճմլին. որպէս ասէ *տեսիլն*...: - 748. Մարգարէն եսայի կրկին ասէ զհատուցումն մեղաց. նոյնպէս և ի *տեսիլն*. և վասն էր դաւիթ եօթնպատիկ ասէ հատուցանել ի ծոց նոցա: - 750. Եւ զայս ցուցանէ *տեսիլն:* - 760. Նախ վասն պայծառութեան տեղւոյն. որպէս ասէ *տեսիլն* «գիշեր այլ մի՛ ևս եղիցի»: - 763. Զի՞նչ է ծառն կենաց և պտուղն երկոտասան զոր ասէ *տեսիլն:* - 765. Եւ այս ո՛չ միայն փութանցիկ գոլոյ վասն, կամ ներհակաբար հատուցման որպէս սովորութիւն է. այլ զի ո՛չ ինչ կարեն տանիլ ընդ ինքեանս. բայց միայն նշխարհս ինչ յիշատակութեան ուրուական *տեսլեան:* - 775

**ՏԵՍԻԼ (կերպարանք) +** Տպաւորեալ *տեսիլ* գազանաց: - 102. Նա՛խ՝ զի գեղեցիկ էր *տեսլեամբ* յովսէփ: - 313. Եւ տէր մեր գեղեցիկ *տեսլեամբ* քան զամենայն որդիս մարդկան. զի «եղբօր որդին իմ ասէ՝ կարմիր է և սպիտակ ընտրեալ ի բիւրուց». այսինքն զի աստուած է մարդացեալ: - 313. Երրորդ՝ զձայնն միայն լսեցին և *զտեսիլն* ո՛չ տեսին. և մեք լուաք և տեսաք և շօշափեցաք զբանն կենաց: - 353. Տասներորդ, մանուկ խարտեաշ և *տեսլեամբ* գեղեցիկ...: - 436. Քսանևմի, հարին մինչև ի դրունս գեթայ. և հաւատացեալք մինչ ի դրունս դժոխոց. և եղեն ի *տեսիլ* ամենայն մսեղեաց: - 436. *Տեսիլ* դիւաց: Աղաղակ: Նախատինք: Պապակումն ծարաւոյ: - 751. Ութերորդ՝ ահագին *տեսիլն* դիւաց և վիշապաց. զոր ի կայծի կայծել հրոյն տեսանեն. և ողորմելի աղաղակ լալ ականացն և ոտնհար լինողացն: - 752. Վասն ութերորդին, որք աստ ի տեսանելոյ զբարիս և ի լսելոյ խոյս տային. արդարապէս ահագին *տեսլեամբ* և լսելեօք թշւառապէս զարհուրին ընդ իւրաքանչիւրոցն: - 753. Նոյնպէս և ջուրն որ հպեցաւ ի մարմին փրկչին, և ծնաւ զմարդիկ որդիս աստուծոյ, նորոգեսցի և պայծառասցի քան զամենայն *տեսիլս* գեղեցկագոյն ականց: - 759. Երրորդ երկնից արժանաւորն *տեսլեամբ*, և անօթն ընտրութեան հոգւոյն, որ կրէր յինքեան զկրօղն էից առաքեալն պօղոս ասէ: - 761

**ՏԵՍԻԼ (տեսողութիւն) +** Նա՛խ՝ զի անհաւա՛ն էր ժողովուրդն և անկատար, զգալի *տեսլեամբ* և

ծայնիւ զարհուրեցոյց. զի մի՛ մոռասցին. այլ հաւանեսցին և ի միտ պահեսցեն: - 341 Ութերորդ՝ զի *տեսիլ* աչացն առաւել պարզեսցէ զլեզու նորա փոխանակ ճարտարութեան լեզուին: - 352. Եւ յետ սակաւուց ի նոյն գլուխն ասէ, թէ ո՛չ զգայապէս լինի *տեսիլ* հրեշտակի...: - 703

**ՏԵՍԻԼ (տեսարան) +** էր և տեսանել աստ աղիողորմ *տեսիլ*. միայն արտասուալի դիմօք և կականաբարձ հառաչմամբ. ազգք և սիրելիք. ծնօղք և եղբարք: - 789

**ՏԵՍՆԱԿԱՆ** - Երկու հաւն՝ կրկին զօրութիւնք ի մեզ. *տեսնական* և գործնական: - 368. Զի գործնականաւն մեռանիմք ընդդէմ մեղացն. և *տեսնականաւն* մտօք թռչիմք ի դրախտն որ է՛ դաշտ երկնային: - 368

**ՏԵՍՈՂԱԿԱՆ +** Երրորդ՝ զի անդ բազմաց շրտնու տեսութիւնն. և աստ միայն զօրանայ *տեսողական* մասն միոյն. որպէս աշակերտին եղիսէի: - 133. Իսկ աստ իրին և *տեսողականին:* - 133. Եւ ըստ որում իմանայ և խորհի, կոչի բանական հոգի. որպէս այլուր բաժանի ի *տեսողական* զօրութիւնն. և յիմացականն. և ի յիշողականն. մնալով անբաժանելի ներգործէ՛ ի նոսա: - 259

**ՏԵՍՈՂՈՒԹԻՒՆ +** Եւ սոքա **ե ե** զօրութիւնս ունին. Մտացն. Իմաստութիւն. *Տեսողութիւն*. Ուսողութիւն. Անմոռացութիւն: - 248. *Տեսողութիւն* ընդ գործն: - 248. Դարձեալ՝ Նայիլն և Յայիլն յատուկ *տեսողութեանն* է. իսկ Տեսանելն հասարակ զգայութեան: - 407. Չորրորդ՝ ի գլխո՛յն է *տեսողութիւն* և լուր և վայելչութիւնք համոց և հոտոց: - 532. Յամբերութիւն է կամաւոր և միշտ *տեսողութիւն* մեծամեծ և դժուարին իրաց վասն օգտութեան և համեստութեան: - 580

**ՏԵՍՈՒԹԻՒՆ +** Ա՛րդ՝ հարկ է ամենեցունց գոլ այնպէս որպէս աստուած ետես և գիտաց. և գիտութիւնն աստուծոյ անպատիր է. ապա ուրեմն ամենայնն լինի ի հարկէ *տեսութեանն* աստուծոյ: - 15. Ասեմք առ այս թէ գիտելի է՝ զի ա՛յլ է *տեսութիւնն* աստուծոյ՝ և այլ է *տեսութիւն* մարդոյ: - 15. Զի ի *տեսութիւնն* աստուծոյ ո՛չ է առաջին և վերջին. այլ բոլորն համանգամայն և կատարեալ: - 15. Իսկ ի *տեսութիւն* մարդոյ է՛ առաջին և վերջին. զի զանցեալն տեսանէ յիշմամբ, և զներկայն իմացմամբ. և զհանդերձեալն ի պատճառն իւր ըստ ժամանակին փոփոխման որպէս ասացաք: - 15. Նախ՝ թէպէտ աստուած տեսանէ զամենայն նախատեսութեամբ և ո՛չ ինչէ արտաքոյ *տեսութեանն* աստուծոյ, սակայն տեսանէ զոմանս ի հարկէ՝ և զոմանս ի ներընդունակութիւնէ լինիլ: - 15. Դարձեալ ասեմք՝ թէպէտ տեսանէ աստուած զամենայն նախքան զլինիլն իւրեանց, սակայն *տեսութիւնն* աստուծոյ ո՛չ հարկ է ի վերայ նոցա լինիլ չար կամ բարի: - 15-16. Զորօրինակ՝ արուեստաւոր ոք մինչ գործէ զսայլ, և ի հեռուստ տեսանէ ոք զոր նա՛ գործէ, այլ ո՛չ *տեսութիւնն* հարկեաց զսայլն լինիլ այնպէս. այլ կամք արուեստաւորին: - 16. Նո՛յնպէս և *տեսութիւնն* աստուծոյ ո՛չ հարկէ ի վերայ մեր գործ զբարի կամ զչար. այլ կամք մեր: - 16. Չորրորդ՝ առանձնակի *տեսութեան* միայն իմացմանն՝ վասն առանձնակի արժանաւորութեան. որպէս մովսէսին: - 24. Իսկ հինգերորդն ի հանդերձեալն դէմ՝ յանդիման *տեսութիւն* ըստ առաքելոյ: - 24. Այսմ *տեսութեանս* որք արժանաւորին, նոքա երանին և անքակ միանան ի սէր նորին որպէս հրեշտակք: - 24. Իսկ երրորդ գլուխն որ է՛ *տեսութեամբ* զգալեաց յերկինս և յերկրի: - 26. Նոյնպէս զիմանալի խորհուրդս և զգիտութիւնս զոր տկարանայ միտք, կարողանայ հաւատքն տեսանել. այլ ո՛չ ունի հաւատ՝ քան *զտեսութիւն* մտացն: - 31. Այլ ասեմք զչորրորդ *տեսութիւնս* յաղագս մարդեղութեանն...: - 41. Բայց է և այլ իմն *տեսութիւն* խորհին և գեղեցիկ. զի նա՛ վասն սրբութեան չարչարեցաւ. և որ ոք ևս չարչարեսցի վասն սրբութեան՝ մի և նոյն է դիտաւորութիւն երկուցն. յայնժամ օգնեսցէ նմա. այսինքն միաւորեսցի ընդ նա՛ սրբութեամբն, և եղիցի աստուած ամէն յամէնի. այսինքն կատարեսցէ զնա աստուածս առնելովն. և եղիցին աստուածք ամենքն: - 43. Եւ միտն արտաքոյ ամենեցուն՝ մեզ շնորհէ *զտեսութիւն* և զկարողութիւն յիւրաքնաչիւր արհեստ: - 51. Ծածուկ և զանխո՛ւլ է աստուածաբանութեան *տեսութիւն* հասարակ մտաց. և հազիւ ճանաչի կիրթ խորհրդոց՝ և նուրբ քննութեանց սրբոց: - 81. Բե՛ր յարմարեսցուք այժմ զերիս եղանակս սոցա՝ միաւորութեան փրկչին ուղղակի իմն *տեսութեամբ*. որ ո՛չ ախորժելի է այլոց: - 89. Ա՛րդ՝ *տեսութիւն* զրոց սրբոց մի և նոյն ելով՝ առ բազումս բազմանայ. որպէս մի և նոյն պարզագոյն ջուր՝ իւրաքանչիւր բնութիւնս տնկոց: - 93. Եւ ճանաչէր զամենայն անհունս զերազանց *տեսութեամբ:* - 100. Վասն *տեսութեան* աստուծոյ. և հրեշտակաց. և մարդկան: - 101. Զի՞նչ զանազանի և հաւասարի *տեսութեանն* աստուծոյ. և հրեշտակաց. և մարդկան: - 101. Զանազանութիւն *տեսութեան* մտաց. և զգայութեանց: - 101. Պարտ է գիտել, զի ի ներքոյ բանին է զգալեացս *տեսութիւն:* - 103. Երկրորդ՝ զի *տեսութիւն* մտաց հասարակի ընդ գոյութեան էութեան. և ուր եզերի բնութիւն՝ անդ և մտաւորութիւն: - 103. Զի խաւարի միտքն. և

մոլորի՛ իմացումն. և կապի ընդարձակ *տեսութիւնն*. և ծանրանայ թեթեւութիւնն. և անջատի ի բազումս. և տգեղանայ պատկերն: - 104. Իսկ սուրբ գիտութիւնն ընդ դէմ այսմ լուսաւորէ՛ զմիտս և ուղղէ՛. և ընդարձակէ *զտեսութիւնն* և թեթեւացնէ առ վերինն. և ժողովէ ի մինն. և կատարէ զպատկերն: - 104. Զոր ցուցցուք օրինակաւ զգալի *տեսութեամբ*: - 104. Նախ՝ որպէս *տեսութիւն* աչաց ի մարմինն հանգչի: - 104. Այսպէս *տեսութիւն* մտաց յանմարմինն. որ է նման: - 104. Հինգերորդ՝ աչք ի զանազան *տեսութիւնս*, և միտք ի զանազան իմաստս: - 104. Ա՛րդ՝ զի հայր պատճա՛ռ է որդւոյ ծննդեան՝ և հոգւոյ բղխման, վասն որոյ հայր նախադասի. իսկ ընդ նմա որդի. ո՛չ որպէս ոմանք կարծեն որդի պատճառ է հոգւոյ բղխման, այլ գ է ուղիղ *տեսութիւնն*: - 109. Նոյնպէս և ի միոյն աստուծոյ իջեալ յարարածս ընդարձակի *տեսութիւն* մեր. և ի սոցանէ ի նա դարձեալ նեղի: - 110. Այլ է՛ յարացոյցն ի յաստուած. և ի *տեսութիւն* նորա. և ի բարի կամս: - 112. Ա՛րդ՝ ո՛չէ ի յաստուած անձնաւոր էութիւն. որպէս Երրորդական անձինքն. և ո՛չ բաժանեալ ի նմանէ. որպէս հրեշտակաց դասքն. և ո՛չ որպէս սոսկ մտածութիւն ի *տեսութիւնն* աստուծոյ: - 112. Զի առ աստուած՝ ո՛չէ սոսկ *տեսութիւն* արտաքոյ. այլ յինքն տեսանելով զյարացոյցն. և զմեզ ի յարացոյցն մեր իբր լինիլ մեզ նախ ի յաստուած, և ապա ի յէութեան մերում. և ո՛չ որպէս փոփոխումն ինչ ի բարի կամացն: - 112. Երբեմն յարացոյց. իբր միշտ ի *տեսութիւնն* աստուծոյ: - 112. Յարացոյցն մի է և պարզ. ըստ այնմ որ մի է էութիւնն աստուծոյ, և մի *տեսութիւն*, և մի ճշմարտութիւն: - 112. Եւ ա՛յս է նախագաղափար *տեսութիւնն* աստուծոյ...: - 113. Ա՛րդ՝ եղականքս որ յետոյ էացաք անեղ էաք ի յանեղ *տեսութիւնն* աստուծոյ: - 114. Ա՛րդ՝ կարգաւո՛ր է զի անեղն աստուած՝ զանեղն ըստ *տեսութեան* յեղելութիւն ածցէ ըստ գոյացութեան իւրեանց: - 114. Կատարեալ, զի առանց աւելւածոյ և պակասութեան. և Անփոփոխ, զի *տեսութիւնն* աստուծոյ նոյն է: - 118. Եւ այս ամենայն ընդդէմ է *տեսութեան* մեր. զի մեք մասամբ տեսանեմք. և մի զկնի միոյ. և առաւել և պակաս գիտութեամբ. և ըստ իրին փոփոխմամբ: - 118. Դարձեալ է՛ յատկութիւն, զի նախ *տեսութիւնն* է աստուծոյ, և ապա էութիւն ամենայն իրի՝ *տեսութեանն* նորա հետևի: - 118. Իսկ մեր *տեսութիւնս* էութեանն հետևի. զի նախ իրն լինի, և ապա՛ մեք տեսանեմք: - 118. Զի աստուած ո՛չ արտաքոյ ինքեան ունի *զտեսութիւնն*. այլ ի ներքս միայն. զի զինքն ի յինքն տեսանէ՝ և զայլս ի յինքն. ապա զեղեալքս ի յարացոյցն որ է *տեսութիւնն* աստուծոյ որպէս ասացաք: -118-119. Ամենահայեացն զբոլոր *տեսութիւնն* ասէ որ ընդդէմ է մասնաւոր *տեսութեանս* մերոյ չորեքկին: - 119. Նախ՝ զի առ աստուած բոլորն *տեսութիւն* է՝ և լուր՝ և այլն: - 119. Առաջին *տեսութիւնն* է հասարակաց: - 119. Առաջին *տեսութիւնն* է բնական: - 119. Իսկ երկրորդն՝ հաւատոյն պայծառ և լուսաւոր *տեսութիւն*: - 119. Հրեշտակք ո՞րպէս ունին *տեսութիւն*: - 119. Աստուածատեսա՛կ է նոցա *տեսութիւնն*. այսինքն պարզ և միեղէն և գերամբարձ: - 119. Վասն որոյ միեղէն տեսանեն և պարզ. որպէս զծագումն լուսոյ առանց ճանապարհորդութեան լուսաւորեալ. և միշտ բարձրանան *տեսութեամբ*: - 119. Որո՞վ զանազանի և հաւասարի *տեսութիւնն* աստուծոյ և հրեշտակաց: - 119. Այսու հաւասար է, զի պա՛րզ է և միեղէն և բարձրագոյն *տեսութիւն* որպէս ասացաք: - 119. Այլ այսու զանազանին, զի աստուած ինքնիմա՛ստ ունի *զտեսութիւնն*. այսինքն յինքենէ՛ է անսկիզբն և անվախճան: - 120. Դարձեալ՝ հրեշտակք միշտ առաւելուն ի *տեսութիւնս* իւրեանց: - 120. Ո՞րպէս է *տեսութիւն* մարդոյ: - 120. Կրկին է *տեսութիւն* մարդոյ: - 120. Իսկ շնորհականն է ընդդէմ այսոցիկ. զի պարզ և միեղէն իմացմամբ բարձրանայ յաստուածային գիտութիւնն. և այնպէս ի զարմացման լինի *տեսութեամբ* նորին: - 120. Եւ այսպէս է մարգարէիցն և առաքելոցն և հաւատոյն *տեսութիւն*: - 120. Որո՞վ զանազանի և հաւասարի *տեսութիւն* հրեշտակաց և մարդկան: - 120. Շնորհական *տեսութեամբ* հաւասարի. այլ բնականաւն զանազանի: - 120. Նախ՝ զի հրեշտակացն իմանալի և միահաղոյն է *տեսութիւն*. իսկ մարդկան բանական և մասն մասն ժողովելով: - 120. Երկրորդ՝ հրեշտակք բարձրանան ի *տեսութիւնն* աստուծոյ. և մարդիկ խոնարհին և շեղին ի յիմացւածն: - 120. Երրորդ՝ պա՛րզ է նոցա *տեսութիւնն*. և մերս բաղադրեալ և նիւթական: - 120. Չորրորդ՝ միեղէն է նոցա *տեսութիւնն* և ի միոյ. իսկ մերս բազում և ի բազմաց. զի բաժանեալ զգայարանօք զբաժանեալ իրս տեսանեմք: - 120. Հինգերորդ՝ նոցա անմոռանալի՛ է *տեսութիւնն*. իսկ մերս հանդերձ մոռացմամբ. որքան զգայութեամբս տեսանէ միտքն: - 120. Որո՞վ զանազանի *տեսութիւն* մտաց և *տեսութիւն* զգայութեանց: - 120. Որո՞վ հաւասարին և զանազանին բանական քննութիւն և հաւատոյ *տեսութիւն*: - 121. Երրորդն է նշանական աստուածաբանութիւն. որ ի զգալի կերպարանաց փոխակցիմք յիմանալի *տեսութիւնն*. թէ զի՞նչ նշանակէ մարդ երևելին. կամ առիւծ. գառն. հուր. լոյս. և այլն: - 122. Երկրորդ՝ անդ աչքն տկարանայ ի *տեսութիւն* ուրուականին: -

133. Երրորդ՝ զի անդ բազմաց շրտնու *տեսութիւնն*. և աստ միայն զօրանայ տեսողական մասն միոյն. որպէս աշակերտին եղիսէի: - 133. Չորրորդ՝ այն փոփոխումն միայն *տեսութեանն* լինի: - 133. Հինգերորդ՝ այն հրաշք միայն խաբէութիւն *տեսութեան* է: - 133. Իսկ այս հրաշք *տեսութեանն* և իմացմանն է: - 133. Եօթներորդ՝ զի երանեալք են ի սէրն և ի *տեսութիւնն* աստուծոյ: - 137. Երրորդ՝ *տեսութեամբն* և իմացմամբն աստուծոյ. զի ոմանց առաւել է և ոմանց նուազ: - 137. Հինգերորդ՝ զի անխոտո՛ր են *տեսութեամբն* ի յաստուած: - 139. Եւ դարձեալ՝ զբազումքս միաւորէ՛ ինքեամբ՝ առ պատճառն իւր. որպէս լոյս արևու ի բազում *տեսութիւնս:* - 140. Իսկ գնդակ որ է կողմնաւոր՝ շարժի հոգին, յորժամ բնականապէս լուսափայլի յաստուածային գիտութիւնս *տեսութեամբ* և մտածութեամբ. և այնպէս հոգէպէս ի յաստուած միաւորի...: - 142. Եւ այլ իմն եղանակաւ զանազանի *տեսութիւն* մտաց: - 142. Է՛ որ իմացումն մտացն առ ինքն ժողովի ի յիշողականէ՞ ի տրամախոհութեանցն՝ ի կարծեաց՝ և յայլոցն, և այնպէս ըստ ինքեան *տեսութեանն* ի աստուած հպի...: - 142. Է՛ որ իմացումն մտացն առ ինքն ժողովի ի յիշողականէ՞ ի տրամախոհութեանցն՝ ի կարծեաց՝ և յայլոցն, և այնպէս ըստ ինքեան տեսութեանն ի աստուած հպի. այս է գերագոյն իմացումն. և կոչի իմացական *տեսութիւն:* - 142. Եւ է՞ յորժամ իմացումն ի յիշողութիւնն ի տրամախոհութիւնն և յայլս բաժանի, և նոքօք իմանայ և տեսանէ զաստուած. և այս ևս է կատարեալ *տեսութիւն*. և կոչի սա բնական *տեսութիւն:* - 142. Իսկ որ զգայարանօքն տեսանէ, այսինքն աչօքն զգոյնն, ականջօքն զձայնն, և այլն. կոչի սա զգայական *տեսութիւն:* - 142. Եւ կարօտի սա **բ** իրաց. այսինքն զի զգայութիւնն առո՛ղջ իցէ, և զգալի առաջի եդեալ իրն յստա՛կ. ապա թափանցէ՛ յինքն ի սոցանէ՛ պա՛րզ *տեսութիւն*...: - 143. Իսկ որ գերակատար իմացումն է և ըստ բնականին *տեսութիւն* անկարօ՛տ է գրոց և սիղոբայից: - 143. Եւ խօսի հրեշտակն ընդ հրեշտակի. ցուցանելով նմա *զտեսութիւն* մտացն միջնորդութեամբ հոգևոր իմն ճառագայթիւք. և այսպէս խօսին հրեշտակք ընդ միմեանս: - 145. Աշխարհ ո՛չ լինի ոչէ. և ո՛չ ապականեալն կոյս. և վասն թողութեան. յորս նախագաղափար *տեսութիւնն* աստուծոյ: - 154. Եւ իսկապէս ներգործութեամբ, զի զօրութեամբ որ է՛ անկատար իր ինչ ի յաստուած ո՛չ է. այլ ամենայն ներգործութեամբ. այսինքն ի *տեսութիւնն* և ի կամքն. ապա ուրեմն անշա՛րժ է *տեսութեամբ* և կամօք: - 162. Առաջին է նախագաղափար *տեսութիւն* արարչին. որպէս նախ քան զժամանակ անսկիզբն յաւիտենիւ. և Երկրորդ սկիզբն է ի ժամանակի լինելութեան իւրոյ: - 163. Նոյնպէս և հրեշտակք ո՛չ տեսանեն զնախագաղափար *տեսութիւնն* որ լինելո՛ց էր յետոյ: - 164. Տասներորդ՝ զի *տեսութիւն* մեր զէ՛սն տեսանէ. և զոչ էսն ո՛չ տեսանէ: - 164. Այլ *տեսութիւնն* աստուծոյ զոչ էսն տեսանէ և նախընտրէ...: - 164. Արդ այս չափ համեմատութիւն է ի նախկին սկիզբն. նախագաղափար *տեսութեանն* աստուծոյ. և ո՛չ յերկրորդ սկիզբն ի գործ արարչութեան: - 164. Եւ որովհետև գիտացեալ եղև այս, ապա յա՛յտ է թէ անկա՛ր է ոչ երևիլ սկիզբն լինելութեան աշխարհի. ըստ այնմ որ էր ի նախագաղափար *տեսութիւնն* աստուծոյ: - 164-165. Եւ ուսեալք զայս, ընկա՛լ և այժմ զլուծումն խնդրոյն. եթէ լինելութիւն աշխարհի ի նախագաղափար *տեսութիւնն* աստուծոյ ո՛չ է զօրութեամբ՝ այլ ներգործութեամբ վասն բազում պատճառի: - 168. Ուստի յա՛յտ է զի ի լինիլն աշխարհի՝ նախագաղափար *տեսութիւնն* նոյնպէս եկաց մնաց առանց յաւելուածոյ և պակասութեան: - 169. Նախ՝ զի զգոլն իւրեանց ունէին ի նախագաղափար *տեսութիւնն* աստուծոյ. թէպէտ յետո՛յ ընկալան գոյացութիւնս յինքեանս. որպէս տաճար ի միտս շինողին: - 170. Եւ թէպէտ ի յէութիւնս իւրեանց յետոյ, սակայն ի նախագաղափար *տեսութիւնն* աստուծոյ, գոյին յառաջ քան ըզլինիլն իւրեանց էութեամբ, և յետոյ եղեն ըստ նոյն նմանութեան: - 172. Նախ՝ զի ասեմք եթէ աշխարհ յառաջ քան զլինիլն իւր գոյր ի նախագաղափար *տեսութիւնն* աստուծոյ. ապա ուրեմն ո՛չ է յոչ ուրեքէ յոչ երբեքէ: - 173. Այլ ունին սոքա բազում զարմանալի *տեսութիւնս:* - 175. Եօթներորդ՝ ներքին իմաստքն ամենևին խոր և բարձրագոյն *տեսութիւն*. զոր ըստ ինքեան միայն իմացումն տեսանէ և ի դուրս արտաբերէ՛: - 177. Երրորդ երկին՝ կատարեալ *տեսութիւն* իմացականին. որ դէմ յանդիման տեսանէին զաստուած. որպէս մովսէս և դաւիթ: - 183. Վեցերորդ՝ կամեցաւ աստուած զի մեք բանիւ և *տեսութեամբ* վայելիցեմք ի գործս արարչին: - 192. Պատասխանեմք յայտնի *տեսութեամբ*, թէ զոր ինչ այրէ հուր, ծախէ՛ և կորուսանէ զամենայն որակսն. այսինքն զգոյն. զհամ. զհոտ. նոյնպէս և զծանրութիւն: - 202. Երկոտասաներորդ՝ կոչման կամ *տեսութեան:* - 209. Զի ի կոչումն անուան՝ չորքս այսոքիկ երևին միանգամայն. բանն և խօսքն և ձայնն և *տեսութիւնն*. այսոքիւք զմարդն կատարեալ երևեցոյց աստուած: - 219. Նախ՝ որպէս ասացաւ ի վերոյ՝ երեք *տեսութիւն* սրբոցն է **գ** իրին. այսինքն զգայութեան. երևակայութեան. և իմացման: - 221. Այլ և ի միտ ածցուք զփառս

երկնային կենաց ուստի անկաք, և անդ դիմելոց եմք. զի *տեսութիւն* մտացն զիոգին ընդ ինքեան ի վեր տանի...: - 233. Վեցերորդ՝ սեաւ պտուղն. զի մի՛ վնասեսցէ *զտեսութիւնն* սպիտակն: - 239. *Տեսութիւնն* ակն: - 250. Եւ որպէս ընդ հանուր մարդկութիւնս լրիւ էացաւ ի *տեսութիւնն* աստուծոյ յորչափութիւնն և ի թիւն: - 254. Այսպէս և այժմ իւրաքանչիւրքն յառաջ եկեալ համանգամայն գոյութեամբ, լնուն զայն թիւն՝ որ նախ էր ի *տեսութիւնն* աստուծոյ: - 254. Եւ դարձեալ պարզ և յայտնի, այսպէս ասէ սուրբն գրիգոր նիւսացին եթէ, բանականին շնորհ ընդ լրումն մարդկութեանս թա՛փ էանց ի *տեսութիւնն* աստուծոյ՝ որքանութիւնն և որպիսութիւնն...: - 258. Նմանապէս և արուեստաւորն աստուած նախանկար *տեսութեամբն* ունի ի միտս իւր նախքան զլինիլն մարդոյն՝ զորպիսիութիւնն. զորքանութիւնն...: - 258. Իսկ թէ զսոսա **գ** տեսակս ասես, կամ զօրութիւնս, կամ մասունս բանական հոգւոյն, մի՛ է *տեսութիւնն:* - 259. Եւ թէ *զտեսութիւնս* զայս կարծես էութիւն հոգւոյ ըստ որում է հոգի, ապա ո՛չ միայն ետես զհոգի, այլ և զմարմին՝ և զիւրաքանչիւրոց ընտրութիւն, և զհամար հերաց և զթիւն աստեղաց. և սոքա յետո՛յ են գոյացեալ ըստ կամաց տեսողին: - 260. Վասն որոյ յայսմանէ և յառաջ հաստատի մարդ ի հանճարս բանակրութեան և ի *տեսութիւն* իմացման մինչև ի **խբ** ամն որ է եօթնիցս եօթն: - 265. Երկրորդ՝ ցուցանէ զաշխարհ. որ էր նախ քան զլինիլն ի նախանկար *տեսութիւն* արարչին՝ և ապա եղև, յետոյ վախճանի: - 268. Նախ՝ *տեսութիւնն* աստուծոյ: - 278. Նա՛խ՝ ի *տեսութենէն*, զի ո՛չ ևս յաւել տեսանել զերեսս աստուծոյ: - 279. Երրորդ՝ հեշտութիւն *տեսութեանն* և ճաշակելեացն. ըստ որում «գեղեցիկ էր ի տեսանել, և քաղցր ի կերակուր»: - 280. Այսինքն *տեսութեամբն* գոչէ՛. կամ զհոգին կոչէ արեան անուամբ: - 287. Երրորդ՝ արիւնն կենդանի է և խօսի *տեսութեամբն* որպէս հաբէլին. վասն որոյ անուտելի է: - 295. Նա՛խ՝ զի յանդրանիկ *տեսութիւնս* իւր ընտրեաց զնոսա յառաջ քան զլինիլն աշխարհի, և յետոյ զնոյն անդրանիկսն պատուեաց: - 309. Է՛ և այլ իմն պայծառ *տեսութիւն* այսմ բանի. զի զգեստ և տաճար կոչի մարմինն ստուգապէս ո՛չ աստուածութեանն քրիստոսի՝ որ ո՛չ բաժանեցաւ ի մարմնոյն ոչ ի մահ և ո՛չ ի գերեզմանն: - 319. Հինգերորդ՝ տղա՛յ էր ժողովուրդն, և զուարճանային ի *տեսութիւնն*. վասն այն զանազան գունով զարդարեաց: - 342. Կապոյտն օդոյն է գոյն. զի թէ ա՛յլ գոյն էր, վնասիչ և խափանիչ լինէր *տեսութեանց*. որպէս սպիտակ կամ սեաւ. այլ կապոյտն է ի հեշտութիւն *տեսութեանց:* - 342. Երկրորդ՝ զի դէմ յանդիման ետես զտէր և նշան լուսոյն մնաց ի *տեսութիւնն:* - 352. Իններորդ՝ ի յօրինակ արդարոցն լուսոյն. որ ո՛չ կարօտին արտաքին լուսոյ, սոյնպէս և մովսէս ո՛չ կարօտէր. զի ո՛չ բնական էր լոյսն. զի աչք բնական *տեսութիւն* ունի, այլ ո՛չ թէ լոյս: - 352. Եւ ապա՛ պայծառանայ *տեսութիւն* մեր դէմ յանդիման *տեսութեանն* աստուծոյ: - 353. Որպէս նախ քան զօրէնս, բնական քննութեամբ ընտրէին մարդիկ. կամ զանճոռնի մեծն, կամ զամենևին փոքրն, կամ զգարշն *տեսութեամբ*, կամ զվնասակարն, ուտելոյ պիղծ ասէին զսոսա: - 364. Չորրորդ՝ ի յանպատշաճ խորհրդոց և ի *տեսութեանց:* - 368. Չորրորդ՝ շիլ. թիւր *տեսութիւն:* - 370. Բազո՛ւմ է *տեսութիւնն:* - 384. Եւ բազո՛ւմ է *տեսութիւնն:* - 385. Երկրորդ՝ ընդ երից գոյացութեանց մեր. աստ ընդ մարմնոյս. և ի մահն ընդ հոգւոյս. և ի յարութեանն ընդ մտաց *տեսութեանն* հակառակին: - 394. Հինգերորդ՝ զրկելով աստ ի խոստմանէն լրոյ. և յետ մահու ի *տեսութեանցն*. և ի յարութեանն ի կատարմանցն: - 394. Նախ՝ որպէս արեգակն եղև *տեսութիւնն* մովսէսի. զի յառաջ զարևմուտս տեսանէ. և վերացեալ զհիւսիս և զհարաւ. և ապա՛ զարևելս: - 394. Բազո՛ւմ է *տեսութիւնն:* - 395. Է՛ և ա՛յլ իմն *տեսութիւն* բանիս. զի կամի՛ զպաշտօնս մեր որոշել ի կռոց զոհիցն. զի սուտանուն դիքն խնդրէին ուստերս և դստերս և արջառս և ոչխարս զոհել և սպանումն օտարաց: - 396. Զի հանապազ քօղ երեսացն մովսէսի առագա՛ստ է ի վերայ սրտից նոցա. և ոչ իմանան *զտեսութիւն* բանին. վասն որոյ ո՛չ հաւատան: - 405. Զի սէն՝ յունա՛ց է, և շան՝ ասորի. և մի և նոյն է *տեսութիւնն* որ ասէ, անգոսնեաց, և անգուշնեաց: - 407. Եւ առ այս յարմարեն բազում *տեսութիւնս* վարդապետք եկեղեցւոյ: - 409. Եւ այն որ վիճա՛կն է՝ ծիրանեգոյն հանդե՛րձ է. որ զսեղան հացին և զխնկոցն ծածկէին. և *տեսութիւն* կամ փրկութիւն թարգմանի: - 425. Նոյնպէս և դևք ի նրբութենէ *տեսութեան* իւրեանց՝ կամ ի լսելոյ՝ խաբեն, զառաջիկայն պատմելով: - 430. Իններորդ՝ լուր բանին և *տեսութիւն* աչաց: - 444. Այլ որ ստուգիւ *տեսութիւն* է բանս, յերկինս ասել զողորմութիւն, զառաւել մեծութիւնն նշանակէ: - 458. Եւ թէպէտ կատարեալ և լի և անթերի էին մասունք մարմնոյն քրիստոսի. այլ ա՛յն քան փոքրիկ, մինչ զի հազիւ անկարէր ընդ *տեսութեամբ* մարդոյ: - 470. Եւ այլք ասեն՝ դրախտ *զտեսութիւն* աստուածութեանն կոչէ...: - 495. Ասեմք եթէ՝ խափանի հաւատն ի հանդերձեալն վասն դէմ յանդիման *տեսութեանն:* - 507. Այլ արդ՝ մեռեալքն ո՛չ են ի դէմ յանդիման *տեսութեան*. վասն որոյ

պիտո՛յ էր նոցա հաւատ: - 507. Ասեմք առ այս, եթէ ո՛չ է արտաքոյ ուղիղ *տեսութեան* եթէ մի է առ հօր և բազում է առ մեզ: - 529. Մի կոչի եկեղեցի՝ ո՛չ տեղեաւ մի. այլ միով հաւատով և յուսով կոչմանն. և միոյ մօր և մի որովայնի ծնունդ աւազանին. և մի կերակուր որ է *տեսութիւն* աստուածային գրոց. և մի մարմին և արիւն փրկական. և մի գլուխ և պսակ և զգեստ ունիմք զքրիստոս: - 533. Տասներորդ վասն *տեսութեան* մեկնութեանն. որպէս առ դանիէլին: - 536. Իսկ յանցումն՝ մտաց *տեսութեան:* - 555. Եւ ոմանք ոչ ինչ համարին զյանցանս մտաց. և ո՛չ դնեն ի կարգս մեղաց. օրինակ տալով իբր զդատարկ սեղան ոչ ինչ կերակրել. և իբր զպտուղ ծառոց *տեսութեամբ* միայն վայելել: - 555. Առաջինն է սակաւ ինչ միայն յանցուած *տեսութեան* ըստ բնաւորական մտածութեան նորա առ ամենայն իրս: - 558. Եւ երկրորդ յանցումնէ՝ որք մտօքն հեշտացեալ մեղկանան ընդ *տեսութեանն*. և հաւանին խոկացեալք ի նոյն: - 558. Նոյնպէս և այժմ սրբոց և երանելեաց յոյսն է հանդերձ ստուգութեամբ *տեսութեանն*. զի դեռևս հանդերձեալ է նոցա մարմնոցն յարութիւն. և փառք և պսակքն ըստ իրին: - 574. Սակայն ներկայ է ըստ ճանաչման *տեսութեանն:* - 574. Եւ ա՛յլ *տեսութիւն* բանիս. որպէս ասացեր ի մարմինն է կապեալ արիւնն և այլն...: - 600. Այլ և զկարգն յարութեան՝ սորա՛ է ասացեալ մեծն վարդան ի *տեսութիւն* անթառամ ծաղկին: - 637. Դարձեալ *տեսութիւն:* - 640. Եւ զայն աշխարհն *տեսութեամբ* և իմացմամբ միշտ յաւիտեան. անվախճան պատրաստէ՛ զհանգիստ և զերանութիւն նոցա: - 647. ...թէպէտ մեք անգիտանամք ի խորհրդոյն որպէս տկար *տեսութեամբ:* - 662. Երկրորդ զպակասութիւնն. այսինքն ուժոյ, *տեսութեան*, և այլոցն: - 665. Կրկին է *տեսութիւնն:* - 666. Է և ա՛յլ իմն *տեսութիւն* վերագոյն...: - 670. ...այսպէս և հոգին զմայլի *տեսութեամբ* սուրբ Երրորդութեանն...: - 672. ...նոյնպէս յերկրորդ օրն պարտ է գալ կանանց նախ ի գերեզմանն, և ապա արանց. և հոգևոր *տեսութեամբ* ուրախանալ: - 680. Ի մարմնոյ բաժանեալ հոգին պայծառանայ *տեսութեամբ*. որպէս որք ի խաւար բանտից ազատին: - 685. Այլ *զտեսութիւն* սրբոցն առաւելու լոյսն շնորհաց և մաքրութեան. և ազատումն ի թանձրութեանց մարմնոյն: - 685. ...այլ խաւար մեղացն արգելու *զտեսութիւնն*. և չա՛ր է կարծիք նոցա, և երկիւղ տանջանաց: - 685. *Տեսութիւնն* է աստուծոյ. որք ըստ բազմազան գործոց իւրեանց տեսանեն. և որպէս ի տան փառաւորին: - 686. ...այլ զանազանութիւն է նոցա յիւրաքանչիւր գործս և ի *տեսութիւնս:* - 686-687. Նա՛խ՝ վասն նորընծայ հաւատացելոցն. անկիրթ գոլով կատարեալ *տեսութեանց*...: - 687. Նախ ասեմ, եթէ հանդերձ սպիտակ և պսակք և աթոռք և այլն ամենայն զոր ետես ի տեսիլն՝ ո՛չ ներկային. այլ հանդերձելոյն էր *տեսութիւն* որ ինչ լինելոց է ի կատարածի...: - 690. Երկրորդ, աներևոյթ են ի *տեսութեանց* իւրեանց. զի զրկեալ են ի լուսոյ շնորհաց որով երանութիւնքն տեսանին: - 690-691. Եւ երթայ առ իւր տէրն հեշտութեամբ. և անդէն վաղվաղակի իբրև երևմամբ և *տեսութեամբ* իմն շահի զպտուղն առաջիկայ երանութեանց: - 691. ...և յետ մահու յոյս նոցա է՛ հանդերձ ստուգութեամբ գիտութեանն. և կամ *տեսութեանն*...: - 696. Ասեմք առ այս, եթէ նախ է բարին ի հոգին ըստ *տեսութեան* մտացն և կամացն...: - 696. Այսպէս հոգին նախ *տեսութեամբն* ուրախանայ և փառաւորի, և ապա՛ մարմնովն կատարեալ պսակի: - 696. Դարձեալ ասեն, զի՞նչ է փառքն և պսակ արդարոցն, եթէ ոչ *տեսութիւնն* աստուծոյ զոր ունին հոգիքն: - 697. Երկրորդ՝ զի *տեսութիւնն* հաւատոյն է փոխարէն զոր հոգին ընկալաւ. և պսակն գործոյն է զոր մարմնով առնու: - 697. ...մինչ ի յարութիւնն առցէ բոլորիւ բոլորապէս զփառս և զպսակս զանվախճան *տեսութիւնն* աստուծոյ: - 705. Չորրորդ զի լուսափա՛յլ է. նշանակէ՛ զբարձրագոյն *տեսութիւնն* որով լուսափայլին իմացմամբ: - 712. Առաջին պակասութիւն է հոգւոյն իմացականին խաւարն և տգիտութիւնն. իսկ ի յարութեանն բառնի այս ի հոգւոյն և լինի լոյս պայծառ՝ և գիտութիւն աստուածային *տեսութեանն*...: - 722. Իսկ ըստ իրին, զի որպէս ամպ զարեգակն արգելու, այսպէս նսեմութիւն օդոյդ զարփին որ արգելէ՛ *զտեսութիւն* մեր: - 729. Նա՛խ՝ զի *տեսութիւնն* աստուծոյ կեանք է յաւիտենից...: - 740. Իսկ յայսպիսի *տեսութենէս* ո՛չ ուրախանան, այլ տրտմին. և այս վասն նախանձու նոցա ընդ բարեբաստութիւնս այլոց: - 741. ...գիրս այս անջնջելի՛ է ի *տեսութիւնն* աստուծոյ. թէ չարեաց և թէ բարեաց...: - 741. Գիր ևս կենաց է *տեսութիւնն* աստուածային. ի յորում ամենեքեան զխիղճս մտաց իւրեանց իբրև զգրեալս տեսցեն: - 742. Այլ որ ուղիղն է *տեսութիւն*, յետ յարութեան փոխի ժամանակն ի յաւիտեան. և այլ ո՛չ գտանի մասն և րոպէ և ժամ. զի երկնային մարմինք դադարին ի շարժմանէ ուստի ժամանակն գոյանայ: - 747. Նախ կոչի հնձան նախածանօթ *տեսութիւնն* աստուծոյ. ուր ընտրէ՛ և ժողովէ՛ զսուրբս իւր յառաջ քան զլինիլն իւրեանց...: - 748. Զրկումն ի *տեսութենէն* աստուծոյ: - 751. Երրորդ՝ որդունք անմահք. այսինքն օձք, վիշապք, *տեսութեամբ* և շաչմամբ ահագին: - 752. Նմին նման և մեք յուսասցուք արժանաւորիլ *տեսութեանն*

քրիստոսի. զի թէ և ի դժոխս իցեմք՝ ա՛յն է արքայութիւն մեր. և ո՛չ թէ յերկրի կամ յայլում տեղւոջ ըստ սրբոյն ոսկէբերանի: - 759. Ի *տեսութենէ* արքային եռակի լիցի ուրախութիւն նոցա: - 762. Եւ այնպիսի քաղցր է *տեսութիւնն* աստուծոյ, մինչ զի չարքն թէ կարէին՝ յօժարէին ի դժոխս կալ և զաստուած տեսանել. քան արտաքոյ տանջանաց լինիլ և զաստուած ո՛չ տեսանել: - 763. Երրորդ ուրախութիւնն եղիցի ի *տեսութենէ* միաւորութեան մարդկային բնութեանն առ աստուածայինն...: - 763. Այսպէս առաջին ուրախութիւնն է յերանելի *տեսութեանցն* աստուծոյ: - 763. Որպէս բան ի ձայն՝ և բան ի գիր՝ և լոյս յօդ՝ և *տեսութիւն* յակն՝ և հուր յերկաթ՝ և մուխ ի պղղուատ: - 769-770. Յաչաց աստի՝ հայեցարատս հերքեալ լիցի *տեսութեամբ* լուսոյդ: - 771. Յաղագս այսմ զանազան են *տեսութիւնք* հարց պետաց: - 781. Եւ զանազան *տեսութիւնք* վարդապետաց չեն ընդ դէմ միմեանց...: - 781-782. Զորօրինակ, ժանգ հայելւոյ ո՛չ զընդունակութիւնն բառնայ, այլ *զտեսութիւնն*. և յետ սրբելոյն, նոյն ծածկեալն երևի ի նմա: - 782. Նա՛խ՝ զի ի վերին գաւառս ուստի էին դևք՝ ո՛չ գոյ հաւատ. այլ դէմ յանդիման *տեսութիւն:* - 784. Երրորդ, ներգործութեամբ ի *տեսութիւնս* աչաց. սոքա կոչին հաւատ անտեսակ: - 784. Եւ նոյն ինքն տէրն բոլորից վկայ քարոզութեան զգործս կատարէր. զի սովորութիւն է մարդկան քան զլուր լսելեաց *տեսութեան* աչաց հաւանիլ: - 785. Եւ կատարեալն *տեսութիւն* խնդրեցաւ ի վերոյ ի **ժգ** գլուխն **իբ** համարն: - 785. Եւ կատարեալ *տեսութիւն* բացերևականն բանի յայտնի՛ է աշխատասէր մտաց. որ յաղագս մեկնութեան լուծումն գրոց. և գո՛ն առ քեզ: - 787

**ՏԵՍՈՒՄՆ +** Հինգերորդ՝ ուրիէլ. *տեսումն* աստուծոյ: - 144

**ՏԵՍՉՈՒԹԻՒՆ +** Երրորդ՝ զի ամենայն իր յէից և յոչ էից են գոյացեալ. յէից՝ ըստ նախածանօթ *տեսչութեան* գաղափարին. և յոչ էից՝ ըստ ինքեան ի ժամանակի հաստատեալք: - 236. Եւ այս անճառ խնամոցն աստուծոյ է *տեսչութիւն* որպէս ցուցանի յառաջիկայդ: - 237. Ասեմք թէ՝ և տեսակք և խառնւածք մարմնոց են ի *տեսչութենէ* խնամոցն արարչին: - 237. Երրորդ՝ զի ո՛չ գիտէին զանդրանիկն ժամանակաւ, և ո՛չ զկրտսերն. և լինէր փոփոխումն վիճակաց նոցին. որպէս յակոբ էառ զանդրանկութիւնն եսաւայ. և եփրեմ զմանասէին. թէ և սոքա *տեսչութեամբն* աստուծոյ. այլ նոքա ի պատրանաց լինէին: - 238. Երրորդ, ի վերին *տեսչութեանցն:* - 668. Նաև անդանօր ետես նախանըկար *տեսչութեամբ* զորքանութիւն մարդկան ըստ թւոյ: - 716. Որք *տեսչութեամբն* աստուծոյ՝ ի մեռելոցն զառհաւատաչեայն ընկալան յարութեան, թէ զիա՞րդ ոչ ունէին ի մտի զանտի կենացն ծանօթութիւն. պատմել մեզ խնդրի: - 774. Իսկ որք *տեսչութեամբն* աստուծոյ ընկալան զթերակատարն յարութիւն, ի վե՛ր է քան զբնութիւն...: - 775

**ՏԵՐԵՒ +** Դարձեալ ասեմք թէ՝ ո՛չ է բարի առանց աստուծոյ կամացն. և ո՛չ չար առանց թոյլ տալոյ նորա. ա՛յն է որ ասէ՝ *տերև* ո՛չ անկանի, և մազ մի ի գլխոյ. զի ո՛չինչ կարեմք առնել առանց կամաց՝ կամ առանց գիտութեան՝ կամ առանց թոյլ տալոյն աստուծոյ: - 18. Կամ որպէս բունն մի է ծառոյն, և ճուղքն և *տերևքն* բազում. նմանապէս և աստուածաբանութիւնն: - 123. Այլ ասիցէ ոք, թէ բազում ինչ գոն ի յայլս գոյացութիւն և ի յայլս պատահումն. որպէս ջերմութիւն ի հուրն գոյացութենէ, և ի անորակ մարմինն պատահումն. և *տերևն* ըստ ինքեան գոյացութիւն է, և ի ծառն պատահումն. այսպէս և մազն: - 169. Պատասխանեմք առ այս եթէ՝ առանց ջերմութեան անձև և անկերպ է անորակ մարմինն. իսկ *տերևն* զա՛րդ է ծառոյն. և մազն մարմնոյն: - 170. Եւ զի արտաքս գան ծաղիկք և պտուղք և *տերևք:* - 197. Եւ զի ցրտութեամբ և չորութեամբ *տերևք* դեղնին և թափին: - 197. Մարերի. որպէս թուլանան մայրիք *տերևօք* և ոստովք. և լինին մայր թռչնոց և գազանաց: - 201. Եւ *տերևն* օդոյն: - 213. Վասն որոյ ի հրոյն ոմն սևանայ. որպէս խաղող. և կէսք կարմրին և դեղնին. որպէս բոյսք՝ և *տերևք* չորացեալ ի հրոյ: - 213. Եւ այլք ասեն թէ ծաղիկք և *տերևքն* լուսընկա՛լք են: - 222. Յայն՝ զի փայտ դրախտին անփուտ է. և *տերևն* անփտելի. և պտուղն անծորելի. և ծաղիկն անթառամելի. և աստուծոյ տնկեալ ձեռօք իւր. տեղի անապական ձեռագործին ադամայ: - 223. Ոմանք թուզ ասեն. թէ ի նոյն ժամն որ կերաւ և մերկացաւ՝ և կարեաց ի *տերևոյ* նորա. և վկայ բերեն թէ՝ վասն այն անէծ զթզենին յերուսաղէմ: - 224. Ապա ուրեմն համաձայնելի է մեզ փիլոնի իմաստնոյ. որ անծորելի է ասէ պտուղն և անթափ *տերևն:* - 224. Եւ թէ ոք ասիցէ, խառնուածոցն է այս, կամ յատուկ տեսակաց. որպէս ծայնք և *տերևք* և կենդանիք չեն նման միմեանց: - 237. ...ո՛չ *տերև* մի ի ծառոյ անկանի առանց գիտութեանն աստուծոյ: - 237. Պատասխանեմք եթէ՝ ոմանք յարմատս ունին զսերմն. ոմանք ի ծայրքն. կէսք ի *տերևն*. այլք ի կեղևն...: - 256. Զի քարշեն յերկրէ զհիւթ, և ունակացեալ պահեն, և հալեալ փոխեն յինքեանս. և վտարեն զաւելորդսն ի կեղև՝ ի *տերև*՝ և յայլսն: - 262. Եւ եերորդ՝ ո՛չ ևս թզենեաւ՝ այսինքն դառն վարուք

ստուերանալ. զի *տերև* թզենւոյն դա՛ռն է և փշոտ ըստ մեղացն առակի: - 281. Եւ որպէս ի տաղաւարքն կողերս՝ *տերև*՝ և ոստ մատուցանէին. զնոյն և քրիստոսի մատուցին յաւուրն ողոգոմեան ի գալուստ նորին յէմ: - 374. Եւ որպէս անչափ են սպեղանիք և դեղք բժշկականք մարմնոյ ի բազում և զանազան ծաղիկս խոտոյ և յարմատս, ի *տերևս* ի պտուղս. և յայլսն...: - 531. Երկրորդ, որպէս հատ մերկ անկանի և բուսանի ծաղկեալ և զարդարեալ *տերևով*...: - 720. Դարձեալ որպէս հատն մերկ սերմանի և մերկ ո՛չ բուսանի. այլ զարդարեալ խոտով և *տերևով* եօթն թուով: - 721. Այսինքն նախ արմատն. և յետոյ խոտն. յետոյ ծղօտն. և ծնունդն. և ապա՛ *տերև*. պատանք. և քիստք. և ապա՛ ցորեանն ատոք ի հասկին: - 721. ...*տերևն* յիւրում ժամանակին թափի և դարձեալ զարդարի *տերևով* և մրգով: - 728. Ունելով *տերև* զգիտութիւն սուրբ գրոց. և զծաղիկ հաւատոյ՝ և զպտուղ բարեաց գործոց: - 765. Եւ *տերև* գիտութիւն հոգւոյն. և ծաղիկ ծագումն բանին. և պտուղ արդեանցն հօր: - 765. Դարձեալ՝ *տերև* զկանաչագեղ կեանս. և ծաղկեալ առաքինութեամբ. և պտուղ արդեանցն հանապազորդ: - 765. Ունելով *տերև* և ծաղիկ և պտուղ. այսինքն մաքրել, լուսաւորել, և կատարելս առնել ըստ մեծին դիոնիսի: - 767. Ի գնացս հոգւոյն զօրացեալ, զի ըստ տընօրէնութեանն խորհրդոյ միշտ հոգւով սրբով ներգործէր. ունելով *տերև* զաշխարհակեցոյց վարդապետութիւնն: - 768. Այլ և *տերև* է մշտասաղարթ գիտութիւն հաւատոյն. ծաղկեալ դաւանութեամբ և պտղաբերեալ գործով առաքինութեան: - 769. Դարձեալ՝ ծածկութիւն յանցանաց՝ է՛ բնականապէս մեզ ի *տերևոյ* անտի. իսկ յանդիմանութիւն է ծածկելոց յայտ արարողութիւն. վասն որոյ ամենքեան դժկամակ երևին: - 774

**ՏԵԻԵՄ +** Եւ որքան ի վերին կիսագունդն *տևէ*, կոչի տիւ: - 190. Եւ *տևէ* որքան է նիւք գոլորշոյն. և լուսեղէն բա՛շս արձակէ առ ի ցուցանել թէ ո՛չ է ի բնական աստեղաց: - 203. Տասներորդ՝ կին, իբր թէ կեանք. զի որպէս կենօք է *տևել*. նոյնպէս տեսակ մարդոյս ի ձեռն կնոջ ծննդեանն *տևէ*, և կայ մնայ մինչ ի կատարած: - 276. Երկրորդ՝ որպէս մանուկն *տևէ* յարգանդի **թ** ամիս՝ և **ե** օր անդրանկանն՝ և ապա՛ ծնանի: - 290. Նոյնպէս և անդրանիկ ծնունդքն աշխարհի էին նախապետքն որ նախ քան զջուրն, *տևէին* ի կեանս այս **թճ** կամ աւելի ամ, և ապա ծնանէին ի հանդերձեալ կեանսն մահւամբ ելիւք: - 290. Երկրորդ՝ և արդարք առնեն ընդ դէմ սմին ի յամօթ չարին. որ հնարեցաւ ի ձեռն մեղացն՝ մահւամբ բառնալ զմարդկութիւնս. այլ հրամանաւն արարչին ծննդեամբք *տևէ* և յերկարէ՛ բնութիւնս: - 321. *Տևեալ* ամս **Ո**. մինչ ի սեդեկիա որ գերեցաւ ի բաբիլօն. և հրձիգ եղև տաճարն և երուսաղէմ: - 446. *Տևեցին* զամս **մծ**. մինչ յովսէէ որդի ելայ. որ գերի վարեցաւ յասորեստան. և բարձաւ թագաւորութիւնն իսրայէլի: - 446. *Տևեաց* տաճարն զամս **նխք**: - 453

**ՏԵՒՈՒՄՆ +** Եւ մաստութիւնն է նոյն ընդ համբերութեանն. զի համբերութիւնն է *տևումն* մարմնաւոր նեղութեանց. իսկ մաստնութիւնն է *տևումն* նախատանաց: - 584

**ՏԷԳ +** Նա խթեաց *զտէգն* և հասոյց յաչքն իւր և լուսաւորեցաւ...: - 495

**ՏԷՐ +** Դարձեալ ասեմք՝ թէ կամքն աստուծոյ ո՛չ է ընդդունայն. զի զոր ինչ կամի առնէ. այլ կամեցաւ և արար զմեզ անձնիշխան և *տէր* գործոց մերոց. եթէ չար՝ և եթէ բարի: - 16. Նախ եթէ՝ ունիմք անձնիշխան կամք. և *տէ՛ր* եմք գործոց մերոց. առնել և ո՛չ առնել. այլ երբեմն սկիզբն ի մէնջէ, և կատարումն ի նախախնամութիւնն աստուծոյ: - 17. ...եդ և զանձնիշխան կամքն *տէր* և իշխան իներքս ի հոգին. զի կառավարէ և առաջնորդէ՛ հոգւոյն. զվատ որակն ի բարին ուղղել, և զբարին ի նոյնն պահել և առաւելուլ. զի այս է գործ անձնիշխանին: - 19. Երկոտասաներորդ՝ ասեն թէ աստուած առնէ զոմն աղքատ և զոմն մեծատուն *տէր*՝ և ծառայ. իշխան՝ և իշխեցեալ: - 19. Դարձեալ ասեմք, եթէ առնէ աստուած մեծատուն և աղքատ, *տէր* և ծառայ և այլն, զի ի միմեանց օգտեսցին: - 19. Եւ ի ձեռն *տէրանց* խնամէ՛ զծառայս և զհնազանդեալս: - 19. Ասեմք եթէ՝ զոգ և մազօգն՝ հոգևորապէս իմացեալ լինին ամենայն հալածօղք եկեղեցւոյ. զորս սատակեսցէ՛ *տէր* յիսուս զամենեսեան որպէս ասէ սաղմոսն՝ «րպէս զանօթ բրտի փշրեսցես զնոսա»: - 28. Ութերորդ՝ *Տէր* ստացաւ զիս, և պատասխանիք նոցա **դ** գլխով: - 29. Չորրորդ՝ Զի մի՛ է *տէր* մեր և աստուած մարմնով՝ ի գլխով: - 30. Վասն այն ո՛չ կարեն իմանալ՝ զի ասէ *տէրն*, «կոյր կուրի առաջնորդէ՛, երկոքին ի խորխորատ անկանին»...: - 31. Եւ այլս բազում բաղդատութիւն գոլով հերձւածողի և նեռինն. և զորս *տէրն* գնեաց՝ սոքա ուրացեալք՝ ածեն ի վերայ անձանց զերագահասն կորուստ: - 35. Իսկ յորժամ ամէն լեզու խոստովան լիցի *տէր* զյիսուս քրիստոս, անզրաւապէս թագաւորէ՛ ընդ հօր և տնտեսութեամբն: - 42. Նախ՝ զի որպէս զգեստին ծածկի մարմինն, այսպէս *տէրն* զաստուածութիւնն իւր ամփոփեաց մարմնովն անհաս լինիլ ի փորձողէն...: - 43. Ասեմք զայս ըստ մարդկութեանն. զի ո՛չ ունէր բնութիւնս մեր. այլ յորժամ միացաւ

ընդ բանին և եղև որպէս առօղն և առեալն իշխան և *տէր* ամենեցուն: - 46. Վասն այն *տեառն* ընկերկեաց զօրինականն թէ միայն ծայրագոյն բարի է՛ աստուած. և ի մարդկանէ ո՛չ ոք ունի զայս: - 47. Դարձեալ՝ փորձիչս այս փառասիրութեամբ յառաջեաց առ քրիստոս. ուստի և ի բանից իւրոց երևի թէ ամենայն պատուիրանացն պահպանօղ եմ. զոր *տէրն* պակաս լինել յանդիմանեաց: - 47. Ցիշխանականն. որպէս *Տէր* սաբաւօթ. Թագաւոր ամենակալ: - 49. Եւ վասն հոգւոյն ասացեալ է՝ «հոգի *տեառն* ելից զտիեզերս»: - 56. Մեծ է հայր. մեծ է և որդի. անբովանդակելի է և հոգին սուրբ. ըստ հոգէնըւագին որ ասէ, «Մեծ է *տէր* մեր. և մեծ է զօրութիւն նորա». որ է քրիստոս աստուծոյ զօրութիւն: - 56. Եւ դարձեալ, զի ամենայն ինչ որ հօր է՝ այն որդւոյ է որպէս ասէ *տէր*. ապա ուրեմն հոգի հօր՝ հոգի է որդւոյ վասն միոյ էութեանն: - 61. Վեշտասաներորդ՝ մանաւանդ զի յոյժ անվայելուչ է կարգել զծառայն ընդ *տեառն*՝ և զստեղծուածն ընդ ստեղծողին՝ յորժամ ա՛յլ է բնութեամբ: - 67. Ո՛վ երկաբնակ՝ դու զո՞ր բնութիւն ի քրիստոս ասես մի *տէր*. զաստուծոյն՝ թէ զմարդոյն: - 68. Իսկ թէ և զերկու բնութիւնն ասես *տէր*, ընդդէմ խօսիս առաքելոյն որ մի ասաց *զտէր* մեր յիսուս քրիստոս՝ որպէս և զհայր: - 69. Ա՛րդ մկրտիմք հաւատացեալքս որպէս ի հայր և ի հոգին սուրբ՝ այսպէս և յորդին մարմնացեալ մի *տէր* մի քրիստոս: - 69. Ապա ուրեմն աստուած է *տէր* մեր յիսուս քրիստոս: - 70. Եւ *տէրն* զի գիտէր զխորհուրդս նոցա, ասէ «զի՛ խորհիք ի սիրտս ձեր»: - 71. Ասեմք եթէ՝ *տէր* ապաւէն եղև ասէ մարգարէն. ո՛չ թէ փոփոխեցաւ ի տէրութենէն յապաւինութիւն, այլ եկաց մնաց *տէր*, և եղև ապաւէն: - 72. Ապա ուրեմն մի է *տէր* և մի քրիստոս բանն մարդացեալ: - 72. Արդ բանն առանց մարմնոյն քրիստոս ո՛չ է. ապա ուրեմն յա՛յտ է զի միացեալ մարմնովն է՛ հաւասար և ի կերպարանս աստուծոյ *տէր* մեր յիսուս քրիստոս: - 72. Իննևժերորդ՝ թէպէտ մարդիկ ոմանք կոչին *տէր* վասն ունելոյ իշխանութիւն ինչ, այլ *տէր* միայն աստուած է...: - 74. Այլ զխաչեալն քրիստոս՝ *տէր* փառաց կոչէ պօղոս յառաջին կորնթացւոցն...: - 74. Եւ երևեալ մարմնովն մի բնութիւն տեսակացեալ և մի անձնաւորութիւն. մի *տէր*. մի որդի. ըստ սուրբ հարցն ուղղափառութեան: - 76. Եւ թէ՝ մի ասեմք *զտէր* մեր յիսուս քրիստոս. և մի զբնութիւն նորա. զի մի՛ է բնութիւն բանին մարմնացելոյ: - 76 - 77. Եւ ո՛չ ասի ծառայ վասն ծառայական մարմնոյն. այլ միշտ *տէր* և ազատ: - 78. Որք **բ** անձն և **բ** բնութիւնս՝ և **բ** կամս՝ և **բ** գործս բաժանեն քրիստոսի. **բ** որդի՝ և **բ** քրիստոս յայտնապէս ասեն. զմինն *տէր*, և զմինն ծառայ, զմինն բնութեամբ որդի աստուծոյ, և զմիւսն շնորհօք. և այլն: - 82. Եւ բանն քրիստոս կոչի, և յիսուս, և *տէր*. և աստուած. նոյնպէս և մարդն կոչի քրիստոս, և յիսուս, և *տէր*, և աստուած: - 82. Եւ է՛ ուրեք զի միաւորեն զանունն՝ մի քրիստոս՝ մի *տէր*՝ մի որդի՝ և մի անձն ասելով որպէս քաղկեդոնի թըւի երկաբնակ ժողովոյն: - 87. Իսկ *տէր* մեր անուամբ և բնութեամբ է աստուած որպէս խոստովանիմք դասք ուղղափառաց: - 88. Նոյնպէս և քրիստոսն անունն՝ և *տէր*՝ և աստուած՝ և այլն՝ զո՛յգ և հաւասա՛ր է մարդկութեան իւրոյ և աստուածութեանն...: - 89. Եւ ո՞րպէս երկիր պագանեն նմա երկնաւորք և երկրաւորք և սանդարամետականք. և ամենայն լեզու խոստովան լիցի թէ *տէր* է յիսուս քրիստոս ի փառս աստուծոյ հօր: - 99. Եւ մեք զնոյն դաւանութիւնն պինդ կալցուք անշարժ յուսով ի կեանս և ի մահ և յետ մահու. և նորին խոստացեալ բարեացն արժանի լիցուք ի քրիստոս յիսուս ի *տէր* մեր: - 101. Եւ *տէր* մեր յարևելից ի հօրէ, և առ մեզ երևեալ ի մօրէ՜ լուսաւորեաց զմեզ: 125-126. Եւ *տէր* մեր չորիւք կատարեաց զտարի տնօրէնութեան իւրոյ: - 126. Եւ *տէրն*՝ զառաքինութիւն մարդկան հոգիացուցանելով և զթերին լնլով: - 126. Եւ *տէրն* զհին կտակն որ խստութիւն էր և սպանօղ՝ ընդ նորոյս խառնելով. որ հոգւով է և կեցուցանօղ: - 126. Եւ *տէր* մեր հաւասար ողորմութեամբ և արդարութեամբ. զի որքան տեսանեն ողորմութեամբ՝ ձգտին առ շնորհն արդարութեան: - 127. Մեծ է *տէր* մեր և մեծ է զօրութեամբ. այլ քանակեալ մարմնով ի չափս մեր տեսանի: - 127. Սմին նման և *տէր* մեր ընտրեաց զառաքեալս և նոքօք կոչեաց զհաւատացեալս: - 127. Երկրորդ՝ ցուցանէ զնստեալն ի վերայ՝ *տէր* գոլ երկնի և երկրի և ծովու: - 132. Եզն վաստակասէր. որպէս ղուկաս ընդարձակ զցեղ ազգատոհմին *տեառն* ցուցեալ: - 133. Եւ սերօբէն որ է՛ ջեռուցիչ՝ ի դէմս հոգւոյն սրբոյ. զի նա՛ է հուր սիրոյ զոր էարկ *տէր* մեր յերկիր: - 135. Այլ և երկոտասան գունդս հրեշտակաց եցոյց *տէրն* յաւետարանին ըստ թըւոյ երկոտասան առաքելոցն և երկոտասան կենդանատեսակացն: - 141. Ա՛րդ՝ ներքնագոյն սիրովն խնամէ աստուած զարարածս. և առաջին դասք հրեշտակաց զվերջինսն. և հարք զորդիս. և վարդապետք զաշակերտս. և իշխանք զիշխեցեալս. *տեարք* զծառայս. և այս սիրովս շարունակին ընդ նոսա: - 143. Ութերորդ՝ ադոնիէլ. *տեառն* իմոյ աստուծոյ: - 144. Եւ փառաբանութիւն է նոցա, ողորմեա՛ *տէր* քո արարածոց: - 144. Եւ ասեն՝ *տէր* հզօր զօրութեամբ, *տէր* կարօղ ի պատերազմի: - 144. Եւ ասեն, սուրբ սուրբ սուրբ *տէր* զօրութեանց. որպէս

լըւաւ եսայի: - 144. Եւ ասեն՝ օրհնեալ փառք *տեառն* ի տեղւոջ իւրում: - 144. Որև *տէրն*՝ փայլակն ասէ անկանել յերկնից: - 148. Երկրորդ՝ զի որպէս ծառայ առ *տէրն*՝ ընդդէմ աստուածակերպ իմացմանն մեղանչեաց: - 150. Զոր եկեալ *տէրն* անմեղ և անապական մարմնովն նահանջեաց զմեղս, և զարդարութիւն սփռեաց ի վերայ մարդկան. և դատապարտեաց զսատանայ իբր զդաւաճանօղ մարդկան և կոխան արար ի ներքոյ մարդկան: - 153. Եւ վասն երկրորդին ինքն *տէրն* ասէ՝ կապեալ զհզօրն և զտուն նորա աւար հարեալ որ է՛ դժոխքն...: - 153. Եօթներորդ՝ թոյլ տուեալ լինի և ոմանց անկանիլ ի մեղս ինչ. զի ի հպարտութենէն զոր ունէր վասն առաքինութեան՝ խոնարհեսցի և անկցի առաջի *տեառն* խոստովանութեամբ. և ընկալցի զթողութիւն. որ նախ համասե՛ռ էր սատանայի: - 159. Զի՞նչ է զոր *տէրն* հրամայէ աղօթել՝ «մի՛ տար զմեզ ի փորձութիւն». և առաքեալն յակոբոս՝ ուրախ լինիլ ասէ՝ «յորժամ ի պէս պէս փորձութեան մէջ անկանիցիք»: - 160. Դարձեալ այսպէս մեկնեն եթէ՝ **փորձութիւնն ըստ ինքեան ո՛չ է բարի. այլ պատահմամբ լինի բարի. յորժամ համբերութիւնն մերձ դնի և յաղթիցէ. իսկ յորժամ համբերութիւն ոչ լիցի, ըստ ինքեան չար և վատ է փորձութիւնն. վասն այն *տէրն* արգելուլ հրամայէ**: - 160. Զայս և *տէրն* աղիւ օրինակեաց. յորժամ անհամի ո՛չ ինչ է պիտանի հրամայէ: - 166. Իսկ Առինչ կոչի, ո՛չ որպէս առ մեզ առինչք են մակագոյեղքն. այլ գոյացական, կամ բաղդատական. որպէս ծնօղ. ծնեալ. բղխօղ. բղխեալ. կամ արարիչ և *տէր* արարածոց և ծառայից: - 172. Այսինքն կամօք է՝ զի գիտութիւնն և կամքն առաջնորդէ՛ գործոյն և հնարաւոր է՛ առնել զայս՝ և առնել զայն, զոր և կամեսցի. որպէս մարդ զի *տէր* է գործոյ իւրոյ՝ առնելոյ և ոչ առնելոյ: - 173. Ո՞վ մեծի աղետիս և վշտալից տարակուսի. զի այսպիսիքս զմի միաւորութիւն *տեառն* ուրանան...: - 176. Յարեգական օրն կոչեցին կիրակէ. որ է՛ տէրունական վասն յարութեան *տեառն:* - 190. Հինգերորդ՝ զի մարդն *տէր* և իշխա՛ն է երկրաւորացս, գիտասցէ ըստ կարգի զիշխանութիւնն իւր ուղղել. և մի՛ անկարգ և անիրաւ: - 192. Նախ՝ զի ծառայք են միշտ վասն այլոց. որպէս մարդս միշտ *տէր* է. և անասունքն *տէր* և ծառայք. զի ծառայք են մարդկան, և *տէր* բուսոց. իսկ բոյսք և տունկք միշտ ծառայք են: - 214. Վեցերորդ՝ զի գլխոյն՝ այսինքն *տեառն* աստուծոյ՝ իմանալի օձն հակառակեցաւ: - 218. Հինգերորդ՝ օգնական ետ զկենդանիքդ մարդոյն. որպէս ծառայք *տեառնն*. անուամբ պարտ էր ճանաչել զնոսա: - 219. Նա՛խ՝ զի յորժամ մարդն անհնազանդ եղև *տեառն* իւրոյ արարչին, յիրաւի անհնազանդք եղեն և մարդոյն անասունք տուեալ նմա ի ծառայութիւն: - 220. Երկրորդ՝ զի ցոր քան իշխէր ինքն ի վերայ անասնական մասանց իւրոց որպէս ասացաք, իշխէր և ի վերայ արտաքին անասնոց և գազանաց. իսկ յորժամ ապստամբեցին ներքինքն բանականին *տեառն* իւրեանց՝ ապստամբեցին և արտաքինքն մարդոյն *տեառն* իւրեանց: - 220. Նոյնպէս ի հողեղէն և յապականացու մարմնոյս մարդկան՝ էառ բանն աստուած. և միաւորելով ընդ ինքեան ծնաւ անապական մարմնով. անմեղ հոգւով և մտօք. և եղև երկրորդ ադամ *Տէր* յերնից: - 229. Հինգերորդ՝ զի մարդն իշխան և *տէր* է ամենայն կենդանեաց...: - 233. Վեցերորդ՝ զի ո՛չ պատւաւորքն մեծարեին, և ո՛չ անարգք անպատուեին. այլ ընդդիմակն սոցա. զի ո՛չ կարէին ճանաչել *զտէրն* և զծառայն. զազատն և զանազատն: - 238. *Տէրն* յաւետարանին զչարն և զվատն մին ասէ: - 251. Եւ վասն տնկական և զգայական մասին՝ կազմողական զօրութիւնն այլ ևս աճեցուցեալ զմարմինն **բ** ամ և դադարեալ յերեսներորդին, լինի ժամանեալ ի չափ հասակի կատարմանն քրիստոսի, յորում մկրտեցաւ *տէրն* մեր: - 265. Դարձեալ և *տէրն* բաժանէ զհասակ մարդոյ ի **դ**. յերեկոյ. ի մէջ գիշեր. ի հաւախօս. և ընդ առաւօտս: - 265. Իսկ դիւականն ընդդէմ այսմ՝ վասն մոլորութեան զանազան երևմունս ցուցանէ աղտեղութեան. և կամ զբարին խափանել ջանայ. որպէս ի չարչարանս *տեառն* վասն կնոջն պիղատոսի ընթերցեալ լինի. և որպէս գրէ սուրբն նազրիոս: - 268. Եւ զայս իմաստութիւնս *տէրն* հաւատ կոչէ. և յօհաննէս լոյս. և սողոմոն իմաստութիւն: - 269. Նա՛խ՝ ի թագն. զի գլուխ և *տէր* է բոլոր հնազանդելոցն: - 271. Երկրորդ՝ աստուած *տէ՛ր* է և իշխան և ինքնակալ արարածոց. և զամենայն երևելիս հնազանդ և ծառայ արար մարդոյն: - 271. Հնգետասաներորդ՝ այլ և ողորմած և գթա՛ծ է *տէր*. և մեզ հրամայէ՛ «Եղերուք գթածք, որպէս և հայրն ձեր երկնաւոր գթած է»: - 272. Իննև**ժ**՝ ուղիղ է ձև մարդոյ. և ուղիղ է *տէր* աստուած մեր: - 272. Դարձեալ՝ իշխան և *տէր* է ամենայն մարմնականաց որպէս ասացաւ: - 275. Եւ օրէնք՝ *տեառն* առ ծառայս: - 277. Երկրորդ՝ ցուցանէ զինքն *տէր* և ստեղծօղ մարդոյն: - 277. Հինգերորդ՝ երկիւղն յայնմ. զի լաւն զձայն գնալոյ *տեառն* և երկեան: - 280. Եւ բաղդատութեան իսահակայ և *տեառն* **հ** թուով: - 283. Տասնև**զ**՝ Բաղդատութիւն յովսէփայ և *տեառն* **հ** գլխով: - 283. Տասնև**ը**՝ Առիւծու ընդ *տեառն* բաղդատութիւն **հ** գլխով: - 283. Քսան**գ**, Բաղդատութիւն մովսէսի և *տեառն* **լ** գլխով. և ազգահամարն աբրահամու: - 283.

Երեսունևէ, Զանազանի հին և նոր օրէնք. և քահանայութիւն *տեառն* և հնոյն: - 284. Որպէս ենովս որ յուսացաւ կոչել զանուն *տեառն* աստուծոյ. այսինքն յուսացաւ զհանդերձեալ կեանսն որ աներևոյթն էր. և վասն իւրաքանչիւր գործոց գոլ հաստուցումն. և կոչեաց զանունն աստուծոյ ի յօգնականութիւն: - 288. Երրորդ՝ յուսացաւ կոչել զանուն *տեառն* աստուծոյ ի յօգնութիւն. զոր մարդիկ յուսահատեալ էին եթէ վասն մեղաց մերոց եթող զմեզ աստուած ի ձեռաց. և նա ի յօգնութիւն կոչեաց զանուն տեառն աստուծոյ. այսինքն զի *տէր* է՝ ո՛չ գարշի ի ծառայից իւրոց. և զի աստուած է՝ էա՛ծ զմեզ աստ ոչ ի կորուսանել, այլ ի կեցուցանել: - 289. Նախ՝ եթէ **ռ** ամն մեր՝ յաչս *տեառն* որպէս օր մի է: - 290. Եւ *տէր* մեր յիսուսի քրիստոս է՛ թագաւոր յաւիտենական. և արդարութիւն արար մեզ և հաշտեցոյց զաստուած ընդ մարդկան: - 301. Եւ *տէր* մեր էառ մարմին ի դատապարտեալ ազգէ մարդկային...: - 301. **Եւ *տէրն* մեր անմայր յերկինս, անհայր յերկրի**. «և զազգատոհմն նորա ո՛ պատմեսցէ» ասէ մարգարէն եսայի: - 302. Եւ *տէրն* մեր նովիմբ աւանդեաց զփրկական մարմին և արիւն իւր: - 302. Եւ *տէրն* ո՛չ ի ձեռս հրեշտակաց սերօբէից և քերովբէից, և ո՛չ միջնորդութեամբ մարդկան ընտրելոց նահապետաց մարգարէից առաքելոց կամ մարտիրոսաց: - 302. Նոյնպէս և *տէրն* մեր ետ հաւատացելոցն զկենարար մարմինն և արիւնն իւր. յորոց խնդրէ զգործս տասնաւոր. այսինքն զկատարեալս. և զկատարումն **ժ** բանեան օրինացն. ի յորս է՛ մաքրութիւն **ժ** զգայարանացս որպէս ի վերոյ ասացաւ: - 302. Ծնաւ և *տէր* մեր մարդ բնութեամբ, քակելով զբնութեան օրէնս: - 305. Եւ *տէրն* վերջին ի լրումն օրինին ի նոյն քանիսն եղեալ հրամանին. զի ո՛չ ելոյծ զօրէնսն, այլ էլից: - 305. Եւ *տէրն* զհարսնացեալ եկեղեցի եմոյծ վերըստին ի դրախտն որ զվեց դարիւ արգելեալ էր և փակեալ: - 305. Եւ *տէր* մեր գլուխ հրէից և հեթանոսաց: - 305. Եւ զհետ *տեառն* պետրոս և յովհաննէս մինչ ի սրահ քահանայապետին: - 306. Եւ ի վերայ *տեառն* ջահիւք և սուսերօք եկին ըմբռնել ըստ աւետարանին: - 306. Եւ *տէրն* եբարձ ի յուս իւր զփայտ խաչին մինչ ի նոյն տեղի գողգոթային ուր զենանէր իսահակ: - 306. Եւ *տէրն* բևեռեցաւ ի վերայ սեղանոյ խաչին: - 306. Եւ վասն *տեառն* եղև ձայն՝ «փառաւոր արարի, և դարձեալ փառաւոր արարից»: -306. Իսկ չորրորդն է՛ պատարագ *տեառն* մերոյ քրիստոսի որ ի մի դէմ անձնաւորութեան **գ** երեսս պատարագին բացայայտեցաւ: - 306. Ութերորդ՝ յուսով ժառանգ երկրին ծնաւ իսահակ. նոյնպէս և ժառանգ բոլորիցս *տէր* մեր...: - 307. Երրորդ՝ ըստ առաքինութեան ի պատուիրանէն *տեառն* յղացեալք, և ծնանիմք առաքինութեամբ զփրկութիւն հոգւոյ...: - 308. Ութերորդ՝ անդրանիկք են ըստ մարմնոյ վերակացուք և *տեարք*. որպէս թագաւորք, և իշխանք. նոյն և առաջին ծնունդք ելեալ յարգանդէ՛: - 309. ...և մեք անդամք ի նա՛ յարեցաք և եղաք անդրանիկք հրեշտակաց որ էաք կրսեր նոցա. զի ամենայն երկնաւորքն ծունր կրկնեն քրիստոսի և խոստովանին զնա՛ *տէր:* - 309. **Իններորդ՝ ցուցանէ թէ ո՛չ է այն անդրանիկն որ նախածին լինի և մարմնովն քաջ. զի ո՛չ հաճի *տէր* ընդ իրանս առն հսկայի. այլ անդրանիկ է այն՝ որ զհաճոյսն աստուծոյ կատարէ**: - 310. ...որպէս դաւիթ կրտսեր էր և հաճեցաւ *տէր*. այլ եղբարքն մեծամեծք խոտանք եղեն: - 310. Եւ *տէր* մեր գեղեցիկ տեսլեամբ քան զամենայն որդիս մարդկան...: - 313. Նոյնպէս և *տէր* մեր փոխանակ շնացօղ ազգին հրէից ընկալաւ զեկեղեցի կոյս՝ և սուրբ ժողովուրդ իւր: - 313. Եւ *տէր* մեր ազատ յերկինս առ հայր, և յերկրի եղև ծառայ զկերպարանս ծառայի առեալ: - 313. Եւ դժոխք ո՛չ յաղթեաց *տեառն* մերոյ. այլ զերծաւ ի նմանէ բոլոր հաւատացելովքն: - 313. Եւ *տէր* մեր լոյս ծագեաց ի բանտ դժոխոցն: - 313. Եւ *տէր* մեր յերկուց աւազակացն զմինն ի փառս էած, և զմինն ի դատապարտութիւն: - 313. Եւ *տէր* մեր մարմնով մեռեալ, միշտ կենդանի է աստուածութեամբն: - 313. Տասներորդ՝ հայրն առաքեաց զյովսէփ առ եղբարսն որ էին հովիւք և երիցունք տեսանել զնոսա. և բանիւն յուդայի վաճառեցաւ և եղև *տէր* երկրին և կերակրիչ: - 313. Նոյնպէս և քրիստոս եկն առ եղբարս իւր որ էին որդիք դաւթի և աբրահամու և առաջնորդք ժողովրդեանն. և յուդա վաճառեց զնա. և *տէր* եղև կենդանեաց և մեռելոց և կերակրիչ. զի ազատեաց զհոգիսն ի սովոյ դժոխոցն: - 313. Եւ *տէրն* մեր կրկին թուով ամաց. զի աստուած և մարդ էր վաճառեցաւ **լ** արծաթոյ: - 313. Եւ *տէրն* մեր **լ** ամեայ մկրտեցաւ. զորմէ հրամայեաց հայր՝ դմա՛ լուարուք ամենայքն: - 313. Եւ *տէր* մեր գիտէր զինչ կրէր ի մարդն. այլ և զծածուկսն հօր յայտնեաց մեզ: - 313. Եւ *տէրն* մեր յերկրորդ գալստեանն տայ ծանօթս հարուածովք տիգին և բևեռացն: - 314. Նոյնպէս և *տէր* մեր յետոյ բառնալո՛ց է զչար. գազանն զորդին կորստեան և զպաշտօնեայսն նորա ի կատարածի: - 314. Զի ի գալստեան *տեառն* կնատքն և թոյլքն ո՛չ թուին. այլ արիագոյնքն անխտիր. զի ի քրիստոս յիսուս արու և էգ ո՛չ է. ո՛չ ի մկրտութեանն և ո՛չ ի յարութեանն: - 315. Եւ *տէր* մեր է՛ թագաւոր յաւիտենական: - 315. Եւ *տէր* մեր արի եղև ի պատերազմի: - 315. Եւ *տէր* մեր ո՛չ երկնչի յումեքէ: - 315.

Եւ *տէր* մեր ի վերայ թշնամւոյն: - 315. Եւ *տէր* մեր անըմբռնելի: - 315. Եւ *տէր* մեր փոյթ ի հատուցումն չարաց: - 315. Եւ *տէր* մեր ի վերայ չարաց: - 315. Եւ ահե՛ղ է պատուհաս ամենայն մեղաւորաց ի *տեառնէ* ...: - 315. Եւ *տէր* մեր էառ զաւար զմարդկային ազգս և գնաց յերկինս: - 315. Եւ *տէրն* մեր որ զմարմինն և զարիւնն իւր ետ ամենայն աշխարհի. նախ ինքն եկեր, և ապա ետ առաքելոցն: - 316. Եւ ի գոչել *տեառն* մերոյ ի վերայ խաչին՝ սարսեցին դժոխայինքն ահաբեկեալ ի կենաց: - 316. Եւ *տէր* մեր ասէ ի յերգն, «ես ննջեմ և սիրտ իմ արթուն է»: - 316. Եւ ի յառնել *տեառն* մերոյ ի գերեզմանէն՝ սարսեցին ամենայն թշնամիք նորա որդիք անդնդոց: - 316. Եւ *տէր* մեր ճոխ ի մէջ նոցա. զի բարձր և գերագոյն եղև ի վերայ մեղաց: - 316. Նոյնպէս և *տէր* մեր յարուցեալ ի հայրական աթոռոյն՝ գայ ի դատել զերկիր...: - 317. Յորոց փրկեսցէ զմեզ և զամենայն հաւատացեալս անուան իւրոյ ի յաւիտենական և յանել տանջանաց հրոյն. և մասնաւոր աջակողմեան դասուն և ժառանգ արքայութեանն երկնից կացուսցէ յիսուս քրիստոս *տէր* մեր. որ է օրհնեալ յաւիտեանս Ամէն: - 317. Նմանապէս և *տեառն* մերոյ: - 318. Եւ այս ևս գիտելի է, զի *տէրն* մեզ կոչի զգեստ փրկութեան և պատմուճան ուրախութեան ի ձեռն մկրտութեան...: - 318. Նոյնպէս և *տեառն* մերոյ կոչի տաճար արտաքին բնակարան. որպէս կոյսն մարիամ, և հաւատացեալ ժողովուրդք, և շինուածք տաճարաց: - 319. ...և յայնցանէ աճեցոյց *տէր* զինչս և զանասունս նորա. որպէս յանապատին զսակաւն աճեցոյց նկանակ, և զբազումսն կերակրեաց: - 326. Նա՛խ՝ զի յաղթեաց փորձողին որպէս յոբ՝ նոյնպէս և *տէր* մեր: - 327. Երրորդ՝ խոնարհեցաւ յոբ ի պատւոյն. և *տէր* մեր էջ ի յերկիր և վասն մեր աղքատացաւ: - 327. Չորրորդ՝ յոբ կրկին վկայեալ յաստուծոյ արդար և անարատ. և *տէր* մեր երկիցս վկայեալ ի հօրէ «դա՛ է որդի իմ ընտրեալ»: - 327. Վեցերորդ՝ հարուածս կրեալ յոբ ի բոլոր մարմինն. և *տէր* մեր ի ձեռս և յոտս և ի կողս. որ և փշով պսակեալ ապտակեալ և գան հարեալ: - 327. Եօթներորդ՝ յոբ ի բարեկամացն նախատեալ. և *տէր* մեր յազգէ իւրմէ չարչարեալ և չարախօսեալ: - 327. Ութերորդ՝ յոբ ո՛չ անիծանէր, այլ աղօթիւքն զբարեկամսն փրկէր. և *տէր* մեր ի վերայ խաչողացն աղօթէր: - 327. Իններորդ՝ յոբայ մարմինն նորոգեցաւ յետոյ. և *տէր* մեր խաչիւն նորոգեաց զպատկերն ադամայ և զծննդոց նորա յարութեամբն իւրով: - 327. Տասներորդ՝ կրկին եղև կեանքն և պատիւն յոբայ. և *տէր* մեր ել ի փառս առաջին և նստաւ մարմնով ընդ աջմէ հօր: - 327. Եւ *տէրն* մեր քրիստոս ի մանկակոտոր սպանմանէն հերովդէի: - 328. Եւ *տէրն* զջուրն ի գինի փոխեաց և զգինին յարիւնն իւր սուրբ: - 328. Եւ *տէր* մեր պահեաց **խ** օր ի փորձութեան լեառն: - 328. Եւ *տէրն* յետ յարութեանն զ**խ** օր ի վերայ օդոյդ: - 328. Եւ *տեառն* ի թաբօր: - 328. Եւ *տէրն* **հ** աշակերտաց իւրոց: - 328. Եւ *տէրն* **բժ**ան առաքելօք զազգս քրիստոնէիցն յերկինս հրաւիրեաց: - 329. Եւ *տէր* մեր զհացն աճեցոյց ապերախտ ազգին, և զձուկն ի ծովէն: - 329. Եւ ի կողից *տեառն* բղխեցին աղբերք ի զմայլումն պասքեցելոց և ի լուացումն ախտաժէտ հոգւոց: - 329. Եւ *տէրն* մի անգամ կատարեաց ի վերնատունն և ետ յառաքեալսն և ի մանկունս եկեղեցւոյ: - 329. Եւ *տէր* ինքն բարձրացաւ ի խաչ և զհարեալսն ի թունիցն դիւաց բժշկէր: - 329. Եւ *տէրն* բազկատարած ի խաչին զսատանայ կործանէր: - 329. Եւ *տէր* մեր՝ չարչարողացն իւրոց թողութիւն խնդրէր ի հօրէ՛: - 329. Նոյնպէս և *տէր* ի հօրէ և ի մօրէ. պայծառութեամբն ի թաբօր. մկրտութեամբն ի ջրոյ. և յարութեամբն ի գերեզմանէ՛: - 329. Եւ *տէր* մեր է՛ր աստուած և կոչեցաւ էմմանուէլ. և իրօք զգործս աստուծոյ ցուցանէր: - 329. Եւ *տէրն* զերկիր շարժեաց և զգերեզմանս եբաց. և **գ** ժամ խաւար էած փոխանակ **գ** աւուր խաւարին եգիպտոսի: - 329. Եւ *տէրն* մեր զիմանալի օձն կորոյս և կոխանեդ: - 329. Եւ *տէրն* եկեղեցւոյ հեթանոսաց՝ և սրբեաց զնա՛: - 329. Եւ *տէր* մեր զգալուստ հոգւոյն և զկատարած աշխարհի պատմեաց, և յանձնեաց զկոյս տաճար իւր ի կոյսն յօհաննէս: - 329. Եւ *տէր* մեր խաչիւն զծով մեղաց աշխարհի: - 329. Եւ *տէրն* ի մէջ գիշերի յարեաւ և ազատեաց զարգելեալսն ի բանտէն: - 330. Եւ *տէրն* եդ զձեռն ի վերայ առաքելոցն: - 330. Եւ զի ո՛չ նկարեցաւ ի պատկեր կռոց և ո՛չ պաշտեցաւ մորենին. վասն այն *տէր* երևեցաւ ի նմա: - 330. ...զի հրեշտակն պատգամաբեր լսի. և *տէրն* ասաց, «զոր ինչ լուայ ի հօրէ՝ ծանուցի ձեզ»: - 331. Ի յայս միտս և *տէրն* աշակերտացն պատուիրեաց մի՛ ագանել կօշիկս: - 331. Իսկ *տէրն* մեր բոլոր անդամօք մեռաւ. զի զբոլոր բնութիւնս փրկեաց: - 332. Եւ *տէր* մեր արար զզատիկն յերիկունն մեծի **Ե** շաբաթին: - 337. Եւ որպէս դարձաւ ժողովուրդն ի հանգրուանն առաջին. և *տեառն* մարմինն եդաւ ի հող երկրի: - 337. Յորում աւուր կիրակէին ի մէջ գիշերի ընդ առաւօտս յարեաւ *տէր* ի գերեզմանէն, ազատելով զհոգիսն ի դժոխոց: - 337. Եւ ի ձախմն, Ադօնիա՜. *տէր* *տէրանց* ընդ մեզ: - 338. Գունդն *տէրն:* - 347. Եւ գունդն ջահ՝ *տէր* մեր, որ լուսաւորէ՛ զհաւատացեալս իւր: - 347. Եւ ճրագ *տէրն* ի վերայ նորա: - 347. Զի՞նչ

զանազանի որ մովսէս՝ աստուած և *տէր* կոչեցաւ: - 350. Ճշմարիտն աստուած՝ բնութեամբ և գործով և անուամբ կոչի աստուած և *տէր:* - 350. Երկրորդ՝ զի դէմ յանդիման ետես *զտէր* և նշան լուսոյն մնաց ի տեսութիւնն: - 352. Հինգերորդ՝ խնայեաց ի նա՛ *տէր* ո՛չ ցուցանել զերեսս իւր. այն կոչեաց զնա՛ *տէր* և արար զաչս նորա *տէր* և պատժօղ: - 352. Մետասաներորդ՝ յօրինակ *տեառն* որ պայծառացաւ ի թաբօր: - 352. Նա՛խ՝ զի *տէրն* բոլոր մարմնով լուսաւորեցաւ. և նա՛ մասամբ...: - 352. Դարձեալ՝ *տէրն* բնութեամբ ունէր զլոյսն. և նա՛ արտաքուստ ստացաւ...: - 352. Դարձեալ՝ *տէրն* այլոց տայ զլոյսն. և մովսէս ո՛չ կարէ: - 352. ...դարձցին առ *տէր* հոգիքն որպէս զմովսէս. և ապա վերասցի քօղն և յայտնեսցի լոյս գիտութեան նոցա: - 352. Եւ **գ** ըստ շնորհաց. որպէս ի ջրոյ, ի հրոյ, և ի վիմէ. ի տիպ *տեառն* մերոյ որպէս ասացաւ: - 353. Զի՞նչ հասարակ և զի՞նչ յատուկ քահանայութեան *տեառն* մերոյ՝ և հնոյն քահանայութեան: - 354. Երկրորդ, զի նոցա նոցայն ժամանակեայ և խափանելի, իսկ *տեառն* մերոյ մշտնջենաւոր և յաւիտենական...: - 354. Երրորդ, այն առանց գթութեան հատուցանէր պատիժս պարտուց. իսկ *տեառն* մերոյ շնորհիւ և ողորմութեամբ...: - 354. Չորրորդ, զի նոքա ոչ կարէին լինիլ ախտակից տկարացելոցն. իսկ *տէրն* որ զփորձ էառ՝ կարօ՛ղ է և փորձանաւորացն օգնել...: - 354. Հինգերորդ, նոքա մատուցանէին պատարագ նախ վասն իւրեանց, և ապա՛ վասն ժողովրդեանն անգիտութեան. իսկ *տէրն* մեր ո՛չ արար մեղս ըստ մարգարէին...: - 354. Ութերորդ, նոքա մատուցանէին ի ձեռագործ խորանսն որ ի մովսիսէ՛ կանգնեցաւ, իսկ *տէրն* մեր անցեալ ի ներքին կողմն վարագուրին...: - 354. Մետասաներորդ, նոքա ո՛չ իշխէին ճաշակել զպատարագս իւրեանց. այլ արտաքոյ յարէին. իսկ *տէրն* մեր և մեք ճաշակեմք զպատարագ նորոյս...: - 355. Երկոտասաներորդ, նոքա հին ուխտին էին միջնորդ. իսկ *տէրն* նորոյս...: - 355. Երեքտասաներորդ, նոքա փոփոխականք էին վասն մահու արգել լինելոյ. իսկ *տէր* մեր անփոփոխ և յաւիտեան է քահանայ. վասն յաւիտեան և անմահ գոլոյն: - 355. Չորեքտասաներորդ, նոքա յերկրէ և յերկրի մատուցանէին պատարագ. իսկ *տէրն* մեր յերկնից և յերկինս մատոյց: - 355. Եօթներորդ, խմորն զաղանդ սադուկեցւոցն և փարիսեցւոցն առակեաց *տէրն:* - 356. Ութերորդ, ապականութիւն է խմորն. վասն այն *տէրն* զանապական մարմինն իւր բաղարջով աւանդեաց: - 356. Եւ ո՛չ միայն այս, այլ զեօթն օր անխմոր բաղարջ ուտէին ամենայն ժողովուրդն. և Աբրահամ և ղովտ բաղա՛րջ յօրինեցին զխորհուրդ փրկական մարմնոյ *տեառն* որ ի վերնատունն բաղարջով աւանդեաց: - 356. Ի սոցանէ ափով չափ դնէր քահանայն ի սեղան ողջակիզացն ի հոտ անուշից *տեառն:* - 357-358. Եւ յայսմանէ՝ հանեն մասն զերիկամունս և զլերդափոյթն և զբովանդակ ճարպն ի հոտ անուշից *տեառն:* - 358. Այլ և ի տօնի քաւութեանն զուարակ մի և **բ** նոխազ վիճակով. մին *տեառն* և միւսն արձակման յանապատ: - 359. Եւ առաջին *տեառն* սպանանել. որ զծածուկս տեսանէ և ո՛չ կեղծիւք ինչ: - 360. Զի *տէր* մեր ի հիւսիսո՛յ կողմ երուսաղէմ խաչեցաւ: - 360. Վեցերորդ, թիթեղն ցուցանէր ի ճակատն գրեալ սրբութիւն *տեառն* նուիրեալ. զի նէրք քահանային սրբութիւն է: - 363. Զնոյն և ի նորս *տէրն* հրամայէ, «արժա՛ն է մշակն կերակրոյ իւրոյ»: - 363. Երկու նոխազն համատեսակ օրինակ *տեառն* մերոյ՝ յերկուց միաւորեալ մի անձն. և միաւոր բնութեամբ աստուած և մարդ: - 369. Երրորդ՝ զի աւետարանիչքն յայտնապէս ասեն թէ՝ ընդ մկրտիլ *տեառն*՝ նոյն ժամայն հոգին հանէ՛ զնա յանապատ. և պահեաց զ**խ** տիւ և զ**խ** գիշեր: - 373. Ուռն՝ կոյսն յարմատոյն և յեսսեայ. և Ողկոյզն *տէր* մեր ծնեալ ի նմանէ զուարճալի կերակուր մեզ: - 381. Իսկ *տէրն* ի մարդեղութեան զակամայն ո՛չ կրեաց. զի հեռի է յաստուծոյ ակամայն: - 383. Եւ զանգոսնելիսն ո՛չ կրեաց. զի տեսա՛կ է մեղաց. և *տէրն* ո՛չ արար մեղս: - 383. Զի գողացեալ մեղքն միայն խոստովանելով ոչ քաւի. այլ հատուցանել պարտ է զգողօնքն. կամ ի *տէրն*, կամ յազգականս նորա. կամ ի քահանայն. զի միջնո՛րդ է մեռելոց և կենդանեաց: - 384. Նոյնպէս այժմ ի նորս պարտ է խոստովանիլ վասն կանոնաց եկեղեցւոյ. և զգողօնսն վճարել կամ ի *տէրն*, կամ ի քահանայս, կամ յաղքատս: - 384. Երրորդ՝ զի առաջնո՛րդ է ի մուտն մեր և յելս յաշխարհէ...: - 385. Նա՛խ՝ որպէս բարձրացաւ օձն ի ձողին. նոյնպէս *տէրն* մեր ի խաչին: - 386. Երրորդ՝ հակառակատիպ տեսանի. զի անդ օձն պղնձի զմարդ թշնամիս իւր կեցուցանէր և զօձսն սատակէր. և *տէր* մեր զմարդիկ ազգակից իւր կեցուցանէր, և զթշնամին սատանայ հալածէր: - 386. Չորրորդ՝ պղինձն ոսկէտեսակ. և *տեառն* մարմինն աստուածատեսակ փառօք և ներգործութեամբ: - 386. Վեցերորդ՝ առանց դառնութեան և թունից էր օձն. և *տէր* մեր առանց դառնութեան մեղաց: - 386-387. Եօթներորդ՝ օձն մեռեալ սպանանէր զօձսն. և զհարեալսն կեցուցանէր. և *տէրն* մեր մեռեալ մարմնովն զմեղս մեռուցանէր, և կենդանի աստուածութեամբն զմարդիկ կենագործէր: - 387. Ութերորդ՝ հինգպատ օձին է՛ **ե** զգայութիւնս մեր. զոր

էառ *տէրն* և սրբեաց զմեզ: - 387. Որ և տրտմեցաւ *տէրն* մինչ ի մահ. զի զտրտմութիւնս մեր եբարձ: - 387. Եւ *տէրն* արդար դատաստանաւ ըստ նմանութեան մեղացն պատժէ՛ զմեղապարտն: - 387. Երրորդ՝ ծառայք և վարձկանք հրամանաւ *տէրանց:* - 389. Չորրորդ՝ հաց ի յերկնից իջեալ մանանայն կենարար. և բանն աստուծոյ նոյն ինքն *տէրն* մեր. որպէս ասաց առ փորձիչն թէ՝ ինև կերակրին ամենայն սուրբք և ո՛չ հացիւ: - 397. Ութերորդ՝ մովսէս ի լեառն եկաց **խ** տիւ և **խ** գիշեր անսուաղ. և կերակրիւր բանիւն աստուծոյ. նոյնպէս և եղիա. նաև *տէր* մեր ի փորձութեան լերինն: - 397. Աչք *տեառն* ի սկզբանէ տնօրէնութեանն և մինչև ցկատարումն տարւոյն ի վերայ նորա: - 398. Աստ **զ** նշան դնէ մարգարէին որ ճշմարտապէս զքրիստոս *տէր* մեր ցուցանէ: - 399. Երկրորդ՝ զի ասէ «իբրև զիս». իբրև օրինա՛կ է. որպէս մովսէս աստուած կոչեցաւ, և *տէր* մեր էմմանուէլ. և զնա՛ հայր կնքեաց աստուած. և որպէս մովսէս իշխէր տարերաց, և *տէր* ի ծովուն գնայր, և ի վերայ օդոյն: - 399. Չորրորդ՝ նշան թէ՝ զոր ասէ և լինի. և *տէր* մեր զգործս աստուծոյ գործէր առ կաղս և կոյրս և հիւանդս և մեռեալս. զոր ասէր բանիւ՝ կատարէր գործով: - 399. Նոյնպէս և *տէր* մեր ո՛չ է անիծեալ: - 400. Մովսէսին պատճառն վասն խստասրտութեան նոցա է որպէս *տէրն* ասաց. զի մի՛ սպանումն լիցի: - 401. Եւ *տէրն* նշանակեաց **իռ.** **ժ** զգայարանացս **բ բռ**: - 404. Նախ ասեն թէ զնիւթն աստուած կարծեցին, սատանայ խաբէր թէ ի՛մ է այս մարմինս իբրև *տեառն* նիւթոյ...: - 409-410. Իններորդ՝ ի ժամ այլակերպութեան *տեառն* ի բերել հրեշտակապետին զմովսէս, ասէ սատանայ ցհրեշտակն, ստեաց աստուած զմովսէս մուծանել յերկիրն ուր երդուաւ ո՛չ մտանել նմա: - 410. Տասներորդ՝ ի սկզբանէ հայհոյիչ աստուածամարտ էր սատանայ. և վասն այն զմարդիկ կորուսանէր մեղօք. որում զվճիռն և զսաստն *տէրն* ետ, և դատապարտեաց զմեղս ի մարմնի իւրում. և եբարձ մահուամբն զմահ, և որ զիշխանութիւն մահուն ունէր: - 410. Որպէս *տեառն* մերոյ ի համբառնալն՝ ամպն կալաւ զնա՛ յաչաց նոցա: - 411. Որոց լիցի մեզ ամենեցուն մասնաւորիլ ի փառս արքայութեան երկնից ի քրիստոս յիսուս ի *տէր* մեր ամէն: - 411. Չորրորդ՝ Բաղդատութիւն յեսուայ և *տեառն* **լ** գլխով: - 412. Եօթներորդ՝ Բաղդատութիւն սամփսոնի և *տեառն* **լե** գլխով: - 412. Տասներորդ, Բաղդատութիւն սաւուղայ և *տեառն* **ժ** գլխով: - 412. Ութևժ, Բաղդատութիւն դաւթի և *տեառն* **ծ** գլխով: - 413. Քսանևմի, Բաղդատութիւն սողոմոնի և *տեառն* **լ** գլխով: - 413. Նա՛խ՝ զի մարդն *տէ՛ր* է և թագաւոր. և անասունքն ծառայ ընդ անգաւոր *տէրանց*. և ծառայքն պատուհասին. որպէս առ ջրհեղեղաւն: - 416. Վեցերորդ՝ զի թէ լինի անկարօտ գող և զրկօղ, ընդ *տեառն* իւրոյ կորուսանէ և զինչսն...: - 416. Նա՛խ՝ զի *տէր* ինքն էր բաժին նոցա. և զամենայն իրաւունս ի քահանայսն տային: - 417. Եւ *տէր* մեր զնորս հեթանոսաց անջինջ գրեալ օրէնս ի սրտի: - 417. Եւ *տէր* մեր զառաքեալս ընդ ծագս. որք համբաւեցին մեզ զյաղթութիւնն սատանայի և դժոխոց: - 417. Եւ *տէր* մեր խաչիւն զքնութիւնս ի տեղի իւր: - 418. Եւ *տէր* մեր զհաւատացեալս իւր հանեալ ի մեղաց շինեաց սեղան և եկեղեցի սուրբ. և զմեղս երկոտասան անդամոցն ընկղմեալ կորոյս: - 418. Եւ *տէր* մեր վիմով հաւատոյն զսիրտս քրիստոնէից: - 418. Եւ *տէր* մեր աւերեաց զամուրս դժոխոց զմահ և զմեղք, և ապա՛ յերկինս հանեալ և անմահացոյց: - 418. Եւ *տէրն* զեկեղեցիս խաչիւ և արեամբ: - 418. Եւ *տէրն* կորոյս զիսրայէլ ազգօք. և փոխանակեաց իւր ժողովուրդ զհեթանոսս օրինօք: - 418. Եւ *տէրն* մեր նորէ՛ մեղաւորաց աստ ի կեանս և յետ մահու գիշերի. և ի ծագել լուսոյ յարութեանն՝ ստուգութեամբ դատապարտէ՛: - 418. Եւ *տէրն* մեր կանգնեաց զխաչն ի գողգոթայ մինչև յերեկոյ և վանեաց զքշնամին մեր: - 418. Եւ *տէր* մեր զգլխաւորն սատանայի բևեռեաց ընդ խաչափայտին: - 418. Եւ *տէր* մեր զապաւինեալ հեթանոս կորզեաց ի սրոյ յաւիտենական մահուն: - 418. Եւ *տէր* մեր ի ժամ խաչին խաւարեցոյց զնոսա և մի օրն եղև **բ**: - 418. Եւ *տէր* մեր խաչիւն կործանեաց զկուռս և զպաշտամունս նոցա: - 418. Եւ *տէր* մեր փրկէ զյուսացեալս իւր, որք պաշարին հնգիւք զգայութեամբք յիշխանացն դիւաց: - 419. Եւ *տէր* մեր նախ կապեաց զհզօրն ի խաչին և զտունն նորա աւերեաց որ էր ամրոց դժոխոցն: - 419. Եւ *տէր* մեր յաղթեաց իշխանին դիւաց. և եհատ զնորայն բռնութիւն աջոյ. և զոմանս եթող ձախիւ թիւրելոյ և զընտիրս որոշելոյ: - 419. Եւ *տէր* ծածուկ տնօրէնութեամբն գործոց յաղթեաց բանսարկուին: - 419. Եւ այն զի քամեալ լցաւ կուրն և ո՛չ երկիր. զի մնացին և կատարեցան բանք մարգարէիցն ամենայն և ո՛չ եղծան. իսկ յետոյ հոգի *տեառն* ելից զտիեզերս մարգարէութեամբ և շնորհօքն քրիստոսի: - 421. Այլ ո՛չ այսպէս. զի ե՞րբ եկաց և մնաց ընդ արև, կամ յառաջ քան զլուսին սողոմոն. այլ *տէրն* նորա: - 421. Արին Սամփսոն բազում բաղդատութեամբ խորհուրդ և օրինա՛կ է *Տեառն* մերոյ ամենազօր փրկողին: - 421. Եւ *տէրն* մեր արեգակն արդարութեան ծագեաց երկիւղածաց իւրոց և փրկութիւն ժողովրդեանն իւրոյ: - 421. Եւ *տէր* մեր լրումն աւետեաց ուխտին նախահարցն. և

նախ քան զսկիզբն աշխարհի ուխտի աւետեաց մարդկան փրկանաց: - 422. Հինգերորդ՝ օրհնեալ ի *տեառնէ* մանուկն սամփսոն, և հոգւով զօրութեամբ շրջէր: - 422. Նշանակ եօթնարփեան հոգւոյն ընկալեալ անկարօտաբար իբր ի գլուխ *տէր* մեր, և պարգևեալ անդամոց իւրոց: - 422. Եւ *տէրն* զոսոխն մեր սատանայ իբր զառիւծ պատառօղ՝ տարածմամբ ձեռաց ի խաչին սատակեաց: - 422. Եւ *տէր* մեր ի սպանօղ մարմնոյս որ է՛ պատառօղ հոգւոյս, սպանելով զսա՛ գտանէր զքաղցր կեանս տալ որդւոց մարդկան ազգի: - 422. Եւ *տէր* մեր զհայր ի յերկինս և զմայր ի յերկրի քաղցրացոյց փրկութեամբ մարդկան: - 422. Եւ *տէր* մեր հաճեցաւ լինիլ մարմին ի մարդկան ազգէ: - 422. Եւ *տէր* մեր մերժեաց զհրէայս և ժողովեաց զհեթանոս որ էր աղքատ ի բարեաց: - 422. Եւ *տէր* մեր զզարդ և զպսակ անկելոցն խոստացաւ մեզ և ետ: - 422. Թողին և հրէայք *զտէր* մեր և հաւատան նեռին և ի հուր նորին այրեսցին: - 423. Եւ *տէր* մեր յաշխարհ էջ և ի դժոխս: - 423. Եւ *տէրն* ի մէջ գիշերի զդրունս և զնիգս դժոխոց խորտակեալ յարեաւ ի գերեզմանէն. և զհոգիս մարդկան էհան յերկինս: - 423. Իսկ *տէրն* մեր զմարմին և զհաւատացեալս իւր ապրեցոյց յիշխանէն այլազգեացն դիւաց: - 423. Եւ *տէր* մեր հրդեհեաց զգործս հեթանոսաց արուեստաւոր հնարիւք իւրոցն հետևողաց: - 423. Եւ *տէր* մեր ի նոյն այրին յազգէ նոցին ըմբռնեալ. և ի զինաւորս պիղատոսի մատնեալ: - 423. Եւ *տէր* մեր յեօթն տեղւոջ է ծաղանօք երիցս կապեալ: - 423. Եւ *տէր* մեր խաչիւ և մարմնով զբովանդակ թշնամիսն կործանեաց: - 423. Եւ *տէր* մեր էա՛ռ զնոյն և սրբեաց և նովաւ զամենայն հրաշագործեաց: - 423. Եւ *տէր* մեր մարմնով զպատերազմն վանեալ. և նոյն մարմնով մեզ կեանս բղխեալ: - 423. Երեսուներորդ, ի *տեառնէ* յաջողեալ զօրութեամբ ծնօտին, և նովաւ զօրացեալ մեծ ծարաւն սամփսոնի: - 423. Եւ *տէր* մեր զխորհրդոց և զգործոց՝ և յետոյ զպատիժն մեղաց ջնջէր: - 424. Եւ *տէր* մեր զսկզբնական և զներգործական մեղսն: - 424. Եւ *տէր* մեր մահուամբ առաւել կորոյս զթշնամին, որ քան ի կեանս գործով հրաշից: - 424. Գիտելի՛ է, զի որպէս զօրութեամբն սամփսոնի՝ *տեառն* զօրութիւնն նկարեցաւ: - 424. Չորրորդ՝ նշանակ իմանալւոյն դագոնայ, որ զգլուխ իւր ամբարձ ընդ դէմ աստուծոյ. և ընդ բռամբ էարկ և կոխեաց զմարդկային ազգ. զորս խորտակեաց *տէր* մեր: - 426. Սաւուղ առաջին թագաւոր, բաղդատի ի *տէր* մեր: - 426. Նա՛խ՝ որպէս սաւուղ ի խնդիր իշոյ ել և թագաւորութիւն եգիտ. և *տէր* մեր մարդկան ազգի որ հաւասարեաց անբանից, և թագաւորեաց մեզ: - 426. Երկրորդ՝ անցեալ ընդ լերամբ և ո՛չ գտեալ. մինչև առ տեսանօղն եկեալ. և *տէր* մեր էանց զլերինս հրեշտակաց և եկն ի մարգարէս. և նոքա աւետեցին զգիւտն գ օրեայ կորստեան իշոյն...: - 426. Երրորդ՝ նա՛ ի կրտսեր ազգէ բենիամենի թագաւորեաց ամենայն իսրայէլի. և *տէր* մեր յազգէ մարդկան կրտսերաց առեալ մարմին և թագաւորեալ ամենայն զօրութեանց երկնից: - 426. Չորրորդ՝ նախ օծաւ ծածուկ, և ապա՛ յայտնի ի գաղգաղայ. և *տէր* մեր նախ օծաւ յարգանդի, և ապա՛ ի յորդանան ի յովհաննէ: - 426. Վեցերորդ՝ զնա վկայէ՛ բարի և լաւ և անձնեայ ի մէջ իսրայէլի. և *տէր* մեր բարի և ընտրեալ ի մէջ բիւրաւոր արարածոց: - 426-427. Եօթներորդ՝ կոչի սաւուղ, որ է՛ ընտրեալ հայցումն. և *տէր* մեր հայցումն և ակնկալութիւն է ամենայն արարածոց: - 427. Ութերորդ՝ նա՛ ուսովք էր բարձր քան զամենայն մարդ. և *տէր* մեր ո՛չ միայն աստուածութեամբն որ գլուխ է, այլ և չարչարանօք իւր՝ գերագոյն և բարձրագոյն ցուցաւ. զի փրկեաց զամենայն: - 427. Իններորդ՝ յետ է աւուր կորոյս *զնաաս* խռովարար, որ բրէր զաջոյ ակն իէլի. և *տէր* մեր զխռովարար բանսարկուն, որ բրէ՛ զակն իմացականին մարդոյ...: - 427. Տասներորդ՝ յետ որոյ հնազանդեցան նմա՛ ամենայն իսրայէլ. և *տեառն* մերոյ զկնի խաչին հաստատեցան ի հաւատս...: - 427. Օրհնեա՛ անձն իմ զտէր. *տէր* աստուած իմ մեծ եղեր յոյժ: - 630. Չորրորդ՝ զի թէ սամուէլ էր որ ասաց թէ՝ *տէր* հեռացաւ ի քէն, և այս ո՛չ է մարգարէութիւն. զի կրկնեաց զիւր բանն...: - 430. Ա՛յն է որ կաղք և կոյրք ընդ դէմ դարձան դաւթի և անարգանօք ասէին՝ մի՛ մտցէ դաւիթ ի քաղաքս. որ նա՛ ինքն է երեսուղէմ. որ եղև տուն *տեառն:* - 431. Երրորդ՝ զի *տէր* գրգռեաց զնա որպէս զնաթան: - 433. Վեցերորդ, լռեաց՝ զի *տէր* հատուսցէ բարիս ընդ այնր որպէս եղև: - 434. և *Տէր* մեր բոլորովին եղև երկրորդ ադամ: - 434. Երրորդ՝ ջուր բեթլէհէմի է՛ *տէր* մեր. որ զծարաւս մեր զովացոյց: - 434. Որ և դաւիթ *տեառն* նուիրեաց զջուրն զայն: - 434. Որ օրինակաւ ակնարկէ՛ ի *տէր* մեր ի մարդացեալ բանն. որոյ գործք ձեռացն արդարութիւն և իրաւունք են: - 435. Նա՛խ՝ զի որդի է յեսսեայ. որ է՛ պտուղ կղզւոյ. և *տէրն* մեր եղև պտուղ մարիամու ցամաքեալ ի խոնաւութեանց կենցաղոյս: - 435. Երկրորդ՝ կոչի դաւիթ որ է՛ սիրեցեալ և բաւական ձեռօք. և *տէր* մեր սիրեցեալ ի հօրէ և ի մարդկանէ իբր զորդիս մի եղջերոյ...: - 435. Երրորդ, նա՛ հովիւ հօտից. և *տէր* մեր հովիւ կոչեցաւ իմանալեացն վերնոց և մարդկան մոլորելոց: - 435. Չորրորդ, ի հովւութենէ օծաւ թագաւոր և *տէր* մեր նա՛խ քարոզեաց, և ապա՛

ժողովեաց. և տիրեաց յերկինս և յերկրի: - 435. Հինգերորդ, նա՛ փոքր և կրտսեր եղբարցն. և *տէր* մեր երկրորդ ադամ. և փոքրիկ կոչեցաւ քան զհրեշտակս և առաւել պատուեցաւ: - 435. Եօթներորդ, զառաջինն օծաւ ի բեթլէհէմ. և *տէր* մեր ի ծնունդն կոչեցաւ օծեալ ի հրեշտակին: - 435. Ութերորդ, ի ձեռն սամուէլի և իւղով օծաւ. և *տէր* մեր ի հօրէ օծաւ և հոգւով սրբով: - 435. Մետասաներորդ, ի բերանոց գազանաց կորզէր զհօտս. և *տէր* մեր փշրելով զժանիս մեղաւորին, կորզեաց զհաւատացեալս իւր: - 436. Երկոտասաներորդ, եթող զոչխարսն ի տուարածսն. և *տէրն* զիննսուն և զինն յանապատին: - 436. Երեքտասաներորդ, եհար զգողիաթ զնախատիչն իսրայէլի. և *տէրն* զսատանայ նախատիչ մարդկան ազգի: - 436. Չորեքտասաներորդ, ցպով և պարսաքարով ել ընդ դէմ գողիաթու. և *տէր* մեր խաչիւ որ վէմ կոչեցաւ, և ի ձայն բարձր աղաղակեաց և արձակեաց զհոգին: - 436. Վեշտասաներորդ, դարձեալ **խ** օր արձանացաւ գողիաթ և *զտէրն* **խ** օր փորձեաց սատանայ: - 436. Ութևժ, զօրացաւ դաւիթ անուամբն աստուծոյ. և *տէր* մեր զօրութիւն է հօր աստուծոյ: - 436. Իննևժ, սրովն գողիաթու սպան զնա. և *տէր* մեր սրով մահուան սպան զիշխանն մահու: - 436. Քսանգ, զօրավար կարգեցաւ դաւիթ. և *տէր* մեր գլուխ զինուորաց եկեղեցոյ: - 436. Քսանևե, այսն չար խեղդէ՛ր զսաւուղ. և նոյն այսն զորդիսն սաւուղայ յաւուրս *տեառն:* - 436. Քսանևը, ձգեաց սաւուղ զգեղարդն դաւթի, եհար զորմն և ապրեցաւ դաւիթ. և որդիքն սաւուղայ հարկանել ետուն ըզկողս *տեառն* և ո՛չ վնասեցին աստուածութեան նորա: - 436. Երեսուննմի, գիշերի ընդ պատուհանն ել, թողեալ զպատանսն յանկողնի. և *տէրն* ի գիշերի յարուցեալ եթող զկտաւն ի գերեզմանին կնքեալ: - 436-437. Երեսունբ, յետոյ առ սամուէլ ի նաւաթ գնացեալ և հոգի աստուծոյ խաղացեալ. և *տէր* մեր առ հայր ի յերկինս ելեալ, և յառաքեալսն զհոգին առաքեալ: - 437. Երեսունևդ, դաւիթ թաքեաւ գօրեայ առ վիմին. և *տէրն* գօրեայ ի գերեզմանին: - 437. Երեսունևե, հաստատեաց զուխտն առ յովնաթան և մելքօղ. և *տէրն* եղբարց իւրոց և եկեղեցւոյ...: - 437. Երեսունևէ, զհաց սրբութեանն բաշխեաց մանկանցն. և *տէրն* զհացն սուրբ և երկնային հաւատացելոց: - 437. Երեսունևթ, դաւիթ այլակերպեցաւ ի մէջ այլազգեաց. և *տէրն* անարգեցաւ ի խաչին: - 437. Քառասուներորդ, սաւուղ բազում անգամ խնդրէր զդաւիթ և ո՛չ կարէր ըմբռնել. և որդիքն սաւուղայ *զտէրն*. զի ո՛չ էր հասեալ ժամ նորա: - 437. Այլ և դաւիթ եգիտ զսաւուղ և զզօրսն նորա ի քուն և ո՛չ վնասեաց. այլ զզէնն էառ. և *տէրն* ո՛չ կամի զմահ որք ննջեն ի մեղս. այլ զպատճառ մեղացն հանէ: - 437. Դաւիթ պաշարեցաւ յայրին. և *տէրն* մեր ի դժոխս և քակեաց զնա՛: - 437. Դաւիթ չորս ամ բնակեցաւ ի գէթ մինչ մեռաւ սաւուղ. և *տէր* մեր յեգիպտոս՝ մինչ մեռաւ հերովդէս: - 437. Դաւիթ եհար զամաղէկ որ գերեաց զիրէայս և զայլազգիս. և *տէր* մեր եհար զգերիչն հրէից և հեթանոսաց: - 437. Այլ և օրհնութիւն բաշխեաց յաւարէն ամենայն ծանօթից. և *տէրն* առեալ աւար բաշխեաց պարգևս որդւոց մարդկան: - 437. Դաւիթ երեսնամեայ թագաւորեաց. և *տէր* մեր լամեայ մկրտեցաւ և ի գերեզմանէն յարեաւ: - 437. Դաւիթ լգ ամ թագաւորեաց. և *տէր* մեր մարմնով ի վերայ երկրի: - 437. Թագաւորեաց նախ է ամ ի վերայ յուդայ, և ապա ամենայն իսրայէլի. և *տէր* մեր յեօթն դարույս թագաւորէ՛ հաւատացելոց...: - 437. Քառասուն ամ թագաւորեաց դաւիթ, որ է չորիցս ժ. և սկիզբն և կատարումն ամենայնի է՛ *տէր* մեր: - 437. Դաւիթ արար զողորմութիւն կաղացն և կուրացն յեբեսացոց. և *տէր* մեր բժշկեաց զկաղս և զկոյրս որ «որդի դաւթի» աղաղակէին: - 438. Դաւիթ էառ զերուսաղէմ և շինեաց իւր տուն. և *տէրն* զվերինն երուսաղէմ, և ետ իւրայնոցն զխաղաղութիւն: - 438. ...և *տէրն* մարտեաւ ընդ բելիարայ և յաղթեաց մահու...: - 438. Դարձեալ հալածեցաւ յաբիսողոմայ. և *տէրն* յորդոց ժողովրդեանն իւրոյ: - 438. Դաւիթ յետ յերկուց ամաց ետես զաբիսողոմ. և *տէրն* զմեղաւորս յետ ապաշխարութեան հոգւոյ և մարմնոյ...: - 438. Խորհի ակիտոփէլ չար վասն դաւթի և խեղդի. և յուդա վասն *տեառն* խորհեցաւ և խեղդեցաւ: - 438. Հետիոտս փախեաւ և ծածկեալ գլխով. և նոյնպէս *տէրն* ի խաչին: - 438. Դաւիթ երիցս սուգ էառ մեռելոյ. և *տէրն* ի վերայ երուսաղէմի և ի գերեզմանն ղազարու և մերձ ի խաչն: - 438. Դաւիթ հալածեալ ի սաւուղայ և յաբիսողոմայ. և *տէր* մեր յանհաւատից և հերձուածողաց: - 438. Եօթանասուներորդ, յերիս առաջս զօրօք յաղթեաց թշնամեաց. և *տէրն* մարմնով և հոգւով և աստուածութեամբն յաղթեաց: - 438. Այլ և դաւիթ անյիշաչար եղև սիմէի նախատչի. և *տէրն* խաչողաց իւրոց աղօթէր: - 438. Յաղթեաց դաւիթ հնգից հսկայիցն. և *տէրն* մեր իշխանացն զգայութեանց: - 438. Դաւիթ ծարաւեալ ջրոյն բեթլէհէմի ծնիցելոյն ի կուսէ. և ծարաւեալ *տէրն* ի խաչին փրկութեան մարդկան ազգի: - 438. Դաւիթ կանգնեաց սեղան և դարձոյց զսուր հրեշտակին. և *տէր* մեր զսեղան խաչին զենմամբ պատարագին ի փրկանս և ի կեանս աշխարհի: - 438. Այլ և գոհացաւ ի վերջոյ ի վերայ ամենայն յաղթութեանցն. և *տէր* մեր ի վերայ ամենայն

ներգործութեանցն. որ և ամենայն օրհնութիւնքն ի *տէրն* ակնարկէ. որ եղև գլուխ հեթանոսաց. յաղթեաց մահու և բարձրացաւ ի գերեզմանէ: - 438. Զի թշնամեաց *տեառն* սատակումն՝ արդարութիւն էր նոցա: - 439. Եւ ինչ ոչ գոյր ի հրէիցն, բայց միայն սողոմոն. որոյ հրամանաւն շինեցաւ ի տիպ հեթանոսաց եկեղեցւոյ զոր շինելոց էր *տէր* մեր: - 440. Եւ *տեառն* մերոյ ասէր հայր՝ «դա՛ է որդի իմ սիրելի ընդ որ հաճեցայ»: - 440. Եւ *տէր* մեր արար խաղաղութիւն յերկինս և երկրի: - 440. Եւ *տէրն* զկործանեալ բնութիւնս կանգնեաց: - 440. Եւ *տէրն* զեկեղեցի տաճար աստուծոյ կենդանոյ: - 441. Եւ *տէր* մեր յերկրի մարդացաւ, և յերկինս թագաւորեաց. իսկ նստիլն ի վերայ ջորոջ, որ է խաչն. զի վիրք զխաչն ջուարի կոչեն: - 441. Եւ *տէրն* զզղջացեալն փրկէ, և զանզեղջսն կորուսանէ: - 441. Եւ *տէր* զչարագործս և զհերձուածօղս սատակէ՛: - 441. Եւ *տեառն* մերոյ առաքեալք: - 441. Եւ *տէր* մեր զամենայն առակս խօսէր ընդ ժողովրդեանն. և առանց առակի և ո՛չ ինչ: - 441. Եւ *տէր* մեր զեկեղեցիս ասէր քարոզել և մկրտել: - 441. Եւ *տէրն* զբազուկս ի վերայ խաչին: - 441. Եւ *տէրն* վասն հեթանոսաց աշխարհի: - 441. Եւ *տեառն* մերոյ տուաւ ամենայն իշխանութիւն յերկինս և յերկրի: - 442. Եւ *տեառն* մերոյ կրկնի ամենայն ծունր յերկինս և յերկրի: - 442. Եւ *տեառն* մերոյ ի հեթանոսաց փառք և մեծութիւն. որ նստի յանզուգական աթոռ դատողութեան **բժ**ան թագաւորօք դատել զամենայն: - 442. Նա՛խ՝ զի միայն մասին աշխարհի և սակաւո՛ւց էր *տէր* իսկ քրիստոս ամենայնի: - 442. Ծեր մարգարէն որ դարձոյց զնա, արեան *տէ՞ր* է թէ ոչ: - 443. Դարձեալ խրատէ՛ զառաքեալս ի գործ ինչ՝ բոլոր և ամբողջ բերել առ *տեարս* իւրեանց. և նոքա մասնաւորեսցեն նոցա: - 443. Ա՛յս է խորհուրդն. զի *տէր* մեր նախ երևեցոյց զդատողութիւնն...: - 449. Քսանն**դ**, Վասն թլփատութեան *տեառն* **ծ** պատճառաւ: - 454. Մկրտութիւնն յովհաննու և *տեառն:* - 454. Երեսունն**ա**, Վասն համբարձմանն *տեառն:* - 455. ...իսկ Աննա ամուսնացաւ ի գալիլեայ ընդ յովակիմայ. և ծնաւ զաստուածածինն մարիամ ի պրոպատիկէ ի տունն յովակիմայ. և անտի տարեալ եղև ի տաճարն *տեառն:* - 460. Իններորդ՝ զի մի՛ երևեսցի *տէրն* հակառակ օրինացն որ գովէր զպսակն: - 461. Զբառս զայս ընդունելութեան դնէ՝ ընդ քեզ. այսինքն *տէրն* յետ ծննդեանն ընդ քեզ յաւիտեանս յաւիտենից...: - 464. Եւ նոյն է *տէրն* և աստուածն գոլ. ապա ուրեմն կոյսն սուրբ մայր է *տեառն* և աստուծոյ: - 466. Ա՛րդ՝ ծնեալն *տէր* ծնեալ է ի կուսէն. ապա ուրեմն կոյսն տիրամայր է և աստուածածին: - 466. Իններորդ՝ վասն հաստատ ժառանգութեան խոստացելոյն. զի մի՛ ասիցէ ոք ցհայր, *տէր* դու ունիս որդի և ժառանգ: - 468. Դարձեալ՝ մարդեղութեամբն *տէրն* եղև ծառայ: - 470. Զի յղացումն *տն* ո՛չ եղև ի սերմանէ առն: - 470. Է՛ և այլ եղանակ ծննդեան *տն* բաղդատութեամբ առ մովսէս ասացեալ ի վերոյ ի **ի** գլուխն, ի **իգ** համարն: - 472. Եւ *տեառն* մերոյ ո՛չ էր լինելոյ. ոչ հիւանդութիւն և ո՛չ ծերութեան փոփոխումն: - 480. Ա՛րդ՝ *տէր* մեր ո՛չ արար մեղս, և ո՛չ էառ զդատապարտութիւն մեղացն: - 480. Չորրորդ՝ որպէս արու բռնացա՛ւ *տէր* ի քակել զօրէնս բնութեան. և խզեաց զկապ կուսանաց և զմայրական. այսինքն զի որ մա՛յր է՝ կոյս ո՛չ է. և որ կոյս է՝ մայր ո՛չ է: - 480. Արդ զգիրն ադամայ պարտուց՝ *տէրն* որդի եղև նմա և անմեղ մահուամբն տարածեալ զձեռս ի խաչին պատառեաց ասելով, նա մեղաւ և մեռաւ. ես զինչ մեղայ. դո՛ւ ես պատճառն: - 482. Եւ որպէս կարգեաց *տեառն* եղբայրն յակոբոս զընթերցուածն. և ի նմին աւուր զերկու տօնս: - 482. Այլ մեզ այսպէս իմանալի է. զի թշրինի մէկն նուիրեալ օր սուրբ *տեառն* կոչեսցի ասացաւ. որ է՛ սեպտեմբերի **ժը**: - 483. Երեքտասաներորդ՝ ականատես տնօրէնութեանն եղբայր *տեառն* յակոբոս որ կարգեաց զընթերցուածն, յունվարի վեցն աւանդեաց զտօնն ծննդեանն. և ի նոյն օրն դարձեալ զմկրտութեանն: - 484. Իսկ *տէրն* մեր էր անդրանիկ ի հօրէ և անդրանիկ ի մօրէ. և անդրանիկ շնորհաց և արդարութեան. և անդրանիկ յարութեան մեռելոց. վասն որոյ անդրանկապէս ընկալաւ զօրէնս թլփատութեան: - 486. Երրորդ «առ յովհաննէս». այսինքն *տէրն* առ ծառայն, թագաւորն առ սպասաւորն, արեգակն առ արուսեակն: - 487. Հինգերորդ՝ մկրութիւն *տեառն* այն որ ինքն մկրտեցաւ. այլ մկրտիմք և մեք զկատարեալ մկրտութիւն *տեառն* ջրով և հոգւով: - 488. Երկրորդ՝ ի յանդիմանութիւն խաչողացն. զի լուսաւորքն տեսեալ *զտէրն* իւրեանց մերկացեալ, պատկառեցին և քօղ արկին զխաւարն: - 490. Իսկ չորրորդն է՛ պատարագ *տեառն* մերոյ քրիստոսի որ ի մի դէմ անձնաւորութեան **գ** երես պատարագին բացայայտեցաւ. այսինքն մեծ գոլ մատուցօղն և ընդունօղն և պատարագն: - 491. Յիրաւի ապա *տէր* մեր զգին արեանն ի հայր ետ. թէպէտ սատանայ էր գերեալ և չարչարէր զմարդիկ: - 492. Նա՛խ՝ քառադէմ կառքն եզեկիէլի, և *տէր* բազմեալ ի վերայ: - 494. Այլ և սանդուղքն յակոբայ և *տէր* հաստատեալ ի նմա: - 494. Այլ զանազանութիւն գոյ ի մէջ մահու նախաստեղծ մարդոյն, և մահու *տեառն* մերոյ քրիստոսի, և մահու հասարակ մարդկայինս ազգի: - 495. Իսկ *տէր* մեր ի մարդեղութեան

իւրում յայսցանէ եկամուտ կրից միայն զմահն կրեաց. իսկ զմեղս և զապականութիւնս ո՛չ կրեաց: - 496. Այսպէս և *տէր* մեր նմանեաւ, որպէս անիծիւք զանէծս՝ և մահուամբ զմահ եբարձ. իսկ հակառակաւն՝ անապական և անմեղ մարմնովն զմեղս և զապականութիւն ելոյծ: - 498. Երկրորդ՝ ապականութիւն և մեղք ո՛չ է գործ արարչի. այլ մեղանչականին ադամայ և արկածք բանսարկուին. վասն որոյ *տէրն* զարկուածս բանսարկուին ո՛չ հպեցոյց ի մարմինն իւր. ապա ուրեմն անապակա՛ն է մարմինն *տեառն:* - 498-499. Եւ թէպէտ ասացաւ ճշմարիտն թէ անապակա՛ն է մարմինն *տեառն,* այլ այժմ դիցուք զբանս նոցա թէ վասն է՞ր ասեն ապականացու. և յարմարեսցուք զպատասխանիսն: - 500. Դարձեալ ասեմք ըստ ձեզ, թէ յետ խաչին յապականութիւն փոխեցաւ մարմինն *տեառն*, ապա յառաջ քան զխաչն կատարեալ էր զի ապականացո՛ւ էր. և յետ խաչին անկատար զի անապական եղև որպէս դուքդ ասէք: - 500. Եւ *տէրն* ի մարդեղութեանն զկամաւո՛րն կրեաց յինքեան և ո՛չ զակամայն. զի ո՛չ էր ի ներքոյ հարկի և ծառայութեան բնութեան որպէս մեք. այլ *տէր* և ազատ յամենայն կրից: - 501. Իսկ *տէր* մեր զի էր աստուած մարդացեալ՝ ո՛չ ունէր ակամայ կիրք. այլ զկամաւորն: - 502. Եւ դարձեալ ասեմք. *տէրն* մեր՝ մարդեղութեամբն եկն զապականութիւն մեր յանապականութիւն փոխարկել. և զիա՞րդ ինքն կրէր զապականութիւն: - 502. Զի ապականացու զապականացու մաքրել ո՛չ կարէ. այլ անապական մարմնովն եղև մաքրիչ *տէրն* մեր ապականութեան մերում: - 502. Դարձեալ ասեն նոքա, զի թէ մարմին *տեառն* զկամայն ո՛չ կրէր, թերեկատար էր մարդեղութիւնն: - 502. Եւ *տէրն* ի մարդեղութեան իւրում ընկալաւ զոր ինչ բնականն էր մարդոյս բնութեան. և ոչ զեկամուտ անասնականն: - 502. Նոյնպէս և ո՛չ *տէր* մեր: - 502. Իսկ *տէր* մեր ի մարդեղութեան իւրում՝ զակամայն ո՛չ կրեաց. զի հա՛րկ է և ծառայական: - 502. Աւա՜ղ անբան մտահաճութեան նոցա. որք զմիայն *տէրն* ուրացեալ, ածեն ի վերայ ինքեանց զարագահասն կորուստ: - 503. Վասն է՞ր հոգւովն էջ ի դժոխս *տէրն* մեր քրիստոս: - 503. Հինգերորդ՝ զաղամաստեղծ ձեռս իւր տարածեաց *տէրն* ի վերայ խաչին. և արտաքս ընկէց զչար իշխանն. և կորզեաց զմարդիկ յիշխանութենէ նորա: - 503. Որ և անդ ժամանեաց *տէրն* և կապեաց զհզօրն. և զկարծրացեալ ամրոցն աւերեաց. և կողոպտեաց ի նմանէ զհոգիսն մարդկան որ յադամայ հետէ ընդ բռամբ ունէր: - 503. Որ և զերկոսինս զայսոսիկ խորտակեաց *տէր* իջմամբն առ նոսա: - 504. Այլ ա՛րդ՝ *տէրն* մահուամբ զմահ մեռոյց որ է՛ դժոխքն այժմ. և յարութեամբն եբարձ զապականութիւն մարմնոյ ի հանդերձեալն. ապա ուրեմն աւերեաց զդժոխս: - 506. Վասն այն յերկարեցի, թէ ոք հակառակի՝ այսպէս պատասխանեսցես նոցա. և զեղկելի անձն իմ յիշեսցես ի *տէր* ուղղակից եղբայր իմ ի քրիստոս: - 511. Նոյնպէս ըստ օրինակին արար *տէր* մեր զատիկն յերեկոյի մեծի **ե** շաբաթին. և ի մէջ գիշերին յորում ըմբռնեցաւ՝ եհար զանդրանիկսն դիւաց: - 513. Եւ որպէս դարձաւ ժողովուրդն ի հանգրուանն առաջին, և *տեառն* մարմինն եդաւ ի հող երկրի: - 513. Յորում աւուր կիրակէի ի մէջ գիշերի ընդ առաւօտն յարեաւ *տէրն* ի գերեզմանէն...: - 513. Ութերորդ՝ արին սամփսոն որ օրինա՛կ էր ամենազօր *տեառն* մերոյ, էջ ի գազա ի տիպ աշխարհի...: - 513. Այսպէս և որդիքն սաւուղայ հարեալ նախանձու բևեռեցին *զտէրն* և խոցեցին նիզակաւ. և պահէին զգերեզմանն: - 513. Եւ *տէրն* ի գիշերի ելեալ ի գերեզմանէն բաժանեաց և էառ զհոգիս մարդկան ի նմանէ. և արար իւր հանդերձ զսուրբ ժողովուրդ իւր: - 513-514. Այսպէս և *տէր* մեր էջ առ ննջեցեալսն ի գերեզմանս և ի դժոխս: - 514. ...և *տէր* մեր յետ յերից օրինաց՝ այսինքն բնական բանական և գրաւական՝ երևեալ ի գիշեր կենցաղոյս և իջեալ ի դժոխս աւերելով զնա դարձոյց զերկոսին ժողովուրդս իւր...: - 514. Չորեքտասաներորդ՝ այլ և ի գիշերի հրեշտակն *տեառն* էհան զզօրսն ռափսակայ. որ պաշարեալ էին զերուսաղէմ և փրկեաց զնոսա...: - 514. Եւ ոմանք ասեն թէ՝ երկու են մագդաղենացիքն. մինն գնաց և ի ճանապարհին ետես *զտէրն*. և միւսն եկաց և ի պարտիզին ետես: - 515. Ապա ո՞րպէս է **գ** տիւ և **գ** գիշեր թաղումն *տեառն:* - 516. Նախ՝ խորհրդաբար. ի **ե** շաբաթոջ աւուրն յերեկոյն թաղեցաւ ի սիրտ առաքելոցն ճաշակմամբ մարմնոյն. և յերեկոյի կիրակէին տեսին *զտէրն* յորժամ դրօքն փակելովք եմուտ առ նոսա: - 516. Վեցերորդ՝ մարիամ քոյրն ղազարու. որ էօծ *զտէրն* իւղով: - 517. ...և ինքն *տէր* մեր իբրև քահանայ նոր յամենայն ձեռաց պահէր զգուշութեամբ...: - 517-518. ...իսկ *տէրն* կամեցաւ ուսուցանել նմա զխոնարհութիւն՝ արգել զնա: - 518. Այլ ընդ *տեառն* մերոյ բազումք խօսակիցք եղեն և տեսին: - 522. Եւ *տէր* յորո՞ւմ տեղւոջ կատարեաց: - 526. Զոր *տէրն* օրէնք կոչեաց զմարգարէական բանն դաւթի...: - 528. Վասն որոյ նոր օրհնութիւն նորածին աստուծոյ և *տեառն* մատուցանեմք նոր ժողովուրդքս աստուծոյ: - 528. Երրորդ՝ ի լեառն ձիթենեաց տեսին *զտէրն* ելեալ յերկինս՝ երկրպագեցին նմա: - 528. Եւ հանապազ ի տաճարին գովէին և օրհնէին զաստուած նոր օրհնութեամբ համբարձելոյն ի յերկինս *տեառն* և աստուծոյ. որպէս կանխաւ

ասաց մարգարէն...: - 528-529. Յինգերորդ՝ զի խոստովանի ամենայն լեզու թէ *տէր* է յիսուս քրիստոս ի փառս հօր աստուծոյ բազմեալ: - 529. Իսկ կապելն ի դէմս մեղացն է և մեղսասիրաց. որպէս *տէր* մեր բևեռեաց զմեղս և զսատանայ ընդ խաչափայտին: - 540. Չորրորդ, առ նոյն թագաւորաւն զկնի **իդ** ամի եղև արժանաւոր ժողովն եփեսոսի ընդ դէմ եւտիգի. որ առ աչօք ասէր *զտեառն* մարդանալն: - 542. Եւ զդիաքեկ զմանկութեան *տեառն:* - 545. Ասեմք թէ՝ *տէրն* երկոտասան գունդս ասաց հրեշտակաց իւրաքանչիւր դասուց: - 546. Վասն որոյ և *տէրն* **բժ**ան թիւ ընտրեաց առաքելոցն, և ետ **բժ**ան աթոռ դատողական: - 546. Եւ զի ճշմարիտ վկայք են սոքա, և *տէր* մեր առ կուրացեալ հրէայսն...: - 551-552. Վասն որոյ և *տէրն* յորժամ ասաց զցանկութիւնն շնութիւն, յաւել ի վերայ թէ՝ «ի սրտի իւրում». զի մի՛ կարծեսցի մարմնական շնութիւն, այլ հոգէկան և մտաւոր. ապա ուրեմն կատարեալ է մեղք մտացն: - 556. Տե՛ս զի ո՛չ բանիւ և ո՛չ գործով էր, այլ միայն ի միտս ունէին և յանդիմանեցան ի *տեառնէ:* - 557. Ողջ լեր ի *տէր* ի պարծանս մեր: - 558. Չորրորդ՝ զբաժանեալքս միացնէ ի *տէր* և առ միմեանս: - 573. Իններորդ, զի մկրտութիւնն է գործ քահանայութեան. և քահանայութիւնն է ազատ և ո՛չ ընդ ումեք հարկի ներքոյ. իսկ կինն ծառայ և ոտք է առն. վասն այսր հարկի ո՛չ է պարտ ծառային առնել զգործ *տեառն:* - 589. ...բայց թէ ազատեալ լիցի *տեռան* կամօք. որպէս նեսիմոնս այն. իսկ թէ զայր որ ընդ ծառայութեամբ է՝ ո՛չ հրամայեցին հայրապետքն սուրբք գալ ի յաստիճան եկեղեցւոյ...: - 589. Եւ ասացեալ են գոյացականք մկրտութեանն ի վերոյ ի մկրտութիւն *տեառն* ի **իե** համարն գտցես: - 590. ...և առանց ցանկութեան մեղաց ո՛չ ոք կարէ ծնանիլ. բայց միայն *տէր* մեր որ առանց ցանկութեան ի կուսական արգանդէ ծնաւ՝ ո՛չ ունէր զմեղս սկզբնական: - 592. Դարձեալ՝ ընդէ՞ր ինքն *տէրն* հրամայէ ...: - 600. Յայս միտս և *տէր* մեր բաշխեաց զմարմինն և ետ առաքելոցն ի վերնատունն: - 600. Թէ կնոջ *տէ՞ր* էր յորժամ մեղանչեաց՝ թէ ազա՛պ էր: - 601. Իրաց *տէր* և անողորմ: - 601. Կնոջ *տէր* և պոռնիկ: - 601. ...ընդ բառնիլ մեղացն բարձաւ և պատիժ գեհեննին. որպէս *տէր* մեր եթող զմեղս անդամալուծին. և բարձան պատիժքն: - 603. Այլ և ի մկրտութեանն *տեառն* յաւուր յայտնութեան: - 604. Նաև *տէրն* կացոյց զայս կարգս. յորժամ ի լերինն զարքայութիւնն երկնից աւետարանեաց նոցա: - 606. Յինգերորդ, օրհնեմք զեկեղեցիս, զի օրհնութիւն վերնատանն ուր *տէրն* պատարագեաց, և հոգին սուրբ էջ յառաքեալսն...: - 615. Զի յառաւօտն մին խնկարկի ի տէր *եթէ* շրթունքն. և այն ևս **գ** անգամ պար առեալ. և մի յօրհնութիւնն ևս **գ** անգամ. և մի ի փառք ի բարձունսն ևս **գ** անգամ: - 618. ...վասն որոյ յայսմ ժամու սկիզբն է աղօթից բոլոր աւուրն. յորում ասեմք *զտէր* եթէ շրթունքն և զայլ սաղմոսսն ի դէմս հօր աստուծոյ: - 621. Եւ *տէրն* յայսոսիկ ժամս զգուշացոյց զմեզ արթուն կալ և աղօթել...: - 622. Արի *տէրն*, աղերս յարութեանն: - 628. Իսկ *տէր* երկնիցն, ընդ հրեշտակս օրհնաբանել զսուրբ Երրորդութիւնն. - 628. Եւ *տեառն* մերոյ սուրբ եկեղեցի. և վերջինն օրն է յաւիտենից: - 629. ...նոքա սիրեն *զտէր*. և զօրացեալ ի նմանէ՝ կոխեն զանմարմին թշնամին. որպէս ժողովուրդն զփարաւօն: - 629. Եւ անցեալ ընդ խորս չարեաց՝ օրհնեն *զտէր* և փառաւորեն: - 629. Իսկ չորրորդն, ողորմելիքս չորեքնիւթեայ բնութեամբ յուսասցուք ի *տէր* և երկիր պագցուք նմա. և այնու հաստատեսցին սիրտք մեր ի *տէր:* - 629. Այսպէս վեցերորդն ապաւինելով ի *տէր* խոստովան եղիցուք նմա...: - 629. Իսկ և եօթներորդն խոստովան լինիլ բարութեան և արդարութեան *տեառն*. և մերձիլ խնդրուածովք. և օրհնել զաստուած նոր օրհնութեամբ յետ աստեացս: - 630. Յինգերորդն հրոյ կիզումն և բարձումն ամբարշտաց. և ոմանց բժշկութեան ցօղ ի *տեառնէ* ցօղեալ: - 630. Օրհնեա՛ անձն իմ *զտէր*. տէր աստուած իմ մեծ եղեր յոյժ: - 630. Զի թէ մանկութիւնն է և թէ մեռանիլն, երկիւղի ժամանակ է. որպէս ծառայ ի *տեառնէ:* - 631. Զի այսպէս ասէ ներքտառիոս հայրապետն հռոմայ թէ՝ չէր հնար իջուցանել զմարմինն *տեառն* ի խաչէն վասն փայլատակմանցն ի խոցուածոյն: - 631. Եւ ի նոյն ժողովն ի փառք ի բարձունս, օրհնեալ *տէր* ուսո՛ ինձ զարդարութիւնս քո. **գ** անգամ: - 632. Զի՞նչ է որ ա՛յլ ազգք ի դէմս Երրորդութեանն ասեն. և վկայ ածեն զսերովբէսն **գ** սուրբ և մի *տէր* ասելովն: - 632. Այլ գիտելի՛ է, թէ սաղմոսն շարականաց որ **բժ**ան տուն է՝ զփառքն և զայժմն ի միասին երգեմք. որպէս զօրհնութիւնն, հարցն, ողորմեայն, *տէր* յերկնիցն: - 636. Զոռփսիմեանց անձինքն և զհարցն՝ *տէր* կումիտասն: - 637. Ծագեաց մեզ *տէր* եղջիւր ի դաւիթ: - 638. Նախ որպէս ձայնիւ եղանակաւ նման միմեանց. որպէս զողորմեայքն առ նոյն. և *զտէր* յերկնիցն առ նոյն: - 642. Դարձեալ՝ նախ զօրինակն, և ապա՛ զճշմարտութիւնն ուսանիմք աստ, և ապա՛ անդ անընդմիջաբար ի *տեառնէ*...: - 643. Ի խորհուրդ օրինացն. յորժամ էջ *տէր* ի սինա, փող և որոտ, հուր և ծուխ և այլն: - 644. Այսու մտօք և *տէր* մեր զհաւածեալսն ի յուրբաթու՝ բժշկէր ի շաբաթու: - 648. Վեցերորդ համբարձման *տեառն* յերկինս: - 649.

Եւ թէ ոք ասիցէ, *տէր* ամենակալն ի չորեքշաբաթի մտանէ: - 651. Վասն այն *տէր* ամենակալն ի մեծ կարգն սկսանի: - 651. Իսկ *տեառն* մերոյ քառասնիցն սկիզբն է երկրորդ շաբաթն, և կատարումն չարչարանք մեծի ուրբաթուն: - 651. Իսկ *տեարքն* բազմեալ ի հանգիստ վայելման: - 656. Եւ առաջին կանոնին՝ *տէր* տուրնջան. և որ այլ զհետ սոցա աղօթք և փոխք նոցունց: - 659. Ութերորդ՝ որպէս ողորմած նոյնպէս և արդա՛ր է *տէր:* - 663. Տասներորդ՝ ճանապարհ փառաց և երանութեան կոչի *տէր* մեր. զի առաջնորդէ՛ առ հայր...: - 666. Եւ ապա՛ ի կատարածի ի հուրն յաւիտենական տանջին ասէ *տէր:* - 667. Զի արդարոյն մահ՝ պատուակա՛ն է առաջի *տեառն* որպէս ասէ մարգարէն...: - 669. ...և ի համբարձումն *տեառն* ամպն կալաւ զնա յաչաց նոցա: - 674. Եօթներորդ, զի **գ** են հանգիստ և վարձք սրբոցն. որպէս ասէ *տէրն*. **ճ, կ,** և **լ**...: - 675. Այլ և գանձարա՛ն է մարմնոյն. զի պահէ՛, և դարձեալ ի *տէրն* տայ: - 678-679. Դարձեալ, ի տիպ պահապան հրեշտակին որ նստէր մի ի սնարից և մի յանոտից *տեառն* գերեզմանին. - 679. ...զի հրեշտակք խաչաձև երևեցան առ գերեզմանաւն *տեառն:* - 679. Յինգերորդ, զի և նախահարցն քարեայ էր գերեզմանն. աբրահամու. սահակայ. և յակոբայ. նոյնպէս և գերեզման *տեառն*. և կափարիչ վեմն...: - 679. Եւ տարի՛ է քրիստոս. և ամ *տեառն* ընդունելի. և **բժ**ան ամիսք առաքեալքն: - 683. Աղօթք նոցա ցանկութիւնն է նոցա. զի կամս երկիւղածաց իւրոց կատարէ՛ *տէր:* - 685. Եւ երթայ առ իւր *տէրն* հեշտութեամբ. և անդէն վաղվաղակի իբրև երևմամբ և տեսութեամբ իմն շահի զպտուղն առաջիկայ երանութեանց: - 691. Քսանևմի, և յառակս տնտեսին զոր կացոյց *տէր* ի վերայ ծառայիցն տալ կերակուր. զոր յետոյ *տէրն* եկեալ գտցէ այնպէս՝ երանի է ծառային այնմիկ. ապա թէ ոչ՝ ընդ մէջ կտրեսցէ: - 693. ...և աղաղակէին բարձր ձայնիւ՝ մինչ յե՞րբ *տէր* սուրբ և ճշմարիտ ո՛չ դատես և առնուս զվրէժ արեան մերոյ: - 694. Եւ մեկնիչն ասէ, աստուածապա՛շտ են որք խոստովանին զմեղս. զոր գիտէ *տէր* յայսմ աշխարհի փրկել առանց քաւարանի հրոյ: - 699. Իսկ թէ ժամանակեայ, ընդ դէմ ասէք աստուածային բանին. զի *տէրն* մի հուր ասաց. և զայն յաւիտենից...: - 700. Իսկ *տէրն* մեր անմեղ մարմնովն դատապարտեաց զնա իբր զպատճառ մեղաց...: - 705. Զի *տէրն* պղծութիւն կոչէ զնա և սուտ քրիստոս: - 707. Եւ յետ այսորիկ ի լեառն ձիթենեաց ուստի համբարձաւ քրիստոս՝ *տէր* իշխանութեամբ իւրով սպանցէ զնեռն: - 709. Եւ յետ այնորիկ ոչ առ ժամայն գայցէ *տէր* ի դատաստան. այլ տացի խաղաղութիւն աւուրս **խե**. առ ի հանգիստ սրբոցն և ի յապաշխարութիւն թիւրելոցն: - 709. Որոյ ընդ դէմ է աւետարանն որ առ սադուկեցիսն հրամայէ *տէր*...: - 710. Այսինքն զի աստուածք և *տեարք* կոչին յերկինս հրեշտակացն դասք, և թագաւորք յերկրի...: - 711. Նոյնպէս և զօրք հրեշտակաց և մարդիկ երկիր պագանեն սրբոց. վասն որոյ թագաւոր թագաւորաց են և *տէր տէրանց*...: - 711. Եւ *տէրն* վասն կերակրոյն ո՛չ ասաց թէ ի մարմին մարդոյն ո՛չ հաւասարի. այլ զայն թէ՝ դառնութիւն և ծանրութիւնն արտաքս ելանէ...: - 718. Ութերորդ, բարի և չար սերմանիքն ի միասին բուսանին և մնան մինչ ի հունձս. մանաւանդ մինչ ի կալն ըստ առակի *տեառն*...: - 721. ...այլ ա՛յս է՝ զի իւրաքանչիւր մարմինք սրբոց պայծառասցին էպատիկ քան զարեգակն. որպէս *տեառն* մերոյ ի թաբօր լերինն. և **թ** դասուց հրեշտակաց լոյսն յերկիր ծաւալին. զի զօրութիւնք երկնից շարժեսցին: - 728. Վասն որոյ *տէրն* գողոյ նմանեցուցանէ զմահն օրհասական: - 730. Զի որպէս փայլակն ելանէ յարևելից ի վերայ լուսեղէն ամպոյ, և քառաձև լուսովն լնու զչորս կողմ աշխարհի և հաստատի ի գողգոթայ յորում խաչեցաւ *տէրն:* - 732. Երևի՞ անդ փայտ խաչին յորում խաչեցաւ *տէրն:* - 732. Տասներորդ՝ զի զսա՛ ետ մեզ նշան *տէր* իւրոյ գալստեանն...: - 734. Ի մէջ գիշերի. յորում ժամու հրեշտակն զեգիպտոս եհար, և *տէրն* զդժոխս աւերեաց. յայն ժամու զընտրեալս իւր յաշխարհէ ազատեսցէ: - 734. Ո՞րպէս եկեսցէ *տէրն* ի դատաստան: - 734. Եւ եսայի ետես *զտէր* նստեալ յաթոռ բարձրութեան: - 736. Ուր ինքն *տէրն* խաչեցաւ և յարեաւ. և սոքա ամենեքեան ձոր յովսափաթու կոչին, որ յերկու ձորի մէջն է յերուսաղէմ: - 737. Ո՞րպիսի կերպարանօք երևի *տէրն:* - 740. Դարձեալ կշիռք արդարութեան առանձնապէս իմանի *տէր* մեր ըստ չորից: - 745. Ողորմութիւն *տեառն* է եռակի: - 747. Երկրորդ՝ ի ստեղծումն յարարչութեան բոլորից՝ ուրախ եղև *տէր* յարարածս իւր և յորդիս մարդկան ըստ սողոմոնի: - 748. Չորրորդ՝ ի վախճանի յորժամ հնազանդին նմա ամենայն և պսակէ զսուրբս իւր, ուրախ եղիցի *տէր* յարարածս իւր: - 748. Է՛ ուրեմն ասել, եթէ ոչ *տեառն* սաբաւովթ, այսինքն զօրութեանց, թողեալ էր մեզ սերմն առաքելօք և մարգարէիւք և այլովք սրբովք և վարդապետութեամբ աւետարանին, համերք և ի մեղս լինէաք խստացեալք: - 755. Եւ քանզի մովսէս որ ջրային կամ ի ջրոյ հանեալ թարգմանի. թէպէտ երբեմն զօրէնս և երբեմն *զտէրն* նշանակէ. այլ աստ ոչ զօրէնս, այլ *զտէրն* գուշակէ՛. որ ի ջուրց մարդկայինս բնութեան ընկալեալ եղև: - 756. Նա՛խ՝ զի առ նոսա միաւորեալ է քրիստոս իբր *տէր* ընդ

ծառայս. իսկ միաւորի ընդ եկեղեցի իբր փեսայ ընդ հարսին. և գլուխ ընդ անդամոց: - 757. Զի թէ և սակաւ ժամ լինի մնացեալ ի կենացն որ քան աւազակին ի յելս շնչոյն. և նա՛ յառաջ քան զամենայն արդարս եմուտ ի դրախտն աստուծոյ ընդ *տեառն:* - 758. Ո՞րպիսի լիցի օրն այն, մինչ քեզ մարիամ մայր *տեառն* ընդ առաջ ելանէ հանդերձ պարուք կուսանաց: - 764. Եւ երկոտասան պտուղ ըստ բժան գնդիցն ասացեալ ի *տեառնէ:* - 767. *Տէրն* զգանձն մատանեաւ դրոշմեալ տայ ի ծառայս. և մատանին ի ձեռին է. երբ խնդրէ՝ թերին յանդիմանի: - 769. Մօտ զտնօրէնութիւն *տեառն*. և հեռի զարարչութիւնն: - 769. Այսօր վերստին հրամայեաց հաւատացելոց իւրոց ճաշակել ի պտղոյն կենաց. և մնալ յաւիտեան և անմահ կենդանութեամբ ի քրիստոս յիսուս ի *տէր* մեր: - 771. Եւ մարգարէն երանէ զմարդ զոր խրատէ *տէր:* - 774. Իններորդ, զի բռնութիւն սատանայի էր կապեալ զնոսա. և *տէր* մեր կապեաց զնա ընդ խաչափայտին. որ նա ինքն էր դրունք դժոխոց. ապա ուրեմն արձակեցան անտի: - 777. Ասեմք թէ՝ յիրաւի, որովհետև երևեցաւ *տէր* մեր ի փրկութիւն ընտրելոց ըստ ամբակումայ, նախահայրն յաւիտեան. իսկ այլք ազատեցան ժամանակեայ: - 777. Եւ նոյն ինքն *տէրն* բոլորից վկայ քարոզութեան զգործս կատարէր. զի սովորութիւն է մարդկան քան զլուր լսելեաց տեսութեան աչաց հաւանիլ: - 785. Յաւանեացն *տեառն* շնորհք, և սխալանացն տկա՛րս անօրոյ: - 789. Միայն բարեսէր կամօք յիշատակ բարի առ քոյդ արձանագրեսցի ի *տէր:* - 789

***ՏԷՐ ՏԷՐ*** - Ուստի *տէր տէր* տայ ինձ լեզու խրատու և սիրտ ի ժամու: - 456. Որ եսդ *տէր տէր* հաւատարիմ յիսուս, անբաժանելի լեր ի զգայութեանցս. և յամենայն գոյացութեանց աստի իմոցս. ներկեալ խոստովանութեամբ և շնորհօք հոգի մարմին նիարդք իմ և անառք: - 771

***ՏԷՐ ՏԷՐԱՆՑ*** - Նախ՝ զի միեղէն է և հասարակ՝ գերադրականքն. որպէս գերագոյն աստուած. և *տէր տէրանց:* - 106

***ՏԷՐ ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍ*** - Երրորդ՝ զի ո՛չ մի որդի և *տէր յիսուս քրիստոս* խոստովանին որպէս ասեն առաքեալքն և հարքն սուրբք: - 66. Նոյնպէս և մի *տէր յիսուս քրիստոս* մի բնութեամբ էր աստուած, և եղև մարդ. հաւատացելոցն ի կանգնումն, և անհաւատիցն ի գլորումն: - 333. Տասներորդ՝ յետ որոյ հնազանդեցան նմա՛ ամենայն իէլ. և տեառն մերոյ զկնի խաչին հաստատեցան ի հաւատս. մանաւանդ յետ է դար կենցաղոյս ամենայն լեզու խոստովան լիցի *զտէր յիսուս քրիստոս* ի փառս աստուծոյ հօր ամէն: - 427

***ՏԷՐ ՄԵՐ ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍ*** - Դարձեալ ըստ սրբոյն կիւրղի՝ տապանա՛կ է *տէրն մեր յիսուս քրիստոս*. և անփուտ փայտն անապական մարմինն: - 345. Եւ զիարիւրորդ մոլորեալ ոչխարն խնդրեալ *տեառն մերոյ յիսուս քրիստոսի:* - 376. Տապանակն է՛ *տէր մեր յիսուս քրիստոս*. և նախընթա՛ց եղև մեզ ասելով՝ «երթամ և պատրաստեմ ձեզ տեղի»: - 380. Վեցերորդ՝ դարձեալ *տէր մեր յիսուս քրիստոս* որ եղև զգեստ հաւատացելոց իւրոց. մկրտեցաւ ի յորդանան. և ձայն հօր վկայեաց. և աղաւնակերպ հոգին էջ ի վերայ նորա: - 421. Եւ հերովդէս այլազգի տիրէր. յորոյ լբ ամին ծնաւ *տէր մեր յիսուս քրիստոս:* - 449. Վասն է՞ր նախ դատաւորք և ապա թագաւորք և ապա քահանայք առաջնորդեցին մինչ ի *տէր մեր յիսուս քրիստոս:* - 449. Ա՛րդ՝ եթէ նահապետքն ամենայն որ թձ ամ կամ աւելի և պակաս ապրէին՝ ո՛չ ալևորէին, ապա և ո՛չ *տէր մեր յիսուս քրիստոս:* - 480. Դարձեալ ի ձեռն կուսին՝ կենաց գիր տուաւ ազգի մարդկան *տէր մեր յիսուս քրիստոս:* - 481. Եւ պատճառն ասացաւ ի վերոյ, զոր ինչ ինքն եդ զպատիժ՝ նմանեաւն եբարձ. և զորս յանձնիշխան կամաց մարդոյն և ի բանսարկուէն արկածք, զայնոսիկ հակառակաւն ելոյծ *տէր մեր յիսուս քրիստոս:* - 498. Նոյնպէս մի է *տէր մեր յիսուս քրիստոս* և ո՛չ երկու ըստ բաժանողաց ոմանց: - 532. Գլուխ եկեղեցւոյ է՛ *տէր մեր յիսուս քրիստոս* որպէս ասացաւ: - 534. Այլ և զարարիչ օրհնութեան զինւոյն *զտէր մեր յիսուս քրիստոս:* - 656. Եւ գիտելի է, զի հիմն և սկիզբն անդ եկեղեցւոյն եղև *տէր մեր յիսուս քրիստոս* յարուցեալ ի մեռելոց. և ընդ ինքեան հանեալ և վերացուցեալ զհոգիս սրբոց նահապետաց և մարգարէից: - 688. Ա՛րդ՝ ի վերայ երից սոցա բազմեալ է *տէր մեր յիսուս քրիստոս* ո՛չ միայն յերկրի, այլ և յերկինս. - 736. Չորրորդ՝ ծառ կենաց կոչի *տէր մեր յիսուս քրիստոս*. ըստ որում փայտ դալար էր աստուածութեամբն. և մեզ կեանք և կենդանարար եղև յարութեամբն իւրով: - 768. Տալով մեզ զանմահական պտուղն կենաց *զտէր մեր յիսուս քրիստոս:* - 768. Որ և ձեզ յիշողացդ և մեզ յուսողացս առհասարակ ողորմեսցի բարերար և բազում ողորմ մարդասէրն աստուած և *տէրն մեր յիսուս քրիստոս* ամէն: - 773

***ՏԷՐ ՔՐԻՍՏՈՍ*** - ...վասն որոյ *տէրն քրիստոս* մարմնով ի գերեզմանի հանգեաւ. և սուրբքն հոգւով առ աստուած յերկինս: - 648

***ՏԷՐ ՄԵՐ ՔՐԻՍՏՈՍ*** - Եւ այս գիտելի է, զի *տէր մեր քրիստոս* նախ քան զյարութիւնն զչորեսինս զայս եցոյց ի մարմին իւր: - 722

***ՏԷՐ ԵՂԻԱ*** - Եօթներորդ՝ ժողովն սիմէօնի աղուանից կաթողիկոսի և հայոց կաթողիկոսի *տէր եղիայի:* - 545. Զոր յառաջին ամին յորժամ նստաւ կաթողիկոս տէր սիմէոնի, ի ձեռն *տէր եղիայի* մեծահանդէս ժողովմամբ պայծառացոյց զեկեղեցի կանոնական հաստատութեամբ ի փառս քրիստոսի աստուծոյ մերոյ օրհնելոյն յաւիտեանս ամէն: - 545

***ՏԷՐ ՅԱԿՈԲ ԿԼԱՅԵՑԻ*** - Զշարականս ո՞վ է ասացեալ: ...Զերգեցէքն, *տէր յակոբ կլայեցին:* - 638

***ՏԷՐ ՍԻՄԷՈՆ*** - Զոր յառաջին ամին յորժամ նստաւ կաթողիկոս *տէր սիմէոնի*, ի ձեռն տէր եղիայի մեծահանդէս ժողովմամբ պայծառացոյց զեկեղեցի կանոնական հաստատութեամբ ի փառս քրիստոսի աստուծոյ մերոյ օրհնելոյն յաւիտեանս ամէն: - 545

***ՏԷՐ ՍԻՈՆ*** - Եւ *տէր սիոն* հայոց կաթողիկոսն անդր հասեալ բազում եպիսկոպոսօք և մեծամեծ ազատօք հայոց և իշխանօք նոցին. ընդ դէմ աղանդոց ա՛յնր ժամանակի, և թուլութեան կարգաւորաց եկեղեցւոյ, և բռնութեան իշխանաց: - 545

***ՏԷՐ ՈՂՈՐՄԵԱՅ*** - Քառասունևինն, Գրոց կարդալն. և Սաղմոս կցորդ. Որբի. և Ալէլուն. և *Տէր ողորմեային:* - 527. Եւ **ճ** *տէրողորմեային*, ըստ թուոյ **ճ** ոչխարացն միոյն մոլորելոյ: - 621. Եւ **գ** *տէրողորմեա* տէրունական տօնիցն: - 621. Այլ և **թ** *տէր ողորմեային* ի պատարագն. և **թ** երեքսրբեանն, ի խորհուրդ **թ** դասուց վերնական յերիս երրեակս որոշեալ: - 645

**ՏԷՐՈՒԹԻՒՆ +** Ասեմք թէ՝ զբանս զայս ասէ մարգարէն վասն խաղաղութեան որ եղև սակաւ մի յառաջ քան զգալուստն քրիստոսի՝ և ի բոլոր ժամանակս քրիստոսի, և յետ նորա **խ** ամ մինչև ապստամբեցին հրէայքն հռոմայեցւոց *տէրութեանն:* - 27. Հինգերորդ՝ զի զօրութիւն՝ կարողութիւն՝ ուստի առնելն է՝ և աստուածութիւն՝ *տէրութիւն* իշխանութիւն և այլք այսպիսիք՝ ո՛չ են առանձին անձնաւորութեանց. այլ հասարա՛կ են...: - 45. Իսկ թէ զմարդն միայն ասես, զրկեցեր զբանն ի *տէրութենէ*. և առանձին մարդո՛վ ասես եղեալ զամենայն. որ է անհնարին չար: - 69. Ասեմք եթէ՝ տէր ապաւէն եղև ասէ մարգարէն. ո՛չ թէ փոփոխեցաւ ի *տէրութենէն* յապաւինութիւն, այլ եկաց մնաց տէր, և եղև ապաւէն: - 72. Եւ այժմ զինեսցուք առ քեզ՝ քոյին բանիւ. որպէս դուդ ասես՝ շնորհօք տըւաւ մարդոյն այն անունն օծութեան և որդիութեան և *տէրութեան* և իշխանութեան: - 94. Երկրորդ՝ *Տէրութիւնք*. Զօրութիւնք. Իշխանութիւնք: - 134. Եօթներորդ՝ աթոռոց՝ *տէրութեանց*՝ և հրեշտակաց: - 134. Նմանապէս և ի միջին կարգ քահանայապետութեանն՝ առաջին է *տէրութիւնքն*. և ապա զօրութիւնք. և ընդ նմին իշխանութիւնք: - 135. Նախ՝ զի *տէրութիւնն* ակնարկէ՛ առ հայր. և զօրութիւնն առ որդին. և իշխանութիւնն առ իշխանակից սուրբ հոգին: - 135. Դարձեալ՝ առաջինքն կարգաւորեն զգործս հրեշտակաց և *տէրութեանց* մարդկան: - 136. Վեցերորդ՝ *տէրութեանցն:* - 144. Եւ ասեն՝ արքայութիւն քո արքայութիւն յաւիտենից՝ և *տէրութիւն* քո յազգէ մինչև յազգ: - 144. Եւ այլք ասեն թէ՝ ի *տէրութեանց* դասուն ի վայր ի ներքոյ քերօբէիցն յամենայն դասուցն անկան դասու միոյ չափ: - 150. Ութերորդ՝ զխոհեմութեան և խօսից և ձայնից և *տէրութեան* շնորհին այժմ երևեցո՛յց ի յաղամ: - 219. Միջինն *տէրութեանցն:* - 343. Վեցերորդ՝ օծումն թագաւորաց. վասն *տէրութեան:* - 474. Տասներորդ՝ թէ և հասարա՛կ է ամենայն ինչ երրորդութեանն, *տէրութիւն* իշխանութիւն աստուածութիւն և այլն: - 522. Երրորդ, որպէս յերկինս յերիս երրեակս որոշին դասքն. այսինքն առաջին՝ աթոռոցն. միջին՝ *տէրութեանցն*. և վերջին՝ հրեշտակացն: - 624. Եւ որ՝ քան զայս աւելի ասեն, որպէս տնօրինեցար. կամ ընծայեցար. կամ քո *տէրութեամբդ*. կամ որ եկիր ի բեթանիա. կամ ի վերնատունն: - 634. Եւ զկրօնաւորս ի վերջին դասս *տէրութեանցն:* - 672. Ա՛րդ՝ առաջնոյն ասեմք թէ՝ ի պատկեր արարչին ինքնիշխան *տէւութեամբ* և անմեղութեամբ կազմեցաւ առաջինն մարդ: - 776

**ՏԷՐՈՒՆԱԿԱՆ +** Յարեգական օրն կոչեցին կիրակէ. որ է՛ *տէրունական* վասն յարութեան տեառն: - 190. Որպէս տօնականն զատկի և *տէրունական* տօնից: - 362. Իսկ *զտէրունական* տօնս երեկօրեայ յինն ժամ **է** աւուրն սկսանեմք. որ է՛ **թ** ժամաւ յառաջ քան զհասարակաց տօնս: - 508-509. Նա՛խ՝ զի խոստովանիմք զքրիստոս աստուած և զտօն նորա ըստ *տէրունականացն* կատարեմք: - 509. Եւ փոխեցին զտօնս *տէրունականս:* - 547. Վեցերորդ ըստ երրին. այսինքն թէ ե՞րբ գործեն զմեղքն. ի տղայութեա՞ն, թէ ի ծերութեան որ մեծ մեղք է. ի սո՞սկ աւուրս, թէ ի *տէրունական* տօնս. զի որ ի տօնս մեղք գործէ, առաւել պատժի քան զմիւսն: - 565. Եօթներորդ՝ զի պսակ եկեղեցւոյ և փառք է՛ սուրբ խաչն *տէրունական*. որպէս ի գլուխն է կանգնեալ: - 616. Եւ **գ** տէրողորմեա *տէրունական* տօնիցն: -

621. Նա՛խ ի *տէրունական* բանիցն է յայտ. որպէս ուսոյց հասարակ աղօթել...: - 623. Զի ի կիրակէ և ի *տէրունական* տօնս ո՛չ կարօտիմք բարեխօսի. այլ երգս սրովբէականս նուագեմք: - 627. Դարձեալ՝ կրկին է տօն. մինն *տէրունական*, և միւսն հասարակ սրբոց: - 646. Ա՛րդ՝ ի տօնս *տէրունականս* նախատօնական առնեմք յերեկոյս. և ի վաղիւն զկատարեալ տօնն: - 646. Իսկ գլխաւորագոյն սրբոցն, որպէս յաւագ տօներն և յայլս, որ առնեմք նախատօնակ որպէս ի տօնս *տէրունականս:* - 647. Մին ի տօնս *տէրունականս:* - 649. ...այլ յորժամ ապաշխարութեամբ քաւեմք՝ տօնեմք. եթէ *տէրունական* և եթէ սրբոց: - 650. Եւ ա՛յս է տարաձայնութիւն սոցա. զի ոմանք ապականացու ասեն զխաչն *տէրունական* առարկելով կրկին կերպիւ: - 732. Ա՛րդ՝ նորոգեսցի երկիր որ ընկալաւ ի ծոց իւր *զտէրունական* մարմինն: - 759

**ՏԷՐՈՒՆԵԱՆ +** Ուր եկեալ աբրահամ, և նա՛ել ընդ առաջ նորա ջերմ բաղարջ հացով և գինեաւ օրինակ *տէրունեան* խորհրդոյն: - 300. Նա՛խ՝ ի *տէրունեան* անսուտ հրամանացն. թէ «որ հայի ի կին մարդ ցանկութեամբ՝ անդէն շնացաւ ի սրտի իւրում»: - 556

**ՏԷՐՈՒՆԻ +** Եւ այս է պատճառն, զի կիրակին *տէրունի* թարգմանի. և օր է ստեղծման աշխարհի, և յարութեանն քրիստոսի, և միւս անգամ գալստեանն: - 642. Վասն որոյ *տէրունի*՛ է տօնելի միշտ: - 642. Թէ *տէրունի* իցէ տօն, այսպէս է կարգն: - 642. Եւ կիրակէն տօն է *տէրունի:* - 644. Յորում ամի եղև **ծռատօն** զատկաց ազգի կոչեցեալ յունաց. ի վերոյ ասացեալն աւուր նորոյս *տէրունեաց:* - 789

**ՏԸԻՉԱԿԱՆ** - Հինգերորդ՝ *տըւչական* խաղաղութեան. ըստ այնմ «խաղաղութիւն ընդ ձեզ. ե՛ս եմ մի՛ երկնչիք»: - 464

**ՏԻ(Ք) +** Վասն որոյ յայսմ հասակի *տւոց* հրաման է յեկեղեցւոյ պսակ դնել այսպիսի մանկանց: - 265. Ութերորդ՝ զի ապաժո՛յժ է և պակասամիտ որպէս զտղայ. զի անիւ կենացն հոլովեա՛լ է ի տղայութեան *տիքն:* - 377. Չորրորդ ի հասակն է իմանալ. զի *տիքն* անցանեն, և զօրութիւնք և ներգործութիւնքն պակասին...: - 666

**ՏԻԲԵՐ** - Արդ՝ առաջին վկայութիւն, ասէ սուրբն կիւրեղ ի գիրս պարապմանց ի հարցմունս *տիբերեայ* եթէ՝ հատուցմունքն հետևին դատաստանին. և դատաստանն գալստեան դատաւորին ի կատարածի: - 691

**ՏԻԲԵՐԻԱՅ ԾՈՎ** - Եւ կրկին սուտ. զի ուր զձուկն կերին՝ ի գալիլեայ յեզր *տիբերիայ ծովուն* էր **դ** աւուր ճանապարհ հեռի յէէմէ՛ և ի լեռնէն ձիթենեաց ուստի համբարձաւ քրիստոս: - 511

**ՏԻԵԶԵՐԱԿԱՆ +** Վասն որոյ զայս **գ** ժողովքս *տիեզերական* և միմեանց համաձայն ընդունիմք. այլ զքաղկեդոնին ո՛չ ընդունիմք. զի ընդ դէմ է առաջնոցն և քակտումն դաւանութեան տօնից կարգաց և կանոնաց ամենայնիւ: - 541

**ՏԻԵԶԵՐՔ +** Տասներորդ՝ այլև օրինակ և յարացոյց նմանատիպ հասարակաց յարութեան և նորոգման *տիեզերաց* և մարդկային բնութեանս որ յապագայն: - 196-197. Նոյնպէս և երկրի է՛ է մասն *տիեզերաց*. զոր է կլեմ կոչեն: - 241. Երրորդ՝ տօն փողոցն. իսկ մեզ առաքելոցն տօն. զի նոքա են փողք *տիեզերաց:* - 372. Եւ այն զի քամեալ լցաւ կուրն և ո՛չ երկիր. զի մնացին և կատարեցան բանք մարգարէիցն ամենայն և ո՛չ եղծան. իսկ յետոյ հոգի տեառն ելից *զտիեզերս* մարգարէութեամբ և շնորհօքն քրիստոսի: - 421. Եւ առաքեալքն զաւազանն ընդ չորեքծագեան *տիեզերս:* - 441. Դարձեալ նշանակէ **դ** թև խաչին՝ փրկութիւն գոլ և լոյս հոգւոյ որք ի **դ** ծագս *տիեզերաց* հաւատացեալք են: - 493. Վեցերորդ՝ համբարձաւ ձայնիւ փողով ըստ դաւթի. և այս վերաբերի յառաքեալսն. որ յանձնեցաւ նոցա երթալ քարոզել ամենայն հեթանոսաց. և փողք եղեն *տիեզերաց*...: - 520. Ո՞րպէս է մի կաթուղիկէ եկեղեցի ընդ ոլորտս *տիեզերաց:* - 532. ...և այլ նմանապէս առ այսոքիւք երրորդ եկեղեցի որով կարո՛ղ են հաւաքել ամենայն *տիեզերք* երկրի և լինիլ միով հաւատովն մի հաւատացեալք որպէս ասացաւ: - 533. Զի **դ** գլխաւորագոյն աթոռք կարգեցան ընդ բոլոր *տիեզերս* վասն չորից աւետարանչացն: - 549. Սոքա **է** սիւնք և **է** խարիսխք են եկեղեցւոյ գլուխ կարգեալք ընդ բոլոր *տիեզերս* որպէս ասացաւ: - 549. Եւ ի համբառնալն կալան հրաման վերագոյն. առաքելով զնոսա ընդ *տիեզերս:* - 607. Եւ գո՛րծ է նոցա ձեռնադրել զարք եպիսկոպոսունս. որք են ընդ իւր վիճակաւն ի չորս բաժինս *տիեզերաց:* - 607. Երկրորդ՝ զի **գ** են փողք *տիեզերաց:* - 618. Դարձեալ՝ մի տախտակն է՛ մի և նոյն քարոզութիւնն առաքելական ի չորեք ծագեան *տիեզերս* տարածեալ: - 646. ...այնմ խորհրդով որ ընդ չորս կողմն *տիեզերաց* աւետարանեցաւ: - 673. Եւ իշխանք են առաքեալք և մարգարէք որ փողք են *տիեզերաց*, նախ զնոսա կոչէ: - 713. Եւ տարերք ամենայն շտեմարանք են աստուծոյ. և *տիեզերք* ամենայն ի ձեռին

նորա՛ են ըստ մարգարէին: - 718. Նոյնպէս սրբին ամենայն *տիեզերը*. զի երեսք երկրի այնպէս պայծառանայ որպէս զհայելի: - 728. Այսպէս և զչնչին փայտն առեալ արար փրկութիւն *տիեզերաց* և արար անապական: - 734. Տասներորդ, ասի հնծան և կտակարանքն սուրբ. ուր հին և նոր իմաստութիւն ժողովեցաւ ի խառնարանին գինւոյ. յորմէ բաժակէ՛ արբին առաքեալքն ի սուրբ վերնատունն. և արբուցին ամենայն *տիեզերաց*...: - 749

**ՏԻՉ +** Երրորդ՝ հարուածն է մունն որ է՛ մանր *տիզ*. կամ մոծակ. կամ մժեխ. ի ցուցանել զի մանրակրծո՛ւ էին բարուք և խոցոտիչք բանիւք: - 334

**ՏԻԿԻԱՑԻ** - Եւ այս են **իբ** լեզուքն: ...*Տիկիացիք:* - 298

**ՏԻԿԻՆ +** Ասեն թէ՝ **ռ** կին էր սողոմոնի. **է ճ** *տիկնայք*, և **գ ճ** հարճք. և նոցա **ռ** պահապան. իսկ ի փորձելն խաբեաց զհազար կանայսն. և ի յարանցն մին ո՛չ խաբեցաւ. այս առասպե՛լ է: - 440. Քսանգ, *տիկինն* սաբայ որ կոչիւր նաա, ցանկացաւ իմաստութեանն սողոմոնի: - 441

**ՏԻՂՄ +** Եւ զի կաւ և *տիղմ* և գարշութիւնք բազմանան: - 197. Այլ և ամենայն աշխարհ տաճա՛ր է աստուծոյ. թէ ի դաշտի թէ յագարակի թէ ի *տղմի*. կամ ի ջուր սուզի, կամ ի գազանաց գիշատի, կամ ի ծկանց կլցի, արդարութեան ոչ ինչ վնասէ: - 678. Իսկ Չորրորդն արքայութիւն՝ է՛ յաւիտենականն գաւառ. յորմէ ի ծեռն մեղաց առաջնոյ մարդոյն՝ տարեալք պանդխտիմք յայսմ տառապանաց գբի և ի *տիղմ* կաւոյ...: - 756

**ՏԻՄՈԹԷՈՍ** - Ո՞ր քան են և ո՞րք գիրք սուրբք հին և նոր կտակարանք: ...Երկու *տիմօթէի:* - 450. *Տիմոթէոս* աղէքսանդրու. Մելիտոս անտիոքայ. **ճծ** հարք ընդ դէմ մակեդոնի հայհոյչի հոգւոյն սրբոյ: - 542. ...և զթէոդորիտոս եդին զլուխ ժողովոյն վասն մարդահաճութեան թագուհւոյն և թագաւորին. և զղէոսկորոս հայրապետն աղէքսանդրու, և զպետրոս անտիոքու, և *զտիմոթէոս* և զանատօլ, և զայլս բազումս խոտեցին. և վկայեցին նոքա ճշմարտութեան: - 543. Այլ և պետրոս անտիոքայ և *տիմօթէոս* աղէքսանդրու հրամանաւ յուստիանոսի կայսեր՝ հաստատեցին ի սուրբ աստուածն խաչեցար ասել: - 631. Տասներորդ, գրէ առ *տիմօթէոս*, «կայ և մնայ ինձ արդարութեան պսակն զոր հատուցէ տէր յաւուր այնմիկ արդար դատաւորն. ո՛չ միայն ինձ՝ այլ և ամենեցուն որ սիրեն զնա»: - 692

**ՏԻՊ +** Ոմանց գոյութիւն միայն. և այլոց կեանք. և բան. և իմացումն. որպէս *տիպ* կնքեալ ի մոմի: - 106. Եւ այն որ կրկին լինի, ներքին պայծառն է *տիպ* յարեգակնէն. և վերին նուազն *զտիպ* ներքնոյն է ընկալեալ: - 203. Յարցումն ա՛յսմ իրի՝ նախ գիտելի է՝ թէ ուստի՞ գոյանայ պատկերն և *տիպ:* - 235. Զորօրինակ՝ բնութեան յատուկն և անձին. զի բնութեան տարբերն հեռագոյն է և մեծ. որպէս կենդանին և բանականն. և դիմաց յատուկն մերձ և նուազ. որպէս յատուկն մերձ և նուազ. որպէս պատկեր և *տիպ:* - 235. Ըստ այսմ ապացուցի. զի բնութիւնն ի սեռ՛ւմն է և ի տարբերութեան ուստի բաղկանայ. և անձն ի բնութիւնն է յորմէ կայանայ. և դէմքն ի յանձնէ՛. և կերպարանն ի դիմաց. և պատկերն ի կերպարանաց. և *տիպն* ի պատկերաց. և որակ տպաւորեալ ի պատահմանց: - 235. Այսպէս ի հասարակաց ի նուազունս գոլով ի մարմնականն *տիպ*. իսկ անդրադարձեալ: - 235. Այս՝ թէ ուստի՞ գոյանայ պատկերն և *տիպ:* - 236. Եւ պակասեալ ի սմանէ տեղին, լինի *տիպ* ի քանակէ և ի ծնոյ բաղկացեալ. որպէս յա՛յտ է ի մոմն տպացեալ: - 236. Զի որդի պատկե՛ր է հօր և *տիպ* և կերպարան: - 237. Եւ սուտ առաքեալք զճշմարտիցն կերպանային. և այն զի ո՛չ ունէին զնոյն *տիպ*. իսկ թէ ունիցին զնոյն *տիպ*՝ ո՞րչափ ևս: - 238. Նա՛խ՝ զի զգայարանքն նորա որպէս զկակուղ մոմ առաւել ընդունի *զտիպն:* - 251. Վասն չորրորդին՝ զի առաջին եղև քահանայ ի *տիպ* ճշմարիտ քահանայապետին քրիստոսի: - 286. Եւ այլն ամենայն բանք և գործք յոբայ ի *տիպ* օրինակի էր նորն ադամայ չարչարանաց թաղման և յարութեան որպէս յա՛յտ է ի գիրս պատմութեան նորա: - 327. Եւ **գ** ըստ շնորհաց. որպէս ի ջրոյ, ի հրոյ, և ի վիմէ. ի *տիպ* տեառն մերոյ որպէս ասացաւ: - 353. Որ առաքեաց լրտեսս ի *տիպ* առաքելոցն: - 414. Եւ զարծանն վկայութեան կանգնեաց ի *տիպ* հաւատոյն որ ի քրիստոս, և վախճանեցաւ: - 419. Երրորդ՝ ի *տիպ* երկնաւոր հացին որ բաշխելոց էր քրիստոնէից: - 427. Չորրորդ՝ ի *տիպն* քրիստոսի որ ասէր ծարաւի եմ և ո՛չ էառ: - 434. Դարձոյց ի յորդանանու զբերզելի որ տասամբն կերակրեաց զդաւիթ. ի *տիպ* հին օրինացն **ժ** բանեան զոր կատարեց քրիստոս: - 438. Չորրորդ՝ ի *տիպ* աստուածահօրն յովսեփայ առ անարատ կոյսն: - 439. Եւ այս ի *տիպ* փրկչին. զի որդին միածին շինեսցէ զտաճար բնութեան մերոյ մարդանալովն իւր: - 440. Եւ ինչ ոչ գոյր ի հրէիցն, բայց միայն սողոմոն. որոյ հրամանաւն շինեցաւ ի *տիպ* հեթանոսաց եկեղեցւոյ զոր շինելոց էր տէր մեր: - 440. Չորրորդ՝ ի *տիպ* մարմնոյն փրկական. զի ոչ յաւելու ի բազում պատարագելն. և ոչ նւազէ ի ճաշակելն: - 444. Իսկ ի մահուն որ յարոյց զմեռեալն յորժամ մերձեցաւ ի

յոսկերսն եղիսէի, ի *տիպ* մահուն քրիստոսի որ մահուամբն մեզ կեանք և յարութիւն շնորհեաց: - 446. Եւ դարձեալ ի *տիպ* քրիստոսի որ ի գիշերի եհար զսատանայ և ազատեաց զհոգիսն ի դժոխոցն: - 446. Ի *տիպ* խորհրդոյ օրինակի մերոյս տաճարի գերեալ ի մեղաց և աւերեալ տաճար սրբութեանս եօթնիւք զգայութեամբք: - 448. Եօթներորդ՝ դարձեալ յաւուր կիրակէի էանց մովսէս ընդ ծովն կարմիր. և ընկղմեցաւ փարաւոն ի *տիպ* յարութեանն քրիստոսի և կորստեան սատանայի: - 512-513. Ութերորդ՝ արին սամփսոն որ օրինակ էր ամենազօր տեառն մերոյ, էջ ի գազա ի *տիպ* աշխարհի...: - 513. ...և զաւարն ժողովեցին ի *տիպ* խորհրդոյն քրիստոսի. որ ի գիշերի եհար զզօրութիւնն սատանայի և յառաւօտուն ցուցեալ զինքն աշակերտաց իւրոց և զյարուցեալսն ընդ իւր: - 514. Նախ՝ զի ցուցանէ թէ որ ետ զօրէնսն՝ նոյն առաքեաց և զհոգին և ի նոյն *տիպն* որոտ և փայլատակումն հողմ և հուր երևեալ որպէս անդ ի լերինն: - 524. Նմանապէս և յեկեղեցի՝ ոմանք սաղմոսեն. և սարկաւագն ի *տիպ* հրեշտակին տայ զօրհնեայն ի քահանայն որ է տիպ քրիստոսի...: - 625. Նմանապէս և յեկեղեցի՝ ոմանք սաղմոսեն. և սարկաւագն ի տիպ հրեշտակին տայ զօրհնեայն ի քահանայն որ է *տիպ* քրիստոսի. - 625. Զի երևելիքս *տիպ* և գաղափար են աներևութիցն: - 671. Դարձեալ, ի *տիպ* պահապան հրեշտակին որ նստէր մի ի սնարից և մի յանոտից տեառն գերեզմանին...: - 679. Դիոնէսիոս զիաւատն *տիպ* ասէ. և Աղէքսանդրոս կնիք. և Պօղոս աներևոյթ իրաց երես. և Յօհան ոսկէբերանն՝ լոյս անյայտ իրաց: - 769. Օրինակ. Աստուած մատանի. և միտք մոմ. և հաւատն *տիպ* ի մատանոյն. այս է սուրբ Երրորդութիւնն: - 769. Ոչ ունիմք վեհագոյն քան զհաւատն. *տիպ* աստուծոյ ճշմարտի դրոշմեալ ի մեզ ի բնէ. մեր հրահանգ և զարդ: - 769. Եւ արդ, Ո՜ հաւատ մեծ պաշտելի լոյս իմ և *տիպ*. և գանձ անկողոպուտ. կացցես առ իս. յարգանդէ մօր իմոյ խուսափեալս ի ծոց քո: - 771. Այլ վարկանին ոմանք զթիւ կազմութեան աւուրց պակաս գոլոյ նախնւոյն մարդոյ. զորոյ *զտիպ* յինքն նկարելով և այժմ անդրանիկն ծնունդ՝ յապաղելով գայ աշխարհ: - 785

**ՏԻՏԱՆ +** Եւ դաղմատերէն *տիտան*. այսինքն արեգական կամ հսկայ: - 707

**ՏԻՏՈՍ** - Եւ չորեքտասան թուղթք պօղոսի ...*Տիտոսի:* Փիլիմոնի: - 450. ...որպէս գրէ սուրբն դիոնէսիոս ի թուղթն *տիտոսի:* - 596

**ՏԻՐԱԲԱՐ +** Ո՛չ թէ նոր իմն տեսակ և կամ նոր աշխարհ. այլ զեղելոցս նախախնամութիւնն. և ի նոյնութիւն կալն հայր կամի և որդի կատարէ՛. ոչ ծառայաբար և անուսումնապէս. այլ *տիրաբար* և հաճճարով: - 46. Իսկ թէ զոր ի զաւակէն դաւթի առանձին, զիա՞րդ եթէ ինքն շնորհօք է սրբեալ՝ սրբեսցէ *տիրաբար* զառ ի նա՛յն հաւատացեալս: - 69

**ՏԻՐԱԿԱՆ +** ...իսկ յորժամ սպասաւորեաց հրեշտակապետն՝ *զտիրական* անունն ի սաստ կոչելով. յայնժամ ամպ ինչ լուսաւոր ծագեալ ի տեղւոջն, շիջոյց զերևումն չարին: - 410. Իսկ մեր վարդապետք ասեն որպէս մեծն ներսէս, թէ ի զերրորդ աւուր արարաւ առաջին ադամն ի պատկեր *տիրական:* - 467. Զի հաճելի՛ է բնաւորեալ գովութիւն մարդոյ. ըստ որում մեծարեցաւ *տիրական* պատուով. և է՛ այս հասարակ: - 774

**ՏԻՐԱՄԱՅՐ +** Ա՛րդ՝ ծնեալն տէր ծնեալ է ի կուսէն. ապա ուրեմն կոյսն *տիրամայր* է և աստուածածին: - 466. Այլ համբարձումն նշանակէ՛ ի միտս համայն բարձր քան զամենայն դասս իմանալեացն. զի նմա՛ երկրպագեն ամենայն երկնայինքն. և անդր քան զտեղի *տիրամօրն*. զի ի միածին որդւոյ իւրմէ խնդրէ զփրկութիւն մարդկան: - 519. Զի և *տիրամայր* կոյսն ո՛չ էր ի ժամ մկրտութեանն ընդ քրիստոսի ի յորդանան որպէս ասացաւ ի վերոյ: - 591. Թովմաս առաքեալն ի թաղումն *տիրամօրն* է ասացեալ. որպէս գրեալ է ի գիրս որ կանոնական լրմունք կոչի: - 633. Եւ կենդանագիրն՝ պատկեր *տիրամօ՛րն* է: - 639. Երրորդ, և նոյն ինքն *տիրամայրն* խաչին երկիր պագանէր միշտ: - 642

**ՏԻՐԱՆԵՆԳ +** Հինգերորդ՝ հրէայքն *տիրանենգք* և աստուածասպանք: - 34

**ՏԻՐԱՊԵՏԵՄ +** Զլաւագոյն կայս զոր աստուած տուեալ էր նմա՝ կամեցաւ ակամայ յաստուծոյ հ՛ւր շորթել. և այլոցն բռնաբար *տիրապետել* և հրամայել: - 149

**ՏԻՐԱՊԷՍ +** Իններորդ, նորա ծառայաբար մատուցանէին. ուստի յա՛յտ է զի ո՛չ կարէին նստիլ ի սրբութիւնսն կամ ի քաւութիւնսն. իսկ քահանայապետն մեր *տիրապէս* և աստուածաբար նստեալ ի յերկինս ընդ աջմէ աստուծոյ...: - 354. Եւ փոխանակ հոգւոյն՝ հրեշտակական օգնութեանն կարօտացաւ ցուցանել *զտիրապէս* իշխօղն բնութեան. որ և կշտամբեաց զբռնութեամբ թագաւորելն նորա: - 410. Առաջինն ադամայ. որ է՛ *տիրապէս* յարմարեալ: - 778

**ՏԻՐԵՄ +** Նախ՝ եթէ աղքատութիւն և մեծութիւն *տիրելն* և ծառայելն, է՛ յաստուծոյ. սակայն ոմանց կամելով՝ և ոմանց ներելով և թոյլ տալով...: - 19. Ա՛րդ՝ յորժամ ծնաւ քրիստոս՝ այնպէս խաղաղութիւն էր՝ որ մին մարդ *տիրէր* ամենայն աշխարհի: - 27. Այժմ արարչութեամբ ամէնի *տիրէ*՛ կամողաց և ոչ կամողաց. զի աստուած է: - 42. Դարձեալ՝ յառաջինսն *տիրէ* աստուած իբր մեծութիւն. ի յերկրորդսն կառավարէ իբր զօրութիւն. ի յերրորդսն պարսպէ՛ իբր փրկութիւն: - 135. Դարձեալ՝ իմաստութեամբն *տիրեմք* ծովու և ցամաքի. և բազում բարութիւն հոգւոյ և մարմնոյ ի նմանէ ծնանի: - 178. Եւ զի պլղամ և սպիտակ հիւթք *տիրեն:* - 197. Եւ այսպէս միջին հասակս կատարեալ, ձգի մինչև ի **խզ** ամն. որ է **դ ժզ**. և վեցն կատարեալ թիւ է. և աստ *տիրէ* ալիք և սկիզբն լինի ծերութեան մինչև ի **հբ** ամն...: - 265. Հինգերորդ՝ մահ և բռնութիւն սատանայի *տիրեալ* էր մարդկան. ի հաւատ կործանման նոցա անմահացոյց զենովք և վերացոյց զեղիա: - 289. Եւ թէ նախ դատաւորք և թագաւորք, և ապա՛ քահանայք *տիրեցին* իսրայէլի: - 413. Եւ այսպէս կարգեցան առաջնորդք. զի յետ յեսուայ *տիրեցին* այլազգիքն ամս **ը**: - 420. Չորրորդ, ի հովւութենէ օծաւ թագաւոր և տէր մեր նա՛խ քարոզեաց, և ապա՛ ժողովեաց. և *տիրեաց* յերկինս և յերկրի: - 435. Եւ հերովդէս այլազգի *տիրէր*. յորոյ **լբ** ամին ծնաւ տէր մեր յիսուս քրիստոս: - 449. Իսամարիայ **ժ** ազգին *տիրէ*՛ րոբովամ որդին նաբատայ. որք կոչեցան թագաւորք իսրայէլի չարք և ո՛չ բարիք: - 452. Նա՛խ՝ մաքրութիւն ի մահու չափ մեղաց. զի այլ ո՛չ ևս *տիրեցին* նոցա յետ հոգւոյն իջման: - 524. Երկրորդ՝ զի մանկունս հասակաւ նախ որկորստութիւնն *տիրէ*, և ապա՛ յերիտասարդութեանն պոռնկութիւնն զօրանայ: - 561. Նա՛խ՝ զի սկզբնականն հարկիւ և ակամայ *տիրէ*. իսկ սոքա ըստ կամաց: - 568. Երկրորդ՝ մարմնովն *տիրեաց* ցանկութեանցն երկրաւոր՝ և իշխանացն դիւաց...: - 711. Երրորդ, հոգւովն *տիրեաց* դժոխայնոցն. կապեաց զհզօրն. և արձակեաց զկապեալ հոգիսն: - 711. Նոյնպէս և սուրբքն այժմ թագաւորե՛ն և *տիրեն* ի վերայ ախտից, և յետոյ ի վերայ դիւաց, և ապա ի վերայ մահու: - 711. Սպառիլ սիրոյ և հատումն յուսոյ. բազմանալ անօրէնութեանց և *տիրել* անզղջութեանց: - 789

**ՏԻՒ +** Ութերորդ՝ և զի *զտիւս* կատարեն: - 125. Նախ՝ զի որպէս արեգակն ունի մշտնջենաւոր զլոյսն՝ և առնէ ի վերոյ երկրի *տիւ* և գիշեր: - 125. Մետասաներորդ՝ *զտիւ* և զգիշեր կատարէ՛: - 186. Իսկ զօր՝ որ է *տիւ* և գիշեր. և զ**դ** եղանակս. և զտարի, արեգա՛կն կատարէ: - 190. Եւ որքան ի վերին կիսագունդն տևէ՛, կոչի *տիւ:* - 190. Ի խոյն և ի ցուլն և յեկաւորն առնէ զգարուն. որ է հասարակ *տիւն* և գիշերն **ժբ** ժամ: - 190. Ի խեցգետինն յառիւծն և ի կոյսն՝ առնէ զամառն. որ *տիւն* առաւել է քան զգիշերն **զ** ժամ: - 190. Ի կշիռն ի կարիճն և յաղեղնաւորն առնէ աշուն. նոյնպէս հասարակ *տիւ* և գիշեր **ժբ** ժամ: - 190. Եւ յայծեղջիւրն ի ջրհոսն և ի ձուկն՝ առնէ զձմեռն. որ առաւելու գիշերն քան *զտիւ* **զ** ժամ. զի լինի գիշերն **ժե** ժամ. և *տիւն* հնն ժամ. որպէս յամառն *տիւն* է **ժե** ժամ. և գիշերն **թ** ժամ: - 190. Եւ օրն ի *տիւն* միայն՝ **յկե** մասն: - 190. Զի օրն ընդ *տիւ* և ընդ գիշեր է՛ **իդ** ժամ: - 191. Նա՛խ՝ զորքանութիւն աւուրցն ցուցանէ, թէ *տիւ* և գիշեր **իդ** ժամն լինի օր մի բնական: - 193. Նա՛խ՝ զի բնական օրն է *տիւ* և գիշեր: - 194. Իսկ արուեստական օրն միայն *տիւ* ասացաւ: - 194. Այս է պատճառն. զի ի սկզբանէ *տիւն* առաջանայր գիշերոյն. զի ադամ ի լուսոյ շնորհացն անկաւ ի խաւար մեղաց: - 194. Եւ զի հաւասարի *տիւ* և գիշեր: - 197. Նա՛խ՝ զի կշիռ և հաւասա՛ր են *տիւ* և գիշեր: - 197. Դարձեալ՝ յամառն և ի ձմեռն զրկո՛ւմն է տուընջեան և գիշերոյ. զի ամառն զրկէ զգիշերն, և ձմեռն *զտիւ:* - 198. Ի *տուէ* ի գիշեր. ի գիշերէ ի *տիւ:* - 199. ...ի հիւսիսոյ կողմն լերինն միշտ գիշեր լինի. որպէս աղէքսանդրու պատմութիւնն ասէ. և ի գլուխն միշտ լոյս. և ի հարաւոյ կողմն *տիւ* և գիշեր: - 222. Ոմանք ի դրախտն ևս ասեն թէ *տիւ* և գիշեր լինի. կամ գարուն և աշուն. զոր մեզ չէ ընդունելի: - 222. Այլ և *տիւ* և գիշեր որք ընդ լուսոյն եղեն: - 226. Նա՛խ՝ զի ի *տիւ* և ի գիշեր լսէ: - 235. Յրեշտա՛կ էր. որ ի *տիւն* հովանի լինէր ի տապոյ արևուն և ցուցանէր ամենայն աշխարհի զելս ժողովրդեանն: - 338. Ի *տուէ* ամպով ծածկեալ լինէր և ի գիշերի լուսով: - 345. Երրորդ՝ զի աւետարանիչքն յայտնապէս ասեն թէ՝ ընդ մկրտիլ տեառն՝ նոյն ժամայն հոգին հանէ՛ զնա յանապատ. և պահեաց զ**խ** *տիւ* և զ**խ** գիշեր: - 373. Երկրորդ՝ զի եօթնիցս եղև արժանի տեսլեան Երրորդութեանն. կրկին անգամ զհայր ի գիշերի. և կրկին զորդին ի *տիւն*. և հոգի աստուծոյ ի վերայ նորա երկիցս անգամ. և մի անգամ զհրեշտակն ետես: - 387. Ութերորդ՝ մովսէս ի լեառն եկաց **խ** *տիւ* և **խ** գիշեր անսուաղ. և կերակրիւր բանիւն աստուծոյ. նոյնպէս և եղիա. նաև տէր մեր ի փորձութեան լերինն: - 397. Եւ վասն աւուրն ասաց՝ *տիւ*. և գիշեր զխաւարումն. և ընդ երեկս լոյս դարձեալ: - 405. Եւ հաւատարիմ է այս. զի առ յեսու սքանչելիքն լինէր ի կամարն երկնից. և մի *տիւն* ժամս **լզ**: - 416. Եւ առ եզեկիա՝ արեգակն յետս դարձաւ. *տիւն* եղև ժամս **լբ**: - 416. Յնգետասաներորդ՝

յեսու ներեաց աքարայ *զտիւն* և զգիշերն մինչ լուսով առաւօտին վիճակաւ յանդիմանեցաւ: - 418. Երեք *տիւ* և երեք գիշեր: - 455. Ա՛րդ՝ շաբաթի գիշերն և *տիւն* **իդ** ժամ. և **զ** ժամ ի կիրակէէն մինչ ի մէջ գիշերն. որ լինի **լ** ժամ. իսկ հոգին **դ** ժամ և կէս նախ իջեալ ի դժոխս որ լինի **լգ** ժամ և կէս: - 516. Ապա ո՞րպէս է **գ** *տիւ* և **գ** գիշեր թաղումն տեառն: - 516. Եւ շաբաթի գիշերն և *տիւն* իւր՝ լինի **գ** *տիւ* և **գ** գիշեր: - 516. Երրորդ սոյնպէս ասեն, ընդ *տիւն* և ընդ գիշերն **գ**. որ է՛ ուրբաթն, և շաբաթի գիշերն, և շաբաթի օրն. և յերեկօրեայ յարութիւնն: - 516. Այլ պիտո՛յ է բնական **գ** *տիւ* և **գ** գիշեր գոլ ի սիրտ երկրի որպէս ասաց քրիստոս: - 516. Որովք միշտ երանութեամբ զաստուած տեսցես. հայելով յօրէնս նորա ի *տուէ* և ի գիշերի: - 558. Զայս **դ** ժամու աղօթս ի գիշերի կատարէին. և զերեք ժամուն ի *տիւն:* - 621. Զի *տիւ* և գիշերն է՛ **իդ** ժամ. լինի ապա ընդ **բ** ժամն մի անգամ աղօթք: - 623. Որ ընդ *տիւ* և ընդ գիշեր ի խորանին երգէին: - 626. Առաքեալքն. ընդ *տիւ* և ընդ գիշեր բոլորեալ: - 631. Երկու դասք էին երգիչք ի տաճարին զոր կարգեաց դաւիթ ընդ *տիւ* և ընդ գիշեր հանապազորդ պաշտօն **իդ** ժամուց...: - 636. Զի ո՛չ եկեր և ո՛չ էարբ զքառասուն *տիւ* և **ըզխ** գիշեր: - 652. Եւ առաջին կանոնին՝ տէր *տուընջան*. և որ այլ զհետ սոցա աղօթք և փոխք նոցունց: - 659. ...և գնացին յերեքօրեայ ճանապարհ. ի *տիւն* ամպ հովանի, և գիշերն լոյս գայր...: - 682. Որ և յետ այնորիկ սպանցին ի նեռնէն յերուսաղէմ. և անկեալ լիցին մարմինք նոցա ի հրապարակս զերիս *տիւս* և զերիս գիշերս: - 709. Եօթներորդ՝ երկինք *զտիւն* ասէ՝ և երկիր հաստատ զգիշերն: - 729. Ա՛յս է գալարիլն նոցա, զի երկինք և երկիր *տիւ* և գիշեր միաբանեալ վկայե՛ն գործոց մարդկան: - 729. Եւ յորում ժամու և գործեն՝ վկայե՛ն *տիւ* և գիշեր...: - 729. Ապա յա՛յտ է յասացելոցս թէ՝ քրիստոս երևեցի արդարոցն քաղցրատես, և մեղաւորացն դառնակերպ. որ նշանակեցաւ ի սիւն ամպոյն ի *տուէ* և ի հուրն ի գիշերի: - 741. Իսկ անկենդան՝ գործքն մեր. երկինք և երկիր. *տիւ* և գիշեր: - 743. Անդ *տիւ* և գիշեր ժամանակի և մասանց սորին ո՛չ է. զի անցեալ է ժամանակն և մնացեալ է յաւիտեանն: - 750. Այլ նախ ասի միշտ *տիւ* ի վերին երես երկրի. ուր արեգակն և լուսին զկա՛յէ առեալ. իսկ ներքինն միշտ գիշեր և խաւար անփոփոխելի: - 750. Երկրորդ՝ *տիւ* է իմանալ զկեանս սրբոցն ի յերկինս. իսկ գիշեր զտանջանս գարշելեացն ի դժոխս: - 750. Երրորդ՝ *տիւ* ասի պայծառ լուսոյն գիտութեան հասումն. և գիշեր ծածուկ խորոցն աստուծոյ անգիտութիւն անհասիցն: - 750. Իսկ *տիւ* և գիշեր, այսինքն արևապէս հասումն նոցա՝ *տիւ* է համարեալ. և անհասութիւն խորոցն աստուծոյ՝ գիշեր: - 767. Եւ թէ նայիս մտօք, թէպէտ առ մեզ փոփոխին *տիւ* և գիշեր. այլ նա միշտ լոյս և միշտ գիշեր կազմէ...: - 779

**ՏԻՒՐԱՑԻ** - Զի զտեղին յեբուսացւոցն գնեաց դաւիթ. և ճարտարապետն քիրամ *տիւրացի* էր որ շինեաց. և քիրամ արքայ զփայտն առաքեաց: - 440

**ՏԽԵՂԾ +** Եւ այն *տխեղծ* մատանց, տառատիպ գծաց. որ անհրաժեշտն է առարկողաց: - 93. Եւ այսպէս տրտմեալ սգով և թախծեալ մտօք ընծայեցի *տխեղծ* մատամբ զխունախոյ նուէրս բանի, իբր զլոմայս այրւոյն՝ քումդ գանձարանի: - 789

**ՏԽՄԱՐ +** Լանջքն մսակոյտ՝ *տխմա՛ր* է: - 247

**ՏԽՈՒՐ +** Ձայնն բարակ՝ *տխու՛ր* է և կարճոտ: - 247

**ՏԽՐԱԼԻ +** Այսպէս մշակեղէն հանդերձն նշանակէ՛ *զտխրալի* և ախտաւոր մարմինս: - 282

**ՏԽՐԻՄ +** Երրորդ՝ զի երեսն հայելի է սրտին. և նորա փոփոխմամբն զխորհուրդն ճանաչեմք. որպէս ի *տխրիլն* և ի զուարճանալն և յայլն...: - 234. Իսկ հօրն ամենևին ո՛չ պղտորեցան խորհուրդք. և ո՛չ տրտմեցան սիրտք. և ո՛չ *տխրեցան* դէմք: - 304. Նաև ի *տխրիլն* զծեռն ի ծնօտն եդեալ...: - 670. ...լալ և կրճել ատամանցն. փոշիմանիլ, *տխրիլ*, և ոչ ինչ օգտիլ...: - 671

**ՏԽՐՈՒԹԻՒՆ +** Եւ զի անգործութիւն է մարդկան, և ամենայն կենդանեաց սղութիւն և *տխրութիւն:* - 197. Երեսուն օրն աւուրք է լուսնին որ փոխէ *զտխրութիւն* և ի լոյս գայ: - 411

**ՏԿԱՐ +** ...զմեր նուաստ և *տկար* բնութիւնս միացոյց ընդ իւրում աստուածութեանն...: - 40. Տե՛ս՝ զի առանց որդւոյ անբան և *տկա՛ր* է հայր. ո՛չ կարէ լինիլ աստուած. ապա և ո՛չ հոգի: - 51. Եւ ո՛չ ասի տգէտ և *տկար* վասն մարմնոյն. այլ ամենագէտ և ամենազոր մարմնովն: - 78. Հզօր և *տկար:* - 78. Նոյնպէս և քրիստոսն անունն՝ և տէր՝ և աստուած՝ և այլն՝ զո՛յգ և հաւասա՛ր է մարդկութեան իւրոյ և աստուածութեանն. և ո՛չ առաւել և նուազ. կամ *տկար* և հզօր. կամ անգէտ և ամենագէտ. և որ ինչ այսմ նման: - 89. Դարձեալ՝ որպէս ասեն աստուած և մարդ անհաւասար. այսինքն հզօր և *տկար*. անեղ և եղական. բնութեամբ և շնորհօք: - 90. Որ ասես սոսկ մարդ գոլ զքրիստոս. և տգէտ և *տկար*. և ապականացու մարմին. և անկեալ ընդ կարեօք մարդկան: - 98. Քսանևմիերորդ՝ արդ՝ եթէ քրիստոս

տգէտ ունէր միտս, և *տկար* հոգի, և ապականացու մարմին և եկն քրիստոս զի բարձցէ զտկարութիւնս մեր...: - 99. Նախ՝ զի մի՛ կարծեսցի հայր *տկար* վասն ծերութեան: - 105. Իսկ արժանապէսն՝ զի կարօղ աչքն լուսաւորին, և *տկարքն* խաւարին: - 127. Երկրորդ՝ առողջ լսելեաց և *տկար* գոլ: - 131. Իսկ առողջ լսելիք և *տկար*՝ պատճառի ի համակարգս...: - 131. Զի թիւ մեր նիւթեղէն և *տկա՛ր* և չափաւո՛ր է. վասն որոյ զանբաւութիւն նոցա ո՛չ կարէ չափել. ուստի յայտ է՝ զի և ո՛չ զթիւ մեր կարեմք գիտել: - 141. Երեքտասաներորդ՝ զի *տկար* մարմնով անմարմին և զօրաւոր թշնամոյն յաղթեսցեն. որով աստուած իսկապէս փառաւորի. տեսանելով *զտկարն* յաղթել զօրաւորին ...նոյնպէս և դու շնորհօք իմովք՝ *տկար* մարմնով քո՝ յաղթես և նկուն առնես զնա: - 159. Իսկ հուրս առ մեզ որ կապեալ է ի նիւթ՝ *տկա՛րն* ունի զայրելն. վասն որոյ նախ զքանակն և զորակն ապականէ, և ապա զգոյացութիւն իրին: - 204. Դարձեալ ի հողոյ ստեղծ ի նախատինս սատանայի. զի յամօթ լիցի յորժամ *տկարս* այս և կաւեղէնս ի փառսն մտանէր յորմէ նա՛ որ փառաւորն էր անկաւ: - 229. Յալողականն է՝ յորժամ ի ջերմութենէն եփի կերակուրն և հալի որպէս ապուր ի պտկի. և հալի ամենայն կերակուրն մինչև ի **զ** ժամն. և է՛ որ պակաս և աւելի. վասն առողջ և *տկար* մարմնոյն: - 242. Եւ փայծեղն և թոքն ցրտայինք ի ձախ կողմն են. վասն այն աջն զօրեղ է և ձախն *տկար:* - 243. Ոտք ստուար և կարճ, յոյժ *տկարի* է: - 247. Յինգերորդ՝ ի յուսումն խոնարհութեան մերոյ. զի տեսանելով զմեզ *տկար* քան զանասունս, մերկ և աղքատ ի մօրէ ծնեալ, խոնարհեալ զիջանիմք ի հնազանդութիւն արարչին. և զի մի՛ եկամուտ հպարտութեամբ կրեսցուք զանկումն արուսեկին: - 267. Չորրորդ՝ զի մի՛ *տկար* ոք կարծիցի. այլ որպէս կողե՛ղ և հաստակող ասեմք զըմբիշս. այսպէս զօրեղ եղիցի կինն ի տնօրինել զտունն: - 276. Իններորդ՝ կին, նշանակէ զթոյլն և *զտկարն:* - 276. Եւ վասն կրկին պատճառի է *տկար:* - 276. Երկրորդ՝ զի ի ձախ կողէ՛ շինեցաւ կինն. և *տկա՛ր* է ձախ կողմն մարդոյս: - 276. Եւ նոքա յայնժամ էին *տկարք* ի հաւատոց և անպտուղք ի բարեաց գործոց: - 331. Վասն է՞ր *տկար* զեռնօք տանջեաց զեգիպտոս, և ո՛չ առիւծ կամ արջ կամ այլ ինչ հրաշունչ կենդանեօք: - 333. Երկրորդ՝ ցոյցք է տկարութեան եգիպտացւոցն. որ ո՛չ կարացին ընդ դէմ կալ *տկար* զեռնոցն: - 333. Դարձեալ գիտելի է, որք զքրիստոս բաժանեն յերկուս բնութիւնս. և յերկուս գործս սոյնպէս. զմինն աստուած՝ և զմիւսն մարդ. հզօր և *տկար*. և գործ մարդոյ և գործ աստուծոյ. որպէս աղանդն քաղկեդոնի: - 350. Եւ յանուանէն զօրացեալ էր մովսէս. և նոքա *տկար* և տգէտ: - 350. Նախ՝ զի փորձեսցին և ընտրեսցին ի միմեանց հաստատունքն ի հաւատս և *տկարքն:* - 388. Զորօրինակ՝ ճրագ ըզտեսօղս լուսաւորէ՛, և *զտկարս* խաւարէ՛. կամ որք ի ճրագ նային տեսանեն լոյս. և որք յետս դառնան խաւարին: - 403. Եւ յորժամ է զօրութեամբք հոգւոյ յաղթիցեն նոցա, փախիցեն յէ զգայարանաց մարդոյն եօթնեկի մահացու մեղօք. զայս կատարելո՛ցն է իմանալ. և ո՛չ մեզ *տկարացս:* - 404. Զորօրինակ, արեգական լոյսն *տկար* աչաց վնասիչ է և ո՛չ օգուտ. և ջուր չորացեալ տնկոյ: - 540. Զի սրտիւն ապրին մարմնակեր գազանք. և հեշտ ցանկութեամբ բազմածին կենդանիք աճեն. և երկչոտութեամբ ապրին նապաստակք և *տկարք* ի հզօրից...: - 563. Սոքա քաղկեդոնին են. որք բաժանեն զբանն ի մարմնոյն. և զխաչեալն՝ մարդ սոսկ և *տկար* և մահկանացու խոստովանին: - 635. ...թէպէտ մեք անգիտանամք ի խորհրդոյն որպէս *տկար* տեսութեամբ: - 662. Այլք եղէգն. այսինքն զդատարկաբանութիւնս և *զտկար* գործս: - 702. Եւ սոքա ուղղին ի յարութեանն. զի գո՛րծ է կարօղ զօրութեանն աստուծոյ և ո՛չ *տկար* բնութեան: - 725. Երրորդ անդուստ՝ զի իբրև նոքա որ այն քան *տկարքն* էին՝ սակայն յա՛յնպիսի թշնամին այն քան յաղթութիւնս գործեցին ըստ յոբայ: - 765. Եւ ապա ի սէր և անձուկ ժտելոյ նորին, ապաստանեալ ի նոյն որ զօրացոյց *զտկարս*, ձեռն ի գործ արկեալ աւարտեցաւ բազում միջոցաւ. և փախստեամբ ի տեղիս. և մեծ ջանիւ փութացեալ: - 772. Յաւանեացն տեառն շնորհք, և սխալանացն *տկա՛րս* անօթոյ: - 789

**ՏԿԱՐԱՆԱՄ +** Նոյնպէս զիմանալի խորհուրդս և զգիտութիւնս զոր *տկարանայ* միտք, կարողանայ հաւատքն տեսանել. այլ ո՛չ ունի հաւատ՝ քան զտեսութիւն մտացն: - 31. Իններորդ՝ աչք ի չափաւորն հեշտանայ՝ և յանչափն *տկարանայ* որպէս յարեգակն: - 104. Եւ *զտկարանալն* ի խաչին, զառաւել զօրութիւն նորա. և այլն ամենայն: - 118. Երկրորդ՝ անդ աչքն *տկարանայ* ի տեսութիւն ուրուականին: - 133. Զի յետ անկմանն եղև խստացեալ և անզեղջ ի չարն. կորացեալ ի ճշմարտութենէն. անկեալ ի բարւոյն. *տկարացեալ* ի զօրութենէն. արտաքսեալ յաստուածային խոկմանէն: - 146. Նախ՝ զի հակառա՛կ է աստուծոյ, և մարդն պատկեր է աստուծոյ. յորժամ *տկարանայ* ի նախատիպն՝ ընդ պատկերն հակառակի: - 146. Եւ քրիստոսիւ *տկարացան* ի կրկին զօրութենէ...: - 153. Եւ թէ *տկարանաս* ի զօրութիւնն աստուծոյ՝ առ մե՛զ ևս զոն քեզ հաստատութեան նշան՝ անփուտ փայտ. և անքառամ

ծաղիկ. և մշտականաչ սաղարթ. և անթափ պտուղ: - 223. *Տկարանայ* միտքս թէ յապականացու երկրէ՛ է դրախտն և մասն է երկրի, ո՞րպէս է անապական: - 225. Վասն այն յորժամ մարդն *տկարանայ*՝ և այրեցած արիւնն աւելնայ, մազն ծորի՛ և երկայնանայ: - 240. Դարձեալ՝ որ քան յերկարի ժամանակս, մաշի՛ երկիր և ի ծերութիւն երթայ և *տկարանայ*. որպէս ծեր մարդոյն զօրութիւնն պակասի և ցաւքն առաւելու: - 292-293. Նաև ո՛չ ևս գային զի *տկարացեալ* էր յախտիցն արուեստ նոցա: - 323. Չորրորդ, զի նոքա ոչ կարէին լինիլ ախտակից *տկարացելոցն*...: - 354. Ութերորդ՝ զի թէ փրկիչն *տկարացաւ* զի մարդ եղև, քանի՞ առաւել սուրբքն: - 386. Եօթներորդ՝ *տկարանայ* զօրութիւնն: - 424. Դարձեալ՝ նոյն ինքն քրիստոսի է իշխանութիւնն որ աստ լուծանէ ի ձեռն քահանային. և իշխանութիւն նորա ո՛չ *տկարանայ* երբէք. որպէս զհաց և զգինին կատարէ և զայլ խորհուրդս. նոյնպէս և աստ: - 433. Զօրութիւնն երկնից՝ *տկարանայ*. և կեանքն ամենեցուն մեռանի: - 470. Թէպէտ կամաւ *տկարացար* և ետուր զքեզ ի ձեռս խաչողացն՝ հզօ՛ր ես յամենայնի: - 632. Եւ մեզ ետ իշխանութիւն կոխել զօձս և զկարիճս որ *տկարացեալ* էր և կապեալ: - 706

**ՏԿԱՐՈՒԹԻՒՆ +** Առաջին է՛ անգիտանալ *զտկարութիւն* և զփոքրկութիւն մարդկային մտաց. կարծեն թէ՝ ամենայնի պարունակօ՛ղ է, և ո՛չ ունի սահման: - 31. Գլուխ գոլով մեր և լեզու. *զտկարութիւն* բնութեան անդամոցս ցուցանելով հօր: - 42. Եօթներորդ՝ զի չարչարանօքն իւրովք յուսադրեաց զմեզ, զի մի՛ յետ *տկարութեանս* և սակաւ չարչարանաց ի փորձողէն՝ կասեսցուք ի նախատակութեանց...: - 43. Չորրորդ՝ կարողութեամբ արար զբանն և զհոգին և ո՛չ *տկարութեամբ:* - 56. Քսանևմիերորդ՝ արդ՝ եթէ քրիստոս տգէտ ունէր միտս, և տկար հոգի, և ապականացու մարմին և եկն քրիստոս զի բարձցէ *զտկարութիւնս* մեր...: - 99. Չորեքտասաներորդ՝ զի գիտասցէ սատանայ *զտկարութիւն* իւր՝ թէ ո՛չ միայն յաստուծոյ, այլ և ի մարդկանէ յաղթի...: - 159. Եւ այս ո՛չ պատճառի ի *տկարութենէ* շնորհացն որ միշտ նոյնպէս է նախ և յետոյ. այլ ի *տկարութենէ* անձինն շրջելոյ: - 166. Երրորդ՝ վասն *տկարութեան* և մոռացութեան մերոյ: - 177. Երկրորդ՝ վասն հպարտութեան մարդոյն. զի յորժամ խայթեսցեն զնա՝ ծանիցէ *զտկարութիւն* իւր. որ և զփարաւոն ո՛չ թէ առիւծք կամ առջք հարին, այլ ճանճք և մժղուկք տանջեցին: - 217. Հինգերորդ՝ զի *տկարութիւն* է զօրութեանն աստուծոյ՝ եթէ զմի էութիւն ըստ մասին յայլ և այլ ժամանակս գործեաց: - 254. Եւ ոչ նոր, զի մի և նոյն ի սկզբանէ հրամանն արարչադիր առանց *տկարութեան* ներգործէ մինչ ի կատարած...: - 257. Իսկ տնկականն միայն գործ է ի կերակրիլն և աճիլն, նա նկարէ յինքեան ի զգայութեանցն և ի մտացն ըստ *տկարութեան* իւրոյ անկարգաբար երևեցուցեալ ի յիշատակարանս մտացն որպէս ասացաք: - 268. Դարձեալ՝ յատկութիւն ի *տկարութենէ*. զի հանապազորդ ունի զպակասութիւն. և անկա՛ր է ի միշտ կանգնիլն: - 275. Երրորդ՝ զի մի հպարտասցի յետ յաղթութեանն սատանայի, խօսեցաւ աստուած և յաղթեաց բանիւ. զի տեսցէ *զտկարութիւն* իւր և խոնարհեսցի: - 325. Երկրորդ՝ ցոյցք է *տկարութեան* եգիպտացւոցն. որ ո՛չ կարացին ընդ դէմ կալ տկար զեռնոցն: - 333. Իսկ յատուկ, Նա՛խ՝ զի նոքա մարդիկ էին անկեալ ընդ *տկարութեամբ:* - 354. Եւ որ հասարակն, և սմա՛ մարմնոյն և հոգւոյն ո՛չ խտրի. զի եղբայր յեղբօրէ օգնեալ՝ զմիմեանց բառնան *զտկարութիւն:* - 370. Եօթներորդ, աստուած կոչեցեալ էր՝ զի յայտնեսցի *տկարութիւն* մարդոյ: - 386. Եւ դարձեալ՝ հայեաց ի քեզ. և մի՛ մոռանար *զտկարութիւն* և զպակասութիւն քո: - 398. Երկրորդ՝ զի տեսցեն *զտկարութիւն* դիցն որք զլուսաւորսն պաշտէին: - 416. Թողում զգերծումն մերկութեան և զքօշումն անարգութեան և *տկարութեան* խաչին. զայպանելն խաչողաց. և զխաւար լուսաւորացն. և յայլ դէմս դարձուցից զբանս: - 424. Նոյնպէս և *տկարութեամբ* նորին՝ կորստական խոնարհութիւն ցուցանի մարմնոյ իւրոյ աշխարհի: - 424. Երկրորդ՝ վասն *տկարութեան* օրինացն. զի ի հինն ո՛չ կարէր բառնալ զմեղս առանց մարմնական փոխարինաց և յիշատակութեանց: - 433. Չորրորդ՝ զի աշակերտքն *զտկարութիւնս* իւրեանց փորձիւ ճանաչեսցեն և գիտասցեն թէ ոչ վասն իւրեանց արժանաւորութեանն ընտրեցան...: - 521. ...զի ուսցին բառնալ *զտկարութեան* այլոց. որպէս քրիստոս զնոցայն եբարձ. իսկ թէ նախ զհոգին առեալ էին՝ ո՛չ կարէին բառնալ զայլոց *տկարութիւնն:* - 521. Սա յիմա՛ր է ո՛չ գիտէ *զտկարութիւն* իւր որպէս չար հիւանդ. զարթո՛ զսա: - 537. Այլ և որա՛կ է կամաւն և ակամայն. գիտութեամբն և անգիտութեամբ. կարողութեամբ և *տկարութեամբ*. և այլն: - 565. Այլ յատկապէս ըստ երից դիմացն, որ *տկարութեամբ* մեղանչէ՝ է՛ ընդ դէմ հօր. և տգիտութեամբն ընդ դէմ որդւոյ. և չարութեամբն ընդ դէմ հոգւոյն սրբոյ...: - 566. Եւ այսպիսի ասացեալ *տկարութեան* մեղաց առողջութիւն է բժշկարան **է** զօրութիւնք որ կոչին առաքինութիւնք. որ են այսոքիկ: - 571. ...զի բազում արգելմունք գոն պսակին. որպէս ազգակցութիւնն

հոգևոր կամ մարմնաւոր. կամ *տկարութիւն* բնութեանն...: - 610. Երրորդ՝ ուղղի մոլորութիւնն որ է՛ խանգարումն անդամոցն ի միմեանս սխալեալ ըստ բնութեան *տկարութեանն:* - 725. Մակա՛ն հաստատուն իմոյ *տկարութեան* ես դու: - 771. Եւ վասն իմոյ *տկարութեան* և ժամանակիս վրդովման զխնդիրն յապաղէի: - 772. Ո՛չ ըստ բաւական բանի առեալ զլուծումն. այլ ըստ կարի *տկարութեան* արտայայտումն. մանաւանդ հարկեալ ի սիրոյ քումդ եղբայրական խնդրոյ: - 788

**ՏՀԱՍ +** Իսկ մեք ո՛չ ոտք և ո՛չ լեզու ունիմք. այլ *տհաս* և տգէտ...: - 620

**ՏՂԱՅ +** Ասեմք առ այս, եթէ այսու վկայե՛ս և դու մեզ՝ թէ ո՛չ է հարկ. զի ի բոլոր քաղաքն այնքան բիւր մարդիկ՝ ծեր և *տղայ*՝ ե՛րբ և ո՛ւր ի մի շարժումն աստեղաց ծնան, որք ի միասին կործանեցան...: - 13. Ձորօրինակ՝ որպէս *տղայ* որ տեսանիցէ ցից ի յորմում, երթայ ի մօտ. թէ ամո՛ւր է՝ թողու. վասն զի ո՛չ կարէ հանել. և երթայ առ միւսն. թէ շարժի՝ ի մօտ կենայ մինչև հանէ՛: - 160-161. *Տղայն* զմերձն տեսնու, և ծերն զհեռուն: - 227. Եւ ուսումն *տղայոց:* - 228. Զի՞նչ է որ *տղայն* զմերձն աղէկ տեսնու. և ծերն զհեռուն: - 239. Այս երկու երակս թէ տաք է և չոր, մարդն ի մօտն աղէկ տեսնու՝ և ի հեռուն վատ. որպէս *տղայն:* - 239. Նախ՝ ի տղայութեան հասակն. յորժամ ծնանի *տղայն*՝ ունի զհողմն արևելից տաք և գէջ: - 240. Վասն է՞ր *տղայն* առաւել ուսանի քան զմեծն: - 251. Եւ գիտելի՛ է, զի զբնական արւեստն *տղայքն* առաւել ուսանին: - 251. Վասն է՞ր մին *տղայն* ուշիմ և մտացի լինի. և մինն ապուշ և բռնամիտ: - 251. Վասն որոյ յեօթն ամիսս ատամն բուսանի *տղայոց*. և յեօթն ամն դարձեալ փոխի: - 264. Նախ՝ վասն պարզամտութեանն. զի որպէս *տղայք* ո՛չ ամաչեն անծածուկ ունելով զմասունս. նոյնպէս և նոքա: - 278. Իսկ ի նախնիքն *տղայ* և առոյգ էր բնութիւնս՝ վասն որոյ յերկար ապրէին: - 291. Զի *տղայ* մանուկ երթեալ ո՛չ ոք գիտէր զնա. և ո՛չ նա զոք ճանաչէր զի քանանացի՛ էր և աննման վարուց նոցա: - 300. Հինգերորդ՝ նշանակէ թէ զարիւն *տղայոցն* չէ մոռացեալ աստուած զոր հեղձուցին ի գետն. զայն ըմպել տայ նոցա: - 333. Երկրորդ՝ իբր թէ *տղայքն* զորս ի ջուրն հեղձուին՝ կենդանացեալ տանջեն զնոսա: - 334. Զի *տղայո՛ց* է երկիւղիւ խօսիլ: - 341. Հինգերորդ՝ *տղա՛յ* էր ժողովուրդն, և զուարճանային ի տեսութիւնն. վասն այն զանազան գունով զարդարեաց: - 342. Նա՛խ՝ զի *տղա՛յք* էին և ի տե՛սն զուարճանային. որպէս խորանն և ա՛յլ սրբութիւնք. նոյնպէս և զգեստք քահանայութեան: - 347. Տասներորդ՝ ձայնն երկիւղէ *տղայոց*. և բանն երկիւղէ կատարելոց: - 354. Չորրորդ՝ այն *տղայ* հասակի. և աստ երիտասարդ. և անդ ծեր: - 355. Հինգերորդ՝ թիւն զընտրութիւն՝ զդաս՝ և զկարգն ցուցանէ. զի գո՛յ ի նմա՛ առաջին միջին և վերջին. որպէս զինւորք. իսկ անթիւն խոտան և անկա՛րգ է. որպէս ծերք և *տղայք:* - 377. Նա՛խ՝ զի ծերն և *տղայն* պակա՛ս է ի զօրութենէ: - 377. Դարձեալ՝ ծեր և կին և *տղայք* ո՛չ թուին. զի պակասեա՛լ են յարիութենն: - 377. Երկրորդ՝ զի զգին ծերոյն պակաս հրամայեաց. զի **ե** ամեայ *տղայոյ* երկդրամեան էր. և ի ամենին ի երկդրամեան. և անտի մինչև ի **կ** ամն **ծ** երկդրամեան. և ի **կէն** յառաջ **ժե** երկդրամեան: - 377. Ութերորդ՝ զի ապաժո՛ւժ է և պակասամիտ որպէս *զտղայ*. զի անիւ կենացն հոլովեա՛լ է ի տղայութեան տիքն: - 377. Որ է՛ *Տղայ*. Մանուկ. Պատանեակ. Երիտասարդ. Ալևոր. Ծեր. իսկ երեխայն դեռածինն է: - 378. *Տղա՛յ* է եօթնամեան: - 378. Որ է՛ *տղայն*. կատարեալն. և ծերն: - 378. Առաջին մինչ ի **ի** ամն *տղայ:* - 378. Երրորդ՝ նախ անկատա՛ր բնութիւնս և *տղայ*. և այժմ կատարեալ: - 395. **Իսկ ճշմարիտն աստուած զայս ո՛չ խնդրէ. այլ երկիւղ խնդրէ ի *տղայոց* որով խորշին ի չարէ. և սէր ի սրտէ փոխանակ անասնոց. և խաղաղութիւն առ ընկերս և օտարս**...: - 396. Երրորդ՝ զայն ցուցանէ որ կեանք դրախտին դարձաւ առ նոսա յանապատին անկարօտ ամենայնի. զի զգեստն ո՛չ մաշէր. այլ աճէ՛ր ընդ *տղայոցն*. և ոտն բոկ՝ և ոչ՛ կոշկոճէր...: - 397. Եւ կամ այն թէ՝ «ութնօրեայ թլփատեսցես զմանուկն և մի պակաս». զի մի՛ ճիչ *տղային* չարչարեսցէ զգութ մօրն: - 399. Եւ այսպէս ամենայն *տղայոց* հանդիպի մահ ըստ խնամոցն աստուծոյ: - 433. Եւ երբեմն երկոքեանն ծածուկ. որպէս ի նեղութիւնս իւրաքանչիւր արդարոց և անմեղաց. և ի հիւանդութիւնս *տղայոց:* - 459. Երրորդ՝ զի իւրաքանչիւր հասակի զմեղս բարձցէ. որպէս ծննդեամբն զերկուսն ելոյծ. և մահուամբն զմահ. նոյնպէս և *տղայ* և մանուկ և երիտասարդ հասակաւ զնոսա արդարացոյց: - 479. Այլ թէ որ հասակաւ մեծ է, խնդրի յատուկ հաւատ. իսկ թէ *տղայ* է՝ բաւական է խորհուրդն եկեղեցւոյ: - 588. Այլ կնքահայր ո՛չ է պարտ առնել զայլազգին. զի ո՛չ ունի զհաւատն սուրբ, և ո՛չ է հրաժարեալ ի սատանայէ. վասն որոյ ո՛չ կարէ լեզու լինիլ *տղային* կամ երաշխաւոր...: - 591. Փոքրիկ *տղային* զի՞նչ է մեղք: - 591. *Տղայն* իւր կամաւն ո՛չ գործէ. վասն է՞ր է պարտական մեղացն ադամայ: - 591. Արդ փոքրիկ *տղայն* ո՛չ վասն այն տանջի թէ ադամ եթող զայն. այլ զի ինքն զարդարութիւնն զայն ո՛չ ունի վասն այն տանջի: - 591. Ապա ուրեմն յիրաւի՝ զի բնական արդարութիւն ի *տղայն* ո՛չ գտանի, յարդարութենէն աստուծոյ

արդարապէս մերժի և ընդ անիրաւսն տանջի: - 591. Թէ յղի կին մկրտի՝ օգո՞ւտ է այն *տղային* թէ յարգանդ մօրն մեռանի: - 592. Եւ զի՞նչ իցէ պատիժ անմկրտեալ *տղային:* - 592. Եւ թէ ասեն՝ կարէ՛ մին քահանայն ի մին ժամս բազում *տղայս* մկրտել. ապա և կարէ՛ բազում հացս օրհնել: - 597. Կամ ի զանազան դիմաց և ազգաց. որպէս այր, կին, ծեր, *տղայ*, ժողովեալ կոչի մի եկեղեցի: - 613. ...այսինքն ա՛յլ կարգ քահանայից. և ա՛յլ կրօնաւորաց. ա՛յլ աշխարհականաց. և ա՛յլ *տղայոց:* - 671. Եւ թէ ոք ասիցէ, անմեղ *տղայքն* զի՞նչ պէտք ունին առաւել թաղման: - 674. Ասեմք թէ՝ անմեղ *տղայոցն* առաւել պէտք են...: - 674-675. Զի՞նչ է որ առ հասարակ ամենեքեան. այր և կին՝ ծեր և *տղայ* ընդ մեռելոյն ընթանան ի գերեզմանն: - 675. ...այսպէս և ննջեցեալք ամենայն ծեր և *տղայ*՝ յառնեն ի մի չափ հասակի երեսնամեայ որ է կատարեալ հասակ որպէս ցուցանի յառաջիկայդ: - 721. Նախ զպակասութիւնն. որպէս ի *տղայս* և յանդամնահատս և նուազեալ անդամք. որպէս **դ** մատնի և այլքն...: - 725. Սակայն իւրաքանչիւր ոք անսխալ անդամօք իւրովք յառնէ. այլ ո՛չ երևի թէ սա այր է և նա կին. այն ծեր և այն *տղայ*. զի որպէս հրեշտակք են յերկինս: - 726. Եւ է՛ ինչ ի ներգործութեանց հոգւոյն աստուծոյ շնորհաց. որ ծածկէ՛ յիմաստնոց և յայտնէ *տղայոց* յիւրաքանչիւր ժամանակս ըստ կամաց իւրոց: - 772

**ՏՂԱՅԱԿԱՆ +** Նոյնպէս և քրիստոսի մինչ *զտղայական* հասակն նկարեն, փաթութեալ հանեն զթուղթն ի ձեռն. իբր ի հրէից ծնեալ զամենայն ինչ ըստ օրինացն առնել: - 481. Իսկ թէ իցէ հաւատ դիւաց, գո՛յ մտածել *տղայական* կարծեօք՝ թէ անկումն նոցա եղև հաւատոց պատճառ է որ է՛ սուտ: - 784

**ՏՂԱՅՈՒԹԻՒՆ +** Զի *տղայութիւնն* օդո՛յ է. և միջին հասակն հրոյ և հողոյ. և վերջինն ջրոյ. վասն այն սպիտակի. որպէս ցուցանի յառաջիկայդ **ժզ** գլուխն՝ **իզ** համարն: - 213. Նախ՝ ի *տղայութեան* հասակն. յորժամ ծնանի տղայն՝ ունի զհողմն արևելից տաք և գէջ: - 240. Երեկոյ է ի *տղայութենէ* ի մանկութիւն: - 265. Առաւօտ՝ որ է՛ *տղայութիւնն*. այն ինչ ի լոյս մերձեալ: - 265-266. Ապա ուրեմն յա՛յտ է՝ զի *տղայութիւնն* ո՛չ կարէ զնմանն ծնանիլ. այլ մանկութիւնն որպէս ասացաւ: - 266. Յեղանակս գարնան, և յառաւօտուն մինչև յերեք ժամս, և հիւթոյ արեան, և մանկութեան հասակն ի *տղայութենէ* ծննդեան և անման՝ ունին զնմանութիւն օդոյ ջերմ և գէջ գոլով: - 266. Ութերորդ՝ զի ապաժո՛յժ է և պակասամիտ որպէս զտղայ. զի անիւ կենացն հոլովեա՛լ է ի *տղայութեան* տիքն: - 377. Վաթսունն՝ **զ** տասն է. նշան նոցա՝ որք **զժ** բանեան օրէնսն կատարեն ի **զ** դար կենցաղոյս...: - 440. Դարձեալ ասեմք, փոփոխումն և աճումն հասակին ո՛չ եթէ ապականութեան էր ցոյցք. այլ զի զճշմարիտ մարդեղութիւնն հաստատեսցէ ընտել սովորութեամբ մեր որ ի *տղայութենէ* զարգանամք: - 501. Վեցերորդ ըստ երբին. այսինքն թէ ե՞րբ գործեն զմեղքն. ի *տղայութեա՞ն*, թէ ի ծերութեան որ մեծ մեղք է. ի սո՞սկ աւուրս, թէ ի տէրունական տօնս. զի որ ի տօնս մեղք գործէ, առաւել պատժի քան զմիւսն: - 565. Երեկոյ է *տղայութիւնն*. յորում նո՛ր գամք ի խաւար կենցաղոյս: - 622. Եօթներորդ, որ ի *տղայութեանն* հասակէ՛ կան յաստուածպաշտութիւն, իբր զխոտս դալարի պտղաբերեն զհարիւրաւորն: - 757

**ՏՄՈՐԻՍ** - Ծաղիկ զմռնեաց. նմանէ պոյտն ծաղկի. և Կինամոն. արմա՛տ է խոտոյ ի *տմորիս* հայոց. և Խնկեղէգն. որ յարմատս ո՛չ ամենայն եղեգան լինի. և Յիրիկ. խէ՛ժ է ծառոց: - 349

**ՏՆԱՆԿ +** Աղքատ և *տնանկ* զմարդկային բնութիւնս ասէ. որ հարստահարեցաւ և զրկեցաւ ի սատանայէ՛: - 317. Երկրորդ՝ զի ողորմութիւն և մարդասիրութիւն ուսցին. տալ զբաժին աղքատաց և *տնանկաց:* - 371. ...և **ժ** գան արբցէ. և տրօք *տնանկաց* ապա՛ հաղորդեսցի: - 652

**ՏՆԱՆԿԱՆԱՄ +** Երկրորդ՝ զփոփոխումն թագաւորաց, զաղքատաց մեծանալն, և զփարթամացն *տնանկանալ:* - 26

**ՏՆԿԱԳՈՐԾ +** Ի փառս և ի Գովեստ նորին *Տնկագործի* և Առաջնորդի: - 772

**ՏՆԿԱԿԱՆ +** Երկրորդ՝ *տնկականացն:* - 50. Եւ ժամանակեայ՝ որ ունի սկիզբն և կատարած. որպէս զգայականք. և *տնկականք:* - 116-117. Որո՞վ զանազանին և հաւասարին զգայական և *տնկական* կեանք: - 117. Եւ զանազանին, Նախ՝ զի *տնկականն* միայն ի ջերմութենէ հրո՛յ է: - 117. Երկրորդ՝ զի *տնկականն* ունի զկերակրիլն՝ զաճիլն՝ և զծնանիլն: - 117. Երրորդ՝ ի ձայնաւորէ՛, կիսաձայնէ՛, և բաղաձայնէ՛. որպէս բանական զգայական և *տնկական:* - 178. Դարձեալ՝ զի *տնկականն* վերափչո՛ւմն է օդոյն հանդերձ խոնաւութեամբն երկրի. վասն որոյ բոլորաձև արտաքս գայ և լինի ծառ: - 213. Քանզի՝ ե՞րբ ներգործէ *տնկականն* և զգայականն և բանականն: - 228. Այսինքն *տնկական*. և զգայական. և բանական. և զի յանկատարէն ելանեմք ի կատարեալն. վասն որոյ նախ ստեղծաւ *տնկականն* ոգի, և ապա՛ զգայականն, և ապա՛ բանականն որ է կատարեալ մարդն: - 231. Դարձեալ են և ա՛յլ զօրութիւնք անբաժանելիք ի հոգւոյն. որպէս *տնկականք*, և զգայականք: - 249. Իսկ անհնազանդ բանին՝ որպէս

բանականն և *տնկականն:* - 249. Եւ ըստ այսմ զանազանին երեքկին զօրութիւնք հոգւոյն. այսինքն *տնկական*. զգայական. և բանական: - 249. Զի *տնկական* հոգին յօժարի՛ գոլ...: - 249. Զի կազմողական զօրութիւնն որ է՛ ի նիւթն՝ ազդումն առեալ յարարչադիր հրամանէն, նախ կազմէ՛ և պատրաստէ՛ զնիւթն առ ի յընդունելոյ *զտնկականն*. և ապա զզգայականն. յետ որոյ զբանականն ի ծագմանէն աստուծոյ: - 254. **Նախ՝ զի նիւթն այն ունի առ ինքն բնական զկենդանութիւն *տնկականին*. և *տնկականն* մա՛սն է զգայականին. և զգայականն բանականին. և սոքա ո՛չ որոշին ի բոլորէն. զի մի են էութեամբ ի մարդն թէպէտ ա՛յլ են ներգործութեամբ**: - 254. Ասեմք եթէ՝ ի կողմանէ նիւթո՛յն կարելի է ասել. զի զոմն ունի, և զոմն ընդունի. այսինքն *զտնկականն* ունի, և ընդունի զբանականն: - 254. Այլ ի կողմանէ հոգւոյն՝ զօրութեամբ ո՛չ է ի սերմն այն ըստ ինքնութեան բոլորին. այլ ըստ ինքնութեան մասին. որ է *տնկականն* և զգայականն: - 255. Այսպէս և բանական հոգւոյն նշոյլք է զգայականն և *տնկականն:* - 255. Այսպէս և հնազանդեալ զօրք հոգոյն՝ զգայականն և *տնկականն* է. և նոքօ՛ք է հոգին ի մարմինն: - 255. Նախ *տնկականն*. և ապա զգայականն. և ուր սոքա երևին ի հրամանէն աստուծոյ, երևի և անդ բանականն: - 255. Չորրորդ՝ զի ո՛չ է այն մեռելութիւն միայն՝ որ բանականն կամ շունչն պակասի. այլ և որ *տնկականն* պակասի. որպէս քար. ա՛յն է իսկապէս մեռեալ: - 256. Այլ այժմ *տնկականն* գո՛յ ի նմա թէպէտ ո՛չ շունչն և ոչ բանն: - 256. Եթէ *տնկական*. եթէ զգայական. և եթէ բանական: - 257. Այլ և հատումն ամենևին ո՛չ ասի հոգւոյն. ո՛չ *տնկականի* և ո՛չ զգայականի և ո՛չ բանականի: - 257. Նա՛խ՝ զի անմարմին է հոգին. վասն որոյ ո՛չ հատանի. ո՛չ *տնկականն*. ո՛չ զգայականն. և ո՛չ բանականն: - 257. Այլ արդ՝ նախախնամութեամբ է *տնկականն* և զգայականն. որք փտելով և զնմանս ծնանելով պահեն զնոյն տեսակն: - 257. Զի նախախնամութեամբ ունի *զտնկականն* և զզգայականն. և ստեղծմամբ զբանական հոգին զպատկերն աստուծոյ: - 257. ...իսկ արուեստն որ է արարչադիր հրամանն, ազդէ՛ ի նիւթն. և զի անկատա՛ր է նիւթն, անկատար տայ և նմա հոգի *զտնկականն:* - 258. Եւ թէ ոք ասիցէ, վասն է՞ր նախ *զտնկականն* տայ և ապա զբանական հոգին: - 258. Եւ ըստ անասնոցն հաւասարութեան նախ գոյանայ անասնականն որ է *տնկականն* և զգայականն. և յետոյ բանականն: - 258. Ոմն նախախնամութեամբ. որպէս *տնկականն* և զգայականն. և ոմն ստեղծմամբ. որպէս բանականն: - 258. Իսկ հոգի մի է մարդոյ ի միոյ նախախնամութենէ յառաջ բերեալ. յանկատար նիւթն եդեալ *զտնկականն* և զզգայականն. և ի կատարեալն զհոգի բանական ծագեալ: - 259. Այսինքն բանականն ի մարդն. և զգայականն յանասունս. և *տնկականն* ի բոյսս: - 259. Իսկ *զտնկականն* ի տունկն ո՛չ է պարտ ասել զօրութիւն. այլ հոգի է *տնկական:* - 259. Զի մի և նոյն հոգին ըստ այնմ որ ազդէ՛ ի *տնկական* ներգործութիւնն որ է՛ կերակրական. աճողական. և ծննդական. կոչի *տնկական:* - 259. Եւ զորօրինակ՝ ի զգայականն գոյ *տնկականն*, այլ մի է հոգի զգայականին և ո՛չ **բ**: - 259. Այսպէս և զգայականն և *տնկականն* մասունք են բանականին՝ նախ եդեալ ի մարմինն. և յորժամ բանականն հեղի ի մարմինն, յայնժամ և սոքա հեղին ընդ նմա. զի զօրութիւնք և մասունք են նորա ըստ օրինակի նախասացեալ երրորդ թուոյն: - 259-260. Եւ յայնժամ զգայականն և *տնկականն* ո՛չ ունին զներգործութիւն իւրեանց ի կազմողական զօրութենէն. այլ ի նոյն ինքն ի հոգոյն: - 260. Եւ նա հոգին է որ զզգայական և *զտնկական* զօրութիւնն ի գործ ածէ միայն ի մարմինն որքան է ի մարմնի: - 260. Եւ թէ ասիցէ ոք, երևի ապա թէ առաջին զօրութիւն հոգւոյն *տնկականն* է՝ և վերջին բանականն որ է՛ յոյժ անպատշաճ: - 260. Ասեմք առ այս, եթէ բանականն առաջին է ըստ պատւոյ քան զզգայականն. և զգայականն քան *զտնկականն:* - 260. Այլ հակադարձեալ սոքա ըստ կարգի և ըստ դասու՝ յառա՛ջ է *տնկականն* քան զզգայականն, և նա՛ քան զբանականն ի յերևումն. այլ էութեամբ համանգամայն են. որպէս անդ ուրեմն ասացաք վասն հոգւոյ և մարմնոյ: - 260. Դարձեալ ըստ կարգիս հարցանեմ թէ յո՞րժամ, և ի քանի՞ս սկսանի ներգործել *տնկականն* և զգայականն և բանականն: - 261. Զի սերմնական զօրութիւնն որ է՛ ի նիւթն այն՝ իսկ ընդ խառնիլ սերմանցն յարգանդի, զուգապէս ցուցանէ *զտնկականն:* - 261. Իսկ *տնկականն* կերակրի յետ **զ** աւուր: - 262. Զի վեցն որ է՛ կատարեալ թիւ, և նիւթն այն է՛ ի չորից տարերց, և ունի առ ինքն զկազմողական և *զտնկական* զօրութիւնն որ է **զ**: - 262. Զի ամենայն նիւթ սերմնականի է՛ ի չորից տարերց. և ունի զկազմողականն զօրութիւն. որով լինի *տնկականն:* - 262. Իսկ *տնկականն* ունի երիս զօրութիւնս. այսինքն զկերակրականն որ է՛ սննդականն. զաճողականն և զծննդականն: - 262. Արդ՝ *տնկական* զօրութիւնն բնականապէս՝ է նիւթն. որով կազմի և պատրաստի նիւթն առ տեսակս ազգի իւրեանց: - 262. Ասեմք թէպէտ նիւթն ի չորից տարերց է, այլ *տնկականն* զօրացեալ քան զնիւթն՝ ըստ իւրոյ մասանցն ծնանի...: - 262-263. Ասեմք թէպէտ նիւթն ի չորից տարերց է, այլ տնկականն զօրացեալ քան

զնիւթն՝ ըստ իւրոյ մասանցն ծնանի. զի ծնանիլն *տնկականին* է. այլ և ունի զտարերացն թիւ. զի յամիսս չորս կատարի այն՝ որ յառաջ ծնաւ: - 262-263. Եւ ունեալք *զտնկականն* կարգաւ ելցուք ի զգայականն: - 263. Արդ՝ զգայականն է ի չորից տարերց. և ունի *զտնկականն:* - 263. Այլ և պարզապէս ըստ չորից տարերց *տնկականին*՝ **գ** զօրութիւնք և **ե** զգայութիւնք՝ լինի **բժ**ան: - 263. Այլ և յաւելեալ ի վերայ զշարժականն և զշնչականն և զցասմնականն և զցանկականն, ընդ նմին և զկազմողական նիւթն և *զտնկականն*, որ լինի **ժը**. վասն որոյ ոմանք ի տարին և կէսն ծնանին որպէս ուղտ: - 263. Դարձեալ *տնկականն* ունի **գ** զօրութիւն, և **ա** զնիւթն, և **ե** զգայութիւնս, որ լինի **թ**. վասն որոյ **թ** ամսեայ ծնանի: - 263. *Տնկական*. զգայական. և բանական. վասն որոյ **է** ամսեայ ծնեալն ապրի և շնորհալի լինի վասն շնորհալի թուոյ եօթներորդին: - 263. Դարձեալ **դ** տարր, և *տնկականն* և զգայականն, և երեք մասունք հոգւոյն բան ցասումն և ցանկութիւն, որ լինի **թ**: - 264. Դարձեալ **գ** ամիս *տնկականին* որպէս ասացաք. և **գ** զգայականին. և **գ** բանականին: - 264. Իսկ մարդոյն խորհուրդն ըստ չորից տարերց և երից զօրութեանց *տնկականին* եօթեամբ կատարի...: - 264. Եւ վասն *տնկական* և զգայական մասին՝ կազմողական զօրութիւնն այլ ևս աճեցուցեալ զմարմինն **բ** ամ և դադարեալ յերեսներորդին...: - 265. ...և *տնկականն* առաւել է ի տունկս՝ քան յանասունս: - 266. Իսկ զի բանական միտքն ո՛չ տեսանէ զերազն, այլ անբան մասն, որ է՛ *տնկականն* ի մեզ. նա՛ յածի յերազն. և ցուցանի այս ի կրկին իրաց: - 268. Իսկ *տնկականն* միայն գործ է ի կերակրիլն և աճիլն...: - 268. Իններորդ՝ **մանուկն յարգանդի ո՛չ հացիւ կեայ. այլ հրամանաւն աստուծոյ կերակրի ընդ պորտն զինն ամիս. որպէս *տնկականք*, և որպէս նոյ ի տապանն. մինչ ելանէ յարգանդէ**...: - 397. *Տնկականք*՝ այսինքն բոյսք և պտուղք յորմէ և հատցին թէ ի մարդոյ և թէ յայլ կենդանեաց՝ կերակրելիք են: - 511. Որ անհնազանդ է բանին, որպէս *տնկականն*. հալելն և աճիլն և այլն. և սոքա ոչ կարեն լինիլ ենթակայ առաքինութեանց: - 572. Երրորդ՝ զի **գ** են տեսակք հոգւոց. *տնկական*, զգայական, բանական. և սոքօք մեղանչեմք: - 681. Նաև **գ** զօրութիւնք են *տնկականին*. այսինքն կերակրիլն, աճիլն, և ծնանիլն. և մեք ունիմք զայս: - 681. Կամ *տնկական* և զգայական և շնչաւոր գոլն: - 745

**ՏՆԿԱԿԻՑ +** Մահուամբն քրիստոսի լուծան մեղք. բայց մեք ի հաւատ մահուն քրիստոսի մկրտիմք. զի *տնկակից* լիցուք մահու նորա: - 592

**ՏՆԿԵՂԷՆ** - Երրորդն հողեղէն և *տնկեղէն:* - 221

**ՏՆԿԵՄ +** Նախ՝ եթէ լինէր բանս մեր ի հարկէ ճըշմարիտ, նա ո՛չ մինն միայն, այլև ամենայն բան զինչ ասէաք՝ ճշմարիտ լինէր. որպէս շինել քաղաք, կամ ո՛չ շինել. *տնկել* այգի, կամ ո՛չ *տնկել:* - 8. Ո՞րպէս ասէ մեծն Ներսէս շնորհալին. ընդ ծառոց երկրի զգալեաց. *տնկեաց* և զտունկս իմանալեաց: - 221. Յայն՝ զի փայտ դրախտին անփուտ է. և տերևն անփտելի. և պտուղն անծորելի. և ծաղիկն անթառամելի. և աստուծոյ *տնկեալ* ձեռօք իւր. տեղի անապական ձեռագործին ադամայ: - 223. Իսկ թէ ըստ մարմնոյն շեղեսցի՝ ի մահ պարտաւորեսցի և *տնկեսցի* ի մարմնաւոր տեղիս. որպէս և եղև իսկ: - 231. Եւ զոր օրինակ՝ տունկ ի յերկրի *տնկեալ*՝ նախ դալարի. և յորժամ հաստատի ծաղկի. և յորժամ ևս հաստատի՝ ապա պտղաբերի: - 255. Որպէս ճիւղ հատեալ ի ծառէ և *տնկեալ* յերկրի, ճիւղն է հատեալ ի ծառէն, այլ կենդանութիւնն ո՛չ. ուստի յա՛յտ է զի *տնկեալ* ճիւղն նոյն կենդանութեամբն բուսանի զոր ունի առ ինքն: - 257. Նա՛խ՝ եթէ գիտէ՞ր մարդ զօր մահուն, ո՛չ շինէր և ո՛չ *տնկէր* և ոչ ծնանէր զաւակ. և լինէր պատճառ աւերման: - 292. **Երրորդ՝ նշանն սրբոյն յակոբայ մծբնայ հայրապետին. և գեօղն արկուռի՝ ուր *տնկեաց* այգի. և քաղաքն նախիջևան, ուր ինքն նոյ հանգուցեալ է ի տապանի**: - 295. Նաև զամենայն գլխաւոր մեղս ընդ հզօր խորհուրդ ասէ սուրբն եւագրիոս. վասն զի նախ ի խորհուրդն *տնկի* ամենայն սերմն մեղաց. և ապա ի մարմինն բուսանի և աճէ: - 557. Որ և յարազուարճ բարերջանկութեամբ լի և ամենազան քաղցրորակ պտղաւէտութեամբ *տնկեսցիս* ծառ բարձրաբերձ յընթացս հոգւոյն ի մէջ եկեղեցւոյ տանս թորգոմեան ազգիս հայկազնեան: - 558. Եւ զորօրինակ **յաշնայնոյ զդժնիկն խլեմք և զվարդենին *տնկեմք***...: - 714. ...ի գարունն ո՛չ թէ դժնիկն խլեալ բուսանի, այլ *տնկեալ* վարդենին. եթէ արմատն ոչ մնայ դժնկին: - 714. Ուղղակի ուրեմն փայտս այս ասի գոլ *տընկեալ* մերձ յընթացս ջուրց. զի ի նմանութիւն մարմնոյ մեղաց երևեցաւ. և զամենայն նուաստութիւնս մեր յինքն ընկալաւ: - 755. Նա՛խ՝ ծառն կենաց են հաւատացելոց անձինքն *տնկեալք* ի վտակս հոգւոյն՝ ջրով աւազանին. հետևեալ ի մշտնջենաւոր կեանս: - 765. Երկրորդ՝ ծառ կենաց են բնակիչք վերնոյն սիօնի. *տնկեալք* յաղբիւրն կենաց որ իջանէ յաթոռոյն աստուծոյ ի մէջ նոցա. ունելով զանմահ կեանս յաւիտենից: - 765. Դարձեալ, ծառ կենաց է աւետարանն սուրբ *տնկեալ* ի մէջ

եկեղեցւոյ դրախտին. բերելով պտուղ կենաց զիմաստութիւնն երկնաւոր. որ կեանս տայ ճաշակողացն զնա. և միշտ շնորհս բժշկութեան և թողութեան մեղաց: - 768. Դարձեալ՝ ծառ կենաց է տունկն իմաստութեան որ ի յերկնից առ մարդիկ *տնկեալ:* - 768. Արդ ահա ա՛յսոքիկ են ծառ կենաց ի յերկինս և յերկրի *տնկեալ*. փոխանակ ծառոյն կենաց ի դրախտին եդեմայ. յորմէ հրաժարեցոյց և պարսպեաց բոցեղէն սրովն զճանապարհ նորին: - 771

**ՏՆՏԵՍ +** Ութերորդ՝ անդ տանն *տնտեսն*. և աստ տանն առնօղն: - 353. Երկրորդ՝ առեալ լինի ի տեղի միամտութեան, ըստ *տնտեսին* որ էր «հաւատարիմ և իմաստուն»: - 457. Քսաներորդ՝ ... Քանզի, և յառակս *տնտեսին* զոր կացոյց տէր ի վերայ ծառայիցն տալ կերակուր. զոր յետոյ տէրն եկեալ գտցէ այնպէս՝ երանի է ծառային այնմիկ. ապա թէ ոչ՝ ընդ մէջ կտրեսցէ: - 693

**ՏՆՏԵՍԱԿԱՆ +** Եւ ի *տնտեսականն*. որպէս Աստուած փրկիչ. կամ արդարութեան. կամ խաղաղութեան. կամ աբրահամու. կամ իսահակայ և այլն. և այս հասարա՛կ է Երրորդութեանն: - 49. Որ է՛ բարոյականն *տնտեսականն* և քաղաքականն: - 580. Դարձեալ կոչին և բարոյական և *տնտեսական* և քաղաքական առաքինութիւնք. որպէս ասացաւ ի վերոյ ի ճառս խոհեմութեան: - 582

**ՏՆՏԵՍՈՒԹԻՒՆ +** Զի **բ** թագաւորութիւն լուաք ի գրոց. **ա** ըստ արարչութեան, և **բ** ըստ *տնտեսութեան:* - 42. Եւ *տնտեսութեամբն* ո՛չ. բայց միայն հնազանդելոցն: - 42. Իսկ յորժամ ամէն լեզու խոստովան լիցի տէր զյիսուս քրիստոս, անզրաւապէս թագաւորէ՛ ընդ հօր և *տնտեսութեամբն:* - 42

**ՏՆՕՐԷՆՈՒԹԻՒՆ +** Դարձեալ քննեսցուք ըստ մեզ. զի ո՛չ են հակառակ առաքելոյն բանն և աւետարանին, թէ հայր մեծ է քան զորդի. զի երկոքին նոյն ինքն աստուածութեանն իմանին. ըստ այնմ որ զմեր նուաստ և տկար բնութիւնս միացոյց ընդ իւրում աստուածութեանն, և անտեսանելին տեսանիւր՝ և ծառայի կերպիւ շրջէր վասն *տնօրէնութեան* ասի փոքր յայս միաւորութեանս քան զհայր. իսկ ըստ այնմ որ է՛ անճառ և նախքան զյաւիտեանս ծնունդ ի հօրէ՛, հաւասա՛ր է հօր և ոչ փոքր: - 40. Եւ կամ թէ զո՛չ ոքն ասիցէք, ահա նո՛ր աղանդ չարափառութեան և խափանումն *տնօրէնութեան* մեծի խորհրդոյն: - 68. Նոյնպէս և ի *տնօրէնութիւնն* քրիստոսի նեստոր չարաչա՛ր բաժանէ զանձինս և զբնութիւնս, զկամս և զգործս: - 81. Նոքա ի կիսաէշ նման *զտնօրէնութիւնն* սուրբ համբաւեն. և կամ առ աչօք և ունայնութեամբ. որպէս մանիքեցւոցն, և կամ եւտիքի կարծի: - 81. Եւ ուրանալ զբոլոր *տնօրէնութեանն* խորհուրդ: - 90. Իսկ թէ ասի ուրեք՝ ի հոգւոյն և ի հօրէ օծանիլ նմա, վասն *տնօրէնութեանն* խորհրդոյ ասին: - 95. Ա՛րդ՝ ճանապարհո՛րդ էր ըստ մարմնոյ *տնօրէնութեանն* մահւամբ և յարութեամբ մտանել ի փառս: - 100. Այսքան առ *տնօրէնութիւն* բանին: - 101. Եւ տէր մեր չորիւք կատարեաց զտարի *տնօրէնութեան* իւրոյ: - 126. Դարձեալ՝ և առ *տնօրէնութիւն* Բանին տեսանին սոքա չորեքկին: - 129. Նախ՝ աստուածաբանն գրիգոր՝ զոտքն մարմնով *տընօրէնութեանն* ասէ նշանակ. զի մարմնով եկեալ զփրկութիւն մեր արար. և մարմնով համբարձաւ առ հայր: - 130. Չորրորդ՝ նշանակեն *զտնօրէնութիւն* փրկչին: - 132. Զի ըստ որում մարդ եղև *տնօրէնութեամբ*՝ պատարագեաց զինքն: - 307. Եւ *տնօրէնութիւն* փրկչին ծածո՛ւկ էր...: - 315. Դարձեալ՝ է ճրագն և է բերան ճրագացն որ լինի չորեքտասան, նշանակէ՛ զչորեքտասան աստիճան հաւատոյն. է ի յանմարմին բնութիւն աստուծոյ, և է ի *տնօրէնութիւն* բանին: - 347. Երրորդ՝ զի յերկնից էջ՝ և ել յերկինս կատարեալ *զտնօրէնութիւնն:* - 347. Երրորդ՝ անդ նկարեալ էր մեր հոգևորն. և աստ բացայայտեալ խորհուրդ *տնօրէնութեան* քրիստոսի աստուծոյ մերոյ: - 353. Աչք տեառն ի սկզբանէ *տնօրէնութեանն* և մինչև ցկատարումն տարւոյն ի վերայ նորա: - 398. Եւ տէր ծածուկ *տնօրէնութեամբն* գործոց յաղթեաց բանսարկուին: - 419. Եւ որք գիտեն *զտնօրէնութիւն* փրկչին, զգեցցին զփրկութիւն նորին. զի նա՛ է հզօրն յորմէ ել կերակուր քաղցր: - 422. Իսկ ըստ *տնօրէնութեանն* քրիստոսի՝ պատշաճի և երրորդ եղանակն: - 457. Եւ այս գիտելի է, զի բանն աստուած ի *տնօրէնութեան* իւրում ընկալաւ զամենայն եղանակս օծութեան: - 474. Այսպէս և բոլոր *տնօրէնութիւն* մարդացելոյն բանի՝ միով զօրութեամբ և կարողութեամբ ըստ միութեանն կամաց մի ներգործութիւն երևի: - 478. Նա՛խ՝ ցուցանէ թէ կատարումն ամենայն *տնօրէնութեանց* խա՛չն եղև: - 481. Երեքտասաներորդ՝ **ականատես *տնօրէնութեանն* եղբայր տեառն յակոբոս որ կարգեաց զընթերցուածն, յունվարի վեցն աւանդեաց զտօնն ծննդեանն. և ի նոյն օրն դարձեալ զմկրտութեանն:** - 484. Նա՛խ՝ զի զմերն յանձն էառ սրբութիւն. որպէս զայլսն ամենայն *տնօրէնութիւն:* - 486. Զի ըստ որում մարդ եղև *տնօրէնութեամբ* պատարագեաց զինքն: - 491. Իսկ պատանքն ո՛չ ծալեալ. զի խորհուրդ *տնօրէնութեանն* ո՛չ ամենևիմբ յայտնի է և ո՛չ անյայտ. որպէս կտաւն բազո՛ւմ ունէր փոթուածս: - 517. Իսկ մեծացուսցէն ի կիրակէի, զբնաւ *տնօրէնութիւնն* պատմէ.

զի թէ ոչ էր ծնեալ՝ և ո՜չ էր խաչեալ. և ո՜չ յարուցեալ. և ո՜չ զմեզ փրկեալ: - 628. ...զի ճառ խաչին պատւական՛ն է առ աստուած և առ մարդիկ. և փառք քրիստոսի է խաչն և կատարումն ամենայն *տնօրէնութեանցն:* - 634. Դարձեալ՝ որպէս յետ ամենայն *տնօրէնութեանցն* ել առ հայր և պարգևեաց զհոգին սուրբ: - 634. Իսկ քեզ վայելէն, զարարչութեանն ունի խորհուրդ. այլ և *զտնօրէնութեանն* և զկատարածին...: - 644. ...զի առաւել քան զայլս զբոլոր *տնօրէնութիւնն* քրիստոսի խօսեցաւ. զծնունդն. զխաչն. և զայլն ամենայն: - 644. Այլ և յարութիւնն կատարումն է *տնօրէութեանցն*. վասն այն զեսայի ընթեռնումք: - 644. Այլ և բոլոր ամենայն *տնօրէնութեանցն* պատմօղ. վասն այն յամենայն օր ի տօնս, ի պահս, և յուտիս, ի շաբաթս, և ի կիրակէ, զնա՛ ընթեռնումք: - 644. Այս է խորհուրդն. զի երեկոյս նշանակէ՛ զկեանս զայս որ *տնօրէնութեամբ* փրկչին սակաւ ինչ տեսօղ եղաք հաւատով: - 646. զի պատմօղ և կատարումն են *տնօրէնութեանցն* քրիստոսի: - 646. Ի գնացս հոգւոյն զօրացեալ, զի ըստ *տրնօրէնութեանն* խորհրդոյ միշտ հոգւով սրբով ներգործէր. ունելով տերև զաշխարհակեցոյց վարդապետութիւնն: - 768. Դարձեալ **բժ**ան պտուղք են **բժ**ան առաքեալքն. որք յամս և յամիսս *տնօրէնութեանն* պտղաբերեցան: - 768. Հաւատ ի *տրնօրէնութենէն* որդւոյ ի մարդիկ սփռի: - 769. Հաւատ ի *տրնօրէնութիւնն* որդւոյ: - 769. Մօտ *զտնօրէնութիւն* տեառն. և հեռի զարարչութիւնն: - 769

**ՏՆՕՐԻՆԱԿԱՆ +** Եւ բաժանեալ զսուրբ տեղիս *տնօրինական*, ետուն զսուրբ յակոբն պատրիարգարան, և զգողգոթայն, և զսուրբ կարապետն և զնարսն. և արկեալ վիճակս ի վերայ յարութեանն՝ անկաւ հայոց. և տրտմեցան ոմանք յազգէ նոցա: - 548

**ՏՆՕՐԻՆԵՄ +** Չորրորդ՝ զի մի՛ տկար ոք կարծիցի. այլ որպէս կողե՛ն և հաստակող ասեմք զըմբիշս. այսպէս զօրեղ եղիցի կինն ի *տնօրինել* զտունն: - 276. Եւ որ՝ քան զայս աւելի ասեն, որպէս *տնօրինեցար*. կամ ընծայեցար. կամ քո տէրութեամբդ. կամ որ եկիր ի բեթանիա. կամ ի վերնատունն: - 634. Խնամք մարդասիրութեանն աստուծոյ որ զամենայն յամենայնի *տնօրինէ՛*, արգել զայս. զի մի՛ ունիցին ինչ ի մտի յարուցեալքն ի մեռելոց. ապա թէ ոչ, որ ի սկզբանէ բարէատեացն էր և մարդասպան, բազում և զանազան երևոյթս...: - 775

**ՏՆՕՐՀՆԷՔ** - Այսպէս և ի *տնօրհնէքն* ընծայք խաչին և աւետարանին որ ի նոցա տունն մտանէ: - 684

**ՏՈԿՈՍ +** Նա՛խ ասեն թէ՝ արծաթն նիւք վաճառո՛յ է. և այնու շահի. և ո՛չ *տոկսւեօր:* - 375

**ՏՈՀՄ +** Ութերորդ, զի ծնունդ էր նա նոր և գլխաւոր. և այն՝ զի նովաւ կորնչէին ազգք և *տոհմք* և դարք: - 517. Յիմանալեացն սեռից և ի զգալեացս *տոհմից:* - 771

**ՏՈՂԵՄ +** Եւ բազում մտացածին բանս *տողեն:* - 225. Զի ասեն եթէ՝ **խ** օր էր պայմանն ադամայ. յետ **խ** աւուր ուտէր ասեն՝ ի փայտէն գիտութեան և սրբութեամբ որդիս ծնանէր. և ապա՛ ուտէր ի կենաց փայտէն և վերափոխեր. և այլ բազում բանս *տողեն:* - 391

**ՏՈՄԱՐ կմ ՏՈՒՄԱՐ +** Եւ որպէս լրումն զատկի ունի աւուրս **ժզ**. և այլքն **ժե**. և այս ի *տումարս* մեր է. և իրն որ է՛ լուսինն մի և նոյն: - 192. Այսպէս և կատարումն մասանց լուսնին ի *տումարս* մեր է և ո՛չ ի յենթակայն նորին: - 192. Ա՛րդ՝ ցուցից *տումարաւ* զտօնս մեր և զնոցայն. զի տօնախմբութիւն նոցա այսպէս կատարի առ յայտնութիւնն: - 483. Եւ թղթով նզովեցին զեւտիքէս և զփլաբիանոս և զդոմնաս և *զտումարն* լևոնի: - 542. Եւ նզովեցին զաղանդն մարկիանու և զարտեմոնի, և *զտումարն* լևոնի. և միաբանեցան ի մի հաւատս սուրբ առաքելոցն. և ի կանոնս սուրբ ժողովոյն ինչ պետք էին յաւելին գլուխս **բ** ի զգուշութիւն եկեղեցւոյ: - 544

**ՏՈՄԱՐԱԳԷՏ(Ք) +** Որպէս ասեն *տոմարագէտք*, Խոյն գլուխն որ է՛ պարսիկք. և այլն: - 241

**ՏՈՉՈՐԵՄ +** Ոմանք հրով կիսայրեաց *տոչորեալք*. և այլք ի սովոյ գազանաբեկ վտանգեալք: - 788

**ՏՈՊԱԶ** - Տպազիոն. կարմիր է. և գտանի ի *տոպազէ՛* քաղաք ի հնդիկս: - 348

**ՏՈՐՈՍ** - Բիւրեղն, ծովագոյն յօղանման. գտանի ի *տորոս* յանցս եփրատ գետոյն: - 349

**ՏՈՒԱՅՏԵՄ +** Զի ունօղքն բարեկեցիկ կենօք, և ոչ նոյնպիսիքն սովամահ *տուայտեալք:* - 789

**ՏՈՒԱՐԱԾ +** Երկոտասաներորդ, եթող զոչխարսն ի *տուարածսն*. և տէրն զինեսուն և զինն յանապատին: - 436

**ՏՈՒԲԻԱ** - Երկու մնացորդացն: Երկու եզրաս: Նէեմի: Եսթեր: Յուդիդ: Տուբիդ և *տուբիա*. որ լինի **ի** երորդ: - 450. Իսկ Սիրաք և Իմաստութիւնն և Յուդիդն և Տուբիդն և *Տուբիայն* և Մակաբայեցիքն և Կտակքն և այլք, չեն յայսմ համարի: - 451

**ՏՈՒԲԻԴ, ՏՈՒԲԻԹ** - Զոր ի *տուբիթն* ասէ, «յորժամ կացեր յաղօթս և նուն քո սառա, ես մատուցի զաղօթս ձեր առաջի սրբոյն»: - 59. Երկու մնացորդացն: Երկու եզրաս: Նէեմի: Եսթեր: Յուդիդ: *Տուբիդ*

և տուբիա. որ լինի ի երրորդ: - 450. Իսկ Սիրաք և Իմաստութիւնն և Յուդիդն և *Տուբիդն* և Տուբիայն և Մակաբայեցիքն և Կտակքն և այլք, չեն յայսմ համարի: - 451. Երրորդ՝ ըղձական խնդրութեան. որպէս ի *տուբիթն* «խնդրութիւն քեզ»: - 464. Զառաջին վեցն ունիմք յաւետարանէն. և զեօթներորդն ի *տուբիթայ:* - 585

**ՏՈՒԳԱՆ(Ք) +** զգլուխն **ե** երորդ մասամբն ի յետ դարձուցանել որ է՛ *տուգանք* **ե** զգայարանացն որ մոռացաւ և ո՛չ զգաց զօրէնս աստուծոյ: - 358. Եւ զհինգ բաժնէն մի մասն *տուգանք*, զի **ե** զգայութեամբ մեղաւ: - 384. Եւ տե՛ս զշնորհս խոստովանութեան. վասն այն որ զղջացաւ և յայտնեաց, ի հնգէն զմին տայ *տուգանք:* - 384. Եւ թէ ոչ էր զղջացեալ, միոյն **դ** և **ե** էր *տուգանք* գողին: - 384. Եւ հինգ մասն *տուգանքն*՝ և խոյն՝ ա՛յն է, որ **ե** զգայարանօքս ապաշխարեմք: - 384. **Զի պահքն և աղօթքն խո՛յ է աստուծոյ. և ողորմութիւնն *տուգանք*. և ամենայն ապաշխարութիւն սոքօք կատարի**: - 384. ...և **լ** դրամ *տուգանս* տացեն յեկեղեցին: - 652

**ՏՈՒԺԵՄ +** Դարձեալ՝ աստուած յառաջնումն ծննդեան յորժամ զյանցաւորս ըստ բնական մեղացն՝ ջրհեղեղաւն ջնջեաց. յերկրորդումն ծննդեան յորժամ զյանցաւորս ի կռապաշտութիւն՝ կարմիր ծովովն ընկղմեաց. յերրորդումն ծննդեան *տուժեաց*, յորժամ զյանցաւորս գրաւորական օրինացն պատերազմօք սատակեաց: - 351. Ութևժ, եւ կինն ի սամփոնէ և եղև հացերիցուն. վասն որոյ և *տուժեցան* հրով: - 422-423

**ՏՈՒՆ +** Եւ վասն երկրորդին ինքն տէրն ասէ՝ կապեալ զհզօրն և *զտուն* նորա աւար հարեալ որ է՛ դժոխքն...: - 153. Որպէս *տունն* ի ժողովիլ փայտից և որմոց՝ շինի. և ի ցրուիլն սոցա կործնչի *տունն:* - 175. Զի հինքն զեօթն մոլորականն՝ է *տուն* աստուածոց կոչէին: - 190. Եւ զի փակեն զդրունս *տանց:* - 196. Եւ դարձեալ՝ արք իմաստունք սահմանեն *զտունս* իւրեանց ի գալ ձմերան: - 200. Եւ կայ ի *տուն*՝ կատու. և խուզողն խոզ: - 220. Չորրորդն թո՛քն է. հո՛վ և գէճ. և է՛ *տուն* պլղամի. և ունի տանուտէր զլուսինն: - 241. Վեցերորդն երիկամունքն որ է *տուն* սերման. ջերմ և գէջ. և տանուտէր ունի զզօհրայն. որ է լուսաբերն: - 241. Զի սիրտն ունի **բ** *տուն*. ի յաջ կողմն իւր զարիւնն ժողովեալ որ առնու ի լերդէն: - 244. Չորրորդ՝ զի մի՛ տկար ոք կարծիցի. այլ որպէս կողե՛ղ և հաստակող ասեմք զըմբիշս. այսպէս զօրեղ եղիցի կինն ի տնօրինել *զտունն:* - 276. Եօթներորդ՝ զի պարունակածև է կողն. ի նշանակել, զի կինն պարունակիչ և հաւաքիչ է *տան* առն և ընչից: - 276. Եւ կամ որպէս ճանապարհորդք հեռացեալք ի *տանէ*՝ յորժամ դարձցին վերստին ի *տունս* իւրեանց, նախ թողուն զվերջին բնակետղն ուստի դիմեցինն երթալ: - 280. ...ապրեցաւ ինքն և *տունն* իւր. և երկրորդ սկիզբն եղև մարդկութեանն և աշխարհի շինութեան: - 288. Այլ ի դէ՛պ է զի նախանձախնդի՛ր է աստուծոյ ընդդէմ *տանն* կայենի: - 290. Զի զամենայն կենդանեաց սերմն կրելոյ էր՝ պիտո՛յ էր մեծ *տուն:* - 293. Ի ներքին *տունն* չորքոտանիք. և ի միջինն մարդն. և ի վերինն թռչունք: - 293. Կամ որպէս ասեն թէ՝ ներսէս անուն արուեստաւոր տապանին՝ շինեաց իւր *տուն* ի վերոյ կողմանէ ...: - 294. Զի որպէս տապանաւն պահեաց *զտունն* նոյի հայր աստուած, պահեսցէ և զմեզ: - 295. Աբրահամ որդի էր ի *տանէն* սեմայ՝ արժանի օրհնութեան: - 300. Երկրորդն է վարիլն սառայի ի *տուն* փարաւօնի: - 304. Իններորդ՝ վարիլն սառայի ի *տունն* աբիմելիքայ: - 304. Ութերորդ՝ զի էառ իսահակ զհարսն և ուրախացաւ ի *տան* մօրն իւրում սառայի. որ զվեց ամ փրկեալ գոյր և ո՛չ ոք մտեալ: - 305. Հինգերորդ՝ յովսէփ ի *տան* հօրն ազա՛տ էր, և յեգիպտոս եղև ծառայ: - 313. Եւ հողմ կործանեաց *զտունն* և սպան զորդիսն ի սեղանի: - 321. Ութերորդ՝ անդ *տանն* տնտեսն. և աստ *տանն* առնօղն: - 353. Այլ և նուէրք սրբութեանն *տունս*, անդաստանս պտղաբերս, անասունս, և այլ մասնաւոր նուէրք: - 359. Դարձեալ՝ **գ** իրա՛ց էր բորն. մարմնոյն՝ հանդերձին՝ և *տանն:* - 367. Դարձեալ՝ մեք մարմին եմք քրիստոսի և անդամք նմա. նոյնպէս և զգեստ. այսպէս *տուն* և տաճար. մկրտութեամբ և հաւատով և բարի գործով: - 367. Իսկ թէ ի *տունն* ի ժողովուրդս նորա. կամ յեկեղեցիս մեղանչեմք. յետ է ժամանակի փոխելոյ՝ որ է՛ է հասակ մեր. և է դար կենցաղոյս...: - 368. ...յայնժամ քակէ՛ *զտունն* մեր որ է՛ հոգի և մարմին...: - 368. Մեսեդին **բ** *տուն*. և **բ** *տուն* ուղղիցին խնկօքն: - 375. Այլ և ուղղիցին **դ** *տուն* է կիսամասնեայ. ընդ սրբոյ խաչեցարին հզօր և անմահ գառինն եղեալ: - 375. Եւ ուխտաւորն ի *տուն* սգոյ ո՛չ երթայ. այն է որ ի մեղքն այլ ո՛չ դառնայ. և ո՛չ ընդ մեղսասէր գործակիցս: - 390. Եւ թէ մեռանի ոք ի *տուն* ուխտաւորին, պղծեցաւ ուխտն. և անհամար լիցին առաջին աւուրքն, և նո՛ր սկսցի: - 390. Երեսունք, Սուրբ գիրք ամէնն քանի՞ *տուն* է: - 413. Եւ տէր մեր նախ կապեաց զհզօրն ի խաչին և *զտուն* նորա աւերեաց որ էր ամրոց դժոխոցն: - 419. Իննևժ, էջ ի գազայ ի *տուն* պոռնկի: - 423. Երեսուննդ, նա՛ զբ սիւնսն շարժէր և *զտունն* կործանէր: - 424. Ա՛յն է որ կաղք և կոյրք ընդ դէմ դարձան դաւթի և անարգանօք ասէին՝ մի՛ մտցէ դաւիթ ի քաղաքս.

որ նա՛ ինքն է երեսուղէմ. որ եղև *տուն* տեառն: - 431. Երկրորդ՝ զի կրկին էր պատիժն. սուր ի *տանն*, և խայտառակութիւն կանանցն: - 432. Դաւիթ էառ զերուսաղէմ և շինեաց իւր *տուն*. և տէրն զվերինն երուսաղէմ, և ետ իւրայնոցն զխաղաղութիւն: - 438. Եւ յետ **ե** ամսոյ՝ նաբուզարդան դահճապետն հրձիգ արար զերուսաղէմ և զտաճարն և *զտուն* թագաւորացն...: - 447. Քանի՞ *տուն* է աստուածաշունչ գիրքն ամենայն: - 451. Յին կտակարանքն ամենայն՝ են *տունք*՝ **ա՞. ք. ճիթ**: - 451. Եւ նոր կտակարանքն ամենայն՝ են *տունք*՝ **ա՞. փ. շղա**: - 451. Միահամուռ հին և նոր կտակարանքն՝ **դ ա՞. էռ. չի** *տուն* է: - 451. ...իսկ Աննա ամուսնացաւ ի գալիլեայ ընդ յովակիմայ. և ծնաւ զաստուածածինն մարիամ ի պրոպատիկէ ի *տունն* յովակիմայ. և անտի տարեալ եղև ի տաճարն տեառն: - 460. Երրորդ՝ զի ո՛չ ինչ յորոց ստեղծ աստուած գարշի բնակիլ. մանաւանդ յարգանդի զարդարեալ կուսութեամբ. զի զոր ստեղծ ձեռօք, բնակէ՛ ի *տան* ձեռագործի իւրոյ: - 469. Ջօծումն մարմնական ընկալաւ ի պոռնիկ կնոջէն յորժամ եբեկ զշիշ իւղոյն ի գլուխ նորա ի *տան* սիմոնի: - 474. Երկրորդ՝ կապեալ ածաւ ի *տունն* աննայի. և ի ծառայէն ապտակեցաւ. և պետրոս **գ** անգամ ուրացաւ: - 492. Երրորդ՝ կապեալ ածաւ ի *տունն* կայիափայ. և անդ զթուքն կալաւ յերեսն. և մինչ ի վաղիւն հսկեաց: - 492. Տասներորդ՝ յաւուր միում այսահարեալ սաւուղ՝ կամէր նիզակաւն բևեռել զդաւիթ յորմն. յորմէ զերծեալ ապրեցաւ և գնաց ի *տունն*: - 513. Երրորդ՝ զի զամենայն փոըւածս լնու. այսպէս և հոգին էլից զամենայն *տունն* յորում նստէին: - 522. Առաջին ժողովն եղև ի *տանս* թորգոմայ յարևելից կողմանս. զկնի **է** երորդ ամի վախճանելոյ մեծին սահակայ: - 544. Որ և յարազուարճ բարերջանկութեամբ լի և ամենազան քաղցրորակ պտղաւէտութեամբ տնկեսցիս ծառ բարձրաբերձ յընթացս հոգւոյն ի մէջ եկեղեցւոյ *տանս* թորգոմեան ազգիս հայկազնեան: - 558. Յինգերորդ ըստ ուրին. թէ ուր գործեն զմեղքն. կամ ի վանք, կամ յեկեղեցի որ է *տուն* աստուծոյ. կամ ի գեօղ, կամ ի քաղաք, կամ ի պոռնկատուն: - 565. Վեցերորդ օրհնեմք, զի բաժանեսցի յայլ աշխարհական *տանց* որք ո՛չ ունին զօծումն սրբութեան: - 615. Այլ **գ** թագաւորքն պահոց, և **գ** *տուն* յուտիքն, ի դէմս սուրբ Երրորդութեանն: - 628. Եւ կրկին *տուն* սաղմոսին, զի հոգի և մարմին եղև բանն: - 628. Եւ **թ** *տունքն* ինն դասուց զուարթնոց: - 628. Եւ որ նա՛խ է վերջին *տունն* ի մեսեդի կամ կցորդ. այն է զի քրիստոսիւ դարձաք յառաջինն և ի բարձրագոյնսն. ուստի ադամաւ խոնարհեցաք...: - 629. Յանգիստն որպէս մասնաւորքն. նոյնպէս և *տունքն*: - 631. Այլ գիտելի՛ է, թէ սաղմոսն շարականաց որ **բժ**ան *տուն* է՝ զփառքն և զայժմն ի միասին երգեմք. որպէս զօրհնութիւնն, հարցն, ողորմեայն, տէր յերկնիցն: - 636. Եւ ա՛յս է պատճառն, զի մի *տան* շարականի **դ** *տուն* սաղմոսի պիտոյ է յերկու դասս. և մին շարականն **ժբ** *տամբ* աւարտի: - 636. Եւ որ սաղմոսն **ը** *տուն* է՝ կամ ա՛յլ նուազ, զփառքն և զայժմն վերջին *տան* շարականին տամք: - 636. Նմանապէս և ամենայն շարական **գ** *տուն* է, և հարցն **զ**. զի վեցն կրկին **գ** է: - 637. Այլ և վեց փոխ է սաղմոսն այն և վաթսուն *տուն*: - 637. Այլ սուրբն ստեփաննոս սիւնեաց, և մեծն ներսէս, վասն պատուոյ՝ նախ զխաչի *տունն* են ասացեալ, և ապա՛ զաստուածածնին: - 642. Իսկ կցորդ և սկիզբն, այն մին *տունն* է խորհրդաւոր ըստ պատշաճի աւուրն: - 643. Եւ բոլոր սաղմոսն՝ այն մին *տանն* համաձայնք և վկայք. վասն այն ասի սաղմոս կցորդ: - 643. Երրորդ, աստուածահայր կոչեցաւ, պա՛րտ է առաւել զինչս հօրն ծախել ի *տունս* եկեղեցւոյ: - 643. Իսկ սաղմոս *տունն* է երգ մարդկան. այսինքն է զի հրեշտակք և մարդիկ միաբանեալ օրհնեմք զաստուած փրկիչն մեր որ խօսի ընդ մեզ: - 644. Ուստի յա՛յտ է՝ զի ուր և ալէլու ասեմք, սաղմոս *տուն* գոյ ընդ նմա: - 644. ...կամ **ա ա** *տուն* սաղմոս ասեն...: - 655. ...և յետոյ զբաժին նոցա ի վերայ լնուին. նոյնպէս ի *տունս* և ի դուրս յորժամ յիշէին: - 656. Իններորդ, Վասն է օրէիցն. և մեռելոցն. և գերեզման օրհնելն. և *տուն* օրհնել: - 660. Դարձեալ՝ նշանակէ՛ յետ մեռելոյն զփոխումն ուրախութեան մեր ի սուգ և ի մերկութիւն. և ի սև հանդերձս. ի խաւար *տունս* և այլն: - 670. ...և ողջունեն առ հասարակ և պատեալ դնեն զմարմինն ի *տան* պատուականի: - 672. Իսկ դնել զմարմինն ի *տան* պատուականի որ է՛ գերեզմանն...: - 674. Չորրորդ, զի մի՛ լիցին փողոցք և *տունք* մեր գերեզմանատուն մեռելոց...: - 677. Այսպէս և ի տնօրինէքն ընծայք խաչին և աւետարանին որ ի նոցա *տունն* մտանէ: - 684. Զի՞նչ է *տուն* օրհնելն ի զատկի և յայտնութեանն: - 684. ...վասն որոյ զնոյն խաչն և զաւետարանն տարեալ ի *տուն* օրհնեմք զբնակութիւնս մեր: - 684. Զի՞նչ է *տուն* հօր և օթևանք բազում: - 686. Տեսութիւնն է աստուծոյ. որք ըստ բազմազան գործոց իւրեանց տեսանեն. և որպէս ի *տան* փառաւորին: - 686. Որպէս ծառայքն փարաւօնի ի *տան* բանտին ընդ յովսեփայ: - 689. Զոր օրինակ նշան դրոշմի կայ ի մէջ քո՝ և անասնոյն՝ և *տանն*. զի ելեալ ի *տանէ* երթայ խառնի ի հասարակ նախիրն...: - 719. ...և ի դառնալն այսու նշանաւս ճանաչէ զքեզ և *զտունն*. և դու ճանաչես քո դրոշմիւն զնա: - 719. Այլ և վառ ունիլ զճրագ մտաց մերոց և նայիլ *զտունս* մտաց մերոց և նայիլ *զտունս* մեր...: - 730. Եւ այսպէս հսկել և

պահել *զտունս* մեր, զի մի՛ գող մահուն և կատարածի՝ գտեալ զմեզ անպատրաստ ի մեղս՝ տանիցի զհոգիս մեր ի տանջանս յաւիտենից: - 730. Ղամպարք ի միում *տան*. և ուրուք շարժեցելոյ՝ ի նոցանէ լոյսն ո՛չ շարժի և ոչ բաժանի և ո՛չ հատանի թէ անջրպետ ոչ կայցէ ի միջի. և անդ ո՛չ է միջոց: - 770. Զի որպէս սիւն *տան*, և ոսկերք մարմնոյ, և բրգունք աշտարակի: - 788. Այլ և ոմանք ասեն և է գոլ սեանց ընդ շինեալ *տունն* ի սողոմոնէ. կանգնեալ սիւնս է մարմնապէս. թէպէտ ա՛յլ է իմացումն հոգէպէս: - 788

**ՏՈՒՆԿ +** Ասեմք առ այս, թէ սնունդ և աճումն մարմնոց, *տնկանին* է և ոչ աստեղաց. թէպէտ օգնեալ լինի ի նոցանէ: - 10. Ա՛րդ՝ տեսութիւն գրոց սրբոց մի և նոյն ելով՝ առ բազումս բազմանայ. որպէս մի և նոյն պարզագոյն ջուր՝ իւրաքանչիւր բնութիւնս *տնկոց:* - 93. Վասն է՞ր զանազանապէս տայ աստուած զպարգևս և ո՛չ հաւասար. որպէս առաւել տայ հրեշտակաց՝ և սակաւ մարդկան. և նըւազ կենդանեաց և *տնկոց* և անշնչից: - 130. Ոմանք մերձ են էութեամբ արարչին. և ոմանք հեռի. որպէս իմացականքն քան զբանականս. և սա՛ քան զկենդանիս. և նոքա քան *զտունկս*...: - 131. Վասն բուսուց և *տնկոց*՝ և կանաչութեան նոցա. և ծաղկի, և պտղոյ, և համոյ, և հոտոյ նոցա: - 155. Վասն դրախտին զի երկին կոչի և իմանալի *տունկ:* - 155. *Տնկոց* սնո՛ւնդ է: - 186. Եօթներորդ՝ բուսուց և *տնկոց* և ամենայն կենդանեաց ծննդեան և աճման: - 196. Մեհեկի. զի *տունկք* և բոյսք որպէս զմեռեալ զլինին եղեմնապատ և ծիւնաթաղ. մէհէկի. այսինքն ածի: - 201. Աճումն է *տնկոց:* - 202. Քսանևզ՝ *տնկոց* կենդանութիւն է: - 207. Չորրորդ՝ զի *տունկք* և բոյսք ի ներքին հիւթոյ և ի վերին անձրևոյ միշտ դալար մնացեն: - 207. Եւ զի արմա՛տ է *տնկոց:* - 211. Չորրորդ՝ զի նիւթք եղեն երկնաւոր խորհրդոյն. որպէս ի *տնկոց* փայտ խաչին. և յայլ բուսոց հաց պատարագին և գինի. և ձէթ մեռոնի կազմեցաւ: - 212. Վասն է՞ր ամենայն *տունկք* բոլորաձև բուսանին: - 213. Նա՛խ՝ զի սերմնական զօրութիւնն է ի մէջն բնաւորեալ. ուստի բոլորապէս և հաւասար տայ շարժիլ *տնկոյն:* - 213. Վասն է՛ր բոյսք փութով աճին և դալարին քան *զտունկ* և զծառ: - 214. Երկրորդ՝ որք երկարակեացք են՝ որպէս *տունկք*, յապաղելով աճին և յա՛մր ծնանին: - 214. Նախ՝ զի ծառայք են միշտ վասն այլոց. որպէս մարդս միշտ տէր է. և անասունքն տէր և ծառայք. զի ծառայք են մարդկան, և տէր բուսոց. իսկ բոյսք և *տունկք* միշտ ծառայք են: - 214. Եւ ո՛չ այս միայն, այլ և բոյսք և *տունկք* ունին բնութեամբ զէնս պահապան ինքեանց: - 217. Ո՞րպէս ասէ մեծն Ներսէս շնորհալին. ընդ ծառոց երկրի զգալեաց. տնկեաց և *զտունկս* իմանալեաց: - 221. Երրորդ՝ զի իմանալեա՛ցն է *տունկ*. այսինքն բանականաց. հրեշտակաց կամ մարդկան. և ո՛չ զգալի կենդանեաց: - 222. Չորրորդ՝ զի նոյն ինքն դրախտն և *տունկն* է իմանալի և զգալի. որպէս վայելօղ մարդն էր իմանալի և զգալի: - 222. Նոյնպէս և *տունկք* դրախտին ըմպեն զջուր գետոյն որ ոռոգանէ՛ զդրախտն: - 225. Երկրորդ՝ զի դրախտն է տեղիք անապական. և ո՛չ լինէր ի մարդոյն ծորումն ինչ աղտեղութեան. և ոչ որպէս *տնկոցն:* - 225. յԵրրորդ օրն, բոյսք և *տունկք* և դրախտն: - 226. Կարգաւոր էր նախ պատրաստել զարքունիս որ է երկինք և երկիր. և զգահոյս որ է՛ դրախտն. և զսպասաւորքն որ են կենդանիքն. և զմեծութիւնս *տնկոց* և բուսոց...: - 230. Երկրորդ՝ զի իմանայ ընդ հրեշտակաց. զգայ ընդ կենդանեաց. աճէ՛ ընդ *տնկոց*. գոյ ընդ անշնչից: - 231. Մազն բուսոց և *տնկոց:* - 232. Վեցերորդ՝ զի բաժանեսցի մարդն ի կենդանեաց և ի *տնկոց*. զի *տունկք* զհակառակն ունին զարմատն որ է՛ գլուխ՝ ի յերկիր, և զոտն ի յերկինս: - 233. Իսկ մազն է այրեցած արիւնն. որ օդովն ի դուրս փչի. որպէս *տունկք* յերկրէ: - 240. Եւ յայնմանէ փոխեալ ի կենդանւոյ մարմին և ի *տունկս*, և ապա ի մարդն դարձեալ: - 252. Այլ ա՛րդ ի յանբանսն ո՛չ է առաքինութիւն որով սրբի ի մեղաց. ապա պարտ է զի փոխեսցի ի ներքինն իւր որ է՛ *տունկն*. և նման կենդանւոյն զի աճէ՛: - 252. Այլ արդ՝ ի *տունկն* ո՛չ կարէ սրբիլ. այլ անկանի յանշունչն, որ ներքո՛յ է *տնկոյն*, և նման նորա զի մարմին է: - 252. Եւ թէ ասեն՝ եթէ մեք ի *տնկոյն* ասեմք դարձեալ ի մարդն փոխիլ և ո՛չ յանշունչն: - 252. Այլ ա՛րդ եթէ փոխի ի *տնկոյն* ի մարդն, վատթա՛ր է մարդոյն կեանք քան *զտնկոյն*. ուստի ի մեծագունէն ի նւաստն փոխեցաւ: - 253. Եւ զոր օրինակ՝ *տունկ* ի յերկրի տնկեալ՝ նախ դալարի. և յորժամ հաստատի ծաղկի. և յորժամ ևս հաստատի՝ ապա պտղաբերի: - 255. Իսկ զտնկականն ի *տունկն* ո՛չ է պարտ ասել զօրութիւն. այլ հոգի է տնկական: - 259. Եւ ունին զայս ամենայն բոյսք և *տունկք:* - 262. Նա՛և այսու թըւով *տունկք* երից ամաց տան զպտուղս: - 262. Նմանապէս ծառք և *տունկք*՝ որ յետ երից ամաց կամ չորից ցուցանեն զպտուղս՝ յայսմ թըւոյ ո՛չ ելանեն արտաքս: - 263. Իսկ *տունկք* որք են մեծաբոյսք՝ և չորքոտանիք մեծամեծք՝ յերրորդ ամին ծնանին զնմանն. որ է թիւ կրկին ամսոյ ընդ երրեակ վեցից: - 264. Դարձեալ՝ ամենայն իր առաւել ունի զօրութիւն ի տեսակս իւր՝ քան ի յայլս. որպէս ջուր առաւել զօրաւոր է ի գետս՝ քան ի յերկիր խառնեալ. և տընկականն առաւել է ի *տունկս*՝ քան յանասունս: - 266. Ուստի յա՛յտ է՝ զի յառաւել կերակրի և աւելի աճէ և բազումս ծնանի

*տունկն* քան զանասունս: - 266. Զի՞նչ է որ ամենայն ծնունդ թէ *տունկք* թէ կենդանիք՝ նախ յղանան և ապա ծնանին: - 267. Կայ ընդ *տնկոց:* - 275. Ութերորդ՝ մշակութիւն աստուծոյ. այսինքն անմահ *տնկոցն* երկրագործ և պահապան: - 279. Չորրորդ՝ զանազան նկարք աշտանակին, զանազան ներգործութիւնք ընթացից նոցա առ երկիրս, կենդանեաց՝ *տնկոց*՝ և անշնչից: - 346. Զի գա՛յ զղջումն և խոստովանութիւն՝ որ զմեղքն բառնայ և զպատիժն ընդ նմին. որպէս հատեալ *տունկ*՝ չորանան ճիւղքն. որ բոլորով սրտիւ զղջայ և խոստովանի և այլ ո՛չ գործէ: - 432. Իսկ նաւակատեաց կերակուր այն է՝ որ միջակ է սոցա երկոցունց. այսինքն ի կենդանւոյ և ի *տնկոյ*. որպէս ձուկն, ձու, և կաթն: - 510. Դարձեալ՝ որպէս *տնկոց* հատումն է, և ձկանց հանումն, և այլ կենդանեաց զենումն: - 511. Եւ ա՛յս է պատճառն. վասն զի *տունկն* յարմատն է հաստատեալ. և ձուկն ի ջուրն. և կենդանիք ի շունչ և յարիւն: - 511. Զորօրինակ, արեգական լոյսն տկար աչաց վնասիչ է և ո՛չ օգուտ. և ջուր չորացեալ *տնկոյ:* - 540. Երկրորդ ըստ *տնկոց* ի մանկութիւն և ի ծերութիւն: - 663. ...նման է պղատոնի մարմնափոխութեանցն. որ ի բանական մարդոյն ի զգայականն, և անտի ի *տունկն* ասեն...: - 687. ...և ի *տնկոցն* յերկինս վերափոխիլ. և սոքա ի հուրն ասեն մտեալ և անտի յերկինս վերափոխեալ: - 687. Իսկ այլ ամենայն մարմինք շնչաւոր և անշունչ, *տունկք* և կենդանիք ամենայն ապականին վասն **գ** պատճառի: - 727. Երրորդ պատճառ, ասեն իմաստունքն թէ ծնունդք կենդանեաց և բուսոց լինին ի շարժմանէ երկնային մարմնոց. իսկ ի կատարածի խափանի շարժումն նոցա. վասն այն անբան կենդանիք և *տունկք* խափանին: - 727. Ասեն վարդապետք՝ եթէ են ինչ որ էութեամբ և պատահմամբ անցանեն. որպէս կենդանիք և *տունկք* և որ ինչ ի չորից տարերաց են գոյացեալք: - 727. Երրորդ՝ ծառ կենաց իմանին *տունկք* իմանալի դրախտին. այսինքն բանակք երկնաւոր զօրացն. միշտ յարազուարճ բերկրանօք բարձրացեալ ի փառս: - 767. Այսպէս վասն երկնային և իմանալի *տնկոցն* որ կոչին ծառ կենաց. ունելով յինքեան զկեանս և բաշխելով այլոց ամենեցուն զխնամս: - 767. Դարձեալ՝ ծառ կենաց է *տունկն* իմաստութեան որ ի յերկնից առ մարդիկ տնկեալ: - 768. Դարձեալ՝ ծառ կենաց և *տունկ* երկնային՝ է՛ հաւատն կենդանարար. որոյ արմատն է հայր, և ստեղունք որդի. ծաղիկ և պտուղ հոգին սուրբ: - 768-769

**ՏՈՒՆՋԵԱՆ +** Վասն որոյ գիշերն յառաջէ՛ *տունջեան* մինչ ի կատարած: - 194. Նա՛խ՝ առաւօտն և երեկոյն. և է՛ առաւօտն վախճան գիշերոյ՝ և սկիզբն *տունջեան:* - 194. Եւ երեկոյն է վախճան *տունջեան*, և սկիզբն գիշերոյ: - 194. Չորեքտասաներորդն *տուընջեան:* - 195. Նա՛խ՝ զի սկիզբն է *տուընջեան*, և վախճան գիշերոյ: - 196. Եւ զի հաւասար և մէջ է *տուընջեան:* - 196. Նա՛խ՝ զի վախճա՛ն է *տուընջեան*, և սկիզբն գիշերոյ: - 196. Հինգերորդ՝ հասարակութիւն *տուընջեան* և գիշերոյ: - 196. Դարձեալ՝ յամառն և ի ձմեռն զրկո՛ւմն է *տուընջեան* և գիշերոյ. զի ամառն զրկէ զգիշերն, և ձմեռն զտիւ: - 198. Իսկ գարուն և աշուն հաւասար արդարութիւն է *տուընջեան* և գիշերոյ. վասն որոյ բուսանին սերմանիք: - 198. Եւ դարձեալ՝ մինն սկիզբն և վախճան է գիշերոյ. և միւսն *տըւընջեան:* - 623

**ՏՈՒՉՈՒԹԻՒՆ կմ ՏԸՒՉՈՒԹԻՒՆ +** Երրորդ՝ բազում աստուածախօսութիւնք ի նմա եղեն. յելանելն նոյի ի տապանէն. և առ աբրահամ. և առ մովսէս ի սինա լեառն. և *տուչութիւն* օրինացն ի կիրակէ եղև: - 193. Երկրորդ՝ *տըւչութեան* օրինացն՝ յիսներեկի աւուրն յամռան: - 340. Երրորդ՝ յիսներեկին *տըւչութեան* օրինացն. որ է՛ հոգւոյ գալուստն: - 372. Եւ եօթնից է տօնեմք յարութեան. նոյնպէս զմի օր օրինացն *տըւչութեան*, տօնեմք **ը** օր հոգւոյն գալստեան: - 373. Հինգերորդ՝ զի գիտացեն թէ քրիստոսիւ պարգևեցաւ. թէ յառաջագոյն էին ընկալեալ, պարզապէս յաստուծոյ կարծէին *զտուչութիւն* հոգւոյն և ո՛չ ի քրիստոսէ: - 521

**ՏՈՒՏՆ +** Հրեղէն վիշապն. և *տուտն* նորա: - 102. Իսկ «*տուտն*», Նախ՝ նշանակէ զվերջին հետեւեալսն ընդ նմա. զի նա առաջին ինքնագիտ էր ի չարն. և այլքն հետևեցան նմա: - 152. Երկրորդ՝ զօրաւոր մասն է *տուտն* սողնոց. ցուցանէ զբռնութեամբ քարշելն ընդ ինքեան: - 152. Երրորդ՝ գլուխ վիշապին՝ է մեղքն, և *տուտն* մահ և դժոխք: - 152. Չորրորդ՝ *տուտն* նշանակէ զսեռն. որ ի վերջին ժամանակս բռնանայ և քարշէ՛ զերրորդ մասն աստեղաց: - 152. Իններորդ՝ գլուխ և *տուտն* ցասումն է և տրտմութիւնն զկնի. և ամենայն մեղաց յետ գործոցն տրտմութիւն հետևի: - 387. Զգլուխն ի յորդանան ջախջախեաց, և *զտուտն* ի գերեզմանն և ի դժոխս: - 488-489. Այն է *տուտն* որ զերրորդ մասն աստեղաց ընդ իւր քարշեաց: - 489. Հինգերորդ, որպէս *տուտն* ջախջախեալ վիշապին շարժի: - 706. Եւ սատակեալ վիշապին *տուտն* է նեռն. որ ի վերջին ժամանակս քարշէ զերրորդ մասն աստեղաց...: - 706. Եւ վասն հրեղէն վիշապին և *տտան* նմին ասացաւ ի վերոյ **թ** գլուխն **իե** համարն: - 706

**ՏՈՒՐ(Ք) +** Որպէս *տուրքն* նաբուգոդոնոսորայ. և աղօթքն եզեկիայ. որ յետս դարձոյց զմահ. և այլք

բազումք. ապա ուրեմն ո՛չ է հարկ: - 11. Երբեմն զմարմնական *տուրս* շնորհք կոչէ...: - 139. Ուսաք յիմաստնոց թէ՝ ի բաժանիլ լեզուաց **իբ** տանուտերանց, և ի գնալն յիւրաքանչիւր տեղիս ի հեռու կամ ի մօտաւոր աշխարհս. զօրն զայն տարեմուտս կարգեցին. և ուսուցին որդւոց իւրեանց պատւեալ զօրն զայն *տրօր* ընչից: - 200. Վեցերորդ՝ ի սոցանէ երևի և գործ արդարութեան. որ ընտիրսն աստուծոյ նուիրէր գիտելով զմեծութիւն նորա և զբոլորիցն *տուրսն*. և զխոստանն ի՛ւր թողլով: - 286. Իսկ այս օրինակն է և *տուրք* աղքատացն: - 371. Այլ ես ասեմ, եթէ ամենայն *տուրք* բաժանի յերեք: - 375. ...իսկ յետ մահու պաշտօնք և *տուրք* աղքատաց և այլն՝ է՛ հատուցումն պատժոց միայն...: - 434. Եւ է՛ ողորմութիւն նորա ծրի շնորհօք և պարգևօք. իսկ արդարութիւնն *տուրք* փոխարէնք և հատուցումն: - 457. Ապա և ո՛չ աղօթք և պաշտօն քահանայից կամ *տուրք* կամ պատարագք է օգուտ հոգւոյն ըստ քեզ որ է բնաւ սուտ և չար հերձուած: - 605. ...**ժ** գան արբցէ. և *տրօր* տնանկաց ապա՛ հաղորդեսցի: - 652. Չորրորդ *տուրք* աստուծոյ է ...: - 664. Եւ թէ ոք ասիցէ, թէ *տուրք* աղօթք և պատարագ, ո՞չ է օգուտ նոցա: - 683. Երրորդ, զի ընդունայն լինին աղօթք և *տուրք* և այլ օժանդակութիւնք եկեղեցւոյ՝ յորժամ ինքեանք քաւեսցեն: - 698. Մ՛րդ՝ քարշէ զչարսն *տրօր*. զբարիսն տանջանօք. զպարզամիտսն քարոզութեամբ և սքանչելեօք: - 708. Երրորդ՝ առատ պարգևաց *տրօր* պատրեսցէ զմեծամեծս և զազահս...: - 708

**ՏՈՒՐԱՑԻ** - Եւ այս են **իբ** լեզուքն: ...*Տուրացիք:* - 298

**ՏՈՒՐԵՒԱՌ (տեքստում՝ ՏՈՒՐ ԵՒ ԱՌ) +** Վասն որոյ գլուխն է՛ ի վերոյ. և խռչափողն որ ունի *զտուր և զառն* օդո՛յդ է նման. և ի ներքոյ այլ մարմինք և հիւթ արեան և ջրոյ՝ երկրիս է օրինակ: - 232-233. Իսկ ծուկն կենդանի՛ է կատարեալ զգայարանօք և շարժմամբ. այլ *զտուր և առ* շնչոյ ո՛չ ունի. վասն այն պակա՛ս է: - 510

**ՏՈՒՓ +** *Տուփն* ժողովումն բարեաց: - 346. Բաց յայսցանէ **բճճբ** գլուխ ոսկի *տուփ* խնկով: - 359

**ՏՊԱԶԻՈՆ +** *Տպազիոն*. կարմիր է. և գտանի ի տոպազէ՛ քաղաք ի հնդիկս: - 348

**ՏՊԱՆԱՄ +** Եւ պակասեալ ի սմանէ տեղին, լինի տիպ ի քանակէ և ի ձևոյ բաղկացեալ. որպէս յա՛յտ է ի մոմն *տպացեալ:* - 236. Յերկրորդ ամին աստուածածինն *տպացաւ* ի սեանն, և քառասնօրեայ մանուկն յիսուս ի գիրկն. և խաչ ծիրանի յերկոսին ձեռինն: - 485. Եւ դարձեալ զոր օրինակ, գիր մատանւոյն մի և նոյն կատարեալն է *տպացեալ* յամենայն մոմս կնքեալ և ո՛չ աւելի և ո՛չ նուազ: - 530

**ՏՊԱՒՈՐԱԿԱՆ +** Չորս. այսինքն է՝ Նախ՝ *տպաւորական:* - 122. Առաջինն որ է *տըպաւորական* աստուածաբանութիւն՝ է՛ ի դէմս սուրբ Երրորդութեանն և մի աստուածութեանն. թէ ո՞րպէս է մի. ո՞րպէս երրեակ. և ծնօղ. և ծնունդ. և բղխումն. և վասն մարդեղութեանն քրիստոսի: - 122. Եւ այսպէս է *տպաւորականն* և պատճառաբանականն: - 123. Գիտելի է՝ զի առաջին աստուածաբանութիւնն նեղագոյն է և սակաւաբան. որ է *տպաւորականն:* - 123

**ՏՊԱՒՈՐԵՄ +** Այլ զի մեք թողեալք և անտես եղեալք յաստուծոյ վասն յանցանացն, զդէմս մեր *տպաւորէ*՛ յինքեան. բնութենակից գոլով մեր և գլուխ անդամոցս: - 42. *Տպաւորեալ* տեսիլ գազանաց: - 102. Եւ կարծեօքն *տպաւորէ* զնմանութիւնս և ի բացեայ. որպէս սպիտակ: - 103. Վասն է՞ր աստուածաբան մարգարէքն զտեսիլ երկնայնոցն սոյնպէս անարգ կերպիւ *տպաւորեցին*. որպէս առիւծ. և եզն. աթոռք. և կառք. և այլն: - 131. Իսկ խօսի դևն ընդ մարդոյ՝ կամ փոփոխելով զգոյութիւնն որպէս հրեշտակն կամ զպատկեր նմանութեանն ցուցանէ տեսանելեացն. և կամ *տպաւորէ*՛ յերևակայութիւնն: - 145. Դարձեալ՝ հոգին խօսի ընդ դիւին, զի զբաղձանք սրտին *տպաւորէ* ի զգայութիւնսն: - 145. ...անձն ի բնութիւնն է յորմէ կայանայ. և դէմքն ի յանձնէ՛. և կերպարանն ի դիմաց. և պատկերն ի կերպարանաց. և տիպն ի պատկերաց. և որակ *տպաւորեալ* ի պատահմանց: - 235. Իսկ զխորհուրդ նորն ադամայ բազումս *տպաւորէր:* - 327. Չորրորդ՝ նշան պատկառելի է ծերութիւն. որ զհին աւուրցն *տպաւորէ՛:* - 378. Սակայն ըստ ներգործութեան մեծագոյն է սրբութիւն մկրտութեանն. զի *տպաւորէ* զկնիքն. այլ և բանայ զդուռն արքայութեան...: - 462

**ՏՊԱՒՈՐՈՒԹԻՒՆ +** Ասեմք եթէ՝ *տպաւորութիւնն* լինի կրկնակի. միոն նման նմանութեամբ. որպէս լոյս. հուր. և այլն: - 131. Տասներորդ՝ յատուկ առանձնապէս *տըպաւորութիւնք* խորհրդական. որպէս քերօբէքն բազմաչեայք և ընդ թևեանք. և սերօբէքն սրբաբան՝ ընդ աթոռոցն քառակերպեան: - 138. Երկրորդ՝ կերպիւ խօսի հրեշտակն ընդ մարդոյ *տպաւորութեամբ* երևակայութեան: - 145

**ՏՌՓԻՄ +** Դարձեալ՝ իմաստութիւնն է բանին. զի նորա՛ է իմանալն. գիտութիւնն ցասմանն. զի նորա է ընտրելն. և հաճարն ցանկութեանն. զի նորա է յանճարն *տռփիլ:* - 270

**ՏՐԱՄԱԲԱՆԵՄ +** Եւ այնպիսիքն *տրամաբանել* ո՛չ կարեն վասն հոգւորին. որպէս ի ծնէ կոյրն վասն գունոց, քանզի ասեն վարդապետք՝ աստուած լոյս է ո՛չ մարմնոց, այլ մտաց. զոր թէ ոք ո՛չ տեսանէ՝ կո՛յր է: - 32

**ՏՐԱՄԱԴՐՈՒԹԻՒՆ +** Իսկ *տրամադրութիւնք* հոգւոյն՝ խառնուածոյ մարմնոյն ո՛չ հետեւին: - 251-252

**ՏՐԱՄԱԽՈՀՈՒԹԻՒՆ +** Իսկ *տրամախոհութեամբ* քննէ զիմանալիս. որպէս հրեշտակ: - 103. Է՛ որ իմացումն մտացն առ ինքն ժողովի ի յիշողականէ՞ ի *տրամախոհութեանցն* ի կարծեաց՝ և յայլոցն, և այնպէս ըստ ինքեան տեսութեանն ի աստուած հպի. այս է գերագոյն իմացումն. և կոչի իմացական տեսութիւն: - 142. Եւ է՞ յորժամ իմացումն ի յիշողութիւնն ի *տրամախոհութիւնն* և յայլս բաժանի, և նոքօք իմանայ և տեսանէ զաստուած. և այս ևս է կատարեալ տեսութիւն. և կոչի սա բնական տեսութիւն: - 142. Գիտնականին են՝ Միտք. *Տրամախոհութիւն*. Կարծիք. Երևակայութիւն. և Հասարակ զգայութիւն: - 248. Բանականք են Միտք. *Տրամախոհութիւն*. Կարծիք. Կամք. Ընտրողութիւն: - 248. Ի յայսոսիկ հոգին ո՛չ առնու ի կիր զմարմինն. այլ զկիր առնօղն մարմնոյն *զտրամախոհութիւն:* - 249. Զի *տրամախոհութիւնն* ա՛յնպէս է առ իմացումն որպէս գոյնն առ տեսանելիքն: - 249. Երևակայութիւնն: Կարծիքն: *Տրամախոհութիւնն*. և Յիշողականն: - 249. Իսկ ներքինն՝ որ է հասարակ զգայութիւնն. երևակայութիւնն. կարծիքն. *տրամախոհութիւնն*. յիշողութիւնն որ է միտք. զի ամենայն ինչ ի յիշողականն մտանէ: - 249. Եւ է՛ գործի նոցա՝ *տրամախոհութիւնն*. և ենթակայ՝ բանից զանազանութիւնք: - 269. Դարձեալ՝ հանճարն է *տրամախոհութեանն*. զի կարծիք է կապեալ ընդ ուղիղ խորհրդոյ. իմաստութիւնն իմացմանն. գիտութիւնն յիշողութեանն: - 270. ...որ է՛ հասարակ զգայութիւն. երևակայութիւն. կարծիք. *տրամախոհութիւն*. և միտք որ է՛ յիշողութիւն: - 622

**ՏՐԱՄԱԿԱՅԻՄ +** Եւ ի սոցանէ ողորմութեան և արդարութեան գործ. որ է՛ օրհնութիւն և անէծք ի մի պատուիրանն աստուծոյ *տրամակայեալ:* - 403

**ՏՐԱՄԱՏԵՄ +** Գիտելի է, զի որպիսութիւն կենաց մարդոյս *տրամատի* յերիս. ըստ երից փոփոխմանց մարդոյն. այսինքն նախ քան զծեղքն. և յետ մեղացն. և յետ մահուն: - 278. Նոյնպէս և կապն միջակօրէն *տրամատի* ի դ: - 317. Ողջոյնն ըստ աշխարհի *տրամատի* ի ե: - 464. Միաւորութիւնն սեռաբար *տրամատի* յերիս. ի յանշաղկապն և ի շաղկապեալն և ի շաղադրեալն: - 475. Ամենայն եղանակք բարբառոց ի հինգ *տրամատին:* - 639

**ՏՐԱՄԷՐ +** Նմանապէս խոհեմին և անզգամին. *տրամիրին*, և անյագ անիրաւին: - 268

**ՏՐԴԱՏ** - Ասեմք առ այս՝ թէ լուսաւորիչն գնաց ի հռօմ ո՛չ վասն ձեռնադրութեան, այլ վասն սիրոյ և միաբանութեան երկուց ազգաց և ուղղափառ թագաւորացն *տրդատայ* և կոստանդիանոսի: - 548. Եւ յառաջ *տրդատ* հաւատաց և ապա՛ կոստանդիանոս: - 549

**ՏՐԵԱԼ** - Մետասաներորդ՝ մալեալն, *տրեալն*. պակասն արիութեամբ: - 371

**ՏՐԷ +** *Տրէ*. զի առնու գիշերն յօրէն զժամ և զմասունքն. որպէս կրելով յինքն: - 200

**ՏՐԻՏՈՒՐ +** Նա՛խ՝ շնորհակալութիւն է և գոհութիւն երախտեացն աստուծոյ *տրիտուր*. ո՛չ իբր կարօտի, այլ անկարօտի որպէս աստուծոյ: - 406

**ՏՐՈՀԵՄ +** Սակայն վարդապետք եկեղեցւոյ պատշաճե՛ն զստեղծանելն հօր. իսկ *զտրոհելն* որդոյ. և զզարդարելն հոգւոյն սրբոյ: - 522

**ՏՐՈՒՊ +** Արդ՝ ես վերջին ծնունդս եկեղեցւոյ և *տրուպս* բանասիրաց, Գրիգոր պիտակ անուն խնդրող բանին. բացայայտեցի զբանս Հարցմանց ի լուսաւոր բանից վարդապետաց եկեղեցւոյ: - 772

**ՏՐՏՄԱԿԱՆ +** Եւ թէ ծախողակի վրիպութիւնք ամփոփե՛ն *տրտմականօք*, ի հաւատն սփոփեսցիս և մի անկցիս յուսահատեալ: - 770

**ՏՐՏՄԱԿԵԱՑ** - Եւ որ զհողն ունի, *տրտմակեաց* է և ծանրաշարժ և ծոյլ մարմնով: - 245

**ՏՐՏՄԵՑՈՒՑԱՆԵՄ +** Նոյնպէս՝ թէ ասի տրտմութիւն հոգւոյն. զի որպէս տրտմեալն հեռանա՛յ ի *տրտմեցուցողէն*, այսպէս և հոգին սուրբ հեռանայ ի մեղաւորէն: - 60

**ՏՐՏՄԻՄ +** Նոյնպէս՝ թէ ասի տրտմութիւն հոգւոյն. զի որպէս *տրտմեալն* հեռանա՛յ ի տրտմեցուցողէն, այսպէս և հոգին սուրբ հեռանայ ի մեղաւորէն: - 60. Եւ թէ ո՞րպէս ասեմք ննջել զարքնուլ սրտմտիլ կամ *տրտմիլ* աստուծոյ: - 122. Նոյնպէս և ի *տրտմիլն* սևանայ վասն սեաւ մաղձոյն որ տայ ի յերեսն: - 245. Չորրորդ՝ մահու մեռանիլ այն է, որ հոգւով և մարմնով *տրտմին*. և անմահ չարչարին. որպէս մեղաւորք յայս կեանս և յետ մահու. զի որ մեռանի մարմնով՝ զպարտս վճարէ. և որ *տրտմի* հոգւով՝ անմահ մահանայ: - 277. Զի ո՛չ հաճեցաւ ի նա և ո՛չ ի զոհս նորա. և *տրտմեցան* երեսք

նորա և այլն: - 287. Իսկ հօրն ամենևին ո՛չ պղտորեցան խորհուրդք. և ո՛չ *տրտմեցան* սիրտք. և ո՛չ տխրեցան դէմք: - 304. Դարձեալ՝ ուռն և լծակն՝ խաչն. և Ողկոյզն անապական ճմլեալ ի վերայ խաչին հնձանի. և եղև ուրախարար գինի *տրտմեցելոցս* մեզօք: - 381. Երրորդ, *տրտմեալ* էր վասն մահուն մարիամու: - 386. Որ և *տրտմեցաւ* տէրն մինչ ի մահ. զի զտրտմութիւնս մեր եբարձ: - 387. Նոյնպէս և կրօնաւորն ո՛չ ցաւի և *տրտմի* և ո՛չ հեշտանայ ընդ աշխարհի: - 390. Եւ յիսուս անունն՝ են վեց գիր. որ կարեն լինիլ սկիզբն այսպիսի ասութեանց. այսինքն Յարազուարճութիւն *տրտմեցելոց:* - 474. Երրորդ՝ վասն մխիթարութեան աշակերտացն. զի **խ** օր մխիթարեսցէ զնոսա փոխանակ **խ** ժամուն որ *տրտմեցան* ի մահն քրիստոսի...: - 520. Առ երկրորդն ասեմք թէ, ընդ ուրացութիւնն պետրոսի՝ սիրտ ամենայն առաքելոցն *տրտմեցան* և կոտորեցան. և ի զղջումն նորա ամենեքեան հաստատեցան վերստին: - 547. Եւ բաժանեալ զսուրբ տեղիս տընօրինական, ետուն զսուրբ յակոբն պատրիարգարան, և զգողգոթայն, և զսուրբ կարապետն և զնմարսն. և արկեալ վիճակս ի վերայ յարութեանն՝ անկաւ հայոց. և *տրտմեցան* ոմանք յազգէ նոցա: - 548. Վասն որոյ յետոյ *տրտմի* և նեղի. ատէ՛ զպատճառ մեղացն և դառնայ ինքեան. որպէս ամոնի եղև: - 558. Ի վայր շարժումն է տրտմութիւն և ծանծրութիւն. որ է՛ ծուլութիւն. զի մինն ծանրանայ և ո՛չ գործէ զբարիս. և միւսն *տրտմի* և պակասի: - 560. ...ապա՛ ի պակասիլն սոցա *տրտմի*. և թէ ոք հակառակի՝ բարկանայ ընդ դէմ նոցա. ապա յամենայնէ ծանծրանայ: - 561. Որպէս յա՛յտ է ի *տրտմիլն*. զի խորհուրդն մշակ եղեալ յետոյ ի յոխս և ի քէնս և ի նախանձս յաւելու: - 564. Նա՛խ՝ զի ի հոգին է. **բ**՝ զի վասն հոգւոյն *տրտմի* և ցաւի. **գ**՝ արտասուս հոսէ. **դ**՝ զմահ զդատաստան և զտանջանս ի միտ ածէ՛...: - 584. Իսկ ընդ դէմ այսմ, դիւական տրտմութիւնն ի մարմինն է և վասն մարմնոյն. և զարտասուս ցամաքեցնէ. և *տրտմի* և ամբոխի. և հետևի նմա ոխ և ատելութիւն. այլ և մահ ևս գործէ որպէս ասէ առաքեալն: - 584. ...**ե**՝ մխիթարել *զտրտմեալսն*...: - 585. Նաև բերանն դառնանայ և չորանայ *տրտմեցելոյն*. զի չո՛ր է և դառն...: - 620. Յայս միտս՝ յորժամ փոշիմանիմք ի վերայ բանի կամ *տրտմիմք*, ատամամբք զմատն խածանեմք...: - 670. Իսկ յայսպիսի տեսութենէս ո՛չ ուրախանան, այլ *տրտմին*. և այս վասն նախանձու նոցա ընդ բարեբաստութիւնս այլոց: - 741. Ցասմականն *տրտմեալ*: - 752. Եւ այսպէս *տրտմեալ* սգով և թախծեալ մտօք ընծայեցի տխեղծ մատամբ զխունախոյ նուէրս բանի, իբր զլոմայս այրւոյն՝ քումդ գանձարանի: - 789

**ՏՐՏՄՈՒԹԻՒՆ +** Զի *տրտմութեամբ* մեղանչումն հիւանդութիւն է և գայթակղութիւն. և հիւանդն յառողջութիւն փութայ. և գայթակղեալն՝ ի ճանապարհ: - 33. Նոյնպէս և զաղաղակն և զարտասուսն՝ զերկիւղն՝ *զտրտմութիւնն*՝ զաղօթելն՝ և զայլ սոյնպիսին ի դիմաց մերոց իմասցիս: - 42. Չորրորդ ասեն, *տրտմութիւնն* կիրք է և ո՛չ լինի յաստուած: - 60. Նոյնպէս՝ թէ ասի *տրտմութիւն* հոգւոյն. զի որպէս տրտմեալն հեռանա՛յ ի տրտմեցուցողէն, այսպէս և հոգին սուրբ հեռանայ ի մեղաւորէն: - 60. Երկրորդ՝ փարատէ՛ *զտրտմութիւն* և ուրախ առնէ: - 185. Երկրորդ՝ *զտրտմութիւն* մեղաց փարատէ՛: - 185. Նոյնպէս և Աշխարհ կոչէ. այսինքն աշխար. և սուգ. և *տրտմութեան* հովիտ: - 210. Հինգերորդն կարօտութեան և *տրտմութեան:* - 210. Եւ ոմանք ասեն՝ թէ սեաւ մաղձն առնէ *տրտմութիւն* և սրտմտութիւն. և խարտէշն զբարկութիւն և զմախանք. արիւնն արի և վայրաբեր. և պաղդամն ծոյլ և քնափ: - 245. Վասն է՞ր այնչափ ի մէջ ցաւոց և *տրտմութեան* եմք առաւել քան զառաջինսն: - 292. Եւ այսպէս մխիթարեցաւ յայս երից վշտացս *տրտմութեանց:* - 313. Այսինքն մարդիկք որ անբան *տրտմութեամբ* և անմիտ ցանկութեամբ ի վայր գտան քան զանասունս: - 316. Եւ իւղն՝ զուարթութեամբ կատարելն առանց *տրտմութեան:* - 357. Իսկ որ վասն մեղաց նաշիհ իւղ և խունկ ոչ դնէին. զի *տրտմութիւն* և խաւար է մեղքն, և գարշ հոտ գայ ի խղճմտանացն մինչև ապաշխարեսցէ: - 357. Իններորդ՝ գլուխ և տուտն ցասումն է և *տրտմութիւնն* զկնի. և ամենայն մեղաց յետ գործոցն *տրտմութիւն* հետևի: - 387. Որ և տրտմեցաւ տէրն մինչ ի մահ. զի *զտրտմութիւնս* մեր եբարձ: - 387. ...քաղաք ապաստանի է նոցա ի կայանս հոգւոցն *տրտմութիւն*...: - 392. Ուստի յա՛յտ է, զի որակ ծնողացն խառնի ի բեղմնաւորիլն. ի դաշտանւոյն գօղի. ի հիւանդութենէ, ի շիկութենէ. որպէս ադամ *տրտմութեամբ* ծնաւ զորդին կայէն. ցաւած ծնողացն ցաւածին որդի: - 439. Եւ ոմանք յաւելուն այլ ևս զամօթ՝ *զտրտմութիւն* և զցաւս մարմնական. որ և սոքա ընդ նոսա են: - 474. Զի *տրտմութիւն* արտասուաց ընդ մահուանն բարձաւ. իսկ ամօթ և ցաւք մարմնոյ՝ ընդ մեղացն բարձան. որպէս ի հատանիլ արմատոյ՝ չորանան ստեղունքն: - 474. զի ցուցցէ թէ աստուածային ուրախութիւնն գերազա՛նց է քան զմարմնաւոր *տրտմութիւնս:* - 520. Քսանևէ, Վասն ինն երանութեանցն. Աղքատութեան. Սգոյ. և *Տրտմութեան*. և այլոցն կարգաւ: - 526. Իսկ գործ մեղացն բերէ յինքն

*զտրտմութիւն*, զստրջանք, զապաշաւ, և զերկիւղ: - 557. Նախ ասեմք թէ՝ համաձա՛յն են միմեանց. զի և սա Նազրիոս է ասէ. զի *տրտմութիւն* և ձանձրութիւն մի երևին. զի *տրտմութիւն* ի պակասութենէ բարւոյն լինի, իսկ ձանձրութիւն յաւելուածոյ բարւոյն: - 559. Վասն այն այլ վարդապետք կոչեն զայս ախտ՝ ծուլութիւն. զի ծուլութիւնն յերկու իրաց երևի. մին որ յետս դառնայ ի հոգևոր բարւոյն և ծանրանայ ի գործելն. այսինքն պահել՝ աղօթել և այլն. և ըստ այսմ կոչի *տրտմութիւն:* - 559. Չորրորդ *տրտմութիւն:* - 560. Ի հողոյ *տրտմութիւն* և ձանձրութիւն. զի ցուրտ է և հակօղ: - 560. *Տրտմութիւն* հողոյ որպէս ասացաք: - 560. *Տրտմութիւն* հոտոտելեաց: և Ձանձրութիւն բոլոր մարմնոյն: - 560. Ի վայր շարժումն է *տրտմութիւն* և ձանձրութիւն. որ է՛ ծուլութիւն. զի մինն ծանրանայ և ո՛չ գործէ զբարիս. և միւսն տրտմի և պակասի: - 560. Կամ և թիւրի ցանկութեամբ. և ըստ այսմ է՛ ծուլութիւն. որ է՛ *տրտմութիւն* և ձանձրութիւն: - 561. Եւ ի կատարեալ հասակն ազահութիւնն. և յետ այնորիկ *տրտմութիւն,* ծուլութիւն, և այլն: - 561. Քանի՞ է *տրտմութիւն* և խնդութիւն: - 584. Կրկին *տրտմութիւն* է և կրկին խնդութիւն. զի է՛ աստուածային և է դիւական: - 584. Աստուածային *տրտմութիւն* և խնդութիւնն հոգևո՛ր է և բարի: - 584. Իսկ դիւական *տրտմութիւն* և խնդութիւնն մարմնաւո՛ր է և չար: - 584. Այն որ աստուածային *տրտմութիւնն* է, ունի **դ** յատկութիւնս: - 584. Իսկ ընդ դէմ այսմ, դիւական *տրտմութիւնն* ի մարմինն է և վասն մարմնոյն. և զարտասուս ցամաքեցնէ. և տրտմի և ամբոխի. և հետևի նմա ոխ և ատելութիւն. այլ և մահ ևս գործէ որպէս ասէ առաքեալն: - 584. Նա՛խ՝ զի *զտրտմութեան* դնն զձանձրութեան զկարճմտութեան զսրտմտութիւն և զոխն հանէ՛ ի հոգւոյն: - 584. Իսկ որ մարմնական խնդութիւնն է և դիւական՝ ընդ դէմ այսմ ամենայնի. և ի վախճանի *տրտմութիւն* հետևի որպէս ասէ սուրբն եւագրիոս: - 584. Այլ և տարակո՛յս է թէ՝ վասն է՞ր *տրտմութեան* արտասուքն դառն է, և ուրախութեան քաղցր: - 619. Իսկ ի լուր *տրտմութեան*՝ խուճապի մարմինն. և ի դառն մաղձոյն որ է՛ լեղին՝ հոսի ի բերան քաղրդին...: - 619-620. ...և յինունքն յարութեան խորհուրդ. զի ո՛չ է սուրգ և ո՛չ *տրտմութիւն* և ո՛չ ցաւք: - 654. Երկրորդ ըստ ախորժակին, *տրտմութիւն* և ուրախութիւն: - 663. Իսկ յորժամ մեղաւոր հոգին հասանէ ի վախճան, *տրտմութեամբ* և ակամայ իբրև զանասուն ի սպանդ վարեալ...: - 669. ...և նա ցաւօք և *տրտմութեամբ* և հեծութեամբ կայ անդ ի խաւարին բանտն ընդ այլ խաւարասէր հոգւոցն: - 669. և այնպէս դառնացեալ *տրտմութեամբ* և սարսռելի երկիւղիւ յուսահատեալ մնան...: - 669. Է և ա՛յլ իմն տեսութիւն վերագոյն. զի արարողութիւն սըգոյս ցուցանէ զառաջին անկումն մեր ի լուսեղէն կենացն ի խաւար աշխարհ *տրտմութեամբ* և ցաւօք մահու մեռեալք և ի հող դարձեալք. և այս ի ճաշակմանէ պտղոյն: - 670. Երրորդ՝ զի կամօք և ուրախութեամբ ուղարկեմք ի քրիստոս և ո՛չ ակամայ կամ *տրտմութեամբ:* - 673. Ա՛րդ՝ դարձեալ տեսանելն զմիւսանգամ գալուստն նշանակէ. որով ուրախ լիցին առանց *տրտմութեան:* - 692. Երրորդ պակասութիւն *տրտմութիւնն* է ի հոգին. զի բազում ինչ խնդրէ և ո՛չ կարէ առնուլ. և բազում ինչ ոչ խնդրէ և լինի նմա. - 722. Վասն այն հոգիք մեղաւորաց լինին ի խաւարն անգիտութեան. և ի *տրտմութիւն* յաւիտենական. և որոշեալք յաստուծոյ: - 723. Երրորդ՝ դարձեալ զերկնային զօրութեանց վշտանալն ցուցանէ ի վերայ կործանելոցն. զի վասն իմ գալարին և ընդ իմ կործանումն՝ *տրտմութիւն* զգենուն: - 729. Կապանք: Երկիւղ: Ցաւ: Ամօթ: Նախանձ: Ղեռ: *Տրտմութիւն:* - 751. Եւ այն է կեանք՝ ուստի մերժեալ են ցաւք և *տրտմութիւնք* և հեծութիւնք: - 762. Որում համեմատեալ այլ ուստէք ամենայն հրճուանք *տրտմութիւն* է...: - 762. Զի ա՛յն է կեանք՝ ուստի մերժեալ են ցաւք և *տրտմութիւնք* և հեծութիւնք: - 767. Յորոց յա՛յտ է թէ՝ որք աստի կենօքս ի սուգ *տրտմութեան* անցուցանին զի ուրախութեան հասցեն: - 775. Իսկ ի ներքուստ, ի լինիլ *տրտմութեանց*՝ խուճապեալ մարմնոյն հոսի մաղձ դառն ի ստամոքս որովայնի...: - 787

**ՏՐՏՆՋԱԿԱՆ +** Չորրորդ՝ զի ի դևն շրջեալ է *տրտնջականն* ըստ յառաջանալոյ ի բարին: - 151. Այնպէս մարդ մեղօք զրկի ի շնորհաց լուսոյն. այլ լոյս խնամոցն աստուծոյ չէ հեռացեալ և սակաւ փայլէ ի ներքս ի *տրտնջականն*...: - 562-563

**ՏՐՏՆՋԵՄ +** Նա՛խ՝ զի օձին հող ետ աստուած կերակուր և ո՛չ *տրտնջեաց:* - 386. Եւ նոցա մանանայ յերկնից ետ և *տրտնջէին* և սնոտի՛ հաց կոչէին: - 386. Իսկ յետ մահուան ահարոնի նուազեաց մանանայն. յորում *տրտնջէին* և յօձից սատակեցան: - 415

**ՏՐՏՈՒՄ +** Զի ընդ իւր անկումն ի պատուոյ այնչափ չէ՛ *տրտում*, որքան ընդ մարդոյն փառաւորիլն: - 146. Մեղաց պատարագին խունկ և իւղ չէր հրամայեալ օրէնքն. զի *տրտում* և ժահահո՛տ է: - 630. Մատռուակն ուրա՛խ էր. և խոհագործն *տրտում* վասն ցուցման երազոյն: - 689

**ՏՐՏՈՒՆՋ +** Եւ *տրտունջ* ժողովրդեանն: - 284. Զի՞նչ է *տրտունջն*. և զի՞նչ է բամբասանքն: - 381. *Տրտունջն* դժգոհանքն է. և բամբասանքն բասիր բանք զայլմէ՛: - 381. Եւ երեք դաս է *տրտունջն*. այսինքն Կարօտանաց. և Փործանաց. և Չարաչար: - 381. Փործանքն է՝ որպէս թէ զայս առնես՝ լսեմք. և թէ ոչ առնես՝ ո՛չ լսեմք. և Չարաչարն՝ հայհոյութեամբ *տրտունջն* է: - 381

**ՏՔՆԻՄ +** Երրորդ՝ զի չունէին պատճառս հայհոյութեան հոգւոյն որպէս զորդոյ. զի տեսանէին մարմին զգեցեալ, ուտել և ըմպել, *տրքնիլ* և ննջել: - 566

**ՏՔՆՈՒԹԻՒՆ +** որ ամենայնիւ ընդ դէմն փոխի ուտելն և ըմպելն ի ծոմ և ի ծարաւ. ծաղրն ի սուգ. հեշտութիւնն ի *տրնութիւն*. և ի չարչարանս և այլն: - 657

**ՏՕԹ +** Չորեքտասաներորդ՝ բարեխառնէ՛ զժամս *տօթոյ* և ցրտոյ: - 126. Հինգերորդ՝ զի հովանի լինի *տօթոյ:* - 206. Երրորդ՝ վասն *տօթոյ:* - 281

**ՏՕՆ +** Իսկ կէս մասն ի մեկ ամիսն՝ լինի կէս ժամ. և ի մեկ տարին **զ** ժամ. և ի **դ** տարին ժողովեալ՝ լինի օր մի **իդ** ժամ. և ա՛յն առնէ զնահանճն. և շարժէ՛ *զտօնս* և զեղանակս: - 190. Վասն որոյ *տօն* առաջին աւուրն ի մէջ գիշերի սկսանի. և մեծամեծ *տօնքն* յերեկօրեայ որպէս ասեմք զշաբաթի երեկոյն կիրակմուտ: - 194. Յիսունեմի, Ուր էր և *տօնք* ի հինն որ փոխեցաւ ի նորս: - 284. Ի հինն **գ** *տօն* էր գլխաւոր: - 340. Եւ *տօն* սրբոյ խաչին. զի արմտեաց և արդեանց մերոց ժողովումն է սուրբ խաչն փրկչական: - 341. Եւ բաց յայսցանէ **բ** ակն յանդիմանութեան զոր անդամանդեայ կոչէին, և էր ի պճղնաւոր զգեստին ի վերայ ուսոց քահանայապետին յորժամ մտանէր ի սուրբն սրբոց երիցս ի տարւոջն, ի *տօնի* զատկին և յիսներորդացն և ի քաւութեանն: - 349. Երկրորդ՝ վասն անգիտութեան և ակամայիցն զուարակ մի քահանային. և զուարակ մի՝ բոլոր ժողովրդեանն ի *տօնի* քաւութեանն: - 358. Այլ և ի *տօնի* քաւութեանն զուարակ մի և **բ** նոխազ վիճակով. մին տեառն և միւսն արձակման յանապատ: - 359. Որպէս տօնականն զատկի և տէրունական *տօնից:* - 362. Հինգերորդ՝ կրկին ողջակէզն. մին պատարագն է ամենայն աւուր. և միւսն *տօն* չարչարաց խաչի և մահու յամենայն ամի՛ զոր նոյն խորհրդով կատարէ՛ եկեղեցի: - 363. Զի յերկրորդ ամն էր առաջին *տօնն* ելից եգիպտոսէ՛: - 371. Քանի՞ էր *տօնք* ի հինն: - 372. Հինգ *տօն* էր ի բոլոր ամն: - 372. Չորրորդ՝ քաւութեանն. որ է *տօն* խաչին: - 372. Հինգերորդ՝ տաղաւարահարքն. որ է՛ եկեղեցւոյ *տօն*. վասն այն զխաչին և զեկեղեցւոյն ի միասին տօնեմք: - 372. Այլ և բոլոր ամենայն *տօնք* հնոյն՝ **ը** *տօն* էր. զոր այժմ մեք ունիմք փոխեալ ի նորս: - 372. Այլ և զաւագ *տօնս* ի շաբաթու տօնեմք: - 372. Երրորդ՝ *տօն* փողոցն. իսկ մեզ առաքելոցն *տօն*. զի նոքա են փողք տիեզերաց: - 372. Չորրորդ՝ ամսամուտն նոցա. զոր ի նորանալ լուսնին տօնէին. իսկ մեզ *տօն* կուսին մարիամու որ լուսաւորութիւն լսի ըստ ոմանց: - 372-373. Այլ ամսամուտն է ծննդեան *տօն*. զի քրիստոս եղև մեզ ամիս ծննդեամբ և մահուամբ և յարութեամբն: - 373. Եւ ի մեզ *տօն* զատկին: - 373. Եւ տես, զի սոքա երեքեան *տօնքս*, այսինքն ամսամուտն, և պասքայն, և յիսներեակն, հաւասար ունին զմատուցմունքն *տօնից:* - 373. Երրորդ՝ զի հաւասարք են **գ** *տօնքս*. որպէս ծննդեան և յարութեան՝ նոյնպէս և հոգւոյն գալստեան **ը** օր տօնեմք: - 373. Եօթներորդ՝ *տօն* տաղաւարահարացն որ նշանակէ՛ առ մեզ զտօնելն եկեղեցւոյ, ի բոլոր ամն **ը** օր կատարի: - 373. Ութերորդ՝ *տօն* քաւութեան: - 373. Եւ նշանակէ՛ ի մեզ *զտօն* սրբոյ խաչին. զի նա՛ է քաւութիւն մեր: - 373. Այլ ըստ ոմանց՝ *տօն* քաւութեան որթագործութեանն, նշանակէ ի մեզ *զտօն* մեծ քառասնորդացն պահոց: - 373. Այսպէս և մեք խոնարհ մտօք և ուրախ սրտիւք տօնեմք *զտօն* պահոցն: - 373. Իսկ զվարդավառին և զփոխմանն *տօն*՝ ի նորո՛յս է աւանդեալ. որպէս ողոգոմեանն, և քառասնօրեայ գալստեանն: - 373. Զի՞նչ էր որ ի տաղաւարահարքն ըստ միոյ միոյ աւուրց մի մի զուարակ պակասէին ի *տօնս*. և յութերորդ օրն ի միհն յանգէին: - 374. Առ տեղեաւն՝ նշանակէր զնուազութիւն աւուրցն *տօնից* ի պակասումն զուարակացն: - 374. Երրորդ՝ նշանա՛կ են սրբոցն *տօնից:* - 374. Զի՞նչ է որ ըստ *տօնից* մեծութեանն առաւելոյր նաշիհն և իւղն և գինին: - 375. Նոյնպէս և մեք ի հանդէս *տօնից* նուիրեմք նաշիհ և գինի պատարագի. ձէթ՝ մոմ՝ խունկ՝ և զենումն մատաղի: - 375. Այլ հոգեպէս՝ նաշիհն է՛ մարմնական նուէրքն. և կամ չարչարանք մարմնոյ որ ի *տօնս* ճգնիմք...: - 375. Կարդացմունք. քարոզք. ներբողեանք և այլք. որ ըստ *տօնից* առաւելուլ պարտ է զնոսա: - 375. Քսանգ, Վասն *տօնի* ծննդեանն ի վեցն յունվարի **ժե** պատճառաւ: - 454. Վասն է՞ր ազգս հայոց *զտօն* ծննդեանն քրիստոսի և մկրութեան ի միում աւուր կատարեմք: - 482. Եւ որպէս կարգեաց տն եղբայրն յակոբոս զընթերցուածն. և ի նմին աւուր զերկու *տօնս:* - 482. Եւ բարսեղ ի քրիստոսի ծնունդն յիւրական ճառին ասէ, անուն դիցուք *տօնիս* աստուածայայտնութիւն: - 482. Քանզի ո՛չ կարէին ի միում աւուր յերկոսեան

ուխտսն կատարել *զտօնսն* հեռի գոլով ի միմեանց. երուսաղէմացիքն այսր աղագաւ փոխեցին. և փոքր փոքր աճմամբ ընկալան և ա՛յլ եկեղեցիք զնոյն: - 482. Զոր ի ժողովն քաղկեդոնի հաստատեցին զսոյն *տօն* ի **իե**ն դեկտեմբերի. պատճառելով թէ՝ ի հռօմ դարձի արեգական *տօն* կատարէին. և փոխեաց զայն պետրոս տօնել արեգականն արդարութեան: - 482. Եւ զինչ և իցէ պատճառաւ զկարգեալսն առաքելոցն փոխեցին զծնունդն և զտեառնընդառաջին *տօնն:* - 482. Ա՛րդ՝ ցուցից տումարաւ *զտօնս* մեր և զնցայն. զի տօնախմբութիւն նոցա այսպէս կատարի առ յայտնութիւնն: - 483. Եւ թշրինի **ժե**՝ սկիզբն *տօնի* տաղաւարահարաց, որ է՛ հոկտեմբերի **բ**. և անտի մինչև ի **իբ**ն թշրինի՝ և ի հոկտեմբերի **թ** կատարումն *տօնին:* - 483. Հինգերորդ՝ ի նմին իրացն յայտնի է՝ զի ռամիկ ժողովուրդն ի *տօնի* քաւութեանն երեքօրեայ սրբութեամբ մերձենային առ դուռն տաճարին: - 483. Ութերորդ՝ զի թէ հաւատան աւետարանին և ոչ ստեն **լ** ամաց գալ քրիստոսի ի մկրտութիւն, ի հարկէ՛ պա՛րտին կատարել և զմկրտութիւնն ի նոյն ի *տօնի* ծննդեանն իւրեանց ի դեկտեմբերի **իե** որ իցեն ամենևիմբ սուտ: - 484. Տասներորդ՝ զի և ազգն հռօմայեցւոց մինչև ցայսօր յայտնապէս ի վեցն յունվարի զերից *տօնից* յիշատակս կատարեն: - 484. Երեքտասաներորդ՝ ականատես տնօրէնութեանն եղբայր տեառն յակոբոս որ կարգեաց զընթերցուածն, յունվարի վեցն աւանդեաց *զտօնն* ծննդեանն. և ի նոյն օրն դարձեալ զմկրտութեանն: - 484. Հնգետասաներորդ՝ յա՛յտ է յայսմանէ. զի վասն *տօնի* տեառնընդառաջին առաքեաց յուստիանոս կայսրն յերուսաղէմ զօրս բազում երիցս անգամ...: - 484-485. Չորրորդ՝ զի ի *տօնի* զատկին ի մէջ բազում ժողովրդոց: - 490. Եւ շնորհականն հոգևոր. ուր սկսանին ամենայն *տօնք* սրբոց **զ** ժամով յառաջ քան զբնական օրն: - 508. Իսկ զտէրունական *տօնս* երեկօրեայ յինն ժամ **է** աւուրն սկսանեմք. որ է՛ **թ** ժամաւ յառաջ քան զհասարակաց *տօնս:* - 508-509. Նա՛խ՝ զի խոստովանիմք զքրիստոս աստուած և *զտօն* նորա ըստ տէրունականացն կատարեմք: - 509. Եւ որ ոք ո՛չ խոստովանի զքրիստոս աստուած, *զտօն* նորա ըստ հասարակ մարտիրոսացն առնէ ի մէջ գիշերոյն ի վեր: - 509. Տե՛ս զի ի ժողովն եփեսոսի հասարակ ամենայն ազգ այսօր նաւակատիս առնէին մինչ ի ժողովն քաղկեդոնի ուր փոխեցան *տօնք* և պահք և դաւանութիւնք: - 509. Թէպէտ այսօր վասն պատրանաց մարդկան և փոխելոյ *զտօնս*՝ ոչ ինչ ուտեն զնաւակատեաց որ է ծուկն. զոր միշտ զքառասնորդ պահքս պղծեալ են ձկամբ և արբեցութեամբ: - 509. Նաւակատիսն նորոգումն և *տօն* կամ ուրախութիւն թարգմանի: - 509. Եւ ի յայս միտս *զտօն* ամենայն սրբոց մարտիրոսաց ի մէջ գիշերի սկսանեմք **զ** ժամով յառաջ քան զծագումն լուսոյն հասարակ աւուր: - 515. Յիսունսմի, Վասն շաբաթի *տօնից*. և ութօրէք. և փոխմունք ժամատեղաց: - 527. Վասն որոյ զայս **գ** ժողովքս տիեզերական և միմեանց համաձայն ընդունիմք. այլ զքաղկեդոնին ո՛չ ընդունիմք. զի ընդ դէմ է առաջնոցն և քակտումն դաւանութեան *տօնից* կարգաց և կանոնաց ամենայնիւ: - 541. Եւ փոխեցին *զտօնս* տէրունականս: - 547. Երկրորդ՝ գառն զենուլ ի *տօնս:* - 553. Չորրորդ՝ *զտօն* սրբոցն յառաջիկայն անցուցանել օր: - 553-554. Որպէս և *տօն* ծննդեանն զոր միաբան ասեն տօնել այլոց քրիստոնէից բաց ի հայոց. և զի և այն աւանդութիւն է և տօնախմբութիւն և ո՛չ հաւատ: - 554. Զի և սա՛ մի է ի խորհրդականաց *տօնից* կենարարին մերոյ: - 554. Վեցերորդ ըստ երբին. այսինքն թէ ե՞րբ գործեն զմեղքն. ի տղայութեա՞ն, թէ ի ծերութեան որ մեծ մեղք է. ի սո՞սկ աւուրս, թէ ի տէրունական *տօնս*. զի որ ի *տօնս* մեղք գործէ, առաւել պատժի քան զմիւսն: - 565. Եւ ի *տօն* զատկին որ արար խարազան չուանեայ և եհան զվաճառականսն, ցուցաւ սարկաւագի գործ նորա: - 606-607. Եւ յամենայն ամի *տօն* քաւութեան և տաղաւարահարացն: - 616. Աշխարհամատրանն. և յետ գալստեան Հոգւոյն կիրակէն. Տապանակին. Շողակաթին. և **դ** օր ի Խաչին *տօնն*. **բ** Գալստեանն. Վերնատանն. Եւ նոր կիրակէին: - 616. Նա՛խ՝ զի ի հինն *զտօն* քաւութեան և զտաղաւարահարացն ի միասին տօնէին ի թշրինի **ժ**: - 616. Իսկ մեր քաւութեան *տօն* խաչն է. և տաղաւարահարն եկեղեցին. վասն այն զխաչի և եկեղեցւոյ ի միասին տօնեմք: - 616. Երկրորդ, յորժամ արմըտիքն ժողովեին յաշնանն, յայնժամ տօնէին զերկու *տօնն:* - 616. Վասն որոյ և մեք միշտ ի նոյն քանիս ամսոյն սուրբ խաչին և եկեղեցւոյ *տօն* կատարեմք: - 617. Եւ ա՛յն էր նշանակ չւելոյ բանակին կամ ժողովելոյ իշխանացն. կամ ամսամտից և այլ *տօնից* նոցա: - 618. Եւ **գ** տէրողորմեա տէրունական *տօնիցն:* - 621. Եւ ամաց **է** օր բաղարջակերք, և *տօն* տաղաւարահարացն: - 626. Նոյնպէս և **ը** ձայն եղանակաց. և **ը** օրեայ *զտօնս* գլխաւորս. որպէս ծննդեանն ութն օր. և յարութեանն՝ և հոգւոյն գալստեանն՝ և խաչի՝ և եկեղեցւոյ՝ և այլն: - 627. Զի ի կիրակէ և ի տէրունական *տօնս* ո՛չ կարօտիմք բարեխօսի. այլ երգս սրովբէականս նուագեմք: - 627. Նոյնպէս խունկն ի *տօնս* սրբոց: - 628. Զմեղաք յամենայնին, և զկարգ մեծ *տօնիցն*, յոհան օձնեցին: -

637. Եւ նախ ըստ աւուրց *տօնից*, որպէս մեծն ներսէս ասացեալ է զերգն: - 641. Շաբաթ մեծամեծ *տօն* սրբոց. որք են ի հանգիստն երկնից...: - 642. Եւ շաբաթն *տօն* մեծ որպէս ասացաք: - 642. Այս ըստ *տօնի* աւուրց: - 642. Թէ տէրունի իցէ *տօն*, այսպէս է կարգն: - 642. Եւ կիրակէն *տօն* է տէրունի: - 644. Այլ և բոլոր ամենայն տնօրէնութեանցն պատմօղ. վասն այն յամենայն օր ի *տօնս*, ի պահս, և յուտիս, ի շաբաթս, և ի կիրակէ, զնա՛ ընթեռնումք: - 644. Դարձեալ՝ կրկին է *տօն*. մինն տէրունական, և միւսն հասարակ սրբոց: - 646. Ա՛րդ՝ ի *տօնս* տէրունականս նախատօնական առնեմք յերեկոյս. և ի վաղիւն զկատարեալ *տօնն:* - 646. Իսկ վաղն որ է՛ կատարեալ *տօն*...: - 646. Այլ *տօն* նոցա է վաղն ի մէջ գիշերոյ ի վեր: - 647. ...վասն որոյ ի մէջ գիշերոյ ի վեր սկսանի *տօն* նախատակութեան նոցա: - 647. Իսկ գլխաւորագոյն սրբոցն, որպէս յաւագ *տօներն* և յայլս, որ առնեմք նախատօնակ որպէս ի *տօնս* տէրունականս: - 647. վասն որոյ յերեկոյս տօնեմք *զտօն* կատարման ելից նոցա ի յերկրէ...: - 647. ...և վաղն *զտօն* պսակաց և փառաց նոցա: - 647. Քանի՞ են ութօրեայ *տօնք* ի բոլոր տարին: - 649. Տասներորդ խաչի **դ** *տօնն*. զոր ի սուրբ խաչին է. և երևմանն. և վարագայ խաչին. և խաչգիւտն: - 649. Նոյնպէս աշխարհամատրանն և եկեղեցւոյ *տօնն* ի կիրակէ: - 649. Այսոքիկ են մեզ **ը** օրեայ *տօնք:* - 649. Մին ի *տօնս* տէրունականս: - 649. *Տօնն* ուրախութիւն է. որպէս հոգւոյ՝ նոյնպէս և մարմնոյ: - 650. Ասեմք թէ՝ քրիստոս **խ** օր պահեաց, և **խ** օր է մինչ ի ղազարու *տօնն:* - 651. Եւ նա՝ եղիայի և մովսէսի քառասնիցն, սկիզբն է առաջին շաբաթն. և կատարումն *տօնն* ղազարու: - 651. Ութերորդ, **է է** ածել զգառինսն պատարագ ի *տօնսն:* - 653. Տասներորդ, **ե** օր քաւութեան *տօնն:* - 653. Հինգերորդ, զի մեծ ուրախութիւն է և *տօն* յորժամ համանգամայն ամենայն մարդկան յական թօթափելն լիցի յարութիւն, քան յայլ և այլ ժամանակս. - 717

**ՏՕՆԱԽՄԲՈՒԹԻՒՆ +** Ա՛րդ՝ ցուցից տունմարաւ զտօնս մեր և զնոցայն. զի *տօնախմբութիւն* նոցա այսպէս կատարի առ յայտնութիւնն: - 483. Որպէս և տօն ծննդեանն զոր միաբան ասեն տօնել այլոց քրիստոնէից բաց ի հայոց. և զի և այն աւանդութիւն է և *տօնախմբութիւն* և ո՛չ հաւատ: - 554. Եւ ո՛չ միաբանին յայս *տօնախմբութիւն* ամենայն հաւատացելոց ժողովուրդք: - 554

**ՏՕՆԱԿԱՆ +** Իսկ յօրինակն խառնեմք աղ. որպէս յագապս. յոգէհանգիստս և ի *տօնական* պատարագս: - 356. Որպէս *տօնականն* զատկի և տէրունական տօնից: - 362

**ՏՕՆԱՀՄԱՅՔ** - Այլ և թերափն՝ իղձք ասէ. և թերափիմք՝ *տօնահմայք:* - 425

**ՏՕՆԵԼԻ** - Դարձեալ ասեմք եթէ՝ տօնօղքս և *տօնելին* **բժ**ան է: - 616. Վասն որոյ տէրունի՛ է *տօնելի* միշտ: - 642

**ՏՕՆԵՄ +** Այլ և մովսէս հրամայեաց յամենայն ամսամուտս *տօնել* և փող հարկանել...: - 200. Առաջին, ողջակիզաց մեծն. յոր զհասարակացն *տօնէին:* - 364. Ի եօթներորդն ամիսն որ է՛ թշրին՝ **ժ** օր քաւութեան *տօնէին*. զի է շաբաթ շաբաթուցն ի նա՛ է. և **է**երորդ ամիսն. այլ և **ժ**երորդ օրն շաբաթ էր: - 371. Հինգերորդ՝ տաղաւարահարքն. որ է՛ եկեղեցւոյ տօն. վասն այն զխաչին և զեկեղեցւոյն ի միասին *տօնեմք:* - 372. Այլ և զաւագ տօնս ի շաբաթու *տօնեմք:* - 372. Չորրորդ՝ ամսամուտն նոցա. զոր ի նորանալ լուսնին *տօնէին*. իսկ մեզ տօն կուսին մարիամու որ լուսաւորութիւն լսի ըստ ոմանց: - 372-373. Եւ յաղագս երից պատճառաց **ը** օր *տօնեմք* գալստեան սուրբ հոգւոյն: - 373. Եւ եօթնից է *տօնեմք* յարութեան. նոյնպէս զմի օր օրինացն տըւչութեան, *տօնեմք* **ը** օր հոգւոյն գալստեան: - 373. Երրորդ՝ զի հաւասարք են **գ** տօնքս. որպէս ծննդեան և յարութեան՝ նոյնպէս և հոգւոյն գալստեան **ը** օր *տօնեմք:* - 373. Ասեմք նախ եթէ՝ ծնունդն և յարութիւնն մարմնաւոր էր. վասն որոյ մարմնապէս *տօնեմք:* - 373. Եւ գալստեան հոգւոյն՝ հոգեպէս պահօք և հոգևոր երգով *տօնեմք:* - 373. Նոյնպէս և մեք ի յառնուլ զհոգին սուրբ պահօ՛ք *տօնեմք:* - 373. Եօթներորդ՝ տօն տաղաւարահարացն որ նշանակէ՛ առ մեզ *զտօնելն* եկեղեցւոյ, ի բոլոր ամն **ը** օր կատարի: - 373. Վասն որոյ ի միասին *տօնեմք* խաչի և եկեղեցւոյ. որպէս ասացաւ ի **լե** գլուխն, **լը** համարն: - 373. Այսպէս և մեք խոնարհ մտօք և ուրախ սրտիւք *տօնեմք* զտօն պահոցն: - 373. Զի վարդավառին ա՛յն է, յորժամ կրկին **խ** պահեաց մովսէս ի լեառն և լուսաւորեցան երեսքն. վասն այն զկնի երկու յիսնակացն *տօնեմք:* - 373-374. Երրորդ՝ զուրբս որոց *տօնեմք:* - 374. Վասն է՞ր հօր ո՛չ *տօնեմք* որպէս քրիստոսի և հոգւոյն: - 455. Յառաջագոյն ամենայն ազգք քրիստոնէից սկսեալ յառաքելոցն այսպէս *տօնէին*. ի վեցն յունվարի զծնունդն, և ի նմին աւուր զմկրտութիւնն ըստ աւետարանին վկայութեան: - 482. Այլ և աստուածաբանն ի քրիստոս ծնեալ ճառին ասէ, այսօ՛ր աստուծոյ յայտնութեանս *տօնէ:* - 482. Եւ յա՛յսմանէ յա՛յտ է, զի սուրբքն զծնունդն և զյայտնութիւնն ի միասին *տօնէին*. և յետոյ բաժանեցին

ոմանք վասն բեթղէհէմի և յորդանանու: - 482. Զոր ի ժողովն քաղկեդոնի հաստատեցին զսոյն տօն ի **իե**ն դեկտեմբերի. պատճառելով թէ` ի հռօմ դարձի արեգական տօն կատարէին. և փոխեաց զայն պետրոս *տօնել* արեգականն արդարութեան: - 482. Ա՛րդ` կարգեցին բազմազան վկայութինս զոր հաստատապէս *տօնեմք* զծնունդն քրիստոսի ի վեցն յունվարի: - 483. Եւ այս ամենայն ազգաց յա՛յտ է, որ ի յունվարի վեցն *տօնեն* մկրտութեան. ապա ուրեմն նոյն օրն է և ծննդեանն: - 484. ...զի զքառասնօրեայ գալուստն ի տաճարն` ըստ ծննդեանն *տօնեսցեն* և ո՛չ ըստ յայտնութեանն. որ է՛ յունվարի վեցն. զոր մեք *տօնեմք* **խ** օր թուեալ մինչև ի **ժդ**ն փետրվարի: - 485. Նմանապէս և աստ յայսմ աւուր շաբաթու որ ի կիրակէ յարութեան *տօնեմք*, այժմ յինն ժամուն ի վեր նախատօնակ առնեմք յարութեանն քրիստոսի. և այս վասն բազում պատճառի: - 509. Յօր աստուծոյ վասն է՞ր ոչ *տօնեմք* որպէս քրիստոսի և հոգւոյն սրբոյ: - 525. Իսկ թէ **ը** օր *տօնեմք*, ասացեալ է ի վերոյ ի **իա** գլուխն, **ծա** համարն: - 525. Եւ թէ խաչի և եկեղեցւոյ ի միասին *տօնեմք:* - 526. Եւ պահոցն ո՛չ *տօնեմք:* - 527. Յինգերորդ` այսմաւուրօք ո՛չ *տօնել* ըստ յունաց. այլ այլո՛վ օրինակաւ *տօնել:* - 554. Չորրորդ` յարդեան ժամանակիս այսմաւուրօք *տօնել* ոմանց. և այսոքիկ առ յոյնս: - 554. Որպէս և տօն ծննդեանն զոր միաբան ասեն *տօնել* այլոց քրիստոնէից բաց ի հայոց. և զի և այն աւանդութիւն է և տօնախմբութիւն և ո՛չ հաւատ: - 554. Եւ ո՛չ բարկանայ առ այս քրիստոս յայլ և այլ ժամու *տօնել:* - 554. Որպէս և ո՛չ բարկանայ վասն պայծառակերպութեանն իւրաքանչիւր ոք յայլում ժամու *տօնել:* - 554. Նա՛խ` զի զմի օր նոցա *տօնեմք*. և է յաւելեալ վասն է զգայարանաց. և վասն եօթնեկի մեղաց քաւութեան: - 616. Երրորդ, վասն **է** կենցաղոյս` և ըստ հանդերձելումն **ը** օր *տօնեմք:* - 616. Երկրորդ ասեմք, և մեք **բժ**ան օր *տօնեմք* եկեղեցւոյ ի բոլոր ամն. որ են այս: - 616. Դարձեալ ասեմք եթէ` *տօնօղքս* և տօնելին **բժ**ան է: - 616. Զի **բժ**ան առաքելոցն *տօնեմք:* - 616. Եւ **բժ**ան անդամքս *տօնեմք:* - 616. Դարձեալ, **ը** օր եկեղեցւոյ *տօնեմք*. և մի գլխոյն եկեղեցւոյ. և անդամոց նորա: - 616. Վասն է՞ր խաչի և եկեղեցւոյ ի միասին *տօնեմք:* - 616. Նա՛խ` զի ի հինն զտօն քաւութեան և զտաղաւարահարացն ի միասին *տօնէին* ի թշրինի **ժ**: - 616. Իսկ մեր քաւութեան տօն խաչն է. և տաղաւարահարն եկեղեցին. վասն այն զխաչի և եկեղեցւոյ ի միասին *տօնեմք:* - 616. Երկրորդ, յորժամ արմըտիքն ժողովեին յաշնանն, յայնժամ *տօնէին* զերկու տօնն: - 616. ...կարգեաց **ը** օր նաւակատիս խաչի և եկեղեցոյ ի միասին *տօնել:* - 617. ...վասն որոյ յերկրորդ օրն յառաջ քան զամենայն նոցա *տօնեմք:* - 642. Եւ ա՛յս է խորհուրդն. զի որ քան են սուրբք ի յերկրի կենդանի, ո՛չ *տօնեմք* նոցա մինչ ի հանդէս նահատակութեան են...: - 647. ...վասն որոյ յերեկոյս *տօնեմք* զտօն կատարման ելից նոցա ի յերկրէ ...: - 647. Վասն է՞ր ի շաբաթի օր *տօնեմք* սրբոցն: - 647. Վեցերորդ` յետ ուրբաթուն չարչարանաց` ի շաբաթի օր *տօնեմք* սրբոցն...: - 648. Եօթներորդ` շաբաթի օր *տօնեմք* սրբոցն և պատարագ մատչի ըստ նիկիական կանոնին...: - 648. Յաղագս որոյ ի շաբաթի աւուր *տօնեմք* մեծամեծ սրբոց: - 648. Առաջին և երկրորդն` ծննդեան և մկրտութեանն. զոր ի միասին *տօնեմք* ըստ կանոնաց սուրբ հարցն և տեառն եղբօրն յակոբայ: - 649. Պահք օրն վասն է՞ր ո՛չ *տօնեմք:* - 650. Վասն որոյ յորժամ *տօնեմք* հոգւով` ուրախանամք մարմնով: - 650. Դարձեալ` որ քան եմք ի պահքն` ընդ ապաշխարութեամբ եմք և ո՛չ եմք արժանի *տօնել* սրբոց...: - 650. ...այլ յորժամ ապաշխարութեամբ քաւեմք` *տօնեմք.* եթէ տէրունական և եթէ սրբոց: - 650. Զի յաւարտումն պահոցն` նոցա *տօնեմք*...: - 650. Երկրորդ, զի սիրելիք նոցա որք անդ ժողովին, *տօնեն* և յիշեն զնոսա աղօթիւք առ աստուած: - 678. Դարձեալ, ի կիրակէ յարութեանն քրիստոսի *տօնեմք*. և յերկուշաբաթին` նոցա սրբոցն որք ընդ քրիստոսի յարեան և մտին ի քաղաքն սուրբ: - 684. Եւ դարձեալ, զի ի **խ** օր պահոցն մինչ ի յարութիւնն ղազարու այլ հանգստեան ո՛չ *տօնեմք:* - 684

# Ր

**ՐԱԲՈՒՆԻ +** Գիր քոյոյ վսեմամիտ խոհեմութեանդ ո՛վ արփիածին հարազատ, և վերնոյն սիօնի նազելի զաւակ Գէորգէոս *Րաբունեայ* պետ: - 773

**ՐԱԽԱԲ** - Դարձեալ վայելո՛ւչ էր փրկութեան մեր լինիլ ի ձեռն փայտի. որ ցուցանէ զփայտն կենաց ի մէջ դրախտին: ...Եւ նշանն *րախաբ* պոռնկի: - 494

**ՐՈՊԷ +** Օր, ամիս, և տարի և շաբաթ, և ժամք, վերադիր, և *րոպէք*, ոլոմպիադ, և այլն: -154. Իսկ *Րոպէն* այս է: - 191. Եւ մէկ ժամն է՛ **լ** մասն. և մէկ մասն է՛ **կ** *րոպէ:* - 191. Ապա ուրեմն **ժ** մասն է **ռ** *րոպէ*. և մէկ ժամն **ռպ** *րոպէ:* - 191. Որ լինի **ժ** ժամն **ժըռ** *րոպէ:* - 191. Եւ ժողովեալ մէկ օրն **իդ** ժամ՝ լինի **դ** բիւր և **սբճ** *րոպէ:* - 191. Չինգերորդ՝ զի անշա՛րժ և անփոփոխ է ժամուց մասանց և *րոպէից:* - 193. Դարձեալ ըմպումն մահադեղին միում *րոպէի*՝ ածէ՛ զմահ յաւիտենական: - 744. Այլ որ ուղիղն է տեսութիւն, յետ յարութեան փոխի ժամանակն ի յաւիտեան. և այլ ո՛չ գտանի մասն և *րոպէ* և ժամ. զի երկնային մարմինք դադարին ի շարժմանէ ուստի ժամանակն գոյանայ: - 747

# Ց

**ՑԱԾՆՈՒՄ +** Բոլոր տարի մի. զի այսպէս ասէ գիրն թէ՝ **ճծ** օր բարձրացաւ ջուրն. և յետոյ **ճծ** օր *ցածուցաւ*. որ լինի **ժ** ամիս: - 294

**ՑԱՄԱՔ +** Դարձեալ՝ իմաստութեամբն տիրեմք ծովու և *ցամաքի*. և բազում բարութիւն հոգւոյ և մարմնոյ ի նմանէ ծնանի: - 178. Եւ այլք ասեն թէ՝ կերպն է *ցամաք* երկրիս. որպէս հայելին զմարդոյ կերպն յինքն երևեցնէ: - 187. Երկրորդ՝ զի երկիր չո՛ր է և *ցամաք*, պարտ էր լինիլ բազմութեան ջուրց. զի խառնեսցի ընդ երկիր և ծննդականս արասցէ: - 207. Ասեն թէ **ռ** ազգ է. **ո** ի *ցամաքի* թռչնովք. և **ճ** ի ջուրս: - 216. յԵրկրորդ օրն, հաստատութիւնն և ջրեղէն կամարն. և ծովք. և *ցամաք* երկիր: - 226. Եւ է՛ բնութիւն ոսկերաց ցուրտ և չոր. զի խոնաւն և լոյծն ի *ցամաք* և ի ցուրտ մածնու և լինի ոսկր. որպէս ջերմն և խոնաւն լինի միս: - 244. Եօթներորդ՝ զի նոր իմն չնաշխարհիկ կազմեաց. նոր ժողովրդեանն և նոր օրինացն, իցէ և նո՛ր տաճար հռչակեալ ընդ ծով և ընդ *ցամաք*...: - 342. Նմանապէս և **բժ**ան քարինքն հանեալ ի *ցամաք* և կանգնեալ սեղան՝ հաւատացեալքն են. որք ի ձեռն **բժ**ան առաքելոցն հաւատացին և ելին ի մեղաց. և եղեն սրբութեան սեղան աստուծոյ **բժ**ան անդամօք և **բժ**ան առաքելովք: - 415. Եւ **յ** արքն ընդ նմա *ցամաք* մնացին յարենէ մադիանացւոցն որ կոտորեցան: - 421. Երկրորդ՝ երբեմն նշանակէ հացն *ցամաք* զբանն ի յերկնից իջեալ. և գինին զմարդկութիւնն...: - 598. Զի թէ յօրինեալ հացէն այլոցն ամենեցուն *ցամա՛ք* էր տուեալ և նորա թաց, պատճառ լինէր մատնութեանն յուդայի. և յիրաւի: - 599. Հիւանդութիւն է անչափակցութիւն տարերց մարմնոյ. որ առաւելու և նուազէ՛. ջերմ և ցուրտ, խոնաւ և *ցամաք:* - 665

**ՑԱՄԱՔԱՅԻՆ +** Ասեմք թէ՝ որպէս *ցամաքայինքն* ունին զշունչ օդոյ: - 215. Արդ՝ *ցամաքային* կենդանիքն զերկուսին զսոսա՛ ունին. վասն որոյ ձայն արձակեն: - 216. ի Վեցերորդն, *ցամաքային* կենդանիքն. այլ և Ադամ և Եւա: - 226. Զի որպէս այլասե՛ռք են *ցամաքայինք* և ջրայինք. նոյնպէս և այլատեսա՛կ են կենդանութեամբ. և այլատեսա՛կ է զենումն նոցա: - 296

**ՑԱՄԱՔԵՑՈՒՑԻՉ +** Որ մերձ ի հիւսիս հնչէ, Կիկիաս կոչի. չո՛ր է և *ցամաքեցուցիչ:* - 205

**ՑԱՄԱՔԻՄ +** Եւ զի ջերմութեամբ և չորութեամբ *ցամաքի* երկիր: - 197. Վեցերորդ՝ մեծ սքանչելիք էր որ յետ դարձաւ, քան *զցամաքիլն:* - 414. Եւ յետոյ յամենայն աշխարհ եկեղեցի աստուծոյ և օրէնք և սեղան աստուծոյ կանգնեցան, և երուսաղէմ *ցամաքեցաւ:* - 421. Նա՛խ՝ զի որդի է յեսսեայ. որ է՛ պտուղ կղզւոյ. և տէրն մեր եղև պտուղ մարիամու *ցամաքեալ* ի խոնաւութեանց կենցաղոյս: - 435. Այլ ես ասեմ թէ արիւն ունին յայտնապէս, թէպէտ փութով *ցամաքի:* - 511. Իսկ ընդ դէմ այսմ, դիւական տրտմութիւնն ի մարմինն է և վասն մարմնոյն. և զարտասուս *ցամաքեցնէ*. և տրտմի և ամբոխի. և հետևի նմա ոխ և ատելութիւն. այլ և մահ ևս գործէ որպէս ասէ առաքեալն: - 584

**ՑԱՄԱՔՈՒԹԻՒՆ +** Իսկ փայտն. մարմնոյ *ցամաքութիւն* և պարկեշտութիւն. որ առաւել բորբոքէ զպատարագն: - 360

**ՑԱՅԳ +** ...զոր կախեցին *զցայգ* և զցերեկ յաւուրն ուրբաթու, և ո՛չ հաւատացին մովսէսի և զաքարիայ որ ասէ՝ «հայեսցին ի նա զոր խոցեցինն»: - 405

**ՑԱՆԵՄ +** Իւր ձեռօքն *ցանէր* և որթ վաստակէր իւր բաւական: - 300. Զի՞նչ է որ զկէս արեան պատարագին խառնեաց ի ջուր և *ցանեաց* ի ժողովուրդն. և զկէսն էարկ շուրջ զսեղանովն: - 341. Երրորդ՝ նախ զխառնեալ ջուրն *ցանեաց* ի վերայ ժողովրդեանն որ էր մկրտութիւնն. և սոքա ճաշակեն զջուրն և զարիւնն: - 341. Եւ *ցանեալ* **է** անգամ ի վարագոյրն. որ է՛ քաւութիւն **է** զգայարանցս ի **է** զօրութեանց հոգւոյն. **է** խորհրդով եկեղեցւոյ. առ **է** դար կենցաղոյս: - 360. Եւ թէ այր մարդ ոչ լինի և տղայն մերձ ի մեռանիլ լինի, կինն կարէ՛ մկրտել թէ գիտէ զձև բանին զոր քրիստոս ուսոյց «անուն Հօր և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ». *ցանէ՛* զջուրն և ասէ՝ մկրտեալ լինի: - 588-589. Իսկ հող *ցանեալ* ի գլուխն, գլուխ զմիտքն նշանակէ. որ ինքնիշխան եղև յաստուծոյ. և հնազանդեալ խրատու հողակեր օձին՝ մահացաւ...: - 670

**ՑԱՆԿ +** Ա՛յս է *Ցանկ* Նորոց Օրինացս: - 455. ...այլ ապաշխարութիւնն *ցանկ* է և պարիսպ ապագային զի մի՛ ևս գործեսցէ: - 602. Այլ զապաշխարանքն դնէ կանոնքն, զի *ցանկ* և պարիսպ է մեղաւորին...: - 701

**ՑԱՆԿԱԼԻ +** Վասն է՞ր դէմք երեսացն առաւել *ցանկալի* է: - 234. Երկրորդ՝ զի արարաւ մարդն ի պատկեր աստուծոյ, վասն որոյ պատկե՛րն է *ցանկալի:* - 234. Չորրորդ՝ զի յերեսա՛ցն ճանաչեմք զսիրելիս. վասն որոյ առաւել *ցանկալի* է: - 234. Այս ըստ առաջին մասին որ ցանկայ ոչ *ցանկալեաց:* - 561

**ՑԱՆԿԱԿԱՆ +** Վեցերորդ՝ զի *ցանկական* երակք ա՛նդ են սփռեալ: - 234. Ութերորդ՝ զի ա՛նդ է *ցանկական* մասն աչաց զարդարեալ գեղով: - 234. Ճարպ երիկամանցն նախ՝ ամոքէ՛ *զցանկականն*. և երկրորդ անվնաս պահէ: - 241. Այլ և զգայականին յաւելեալ շնչականն և շարժականն և ցասմնականն ընդ *ցանկականին* լինի **թ**. վասն որոյ ոմանք յինն ամիսս ծնանին կամ ի **ժ**: - 263. Այլ և յաւելեալ ի վերայ զշարժականն և զշնչականն և զցասմնականն և *զցանկականն*, ընդ նմին և զկազմողական նիւթն և զտնկականն, որ լինի **ժը**. վասն որոյ ոմանք ի տարին և կէսն ծնանին որպէս ուղտ: - 263. Դարձեալ ունի զ**ե** զգայութիւնս, և զշարժականն՝ և զշնչականն՝ և զսրտմտականն՝ և *զցանկականն*, որ լինի ինն: - 263. Եւ այսպէս ի ներքուստ ի վեր կրկնեալ եօթնից որ է չորեքտասան, կատարի *ցանկական* մասամբն և կարէ՛ զնմանն ծնանիլ և կոչի մանուկ: - 264-265. Եւ կրկնեալ ի հնգետասանէն մինչև ի **լ**, կատարի երիտասարդական հասակն. որ է **գ** տասամբ կատարեալ. ունելով *զցանկականն* և զցասմնականն և զբանականն լիով առ ինքեան: - 265. Եւ այս յիրաւի իսկ. զի որ հայեցաւ *ցանկական* մտօք՝ ի կամս իւր գործեաց զմեղս: - 556. Այլ գիտելի է, զի առաքինութեամբն ուղղի հոգին ի զօրութիւնս իւր. քանզի խոհեմութիւնն ուղղէ զբանականն. արիութիւնն զցասմնականն. ողջախոհութիւնն *զցանկականն*. իսկ արդարութիւնն ուղղէ՛ զամենայն զօրութիւնս: - 578

**ՑԱՆԿԱՄ +** Դարձեալ, անձնիշխան կամքն է՛ յաստուծոյ. և է՛ յոչընչէ եղեալ. այլ ա՛րդ՝ անձնիշխան կամքն ըստ այնմ՝ որ յաստուծոյ է եղեալ՝ ո՛չ է պատճառ չարի. այլ ըստ այնմ որ յոչընչէ՝ և *ցանկայ* ոչնչի...: - 16. Դարձեալ ասեմք թէ՝ ըստ ինքեան սոքա ոչ են չար. այլ բարի. որպէս տգէտն ի մեղաց. և բարկութիւնն ընդդէմ չարեաց. և *ցանկացողն* բարեաց...: - 19. Նախ՝ զի ո՛չ էն փափագի և *ցանկայի* է լինիլ և գոյ: - 23. Վեցերորդ՝ զի ի միտ ածցուք զառաջին փառսն մեր և *ցանկասցուք*. և մի՛ որպէս զանասուն յերկիր կորասցուք: - 188. Եւ որպէս այս, նոյնպէս ի հոգևորն. վասն որոյ մովսէս *ցանկայր* տեսանել զերեսս աստուծոյ: - 234. Է և այլ իմն աննմանութիւն հոգւոյ ըստ իմացմանն. առաւել և նուազ. ուշիմ և ապուշ. չկամ և կամեցող. հեզ և յանդուգն. *ցանկացող* և ողջախոհ. ըստ բնական բարոյիցն որակացեալ. նման և աննման գոլով իրերաց: - 237. Նա՛խ՝ զի *ցանկացաւ* աստուածանալ: - 279. Նոյնպէս և մարմնական կապովն, զի ազգակից է մեզ և փեսայ հոգևոր. և *ցանկամք* նմա ակն ունելով վարձուցն հատուցման: - 318. Երկրորդ, ըստ փիլոնի, օձն ցանկութեան է օրինակ, որ *զցանկացող* ժողովուրդն սատակէր. ի յախտս իւրեանց նմանեցոյց զպատիժն: - 386. Տասներորդ, որպէս ասէ փիլոն՝ նշանակ հեշտ ցանկութեան է օձն. որ և *զցանկացող* ժողովուրդն սատակէր...: - 387. Իսկ ի միասին կարգէ՛, զի կամ երկիցեն յանիծիցն, և կամ *ցանկասցին* օրհնութեանն և պահեսցեն զօրէնսն աստուծոյ: - 403. Եօթներորդ՝ ռահաբ եթող զկուռս և զբազում հոմանիս. և *ցանկացաւ* յեսուայ: - 417. Քսանգ, տիկինն սաբայ որ կոչիւր նսա, *ցանկացաւ* իմաստութեանն սողոմոնի: - 441. Քսանևբ, *ցանկացան* ամենայն թագաւորք տեսանել զսողոմոն: - 442. Նա՛խ՝ զի ո՛չ խնդրէին, ըստ որում ո՛չ *ցանկանային:* - 467. Զի մարդն *ցանկացաւ* գիտութեանն աստուծոյ որ է յատուկ որդւոյ՝ և անկաւ. նոյնպէս նովին գիտութեամբն պարտ էր և կանգնիլ: - 468. Չորրորդիւն *ցանկալ* փրկութեան մերում: - 492. Եւ ցանկութեանն են այլքն. զի *ցանկայ* ագահել. և որկորստել. և պոռնկիլ: - 559. այսինքն զի կամ *ցանկանայ* ոչ *ցանկացեալ*, կամ հրաժարի յոչ հրաժարելեաց: - 560-561. Ա՛րդ՝ ըստ առաջին կարգին թէ *ցանկայ* ի ներքս, ըստ որում է՛ հպարտութիւն և փառասիրութիւն: - 561. Եւ թէ *ցանկայ* արտաքս, ըստ որում է՛ արծաթսիրութիւն և ագահութիւն: - 561. Եւ թէ *ցանկայ* ստորև հեշտալեաց, և այս լինի կրկին. թէ հեշտալին այն է ի պահպանութիւն անհատին, լինի որկորստութիւն...: - 561. Այս ըստ առաջին մասին որ *ցանկայ* ոչ ցանկալեաց: - 561. Եւ զցանկութիւնն զոր ունիմք առ բարին, փոխեմք և *ցանկամք* չարեաց: - 564. Եւ ա՛յս է մեծագոյն չար աշխարհի. զի չէ աւելի աղքատ քան զայն որ *ցանկայ* աւելի ունել: - 570. Սիրովն *ցանկամք* վերնային բարւոյն: - 571. Երրորդ ինքն առ ինքն. որպէս առաքինիքն ի մէջ հոգւոյն և մարմնոյն և մտացն առնեն զխաղաղութիւն. և զպատերազմն որով *ցանկայ* մարմինն հակառակ հոգւոյն, հանեն ի միջոյ: - 585. ...որոց *ցանկացան* և ելին յաշխարհէս և ի լոյս են բնակեալ: - 647. իբր թէ սիրտն *ցանկացաւ*...: - 670. Եւ երևի որպէս բլուր մեծամարմինք նոցա յաչս իւրեանց. սև և աղտեղի և չարչարելի. զի կրեն անչափ չարչարանս և *ցանկան* մահու և ո՛չ մեռանին...: - 723. Նախ հոգին և մարմինն. զի *ցանկան* հակառակ միմեանց ըստ այրւոյ առակին առ անիրաւ դատաւորին: - 743. Վասն իններորդին, որք աստ իւրաքանչիւր մեղօք գոյին շաղախեալք. արդարապէս ունին զիւրաքանչիւր անդամս կապանօք կաշկանդեալս. և *ցանկան* մեռանիլ և փախիցէ մահ ի նոցանէ: - 753. Եւ թէ լինէիր կամօք փարթամ որպէս սողոմոն. որում ո՛չ անխայեաց զոր ինչ

*ցանկացաւ* ի սրտի: - 761. Որպէս ասեն վարդապետք, յագեալ *ցանկասցուք*, զի մի՛ յագեցումն ծնմի զտաղտկութիւն. *ցանկացեալ* յագեսցուք, զի մի՛ ծանծրութեամբ իցէ ցանկութիւնն: - 766

**ՅԱՆԿԱՍԷՐ +** Այսպէս ի բնական ստեղծումն հոգւոյն՝ ոմն խոհեմ և ոմն անզգամ. *ցանկասէր*՝ և ողջախոհ. բարեբարոյ՝ և չարաբարոյ լինին: - 19. Ա՛յսպէս և *ցանկասէրն* ի բարւոյն ուղղեսցի: - 19. Նոյնպէս և ի բանական որակութիւնս հոգւոյն՝ նման և աննման, հաւասար և անհաւասար բացատրեաց. այսինքն խոհեմ և տգէտ. հեզ և բարկացօղ. ողջախոհ և *ցանկասէր*. և այլ զանազան բարս բնական՝ մարդոյն: - 252. Իսկ ամառն, և մինչ ի **զ** ժամս աւուրն, և խարտեաշ մաղձն, և երիտասարդն՝ ըստ նմանութեան տարրական հրոյ ջերմ և չոր գոլով. վասն որոյ առաւել բարկացօղ և *ցանկասէր* լինի: - 266

**ՅԱՆԿՈՒԹԻՒՆ +** Իններորդ՝ զի նոցա բանականն է մոլորեալ. և ո՛չ ցասումն և *ցանկութիւնն*. յորոց վերայ բանն բռնադատէ խղճիւն, և ստիպէ զնոսա յուղղութիւն. այլ ինքն կառավարն խոհեմութիւնն մոլորեալ ո՛չ ուղղի: - 32. Ա՛յսպէս, զի սոքա ունին սրտմտութիւն և *ցանկութիւն:* - 132. Առիւծն զցասումն. եզն *զցանկութիւնն*. Արծուին զարդարութիւնն բարձրագոյն սոցա թռուցելոյ: - 132. Եօթներորդ ի մեզ, մարդն բանն. առիւծն ցասումն. եզն *ցանկութիւնն*. արծուին գիտութիւն բարձրաթռիչ զվերինն խորհիլ միշտ: - 133. Եւ զբարւոյ *ցանկութիւնս* ունին: - 140. ...որպէս զադամ *ցանկութեամբ* աստուածանալոյն յերկիր ընկէց. սոյնպէս և զայլս: - 148. Եւ կամ բան, ցասումն, և *ցանկութիւն:* - 178. Վեցերորդ՝ հեշտ *ցանկութեան:* - 209. Վեցերորդ՝ զի անձնիշխա՛ն է մարդն այսինքն իշխէ բանականաւն ցասման և *ցանկութեան* որք են անասնական մասունք: - 220. Ուստի յա՛յտ է, որք վերստին յաղթեն ախտիցն որք յինքեանս, այսինքն ցասման և *ցանկութեան*. յաղթին և հնազանդին նոցա արտաքին գազանք և անասունք: - 220. Ոմանք կամին ցուցանել ապականացու գոլ զդրախտն և շաղաշարումն արուի և իգի. և առաւել *ցանկութիւն* և ծնունդ զաւակաց: - 225. Հինգերորդ՝ նախ բան զյանցանելն՝ էին ադամ և կինն մերկ և ո՛չ ամաչէին. վասն զի ո՛չ ունէին *ցանկութիւն* հեշտութեան: - 225. Նա՛խ՝ ըստ փիլիսոփայիցն ներքին մասունքն հոգւոյն պատճառե՛ն զարտաքին մասունս մարմնոյն. և ըստ պղատոնի՝ հոգին եռամասնեայ գոլով՝ բան և ցասումն և *ցանկութիւն:* - 232. Եւ ցասումն միջին. և *ցանկութիւնն* վերջին: - 232. Ութերորդ՝ վասն արտաքին զգայութեանցն որ են ի գլուխն. զի այլ կենդանիք միայն հեշտանան կերակրով և *ցանկութեամբ*...: - 233. Ասեմք թէ՝ սոքա ի մասնաւոր հոգւոյն բարի են բնաւորեալ նախանձ *ցանկութիւն* և այլն...: - 237. Իսկ կենդանականին են, Կամք. Ընտրողութիւն. Յօժարութիւն. Բարկութիւն. *Ցանկութիւն:* - 248. Իսկ անբանք՝ Երևակայութիւն. Զգայութիւն. Յօժարութիւն. Բարութիւն. *Ցանկութիւն:* - 248. Եւ հնազանդ են բանին՝ զգայականն. որպէս ցասումն և *ցանկութիւնն:* - 249. Հաճճարն և *ցանկութիւն* յերիկամունքն: - 250. Դարձեալ **դ** տարր, և տնկականն և զգայականն, և երեք մասունք հոգւոյն բան ցասումն և *ցանկութիւն*, որ լինի **թ**: - 264. Եւ **է** ամեայ ուսումն ստանայ. վասն որոյ մինչև յեօթն ամն երեխայ կոչի. զի **գ** մասունք են հոգւոյն. բան. ցասումն. և *ցանկութիւն*. ըստ պղատոնի: - 264. Դարձեալ՝ իմաստութիւնն է բանին. զի նորա՛ է իմանալն. գիտութիւնն ցասմանն. զի նորա է ընտրելն. և հաճճարն *ցանկութեանն*. զի նորա է յանճարն տռփիլ: - 270. Այլ ոմանք ասեն թէ՝ հաճճարն ցասմանն է արիութիւն. և գիտելն *ցանկութեանն*...: - 270. Դարձեալ՝ մարդո՛յն է կարգաւորել զկիրս բարկութեան և *ցանկութեան* ըստ կանոնաց բանականին: - 274. Որպէս թէ *ցանկութեամբն* ասի խոզ. և բարկութեամբն շուն. յափշտակութեամբն գայլ. և այլն: - 274. Հինգերորդ՝ զի կողնէ աման և տեղի երիկամանց. յորմէ շարժի *ցանկութիւնն*. զի թէպէտ ո՛չ շարժէ զնա. այլ ազդումն ինչ ունի զնմանէ: - 276. Չորրորդ՝ վասն *զցանկութիւնն* զսպելոյ: - 281. Նա՛խ՝ **գ** մասունք հոգւոյն, բան՝ ցասումն՝ և *ցանկութիւն*. և **դ** տարերաց խառնուածն որովք մեղանչէ մարդ: - 287. Դարձեալ՝ *ցանկութիւնն* ի ներքոյ. ցասմնականն ի մէջն. և բանն թռչուն ի վերոյ: - 293. Այսինքն մարդիկք որ անբան տրտմութեամբ և անմիտ *ցանկութեամբ* ի վայր գտան բան զանասունս: - 316. Եւ կապ *ցանկութեան* որպէս մեղաց: - 317. Բնութենական, որպէս ցասումն և *ցանկութիւն:* - 318. Երկրորդ՝ զի մի ինչ ի մէջ քո և աստուծոյ անասնական լիցի. բարկութիւն կամ *ցանկութիւն* կամ ա՛յլ ինչ: - 331. Այս է թէ՝ եթէ ո՛չ ունիցին ժոյժ ընդ դէմ *ցանկութեան*, զգեցցին զօրինաւորն: - 331. Վեցերորդ՝ զհեշտ *ցանկութիւն* նշանակէ...: - 356. Երիկամունքն, զկրկին *ցանկութիւնն* հոգւոյ և մարմնոյ: - 360. Որ նշանակէ ի մեզ զերեք մասանց թիւրիլն. այսինքն բանից, ցասման, և *ցանկութեան* հինգ զգայարանօք: - 367. Երկրորդ՝ գիրութիւնն հալի ի ջերմ *ցանկութենէն* և հոսի: - 368. Չորրորդ՝ որպէս ո՛չ ունէր զաւելորդ *ցանկութեանն*, նոյնպէս և ո՛չ զկերակրոյ: - 383. Երկրորդ, ըստ փիլոնի, օձն *ցանկութեան* է

օրինակ...: - 386. Տասներորդ, որպէս ասէ փիլոն՝ նշանակ հեշտ *ցանկութեան* է օձն...: - 387. Այն է որ թէ ի մասանց հոգւոյն և մարմնոյն այսինքն բանիւ՝ ցասմամբ՝ և *ցանկութեամբ*, կամ աչօք կամ լսելեօք կամ այլ ինչ գործով մեղանչէ դարձեալ, ուխտն ո՛չ եղև ամբողջ. դարձեալ նո՛ր պարտ է ապաշխարել: - 390. Նոյնպէս և մտօք զմասունսն հոգւոյս զբան՝ զցասումն՝ և *զցանկութիւնն* տեսանել և զարթարել: - 397. Զի սամփսոն ի ժամ գերծելոյ գլխոյն թմրեալ ի ծունկս թալիլայ խոնարհէր. նոյնպէս և ամենայն մեղք զոր գործէ մարդ, և առաւել գէճ *ցանկութիւն*, անարգէ զմարդ: - 424. Սակայն արմատ մեղացն որ է՛ *ցանկութիւնն* և դիւրասահութիւնն ի մեղանչելն՝ մնայ...: - 462. Եւ սկզբնական մեղքն գէճ *ցանկութեամբն* տարածի: - 489. Առաջինն է՝ զի ի տեսս աշակերտացն վերացաւ. այսինքն զի յորդորեսցէ *զցանկութիւն* գնալոյն առ նա: - 520. Վասն որոյ և տէրն յորժամ ասաց *զցանկութիւնն* շնութիւն, յաւել ի վերայ թէ՝ «ի սրտի իւրում». զի մի՛ կարծեսցի մարմնական շնութիւն, այլ հոգէկան և մտաւոր. ապա ուրեմն կատարեալ է մեղք մտացն: - 556. Տասներորդ՝ յա՛յտ է ի համազօրութենէ. զի երբեմն շարժէ՛ ախտ զմիտս. և երբեմն շարժի ի մտացն ախտ. որպէս ասէ երանելին եւագրիոս. եթէ մինչ յերեսնամեայ հասակս ախտն շարժէ զմիտս ի *ցանկութիւն*. և անտի յառաջ միտքն շարժէ զախտն: - 557. Դարձեալ ասեմք թէ՝ այլ վարդապետք է ասեն զմեղս, զի **դ** տարերք են մարմնոյն, և **գ** զօրութիւնք հոգւոյն. այսինքն բան, ցասումն, և *ցանկութիւն:* - 559. Յպարտութիւնն է բանին. Նախանձն *ցանկութեանն:* - 559. Եւ *ցանկութեանն* են այլքն. զի ցանկայ ագահել. և որկորստել. և պոռնկիլ: - 559. Կամ և թիւրի *ցանկութեամբ*. և ըստ այսմ է՛ ծուլութիւն. որ է՛ տրտմութիւն և ձանձրութիւն: - 561. Զի՞նչ է պատճառն որ սրտմտութիւն և *ցանկութիւն* և այլն ի յանբան կենդանիսդ գործ է. իսկ ի մեզ ախտ և մեղք: - 563. Զի սրտիւն ապրին մարմնակեր գազանք. և հեշտ *ցանկութեամբ* բազմածին կենդանիք աճեն...: - 563. Նոյնպէս *զցանկութիւնն* ի շնութիւն և ի պոռնկութիւն յաւելու հանապազ. զոր անասունք յիւրեանց ժամանակին ունին զխառնումն: - 564. Եւ *զցանկութիւնն* զոր ունիմք առ բարին, փոխեմք և ցանկամք չարեաց: - 564. Ա՛րդ՝ թէպէտ հոգին ո՛չ լինի սերեալ ի հօրէն որպէս մարմինն, սակայն սկզբնական մեղքն անցանէ ի հոգւոյն յադամայ ի հոգիս զհետ եկելոցն միջնորդութեամբ մարմնոյն *ցանկութեամբ* ծնելոյն: - 567. Զի որպէս ի մեղանչել հոգւոյն ապականեցաւ մարմինն ադամայ և եղև դիւրասահ առ վավաշոտ *ցանկութիւնն*. այսպէս և սերեալ մարմինն քարշելով ընդ ինքեան զապականութիւնն՝ աղտեղացուցանէ զհոգին: - 567. Դարձեալ՝ մեղքն է խօսք և գործք և *ցանկութիւն* որ լինի ընդ դէմ օրինացն աստուծոյ: - 569. Ագահութիւն է անկերպ *ցանկութիւն* ունել յինչքն: - 570. Բղջախոհութիւն է *ցանկութիւն* յամենայն ժամ լնուլ զվավաշոտութիւնն: - 570. Իսկ երկրորդ սեռն հնազանդ բանին՝ ցասումն և *ցանկութիւնն*. և սոքա ո՛չ կարեն լինիլ ենթակայ իմանալի առաքինութեանց: - 572. Իններորդ ըստ հոգւոյն մասանց. հաւատն է ի բանն. յոյսն ի ցասումն. սէրն ի *ցանկութիւնն:* - 578. Ողջախոհութիւն է հաստատութիւն հոգւոյ. որով արգելու *զցանկութիւն* զգայական և զհեշտութիւն մարմնական: - 581. Ա՛րդ՝ ժուժկալութիւն է որով ամենայն *ցանկութիւն* ուղղի կառավարութեամբ խրատուն: - 581. Իսկ պսակն է՛ ի խորհուրդ ողջախոհութեան. զի ողջախոհ ամուսնութեամբ զսպեսցէ առ ինքն զբղջախոհ *ցանկութիւնն*. և արգելցի ի շնութենէ և ի պոռնկութենէ. վասն որոյ **է** են խորհուրդք եկեղեցւոյ: - 587. Պսակն ընդ դէմ *ցանկութեան*. զոր բարեխառնէ՛ և անմեղադրելի առնէ: - 588. Զի ջուր հակառակ է հրոյ. և զի՞նչ է մեղք, եթէ ոչ հուր. որպէս յոգւոջ բարկութիւն. և ի մարմնի *ցանկութիւն*. ուստի յայտ է զի հրով տանջանաց պատժի. և աստ զի հուրն շիջցի ի ջուր մկրտիմք: - 591. Մեղքն ադամայ այն է որ զարդարութիւն կորոյս. և մեզօք և *ցանկութեամբ* ծնաւ զորդին. և այն մեղքն սկզբնական կոչի. և ո՛չ թողցի եթէ ոչ ի մահն քրիստոսի մկրտեսցի: - 591. ...զի բոլոր բնութիւնս մեր ի յանձն ադամայ մեղանչական եղև *ցանկութեամբն*...: - 591-592. ...և առանց *ցանկութեան* մեղաց ո՛չ ոք կարէ ծնանիլ. բայց միայն տէր մեր որ առանց *ցանկութեան* ի կուսական արգանդէ ծնաւ՝ ո՛չ ունէր զմեղս սկզբնական: - 592. Բոլորովիմբ մարդ ի ձեռն մկրտութեանն ներքուստ և արտաքուստ սրբի. բայց դարձեալ սերմն նորա ի ձեռն մարմնոյն *ցանկութեանն* պղծի: - 592. Որոյ պատճառէ. զի հոգին եռամասնեա՛յ է. այսինքն բան՝ ցասումն՝ և *ցանկութիւն*...: - 611. Նա՛խ՝ զի միայն զհեշտ *ցանկութիւնն* սիրեն հանապազ. ինքն և գործակիցն իւր: - 613. Յինգերորդ՝ զի դառնութիւն արտասուացն *զցանկութիւն* աչացն դարձուցանէ: - 619. Նա՛խ՝ վասն զի հոգին եռամասնեայ է. բան, ցասումն, և *ցանկութիւն*. և ունի իմացումն և կամք: - 622. Երկրորդ, այլ և *ցանկութիւն* ի վերինն երուսաղէմ յերկինս: - 677. Այլ և բանական հոգւոյն **գ** են զօրութիւնք. բան ցասումն և *ցանկութիւն:* - 681. Աղօթք նոցա *ցանկութիւնն* է նոցա. զի կամս երկիւղածաց իւրոց կատարէ՛ տէր: - 685. Իսկ

արմաւենիքն զյաղթութիւնն նշանակեն. որք յաղթեցին *ցանկութեանց* մարմնոյ և սատանայի: - 690. Նա՛խ՝ վասն հեշտ *ցանկութեան* իւրեանց զոր ոչ կամին ելանել անտի...: - 701. Եւ լինիցի նեռն բղջախոհ ի *ցանկութիւնս* կանանց...: - 707. Երկրորդ՝ մարմնովն տիրեաց *ցանկութեանցն* երկրաւոր՝ և իշխանացն դիւաց...: - 711. Զյաղթութիւն նոցա ցուցանէ. որք յաղթեցին *ցանկութեանց* մարմնոյ աշխարհի և սատանայի: - 712. Եւ գերեզանց գործ *ցանկութեանն* է տանել ողջախոհ կուսութեան. և զայս ունին կուսանքն: - 712. Եւ յիրաւի նախ ջրով. զի յայնժամ ջերմացեալ էին մարդիկ ի *ցանկութիւն* մեղաց, վասն որոյ ջրով պատժեցան: - 731. *Ցանկութիւնն* յիմարեալ: - 752. Վասն առաջնոյն, որք աստ հրով *ցանկութեանցն* վառեցան, արդարապէս բորբոքին: - 752. Այլ յայնժամ լցցի ի բարութենէ *ցանկութիւն:* - 766. Որպէս ասեն վարդապետք, յագեալ ցանկասցուք, զի մի՛ յագեցումն ծնսի զտաղտկութիւն. ցանկացեալ յագեսցուք, զի մի՛ ձանձրութեամբ իցէ *ցանկութիւնն:* - 766. Նմանապէս և բոլորս մարդկութիւն կրեցին զապականութիւն ի նոյն ադամայ. ծնունդ գոլով նորին *ցանկութեանն:* - 776. Եւ այսպէս քարշեալ եղև ի մեզ սկզբնականն մեղք՝ յանհնազանդութենէ հոգւոյն և ի *ցանկութենէ* մարմնոյն. անցեալ ի ծնունդս նորա նիւթապէս ի մարմինս, և տեսակաբար ի հոգիս: - 776

**ՑԱՍՄՆԱԿԱՆ +** Այլ և զգայականին յաւելեալ շնչականն և շարժականն և *ցասմնականն* ընդ ցանկականին՝ լինի **թ**. վասն որոյ ոմանք յինն ամիսս ծնանին կամ ի **ժ**: - 263. Այլ և յաւելեալ ի վերայ զշարժականն և զշնչականն և *զցասմնականն* և զցանկականն, ընդ նմին և զկազմողական նիւթն և զտնկականն, որ լինի **ժը**. վասն որոյ ոմանք ի տարին և կէսն ծնանին որպէս ուղտ: - 263. Եւ երիցս կրկնեալ **է**-ից մինչև ի **իա**, լինի կատարեալ արիական մասն *ցասմնականին*. և կոչի պատանեակ մինչև ի **իը** ամն: - 265. Եւ կրկնեալ ի հնգետասանէն մինչև ի **լ**, կատարի երիտասարդական հասակն. որ է **գ** տասամբ կատարեալ. ունելով զցանկականն և *զցասմնականն* և զբանականն լիով առ ինքեան: - 265. Դարձեալ՝ ցանկութիւնն ի ներքոյ. *ցասմնականն* ի մէջն. և բանն թռչուն ի վերոյ: - 293. Այլ գիտելի է, զի առաքինութեամբն ուղղի հոգին ի զօրութիւնս իւր. քանզի խոհեմութիւնն ուղղէ զբանականն. արիութիւնն *զցասմնականն*. ողջախոհութիւնն զցանկականն. իսկ արդարութիւնն ուղղէ՛ զամենայն զօրութիւնս: - 578. *Ցասմականն* տրտմեալ: - 752

**ՑԱՍՆՈՒՄ +** Վեցերորդ՝ զի թէ լինի անկարօտ գող և զրկօղ, ընդ տեառն իւրոյ կորուսանէ և զինչսն. որպէս աքարն որ ունէր բազում ստացւածս, և գողացաւ ի նզովիցն երիքովի. տեսին ամենայն ժողովուրդն և *ցասեան* ի վերայ նորա և իրաւունս ետուն սատակմանն: - 416

**ՑԱՍՈՒՄՆ +** Իններորդ՝ զի նոցա բանականն է մոլորեալ. և ո՛չ *ցասումն* և ցանկութիւնն. յորոց վերայ բանն բռնադատէ խղճիւն, և ստիպէ զնոսա յուղղութիւն...: - 32. Առիւծն *զցասումն*. եզն զցանկութիւնն. Արծըւին զարդարութիւնն բարձրագոյն սոցա թռուցելոյ: - 132. Եօթներորդ ի մեզ, մարդն բանն. առիւծն *ցասումն*. եզն ցանկութիւնն. արծըւին գիտութիւն բարձրաթռիչ զվերինն խորհիլ միշտ: - 133. Իշխանականք են *ցասմամբ:* - 140. Եւ կամ բան, *ցասումն*, և ցանկութիւն: - 178. Վեցերորդ՝ զի անձնիշխա՛ն է մարդն այսինքն իշխէ բանականաւն *ցասման* և ցանկութեան որք են անասնական մասունք: - 220. Ուստի յա՛յտ է, որք վերստին յաղթեն ախտիցն որք յինքեանս, այսինքն *ցասման* և ցանկութեան...: - 220. Նա՛խ՝ ըստ փիլիսոփայիցն ներքին մասունքն հոգւոյն պատճառե՛ն զարտաքին մասունս մարմնոյն. և ըստ պղատոնի՝ հոգին եռամասնեայ գոլով՝ բան և *ցասումն* և ցանկութիւն: - 232. Եւ *ցասումն* միջին. և ցանկութիւնն վերջին: - 232. Եւ հնազանդ են բանին՝ զգայականն. որպէս *ցասումն* և ցանկութիւնն: - 249. *Ցասումն* ի լեղին: - 250. Դարձել **դ** տարր, և տնկականն և զգայականն, և երեք մասունք հոգւոյն բան *ցասումն* և ցանկութիւն, որ լինի **թ**: - 264. Եւ **է** ամեայ ուսումն ստանայ. վասն որոյ մինչև յեօթն ամն երեխայ կոչի. զի **գ** մասունք են հոգւոյն. բան. *ցասումն*. և ցանկութիւն. ըստ պղատոնի: - 264. Դարձեալ՝ իմաստութիւնն է բանին. զի նորա՛ է իմանալն. գիտութիւնն *ցասմանն*. զի նորա է ընտրելն. և հանճարն ցանկութեանն. զի նորա է յանճարն տռփիլ: - 270. Այլ ոմանք ասեն թէ՝ հանճարն *ցասմանն* է արիութիւն. և գիտելն ցանկութեանն...: - 270. Նա՛խ՝ **գ** մասունք հոգւոյն, բան՝ *ցասումն*՝ և ցանկութիւն. և **դ** տարերաց խառնուածն որովք մեղանչէ մարդ: - 287. Բնութենական, որպէս *ցասումն* և ցանկութիւն: - 318. Որ նշանակէ ի մեզ զերեք մասանց թիւրիլն. այսինքն բանից, *ցասման*, և ցանկութեան հինգ զգայարանօք: - 367. **Իններորդ՝ գլուխ և տուտն *ցասումն* է և տրտմութիւնն զկնի. և ամենայն մեղաց յետ գործոցն տրտմութիւն հետևի**: - 387. Այն է որ թէ ի մասանց հոգւոյն և մարմնոյն այսինքն բանիւ՝ *ցասմամբ*՝ և ցանկութեամբ, կամ աչօք կամ լսելեօք կամ այլ ինչ գործով մեղանչէ դարձեալ, ուխտն ո՛չ եղև ամբողջ. դարձեալ նո՛ր պարտ է ապաշխարել: - 390. Նոյնպէս և մտօք

զմասունսն հոգւոյս զբան՝ *զցաւումն*՝ և զցանկութիւնն տեսանել և զարթարել: - 397. Երկրորդ՝ զի յորժամ ուխտէ մարդ, ի նոյն ժամն դադարի *ցաւումն* աստուծոյ. ապա յորժամ կատարեմք՝ երևի մեզ: - 435. Դարձեալ ասեմք թէ՝ այլ վարդապետք է ասեն զմեղս, զի **դ** տարերք են մարմնոյն, և **գ** զօրութիւնք հոգւոյն. այսինքն բան, *ցաւումն*, և ցանկութիւն: - 559. Բարկութիւնն *ցասմանն*. իսկ Ծուլութիւնն է հոգւոյն. Ագահութիւնն հրոյն. Որկրամոլութիւնն օդոյն. և Բղջախոհութիւնն ջրոյն: - 559. Եւ *ցասմանն* է բարկութիւն և ծուլութիւն առաւելն և նուազն: - 559. Կամ թիւրի՛ *ցասմամբ*. և ըստ այսմ է՛ բարկութիւն: - 561. Բարկութիւն է *ցաւումն* հոգւոյ. որով ոք ընդ դէմ այլոց յառնէ: - 570. Իսկ երկրորդ սեռն հնազանդ բանին՝ *ցաւումն* և ցանկութիւնն. և սոքա ո՛չ կարեն լինիլ ենթակայ իմանալի առաքինութեանց: - 572. Իններորդ ըստ հոգւոյն մասանց. հաւատն է ի բանն. յոյսն ի *ցաւումն*. սէրն ի ցանկութիւնն: - 578. Հեզութիւնն է ընդ դէմ *ցասման*. և խոնարհութիւնն ընդ դէմ հպարտութեան: - 584. Որոյ պատճառէ. զի հոգին եռամասնեա՛յ է. այսինքն բան՝ *ցաւումն*՝ և ցանկութիւն. - 611. Նա՛խ՝ վասն զի հոգին եռամասնեայ է. բան, *ցաւումն*, և ցանկութիւն. և ունի իմացումն և կամք: - 622. Այլ և բանական հոգւոյն **գ** են զօրութիւնք. բան *ցաւումն* և ցանկութիւն: - 681. Եւ գերազանց գործ *ցասմանն* է համբերել չարչարանաց. և զայս ունին մարտիրոսքն: - 712. Երկրորդ՝ կոչի հնձան *ցասմանն* աստուծոյ...: - 748

**ՑԱՒ(Ք) +** Եւ որպէս կիրք *ցաւոցն* մարդոյն են, զի զգա՛յ զկսկիծն. նոյնպէս և կիրք հեշտութեանն նորա՛ են, եթէ չարեաց և եթէ բարեաց, ապա ուրեմն մեր է ներգործութիւնն և ո՛չ հարկին: - 11. Եւ այս է անբժշկելի *ցաւ*: - 33. Եւ սոքա ցուցանեն *զցաւ* և զառողջութիւն մարդոյն: - 244. Հինգերորդ՝ զի *ցաւօք* և հեծեծանօք ապրեցաւ: - 279. Վասն է՞ր այնչափ ի մէջ *ցաւոց* և տրտմութեան եմք առաւել քան զառաջինսն: - 292. Առաջին պատճառ, զի ընդ ինքեան մարդկայինս բնութիւն այլայլո՛տ է և *ցաւօք*. և յորժամ աստուած ևս բազմացուցանէ, ո՞վ կարէ զաղէտն պատմել: - 292. Եւ որ քան օրս յաւելու, նոյնպէս և *ցաւս* մեր բազմանայ: - 292. Դարձեալ՝ որ քան յերկարի ժամանակս, մաշի՛ երկիր և ի ծերութիւն երթայ և տկարանայ. որպէս ծեր մարդոյն զօրութիւնն պակասի և *ցաւքն* առաւելու: - 292-293. Եւ դարձեալ՝ որ քան մերձիմք կատարածի, այնքան մերձենամք ի *ցաւս* դժոխոցն. որպէս յերիկունն սակաւ սակաւ առաւելու խաւարն և ցուրտ: - 293. Ութերորդ՝ ըստ մեղաց. զի սերմ առեալք ի սատանայէ՛ յղանամք *զցաւս* և ծնանիմք զանօրէնութիւն: - 308. Իններորդ՝ ըստ փոփոխման ասի. զի յղացեալ ունիմք զմահ անդստին. և ի վախճան մերձեալ հասանէ երկն *ցաւոց*. և բաժանեալ հոգին ծնանի ի մահ: - 308. Զառաջինն մխիթարեցաւ աստուածածին կուսիւն մարիամաւ. որ առանց երկանց և *ցաւոց* ծնաւ զմիածինն որդի, որ եբարձ զարտասուս վշտաց մօրն հռաքէլի: - 312. Նա՛ կեղ և մուն յարուցանէր ի մարմին նոցա. և քրիստոս զբոր և *զցաւս* սրբէր ի մարմնոցն: - 328. Երրորդ՝ ի *ցաւոց* կամ ի հովութենէ յաւելու: - 368. Երկոտասաներորդ՝ փօշտանկն. որ հատեա՛լ է աղիքն և ի դուր թափեալ. նշանակ հոգեկան *ցաւոց* ի մարմինն երևեալ: - 371. Նա՛խ՝ տարակուսանք մտաց և *ցաւ* աչաց. զի մոլորեսցին ի փախչիլն: - 376. Իսկ յետ մահու ա՛յնոցիկ հոգւոց որք զղջան կամ խոստովանին զմեղս, քաղաք ապաստանի է նոցա ի կայանս հոգւոցն տրտմութիւն և *ցաւն* վասն փոխարինաց մինչ մեռանի քահանայն մեծ. որ եկեղեցի սուրբ՝ պատարագաւ և աղօթիւք և ողորմութեամբ հատուցանէ՛ զպարտս նոցա և ազատին: - 392. ...եթէ զոր օրինակ բժիշկք՝ ո՛չ ի սկիզբն *ցաւոց* և ո՛չ ամենևին անագան տան ըզդեղ հիւանդին. զի անօգուտ է և վնասիչ. այլ ի դիպօղ ժամու յորում առողջասցի: - 467. Այլ ի դիպօղ ժամու յորում *ցաւն* զօրացաւ և կարօտացաք բժշկութեան...: - 467. Ամուսնացեալք՝ զի *ցաւօք* ծնան: - 469. Զի կուսութեամբ ծնաւ և *զցաւս* ո՛չ զգաց: - 469. Եւ ոմանք յաւելուն այլ ևս զամօթ՝ զտրտմութիւն՝ և *զցաւս* մարմնական. որ և սոքա ընդ նոսա են: - 474. Զի տրտմութիւն արտասուաց ընդ մահուանն բարձաւ. իսկ ամօթ և *ցաւք* մարմնոյ՝ ընդ մեղացն բարձան. որպէս ի հատանիլ արմատոյ՝ չորանան ստեղունքն: - 474. Բժիշկք զհիւանդաց առողջութիւն և *զցաւս*. և նաւավարք զխռովութիւն ալեաց և զանդորրութիւն: - 536. Նաև ի յայն որում թողեալ լինի՝ **բ** ինչ պահանջի. այսինքն *ցաւ* վասն գործելոցն, և մտադիւրութիւն վասն ոչ գործելոցն...: - 567. ...և յինունքն յարութեան խորհուրդ. զի ո՛չ է սուրգ և ո՛չ տրտմութիւն և ո՛չ *ցաւք:* - 654. Աստ զանազան *ցաւոց*՝ և զանազան դեղս կազմեաց արարիչն աստուած. որպէս յարմատս ի ծաղիկս ի պտուղս և յայլսն: - 665. Երկրորդ, ի թուլութենէ *ցաւոյն:* - 668. Նմանապէս և յանկարծակամահ լինի, կամ ի խստութենէ *ցաւոյն*...: - 668. Եւ այնպէս յարաժամ տեսանէ *զցաւս* մերձ ինքեան և առ ինքն ի չար գործս իւր անբաժանելի ի նմանէ մինչ ի յարութեանն օր...: - 669. ...և նա *ցաւօք* և տրտմութեամբ և հեծութեամբ կայ անդ ի խաւարին բանտն ընդ այլ խաւարասէր հոգւոցն: - 669. Է և ա՛յլ իմն տեսութիւն վերագոյն. զի արարողութիւն սըգոյս ցուցանէ զառաջին

անկումն մեր ի լուսեղէն կենացն ի խաւար աշխարհ տրտմութեամբ և *ցաւօք* մահու մեռեալք և ի հող դարձեալք. և այս ի ճաշակմանէ պտղոյն: - 670. Եւ զոր օրինակ փայտն գիտութեան պատճառ մահու եղև. պատասխանեալ դեղն *ցաւոց:* - 734. Կապանք: Երկիւղ: *Ցաւ:* Ամօթ: Նախանձ: Չեռ: Տրտմութիւն: - 751. Եւ այն է կեանք՝ ուստի մերժեալ են *ցաւք* և տրտմութիւնք և հեծութիւնք: - 762. Զի ա՜յն է կեանք՝ ուստի մերժեալ են *ցաւք* և տրտմութիւնք և հեծութիւնք: - 767. Չորրորդ՝ զի ակամայ ի կրիցն *ցաւոց,* որպէս աւազակաց հատուցմանց: - 780

**ՑԱՒԱԳԻՆ +** Չորրորդ՝ Վասն չգիտելոյ մեր զօր մահուն. և վասն *ցաւագին* կենացս: - 283

**ՑԱՒԱԼԻՑ +** Եւ ապա Իններորդ ի *ցաւալից* երկիրս այս պանդխտանալ: - 280. Մետասաներորդ, նախ ետ զայս կեանքս որ է՛ *ցաւալից* և բազմաչարչար...: - 663

**ՑԱՒԱԾ +** Ուստի յա՛յտ է, զի որակ ծնողացն խառնի ի բեղնաւորիլն. ի դաշտանւոյն գօդի. ի հիւանդութենէ, ի շիկութենէ. որպէս ադամ տրտմութեամբ ծնաւ զորդին կայէն. *ցաւած* ծնողացն ցաւածին որդի: - 439

**ՑԱՒԱԾԻՆ** - ...որպէս ադամ տրտմութեամբ ծնաւ զորդին կայէն. ցաւած ծնողացն *ցաւածին* որդի: - 439

**ՑԱՒԱԿԻՑ +** Ութերորդ՝ լինի *ցաւակից* նմա ի ժամանակի նեղութեան: - 575. Աստուածա-պաշտութեամբն *ցաւակիցք:* - 583

**ՑԱՒԱԿՑՈՒԹԻՒՆ +** Եւ դարձեալ՝ ողորմութիւն է կամաւոր *ցաւակցութիւն* յաղագս այլոյ թշուառութեանց: - 584

**ՑԱՒԻՄ +** Զի նա գլուխ է մեր՝ և մեք անդամք. յորժամ տեսանէ զմեզ ի մեղս՝ հոգա՛յ և *ցաւի* վասն մեր: - 48. Եւ հերքն յառաջ եկեալ՝ անզգա՛յ է. ո՛չ հեշտանայ և ո՛չ *ցաւի:* - 390. Նոյնպէս և կրօնաւորն ո՛չ *ցաւի* և տրտմի և ո՛չ հեշտանայ ընդ աշխարհի: - 390. Ասեմք թէ՝ մեզ պա՛րտ է ի մտի պահել և ի լեզուի զմեղս. և *ցաւիլ* և հոգալ հանապազ վասն անցեալ մեղացն և չգործելոյ բարեացն: - 433. Տասներորդ, *ցաւի* ընդ հեռանալն նորա: - 575. Նա՛խ՝ զի ի հոգին է. **բ**՝ զի վասն հոգւոյն տրտմի և *ցաւի*. **գ**՝ արտասուս հոսէ. **դ**՝ զմահ զդատաստան և զտանջանս ի միտ ածէ՛...: - 584. Ապաշխարութիւնն է *ցաւիլ* վասն մեղացն զոր գործեաց...: - 601. ...վասն անցեալ մեղացն *ցաւի*. և խոստանայ այլ ո՛չ մեղանչել զանցեալ մեղքն: - 602. Ո՞չ *ցաւին* արդարքն ի տեսանելն զնոսա յայնպիսի տանջանս: - 754. Ո՛չ բնաւ, թէպէտ հայր տեսանէ զորդի կամ մայր զդուստր. և կամ զեղբայր և զայլս. ո՛չ միայն ո՛չ *ցաւին*, այլ ա՛յնպէս լինի հեշտալի, որպէս տեսանեմք զձկունս որ խաղան ի վտակս: - 754

**ՑԱՒՈՏ + Ղեկ նաւին ի ջուրս բեկեալ թուի. և *ցաւոտ* գլխոյ լերինք շարժեալ**: - 662

**ՑԵՂ +** Եգն վաստակասէր. որպէս դուկաս ընդարձակ *զցեղ* ազգատոհմին տեառն ցուցեալ: - 133. Երկու *ցեղ* և կէսն մնացին յայնկոյս, թէ զի՞նչ նշանակէր: - 285. Երկրորդ՝ զի **խ** քաղաք առին ի բենիամենէ՛ յուդայի *ցեղքն* վասն շնութեան կնոջն պատահելոյ. և կոտորեցին զնոսա առ հասարակ **իեռ** արս. և մնաց վեց հարիւր այր զոր յետոյ ստացան ժառանգութիւն իւրեանց. որպէս յա՛յտ է ի դատաւորաց վերջքն: - 312. Երեքտասաներորդ, նա՛ երկոտասան իշխանօք **բժ**ան *ցեղիցն* առաջնորդեաց: - 329. Նախ եմուտ *ցեղն* բենիամենի: - 338. Եւ յօշելն զանդամս **բժ**ան մասն ընդ *ցեղիցն*. և զոտս և զփորն լուանալն. և ողջակիզել ի վերայ պղնձի սեղանոյն: - 358. Ո՞րպէս բանակէին **բժ**ան *ցեղքն:* - 378. Ի **դ** կողմն խորանին բանակեցան **բժ**ան *ցեղքն*. և ի մէջ նոցա խորանն էր Ղևտական *ցեղօքն:* - 378. Նոյնպէս և Ղևտացիքն շուրջ զխորանաւն բանակէին ի մէջ **բժ**ան *ցեղիցն*. և խորանն ի միջի նոցա այսպէս: - 378. Մերարեայն ի հիւսիսոյ. և Կահաթուն որ է՛ *ցեղն* քահանայից ի հարաւոյ: - 378-379. Որ նշանակէր՝ «աստուած ի հարաւոյ եկեսցէ» ի թագաւորի և քահանայի *ցեղէն*. զի բեթլէհէմ հարաւ է երուսաղէմի: - 379. Եւ այն զի երկոտասան էին գաւազանք *ցեղիցն* իշխանաց. և ահարոնին երեքտասան: - 382. Զի՞նչ նշանակէ որ **բ** *ցեղն* և կէսն մնացին յայնկոյս յորդանանու և ժառանգեցին, և այլքն անցին ի քանանացիքն: - 390. Այլ ոմանք՝ **ճ**աւոր զերկին, և վաթսնաւոր զդրախտն, և երեսնաւոր զերկիրս ասեն նշանակեալ **բ** *ցեղիցն* յայնկոյս յորդանանու, և **թ** *ցեղիցն* յերկիրն քանանացւոց: - 391. Իսկ **թ** *ցեղն* նշանակէ՛ զեկեղեցի նոր օրինացս **թ** աստիճանօք կարգաւորեալ: - 391. Զնոյնս նշանակէ **բ** *ցեղն* յայնկոյս յորդանանու. որք այլոցն պատերազմակից եղեն, և ապա՛ ի միասին զժառանգութիւնն առին: - 394. Նա՛խ՝ վասն *ցեղին* ռուբէնի ասի. փոխելով զանէծքն ի յօրհնութիւն: - 409. Եւ ղևեայ *ցեղին* բաժին ո՛չ ետ: - 412. Յետ վախճանելոյն Մովսէսի՝ առաջնորդեաց ժողովրդեանն փոխանորդ նորին Յեսու որդի նաւեայ. ի *ցեղէն* եփրեմի: - 414. Եւ բաժանեաց **բժ**ան *ցեղիցն* ի խորհուրդ փրկչին յիսուսի: - 414. Վասն է՞ր ոչ ետ ղևեայ *ցեղին* բաժին: - 417. Երեսուներորդ, յեսու բաժանեաց զերկիրն ամենայն *ցեղիցն*. և եղիազար քահանայ

և իշխանքն ընդ նմա: - 419. Երկրորդ՝ զի կամէր զա՛զգն հարցանել թէ յուդայի *ցեղէն* և փարիսէ՞ն իցէ, զի սպանցէ զնա: - 427. Ուստի յա՛յտ է, զի *ցեղն* իսրայէլի **ընռ** էին. և *ցեղն* յուդայ **եճռ**. և *ցեղն* քահանայից և բենիամենի ո՛չ անկաւ ի թիւ: - 434. ...և փակէի արքայի որդւոյ ռոմելայ. և գերեաց զնեփթաղիմ և զգալիլեա. և Զգաղայաք **զ** *ցեղիւքն* իսրայէլի. և տարաւ յերկիրն ասորեստանեայց: - 447. ...և երեք ամ պաշարեալ էառ զնա. և գերի վարեաց զթագաւորն ովսէէ որդի ելայ. և **զժ** *ցեղն* բովանդակ տարաւ յասորեստան: - 447. Եւ էր սաղմոն իշխան *ցեղին* յուդայ յորժամ անցոյց զժողովուրդն ընդ յորդանան յեսու: - 452. Զնա էառ կին յովիդա քահանայ. և խառնեցան երկու *ցեղք* թագաւորաց և քահանայից: - 452. Յորմէ՞ *ցեղէ* էր աստուածածին կոյսն: - 459. Փառաւորեալ և միշտ կոյսն Աստուածածին մարիամ՝ էր ի թագաւորական *ցեղէն* դաւթի...: - 459. Եւ յովսէփ արդարն էր ի թագաւորական *ցեղէն*. որպէս պատմէ՛ աստուածախօսութիւնն Մատթէոս և Ղուկաս: - 460. Զի ի *ցեղէն* նաթանայ որդւոյ դաւթի այրն ոմն անուն ղևի՝ ծնաւ երկուս որդիս. զմելքի և զպանթեր: - 460. Դարձեալ վասն յովսեփայ գիտելի է. զի ի *ցեղէն* սողոմոնի որդւոյն դաւթի՝ մատթան առեալ կին, ծնաւ զյակոբ: - 460. Եւ յետ մահւանն մատթանայ՝ մելքի ի *ցեղէն* նաթանայ որ որդի էր ղևեայ և եղբայր պանթերայ, առեալ զկնոյն կին մատթանայ և ծնաւ զելի: - 460. Յակոբ ի *ցեղէն* սողոմոնի որդի մատթանայ. և Ելի ի *ցեղէն* նաթանայ որդի մելքեայ: - 460. Եւ այսպէս յովսէփ բնութեամբ որդի էր յակոբայ և ի *ցեղէն* սողոմոնի. և օրինօք որդի էր ելեայ որ ի նաթանայ: - 460. Իսկ ի մօր կողմանէ՝ մարիամ էր ի քահանայից *ցեղէն*, զի մատթան քահանայն բնակէր ի բեթլէհէմ, և ունէր երիս դստերս: - 460. Իսկ յովակիմ արդարն էր ի թագաւորական *ցեղէն* յուդայի **լը** երրորդ ի թոռանց նաթանայ որդւոյն դաւթի փառաւոր և մեծատուն յոյժ: - 460-461. Որպէս զի լիցի կոյսն մարիամ յազգէ հարց ի թագաւորական *ցեղէն*. և յազգէ մօր ի քահանայից: - 461. Զի թէպէտ փակեալ էր օրէնքն խառնիլ երկուց *ցեղիցն* ընդ միմեանս, սակայն ղևտացւոցն ո՛չ գոյր ժառանգութիւն և բաժին, խառնեին երբեմն ընդ թագաւորական ազգն յուդայ: - 461. Այսպէս և յովակիմ ի յուդայէ՛ էր և ունէր զաննա զդուստր մատթանայ ի *ցեղէն* ղևեայ. վասն այն ազգական մարիամու զեղիսաբեթ ասէր գաբրիէլ: - 461. Եւ վասն այն խառնեցան **բ** *ցեղքն*. զի ծնեալն ի նոցանէ քրիստոս ըստ մարմնոյ, թագաւոր և քահանայ լինէր: - 461. Հինգերորդ՝ զի մի՛ դատապարտեսցի իբր անժուժկալ. զի էր ի քահանայական *ցեղէն*. և այսպիսիքս այրեալ լինէին. իսկ այլ շնացօղք քարկոծեալ: - 461. Եւ ապա *ցեղին* ղևեայ՝ գաթսոնի և կահաթու և մերարեայ զա՛յլ աստիճանքն ետ: - 609. Երկրորդ ասեն, **դ** դասք էին իշխեցօղք ժողովրդեանն. այսինքն իշխանք *ցեղիցն*՝ և ծերքն՝ և դատաւորքն՝ և ատենադպիրքն: - 609. Եւ բաց յայսցանէ՝ Ղևեայ *ցեղք* քահանայիցն: - 609. Զի իւրաքանչիւր իշխանք և *ցեղք* մի մի օր նաւակատիս առնէին: - 616. Երրորդ՝ ի բանակիլն խաչաձև բանակեցան երկոտասան *ցեղքն*, և խորանն ի միջի. որ նշանակէ՛ զխորանն եկեղեցւոյ՝ խորհրդով խաչին քարոզեալ ընդ **դ** կողմ աշխարհի: - 616. Ա՛րդ՝ ծնանի ի բաբելօն ի *ցեղէն* դանայ. և եկեսցէ յերուսաղէմ և թլփատեսցէ զինքն: - 707. Ասեն ոմանք թէ **ժ** *ցեղքն* իսրայէլի որ փակեցան ի մէջ լերանցն կասբից...: - 708

**ՑԵՂԱՊԵՏ +** Վեցերորդ, զի **բժ**ան *ցեղապետք* էին հնոյն. և **բժ**ան առաքեալ նորոյս. զերկոցունց ազգաց նահապետսն դնելով զբոլոր թիւ ամենայն ազգին, նշանակէ՛: - 712

**ՑԵՏ (տ. ՉԵՏ) +** Նա՛խ՝ զի առիւծն թագաւորակա՛ն է: ...Ութերորդ՝ *ցետովն* զիետն ծածկէ: - 315

**ՑԵՏԵՄ** - Վասն որոյ ո՛չ ուտեմք. և մերկանամք զզգեստս. և *ցետեմք* զիերս. և հող զգլխով արկեալ, ի խաւար բնակիմք և այլն: - 670

**ՑԵՐԵԿ +** Իսկ չորրորդ ժամն՝ *ցերեկին* երրորդ ժամուն առաջին ողորմեայն է ի դէմ հոգւոյն սրբոյ. որ յերրորդ ժամու էջ յառաքեալսն: - 622. Իսկ ի *ցերեկին* աղօթեմք **Ե** անգամ ի դէմս հոգւոյս մերոյ: - 622. Եւ սոքօք զամենայն բարի և զչար գործէ մարդ. վասն որոյ ի *ցերեկն* **Ե** անգամ աղօթեմք: - 622. Իսկ ոմանք ևս կատարեալք ամենայնիւ՝ յերեք ժամանակս աղօթեն առանձնակի. մի ի մէջ գիշերի յառաջ քան զիասարակաց ժամն. և մի յայգն. և մի ի *ցերեկն:* - 623

**ՑԻՆ +** *Ցին*, որ զայլոց վաստակս ուտէ: - 365

**ՑԻՑ +** Զորօրինակ՝ որպէս տղայ որ տեսանիցէ *ցից* ի յորմում, երբայ ի մօտ. թէ ամո՛ւր է՝ թողու. վասն զի ո՛չ կարէ հանել. և երթայ առ միւսն. թէ շարժի՝ ի մօտ կենայ մինչև հանէ՛: - 160-161. Այլ և *ցիցն* ի ծեռին յայտելի զոր վարսեաց ընդ ծամելիսն սիսարայ: - 494

**ՑՆԾԱՄ +** Յորժամ սրբազան և մաքուր հոգին հասանէ ի վախճան՝ ուրախութեամբ *ցնծայ* իբր ի հանդիսից զերծեալ և ի պսակն ընթացեալ. և որպէս յանփոփոխ կեանքն հետևեալ: - 668. Այսպէս և ի նաւորդսն զկնի վշտաց նաւաբեկութեանն *ցնծան* յոյժ. վասն զի երկեա՛ն յոյժ: - 765

**ՑՆԾՂԱՅ** - Ասափ և Դիքամ *ցնծղայիւք* երգէին: - 640-641

**ՑՆԾՈՒԹԻՒՆ +** Նմանապէս և հասարակն թէպէտ բազում է, այլ երկոտասան գլխով նշանակի. նախ Բնութիւն. որ նոյն է էութիւն. ապա Բարութիւն. Կամք. Անմահութիւն. Իմաստութիւն. Լուսաւորութիւն. Գեղեցկութիւն. Անփոփոխութիւն. *Ցնծութիւն*. Փառք. Իշխանութիւն. և Արարչութիւն: - 105. Չինգերորդ՝ *ցնծութիւն* է աչաց և սրտից: - 196. Եօթներորդ՝ *ցնծութիւն* եղև իսահակ ազգին իւրում. ըստ որում կոչեցաւ իսահակ որ է՛ ծաղր. և ճշմարիտ *ցնծութիւն* է քրիստոս ամենայն հաւատացելոց...: - 307. Մետասաներորդ՝ փողով և *ցնծութեամբ* ել յերուսաղէմ: - 441. Չորրորդ զատիկ համբարձումն առ հայր *ցնծութեամբ* և փողով: - 524. Նոյնպէս քրիստոս է փառք և *ցնծութիւն*, բան և իմաստութիւն եկեղեցւոյ սրբոյ: - 532. Նախ ի տեսանելն զերեսս աստուածային որ է անճառելի *ցնծութիւն*. որպէս ասեն վարդապետք, այն է ճշմարիտ և միայն ուրախութիւն...: - 762

**ՑՆՈՐ(Ք) +** և Նախ՝ զի նոցայն՝ էութիւն ո՛չ է. այլ առ աչօք ուրուական ցուցմունք. որպէս ի միտս *ցնորք:* - 133. Եւ զի ժամանա՛կ է երկիւղի, և երազոց և *ցնորից* ածօղ: - 196

**ՑՆՈՐՈՒԹԻՒՆ(Ք)** - Եթէ ի խելս և ի խորհուրդ *ցնորութիւնք* և զայրոյք ուռուցանիցեն խխայթեալք. բժշկեսցիս հաւատով. ըստ մարգարէին հիացեալ՝ ստուերս և ունայնս դնելով զամենայն անցաւորս: - 770

**ՑՆՑՈՒՂ +** Նոյնպէս ընդ ներքին դուռն զաւելորդն արտաքս վտարէ ընդ աղիսն. և յայսմանէ ջրատեսակն ընդ *ցնցուղ* քաղրթին ի փալաբուշտն իջանէ և լինի մէզ: - 242. Եւ որպէս այլքն այլ ինչ, և սա՛ զծխատեսակ ջերմութիւն սրտի ընդ *ցնցուղս* ծայրից արտաքարշելով ի կրկին կողմանէ որպէս ասեն բժիշկք: - 786

**ՑՈԼԱՆԱՄ +** Եւ այն որ ի վերայ վառին նիւթեղէն զգեստէ, զի գայցէ խաչն ի վերայ լուսեղէն ամպոյ. յօդս բարձրացեալ և *ցոլացեալ*...: - 676

**ՑՈԼՈՒՄՆ +** Յօրինակ լուսեղէն ամպոյն վառն, և փոքր վարշամակն *ցոլմունք* լուսոյն: - 732

**ՑՈՅՑ(Ք) +** Այսք և այլ սոյնպիսիք՝ հաւասարութեան են *ցոյցք* ընդ հօր: - 39. Եւ թէ ասես միայնաբար՝ աստուած է մարմինն. և աստուած է արիւնն, լինի բազմաստուածութեան *ցոյցք:* - 92. Իսկ այն որ ո՛չ կարէ զչար, առաւել կարողութեանն է *ցոյցք*, և ո՛չ եթէ անկարութեան: - 163. Յարփոյն երկնային իջանէ առ մեզ. ի *ցոյցս* ակներև երկնային փառացն: - 203. Չորրորդ՝ *ցոյցք* է ամենահրաշ խնամոց արարչին...: - 209. Մատունքն փոքր և բարակ, յիմարի՛ է *ցոյց:* - 247. Իններորդ՝ զի որպէս կողից երեսն որ ի փորն նայի՝ կոկ գոլով և մզղնատեսակ. իսկ մէջն փուշ և մրրախառն. այսպէս սէրն զոր ցուցանէ առ այրն, նօսր առ ի *ցոյցս*՝ և երեսս միայն ունի. իսկ ի սիրտն զմրուր դառնութեան: - 276. Եւ այս *ցոյցք* յուսո՛յ է վասն հանդերձելոյն հոգալ և պատրաստել: - 289. Այլ թէ վերջինքս կոչեմք նմա անուն աստուած՝ արարիչ՝ և այլն. ներգործութեանն է *ցոյցք* և ո՛չ թէ գոյացութեան կամ բնութեանն է յայտնութիւն: - 312. Երկրորդ՝ *ցոյցք* է տկարութեան եգիպտացւոցն. որ ո՛չ կարացին ընդ դէմ կալ տկար զեռնոցն: - 333. Բազում է խորհուրդն. բայց նախ հրեշտակաց յարմարի *ցոյցք* տապանին. զի նոքա են անապական և անմահ: - 344. Այլ աստ ասէ սուրբն եփրեմ եթէ՝ խրատն դալեի եղև հատուցումն մեղացն. այլ և պարտք բարեաց առ աստուած ի *ցոյց* օրինի ամենայն ապաշխարողաց: - 434. Եւ եփրեմեանցն զկագելն առ յուդա. ի *ցոյցս* հրեշտակացն յորժամ արար փրկութիւն մարդկան ազգի: - 438. Ասեմք թէ՝ աճումն մարնոյն ո՛չ է ապականութեան *ցոյցք*, այլ հակառակ նմին: - 501. Դարձեալ ասեմք, փոփոխումն և աճումն հասակին ո՛չ եթէ ապականութեան էր *ցոյցք*. այլ զի զճշմարիտ մարդեղութիւնն հաստատեսցէ ընտել սովորութեամբ մեր որ ի տղայութենէ զարգանամբ: - 501. Եւ եփրեմի ներբողեա՛նն այլ՝ *ցոյց* զա՛յս տայ. թէ դահիճն ետես ի բանտին որ այսպէս աղօթէր: - 659. Իններորդ՝ առաւել ամենահնար զօրութեան է *ցոյցք*. զի եղական բնութիւնս ո՛չ կարէր անմեղ մնալ. զի անեղն է անմեղ: - 663. Այլ ես ասեմ, ատելութեան և անարգանա՛ց էր *ցոյցք*, եթէ զպատուականն էր տուեալ նախ՝ անտի փոխեալ: - 663. Իսկ ուղղակին. զի մոռացումն բնաւորեալ է առ խառնուած կազմութեան մարդոյ. իսկ խրատ՝ յանդիմանութեան է՛ ի *ցոյց* ինքեան: - 774. Իսկ եթէ բաղդատելով ոք ասիցէ, թէ ի մարմնի գոլով ապաշխարեալ սրբեցաւ նա ի ներգործականէն իւրմէ մեղաց. և այս ո՛չ ուրէք երևի *ցոյցք* ի գիրս սուրբս: - 775-776. Եւ ո՛չ է տարադէպ *ցոյցք* ականն արփիաւորի, զի ի միջօրեայ ժամու փոփոխումն մարմնոյ և ական արձակէ՛ ստուեր կամ լոյս. այլ ինքն միշտ լոյս գոլով ո՛չ փոփոխի: - 779

**ՑՈՊ** - Որք զաչս իմաստից յիմանալի ճառագայթիցն խուսափեցին թիւր կամօք, և խոտոր մտօք. զանուղղայս խորհելով, և զանպատշաճս բարբառելով. յարձակեալ անկապ լեզւաւ և անդուռն շրթամբք բացեալ յերկինս. *ցոպ* բերանով ի բարձունս բարբանջելով. և յածեալ ընդ երկրաւ լեզուագարելով. որոց դատաստանն ի բնէ ո՛չ դատարկանայ. և կորուստն ո՛չ նիրհեսցէ: - 31

**ՑՈՐԵԱՆ +** Յոռի. զի հորե՛ն երկրագործք և մշակք *զցորեան* և զգինի, յըշտեմարանս ժողովեալ. զի **թ** հոռի՝ մո՛ւտ է աշնան: - 200. Եւ զորօրինակ՝ լիտր մի *ցորեան*, կամ այլ ինչ. յորժամ ձեռօքդ բաժանես և ցրուես զհատսն, ո՛չ մնայ կշիռն: - 202. Այլք ասեն թէ՝ խաղո՛ղ էր. կամ *ցորեան*. զի զգինին ետ գրաւական կենաց՝ և զհաց մարմնոյն: - 224. Եւ դարձեալ՝ որպէս հատն *ցորենոյ* ունի առ ինքն զօրութեամբ զխոտն և զծաղիկն և զհասկն. և սոքա համանգամա՛յն են ի հատն այն զօրութեամբ...: - 255. Նա՛խ՝ զի զնման և զաննմանն ծնանի. որպէս հատն *զցորեանն* և զծեղ: - 256. Վասն որոյ ըստ թուոյ զօրութեան իւրոյ որ է՛ սնանիլն աճիլն և ծնանելն, յերեք ամիսս ծնանի զպտուղս. որպէս *ցորեան* և այլքն: - 262. Չորրորդ՝ զի վայելէ՛ր իսկ նմա որպէս զհատ *ցորենոյ* թաղեալ յաղբիւսն՝ այսինքն յերկիր. և պարարտացեալ հասցէ ի հունձս պտղաբերութեան: - 323. Այլ և նաշիհ. զի հաց կենդանարար և հատ *ցորենոյ* կոչեցեալ. ճնշեալ չարչարանօք և որոշեալ ի թեփոյ մեղաց: - 361. Սա՛ ետես զգեղմն իմանալի յորժամ ծեծէր *զցորեանն* ի կալն: - 420. Զոր օրինակ *ցորեան* մերկ սերմանի և խոտօք և պատենօք բուսանի: - 592. Ոչ ինչ ամենևին՝ թէ ընկալցին զմկրտութիւնն. որպէս և ոչ *ցորենոյն* է վտանգ թէ գողունի իցէ և սերմանի ի ձեռն գողի: - 593. Նիւթ այսմ խորհրդոյս է՛ հաց *ցորենոյ*, և գինի որթոյ: - 594. Եւ յայնժամ զորոմն քաղել առ ի յայրել ի հուրն. և *զցորեանն* ի շտեմարանն ժողովել ի կեանս: - 693. Երրորդ, ներելով արծակէ զսատանայ որով փորձին ընտրեալքն որպէս *ցորեան* ի շտեմարանս արքայութեան...: - 706. Եւ դարձեալ՝ որպէս զանազան սերմանիք *ցորեան* կորեակ և այլք՝ հասարակ ի մի վայր սերմանին. և հասարակ ջրով և ջերմութեամբ սնանին. և ի յազգս իւրեանց կատարին. *ցորեանն* ի *ցորեանն* և այլն: - 719. Երկրորդ՝ զի և վարդապետն իւր ետ օրինակ զհատն *ցորենոյ:* - 720. Այսինքն նախ արմատն. և յետոյ խոտն. յետոյ ծղօտն. և ծնունդն. և ապա՛ տերև. պատանք. և քիստք. և ապա՛ *ցորեանն* ատոք ի հասկին: - 721. և Դարձեալ, որպէս մի շնչմամբ օդոյ՝ *ցորեանն* ժողովի և յարդն հոսի: - 739. Սա է հատն *ցորենոյ* որ անկեալ յերկիր՝ բազում պտուղս աշխարհի պտղաբերեաց...: - 755. *Ցորեան* ընդ յարդի. կնճիռն ընդ գինւոյ. մրուր ընդ ձիթոյ. յուդա ընդ յառաքեալսն. նիկօլայոս հերեսիոտ ընդ աշակերտսն: - 756. Որոմն ընդ *ցորենոյ* ի տանուտեառն ագարակին: - 756

**ՑՈՒԼ +** Իսկ *Ցուլն* և Կոյսն և Այծեղջիւրն, ունին զբնութիւն հողոյ չոր և ցուրտ: - 189. Ի խոյն և ի *ցուլն* և յեկաւորն առնէ զգարուն. որ է հասարակ տիւն և գիշերն **ժբ** ժամ: - 190. Կամ եղջիւրք. որպէս *ցլուց:* - 216

**ՑՈՒՊ +** Քսանևէ, *Ցուպն* եղիսէի խաչն էր. ծկիլն **է** անգամ: - 413. Չորեքտասաներորդ, *ցպով* և պարսաքարով ել ընդ դէմ գողիաթու. և տէր մեր խաչիւ որ վէմ կոչեցաւ, և ի ձայն բարձր աղաղակեաց և արծակեաց զհոգին: - 436. *Ցուպն* եղիսէի օրինակ էր խաչին. վասն է՞ր ոչ յարոյց զմեռեալն: - 445. Այլ և *ցուպն* յակոբայ անցեալ ընդ յորդանան. և սանդուղքն ասացեալ: - 494. Այլ և *ցուպն* հովուական դաւթի. զոր տարաւ ընդ դէմ գողիաթու: - 494

**ՑՈՒՐՏ +** Ներհական. որպէս ջերմ և *ցուրտ:* - 21. Եւ ո՛չ որպէս ներհականք. որպէս ջերմ և *ցուրտ*. սպիտակ և սեաւ. զի սոքա որակութիւնք են. իսկ բարին էութիւն է, և չարն ո՛չ է էութիւն: - 21. Եւ թէ ոք ասիցէ, ջերմն ապականէ՛ *զցուրտ*՝ և ինքն մնայ. սոյնպէս և չարն: - 22. Ասեմք առ այս եթէ՝ ջերմն ապականէ *զցուրտ*՝ և ինքն մնայ ի յենթակայն. զի էութիւն է և որակ: - 22. Չորեքտասաներորդ՝ բարեխառնէ՛ զժամս տօթոյ և *ցրտոյ:* - 126. «Ի բարձունս հիւսիսոյ». այսինքն ի վերայ *ցուրտ* և սառնասառոյց չարութեան իւրոյ: - 148. Իսկ ներհական հակակայքն և այլքն կարեն փոփոխիլ ի միմեանս. որպէս չարն և բարին. ջերմն և *ցուրտն:* - 165. Եւ ո՛չ միայն այս. այլ և դ բնութիւն է չորից տարերաց մարմնոյն. ջերմ և *ցուրտ*. չոր և գէճ: - 176. Զի երկիր *ցուրտ* է և չոր: - 181 Եւ ջուր գէճ է և *ցուրտ:* - 181. **Եւ այսպէս ջերմ և *ցուրտ*, չոր և գէճ, թշնամիք են անհաշտելիք. և լինին միաւորեալք դարձեալ ծայրիւքն և մնան սիրելիք անքակտելիք այսպէս**: - 181. Ութերորդ՝ զի է՛ առանց պղտորման. այսինքն ձեան, կամ անձրևաց, խորշակի, և *ցրտոյ:* - 184. Իսկ Ցուլն և Կոյսն և Այծեղջիւրն, ունին զբնութիւն հողոյ չոր և *ցուրտ:* - 189. Իսկ Խեցգետինն և Կարիճն և Ձուկն, ունին զբնութիւն ջրոյ *ցուրտ* և գէճ: - 189. Եւ է՛ առաջին և վերջին մոլորակացն Երևակն. զոր պարսիկք զօհալ կոչեն. *ցուրտ* է և չոր...: - 189. Եւ զի ջերմ և *ցուրտն* բարեխառնին: - 197. Նա՛խ՝ զի ամառն կարի՛ ջերմ է և չոր՝ չորացուցանէ՛. և ձմեռն խիստ *ցուրտ*՝ սառուցանէ՛ զսերմն: - 197. Դարձեալ քան զժամանակն ոչ ինչ այլայլի. քանզի մերթ *ցուրտ* է և մերթ ջերմն. ամպ և պարզ: - 199. Նմանապէս պնդի և լուծանի. վասն զի *ցո՛ւրտ* է և գէջ: - 202. Իսկ Հիւսիսայինքն, Վաւռէք կոչին. որք են *ցուրտ:* - 205. Իսկ միջինն՝ Ապարքտիաս. *ցուրտ* և կարկտաբե՛ր է: - 206. Վեշտասաներորդ՝ ներընդունակ է ջերմոյ և *ցրտոյ:* - 207. Վասն է՞ր աղբերք ի

ձմերայնի ջերմն բղխեն, և յամարայնի *ցուրտ:* - 208. Վասն որոյ բղխեն ջերմ և *ցուրտ:* - 209. Եւ զի *ցուրտ* է և չոր: - 211. Հինգերորդն փայծեղն է. որ է՛ ախոռ այրեցած արեանն. *ցո՛ւրտ* է և չոր. և ունի տանուտէր զզոհալն որ է երևակն ցուրտ և չոր գոլով: - 241. Հինգերորդն փայծեղն է. որ է՛ ախոռ այրեցած արեանն. ցո՛ւրտ է և չոր. և ունի տանուտէր զզոհալն որ է երևակն *ցուրտ* և չոր գոլով: - 241. Եւ փայծեղն առաւել *ցուրտ* է: - 242. Եւ է՛ բնութիւն ոսկերաց *ցուրտ* և չոր. զի խոնաւն և լոյծն ի ցամաք և ի *ցուրտ* մածնու և լինի ոսկր. որպէս ջերմն և խոնաւն լինի միս: - 244. Եւ *ցուրտ* և լոյծն խառնեալ՝ լինի ջիլ. որպէս *ցուրտ* և խոնաւն փողք: - 244. Եւ հիւսիսայնոցն ո՛չ բուսանի վասն խիստ *ցրտոյն*. և միջերկրայքս վասն բարեխառնութեանն մորուս ունին: - 245. Թէ ժամանակն *ցուրտ* է կամ ջերմ. և երկիրն գէջ կամ չոր. և սերմն հոտեալ կամ աղանձեալ. և սերմանօղ ո՛չ լինի կամ ոչ սերմանէ. վասն որոյ ո՛չ բուսանի: - 256. ...որ *ցուրտ* գոլով վասն փայծաղանն՝ յապաղէ՛ զկազմուած նիւթոյն ի կրկնապատիկ ժամանակս **ծ** աւուրց: - 261. Որպէս լերինք *ցուրտ* գոլով՝ զպտուղս ո՛չ հասուցանեն որպէս ի դաշտի: - 261. Իսկ աշունն, և մինչ ի **թ** ժամս աւուրն, և սեաւ մաղձն, և ալևորն, ըստ նմանութեան երկրի *ցուրտ* և չոր գոլով՝ ծոյլ և պղերգ գոլով ամենայն ուսմանց և գործոց: - 266. Իսկ ձմեռն, և յինն ժամէն մինչև յերեկոյ և բոլոր գիշերն, և սպիտակաթոյր հիւր պլղամին, և ծեր մարդ, ըստ նմանութեան ջրոյ *ցուրտ* և գէջ գոլով. վասն որոյ սպիտակի և ցրտանայ և պակասի զօրութեամբ: - 266. Երրորդ՝ ըստ հիւթին յաւելլածոյ՝ և պակասութեան մաղձիցն՝ ի ներքուստ կամ յարտաքուստ, ջերմ և *ցուրտ* և այլն, զնորին նմանն և զկերպարանն առնու առ ինքն: - 268. Երկրորդ՝ վասն *ցրտոյ:* - 281. Եւ դարձեալ՝ որ քան մերձիմք կատարածի, այնքան մերձենամք ի ցաւս դժոխոցն. որպէս յերիկունն սակաւ սակաւ առաւելու խաւարն և *ցուրտ:* - 293. Չորրորդ՝ զի ուտելով և ըմպելով անփոյթ առնէին զուխտաւորս ի հեռուստ եկեալ քառասնօրեայ մանկամբ և այլ ուխտիւ. և յանձրև և յարև և ի *ցուրտ* վաստակէին: - 425. Այլ զորօրինակ՝ բժիշկք երբեմն նմանեաւն և երբեմն հակառակաւն բժշկեն. նմանեաւ՝ որպէս հրով զհուր, և *ցրտով զցուրտ:* - 497. Իսկ հակառակաւն՝ որպէս ջերմ *զցուրտ*, և գէճ զչորն արտաքսէ: - 497. Երկրորդ՝ կրկին ջուրն, ջերմ և *ցուրտ:* - 553. Ի հողոյ տրտմութիւն և ծանձրութիւն. զի *ցուրտ* է և հակօղ: - 560. **Հիւանդութիւն է անչափակցութիւն տարերց մարմնոյ.** որ առաւելու և նուազէ՛. ջերմ և *ցուրտ*, խոնաւ և ցամաք: - 665. Իսկ հիւսիս բա՛րձր է. և լուսաւորքն հեռու. և է ձախ կողմն աշխարհի. վասն այն *ցուրտ* է և սառնամանիք: - 731. Այլ և ամենայն տարերք խռովեսցին. մրրիկ ձմերան և *ցրտոյ*՝ հրախառն յամենայն ուրէք սաստկացեալ. - 735. Կրճել ատամանց ի *ցրտոյ:* Խաւար: Ծուխ: Արտասուք ներքին: - 751. Երկրորդ՝ անտանելի *ցուրտ*. յոր եթէ հրեղէն լեառն անկանէր՝ սառն դառնայր. վասն այս երկուցս ասի՝ լալ աչաց և կրճել ատամանց...: - 752. ...զի ծուխն ի հրոյն պատճառէ զլալ աչաց. և *ցուրտն* զկրճել ատամանց: - 752. Վասն երկրորդին, որք *ցրտի* չարութեան աստ կարծրացան, արդարապէս անդ տանջողական *ցրտի* կրճտեն զատամունս իւրեանց: - 752

**ՑՈՒՑԱԿ +** Դարձեալ ասեն նոքա թէ՝ խոցուածն և արիւնն և այլն *ցուցակ* ապականութեան են: - 502. Ասեմք, եթէ խոցուածն և արիւնն *ցուցակ* ապականութեան են, ապա և զայս խոցուածս եցոյց յետ յարութեանն. նաև ի կատարածի ցուցանելոց է զամենայն խոցուածս վիրացն...: - 502-503

**ՑՈՒՑԱՆԵՄ +** Ապա յա՛յտ է՝ թէ զոր ինչ խորհիմք՝ ի հանդերձեալն զնոյն առնեմք. և ո՛չ ի հարկէ բանն մեր որպէս *ցուցաւ*: - 9. Ամենայն ինչ որ լինի՝ ունի պատճառ. և ամենայն պատճառ ի հարկէ է՛ նախքան զպատճառելին. ապա թէ հարկաւոր պատճառս այս ո՛չ է բանն մեր որպէս *ցուցաւ*...: - 10. Եւ ա՛րդ՝ *ցուցաւ* զի պատահումն ո՛չ է ի յաստուած: - 15. Եւ արդ՝ բաւական է այսչափ որպէս *ցուցաւ*, թէ աստուած ո՛չ է պատճառ չարեաց, այլ բարեաց միայն: - 15. Այլ արդ՝ չար գործոցն ո՛չ է յաստուծոյ. որպէս *ցուցաւ*...: - 18. Ասեմք զառաջինն թէ ո՛չէ է չար. զի ապականիչ և կորուսիչ է որպէս *ցուցաւ*. ա՛րդ՝ ընդ ապականել զայլսն՝ ապականէ և զինքն. և ո՛չ մնայ ի յէութեան: - 22. Այլ և ո՛չ ի յէս է չարն. և զայս *ցուցցուր* ի բաժանմանէ: - 22. Իսկ չարն ոչնչութիւն է. և ո՛չ ունի առաջք և վերջք. վասն որոյ անչափ է չարն և անպատճառ, որպես ի վերոյ *ցուցաւ:* - 23. Եթէ ոք գիր ո՛չ գիտէ, և ո՛չ զվկայութիւն ընդունի սուրբ գրոց, որպէս *ցուցանեմք* նմա թէ է՛ աստուած: - 25. Յեղելոց իրաց կարե՛մք *ցուցանել* թէ է՛ և զո՛յ աստուած՝ երեք եղանակաւ: - 25. Ապա ուրեմն ամենայնն *ցուցանէ* զբազումս: - 27. Իսկ եզր աստ *ցուցանէ* զնոսա սուտս և ապաշնորհս...: - 28. Ասելովն ծնունդ ի հօրէ, *ցուցանէ* ոչ լինիլ յառաջ քան զհայր: - 37. Իսկ այլ վարդապետք ասեն թէ՝ բանիւս այսու՝ *ցուցանի* կերպ աստուածային ծննդեանն...: - 41. Գլուխ գոլով մեր և լեզու. զտկարութիւն բնութեան անդամոցս *ցուցանելով* հօր: - 42. Որով *ցուցանի* կատարեալ սէրն նորա առ մեզ արդեամբք և ճշմարտութեամբ...: - 43. Այսքան պատճառս *եցոյց* չարչարանքն փրկչին յայսմ տեղւոջ: - 43. Չորրորդ՝

այսու առաւել զմիականութիւն *ցուցանէ* ...: - 45. Ո՛չ *ցուցանէ* այս ք կամք հակառակ միմեանց. զի առողին է բանս և ո՛չ առեցելոյն. այսինքն բանին՝ և ո՛չ մարդկութեանն: - 46. Այլ այս առաւել զմիականութիւնն ընդ հօր և որդւոյ *ցուցանէ*. զի ասէ՝ ո՛չ իմ կամք այլ որիշ զի առնեմ, այլ զա՛յդ կամքդ առնեմ զի հասարա՛կ է: - 46. Ո՛չ թէ բացասութիւնքս այսորիկ զլինիլն *ցուցանէ*, այլ թէ ո՛չ էր ամէնիւ: - 46. Եւ դարձեալ՝ *զի* այժմ ասէ զհայր ճշմարիտ աստուած, և զոր առաքեցեր, ևն շաղկա՛պ է. *ցուցանէ*՛ շաղկապ գրովն և զիւր աստուածութիւնն ընդ հօր: - 47. Որ *ցուցանէ* թէ՝ ամենևին ժամն այն ո՛չ ումեք է հասանելի յեղելոցս, այլ առաջին անեղ բնութեանն աստուծոյ: - 48. Իսկ էն՝ զմիշտ լինիլն *ցուցանէ*. ըստ այնմ՝ «ես եմ ալֆա և օմեգա». այսինքն առաջին և վերջին: - 49. Պատասխանեմք թէ *ցո՛յց* մեզ սոյնպէս աստուած երեք անձինք ի մի բնութիւն. և ես *ցուցանեմ* զմինն ծնունդ և զմիւսն ո՛չ ծնունդ: - 53. Պատասխանեմք թէ՝ ո՛չ ասէ պարզաբար ամենայն, այլ կարգէ՛ զիետն թէ՝ ամենայն որ ինչ եղևն. թէ եղեալ *ցուցանես* զհոգին, և ես հաւատամ թէ ի ձեռն որդւո՛յ է եղեալ: - 53. Եւ ո՛չ ասի ի գիրս սուրբս ըստ այդմ բառի, բայց այլ կերպիւ *ցուցանէ* զայդ...: - 55. Այսպէս զհոգւոյն թէ յայտնապէս աստուած ասիլ ծածկեցաւ, և այլ իմն բառիւ յայտնեցաւ. որ *ցուցանէ* զնոյն ճշմարտապէս աստուած կատարեալ...: - 55. Այսորիկ և այլ սոյնպիսիք յայտնապէս աստուած *ցուցանեն* զհոգին: - 55. Այս են որ ո՛չ է և ասի. է՛ և ո՛չ ասի. ո՛չ է և ո՛չ ասի. է՛ և ասի որպէս *ցուցաք*: - 55. Եւ այս *ցուցանի* յառաջին կորընթացւոցն...: - 58. Նոյնպէս և առաքումն հոգւոյն ո՛չ նըւազութիւն *ցուցանէ*, այլ զհամականութիւն ընդ հօր և ընդ որդւոյ: - 60. Իսկ շարժմունքս այս ո՛չ *ցուցանեն* զաստուած ստեղծուած: - 60. Եւ *ցուցանէ* զմիոյն ի բազումս ծաւալումն շնորհաց հոգոյն: - 60. Իսկ առ երկրորդն ասեմք, եթէ «փչեաց յառաքեալսն» այս զբղխումն *ցուցանէ*...: - 61. Այլ այսորիկ զհաճութիւն կամացն *ցուցանեն*: - 61. Այլ այսորիկ զմիութիւնն մեզ *ցուցանեն*: - 61. Ապա ուրեմն այսպէս կարծելն՝ զհոգին միայն յորդւոյ *ցուցանէ*՛ և ո՛չ ի հօրէ որ է անհնարին հերձուած: - 62. Եթէ զնոյն բղխեն՝ աւելո՛րդ է միոյն բղխումն որպէս *ցուցաւ*: - 63. Այլ այնպէս ասաց առ ի *ցուցանել* զանչափ յաւիտենական աստուածութիւնն...: - 65. Եթէ զաստուծոյն ասես, *ցուցանես* զբանն կարօտ գոլ փառաց. և հա՛րկ է հետևիլ քեզ արիոսի: - 69. Վասն որոյ հարկաւորիմ *ցուցանել* նոյն քան զլխով եթէ աստուած է քրիստոս և ըստ մարմնոյն միութեան մարմնացեալ և մարդացեալ աստուած: - 72. Իսկ թէ ոք ասիցէ՝ եղևն զփոփոխումն *ցուցանէ*. որպէս այն թէ՝ գաւազանն մովսէսի օձ եղև: - 72. Ուստի ո՛չ ասի քրիստոս սոսկ մարդն, կամ մերկ աստուածն. այլ որպէս *ցուցաւ* յերկուց միաւորութիւնն: - 75. Եւ բարձեալ զխտրոցս բաժանման ասէ՝ երկոքեանն մի՛ են. առնլովն աստուծոյ և մարդանալովն. և մարդոյն աստուածանալովն. ահա զբնութեանցն միաւորութիւնն *եցոյց*: - 80. Որք ուսուցին մեզ զխորհուրդ աստուածպաշտութեան որպէս *ցուցաւ*: - 84. Ա՛րդ՝ *ցուցցուք*՝ զի զվեցեքինն սոցա բաժանեն երկաբնակքն: - 87. Այլ աստ գոյ որպէս *ցուցաւ*: - 88. Նմանապէս մարմին և արիւն և ոսկր և այլն աստուծոյ ասել՝ զաստուած *ցուցանէ*: - 93. Յայտնապէս *ցուցանէ* գիտութեամբ զինքն հաւասար հօր: - 97. Ա՛րդ՝ եթէ զբոլորն *ցուցանել* նշան է սիրոյ հօր, ապա թէ ո՛չ ինչ *ցուցանէ* ատէ՛ զորդի: - 97. Մետասաներորդ՝ ասէ ի յօհաննէս, «ե՛ս եմ ճանապարհ և ճշմարտութիւն». այսինքն՝ որ տանիմ առ հայր և ճշմարտութեամբ *ցուցանեմ* ձեզ: - 97. Արդ՝ եթէ ինքն ճշմարտութեամբ ո՛չ գիտէ, մեզ որպէս *ցուցանէ*. և թէ ինքն մոլորեալ է՝ զմեզ ո՞րպէս տանի առ հայր: - 97. Խոստովանեալ յերկնաւորաց և յերկրաւորաց. և հաստատեալ սուրբ գրոց վկայութեամբ որպէս *ցուցաւ*: - 101. Զոր *ցուցցուք* օրինակաւ զգալի տեսութեամբ: - 104. Տե՛ս՝ զի հոգին բղխումն է հօր անձամբ. և առումն յորդւոյ իմաստութեամբ. որպէս *ցուցաւ* ի վեց գլուխն ի ժգ համարն: - 105. Երկրորդ՝ Երրորդութիւնն *ցուցանէ* զհամագոյութիւն երիցն. զի ո՛չ է առաջին և վերջին ի նոսա. այլ՝ զո՛յգ և համանգամայն: - 107-108. Երրորդ՝ Երրորդութիւնն *ցուցանէ* երիցն զմի հասարակ բնութիւն...: - 108. Եւ է մի՝ որ անդրադարձի էի. և այսպէս ասի մի աստուած իբր թէ է՛. զի պատահումն ո՛չ *ցուցանէ*: - 110. Եւ զմնացեալն *ցուցցուք* յառաջիկայսդ: - 113. Եւ զայլ յատկութիւնս հոգւոյ և հրեշտակի՝ *ցուցանելո՛ց* եմք յառաջիկայսդ չորիւք: - 117. Հինգերորդ՝ զարեգակն արևն *ցուցանէ*: - 125. Ութևժերորդ՝ բազմապատիկ մեծ է քան զերկիր. և փո՛քր քանակով *ցուցանի*: - 127. Զարեգական յատկութիւնս թէ կամիս յաւելուլ, *ցուցցի* յառաջիկայդ: - 127. Իններորդ՝ զի նշանակեալքն՝ վայրիք գազանք՝ հրեղէնք՝ և թևաւորք երևէին. *ցուցանելով* թէ արտաքոյ և հեռի՛ են յերևելեացս բնութեանց. և անընտելք և վայրենիք: - 132. Երկրորդ՝ *ցուցանէ* զնստեալն ի վերայ՝ տէր գոլ երկնի և երկրի և ծովու: - 132. Հինգերորդ՝ նշանակէ զչորեսին աւետարանիչքն. մարդն զՄատթէոս՝ զմարդեղութիւն բանին *ցուցեալ* առիւծն զՄարկոս՝ արիաբա՛ր աւետարանեալ...: - 132-133. Առիւծն թագաւորական՝ նշանակէ՛ զյօհաննէս. ի սկզբանէ՛ զբանն աստուած և թագաւոր յաւիտենից *ցուցեալ*: - 133. Եզն վաստակասէր. որպէս ղուկաս ընդարձակ զցեղ ազգատոհմին տեառն *ցուցեալ*: - 133. Ասեմք թէ՝

երևմունք նոցա ո՛չ են առ աչօք. որպէս նմանագործք ի յաչս *ցուցանեն:* - 133. Եւ արդ որպէս *ցուցաւ*՝ վերինք մինչ ի միջինս ունին բոլորապէս զներքնոցն. և ներքինքն մասնաւորաբար մինչ ի զօրութիւնսն՝ յաղագս առ հասարակ զօրութիւնք կոչին: - 137. Տասներորդ՝ զի մշտաշարժք են երեքկին. այսինքն բոլոր՝ ուղիղ՝ և կողմնաւոր. որպէս *ցուցցի* յառաջիկայսդ: - 137. Այս զանազանութիւն առ երրորդ էութիւնս որպէս *ցուցաւ:* - 138. Այլ և երկոտասան գունդս հրեշտակաց *եցոյց* տէրն յաւետարանին ըստ թըւոյ երկոտասան առաքելոցն և երկոտասան կենդանատեսակացն: - 141. Եւ խօսի հրեշտակն ընդ հրեշտակի. *ցուցանելով* նմա զտեսութիւն մտացն միջնորդութեամբ հոգևոր իմն ճառագայթիւք. և այսպէս խօսին հրեշտակք ընդ միմեանս: - 145. Իսկ խօսի հրեշտակն ընդ դիւին՝ *ցուցանելով* նմա զտեսակս իմացման իւրոյ առանց լուսաւորութեան իմն: - 145. Իսկ խօսի դևն ընդ մարդոյ՝ կամ փոփոխելով զգոյութիւնն որպէս հրեշտակն կամ զպատկեր նմանութեանն *ցուցանէ* տեսանելեացն...: - 145. Եւ *ցուցցէ* թէ իշխան և գլուխ էր սադայէլ իւրոյ դասուցն: - 148. Եւ ապա զի *ցուցցէ* թէ՝ չար խորհրդոցն վրէժ խնդրութիւն կայ և պատիժ: - 148. Երկրորդ՝ զօրաւոր մասն է տուտն սողնոց. *ցուցանէ* զբռնութեամբ քարշելն ընդ ինքեան: - 152. Տասներորդ՝ գործ մարդոյս նախ զօրութեամբ՝ և յետոյ ներգործութեամբ եղանի. իսկ աստուծոյն միշտ ներգործութեամբ է. որպէս *ցուցանի* յառաջիկայդ: - 157. Եւ բաժանմամբ *ցուցանի*. զի **դ** ազգ է բարին: - 160. Եւ նախ վասն առաջնոյն *ցուցցուք* բնականապէս և բարոյականապէս: - 162. Նախ որպէս *ցուցաւ* միշտ է աստուած էութեամբ և ներգործութեամբ. առ ինքեան միշտ է, և ներգործութիւն իւր առ ա՛յլս: - 162. Ապա ուրեմն յա՛յտ է ի բաժանման է թէ ի յաստուած ո՛չ գոյ իր ինչ զօրութեամբ. այլ բովանդակն ներգործութեամբ որպէս *ցուցաւ:* - 169. Նախ՝ զի առ ինչք են սոքա. ծնունդն զծնօղն *ցուցանէ*. և արարածն զարարիչն: - 179. Եւ եթէ գո՛յ՝ *ցոյց* թէ յորո՞ւմ ժամանակի եղև կամ ո՞ւր: - 180. Արդ սկիզբն ժամանակի ո՛չ է ժամանակ. վասն այն ո՛չ *ցուցանի* թէ ե՞րբ եղև: - 180. Վեցերորդ՝ զբարեկամս և զթշնամիս *ցուցանէ:* - 185. Վեցերորդ՝ զբարեկամ հրեշտակս՝ և զթշնամին սատանայ *ցուցանէ՛:* - 185. Երրորդ՝ որ զերկնայինսն կատարեալ ստեղծ, ամենակարօղ զօրութեանն է *ցոյցք:* - 192. Եօթներորդ՝ *ցուցանէ* թէ՝ որպէս մարմնական բնութիւնք նախ էին անկատար և անտեսակ՝ և յետոյ կատարեցան յաստուծոյ: - 192. Զի առաջին օրն *ցուցանէ* զառաջին դարն՝ որ յադամայ մինչև ցնոյ: - 193. Նա՛խ՝ զորքանութիւն աւուրցն *ցուցանէ*, թէ տիւ և գիշեր **իդ** ժամն լինի օր մի բնական: - 193. Եւ տևէ՛ որքան է նիւթ գոլորշոյն. և լուսեղէն բա՛շս արձակէ առ ի *ցուցանել* թէ ո՛չ է ի բնական աստեղաց: - 203. Իսկ ի չորրոյն՝ հողմունք և հնչմունք զանազանք. որոտք և փայլատակմունք. կայծ. և այլն որպէս *ցուցաւ:* - 204. Նա՛խ՝ զի բղխումն *ցուցանէ* զկատարեալն. որ ամենայն ինչ կատարեալ և լի ստեղծան յարարչէն: - 212. Երկրորդ՝ բղխումն զհամանգամայն ստեղծումն *ցուցանէ:* - 212. Զի տղայութիւնն օդո՛յ է. և միջին հասակն հրոյ և հողոյ. և վերջինն ջրոյ. վասն այն սպիտակի. որպէս *ցուցանի* յառաջիկայդ **ժզ** գլուխն՝ **իգ** համարն: - 213. Իսկ պտուղք զկարգ տարերա՛ցն բերէ որպէս *ցուցաւ*. ի հողոյն սկսեալ և առ հուրն դադարեալ: - 213. Չորրորդ՝ *ցուցանեն* զստեղծօղն իւրեանց յերկինս գոլ. վասն այն ի վե՛ր ճեպին: - 214. Երրորդ՝ զի ադամայ ետ աստուած զբնական իմաստութիւնն առ ի *ցուցանել* զլաւագոյն ծնունդս բանին՝ հրամայէ՛ անունս դնել: - 219. Չորրորդ՝ զի *ցուցցէ* անձնիշխան գոլ զմարդն, վասն որոյ հրամայէ՛ նմա զի զոր ինչ և կամեսցի՝ անուն դնիցէ: - 219. Երրորդ՝ ի նոյն իսկ ի ձևոյ շինուածոյ մարդոյն. զի ուղիղ գոլով՝ զիշխանականն նշանակէ. իսկ կենդանիքն կո՛ր գլխով զծառայականն *ցուցանեն:* - 220. Ոմանք կամին *ցուցանել* ապականացու գոլ զդրախտն և շաղաշարումն արուի և իգի. և առաւել ցանկութիւն և ծնունդ զաւակաց: - 225. Եւ զայսոսիկ *եցոյց* քրիստոս նախքան զխաչն: - 228. Եւ այս առինչ է. զի մեծն *ցուցանէ* զփոքրն. և պատուականն զանապատիւն: - 230. Եւ յայսմանէ *ցուցանի* եթէ մի է արարիչ բոլոր ամենայն գոյից: - 231. Երկրորդ՝ *ցուցանէ* յերկուց մասանց գոլ զբոլոր մարդն. և հոգոյն է զգալն և տեսանել և այլն: - 234. Զայս *ցուցանէ* դէմք ի նմին կողմն, և զոտս յառաջ փոխել և զձեռս: - 234. Եւ պակասեալ ի սոցանէ մարմնոյն, *ցուցանի* կերպարան ի գոյէ ի քանակէ և յորակէ և ի տեղւոյ շարակցեալ. որպէս յա՛յտ է ի հայելւոջ: - 236. Եւ նուազեալ ի սմանէ քանակին, լինի նման և աննմանն *ցուցեալ*. որպէս յա՛յտ է ի տառն գրեալ. զի նման և աննմանն ուրոյն են որակի: - 236. Ա՛րդ՝ վասն զի գոն յամենայն իրս նոյնութիւն և այլութիւն որպէս *ցուցաւ*, յաղագս որոյ են նմանք և աննմանք միմեանց: - 236. Նա՛խ *ցուցանի* զի մի է արարիչ սոցա, և բազում արարածք. յաղագս որոյ նմանին և զանազանին: - 237. Եւ այս անճառ խնամոցն աստուծոյ է տեսչութիւն որպէս *ցուցանի* յառաջիկայդ: - 237. Եւ սոյնպէս մարդն առաւելու ի չարն. ի բանականէն և ի կամացն և ի թունիցն սատանայի չարացեալ որպէս *ցուցաւ* ի սկիզբն գրոցս: - 237-238. Այսպէս ի սեաւ մաղձէն լինի արտասուքն աղի, զի մի՛ հոտեսցի ակն որպէս *ցուցաւ* նախ: - 243. Եւ սոքա *ցուցանեն* զցաւ և զառողջութիւն մարդոյն: - 244. Նա՛խ՝ զի այնպիսի նշանք ո՛չ դնեն հարկ ի մարդն. այլ

*ցուցանեն* զձկտումն բնութեանն ի յայնպիսի իրս: - 246. Յերն կակուղ և նօսր, *ցուցանէ* զբթամիտն. և զգռուզն. և զաներկչոտն: - 246. Յերք բուսեալ ի ճակատն, *ցուցանէ* զգազանաբարքն: - 246. Գլուխն մեծ, *ցուցանէ* զդէշն: - 246. Եւ նօսրն՝ զխորամանկն *ցուցանէ:* - 246. Գոյնն միջակ ի մէջ սպիտակին և սևին՝ *ցուցանէ* զուշիմն և զբարեբարոյն: - 247. Իսկ հերն կիսասև և ոչ յոյժ բարակ՝ զբարեբարոյն և զբարի կազմուածն *ցուցանէ:* - 248. Իսկ ամենայն անդամք որ ներհա՛կ են այսմ, զթիւրամիտն *ցուցանեն:* - 248. Զի թէպէտ ըստ ներգործութեանն բաժանին երբեմն ի բաժանելի մարմնոյն՝ զի առանց մարմնոյն ո՛չ կարեն ներգործել սոքօք, այլ անբաժանելի մնան ըստ էութեանն ի հոգին. որպէս *ցուցանելոց* եմք յառաջիկայսդ: - 249. Այլ և ի սկիզբն գրոցս *ցուցաւ* յերեք համարն: - 252. Եւ եթէ այս սուտ է հա՛րկ է ասել քեզ կամ մնալ ի թուփն, կամ փոխիլ յանէն և անգոյանալ որպէս *ցուցաւ:* - 253. Այսպէս և ի կազմուած իւրաքանչիւր մարդոյ ո՛չ է մարմին յառաջ քան զհոգի որպէս *ցուցանելոց* եմք: - 254. Զի սերմնական զօրութիւնն որ է՛ ի նիւթն այն՝ իսկ ընդ խառնիլ սերմանցն յարգանդի, զուգապէս *ցուցանէ* զտնկականն: - 261. Նմանապէս ծառք և տունկք՝ որ յետ երից ամաց կամ չորից *ցուցանեն* զպտուղս՝ յայսմ թըւոյ ո՛չ ելանեն արտաքս: - 263. Եւ անտի ի չորեքտասանն՝ զծննդականն *ցուցանէ*. որ է՛ կերակրականին դարձեալ: - 267. Եւ անտի յառաջ զբանական մասին կատարումն և զկայ՝ *ցուցեալ:* - 267. Երկրորդ՝ *ցուցանէ* զաշխարհ. որ էր նախ քան զլինիլն ի նախանկար տեսութիւն արարչին՝ և ապա եղև, յետոյ վախճանի: - 268. Որ ի խորհրդական միտսն վասն օգտի զլինելոցն *ցուցանէր:* - 268. Իսկ դիւականն ընդդէմ այսմ՝ վասն մոլորութեան զանազան երևմունս *ցուցանէ* աղտեղութեան. և կամ զբարին խափանել ջանայ...: - 268. Իսկ զի բանական միտքն ո՛չ տեսանէ զերազն, այլ անբան մասն, որ է՛ տնկականն ի մեզ. նա՛ յածի յերազն. և *ցուցանի* այս ի կրկին իրաց: - 268. Եւ այս չէ՛ ընդունելի. զի մարդն երրորդութեանն է պատկեր եղեալ որպէս *ցուցաւ*. և ո՛չ միայն որդւոյ և հոգւոյն սրբոյ: - 273. Եւ այս ևս չէ՛ ընդունելի. զի *ցուցաւ* ի վերոյ եթէ յարացոյցն նոյն ինքն աստուած է ամենեցուն: - 273. ...իմանամք զնմանութիւնն ի պատկերին որպէս *ցուցաւ* ի վերոյ...: - 273. Դարձեալ՝ մարդո՛յս է ուղղաձև լինիլ որպէս *ցուցաւ:* - 275. Ութերորդ՝ զի կողն կեռ գոլով՝ *ցուցանէ* զկինն նենգ գոլ և երկմիտ. կեռ, այսինքն խեռ ընդ առն: - 276. Իններորդ՝ զի որպէս կողից երեսն որ ի փորն նայի՝ կոկ գոլով և մզղնատեսակ. իսկ մէջն փուչ և մրրախառն. այսպէս սէրն զոր *ցուցանէ* առ այրն, նօսր առ ի ցոյցս՝ և երեսս միայն ունի. իսկ ի սիրտն զմրուր դառնութեան: - 276. Երկրորդ՝ *ցուցանէ* զինքն տէր և ստեղծօղ մարդոյն: - 277. Չորրորդ՝ ի *ցուցանել* զարդար վճիռ հատուցմանն...: - 277. Եւ բաց յայսցանէ՝ բնական որակօք ներհա՛կք են միմեանց դ տարերքդ որպէս *ցուցաւ* ի վերոյ: - 278. Տե՛ս, զի յայտնապէս *ցուցանէ* սուրբն, զի թէ պահպանութեամբ կացեալ էին ի դրախտին, ո՛չ ևս ամուսնութեամբ լինէր աճումն: - 280. Եւ ըստ այնմ որ նշանակութիւն է, *ցուցանէ* զմարմինս մեր փոփոխական. որպէս այն որ փչեաց յերեսս մարդոյն շունչ կենդանի: - 282. Իսկ ըստ նշանակութեան *ցուցանէր* զբանական հոգին. որով կենդանացաւ մարդն: - 282. Զի յանապական կուսէ ծնաւ *եցոյց* զանընդդիմահարութիւնն և զանօսրութիւնն...: - 282. Երկրորդ՝ զմին յառաջ քան զջրհեղեղն, և զմիւսն յետոյ. զի *ցուցցէ* թէ յերկոսին ժամանակս ընտրեալքն հաճոյ եղեն աստուծոյ: - 289. Երրորդ՝ մինն կուսութեամբ, և միւսն ողջախոհ ամուսնութեամբ. զի *ցուցցէ* թէ ի կուսից և յամուսնացելոց մտցեն յարքայութիւնն երկնից: - 289. Զի փոխելն *ցուցանէ* նախ զկարօղ զօրութիւն փոխողին: - 289. Եւ ա՛յս է պատճառ յերկարելոյ և կարճելոյ կենաց. այսինքն արդարութիւնն կամ մեղքն որպէս *ցուցաւ:* - 292. Այլ ճշմարտութիւնն յայտնապէս ի մե՛րս մասիս *ցուցանէ:* - 294. Զի արիւն և շունչն արակա՛ն է որպէս *ցուցաւ*. վասն այն ա՛յրն հանէ զնոսա. և կինն չէ տուեալ արիւն՝ ո՞րպէս հանէ: - 296. Եւ դարձեալ՝ որպէս սահմանն զտեսակս ազգացն նշանակէ. նոյնպէս և լեզուն զիւրաքանչիւր ազգս *ցուցանէ:* - 298. Զի յորժամ աբրահամ սեղան կանգնեաց, *եցոյց* զքահանայութիւն: - 300. Եւ յորժամ կոտորեաց զթագաւորսն քոդող գոմորայ, *եցոյց* թէ թագաւոր թագաւորա՛ց է: - 300. Եւ յորժամ խօսեցաւ աստուած ընդ նմա, *եցոյց* զմարգարէութիւնն: - 300. Այսպէս և սէրն աստուծոյ առաւել *ցուցաւ* ի ձեռն որդւոյն: - 305. Իններորդ՝ *ցուցանէ* թէ ո՛չ է այն անդրանիկն որ նախածին լինի և մարմնովն քաջ. զի ո՛չ հաճի տէր ընդ իրանս առն հսկայի. այլ անդրանիկ է այն՝ որ զհաճոյսն աստուծոյ կատարէ: - 310. Ութերորդ՝ առ ի *ցուցանել* թէ մարդկային միտք ի քննութիւն աստուածային բանին կա՛ղ գտանին: - 311. Տասներորդ՝ ի *ցուցանել* թէ կաղանալ պարտիմք աշխարհի, և ապա ի հանդէսն աստուծոյ մտանել: - 311. Երկրորդ՝ էրն զվախճան անցելոյն *ցուցանէ*, և եղիցին զսկիզբն հանդերձելոյն: - 312. Երրորդ՝ կոտորեալ մանկունքն բեթլէհէմի ո՛չ էին ի զաւակացն հռաքէլի որպէս *ցուցաւ* ի վերոյ: - 312. Վեցն զկատարելութիւն մարմնոյն *ցուցանէ*, և հարիւրն, զհոգւոյն. և հազարն, զպատիւ կենաց յաւիտենից: - 315. Եւ զի *ցուցանէ*՛ զդէմս առանձնական: - 319. Երրորդ՝ *ցուցանէ* զգողացեալն ի բանից, զնոյնն կրկնել և շրջել պատասխանելով: - 323. Չորրորդ՝

կամէին զինքեանս արդա՛ր *ցուցանել*, և յանցաւոր զյոբ. և վասն այսմ կարգէին ընդ յոբայ: - 324. Երրորդ՝ *ցուցանէ* թէ կրկին գովութիւն է և հատուցումն արդարոց. աստ և ի հանդերձեալն: - 326. Եւ տէր մեր է՛ր աստուած և կոչեցաւ էմմանուէլ. և իրօք զգործս աստուծոյ *ցուցանէր:* - 329. Արդ՝ լոյսն *ցուցանէ* զխնամս արժանաւորացն. և կիզումն զպատիժ անարժանիցն: - 330. Երրորդ՝ էն՝ զմիշտն *ցուցանէ*. իբր անսկիզբն և անվախճան: - 332. Նա՛խ *ցուցանէ*՛ թէ՝ ձեռքդ այդ գրեսցէ օրէնս որով սրբին պահօղք, և պղծին ո՛չ պահօղք: - 332. Նախ *ցուցանէ* թէ՝ զազիր են գործօք և բորոտեալ մեղօք. վասն որոյ գարշ կենդանեօք ապականէր զնոսա: - 334. Երրորդ՝ հարուածն է մունն որ է՛ մանր տիզ. կամ մոծակ. կամ մժեխ. ի *ցուցանել* զի մանրակըծո՛ւ էին բարուք և խոցոտիչք բանիւք: - 334. Նոյնպէս պաշտօնեայք նորա *ցուցանեն* ինչ որ չէ ճշմարիտ: - 335. Եւ այս գիտելի է. զի կախարդքն փոխեն զզգայարանս և *ցուցանեն* առ աչօք երևումն ինչ: - 335-336. Հրեշտա՛կ էր. որ ի տիւն հովանի լինէր ի տապոյ արևուն և *ցուցանէր* ամենայն աշխարհի զելս ժողովրդեանն: - 338. Նա՛խ՝ զի մովսէս յայտնապէս զկէս արեանն անապական եհեղ զսեղանովն որ նշանակէր զանապական խորհուրդ արեանն. և զկէսն խառնեաց ի ջուր որպէս *ցուցաւ* ի խորհուրդ մկրտութեան և հաղորդութեանն խառնեալ: - 341. Երկրորդ՝ զի նախ ջուրն էր ի խառնարանն և եհե՛ղ զարիւնն ի վերայ որ է՛ *ցոյց* մկրտութեանն: - 341. Եւ յայտ է զի յետ մկրտութեանն պա՛րտ է հաղորդել, և նոքա ո՛չ առնեն որպէս *ցուցաւ:* - 341. Երկրորդ՝ զորպիսութիւն և զձև աշխարհիս *ցուցանէր* ի խորանն եռայարկեան...: - 342. Չորրորդ՝ և բովանդակն ե կանգուն, *ցուցանէ* թէ ո՛չ են նոքա ի չորից տարերց...: - 344. Եւ որպէս ներքին տապանակն օրինակ *ցուցաւ* իմանալեացն: - 346. Նոյնպէս և սեղան խնկոց և երեսացն *ցուցանէ* զհոգիս սրբոց ելեալ ի մարմնոց և մտեալ դէմ յանդիման երեսացն աստուծոյ: - 346. Որ և *ցուցանէր* յետ եօթնասուն ամի զդարձ գերուլյն, և զնորոգիլն իրէական կարգին: - 346-347. Երկրորդ թէ՝ զքո ձեռագործն *ցո՛յց* անարժան ժողովրդեանն: - 350. Նա՛խ *ցուացնէ* զառատութիւն պարգևացն աստուծոյ, որ ո՛չ զուգակշիռ գործոցն հատուցանէ, այլ բազմապատիկ և հազարաւոր: - 351. Հինգերորդ՝ խնայեաց ի նա՛ տէր ո՛չ *ցուցանել* զերեսս իւր. այն կոչեաց զնա՛ տէր և արար զաչս նորա տէր և պատժօղ: - 352. Վեցերորդ՝ զի իմանալի ունի լոյս՝ *ցուցանէ*՛ զգալի լոյսն...: - 352. Նա՛խ՝ զի մեղրն զհեշտութիւն մարմնոյն *ցուցանէ:* - 355. Նախ *ցուցանէ* զխոհեմութիւն բարուց որ ընդունելի է աստուծոյ և մարդոյ. այլ պարզութիւնն է՛ պատարագ: - 356. Նա՛խ՝ զի խմորն զհին չարութիւնն *ցուցանէ*. որ նախ հրաժարիլ պարտէ, և ապա՛ զբարիս գործել: - 356. Հինգերորդ, զզայրացումն սրտին *ցուցանէ:* - 356. Նա՛խ՝ բերել ի դուռն խորանին և տաճարին. և ո՛չ ի բազում մեհեանս. զի *ցուցցէ* զմինն աստուած՝ և յանուն նորա ընծայել: - 359. Նա՛խ՝ *ցուցանէ* թէ սա՛ անմեղ է՝ վասն իմ մեղացս մեռանի. զոր ձեռօք ի սա՛ տամ զմեղս: - 359. Երկրորդ՝ *ցուցանէ* զանմեղ մահն քրիստոսի վասն մեր մեռեալ. զոր մատամբ *ցուցանէին* խաչօղքն թէ խաչեսցի դա՛: - 359. *Ցուցանէ*՛ զառաջին՝ զմիջին՝ և զյետին ժամանակս տալ աստուծոյ: - 360. Վեցերորդ, թիթեղն *ցուցանէր* ի ճակատն գրեալ սրբութիւն տեառն նուիրեալ. զի նէրք քահանային սրբութիւն է: - 363. Եւ զայս *ցուցանէ* զմորթն ի բաց հանելն և ապա՛ պատարագել: - 363. Երկրորդ, դէպ յարնելս, յանուն սրբոյ Երրորդութեանն. զի *ցուցցի* թէ վասն որո՞յ է: - 366. Այլ և հաւատն և յոյս և սէր որպէս *ցուցաւ:* - 368. Եւ զկենդանին ներկեալ՝ և կարմիր կապեալ ի պարանոցն, *ցուցանէր* զմեռանիլն աստուծոյ վասն մեր: - 369. *Ցուցանէ* թէ՝ անկեալքն ի քահանայութենէ՝ հաղորդին ի ձեռս այլոց. այլ և հասի իրաւանցն: - 370. *Ցուցանէ* թէ՝ մինչ ի մեղս իցեն քահանայքն՝ ո՛չ զհասն կերիցեն և ո՛չ ի սուրբ խորհուրդն մերձեսցին: - 370. Երկրորդ՝ *ցուցանէ* թէ բանական հոգիս մեր ո՛չ կորնչի: - 371. Չորրորդ՝ զի *ցուցցէ* նոցա՝ յեօթանց զմինն աղքատաց և կարօտելոց բաշխել: - 372. Զայն *ցուցանէ* որ նուազելոց էր հինն և օրինակն՝ ի գալ նորոյն և ճշմարտութեանն քրիստոսի: - 374. Դարձեալ *ցուցանէ*՝ ի լրման ժամանակի տասանց միոյ կորուսեալ դրամին ի խնդիր ելեալ: - 376. Նա՛խ՝ զի *ցուցանէ* թէ յորմէ՞ ազգէ ծագելոց էր արեգակն արդարութեան քրիստոս: - 377. Հինգերորդ՝ թիւն զընտրութիւն՝ զդաս՝ և զկարգն *ցուցանէ*. զի գո՛յ ի նմա՛ առաջին միջին և վերջին. որպէս զինւորք. իսկ անթիւն խոտան և անկա՛րգ է. որպէս ծերք և տղայք: - 377. Զի՞նչ *ցուցանէր* գ օր յառաջ գնալ տապանակին դիտեալ զհանգիստ: - 380. Զի՞նչ *ցուցանէ* երկոտասան լրտեսքն: - 380. Այլ որ զուղիղն ասեն ա՛յս է, կորխ՝ *եցոյց* զօրինակ զղջման...: - 382. Երկրորդ՝ երկուքն ևս ահարօնի. զի բուրվառն ոսկի զմաքուր քահանայութիւնն *ցուցանէ*. և գաւազանն զիշխանութիւնն: - 382. Նա՛խ՝ առ տեղեաւն *ցուցանէր* յահարօնէ՛ լինիլ քահանայ. յորդիս և ի թոռունս յազգէ յազգ: - 382. Իսկ կրկին պատարագն. մին վասն բոլոր ժողովրդեանն, և մին վասն անձին ակամայիցն. *ցուցանէ* զկրկին խոստովանութիւնն. մին յայտնի առհասարակ եկեղեցոյն. և միւսն ծածուկ առանձին մեղաց: - 385. Նա՛խ՝ *ցուցանէ* թէ քրիստոս է առաջին և վերջին. այսինքն սկիզբն և կատարումն եկեղեցւոյ. ո՛չ միայն աստուածութեամբն, այլ և մարդկութեամբն:

- 385. Իններորդ, զի *ցուցցի* թէ բարկացողաց ո՛չ երևի աստուած. որպէս և ո՛չ եղիայի: - 386. Տասներորդ, բարկութեամբն արգելաւ յերկրէն աւետեաց. զի *ցուցցի* թէ արդա՛ր է աստուած. և ա՛կն ումեք ո՛չ առնու: - 386. Զայն *ցուցանէ* թէ յուղղութիւնս մեր երևի աստուած. այլ ի խոտորիլն ո՛չ: - 387. Երրորդ՝ զի *ցուցցէ* թէ ոչ ինչ զօրութիւն ունի բան նորա: - 388. Զայն *ցուցանէ*, զի մեռանիլն քահանային՝ ազատութիւն էր նոցա, յօրինակ քրիստոսի. յորժամ մեռաւ վասն աշխարհի, ազատեցան մահապարտքն: - 392. Դարձեալ՝ ակամայ սպանօղն *ցուցանէ* զզղջացեալն ի մեղաց: - 392. Զայն *ցուցանէ* իբր միշտ թշնամի են մեր և հակառակ: - 394. Դարձեալ՝ զերեք տեսակ սիրոյն *ցուցանէ*. մարմնով և հոգւով և մտօք սիրել զաստուած: - 396. Երրորդ՝ զայն *ցուցանէ* որ կեանք դրախտին դարձաւ առ նոսա յանապատին անկարօտ ամենայնի...: - 397. **Ակնառութիւն ո՛չ է աստուծոյ. զնախնիքն սիրեաց աստուած, զի արժանիք էին. և *եցոյց* նոցա զինքն. և զխոստումն աւետեաց ուխտեաց նոցա մարդ լինիլ ի զաւակէ նոցա յետոյ**: - 398. Աստ **զ** նշան դնէ մարգարէին որ ճշմարտապէս զքրիստոս տէր մեր *ցուցանէ:* - 399. Զայն *ցուցանէ* որ պատճառաւ իրիք կամ պոռնկութեամբ կամ այլ ինչ յորժամ բաժանին, առանց ամուսնութեան մնասցեն թէ երկուքն են բաժանմանն պատճառ, մինչև հաշտեսցին: - 401. Նշանակէր զյարութեան խորհուրդն յոր նոքա ո՛չ հաւատային. աստէն իսկոյն *եցոյց* յարութեան անուամբն. այսինքն «յարուսցէ՛» ասելովն: - 402. Երրորդ, ի խնամելոյ զմարդ և զանասուն՝ *ցուցանի* թէ նա՛ է արարիչ որ խնամէ՛ և դարմանէ՛ զսոսա՛: - 406. Հինգերորդ՝ *ցուցանէ* թէ մարմնաւոր օրինացն վախճան հոգևոր և օրհնութիւնն է որ եղև քրիստոսիւ: - 409. Եւ փոխանակ հոգւոյն՝ հրեշտակական օգնութեանն կարօտացաւ *ցուցանել* զտիրապէս իշխօղն բնութեան. որ և կշտամբեաց զբռնութեամբ թագաւորելն նորա: - 410. Երրորդ՝ զհանդերձեալ յարութեան խորհուրդն յինքեան *ցուցանէր:* - 411. Եւ ի մեծի ուրբաթի խաչին, լուսինն ընթացաւ և ձգեցաւ յարևն, և յետս դարձաւ. որպէս *ցուցանի* յառաջիկայդ առ խաչելութեամբն ի **լ** գլուխն ի **hզ** համարն: - 416. Նոյնպէս և տկարութեամբ նորին՝ կորստական խոնարհութիւն *ցուցանի* մարմնոյ իւրոյ աշխարհի: - 424. Չորրորդ՝ *ցուցանէ* թէ որ ի սրբութիւնն իւր ո՛չ խնայէ, և ո՛չ ի ձեզ յանցաւորքդ թէ ոչ դառնայք: - 425. Ութերորդ՝ նա՛ ուսովք էր բարձր քան զամենայն մարդ. և տէր մեր ո՛չ միայն աստուածութեամբն որ գլուխ է, այլ և չարչարանօք իւր՝ գերագոյն և բարձրագոյն *ցուցաւ*. զի փրկեաց զամենայն: - 427. Եւ այս *ցուցանի* ի սաւուղայ. որ այլակերպեալ գնաց առ վհուկն...: - 428. Չորրորդ՝ զի *ցուցանէ* եթէ՝ **խ** ամ թագաւորեաց, և զայն մինն միա՛յն մեղանչեաց: - 432. Հինգերորդ՝ զի *ցուցանէ* թէ՝ որ ի սիրելին իւր դաւիթ ոչ խնայեաց, նոյնպէս և զամենայն մեղաւորս յանդիմանէ՛: - 432. Զի սա՛ ի կանոնաց թեթևացեալ է որպէս յառաջիկայդ *ցուցանի* ի խոստովանութեան ճառն: - 432. *Ցուցանէ* թէ տարաժամ մահն ընտրութեամբ և կամօքն աստուծոյ լինի, և ո՛չ պատահմամբ որպէս ասեն ոմանք: - 435. Դարձեալ, ժամանակն ունի մասունս երիս. և մշտնջենաւորն. և դարձեալ յաւիտենական է բանն. և ժամանակեայ մարմինն. և մշտնջենաւոր հոգին. և անքակտելի միութիւնն *ցուցանէ* մեզ զչորս թուոյն. և ամենայնիւ կատարեալ գոյացութեամբ: - 437-438. Նախ զայն *ցուցանէ* առ նորս, եթէ ոք յանգիտութեան մեղանչէ՝ թողու աստուած. և որ դարձեալ կրկնէ, և զառաջինն պահանջէ ասէ: - 439. Զայս *ցուցանէ* թէ՝ որ քան ի խռովութեան եմք ընդ թշնամւոյն և յանձինս մեր՝ ո՛չ լինիմք տաճար աստուծոյ: - 440. Նա՛խ՝ *ցուցանէ* զչափաւոր հարկաւորքն մեր: - 444. Երրորդ՝ *ցուցանէ* զպտուղ դրախտին նոյնպէս գոլ առանց յաւելուածոյ և առանց նուազելոյ. թէպէտ կերակրիւր: - 444. Երկրորդ՝ *եցոյց* թէ նոյնպէս ընդ քե՛զ է լինելոց զօրք հրեղինացն նովին հոգւովն: - 445. Երրորդ՝ *եցոյց* յայտնապէս զպատերազմն առաջի այսոց օդոցս. վասն այն պիտոյ էր հեծեալք: - 445. Եւ այս՝ և պատերազմն վասն մովսիսեան մարմնոյն՝ *ցուցանեն* զպատերազմ հոգւոց յետ ելից մարմնոյն: - 445. Նա՛խ՝ զի գործ ողորմութեանն է ի սկիզբն աշխարհի՝ և ի մէջն. և ի կատարումն յարութեամբ մարդկան որպէս *ցուցաւ* ի վերոյ: - 458. Եւ յովսէփ որդի դաւթի որպէս *ցուցաւ:* - 460. Երկրորդ՝ զի յովսեփիւ *ցուցցի* ազգաբանութիւն կուսին որ արամբն շարագրի: - 461. Ողջոյնս այս՝ է հանդերձ բերողիւն և առաքողիւն և կուսիւն *ցուցանէ* զ**ծ** գերազանցութիւն պատուոյ կուսին: - 463-464. **Երրորդ՝ զի կոյս էր ողջոյնընկալն և գերազանց քան զամենայն կոյս** որպէս *ցուցաւ:* - 464. Չորրորդ՝ զի ասելն «ուրախ լեր» ի յայլ թարգմանս է «ողջ». *ցուցանէ* զողջութիւն և զանմեղութիւն կուսին: - 464. Հինգերորդ՝ *ցուցանէ* զշնորհն որ ասէ՝ «լի շնորհօք» ըստ այլ թարգմանչաց: - 464. Զի՞նչ *ցուցանեն* պատասխանիք Կուսին: - 465. Որ *ցուցանեն* զչորեսին առաքինութիւնս նորա: - 465. Զի ասելն «Ահաւասիկ» *ցուցանէ* զյօժարական հնազանդութիւնն: - 465. Եւ առաքեալն *ցուցանէ* թէ քրիստոս է զաւակն այն...: - 466. Եթէ աստուած մարդ եղև՝ *ցուցաւ* յայլում տեղւոջ: - 468. Իսկ թէ մինն համագոյ երրորդութեան բանն մարմին եղև՝ *ցուցցի* այժմ: - 468. Այլ և *ցուցանի* թէ զայլ ամենայն բարութիւնս ո՛չ խնայէ մեզ զոր ինչ և խնդրեմք ի նմանէ: - 468. Եւ զի հոգին է նա ի հօրէ, սակայն

բղխումն է և ո՛չ ծնունդ որպէս *ցուցաւ* ի վերոյ: - 472. Իսկ զօծումն հիւանդաց *եցոյց* ինքեամբ յայլս. յորժամ զանկեալն ի ձեռս աւազակաց ծիթով և գինւով բժշկեաց: - 474. Զի արիոս կամէր զանեղական բանն աստուած եղական և կարօտ օծման *ցուցանել:* - 475. ...զոր և յառաջիկայդ *ցուցցի:* - 476. Նա՛խ` *ցուցանէ* թէ կատարումն ամենայն տնօրէնութեանց խա՛չն եղև: - 481. Ա՛րդ` *ցուցից* տումարաւ զտօնս մեր և զնոցայն. զի տօնախմբութիւն նոցա այսպէս կատարի առ յայտնութիւնն: - 483. Երրորդ` զի ո՛չ ասաց հրեշտակապետն զաքարիայի թէ ահա՛ եղիսաբեթ յղասցի և ծնեցի քեզ որդի զներկայն *ցուցանելով*...: - 483. Երկրորդ` զի *ցուցցէ* զճշմարիտ մարդեղութիւն իւր և ո՛չ կարծեսցի առ աչօք...: - 485. Վեցերորդ` զի *ցուցցէ* զինքն որդի աբրահամու. առ որ հրաման թլփատութեանն եղև և խոստումն օրհնեալ զաւակին. և այսպէս խոստմանն աստուծոյ կատարումն քրիստոս զինքն *ցուցանէր:* - 485. Ութերորդ` զի թլփատութեամբն զինքն եղբայր հրէիցն *ցուցանէր*...: - 485. Տասներորդ` զի *ցուցցէ* զխոնարհութիւն իւր: - 486. Ա՛րդ` խոնարհութիւնն քրիստոսի *ցուցանի* չորիւք...: - 486. Այլ և օգտութիւն մկրտութեան մերոյ *ցուցանի* ի մկրտութիւնն քրիստոսի չորիւք: - 487. Երկրորդն որ ասէ «բացաւ երկինս» որ *ցուցանէ* թէ մկրտելոյն առ ժամայն բացեալ է դուռն արքայութեանն: - 487. Երրորդն որ ասէ «էջ հոգին ի վերայ նորա». *ցուցանէ* թէ մկրտութեամբն լինիմք տաճար հոգոյն սրբոյ: - 487. Իսկ ձայնն հօր ի վերայ որդւոյն` *ցուցանէ* զգերազանցութիւնն քրիստոսի: - 487. Չորրորդ որ ասէ «իմ». *ցուցանէ* զքրիստոս գոյակից հօր: - 487. Երրորդ` այնու *ցուցանի* և պարզևի մեզ Բարձրութիւն յուսոյ: - 493. Չորրորդ դարձեալ` **դ** թև խաչին նշանակէ զչորս բարերարութիւնս քրիստոսի. զի վերին մասն *ցուցանէ* զբացումն արքայութեանն երկնից. ներքինն զաւերումն դժոխոց. աջն զբաշխումն շնորհաց. ահեակն զթողութիւն մեղաց: - 493. Դարձեալ վայելո՛ւչ էր փրկութեան մեր լինիլ ի ծեռն փայտի. որ *ցուցանէ* զփայտն կենաց ի մէջ դրախտին: - 494. Ասեմք թէ` ո՛չ զհարկաւորն, այլ զկամաւոր մահն կրեաց որպէս *ցուցաւ* ի վերոյ: - 497. Դարձեալ ասեմք, մեղքն ապականութիւնն են առաջին և վերջին ծայրքն կրից. իսկ մահն միջին որպէս *ցուցաւ* ի վերոյ: - 497. Վասն որոյ նա՛խ *ցուցանել* պա՛րտ է թէ ո՛չ նոյն է մահ և ապականութիւն: - 498. Դարձեալ ի սկզբանէն *ցուցցուք.* մահն պատիժ է յարարչէն եղեալ. և ապականութիւնն ի բանսարկուէն արկեալ հետևանք մահուն: - 498. Դարձեալ` մահն խառնեա՛լ է ընդ բարւոյ. և ապականութիւնն ամենևին չար. որպէս *ցուցաւ* ի գիրս քառասնօրեայ զալստեանն և մահուն սիմէօնի. ապա յա՛յտ է թէ ա՛յլ է մահ և ա՛յլ ապականութիւն: - 498. Այլ սակայն բնախօս քննութեամբ *ցուցցուք* բազմազան եղանակաւ: - 498. ...որպէս *ցուցաւ* ի վերոյ ի սոյն գլուխ ի **ժ** համարն...: - 499. Ասեմք առ այս` եթէ ո՛չ են նման մահկանացու և ապականացու ասելն. զի ա՛յլ է մահ և ա՛յլ ապականութիւն որպէս *ցուցաւ* ի վերոյ: - 500. Ապա թէ ոչ` նա՛ որ զադամ երեսնամեայ ստեղծ, կարէ՛ր և նոյն հասակաւն ծնանիլ. այլ այն ո՛չ լինէր ըստ սովորութեան մեր որպէս *ցուցաւ* ի վերոյ: - 501. Զի *ցուցանիցէ* թէ նոյնպէս եկեր և յառաջ քան զխաչն անապական մարմնով: - 501. Եւ այս *ցուցաւ* **ե** գլխով ի վերոյ ի **իբ** գլուխն: - 502. Ասեմք, եթէ խոցուածն և արիւնն ցուցակ ապականութեան են, ապա և զայս խոցուածս *եցոյց* յետ յարութեանն. նաև ի կատարածի *ցուցանելոց* է զամենայն խոցուածս վիրացն...: - 502-503. Նա՛խ` զի *ցուցցէ* վասն որոյ մարդ եղև և մեռաւ զի ազատեսցէ զհոգիսն: - 503. Եւ ըստ եկեղեցոյ *ցուցաւ* խտրութիւնն ի վերոյ ի **իա** գլուխն **խե** համարն: - 511. ...և զաւարն ժողովեցին ի տիպ խորհրդոյն քրիստոսի. որ ի գիշերի եհար զզօրութիւնն սատանայի և յառաւօտուն *ցուցեալ* զինքն աշակերտաց իւրոց և զյարուցեալսն ընդ իւր: - 514. Ասեմք նախ` թէ յարութիւնն ի մէջ գիշերի է որպէս *ցուցաւ*. այլ երևիլն ընդ արշալո՛յսն է: - 515. Երրորդ վասն այն արգել, զի *ցուցանէ* թէ յոյժ պատուեցաւ մարմինն այն և ո՛չ է համարձակելի որպէս յառաջն մաքսաւորք և պոռնիկք մերձենային: - 517. Տասներորդ, զի *ցուցցէ* թէ բշնամեաց նորա ո՛չ է իշխանութիւն բուռն հարկանել զնմանէ ...: - 518. Չորեքտասաներորդ, զի *ցուցցէ* թէ յայսմ հետէ արքն միա՛յն ունին իշխանութիւն մերձենալ առ ի պատարագել. և ո՛չ գոյ համարձակութիւն կանանց յայս գործ: - 518. Իսկ ասելն «չև՛ ևս ելեալ եմ առ հայր իմ», *ցուցանէ* թէ որպէս նախ զչարչարանսն և զյարութիւնն ասաց վասն չարչարանաց և յարութեանն: - 518. Իսկ զտեղի համբարձմանն քրիստոսի միտք ո՛չ կարէ *ցուցանել*...: - 519. Զի զանպարտ արիւնն իւր *ցուցանէ* հօր. և զխոցուած բևեռացն զոր վասն մեր ընկալաւ: - 519. Ութերորդ` զի *ցուցցէ* մեզ զճանապարհս երկնից...: - 519. Զի արտաքս հանելով *ցուցցէ* ո՛չ ունել քաղաք որ աստէն մնալոց իցէ: - 519. Եւ եհան ի լեառն ձիթենեաց. զի լերամբն *ցուցանի* համբարձումն մտաց ի խոկումն աստուածային: - 519. ...զի *ցուցցէ* թէ աստուածային ուրախութիւնն գերազա՛նց է քան զմարմնաւոր տրտմութիւնս: - 520. Հինգերորդ` յետ **խ** աւուր համբարձաւ, զի *ցուցցէ* թէ որք զ**ժ** բանեան օրէնսն չորիւք աւետարանաւն լնուն, կարեն յերկինս ելանել: - 521. Նոյնպէս և նստիլն զհանգիստն *ցուցանէ:* - 521. Դարձեալ կարէ ասիլ Ութերորդ պատճառս, առ ի *ցուցանել* թէ հոգին ո՛չ ունէր

առատապէս պարգևի, եթէ ոչ յիսուս ի սիրտ նորա յատկապէս փառաւորեսցի: - 522. Նախ՝ զի *ցուցանէ* թէ որ ետ զօրէնսն՝ նոյն առաքեաց և զհոգին և ի նոյն տիպն որոտ և փայլատակումն հողմ և հուր երևեալ որպէս անդ ի լերինն: - 524. Աղաւնին աւետաբեր է շնորհաց. որպէս ի տապանն նոյի եբեր զշիւղ ձիթենւոյն. որ *ցուցանէ* զշնորհս մկրտելոցն: - 525. Այլ որակն և պատահմունքն *ցուցանեն* այլ և այլ: - 530. Զի բազմանայ և ի միութեան մնայ. բովանդակի անբովանդակապէս. և բաժանի անբաժանապէս. որ է մի և նոյն տեսակաւ և գոյացութեամբ որպէս *ցուցաւ:* - 530. Նոյնպէս և անչափութիւն բանից և խրատուց հարց և իմաստնոց գիրք սուրբք՝ հին և նոր կտակարանք *ցուցանեն* զանչափ հիւանդութիւն հոգւոյ. զի սոքօք առողջացին: - 531. Յիմն և շինուածն *ցուցանեն* եթէ տաճարս կամի շինել զմեզ աստուծոյ...: - 531. Եւ այլ բազում ինչ ունիմք հաւասարութիւն. որպէս *ցուցանի* յառաջիկայդ ի **լր** համարն: - 533. Զորօրինակ՝ մեռեալ մարդ ո՛չ ասի պարզաբար մարդ, նոյնպէս և այս. որպէս *ցուցաւ* ի թագաւորութեանցն **իզ** գլուխն. **ժբ** համարն: - 536. Առաջին՝ ի բնական. որպէս երէոց, անասնոց, թռչնոց, և մրջմանց. որպէս *ցուցաւ* ի վերոյ ի **ժգ** գլուխն, **ծա** համարն: - 536. Իսկ առ ներքինս օրհնելն՝ իշխանութիւն և շնորհաց տալն թարգմանի. որ քահանայն կամ եպիսկոպոսն տայ. որպէս *ցուցաւ* ի վերոյ ի **իգ** գլուխն, **հե** համարն: - 540. Եւ յորժամ ասիցէ զբարին ոչ չար գոլ, ճշմարիտ է և այս. այլ ըստ պատահման է որպէս *ցուցաւ:* - 550. Եւ զայս վասն է՞ր յերկարել ինձ. զի *ցուցանիցի* թէ ո՛չ է պարտ միոյն ճշմարտի բազում ստոց հետևիլ: - 551. Այլ դաւանութիւն նոցա այս է. որպէս զի մի՛ լիցի ըստ նոցա աստուած մարդացեալ. կամ մերս բնութիւն ընդ աստուածութեանն միաւորեալ. որպէս ընդարձակապէս *ցուցանէ* աստուածաբանն կիւրեղ ի գիրս պարապմանց: - 552. Ո՞չ ապաքէն մովսէս ի հինն որոշեաց զսուրբս և անսուրբս. մանաւանդ թէ յաւուրս նոյի գոյր ընտրութիւնս. այսպէս *ցուցաւ* և մեզ պահելի իբր զբնական օրէնս. այլ սոցա ոչինչ է պիղծ ի կենդանեաց: - 552. **Բայց պարտ է այնոցիկ որք ո՛չ գիտեն՝ և կամ թէ կամաւ տգիտանան՝ *ցուցանել* զմիաբանութիւն ազգիս հայոց առ այլ քրիստոնեայսն. զի գիտացեալ յամօթ լիցին յաղթեալք ի ճշմարտութենէն:** - 553. Իսկ վասն ջրոյն զի՞նչ պարտ է ասել. զի յոյնք թերի *ցուցանեն* զլատինացւոց խառնումն, ինքեանց կրկին խառնմամբն. և զայն խորհուրդ առեալ: - 554. Պատասխանեմ և ասեմ եթէ ո՛չ են միմեանց հակառակ. այլ երկոքեանն ճշմարիտք են որպէս *ցուցանեմք* յետոյ: - 556. Ա՛րդ՝ եթէ շարժումն ախտիցն մեղք է ըստ որում է՛, ապա և շարժումն մտացն մեղք է որպէս *ցուցաւ:* - 557. Չորրորդ՝ խորհուրդ մեղացն ճշմարիտ և բարի *ցուցանէ* զգործն և սիրելի և հեշտ. վասն որոյ յօժարի և եռայ ի կատարումն: - 558. Իսկ գործն զհակառակն նմին սուտ երևեցնէ զխորհուրդն և չար *ցուցանէ* զգործն և զազրալի: - 558. Եւ թէ հաւատն առաւել է քան զգիտութիւն, *ցուցաւ* ի վերոյ յաստուածաբանութիւնն դիոնիսեայ ի **ժէ** համարն տես: - 573. Գթութիւն է գութ *ցուցանել* առ ընկերն և սիրել զնա. վասն զի պատկեր աստուծոյ է: - 582. Առաքինութիւնս այս *ցուցանէ* թէ համբերել հալածանաց վասն արդարութեան՝ կապակցեալ է ընդ խաղաղութիւնն...: - 586. Եւ յերկինս ասելովն, Նախ *ցուցանէ* թէ՝ ո՛չ են երկրաւոր ինչ: - 586. Եօթներորդ, յերկինս ասելով՝ *ցուցանէ* յետ աստեա՛ցս զվարձն և ո՛չ ի մարմնի: - 586. Զոր և անյարմար շարաբանութեամբ «զկո՛ւն» *ցուցանեն* մկրտել և ո՛չ զնուիրեալն: - 588. Չորրորդ՝ զի միշտ որդի ծնանիմք աստուծոյ և ո՛չ դուստր և էգ. զի ի քրիստոս յիսուս արու և էգ ո՛չ է ասէ առաքեալն. և զայս *ցուցանէ* աւազանն ի յաջ կողմն եկեղեցւոյն: - 590. Եւ զայս *ցուցանէ* նոյն ձև բանին որ է կոչմունք Երրորդութեանն. և նոյն դաւանութիւն հաւատոյն և այլն: - 590-591. Դարձեալ՝ ջուր զաղտս լուանայ. զծարաւս շիջուցանէ. զպատկերս *ցուցանէ:* - 591. Որպէս թէ ոք ի պատուհան ինչ *ցուցանէ* զինքն յաշխարհի, և վաղվաղակի ի մահ դառնայ: - 592. Զայն *ցուցանէ* թէ յորժամ մկրտեցաւ քրիստոս՝ հոգին սուրբ էջ ի վերայ նորա...: - 593. Այլ և առաքեալքն և հետևօղք նոցա հարքն սուրբք՝ ո՛չ գիտէին զխառնարանն. և դու ուսար և խառնես ջուր և ընդ անիծիւք նոցա մնաս որպէս *ցուցաւ* ի վերոյ: - 596. Ապա յա՛յտ է զի ո՛չ ի մարմնոյ և ո՛չ յարենէն էր թացեալ պատառն. այլ ի այլ ինչ կերակրոյ ի սեղանոյն առեալ թացեալ և տուեալ. զի *ցուցցէ* զմատնիչսն: - 599. Նա՛խ՝ եթէ ո՛չ զմարմինն տան ժողովրդեանն. այլ սոսկ հաց և գինի. զի մարմին քրիստոսի այն միսն է որ օրհնեցաւ որպէս *ցուցաւ* ի վերոյ: - 600. Ի ժամ մկրտութեանն քրիստոս *եցոյց* զքրիստոնէութեան խորհուրդն. զի մեք մկրտութեամբն լինիմք քրիստոնեայք: - 606. Եւ ի նազերեթացոց ժողովրդանոցին դպիր *ցուցաւ* ի կարդալն զեսայի մարգարէն՝ յոտն և բացաւ գլխով: - 606. Եւ ի տօն զատկին որ արար խարազան չուանեայ և եհան զվաճառականսն, *ցուցաւ* սարկաւագի գործ նորա: - 606-607. Իսկ ի թաբօր լերինն ձայնիւ հայրական և հովանեաւ հոգւոյն եղև քահանայ. *ցուցեալ* մովսէս և եղիա սարկաւագունք յաջմէ և յահեկէ: - 607. Եւ խաչիւ չարչարեալ և յարուցեալ ի մեռելոց. և առ աշակերտսն մտեալ եպիսկոպոս *եցոյց* զինքն: - 607. Օրհնեաց զնոսա և *ցուցան* կաթողիկոսք և հայրապետք: - 607. Զի ընդ ամենեսեանն՝ զանձն նշանակէ. իսկ ամենեցունն՝ զշնորհս հոգոյն սրբոյ *ցուցանէ:* - 625. Եւ զայս տէրն

*ցուցանէ*. երբեմն ասէր, «զխաղաղութիւն զիմ տամ ձեզ». որ է՛ շնորհք հոգւոյն: - 625. Եւ դարձեալ՝ ընդ ձեզն, զերբեմն *ցուցանէ* և այլ ընդ այլոյ. որպէս ասէր՝ «ես ընդ ձեզ եմ զամենայն աւուրս»: - 625. Խաւարեցոյց կնքեալ, այսինքն վկայեաց *եցոյց* թէ ոչ են աստուածք: - 639. Եւ զի չորք են ձայնք բնականք ըստ չորից տարերց, *ցուցցի* հոգեպէս: - 640. Զի յարութեանն փառք՝ խաչն *ցուցաւ:* - 642. ...և բերէր ի խորանն հանգուցանէր. որպէս *ցուցաւ* յառաջագոյն յերկրորդ թագաւորութեանց **ժդ** համարն: - 645. Դարձեալ՝ *ցուցանէ* զմարգարէս և զառաքեալս. և ի գլուխ նոցա երևեալ բանն աստուած և խօսեալ: - 646. Եւ դարձեալ ճաշքն *ցուցանեն* յերիս հասակս զբարեգործսն. և ընթրիսն զվերջին հասակին յորում ննջեմք ի գերեզմանի: - 656. ...որպէս *ցուցաւ* ի **խա** գլուխն, **խե** համարն: - 657. Որդի սուրբ՝ *ցո՛յց* մեզ զերեսս քո: - 659. ...զկրճել ատամանցն *ցուցանեն*...: - 669. որպէս *ցուցանի* յառաջիկայդ բազում վկայութեամբ: - 670. Դարձեալ՝ *ցուցանէ*՝ իբր թէ սիրելոյն որ մեռաւ՝ կցորդիմք և չարչարեմք զմարմինս. մերկանալով, ի սով և ի ծարաւ, ի մութն և ի հող որպէս նա ի գերեզմանի եղև: - 670. Է և ա՛յլ իմն տեսութիւն վերագոյն. զի արարողութիւն սգոյս *ցուցանէ* զառաջին անկումն մեր ի լուսեղէն կենացն ի խաւար աշխարհ տրտմութեամբ և ցաւօք մահու մեռեալք և ի հող դարձեալք. և այս ի ճաշակմանէ պտղոյն: - 670. Եւ զի կտաւն յերկրէ է և արուեստիւ գործեալ. *ցուցանէ* թէ զոր ինչ գործեաց ոք ի յերկրի, զնոյն զգենու և զարդարի: - 671. Երկրորդ, *ցուցանէ* թէ՝ որպէս ի մկրտութիւնն նախ օծաւ և ապա թաղեցաւ ի ջուր...: - 672. ...*ցուցանէ* թէ ի նոյն հանդէսն ճանեցաւ և վախճան կատարման ընկալաւ: - 672. Հինգերորդ, *ցուցանէ* թէ որպէս մարմինն օծանի ի քահանայապետէն անուշահոտ իւղով...: - 672. Եօթներորդ, *ցուցանէ* թէ հոգին սուրբ և քրիստոս հանգուցեալ է ի նշխարս սրբոց. որպէս ի կեանքն՝ նոյնպէս և ի մահն: - 672. Ութերորդ, *ցուցանէ* թէ իշխանութիւն քահանայութեանն անբաժանելի է ի նմանէ...: - 672-673. Նախ *ցուցանէ* զանվախութիւնն մեր ի մահուանէ: - 673. Իսկ՝ նախ ի յարնելս, *ցուցանէ* զմիածինն որ իբր յարնելից ի ծոցոյ հօր ծագեցաւ մեզ արեգակն արդարութեան...: - 673. Եւ վերջոյ ի հիւսիս. որ *ցուցանէ* զշնորհն որ ի հինն սիովնէ հնչեաց յեկեղեցիս հեթանոսաց...: - 674. ...*ցուցանէ* թէ անուշահոտ վարուք և խրատու աւետարանին ընթացաւ զկեանս իւր: - 674. Զի *ցուցցէ* թէ նմանապէս լինելոց է ի յարութեանն հանգիստ նոցա ի կարգս իւրեանց: - 674. ...որ *ցուցանէ* թէ մարմինն նորա միշտ յեկեղեցւոջէ և յետ մահուն...: - 674. Նախ *ցուցանէ* թէ՝ և այսպէս հասարակ ընթանամք առաջի քրիստոսի: - 675. ...որպէս *ցուցաւ* ի վերոյ լե գլուխն ի կարգ աղօթիցն ի խա համարն: - 676. ...*ցուցանէ* թէ անշարժ է մեռեալ մարմինն ամենևին ի կենդանական շարժմանէ: - 678. Այլ և դիրք՝ զնշանացի տեղն *ցուցանէ:* - 678. Նշանաքարն կրկին, Նախ *ցուցանէ* զհոգի և մարմին բաժանեալ ի միմեանց: - 679. Երկրորդ, զի քարն անպտուղ՝ *ցուցանէ* զանգործութիւն մեռելոյն: - 679. Չորրորդ, անշա՛րժ է քարն, *ցուցանէ* զանշարժութիւն մեռելոյն...: - 679. Եւ դարձեալ՝ *ցուցանէ* թէ այսպէս և հոգի նորա անշարժ կայ և մնայ ի յաւիտենական փառս և ի մշտնջենաւոր հանգիստն ամէն: - 679. ...են հոգիք նոցա ի միում խորանի մինչ դատաստանն ընտրեսցէ զնոսա և որոշեսցէ. որպէս *ցուցանի* յառաջիկայդ: - 687. Իսկ թէ ո՞ւր իցեն սոքա երկոքեանս, տեսիլն յօհաննու յայտնապէս *ցուցանէ*. սրբոց խորանս ասէ զվերինն սիօն և զհրեշտակացն դասս: - 688. Դարձեալ ասեմք, թէպէտ զներկայն ետես, սպիտակ հանդերձն ո՛չ *ցուցանէ* զփառս հատուցման. այլ զփառս և զհանգիստ գործոց: - 690. Քանզի, այժմ *ցուցից* բնականապէս քննութեամբ: - 693. Ասեմք ըստ սրբոյն անդրէի մեկնչի՝ եթէ սուրբքն զաշխարհի վախճան խնդրեցին. որոց *ցուցանէ* զպատճառս երկայն մտելոյն...: - 696. Իսկ կոչելն զյառնելն ի մեռելոց *ցուցանէ*. հոգւոյն և մարմնոյն միաւորեալ: - 696. Ասեմք եթէ՝ ձայնիւն և պսակաւն *եցոյց* մարդկան և լսեցոյց ի յաչս և ի յականջս թէ զայնպիսի կեանս վիճակեցին նոքա որք սուրբք են ի մարդկանէ...: - 697. Նա՛խ՝ զի ընդ դէմ է սուրբ գրոց և ուղղափառ վարդապետաց որպէս *ցուցանի* յառաջիկայդ: - 698. ...զի զգործ դատաստանին այժմ կատարէ՛ որպէս *ցուցաւ* ի վերոյ: - 700. ...ապա ի յարութեանն ո՛չ է բոլոր մարդոյն հատուցումն. այլ մարմնոյն միայն որպէս *ցուցաւ:* - 700. Զի տանջանարանք կազմեն, սառնամանիք *ցուցանեն*, հուր բորբոքեն: - 703. Եւ զոր ինչ լինի ի կատարածի անդ *ցուցանեն:* - 703. ...և սուրբքն ելեալք ի մարմնոյ և յաղթեալք թշնամոյն՝ թագաւորեն ընդ քրիստոսի որպէս *ցուցանի* յառաջիկայդ: - 706. բայց ըստ վերերևութեանն *ցուցանէ* զսրբութիւն. զի դիւրաւ խաբեսցէ: - 707. ...որպէս *ցուցաւ* ի վերոյ ուր յաղագս անկման դիւաց ասացաւ: - 708. *Ցուցանեն* այսոքիկ զկատարեալ և զառաւել հանգիստ սրբոցն այժմ յուսով և յետ մահու հոգւով թագաւորեալ ընդ քրիստոսի. և ապա յետ յարութեանն հոգւով և մարմնով ո՛չ **ռ** ամօք. այլ անվախճան կենօք...: - 710. Իսկ **իդ** թիւն ո՛չ եթէ սահման և կէտ է. այլ սովորութիւն է գրոց փոքր թւով զբազումսն *ցուցանել:* - 711. Երկրորդ, որպէս չորք կենդանիքն զվեհագոյնս և զնախամեծարս երկնայնոցն *ցուցանեն*. նոյնպէս և **իդ** երիցունքն զնախամեծարս ընտրելոցն մարդկան...: - 711. Նա՛խ՝ զի բեհեզն է՛

անօսր. *ցուցանէ* զանօսր էութիւն և զմտածութիւն սրբոցն առանց թանձրութեան մարմնոյ: - 712. Երրորդ զի սուրբ է. *ցուցանէ* զմաքրութիւն նոցա առանց աղտեղութեան: - 712. Չինգերորդ զի կա՛րծր է. *ցուցանէ* զկարծր և զսերտ առաքինութիւն նոցա առանց քակտելոյ: - 712. Զյաղթութիւն նոցա *ցուցանէ*. որք յաղթեցին ցանկութեանց մարմնոյ աշխարհի և սատանայի: - 712. Եւ ոսկեղէն պսակն զթագաւորելն ընդ քրիստոսի որպէս *ցուցաւ*: - 712. Չինգերորդ՝ զմեռելութիւն մարմնոյ և զկրթութիւն չարչարանաց նոցա *ցուցանէ*: - 713. ...որպէս *ցուցաւ* յերգս երգոց ի **իդ** համարն: - 714. Զջերմ սէրն հուրն *ցուցանէ*. թէ առ աստուած և թէ ի մարմինն: - 714. Եւ հաւատարիմ վկայ ընդհանուր յարութեանն զգործս *եցոյց*. որ զղազար չորեքօրեայ ի գերեզմանէն յարոյց: - 716. Առաքեալն պօղոս ո՛չ զայն ասէ թէ յապաղելով լինի յարութիւնն, այլ զկարգն *ցուցանէ* ոչ ժամանել ննջեցելոցն: - 717. ...նմանապէս և մերկ մարմին մեռելոյ ո՛չ յառնէ մերկ, այլ փառօք. որպէս *ցուցանի* յառաջիկայդ: - 720. ...իսկ հոգիք սրբոցն նախ ծաղկին բնական պայծառութեամբն իւրեանց որպէս *ցուցաւ* ի վերոյ, և ապա՛ յետոյ արդեամբք պտղոյն կատարին ի հանդերձեալ կեանքն: - 721. ...այսպէս և ննջեցեալք ամենայն ծեր և տղայ՝ յառնեն ի մի չափ հասակի երեսնամեայ որ է կատարեալ հասակ որպէս *ցուցանի* յառաջիկայդ: - 721. Եւ այս գիտելի է, զի տէր մեր քրիստոս նախ քան զյարութիւնն զչորեսին զայս *եցոյց* ի մարմին իւր: - 722. Դարձեալ՝ ո՛չ գան ի դատաստան, զի մասն բարւոյ ո՛չ ունին որով քննիցին. այլ դատապարտին որպէս *ցուցանի* յառաջիկայդ: - 725. Իսկ զի նիւթ խաչին մնայ ըստ ոմանց՝ այս ո՛չ է ըստ բնութեան կարգի, այլ սքանչելեաց հարկի որպէս *ցուցանի* յառաջիկայդ: - 727. Եւ ըստ ոմանց կարծեաց զի տեղիք լիցին երեսնաւոր արդարոցն. որպէս *ցուցանելոց* եմք յառաջիկայդ: - 727. Սո՛ւտ է այս և չէ՛ ընդունելի որպէս *ցուցանելոց* եմք: - 729. Երրորդ՝ դարձեալ զերկնային զօրութեանց վշտանալն *ցուցանէ* ի վերայ կործանելոցն. զի վասն իմ գալարին և ընդ իմ կործանումն՝ տրտմութիւն զգենուն: - 729. Արդ ի պարզիլ օդոյդ որպէս *ցուցաւ* երևի լոյս արփւոյն անարգել: - 729. Արդ *ցուցցուք* թէ ճշմարիտ անապական է սուրբ խաչն բնական քննութեամբ և սուրբ գրոց վկայութեամբ: - 733. Որպէս յորժամ կայսր մտեալ ի քաղաք՝ թագ և այլ նշանք առաջի տարցին, որով գալուստ նորա *ցուցանիցի*: - 734. Իններորդ, փա՛ռք է զդատաստանն առնել. զի նմա տըւաւ իշխանութիւն ասէ դանիէլ. և հայր ո՛չ զոք դատէ. այլ զամենայն ետ որդւոյ որպէս *ցուցաւ*: - 737. Զի՞նչ *ցուցանէ* վճիռ դատաստանին: - 740. Երրորդ՝ զբանտարգել լինիլն. որ *ցուցանէ* նախդիրն: - 740. Զի վարդապետութեանն իւրեանց և օրինակացն հետևօղս լեալ *ցուցանեն*. և արքայութեանն արժանաւորս վկայեն: - 740. ...որպէս *ցուցաւ* վերագոյն: - 743. Եւ դարձեալ *ցուցցուք* օրինակաւ: - 744. Զայս *ցուցանէ* հաւասարութիւն կշռոյն և միտելն: - 747. Եւ այսպէս դնի կշիռք արդարութեան որպէս *ցուցաւ*: - 747. Յարութիւն մարդկան ի վայրկեան ժամանակի և յանկարծակի լինի որպէս *ցուցաւ* ի վերոյ...: - 747. Կամ *ցուցանէ* զչափով տանջանս մեղաւորացն...: - 749. Նախ *ցուցանէ* զմեղս անհաւատիցն լցեալ զտաճար ներողութեանն աստուծոյ. զի լցեալ և յաղթահարի ողորմութիւնն յարդարութենէն: - 749. Ոմանք որդն զխիղճ մտացն ասեն որպէս *ցուցաւ* ի վերոյ: - 753. Արդարքն տեսանեն զնոսա ի տանջանս և ուրախանան զի զերծան յայնմանէ. որպէս *ցուցանի* յառաջիկայդ: - 754. Այլ զկնի դատաստանին՝ բարիքն թէպէտ տեսցեն զչարսն ի տանջանս, բայց չարքն ո՛չ երբէք այնուհետև տեսցեն զբարիսն որպէս *ցուցաւ*: - 754. Իսկ չար՝ թէպէտ լինի ներգործութեամբ անձնիշխան կամօք, այլ բնութեամբ չար ո՛չ է ըստ ինքեան. զի ո՛չ է էութիւն այլ պակասութիւն բարւոյ. որպէս *ցուցաւ* ի վերոյ ի **ե** համարն: - 758. Դարձեալ, հոգիք սրբոց ա՛յժմ են ի յերկինս և առ երկինս որպէս *ցուցաւ*. և յայնմ աւուր փառաց ի փառս բարձրանալ հաւատացեալ լինի: - 759. Եւ ինքն տէր՝ «ուր եսն եմ, անդ և պաշտօնեայն իմ եղիցի» ասէ. իբր մատամբ *ցուցանելով* զտեղին: - 759. Եւ այնպէս մնասցեն յաւիտեան որպէս *ցուցաւ* ի վերոյ: - 760. Եւ զայս կրկին տեղիքս ճշմարտութիւնն *ցուցանէ*: - 760. Այլ ի նոցանէ՛ անկաւ, որպէս *ցուցաւ* ի վերոյ **թ** գլուխն, **իբ** համարն: - 760. Եւ զայս *ցուցանէ* տեսիլն: - 760. Եօթն զարդ հարսին որպէս *ցուցաւ*. և օժիտք յաւիտենիցն կենացն. պսակք և արկանելիք, ասացան մեզ փոքրիշատէ յառաջագոյն ի բանից սրբոց: - 761. Ծնունդն, զօրութիւնն, մահն, ընդ աջմէ հօր նստիլն, և այլն ամենայն, զաստուած ի մարդում, մանաւանդ զմարդ յաստուածում ըստ սքանչելագործին գրիգորի *ցուցանեն*: - 770. Ութերորդ, զի ասէ մարգարէն՝ «գերեաց զգերութիւն և էառ աւար». իսկ աւարն զհասարակութիւն *ցուցանէ*: - 777. Զի ո՛չ երբէք անկար և անգութ և անիրաւ ասել զնա *ցուցանի* բնաւ ուրէք...: - 778. Եւ այսոքիկ որք երևին ընդ դէմ միմեանց, կամ առ այլս կամ երբեմն, ո՛չ փոփոխումն ինչ *ցուցանեն* անփոփոխելոյն. առ մեզ փոփոխելոց ըստ արժանոյն գութ կամ հատուցումն. թէ աստ՝ թէ ի հանդերձեալն: - 779

**ՑՈՒՑՈՒՄՆ +** և Նախ՝ զի նոցայն՝ էութիւն ո՛չ է. այլ առ աչօք ուրուական *ցուցմունք*. որպէս ի միտս

ցնորք: - 133. Ապա յա՛յտ է *ցուցումն* առաջնոյն: - 165. Երկրորդ՝ *ցուցմամբ*. զի տեսանելն զհաւատն նշանակէ որ է հաստատ. և լսելն զուսումն ճարտարութեան: - 239. Որպէս ասէ աստուածաբանն թէ՝ ոչ ինչ էր ծածկոյթ ի մէջ նոցա և աստուծոյ. իսկ յետ մեղացն փոխեցան այսոքիկ. վասն որոյ մաշկեղէն հանդերձին *ցուցմամբն* նշանակէ՛ զմարմինս: - 282. Մատռուակն ուրա՛խ էր. և խոհագործն տրտում վասն *ցուցման* երազոյն: - 689. Նոյնպէս և լուսեղէն պսակքն որ իջանէր ի վերայ նոցա՝ յայտնապէս *ցուցումն* է իմանալի պսակացն: - 697

**ՑՈՓ +** Ոմն յամրախօս. և ոմն *ցոփ* և շուտափոյթ: - 251

**ՑՐԵՄ +** Որպէս եսաւ անդրանիկն իսահակայ՝ կցողական դեղօք ողջացոյց զմարմին իւր և արար անթլփատ. զի *ցրեսցէ* զուխտն աստուծոյ: - 486

**ՑՐՈՒԵՄ +** Իսկ ի գալստեան մէսիային ձեր առաւել *ցրուեցան* և կորեան: - 28. Որպէս տունն ի ժողովիլ փայտից և որմոց՝ շինի. և ի *ցրուիլն* սոցա կործանի տունն: - 175. Դարձեալ ասեմք թէ՝ զինչ ծանրութիւն որ պատահական է՝ ի *ցրուիլն* նիւթոյն կործանի ծանրութիւնն: - 202. Եւ զորօրինակ՝ լիտր մի ցորեան, կամ այլ ինչ. յորժամ ձեռօքդ բաժանես և *ցրուես* զհատսն, ո՛չ մնայ կշիռն: - 202. Զամպս *ցրուէ:* - 202. Եօթներորդ՝ զի հողն ի հողմոյ փոշի լինի. այսպէս յորժամ հողմահուն շնչէ ի մարմինս մեր՝ *ցրուի* և լինի փոշի: - 229. Ասեն վարդապետք եթէ հողմն հնչեաց և *ցրուեաց* զաշտարակն. զի մի՛ փլուցեալ վնասեսցէ զմարդիկ: - 298. Վասն որոյ օրհնութեամբ *ցրուեաց* զնոսա ի վերայ երկրի, զի աճեսցին և բազմասցին և լցցեն զերկիր ծննդօք և շինութեամբ և բարեգործութեամբ ի փառս ամենասուրբ Երրորդութեանն ամէն: - 298. Քսաներորդ՝ յարուցեալ առիւծն *ցրուէ* զհակառակս իւր: - 317. Այլ ոմանք ասեն ի ձեռն հրեշտակաց ի միում աւուր ժողովեցան. որպէս ի ձեռն դիւաց *ցրուեցան:* - 326. Եւ քրիստոս զհրէայսն *ցրւեաց*, և ի սիրտ հեթանոսաց նոր ժողովրդեանն աւանդեաց զօրէնսն: - 328. Եւ զի զայս ամենայն վկայութիւնս նշանի տեսին աչօք և լսեցին ականջօք և ո՛չ հաւատացին. վասն այն վրէժ խնդրեաց աստուած ի նոցանէ. սատակեցան և *ցրուեցան*...: - 400. Չորրորդ՝ և մի՛ այլազգիքն *ցրւեսցեն* զոսկերսն: - 411. Եւ սոքա են հարճք որ կարեն ի բաց հանիլ ի ժառանգութենէ. զի սէրն է կապ և լար շարոցին որ ո՛չ թողու *ցրւիլ:* - 440. ...վասն զի աղբիւր արեանն բաժանեալ ի մարմնոյն՝ դարձեալ միաւորեցաւ առ ինքն և ժողովեցաւ ի մարմինն իւր և ո՛չ *ցրուեցաւ* ա՛յլ արտաքոյ: - 598. Եւ զի պահէ՛ ո՛չ ուտիլ ի գազանէ, և ո՛չ *ցրուիլ* ի ջրոյ. և ո՛չ հոսիլ ի հողմոյ, և յայլոցն պահէ: - 678

**ՑՐՈՒՄՆ +** Իսկ չորն ի *ցրումն* վանելով արտաքս հոսմանէն հո՛ղմ եղև: - 205

**ՑՐՏԱՅԻՆ +** Եւ փայծեղն և թոքն *ցրտայինք* ի ձախ կողմն են. վասն այն աջն զօրեղ է և ձախն տկար: - 243

**ՑՐՏԱՆԱՄ +** Եւ թէ ոք ասիցէ, որովհետև ներգործութիւնքն բնութեանց հետևին, որպէս հուրն միշտ այրէ, և ջուրն *ցրտանայ* և ջերմանայ. ապա ճշմարիտ երևի բանն դամասկացւոյն՝ եթէ է՛ ի քրիստոս կրկին ներգործութիւն. որպէս և կրկին բնութիւն: - 174. Իսկ ձմեռն, և յինն ժամէն մինչև յերեկոյ և բոլոր գիշերն, և սպիտակաթոյր հիւր պլղամին, և ծեր մարդ, ըստ նմանութեան ջրոյ ցուրտ և գէջ գոլով. վասն որոյ սպիտակի և *ցրտանայ* և պակասի զօրութեամբ: - 266. Նա՛խ նշանակէ՛, զի ի սիրոյն աստուծոյ *ցրտացեալք* էին և ի սէր սնոտեացս ջերմացեալք: - 334. Իննևժ, *Ցրտացաւ* դաւիթ: - 413. Վասն է՞ր *ցրտացաւ* ի ծերութեանն դաւիթ: - 439. Այլ զի ծերութեան որդի էր յեսսեայ, վասն որոյ ի ծերութեանն *ցրտացաւ*: - 439. Իսկ ի կատարածի *ցրտացեալ* լինին մարդիկ ի սիրոյն աստուծոյ իբր ծերացեալ աշխարհի. վասն այն ջերմ հրով պատժեսցին: - 731. Զի ասին՝ արտաքոյ կիզանիլ հրով որպէս խոտ ի հնոցի. և ի ներքուստ *ցրտանան*...: - 752

**ՑՐՏԱՑՈՒՑԱՆԵՄ +** Բոլորակ՝ այսինքն ի բնական ներգործութեանց. որպէս հրոյ այրելն և ձեան *ցրտացուցանելն:* - 142. Իսկ միւս զօրութիւնն որ կարելի է՝ և ներընդունի զգոլն և զչգոլն՝ և երբեմն՝ ասի ի վերայ փոփոխական բնութեանց. որպէս հանդերձն կարէ՛ պատառիլ և ո՛չ պատառիլ. և ջուրն կարէ՛ *ցրտացուցանել* և ո՛չ *ցրտացուցանել:* - 168

**ՑՐՏՈՒԹԻՒՆ +** Եւ որպէս հուր յերկաթ միաւորեալ բառնայ ի նմանէ *զցրտութիւնն* և զսևութիւնն և մնայ ծանրութիւնն, - 100. Զի ջուր *ցրտութեամբ* ընդ երկի՛ր է կապեալ. և գիճութեամբ ընդ օդ: - 181. Երկրորդ՝ յա՛յտ է զի ունին ջերմութիւն և *ցրտութիւն*. չորութիւն և գիճութիւն. որ յայտնապէս տարրական է որակութիւն: - 188. Եւ զի *ցրտութեամբ* և չորութեամբ տերևք դեղնին և թափին: - 197. Եւ զի *ցրտութիւնք* և գիջութիւնք առաւելուն: - 197. Զի չորութիւն և *ցրտութիւն* հակառա՛կ է ծննդեան. և ջերմ և գէջն օգնական: - 197. Վասն որոյ ջերմութեամբ *զցրտութիւն* լուծանէ որ յերկաթն և ի սառն. և չորութեամբ

զիիւթն մերժէ որ ի ձու հաւի և յայլսն: - 202. Դարձեալ ասեմք թէ՝ ծանրութիւն փայտին գիճութիւնն է և *ցրտութիւնն*. և հուրն ջերմութեամբ և չորութեամբ զսոսա կորոյս: - 202. Զի զգայ զջերմութիւն հրոյն. և *զցրտութիւն* որ է ջրոյն. և զխոնաւութիւն որ է օդոյն. և չորութիւն հողոյն: - 215. Եւ էգն հոգևորի յետ Ձ աւուրն՝ որպէս ասացաք զպատճառն վասն տեղւոյն *ցրտութեան* որ է՛ ձախ կողմն արգանդին. որ ցուրտ գոլով վասն փայծաղանն՝ յապաղէ՛ զկազմուած նիւթոյն ի կրկնապատիկ ժամանակս Ձ աւուրց: - 261. Կամ ըստ ազգի իւրեանց, և կամ ըստ տեղւոյն և ժամանակին *ցրտութեան* և ջերմութեան և այլն: - 263. Դարձեալ՝ էութիւնն մնայ, այլ ներգործութիւնն պակասի՝ այսպէս. զի ջերմութիւն հրոյն և *ցրտութիւն* ջրոյն և փոփոխմունք օդոյդ որպէս ամպք և այլն, և սևութիւն երկրի...: - 728

**ՑՔԻ +** Ի գինւոյ և ի *ցրոյ* պահել, զի մոռացկոտ և քնու և ծոյլ և ապուշ առնէ գինին: - 389

**ՑՕՂ +** Եւ զի *ցօղէն* ամպք զանձրև: - 197. Եւ զի *ցօղ* իջանէ ի գիշերի: - 197. Իսկ *Ցօ՛ղ* է գիճութիւն ի պարզոյ իջեալ. զոր աստեղք ի գիշերի քարշեն ի վեր. և ընդ ծագել առաւօտուն՝ յետ ի յերկիր անկեալ մանրամասն շիթ: - 204. Իսկ Եղեա՛մն է նոյն *ցօղն* թերասառոյց ի վերայ երկրի: - 205. Տասներորդ՝ ամպն ո՛չ միայն *զցօղ* անձրևէ, այլ և ձիւն և կարկուտ և հրայրեցութիւն. որպէս ասացաւ ի վերոյ: - 206. Եւ զի քարշեն լուսաւորք զգոլորշին յերկրէ՝ յայտ է ի *ցօղ* առաւօտուն և յեղեամն. որ ի գիշերն ի վեր քարշին. և ընդ ծագել լուսոյն հատանին և յետս յերկիր անկանին. և յաւուրս ձմերան լինի եղեամն. և յամարան *ցօղ:* - 208. Վեցերորդ՝ նախ *ցօղն* կարապետ իջանէր. և ի մեզ շնորհքն նախապատրաստութեան ճաշակմանն: - 339. Վեցերորդ՝ Գեղմն և *ցօղն* և գեղէոնի: - 412. Զի՞նչ նշանակէր գեղմ և *ցօղն* գեղէոնի: - 421. Գեղմն և *ցօղն* մի էր. բայց նշանն կրկին: - 421. Երրորդ՝ գեղմն մարգարէքն, և *ցօղ* շնորհք մարգարէութեան ի վերայ նոցա: - 421. ...իսկ *ցօղ* իմաստութիւնն որ տուաւ նմա յաստուծոյ. և թագաւորք արաբայ և սաբայ, ընծայաբերքն նմա: - 421. Հինգերորդ՝ գզաթ էր կոյսն մարիամ. և *ցօղ* բանն աստուծոյ. որ աւետեօք հրեշտակապետին էջ ի վերայ նորա առանց ոտնաձայնութեան և ծածուկ: - 421. Իններորդ, գեթէօն՝ այն որ *զցօղն* ետես ի վերայ գեղման, զհօր իւրոյ զեզն պարարակ հրամանաւ հրեշտակին ի մէջ գիշերին պատարագեալ. և զանտառն և զսեղանն բահաղու կործանեալ և զերծեալ ի ձեռաց նոցա. որ էր օրինակ փրկչին. զի նա՛ է եզն պարարակ պատարագեալ. և ի մէջ գիշերի զբագինսն դժոխոց կործանեալ և յարուցեալ և ապրեալ ի մահու: - 513. Հինգերորդն հրոյ կիզումն և բարձումն ամբարշտաց. և ոմանց բժշկութեան *ցօղ* ի տեառնէ ցօղեալ: - 630

**ՑՕՂԱՒՈՐ +** Նմանապէս և հոգին սուրբ ի գիշեր կենցաղոյս լուսով աւետարանին առաջնորդէ՛ մինչև հասուցանէ յայգն հանդերձեալ աւուր ի *ցօղաւոր* ամպն որ է՛ բանն մարմնացեալ. որ է հովանի և հանգիստ ամենայն սրբոց: - 338

**ՑՕՂԵՄ +** Ութերորդ՝ ամպն առեալ ի ծովէն ծածկաբար, և ապա *ցօղէ*՛ յերկիր յայտնապէս. և լցուցանէ զնա ամենայն բարութեամբ: - 206. Հինգերորդն հրոյ կիզումն և բարձումն ամբարշտաց. և ոմանց բժշկութեան ցօղ ի տեառնէ *ցօղեալ:* - 630. Զի կա՛թ մի արտասուաց ի կաթիլ դուլէ ձե՛րդ մաղթանաց *ցօղեսցի* ի գերեզման հոգւոյ իմ տառապանաց: - 773

**ՑՕՂՈՒՆ +** Զորօրինակ՝ կանաչ բոյս՝ թէպէտ ի *ցօղուն* և ի հասկ՝ չէ՛ կատարեալ. այլ ի տեսակս իւր կատարեալ է: - 556

# Ւ

**ՒԻՒԹ (տ. ՅԻՒԹ) +** Եւ յիսուս անունն՝ են վեց գիր. որ կարեն լինիլ սկիզբն այսպիսի ասութեանց. այսինքն Յարազուարճութիւն տրտմեցելոց: Իրաւունք սրբոց: Սրբութիւն երանելեաց: Ուղղութիւն մոլորելոց: *Իիւք* անոյշ՝ խնդրողաց զփրկութիւն: Սանդուխք ելողութեան ի յերկինս: - 474

# Փ

**ՓԱԹՈՒԹԵԼ +** Եւ այն զի *փաթութած* է՝ ըստ հրէական օրինին է. զի կոնդակ և գալարելո՛վ էր նոցա գիրն. իբր թէ ծածո՛ւկ է ի նոցանէ խորհուրդ մարգարէիցն և թաքուն: - 481. Նոյնպէս և քրիստոսի մինչ զտղայական հասակն նկարեն, *փաթութեալ* հանեն զթուղթն ի ձեռն. իբր ի հրէից ծնեալ զամենայն ինչ ըստ օրինացն առնել: - 481

**ՓԱԽՈՒՍՏ +** Հինգերորդ՝ սուր և *փախուստ* ի թշնամեաց: - 376. Եւ **է** երորդն *փախուստն* է այլ ընդ այլ՝ արտաքոյ **զ** շարժմանց: - 404. Երրորդ խոհեմութիւն է գործոյն. որ կայանայ ի *փախուստ* չարին և յընտրութիւն բարւոյն...: - 580. Երկիւղ է հոգևորապէս *փախուստ* ի չարէն. զի մի՛ կորուսանիցէ զայն զոր սիրէ: - 582. Եւ ապա ի սէր և անձուկ ժտելոյ նորին, ապաստանեալ ի նոյն որ զօրացոյց զտկարս, ձեռն ի գործ արկեալ աւարտեցաւ բազում միջոցաւ. և *փախստեամբ* ի տեղիս. և մեծ ջանիւ փութացեալ: - 772

**ՓԱԽՈՒՑԱՆԵՄ +** Երրորդ՝ զգազանս և զգողս *փախուցանէ:* - 185. Երրորդ՝ զթշնամին սատանայ և զչարն *փախուցանէ:* - 185. Հինգերորդ՝ յա՛յտ է ի *փախուցելոցն* որ երկնչին ի մարդկանէ որպէս զապստամբեալ ծառայս: - 220. Յայնժամ *փախուցեալ* սատանայ իբր զապստամբ ծառայ. և մտեալ յորջն դժոխոց կարծէր ամրանալ անդ և ունել զհոգիսն: - 503. Զի որպէս նախանձն կորուսանէ զինքն, այսպէս և բարկութիւնն *փախուցանէ* զընկերն: - 570

**ՓԱԽՉԻՄ կմ ՓԱԽՆՈՒՄ +** Իսկ ոմանք յաւելուն յևս ամբարշտութիւն. իբր *փախչելով* ի ձախոյն՝ խոտորին յաջ կողմն: - 13. Ասելով թէ պատճառ ամենայնի՝ բարեաց և չարեաց մերոց ո՛չ մեք եմք, այլ է՛ առաջին պատճառն աստուած. որք *փախչելով* յառաջ ասացեալ բախտէ՛ և ճակատագրէ՛ աստեղացն, փոխանակ նոցա յառաջին պատճառն վերագրեն զհարկն. որպէս զի մի՛ ասիցեն երկու սկիզբն ըստ մանիքոսի: - 13. Ութերորդ՝ ընդ վա՛յր էին ուսմունք և յորդորմունք ի բարիս. որովք *փախչիմք* ի չարէն, և հասանիմք բարւոյն: - 20. Երեքտասաներորդ՝ *Փախչիլ* յևտիքէ և նեստորէ: - 30. Երկուց կողմանցն ևս պարտ է *փախչիլ:* - 37. **Յորոյ *փախչելով* մեր և յերկուց ծայրիցն, զառ ի մէջն ունելով ուղղապէս ընթացք, ասեմք եթէ քրիստոս ըստ անշփոթ միաւորութեանն՝ աստուածային բնութեամբն մարդ է, և մարդկային բնութեամբն աստուած է:** - 75. Ո՞րպէս *փախիցուք* ի նեստորի բաժանելոյն, և յեւտիքեայ շփոթելոյն: - 80. Եւ այսպէս *փախչելով* ի թիւր ծայրիցն, զմիջինն պահելով ընթացք բարեպաշտութեան, անշթոփ և անբաժան միութիւն, խոստովանիմք զքրիստոս՝ աստուած մարդացեալ. մի անձն և մի բնութիւն. և մի կամք և գործք ըստ ուղղութեանն բանի: - 81. Ապա ուրեմն յորդիութիւնն և յանունն խոստովանին միութիւն ի պատրանս պարզամտաց. և զճշմարիտ միութիւնն ուրանան և *փախչին:* - 82. Իսկ թէ յայնցանէ *փախչիք* իբր յայտնապէս որոշումն՝ և այլիմն պատճառաւ որպէս գառնենեաւ ծածկէք զգայլենիս ձեր: - 89. Այսինքն զի ոմանք *փախչին* յանապատ և թաքչին: - 152. Չորրորդ՝ *փախչին* գողք և գազանք: - 196. Իններորդ՝ ընդ փայլիլն և ի բաց *փախչի:* - 207. Նա՛խ՝ զի մարդո՛յն է զանազանել զբարի և զչար. և *փախչիլ* ի չարէ՛, և երթալ զհետ բարւոյն՝ կատարելոցն է...: - 274. Մին ճանապարհ գալ՝ և է *փախչիլ:* - 285. Վեցերորդ՝ զի ի ձեռս ետ զհագար աղախինն չարչարել սառայի. ուստի զերծեալ *փախեաւ* և հարցաւ ի հրեշտակէն: - 304. Երկոտասաներորդ՝ ի հոտոյ առիւծուն *փախչի* շուն: - 316. Եւ յանւանէն և ի նշանացն քրիստոսի *փաղչի* շողոքորթն սատանայ: - 316. Զի ասեն թէ՝ յոբայ հէճուպն ի պարսիկս *փախեա*...: - 320. Իսկ ի հոգւոյ մարդոյն **բ** իր հեռացուցանեն զդևսն. այսինքն խոնարհութեամբ և ճշմարտութեամբ. վասն զի զերկուքս զայս ո՛չ ունի սատանայ. և ամենևին *փախչի* և ատէ՛ զխոնարհութիւն և զճշմարտութիւն: - 324. ...զոր եսպան մովսէս և *փախեաւ* ի մադիամ...: - 330. Մովսէս **խ** ամեա էր յորժամ *փախեաւ:* - 330. Նա՛խ՝ տարակուսանք մտաց և ցաւ աչաց. զի մոլորեսցին ի *փախչիլն:* - 376. Մի ճանապարհ գալն է. և է զբազումս ասէ ի *փախչիլն:* - 404. Եւ յորժամ **է** զօրութեամբք հոգւոյ յաղթիցեն նոցա, *փախիցեն* յէ զգայարանաց մարդոյն եօթնեկի մահացու մեղօք. զայս կատարելո՛ցն է իմանալ. և ո՛չ մեզ տկարացս: - 404. Եւ դաւիթ *փախեաւ:* - 413. Նա՛խ՝ զի մի՛ *փախիցեն* թշնամիքն. զի ընդ երե՛կս էր: - 416. Կամ զի աքիմելէք **զճ** քահանայիւք սպանաւ ի սաւուղայ. և աբիաթար *փախեաւ* առ դաւիթ և ընդ նմա՛ էր զամենայն աւուրս թագաւորութեան նորա. և յանուանէ զնա՛ յիշէ: - 427. Վեցերորդ՝ զի թէ հաւատացեալ էր սաւուղ ո՛չ երթայր ի պատերազմ. այլ խոյս տայր և *փախչէր:* - 429. Հետիոտս *փախեաւ* և ծածկեալ գլխով. և նոյնպէս տէրն ի խաչին: - 438. Երկրորդ՝ զի մի՛ ոք *փախիցէ:* - 446. Ո՞ր քան առաւել մերս անկրթութեան մտօք և իրօք պարտ էր հրաժարիլ և ի բաց *փախչիլ* որպէս խռիւ ի հրոյ և զաչացու ի լուսոյ: - 456. Հինգերորդ՝ զանբաժանելի միացումն ի սէրն

քրիստոսի. զի որ ի խաչին թողին և *փախեան*...: - 524-525. Այնպիսին տգէտ և լիրբ է. *փախի՛ր* ի նմանէ: - 537. Եւ որպէս եղիա որ կապեաց զերկինս և *փախեաւ* ի սիդոն. նոյն նմա հրամայեաց աստուած բանալ զերկինս. նմանապէս և այս: - 542. Դարձեալ, բարկութեամբ զպատկերն աստուծոյ կորուսանեմք ի մեզ. և հոգին սուրբ *փախչի* ի բարկացեալ հոգւոյ. զի խաղաղութիւն է տեղի նորա: - 570. Իսկ սգալ վասն չարին, զի *փախիցուք* ի նմանէ: - 583. ...որպէս նոքա որ զդեղ մահու խառնեն. վասն որոյ նշանաւ խաչին կնքեմք զնոսա, զի *փախիցեն* դևքն: - 654. ...որպէս *փախեաւ* կինն որ ծնաւ զմանուկն արու ի տեսիլն. և ո՛չ կարաց հրեղէն վիշապն հասանիլ: - 689. ...այսինքն զի ոմանք *փախչելով* յանապատս զերծանին, և ոմանք արեամբ վկայեալք ապրին: - 706. Վասն իններորդին, որք աստ իւրաքանչիւր մեղօք գոյին շաղախեալք. արդարապէս ունին զիւրաքանչիւր անդամս կապանօք կաշկանդեալս. և ցանկան մեռանիլ և *փախիցէ* մահ ի նոցանէ: - 753

**ՓԱԽՍՏԵԱՅ +** Մետասաներորդ՝ *փախստեայ* դաւիթ բնակէր ի ներքնումն այրի. և սաւուղ ննջեաց յարտաքին այրին: - 513

**ՓԱԿ +** Զի սկիզբն մեղաց՝ հիմն է դժոխոց. և կատարումն՝ դուռն. և յամելն՝ *փակ:* - 418

**ՓԱԿԵՂՆ +** Ա՛րդ՝ եթէ ի հասարակ ժողովրդենէ իցէ ննջեցեալն, հանեն զհին հանդերձն և պատե՛ն սուրբ կտաւովք և զգլուխն *փակեղամբ* և վարշամակօք, և օդ յոտս: - 671. *Փակեղն* և վարշամակն ի գլուխն, որպէս սաղաւարտ: - 674

**ՓԱԿԵՄ +** Ութներորդ՝ զոր դրօքն *փակելօք* եմուտ: - 50. Զի ի կատարածի աշխարհի յորժամ դադարի գործ դիւացն՝ ամենեքեան միահաղոյն *փակեսցին* ի դժոխս: - 147. Գիտելի է, զի **է** դրամբ *փակեալ* է ծածուկ իմացումն գրոց: - 177. Եւ զի *փակեն* զդրունս տանց: - 196. Եւ զի ի գոլորշեաց որ ի ներքս է *փակեալ*՝ թօթափի և շարժի: - 211. Ունականն է՝ յորժամ ժողովէ զկերակուրն՝ ծկտի և լայնանայ և *փակէ*՛ զամենայն դրունսն որ ի ներքոյ և ի վերոյ և ի կողմանէ, զի մի՛ թափեսցի կերակուրն: - 242. ...և ապա ստեամբք կերակրէ զնա մայր իւր բանիւն աստուծոյ. զոր ասեն յաշխարհի, եթէ զմին դուռն *փակէ* աստուած, նա զերկուքն բանայ. զի յորժամ զմին դուռն պորտին *փակեցաւ*, **բ** ստինքն բացան: - 397. *Փակեաց* թէ ամենևին ո՛չ բաժանի օրհնեալ պսակն մինչ ի մահ: - 401. Քսաներորդ, սամփսոն ի մէջ գիշերի *զփակեալ* դուռսն կորզեաց և էհան ի լեառն: - 423. Կամ *փակեալ* մնասցէ երկինքն: - 443. Զի թէպէտ *փակեալ* էր օրէնքն խառնիլ երկուց ցեղիցն ընդ միմեանս, սակայն ղևտացւոցն ո՛չ գոյր ժառանգութիւն և բաժին, խառնեին երբեմն ընդ թագաւորական ազգն յուդայ: - 461. Եւ գերեզմանք բացան. զի կարօ՛տ էին ննջեցեալքն նմա. և նոքա *փակեցին* զգերեզմանս սրտից իւրեանց: - 490. Եւ դարձեալ՝ մե՛ղքն ծանրացուցանէր և *փակէր* ի դժոխս: - 504. Եւ ի մէջ գիշերի զարթեաւ և զդրունս *փակեալ* նգօքն և սեմօք եհան յուսն և ել ի լեառն: - 513. ...և յերեկոյի կիրակէին տեսին զտէրն յորժամ դրօքն *փակելովք* եմուտ առ նոսա: - 516. Երրորդ կրկին զատիկն երևեալ դրօքն *փակելովք:* - 524. Զի նորին գործն է որ բանայ և *փակէ* զդուռն եկեղեցոյ: - 606. Իսկ մի տախտակն յերկուս բաժանեալ և հնգիւք *փակեա*...: - 646. ...որ և յա՛յտ է ի *փակելոյ* դրանց եկեղեցւոյ: - 650. ...իսկ միտքն տայ պատասխանի՝ դրունքս *փակեալ* են. այսինքն զգայարանքս խցեալ են և մեղաց մանկունքս ընդ ինև ո՛չ տան թոյլ...: - 697. Ասեն ոմանք թէ **ժ** ցեղքն իսրայէլի որ *փակեցան* ի մէջ լերանցն կասբից...: - 708. Որպէս լոյս արեգական անցանէ ընդ երկինս առանց ապականութեան. և որպէս քրիստոս յարեաւ մարմնով ի գերեզմանէն վիմովն կնքելով. և եմուտ առ աշակերտսն դրօքն *փակելովք:* - 722. Իսկ դատաւորն նստեալ յաթոռ արդարութեան արդարապէս հատուցանէ ըստ գործոց. ըստ որում յիմար կուսիցն *փակեցաւ* դուռն և ո՛չ առին զփնդիրն: - 742. Երրորդ այնու՝ զի մեղքն որ յոյժ վտանգեաց զմարդիկ, եղիցի *փակեալ* ի դժոխս զկնի աւուրն դատաստանի...: - 764

**ՓԱԿԷ** - ... և *փակէի* արքայի որդւոյ ռոմելայ. և գերեաց զնեփթաղիմ և զգալիլեա. և Զգաղայաթ **զ** ցեղիւքն իսրայէլի. և տարաւ յերկիրն ասորեստանեայց: - 447

**ՓԱԿՈՒՄՆ +** Իսկ մեծացուսցէն ի կիրակէի, զբնաւ տնօրէնութիւնն պատմէ. ...Իսկ *փակումն* դրանն զթաղումն ի գերեզմանի: - 628

**ՓԱՂԱՆԳ +** Իսկ ուրախանալն ի չարն մահ է և անզգայութիւն. և ընդդէմ բժշկողացն մրցումն. որպիսիք էին հեթանոսքն ի կուռս իւրեանց. և հրէայքն յօրէնսն. և *փաղանք* հերետիկոսացն յաղանդս իւրեանց: - 33

**ՓԱՂԱՆՈՒՆ +** Իսկ անեղ և պարզ էութեանն պատշաճի միայն նմանապէս համեմատութեամբ. զի է կոչի աստուած, ըստ այնմ «ես եմ որ էն». և ո՛չ ըստ այնմ որ բաժանի ի գոյացութիւն և ի պատահումն. որպէս հոմանուն կամ *փաղանուն*. կամ ի միոջէ և առ մի. որպէս ընդհանուր էակն է՝ բաժանի առ մեզ: - 171

**ՓԱՂԱՆՈՒՆԱԲԱՐ +** Դարձեալ՝ աստուածք կոչին ո՛չ *փաղանունաբար*, այլ հոմանունութեամբ. այսինքն անուամբ միայն, այլ ո՛չ բնութեամբ: - 137

**ՓԱՂԱՌՈՒԹԻՒՆ +** Գիտելի է, զի **է** դրամբ փակեալ է ծածուկ իմացումն գրոց: ...Չորրորդ՝ վանկն կամ *փաղառութիւնն:* - 177

**ՓԱՂԵԿԱՅՆ** - Անունք Կանանց Նահապետացն: ...*Փաղեկայն* դուբնա՛: - 299

**ՓԱՅԼԱԾՈՒ +** Եւ **է** երկինք՝ **է** գօտիքն են **է** մոլորակացն. որ է Զոհա՛լն. Երևա՛կն. Հրա՛տն. Արեգա՛կն. Լուսնթա՛գն. *Փայլածո՛ւն* և Լուսինն: - 183. Վեցերորդ *Փայլածուն*. զոր օտարիտ կոչեն. միշտ շրջի ընդ արեգականն. և սակաւ հեռանայ ի նմանէ. զընթացս իւր կատարէ՛ **յլը** աւուրս. **ժ** օր պակաս քան զլուսաբերն. և այլք թէ **գ** ամիս: - 189

**ՓԱՅԼԱԿԱՆ +** Վասն է՞ր *փայլական* նմանեցուցանէ զիջումն հոգւոյն սրբոյ: - 522. Վասն որոյ նմանեցաւ իջումն հոգւոյն սրբոյ *փայլական:* - 523

**ՓԱՅԼԱԿՆ +** Որև տէրն՝ *փայլակն* ասէ անկանել յերկնից: - 148. Ծիածանն, բակն, և թռիչ աստեղաց. և լոյսն. և *փայլակն*. և այլն: - 155. Զի՞նչ է *փայլակն:* - 203. *Փայլակն* լինի ի շիջեալ հրոյն ջրով ամպոյն և հողմով որ ի մէջն է, վերստին արծարծի և արտաքս բացափայլէ: - 203. Եւ զի նախ որո՛տն է և ապա *փայլակն:* - 204. Այլ ձայնն յա՛մր հասանէ ի լսելիս քան *զփայլակն*. վասն որոյ յետո՛յ լսի: - 204. Իսկ միջինն է՛ Նօտոսն. առնէ որոտ. և *փայլակն*. և անձրև խիստ: - 206. Վեցերորդ՝ երա՛գ է *փայլակն:* - 207. Երրորդ՝ ահագին երևումն, որոտ, և *փայլակն:* - 393. Վեցերորդ՝ զի երա՛գ է *փայլակն*...: - 522. Զի որպէս *փայլակն* ելանէ յարևելից ի վերայ լուսեղէն ամպոյ, և քառաձև լուսովն լնու զչորս կողմ աշխարհի և հաստատի ի գողգոթայ յորում խաչեցաւ տէրն: - 732

**ՓԱՅԼԱՏԱԿԵՄ +** Չորրորդ՝ զի *փայլատակեալն* անբաժանելի մնայ: - 207. Չորրորդ՝ զի *փայլատակեալն* անբաժանելի մնայ յինքենէ. այսպէս և շնորհք հոգոյն սրբոյ անբաժանելի գոլով բաժանեցաւ յառաքեալսն: - 522. Եւ հուրն այնպէս *փայլատակէ* որպէս զլուսին. և լուսինն որպէս զարեգակն. և արեգակն եօթնապատիկ պայծառանայ որպէս ասէ եսայի: - 728

**ՓԱՅԼԱՏԱԿՈՒՄՆ +** Իսկ գէջն լինի ամպ. և չորն ի մէջ ամպոյն նեղեալ պատառելով զծալմունս ամպոյն՝ լինի որոտ և *փայլատակունք* ևս: - 204. Իսկ ի չորոյն՝ հողմունք և հնչմունք զանազանք. որոտք և *փայլատակմունք*. կայծ. և այլն որպէս ցուցաւ: - 204. Եւ ծնանին *զփայլատակմունս* և զյորդահոս անձրևս: - 205. Իջումն հոգւոյն *փայլատակումն* է՝ **ժ** թուով: - 455. Նախ՝ զի ցուցանէ թէ որ ետ զօրէնսն՝ նոյն առաքեաց և զհոգին և ի նոյն տիպն որոտ և *փայլատակումն* հողմ և հուր երևեալ որպէս անդ ի լերինն: - 524. Զի այսպէս ասէ նեքտառիոս հայրապետն հռօմայ թէ՝ չէր հնար իջուցանել զմարմինն տեառն ի խաչէն վասն *փայլատակմանցն* ի խոցուածոյն: - 631

**ՓԱՅԼԵՄ +** Նախ՝ զի յանկարծ *փայլէ:* - 206. Երկրորդ՝ ի կերպ հրոյ *փայլէ:* - 206. Հինգերորդ՝ նա՛խ որոտայ և ապա՛ *փայլէ:* - 207. Ութերորդ՝ ի միջոյ ամպոյն *փայլէ* որ ծածկեալ էր ի նմա՛: - 207. Իններորդ՝ ընդ *փայլիլն* և ի բաց փախչի: - 207. Նա՛խ՝ զի յանկարծակի՛ *փայլէ*. նոյնպէս և հոգին սուրբ յանկարծակի էջ: - 522. Երկրորդ՝ զի ի կերպ հրոյ *փայլէ*. այսպէս և հոգին սուրբ հրեղէն լեզուօք: - 522. Հինգերորդ՝ նախ որոտայ և ապա՛ *փայլէ*. այսպէս և հոգին որոտմամբ էջ...: - 522. Ութերորդ՝ զի ընդ *փայլիլն* փախչի. այսպէս և «հոգին սուրբ փախչի ի նենգութենէ. և յանձն չար՝ արուեստ իմաստութեան ո՛չ բնակէ» ասէ սողոմոն: - 522-523. Իններորդ՝ ի միջոյ ամպոյն *փայլէ* որ ծածկեալ էր ի նմա: - 523. Ա՛րդ՝ մեղանչելն մարդոյ այնպէս է որ զակն խփեաց ի լուսոյն և խաւարեցաւ. սակայն լոյսն ծագէ՛ դեռևս ի վերայ աչացն և սակաւ *փայլէ* ի ներքս. և յորժամ բանայ վաղվաղակի լոյս տեսանէ: - 562. Այնպէս մարդ մեղօք զրկի ի շնորհաց լուսոյն. այլ լոյս խնամոցն աստուծոյ չէ հեռացեալ և սակաւ *փայլէ* ի ներքս ի տրտնջականն...: - 562-563. Այլ որպէս կայծ հրոյ և անօթ արեգական բոլորովիմբ է լոյս, նոյնպէս և անդ բոլոր անդամօքն *փայլեսցին* իբրև զարեգակն: - 726. Նմանապէս և հուրն որով հրեղէն լեզուօք երևեցաւ սրբութեան հոգին, բաժանեսցի այրեցումն և մշտափայլ լուսով *փայլեսցի* որպէս զարփին և որպէս զարեգակն: - 759-760

**ՓԱՅԼՈՒՄՆ +** Բաղդատութիւն ամպոյ և մեղաց. ամպոյ և սուրբ կուսին. և յատկութիւնք *փայլման* ի հոգին սուրբ: - 155

**ՓԱՅԼՈՒՆ +** Երկրորդ՝ զի է՛ *փայլուն* լուսաւոր: - 184. Խաժակն և *փայլուն*, համարձա՛կ է ի չարութիւնն: - 246. Եղունկն սպիտակ տափակ կակուղ և նօսր, կարմրագոյն և *փայլուն*, ուժե՛ղ է: - 247

**ՓԱՅԾԱՂՆ (տեքստում նաև՝ ՓԱՅԾԵՂՆ) +** Սեաւ մաղձն որ է *փայծեղն*՝ է՛ հողոյն: - 215. **Հինգերորդն**

***փայծեղն* է. որ է՛ ախտռ այրեցած արեանն.** ցո՛ւրտ է և չոր. և ունի տանուտէր զզոհալն որ է երևակն ցուրտ և չոր գոլով: - 241. Եւ *փայծեղն* առաւել ցուրտ է: - 242. Եւ *փայծեղն* հո՛վ է ի ձախ կողմանէ: - 242. Ձդառնութիւնն ի լեղին. և զհոտածն յերիկամունքն. և զմրուրն և զթթուն ի *փայծեղն*. և զքաղցր արիւնն ի սիրտն. և սիրտն երակովն և շնչովն բաժանէ ի բոլոր մարմինն: - 242. Եւ *փայծեղն* և թոքն ցրտայինք ի ձախ կողմն են. վասն այն աջն զօրեղ է և ձախն տկար: - 243. Ստուգութիւնն *փածեղ:* - 250. Ստուգութիւնն որ է ճարտարախօսութիւնն՝ ի *փայծեղն:* - 250. Եւ էգն հոգևորի յետ **ձ** աւուրն՝ որպէս ասացաք զպատճառն վասն տեղւոյն ցրտութեան որ է՛ ձախ կողմն արգանդին. որ ցուրտ գոլով վասն *փայծաղանն*՝ յապաղէ՛ զկազմուած նիւթոյն ի կրկնապատիկ ժամանակս **ձ** աւուրց: - 261

**ՓԱՅՏ +** Երկրորդ՝ զի թէ ի ներկայս ասեմք ի վերայ քարի թէ լինիցի *փայտ*. ո՛չ լինի այնպէս...: - 8. Ոչ նմանամասնաբար. զի նոքա բոլորին՝ և միմեանց հոմանունաբար ասին. որպէս *փայտ* ի բազում *փայտս:* - 88. Զի աստուած առնէ զբորբոքումն ախորժակին. որպէս հուր որ վառէ՛ *զփայտ:* - 133-134. Իսկ ախորժելի իրն բորբոքէ՛ զախորժակն որպէս *փայտ* զհուր: - 134. Իսկ հրեշտակն զարթուցանէ զախորժակն՝ որպէս այն որ դնէ *զփայտ* ի հուրն: - 134. Որպէս տունն ի ժողովիլ *փայտից* և որմոց՝ շինի. և ի ցրուիլն սոցա կորնչի տունն: - 175. Յորժամ *փայտն* այրի, ծանրութիւն զի՞նչ լինի: - 202. Դարձեալ ասեմք թէ՝ ծանրութիւն *փայտին* գիճութիւնն է և ցրտութիւնն. և հուրն ջերմութեամբ և չորութեամբ զսոսա կորոյս: - 202. Նոյնպէս ծանրութիւն *փայտին* պատահակա՛ն է և եկամուտ. զորս կորուսանէ հուրն: - 202. Չորրորդ՝ զի նիւթք եղեն երկնաւոր խորհրդոյն. որպէս ի տնկոց *փայտ* խաչին. և յայլ բուսոց հաց պատարագին և գինի. և ձէթ մեռոնի կազմեցաւ: - 212. Եւ թանձրութիւնն *փայտին* է՛ հողոյն: - 213. Իսկ ծառք միջնորդութեամբ *փայտին* ի հեռուստ ընդունին: - 214. Նմանապէս և կոչին *փայտ*. զի ի փտելոյ և յապականելոյ գոյանան այսպէս. յորժամ բորբոսի երկիր՝ նա՛ զարմատն ի վայր արձակէ և զբոյսն ի վեր: - 214. Յայն՝ զի *փայտ* դրախտին անփուտ է. և տերևն անփտելի. և պտուղն անծորելի. և ծաղիկն անթառամելի. և աստուծոյ տնկեալ ձեռօք իւր. տեղի անապական ձեռագործին ադամայ: - 223. Եւ թէ տկարանաս ի զօրութիւնն աստուծոյ՝ առ մե՛զ ևս գոն քեզ հաստատութեան նշան՝ անփուտ *փայտ*. և անթառամ ծաղիկ. և մշտականաչ սաղարթ. և անթափ պտուղ: - 223. Դարձեալ՝ *փայտն* կենաց ունէր կերակրելի՛ պտուղ: - 223. Եւ գիտութեան *փայտն*՝ զյատուկ կերակուրն կատարեալ արանց: - 223-224. Երկրորդ՝ զի զրկեցաւ ի կենացն *փայտէն* և ի դրախտէն արտաքսեցաւ: - 279. Եւ զի՞նչ է՝ անիծեալ կախեալ *զփայտէ:* - 285. Նախ՝ որ անփուտ էր *փայտն*. և մարմին մարդոյս անփուտ և անապական է. և յա՛յտ է ի յարութիւնն անմահ: - 293. Եւ թէ չունիս հաւատ զփտեալ *փայտն* տե՛ս ի գիշերի: - 294. Եւ այլք ասեն թէ՝ գետն առ որով բնակեալ էր նա՝ *փայտ* բերէր, անտի անուանեցաւ եբեր: - 299. Հնգետասաներորդ՝ որպէս ի վերայ իսահակայ եդեալ եղև *փայտ* պատարագին մինչ ի տեղի զենմանն: - 306. Եւ տէրն եբարձ ի յուս իւր *զփայտ* խաչին մինչ ի նոյն տեղի գողգոթային ուր զենանէր իսահակ: - 306. Եւ ուրիաս *փայտի:* - 344. Անփուտ *փայտն* անապական կուսութիւնն: - 345. Դարձեալ ըստ սրբոյն կիւրղի՝ տապանա՛կ է տէրն մեր յիսուս քրիստոս. և անփուտ *փայտն* անապական մարմինն: - 345. Իսկ *փայտն*. մարմնոյ ցամաքութիւն և պարկեշտութիւն. որ առաւել բորբոքէ զպատարագն: - 360. Նաև ո՛չ *փայտ* և ո՛չ արծաթ: - 366. *Փայտն* եղևնեայ, զօրութիւն հաւատոյն: - 368. Դարձեալ՝ կրկին հաւն նշանակէ՛ զքրիստոս. *Փայտն*, զխաչն. և Կարմիր արիւնն. զի աստուծոյ է արիւն. և Զոպայն, զհոգին սուրբ: - 368. *Փայտն* չարչարանքն ի մեզ: - 368. Զի ասեն եթէ՝ **խ** օր էր պայմանն ադամայ. յետ **խ** աւուր ուտէր ասեն՝ ի *փայտէն* գիտութեան և սրբութեամբ որդիս ծնանէր. և ապա՛ ուտէր ի կենաց *փայտէն* և վերափոխեր. և այլ բազում բանս տողե՛ն: - 391. Զի՞նչ է որ ասէ, «անիծեալ որ կախեալ կայցէ *զփայտէ»:* - 400. Եւ հայրազեղծն որ հարկանէր զծնօղ, զանիծից *փայտէ* կախէին, և ի նոյն օր ի գերեզման իջուցանէին զի մի՛ պղծեսցին: - 400. Զի *փայտն* և հողն անիծաւ...: - 400. Եւ հայր աստուած որ ո՛չ կատարի կամք նորա ի մեզ. յայնժամ ըստ բազում գթութեան իւրոյ առաքեաց զմիածին որդին որ փոխանակ մեր կախեցաւ *զփայտէն* և ազատեաց զմեզ յանծիցն օրինաց...: - 400. Ուստի յա՛յտ է զի փոխեաց *զփայտն* անիծից և զգերեզմանն, և արար աղբիւր օրհնութեան *փայտի* և գերեզմանի: - 400. Եւ այլք այսպէս մեկնեն թէ՝ ամենայն անիծեալ կախեալ կայցէ *զփայտէ*. այլ ո՛չ ամենայն կախեալ *զփայտէ*՝ անիծեալ է. որպէս խոյն ի սաբեկայ կախեալ ո՛չ է անիծեալ: - 400. Երկրորդ՝ *զփայտէն* կախիլով եբարձ զանէծսն և ետ մեզ օրհնութիւն: - 403. Զի՞նչ է «տեսանիցէք զկեանս ձեր կախեալ *զփայտէ*՛ զցայգ և զցերեկ և ո՛չ հաւատայք»: - 404. Նա՛խ՝ անընդմիջաբար ի հողոյ. որպէս *փայտ:* - 407. Ութևժ, զթագաւորս նոցա կախեաց յերկճղի *փայտէ*. և յերիկոյն ի գուբն սուզեաց: - 418. Զի զտեղին

յեբուսացւոցն գնեաց դաւիթ. և ճարտարապետն քիրամ տիւրացի էր որ շինեաց. և քիրամ արքայ *զփայտն* առաքեաց: - 440. Չորրորդ՝ նա՛ վասն քարի և *փայտի* պատմէր. և քրիստոս վասն արքայութեանն: - 442. Եւ ի *փայտի* մեռաւ: - 454. Քառաթև էր խաչն. և *փայտ* էր խաչն: - 454. Եւ որք խռիւ *փայտ*՝ խոտ՝ և եղէգն, այրեսցի անշէջ հրով: - 488. Վասն է՞ր կամեցաւ ի *փայտի* բարձրանալ և մեռանիլ: - 491. Զի զայն որ *փայտիւն* յաղթեաց՝ յաղթեսցէ. և զայն որ *փայտիւն* անկաւ՝ փրկեսցէ: - 491. Դարձեալ վայելո՛ւչ էր փրկութեան մեր լինիլ ի ձեռն *փայտի*. որ ցուցանէ *զփայտն* կենաց ի մէջ դրախտին: - 494. Այլ և *փայտն* բարձեալ ի վերայ իշոյն իսահակայ: - 494. Այլ և նշանեալ *փայտն* խայտախարիւ յաւազանս եղեալ: - 494. Եւ *փայտն* որ քաղցրացոյց զջուրն ի մեռայն. և ի վիմէն ջուր բղխեցոյց: - 494. Նաև *փայտն* որով զերկաթն ի յորդանանէ՛ վերածեաց: - 494. Զի՞նչ նշանակէ չորս մասն *փայտից* Խաչին: - 494. Եւ որպէս մի հուրն զանազանապէս այրէ զդալար *փայտ*՝ և զչոր խոտ՝ և զեղէգն: - 505. Նոյնպէս վասն երկրորդին գիտելի է, զի որպէս *զփայտ* թիւրութեամբ պնդեալ՝ դժուարին է ուղղել. նոյնպէս զչար սովորութիւն մարդկան դժուարին է փոփոխել: - 531. Երկրորդ՝ զի նիւթ սորա է՛ ի քարանց արտաքին և ի *փայտից* որ կոխան է եղեալ անասնոց և անսրբոց...: - 615. Եւ նշանակէ՛ր կրկին փողն զերկու զանկակս, կամ զզանկակն և զժամահարն. կամ *զփայտէն* և զերկաթին: - 618. Իսկ որք շինեն *փայտ*, այսինքն զբորբոքեալ սէր ժամանակաւորացս: - 702. Եւ այլ վարդապետք *փայտ* խոտ և եղէգն զներելի մեղս ասեն. և առաւել և նուազ և միջակ: - 702. Իսկ այլք զերեք տեսակ մեղացն. այսինքն սկզբնականն որ է խոտ. և ներելին եղէգն. և մահացուն *փայտ:* - 702. Դարձեալ՝ խոտն մտաւոր մեղք խորհրդոց. և եղէգն յանցանք բանից. և *փայտն* մարմնական մեծամեծ մեղք: - 702. Երրորդ, նոքա *փայտ* խոտ և եղէգն զներելիսն ասեն. որք անդ ծախին և ազատին. - 702. ...և ոսկեբերանն զմահացուն լինիլ ասէ *փայտ* խոտ և եղէգն. և նիւթ յաւիտենից այրելոյն: - 702. Ահա՛ յայտնապէս *զփայտ* զխոտ և զեղէգն զոր նոքա վասն քաւարանին ասեն...: - 703. Եթէ *փայտ* խոտ եղէգն որ են մեղաւորքն, զի անդէն մնան: - 721. Երևի՞ անդ *փայտ* խաչին յորում խաչեցաւ տէրն: - 732. Նա՛խ՝ զի ամենայն որ ի չորից տարերց է՝ կրէ՛ զապականութիւն. արդ խաչն *փա՛յտ* է և ի չորից տարերց. ապա ուրեմն ապականի և նա՛: - 732. Այսպէս և զչնչին *փայտն* առեալ արար փրկութիւն տիեզերաց և արար անապական: - 734. Ա՛րդ՝ յայտնեալ է նա և որոշեալ ի մէջ ամենայն *փայտից* գոլ արմատ արդարութեան որով փրկեցաք ի բանսարկուէն: - 734. Եւ զոր օրինակ *փայտն* գիտութեան պատճառ մահու եղև. պատասխանեալ դեղն ցաւոց: - 734. Դարձեալ՝ Առաջին արքայութիւնն է *փայտն* այն զոր մարգարէն ասէ «անկեալ գոլ ի գնացս ջուրց. որ զպտուղ իւր տայ ի ժամանակի»: - 755. Եւ ասի սա նման *փայտին* կենաց որ է՛ ի մէջ դրախտին. այսինքն քրիստոս՝ որ է՛ ի մէջ եկեղեցոյս կարգեալ: - 755. Քանզի որպէս *փայտն* այն ասի քան զայլ *փայտս* դրախտին կանաչագոյն: - 755. Ուղղակի ուրեմն *փայտս* այս ասի գոլ տնկեալ մերձ յընթացս ջուրց. զի ի նմանութիւն մարմնոյ մեղաց երևեցաւ. և զամենայն նուաստութիւնս մեր յինքն ընկալաւ: - 755. Այսմ *փայտի* ո՛ստ են **գ** կարգ յեկեղեցի աստուծոյ. այսինքն ամուսնացելոց, ժուժկալողաց, և կուսանաց: - 755. Կամ *փայտիս* այսորիկ ոստք կարեն ասիլ միաւորեալ բնութիւնքն քրիստոսի. այսինքն աստուածութիւնն և հոգին և մարմինն: - 755. Կամ թէ ոստք *փայտիս* այսորիկ ասին եօթանքս այսոքիկ. այսինքն՝ քրիստոսի ծնունդն, մկրտութիւնն, չարչարանքն, ի դժոխս իջումն, յարութիւն, յերկինս համբարձումն, և հոգւոյն սրբոյ պարգևումն: - 755. Սոքա են **բժ**ան պտուղք *փայտին* կենաց: - 767. Չորրորդ՝ ծառ կենաց կոչի տէր մեր յիսուս քրիստոս. ըստ որում *փայտ* դալար էր աստուածութեամբն. և մեզ կեանք և կենդանարար եղև յարութեամբն իւրով: - 768. Հինգերորդ՝ ծառ կենաց է փրկական *փայտն* կենդանարար սուրբ խաչին: - 768. Որ փոխանակ մահացու *փայտին* գիտութեան զյաւիտենից կեանքն մեզ պարգևեաց...: - 768. Եւ երկոտասան պտուղ յերկոտասան ամիսս, զի ո՛չ երբէք նուազի անմահական պտուղն *փայտին* կենաց: - 768. Զորօրինակ եթէ արմատ *փայտի* եղեալ ի հուր՝ նախ ինքն այրի և ապա ճիւղքն: - 777

**ՓԱՅՏԵՂԷՆ +** Եւ այս ո՛չ թէ լոյս միայն է. զի զլոյսն ո՛չ ետ մեզ նշան. այլ զխաչն *փայտեղէն* յորոյ վերայ զձեռն իւր տարածեաց միածին բանն: - 734

**ՓԱՅՏԷ** - Ասի ի լրոյ եթէ՝ նոյ արար *փայտէ՛* կոչնակ. և կոչեաց զկենդանիսն ի տապանն: - 618

**ՓԱՆԱՔԻ +** Այլ որ առաւել մեծն է և հսկայանդամ, և կարի փոքր և *փանաքի*, յերեսնամեայ հասակն իւրեանց չափաւորին: - 726

**ՓԱՆՈՒԷԼ** - Քանի՞ հրեշտակապետի անուն ասի կամ մեկնի: ...Իններորդ՝ *փանուէլ*. յայտնութիւն աստուծոյ: - 144

**ՓԱՌ +** ...նոցա *փառք* կամ կցորդ գոյ զկնի. և որք որիշ են՝ նոցա կցորդ ո՛չ ասի: - 636

**ՓԱՌԱԲԱՆԻՉ +** Նախ՝ զի պատկե՛ր է նմա. և ապա զի *փառաբանիչ* աստուծոյ: - 128. Եւ **թ** միւս որմունք ըստ դասուցն իմանալեացն *փառաբանիչք:* - 391. Այլ և այսպէս **բ** որմունք լինելոց են ի հանդերձեալն. այսինքն է մին հրեշտակաց և միւսն մարդկան սրբոց յաւիտենից *փառաբանիչք:* - 636

**ՓԱՌԱԲԱՆՈՒԹԻՒՆ +** *Փառաբանութիւնք* հրեշտակացն: - 102. Զի՞նչ է *փառաբանութիւն* ինն դասուց հրեշտակաց: - 144. Եւ *փառաբանութիւն* է նոցա, փառք ի բարձունս աստուծոյ: - 144. Եւ *փառաբանութիւն* է նոցա, ողորմեա՛ տէր քո արարածոց: - 144. Նախ՝ յորժամ սերոբէն ասէր սուրբ, և միւսն երկրորդէր զնոյն. և սա՛ լռեաց *զփառաբանութիւն* ընկերին երկրորդել աստուծոյ, թէ փառքն ի վերայ իւր անկանի և աստուածանայ որպէս ասաց պօղոս: - 147. Իսկ քնարն Նախ նշանակէ՛ զքաղցրաձայն երգս *փառաբանութեանն* աստուծոյ: - 713

**ՓԱՌԱԿԻՑ +** Ապա ուրեմն հոգին սուրբ է հաւասար աստուած ընդ հօր և ընդ որդւոյ. արարչակից և մշտնջենաւորակից և *փառակից:* - 60. Չորրորդ՝ որք միայն զորդւոյ ասեն բան՝ սակաւ պատիժն, զի մի է յերրորդութենէն. իսկ որ *զփառակիցն* ես՝ կրկնապատիկ հատուցանի նմա: - 566

**ՓԱՌԱՄՈԼ +** Վասն այն հեզն յամենայնի արհամարհեաց *զփառամոլ* միտս նորա խոնարհ պատասխանեօք: - 47

**ՓԱՌԱՍԷՐ +** Եւ դարձեալ՝ զոր նոքա նախանձ ասեն՝ սա՛ ամբարհաւա՛ճ ասէ. որ է՛ *փառասէր:* - 559. Զի *փառասէրն* զիւր փառքն և զիւր բարին սիրէ. և զայլոց փառք և զբարիս յաչաղէ և ատէ: - 559. Ի ջրոյ պոռնկութիւն և փառասիրութիւն. որ գէճ է և թոյլ. և *փառասէրն* յայլոյ բանս մեղկի և թուլանայ: - 560. Այլ զանազանին. զի հպարտն ի ներքուստ ունի զբարձրամտութիւնն. և *փառասէրն* յարտաքուստ յայլմէ՛ բերանոյ ընդունի զփառս գովութեան: - 560

**ՓԱՌԱՍԻՐԵԼ +** Իսկ փառասիրութիւն և հպարտութիւն ո՛չ են այսց կարգաց. այլ յորժամ զվեցեքին սոքա յաղթէ, ապա՛ *փառասիրի* և հպարտանայ: - 561

**ՓԱՌԱՍԻՐՈՒԹԻՒՆ +** Դարձեալ՝ փորձիչս այս *փառասիրութեամբ* յառաջեաց առ քրիստոս...: - 47. Եօթներորդ ամբարհաւաճութիւն. որ է՛ *փառասիրութիւն:* - 560. Ի ջրոյ պոռնկութիւն և *փառասիրութիւն*. որ գէճ է և թոյլ. և փառասէրն յայլոյ բանս մեղկի և թուլանայ: - 560. Յոգւոյ և ի ջրոյ *փառասիրութիւնն:* - 560. *Փառասիրութիւն* և հպարտութիւն են հոգւոյ և մտաց. որ լինի **ը**: - 560. Ի վեր շարժումն է հպարտութիւն և *փառասիրութիւն*. զի յատուկ է սոցա ի վերամբարձումն: - 560. Ա՛րդ՝ ըստ առաջին կարգին թէ ցանկայ ի ներքս, ըստ որում է՛ հպարտութիւն և *փառասիրութիւն:* - 561. Իսկ *փառասիրութիւն* և հպարտութիւն ո՛չ են այսց կարգաց. այլ յորժամ զվեցեքին սոքա յաղթէ, ապա՛ փառասիրի և հպարտանայ: - 561

**ՓԱՌԱՏՐՈՒԹԻՒՆ +** Որում Գոհացողական Օրհնութիւն. և Բարեբանօղ *Փառատրութիւն*. Յամենայն գոյեղէն բնութեանց. ի վեհագունից մինչ ի հուսկ յետինս: - 771

**ՓԱՌԱՒՈՐ +** Եւ զնայելոյն պատճառն իրինոս մեկնէ թէ՝ զմարդոյն լինիլն ետես այնպէս *փառաւոր*...: - 147-148. Դարձեալ ի հողոյ ստեղծ ի նախատինս սատանայի. զի յամօթ լիցի յորժամ տկարս այս և կաւեղէնս ի փառսն մտանէր յորմէ նա՛ որ *փառաւորն* էր անկաւ: - 229. Եւ թէ մովսէսի ոչ հաւատայք որ *փառաւո՛րն* է ի մէջ ձեր, ինձ զիա՞րդ հաւատայք որ թշնամի կարծէք: - 405. Իսկ յովակիմ արդարն էր ի թագաւորական ցեղէն յուդայի **լը** երորդ ի թոռանց նաթանայ որդւոյն դաւթի *փառաւոր* և մեծատուն յոյժ: - 460-461. Նա՛խ՝ ի կողմանէ պարգևողին. զի յորժամ քրիստոս նստեալ լինէր ըստ մարմնոյ ընդ աջմէ հօր իբր զթագաւոր փառաց յաթոռ թագաւորութեան իւրոյ, յայնժամ մեծագոյն լինէր պարգևք հոգւոյն տուեալ ի *փառաւոր* քրիստոսէ աստուծոյ: - 521. Երրորդ՝ ի կողմանէ հոգւոյն սրբոյ. զի առաւել ահաւոր և *փառաւոր* եղև այսպէս...: - 522. Զի ո՛չ միայն համարի մեծ և *փառաւոր* զաստուածութիւնն նորա, այլ և զաղքատութիւնն և զանարգանս և զմահն. և յայնժամ արժանացաւ առատապէս ընդունել զհոգին սուրբ: - 522. Բայց զոր ինչ մեզ *փառաւոր* երևի՝ զնոյն և աստուծոյ փառս կոչեմք: - 736. Այլ ի գալուստն քրիստոսի Առաջին փառք է՝ զի *փառաւոր* երևեցի սիրելեաց իւրոց, յայտնեալ զաստուածութեան փառս միաւորեալ ի մարմնի. որպէս երևեցաւ ի թաբօր: - 736

**ՓԱՌԱՒՈՐԵԱԼ +** Չորրորդ՝ տեսեալ զմովսէս առաւել *փառաւորեալ*, և յետ վախճանին թոյլ ետ ներողութիւնն աստուծոյ ժպրհիլ բանսարկուին ստգտանօք մեղաց...: - 410. *Փառաւորեալ* և միշտ կոյսն Աստուածածին մարիամ՝ էր ի թագաւորական ցեղէն դաւթի...: - 459. Երկրորդ՝ զի թէ քրիստոս այնպէս *փառաւորեալ* էր որպէս յետ խաչին, արգել և խափան լինէր ամենայն չարչարանացն և

փրկութեան մարդկան: - 521. ...ամենայն ազգ և ամենայն լեզուք, գայցեն ի կատարածի յերկրպագութիւն քրիստոսի. և անեզր յաւիտենիւ *փառաւորեալ* օրհնեն զնա: - 529. Վասն է՞ր ի պատարագի ժամն ո՛չ ասեմք *զփառաւորեալն:* - 634. *Զփառաւորեալն* ո՞վ է ասացեալ: - 633. Երկրորդ բաղդատութեամբ այնորիկ՝ որ եղիցի ի ներքոյ ինքեան. այսինքն զի ներքին մարմինք մարմնոյ *փառաւորելոյ* տեղի՛ տան: - 764. Նախ եղիցի ուրախութիւն ի մարմնի, բաղդատելով առ այն որ եղիցի մերձ ինքեան. այսինքն զի ա՛յլ մարմինք *փառաւորեալ* առաջի նորա հրճուին: - 764. Եւ պիտանեացն՝ փառս վերընծայել այնմ, որ *փառաւորեալն* է ի պարգևս իւր...: - 772-773

**ՓԱՌԱՒՈՐԵՄ +** Յինգերորդին պատասխանեմք, եթէ *փառաւորէ* հոգի զորդի՝ ասես ի նմանէ սկզբնաւորեալ: - 61. Տե՛ս՝ *փառաւորէ՛* և հայր զորդի որ սկիզբն է նորա...: - 61. Իսկ սուրբն կիւրեղ ընդ դէմ նեստորի զինէր. որ ասէր ...յետ յարութեանն *փառաւորեաց* զնա և զօրացոյց յարակցութեամբ ընդ ինքեան: - 79. Զի ընդ իւր անկումն ի պատուոյ այնչափ չէ՛ տրտում, որքան ընդ մարդոյն *փառաւորիլն:* - 146. Երեքտասաներորդ՝ զի տկար մարմնով անմարմին և զօրաւոր թշնամոյն յաղթեսցեն. որով աստուած իսկապէս *փառաւորի*...: - 159. Թէ հիւանդանայ, *փառաւորէ՛* զաստուած որպէս զյոբ: - 178. Քանև, *փառաւորէ՛* զաստուած. զի և ինքն *փառաւորեսցի:* - 272. Դարձեալ՝ մարդն միա՛յն է ծիծաղական. և *փառաւորիլ* վասն ուրախութեան սրտին: - 275. Ըստ որում առաւել *փառաւորեցաւ* կրկին կենօք: - 288. Չորրորդ՝ ի խորհուրդ յարութեան մերոյ, որ վերստին գոյացուցանէ ի խաւարէ՛ գերեզմանին և ի լոյս հանէ և ուրախութեամբ զարդարէ՛ և *փառաւորէ՛:* - 321. Վասն որոյ այսօր ժողովեալ փառս և պատիւ տամք աստուծոյն մերոյ որ յաւիտեան զփառաւորիչս իւր *փառաւորէ՛:* - 321-322. Երրորդ՝ զի ասէ՝ զպատգամն աստուծոյ ունի և ո՛չ զօտար աստուծոյ. և քրիստոս ասէր, «զոր լուայ ի հօրէ՝ պատմեմ ձեզ». և յանուն հօր եկն. և զհայր ետ *փառաւորել* միայն ճշմարիտ աստուած: - 399. ...զի զնոսա *փառաւորէ* ի վեր քան զարժանն. և զսոսա պատժէ սակաւ քան զարժանն. այսոքիկ ողորմութեանն են: - 459. Դարձեալ կարէ ասիլ Ութերորդ պատճառս, առ ի ցուցանել թէ հոգին ո՛չ ումեք առատապէս պարգևի, եթէ ոչ յիսուս ի սիրտ նորա յատկապէս *փառաւորեսցի:* - 522. Նախ այն է՝ որ զորդի ընդ հօր և սուրբ հոգւոյն *փառաւորեմք* և օրհնեմք **գ** անձինք ի միում բնութեան...: - 528. Յամբարձումն ձեռաց սրբութեամբ աւետարանին, նշանակ գործոց բարեաց որով *փառաւորի* աստուած: - 628. Եւ անցեալ ընդ խորս չարեաց՝ օրհնեն զտէր և *փառաւորեն:* - 629. ...նոյնպէս և սուրբքն ամենայն ի գործոց իւրեանց հանգչին և *փառաւորին* և սպասեն գալստեանն քրիստոսի և հատուցման վարձուցն: - 648. ...զի ի յարութեանն ի միասին պսակեսցին և *փառաւորեսցին:* - 677. Տեսութիւնն է աստուծոյ. որք ըստ բազմազան գործոց իւրեանց տեսանեն. և որպէս ի տան *փառաւորին:* - 686. Այսպէս հոգին նախ տեսութեամբն ուրախանայ և *փառաւորի,* և ապա՛ մարմնովն կատարեալ պսակի: - 696. Տասներորդ, զի պսակէ՛ զսուրբս իւր և *փառաւորի* ի մէջ նոցա. - 737. Այլ բոլորովին զհամագոյ և ըզհամառօտ և զանաւելորդ Երրորդութիւնն *փառաւորեա* միշտ և հանապազ: - 771. Զի զնոսա *փառաւորէ՛* ի վեր քան զարժանն, և զնոսա դատապարտէ՛ սակաւ քան զարժանն. և է՛ այս ողորմութիւն: - 779

**ՓԱՌԱՒՈՐԻՉ +** Վասն որոյ այսօր ժողովեալ փառս և պատիւ տամք աստուծոյն մերոյ որ յաւիտեան *զփառաւորիչս* իւր փառաւորէ՛: - 321-322

**ՓԱՌԱՒՈՐՈՒԹԻՒՆ +** Չորրորդն *փառաւորութեան:* - 210. Ութերորդն է թագիլն փշեղէն պսակօք. ի նշան *փառաւորութեան* մերոյ: - 489. Նաև հոգւոյ և մարմնոյ *փառաւորութիւն:* - 573. Չորրորդ ի մարմնոյն *փառաւորութենէ:* - 762. Չորրորդ վասն մարմնոյ *փառաւորութեան* քառակի լիցի ուրախութիւնն: - 764

**ՓԱՌՔ +** Իսկ մարդիկ անձնիշխան կամօք և գործովք հասանին այն փրկութեան և շնորհաց և *փառաց:* - 18. Ո՛չ է ըստ չարափառացն ասել ուղղակի՝ թէ նախանձու կամ վասն *փառաց* որպէս ասեն...: - 24. Զորօրինակ ո՛չ է անզգուշագոյն յառել ի բոլորակս արեգական՝ զի շրտնու և ի սակաւուն զոր ունի. ըստ այսմ խնայեաց աստուած ի յազինս մարդկային, զի մի՛ կրիցեմք զկիրս զանկելոյ արուսեկին. որ ո՛չ կարացեալ տանիլ մեծութեան *փառացն*՝ զրկեցաւ և ի չափաւորէն: - 24. Նաև սէր աշխարհիս և *փառաց*՝ ո՛չ ետ թոյլ հաւատալ...: - 32. Իսկ պաշտօն կռոցն՝ մեղանչումն է ընդդէմ էութեանն աստուծոյ և *փառաց:* - 33. Երրորդ՝ զի նոքա զաստուծոյ *փառսն* առաւելուին թէպէտ զճշմարիտն անգիտանային: - 33. Իսկ հերձւածօղքն *զփառս* ճշմարտին աստուծոյ նուազեն: - 33. Դարձեալ ո՛չ ասի անպատճառ պատճառն քան զպատճառելին մեծ. զի և որդի նոյն պատճառի հօր *փառաց* և մեծութեանն է հաղորդ: - 39. Այս է մեկնութիւնն թէ՝ հաւասարն աստուծոյ՝ յափշտակութիւն և զրկումն չհամարէր իւր զճառայի

կերպարանս առնուլ. զի ո՛չ ունէր յայլմէ կասկած խլելոյ *զփառսն*. զի ի՛ւրն է սեպհական: - 39. Թէպէտ մեկնեն և այլ ազգ, թէ որ զմարդկայինս բնութիւն հաւասարեցոյց *փառաց* իւրոց և հաղորդ արար աստուածութեանն, ոչ ինչ զրկումն համարեցաւ. զի բնութիւնն մի է: - 39-40. Այլ զի խոնարհեցաւ ի բարձրութենէ *փառացն* և ընդ նուաստ բնութեան մերում միաւորեցաւ. ա՛յս է որ առաքեալ ասի: - 40. ...հայր *փառացն* որ է բանն աստուած ի բնութենէ հօրն ծնեալ անմարմին. որ յետոյ միաւորեցաւ ի մարմին: - 44. Այսպէս և հոգւոյն բարեխօսելն է. զի ինքն ծագէ ի սիրտս մեր զբարեխօսն լինիլ յաղօթս. այսինքն զայն խնդրել որ ինչ ի *փառս* աստուծոյ է: - 59. Որք ուրանան զբնութեամբ միաւորութիւն աստուծոյ մարդացելոյն, այլ միայն բնակութեամբ և շնորհիւ որդէգրութեան ելեալ յաստուածութեանն *փառս*. որպէս ասեն նեստորականքն: - 66. ԻննԺերորդ՝ զի թէ առանձնապէս մարդ է, ապա հետևի բաժանեալ բնութիւն և **բ** կամք և կրկին ներգործութիւն. յայնժամ ո՛չ լինի բանն մարդ եղեալ. այլ մարդն բնակութեամբ ի *փառս* բանին բարձրացեալ: - 68. Եթէ զաստուծոյն ասես, ցուցանես զբանն կարօտ գոլ *փառաց*. և հա՛րկ է հետևիլ քեզ արիոսի: - 69. Իսկ թէ ըստ ինքեան զմարդկայինն, զիա՞րդ ունէր *զփառս* յառաջ քան զլինիլն աշխարհի. զի ինքն ի ժամանակի եղև: - 69. Այլ զխաչեալն քրիստոս՝ տէր *փառաց* կոչէ պօղոս յառաջին կորնթացւոցն. «թէ էին ծանուցեալ ասէ ո՛չ արդեօք զտէրն *փառաց* ի խաչ հանէին»: - 74. Եթէ երկուքն, հարկ է ասել ձեզ՝ *փառք* հօր՝ և որդւոյ երկու բնութեանցն՝ և հոգւոյն սրբոյ: - 90. Եւ *զփառս* բանին զրկելով՝ ետուք մարդոյն. և եղէք մարդապաշտք, և մարդոյ մարմնակերք...: - 90. Ասաց թէ՝ որ ի կերպարանս աստուծոյ էր բանն, այսինքն էակից հօր, ո՛չ ինչ զրկումն համարեցաւ ի ներգոյական *փառաց* զլինիլն հաւասար մեզ: - 93. Իսկ եթէ ի դէմս մարդոյն, ո՞րպէս ունէր *զփառս* յաւիտենից այն որ այսօր ի կուսէն ծնաւ: - 94. Այլ արդ՝ յերկնաւոր *փառսն* այն է գերագոյն՝ որ քան կատարեալ տեսանէ զաստուած: - 97. Եւ ո՞րպէս երկիր պագանեն նմա երկնաւորք և երկրաւորք և սանդարամետականք. և ամենայն լեզու խոստովան լիցի թէ տէր է յիսուս քրիստոս ի *փառս* աստուծոյ հօր: - 99. Ա՛րդ՝ ճանապարհո՛րդ էր ըստ մարմնոյ տնօրէնութեանն մահւամբ և յարութեամբ մտանել ի *փառս:* - 100. Եւ ըմբռնօղ՝ զի բանական իմացմամբ մտաց զմայլեալ էր միաւորութեամբ աստուածային *փառացն:* - 100. Որով և ընդ Որում Հօր և Հոգւոյն սրբոյ *փառք* և պատիւ և իշխանութիւն յամենայն գոյից անբաւ յաւիտենիւ ամէն: - 101. Նմանապէս և հասարակն թէպէտ բազում է, այլ երկոտասան գլխով նշանակի. նախ Բնութիւն. որ նոյն Է էութիւն. ապա Բարութիւն. Կամք. Անմահութիւն. Իմաստութիւն. Լուսաւորութիւն. Գեղեցկութիւն. Անփոփոխութիւն. Ցնծութիւն. *Փառք*. Իշխանութիւն. և Արարչութիւն: - 105. Վասն է՞ր յորժամ *փառս* տամք, նախ՝ հօր, ընդ նմին որդոյ, և ապա հոգւոյն: - 109. ...նախ տուեալ լինի շնորհքն աստ. եւ ապա *փառքն* ի հանդերձեալն. և կատարողական պատճառ՝ զի լինիցիմք սուրբք և անբիծք: - 112. Այսպէս և *փառս* տամք հօր և որդւոյ և հոգւոյն սրբոյ: - 116. Իսկ հաւատոյն վարձս ընդունի և *փառս:* - 122. Երկրորդ՝ ուրացականն ընդդէմ էութեան և *փառացն* աստուծոյ է. զի զէութիւն և *զփառս* աստուծոյ ուրանալ տայ: - 124. Իսկ բացբարձականքն՝ ո՛չ զէութիւն կամ *զփառս* աստուծոյ բառնայ...: - 124. Իսկ արժանաւորաց զհոգևոր շնորհս և զհաւատս աստ, և ի հանդերձեալն *զփառս* անվախճանս: - 127. Իսկ «ես նախանձոտ, *զփառս* իմ այլում ո՛չ կամիմ». *փառք* իւր կոչէ զմարդն: - 128. Իններորդ՝ սկիզբն է շնորհաց որպէս այժմ. և կատարումն *փառաց* ի հանդերձեալն: - 130. Իններորդ՝ զի ամենեքեան հրեղէն բնութեամբ են ի շնորհս և ի *փառս* անփոփոխելիք: - 137. Երկրորդ՝ *փառքն* և պատիւն. զի ոմանք են ի գերագոյն *փառսն* քան զոմանս: - 137. Եւ փառաբանութիւն է նոցա, *փառք* ի բարձունս աստուծոյ: - 144. Եւ ասեն՝ օրհնեալ *փառք* տեառն ի տեղւոջ իւրում: - 144. Զամենայն հրեշտակս բարի արար աստուած, այլ ո՛չ ծայրագոյն բարիս. այլ միջակս. որ է ի մէջ անփոփոխ և փոփոխական բարւոյն. այնպէս՝ զի թէ դառնային և սիրէին զայն՝ որ ի վեր քան զինքեանս, ելանէին յորպիսութիւն շնորհաց և *փառաց*. որպէս այժմ են հրեշտակք բարիք: - 146. Երկրորդ՝ զի կամի այնու *զփառս* և զպատիւ աստուծոյ նուազել: - 146. Եւ այլք թէ՝ լռեաց և ո՛չ ետ *փառս* աստուծոյ: - 147. Նախ՝ յորժամ սեռօբէն ասէր սուրբ, և միւսն երկրորդէր զնոյն. և սա՛ լռեաց զփառաբանութիւն ընկերին երկրորդել աստուծոյ, թէ *փառքն* ի վերայ իւր անկանի և աստուածանայ որպէս ասաց պօղոս: - 147. Նոյնպէս և յառնել մարդոյն և յանուն դնելն կենդանեաց՝ *փառս* ետուն աստուծոյ. իսկ նա լռեաց: - 147. Իսկ ոմանք ասեն զտեղի նորա ի հաստատութեան երկնից. և զի ո՛չ ետուն *զփառս* աստուծոյ անկան...: - 150. Տեղական անկումն եղև դիւաց ի սկիզբն ստեղծման իւրեանց վասն ամբարտաւանութեան և մախանաց ընդդէմ արարչին *փառաց*. ուստի անկաւ յերկնից ի դասուց հրեշտակաց և ի *փառաց* իւրեանց որպէս ասացաւ յառաջագոյն: - 153. Երկրորդ՝ անկումն

եղև ի *փառաց* յուսոյն...: - 153. Կալ՝ ըստ որում «կայ ընդ աջմէ աստուծոյ». և նստաւ ի *փառսն* հայրենի: - 172. Իններորդ՝ զի օրինակ *փառաց* մերո՛ց է: - 186. Վեցերորդ՝ զի ի միտ ածցուք զառաջին *փառսն* մեր և ցանկասցուք. և մի՛ որպէս զանասուն յերկիր կորասցուք: - 188. Տասներորդն *փառաց:* - 195. Յարփոյն երկնային իջանէ առ մեզ. ի ցոյցս ակներև երկնային *փառացն:* - 203. Չորրորդն *փառաց* և մեծութեան: - 210. Նա՛խ՝ զի եղեն ի գովեստ *փառաց* իւրոց: - 217. Նա՛խ՝ ի *փառս* աստուծոյ ստեղծան. զի յորժամ զզանազան կերպարանս նոցա տեսանեմք, *փառս* տամք արարչին: - 217. Եւ զի մերկացոյց զնախաստեղծքն ի *փառաց*, զխորխ իւր մերկանայ: - 219. Իսկ ադամայ կոչելն *փա՛ռք* է որդւոցս: - 220. Վեցերորդ՝ զի տեսցէ ադամ թէ յապականացու հողոյս անապական մարմին կազմեցաւ վասն *փառաց*. և յորժամ կորոյս մեղօքն եղև ապականացու, ինքն իցէ պատճառ ապականութեան իւրոյ: - 229. Դարձեալ ի հողոյ ստեղծ ի նախատինս սատանայի. զի յամօթ լիցի յորժամ տկարս այս և կաւեղէնս ի *փառսն* մտանէր յորմէ նա՛ որ փառաւորն էր անկաւ: - 229. Այլ և ի միտ ածցուք *զփառս* երկնային կենաց ուստի անկաք, և անդ դիմելոց եմք. զի տեսութիւն մտացն զիոգին ընդ ինքեան ի վեր տանի. և նա զշունչն. և շունչն ընդ արեանն է կապեալ. և արիւնն ընդ մարմնոյն. զգայարանքն ընդ մարմնոյն. և լինի մարդն բոլորովին երկնային: - 233. *Փառքն* պարանոց: - 250. *Փառք*՝ ծախոյ ձեռն: - 250. Դարձեալ՝ ասեմք եթէ գ կերպիւ մարդն իմանի պատկեր. այսինքն բնական, շնորհաց, և *փառաց:* - 273. Իսկ պատկեր շնորհաց և *փառաց* է, կատարելապէս ճանաչել և սիրել զաստուած...: - 274. Տասներորդ՝ որպէս կողն զզօրութիւնն քարշէ՛ և տայ ի թիկունքն և պնդէ՛ զնա. այսպէս կինն *զփառս* և զինչս առն յինքն քարշելով թանձրացուցանէ և պնդէ՛ զինքն: - 276. Նա՛խ՝ զդարձումն յետս աստուածային *փառացն*. և վասն այն շրջեցաւ ի զբօսանս դրախտին: - 280. Երկրորդ՝ հեշտութիւն խօսակցիլ ընդ օձին. և վասն այն կամեցաւ լսել, զի հեշտացաւ վասն *փառաց* աստուածանալոյն: - 280. Վասն որոյ օրհնութեամբ ցրուեաց զնոսա ի վերայ երկրի, զի աճեսցին և բազմասցին և լցցեն զերկիր ծննդօք և շինութեամբ և բարեգործութեամբ ի *փառս* ամենասուրբ Երրորդութեանն ամէն: - 298. Եւ տէր մեր յերկուց աւազակացն զմինն ի *փառս* էած, և զմինն ի դատապարտութիւն: - 313. Նոյնպէս և մեք աստէն քաղցեալ եմք բանիւ մինչ ա՛նդր երթիցուք, և ապա անդ զկրկին զգեստն զգեցցուք. այսինքն *զփառս* հոգւոյ և մարմնոյ: - 314. Նոյնպէս և սրբոցն միտք լուսաւորին յաջոյն քրիստոսի. զոր աստ շանմանդաղ տեսանէին *զփառս*, անդ յայտնապէս տեսցեն: - 314. Ութերորդ՝ ի լեառն թաբօր յայտնեաց *զփառս* աստուածութեան իւրոյ և օրհնեաց: - 320. Վասն որոյ այսօր ժողովեալ *փառս* և պատիւս տամք աստուծոյն մերոյ որ յաւիտեան զփառաւորիչս իւր փառաւորէ՛: - 321-322. Վեցերորդ՝ զի լիցի և պատկեր քրիստոսի որ անմեղութեամբ դատապարտեցաւ, և յառաջին *փառսն* դարձոյց զնախաստեղծն ծննդօք իւրովք: - 325. Երկրորդ՝ զի գիտէր որ եղծանելոց էր մարդն *զփառս:* - 325. Երրորդ՝ զի ծածկոյթ անպն նշանակէ՛ զանճառելի բնութիւնն աստուծոյ և *զփառսն:* - 326. Նախ՝ թագաւորութեամբն ունէր զպատկեր *փառացն* ադամայ: - 327. Տասներորդ՝ կրկին եղև կեանքն և պատիւն յոբայ. և տէր մեր ել ի *փառս* առաջին և նստաւ մարմնով ընդ աջմէ հօր: - 327. ...պսակ և *փառք* արդարոցն է՛ զոր ակն ո՛չ ետես և ունկն ո՛չ լուաւ. նոյնպէս և սա՛ ի զգալիսս անհաս ի մտաց մարդկան: - 342. Այլ իմանալեացն դասք վկայք են Նա՛խ՝ զի ի դրունս են սուրբ Երրորդութեանն և տեսօ՛ղք են անճառելի *փառացն:* - 345. Երկրորդ՝ յորժամ յերկրի երևին, և պակնուն տեսօղքն երևմամբ նոցա, վկայք լինին *փառաց* ամենազօրին: - 345. Երրորդ՝ զի *փառք* տախտակացն մեծասցի ի լոյս երեսացն: - 352. Երկրորդ, զիպարտացեալ *փառքն* նշանակէ. զոր ո՛չ է պարտ խառնել ի բարիս: - 356. Եւ ըստ միտս, զի առաքինութիւնն է ի *փառս* աստուծոյ. այլ և ի պատիւ և ի գովութիւն մարդկան. զի բազումք հաղորդին սրբութեան նորա: - 358. Ապա թէ բորոտիմք ծածուկ մեղօք ի մարմնի՝ կապեալ բերանով առանց խոստովանելոյ, արտաքսիմք յեկեղեցւոյ՝ ի հանգստենէ՝ և ի *փառաց* արդարոց: - 368. Որում *փառք* յաւիտեանս ամէն: - 376. Յորում և զմեզ թուեսցէ ի թիւ սրբոց իւրոց անջինջ դպրութեամբ. և Նմա *փառք* յաւիտեանս ամէն: - 392. Երրորդ՝ ըստ օգտութեան աստ. զի փորձին ընտրեալքն. և յետ մահու շնորհաց. և յարութեանն *փառաց* լինին առիթք: - 394. Երկրորդ՝ նշանակէ՛ զիոգիս սրբոց. որ տեսանեն *զփառս*, այլ ի յարութեանն առնուն: - 394. Տասներորդ՝ ի կայանս հոգւոց նախ տեսանի պատիժն, և ապա *փառքն:* - 395. Իսկ տարի՛ է յաւիտենական *փառքն*. որոյ սկիզբն խնամոցէ՛ նախ քան զլինիլն աշխարհի. և կատարումն անվախճան *փառքն:* - 399. Նոյնպէս որ պատրաստեաց սիրելեաց *զփառս*, և զտանջանս չարեաց, անգիտելի՛ է այժմու կենացս: - 406. Երրորդ՝ յայտնեմք *զփառս* և զպատիւ և զիանգիստ նոցա և զայլն: - 406. Եօթներորդ՝ ի կատարածի ասէ՝ «եկա՛յք օրհնեալք հօր իմոյ». և

մտանեն ի *փառս*. զայս նշանակէ կտակ և օրհնութիւնն ի վախճանի: - 409. Որոց լիցի մեզ ամենեցուն մասնաւորիլ ի *փառս* արքայութեան երկնից ի քրիստոս յիսուս ի տէր մեր ամէն: - 411. Իսկ յետ մահուանն մովսէսի վերացաւ ամպն. և հրամայեցաւ ժողովրդեանն հեռու կալ կանգունս երկուց հազարաց վասն *փառաց* տապանակին և վասն զօրութեան նորա: - 415. Երրորդ՝ ի յեղծանիլ պատկերին աստուծոյ որ վասն *փառացն* աստուծոյ ստեղծաւ, ընդ նմին եղծան և ապականեցան այլ արարածք որ վասն *փառաց* մարդոյն ստեղծան...: - 416. Դարձեալ անցեալ ընդ ապաշխարութիւն և սատակեալ զորդիսն բելիարայ, ապա՛ ժառանգեսցեն զարքայութիւնն երկնից ի *փառս* քրիստոսի աստուծոյ մերոյ: - 419. Տասներորդ՝ յետ որոյ հնազանդեցան նմա՛ ամենայն իսրայէլ. և տեառն մերոյ զկնի խաչին հաստատեցան ի հաւատս. մանաւանդ յետ է դար կենցաղոյս ամենայն լեզու խոստովան լիցի զտէր յիսուս քրիստոս ի *փառս* աստուծոյ հօր ամէն: - 427. Երրորդ՝ զի *փառք* և պսակ է արդարոց և կատարեալ խոստովանողաց: - 432. ...և Նմա *փառք* և գոհութիւն յաւիտեանս ամէն: - 438. Եւ շնորհք նոր օրհնացս հայի յողորմութիւնն աստուծոյ և ի *փառս* վերինն երուսաղէմի որպէս ասացաւ ի վերոյ: - 439. Եւ եկեղեցի փոխանակ բարեաց զշնորհս և *զփառս:* - 441. Եւ տեառն մերոյ ի հեթանոսաց *փառք* և մեծութիւն. որ նստի յանզուգական աթոռ դատողութեան բժան թագաւորօք դատել զամենայն: - 442. ...և Նմա *փառք* յաւիտեանս Ամէն: - 442. Վեցերորդ՝ զի *զփառս* եթող և զսէր բարեկամաց: - 442. Ըստ որում թէ՝ «եղիցին կատարեալք ի մի». և Նմա *փառք* և պատիւ յարակայ Ամէն: - 450. Եւ աստանօր Կատարումն հին Կտակարանաց. և Եօթներորդ Յատորի Յարցմանցս. ի *Փառս* Քրիստոսի Աստուծոյ մերոյ Օրհնելոյն Յաւիտեանս Ամէն: - 453. Որ և նովաւ զնորայս վասն նորա խօսեսցուք. և ի գովեստ մեծութեան *փառաց* նորին յանկեսցուք: - 456. Դարձեալ ողջոյնս այս՝ ունի նշանակութիւն գերազանցութեան կուսին. բնութեան, շնորհաց, և *փառաց:* - 464. *Փառաց*՝ ասելն «օրհնեալ ես դու ի կանայս»: - 464. ...և ամենայնքն մեղան և նուազեցան ի *փառաց* ըստ առաքելոյ: - 473. Չորրորդ՝ զարգացաւ հասակաւ, ի նշանակել թէ զբնութիւնս մեր ի նուազութենէ ի մեծութիւն և ի *փառս* է՛ հանելոց: - 479. Երկրորդ՝ թէ խա՛չն է *փառք* փրկչին մերոյ...: - 481. Աջ և ահեակն զընտրութիւն դատաստանին. *զփառս* աջակողմեանց, և զպատիժ ձախակողմեանց: - 493. Որ և մարդիկք կրկին թևօք ժամանեն ի *փառս* յաւիտենական կենացն: - 494. Որպէս այնորիկ որք զօրացան այսու մահուամբ և զորդեգրութեանն ընկալան շնորհ և նահատակեցան, նոքա չարչարակից եղեն քրիստոսի, և *փառացն* հաղորդակիցք: - 497. Որում *փառք* և զօրութիւն յաւիտեանս ամէն: - 498. Եւ վասն այն աստուած եղև զի յառաջին *փառս* և որդիսութիւնն զմեզ հանցէ: - 500. ...և Նմա *փառք* յաւիտեանս ամէն: - 503. Եւ որպէս ի մի արքայութիւնն օթևանք և *փառք* բազում են ըստ գործոցն. այսինքն երեսնաւոր. վաթսնաւոր. և ճաւոր: - 504-505. Եւ վա՛յ ասեմ որովայնամոլ ազգացն որք զամենայն պահքս լուծանեն ի ծուլն անխտիր. որոց աստուած որովայնք իւրեանց է և *փառք* ամօթն ըստ առաքելոյ: - 510. Իսկ որ ասէ՝ «նստաւ ընդ աջմէ հօր», աջովն իմանի հաւասար ի *փառս* աստուածութեանն հօր: - 521. Նա՛խ՝ ի կողմանէ պարգևողին. զի յորժամ քրիստոս նստեալ լինէր ըստ մարմնոյ ընդ աջմէ հօր իբր զթագաւոր *փառաց* յաթոռ թագաւորութեան իւրոյ, յայնժամ մեծագոյն լինէր պարգևք հոգւոյն տուեալ ի փառաւոր քրիստոսէ աստուծոյ: - 521. Այսպէս և մեք *փառս* տամք հօր և որդւոյ և հոգւոյն սրբոյ. այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից: - 522. Նախ զայս ասեմք թէ՝ համաբուն և համապատիւ է Երրորդութիւնն սուրբ. զի միոյն *փառքն* երիցն է և երիցն միոյն: - 525. Եւ *փառք* ի բարձունս: - 527. Եւ աստանօր Կատարումն Իններորդ Յատորի Յարցմանցս Այսոցիկ. և Քրիստոսի *Փառք* յաւիտեանս Ամէն: - 527. Յինգերորդ՝ զի խոստովանի ամենայն լեզու թէ տէր է յիսուս քրիստոս ի *փառս* հօր աստուծոյ բազմեալ: - 529. Յինգերորդ՝ ի գլխո՛յն են *փառք* և խնդութիւն. բան և իմաստութիւն: - 532. Նոյնպէս քրիստոս է *փառք* և ցնծութիւն, բան և իմաստութիւն եկեղեցւոյ սրբոյ: - 532. Որով *զփառս* որդէգրութեան և զժառանգութիւն արքայութեան ընկալաք. որ է՛ անտրտում ուրախանութիւն: - 532. Երրորդ՝ վասն ախտի. այսինքն *փառաց* կամ մախանաց. կամ ագահութեան ընչից. կամ այլ ինչ այսպիսեացս. ո՛չ կատարին կապանքն: - 539. Զոր յառաջին ամին յորժամ նստաւ կաթողիկոս տէր սիմէոնի, ի ձեռն տէր եղիայի մեծահանդէս ժողովմամբ պայծառացոյց զեկեղեցի կանոնական հաստատութեամբ ի *փառս* քրիստոսի աստուծոյ մերոյ օրհնելոյն յաւիտեանս ամէն: - 545. Որում *փառք* և զօրութիւն ընդ Յօր իւրում և սուրբ Յոգւոյն ամէն: - 555. Զի փառասէրն զիւր *փառքն* և զիւր բարին սիրէ. և զայլոց *փառք* և զբարիս յաչաղէ և ատէ: - 559. Այլ զանազանին. զի հպարտն ի ներքուստ ունի զբարձրամտութիւնն. և փառասէրն յարտաքուստ յայլմէ՛ բերանոյ ընդունի *զփառս*

գովութեան: - 560. Նաև ասեն թէ՝ վասն *փառաց* աստուածանալոյն մեղանչեաց ադամ. և վասն նախանձու առն՝ կինն նախ եկեր զպտուղն: - 561. Իսկ *փառք* և պսակք հետևին յուսոյն և սիրոյն: - 572. Նոյնպէս և այժմ սրբոց և երանելեաց յոյսն է հանդերձ ստուգութեամբ տեսութեանն. զի դեռևս հանդերձեալ է նոցա մարմնոցն յարութիւն. և *փառք* և պսակքն ըստ իրին: - 574. Եւ այնք որ ո՛չ խոստովանին զմիասնական սուրբ Երրորդութիւնն, մկրտելի է զմկրտեալն ի նոցանէ ի *փառս* ամենասուրբ Երրորդութեանն: - 590. Եւ դարձեալ տամ զքեզ ի խորհուրդ սուրբ եկեղեցոյ. զոր ինչ գործեսցես, եղիցի քեզ ի բարեգործութիւն և ի *փառս* հանդերձեալ կենացն ամէն: - 602. ...վասն որոյ *փառքն* աստուծոյ լցին զտաճարն. և հուր էջ ի պատարագն: - 615. Եօթներորդ՝ զի պսակ եկեղեցւոյ և *փառք* է՛ սուրբ խաչն տէրունական. որպէս ի գլուխն է կանգնեալ: - 616. Այլ *զփառս* արքայութեան երկնից ի կատարածի ժառանգեսցեն հոգւով և մարմնով անվախճան յաւիտենից: - 617. Զի յառաւօտն մին խնկարկի ի տէր եթէ շրթունքն. և այն ևս **գ** անգամ պար առեալ. և մի յօրհնութիւնն ևս **գ** անգամ. և մի ի *փառք* ի բարձունսն ևս **գ** անգամ: - 618. Չորրորդ, հասարակ աղօթքն է միակի պատիւ և *փառք*. և առանձնականն կրկնակի: - 623. Վասն երկրորդին՝ յայտնեմք *զփառս* և զմեծութիւն նորա: - 624. ...այսինքն գոհացիր զաստուծոյ. և յայտնեա՛ *զփառս* նորա...: - 624. Ապա՛ զկնի երից մանկանցն աղօթից որով քաւիմք ի մեղաց. ի *փառս* տալն ի բարձունս՝ անուշահոտ բուրմամբ նուիրեմք: - 628. Եւ յետ այսորիկ ի միասին համաձայն երգել *զփառս* ի բարձունս աստուծոյ, որ փրկեաց զմեզ: - 628. Իսկ սաղմոսն՝ մանկացելոցն մկրտութեամբ հրամայէ որդիացելոցն օրհնել զհայրն երկնաւոր. որում *փառք* յաւիտեանս ամէն: - 629. Իսկ երկրորդն, որ երկինք պատմեն *զփառս* աստուծոյ, զայնմ որ դատէ՛ զհակառակն մեր. զի յերկինս է ողորմութիւն նորա: - 629. Իսկ *փառքն*, և ալէլուն, և օրհնութիւն և *փառքն*, և ամէնն, և ընդ հոգւոյդ քումն, և խաղաղութիւնն, այս ամէն Առաքելադի՛ր է: - 631. Եւ վկայէ՛ մեզ աւետարանիչն յօհաննէս. զի ասէ՝ եսայի ետես *զփառս* նորա և խօսեցաւ վասն նորա...: - 632. Եւ ի նոյն ժողովն ի *փառք* ի բարձունս, օրհնեալ տէր ուսո՛ ինձ զարդարութիւնս քո. **գ** անգամ: - 632. Զի խաչն պսակ և *փառք* է քրիստոսի և պարծանք քրիստոնէից և ո՛չ նախատինք...: - 632. ...զի ճառ խաչին պատւակա՛ն է առ աստուած և առ մարդիկ. և *փառք* քրիստոսի է խաչն և կատարումն ամենայն տնօրէնութեանցն: - 634. Զի սուրբ աստուածն անդ հաստատեցաւ. որպէս և *փառք* ի բարձունքն. սկսեալ ի հրեշտակացն ի ծնունդ քրիստոսի. և յերեք սուրբ ժողովնս եղև կատարեալ: - 635. Ապա ի ժողովն եփեսոսի վերստին հաստատեցին *զփառք* ի բարձունսն ի սաղմոսէն՝ յաւետարանէն՝ և ի մարգարէիցն զայս ինչ, «Տէր ապաւէն եղեր մեր յազգէ յազգ»: - 635. Իսկ երբեմն համաձայնին երկու դասքն. որպէս ի *փառք* ի բարձունս և յայլ երգսն: - 636. Վասն է՞ր երբեմն *զփառքն* և զայժմն ի միասին երգեմք. և երբեմն ո՛չ: - 636. Եւ ա՛յս է խորհուրդն, զի որ վաստակի յերգս՝ նա՛ տացէ *զփառս* արժանապէս: - 636. Այլ գիտելի՛ է, թէ սաղմոսն շարականաց որ **բժ**ան տուն է՝ *զփառքն* և զայժմն ի միասին երգեմք. որպէս զօրհնութիւնն, հարցն, ողորմեայն, տէր յերկնիցն: - 636. Իսկ թէ նուազ է, որպէս մանկունքն ճաշուն, և համբարձին. որիշ ասեմք *զփառքն* և զայժմն: - 636. Եւ որ սաղմոսն **ը** տուն է՝ կամ ա՛յլ նուազ, *զփառքն* և զայժմն վերջին տան շարականին տամք: - 636. Դարձեալ այլ իմն պատճառ. որոց շարականաց *փառքն* և այժմն ի միասին է...: - 636. Ամպօք վերանալ. և *փառք* ընտրելոցն: - 640. Զի յարութեանն *փառք*՝ խաչն ցուցաւ: - 642. Եւ ի վճարմանն ասեմք, *փա՞ռք* քեզ աստուած: - 644. ...այլ յետ մահուն և յարութեանն առնուն զկատարեալ *փառս*...: - 647. ...և վաղն զտօն պսակաց և *փառաց* նոցա: - 647. ...զի և *փառաց* ընդ նմա հաղորդեսցիս...: - 648. Նոյնպէս և սուրբք որ ա՛յժմ են ի հանգիստ՝ ի կիրակէ գալստեանն ի կատարեալ *փառս* և ի հանգիստ մշտնջենաւոր փոխին. ի հանգչելոյ ի հանգիստ. ի *փառաց* ի *փառս:* - 648. Զի մերձ յինքեանս և յինքեան տեսանեն *զփառս* և զհանգիստ: - 648. Ասեմք թէ՝ այժմ ի հանգիստ գործո՛ցն են, և յայնժամ փոխին ի հանգիստ *փառաց* և պսակաց: - 648. Զի այժմ յուսով լցեալ ունին ի հոգիս իւրեանց *զփառս* և զպայծառութիւն գործոցն: - 648. Երկրորդ, որպէս կենդանւոյն աղ, նոյնպէս ի կեանս մեր հանապազ պա՛րտ է ի լեզուս ունել զօրհնութիւն և *զփառս* աստուծոյ: - 658. ...յորժամ այս ամենայն հաստատեալ նորոգեցաւ հրամանաւ սրբոյն սահակայ պարթևի ի *փառս* քրիստոսի. ձեռամբ իմով մովսիսի գրչի սահակայ: - 659. Յերկրորդ ամէ՛ սրբոյն սահակայ մինչև ի **ժգ** ամն նորին՝ կատարեցան ի *փառս* քրիստոսի աստուծոյ մերոյ: - 659. Իններորդ հարցմանս բաւական լիցի ի *Փառս* Քրիստոսի Աստուծոյ մերոյ Ամէն: - 659. Երեսունք, Վասն աթոռոյ և *փառաց* նստելոյն: - 661. Քառասուն**գ**, Վասն ուրախութեան և *փառաց* նոցա: - 661. Եւ աստանօր Աւարտումն Տասներորդ Յատորի Յարցմանցս, ի *Փառս* Քրիստոսի Աստուծոյ մերոյ

Յաւիտեանս Ամէն: - 661. Տասներորդ՝ ճանապարհի *փառաց* և երանութեան կոչի տէր մեր. զի առաջնորդէ՛ առ հայր...: - 666. Նախ աստ հոգի մարդոյն է ի մէջ չարեաց և բարեաց. իսկ յետ մահու ի մէջ բարեաց միայն. և ի յարութեանն ի մէջ բարեաց և *փառաց:* - 667. ...յայնժամ յայտնի և մերձակայ տեսանէ զամենայն *փառս* և զպսակ զոր ընդունելոց են նոքա ի յարութեանն աւուր...: - 668. Եւ որպէս արդարքն դեռևս ոչ են ընկալեալ զկատարեալ *փառս* իւրեանց...: - 669. Հինգերորդ՝ փափագիմք մասնակից նորա լինիլ սրբութեան և *փառաց:* - 673. Եւ ապա՛ ի յարևմուտս. զի նստի ընդ արևմուտս որ է՛ մարդկային սրբութիւնս. և *փառաց* աթոռն քահանայութեան աստիճանս...: - 673. Եւ դարձեալ՝ ցուցանէ թէ այսպէս և հոգի նորա անշարժ կայ և մնայ ի յաւիտենական *փառս* և ի մշտնջենաւոր հանգիստն ամէն: - 679. Եւ ի հեռուստ տեսեալ զտեղին, զի յետ կատարածի մարմնով առնելո՛ց են իւրաքանչիւր որ *զփառս* կամ զտանջանս: - 682. Արդարքն վասն իւրեանց սիրելեացն միշտ աղօթեն զի ազատեսցին ի փորձանաց և ուղղեսցին ի մոլորութեանց և ընկեր *փառաց* նոցա լինիցին: - 685. Զի այժմ յուսով են յերկինս և առ երկինս. և յետ մահու հոգւով. և յետ յարութեանն հոգւով և մարմնով յանճառելի *փառսն:* - 689. Հոգիք արդարոց կամ մեղաւորաց ունի՞ն այժմ *զփառս* կամ զտանջանս թէ ոչ: - 689. Յետ աստեացս *փառք* երանելեացն կրկին է. այսինքն է *փառք* գործոց ըստ ինքեան, և *փառք* հատուցմանց: - 689. Եւ այժմ հոգիք սրբոց առնուն *զփառս* գործոց ըստ ինքեան...: - 689. ...և ի յարութեանն առնուն *զփառս* հատուցմանց հոգւով և մարմնով. և այնպէս *փառաց* ի *փառս* բարձրանան որպէս ասի յերգս: - 689. Դարձեալ ասեմք, թէպէտ զներկայն ետես, սպիտակ հանդերձն ո՛չ ցուցանէ *զփառս* հատուցման. այլ *զփառս* և զհանգիստ գործոց: - 690. Զի հոգիք սրբոցն ո՛չ են առանց մխիթարութեան. այլ հանգչին և ուրախանան ի գործս իւրեանց և յուսով *փառացն* հատուցման...: - 690. Երկրորդ, ասէ սուրբն դիոնէսիոս ի ննջեցելոց կատարմանց գլուխն՝ եթէ մաքրելոց հոգին հասեալ ի վախճան՝ յայտնի և մերձակայ տեսանէ զամենայն *փառս* և զպսակ զոր ընդունելո՛ց են նոքա ի յարութեան աւուրն: - 691. Եւ փոքր ինչ յետոյ մարմնովն զոր զգեցցի ժառանգեսցէ *զփառսն* զայն...: - 691. Այս է ի միւսանգամ գալուստն. որք զարծաթ բանին շահեցան, տալ *զփառս* և զմուտն ուրախութեան. և որք ո՛չ՝ նոյնպէս զտանջանս: - 693. Եւ մինչ այս ոչ կատարի, ո՛չ առնուն արդարք *զփառս*, և ո՛չ մեղաւորք զտանջանս: - 693. Այլ յորժամ հոգին միաւորեսցի ընդ մարմնի և յերկուցն լինիցի անձն, յայնժամ կարէ՛ ունել ներգործութեամբ *զփառս* կամ զտանջանս: - 694. Եւ թէ մասն մարդոյն որ է հոգին՝ տանջի այժմ վասն մեղաց և մարմինն հանգչի, այս ո՛չ է ուղիղ, նոյնպէս և *զփառսն:* - 694. Քանզի, տանջանք և *փառք* այնմ կենաց յա՛յտ է զի ո՛չ է ժամանակեայ, այլ յաւիտենական: - 694. Ա՛րդ՝ եթէ արդարք այժմ առնուն *զփառս* և ի դատաստանին դարձեալ փոխիցին յայնմանէ, ապա ուրեմն ամենայն ինչ այն կենացն անցաւոր է և փոփոխական. այսինքն *փառքն* և տանջանքն: - 694. Երեսուներորդ, յա՛յտ է յորպիսութեանցն չորից որ ասացաւ յառաջագոյն եթէ աստ հոգի մարդոյն է ի մէջ բարեաց և չարեաց. իսկ յետ մահու ի մէջ բարեաց միայն. իսկ ի յարութեանն ի մէջ բարեաց և *փառաց:* - 694. Իսկ զբնակութիւն *փառացն* այլ ուր պատրաստ ասէ և ոչ տուեալ: - 695. Զի թէպէտ անդ ո՛չ է *փառք*, այլ և ո՛չ տանջանք և չարչարանք գոյ. վասն այսորիկ առ աստուած ասէ որք են ի պահեստ հոգւոցն: - 695. Այլ արկանելիք սպիտակ՝ զծաղկեալ նոցա առաքինութեանն երևեցուցանէ զպայծառութիւն յետ ի թանձրութենէ մարմնոյս փոխելոյն. զոր զգեցեալ են նախ քան զխոստացեալ *զփառսն*...: - 696. Սակայն *զփառսն* չև ևս են ընկալեալ մինչև ի սքանչելի երկրորդն գալուստ. այսպէս մեծն անդրէաս: - 696. ...որով իմանան արդարքն թէ այնպիսի *փառս* պատրաստեալ է նոցա. և յուսով վայելեն մինչև օր դատաստանին: - 697. Դարձեալ ասեն, զի՞նչ է *փառքն* և պսակ արդարոցն, եթէ ոչ տեսութիւնն աստուծոյ զոր ունին հոգիքն: - 697. ...այս է *փառք* և պսակ սրբոցն: - 697. ...զի մինչև զօրն զայն ասեն զքաւարանն. այլ առ ժամայն ի *փառս* կամ ի տանջանս: - 700. Իսկ թէ այժմ հոգւոյն եղեալ է դատաստան, և հատուցումն ըստ գործոց, և արդարոցն *փառք* և մեղաւորացն տանջանք. և յայնժամ մարմնոյն որպէս ասեն նոքա...: - 700. Նա՛խ՝ զի աստ յայժմու կեանս շնորհքն է, իսկ անդ *փառքն*. որպէս աստ մեղքն է և անդ պատիժն. այլ ո՛չ քաւարան: - 702. ...և ըստ իւրաքանչիւրոցն տեսանէ *զփառս* և յուսով վայելէ...: - 705. ...մինչ ի յարութիւնն առցէ բոլորիւ բոլորապէս *զփառս* և զպսակս զանվախճան տեսութիւնն աստուծոյ: - 705. Եւ երկրորդ յարութիւնն որ է մարմնաւոր, և այն ևս կրկին է. նախ յարութիւն կենաց, և ապա յարութիւն *փառաց*...: - 710. ...յորժամ հոգին միաւորի ընդ մարմնոյն և մարմնովն ժառանգէ *զփառս* և զկեանսն յաւիտենից: - 710. Ուստի և փրկչին ակնունիմք նորոգել զմարմին խոնարհութեան մերոյ ըստ մարմնոյ *փառաց* իւրոց: - 716. Տասներորդ, գործք մարդոյ

անցաւոր է որպէս ինքն. իսկ հատուցմունքն աստուծոյ մշտնջենաւոր որպէս նոյն ինքն. վասն որոյ յարուցանէ անմահ, զի հատուցէ ոմանց *զփառս* և ոմանց զտանջանս անմահ մարմնով: - 724. Վեցերորդ՝ գալարին երկինք՝ պատմելով *զփառս* աստուծոյ. և հաստատութիւնդ զարդար դատաստան նորա յարարածս իւր: - 729. ...որպէս յա՛յտ է ի սերովբէսն որ ի ներքոյ *փառաց* աթոռոյն, այսինքն է խաչին. թևաքօղեալ զերեքսրբեանն վերածայնէին: - 734. Իսկ լոյսն ի *փառս* խաչին այնորիկ երևի: - 734. Զի՞նչ է *փառացն* աթոռ: - 736. Որպէս մեծութիւնն աստուծոյ անչափ է՝ և *փառքն* անհաս...: - 736. Բայց զոր ինչ մեզ փառաւոր երևի՝ զնոյն և աստուծոյ *փառս* կոչեմք: - 736. Այլ ի գալուստն քրիստոսի Առաջին *փառք* է՝ զի փառաւոր երևեսցի սիրելեաց իւրոց, յայտնեալ զաստուածութեան *փառս* միաւորեալ ի մարմնի. որպէս երևեցաւ ի թաբօր: - 736. Երկրորդ *փառք* է՝ զի հայր և հոգի ընդ նմա ի դատաստան գայցեն...: - 737. Իններորդ, *փա՛ռք* է զդատաստանն առնել. զի նմա տըւաւ իշխանութիւն ասէ դանիէլ. և հայր ո՛չ զոք դատէ. այլ զամենայն ետ որդւոյ որպէս ցուցաւ: - 737. Այսքան վասն *փառաց* աթոռոյն: - 737. Նստի քրիստոս ի բարձրագոյն աթոռ ի վերայ օդոյդ, և սուրբքն ընդ աջմէ. այսինքն ի վեր ի *փառս* ընդ նմա ի վերայ օդոյդ. հաւատոյ և գործոյ թևո՛քն բարձրացեալ իբր զարծուի: - 738. Վեցերորդ՝ զնախապատրաստութիւն *փառացն* որ ասէ «որ պատրաստեալ է ձեզ»: - 740. *Զփառս* արդարոցն տեսանե՞ն մեղաւորքն թէ ոչ: - 741. Մինչև յօր դատաստանին տեսանեն մեղաւորք *փառս* արդարոց ընդհանրապէս՝ այլ ո՛չ մասնաւորաբար. զի տեսանիցեն զնոսա ի մեծ *փառս*՝ այլ ո՛չ ի յորպիսիս: - 741. Դարձեալ՝ առաջինն բնութեան է. երկրորդն շնորհաց. երրորդն *փառաց:* - 747. Երկրորդ կոչի հնձան արքայութիւնն երկնից. ուր ժողովին պսակք և *փառք* զանազան հանգստեան սրբոց զոր պատրաստեալ է աստուած սիրելեաց իւրոց ըստ առաքելոյ: - 748-749. Զի ըստ առաջնոյն ամբարիշտքն կորուսին զաստուած և զամենայն բարի շնորհս և *զփառս*. և ոչ ունին յոյս ողորմութեանն աստուծոյ...: - 751. Եւ վասն այն կոչի եկեղեցի արքայութիւն, զի որ ի ներկայիս եկեղեցւոյ արքայութիւն առնէ և գործէ՛, ունի զվախճան մեծի *փառաց:* - 754. Եւ վասն այն ասի արքայութիւն, զի ամենայն երանութեանց և *փառաց* է՛ կատարումն և ծայրագոյն մեծութիւն: - 754. Ի չորրորդումն ի *փառս* թագաւորելոց եմք: - 755. Այլ զայս ո՛չ իմանան հասարակ կարծիք. զի արքայութիւնն երկնից մի է. այլ *փառք* և պսակքն են զանազանք առաւել և նուազ: - 758. Արդ՝ եթէ արքայութիւնն երկնից մի է, այլ *փառքն* գ. պա՛րտ է ապա զի լիցի և դժոխքն գ, որ է՛ սուտ: - 758. Դարձեալ, հոգիք սրբոց ա՛յժմ են ի յերկինս և առ երկինս որպէս ցուցաւ. և յայնմ աւուր *փառաց ի փառս* բարձրանալ հաւատացեալ լինի: - 759. Ա՛րդ՝ եթէ ա՛յժմ են յերկինս և յայնժամն ի սրբեալ երկիր, զի՞նչ է *փառաց փառքն:* - 759. Զի՞նչ իցէ ուրախութիւն սրբոցն և *փառք:* - 761. Դարձեալ որպէս ասեն վարդապետք, եօթն յատկապէս *փառս* ունին մարմինք, և եօթն հոգիք: - 761. Եւ թէպէտ գերազանցեալ են այսորիկ *փառք* քան որք այժմ ունին յերկրի. այլ սակայն օրինակաւ սակաւ ինչ բացայայտութիւն առցուք: - 761. Առաւել պարտ էր մարդկան վաստակիլ միայն՝ զի կարասցեն գոլ ի միում աւուր ընդ երանելի սրբուհւոյ աստուածածին կուսին. քան բազում վաստակիլ վասն յաւիտենական *փառացն:* - 763. Այս վասն *փառաց* մարմնոյն: - 764. Անդ եղիցի ճշմարիտ *փառք*, ուր ո՛չ ոք գովեսցէ մոլորութեամբ. և ո՛չ գովեսցի ոք սուտակասպասութեամբ: - 765. Երրորդ՝ արմաւենին ուշ բերէ պտուղն. և մայրն յետոյ պնդի. և *փառք* արդարոցն է՛ ի կատարած աշխարհի. և պնդիլն անմահութեամբ: - 765. Մետասաներորդ է *փառք* առանց անարգանաց: - 767. Երրորդ՝ ծառ կենաց իմանին տունկք իմանալի դրախտին. այսինքն բանակք երկնաւոր զօրացն. միշտ յարազուարճ բերկրանօք բարձրացեալ ի *փառս:* - 767. Որով և ընդ որում հօր միանգամայն և հոգւոյն սրբոյ վայելէ *փառք* և պատիւ և իշխանութիւն և զօրութիւն. այժմ և միշտ և յաւիտենից յաւիտեանս Ամէն: - 771. Յաւարտ և ի կատարումն *Փառաց* Պարգևաց Բանին և Շնորհաց նորին Յոգւոյ: - 771. Ի *փառս* և ի Գովեստ նորին Տնկագործի և Առաջնորդի: - 772. Եւ պիտանեացն՝ *փառս* վերընծայել այնմ, որ փառաւորեալն է ի պարգևս իւր. իսկ զանպիտանսն ներել մերոյ փոքր ընկալ անօթոյ և դանդաղկոտ փութոյ: - 772-773. Եւ է՛ շնորհ յատուկ ընտրութեամբն աստուծոյ, որ պատճառ է՛ *զփառս* զանազան ներգործութեամբ. և է՛ սա՛ ան՛ի բաց դնելի անգեղջ խոստմամբ ի կողմանէ տուողին. որպէս է՛ առ մեզ շնորհք աւազանին: - 783

***ՓԱՌՕՔ +*** Եւ այսու *փառօք* ըմբռնէր քրիստոս զամենայն հունաւորս ներգործութեամբ: - 100. Որպէս ի դասս հրեշտակաց՝ առաջին երրեակ դասքն առաւել են *փառօք* քան զմիջինսն և զվերջինսն: - 131. Չորրորդ՝ գ որպիսութեամբ. բնութեամբ՝ շնորհօք՝ և *փառօք:* - 134. Եւ այլք ասեն այսպէս հակառակիլ ընդ աստուծոյ, յորժամ ետես զինքն *փառօք* և վայելչութեամբ քան զամենայն դասս

գերազանցեալ, կամեցաւ մեծ լինիլ ի վերայ ամենայնի և հաւասար աստուծոյ: - 149. Նոյնպէս և թագաւորք երկրի և իշխանք՝ որք բարձրացեալ են *փառօք* և դատա՛րկ յառաքինութեանց, են որպէս հովանաւորք: - 212. Իսկ այն որ ինքն զգեցուցանէ, նշանակէ՛ զինքնազգեստ *փառս* անմահութեան, զոր այժմ զգեցոյց քրիստոս շնորհօք, և յետ յարութեանն զգեցուցանէ *փառօք:* - 281. Չորրորդ՝ պղինձն ոսկէտեսակ. և տեառն մարմինն աստուածատեսակ *փառօք* և ներգործութեամբ: - 386. Երկրորդ՝ բարձր *փառօք* հանել զժողովուրդն անձեռնարկելի թշնամեաց: - 395. Քսաննէ, մեծացաւ իմաստութեամբ և *փառօք:* - 442. Նա՛խ՝ զի երևելի էր և ո՛չ անարգ ոք. որ և սակաւ ինչ յառաջ *փառօք* եմուտ ի քաղաքն: - 490. Վասն զի արեգակն արդարությյան քրիստոս հայրական *փառօք* և աստուածագումար դասուք և կարապետեալ աստուածային նշանն անտի գալոց է...: - 555. Տասներորդ, որպէս զանազա՛ն են աստեղք յերկինս, և վարձք ծեր զանազան *փառօք* ըստ առաքելոյ. «որպէս աստղ քան զաստղ առաւել է *փառօք»*: - 586. Կարգաւոր է զի ո՛ր դաս որ սկսանի զերգն, նոյնն աւարտէ *փառօք*. թէ այս՝ թէ այն: - 636. ...և լուսով հաւատոյն գնաց *փառօք* առ աստուած...: - 677. ...նմանապէս և մերկ մարմին մեռելոյ ո՛չ յառնէ մերկ, այլ *փառօք*. որպէս ցուցանի յառաջիկայդ: - 720. Նա՛խ՝ զի արու և էգ անդ ո՛չ ճանաչին մասին անդամօք, այլ յատուկ դիմօք և բարի գործովք և *փառօք* և անուամբ զանազանին...: - 725. Այլ և որպէս հրեշտակք զանազանին. նոյնպէս և ի յարութեանն *փառօք* և պսակաւն: - 725. Այլ և որպէս նախաստեղծքն ի դրախտին ո՛չ ամաչէին. նոյնպէս և սուրբք ի յարութեանն. զի ծածկեալ են ի ներքուստ հոգւոյն լուսաւորութեամբն, և արտաքուստ պսակաւն և *փառօք:* - 726. Չորրորդ, զի *փառօք* հօր և հրեշտակաց սրբոց: - 730. Զի որպէս խաչեալն ի ժամ խաչելութեանն տգեղ երևէր, և ի միւսանգամ գալստեանն *փառօք* հօր և ընդ ամպս: - 734. Վեցերորդ, զի ահագին *փառօք* գայցէ փողով մեծաւ և ամպախաղաց որոտմամբ և շարժմամբ և հրով բորբոքելոյ որպէս ի սինայ: - 737. Եւ այսպէս բաժանեսցին ի միմեանց տեղեաւ և *փառօք*. որպէս օդիք և այծիք յաջմէ և յահեկէ քրիստոսի: - 738. Եւ թէպէտ մի իցէ արքայութիւն սրբոց, սակայն զանազանեսցին *փառօք* և պսակաւ և հանգստեամբ: - 760. Զորօրինակ, ի մի երկինս աստղ քան զաստղ առաւե՛լ է *փառօք:* - 760

**ՓԱՐԱԹՈՆԱՑԻ** - Եւ յետ յեսուայ դատաւորք դատեցին առաջնորդութեամբ զիսրայէլ **նժ** ըստ եօթանասնիցն թւով երեքտասան դատաւորք մինչև ի հեղի քահանայ: ...երկոտասաներորդն Աբդոն որդի ելեքայ *փարաթոնացի* ամս **ը**: - 420

**ՓԱՐԱԽ +** Եւ զի հօտք ի հովուաց առ *փարախս* և ի գոմս ածին: - 196. Վեցերորդ՝ զի եկեղեցին *փարա՛խ* է բանաւոր հօտից. և ո՛չ անբանից: - 617

**ՓԱՐԱՆՈՒ** - Եւ աքսորեցին զթէոդորոս *զփարանու* եպիսկոպոսն: - 543

**ՓԱՐԱՏԵՄ +** Զորօրինակ գիտութիւն մարդկան ի սկիզբն և ի մէջն և յեզերն՝ նախ զտգիտութիւն *փարատէ՛*, և ապա՛ զմիտս լուսաւորէ՛ և կատարէ: - 139. Երկրորդ՝ *փարատէ՛* զտրտմութիւն և ուրախ առնէ: - 185. Երկրորդ՝ զտրտմութիւն մեղաց *փարատէ՛:* - 185

**ՓԱՐԱՒՈՆ** - Երկրորդ՝ վասն հպարտութեան մարդոյն. զի յորժամ խայթեսցեն զնա՝ ծանիցէ զտկարութիւն իւր. որ և *զփարաւոն* ո՛չ թէ առիւծ կամ առջ հարին, այլ ճանճք և մժղուկք տանջեցին: - 217. Եւ որպէս *փարաւոն* վասն հեղցուցեալ մանկանցն՝ ջրասոյզ կորեաւ. և յառաջ քան զայս՝ **ժ** հարուածովք պատժեցան: - 288. Նմանապէս և մեծն ի մարգարէս աստուածախօսն մովսէս որ աստուած կոչեցաւ *փարաւոնի*. իշխելով տարերցս փոփոխման, որ ջրածինն էր՝ եղև վիմածին և կայծակնածին. որում լուսաւորեցան երեսք: - 288. Երկրորդն է վարիլն սառայի ի տուն *փարաւօնի:* - 304. Իններ, յովսէփ ստացաւ ոսկի և զարծաթ և զերկիրն եգիպտացւոց՝ *փարաւոնի*...: - 314. Իսկ թագաւորք յամենայն ամի զնոյն առնեն ուրախութիւն. ուտել և ըմպել և հեշտութիւն մարմնոյ. որպէս *փարաւոն* առնէր և հերովդէս: - 321. Առաջին, որպէս ի ծնունդն իւր ապրեցաւ մովսէս յարուախեղդ մահուանէն փարաւոնի: - 328. Չորրորդ, նա՛ զգառն զատկին եղեն որով ազատեցան ի փարաւոնէ: - 328. Քսաննզ, մովսէս որդի կոչեցաւ դստերն *փարաւոնի* և փրկեաց զնա: - 329. *Փարաւոնի* դստերն մառի կոչէին. որ արար զմովսէս իւրն որդէգիր: - 330. Հինգերորդ՝ նշանակէ՛ *զփարաւոն* զվիշապն դառնաշունչ...: - 332. Ըմբռնելն յուսադրեաց զմովսէս յաղթել *զփարաւոնի* և հանդարտել: - 332. Եւ յերեկոյ շաբաթուն պատառեցաւ ծովն. և ի գիշերի կիրակէին անցին ընդ ծովն. և ընկղմեցաւ *փարաւոն:* - 337. Եւ խաչանիշ գաւազանաւն ընկղմեաց զիմանալին *փարաւոն* յանդունդս դժոխոց: - 337. Եւ անուն *փարաւոնի* որ ընկղմեցաւ՝ փեսիոս. և ոմանք կանաքարիս կոչեն: - 337. Նա՛խ՝ յէգիպտոս ընդ *փարաւօնի*. յորժամ եմք աստ: - 393. Զյովաքազ գերի տարաւ նեքաւով *փարաւոն*. և թագաւորեցոյց

զեղիակիմ: - 453. Եւ յորում ժամու եղ մովսէս յեգիպտոսէ և եհան զժողովուրդն, ի նոյն ժամն յարեաւ քրիստոս ի մեռելոց և եհան ազատեաց զհոգիսն ի հրահալոց չարութենէ դժոխոցն և ի բռնութեանց իմանալի *փարաւոնին:* - 512. Եօթներորդ՝ դարձեալ յաւուր կիրակէի էանց մովսէս ընդ ծովն կարմիր. և ընկղմեցաւ *փարաւոն* ի տիպ յարութեանն քրիստոսի և կորստեան սատանայի: - 512-513. Եւ յերեկոյի շաբաթուն պատառեցաւ ծովն, և ի գիշերի կիրակէի անցին ընդ ծովն և ընկղմեցաւ *փարաւոն:* - 513. ...որպէս մովսէս եղև որդէգիր դստերն *փարաւոնի:* - 611. ...նոքա սիրեն զտէր. և զօրացեալ ի նմանէ՝ կոխեն զանմարմին թշնամին. որպէս ժողովուրդն *զփարաւոն:* - 629. Տասներորդ՝ **գ** օրս այս նշանակեցաւ որ ասէր մովսէս *զփարաւոն* արձակեա՛ զիսրայէլ...: - 682. ...և ծովն պատառեցաւ. և *փարաւոն* ընկղմեցաւ...: - 682. Արդ եգիպտոս նշանակէ՛ զաշխարհս որ է՛ հալոց չարութեան և տեղի ծառայութեան մեղաց և սատանայի որ է՛ *փարաւոն:* - 682. Եւ *փարաւոն* ընկղմեալ զօրօքն. զի ոչ ինչ կարեն վնասել չար դևքն՝ քրիստոնէից հոգւոց: - 682. Որպէս ծառայքն *փարաւոնի* ի տան բանտին ընդ յովսեփայ: - 689. Մինչ զկնի կարմիր ծովուն՝ յընկըղմիլն *փարաւոնի* հանդերձ զօրօքն, զթմբուկն ունելով երգէ՛ զերգն, «օրհնեսցուք զտէր զի փառօք է փառաւորեալ» և այլն: - 764

**ՓԱՐԷՍ** - Թամար՝ որ ծնաւ *զփարէս* ի յուդայէ՛: - 300. Յուդա ամաց **խը**՝ ծնանի *զփարէս* ի թամարայ: - 452. *Փարէս* ամաց **ծթ**՝ ծնանի զեզրոն: - 452

**ՓԱՐԹԱՄ +** Երկրորդ՝ զփոփոխումն թագաւորաց, զաղքատաց մեծանալն, և *զփարթամացն* տնանկանալ: - 26. *Փարթամ* անգութ: - 601. Եւ թէ լինէիր կամօք *փարթամ* որպէս սողոմոն. որում ո՛չ անխայեաց զոր ինչ ցանկացաւ ի սրտի: - 761

**ՓԱՐԹԱՄԱՆԱՄ +** Եւ դարձեալ՝ բարեկենդանն նշանակէ՛ զառաքինութիւն հոգւոյն ամենայնիւ *փարթամացեալ:* - 657. Եւ երբեմն միտէ՛. որպէս ի փրկել զբարիս կամ զչարս. և *փարթամանալ* բարեաց կամ չարաց: - 746

**ՓԱՐԹԱՄՈՒԹԻՒՆ +** Իններ, յովսէփ ստացաւ ոսկի և զարծաթ և զերկիրն եգիպտացւոց՝ փարաւոնի. այսինքն զզէնս սատանայի. զի *փարթամութիւնն* մեծ զէն է սատանայի որովք գործէ՛ զամենայն պղծութիւնս...: - 314. Եւ որպէս ննջեցեալն քնով՝ ո՛չ տեսանէ զինքն. և որպէս յաւելի կերակրոյ խնուն զգայարանքն. նոյնպէս ագահութիւն և *փարթամութիւն* և հպարտութիւն մոռանալ տայ զինքն...: - 397-398. Իններորդ՝ և բազում ծախիւք և *փարթամութեամբ* եկն: - 442. Աղքատութիւն հոգւոյ է՛ հրաժարիլն յաշխարհէ. այսինքն ի սիրոյ մարմնական հեշտութեանց և ի *փարթամութեանց* և ի պատուոյ. քանզի զերիսս զայս պարունակէ սէր աշխարհիս: - 583. Երրորդ ըստ արտաքին ընչից, աղքատութիւն և *փարթամութիւն:* - 663

**ՓԱՐԻՍ** - Երկրորդ՝ զի կամէր զա՛զգն հարցանել թէ յուդայի ցեղէն և *փարիսէ՞ն* իցէ, զի սպանցէ զնա: - 427

**ՓԱՐԻՍԵՑԻ** - Այլ և ատելութիւնն դարձուցանէ զմիտս բազմաց ի հաւատոցն. որպէս ատելութիւն և նախանձ *փարիսեցւոցն* ո՛չ տային թոյլ հաւատալ ի քրիստոս. թէպէտ տեսանէին զամենայն նշանսն զորս առնէր...: - 32. Եօթներորդ, խմորն զաղանդ սադուկեցւոցն և *փարիսեցւոցն* առակեաց տէրն: - 356. Եւ երբեմն առ *փարիսեցիսն*, «զի՞ փորձէք զիս կե՛ղծաւորք»: - 557. Երկրորդ, որ ասաց *փարիսեցին* «պահեմ երկիցս ի շաբաթու»: - 653

**ՓԱՓԱԳ +** Այլ սէրն և *փափագն* ասի նախանձ զաստուծոյ: - 128. Տասներորդ՝ յապաղեաց զայն, զի *փափագն* առաւելասցի. աստ հաւատով և յուսով ակն ունել. և ապա՛ դէմ յանդիման երևիլ: - 663

**ՓԱՓԱԳԱՆՔ +** Մինն կամէր լնուլ զպէտս իւր և անգիտութեամբ անկաւ յորովայնամոլութիւն. և միւսն յօժարութեամբ և *փափագանօք* անկաւ: - 565. Այն որ *փափագանօք* անկաւ՝ մեծագոյն է քան զմիւսն: - 565

**ՓԱՓԱԳԵԼԻ +** Յնգետասաներորդ՝ ասէ սուրբն դիոնէսիոս՝ թէ վասն այն տայ աստուած սրբոցն նեղութիւնս և փորձութիւնս, զի նեղութիւնն սիրելի և *փափագելի*՛ է նոցա. և յայնժամ ուրախանան սուրբքն, յորժամ ի մարմնական հեշտութեանց հեռանան. և արիանան ի փորձութիւնս. և սակաւ նեղութեամբ ժամանեն ի մեծ հանգիստն: - 159-160. Երրորդ, քաղցր է և *փափագելի*. զի զամենայն ինչ որ բարի է ի ստեղծուածս՝ օրինակ տամք ստեղծողին: - 338

**ՓԱՓԱԳԵՄ, ՓԱՓԱՔԵՄ +** Նախ՝ զի ո՛չ էն *փափագի* և ցանկայի է լինիլ և գոյ: - 23. Իսկ չարն ո՛չ *փափագի* բարի լինիլ: - 23. Եւ նախա՛նձ է սիրելն և *փափագիլն.* ըստ այնմ, «նախանձաւոր լերուք շնորհացն որ լաւն են»: - 128. Յինգերորդ՝ *փափագիմք* մասնակից նորա լինիլ սրբութեան և փառաց: - 673. Խնդրել *փափաքիմ:* - 784

**ՓԱՓԿԱՆԱՄ +** ...եթէ սուրբք որ աստ չարչարեցան, յառնեն յառաջագոյն և *փափկանան* մարմնով **ռ** ամ. և ապա հասարակ յարութիւնն ամենայն մարդկան: - 710. Վասն չորրորդին, որք աստ ժահահոտ նեխութեամբ պոռնկութեանն քաղցրապէս *փափկանային*. արդարապէս անդ դառնապէս տանջին: - 752

**ՓԱՓԿԱՍԷՐ +** Նախ՝ օծումն մարմնական. որպէս *փափկասիրաց:* - 474

**ՓԱՓԿՈՒԹԻՒՆ +** Արդ ներքին է՝ որ ի *փափկութեանց* և ի հեշտութեանց փորձի բնութիւնս մեր և այլայլի ի զանազան տեսակս մեղաց...: - 160. *Փափկութիւնն* ջրոյ: - 215. Եօթներորդ՝ վայելչութիւն անաշխատ *փափկութեան* դրախտին: - 278. Չորրորդ՝ ի խրախութիւն գինւոյ՝ **ժ** մեղք գործին. այսինքն Նախ՝ բազմակերութիւն. **բ**՝ արբեցութիւն. **գ**՝ զմայլումն զգայութեանց. **դ**՝ *փափկութիւն* մարմնոյ...: - 322. ...զի գիտասցուք թէ որպէս արդարոց *փափկութիւնն* է յաւիտենական, ա՛յսպէս և մեղուցելոց տանջանքն: - 703. ...և ամենայն որ ինչ *փափկութիւն* գտանիցի՝ աշխատութիւն. մինչ զի բարութիւնն աստուծոյ յանհունս գերազանցէ՛ քան զամենայն ստեղծեալ բարութիւնս: - 762. Զի նւազունք են ամենայն *փափկութիւնք* որ լինին յաշխարհի մինչև ցօրն դատաստանի, բաղդատեալ առ այն քաղցրութիւն. որպէս կաթիլ մի ջրոյ առ համեմատութիւն ընդ հանուր ծովու: - 762

**ՓԱՓՈՒԿ (կակուղ, նուրբ) +** Երրորդ՝ զի *փափուկ* ջիլք և նեարք՝ յերեսացն գան և առնեն զգայարանս. և հաստն ի թիկունքն սփռի վասն ուժոյ և պնդութեան և շարժութեան: - 234. Իսկ պարզն և մաքուրն մնայ ի յուղեղն ի *փափկոց* խելացն: - 242

**ՓԱՓՈՒԿ (փափկախոս, մեղմ) +** Զի *փափուկ* է հելլենացին. և սաստիկ հռոմայեցին: - 297. Իսկ գեղեցկախօսութիւն լեզուաց, *Փափուկ* հելլենն: - 299

**ՓԵԳՈՎՐԱՅ** - *Փեգովրայ* տեղի՛ էր կռոց. և դևքն չտային թոյլ քաղել զմարմինն...: - 409

**ՓԵՂԿ +** Զի՞նչ նշանակէր **ժ** *փեղկ* և ձև խորանին: - 342

**ՓԵՆԵՅԷՍ, ՓԵՆԷՅԷԶ** - Նախ՝ զի հրամանաւն աստուծոյ էր. որպէս պոռնկութիւնն ովսէի և սպանութիւնն *փենեհէսի* ո՛չ էր մեղք: - 337. Նախ՝ զի զայրացաւ նախանձուն աստուծոյ. որպէս *փենեհէս* և եղիա: - 349. Եւ վասն այսմ ի սուր անկան ծոյլ քահանայքն ոփնի և *փենէհէզ*. և **լա** ի դասուց անկան և տապանակն գերի առաւ: - 425. Նախ՝ զի անարժան լինին սպասաւորքն. որպէս ոփնի և *փենէհէզ* որդիքն հեղեայ: - 425. Աբիաթար որդի է աքիմէլէքայ. որդւոյ աքիտովբայ. որդւոյ *փենէհէսի*. որդւոյ հեղեայ: - 427. Նախ՝ զի վրէժխնդիր եղև օրինացն աստուծոյ. որպէս *փենէհէզ* սպան զզամբրի և զքասբի. և սանուէլ զագագ: - 444

**ՓԵՌԵԿԵԼ +** Երկրորդ՝ այսպէս. զի օդն հողմովն *փեռեկէ*՛ զհուրն ի **բ** կիսագունդս. վերոյ և ներքոյ: - 181. Եւ բնականն Նախ այսպէս. զի օդն որ ի մէջէ մտեալ և *փեռեկեալ* զներքին և զվերին կիսագունդն, նա՛ է պատճառ շարժութեան երկնից: - 182. Ի ներքոյ երկրի անցեալ և զերկին *փեռեկեալ* հաստատուն պահէ: - 203. Նոյնպէս և երբեմն յուզել ուրախութեանց. ի *փեռեկեալ* թոքոյ ի կոտորումն շնչոյն, ի քաղանթէ՛ որ առ լերդաւն՝ հիւթ ինչ ծաւալի առ նոյն ասացեալ տեղի. ելեալ զոլորշեացն նմանապէս առաջնոյն. և լինի քաղցրագոյն արտօսր. վասն ասացեալ հիւթոյն ի քաղցրորակն անօթոյ: - 787. *Փեռեկելով* զերկոսին կիսագունդս ներքոյ և վերոյ և ի միջի հաստատ կացելոյ երկրի: - 788

**ՓԵՍԱՅ +** Երրորդ՝ ըստ ո՛չ պատշաճի. որպէս ո՛չ կարեն պահել որդիք առագաստի մինչ ընդ նոսա իցէ *փեսայն* որ է քրիստոս: - 44. Եւ մերոյն *փեսային* քրիստոսի՝ յովհաննէս ի վերայ յորդանանու խօսեցաւ զհարսնացեալ եկեղեցի: - 305. Նոյնպէս և մարմնական կապովն, զի ազգակից է մեզ և *փեսայ* հոգևոր. և ցանկամբ նմա ակն ունելով վարձուցն հատուցման: - 318. Խոյ կոչեցաւ. զի ծնաւ և զգեցոյց զմեզ. և *փեսա՛յ* է եկեղեցոյ: - 361. Չորրորդ՝ խորհրդական. զի մի է քրիստոս *փեսայ*. և զեկեղեցիս հրէից և հեթանոսաց ընկալաւ իւր հարսն սուրբ: - 401. Երկոտասաներորդ՝ խօսեցան զառաջինն ի հաւանութիւն *փեսային:* - 422. Քսանք, երկոքին դուստրն խօսեցաւ դաւթի, և կրտսերն տւաւ. և *փեսային* քրիստոսի կրկին խօսեցաւ եկեղեցի և նո՛րս տուաւ: - 436. Տասներորդ՝ քրիստոս *փեսայ* կոչի և եկեղեցի հարսն հոգևոր. և նա՛ գլուխ և մեք անդամք և ժառանգակիցք: - 480. Ա՛րդ՝ *փեսայ* և գլուխ և ժառանգ արուն է և ո՛չ էգն. վասն այն արու ծնաւ քրիստոս: - 480. Եւ վարագոյրն պատառեցաւ. զի յանարգանս *փեսային* պատառեաց հարսն զքօղն. և կողն աղբիւրացաւ. և նոքա ո՛չ արտասուեցին: - 490. Նախ՝ զի յետ յարութեանն ո՛չ էր պահք. այլ զատիկ մինչ *փեսայն* ընդ նոսա էր որպէս ինքն հրամայեաց: - 511. Եւ դարձեալ նա՛ կոչի դուստր. և մեք հարսն երկնաւոր *փեսային:* - 533. Նախ՝ վասն կատարեալ սիրոյն քրիստոսի որպէս *փեսայի* և հարսին: - 534. Ընդ քրիստոսի միաւորեալ. որպէս *փեսայն* որդի է, և հարսն դուստր կոչի աստուծոյ հօր: - 534. Եւ կին վասն գոլոյն որում *փեսայ* կոչի: - 534. Զի եպիսկոպոսն

*փեսայ* է և վիճակն հարսն. նա՛ միա՛յն իշխէ: - 541. Եւ այս աճման սկիզբն պսակն է. որ միանայ հարսն ընդ *փեսային*. և լինի ըստ սահմանադրութեանն աստուծոյ ծննդագործութիւն: - 609. Զի յայնմ հետէ հարսն *փեսային* լինի նշանեալ, և *փեսայն* հարսինն է՛ յատկացեալ: - 609-610. Զի բռնութեամբ և առանց հաւանելոյ միմեանց՝ այսինքն *փեսային* և հարսին՝ ո՛չ հաստատի պսակն: - 610. Զայս ունի խորհուրդ, որ հարսն և *փեսայն* յառաջ քան զպսակն տեսանեն զմիմեանս. և հաւանին սրտիւք և կամօք և ապա՛ պսակին: - 610. Զի օտար ազգք՝ միջնորդութեամբ *փեսային* և հարսին որ են մի մարմին, լինին և նոքա մի ազգ: - 611. Դարձեալ՝ բանն աստուած *փեսայ* կոչի հարսին եկեղեցւոյ. և զօտար բնութիւնս մարդկան միաւորեաց ընդ ինքեան: - 612. Եւ եկեղեցի սուրբ. հարսն անախտ. և դշխոյ անարատ ընդ աջմէ *փեսային* քրիստոսի: - 614. Չորրորդ, զի մանկունք եմք առագաստի և *փեսայն* քրիստոս ընդ մեզ է...: - 654. ...և յարութիւնն միանալ սիրով ընդ *փեսային* քրիստոսի և մտանել յառագաստն ընդ իմաստուն կուսիցն: - 681. Ա՛րդ՝ *փեսա* քրիստոս է. և հարսն հաւատացեալ ժողովուրդքն: - 693. Արդ այժմ ի մկրտութիւնն հաւատն նշան դնի հարսին. և յետ մահու յուսով կոչի ի հարսանիս. և յետ յարութեանն սիրով միաւորի ընդ *փեսային:* - 693. Ապա ուրեմն ի գալ *փեսային* լինի պսակ և հարսանիսս այս հոգևորապէս: - 693. Եւ յայնմ աւուր իմաստունքն մտին յառագաստ *փեսային*, և յիմարքն արտաքոյ մնացին: - 693. Երբեմն *փեսայ* և հարսանիք, վասն անտրտում ուրախութեանն: - 757. Նա՛խ՝ զի առ նոսա միաւորեալ է քրիստոս իբր տէր ընդ ծառայս. իսկ միաւորի ընդ եկեղեցի իբր *փեսայ* ընդ հարսին. և գլուխ ընդ անդամոց: - 757. Զի որպէս քրիստոս չարչարանօքն փրկեաց զեկեղեցի և հարսնացոյց, նոյն և առաքեալն քարոզութեամբ իբր զկոյս մի սուրբ յանդիման արար *փեսային* քրիստոսի: - 781

**ՓԵՍԱՒԷՐ +** Եօթներորդ՝ որպէս *փեսաւէրն* խահակայ եղիազար խօսեցաւ զհարսն ի վերայ ջրհորոյն: - 305

**ՓԵՍԻՈՍ** - Եւ անուն փարաւոնի որ ընկղմեցաւ՝ *փեսիոս*. և ոմանք կանաքարիս կոչեն: - 337

**ՓԵՏ +** Զի ի երկու տառք են Ալֆա *փետացն* եբրայեցւոց: - 451

**ՓԵՏԱ** - Որպէս դամասկացին յոհան՝ և օգոստինոս՝ իմանալի և զգալի ասացին: Այսպէս և *փետա:* - 221

**ՓԵՏՐՎԱՐ +** Բայց ասեն ոմանք թէ՝ յաւուրս մանասէի՝ Նումաս պումիլոս **բ** ամիս յաւել ի տարին հռօմոց. զի յառաջ քան զնա՝ **ժ** էր. և յաւել ի նոսա զյունվար և *զփետրվար:* - 201. Եւ ի *փետրվարի* երկուքն տեառնընդառաջ կատարեն: - 483. Որ կատարի տեառնընդառաջն *փետրվարի* **ժդ**: - 483. ...զի զքառասնօրեայ գալուստն ի տաճարն՝ ըստ ծննդեանն տօնեսցեն և ո՛չ ըստ յայտնութեանն. որ է՛ յունվարի վեցն. զոր մեք տօնեմք **խ** օր թուեալ մինչև ի **ժդ**ն *փետրվարի:* - 485

**ՓԵՐԵԶԱՑԻ** - Եւ այս են **իբ** լեզուքն: ...*Փերեզացիք:* - 298

**ՓԻԼԻՄՈՆ** - Եւ չորեքտասան թուղթք պօղոսի. ...Տիտոսի: *Փիլիմոնի:* - 450

**ՓԻԼԻՊՊԵՑԻ (Պողոս առաքյալի թղթերից)** - Այլ ի *փիլիպպեցւոցն* ասէ պօղոս, «թլփատութիւն մեք իսկ եմք որք զհոգին աստուծոյ պաշտեմք»: - 57. Երրորդ՝ ասէ ի *փիլիպպեցւոցն*, «զայն խորհեսցի իւրաքանչիւր ոք որ ի քրիստոս յիսուս՝ որ ի կերպարանս աստուծոյ էր»: - 72. Չորեքտասաներորդ՝ պօղոս ասէ ի *փիլիպպեցւոցն* «որ ի կերպարանս աստուծոյ էր՝ զկերպարանս ծառայի էառ. ի նմանութիւն մարդկան եղև». և այլն: - 73. Գաղատացւոց: Եփեսացւոց: *Փիլիպպեցւոց:* Կողոսացւոց: - 450. Որպէս ասէ *փիլիպպեցւոցն*, «փրկչին ակնունիմք գալստեան. զի նորոգեսցէ զմարմին խոնարհութեան մերոյ ըստ նմանութեան մարմնոյ փառաց իւրոց»: - 736-737. Եւ ի *փիլիպպեցոց*՝ «փրկչին ակն ունիմք տն մերոյ յիսուս քրիստոսի որ նորոգեսցէ զմարմին խոնարհութեան մերոյ ըստ նմանութեան մարմնոյ փառաց իւրոց»: - 767

**ՓԻԼԻՊՊՈՍ** - Ռուբէ՛ն է և *Փիլիպպոս:* - 348. Այլ և *փիլիպպոս* **խ** օր արտաքոյ եկաց դրախտին: - 391. Ներքինոյն զոր *փիլիպպոս* մկրտեաց փոքամո՛ս էր: - 495. Ասաց զայս *փիլիպպոս:* - 573. Չորրորդ, զի թէ ի ձեռն *փիլիպպոսի* առաքելոյ որ էր մի յեօթանց անտի սարկաւագացն ո՛չ եղև իջեալ հոգին ի վերայ ներքինւոյն մինչև յափշտակեցաւ յազովտոս...: - 589

**ՓԻԼԻՍՈՓԱՅ +** Դարձեալ ասեն ըստ *փիլիսոփային* թէ՝ ո՛չ աստուած՝ և ո՛չ բնութիւնն՝ և ո՛չ արհեստ՝ վայրապար իրս երբեք ստեղծանեն...: - 13. ...ըստ բնութեան գործելով ոչ ոք մեղանչէ ասէ *փիլիսոփայն:* - 19. Առ որս ասեմք եթէ՝ բանս այս «ամենայն» ո՛չ այնպէս նեղագոյն առեալ լինի ի սուրբ գիրս՝ որպէս առ *փիլիսոփայսն:* - 27. Ուր են եղանակք բաժանման ըստ *փիլիսոփային*. այսինքն Որպէս սեռ ի տեսակս. Տեսակ յանհատս: - 87. Եւ որպէս ասէ *փիլիսոփայն*՝ երեք են յասացելոցդ իսկապէս եղանակք բաժանման. այսինքն Որպէս սեռ ի տեսակս. Որպէս բոլոր ի մասունս. Որպէս համանուն

ծայն: - 89. Տասներորդ՝ գործ բութեան ո՛չ ինչ ունի մեղք. զի ըստ բնութեան գործելով ոչ ոք մեղանչէ ասէ *փիլիսոփայն*. իսկ կամացն գործ՝ մեղանչական է. վասն որոյ կամաւորին գով և պարսաւ հետևի: - 156. Զի՞նչ է որ ասեն *փիլիսոփայք* թէ յոչ ուրեքէն յոչ երբեքէն ոչինչ լինի: - 173. Իսկ բանք *փիլիսոփայիցն* ո՛չ են ընդդէմ եկեղեցւոյ. այլ համաձայնին միմեանց: - 173. Որպէս ասեն *փիլիսոփայք* թէ կրկին է չափ: - 198. Նա՛խ՝ ըստ *փիլիսոփայիցն* ներքին մասունքն հոգւոյն պատճառե՛ն զարտաքին մասունս մարմնոյն. և ըստ պղատոնի՝ հոգին եռամասնեալ գոլով՝ բան և ցասումն և ցանկութիւն: - 232. Սակայն և ո՛չ է պարտ զանց առնել զիմաստս *փիլիսոփայիցն:* - 246. Ըստ *փիլիսոփային* **բ** են զօրութիւնք անձին. այսինքն գիտնականս և կենդանականս: - 248. Իմաստասէր իմանամք զայնս՝ որք ըստ արտաքին *փիլիսոփայիցն* կրթութեան են վարժեալք. որպէս պղատոն, արիստոտէլ, և այլքն: - 269. Զի ըստ *փիլիսոփային* եթէ է՞, և զի՞նչ է, և ո՞րպիսի ինչ է: - 331. Սակայն տեսցուք զի ըստ *փիլիսոփային* մի ասի **գ** եղանակաւ: - 533. Արդ՝ որոյ գործն յաւիտենական է, և նոյն ինքն անապական է ասէ *փիլիսոփայն*. ապա ուրեմն անապական է սուրբ խաչն: - 734. Նախ բնական առարկութեամբ ըստ *փիլիսոփայիցն* հաստղութեան. և սա՛ կոչի գիտութիւն: - 784

**ՓԻԼՈՆ (Ալեքսանդրացի)** - Իսկ աբրահամ մանուկ. ըստ որում «**գ** արքն՝ **գ** մանկունք էին» ասէ *փիլոն:* - 115. Նշանակէ՛ ըստ *փիլոնի*, զի անմարմինքն մինչև յերեքն հասանին. որպէս երկրաչափքն գրեն նիշ՝ գիծ՝ երևոյթ. ա՛յս է իմանալեացն չափ: - 344. Հինգերորդ, ըստ *փիլոնի* գաւազանն է իմաստութիւննն. դալարեալ մտօք և ծաղկեալ ուսմամբն. և պտուղ՝ ուսուցմամբ աշակերտաց: - 382. Երկրորդ, ըստ *փիլոնի*, օծն ցանկութեան է օրինակ, որ զցանկացօղ ժողովուրդն սատակէր. ի յախտս իւրեանց նմանեցոյց զպատիժն: - 386. Տասներորդ, որպէս ասէ *փիլոն* նշանակ հեշտ ցանկութեան է օձն. որ և զցանկացօղ ժողովուրդն սատակէր. ըստ ախտին իւրեանց նմանեցոյց զպատուհասն: - 387. Եւ են սոքա կրկին զօրութիւնք. արարչական և արքունական. ըստ *փիլոնի* որպէս կրկին ձեռք մարդոյ աջ և ահեակ: - 457

**ՓԻԼՈՆ (եկեղեցական զգեստ) +** Երկրորդ՝ Արքեպիսկոպոսք. որ թարգմանին եպիսկոպոսապետք. և սքեմ նոցա քականօթ և պճղնաւոր. և *փիլոն*. և ի վերայ նորա եմիփորոն **դ** կրկին խաչիւ շուրջ զիւրև: - 607. Բաճկոնն և *փիլոնն*, որպէս զրահ: - 674

**ՓԻԼՈՆ ԻՄԱՍՏՈՒՆ** - Ապա ուրեմն համաձայնելի է մեզ *փիլոնի իմաստնոյ*. որ անճօրելի է ասէ պտուղն և անթափ տերևն: - 224

**ՓԻՂ +** Ո՞րք և ո՞յք են բնութեամբ զէնք կենդանեաց: ...Կամ կնչիթ. որպէս *փղի:* - 216

**ՓԻՍՈՆ ԳԵՏ** - Զմրուխտ. կանա՛չ է և դեղնագոյն. գտանի ի *փիսոն գետ*. Ղևի՛ է և Յոհաննէս: - 348

**ՓԻՆԻԿ +** Հինգերորդ՝ արմաւ հաւուն՝ զոր այլք *փիւնիկ* ասեն որ է յարաբիայ. որ ծախէ՛ ինքն զինքն հրով, և դարձեալ կենդանանայ: - 53

**ՓԻՆԻԿԵՑԻ** - Եւ այս են **իբ** լեզուքն: ...*Փիւնիկեցիք:* - 298. Իսկ որ զդպրութիւն գիտէ և գրով վարի՝ **բժան** ազգ է. այսինքն Եբրայեցիք. Քաղդէացիք. Ասորիք. Պարսիկք. Մարք. Հնդիկք: *Փիւնիկեցիք:* - 299

**ՓԼԱԲԻԱՆՈՍ** - Եւ ոմանք որպէս քաղկեդոնիկքն՝ մի անձն համբաւեն, և յերկու բնութիւնս բաժանեն զմի քրիստոսն. և **բ** կամք. և **բ** գործք. որպէս անիծեալն լևոն. և *փլաբիանոս*, և ընկերք նոցա: - 82. Եւ ընդ դէմ *փլաբիանոսի* որ **բ** բնութիւն ասէր: - 542. Եւ թղթով նզովեցին զեւտիքէս և *զփլաբիանոս* և զդոմնաս և զտումարն լևոնի: - 542. Եւ էր սիրելի *փլաբիանոսի*. և լևոնի. և թէոդորիտոսի զորս նզովեցին յեփեսոս. և վասն նոցա վրէժխնդրութեանն արարին ժողով **ոլզ** եպիսկոպոսաց. և ընկալան զթուղթն լևոնի. և զնզովեալն յեփեսոս *զփլաբիանոս* ընկալան...: - 542-543

**ՓԼՈՒՑԱՆԵՄ +** Ասեն վարդապետք եթէ հողմն հնչեաց և ցրուեաց զաշտարակն. զի մի՛ *փլուցեալ* վնասեսցէ զմարդիկ: - 298

**ՓԽՐԵՄ +** Իսկ մուրկ *փխրեալ*՝ եղին է փշրեալ: - 357

**ՓՂՇՏԱՑԻ** - Իսկ *զփղշտացիսն* եթող վասն ուխտին աբրահամու և աբիմելիքայ: - 417

**ՓՇԱԲԵՐ +** Վեցերորդ՝ ի խորհուրդն ադամայ որ անկաւ յերկիր *փշաբեր*, անկաւ յոբ յերկիր և յաղբիւս: - 323

**ՓՇԵՂԷՆ +** Հինգերորդ՝ *զփշեղէն* պսակն որ ի խաչին ի գլուխն էր՝ նշանակէ՛: - 481. Ութերորդն է թագիլն *փշեղէն* պսակօք. ի նշան փառաւորութեան մերոյ: - 489

**ՓՇՈՏ** - Եւ եերորդ՝ ո՛չ ևս թզենեաւ՝ այսինքն դառն վարուք ստուերանալ. զի տերև թզենւոյն դա՛ռն է և *փշոտ* ըստ մեղացն առակի: - 281

**ՓՇՐԱՆՔ +** Երրորդ՝ զի ի *փշրանաց* սեղանոյն և հեթանոսք կերակրեսցին: - 402

**ՓՇՐԵՄ +** Իսկ մուրկ փխրեալ՝ եղին է *փշրեալ:* - 357. Մետասաներորդ, ի բերանոց գազանաց կորզէր զհօտս. և տէր մեր *փշրելով* զժանիս մեղաւորին, կորզեաց զհաւատացեալս իւր: - 436. Եւ յորժամ ուտէր՝ նոցա *փշրէր* զմնացեալն: - 443

**ՓՈԹԱՄՈՍ** - Ներքինոյն զոր փիլիպպոս մկրտեաց *փոթամո՛ս* էր: - 495

**ՓՈԹՈՒԱԾ +** Իսկ պատանքն ո՛չ ծալեալ. զի խորհուրդ տըՆօրէնութեանն ո՛չ ամենևիմբ յայտնի է և ո՛չ անյայտ. որպէս կտաւն բազո՛ւմ ունէր *փոթուածս:* - 517

**ՓՈԽ +** Ունի բնական լոյս. և յարեգակնէն *փոխ* առնու լոյս: - 186. Նախ ասեն եթէ ի ծննդեանն կալեալ էր զգարշապարէն՝ եսաւայ, այժմ *զփոխն* անդրադարձէ՛ և յիշեցուցանէ նմա թէ՝ ամենայն իրի հատուցումն գոյ: - 311. Երկրորդ՝ որ գլուխն խնդրի և ո՛չ շահ. որպէս *փոխն:* - 375. Ա՛րդ՝ վասն այն ո՛չ խնդրի շահ արծաթոյ, զի *փո՛խ* է տուեալ: - 375. Նոյնպէս և *փոխ* հացի և այլ ինչ իրաց: - 375. Նա՛խ՝ զի զա՛յլ հարուածոց *փոխն* կրեցին զչարչարանքն յեգիպտոս. իսկ անդրանկացն մնաց: - 380

**ՓՈԽ (սաղմոսի մաս) +** Եւ **դ** *փոխն* վասն չորեքնիւթեայ բնութեանս. և վասն **դ** պահու գիշերոյն...: - 621. Իսկ եկեսցէն ունի սաղմոսս **թ** *փոխ* բոլոր. պահապան **թ** ժամուց հանապազորդ գիշերոյն: - 622. Այլ և խաղաղականն որ է ի կարդալն՝ է՛ **է** *փոխ*. ի պահպանութիւն է զգայարանցս. և ի մաքրութիւն անցեալ գործելեացն: - 622. Եւ *զփոխն* առաւել բարձր, որ է՛ աղաղակ ժողովրդեանն: - 627. ...զի առաջին *փոխն* է ի դէմս հօր. և միջինն առ որդի. և վերջինն առ հոգին սուրբ: - 628. Եւ *փոխն* որպէս գլուխն: - 631. Այլ և վեց *փոխ* է սաղմոսն այն և վաթսուն տուն: - 637. Եւ առաջին կանոնին՝ տէր տուընջան. և որ այլ զհետ սոցա աղօթք և *փոխք* նոցունց: - 659

**ՓՈԽԱԴՐԵՄ +** Իսկ եթէ զաստուածային անձն ասէք քրիստոս, որ է օծեալ. ահա ընդ օծեալս *փոխադրեցիք:* - 89. Երրորդ՝ վախճանեալ մովսէս ի լերինն, և միքայէլ *փոխադրէր* զմարմինն. սկսաւ սատանայ հայհոյել զսուրբն և սպանօղ անուանել վասն հարկանելոյն զեգիպտացին. վասն որոյ սաստեաց նմա հրեշտակապետն: - 410

**ՓՈԽԱԿԵՐՊԵՄ +** Գոյացութիւն հացին փոխեալ է ի գոյացութիւն մարմնոյն քրիստոսի և է՛ անապական. իսկ քանակն և որակն մնացեալ է դեռևս փոփոխելի. և յայնմանէ *փոխարկեալին* այլայլմունք ինչ: - 339. Իսկ ստինք յատկապէս գործի՛ է բնութեան ի պէտս սննդեան այնոցիկ ծննդոց զօրէն սերմանեաց երկրի. յորմէ հիւթոյ արեանն գոյացելոյ, ընդ ագուգայս երակաց արտագունեալ որակօք կաթն *փոխակերպեալ:* - 786

**ՓՈԽԱԿՑԻՄ** - Երրորդն է նշանական աստուածաբանութիւն. որ ի զգալի կերպարանաց *փոխակցիմք* յիմանալի տեսութիւնն. թէ զի՞նչ նշանակէ մարդ երևելին. կամ առիւծ. գառն. հուր. լոյս. և այլն: - 122

**ՓՈԽԱՆ +** ...նա *փոխան* այնմ զուրբաթ և զչորեքշաբաթ լուծանէ: - 649

**ՓՈԽԱՆԱԿ +** Ասելով թէ պատճառ ամենայնի՝ բարեաց և չարեաց մերոց ո՛չ մեք եմք, այլ է՛ առաջին պատճառն աստուած. որք փախչելով յառաջ ասացեալ բախտէ՛ և ճակատագրէ՛ աստեղացն, *փոխանակ* նոցա յառաջին պատճառն վերագրեն զիարկն. որպէս զի մի՛ ասիցեն երկու սկիզբն ըստ մանիքոսի: - 13. Դարձեալ, չորեքկին են հատուցմունք. բարի՛ *փոխանակ* բարւոյ, և չար *փոխանակ* չարի. որ է՛ գործ արդարութեան: - 18. Եւ բարի *փոխանակ* չարի, որ է անբաւ գթութեանն և ողորմութեանն աստուծոյ: - 18. Իսկ չար *փոխանակ* բարւոյ ո՛չ առնէ ըստ որում անիրաւութիւնէ...: - 18. Այլ որ եղև *փոխանակ* հնոյն նոր անդամ. և նզովք կոչեցաւ վասն իմ և մեղք այն որ ո՛չ արար զմեղս, և ելոյծ զանէծս և եբարձ զմեղս: - 42. Իսկ թէ մարդկութեանն միայն, անկա՛ր ընդ մարդապաշտ հայհոյութեամբ. և *փոխանակ* արարչի՝ արարածո՛յ երկրպագեցեր ընդդէմ աստուածային օրինացն: - 68. Շնորհեացն *փոխանակ* տալոյն է...: - 94. Ընդէ՞ր այլ հրեշտակք ո՛չ ստեղծ *փոխանակ* նոցա: - 149. Այլ հրեշտակ ո՛չ էր պարտ ստեղծանել *փոխանակ* նոցա: - 149. Զի աստուած *փոխանակ* ապաշխարութեան զմահն կամեցաւ. և հրեշտակք անմահք են. վասն որոյ առանց փրկութեան մնացին: - 149. Տասներորդ՝ զանկեղծ սէրն նշանակէ զոր ունին առ քրիստոս, *փոխանակ* չարչարանաց նորա չարչարանս կրել. և ի սիրոյ նորա ոչ մեկնիլ...: - 159. Եւ *փոխանակ* ծիրանւոյն՝ զառաքինութիւն զգեցոյց. որ քան զամենայն զգեստ արքունակա՛ն է: - 271. Եւ *փոխանակ* թագին՝ ինքնիշխան կամօք զարդարեաց: - 271. Եւ *փոխանակ* գաւազանին՝ անմահ երանութեամբ հաստատեաց: - 271. Եւ *փոխանակ* կօշկաց՝ զամենայն ինչ հնազանդ արար ի ներքոյ ոտից նորա: - 271. Այլ մորթ մաշկեղէն

ստեղծեաց և զգեցոյց նմա *փոխանակ* լուսեղէն զարդուն. զմեռելութիւն նորա նշանակելով: - 280. Եւ *փոխանակ* յ կանգնոյն՝ յ ամքն ի քրիստոսէ մինչև ի մեծն կոստանդիանոս. ուր յայտնեցաւ խաչն փրկչական: - 294. Որոյ *փոխանակ* հայր աստուած ետ զորդին իւր վասն գերազանց սիրոյն ի փրկութիւն աշխարհի: - 304. Չորրորդ՝ յովսէփ *փոխանակ* պոռնիկ կնոջն էառ զասանէթ կոյս գեղեցիկ: - 313. Նոյնպէս և տէր մեր *փոխանակ* շնացօղ ազգին հրէից ընկալաւ զեկեղեցի կոյս՝ և սուրբ ժողովուրդ իւր: - 313. Եւ տէրն զերկիր շարժեաց և զգերեզմանս եբաց. և գ ժամ խաւար էած *փոխանակ* գ աւուր խաւարին եգիպտոսի: - 329. Եւ *փոխանակ* սիւն ամպոյ՝ հոգին հովանաւոր և աւետարանին լոյս ծագեաց հոգւոցն: - 329. Չորրորդ՝ եղեգն *փոխանակ* յարդի: - 335. Երկրորդ՝ զորպիսութիւն և զձև աշխարհիս ցուցանէր ի խորանն եռայարկեան ի չորից նիւթոց *փոխանակ* դ տարերաց յանապական և յապականացու բնակչաց: - 342. Խոյրն, վարշամակն. և Միթրն և թիթեղն ոսկի, պատկերք սրբոցն նկարեալ. և երկոքին Բազպանն, *փոխանակ* անդրավարտեաց: - 348. Եօթներորդ՝ յօրինակ բանին մարդեղութեան գրեցաւ բանն ի տախտակի, և նա՛ կոչեցաւ վէմ կարծրացեալ աստուածութեամբն *փոխանակ* հողացելոյն ադամայ: - 349. Ութերորդ՝ զի տեսիլ աչացն առաւել պարզեսցէ զլեզու նորա *փոխանակ* ճարտարութեան լեզուին: - 352. Անդրանկաց սատակումն եգիպտոսի, նշանակէ՛ զանկումն սատանայի յերկնից. և *փոխանակ* նոցա ընտրեալ և կոչեալ որդի անդրանիկ զիսրայէլ...: - 380. Իսկ ճշմարիտն աստուած զայս ո՛չ խնդրէ. այլ երկիւղ խնդրէ ի տըղայոց որով խորշին ի չարէ. և սէր ի սրտէ *փոխանակ* անասնոց. և խաղաղութիւն առ ընկերս և օտարս...: - 396. Եւ *փոխանակ* մօրն տարերք ամենայն. որ հեծեն և յոգոց հանեն վասն ապականութեան մեր ըստ առաքելոյ: - 400. Եւ հայր աստուած որ ո՛չ կատարի կամք նորա ի մեզ. յայնժամ ըստ բազում գթութեան իւրոյ առաքեաց զմիածին որդին որ *փոխանակ* մեր կախեցաւ զփայտէն և ազատեաց զմեզ յանծիցն օրինաց...: - 400. Երկրորդ՝ զհոգին մովսէսի ո՛չ կարէր յափշտակել սատանայ, *փոխանակ* հոգւոյն զմարմինն ջանայր յափշտակել. և վիճէր ընդ հրեշտակին թէ իմ է...: - 410. Եւ *փոխանակ* հոգւոյն՝ հրեշտակական օգնութեանն կարօտացաւ ցուցանել զտիրապէս իշխօղն բնութեան. որ և կշտամբեաց զբռնութեամբ թագաւորելն նորա: - 410. Քսանևէ, սաւուղ *փոխանակ* պատուելոյ խորհէր դաւթի չարիս. և որդիքն սաւուղայ որդւոյն դաւթի *փոխանակ* երկրպագելոյ, ասէին «եկա՛յք արկցուք փայտ ի հաց մարմնոյ նորա, և ջնջեսցուք զյիշատակս նորա»: - 436. Եւ եկեղեցի *փոխանակ* բարեաց զշնորհս և զփառս: - 441. Եւ *փոխանակ* հայհոյութեան զպատարագ օրհնութեան մատուցանեն աստուծոյ: - 443. Դարձեալ՝ զարդարութիւն գործէր զի հաշտեսցի աստուած. վասն որոյ ինքնին սպան զամենայն. այս զուբճ յիսուսնսն, *փոխանակ* մարգարէիցն աստուծոյ զոր եսպան եզաբէլ: - 444. Իսկ ի հիւանդանալն՝ եղիսէոս եդ զձեռն ի վերայ ձեռաց արքային յովասու և զօրացոյց զնա ի պատերազմին ընդ դէմ ասորոցն *փոխանակ* լալոյն ի վերայ նորա: - 446. Երրորդ՝ վասն մխիթարութեան աշակերտացն. զի խ օր մխիթարեսցէ զնոսա *փոխանակ* խ ժամուն որ տրտմեցան ի մահն քրիստոսի...: - 520. Զի ատելութիւն մեղաց զղջումն է սրտին. և խոստովանի բերանով. և զամօթն կրէ *փոխանակ* պատժոյն: - 603. որք ունին զաթոռ չորից աւետարանչացն. որ *փոխանակ* չորեքկերպեան կենդանեացն եդան աւետարանիչքն: - 607. Նոյնպէս և աստ *փոխանակ* որոտմանն, Ո՞րթի բարձրաձայն. որ է՛ յառաջ մատիք: - 644. Եւ *փոխանակ* դաղմատին է՛ իւրաքանչիւր լեզու որ պատարագէ՛: - 645. ...վասն որոյ զուրբաթ և զչորեքշաբաթ լուծանէ այնմ *փոխանակ:* - 649. ...որ հեղու զարիւն մարդոյ *փոխանակ* նորա հեղցի արիւն նորա...: - 715. Նմանապէս և կողն որ առաւ յադամայ և շինեցաւ կին, ո՛չ յառնէ ի յադամ, այլ ի յևա. որոյ հիմն կազմութեան եղև *փոխանակ* սերման: - 719. Եւ դարձեալ ոմանք հերձուածօղք ասացին թէ՝ այս մարմինս ո՛չ յառնէ և ո՛չ այս մարդ որ մեռանի. այլ *փոխանակ* նորա նոր մարդ յառնէ: - 720. Իսկ հատուցանէ բարի *փոխանակ* բարեաց և շնորհ *փոխանակ* շնորհաց, զի բարի և արդա՛ր է: - 744. Այլ չար *փոխանակ* բարեաց ո՛չ երբէք հատուցանէ. ոչ ի կեանս յայս և ո՛չ ի հանդերձեալն...: - 744. Այլ թէ ի սոցանէ մի մի ուրուք տուեալ լինէր, *փոխանակ* թագաւորութեան համարէր. իսկ թէ սոքօք ամենեքումբք վայելեսցէ, գերագոյն բոլոր աշխարհի լինէր: - 761. Որ *փոխանակ* մահացու փայտին գիտութեան զյաւիտենից կեանքն մեզ պարգևեաց...: - 768. Արդ ահա ա՛յսօքիկ են ծառ կենաց ի յերկինս և յերկրի տնկեալ. *փոխանակ* ծառոյն կենաց ի դրախտին եդեմայ. յորմէ հրաժարեցոյց և պարսպեաց բոցեղէն սրովն զճանապարհի նորին: - 771. *Փոխանակ* խրախութեանց ճիչ աղաղակի ընդդէմ հեշտալեաց...: - 789

**ՓՈԽԱՆԱԿԵՄ +** Երրորդ՝ զի բազում օրհնութիւնս *փոխանակէին* ի զանազան համսն: - 339. Այլ և

ունիմք զբանաւոր պատարագս՝ զհոգի և զմարմին մեր սրբութեամբ *փոխանակեալ* նմա: - 362. Չորեքտասաներորդ՝ նա քարկոծեաց զաքար ազգականօք. և զռահաբ *փոխանակեաց* իւր ազգօքն: - 418. Եւ տէրն կորոյս զիսրայէլ ազգօք. և *փոխանակեաց* իւր ժողովուրդ զհեթանոսս օրինօք: - 418

**ՓՈԽԱՆՈՐԴ +** Յետ վախճանելոյն Մովսէսի՝ առաջնորդեաց ժողովրդեանն *փոխանորդ* նորին Յեսու որդի նաւեայ. ի ցեղէն եփրեմի: - 414. Եւ *փոխանորդ* նորա ի յերկրի ի հինն քահանայապետն որպէս ահարոն. և ի նորս կաթողիկոսն իւրաքանչիւր ազգի: - 534. Եւ *փոխանորդ* իւր նստոյց յաթոռ զսուրբն արիստակէս համանըման նորին առաքինութեամբ, և որդի ըստ մարմնոյ. և ապա՛ գնաց ի հռօմ: - 548. ...այսպէս և աստ զպակասութիւնս ասէ. որ է նոյն *փոխանորդ* չարչարանաց: - 781

**ՓՈԽԱՆՈՐԴԵՄ +** Եւ ո՛չ ամենևին ստեղծմամբ. զի մարմինն նախախնամութեամբ *փոխանորդի:* - 257. Չորրորդ՝ մովսէս եբեր մինչ ի յորդանան, և *փոխանորդեաց* յեսու: - 417

**ՓՈԽԱՆՈՐԴՈՒԹԻՒՆ +** Ասեմք առ այս. զի թէպէտ ա՛յլ է գործ ստեղծման և ա՛յլ նախախնամութեան. զի սեղծանելն է առնել իր ինչ ի յոչնչէ. և նախախնամելն՝ զեղեալն *փոխանորդութեամբ* ի նոյն տեսակն պահել: - 257

**ՓՈԽԱՆՑԱՊԷՍ** - Չորրորդ՝ հոգին *փոխանցապէս* իմանայ և յարացուցիւ. իսկ հրեշտակն զնախատիպն առանց յարացուցի: - 141. Զի յայսմ կենցաղոյս զուգաւորին յիշելն երբեմն և մոռանալ զներքոյս և զարտաքոյս. ըստ որում *փոխանցապէս* ունիմք զերից ժամանակաց գիտութիւն: - 774

**ՓՈԽԱՆՑԵՄ +** Իսկ կողմնաւոր՝ որպէս *փոխանցեալքն* ի միմեանց. որդի ի հօրէ՛. և լօղակք ի ջրոյ: - 142. Ասեմք առ այս եթէ որպէս դու օրէնս եդեր *փոխանցիլ* ի բարձրագունէն ի նւաստագոյն կեանս վասն մեղաց: - 252-253. Յիրաւի ապա ըստ այսմ օրինակի՝ որք ի մշտնջենաւորէն *փոխանցին* առ երազ սնոտեաց, ոչ ունիցին ինչ ի մտի. թէ և անդրադարձեալ աստի անդ մնասցէ յիշատակութիւն որպէս ասացաւ: - 775

**ՓՈԽԱՏՐԱՊԷՍ** - Ո՛չ փոխարկապէս, այլ *փոխատրապէս*. այսինքն զի ի միաւորութեանն եկաց մնաց որ ինչ էրն, և եղև որ ինչ ո՛չն էր: - 75. Երկրորդ՝ ասել զնոյն աստուածն մարդ. զնոյն մարդն աստուած. ո՛չ փոխարկապէս, այլ *փոխատրապէս:* - 77

**ՓՈԽԱՐԷՆ(Ք) +** Վեցերորդ՝ զի պահանջէ՛ ի սիրողաց իւրոց միշտ զայն խորհիլ. զի որպէս ինքն վասն սիրոյ զանձն իւր եդ ի վերայ մեր, և մեք վասն սիրոյ նորա *փոխարէն* դիցուք ի վերայ նորա: - 43. Իսկ *զփոխարէն* պարգևսն զոր ընկալաւ, Վասն առաջնոյն՝ զի ասէ գիր, «հայեցաւ», այսինքն հաճեցաւ աստուած ի հաբէլ: - 286. Երկրորդ՝ զուղղութեան գործոց բուռն էհար. և յուսացաւ թէ գո՛յ հատուցումն գործոց, և բարեաց *փոխարէն:* - 289. Տասն հարւածք էր եգիպտոսի, վասն է՞ր միայն զանդրանկաց *փոխարէնն* խնդրէ: - 380. Չորրորդ, **գ** օրն ի մեզ զղջմամբ և խոստովանութեամբ և *փոխարինաւն* հանգչիմք: - 380. Կամ զղջումն՝ խոստովանութիւնն՝ և *փոխարէնքն:* - 392. Իսկ յետ մահու ա՛յնոցիկ հոգւոց որք զղջան կամ խոստովանին զմեղս, քաղաք ապաստանի է նոցա ի կայանս հոգւոցն տրտմութիւն և ցաւն վասն *փոխարինաց* մինչ մեռանի քահանայն մեծ...: - 392. Առաջինն՝ նախ սիրել. և առանց *փոխարինաց:* - 396. Զի որ յետոյ սիրէ և *փոխարինօք* և մասնաւոր և երբէք, անկատար սէր է և մարմնական: - 396. Եւ այս գիտելի է, զի ամենայն խոստովանելոց թէ կատարեալ թէ անկատար, պա՛րտ է կարգել զապաշխարութիւն. այսինքն զհատուցումն *փոխարինաց:* - 432. Երկրորդ՝ վասն տկարութեան օրինացն. զի ի հինն ո՛չ կարէր բառնալ զմեղս առանց մարմնական *փոխարինաց* և յիշատակութեանց: - 433. Եւ յորժամ զղջանամք ի մեղաց՝ նախ խոստովանութեամբ շինեմք զտաճար սրբութեան մերոյ. և ապաշխարութեամբն որ է՛ *փոխարէնքն* կանգնեմք զպարիսպն եօթնիւք զգայութեամբք: - 448. Եւ է՛ ողորմութիւն նորա ծրի շնորհօք և պարգևօք. իսկ արդարութիւնն տուրք *փոխարէնք* և հատուցումն: - 457. Երեք. այսինքն զի բոլոր սրտիւ սիրէ և միշտ սիրէ և առանց *փոխարինաց* սիրէ. որպէս ասացաւ յերկրորդ օրէնքն: - 576. Չորրորդ՝ եթէ անփոյթ արար և մոռացաւ զկարգեալ ապաշխարութիւն *փոխարինացն*, պա՛րտ է կրկին խոստովանիլ...: - 603. Վեցերորդ, գոհութիւնն *փոխարէ՛ն* է ամենայն պարգևացն աստուծոյ: - 626. Նոյնպէս և երկրորդն որ ասէ ոչ նախանձիլ ընդ չարս որ են անզգամք. և զի ո՛չ գոյր նոցա աստ *փոխարէն* մեղաց. վասն այն հրովն յաւիտենից այրեսցէ զնոսա: - 629. ...և կոչելն զմահն ասէ. և վարձ՝ իսկոյն *զփոխարէնն:* - 696. Երկրորդ՝ զի տեսութիւնն հաւատոյն է *փոխարէն* զոր հոգին ընկալաւ. և պսակն գործոյն է զոր մարմնով առնու: - 697

**ՓՈԽԱՐԿԱՊԷՍ** - Երկրորդ՝ ասել զնոյն աստուածն մարդ. զնոյն մարդն աստուած. ո՛չ *փոխարկապէս*, այլ փոխատրապէս: - 77

**ՓՈԽԱՐԿԵՄ +** Պտուղն որ հատանի և ծասկի և ի մարմին *փոխարկի*. ո՞րպէս է անապական: - 223. Զի՞նչ է գաւազանն ի յօձ *փոխարկեալ:* - 332. Առաջինն է գաւազանն ի յօձ *փոխարկիլ:* - 332. Անդրանկաց սատակումն եգիպտոսի, նշանակէ՛ զանկումն սատանայի յերկնից. և փոխանակ նոցա ընտրեալ և կոչեալ որդի անդրանիկ զիսրայէլ. և զնոսա *փոխարկեալ* առնու զօծելոց դասս քրիստոնէից ի տեղի նոցա: - 380. Եւ դարձեալ ասեմք. տէրն մեր՝ մարդեղութեամբն եկն զապականութիւն մեր յանապականութիւն *փոխարկել*. և զիա՞րդ ինքն կրէր զապականութիւն: - 502. Որպէս անպտուղ երկիր կորուսանէ զբարի սերմանս և փուշ բուսուցանէ. նոյնպէս և մեք զբարի սերմանս որ եդ ի մեզ աստուած ի չարն *փոխարկեմք:* - 564. Եւ ասելն «ա՛յս է արիւն իմ» զէութիւն գինւոյն *փոխարկեաց:* - 596. Պատահմունք և որակն մնան ի հացն և ի գինին. իսկ գոյացութիւնն *փոխարկի* ի մարմին և արիւնն քրիստոսի վասն **դ** պատճառի: - 597. Իններորդ, հոգին և մարմինն են մի անձն մարդոյ. վասն որոյ *փոխարկեն* ի միմեանց զբարիս և զչարիս: - 724

**ՓՈԽԱՐԿՈՒԹԻՒՆ +** Այլ ո՛չ ասի մարդ աստուածացեալ և անմարմնացեալ. զի այս *փոխարկութեան* է: - 79

**ՓՈԽԵՄ +** Երկրորդ՝ զի թէ ի ներկայս ասեմք ի վերայ քարի թէ լինիցի փայտ. ո՛չ լինի այնպէս. արդ՝ թէ ասելն մեր զներկայն ո՛չ փոփոխէ, նա և ո՛չ զիանդերձեալ. կարէ *փոխել*. ո՛չ զմերձաւոր հանդերձեալն՝ և ո՛չ զհեռաւորն: - 8. Դարձեալ, թէ է հարկ, վասն է՞ր աղօթք և պատարագք և ողորմութիւնք և այլն՝ դարձուցանեն զմերձեալ չարիսն, և *փոխեն* ի բարիս: - 11. Եւ թէ սկսանիմք զչար, և նա *փոխէ* ի բարին ըստ բարի խնամոցն իւրոց: - 18. Իսկ ի բարւոյն ի չար՝ և ի չարէն ի բարի կարէ ոք *փոխիլ:* - 21. Եւ թէ ոք ասիցէ, այս ներհակա՛ց է որք *փոխեն* զմիմեանս. և ո՛չ ունակութեանց և պակասութեանց: - 21. Չորրորդ՝ ոչ էն յորժամ էանայ՝ դարձեալ յոչ էութիւն ո՛չ կարէ *փոխիլ:* - 23. Իսկ չարն ի յէութեան երևեալ՝ *փոխի* դարձեալ յոչինչ և յոչ գոյ: - 23. Զի և յօհան դամասկացին ասէ հարկ գոլ ամենայն սկզման ունել դադարումն. այլ զի հրեշտակք և հոգիք ոչ դադարին, այս կամա՛ցն աստուծոյ է պահպանութիւն, և ոչ բնութեան նոցա. զի յո՛չ էից եղեալքն՝ կարեն յոչ էութիւն *փոխիլ:* - 37. Վեցերորդ՝ որ *փոխին* այլք յայլոց բնութենէ վասն առատութեան բնութեանն. որպէս կարպասածին ճճին ունի սա ծնունդ սերմամբ իւր զնմանն. և ունի ելումն զկերպասն: - 53. Չորրորդ՝ երեք թիւն փոփոխմամբ է. յորժամ ասեմք մի և **բ** և **գ**, *փոխեցաւ* ի միոյն և եղև երկու. և *փոխեցաւ* յերկուցն և եղև **գ**: - 108. Իսկ սուրբ Երրորդութիւնն անփոփոխելի է. զի հայր ծնաւ զորդի և բղխեաց զհոգին. և ո՛չ *փոխեցաւ* ի գոլոյն հայր: - 108. Դարձեալ՝ ճշմարիտն *փոխի* երբեմն ի սուտն. որպէս իմաստասիրաց բանքն: - 121. Այսպէս և ծիածանն յինքն *փոխէ* զկերպարանն և լինի այլ: - 131. Տասներորդ՝ դարձեալ զանազանի, զի երևմունքն միայն *փոխեն* զհասարակ զգայութիւնն: - 133. Իսկ դևք *փոխեն* զերևակայութիւնն...: - 133. Իսկ հրեշտակք *փոխեն* զտեսս և զիմացականն վասն բարւոյ. զոր դևք ո՛չ կարեն *փոխել:* - 133. Իսկ աստուած կարէ՛ *փոխել* և զկամքն՝ որ է՛ ախորժակ ի չարէն առ բարին. զոր հրեշտակք ո՛չ կարեն *փոխել*. այլ միայն զարթուցանեն զախորժակն և օգնեն: - 133. Թէպէտ և զայս կարգ *փոխեն* ոմանք և զզօրութիւնն և զպետութիւնն աւանդեն որ մեզ ո՛չ է հետևելի. այլ սրբոյն դիոնիսեայ որպէս ասացաք: - 135. Նմանապէս և այս *փոխի* ի յարութեանն...: - 141. Իսկ ուղիղ՝ որպէս ապականեալք *փոխին* յիւրաքանչիւր տարերքս: - 142. Վասն որոյ կամեցաւ և արար ի գոյութիւն. այժմ ո՛չ կամի և ո՛չ *փոխէ* յանգոյութիւն: - 162-163. Այլ և ո՛չ ըստ այնմ որ է՛ սկիզբն գոյացութեան աշխարհի. զի անփոփոխ կամօք կամեցաւ և արար ի գոյութիւն. և անկա՛ր է *փոխիլ* կամացն անեղին և առնել յանգոյութիւն զեղեալս էութիւն: - 165. Զոր սուրբ հայրապետք *փոխեցին* զանուանս նոցա և եդին բոլոր շաբաթուն եօթն աւուրցն: - 190. Իսկ գիշեր յարութեանն քրիստոսի՝ *փոխեաց* զայս կարգ. զի յարութեամբն իւրով եհան զմեզ ի լոյս շնորհաց և արդարութեան: - 194. Այլ է՛ նշան *փոխելոյ* թագաւորաց. պատերազմի. և սովոյ. կամ այլ ինչ խռովութեան երկրի: - 203. Եւ սառուցեալ ի ներհակ հողմոյն, համանգամայն ընդ *փոխիլն* ի ջուր: - 205. Իններորդ՝ դառն ջուրն ի մէջ ամպոյն *փոխի* քաղցր և ախորժելի: - 206. Երրորդ՝ զսա՛ քրիստոս ի գինի *փոխեաց:* - 207. Իններորդ՝ ի դառնութենէ ի քաղցրութիւն *փոխի* ընդ երակս երկրի: - 207. Եւ այլք ասեն թէ՝ բազում աղբիւրք բղխեն ի ծովն. որպէս մեռայի ջուրն, և *փոխեն* զծովն ի դառն: - 208. Հինգերորդ՝ որ *փոխիլ* հրամայի: - 210. Երկիր որ *փոխիլ* հրամայի, է՛ յանցանք դատապարտելի: - 210. Մարդս զկարգ եղանակացդ բերէ յինքն. վասն այն ի վերջին *փոխիլն* սպիտակի: - 213. Եւ զի օրհնութիւնն ի յանէծք *փոխեաց*, ինքն անիծաւ և զրկեցաւ յօրհնութենէ ամենայն կենդանեաց: - 219. Այսպէս երևի թէ և դրախտին պտուղն նորն զհինն *փոխէ՛:* - 224. Եթէ յամենայն ամի նորն զհինն *փոխէ*, այս լինի կամ թափիլ

պտղոյն ի ծառոյն. և կամ մնալ հինն ընդ նորոյն: - 224. Թէպէտ ըստ նիւթոյն յապականացու երկրէ է, այլ ըստ կատարման յանապականութիւն *փոխեցաւ*: - 225. Մետասաներորդ՝ Վասն ստամոքսին. բերանն դառն և աղի՛ *փոխի*. և աջ կողմն ուժո՛վ է: - 227. Ձայս ցուցանէ դէմք ի նմին կողմն, և զոտս յառաջ *փոխել* և զձեռս: - 234. Ասեմք թէ՝ սոքա ի մասնաւոր հոգւոյն բարի են բնաւորեալ նախանձ ցանկութիւն և այլն. և վասն բարւո՛յ են եդեալ. այլ մարդն կամօք իւրովք *փոխէ*՛ զբնական բարին ի չարն: - 237. Եւ մինչ ի խռչափողն արիւն գայ, և անդ ի սպիտակ ջուր *փոխի*: - 242. Եւ որպէս արիւն հոսմանն ի մէջ երակացն *փոխի* և լինի սպիտակ կաթն, և ժողովի ի ստինսն: - 242. ...իսկ թէ պաղդամն մնայ ի լեարդն, բերանն աղի *փոխի*. իսկ թէ յըստակ արիւնն մնայ ի լեարդն, լերդին համն անոյշ լինի, և բերանոյն համն անուշ տայ և քաղցր: - 242-243. Եւ յայնմանէ *փոխեալ* ի կենդանւոյ մարմին և ի տունկս, և ապա ի մարդն դարձեալ: - 252. Այլ ա՛րդ ի յանբանսն ո՛չ է առաքինութիւն որով սրբի ի մեղաց. ապա պարտ է զի *փոխեսցի* ի ներքինն իւր որ է՛ տունկն. և նման կենդանւոյն զի աճէ՛: - 252. Կարգաւո՛ր է ապա՝ զի յանշնչոյն *փոխեսցի* յանէն և յանգոյն. որ մերձակայ և ներքո՛յ է անշունչ մարմնոյն: - 252. Եւ թէ ասեն՝ եթէ մեք ի տնկոյն ասեմք դարձեալ ի մարդն *փոխիլ* և ո՛չ յանշունչսն: - 252. Այլ ա՛րդ եթէ *փոխի* ի տնկոյն ի մարդն, վատթա՛ր է մարդոյն կեանք քան զտնկոյն. ուստի ի մեծագունէն ի նւաստն *փոխեցաւ*: - 253. Եւ եթէ այս սուտ է հա՛րկ է ասել քեզ կամ մնալ ի թուփն, կամ *փոխիլ* յանէն և անգոյանալ որպէս ցուցաւ: - 253. Չորրորդ՝ զի զօրութիւն է, և յետոյ ներգործութեամբ *փոխի*: - 256. Ձի քարշեն յերկրէ զհիւթ, և ունակացեալ պահեն, և հալեալ *փոխեն* յինքեանս. և վտարեն զաւելորդսն ի կեղև՝ ի տերև՝ և յայլսն: - 262. Վասն որոյ յեօթն ամիսս ատամն բուսանի տղայոց. և յեօթն ամն դարձեալ *փոխի*: - 264. Թէպէտ ոմանք *փոխեն* զայս կարգ, ո՛չ ընդ դէմ բանիցս կարգի. այսպէս ասելով: - 265. Եւ ապա զի յոչնչէ եղեալն կարէ՛ նմա և ի նոյն *փոխիլ* եթէ կամքն աստուծոյ թոյլ տացէ: - 274. Եօթներորդ՝ թշնամի եղև գործն մեր. որ նա՛ ի մեղս *փոխեաց* անցանելով զպատուիրանն: - 277. Այլ կամ իբր զիրեշտակս, կամ որպէս ի միոյ լուսոյ բազումք, կամ կուսութեամբ ծնունդ. որպէս սուրբ կոյսն մարիամ աստուածածին սրբութեամբ և կուսութեամբ ծնեալ *փոխեաց* զկարգ բնութեան ծննդեանս որ ի սերմանէ առն և կնոջ. զի սա՛ ծնունդ միայն ի մօրէ՛: - 280. Որ յետ յանցանացն *փոխեցաւ* և եղև թանձր և ծանր և մահկանացու և ընդդիմահար և աղտեղի: - 282. Որպէս ասէ աստուածաբանն թէ՝ ոչ ինչ էր ծածկոյթ ի մէջ նոցա և աստուծոյ. իսկ յետ մեղացն *փոխեցան* այսոքիկ. վասն որոյ մաշկեղէն հանդերձին ցուցմամբն նշանակէ՛ զմարմինս: - 282. Ասեմք եթէ՝ զոր ինչ ի յարութեանն աւուր լինելոց է սրբոցն, զսկիզբն անդանօր սերմանեաց ի նախնի մարդն ադամ. զի թէ յիւրում ժամանակին կերեալ էին ի կենաց պտղոյն, լինէին կատարեալ անմահք. և *փոխեին* յարքայութիւնն: - 282. Ձի պահելով զպատուիրանն ի կատարեալ անմահութիւնն ժամանէր յերկինս. իսկ անցանելովն *փոխեցաւ* ի մահ և անկաւ յերկիր: - 282. Եւ թէ զի՞նչ *փոխի* ի հանդերձեալն: - 284. Եւ թէ ո՞րպէս *փոխեցաւ* հինն ի նորս: - 284. Յիսունսմի, Ուր էր և տօնք ի հինն որ *փոխեցաւ* ի նորս: - 284. Եւ **խ** իջևանս *փոխելոյ* հոգւոցն: - 285. Ո՞ւր *փոխեցան* ենովք և եղիա: - 289. Այլ ի յամօթ առաջին կարծեացն՝ *փոխեաց* զենովք և ի հաւատ վերջին յարութեանն՝ վերացոյց զեղիա: - 289. Ձի *փոխելն* ցուցանէ նախ զկարող զօրութիւն *փոխողին*: - 289. Վասն որոյ փութացաւ աստուած և *փոխեաց* զէնօք, զի մի՛ սպանցեն և ասիցեն թէ *փոխեցաւ* յերկինս: - 290. Եւ այլք ասեն ընդդէմ այսմ, եթէ յետ **ռ** ամին ի դրախտէն *փոխիլոց* էին յարքայութիւնն թէ պահէին զպատուիրանն. և յորժամ ելին ի դրախտէն՝ ի նոյն թիւն ո՛չ հասին: - 290. Եւ վասն երկրորդին ասեն, եթէ կարծեօ՛ք է՝ թէ համանգամա՞յն *փոխիլոց* էին, թէ մի զհետ միոյ: - 290. Իններորդ՝ արիւնն և շունչն է սկիզբն գոյացութեան մերոյ. զի արիւնն *փոխի* ի սաղմն...: - 295. Կինն ղովտայ վասն է՞ր յաղ և ոչ յայլ ինչ նիւթ *փոխեցաւ*: - 303. Եւ սոքա որ երևինս մեզ կրտսեր և վերջին, *փոխեին* և լինէին նախկին և առաջին ըստ նախընտրութեանն աստուծոյ: - 310. ...իսկ յետ մահուն՝ *փոխի* և լինի հոգին երէց և անդրանիկ անմահ կենօք...: - 310. Ձի որք կամին՝ լինին անդրանիկ գործովք իւրեանց. և որք ոչ կամին՝ *փոխին* և լինին անարգ և վերջին: - 310. Եւ որք աստ պատւով են, *փոխին* և լինին անդ անարգ. և անպատիւքն պատւաւորք: - 310. Որպէս նշանակեցաւ յեփրեմն և ի մանասէ. որք *փոխեցան* յաջ և յահեակ: - 310. Եւ կարելի՛ է ամենայն կապիւս զոր ունիմք առ միմեանս՝ *փոխիլ* առ աստուած և կապիլ ի նա: - 317. Տասներորդ՝ ի փորձութեան լեառն զպատճառն ամենայն անիծից կործանեաց. և զառաջին անէծս յօրհնութիւն *փոխեաց*: - 320. ...**ե**՝ *փոխէ* զխորհուրդն...: - 322. Եւ տէրն զջուրն ի գինի *փոխեաց* և զգինին յարիւնն իւր սուրբ: - 328. Իսկ քրիստոս անխայելով յեկեղեցի՝ *փոխեաց* ի մկրտութիւն: - 329. Երկրորդ՝ դարձեալ նոյն ինքն սատանա՛յ է օձն. որ *փոխեցաւ* ի բարեկամի ձև. և պատրեաց զնախաստեղծսն: - 332. Առաջինն է՝ գետն յարիւն *փոխիլ*: - 333.

Զի՞նչ է գետն յարիւն *փոխիլ:* - 333. Է՛ որ զէութիւնն *փոխէ.* որպէս մովսէս զգետն յարիւն դարձոյց և զգաւազանն յօձ. և այս կոչի սքանչելիք: - 335. Եւ է՛ որ զկերպն և զձևն միա՛յն *փոխէ*, և կոչի առաչօք. որպէս յանէսն և յամրէսն առնէին կախարդութեամբ դիւական: - 335. Եւ այս գիտելի է. զի կախարդքն *փոխեն* զզգայարանս և ցուցանեն առ աչօք երևումն ինչ: - 335-336. Իսկ դևքն *փոխեն* զերևակայութիւնն և զզգայարանս, այլ ո՛չ զմիտս: - 336. Իսկ հրեշտակք կարե՛ն *փոխել* զմիտս և շրջել ի բարին. նաև զերևակայութիւնս և զզգայարանս, այլ ո՛չ զկամս: - 336. Իսկ աստուած *փոխէ*՛ և զկամս ազդելով ի նոսա զբարին...: - 336. Երկրորդ ա՛յն է՝ որ յորժամ լինի կամքն մարդոյն չար և խիստ ի ծածուկ, և զայն յայտնէ՛ աստուած. որպէս նաբուգոդոնոսորայ. որ ունէր սիրտ գազանի՝ ի կերպարանս գազանաց *փոխեցաւ:* - 336. Յինգերորդ, զի զանազան որակս *փոխեր:* - 338. Վասն է՞ր ի զանազան համս *փոխէր* մանանայն: - 339. Գոյացութիւն հացին *փոխեալ* է ի գոյացութիւն մարմնոյն քրիստոսի և է՛ անապական...: - 339. Յինգերորդ՝ յախորժակս *փոխիլն*. արժանաւորացն կեանք է և անարժանիցն մահ: - 339. Եւ **ե** միշտ՝ և առ ո՛չ միշտ. զի կերպն *փոխեցաւ* առ նորս: - 340. Եւ զոր ինչ լինելոց էր ի տարին, ի նոյն կերպարանս *փոխեին* և ակունքն: - 349. Դարձեալ՝ **դ** հասակ *փոխի* մարդոյս. մանուկ. երիտասարդ. կատարեալ հասակ. և ծեր: - 351. Յինն օրինա՛կ էր, և նորս ճշմարտութիւն. հանդերձեալն զի՞նչ *փոխի:* - 355. Սա՛ *փոխեալ* ի նորս նշանակէ՛ զմարմնաւոր նուէրքս. որպէս պահք աղօթք, ողորմութիւն: - 357. Չորրորդ, *փոխի*՛ բորն. և մեղքն ի միմեանս: - 367. Չորրորդ, թէ լուացեալ *փոխէ* զգոյնն, պատառէ՛ և սրբի: - 367. Այսինքն յորժամ խոստովանին և *փոխին* յապաշխարութեան վարս, պատառեն զմեղս և սրբին ի գործեցեալ մեղացն: - 367. Իսկ թէ ի տունն ի ժողովուրդս նորա. կամ յեկեղեցիս մեղանչեմք. յետ **է** ժամանակի *փոխելոյ*՝ որ է՛ **է** հասակ մեր. և **է** դար կենցաղոյս...: - 368. Ո՞րպէս է *փոխեալ* հինն ի նորս: - 369. Ոմանք ասեն՝ գործ մեղաց մնաց նոյն. այլ գործ սրբութեանն *փոխեցաւ* ի հոգևորն: - 369. Դարձեալ ասեն, մարմնական մեղքն *փոխեցաւ*. որպէս ի մեռեալ մերձիլն: - 369. Դարձեալ ասեն, բնական մեղքն խտրութեան մնաց ի գրաւորն, նոյնպէս ի նորս. որպէս սերմնակաթն և դաշտանին. այլ պատիժն *փոխեցաւ* հինն ի նորս: - 369. Զի իրն *փոխեցաւ* ի ճշմարտութիւն, և խորհուրդն մնաց նոյն. որպէս ջուրն և խունկն. իւղն և նաշիհն: - 369. Ա՛յսպէս *փոխեցաւ* ստուերն ի լոյս, և օրինակն ի ճշմարտութիւն: - 369. Այլ ուղիղն, զի օրէնքն թէպէտ ըստ խորհրդոյն *փոխեցաւ*, այլ ըստ իրին մնաց յաւիտեան. զի օրինակն էանց, այլ ճշմարտութիւնն մնաց: - 369. Մետասաներորդ՝ քաղցկեղ. որ զայլս *փոխէ*՛ ի մեղս: - 370. Այլ և բոլոր ամենայն տօնք հնոյն՝ **ը** տօն էր. զոր այժմ մեք ունիմք *փոխեալ* ի նորս: - 372. Զի՞նչ էր որ եհար զանդրանիկս եգիպտացւոց. և էառ զանդրանիկս իսրայէլի. և զայն ևս *փոխեաց* և էառ զղևտացիս: - 380. Դարձեալ՝ զղջմամբ սատակի չար խորհուրդն. և ապա՛ խոստովանիմք լեզուաւ. և զնոսա *փոխեալ* գործե՛մք զբարիս: - 380. Զջուրն ի գինի *փոխեաց:* - 399. Երրորդ՝ զի ինքն օրհնութիւն էր, և անէծքն մերձեալ ի նա յօրհնութիւն *փոխեցաւ*. որպէս խաւարն ի լոյս *փոխի*. և մեղքն յարդարութիւն. և մահ ի կեանս: - 400. Ուստի յա՛յտ է զի *փոխեաց* զփայտն անիծից և զգերեզմանն, և արար աղբիւր օրհնութեան փայտի և գերեզմանի: - 400. Իսկ խորհուրդն, ի յօրէնքն նոցա է զի փոփոխական էր օրէնքն նոցա. և որ *փոխիւր*, այլ ո՛չ դառնայր յօրէնս նոցա: - 401. Նա՛խ՝ վասն ցեղին ռուբէնի ասի. *փոխելով* զանէծքն ի յօրհնութիւն: - 409. Երեսուն օրն աւուրք է լուսնին որ *փոխէ* զտխրութիւն և ի լոյս գայ: - 411. Եւ հին օրէնքն արգելաւ ի մկրտութիւնն, և *փոխեաց* քրիստոս: - 417. Եւ զի հեղի ո՛չ խրատէր զնոսա սաստիւ և տանջանօք. վասն որոյ և ինքն պատժեցաւ և մեռաւ. և քահանայութիւնն յազգէ նորա *փոխեցաւ* յաւուրս սողոմոնի: - 425. Նախ ասեն թէ՝ *փոխեալ* էր զզգեստ պատւոյն և զգեցեալ ձորձ հովւութեան և այլագունեալ: - 427. Եւ յորժամ *փոխեցաւ* առ քրիստոս՝ **կ** ամաց էր: - 461. Քանզի ո՛չ կարէին ի միում աւուր յերկոսեան ուխտսն կատարել զտօնսն հեռի գոլով ի միմեանց. երուսաղէմացիքն այսր աղագաւ *փոխեցին*. և փոքր փոքր աճմամբ ընկալան և ա՛յլ եկեղեցիք զնոյն: - 482. Եւ այլք վասն արտեմոնի. զի նա՛ *փոխեաց* զծնունդն ի դեկտեմբերի **իե**: - 482. Զոր ի ժողովն քաղկեդոնի հաստատեցին զսոյն տօն ի **իե**ն դեկտեմբերի. պատճառելով թէ՝ ի հռօմ դարձի արեգական տօն կատարէին. և *փոխեաց* զայն պետրոս տօնել արեգականն արդարութեան: - 482. Եւ զինչ և իցէ պատճառաւ զկարգեալն առաքելոցն *փոխեցին* զծնունդն և զտեառնընդառաջին տօնն: - 482. Երրորդ՝ ի կանայ զջուրն ի գինի *փոխելոյ:* - 484. Մետասաներորդ՝ յա՛յտ է յամիսս նոցա. զի առաջին ամիս սեպտեմբե՛ր է նոցա. և վասն ծննդեանն քրիստոսի՝ *փոխեցին* և եդին զյունվար առաջին ամիս: - 484. Եւ յետ յարութեանն դուք ասէք թէ յանապականութիւն *փոխեցաւ:* - 500. Դարձեալ ասեմք ըստ ձեզ, թէ յետ խաչին յապականութիւն *փոխեցաւ* մարմինն տեառն, ապա յառաջ քան զխաչն կատարեալ էր զի ապականացո՛ւ էր. և յետ խաչին

անկատար զի անապական եղև որպէս դուքդ ասէք: - 500. Երկրորդ՝ զի *փոխեալ* է որպիսութիւն մարդոյն...: - 508. Տե՛ս զի ի ժողովն եփեսոսի հասարակ ամենայն ազգ այսօր նաւակատիս առնէին մինչ ի ժողովն քաղկեդոնի ուր *փոխեցան* տօնք և պահք և դաւանութիւնք: - 509. Թէպէտ այսօր վասն պատրանաց մարդկան և *փոխելոյ* զտօնս՝ ոչ ինչ ուտեն զնաւակատեաց որ է ծուկն. զոր միշտ զքառասնորդ պահքս պղծեալ են ձկամբ և արբեցութեամբ: - 509. Իսկ առաքեալքն *փոխեցին* զնաւակատիս մեր առանց արեան զի որոշեսցուք ի նոցանէ: - 509. Եօթնեմ՝ ի մէջ գիշերի յարեաւ, զի զօրէնս ստուերական ի լոյս ճշմարտութեան *փոխեսցէ:* - 514. Զի՞նչ զանազանին *փոխիլն* և համբառնալն և թռչիլ: - 519. Իսկ առաքեալն *փոխէ*՛ զայս կարգ բնական ի կարգ արհեստական և զարժանաւորսն նախադասէ: - 535. Նոյնպէս և աթոռակալքն որ ի չորս աթոռս, ա՛յլ զայլոյ վիճակեալ ո՛չ կարէ կապել և ո՛չ արձակել. նոյնպէս և ի նոյն աթոռն, վերջինն զառաջ նոյն ո՛չ կարէ *փոխել* կանոնս և զկարգ: - 541. Իսկ ի համակարգսն վերջինն զառաջ նոյն ընդէ՞ր ոչ *փոխէ* զկանոնսն: - 541. Յաղագս որոյ ո՛չ կարեմք զառաջնոյն հայրապետաց կարգ կամ զկանոնս զպահք կամ զայլ ինչ թիւրել և *փոխել:* - 541. Եւ *փոխեցին* զտօնս տէրունականս: - 547. Զի յղացեալ էր ի գերեզմանին թաղէոսի. և սնաւ անդ՝ ուր առաքեալն սկսաւ քահանայագործել. և *փոխեաց* յինքն զշնորհս նորա անդր եղեալ եպիսկոպոս: - 548. Զոր յետոյ մեծն կոստանդիանոս զայս աթոռս յեփեսոսէ՛ ի կոստանդնուպօլիս *փոխեաց:* - 549. «Ղէբէոս որ անուանեցաւ թադէոս». յայտ է ի քրիստոսէ զանունն *փոխեալ*. որպէս զպետրոսին և զորդւոցն որոտման: - 549. Երկրորդ պատճառ, զի այսոսիկ անասունքն գործեն ըստ բնական կարգին. իսկ մեք ի հակառակն *փոխեմք:* - 564. Որպէս բարկութիւնն բարի է ի դէմս չարեացն. *փոխեմք* զայն ընդ դէմ բարւոյն: - 564. Եւ զցանկութիւնն զոր ունիմք առ բարին, *փոխեմք* և ցանկամք չարեաց: - 564. Այսպէս և զխոհեմութիւնն ի չար խորհուրդս և ի խորամանկութիւնս *փոխեմք:* - 564. Զսէրն որ առ աստուած պարտ էաք, *փոխե՞մք* առ երկրաւորս և ի մեղս: - 564. Եւ զայս *փոխեն* ոմանք այսպէս. զսէրն առ բարութիւնն. զյոյսն ի բարձրութիւնն. և զհաւատն առ ճշմարտութիւնն: - 578. Եւ ո՛չ զկարգն *փոխել*. որպէս թէ յառաջ զհոգւոյ անունն ասել և ապա զորդւոյ և ապա՛ զհօր: - 588. Եւ ընդ ասելն «մեղայ», անցոյց աստուած զմեղքն. այսինքն անցաւ և *փոխեցաւ* յաւիտենից պատուհասն ի ժամանակեայն...: - 602. ...զի յորժամ մեղանչեմք, գրիմք ի պատիժն յաւիտենից. այլ ի զղջանալն և *փոխիլն* մեր, *փոխէ*՛ աստուած և զպատիժն ի ժամանակեայս: - 602. Զայս կարգս կացոյց քրիստոս յորժամ ի ժամ ընթրեացն զհացն ի մարմին իւր և զգինին ի յարիւն իւր *փոխեաց:* - 606. Վասն զի մարմինն ի չորից տարերց է. և ի **դ** ծնունդս *փոխին* **դ** արիւնք տարրականք ըստ այսմ օրինակի: - 612. Իսկ ի նորս *փոխեցաւ* ի հոգևոր օրհնութիւն և ծնունդ. և զմարմնաւորն ի սկզբան չափաւորն կապեաց. որպէս ադամ և եւա: - 613. Վասն է՞ր սարկաւագն զամենայն քարոզի վերջքն յաղօթից ձևս *փոխէ* ասելով՝ կեցո՛ և ողորմեա՛: - 625-626. Ի յայս միտս և զեօթն օր շաբաթուն *փոխեցին* առաքեալքն ի կիրակէ. որ **ը** երորդ է ըստ կարգի: - 627. ...որպէս և մեք ի սաղմոսաքաղ *փոխերն* չեմք ասեր. և այս այլ ի սաղմոսաքաղի հաշիւն է: - 630. Նոյնպէս և որ անիծից *փոխէ*՝ զալէլուն որ օրհնութիւն է ո՛չ խառնեմք: - 630. Վասն է՞ր ի բուն բարեկենդանն զձայնն ի վերջ *փոխեմք:* - 641. Վասն այն և տեղեաւ *փոխեմք*. զմարգարէսն ի մէջ եկեղեցւոյն, և զառաքեալսն մերձ բեմին ընթեռնումք: - 643. Դարձեալ՝ ի դատաստանի յորժամ դպրութիւնք բանին, որք աստ ի ձախմէ մարմնոյ՝ *փոխեսցին* յաջմէ. և որք յաջմէ՝ յահեկէ՛: - 646. Ութերորդ՝ որպէս յետ շաբաթուց կիրակէն *փոխի:* - 648. Նոյնպէս և սուրբք որ ա՛յժմ են ի հանգիստ՝ ի կիրակէ գալստեանն ի կատարեալ փառս և ի հանգիստ մշտնջենաւոր *փոխին*. ի հանգչելոյ ի հանգիստ. ի փառաց ի փառս: - 648. Եւ թէ հարցանէ ոք, այժմ ի յո՞ր հանգիստ են որ *փոխին:* - 648. Ասեմք թէ՝ այժմ ի հանգիստ գործո՛ցն են, և յայնժամ *փոխին* ի հանգիստ փառաց և պսակաց: - 648. ...և *փոխեցաւ* յերկուշաբաթի օրն: - 651. Եւ ի նորս՝ ի չորեքշաբաթ և յուրբաթ *փոխեցին* առաքեալքն. որպէս յա՛յտ է յառաքելական կանոնս. նաև ի նիկիականն: - 652. Որ ի հարսանիսն զջուրն ի գինի *փոխեաց* և օրհնեաց: - 655. որ ամենայնիւ ընդ դէմն *փոխի* ուտելն և ըմպելն ի ծոմ և ի ծարաւ. ծաղրն ի սուգ. հեշտութիւնն ի տքնութիւն. և ի չարչարանս և այլն: - 657. Իսկ վասն գրակարդացի և նկարեալ եկեղեցւոյ. և վասն զնշխարս ի հանգիստ *փոխելոյ*. այս ամենայն յիշատակ է մեզ ի սրբոյն գրիգորէ՛ լուսաւորչէն մերմէ: - 659. Քսանևդ, Թէ յանմահութիւն *փոխիմք:* - 660. Եւ թէ անտի *փոխէր* յերկիր, լինէր երկին փոփոխական, և երկիր անփոփոխ: - 662. Եւ թէ յայսմանէ ևս *փոխէր*, լինէր ո՛չ ոքն անփոփոխ: - 662. Այլ ես ասեմ, ատելութեան և անարգանա՛ց էր ցոյցք, եթէ զպատուականնն էր տուեալ նախ՝ անտի *փոխեալ:* - 663. Կամ ի վերինն խնամոցն. զի արդարքն դիւրաւ *փոխեսցին* ի կեանս: - 668. Վեցերորդ, որպէս կենօք *փոխեցաւ*, նոյնպէս և տեղեաւ *փոխեսցի*...:

- 677. Երրորդ, զի մարմինն *փոխեսցի* ի հող մինչև հոգին յանապական և յանփոփոխ սերտութիւնն կայասցի...: - 677. ...իսկ դևք զերկուքն ունին. զի յոչ էից եղէն. և *փոխեցան* ի բարւոյն ի չար. այլ զմինն չունին...: - 681. Եւ առաւօ՛տ է օր դատաստանին. զի միշտ առաւօ՛տ է և ո՛չ երբէք *փոխէ* զնա երեկոյ: - 692. Ա՛րդ` եթէ արդարք այժմ առնուն զփառս և ի դատաստանին դարձեալ *փոխիցին* յայնմանէ, ապա ուրեմն ամենայն ինչ այն կենացն անցաւոր է և փոփոխական...: - 694. Եւ հետևի հազարամեայ արքայութիւնն որոգինի. նաև *փոխիլն* ի տանջանաց: - 694. Այլ արկանելիք սպիտակ` զծաղկեալ նոցա առաքինութեանն երևեցուցանէ զպայծառութիւն յետ ի թանձրութենէ մարմնոյս *փոխելոյն.* զոր զգեցեալ են նախ քան զխոստացեալ զփառսն...: - 696. Վեցերորդ, զի մահն սկիզբն է անփոփոխ կենացն. զի ո՛չ կարէ *փոխիլ* ի մեղաց յարդարութիւն...: - 699. ...որպէս և հրեշտակք յետ անկմանն ո՛չ կարացին *փոխիլ* յարդարութիւն: - 699. Երկրորդ, որպէս մարմինն ոչ *փոխի* ի բարւոյ ի չար, կամ ի հակառակն. նոյնպէս և ո՛չ հոգին...: - 704. Նոյն հասակաւն որով *փոխեցան* և գայցեն: - 709. ...և նիւթ կերակրոյն` այն մասն որ *փոխեցաւ* ի գոյացութիւն մեր` յառնէ՛. զի մարմին եղև մարդոյն այլ աւելորդքն ո՛չ յառնեն: - 718. ...և քաղցրութիւն և թեթևութիւնն ի մարմինն *փոխի:* - 718. Ապա ուրեմն կենդանեաց մարմինն ոչ յառնէ ի մեզ ըստ բոլոր նիւթոյն, այլ ըստ չափոյ զօրութեանն որ *փոխեցաւ* ի մեզ և եղև մարմին մարդոյ, ա՛յն մարմինն յառնէ: - 718. Ոմանք ասացին թէ ի յարութեանն մարմինք մարդկան ի հոգի *փոխին:* - 720. Թօթափիլ կամ խաւարիլ լուսաւորաց ո՛չ է իմանալ թէ ի կամարէ՛ երկնից անկանին կամ զգոյացական տեսակն *փոխեն:* - 728. Նոյնպէս և լուսաւորքն ի վերջին ժամանակս ի կատարածի ծածկեսցին, և դարձեալ յա՛յլ իմն յազնուականութիւն *փոխեսցին:* - 728. Նմանապէս և ի բարի գործս *փոխեալք:* - 745. Այլ որ ուղիղն է տեսութիւն, յետ յարութեան *փոխի* ժամանակն ի յաւիտեան. և այլ ո՛չ գտանի մասն և րոպէ և ժամ. զի երկնային մարմինք դադարին ի շարժմանէ ուստի ժամանակն գոյանայ: - 747. Երկրորդ վասն ժամանակին. զի *փոխեալ* է ի յաւիտեան: - 750. Զի *փոխեսցին* յայսմ կերպարանաց զոր ունին, և այլ իմն նո՛ր զգեցցին. - 759. Թէ ասիցէ ոք, թէ աստուած յողորմութենէ կամացն *փոխի* յայնժամ յանողորմութեան յաքոռ: - 778. Իսկ աստուած ո՛չ *փոխեաց* զխորհուրդն իւր որ էր յաւիտենական. այլ վճիռն որ հայէր ի պատիժ արժանեաց նոցա: - 779. Զի յորժամ ինքեանք *փոխեցան*, *փոխեցաւ* և ըստ նոցա պատիժն ասացեալ...: - 779. Երրորդ` ժամանակ կենցաղոյս մինչև ի մահ, է՛ ընդունելութեան աստուծոյ. ըստ որում բազմեալ է յաթոռ շնորհաց ըստ առաքելոյ. իսկ յետ այնորիկ ո՛չ ևս. զի *փոխի* յաթոռ դատաստանաց ըստ աւետարանին: - 780

**ՓՈԽՈՒՄՆ +** Նմանապէս և նըւազ ծայնն այն` *փոխո՛ւմն* է առաջին ծայնին. վասն այն լսէ զծայնն` և ո՛չ զբանն: - 131. Երրորդ` ըստ կատարման. զի այս յետ *փոխման* զոյոսն ունի լծակցեալ անմահութեան և խնդութեան...: - 269. Նոյնպէս և *զփոխումն* եօնվքայ տեսին եղբարքն ուստերքն և դստերք նորա. զի մի՛ ասիցեն թէ սպա՛ն զնա՛ կուրացեալն դամեբ թոռն կայենի: - 290. Ա՛յս է եղեալ պատճառ *փոխմանն* եօնվքայ և եղիայի: - 290. Իսկ զվարդավառին և *զփոխմանն* տօն` ի նորո՛յս է աւանդեալ. որպէս ողոգոմեանն, և քառասնօրեայ գալստեանն: - 373. Եւ *փոխմանն,* ի վախճանիլն մարիամու` քուերն ահարոնի յանապատին: - 374. Զա՛յս նշանակէ անդրանկաց *փոխումն:* - 380. Իսկ *փոխումն* աստուածամօրն կուսի. որ որդին յատկապէս սպասաւորէ մօրն: - 519. Այլ տեղի *փոխման* կուսին ի վե՛ր է քան զամենայն դասս հրեշտակաց: - 519. Յիսունեմի, Վասն շաբաթի տօնից. և ուքօրէք. և *փոխմունք* ժամատեղաց: - 527. Եւ յետ *փոխման* առաջնոյն` նստի կաթողիկոսն երկրորդ: - 546. Մովսէս քերթօղն զծննդեանն, և զմեծացուսցէքն, և զտեառնընդառաջին, և *զփոխման* առաջին պատկերն: - 637. ...և զվարդավառի **բ** պատկերն, և *զփոխման* **բ** պատկերն, զհրեշտակապետացն, և զեօթանասնիցն, զղևոնդեանցն...: - 637. Այլ և կուսին *փոխումն* ի **ե** շաբաթի: - 638. Նախ ասել աւետեաց, և ապա՛ ծննդեան. և գալստեան. և խաչի. և յարութեան. և համբարձման. և հոգւոյ գալստեան. և վարդավառի. և *փոխման:* - 642. Ութերորդ *փոխմանն:* - 649. Դարձեալ` *փոխումն* է մահն ժամանակի և մուտ յաւիտենին...: - 667. Դարձեալ` նշանակէ՛ յետ մեռելոյն *զփոխումն* ուրախութեան մեր ի սուգ և ի մերկութիւն. և ի սև հանդերձս. ի խաւար տունս և այլն: - 670. Այլ և ի մերոց վարդապետաց սկիւռացին գրիգոր ի *փոխումն* աստուածածին կուսին: - 687

**ՓՈԿԵՂԷԴԷՍ** - ...և *Փոկեղէդէս* եղբայր նորա` արար զերկրորդ ծայնն ի դարբնականէ..: - 640

**ՓՈՂ(Ք) (կոկորդ) +** Եւ ցուրտ և լորձն խառնեալ` լինի ջիլ. որպէս ցուրտ և խոնաւն *փողք:* - 244

**ՓՈՂ (փչողական գործիք) +** Այլ և մովսէս հրամայեաց յամենայն ամսամուտս տօնել և *փող* հարկանել...: - 200. Որպէս պատմի ի դատաւորքն. յորժամ գեդէոն *զփողսն* հնչեցոյց, այլազգիքն

ինքեանք զինքեանս ի սուր մաշեցին ի գիշերի: - 238. Այլք եղջիւրս ասեն ունել ի ճակատն որ իբր *զփող* գոչէր թէ՝ գա՛յ ահա կայեն եղբայրասպանն: - 287. Երկրորդ՝ ի յօրինակ միւս անգամ գալստեանն *փողով* և հրով իջանելն ի դատաստան: - 341. Երրորդ՝ տօն փողոցն. իսկ մեզ առաքելոցն տօն. զի նոքա են *փողք* տիեզերաց: - 372. Երրորդ՝ ահագին երևումն դատաւորին. և ձայն *փողոյն*, և հուր նախընթաց: - 393. Եօթն դաս պարուց էին. որոց երեքն բերանով երգէին. այսինքն նուագն և սրինգն և *փողքն:* - 431. Մետասաներորդ՝ *փողով* և ցնծութեամբ ել յերուսաղէմ: - 441. Եւ ձայն աղաղակին՝ ձայն *փողոյն:* - 444. Վեցերորդ՝ համբարձաւ ձայնիւ *փողով* ըստ դաւթի. և այս վերաբերի յառաքեալսն. որ յանձնեցաւ նոցա երթալ քարոզել ամենայն հեթանոսաց. և *փողք* եղեն տիեզերաց...: - 520. Չորրորդ զատիկ համբարձումն առ հայր ցնծութեամբ և *փողով:* - 524. Այլ մովսէս օրինադրեաց ի թիւքն առնել կրկին *փողս* արծաթի. և կոչեաց զնոսա *փողս* ազդեցութեան. որպէս դեռևս գոն ի դրունս թագաւորաց կրկին *փողք:* - 618. Եւ նշանակէ՛ր կրկին *փողն* զերկու զանկակս, կամ զզանկակն և զժամահարն. կամ զփայտէն և զերկաթին: - 618. Դարձեալ՝ ի խորհուրդ գոչման *փողոյն* այն որ ի բարձունս. զի նախ յերկնից գոչէ *փողն* գաբրիէլի և ժողովէ զհոգիսն...: - 618. Եւ ի կիրակէ **գ** *փող* հնչէ ի գիշերի: - 618. Երկրորդ՝ զի **գ** են *փողք* տիեզերաց: - 618. Նա՛խ՝ մարգարէքն. երկրորդ առաքեալքն. երրորդ հրեշտակապետին վերջին *փողն:* - 618. Երրորդ՝ զի երիցս գոչէ *փողն*...: - 618. ...և յեօթներորդ օրն ի եօթն նուագին բարձրաձայն *փողովք* հնչեցին քահանայքն. և ժողովուրդն բարձրաձայն աղաղակեաց. յորմէ կործանեցաւ եօթնապատեան պարիսպն երիքովի: - 627. Ի յայս միտս զվեց գուբղայն ի թիւ ասեմք. և զեօթներորդն ձայնիւ *փողոյ:* - 627. Երկրորդ՝ նշանակէ զձայն *փողոյն*, և ապա՛ զօրհնութիւն յարուցելոցն: - 627. Երրորդ, ի յարութեանն յորժամ *փողն* գոչէ՝ յառնեմք և յառաջ ընթանամք քրիստոսի: - 627. *Փողք* են առաքեալքն...: - 639. Անանիաս Եղիազար *փողովք* երգէին: - 641. Ի խորհուրդ օրինացն. յորժամ էջ տէր ի սինա, *փող* և որոտ, հուր և ծուխ և այլն: - 644. Եւ ձայն բուրվառին՝ որպէս *փողքն:* - 644. Այն է՝ յորժամ դաւիթ զտապանակ ուխտին հանէր յերուսաղէմ, **է** դաս պարուց որք են քահանայից դասք. և սրինկ. և *փողք*. և քնար. և այլն: - 645. Իննեւ, Վասն *փողոյն* գոչման: - 660. Իններորդ, վասն **գ** գոչման *փողոյն* երիցս ընթեռնումք զաւետարանն: - 675. Իսկ խաչն վառել և ժամահարն յառաջ. նշանակէ՛ զվերջին գոչումն *փողոյ* հրեշտակապետին: - 676. Չորիւք իմանի յետին *փողն:* - 713. Նա՛խ՝ զի առաջին *փող* էին մարգարէքն կոչելով յօրինակն: - 713. Եւ միջին *փող* առաքեալքն կոչելով ի ճշմարտութիւնն: - 713. Վերջին *փող* է հրեշտակացն որ կոչէ՛ ի դատաստան: - 713. Երկրորդ, ըստ ոմանց **գ** է գոչումն *փողոյն*...: - 713. Չորրորդ, ըստ ոմանց **դ** է գոչումն *փողոյն*...: - 713. ...վասն զի չորիցս գոչէր *փողն* ազդարար ի չուել բանակին իսրայէլի: - 713. Եւ իշխանք են առաքեալք և մարգարէք որ *փողք* են տիեզերաց, նախ զնոսա կոչէ: - 713. Ա՛յս է *փողն* յետին: - 713. Զի՞նչ է ձայն *փողոյն:* - 713. Նախ ձայն *փողոյ* է՛ հրամանն քրիստոսի որ հրամայէ՛ զյարութիւնն: - 713. Երկրորդ երևելի ձայնն հրեշտակապետին. որպէս ձայնն *փողոյ* ի սինա լերինն. և ազդումն զօրութեանն քրիստոսի: - 713. Ո՞ւր գոչէ *փողն:* - 713. Յո՞րժամ և յորում աւուր գոչէ *փողն:* - 714. ...ի նոյն ժամն ի մէջ գիշերի հարկանի *փողն*...: - 714. Վասն է՞ր *փողն* ի յերկինս և յերկրի գոչէ...: - 714. ...և մարմինք մեռեալք որ յադամայ հետէ՝ յանկարծակի յական թօթափել ի *փող* յետին յարիցեն ասէ առաքեալն: - 721. Եօթներորդ, զի առաքեսցէ զհրեշտակս իւր *փողով* մեծաւ...: - 730. Յետ որոյ *փող* հարկանի և մեռեալք յառնեն: - 732. Եւ հրեշտակք զխաչն բարձեալ առաջի երթիցեն. և զմեռեալս՝ *փողով* և ձայնիւ ընդ առաջ նորա զարթուսցեն: - 734. Վեցերորդ, զի ահագին փառօք գայցէ *փողով* մեծաւ և ամպախաղաց որոտմամբ և շարժմամբ և հրով բորբոքելոյ որպէս ի սինայ: - 737

**ՓՈՂԵՄ +** ...և ապա՛ ի յերկրէ յարուցանէ զմարմինս. որպէս այն որ հրեշտակապետն նստեալ ի վերայ վիմին *փողէր* զյարութիւնն քրիստոսի: - 618

**ՓՈՂՈՑ +** Վասն որոյ նստաւ յաղբիւսն *փողոցին* անհնարին հարւածովք: - 323. Հինգերորդ՝ հանգիստն կատարեալ հոգւով և մարմնով. որ է՛ *փողոց* հնչմունք. ազատութիւն յապականութեանց. ամ թողութեան և իւրաքանչիւր ուրուք ի ստացուածս իւր դարձումն. որ է՛ գործոց հատուցումն: - 372. Երրորդ՝ տօն *փողոցն*. իսկ մեզ առաքելոցն տօն. զի նոքա են փողք տիեզերաց: - 372. Ողջոյն տուր *փողոցն:* - 639. ...և քաղաքացիքն նախ զարդարեն զինքեանս և *զփողոցն* և կան պատրաստ: - 646. Չորրորդ, զի մի՛ լիցին *փողոցք* և տունք մեր գերեզմանատուն մեռելոց...: - 677

**ՓՈՅԹ +** Նա՛խ՝ զի տարրակա՛ն է հուր: Եւ զի ջերմ է: Հաղորդական: Ներգործական: Ի մերձն առաւել: Ի հեռին նուազ: Ի նմանն *փոյթ:* - 202. Չորրորդ՝ զի երագընթա՛ց է և *փոյթ* աճէ: - 206. Զի ասեն

եթէ՝ ոգի արուին է՛ *փոյթ* և քաջասիրտ. իսկ կին՝ ողորմած և երկչոտ: - 246. Եօթներորդ՝ համառօ՛տ է և *փոյթ* ի զգեւն: - 315. Եւ տէր մեր *փոյթ* ի հատուցումն չարաց: - 315. Իսկ ի նորս առ մեզ, Սակաւ ինչ հոգացեալ զեօթնիցս, այլ ութերորդին *փոյթ* տարեալ դարուց աւանդապահք եկեղեցոյ, կարգեցին ութն կանոնս **ըը** գուրդայիւ: - 627

**ՓՈՇԵՏԵՍԱԿ +** ...այլ չոր ծաղկն դալարիւր. այսինքն թէ ի զանգուածոյն ադամայ ունէր ինչ *փոշետեսակ*՝ սրբեցաւ հրով հոգւոյն սրբոյ: - 331. Այլ և լւաց ևս զոտս նոցա յամենայն *փոշետեսակ* աղտեղութեանց: - 331. Նոյնպէս և օծումնս այս է՛ վերջին որ *զփոշետեսակ* և զներելի մեղսն սրբէ...: - 605. Բարեաց՝ զի քաւեցին *փոշետեսակ* յանցանք ինչ. և կամ զի պսակքն բազմացին: - 668

**ՓՈՇԻ +** Չորրորդ՝ մանր *փոշին* ի շո՛ղն երևի: - 125. Եւ մարմնով ո՛չ բաժանին սոքա. թէպէտ և մանր *փոշի* լինին՝ ունին զքանակն զորակն և զայլն. զի անմեկնելի որոշմունք են գոյացութիւն և պատահմունք: - 175. Զորօրինակ՝ եթէ ոք պատառէ զկտաւ և թափի *փոշին:* - 204. Եօթներորդ՝ զի հողն ի հողմոյ *փոշի* լինի. այսպէս յորժամ հողմահուն շնչէ ի մարմինս մեր՝ ցրի և լինի *փոշի:* - 229. Երկրորդ՝ զի *զփոշին* սրբէ որ ի յօդոյս նստի յաչքն. որպէս մեք ձեռօք սրբեմք զերեսս հայելւոյ: - 239. Օծումն է՛ խորհուրդ ի լրումն արդարութեանն. զի ելեաք ի պատերազմէ՛ *զփոշին* և զքիրտն սրբեմք...: - 587. Զորօրինակ զմարտիկ ոք յետ հանդիսին դարձեալ լուանան ի *փոշոյն* և օծանեն: - 672. Որ արարն յոչ էից, գիտէ անխառնապէս որոշել զիւրաքանչիւր *փոշիս* արդարոց և մեղաւորաց. զի հատուսցէ իւրաքանչիւր ըստ գործոց: - 719. Ասեմք եթէ՝ զորօրինակ սնդիկ լուծեալ և ի հող խառնեալ գնդապէս և փոշիացեալ. յորժամ ի մի վայր ժողովես՝ թողու *զփոշիսն* ի յորս խառնեալ է և պարզ միայն սնդիկն ժողովի: - 719. Դարձեալ, յերես անկեալ արտասուալի դիմօք հողս և *փոշի*՝ սուրբ զարշապարաց ծերոց, աղերսեմ ի խորոց սրտէ զիարազատ գութ հարց և եղբարց մեր հոգևորաց: - 773. Որպէս յա՛յտ է ի ծխոյ և ի *փոշւոյ* և յայլոց. ընդ դէմ գոլոյ պարզութեանցն լուսոյ՝ ի ներքս մտեալ զկծեցուցանէ զնա: - 786-787

**ՓՈՇԻԱՑԵԱԼ** - Տասներորդ՝ զի յայյսմանէ հաստատեսցի ի մեզ հաւատ յարութեանն. որպէս զառաջինն ի հողոյ ստեղծ զմեզ, դարձեալ ի յարութեանն ի նոյն հողոյն լուծեալ և *փոշիացեալ*՝ յարուցանէ աստուած: - 229. Դարձեալ՝ կենդանիքն ո՛չ ժամանեն ննջեցելոցն, այսինքն նոցա որ մեռեալ են և ի հող փտեալ և *փոշիացեալ*...: - 717. Ասեմք եթէ՝ զորօրինակ սնդիկ լուծեալ և ի հող խառնեալ գնդապէս և *փոշիացեալ*. յորժամ ի մի վայր ժողովես՝ թողու զփոշիսն ի յորս խառնեալ է և պարզ միայն սնդիկն ժողովի: - 719

**ՓՈՇԻՄԱՆԻՄ** - Յայս միտս՝ յորժամ *փոշիմանիմք* ի վերայ բանի կամ տրտմիմք, ատամամբք զմատն խածանեմք...: - 670. ...լալ և կրճել ատամանցն. *փոշիմանիլ*, տխրիլ, և ոչ ինչ օգտիլ...: - 671

**ՓՈՇՏԱՆԿ (ՓՕՇՏԱՆԿ) +** Երկոտասաներորդ՝ *փօշտանկն*. որ հատեա՛լ է աղիքն և ի դուր թափեալ. նշանակ հոգեկան ցաւոց ի մարմինն երևեալ: - 371

**ՓՈՍ +** Ճակատն նեղ՝ շատակո՛ւլ է: ...*Փոսն*՝ ամօթխած: - 246

**ՓՈՏԻՆԱ** - Այլ և սամարուհի կնոջն լուսինա՛ էր անունն: Տեռատեսին *փոտինա:* - 495

**ՓՈՏԻՆՈՍ** - Դարձեալ՝ մի բնութիւն համբաւեն մարկեղոս և *փոտինոս:* - 82. Այլ և ո՛չ որպէս պատահումն ի յէութիւն. զի բանն աստուած ո՛չ է անանձն և ազդումն ինչ որպէս մեր բանս ըստ ոմանց. որպէս մարկեղոս և *փոտինոս* դանդաչեն: - 88

**ՓՈՐ +** Եւ երեսք *փորոյն* հուրն: - 234. Եւ ծուկն ի ջուրն՝ *փոր* ի վեր շրջի: - 234. Լանջքն որ երկայն է քան *զփորն*՝ խոհեմ է: - 247. Լանջքն որ *փորիւն* մազածածո՛ւկ է՝ անկրօն է և անկայուն և անգութ: - 247. Իններորդ՝ զի որպէս կողից երեսն որ ի *փորն* նայի՝ կոկ գոլով և մզղնատեսակ. իսկ մէջն փուչ և մրրախառն. այսպէս սէրն զոր ցուցանէ առ այրն, նօսր առ ի ցոյցս՝ և երեսս միայն ունի. իսկ ի սիրտն զմրուր դառնութեան: - 276. Եւ յօշելն զանդամս **բժ**ան մասն ընդ ցեղիցն. և զոտս և *զփորն* լուանալն. և ողջակիզել ի վերայ պղնձի սեղանոյն: - 358

**ՓՈՐԵՄ +** Քանդէ՝ զքարինս *փորէ:* - 207. Եւ ըմբռնեաց զսեդեկիա արքա յուղայ, և *փորեալ* զաչսն տարաւ ի բաբիլօն: - 447

**ՓՈՐՁ +** Երկրորդ՝ զի գործով կատարեսցէ զհնազանդութիւնն *փորձիւ* չարչարանացն: - 43. Դարձեալ ասեն ոմանք, նախ քան զուտելն ի պտղոյն՝ գիտէր ադամ զբարին *փորձիւ*, և զչարն գիտութեամբ. իսկ յորժամ եկեր՝ գիտաց զչարն *փորձիւ*, և զբարին գիտութեամբ. այն է գիտութիւն բարւոյ և չարի: - 223. Ո՛չ թէ *փորձիւ* գիտէ աստուած զմարդ: - 304. Որք **է** ամ ասեն զփորձանսն՝ սոյնպէս թուեն. զի յետ փորձանացն ասէ գիրն **ճհ** ամ. և յառաջ քան *զփորձն* **հ** ամ. և **ը** ամ փորձանացն և

դարձին: - 326-327. Քսանեգ՝ նա՛ սպան զքագաւորս և զիսկայսն քանանու. և զոմանս եթող ի *փորձ* ընտրելոց: - 419. Չորրորդ՝ զի աշակերտքն զտկարութիւնս իւրեանց *փորձիւ* ճանաչեսցեն...: - 521. Երկրորդ՝ ի կողմանէ ընդունողաց առաքելոցն. զի պատշաճաւորեցան հոգոյն սրբոյ. զի *փորձիւ* գիտէին զվարդապետութիւնն քրիստոսի, զմահն և զյարութիւնն և զայլսն: - 521-522. Եւ ի կարմրանալ երկնից ընդ երեկս և ընդ առաւօտս, զերաշտոց և զանձրևոց ի *փորձոյ* ուսեալք յառաջագուշակ լինին: - 536. Զի ասեն վարդապետք թէ որպիսի իւրաքանչիւր ոք ծածկեալ իցէ յինքեան. *փո՛րձ* է տուեալ նախատինքն: - 586. Արդ՝ ըստ կարգի՝ սերմանքն յառաջ են քան զարդիւնսն. և նահատակքն քան զպսակն. վասն որոյ որք աստ *փորձ* գտանին, անդ առցեն զպսակն կենաց: - 662-663. Երրորդ հիւանդութիւն է ընտրելոց, զի *փո՛րձ* երևեսցին ի յամօթ չարին. որպէս յոբայն: - 665. Ո՛չ իբր կարօտի բազմաց բաշխողի. կամ փորձողի *փորձոյ* սիրալի: - 773. Իսկ սիմոնի և այլոցն՝ *փորձիւ* և թերութեամբ է հաւանութիւն: - 785

***ԶՓՈՐՁ ԱՌՆՈՒԼ +*** Ութերորդ՝ զի որ *զփորձ էառ* չարչարանացն՝ օգնեսցէ որք ի չարչարանս իցեն: - 43. Իսկ յորժամ դառնամք ի մեղաց՝ յորդորէ՛ զմեզ ի ծածուկ իմաստիւքն իւրովք, ժուժկալ լինել ի փորձութիւնս և համբերել տանջանաց որով ինքն *զփորձ էառ:* - 48. Չորրորդ, զի նոքա ոչ կարէին լինիլ ախտակից տկարացելոցն. իսկ տէրն որ *զփորձ էառ*՝ կարօ՛ղ է և փորձանաւորացն օգնել...: - 354. Երրորդ՝ զի կարէ՛ այլոց խրատ լինիլ բազում ինչ *զփորձ առեալ:* - 378

**ՓՈՐՁԱՆԱՒՈՐ +** Չորրորդ, զի նոքա ոչ կարէին լինիլ ախտակից տկարացելոցն. իսկ տէրն որ զփորձ էառ՝ կարօ՛ղ է և *փորձանաւորացն* օգնել...: - 354

**ՓՈՐՁԱՆՔ +** Երկոտասաներորդ՝ զի սուրբքն բանիւ մեզ ուսուցանեն՝ նեղութեան և *փորձանաց* համբերել...: - 159. Իսկ աստուած գիտէ զառաջիկայն և այնպէս տայ ի *փորձանս:* - 161. Եւ թէ ոք ասիցէ՝ յորժամ գիտէ՛ աստուած զկատարածն, վասն է՞ր տայ ի *փորձանս:* - 161. Եւ օգտութիւն *փորձանաց* գրեալ է ի սաղմոսն, յայն բան գի՛տ և կարդա՛: - 162. Չորրորդ՝ երկիր. այսինքն զի յերերման և ի տատանմա՛ն է ի մէջ *փորձանաց:* - 210. Տասնևա՝ Վասն աբրահամու. և *փորձանացն:* - 283. Եւ գիտելի է, զի **Ժ** *փորձանացն* աբրահամու որք էին ծոյլարան նորա՝ մի է և այս: - 304. Եւ աստ գիտելի՛ է, զի յետ *փորձանացն* կրկին եղեն ըստացւածքն նորա: - 326. Որք է ամ ասեն *զփորձանսն* սոյնպէս թուեն. զի յետ *փորձանացն* ասէ գիրն **ճհ** ամ. և յառաջ քան զփորձն **h** ամ. և **ը** ամ *փորձանացն* և դարձին: - 326-327. Եւ որք **լը** ասեն *զփորձանսն* սոյնպէս թուեն. յետ հարւածոցն եկաց յոբ **ք** եօթանասուն. այսինքն **ճխ** ամ: - 327. Եւ այլք ոմանք **մխը** ամ յետ *փորձանացն* ասեն: - 327. Սոքա նշանակեն զնահատակսն որք բազում վշտաց և *փորձանաց* համբերեցին: - 357. Եւ երեք դաս է տրտունջն. այսինքն Կարօտանաց. և *Փորձանաց*. և Չարաչար: - 381. *Փորձանքն* է՝ որպէս թէ զայս առնես՝ լսեմք. և թէ ոչ առնես՝ ո՛չ լսեմք. և Չարաչարն՝ հայհոյութեամբ տրտունջն է: - 381. Չորրորդ՝ վասն այսմ աշխարհիս և հեղդերձելոյն առանձնակի աղօթեմք փրկիլ ի *փորձանաց:* - 623. Երրորդ, որպէս ողջակէզ նորին, և մեզ պա՛րտ է զանազան *փորձանաց* և նեղութեան զանձինս մատուցանել սիրովն աստուծոյ: - 658. Արդարքն վասն իւրեանց սիրելեացն միշտ աղօթեն զի ազատեսցին ի *փորձանաց* և ուղղեսցին ի մոլորութեանց և ընկեր փառաց նոցա լինիցին: - 685. Որ թէ ի բարձանց լինի պատերազմ անձրև օրէն *փորձանաց*, ի ներքոյ կացցես հաւատոցն և ապրիս: - 770

**ՓՈՐՁԵՄ +** Զի նախախնամութեամբ բազում բարիս յառաջած է ի չարէ. որպէս սատանայի թոյլ տայ, զի *փորձեսցին* բարիքն և յաւելցին պսակքն: - 17. Չորրորդ՝ զի չարչարանօքն իւրովք *փորձեսցէ՛* զհնազանդութիւնս մեր...: - 43. Եւ գործոյն որ ունին կրթել զմարդիկ՝ յարմարի օդն որ է՛ մերձ առ մեզ *փորձելոյ* զմեզ. այլ ո՛չ ի լոյս. զի մի ուրախասցին: - 146. Արդ ներքին է՝ որ ի փափկութեանց և ի հեշտութեանց *փորձի* բնութիւնս մեր...: - 160. Արդ *փորձէ* մարդ՝ զի զստո՛յգն գիտեսցէ: - 160. Իսկ սատանայ *փորձէ*՝ զի ի չար ընկեսցէ: - 160. Իսկ աստուած *փորձէ* զմարդ՝ զի գիտէ զնա՛ բարի և հաւատարիմ. այլ ծածկեա՛լ է յայլոց. *փորձէ*՝ զի յայտնի լիցի ամենայն աշխարհի առաքինութիւն նորա: - 161. Եւ այսու զանազանի փորձութիւնն աստուծոյ և սատանայի, Նախ՝ որպէս ասացաք՝ աստուած *փորձէ*՛ զի յայտնեսցէ զբարութիւնն. և սատանայ *փորձէ* զի հանցէ ի բարւոյն: - 161. Երկրորդ՝ աստուած *փորձէ* և տայ զհամբերութիւնն. և սատանայ ընդ փորձութեանն առնէ զձանձրութիւն: - 161. Երրորդ՝ աստուած *փորձէ*՛ և տայ զելսն՝ զի մի՛ յուսահատեսցի. և սատանայ *փորձէ* և ծանձրացուցանէ զի ընկեղմեսցին: - 161. Հինգերորդ՝ զանազանութիւն՝ զի սատանայ ի *փորձելն* ո՛չ գիտէ զառաջիկայն թէ յաղթէ և թէ յաղթի. և եթէ էր տեղեակ՝ ո՛չ մրցէր ընդ կատարելոցն որք յաղթահարեն զնա. որպէս ընդ

ստեփաննոսի, անտոնի, և այլոցն, որք յաղթեցին սատանայի: - 161. Եւ մինչ զգիրն յառաջ կալան թէ այսու *փորձիմք*, այլ ո՛չ ոք գիտաց կարդալ՝ բաց յեբրայեցւոցն. վասն այն ասի երեր, թէ զառաջին լեզուն նա՛ երեր: - 299. *Փորձեաց* աստուած զաբրահամ ասելով, ա՛ռ զորդիդ քո սիրելի և բե՛ր մատո՛ ինձ ողջակէզ: - 304. Այլ *փորձէ*՛ աստուած զմարդ՝ զի յայտնեսցէ զնա. որպէս զաբրահամուս և զյակոբայն: - 304. Իսկ մարդ *փորձէ*՝ զի գիտասցէ: - 304. Իսկ սատանայ *փորձէ*՛ զի խաբեսցէ որպէս զնախահայրն: - 304. Ոմանք **է** ամ ասեն. ըստ որում ի վեցից վշտաց փրկեսցէ, և յեօթներորդին ո՛չ *փորձեսցի* չար: - 326. Նախ՝ զի *փորձեսցին* և ընտրեսցին ի միմեանց հաստատունքն ի հաւատս և տկարքն: - 388. Երրորդ՝ ըստ օգտութեան աստ. զի *փորձին* ընտրեալքն. և յետ մահու շնորհաց. և յարութեանն փառաց լինին առիթք: - 394. Երրորդ՝ զի *փորձեսցի* նոքօք իսրայէլ: - 416. Ութերորդ՝ յօրինակ փրկչին յիսուսի, որ զբռնութիւն թշնամւոյն խորտակեաց և զխաբէութիւնն եթող. զի *փորձեսցին* ընտրեալքն և խոտեսցին վատթարքն: - 417. Քսանևդ, սամփսոն երիցս **է** կապօք *փորձեցաւ* ի կնոջէն: - 423. Նա՛խ՝ որպէս գեդէոն ջրովն *փորձեաց* զհաւատս զօրացն. նոյնպէս և դաւիթ: - 434. Վեշտասաներորդ, դարձեալ **խ** օր արձանացաւ գողիաթ և զտէրն **խ** օր *փորձեաց* սատանայ: - 436. Ասեն թէ՝ **ռ** կին էր սողոմոնի. **է ճ** տիկնայք, և **գ ճ** հարճք. և նոցա **ռ** պահապան. իսկ ի *փորձելն* խաբեաց զհազար կանայսն. և ի յարանցն մին ո՛չ խաբեցաւ. այս առասպե՛լ է: - 440. Ա՛րդ՝ ե՛կ ես և դու *փորձեսցուք* թէ ով զդաւանութիւն առաքելոյն ունի և զկանոնքն՝ նա՛ է հնազանդ նմա: - 548. Երկրորդ՝ զի *փորձէ* զայլսն ամենայն ի վերջնոյն մինչև ցառաջինն թէ ճշմարի՞տ իցեն արդեօք: - 586. Երկրորդ, տայ զաղքատութիւնն և *փորձէ* զմարդն. - 664. ...որպէս հրովն *փորձի* ոսկին թէ լաւ է թէ վատ. - 664. Երրորդ, զլաւ մարդն աղքատացնէ և *փորձէ*, թէ վասն ընչի՞ցն սիրէր զաստուած՝ թէ յաղքատութեանն այլ նոյնպէս է. որպէս յոբայն: - 664. ...մինչև կատարեսցին հարուածք բարկութեանն աստուծոյ ի վերայ երկրի. որով *փորձին* և արդարք և մեղաւորք...: - 703. Երրորդ, ներելով արձակէ զսատանայ որով *փորձին* ընտրեալքն որպէս ցորեան ի շտեմարանս արքայութեան...: - 706

**ՓՈՐՁԻՉ, ՓՈՐՁՈՂ +** Եօթներորդ՝ զի չարչարանօքն իւրովք յուսադրեաց զմեզ, զի մի՛ յետ տկարութեանս և սակաւ չարչարանաց ի *փորձողէն* կասեսցուք ի նահատակութեանց...: - 43. Նախ՝ զի որպէս զգեստիւն ծածկի մարմինն, այսպէս տէրն զաստուածութիւնն իւր ամփոփեաց մարմնովն անհաս լինիլ ի *փորձողէն*...: - 43. Զի՞նչ է որ առ *փորձիչ* օրինաւորն ասաց՝ «չիք ոք բարի՝ բայց մի աստուած»: - 47. Դարձեալ՝ *փորձիչս* այս փառասիրութեամբ յառաջեաց առ քրիստոս...: - 47. ...որպէս ես աստուածային մարմնոյս զօրութեամբն յաղթեցի *փորձողին*, նոյնպէս և դու շնորհօք իմովք՝ տկար մարմնով քո՝ յաղթես և նկուն առնես զնա: - 159. Դարձեալ՝ պահօք և աղօթիւք հնար է յաղթել *փորձողին*...: - 324. Երկրորդ՝ զի թոյլ տուաւ *փորձողին* մարտնչիլ որպէս ընդ ադամայ՝ այսպէս ընդ յոբայ: - 327. Նա՛խ՝ զի յաղթեաց *փորձողին* որպէս յոբ՝ նոյնպէս և տէր մեր: - 327. Չորրորդ՝ հաց ի յերկնից իջեալ մանանայն կենարար. և բանն աստուծոյ նոյն ինքն տէրն մեր. որպէս ասաց առ *փորձիչն* թէ՝ ինև կերակրին ամենայն սուրբք և ո՛չ հացիւ: - 397. Տասներորդ՝ յաղթելն *փորձչին:* - 471. Ո՛չ իբր կարօտի բազմաց բաշխողի. կամ *փորձողի* փորձոյ սիրալի: - 773

**ՓՈՐՁՈՒԹԻՒՆ +** ...թէպէտ մեզ չար երևի, այլ այս ևս բարի է. որպէս հիւանդութիւն. *փորձութիւն*. և այլն: - 18. Իսկ յորժամ դառնամք ի մեղաց՝ յորդորէ՛ զմեզ ի ծածուկ իմաստիւքն իւրովք, ժուժկալ լինել ի *փորձութիւնս* և համբերել տանջանաց որով ինքն զփորձ էառ: - 48. Զի մեք որ ի նեղութիւնս և ի *փորձութիւնս* ժուժկալեմք աղաչանօք. իսկ մեր մաղթանքն նմա՛ վերաբերի: - 48. Նաև անբարիշտ կամք նորա դարձել է յատելութիւն և ի նախանձ մարդոյն. զի ամենայն ջանիւ նկրտի ի կործանումն նորա բազմադիմի *փորձութեամբ:* - 146. Արարչութիւն և նախախնամութիւն. յորում և վասն *փորձութեանց* զանազան: - 154. Որպէս արդարոց անկանիլ ի *փորձութիւնս* և զանազան վնասս վասն օգտութեան իւր՝ և կամ այլոց: - 158. Վասն է՞ր թոյլ տայ աստուած արդարոց անկանիլ ի *փորձութիւն:* - 158. Չորրորդ՝ թոյլ տայ *փորձութեան* արդարոց ի յուղղութիւն այլոց. որպէս ղազարոյն և մեծատանն...: - 158. Յնգետասաներորդ՝ ասէ սուրբն դիոնէսիոս՝ թէ վասն այն տայ աստուած սրբոցն նեղութիւնս և *փորձութիւնս*, զի նեղութիւնն սիրելի և փափագելի՛ է նոցա. և յայնժամ ուրախանան սուրբքն, յորժամ ի մարմնական հեշտութեանց հեռանան. և արիանան ի *փորձութիւնս*. և սակաւ նեղութեամբ ժամանեն ի մեծ հանգիստն: - 159-160. Կրկին է *փորձութիւն*. այսինքն ներքին և արտաքին. որ է՛ մեղաց և պատժոց: - 160. Արդ ներքին է՝ որ ի փափկութեանց և ի հեշտութեանց փորձի բնութիւնս մեր և այլայլի ի զանազան տեսակս մեղաց. զոր պա՛րտ է հանապազ աստուածային խնամոյն՝ զի մի՛ թողցէ յայսպիսի *փորձութիւնս*

զմեզ ընկղմիլ: - 160. Իսկ առաքեալն վասն արտաքին *փորձութեանցն* ասէ. որ ի հալածչաց հասանէ ի վերայ մեր. յորում ուրախանալ պարտիմք. զի որքան յաճախէ *փորձութիւնն*, ա՛յնքան առաւելու և պսակն: - 160. Դարձեալ այսպէս մեկնեն եթէ՝ *փորձութիւնն* ըստ ինքեան ո՛չ է բարի...: - 160. Եւ ըստ ա՛յսմ կերպի է *փորձութիւնն* բարի. զի բնութեամբ չար է. և պատճառէ՛ զչար մեղքն. բայց պատահեցաւ ոմանց զի յաղթեցին *փորձութեանց* և ընտիրք երևեցան: - 160. Վասն այսորիկ ո՛չ է պարտ խնդրել *զփորձութիւնն* և ո՛չ զարգելումն. այլ զյաղթութիւնն: - 160. Ասեն ոմանք թէ *փորձութիւնն* երեք է. այսինքն ի մարդկանէ՛, ի սատանայէ՛, և յաստուծոյ: - 160. Եւ այսպէս աբրահամ և յոբ և այլք սուրբք *փորձութեամբքն* երևեցան, և գտան արդար և սուրբ և անարատ: - 161. Եւ այսու զանազանի *փորձութիւնն* աստուծոյ և սատանայի, Նախ՝ որպէս ասացաք՝ աստուած փորձէ՛ զի յայտնեսցէ զբարութիւնն. և սատանայ փորձէ զի հանցէ ի բարւոյն: - 161. Երկրորդ՝ աստուած փորձէ և տայ զհամբերութիւնն. և սատանայ ընդ *փորձութեանն* առնէ զձանձրութիւն: - 161. Չորրորդ՝ զի յետ *փորձութեան* աստուած զպսակն պարգևէ. և յետ *փորձութեանն* սատանայ, ընդ իւր ի կորուստն յաւիտենական սպանանէ: - 161. Ի *փորձութեանց* ծանեաք զչահն որ ասացաւ ի վերոյ. այլ հասարակ ամենայն մարդկան զի՞նչ օգուտ է *փորձութիւնն*...: - 161. Իսկ թէ զի՞նչ համբերութիւնն. ասէ՝ «գործ կատարեալ ունիցի». այսինքն թէ՝ նիւթ աստուծոյ գործոյն՝ *փորձութիւնն* և նեղութիւնն է. և յօրինօղ՝ հաւա՛տն է. և ի կատարումն ածօղ՝ համբերութիւնն է: - 161. ...կեղծաւոր և անկեղծ սէրն առ աստուած *փորձութեամբքն* երևի: - 162. Զհակառակն յաղթեալ ի *փորձութիւնն*. և զանհաւատն ի հաւատ էած: - 316-317. Տասներորդ՝ ի *փորձութեան* լեառն զպատճառն ամենայն անիծից կործանեաց. և զառաջին անէծս յօրհնութիւն փոխեաց: - 320. Որ ի *փորձութիւնն* սատանայի յաղթօղ երևեալ: - 321. Եւ յաւուր *փորձութեանցն* հուր անկեալ յերկնից այրեաց զհօտսն. և ասպատակք աւար առին զուղտն և զէշսն և զեզինսն: - 321. Ո՞րքան էր *փորձութիւնք* յոբայ: - 322. Քանի՞ ամ եկաց ի *փորձութիւնսն*: - 326. Եւ տէր մեր պահեաց **խ** օր ի *փորձութեան* լեառն: - 328. Նաշիհ և իւղ զանգեալ և ո՛չ եփեալ, նշանա՛կ է նոցա՝ որ ի *փորձութիւնս* մտեալ և փութով ելեալ ի ձեռն աղօթից...: - 357. Այլ և ալիւր գարեղէն զոհ յիշատակի *փորձութեան* կանանց: - 359. Ութերորդ՝ մովսէս ի լեառն եկաց **խ** տիւ և **խ** գիշեր անսուաղ. և կերակրիւր բանիւն աստուծոյ. նոյնպէս և եղիա. նաև տէր մեր ի *փորձութեան* լերինն: - 397. Նոյնպէս անցեալ ընդ մկրտութիւն և յաղթեալ *փորձութեանցն* և եկեալ ի քրիստոնէութիւն: - 419. Չորրորդ դիմամարտ լինիլ *փորձութեանց*. ըստ առաքելոյ «ո՛չ ոք պսակի՝ եթէ ոչ ըստ օրինին մարտիցի»: - 581. ...քանզի խաղաղարարն է առանց հակառակութեան մարմնոյ՝ աշխարհի՝ և սատանայի. յա՛յտ է զի լինիցի պատրաստ ի յաղթել *զփորձութիւն* մահու: - 586. Եւ եթէ թեթև *փորձութեամբ* անկաւ և եթէ մեծ: - 601. Արդ նա՛ որ զամենայն գերեզման կնքեալ պահէ, զեկեղեցիս օրհնէ՛ և հաստատէ՛ և ամենեցուն զօրաւիգն է ի *փորձութիւնս*...: - 733. Որոց խնամօք անդրացեալ փրկեսցուք յամենայն *փորձութեանց* ամէն: - 772

**ՓՈՐՈՏԻ(Ք) +** *Փորոտին* զձածուկ խորհուրդն. զոր լուանալ հրամայէ՛ ջրով. այսինքն խոհականաւն զգարշելի մտածմունս սրբել: - 360. Եւ *փորոտիքն* կակուղ՝ ջուրն: - 234. Եւ զայլն բովանդակ մորթով և *փորոտիւք* և գլխով հանեն ի մոխրակոյտն և այրեն անդ: - 358. *Փորոտին* զձածուկ խորհուրդն. զոր լուանալ հրամայէ՛ ջրով. այսինքն խոհականաւն զգարշելի մտածմունս սրբել: - 360

**ՓՈՐՈՒԱԾ +** Եւ աստուածաբանքն հեթանոսաց՝ որպէս միտս ամենեցուն՝ և միտս արտաքոյ գոլ ասացին լցեալ *զփորուածս* երկնից: - 51. Իններորդ՝ *զփորուածս* երկնից բովանդակ լնու: - 185. Երրորդ՝ զամենայն *փորուածս* լնու: - 206. Զի լոյս Բանին և պայծառախօսութիւն՝ ի խելքն ծագէ. և Իմացականն՝ ի միջին *փորուած* գլխոյն: - 250. Երրորդ՝ զի զամենայն *փորւածս* լնու. այսպէս և հոգին էլից զամենայն տունն յորում նստէին: - 522. Վեցերորդ՝ *զփորուածս* լնու և ամենայն ումեք մերձ է: - 523

**ՓՈՐՈՒՄՆ +** Դարձեալ ժամանակաւ *փորումն* աչաց՝ առնէ մշտնջենաւոր կուրութիւն: - 744

**ՓՈՒԱ** - Նախ *փուա* արքայ ասորեստանեայց ել ի վերայ իսրայէլի: - 446

**ՓՈՒԹ +** Եւ պիտանեացն՝ փառս վերընծայել այնմ, որ փառաւորեալն է ի պարգևս իւր. իսկ զանպիտանսն ներել մերոյ փոքր ընկալ անօթոյ և դանդաղկոտ *փութոյ*: - 772-773

**ՓՈՒԹԱՄ +** Զի տրտմութեամբ մեղանչումն հիւանդութիւն է և գայթակղութիւն. և հիւանդն յառողջութիւն *փութայ*. և գայթակղեալն՝ ի ճանապարհ: - 33. Եւ քարոզչօր՝ այսինքն հրեշտակօր կամ վարդապետօր կամ գրոց սրբոց գիտութեամբ, *փութայ* զկեալն մեր: - 48. Պատճառ յապաղելոյ և *փութալոյ* սերմնականին զօրութեան **գ** են: - 261. Եւ կամ ըստ ազգի իւրեանց և ըստ տեղւոյն և ժամանակին *փութան* և յապաղեն զծնունդն: - 263. Վասն որոյ *փութացաւ* աստուած և փոխեաց զէնօք,

զի մի՛ սպանցեն և ասիցեն թէ փոխեցաւ յերկինս: - 290. ...այժմ ծերացեալ է բնութիւնս՝ վասն որոյ *փութայ* ի հող: - 291. Վեցերորդ՝ զի *փութասցին* ուսման և դպրութեան: - 402. Զի որպէս ադամ յաստուածանալն *փութացաւ*, և բանն աստուած ի մարդանալն *փութացաւ*. վասն որոյ ամք թուոց զանազան են եղեալ...: - 451. Ձճուլութիւնն՝ *փութալովն* ի չարչարանս: - 489. Այլ թացեալ պատառն այսպէս էր. զի ի սկաւառակն ընդ վարդապետին *փութացաւ* մատնիչն տանիլ զձեռն լիրբ դիմօք և արհամարհեալ մտօք: - 599. Եւ ապա ի սէր և անձուկ ժտելոյ նորին, ապաստանեալ ի նոյն որ զօրացոյց զտկարս, ձեռն ի գործ արկեալ աւարտեցաւ բազում միջոցաւ. և փախստեամբ ի տեղիս. և մեծ ջանիւ *փութացեալ*: - 772

**ՓՈՒԹԱՆՑԻԿ** - Եւ այս ո՛չ միայն *փութանցիկ* գոլոյ վասն, կամ ներհակաբար հատուցման որպէս սովորութիւն է. այլ զի ո՛չ ինչ կարեն տանիլ ընդ ինքեանս. բայց միայն նշխարհս ինչ յիշատակութեան ուրուական տեսլեան: - 775

**ՓՈՒԹԱՆՑՈՒԹԻՒՆ +** Չորրորդ՝ նշանակէ՛ *զփութանցութիւն* աւուրցս մեր. զի ամենայն ժամանակք մեր անցանեն իբրև զմի օր անզգայաբար: - 193

**ՓՈՒԹԱՊԷՍ +** Յաղագս այսորիկ անբան կենդանիք *փութապէս* զգան զառաջին շարժումն և զփոփոխումն օդոյդ քան զմարդ. և յառաջագէտ լինին: - 218. Նախ ասեն ոմանք, եթէ ուղեղ գլխոյ անբանիցն ընդ խելապատակին ունի չորութիւն և հովութիւն. և ջիլքն ի նմանէ յառաջեալ յանդամս մարմնոյն՝ *փութապէս* պնդէ՛ և տայ շարժիլ: - 266

**ՓՈՒԹՈՎ +** Վասն ծառոյ՝ և ձևոյ և անուան նոցին. և զի բոյսք *փութով* աճեն քան զծառս: - 155. Նոյն և սա՛ գոլորշի՛ է վերացեալ հողմոց. և մերձեցեալ ի հուռն՝ վառի՛ ի նմանէ. և բռնութեամբ հողմոյն վարեալ երևի իբրև զբռիչ աստղ և *փութով* շիջանի: - 203. Ութերորդ՝ զի նաւք ի վերայ ջուրց ընթանան *փութով*. և զպէտս միմեանց լնուն: - 207. Վասն է՞ր բոյսք *փութով* աճին և դալարին քան զտունկ և զծառ: - 214. Եւ սակաւակեացքն *փութով*. որպէս նարին խոտն, մանուշակն, և այլն: - 214. Զի մարդս բազում իրօք զբաղեալ է ի միտս. իսկ նոքա միայն ի բնութիւնս իւրեանց *փութով* ճանաչեն: - 218. Ոմանք ըստ ազգի և տեսակի իւրեանց հով և ջերմ՝ չոր և գէջ գոլով, *փութով* կամ յապաղելով բուսանին: - 261. Այսպէս և արու մանկանն յաջ կողմն բեղնաւորեալ՝ վասն ջերմութեան լերդին և լեղւոյն՝ *փութով* կատարի անդամօք: - 261. Այս է պատճառն. զի ոմանք յապաղեն. և ոմանք *փութով* տան զպտուղն որպէս ասացաք: - 263. Ուստի յա՛յտ է՝ զի այծեամն առաւել է տեսանելեաւ. և շուն հոտոտելեաւ. և այլն նմանապէս. վասն որոյ *փութով* շարժին և կանգնին քան զմարդն: - 266. Նաշիհ և իւղ զանգեալ և ո՛չ եփեալ, նշանա՛կ է նոցա՝ որ ի փորձութիւնս մտեալ և *փութով* ելեալ ի ձեռն աղօթից...: - 357. Եւ հրաւիրակք են անուանեալ քրիստոնեայք. որք չունին զգործս՝ նոքա *փութով* հանին ի բաց: - 440. Այլ ես ասեմ թէ արիւն ունին յայտնապէս, թէպէտ *փութով* ցամաքի: - 511. Իսկ թէ զերծանի ի մահուանէ, *փութով* առողջութեան պատճառ լինի...: - 604

**ՓՈՒՆՋ +** Զոր և ես զօրէն մշակաց բազմահաւաք պտղոց. կամ *փունջ* մի անուշահոտ բազմերանգ ծաղկանց. կամ չնչին թռչնոյ զխորհիսխ մեղու. կամ որպէս զլոմայս այրւոյն տառապեալ գոյիւ: - 772

**ՓՈՒՇ +** Իններորդ՝ *փուշ*. որպէս ոզնոց: - 216. Որպէս *փուշք* վարդից. և քիսք հասկից. և խայթոցն աղնճին: - 217. Վեցերորդ՝ հարուածս կրեալ յոր ի բոլոր մարմինն. և տէր մեր ի ձեռս և յոտս և ի կողս. որ և *փշով* պսակեալ ապտակեալ և գան հարեալ: - 327. Որպէս անպտուղ երկիր կորուսանէ զբարի սերմանս և *փուշ* բուսուցանէ...: - 564. Իսկ զանազանի մահացուն և ներելին ըստ առաւելութեան և նուազութեան. որպէս առաւել է հարկանումն օձի քան զլուոյ. և նետի քան *զփշի*. այսպէս և մահացուն է առաւել քան զներելին: - 568

**ՓՈՒՉ** - Իններորդ՝ զի որպէս կողից երեսն որ ի փորն նայի՝ կոկ գոլով և մզղնատեսակ. իսկ մէջն *փուչ* և մրրախառն. այսպէս սէրն զոր ցուցանէ առ այրն, նօսր առ ի ցոյցս՝ և երեսս միայն ունի. իսկ ի սիրտն զմրուր դառնութեան: - 276

**ՓՈՓՈԽԱԿԱՆ +** Նա՛խ, զի ըստ սոցա ոչինչ է զանազանութիւն մշտնջենաւորացն և *փոփոխականացն*...: - 8. Իսկ ի վերայ *փոփոխականացս* ո՛չ նմանապէս. զի յանցեալ ժամանակս և ի ներկայս բացորոշակի մինն ճշմարիտ է և մինն սուտ՛...: - 9. Մինն է արդարութեան այժմու կենացս, որ է *փոփոխական*. յորմէ կարէ՛ ոք ջնջիլ: - 18. Այս բարիս ի հրեշտակս անփոփոխ և սերտ է. իսկ ի մեզ *փոփոխական* է: - 23. Զի *փոփոխական* է հոգիս մեր. երբեմն բարի և երբեմն չար: - 23. Չորրորդ՝ հրեշտակն անփոփոխ է. իսկ հոգին *փոփոխական*. որպէս ասացաք ի **լզ** գլուխն: - 141. Զամենայն

իրեշտակս բարի արար աստուած, այլ ո՛չ ծայրագոյն բարիս. այլ միջակս. որ է ի մէջ անփոփոխ և *փոփոխական* բարույն...: - 146. Իսկ թէ դառնային ի ներքոյ ինքեանց առ *փոփոխական* բարին, անկանէին ի չար մեղացն և ի չար պատժոցն. որպէս այժմ դևք և ի կատարածի: - 146. Որպէս այսոքիկ որ *փոփոխականք* են. որ կարեն գոլ և ո՛չ գոլ. և երբեմն հանդերձ զօրութեամբ: - 162. Իսկ միւս զօրութիւնն որ է *փոփոխական*՝ ի գոլն և ի չգոլն կարէ՛. և անկար առ ո՛չ ոք է: - 168. Իսկ միւս զօրութիւնն որ կարելի է՝ և ներընդունի զգոլն և զչգոլն՝ և երբեմն՝ ասի ի վերայ *փոփոխական* բնութեանց. որպէս հանդերձն կարէ՛ պատառիլ և ո՛չ պատառիլ. և ջուրն կարէ՛ ցրտացուցանել և ո՛չ ցրտացուցանել: - 168. Ապա թէ ոչ՝ մշտնջենաւորն լինի *փոփոխական* որ սուտ է: - 168. Այլ արդ եթէ է զօրութիւն ի յաստուած լինի *փոփոխական* և նա որ է՛ անտեղի: - 168. Չորրորդ՝ զի պատահումն է՛ *փոփոխական* իր. իսկ աստուած անփոփոխ է էութեամբ զօրութեամբ կամօք և գիտութեամբ...: - 170. *Փոփոխակա՛ն* է: - 186. Եւ քան զժամանակն ո՛չ է ինչ պատուական. ոչ ինչ հասարակ. ոչ ինչ անցական և հոսական. ոչ ինչ անմնացական. ոչ ինչ այլայլական և *փոփոխական:* - 198-199. Եւ զի *փոփոխակա՛ն* է և այլայլի ընդ **դ** եղանակս: - 211. Նախ՝ բնական. զի յառաջ եղեալն աչացն անփոփո՛խ է իրօք. և ականջին ձայնն և բանն *փոփոխական:* - 239. Եւ ըստ այնմ որ նշանակութիւն է, ցուցանէ զմարմինս մեր *փոփոխական*. որպէս այն որ փչեաց յերեսս մարդոյն շունչ կենդանի: - 282. Եօթներորդ՝ նշանակէ թէ բնական և անփոփոխ ո՛չ է անդրանկութիւնն. այլ ստացական և *փոփոխական:* - 310. Եւ դարձեալ՝ մարմինն է անփոփոխ. և հանդերձն *փոփոխական:* - 318. Երկրորդ՝ կոչի զգեստ նմա արտաքին և *փոփոխական* հաւատացեալ անդամք քրիստոսի՝ եկեղեցի սուրբ...: - 318. Այսպէս կոչի և զգեստ մարմնոյն. զի արտաքին զգեստն որպէս ծիրանին թագաւորի ա՛յլ է ի զգեցողէն և պատահական նմա և *փոփոխական*. այսպէս զգեստ ո՛չ ասի մարմին նորա. այլ եկեղեցի սուրբ որպէս ասացաւ: - 319. Երեքտասաներորդ, նոքա *փոփոխականք* էին վասն մահու արգել լինելոյ...: - 355. Չորրորդ, ի բազում ամանս փոփոխի. *փոփոխականն* մեղքն է: - 356. Եւ նշանակէ՛ր այս, զի է՛ թիւ ժամանակեայ և *փոփոխական* որ առ մեզ է: - 392. Իսկ խորհուրդն, ի յօրէնքն նոցա է զի *փոփոխական* էր օրէնքն նոցա. և որ փոխիւր, այլ ո՛չ դառնայր յօրէնս նոցա: - 401. Իսկ ըստ պատահմանն՝ կարելի՛ է և ներընդունական. այսինքն *փոփոխական* և երբեմն: - 550. Չորրորդ՝ այն տեղիք անփոփոխ է. և այս *փոփոխական:* - 662. Եւ թէ անտի փոխէր յերկիր, լինէր երկին *փոփոխական*, և երկիր անփոփոխ: - 662. Ա՛րդ՝ եթէ արդարք այժմ առնուն զփառս և ի դատաստանին դարձեալ փոխիցին յայնմանէ, ապա ուրեմն ամենայն ինչ այն կենացն անցաւոր է և *փոփոխական*. այսինքն փառքն և տանջանքն: - 694. Զի այժմ հոգիս *փոփոխական* է. որպէս խորհրդով կամօք և այլն. վասն որոյ զմիաւորութիւնն ընդ մարմնոյ *փոփոխական* ունի...: - 723. Երրորդ, այժմ ի ժամանակի եմք եղեալք. և ժամանակն *փոփոխական* է. վասն որոյ ընդ ժամանակին փոփոխիմք և մեք: - 723. Եւ միւս գիր է գործոց *փոփոխական* և ջնջելի ըստ ժամանակիս: - 741. Ա՛րդ՝ սոքա ամենայնքին մասնաւոր և *փոփոխական* են...: - 762. Զի ի ժամանակի եղեալք՝ ընդ ժամանակի *փոփոխակա՛ն* են. իսկ անեղն՝ ի ժամանակի ո՛չ է *փոփոխական*...: - 779. Եւ յայսմանէ բացայայտի այս, զի աստուած միշտ անփոփոխ է. իսկ ժամանակն միշտ *փոփոխական* է. իսկ մեք երբեմն *փոփոխական* և երբեմն ո՛չ: - 779. Զի նկատմամբ առ անփոփոխն՝ միշտ անփոփոխ գոն նախ օրինակաւ. այլ առ ժամանակն՝ *փոփոխական:* - 779. Որպիսութիւն պահանջի, զի իցէ *փոփոխական* կենօք: - 780. Շնորհքն որ տւաւ ադամայ, *փոփոխական* էր ըստ նմա: - 783. Իսկ շնորհք նորոյս ի ձեռն քրիստոսի տուեալ՝ ո՛չ է *փոփոխական.* զի վերստին նորոգման է շնորհք և անապականութեան: - 783. Շնորհք որ ի հինն զինչ և իցէ *փոփոխական* գոլով՝ օրինակ նորոյս էր. որպէս քահանայութեան և այլն: - 783. Եւ այլքն ո՛չ են կնիք. այլ զարդ պակասութեանց նորին. վասն որոյ և *փոփոխականք* են: - 783. Որոց սկիզբն է հաւատն առ մկրտութեամբն. և կատարումն հայի առ գործն. և սոքա *փոփոխականք* են ըստ քանքարացն յարգելոյ և պակասելոյ: - 783

**ՓՈՓՈԽԵԼԻ(Ք)** - Այսպէս անժամանակն զժամանակեայս. անմարմինն զմարմնաւորս. անփոփոխն *զփոփոխելիս*. անսկիզբն զսկզբնաւորքն. և զայլսն նմանապէս: - 113. Այլ արդ՝ անեղն գիտութեամբ և անփոփոխն՝ գիտէ զեղականքս և *զփոփոխելիքս:* - 113. Գոյացութիւն հացին փոխեալ է ի գոյացութիւն մարմնոյն քրիստոսի և է՛ անապական. իսկ քանակն և որակն մնացեալ է դեռևս *փոփոխելի*. և յայնմանէ փոխարկեպին այլայլմունք ինչ: - 339. Եւ զի պատահմունքն *փոփոխելի* է, ուստի յա՛յտ է զի փոփոխի և միաւորի՛ ի մարմին կերողացն: - 339. Նա՛խ՝ փոփոխմամբ իւր նշանակէ՛ *զփոփոխելի* կենցաղս այս. իսկ արեգակն անփոփո՛խ է. որ է՛ հանդերձեալն: - 411. Երկրորդ՝ *զփոփոխելի* կեանքս սգան. և յուսով

հանդերձեալ յարութեանն դադարին ի սգոյ և ուրախանան: - 411. Եօթներորդ՝ որպէս այլայլական և *փոփոխելի* մարմինս կայ և մնայ անփոփոխ և անապական միաւորեալ ընդ հոգւոյն մինչև ցորոշումն: - 477. Մեղք է դարձուցանել զերեսս յանփոփոխելի բարւոյն որ է՛ առ աստուած. և դառնալ առ *փոփոխելի* բարին որ է արարածքս: - 569

**ՓՈՓՈԽԵՄ +** Երկրորդ՝ զի թէ ի ներկայս ասեմք ի վերայ քարի թէ լինիցի փայտ. ո՛չ լինի այնպէս. արդ՝ թէ ասելն մեր զներկայն ո՛չ *փոփոխէ*, նա և ո՛չ զհանդերձեալ. կարէ փոխել. ո՛չ զմերձաւոր հանդերձեալն՝ և ո՛չ զհեռաւորն: - 8. Արդ՝ ժամանակեայ արդարութիւնն յայտնի է որ անձնիշխան կամօք *փոփոխի*. երբեմն ի չար և երբեմն ի բարի...: - 18. Եւ զի՝ մարդոյ ճանաչումն *փոփոխի* **ը** իրին. իսկ աստուծոյն անփոփոխելի մնայ: - 20. Ասեմք եթէ՝ տէր ապաւէն եղև ասէ մարգարէն. ո՛չ թէ *փոփոխեցաւ* ի տէրութենէն յապաւինութիւն, այլ եկաց մնաց տէր, և եղև ապաւէն: - 72. Չորրորդ՝ զի *փոփոխեա՛լ* է: - 114. Եւ ո՛չ *փոփոխի* կամ այլայլի...: - 114. Իսկ հոգին *փոփոխի:* - 117. Իսկ ճշմարտութիւնն ո՛չ *փոփոխի*. որպէս լոյս հաւատոյն: - 121. Այլ արդ՝ շնորհքն ըստ իւրում ինքնութեան է՛ անեղ՝ յանեղ է էն յառաջեալ, և նախախնամաբար եղելոցս հաղորդի, և յիւրմէ էութենէն ո՛չ *փոփոխի:* - 140. Որպէս ո՛չ արտաբերի հնչումն ձայնական գործեաց և ո՛չ *փոփոխէ* զօդն որ ի մէջն: -145. Իսկ խօսի դևն ընդ մարդոյ՝ կամ *փոփոխելով* զգոյութիւնն որպէս հրեշտակն կամ զպատկեր նմանութեանն ցուցանէ տեսանելեացն. և կամ տպաւորէ՛ յերևակայութիւնն: - 145. Իսկ ներհական հակակայքն և այլքն կարեն *փոփոխիլ* ի միմեանս. որպէս չարն և բարին. ջերմն և ցուրտն: - 165. Դարձեալ ասեմք, թէ կոյսն և պոռնիկն՝ առաքինութեան և չարութեան են տեսակք, և ներհա՛կք են առաքինութիւն և չարութիւն. զի *փոփոխեն* զմիմեանս. ըստ այնմ և թողութեան հանդիպին: - 165. Հինգերորդ՝ զօրութեամբ և ներգործութեամբ *փոփոխեն* զմիմեանս: - 168. Եւ է՛ էակ որ երբեմն զօրութեամբ է. որպէս այնոքիկ որ ի լինելութեան և յապականութեան են որք միշտ *փոփոխին*. որպէս մարդ և ոչխար և ծառ: - 173. Եւ զի *փոփոխին* ժամանակք դիւրաւ: - 197. Այսպիսի ժամանակ է յայտնապէս կեանք մեր. զի զոր ինչ ժամանակ կենցաղոյս չափէ բնութեամբ՝ ապականէ և *փոփոխէ* ...: - 199. ...յա՛յտ է զի գիշեր ո՛չ լինի անդ. և ո՛չ եղանակք *փոփոխին:* - 222. Պտուղքն դրախտին շօշափելիք են և կերակրելիք. հատանի և ծասկի և *փոփոխի* ըստ պատահական որակացն...: - 223. Որպէս հաց մարմնոյն քրիստոսի ըստ գոյացութեան և ներգործութեան անապական է. թէ և *փոփոխի* ըստ արտաքին որակացն: - 223. Վերջին հուրն ի կատարածի զդրախտն *փոփոխէ՞* թէ ոչ: - 225. Եւ զի ո՛չ է ապականացու դրախտն՝ և ոչ *փոփոխի:* - 225. Նոյնպէս ի **դ** հասակ մարդոյն *փոփոխին* **դ** հողմունքն: - 240. Կամ ի *փոփոխիլ* երեսացն: - 250. Եւ տե՛ս, զի **բ բ** են յաւելեալ թիւ ի չորեքտասան, յերեք հասակս *փոփոխելով:* - 265. Եւ դարձեալ ըստ չորից տարերց և եղանակաց և ժամուց աւուր և հիւթոց համեմատաբար *փոփոխին* և հասակ մարդկան: - 266. Զայս կարգ պահէ՛ և ի զարգացման հասակին. զի մինչև ցեօթն ամն ատամն բուսանելով և *փոփոխելով* նշանակէ՛ զկերակրականն: - 267. Նմանապէս և զայս սահման լեզուի ո՛չ ոք կարէ *փոփոխել*. ո՛չ բռնաւոր և ո՛չ իշխան. բայց միայն աստուած որ եդ զսա: - 298. Եւ յորժամ *փոփոխի* այս, այսինքն ի հանդերձեալն, յայնժամ ի լեզուս հրեշտակաց խօսիցիմք: - 298. Կարե՞ն դևք հուր իջուցանել և *փոփոխել* զտարերքս: - 321. Ո՛չ կարեն դևք զտարերքս *փոփոխել*. և ո՛չ հուր և ո՛չ շանթս և ո՛չ այլ ինչ ի տարերացս առնել որպէս կարծեն ոմանք: - 321. Եւ զի պատահմունքն փոփոխելի է, ուստի յա՛յտ է զի *փոփոխի* և միաւորի՛ ի մարմին կերողացն: - 339. Ութերորդ, ձայն *փոփոխի*. և բանն մնայ: - 354. Չորրորդ, ի բազում ամանս *փոփոխի*. փոփոխականն մեղքն է: - 356. Երրորդ՝ եօթն հասակ մեր *փոփոխի*. և ութն հաստատի: - 374. Առաջին աստ *փոփոխիլ* ի մարմին և ի հոգի: - 394. Դարձեալ ասեն նոքա, եթէ մարմինն քրիստոսի *փոփոխէր* աճելովն որ տեսա՛կ է ապականութեան: - 501. Զի աճումն զգգայութիւնն զարգացուցանէ. իսկ ապականութիւնն ընդ դէմ նմին զգոյն ի նուազութիւն և յոչգոյութիւն *փոփոխէ:* - 501. Նոյնպէս վասն երկրորդին գիտելի է, զի որպէս զփայտ թիւրութեամբ պնդեալ՝ դժուարին է ուղղել. նոյնպէս զչար սովորութիւն մարդկան դժուարին է *փոփոխել:* - 531. ...այն է հպարտութիւն որ խոտե՛մք և անարգեմք զճշմարիտ բարին. և ապա խոտորիմք և հետևիմք զհետ *փոփոխելոյ* բարւոյս. և այսպէս երևի հպարտութիւնն յամենայն մեղս: - 562. Զի հասակ ամենայն մարդոյ ի չորս *փոփոխի:* - 622. Հինգերորդ, զի **գ** է հասակ մարդոյս. մանկութեան երիտասարդութեան և ծերութեան յորում *փոփոխիմք* վարուք. վասն սոցա **գ** հանգիստ դնեմք: - 675. ...և յէութեանս միշտ *փոփոխիմք* վասն կարօտութեան...: - 681. ...և յետոյ յէութենէ յոչ էութիւն *փոփոխիմք* մարմնով: - 681. Ասեմք եթէ՝ մտանելն առ աստուած այն է՝ որ հեռանայ ի չարութեանց և լինի ի բարութեան և ո՛չ *փոփոխի* ի չար, աստուծոյ պահելովն...: - 695.

...և ո՛չ էր պարտ մասին *փոփոխիլ* առանց բոլորին...: - 717. Եւ թէպէտ մարմինն *փոփոխի* հասակաւ կամ հիւանդութեամբ, կամ մեղօք հոգին հիւանդանայ. դիմաւոր նշանս այս անփոփոխ մնայ: - 719. Երրորդ, այժմ ի ժամանակի եմք եղեալք. և ժամանակն փոփոխական է. վասն որոյ ընդ ժամանակին *փոփոխիմք* և մեք: - 723. Եւ **դ** տարերքդ իւրաքանչիւր դադարին ի տեղի իւրեանց և բնաւ ո՛չ *փոփոխին:* - 727. Գիրն անփոփոխ ո՞րպէս լինի *փոփոխեալ:* - 742. Նա՛խ՝ ի ժամանակէս զի *փոփոխի:* - 742. Երրորդ ի վկայիցն զոր կարեմք *փոփոխել* այժմ: - 742. *Փոփոխեսցի* բնութիւն. և բնակութիւն աշխարհի...: - 759. Այսպէս և օդն յորս եկաց փրկիչն յետ յարութեանն, *փոփոխեսցէ* զբնական նսեմութիւնն իւր և պայծառասցի որպէս զեթերն: - 759. Շող յաստուծոյ ծագեալ հաւատ. զերկնից կախեալ լար իմն լուսեղէն. զորմէ բուռն հարեալ ձեռն զձեռամբ *փոփոխեալ*. ի ծովու սքանչելեաց յերկինս և յօդս վերանալ: - 769. Եւ այսոքիկ որք երևին ընդ դէմ միմեանց, կամ առ այլս կամ երբեմն, ո՛չ փոփոխումն ինչ ցուցանեն անփոփոխելոյն. առ մեզ *փոփոխելոց* ըստ արժանոյն գութ կամ հատուցումն. թէ աստ՝ թէ ի հանդերձեալն: - 779. Եւ ո՛չ է տարադէպ ցոյցք ականն արփիաւորի, զի ի միջօրեայ ժամու փոփոխումն մարմնոյ և ական արձակէ՛ ստուեր կամ լոյս. այլ ինքն միշտ լոյս գոլով ո՛չ *փոփոխի:* - 779. Եւ թէ նայիս մտօք, թէպէտ առ մեզ *փոփոխին* տիւ և գիշեր. այլ նա միշտ լոյս և միշտ գիշեր կազմէ...: - 779. Զի ի ժամանակի եղեալք՝ ընդ ժամանակի փոփոխակա՛ն են. իսկ անեղն՝ ի ժամանակի ո՛չ է փոփոխական...: - 779. Իսկ ի ժամանակի *փոփոխիլն* առ յաւիտեան, յայնժամ և մեք լիցուք անփոփոխք և յաւիտենականք: - 779. Եւ ըստ այլ կերպի *փոփոխին* սոքա ի միմեանս և լինի ստորասութիւնն բացասութիւն, և բացասութիւնն ստորասութիւն: - 787

**ՓՈՓՈԽՈՒՄՆ +** Իսկ ի տեսութիւն մարդոյ է՛ առաջին և վերջին. զի զանցեալն տեսանէ յիշմամբ, և զներկայն իմացմամբ. և զհանդերձեալն ի պատճառն իւր ըստ ժամանակին *փոփոխման* որպէս ասացաք: - 15. Երկրորդ՝ *զփոփոխումն* թագաւորաց, զաղքատաց մեծանալն, և զփարթամացն տնանկանալ: - 26. Երրորդ՝ *զփոփոխումն* ի խորհրդոց և կամաց մարդկան. զի բազում ինչ խորհիմք և կամիմք և ո՛չ կատարի: - 26. Տասներորդ՝ առարկութիւն արիանոսացն՝ Պարտէ ասեն թագաւորել սմա մինչև ի ժամանակաց *փոփոխումն* ըստ առաքելոյն: - 41. Իսկ յորժամ հնազանդին ամենայն անդամք գլխոյն քրիստոսի գիտութեամբ և *փոփոխմամբ*, յայնժամ և ինքն լնու զհնազանդութիւնն, ընծայելով զհնազանդեալքս հօր: - 42. Իսկ թէ ոք ասիցէ՝ եղևն *զփոփոխումն* ցուցանէ. որպէս այն թէ՝ գաւազանն մովսէսի օձ եղև: - 72. Զի անե՛ղ է՝ յաղագս որոյ ո՛չ կրէ յեղումն ինչ և *փոփոխումն* կրից: - 76. Այսպէս և բանն աստուած կատարէր մի ներգործութիւն մարմնով իւրով. զի միաւորութիւն բնութեանցն առանց *փոփոխման* և բաժանման է: - 86. Չորրորդ՝ երեք թիւն *փոփոխմամբ* է. յորժամ ասեմք մի և **բ** և **գ**, փոխեցաւ ի միոյն և եղև երկու. և փոխեցաւ յերկուցն և եղև **գ**: - 108. Զի առ աստուած՝ ո՛չէ սոսկ տեսութիւն արտաքոյ. այլ յինքն տեսանելով զյարացոյցն. և զմեզ ի յարացոյցն մեր իբր լինիլ մեզ նախ ի յաստուած, և ապա ի յէութեան մերում. և ո՛չ որպէս *փոփոխումն* ինչ ի բարի կամացն: - 112. Եւ զանազանին միով. այսինքն *փոփոխմամբ*. զի հրեշտակն նոյն և անփոփոխ կենդանի է: - 117. Եւ այս ամենայն ընդդէմ է տեսութեան մեր. զի մեք մասամբ տեսանեմք. և մի զկնի միոյ. և առաւել և պակաս գիտութեամբ. և ըստ իրին *փոփոխմամբ:* - 118. Չորրորդ՝ այն *փոփոխումն* միայն տեսութեանն լինի: - 133. Դարձեալ՝ կամքն աստուծոյ անփոփոխ է. զի ո՛չ տարակուսի և ո՛չ զղջանայ. ապա թէ արար աստուած զաշխարհս ի գոյութիւն՝ այժմ առնէ յանգոյութիւն, երևի *փոփոխումն* անփոփոխելոյն. կամ զղջումն և երկբայութիւն. որ օտա՛ր է արարչականն կամաց: - 162. Իսկ Երբ ո՛չ ասի աստուծոյ. զի անժամանա՛կ է և ո՛չ ունի *փոփոխումն*...: - 172. Իններորդ՝ զի մշտակա՛յ է ի պարունակութիւնս իւր. այսինքն զի ո՛չ ունի այլայլումն և *փոփոխումն* ըստ անարգ շարժութեան երկրի: - 184. Յաղագս այսորիկ անբան կենդանիք փութապէս զգան զառաջին շարժումն և *զփոփոխումն* օդոյդ քան զմարդ. և յառաջագէտ լինին: - 218. Երրորդ՝ զի երեսն հայելի է սրտին. և նորա *փոփոխմամբն* զխորհուրդն ճանաչեմք...: - 234. Երրորդ՝ զի ո՛չ գիտէին զանդրանիկն ժամանակաւ, և ո՛չ զկրտսերն. և լինէր *փոփոխումն* վիճակաց նոցին...: - 238. Եւ դարձեալ՝ հասակ մարդոյ չորիցս ունի *զփոփոխումն*. այսինքն, Ի մանկութիւն. Յերիտասարդութիւն. Յալևորութիւն. և Ծերութիւն: - 265. Գիտելի է, զի որպիսութիւն կենաց մարդոյս տրամատի յերիս. ըստ երից *փոփոխմանց* մարդոյն. այսինքն նախ քան զմեղքն. և յետ մեղացն. և յետ մահուն: - 278. Նմանապէս և մեծն ի մարգարէս աստուածախօսն մովսէս որ աստուած կոչեցաւ փարաւոնի. իշխելով տարերցս *փոփոխման*, որ ջրածինն էր՝ եղև վիմածին և կայծակնածին. որում լուսաւորեցան երեսք: - 288. Իններորդ՝ ըստ *փոփոխման* ասի. զի յղացեալ

ունիմք զմահ անդստին. և ի վախճան մերձեալ հասանէ երկն ցաւոց. և բաժանեալ հոգին ծնանի ի մահ: - 308. Նա՛խ՝ *փոփոխմամբ* իւր նշանակէ՛ զփոփոխելի կենցաղս այս. իսկ արեգակն անփոփո՛խ է. որ է՛ հանդերձեալն: - 411. Եւ եօթնից ժամանակաց *փոփոխմամբ*՝ է հասակաւ յեօթն դար կենցաղոյս՝ լինիմք տաճար և քաղաք քրիստոսի աստուծոյ մերոյ: - 448. Երրորդ՝ զի քրիստոս զչափ հասակի զադամայն ունէր, որ նախ քան զյանցանս և ադա՛մ ոչ ունէր հիւանդութիւն և ո՛չ ծերութեան *փոփոխումն:* - 480. Եւ տեառն մերոյ ո՛չ էր լինելոյ. ոչ հիւանդութիւն և ո՛չ ծերութեան *փոփոխումն:* - 480. Վեցերորդ՝ ի յանմարմին բնութիւնն ո՛չ կոչէր իգական. այլ արական որդի. իսկ թէ ի մարդեղութիւնն լինէր իգական, *փոփոխումն* էր դիմացն և սերիցն: - 480. Դարձեալ ասեմք, *փոփոխումն* և աճումն հասակին ո՛չ եթէ ապականութեան էր ցոյցք. այլ զի զճշմարիտ մարդեղութիւնն հաստատեսցէ ընտել սովորութեամբ մեր որ ի տղայութենէ զարգանամք: - 501. Եւ *փոփոխումն* ձայնից. և շարականաց քաղելն: - 527. Նախ վասն տգիտութեան. **բ** վասն *փոփոխման*. **գ** վասն հիւանդութեան: - 531. Ա՛րդ՝ տգիտութիւնն բնակա՛ն է մարդոյ. *փոփոխումն* ստացական. և հիւանդութիւնն դիւական: - 531. Ճշմարտութիւն է որ առանց *փոփոխման* ասին այնք որ են, կամ լինին, կամ լինելո՛ց են: - 579. Եւ դարձեալ՝ **գ** է որպիսութիւնք մեր և *փոփոխմունք*. որ է՛ աստի կեանս. և յետ մահուն. և յետ յարութեանն...: - 623. Չորրորդն պարտապան գոհութեան վասն էից *փոփոխման*. և ոմանց ամօթ պատկառանաց: - 630. Եօթն աղին՝ **է** զգայարանս. և եօթն *փոփոխմունք* եօթնից դարուցն. և զօրութիւնք հոգւոյ: - 641. Քանի՞ են *փոփոխմունք* ժամատեղաց կարգաց ի բոլոր տարին: - 649. Երկրորդ՝ Վասն է *փոփոխման* մարդոյն: - 660. Ո՞ր քան է *փոփոխումն* մարդոյ: - 663. Որ ամենեքեան լինին է *փոփոխմունք* կենցաղական...: - 663. Եւ գիտելի է, զի հրեշտակք ո՛չ ունին զայսպիսի *փոփոխմունս*. զի ո՛չ են տարրականք, և ո՛չ ընդ ժամանակաւ: - 663. Այլ ըստ իմացման առաւելուն ի գիտութիւն. և այն ո՛չ է նոցա *փոփոխումն*, այլ աճումն իմաստութեամբ: - 663. Այսպէս և ի յարութեանն սուրբք զայսպիսի *փոփոխմունս* ո՛չ ունին...: - 663. ...այլ հրեշտակաց հաւասարք են առանց *փոփոխման*...: - 663. Է՛ և այլ իմն եղանակ *փոփոխման* ըստ իմաստասիրացն **դ**: - 664. Արդ՝ ա՛յլ ամենայն *փոփոխմունք* ասացան ի վերոյ ի զանազան տեղիս: - 664. ...զի որ քան էր ի ժամանակս ի մէջ *փոփոխման* էր հոգին...: - 667. ...այլ ունիմք թերևս *փոփոխումն* յուսոյ և սիրոյ...: - 667. Եւ ամենայն ինչ որ աշխարհի է՝ յայսմանէ արտաքս ո՛չ է. եթէ ժամանակն եթէ կեանքն և եթէ *փոփոխումն* մեր: - 681. Եւ **գ** *փոփոխումն* ունիմք. զի նախ յոչ է է ի յէութիւն գամք...: - 681. Յայս **գ** *փոփոխմանէս* աստուած ամենևին անփոփո՛խ է...: - 681. Վեցերորդ, ի *փոփոխումն* աստուածածին կուսին յետ **գ** յաւուր ձայն հրեշտակացն դադարեցաւ...: - 681. Նա՛խ՝ որպէս ասացաւ ի քահանայաթաղն վասն **է** շնորհաց հոգւոյն, և **է** խորհրդոց եկեղեցւոյ, և **է** առաքինութեանց, և **է** գլխաւորագոյն մեղաց, և **է** զգայարանօք մեղանչեմք, և **է** *փոփոխմամբ* հասակի...: - 683. Վարդապետք սուրբք՝ զպահեստ հոգւոց յերիս *փոփոխմունս* գիտեն. այսինքն նախ քան զքրիստոս. և յետ քրիստոսի. և յետ դատելոյն: - 686. Այլ արդ՝ մարմնով աճումն է ըստ բնութեան. և բնութիւնն ըստ ժամանակի *փոփոխման* կատարի: - 716. Դարձեալ՝ էութիւնն մնայ, այլ ներգործութիւնն պակասի՝ այսպէս. զի ջերմութիւն հրոյն և ցրտութիւն ջրոյն և *փոփոխմունք* օդոյդ որպէս ամպք և այլն, և սևութիւն երկրի...: - 728. *Փոփոխումն* գրոյն պատճառի ի չորից: - 742. Եւ այս՝ *փոփոխումն* յանեղ բնութիւնն երևեցուցանէ որ է՛ անդունդ հերձուած: - 778. Իսկ եթէ ոք *զփոփոխումն* ի մեզ ասիցէ ըստ օրինակի արեգական. որ զչորեսին եղանակս կազմէ՛ և ինքն անյեղ մնայ: - 778. Եւ այսորիկ որք երևին ընդ դէմ միմեանց, կամ առ այլս կամ երբեմն, ո՛չ *փոփոխումն* ինչ ցուցանեն անփոփոխելոյն. առ մեզ փոփոխելոց ըստ արժանոյն գութ կամ հատուցումն. թէ աստ՝ թէ ի հանդերձեալն: - 779. Եւ ո՛չ է տարադէպ ցոյցք ականն արփիաւորի, զի ի միջօրեայ ժամու *փոփոխումն* մարմնոյ և ական արձակէ՛ ստուեր կամ լոյս. այլ ինքն միշտ լոյս գոլով ո՛չ փոփոխի: - 779. Իսկ իւրաքանչիւրոց հատուցումն՝ այսինքն բարեացն բարիս և չարացն չարիս, է՛ այս գործ արդարութեան. և այսորիկ առ մե՛զ *փոփոխմունք*. և ո՛չ անեղ բնութեանն: - 779

**ՓՈՔՐ +** Առնչական. որպէս մեծ և *փոքր:* - 21. Ուստի յա՛յտ է մեծութիւն յանցանացն. քանզի ի հինն զինչև մեղանչէր ոք մեծ կամ *փոքր*՝ պատարագաւն սրբէր. թռչնօք և անասնօք: - 33. Եօթներորդ՝ զնա *փոքր* եղջիւր կոչէ դանիէլ...: - 35. Եւ թէ հայր մեծ է քան զորդի, զիա՞րդ տանի *փոքրն* զմեծն: - 39. ...վասն տնօրէնութեան՝ ասի *փոքր* յայս միաւորութեանս քան զհայր. իսկ ըստ այնմ որ է՛ անճառ և նախքան զյաւիտեանս ծնունդ ի հօրէ՛, հաւասա՛ր է հօր և ոչ *փոքր:* - 40. Զի ո՛չ էր հայր մեծ քան զնա՝ ի յոր երդնոյր. զի որք երդնուն՝ ի մեծագոյնսն քան զինքեանս երդնուն. ապա ուրեմն հաւասա՛րէ որդի հօր և ո՛չ *փոքր* որպէս ասէ առաքեալն: - 40. Այլ և ոչ ասի անկատար և *փոքր* վասն աճման հասակին:

- 78. Ա՛րդ՝ եթէ՝ ի յարութեանն հասարակ արդարք տեսանեն զաստուած դէմ յանդիման որպէս և է, և քրիստոս ո՛չ կարէ տեսանել, *փո՛քր* լինի գիտութեամբ քան զմարդ որ է սուտ: - 99. Արդ՝ եթէ առաքեալքն որ բնակարանք են հոգւոյն՝ ճանաչեն զհոգին աստուած, և մարդկութիւնն քրիստոսի ո՛չ ճանաչէ, *փոքր* քան զբնակարանքն եղիցի քրիստոս: - 99. Ա՛րդ՝ եթէ հրեշտակք տեսանեն զբանն աստուած՝ և առնուն գիտութիւն ի նմանէ, և մարդն քրիստոս ո՛չ տեսանէ որպէս ասես նեստո՛րդ, ապա քրիստոս *փո՛քր* է գիտութեամբ քան զհրեշտակս: - 99. Համագոյ և միասնական սուրբ Երրորդութեանն ո՛չ է առաջին և վերջին. ո՛չ մեծ և *փոքր*. և ո՛չ երէց և կրտսեր: - 109. Երկրորդ՝ ըստ չափոյ մտիցն քանականայ մեծ կամ *փոքր:* - 125. Ութևժերորդ՝ բազմապատիկ մեծ է քան զերկիր. և *փո՛քր* քանակով ցուցանի: - 127. Երկրորդ՝ է՛ գործ արդարութեան. զի ըստ արժանեաց հատուցի մեծաց և *փոքունց*. և առաջնոց և երկրորդաց: - 130. Երրորդ՝ է՛ գործ նախախնամութեան. զի ըստ ընտանի կարողութեան իւրեանց՝ համեմատապէս զպարգևս ընկալցին. զի մի վնասեսցին *փոքունքն* մեծամեծօք. և թերի մնացին մեծամեծքն սակաւուք: - 130. Եւ այսպէս խօսին մեծք առ *փոքունսն*. և *փոքունքն* առ մեծսն: - 145. Հինգերորդ՝ զի դիրքն իւր մեծ է. թէպէտ և առ մեզ *փոքր:* - 186. *Փո՛քր* է գօտին: - 186. Եւ այս առինչ է. զի մեծն ցուցանէ *զփոքրն*. և պատուականն զանապատիւն: - 230. Վասն որոյ պա՛րտ էր լինիլ նոցա նախ որ *փոքունք* և անպատիւք են, զի երևեսցի մեծն և պատուաւորն այսինքն մարդն: - 230. Իններորդ՝ զի և ի հոգևորն՝ *փոքունք* զմեծամեծաց անուանս կոչէին ինքեանց ի մոլորումն մարդկան. որպէս սիմոն կախարդն ասէր զինքենէ՛ թէ քրիստոսն իցէ. մինչև յանդիմանեցաւ ի պետրոսէ: - 238. Շրթունքն բարակ և բերանն և *փոքր* բերանն՝ թուլասիրտ է: - 247. Բերանն *փոքր*՝ պատկանի կանանց: - 247. Ձեռքն կարճ և *փոքր*, ուժեղ է և հնարաւոր: - 247. Մատունքն *փոքր* և բարակ, յիմարի՛ է ցոյց: - 247. Մատունքն *փոքր* և ստուար, համարձա՛կ է: - 247. Եւ մի՛ աստ ընդ դէմ բերցի բանիս թէ՝ ամենայն մեծամեծք գութ ունին *փոքունց*...: - 267. Տասներորդ՝ ևս մեծագոյն խորհուրդ. զի բանն աստուած որ անդրանիկ էր հօր, եղև կրտսեր մարդ ի ժամանակի և *փոքր*...: - 311. Տասներորդ՝ մահ անդրանկացն. իբր ի *փոքունցն* կարգաւ ի խստագոյնն ելեալ: - 333. Չորրորդ՝ խնայեաց զնոսա իբր ի մարդիկ զի զղջասցեն *փոքր* խրատովն և ի մեծ պատուհասէն զերծանիցին. այլ նոքա խստացան մինչև զամենայնն կրեցին: - 333. Երկրորդ՝ *փոքր* ողջակիզացն. յոր մասնաւոր պատարագացն էր: - 364. Որպէս նախ քան զօրէնս, բնական քննութեամբ ընտրէին մարդիկ. կամ զանճոռնի մեծն, կամ զամենևին *փոքրն*, կամ զգարշն տեսութեամբ, կամ զվնասակարն, ուտելոյ պիղծ ասէին զսոսա: - 364. Նա՛խ՝ ի սեռս իւր ներելի և *փոքր*. որպէս դատարկաբանելն և մորոսն: - 385. Երրորդ՝ ներելի մեղքն և *փոքր*՝ թէ ո՛չ ապաշխարի, լինի մահու չափ և անթողլի: - 385. Եւ դարձեալ՝ զի բազմացն շատ տացէ զբաժին երկրին, և սակաւուցն *փոքր:* - 392. Այլ կենդանի եղբօր, կամ *փոքր* եղբօր կինն, կամ գոլով զաւակ, անօրէնութիւն էր որպէս հերովդին...: - 402. Երկրորդ՝ և մի՛ *փոքր* կասցի օրէնքն, տեսանելով զլոյս երեսացն նաւաղեալ: - 411. Հինգերորդ, նա՛ *փոքր* և կրտսեր եղբարցն. և տէր մեր երկրորդ ադամ...: - 435. Յաղագս այսորիկ նւազ և *փոքր* լսի գործ արդարութեան քան զգործ ողորմութեան: - 458. Քանզի ո՛չ կարէին ի միում աւուր յերկոսեան ուխտսն կատարել զտօնսն հեռի գոլով ի միմեանց. երուսաղէմացիքն այսր աղագաւ փոխեցին. և *փոքր* *փոքր* աճմամբ ընկալան և ա՛յլ եկեղեցիք զնոյն: - 482. Նոյնպէս պա՛րտ էր զսերմն հաւատոյ ընդունել նոցա քրիստոսիւ, և ապա *փոքր* *փոքր* աճմամբ հասանիլ պարգևաց հոգւոյն, և պտղաբերել և զայլսն: - 521. Եւ ըստ յունաց թէ աստիճանն. և ըստ մեծին դիոնիսեայ. և մինչ ի **դ դ** կարգն *փոքր* է. հրաման ամուսնութեան: - 526. Ի մեծէն. ի կամացն. յիշխանութենէն ի *փոքրոյն*. ի հնազանդութենէն. և ի գործոյն: - 535. Եւ որպէս ի մէջ աւետարանչացն ո՛չ է մեծ և *փոքր:* - 547. Նոյնպէս, ի մէջ առաքելոցն ո՛չ է մեծ և *փոքր* իշխանութեամբ: - 547. Եւ այսոքիկ թէպէտ և ոմանց ո՛չ թուեսցին որպէս *փոքր* կարծեցեալք. սակայն աւանդութիւն և ո՛չ հաւատ: - 554. Եւ զի ո՛չ է որպէս մահացուն մեծ կամ *փոքր*. որպէս շնութիւն մեծ է քան զպոռնկութիւն. և մարդասպանութիւն քան զգողութիւն: - 568. *Փոքերն* զուղղութիւն և զողորմութիւն: - 579. Զի ծաղիկն դիւրաւ թափի յամէն *փոքր* պատճառէ. յանձրևոյ և ի հողմոյ և ի սաստիկ որոտոյ. վասն այն պտուղն կորնչի: - 638. Ասեմք թէ՝ ի յաղուհացսն կրկին կարգ է. այսինքն մեծ և *փոքր:* - 651. Եւ *զփոքր* կարգն մեծն կիւրեղ եէմի հայրապետն. է՛ սկիզբն **բ** շաբաթի, և աւարտն ի **ե** շաբաթի: - 651. Ապա պա՛րտ է քեզ ի *փոքր* կարգն ուտել զամենայն աւուրս և զմեծն պահել: - 651. Եւ դանիէլ՝ *փոքր* եղջիւր: - 707. Իսկ **իդ** թիւն ո՛չ եթէ սահման և կէտ է. այլ սովորութիւն է գրոց *փոքր* թուով զբազումսն ցուցանել: - 711. Այլ համահասակ քանակաւ ո՛չ. զի աստ ոմն մեծ լինի և ոմն *փոքր* ի ջերմութենէն որ անհաւասա՛ր է ի նոսա. նոյնպէս և անդ: - 726. Այլ որ

առաւել մեծն է և հսկայանդամ, և կարի *փոքր* և փանաքի, յերեսնամեայ հասակն իւրեանց չափաւորին: - 726. Եւ մեծ և *փոքր* ի յարութեանն եռակի ասի: - 726. Երկրորդ՝ զի ժամանակ կենցաղոյս համեմատեալ յաւիտենին՝ *փո՛քր* է և սակաւ: - 730. Երրորդ՝ զի ժամանակ մարդոյ մինչ ի վախճան իւր *փոքր* է և սակաւ: - 730. Յօրինակ լուսեղէն անպոյն վառն, և *փոքր* վարշամակն ցոլմունք լուսոյն: - 732. Եւ պիտանեացն՝ փառս վերընծայել այնմ, որ փառաւորեալն է ի պարգևս իւր. իսկ զանպիտանսն ներել մերոյ *փոքր* ընկալ անօքոյ և դանդաղկոտ փութոյ: - 772-773

***ՓՈՔՐ ԻՆՉ +*** Որպէս *փոքր ինչ* յառաջ ասաց «օ՜ն՝ արի՛ք գնասցո՛ւք աստի»: - 519. Եւ *փոքր ինչ* յետոյ մարմնովն զոր զգեցցի ժառանգեսցէ զփառսն զայն...: - 691. Վեցերորդ՝ զի գործ աստուծոյ է ի նւաստ և ի *փոքր ինչ* իր զմեծամեծսն ներգործել. որպէս կաւովն զկուրին աչքն եբաց, և ի վիմէն ջուր բղխեցոյց **բժան**. և այլ բազումս: - 733-734

**ՓՈՔՐԱԳՈՅՆ +** Երկրորդ ասեն, առաքիլն *փոքրագունին* է ի մեծ է: - 60. Եւ էր ի վերջոյ քան զզաւակն. *փոքրագոյն* քան զպարունակեալն յինքեան: - 469. Եւ այն ևս սքանչելիք, որ ի *փոքրագոյն* մարմինն ընկալեալ եղև հոգի բանական, և տեսակաւորեալ որպէս քառասնօրեայ մանուկ յարգանդի: - 470. Իսկ ներելի մեղքն է յանցանք *փոքրագոյն*. քանզի ի մանկունս յետ մկրտութեան նախ յառնեն ներելիքն, և ապա՛ մահու չափքն: - 567

**ՓՈՔՐԱԽԵԼՔ** - Ճակատն նեղ՝ շատակո՛ւլ է: ...Իսկ լայնն՝ *փոքրախելք*: - 246

**ՓՈՔՐԻԿ +** Մեծ ականջն դէ՛շ է և շատախօս: ...Եւ *փոքրիկն* խորամանկ: - 246. Տասներորդ՝ ևս մեծագոյն խորհուրդ. զի բանն աստուած որ անդրանիկ էր հօր, եղև կրտսեր մարդ ի ժամանակի և փոքր. ըստ որում կոչեաց զինքն «*փոքրիկ*». զի բնութիւն մարդոյս ընդ ինքեան խառնելով արասցէ մեծ և անդրանիկ: - 311. Հինգերորդ, նա՛ փոքր և կրտսեր եղբարցն. և տէր մեր երկրորդ ադամ. և *փոքրիկ* կոչեցաւ քան զհրեշտակս և առաւել պատուեցաւ: - 435. Եւ թէպէտ կատարեալ և լի և անթերի էին մասունք մարմնոյն քրիստոսի. այլ ա՛յն քան *փոքրիկ*, մինչ զի հազիւ անկարէր ընդ տեսութեամբ մարդոյ: - 470. Անչափն *փոքրիկ*: - 470. *Փոքրիկ* տղային զի՞նչ է մեղք: - 591. Արդ *փոքրիկ* տղայն ո՛չ վասն այն տանջի թէ ադամ եթող զայն. այլ զի ինքն զարդարութիւնն զայն ո՛չ ունի վասն այն տանջի: - 591. Վասն է՞ր մինչ ի չորրորդ կարգն *փոքրիկ* ջահընկալութեանն կարեն ամուսնանալ, և յայնմ հետէ ոչ: - 609. Երրորդն ասեն եթէ՝ **բ** ազգն գեթսոնի և **բ** գունդն մերարեայ՝ զչորս *փոքրիկ* աստիճանս ունէին ի խորանն...: - 609. Բայց ի կատարածի *փոքրիկ* լինին հասակք մարդկան քան զմերս. որպէս մերս քան զառաջնոցն: - 708. Զի թէ սկզբնական նիւթն միայն յառնէ, մարմին մարդոյ ամենևին *փոքրիկ* և անկատար լինի: - 718

**ՓՈՔՐԻՇԱՏԷ** - Այս քան վասն Օծման *փոքրիշատէ*: - 475. Այս *փոքրիշատէ* պատճառ իմաստից ծեր լիցի. - 663. Եօթն զարդ հարսին որպէս ցուցաւ. և օժիտք յաւիտենիցն կենացն. պսակք և արկանելիք, ասացան մեզ *փոքրիշատէ* յառաջագոյն ի բանից սրբոց: - 761. Այժմ ճանաչեմք *փոքրիշատէ*. իսկ յայնժամ ծանեայց որպէս ծանուցայ ի նմանէ: - 767

**ՓՈՔՐԿԱՆԱՄ +** Խաչանման տարածեցաւ ի վերայ մանկանն և կծկեցաւ. այսինքն *փոքրկացաւ* ի չափ մանկանն. և ապա յայտնապէս է անգամ յօրանչելով և կծկելով կենդանացոյց զնա: - 446. Արդ եղիսիէէ նշանակէ՛ զբանն աստուած. որ *փոքրկացաւ* և բովանդակեցաւ ի ծոց կուսին ի մարմնի միաւորեալ. և ապա ի խաչն բարձրացեալ կեանս շնորհեաց մարդկան: - 446

**ՓՈՔՐԿՈՒԹԻՒՆ +** Առաջին է՛ անգիտանալ զտկարութիւն և *զփոքրկութիւն* մարդկային մտաց. կարծեն թէ՝ ամենայնի պարունակօ՛ղ է, և ո՛չ ունի սահման: - 31. Պատասխանեմք եթէ՝ որպէս ասի որդի առաքեալ ի հօրէ և ի հոգւոյն, ըստ այնմ «տէր տէր առաքեաց զիս և հոգի նորա». և այս ո՛չ վասն *փոքրկութեան*, այլ վասն միութեան կամացն: - 60

**ՓՈՔՐՈՒԹԻՒՆ +** Նոյնպէս և ճանաչումն հասակի ընկալաւ ի *փոքրութենէ* ի մեծութիւն: - 479

**ՓՉԵՄ +** Նախ՝ *փչեաց* ի յադամ շունչ կենդանի և եղև: - 50. Երկրորդ՝ զի *փչեաց* յառաքեալսն և ասէ «առէք հոգի սուրբ»: - 61. Պատասխանեմք, այն որ ասի հոգի քրիստոսի, և թէ՝ *փչեաց*, և թէ՝ առաքեաց, յայն սակս ասացան, զի ծաւալումն հոգւոյն սրբոյ յաղագս մարդկան՝ գալստեամբն քրիստոսի եղև: - 61. Եւ կամ յորժամ որպէս զիւր բարի շնորհէր իւրայնոցն՝ մարմնապէս *փչեալ* ի նոսա ասելով՝ «առէք հոգի սուրբ»: - 69. Նոյնպէս *փչօղ*. *փչեալ*. փչումն. և այլ ծանօթութիւնք աստ յարմարին: - 105. Որպէս ի մէջ երկրի գոն երակք ջրոց, նոյնպէս և հողմոց, ուստի ի վեր *փչեն*: - 208. Եօթներորդ՝ զի *փչեաց* ի նա զշնորհաց հոգին զանազան պարգևաց, այժմ զքահանայութեան շնորհն երևեցոյց ի նա՛: - 219. Եւ օդն

է ի թոքն. զի հանապազ ի շարժութեան կայ և *փչէ՛* ընդ դէմ ջերմութեան սրտին: - 232. Իսկ բարոյականն, Նա՛խ՝ զի յերեսն *փչեաց* զշունչ կենդանի. վասն որոյ յերեսն ունի զգայարանս մարմնոյ: - 234. Իսկ մազն է այրեցած արիւնն. որ օդովն ի դուրս *փչի*. որպէս տունկք յերկրէ: - 240. Իսկ որ զմարմին յառաջ ասեն քան զհոգի, վկայ ածելով զմովսէս որ ասէ եթէ՝ էառ զհողն և շինեաց մարմին. և յետոյ *փչեաց* ի նա զշունչն կենդանի, որ է կենդանարար հոգին: - 253. Եւ արդ ի կատարեալ մարդն հոգւով և մարմնով՝ *փչեաց* զշնորհաց հոգին ի մարդկայինս ազգ. և ունէին որ քան յանմեղութեան էին. և կորուսին ի մեղանչելն: - 253. Եւ դարձեալ զնոյն շնորհաց հոգին յետ յարութեանն *փչեաց* յառաքեալսն ասելով՝ «առէք հոգի սուրբ»: - 253. Եւ ըստ այնմ որ նշանակութիւն է, ցուցանէ զմարմինս մեր փոփոխական. որպէս այն որ *փչեաց* յերեսս մարդոյն շունչ կենդանի: - 282. Ըստ իրին նշանակէր զշնորհաց հոգին, զոր ի մարմին եղելոցն վերացոյց. և ի վերնատունն դարձեալ *փչեաց:* - 282. երիցս *փչելն* ի խորհուրդ Երրորդութեանն: - 444. Ութերորդ՝ որք առեալ զօդ դարձեալ արտաքս *փչեն* ներհակ իմն գործով. այսինքն ջերմացուցանեն և զովացուցանեն. վառեն և շիջուցանեն: - 523. Եւ յորժամ առաքելոցն ետ՝ նախ *փչեաց* ի նոսա զհոգին սուրբ, և ապա ետ իշխանութիւն կապելոյ և արձակելոյ: - 539. Վասն որոյ ի վերնատունն յորժամ *փչեաց* յառաքեալսն՝ նախ ետ զարձակելն և ապա զկապելն: - 541. Նախ՝ զի յետ յարութեանն հաւասար ետ զիշխանութիւնն. *փչեաց* ի նոսա և ասէ, «զոր ոք կապիցէք՝ կապեալ լիցի» և այլն: - 546. Եւ յետ յարութեանն *փչելովն* զհոգին՝ արար զնոսա եպիսկոպոսունս: - 607

**ՓՉՈՒՄՆ +** *Փչումն* **ժ** գլխով: - 29. Նոյնպէս փչօղ. փչեալ. *փչումն*. և այլ ծանօթութիւնք աստ յարմարին: - 105. Նա՛խ՝ վասն առաջին *փչմանն* յերեսս մարդոյն: - 234. Պատասխանեմք առ այս եթէ՝ *փչումն* ո՛չ զբանական հոգին ասեն սուրբ հարքն...: - 253. Եւ դարձեալ՝ եթէ տամք *զփչումն* բանական հոգւոյն ըստ ոմանց, և այսու յետո՛յ իմանալ զհոգին քան զմարմինն մեղանչումն է ճշմարտութեան ըստ **Ե** եղանակի: - 253

**ՓԱԱԼՏ +** Իններորդ՝ *Փայլտր*. որ են սաղմոսասացք: - 608

**ՓԽԱԾ +** Արդ՝ կռապաշտն և հերձուածօղն հաւասա՛ր են յամբարիշտ գոլն. զի որպէս շուն դառնայ ի *փսխած* իւր...: - 33. Որ յետ խոստովանութեան դառնայ ի նոյն մեղս, իբր շուն դառնայ ի *փըսխած* իւր...: - 367. Եւ է՛ որ խոստովանի. և ոչ մեղքն միայն թողուի. որք թերի են սրտիւ. և զմեղս թերի խոստովանին. և ի միտս եդեալ են դարձեալ գործել. այսպիսեաց ոչ մեղքն թողուի և ոչ պատիժն. զի որպէս զշուն դառնայ ի *փսխած* իւր: - 432

**ՓՏԵՄ +** Նմանապէս և կոչին փայտ. զի ի *փտելոյ* և յապականելոյ գոյանան այսպէս...: - 214. Եւ նոյնպէս զգայական մարմինք ի *փտելոյ* և յապականութենէ գոյանան...: - 214. Այլ արդ՝ նախախնամութեամբ է տնկականն և զգայականն. որք *փտելով* և զնմանս ծնանելով պահեն զնոյն տեսակն: - 257. Նախախնամութեամբ՝ ո՛չ որպէս *փտելով* կամ ծնանելով զմարմին ի մարմնոց. այլ յառաջ բերէ զպատկերն իւր որպէս ինքն գիտէ: - 258. Եւ թէ չունիս հաւատ *զփտեալ* փայտն տե՛ս ի գիշերի: - 294. Դարձեալ՝ կենդանիքն ո՛չ ժամանեն ննջեցելոցն, այսինքն նոցա որ մեռեալ են և ի հող *փտեալ* և փոշիացեալ. - 717

**ՓՐԿԱԳՈՐԾՈՒԹԻՒՆ +** Եւ վկայքն հաստատեցին մեծ գոլ և ծածուկ՝ հրաշալի խորհուրդ միածնին *փրկագործութեան* երևումն առ մարդիկք: - 456

**ՓՐԿԱԿԱՆ +** Նախ զի *փրկական* է խորհուրդն ամենեցուն...: - 167. Եւ տէրն մեր նովիմք աւանդեաց *զփրկական* մարմին և արիւն իւր: - 302. Վասն է՞ր զգեստ կոչի մարմինն *փրկական:* - 318. Ութերորդ՝ խաչն *փրկական* նախ էր մահու գործիք. զոր առեալ ի ձեռն քրիստոս, և եղև կենաց պատճառ: - 332. Իսկ **Ե** կանգուն և կէսն. զի գալուստն քրիստոսի և *փրկական* խաչն և եկեղեցի՝ է՛ ի **Ե**երորդ դարն և կէսն երևեալ ի մուտ զ**ռ** ամին: - 345. Եւ ո՛չ միայն այս, այլ զեօրն օր անխմոր բաղարջ ուտէին ամենայն ժողովուրդն. և Աբրահամ և ղովտ բաղա՛րջ յօրինեցին զխորհուրդ *փրկական* մարմնոյ տեառն որ ի վերնատունն բաղարջով աւանդեաց: - 356. Ա՛րդ՝ մանանայն նշանակէ՛ *զփրկական* խորհուրդն ուր ո՛չ է աղ: - 356. Երեսունն**զ**, պահեցաւ սուրն գողիաթու ի խորանն. և խաչն *փրկական* ի յեկեղեցի: - 437. Չորրորդ՝ ի տիպ մարմնոյն *փրկական*. զի ոչ յաւելու ի բազում պատարագելն. և ոչ նուազէ ի ճաշակելն: - 444. Արդ աղեղն և նետն ի վերայ եդեալ՝ նշանակէ՛ զխաչն *փրկական* ընդ դէմ իմանալի ասորւոյն սատանայի: - 446. **Մի կոչի եկեղեցի՝ ո՛չ տեղեաւ մի. այլ միով հաւատով և յուսով կոչմանն. և միոյ մօր և մի որովայնի ծնունդ աւազանին. և մի կերակուր որ է տեսութիւն աստուածային զրոց. և մի մարմին**

**և արիւն *փրկական*. և մի գլուխ և պսակ և զգեստ ունիմք զքրիստոս**: - 533. Նա՛խ՝ զի արիւնն հեղուկ նիւթ է. կամ ո՛չ է տալի որպէս այլ ազգք, և զրկել զժողովուրդն ի *փրկական* արենէն: - 598. Իններորդ, ըստ մասին ի սմա խաչն *փրկական:* - 614. և կանգնեաց զխաչն *փրկական* ի սուրբ գողգոթայ ի սեպտեմբերի **ժդ**ն...: - 617. **Իններորդ՝ կոչի հնձան և խաչն *փրկական*. յորում ողկոյզն անապական ճմլեցաւ և ետ մեզ ուրախարար գինի զանապական արիւնն իւր**...: - 749. Հինգերորդ՝ ծառ կենաց է *փրկական* փայտն կենդանարար սուրբ խաչին: - 768. Միանգամայն և իղձք *փրկական* և հրաման հարկի ժամանեալ էհաս առ ներգևեալս ոգի և թաւազարթ թզենի: - 773

**ՓՐԿԱՆՔ +** Եւ տէր մեր լրումն աւետեաց ուխտին նախահարցն. և նախ քան զսկիզբն աշխարհի ուխտի աւետեաց մարդկան *փրկանաց:* - 422. Դաւիթ կանգնեաց սեղան և դարձոյց զսուր հրեշտակին. և տէր մեր զսեղան խաչին զենմամբ պատարագին ի *փրկանս* և ի կեանս աշխարհի: - 438

**ՓՐԿԵՄ +** Բայց նախախնամութիւնն աստուծոյ ճանաչէ *զփրկեալսն*, և տայ զկերպ *փրկելոցն* որով *փրկին* ընտրեալքն: - 18. Նոյնպէս և աստուած զամենայն մարդոյ փրկութիւն կամի. որք անձնիշխան կամօք համակամ լիցին աստուծոյ՝ *փրկին*. և որք հակառակին կամօք՝ ո՛չ *փրկին:* - 20. Այլ զի արեգակն անբանապէս տայ զլոյսն. իսկ աստուած բանիւ և իմացմամբ ընտրէ զարժանիսն և *փրկէ* ...: - 20. Քանզի ասէ թէ՝ ջիւուն թարքմանի խոստովանօղ. քանզի խոստովանօղքն մեսիային *փրկեսցին:* - 28. Էառ փրկիչն զամենայն, զի *փրկեսցէ* զամենայն...: - 50. Չորեքտասաներորդ՝ զի թէ մահւամբ չարչարանօք նորա *փրկեցաք* մեք ամենեքեան...: - 67. Եւ եղիցի նա՛ փրկիչ *փրկեալ*, և ապրեցուցիչ ապրեալ: - 67. Եւ զայս եթէ բաժանմամբ, ո՛չ է առանձնապէս բանն քրիստոս. զի ո՛չ գոյ մեծագոյն օծանօղ նմա. որ և ո՛չ առանց մարմնոյ *փրկեաց:* - 94. Եւ հաւատացեալքն *փրկին*. և հակառակօղքն կորնչին: - 96. **Եւ արդ՝ տգէտն զտգիտութիւն ո՛չ կարէ բառնալ. և ո՛չ մեղաւորն զմեղս. և ո՛չ ապականացուն զապականութիւն**. և ո՛չ սոսկ մարդ զմարդ կարէ *փրկել*. զի սո՛ւտ է փրկութիւն մարդոյ: - 99. Ընդէ՞ր քրիստոս ո՛չ փրկեաց զնոսա որպէս *փրկեաց* զմարդիկ: - 149. Վասն այն թէ քրիստոս զմի հրեշտակի բնութիւն ընդունէր՝ զնա միա՛յն *փրկէր* և այլքն արտաքոյ մնային փրկութեան: - 149. Դարձեալ՝ և ո՛չ զնա միայն *փրկէր* զի մեռանիլ ո՛չ կարէր: - 149. Այլ և եկեղեցի սուրբ շինեալ ի քրիստոսէ հոգևոր տապան մեզ ի մէջ ծովու աշխարհիս՝ որ զհոգիս մեր *փրկէ* ի ջուրց մեղաց: - 293. Նա՛խ՝ զի ի պատճառս ղովտայ *փրկեսցի* սոդոմ ի գերչացն: - 302. Չորրորդ՝ զի յորժամ *փրկեսցի* ղովտ ի սոդոմայ, զօրութիւն աստուծոյ յայտնի լիցի: - 302. Ութերորդ՝ զի էառ իսահակ զհարսն և ուրախացաւ ի տան մօրն իւրում սառայի. որ զվեց ամ *փրկեալ* գոյր և ո՛չ ոք մտեալ: - 305. Եւ տէրն զհարսնացեալ եկեղեցի եմոյծ վերըստին ի դրախտն որ զվեց դարիւ արգելեալ էր և *փակեալ:* - 305. Եւ մեք առանց արծաթոյ միայն ձրի շնորհօքն քրիստոսի լինիմք *փրկեալք* և ապրեալք: - 314. Յորոց *փրկեսցէ* զմեզ և զամենայն հաւատացեալս անւան իւրոյ ի յաւիտենական...: - 317. Ոմանք է ամ ասեն. ըստ որում ի վեցից վշտաց *փրկեսցէ*, և յեօթներորդին ո՛չ փորձեսցի չար: - 326. Ութերորդ՝ յոր ո՛չ անիծանէր, այլ աղօթիւքն զբարեկամսն *փրկէր*. և տէր մեր ի վերայ խաչողացն աղօթէր: - 327. Քսանև**զ**, մովսէս որդի կոչեցաւ դստերն փարաւոնի և *փրկեաց* զնա: - 329. Չորրորդ՝ մին ձեռն մովսէսի մեռաւ բորոտութեամբ. զի մին ազգ *փրկեցաւ* նովաւ: - 332. Իսկ տէրն մեր բոլոր անդամօք մեռաւ. զի զբոլոր բնութիւնս *փրկեաց:* - 332. Չորրորդ՝ վասն փրկութեան ի հիւանդութենէ կամ ի պատերազմէ՛ *փրկեալք*, մատուցեն ասէ պատարագ և նւէրս ընծայեսցեն ի սեղանն ի հոտ անուշից: - 358. Յորմէ *փրկեսցէ* զմեզ քրիստոս աստուած փրկիչ մեր ամէն: - 394. Զի պարգևօք և ողորմութեամբ աստուած մարդացաւ և *փրկեաց* զմեզ: - 402. Երկրորդ ըստ իրին. զի յեսու *փրկեաց* զժողովուրդն ի մարմնաւոր թշնամեաց: - 417. Եւ յիսուս *փրկեաց* զմեզ յիմանալւոյն ձեռաց: - 417. Քսան**գ**՝ յեսու *փրկեաց* զգաբաւոն ի **ե** թագաւորացն որք պաշարէին: - 419. Եւ տէր մեր *փրկէ* զյուսացեալս իւր, որք պաշարին հնգիւք զգայութեամբք յիշխանացն դիւաց: - 419. Արին Սամփսոն բազում բաղդատութեամբ խորհուրդ և օրինա՛կ է Տեառն մերոյ ամենազօր *փրկողին:* - 421. Ութերորդ՝ նա՛ ուսովք էր բարձր քան զամենայն մարդ. և տէր մեր ո՛չ միայն աստուածութեամբն որ գլուխ է, այլ և չարչարանօք իւր՝ գերագոյն և բարձրագոյն ցուցաւ. զի *փրկեաց* զամենայն: - 427. Հինգերորդ՝ զի որպէս զկանխագէտ ոչ ասաց սաւուղայ թէ դու ո՞վ ես որ զիս *փրկես* ի սաւուղայ: - 428. Վասն որոյ ասաց դաւիթ, ամենայն որ մարտնչի սրով ընդ կաղս և ընդ կոյրս որպէս ասացին յեբուսացիքն, նա՛ ատելի՛ է անձին դաւթի. և խնայեաց ի նոսա և *փրկեաց:* - 431. Երկրորդ՝ որպէս թուեաց դովեկ զքահանայսն զի մի՛ զերծանիցեն ի սրոյն. նոյնպէս և այս վասն քահանայիցն վրէժխնդրութեան էր. զի կամեցաւ ժողովուրդն *փրկել* զնոսա: - 434. Եւ տէրն զզղջացեալն *փրկէ*, և զանզեղջսն կորուսանէ: - 441. Ի վեցից իրաց *փրկեաց:* - 454. Եւ թէ յայնմ ժամանակի *փրկեալ* լինէաք, կարծէաք թէ յօրինաց անտի եղև փրկութիւն: - 467. Այլ յորժամ նկուն եղեն օրէնք ամենայն, և ո՛չ

կարեցին *փրկել*. յետոյ եկն և երևեցաւ նոյն ինքն օրէնսդիրն և *փրկեաց* զմեզ: - 467. Հինգերորդն Մովսէսի. իսկ Վեցերորդ դարն` յորում ծնաւ Փրկիչն մեր Քրիստոս. և *փրկեաց* և բժշկեաց զմեզ: - 467. Ա՛րդ` ի դէմս փրկչին նայելով յիրէ՛ն է փրկիչն. իսկ ի դէմս *փրկելոցն* ի գործոյն: - 473. Ուստի՞ *փրկեաց* զմեզ: - 473. Ի վեց իրաց գլխաւորօրէն փրկութիւն ներգործեաց. ըստ յոքայ վեցիցս *փրկեցար* նովաւ: - 473. Նա՛խ` *փրկեաց* ի մեղաց...: - 473. Երկրորդ` *փրկեաց* յանիծից օրինացն...: - 473. Երրորդ` *փրկեաց* ի բուռն ծառայութենէ սատանայի...: - 473. Չորրորդ` *փրկեաց* ի մահուանէ ...: - 473. Հինգերորդ` *փրկեաց* զհոգիսն ի բանտէ դժոխոցն...: - 473. Վեցերորդ` *փրկեաց* ի կռամոլ դիւաց...: - 473. Արդ այսպէս ի **զ** իրաց *փրկեաց* զմեզ մարդեղութեամբն իւր քրիստոս: - 473. Ապա ուրեմն ի վեցից գլխաւոր վշտաց *փրկեաց* զմեզ: - 474. Որ և զչարչարանքն և զմահն` աստուծոյ մարդացելոյ խոստովանիմք որով *փրկեցարն:* - 478. Ութերորդ` սկիզբն մարդկութեանս ա՛յրն է. և կինն ի նմանէ. վասն որոյ այր եղև, զի զբոլորս լինէր առեալ և *փրկեալ:* - 480. Զի զայն որ փայտիւն յաղթեաց` յաղթեսցէ. և զայն որ փայտիւն անկաւ` *փրկեսցէ:* - 491. Ութերորդ` նշանակէ՛ զչորս տարբերութիւն *փրկելոցս* նովաւ. այսինքն երկնաւորք և երկրաւորք, կենդանիք և մեռեալք: - 493. Ապա ապականութիւնն *փրկեաց* զմեզ. զնա կարդալի է փրկիչ. այսինքն և զապականութիւնն և ո՛չ զքրիստոս: - 503. Նոյնպէս և քրիստոսիւ ամենայնքն *փրկեցան* արդարք և մեղաւորք ըստ առաքելոյ: - 507. Եւ թէ ոք ասիցէ` ի յերկրի որք հաւատացին *փրկեցան*, և անհաւատքն ո՛չ նոյնպէս և ի դժոխս: - 507. Որք հաւատացին` յաւիտենից *փրկեցան*...: - 508. Չորեքտասաներորդ` այլ և ի գիշերի հրեշտակն տեառն էհան զզօրսն ռափսակայ. որ պաշարեալ էին զերուսաղէմ և *փրկեաց* զնոսա...: - 514. Հինգերորդ` համբարձաւ զուարճութեամբ. որ վերաբերի առ նոսա որք *փրկեցան* ի դժոխոցն և ընդ նմա ելին յերկինս. զի **բ** բանակօք ել յերկինս այսինքն սպասաւոր հրեշտակք և մարդկան *փրկելովք:* - 520. Եւ **լգ** ժամ ի դժոխս, զի *փրկեսցէ* զհոգիսն: - 520. Յորմէ *փրկեսցէ* քրիստոս աստուած զմեզ և զամենայն հաւատացեալս անուան իւրոյ ամէն: - 570. Դարձեալ` հաւատովն հաւատամք` որ միայն իւր բարութեամբն զմեզ ստեղծեաց և վերստին *փրկեաց* և ո՛չ ի հարկէ: - 571. Որք ասեն` պա՛րտ է յամենայն աւուր ջերմ հաց հանել ի սեղանն և անապական բաժակ. զի անապական արեամբն քրիստոսի *փրկեցար:* - 595. Երկրորդ ժամն է՛ օրհնութիւն երից մանկանցն ի դէմս որդւոյ. որ նա՛ էջ ի մէջ հնոցի աշխարհիս. և *փրկեաց* զմեզ: - 621. և Չորրորդ` վասն այսմ աշխարհիս և հենդերձելոյն առանձնակի աղօթեմք *փրկիլ* ի փորձանաց: - 623. Իսկ մեծացուսցէն ի կիրակէի, զբնաւ տնօրէնութիւնն պատմէ. զի թէ ոչ էր ծնեալ` և ո՛չ էր խաչեալ. և ո՛չ յարուցեալ. և ո՛չ զմեզ *փրկեալ:* - 628. Եւ յետ այսորիկ ի միասին համաձայն երգել զփառս ի բարձունս աստուծոյ, որ *փրկեաց* զմեզ: - 628. Ութերորդն նոյնպէս զերկոցունց կողմանց յայտնէ *զփրկելոց* և զկորուսելոց...: - 630. Ա՛րդ` եթէ ճշմարիտ է մարգարէն և առաքեալն, զի ահա՛ ա՛ստ է ընդունել զապաշխարութիւն և *փրկել* զհոգիս. - 698. Եւ մեկնիչն ասէ, աստուածապա՛շտ են որք խոստովանին զմեղս. զոր գիտէ տէր յայսմ աշխարհի *փրկել* առանց քաւարանի հրոյ: - 699. Արդ այսորիկ *փրկին* արդեամբք հիման հաւատոյն. սակայն այնպէս որպէս թէ ի հուր: - 702. Յորմէ *փրկեսցէ* քրիստոս աստուած առ հասարակ զամենայն հաւատացեալս անւան իւրոյ ամէն: - 710. Ա՛րդ` յայտնեալ է նա և որոշեալ ի մէջ ամենայն փայտից գոլ արմատ արդարութեան որով *փրկեցար* ի բանսարկուէն: - 734. Հինգերորդ, զի որդին ծնաւ ի կուսէն և յերկրի շրջեցաւ և քարոզեաց և չարչարանօք *փրկեաց* և պատճառ եղև ընդհանուր յարութեան բնութեանս մերոյ. - 735. Ո՞րք են որ առանց դատաստանի *փրկին:* - 739. Ո՞րք են դատաստանաւ *փրկին:* - 739. Եւ երբեմն միտէ՛. որպէս ի *փրկել* զբարիս կամ զչարս. և փարթամանալ բարեաց կամ չարաց: - 746. Իսկ կշռողականն է զոյգ արդարութեամբ կշռել. որպէս յորժամ ողորմելով միոյն` պատժէ՛ զընդդիմակն նորին. որպէս *փրկեցաւ* իսրայէլ և պատժեցաւ եգիպտոս. և յազատիլ բնութեան մարդոյս` պատժեցաւ սատանայ: - 747. Երեք կարգս այսորիկ գուշակեին երեքումբք արամբքն զորս եզեկիէլ մարգարէացաւ. *փրկելոցն* Նոյիւ Յոբաւ և Դանիէլիւ: - 755. Յորոց *փրկեսցէ* զմեզ փրկիչն ամենայնի և առհասարակ զամենայն հաւատացեալս անուան իւրոյ. և կացուսցէ ի տեղւոջ լուսոյ և հանգստեան. Ամէն: - 760. Երկրորդ այնու` զի ի նաւաբեկութենէ *փրկեալք* եղիցին. թէ նաւաբեկեալքն որ ի ծովէն ելանեն այնքան ուրախանան, ո՞րչափ ևս առաւել ուրախասցին որք զայս քան նաւաբեկութիւնս կրեալք ի վշտագին ծովէ այսմ աշխարհի զերծան: - 764. Որոց խնամօք ամրացեալ *փրկեսցուք* յամենայն փորձութեանց ամէն: - 772. Եւ այլևս յարմար տեղւոյս այսպէս իմանի. զի սուրբ հարքն առաջինք պակաս ունէին զչարչարանս. վասն որոյ ո՛չ կարէին *փրկիլ*. իսկ քրիստոս եղեալ ըստ մարմնոյ որդի նոցա, զպակասութիւն հարցն չարչարանաց յիւրումն մարմնի էլից: - 781. Զի որպէս քրիստոս չարչարանօքն *փրկեաց* զեկեղեցի և հարսնացոյց, նոյն և առաքեալն քարոզութեամբ իբր զկոյս մի սուրբ յանդիման արար փեսային քրիստոսի: - 781. Վեցերորդ, հաւատովն *փրկի* ոք. ըստ այնմ «հաւատք քո կեցուցին զքեզ». այլ

արդ դիւաց ո՛չ գոյ փրկութիւն: - 784. Այլ և ի դռան Կլայիս սակաւ ինչ դանդաղեալ, մինն *փրկեալ* և միւսն գերեալ: - 789

**ՓՐԿԻՉ +** Այսքան պատճառս եցոյց չարչարանքն *փրկչին* յայսմ տեղւոջ: - 43. Եւ ի տնտեսականն. որպէս Աստուած *փրկիչ*. կամ արդարութեան. կամ խաղաղութեան. կամ աբրահամու. կամ իսահակայ և այլն. և այս հասարա՛կ է Երրորդութեանն: - 49. **Էառ *փրկիչն* զամենայն, զի փրկեսցէ զամենայն. բաց ի մեղաց. զի մեղքն եկամուտ է և ո՛չ է ի բնութենէս. զի բնութիւնս անմեղ ստեղծաւ յաստուծոյ**: - 50. Եւ եղիցի նա՛ *փրկիչ* փրկեալ, և ապրեցուցիչ ապրեալ: - 67. Եւ ապա ի բարձր հանէ վարդապետութիւն զբնութեանցն միաւորութիւն. ասէ՝ այլ և այլ յորոց *փրկիչն*. եթէ ոչ՝ նո՛յն է երևելին և աներևոյթն. անժամանակն և ընդ ժամանակաւն: - 80. Իսկ բաժաննունքն յորոց *փրկիչն* ընդդէմ է այնմ. զի բնութեամբ է միաւորեալ. որ ո՛չ է հնար շփոթելոյ: - 80. Երկրորդ՝ զի ո՛չ մասամբ ինչ ըստ ոմանց ապօղինարի և այլոց. այլ յերկուց կատարեալ բնութեանց է միաւորութիւն *փրկչին:* - 88. Բե՛ր յարմարեսցուք այժմ զերիս եղանակս սոցա՝ միաւորութեան *փրկչին* ուղղակի իմն տեսութեամբ. որ ո՛չ ախորժելի է այլոց: - 89. Այլ ամենազոյգ և հաւասա՛ր է միաւորութիւն *փրկչին:* - 89. Չորրորդ՝ նշանակեն զտղնօրէնութիւն *փրկչին:* - 132. Զայսմ վիշապէ՛ ասէ՝ զգլուխ վիշապին *փրկիչն* ջախջախեաց ի յորդանան. այն է որ զամենայն ջուրս ծովուն յակնակապիճս իւր ընդունէր: - 151. Իններորդ՝ նահատակադիրն քրիստոս է *փրկիչն* ամենեցուն. և ամենայն սուրբք զինուո՛րք նորա. պարտին և զինւորքն զօրավարին նմանիլ և նահատակիլ...: - 159. Ութերորդ՝ *փրկչին* մերոյ և աստուծոյ աւետեաց. որ ծնաւ մարմնով վասն մեր: - 196. Ա՛րդ՝ բազմազան եղանակաւ համեմատի մեծն մովսէս *փրկչին* մերոյ քրիստոսի...: - 328. Եւ *փրկիչն* միա՛յն էջ ի դժոխս, և ազատեաց զամենայն հոգիսն ի հրահալոց տանջանացն սատանայի: - 329. Իսկ ի ջուր, Նա՛խ՝ զի ջուր բղխեաց ի լուացումն և յարբուցումն. որպէս ի կողից *փրկչին* ջուր և արիւն: - 386. Ութերորդ՝ զի թէ *փրկիչն* տկարացաւ զի մարդ եղև, քանի՞ առաւել սուրբքն: - 386. Եղիազար՝ աստուծոյ զօրութիւն լսի որ է՛ քրիստոս և քահանայ և *փրկիչ* մեր. և իշխանք՝ **բժան** առաքեալքն աթոռակիցք քրիստոսի: - 391. Եւ որք պարտին աստ, նոքա և յետ մահու և յարութեանն. զորս կորուսցէ *փրկիչն* մեր յիսուս: - 394. Յորմէ փրկեսցէ զմեզ քրիստոս աստուած *փրկիչ* մեր ամէն: - 394. Իսկ խոստման երկիրն նոր օրինօքս ի ձեռն *փրկչին* յիսուսի: - 395. Մովսէս նշան կատարեաց մեծամեծ. նոյնպէս և ա՛յլ մարգարէք. *փրկչին* մերոյ ո՞րն է առաւել քան զնոցայն: - 411. Եւ բաժանեաց **բժան** ցեղիցն ի խորհուրդ *փրկչին* յիսուսի: - 414. Երրորդ՝ յօրինակ *փրկչին* յիսուսի որ եղև առ խաչին: - 416. Ութերորդ՝ յօրինակ *փրկչին* յիսուսի, որ զբռնութիւն թշնամւոյն խորտակեաց...: - 417. Նա՛խ ըստ հոմանունն. զի յեսու՝ *փրկիչ*, և յիսուսն *փրկիչ* լսի ըստ հրեշտակին...: - 417. Եւ զյիսուս *փրկիչն* հայր սրբեաց և առաքեաց...: - 417. Եւ խոստումն օրհնութեանց զաւակին՝ և օրինաց կատարումն՝ *փրկիչն* եղև: - 419. Եւ *փրկիչն* մեր զհայրենի ժառանգութիւնն: - 419. Եւ անտի քահանայքն մինչ ի յիսուս *փրկիչն* ճշմարիտ: - 421. Եւ աւետեօք հրեշտակապետին ծնաւ *փրկիչն* ի կուսական արգանդէ: - 422. Եւ որք գիտեն զտղնօրէնութիւն *փրկչին*, զգեցցին զփրկութիւն նորին. զի նա՛ է հզօրն յորմէ եղ կերակուր քաղցր: - 422. Եւ այս ի տիպ *փրկչին*. զի որդին միածին շինեսցէ զտաճար բնութեան մերոյ մարդանալովն իւր: - 440. Չորրորդ՝ գերիլն ի բաբիլօն՝ զգերութիւն բնութեանս նշանակէ. և եօթանասուն ամն զեօթն դար կենցաղոյս. և ապա դարձումն ի հայրենի բնակութիւնն մեր ի ձեռն *փրկչին* մերոյ և աստուծոյ: - 448. Եւ մարդեղութիւն *փրկչին* **ձգ** ամաւ յառաջ է քան զբան մարգարէիցն: - 451. Երեքտասաներորդ, Յիսուս կոչի և *փրկիչ:* - 454. Յինգերորդն Մովսէսի. իսկ Վեցերորդ դարն՝ յորում ծնաւ *Փրկիչն* մեր Քրիստոս. և փրկեաց և բժշկեաց զմեզ: - 467. Եւ ոմանք ըստ չորրորդ եղանակի ասեն. երեքն յառաջագոյն եղեալ, և չորրորդ ծնունդն *փրկչին:* - 471. Յիսուս՝ *փրկիչ* թարգմանի. որպէս ասաց հրեշտակն առ յովսէփ: - 473. Ա՛րդ՝ ի դէմս *փրկչին* նայելով յիրէ՛ն է *փրկիչն*. իսկ ի դէմս փրկելոցն ի գործոյն: - 473. Յասիցելոցս ո՛չ որն յարմարի միաւորութեան *փրկչին*. բայց միայն երրորդն առաջնոյն. այսինքն էութիւն առ էութիւն անշփոթ խառնումն. որպէս հոգւոյ և մարմնոյ. զոր և յառաջիկայդ ցուցցի: - 476. Այսպէս և ծնեալ *փրկիչն* աստուած մարդացեալ՝ և զծնօղն աստուածածին դաւանիմք: - 478. Իսկ *փրկչին* բոլորից՝ անեղ ընդ եղականի: - 478. Իսկ ի միաւորութիւն *փրկչին* բոլորից՝ բանն անդրանիկ կոչի և ի բազում եղբարս. և մարդն միածին հօր...: - 479. Նոյնպէս և *փրկիչն* զիւր աւետարանն ի ձեռն ունի: - 481. Երկրորդ՝ թէ խա՛չն է փառք *փրկչին* մերոյ...: - 481. Եւ ասաց թէ առաքեալքն թաքուցին ի մէջ զծնունդ *փրկչին:* - 482. Եւ ապա հետևիլ թէ անապական է մարմին *փրկչին:* - 498. Վեցերորդ՝ զմարիամ մայր *փրկչին* կոյս և անապական խոստովանին հարք ուղղափառութեան...: - 499. Ութերորդ՝ մանանայն յանապատի էր օրինակ անապական մարմնոյ *փրկչին*...: - 499. ...ուրեմն և նախ քան զխաչն անապական էր մարմինն քրիստոսի *փրկչին* մերոյ: - 499. Նա՛խ ասեն,

եթէ անապական էր մարմինն *փրկչին*, ապա անմահ և անչարչարելի՛ է: - 500. Ապա ապականութիւնն փրկեաց զմեզ. զնա կարդալի է *փրկիչ*. այսինքն և զապականութիւնն և ո՛չ զքրիստոս: - 503. ...զանտառն և զսեղանն բահաղու կործանեալ և զերծեալ ի ձեռաց նոցա. որ էր օրինակ *փրկչին*...: - 513. Ուքևծ՝ ի մէջ գիշերի է յարութիւն *փրկչին*, վասն որոյ յերեկոյն մերձ ի մուտս գիշերոյն ճրագալոյց առնեմք և պատարագ որպէս ի ծննդեանն: - 514. Այսքան վասն Մարդեղութեան *Փրկչին:* - 525. Բայց միայն *փրկչին* մեր քրիստոս էր ազատ ի սկզբնականէն: - 568. Չորրորդ վասն չարչարանաց *փրկչին:* - 572. Ա՛րդ՝ **թ** երանութիւնք *փրկչին* զոր քարոզեաց ի լերինն, **ը** են ըստ էութեանն. այլ **է** են ըստ աստիճանաց...: - 583. ...և յարևելս երկրպագեմք ուստի ակն ունիմք գալստեան *փրկչին*. որպէս լուսանցն յարևելից: - 613-614. Նոյն սարասիւք այժմ ի ձեռն *փրկչին* մերոյ յիսուսի՝ տապանակաւ խաչին և աղօթիւք սուրբ եկեղեցւոյս՝ բարձրացեալ պարիսպն չարութեան եօթնից զգայութեանց մեղաց որոշօղ ի մէջ մեր և աստուծոյ, կործանեսցի ի սպառ: - 627. Եւ *զփրկիչն* ի նոյն օրն ծնաւ: - 638. Իսկ սաղմոս տունն է երգ մարդկան. այսինքն է զի հրեշտակք և մարդիկ միաբանեալ օրհնեմք զաստուած *փրկիչն* մեր որ խօսի ընդ մեզ: - 644. Այս է խորհուրդն. զի երեկոյս նշանակէ՛ զկեանս զայս որ տնօրէնութեամբ *փրկչին* սակաւ ինչ տեսօղ եղաք հաւատով: - 646. ...ուր սուրբք ամենայն սպասեն մեծի հարսանեաց գալստեանն *փրկչին:* - 675. ...այսինքն զի ուսուսցեն վերջնոցն զհաւատս *փրկչին*. յոր և նոքայն հաւատացին: - 709. Եւ մինչդեռ ասասցեն զայս, յանկարծակի եկեսցէ ի վերայ նոցա սատակումն որպէս յաւուրսն նոյի ըստ հրամանի *փրկչին:* - 709. Ուստի և *փրկչին* ակնունիմք նորոգել զմարմին խոնարհութեան մերոյ ըստ մարմնոյ փառաց իւրոց: - 716. Զի՞նչ է նշան գալստեան *փրկչին:* - 730. Նոյնպէս և ջուրն որ հպեցաւ ի մարմին *փրկչին*, և ծնաւ զմարդիկ որդիս աստուծոյ, նորոգեսցի և պայծառասցի քան զամենայն տեսիլս գեղեցկագոյն ականց: - 759. Այսպէս և օդն յորս եկաց *փրկիչն* յետ յարութեանն, փոփոխեսցէ զբնական նսեմութիւնն իւր և պայծառասցի որպէս զեթերն: - 759. Յորոց փրկեսցէ զմեզ *փրկիչն* ամենայնի և առհասարակ զամենայն հաւատացեալս անուան իւրոյ. և կացուսցէ ի տեղւոջ լուսոյ և հանգստեան. Ամէն: - 760. Նոյն և կամք և կիրք և ներգործութիւն մարդկային ընդ աստուածայինն միաւորեալ. միջնորդելով հոգւոյ բանականի՝ աստուածութեանն՝ և մարմնոյն. որ է՛ ներգործութեամբ միշտ աստուած և *փրկիչ* բնութեամբ. քրիստոս. նոր ադամ. էմմանուէլ ճշմարտութեամբ: - 770. Զի թերևս վասն ձեր սիրալիր մաղթանացդ՝ գտայց ողորմութիւն յամէնողորմ *փրկչէն* մերմէ: - 773. Որք դարձուսցեն զսիրտ հարց յորդիս ըստ մաղաքիայի. այսինքն ուսուցանեն զհաւատն *փրկչին* զոր հարքն ունէին. և է՛ վարձաւորելի և կարի քաջ. և թէ այսպէս և թէ այն՝ քրիստոս քարոզի: - 785

**ՓՐԿՈՒԹԻՒՆ +** Արդ՝ ժամանակեայ արդարութիւնն յայտնի է որ անձնիշխան կամօք փոփոխի. երբեմն ի չար և երբեմն ի բարի. և ժամանէ *փրկութեան* կամ դատապարտութեան: - 18. Իսկ մարդիկ անձնիշխան կամօք և գործովք հասանին այն *փրկութեան* և շնորհաց և փառաց: - 18. Նոյնպէս և աստուած զամենայն մարդոյ *փրկութիւն* կամի...: - 20. ...եղև մեծ խորհրդոյս սպասաւոր. այսինքն *փրկութեան* մերոյ՝ մարդանալովն իւր: - 40. Եւ թէ գոյր երիցագոյն, լինէր պատճառն և գերագոյն քան զաստուած. իսկ ստեղծանելն երևի պատճառաւ. այսինքն վասն *փրկութեան* մարդկան: - 41. Չորեքտասաներորդ՝ զի թէ մահուամբ չարչարանօք նորա փրկեցաք մեք ամենեքեան՝ և այն է սոսկ մարդոյ *փրկութիւն* մեր: - 67. Ապա ո՛չ եղև աստուծով, այլ մարդով. զոր սո՛ւտ առնէ մարգարէն *զփրկութիւն* մարդոյ: - 67. Նաև հեռանալ ի *փրկութենէ* նորին: - 90. Եւ զփառս բանին զրկելով՝ ետուք մարդոյն. և եղէք մարդապաշտք, և մարդոյ մարմնակերք. և ի մարդ մկրտեալք. և սուտ է *փրկութիւն* մարդոյ մարգարէն կնքեաց: - 90. Վասն զի իմաստունք մաքառին ընդ դէմ հաւատոց. և քննութեամբ մտաց ո՛չ կարեն հասանիլ. և զրկին ի *փրկութենէ* իւրեանց: - 96. Եւ արդ՝ տգէտն զտգիտութիւն ո՛չ կարէ բառնալ. և ո՛չ մեղաւորն զմեղս. և ո՛չ ապականացուն զապականութիւն. և ո՛չ սոսկ մարդ զմարդ կարէ փրկել. զի սո՛ւտ է *փրկութիւն* մարդոյ: - 99. Ա՛րդ՝ քննել մտօք յանդգնութիւն է. և հաւատալն կեանք. զի ի հաւատո՛ցն է *փրկութիւն:* - 101. Նախ՝ աստուածաբանն գրիգոր՝ զոտքն մարմնով տընօրէնութեանն ասէ նշանակ. զի մարմնով եկեալ *զփրկութիւն* մեր արար. և մարմնով համբարձաւ առ հայր: - 130. Դարձեալ՝ յառաջինսն տիրէ աստուած իբր մեծութիւն. ի յերկրորդսն կառավարէ իբր զօրութիւն. ի յերրորդսն պարսպէ՛ իբր *փրկութիւն:* - 135. Վասն այն թէ քրիստոս զմի հրեշտակի բնութիւն ընդունէր՝ զնա միա՛յն փրկէր և այլքն արտաքոյ մնային *փրկութեան:* - 149. Զի աստուած փոխանակ ապաշխարութեան զմահն կամեցաւ. և հրեշտակք անմահք են. վասն որոյ առանց *փրկութեան* մնացին: - 149. Երկրորդ՝ զի ի ձեռն անտեղի գործոց՝ *փրկութիւն* լիցի այլոց. որպէս ի ձեռն խաչին քրիստոսի՝ *փրկութիւն* եղև աշխարհի: - 158. Այլ և գիտելի է, զի ամենայն կենդանեաց բնականապէս հնարք ետ աստուած վասն օգտի նոցա և *փրկութեան:* - 218. Այլ նոյն ինքն

խոնարհեալ ի մերս՝ ինքեամբ արար *զփրկութիւնս* մեր: - 302. Որոյ փոխանակ հայր աստուած ետ զորդին իւր վասն գերազանց սիրոյն ի *փրկութիւն* աշխարհի: - 304. Յատուցումն ի ստենէ՛ իսահակայ՝ *փրկութիւն* եղև հաստատ կերակրովք: - 308. Երրորդ՝ ըստ առաքինութեան ի պատուիրանէն տեառն յղացեալք, և ծնանիմք առաքինութեամբ *զփրկութիւն* հոգւոյ...: - 308. Եւ այս ևս գիտելի է, զի տէրն մեզ կոչի զգեստ *փրկութեան* և պատմուճան ուրախութեան ի ձեռն մկրտութեան...: - 318. Զոր թէ ընկենու ոք, լինի երկրաքարշ մարդ և մեղաւոր. և մինչ զղջացեալ դարձեալ ըմբռնէ յետոյ, լինի պատճառ կանգնելոյ և *փրկութեան*: - 332. Եւ ի ձեռն կախարդաց խափանէր զժամանակն *փրկութեան*: - 336. Երկրորդ՝ այն մարմնական, և այս հոգևոր *փրկութիւն*: - 353. Չորրորդ՝ վասն *փրկութեան* ի հիւանդութենէ կամ ի պատերազմէ՛ փրկեալք, մատուցեն ասէ պատարագ և նւէրս ընծայեսցեն ի սեղանն ի հոտ անուշից: - 358. Նա՛ է ողջակէզ և *փրկութիւն* և գոհութիւն, և վասն մեղաց և յանցանաց. և յամենայն նւիրաց կատարումն և գլուխ նա՛ է: - 362. Եւ վասն կենաց. և վասն *փրկութեան*: - 362. Վիճակ սահմանն է. որ նախ քան զյաւիտեանս սահմանեաց հայր *զփրկութիւն* մարդկան: - 369. Այլ և վասն հոգւոյ և մարմնոյ *փրկութեան*: - 373. Եւ կարմիրն զարեամբ *փրկութիւնն*: - 379. Այլ և ի վերայ այսր ամենայնի անասելի բարութիւն. զարիւնն իւր ետ ի *փրկութիւն* մեզ...: - 398. Նա՛խ՝ ըստ անուանն. զի սամփսոն՝ արեգակն կամ *փրկութիւն* լսի: - 421. Եւ տէրն մեր արեգակն արդարութեան ծագեաց երկիւղածաց իւրոց և *փրկութիւն* ժողովրդեանն իւրոյ: - 421. Եւ տէր մեր զհայր ի յերկինս և զմայր ի յերկրի քաղցրացոյց *փրկութեամբ* մարդկան: - 422. Եւ որք գիտեն զտնօրէնութիւն փրկչին, զգեցցին *զփրկութիւն* նորին. զի նա՛ է հզօրն յորմէ ել կերակուր քաղցր: - 422. Եւ ինքն որդիէ՛ զօրութիւն հօր. և ծարաւ *փրկութեան* մարդկան, նովաւ զովացեալ: - 423. Եւ այն որ վիճա՛կն է՝ ծիրանեգոյն հանդե՛րձ է. որ զսեղան հացին և զխնկոցն ծածկէին. և տեսութիւն կամ *փրկութիւն* թարգմանի: - 425. Այլ ճշմարիտ *փրկութիւնն* մեր յւսո՛վ է և աղօթիւք: - 429. Եւ եփրեմեանցն զկագելն առ յուդա. ի ցոյցս հրեշտակացն յորժամ արար *փրկութիւն* մարդկան ազգի: - 438. Դաւիթ ծարաւեալ ջրոյն բեթլէհէմի ծնիցելոյն ի կուսէ. և ծարաւեալ տէրն ի խաչին *փրկութեան* մարդկան ազգի: - 438. Եօթներորդ՝ զի նա՛ ո՛չ արար *փրկութիւն* հոգւոց. և քրիստոս ամենայն աշխարհի: - 442. Դարձեալ՝ առաջին գալուստն ծածուկ *փրկութիւն* և կեանս շնորհեաց. իսկ յերկրորդին յայտնապէս յարուցանէ: - 446. Եւ թէ յայնմ ժամանակի փրկեալ լինէաք, կարծէաք թէ յօրինաց անտի եղև *փրկութիւն*: - 467. Զի մի՛ յօրինաց, այլ ի շնորհացն քրիստոսի իմասցուք զարդարութիւն և *զփրկութիւն* մեր: - 467. Ութերորդ՝ զի լիցի պատճառ *փրկութեան* որ եղև պատճառ գլորման: - 468. Ի վեց իրաց գլխաւորօրէն *փրկութիւն* ներգործեաց. ըստ յոբայ վեցիցս փրկեցաք նովաւ: - 473. Իիւթ անոյշ՝ խնդրողաց *զփրկութիւն*: - 474. Այլ և եղև այր, զի որպէս ծնօղն աստուածածին ազգի կանանց, և ի նմանէ ծնեալն աստուած՝ արանց միանգամայն և հանուրց լիցի *փրկութեան* պատճառ: - 480. Նախ ասէ «եկն յիսուս». այսինքն տըւօղն *փրկութեան* և ոչ կարօտն *փրկութեան*: - 486-487. Ութերորդ ի կատարածի. այն որ ո՛չ ի *փրկութիւն*, այլ ամենայն չարութեան ջնջումն առնելով տանջանօք որ է հուրն անշիջանելի: - 488. Երրորդն է՛ բացումն կողին. ի նշան ամէնառատ գնոջ *փրկութեան* մերոյ: - 489. Յայր մատնեաց զնա՛ վասն սիրոյ. և Որդի մատնեաց զանձն իւր վասն *փրկութեան* մերոյ. իսկ յուդա մատնեաց վասն ագահութեան: - 491. Չորրորդիւն ցանկալ *փրկութեան* մերում: - 492. Եւ դարձեալ՝ աջն *զփրկութիւն* մարդկան. ահեակն զսաստ դիւացն: - 493. Դարձեալ նշանակէ **դ** թև խաչին՝ *փրկութիւն* գոլ և լոյս հոգւոյ որք ի **դ** ծագս տիեզերաց հաւատացեալք են: - 493. Դարձեալ վայելո՛ւչ էր *փրկութեան* մեր լինիլ ի ձեռն փայտի. որ ցուցանէ զփայտն կենաց ի մէջ դրախտին: - 494. Դարձեալ ասեն նոքա, մեր մարմինս ապականացո՛ւ է. իսկ թէ անապական մարմին էառ քրիստոս, ո՛չ արար *փրկութիւն* մեզ. այլ առաջին բնութեանն ադամայ որ էր անապական ի դրախտին: - 500. Ասեմք եթէ՝ բանն աստուած էառ զմեր ապականակիր մարմինս և զմեղանչական հոգի և զմիտս. և մերովս արար *փրկութիւն* մեզ: - 500. Դարձեալ՝ եթէ առհասարակ սոքա՝ կերակուր՝ արիւն և խոցուածք և մահ՝ ապականութիւնք են որպէս դու ասես, և *փրկութիւն* աշխարհի սոքօք ներգործեցաւ. այսինքն չարչարանօք՝ մահուամբ և խոցւածովքն: - 503. Երրորդ՝ որպէս մարմնով լոյս ծագեաց մարմնաւորացն և քարոզեաց *զփրկութիւն*: - 503. Նոյնպէս և հոգւոցն որ ի դժոխս լոյս ծագեաց հոգւով և քարոզեաց *զփրկութիւն*: - 503. Ապա մասնաւո՛ր եղև *փրկութիւնն* և ո՛չ բոլորից մարդկան: - 506. Նա՛խ՝ զի անցեալ է ժամանակն և օր *փրկութեան* ըստ առաքելոյն «ահա՛ ժամանակ ընդունելի, ահա՛ օր *փրկութեան*»: - 508. Իսկ հոգիքն ի դժոխս յորժամ տեսին զքրիստոս, այն էր ժամանակ *փրկութեան* նոցա և ընդունելոյ զողորմութիւն. յաղագս որոյ հաւատովք արդարացան նոքա միայն ի նոյն ժամն: - 508. Ասեմք թէ՝ կրկին է *փրկութիւնն*. յաւիտենից և

ժամանակեայ: - 508. Այլ համբարձումն նշանակէ՛ ի միտս համայն բարձր քան զամենայն դասս իմանալեացն. զի նմա՛ երկրպագեն ամենայն երկնայինքն. և անդր քան զտեղի տիրամօրն. զի ի միածին որդւոյ իւրմէ խնդրէ *զփրկութիւն* մարդկան: - 519. Երկրորդ՝ զի թէ քրիստոս այնպէս փառաւորեալ էր որպէս յետ խաչին, արգել և խափան լինէր ամենայն չարչարանացն և *փրկութեան* մարդկան: - 521. Այս ո՛չ եթէ բաժանմամբ. այլ նկատմամբ ի յատկութիւնս անձանց. ըստ որում սկիզբն է հայր. և *փրկութիւն* է որդին. և ջերմութիւն հոգին: - 577. Յանճա՛ր է ճանաչել *զփրկութեան* նշանն...: - 582. ...զ՝ աղօթել վասն *փրկութեան* ընկերին...: - 585. Նա՛խ՝ է՛ վկայութիւն անդուստ իսկ թշնամեացն. քանզի ասէ ալպերտն ի յառաջին գիրքն **ժա** համարին, թէ հոգի ասեմ սրբութեան. արիւն *փրկութեան*. և ջուր լուացման: - 594. ...յորում բազումս նեղեաց զմեզ թշնամին մեր. գանկատիմք նմա և խնդրեմք *զփրկութիւն:* - 621. Եօթներորդն օրհնութիւն հրեշտակաց և *փրկութիւն:* - 630. Ասեմք նա՛խ՝ թէ մարգարէքն իբր յառաջասաց՝ պատմեցին զմարդեղութիւն բանին և *զփրկութիւն* մարդկան: - 643. Ովսաննայ՝ ի յեբրայեցւոցն ի մերս՝ *փրկութիւն* լսի...: - 644. Չորրորդ, ի խորհուրդ կուսին որում աւետեաց հրեշտակն *զփրկութիւն* մեր...: - 653. Երկրորդ, *փրկութեան* է յոյս և թողութեան մեղաց: - 657. Եւ ոչ մի ինչ ունի յոյս *փրկութեան*. ո՛չ օգնական. ո՛չ բարեխօս. ո՛չ ողորմութիւն. և ո՛չ այլ ինչ այնպիսի որ արժանաւորացն է: - 669. Վեցերորդ, զբոլոր մարդոյն յարութիւնն և զբոլորին *փրկութիւնն* և զսրբութիւնն նշանակէ որ է՛ հոգին և մարմինն...: - 672. ...վասն այն հոգւոյ նորա աղօթիւք սրբութիւն և *փրկութիւն* խնդրեմք...: - 672. Չորրորդ, զի յայտնապէս զրկէ զժողովուրդն ի *փրկութենէ*, և ծուլութեամբ ընկղմէ ի մեղս...: - 698. Ահա՛ ժամանակ ընդունելի. ահա՛ օր *փրկութեան.* մի և մի իւիք տայցէք պատճառս. զի մի՛ արատեսցի պաշտօնն: - 698. ...ապա սո՛ւտ են որք անդ ասեն *փրկութիւն* և քաւարան: - 698. Նմանապէս և խաչն աստուծոյ՝ է՛ ի կամացն աստուծոյ և ի նորին ներգործութենէն որ անապական կամի զնա. զի նովաւ արար *փրկութիւն* ազգի մարդկան: - 733. Այսպէս և զչնչին փայտն առեալ արար *փրկութիւն* տիեզերաց և արար անապական: - 734. Երկրորդ, զի դատաստանն պա՛րտի յայտնի լինի. այլ՝ արդ՝ երուսաղէմ է՛ առաւել յայտնի վասն *փրկութեանն* որ անդ կատարեցաւ: - 738. Երրորդ՝ ի *փրկութիւն* մարդկան ի ձեռն մարդանալոյ բանին: - 748. Բարձումն յուսոյ և ամենայն *փրկութեան* Նաև գոլն իսկ որում տենչան ամենայն ստեղծուածք՝ է՛ նոցա պատիժ. վասն զի խնդրեսցեն զնահ և ո՛չ գտանիցեն: - 751. Ի ծովուց ջուրց ի չորից նաւաց հազիւ մինն կորնչի. և ի ծովու այսմ աշխարհի ի չորից նաւաց հազիւ մինն ի նաւահանգիստ *փրկութեան* հասանէ: - 764. Այլ և ծաղիկ՝ զպայծառ և զանուշահոտ վարս առաքինութեան. և պտուղ՝ արդիւնքն ըստ գործոց. յորմէ *փրկութիւն* եղև ամենայն աշխարհի և վայելչութիւն արքայութեանն երկնից: - 768. Ասեմք թէ՝ յիրաւի, որովհետև երևեցաւ տէր մեր ի *փրկութիւն* ընտրելոց ըստ ամբակումայ, նախահայրն յաւիտեան. իսկ այլք ազատեցան ժամանակեայ: - 777. Զի առաջին ձեռամբն աստուծոյ նա՛ արարաւ, և նա՛ միայն յանցեաւ. և նմա՛ խոստացաւ *փրկութիւն:* - 778. Եւ է՛ հասարակ շնորհ, հաւանութեամբ անձնիշխան կամաց՝ պատրաստել զինքն առ ի *փրկութիւն* օգնականութեամբ շնորհին: - 783. Վեցերորդ, հաւատովն փրկի ոք. ըստ այնմ «հաւատք քո կեցուցին զքեզ». այլ արդ դիւաց ո՛չ գոյ *փրկութիւն:* - 784

**ՓՐԿՉԱԿԱՆ +** Եւ փոխանակ յ կանգնոյն՝ յ ամքն ի քրիստոսէ մինչև ի մեծն կոստանդիանոս. ուր յայտնեցաւ խաչն *փրկչական:* - 294. Եւ տօն սրբոյ խաչին. զի արմտեաց և արդեանց մերոց ժողովումն է սուրբ խաչն *փրկչական:* - 341. Յայս միտս ի կենդանագիր կուսին՝ ի ձախոյ գիրկս լինի *փրկչական* պատկերն. նոյնպէս և առ ի խաչին ի յաջակողմն կացեալ: - 441. Զի՞նչ է որ ի *փրկչական* պատկերն գիր ի ձեռն և խաչ ի գլուխն նկարեն: - 481. Վասն այն ի *փրկչական* պատկերն նկարեալ է ի մին ձեռն գիր և ի միւսն խաչ: - 482. և զգործով պատւականն աւարտ ի վերայ բերել. որ է սուրբ մարմին և արիւնն *փրկչական:* - 634. Եօթներորդ՝ զի սողոմոն ասէ «օրհնեալ է փայտն որով լինի արդարութիւն» որ է՛ խաչն *փրկչական:* - 734

**ՓՐՓՐԱՏԵՍԱԿ +** Եւ գործեալ լինի *փրփրատեսակ* և սպիտակագոյն: - 205

**ՓՐՓՐԻՄ +** Որպէս ջուրն ի մէջ ամպոյն *փրփրի* և լինի սպիտակ ձիւն: - 242

**ՓՔԱՆԱՄ +** Զի որոց բազում աւանդեցաւ. առաւել ինչ պահանջեցաւ. և *փքացելոց* հպարտութեամբ՝ ստորասուզեալ մակբեկութեամբ: - 789

**ՓՔԱՑՈՒՄՆ +** Եօթներորդ՝ է՛ հպարտութիւնն. որ *փքացումն* է երեսաց մտացն և որոշէ՛ յաստուծոյ...: - 32

# Ք

**ՔԱԾԱՒԱՐԻ** - Եւ **բժ**ան արատ պատարագին: ...Եօթներորդ՝ *<u>քածաւարին</u>*. այլամազն խառնեալ. զանազան բարուց նշանակ: - 371

**ՔԱԿԱՆՕԹ** - Երկրորդ՝ Արքեպիսկոպոսք. որ թարգմանին եպիսկոպոսապետք. և սքեմ նոցա *<u>քականօք</u>* և պճղնաւոր. և փիլոն. և ի վերայ նորա եմիփորոն **դ** կրկին խաչիւ շուրջ զիւրև: - 607

**ՔԱԿԵՄ +** Եւ թէ ասեն տգիտաբար, *<u>քակեն</u>* զնկարն. բառնի և էութիւն հօր: - 36. Իսկ յորժամ *<u>քակես</u>*՝ լինի մի և մի. *<u>քակեցաւ</u>* այժմ ի յառաջին բնութենէն ըստ քեզ՝ և ունի դեռևս զնոյն համարն: - 55. Այսորիկ և այսպէս ասել՝ *<u>քակէ</u>*՛և ուրանայ զմիութեանն բան: - 76. Եւ որովհետև ծանեաք զի անմարմին են սոքա, յա՛յտ է զի բաժանումն սոցա *<u>քակէ</u>*՛ զնիւթն ի մարմնոյ. ապա ուրեմն ի մի վայր ժողովումն՝ ծնանի զնիւթական մարմինն: - 175. Ծնաւ և տէր մեր մարդ բնութեամբ, *<u>քակելով</u>* զբնութեան օրէնս: - 305. ...յայնժամ *<u>քակէ</u>*՛զտուննն մեր որ է՛ հոգի և մարմին...: - 368. Դաւիթ պաշարեցաւ յայրին. և տէրն մեր ի դժոխս և *<u>քակեաց</u>* զնա՛: - 437. Վաթսուներորդ, մարտեաւ ընդ ադրիազարու և սպան զնա և *<u>քակեաց</u>* զկառս նորա, և զթագն եդ ի գլուխ իւր...: - 438. ...և տէրն մարտեաւ ընդ բելիարայ և յաղթեաց մահու. և *<u>քակեաց</u>* զդժխս...: - 438. Եւ զօծումն զօրութեան՝ յորժամ օծաւ արեամբ ի վերայ խաչին և *<u>քակեաց</u>* զամուրս հզօրին և էառ աւար: - 474. Չորրորդ՝ որպէս արու բռնացա՛ւ տէր ի *<u>քակել</u>* զօրէնս բնութեան. և խզեաց զկապ կուսանաց և զմայրական. այսինքն զի որ մա՛յր է՝ կոյս ո՛չ է. և որ կոյս է՝ մայր ո՛չ է: - 480. Դարձեալ ևս յայտնի. մահն զանձն *<u>քակէ</u>*՛և որոշէ՛. իսկ ապականութիւն զբնութիւնն ապականէ և այլայլէ՛: - 498. Եւ քրիստոս ա՛նդ գնաց և կապեաց զհզօրն և *<u>քակեաց</u>* զամուրս նորա և աւար էառ զհոգիսն: - 506. Ասեմք առ այս, եթէ համակարգ և համիշխանք են վերջինն ընդ առաջնոյն ի կարգել և ի յուղղել. այլ ո՛չ ի թիւրել և ի *<u>քակել</u>*...: 541. Որպէս որք յեփեսոս՝ զնիկիականն ուղղութիւն ո՛չ *<u>քակեցին</u>*. այլ ի նոյն տեսակ նոր կանոնս կարգեցին ի հաւատս ուղիղ: - 541. Եւ է՛ խոստովանութիւն որ զարմատ մեղացն *<u>քակէ</u>*՛ի սրտէն և զղջացեալ ի մեղաց, հաստա՛տ է ի կամս և ի միտս այլ ո՛չ մեղանչել...: - 603. Սակայն ի մահն արձակի և *<u>քակի</u>* շաղկապ պսակին: - 610. Եւ մարմնաւոր շաղկապն արձակի և *<u>քակի</u>* մարմնաւոր մահւամբն...: - 611. Նախ՝ զի *<u>քակե՛ն</u>* զխոստովանութիւնն յեկեղեցւոյ և ի քաւարանն ապաւինեալ կորնչին մեղօք: - 698. Եւ զի ժամանա՛կ է լինելոյ և ժամանակ *<u>քակելոյ</u>*, յայլում ժամու և ո՛չ ի նոյնն սերմանի և հնձի: - 780. Նմանապէս և ո՛չ զքահանայութիւն կարէ *<u>քակել</u>* ի յանարժանէն: - 782

**ՔԱԿՏԵՄ +** Իսկ անհատ ասի՝ զի ո՛չ *<u>քակտի</u>* և ո՛չ հատանի որպէս բոլորն ի մասունս...: - 86-87. Զի զոչ առեալն ասեն մի ի քրիստոս՝ և ո՛չ զառեալն. այսինքն զանձն՝ որ ո՛չ է առեալ՝ մի ասեն. իսկ զառեալ բնութիւնն որոշեալ պահեն և յերկուս *<u>քակտեն:</u>* - 88. Չորրորդ՝ մի է և միակ. զի ո՛չ բաժանի. և ո՛չ *<u>քակտի:</u>* - 109. Զի ուղեղն ի մէջն սնուցանէ զոսկրն. և ջիլն կապէ՛ առ միմեանս զի մի *<u>քակտեսցին</u>* ոսկերքն. և արիւնն կերակո՛ւր է նոցա: - 240. Երրորդ՝ զի երեսունն **գ ժ** է. զի **ժ** զգայարանքն մարմնոյ և հոգոյ և մտաց՝ *<u>քակտի</u>*. վասն որոյ **լ** օր սգան: - 411. Եւ դարձեալ զոր օրինակ, բան թագաւորին մի է, այլ ի բազում լեզուս և ի բազում լսելիս և ի բազում թուղթս որակացեալ և բազմացեալ, յիւրում միութենէն ո՛չ է *<u>քակտեալ:</u>* - 529. Զի յատուկ է անմարմնոյ, որպէս ի բազումս բազմանայ և ի միութենէն ո՛չ բաժանի, այսպէս ի մասունս մասնաւորի և ի բոլորէն ո՛չ *<u>քակտի:</u>* - 529-530. Եւ սուրբն դուկիոս սքանչելագործ և մարգարէաշնորհ, գրեաց առ մարկիանոս, թէ սուգ զգեցուցեր առաքելոց և մարգարէից. զի *<u>քակտեցեր</u>* զնոցա շինուածն...: - 543. Այլ և մարմին և ոսկր և ջիլք և այլն *<u>քակտին</u>* և ի հող լուծանին: - 667. Իսկ տապանաքարն, Նա՛խ՝ զի մի՛ գործեսցի երկիրն այն յայլ ինչ գործ, կամ *<u>քակտեսցի</u>* վասն այլ մեռելոյ: - 679. Հինգերորդ զի կա՛րծր է. ցուցանէ զկարծր և զսերտ առաքինութիւն նոցա առանց *<u>քակտելոյ:</u>* - 712. Նա՛խ՝ զի ո՛չ է ի չորից տարերց ժողովեալ որ *<u>քակտելով</u>* մահանայ: - 715. Իսկ երկրորդին այսպէս պատասխանեսցուք ընդդիմայարակայութեամբ. զի մարդոյ մարմին ապականի. վասն զի *<u>քակտի</u>* ի նմանէ կենդանացուցիչ նորին հոգին...: - 733. Իսկ խաչին կենդանութիւնն քրիստոս է, և ո՛չ *<u>քակտի</u>* ի նմանէ...: - 733. **Ասեմք նա՛խ՝ եթէ ամենայն շնորհ զինչ և իցէ տուեալ բնութեան, ո՛չ *<u>քակտի</u>* ի նմանէ. թէպէտ ծածկի երբեմն վասն մեղաց**: - 782. Եւ այլք թէ՝ պատրուակ գոն ի խինձս արգանդի բնաւորեալ. յիւրաքանչիւր աւուրս հնգից՝ մին մին *<u>քակտին</u>* երկամբք. և ապա՛ արձակի ծնունդն: - 785

**ՔԱԿՏԻՉ +** Այլ և կենդանութեանց *<u>քակտիչ</u>* է. զի գործիք է մահու: - 732. Եւ ևս. բացասութիւն ինքն ինքեան *<u>քակտիչ</u>* բացատրի կրկնելովն. իսկ ստորասութիւն ո՛չ: - 787

**ՔԱԿՏՈՒՄՆ +** Վասն որոյ զայս **գ** ժողովքս տիեզերական և միմեանց համաձայն ընդունիմք. այլ զքաղկեդոնին ո՛չ ընդունիմք. զի ընդ դէմ է առաջնոցն և *քակտումն* դաւանութեան տօնից կարգաց և կանոնաց ամենայնիւ: - 541. Այս *քակտումն* է անձինն: - 667. Նա՛խ՝ զի յերի՛ց է մարդն. հոգի մարմին և շունչ գոյացեալ. ի *քակտումն* սոցա **գ** վկա՛յ է պիտոյ: - 742. Ապա ուրեմն *քակտումն* ներհակին՝ գոյութիւն է ընդդիմակին: - 787

**ՔԱՀԱՆԱՅ +** Չորրորդ՝ նա սուտ քրիստոս և սուտ մարգարէ կոչի. և սոքա սուտ *քահանայք*՝ և սուտ վարդապետք՝ և սուտ առաքեալք կոչին: - 35. Զի քրիստոս *Քահանա՛յ* է ըստ կարգին մելքիսեդեկի **ժ** կերպիւ: - 50. Առիւծն՝ զի թագաւոր է. և եզն՝ զի *քահանայ* է և պատարագ: - 132. Որև այժմ ի յեկեղեցի ի նոյն խորհուրդ՝ սերոբէին պատկեր որ է քշոցն՝ ի ձեռն սարկաւագին աւանդի՝ որ է՛ մաքրօղն. և երրորդ կարգ յետ *քահանային* և քահանայապետին: - 135. Իսկ ընդդէմ այսմ՝ քահանայապետն որ վերին է՝ ունի *զքահանային* և կոչի: - 136. Իսկ *քահանայն* կամ սարկաւագն ո՛չ ունի զվերնոցն և ո՛չ կոչի: - 136. Եւ ասեն դո՛ւ ես *քահանայ* յաւիտեան ըստ կարգին մելքիսեդեկի: - 144. Եւ թէ ոք ասիցէ, ապա զիա՞րդ նոր եկեալքն ի հաւատս՝ թողեալք զկուռս և զամենայն չար՝ լինէին *քահանայք* և եպիսկոպոսունք. որպէս սուրբն կիպրիանոս: - 166. Եւ յայտնի եղեալ որպիսութիւն սոցա ի միտ առ. զի անհաւատն այժմ եկեալ ի հաւատս կարէ՛ լինիլ և *քահանայ*. իսկ չար հաւատացեալն ո՛չ կարէ լինիլ *քահանայ:* - 166. Նոյնպէս և *քահանայն* պոռնկեալ՝ ո՛չ լինի *քահանայ:* - 166. Ասեմք առ այս եթէ՝ ո՛չ վասն ասացեալ պատճառիցդ արգելի *քահանայն* ի գործոյն: - 167. Զի *քահանային* է անունս դնել յետ աւազանին ծննդեանն: - 219. Քառասունն**գ**, Իրաւունք *քահանայից:* - 284. Նոր օրհնել *քահանայից* և եկեղեցոյ. Նաբադ և աբիուդ այրեցան: - 284. Քառասուննե**ը**, Արատ *քահանայիցն* **բժ**ան: - 284. Յիսուննե**է**, Հին *քահանայքն* նորոյս աստիճանի օրինակ: - 284. Եւ օրհնութիւն *քահանայից* և ժողովրդեանն: - 284. Վասն չորրորդին՝ զի առաջին եղև *քահանայ* ի տիպ ճշմարիտ քահանայապետին քրիստոսի: - 286. Եւ վերինն *քահանայից* բեմն տեղիք պատարագաց: - 294. Վասն է՞ր *քահանայի* զենեալն ո՛չ ուտի: - 296. Նա՛խ՝ զի *քահանայն* արեան բարեխօս է, և ո՛չ արիւնահեղ: - 296. Երկրորդ՝ զի ի հին օրէնքն *քահանայքն* զենուին. զոր որոշեսցուք ի նոցանէ: - 296. Իսկ *քահանայ*, զի հաց և գինի պատարագ մատոյց: - 300. Երկրորդ՝ զմելքիսեդեկ *քահանայ* առաջին վկայէ՛ գիր ըստ մովսէսի, «թէ *քահանայ* էր աստուծոյ բարձրելոյ»: - 301. Երրորդ՝ զի մելքիսեդեկ *քահանայ* ո՛չ ըստ մարմնական ինչ օծմամբ իւղոյ որպէս այլոցն, այլ շնորհօք հոգւոյն անընդմիջաբար: - 301. Իսկ աստեղք՝ ծնունդքն իսահակայ պայծառ վարուք և երկնընթացք որպէս մարգարէքն՝ *քահանայքն*՝ և ընտրեալ թագաւորք՝ և այլքն: - 303. Եւ է՛ որ պատարագն մեծ է քան զմատուցօղն. որպէս նոր օրինացս՝ մարմինն քրիստոսի մեծ է քան *զքահանայն:* - 306. Եւ է՛ որ մատուցօղն մեծ է քան զընդունօղն. որպէս մելքիսեդեկ քան զաբրահամ. և *քահանայն* մեծ է քան զժողովուրդն որ ճաշակէ: - 306. Նոր պատարագ, և նոր *քահանայ*, և նոր եղանակն: - 307. Եօթներորդ՝ անդրանիկք են իշխանք հոգևորք, վերակացուք և խնամողք այլ հոգւոցն. որպէս *քահանայք*, ուսուցիչք, և այլք. վասն որոյ երիցունք կոչին: - 309. Եւ այն որ շուրջ զսեղանովն, նշանակէ՛ *զքահանայս*. որ մերձ սեղանոյն որ է՛ քրիստոս՝ միշտ սպասաւորե՛ն և պատերազմին արեամբ չափ ընդ ախտս և ընդ դևս: - 341. Հինգերորդ, *քահանայք* և քահանայապետք առաջին: - 343. Սիւնք՝ իշխանքն. և Խոյակք՝ *քահանայքն:* - 343. Եւ **բ** ձիթենիքն, զօրաբաբէլ և յեսու *քահանայ:* - 347. Եւ սովաւ օծէին զթագաւորս և *քահանայս:* - 349. Հասարակ, զի ամենայն *քահանայ* միջնորդ և հաշտարա՛ր է աստուծոյ և մարդկան...: - 354. Երեքտասաներորդ, նոքա փոփոխականք էին վասն մահու արգել լինելոյ. իսկ տէր մեր անփոփոխ և յաւիտեան է *քահանայ*. վասն յաւիտեան և անմահ գոլոյն: - 355. Իսկ այն որ զմեղրովն պտուղն նուիրէին *քահանայից*, բայց ի սեղանն ոչ: - 356. Ի սոցանէ ափով չափ դնէր *քահանայն* ի սեղան ողջակիզացն ի հոտ անուշից տեառն: - 357-358. Եւ զմնացեալ նշխարսն ուտէին. *քահանայքն* և արուք նոցա ի սուրբ տեղւոջ: - 358. Երկրորդ՝ վասն անգիտութեան և ակամայիցն զուարակ մի *քահանային*. և զուարակ մի՝ բոլոր ժողովրդեանն ի տօնի քաւութեանն: - 358. Եւ ա՛ջ երին *քահանային*, և երբուծն քահանայապետին. և զայլն կերիցեն *քահանայքն:* - 358. Տասներորդ, խոյն կատարման *քահանայից* և պանն: - 359. Եւ ի սմանէ առցեն ասէ զիաս իրաւանցն. և զմնացեալն եփեսցեն ի սուրբ տեղւոջ և կերիցեն *քահանայքն* զեօթն օր: - 359. Հանապազորդ *քահանայիցն* գրիւ մի զանգեալ. կէս յառաւօտն և կէս յերիկոյն: - 359. Եւ **խը** քաղաք ապաստանից տալ *քահանայիցն:* - 359. Իսկ միւս խոյն կատարմանն, *քահանայիցն* կերակուր և նուէրքն մովսէսի: - 362. Հասք և իրաւունք *քահանայից* մե՞ղք է թէ ոչ: - 363. Յորժամ զգործ *քահանայի* ունիցին՝ ո՛չ է մեղք. այլ սրբութիւն: - 363. Երկրորդ, զի ի

նուիրացն աստուծոյ առնուն զբաժին *քահանայքն* և ո՛չ ի մարդոյ. և ամենայն ոք աստուծոյ տայ և ո՛չ մարդոյ: - 363. Երրորդ, երկրորդ սեղան է սիրտ *քահանային*. որպէս սեղանն զողջակէզն մաքրէ՛, նոյնպէս իշխանութիւն *քահանային:* - 363. Զի որպէս ստամոքն զկերակուրն հալէ, նոյնպէս և *քահանայն* զմեղքն: - 363. Վեցերորդ, թիթեղն ցուցանէր ի ճակատն գրեալ սրբութիւն տեառն նուիրեալ. զի նւէրք *քահանային* սրբութիւն է: - 363. Վասն զի կրկին է գործ *քահանային:* - 363. Այլ որ ուղիղն է, մովսէս յամենայն ժամ մտանէր ի սուրբն սրբոց. և ահարոն մի՛ անգամ ի տարւոջն. և *քահանայքն* ո՛չ մտանէին: - 364. Եւ *քահանայքն* հպարտացան և օտար հրով խնկարկեցին ի ներքս վարագուրին, վասն այն պատժեցան ի խրատ այլոց: - 364. Իսկ *քահանայքն* ի նորս ո՛չ հեղուն զարիւն: - 366. Երկրորդ՝ զի անարիւն է զենումն նոցա և ո՛չ ըստ հնոյ *քահանայիցն:* - 366. Երրորդ՝ զի տացի մասն *քահանայիցն* աստուծոյ **ք** մասն: - 366. Եւ երին աջոյ՝ իւր *քահանային*, ի նշան աջեա՛յ գործոցն նորա: - 367. Եւ զմորթն որ է ծածկոյթ մեղաց՝ ի *քահանային* տայ. զի «զմեղս ժողովրդեանն իմոյ կերիցեն *քահանայքն* ասէ, և քաւեսցեն վասն նոցա»: - 367. Պա՛րտ է տալ զսոսա ի *քահանային* որպէս կարգեաց մեծն մովսէս ի հինն, և սուրբն գրիգոր ի նորս: - 367. *Քահանայն* յոհաննէս: - 368. Նորոց *քահանայից* ո՞րն է խոտելի արատ: - 370. Ցուցանէ թէ՝ մինչ ի մեղս իցեն *քահանայքն* ո՛չ զիասն կերիցեն և ո՛չ ի սուրբ խորհուրդն մերձեսցին: - 370. և Գինին ուրախութեան ծայնք պաշտամանց *քահանայից:* - 375. Մերարեայն ի հիւսիսոյ. և Կահաթուն որ է՛ ցեղն *քահանայից* ի հարաւոյ: - 378-379. Որ նշանակէր՝ «աստուած ի հարաւոյ եկեսցէ» ի թագաւորի և *քահանայի* ցեղէն. զի բեթլէհէմ հարաւ է երուսաղէմի: - 379. Իսկ մովսէս և ահարոն և ա՛յլ *քահանայք* յարևելից կուսէ ուր սուրբն սրբոց էր պաշտէին: - 379. Հին *քահանայքն* ո՞րպէս էին օրինակ աստիճանի նորոյս: - 379. Որք են քահանայապետք, *քահանայք*, և սարկաւագունք: - 379. Երկրորդ՝ **գ** իշխանք նոցա ընդ իշխանութեամբ եղիազարու, **գ** դասքն են պաշտօնէից ընդ իշխանութեամբ *քահանայիցն:* - 379. Չորրորդ՝ գեթսոնի ազգն դռնապա՛նք էին. և մերարեայ երդմնեցուցիչք ընդ իշխանութեամբն իթամարայ *քահանայի*. և կահաթու գունդն աւագ պաշտօնեայք: - 379. Եւ որք զսուրբն սրբոց՝ քահանայապետք և *քահանայք:* - 379. Վասն է՞ր **իե** ամեայն լինէր *քահանայ:* - 379. Իսկ ի նորս՝ ի կատարեալ հասակն երեսնամեայ լինին *քահանայք*. ի հասակ մկրտութեանն քրիստոսի: - 379. Զի՞նչ է օրինութիւն հին *քահանայիցն:* - 379. Մին՝ քահանայապետք և *քահանայք*. և վեց պաշտօնեայք: - 380. Դարձեալ, *քահանայից* մեղքն զերկին շարժէ որպէս անդ: - 381. Իսկ կորխ ի *քահանայս* մեղանչեաց: - 381. Եւ այս են գործք *քահանայից:* - 382. Նա՛խ՝ առ տեղեաւն ցուցանէր յահարոնէ՛ լինիլ *քահանայ*. յորդիս և ի թոռունս յազգէ յազգ: - 382. Զի գողացեալ մեղքն միայն խոստովանելով ոչ քաւի. այլ հատուցանել պարտ է զգողօնքն. կամ ի տէրն, կամ յազգականս նորա. կամ ի *քահանայն*. զի միջնո՛րդ է մեռելոց և կենդանեաց: - 384. Նոյնպէս այժմ ի նորս պարտ է խոստովանիլ վասն կանոնաց եկեղեցւոյ. և զգողօնսն վճարել կամ ի տէրն, կամ ի *քահանայս*, կամ յաղքատս: - 384. Հինգերորդ, զի քրիստոս չարչարելո՛ց էր ի *քահանայից:* - 386. Վեցերորդ՝ շնորհընկալք. որպէս խոստովան որդիք. և ժողովուրդք. և *քահանայք* հայրապետաց: - 389. Եւ այսպէս բաժանեսցեն զաւարն. ի **ճ**էն զմինն տայցեն քահանայապետին. և յիսնէն զմինն *քահանայից* և աղքատաց. և հնգէն զմինն թագաւորաց բաժին. և կէսն աւար բերողացն է զինւորացն. և կէսն այլ հեծելիցն. որպէս բաժանեաց մովսէս: - 390. Զի՞նչ նշանակէ եղիազար *քահանայ*, և յեսու, և իշխանքն որք բաժանեցին զերկիրն: - 391. Եղիազար՝ աստուծոյ զօրութիւն լսի որ է՛ քրիստոս և *քահանայ* և փրկիչ մեր. և իշխանք՝ **բժ**ան առաքեալքն աթոռակիցք քրիստոսի: - 391. Վեց քաղաքաց հրամայեաց որոշել ապաստանի և տալ *քահանայից*. **գ** յերկիրն քանանու և **գ** յայնկոյս յորդանանու: - 392. Զի ակամայ սպանօղք զերծանիցին անդ մինչ *քահանայն* կենդանի իցէ. և յորժամ մեռանիցի *քահանայն*, ապա գնասցեն ի տեղիս իւրեանց: - 392. Զայն ցուցանէ, զի մեռանիլն *քահանային* ազատութիւն էր նոցա, յօրինակ քրիստոսի. յորժամ մեռաւ վասն աշխարհի, ազատեցան մահապարտքն: - 392. Եւ *քահանայի* մահն՝ պատարագն քրիստոսի է. մինչ վճարեսցի կանոն ապաշխարութեանն և ապա արժանասցին հաղորդելոյ: - 392. Իսկ յետ մահու ա՛յնոցիկ հոգւոց որք զղջան կամ խոստովանին զմեղս, քաղաք ապաստանի է նոցա ի կայանս հոգւոցն տրտմութիւն և ցաւն վասն փոխարինաց մինչ մեռանի *քահանայն* մեծ. որ եկեղեցի սուրբ՝ պատարագաւ և աղօթիւք և ողորմութեամբ հատուցանէ՛ զպարտս նոցա և ազատին: - 392. Եւ երկրորդ՝ զի ո՛չ ինքեամբ՝ այլ ի ձեռն *քահանայիցն* մահուն ազատիւր: - 392. Զի որպէս *քահանային* օծումն ի հոգւոյն ո՛չ բաժանի յաւիտեան, և պսակի օրհնութիւնն որ ի մարմինն է՝ ո՛չ բաժանի մինչ ի մահ ի մարմնոյն: - 401. Ասա՛ թէ՝ *քահանայիցն* հրամայեաց ի բաց կալ

յամուսնութենէ յորժամ մտանէին ի տաճարն և ի խորանն. և յորժամ լսէին զօրէնս աստուծոյ **գ**օրեայ սրբեցան: - 404. ...այսու եղանակաւ օրհնեմք *զքահանայս*. զժողովուրդս. զմեռեալս և զկենդանիս: - 406. Յայս միտս *զքահանայից* թաղումն վարագուրաւ ծածկեմք: - 411. Եւ թէ նախ դատաւորք և թագաւորք, և ապա՛ *քահանայք* տիրեցին իսրայէլի: - 413. Նա՛խ՝ զի տէր ինքն էր բաժին նոցա. և զամենայն իրաւունս ի *քահանայսն* տային: - 417. և Երեսուներորդ, յեսու բաժանեաց զերկիրն ամենայն ցեղիցն. և եղիազար *քահանայ* և իշխանքն ընդ նմա: - 419. Եւ յետ յեսուայ դատաւորք դատեցին առաջնորդութեամբ զիսրայէլ **նժ** ըստ եօթանասնիցն թուով երեքտասան դատաւորք մինչև ի հեղի *քահանայ:* - 420. Եւ յետ սորա հեղի *քահանայ* յազգէ ի թամարայ դատեաց զիսրայէլ ամս **խ**: - 420. Եւ յետ զերութեանն *քահանայք* իշխեցին ժողովրդեանն: - 421. Երկրորդ՝ թագաւորք մինչ ի զօրաբաբէլ. և յեսու *քահանայ:* - 421. Եւ անտի *քահանայքն* մինչ ի յիսուս փրկիչն ճշմարիտ: - 421. Այն որ ուսանո՛ց է, որպէս վակաս *քահանային*. և որպէս մայրն սամուէլի արար: - 425. Եւ վասն այսմ ի սուր անկան ծոյլ *քահանայքն* ոփնի և փենէհէզ. և **լա** ի դասուց անկան և տապանակն գերի առաւ: - 425. Նոյնպէս ի նորս *քահանայք* և ժողովուրդք: - 425. Կամ զի աքիմելէք **գճ** *քահանայիւք* սպանաւ ի սաւուղայ. և աբիաթար փախեաւ առ դաւիթ և ընդ նմա՛ էր զամենայն աւուրս թագաւորութեան նորա. և յանուանէ զնա՛ յիշէ: - 427. Երրորդ՝ զի ո՛չ էր *քահանայ*. վասն որոյ յետոյ ասէր դաւիթ *զքահանայսն*, դո՛ւք ղևտացիքդ սրբեցէք և բարձէք զտապանակն. զի մի՛ լիցուք որպէս զոզիա: - 431. Յայս միտս ի բերել ընծային ի սեղանն՝ է դասք *քահանայից* կան ի սպասու. և երգեն եղանակաւ...: - 431. Եւ ա՛յս է պատճառն. զի ի դատաստան *քահանային* քննեալ՝ այլ ո՛չ քննի ի դատաստանին քրիստոսի...: - 33. Դարձեալ՝ նոյն ինքն քրիստոսի է իշխանութիւնն որ աստ լուծանէ ի ձեռն *քահանային*...: - 433. Երկրորդ՝ որպէս թուեաց դովեկ *զքահանայսն* զի մի՛ զերծանիցեն ի սրոյն. նոյնպէս և այս վասն *քահանայիցն* վրէժխնդրութեան էր. զի կամեցաւ ժողովուրդն փրկել զնոսա: - 434. Ուստի յա՛յտ է, զի ցեղն իսրայէլի **ըճռ** էին. և ցեղն յուդայ **եճռ**. և ցեղն *քահանայից* և բենիամենի ո՛չ անկաւ ի թիւ: - 434. Կոտորեաց սաւուղ *զքահանայս* վասն դաւթի. և հերովդէս զմանկունսն բեթլէհէմի: - 437. Զի չասացաւ նմա ի ձեռաց *քահանայիցն* կերակրիլ. այլ ի ձեռաց ագռաւուցն: - 443. Յետ որոյ քեղկի *քահանայ* որ էր հայր երեմիայի՝ եգիտ զերկրորդ օրէնքն և մատոյց առ ովսիա. և գնաց առ ողդիկին մարգարէ հարցանել...: - 447. Եւ առաջնորդեն օծեալ *քահանայքն* յետ դարձին **նձգ** ամ. մինչև բարձան օծեալքն հրէից և ծնաւ ճշմարիտ օծեալն քրիստոս: - 449. Եւ յետ հիւրկանեայ ո՛չ ևս ի *քահանայից* ազգէն կացին օծեալքն առաջնորդք. այլ աննշանք ոմանք ամսօրեայք և տարևորք: - 449. Եւ յայնմ ժամանակի ասէ՝ սպանցի օծեալն, յորում *քահանայքն* և իրաւունք ո՛չ իցեն. այսինքն թագաւոր և դատաւոր: - 449. Վասն է՞ր նախ դատաւորք և ապա թագաւորք և ապա *քահանայք* առաջնորդեցին մինչ ի տէր մեր յիսուս քրիստոս: - 449. Եւ ապա՛ *քահանայ* ի վերնատունն և ի խաչին: - 450. Եւ եղև քոյր սորա եղիսաբեթ կին ահարօնի *քահանայի*. յորմէ ծնաւ նաբաթ և աբիուդ. եղիազար և իթամար *քահանայք:* - 452. Զնա էառ կին յովիդա *քահանայ*. և խառնեցան երկու ցեղք թագաւորաց և *քահանայից:* - 452. Այլ և *քահանայքն* ո՛չ յանցանէին զօրինօքն և յօտար ազգէ տային նմա կին: - 460. Իսկ ի մօր կողմանէ՝ մարիամ էր ի *քահանայից* ցեղէն, զի մատթան *քահանայն* բնակէր ի բեթլէհէմ, և ունէր երիս դստերս: - 460. Որպէս զի լիցի կոյսն մարիամ յազգէ հարց ի թագաւորական ցեղէն. և յազգէ մօր ի *քահանայից:* - 461. Եւ վասն այն խառնեցան **բ** ցեղքն. զի ծնեալն ի նոցանէ քրիստոս ըստ մարմնոյ, թագաւոր և *քահանայ* լինէր: - 461. Զի օծեալք սոքա էին *քահանայք* և թագաւորք. յորոց և բազումք մարգարէք եղեն: - 461. Եւ սոյնպէս և քրիստոս եղև երկուց զարմիցն մի *քահանայ* և թագաւոր ճշմարիտ և մշտնջենաւոր *քահանայ* և թագաւոր յաւիտեան: - 461. Հինգերորդ՝ օծումն *քահանայից*. վասն միջնորդութեան: - 474. Հինգերորդ՝ քրիստոս լինելոց էր *քահանայ* և թագաւոր յաւիտենական. և էգն ո՛չ կարէր օծանիլ *քահանայ* և թագաւոր. ո՛չ յօրինակն և ո՛չ ի ճշմարտութիւնս: - 480. Երրորդ՝ եթէ *քահանայ* է և թագաւոր. վասն այն ընդ թագին և խա՛չն նկարի: - 481. Մկրտողն էր յովհաննէս. որպէս սպասաւոր *քահանայքն:* - 487. Եւ է՛ որ պատարագն մեծ է քան զմատուցօղն. որպէս նոր օրինացս մարմինն քրիստոսի մեծ է քան *զքահանայն:* - 491. Եւ է՛ որ մատուցօղն մեծ է քան զընդունօղն. որպէս մելքիսեդեկ քան զաբրահամ. և *քահանայն* մեծ է քան զժողովուրդն որ ճաշակէ: - 491. Նոր պատարագ և նոր *քահանայ* և նոր եղանակ: - 491. ...և ինքն տէր մեր իբրև *քահանայ* նոր յամենայն ձեռաց պահէր զգուշութեամբ, զի պահեսցէ զնա ի ձեռինն որ կարօ՛ղ է ընդունել զայնպիսի պատարագն: - 517-518. Ձեռք՝ *քահանայք* գործիք սուրբ խորհրդոցն: - 534. Իսկ գրապան՝ վարդապետք և *քահանայք* պահապանք ժողովրդեանն. որք բոլորակի զգեստ կոչեցան

քրիստոսի: - 534. Յաղագս որոյ կացոյց հոգևոր իշխան *զքահանայս*. զի հոգէպէս ուղղեսցեն զմարդիկ և արգելցեն ի մեղաց: - 537-538. Եւ զի *քահանայք* իշխանք են ասէ օրէնքն «զիշխանս ժողովրդեան քո մի՛ հայհոյեսցես»: - 538. Կրկին իշխանութիւն է զոր ունի *քահանայն*. զի կապելն որոշելն է. սարկաւագին որ որոշէ՛ զանմաքուրն յեկեղեցւոյ: - 538. Իսկ արձակելն որ է՛ մերձաւորել և հաղորդել՝ է՛ յատուկ *քահանային:* - 538. Այլ վերնագոյն է *քահանայն*. վասն որոյ ունի զկրկինն: - 538. Եւ սոքա են սուր երկսայրիք տուեալ ի ձեռս *քահանայից* զինուորաց քրիստոսի...: - 538-539. Այլ գիտելի է, զի *քահանայն* զինուո՛ր է. ոչ զոր ինքն կամի և ախորժէ զայնս կապէ և արձակէ. այլ զոր հաճո՛յ է զօրավարին քրիստոսի: - 539. Զի *քահանայն* արդարութեանն աստուծոյ հրեշտա՛կ է...: - 539. Նա՛խ՝ թէ անկարգաբար կապէ. որպէս *քահանայ* զեպիսկոպոս կամ զկաթողիկոսս. կամ սարկաւագ *զքահանայ*. այս ո՛չ կատարի: - 539. Որպէս դիմոփիլոս կիսասարկաւագ *զքահանայ* ոմն արտաքսեաց յեկեղեցւոյ. զոր յանդիմանէ՛ սուրբն դիոնէսիոս յութերորդ թուղթն իւր: - 539. Զի թէպէտ *քահանայն* և բանքն նոյն է, այլ ո՛չ դիտաւորութիւնն: - 539. **Զորօրինակ, *քահանայ* ոք ի վաճառանոցն ի բազում հացս և ի գինիս ասասցէ «ա՛յս է մարմին իմ և արիւն իմ» ո՛չ կատարի. զի ոչ ունի զդիտաւորութիւնն**...: - 539. Իսկ առ ներքինս օրինելն՝ իշխանութիւն և շնորհաց տալն թարգմանի. որ *քահանայն* կամ եպիսկոպոսն տայ. որպէս ցուցաւ ի վերոյ ի **իզ** գլուխն, **hե** համարն: - 540. Որպէս մինչ անարժան *քահանայն* պատարագէ, այլքն հաղորդին սրբութեան. այլ ինքն դատապարտի: - 540. Զորօրինակ՝ նախ լինի սարկաւագ, և ապա *քահանայ:* - 541. Այլ սոքա ամենայնքն նախկին և պատւականք են. այսինքն *քահանայ* քան զսարկաւագ. և բանական քան զգայական. և ներգործութեամբ քան զօրութեամբ. այսպէս արձակելն քան զկապելն: - 541. Եւ գիտելի է, թէ *քահանայ* ոմն զժողովուրդ իւր կապիցէ, ա՛յլ *քահանայ* ո՛չ կարէ արձակել: - 541. Եւ թէ եպիսկոպոս զիւր *քահանայն* կապէ, ա՛յլ եպիսկոպոս ո՛չ կարէ արձակել: - 541. Իսկ համակարգ *քահանայք* կամ եպիսկոպոսք զնոյն ոմն ընդէ՞ր ոչ կապեն կամ արձակեն: - 541. Ասեմք առ այս, եթէ համակա՛րգ են *քահանայք* կամ եպիսկոպոսք որպէս առաքեալքն. այլ ունին զվիճակ և ժողովուրդ այլ և այլ: - 541. Իսկ *քահանայք* ժողովրդեանն՝ նա կանոնս դնէ՝ որ խոստովանա հա՛յր է և գիտէ զկարն և զորքանն մեղաց: - 541-542. Ասեմք թէ՝ պետրոս գլուխ է առաքելոցն՝ ո՛չ որպէս եպիսկոպոսն *քահանայից*. կամ կաթողիկոսն եպիսկոպոսաց: - 546. Այլ որպէս ի մէջ համակարգից *քահանայից* մինն լինի հայր: - 546. Երկրորդ՝ մի *քահանայ* երիցս անգամ ի միում աւուր պատարագս մատուցեալ: - 553. Իններորդ՝ կին ո՛չ առնուլ *քահանայից*. և զմորուսն ածիլել. և զգլորեալն կանգնել անխտիր: - 553. Չորրորդ՝ հրաման տալ աւագ սարկաւագաց կին առնուլ և *քահանայ* լինիլ: - 553. Երրորդ՝ առ *քահանայս* զգուշութիւն օրինօք ունել. թէպէտ և ոմանք կաղան առ այս: - 554. ...որպէս առաւել է մեղք հրեշտակին քան զմարդոյն. վասն այն մին *քահանայի* մեղք՝ որ չափ բոլոր ժողովրդեանն է. ուստի յա՛յտ է ի պատարագէ հնոյն...: - 563. ...զի վասն բոլոր ժողովրդեանն մին էր զուարակ. և վասն միայն քահանայապետին մին. և զշնացեալ դուստր *քահանային* այրէին. և զժողովրդեանն քարկոծէին. և վա՞յ ինձ զի անձամբ զանձն իմ դատապարտեմ: - 563. Վեցերորդ կարգն. որ է՛ սպասաւորելոցն այսմ խորհրդոց որք են յեկեղեցի *քահանայք* և այլք: - 587. Դարձեալ գիտելի է, զի աստ ասեն հերձուածօղ ազգն Ֆռանկաց թէ՝ թէպէտ մկրտութիւնն գործ *քահանայի* է, բայց ի հարկաւոր ժամանակն թէ *քահանայ* ո՛չ լինի ամենայն ոք որ գիտէ զձև մկրտութեան՝ կարէ մկրտել: - 588. **Հինգերորդ, զի թէ գո՛յր հնար կնոջ վասն հարկին առնել զգործ *քահանայի*, ընդէ՛ր ոչ կարաց նունի կոյսն մկրտել զոք ի վրաց յորժամ դարձոյց յաստուածգիտութիւն**...: - 589. ...այլ առաքեաց առ սուրբն գրիգոր և խնդրեաց *քահանայս* մկրտել զնոսա: - 589. Եօթներորդ, զի մկրտելն է գործ *քահանայի*...: - 589. ...քանի՞ ևս առաւել հերձուած մեծ է կանանց. որոյ ասաց աստուած թէ «առ այր քո դարձ քո և նա տիրեսցէ քեզ» հրաման տալ զգործ *քահանայի* առնել որ ազատա՛ց է և ո՛չ ծառայից: - 589. Տասներորդ, զի մկրտութիւնն է գործ *քահանայի* որ աղօթիւք կատարի...: - 589-590. ...իսկ կանանց ազգին պատուիրէ՛ առաքեալն ի ժամ աղօթիցն շուք դնել գլխոյն վասն հրեշտակաց. այսինքն վասն *քահանայից* որ հրեշտակք կոչին ի գրոց...: - 590. ...և զայս պատճառէ՛ զօրեղ իշխանութիւն *քահանային* և ջրոյ առաւելութիւնն: - 590. Եւ դնէ զայս *քահանայն* սուրբ մեռոնաւն ի ճակատ նուիրելոյն ասելով այսպէս. ըստ այլազգաց եկեղեցեաց. թէ ի ներքոյ ձևիս այս ես կու նշանեմ զքեզ նշանաւ խաչի...: - 593. Ասեմք թէ՝ առնեմք ըստ ազգին յունաց. որ որպէս *քահանայն* պատարագէ և մկրտէ, նոյնպէս և դրոշմէ ըստ սրբոյն դիոնիսեայ: - 594. Եւ այլ *քահանայքն* ընկերակիցք և սպասաւորք են խորհրդոյն: - 594. Դարձեալ ասեմք թէ՝ *քահանայքն* մեր ունին իշխանութիւն դրոշմելոյ զոր նոցա եպիսկոպոսն դնէ. ապա

ուրեմն իշխանակիցք են *քահանայք* մեր և եպիսկոպոսք նոցա: - 594. Այս ըստ հակառակասիրութեան նոցա ասի. այլ ըստ ուղղութեան՝ *քահանայն* ունի իշխանութիւն զեօթն խորհուրդ եկեղեցւոյ կատարել...: - 594. Եւ սպասաւոր այսմ խորհրդոյ միայն *քահանայն* լինի: - 594. Առաջին՝ *քահանայն:* - 597. Եւ թէ ոք ասիցէ, կարողութիւն ունի *քահանայն* բազում հացս օրհնել: - 597. Եւ թէ ասեն՝ կարէ՛ մին *քահանայն* ի մին ժամս բազում տղայս մկրտել. ապա և կարէ՛ բազում հացս օրհնել: - 597. Իսկ յորժամ դուք անօրէն *քահանայքդ* առնուք զարիւնն ընդ մարմնոյն՝ ամենայնքն յուդա էք: - 598. Եւ պա՛րտ է որ ապաշխարանքն լինի առ ոտս *քահանային:* - 601. *Քահանայ* էր թէ սարկաւագ: - 601. Դարձեալ թէ՝ ի՞նչ մարդոյ խոստովանեցաւ. թէ *քահանա՞յ* էր. հերձուածօ՞ղ էր թէ ուղղափառ: - 601. Դարձեալ զգուշասցի զի մի՛ յամօթէ՛ կամ երկիւղէ՛ *քահանային* յուսահատութեամբ ծածկէ զմեղքն...: - 601. ...և կամ զմեղքն բաժանէ. և զկէսն մին *քահանային* ասէ և զկէսն մին: - 601. Իսկ յորժամ մեղաւորն խոստովանի, պա՛րտ է հայիլ *քահանային* թէ կրօնաւո՞ր է թէ աշխարհական: - 601. Իսկ թէ աշխարհական լինի. հայի *քահանայն* թէ խոստովանօղն իմաստուն մարդ լինի առանց բարի գործոց: - 601. Ջամենայն ճշմարտութեամբ հարցանէ *քահանայն*. և այնպէս որ մի՛ լիցի ի հարցանելն մեղք ուսուցանել ժողովրդեանն: - 601. Իսկ յորժամ *քահանայն* լաւ քննէ զխղճմտանքն ժողովրդեանն. խորհի վասն ապաշխարութեանն թէ ո՞րպէս կարէ ապաշխարել...: - 601. ...որպէս ազգն Ֆռանկաց ունին զայսպիսի խոստովանութիւնս միշտ *քահանայքն* և ժողովուրդքն. և այսպիսիս անկատար առնու զթողութիւն...: - 603. Նոյնպէս և *քահանայացւոյն*. նոյնպէս և աւազակին: - 603. Երկրորդ՝ թէ տգէտ լիցի *քահանայն* և ո՛չ կարէր ընտրել զծանրութիւն մեղացն և զանազանել: - 603. ...զի պարտ է զոր ի մտի ունի՝ զբոլորն միոյ *քահանայի* խոստովանիլ: - 603. Այլ և զայս օծումնս ունիմք ի ննջեցեալ *քահանայս:* - 604. Դարձեալ՝ մահու չափ մեղքն բանիւ սրբի ի ձեռն *քահանային*...: - 604. ...այսպէս և ներելին սրբի բանիւ *քահանային* և աղօթիւք: - 604. Յայս միտս ժողովիմք *քահանայքս* և պաշտօն առնեմք յերեկօրեայ մինչ ի լոյս...: - 604-605. Ապա ուրեմն բան *քահանային*՝ անուամբն աստուծոյ սրբէ զներելիսն: - 605. Եւ թէ ոք ասիցէ, պա՛րտ է զի ձեռն *քահանային* մերձեսցի ի զգայարանսն: - 605. Ասեմք թէ՝ յարաժամ աջ *քահանային* մերձի ի գլուխ քրիստոնէին ուր արմատն է բոլոր զգայութեանցն: - 605. Եւ ձեռն *քահանային* է՛ օծեալ և սրբեալ մեռոնաւն...: - 605. ...զի մի՛ համարձակեսցին *քահանայք* և զձէթ օրհնելն վերստին նուծցեն յեկեղեցիս մեր: - 605. Դարձեալ և զօծման խորհուրդս ունիմք ի *քահանայս* ննջեցեալս...: - 605. Ապա և ո՛չ աղօթք և պաշտօն *քահանայից* կամ տուրք կամ պատարագք է օգուտ հոգւոյն ըստ քեզ որ է բնաւ սուտ և չար հերձուած: - 605. Որոյ գործն է սպասաւորել *քահանային* ի խորհուրդ եկեղեցւոյն. զսկիհն պատրաստել, զաւետարանն կարդալ ի բեմն: - 606. Իսկ ի թաբօր լերինն ձայնիւ հայրական և հովանեաւ հոգւոյն եղև *քահանայ*. ցուցեալ մովսէս և եղիա սարկաւագունք յաջմէ և յահեկէ: - 607. Ջի եպիսկոպոսունք տան հոգի *քահանայից* և զկապելոյ և զարձակելոյ իշխանութիւն: - 607. Եւ յառաջին արտորէիցն պտղոց տալով նոցա ուտել զոր *քահանայքն* ուտէին՝ արար զնոսա *Քահանայս:* - 607. Հինգերորդ դասք՝ *Քահանայք*. որք ի քաղաքի լինին, և որք ի վանորայս, և ի գեօղս երիցունք: - 608. ...և գո՛րծ է նոցա, հրամանաւ *քահանային* աւետարան կարդալ, քարոզել, և բառնալ քշոց և բուրբառ. և նստիլ ամենևին ո՛չ: - 608. Եպիսկոպոսն և *քահանայն*, զսոսա ի մի կարգ թուէ ի դէմս վերնագոյն դասուց երկնաւորաց. որք են Աթոռք. Քերովբէք. և Սերովբէք: - 608. Եւ բաց յայսցանէ՝ Ղեւայ ցեղք *քահանայիցն:* - 609. Իսկ կատարի պսակն օրհնութեամբ *քահանային*. և մարմնական զուգաւորութեամբն: - 609. Իսկ ի կատարումն պսակին՝ նախ է՛ օրհնութիւն *քահանային*, և ապա՛ մարմնական զուգաւորութիւնն: - 610. Վասն որոյ նախ *քահանայն* օրհնէ հոգևորապէս, և ապա մարմնաւորապէս զուգակցին: - 610. Պետաց, *Քահանայից*, և Սարկաւագից: - 614. Նոյնպէս և *քահանայքն* հնչէին ի հինն. որպէս այժմ ի յեկեղեցի ժողովեն ի յաղօթս հանապազորդ: - 618. Ի հինքն **բ** անգամ քահանայապետն և *քահանայն* յառաւօտն և յերեկոյն խնկարկէին...: - 618. Իսկ և ի ճաշոյն պատարագն **գ** անգամ. մին *քահանայն*. և **բ** սարկաւագն: - 618. Երկրորդ՝ վասն զի *քահանայք* եմք՝ պա՛րտ է հասարակ աղօթել. և զի աբեղայք՝ պա՛րտ է առանձնակի աղօթել: - 623. Նոյնպէս և մեք զնծայս սաղմոսից և զայլ երգոց տամք ի *քահանայս*...: - 624. ...զի *քահանայն* միջնո՛րդ է առ աստուած և առ մարդիկ: - 624. Երկրորդ, որպէս ի հինքն մատուցանէին զպատարագն առ *քահանայսն*. և նոքա նուիրէին աստուծոյ: - 624. Նոյնպէս և մեք զբանեղէն պատարագս մեր տամք ի *քահանայս* ընծայել աստուծոյ, և բերել զշնորհքն թէ «խաղաղութիւն ամենեցուն»: - 624. Եւ ասելն «ընդ հոգւոյդ քում», և *քահանայքն* ճաշակէին ի նւիրացն աստուծոյ: - 624. Առաջին՝ *քահանայք*. և միջին՝ սարկաւագունք. և

վերջին են սաղմոսօղք: - 624. Արդ սաղմոս երգօղքն տան ի սարկաւագն. և սարկաւագն ի *քահանայն*. և նա՛ մատուցանէ աստուծոյ զօրհնութիւնն. որպէս առաջին դասք քերօբէիցն: - 624. Նմանապէս և յեկեղեցի՝ ոմանք սաղմոսե՛ն. և սարկաւագն ի տիպ հրեշտակին տայ զօրհնեայն ի *քահանայն* որ է՛ տիպ քրիստոսի...: - 625. Զի՞նչ է որ *քահանայն* աղօթէ՛ և եպիսկոպոս զխաղաղութիւնն տայ: - 625. Ո՛չ զամենայն, այլ զիւրաքանչիւր ժամու առաջին աղօթիցն եպիսկոպոսն ասէ զխաղաղութիւնն, և զայլն *քահանայն* որ աղօթէ՛: - 625. Եւ ա՛յս է պատճառն, զի *քահանայն* է՛ ի դէմս քրիստոսի, և եպիսկոպոսն հօր աստուծոյ. և խաղաղութիւնն է՛ հոգին սուրբ որ ի հօրէ առաքեցաւ...: - 625. Վասն որոյ *քահանայն* աղերսէ՛ զեպիսկոպոսն, և նա՛ տայ զխաղաղութիւնն: - 625. Եւ յորժամ *քահանայն* ասէ զխաղաղութիւնն՝ ա՛յս է պատճառն, զի *քահանայն* է՛ միջնորդ առ աստուած և առ մարդիկ...: - 625. Եւ առաւել յարմարէ *քահանային* զշնորհս հոգւոյն սրբոյ բաշխել, քան թէ զանձն: - 625. Յօրինակ յեսուայ, որ տապանակաւն և *քահանայիւք* և ժողովրդովք զվեց օր շրջեցաւ լռութեամբ. - 627. ...և յեօթներորդ օրն ի եօթն նուագին բարձրաձայն փողովք հնչեցին *քահանայքն*. և ժողովուրդն բարձրաձայն աղաղակեաց. յորմէ կործանեցաւ եօթնապատեան պարիսպն երիքովի: - 627. Եբրայեցիքն առաջին դասքն չասէին ալէլու. այլ զօր միայն *քահանայքն* երգէին ալէլուով էր...: - 630. Իսկ *քահանայն* յորժամ աղօթէ՛ կամ պատարագէ՛: - 635. Այլ ի պատարագն պարտ է բանալ զգլուխս որ պատարագիչն է ամենայն ոք որ և իցէ. թէ *քահանայ* և թէ եպիսկոպոս և կամ ա՛յլ ոք: - 635. Եւ *քահանայքն* հոլոնեալ. որ է ժողովեալ և խորհեալ: - 639. Յայս միտս սարկաւագն նախ առաջի *քահանային* ընթեռնու իբր ի նմանէ՛ ուսեալ...: - 644. Այն է՝ յորժամ դաւիթ զտապանակ ուխտին հանէր յերուսաղէմ, է դաս պարուց որք են *քահանայից* դասք. և սրինկ. և փողք. և քնար. և այլն: - 645. Այլ և դարձեալ նշանակէ՛ զաստիճանաւորս ի խոնարհ քան *զքահանայս*...: - 646. Իսկ թէ *քահանայ* ոք հանդիպի ի նոյն չարիս, մի՛ պաշտեսցէ զքահանայութիւնն...: - 652. Չորրորդ, որպէս մասն ինչ է *քահանայից* և մասն աշխարհականաց...: - 658. ...այսինքն ա՛յլ կարգ *քահանայից*. և ա՛յլ կրօնաւորաց. ա՛յլ աշխարհականաց. և ա՛յլ տղայոց: - 671. Նոյնպէս թէ *քահանայ* իցէ՝ կարգիւն պատեն և դնեն ի վերայ բեմին. առաջի սեղանոյն: - 671. Դարձեալ՝ դնեն *զքահանայս* առաջի սեղանոյն ի վերայ բեմին, և զկրօնաւորս ի մէջ եկեղեցւոյն, և զաշխարհականս առ դուռն, նշանակէ զզանազան տեղիս: - 672. *Զքահանայս* ընդ սերովբէից և քերովբէից յառաջին դասս վերինն զուարթնոցն: - 672. Վասն է՞ր *զքահանայս* միայն օծանեմք...: - 672. Երկրորդ, զի *քահանայն* գլուխ է...: - 672. այսպէս և *քահանայն* նախ օծանի և ապա՛ թաղի: - 672. ...այսինքն թէ եպիսկոպոս իցէ՝ եպիսկոպոսք. և թէ *քահանայ*՝ և թէ սարկաւագ. նմանապէս և աշխարհականք զաշխարականս: - 674. Այսպէս և հանգստարանք եպիսկոպոսաց ի կարգս իւրեանց, և *քահանայից*, և կրօնաւորաց, և թագաւորաց, և աշխարհականաց: - 674. Եւ ի խորհուրդ եօթանց դարուց կենցաղոյս՝ զեօթն օր նաւակատիս կատարեմք թաղման *քահանայից:* - 674. Այսպէս է կարգ կատարման ննջեցելոց սրբոց *քահանայից* և կրօնաւորաց և առ հասարակ ժողովրդոց: - 674. Եւ յորժամ դնեն ի գերեզման, *քահանայն* նախ օրհնէ՛ երիցս ափով զհողն և արկանէ ի գերեզմանն ասելով...: - 676. Ո՛ հա՛յրդ ես որոց ի վեր քան զերկինս. այսինքն հոգւոց սրբոց կատարելոցն որ ի վերեն քան զդասս հրեշտակաց մեծ քրիստոսի որպէս *քահանայք* առ քահանայապետ, և անդամք առ գլուխն. և որդիք առ հայր: - 688. եկեղեցի սուրբ և աղօթք *քահանայից* հատուցանէ զպարտս նոցա և քաւէ...: - 701. Դարձեալ ասեմք եթէ՝ խոստովանողին պատիժ ամօթն է զոր կրէ առաջի *քահանային*. և ո՛չ կրէ զամօթն յաւիտենից: - 701. Ա՛րդ՝ որք կրեն զամօթն առաջի *քահանային*, ո՛չ կրկնի ի վերայ նոցա պատիժ: - 701. Երիցունք նախ նշանակէ՛ *զքահանայս* որք զանձինս իւրեանց մատուցանեն պատարագ աստուծոյ: - 711. Երկրորդ *զքահանայս* հին և նոր. որ գնեն զպատարագս ուխտից ի սեղանն: - 713. Հինգերորդ, քահանայապետք հարիւրաւոր. և *քահանայք* վաթսունաւոր. և պաշտօնեայք երեսնաւոր: - 757. Այսպէս և ժանգ յանցանաց մկրտելոց և *քահանայից*՝ բառնայ զգործ՝ կամ զնշանակութիւն շնորհացն. իսկ յետ սրբութեան զղջմամբ՝ զիա՞րդ կրկնի ունակացեալն ի նմա՛: - 782. Ոմանք ի գերութիւն վարեալք արք և կանայք. և կէսք առաթուր դիաթաւալ սրախողխող գալարեալ. առհասարակ *քահանայք* և աշխարհականք գէշ անկեալ դիակամբ անթաղ ընկեցեալք: - 788

**ՔԱՀԱՆԱՅԱԳՈՐԾԵՄ +** Զի յղացեալ էր ի գերեզմանին թաղէոսի. և սնաւ անդ՝ ուր առաքեալն սկսաւ *քահանայագործել*. և փոխեաց յինքն զշնորհս նորա անդր եղեալ եպիսկոպոս: - 548. Եւ դարձեալ՝ կանանց ազգ ո՛չ կարէ *քահանայագործել*. և ո՛չ կնքահայր լինիլ: - 591

**ՔԱՀԱՆԱՅԱԳՈՐԾՈՒԹԻՒՆ +** Եւ թէ ոք ասիցէ, երևի ապա թէ *քահանայագործութիւն* պոռնկին ո՛չ լինի

կատարեալ. վասն այն արգիլեալ է ի գործոյն: - 167. Այլ և միշտ և անփոփոխ. և անմիջաբար դեմ յանդիման *քահանայագործութիւն* է անդ ըստ իմանալեացն օրինի: - 355. Որ և յերկրորդ գալուստն նախ դատեսցէ. և ապա թագաւորեսցէ անվախճան. ընդ որով *քահանայագործութեամբ* մաքրէ՛ և լուսաւորէ՛ և կատարեալս առնէ միշտ անզրաւ յաւիտենին: - 450

**ՔԱՀԱՆԱՅԱԹԱՂ +** Իսկ վասն ագապս առնելոյ որ է՛ ոգէհանգիստ. և վասն *քահանայաթաղին* որ է՛ **ժը** աւետարան...: - 658. Հինգերորդ, *Քահանայաթաղ*. և օծման նոցա. և ողջունին. **ժ ժ** թուով: - 660. Իսկ ի *քահանայաթաղն* քահանայապետն հեղու զիւղն ի վերայ մարմնոյն. այսինքն ի ճակատն և ի ձեռն...: - 672. Նա՛խ՝ որպէս ասացաւ ի *քահանայաթաղն* վասն **է** շնորհաց հոգւոյն, և **է** խորհրդոց եկեղեցւոյ, և **է** առաքինութեանց, և **է** գլխաւորագոյն մեղաց, և **է** զգայարանօք մեղանչեմք, և **է** փոփոխմամբ հասակի...: - 683

**ՔԱՀԱՆԱՅԱԿԱՆ +** Երեսունգ, Երեսաց հացն. և գառն. և աշտանակն. և *քահանայական* զգեստն: - 284. Հինգերորդ՝ զի մի՛ դատապարտեսցի իբր անժուժկալ. զի էր ի *քահանայական* ցեղէն...: - 461. ...այսպիսիս կատարեալ խոստովանութիւն է. և զայսպիսոյ մեղս թողու *քահանայական* իշխանութիւնն. և զպատիժն ըստ նմին: - 603. Այսպէս բազմապատիկ թողութիւն շնորհէ *քահանայականն* կարգ՝ ձեռնդնելով և բանիւ շնորհաց սրբելով: - 605. Իսկ որ պատեն զնա *քահանայական* զգեստիւք: - 674. ...զի *քահանայական* աղօթիւք և պատարագօք կամ առաւելուն պսակքն, կամ ջնջին մեղք նոցա: - 674. Ապա ուրեմն ամենեցուն առ հասարակ պէտք են *քահանայական* կատարմունք և նուէրք. գալ ի գերեզմանն և այլն ամենայն: - 675

**ՔԱՀԱՆԱՅԱՊԵՏ +** Այսպէս և *քահանայապետն* մեր միայն եմուտ ի ներքին կողմն վարագուրին: - 50. Որև այժմ ի յեկեղեցի ի նոյն խորհուրդ՝ սերոբէին պատկեր որ է քշոցն՝ ի ձեռն սարկաւագին աւանդի՝ որ է՛ մաքրօղն. և երրորդ կարգ յետ քահանային և *քահանայապետին:* - 135. ...*քահանայապետն* ունի զաստիճան ներքնոցն բոլորապէս. և ներքինք զվերին *քահանայապետիցն* մասնապէս: - 136. Իսկ ընդդէմ այսմ՝ *քահանայապետն* որ վերին է՝ ունի զքահանային և կոչի: - 136. Վասն չորրորդին՝ զի առաջին եղև քահանայ ի տիպ ճշմարիտ *քահանայապետին* քրիստոսի: - 286. Եւ զհետ տեառն պետրոս և յովհաննէս մինչ ի սրահ *քահանայապետին:* - 306. Հինգերորդ, քահանայք և *քահանայապետք* առաջին: - 343. Չորրորդ՝ ի խորհուրդ վայելչական մարմնոյ ճշմարիտ *քահանայապետին* մերոյ քրիստոսի: - 347. Իբր՝ *քահանայապետն* գլուխ գոլով՝ առեալ զբոլոր արարածս նուիրէ աստուծոյ: - 348. Եւ բաց յայսցանէ **բ** ակն յանդիմանութեան զոր անդամանդեայ կոչէին, և էր ի պճղնաւոր զգեստին ի վերայ ուսոց *քահանայապետին*...: - 349. Եօթներորդ, նոքա յօտարա՛ց մատուցանէին. այսինքն զուարակ և նոխազ, իսկ *քահանայապետն* մեր քրիստոս զմարմին իւր պատարագեաց հօր ի հոտ անուշից...: - 354. Իններորդ, նոքա ծառայաբար մատուցանէին. ուստի յա՛յտ է զի ո՛չ կարէին նստիլ ի սրբութիւնսն կամ ի քաւութիւնսն. իսկ *քահանայապետն* մեր տիրապէս և աստուածաբար նստեալ ի յերկինս ընդ աջմէ աստուծոյ...: - 354. ...իսկ *քահանայապետն* մեր եմուտ ո՛չ յօրինակս ճշմարտութեան, այլ ի բուն իսկ յերկինս յանդիման լինիլ յերեսացն աստուծոյ վասն մեր...: - 355. Հնգետասաներորդ, նոցայն *քահանայապետ* մովսէս և ահարօն ո՛չ կարացին մտանել յերկիրն պարգևաց. իսկ *քահանայապետն* մեր էանց ընդ երկինս երկնից...: - 355. Իբր թէ հաւասա՛ր ծանր է մեղք *քահանայապետին* և բոլոր ժողովրդեանն: - 358. Եւ ա՛ջ երին քահանային, և երբուծն *քահանայապետին*. և զայլն կերիցեն քահանայքն: - 358. Եւ արտաքոյ՝ կուրծքն *քահանայապետին*, որ է՛ բնակարան սրտին: - 367. Այլ և *քահանայապետն* դատապարտեաց զերևելին մարդ խաչիլ: - 369. Որք են *քահանայապետք,* քահանայք, և սարկաւագունք: - 379. Եւ որք զսուրբն սրբոց՝ *քահանայապետք* և քահանայք: - 379. Մին՝ *քահանայապետք* և քահանայք. և վեց պաշտօնեայք: - 380. Եւ այսպէս բաժանեսցեն զաւարն. ի **ճէն** զմինն տայցեն *քահանայապետին*...: - 390. Դարձեալ, եկեղեցի սուրբ՝ է՛ քաղաք ապաստանի. և *քահանայապետ* ի նմա՛ պատարագն. յոր մտեալ աղօթեմք և թողութիւն գտանեմք: - 392. Կամ երկոքեանն *քահանայապետք* էին: - 427. Արդ սկսեալ առ դարեհիւ ի **կե** ոլոմպիադին՝ դադարեցին ի **ճձզ** ոլոմպիադին առ հիւրկանոսիւ *քահանայապետիւ*, որ գերեցաւ ի պարթևաց: - 449. Այլ և յովիդա *քահանայապէտ* զդուստր յովրամայ արքայի զքոյր ոքոզիայ: - 461. Եւ թշրինի **ժ** միշտ առաջին օր քաւութեան. յորում մտանէր *քահանայապետն* ի սուրբն սրբոց: - 483. Ո՞ր քան ևս *քահանայապետին* որ զերկոտասան օր պարտ էր խնկօք պաշտել ի մէջ տաճարին ի ժամ աղօթիցն...: - 483-484. Անմարթ էր թողուլ զժողովուրդն ի դրան տաճարին և մերձիլ յանկողինս. և ըստ

օրինացն **գ**օրեայ սրբութիւն ստանալ. որ անհնա՛ր է ամենևին. թէպէտ ասեն՝ գոյր ա՛յլ *քահանայապետ* որ զկարգ պաշտամանն կատարէր: - 484. Եւ փոխանորդ նորա ի յերկրի ի հինն *քահանայապետն* որպէս ահարօն. և ի նորս կաթողիկոսն իւրաքանչիւր ազգի: - 534. ...զի վասն բոլոր ժողովրդեանն մին էր զուարակ. և վասն միայն *քահանայապետին* մին...: - 563. Եւ *քահանայապետ* ասէ զնա՝ որ պատարագէ և մկրտէ և դրոշմէ. զի նա՛ է պետ և աւագ ի կատարմունս խորհրդոյն: - 594. Ի հինքն **բ** անգամ *քահանայապետն* և քահանայն յառաւօտն և յերեկոյն խնկարկէին...: - 618. Զաստուած ասեն. թէ *քահանայապետի* նատանւոյն աստուած անունն էր գրած. և հաստատեաց թէ աստուած է: - 638. Եւ տանին առ աւագ երէցն զոր *քահանայապետ* կոչէ սուրբն դիոնէսիոս...: - 671. Եւ որպէս հրեշտակքն զհոգին ածեն առ աստուած, նոյնպէս և զմարմինն տանին առ *քահանայապետն*...: - 672. Իսկ ի քահանայաթաղն՝ *քահանայապետն* հեղու զիւղն ի վերայ մարմնոյն. այսինքն ի ճակատն և ի ծեռն...: - 672. Չինգերորդ, ցուցանէ թէ որպէս մարմինն օծանի ի *քահանայապետէն* անուշահոտ իւղով...: - 672. ...զի *քահանայապետն* զհայր նշանակէ. և իւղն զքրիստոս. և անուշահոտն զհոգին սուրբ որ քրիստոսիւ պարգևեցաւ մեզ: - 672. Նա՛խ՝ *քահանայապետին* և ապա այլոցն: - 673. Նախ այն է, յորժամ բերեն առ *քահանայապետն:* - 675. Ո՜ հա՛յրդ ես որոց ի վեր քան զերկինս. այսինքն հոգւոց սրբոց կատարելոցն որ ի վերեն քան զդասս հրեշտակաց մերծ քրիստոսի որպէս քահանայք առ *քահանայապետ*, և անդամք առ գլուխն. և որդիք առ հայր: - 688. Չինգերորդ, *քահանայապետք* հարիւրաւոր. և քահանայք վաթսունաւոր. և պաշտօնեայք երեսնաւոր: - 757. Իսկ շնորհք նորոյս հաստատ և անփոփոխ ի ճշմարիտ *քահանայապետէն* անփոխանցելի պարգևեալ: - 783

**ՔԱՀԱՆԱՅԱՊԵՏԵՄ +** Ութերորդ՝ ոմանք *քահանայապետե՛ն*, ոմանք *քահանայապետին,* և միջինքն *քահանայապետին* և *քահանայապետեն:* - 134

**ՔԱՀԱՆԱՅԱՊԵՏՈՒԹԻՒՆ +** Զոր նախ «յեկեղեցական *քահանայապետութեան*» երեք գլուխն ասէ...: - 83. *Քահանայապետութիւն* նոցա և մարդկան: - 102. Եւ են առաջին դասք *քահայանապետութեան:* - 134. Ի յառաջին կարգ *քահանայապետութեանն*՝ սերօբէ՞ն է առաջին դաս՝ թէ աթոռքն: - 135. Նմանապէս և ի միջին կարգ *քահանայապետութեանն*՝ առաջին է տէրութիւնքն. և ապա զօրութիւնք. և ընդ նմին իշխանութիւնք: - 135. Այս է միջին կարգ *քահանայապետութեան* նոցա և գործ նոցա: - 136. *Քահանայապետութիւնն* ո՞րպէս է ի հրեշտակս, և ո՞րպէս ի մեզ: - 138. *Քահանապետութիւնն* ըստ այնմ որ կա՛րգ է՝ մի և նոյն է ի մարդիկ՝ ի հրեշտակս՝ և յաստուածպետութիւնն սուրբ: - 138. Նախ՝ զի յաստուած ինքնակատար և նախակատա՛ր է *քահանայապետութիւնն:* - 138. Այս զանազանութիւն է երկնայնոց *քահանայապետութեանց:* - 138. Ապա յա՛յտ է թէ ո՞րպէս է հաւասարակ և զանազան *քահանայապետութիւնն* առ աստուած ի հրեշտակս և ի մարդիկ: - 139. Զի՞նչ է շնորհ *քահանայապետութեան:* - 140. Իսկ ի նոյն ինքն՝ առաջին է նախախնամութիւնն առ աստուած, և ապա՛ ստեղծումն. զի վասն նախախնամական բարութեանն կամեցաւ ստեղծանել զեղեալքս. որպէս ասէ սուրբն դիոնէսիոս ի **դ** գլուխն որ «յաղագս երկնայնոցն *քահանայապետութեանց»:* - 157-158. Իսկ գործ պոռնկութեանն զկնիք կուսութեանն շրջէ և զբնութիւնն ապականէ. որպէս ասէ սուրբն դիոնէսիոս յերկրորդ ճառն որ «յաղագս երկնայնոց *քահանայեապետութեանց*»...: - 165. ...և **բ** Ակունք ուսոյն՝ կրկին կիսագունդք երկնից. ունելով **զզ** կենդանակերպս. և Վակաս լանջացն **բժ**ան ականբք նոյն կենդանակերպք ի լանջս երկնից Միթրն՝ պսակ *քահանայապետութեան*. և Թիթեղն՝ մտաց թեթևութեան: - 348. Զի այսպէս միատեսակ բնութեամբ խոստովանի ընդ մեզ և այլ ժողովուրդ ուղղափառաց ըստ ուսուցման մեծին դիոնիսեայ յերկրորդ գլուխն «եկեղեցական *քահանայապետութեանն*» ասել...: - 477. Պետրոս գլուխ է առաքելոցն. որպէս գրէ դիոնէսիոս ի **զ** գլուխն «եկեղեցական *քահանայապետութեան»:* - 546. Եւ համակա՛րգ է նոցա ըստ առաքելութեան և ըստ *քահանայապետութեան*. զի ամենայնքն համահաւասար զիշխանաութիւն առաքելութեան և *քահանայապետութեան* ունէին: - 546

**ՔԱՀԱՆԱՅԹԱՂԷՔ** - Եւ նոյն *զքահանայթաղէքն*, որ ունի **է** աւետարան. և զաշխարհական թաղումն, ի յայրարատ գաւառի ի վաղարշապատ քաղաքի ի վկայարանս սրբոյն հռիփսիմի. յետ **ճժա** ամի սրբոյն գրիգորի. զի մինչև ցայն հնովն վարեին: - 659

**ՔԱՀԱՆԱՅՈՒԹԻՒՆ +** Իններորդ՝ զի անփոխանո՛րդ էր *քահանայութիւն* նորա: - 50. Տասներորդ՝ զի յաստուծոյ էր կոչեցեալ նա ի *քահանայութիւն:* - 50. Զի՞նչ է շնորհքն. և զի՞նչ շնորհք *քահանայութեան:* - 102. Երկրորդ՝ մարդկան *քահանայութիւն* նիւթական խորհրդով ներգործի. որպէս հացիւ գինեաւ և

այլով. իսկ նոցայն աննիւթութեամբ կատարի: - 139. Երբեմն զզանազան պարգեւս հոգւոյն՝ զոր յաւազանէն տայ մարգարէութիւն *քահանայութիւն*՝ լեզւաց գիտութիւն...: - 140. Յաղագս այսորիկ կանոնեցին սուրբ հարքն վասն այնպիսեացն ո՛չ կատարել դարձեալ զկարգ *քահանայութեան:* - 165. Եւ եթէ ոք ասիցէ, եթէ պոռնիկն դարձեալ ի կարգ *քահանայութեան* ոչ մտանէ, ապա չեղեւ իսկապէս թողութիւն: - 165. Եօթներորդ՝ զի փչեաց ի նա զշնորհաց հոգին զանազան պարգեւաց, այժմ *զքահանայութեան* շնորհն երեւեցոյց ի նա՛: - 219. Քսանևմեկ, զի շնորհ *քահանայութեան* ընկալաւ: - 272. Մետասաներորդ՝ *քահանայութիւն:* - 279. Ի *քահանայութենէն*, զի ո՛չ իշխեաց պատարագ մատուցանել ի կեանս իւր: - 279. Երեսունևէ, Զանազանի հին և նոր օրէնք. և *քահանայութիւն* տեառն և հնոյն: - 284. Զի՞նչ զանազանի *քահանայութիւնն* մելքիսեդեկի և աբրահամու: - 300. Երեք շնորհօք հաւասարք են մելքիսեդեկ և աբրահամ. այսինքն *քահանայութեամբ*, թագաւորութեամբ, և մարգարէութեամբ: - 300. Զի յորժամ աբրահամ սեղան կանգնեաց, եցոյց *զքահանայութիւն:* - 300. Իններորդ՝ *քահանայութիւն* և պատարագն մելքիսեդեկի առաջին էր և երկնաւոր: - 301. Այսքան զանազանութիւն է *քահանայութեանն* մելքիսեդեկի և աբրահամու: - 301. Եւ ի ձեռն մովսէսի դարձեալ եղև գաւազան թագաւորական և *քահանայութեան:* - 332. Եւ **է** է աստիճան *քահանայութեան:* - 347. Նա՛խ՝ զի տղա՛յք էին և ի տե՛սն զուարճանային. որպէս խորանն և ա՛յլ սրբութիւնք. նոյնպէս և զգեստք *քահանայութեան:* - 347. Հինգերորդ՝ յօրինակ զգեստի նորս *քահանայութեան:* - 347. Զի՞նչ հասարակ և զի՞նչ յատուկ *քահանայութեան* տեառն մերոյ՝ և հնոյն *քահանայութեան:* - 354. Այս նոցա՛ է որք սրբութեամբ ունիցին *զքահանայութիւնն:* - 363. Եւ զգեստ *քահանայութեանն* ո՛չ այրեցաւ յօրինակ այժմոյս որ հոգւով դատապարտին և մարմինն մնայ: - 364. Քանի՞ են արատք արգելք *քահանայութեան:* - 370. Եօթներորդ՝ սապատողն. կուզն. կամ ելուստ ի թիկունքն. որ ո՛չ կրէ զբեռն *քահանայութեան* հպարտութեամբ: - 370. Ի նորս կրկին է *քահանայութիւն:* - 370. Ցուցանէ թէ՝ անկեալքն ի *քահանայութենէ*՝ հաղորդին ի ձեռս այլոց. այլ և հասի իրաւանցն: - 370. Եւ մինչ ի **կ** ա՛մն գործեն *զքահանայութիւնն* որպէս սուրբ հա՛րցն է կանոնեալ: - 379. Զի յեկեղեցի է դասք են *քահանայութեան:* - 380. Կորխ՝ յազգէ ղեւայ էր *զքահանայութիւնն* խնդրէր: - 381. Արդ *քահանայութիւնն* երկնային է. վասն այն կորխ յերկնից հրովն այրեցաւ: - 381. Դարձեալ, *քահանայութիւնն* կա՛րգ է հրեշտակաց. պա՛րտ է սրբութեամբ պահել: - 381. Երկրորդ՝ երկուքն ևս ահարօնի. զի բուրվառն ոսկի զմաքուր *քահանայութիւնն* ցուցանէ. և գաւազանն զիշխանութիւնն: - 382. Եւ զի հեղի ո՛չ խրատէր զնոսա սաստիւ և տանջանօք. վասն որոյ և ինքն պատժեցաւ և մեռաւ. և *քահանայութիւնն* յազգէ նորա փոխեցաւ յաւուրս սողոմոնի: - 425. Եւ զօծումն *քահանայութեան* ի թաբօր լերինն. ուր և հոգին սուրբ ամպ հովանի եղեւ. և հայր հաճութեամբ վկայեաց: - 474. Հինգերորդ, այլք ասեն թէ հայցեաց ինչ շնորհս *քահանայութեան* որ չէր անկ կանանց: - 517. Երեսունևդ, Կարգ *քահանայութեան* **է** է: - 526. Եւ թէ՝ «գնացէ՛ք աշակերտեցէ՛ք զամենայն հեթանոսս». որ է՛ իշխանութիւն *քահանայութեան:* - 546. Ուստի յա՛յտ է, զի առեալ էր *զքահանայութիւն*. և մկրտեալ զթագաւորն և լուսաւորեալ զազգս, և շինեալ եկեղեցիս: - 548. Առ աստիճանս այս պարունակի է խորհուրդ եկեղեցւոյ. որ է՛ Մկրտութիւնն. Դրոշմն. Պատարագն. Ապաշխարութիւնն. Կարգ *քահանայութեանն*. Պսակն. և Օծումն: - 573. Վեցերորդ կարգ *քահանայութեանն:* - 587. Եօթներորդ, զի մկրտելն է գործ քահանայի. և *քահանայութիւնն* է սպասաւորութիւն աստուծոյ...: - 589. Իններորդ, զի մկրտութիւնն է գործ *քահանայութեան*. և *քահանայութիւնն* է ազատ և ո՛չ ընդ ումեք հարկի ներքոյ. իսկ կինն ծառայ և ոտք է առն. վասն այսր հարկի ո՛չ է պարտ ծառային առնել զգործ տեառն...: - 589. ...ապա քանի՞ դատապարտութիւն է հրաման տալ նոցա և ի գործ *քահանայութեան* յանդգնիլ: - 590. Զի՞նչ է կարգ *քահանայութեան:* - 606. Եօթներորդ՝ *Քահանայութիւնն:* - 606. Իսկ թէ քահանայ ոք հանդիպի ի նոյն չարիս, մի՛ պաշտեսցէ *զքահանայութիւնն*...: - 652. ...և ապա՛ հրամանաւ եպիսկոպոսին պաշտեսցէ *զքահանայութիւնն:* - 652. Ութերորդ, ցուցանէ թէ իշխանութիւն *քահանայութեանն* անբաժանելի է ի նմանէ...: - 672-673. Եւ ապա՛ ի յարևմուտս. զի նստի ընդ արևմուտս որ է՛ մարդկային սրբութիւնս. և փառաց աթոռն *քահանայութեան* աստիճանս...: - 673. Նմանապէս և ո՛չ *զքահանայութիւն* կարէ քակել ի յանարժանէն: - 782. Շնորհք որ ի հինն զինչ և իցէ փոփոխական գոլով՝ օրինակ նորոյս էր. որպէս *քահանայութեան* և այլն: - 783

**ՔԱՀԱՆԱՅՕՐՀՆԷՔ - Իսկ վասն *քահանայօրհնէիցն*, սուրբն սահա՛կ է արարեալ. յառաջին ամի եպիսկոպոսութեան իւրոյ. ի նաւասարդի ամսեանն որ օր մի էր. և յիշատակ սուրբ կարապետին արար** *զքահանայօրհնէքն:* - 659

**ՔԱՂ +** Եւ ո՛չ այս կարէ լինիլ ի յերկուցն հատումն. այսինքն զի լիցի յաստուծոյ և արարածէն՝ և լինիլ մի էութիւն. որպէս ո՛չ է էութիւն եղջերուաքաղն որ յեղջերէ՛ և ի *քաղէ* ստեղծանի. ապա ուրեմն ո՛չ լինի էութիւն յարարչէն և յարարածէն: - 52

**ՔԱՂԱՔ +** Դարձեալ ասեն, եթէ ոչ է հարկ՝ ընդէ՛ր ոմն *քաղաք* կործանի և ոմանք ո՛չ...: - 12-13. Ասեմք առ այս, եթէ այսու վկայե՛ս և դու մեզ՝ թէ ո՛չ է հարկ. զի ի բոլոր *քաղաքն* այնքան բիւր մարդիկ՝ ծեր և տղայ՝ ե՛րբ և ո՛ւր ի մի շարժումն աստեղաց ծնան...: - 3. Առակի են նման, որպէս թէ ոք որ նախ զպարիսպ *քաղաքին* ինչ իցէ գիտենայ, և զպարսպէն ասէ ո՛չ գիտեմ: - 48. Եւ որք զայս ասեն՝ հետևին մոլորութեանցն պղատոնի մարմնափոփոխութեանցն. որ ասէ *քաղաք* ի յերկինս. և հոգիքն անդ ժողովեալ իբրև զզօր և զդասս: - 252. Վաքսունևէ, *Քաղաքացն* ապաստանի. և խորհուրդ նոցա: - 285. Յօրն անունն մելքի, և մօրն սաղա. և *քաղաքին* սաղիմ: - 300. Երկրորդ՝ զի **խ** *քաղաք* առին ի բենիամենէ՛ յուդայի ցեղքն վասն շնութեան կնոջն պատահելոյ. և կոտորեցին զնոսա առ հասարակ **իեռ** արս. և մնաց վեց հարիւր այր զոր յետոյ ստացան ժառանգութիւն իւրեանց. որպէս յա՛յտ է ի դատաւորաց վերջքն: - 312. Տպազիոն. կարմիր է. և գտանի ի տոպազէ՛ *քաղաք* ի հնդիկս: - 348. Եւ **խը** *քաղաք* ապաստանից տալ քահանայիցն: - 359. Այլ և արտաքոյ *քաղաքին* ի կողմն հիւսիսոյ: - 362. ...յայնժամ քակէ՛ զտունն մեր որ է՛ հոգի և մարմին. և արտաքոյ *քաղաքին* յանսուրբ տեղիս ընկենու որ է՛ դժոխքն արտաքոյ արքայութեանն, և անսուրբ տեղի մեղաց և մեղաւորաց. և անդ արտաքսէ զմեղաւորսն: - 368. Եւ նա՛ ծնաւ զեզն պարարակ. որ ողջակէզ եղև արտաքոյ *քաղաքին* ի դէմս տաճարին: - 383. Զի՞նչ նշանակէր *քաղաք* ապաստանաց: - 392. Վեց *քաղաքաց* հրամայեաց որոշել ապաստանի և տալ քահանայից. **գ** յերկիրն քանանու և **գ** յայնկոյս յորդանանու: - 392. Եւ այն որ քննէին ծերքն՝ խոստովանիլն է. և ապա՛ դնէին ի *քաղաքն*, ապաշխարութիւնն է: - 392. Դարձեալ՝ **խը** *քաղաք*՝ մեծ պաքնէ քառասնիցն: - 392. Եւ **զ** *քաղաք*՝ շաբաթապահքն: - 392. Եւ **գ** *քաղաք*՝ **գ** տեսակ ապաշխարութեան: - 392. Դարձեալ, եկեղեցի սուրբ՝ է՛ *քաղաք* ապաստանի. և քահանայապետ ի նմա՛ պատարագն. յոր մտեալ աղօթեմք և թողութիւն գտանեմք: - 392. Իսկ յետ մահու ա՛յնոցիկ հոգւոց որք զղջան կամ խոստովանին զմեղս, *քաղաք* ապաստանի է նոցա...: - 392. Երկրորդ՝ զի մի՛ զատեսցին ի ժողովրդենէն. այլ ի *քաղաքս* ապաստանաց սփռեսցին և ուսուսցեն զնոսա: - 417. Քսաննե՝ յեսու նախ սպան զթագաւորս, և *զքաղաքս* նոցա աւերեաց: - 419. Եւ զաղխեալ դուռն *քաղաքին* եդեալ ի յուսն եհան ի գլուխ լերինն: - 420. Երկրորդ՝ նշանակէր *զքաղաքն* երուսաղէմ. զի միայն ա՛նդ եղև մարգարէութիւն և օրէնքն. և սեղան աստուծոյ ի սիօն: - 421. Ա՛յն է որ կաղք և կոյրք ընդ դէմ դարձան դաւթի և անարգանօք ասէին՝ մի՛ մտցէ դաւիթ ի *քաղաքս*. որ նա՛ ինքն է երեսուղէմ. որ եղև տուն տեառն: - 431. Եւ յետ **բ** ամի՝ դարձեալ ել յերուսաղէմ, և **թ** ամ պաշարեաց *զքաղաքն* ի սով սաստիկ: - 447. Եւ եօթնից ժամանակաց փոփոխմամբ՝ է հասակաւ յեօթն դար կենցաղոյս՝ լինիմք տաճար և *քաղաք* քրիստոսի աստուծոյ մերոյ: - 448. Եւ յետ այնորիկ սպանցի օծեալն. և իրաւունք ո՛չ իցեն ի նմա. և *քաղաք* և սրբութիւն ապականեսցի: - 449. Եւ սա՛ շինէ զբեթլէհէմ *քաղաք* ի գետինս յուդայի: - 452. Իսկ ըստ ժողովման, որպէս եկեղեցի. և անձն. հոտ. կամ *քաղաք:* - 476. Նա՛խ՝ զի երևելի էր և ո՛չ անարգ ոք. որ և սակաւ ինչ յառաջ փառօք եմուտ ի *քաղաքն:* - 490. Երկրորդ՝ զի ի բարձր տեղւոջ էր ի թագաւորական *քաղաքի:* - 490. Ութերորդ՝ արին սամփսոն որ օրինա՛կ էր ամենազօր տեառն մերոյ, էջ ի գազա ի տիպ աշխարհի. և օթեցաւ ի պոռնկատունն յօրինակ դժոխոցն. յորում պաշարեցին *զքաղաքն* այլազգիքն: - 513. Զի արտաքս հանելով ցուցցէ ո՛չ ունել *քաղաք* որ աստէն մնալոց իցէ: - 519. Եւ տե՛ս, զի սիմէի որքան յամեաց ի *քաղաքն* ըստ հրամանի սողոմոնի ո՛չ մեռաւ զերիս ամս: - 540. Եւ յորժամ ել արտաքոյ *քաղաքին* թողեալ զկապանս սողոմոնի՝ սպանաւ: - 540. Երկրորդն է ժողովն թէոդուպօլսի, որ այժմ կոչի կարնոյ *քաղաք*. ո՛չ այն զոր յետոյ հերակլ քաղկեդոնիկ ժողովեաց և խաբեաց զեզր կաթուղիկոսն հայոց: - 544. Եւ սեպհական *քաղաք* է հայոց կեսարիա: - 548. զԹադէոս. և զԲարդուղիմէոս. և զՅուդայ յակոբեան. որ կայ ի յորմի. որ սեպհական *քաղաք* է հայոց: - 549. Հինգերորդ ըստ ուրին. թէ ուր գործեն զմեղքն. կամ ի վանք, կամ յեկեղեցի որ է տուն աստուծոյ. կամ ի գեօղ, կամ ի *քաղաք*, կամ ի պոռնկատուն: - 565. Երրորդն կառավարել *զքաղաքս* և զթագաւորութիւնս: - 580. Հինգերորդ դասք՝ Քահանայք. որք ի *քաղաքի* լինին, և որք ի վանորայս, և ի գեօղս երիցունք: - 608. Իսկ ի կիրակէի խնկարկելն և **ժ** օրհնութիւնն՝ նշանակէ զտասն *քաղաքացն* իշխանութիւն ունել. և **ժ** քանքարացն: - 628. Եւ տասն մնասն, և **ժ** *քաղաքաց* իշխել: - 640. Դարձեալ, **խը** *քաղաքն* ապաստանի, նշանակէ՛ զմեզ պահքն **խը** օր: - 653. Դարձեալ, **գ** յիսնեակն՝ **գ** *քաղաք* ապաստանաց ի քանանացւոց երկրին: - 653. Վեցերորդ՝ **զ** *քաղաքն* ապաստանի առանձին: - 653. ...զոր

արարեալ է սրբոյն եփրեմի խորհն ասորւոյ ի նիկոմիդացոց *քաղաքին:* - 658-659. Իսկ զքեմայ կարգն՝ սուրբն դիոդորոս եպիսկոպոս պամփիլացոց *քաղաքի*. յառաջին ամի իւրոյ. հրամանաւ մեծին անտօնի և **ք** թեքայեցոցն. և **ք** սկիւթացւոց լերինն: - 659. Եւ նոյն զքահանայթաղէքն, որ ունի է աւետարան. և զաշխարհական թաղումն, ի յայրարատ գաւառի ի վաղարշապատ *քաղաքի* ի վկայարանս սրբոյն հռիփսիմի. յետ **ծժա** ամի սրբոյն գրիգորի. զի մինչև ցայն հնովն վարեին: - 659. **Զի կենցաղս այս որպէս երկդռնի *քաղաք* է. ի մինն մտանեմք և ի միւսն ելանեմք**...: - 680. Դարձեալ, ի կիրակէ յարութեանն քրիստոսի տօնեմք. և յերկուշաբաթին՝ նոցա սրբոցն որք ընդ քրիստոսի յարեան և մտին ի *քաղաքն* սուրբ: - 684. Եւ այն է *քաղաք* աստուծոյ և վերին երուսաղէմ՝ և եկեղեցիք արդարոց ըստ պօղոսի: - 688. ...ըստ որում երեքօրեայ յարեաւ ի գերեզմանէն անապական մարմնով. և զբազումս յարոյց ընդ իւր և մտին ի *քաղաքն* սուրբ...: - 716. Որպէս յորժամ կայսր մտեալ ի *քաղաք*՝ թագ և այլ նշանք առաջի տարցին, որով գալուստ նորա ցուցանիցի: - 734. Որպէս ասեն երբեմն ժամանակի ի կոստանդնուպօլիս հռչակեալ *քաղաքի*, մոլորեալ յոյնք ի մոլորեալ երիտասարդէ՛ միոջէ՛, բարձին յեկեղեցւոյ զերգ երեքսրբենին: - 775

***ՔԱՂԱՔ ԲԵԹԱՆԻՈՅ*** - Վասն այն եհան զաշակերտսն արտաքոյ *քաղաքին բեթանիոյ:* - 519

***ՔԱՂԱՔ ԵՐՈՒՍԱՂԷՄ*** - Այս է՝ զի ի բանալ դրանն դղրդեցաւ *քաղաքն երուսաղէմ*...: - 638. Զի արտաքոյ երկնային *քաղաքին երուսաղէմի* է՛ տանջանաց տեղի, ուր մեղաւորքն ժողովին: - 748

***ՔԱՂԱՔ ՆԱԽԻՋԵՒԱՆ*** - Երրորդ՝ նշանն սրբոյն յակոբայ մծբնայ հայրապետին. և գեօղն արկուռի՝ ուր տնկեաց այգի. և *քաղաքն նախիջևան*, ուր ինքն նոյ հանգուցեալ է ի տապանի: - 295

**ՔԱՂԱՔԱԿԱՆ +** Դարձեալ, թէ է՛ հարկ՝ ո՛չ են իրաւունք դատաստանի և քննութիւն. և ո՛չ օրէնք *քաղաքական*. և ո՛չ արժանապէս հատուցմունք բարեաց և չարեաց. զի հարկն բռնադատեաց գործել զայս. հարկին եղիցին պատիւ և պատիժք. և ո՛չ մարդոյն: - 12. **Դարձեալ՝ մարդն է *քաղաքական* կենդանի. զի լինիցի համաքնակք և կարեկիցք և օգտակարք ի բարին**: - 274-275. Որ է՛ բարոյականն տնտեսականն և *քաղաքականն:* - 580. Դարձեալ կոչին և բարոյական և տնտեսական և *քաղաքական* առաքինութիւնք. որպէս ասացաւ ի վերոյ ի ճառս խոհեմութեան: - 582. Եւ բնական քննութեամբ նախ այսպէս եթէ՝ տեսանեմք ի *քաղաքական* օրէնս զի գոյ դատաստան. այսինքն բարեացն պատիւ և չարացն պատիժ...: - 715. Ոմանք ըստ *քաղաքական* օրինացն **ը** ասեն գոլ պատիժ: - 751

**ՔԱՂԱՔԱՑԻ +** ...և *քաղաքացիքն* նախ զարդարեն զինքեանս և զփողոցն և կան պատրաստ: - 646

**ՔԱՂԲԱՆ +** Նմանապէս և խունկ ծխելոյ **դ** էր: Ստաշխն. և *Քաղբան*. եղունգն. և Կնդրուկ: - 349

**ՔԱՂԴԷԱՑԻ +** Դարձեալ՝ ա՛յն է խառնակիլն, որ ի միոյ խոշոր լեզուէ *քաղդէացոցն* խառնակեցան և եղեն զանազանք: - 297. Ասեմք եթէ՝ *քաղդէացին* որ է՛ արապն. զի մնաց առ երեր և ո՛չ խառնակեցաւ: - 298. Եւ այս են **hբ** լեզուքն: ...*Քաղդէացիք:* - 298. Իսկ որ զդպրութիւն գիտէ և գրով վարի՝ **բժան** ազգ է. այսինքն Եբրայացիք. *Քաղդէացիք*. Ասորիք. Պարսիկք. Մարք. Հնդիկք...: Փիւնիկեցիք: - 299. Ականտ. զականտն չգտաք իրք ասացեալ նմա. զոսկե՛կն է դրել. և ասէ ոսկէգոյն զնա. և գտանի ի *քաղդէացիս:* - 348. Յերկոտասան ամին սեդեկիայ՝ նաբուգոդոնոսոր *քաղդէացի* էառ զերուսաղէմ և զտաճարն հրձիգ առնէ: - 453.

**ՔԱՂԵՔ** - Դարձեալ՝ *քաղեք* և յեսու. հին և նոր կտակարանք. որք զհանդերձեալսն մեզ պատմեն. և զյաղթելն անմարմին թշնամւոյն: - 380. Եւ դատաւորաց առաջինն Գոդոնիէլ որդի կենեզայ եղբայր *քաղեբայ* յազգէ յուդայ ամս **խ**. և այլազգիքն ամս **ժը**: - 420

**ՔԱՂԵՄ +** Այլ և *քաղի* ժամք և մասունքն. զի քաղոցի տասն ծմեռնամո՛ւտ է: - 200. Զորօրինակ՝ յորժամ մարդն մեռանի՝ ջերմութիւնն ի սիրտն ժողովի և ապա *քաղի:* - 209. *Քաղելով* գործելն այն է, որ **ժե** կանգուն հաւասար բարձրացոյց, զի մեծահասակ կենդանիքն հանգիցեն: - 293. Իսկ *քաղելով* գործելն, զի սկսեալ բնութիւնս մեր ի գլխոյն լայնանայ ի թիկունքն՝ և նրբի ի կրունկն, և բոլորեալ դարձեալ կատարի ի գլուխն: - 293. Նա՛խ՝ որպէս հատանեմք *քաղելով* զբանջարն և ապա՛ ուտեմք, նոյնպէս զենումք զկենդանին և ապա՛ ուտեմք: - 295. Եւ թէ շունչն *քաղի*, է՛ հեղձական մահ. ո՛չ է ուտելի: - 366. Եւ փոփոխումն ձայնից. և շարականաց *քաղելն:* - 527. Ձտարւոյն ոստն ջարդեն ի վերայ բնոյն. և որ աճէ՛ զայն *քաղեն* և հիւսեն. Պտղակորոյս որպէս ծիթենի: - 638. Զշարականն ո՞րպէս *քաղեմք:* - 641. Եւ յայնժամ զորոմն *քաղել* առ ի յայրել ի հուրն. և զցորեանն ի շտեմարանն ժողովել ի կեանս: - 693. Եւ տե՛ս յօրինակաց. զի չնչին գողութիւնն, զաքար իւր զարմիւքն քարկոծեաց. և կրկուտ *քաղելն* զայրին: - 745

**ՔԱՂԻՐԴ, ՔԱՂԻՐԹ (տեքստում նաև՝ ՔԱՂԵՐԹ) +** Նոյնպէս ընդ ներքին դուռն զաւելորդն արտաքս վտարէ ընդ աղիսն. և յայսմանէ ջրատեսակն ընդ ցնցուղ *քաղրթին* ի փալաբուշտն իջանէ և լինի մէզ: - 242. Եւ միջնատունն՝ *քաղերթն:* - 293. Իսկ ի լուր տրտմութեան՝ խուճապի մարմինն. և ի դառն մաղձոյն որ է՛ լեղին՝ հոսի ի բերան *քաղրդին*...: - 619-620

**ՔԱՂԿԵԴՈՆ** - Վեցերորդ վկայ ի ժողովոյն *քաղկեդոնի* զոր նոքա ընդունին և ո՛չ մեք...: - 64. Եւ է՛ ուրեք զի միաւորեն զանունն՝ մի քրիստոս՝ մի տէր՝ մի որդի՝ և մի անձն ասելով որպէս *քաղկեդոնի* թւի երկաբնակ ժողովոյն: - 87. Ա՛րդ՝ նո՛յն է եթէ ի բնութենէ բաժանեն, և եթէ յանձնէ յանձն ըստ նեստորի. և եթէ յանձնէ ի բնութիւն բաժանեն ըստ *քաղկեդոնի:* - 88. Դարձեալ գիտելի է, որք զքրիստոս բաժանեն յերկուս բնութիւնս. և յերկուս գործս սոյնպէս. զմինն աստուած՝ և զմիւսն մարդ. հզօր և տկար. և գործ մարդոյ և գործ աստուծոյ. որպէս աղանդն *քաղկեդոնի:* - 350. **Զոր ի ժողովն *քաղկեդոնի* հաստատեցին զսոյն տօն ի իեն դեկտեմբերի. պատճառելով թէ՝ ի հռօմ դարձի արեգական տօն կատարէին.** և փոխեաց զայն պետրոս տօնել արեգականն արդարութեան: - 482. Տե՛ս զի ի ժողովն եփեսոսի հասարակ ամենայն ազգ այսօր նաւակատիս առնէին մինչ ի ժողովն *քաղկեդոնի* ուր փոխեցան տօնք և պահք և դաւանութիւնք: - 509. Վասն որոյ զայս **գ** ժողովքս տիեզերական և միմեանց համաձայն ընդունիմք. այլ *զքաղկեդոնին* ո՛չ ընդունիմք. զի ընդ դէմ է առաջնոցն և քակտումն դաւանութեան տօնից կարգաց և կանոնաց ամենայնիւ: - 541. Եւ սուրբն յոհան օձնեցին զեզր կաթողիկոսին և զայլոցն որք թիւրեալք էին զկնի *քաղկեդոնի:* - 541. Հինգերորդ, յերկրորդ ամի թագաւորութեանն մարկիանոսի եղև ժողովն *քաղկեդոնի:* - 542. **Եւ յովսէփ փալանացի, և եզնակ կողբացի թարգմանիչք, դարձեալ էին յաթենայ և եկեալ ի կոստանդնուպօլիս. լուան զժողովոյն և գնացին ի *քաղկեդոն*. զի չէր յոյժ հեռի ի ճանապարհէն որով գային ի հայս**...: - 543. ...և նոքա զամենայն ինչ ծածկապէս տեղեկացան. զի ժողովեալքն ի *քաղկեդոն* ակն առին թագաւորին և կնոջ իւրոյ. և զարհուրեցան ի սպառնալեացն. և զնեստորի կարծիսն հաստատեցին. զերկու բնութիւնսն. և զ**բ** կամսն. և զ**բ** ներգործութիւնսն: - 543. **Եւ սուրբն սիմէոն սիւնակեացն այրեաց զթուղթն դաւանութեանն *քաղկեդոնի*՝ զոր գրեալ էր թագաւորն մարկիանոս աղաչանօք առ նա՛. և նզովեաց զթղտատարն որ էր թէոդորիտոս գլուխ ժողովոյն**: - 543. Եւ զայլ ամենայն որպիսութիւն չար ժողովոյն *քաղկեդոնի* գտցես ի պատմագիրս միխայէլի: - 543. Եւ ի նոյն ժամանակս ասի լեալ անիծեալ ժողովն *քաղկեդոնի:* - 544. ..**որ եզր եղև հաւատոյ ուղղութեան. և հրամանաւ հերակլի հաւանեցաւ ժողովոյն *քաղկեդոնի*. կացեալ զ կաթողիկոսք նոյն աղանդովն որ են այսոքիկ. Եզր. Մովսէս. Անաստաս. Իսրայէլ. Սահակ. Եղիա**: - 545. **Այլ զչար և զաստուածուրաց ժողովն *քաղկեդոնի* որ ի ձեռն մարկիանոսի և անիծելոյն պօղքերի՝ ո՛չ ընդունիմք. և զընդունօղսն նզովեմք**: - 547. Եւ **զճ** ամ աւելի՝ բազում ազգ Ֆռանկաց ո՛չ հնազանդեցան չար ժողովոյն *քաղկեդոնի:* - 547. Այսպէս և ամենայն ազգք քրիստոնէից զնոյն ունէին ճանապարհ դաւանութեան և աւանդութեան յառաքելոց անտի մինչ ի ժողովն *քաղկեդոնի*. և յետ անտի բաժանեցան ամենայն ազգք յամենայն իրս, որպէս յա՛յտ է յիւրաքանչիւր եկեղեցիս: - 551. Չորրորդ՝ ի ժողովոյն *քաղկեդոնի* խորշիլ. և այսոքիկ առ ասորիս: - 554. Այլ գիտելի է, զի ոմանք հետևօղք չար աղանդոյն *քաղկեդոնի* մոլորեալք ի ճշմարտութենէն՝ ջուր խառնեն յանապական բաժակ արեանն քրիստոսի: - 594. Սոքա *քաղկեդոնին* են. որք բաժանեն զբանն ի մարմնոյն. և զխաչեալն՝ մարդ սոսկ և տկար և մահկանացու խոստովանին: - 635

**ՔԱՂԿԵԴՈՆԻԿ** - Եօթներորդ՝ Վասն է՞ր ուրանան *քաղկեդոնիկք* զբնութեամբ միաւորութիւնն: - 30. Ըստ այսմ օրինակի և նոր հերձուածօղք *քաղկեդոնիկք* նեռին կարապետք. հետևօղք նեստորի անիծելոյ՝ և լևոնի պղծոյ: - 34. Եօթներորդ՝ վկայ դամասկացին որ ասէ. որ և նա ևս *քաղկեդոնիկ* է. եթէ յայտնապէս զհոգին սուրբ ի հօրէ՛ ասեմք. և զնա հոգի հօր անւանեմք: - 64-65. Վասն է՞ր *քաղկեդոնիկքն* և նեստորականքն ուրանան զբնութեամբ միաւորութիւնն. այլ անձամբ միայն և յատկութեամբ ասեն: - 76. Եւ ոմանք մասամբ և բաժանեալ. որպէս *քաղկեդոնիկքն* ասեն: - 77. Եւ ոմանք որպէս *քաղկեդոնիկքն*՝ մի անձն համբաւեն, և յերկու բնութիւնս բաժանեն զմի քրիստոսն. և **բ** կամք. և **բ** գործք. որպէս անիծեալն լևոն. և փլաբիանոս, և ընկերք նոցա: - 82. Իսկ ոմանք զքրիստոսէ՛ ասեն բնութեամբ և շնորհօք որդի. որպէս նեստորք և *քաղկեդոնիկք* անիծեալք...: - 402. Երկրորդն է ժողովն թէոդուպօլսի, որ այժմ կոչի կարնոյ քաղաք. ո՛չ այն զոր յետոյ հերակլ *քաղկեդոնիկ* ժողովեաց և խաբեաց զեզր կաթուղիկոսն հայոց: - 544. Իսկ որք ոչ միաւորեն, բաժան և որիշ նշանակեն զբանն ի մարմնոյ իւրմէ. որպէս երկաբնակքն *քաղկեդոնիկք:* - 598

**ՔԱՂՈՑ +** *Քաղոց*. զի արծակի խոյն ի հօտն ըստ հանճարեղ արանցն: - 200. Այլ և քաղի ժամք և մասունքն. զի *քաղոցի* տասն ծմեռնամուտ է: - 200

**ՔԱՂՑ +** Այսինքն երկնչելովն՝ զերկիւղն իմ. *քաղցիւն* *զքաղցն*. վաստակելովն՝ զքիրտն. նմանապէս և զայլսն իմասցիս: - 42. *Զքաղցն* զճարաւն՝ մարդո՛յն ասեն: - 85. Երկրորդ, *քաղց* և ծարաւ և առանց վաստակոց: - 393. Երկրորդ՝ *քաղց* և ծարաւ մեղաւորաց. և առանց վաստակելոյ և գործելոյ: - 393. Եւ է՛ բնականն կիրք, որպէս *քաղց*. ծարաւ. ննջել. աշխատիլ. և այլն: - 496. Որպէս *քաղցն* և ծարաւն: - 502. Ա՛յս է *քաղցն* որ կշտումն ո՛չ ունի: - 570. ...այսինքն Աղքատութիւն հոգւոյ. Սուգ. Հեզութիւն. *Քաղց* արդարութեան. Ողորմածութիւն. Սրբութիւն սրտի. և Խաղաղութիւն: - 583. *Քաղց* արդարութեանն զծուլութիւն: - 583. *Քաղց* է ըստ մարմնոյ՝ թերութիւն ստամոքսի. իսկ ծարաւ՝ տապութիւն ջերմութեանն: - 584. Եւ *քաղց* արդարութեան է սաստիկ տենչումն արդարութեան. կամ ծայրագոյն բարւոյն: - 584. Ա՛րդ՝ *քաղց* արդարութեան է առաւել երանութիւն քան *զքաղց* այլոց մակստացական առաքինութեանց: - 584. Իսկ առաջին պակասութիւն է մարմնոյն աստ՝ զի է՛ մահկանացու՝ յապականացու՝ և չարչարելի. որպէս *քաղցն* ծարաւն՝ հիւանդանալն և այլն...: - 722. Ոմանք ասեն պակասութիւն *զքաղց* և զծարաւ՝ զերկիւղ և զայլն. որք են պակասականք բնութեան զորս կրեաց քրիստոս...: - 781

**ՔԱՂՑԿԵՂ +** Քանի՞ են արատք արգելք քահանայութեան: ...Մետասաներորդ՝ *քաղցկեղ*. որ զայլս փոխէ՛ ի մեղս: - 370

**ՔԱՂՑՆՈՒՄ +** Նոյնպէս և զկիրսն և զզօրութիւնսն անբաժանաբա՛ր ասեմք ի քրիստոս. որպէս Կիրք է *քաղցնուլն*. և Ներգործութիւն զհազարսն կերակրել: - 85. Միսն տաք է և ջիլն հով. զի ջիլն ձկտի յորժամ յագենայ. և կծկի յորժամ *քաղցենայ:* - 242. Քարշողականն է՝ յորժամ կծկի և *քաղցի*, ներքուստ և արտաքուստ խնդրէ կերակուր: - 242. Երկրորդ՝ զոր ախորժակն ունի զկարօտութիւն՝ զա՛յն տեսանէ. որպէս *քաղցեալն* զկերակուր. և ծարաւն զջուր: - 268. Եօթներորդ՝ մելքիսեդեկ ինքնին մատոյց զպատարագն *քաղցելոց* և ծարաւելոց. որպէս և քրիստոս ո՛չ միջնորդօք հրեշտակաց կամ մարդկան, այլ ինքնին բաշխեաց զմարմին և զարիւն իւր՝ *քաղցեալ* և ծարաւեալ ազգի: - 301. Նոյնպէս և մեք աստէն *քաղցեալ* եմք բանիւ մինչ ա՛նդր երթիցուք, և ապա անդ զկրկին զգեստն զգեցցուք. այսինքն զփառս հոգւոյ և մարմնոյ: - 314. Ուստի յա՛յտ է զի յորժամ կամէր՝ *քաղցնոյր* և ծարաւէր: - 501. ...զի զկերակուրն ի հարկաւոր ժամանակին պարտ է ուտել. այսինքն որ *քաղցեալ* լինի. այլ ո՛չ յամենայն ժամ որ յագեալ լինի: - 570. ...**ա**՝ կերակրել *զքաղցեալս*...: - 585

**ՔԱՂՑՐ +** Երրորդ՝ որ է՛ ինքն բարի, և պատճառէ՛ զայլ բարի. զորօրինակ՝ որպէս *քաղցր* դեղն պատճառէ՛ զառողջութիւն: - 160. Իսկ Որակ կոչի, որպէս բարի, լոյս, *քաղցր*, և գեղեցիկ: - 171. Իններորդ՝ դառն ջուրն ի մէջ ամպոյն փոխի *քաղցր* և ախորժելի: - 206. Երկրորդ՝ ասէ արիստոտէլ՝ թէ ջերմութիւն լուսաւորացդ և տարրական հրոյն և օդոյն մտանեն ի ծովն և քարշեն ի նմանէ *զքաղցր* և զպարզ հիւթն. և մնացեալն լինի դառն և աղի: - 208. Ջուրք ծովուն աղի են. վասն է՞ր աղբերք և գետք որ առ մեզ բղխեն՝ *քաղցր* են: - 208. Ջուրք ծո՛վուց ընդ մէջ երկրի անցանեն և պարզին ի ժանկոյն և ի դառնութեանցն. զի երկիր և աւազք զդառնութիւնն յինքեանս քարշեն, և մնայ *քաղցր* ջուրն: - 208. Աղի, և դառն՝ *քաղցր*, և հոտած: - 240. Եւ *քաղցր* ջուրն է ի բերանն վասն առնելոյ զճաշակ համոցն: - 240. Զդառնութիւնն ի լեղին. և զհոտածն յերիկամունքն. և զմրուրն և զթթուն ի փայծեղն. և *զքաղցր* արիւնն ի սիրտն. և սիրտն երակովն և շնչովն բաժանէ ի բոլոր մարմինն: - 242. Վասն է՞ր բերանն մարդոյն երբեմն *քաղցր* լինի. երբեմն դառն. և թթու. և այլ ինչ: - 242. ...իսկ թէ պալղամն մնայ ի լեարդն, բերանն աղի փոխի. իսկ թէ յըստակ արիւնն մնայ ի լեարդն, լերդին համն անոյշ լինի, և բերանոյն համն անուշ տայ և *քաղցր:* - 242-243. Վասն է՞ր մի ջուրն ի բերանն *քաղցր* լինի, և յաչքն աղի. յունչն հոտեալ. և յականջն դառն: - 243. Ի լերդէն ջուր բերանոյն *քաղցր*. զի զամենայն համս առցէ: - 243. Ի բերանն *քաղցր*. զի զամենայն բան *քաղցր* խօսեսցի: - 243. Եւ էր ինքն բոլոր և սպիտակ նման գնծի. և *քաղցր* որպէս զմեղր: - 338. Երրորդ, *քաղցր* է և փափագելի. զի զամենայն ինչ որ բարի է ի ստեղծւածս՝ օրինակ տամք ստեղծողին: - 338. Որպէս լոյս, գեղեցիկ, *քաղցր*, և այլն: - 338. Չորրորդ՝ *քաղցր* համն. զի քաղցրանայ ի մեզ դառնութիւն մեղաց: - 339. Հինգերորդ, նոցա ծայնն որոտմամբ ահագին. և մեզ բանն հանդարտ և *քաղցր:* - 354. Իսկ Թուղն *քաղցր* և մանրակորիզ. բանքն աստուծոյ *քա՛ղցր* են ի մեզ և մանրաքնին: - 381. Ութերորդ՝ նա՛ ի դառնացողէն *քաղցր* կերակուր առեալ...: - 422. Եւ տէր մեր ի սպանօղ մարմնոյս որ է՛ պատառօղ հոգւոյս, սպանելով զսա՛ գտանէր *զքաղցր* կեանս տալ որդւոց

մարդկան ազգի: - 422. Իններորդ՝ եւ զխորհիսխ *քաղցր* հօր և մօր իւրոյ ի ճաշակ: - 422. Եւ որք գիտեն զտնօրէնութիւն փրկչին, զգեցցին զփրկութիւն Նորին. զի Նա՛ է հզօրն յորմէ ել կերակուր *քաղցր:* - 422. Երրորդն *զքաղցր* մարդասիրութիւնն: - 465. *Քաղցր* դառնութիւն: - 570. Այլ և տարակո՛յս է թէ՝ վասն է՞ր տրտմութեան արտասուքն դառն է, և ուրախութեան *քաղցր:* - 619. Եւ ի հիւթոյն յայնմանէ ելեալ ի գլուխն լինի արտօսր *քաղցր* վասն քաղցրութեան լերդին: - 619. Երրորդ՝ զի *քաղցր* ձայնիւ հեշտացեալ մարդիկ՝ զանխլաբար ուսցին զհոգւոյն բանս: - 641. Խորան ասեն աջակողմ և ձախակողմ. այսինքն ի *քաղցր* հայեցողութիւնն քրիստոսի որ է աջ. և ի դառն և ահաւոր որ է՛ ձախ: - 686. Եւ այնպիսի *քաղցր* է տեսութիւնն աստուծոյ...: - 763. Որպէս ասեն վարդապետք, լցեալ առ ժամայն ամենայն անոյշ և *քաղցր* ուրախութեամբ, տեսանեն զմարդն մարդկան արարիչ: - 763. Թէ զիա՞րդ և որ ի ծիծաղելոյն արտասուքն *քաղցր.* և ի սրտմտութենէն աղի: - 786

**ՔԱՂՑՐԱԲԱՆՈՒԹԻՒՆ +** Տասներորդ՝ նեռն քարոզութեամբ պատրէ՝ և ուրական սքանչելեօք. և այլն. և սոքա *քաղցրաբանութեամբ* և օրհնութեամբ պատրեն զմիտս անմեղաց...: - 35

**ՔԱՂՑՐԱԳՈՅՆ +** Նոյնպէս և երբեմն յուզել ուրախութեանց. ի փեռեկեալ թոքոյ ի կոտորումն շնչոյն, ի թաղանթէ՛ որ առ լերդաւն՝ հիւթ ինչ ծաւալի առ նոյն ասացեալ տեղի. ելեալ գոլորշեացն նմանապէս առաջնոյն. և լինի *քաղցրագոյն* արտօսր. վասն ասացեալ հիւթոյն ի քաղցրորակն անօթոյ: - 787

**ՔԱՂՑՐԱՁԱՅՆ +** Իսկ քնարն Նախ նշանակէ՛ *զքաղցրաձայն* երգս փառաբանութեանն աստուծոյ: - 713

**ՔԱՂՑՐԱՆԱՄ +** Չորրորդ՝ քաղցր համն. զի *քաղցրանայ* ի մեզ դառնութիւն մեղաց: - 339

**ՔԱՂՑՐԱՊԷՍ +** Վասն չորրորդին, որք աստ ժահահոտ նեխութեամբ պոռնկութեանն *քաղցրապէս* փափկանային. արդարապէս անդ դառնապէս տանջին: - 752

**ՔԱՂՑՐԱՏԵՍ** - Ապա յա՛յտ է յասացելոցս թէ՝ քրիստոս երևեսցի արդարոցն *քաղցրատես*, և մեղաւորացն դառնակերպ. որ նշանակեցաւ ի սիւն ամպոյն ի տուէ և ի հուրն ի գիշերի: - 741

**ՔԱՂՑՐԱՑՈՒՑԱՆԵՄ +** Վեցերորդ, մովսէս զդառն ջուրն *քաղցրացոյց* և զգետն յարիւն դարձոյց: - 328. Եւ տէր մեր զհայր ի յերկինս և զմայր ի յերկրի *քաղցրացոյց* փրկութեամբ մարդկան: - 422. Եւ փայտն որ *քաղցրացոյց* զջուրն ի մեռայն. և ի վիմէն ջուր բղխեցոյց: - 494. Սա՛ է ջուրն յաղեալ. որ զդառնութիւն ջուրցն այնցիկ որք գտանին ի մեռայն՝ *քաղցրացոյց:* - 756

**ՔԱՂՑՐՈՐԱԿ +** Որ և յարազուարճ բարերջանկութեամբ լի և ամենազան *քաղցրորակ* պտղաւէտութեամբ տնկեսցիս ծառ բարձրաբերձ յընթացս հոգւոյն ի մէջ եկեղեցւոյ տանս թորգոմեան ազգիս հայկազնեան: - 558. Նոյնպէս և երբեմն յուզել ուրախութեանց. ի փեռեկեալ թոքոյ ի կոտորումն շնչոյն, ի թաղանթէ՛ որ առ լերդաւն՝ հիւթ ինչ ծաւալի առ նոյն ասացեալ տեղի. ելեալ գոլորշեացն նմանապէս առաջնոյն. և լինի քաղցրագոյն արտօսր. վասն ասացեալ հիւթոյն ի *քաղցրորակն* անօթոյ: - 787

**ՔԱՂՑՐՈՒԹԻՒՆ +** ...ո՛չ յամեաց. և ո՛չ ի յաւիտենական *քաղցրութենէն* ճաշակեաց. վասն որոյ ո՛չ երանեցաւ և ո՛չ մնաց ի բարութեան: - 147. Իններորդ՝ ի դառնութենէ ի *քաղցրութիւն* փոխի ընդ երակս երկրի: - 207. Դարձեալ՝ հաճճարովն ճանաչեմք զաստուած. այլ իմաստութեամբն ճանաչեմք *զքաղցրութիւն* նորա: - 270. Իսկ պատուիրանքն՝ բարեկամի առ բարեկամս *քաղցրութեամբ*. որպէս հօր առ որդիս. և եղբօր առ եղբարս: - 277. Եւ ուրեք զսէր և *քաղցրութիւն* պատուիրել ասէ. որպէս ադամայ պատուիրեաց: - 277. Երկրորդ՝ ի նշան *քաղցրութեանն* յորայ. ուստի իջանեն անձրևք: - 326. Նա՛խ՝ զի երևեսցի *քաղցրութիւնն* աստուծոյ ի վերայ իսրայէլի: - 339. Դարձեալ՝ բազմազա՛նք են առաքինութիւնքն ի մեզ հանդերձ *քաղցրութեամբն:* - 381. Եւ սա՛ բղխէ զկաթն և զմեղր. որ է՛ *քաղցրութիւն* և թողութիւն մեղաց. նոյնպէս և զծ բանեան օրէնս: - 395. Նա՛խ՝ զի հեզութեամբ և *քաղցրութեամբ* մեծարեաց զնա զի մի՛ սովեսցի և մեռցի: - 443. Երրորդ ասի ողորմութիւն, իբր թէ զարմանալի իմն *քաղցրութեամբ* ոռոգել զսիրտս: - 459. Երրորդ՝ համակ հանապազորդ ներգործական դարձումն բոլոր մարդոյն առ աստուած. որով մարդն աստուածային *քաղցրութեամբն* զմայլի...: - 462. Երրորդ՝ թէ ո՞րպէս *քաղցրութեամբ* զօրացոյց զնա ասելով «մի՛ երկնչիր մա՛րիամ»: - 465. Դարձեալ՝ ի չարչարանքն քրիստոսի ծանիր ը *քաղցրութիւնս:* - 489. Քացախ և լեղի արբնու *քաղցրութիւնն:* - 491. Զի թէպէտ անպատեհ է ասել զբարկութիւնն առ աստուած զի անփոփոխելի *քաղցրութիւն* է...: - 569. Դարձեալ՝ կատարեալ սէր է, յորժամ է ունակութեամբ մեծ. ներքին շարժմամբն ուղիղ. արտաքին գործքն ժիր. արմատովն հաստատեալ. ջերմ եռանդութեամբն խոհեմ. և *քաղցրութեամբն* մխիթարական: - 576. Եւ ի նոյն ճառն ուր թուէ ը *քաղցրութիւնս* չարչարանցն քրիստոսի, զչորրորդն ասէ՝ ելումն արեան և ջրոյն ի լուացումն մեր: - 594-595. Եւ ի հիւթոյն յայնմանէ ելեալ ի գլուխն լինի

արտօսր քաղցր վասն *քաղցրութեան* լերդին: - 619. ...և *քաղցրութիւն* և թեթևութիւնն ի մարմինն փոխի: - 718. Որում համեմատեալ այլ ուստէք ամենայն հրճուանք տրտմութիւն է ...ամենայն *քաղցրութիւն* դառնութիւն...: - 762. Զի նւազունք են ամենայն փափկութիւնք որ լինին յաշխարհի մինչև ցօրն դատաստանի, բաղդատեալ առ այն *քաղցրութիւն*. որպէս կաթիլ մի ջրոյ առ համեմատութիւն ընդ հանուր ծովու: - 762. Զի թէ աստուածային բարութեանց շաւղացն շաւիղք այս քան ունին *քաղցրութիւնս*, զի՞նչ ունի ինքն աղբիւրն անուշութեան աստուած: - 762. Եւ վա՛յ է թշնամեացն աստուծոյ. որք զշիթսն զայնս յերկրի լիզեն և զաղբիւրն *քաղցրութեան* արհամարհեն: - 762. Այլ ո՛չ թէ ողորմութիւնն աստուծոյ հետևի ժամանակի, այլ *քաղցրութեան* կամացն: - 780. Այլ մեք հետևելով ժամանակի՝ գտցուք զողորմութիւն ի *քաղցրութեան* կամաց: - 780

**ՔԱՄ** - Հայկն յաբեթի. և Բէլն ի *քամայ* որսորդ նոցա: - 297. Անունք Նախահարցն: ...*Քամ* իշխեցող: - 299

**ՔԱՄԱՀԵՄ +** Ապա թէ *քամահելով* և նախանձու զանց առնէ, մահու չափ է: - 620

**ՔԱՄԵՄ +** Եւ այն զի *քամեալ* լցաւ կուրն և ո՛չ երկիր. զի մնացին և կատարեցան բանք մարգարէիցն ամենայն և ո՛չ եղծան. իսկ յետոյ հոգի տեառն ելից զտիեզերս մարգարէութեամբ և շնորհօքն քրիստոսի: - 421

**ՔԱՅԼ +** Զոր ոմանք **լ** ստադիոն ասեն զբարձրութիւնն և զլայնութիւնն շուրջանակի **խդռ** *քայլք*. այսինքն **խդ** մղոն ձգեալ ասի: - 297

**ՔԱՆ +** Ասեմք առ այս, եթէ՝ ամենայն ինչ որ լինի՝ ունի պատճառ. և նախ է պատճառն *քան* զպատճառելին...: - 10. Արդ՝ նա՛խէ որ բաղկացոյցն՝ *քան* զոր բաղկացաւն: - 20. Զի գերազանց է անպատճառ և անսահման գոլն աստուծոյ՝ *քան* այլոց: - 24. Ա՛րդ՝ բազում աւուրք անցին յետ մէսիային ձերոյ, այսինքն աւելի՛ *քան* զհազար և չորս հարիւր ամ. ապա և ո՛չ էր նա մէսիայն: - 27. Եօթներորդ՝ Հայր իմ մեծ *քան* զիս. և պատասխանիք նոցա **ը** գլխով: - 29. Նոյնպէս զիմանալի խորհուրդս և զգիտութիւնս զոր տկարանայ միտք, կարողանայ հաւատքն տեսանել. այլ ո՛չ ունի հաւատ՝ *քան* զտեսութիւն մտացն: - 31. ...զի կարծեն զինքեանս ճշմարիտ գոլ *քան* զայլսն: - 33. Եւ որպէս ասեն վարդապետք՝ *քան* զամենայն մեղս ծանրագոյն գոլ զպաշտօն կռոցն վասն երկուց: - 33. Որ է տարակուսանք այս, եթէ գոյր ոմն մեծ *քան* զհայր՝ զի բռնադատեաց զնա՛: - 36. Եւ ի սկզբանն ասելով, ո՛չ յետոյ *քան* զհայր գոլ: - 37. Իսկ դուք զի ուրանայք զհոգին հաւասար գոլ հօր և որդւոյ, և կրտսե՛ր ասէք *քան* զորդի: - 39. Եւ թէ հայր մեծ է *քան* զորդի, զիա՞րդ տանի փոքրն զմեծն: - 39. Եւ զի ո՛չ է հնար որպէս ասացի, ապա ուրեմն ո՛չ է մեծ հայր *քան* զորդի...: - 39. Դարձեալ ո՛չ ասի անպատճառ պատճառն *քան* զպատճառելին մեծ...: - 39. Դարձեալ ասի մեծ բանն աստուած *քան* զմարդկային բնութիւնս: - 39. Դարձեալ քննեսցուք ըստ մեզ. զի ո՛չ են հակառակ առաքելոյն բանն և աւետարանին, թէ հայր մեծ է *քան* զորդի ...և անտեսանելին տեսանիւր՝ և ծառայի կերպիւ շրջէր վասն տնօրէնութեան՝ ասի փոքր յայս միաւորութեանս *քան* զհայր. իսկ ըստ այնմ որ է՛ անճառ և նախքան զյաւիտեանս ծնունդ ի հօրէ՛, հաւասա՛ր է հօր և ոչ փոքր: - 40. Զի ո՛չ էր հայր մեծ *քան* զնա՝ ի յոր երդնոյր. զի որք երդնուն՝ ի մեծագոյնսն *քան* զինքեանս երդնուն...: - 40. Ութերորդ հարցումն արիանոսացն, զի ասէ սօղոմոն՝ «տէր ստացաւ զիս ի սկիզբն ճանապարհաց իւրոց յամենայն գործս իւր». և զի յառաջ էր *քան* զմարմնական ծնունդն քրիստոսի բազում ամօք. ապա ուրեմն զառաջին լինելութիւնն ասէ ստեղծուած *քան* զամենայն եղելոց ասեն: - 40. Եւ թէ գոյր երիցագոյն, լինէր պատճառն և գերագոյն *քան* զաստուած. իսկ ստեղծանելն երևի պատճառաւ. այսինքն վասն փրկութեան մարդկան: - 41. Այլ զայս երկբայիս յաղագս ոչ գիտելոյ քոյ թէ «մինչդ» ամենուրէք ո՛չ որոշէ ընդդէմ հանդերձելոյն. զի թէպէտ նշանակէ՛ զկէտն ուր մինչն է եղեալ, այլ զոր ա՛նդր է *քան* զնա՝ ո՛չ ուրանայ: - 42. Թուի թէ նուազ է *քան* զհայր. զի ոչ ունէր և տւաւ: - 46. Ոչ թէ նւաստ է *քան* զհայր, կամ ծառայաբար ծունր կրկնելով բարեխօսէ՛: - 48. Բայց թըւի թէ՝ էն և Աստուածն մերձ է աստուծոյ բնութեանն *քան* զայլսն: - 49. Եօթներորդ՝ նախ *քան* զխաչն, որ ետ զօրութիւն առաքելոցն: - 50. Բայց ո՛չ ծնեալ ասեմք՝ և ո՛չ անծին. այլ արտաքս առաքեալ ի հօրէ. որպէս վկայէ քրիստոս թէ՝ «հոգին որ ի հօրէ՛ ելանէ». թերևս ճշմարիտ աստուածաբա՛ն իցէ *քան* զքեզ: - 52. Նաև մարդիկ ո՛չ միայն զի ի բազմաց են գոյացեալ, այլ և ժամանակաւ առաւելք մի *քան* զմի. և կամօք բաժանեալք և ի միմեանց և իրերաց հակառակք: - 54. Նաև ի կանոն երից սուրբ ժողովոցն՝ ընդ բանիւ արգելեալք կան նոքա՝ որ ա՛յլ կերպիւ քարոզեն և այլ կերպիւ ուսուցանեն *քան* զոր նոքա ուսուցանեն: - 64. Եւ թէ և նա՛ է բնակարան, ապա ո՛չ ինչ ունի *քան* զմեզ առաւել: - 66. Զի թէ զաստուծոյն միայն՝ անկար ի յարիոսին. զի զբանն առանձին քրիստոս ասացեր. այսինքն օծեալ և սրբեալ ի հօրէ. յորմէ

իմանի պակաս գոլ *քան* զհայր: - 68-69. Եւ այն զի ո՛չ ինչ ունի մինն ըստ լաւագոյն ոչ իբրեւ *քան* զերկուքն, և ո՛չ երկուքն առաւել քան զմին, բաց յառանձնութեանցն: - 74. Այն որ ընդ լաւաստացոյց զինքն ի յունայնութիւն մարդկան, եղև ի կերպ ծառայի՝ և գործով և կրիւք և նմանութեամբ մարդկան. և կերպարանօք գտաւ մարդ. զի ի վեր էր քան զմարդ՝ և *քան* զկերպարան մարդոյ: - 93. Եւ դարձեալ՝ եթէ շնորհօք որդի և օծեալ, և ո՛չ աւելի նա *քան* զմեզ. զի և մեք չեմք ծառայ, այլ՝ որդի: - 94. Ա՛րդ՝ եթէ տգէ՛տ է որդին աստուծոյ հօր, և տգէտ որդւով խօսեցաւ ընդ մեզ. տգիտութեան եղիցի և օրէնքս նոր *քան* զհինն: - 96. Ա՛րդ՝ եթէ յայտնեաց զինքն աշակերտաց իւրոց. և մարդկութեան իւրոյ ո՛չ յայտնեաց, եղիցի ինքն տգէտ *քան* զաշակերտսն իւր. և կամ ոչ ինչ յայտնեաց զոր ինքն ո՛չ գիտաց: - 96-97. Ա՛րդ՝ եթէ՝ ի յարութեանն հասարակ արդարք տեսանեն զաստուած դէմ յանդիման որպէս և է, և քրիստոս ո՛չ կարէ տեսանել, փո՛քր լինի գիտութեամբ *քան* զմարդ որ է սուտ: - 99. Արդ՝ եթէ առաքեալքն որ բնակարանք են հոգւոյն՝ ճանաչեն զհոգին աստուած, և մարդկութիւնն քրիստոսի ո՛չ ճանաչէ, փոքր *քան* զբնակարանքն եղիցի քրիստոս: - 99. Ա՛րդ՝ եթէ հրեշտակք տեսանեն զբանն աստուած՝ և առնուն գիտութիւն ի նմանէ, և մարդն քրիստոս ո՛չ տեսանէ որպէս ասես նեստո՛րդ, ապա քրիստոս փո՛քր է գիտութեամբ *քան* զհրեշտակս: - 99. Դարձեալ՝ զգայութեամբ ծանօթանամք որ արտաքոյ *քան* զմեզ: - 103. Իսկ յատուկ այլ է երիցն. և երկուքն աւելի՛. և նւազ *քան* զմինն: - 104. Եւ դարձեալ՝ զի կարողութիւնն նախ է *քան* զիմաստութիւնն. և իմաստութիւնն նա՛խ է *քան* զբարութիւնն: - 105. Երկրորդ՝ յերեք թիւն մինն պակաս ունի *քան* զերկուքն. և երկուքն աւելի *քան* զմինն: - 108. Իսկ ի սուրբ Երրորդութիւնն՝ մինն պակաս չունի *քան* զերկուքն. և ո՛չ երկուքն աւելի *քան* զմինն. զի հայր ունի զամենայն լիութիւն որդւոյ և հոգւոյ: - 108. Երրորդ՝ զի մին թիւն անկատա՛ր է *քան* զերկուքն. և երկուքն *քան* զերեքն: - 108. Քանզի՝ որդի նմանագո՛յն է հօր *քան* զդուստր: - 109. Մին՝ զի նա՛խ է *քան* զամենայն գոյ. թէ սկիզբն և թէ էութիւն: - 111. Զի անդրանիկ է էն անուն՝ *քան* զամենայն բարի և ազնիւ և այլն. վասն որոյ ասաց մովսէսի՝ «ես եմ որ էնն»: - 111. Երկրորդ՝ զի նախ է *քան* զամենայն յաւիտեանս. և *քան* զժամանակ. և *քան* զամենայն օր: - 115. Երրորդ՝ այսպէս մեկնեն, եթէ հին աւուրց զնախնի ժամանակս նշանակէ. և մանուկն զնախնի թիւն. զի միակն սկիզբն է ամենայն թւոց. և որ մերձ է միակին՝ սկզբնապետագո՛յն է *քան* զհեռագոյնն: - 115. Որպէս յորժամ ասեմք անբան և յիմարութիւն, գերագոյն ունիլ զբան և զիմաստութիւն *քան* զմերս: - 118. Զի աստուած նախ քան զգործն՝ և յառաջ քան զկամիլն՝ և նախ *քան* զէանալն տեսանէ...: - 118. Հինգերորդ՝ զի ընդարձակի բանս մեր *քան* զամենայն ինչ...: - 121. Եւ է սա՛ առաջին. զի զոր նա՛խ է *քան* զյաւիտեանս և զժամանակս՝ աստուածաբանէ՛ և քննէ՛: - 122. Հնգետասաներորդ՝ նա՛խ է տեսակն *քան* զնիւթն անի բաց դնելի: - 126. Ութևժերորդ՝ բազմապատիկ մեծ է *քան* զերկիր. և փո՛քր քանակով ցուցանի: - 127. Սակայն ըստ մեր իմացմանս հասարակ է բարին *քան* զսէրն...: - 128-129. Այլ ի ստեղծումն էիցս՝ սէրն առաջին է *քան* զբարին. զի ի սիրո՛յ շարժեցաւ յառաջ բարերարել և խնամել: - 129. **Բարձրութիւն իմաստութիւնն է. որ գերազա՛նց է *քան* զամենայն միտս. և ամենայն ինչ մերկապարանո՛ց կայ առաջի նորա**: - 129. Ոմանք մերձ են էութեամբ արարչին. և ոմանք հեռի. որպէս իմացականքն *քան* զբանականս. և սա՛ *քան* զկենդանիս. և նոքա *քան* զտունկս...: - 131. Իսկ **է** երկինք զհրեշտակաց դասուցն ասէ, մի *քան* զմի բարձրագոյն յիրաքանչիւր երկինս: - 134. Երկրորդ՝ փառքն և պատիւն. զի ոմանք են ի գերագոյն փառսն *քան* զոմանս: - 137. Չորրորդ՝ յատուկ է նոցա կարգն. զի ոմանք բարձրագոյնք են *քան* զոմանս: - 138. Եւ կոչի արուսեակ դարձեալ, զի *քան* զայլս՝ իւր լուսոյ գեղեցկութիւնն առաւել կուրացոյց զինքն: - 148. Եւ այլք ասեն այսպէս հակառակիլ ընդ աստուծոյ, յորժամ ետես զինքն փառօք և վայելչութեամբ *քան* զամենայն դասս գերազանցեալ, կամեցաւ մեծ լինիլ ի վերայ ամենայնի և հաւասար աստուծոյ: - 149. Վասն ծառոյ՝ և ձևոյ և անուան նոցին. և զի բոյսք փութով աճեն *քան* զծառս: - 155. Եօթներորդ՝ ներգործութեամբն պատական է *քան* զօրութեամբն. և թէ գոյր զօրութեամբ, լինէր ինքն ինքեան պատուական և անպատիւ որ է՛ անյարմար: - 168-169. Ի սեռս էականութեան գոյացութիւն նախապատիւ է *քան* զպատահումն. և զի նախապատիւ է աստուած ամենայն գոյից, վասն որոյ գոյացութիւն է և ո՛չ պատահումն: - 170. Նախ՝ զի գոյն նախկին է *քան* զպատահումն. և նախկին է աստուած ամենայնի: - 171. Վեցերորդ՝ զի ի բազում բանս մտանէ և գրի *քան* զայլ ձայնաւորս. և յա՛յտ է, զի բազում իմաստութիւնս ծնանի: - 178. Դարձեալ՝ որպէս ասեն իմաստունք՝ թէ *քան* զամենայն պարգևք գերագո՛յն է իմաստութիւնն յաստուծոյ առ մարդիկ իջեալ. այսինքն *քան* զկեանս և զառողջութիւն, և *քան* զմեծութիւն և զայլսն: - 178. Եւ դիրք տարերացդ է այսպէս Որ երկիրն ծանր է *քան* զջուր՝ ի ներքո՛յ է: - 180. Եւ ջուրն *քան* զօդ. և օդն ծա՛նր է *քան* զհուր. զի սակաւ ինչ

գիճութիւն ունի: - 180. **Եւ բոլորակ ձևն պա՛րզ է *քան* զամենայն ձև. զի եռանկիւնին յերից գծից բաղկանայ, և քառանկիւնին ի քառից. նոյնպէս և այլքն**: - 182. ...և ուղղական գիծն կա՛րճ է *քան* զխոտորնակ գիծն: - 183. Ապա ուրեմն ո՛չ երբէք մեծագոյն երևի աստղ՝ յորժամ է ի միջին կէտն՝ *քան* յորժամ է յարևելս կամ յարևմուտս: - 183. Վեցերորդ՝ մեծ է *քան* զաշխարհս: - 186. Վեցերորդ Փայլածուն. զոր օտարիտ կոչեն. միշտ շրջի ընդ արեգականն. և սակաւ հեռանայ ի նմանէ. զընթացս իւր կատարէ՛ **յլը** աւուրս. **ժ** օր պակաս *քան* զլուսաբերն. և այլք թէ **գ** ամիս: - 189. Եւ յայծեղջիւրն ի ջրհոսն և ի ձուկն՝ առնէ զձմեռն. որ առաւելու գիշերն *քան* զտիւ **զ** ժամ...: - 190. Զի արեգական տարին է՛ **յկե** օր. և լուսնին տարին **յծդ** օր. **ժա** օր պակաս *քան* զարեգակն: - 191. Ապա թէ ոչ՝ ի յակնարկել կամացն՝ բիւրապատիկ կարող էր աստուած ստեղծանել *քան* զայս աշխարհս: - 192. Ուստի յա՛յտ է՝ զի երեկոյ շաբաթուն որ կոչի կիրակմուտ՝ պատուակա՛ն է *քան* զմիւս գիշերն որ զհետագայ կիրակէին: - 194. Եւ *քան* զժամանակն ո՛չ է ինչ պատուական...: - 198-199. Դարձեալ՝ ոչ ինչ պատուական *քան* զժամանակ...: - 199. Դարձեալ՝ *քան* զժամանակն ոչ ինչ անցաւոր...: - 199. Դարձեալ՝ *քան* զժամանակ ոչ ինչ անկայուն և անյայտ: - 199. Դարձեալ *քան* զժամանակն ոչ ինչ այլայլի. քանզի մերթ ցուրտ է և մերթ ջերմն. ամպ և պարզ: - 199. Դարձեալ՝ *քան* զժամանակ ոչ ինչ հասարակ. զի ժամանակ յամենեցունց հասարակ ստացեալ լինի. և հասարակապէս անցանէ: - 199. Այլ ձայնն յա՛մր հասանէ ի լսելիս *քան* զփայլակն. վասն որոյ յետո՛յ լսի: - 204. Իսկ Մառախուլն է մթագոյն գոլորշի անձննդական ջուրց. *քան* զօդ թա՛նձր է, և *քան* զամպ նօսր: - 204. Երրորդ՝ զի ջուրք ծովուն բա՛րձր է *քան* զերկիր...: - 209. Վասն է՛ր բոյսք փութով աճին և դալարին *քան* զտունկ և զծառ: - 214. Ճաշակելիքն ջրոյն՝ ի վերոյ *քան* զնա: - 215. Վասն է՞ր գազանք հնարաւոր և ուժեղք են *քան* զանասուն: - 218. Յաղագս այսորիկ անբան կենդանիք փութապէս զգան զառաջին շարժումն և զփոփոխումն օդոյդ *քան* զմարդ. և յառաջագէտ լինին: - 218. Ո՛չ թէ *քան* զտարրական հուրն ի վե՛ր է անցեալ. այլ զի լուսինն և արեգակն միշտ ի հարաւոյ կողմանէ ի ստորոտէ լերինն ելանեն. և ի հիւսիսոյ կողմն լերինն միշտ գիշեր լինի...: - 222. ...իսկ թէ թափի հինն. այս լինի կամ յատակս ծառոցն ծորեալ և ապականեալ. և կամ ամենայն ամբարեալ և ժողովեալ և բարձրացեալ *քան* զծառս դրախտին որ է անպատշաճ: - 224. Որպէս առաջին է կառքն և յետո՛յ կառավարն. և առաջին է նաւն, և ապա նաւավարն. և պատուական է մարդն *քան* զնաւն և զկառքն: - 230. Եւ առաջին է դուռն *քան* զտաճարն: - 230. Եւ սպասաւորն *քան* զթագաւորն առաջին հանդիպի: - 230. Եւ առաջին է վաստակն *քան* զպսակն: - 230. Այսպէս և մարդն թէպէտ յետոյ ստեղծաւ, մեծ և պատուակա՛ն է *քան* զամենայն երևելի արարածս: - 230. Ա՛րդ՝ վասն այսր և այլ ևս *քան* զայս պատճառաց ի վերջո՛յ արարաւ մարդն ամենայն գոյից: - 231. Երկրորդ՝ զի տեսանելն հաստա՛տ է *քան* զլուր ունկան: - 235. Տասներորդ՝ զի և բանականս մարդ՝ *քան* զանբան կենդանիս տգէտ լինէր. վասն զի ամենայն կենդանի ունի բնական ճանաչումն իւրոց և օտարաց...: - 238-239. Վասն է՞ր տեսանելն հաստա՛տ է *քան* զլսելն: - 239. Վասն այն յորժամ ննջէ մարդն ի վերայ ձախ կողմանն, շուտո՛վ հալի կերակուրն *քան* ի վերայ աջ կողմանն: - 242. Վասն է՞ր մարդոյն աջ կողմն ուժով է *քան* զձախն: - 243. Բայց կին մարդոյն **դ** ոսկր աւելի՛ է *քան* զառն. այսինքն է ծննդական անդամոցն: - 243. Իսկ թխակն և կարմրագոյն՝ *քան* զգազան չա՛ր է: - 246. Լանջքն որ երկայն է *քան* զփորն՝ խոհեմ է: - 247. Եւ ոմանք զմարմինն *քան* զհոգի: - 252. Այլ ա՛րդ եթէ փոխի ի տնկոյն ի մարդն, վատթա՛ր է մարդոյն կեանք *քան* զտնկոյն. ուստի ի մեծագունէն ի նւաստն փոխեցաւ: - 253. Իսկ որ ի **զ** օրն ասեմք ստեղծեալ զարարածս, այս զկարգ և զդասն նշանակէ մի *քան* զմի յետոյ...: - 253. Եւ դարձեալ՝ եթէ տամք զփչումն՝ բանական հոգւոյն ըստ ոմանց, և այսու յետո՛յ իմանալ զհոգին *քան* զմարմինն մեղանչումն է ճշմարտութեան ըստ **ե** եղանակի: - 253. Նախ եթէ վասն մարմնո՛յն եղև հոգի զի շարժեսցէ զնա. ապա անա՛րգ է հոգին *քան* զմարմին որ վասն նորա եղեալն է. և մեծ և պատուական է մարմին *քան* զհոգի: - 253. ...այլ արդ անա՛րգ է արարածք *քան* զարարիչն: - 253. Եւ ասի զմարդոյն թէ վասն նորա է ամենայն. այսինքն անասունք և բոյսք. և անա՛րգ է բոյս *քան* զանասուն. և անասուն *քան* զմարդ: - 253. Այսպէս եթէ հոգի յետո՛յ ստեղծաւ վասն մարմնոյն, անա՛րգ է *քան* զմարմին: - 253. Երրորդ՝ զի թէ հոգին յետո՛յ է *քան* զմարմին, լինի ինքն առ ինքն խեղ և անկատար: - 254. Իսկ վարդապետք ուղղաձնութեան՝ յանդիմանեալ զերկոսին կողմանց ստախօսութիւն, ո՛չ զհոգի յառաջ քան զմարմին ասեն ստեղծեալ, և ո՛չ զմարմին *քան* զհոգի: - 254. Հինգերորդ՝ զի ունակութիւնն նա՛խ է *քան* զպակասութիւնն. զի ուր ո՛չ է ունակութիւն, և ո՛չ է անդ պակասութիւն: - 256. Ասեմք առ այս, եթէ բանականն առաջին է ըստ պատւոյ *քան* զզգայականն. և զգայականն *քան* զտնկականն: - 260. Այլ հակադարձեալ սոքա ըստ կարգի և ըստ

դասու` յառա՛ջ է տնկականն քան զզգայականն, և նա՛ *քան* զբանականն ի յերևումն...: - 260. Եւ թէ ոք ասիցէ, երևի ապա թէ յառաջագո՛յն է հոգի *քան* զմարմին, և յետոյ մասամբ երևի: - 260. Եւ նախ սիրտն կազմի *քան* զայլ անդամսն. զի ջերմութիւն սերմանն ի մէջն ժողովի և կազմէ՛ զսիրտն: - 261. Ասեմք թէպէտ նիւթն ի չորից տարերց է, այլ տնկականն զօրացեալ *քան* զնիւթն` ըստ իւրոյ մասանցն ծնանի. զի ծնանիլն տնկականին է. այլ և ունի զտարերացն թիւ. զի յամիսս չորս կատարի այն` որ յառաջ ծնաւ: - 262-263. Խնդրեմ և զայս ուսանիլ թէ ընդէ՞ր է` զի մարդս կատարեալ կենդանի է *քան* զանասունս. և յորժամ ծնանին նոքա ահա՛ ի նոյն ժամն կանգնին յոտից վերայ և գնան, և այլն. իսկ մարդն ոչ: - 266. Ուստի յա՛յտ է` զի յառաւել կերակրի և աւելի աճէ և բազումս ծնանի տունկն *քան* զանասունս: - 266. Հինգերորդ` ի յուսումն խոնարհութեան մերոյ. զի տեսանելով զմեզ տկար *քան* զանասունս, մերկ և աղքատ ի մօրէ ծնեալ, խոնարհեալ զիջանիմք ի հնազանդութիւն արարչին. և զի մի՛ եկամուտ հպարտութեամբ կրեսցուք զանկումն արուսեկին: - 267. Սակայն ա՛յլ եղանակաւ է *քան* զասացեալս բնաբանաբար ի մէնջ: - 270. Որպէս յարելով զինքն յերկրաւորս` լինի ստորև *քան* զաշխարհս: - 274. Դարձեալ` մա՛րդն է պատւական *քան* զամենայն մարմնական ստեղծւածս: - 275. Եւ թէ` մեծ էր նշանն քրիստոսի որ հոգւոցն արար, *քան* զմովսէսին որ մարմնոց: - 285. Երկրորդ` զի խոնարհ և հնազանդ էր յամենայնի. ուստի մնաց եղբօրն պատարագի. որ իւրն **գ** ամսով յառա՛ջ էր հասեալ քան զեղբօրն. այսինքն ծնունդ ոչխարացն *քան* զպտուղ երկրին...: - 286. Չորրորդ` յա՛յտ է, զի աշխարհս հայոց **բ** գետով և տապանաւն առաւելու *քան* զբազումս: - 295. Երկոտասաներորդ` զի որպէս իսահակ հնազանդ գտաւ հօրն մահո՛ւ չափ, լաւ համարելով զմեռանիլն` *քան* առանց հնազանդութեան զկալն: - 305. Զի է՛ որ մատուցօղն մեծ է *քան* զպատարագն. որպէս հին օրինաց պատարագն. զի անասունք էին: - 306. Եւ է՛ որ պատարագն մեծ է *քան* զմատուցօղն. որպէս նոր օրինացս` մարմինն քրիստոսի մեծ է *քան* զքահանայն: - 306. Եւ է՛ որ մատուցօղն մեծ է *քան* զընդունօղն. որպէս մելքիսեդեկ *քան* զաբրահամ. և քահանայն մեծ է *քան* զժողովուրդն որ ճաշակէ: - 306. Եւ երէց է աստուած *քան* զաշխարհս...: - 308. Երրորդ` անդրանիկ են հրեշտակք *քան* զմարդիկ ըստ կարգի և պատւոյ. թէպէտ բանական եմք որպէս նոքա: - 309. Չորրորդ` անդրանիկ է հոգին *քան* զմարմին բնութեամբ և պատւով. թէպէտ հաւասարք են ամանակաւ գոյացեալք: - 309. Երկրորդ` հրեշտակք անդրանիկք են *քան* զմարդ ստեղծմամբ. և յորժամ մեղան դևքն` խոտեցան և եղեն կրտսերք. և մարդն ել ի տեղի նոցա և եղև անդրանիկ: - 310. Վեցերորդ` մարմինն երէց է ըստ կարգի *քան* զհոգին...: - 310. Եւ տէր մեր գեղեցիկ տեսլեամբ *քան* զամենայն որդիս մարդկան...: - 313. Տասներորդ` ահեղ է *քան* զամենայն գազանս: - 315. Այսինքն մարդիկք որ անբան տրտմութեամբ և անմիտ ցանկութեամբ ի վայր գտան *քան* զանասունս: - 316. Երկրորդ` լա՛ւ համարեցաւ զերկնաւոր գանձն` *քան* զոսկի և *քան* զարծաթ կորստական: - 338. Երկրորդ` զի մի ոք որ կատարէ զօրէնս, պատուակա՛ն է աստուծոյ *քան* զամենայն աշխարհս. վասն այն ընդ մինն խօսի: - 340. Երկայնութիւն` է՛ կեանք նոցա անմահ. զի գերազանցեալ են *քան* զժամանակեայս, և պակաս *քան* զյաւիտենականն աստուած: - 344. Նոյնպէս և բարձրացեալ են գիտութեամբ առաւել քան զմարդիկք, և պակաս *քան* զաստուծոյ: - 344. Իսկ կէսն, զի կիսկատար և պակա՛ս են *քան* զաստուած այնու, զի եղակա՛նք են և յոչ գոյից գոյացեալք որպէս ասացաք: - 344. Նա՛խ` զոր լւան զօրէնս ականջօք, տեսցեն և աչօք զի հաստա՛տ է տեսն *քան* զլուրն: - 349. և Ալոջ, և Որոջ. ունելով զկէս ամն աւելի *քան* զերեք ամն ի ծննդենէն մինչև ի խաչն: - 361. Նա՛խ` զի մի պակաս երևեսցի *քան* զհեթանոսս, խտրէին զմարմնոյ արատն: - 370. Դարձեալ` այն որ մի *քան* զմի առաւել են չափով դորակին, նշանակէ՛ զհաւատն և զյոյսն և զսէրն առաւել: - 375. Այսպէս և օրհնութիւն մարդկան որ գերագոյն է *քան* զմեզ...: - 406. Նա՛խ` կոչի աւագ, զի մովսէս երէ՛ց է և առաջին *քան* զամենայն մարգարէսն: - 407. Հինգերորդ` բարձրագոյն էր մովսէս *քան* զյակոբ. կամ հաւասար նմին: - 409. Մարմնական նշանքն զոր կատարէր` չէ՛ր պակաս *քան* զնոցայն: - 411. Այլ այնո՛ւ էր առաւել, զի քրիստոս զհոգիս ազատեաց ի դժոխոց. և աստուած էր և մարդ եղև և խաչեցաւ. որ մեծ է *քան* զամենայնին: - 411. Վեցերորդ` մեծ սքանչելիք էր որ յետ դարձաւ, *քան* զցամաքիլն: - 414. Երկրորդ` զի մի՛ անբանքն` աստուծոյ պատւականք երևեսցին *քան* զբանականքս: - 416. Ութերորդ` նա՛ ուսովք էր բարձր *քան* զամենայն մարդ...: - 427. Սակայն բարի՛ է *քան* զայն որ ամենևին ո՛չ խոստովանի: - 432. Նա՛խ` զի **գ** ամ սովն, և **գ** ամիս սուրն` սաստիկ էր *քան* զերեք աւուր մահն: - 434. Հինգերորդ, նա՛ փոքր և կրտսեր եղբարցն. և տէր մեր երկրորդ ադամ. և փոքրիկ կոչեցաւ *քան* զհրեշտակս և առաւել պատուեցաւ: - 435. Կամ առաջինն եղիա, երկրորդն եղիսէոս լինի *քան* զնա՛: - 445. Եւ դարձեալ` յետ աւելի *քան* զերեսուն ամ ի **զ**երորդ ամին եզեկիայ արքայի յուդայ` ել

սաղմանաասար արքայ ասորեստանեայց ի վերայ սամարիայ...: - 447. Եւ տարաձայնութիւն թուոցդ յայնմանէ լինի, որ **ծգ** ամաւ յառաջեաց բանն աստուած ի մարդանալն *քան* զնշանակութիւնս մարգարէիցն: - 449. Յաղագս այսորիկ նւազ և փոքր լսի գործ արդարութեան *քան* զգործ ողորմութեան: - 458. Զայս հաստուցանել ի վեր քան զարժանն. և պատժել սակաւ *քան* զարժանն: - 459. ...զի զնոսա փառաւորէ ի վեր քան զարժանն. և զսոսա պատժէ սակաւ *քան* զարժանն. այսոքիկ ողորմութեանն են: - 459. Եւ թէպէտ աստուած արդար է և ողորմած, սակայն յատկագոյն ասի ողորմած *քան* արդար: - 459. Եւ գիտելի է, զի թէպէտ մեծագո՛յն է ըստ ինքեան սրբութիւն արգանդին *քան* զսրբութիւն մկրտութեանն...: - 462. Նա՛ ևս գերազանցեալ *քան* զիրեշտակս այսու, զի նոքա ի գոյացական վարձս ո՛չ աճիլ կարեն և ո՛չ նուազիլ...: - 463. Երրորդ՝ որպէս գերազա՛նց է *քան* զամենայն պատիւ մայր աստուծոյ լինիլ: - 463. Այսպէս գերազա՛նց է *քան* զամենայն շնորհք հեղեալ ի ստեղծուածս...: - 463. Երրորդ՝ զի կոյս էր ողջոյնընկալն և գերազանց *քան* զամենայն կոյս որպէս ցուցաւ: - 464. Եւ էր ի վերջոյ *քան* զզաւակն. փոքրագոյն *քան* զպարունակեալն յինքեան: - 469. Երրորդ՝ զի արուն զօրաւո՛ր է *քան* զէգն...: - 480. Եօթներորդ՝ արեամբ և վկայութեամբ. զոր և ինքն քրիստոս մկրտեցաւ վասն մեր իբրև յոյժ գովելի և երանելի այս մկրտութիւնս *քան* զառաջինսն: - 488. Դարձեալ՝ վիշապն չարաթոյնք է *քան* զօձն: - 488. Զի է՛ որ մատուցօղն մեծ է *քան* զպատարագն. որպէս հին օրինաց պատարագն. զի անասունք էին: - 491. Եւ է՛ որ պատարագն մեծ է *քան* զմատուցօղն. որպէս նոր օրինացս մարմինն քրիստոսի մեծ է *քան* զքահանայն: - 491. Եւ է՛ որ մատուցօղն մեծ է *քան* զընդունօղն. որպէս մելքիսեդեկ *քան* զաբրահամ. և քահանայն մեծ է *քան* զժողովուրդն որ ճաշակէ: - 491. Ապա յա՛յտ է ի գործոյն՝ թէ դժնդա՛կ է ապականութիւն *քան* զմահ: - 498. Զի տես աչացն հաստա՛տ է *քան* զլուր լսելեացն: - 509. Եւ գազա՛ն է ծուկն և վիթխարի և խառնակեր *քան* զամենայն գազանս: - 511. Այլ համբարձումն նշանակէ՛ ի միտս համայն բարձր *քան* զամենայն դասս իմանալեացն. զի նմա՛ երկրպագեն ամենայն երկնայինքն. և անդր *քան* զտեղի տիրամօրն. զի ի միածին որդւոյ իւրմէ խնդրէ զփրկութիւն մարդկան: - 519. ...զի ցուցցէ թէ աստուածային ուրախութիւնն գերազա՛նց է *քան* զմարմնաւոր տրտմութիւնս: - 520. Նա՛խ՝ զի չարչարանքն քրիստոսի պատճառ եղև պարգևաց սուրբ հոգւոյն, պարտ էր նախկին գոլ. որպէս ամենայն պատճառ նա՛խ է *քան* զպատճառելին: - 521. Վեցերորդ՝ որպէս սերմանելն նա՛խ է *քան* զպտուղն և զհունձն: - 521. Եւ թէ ոք ասիցէ, ծանեաք զմիութիւնն. այլ թուի թէ անկատար է *քան* զբանն աստուծոյ՝ բան աւետարանիս: - 529. Վասն առաջնոյն գիտելի է, զի դիւրին է զգազանս ընտելացնել, *քան* զտգէտ անձն ի գիտութիւն ածել: - 531. Այլ սոքա ամենայնքն նախկին և պաւականք են. այսինքն քահանայ *քան* զսարկաւագ. և բանական *քան* զգայական. և ներգործութեամբ *քան* զօրութեամբ. այսպէս արձակելն *քան* զկապելն: - 541. Եւ թէ ոք ասիցէ, երևի թէ առանձին իշխանութիւն ունի *քան* զայլսն: - 547. Ասեմք թէ՝ ոչ ինչ է այս նախատինք մեզ. զի հեթանոսք յետոյ հաւատացին և լաւագոյնք են *քան* զիրէայս. և վերջին մշակքն ընդ առաջինսն առին զվարձս. և որք նախանձեցան կորեան: - 549. Այլ և ասեն թէ ընդհանրական կանոնքն ճշմարիտ է *քան* զառանձնականնն: - 550. Դարձեալ՝ զուտ է և անխառն իսկապէս ճշմարիտն *քան* զխառնեալն ի ստէ: - 550. Դարձեալ՝ յայտնապէս ասել ո՛չ է հարկ՝ է ամենայն բազում պատուական է *քան* զմին...: - 551. Որ և պատուական է վարդապետն *քան* զաշակերտն. և զօրավարն *քան* զզօրս. և կառավարն *քան* զկառն և այլն: - 551. Եւ լաւ է մի ակն պաւական՝ *քան* զբազում քարինս անպիտան: - 551. Եւ թէ ոք ասիցէ, ապա ուրեմն լա՛ւ է տարաձայնութիւն *քան* զհամաձայնութիւն. և բաժանումն *քան* զմիութիւն: - 551. Ասեմք առ այս թէ՝ ո՛չ է հարկաւոր այս ամենայն ուրէք. զի գո՛յ և տարաձայնութիւն բարի՝ *քան* զհամաձայնութիւն ընդ հերձուածօղս. և լաւ է բաժանումն ի չար ժողովոց՝ *քան* զմիաբանութիւն: - 551. Եւ բաժանումն յաւէտ *զքան* զաւառաւ և լեզուաւ՝ կանոնական սահմանաւն ասացեալ Իններորդ՝ զի թէ հաւատն և յոյսն և սէրն՝ աստուածային առաքինութիւնք են և լաւագոյն *քան* զամենայն առաքինութիւնս...: - 557. Ապա անհաւատութիւն և յուսահատութիւն և ատելութիւն է՛ ի միտս. և սոքա մեծ են *քան* զամենայն չարիս որպէս ուսուցանեն գիրք սուրբք: - 557. Վասն որոյ զգուշանալ պարտ է սրտին սրբութեան *քան* զմարմնոյն: - 558. Վասն է՞ր սատանայի մեղքն մեծ է և անթողլի *քան* զմարդոյ: - 562. Այսպէս մեծ է՛ մեղք հպարտութեան *քան* զամենայն մեղս մարմնական: - 563. Նա՛խ՝ զի որ կամաւ և գիտութեամբ մեղանչէ, առաւել է քան զակամայն և զտգիտութեան. զի թէպէտ և սոքա մեղք են, այլ պատիժն նւազ. որպէս անասնոյն *քան* զմարդոյն: - 563. Եւ թէ **բ** մարդ գործեն զմեղս զայսոսիկ, սպանանելն մեծ է *քան* զսուտ վկայելն. և այլն նմանապէս: - 565. Այն որ փափագանօք անկաւ՝ մեծագոյն է *քան* զմիւսն: - 565. Ահա՛ որ

մեծ է *քան* զամենայն մեղք: - 565. Նոյնպէս և եկեղեցւոյն *քան* զայլն: - 565. Որ յեկեղեցին գործէ՝ մեծ է *քան* զայլն: - 565. Տասներորդ՝ վասն հոգեմարտին մակեդոնի որ հայհոյէր զհոգին սուրբ նուազ ասելով *քան* զհայր և զորդի, ո՛չ թողցի նմա: - 566. Եւ զի ո՛չ է որպէս մահացուն մեծ կամ փոքր. որպէս շնութիւն մեծ է *քան* զպոռնկութիւն. և մարդասպանութիւն *քան* զգողութիւն: - 568. Եւ ա՛յս է մեծագոյն չար աշխարհի. զի չէ աւելի աղքատ *քան* զայն որ ցանկայ աւելի ունել: - 570. Եւ վասն չորից պատճառաց լաւագոյն է սիրել *քան* զսիրիլ: - 576....և յետոյ *քան* զամենայն բաշխեաց զմարմինն իւր...: - 599. Պիտանի է ապա խոստովանիլ՝ *քան* օծանիլ: - 604. Մա՞րթ է աւելի *քան* զմին կին առնուլ՝ թէ ոչ: - 612. Ապա ուրեմն պա՛րտ է ասել՝ «խաղաղութիւն ամենեցուն». *քան*՝ «ընդ ամենեսեան»: - 625. Եւ որ՝ *քան* զայս աւելի ասեն, որպէս տնօրինեցար. կամ ընծայեցար. կամ քո տէրութեամբդ. կամ որ եկիր ի բեթանիա. կամ ի վերնատունն: - 634. Այս քան շարականս ընդունելի՛ է յեկեղեցի. և աւելին *քան* զայս՝ խոտելի՛ է և անպիտան: - 638. Երրորդ՝ որ բանն առաւե՛լ է *քան* զձայնն. որպէս երգ շարականաց: - 639. Այլ երկրորդ են լոյսք յետ արարչին. և առաջին *քան* զմարդիկ...: - 642. Այլ և դարձեալ նշանակէ՛ զաստիճանաւորս ի խոնարհ *քան* զքահանայս...: - 646. Չորրորդ, զի մա՛սն է հոգւոյն և հանդերձեալ կենացն. պա՛րտ է զպատւականն որոշել *քան* զմարմնոյս: - 657. Իսկ զկամքն տալ աստուծոյ հաճո՛յ է *քան* զպատարագ՝ վասն չորից: - 658. Եւ այն զի նախապատիւ է պատուականն *քան* զանարգն: - 662. Զի նախ է մարմին *քան* զհոգի. ոչ ժամանակաւ և պատւով. այլ նիւթով և զօրութեամբ: - 662. Վեցերորդ՝ ամենայն պատուական իր՝ ի բարձր տեղւո՛ջէ. որպէս գլուխն զի պատուական մասն է. և լուսաւորքն և երկին *քան* զերկիրս: - 662. Իսկ որ ասեն՝ նախապատիւ է պատուականն *քան* զանարգն: - 663. ...ծածկէ՛ զգարշութիւն մեր. որպէս մայր մանկան *քան* զայլ կարևորս: - 677. Ո՞ հա՛յրդ ես որոց ի վեր քան զերկինս. այսինքն հոգւոց սրբոց կատարելոցն որ ի վերեն *քան* զդասս հրեշտակաց մերձ քրիստոսի որպէս քահանայք առ քահանայապետ, և անդամք առ գլուխն. և որդիք առ հայր: - 688. Իսկ ի ներքոյ երկնից առ երկնիւ է կայանք հոգւոց կիսամասնեայ արդարոց այնոցիկ որոց պակա՛ս է արդարութիւն *քան* զմեղս և կամ առաւել: - 688. Եւ որպէս նեռն լինիցի անողորմ *քան* զամենայն հալածիչս յառաջագոյն...: - 708. ...նոյնպէս և սուրբք ժամանակին այնորիկ լինիցին զօրեղագոյն *քան* զամենայն յառաջագոյն մարտիրոսսն: - 708. Բայց ի կատարածի փոքրիկ լինին հասակք մարդկան *քան* զմերս. որպէս մերս *քան* զառաջնոցն: - 708. ...որք աստիճանաւ վեհագոյնք են *քան* զհասարակաց արդարս. որպէս աբէլ, և առաքեալքն. և մարգարէքն. և այլք: - 711. Երրորդ, որպէս **իղ**ն բազում է *քան* զչորսն. նոյնպէս կարծի վեհագոյնքն ի մարդկանէ բազում գոլ *քան* զվեհագոյնս երկնայնոցն: - 711. Հինգերորդ, զի մեծ ուրախութիւն է և տօն յորժամ համանգամայն ամենայն մարդկան յական թօթափելն լիցի յարութիւն, *քան* յայլ և այլ ժամանակս...: - 717. ...այլ ա՛յս է՝ զի իւրաքանչիւր մարմինք սրբոց պայծառասցին **է**պատիկ *քան* զարեգակն...: - 728. Այլ և յորժամ ի վեր քան զչափն պատուէ զսուրբս, և ի վայր *քան* զչափն պատժէ զմեղաւորս: - 746. Իսկ ծուխն յերեսացն աստուծոյ, Նախ նշանակէ զահագին սպառնալիք բարկութեան տանջանացն. որպէս նա՛խ է ծուխն *քան* զհուր, և սպառնալիքն *քան* զտանջանս: - 749. Քանզի որպէս փայտն այն ասի *քան* զայլ փայտս դրախտին կանաչագոյն: - 755. Այսպէս և քրիստոս *քան* զամենայն սուրբս զպարգևս ունի առատագոյնս. որում հոգին ո՛չ տուաւ չափով: - 755. Որ և ա՛յն քան գերազանց է միաւորութիւնն քրիստոսի ընդ եկեղեցի *քան* զմարմնական հարսանեաց, որպէս լոյս *քան* զխաւար. և իւղ անոյշ *քան* զգարշութիւնս: - 757. Այլ և *քան* զանմարմնոց միութիւնս գերազանցեալ է: - 757. Նոյնպէս և ջուրն որ հպեցաւ ի մարմին փրկչին, և ծնաւ զմարդիկ որդիս աստուծոյ, նորոգեսցի և պայծառասցի *քան* զամենայն տեսիլս գեղեցկագոյն ականց: - 759. Զորօրինակ, ի մի երկինս աստղ *քան* զաստղ առաւե՛լ է փառօք: - 760. Ո՛չ թէ որիշ դաս անկաւ այլ իմն թուով՝ արտաքոյ *քան* զինն դասս: - 760. Երկրորդ վասն տեղւոյն. զի վերինն երուսաղէմ է՛ ի բարձունս *քան* զարեգակն. վասն որոյ ո՛չ լուսաւորէ զնոսա: - 760. Եւ թէպէտ գերազանցեալ են այսոքիկ փառք *քան* որք այժմ ունին յերկրի. այլ սակայն օրինակաւ սակաւ ինչ բացայայտութիւն առցուք: - 761. ...և ամենայն որ ինչ փափկութիւն գտանիցի՝ աշխատութիւն. մինչ զի բարութիւնն աստուծոյ յանհունս գերազանցէ՛ *քան* զամենայն ստեղծեալ բարութիւնս: - 762. Եւ այնպիսի քաղցր է տեսութիւնն աստուծոյ, մինչ զի չարքն թէ կարէին՝ յօժարէին ի դժոխս կալ և զաստուած տեսանել. *քան* արտաքոյ տանջանաց լինիլ և զաստուած ո՛չ տեսանել: - 763. Առաւել պարտ էր մարդկան վաստակիլ միայն՝ զի կարասցեն գոլ ի միում աւուր ընդ երանելի սրբուհւոյ աստուածածին կուսին. *քան* բազում վաստակիլ վասն յաւիտենական փառացն: - 763. Ոչ ունիմք վեհագոյն *քան* զհաւատն. տիպ աստուծոյ ճշմարտի

դրոշմեալ ի մեզ ի բնէ. մեր հրահանգ և զարդ: - 769. Իսկ որք տեսչութեամբն աստուծոյ ընկալան զքերակատարն յարութիւն, ի վե՛ր է *քան* զբնութիւն...: - 775. Զի զնոսա փառաւորէ՛ ի վեր քան զարժանն, և զնոսա դատապարտէ՛ սակաւ *քան* զարժանն. և է՛ այս ողորմութիւն: - 779. Երկրորդ հմտութեամբ ժամանակին. որով իմանան զներկայս և զապառնիս և յառաջեն *քան* զգործս...: - 784. Եւ են մի *քան* զմի առաւել գերագոյն սոքա և վարձատրելիք: - 785. Եւ նոյն ինքն տէրն բոլորից վկայ քարոզութեան զգործս կատարէր. զի սովորութիւն է մարդկան *քան* զլուր լսելեաց տեսութեան աչաց հաւանիլ: - 785

***ՔԱՆ ԵԹԷ, ՔԱՆ ԹԷ +*** ...զի մեծ է նմա հալածիլն՝ *քան թէ* մեր վերջանալն թշուառութեամբ: - 43. Եւ զի ո՛չ է արարած՝ ո՛չ այլ ինչ է՝ *քան թէ* աստուած որպէս ասացաք: - 52. Ապա ըստ այսմ հետևի՝ զի մարիամ մայր քրիստոսի լինի և ո՛չ աստուծոյ. զի լաւ է քրիստոսածին և մարդածին կոչիլ՝ *քան թէ* աստուածածին: - 91. Ո՞չ ապաքէն ի վեր ասեմք զմարդն անուն կենդանի մարդոյն՝ *քան թէ* գրեցելոյն: - 95. Զի սատանայ այլ մեղք ո՛չ գործեաց, *քան թէ* խորհեցաւ զյատուկ բարձրանալն իւր...: - 569. Զի առաւել յարմա՛ր է անապակ բաժակն անապական արեանն քրիստոսի, *քան թէ* խառնեալն ի ջրոյ և ապականեալն: - 595. ...*քան թէ* բառնալ զխոստովանութիւնն որ հարկաւոր է. առանց որոյ ո՛չ գոյ ներգործական մեղացն թողութիւն գտանել: - 604. Եւ առաւել յարմարէ քահանային զշնորհս հոգւոյն սրբոյ բաշխել, *քան թէ* զանձն: - 625. Եւ այն զի պատճառ մեղաց առաւել մարմինն՝ *քան թէ* հոգին լինի: - 699. Ոմանք ասեն թէ՝ յարութիւն ո՛չ այլ ինչ է՝ *քան թէ* վերստին կենդանանալ: - 716

**ՔԱՆԱԿ +** Եւ միութիւնն ի *քանակն* առնէ զհասարակութիւն: - 104. Նախ՝ զի թիւն *քանակ* է պատահական՝ և գիտելի մեզ: - 108. Իսկ ի յերրորդութիւնն ո՛չ է *քանակ* և չափ, և ո՛չ պատահումն, և ո՛չ գիտելի եղական մտաց: - 108. Երկրորդ՝ թիւն *քանակ* է. և աստուած ո՛չ չափի: - 110. Զի է՛ մի՝ որ սկիզբն է թւոյ. և այսպէս մի ո՛չ ասի աստուծոյ. զի այս *քանա՛կ* է. և պատահումն ո՛չ գոյ յաստուած: - 110. Իսկ պատահումն է *քանակ*՝ որակ՝ և այլն: - 111. Երկրորդ՝ միտք զգոյացութիւն իրին տեսանէ որ է ի ներքոյ եղեալ. և զգայութիւն զպատահմունքն ի վերայ եկեալ. որպէս որա՛կ *քանա՛կ* և այլն: - 120. Ութևժերորդ՝ բազմապատիկ մեծ է քան զերկիր. և փո՛քր *քանակով* ցուցանի: - 127. Նախ՝ զի նիւթեղէն միտք՝ միջնորդութեամբ նիւթո՛յ հասանէ յաննիւթն. որպէս տեսեալ զգիր՝ իմանամք զզօրութիւն նորա. և տեսեալ զորակ և *զքանակ*՝ իմանամք զգոյացութիւն իրին: - 131. Ո՛չ ըստ տարաչափութեան *քանակի* ասեմք. այլ ըստ ամենազօր կարողութեան և անչափ անհասութեան ասեմք զնա մեծ: - 171. *Քանակաւն* և որակաւն. զի սոքօք անհատ գոյացութիւնն երևի: - 174. Հինգ. այսինքն *Քանակն* որ է չափն. Որակն. որ է գոյնն. ձևն. տեղին. զատութիւնն: - 174. Նախ՝ զի ո՛չ ունի *քանակ*, որակ, ձև, և այլքն, որ նիւթո՛յ են յատկականք: - 175. Այլ թէպէտ աննիւթ է աստուած՝ ո՛չ է անկարգ զնիւթականքս յառաջ ածել ըստ այսմ օրինակի. զի նիւթն որ է՛ գոյացութիւն մարմնական՝ ունի որակութիւնս իմն մարմնական. որպէս *քանակ*. որակ. և այլքն: - 175. Արդ սոքա ըստ ինքեան անմարմին են. այսինքն գոյացութիւնն. *քանակն*. որակն. և այլքն: - 175. Եւ մարմնով ո՛չ բաժանին սոքա. թէպէտ և մանր փոշի լինին՝ ունին *զքանակն* զորակն և զայլն. զի անմեկնելի որոշմունք են գոյացութիւն և պատահմունք: - 175. Զի աննիւթ և պա՛րզ էութիւն է աստուած. և յառաջ էած յոչընչէ զաննիւթ էութիւնքս. այսինքն զգոյացութիւն, *զքանակ*, զորակ, և զայլսն. և իւրով զօրութեամբն ի միասին ժողովեալ կազմեաց մարմնական նիւթ: - 175. Նախ՝ զի սոքա անմարմինք են ըստ ինքեան. այսինքն *քանակ*, որակ, և այլքն. և յանմարմին էութիւնս ո՛չ տեսանին. որպէս ի հրեշտակս կամ ի հոգիս. զի նոքա ո՛չ ունին ձև. որակ. *քանակ*. և զայլսն: - 175. Չորրորդ՝ զի իւրաքանչիւր սոքա առանձին սահման ունին և բնութիւն. և ո՛չ միաբանին ընդ միմեանս և ո՛չ ընդ մարմնի. այսինքն *քանակն* որակն. և ծանրութիւնն. և այլքն: - 175. Զի *քանակն* որակ ո՛չ է և ոչ ասի. և ո՛չ ծանրութիւն. և ո՛չ կարծրութիւնն մարմին: - 175-176. Ապա ընդէ՞ր սոքա՝ գոյացութիւն, որակ, *քանակ*, և այլքն, եղական գոլով ո՛չ շփոթին ի մի բնութիւն խառնեալ: - 176. Եւ վասն առաւել և ազդու զօրութեան և ջերմութեան՝ զգոյացութիւն կենդանեաց և մարդկան առ որս դիպի ապականէ՛. և պատահմունքն *քանակ* և որակ մնան: - 204. Իսկ հուրս առ մեզ որ կապեալ է ի նիւթ՝ տկա՛րն ունի զայրելն. վասն որոյ նախ *զքանակն* և զորակն ապականէ, և ապա զգոյացութիւն իրին: - 204. Իսկ երկրորդն թէ յորմէ՞ սեռէ է օտարն և աննմանն՝ գիտելի է, զի դէմն և կերպն ի չորից սեռից գոյանայ. ի գոյէ՝ ի *քանակէ*՝ յորակէ և ի տեղւոյ: - 236. Եւ երկայն և կարճ՝ *քանա՛կ* է շարունակ. և բ ակն և ունկն տարորո՛շ է: - 236. Եւ պակասեալ ի սոցանէ մարմնոյն, ցուցանի կերպարան ի գոյէ ի *քանակէ* և յորակէ և ի տեղւոյ շարակցեալ. որպէս յա՛յտ է ի հայելւոջ: - 236. Եւ նւազեալ յայսցանէ գոյնն՝ մնայ պատկեր ի *քանակէ* և ի ձևոյ և ի տեղւոյ երևեալ. որպէս յա՛յտ է ի մեռեալ մարդն: - 236. Եւ պակասեալ ի սմանէ տեղին, լինի տիպ ի *քանակէ* և ի

ծնոյ բաղկացեալ. որպէս յա՛յտ է ի մոմն տպացեալ: - 236. Եւ նուազեալ ի սմանէ *քանակին*, լինի նման և աննմանն ցուցեալ. որպէս յա՛յտ է ի տառն գրեալ. զի նման և աննմանն ուրոյն են որակի: - 236. Դարձեալ՝ պատկերն ի կերպարանն լինի առեալ. և նմանն ի յորակն կամ ի *քանակն:* - 273. Գոյացութիւն հացին փոխեալ է ի գոյացութիւն մարմնոյն քրիստոսի և է՛ անապական. իսկ *քանակն* և որակն մնացեալ է դեռևս փոփոխելի. և յայնմանէ փոխարկեպին այլայլմունք ինչ: - 339. Զի էութիւն ընդ պատահման միշտ անշփոթ միաւորի. որպէս որակ և *քանակ* ի գոյացութեան. զի անմեկնելի որոշմունք են: - 475. Երրորդ, ըստ *քանակին* այսպէս. զի ոմն մի գործեաց զպոռնկութիւն, և ոմն **ռ**: - 565. Դարձեալ՝ նշանակէ *զքանակ* հասակի մարմնոյն մեռելոյ: - 679. Այլ համահասակ *քանակաւ* ո՛չ. զի աստ ոմն մեծ լինի և ոմն փոքր ի ջերմութենէն որ անհաւասա՛ր է ի նոսա. նոյնպէս և անդ: - 726. Երրորդ՝ *քանակաւ* հասակին. զի իւրաքանչիւր ոք յիւրն երեսնամեայ յարիցէ. որպէս հարիւրամեան անցեալ և քառասնօրեայ մեռեալ. որ լինելոց էր երեսնամեայ, ի նոյն հասակն յառնեն: - 726. Նոյնպէս և հատուցի առաւել և նուազ և հաւասար. ո՛չ միայն ըստ սեռի գործոց, այլ և ըստ տեսակի և *քանակի* և որակութեանց նմին: - 746. Իսկ ըստ *քանակի*, չափու գործելեացն առաւել և նուազ իւրաքանչիւրոց ի խորհուրդս ի բանս և ի գործս: - 746. *Քանակաւ*. Օրինակաւ. Որքանութեամբ. Պարագայիւ. և Բաղդատութեամբ: - 777. *Քանակաւ*, զի նա՛ գործով, իսկ նոքա և գործով և հասեալ մեղօք...: - 777

**ՔԱՆԱԿԱՆԱՄ +** Երկրորդ՝ ըստ չափոյ մտիցն *քանականայ* մեծ կամ փոքր: - 125

**ՔԱՆԱԿԵՄ +** Մեծ է տէր մեր և մեծ է զօրութեամբ. այլ *քանակեալ* մարմնով ի չափս մեր տեսանի: - 127. Վեցերորդ՝ մեծութեամբ *քանակեալ:* - 184

**ՔԱՆԱԿՈՒԹԻՒՆ +** Արդ՝ զորօրինակ զգալի աչք մեր ո՛չ կարէ ըմբռնել *զքանակութիւն* արեգականն և այլ լուսաւորացն. այլ մտօք իմանամք զմեծութիւն նոցա: - 31. Նախ զնիւթն զմի բնութիւն նիւթական որպէս մարդ. և զմիւսն բնութիւն աննիւթ որպէս զաստուած. զՉնն՝ զմինն *քանակութեամբ* և որակութեամբ տարբերեալ...: - 87. Երկրորդ՝ հասարակութիւն է, զի որպէս է նկարեալ ծնն, նոյնպէս և շինեալ տաճարն *քանակութեամբ* և որպիսութեամբ. և անդրադարձեալ ևս: - 163. Եւ առ հասարակ ասեմ զայս դնել ի մտի. զի չափաւորութիւն անդամոցն ըստ ծնոյն և ըստ գունոյն և ըստ *քանակութեան* և ըստ կազուածոյն և ըստ շարժմանն, նշանակէ զբարի մտացն ընդաբոյս յարմարութիւնն: - 248

**ՔԱՆԱՆ** - Անունք Նախահարցն: ...*Քանան* դառնացօղ: - 299. Նա՛խ՝ որպէս մելքիսեդեկ ի յանցաւոր և յանիծեալ ազգէն *քանանու:* - 301. Երրորդ՝ ի *քանան* ո՛չ մնաց ոք ի նոցանէ, և ո՛չ ոք ի յելսն յեգիպտոսէ: - 314. Բոլորն ամենայն **դձլ** ա՛մ է յաւետեացն աբրահամու մինչև յելսն յեգիպտոսէ՛. այլ զերկու **ճե** ամն հարքն յերկրին *քանանու* բնակեցան. և զբ **ճիե** ամն որդիքն յեգիպտոս կացին...: - 337. Վեց քաղաքաց հրամայեաց որոշել ապաստանի և տալ քահանայից. **գ** յերկիրն *քանանու* և **գ** յայնկոյս յորդանանու: - 392. Քսանևզ՝ նա՛ սպան զթագաւորս և զիսկայսն *քանանու*. և զոմանս եթող ի փորձ ընտրելոց: - 419

**ՔԱՆԱՆԱՑԻ +** Չորրորդ՝ ժառանգելն զերկիրն *քանանացւոց:* - 196. Եւ այս են **իբ** լեզուքն: ...*Քանանացիք:* - 298. Զի տղայ մանուկ երթեալ ո՛չ ոք գիտէր զնա. և ո՛չ նա զոք ճանաչէր զի *քանանացի*՛ էր և աննման վարուց նոցա: - 300. ...որպէս և եղև նոցա մարմնաւորապէս ժառանգել զերկիր ամոնացւոց, մովաբացւոց, և *քանանացւոց:* - 306. Զի *քանանացիքն* խորհրդածի այսմ երկրի և կենաց: - 314. Եօթներորդ՝ զի որ աշակերտի մովսէսի՝ զլոյս ընդունի. և որ ո՛չ աշակերտի՝ ի խաւար մնասցէ որպէս *քանանացիքն:* - 352. Զի՞նչ նշանակէ որ **բ** ցեղն և կէսն մնացին յայնկոյս յորդանանու և ժառանգեցին, և այլքն անցին ի *քանանացիքն:* - 390. Այլ ոմանք՝ **ճ**աւոր զերկին, և վաթսնաւոր զդրախտն, և երեսնաւոր զերկիրս ասեն նշանակեալ **բ** ցեղիցն յայնկոյս յորդանանու, և **թ** ցեղիցն յերկիրն *քանանացւոց:* - 391. Զի՞նչ է որ զերկու թագաւորսն զսեհոն և զովք յայնկոյս յորդանանու կորոյս, և զայլսն ի *քանանացիսն:* - 393. Երրորդ՝ ի *քանանացիս*. յետ յարութեանն ընդ ոսոխացն դիւաց: - 394. Զթագաւորսն *քանանացւոց* կոտորեաց թուով **իթ**: - 414. Նա՛խ՝ դարձաւ գետն, զի ա՛հ և երկիւղ լիցի *քանանացւոցն*. և մի՛ հակառակեսցին յեսուայ և անկցին ի սուր նորա: - 414. Հինգերորդ՝ երկաթն սպանմա՛ն է գործի *քանանացւոցն:* - 415. Երկոտասաներորդ, զի ուսուսցէ մեզ զմարդասիրութիւնն և զներելն միմեանց. որպէս աստուած երկայնամիտ եղև առ *քանանացիսն* որ պատժապա՛րտք էին: - 417. Աբրահամ միայն էր աստուածապաշտ, և *քանանացիք* բազում: - 551. Դարձեալ, **գ** յիսնեակն՝ **գ** քաղաք ապաստանաց ի *քանանացւոց* երկրին: - 653

**ՔԱՆԱՆՈՒՅԻ +** Այլ և սամարուհի կնոջն լուսինա՛ էր անունն: ...*Քանանուհւոյն* վերինէ՛: - 495

**ՔԱՆԶԻ +** Որոց պատասխանեն վարդապետք եկեղեցւոյ. և ես զնոցայն առեալ ասացից՝ թէ յաւուրս յետինս՝ ոչ զկատարած աշխարհի կոչէ, այլ կոչէ աւուրս յետինս՝ զպակասութիւն օրինացն և արդարութեան նորա. *քանզի* օրէնք նոցա պակասեցաւ ի գալստեանն քրիստոսի: - 27. *Քանզի* հրէայքն ի ժամանակս քրիստոսի ո՛չ լինէին նեղեալք յումեքէ: - 28. *Քանզի* ասէ թէ՝ ջիուտն թարքմանի խոստովանօղ. *քանզի* խոստովանօղքն մեսիային փրկեսցին: - 28. Եւ այնպիսիքն տրամաբանել ո՛չ կարեն վասն հոգևորին. որպէս ի ծնէ կոյրն վասն գունոց, *քանզի* ասեն վարդապետք՝ աստուած լոյս է ո՛չ մարմնոց, այլ մտաց. զոր թէ ոք ո՛չ տեսանէ՝ կո՛յր է: - 32. *Քանզի* որպէս արեգակն ո՛չ տեսանի՝ եթէ ո՛չ լուսովն իւրով. այսպէս իմանալին աստուած ո՛չ տեսանի, եթէ ո՛չ լուսով շնորհաց հաւատոյն իւրոյ: - 32. Ուստի յա՛յտ է մեծութիւն յանցանացն. *քանզի* ի հինն զինչև մեղանչէր ոք մեծ կամ փոքր՝ պատարագաւն սրբէր. թոչնօք և անասնօք: - 33. Արդ *քանզի* աստուած առանց պատճառի է աստուած. և թէ ոչ՝ ո՞ է պատճառ աստուածանալոյն: - 41. Իսկ ի ստեղծումն է ընդդէմ այսմ. *քանզի* ստեղծօղն ո՛չ այլայլի, այլ ստեղծուածն: - 41. Աղբիւր է հոգին սուրբ. *քանզի* մեք ամենայնքին զնոյն հոգի արբաք: - 57. Ըստ որում մերձ դնէ, *քանզի* մարմին և հոգի. այսինքն թէ ո՛չ կարէ մարդն առանց հոգւոյն գոյանալ: - 80. Զի՞նչ է ասելն աստուածաբանին, այլ և այլ ընդ նմին Երրորդութեանն ունի. *քանզի*՝ անդ այլ ոմն է և այլ. զի մի՛ զդէմսն խառնակիցեմք: - 80. *Քանզի* առ իմաստութիւնն է ճանաչումն ամենայն աստուածայնոցն: - 97. *Քանզի* ներքին մասամբ ի ձեռն զգայութեանց ճանաչէ զերևելիս. որպէս քար: - 103. *Քանզի* ծնունդ սկզբնաբար ի հօրէ՛ ելանէ: - 109. *Քանզի*՝ որդի նմանագո՛յն է հօր քան զդուստր: - 109. *Քանզի* ո՛չ է ծնունդ, այլ բղխումն. որպէս շունչ և կեանք ի հոգւոյս մեր: - 109. *Քանզի* **Ժ** տասն՝ հարիւր է. և **Ժ** հարիւրն՝ հազա՛ր է. և **Ժ** հազարն՝ բիւր է: - 141. *Քանզի* դևք ո՛չ են ի վերին մասն օդոյն, զի մի խնդասցեն լուսովն. և ո՛չ ի ստորին մասն, զի մի՛ առաւել վնասեսցեն զմարդիկ: - 146. Ո՛չ մի ժամանակս կատարեալ. *քանզի* «ի ճշմարտութեան ո՛չ եկաց» ասէ տէրն...: - 147. Վեցերորդ՝ զի թէ երկինքն ո՛չ էր բոլորակ, յայնժամ արեգակն և այլ աստեղք յորժամ գային ի մէջ երկնից, մեծագոյն երևէին. *քանզի* ի միջին կիտէն երկնից առ մեզ է ուղղական գիծ...: - 183. Վասն այնորիկ յորժամ զիրս հոսականս և շարժունս չափէ՛, հա՛րկ է զի ի նոսին հոսեսցի. *քանզի* միշտ ժամանակն անցանէ և հոսի...: - 199. *Քանզի* ժամանակ ըստ ինքեան ո՛չ ճանաչի. այլ միայն մարդկային ներգործութեամբ: - 199. Դարձեալ քան զժամանակն ոչ ինչ այլայլի. *քանզի* մերթ ցուրտ է և մերթ ջերմն. ամպ և պարզ: - 199. *Քանզի* եբրայեցիք և մակեդոնացիք՝ Զաւելեաց աւուրքն դնեն գլուխ տարւոյ. և ասեն օր առաջին. և **բ**. և **գ**. և **դ**. և **ե**. և վեցն մուտ Նիսան ամսոյ. որ թարգմանի կազմութիւն: - 200. Շանթքն լինի ի մէջ գոլորշեացն որ ի մէջ ամպոյն. և ջերմութեամբն չորացեալ. *քանզի* հո՛ւր է քարացեալ: - 204. *Քանզի* միտք շարժեալ առիմաստս՝ դադարէ՛ ի ճշմարտութիւնն: - 248. Եւ երկուցն կատարումն է՛ ի յաստուած. *քանզի* նա՛ է ճշմարտութիւնն. և նա՛ է բարին: - 248. Հինգերորդ, մա՛հ անասնոց. *քանզի* **ե** զգայարանօք իբրև զանասունս եղեն և կորուսին յինքեանց զբանն: - 334. Երկրորդ՝ զի գաւազանն մովսէսի մի վիշապ եղեալ կլանէր զբազում վիշապս նոցա որ և հե՛տն միանգամայն ո՛չ երևէր. ընդէ՞ր ապա և նոցայն ո՛չ եկուլ զմովսէսին. *քանզի* սո՛ւտ էր: - 335. Եփուտն հոմանուն է. *քանզի* կոչի ուսանոց. և կոչի վիճակ: - 425. *Քանզի* ճշմարտութիւնն յառաջանայ ընդ խստութեանն: - 459. *Քանզի* առ ի կատարել զգործ արդարութեանն՝ պահանջէ ինչ և ի կողմանէ մարդոյն...: - 459. *Քանզի* պարունակէ զողջութիւնն ընդ ասելն «ողջոյն»: - 464. *Քանզի* անդ տարաւ յինքեան աստղն զարեգակն: - 469. *Քանզի* ո՛չ կարէին ի միում աւուր յերկոսեան ուխտսն կատարել զտօնսն հեռի գոլով ի միմեանց...: - 482. Իսկ թէ ուրեք առաքեալք և մարգարէք հիմն կոչին, *քանզի* նա՛խ նոքա ժողովեցան ի հաւատս և եղեն հիմունք եկեղեցւոյ, և ապա՛ զայլս ժողովեցին: - 532. Եօթներորդ՝ զի որ հպարտքն են ոչ ունին հանգիստ մտաց և մարմնոյ. *քանզի* որ քան մարդ խոնարհէ՝ այն քան հանգիստ է: - 562. Իսկ ներելի մեղքն է յանցանք փոքրագոյն. *քանզի* ի մանկունս յետ մկրտութեան նախ յառնեն ներելիքն, և ապա՛ մահու չափքն: - 567. *Քանզի* ի գործս առաքինութեան յորդորէ՛ զմեզ բնութիւն և բանականութիւն. և շնորհն յորդորէ՛ զբնութիւնն: - 578. *Քանզի* առնէ զմիտսն անյաղթելի և անփոփոխելի ի մէջ յաջողութեանց և թշւառութեանց ամենայնի: - 578. Այլ գիտելի է, զի առաքինութեամբն ուղղի հոգին ի զօրութիւնս իւր. *քանզի* խոհեմութիւնն ուղղէ զբանականն...: - 578. *Քանզի* Աղքատութիւն հոգւոյն արտաքսէ՛ զհպարտութիւնն: - 583. Խաղաղութիւնն արտաքսէ՛ զբղջախոհութիւնն. *քանզի* ընդ ճաշակելն զհոգևորն՝ անհամանայ նմա ամենայն մարմնաւոր: - 583. Աղքատութիւն հոգւոյ է՛ հրաժարիլն յաշխարհէ. այսինքն ի սիրոյ մարմնական հեշտութեանց և ի փարթամութեանց և ի պատուոյ. *քանզի* զերիսս զայս պարունակէ սէր աշխարհիս: - 583. ...*քանզի*

խաղաղարարն է առանց հակառակութեան մարմնոյ՝ աշխարհի՝ և սատանայի. յա՛յտ է զի լինիցի պատրաստ ի յաղթել զփորձութիւն մահու: - 586. Նա՛խ՝ է՛ վկայութիւն անդուստ իսկ թշնամեացն. *քանզի* ասէ ալպերտն ի յառաջին գիրքն **ժա** համարին, թէ հոգի ասեմ սրբութեան. արիւն փրկութեան. և ջուր լուացման: - 594. Եւ այս է ճշմարիտն. *քանզի* յօրհնեալ հացէն որ բաշխեաց և ետ առաքելոցն, այլ ո՛չ մնաց: - 599. Ո՛չինչ բնաւ. *քանզի* յորմէ հետէ քրիստոս ի գերեզման եդաւ ամենայն հողք օրհնեցան...: - 678. ...*քանզի* յորժամ սրբի հոգին՝ բնական ունի զպայծառութիւնն: - 696. ...*քանզի* մեծամեծ և խստագոյն չարչարանս տացէ պաշտօնէիցն աստուծոյ: - 708. *Քանզի* լեառն ծիթենեաց նշանակէ՛ զողորմութիւնն որ մե՛րձ է ի ծորն այն: - 738. Որք որպէս գիրք յայնժամ բացեալք եղիցին. *քանզի* վարդապետութիւնք նոցա և օրինակք՝ ամենեցունց յայտնեսցին. ի յորս ամենեքեան իբրև ի գիրս տեսցեն թէ զի՞նչ պարտ էր առնել կամ խոտել ինքեանց: - 742. Նա՛խ՝ *քանզի* մեղանչեաց յիւր յաւիտեանին, արժանապէս պատժի ի յաւիտենին աստուծոյ: - 744. *Քանզի* որպէս փայտն այն ասի քան զայլ փայտս դրախտին կանաչագոյն: - 755. Եւ *քանզի* մովսէս որ ջրային կամ ի ջրոյ հանեալ թարգմանի...: - 756. Այլ *քանզի* վարդապետաց մերոց և մեծաց է ասացեալ բանքն՝ ո՛չ ընդդիմանամք: - 759. *Քանզի*՝ ունիցի մարմինն Զգեղեցկութիւն. Զարագութիւն. Զուժգնութիւն. Զազատութիւն. Զկամաւորութիւն. Զառողջութիւն. և Զանմահութիւն: - 761. Երրորդ ուրախութիւնն եղիցի ի տեսութենէ միաւորութեան մարդկային բնութեանն առ աստուածայինն. *քանզի* սքանչելի ուրախութիւն լինիցի ընտրելոցն, յորժամ ճանաչիցեն թէ եղբայր նոցա ըստ մարմնոյ՝ ճշմարիտ աստուած է: - 763. *Քանզի* մարմինս ո՛չ ըմբռնեսցի կամ իւրն ծանրութեամբ կամ այլ մարմնոյ ընդդիմահարութեամբ: - 766

**ՔԱՆԻ +** *Քանի*՞ է եղանակ աստուածաբանութեան: - 102. *Քանի*՞ են յաւիտեանք: - 115. *Քանի*՞ հրեշտակապետի անուն ասի կամ մեկնի: - 144. Զո՞ր ձև ունի երկինք. և *քանի*՞ է: - 154. Վասն ջրայնոց և թռչնոց և սողնոց. և թէ *քանի*՞ ազգեն կենդանեաց: - 155. *Քանի* ի՞նչ է պարագրող մարմնոյ: - 174. *Քանի*՞ են երկինք: - 183. Հինգերորդ՝ զի տեսցուք և իմասցուք թէ արտաքին սրահն երկնից այսպէս է զարդարուն. *քանի*՞ առաւել ներքին կողմն սրբութեան իմանալեացն դասուց: - 188. *Քանի*՞ են ազգ պտղոց: - 213. *Քանի*՞ ազգ են կենդանեաց: - 216. *Քանի*՞ են գլխաւոր արարածք: - 226. *Քանի*՞ են պահապանք աչաց լուսոյն: - 239. *Քանի*՞ են զօդուածք և ոսկերք մարդոյն: - 243. Դարձեալ ըստ կարգիս հարցանեմ թէ յո՞րժամ, և ի *քանի*՞*ս* սկսանի ներգործել տնկականն և զգայականն և բանականն: - 261. Քսանև**ը**՝ *քանի*՞ ամ ծառայեցին. և յորո՞ւմ աւուր ելին: - 283. Եւ *քանի*՞ անգամ ել ի լեառն. և **գ** քառասուն պահեաց. և **դ** ծնունդն մովսէսի: - 284. Երեսուն**թ**՝ Թէ *քանի*՞ են պատարագ հնոյն: - 284. *Քանի*՞ են պարարտութեան աստիճանք և նիւթ լուսոյ: - 285. Եւ թէ՝ *քանի*՞ ամաց պատմութիւն է **ե** գիրքն մովսէսի: - 285. *Քանի*՞ օր կացին ի տապանին: - 294. *Քանի*՞ ամ եկաց ի փորձութիւնսն: - 326. Յաբրահամէ՛ ի մովսէս *քանի*՞ ազգ է: - 330. *Քանի*՞ ամ կացին ի ծառայութիւն: - 337. Յորո՞ւմ աւուր ել ժողովուրդն յեգիպտոսէ, և *քանի*՞ ամ էր յադամայ: - 337. *Քանի*՞ անգամ ել ի լեառն մովսէս: - 352. *Քանի*՞ սեղան էր ի խորանին: - 364. Որ նշանակէ՛ սերմն զգործն. որ *քանի* ի մեզ է՝ ո՛չ է պիղծ. և յորժամ գործի՝ պղծէ՛: - 369. *Քանի*՞ են արատք արգելք քահանայութեան: - 370. *Քանի*՞ էր տօնք ի հինն: - 372. *Քանի*՞ է հասակ մարդոյս: - 378. *Քանի*՞ առաւել որք յաստուած՝ և ի մովսէս մեղան որ աստուած կոչեցեալ էր և իշխան ժողովրդեանն: - 381. Որ և միով հպմամբ ի լանջսն՝ մաքրեցաւ աշակերտն յայսպիսի կրից. *քանի*՞ առաւել որ եբարձ զապականութիւնս ազատ լիցի յայսպիսի կրից: - 383. Ութերորդ՝ զի թէ փրկիչն տկարացաւ զի մարդ եղև, *քանի*՞ առաւել սուրբքն: - 386. *Քանի*՛ ամաց պատմութիւն է **ե** գիրքս մովսէսի: - 411. Երեսունք, Սուրբ գիրք ամէնն *քանի*՞ տուն է: - 413. *Քանի*՞ տուն է աստուածաշունչ գիրքն ամենայն: - 451. Եւ գոյացութիւն մկրտութեանս մերոյ. և *քանի*՞ է եղանակ մկրտութեան: - 454. *Քանի*՞ է մասն խաչին. և *քանի*՞ է բևեռն: - 454-455. *Քանի*՞ են դժոխք զոր աւերեաց առհասարակ և ազատեաց զհոգիսն: - 455. Եւ թէ *քանի*՞ ժամս եկաց ի գերեզմանի: - 455. Եւ *քանի*՞ են զատիկք: - 455. *Քանի*՞ եղանակաւ ծնունդ ասի քրիստոսի: - 471. *Քանի*՞ է եղանակ մկրտութեան: - 488. *Քանի*՞ եղեն նշանք ի խաչելութեանն: - 490. *Քանի*՞ են նշանք ի խաւարիլն: - 490. Ի *քանի*՞ տեղ յոյժ անարգեցաւ քրիստոս ի ժամ չարչարանացն: - 492. *Քանի*՞ բևեռ է խաչին: - 495. Դարձեալ ասեմք, եթէ միով հպմամբ լանջացն յիսուսի մաքրեցաւ աշակերտն յայսպիսի կրից. *քանի*՞ առաւել բարձօղն ապականութեանց ազատ լիցի յայսպիսի կրից: - 502. *Քանի*՞ են դժոխք: - 504. Յորո՞ւմ ժամու յարեաւ քրիստոս. և *քանի*՞ ժամ եկաց մեռեալ: - 512. Իսկ թէ *քանի*՞ ժամս եկաց մեռեալ: - 515. *Քանի*՞ են մարիամք զոր յիշէ աւետարանն: - 516. *Քանի*՞ են զատիկք: - 524. *Քանի*՞ ազգ

պարզև ետ հոգի սուրբ՝ առաքելոցն: - 524. Թէ *քանի՞* են ժամ աղօթից: - 527. *Քանի՞* են օրէնք: - 528. *Քանի՞* եղանակ է առաքելութեան: - 535. *Քանի՞* է վարդապետութեան եղանակ: - 537. *Քանի՞* են իշխանութիւնք ամենայն: - 537. *Քանի՞* են աստիճանք հաւատոյ: - 572. *Քանի՞* է տրտմութիւն և խնդութիւն: - 584. ...ապա *քանի՞* դատապարտութիւն է հրաման տալ նոցա և ի գործ քահանայութեան յանդգնիլ: - 590. *Քանի՞* են գոյացականք պատարագին: - 597. *Քանի՞* անգամ խունկ արկանեն յեկեղեցին: - 618. *Քանի՞* են ժամք աղօթից և ո՞րք: - 621. *Քանի՞* է սուրբ աստուածն ի բոլոր տարին: - 634. *Քանի՞* են ուքօրեայ տօնք ի բոլոր տարին: - 649. *Քանի՞* են փոփոխմունք ժամատեղաց կարգաց ի բոլոր տարին: - 649. Ի տարին *քանի՞* օր պահք է: - 649. Երեսունևք, *Քանի՞* են թիւք տանջանաց անդ: - 661. Զի թէ զչգոյն կոչէ ի գոյ և լսեն նմա, *քանի՞* առաւել զգոյն ի գոյից ժողովէ և նորոգէ: - 714

***ՔԱՆԻ՞ ԵՒՍ +*** Զի թէ աստուածայինքն ամենայն որք շուրջ զավ՝ են անհպելիք. *քանի՞ ևս* անզննելի իւրն էութեան և եղելութեան աստուածն քանի: - 456. Վեցերորդ, զի թէ կինն կարէ մկրտել ի հարկաւոր ժամանակի, սուրբն գրիգոր լուսաւորիչն *քանի ևս* առաւել պատւական էր քան զմի կին...: - 589. ...զնոյն և ամենայն հեթանոսք առնեն. իսկ թէ ի հեթանոսս այսպիսի պարկեշտութիւն պարտ էր առնել, *քանի՞ ևս* առաւել յեկեղեցիս պարտ է լինիլ. որ է ճշմարիտ կարգաւորութիւն և սրբութեան օրէնք: - 589. ...*քանի՞ ևս* առաւել հերձուած մեծ է կանանց ...հրաման տալ զգործ քահանայի առնել որ ազատա՛ց է և ո՛չ ծառայից: - 589

**ՔԱՆԻ՞Ս, ՔԱՆԻ՞ՑՍ +** *Քանի՞ս* բաժանի կեանքն: - 116. Եւ ի միւս տարին ի նոյն *քանիս* ամսոյն որ մտին ի նոյնն ելին ի տապանէն: - 294. Եւ տէրն վերջին ի լրումն օրինին ի նոյն *քանիսն* եղեալ հրամանին. զի ո՛չ ելոյծ զօրէնսն, այլ էլից: - 305. Ի *քանի՞ս* բաժանի մարգարէութիւնն: - 536. *Քանի՞ցս* անգամ խօսեցաւ աստուած ընդ հարսն ամենայն: - 412. Վասն որոյ և մեք միշտ ի նոյն *քանիս* ամսոյն սուրբ խաչին և եկեղեցւոյ տօն կատարեմք: - 617. Մահն ի *քանի՞ս* բաժանի: - 668

**ՔԱՆԻՈՒԹԻՒՆ +** Պատասխանեմք թէ՝ ամենայն թիւ ո՛չ բնութեան է յայտնիչ՝ այլ *քանիութեան* ներքոյ արկելոյ թւին: - 54

**ՔԱՆՈՆ +** Ստուգաբանութեամբ կոչի կանոնն *քանոն*. այսինքն ուղղութիւն և կարգ և օրէնք: - 538

**ՔԱՆՔԱՐ +** Բազում ողորմ առ բազմապարտ դարձեալսն ի մեղաց. որպէս պարտապանն բիւր *քանքարոյ:* - 351. Իսկ ի կիրակէի խնկարկելն և **ժ** օրհնութիւնն՝ նշանակէ զտասն քաղաքացն իշխանութիւն ունել. և **ժ** *քանքարացն:* - 628. Նոյնպէս և յառակս որ *զքանքարն* ետ և զննասն. յետոյ եկն և արար խնդիր: - 693. Եթէ ումեք տւեալ իցէ շնորհ հասարակ կամ յատուկ, որպէս մկրտութիւնն և հաւատքն. *քանքար* և տաղանդ...: - 747. Որոց սկիզբն է հաւատն առ մկրտութեամբն. և կատարումն հայի առ գործն. և սոքա փոփոխականք են ըստ *քանքարացն* յարգելոյ և պակասելոյ: - 783. Իսկ որք զմի *քանքար* հաւատոյ կամ զմկրտութեանն շնորհի ի բաց կորուսանեն, ո՛չ զկնիքն խորհրդապէս, այլ զարժանն վարձու իրողապէս: - 783

**ՔԱՋ (ուժեղ, կորովի) +** Որք դարձուցեն զսիրտ հարց յորդիս ըստ մաղաքիայի. այսինքն ուսուցանեն զհաւատն փրկչին զոր հարքն ունէին. և է՛ վարձաւորելի և կարի *քաջ*. և թէ այսպէս և թէ այն՝ քրիստոս քարոզի: - 785

**ՔԱՋ (կարի, յոյժ) +** Թէ լինի սակաւ մի մեղուշագոյն, արդարամիտ է և *քաջ* ուշիմ: - 246. Իսկ բանին աստուծոյ *քաջ* սիրով եռացումն ընդ մարմնոյ անբաժ և անորիշ գործեաց միաւորութիւն: - 478. Եւ զերկրորդն ղուկաս պատմէ՛ վաղ *քաջ* ընդ առաւօտն. և տեսին արք երկու լուսազգեցք. և զվէմն թաւալեալ: - 515. Չորրորդ՝ մնացուած պատարագին. որպէս ինքեանք *քաջ* գիտեն: - 553. Եւ առ այս եկն սով *քաջ*՝ զուգակշիռ հասարակութեանց մեծատանց և աղքատաց: - 789

**ՔԱՋ (դյուցազուն, հսկա) +** Իններորդ՝ ցուցանէ թէ ո՛չ է այն անդրանիկն որ նախածին լինի և մարմնովն *քաջ*. զի ո՛չ հաճի տէր ընդ իրանս առն հսկայի. այլ անդրանիկ է այն՝ որ զհաճոյսն աստուծոյ կատարէ: - 310

**ՔԱՋՔ (դև, այս) +** Յաւերժահասունք և *քաջք* և այլն, զի՞նչ են: - 150. Եւ որք՝ ի վէմս իշխեն՝ *քաջք* կոչեցան: - 150

**ՔԱՋԱԲԱՆ +** Այլ որ **ճծ** ամաւ յառաջ եկին ի հայք՝ ասորիք արք *քաջաբանք*, և կամեցան սերմանել զաղանդն նեստորի. որք նզովեալ որոշեցան. բայց ոմանք ընկալեալ էին և թարգմանեալ ի նոցանէ գիրս սուտս, Զգօրտոսակ. Զկիրակոսակ. Զպղի տեսիլն: - 545

**ՔԱՋԱԼԵՐԻՄ +** Իններորդ՝ զիա՞րդ զարհուրեցաւ կինն յետ երդմանն, և անկաւ յերեսս մինչ

*բաջալերեաց* սաւուղ և եհարց: - 428. Վեցերորդ՝ ընդէ՞ր ոչ *բաջալերեաց* զնա ասելով, եթէ մեռանիս՝ վիուկդ յարուցանէ՛ զքեզ որպէս զիս: - 429

**ՔԱՋԱՆԱՄ +** Դրոշմն է հաստատութեան խորհուրդ. որ տուեալ լինի առ ի զօրացնել և *բաջացնել* զմարդն: - 593

**ՔԱՋԱՍԻՐՏ +** Զի ասեն եթէ՝ ոգի արուին է՛ փոյթ և *բաչասիրտ*. իսկ կին՝ ողորմած և երկչոտ: - 246. Ջօրութեամբն *բաջասիրտք:* - 583

**ՔԱՌ +** Եւ բոլորակ ձևն պա՛րզ է քան զամենայն ձև. զի եռանկիւնին յերից գծից բաղկանայ, և քառանկիւնին ի *քառից*. նոյնպէս և այլքն: - 182. Դարձեալ **թ** խառնուա՛ծ է չորից տարերց ըստ կրկին *քառից* որակաց առաւել և նուազ, և իններորդն հաւասար է որ է ի մարդն. վասն որոյ ինն ամսեայ ծնանի: - 264. Եւ այս աղէտ անզերծ տարակուսից շրջապատեալ զմեզ շրջագայութեամբ տօմարի հայկազեան սեռից, հարիւրից կրկնակի՛ *քառից* և վեցեա՛կ վեցից: - 789

**ՔԱՌԱԴԷՄ +** Նա՛խ՝ *քառադէմ* կառքն եզեկիէլի, և տէր բազմեալ ի վերայ: - 494

**ՔԱՌԱԹԵՒ +** Դարձեալ տապանակն քառակուսի անփուտ՝ է՛ խաչն *քառաթև* անապական աստուածընկալ: - 345. *Քառաթև* էր խաչն. և փայտ էր խաչն: - 454. Զի՞նչ նշանակէ *քառաթև* խաչն. երկայն, և լայն, խոր, և բարձր: - 493. Դարձեալ՝ նշանակութիւն *քառաթև* խաչին...: - 494. Սեղան ողջակիզացն, և սեղան սրբութեանցն և սեղան խնկոցն. ամենայն քառակուսի նշանա՛կ են *քառաթև* խաչին յիսուսի: - 494

**ՔԱՌԱԿԱԲԱՐ +** Գիտելի՛ է, զի *քառակաբա՛ր* ասի անեղ: - 113

**ՔԱՌԱԿԵՐՊԵԱՆ +** Տասներորդ՝ յատուկ առանձնապէս տըպաւորութիւնք խորհրդական. որպէս քերօբէքն բազմաչեայք և ընդ թևեանք. և սերօբէքն սրբաբան՝ ընդ աթոռոցն *քառակերպեան:* - 138

**ՔԱՌԱԿԻ +** *Քառակի՛* էր անօթ խաչին: - 454. Իսկ ամօթն *քառակի* էր: - 490. Եւ ըստ ներգործութեանն սահմանի *քառակի:* - 575. Չորրորդ վասն մարմնոյ փառաւորութեան *քառակի* լիցի ուրախութիւնն: - 764

**ՔԱՌԱԿՈՒՍԻ +** Իսկ *քառակուսի* և չափաւոր մեծն՝ իմաստուն է և մեծահոգի: - 246. Կլափն որ չափաւոր է և *քառակուսի*՝ օգո՛ւտ է: - 247. Դարձեալ՝ տապանն չորեքկուսի՝ է՛ սուրբ խաչն *քառակուսի*. որ ժողովէ՛ յերկրպագութիւն իւր յամենայն ազգաց և լեզուաց: - 294. Դարձեալ տապանակն *քառակուսի* անփուտ՝ է՛ խաչն քառաթև անապական աստուածընկալ: - 345. Սեղան ողջակիզացն, և սեղան սրբութեանցն և սեղան խնկոցն. ամենայն *քառակուսի* նշանա՛կ են քառաթև խաչին յիսուսի: - 494

**ՔԱՌԱՁԵՒ +** Զի որպէս փայլակն ելանէ յարևելից ի վերայ լուսեղէն ամպոյ, և *քառաձև* լուսովն լնու զչորս կողմ աշխարհի և հաստատի ի գողգոթայ յորում խաչեցաւ տէրն: - 732

**ՔԱՌԱՆԿԻՒՆԻ +** Երրորդ վանկն, ոչ են և ո՛չ ասին ի յէքս, ոչ եղեալքն ո՛չ ասին. և ո՛չ գունտն *քառանկիւնի*. կամ մարդս պարզ: - 55. Եւ բոլորակ ձևն պա՛րզ է քան զամենայն ձև. զի եռանկիւնին յերից գծից բաղկանայ, և *քառանկիւնին* ի քառից. նոյնպէս և այլքն: - 182. Հինգերորդ՝ թէ երկինքն ո՛չ էր բոլորակ՝ այլ *քառանկիւնի* կամ եռանկիւնի, յորժամ շարժէին անկիւնքն՝ յորմէ տեղւոջէ վերանային՝ մնային առանց տեղւոյ. և տեղի անկեանցն առանց մարմնոյ: - 183

**ՔԱՌԱՍՆՈՐԴ(Ք) +** Այլ ըստ ոմանց՝ տօն քաւութեան որթագործութեանն, նշանակէ ի մեզ զտօն մեծ *քառասնորդացն* պահոց: - 373. Թէպէտ այսօր վասն պատրանաց մարդկան և փոխելոյ զտօնս՝ ոչ ինչ ուտեն զնաւակատեաց որ է ձուկն. զոր միշտ *զքառասնորդ* պահքս պղծեալ են ձկամբ և արբեցութեամբ: - 509. որպէս այնք որք խոստովանին ի մուտս *քառասնորդաց* պահոց. որպէս ասէ եսայի: - 602. Եւ այսպէս բազում են խորհուրդ *քառասնորդացն*. և ըստ խորհրդոցն պահքն ո՛չ լուծանի: - 651-652. Իսկ վասն հիմնարկութեան սուրբ տաճարի և ժամահար օրհնելոյ. սկիհ և մաղզմայ. և զգիրք. և զկնունք առնելոյ. և խաչօրհնելոյ. և *զքառասնորդաց* **գ** ժամուց զքարոզքն և զաղօթսն, յոհան մանդակունին է արարեալ...: - 659

**ՔԱՌԱՍՆՕՐԵԱՅ +** Երկրորդ, *քառասնօրեայ* պահելով էառ զ**բ** տախտակս և խորտակեաց: - 352. Իսկ զվարդավառին և զփոխմանն տօն՝ ի նորո՛յս է աւանդեալ. որպէս ողոգոմեանն, և *քառասնօրեայ* գալստեանն: - 373. Եւ *քառասնօրեայ* օրէնք ետ մովսէս...: - 374. Չորրորդ՝ զի ուտելով և ըմպելով անփոյթ առնէին զուխտաւորս ի հեռուստ եկեալ *քառասնօրեայ* մանկամբ և այլ ուխտիւ. և յանձրև և յարև և ի ցուրտ վաստակէին: - 425. Եւ այն ևս սքանչելիք, որ ի փոքրագոյն մարմինն ընկալեալ եղև հոգի բանական, և տեսակաւորեալ որպէս *քառասնօրեայ* մանուկ յարգանդի: - 470. Երկրորդ՝ ընդ մտանելն

յարգանդ բանին՝ շնչաւորիլն և գտանիլն որպէս *քառասնօրեայ:* - 471. Հինգերորդ՝ բանալ դրանն ի գնալն *քառասնօրեայ* ի տաճարն: - 471. ...զի *զքառասնօրեայ* գալուստն ի տաճարն՝ ըստ ծննդեանն տօնեսցեն և ո՛չ ըստ յայտնութեանն. որ է՛ յունվարի վեցն. զոր մեք տօնեմք **խ** օր թուեալ մինչև ի **ժդ**ն փետրվարի: - 485. Յերկրորդ ամին աստուածածինն տպացաւ ի սեանն, և *քառասնօրեայ* մանուկն յիսուս ի գիրկն. և խաչ ծիրանի յերկոսին ձեռինն: - 485. Անսուաղ՝ զպահքն *քառասնօրեայ:* - 491. Դարձեալ՝ մահն խառնեա՛լ է ընդ բարւոյ. և ապականութիւնն ամենևին չար. որպէս ցուցաւ ի գիրս *քառասնօրեայ* գալստեանն և մահուն սիմէօնի...: - 498. Երկրորդ «որ եկիր և գալոց ես». *քառասնօրեայ* գալստեանն, և ծաղկազարդին, և բուն յինանց կիրակմտին զա՛յս ասա: - 634. Հայր ի յորդանան բնութեամբ որդի իւր դաւանեաց. և մանկունքն ի *քառասնօրէին* և յողոգոմին: - 638. Երրորդն գալստեան. թէպէտ յայլ և այլ աւուրս. որպէս *քառասնօրեայն*, և յաւանակաւն, և յինանց կիրակմտիցն: - 649. Երրորդ՝ քանակաւ հասակին. զի իւրաքանչիւր ոք յիւրն երեսնամեայ յարիցէ. որպէս հարիւրամեան անցեալ և *քառասնօրեայ* մեռեալ. որ լինելոց էր երեսնամեայ, ի նոյն հասակն յառնեն: - 726

**ՔԱՍԲԻ** - Նա՛խ՝ զի վրէժխնդիր եղև օրինացն աստուծոյ. որպէս փենէհէզ սպան զզամբրի և *զքասբի*. և սամուէլ զագագ: - 444

**ՔԱՐ +** Երկրորդ՝ զի թէ ի ներկայս ասեմք ի վերայ *քարի* թէ լինիցի փայտ. ո՛չ լինի այնպէս...: - 8. Նախ՝ թէ ըստ այդմ բանի հա՛րկ է ապա և քեզ ջուր լինիլ և զջուրն գիտել. և *քար* լինիլ և *զքարն* ճանաչել, և զայլսն նոյնպէս: - 17. Քանզի ներքին մասամբ ի ձեռն զգայութեանց ճանաչէ զերևելիս. որպէս *քար:* - 103. Ութերորդ՝ ի թանձր և ի կարծր նիւթն անգործ մնայ. որպէս ի *քար* և ի հող: - 185. Քսանէ՝ *զքարինս* փորէ՛: - 207. ...և հուրն և հողն՝ կայծն ի վայր անկեալ *քար* լինի: - 214. Եւ որպէս ոսկին յերկրէ՛ է և անապական. և *քարինք* կարծրացեալ ի հրոյ և անապական մնան: - 225. Իսկ ամպք և հողմունք ի յօդոյն են. որպէս *քարինք* և երկաթք յերկրէ. սոյնպէս աղբիւրք և գետք ի ծովէ՛: - 227. Վեցերորդ՝ այլ և ոսկերքն նման են *քարանց:* - 232. Տեսակաւ, որպէս մարդ և *քար:* - 236. Չորրորդ՝ զի ո՛չ է այն մեռելութիւն միայն՝ որ բանականն կամ շունչն պակասի. այլ և որ տնկականն պակասի. որպէս *քար*. ա՛յն է իսկապէս մեռեալ: - 256. Զորօրինակ՝ արուեստաւոր ոք կամիցի դրօշել ի քարեայ պատկեր, նախ նկարէ՛ ի միտս իւր զձև պատկերին. և ապա հատանէ *զքարն* և տաշէ՛ և դրօշմէ՛ զկերպն ըստ այնմ նմանութեանն որ էր ի միտս ծնացեալ: - 258. Զգոյն ունի ընդ *քարանց:* - 275. Եւ դարձեալ՝ այլազգին զիոգին իւր սպանեալ է մեղօք. և մեռելոյ զենեալն ո՛չ ուտի. որպէս ի *քարէ* անկեալն կամ ի կարկատէ՛ հարեալն ո՛չ ուտի: - 296. Եւ էր թրծեալ աղիւսն ի տեղի *քարի*, և կուպրն ի տեղի շաղախի: - 296. Չորրորդ՝ վասն անհաւատութեան եղև *քար*. զի ո՛չ հաւատաց հրեշտակացն: - 303. Նոյնպէս և անունն սահմանէ կարճառօտ՝ յայտնիչ բնութեան իրին. որպէս մինչ ասեմք մարդ, *քար*, յայտնեցաւ բնութիւնն: - 311. Չորրորդ՝ զի մի՛ ջնջեսցի ի հրոյ կամ ի ջրոյ ի *քարի*՛ գրեաց: - 349. Երկրորդ՝ զենլին. զի լիցի կենդանի. զի մեռեալն՝ և անկենդանն որպէս *քար*՝ ո՛չ զենի: - 365. Նա՛խ՝ զի իցէ կենդանի յորմէ ելցէ արիւն. իսկ մեռեալն կամ անշունչ *քար* ո՛չ ունի արիւն: - 366. Ապա յա՛յտ է թէ՝ որ անկանի ընդ *քար* կամ ի վիհ և մեռցի, ո՛չ է ուտելի: - 366. Եօթներորդ՝ զի միտքն զախտն շարժէ ի չարն. և ո՛չ ախտն զմիտքն. որպէս ասի, խորհուրդք ծերոց *զքարինս* պատառեն: - 377. Դիւթ է՝ որ ձեռօք և նիւթո՛վ գործէ. որպէս գարի, և ալիւր, և աւազ, և ջուր, և *քար*. և այն որ թզով չափէ, և այլն ամենայն: - 388. Երրորդ, վասն վերջնոցն լաւութեան ընտրեցան և խոտանքն. որպէս զիող *զքար* և զխեցցէ մորթն պատուեմք վասն ոսկւոյ և արծաթոյ և մարգարտին: - 398. Նմանապէս և **բժ**ան *քարինքն* հանեալ ի ցամաք և կանգնեալ սեղան՝ հաւատացեալքն են...: - 415. Եւ **բժ**ան *քարինքն* դարձեալ ի գետն եղեալ, նշանակէ՛ զմեղս ի խորս անդնդոց ընկղմեալ: - 415. Այլ և *քարինք* բազումք էին ի վեր և ի վայր՝ բաց ի յունաց յոր անցանէին. որ կրթեալ և սրբեալ էին: - 415. Էառ *զքարինսն* յօրինակ աշակերտաց կրթութեանն որ լինի ապա՛ պիտանի: - 415. Հնգետասաներորդ, **ե** ողորկ *քար* էառ ի մախաղն. **ե** զգայութիւնք անբիծ և անարատ մարմնոյն: - 436. Եօթնէ**ժ**, անդ միով *քարամբ* էհար. և աստ մի բանիւ բերանոյ ի պարսէ՛ լեզուին: - 436. Չորրորդ՝ նա՛ վասն *քարի* և փայտի պատմէր. և քրիստոս վասն արքայութեանն: - 442. Տասներորդ՝ զի սողոմոն ի *քարանց* ձեռագործաց կազմէր տաճար աստուծոյ. իսկ քրիստոս զբանական հոգիս մարդկան շինէր օթևան սուրբ երրորդութեանն: - 442. Զոր օրինակ ի բարձր ուստէք *քար* հոլովեսցի, և որ մօտն կացցէ ասէ ցնա՝ երթալ ունիս մինչ ի ներքին վայր տեղիս և ապա դադարիս: - 497. Եւ հո՛մանուն է. զի եկեղեցի է շինեալն ի *քարանց*, և եկեղեցի է հաւատացեալ ժողովուրդն: - 532-533. Երկրորդ, մի անուն՝ և նշանակեալքն բազումք. որպէս խոյ է յերկինս և յերկրի և ի ծովս. նոյնպէս մի կոչի եկեղեցի կենդանի մարդն և շինեալն ի *քարանց* և եկեղեցին անդրանկացն

յերկինս. սակայն զանազա՛ն են որպիսութեամբ: - 533. Եւ լաւ է մի ակն պաուական՝ քան զբազում *քարինս* անպիտան: - 551. Նա՛խ՝ որպէս նա ի *քարանց* և յայլ նիւթո՛ց է ժողովեալ: - 613. Հինգերորդ, ի սմա՛ երկոտասան *քարինք* հիմնարկեալք. և բժան լուսանցոյց ի խորհուրդ մարգարէիցն և առաքելոցն...: - 614. Երկրորդ՝ զի նիւթ սորա է՛ ի *քարանց* արտաքին և ի փայտից որ կոխան է եղեալ անասնոց և անսրբոց...: - 615. Եւ վկայ այսոցիկ ի մամեստիայ գտեալ *քարն*. յորում գրեալ էր յունարէն գրով, «սուրբ աստուած սուրբ և հզօր սուրբ և անմահ որ խաչեցար վասն մեր ողորմեա՛ մեզ»: - 632. Այլ և *զքարինքն* մարդաչափ ասեն: - 639. *Քար* գերեզմանին և կնքելն: - 660. Զի՞նչ է *քար* գերեզմանին: - 679. Երկրորդ, զի *քարն* անպտուղ՝ ցուցանէ զանգործութիւն մեռելոյն: - 679. Երրորդ, և որպէս այն *քար* անպիտան է գործոյ, նոյնպէս և մեռեալն անպիտան է աշխարհի: - 679. Չորրորդ, անշա՛րժ է *քարն*, ցուցանէ զանշարժութիւն մեռելոյն...: - 679. ...այսպէս և *քար* տապանիս մեր լիցի. նշանակէ՛ զանապական յարութիւնն. որ վիմածին լինիմք և առանց ապականութեան որպէս քրիստոս. և ո՛չ հողածին ապականացու որպէս զառաջին ադամն: - 679. Եօթներորդ՝ վասն բարձրութեանն ի ջանուց մշակաց. զի որ քան առաւել բրի ի ներքոյ երկիրն և *քարինս* դնի, այն քան առաւել բարձրանայ: - 766. Ոչ այլ ինչ գոլով սիւն աշխարհի զգալապէս, բայց միայն բազմութիւն լերանց և *քարանց*: - 788. Նոյնպէս և *քարինք* արծանացեալք հաստատութիւն է երկրի. զոր աշխարհ կոչեմք ի մասնէ՛: - 788

**ՔԱՐԱՀԱՏ +** Եւ *քարահատք* և բեռնակիրքն ծծռ՝ յայլազգեացն եկամուտք էին: - 440

**ՔԱՐԱՆԱՄ +** Շանթքն լինի ի մէջ գոլորշեացն որ ի մէջ ամպոյն. և ջերմութեամբն չորացեալ. քանզի հո՛ւր է *քարացեալ*: - 204. Եւ ի ձայնէն վէմք պատառեալ և երկիր շարժեալ, տեղի ետուն իջանել ի նոսա՛. և *քարացեալ* սիրտ նոցա ո՛չ շարժեցաւ: - 490

**ՔԱՐԲ +** Եւ սողնոց Օձն արքայեկ. զոր իժ և *քարբ* ասեն: - 216

**ՔԱՐԵԱՅ, ՔԱՐԵՂԷՆ +** Որպէս կրիտէս թագաւորն կրէատացւոց կախեաց ի մէջ տաճարին անդամանդ *քարեայ* ամենայն ուստէք ըմբռնեալ: - 180. Զորօրինակ՝ արուեստաւոր ոք կամիցի դրօշել ի *քարեայ* պատկեր, նախ նկարէ՛ ի միտս իւր զձև պատկերին. և ապա հատանէ զքարն և տաշէ՛ և դրօշմէ՛ զկերպն ըստ այնմ նմանութեանն որ էր ի միտս ծևացեալ: - 258. Եւ դարձեալ՝ որպէս ծու հաւի և ծու *քարեայ*՝ նման ասին միմեանց, այլ ո՛չ պատկեր. զի ո՛չ են ի միմեանց ելեալ. և ո՛չ զնոյն էութիւն ունին: - 273. Երեսունևև, *Քարեղէն* տախտակն. և խորտակելն: - 284. Վասն է՞ր կրկին *քարեղէն* տախտակս: - 349. Զի թէ լինիցի *քարեայ* սուր, որպէս գայլախազ, որով սպանեաւ աբէլ. ո՛չ է պիտանի: - 366. Հինգերորդ՝ գրեաց յեսու զօրէնս ի *քարեայ* արձանս հեթանոսաց: - 417. Քսանբ, եհար *քարեայ* կարկտիւ ի պատերազմի: - 419. Հինգերորդ, զի և նախահարցն *քարեայ* էր գերեզմանն. աբրահամու. սահակայ. և յակոբայ. նոյնպէս և գերեզման տն. և կափարիչ վեմն...: - 679

**ՔԱՐԹՈՇ -** Ասեմք եթէ՝ մողեզն և կոկորդիլոսն որ *քարթոշ* ասեն, և յերկրի ազգի ազգի զեռունք արիւն ո՛չ ունին: - 511

**ՔԱՐԿՈԾ +** Երկրորդ՝ ի լեառն սինա թէ անասուն մերձենայր *քարկոծ* լինէր: - 617

**ՔԱՐԿՈԾԵՄ +** Նա՛խ՝ զի կամէին *քարկոծել*: - 386. Անառակ որդի որ անհնազանդ լինէր ծնողացն, օրէնքն *քարկոծել* տայր: - 400. Պոռնիկն ըստ այսմ որ շնացօղ է թէ կին և թէ այր՝ *քարկոծէ՛ր* օրէնքն: - 401. Չորեքտասաներորդ՝ նա *քարկոծեաց* զաքար ազգականօք. և զռահաբ փոխանակեաց իւր ազգօքն: - 418. Հինգերորդ՝ զի մի՛ դատապարտեսցի իբր անժուժկալ. զի էր ի քահանայական ցեղէն. և այսպիսիքս այրեալ լինէին. իսկ այլ շնացօղք *քարկոծեալ*: - 461. ...զի վասն բոլոր ժողովրդեանն մին էր զուարակ. և վասն միայն քահանայապետին մին. և զշնացեալ դուստր քահանային այրէին. և զժողովրդեանն *քարկոծէին*. և վա՜յ ինձ զի անձամբ զանձն իմ դատապարտեմ: - 563. Եւ օրէնս եդ նոցա թէ որ զաստուած անարգէ՝ *քարկոծեսցի*: - 566. Եւ զի խիստ էր հայհոյութիւնք նոցա, խստագոյնս *քարկոծեցան* տանջանօքն յաւիտենից: - 566. Եւ տե՛ս յօրինակաց. զի չնչին գողութիւնն, զաքար իւր զարմիւքն *քարկոծեաց*. և կրկուտ քաղելն զայրին: - 745

**ՔԱՐԿՈԾՈՒՄՆ +** Ութերորդ՝ թոյլ տալով սրբոց չարչարիլ՝ վասն պսակացն առաւելութեան է. զի կենցաղս այս հանդէ՛ս է նահատակութեան. և ըստ չափոյ համբերութեան՝ առցէ զյաղթանակն. որպէս սրբոյն ստեփաննոսի. զի ունէր զսարկաւագութեան և զառաքելութեան պատիւն, ընկալաւ և զմարտիրոսութեան պսակն ի *քարկոծումն* իւր...: - 159. Իսկ *քարկոծումն* այն է, որ անզեղջն ի մեղաց՝ արտաքսի՛ յեկեղեցւոյ և անիծանի: - 385

**ՔԱՐՇԵՄ +** Ութերորդ՝ է՛ անկարգ ախորժակն. որ *քարշէ՛* զմիտսն առ ներհակս հաւատոյն...: - 32.

Զի որպէս գիջակնութիւնն չտայ թոյլ տեսանել յստակ, այսպէս երկիւղն յետս *քարշէ* զբազումս ո՛չ հաւատալ ի քրիստոս...: - 32. Իսկ թէ յոչ կամայ, այլ ուրեմն բռնադատութեամբ *քարշեցաւ* յաստուածութիւն. և բարձեր զանսկզբնութիւն նորա: - 36. Չորրորդ՝ բանական քննութիւն զճշմարիտն ընդ մտա՛ցն *քարշէ*. իսկ հաւատոյն՝ միտք ընդ ճշմարտութեանն հետևի: - 122. Չորրորդ՝ զի ընդ ինքեան ի տանջանս *քարշեսցէ:* - 146. Որև կործանմամբն իւրով չարչարեաց զվերին դասքն սրտմտութեամբ, և զներքին դասքն սասանմամբ, և զհամակամսն ընդ ինքեան *քարշեաց:* - 148. Զի՞նչ է «տուտն նորա որ *քարշէր* զերրորդ մասն աստեղացն»: - 152. Իսկ դևք զանհաստատսն մտօք՝ ի ստորևս *քարշեն* և յերկիր կործանեն զերկրաւորս խորհելով. և ընդ ինքեան ի յատակս դժոխոց մերժեն: - 152. Երկրորդ՝ զօրաւոր մասն է տուտն սողնոց. ցուցանէ զբռնութեամբ *քարշելն* ընդ ինքեան: - 152. Նշանակէ զհետևեալսն ի մահ և ի դժոխս *քարշել* և արկանել: - 152. Չորրորդ՝ տուտն նշանակէ զսեռն. որ ի վերջին ժամանակս բռնանայ և *քարշէ*՛ զերրորդ մասն աստեղաց: - 152. Հինգերորդ՝ երկինքն թեթև է ի վեր *քարշէ*. և երկիրս ծանր ի վայր հակէ. և այսպէս մի զմի հաստատուն պահեն: - 182. Մնացեալ ա՛մպ է շուրջ զաստեղօքն. որ *քարշէ* յինքն զսպիտակ լոյս մոլորակացն և լուսաւորի: - 203. Իսկ Ցօ՛ղ է գիճութիւն ի պարզոյ իջեալ. զոր աստեղք ի գիշերի *քարշեն* ի վեր. և ընդ ծագել առաւօտուն՝ յետ ի յերկիր անկեալ մանրամասն շիթ: - 204. Իսկ շա՛րժն է թանձր գոլորշի արտաքս *քարշեալ* յերկրէ, և նեղեալ ի յելսն շարժէ՛ զերկիր: - 206. Երկրորդ՝ ասէ արիստոտէլ՝ թէ ջերմութիւն լուսաւորացդ և տարրական հրոյն և օդոյն մտանեն ի ծովն և *քարշեն* ի նմանէ զքաղցր և զպարզ հիւթն. և մնացեալն լինի դառն և աղի: - 208. Եւ զի *քարշեն* լուսաւորք զգոլորշին յերկրէ՝ յայտ է ի ցօղ առաւօտուն և յեղեամն...: - 208. Ջուրք ծո՛վուց ընդ մէջ երկրի անցանեն և պարզին ի ժանկոյն և ի դառնութեանցն. զի երկիր և աւազք զդառնութիւնն յինքեանս *քարշեն*, և մնայ քաղցր ջուրն: - 208. Նա՛խ՝ զի օդն վերընթա՛ց է և *քարշէ*՛ ի վեր և աճէ: - 213. Երկրորդ՝ զի ջերմութիւն լուսաւորացն սնուցանէ և զառ ի վեր *քարշէ:* - 214. Որպէս լուսաւորք երկնից *քարշեն* յերկրէ և ի ծովէ զհիւթ՝ և կերակրին և անապականք են: - 224. Եօթներորդ՝ վասն զգայութեանցն, որ ամենեքին յառաջ հեղուն յուղեղէն, և ազատապէս տեսանեն և իմանան. զի թէ գլուխն և ուղիղն ի վա՛յր էր *քարշեալ* և կորացեալ՝ ո՛չ կարէր ուղղակի զգալ և իմանալ. որպէս այլ կենդանիք: - 233. Զի *քարշեն* յերկրէ զհիւթ, և ունակացեալ պահեն, և հալեալ փոխեն յինքեանս. և վտարեն զաւելորդսն ի կեղև՝ ի տերև՝ և յայլսն: - 262. Տասներորդ՝ որպէս կողն զզօրութիւնն *քարշէ*՛ և տայ ի թիկունքն և պնդէ՛ զնա. այսպէս կինն զփառս և զինչս առն յինքն *քարշելով* թանձրացուցանէ և պնդէ՛ զինքն: - 276. Դարձեալ՝ վարժէ՛ զնա գօտեաւն՝ պատերազմիլ ընդ մեղս և ընդ մեղսասէր մարդիկ որ կամին զանմեղն *քարշել* արտաքոյ օրինացն աստուծոյ: - 311. Ո՛չ ասէ գնալ որ կամաւորն է. այլ երթալ, որ ակամայ *քարշիլն* է: - 389. Այն է տուտն որ զերրորդ մասն աստեղաց ընդ իւր *քարշեաց:* - 489. Եօթներորդ՝ զի զցանկութիւն մեր *քարշեսցէ* զհետ իւր...: - 519. Յօդոյ որկորստութիւն և հպարտութիւն. զի վերընթա՛ց է և *քարշօղ:* - 560. Զի որպէս ի մեղանչել հոգւոյն ապականեցաւ մարմինն ադամայ և եղև դիւրասահ առ վավաշոտ ցանկութիւնն. այսպէս և սերեալ մարմինն *քարշելով* ընդ ինքեան զապականութիւնն՝ աղտեղացուցանէ զհոգին: - 567. Հնգետասաներորդ՝ *քարշէ*՛ և զայլս ի սիրելութիւն նորա: - 576. Հեզ է որ ո՛չ կրէ և ոչ *քարշի:* - 584. Եւ սատակեալ վիշապին տուտն է նեռն. որ ի վերջին ժամանակս *քարշէ* զերրորդ մասն աստեղաց...: - 706. Ա՛րդ՝ *քարշէ* զչարսն տրօք. զբարիսն տանջանօք. զպարզամիտսն քարոզութեամբ և սքանչելեօք: - 708. ...և ընդ վճռի դատաւորին իսկոյն *քարշին* ի տանջանս ի հրեղէն ծովն որ հուրն է յաւիտենից: - 731. Եւ այսպէս *քարշեալ* եղև ի մեզ սկզբնականն մեղք՝ յանհնազանդութենէ հոգոյն և ի ցանկութենէ մարմնոյն. անցեալ ի ծնունդս նորա նիւթապէս ի մարմինս, և տեսակաբար ի հոգիս: - 776

**ՔԱՐՇՈՂԱԿԱՆ +** Եւ ունի ստամոքն **դ** զօրութիւնս. որ է՛ *քարշողական*. ունական. հալողական. վտարական: - 242. *Քարշողականն* է՝ յորժամ կծկի և քաղցի, ներքուստ և արտաքուստ խնդրէ կերակուր: - 242. Նմանապէս և կերակրականն ունի զօրութիւնս **դ**. որ է՛ *քարշողականն*. ունականն. հալողականն. և վտարականն: - 262

**ՔԱՐՈԶ +** Կարդացմունք. *քարոզք*. ներբողեանք և այլք. որ ըստ տօնից առաւելուլ պարտ է զնոսա: - 375. *Քարոզքն* սերմանեցին: - 456. Քառասունն**դ**, Մասնաւոր Աղօթք. և Օրհնութիւնք. և Խաղաղութիւն. *Քարոզ.* և Մաղթանք և Գոհութիւն: - 527. Բերան՝ աւետարանիչքն. և լեզուք՝ *քարոզք* բանին կենաց: - 534. Վասն է՞ր սարկաւագն զամենայն *քարոզի* վերջքն յաղօթից ձևս փոխէ ասելով՝ կեցո՛ և ողորմեա՛: - 625-626. Սարկաւագն է՛ *քարոզ* և ուսուցիչ մեր ի դէմս հոգւոյն և ի դէմս

առաքելոցն...: - 626. Զի՞նչ է որ զառաւօտու *քարոզն* այսինքն զերկրպագեմքն, և զՊատարագին գոհութիւնն, և յերեկոյն զՅասեալքս ի ժամն, աղօթից ձևով ասէ սարկաւագն: - 626. Դարձեալ՝ ա՛յլ է *քարոզն* առ մեզ, և ա՛յլ է աղօթքն առ աստուած, և ա՛յլ է մաղթանքն առ սուրբս, և ա՛յլ է գոհութիւնն: - 626. Դարձեալ՝ *քարոզն* ըստ ինքեան յայտնի է զի յորդորո՛ւմն է մեզ: - 626. Արար սա՛ զգիշերոյն *քարոզքն*. և զնոցունց **դ** աղօթքն: - 659. Իսկ վասն հիմնարկութեան սուրբ տաճարի և ժամահար օրհնելոյ. սկիհ և մաղզմայ. և զգիրք. և զկնունք առնելոյ. և խաչօրհնելոյ. և զքառասնորդաց **գ** ժամուց *զքարոզքն* և զաղօթսն, յոհան մանդակունին է արարեալ...: - 659. Նա՛խ՝ սերմ է բանք և *քարոզք* աւետարանին: - 757

**ՔԱՐՈԶԵՄ +** Զսէր *քարոզեն*, և զդաւ նենգութեամբ կայենի նիւթեն: - 34. Նաև ի կանոն երից սուրբ ժողովոցն՝ ընդ բանիւ արգելեալք կան նոքա՝ որ ա՛յլ կերպիւ *քարոզեն* և այլ կերպիւ ուսուցանեն քան զոր նոքա ուսուցանեն: - 64. Երկրորդ՝ մովսէս *քարոզէր* ժողովրդեանն թէ՝ աստուած հարցն ձերոց առաքեաց զիս. և յերկրպագութիւն նմա հրաւիրէր: - 328. Եւ քրիստոս առաքեալ զինքն ի հօրէ *քարոզէր*, և հաւատալ ի հայր պատուիրէր: - 328. Չորրորդ, ի հովւութենէ օծաւ թագաւոր և տէր մեր նա՛խ *քարոզեաց*, և ապա՛ ժողովեաց. և տիրեաց յերկինս և յերկրի: - 435. Եւ տէր մեր զեկեղեցիս ասէր *քարոզել* և մկրտել: - 441. Ինքնատեսք *քարոզեցին:* - 456. ...անօրն ընտրութեան նորին *քարոզէր*. առանց քննութեան դատաստանի և ճանապարհի եկաւորութեան մարմնով ի վերայ երկրի: - 456. Զի պետրոս *քարոզեալ* ասէ հոգւոցն որ ի բազում ժամս կատարի: - 495. Զի որ քան ամ ի յերկրի *քարոզեաց*, նոյն քան ժամ ի դժոխս առ հոգիսն: - 495. Երրորդ՝ որպէս մարմնով լոյս ծագեաց մարմնաւորացն և *քարոզեաց* զփրկութիւն: - 503. Նոյնպէս և հոգւոցն որ ի դժոխս լոյս ծագեաց հոգւով և *քարոզեաց* զփրկութիւն: - 503. Եօթներորդ՝ որպէս ասացաք յառաջին պատասխանին՝ որդիք մահապարտաց և ապստամբք աստուծոյ մեղաւո՛րքն էին նոցա *քարոզեաց* և ազատեաց: - 507. Եւ ա՛յն է խորհուրդն, զի որ քան ամ մարմնով մարմնաւորացն *քարոզեաց*. նոյնքան ժամս հոգւով հոգւոցն *քարոզեաց*. այսինքն **լգ** ամ և կէս ի յերկրի. **լգ** ժամ և կէս ի դժոխս...: - 516. Վեցերորդ՝ համբարձաւ ձայնիւ փողով ըստ դաւթի. և այս վերաբերի յառաքեալսն. որ յանձնեցաւ նոցա երթալ *քարոզել* ամենայն հեթանոսաց...: - 520. Եօթներորդ զաւետարանն *քարոզել*. որպէս առաքեալք: - 536. Որ և սողոմոն անճողոպրելի *քարոզէ* ամենայն մարդկային մտաց...: - 558. Ա՛րդ՝ **թ** երանութիւնք փրկչին զոր *քարոզեաց* ի լերինն, **ը** են ըստ էութեանն. այլ **է** են ըստ աստիճանաց...: - 583. Դարձեալ ասեմք, ընդէ՞ր ժողովրդեանն հաւատ *քարոզես*, և դու անհաւատանաս ի ճաշակումն արեանն...: - 600. ...և գո՛րծ է նոցա, հրամանաւ քահանային աւետարան կարդալ, *քարոզել*, և բառնալ քշոց և բուրբառ. և նստիլ ամենևին ո՛չ: - 608. Երկրորդ ուրացօղք. և սոցա *քարոզէ՛* ընթերցօղն: - 608. Երրորդ՝ ի բանակիլն խաչաձև բանակեցան երկոտասան ցեղքն, և խորանն ի միջի. որ նշանակէ՛ զխորանն եկեղեցւոյ՝ խորհրդով խաչին *քարոզեալ* ընդ **դ** կողմ աշխարհի: - 616. Սարկաւագն *քարոզօ՛ղ* է մեզ և հրաւիրօղ յաղօթս...: - 626. Իսկ սարկաւագն՝ յորժամ *քարոզէ՛* կամ խնկարկէ կամ ընթեռնու: - 635. Զի՞նչ է, չորեքկերպեան կենդանեացն զխորհուրդ *քարոզեաց* ամլորդին: - 638. Դարձեալ՝ նշանակ խաչին. և քրիստոս ի վերայ նորա խաչիւն *քարոզեալ:* - 646. Այլ ի ժողովն նիկիոյ *քարոզեցաւ* պահք, բայց պատարագ մատչիլ: - 651. Եւ ի նոյն օրն ի գերեզման եմուտ և էջ ի դժոխս և *քարոզեաց:* - 684. Եւ որ *քարոզէ՛* առանց հաւատոյ՝ ոչ խօսի զբանն հաւատարիմ որ ըստ աստուծոյ: - 702. ...և ընդ դէմ խօսեսցի աւետարանին և արգելուցու զուղղափառ վարդապետս զի մի՛ *քարոզեսցեն:* - 708. Եւ *քարոզեսցեն* զաւուրս **ռմ** և **կ**. այսինքն **գ** ամ և կէս. որպէս ասէ տեսիլն: - 709. Այնչափ որչափ և քրիստոս *քարոզեաց:* - 709. Դարձեալ, զի քրիստոս էր վարդապետ ըստ որում զճշմարտութիւնն *քարոզեաց*...: - 712. Յինգերորդ, զի որդին ծնաւ ի կուսէն և յերկրի շրջեցաւ և *քարոզեաց* և չարչարանօք փրկեաց և պատճառ եղև ընդհանուր յարութեան բնութեանս մերոյ...: - 735. Որպէս առաքեալքն ի մի լեզու *քարոզէին* և ամենեքեան ի լեզուս իւրեանց լսէին: - 739. Զորօրինակ, *քարոզեցաւ* նինուէի կործանումն. և նախագուշակ եղև եզեկիայի մահ. և ո՛չ մի ի սոցանէ կատարեցաւ: - 779. Որ *քարոզեսցեն* զաւուրս **ռ** երկերիւր **կ** և **գ**: - 785. Որք դարձուսցեն զսիրտ հարց յորդիս ըստ մաղաքիայի. այսինքն ուսուցանեն զհաւատն փրկչին զոր հարքն ունէին. և է՛ վարձաւորելի և կարի քաջ. և թէ այսպէս և թէ այն՝ քրիստոս *քարոզի:* - 785

**ՔԱՐՈԶԻՉ +** Եւ *քարոզչօք*՝ այսինքն հրեշտակօք կամ վարդապետօք կամ գրոց սրբոց գիտութեամբ, փութայ զկեալն մեր: - 48. Այլ և պատկերք *քարոզչացն:* - 645. Արդ որպէս յամենայն ժամանակս սորօք

գան ի հաւատս ուղղութեան և է՛ վարձատրելի. այսպէս և ի վերջին ժամանակս որք յետ նեռինն՝ ո՛չ միայն ի հարկէ սքանչելեաց, այլ և ի լրոյ *քարոզչաց* երկուցն վկայից իջելոց սրբոց: - 785

**ՔԱՐՈԶՈՒԹԻՒՆ +** Նոյնպէս ի ժամանակս *քարոզութեանն* քրիստոսի և առաքելոցն էր խաղաղութիւն: - 27. Տասներորդ՝ նեռն *քարոզութեամբ* պատրէ...: - 35. Այս է յղացմամբ յարգանդի և ծննդեամբ. և *քարոզութեամբ*. և մահուամբ. և յարութեամբն և համբարձմամբն առ հայր՝ իբր զպսակ տարւոյ կատարեալ բնութեամբ մեր՝ ի ներքին կողմն վարագուրին մտեալ: - 126. Երբեմն *զքարոզութիւնն* ասէ...: - 139 - 140. Եւ զնդակն է *քարոզութիւն* նոցա որ ընթռնէ զմերձաւորսն: - 317. Երրորդ՝ արծաթ զբանն նշանակէ. որոյ չէ՛ պարտ վասն իրաւանց և *քարոզութեան* արծաթ առնուլ: - 375. Երկրորդ, *քարոզութիւնն* **բժ**ան ազգաց: - 386. Եւ *քարոզութիւնն* պետրոսի առաքելոյ: - 451. Երկրորդ՝ և յայսմ աւուր տւաւ մեզ նոր օրէնս և *քարոզութիւն* սուրբ աւետարանին: - 524. Երրորդ՝ համարձակութիւն *քարոզութեան* առանց երկիւղի խօսիլ զբանն առաջի ազգաց և ազանց և թագաւորաց...: - 524. ...և առաքեալքն ծեռն դնելովն միայն՝ տային զհոգին սուրբ. և ի լեզուս խօսէին. և մարգարէանային ընդունօղքն. իսկ վարդապետք սուրբք՝ *քարոզութեան* նոցին հետևօղք և որդիք ծնողացն՝ երրորդ կարգին յետ նոցա: - 535. Հինգերորդ՝ առաջին առաքեալքն իբր կատարումն բանից. երկրորդ մարգարէք նախածայնք նոցին. երրորդ վարդապետք մեկնիչք և թարգմանք երկուցն *քարոզութեանց:* - 535. Երրորդ՝ յերկոտասանից առաքելոցն երիցն ի հայս *քարոզութիւնն* և վախճան: - 555. Եւ ընդ ոլորտս հնչեցաւ առաքելոցն *քարոզութեամբ:* - 645. Դարձեալ՝ մի տախտակն է՛ մի և նոյն *քարոզութիւնն* առաքելական ի չորեք ծագեան տիեզերս տարածեալ: - 646. Արծաթ՝ բան *քարոզութեանն:* - 702. Ա՛րդ՝ քարշէ զչարսն տրօք. զբարիսն տանջանօք. զպարզամիտսն *քարոզութեամբ* և սքանչելեօք: - 708. Նա՛խ՝ պատրեսցէ զեկեղեցականս խորամանկ *քարոզութեամբ*...: - 708. Իսկ մեծն ներսէս ասէ, պակասութիւնն այն է, որ կիրք չարչարանացն քրիստոսի թուով և տեսակաւ պակա՛ս էր յառաքեալն պօղոս. այսինքն խաչն, բևեռքն, և այլն. և զայն էլից *քարոզութեամբն* իւր ի մարմինս եկեղեցւոյ: - 781. Զի որպէս քրիստոս չարչարանօքն փրկեաց զեկեղեցի և հարսնացոյց, նոյն և առաքեալն *քարոզութեամբ* իբր զկոյս մի սուրբ յանդիման արար փեսային քրիստոսի: - 781. Երկրորդ, վկայութեամբ սուրբ գրոց և *քարոզութեամբ* բանից: - 784. Եւ նոյն ինքն տէրն բոլորից վկայ *քարոզութեան* զգործս կատարէր. զի սովորութիւն է մարդկան քան զլուր լսելեաց տեսութեան աչաց հաւանիլ: - 785

**ՔԱՐՈՒՏ +** Եօթներորդ՝ զի ոսկերքն է *քարուտն:* - 215

**ՔԱՐՏԷՍ +** Իսկ բանն աստուած է՛ ծնեալ ի հօրէ՝ այլ ո՛չ բաժանեալ. որպէս ո՛չ բաժանի բան՝ ի մտաց. թէպէտ ի բազում լսելիք մտանէ. և թէ ի վերայ *քարտիսի* մարմին զգենու: - 45. Եւ անդ ընթեռնու դնն որպէս ի *քարտիսի* և իմանայ յայնմանէ: - 145. Եօթներորդ՝ բանին էր պատշաճ պատմել զհօրէ. և երևիլ մեզ. որպէս ներտրամադրեալ բանն յառաջ գայ և լինի բարբառ և գրեալ ի *քարտիսի*, երևի և շօշափի: - 468. ...իսկ թէ մի է, ո՞րպէս կարասցուք ասել մի և զնոյն բանն աստուծոյ որ նախ քան զյաւիտեանս. և այսօր գրեալ ի *քարտիսի:* - 529. Եւ մի և նոյնն է միաւորեալ ի մարմնի և երևեալ մեզ և գրեալ ի *քարտիսի* յիւրաքանչիւր աւետարանս: - 529. Եւ մի և նոյն բանն է ներտրամադրեալն ի սրտի. զի ըստ բան գոլոյն ո՛չ զանազանի. սակայն ըստ որպիսութեան որակին. զի էր անմարմին ի սրտի՝ և այժմ մարմնացաւ ի *քարտիսի:* - 529

**ՔԱՐՑ +** Երեքտասաներորդ՝ Բաժանումն առն և կնոջ և *քարցի:* - 227. Իսկ զի կէսք *քարց* և անմորուք լինին, զի ջլապինտ է մորթ երեսացն որպէս զքար ծեռաց. վասն որոյ մազ ո՛չ բուսանի: - 245

**ՔԱՑԱԽ +** Եւ *քացախ* ո՛չ ուտել, զի ապականութիւն է: - 389. Զորկրամոլութիւնն՝ ըմպելովն *զքացախն* և զլեղին: - 489. *Քացախ* և լեղի արբնու քաղցրութիւնն: - 491. Ըմպելեաւ, յորժամ ճաշակեաց *քացախ* ընդ լեղի: - 491

**ՔԱՑԱԽՈՒՏ +** Երրորդ, շարաւահոտ և *քացախո՛ւտ* է. այս մեղաց հոտ է և համ: - 356

**ՔԱ՛Ւ ԼԻՑԻ կմ ՔԱ՛Ւ (ԵՒ) ՄԻ՛ ԼԻՑԻ +** Ոչ թէ անգիտանայ՝ *քաւ լիցի*. զի զամենայն որ լինելոցն էր ի կատարածին՝ ասաց. զիա՞րդ զժամն անգիտանայ: - 48. Յերեկոյի շաբաթոյն ո՛չ վասն այն լուծանեմք թէ յարութիւնն քրիստոսի ի շաբաթի աւուրն է. ո՜չ. *քա՛ւ և մի՛ լիցի:* - 508

**ՔԱՒԱՐԱՆ +** Եւ որք **դ** ասեն՝ զներքին դժոխքն մահու չափ մեղաւորացն ասեն. և *զքաւարանն* ներելի մեղաւորաց. և զլիմպոսն արդարոց. և զդժոխս ոչ մկրտելոցն: - 504. Չորեքտասաներորդ, թէ ո՛չ է *քաւարան* հրոյ, **ծե** թուով: - 660. Հնգետասաներորդ, Վկայութիւնք *քաւարանին*, և լուծումն նոցա **ծ**

թուով: - 660. Եւ ո՛չ որպէս շաղակրատեն ոմանք մտացածին բանիւ. թէ երեք օրն՝ կամ յեօթն՝ կամ յամիսն՝ և կամ ի տարին ելանեն ի *քաւարանէն:* - 683-684. ...և որք միջակք են, և նոքա ի *քաւարանին* մաքրին և յերկինս ելանեն: - 686. Ո՞րք են որ ասեն *քաւարան* հրոյ. և զի՞նչ է պատճառն: - 698. Ընդհանուր ամենայն վարդապետք ուղղափառաց համաձայնեալ աստուածեղէն գրոց՝ ո՛չ ասեն *քաւարան* հրոյ: - 698. Եւ վասն **դ** պատճառի ո՛չ ասեմք *քաւարան* հրոյ: - 698. ...ի վասն անտի *քաւարանին* աստ ո՛չ պահեն և ո՛չ աղօթեն. և անդ ի դժոխս մատնին: - 698. Իսկ որք հաստատե՛ն *զքաւարան* հրոյ՝ չորիւք մեղանչեն ինքեանց: - 698. Նախ՝ զի քակե՛ն զխոստովանութիւնն յեկեղեցւոյ և ի *քաւարանն* ապաւինեալ կորնչին մեղօք: - 698. ...նոքա *քաւարան* ասելով բառնան զերկիւղ դատաստանին: - 698. ...և *զքաւարանին* զօրութիւնն առաւել ասեն քան զքրիստոսի: - 698. ...ապա սո՛ւտ են որք անդ ասեն փրկութիւն և *քաւարան:* - 698. Եւ մեկնիչն ասէ, աստուածապա՛շտ են որք խոստովանին զմեղս. զոր գիտէ տէր յայսմ աշխարհի փրկել առանց *քաւարանի* հրոյ: - 699. Եւ ո՛չ է ի դէպ թէ հոգին ըստ ինքեան վճարէ զպարտս մարմնոյն. ապա ո՛չ է անդ *քաւարան:* - 699. Այլ հոգի դատարկ ի *քաւարանին* աչս ո՛չ ունի զի լացցէ որով յարատ հայեցաւ. և ո՛չ մարմին զի պահեսցէ և աղօթեսցէ. այլ և ո՛չ զղջումն. զի հոգին ինքն ըստ ինքեան ո՛չ կարէ զղջալ: - 699. Այլ և պա՛րտի ապաշխարութիւնն կամաւ գոլ. իսկ ի *քաւարանն* հարկիւ տանջի: - 699. Ապա ուրեմն ո՛չ գոյ *քաւարան* հրոյ: - 699. Իններորդ, հուր *քաւարանին* պատիժ է մեղացն ըստ նոցա: - 699. Տասներորդ, որք գտանին կենդանի յաւուրն դատաստանին, ո՛չ երթիցեն ի *քաւարանն*...: - 700. ...զի մինչև ցօրն ցայն ասեն *զքաւարանն*. այլ առ ժամայն ի փառս կամ ի տանջանս: - 700. ...իսկ յետ մահու ո՛չ է *քաւարան* հրոյ: - 700. Ա՛րդ՝ ի *քաւարանն* ոչ է ժամանակ. զի ժամանակն յարեգակնէ՛ և ի լուսնէ՛ լինի...: - 700. ...ապա ուրեմն դժոխքն է անտի պատիժ որ է յաւիտենական և անզերծանելի. և ո՛չ գոյ *քաւարան:* - 700. Տասնբ, հարցանեմ, հուր *քաւարանին* ժամանակեա՞յ է թէ յաւիտենից: - 700. Զի թէ յաւիտենից է, տանջանք է և ո՛չ *քաւարան:* - 700. Ապա ուրեմն ո՛չ գոյ *քաւարան*. և ո՛չ հուր ժամանակեայ տանջիչ: - 700. Ապա ուրեմն ո՛չ գոյ *քաւարան* հրոյ: - 700. Հնգետասաներորդ, զի թէ գոյ *քաւարան* այժմ հոգւոյ՝ ապա ո՛չ է բոլոր դատաստան ի կատարածի...: - 700. Այլ և թէ գոյ *քաւարան*՝ ո՛չ գոյ դատաստան...: - 700. Ապա վասն է՞ր ասեն *քաւարան:* - 701. ...ապա ուրեմն և հոգիքն նորոգին ի հուր *քաւարանին:* - 701. Դարձեալ ասեմք, եթէ ի հուրն համատարած ամենայնքն անցանելոց եմք ի կատարածի. այլ ո՛չ ի հուր *քաւարանի*. զի ո՛չ գոյ *քաւարան:* - 701. ...ուստի յայտ է զի *քաւարանն* ջուր ո՛չ է: - 701. Վեցերորդ ասեն, ահա այս է *քաւարանին* հուրն: - 702. Նա՛խ՝ զի աստ յայժմու կեանս շնորհքն է, իսկ անդ փառքն. որպէս աստ մեղքն է և անդ պատիժն. այլ ո՛չ *քաւարան:* - 702. Ահա՛ յայտնապէս զփայտ զխոտ և զեղէգն զոր նոքա վասն *քաւարանին* ասեն...: - 703. Տեսէք եղբարք զսրբոց վարդապետաց բանսն զի ո՛չ գոյ անդ *քաւարան* հրոյ: - 703

**ՔԱՒԵՄ +** Եւ խաչիւն *քաւեաց* զմեզ. վասն որոյ սուրբ խաչ կոչի: - 345. Հինգերորդ, վասն մեղաց պատարագ, ի մեռելոտի կամ ի պիղծ ինչ մերձեցեալ. ոչխարով և թռչնով և նաշիով առանց իւղոյ և խնկոյ *քաւէին:* - 358. Ի խնկոց սեղանն *քաւէ՛ր* արիւնն. զի զաղօթս սրբոցն բարեխօս ունիմք ընդ խորհրդաւոր արեանն: - 360. Վասն մեղա՛ց է՝ որ խոստովանութեամբ արտաքոյ ելեալ ի մեղաց և ապաշխարութեամբ *քաւեմք* զմեզ ներքին խորհրդով և արտաքին գործով: - 362. Եւ արիւնն, զմեղս մեր բարձեալ յինքեան և տարեալ ի դաշտն առ հայր յերկինս. զի որպէս մեռեալ մարմնովն *քաւեաց* զմեղս...: - 369. Որ զգործեցեալ մեղս ապաշխարութեամբ *քաւեմք*. ճնշելով զանձինս մեր պահօք: - 373. Այլ և նշանակէ՛ զօր մեծի ուրբաթուն չարչարանացն քրիստոսի. որով *քաւեցար* ի մեղաց: - 373. Զի գողացեալ մեղքն միայն խոստովանելով ոչ *քաւի*. այլ հատուցանել պարտ է զգողօնքն. կամ ի տէրն, կամ յազգականս նորա. կամ ի քահանայն. զի միջնո՛րդ է մեռելոց և կենդանեաց: - 384. Զի՞նչ է որ զակամայ մեղուցեալն *քաւէր* պատարագօք. և զկամաւոր յանցաւորն սատակել տայր ժողովրդեանն: - 385. Որ տուեալ լինի ի մկրտութիւնն հոգի սուրբ որով մեղքն *քաւեալ* լինի: - 593. Նոյնպէս ի սրտէն ելանէ կսկիծ արտասուաց. և զհեշտութիւն նորա *քաւէ՛:* - 619. Ապա՛ զկնի երից մանկանցն աղօթից որով *քաւիմք* ի մեղաց. ի փառս տալն ի բարձունս՝ անուշահոտ բուրմամբ նուիրեմք: - 628. ...իսկ զմիջին ժամանակն ապաշխարութեամբ *քաւեալ* միաւորեցաւ: - 630. ...այլ յորժամ ապաշխարութեամբ *քաւեմք*՝ տօնեմք. եթէ տէրունական և եթէ սրբոց: - 650. Բարեաց՝ զի *քաւեսցին* փոշետեսակ յանցանք ինչ. և կամ զի պսակքն բազմասցին: - 668. Այլ յորժամ սիրտն կապեալ է ի մեղս աշխարհի և ոչ կարաց ապաշխարութեամբ *քաւել*, ո՛չ մտանէ յարքայութիւնն երկնից:

- 683. ...և մե՛ք *քաւեմք* զմեղս նոցա և ո՛չ նոքա: - 684. Իսկ երկրորդն՝ որ ի բուրգաթուրն ասեն *քաւեալ* և ելեալ յերկինս...: - 687. ...որ գթով ողորմութեամբ դիւրապէս *քաւեսցին* և ողորմութեան արժանասցին: - 688. Զի յորժամ ոմանք *քաւին* և մտցեն յարքայութիւնն, և ոմանք ի տանջանս յաւիտենից, ա՛յս է հաստուցումն: - 698. Երրորդ, զի ընդունայն լինին աղօթք և տուրք և այլ օժանդակութիւնք եկեղեցւոյ՝ յորժամ ինքեանք *քաւեսցեն:* - 698. Ապա ուրեմն խոստովանութեամբ *քաւին* մեղքն և ո՛չ հրով: - 699. ...իսկ հոգին միայն ո՛չ կարէ *քաւել* զանչափ մեղս: - 699. Նոյնպէս և հոգին յետ բաժանման մարմնոյն ո՛չ կարէ *քաւել:* - 699. Ա՛րդ՝ եթէ մեռեալք ո՛չ խոստովանին և ո՛չ օրհնեն. ապա և ո՛չ ապաշխարեն և ո՛չ *քաւեն* ըստ ինքեան զմեղս: - 699. ...զի նա *քաւեալ* է և սա ոչ. մինչև մարմինն ևս տանջեսցի և *քաւեսցի*. որ է՛ անպատշաճ երկրքինն: - 699. Նա՛խ եթէ ի խոստովանութիւն մեղացն մնայ պատիժն զոր ապաշխարութիւնն *քաւէ.* որպէս յայտ է ի կանոնս...: - 701. ...և որ ոք ի պատիժն աստ ոչ ժամանէ կրել, անդ կրէ յետ մահու ի հուրն և *քաւի:* - 701. Դարձեալ ասեմք, եթէ զպատիժ մեռելոյն զոր նա ո՛չ կարէ *քաւել*...: - 701. ...եկեղեցի սուրբ և աղօթք քահանայից հատուցանէ զպարտս նոցա և *քաւէ*...: - 701. ...և որ ոք աստ կամաւ ո՛չ պատժի, աստուած պատժէ զնա ի հուրն և *քաւի:* - 701

**ՔԱՒՈՒԹԻՒՆ +** Նոյնպէս և քերովբէքն ի վերայ *քաւութեանն* հովանացեալ, և ի միջոյ նոցա աստուածախօսութիւնն: - 345. Եւ *քաւութիւնն* ի վերայ, զի նա՛ եղև *քաւութիւն* մեր: - 345. Եւ բաց յայսցանէ **բ** ակն յանդիմանութեան զոր անդամանդեայ կոչէին, և էր ի պճնաւոր զգեստին ի վերայ ուսոց քահանայապետին յորժամ մտանէր ի սուրբն սրբոց երիցս ի տարւոջն, ի տօնի զատկին և յիսներորդացն և ի *քաւութեանն:* - 349. Յասարակ, զի ամենայն քահանայ միջնորդ և հաշտարա՛ր է աստուծոյ և մարդկան. զընծայս ժողովրդեանն աստուծոյ նուիրելով և յաստուծոյ շնորհս և *քաւութիւն* ժողովրդեանն առնելով: - 354. Իններորդ, նոքա ծառայաբար մատուցանէին. ուստի յա՛յտ է զի ո՛չ կարէին նստիլ ի սրբութիւնսն կամ ի *քաւութիւնսն*...: - 354. Երկրորդ՝ վասն անգիտութեան և ակամայիցն զուարակ մի քահանային. և զուարակ մի՝ բոլոր ժողովրդեանն ի տօնի *քաւութեանն:* - 358. Երրորդ՝ վասն անգիտութեան և ակամայի իշխանին և իւրաքանչիւր անձին նոխազ յայծից և ալոջ ի *քաւութիւն* նոցա: - 358. Այլ և ի տօնի *քաւութեանն* զուարակ մի և **բ** նոխազ վիճակով. մին տեառն և միւսն արձակման յանապատ: - 359. Զի մերձեալ ի քրիստոս աղօթք մեր լինին *քաւութիւն* մեզ: - 360. Եւ ցանեալ **է** անգամ ի վարագոյրն. որ է՛ *քաւութիւն* **է** զգայարանցս ի **է** զօրութեանց հոգւոյն. **է** խորհրդով եկեղեցւոյ. առ **է** դար կենցաղոյս: - 360. Եւ մի է *քաւութեան* պատարագն քրիստոսի. մեղաւորին և յանցաւորին: - 362. Բաց ի *քաւութենէն* որ ի սուրբն սրբոց՝ ի ներս և ի դուրս **ժ** էր բովանդակն: - 364. Ի եօթներորդն ամիսն որ է՛ թշրին՝ **ժ** օր *քաւութեան* տօնէին. զի **է** շաբաթ շաբաթուցն ի նա՛ է. և **է**երորդ ամիսն. այլ և **ժ**երորդ օրն շաբաթ էր: - 371. Դարձեալ շաբաթ շաբաթուց այն էր. որ *քաւութիւն* մեղաց հոգւոցն էր շաբաթ. որպէս դատարկանալն մարմնոյն: - 371. Չորրորդ՝ *քաւութեանն*. որ է տօն խաչին: - 372. Ութերորդ՝ տօն *քաւութեան:* - 373. Եւ նշանակէ՛ ի մեզ զտօն սրբոյ խաչին. զի նա՛ է *քաւութիւն* մեր: - 373. Այլ ըստ ոմանց՝ տօն *քաւութեան* որթագործութեանն, նշանակէ ի մեզ զտօն մեծ քառասնորդացն պահոց: - 373. Որպէս նոքա ի սկիզբն *քաւութեան* պահօք խոնարհեցուցանէին զանձինս: - 373. Եւ զայս գործի հմայութեան առնէին. և *քաւութիւն* քարզմանի: - 425. Եւ թշրինի **ժ** միշտ առաջին օր *քաւութեան*. յորում մտանէր քահանայապետն ի սուրբն սրբոց: - 483. Եւ աւուրք պաշտամանն էր երկոտասան. **ե** օր *քաւութեանն* վասն որթոյն յանապատին. և **է** օր տաղաւարահարացն ի յիշատակ խորանաւ բնակելոյն յանապատին ամս **խ**. և այլ սքանչելեացն զոր գործեցաւ անդ: - 483. Հինգերորդ՝ ի նմին իրացն յայտնի է՝ զի ռամիկ ժողովուրդն ի տօնի *քաւութեանն* երեքօրեայ սրբութեամբ մերձենային առ դուռն տաճարին: - 483. Այլ և տապանն նոյի. և տապանակն մովսէսի և *քաւութիւնն* ի վերայ: - 494. Եւ զի **ե** են զգայարանք մեր որով մեղանչեմք, **ե** օր է նաւակատեաց ի բոլոր տարին ի *քաւութիւն* **ե** զգայութեանցս: - 510. Եւ յամենայն ամի տօն *քաւութեան* և տաղաւարահարացն: - 616. Նա՛խ՝ զի զմի օր նոցա տօնեմք. և **է** յաւելեալ վասն **է** զգայարանաց. և վասն եօթնեկի մեղաց *քաւութեան:* - 616. Նա՛խ՝ զի ի հինն զտօն *քաւութեան* և զտաղաւարահարացն ի միասին տօնէին ի թշրինի **ժ**: - 616. Իսկ մեր *քաւութեան* տօն խաչն է. և տաղաւարահարն եկեղեցին. վասն այն զխաչի և եկեղեցւոյ ի միասին տօնեմք: - 616. Որ և մովսէս նկարեաց զքերովբէսն հովանի ունել ի վերայ *քաւութեանն:* - 645. Տասներորդ, **ե** օր *քաւութեան* տօնն: - 653. Հինգերորդ՝ *քաւութիւն* մեղաց շնորհեցաւ: - 657. Այլ և մտաց և բանից և գործոց մեղացն *քաւութեան:* - 679. Նոյնպէս և այժմ

որ քան ի մարմնի եմք՝ գոյ հնար *քաւութեան*...: - 700

**ՔԱՔԱՐ +** Եւ *քարար*՝ պատա՛ռ պատառ կոտորեալ և ի տապակի եփեալ իւղով: - 357

**ՔԵԲՐՈՆ** - Նախ ի բեքլէհէմ. և ապա՛ ի *քեբրոն*. և յետ եօթն ամաց ի վերայ ամենայն իսրայէլի օծաւ: - 673

**ՔԵՂԿԻ** - Յետ որոյ *քեղկի* քահանայ որ էր հայր երեմիայի՝ եգիտ զերկրորդ օրէնքն և մատոյց առ ովսիա. և գնաց առ ողդիկին մարգարէ հարցանել...: - 447

**ՔԵՌՈՐԴԻ +** ...ապա Պապիանոս *քեռորդի* սոցա՝ արար զչորրորդ ձայնն ի ծփանաց ծովու: - 640

**ՔԵՏԱՑԻ** - Եւ այս են **hք** լեզուքն: ...*Քետացիք:* - 298

**ՔԵՏՈՒՐԱՅ** - Սեփովրա էր դուստր ռագուէլի քրմի՝ որդոյ դեդանայ. որդւոյ յեկտանայ. որդւոյ աբրահամու ի *քետուրայ* կնոջէ: - 330. Զի եղեն **զ** որդիք աբրահամու ի *քետուրայ:* - 330

**ՔԵՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ +** Եւ իմաստակ կոչին՝ որք միոյ արհեստի են գլուխ. որպէս *քերականութեան*. ճարտասանութեան. աստղաբաշխութեան. և այլք. որպէս պիհռոնացիք ակադիմեանքն. որք հակառակ կոչին: - 269

**ՔԵՐԵՄ +** Նա՛խ՝ զի կաւովն *քերէր* զկաւն որ էր նիւթ մարմնոյն: - 323

**ՔԵՐԹԵՄ +** Սպանանել՝ է՛ զենուլն. և մորթելն՝ *քերթե՛լն* է: - 358. Ութերորդ՝ թաղամասւորն. որ թաղիացեալ է միսն ի կաշին և *չքերթուի*. որ անորի՛շ է ի խառնակ կենաց: - 371

**ՔԵՐԹՈՂ +** Իսկ թէ ըստ պատուոյ իմանաս, նա՛խ է ներկայն. զի է՛ ստոյգ և ճշմարիտ. և ապա՛ անցեալն. և յետոյ ապառնին. և այսպէս շարադասեն *քերթողքն:* - 198. Երրորդ՝ մահու մեռանիլ զհոգւոյ մահն ասէ որ մեղօքն մեռանի. զի այն է առաւել մահ և յաւիտեան չար. որպէս ասէ *քերթօղն*...: - 277

**ՔԵՐՈՎԲ, ՔԵՐՈՎԲԷ (տեքստում նաև՝ ՔԵՐՕԲԷ) +** Իսկ մովսէս՝ որ միոյ բնութեան էին հաղորդք և միոյն անւան *քերովբէքն*, մի յաջմէ և մի յահեկէ ասէ: - 54. Ասեմք եթէ՝ ինն դասք յերիս երրեակս որոշեալ քըւոց. որոց Առաջինն է Աթոռք. *Քերօբէք*. և Սերօբէք: - 134. Իններորդ՝ յերիս որոշեալ դասս. որպէս սերօբէք՝ *քերօբէք*՝ և աթոռք: - 134. Ասեմք եթէ՝ նոքա երեքեան դասքն՝ այսինքն աթոռք՝ *քերօբէք*՝ և սերօբէք՝ միակարգ միապատիւ և գերազանց էութիւնք են...: - 135. Նախ՝ զաթոռքն. և զհետ *զքերօբէքն*. և զհետ զսերօբէքն. և այս վասն **գ** պատճառի: - 135. Նախ՝ զի զաթոռն մերձ նստողին տեսին եզէկիէլ և եսայի, և շուրջ *զքերօբէքն* և զսերօբէքն: - 135. Եւ *քերօբէն* որ է՛ բազում գիտութիւն՝ ի դէմս որդւոյ. զի նա՛ է իմաստութիւն և գիտութիւն հօր ըստ առաքելոյն: - 135. Երրորդ՝ զի սերօբէն մաքրական լսի և հրաբերձ. ըստ որում մաքրեաց զմարգարէն. և *քերօբէն* իմաստութեամբ լուսաւորիչ. և աթոռքն ուղղութեամբն կատարիչ: - 135. Նախ՝ զի սերօբէն խոկայ զբարութիւնն աստուծոյ. և *քերօբէն* զճշմարտութիւնն. և աթոռք զուղղութիւնն: - 135. Երկրորդ՝ զի սերօբէն բորբոքէ ի սէրն որ է անմիջոց կապ. և *քերօբէն* ի ճանաչումն ճշմարտութեան. և աթոռքն ի յուղղութիւնն. և նոքա են վերակացուք դատաստանի իրաւանց: - 135. Որև յայլուրեք ի *քերօբէս* ասի նստել. զի ամենեքեան աստուածակիրք են և հանգիստ կամացն աստուծոյ: - 135. Տասներորդ՝ յատուկ առանձնապէս տըպաւորութիւնք խորհրդական. որպէս *քերօբէքն* բազմաչեայք և ընդ թևեանք. և սերօբէքն սրբաբան՝ ընդ աթոռոցն քառակերպեան: - 138. Ութերորդ՝ *քերօբէիցն*. որ են վարսք հրեղէնք: - 144. Եւ այլք ասեն թէ՝ ի տէրութեանց դասուն ի վայր ի ներքոյ *քերօբէիցն* յամենայն դասուցն անկան դասու միոյ չափ: - 150. Եւ տէրն ո՛չ ի ձեռս հրեշտակաց սերօբէից և *քերովբէից*, և ո՛չ միջնորդութեամբ մարդկան ընտրելոց նահապետաց մարգարէից առաքելոց կամ մարտիրոսաց: - 302. Առաջինն աթոռոցն և *քերօբէիցն:* - 343. Նոյնպէս և *քերովբէքն* ի վերայ քաւութեանն հովանացեալ, և ի միջոյ նոցա աստուածախօսութիւնն: - 345. Զի աթոռք և *քերովբէք* շուրջ են զաստուծով...: - 345. Եւ զխաչն հրաշագործ՝ զկենսատու մանանայն. և բուրվառ զխունկս աղօթից. վէմն սեղանն սուրբ. և *քերովբէք* քշոցքն **բ**: - 345. Երրորդ՝ զի յորում ժամու մտանէր մովսէս աղօթս առնել և խնդրուածս, աստուածախօսութիւնք լինէին ի միջոյ *քերովբէիցն* որ կային անդ: - 379. Զի աթոռք՝ *քերովբէք*՝ սերովբէք՝ հաւասարապատիւք են՝ մի համարի դասս. և վեցն զկնի նոցա: - 380. Իննև, կրկին *քերովբէքն* խաչատարած: - 441. Որ նստի ի *քերովբէս*՝ ի մուտ դնի: - 470. Ասեմք առ այս, թէ որպէս ի մէջ սերովբէից և *քերովբէից* և աթոռոց ո՛չ ասի վերնագոյն և նուաստագոյն, զի համակա՛րգ են և շուրջ զաստուծով: - 547. Եպիսկոպոսն և քահանայն, զսոսա ի մի կարգ թուէ ի դէմս վերնագոյն դասուց երկնաւորաց. որք են Աթոռք. *Քերովբէք*. և Սերովբէք: - 608. Արդ սաղմոս երգօղքն տան ի սարկաւագն. և սարկաւագն ի քահանայն. և նա՛ մատուցանէ աստուծոյ զօրհնութիւնն. որպէս առաջին դասք *քերօբէիցն:* - 624. Որ և մովսէս նկարեաց *զքերովբէսն* հովանի

ունել ի վերայ քաւութեանն: - 645. Ձքահանայս ընդ սերովբէից և *քերովբէից* յառաջին դասս վերինն զուարթնոցն: - 672. Այսինքն սուրբն սրբոց որ է արքայութիւնն երկնից. ուր աստուածութիւնն է բնակեալ. և *քերովբէիւք* սպասաւորեալ: - 682

**ՔԵՐՔԵՇԵԼ +** Վեցերորդ հարուածն է՛ կեղն և խաղաւարտն. զի *քերքեշէ՛ր* զմորթն, և ի վեր եռացեալ լինէր խաղաւարտն. և մորմոքէր զմարմինս նոցա: - 334

**ՔԷ** - Զինչ է որ ասէ տեսիլն, «ես եմ ալֆա և օմեգա. որ է այբ և *քէ»:* - 129. Նախ ա՛յս է միտքն՝ որ այբն առաջին է և *քէն* վերջին. այսինքն ես եմ առաջին աստուածութեամբս. և ես եմ վերջին մարդկութեամբս. զի մարդն վերջին է արարածոց: - 129

**ՔԷՆ +** Որպէս յա՛յտ է ի տրտմիլն. զի խորհուրդն միշտ եղեալ յետոյ ի յոխս և ի *քէնս* և ի նախանձս յաւելու: - 564. ...զի որպէս հոգևոր սիրով կեցաք. նոյնպէս սիրով բաժանիմք. և թէ իցէ *քէն* ինչ, զայն շնորհիմեք միմեանց: - 673

**ՔԹԹԵԼ ԱԿԱՆ +** Ի *քթթելական* որքան վաղվաղակի կարես բանալ զակն՝ զբոլորն համանգամայն ստեղծ: - 227. Վասն է՞ր բիբն համապազ թարթէ՛ և *քթթէ զաչքն:* - 239. Եւ այն ի *քթթել ական* կարող զօրութեամբն աստուծոյ: - 314. ...այսինքն ի *քթթել ական* մեռանին և յառնեն. զնոսա՝ և զյառաջագոյն մեռեալսն դատէ՛: - 740

**ՔԻԹ +** Յերիկամանցն *քթին* հոտեալ: - 243. Ի *քիթն* հոտեալ. որ զհոտ մեղացն արտաքսեսցէ: - 243. Եւ բաց յայսցանէ՝ ի յուղեղէն **բ բ** երակ գայ յիւրաքանչիւր զգայարանս. **բ** յաչքն. **բ** յականջն. **բ** ի *քիթն*. **ա** ի բերանն. մին ի լեզուն. **բ** ի ձեռքն. **բ** ի յոտքն. որ լինի **ժբ**: - 244

**ՔԻՄՔ +** Աղուորութիւն խօսիցն ի *քիմսն:* - 250

**ՔԻՆՈՍՓԷՆԷՍ** - Եւ ապա՛ *քինոսփէնէս* հմուտ ձայնից գազանաց և թռչնոց, զատուցանէ՛ ըզկողմն առաջին ձայնին: - 640

**ՔԻՍ +** Որպէս փուշք վարդից. և *քիսք* հասկից. և խայթոցն աղնճին: - 217

**ՔԻՍՏ +** Այսինքն նախ արմատն. և յետոյ խոտն. յետոյ ծղօտն. և ծնունդն. և ապա՛ տերև. պատանք. և *քիստք*. և ապա՛ ցորեանն ատոք ի հասկին: - 721

**ՔԻՐԱՄ** - Զի զտեղին յեբուսացւոցն գնեաց դաւիթ. և ճարտարապետն *քիրամ* տիւրացի էր որ շինեաց. և *քիրամ* արքայ զփայտն առաքեաց: - 440

**ՔԻՐՏՆ +** Այսինքն երկնչելովն՝ զերկիւղն իմ. քաղցիւն՝ զքաղցն. վաստակելովն՝ *զքիրտն*. նմանապէս և զայլսն իմասցիս: - 42. Զի զորս *քրտամբք* և աշխատութեամբ յաղթէ՝ զնոյն պսակն ի գլուխն իւր դնէ: - 152. Նա՛խ՝ յօնքն ի վերոյ՝ *զքիրտն* արգելէ՛: - 239. Երկրորդ՝ զի *քիրտն* հոսէր: - 383. Նա՛խ՝ վասն ժողովրդեանն ասէ, թէ ոչ միայն հացիւ կեայ մարդ. որպէս ասաց ադամայ ուտել զհաց *քրտամբք:* - 397. Եւ *քրտամբ* յորժամ *քիրտն* հոսէր յերկիր: - 491. Եւ ի *քիրտ* արեանն կայլակ հոսիլ: - 492. Նախ անարգեցաւ ի պարտէզն զկնի արեան *քրտանցն* յորում մատնեցաւ ի յուդայէ. և իբրև աւազակ ըմբռնեցաւ և կապեցաւ: - 492. Օծումն է՛ խորհուրդ ի լրումն արդարութեան. զի ելեաք ի պատերազմէ՛ զփոշին և *զքիրտն* սրբեմք. որպէս ելեալքն ի մարմնական պատերազմէ՛: - 587

**ՔՆԱՍԻՐՈՒԹԻՒՆ** - Թէ ի բերան պատերազմի յել անմահին և ի մուտ մահկանացուին. դիցես պահապան բերանոյդ. լար կարմիր շրթանցդ. այսինքն հաւատով սիրով զօրացեալ. և ո՛չ բաժանիլ ի *քնասիրութիւն* և յարծաթսիրութիւն. յառաքինասիրութիւն. և յախտասիրութիւն. յընկերսիրութիւն և յարատսիրութիւն: - 770-771

**ՔՆԱՏԵՂ** - Ներքին կզակն և վերին. և **բ** *քնատեղն* մին ոսկր. և գագաթն: - 243

**ՔՆԱՐ +** Իսկ մի գոլ ներգործութիւնք և կիրք. որպէս *քնարն* և որ շարժէ *զքնարն* մի ներգործութիւն կատարեն և ո՛չ երկուս: - 86. Եւ չորսն ձեռօք. որ է տաւիղն, *քնարն*, թմբուկն, և ծնծղայք: - 431. Եւ զանազան ձայնք *քնարի*՝ մի ենթակայ օդով միաւորին: - 476. Եւ թէ մարգարէքն *քնարաւ* երգէին: - 527. Բանէաս Մանէոն և այլքն *քնարօք* երգէին: - 641. Վասն է՞ր ձայն և *քնար* խառնէր դաւիթ ի յերգս հոգւոյն: - 641. Երկրորդ՝ զի սատանայագիտ էր *քնար* և տաւիղ...: - 641. Այն է՝ յորժամ դաւիթ զտապանակ ուխտին հանէր յեէմ, է դաս պարուց որք են քահանայից դասք. և սրինգ. և փողք. և *քնար*. և այլն: - 645. Ուբևժ, **իդ** Երիցունքն. և սպիտակ զգեստն. պսակն և *քնարն:* - 660. Զի՞նչ է բուրվառն ոսկի և *քնարն* ի ձեռս նոցա: - 713. Իսկ *քնարն* Նախ նշանակէ՛ զքաղցրաձայն երգս փառաբանութեանն աստուծոյ: - 713

**ՔՆԱՓ** - Եւ ոմանք ասեն՝ թէ սեաւ մաղձն առնէ տրտմութիւն և սրտմտութիւն. և խարտէշն

զբարկութիւն և զմախանք. արիւնն արի և վայրաբեր. և պաղղամն ծոյլ և *բնափ:* - 245. Թէ կրօնաւոր է՝ հարցանէ թէ ծոյլ եղեա՞լ է յաղօթքն. կամ անհնազանդ. թէ բղջախոհ. թէ յատուկ իրք ունօղ. թէ պճնօղ. թէ որոնօղ լաւ կերակրոց և ըմպելեաց. թէ *բնափ* և թէ կռւօղ: - 601

**ՔՆՆԵՄ +** Դարձեալ *քննեսցուք* ըստ մեզ...: - 40. Եօթներորդ՝ *քննել* զսիրտս աստուծոյ՝ ո՛չ է ստեղծուածոյ ումեք...: - 57. Այլ դատաւորին պարտէ ունիլ անհուն գիտութիւն. զի *քննել* կարասցէ զամենայն բնութիւն հրեշտակաց և մարդկան...: - 100. Ա՛րդ՝ *քննել* մտօք յանդգնութիւն է. և հաւատալն կեանք. զի ի հաւատո՛ցն է փրկութիւն: - 101. Իսկ տրամախոհութեամբ *քննէ* զիմանալիս. որպէս հրեշտակ: - 103. Եւ է սա՛ առաջին. զի զոր նա՛խ է քան զյաւիտեանս և զժամանակս՝ աստուածաբանէ՛ և *քննէ՛:* - 122. Նմանապէս տարբերութեամբ յատկիւ և պատահմամբ. այլ են *քննօղ* մտաց: - 236. Յոգին պատկե՛ր է աստուծոյ. և աստուածապաշտ մարդոյ՝ զաստուած *քննել* ո՛չ մարթի թէ ուստի՞ է. կամ ո՞ւր է կամ ո՞րչափ է. և կամ թէ ո՞րպէս է. կամ թէ մինչ ի յուր է: - 251. Եւ նախ ասի իմաստութիւն նոցա, որ զբնութիւն էիցս *քննեցին*. և զշարժումն լուսաւորացն. որպէս իմաստունքն յունաց: - 269. Յինգերորդ՝ զի ամենայն տեսանէ և *քննէ* աստուած. այսպէս և մարդն ներքին և արտաքին զգայարանօք: - 271. Իններորդ՝ անշարժ նոյնութեամբ իւրով զամենայն *քննէ* և իմանայ. այսպէս և միտք առ մարդն գոլով զգիտութիւն էիցս *քննէ:* - 271. Սուրբ գիրն ասէ՝ «տէր աճեցոյց և օրհնեաց զյոբ». և անպատշաճ է զուստին *քննել*. զի ամենակարօ՛ղ է: - 326. Զառաջիկայն և զմիտս մարդկան ո՛չ ոք գիտէ. ո՛չ հրեշտակք և ո՛չ դևք և ո՛չ մարդիկք. բայց միայն աստուած որ *քննէ* զսիրտս և զերիկամունս: - 336. Որոճօղն՝ *քննօղ* իմաստութեան. և կճղակն ուղիղ վարք հոգւոյ և մարմնոյ. սուրբ են: - 364. Եւ այն որ *քննէին* ծերքն՝ խոստովանիլն է. և ապա՛ դնէին ի քաղաքն, ապաշխարութիւնն է: - 392. Դարձեալ՝ հայեա՛ց յանձն քո. և նախ զքեզ *քննեա* և տե՛ս, և ապա՛ զայլս: - 398. Դարձեալ՝ զաստուածայինս ամենայն՝ ո՛չ կարեմ *քննել*. այլ զոր ինչ յայտնէ՝ պատմեմ ձեզ: - 405. Դարձեալ՝ և դուք զծածուկն աստուծոյ մի՛ համարձակիք *քննել*. այլ զոր ինչ յայտնէ ձեզ՝ ուսուցէք որդւոց ձերոց: - 405. Դարձեալ՝ ի սուրբ գիրս զդժուարն և զծածուկն մի՛ *քննէք:* - 405. Զի թէ զամենայն բան *քննեմք*, աստուծոյ զի՞նչ թողումք յապայ: - 405. Դարձեալ՝ օրէնքս յայտնի էր զոր ուսոյց. և աւետարանն ծածկեալ, զոր հոգին սուրբ յայտնէ որ *քննէ* զխորս աստուծոյ: - 405. Իսկ առ մեզ Նախ ծածուկ ներտրամադրեալն բան. զի աստուած *քննէ* զսիրտս: - 406. Եւ ա՛յս է պատճառն. զի ի դատաստան քահանային *քննեալ*՝ այլ ո՛չ *քննի* ի դատաստանին քրիստոսի...: - 433. Եւ այլք գոն յոլովք. զի յորժամ պարապով ոք *քննիցէ* գտանէ: - 553. Յարամնայութիւն է հաստատ և միշտ յարակայութիւն ի բարեպէս *քննել* բանականութեանն: - 580. Իսկ յորժամ քահանայն լաւ *քննէ* զխղճմտանքն ժողովրդեանն. խորհի վասն ապաշխարութեանն թէ ո՞րպէս կարէ ապաշխարել...: - 601. ...Դարձեալ՝ ո՛չ գան ի դատաստան, զի մասն բարւոյ ո՛չ ունին որով *քննիցին*. այլ դատապարտին որպէս ցուցանի յառաջիկայդ: - 725. ...զի ի նմա՛ է ծածկեալ ամենայն գանձք իմաստութեան և գիտութեանն աստուծոյ. վասն որոյ իմաստութիւնն *քննէ* և դատէ: - 735. Մետասաներորդ, հնձան կոչի և հաւատն սուրբ. զի ի նա՛ հաւաքի ամենայն բան և գործք մեր. և ճմլեալ այսինքն *քննեալ*՝ լինի գինի ուրախարար աստուծոյ և հրեշտակաց: - 749. Եւ նմա աւանդել՝ յորում ծածկեա՛լ են ամենայն գանձք իմաստութեան. և որ *քննէ* զխորս աստուծոյ: - 759

**ՔՆՆԻՉ +** Ի դէմս հօր՝ մարգարէքն. ի դէմս որդւոյ՝ առաքեալքն. ի դէմս հոգւոյն՝ *քննիչ* վարդապետք. զի «հոգին քննէ զամենայն և զխորս աստուծոյ»: - 535

**ՔՆՆՈՒԹԻՒՆ +** Դարձեալ, թէ է՛ հարկ՝ ո՛չ են իրաւունք դատաստանի և *քննութիւն*...: - 12. Նախ՝ բնական *քննութեամբ*. որպէս իմաստասէրքն գտնի: - 24. Նաև բնական *քննութեամբ*. զի յորժամ ասես՝ մի և մի՝ եղև երկու. և այժմ ունի զերկուին բնութիւն: - 55. Ծածուկ և զանխո՛ւլ է աստուածաբանութեան տեսութիւն հասարակ մտաց. և հազիւ ճանաչի կիրթ խորհրդոց՝ և նուրբ *քննութեանց* սրբոց: - 81. Վասն զի իմաստունք մաքառին ընդ դէմ հաւատոց. և *քննութեամբ* մտաց ո՛չ կարեն հասանիլ. և զրկին ի փրկութենէ իւրեանց: - 96. Եւ դարձեալ՝ *քննութեամբ* մտաց ո՛չ լինի հասեալ անհասանելին. այլ հաւատով լինի իմացեալ. և յուսով ըմբռնեալ. և սիրով միաւորեալ: - 101. Եւ զանազանութիւն բնական *քննութեան* և հաւատոյ: - 101. Եւ մերձ բանին իմանալեացն *քննութիւն:* - 103. Երրորդ՝ և բաժանի և զանազանի ի բազումս. և այնպէս շրջագայութեամբ գտանէ զճշմարիտն. և այսպէս է բնական *քննութիւն* իմաստասիրացն: - 120. Որո՞վ հաւասարին և զանազանին բանական *քննութիւն* և հաւատոյ տեսութիւն: - 121. Երրորդ՝ բանական *քննութեան* հետևի հերձուած. և հաւատոյն ուղղափառութիւն: - 122. Չորրորդ՝ բանական *քննութիւն* զճշմարիտն ընդ մտա՛ցն քարշէ. իսկ հաւատոյն՝ միտք ընդ

ճշմարտութեանն հետևի: - 122. Չինգերորդ՝ բանական *քննութիւնն* անվարձատրելի է: - 122. Նախ՝ զի խորհրդով և հաւատով տեսանի և ո՛չ *քննութեամբ* մտաց: - 123. Եւ երկրորդն որ է պատճառաբանականն՝ առաւել է քան զառաջինն. զի յաղագս աստուածային անուա՛նցն է *քննութիւն:* - 123. Եւ զայլ յերկար *քննութիւն* տարերաց՝ գտցես ի գիրս նիւսացւոյն որ վասն բնութեան մարդոյ: - 181. Երրորդ՝ իմաստութիւն ասի և բանական *քննութիւն*. որք բանիցն տեղեկացեալ ընտրեն զստոյգն ի ստոյն: - 269. Չինգերորդ՝ զի մտօք յաստուածային խոկումն էին վերացեալ, և զգայարանօք ընդ գործս հրաշիցն. և ոչ էին պարապեալ *քննութեան* անձին...: - 278. Եւ զայլ *քննութիւն* զենմանն գտցես յառաջիկայդ ի **խե** համարն: - 296. Զայս և այլ սոյնպիսիս բազմօրինակ ստուերագրութեամբ առ ճշմարտութիւն իրին. իսկութեամբ ոչ գոլ անհնարին երկասիրացդ ի սոյն դեգերմամբ զոր ի պարապ ժամու *քննութեան:* - 306. Ութերորդ՝ առ ի ցուցանել թէ մարդկային միտք ի *քննութիւն* աստուածային բանին կա՛ղ գտանին: - 311. Եւ միջին խորհուրդ է, յորժամ ի *քննութիւն* էիցս պարապի: - 331. Իրաւունքն է ընտրութիւն և հատուցումն դատաստանին այսպէս. զի դատաստանն է տեղիք *քննութեան*. և արդարութիւնն է գործ դատաստանին: - 340. Եւ իրաւունքն է կատարումն *քննութեան* և արդարապէս հատուցումն: - 340. Որպէս նախ քան զօրէնս, բնական *քննութեամբ* ընտրէին մարդիկ...: - 364. Այլ ի դատաստանն *քննութեան* ջնջեալ է զոր ինչ մեք ի մտի ունիմք. որպէս ասացաւ ի վերոյ: - 433. «Ո՜ խորք մեծութեան և իմաստութեան» անօթն ընտրութեան նորին քարոզէր. առանց *քննութեան* դատաստանի և ճանապարհի եկաւորութեան մարմնով ի վերայ երկրի: - 456. Այլ սակայն բնախօս *քննութեամբ* ցուցցուք բազմազան եղանակաւ: - 498. ...և Երկրորդ՝ ի հաւատն եղեն ապաստան. որոյ վարձքն հետևի. և ո՛չ ի *քննութիւն* մտաց...: - 687. Քսանևդ, այժմ ցուցից բնականապէս *քննութեամբ:* - 693. ...զի այժմ մասին *քննութիւն* է հոգւոյ և յայնժամ մասին մարմնոյ: - 700. Իսկ թէ բոլոր և բոլորից դատաստանն է ի կատարածի. ապա ուրեմն այժմ ո՛չ է *քննութիւն* մասնաւոր հոգւոյ: - 700. Այն է՝ որ յետ աստի կենացս հոգին ի *քննութիւն* գործոց ժամանէ...: - 705. Սակայն հաստատի յարութիւնն բնական *քննութեամբ* և սուրբ գրոց վկայութեամբ: - 714. Եւ բնական *քննութեամբ* նախ այսպէս եթէ՝ տեսանեմք ի քաղաքական օրէնս զի գոյ դատաստան. այսինքն բարեացն պատիւ և չարացն պատիժ: - 715. Արդ ցուցցուք թէ ճշմարիտ անապական է սուրբ խաչն բնական *քննութեամբ* և սուրբ գրոց վկայութեամբ: - 733. Նախ բնականաբար *քննութեամբ:* - 733. Նախ *քննութեան*. և երկրորդն հատուցման: - 738. Եւ դատաստան հատուցման ամենեցուն է, այլ դատաստան *քննութեանն* ո՛չ. զի ի չորս բաժանին ամենայն դատեցեալք: - 738. Լուծն՝ ուղիղ և անաչառ *քննութիւնն:* - 745. Երրորդ, հայի առ նոյն ինքն արդարապէս հատուցումն մանրամասն *քննութեամբ* բարեացն և չարացն. որք առաւել կամ նուազ ունին. կամ հասարակ յերկուցն կրից: - 746. Յարութիւն մարդկան ի վայրկեան ժամանակի և յանկարծակի լինի որպէս ցուցաւ ի վերոյ. այլ զյերկարութիւն ժամու *քննութեան* դատաստանին, ոմանք ժամ մի ասեն. որքան եկաց ընդ ադամայ ի *քննութիւն* հարցմանց յետ յանցանաց նորին: - 747. Այլ զի մի՛ իրողութիւն դատաստանին և յարութեան ուրուական և առ աչօք թուեսցի ընդհանուր ամենայն մարդկան, վասն որոյ ասեն վարդապետք ի յարութենէն մինչ ի գալուստն և *քննութիւնն* և հրով նորոգիլն և այլն՝ յերկարի միջոցաւ որքան ժամս **զ**: - 747

**ՔՆՈՒ** - Ի գինւոյ և ի ցքոյ պահել, զի մոռացկոտ և *քնու* և ծոյլ և ապուշ առնէ զինին: - 389

**ՔՇՈՑ +** Որև այժմ ի յեկեղեցի ի նոյն խորհուրդ՝ սերոբէին պատկեր որ է *քշոցն*՝ ի ձեռն սարկաւագին աւանդի...: - 135. Եւ զխաչն հրաշագործ՝ զկենսատու մանանայն. և բուրվառ զխունկս աղօթից. վէմն սեղանն սուրբ. և քերովբէք *քշոցքն* **բ**: - 345. Յայս միտս ի բերել ընծային ի սեղանն՝ է դասք քահանայից կան ի սպասու. և երգեն եղանակաւ. և *քշոց* և բուրվառ և զանգակ հնչէ: - 431. ...և գո՛րծ է նոցա, հրամանաւ քահանային աւետարան կարդալ, քարոզել, և բառնալ *քշոց* և բուրբառ. և նստիլ ամենևին ո՛չ: - 608. Նմանապէս և *քշոցն*՝ վեցթևեան սերովբէքն: - 645

**ՔՈԴՈՂ ԳՈՄՈՐ** - Եւ յորժամ կոտորեաց զթագաւորսն *քոդող գոմորայ*, եցոյց թէ թագաւոր թագաւորա՛ց է: - 300

**ՔՈՅՐ +** Եւ սեփովրա դուստր էր ռագուէլի, և *քոյր* յոթորայ. յազգէ աբրահամու **ե** երորդ այսպէս: - 330. Եւ եղև *քոյր* սորա եղիսաբեթ կին ահարօնի քահանայի. յորմէ ծնաւ նաբաթ և աբիուդ. եղիազար և իթամար քահանայք: - 452. Այլ և յովսաբեթ դո՛ւստր է յովրամայ և գոդողիայ և *քոյր* ոքոզիայ: - 452. Եւ այսպէս սողոմի և եղիսաբեթ և մարիամ աստուածածինն **գ** *քերց* դստերք էին: - 460. Որպէս ահարօն ունէր զդուստրն ամինադաբայ՝ *զքոյրն* նայասոնի իշխանին յուդայ: - 461. Այլ և յովիդա

քահանայապետ զդուստր յովրամայ արքայի *զքոյր* ոքողիայ: - 461. Եւ զօծումն թագաւորական՝ ի մարեմայ *քեռէն* ղազարու. յորժամ նստաւ ի վերայ յաւանակին: - 474. Եւ վասն այս չափ ազգակցութեան՝ *քոյր* աստուածամօրն կոչեցաւ: - 517. Վեցերորդ՝ մարիամ *քոյրն* ղազարու. որ էօծ զտէրն իւղով: - 517. Զի պողքէր *քոյր* թագաւորին թէոդոսի ի կուսանաց վանս էր. և պղծեցաւ պոռնկութեամբ ի մարկիանոսէ. և ապա՛ եղև կին նմա. և ասեն թէ ի նեստորէ՛ էր մկրտեալ: - 542. ...թէ զերկու *քորս* **բ** եղբարցն տալ. կամ զսանին *քոյրն* միւս եղբօրն. որպէս քո սուտ պետրոսին կանոն է, և ո՛չ ճշմարիտ պետրոսին. և զայլն լռեմ իբրև զամօթալի: - 548. Եւ այլ բազում և զանազան ազգապղծութիւն ընդ հօգևորս և ընդ մարմնաւորս. երկու եղբարց և **բ** *քերց*. և ընդ *քերց* հօգևոր մօր. և անխտիր ի բազմանկողինս և այլս բազումս որ զազիր է խօսելոյ օրէնքէ նոցա: - 552. Իսկ ի կողմանէ, որպէս եղբայր և *քոյր* մեր, և նոցին ծնունդքն: - 611. Եւ հօր եղբայր, և *քոյր*. և մօրաքոյր, և եղբայր. և ծնունդք նոցա մինչև յեօթն ազգն: - 611. Զի **բ** են հայր և մայր մեր. և **բ** ծնունդ որդին և դուստրն. և **բ** եղբայրն և *քոյրն*. և մեք ի մէջն **է** երորդ: - 611. Զի եղբայրն և *քոյրն* ունին զբոլոր արիւն ծնողին...: - 612

**ՔՈՍ +** Արատ Պատարագացն: ...Տասներորդ՝ *քոսն*. զազիր գործն: - 370. Հինգերորդ՝ *քոսն*. որ յայտնին է: - 371

**ՔՈՐԱԶ** - Եւ ծնունդն ի *քորազին*. և սնունդն ի բեթսայիդայ. և թագաւորեալ ի բիւզանդիայ: - 706

**ՔՈՐԵՄ +** Վեցերորդ, յարաժամ *քորի*. և յանա՛գ է մեղքն: - 367

**ՔՈՒԵՐՔ (տ. ՔՈՅՐ) +** Եւ փոխմանն, ի վախճանիլն մարիամու՝ *քուերն* ահարօնի յանապատին: - 374

**ՔՈՒԷԱՆԱՄ** - Եւ կամ աննիւթ ինչ և աննկերպ՝ ընդ նիւթական կերպարանաց ձևացեալ. յորում իւրաքանչիւրոցն էութիւնք անշփոթաբար երևին. որպէս պղինձ գնդացեալ. կամ *քուէացեալ:* - 476

**ՔՈՒՆ +** ...և որպէս ի *քնոյ* զարթուցեալք ո՛չ լսէին զլեզուս միմեանց: - 298. Սիրտ զանմահ աստուածութիւնն ասէ որ ո՛չ ննջէ և ոչ ի *քուն* երբայ պահապանն իսրայէլի: - 316. Եւ որպէս ննջեցեալն *քնով* ո՛չ տեսանէ զինքն. և որպէս յաւելի կերակրոյ խնուն զգայարանքն. նոյնպէս ագահութիւն և փարթամութիւն և հպարտութիւն մոռանալ տայ զինքն. վասն այն ասեն թէ՝ ինքեանց գիտակքն իմաստունք են: - 397-398. Այլ և դաւիթ եգիտ զսաւուղ և զզօրսն նորա ի *քուն* և ո՛չ վնասեաց. այլ զզէնն էառ. և տէրն ո՛չ կամի զմահ որք ննջեն ի մեղս. այլ զպատճառ մեղացն հանէ: - 437. *Զքուն* մահուն ասէ մինչ ի կատարած. և ի մէջ գիշերի յարութեանն աւուր յարեան ամենայն կուսանքն և կազմեցին զլապտերս: - 693. Անդ ի *քունն* ձայն լսէ թէ՝ կին դու յղասցիս մեծ ոմն: - 706. Երրորդ, ասեն թէ միովն զարթուցանէ որպէս ի *քնոյ*. և միովն յառնեն. - 713. Նախ՝ զի կամ ննջելով հանգչին ի տանջանացն. իսկ անդ հատեալ է *քուն* յաչաց նոցա: - 750

**ՔՈՒՆ(Ք) +** Թէ կամարաձևն դէպ ի *քունն* է, նշանակէ զհեղգն: - 246

**ՔՈՒՍԻ** - Նախ բնական խեւքն. որ ի բարեխառն կազմուածոյ հանդիպի. որպէս էր՝ ակիտոփէլին և *քուսեայ* բարեկամին դաւթի: - 537

**ՔՈՒՐՄ +** Քսաներորդ, և որպէս յովսէփ եթող *զքուրմն* և զերկիր նոցա, զոր քրիստոս էր բառնալոց զմեծամեծ մեղսն և զկռապաշտութիւնն. զի ըստ առն և զօրութիւն իւր. և ըստ աստուծոյ և գործք իւր: - 314. Սեփովրա էր դուստր ռագուէլի *քրմի*՝ որդոյ դեդանայ. որդւոյ յեկտանայ. որդւոյ աբրահամու ի քետուրայ կնոջէ: - 330

**ՔՍԱԿ +** Վարդապետք ասեն. որպէս սուրբն բարսեղ՝ թէ որպէս երկբերանի *քսա՛կ* է լուսինն. ընդ միոյն ելանէ և ի վերի թիկունքն ժողովի և պակասի ի մէնջ լոյսն. և ի միւսն ի ներքս մտանէ և լուսաւորէ՛ զմեզ: - 187

**ՔՍԱՆԹԻՍ** - Եգիպտոսի իշխանին *քսանթիս* կոչէին որ չարչարիչն էր իսրայէլի...: - 330

**ՔՐԷԱԿԱՆ +** Իսկ դադան *քրէական* մեղանչեաց որ է՛ յանցումն ի թագաւոր. զոր անհնարին պատուհասին. գոյիւք և ազգօք ջնջին: - 381. Ոմանք ասեն թէ՝ դադան *քրէական* մեղանչեաց. վասն այն դառն տանջեցաւ: - 381. Հինգերորդ՝ զի *քրէական* մեղքն ազգաջինջ առնէ...: - 416

**ՔՐԻՍՏՈՆԵԱՅ +** Երրորդ՝ մոլորեցուցիչ կոչի. և հերձուածօղք մոլորեն զուղիղ հաւատս *քրիստոնէին*. և զբարի գործս նոցա: - 35. Վեցերորդ՝ հակառակէ քրիստոսի՝ և *քրիստոնէից*. և սոքա հակառակին սուրբ եկեղեցւոյ և ուղղափառ հաւատոյ...: - 35. Ա՛րդ՝ եթէ բաժանեցեր զքրիստոս՝ բաժանեցար ի հաւատոցդ. և ո՛չ լինիս *քրիստոնեայ:* - 95. Իսկ ա՛յժմ *քրիստոնէիցս* կրկին է սկիզբն բնական աւուր. այսինքն մէջ գիշերն, և առաւօտն: - 194. Յորմէ ուսեալք՝ յամենայն ամի կատարեմք իւրաքանչիւր ազգ *քրիստոնէից:* - 200. Եւ որք հաղորդեցան հոգւոյ, այսինքն հաւատոյ նորա, եղեն որդիք հաւատոյ նորա.

որպէս *քրիստոնեայք*: - 303. Եւ տէրն **բժ**ան առաքելոք զազգս *քրիստոնէիցն* յերկինս հրաւիրեաց: - 329. Այսպէս և *քրիստոնեայք* յորժամ ելանեն ի կենաց աստի, կողոպտեսցեն զդևս և ապա՛ ելցեն: - 336. Գառն՝ որդիք *քրիստոնէի*. և Ուլն՝ որդիք հեթանոսի յորժամ գան յեկեղեցին սրբին և նւիրին աստուծոյ: - 358. Նոյնպէս *քրիստոնեայն* որ մեղօք մեռանի՝ և անհաւատն միապէս պիղծ են առաջի աստուծոյ: - 365. Երևումն՝ *քրիստոնէիցս* ի նորս: - 379. Անդրանկաց սատակումն եգիպտոսի, նշանակէ՛ զանկումն սատանայի յերկնից. և փոխանակ նոցա ընտրեալ և կոչեալ որդի անդրանիկ զիսրայէլ. և զնոսա փոխարկեալ առնու զօծելոց դասս *քրիստոնէից* ի տեղի նոցա: - 380. Չորրորդ՝ ազգս *քրիստոնէից*. հաւասար անցեալք ընդ յորդանան և մկրտեալք: - 391. Երրորդ՝ զի ամենայն ազգ ի մի կողմ երկրպագէին. և յետոյ *քրիստոնեայք* յարևելս: - 395. Նշանակէ զօրէնս *քրիստոնէից* այսպէս: - 395. Ա՛րդ՝ զերկու օրհնութիւնս **բ** կտակօք բաշխեաց մարդկան. զմարմնոյ աճումն և ընչից՝ ետ իսրայէլի. և զհոգւոյ աճումն կուսութեամբ և աղքատութեամբ՝ ետ *քրիստոնէից*: - 403. Եւ տէր մեր վիմով հաւատոյն զսիրտս *քրիստոնէից*: - 418. Երրորդ՝ ի տիպ երկնաւոր հացին որ բաշխելոց էր *քրիստոնէից*: - 427. Եւ հրաւիրակք են անուանեալ *քրիստոնեայք*. որք չունին զգործս՝ նոքա փութով հանին ի բաց: - 440. Զի աւելին ագահութիւն հեթանոսաց էր. և պակասն անհաւատից. այլ միջինն *քրիստոնէից*...: - 444. Իսկ ըստ կոչման, որպէս *քրիստոնեայք*. մկրտեալք. ծառայք. և ստեղծեալք: - 476. Երրորդ ձեռագիր *քրիստոնէիցս* առ աւազանաւն. որ հրաժարիմք ի սատանայէ՛ և դաւանիմք զքրիստոս: - 482. Իսկ զգիր *քրիստոնէից* զոր յետ աւազանին մեղանչեմք և գրեմք զյանցանս, զայն պատառէ ապաշխարութիւնն. որ է՛ զղջումն սրտի և խոստովանութիւն լեզուի և հատուցումն գործոց մարմնոյ: - 482. Յառաջագոյն ամենայն ազգք *քրիստոնէից* սկսեալ յառաքելոցն այսպէս տօնէին. ի վեցն յունվարի զծնունդն, և ի նմին աւուր զմկրտութիւնն ըստ աւետարանին վկայութեան: - 482. Նմանապէս և զկերակուրս **գ** են որոշեալ *քրիստոնէից*: - 510. Ա՛րդ՝ մի է ամենայն ընդհանուր եկեղեցիք որ է բոլոր *քրիստոնեայք* ըստ հաւատոյն և կոչմանն յուսոյն որպէս սեռիւ: - 533. Նա՛խ՝ որպէս բոլորն է մարմին և իւրաքանչիւր մասունքն. նոյնպէս և բոլորն մի եկեղեցի՝ և իւրաքանչիւրքն. և բոլորն *քրիստոնեայ*՝ և մին մարդն. եթէ նման են միմեանց և եթէ աննման: - 533. ...մի է եկեղեցի յիւրաքանչիւր ազգս. զմի և զնոյն ունելով գործ և իր ի միոյ գլխոյն առ մի անդամքս. ի միոյն քրիստոսէ առ մի *քրիստոնեայքս*. ի միոյ հաւատոյն առ մի հաւատացեալքս...: - 533. Այսպէս. որք ելեալ ի կանոնէն՝ չեն ի նոյն կարգ *քրիստոնէից*: - 538. Եւ վէմ դաւանութիւնն էր որ խոստովանեցաւ զքրիստոս որդի աստուծոյ կենդանւոյ. և ի վերայ այնմ դաւանութեան շինեցաւ եկեղեցի *քրիստոնէից*: - 547. Ապա ուրեմն պարտին ամենայն ազգք *քրիստոնէից* սորա հետևիլ: - 550. Այսպէս և ամենայն ազգք *քրիստոնէից* զնոյն ունէին ճանապարհ դաւանութեան և աւանդութեան յառաքելոց անտի մինչ ի ժողովն քաղկեդոնի. և յետ անտի բաժանեցան...: - 551. Նմանապէս և ամենայն ազգ *քրիստոնէից* ասէ զինքն ճշմարիտ: - 551. Զա՛յս ասեմ, զի որ ինչ անօրէնութիւն է ազգիս հայոց, նո՛յն է օրէնք այլազգ *քրիստոնէից*. և որ մեզ երկբայութիւն է՝ նոյն դաւանութիւն է նոցա: - 552. Այսինքն է, զազգս *քրիստոնէից* տեսանեմք զի ո՛չ ըստ անուանն և զմիութիւն կանոնական սահմանի ունել: - 553. Եւ այսպէս բազում ունելով իւրաքանչիւր ոք սահմանս առանձին, միայն հայք նախատեալ լինին որպէս ո՛չ ունել միաբանութիւն ընդ այլս ի *քրիստոնէից*. այլ առանձին միայնաբար ընթանալ. և այսու որպէս հակառակ եպերեալ: - 553. Բայց պարտ է այնոցիկ որք ո՛չ գիտեն՝ և կամ թէ կամաւ տգիտանան՝ ցուցանել զմիաբանութիւն ազգիս հայոց առ այլ *քրիստոնեայսն*. զի գիտացեալ յամօթ լիցին յաղթեալք ի ճշմարտութենէն: - 553. Եւ ըստ այսմ միաբանութեան և զմէրս տեսանեմք եկեղեցի ունել եզով միաբանութիւն առ այլ *քրիստոնեայս*: - 554. Որպէս և տօն ծննդեանն զոր միաբան ասեն տօնել այլոց *քրիստոնէից* բաց ի հայոց. և զի և այն աւանդութիւն է և տօնախմբութիւն և ո՛չ հաւատ: - 554. Նա՛խ՝ զի այսպիսի չար աղանդս ո՛չ գտանի յայլ եկեղեցիս *քրիստոնէից*: - 589. Որդի *քրիստոնէին* զիա՞րդ լինի մեղաւոր յորժամ սրբեալ է հայրն մկրտութեամբ: - 592. Եւ որ զայլ մասունս օծանէ՝ յա՛յնմ խորհրդոյ է՝ որ յառաջ քան զմկրտութիւնն օծանեն այլ ազգք *քրիստոնէից*: - 593. Ասեմք թէ՝ յարաժամ աջ քահանային մերձի ի գլուխ *քրիստոնէին* ուր արմատն է բոլոր զգայութեանցն: - 605. Ի ժամ մկրտութեանն քրիստոս եցոյց զքրիստոնէութեան խորհուրդն. զի մեք մկրտութեամբն լինիմք *քրիստոնեայք*: - 606. Յասմանէ ուսեալք ազգ *քրիստոնէից* յօտար ազգէ առնեմք զհարսն: - 612. Իսկ այժմ ի մէջ *քրիստոնէից*՝ ի մեռանիլ միոյն՝ միւսն նս ածեն...: - 613. Իսկ ի նորս եկեղեցի *քրիստոնէիցս* ազգի՝ յաւելեալ է կրկին ժամ. այսինքն յետ առաւօտին զարևագալն. և յետ երեկոյին՝ զխաղաղականն...: - 621. Յայս միտս մեք ազգս *քրիստոնէից* յելս արևու

և ի մուտս համածայն վերին զուարթնոցն աղօթեմք առ աստուած: - 621. Զի խաչն պսակ և փառք է քրիստոսի և պարծանք *քրիստոնէից* և ո՛չ նախատինք...: - 632. ...որպէս յառաջն ունէին ամենայն ազգք *քրիստոնէից*. և դեռևս պահէ՛ ազգն դպտի և հապաշի: - 650. Եւ զայս ունին սկիզբն և հիմն պահոց ամենայն ազգ *քրիստոնէից* զոր նոքա լուծանեն: - 651. Չորրորդ յայտնի և հաստատուն, որ ամենայն ազգ *քրիստոնէից* պահեն զչորեքշաբաթն և զուրբաթն վասն խաչելութեանն որ սո՛ւգ է և պահք: - 652. Իսկ *քրիստոնէիցս* օրհնութեամբ է և շնորհօք: - 654. Յինգերորդ, *քրիստոնէից* մարմինք սրբութեամբ տաճա՛ր են աստուծոյ, յոր պիղծ ոչ ինչ մտանէ: - 654. Եւ զայս սովորեցաք *քրիստոնեօից* ազգս...: - 655. Վասն այն ընդ *քրիստոնէի՛ց* պարտ է բաժանել զհացն...: - 655. Նոյնպէս զայս ի քրիստոսէ ունիմք *քրիստոնեայքս:* - 655. Վասն որոյ ընպելի եղև *քրիստոնէիցս* և օրհնութեան բաժակ: - 655. Այլ բաժին ննջեցելոց *քրիստոնէից* արքայութիւնն է և կեանքն քրիստոս: - 656. Կոչի կարգ, Նախ զի *քրիստոնէից* մին կարգ՝ ննջեցելոց կատարումն է ի վերայ է խորհրդոցս. ութերորդ խորհուրդ և կարգ. վասն ութերորդին կենաց: - 671. Զի վասն յանցանացն ադամայ անիծաւ երկիր ի գործս նորա. զսուրբ մարմինն *քրիստոնէի* չէ՛ պարտ դնել յանսուրբ հող...: - 676. Եւ փարաւոն ընկղմեալ զօրօքն. զի ոչ ինչ կարեն վնասել չար դևքն՝ *քրիստոնէից* հոգւոց: - 682. Այսպէս թէպէտ *քրիստոնէից* հոգիքն որ անարժանք են՝ ի ձեռն հրեշտակին ժամանեն ի կայանս հոգւոցն այսպիսի սքանչելեօք: - 682-683. Նստցի ի տաճարին զոր շինեսցեն նմա հրէայքն. և ասասցէ թէ, յառաջ քան զիս ո՛չ ոք է ճշմարիտ *քրիստոնեայ*. այլ նեռինք են ամենայնքն: - 707. Իններորդ, զի զիտասցուք մեք *քրիստոնեայքս*՝ թէ քրիստոս է մեզ դատաւոր...: - 735. Որք առին զօրէնս և ո՛չ պահեցին. որպէս չար *քրիստոնեայք* ի նորս և չար հրէայքն ի հինն...: - 739

**ՔՐԻՍՏՈՆԷԱԿԱՆ +** Չորրորդ, *քրիստոնէական* ժողովուրդն դալարացեալ ի մեղաց. շառաւիղեալ ծննդօք. ծաղկեալ հաւատով և պտղաբերեալ: - 382. ...և օգնեաց մեզ *քրիստոնէական* անուամբ: - 673

**ՔՐԻՍՏՈՆԷՈՒԹԻՒՆ +** Եւ որ ուրանայ զմիութիւնն՝ ուրանայ և զքրիստոսն զոյ. ապա ուրեմն և զհաւատ *քրիստոնէութեանն:* - 76. Այլ յորժամ յաւելաւ *քրիստոնէութիւնն*, յաւելաւ և կանոնքն: - 166. Զի *քրիստոնէութիւն* որպէս մկրտութիւն և այլն՝ անբաժանելի՛ է ի հոգւոյն. թէպէտ ուրանայ լեզուաւ և գործով: - 401. Նոյնպէս անցեալ ընդ մկրտութիւն և յաղթեալ փորձութեանցն և եկեալ ի *քրիստոնէութիւն:* - 419. Ի ժամ մկրտութեանն քրիստոս եցոյց *զքրիստոնէութեան* խորհուրդն. զի մեք մկրտութեամբն լինիմք քրիստոնեայք: - 606

**ՔՐԻՍՏՈՍ +** Այլ արդ՝ է *քրիստոս* ամենայն՝ սիրով յօդեալ են ի միմեանս՝ և բարեկարգեալք: - 21. Որոց պատասխանեն վարդապետք եկեղեցւոյ. և ես զնոցայն առեալ ասացից՝ թէ յաւուրս յետինս՝ ոչ զկատարած աշխարհի կոչէ, այլ կոչէ աւուրս յետինս՝ զպակասութիւն օրհնացն և արդարութեան նորա. քանզի օրէնք նոցա պակասեցաւ ի գալստեանն *քրիստոսի:* - 27. Եւ զի ո՛չ ընկալան զարեգակն արդարութեան *զքրիստոս*, անկան ի լուսոյ ի խաւարն: - 27. Եւ այսպէս առ *քրիստոս* ոչ ամենայն ազգ, այլ բազումք յամենայն ազգաց եկին: - 27. Ասեմք թէ՝ զբանս զայս ասէ մարգարէն վասն խաղաղութեան որ եղև սակաւ մի յառաջ քան զգալուստն *քրիստոսի*՝ և ի բոլոր ժամանակս *քրիստոսի*, և յետ նորա **խ** ամ մինչև ապստամբեցին հրէայքն հռոմայեցւոց տէրութեանն: - 27. Ա՛րդ՝ յորժամ ծնաւ *քրիստոս*՝ այնպէս խաղաղութիւն էր՝ որ մին մարդ տիրէր ամենայն աշխարհի: - 27. Նոյնպէս ի ժամանակս քարոզութեանն *քրիստոսի* և առաքելոցն էր խաղաղութիւն: - 27. Այլ ոմանք ասեն թէ՝ նախ ասացեալ բանքս՝ ո՛չ լինին զառաջին գալստենէն *քրիստոսի* ասացեալ, այլ զերկրորդէն: - 27. Քանզի հրէայքն ի ժամանակս *քրիստոսի* ո՛չ լինէին նեղեալք յումեքէ: - 28. Դարձեալ՝ ի գալստեանն *քրիստոսի*՝ բազում գազանաբարոյ անբարիշտք եկին ի հնազանդութիւն *քրիստոսի:* - 28. Արդ՝ թէ ինն ամսով յառաջ թագաւորեալ էր թագաւորն չար, ապա ուրեմն ի ժամանակս Օգոստոս կայսեր ծնաւ *քրիստոս*. զոր և վկայէ՛ աւետարանն սուրբ: - 29. Չորրորդն՝ ի մօրէ միայն առանց հօր. որ է *քրիստոսին:* - 29. Այլ և զամս ծննդեանն *քրիստոսի*՝ և վասն եօթներորդացն դանիէլի՝ գտցես ի չորրորդ թագաւորութեանց վերջքն ի **լ** համարն. զոր ընդդէմ հրէից գտցես բան: - 29. Երրորդ՝ Զի ճշմարիտ աստուած է *քրիստոս* ի գլխով: - 30. Ութևտասներորդ՝ Զի մասունքն *քրիստոսի* աստուած է, ոտք և ձեռք և գլուխն: - 30. Զի որպէս գիջակնութիւնն չտայ թոյլ տեսանել յստակ, այսպէս երկիւղն յետս քարշէ զբազումս ո՛չ հաւատալ ի *քրիստոս* որպէս ասէ յօհաննէս. «զայս ասացին ծնօղքն կուրին՝ զի երկնչէին ի հրէիցն խոստովան լինիլ *զքրիստոս»:* - 32. Այլ և ատելութիւնն դարձուցանէ զմիտս բազմաց ի հաւատոցն. որպէս ատելութիւն և նախանձ փարիսեցւոցն՝ ո՛չ տային թոյլ հաւատալ ի *քրիստոս*. թէպէտ տեսանէին զամենայն նշանսն զորս առնէր. որպէս ասէ

սաղմոսն, «ատեցին զիս ի տարապարտուց»: - 32. Այլ սոքա ինքեանց և բազմաց. այսինքն հօտին *քրիստոսի*. «յափշտակելով ի նմանէ և ինքեանց առնելով» ասէ սուրբն կիւրեղ. և յետոյ գրով աւանդեցին զչար աղանդն այլոց չար յիշատակ և ի կորուստ անձանց իւրեանց: - 33. Երկրորդ՝ նոքա հակառակ էին *քրիստոսի* թէ «դու մարդ ես՝ և զանձն քո աստուած առնես»: - 34. Չորրորդ՝ հրէայքն դաւանին զմովսէս՝ և ուրանան *զքրիստոս*, զխաչն և զօրէնս նորա: - 34. Հերձեալք ի հաւատոց՝ բաժանեն *զքրիստոս*. և զայլ եկեղեցիս հերձուածօղս կոչեն: - 34. Երկրորդ՝ նեռն հայհոյէ *զքրիստոս* զինքն կոչելով. նմանապէս և հերձուածօղք ոմանք հայհոյեն զմարդեղութիւնն *Քրիստոսի:* - 34. Չորրորդ՝ նա սուտ *քրիստոս* և սուտ մարգարէ կոչի. և սոքա սուտ քահանայք՝ և սուտ վարդապետք՝ և սուտ առաքեալք կոչին: - 35. Նոյնպէս և հերձուածօղք պղծեն զտաճարն աստուծոյ և զհաւատն սուրբ՝ որով *քրիստոս* ի մեզ բնակի, և մեք ի նա՛: - 35. Վեցերորդ՝ հակառակէ *քրիստոսի*՝ և քրիստոնէից. և սոքա հակառակին սուրբ եկեղեցւոյ և ուղղափառ հաւատոյ...: - 35. Պատասխանեմք թէ՝ ամենայն հաւանութիւն որ է կամք յետ խոկմանցէ և իմաստութեանց. և *քրիստոս* է աստուծոյ իմաստութիւն ըստ առաքելոյ: - 36. Եօթներորդ հարցումն հակառակորդացն. ընդէ՞ր ասէ *քրիստոս* թէ՝ «առաքեցայ ի հօրէ՛»: - 39. Այլ նա ընդ ամենայն է *քրիստոս* զօրութեամբ և էութեամբ թափանցեալ է. և ո՛չ է տեղի թափուր ի նմանէ...: - 40. ...զի յառաջ էր քան զմարմնական ծնունդն *քրիստոսի* բազում ամօք. ապա ուրեմն զառաջին լինելութիւնն ասէ ստեղծուած քան զամենայն եղելոց ասեն: - 40. Իսկ յորժամ հնազանդին ամենայն անդամք գլխոյն *քրիստոսի* գիտութեամբ և փոփոխմամբ, յայնժամ և ինքն լնու զհնազանդութիւնն, ընծայելով զհնազանդեալքս հօր: - 42. Իսկ վասն չարչարանաց հնազանդութեանն *քրիստոսի* բազում պատճառս դնէ յայսմ վայրի աստուածաբանն գրիգորիոս: - 42. Երկրորդ՝ զի որպէս ամէն ոք իւր զգեստիւն ճանաչի, այսպէս և *քրիստոս* մարմնով երևեալ յայտնեցաւ աշխարհի: - 43. Երրորդ՝ ըստ ո՛չ պատշաճի. որպէս ո՛չ կարեն պահել որդիք առագաստի մինչ ընդ նոսա իցէ փեսայն որ է *քրիստոս:* - 44. Եւ իմաստութիւն *զքրիստոս* ասէ աստուծոյ. թէ աստուած իմաստութեամբ հիմունս էարկ երկրի: - 45. Սմին նման է զոր ասէ մարգարէն յաղագս *քրիստոսի*, «ո՛չ մեղք իմ և ո՛չ յանցանք»: - 46. Ասեմք եթէ՝ օրինականն որպէս զմարդո՛յ բարութիւն կարծէր ունել *քրիստոսի*՝ այլ ո՛չ գերագոյն. զի և մարդիկք բարի անուանին...: - 47. Դարձեալ՝ փորձիչս այս փառասիրութեամբ յառաջեաց առ *քրիստոս*. ուստի և ի բանից իւրոց երևի թէ ամենայն պատուիրանացն պահպանօղ եմ. զոր տէրն պակաս լինել յանդիմանեաց: - 47. Եւ *քրիստոս* թէ՝ «մի՛ հոգայք զինչ ասիցէք. զի հոգին հօր ձերոյ տացէ ձեզ ի ժամուն յայնմիկ»: - 48. Զի *քրիստոս* Քահանա՛յ է ըստ կարգին մելքիսեդեկի ժ կերպիւ: - 50. Եւ *քրիստոս* թագաւո՛րէ յաւիտենական: - 50. Զի արդարութիւն արար *քրիստոս* բնութեանս մերոյ գերեալ ի սատանայէ՛: - 50. Եւ *քրիստոս* խաղաղութիւն արար յերկինս և յերկրի. և զխաղաղութիւն իւր ետ մեզ: - 50. Եւ *քրիստոս* ի յերկրի: - 50. Եւ *քրիստոս* ի հօրէ՛: - 50. Եւ *քրիստոս* զհաւատացեալքս: - 50. Այսպէս և *քրիստոս:* - 50. Այսպէս և *քրիստոս* ի հօրէ՛ ունէր զիշխանութիւնն: - 50. Վեցերորդ՝ իջումն ի յորդանան. զոր *քրիստոս* գլուխն մեր էառ և ետ ի յանգամքս: - 50. Բայց ո՛չ ծնեալ ասեմք՝ և ո՛չ անծին. այլ արտաքս առաքեալ ի հօրէ. որպէս վկայէ *քրիստոս* թէ՝ «հոգին որ ի հօրէ՛ ելանէ». թերևս ճշմարիտ աստուածաբա՛ն իցէ քան զքեզ: - 52. Եւ *քրիստոս* յաւետարանին՝ զաստուած և զմամոնայն թւակցէ: - 54. Եւ առաքեալն զհոգին և զջուր և զարիւնն ասէ գ վկայք *քրիստոսի:* - 54. Նոյնպէս և հոգին յիւրում ժամանակին. յետ խաչելութեանն *քրիստոսի* և համբառնալոյն առ հայր. և ապա իջանելոյ հոգւոյն. և յայտնելոյ զաստուածութիւնն իւր: - 55. Մեծ է հայր. մեծ է և որդի. անբովանդակելի է և հոգին սուրբ. ըստ հոգէնըւագին որ ասէ, «Մեծ է տէր մեր. և մեծ է զօրութիւն նորա». որ է *քրիստոս* աստուծոյ զօրութիւն: - 56. Նախ՝ ասէ մակեդոն եթէ աղօթել և բարեխօսել ո՛չ յարմարի աստուծոյ. զի եթէ *զքրիստոսէ*՛ ասի՝ վասն մարդկութեանն է: - 59. Նախ պատճառեն՝ զի ասի հոգի *քրիստոսի:* - 61. Պատասխանեմք, այն որ ասի հոգի *քրիստոսի*, և թէ՝ փչեաց, և թէ՝ առաքեաց, յայն սակս ասացան, զի ծաւալումն հոգւոյն սրբոյ յաղագս մարդկան՝ գալստեամբն քրիստոսի եղև: - 61. Պատասխանեմք, այն որ ասի հոգի քրիստոսի, և թէ՝ փչեաց, և թէ՝ առաքեաց, յայն սակս ասացան, զի ծաւալումն հոգւոյն սրբոյ յաղագս մարդկան՝ գալստեամբն *քրիստոսի* եղև: - 61. Այլ զի ամենայն ինչ զոր ունի հայր՝ որդւոյ է. և *քրիստոս* աստուծոյ զօրութիւն և իմաստութիւն: - 65. Նաև աշակերտքն. որպէս պետրոս որ դաւանեաց *զքրիստոս* որդի աստուծոյ: - 68. Ո՛վ երկաբնակք, *զքրիստոս* աստուած մարդացեա՞լ խոստովանիք, թէ մարդ աստուածացեալ: - 68. Ա՛րդ՝ ո՛վ բաժանօղք, ո՞ր բնութիւն է ի *քրիստոս* երկրպագելի: - 68. Ո՛վ երկաբնակ՝ դու զո՞ր բնութիւն ի *քրիստոս* ասես մի տէր. զաստուծոյն՝ թէ զմարդոյն: - 68. Զի թէ զաստուծոյն միայն՝ անկար ի յարիոսին. զի զբանն առանձին *քրիստոս* ասացեր. այսինքն օծեալ և սրբեալ ի հօրէ. յորմէ իմանի պակաս գոլ քան զհայր: - 68-

69. Վեցերորդ՝ «դո՛ւ ես *քրիստոս* որդի աստուծոյ». հարցանեմ զքեզ ո՛վ բաժանօղդ, ի *քրիստոս* զո՞րն բնութեամբ ասես որդի աստուծոյ: - 69. Եօթներորդ՝ էջ հոգին սուրբ ի վերայ *քրիստոսի* և հանգեաւ ի վերայ նորա: - 69. Շնորհօ՞ք ասեմք այժմ հոգի *քրիստոսի* և ո՞չ բնութեամբ: - 69. Ա՛րդ մկրտիմք հաւատացեալքս որպէս ի հայր և ի հոգին սուրբ՝ այսպէս և յորդին մարմնացեալ մի տէր մի *քրիստոս:* - 69. Եւ հարցանեմ բաժանօղսդ *քրիստոսի* եթէ՝ յո՛ր բնութիւն մկրտիս. յաստուծոյն թէ ի մարդոյն: - 69. Ասա՛ ո՛վ բաժանօղդ, ո՛ր բնութիւն ասէ զայս ի *քրիստոս:* - 69. Այսքան հարցուածս է ընդդէմ երկաբնակացն որք ուրանան զմիաւորութիւն բնութեանցն *քրիստոսի:* - 70. Զի թէ զբնութեամբն ասես, ստեա՛ց ուրեմն առաքեալն և աւետարանն. որք *զքրիստոս* ասեն յարուցեալ և համբարձեալ և նեստեալ ընդ աջմէ հօր: - 70. Եւ ահա՛ չորեքտասան հարցմունքս այս՝ է ընդ դէմ երկաբնակ աղանդոցն. որք զմի *քրիստոսն* յերկուս բաժանեն բնութիւնս: - 70. Եւ առաքեալն ասէ վասն *քրիստոսի*, «մի տէր յիսուս քրիստոս, որով ամենայն»: - 70. Երրորդ՝ «աստուած դատաւոր արդար» ասէ սաղմոսն. և վասն *քրիստոսի* ասէ յօհաննու աւետարանն, ո՛չ եթէ հայր դատէ զոք, այլ զամենայն դատաստան ետ որդւոյ իւրում: - 70-71. Ապա ուրեմն աստուած է *քրիստոս:* - 71. Ութերորդ՝ «մի է օրէնսդիր և դատաւոր» ասէ յակոբոս. և ինքն *քրիստոս* դնելով զօրէնսն ասէր, ասացաւ առաջնոցն այս ինչ, բայց ես ասեմ զայս ինչ և զայս: - 71. Ապա ուրեմն աստուած է *քրիստոս:* - 71. Եւ տէր մեր *քրիստոս* առնէր սքանչելիս...: - 71. Ապա ուրեմն աստուած է *քրիստոս:* - 71. Եւ առաքեալն ասէ վասն *քրիստոսի*, «փոխակերպիմք ի նոյն նորոգութիւն, յորժամ նորոգեսցէ զմարմին խոնարհութեան մերոյ ըստ նմանութեան մարմնոյ փառաց իւրոց»: - 71. Ապա ուրեմն աստուած է *Քրիստոս:* - 72. Այլ առաքեալն տէր փառաց *զքրիստոս* ասէ յառաջին կորնթացւոցն. «թէ էին ծանուցեալ՝ ո՛չ արդեօք զտէրն փառաց ի խաչ հանէին»: - 72. Ապա ուրեմն աստուած է *քրիստոս* հաւասար հօր և հոգւոյն սրբոյ: - 72. Այլ թերևս ասիցէ ոք եթէ՝ վերոյ ասացեալ գործառնութիւնքս պատշաճին *քրիստոսի* վասն բնութեան բանին, և ո՛չ վասն մարմնոյն: - 72. Վասն որոյ հարկաւորիմ ցուցանել նոյն քան զլխով եթէ աստուած է *քրիստոս* և ըստ մարմնոյն միութեան մարմնացեալ և մարդացեալ աստուած: - 72. Ապա ուրեմն աստուած է նոյն մարմինն *քրիստոսի:* - 72. Ապա ուրեմն մի է տէր և մի *քրիստոս* բանն մարդացեալ: - 72. Արդ բանն առանց մարմնոյն *քրիստոս* ո՛չ է. ապա ուրեմն յա՛յտ է զի միացեալ մարմնովն է՛ հաւասար և ի կերպարանս աստուծոյ տէր մեր յիսուս քրիստոս: - 72. Իսկ պօղոս զզաւակն զայն *զքրիստոս* ասէ ի հռօմայեցւոցն թէ՝ «*քրիստոս* է ի հարցն ըստ մարմնոյն աստուած օրհնեալ յաւիտեան»: - 73. Ութերորդ՝ ելանելն յերկինս պատշաճի մարմնոյն *քրիստոսի*. որպէս ի տեսս առաքելոցն վերացաւ յերկինս. և իջանելն՝ բանին որպէս ասացաւ: - 73. Այլ մարդն *քրիստոս* ասէր՝ «յառաջ քան զլինիլն աբրահամու եմ ես»: - 73. Եւ պետրոս ասէ ի դաւանութիւնն՝ «դու ես *քրիստոս* որդի աստուծոյ»: - 73. Ապա ուրեմն աստուած և որդի աստուծոյ է մարմնացեալն *քրիստոս:* - 73. Այլ մարմին և հոգին *քրիստոսի* զսկիզբն յաշխարհի ունին...: - 73. Ապա ուրեմն մարմինն *քրիստոսի* աստուած է: - 74. Այլ զխաչեալն *քրիստոս*՝ տէր փառաց կոչէ պօղոս յառաջին կորնթացւոցն...: - 74. Ապա ուրեմն ճշմարիտ աստուած է *քրիստոս* մարմնովն միավորեալ անբաժանելի յաւիտեան: - 74. *Քրիստոս* ըստ մարդկայի՞ն բնութեանն աստուած է, թէ ըստ աստուածային բնութեանն մարդ: - 75. Յորոյ փախչելով մեր և յերկուց ծայրիցն, զառ ի մէջն ունելով ուղղապէս ընթացք, ասեմք եթէ *քրիստոս* ըստ անշփոթ միաւորութեանն՝ աստուածային բնութեամբն մարդ է, և մարդկային բնութեամբն աստուած է: - 75. Զի նոյն ինքն *քրիստոսդ* անուն՝ ուսուցանէ զքեզ աստուածութեամբն մարդ գոլ, և մարդկութեամբն աստուած: - 75. Ուստի ո՛չ ասի *քրիստոս* սոսկ մարդն, կամ մերկ աստուածն. այլ որպէս ցուցաւ յերկուց միաւորութիւնն: - 75. Վասն որոյ աստուածային բնութեամբն մարդ է *քրիստոս*. և մարդկային բնութեամբն աստուած: - 75. Զի այս է ուղղակի դաւանութիւն միաւորութեանն *քրիստոսի:* - 75. Եւ որ ուրանայ զմիութիւնն՝ ուրանայ և *զքրիստոսն* գոլ. ապա ուրեմն և զհաւատ քրիստոնէութեանն: - 76. Եւ դու այսպէս ընկալ և հաստատեա՛ ի քեզ. և լեր միացեալ ամենայն դիմօք և խաղալեօք ի համայնից գլուխն միշտ պաշտաճութեամբ ի *քրիստոս:* - 76. Որև ընդ չարչարիլն *քրիստոսի*՝ չարչարեցաւ և մեռաւ բոլոր մարդկութիւնս ըստ նոցա: - 76. Աստուած և մարդ ասել *քրիստոսի* կրկին է իմացումն: - 77. Ըստ որում՝ «*քրիստոս*՝ աստուծոյ զօրութիւն և աստուծոյ իմաստութիւն»: - 78. Եւ որպէս այս ո՛չ ասի, նոյնպէս և ո՛չ է հնար երկատելով ասել *զքրիստոս* անեղ և եղական: - 78. Սուրբն կիւրեղ ընդդէմ նեստորի՝ որ **բ** բնութիւն բաժանեալ ասէր *քրիստոսի*՝ ասաց, մի բնութիւն միաւորեալ աստուած մարմնացեալ և մարդացեալ: - 79-80. Դարձեալ՝ զի ասէ թէ, ա՛յս միաւորութիւնս որ ի *քրիստոս* է, ո՛չ է իբրև զայն որ յԵրրորդութիւնն է. զի անդ միութիւն է, բայց բաժանումն անձանց: - 80. Նոյնպէս և ի տնօրէնութիւնն *քրիստոսի* նեստոր չարաչա՛ր բաժանէ զանձինս և

զբնութիւնս, զկամս և զգործս: - 81. Եւ այսպէս փախչելով ի թիւր ծայրիցն, զմիջինն պահելով ընթացք բարեպաշտութեան, անշթոփ և անբաժան միութիւն, խոստովանիմք *զքրիստոս*՝ աստուած մարդացեալ. մի անձն և մի բնութիւն. և մի կամք և գործք ըստ ուղղութեանն բանի: - 81. Իսկ որք յետ միաւորութեանն **բ** ասեն բնութիւնս ի *քրիստոս*, և բաժանեն զկամս, և զգործս, և զկիրս, թէպէտ և անձն մի համբաւեն: - 81. Այլ և մի բնութիւն ասեն՝ որք միայն սոսկ մարդ խոստովանին *զքրիստոս*, և ո՛չ աստուած մարդացեալ: - 82. Որք **բ** անձն և **բ** բնութիւնս՝ և **բ** կամս՝ և **բ** գործս բաժանեն *քրիստոսի*. **բ** որդի՝ և **բ** *քրիստոս* յայտնապէս ասեն. զմինն տէր, և զմինն ծառայ, զմինն բնութեամբ որդի աստուծոյ, և զմիւսն շնորհօք. և այլն: - 82. Եւ ոմանք որպէս քաղկեդոնիկքն՝ մի անձն համբաւեն, և յերկու բնութիւնս բաժանեն զմի *քրիստոսն*. և **բ** կամք. և **բ** գործք. որպէս անիծեալն լևոն. և փլաբիանոս, և ընկերք նոցա: - 82. Իսկ անձն առանց բնութեան՝ միայն անուն է սոսկ. որպէս որդի՝ կամ *քրիստոս*՝ կամ յիսուս: - 82. Ա՛րդ՝ սոքա զանունն մի ասեն, և յանունն միաւորեն զբ էութիւնսն. այսինքն զաստուածն և զմարդն. և ասեն մի անձն. մի որդի. մի *քրիստոս*. և այլն: - 82. Եւ բանն *քրիստոս* կոչի, և յիսուս, և տէր. և աստուած. նոյնպէս և մարդն կոչի *քրիստոս*, և յիսուս, և տէր, և աստուած: - 82. Այլ հետևիմք հարցն սրբոց, որք առանց կարծեաց և խոտորմանց՝ զմիաւորութիւնն *քրիստոսի* անշա՛րժ պահեն: - 83. Զի մի յատկասցին **բ** անձինք ի *քրիստոս*. զի թէ **բ** բնութիւն բաժանեմք ի հարկէ երկու անձն բաժանի: - 84. Միաւորութիւնն *քրիստոսի* ունի սկիզբն. և մէջ. և կատարումն: - 84. Զի միաւորեալն ո՛չ երկատի. զի **բ** բնութիւն ասել կամ իմանալ՝ երկատութիւն և բաժանումն է *քրիստոսի:* - 84. Երրորդ՝ զի թէ միայն անձամբ միանայ և ո՛չ բնութեամբ, ապա *քրիստոս* անձամբ և կոչմամբ միա՛յն է որդի աստուծոյ և ո՛չ բնութեամբ: - 84-85. Ա՛րդ՝ դուք որ **բ** բնութիւնս ասէք *քրիստոսի*, զբաժանական տարբերութիւնս ասէք. և մեք մի խոստովանիմք զբաղկացականս միաւորութիւն: - 85. Ապա ուրեմն մի՛ է ներգործութիւնն ի միոյ կամաց միոյն *քիստոսի* յառաջ եկեալ և գործեալ: - 85. Ծանիր և զայս. զի՝ մի բնութիւն ասեմք *քրիստոսի*՝ վասն կատարմանն և ո՛չ սկզբանն. և մի գործ ասեմք վասն սկզբանն և ո՛չ վասն կատարման գործոյն: - 85. Իսկ թէ ոք ընդդիմանալ ասելով, որպէս հրացեալ սուրն կտրէ և այրէ՛, այսպէս և կրկին ներգործութիւնք են ի *քրիստոս:* - 85. Նոյնպէս և զկիրսն և զզօրութիւնսն անբաժանաբա՛ր ասեմք ի *քրիստոս*. որպէս Կիրք է քաղցնուլն. և Ներգործութիւն զիազարսն կերակրել: - 85. Մի՞ է *քրիստոս*, թէ **բ**: - 86. Զի թէ իր, ապա հա՛րկ է ասել քեզ *զքրիստոս* կամ մի իր և **բ**. կամ մասամբ ինչ մի և մասամբ ինչ երկու. կամ բոլոր մի և բոլոր **բ**: - 86. Ապա և բաժանակա՛ն է ընդ մարդկային բնութեանն՝ և ո՛չ է միաւորեալ ընդ օտար տարբերեալ բնութիւն. և եղեր նեստորեան. **բ** անձն և **բ** բնութիւն յատուկ ասելով *քրիստոսի:* - 86. Այսպէս և մի անձն է *քրիստոս* և մի անհատ. զի թէ բաժանես զնա՛ յաստուած և ի մարդ, ո՛չ մնայ բոլորն ի նոյն. այլ մասն ինչ և մասն. կամ ոմն և ոմն: - 87. Եւ է՛ ուրեք զի միաւորեն զանունն՝ մի *քրիստոս*՝ մի տէր՝ մի որդի՝ և մի անձն ասելով որպէս քաղկեդոնի թըւի երկաբնակ ժողովոյն: - 87. Այլ մարդկութիւնն *քրիստոսի* ո՛չ կարէ կայանալ առանց աստուածային էութեանն: - 87. Այլ արդ՝ մարդկային բնութիւնն յաստուածութեանն տեսանի, և աստուածային ի մարդկութեանն, եթէ ի միութիւն բնութեանն, և եթէ ի միութիւն անձինն. զի ո՛չ սոսկ մարդ է *քրիստոս* և ո՛չ մերկ աստուած. այլ աստուած մարդացեալ: - 87-88. Ապա ուրեմն ո՛չ բաժանի մին *քրիստոս* որպէս տեսակ յանհատս: - 88. Իսկ աստ նման միմեանց՝ և բոլորին կոչի *քրիստոս*. ըստ որում ասի՝ *քրիստոս* էջ յերկնից. որ է բանն. և *քրիստոս* եդաւ ի գերեզմանի. որ միայն մարմինն է աստուածութեամբն. և *քրիստոս* էջ ի դժոխս. որ միայն հոգին էր աստուածութեամբն: - 88. Այլ և ո՛չ որպէս էութիւն ի պատահումն. զի մարդկութիւնն *քրիստոսի* է ի սեռէ գոյացութեան, և ո՛չ ի սեռէ պատահման: - 88. Ահա տե՛ս յայտնապէս. զի որք բաժանեն զմի *քրիստոսն* յերկուս բնութիւնս, ո՛չ պահեն զմիաւորութիւնն անբաժանելի: - 88. Այլ բաժանմամբ բնութեանցն՝ բաժանին և անձինքն ի *քրիստոս*. թէպէտ պատճառելով անձն մի համբաւեն: - 88. Զի զոչ առեալն ասեն մի ի *քրիստոս*՝ և ո՛չ զառեալն. այսինքն զանձն՝ որ ո՛չ է առեալ՝ մի ասեն. իսկ զառեալ բնութիւնն որոշեալ պահեն և յերկուս քակտեն: - 88. Նոյնպէս բանն աստուած և հոգի և մարմինն միաւորեալ է բոլոր մի *քրիստոս*. և ի պակասիլ միոյն՝ ո՛չ մնայ *քրիստոս:* - 89. Նոյնպէս և *քրիստոսն* անուն՝ և տէր՝ և աստուած՝ և այլն՝ զո՛յգ և հաւասա՛ր է մարդկութեան իւրոյ և աստուածութեանն. և ո՛չ առաւել և նուազ. կամ տկար և հզօր. կամ անգէտ և ամենագէտ. և որ ինչ այսմ նման: - 89. Ի յերից սոցա զո՞րն ասէք մի *քրիստոս*. զաստուածային անձն ըստ ինքեա՞ն, եթէ զաստուածային բնութիւնն: - 89. Զի եթէ զմարդկայինն ասէք *քրիստոս*, ահա՛ առանձնապէս որոշեցիք զնա ըստ նեստորի. և սոսկ մարդ ասէք *զքրիստոս:* - 89. Իսկ եթէ զաստուածային անձն ասէք *քրիստոս*, որ է օծեալ. ահա ընդ օծեալս փոխադրեցիք: - 89. Եւ մեռեալ ի խաչին զանձն միայն ասէք. որպէս երգէք յերեք սրբեանն ձեր, *քրիստոս* որ խաչեցար ողորմե՛ա մեզ: - 89. Այլ և ի լիթանիայս ձեր ասի՝

*քրիստոս* անօթդ աստուածութեան՝ ողորմեա՛: - 89. Եթէ զաստուածային անձն և զնորին բնութիւնն ասէք մի *քրիստոս*, դեռևս կայք յառաջ ասացեալ տարակուսանսդ. զի զաստուածային անձն և զբնութիւնն ասէք չարչարեալ և մեռեալ. զի *քրիստոս* խաչեցաւ և մեռաւ ըստ գրոց: - 89. Իսկ թէ զաստուածային անձն և զմարդկային բնութիւնն ասէք մի *քրիստոս*, ահա յա՛յտ է զի բաժանեցիք յաստուածային բնութենէն *զքրիստոս*. զի անձն աստուծոյ և զբնութիւն մարդոյ ասէք մի *քրիստոս*. և զաստուածային բնութիւնն որոշէք: - 89. Իսկ եթէ աստուածային բնութիւնն և զմարդկայինն առանց անձին ասէք *քրիստոս*, ահա՛ շփոթեցիք զերկու բնութիւնսն առանց անձին միանալոյ ըստ եւտիքեայ: - 90. Իսկ եթէ զաստուածային անձն և զաստուածային բնութիւնն և զմարդկայինն ասէք մի *քրիստոս*, այս լինի կամ միաւորութեամբ կամ բաժանմամբ: - 90. Եւ եթէ բաժանմամբ, այս լինի **բ** *քրիստոս*, կամ **գ**՝ ըստ անձին և բնութեանցն բաժանման: - 90. Եւ կամ լինի մի *քրիստոս* ըստ կոչմանն, և **գ** ըստ էութեանն: - 90. Այսպէս և նեստոր մի ասէր *զքրիստոս* ո՛չ ըստ իրին միութեան, այլ ըստ անուանն համաձայնութեան. որպէս հոմանուն ձայն մի ունելով զկոչմունս, և զանազան բնութիւնս ի ներքոյ մի անուանն: - 90. Դարձեալ հարցումն առ երկաբնակ դաւանողացդ *զքրիստոս:* - 90. Ահա՛ այս ի կարճոյ բացայայտութիւն ծածկեալ ամբարշտութեանց, որք **բ** բնութիւնս սահմանեն ի վերայ միոյն *քրիստոսի*...: - 90. Բոլորովիմբն է ընդ դէմ երկաբնակացն. որք մասամբ ասեն աստուած և մարդ *զքրիստոս*. այսինքն յաստուածութենէ և ի մարդկութենէ ժողովեալ աստուած և մարդ: - 90. Զի՞նչ պատասխանեմք երկաբնակացն որք հարցանեն զմեզ, թէ մասունքն *քրիստոսի* աստուած է՝ այսինքն ոտքն և ձեռքն և գլուխն ապա բազմաստուածք էք: - 91. Ապա ուրեմն յայտնապէս նոքա ուրանան զայս, և ասեն թէ՝ ձեռքն *քրիստոսի* ոչ է աստուած. և գլուխն *քրիստոսի* ո՛չ է աստուած. և այլն. զի մի բազմաստուածք լիցին: - 91. Ասեն զայս թէ՝ և ո՛չ մարդ չէ. այսինքն ձեռքն և ոտքն *քրիստոսի*. թող թէ աստուած: - 91. Այլ զորօրինակ՝ մարդոյ ձեռն և ոտն մարդ չէ, այլ՝ մարդոյ ձեռն, և մարդոյ ոտն. նոյնպէս և *զքրիստոս* է՛ ասեն: - 91. Յորժամ ձեռն *քրիստոսի* ոչ է աստուած, ապա ուրեմն և բոլոր մարմինն ո՛չ է աստուած. զի բոլորն ի մասանցն բաղկանայ: - 91. Եւ թէ մարմինն *քրիստոսի* չէ աստուած, և հոգին *քրիստոսի* չէ աստուած, որպէս նոքա բարբանջեն. ապա և բոլորն *քրիստոս* չէ աստուած. զի բոլորն *քրիստոս* յաստուածութենէն միաւորեալ լինի մի *քրիստոս*. և բաժանեալ ո՛չ է *քրիստոս:* - 91. Դարձեալ՝ որպէս ձեռն և ոտն մարդոյ ո՛չ է մարդ, նոյնպէս և ձեռն *քրիստոսի* ո՛չ է *քրիստոս.* և ոտն և այլ մասունքն ո՛չ են *քրիստոս*. ապա և բոլոր մարմինն ո՛չ է *քրիստոս*. և հոգին ո՛չ է *քրիստոս*. ապա թէ սոքա չեն *քրիստոս*, և բանն ըստ ինքեան ո՛չ է *քրիստոս:* - 91. Եւ յայտնի եղև թէ և *զքրիստոս* գոլն ուրանան. և զաստուածն ուրանան այսպիսի առարկութեամբ: - 91. Ասեն զայս թէ՝ *քրիստոսի* է մարմին. և *քրիստոսի* է արիւն. և *քրիստոսի* հոգի. այլ աստուծոյ ո՛չ ասեն: - 91. Ապա ուրեմն երևեցաւ՝ զի թէ մասունքն *քրիստոսի* ասին և աստուծոյ ո՛չ ասին, յա՛յտ է թէ *զքրիստոս* ո՛չ խոստովանին աստուած: - 91. Ապա ըստ այսմ հետևի՝ զի մարիամ մայր *քրիստոսի* լինի և ո՛չ աստուծոյ. զի լաւ է քրիստոսածին և մարդածին կոչիլ՝ քան թէ աստուածածին: - 91. Զա՛յս հարցեր, եթէ մասունքն *քրիստոսի* աստուած են, նաև բազմաստուած էք. զի բազում են մասունքն: - 92. Եւ ես ասեմ քեզ. զի թէ մասունքն *քրիստոսի* *քրիստոս* է, ապա բազմաքրիստոս էք և դուք: - 92. Զի ասեմք զմարմինն *քրիստոսի* վասն միաւորութեանն աստուած՝ և աստուծոյ մարմին: - 92. Ո՞չ ապաքէն ասեմք *զքրիստոս*՝ աստուած և որդի աստուծոյ. զի աստուածն ուղղական է՝ և որդի աստուծոյ հոլովական: - 92. Այսպէս կարեմք ասել զմարմինն *քրիստոսի* թէ՝ աստուած է և աստուծոյ մարմին և արիւն. և այլն ամենայն: - 92. Նմանապէս և մարմինն *քրիստոսի* աստուած է առ մասունք մարմնոյն. և աստուծոյ մարմին առ բոլորն *քրիստոս:* - 92. Որպէս ձեռն ունի զգոյացութիւն բոլոր մարմնոյն. և կոչի մարմինն առ բոլորն *քրիստոս:* - 92. Այսպէս մարմին և հոգին են ի գոյացութենէն *քրիստոսի:* - 92. Եւ որպէս *քրիստոս* աստուած է և կոչի: - 92. Նմանապէս մարմինն *քրիստոսի* աստուած է՝ և կոչի աստուած և աստուծոյ մարմին: - 92. Երրորդ՝ զի ո՛չ է նման առ մեզ և առ նա մասն և բոլորն. զի թէպէտ մասունք մարդոյ՝ ո՛չ ունին զկոչմունս բոլորին, սակայն մասունք մարմնոյն *քրիստոսի*՝ կոչին և ունին զբոլորին էութիւն: - 92. Որպէս ի նշխարս մարմնոյն է տեսանել. զի ի բոլորն է բոլոր *քրիստոսն*. և յիւրաքանչիւր մասունս է բոլոր *քրիստոսն:* - 92. Ապա ուրեմն կարեմք ասել զմարմինն *քրիստոսի* աստուած և աստուծոյ մարմին, և զայլն նմանապէս: - 92. Եւ դարձեալ որպէս ասեմք զմարմինն և զարիւնն և զհոգին և զբանն *քրիստոս*՝ և ո՛չ է բազում *քրիստոս:* - 93. Նոյնպէս և ասելն թէ՝ մարմինն *քրիստոսի* աստուած է. և արիւնն աստուած է. և հոգին աստուած է. ո՛չ է բազմաստուած. այլ մի աստուած: - 93. Եւ զայս եթէ բաժանմամբ, ո՛չ է առանձնապէս բանն *քրիստոս*. զի ո՛չ գոյ մեծագոյն օծանօղ նմա. որ և ո՛չ առանց մարմնոյ փրկեաց: - 94. Մարդեղութիւնն *քրիստոսի*՝ տեսանէ՞ զաստուածութիւնն թէ ո՛չ: - 95. Իսկ

թէ միայն անուն առանց էութեան. ապա անւամբ խոստովանիս աստուած *զքրիստոս* և ո՛չ գոյացութեամբ. և հաւասարե՛ս զնա մովսէսի. որ անուամբ աստուած կոչեցաւ և ո՛չ էութեամբ: - 95. Եւ դարձեալ` *քրիստոսն* անուն զմիաւորութիւնն նշանակէ երկուց բնութեանց. ըստ որում աստուածութիւնն էօծ զմարդկութիւնն. որպէս ասէ աստուածաբանն և սուրբն կիւրեղ: - 95. Ա՛րդ` եթէ բաժանեցեր *զքրիստոս*` բաժանեցար ի հաւատոցդ. և ո՛չ լինիս քրիստոնեայ: - 95. Այլ արդ` որ հարցնես թէ` մարդն *քրիստոս* տեսանէ՞ զաստուած թէ ո՛չ. համաձայնիս հրէիցն...: - 95. Իսկ հիմն հաւատոյս մերոյ *քրիստոս* է եդեալ ի հօրէ՛: - 96. Ա՛րդ` *քրիստոսն* որ է օծեալ աստուածութեամբն, և նա աստուծոյ իմաստութիւն է. և ո՛չ ճանաչէ՛ զաստուած. տգիտութեամբ կորուսանէր զնա և որոյ է՛ իմաստութիւն: - 96. Ա՛րդ` եթէ *քրիստոս* տգէտ է և նոքա զմիտս տգիտի ունէին. ո՞րպէս լինէին հազարապետք աստուծոյ խորհրդոցն. կամ հազարապետքն առաւել են քան զխորհուրդն աստուծոյ: - 96. Երեքտասաներորդ` ասէ եսայի վասն *քրիստոսի*. «էլից զնա հոգի իմաստութեան և հանճարոյ` գիտութեան և խորհրդոյ» և այլն: - 97. Ապա ուրեմն հոգին *քրիստոսի* ունի զամենայն ճանաչումն լցեալ հոգւովն սրբով: - 97. Չորեքտասաներորդ` ասէ պօղոս յեփեսացւոցն թէ` հայր կացոյց *զքրիստոս* յերկնաւորս ի վերայ ամենայն իշխանութեանց. և պետութեանց. և զօրութեանց. և ամենայն անուանելոց. ո՛չ միայն յաշխարհիս այլ և ի հանդերձելումն: - 97. Ապա ուրեմն հոգին *քրիստոսի* կատարելագոյն ճանաչէ զաստուած: - 97. Ա՛րդ` ամենայն մարդկան` մարգարէից և սրբոց` հրեշտակք ուսուցանեն. և նոքա ի *քրիստոս* է՛ ուսանին: - 98. Արդ` եթէ բոլոր աստուածութիւնն ի *քրիստոս* էացեալ է մարմնապէս, և ծածկէ զգիտութիւնն ի նմանէ, այս լինի կամ ոչ աստուած մարմնացեալ և մարդացեալ կամ զէութիւնն տըւեալ և ի գիտութենէն զրկեալ որ է սուտ: - 98. Ա՛րդ` եթէ բանն *քրիստոսի* բան մարդոյ է և տգիտի, ապա անցաւո՛ր է: - 98. Եւ թերևս ասիցէ երկաբնակն թէ` սոքա ամենեքեան անձինն վերաբերին *քրիստոսի* և ո՛չ մարդկութեանն: - 98. Ա՛րդ` եթէ մի անձն խոստովանիս *քրիստոսի*, և բնութիւն մարդոյն միացեալ ի յանձն բանին, զոր ինչ բանին է բնութեամբ, ամենայնն եղիցի և մարմնոյն իւրոյ միաւորութեամբ: - 98. Եւ այժմ առ քեզ խօսեսցուք ըստ վկայութեան կարգիս ո՛վ նեստորական երկաբնակ և մարդադաւան որոշօղ *քրիստոսի*, և որոշեալ ի շնորհաց նորին: - 98. Որ ասես սոսկ մարդ գոլ *զքրիստոս*. և տգէտ և տկար. և ապականացու մարմին. և անկեալ ընդ կարեօք մարդկան: - 98. Քսանևմիերորդ` արդ` եթէ *քրիստոս* տգէտ ունէր միտս, և տկար հոգի, և ապականացու մարմին և եկն *քրիստոս* զի բարձցէ զտկարութիւնս մեր. և լուսաւորեսցէ որ նստէաք ի խաւարի. և նա՛ է գառն աստուծոյ որ բառնայ զմեղս աշխարհի և զապականութիւն: - 99. Ա՛րդ` եթէ` ի յարութեանն հասարակ արդարք տեսանեն զաստուած դէմ յանդիման որպէս և է, և *քրիստոս* ո՛չ կարէ տեսանել, փո՛քր լինի գիտութեամբ քան զմարդ որ է սուտ: - 99. Արդ` եթէ առաքեալքն որ բնակարանք են հոգւոյն` ճանաչեն զհոգին աստուած, և մարդկութիւնն *քրիստոսի* ո՛չ ճանաչէ, փոքր քան զբնակարանքն եղիցի *քրիստոս:* - 99. Ա՛րդ` եթէ հրեշտակք տեսանեն զբանն աստուած` և առնուն գիտութիւն ի նմանէ, և մարդն *քրիստոս* ո՛չ տեսանէ որպէս ասես նեստո՛րդ, ապա *քրիստոս* փո՛քր է գիտութեամբ քան զհրեշտակս: - 99. Ա՛րդ` եթէ ճանաչելն զաստուած հայր և զյիսուս քրիստոս կեանք է յաւիտենից, և մարդն *քրիստոս* ճշմարտութեամբ ո՛չ կարէ ճանաչել որպէս դուդ ասես: - 99. Ապա ուրեմն հոգին *քրիստոսի* ունի անհուն գիտութիւն. զի ճանաչէ զանհուն գիտացեալս: - 100. Եւ այսու փառօք ըմբռնէր *քրիստոս* զամենայն հունաւորս ներգործութեամբ: - 100. Այսպէս զի հոգին *քրիստոսի* ճանաչէ զամենայն բովանդակ կարողութիւնն իւր. և զամենայն յորս կարէ: - 100. Ապա ուրեմն հոգին *քրիստոսի* ճանաչէ զանհունս: - 100. Երեսներորդ` զի վարդապետք սուրբք օրինակ տան մարդեղութեանն *քրիստոսի*, որպէս լոյս ընդ օդ` և հուր ընդ երկաթ միաւորեալ: - 100. Արդ` որպէս օդ լուսաւորեալ` ո՛չ ունի մասն խաւարի, Նո՛յնպէս հոգին *քրիստոսի* միաւորեալ ի բանն աստուած` ո՛չ ունի մասն տգիտութեան: - 100. Այսպէս մարմինն *քրիստոսի* միաւորեալ ընդ բանն աստուած` ունի զկարողութիւն և զաստուածութիւն բանին...: - 100. Զի ամենայն ճշմարիտ դաւանօղքն *զքրիստոս* աստուած խոստովանեցան. և ի նոյնն նահատակեցան. և առ ճշմարտութիւնն *քրիստոս* յերկրէ յերկինս վերափոխեցան: - 101. Որդի ո՛չ ունի որդի. այլ ունի հայր և հոգի. զի հոգի *քրիստոսի* ասեմք: - 105. Երկրորդ` զի զամենայն է *քրիստոս* ի նախագաղափար բանն իւր ժողովեալ ունի...: - 121. Երրորդ` զի բանս մեր ձայնիւ յամենայն լսելիս անցանէ և թղթով յամենայն տեղիս ընթանայ. և բանն աստուծոյ սո՛ւր է և հատու և ընդ ամենայն է *քրիստոս* անցանէ թափանցաբար: - 121. Առաջինն որ է տպաւորական աստուածաբանութիւն` է՛ ի դէմս սուրբ Երրորդութեանն և մի աստուածութեանն. թէ ո՞րպէս է մի. ո՞րպէս երրեակ. և ծնօղ. և ծնունդ. և բղխումն. և վասն մարդեղութեանն *քրիստոսի:* - 122. Նոյնպէս որք ուրանան և ասեն, ո՛չէ աստուած *քրիստոս*. ո՛չէ հայր. ո՛չէ որդի: - 124. Նախ` զի ուրացականն ըստ պակասութեան է.

որ ասէ ո՛չէ աստուած *քրիստոս*. այսինքն պակա՛ս է և ո՛չէ աստուած. և ո՛չէ հայր. և ո՛չ որդի: - 124. Եւ ըստ չափոյ ընդունողաց ծնանի *քրիստոս* ի սիրտս մեր: - 125. Նոյնպէս բանն աստուած մի *քրիստոս* է բովանդակեալ մարմնովն անբաժանելի: - 125. Նոյնպէս իմանալի արեգակն *քրիստոս* ի հայրական ծոցոյ անհա՛ս է բնութեամբ՝ և ի սրբոյ կուսէն իբր ի յարևելից ծագեալ. և ջերմ սիրով ի մարդկային ազգս որպէս յարևմուտս խոնարհեալ. և զսառուցեալ բնութիւնս պատեալ. և ի գերեզմանէն ի բարձունս դարձեալ յարևելս առ հայր ամբարձեալ: - 126. Եւ *քրիստոսիւ* լուսաւորեալք որոշեցաք զբարի և զչար: - 126. Եւ միջնորդ հաշտութեան է *քրիստոս* աստուծոյ և մարդկան. այլև հրեշտակաց և մարդկան. նաև հրէից և հեթանոսաց: - 126. Նմանապէս և իմանալի արեգակն արդարութեան *քրիստոս*՝ ըստ հաւասարութեան բաշխէ զմարմնաւորս...: - 127. Որպէս և առաքեալն զկեանս իւր համարէր *քրիստոսի*. «կենդանի եմ ասէ, ո՛չ ես, այլ կենդանի՛ է յիսուս քրիստոս»: - 127. Վասն է՞ր մարմինն ոտք կոչի *քրիստոսի:* - 130. Երկրորդ՝ զի ոտք վերջին է մասն. և ի վերջին ժամանակս երևեցաւ մարմնով *քրիստոս:* - 130. Չորրորդ՝ ներքին է բոլոր մարմնոյն. և հիմն եկեղեցւոյ է *քրիստոս* ըստ առաքելոյ: - 130. Հինգերորդ՝ ոտքն են հաւատացեալք և առաքեալք նորին. և գլուխ է *քրիստոս*. զի անդամք և մարմին եմք նմա ըստ առաքելոյ: - 130. Զի ասէ աստուածաբանն՝ «յաստուած մերձենայաք և աստուած լինէաք» այսմ որ *քրիստոսի* գալովս եղև, զոր և յեկեղեցւոյ ուսան հրեշտակք ըստ պօղոսի: - 147. Ընդէ՞ր *քրիստոս* ո՛չ փրկեաց զնոսա որպէս փրկեաց զմարդիկ: - 149. Վասն այն թէ *քրիստոս* զմի հրեշտակի բնութիւն ընդունէր՝ զնա միա՛յն փրկէր և այլքն արտաքոյ մնային փրկութեան: - 149. Երրորդ՝ անկումն նոցա է՛ր ակնկալութիւն տանջանցն. և զայս մինչ ի *քրիստոս* ո՛չ գիտացին զպատրաստեալ տանջանս իւրեանց. այլ յորժամ զբացախօսութիւն գեհենին լուան ի *քրիստոսէ*՝ ասէին՝ «մի՛ յառաջ քան զժամանակն տանջէր զմեզ սուրբդ աստուծոյ. գիտե՛մք զքեզ զի տանջօ՛ղ ես մեր»: - 153. Երկրորդ՝ բռնութեամբ զհոգիս ի տանջանս տանելոյ մինչ ի *քրիստոս:* - 153. Եւ *քրիստոսիւ* տկարացան ի կրկին զօրութենէ ...: - 153. Զի յետ *քրիստոսի* դադարեաց սատանայ զհոգիսն ի դժոխս տանելոյ որպէս ասէ սուրբն եպիփան: - 153. Երկրորդ՝ զի ի ձեռն անտեղի գործոց՝ փրկութիւն լիցի այլոց. որպէս ի ձեռն խաչին *քրիստոսի*՝ փրկութիւն եղև աշխարհի: - 158. Իններորդ՝ նահատակադիրն *քրիստոս* է փրկիչն ամենեցուն. և ամենայն սուրբք զինուո՛րք նորա. պարտին և զինուորքն զօրավարին նմանիլ և նահատակիլ...: - 159. Տասներորդ՝ զանկեղծ սէրն նշանակէ զոր ունին առ *քրիստոս*, փոխանակ չարչարանաց նորա չարչարանս կրել. և ի սիրոյ նորա ոչ մեկնիլ...: - 159. Եւ թէ ոք ասիցէ, որովհետև ներգործութիւնքն բնութեանց հետևին, որպէս հուրն միշտ այրէ, և ջուրն ցրտանայ և ջերմանայ. ապա ճշմարիտ երևի բանն դամասկացւոյն՝ եթէ է՛ ի *քրիստոս* կրկին ներգործութիւն. որպէս և կրկին բնութիւն: - 174. Ասեմք առ այս Նախ՝ եթէ ո՛չ ամենայն գործ բնութեան հետևի, այլ և կամաց. որպէս մարդոյ. զի մի է կամք ի *քրիստոս*, մի է և ներգործութիւնն: - 174. Ասա՛ աստանօր է բնութիւն *զքրիստոս:* - 176. Մանաւանդ թէ իւրաքանչիւր տարերք **բ** ծայրք որակութեանց ունին. զմինն գոյացական և զմիւսն պատահական. ըստ այսմ պա՛րտ է ասել քեզ մետասան բնութիւն *քրիստոսի:* - 176. Դարձեալ՝ ա՛յլ է բնութիւն մարմնոյն. ա՛յլ ոսկերացն. և ա՛յլ է ջիլն և երակն և մորթն և մազն և իւրաքանչիւր մաղձքն. ըստ այսմ ապա ասա՛ և բազում բնութիւնս *քրիստոսի:* - 176. Զի ուղղաձևութեան ուսուցիչք ի բաժանմանէ ի միութիւն եկեալ խոստովանին *զքրիստոս*. և սոքա ի միութենէ ի բաժանումն որոշեն: - 176. Հինգերորդ՝ զի և *քրիստոս* որ եղև երկրորդ կտակ և օրէնք մեր, կոչի ծնունդ և արարած: - 179. Հինգերորդ՝ պատկեր և օրինա՛կ է *քրիստոսի*՝ արեգականն արդարութեան: - 186. Նոյնպէս և այլքն ըստ կարգի. Աբրաբամ. Մովսէս. Դաւիթ. և *Քրիստոս:* - 193. Չորրորդ՝ պատուեցաւ յարութեամբն *քրիստոսի*. և իջմամբ հոգւոյն սրբոյ ի դասս առաքելոցն: - 193. Հինգերորդ՝ օ՛ր է հասարակ յարութեան մարդկան. և գալստեանն *քրիստոսի*. և հատուցման ըստ իւրաքանչիւր գործոց: - 193. Վասն զի ի մէջ գիշերի ծնաւ *քրիստոս*. և ի մէջ գիշերի յարեաւ ի գերեզմանէն: - 194. Եւ գիտելի է, զի ի սկզբանէ աշխարհիս մինչ ի *քրիստոս* լո՛յսն առաջանայր գիշերոյն. իսկ յետ *քրիստոսի* մինչ ի վախճան՝ գիշե՛րն առաջանայ լուսոյն: - 194. Իսկ գիշեր յարութեանն *քրիստոսի*՝ փոխեաց զայս կարգ. զի յարութեամբն իւրով եհան զմեզ ի լոյս շնորհաց և արդարութեան: - 194. Նա՛խ՝ զի ի կողէն *քրիստոսի* աղբիւրացաւ և բղխեաց առ մեզ: - 207. Երրորդ՝ զսա՛ *քրիստոս* ի գինի փոխեաց: - 207. Եօթներորդ՝ օրինակ՝ զի *քրիստոս* զգլուխ վիշապին խորտակեաց: - 218-219. Երկրորդ՝ իմանալի՛ է, զի իմացումն և իմաստութիւն տայ մեզ յայլ իրս. որպէս ծառն կենաց *զքրիստոս:* - 222. Որպէս հաց մարմնոյն *քրիստոսի* ըստ գոյացութեան և ներգործութեան անապական է. թէ և փոփոխի ըստ արտաքին որակացն: - 223. Եւ մարմինն *քրիստոսի* անապակա՛ն է զոր ճաշակեմք: - 225. Զորս զայնպիսի ասացողքն և ընդունօղքն՝ որոշեալ նզովէ՛ եկեղեցի *քրիստոսի* աստուծոյ: - 226. Եւ զայսոսիկ եցոյց

*քրիստոս* նախքան զխաչն: - 228. Եւ դարձեալ` զի հաստատեսցի ի մեզ հաւատ մարդեղութեանն *քրիստոսի*. թէ որպէս ի յապականացու հողոյն ստեղծ ադամայ մարմին անապական: - 229. Իններորդ` զի և ի հոգևորն` փոքունք զմեծամեծաց անուանս կոչէին ինքեանց ի մոլորումն մարդկան. որպէս սիմոն կախարդն ասէր զինքենէ՛ թէ *քրիստոսն* իցէ. մինչև յանդիմանեցաւ ի պետրոսէ: - 238. Եւ վասն տնկական և զգայական մասին` կազմողական զօրութիւնն այլ ևս աճեցուցեալ զմարմինն **բ** ամ և դադարեալ յերեսներորդին, լինի ժամանեալ ի չափ հասակի կատարմանն *քրիստոսի*, յորում մկրտեցաւ տէրն մեր: - 265. Իսկ իմաստութիւն միայն *քրիստոս* ասի ըստ պօղոսի. «*քրիստոս*` աստուծոյ զօրութիւն և աստուծոյ իմաստութիւն»: - 269. Եւ այս ներգործեալ եղև ի յադամ. և կամ առեալ ի *քրիստոս*. և կամ բնաւորեալ ի մեզ: - 275. Ա՛րդ` որ ոք կամեսցի ի նոյնն ելանել և առ *քրիստոս* լինիլ, պատշա՛ճ է ի վերջնագունէն սկիզբն առնել որպէս սանդղօք: - 280. Իսկ այն որ ինքն զգեցուցանէ, նշանակէ՛ զինքնազգեստ փառս անմահութեան, զոր այժմ զգեցոյց *քրիստոս* շնորհօք, և յետ յարութեանն զգեցուցանէ փառօք: - 281. Եւ թէ ոք ասիցէ, և երկրորդն ադամ *քրիստոս*` զմարմինն ադամայ ունէր, և էր թա՛նձր և ծա՛նր: - 282. Ասեմք եթէ` էառ *քրիստոս* մարմին ի կուսէն մարիամայ զմերս թանձր և մեղանչական. և միաւորելով ընդ ինքեան` եղև առաջին կերպ անմեղութեանն ադամայ որ էր ի դրախտին: - 282. Այսպէս ասեմք զմարմինն *քրիստոսի* ունել զադամայն որ էր յանմեղութեանն: - 282. Իններորդ` Մելքիսեդեկի. բաղդատութիւն առ *քրիստոս*, և յաբրահամ: - 283. Քսանև**թ**, մանանայն օրինա՛կ է ճշմարիտ մարմնոյն *քրիստոսի:* - 283. Եւ զի աւելորդ ծորումն ո՛չ էր ի *քրիստոս:* - 285. Վաթսուն**բ**, Տապանակն յառաջ գնայր և վէմն զհետ` որ էր *քրիստոս:* - 285. Եւ թէ` մեծ էր նշանն *քրիստոսի* որ հոգւոցն արար, քան զմովսէսին որ մարմնոց: - 285. Չորրորդ` զի զանարատսն և զպարարտսն մատուցանէր յօրինակ անարատ գառինն *քրիստոսի*. և ճարպաւորն` լուսոյ աստուածութեանն: - 286. Վասն չորրորդին` զի առաջին եղև քահանայ ի տիպ ճշմարիտ քահանայապետին *քրիստոսի:* - 286. Աստ հայր ազգաց բազմաց եղև. մանաւանդ թէ և նորին իսկ *քրիստոսի* ըստ մարմնոյն: - 288. Այսպէս և ի նորս սուրբն ստեփաննոս որ եղև առաջին մարտիրոս և վկայ *քրիստոսի*` հեղլով զարիւն իւր. տեսանէր բացեալ զերկինս և զյիսուս ընդ աջմէ աստուծոյ: - 288. Նա՛խ` զի ամենայն ոք պատրաստ լիցի մահւան աւուրն և յանկարծակի գալստեանն *քրիստոսի*...: - 292. Այլ և եկեղեցի սուրբ շինեալ ի *քրիստոսէ* հոգևոր տապան մեզ ի մէջ ծովու աշխարհիս` որ զհոգիս մեր փրկէ ի ջուրց մեղաց: - 293. Եւ փոխանակ **յ** կանգնոյն` **յ** ամքն ի *քրիստոսէ* մինչև ի մեծն կոստանդիանոս. ուր յայտնեցաւ խաչն փրկչական: - 294. Այլ մելքիսեդեկին էր նշանակ յաւիտենական պատարագին *քրիստոսի* ի տեսակ հացի և գինւոյ: - 301. Հինգերորդ` մելքիսեդեկ մարդկան նւիրեաց. որպէս *քրիստոս* առաքելոցն և մեզ: - 301. Վեցերորդ` նուիրեաց մելքիսեդեկ զպատարագն և ընկալաւ զտասանորդն. որպէս *քրիստոս* պարգևէ՛ հաւատացելոց զշնորհս, և առնու զտասնեակս զկատարեալ և զբարի գործս. կամ զտասն բանեան օրէնս **ժ** զգայարանօք: - 301. Եօթներորդ` մելքիսեդեկ ինքնին մատոյց զպատարագն քաղցելոց և ծարաւելոց. որպէս և *քրիստոս* ո՛չ միջնորդօք հրեշտակաց կամ մարդկան, այլ ինքնին բաշխեաց զմարմին և զարիւն իւր` քաղցեալ և ծարաւեալ ազգի: - 301. Նոյնպէս և որք հաղորդին մարմնոյն *քրիստոսի*, ո՛չ մերձենան ի զանազան ախտս մարմնական անբլփատութեան և զոհից դիւական: - 301. Տասներորդ` զի մելքիսեդեկ ո՛չ միայն պատարագաւն, այլ և անուամբ և տեղեաւ ևս օրինակ էր *քրիստոսի:* - 301. Օրինակաւ համեմատութիւն մելքիսեդեկի առ *քրիստոս:* - 301. Եւ *քրիստոսն* օծեալ ո՛չ ըստ իւղոյ ինչ երևութապէս օծման, այլ միանալով ընդ բանին աստուծոյ` ասի օծեալ: - 301. Եւ *քրիստոս* թագաւոր գոլով անվախճան` ըստ հրեշտակին թէ` «թագաւորութեան նորա ո՛չ գոյ վախճան»: - 302. Եւ *քրիստոս* թագաւորն վերնոյն երուսաղէմէ մի` զնոյն խաղաղութիւն ետ առաքելոցն զոր ի ծննդեանն հրեշտակք երգէին: - 302. Վասն *քրիստոսի* և մելքիսեդեկի, ասացեալ է և յայլ ուրեք ի վերոյ ի գիրս աստուածաբանութեան **ե** գլուխն` **ի** համարքն: - 302. Դարձեալ` արեգակն արդարութեան *քրիստոս* ի նմանէ՛ ծնեալ: - 303. Եւ որպէս հայրն աբրահամ նմանեցաւ աստուծոյ հօր, մանաւանդ և որդին իսահակ համեստութեամբ ինչ իրօք նմանի որդւոյ նորա *քրիստոսի:* - 304. Սապէս և *քրիստոս* ըստ մարմնոյ որդի է աբրահամու ըստ մատթէոսի: - 304. Եւ մերոյն փեսային *քրիստոսի*` յովհաննէս ի վերայ յորդանանու խօսեցաւ զհարսնացեալ եկեղեցի: - 305. Եւ ի *քրիստոս* բազմութիւն ամենայն հաւատացելոց սերեալք անդամք յանդամոց նորա և մարմինք ի մարմնոյ նորա ծննդեամբ ի նմանէ աւազանաւն: - 306. Եւ է՛ որ պատարագն մեծ է քան զմատուցօղն. որպէս նոր օրինացս` մարմինն *քրիստոսի* մեծ է քան զքահանայն: - 306. Իսկ չորրորդն է՛ պատարագ տեառն մերոյ *քրիստոսի* որ ի մի դէմ անձնաւորութեան **գ** երես պատարագին բացայայտեցաւ: - 306. Եօթներորդ` ցնծութիւն եղև իսահակ ազգին իւրում. ըստ որում

կոչեցաւ իսահակ որ է՛ ծաղր. և ճշմարիտ ցնծութենէ *քրիստոս* ամենայն հաւատացելոց...: - 307. ...և մեք անդամք ի նա՛ յարեցաք և եղաք անդրանիկք հրեշտակաց որ էաք կրսեր նոցա. զի ամենայն երկնաւորքն ծունր կրկնեն *քրիստոսի* և խոստովանին զնա՛ տէր: - 309. **Տասներորդ՝ մկրտութեամբն լինիմք որդիք աստուծոյ և եղբարք *քրիստոսի*. և գերազանցիմք գ ազգաց. այսինքն հասարակ մարդկան, և իսրայէլացւոցն, և հրեշտակաց երկնից**: - 309. Ա՛րդ՝ դաւանութեամբն գերազա՛նց եմք մարդկան հեթանոսաց. և մկրտութեամբն՝ հրէից. և ծննդեամբն ի հոգւոյն՝ հրեշտակաց. զի նոքա ո՛չ ունին ծնանիլ ի հոգւոյն. և ո՛չ եղբայր լինի *քրիստոսի:* - 309. Նոյնպէս և ծնունդք սուրբ աւազանին որք են անդրանիկք և անդամք *քրիստոսի* եղեալք, ագահութեամբ և պոռնկութեամբ կորուսանեն զշնորհն երկնաւոր. և ո՛չ լան և ո՛չ զղջան որպէս եսաւ: - 309. Ջերրորդն՝ զի բազում եղեն յազգէ նորա մարտիրոսք վասն *քրիստոսի* յետոյ: - 313. Բաղդատութիւն կրից և գործոց յովսեփու առ *քրիստոս:* - 313. Նոյնպէս և սատանայ ատէ՛ր զմարդկային բնութիւնս զի ի պատկերն աստուծոյ արարաւ. և հրէայքն ատէին *զքրիստոս*. զի վկայեաց հայր թէ դա՛ է որդի իմ սիրելի: - 313. Եւ *քրիստոս* մարմնով ի գերեզման և հոգւով ի դժոխս եմուտ և եբարձ զմահ և զապականութիւն: - 313. Նոյնպէս և *քրիստոս* եկն առ եղբարս իւր որ էին որդիք դաւթի և աբրահամու և առաջնորդք ժողովրդեանն. և յուդա վաճառեց զնա. և տէր եղև կենդանեաց և մեռելոց և կերակրիչ. զի ազատեաց զհոգիսն ի սովոյ դժոխոցն: - 313. Եւ ի կատարածի դիցին թշնամիքն *քրիստոսի* ի ներքոյ ոտից նորա ասացաւ: - 314. Հինգևժերորդ՝ որք աստ երկիր պագանեն *քրիստոսի*, կենաց հացիւն կերակրին որպէս եղբարքն յովսեփայ: - 314. Եւ մեք առանց արծաթոյ միայն ծրի շնորհօքն *քրիստոսի* լինիմք փրկեալք և ապրեալք: - 314. Նոյնպէս և *քրիստոս* զզէն և զզօրութիւն սատանայի եբարձ որ էր մեղքն և մահ դժոխոցն: - 314. Քսաներորդ, և որպէս յովսէփ եթող զքուրմն և զերկիր նոցա, զոր *քրիստոս* էր բառնալոց զմեծամեծ մեղսն և զկռապաշտութիւնն. զի ըստ առն և զօրութիւն իւր. և ըստ աստուծոյ և գործք իւր: - 314. Նոյնպէս և սրբոցն միտք լուսաւորին յաջոյն *քրիստոսի*. զոր աստ շանմանդաղ տեսանէին զփառս, անդ յայտնապէս տեսցեն: - 314. Նոյնպէս և *քրիստոս* աստ ի գնալն հոգւոց և ի գալստեանն աւուր՝ ընդ առաջ ելանէ սրբոցն և համբուրէ զհիրելիս իւր, որպէս հայրն երկնաւոր ի դարձ անառակին: - 315. Նոյնպէս և *քրիստոս* իմաստութեամբն իւրով կերակրէ՛ զնոսա և զզեցուցանէ որպէս ի դ երիցանցն, որ տուաւ նոցա արկանելիս սպիտակս. այս է շնորհն մաքրութեան զոր ընկալան ի *քրիստոսէ:* - 315. Եւ յանւանէն և ի նշանացն *քրիստոսի* փաղչի շողոքորթն սատանայ: - 316. Վեց են թշնամիք *քրիստոսի:* - 316. Ա՛րդ՝ ո՛չ ասէ թէ ի ներքոյ քոյ. զի զսոսա կոխեալ էր *քրիստոս:* - 316. Այն է զոր հրամայէ՛ տէր՝ «ես եմ որթ և դուք ուռ». այսինքն որթ և հիմն հաւատոյս մեր է՛ *քրիստոս:* - 317. Նախ՝ կոչի մարմինն զգեստ՝ գոյացական՝ անփոփոխ և անքակ միութեամբն. զի բաժանմամբ մարմնոյն և բանին ո՛չ է *քրիստոս*. որպէս ի բաժանիլ հոգւոյ և մարմնոյ ո՛չ է մարդ: - 318. Երկրորդ՝ կոչի զգեստ նմա արտաքին և փոփոխական՝ հաւատացեալ անդամք *քրիստոսի*՝եկեղեցի սուրբ...: - 318. Է՛ և այլ իմն պայծառ տեսութիւն այսմ բանի. զի զգեստ և տաճար կոչի մարմինն ստուգապէս ո՛չ աստուածութեանն *քրիստոսի*՝ որ ո՛չ բաժանեցաւ ի մարմնոյն ոչ ի մահ և ո՛չ ի գերեզմանն: - 319. Եւ ըստ նմանութեանն *քրիստոսի* մի զուարակ. որ վասն մեղաց մերոց մեռաւ: - 322. Վեցերորդ՝ զի լիցի և պատկեր *քրիստոսի* որ անմեղութեամբ դատապարտեցաւ, և յառաջին փառսն դարձոյց զնախաստեղծն ծննդօք իւրովք: - 325. Եւ ոմանք լը ասեն ըստ անդամալուծին զոր բժշկեաց *քրիստոս:* - 326. Ա՛րդ՝ բազմազան եղանակաւ համեմատի մեծն մովսէս փրկչին մերոյ *քրիստոսի*...: - 328. Եւ տէրն մեր *քրիստոս* ի մանկակոտոր սպանմանէն հերովդէի: - 328. Եւ *քրիստոս* առաքեալ զինքն ի հօրէ քարոզէր, և հաւատալ ի հայր պատուիրէր: - 328. Իսկ *քրիստոս* խնամարկեալ իւրոցն ժ սքանչելեօք ի մարմինս նոցա բժշկէր զհէլացիսն: - 328. Եւ յա՛յտ է աստի, զի սքանչելիքն *քրիստոսի*՝ շնորհք մարդասիրութեան է առաւել քան զմովսէսին: - 328. Զի նա խաւարաւ տանջէր, և *քրիստոս* զկոյր աչսն լուսաւորէր: - 328. Նա՛ կեղ և մուն յարուցանէր ի մարմին նոցա. և *քրիստոս* զբոր և զցաւս սրբէր ի մարմնոցն: - 328. Նա՛ մահ անդրանկացն ածէր. և *քրիստոս* զմեռեալս յարուցանէր: - 328. Եւ *քրիստոս* գառն ճշմարիտ զենաւ և ազատեաց զմեզ ի սատանայէ՛: - 328. Եւ *քրիստոս* ի վերայ ծովուն ընթացաւ: - 328. Եւ *քրիստոս* զյարկն դաւթի որ է՛ եկեղեցի՝ չորիցս առաքինութեամբ եռաբնակ օթևան աստուծոյ կազմեաց: - 328. Եւ *քրիստոս* զհրէայսն ցրւեաց, և ի սիրտ հեթանոսաց նոր ժողովրդեանն աւանդեաց զօրէնսն: - 328. Իսկ *քրիստոս* անխայելով յեկեղեցի՝ փոխեաց ի մկրտութիւն: - 329. Ութերորդ՝ խաչն փրկական նախ էր մահու գործիք. զոր առեալ ի ձեռն *քրիստոս*, և եղև կենաց պատճառ: - 332. Այսպէս և մարմին և արիւնն *քրիստոսի*՝արժանաւորացն կեանք է և սրբութիւն. և անարժանիցն մահ և ապականութիւն: - 334. Երրորդ, զի կորնչելոց էին անդրանիկ ծնունդքն

սատանայի. որ էր հպարտութիւնն և կռապաշտութիւն. զի խոնարհութեամբ էր գալուստն *քրիստոսի* և ի մի աստուածպաշտութիւն հրաւիրեաց և կորոյս զպաշտօնն դիւական: - 334. Մանանայն ո՞րպէս է օրինակ մարմնոյն *քրիստոսի:* - 339. Եւ զհաց մարմնոյն *քրիստոսի*՝ որք զբուլոր և որք զմասն ճաշակեն՝ միո՛յ կենաց հաղորդին: - 339. Երրորդ՝ զի անապական էր մանանայն օրինակ անապական մարմնոյն *քրիստոսի:* - 339. Եթէ խորհրդական մարմինն *քրիստոսի* անապական է, ուստի գոյանան կենդանիք և բորբոսք: - 339. Գոյացութիւն հացին փոխեալ է ի գոյացութիւն մարմնոյն *քրիստոսի* և է՛ անապական. իսկ քանակն և որակն մնացեալ է դեռևս փոփոխելի. և յայնմանէ փոխարկեպին այլայլմունք ինչ: - 339. Ութերորդ՝ մի՛ անգամ յաւուրն. և մի անգամ պատարագեմք *զքրիստոս* ըստ աւուրց: - 339. Իսկ ի նորս զատիկ մեր զենաւ *քրիստոս* և ազատեաց զմեզ: - 341. Դարձեալ երիցս երևիլն է, զի աստ ի մարմնի հաւատով տեսանեմք *զքրիստոս*. և յետ մահու յուսով ի հոգիս մեր. և յետ յարութեանն սիրով միաւորիմք ի նա՛: - 341. Նշանակէ զժողովուրդն որք սրբին աւազանաւն և խառնին ի հաղորդութիւն արեանն *քրիստոսի:* - 341. Եւ այն որ շուրջ զսեղանովն, նշանակէ՛ զքահանայս. որ մերձ սեղանոյն որ է՛ *քրիստոս*՝ միշտ սպասաւորե՛ն և պատերազմին արեամբ չափ ընդ ախտս և ընդ դևս: - 341. Իսկ **Ե** կանգուն և կէսն. զի գալուստն *քրիստոսի* և փրկական խաչն և եկեղեցի՝ է՛ ի **Ե**երորդ դարն և կէսն երևեալ ի մուտ զ**Ռ** ամին: - 345. Առաւօտն նշանա՛կ է աստ պատարագելոյն *զքրիստոս:* - 346. Եւ երեկոյն, զի և անդ յետ աստեացս վայելմունք մեր *քրիստոս* է: - 346. Դարձեալ՝ զի անապական է հաւատն եկեղեցւոյ, և հաստատ յոյսն, և ջերմ սէրն առ *քրիստոս:* - 347. Սոքա ամենայնքն զքերանս մտաց բացեալ ունին առ մինն և ճշմարիտ ջահն *քրիստոս:* - 347. Չորրորդ՝ ի խորհուրդ վայելչական մարմնոյ ճշմարիտ քահանայապետին մերոյ *քրիստոսի:* - 347. Դարձեալ գիտելի է, որք *զքրիստոս* բաժանեն յերկուս բնութիւնս. և յերկուս գործս սոյնպէս. զմինն աստուած՝ և զմիւսն մարդ. հզօր և տկար. և գործ մարդոյ և գործ աստուծոյ. որպէս աղանդն քաղկեդոնի: - 350. Նոքա ո՛չ հաւասար մովսէսի ներեն *զքրիստոս* աստուած. զի մովսէս աստուած կոչեցաւ. և զնա մարդ խոստովանին սոսկ: - 350. ...զի ի մովսէս օրինակաւ՝ և ի *քրիստոս* ճշմարտութեամբ կործանեցաւ մահ. և ի յարութեանն առ հասարակ մեր: - 351. Կամ *զքրիստոսի* քառասունքն պահեմք և զմովսիսին և զեղիային: - 353. Երրորդ՝ անդ նկարեալ էր մեր հոգևորն. և աստ բացայայտեալ խորհուրդ տնօրէնութեան *քրիստոսի* աստուծոյ մերոյ: - 353. Եօթներորդ՝ անդ մարդկային մովսէսիւ. և աստ աստուածային ՚ի ձեռն *քրիստոսի:* - 353. Եօթներորդ, նոքա յօտարա՛ց մատուցանէին. այսինքն զուարակ և նոխազ, իսկ քահանայապետն մեր *քրիստոս* զմարմին իւր պատարագեաց հօր ի հոտ անուշից...: - 354. Գառն օրինա՛կ էր *քրիստոսի*. զի կոչեցաւ գառն աստուծոյ. ա՛յլ զգալի գառն ո՛չ եղև: - 357. Իսկ իւղն զանգեալ՝ օրհնութիւնն է որ միանայ ի խորհուրդն և կատարէ՛ մարմին և արիւն *քրիստոսի:* - 357. Որ նշանակէ *զքրիստոս* արտաքոյ դրանն չարչարեալ: - 358. Որ իսկապէս մեզ վայել է *քրիստոս* եկեալ և դժոխք աւերեալ և արքայութիւնն բացեալ: - 358-359. Երկրորդ՝ ցուցանէ զանմեղ մահն *քրիստոսի* վասն մեր մեռեալ. զոր մատամբ ցուցանէին խաչօղքն թէ խաչեսցի դա՛: - 359. Զի մերձեալ ի *քրիստոս* աղօթք մեր լինի քաւութիւն մեզ: - 360. Ո՛չ միայն զի յանունն աստուծոյ, այլ զի օրինա՛կ էին նորոյս պատարագի. և խորհրդովն *քրիստոսի* սրբեցան: - 361. Եւ թէ ոք ասիցէ, ո՞րն է խորհուրդն *քրիստոսի* որով սրբիւր իսրայէլ ի մեղաց: - 361. Ասեմք եթէ՝ ամենայն զենմունք և պատարագ ի խորհուրդ և յօրինա՛կ էր *քրիստոսի:* - 361. Եւ *քրիստոս* կոչեցաւ եզն պարարակ զօրաւոր և արդիւնարար: - 361. Դարձեալ՝ իւղով զանգեալ բաղարջն և նոյն չափ իւղովն որ չափ մասն գինւոյն. այն է՝ զի ընդ օրհնութեան բանին աստուծոյ՝ և հոգին սուրբ իջանէ ի հացն և ի բաժակն և կատարէ՛ մարմին և արիւն *քրիստոսի:* - 361. Ա՛յս է խորհուրդ հին պատարագացն և *քրիստոսիւ* մաքրեին: - 361. Իսկ ի նորս ճշմարտութենէ պատարագ *քրիստոս*. որ միշտ բաշխի յեկեղեցի: - 362. Եւ դարձեալ՝ առաջինն *քրիստոս* պատարագի վասն մեր: - 362. Միջինն մեք վասն *քրիստոսի:* - 362. Այլ զանբան պատարագն ուսան հեթանոսք և կռոց մատուցին. և այն սովորութեամբն իսրայէլ մատոյց աստուծոյ զանբան կենդանիս մինչ եկն *քրիստոս* և եղև ինքն բանաւոր պատարագ, և զնոյնս աւանդեաց մեզ: - 362. Ա՛րդ՝ մեք ունիմք զօրինակ կրկին պատարագաց. զնախնեացն և զճշմարտութիւնն *քրիստոսի:* - 362. Նշանակէ՛ զպատարագիլն *քրիստոսի* ի սեղան խաչին ի հոտ անուշից հօր և հոգւոյն: - 362. Եւ մի է քաւութեան պատարագն *քրիստոսի*. մեղաւորին և յանցաւորին: - 362. Դարձեալ՝ կրկին ողջակէզն, մին այն է որ մատուցանեմք զպատարագն *քրիստոսի* մարմնոյ և արեան: - 362. Դարձեալ՝ որպէս *քրիստոս* յետ մկրտութեանն՝ ի լեառն պահեաց **Խ** օր: - 363. Եւ ի դարձեալ երևիլն դարձեալ լուանալ, այն է՝ որ դարձեալ խոստովանիմք և կրկնեմք զերկն ապաշխարութեան մինչև նկարեսցի ի մեզ *քրիստոս:* - 367. Դարձեալ՝ մեք մարմին եմք *քրիստոսի* և անդամք նմա. նոյնպէս և զգեստ.

այսպէս տուն և տաճար. մկրտութեամբ և հաւատով և բարի գործով: - 367. Յորմէ ազատեսցէ զմեզ *քրիստոս* աստուած մեր ամէն: - 368. Դարձեալ՝ կրկին հաւն նշանակէ՛ *զքրիստոս*. Փայտն, զխաչն. և Կարմիր արիւնն. զի աստուծոյ է արիւն. և Ջոպայն, զհոգին սուրբ: - 368. Իսկ կրկին հաւն մեռեալ և կենդանի. *քրիստոս* մեռեալ մարմնովն, և կենդանի աստուածութեամբն: - 368. Նա՛խ՝ որ *զքրիստոս* պատարագէ: - 370. Իսկ որ *զքրիստոս* պատարագէ, խտրութիւն է արատոյ ի հոգի և ի մարմին: - 370. Զի պա՛րտ է անպարտ գոլ բոլորովին. զի *քրիստոս* կատարեալ անարա՛տ է աստուածութեամբ և մարդկութեամբ: - 370. Այլ *զքրիստոս* ո՛չ պատարագեն. և ո՛չ այլ ինչ ի խորհրդոց եօթանց կատարեն: - 370. Զի ճշմարիտ պատարագն *քրիստոս* է: - 371. Եօթներորդ՝ ստուերապէս նշանակէր զազատութիւնն որ եղև մեզ ի ձեռն *քրիստոսի*. որ ազատեաց յօրինացն դժւարութեանց, և ի մեղացն, զթողութիւն շնորհելով: - 372. Այլ ամսամուտն է ծննդեան տօն. զի *քրիստոս* եղև մեզ ամիս ծննդեամբ և մահուամբ և յարութեամբն: - 373. Երկու զուարակ, որ *քրիստոս* զենաւ վասն ադամայ և եւայի պարտուցն: - 373. Իսկ խոյն *քրիստոսէ:* - 373. Այլ և նշանակէ՛ զօր մեծի ուրբաթուն չարչարանացն *քրիստոսի*. որով քաւեցաք ի մեղաց: - 373. Եւ որպէս ի տաղաւարքն կողերս՝ տերև՝ և ոստ մատուցանէին. զնոյն և *քրիստոսի* մատուցին յաւուրն ողոգոմեան ի գալուստ նորին յերուսաղէմ: - 374. Զայն ցուցանէ որ նուազելոց էր հինն և օրինակն՝ ի գալ նորոյն և ճշմարտութեանն *քրիստոսի:* - 374. Նա՛խ՝ նշանակեն *զքրիստոս:* - 374. Եւ նախ *զքրիստոս* այսպէս: - 374. Զի ի կեանս յայս հաւատով նուիրիմք. և յետ մահու յուսով. և յետ յարութեան կատարեալ սիրով ընդ *քրիստոս* միաւորիմք: - 375. Նա՛խ՝ զի ցուցանէ թէ յորմէ՞ ազգէ ծագելոց էր արեգակն արդարութեան *քրիստոս:* - 377. Կապուտն նշանակէ՛ զխորհուրդ յայտնութեանն *քրիստոսի:* - 379. Իսկ ի նորս՝ ի կատարեալ հասակն երեսնամեայ լինին քահանայք. ի հասակ մկրտութեանն *քրիստոսի:* - 379. Այլք ասեն վասն դադանեանցն թէ՝ հոգիք նոցա մարմնով ի տանջանս կային. ուր ընկեղմեցան մինչև ցաւարումն դժոխոց. ընդ որս և զնոսա ազատեաց *քրիստոս* իջանելովն ի դժոխս: - 382. Երրորդ, սուրբ խաչն աստուածընկալ դալար զօրութեամբ. շառաւիղ թևն. պտուղ *քրիստոս* ծաղկեալ արեամբ և ջրով: - 382. Զի երկոտասան վիճակացն առաքեալք. և նախ *քրիստոս* ի մէջ նոցա: - 382. Եւ խաչօղքն անսուրբք էին մինչ յերեկոյանալ օրինացն հնոյն և ծագել նորոյն. մինչև սրբեցան աւազանաւն և խոստովան եղեն *զքրիստոս:* - 383. Եւ թէ ասեն, կրեաց *քրիստոս* զանգոսնելի կիրս: - 383. Նա՛խ՝ զի յորժամ ճշմարիտ սրբութիւնն գայցէ, հաւանեսցին որ է՛ արիւնն *քրիստոսի*...: - 383. Երինջն ըստ իրաւանցն ունէր զմեղս ժողովրդեանն. և խորհրդովն *քրիստոսի*՝ սրբութիւն գործէր: - 384. Տապանակն էր *քրիստոս*. և ունէր զտախտակս օրինացն: - 385. Եւ վէմն էր *քրիստոս* ըստ առաքելոյ: - 385. Նա՛խ՝ ցուցանէ թէ *քրիստոս* է առաջին և վերջին. այսինքն սկիզբն և կատարումն եկեղեցւոյ. ո՛չ միայն աստուածութեամբն, այլ և մարդկութեամբն: - 385. Տասներորդ՝ զի *զքրիստոսի* առաջին գալուստն նշանակէր տապանակն և տախտակն և մանանայն և այլն. և զվերջինն՝ վէմն աղբիւրացեալ ի յաւիտենից կեանսն: - 385. Վէմն ո՞րպէս էր *քրիստոս:* - 386. Որպէս սափորն կոյսն էր, և գաւազանն խաչն, նոյնպէս վէմն *քրիստոս:* - 386. Եւ վէմ կոչի, Նա՛խ՝ զի ադամ հողացաւ մեղօք. և *քրիստոս* վէմ անմեղութեամբն: - 386. Երրորդ, հոգին սուրբ որ *քրիստոսիւ* ծաւալեցաւ: - 386. Հինգերորդ, զի *քրիստոս* չարչարելո՛ց էր ի քահանայից: - 386. Հինգերորդ՝ անփուտ է պղինձն. և անապական մարմինն *քրիստոսի:* - 386. Երրորդ, զի մարգարէութեամբ նորա բազում ազգաց հեթանոսաց օգուտ եղև. զի յայնմանէ եկին մոգք և երկիր պագին *քրիստոսի:* - 387. Եւ վկայ ածեն զհամբարձումն *քրիստոսի* յետ **խ** աւուր: - 391. Եղիազար՝ աստուծոյ զօրութիւն լսի որ է՛ *քրիստոս* և քահանայ և փրկիչ մեր. և իշխանք՝ **բԺ**ան առաքեալքն աթոռակիցք *քրիստոսի:* - 391. Զայն ցուցանէ, զի մեռանիլն քահանային՝ ազատութիւն էր նոցա, յօրինակ *քրիստոսի*. յորժամ մեռաւ վասն աշխարհի, ազատեցան մահապարտքն: - 392. Եւ քահանայի մահն՝ պատարագն *քրիստոսի* է. մինչ վճարեսցի կանոն ապաշխարութեանն և ապա արժանասցին հաղորդելոյ: - 392. Յորմէ փրկեսցէ զմեզ *քրիստոս* աստուած փրկիչ մեր ամէն: - 394. Հինգերորդ և մեծն ա՛յս է, զի գառն *քրիստոս* է. և կաթն օրէնք. և մայր ժողովուրդն: - 399. Ասէ՝ մի՛ չարչարէք *զքրիստոս* օրինօքն...: - 399. Աստ **զ** նշան դնէ մարգարէին որ ճշմարտապէս *զքրիստոս* տէր մեր ցուցանէ: - 399. Երրորդ՝ զի ասէ՝ զպատգամն աստուծոյ ունի և ո՛չ զօտար աստուծոյ. և *քրիստոս* ասէր, «զոր լուայ ի հօրէ՝ պատմեմ ձեզ». և յանուն հօր եկն. և զհայր ետ փառաւորել միայն ճշմարիտ աստուած: - 399. Իսկ նորս ո՛չ այսպէս. այլ հրամայէ՛ *քրիստոս* թէ՝ «զոր աստուած զուգեաց և միացոյց՝ մարդ մի՛ մեկնեսցէ»: - 401. Չորրորդ՝ խորհրդական. զի մի է *քրիստոս* փեսայ. և զեկեղեցիս հրէից և հեթանոսաց ընկալաւ իւր հարսն սուրբ: - 401. Երկրորդ՝ նշանակէր կրտսեր եղբայրն *զքրիստոս* զերկրորդն ադամ. որով յառնեն մարդիկ յերկրէ: - 402. Իսկ ոմանք *զքրիստոսէ՛* ասեն

բնութեամբ և շնորհօք որդի. որպէս նեստորք և քաղկեդոնիկք անիծեալք. զի այսպէս լինին **բ** որդիք և **բ** անձինք: - 402. Այլ մեք այսպէս խոստովանիմք *գքրիստոս*. որդի աստուծոյ բնութեամբ. և զնոյն որդի մարդոյ բնութեամբ: - 402. Երրորդ՝ զայս անէծս եբարձ *քրիստոս:* - 403. Այլ այս անէծքս յայտնապէս ի վերայ հրէիցն է. որք ո՛չ կատարեն զօրէնս, և ո՛չ ունին զմկրտութիւնն *քրիստոսի:* - 403. Երրորդ՝ յայտնի և ճշմարիտ կեանք *քրիստոս* է...: - 405. Եւ պա՛րտ է մեզ հանապազ *գքրիստոս* առաջի աչաց տեսանել ի խաչ վասն մեր և հաւատալ. և չարչարակից լինիլ նմա յամենայն ժամ: - 405. Հինգերորդ՝ ցուցանէ թէ մարմնաւոր օրինացն վախճան հոգևոր և օրհնութիւնն է որ եղև *քրիստոսիւ:* - 409. Վեցերորդ՝ ի խորհուրդ *քրիստոսի*, որ օրհնեաց զաշակերտսն և վերացաւ: - 409. Երկրորդ՝ ի դէմս անդրանկանն *քրիստոսի*. ըստ որում ասէր՝ «ո՛չ մեռայց՝ այլ կեցից»: - 409. Հինգերորդ՝ մովսէս օրինա՛կ էր, և ճշմարտութիւնն *քրիստոս*. առ որ խափանեցաւ մահ, և թագաւորեաց կեանք: - 409. Այլ այնո՛ւ էր առաւել, զի *քրիստոս* զհոգիս ազատեաց ի դժոխոց. և աստուած էր և մարդ եղև և խաչեցաւ. որ մեծ է քան զամենայնին: - 411. Երեսուն**գ**, Ամք ադամայ մինչև ի *քրիստոս:* - 413. Երեսուն**ե**, ի Ծնունդն *Քրիստոսի* միահամուռ: - 413. Տասներորդ՝ և նորս թլփատութիւն սրտի՝ վէմն *քրիստոս* լինելոց էր. որ կարծրացաւ աստուածութեամբն. և էարկ սուր յերկիր և բաժին: - 415. Եւ հին օրէնքն արգելաւ ի մկրտութիւնն, և փոխեաց *քրիստոս:* - 417. Եւ եկեղեցի եթող զպաշտօնս իւր և զչարիս՝ և սիրեաց *գքրիստոս:* - 417. Եւ զարձանն վկայութեան կանգնեաց ի տիպ հաւատոյն որ ի *քրիստոս*, և վախճանեցաւ: - 419. Դարձեալ անցեալ ընդ ապաշխարութիւն և սատակեալ զորդիսն բելիարայ, ապա՛ ժառանգեսցեն զարքայութիւնն երկնից ի փառս *քրիստոսի* աստուծոյ մերոյ: - 419. Եւ անդ դադարեցան առաջնորդք օծեալք. յորում երևեցաւ ճշմարիտ օծեալն *քրիստոս:* - 421. Եւ այն զի քամեալ լցաւ կուրն և ո՛չ երկիր. զի մնացին և կատարեցան բանք մարգարէիցն ամենայն և ո՛չ եղծան. իսկ յետոյ հոգի տեառն ելից զտիեզերս մարգարէութեամբ և շնորհօքն *քրիստոսի:* - 421. Կրկին կործանիլն դագոնայ, զի նախ՝ օրինօքն մովսէսի անկաւ, և *քրիստոսիւ* կործանեցաւ: - 425. Հինգերորդ՝ զընթացս մեղաց և զգործն որ է սկզբնական և ներգործական մեղք, և զգլուխն որ է՛ մահ և ապականութիւն, խորտակեաց *քրիստոս*...: - 426. Եւ ա՛յս է պատճառն. զի ի դատաստան քահանային քննեալ՝ այլ ո՛չ քննի ի դատաստանին *քրիստոսի*. «զի զոր լուծանէք՝ լուծեալ լիցի» ասէ ...: - 433. Դարձեալ՝ նոյն ինքն *քրիստոսի* է իշխանութիւնն որ աստ լուծանէ ի ձեռն քահանային. և իշխանութիւն նորա ո՛չ տկարանայ երբէք. որպէս զհաց և զգինին կատարէ և զայլ խորհուրդս. նոյնպէս և աստ: - 433. Չորրորդ՝ ի տիպն *քրիստոսի* որ ասէր ծարաւի եմ և ո՛չ էարբ: - 434. Նա՛խ՝ նշանակէ՛ զսեղան խաչին *քրիստոսի.* որ յերեք ժամուն մինչև ի **զ** ժամն խաչեցաւ, և հաշտեցաւ աստուած: - 435. Իններորդ, խաղաց հոգին ի վերայ դաւթի. և աղաւնակերպ հոգին ի վերայ *քրիստոսի:* - 436. Քսաներորդ, կոխեցին զայլազգիսն իէլ և յուդայ. և խոստովանօղք *քրիստոսի* զդևս այլազգիս: - 436. Քսան**բ**, երկոքին դուստրն խօսեցաւ դաւթի, և կրտսերն տւաւ. և փեսային *քրիստոսի* կրկին խօսեցաւ եկեղեցի և նո՛րս տուաւ: - 436. Երեսուներորդ, կացոյց սաւուղ պահապան դաւթի. և կացուցին պահապան գերեզմանին *քրիստոսի:* - 436. Յիսուներորդ, կոչեաց զանունն աւար դաւթի. և այս ազատութիւն *քրիստոսի:* - 437. Դարձոյց ի յորդանանու զբերզելի որ տասամբն կերակրեաց զդաւիթ. ի տիպ հին օրինացն **ժ** բանեան զոր կատարեց *քրիստոս:* - 438. Բերին **գ** արք ի ջրոյն բեթլէհէմի. և **գ** աւետարանիչքն զծնունդն *քրիստոսի:* - 438. Այլ զայն ասէ՝ թէ յամենայն ազգս արանց գտաւ այր մի *քրիստոս*, ազատ ի պարտուց սկզբնականին. և ի կանանց և ո՛չ մի: - 440. Եւ *քրիստոսէ* աստուծոյ զօրութիւն և իմաստութիւն: - 440. Վեցերորդ՝ օրինակն սողոմոն՝ և ճշմարտութիւնն *քրիստոս*՝ կարդաց հայր զաստուած: - 440. Եւ *քրիստոսի* վախճան ո՛չ գոյ ասէ հրեշտակն: - 441. Եւ եկեղեցի հեթանոսաց՝ *քրիստոսի:* - 441. Եւ նոյնպէս թագաւորքն մոգուց բերին ընծայ *քրիստոսի:* - 441. Երանելի են հարսունք և հնազանդեալք *քրիստոսի:* - 441. Եւ ամենայն սուրբք ի մարդկանէ *գքրիստոս*...: - 442. Նա՛խ՝ զի միայն մասին աշխարհի և սակաւո՛ւց էր տէր իսկ *քրիստոս* ամենայնի: - 442. Երկրորդ՝ նա երկրաւոր թագաւոր. և *քրիստոս* երկնաւոր: - 442. Երրորդ՝ և նորա գիտութիւնն անցանելի էր. և *քրիստոսին* անանց: - 442. Չորրորդ՝ նա՛ վասն քարի և փայտի պատմէր. և *քրիստոս* վասն արքայութեանն: - 442. Հինգերորդ՝ *քրիստոս* տուօ՛ղ էր մարգարէութեանն. և նա՛ առնօղ ի *քրիստոսէ:* - 442. Վեցերորդ՝ զի նա՛ զպարգևս երկրային խոստանայր առնողացն զպատուէրս. և *քրիստոս* զերկնայինն: - 442. Եօթներորդ՝ զի նա՛ ո՛չ արար փրկութիւն հոգւոց. և *քրիստոս* ամենայն աշխարհի: - 442. Ութերորդ՝ զի և նա՛ վասն *քրիստոսի* մարգարէանայր: - 442. Իններորդ՝ և մարմնական որդի էր դաւթի ըստ կարգի հասարակ մարդկան. իսկ *քրիստոս* ակնկալութեան և աւետեաց և ի վեր քան զկարգ բնութեան աստուած մարդացեալ: - 442. Տասներորդ՝ զի սողոմոն ի քարանց ձեռագործաց կազմէր տաճար աստուծոյ. իսկ

*քրիստոս* զբանական հոգիս մարդկան շինէր օթևան սուրբ երրորդութեանն: - 442. Նոյնպէս և ամենայն խաչի զօրութիւնն *քրիստոս* է. ի ձեռս արժանաւոր և կատարեալ հաւատոց առնէ սքանչելիս. իսկ ոչ նոյնպիսեացն ծածկէ զզօրութիւնն: - 445. Իսկ ի մահուն որ յարոյց զմեռեալն յորժամ մերձեցաւ ի յոսկերսն եղիսէի, ի տիպ մահուն *քրիստոսի* որ մահուամբն մեզ կեանք և յարութիւն շնորհեաց: - 446. Եւ դարձեալ ի տիպ *քրիստոսի* որ ի գիշերի եհար զսատանայ և ազատեաց զհոգիսն ի դժոխոցն: - 446. Եւ եօթնից ժամանակաց փոփոխմամբ՝ է հասակաւ յեօթն դար կենցաղոյս՝ լինիմք տաճար և քաղաք *քրիստոսի* աստուծոյ մերոյ: - 448. ...նշանակէ *զքրիստոս* որ եղև երկրորդ ադամ. և ի վեց դարուն կանգնեաց զկործանեալ բնութիւնս...: - 449. Եւ առաջնորդեն օծեալ քահանայքն յետ դարձին նձգ ամ. մինչև բարձան օծեալքն իրէից և ծնաւ ճշմարիտ օծեալն *քրիստոս:* - 449. Իսկ այլ ոմանք թուեն զեօթներորդն դանիէլի ի դարեհի որդւոյ արշուրեայ առաջին ամէն. յորում զտեսիլն ետես մարգարէն. մինչև ի ծնունդն *քրիստոսի* ամք **նձգ**: - 449. Ի յադամայ մինչ ի ծնունդն *քրիստոսի*՝ է՛ ըստ եպիփանու **բչ** ամ: - 451. Եւ ի ծննդենէն *քրիստոսի* ի թուականն մեծ՝ **շծգ** ամ: - 451. Եւ առնին ի նորոգմանէ տաճարին մինչև ի ծնունդն *քրիստոսի* ամք **շժը**: - 453. Եւ միանգամայն յադամայ ի ծնունդն *քրիստոսի* ամք **ըճղը**. ըստ եօթանասնիցն որպէս ասացաւ ի վերոյ: - 453. Եւ աստանօր Կատարումն հին Կտակարանաց. և Եօթներորդ Հատորի Հարցմանցս. ի Փառս *Քրիստոսի* Աստուծոյ մերոյ Օրհնելոյն Յաւիտեանս Ամէն: - 453. Եւ սքանչելիք յղութեանն և նշանացն *քրիստոսի:* - 454. Մետասաներորդ, Թէ ո՞րքան է ծնունդն *քրիստոսի:* - 454. Չորեքտասաներորդ, Օծեալ և *քրիստոս* բազում եղանակաւ: - 454. Քսաներորդ, Թէ արու ծնաւ *քրիստոս* **ժ** կերպիւ: - 454. Քսանեւ, Վասն մկրտութեանն *քրիստոսի* **ժ** պատճառաւ: - 454. Զի՞նչ գործեաց մահն *քրիստոսի:* - 454. Եւ թէ զանազանի մահն *քրիստոսի* և մերս: - 455. Քսանէ, Վասն անապականութեան մարմնոյն *քրիստոսի* բազմազան վկայութեամբք: - 455. Երեսուներորդ, Վասն յարութեանն *քրիստոսի:* - 455. Իսկ ըստ տնօրէնութեանն *քրիստոսի*՝ պատշաճի և երրորդ եղանակն: - 457. Երկրորդիւն մարդեղութիւնն *քրիստոսի*. զի խոստացեալ եղև այն մարգարէիւք և նահապետօք: - 458-459. Այլ արդարութիւնն երբեմն ծածկեալ՝ և ողորմութիւնն յայտնի, որպէս յարդարացուցանել զամբարիշտն, և յառաջին գալուստն *քրիստոսի:* - 459. Երբեմն արդարութիւնն յայտնի՝ և ողորմութիւնն ծածկեալ. որպէս պատիժն մանկանց առանց մկրտութեան մեռելոց, և յերկրորդ գալուստն *քրիստոսի:* - 459. Եւ վասն այն խառնեցան **բ** ցեղքն. զի ծնեալն ի նոցանէ *քրիստոս* ըստ մարմնոյ, թագաւոր և քահանայ լինէր: - 461. Եւ սոյնպէս և *քրիստոս* եղև երկուց զարմիցն մի քահանայ և թագաւոր ճշմարիտ և մշտնջենաւոր քահանայ և թագաւոր յաւիտեան: - 461. Նա՛խ՝ զի կոյսն սուրբ՝ նշանակեսցէ զսուրբ եկեղեցի խօսեցեալ *քրիստոսի* որ նմանապէս է կոյս: - 461. Եօթներորդ՝ զի ծնունդն *քրիստոսի* թաքուցեալ լինի ի սատանայէ՛: - 461. Ութերորդ՝ զի մի՛ հրէայքն համարելով *զքրիստոս* ո՛չ ունելով օրինաւոր ծնունդ՝ երևեսցին յիրաւի ի հալածելն զնա: - 461. Եւ ի *քրիստոսի* համբարձմանն **խը** ամաց էր: - 461. Եւ յորժամ փոխեցաւ առ *քրիստոս*՝ **կ** ամաց էր: - 461. Եւ առաքեալն ցուցանէ թէ *քրիստոս* է զաւակն այն...: - 466. Այլ արդ՝ *քրիստոս* ո՛չ է որդի աբրահամու և ո՛չ ի հարցն՝ թէ ոչ է որդի կուսին. ապա ուրեմն ըստ մարմնոյ աստուած է *քրիստոս*, և աստուածածին է ծնօղն. և մայր ըստ մարմնոյն *քրիստոսի:* - 466. Զի մի՛ յօրինաց, այլ ի շնորհացն *քրիստոսի* իմասցուք զարդարութիւն և զփրկութիւն մեր: - 467. Հինգերորդն Մովսէսի. իսկ Վեցերորդ դարն՝ յորում ծնաւ Փրկիչն մեր *Քրիստոս*. և փրկեաց և բժշկեաց զմեզ: - 467. Հինգերորդն ի գերութենէն մինչ ի *քրիստոս:* - 467. Վեցերորդն ի *քրիստոսէ* մինչ ի կատարած աշխարհի: - 467. Ա՛րդ՝ սքանչելիք էին ի մայրն *քրիստոսի* որպէս ասեն վարդապետք: - 469. Եւ թէպէտ կատարեալ և լի և անթերի էին մասունք մարմնոյն *քրիստոսի*. այլ ա՛յն քան փոքրիկ, մինչ զի հազիւ անկարէր ընդ տեսութեամբ մարդոյ: - 470. Այլ և ո՛չ կանանցական սերմն եղև նիւթ մարմնոյն *քրիստոսի:* - 470. Ապա ուրեմն պատշա՛ճ էր նիւթ մարմնոյն *քրիստոսի* մաքուր արիւնն կուսին...: - 470. Յաղագս որոյ պատրաստեաց նիւթ արեան, կազմեալ զօրութեամբ հոգւոյն. որով լինիցի ճշմարիտ մայր *քրիստոսի:* - 470-471. Դարձեալ վասն նշանացն *քրիստոսի* ասեն վարդապետք այսպէս: - 471. Քանի՞ եղանակաւ ծնունդ ասի *քրիստոսի:* - 471. Եւ երեքեան ծնունդ *քրիստոս*՝ ըստ երից գոյացութեանցն որ ի *քրիստոս*. այսինքն աստուածութիւնն՝ մարմինն՝ և հոգին: - 471. Չորրորդ եղանակն որ կատարումն է այլոցն՝ ի կնոջէ առանց առն. որպէս ծնունդն *քրիստոսի* զօրութեամբ հոգւոյն սրբոյ: - 471. Իսկ վարդապետք եկեղեցւոյ բովանդակեալ զամենայն՝ **զ** եղանակաւ ասեն զծնունդն *քրիստոսի:* - 471. Տասներորդ՝ ասի ոմանց թէ ի ժամ ծննդեանն *քրիստոսի* արգելման ամենայն ծնունդք մինչև ծնաւ բարձօղն երկանց ամենայն ծննդոց. զի նա՛ լինէր անդրանիկ ամենայն ծննդոց: - 472. Եւ աստ գիտելի՛ է, զի **գ** ինչ միայն յատուկ է մարդացելոյն *քրիստոսի*.

և ո՛չ այլ ումեք պատշաճի մարդկայինս ազգի: - 473. ...իսկ մեք ո՛չ ի գործոց, այլ ի հաւատոցն *քրիստոսի* ընկալաք զսկզբնական արդարութիւնն և զներգործութիւն մարմնոյ և զսրբութիւն մտաց: - 473. Արդ այսպէս ի **զ** իրաց փրկեաց զմեզ մարդեղութեամբն իւր *քրիստոս:* - 473. Զի՞նչ թարգմանի *քրիստոսն* և օծեալ: - 474. Ըստ լեզուիս մեր՝ օծեալ. ի հոռոմն *քրիստոս*. և յեբրայեցին մեսիա թարգմանի: - 474. Վասն որոյ կոչի Օծեալ և *Քրիստոս:* - 474. Եւ տե՛ս, զի բնութեամբ միաւորեցաւ՝ իմանի *քրիստոս*. յայտ է զի յորոշելն ըստ ոմանց՝ ո՛չ ևս մնայ *քրիստոս:* - 474. Իսկ զօծումն բնութեանն միաւորութեան՝ ընկալաւ ի կուսական արգանդին. ուր խառնեալ միաւորեաց զմերս բնութիւն ընդ իւրում աստուածութեանն և ծնաւ *քրիստոս* որ թարգմանի օծեալ: - 475. Զի հերձուածօղք ոմանք օծեալ ասեն *զքրիստոս* յառաջ քան զյղացումն: - 475. Զի թէ յետոյ ի մկրտութեանն օծաւ *քրիստոս*, զի՞նչ աւետարանեաց հրեշտակն եթէ՝ «ծնաւ ձեզ այսօր փրկիչ օծեալ տէր»: - 475. Յոգւոյ և մարմնոյ միաւորութիւն ո՞րպէս նմանի *քրիստոսի:* - 476. Նոյնպէս և յորոշելն ըստ ոմանց զաստուածն և զմարդ՝ ո՛չ է *քրիստոս*. այլ մարդ սոսկ կամ մերկ աստուած: - 477. Այսպէս թէ ուրեք մարդ միայն անուանի *քրիստոս* «զճշմարութիւն խօսեալ». և կամ՝ «աստուած կնքեալ». ո՛չ ինչ ուրէք վնասէ զմիաւորութիւնն իբր մարդ սոսկ կամ աստուած միայն. այլ աստուած համանգամայն և մարդ խոստովանի միացեալ: - 477. Այսպէս և միաւորութիւնն *քրիստոսի* է՛ յաւիտենից և ժամանակեայ. անմահ և մահկանացու. աստուած և մարդ. նոյն ինքն բանն մարմին եղեալ: - 478. Իսկ ի *քրիստոս* եռակի գոյ միաւորութիւն. այսինքն աստուծոյ ընդ հոգւոյ. հոգւոյ ընդ մարմնոյ. աստուծոյ ընդ մարմնոյ: - 478. Իսկ *քրիստոս* ամենևին ա՛կն՝ ամենևին ունկն՝ ընդ հօր և հոգւոյն աստուածաբար ներգործէ: - 479. Վասն է՞ր ոչ կատարեալ հասակաւ ծնաւ *քրիստոս* որպէս զադամ: - 479. Եթէ ոչ էր խաչեալ *քրիստոս*՝ լինէ՞ր ծեր մարմնով: - 479. Իսկ ի *քրիստոս* ոչ ինչ է անկատարութիւն. ապա և ո՛չ ծերութիւն մարմնոյ: - 480. Երրորդ՝ զի *քրիստոս* զչափ հասակի զադամայն ունէր, որ նախ քան զյանցանս և ադա՛մ ոչ ունէր հիւանդութիւն և ո՛չ ծերութեան փոփոխումն: - 480. Վասն է՞ր *քրիստոս* արու ծնաւ: - 480. Յինգերորդ՝ *քրիստոս* լինելոց էր քահանայ և թագաւոր յաւիտենական. և էգն ո՛չ կարէր օծանիլ քահանայ և թագաւոր. ո՛չ յօրինակն և ո՛չ ի ճշմարտութիւնս: - 480. Տասներորդ՝ *քրիստոս* փեսայ կոչի և եկեղեցի հարսն հոգևոր. և նա՛ գլուխ և մեք անդամք և ժառանգակիցք: - 480. Ա՛րդ՝ փեսայ և գլուխ և ժառանգ արուն է և ո՛չ էգն. վասն այն արու ծնաւ *քրիստոս:* - 480. Նոյնպէս և *քրիստոսի* մինչ զտղայական հասակն նկարեն, փաթութեալ հանեն զթուղթն ի ձեռն. իբր ի հրէից ծնեալ զամենայն ինչ ըստ օրինացն առնել: - 481. Զի՞նչ է ձեռագիրն ադամայ զոր պատառեաց *քրիստոս:* - 481. Երրորդ ձեռագիր քրիստոնէիցս առ աւազանաւն. որ հրաժարիմք ի սատանայէ՛ և դաւանիմք *զքրիստոս:* - 482. Իսկ զձեռագիր հրէիցն, և զայն ևս պատառեաց *քրիստոս* կատարելով զամենայն օրէնս աստուծոյ: - 482. Եւ յորժամ հաւատան ի *քրիստոս* և մկրտին, ջնջի գիր նոցա և անէծքն: - 482. Վասն է՞ր ազգս հայոց զտօն ծննդեանն *քրիստոսի* և մկրութեան ի միում աւուր կատարեմք: - 482. Այլ և աստուածաբանն ի *քրիստոս* ծնեալ ճառին ասէ, այսօ՛ր աստուծոյ յայտնութեանս տօնէ: - 482. Եւ բարսեղ ի *քրիստոսի* ծնունդն յիւրական ճառին ասէ, անուն դիցուք տօնիս աստուածայայտնութիւն: - 482. Իսկ հայաստանեայ *քրիստոս* որպէս ուսան ի սրբոյն գրիգորէ՛ անփոփոխ կացին ի նմին: - 482. Ա՛րդ՝ կարգեցին բազմազան վկայութինս զոր հաստատապէս տօնեմք զծնունդն *քրիստոսի* ի վեցն յունվարի: - 483. Ութերորդ՝ զի թէ հաւատան աւետարանին և ոչ ստեն **լ** ամաց գալ *քրիստոսի* ի մկրտութիւն, ի հարկէ՛ պա՛րտին կատարել և զմկրտութիւնն ի նոյն ի տօնի ծննդեանն իւրեանց ի դեկտեմբերի **իե** որ իցեն ամենևիմբ սուտ: - 484. Մետասաներորդ՝ յա՛յտ է յամիսս նոցա. զի առաջին ամիս սեպտեմբե՛ր է նոցա. և վասն ծննդեանն *քրիստոսի*՝ փոխեցին և եդին զյունվար առաջին ամիս: - 484. *Քրիստոս* վասն է՞ր թլփատեցաւ: - 485. *Քրիստոս* վասն մեր սպասաւոր եղաւ թլփատութեան. և ո՛չ վասն պիտոյից նորա: - 485. Վեցերորդ՝ զի ցուցցէ զինքն որդի աբրահամու. առ որ հրաման թլփատութեանն եղև և խոստումն օրհնեալ զաւակին. և այսպէս խոստմանն աստուծոյ կատարումն *քրիստոս* զինքն ցուցանէր: - 485. Եւ *քրիստոս* ո՛չ միայն օրինակաւն, այլ և հոգևորաւն թլփատեցաւ: - 486. Զի վարդապետք ի **դ** բաժանեն զթլփատութիւնն *քրիստոսի:* - 486. Դարձեալ՝ թլփատի *քրիստոս* և այժմ յեկեղեցի իւր չորեքկին: - 486. Վասն է՞ր մկրտեցաւ *քրիստոս:* - 486. Մկրտութիւնն *քրիստոսի* ո՛չ վասն կարօտութեան էր. զի ամենամաքուր և սուրբ է բնութեամբ և սրբիչ ամենայնի: - 486. Այլ և օգտութիւն մկրտութեան մերոյ ցուցանի ի մկրտութիւնն *քրիստոսի* չորիւք: - 487. ...իսկ *քրիստոս* ո՛չ ունէր զմեղս. վայն այն վաղվաղակի ել ի ջրոյն. և նշանակէ ի մեզ զշնորհաց հեղումն. որ մկրտեալն ազատի ի մեղաց և իսկոյն ելանէ յառաքինութիւնս: - 487. Դարձեալ՝ ի մկրտութիւնն *քրիստոսի* նշանակին գոյացութիւնք մերոյս մկրտութեան. այսինքն Մկրտօղն, Մկրտեալն,

Նիւթն, Տեսակն, և Դիտաւորութիւնն: - 487. Մկրտեալն *քրիստոս*. որ սրբեաց ջզուրն և զօրացոյց վերստին ծնանիլ զմեզ: - 487. Իսկ ձայնն հօր ի վերայ որդւոյն՝ ցուցանէ զգերազանցութիւնն *քրիստոսի:* - 487. Չորրորդ որ ասէ «իմ». ցուցանէ *զքրիստոս* գոյակից հօր: - 487. Այլ և հրով մկրտիչ ասի *քրիստոս*...: - 488. Եօթներորդ՝ արեամբ և վկայութեամբ. զոր և ինքն *քրիստոս* մկրտեցաւ վասն մեր իբրև յոյժ գովելի և երանելի այս մկրտութիւնս քան զառաջինսն: - 488. Եւ զայս հրոյ իմանի որ առ գալստեամբն *քրիստոսի* ոմանց մաքրութիւն ներելեացն լինիլ և առաւել պայծառանալ. որք ոսկի և արծաթ և ականս պատուականս շինեցին: - 488. Մկրութիւնն *քրիստոսի* և յովհաննու որո՞վ համաձայնին և զանազանին: - 488. Այլ զանազանին Նախ ի ծնն. զի մկրտութիւնն յոհաննու տուեալ լինէր յանուն այնմ որ գալոցն էր. իսկ *քրիստոսին* յանուն Երրորդութեանն: - 488. Երկրորդ՝ ի ներգործութիւնն. զի մկրտութիւնն *քրիստոսի* արդարացուցանէ և զդուռն երկնից բանայ. և յովհաննուն ո՛չ: - 488. Երրորդ՝ ի վախճանն. զի յովհաննուն ունէր կարգեալ առ մկրտութիւնն *քրիստոսի*. զի յա՛յն սովորեցուցանէր զժողովուրդն որ էր կատարեալ մկրտութիւն: - 488. Զոր մկրտութեամբն իւր *քրիստոս* սրբեաց զջուրն, և արար սրբութեան նիւթ և կենաց: - 489. Իսկ այժմ վասն խաչին նախ գիտելի է, զի չարչարանքն *քրիստոսի* ընդ դէմ է և բարձօղ է մոլորութեանց մեղաց: - 489. Դարձեալ՝ ի չարչարանքն *քրիստոսի* ծանիր ը քաղցրութիւնս: - 489. Դարձեալ նշանակէ զմահն *քրիստոսի*. զոր արեգակն արդարութեան կամեցաւ ի մարմին իւր թաքչիլ. զի զմեզ լուսաւորեսցէ: - 490. Եւ վասն մերոյ հիւանդութեան՝ *քրիստոս* էառ զդեղն և բժշկեաց զմեզ: - 491. Եւ է՛ որ պատարագն մեծ է քան զմատուցօղն. որպէս նոր օրինացս մարմինն *քրիստոսի* մեծ է քան զքահանայն: - 491. Իսկ չորրորդն է՛ պատարագ տն մերոյ *քրիստոսի* որ ի մի դէմ անձնաւորութեան **գ** երես պատարագին բացայայտեցաւ. այսինքն մեծ գոլ մատուցօղն և ընդունօղն և պատարագն: - 491. Զի՞նչ գործեաց մահն *քրիստոսի:* - 491. Ա՛րդ՝ **գ** իր երևի ի մահն *քրիստոսի:* - 492. Զազգս մարդկան սատանայ էր գերեալ. վասն է՞ր *քրիստոս* զգին արեանն ի հայր ետ: - 492. Այլ և յեօթն տեղ մասնէ՛ բղխեաց արիւնն *քրիստոսի:* - 492. Ի քանի՞ տեղ յոյժ անարգեցաւ *քրիստոս* ի ժամ չարչարանացն: - 492. Նախ նշանակէ զպէս պէս զօրութիւնս *քրիստոսի*. որ երբեմն զբարձրագոյնս ներգործէր և երբեմն զնուաստագոյնս երևեցուցանէր յինքեան: - 493. Չորրորդ դարձեալ՝ **դ** թև խաչին նշանակէ զչորս բարերարութիւնս *քրիստոսի*...: - 493. Եօթներորդ՝ գլուխն և պատուանդանն նշանակէ՛ միաւորեալ զաստուածութիւնն և զմարդկութիւնն *քրիստոսի*. որ խաչեալն է ի նմա: - 493. Վերին մասն միշտ զվերինն խորհիլ ուր *քրիստոս* նստի...: - 493. Ոմանք ասեն թէ աւանդիլ հոգւոյն *քրիստոսի*, աւազակն եմուտ յերկրաւոր դրախտն ուստի ել ադամ. և չէ՛ հաւանելի. զի անդ մարմնովն եմուտ յետ յարութեանն: - 495. Որ էած ապտակ *քրիստոսի*՝ մաղքո՛ս էր անունն: - 495. Որո՞վ զանազանի մահն *քրիստոսի* և հասարակ ամենայն մարդոյ: - 495. Այլ զանազանութիւն գոյ ի մէջ մահու նախաստեղծ մարդոյն, և մահու տեառն մերոյ *քրիստոսի*, և մահու հասարակ մարդկայինս ազգի: - 495. Նա՛խ՝ զի յադամ եղև ներգործեալ. և ի մեզ բնաւորեալ. և ի *քրիստոս* առեալ: - 495. Դարձեալ՝ մահն ի յադամ պատժաւո՛ր է. և ի *քրիստոս* կամաւոր. և ի մեզ հարկաւոր: - 495. Դարձեալ՝ մահն ի յադամ պատիժ ինքեան էր. իսկ ի *քրիստոս* պատիժ այլոց. իսկ ի մեզ պատիժ ինքեան և այլոց. այսինքն զի վասն մեր և վասն ադամա՛յ կրեմք զմահն: - 496. Դարձեալ՝ մահն ադամայ զմահ եմոյծ ի բնութիւնս. և մահն *քրիստոսի* ելոյծ զմահ և եբարձ. և մահ մեր ո՛չ մուծանէ և ո՛չ լուծանէ: - 496. Այս զանազանութիւն ի մէջ երից մահուանն. ադամայ, և *քրիստոսի,* և մեր մարդկայինս ազգի: - 496. Եւ զայսոսիկ կատարեաց *քրիստոս*. զի ստեղծուած էր ինքեան: - 496. Որպէս այնոքիկ որք զօրացան այսու մահուամբ և զորդեգրութեանն ընկալան շնորհ և նահատակեցան, նոքա չարչարակից եղեն *քրիստոսի*, և փառացն հաղորդակիցք: - 497. Արդ զայս կամաւոր մա՛հս կրեաց *քրիստոս:* - 497. Այսպէս և *քրիստոս* զմահ կրեաց և ի բաց ջնջեաց զմեղս և զապականութիւն ի մերմէ բնութենէս: - 497. Յաղագս որոյ զմահն կրեաց *քրիստոս*. զի այսպէս բարձցէ յերկուց կողմանց զմեղս և զապականութիւն: - 497. Ո՞րպէս ասեմք մահկանացու զմարմինն *քրիստոսի* առանց ապականութեան: - 498. Յայտնի՛ է ամենեցուն և առանց երկբայութեան՝ զի *քրիստոս* մեռաւ ըստ գրոց. և մահուամբ եբարձ զմահ և զապականութիւն: - 498. Նախ որպէս ասացաւ՝ ապականութիւնն ծունդ է մեղաց՝ և մեղքն չա՛ր է. և մեղք ո՛չ կրեաց սուրբ մարմինն *քրիստոսի*. ապա ուրեմն անապակա՛ն է: - 498. Ութերորդ՝ մանանայն յանապատի էր օրինակ անապական մարմնոյ փրկչին. և է՛ անապական մինչև ցայսօր ի մէջ ոսկի սափորին. ապա ուրեմն ճշմարիտ մարմինն *քրիստոսի* էր անապական ի կուսական արգանդէ աստուածածին կուսին: - 499. Իններորդ՝ խորհրդական մարմինն սուրբ զոր բաշխեաց ի վերնատունն՝ էր անապական և կենարար. ըստ որում «որ ուտէ զմարմին իմ՝ կեցցէ յաւիտեան». ապա ուրեմն և նախ քան զխաչն անապական էր մարմինն *քրիստոսի* փրկչին

մերոյ: - 499. Եւ նզովիւք փակեն ասելով, «եթէ ոք յետ անճառ միաւորութեանն ապականացու ասէ զանապական մարմինն սուրբ, նզովեալ լիցի». որպէս յա՛յտ է ի գիրս իւրեանց. և որ ոք կամեսցի դիւրաւ գտցէ. ապա ուրեմն անապակա՛ն է մարմինն *քրիստոսի:* - 499. Դարձեալ ասեն նոքա, մեր մարմինս ապականացո՛ւ է. իսկ թէ անապական մարմին էառ *քրիստոս*, ո՛չ արար փրկութիւն մեզ. այլ առաջին բնութեանն ադամայ որ էր անապական ի դրախտին: - 500. Դարձեալ ասեն նոքա, եթէ մարմինն *քրիստոսի* փոփոխէր աճելովն որ տեսա՛կ է ապականութեան: - 501. Նոյնպէս և *քրիստոս* կերակրիւր անապական մարմնով: - 501. Դարձեալ ասեն նոքա, կրակա՞ն էր մարմինն *քրիստոսի* թէ անկրական: - 501. Իսկ աւելորդ ծորումն թէպէտ անանգոսնելի՛ է, սակայն ակամայ է. և զակամայն ո՛չ կրեաց *քրիստոս:* - 502. Ապա ապականութիւնն փրկեաց զմեզ. զնա կարդալի է փրկիչ. այսինքն և զապականութիւնն և ո՛չ *զքրիստոս:* - 503. Այլ մեք եղբարք ուղեկիցք իմ և դաւանակիցք եղիցուք. շինեալք և հաստատեալք ի վերայ հաւատոյ հիման. անշարժ խարսխեալք ի վերայ յուսոյն *քրիստոսի*, սեռն և յստակ կատարեալ սիրով սուրբ հոգւոյն: - 503. Վասն է՞ր հոգւովն էջ ի դժոխս տէրն մեր *քրիստոս:* - 503. Չորրորդ՝ որպէս անիրաւութեամբ կապեաց սատանայ զհոգիս մարդկան. արդարութեամբն ազատեսցէ *քրիստոս* զնոսա: - 503. Եւ չարչարանքն *քրիստոսի* երկու իրս ներգործեաց. նախ զպարտիս մեղաց վճարեաց. երկրորդ զդրունս երկնից եբաց: - 503. Զի յայնմանէ ազատեաց *քրիստոս* իջանելովն անդ. և աւերեաց զնա յաւիտեան. և առ հասարակ ազատեաց զհոգիսն: - 504. Դժոխքն այն յորում նախ քան *զքրիստոս* հոգիսն արգելոյր սատանայ՝ աւերեցաւ յաւիտեան: - 504. Զի որպէս յեսու աւերեաց զերիքով և անէծ զի մի՛ շինեսցի. նոյնպէս և զդժոխքն աւերեաց *քրիստոս* և անէծ զշինօղսն չար գործօք...: - 504. *Քրիստոս* ի յո՞ր դժոխք էջ: - 505. Առ առաջինն ասեմք, թէ *քրիստոս* ո՛չ ի վերին՝ այլ ի ներքին դժոխքն էջ: - 506. Հինգերորդ՝ ադամ առաջին յանցաւորն էր ի ներքին դժոխս. զի ա՛յն է մահու մեռանիլն. այլ արդ եթէ *քրիստոս* ո՛չ գնաց ի ներքին դժոխքն, ո՛չ ազատեաց զադամ: - 506. Եւ *քրիստոս* ա՛նդ գնաց և կապեաց զհզօրն և քակեաց զամուրս նորա և աւար էառ զհոգիսն: - 506. Ա՛րդ՝ եթէ *քրիստոս* ի ներքին դժոխքն ոչ էջ, ո՛չ է կապեալ հզօրն որպէս աւետարանն ասէ. և ոչ զդրունսն խորտակեալ. և ո՛չ զգերիսն աւար առեալ որպէս դաւիթ ասէ: - 506. Այլ ա՛րդ՝ եթէ դժոխքն այն ոչ է աւերեալ. ապա *քրիստոս* ի յառաջին պարտուցն ո՛չ է ազատեալ զմեզ: - 506. Երկրորդ՝ զի դժոխքն այն էր բուռն զօրութիւնն սատանայի. և *քրիստոս* կապեաց զհզօրն ըստ աւետարանին. ապա ուրեմն *քրիստոս* աւերեաց զդժոխս: - 506. Երրորդ՝ մեղքն էր դժոխք և տանջանք մեղաւորաց. և *քրիստոս* եբարձ զմեղս. ապա աւերեա՛ց զդժոխս: - 506. Չորրորդ՝ անէծք առաջին մարդոյն՝ եղև տանջանք և դատապարտութիւն մարդոյն. և *քրիստոս* գնեաց զմեզ յանիծից օրինաց եղեալ վասն մեր անէծք. ապա ուրեմն *քրիստոս* աւերեաց զդժոխս: - 506. Նոյնպէս և *քրիստոսիւ* ամենայնքն փրկեցան արդարք և մեղաւորք ըստ առաքելոյ: - 507. Նոյնպէս և *քրիստոս* առհասարակ ազատեաց զհոգիսն և եհան ի կայանս հոգւոցն: - 507. Տասներորդ՝ առաջին գալուստն *քրիստոսի* ողորմութեան էր և շնորհաց. և երկրորդն արդարութեան և հատուցման: - 507. Ասեմք եթէ՝ ոչ ինչ գոյր նոցա արգելք հաւատոյ յորժամ լոյս ծագեաց *քրիստոս* ի դժոխս: - 508. Եւ դարձեալ որ ուղիղն է, որպէս մարմնով տեսին ի յերկրի, նոյնպէս և հոգւով ի դժոխս պարտ էր հոգւոցն հաւատալ ի հոգին *քրիստոսի* և ազատիլ: - 507-508. Իսկ հոգիքն ի դժոխս յորժամ տեսին *զքրիստոս*, այն էր ժամանակ փրկութեան նոցա և ընդունելոյ զողորմութիւն. յաղագս որոյ հաւատովք արդարացան նոքա միայն ի նոյն ժամն: - 508. Յերեկոյի շաբաթոյն ո՛չ վասն այն լուծանեմք թէ յարութիւնն *քրիստոսի* ի շաբաթի աւուրն է. ո՜չ. քա՛ւ և մի՛ լիցի: - 508. Այլ յարութիւնն *քրիստոսի* յաւուր միաշաբաթու ի մէջ գիշերի է: - 508. Այլ զշաբաթի երեկոյն նախատօնակ առնեմք յարութեանն *քրիստոսի:* - 508. Նմանապէս և աստ յայսմ աւուր շաբաթու որ ի կիրակէ յարութեան տօնեմք, այժմ յինն ժամուն ի վեր նախատօնակ առնեմք յարութեանն *քրիստոսի*. և այս վասն բազում պատճառի: - 509. Նա՛խ՝ զի խոստովանիմք *զքրիստոս* աստուած և զտօն նորա ըստ տէրունականացն կատարեմք: - 509. Եւ որ ոք ո՛չ խոստովանի *զքրիստոս* աստուած, զտօն նորա ըստ հասարակ մարտիրոսացն առնէ ի մէջ գիշերոյն ի վեր: - 509. Եւ որպէս յինն ժամու ուրբաթուն լոյս ծագեաց հոգւոցն ի դժոխս, նոյնպէս և յինն ժամու շաբաթուն լոյս ծագէ զճառագայթս իւր արեգակն արդարութեան *քրիստոս*. մինչ յառաւօտուն բոլորապէս տեսանի ինքն յարուցեալ ի մեռելոց: - 509. Նա՛խ այսպէս, եթէ ի վերնատունն *քրիստոս* ծունկն եկեր. պա՛րտ է ի նմին աւուր ծունկն ուտել: - 510. Դարձեալ պատճառեն թէ՝ յորժամ զնկանակն և զծունկն աճեցոյց *քրիստոս*՝ մե՛ծ էր զատիկն: - 510. Եւ դարձեալ՝ ի քառասունս իւր ո՛չ եկեր ծունկն. և մեք *զքրիստոսի* քառասունսն պահեմք և ո՛չ զիրէիցն: - 510. Եւ կրկին սուտ. զի ուր զծունկն կերին՝ ի գալիլեայ յեզր տիբերիայ ծովուն էր **դ** աւուր ճանապարհ հեռի յէմէ՛ և ի լեռնէն ծիթենեաց ուստի համբարձաւ

*քրիստոս:* - 511. Զի **Ե** անգամ ի **Ե** կիրակէն երևեցաւ *քրիստոս* աշակերտացն մինչ ի համբարձումն: - 511. Վասն այն յերկարեցի, թէ ոք հակառակի՝ այսպէս պատասխանեսցես նոցա. և զեղկելի անձն իմ յիշեսցես ի տէր ուղղակից եղբայր իմ ի *քրիստոս:* - 511. Յորո՞ւմ ժամու յարեաւ *քրիստոս*. և քանի՞ ժամ եկաց մեռեալ: - 512. Ասեմք թէ՝ օր յարութեանն *քրիստոսի* կիրակէն է ըստ աւետարանչացն: - 512. Այլ որք ուղղաձևութեան են աշակերտք՝ ի մէջ գիշերի ասեն զժամ յարութեանն *քրիստոսի* ի գերեզմանէն. որոց հետևիմք և մեք և հաստատեմք բազում վկայութեամբ և օրինակաւ: - 512. Հինգերորդ՝ պատճառ յարութեան մերոյ է յարութիւնն *քրիստոսի:* - 512. Ապա ուրեմն յարութիւնն *քրիստոսի* է՛ ի մէջ գիշերի յաւուր կիրակէի որպէս ասացաւ: - 512. Նոյնպէս և *քրիստոս* ի մէջ գիշերի եհար զսատանայ և կապեաց: - 512. Եւ յորում ժամու ել մովսէս յեգիպտոսէ և եհան զժողովուրդն, ի նոյն ժամն յարեաւ *քրիստոս* ի մեռելոց...: - 512. Եօթներորդ՝ դարձեալ յաւուր կիրակէի էանց մովսէս ընդ ծովն կարմիր. և ընկղմեցաւ փարաւօն ի տիպ յարութեանն *քրիստոսի* և կորստեան սատանայի: - 512-513. Որ նշանակէ՛ զյարութիւնն *քրիստոսի* ի մէջ գիշերի զդրունս դժոխոցն խորտակեալ. և զհոգիսն հանեալ ի լեառն երկնային: - 513. Ապա ուրեմն ի գիշերի է յարութիւնն *քրիստոսի:* - 514. ...և զաւարն ժողովեցին ի տիպ խորհրդոյն *քրիստոսի*. որ ի գիշերի եհար զզօրութիւնն սատանայի և յառաւօտուն ցուցեալ զինքն աշակերտաց իւրոց և զյարուցեալսն ընդ իւր: - 514. ...եթէ *քրիստոս* յարեաւ ի մէջ գիշերի. զի այց արասցէ մարդկան ազգի. և զանկեալքս ի խաւարի և ի ստուերս մահու՝ ի լոյս գիտութեան և շնորհաց յարուսցէ: - 514. Այսպէս իմանալի արեգակն *քրիստոս* ի նոյն ժամն յարեաւ ի գերեզմանէն. և ընդ արշալոյսն երևեցաւ իւղաբերիցն և առաքելոց: - 515. Քսաներորդ, յա՛յտ է յա՛յսմանէ՝ որ նախ քան *զքրիստոս*՝ էր սկիզբն աւուր ծագումն լուսոյն. իսկ յետ յարութեանն *քրիստոսի* եղև սկիզբն աւուրն ի մէջ գիշերի. զի այժմ ի խաւարէ՛ ի լոյս ճանապարհորդիմք: - 515. Իսկ թէ ոք ասիցէ, աւետարանն ընդ արշալոյսն ասէ զգալ կանանցն և տեսանել *զքրիստոս:* - 515. ...բայց մագդաղենացին ջե՛րմ էր ի սէրն *քրիստոսի*՝ եկաց զի ա՛յլ ինչ լուիցէ կամ տեսցէ: - 515. Այս թէ յորո՞ւմ ժամու յարեաւ *քրիստոս:* - 515. Եւ յերեկոյի շաբաթուն յորում լուսանայր միաշաբաթին լինի յարութիւնն *քրիստոսի* ըստ մատթէոսի: - 516. Այլ պիտո՛յ է բնական **Գ** տիւ և **Գ** գիշեր գոլ ի սիրտ երկրի որպէս ասաց *քրիստոս:* - 516. Եւ այսպէս սովորաբար խօսիմք, թէ յուրբաթի կէս օրն ելեալ ոք ի տեղւոջէ՛ մինչև գայ առ մեզ ի լոյս կիրակէին կամ ընդ առաւօտն, ասեմք թէ **Գ** օր է ճանապարհին. նոյնպէս և յարութիւնն *քրիստոսի:* - 516. Նա՛խ՝ որպէս ասաց սուրբն ներսէս՝ *քրիստոսի* բնութեամբ է հայր՝ և մեզ շնորհօք: - 518. Դարձեալ, *քրիստոսի* հայր է բնութեամբ՝ և աստուած հաւասարութեամբ: - 518. Դարձեալ, հայր է *քրիստոսի* ըստ էութեանն. և աստուած վասն միաւորութեանն. զի հա՛յր միաւորեաց զբանն ի մարմնի...: - 518. Եւ վասն յարութեանն *քրիստոսի* այս քան: - 518. Համբարձումն վերաբերի առ *քրիստոս* յատուկ զօրութեամբն իւր: - 519. Իսկ զտեղի համբարձմանն *քրիստոսի* միտք ո՛չ կարէ ցուցանել. զի ի լոյս անմատոյց է բնակեալ և ի ներքին կողմն վարագուրին ըստ առաքելոյն: - 519. Վասն է՞ր համբարձաւ *քրիստոս:* - 519. Ա՛րդ՝ եռակի՛ է համբարձումն *քրիստոսի*. որ է յերկրի, ի վերայ երկրի, ի վերոյ երկնից: - 520. Այլ ասեն վարդապետք եթէ՝ ի համբարձմանն *քրիստոսի* ընդ իրս տեսանելի է որք են պարագայք համբարձմանն: - 520. Երկրորդ՝ զի ամպն կալաւ զնա յաչաց նոցա. նշանակի թէ ի մահկանացու մարմինս ո՛չ կարեմք տեսանել ի բարձունս *զքրիստոս:* - 520. Ութերորդ՝ ետ պարգևս որդւոց մարդկան. զի «ամենայն պարգևք ի վերուստ են» յոր համբարձաւ *քրիստոս:* - 520. Երրորդ՝ վասն մխիթարութեան աշակերտացն. զի **Խ** օր մխիթարեսցէ զնոսա փոխանակ **Խ** ժամուն որ տրտմեցան ի մահն *քրիստոսի*. որպէս ասացաւ թէ յարութիւնն ի մէջ գիշերի, այլ երևեցաւ ընդ արշալոյսն առաքելոցն...: - 520. Վեցերորդ, զի եկեղեցի որ է մարմինն *քրիստոսի*՝ յետ չարչարանաց նեռինն որ հանդերձեալ է կրել, զկնի **Խ** աւուր յերկինս համբառնալոց հաւատացեալ լինի: - 521. Այս քան վասն համբարձմանն *քրիստոսի:* - 521. Նա՛խ՝ զի չարչարանքն *քրիստոսի* պատճառ եղև պարգևաց սուրբ հոգւոյն, պարտ էր նախկին գոլ. որպէս ամենայն պատճառ նա՛խ է քան զպատճառելին: - 521. Երկրորդ՝ զի թէ *քրիստոս* այնպէս փառաւորեալ էր որպէս յետ խաչին, արգել և խափան լինէր ամենայն չարչարանացն և փրկութեան մարդկան: - 521. Երրորդ՝ զի պա՛րտ էր *քրիստոսի* հովուել զպարզամիտ աշակերտսն որպէս հաւ զձագս, և մայր զմանկունսն. և թէ ի սկզբանէ զհոգին ընկալեալ էին՝ ո՛չ էր պիտոյ հովուել զնոսա: - 521. ...զի ուսցին բառնալ զտկարութեան այլոց. որպէս *քրիստոս* զնոցայն եբարձ. իսկ թէ նախ զհոգին առեալ էին՝ ո՛չ կարէին բառնալ զայլոց տկարութիւնն: - 521. Հինգերորդ՝ զի գիտասցեն թէ *քրիստոսիւ* պարգևեցաւ. թէ յառաջագոյն էին ընկալեալ, պարզապէս յաստուծոյ կարծէին զտուչութիւն հոգւոյն և ո՛չ ի *քրիստոսէ:* - 521. Նոյնպէս պա՛րտ էր զսերմն հաւատոյ ընդունել նոցա *քրիստոսիւ*, և ապա

փոքր փոքր աճմամբ հասանիլ պարգևաց հոգւոյն, և պտղաբերել և զայլսն: - 521. Նա՛խ՝ ի կողմանէ պարգևողին. զի յորժամ *քրիստոս* նստեալ լինէր ըստ մարմնոյ ընդ աջմէ հօր իբր զթագաւոր փառաց յաթոռ թագաւորութեան իւրոյ, յայնժամ մեծագոյն լինէր պարգևք հոգւոյն տուեալ ի փառաւոր *քրիստոսէ* աստուծոյ: - 521. Երկրորդ՝ ի կողմանէ ընդունողաց առաքելոցն. զի պատշաճաւորեցան հոգոյն սրբոյ. զի փործիւ գիտէին զվարդապետութիւնն *քրիստոսի*, զնահն և զյարութիւնն և զայլն: - 521-522. Երրորդ՝ ի կողմանէ հոգւոյն սրբոյ. զի առաւել հռչակելի և փառաւոր եղև այսպէս. զի ընկալեալ զհոգին՝ վաղվաղակի սքանչելիս առնէին վկայելով *քրիստոսի*...: - 522. Այսպէս նախ եկն *քրիստոս* և խաչիւ և մահուամբ հաշտեցոյց զհայր, և ապա՛ հայր աստուած առաքեաց զհոգին սուրբ պարգև մարդկան: - 522. Իսկ հոգին սուրբ երագ էջ յառաքեալսն. զոր արեգակն *քրիստոս* բազում ամօք յերկարեալ մարմնով ել յերկինս: - 522. Եւ հոգին սուրբ ի *քրիստոսէ* էջ յառաքեալսն. և նա՛ է իմաստութիւն հօր: - 523. Հինգերորդ՝ զանբաժանելի միացումն ի սէրն *քրիստոսի*. զի որ ի խաչին թողին և փախեան, յետ իջման հոգւոյն՝ ամենեքեան վասն անուան նորա չարչարեցան և մեռան...: - 524-525. Հօր աստուծոյ վասն է՞ր ոչ տօնեմք որպէս *քրիստոսի* և հոգւոյն սրբոյ: - 525. Երրորդ, *Քրիստոս* գլուխ եկեղեցւոյ և հիմն: - 525. Եւ մի նշխար օրհնեմք և լինի մարմին *քրիստոսի:* - 526. Եւ վասն միաւորութեան. և թացեալ պատառացն. և թէ ո՛չ տան ժողովրդեանն յօրհնեալ մարմնոյն *քրիստոսի:* - 526. Եւ աստանօր Կատարումն Իններորդ Հատորի Հարցմանցս Այսոցիկ. և *Քրիստոսի* Փառք յաւիտեանս Ամէն: - 527. Դարձեալ՝ ծննդեամբ աւազանին կոչեցաք նոր որդիք աստուծոյ և եղբարք *քրիստոսի* համահայր և համամայր: - 528. Երկրորդ՝ ի վերնատանն դասք առաքելոցն ի վերայ նոր հաղորդութեանն մարմնոյ և արեանն՝ նոր օրհնեցին *զքրիստոս* և ելին ի լեառն ձիթենեաց որպէս ասէ աւետարանն: - 528. Չորրորդ՝ այժմ մանկունք հաւատոյ ի յեկեղեցիս նոր օրհնութիւն տալով **գ** սրբեան ձայնիւ աստուածաբանե՛ն զխաչեալն *քրիստոս*. և օրհնեն ի վերայ արքայութեան աթոռոյ խաչին: - 529. ...ամենայն ազգ և ամենայն լեզուք, գայցեն ի կատարածի յերկրպագութիւն *քրիստոսի*. և անեզր յաւիտենիւ փառաւորեալ օրհնեն զնա: - 529. Դարձեալ զորօրինակ, մարմինն *քրիստոսի* մի և նոյն էր ի խաչին բևեռեալ, և մի և նոյն մարմինն է ի բազում նշխարս միաւորեալ և ո՛չ բազմացեալ. զի նոյն է գոյացութիւն հացին և գոյացութիւն մարմնոյն *քրիստոսի:* - 530. Եւ թէ ոք ասիցէ, զնոյնութիւնն ընկալայ. այլ ինձ այսպէս թուի թէ աւետարանս բանն է *քրիստոսի*, և *քրիստոս* բանն աստուծոյ. ապա ուրեմն և աւետարանս բան է բանին: - 530. Նմանապէս և առ այս ասեմք, թէ ո՛չ ինչ է զանազանութիւն. զի յորժամ աւետարանն բանն *քրիստոսի* է ճշմարիտ, և *քրիստոս* աստուած է ճշմարիտ. ապա ուրեմն աւետարանն բանն աստուծոյ է ճշմարիտ: - 530. Ա՛րդ՝ առաջին հիմն *քրիստոս* է և գլուխ. և հաւատացեալքն շինուածք ի նա. և հայր շինօղ: - 531. Երկրորդ հիմն՝ դաւանութիւնն պետրոսի է. և դաւանօղքն շինւածք. և *քրիստոս* շինօղ: - 531. Այսպէս հաւատալին է *քրիստոս*. և հաւատալն դաւանելն. և հաւատն որ առ մեզ է: - 532. Զ՞ինչ է որ *քրիստոս* գլուխ կոչի և եկեղեցի անդամք: - 532. «Եւ առն ամենայնի գլուխ է *քրիստոս*». զի անդամք *քրիստոսի* եմք և բնութենակիցք: - 532. Այլ գիտելի է, զի *քրիստոս* գլուխ է եկեղեցւոյ, և հաւատացեալք մարմին և անդամք նմա...: - 532. Նոյնպէս մի է *քրիստոս* և մի մարմին նորա. որ կոչի մի կաթուղիկէ եկեղեցի. որպէս ի հաւատամքն ասի: - 532. Նոյնպէս ի *քրիստոսէ* ի մեզ իջանէ կենդանութիւն հոգևոր, և զօրութիւն, և առողջութիւն, և շարժութիւն յօդոց և խաղալեաց ի ձեռն հաւատոյն շաղկապութեան: - 532. Նոյնպէս *քրիստոսիւ* տեսանեմք զհայր աստուած, և առնեմք զկամս նորա. և կերակրիմք և զմայլիմք հոգէպէս: - 532. Նոյնպէս *քրիստոս* է փառք և ցնծութիւն, բան և իմաստութիւն եկեղեցւոյ սրբոյ: - 532. Եւ զի *քրիստոս* է հիմն երկուցն. և **դ** անկիւն առաքեալք և մարգարէք. և հին և նոր կտակարանք ասացեալ նոցա: - 533. Մի կոչի եկեղեցի՝ ո՛չ տեղեաւ մի. այլ միով հաւատով և յուսով կոչմանն. և միոյ մօր և մի որովայնի ծնունդ աւազանին. և մի կերակուր որ է տեսութիւն աստուածային գրոց. և մի մարմին և արիւն փրկական. և մի գլուխ և պսակ և զգեստ ունիմք *զքրիստոս:* - 533. Երրորդն ի միոջէ և առ մի. որպէս բժշկական դեղ և գործիք. նոյնպէս մի է եկեղեցի յիւրաքանչիւր ազգս. զմի և զնոյն ունելով գործ և իր ի միոյ գլխոյն առ մի անդամքս. ի միոյն *քրիստոսէ* առ մի քրիստոնեայքս. ի միոյ հաւատոյն առ մի հաւատացեալքս...: - 533. Նա՛խ՝ վասն կատարեալ սիրոյն *քրիստոսի* որպէս փեսայի և հարսին: - 534. Երկրորդ՝ վասն գերազանց և ծայրագոյն միաւորութեանն *քրիստոսի* ընդ եկեղեցի: - 534. Նախ՝ զի եղբայր և ժառանգակից եմք *քրիստոսի:* - 534. Ընդ *քրիստոսի* միաւորեալ. որպէս փեսայն որդի է, և հարսն դուստր կոչի աստուծոյ հօր: - 534. Դարձեալ՝ թէպէտ մի է հայր և մայր *քրիստոսի* և եկեղեցւոյ, այլ զանազան կերպիւ: - 534. Եւ որպէս կողն ադամայ եղև կին. և շինեալ եկեղեցի լինի հարսն *քրիստոսի:* - 534. Իսկ մայրն է եկեղեցի վասն անդամոցն *քրիստոսի:* - 534. Մարմին՝

բոլոր հաւատացեալք և անդամք *քրիստոսի:* - 534. Եւ դարձեալ՝ գլուխ է *քրիստոս*. և հերք՝ որպէս դասք վերին զօրացն ի նմանէ՛ առ մեզ իջուցեալ զշնորհս: - 534. Իսկ գրապան՝ վարդապետք և քահանայք պահապանք ժողովրդեանն. որք բոլորակի զգեստ կոչեցան *քրիստոսի:* - 534. Երրորդ՝ զի առաքեալք ինձաք տեսք եղեն *քրիստոսի*. և մարգարէք միջոցաւ ի բացեայ. և վարդապետք յետոյ նոցա: - 535. Եւ սոքա են սուր երկսայրիք տուեալ ի ձեռս քահանայից զինուորաց *քրիստոսի*. զի յաջ և յահեակ հարցեն. այսինքն զսատանայ և զչարսն ի մարդկանէ որք հակառակին բարեաց: - 538-539. Այլ գիտելի է, զի քահանայն զինուո՛ր է. ոչ զոր ինքն կամի և ախորժէ զայնս կապէ և արձակէ. այլ զոր հաճո՛յ է զօրավարին *քրիստոսի:* - 539. Առաջին ժողովն եղև ի Նիկիայ սրբոց հարց. զկնի **յժը**՝ կամ **յլ** ամի ծննդեանն *քրիստոսի*. և ի **ի** ամի թագաւորութեանն կոստանդիանոսի: - 542. Յոհան անտիոքայ՝ թղթով միաբանեալ. **ըճ** հարք ընդ դէմ նեստորի որ **բ** բնութիւն ասէր և **բ** որդի. կրկին կամք և կրկին ներգործութիւն *քրիստոսի*. և զաստուածածինն մարդածին: - 542. Եւ պատճառ սոցա այն էր, զի *քրիստոսի* մի բնութիւն ասէին. և ինքեանք սահմանեցին **բ** բնութիւն. **բ** գործք. և **բ** կամք: - 544. Զոր յառաջին ամին յորժամ նստաւ կաթողիկոս տէր սիմէոնի, ի ձեռն տէր եղիայի մեծահանդէս ժողովմամբ պայծառացոյց զեկեղեցի կանոնական հաստատութեամբ ի փառս *քրիստոսի* աստուծոյ մերոյ օրհնելոյն յաւիտեանս ամէն: - 545. Որպէս և *քրիստոս* արար. որ քան մարմնով ընդ առաքեալսն էր՝ եպիսկոպոսունս արար զնոսա. և յետ համբառնալոյն՝ հոգւովն սրբով արար զնոսա կաթողիկոսունս: - 546. Եւ վէմ դաւանութիւնն էր որ խոստովանեցաւ *զքրիստոս* որդի աստուծոյ կենդանւոյ. և ի վերայ այնմ դաւանութեան շինեցաւ եկեղեցի քրիստոնէից: - 547. Առաքելոյն պետրոսի հնազա՛նդ եմք որպէս *քրիստոսի*. նաև պօղոսի և ամենայն առաքելոցն և աշակերտացն ամենեցուն և հետևողաց նորա և աթոռոց նոցա: - 547. Եւ այլ չորիցն հնազանդիմք որպէս աթոռակից *քրիստոսի:* - 547. Ես խոստովանիմ *զքրիստոս* ճշմարիտ աստուած և բնութեամբ որդի աստուծոյ. և դու բաժանմամբ մա՛րդ դաւանիս և շնորհօ՛ք որդի աստուծոյ: - 548. Եւ անապական պատարագեմ *զքրիստոս* որպէս կանոնքն է առաքելոցն և կղեմայ. և դու ապականես ջրով և զայլն որպէս յառաջիկայդ ասացի: - 548. Մ՛րդ՝ զի՞նչ կամիս որ հնազանդիմք պետրոսի. ուրանա՞լ պարտ է *զքրիստոս* որ լինիմք հնազանդ պետրոսի, եթէ եղծանել զպահքն, թէ զամենայն պիղծ կերակուր ուտել...: - 548. Եւ նա՛ խնդրեաց յաստուծոյ զիջումն լուսոյն ի նշան յարութեանն *քրիստոսի:* - 549. Յերուսաղէմ վասն գերեզմանին *քրիստոսի:* - 549. Դարձեալ ասեմք թէ զիա՞րդ յետին. զի աբգար թագաւորն հայոց նախ քան զխաչն հաւատաց ի *քրիստոս* և երանեցաւ ի նմանէ: - 549. «Դէբէոս որ անուանեցաւ թադէոս». յայտ է ի *քրիստոսէ* զանունն փոխեալ. որպէս զպետրոսին և զորդւոցն որոտման: - 549. Եւ ի գալն յերկիրս հայոց, ետուն նմա օգնական զիւղն օծման զոր *քրիստոս* օրհնեալ էր. և զգեղարդն. և այլոց ազգաց չկա՛յ այս պարծանքս. զի մեր մեռոնս համապազ և միշտ զնոյն շնորհ ունի: - 549. Այլ դատաւոր միտն կացուցեալ երկու վկայ զանբիծ հաւատս և զօրէնս որ են հաւատք և գործք. զի առ ո՞ր և իցէ *քրիստոս* նա՛ է ճշմարիտ: - 551. Երկրորդ՝ ի *քրիստոս* բնութեանցն միացելոց մի ասել բնութիւն ըստ սրբոյն աթանասի և կիւրեղի: - 554. Եւ ո՛չ բարկանայ առ այս *քրիստոս* յայլ և այլ ժամու տօնել: - 554. Չորրորդ՝ աբգարու թագաւորին նախընծայ ի *քրիստոս* հաւատալն: - 555. Վասն զի արեգակն արդարութեան *քրիստոս* հայրական փառօք և աստուածագումար դասուք և կարապետեալ աստուածային նշանն անտի գալոց է...: - 555. Երրորդ՝ ի յաստուած գիտութիւնն. որ եկեալ իցէ ի հաւատս ճշմարիտս. և գիտէ *զքրիստոս* աստուած ճշմարիտ. թողու և գործէ՛ զմեղս կամ զհաւատն: - 564. ...և զրկէին զզօրութիւն հոգւոյն զորմէ ասաց *քրիստոս*, թէ «հոգւովն աստուծոյ հանեմ զդևս». և նոքա դիւաց տային. յիրաւի ոչ թողցի նոցա: - 566. Վեցերորդ՝ *քրիստոս* երբեմն բարերարէ՛ր և երբեմն տանջէ՛ր: - 566. Բայց միայն փրկչին մեր *քրիստոս* էր ազատ ի սկզբնականէն: - 568. Այս ագահութիւնս վաճառեաց *զքրիստոս:* - 570. Յորմէ փրկեսցէ *քրիստոս* աստուած զմեզ և զամենայն հաւատացեալս անուան իւրոյ ամէն: - 570. Երկրորդ վասն առաջին ծննդեանն *քրիստոսի* որ ի հօրէ: - 572. Յորոց եօթն վերաբերին առ աստուածութիւնն. և եօթն ի մարդեղութիւնն *քրիստոսի:* - 572. Իսկ եօթներին աստիճանք առ մարդեղութիւնն *քրիստոսի* են այս: - 573. Նա՛խ՝ զի ի մին աստուածն է և ի մի *քրիստոսն:* - 573. Վասն այս հրամայեաց *քրիստոս* «եղերուք խորագէտք իբրև զօձս և միամիտք որպէս զաղաւնիս»: - 579. Եւ այս տուեալ լինի յաստուծոյ ընդ դէմ երկիւղին որով նմանին *քրիստոսի*...: - 582. Վասն է՞ր են է պարզև *քրիստոս* այսորիկ: - 583. Զի տանելն մահու վասն *քրիստոսի*՝ է՛ նոյն աստիճան ըստ խաղաղութեանն: - 586. Յաղորդութիւնն է՛ խորհուրդ սիրոյ. զի սիրով միաւորիմք և յօդիմք ի գլուխն *քրիստոս*. մարմին ի մարմնոյ նորա և անդամ յանդամոց նորա: - 587. Եւ թէ այր մարդ ոչ լինի և տղայն մերձ ի մեռանիլ լինի, կինն կարէ՛ մկրտել թէ գիտէ զձև բանին զոր

*քրիստոս* ուսոյց «յանուն Հօր և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ». ցանէ՛ զջուրն և ասէ՝ մկրտեալ լինի: - 588-589. **Երրորդ՝ զի որ մկրտի՝ ի մահն քրիստոսի մկրտի. և *քրիստոս* միանգամ մեռաւ. և թէ ոք դարձեալ մկրտէ՝ անձանց ի խաչ հանէ զորդին աստուծոյ և դարձեալ խայտառակէ որպէս առաքեալն**: - 590. Երրորդ՝ զի միշտ անդրանիկ ծնանի և ո՛չ կրտսեր. զի պատկեր *քրիստոսի* ստանամք որ է՛ անդրանիկ հօր: - 590. Զի և տիրամայր կոյսն ո՛չ էր ի ժամ մկրտութեանն ընդ *քրիստոսի* ի յորդանան որպէս ասացաւ ի վերոյ: - 591. Մեղքն ադամայ այն է որ զարդարութիւն կորոյս. և մեղօք և ցանկութեամբ ծնաւ զորդին. և այն մեղքն սկզբնական կոչի. և ո՛չ թողցի եթէ ոչ ի մահն *քրիստոսի* մկրտեսցի: - 591. Արդ ունիմք կրկին ծնօղ. ըստ մարմնոյ զադամ. և ըստ հոգւոյ *զքրիստոս:* - 592. Պարտ է զի իւրաքանչիւր ոք ծնցի մկրտութեամբն *քրիստոսի*. զի սրբեսցի և ազատեսցի ի մահու: - 592. Ա՛րդ մկրտեալն ի *քրիստոս*՝ վասն հոգևոր հօրն ազատի ի հոգևոր պատժոյն. և վասն մարմնաւոր հօրն կրէ՛ զմարմնաւոր պատիժն: - 592. Դարձեալ՝ կրկին է գալուստն *քրիստոսի*. յառաջինն զհոգւոյ պատիժն եբարձ. և յերկրորդն զմարմնոյն. զի երկրորդ է մարմինն հոգւոյն: - 592. Եւ դարձեալ՝ ինքն *քրիստոս* նախ մեռաւ մարմնով, և ապա կենդանացաւ յետ մկրտութեանն: - 592. Թէ մեղքն ի մահն *քրիստոսի* թողեալ լինի, ընդէ՞ր մկրտիմք մեք: - 592. Մահուամբն *քրիստոսի* լուծան մեղք. բայց մեք ի հաւատ մահուն *քրիստոսի* մկրտիմք. զի տնկակից լիցուք մահու նորա: - 592. և խառնեմ զքեզ այսօր ի հաւատն *քրիստոսի:* - 593. Զայն ցուցանէ թէ յորժամ մկրտեցաւ *քրիստոս*՝ հոգին սուրբ էջ ի վերայ նորա...: - 593. Այսպէս ջրովն մկրտիմք ի *քրիստոս* և որդիք աստուծոյ կոչիմք. և իւղովն ի շնորհք հոգւոյն սրբոյ միաւորիմք: - 593. Այլ նարօտն կարմիր և սպիտակ մանեալ՝ զարիւն և զջուր կողին *քրիստոսի:* - 594. Իսկ ելանելն ի բեմն, զի յետ բոլոր անօրէնութեանցն *քրիստոս* ել յերկինս և նստաւ ընդ աջմէ հօր աստուծոյ: - 594. Հաղորդութիւնն է խորհուրդ՝ յորում պարունակի *քրիստոս* ի ներքոյ ձևի հացի և գինւոյ. և յերկոքին մասունքն է բոլոր *քրիստոս:* - 594. Այլ գիտելի է, զի ոմանք հետևօղք չար աղանդոյն քաղկեդոնի մոլորեալք ի ճշմարտութենէն՝ ջուր խառնեն յանապական բաժակ արեանն *քրիստոսի:* - 594. Եւ ի նոյն ճառն ուր թուէ **ը** քաղցրութիւնս չարչարանցն *քրիստոսի*, զչորրորդն ասէ՝ ելումն արեան և ջրոյն ի լուացումն մեր: - 594-595. Երկրորդ ունիմք վկայութիւն ի *քրիստոսէ* յորժամ ետ զարիւնն ի տեսակ գինւոյն՝ ասաց, «ո՛չ արբից ի բերոյ որթոյ մինչև արբից զդա նոր արքայութեան հօր իմոյ». և ջուրն ո՛չ է բեր որթոյ: - 595. Եւ յակոբ ի յօրհնելն զյուդա ի դէմս *քրիստոսի* ասէ՝ «կապեսցէ զորթոյ զյաւանակն. և լուասցէ գինեաւ զպատմուճանն իւր». և ջուր ո՛չ յիշէ: - 595. Դարձեալ՝ մելքիսեդեկ հաց և գինի մատոյց պատարագ աբրահամու և ո՛չ ջուր. որ նշանակէր զճշմարիտ պատարագն *քրիստոսի*. ապա ուրեմն ո՛չ է պարտ խառնել ջուր: - 595. Որք ասեն՝ պա՛րտ է յամենայն աւուր ջերմ հաց հանել ի սեղանն և անապական բաժակ. զի անապական արեամբն *քրիստոսի* փրկեցաք: - 595. Վեցերորդ վկայութիւն ի բացմանէ կողին *քրիստոսի:* - 595. Զի առաւել յարմա՛ր է անապակ բաժակն անապական արեանն *քրիստոսի*, քան թէ խառնեալն ի ջրոյ և ապականեալն: - 595. Ասեմք առ այս, թէ յառաջ խառնումն ջրոյն ո՛չ է ըստ խորհրդոյն. որպէս և ո՛չ առ մեզ, թէ վաճառօղն խառնեսցէ ջուր. այլ *քրիստոս* ո՛չ խառնեաց: - 596. Ասեմք թէ՝ եկեղեցին սիրով և հաւատով է միացեալ ընդ հաղորդութիւնն *քրիստոսի* և ո՛չ ջրով: - 596. Եւ թէ ասեն՝ հաղորդութիւնն նշանա՛կ է մահուն *քրիստոսի* յորմէ ել արիւն և ջուր: - 596. Այլ և զհինն իմաստութիւն ընդ նորոյս խառնեալ միաւորեաց *քրիստոս*. այսինքն զօրինակն ընդ ճշմարտութիւնս: - 596. ...զի որք կամին զմարմինն *քրիստոսի* ապականացու ասել՝ խմոր և ջուր խառնեն. թէպէտ այլ և այլ պատճառեն: - 596-597. Իսկ մեք դասք ուղղափառաց խոստովանիմք զկուսածին մարմինն *քրիստոսի* առանց ապականութեան...: - 597. Չորրորդ՝ բանն *քրիստոսի* որ ասէ «ա՛յս է մարմին իմ. և այս է արիւն իմ»: - 597. Նա՛խ՝ զի *քրիստոս* մի հաց էառ ի ձեռն ի սեղանոյն և օրհնեաց. նոյնպէս և զմի գինի: - 597. Ասեմք թէ՝ կացոյց *քրիստոս* զբազումս մկրտել...: - 597. Ո՞րպէս լինի մարմին և արիւն *քրիստոսի:* - 597. Պատահմունք և որակն մնան ի հացն և ի գինին. իսկ գոյացութիւնն փոխարկի ի մարմին և արիւնն *քրիստոսի* վասն **դ** պատճառի: - 597. Նա՛խ՝ որպէս հացն նոյն է ըստ ձևին, այլ այլ գոյացութիւնն է եղեալ մարմին *քրիստոսի*...: - 598. Եւ դարձեալ՝ որպէս բոլոր նշխարն մի մարմին է, և ի մասունս բաժանեալ իւրաքանչիւրն բոլոր և կատարեալ մարմին է *քրիստոսի:* - 598. Ապա ուրեմն հոգին *քրիստոսի* աստուած է և մարմինն աստուած է և արիւնն աստուած է: - 598. Եւ զպատառն զայն զոր ի ձեռն ունէր *քրիստոս*՝ ետ ի նա...: - 599. ...ընդէ՞ր զժողովուրդն զրկէք ի հաղորդութենէ մարմնոյ և արեանն *քրիստոսի*...: - 599. ...զի հաւատալի է թէ ի մարմինն *քրիստոսի*՝ է՛ և արիւնն կապակցութեամբ. և հոգին համազուգութեամբ. և աստուածութիւնն միաւորութեամբ: - 600. Նա՛խ՝ եթէ ո՛չ զմարմինն տան ժողովրդեանն. այլ սոսկ հաց և գինի. զի մարմին *քրիստոսի* այն մինն է որ օրհնեցաւ որպէս ցուցաւ ի

վերոյ: - 600. Դարձեալ՝ թէ դու հաւատաս զարիւնն ի մարմինն կապեալ, մի՛ հաներ զտեսակ արեանն ի բեմն. այլ նշխար միայն օրհնեա և լիցի մարմին և արիւն *քրիստոսի:* - 600. Ապա ուրեմն ծածուկ և յայտնի զրկես զժողովուրդն ի հաղորդութենէն *քրիստոսի*...: - 600. ...և բազումք անհաղորդ մեռանին և զրկին ի *քրիստոսէ:* - 600. ...նախ վասն ա՛յս խորհրդոյս է. և երկրորդ՝ զի մկրտութիւնս մեր ո՛չ ի ջուրն յովաննու, այլ ի մահն *քրիստոսի* է: - 605. Եւ զայս գործս արար *քրիստոս* յորժամ եհան զգնօղս և զվաճառօղս ի տաճարէն: - 606. Եւ զայս գործս արար *քրիստոս* յորժամ ի տաճարին ընթերցաւ զեսային ասելով «հոգի տն ի վերայ իմ. վասն որոյ և էօծ իսկ զիս»: - 606. Եւ զայս գործս արար *քրիստոս* յորժամ զդիւահարն բժշկեաց: - 606. Եւ զայս գործս արար *քրիստոս* յորժամ զինքն լոյս ի յայտնութիւն հեթանոսաց ետ. և ասաց թէ «ես եմ լոյս աշխարհի»: - 606. Զայս գործս արար *քրիստոս* յորժամ սփածաւ զղենջեակ և լուաց զոտս աշակերտացն: - 606. Զայս կարգս կացոյց *քրիստոս* յորժամ ի ժամ ընթրեացն զհացն ի մարմին իւր և զգինին ի յարիւն իւր փոխեաց: - 606. Ի ժամ մկրտութեանն *քրիստոս* եցոյց զքրիստոնէութեան խորհուրդն. զի մեք մկրտութեամբն լինիմք քրիստոնեայք: - 606. Եօթներորդ, զի և *քրիստոս* ո՛չ ընդ բազում, այլ ընդ մի Կաթուղիկէ եկեղեցի միաւորի: - 612. Եւ գմբէթն զվերինն խորհիլ ուր *քրիստոս* նստի ընդ աջմէ աստուծոյ: - 614. Եւ եկեղեցի սուրբ. հարսն անախտ. և դշխոյ անարատ ընդ աջմէ փեսային *քրիստոսի:* - 614. Եւ ի մեզ խաչ չարչարանացն *քրիստոսի* և մահ: - 614. ...և ապա լինի եկեղեցի և ժողովուրդ *քրիստոսի*. որպէս ասացաւ ի վերոյ **լա** գլուխն, **գ** համարն: - 614. Իսկ հինգերորդն ի նորոյս. զի խաչիւն *քրիստոսի* գնեցաւ և ազատեցաւ եկեղեցի սուրբ: - 616. ...և զխաչն հանապազ կրեն ընդ ինքեանս. և լուսով խաչին ելանեն ընդ առաջ *քրիստոսի:* - 616. Չորրորդ՝ յօրինակ *քրիստոսի* որ խարազանաւ եհան ի տաճարէն զոչխարս և զարջառս. նոյնպէս և մեք արտաքսեմք: - 617. ...և ապա՛ ի յերկրէ յարուցանէ զմարմինս. որպէս այն որ հրեշտակապետն նստեալ ի վերայ վիմին փողէր զյարութիւնն *քրիստոսի:* - 618. Եւ է՛ առաջին ժամ աղօթիցն ի մէջ գիշերի. վասն զի ի մէջ գիշերի յարեաւ *քրիստոս*. և ի մէջ գիշերի հասարակ յարութիւն մեր. - 621. Վեցերորդ ժամն է վերջին ողորմեայն. իններորդ ժամու աղօթն. յորում *քրիստոս* աւանդեաց զհոգին ի ձեռս հօր: - 622. Եօթներորդ ժամն է խոնարհեցո՛ և ապրեցոն ի խորհուրդ թաղմանն *քրիստոսի:* - 622. Ութերորդ՝ խաղաղականն է յետ երեկոյին ժամուն առ հոգին սուրբ. յորում ժամու հոգին *քրիստոսի* էջ ի դժոխս և խաղաղացոյց զնոսա: - 622. Չորրորդ և ուղիղ, որպէս ասէ տեսիլն հրեշտակք առնուին զխունկս որ է՛ աղօթք սրբոցն, և նուիրէին ի սեղանն ոսկի որ է՛ *քրիստոս*. և ի նմանէ բուրէր ծուխն առ հայր: - 625. Նմանապէս և յեկեղեցի՝ ոմանք սաղմոսե՛ն. և սարկաւագն ի տիպ հրեշտակին տայ զօրհնեայն ի քահանայն որ է՛ տիպ *քրիստոսի:* - 625. Եւ ա՛յս է պատճառն, զի քահանայն է՛ ի դէմս *քրիստոսի*, և եպիսկոպոսն հօր աստուծոյ. և խաղաղութիւնն է՛ հոգին սուրբ որ ի հօրէ առաքեցաւ...: - 625. Նա՛խ՝ զի հոգին սուրբ պարգևք է խաչին *քրիստոսի*. այլ և ի վերնատունն լուսեղէն խաչիւ հանգեաւ յառաքեալսն: - 625. Վասն է՞ր զամենայն աղօթից վերջքն ի *քրիստոս* աւարտեմք: - 625. Երկրորդ, զի յարութեամբն իւրով յարոյց զմեզ *քրիստոս:* - 627. Երկրորդ, ընդ *քրիստոսի* յառնելն ի գերեզմանէ: - 627. Երրորդ, ի յարութեանն յորժամ փողն գոչէ՝ յառնեմք և յառաջ ընթանամք *քրիստոսի:* - 627. Եւ ապա՛ ընթերցմունք յիշատակ սրբոցն որք աստ նահատակեցան և անդ պսակեալք թագաւորե՛ն ընդ *քրիստոսի:* - 628. Այլ և ոմանք ի հանդերձեալն ո՛չ ունին պատասխանի առաջի ահաւոր բեմին *քրիստոսի:* - 628. Եւ որ նա՛խ է վերջին տունն ի մեսեդի կամ կցորդ. այն է զի *քրիստոսիւ* դարձաք յառաջինն և ի բարձրագոյնսն. ուստի ադամաւ խոնարհեցաք...: - 629. Նա՛խ՝ երեխայքն ուխտեցին հրաժարիլ ի սատանայէ՛. և ի մեծի զատկին մկրտելովն իսրայէլ. և ապա ուխտ ապաշխարութեան պահոցն. և յարութեանն տեսանել *զքրիստոս*. աստ և անդ: - 629. Եւ զուրբ աստուածն խաչեցար. և այսպէս գրէ՝ եսայի ետես *զքրիստոս* նստեալ յաթոռ որ է խաչն. և երգէին զերեքսրբեանն: - 631. Զի խաչն պսակ և փառք է *քրիստոսի* և պարծանք քրիստոնէից և ո՛չ նախատինք...: - 632. Երկրորդ, զի յայսպէս ասել սուրբ աստուած սուրբ և հզօր սուրբ և անմահ *քրիստոս* որ խաչեցար վասն մեր ողորմեա՛ մեզ: - 633. Յայտնապէս բաժանեն զխաչեալն *քրիստոս* և սոսկ մարդ խոստովանին: - 633. ...և մի դէմ *զքրիստոսն* որ խաչեցաւ. որ լինի չորրորդ դէմ և անձն ըստ նոցա: - 633. Եւ *քրիստոս* որդին՝ կատարումն առ որդին: - 633. Երկրորդ՝ զի պատարագն է դէմ յանդիման լինի *քրիստոսի*. և ո՛չ եմք կարօտ բարեխօսի: - 634. Այսպէս ասէ մեծ իմաստասէրն և երկրորդ աւետարանիչն մեր և կաթողիկոսն սուրբ յոհան յօձնեայ թէ՝ պատարագին ժամն խորհուրդ է խաչին *քրիստոսի*...: - 634. ...զի ճառ խաչին պատւակա՛ն է առ աստուած և առ մարդիկ. և փառք *քրիստոսի* է խաչն և կատարումն ամենայն տնօրէնութեանցն: - 634. Նա՛խ՝ զի *քրիստոսիւ* ծանեաք զհայր: - 634. Տա՛սն է. ինն ի դէմս *քրիստոսի*. և մինն ի հոգին սուրբ ի հոգէգալուստն: - 634. Իսկ

որ ասեն՝ հայր և որդի և սուրբ հոգի. կամ թէ՝ *քրիստոս* որ խաչեցար: - 635. Զի սուրբ աստուածն անդ հաստատեցաւ. որպէս և փառք ի բարձունսն. սկսեալ ի հրեշտակացն ի ծնունդ *քրիստոսի*. և յերեք սուրբ ժողովնս եղև կատարեալ: - 635. Եւ դարձեալ՝ այսպէս էր *քրիստոս* ի վերայ խաչին...: - 635. Վասն *քրիստոսի* ասէ որ եղև մեզ զօրութիւն յազգէ դաւթի: - 638. Եւ այս է պատճառն, զի կիրակին տէրունի թարգմանի. և օր է ստեղծման աշխարհի, և յարութեանն *քրիստոսի*, և միւս անգամ գալստեանն: - 642. Եւ ի **ե** շաբաթին՝ որ վկայք են *քրիստոսի:* - 642. ...զի առաւել քան զայլս զբոլոր տնօրէնութիւնն *քրիստոսի* խօսեցաւ. զծնունդն. զխաչն. և զայլն ամենայն: - 644. Կամ որպէս յետ յարութեանն պետրոս նախ ետես *զքրիստոս*...: - 644. Նա՛խ՝ որպէս ասեն ոմանք՝ Բուրվառն նշանակէ զմարդկութիւնն *քրիստոսի*. և Յուրն զաստուածութիւնն. Ծխումն զբուրումն հոգւոյն սրբոյ: - 645. Դարձեալ՝ նշանակ խաչին. և *քրիստոս* ի վերայ նորա խաչիւն քարոզեալ: - 646. ...զի պատմօղ և կատարումն են տնօրէնութեանցն *քրիստոսի:* - 646. Եւ նոյն ինքն *քրիստոս* երևի մեզ ի խաչն և յաւետարանն: - 646. Զի առաջակայք եղեն *քրիստոսի*, աթոռակիցք և զինաւորք նորա...: - 647. Չորրորդ՝ լրումն օրինաց *քրիստոս* եղև մարմնովն...: - 647. Նոյնպէս և սուրբքն՝ *քրիստոսի* չարչարակիցք եղեն. և զպակասութիւն չարչարանացն *քրիստոսի* ի մարմինս իւրեանց կրեցին...: - 648. ...վասն որոյ տէրն *քրիստոս* մարմնով ի գերեզմանի հանգեաւ. և սուրբքն հոգւով առ աստուած յերկինս: - 648. ...որք տեսին *զքրիստոս* չարչարեալ...: - 648. ...նշանակէ զհանգիստ ապաշխարողաց. որք յուրբաթի յանցեաք ընդ ադամայ. ի շաբաթի հանգչիմք ընդ *քրիստոսի:* - 648. ...նոյնպէս և սուրբքն ամենայն ի գործոց իւրեանց հանգչին և փառաւորին և սպասեն գալստեանն *քրիստոսի* և հատուցման վարձուցն: - 648. ...այսինքն զպայծառութիւն գործոցն և զանմեղութիւն հոգւոյն զոր ընկալան ի շնորհացն *քրիստոսի:* - 648. ...այլ վասն յարութեանն *քրիստոսի* բուն բարեկենդան կարգեցաւ...: - 651. Եւ թէ ոք ասիցէ, **խ** օր **է** պահոց. զի **խ** օր պահեաց *քրիստոս*. և կիրակէն ո՛չ է ի համարս: - 651. Ասեմք թէ՝ *քրիստոս* **խ** օր պահեաց, և **խ** օր է մինչ ի ղազարու տօնն: - 651. Եւ աւագ շաբաթ չարչարանացն *քրիստոսի*՝է՛ ընդ քառասունս կարգեալ...: - 651. Մին *զքրիստոսին*. որ է՛ աղուհացքն: - 653. ...վասն որոյ պահեմք զչորեքշաբաթն. և ուրբաթն խաչելութեանն *քրիստոսի*. զի կցորդեսցուք խաչին: - 653. Չորրորդ, զի մանկունք եմք առագաստի և փեսայն *քրիստոս* ընդ մեզ է...: - 654. Երրորդ, զայս ի *քրիստոսէ* ուսաք. զի գոհացաւ ի հօրէ և ապա՛ բաշխեաց զգարեղէն նկանակսն և աճեաց...: - 654. Եւ զայս ուսաք ի *քրիստոսէ*. որ ի վերնատունն յետ ընթրեացն օրհնեցին և ելին ի լեառն ձիթենեաց: - 655. Եւ զայս ի *քրիստոսէ* ուսաք. զի այսպէս խաչանման բեկանէր զհացն երկոքին ձեռօքն: - 655. Նա՛խ՝ զի այսու՝ խաչին *քրիստոսի* հաղորդեսցուք. և սուրբ հացին զոր ի վերնատունն բաժանեաց: - 655. ...որք հաղո՛րդ եմք մարմնոյն *քրիստոսի* և բաժանորդք արքայութեանն երկնից: - 655. Նոյնպէս զայս ի *քրիստոսէ* ունիմք քրիստոնեայքս: - 655. Եւ յորժամ ըմպեմք, զնոյն օրհնութիւնն *քրիստոսի* յիշատակեմք: - 655-656. Այլ բաժին ննջեցելոց քրիստոնէից արքայութիւնն է և կեանքն *քրիստոս:* - 656. Որ և զմեզ արժանաւորեսցէ *քրիստոս* ամէն: - 656. Դարձեալ՝ մատաղն ստուեր և օրինա՛կ է ճշմարիտ պատարագին *քրիստոսի* որ գառն աստուծոյ և եզն պարարակ կոչեցաւ...: - 657. Դարձեալ՝ ճշմարիտ պատարագն *քրիստոս*՝Նախ կենդանի աղ կոչեցաւ...: - 657. ...յորժամ այս ամենայն հաստատեալ նորոգեցաւ հրամանաւ սրբոյն սահակայ պարթևի ի փառս *քրիստոսի*. ձեռամբ իմով մովսիսի գրչի սահակայ: - 659. Յերկրորդ ամէ՛ սրբոյն սահակայ մինչև ի **ժգ** ամն նորին՝ կատարեցան ի փառս *քրիստոսի* աստուծոյ մերոյ: - 659. Իններորդ հարցմանս բաւական լիցի ի Փառս *Քրիստոսի* Աստուծոյ մերոյ Ամէն: - 659. Եւ թէ ո՞րպէս երևի *քրիստոս:* - 661. Եւ աստանօր Աւարտումն Տասներորդ Յատորի Յարցմանցս, ի Փառս *Քրիստոսի* Աստուծոյ մերոյ Յաւիտեանս Ամէն: - 661. Երկրորդ, որք կամաւ աղքատանան վասն *քրիստոսի:* - 664. Գտցես և վասն մահու առ խաչելութեանն *քրիստոսի* ի **լ** գլուխն ի **իզ** համարն: - 668. Այլ կան և սպասեն մեծի հարսանեացն *քրիստոսի* և կատարածի աւուր...: - 669. Առաջին, որպէս *քրիստոս* նախ օծաւ իւղով և ապա թաղեցաւ...: - 672. ...զի քահանայապետն զհայր նշանակէ. և իւղն *զքրիստոս*. և անուշահոտն զհոգին սուրբ որ *քրիստոսիւ* պարգևեցաւ մեզ: - 672. Եօթներորդ, ցուցանէ թէ հոգին սուրբ և *քրիստոս* հանգուցեալ է ի նշխարս սրբոց. որպէս ի կեանքն՝ նոյնպէս և ի մահն: - 672. Երրորդ՝ զի կամօք և ուրախութեամբ ուղարկեմք ի *քրիստոս* և ո՛չ ակամայ կամ տրտմութեամբ: - 673. ...զի նա կենդանեացս աղօթի՛ց է կարօտ, և մեք նորա բարեխօսութեանն առ *քրիստոս*...: - 673. Եօթներորդ՝ զի սիրելի և համբուրելի է նշխարքն սուրբ որ ի *քրիստոս* միացաւ և օծաւ, և *քրիստոսի* եղև բաժին: - 673. Նախ ցուցանէ թէ՝ և այսպէս հասարակ ընթանամք առաջի *քրիստոսի:* - 675. ...որպէս արտասուեաց *քրիստոս* ի վերայ ղազարու: - 676. Եւ խաչն բարձրացեալ զի նշան խաչին *քրիստոսի* յայնժամ ընդ երկնիւք ծագեսցէ

և զչորս կողմ աշխարհի լցուցէ: - 676. Երկրորդ, զի *քրիստոսիւ* կանգնեցաւ անկեալ բնութիւնս մեր...: - 676. ...ապա և մարմինն անապական և հոգին անփոփոխ կացցէ յաւիտեան. նմանելով անապական և անփոփոխ մարմնոյն *քրիստոսի*: - 678. Ո՛չինչ բնաւ. քանզի յորմէ հետէ *քրիստոս* ի գերեզման եդաւ ամենայն հողք օրհնեցան...: - 678. ...զի գինք են արեանն *քրիստոսի*: - 678. ...ուր բելիարն նստի. զորս աւերեաց *քրիստոս*, և շինեն մեղսասէրք: - 679. ...այսպէս և քար տապանիս մեր լիցի. նշանակէ՛ զանապական յարութիւնն. որ վիմածին լինիմք և առանց ապականութեան որպէս *քրիստոս*. և ո՛չ հողածին ապականացու որպէս զառաջին ադամն: - 679. Եւ որպէս իւղաբեր կանայքն նախ եկին ի գերեզմանն և տեսին յարուցեալ *զքրիստոս*, և ապա առաքեալքն...: - 680. ...նոյնպէս և սուրբքն հոգևոր հա՛րսն են *քրիստոսի*...: - 681. ...և յարութիւնն միանալ սիրով ընդ փեսային *քրիստոսի* և մտանել յառագաստն ընդ իմաստուն կուսիցն: - 681. Հինգերորդ՝ յետ գօրեայ թաղմանն *քրիստոսի* եկին առաքեալքն և կանայքն ի գերեզմանն...: - 681. ...և տեսին յարուցեալ *զքրիստոս*...: - 681. ...մինչ դարձեալ միաւորի ընդ մարմնոյն. և իբրև զարեգակն պայծառացեալ ծագէ ընդ *քրիստոսի*: - 681. Որք են անուշահոտ հոգիք սրբոցն հանդէպ երեսացն *քրիստոսի* ի տեղւոջ մշտնջենաւոր լուսոյն: - 682. Եւ տարի՛ է *քրիստոս*. և ամ տեառն ընդունելի. և **բժ**ան ամիսք առաքեալքն: - 683. Նա՛խ՝ որպէս մեք ի կիրակէ ուրախացաք և վայելեցաք ի շնորհաց յարութեանն *քրիստոսի*, ի միւս օրն և զնոսա մասնաւորեմք: - 684. Դարձեալ, ի կիրակէ յարութեանն *քրիստոսի* տօնեմք. և յերկուշաբաթին՝ նոցա սրբոցն որք ընդ *քրիստոսի* յարեան և մտին ի քաղաքն սուրբ: - 684. Եւ այս է խորհուրդն. զի յայնմ աւուր խաչեցաւ *քրիստոս*, և գերեզմանք բացան և այլն: - 684. Նոյնպէս և յոտնալուայն և ի խաչհամբոյրն՝ գանձանա՛կն է *քրիստոսի* զոր յիշատակեմք: - 684. Զի այնպիսիքն դատաստան ընդունելոց են անձանց իւրեանց ի մեծի ատենին *քրիստոսի*: - 684. Այն է որ յետ յարութեանն *քրիստոս* եմուտ ի վերնատունն և օրհնեաց զաշակերտսն: - 684. Դարձեալ աղօթքն՝ չարչարանքն և բարի գործքն է նոցա, զոր վասն *քրիստոսի* կրեցին...: - 685. Այլ ըստ պսակացն որ մարմնով կատարին՝ և վասն ընկերացն որ ժողովին՝ պակաս է նոցա. զոր ի կատարածի լինելո՛ց է ի գալուստն *քրիստոսի*...: - 686. Վարդապետք սուրբք՝ զպահեստ հոգւոց յերիս փոփոխմունս գիտեն. այսինքն նախ քան *զքրիստոս*. և յետ *քրիստոսի*. և յետ դատելոյն: - 686. Նախ քան *զքրիստոս*, առ հասարակ ի դժոխս. բայց յետ *քրիստոսի*, առհասարակ ի կայանս հոգւոց. և երրորդն ի կատարածի...: - 686. Երկրորդն վասն շնորհացն *քրիստոսի*: - 686. Խորան ասեն աջակողմ և ձախակողմ. այսինքն ի քաղցր հայեցողութիւնն *քրիստոսի* որ է աջ. և ի դառն և ահաւոր որ է՛ ձախ: - 686. Նոքա որ թողին զամենայն և գնացին զհետ *քրիստոսի*, որոց խոստացաւ զհարիւրապատիկն աստ՝ և զկեանսն յաւիտենից: - 688. Ո՜ հա՛յրդ ես որոց ի վեր քան զերկինս. այսինքն հոգւոց սրբոց կատարելոցն որ ի վերեն քան զդասս հրեշտակաց մերձ *քրիստոսի*...: - 688. ...և կատարեալ է կամքն *քրիստոսի*: - 688. Եւ սկիզբն անդ ժողովելոյ՝ ի յարձակելն *քրիստոսի* առ ժամանակեայ զհոգիսն անարժանից՝ անդ մնացին և անտի դարձցին մեղաւորք...: - 688. Որք աստ ունին զյաջողակ գործս բարեաց կամ ձախողակ. և նոյնպէս դասին յաջակողմն և ձախակողմն *քրիստոսի*: - 689. ...որպէս ասէ մեկնիչն տեսլեան. եթէ սպիտակ հանդերձն շնորհացն *քրիստոսի* մաքրութիւնն է. որ սրբութիւն մեղաց մերոց արար *քրիստոս*. յոր ամենայնքն վայելեցաք. զի յորժամ սրբի հոգին, բնական ունի զպայծառութիւնն: - 690. Որոյ պատճառ է, զի դատապարտութիւնն ադամայ բարձաւ *քրիստոսիւ*. և չարաց տանջանքն է՛ ի դատաստանին: - 690. ...որպէս թէ այժմ ակն ունին և մնան գալստեանն *քրիստոսի* և վարձուց հատուցման: - 691. ...այսինքն զի վերստին գալն *քրիստոսի* լինի, և ապա սրբոցն տանիլ առ ինքն: - 692. Արդ տանուտէր աստ կոչէ զաստուած, և այգի է եկեղեցի. և գաւառապետ կոչէ *զքրիստոս*. և առաւօտ յաբելէ առաջին արդարոյն. և երեկոյ օր դատաստանին յորժամ ընտրեալքն ամենայն ժողովին. - 692. Այրն ի տարաշխարհ գնաց *քրիստոսէ*. որ մարմնով համբարձաւ յերկինս. զի յատուկ տեղի մարմնոյ երկիրս է. վասն որոյ ի տարաշխարհ գնալ ասէ յերկինս: - 692-693. Ապա ուրեմն հատուցումն յաւիտենական է՛ ի գալուստն *քրիստոսի*: - 693. Ա՛րդ՝ փեսա *քրիստոս* է. և հարսն հաւատացեալ ժողովուրդքն: - 693. Արդ եթէ սիրելիքն աստուծոյ որք զարիւնս իւրեանց հեղին վասն *քրիստոսի*՝ ոչ առնուն զվարձս իւրեանց, նմանապէս և ամենայն ազգ մարդկան: - 694. Ուստի յա՛յտ է զի նախ քան *զքրիստոս* արդարք և մեղաւորք ի դժոխս էին: - 695. Ասէ մեկնիչն, սպիտակ հանդերձն զոր զգեցեալ էին՝ շնորհացն *քրիստոսի* մաքրութիւնն է. յորմէ ամենեքեան վայելեցաք որպէս ասէ առաքեալն...: - 696. Եւ ասեն թէ մանկունք ի յանկողնի՝ են արդարքն ընդ *քրիստոսի*. և մէջ գիշերն է այս կեանքս. ապա ուրեմն առեալ են զվարձս: - 696-697. Առ առաջինն ասեմք թէ՝ որպէս ո՛չ ոք ընդ *քրիստոսի* ի խաչ ելեալ է՝ բայց միայն աւազակն...: - 697. Երկրորդ, զի բառնայ

զերկրորդ գալուստն *քրիստոսի* և զհատուցումն դատաստանին: - 698. ...և զքաւարանին զօրութիւնն առաւել ասեն քան *զքրիստոսի:* - 698. Այլ թէ ոչ գոյ դատաստան, նաև ոչ յարութիւն մարմնոյ. և ոչ հատուցումն գործոյ. ապա և ո՛չ գալուստն *քրիստոսի* որպէս ասէ սուրբն կիւրեղ: - 700. Ասեմք նախ՝ եթէ երկինք և երկիր մարմին գոլով նորոգին մարմնական հրով. իսկ հոգին զի է՛ անմարմին՝ նորոգի շնորհօքն *քրիստոսի* և հոգւովն սրբով: - 701. Եւ ամենեքեան անցանեն ընդ հուրն որ յառաջ ընթանայ գալստեանն *քրիստոսի:* - 702. Ասեմք նախ՝ եթէ գնալ առ *քրիստոս*՝ վասն յարութեանն ասէ և զվերջին հուրն...: - 703. Այլ ռ ամ է յառաջին գալստենէն *քրիստոսի* մինչև յերկրորդն...: - 706. ...և սուրբքն ելեալք ի մարմնոյ և յաղթեալք թշնամոյն՝ թագաւորեն ընդ *քրիստոսի* որպէս ցուցանի յառաջիկայդ: - 706. Եւ ասէ հրէիցն թէ ե՛ս եմ *քրիստոս* խոստացեալն ձեզ...: - 707. Նաև խոստովանեսցի զինքն գոլ *քրիստոս* և ճշմարիտ որդի աստուծոյ: - 707. Եւ որպէս ի *քրիստոս* բնակեալ է ամենայն լրումն աստուածութեան որպէս ասէ թեսաղոնիկեցոց. նոյնպէս և ի նեռն ամենայն լրումն անօրէնութեան...: - 707. Զի տէրն պղծութիւն կոչէ զնա և սուտ *քրիստոս:* - 707. Այնչափ որչափ և *քրիստոս* քարոզեաց: - 709. Եւ յետ այսորիկ ի լեառն ձիթենեաց ուստի համբարձաւ *քրիստոս*՝ տէր իշխանութեամբ իւրով սպանցէ զնեռն: - 709. Այլ հրէայքն յայնժամ դարձցին ի հաւատս *քրիստոսի*. և եկեղեցի սուրբ խաղաղութեամբ հանգիցէ մինչ ի կատարած աշխարհի...: - 709. Առաջին յարութիւնն եղև առաջին գալստեամբ *քրիստոսի*. և այս երկակի: - 710. Նա՛խ՝ յարութիւն է շնորհաց. որ զթողութիւնն մեղաց ընկալաք և զհաւատն *քրիստոսի:* - 710. Յորմէ փրկեսցէ *քրիստոս* աստուած առ հասարակ զամենայն հաւատացեալս անուան իւրոյ ամէն: - 710. Զինչ է հազարամեայ թագաւորելն ընդ *քրիստոսի:* - 710. Այլ և ռ ամն է յառաջին գալստենէն *քրիստոսի* մինչ յերկրորդն. զի զբազում և զառաւելն նշանակէ: - 710. Ցուցանեն այսոքիկ զկատարեալ և զառաւել հանգիստ սրբոցն այժմ յուսով և յետ մահու հոգւով թագաւորեալ ընդ *քրիստոսի*. և ապա յետ յարութեանն հոգւով և մարմնով ո՛չ ռ ամօք. այլ անվախճան կենօք...: - 710. Եւ աստ գիտելի է, զի ամենակալ թագաւորութիւնն *քրիստոսի* երեք եղանակաւ ասի: - 710. Երկրորդ եղանակաւ ամենակալ թագաւո՛ր է *քրիստոս* ըստ որում անվախճան է մարդկութեամբն...: - 711. Նոյնպէս և սուրբք ընդ *քրիստոսի* յաւիտեանս թագաւորեն...: - 711. Այլ *քրիստոսի* երկիր պագանեն ամենայն երկնաւորք և երկրաւորք և ամենայն հոգիք սրբոց: - 711. Պայծառ հանդերձն զոր զգեցեալ են՝ շնորհացն *քրիստոսի* մաքրութիւնն է յոր ամենայնքն վայելեցաք...: - 712. Եւ ոսկեղէն պսակն զթագաւորելն ընդ *քրիստոսի* որպէս ցուցաւ: - 712. Դարձեալ, զի *քրիստոս* էր վարդապետ ըստ որում զճշմարտութիւնն քարոզեաց. - 712. Բուրվառն ոսկի և խունկն՝ այսինքն զի զաղօթս երկրաւորաց սուրբքն և հրեշտակք մատուցանեն *քրիստոսի:* - 713. ...և միովն ընդ առաջ *քրիստոսի* վերանան: - 713. Նախ ձայն փողոյ է՛ հրամանն *քրիստոսի* որ հրամայէ՛ զյարութիւնն: - 713. Երկրորդ երևելի ձայնն հրեշտակապետին. որպէս ձայնն փողոյ ի սինա լերինն. և ազդումն զօրութեանն *քրիստոսի:* - 713. Ի գարնան եղանակի ի զատկի կիրակէին ի մէջ գիշերի յորում ժամու յարեաւ *քրիստոս* և հրեշտակն թաւալեցոյց զվէմն և գոչէր զյարութիւնն *քրիստոսի*...: - 714. ...որպէս վեց մեռեալքն որք յարեան նախքան *զքրիստոս*. և յարութիւնս այս անկատար է. զի դարձեալ մեռան: - 716. Եւ այսպէս էր յարութիւնն *քրիստոսի*...: - 716. Կամ ոսկի՝ արծաթ՝ ականս. զի արդարքն առաւել պայծառանան և ապա՛ բազմին ի սեղան հօրն երկնաւորի պաշտելովն ի *քրիստոսէ:* - 721. Որպէս լոյս արեգակն անցանէ ընդ երկինս առանց ապականութեան. և որպէս *քրիստոս* յարեաւ մարմնով ի գերեզմանէն վիմովն կնքելով. և եմուտ առ աշակերտսն դրօքն փակելովք: - 722. Զպայծառութիւնն՝ ի թաբօր լեառն. և Զանչարչարութիւնն ի յօրհնելն զմարմինն իւր և տալ աշակերտացն ի վերնատունն՝ անչարչարելի էր մարմինն *քրիստոսի* ներգործութեամբ և ո՛չ զօրութեամբ: - 723. Բայց եօթն զարդքն զոր ունին սուրբքն որք են հարսունք *քրիստոսի*՝ ո՛չ ունին անսուրբքն որք են հարսունք սատանայի: - 723. Եւ որք մկրտեալ մեռանին, առնուն վարձ ի խորհրդոյ եկեղեցւոյ և ի չարչարանացն *քրիստոսի* յոր մկրտեցան: - 724. Զի հուր մեծ ընթանայ ի գալստեանն *քրիստոսի*. և վառեսցին երկինք և երկիր հրովն այն, որպէս ասէ պետրոս: - 727-728. Չորրորդ՝ գալարիլ երկնից զգալուստն *քրիստոսի* նշանակէ. զի գիրք ա՛յնր գիտութեանն բանին: - 729. Նշան բազում ետ *քրիստոս* իւրոյ գալստեանն: - 730. Այլ ի գալուստն *քրիստոսի* երե՛ք են ասացեալ հուր մի զհետ միոյ: - 731. Վասն է՞ր հրով գայ *քրիստոս:* - 731. ...վասն որոյ հուր գայ առաջի *քրիստոսի*. զի զոմանս տանջէ այրելովն, և զոմանս պսակէ՛ լուսովն...: - 731. Դարձեալ յուշ առնէ մարդոյ զչարչարանքն *քրիստոսի*. և խնդրեսցի ի նոցանէ մահն *քրիստոսի* իբր զգին որ տըւեալ է նոցա, և նոքա յափշտակեցին զինքեանս ի նմանէ: - 732. Ոմանք յաւուր ուրբաթու ասեն յորում խաչեցաւ *քրիստոս*. և այլք ի կիրակէն: - 732. Իսկ խաչին կենդանութիւնն *քրիստոս* է, և ո՛չ քակտի ի նմանէ...: - 733. Այսպէս

*քրիստոս* այնու կերպարանաւ որով համբարձաւ՝ հանդերձ ամենայն դասուք հրեշտակաց ի դատաստան եկեսցէ: - 734. Վեցերորդ, *քրիստոս* է՛ իմաստութիւն և գիտութիւն հօր. և գիտէ զարժանաւորութիւն իւրաքանչիւր ումեք...: - 735. Եօթներորդ, *քրիստոս* ո՛չ է պարտաւոր յայնցանէ վասն որոյ դատէ՛ զայլս...: - 735. ...և երկոքեան սոքա կարի յոյժ վայելեն դատաւորի. այսինքն իմաստութիւն և անմեղութիւն. վասն որոյ *քրիստոս* լինի դատաւոր: - 735. Իններորդ, զի գիտասցուք մեք քրիստոնեայքս՝ թէ *քրիստոս* է մեզ դատաւոր...: - 735. Տասներորդ, *քրիստոս* գլուխ է մեր և մեք անդամք. և զի *քրիստոս* է դատաւոր՝ պարտիմք մեք զմիմեանս մեծարել և սիրել...: - 735. Այլ ի գալուստն *քրիստոսի* Առաջին փառք է՝ զի փառաւոր երևեսցի սիրելեաց իւրոց, յայտնեալ զաստուածութեան փառս միաւորեալ ի մարմնի. որպէս երևեցաւ ի թաբօր: - 736. Զի՞նչ է աջ կողմն *քրիստոսի* և ձախ: - 738. Նստի *քրիստոս* ի բարձրագոյն աթոռ ի վերայ օդոյդ, և սուրբքն ընդ աջմէ. այսինքն ի վեր ի փառս ընդ նմա ի վերայ օդոյդ. հաւատոյ և գործոյ թևո՛քն բարձրացեալ իբր զարծուի: - 738. Եւ այսպէս բաժանեսցին ի միմեանց տեղեաւ և փառօք. որպէս օդիք և այծիք յաջմէ և յահեկէ *քրիստոսի:* - 738. Նա՛խ *քրիստոս* դատեսցէ աստուածութեամբն և մարդկութեամբն: - 738. Զի բոլոր Երրորդութիւնն դատէ՛ զմեղաւորս, և մարդկութեամբն խօսի ընդ նոսա *քրիստոս:* - 738. Երկրորդ, աթոռակիցքն *քրիստոսի*. որպէս առաքեալքն և մարգարէք և կատարեալքն դատեն զմեղաւորս իբր տեղեակք օրինացն աստուծոյ: - 738. Որք արտաքոյ օրինաց մեղանչեցին որպէս կռապաշտք՝ և հրէայքն որք յետ խաչելութեանն *քրիստոսի*. զի յետ խաչին պահպանութիւն օրինացն ի կռապաշտութիւն է համարեալ նոցա: - 739. Զի անարժանքն զաստուածութիւնն *քրիստոսի* ո՛չ տեսանեն վասն կրկին պատճառի: - 740. Իսկ զմարդկութիւնն *քրիստոսի* տեսանեն, նաև զխոցուածն, վասն **բ** պատճառի: - 740. Ապա յա՛յտ է յասացելոցս թէ՝ *քրիստոս* երևեսցի արդարոցն քաղցրատես, և մեղաւորացն դառնակերպ. որ նշանակեցաւ ի սիւն ամպոյն ի տուէ և ի հուրն ի գիշերի: - 741. Իսկ գիրք կենաց է գիրքն *քրիստոս*...: - 742. Երկրորդ, զի երկու և երեքն լինին հինգ. զորմէ ասաց *քրիստոս*, «ուր **բ** և **գ** ժողովին յանուն իմ, անդ եմ ես ի մէջ նոցա»: - 742. Եւ պետրոս և որդիքն զեբեթեայ յորժամ լուան ի հօրէ «դա՛ է որդի իմ սիրելի դմա լւարուք», ապա և նոքա վկայեցին, և խաչեցաւ *քրիստոս:* - 742. Եւ դատաւոր *քրիստոս*. և ոսոխք դիւակա՛նն գունդք: - 743. Նախ ինքն *քրիստոս*. որպէս ասէ երեմիա «ես եմ վկայ և դատաւոր ասէ աստուած»: - 743. Զի ծուխ խնկոցն ի վերայ սեղանոյն, Նախ նշանակէ՛ սեղանն *զքրիստոս*. և ծուխն զաղօթս սրբոցն. զոր արծարծէ՛ հօր ի հոտ անուշից: - 749. Վասն վեցերորդին, որք զխաւար մեղաց աստէն սիրեցին և առ լոյսն *քրիստոս* գալ ո՛չ կամեցան. վասն այնորիկ ահագին խաւարաւ անդ նըսեմանան: - 752. Եւ ասի սա նման փայտին կենաց որ է՛ ի մէջ դրախտին. այսինքն *քրիստոս*՝որ է՛ ի մէջ եկեղեցոյս կարգեալ: - 755. Այսպէս և *քրիստոս* քան զամենայն սուրբս զպարգևս ունի առատագոյնս. որում հոգին ո՛չ տուաւ չափով: - 755. Կամ փայտիս այսորիկ ոստք կարեն ասիլ միաւորեալ բնութիւնքն *քրիստոսի*. այսինքն աստուածութիւնն և հոգին և մարմինն: - 755. Կամ թէ ոստք փայտիս այսորիկ ասին եօթանքս այսոքիկ. այսինքն՝ *քրիստոսի* ծնունդն, մկրտութիւնն, չարչարանքն, ի դժոխս իջումն, յարութիւն, յերկինս համբարձումն, և հոգւոյն սրբոյ պարգևումն: - 755. Որ և ա՛յն քան գերազանց է միաւորութիւնն *քրիստոսի* ընդ եկեղեցի քան զմարմնական հարսանեաց...: - 757. Նա՛խ՝ զի առ նոսա միաւորեալ է *քրիստոս* իբր տէր ընդ ծառայս. իսկ միաւորի ընդ եկեղեցի իբր փեսայ ընդ հարսին. և գլուխ ընդ անդամոց: - 757. Երրորդ՝ զի միջնորդութեամբն *քրիստոսի* միաւորի եկեղեցի ընդ հօր աստուծոյ. և լինի աստուած ընդ աստուածս միացեալ...: - 757. Որ և անբաժանելի և անքակ միութեամբ միաւորին յօդեալք ի գլուխն *քրիստոս* անզրաւ յաւիտենիւ: - 757. Նմին նման և մեք յուսասցուք արժանաւորիլ տեսութեանն *քրիստոսի*...: - 759. Նախ վասն անկարօտութեան. զի սուրբքն իմանալի լոյս ունին *զքրիստոս*. և ո՛չ են կարօտ զգալի լուսոյ: - 760. Երկրորդ ուրախութիւնն լինիցի տեսանելովն զմարդկութիւնն *քրիստոսի:* - 763. Նոյն և կամք և կիրք և ներգործութիւն մարդկային ընդ աստուածայինն միաւորեալ. միջնորդելով հոգւոյ բանականի՝ աստուածութեանն՝ և մարմնոյն. որ է՛ ներգործութեամբ միշտ աստուած և փրկիչ բնութեամբ. *քրիստոս*. նոր ադամ. էմմանուէլ ճշմարտութեամբ: - 770. Եւ *քրիստոս* աստուծոյ զօրութիւն և աստուծոյ իմաստութիւն ի հօրէ ըստ սրբոյն դիոնիսեայ: - 770. Իսկ թէ նա որ սկիզբն կորստեան ամենեցուն մեզ եղև և պատճառ ամենայն մեղաւորաց՝ ապրեցաւ շնորհօքն *քրիստոսի*...: - 775. Արդ՝ *քրիստոս* զպատիժ նախահօրն կրեաց և զբնութեանս զպարտն վճարեաց: - 776. Չորրորդ, զի որպէս ադամաւ ամենեքին մեռան արդարք և մեղաւորք. այսպէս և *քրիստոսիւ* ամենեքին կենդանացան. այսինքն ազատեցան: - 777. Այսպէս և յամենայն գործս աստուծոյ գտանի արդարութիւն և ողորմութիւն որպէս ասեն ոմանք. այլ երբեմն արդարութիւնն ծածկեալ և ողորմութիւնն յայտնի. որպէս

յարդարացուցանելն ամբարշտին՝ և յառաջին գալուստն *քրիստոսի:* - 779. Զի թէ պակասութիւն զչարչարանքն ասէ, չարչարանքն այն ոչ ասի պակասութիւն *քրիստոսի*. զի «մարմին նորա ո՛չ ետես զապականութիւն» ասէ գիրն: - 781. Ոմանք ասեն պակասութիւն զքաղց և զծարաւ՝ զերկիւղ և զայլն. որք են պակասականք բնութեան զորս կրեաց *քրիստոս*...: - 781. Այլ ո՛չ զամենայն պակասականքն կրեաց *քրիստոս*. որ է՛ հիւանդութիւն մարմնոյ և ապականութիւն. կամ մեղք հոգւոյ և տգիտութիւն: - 781. Եւ ոմանք յորոց սրբազան առաջնորդն մեր, պակասութիւն ասաց զոլ զորս յետոյ կրեցին անդամք նորա. այսինքն զհատումն մասանց. այրումն հրոյ. և այլ իմն բազմազան տանջանս. յորմէ թուով պակասեաց ի *քրիստոս* և յաւելաւ անդամս իւր: - 781. Դարձեալ՝ մարմին *քրիստոսի* խորհրդապէս է՛ եկեղեցի. և պա՛րտին չարչարակցիլ նորին՝ հետևելով նմին: - 781. Եւ այլևս յարմար տեղւոյս այսպէս իմանի. զի սուրբ հարքն առաջինք պակաս ունէին զչարչարանս. վասն որոյ ո՛չ կարէին փրկիլ. իսկ *քրիստոս* եղեալ ըստ մարմնոյ որդի նոցա, զպակասութիւն հարցն չարչարանաց յիւրումն մարմնի էլից: - 781. Վասն որոյ չարչարանքն *քրիստոսի* ասի պակասութիւն վասն հարցն. ասի և կատարեալ առ ինքեան: - 781. Իսկ մեծն ներսէս ասէ, պակասութիւնն այն է, որ կիրք չարչարանացն *քրիստոսի* թուով և տեսակաւ պակա՛ս էր յառաքեալն պօղոս. այսինքն խաչն, բևեռքն, և այլն. և զայն էլից քարոզութեամբն իւր ի մարմինս եկեղեցւոյ: - 781. Զի որպէս *քրիստոս* չարչարանօքն փրկեաց զեկեղեցի և հաստատեաց նոյն և առաքեալն քարոզութեամբ իբր զկոյս մի սուրբ յանդիման արար փեսային *քրիստոսի:* - 781. Իսկ շնորհք նորոյս ի ձեռն *քրիստոսի* տուեալ՝ ո՛չ է փոփոխական. զի վերստին նորոգման է շնորհք և անապականութեան: - 783. Որք դարձուցեն զսիրտ հարց յորդիս ըստ մաղաքիայի. այսինքն ուսուցանեն զհաւատն փրկչին զոր հարքն ունէին. և է՛ վարձաւորելի և կարի քաջ. և թէ այսպէս և թէ այն՝ *քրիստոս* քարոզի: - 785. Զի՞նչ է սիւնքն աշխարհիս որ դողային ի յարութեանն *քրիստոսի* ի մեռելոց: - 788. Որպէս և բազում ուրէք յերգս գտանի. վէմք պատառեալ. երկիր շարժեալ առ խաչին *քրիստոսի:* - 788

**ՔՐԻՍՏՈՍ ՅԻՍՈՒՍ** - Զի ի գալստեան տեառն կնատքն և թոյլքն ո՛չ թուին. այլ արիագոյնքն անխտիր. զի ի *քրիստոս յիսուս* արու և էգ ո՛չ է. ո՛չ ի մկրտութեանն և ո՛չ ի յարութեանն: - 315. Որոց լիցի մեզ ամենեցուն մասնաւորիլ ի փառս արքայութեան երկնից ի *քրիստոս յիսուս* ի տէր մեր ամէն: - 411. Չորրորդ՝ զի միշտ որդի ծնանիմք աստուծոյ և ո՛չ դուստր և էգ. զի ի *քրիստոս յիսուս* արու և էգ ո՛չ է ասէ առաքեալն. և զայս ցուցանէ աւազանն ի յաջ կողմն եկեղեցւոյն: - 590. ...որպէս ասէ առաքեալն, «չիք խտիր ո՛չ հրէի և ո՛չ հեթանոսի. ո՛չ ծառայի և ո՛չ ազատի». զի դուք միապատիւ էք ի *քրիստոս յիսուս* և համաժառանգք արքայութեանն: - 590. Այսօր վերստին հրամայեաց հաւատացելոց իւրոց ճաշակել ի պտղոյն կենաց. և մնալ յաւիտեան և անմահ կենդանութեամբ ի *քրիստոս յիսուս* ի տէր մեր: - 771

**ՔՐԻՍՏՈՍԱԾԻՆ +** Ապա ըստ այսմ հետևի՝ զի մարիամ մայր քրիստոսի լինի և ո՛չ աստուծոյ. զի լաւ է *քրիստոսածին* և մարդածին կոչիլ՝ քան թէ աստուածածին: - 91

**ՔՐԻՍՏՈՍԱՄԱՐՏ +** Եւ սոքա զմիայն տէրն ուրացեալ՝ *քրիստոսամարտ* լեզուաւ զանձինս կորուսանեն: - 34

**ՔՕՂ +** Նոյնպէս յորժամ ամաչէ՝ զարիւնն սփռէ ի մարմինն, և *քօղ* արկանէ վասն ամօթոյն. յայնժամ յարենէն շառագունի մորթ երեսացն: - 245. Երկոտասաներորդ, լուսաւորեցաւ՝ զի *քօղ* արկցէ երեսացն. որ օրինակէ՛ զհին կտակարանս. որ *քօ՛ղ* է արկեալ և առագաստ մտաց նոցա. մինչև դարձցին առ տէր հոգիքն որպէս զմովսէս. և ապա վերասցի *քօղն* և յայտնեսցի լոյս գիտութեան նոցա: - 352. Զի հանապազ *քօղ* երեսացն մովսէսի առագա՛ստ է ի վերայ սրտից նոցա. և ոչ իմանան զտեսութիւն բանին. վասն որոյ ո՛չ հաւատան: - 405. Երկրորդ՝ ի յանդիմանութիւն խաչողացն. զի լուսաւորքն տեսեալ զտէրն իւրեանց մերկացեալ, պատկառեցին և *քօղ* արկին զխաւարն: - 490. Եւ վարագոյրն պատառեցաւ. զի յանարգանս փեսային պատառեաց հարսն *զքօղն*. և կողն աղբիւրացաւ. և նոքա ո՛չ արտասուեցին: - 490. Եւ ծածկոյթն՝ *զքօղ* օրինացն: - 646

**ՔՕՂԵՄ (ՍՔՕՂԵՄ)** - Ուստի և վեհագոյն իմացութեանց էից սերովբէն *զքօղեալ* զերեսս և զոտս մարդեղութեան խորհրդոյն պարուրեալ: - 456

# O

**O +** Այլ և էն և *օն*՝ անփակ գիր է...: - 638

**ՕԳՆԱԿԱՆ +** Յինգերորդ՝ մարդ թէ բնութեամբ և թէ կամօք գործէ՝ կարօ՛տ է *օգնականի*, իսկ աստուած անկարօ՛տ է *օգնականի:* - 156. Եւ այլ բազում զանազանութիւն է գործոց մարդկան և աստուծոյ. զի մեք կարօտ եմք նիւթոյ. ժամանակի. տեղւոյ. *օգնականի:* - 164. Զի չորութիւն և ցրտութիւն հակառա՛կ է ծննդեան. և ջերմ և գէջն *օգնական:* - 197. Յինգերորդ՝ *օգնական* ետ զկենդանիքդ մարդոյն...: - 219. Ութերորդ՝ կին, իբր թէ կցորդ և *օգնական* առն յամենայն գործս: - 276. Երրորդ՝ զի զաստուած ունէր *օգնական* երկեաւ ի մարդոյ: - 311. Չորրորդ՝ զի նա՛ է առաւել *օգնական* բնութեանս. մարտնչելով աճելութեամբ ընդ դէմ պակասութեան մահու: - 469. **Եւ ի գալն յերկիրս հայոց, ետուն նմա *օգնական* զիւղն օծման զոր քրիստոս օրհնեալ էր. և զգեղարդն. և այլոց ազգաց չկա՛յ այս պարծանքս. զի մեր մեռոնս հանապազ և միշտ զնոյն շնորհ ունի**: - 549. Երկրորդ՝ զի *օգնակա՛ն* են բնական զօրութեանց հոգւոյն: - 583. Եւ ոչ մի ինչ ունի յոյս փրկութեան. ո՛չ *օգնական*. ո՛չ բարեխօս. ո՛չ ողորմութիւն. և ո՛չ այլ ինչ այնպիսի որ արժանաւորացն է: - 669. Երկրորդ, զի ննջեցեալն եղբա՛յր է մեր և ունի բազում պատերազմ, *օգնական* լինիմք նմա: - 676. Ըստ աստուածեղէն տառից՝ արարաւ էգն ի յարուէն ամենայնիւ նման նմա *օգնական:* - 786

**ՕԳՆԱԿԱՆՈՒԹԻՒՆ +** Երբեմն *զօգնականութիւնն* ասէ...: - 39. Որպէս ենովս որ յուսացաւ կոչել զանուն տեառն աստուծոյ. այսինքն յուսացաւ զհանդերձեալ կեանսն որ աներևոյթն էր. և վասն իւրաքանչիւր գործոց գոլ հատուցումն. և կոչեաց զանունն աստուծոյ ի *յօգնականութիւն:* - 288. Չորրորդ, մահ՝ այսինքն սատանայ որ յաղթեաց ադամայ. իսկ մարմնոյն մովսէսի ո՛չ կարաց յաղթել հրեշտակային *օգնականութեամբն*. որպէս ասի յառաջիկայդ: - 409. Իսկ որ ասէ սուրբն ստեփաննոս «յիսուս կայ ընդ աջմէ աստուծոյ», կալն նշանակէ իբր պատերազմակից և *յօգնականութիւն* գալ որք նահատակին վասն անուան նորա: - 521. Եւ է՛ հասարակ շնորհ, հաւանութեամբ անձնիշխան կամաց՝ պատրաստել զինքն առ ի փրկութիւն *օգնականութեամբ* շնորհին: - 783

**ՕԳՆԵՄ +** Ասեմք առ այս, թէ սնունդ և աճումն մարմնոց, տնկանին է և ոչ աստեղաց. թէպէտ *օգնեալ* լինի ի նոցանէ: - 10. Ութերորդ՝ զի որ զփորձ էառ չարչարանացն՝ *օգնեսցէ* որք ի չարչարանս իցեն: - 43. Բայց է և այլ իմն տեսութիւն խորին և գեղեցիկ. զի նա՛ վասն սրբութեան չարչարեցաւ. և որ ոք ևս չարչարեսցի վասն սրբութեան՝ մի և նոյն է դիտաւորութիւն երկուցն. յայնժամ *օգնեսցէ* նմա...: - 43. Իսկ աստուած կարէ՛ փոխել և զկամքն՝ որ է՛ ախորժակ ի չարէն առ բարին. զոր հրեշտակք ո՛չ կարեն փոխել. այլ միայն զարթուցանեն զախորժակն և *օգնեն:* - 133. Երրորդ, զի մեր ախորժակացս հետագայ և աստուծոյն. զի յորժամ ի բարին լինիմք՝ *օգնէ*՛. և ի չարն թո՛յլ տայ. ա՛յն է խստացուցանելն զսիրտ մարդոյ: - 336. Չորրորդ, զի նոքա ոչ կարէին լինիլ ախտակից տկարացելոցն. իսկ տէրն որ զփորձ էառ՝ կարօ՛ղ է և փորձանաւորացն *օգնել*...: - 354. Եւ որ հասարակն, և սմա՛ մարմնոյն և հոգւոյն ո՛չ խտրի. զի եղբայր յեղբօրէ *օգնեալ*՝ զմիմեանց բառնան զտկարութիւն: - 370. ...և *օգնեաց* մեզ քրիստոնէական անուամբ: - 673. Այլ մեծն ներսէս ասէ թէ՝ սուրբքն ի ձեռն պահապան՝ հրեշտակացն երևին. թէ յերազս թէ յարթնութեան. և *օգնեն* մեզ. և խօսին. և լսեն զաղօթս մեր: - 685. Այլ ինչ ո՛չ *օգնել* ի գերութիւն վարելոց. որպէս և յայնմ աւուր ի կորուստ մատնելոց: - 789

**ՕԳՆՈՒԹԻՒՆ +** Աւարտումն առաջին հատորիս *օգնութեամբ* աստուծոյ: - 29. Յինգերորդ՝ է՛ ո՛չ խնդրել *զօգնութիւնն* աստուծոյ ի հաւատալն. զի հաւատն ո՛չ է բնական. զի ըստ այսմ միապէս լինէր ամենեցուն. այլ ի բնութիւէն աստուծոյ ծրի պարգևքէ: - 32. Եւ թէ յերկուցն՝ ո՛չ է կարօղ հայր ծնանիլ և կարօտանայ որդւոյ *օգնութեանն*. և լիցի անկատար որդի: - 52. Նախ՝ զի ասեն վարդապետք թէ ո՛չ ումեք խրատու մեղանչեաց, և ո՛չ ումեք *օգնութեամբ* նորոգեսցի: - 150. Թէպէտ ուր ուրէք զհանգիստ նշանակելով նստիլ ասի աստուծոյ, և ի *յօգնութիւն* ժամանել: - 172. Երրորդ՝ յուսացաւ կոչել զանուն տեառն աստուծոյ ի *յօգնութիւն*. զոր մարդիկ յուսահատեալ էին եթէ վասն մեղաց մերոց եթող զմեզ աստուած ի ձեռաց. և նա ի *յօգնութիւն* կոչեաց զանուն տեառն աստուծոյ...: - 289. Երրորդ՝ զի զազգաւն զազգակիցն մխիթարէր և ո՛չ խնդրէր բժիշկ. զի մի՛ ի մարդկանէ լիցի *օգնութիւն* նմա: - 323. Եւ փոխանակ հոգւոյն՝ հրեշտակական *օգնութեանն* կարօտացաւ ցուցանել զտիրապէս իշխօղն բնութեան. որ և կշտամբեաց զբռնութեամբ թագաւորելն նորա: - 410. **Զայս նշանակէ թէ՝ յետ ելանելոյ հոգւոյ ի մարմնոյ և գնալոյ ի վերին շաւիղն, հակառակ կայ սատանայ և չար զօրութիւնքն ընդ նմա,**

**տանիլ զիետ իւրեանց որ զչա՛րսն են գործեալ. և յարդարոցն յաղթին հրեշտակին *օգնութեամբն*...: -**
410. Վեշտասաներորդ՝ յեսու ետես զիրեշտակ աստուծոյ *յօգնութիւն* եկեալ: - 418. Եւ զի դժուարին է հոգւոյ մարդոյ կարգաւորել զինքն և սրբել ի մեղաց. վասն այսորիկ *օգնութիւն* տայ աստուած հոգւոյ մարդոյ զեօթն պարգևս հոգւոյն սրբոյ: - 582. Նա՛խ՝ զի մին կին ետ աստուած մին մարդոյն ադամայ՝ ի *յօգնութիւն*. նոյնպէս և ամենեցուն օրինադրեաց: - 612. Նա՛խ՝ զի ի սրբոցն որ ա՛նդ են թաղեալ՝ *օգնութիւնս* ընդունին գերեզմանակիցք նոցա: - 678

**ՕԳՈՍՏԻՆՈՍ** - Եւ *օգոստինոս* վարդապետ նոցա ասէ ի գիրս Երրորդութեանն, «ըմբռնել զաստուածային էութիւնն՝ պատկանի որդւոյն աստուծոյ ըստ բնութեանն. և որդւոյն մարդոյ՝ ըստ շնորհաց միաւորութեանն»: - 100. Որպէս դամասկացին յոհան՝ և *օգոստինոս*՝ իմանալի և զգալի ասացին: - 221. ...այսպէս և *օգոստինոս* վարդապետն Ֆռանկաց ի խորհրդոց գիրս **ծա** համարն ասէ, թէ յառաջագոյն բաշխեաց զխորհուրդ մարմնոյ և արեանն և տուեալ յուդայի: - 599

**ՕԳՈՍՏՈՍ +** Իսկ մարտն և ապրիլն՝ իմաստասիրա՛ց անուանքն են. և *Օգոստոսն* թագաւորի: - 201. Կամ լինէիր ազատ որպէս *զօգոստոս*. որում բոլոր աշխարհ ծառայեաց: - 761

**ՕԳՈՍՏՈՍ ԿԱՅՍՐ** - Իններորդ՝ *օգոստոս կայսր*. որ իբրև զերկաթ մանրեսցէ զամենեսին: - 29. Արդ՝ թէ ինն ամսով յառաջ թագաւորեալ էր թագաւորն չար, ապա ուրեմն ի ժամանակս *Օգոստոս կայսեր* ծնաւ քրիստոս. զոր և վկայէ՛ աւետարանն սուրբ: - 29

**ՕԳՈՒՏ +** Դարձեալ թե ի հարկէ՛ է ոչ լինին *օգուտ* խրատք և սպառնալիք և ուսմունք. որովք բազումք յորդորին ի բարիս, և հեռանան ի չարեաց կենցաղոյս: - 11. Ի փորձութեանց ծանեաք զշահն որ ասացաւ ի վերոյ. այլ հասարակ ամենայն մարդկան զի՞նչ *օգուտ* է փորձութիւնն...: - 161. Այլ և գիտելի է, զի ամենայն կենդանեաց բնականապէս հնարք ետ աստուած վասն *օգտի* նոցա և փրկութեան: - 218. Կլափն որ չափաւոր է և քառակուսի՝ *օգո՛ւտ* է: - 247. Որ ի խորհրդական միտսն վասն *օգտի* զլինելոցն ցուցանէր: - 268. և Դարձեալ որպէս իշովն բաղամու *զօգուտն* խօսեցաւ, և ըզլեզու սուտ մարգարէին շարժեաց յանիծիցն յօրհնութիւնս: - 325. Երրորդ՝ շնորհ ինչ տուեալ յաստուծոյ ի *յօգուտ* այլոց, ախտիւ ապականեն զնա՛: - 369. Երրորդ, զի մարգարէութեամբ նորա բազում ազգաց հեթանոսաց *օգուտ* եղև. զի յայնմանէ եկին մոգք և երկիր պագին քրիստոսի: - 387. Եւ այսպէս հանապազ օրհնել պարտ է զաստուած. ըստ որում «օրհնեցից զտէր յամենայն ժամ». զի մե՛զ է շահ և *օգուտ:* - 539-540. Իսկ թէ երկոքին ևս իցեն անարժանք, շնորհն ոչինչ է *օգուտ*. այլ դատապարտութիւն լինի երկոցունցն: - 540. Զորօրինակ, արեգական լոյսն տկար աչաց վնասիչ է և ո՛չ *օգուտ*. և ջուր չորացեալ տնկոյ: - 540. Զի հոգի է աստուած. և յիմացական միտս և ի հոգիս բնակէ. և չէ՛ *օգուտ* մարմնոյն սրբութիւն յորժամ միտքն զբաղեալ է ի չարիս. զի հեռանայ ի սիրոյն աստուծոյ և ի բնակութեանց նորա...: - 558. Երկրորդն ի *յօգուտ* մարմնոյն. և Երրորդն յաստուածային պաշտամունս: - 580. Թէ յղի կին մկրտի՝ *օգո՞ւտ* է այն տղային թէ յարգանդ մօրն մեռանի: - 592. Ո՛չ է *օգուտ*. զի չև ևս ծնաւ երկրորդ ադամ. զի նախ պա՛րտ էր ըստ մարմնոյ ծնանիլ. և ապա ըստ հոգւոյ վերստին ծնունդ: - 592-593. Որք իցեն ի մեծամեծ մեղս մահու չափ, *օգո՞ւտ* է խոստովանութիւնն նոցա թէ ոչ: - 603. Արդ ըստ այնմ որ է՛ հնարք՝ ո՛չ է *օգուտ* որ քան է մարդ ի մեղս: - 603. Ապա թէ ոչ՝ ժա՛մ է քեզ ասել թէ ամենայն կարգ թաղման մարմնոյն՝ ո՛չ է *օգուտ* հոգւոյ ննջեցելոցն: - 605. Ապա և ո՛չ աղօթք և պաշտօն քահանայից կամ տուրք կամ պատարագք է *օգուտ* հոգւոյն ըստ քեզ որ է բնաւ սուտ և չար հերձուած: - 605. Պատասխանեմք այսմ, թէ ամենայն ինչ զոր արար և զոր առնէ աստուած՝ բարի՛ են և *յօգուտ* մեզ. - 662. Եւ զի՞նչ է *օգուտ* ի յօրհնեալ տեղիս թաղելն: - 678. Չարքն ի սուրբ տեղիս թաղեալ *օգո՞ւտ* է նոցա: - 678. Եւ թէ ոք ասիցէ, թէ տուրք աղօթք և պատարագ, ո՞չ է *օգուտ* նոցա: - 683. ...նոցա՛ է *օգուտ* պաշտօն և պատարագ և այլն...: - 683. Իսկ թէ անզեղջ կամօք և առանց խոստովանութեան ի մեղս մեռան, ո՛չ է *օգուտ* նոցա. թէպէտ մկրտեալ իցեն և հաւատացեալ...: - 683

**ՕԳՏԱԿԱՐ +** Դարձեալ՝ մարդն է քաղաքական կենդանի. զի լինիցի համաբնակք և կարեկիցք և *օգտակարք* ի բարին: - 274-275. Սոյնպէս բարեկամք յոբայ թէպէտ շարժեալք էին ի բանսարկուէն, այլ աստուծոյ հոգւովն *զօգտակարսն* բարբառէին. վասն այն գրեցան բանք նոցա ի սուրբ գիրս: - 325. Եօթներորդն *օգտակար* ուսման: - 465

**ՕԳՏԵՄ +** Դարձեալ ասեմք, եթէ առնէ աստուած մեծատուն և աղքատ, տէր և ծառայ և այլն, զի ի միմեանց *օգտեսցին:* - 19. Ա՛յսպէս առնէ զչարս և զմեղաւորս, զի ի ձեռն բարեաց *օգտեսցին* և ի լաւութիւն գայցեն: - 19-20. Երկրորդ՝ զի տեսցեն զբարի օրինակն, և յոչ *օգտիլն* առաւել ևս

տանջեսցին: - 302. Երկրորդ՝ զի թէ ոչ *օգտեսցին* չարքն, առաւել պատժեսցին: - 302. Երկրորդ՝ զի թէ ո՛չ *օգտին*՝ ափիբերան լիցին ի հանդերձեալն: - 324. Ապա թէ որդիք և թոռունք *չօգտին* ի ներելոյն, յայնժամ պատուհասէ՛ և ջնջէ զյիշատակ չար ազգին: - 351. Իններորդ՝ և զերծցին յընդունայն վաստակոց կռոցն որ ոչ *օգտէին*. զի ունայնութիւն լսի գեբաղն: - 402. Վարդապետականն՝ մանկանց եկեղեցւոյ. զի յամէ *օգտեալ* վարդապետք՝ զգուշացուցանեն զմանկունս սիօնի սրբոյ: - 528. Իսկ թէ ձեռնադրօղն իցէ անարժան, միայն ինքն ոչ *օգտի*. այլ դատապարտի. իսկ շնորհն կատարի՛ ի յընդունօղն: - 540. ...լալ և կրճել ատամանցն. փոշիմանիլ, տխրիլ, և ոչ ինչ *օգտիլ*...: - 671. Այլ ի պատճառս տալ իմաստից. որով ո՛չ յագեսցի ակն ի տեսոյ. ի գլուխ գոլոյ իմաստնոյ. մանաւանդ և ի շահ *օգտի* բանասէր մտաց միեղէն եղբարց: - 773. Այլ և աստ ապաշաւելն ոչ ինչ *օգտեալ*...: - 789

**ՕԳՏԵՑՈՒՑԱՆԵՄ +** Այլ դու ո՛վ այրդ աստուծոյ մաքրամիտ և ճգնազգեաց միայնաւոր սուրբ հայրդ սաիակ, թէ և զիջանես եղբայրական սիրով խնդրել բանս ի մէնջ. սակայն կարօղ ես և զթերին լնուլ և զյաւելորդն կշռել. և զմեզ *օգտեցուցանել* ի ներգոյէ՛ քոյին պայծառամիտ սրբութեան սրտի: - 558

**ՕԳՏՈՒԹԻՒՆ +** Որպէս արդարոց անկանիլ ի փորձութիւնս և զանազան վնասս վասն *օգտութեան* իւր՝ և կամ այլոց: - 158. Եւ *օգտութիւն* փորձանաց գրեալ է ի սաղմոսն, յայն բան գի՛տ և կարդա՛: - 162. Այս ամենայն և առաւել քան զայս *օգտութիւն* է ի բազմութեանց ջուրց: - 208. Ասեմք եթէ՝ բազում շահ և *օգտութիւն* է ի բանս նոցա յաշխարհի արդարոց և մեղաւորաց: - 325. Երրորդ՝ ըստ *օգտութեան* աստ. զի փորձին ընտրեալքն. և յետ մահու շնորհաց. և յարութեանն փառաց լինին առիթք: - 394. Իններորդ՝ զի նշանակեսցէ *զօգտութիւնն* մեր: - 486. Այլ և *օգտութիւն* մկրտութեան մերոյ ցուցանի ի մկրտութիւնն քրիստոսի չորիւք: - 487. Համբերութիւն է կամաւոր և միշտ տեսողութիւն մեծամեծ և դժուարին իրաց վասն *օգտութեան* և համեստութեան: - 580

**ՕԴ +** Այժմ պատասխանեսցուք հարցմանն եթէ առաքինութեանն չարութիւն, և արդարութեանն անիրաւութիւն ներհական. որպէս խաւարն լուսոյ. և էութիւն է լոյսն. և ո՛չ էութիւն խաւարն. և *օդն* ընդունակ լուսոյ և խաւարի: - 23. Եւ որպէս լոյսն միշտ լոյս է, թէպէտ պակասեցաւ ի *յօդոյն*. ուստի յայտ է՝ զի դարձեալ լուսաւորէ: - 23. Եւ կամ առանց միջնորդութեան *օդոյս* տեսանել ինչ: - 25. Չորրորդ՝ զայլայլումն *օդոց* և բուսոց: - 26. Պատասխանեմք եթէ՝ հոգի աստուծոյ ոմանք *զօդս* ասեն. որոյ բնական տեղի իւր է՛ ի վերայ ջուրց: - 60. Երեսներորդ՝ զի վարդապետք սուրբք օրինակ տան մարդեղութեանն քրիստոսի, որպէս լոյս ընդ *օդ*՝ և հուր ընդ երկաթ միաւորեալ: - 100. Արդ՝ որպէս *օդ* լուսաւորեալ՝ ո՛չ ունի մասն խաւարի, Նո՛յնպէս հոգին քրիստոսի միաւորեալ ի բանն աստուած՝ ո՛չ ունի մասն տգիտութեան: - 100. Յո՞ր դասէ անկան. և իշխանք *օդոյ* կոչին: - 102. Իսկ զգայականն ի ջերմութենէ և ի շնչոյ *օդոյ:* - 117. Ա՛յլ է բանն՝ և ա՛յլ է ձայնն. զի բանն անմարմին ծնունդն է մտաց. և ձայնն է՛ շարժումն *օդոյ* ի ձայնական գործեաց ի *յօդս* բախեալ. իսկ ի սրտի միաւորին նոքա՝ այսինքն բանն և ձայնն. և լեզուաւ *յօ՛դս* բախեալ՝ հասանէ մինչև ի լսելիս, և անդ ձայնն արտաքոյ մնացեալ, և բանն անմարմին ի միտս լսողացն նստեալ: - 131. Երկրորդ՝ զի ձայնին ընդունարան է լսելիքն մերձ գոլով *օդոյն:* - 131. Երրորդ՝ բացակացեալն ընդ աղօտ լսէ ո՛չ զձայն բերանոյն, այլ զձայն բախման *օդոյն*. որպէս արձագանչումն յինքն նկարէ զձայնն և ո՛չ զբանն: - 131. Իսկ ասա աչքն զօրանայ ի տեսանել զերևեալ պատկերն կազմեալ ի *յօդոյ:* - 133. Որպէս ո՛չ արտաբերի հնչումն ձայնական գործեաց և ո՛չ փոփոխէ *զօդն* որ ի մէջն: -145. Ա՛րդ՝ տեղական անկումն դիւին եղև կամ ի դժոխս՝ կամ ի *յօդս* աղջամղջին որ է՛ միջին կայարան *օդոյն:* - 146. Քանզի դևք ո՛չ են ի վերին մասն *օդոյն*, զի մի խնդասցեն լուսովն. և ո՛չ ի ստորին մասն, զի մի՛ առաւել վնասեսցեն զմարդիկ: - 146. Եւ գործոյն որ ունին կրթել զմարդիկ՝ յարմարի *օդն* որ է՛ մերձ առ մեզ փորձելոյ զմեզ. այլ ո՛չ ի լոյս. զի մի ուրախասցին: - 146. Իշխանք *օդոյ* վասն է՞ր կոչին: - 150. Եւ յօհաննէս զսա *օդո՛յ* դասէ. վասն այն նոյն անուամբն՝ պօղոս իշխան *օդոյս* կոչէ. կամ զի *յօդս* են բնակեալ և իշխեն մարդկան: - 150. ...ի հրոյ և *յօդոյ* են բանական կենդանիք և ունին ծնունդ և մահ...: 150. Յատկութիւնք *օդոյ* երեսուն թւով: - 155. Չորս են տարերք. հող և ջուր. *օդ* և հուր: - 180. Զի առանց հողոյ շօշափումն ո՛չ լինի. և ո՛չ առանց ջրոյ կալումն և մածումն. և ո՛չ առանց *օդոյ* շարժումն. և ո՛չ առանց հրոյ երևումն: - 180. Եւ ջուրն քան *զօդ*. և *օդն* ծա՛նր է քան զհուր. զի սակաւ ինչ գիճութիւն ունի: - 180. *Օդ* ջերմ է և գէճ: - 181. Զի ջուր ցրտութեամբ ընդ երկի՛ր է կապեալ. և գիճութեամբ ընդ *օդ:* - 181. Եւ *օդ* ջերմութեամբ ընդ հուր. և հուր չորութեամբ ընդ երկիր: - 181. Նախ այսպէս ասեն եթէ՝ տարերքն գնդաձև պատեալ են զմիմեանս և ամրացեալ. զի բոլորակ հուրն պատեալ է *զօդ*. և *օդ* զջուր. և ի մէջ ջրոյն երկիր է՛ հաստատեալ: - 181. Երկրորդ՝ այսպէս. զի *օդն* հողմովն փեռեկէ՛ զհուրն ի **բ** կիսագունդս. վերոյ և ներքոյ: - 181. Եւ բնականն Նախ այսպէս. զի

*օդն* որ ի մէջէ մտեալ և փեռեկեալ զներքին և զվերին կիսագունդն, նա՛ է պատճառ շարժութեան երկնից: - 182. Երրորդն` է վերին մասն *օդոյն*. և կոչի եթերային երկին. զի մեծ ի տարրեղէն հուրն է. և վառի ի նմանէ. զոր թռիչ աստեղաց կոչեմք: - 183. Չորրորդն` է ներքին մասն *օդոյն*. և կոչի օդեղէն երկին...: - 183. Այլ զաստղալից երկինս ի *յօդոյ* ասէ խտացեալ և թանձրացեալ. և ի նմա՛ են կառուցեալ աստեղք և ընթանան: - 184. Նմանապէս և հոմանուն է հաստատութիւնն ի ներքոյ ջրոյ. այսինքն ըերրորդ կամարն. և *օդս* առ մեզ որ ունի զջուրս ամպով հաստատեալ: - 184. Իսկ երկրային լոյս` է ճրագն և պայծառ *օդն* և լոյս աչաց: - 185. Եօթներորդ` միջնորդով զայլս լուսաւորէ. որպէս ընդ *օդ* և ընդ ապիկի: - 185. Եւ զի ո՛չ շիջանին հրամանաւ արարչին. ի միջի գոլով երկուց ներհակացն օդեղէնն երկին. որպէս ստորին տարերքս հուր և ջուր միջնորդ *օդիւն* կապակցեալ: - 188. Եւ լուսաւոր անօթքն ի չորրորդում աւուր կազմեցան ի *յօդոյ*. և իւրաքանչիւրքն ընկալան զլոյսս և եղեն լուսաւորք: - 188. Իսկ Եկաւորն և Կշիռն և Ջրհոսն, ունին զբնութիւն *օդոյ* ջերմ և գէջ: - 189. Եւ ի ներքինն անցեալ` գիշեր. զի գարշեցո՛յց զերր. որ է *օդ* և երես երկրի: - 190. Եւ գիշեր, զի գարշանա՛յ երր, որ է *օդ:* - 196. Գէջ *օդն* գոգացեալ և դէմ եղեալ արեգականն` առնու զլոյսն ի նմանէ ըստ բոլորակ ձևոյ նորա: - 203. Եւ զանազան գոյնքն է՛ չորից տարերցն որք են *յօդդ:* - 203. Կապուտն *օդոյն:* - 203. Եւ է՛ որ ի մէջ *օդոյդ* գայ և շիջանի: - 204. Իսկ Մառախուղն է մթագոյն գոլորշի անծննդական ջուրց. քան *զօդ* թա՛նձր է, և քան զամպ նօսր: - 204. Եւ ըստ չափու թանձրութեանն պատառեալ բեկանի, և ի վայր բերմամբ գնդի ի ջերմութենէ *օդոյն*, և լինի կարկուտ: - 205. Երկրորդ` զի ամպ և մէգն խառնէ՛ զպարզ *օդն* և խաւարէ՛: - 206. Տասներորդ` յորժամ ջնջի ամպն, վերըստին պայծառանայ *օդն* յառաջին մաքրութիւնն իւր: - 206. Այսքան վասն *օդոյ* և հրոյ տարերց: - 207. Վեցերորդ` զի և *օդոյն* զթռչունս ետ ի զարդ: - 207. Չորեքտասաներորդ` ջուրն *օդով* ի վեր ընթանայ, և հողմով անձրևի՛ յերկիր: - 207. Երկրորդ` ասէ արիստոտէլ` թէ ջերմութիւն լուսաւորացդ և տարրական հրոյն և *օդոյն* մտանեն ի ծովն և քարշեն ի նմանէ զքաղցր և զպարզ հիւթն. և մնացեալն լինի դառն և աղի: - 208. Երկրորդ` զի վերին մասն *օդոյն* պա՛րզ է. և ներքին մասն մերձեալ ի յերկիր` թանձրանայ ի չորութեանց նորին. և ջերմութիւնն խառնեալ ընդ այն` առաւել շող լինի: - 211. Ոմանք ասեն թէ *յօդոյն* է. զի *օդն* կապոյտ է` խառնի ընդ ջրոյն և լինի կանանչ: - 212. *Օդոյն* կարմիրն: - 212. Եւ տերևն *օդոյն:* - 213. Եւ հոտն *օդոյն* է: - 213. Զի տղայութիւնն *օդո՛յ* է. և միջին հասակն հրոյ և հողոյ. և վերջինն ջրոյ. վասն այն սպիտակի. որպէս ցուցանի յառաջիկայդ **ժզ** գլուխն` **իգ** համարն: - 213. Դարձեալ` զի տնկականն վերափչո՛ւմն է *օդոյն* հանդերձ խոնաւութեամբն երկրի. վասն որոյ բոլորաձև արտաքս գայ և լինի ծառ: - 213. Նա՛խ` զի *օդն* վերընթա՛ց է և քարշէ՛ ի վեր և աճէ: - 213. Յոտոտելիքն և լսելիքն *օդոյն* ի վերոյ նորա: - 215. Կարմիրն որ է արիւնն ի լեարդն` է՛ *օդոյն:* - 215. Վեցերորդ` ըստ այլոց. զի բոլոր թանձր մարմինն է՛ հողոյ. և ամենայն հիւթք և մաղձք է՛ ջրոյ. թոքն է՛ *օդոյն*. և սիրտն է՛ հրոյն ջերմ գոլով: - 215. Շարժումն *օդոյ:* - 215. Զի զգայ զջերմութիւն հրոյն. և զցրտութիւն` որ է ջրոյն. և զխոնաւութիւն որ է *օդոյն*. և չորութիւն հողոյն: - 215. Այլ յայտնապէս կենդանութիւնն է *օդոյն* և հրոյն. և նիւթ մարմնոյն է՛ ջրոյն և հողոյն: - 215. Ասեմք թէ` որպէս ցամաքայինքն ունին զշունչ *օդոյ:* - 215. Եւ մի և նոյն է. զի շունչ կենդանեաց է թանձր մասն *օդոյս*` խառնեալ ընդ ջրոյ. և շունչ նոցա է անօսր մասն ջրոյ` խառնեալ ընդ *օդոյ:* - 215. Նախ` *օդն*. որ էութիւն է ձայնի: - 216. Իսկ ձկունք զի ո՛չ ունին *զօդ*` ամենևին են անձայնք: - 216. Յաղագս այսորիկ անբան կենդանիք փութապէս զգան զառաջին շարժումն և զփոփոխումն *օդոյդ* քան զմարդ. և յառաջագէտ լինին: - 218. Վասն զի բնական լուսաւո՛ր է *օդս* որ ի մէջ դրախտին: - 222. Զի ի վերին մասն *օդոյն* է մերձեցեալ` որ է առաւել բարեսուն. և ամպոց և հողմոց շարժմունք ի միջին մասն *օդոյս* ծնանին. և ի դրախտն ո՛չ հասանեն: - 222. Որպէս մարմինն ադամայ յերկրէ է և անապական. և մանանայն *յօդոյ* և անապական. և յա՛յտ է ի մէջ սափորին: - 225. Իսկ ամպք և հողմունք ի *յօդոյն* են. որպէս քարինք և երկաթք յերկրէ. սոյնպէս աղբիւրք և գետք ի ծովէ՛: - 227. Ձձկունս ի թանձրագոյն մասն եթող, և զթռչունս յանօսրագոյն մասն որ է *օդդ*` վերացոյց: - 227. Չորրորդ` այլ և դիրք տարերաց, հողն է ի ներքոյ. և ապա ջուրն և *օդն* և հուրն: - 232. Նոյնպէս մարմինն է ի ներքոյ. և հիւթ արեանցն ի վերոյ. և ապա շունչն *օդոյ* և հուր լուսաւորացն ի վերոյ: - 232. Եւ *օդն* է ի թոքն. զի հանապազ ի շարժութեան կայ և փչէ՛ ընդ դէմ ջերմութեան սրտին: - 232. Վասն որոյ գլուխն է՛ ի վերոյ. և խռչափողն որ ունի զտուր և զառն` *օդո՛յդ* է նման. և ի ներքոյ այլ մարմինք և հիւթ արեան և ջրոյ` երկրիս է օրինակ: - 232-233. Չորրորդ` ի գլուխ մարդոյն սակաւ է հողն և *օդն* բազում. վասն այն ի վերո՛յ է: - 233. Եւ շունչն *օդն:* - 234. Կարմիրն *օդոյ:* - 234. Զի շօշափելիքն ի ներքո՛յ է որպէս երկիր. և ճաշակելիքն ի վերոյ որպէս ջուր. լսելիքն *յօդն* է. և տեսանելիքն հուրն ի վերոյ: - 235. Նա՛խ` զի յառաջ եղեալ նմա` լո՛յսն է որ է վերին

տարր. և լսելեացն *օդն:* - 235. Երկրորդ՝ զի զփոշին սրբէ որ ի *յօդոյս* նստի յաչքն. որպէս մեք ձեռօք սրբեմք զերեսս հայելւոյ: - 239. Իսկ մազն է այրեցած արիւնն. որ *օդովն* ի դուրս փչի. որպէս տունկք յերկրէ: - 240. Սոքա ո՛չ պահեն զճարպն որ մասն է *օդոյ* պարարտացեալ: - 242. Եւ ի ձախ կողմն *զօդն* ժողովեալ որ առնու ի թոքէն: - 244. Զի թէ հուրն աւելի է, լինի շէկ գունով. և թէ *օդն* լինի կարմիր. իսկ ջուրն առնէ սպիտակ. և հողն սեաւ գունով: - 245. Եւ որ *զօդն* աւելի ունի, է՛ թեթևամիտ և սրընթաց և ծիծաղկոտ: - 245. Յեղանակս գարնան, և յառաւօտուն մինչև յերեք ժամս, և հիւթոյ արեան, և մանկութեան հասակն ի տղայութենէ ծննդեան և աճման՝ ունին զնմանութիւն *օդոյ* ջերմ և գէջ գոլով: - 266. Նա՛խ՝ զի խորհրդական միտքն կարգաւոր և առանց տարակուսանաց տեսանէ. իսկ երազն անկարգ և տարակուսանօք և զանհնարն տեսանէ որպէս ի վերայ *օդոյ* թռչիլ, և ի ծովու գնալն, և աղքատաց թագաւորել, և այլն: - 268. Ի դրախտն, զի թանձր մարմնով ո՛չ բնակին յիմանալեացն կայանս. և *յօդս* կախիլ անպատշա՛ճ էր: - 289. Եօթներորդ՝ արիւնն հուրն է՝ և շունչն *օդն*. պա՛րտ է հանել զ**բ** տարրն. իսկ մնացեալն ջուր է և հող՝ ուտելի է: - 295. Ութերորդ՝ հուրն և *օդն* առաւել է յարիւնն զի առնօղք են. և յայտ է ի խառնումն միութեանց. զի հուրն մածուցանէ՛, և ջուրն և հողն մածնուն, և *օդն* սնուցանէ. վասն այն զարարօղն և զսնուցանօղն ո՛չ ուտեմք: - 295. Իններորդ՝ արիւնն և շունչն է սկիզբն գոյացութեան մերոյ. զի արիւնն փոխի ի սաղմն, և ջերմ *օդով* խառնի ի հով և ի գէճն, և լինի աճումն և սնունդ մարմնոյ: - 295. Զենուլ ձկանն այն է՝ որ ի ջրոյն հանեն. զի զշունչ ջրոյ ունի և ո՛չ զշունչ *օդոյ:* - 296. Եւ զ**խ** ամ շինեցին յամառն և ձմեռն ըստ բարեխառնութեան տեղւոյն. մինչև հասին յործկուտ *օդն* թանձրացեալ ի գոլորշեաց և ջերմացեալ յարևուն: - 297. Եւ տէրն յետ յարութեանն զ**խ** օր ի վերայ *օդոյդ:* - 328. Բնական որակ տարերացն Սևն է՛ երկրի. և Սպիտակն ջրոյ. Կարմիրն *օդոյ*. և Դեղինն հրոյ: - 342. Կապոյտն *օդոյն* է գոյն. զի թէ ա՛յլ գոյն էր, վնասիչ և խափանիչ լինէր տեսութեանց. որպէս սպիտակ կամ սեաւ. այլ կապոյտն է ի հեշտութիւն տեսութեանց: - 342. *Օդն* և օդեղէնքն: - 342. Երրորդ այսպէս. ի լուսնոյդ ի վայր տարրական հուրն և որ ի նմա երեւոյթք լուսոյ. *օդն* և թռչունք. ջուր և լօղականք. երկիր և բոյսք. մարդ և անասունք: - 343. Եւ վարագոյր՝ *օ՛դդ:* - 343. Չորրորդ՝ նոցա ձայնն միջնորդով *օդիւ* և մարգարէիւքն. և ընդ մեզ բանն աստուած անընդմիջաբար խօսեցեալ: - 353. Տասներորդ՝ ունի **գ** տեղիս. կրկին ուստի զրկեցաւ. և *օդդ* ուր անկաւ. և հուրն ուր տանջի: - 394. Նոյնպէս յերեք տեղւոջ ոգորի. յերկրի՝ զի հանցէ յերկնից. և *յօդդ*՝ զի արգելցէ. և ի յարութեանն՝ զի ընկեսցէ ի հուրն: - 394. Այլ բանն աստուծոյ ի ծովէ լորամարգ ի վիմէն ջուր և *յօդոյ* մանանայիւ կերակրեաց զնոսա. զի ամենակա՛ր է զօրութիւնն աստուծոյ: - 397. Երկրորդ՝ զի ասէ «իբրև զիս». իբրևն օրինա՛կ է. որպէս մովսէս աստուած կոչեցաւ, և տէր մեր էմմանուէլ. և զնա՛ հայր կնքեաց աստուած. և որպէս մովսէս իշխէր տարերաց, և տէր ի ծովուն գնայր, և ի վերայ *օդոյն:* - 399. ...այլ և հող և ջուր և *օդ* երկրին կորուսանեն զպտղածնութիւն. որպէս սոդոմայեցոցն: - 416. Եւ զանազան ձայնք քնարի՝ մի ենթակայ *օդով* միաւորին: - 476. Եւ երկուց հողոց և *օդոց* նոյնպէս: - 476. Նա՛խ՝ զի ծանիցի թէ սոցա արարիչ է անարգեալն. վասն այն լուսեղէնք և օդեղէնք և *օդն* խաւարեցան. ջուր ի կողիցն բղխեաց. և երկիր շարժեցաւ: - 490. Ոմանք **դ** ասեն. և այլք՝ բազումք. զի ի գերեզմանի ասեն տանջիլ. և *յօդս*. և ի ծովս. և ի վէմս: - 504. Ասեմք, զի ո՛չ ունին շունչ *օդոյ* այլ շունչ ջրոյ. և հանեալ ի ջրոյն պակասի շունչն. որպէս ասացաւ ի վերոյ ի **ժը** գլուխն ի **զ** համարն: - 511. Նա՛և բազում տեսակք են ի ջուրս և ի *յօդս*. որպէս չղջիկանն առանց արեան է կե՛ր զամենայն: - 511. Եւ **խ** օր *յօդս* զի **լգ** օր *զօդս* սրբեսցէ ի ճենճերից կռոց. և **է** օրն ի խորհուրդ է աստեղեան խորանացն ի կայանս հոգւոցն: - 520-521. Նա՛խ՝ որպէս ծծումն *օդոյ* կենդանութիւն է մարմնոյ: - 523. Երկրորդ՝ որ քան բանայ զբերանն՝ առնու *զօդն:* - 523. Երրորդ՝ զջերմութիւն սրտին զովացուցանէ *օդ:* - 523. Չորրորդ՝ զի որ քան և ծծեն՝ ևս խնդրեն *զօդ:* - 523. Հինգերորդ՝ որ քան ծծեն ո՛չ պակասի *օդն:* - 523. Եօթներորդ՝ մեռեալ մարմին ո՛չ առնու և տայ *զօդ:* - 523. Ութերորդ՝ որք առեալ *զօդ* դարձեալ արտաքս փչեն ներհակ իմն գործով. այսինքն ջերմացուցանեն և զովացուցանեն. վառեն և շիջուցանեն: - 523. Իններորդ՝ այլ և ենթակայ բանից լինի *օդ:* - 523. Տասներորդ՝ զի *օդ* յիւրաքանչիւր ոք զանազան արտաբերէ զձայն և զբան: - 523. Նոյնպէս ի քրիստոսէ ի մեզ իջանէ կենդանութիւն հոգևոր, և զօրութիւն, և առողջութիւն, և շարժութիւն *յօդոց* և խաղալեաց ի ձեռն հաւատոյն շաղկապութեան: - 532. Բարկութիւնն ցասմանն. իսկ Ծուլութիւնն է հոգւոյն. Ագահութիւնն հրոյն. Որկրամոլութիւնն *օդոյն*. և Բղջախոհութիւնն ջրոյն: - 559. *Յօդոյ* որկորստութիւն և հպարտութիւն. զի վերընթա՛ց է և քարշօղ: - 560. Որկորստութիւնն *օդոյ:* - 560. Յոգւոյ և *յօդոյ* ամբարտաւանութիւնն: - 560. ...զի օծանեմք զնոսա որպէս զըմբիշս. զի ի հանդէս մտցէ ընդ այսս չարութեան *օդոյդ:* - 605. Երդմնեցօղն *օդոյ:* - 609. Ի հինգերորդ օր արարչութեանն ի խորհուրդ

մկրտութեան ջրային կենդանիք և թռչունք *յօդս* ելին: - 638. *Օդոյն* մարդոյ: - 640. Նա՛խ՝ յանպատրաստութենէ կամ ի պակասութենէ հարկաւոր պիտոյից. կամ յարտաքին ստահակութենէ *օդոց:* - 665. Զի նախ մեղանչեցին յերկինս. և ապա անկան *յօդս* և մահացան...: - 667. Եւ այն որ ի վերայ վառին նիւթեղէն զգեստ, զի գայցէ խաչն ի վերայ լուսեղէն ամպոյ. *յօդս* բարձրացեալ և ցոլացեալ...: -676. Արդ հայրն աբրահամ նշանակէ՛ զհայր աստուած. և հուր և սուր՝ տանջանարանք որ հանդիպին ի ճանապարհ *օդոյդ:* - 681-682. ...և ելեալ ի մարմնոյն ընթանայ *յօդս:* - 682. Եւ ծովն պատառեալ ի ձեռն մովսիսի այսինքն խաւարային անդունդք *օդոյդ* ի ձեռն առաջնորդ հրեշտակին: - 682. Զնոսա ասել գոլ առ **ը** երորդ կամարն երկնից. ամբարձեալ յիշխանութենէ սատանայի որք ի *յօդս* և ի տարերս միայն իշխեն: - 688. Իսկ ձախակողմեան խորան՝ է՛ ի *յօդս* յաներևոյթ տեղիս. ուր ժողովին հոգիք չարաց և մեղաւորաց. որք դատաստանաւն դատապարտին: - 688. Դարձեալ՝ որ հրոյ է վերակացու, ի վերայ նորին հարկանէ. և որ *օդոյ* և ջրոյ և երկրի, ի վերայ իւրաքանչիւր տարերաց գոչէ՛: -714. Երկրորդ, զի չո՛րք են սկզբունք աշխարհի. երկինք որ է՛ երկուք. հուր և *օդ*. և երկիր որ է՛ **բ** իր. հող և ջուր: - 714. Եւ զբանս *օդն* ունի. եթէ հոգևոր եթէ մարմնաւոր. զի *օդով* խօսեցաք: - 714. Եւ դարձեալ ոմանք ասացին թէ՝ ի յարութեանն մարմինք մարդկան օդային լինին կամ հողմային. զի երբեմն ի գրոց հողմ և *օդ* հոգի կոչի: - 720. Եւ *օդք* այնպէս պայծառանան որպէս զեթերն: - 728. Դարձեալ՝ էութիւնն մնայ, այլ ներգործութիւնն պակասի՝ այսպէս. զի ջերմութիւն հրոյն և ցրտութիւն ջրոյն և փոփոխմունք *օդոյդ* որպէս ամպք և այլն, և սևութիւն երկրի...: - 728. Իսկ ըստ իրին, զի որպէս ամպ զարեգակն արգելու, այսպէս նսեմութիւն *օդոյդ* զարփին որ արգելէ՛ զտեսութիւն մեր: - 729. Արդ ի պարզիլ *օդոյդ* որպէս ցուցաւ երևի լոյս արփւոյն անարգել: - 729. Այն է ծալիլ և գալարիլ *օդոյդ* երկնի. և ո՛չ թէ հաստատութիւնն վերին էութեամբ ի բաց բառնի ըստ ոմանց: - 729. ...և վառեսցեն զերկինս որ է՛ *օդն*. և զերկիր և զլերինս և զդաշտս և զբոյսս և զկենդանիս. և զժանգս մեղաց որպէս ասէ աստուածաբանն գրիգոր: - 731. Զի *զօդս* սրբէ ի մեղաց դիւաց և ճենճերաց. և զերկիր ի մարդկային մեղաց: - 731. Դարձեալ, զի յարնելս բազմեալ դատաւորն. և աջակողմեանքն լինին ի վերայ *օդոյ* ի կողմն հիւսիսոյ. և ձախակողմեանքն վայր ի յերկրի ի կողմն հարաւոյ...: - 731. Սակայն երևելի աթոռ ի *յօդոյդ* կազմեալ հաւատացեալ լինի. զի ամենայն ոք տեսցէ նստեալ: - 736. Նմանապէս և **բժան** աթոռք առաքելոցն սրբոց ի *յօդոյդ* լուսեղէն: - 736. Զի ձո՛ր է յաշխարհս այս՝ և լեառն երկինքն. ի ձորն ապա լիցի դատաստանն. այսինքն յայսմ աշխարհի ի վերայ *օդոյդ:* - 737. Նստի քրիստոս ի բարձրագոյն աթոռ ի վերայ *օդոյդ*, և սուրբքն ընդ աջմէ. այսինքն ի վեր ի փառս ընդ նմա ի վերայ *օդոյդ*. հաւատոյ և գործոյ թևո՛քն բարձրացեալ իբր զարծուի: - 738. Որով հետև ի վերայ երկրի և *օդոյ* է դատաստանն, հաւատալի՛ է և ձայնական խօսից: - 739. և Դարձեալ, որպէս մի շնչմամբ *օդոյ*՝ ցորեանն ժողովի և յարդն հոսի: - 739. Երրորդ՝ զի խաւարն լինի *յօդոյ*. և ա՛յն ի հրոյ: - 753. և Դարձեալ, դատաստանն վերջին լինելոց է ի վերայ երկրի ի *յօդս:* - 759. Այսպէս և *օդն* յորս եկաց փրկիչն յետ յարութեանն, փոփոխեսցէ զբնական նսեմութիւնն իւր և պայծառասցի որպէս զեթերն: - 759. Շող յաստուծոյ ծագեալ հաւատ. զերկնից կախեալ լար իմն լուսեղէն. զորմէ բուռն հարեալ ձեռն զձեռամբ փոփոխեալ. ի ծովու սքանչելեաց յերկինս և *յօդս* վերանալ: - 769. Որպէս բան ի ձայն՝ և բան ի գիր՝ և լոյս *յօդ*՝ և տեսութիւն յակն՝ և հուր յերկաթ՝ և մուխ ի պողւատ: - 769-770. Ո՛չ բանն որպէս հալածու կաղապարեալ. և կամ մարմինն որպէս բոց ի հրոյ և ծուխ անօսր լուծեալ *յօդդ:* - 770. Նմանապէս և հիմունք երկրի ջուրք տատանեսցան. այսպէս և սիւնք ասացեալն *օդոյ* դողային. և լուսաճեմքն խաւարեին: - 788. Եւ սիւնք սորա տարր *օդոյ* ըստ նիւսացոյ: - 788

**ՕԴ (կոշիկ) +** Ա՛րդ՝ եթէ ի հասարակ ժողովրդենէ իցէ ննջեցեալն, հանեն զհին հանդերձն և պատե՛ն սուրբ կտաւովք և զգլուխն փակեղամբ և վարշամակօք, և *օդ* յոտս: - 671. Իսկ կնկուղ ի գլուխ կրօնաւորաց և *օդ* յոտս և գօտի ընդ մէջ. զսպառազինիլն և զարիութեամբ ընթանալն ի պատերազմ: - 671. *Օդ* կամ կօշիկ յոտս, կուռ վառեալ զինու ընդ դէմ օդային թշնամւոյն: - 674

**ՕԴԱՅԻՆ +** ...նոյնպէս և աստ ի մարտ մտանէ ընդ *օդային* այսոց՝ նախ օծանի հոգևոր իւղովն: - 672. Օդ կամ կօշիկ յոտս, կուռ վառեալ զինու ընդ դէմ *օդային* թշնամւոյն: - 674. Եւ դարձեալ ոմանք ասացին թէ՝ ի յարութեանն մարմինք մարդկան *օդային* լինին կամ հողմային. զի երբեմն ի գրոց հողմ և օդ հոգի կոչի: - 720

**ՕԴԱՆՄԱՆ +** Բիւրեղն, ծովագոյն *յօդանման*. գտանի ի տորոս յանցս եփրատ գետոյն: - 349

**ՕԴԱՊԱՐԻԿ +** Այլ և խաչաձև թռչին *օդապարիկ* թռչունք. որ է տեսական միտք. զբև տարածեալ յերկոսին կողմանս: - 494

**ՕՂԱՏԵՍԱԿ +** Այս է՝ զիրատեսակն յերակս աչաց. և *զօղատեսակն* լսելեաց. և զայլսն նմանապէս. և զմաքրագոյնն սոցա ի խելս ի զգուշութիւն զգայութեանց: - 786

**ՕՂԵՂԷՆ +** Եւ դարձեալ, ամպ զերկինս նշանակէ. զի ոմանք *օղեղէն* ասեն զերկինս: - 148. Չորրորդն՝ է ներքին մասն օդոյն. և կոչի *օղեղէն* երկին...: - 183. Եւ զի ո՛չ շիջանին հրամանաւ արարչին. ի միջի գոլով երկուց ներհակացն *օղեղէնն* երկին...: - 188. Երկրորդն ջրեղէն և *օղեղէն:* - 221. Օդն և *օղեղէնքն:* - 342. Նա՛խ՝ զի ծանիցի թէ սոցա արարիչ է անարգեալն. վասն այն լուսեղէնք և *օղեղէնք* և օդն խաւարեցան. ջուր ի կողիցն բղխեաց. և երկիր շարժեցաւ: - 490

**ՕՂԻ +** Երրորդ՝ եցոյց յայտնապէս զպատերազմն առաջի այսոց *օղոցս*. վասն այն պիտոյ էր հեծեալք: - 445. ...յորժամ բաժանին *օղիքն* և այծիք. որ է արքայութիւնն երկնից և դժոխքն յաւիտենից: - 686. ...նմանապէս և մարմինք մեռեալք յերկրի և հոգիք ի կայանս իւրեանց ի միասին կան առհասարակ արդարոց և մեղաւորաց մինչ դատաստանաւն բաժանեսցին *օղիքն* և այծիք: - 721. Եւ այսպէս բաժանեսցին ի միմեանց տեղեաւ և փառօք. որպէս *օղիք* և այծիք յաջմէ և յահեկէ քրիստոսի: - 738

**ՕԹԱՐԱՆ +** Երկրորդն հոգւոց *օթարան:* - 210

**ՕԹԵՎԱՆ +** *Օթևան* այսոց: - 203. Եւ քրիստոս զյարկն դաւթի որ է՛ եկեղեցի՝ չորիցս առաքինութեամբ եռարճակ *օթևան* աստուծոյ կազմեաց: - 328. Այլ ոմանք մնացեալք ի մարմնի, և բազումք ժամանեալք *յօթևանս* վերին: - 391. Իսկ զ**խ** իջևանքն ոմանք խորհուրդ առնուն յետ ելիցն ի մարմնոյ հոգւոյն՝ **խ** աւուրք հասեալ *յօթևանս:* - 391. Եւ ոմանք ի նոյն ժամն ասեն հասանիլ յիւրաքանչիւր *օթևանս:* - 391. Տասներորդ՝ զի սողոմոն ի քարանց ձեռագործաց կազմէր տաճար աստուծոյ. իսկ քրիստոս զբանական հոգիս մարդկան շինէր *օթևան* սուրբ երրորդութեանն: - 442. Եւ որպէս ի մի արքայութիւնն *օթևանք* և փառք բազում են ըստ գործոցն. այսինքն երեսնաւոր. վաթսնաւոր. և **ճ**աւոր: - 504-505. Եւ ուրախութեան նոցա. և *օթևանացն:* - 660. ...վասն որոյ երիցս խնդրեմք զի այժմ բաժանեալ հոգին խաղաղութեամբ ժամանեսցէ *յօթևանս* լուսոյ...: - 675. Այսպէս և բաժանեալ հոգին ի մարմնոյ՝ ընթանայ յերկինս և անփոփի ի տեղւոջ լուսոյ *յօթևանս* հոգւոց...: - 681. Զի՞նչ է տուն հօր և *օթևանք* բազում: - 686. Սոցա համաձայնին ընդհանուր ամենայն վարդապետք գոլ ի յերկնային խորանս անմարմնոց ի զանազան *օթևանս* լուսոյ: - 688. Երրորդ, ասէ առաքեալն թաղէոս, եթէ հոգի ամենայն մարդոյ որ ելանէ ի մարմնոյ, են նոցա *օթևանք* և բնակութիւն ի հանգստեան...: - 691

**ՕԹԷՕՍՆ** - *Օթէօսն* աստուած թարգմանի: - 645

**ՕԹԻՄ +** Ութերորդ՝ արին սամփսոն որ օրինա՛կ էր ամենազօր տն մերոյ, էջ ի գազա ի տիպ աշխարհի. և *օթեցաւ* ի պոռնկատունն յօրինակ դժոխոցն. յորում պաշարեցին զքաղաքն այլազգիքն: - 513

**ՕԺԱՆԴԱԿ +** Այլ զոր այժմ *օժանդա՛կն* է բանիս մեր, դիտեսցուք: - 305

**ՕԺԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ +** Եւ այժմ յոյս մեր է՛ կրկին. նախ առ սուրբս վասն *օժանդակութեան* և բարեխօսութեան: - 574. Երրորդ, զի ընդունայն լինին աղօթք և տուրք և այլ *օժանդակութիւնք* եկեղեցւոյ՝ յորժամ ինքեանք քաւեսցեն: - 698. Որ և առանց յապաղելոյ ապաստանեալ մեր՝ *յօժանդակութիւն* խնդրոյդ: - 773

**ՕԺԻՏ +** Եօթն զարդ հարսին որպէս ցուցաւ. և *օժիտր* յաւիտենիցն կենացն. պսակք և արկանելիք, ասացան մեզ փոքրիշատէ յառաջագոյն ի բանից սրբոց: - 761

**ՕԼՕՄՊԱՅԻՆ** - Երկրորդն՝ ներքին մասն հրոյն. որ կոչի *օլօմպային* երկին. վասն մերձ գոլոյ յօլօմպիոս լեառն: - 183

**ՕԼՕՄՊԻՈՍ** - Երկրորդն՝ ներքին մասն հրոյն. որ կոչի օլօմպային երկին. վասն մերձ գոլոյ *յօլօմպիոս* լեառն: - 183

**ՕԾԱՆԵՄ +** Տեսցուք և զգործն յաղագս որոյ *օծաւ*. այսինքն միացաւ մարդկութիւնն աստուածութեամբն...: - 41. Զի թէ զաստուծոյն միայն՝ անկար ի յարիոսին. զի զբանն առանձին քրիստոս ասացեր. այսինքն *օծեալ* և սրբեալ ի հօրէ. յորմէ իմանի պակաս գոլ քան զհայր: - 68-69. Իսկ եթէ զաստուածային անձն ասէք քրիստոս, որ է *օծեալ*. ահա ընդ *օծեալս* փոխադրեցիք: - 89. Եւ զայս եթէ բաժանմամբ, ո՛չ է առանձնապէս բանն քրիստոս. զի ո՛չ գոյ մեծագոյն *օծանօղ* նմա. որ և ո՛չ առանց մարմնոյ փրկեաց: - 94. Նա՛և ո՛չ մարմինն որիշ *յօծողէն* կոչեսցի *օծեալ:* - 94. Եւ դարձեալ՝ եթէ շնորհօք որդի և *օծեալ*, և ո՛չ աւելի նա քան զմեզ. զի և մեք չեմք ծառայ, այլ՝ որդի: - 94. Իսկ ի վերն քան զամենայն անուն. թէպէտ և անուանեին և յեսու՝ և *օծեալք* բազումք ի հինն և ի նորս: - 95. Նա աստուած *օծաւ*. և սոքա մարգարէ կամ այլինչ: - 95. Իսկ թէ ասի ուրեք՝ ի հոգւոյն և ի հօրէ *օծանիլ* նմա, վասն

տնօրէնութեանն խորհրդոյ ասին: - 95. Եւ դարձեալ՝ քրիստոսն անուն զմիաւորութիւնն նշանակէ երկուց բնութեանց. ըստ որում աստուածութիւնն *էօծ* զմարդկութիւնն. որպէս ասէ աստուածաբանն և սուրբն կիւրեղ: - 95. Ա՛րդ՝ քրիստոսն որ է *օծեալ* աստուածութեամբն, և նա աստուծոյ իմաստութիւն է. և ո՛չ ճանաչէ՛ զաստուած. տգիտութեամբ կորուսանէր զնա և որոյ է՛ իմաստութիւն: - 96. Եւ քրիստոսն *օծեալ* ո՛չ ըստ իւղոյ ինչ երևութապէս օծման, այլ միանալով ընդ բանին աստուծոյ՝ ասի *օծեալ:* - 301. Եւ ի նմանէ լուսաւորեալք՝ պայծառացուցանեն վարդապետութեամբքն իւրեանց զերկու ժողովուրդս որք ի հրէից և որք ի հեթանոսաց *օծեցան* մկրտութեամբն: - 347. Եւ սովաւ *օծէին* զթագաւորս և քահանայս: - 349. Այլ որք յամառելով յօրինակն՝ ա՛ղ խառնեն ի խորհուրդն, պա՛րտ է նոցա խառնել և ձէթ և մուրկ և խունկ և միս գառին. կամ զանգեալ ի կասկարայս, կամ *օծեալ* ի տապակի, զի զօրինակն կատարեսցեն. և հեռասցին ի ճշմարտութենէն: - 357. Եւ շօթն՝ թանձր լօշ եփեալ և ապա՛ *օծեալ* իւղով: - 357. Եւ իւղով զանգեալ և *օծեալն*, զի իւղով աստուածութեամբն *օծաւ*. այլ և զհոգին սուրբ ընկալաւ ի յորդանան: - 361. Անդրանկաց սատակումն եգիպտոսի, նշանակէ՛ զանկումն սատանայի յերկնից. և փոխանակ նոցա ընտրեալ և կոչեալ որդի անդրանիկ զիսրայէլ. և զնոսա փոխարկեալ առնու *զօծելոց* դասս քրիստոնէից ի տեղի նոցա: - 380. Եւ անդ դադարեցան առաջնորդք *օծեալք*. յորում երևեցաւ ճշմարիտ *օծեալն* քրիստոս: - 421. Չորրորդ՝ նախ *օծաւ* ծածուկ, և ապա՛ յայտնի ի գաղգաղայ. և տէր մեր նախ *օծաւ* յարգանդի, և ապա՛ ի յորդանան ի յովհաննէ: - 426. Չորրորդ, ի հովւութենէ *օծաւ* թագաւոր և տէր մեր նա՛խ քարոզեաց, և ապա՛ ժողովեաց. և տիրեաց յերկինս և յերկրի: - 435. Եօթներորդ, զառաջինն *օծաւ* ի բեթլէհէմ. և տէր մեր ի ծնունդն կոչեցաւ *օծեալ* ի հրեշտակին: - 435. Ութերորդ, ի ձեռն սամուէլի և իւղով *օծաւ*. և տէր մեր ի հօրէ *օծաւ* և հոգւով սրբով: - 435. Երիցս *օծաւ* դաւիթ. և որդի նորա ի յարգանդի, և ի յորդանան, և ի վերայ խաչին արեամբ: - 437. Տասներորդ՝ ի սելով *օծաւ* և յերուսաղէմ թագաւորեաց: - 441. Եւ յետ այնորիկ սպանցի *օծեալն*. և իրաւունք ո՛չ իցեն ի նմա. և քաղաք և սրբութիւն ապականեսցի: - 449. Եւ առաջնորդեն *օծեալ* քահանայքն յետ դարձին **նձգ** ամ. մինչև բարձան *օծեալքն* հրէից և ծնաւ ճշմարիտ *օծեալն* քրիստոս: - 449. Եւ յետ հիւրկանեայ ո՛չ ևս ի քահանայից ազգէն կացին *օծեալքն* առաջնորդք. այլ աննշանք ոմանք ամսօրեայք և տարևորք: - 449. Եւ յայնմ ժամանակի ասէ՝ սպանցի *օծեալն*, յորում քահանայքն և իրաւունք ո՛չ իցեն. այսինքն թագաւոր և դատաւոր: - 449. Չորեքտասաներորդ, *Օծեալ* և քրիստոս բազում եղանակաւ: - 454. Զի *օծեալք* սոքա էին քահանայք և թագաւորք. յորոց և բազումք մարգարէք եղեն: - 461. Զի՞նչ թարգմանի քրիստոսն և *օծեալ:* - 474. Ըստ լեզուիս մեր՝ *օծեալ*. ի հոռոմն քրիստոս. և յեբրայեցին մեսիա թարգմանի: - 474. Վասն որոյ կոչի *Օծեալ* և Քրիստոս: - 474. Եւ զօծումն զօրութեան՝ յորժամ *օծաւ* արեամբ ի վերայ խաչին և քակեաց զամուրս հզօրին և էառ աւար: - 474. Իսկ զօծումն բնութեանն միաւորութեան՝ ընկալաւ ի կուսական արգանդին. ուր խառնեալ միաւորեաց զմերս բնութիւն ընդ իւրում աստուածութեանն և ծնաւ քրիստոս որ թարգմանի *օծեալ:* - 475. Դարձեալ գիտելի է, զի *օծեալն* նշանակէ երիս դէմս. այսինքն *զօծեալն* և զօծումն և զօծօղն: - 475. Օծօղն է հայր. և Օծումն որպէս իւղ հոգին սուրբ. և *Օծեալն* բանն մարմնացեալ: - 475. Զի հերձուածօղք ոմանք *օծեալ* ասեն զքրիստոս յառաջ քան զյղացումն: - 475. Այլ և ո՛չ յառաջ քան զյղանալն *օծաւ*. զի սրբիլ և առաքիլ և իջանել յերկնից ո՛չ այլ ինչ է, եթէ ոչ մարմին լինիլ և մարմնով երևիլ բանին: - 475. Այլ մեք այսպէս խոստովանիմք. եթէ *օծաւ* բանն աստուած ի հոգւոյն սրբոյ յորժամ յղացաւ մերովս կերպիւ յորովայնի...: - 475. ...ըստ որում որ էջ հոգին սուրբ յորովայն անարատ կուսին և մաքրեաց զնա, և կազմեաց ի նմանէ զարիւնն. և սրբեաց և *օծեաց* զնա միաւորելով պատկերապէս: - 475. Այսպէս միաւորութեամբ բանն աստուած *օծաւ* և սրբեցաւ ի հօրէ, ի ձեռն հոգւոյն սրբոյ գործակցութեամբ: - 475. Յիսգերորդ՝ քրիստոս լինելոց էր քահանայ և թագաւոր յաւիտենական. և էգն ո՛չ կարէր *օծանիլ* քահանայ և թագաւոր. ո՛չ յօրինակն և ո՛չ ի ճշմարտութիւնս: - 480. Վեցերորդ՝ մարիամ քոյրն ղազարու. որ *էօծ* զտէրն իւղով: - 517. Վեցերորդ՝ և զիաց պատարագին ձիթով *օծանել:* - 553. Զի՞նչ նշանակէ մեռոնաւն սուրբ *օծանել:* - 593. Եւ գիտելի է, զի որ ի ճակատն և ի սիրտն և ի թիկնամէջն *օծանէ*, այն դրո՛շմ է. և որ զհինգ զգայութիւնսն *օծանէ*՝ այն ի խորհուրդ օծմանն է ծածկապէս: - 593. Եւ որ զայլ մասունս *օծանէ*՝ յա՛յնմ խորհրդոյ է՝ որ յառաջ քան զմկրտութիւնն *օծանեն* այլ ազգք քրիստոնէից: - 593. Եւ գիտելի է, զի յետ *օծանելոյն* զգեցուցանեն զհանդերձս պայծառ. որ զլուսաւոր վարս և զպայծառ հաւատս և զանմեղութիւնն նշանակէ: - 594. Ասեմք թէ, ի հնարից չարին բարձին մարդիկք զխոստովանութիւնն որ հարկաւոր էր, յայն ապաւինեալ թէ՝ ի վերջին օրն *օծանիմք* ձիթով

բալասամինաւ և արդարանամբ: - 604. Պիտանի է ապա խոստովանիլ՝ քան *օծանիլ:* - 604. Եւ ձեռն քահանային է՛ *օծեալ* և սրբեալ մեռոնաւն...: - 605. ...զի *օծանեմք* զնոսա որպէս զըմբիշս. զի ի հանդէս մտցէ ընդ այսս չարութեան օդոյդ: - 605. Եւ թէ ասեն, միայն մարմինն *օծանի*՝ զի՞նչ ներգործէ ի հոգին: - 605. Դպիրք եղեն առաքեալքն սպասաւորելով ժողովրդեանն հրամանաւ. և Սարկաւագունք՝ *օծանելով* զհիւանդս. հրաման տալով նոցա իւղ օրհնել յիւրմէ: - 607. Տասներորդ, սա՛ սրբի ջրով և *օծանի*, և ապա՛ է եկեղեցի: - 614. Երրորդ՝ զի մովսէս ի կանգնել զխորանն օրինակի՝ արեամբ նոխազաց և ջրով և իւղովն *էօծ* և սրբեաց: - 615. Նոյնպէս և մեք ի ճշմարտութիւնս՝ ջրով և գինով և սուրբ մեռոնաւն *օծանեմք:* - 615. Չորրորդ՝ զի սողոմոն յորժամ շինեաց զտաճարն՝ յաղօթս եկաց և նոյնպէս օրհնեաց և *օծ*. որպէս մովսէս...: - 615. Տասներորդ՝ սրբեմք և *օծանեմք* զեկեղեցիս յօրինակ մեր...: - 615. Ա՛րդ՝ ջուր և գինին և մեռոնն նշանակեն ի մեզ զջուր սրբութեան աւազանին. և մեռոնն որով *օծար* և դրոշմեցաք. և ապա ճաշակմամբ մեղսաքաւիչ արեանն կատարեցաք: - 615. *Օծցեն* սուրբ իւղովն և ողջունեն և տանին ի հանգիստն: - 671. Վասն է՞ր զքահանայս միայն *օծանեմք*...: - 672. Նա՛խ՝ զի նա՛ միայն *օծաւ* յառնուլ կարգին: - 672. Եւ զի *օծանի* վասն բազում պատճառի: - 672. Առաջին, որպէս քրիստոս նախ *օծաւ* իւղով և ապա թաղեցաւ...: - 672. ...այսպէս և քահանայն նախ *օծանի* և ապա՛ թաղի: - 672. Երկրորդ, ցուցանէ թէ՝ որպէս ի մկրտութիւնն նախ *օծաւ* և ապա թաղեցաւ ի ջուր...: - 672. ...այսպէս և աստ նախ *օծանի* և ապա թաղի ի հող: - 672. ...նոյնպէս և աստ ի մարտ մտանէ ընդ օդային այսոց՝ նախ *օծանի* հոգևոր իւղովն: - 672. Զորօրինակ զմարտիկ ոք յետ հանդիսին դարձեալ լուանան ի փոշոյն և *օծանեն:* - 672. Հինգերորդ, ցուցանէ թէ որպէս մարմինն *օծանի* ի քահանայապետէն անուշահոտ իւղով...: - 672. ...և զմարմինն՝ սուրբ իւղով *օծանեմք:* - 672. Իններորդ, երիցս *օծանի*. այսինքն ի մկրտութիւնն, ի կարգն, և ի թաղումն...: - 673. որպէս և դաւիթ *օծաւ* **գ** անգամ: - 673. Նախ ի բեթլէհէմ. և ապա՛ ի քեբրոն. և յետ եօթն ամաց ի վերայ ամենայն իսրայէլի *օծաւ:* - 673. Եօթներորդ՝ զի սիրելի և համբուրելի է նշխարքն սուրբ որ ի քրիստոս միացաւ և *օծաւ*, և քրիստոսի եղև բաժին: - 673. Նոքա՛ են **բ** ձիթենիք. այսինքն *օծեալ* հոգւով սրբով: - 709

**ՕԾՈՒԹԻՒՆ +** Եւ այժմ զինեցուք առ քեզ՝ քոյին բանիւ. որպէս դուդ ասես՝ շնորհօք տըւաւ մարդոյն այն անուն *օծութեան* և որդիութեան և տէրութեան և իշխանութեան: - 94. Եւ այս գիտելի է, զի բանն աստուած ի տնօրէնութեան իւրում ընկալաւ զամենայն եղանակս *օծութեան:* - 474

**ՕԾՈՒՄՆ +** Երրորդ՝ զի մելքիսեդեկ քահանայ ո՛չ ըստ մարմնական ինչ *օծմամբ* իւղոյ որպէս այլոցն, այլ շնորհօք հոգւոյն անընդմիջաբար: - 301. Եւ քրիստոսն օծեալ ո՛չ ըստ իւղոյ ինչ երևութապէս *օծման*, այլ միանալով ընդ բանին աստուծոյ՝ ասի օծեալ: - 301. Այլ և նաշիհ մարմին սուրբ. և գինի արիւնն. և իւղ *օծումն* աստուածութեանն. որպէս ասացաւ ի վերոյ: - 374. Զի որպէս քահանային *օծումն* ի հոգւոյն ո՛չ բաժանի յաւիտեան, և պսակի օրհնութիւնն որ ի մարմինն է՝ ո՛չ բաժանի մինչ ի մահ ի մարմնոյն: - 401. Եւ բազմաեղանակ է *օծումն:* - 474. Նա՛խ՝ *օծումն* մարմնական. որպէս փափկասիրաց: - 474. Երկրորդ՝ *օծումն* մարտական. որպէս ըմբշամարտից: - 474. Երրորդ՝ *օծումն* մաքրական. որպէս հիւանդաց: - 474. Չորրորդ՝ *օծումն* զմռոյ. որպէս մեռելոց: - 474. Հինգերորդ՝ *օծումն* քահանայից. վասն միջնորդութեան: - 474. Վեցերորդ՝ *օծումն* թագաւորաց. վասն տէրութեան: - 474. Եօթներորդ՝ *օծումն* ըստ զօրութեան...: - 474. Ութերորդ՝ *օծումն* ի հոգւոյն. որպէս մարգարէիցն...: - 474. Իններորդ՝ *օծումն* որդէգրութեան. որպէս մկրտութիւնն: - 474. *Զօծումն* մարմնական ընկալաւ ի պոռնիկ կնոջէն յորժամ եբեկ զշիշ իւղոյն ի գլուխ նորա ի տան սիմոնի: - 474. Իսկ *զօծումն* մարտի՝ յորժամ վարեցաւ ի հոգւոյն յանապատ և յաղթեաց հակառակին: - 474. Իսկ *զօծումն* հիւանդաց եցոյց ինքեամբ յայլս. յորժամ զանկեալն ի ձեռս աւազակաց ձիթով և գինւով բժշկեաց: - 474. Եւ *զօծումն* զմռոյ՝ յորժամ թաղեցաւ: - 474. Եւ *զօծումն* քահանայութեան ի թաբօր լերինն. ուր և հոգին սուրբ անձ հովանի եղեալ. և հայր հաճութեամբ վկայեալ: - 474. Եւ *զօծումն* թագաւորական՝ ի մարենայ քեռէն ղազարու. յորժամ նստաւ ի վերայ յաւանակին: - 474. Եւ *զօծումն* զօրութեան՝ յորժամ օծաւ արեամբ ի վերայ խաչին և քակեաց զամուրս հզօրին և էառ աւար: - 474. Իսկ *զօծումն* հոգւոյն սրբոյ՝ յորժամ էջ աղաւնակերպ ի վերայ նորա: - 474. Իսկ *զօծումն* բնութեանն միաւորութեան՝ ընկալաւ ի կուսական արգանդին...: - 475. Դարձեալ գիտելի է, զի օծեալն նշանակէ երիս դէմս. այսինքն զօծեալն և *զօծումն* և զօծօղն: - 475. Օծօղն է հայր. և *Օծումն* որպէս իւղ հոգին սուրբ. և Օծեալն բանն մարմնացեալ: - 475. Զի արիոս կամէր զանեղական բանն աստուած եղական և կարօտ *օծման* ցուցանել: - 475. Այս քան վասն *Օծման* փոքրիշատէ: - 475. Իսկ ձիթենին զպարարտութիւն *օծման* ջերմեռանդ և ողորմած սրտին: - 519. Երեսունգ, Վերջին *օծումն* յերկա՛ր բանիւք: - 526. Եւ ի գալն յերկիրս

hայոց, ետուն նմա օգնական զիւղն *օծման* զոր քրիստոս օրհնեալ էր...: - 549. Առ աստիճանս այս պարունակի է խորհուրդ եկեղեցւոյ. որ է՛ Մկրտութիւնն. Դրոշմն. Պատարագն. Ապաշխարութիւնն. Կարգ քահանայութեանն. Պսակն. և *Օծումն:* - 573. Հինգերորդ վերջին *օծումն:* - 587. Հինգերորդ վերջին *օծումն*. որ է՛ ելելոցն ի կենցաղոյս և զերծելոցն ի պատերազմէ՛: - 587. *Օծումն* է՛ խորհուրդ ի լրումն արդարութեան...: - 587. Ապաշխարութիւնն ընդ դէմ ներգործական մահու չափ մեղացն. և *Օծումն* ընդ դէմ ներելի մեղացն: - 587-588. Եւ գիտելի է, զի որ ի ճակատն և ի սիրտն և ի թիկնամէջն օծանէ, այն դրո՛շմ է. և որ զհինգ զգայութիւնսն օծանէ՝ այն ի խորհուրդ *օծմանն* է ծածկապէս: - 593. Զի՞նչ է վերջին *օծումն:* - 604. Վերջին *օծումն* է խորհուրդ եկեղեցւոյ...: - 604. Այս սուրբ *օծմամբս* և իւր գթութեամբն աստուած թողու քեզ զոր մեղանչեցեր տեսլեամբդ. նոյնպէս ասէ և այլ զգայութեանցն: - 604. Եւ թէ ոք ասիցէ՝ *օծումն* խորհո՛ւրդ է. ընդէ՞ր մեք ո՛չ ունիմք: - 604. Ասեմք թէ, ունիմք զխորհուրդ *օծմանն*, այլ ծածկապէս. որպէս ի մկրտութիւնն. - 604. ...զոր ասացաք ի վերոյ թէ՝ զդրոշմն և զառաջին *օծումն* և զվերջին *օծումն* կատարեմք ի մկրտելն: - 604. Այլ և զայս *օծումնս* ունիմք ի յոտնալուայն: - 604. Այլ և զայս *օծումնս* ունիմք ի ննջեցեալ քահանայս: - 604. ...և ո՛չ ի բառնիլն ապականէ զկարգ եկեղեցւոյ. որ է վերջին *օծումն*...: - 604. Դարձեալ՝ *օծումն* հիւանդաց ո՛չ սրբէ զմահու չափ մեղս. այլ զներելիս: - 604. Եւ թէ ոք ասիցէ, զառաջին *օծումն* որ նախ քան զմկրտելն՝ ո՛չ ունիմք: - 605. Դարձեալ և *զօծման* խորհուրդս ունիմք ի քահանայս ննջեցեալս...: - 605. Եւ թէ ոք ասիցէ, այս ննջեցելոց *օծումս*՝ վերջի՞ն *օծումն* է՝ թէ առաջին: - 605. Նոյնպէս և *օծումնս* այս է՛ վերջին որ զփոշետեսակ և զներելի մեղսն սրբէ. - 605. Այս քան վասն *Օծման:* - 605. Վեցերորդ օրհնեմք, զի բաժանեսցի յայլ աշխարհական տանց որք ո՛չ ունին *զօծումն* սրբութեան: - 615. Հինգերորդ, Քահանայաթաղ. և *օծման* նոցա. և ողջունին. **Ժ Ժ** թուով: - 660. ...և զի՞նչ է պատճառ *օծմանն:* - 672. ...գլխոյն *օծումն* խորհրդով յանդամն իջանէ...: - 672. Տասներորդ, նշանակէ զվերջին *օծումն*. զի ամենայն կարգ զոր մարմնոյն կատարեմք՝ հոգւոյն է և մարմնոյն որպէս ասացաք: - 673

**ՕԾՕՂ +** Դարձեալ գիտելի է, զի օծեալն նշանակէ երիս դէմս. այսինքն զօծեալն և զօծումն և *զօծօղն:* - 475. *Օծօղն* է հայր. և Օծումն որպէս իւղ հոգին սուրբ. և Օծեալն բանն մարմնացեալ: - 475

**ՕՁ +** Ութերորդ՝ զնա *օ՛ձ* դարանակալ ասէ ի ճանապարհի. և սոքա առաջին *օձին* նմանեալ՝ հրապուրեն զբազումս...: - 35. Իսկ թէ ոք ասիցէ՝ եղևն զփոփոխումն ցուցանէ. որպէս այն թէ՝ գաւազանն մովսէսի *օձ* եղև: - 72. Իմաստութեան *օձին* նմանիլ. և թէ զգլուխն ջախջախեմք. և թէ թոյնքն ի գլուխն է: - 155. Չորրորդ՝ խորխ. որպէս *օձից:* - 216. Կամ թոյնք. որպէս *օձի:* - 216. Գազանք և *օձք* և այլ կենդանիք որք վնասակա՛րք են՝ վասն է՞ր ստեղծան: - 217. Որպէս թիւրակէքն որք լինին *յօձից* և ի գազանաց: - 217. Զի՞նչ իմաստութիւն *օձին* որոյ պարտ է մեզ նմանիլ: - 218. Վասն է՞ր *զօձին* գլուխն ջախջախեն: - 218. Նա՛խ՝ զի *օձն* ի յայն մասնէն սատակի: - 218. Երկրորդ՝ զի թո՛յլ է գլուխ *օձին:* - 218. Վեցերորդ՝ զի գլխոյն՝ այսինքն տեառն աստուծոյ՝ իմանալի *օձն* հակառակեցաւ: - 218. Ութերորդ՝ օրինակ՝ զի գլուխ *օձին* է չար խորհուրդն որ մտանէ ի մեզ. պա՛րտ է սպանանել զնա: - 219. Ի նշանակել՝ զի մահու մարդոյն՝ սկիզբն *օձն* եղև: - 219. Եւ զի զթշնամութիւն էարկ ի մէջ մարդոյն և աստուծոյ, զթշնամութիւն եդ ի մէջ մարդոյն և *օձին:* - 219. Այսքան վասն *օձին:* - 219. Կարճ կլափն՝ նախանձո՛տ է և ո՛չ հեզ. զի նման է *օձի:* - 247. Երկրորդ՝ զի հաւատաց *օձին:* - 279. Երկրորդ՝ հեշտութիւն խօսակցիլ ընդ *օձին*. և վասն այն կամեցաւ լսել, զի հեշտացաւ վասն փառաց աստուածանալոյն: - 280. Իններորդ՝ խորհրդակից ունել ո՛չ զթունարկու *օձն*. այսինքն զարկածք չարին. այլ զպատուիրանս աստուծոյ որ ի գիրս սուրբս: - 281. Վաթսունգ, Պղնձի *օձն*. և թէ զի՞նչ եղև: - 285. Ութևժ, մովսէս *զօձն* բարձրացոյց որ զօձահարսն բժշկէր: - 329. Քսանևե, մովսէս զկախարդաց *օձն* կորոյս: - 329. Եւ տէրն մեր զիմանալի *օձն* կորոյս և կոխանեդ: - 329. Եւ զայն որպէս թէ ո՛չ ունիցին. և այնու կոխեսցեն զգլուխ կամակոր *օձին:* - 331. Զի՞նչ է գաւազանն ի *յօձ* փոխարկեալ: - 332. Առաջինն է գաւազանն ի *յօձ* փոխարկիլ: - 332. Նա՛խ՝ նշանակէ զնոյն ինքն սկզբնաչարն սատանայ. որ էր յերկինս գաւազան ուղղութեան և ընկեցեալ եղև *օ՛ձ:* - 332. Երկրորդ՝ դարձեալ նոյն ինքն սատանա՛յ է *օձն*. որ փոխեցաւ ի բարեկամի ձև. և պատրեաց զնախաստեղծսն: - 332. Երրորդ՝ թագաւորական գաւազան էր ադամ ի դրախտին. և յորժամ մեղաւ՝ անկաւ ի յերկիր և եղև *օձ* մեղաւոր: - 332. Է՛ որ զէութիւնն փոխէ. որպէս մովսէս զգետն յարիւն դարձոյց և զգաւազանն *յօձ*. և այս կոչի սքանչելիք: - 335. Եւ կսկի՛ծ է անհաւատից. և կուրացոյց *զօձն* կամակոր: - 361. Վասն է՞ր *օձիւ* հարկանէր ժողովուրդն: - 386. Նա՛խ՝ զի *օձին* հող ետ աստուած կերակուր և ո՛չ տրտնջեաց: - 386. Երկրորդ, ըստ

փիլոնի, *օձն* ցանկութեան է օրինակ, որ զցանկացօղ ժողովուրդն սատակէր. ի յախտս իւրեանց նմանեցոյց զպատիժն: - 386. Իսկ մովսէս հրամանաւն աստուծոյ արար պղնձի *օձ*. և բարձրացոյց ի դուռն խորանին. և որ հայէր ի նա՝ ապրէր ի թունից *օձիցն:* - 386. Նա՛խ՝ որպէս բարձրացաւ *օձն* ի ձողին. նոյնպէս տէրն մեր ի խաչին: - 386. Երկրորդ՝ որ հայէր ի *յօձն*՝ բժշկէր. և որ հաւատայ ի խաչեալն՝ բժշկի ի թունից մահաբեր *օձին:* - 386. Երրորդ՝ հակառակատիպ տեսանի. զի անդ *օձն* պղնձի զմարդ թշնամիս իւր կեցուցանէր և *զօձսն* սատակէր. և տէր մեր զմարդիկ ազգակից իւր կեցուցանէր, և զթշնամին սատանայ հալածէր: - 386. Վեցերորդ՝ առանց դառնութեան և թունից էր *օձն*. և տէր մեր առանց դառնութեան մեղաց: - 386-387. Եօթներորդ՝ *օձն* մեռեալ սպանանէր *զօձսն*. և զհարեալսն կեցուցանէր. և տէրն մեր մեռեալ մարմնովն զմեղս մեռուցանէր, և կենդանի աստուածութեամբն զմարդիկ կենագործէր: - 387. Ութերորդ՝ հինգպատ *օձին* է՛ **ե** զգայութիւնս մեր. զոր էառ տէրն և սրբեաց զմեզ: - 387. Տասներորդ, որպէս ասէ փիլոն՝ նշանակ հեշտ ցանկութեան է *օձն*. որ և զցանկացօղ ժողովուրդն սատակէր. ըստ ախտին իւրեանց նմանեցոյց զպատուհասն: - 387. Եւ դարձեալ վասն *օձին* տե՛ս ի հարուածն եգիպտոսի ի **ի** գլուխ համարոյն: - 387. Եւ վասն առաջին *օձին* ի **ժգ** գլուխ համարոյն տես թէ պիտի: - 387. Զի՞նչ եղև *օձն* պղնձի: - 387. Եւ *օձն* պղնձի ո՛չ է անիծեալ: - 400. Իսկ յետ մահուան ահարօնի նուազեաց մանանայն. յորում տրտնջէին և *յօձից* սատակեցան: - 415. Զի որպէս սատանայ *օձիւն* խօսեցաւ առ կոյսն եւա, այսպէս տէր մեր հրեշտակիւն առ կոյսն մարիամ: - 463. Եւ ադամ ասաց կնոջն՝ և կրկնեցաւ. և կինն *օձին*՝ և երեքկնեցաւ գիրն: - 481. Որ զադամ խաբեաց *օ՛ձ* էր. այժմ ի յորդանան վիշապ: - 488. Զի *օձն* ի բազում ժամանակս վիշապ լինի: - 488. Դարձեալ՝ *օձն* ի յերեսս երկրի, և վիշապն ի խորս և յանդունդս: - 488. Դարձեալ՝ վիշապն չարաթոյնք է քան *զօձն:* - 488. Գլուխ *օձին* մեղքն է. և խայթոց՝ կարճին մահն: - 489. Եւ ձողն յորում՝ *օձն* պղնձի բարձրացաւ: - 494. Նա՛խ՝ զի խորհրդոյն չարն ի բոլոր հոգի և ի մարմինն սփռի որպէս թոյնք *օձից:* - 557. Իսկ զանազանի մահացուն և ներելին ըստ առաւելութեան և նուազութեան. որպէս առաւել է հարկանումն *օձի* քան զլուոյ. և նետի քան զփշի. այսպէս և մահացուն է առաւել քան զներելին: - 568. Եւ որպէս *օձ* յայգւոյ ծաղկէն մեռանի, նոյնպէս նախանձոտն սատակի ի տեսանել զբարի ընկերին: - 569. Երրորդ, չորեքշաբաթն ի խորհուրդ խաբէութեան կայի. յորում ասաց *օձն* ուտել ի պտղոյն...: - 653. Իսկ հող ցանեալ ի գլուխն, գլուխ զմիտքն նշանակէ. որ ինքնիշխան եղև յաստուծոյ. և հնազանդեալ խրատու հողակեր *օձին*՝ մահացաւ...: - 670. Տասներորդ, զի կերակուր *օձին* է հող...: - 678. պատժեաց զմարդն և ետ զնա ի կերակուր *օձին*...: - 678. Եւ մեզ ետ իշխանութիւն կոխել *զօձս* և զկարիճս որ տկարացեալ էր և կապեալ: - 706. Եւ նահապետն յակոբ՝ *օձ* դարանակալ ի ճանապարհի: - 707. Զի նա՛ է *օձ* դարանակալ ի ճանապարհի որպէս ասաց յակոբ յազգէն դանայ: - 708. Երրորդ՝ որդունք անմահք. այսինքն *օձք*, վիշապք, տեսութեամբ և շաչմամբ ահագին: - 752

***ՕՁՆ ԱՐՔԱՅԵԿ*** - Եւ սողնոց *Օձն արքայեկ*. զոր իժ և քարբ ասեն: - 216

**ՕՁԱՀԱՐ +** Ութևժ, մովսէս զօձն բարձրացոյց որ *զօձահարսն* բժշկէր: - 329

**ՕՁԱՁԵՒ +** Վեցերորդ՝ նշանակէ՛ զբանն աստուած գաւազան ուղղութեան և թագաւորութեան առ հայր. եկն նա՛ յերկիր և էառ *զօձաձև* բնութիւնս մեր. և դարձեալ ըմբռնեալ մարմնովն ել յերկինս և նստաւ ընդ աջմէ հօր: - 332. Վեցերորդ՝ ձեռն հօր է՛ միածին որդին որ ել ի ծոցոյ հօր և էառ *զօձաձև* բնութիւնս մեր. և դարձեալ ել առ հայր, ի նոյն բնութենէն ո՛չ կացեալ ի բաց: - 333

**ՕՁԻՔ +** Նա՛խ՝ նշանակէ՛ ի մեզ զջերմեռանդ բորբոք այրեցման սրտին. որ ի բա՛ց հանէ *զօձիսն* և արտաաւէ...: - 670

**ՕՁՆԵՑԻ** - Չորրորդ՝ մեծ և արժանաւոր ժողովն եղև ի մանազկերտ. ի **ճհդ** թուականին. հրամանաւ և արդեամբք գիտնաւոր և մեծ իմաստասիրին սրբոյն յոհաննու կաթողիկոսին հայոց *օձնեցւոյ:* - 545. Զշարականս ո՞վ է ասացեալ: Եւ զանսկիզբն, յոհան մանդակունին: Եւ այլք ասեն թէ *օձնեցին:* - 637

**ՕՂ +** Եւ **ղ** *օղք* և **բ** լծակքն, զի չորեքնիւթեայ աշխարհի են խնամածուք երկակի զօրութեամբ խնամոցն աստուծոյ. այսինքն արարչական և արքունական: - 344-345

**ՕՃԻՐ (տ. ՈՃԻՐ) +** ...մարմնով մեռելոցն անթիւ *օճիրս* ստախօսութեան գործէր. զանտի կենաց զյարութեան յուսոյ և զհատուցմանց ըստ գործոց՝ բառնալով. զերկիւղ դժոխոց և զսէր արքայութեան. և զամենայն ինչ որ նմանէ այսմ հոգևոր բարութեան: - 775

**ՕՄԵԳԱ** - Իսկ էն՝ զմիշտ լինիլն ցուցանէ. ըստ այնմ՝ «ես եմ ալֆա և *օմեգա*». այսինքն առաջին և վերջին: - 49. Եւ ո՛չ ասի ի գիրս սուրբս ըստ այդմ բառի, բայց այլ կերպիւ ցուցանէ զայդ. այսինքն զի

ասէ, «Ես եմ ալֆա և *օմեգա*». յայսմանէ իմանամք զանսկիզբն և զանվախճանն: - 55. Ալֆա. և *օմեգա:* - 102. Զինչ է որ ասէ տեսիլն, «Ես եմ ալֆա և *օմեգա*. որ է այբ և քէ»: - 129. Այլ կոչի է, ըստ այնմ որ միշտ է՛, ո՛չ ունելով սկիզբն և ո՛չ վախճան. այլ ինքն է ամենեցուն սկիզբն և վախճան. որպէս ասէր՝ «ես եմ ալֆա և *օմեգա*»: -171

**ՕՆ +** Ասեմք առ այս թէ, *օն* ի բա՛ց տար ի մտաց քոց զհեթանոսական կարծիս. զի ո՛չ է հոգի յառաջ քան զմարմին. և ո՛չ մարմին նախ քան զհոգի որպէս ի սկիզբն ասացաք: - 260

**ՕՇԱՐԱԿ +** *Յօշարակաւ* մաճնաւն, յորժամ զմարմին և զարիւն իւր ետ աշակերտացն յետ ընթրեացն: - 491

**ՕՍԻԴ -** Ո՞ր է *օսիդ* աշխարհն: - 327. Այլ աշխարհն *օսիդ*՝ գաւա՛ռ է եսաւայ. զի *օսիդն* մի է յորդւոցն եսաւայ յորոյ անուն կոչեցաւ երկիրն *օսիդ:* - 327

**ՕՏԱՐ +** Չորրորդ՝ զի թէ չարն է յաստուծոյ, այլ արդ չարն եկամուտ է և պատահեալ. լինէր ապա ի յաստուած *օտա՛ր* ինչ և պատահական. որ է անտեղի: - 13. Երկրորդ՝ *օտար* ի բնութենէ և արարած ասեն: - 29. Այսպէս իմացիր և զոչ կարելն որդոյ առնել յանձնէ՛. այսպէս *օտար* ինչ ի հօրէ: - 44. Եւ թէ լինէր՝ գոյր և ի բնութենէ *օտար*. հետևէր ապա ոչ գոլ որդի հօր. թէ ոչ էր ի նոյն բնութենէն. ապա և ոչ հայր. զի հայր որդւո՛վն է հայր: - 44. Ապա ասեն՝ թէ գոյացութիւն է և ո՛չ յայլում՝ այսինքն ի հայր, *օտա՛ր* է ի բնութենէն. արարա՛ծ է և ո՛չ աստուած: - 52. Վեցերորդ՝ թէ արարա՛ծ է բանն և հոգին աստուծոյ՝ ապա *օտա՛ր* է յէութենէ աստուծոյ և եկամուտ և աւելոր՛դ նմա: - 56. Ա՛րդ եթէ երկրպագելի և աստուած՝ և այս վասն բնակութեան աստուծոյ, ապա ուրեմն եղեալ առ ժամայն աստուած և *օտար* ըստ բնութեան: - 67. Ապա և բաժանակա՛ն է ընդ մարդկային բնութեանն՝ և ո՛չ է միաւորեալ ընդ *օտար* տարբերեալ բնութիւն. և եղեր նեստորեան. **բ** անձն և **բ** բնութիւն յատուկ ասելով քրիստոսի: - 86. Իսկ թէ և որոշակի ասես ուղղափառ մտօք, և ո՛չ այն է զարտուղի. յորժամ ասես աստուծոյ մարմին և աստուծոյ արիւն. զի որ ինչ է՛ ի յաստուած՝ աստուած է և ո՛չ *օտար* յաստուծոյ: - 92-93. Ա՛րդ՝ եթէ զհայր ո՛չ ոք ի *յօտարաց* ճանաչէ՝ և ո՛չ որդի ճանաչէ ըստ քեզ, եղիցի և որդին *օտար* ի հօրէ: - 96. Երրորդ՝ գութն առ ընտանիս է, և սէրն առ *օտարս:* - 144. Այլ արդ՝ յայսցանէ *օտա՛ր* են աստուածայինքն: - 162. ...զղջումն և երկբայութիւն. որ *օտա՛ր* է արարչականն կամաց: - 162. Երրորդ՝ զի արարած լսելով՝ մի՛ կարծեսցես *օտար* ի նմանէ զեղեալքս, կոչէ՛ ծնունդ. և յորժամ ծնունդ լըւիցես, մի՛ կարծեսցես յէութիէէն աստուծոյ զեղեալքս՝ ի վերայ բերէ արարած: - 179. Եւ բազում վարդապետք ի մէնջ և *յօտարաց* այսմ համաձայնին: - 221. Վասն է՞ր է զի ամենայն անհատք ի մարդկանէ համատիպք են միմեանց. և *օտարք* իրերաց. զի նմանք են, և աննմանք որակութեամբ և ձևով: - 235. Իսկ երկրորդն թէ յորմէ՞ սեռէ է *օտարն* և աննմանն՝ գիտելի է...: - 236. Ապա ուրեմն յա՛յտ է զի աննմանն և *օտարն* են ի սեռի որակութեան և յատուկ ձևոյ որակի: - 236. Երկրորդ՝ զի ոչ հարազատ որդին սեպհականէր զժառանգութիւնս հօր. այլ *օտարն* ի մեծութիւն հասանէր, և իւրն չքաւորութեամբ տառապէր: - 238. Տասներորդ՝ զի և բանականս մարդ՝ քան զանբան կենդանիս տգէտ լինէր. վասն զի ամենայն կենդանի ունի բնական ճանաչումն իւրոց և *օտարաց*...: - 238-239. Երկրորդ՝ *օտար* և ընդ դէմ բնութեան գործեցին, *օտար* և երկնատեղաց հրով այրեցան: - 303. Նա՛խ՝ զի *օտարք* և հիւրք էին որդիքն յակոբայ՝ և ատեցին զնոսա: - 335. Եօթներորդ, նոքա *յօտարա՛ց* մատուցանէին. այսինքն զուարակ և նոխազ, իսկ քահանայապետն մեր քրիստոս զմարմին իւր պատարագեաց հօր ի հոտ անուշից...: - 354. Կամ զի *օտար* հուր եդին ի բուրվառն որ չէր օրէն: - 364. Եւ քահանայքն հպարտացան և *օտար* հրով խնկարկեցին ի ներքս վարագուրին, վասն այն պատժեցան ի խրատ այլոց: - 364. Է՛ և ա՛յլ իմն տեսութիւն բանիս. զի կամի՛ զպաշտօնս մեր որոշել ի կռոց զոհիցն. զի սուտանուն դիքն խնդրէին ուստերս և դստերս և արջառս և ոչխարս զոհել և սպանումն *օտարաց:* - 396. Իսկ ճշմարիտն աստուած զայս ո՛չ խնդրէ. այլ երկիւղ խնդրէ ի տըղայոց որով խորշին ի չարէ. և սէր ի սրտէ փոխանակ անասնոց. և խաղաղութիւն առ ընկերս և *օտարս*...: - 396. Նախ՝ զի ասէ՝ «յեղբարց ձերոց». այսինքն ո՛չ *յօտարաց*, այլ յազգէ նոցա յուդայէ՛, և ի ղևեայ եղբարց: - 399. Երրորդ՝ զի ասէ՝ զպատգամն աստուծոյ ունի և ո՛չ *զօտար* աստուծոյ...: - 399. Եւ բնութեամբ աստուած՝ մարմնովն. և ո՛չ *օտար* և շնորհօք: - 402. Քսանք**բ**, նա՛ վասն *օտարաց* աղօթեաց: - 441. Այլ և օրէն էր նոցա, որ իւրաքանչիւր ոք յազգէ իւրմէ առնոյր իւր կին և ո՛չ *յօտարէ:* - 460. Այլ և քահանայքն ո՛չ յանցանէին զօրինօքն և *յօտար* ազգէ տային նմա կին: - 460. Ութերորդ՝ զի թլփատութեամբն զինքն եղբայր հրէիցն ցուցանէր. ըստ այնմ «մարգարէ յարուսցէ ձեզ տէր յեղբարց ձերոց». զի մի՛ մերժեսցեն զնա իբրև *զօտար* և ոչ վկայեալ ի մարգարէիցն: - 485. Ապա ուրեմն *օտա՛ր*

արկածք էր ապականութիւնն, վասն այն ո՛չ կրեաց ի սուրբ մարմին իւր անապական: - 497. Եւ այսպէս լինի կատարեալ. մեղք խառնեալ *օտարին* գաղտնապէս, ըստ մտածութեանն բնաւորապէս: - 558. Յաւատն է՞ զի ո՛չ ոք ի յերկուցն պղծեսցի *օտար* անկողնով. որպէս այն որ թողու զհաւատն և ուրանայ բանիւ...: - 610. Նոյնպէս որ *օտար* անկողնով պղծէ զշաղկապ պսակին, որոշի յօրհնութենէն և պղծի անկողինն սուրբ: - 610. Զի *օտար* ազգք՝ միջնորդութեամբ փեսային և հարսին որ են մի մարմին, լինին և նոքա մի ազգ: - 611. Վասն է՞ր ի հին օրէնս եդաւ յիւր ազգէն առնուլ հարսն, և ի նորս *յօտար* ազգէ: - 612. Իսկ ի նորս *յօտար* ազգս առնել խնամութիւն...: - 612. Վասն որոյ *յօտար* ազգէ լինին խնամիք. և *յօտարէն* հոգևոր որդիք: - 612. Դարձեալ՝ բանն աստուած փեսայ կոչի հարսին եկեղեցւոյ. և *զօտար* բնութիւնս մարդկան միաւորեաց ընդ ինքեան: - 612. Յասմանէ ուսեալք ազգ քրիստոնէից *յօտար* ազգէ առնեմք զհարսն: - 612

**ՕՏԱՐԱՁԱՅՆ +** Իսկ լուծումն հարցմանցս այսոցիկ, ո՛չ ամենևին *օտարաձայն* աւելորդս խուզեալ. և ո՛չ գեղջուկ իմն աշխարհական խօսից յարմարեալ: - 772

**ՕՏԱՐԱՆԱՄ +** Չորրորդ՝ զի մի՛ ամենևին *օտարեսցին:* - 402. ...յայն ճանապարհ է *օտարացեալք*...: - 756-757

**ՕՏԱՐԱՑՈՒՑԱՆԵՄ +** Վեշտասաներորդ՝ զպարգևս տուեալ ի նմանէ ո՛չ *օտարացուցանէ:* - 576

**ՕՏԱՐԻՏ (տ. ՓԱՅԼԱԾՈՒ) +** Վեցերորդ Փայլածուն. զոր *օտարիտ* կոչեն. միշտ շրջի ընդ արեգականն. և սակաւ հեռանայ ի նմանէ. զընթացս իւր կատարէ՛ **յլը** աւուրս. **ժ** օր պակաս քան զլուսաբերն. և այլք թէ **գ** ամիս: - 189. Զզօհալն Կռոնոսի. Զմուշթարին Դիոսի. Զմառեխն Արէսի. Զարեգակն Իլիոսի. կամ Զևսիլոսի. Զօհրայն. Ափրոդիտեայ. *Զօտարիտն* Երմեսի. Զլուսինն Սելինի: - 190

**ՕՏԱՐՈՒԹԻՒՆ +** Այս *օտարութիւն* անուանցս լծակցեալ ընդ միմեանս՝ առնէ զմոլորութիւն հերձուածողացն: - 43. Տե՛ս՝ զի ի մի բնութիւն *օտարութիւն* ո՛չ ասի. վասն այն է աստուծոյ կամքն մի և ներգործութիւնքն մի. զի բնութիւնն մի է: - 45. Եւ ապա թէ՝ յորմէ՞ սեռէ է *օտարութիւնն:* - 235. Այլ անճառ երանութիւնն և առաքինութիւնն է աստուծոյ գեղեցկութիւնն զոր մեզ պարգևեաց. այսինքն մաքրութիւն, անախտութիւն, և ի չարէն *օտարութիւն* ասէ նիւսացին սուրբ գրիգոր: - 271

**ՕՐ (տես նաև՝ ԱՒՐ) +** Գիտելի է, զի հին ասելով՝ զյաւիտեանն նշանակէ. և *օր* զժամանակն: - 115. Ա՛յս է զի կոչի յաւիտեան. և ժամանակ. և *օր*...: - 115. Նախ՝ զի է՛ և գո՛յ աստուած յամենայն յաւիտեանս. և յամենայն ժամանակ. և յամենայն *օր:* - 115. Երկրորդ՝ զի նախ է քան զամենայն յաւիտեանս. և քան զժամանակ. և քան զամենայն *օր:* - 115. ...յայնժամ միայն ծագեցին յառաջին *օրն* յանկարծակի և անկան յերկնից. թէպէտ ոմանք յերկրորդ *օրն* ասեն: - 148. *Օր*, ամիս, և տարի և շաբաթ, և ժամք, վերադիր, և րոպէք, ոլոմպիադ, և այլն: - 154. Թէ ի **գ** *օրն* ստեղծան ամենայն: - 154. *Օր* մի. և յատկութիւն միաշաբաթի, և վերջին աւուրն: - 154. Նախ՝ ի շարժմանէ՛ երկնային մարմնոց. զի միշտ նոյնպէս և անդադար շարժին. առնելով *զօր* և զամիս...: - 181. Զի՞նչ է որ ասէ մեծն իգնատիոս վասն արեգական՝ թէ յամենայն *օր* ի բաց դնէ զլոյսն և զջերմութիւն, և միւս անգամ յարփոյն առնու: - 186. Այլ վարդապետք եկեղեցւոյ ասեն ըստ պղատոնի եթէ՝ լոյսն խզումն է ի տարրական հրոյ, որ յառաջին *օրն* գոյացաւ: - 188. Երրորդ՝ Յրա՛տն. զոր մարեխ անւանեն. ջերմ է և չոր. **խ** *օր* յամէ՛ ի կենդանակերպն. և ի **ժզ** ամիսն պատէ՛ զամենայն: - 189. Չորրորդ Արեգակն. զոր շամս կոչեն ջե՛րմ է և լուսաւոր. **լ** *օր* և **ժ** ժամ և կէս յամէ՛ ի կենդանակերպն. և ի բոլոր տարին վճարէ՛: - 189. Յինգերորդ Լուսաբերն. որ է՛ արուսեակն. զոր կոչեն զօհրա. ջե՛րմ է և խոնաւ. **յխը** *օրն* կատարէ՛, զընթացսն. և այլք ասեն թէ ի **գ** ամիսն: - 189. Փայլածուն... զընթացս իւր կատարէ՛ **յլը** աւուրս. **ժ** *օր* պակաս քան զլուսաբերն. և այլք թէ **գ** ամիս: - 189. Եօթներորդ Լուսինն. զոր կամր կոչեն. հո՛վ է և գէճ. **բ** *օր* և կէս յամէ՛ ի կենդանակերպն. և ի **իթ** *օր* և կէս պատէ՛ զամենայն: - 189. Ասացեալ մոլորակացս՝ *զօր*՝ և զամիս՝ և զտարիս՝ ո՛րն առնէ: - 190. Իսկ *զօր*՝ որ է տիւ և գիշեր. և զդ եղանակս. և զտարի, արեգա՛կն կատարէ: - 190. Զի յարևելից կիտէ՛ ի նոյն կէտ շրջեալ՝ լինի *օր* մի. որ է **իդ** ժամ. երկու ժամ միոյ կենդանակերպի: - 190. Իսկ շաբաթն որ է՛ **է** *օր*՝ կոչեցաւ յեօթն մոլորակաց: - 190. Յարեգական *օրն* կոչեցին կիրակէ. որ է՛ տէրունական վասն յարութեան տեառն: - 190. Եւ գիտելի է, զի *օրն* պատկեր է ամսոյն և տարւոյն: - 190. Զի տարին է՛ **յկե** *օր:* - 190. Եւ *օրն* ի տիւն միայն՝ **յկե** մասն: - 190. Եւ ի բոլոր տարին առնէ զ**ե** *օր* աւելեացն: - 190. Իսկ կէս մասն ի մեկ ամիսն՝ լինի կէս ժամ. և ի մեկ տարին **զ** ժամ. և ի **դ** տարին ժողովեալ՝ լինի *օր* մի **իդ** ժամ. և ա՛յն առնէ զնահանճն. և շարժէ՛ զտօնս և զեղանակս: - 190. Զի արեգական տարին է՛ **յկե** *օր*. և լուսնին տարին **յծդ** *օր*. **ժա** *օր* պակաս քան զարեգակն: - 191. Ասեմք եթէ՝ լուսինն ընթանայ ի կենդանակերպսն **իթ** *օր* և կէս՝ և ծնանի: - 191. Եւ

արեգակն ի կենդանակերպն կատարէ՛ **լ** *օր:* - 191. Արդ յամենայն ամիս կէս *օրն*՝ ի բոլոր տարին լինի վեց *օր* պակաս լուսնոյն: - 191. Եւ **ե** *օր* ևս աւել աւուրքն, որ լինի **ժա** *օր:* - 191. Իսկ **ե** *օր* աւելեացն՝ է՛ **ե** *օր* Արարաչութեանն նախքան զստեղծումն ադամայ: - 191. Իսկ Գարնանամուտ՝ որ է՛ հասարակածն՝ է՛ չորրորդ *օրն*. յորում լուսաւորքն կազմեցան: - 191. **Զի ըստ հոռոմ համարին այսպէս է. մա՛րտի ժէ՝ Առաջին *օր* արարչութեան է, յորում եղև լոյսն**: - 191. **Նոյնպէս և ի մերն ի հին հայոյն, Արեգի ի թ է՛ առաջին *օր* արարչութեանն:** - 191. Իսկ եբրայեցիքն ո՛չ այսպէս, այլ՝ առաջին *օր* արարչութեան է՛ նոցա աւելեացն **ա**: - 191. Զի *օրն* ընդ տիւ և ընդ գիշեր է՛ **իդ** ժամ: - 191. Եւ ժողովեալ մէկ *օրն* **իդ** ժամ՝ լինի **դ** բիւր և **սբճ** րոպէ: - 191. Իսկ իննևժերեակն է, զի ընթանայ լուսինն ի տարին **յծդ** *օր*՝ և **ժթ** մասն. որ լինի ի **ժթ** ամին՝ **յկա** մասն: - 191. Եւ արա՛ զերեսուն մասն մի ժամ, և զերկոտասան ժամն մի *օր*. և կոչի այս՝ իննևժերեկի ամ. որ աւելու ի լուսինն մի *օր:* - 191. Եւ արա՛ զերեսուն մասն ժամ մի. և զերկոտասան ժամն *օր* մի: - 191-192. Իններորդ՝ ի վեց *օրն* ստեղծեալ աշխարի. նշանակէ՛ **զզ** դարս. որով մնայ աշխարհ: - 193. Զի առաջին *օրն* ցուցանէ զառաջին դարն՝ որ յադամայ մինչև ցնոյ: - 193. Վասն է՞ր ասէ գիրն՝ «եղև *օր* մի». և ո՛չ թէ՝ առաջին. և այլն ըստ կարգի: - 193. Նա՛խ՝ զորքանութիւն աւուրցն ցուցանէ, թէ տիւ և գիշեր **իդ** ժամն լինի *օր* մի բնական: - 193. Երկրորդ՝ զի մի և նոյն *օր* կատարի դարձմամբ արեգականն ի կիտէ՛ ի նոյն կէտ արևելից: - 193. Երրորդ՝ զի յորժամ կատարին է աւուրքն՝ դառնամք ի յառաջին *օրն* որ է՛ մի և նոյն: - 193. Չորրորդ՝ նշանակէ՛ զփութանցութիւն աւուրցս մեր. զի ամենայն ժամանակք մեր անցանեն իբրև զմի *օր* անզգայաբար: - 193. **Հինգերորդ՝ այս մին *օրս* է որ կրկնելով կատարէ՛ զշաբաթ և զամիս և զտարի և զդարս կենցաղոյս, և հասանէ՛ ի վերջին *օրն*. որ է՛ մի *օր* աներեկ և անփոխանորդ:** - 193. Հինգերորդ՝ *օ՛ր* է հասարակ յարութեան մարդկան. և գալստեանն քրիստոսի. և հատուցման ըստ իւրաքանչիւր գործոց: - 193. Չորրորդ՝ զի *օր* զնա ո՛չ երկրորդէ: - 193. Եւ դարձեալ այսպէս զանազանին սոքա երեքեան աւուրք. այսինքն առաջին *օր* ստեղծման. և միջին մինչ ի կատարած. և վերջին *օր* յարութեան: - 193. **Զի առաջին *օրն* եղև անառաւօտ. և վերջինն աներեկոյ. և միջինն ամենայն աւուրք ունին առաւօտ և երեկոյ:** - 193. Նախ գիտելի է, զի կրկին է *օր*. այսինքն *օր* բնական, և *օր* արւեստական: - 194. *Օր* բնական այն է՝ որ լինի ի կիտէ ի կէտ **իդ** ժամ: - 194. Իսկ *օր* արուեստակա՛ն է ծագումն լուսոյ մինչև յերեկոյ՝ առհասարակ յամենայն ազգս: - 194. Նա՛խ՝ զի բնական *օրն* է տիւ և գիշեր: - 194. Իսկ արուեստական *օրն* միայն տիւ ասացաւ: - 194. Երկրորդ՝ բնական *օրն* հաւասարաչա՛փ է. զի ո՛չ առաւելու և ո՛չ նուազէ: - 194. Իսկ արուեստական *օրն* առաւելու և նուազէ՛: - 194. Եւ բնական *օրն* զանազանապէս է առեալ ի զանազան ազգս: - 194. Զի հրէայք և ասորիք՝ զերեկո՛յն դնեն սկիզբն բնական աւուր. ասելով՝ «եղև երեկոյ և եղև վաղորդայն *օր* մի»: - 194. Իսկ աստեղագէտք զհասարակ *օրն*. յորում արեգակն ի բարձրութիւնս իւր հասանէ: - 194. Ո՞րքան եղանակաւ ասի *օր:* - 195. *Օր* ասի **ժե** կերպիւ: - 195. Երկրորդն է՛ որդի. զորմէ ասի, «ո՞չ երկոտասան ժամք են աւուր». *օր* կոչէ զինքն. և ժամք զառաքեալքն: - 195. Երեքտասաներորդն է՛ արուեստական *օր*՝ յարևելից մինչև ի մուտս արևու...: - 195. Չորեքտասաներորդն է՛ *օր* տուընջեան...: - 195. Հնգետասաներորդ՝ ասի օրէնքն *օր* ըստ սովորութեան...: - 195. Ուսաք յիմաստնոց թէ՝ ի բաժանիլ լեզուաց **իբ** տանուտերանց, և ի գնալն յիւրաքանչիւր տեղիս ի հեռու կամ ի մօտաւոր աշխարհս. *զօրն* զայն տարեմուտս կարգեցին. և ուսուցին որդւոց իւրեանց պատւեալ *զօրն* զայն տրօք ընչից: - 200. Քանզի եբրայեցիք և մակեդոնացիք՝ Զաւելեաց աւուրքն դնեն գլուխ տարւոյ. և ասեն *օր* առաջին. և **բ**. և **գ**. և **դ**. և **ե**. և վեցն մուտ Նիսան ամսոյ. որ թարգմանի կազմութիւն: - 200. Տրէ. զի առնու գիշերն *յօրէն* զժամ և զմասունքն. որպէս կրելով յինքն: - 200. Յառաջին *օրն* եղև առաջին երկինքն ի սկզբանէ: - 221. Յերկրորդ *օրն* եղև հաստատութիւնն երկնից: - 221. Յերրորդ *օրն* եղև դրախտն երկին: - 221. յԵրկրորդ *օրն*, հաստատութիւնն և ջրեղէն կամարն. և ծովք. և ցամաք երկիր: - 226. յԵրրորդ *օրն*, բոյսք և տունկք և դրախտն: - 226. Յերկրորդ *օրն*՝ ի միջին տարրէ՛ ջրոյն զձկունս և զթռչունս: - 227. Կատարումն յաղագս արարածոց զ *օրէից:* - 227. Իսկ որ ի **զ** *օրն* ասեմք ստեղծեալ զարարածս, այս զկարգ և զդասն նշանակէ մի քան զմի յետոյ. այլ ստեղծումն համանգամայն եղև: - 253. Ի մածնուլն արւական և իգական սերմանցն՝ լինի որպէս պանիր մինչև ի **զ** *օրն*...: - 261. Ապա կազմէ՛ զձև զգայականին մինչև ի **ի** *օրն*...: - 261. Եւ ի **իա** աւուրցն ի վեր՝ երևեալ շնչոյն ձևակերպէ՛ զկերպ մարդոյ մինչ ի **խ** *օր* արու մանկան...: - 261. Որև յաւելեալ իր ինչ զգայական՝ լինի **զ**. վասն որոյ առ հասարակ ի **զ** ամիսս ծնանին. և ա՛յլք ի **զ** շաբաթս. և կէսք ի **զ** *օրս:* - 263. Չորրորդ՝ Վասն չգիտելոյ մեր *զօր* մահուն. և վասն ցաւագին կենացս: - 283. Եւ յԵրրորդ *օրն* սրբիլ: - 285. Երեսուն *օր* սուգն: - 285. Զի վասն առաջնոյն ասեն վարդապետք, եթէ ադամ ո՛չ եկաց ի դրախտին **ռ** ամ, կամ աւելի և կամ պակաս,

այլ մի *օր*. մանաւանդ **է** ժամ: - 290. Նախ՝ եթէ **ռ** ամն մեր՝ յաչս տեառն որպէս *օր* մի է: - 290. Այլ ադամ յերեկո՛յն ել ի դրախտէն. և ո՛չ կատարեաց *զօրն* բոլոր...: - 290. Երկրորդ՝ որպէս մանուկն տևէ՛ յարգանդի **թ** ամիս՝ և **ե** *օր* անդրանկանն՝ և ապա՛ ծնանի: - 290. Իսկ ի վերջին դարս որ է՛ լուսնին՝ սակաւակեացք են մարդիկք. զի նա՛ ի **լ** *օրն* վճարէ զբոլոր ընթացս իւր: - 291. Ասեմք թէ ո՛չ էր պատշաճ մեզ գիտել *զօր* մահուն, և ո՛չ զվախճան աշխարհի...: - 292. Նա՛խ՝ եթէ գիտէ՞ր մարդ *զօր* մահուն, ո՛չ շինէր և ո՛չ տնկէր և ոչ ծնանէր զաւակ. և լինէր պատճառ աւերման: - 292. Եւ որ քան *օրս* յաւելու, նոյնպէս և ցաւս մեր բազմանայ: - 292. Քանի՞ *օր* կացին ի տապանին: - 294. Բոլոր տարի մի. զի այսպէս ասէ գիրն թէ՝ **ճծ** *օր* բարձրացաւ ջուրն. և յետոյ **ճծ** *օր* ցածուցաւ. որ լինի **ժ** ամիս: - 294. Եւ **գ** եօթն է որ արձակեաց զաղաւնին որ լինի **իա**. և **ե** *օր* աւելեացն որ լինի տարի մի: - 294. Եւ բարձրացուցին զ**ժ** ամսոյ ճանապարհ ընդ ելն և ընդ էջն. որչափ բարձրացաւ ջուրն **ճծ** *օր*, և **ճծ** *օր* դարձեալ իջաւ: - 296-297. Եօթնև**ժ**, որպէս իսահակ արձակեցաւ յետ երից աւուրց, զի ի կամս հօրն *յօրէ* յայնմանէ էր մեռեալ՝ ուստի սկիզբն եղև ճանապարհին: - 306. Երրորդ՝ զի նա՛խ բանայ զարգանդ ծնողին և գայ ի կեանս. որ և **ե** *օր* աւելի ստանայ զկեանս յարգանդի: - 310. Զի՞նչ է որ որդիքն յոբայ պատուէին *զօր* ծննդեան իւրեանց ի միասին ժողովիլով: - 321. **Նա՛խ՝ որպէս հասարակ շինականք ի ծննդեան զաւակաց զմին *օրն* պատուեն աղարուք կոչելով:** - 321. Եօթներորդ՝ մովսէս **խ** *օր* անսըւաղ պահեաց ի լերինն: - 328. Եւ տէր մեր պահեաց **խ** *օր* ի փորձութեան լեառն: - 328. Ութերորդ, մովսէս **խ** *օր* ի մէջ ամպոյն կալով էառ զպատուիրանսն: - 328. Եւ տէրն յետ յարութեանն զ**խ** *օր* ի վերայ օդոյդ: - 328. Եւ թէ ոք ասիցէ, վասն է՞ր յառաջին *օրն* նեխեցաւ, և յամենայն *օր* հալէր: - 339. Իսկ յամենայն *օր* հալէր հրամանաւն աստուծոյ, զի դադարեսցեն ի հաւաքելոյ. և ապա զի դարձեալ խնդրեսցեն առաւօտել առ աստուած: - 339. Այսպէս յետ **ծ** աւուրց տւաւ օրէնքն. և **ծ** *օր* պահքն երեքօրեայ սրբութիւն: - 344. Եւ միշտ յամենայն *օր* ի թոշակ հանգուցեալոցն: - 346. Եւ մին յորժամ զլրտեսքն առաքեցին ի կագիսա. և **խ** *օր* յամեցին և մովսէս զ**խ** պահեաց: - 353. Եւ ո՛չ միայն այս, այլ զեօթն *օր* անխմոր բաղարջ ուտէին ամենայն ժողովուրդն...: - 356. Իններորդ, պատարագ ուխտի. որ ո՛չ վասն երախտեաց ինչ, այլ իւր կամաւ ուխտեալ. որ յերկրորդ *օրն* ևս ուտէին զմիսն: - 359. Եւ ի սմանէ առցեն ասէ զհաս իրաւանցն. և զմնացեալն եփեսցեն ի սուրբ տեղւոջ և կերիցեն քահանայքն զեօթն *օր:* - 359. Ահարոն և որդիքն է *օր* մնացին ի խորանն. վասն է՞ր մեք **խ**: - 363. Դարձեալ՝ որպէս քրիստոս յետ մկրտութեանն՝ ի լեառն պահեաց **խ** *օր:* - 363. Եւ որպէս երեխայն նախ քան զմկրտիլն **խ** *օր* ուսանի զխորհուրդն: - 363. Այլ և պահեն զեօթն *օր* սուրբ զգեստիւն: - 363. Եւ ի սոցանէ ո՛ր և իցէ, արտա՛քս է յեկեղեցւոյ և ի սրբութեանց, *օր* մի կամ **բ** կամ աւելի. և սրբի խոստովանութեան ջրովն: - 368. Ի եօթներորդն ամիսն որ է՛ թշրին՝ **ժ** *օր* քաւութեան տօնէին. զի **է** շաբաթ շաբաթուցն ի նա՛ է. և **է**երորդ ամիսն. այլ և **ժ**երորդ *օրն* շաբաթ էր: - 371. Նա՛խ՝ *օր* շաբաթուն: - 372. Եւ յաղագս երից պատճառաց **ը** *օր* տօնեմք գալստեան սուրբ հոգւոյն: - 373. Եւ եօթնից **է** տօնեմք յարութեան. նոյնպէս զմի *օր* օրհնացն տըւչութեան, տօնեմք **ը** *օր* հոգւոյն գալստեան: - 373. Երրորդ՝ զի հաւասարք են **գ** տօնքս. որպէս ծննդեան և յարութեան՝ նոյնպէս և հոգւոյն գալստեան **ը** *օր* տօնեմք: - 373. Եւ թէ ոք ասիցէ, ընդէ՞ր ծննդեան և յարութեան **ը** *օրէք* առնեմք և հոգւոյ գալստեան ո՛չ: - 373. Եօթներորդ՝ տօն տաղաւարահարացն որ նշանակէ՛ առ մեզ զտօնելն եկեղեցւոյ, ի բոլոր ամն **ը** *օր* կատարի: - 373. Այլ և զօրհնելն եկեղեցւոյ՝ **ը** *օրն* նաւակատիս կատարեմք: - 373. Այլ և նշանակէ՛ *զօր* մեծի ուրբաթուն չարչարանացն քրիստոսի. որով քաւեցաք ի մեղաց: - 373. Զի՞նչ էր որ ի տաղաւարահարքն ըստ միոյ միոյ աւուրց մի մի զուարակ պակասէին ի տօնս. և յութերորդ *օրն* ի մինն յանգէին: - 374. Իններորդ՝ զի մերձեալ տեսանէ *զօր* մահուն և զթշնամին առաջի աչացն որով պատրաստի: - 378. Զի՞նչ ցուցանէր **գ** *օր* յառաջ գնալ տապանակին դիտեալ զհանգիստ: - 380. Եւ նախ **գ** *օրն*. **գ** գոյացութիւն նորին. այսինքն աստուածութիւնն՝ հոգին՝ և մարմինն միաւորեալ մի: - 380. Չորրորդ, **գ** *օրն* ի մեզ զղջմամբ և խոստովանութեամբ և փոխարինաւն հանգչիմք: - 380. Զի՞նչ էր յերրորդ *օրն* սրբիլ. և յեօթն սրբիլ. և թէ յերրորդն ոչ սրբեսցի, և մի՛ յեօթն սրբեսցի: - 384. Նա՛խ՝ **գ** *օրն* հաւատն **է** յԵրրորդութիւնն սուրբ. և ապա՛ սրբութիւն գործոց է **է** զգայութեամբ: - 384. Երկրորդ, մկրտութիւնն է **գ** *օրն*. զի ունի հրաժարիլն և զդաւանելն և զմաքրիլն...: - 384. Այլ և փիլիպպոս **խ** *օր* արտաքոյ եկաց դրախտին: - 391. Զի ասեն եթէ՝ **խ** *օր* էր պայմանն ադամայ. յետ **խ** աւուր ուտէր ասեն՝ ի փայտէն գիտութեան և սրբութեամբ որդիս ծնանէր. և ապա՛ ուտէր ի կենաց փայտէն և վերափոխեր. և այլ բազում բանս տողե՛ն: - 391. Այլ ոմանք **է** *օր* ասեն յամել ի է գօտիս. վասն որոյ **է** *օրէք* առնեն: - 391. Զի **խ** վասն այն կատարեմք, որ առաջինքն զննջեցեալքն **խ** *օր* լային անմխիթար. որպէս զնահապետն

յակոբ լացին **խ** *օր:* - 391. Զի զաւարօն և զմովսէս **լ** *օր* լացին: - 391. Իսկ **է** ի յայն խորհուրդն, զի որ ի պիղծ մերձենայր՝ **է** *օր* արտաքոյ բանակին կալով յերրորդ և յէերորդ *օրն* սրբէր, և ապա՛ մտանէր. վասն որոյ **գ** *օրէք* և **է** *օրէք* կատարեմք: - 391. ...վասն որոյ յայսմանէ ասեն ոմանք թէ՝ **գ** ամ կամ **խ** *օր* յամեաց ադամ ի դրախտին...: - 397. Զի *օր*՝ ժամանակիս այս պատշաճի. և շաբաթ՝ մահուն հանգիստն. և ամիս՝ մինչ ի յարութեանն: - 399.. Եւ հայրազեղծն որ հարկանէր զծնօղ, զանիծից փայտէ կախէին, և ի նոյն *օր* ի գերեզման իջուցանէին զի մի՛ պղծեսցին: - 400. Ա՛րդ՝ ի նոյն *օր* զանիծեալ հայրազեղծն հանէին ի փայտն անիծից վասն հօրն: - 400. Զոր յայսմ *օրէ* և յառաջ՝ ասեն զամպ հովանին վերացեալ ի նոցանէ: - 410. Վասն է՞ր **լ** *օր* սգացին: - 411. Երեսուն *օրն* աւուրք է լուսնին որ փոխէ զտխրութիւն և ի լոյս գայ: - 411. Արդ սուգն *օր* ըստ տարւոյ երեսուն *օր* էր: - 411. Երրորդ՝ զի երեսունն **գ** **ժ** է. զի **ժ** զգայարանքն մարմնոյ և հոգոյ և մտաց՝ քակտի. վասն որոյ **լ** *օր* սգան: - 411. Քսաներորդ՝ յեսու զլուսաւորսն կապեաց և արար զմի *օրն* **բ**: - 418. Եւ տէր մեր ի ժամ խաչին խաւարեցոյց զնոսա և մի *օրն* եղև **բ**: - 418. Եօթներորդ՝ զի ասաց «առ վաղիւն անկանիցիք ի պատերազմին». և ոչ յերկրորդ և ո՛չ յերրորդ *օրն* ո՛չ եղև պատերազմ. ապա ուրեմն սուտ խօսեցաւ: - 430. Վեշտասաներորդ, դարձեալ **խ** *օր* արձանացաւ գողիաթ և զտէրն **խ** *օր* փորձեաց սատանայ: - 436. Երկրորդ՝ զի ի նոյն *օրն* ո՛չ մեռցի: - 439. Եւ այս գիտելի՛ է, զի դատաստան հին օրինացն հայի յարդարութիւնն աստուծոյ. և *օրն* դատաստանի: - 439. Երկրորդ՝ զի **ի** ամն իբրև զմի *օր* համարեցաւ նոցա. զի հանգիցեն ի չար գործոց, և երկիրն ի չար գործելոյ: - 448. Եւ ի մարտի **իե** էն մինչ ի դեկտեմբերի **իեն** համարեն **թ** ամիս և **ե** *օր*, և ա՛նդ ասեն զծնունդն: - 483. Այլ մեզ այսպէս իմանալի է. զի թշրինի մէկն նուիրեալ *օր* սուրբ տն կոչեսցի ասացաւ. որ է՛ սեպտեմբերի **ժը**: - 483. Եւ թշրինի **ժ** միշտ առաջին *օր* քաւութեան. յորում մտանէր քահանայապետն ի սուրբն սրբոց: - 483. Եւ անտի մինչև ի տբէթի **իա**՝ և յունվարի **զ**՝ կատարի **թ** ամիս և **ե** *օր:* - 483. Եւ աւուրք պաշտամանն էր երկոտասան. **ե** *օր* քաւութեանն վասն որթոյն յանապատին. և **է** *օր* տաղաւարահարացն ի յիշատակ խորանաւ բնակելոյն յանապատին ամս **խ**. և այլ սքանչելեացն զոր գործեցաւ անդ: - 483. Ո՞ր քան ևս քահանայապետին որ զերկոտասան *օր* պարտ էր խնկօք պաշտել ի մէջ տաճարին ի ժամ աղօթիցն. թէպէտ ի սուրբն սրբոց միանգամ ի տարւոջն: - 483-484. Վեցերորդ՝ զի հարկ էր մատուցմունք նւիրաց ժողովրդեանն. և կատարեալ էր մի *օր* պաշտամանն: - 484. **Որ ստոյգ նոյն ծննդեան *օրն* իմանի. ապա թէ ոչ՝ պարտ էր ասել թէ «յիսուս էր ամաց իբրև լ և միոյ. սկսեալ ի ծննդենէն եկն ի մկրտութիւն»**: - 484. Զի **բժ**ան *օրն* թէպէտ պակաս է ի թիւս տարւոյն, սակայն սկիզբն է տարւոյն: - 484. Եւ այս ամենայն ազգաց յա՛յտ է, որ ի յունվարի վեցն տօնեն մկրտութեան. ապա ուրեմն նոյն *օրն* է և ծննդեանն: - 484. **Երեքտասաներորդ՝ ականատես տնօրէնութեանն եղբայր տեառն յակոբոս որ կարգեաց զընթերցուածն, յունվարի վեցն աւանդեաց զտօնն ծննդեանն. և ի նոյն *օրն* դարձեալ զմկրտութեանն:** - 484. ...զի զքառասնօրեայ գալուստն ի տաճարն՝ ըստ ծննդեանն տօնեսցեն և ո՛չ ըստ յայտնութեանն. որ է՛ յունվարի վեցն. զոր մեք տօնեմք **խ** *օր* թուեալ մինչև ի **ժդ**ն փետրվարի: - 485. Զի **բ** *օր* ասացեալ է ի վարդապետաց. մին բնական *օր* և միւսն շնորհական: - 508. Բնական *օրն* է մարմնաւոր. որ բաժանէ զպահս և զուտիսս: - 508. Եւ շնորհականն հոգևոր. ուր սկսանին ամենայն տօնք սրբոց **զ** ժամով յառաջ քան զբնական *օրն:* - 508. Վեցերորդ վկայ նոյն ինքեանք ազգն Ֆռանկաց. որ յամենայն շաբաթ *օր* վիճիլ ասեն. և միս ո՛չ ուտեն ի խորհուրդ նաւակատեաց մեծի շաբաթուս: - 509. Եւ զի **ե** են զգայարանք մեր որով մեղանչեմք, **ե** *օր* է նաւակատեաց ի բոլոր տարին ի քաւութիւն **ե** զգայութեանցս: - 510. Նոյնպէս և որ ոք յայս *օրս* պահէ և յամենայն կերակրոց չուտէ, կամ միս ուտէ, ըստ դատապարտութեամբ է: - 510. Եւ զի **գ** է *օր* ի բոլոր տարին. կամ ամենևին պահք. կամ ուտիք. կամ միջակ. որպէս նաւակատիկք: - 510. Դարձեալ պատճառե՛ն թէ՝ յետ յարութեանն եկեր ձուկն ընդ աշակերտսն. յորում կրակեաղ կայծականց տեսին և ձուկն խորովեալ և հաց. և *օրն* էր չորեքշաբաթի. և ի **ե** շաբաթի համբարձաւ: - 511. Եւ **ե** անգամ ի նոյն *օրն* յորում յարեաւ ի գերեզմանէն. որ լինի **ժ** անգամ: - 511. Եւ **զ** ժամն անցեալ և իւր գիշերն լինի **բ** *օր* ուրբաթուն: - 516. Երրորդ սոյնպէս ասեն, ըստ տիւն և ըստ գիշերն **գ**. որ է՛ ուրբաթն, և շաբաթի գիշերն, և շաբաթի *օրն*. և յերեկօրեայ յարութիւնն: - 516. Հինգերորդ որ ուղիղն է. զի **բ** է *օր*. բնական և արուեստական. և ասացեալքդ ամենայն յարուեստական *օրս* նկատեն և ի չարչարանս: - 516. Եւ է՛ այսպէս. զի անուամբ բոլորին պարտ է իմանալ զմասնաւորն. զի առաջին *օրն* անկատա՛ր է. նոյնպէս և երկրորդն անկատա՛ր է և մասն. այլ միջինն կատարեալ է: - 516. Եւ այսպէս սովորաբար խօսիմք, թէ յուրբաթի կէս օրն ելեալ ոք ի տեղւոջէ՛ մինչև գայ առ մեզ ի լոյս կիրակէին կամ ըստ առաւօտն, ասեմք թէ **գ** *օր* է ճանապարհին. նոյնպէս և յարութիւնն քրիստոսի: - 516.

Երրորդ՝ վասն մխիթարութեան աշակերտացն. զի **խ** *օր* մխիթարեսցէ զնոսա փոխանակ **խ** ժամուն որ տրտմեցան ի մահն քրիստոսի. որպէս ասացաւ թէ յարութիւնն ի մէջ գիշերի, այլ երևեցաւ ընդ արշալոյսն առաքելոցն...: - 520. Եւ **խ** *օր* յօդս զի **լգ** *օր* զօդս սրբեսցէ ի ճենճերից կռոց. և **է** *օրն* ի խորհուրդ **է** աստեղեան խորանացն ի կայանս հոգւոցն: - 520-521. Եւ այլք ասեն թէ՝ **խ** *օր* յերկրաւոր դրախտին եկաց ինքն և յարուցեալքն ընդ նմա. և մխիթարեաց զեղիա և զենովք: - 521. *Զօրս* զայս պատուեն իսրայէլացիքն վասն երից պատճառաց: - 523. Նաև մեք յաղագս երից պատճառաց պատուեմք *զօրս* զայս: - 524. Եւ **է** շաբաթն **ծ** *օր* է. որ է՛ ազատարար թիւ և օրինակ հանդերձելոյն: - 524. Իսկ թէ **ը** *օր* տօնեմք, ասացեալ է ի վերոյ ի **հա** գլուխն, **ծա** համարն: - 525. Եւ **ը** *օր* նաւակատեաց: - 526. Եւ Ֆռանկն երկու *օր* լուծանէ: - 527. Չորրորդ՝ զտօն սրբոցն յառաջիկայն անցուցանել *օր:* - 553-554. Վերջին օծումն է խորհուրդ եկեղեցւոյ. որ տուեալ լինի հիւանդաց ի հոգէվարի *օրն*. յաչքն, յականջն, ի բերանն, ի ձեռքն, ի կուշտն, յոտից ներբանքն: - 604. Ասեմք թէ, ի հնարից չարին բարձին մարդիկք զխոստովանութիւնն որ հարկաւոր էր, յայն ապաւինեալ թէ՝ ի վերջին *օրն* օծանիմք ձիթով բալասամինաւ և արդարանամք: - 604. Վասն է՞ր հինքն **բժ**ան *օր* նաւակատիս կատարէին որ է՛ նորոգումն խորանի տաճարին: - 616. Եւ մեք **ը** *օր:* - 616. Ասեմք նախ եթէ՝ ո՛չ երկոտասան. այլ մի *օր* կատարէին: - 616. Զի իւրաքանչիւր իշխանք և ցեղք մի մի *օր* նաւակատիս առնէին: - 616. Իսկ մեք ութն *օր:* - 616. Նա՛խ՝ զի զմի *օր* նոցա տօնեմք. և **է** յաւելեալ վասն **է** զգայարանաց. և վասն եօթնեկի մեղաց քաւութեան: - 616. Երրորդ, վասն **է** կենցաղոյս՝ և ըստ հանդերձելումն **ը** *օր* տօնեմք: - 616. Երկրորդ ասեմք, և մեք **բժ**ան *օր* տօնեմք եկեղեցւոյ ի բոլոր ամն. որ են այս: - 616. Աշխարհամատրանն. և յետ գալստեան Յոգւոյն կիրակէն. Տապանակին. Շողակաթին. և **դ** *օր* ի Խաչին տօնն. **բ** Գալստեանն. Վերնատանն. Եւ նոր կիրակէին: - 616. Դարձեալ, **ը** *օր* եկեղեցւոյ տօնեմք. և մի գլխոյն եկեղեցւոյ. և անդամոց նորա: - 616. ...կարգեաց **ը** *օր* նաւակատիս խաչի և եկեղեցոյ ի միասին տօնել: - 617. Որով յա՛յտ է՝ զի ի կէս աւուրն որ է **ժբ** ժամն՝ աղօթելի՛ է մեզ յամենայն *օր*. և զկէսն այլ՝ մարմնական հոգոց պարապիլ. գործոյ աշխատութեան՝ ննջելոյ՝ կամ այլ ինչ իրաց: - 623. ...վասն որոյ մեզ լեզու լինի և ի դէմս մեր գոհանայ զաստուծոյ ըստ իւրաքանչիւր ժամու. այսինքն յառաւօտն, ի հասարակ *օրն*, և յերեկոյն. զի գոհացումն է և ո՛չ աղօթք: - 626. Եւ ամաց **է** *օր* բաղարջակերք, և տօն տաղաւարահարացն: - 626. Այլ և զեօթն *օր* շրջեցան տապանակաւն, և կործանեցաւ պարիսպն երիքովի: - 626. Նոյնպէս և **ը** ձայն եղանակաց. և **ը** օրեայ զտօնս գլխաւորս. որպէս ծննդեանն ութն *օր*. և յարութեանն՝ և հոգւոյն գալստեանն՝ և խաչի՝ և եկեղեցւոյ՝ և այլն: - 627. Ի յայս միտս և զեօթն *օր* շաբաթուն փոխեցին առաքեալքն ի կիրակէ...: - 627. Յօրինակ յեսուայ, որ տապանակաւն և քահանայիւք և ժողովրդովք զվեց *օր* շրջեցաւ լռութեամբ...: - 627. ...և յեօթներորդ *օրն* ի եօթն նուագին բարձրաձայն փողովք հնչեցին քահանայքն. և ժողովուրդն բարձրաձայն աղաղակեաց. յորմէ կործանեցաւ եօթնապատեան պարիսպն երիքովի: - 627. Եւ տեառն մերոյ սուրբ եկեղեցի. և վերջինն *օրն* է յաւիտենից: - 629. ...զի *օրն* այն ուրախութիւն է արդարոց. և կործանումն ամբարշտաց. որպէս երգն այն ուրախութիւն է, և սուգ՝ եգիպտոսի: - 630. Եւ յամենայն *օր* **դ** անգամ ասեմք ի սրբութիւն մեր հոգւոյ և մարմնոյ և մտաց: - 632. Եւ ի հասարակ *օրն* յորում խաչեցաւ: - 632. Զի՞նչ է ի **ե** *օր* ծննդեանն Ովսաննայ ի բարձունս: - 638. Ի հինգերորդ *օր* արարչութեանն ի խորհուրդ մկրտութեան ջրային կենդանիք և թռչունք յօդս ելին: - 638. Եւ զփրկիչն ի նոյն *օրն* ծնաւ: - 638. Երկուշաբաթի *օրն* հրեշտակաց: - 642. Երեքշաբաթի *օրն* մարգարէից: - 642. Չորեքշաբաթի *օրն* աւետաց: - 642. Յինգշաբաթի *օրն* առաքելոց: - 642. Եւ այս է պատճառն, զի կիրակին տէրունի թարգմանի. և *օր* է ստեղծման աշխարհի, և յարութեանն քրիստոսի, և միւս անգամ գալստեանն: - 642. ...վասն որոյ յերկրորդ *օրն* յառաջ քան զամենայն նոցա տօնեմք: - 642. Այլ և բոլոր ամենայն տնօրէնութեանցն պատմօղ. վասն այն յամենայն *օր* ի տօնս, ի պահս, և յուտիս, ի շաբաթս, և ի կիրակէ, զնա՛ ընթեռնումք: - 644. Վասն է՞ր ի շաբաթի *օր* տօնեմք սրբոցն: - 647. Զի ի **զ** *օրն* արար զժամանակաւոր և զապականացու աշխարհս. - 647. ...և ի է *օրն* սկսաւ զիմանալի աշխարհն որ սրբոցն է հանգիստ: - 647. Եւ զայս աշխարհս արար ի **զ** *օրն* և դադարեաց: - 647. ...նոյնպէս և ի շաբաթի *օրս* հանգեաւ ի չարչարանաց ուրբաթուն և եդաւ ի գերեզմանի: - 647-648. Վեցերորդ՝ յետ ուրբաթուն չարչարանաց՝ ի շաբաթի *օր* տօնեմք սրբոցն...: - 648. Եօթներորդ՝ շաբաթի *օր* տօնեմք սրբոցն և պատարագ մատչի ըստ նիկիական կանոնին...: - 648. Զի որպէս ի մէջ շաբաթուն և ի կիրակէին այլ միջոց *օր* չկայ: - 648. Ասեմք թէ՝ ծննդեան պահքն **ը** *օր* է. զշաբաթն և զկիրակէ պահեաց...: - 649. Եւ **դ** *օր* ի սուրբ խաչին կարգն: - 649. Ի տարին քանի՞ *օր* պահք է: - 649. Վասն որոյ կարգեցին առաքեալքն և հարքն՝ **ճձ** *օր* պահք. և նոյնչափ

ուտիք: - 649. Զի **կ** *օր* ուրբաթ և չորեքշաբաթի և **գ** քառասունք պա՛հք է ի բոլոր տարին: - 649. Պահք *օրն* վասն է՞ր ո՛չ տօնեմք: - 650. Զի յորժամ ելին ի դրախտէն՝ **ե** *օր* անսւաղ պահեցին: - 650. Եւ նոյնպէս նինուէացիքն **գ** *օր* պահեցին. և երկուքն՝ չորեքշաբաթ և ուրբաթ: - 650. Եւ յորժամ մերն լուսաւորիչ ել ի վիրապէն, **ե** *օր* պահք կարգեաց և ապա՛ բժշկեաց ի հարուածոյն...: - 650. ...և աստի մինչ ի զատիկն **հ** *օր* է...: - 650. Զի յառաջն զոսա լուծանէին որք յառաջաւորացն ի վեր պահէին **հ** *օր:* - 651. Վասն է՞ր ազգն Ֆռանկաց զերկու *օր* պահոցն լուծանէ: - 651. ...և փոխեցաւ յերկուշաբաթի *օրն:* - 651. ...և պապ նոցա հրամայեաց զերկու *օրն* ուտել: - 651. Եւ թէ ոք ասիցէ, **խ** *օր* է պահոց. զի **խ** *օր* պահեաց քրիստոս. և կիրակէն ո՛չ է ի համարս: - 651. Ասեմք թէ՝ քրիստոս **խ** *օր* պահեաց, և **խ** *օր* է մինչ ի ղազարու տօնն: - 651. Եւ այլ ևս, յորժամ զշաբաթ և զկիրակէ արտաքոյ թուեմք որ պատարագ մատչի, **ե** *օր* առաջաւորն ըստ աղուհացիցն համարեալ՝ լինի **խ** *օր:* - 651. Ապա թէ ոչ՝ **լե** *օր* է: - 651. Դարձեալ՝ մովսէս **զ** *օր* արտաքոյ ամպոյն և հրոյն եկաց...: - 651. ...և ապա՛ ի ներքս մտեալ՝ **խ** *օր* աւարտեաց ընդ աստուած խօսելով: - 651. Եւ *օրն* յորում պղծեցաւ, սրբութեամբ պահեսցէ զնա մինչ ցմահ իւր. և ապա՛ հաղորդեսցի: - 652. Դարձեալ, **խը** քաղաքն ապաստանի, նշանակէ՛ զմեզ պահքն **խը** *օր:* - 653. Երկրորդ, յետ ելիցն ի դրախտին **ե** *օր* սուգ պահեաց անսուաղ...: - 653. Տասներորդ, **ե** *օր* քաւութեան տօնն: - 653. Այլև **է** *օր* տաղաւարահարացն նշանակէ՛ զսրբութիւն պահոց շաբաթոյս...: - 653. Երկրորդ, զի **ծ** *օր* պահեցաք վասն հոգւոյն...: - 654. ...և **ծ** *օր* ուտեմք վասն մարմնոյն: - 654. Վասն որոյ յետ համբարձմանն պահելի է զդշաբաթ և զուրբաթ. և կամ զինն *օր* մինչ ի հոգւոյ գալուստն: - 654. **Իսկ վասն քահանայօրհնէիցն, սուրբն սահա՛կ է արարեալ. յառաջին ամի եպիսկոպոսութեան իւրոյ. ի նաւասարդի ամսեանն որ *օր* մի էր. և յիշատակ սուրբ կարապետին արար զքահանայօրհնէքն**: - 659. Իններորդ, Վասն **է** *օրէիցն*. և մեռելոցն. և գերեզման օրհնելն. և տուն օրհնել: - 660. Եւ թէպէտ մարդ ո՛չ գիտէ *զօր* մահուն իւրոյ, այլ երիս իրս տուեալ է աստուած ի զգուշութիւն մեզ և կարապետ մահուն: - 665. Եւ վասն յերկարութեան կենաց, և վասն ո՛չ գիտելոյ *զօր* մահուն և զկատարածի, ասացեալ է ի վերն առ նահապետսն ի **դ** համարն: - 665. ...զի տեսցուք և ի միտ ածցուք *զօր* ելիցն մեր ի մարմնոյ: - 668. Երրորդ մահու *օրն:* - 668. Եւ այնպէս յարաժամ տեսանէ զցաւս մեծ ինքեան և առ ինքն ի չար գործս իւր անբաժանելի ի նմանէ մինչ ի յարութեանն *օր*...: - 669. ...և նա դնէ յեկեղեցին մեծ առ դուռն որ նշանակէ զկայանք հոգւոցն յերկինս ի վերջին տեղւոջ մինչ ի յարութեանն *օր:* - 672. Եւ այսպէս ծածկեսցեն հողով զեօթն *օր* զաստիճանքն...: - 674. Եւ ի խորհուրդ եօթանց դարուց կենցաղոյս՝ զեօթն *օր* նաւակատիս կատարեմք թաղման քահանայից: - 674. Զի՞նչ է որ յերկրորդ *օրն* դարձեալ գան ի գերեզմանն: - 680. ...նոյնպէս յերկրորդ *օրն* պարտ է գալ կանանց նախ ի գերեզմանն, և ապա արանց. և հոգևոր տեսութեամբ ուրախանալ: - 680. Դարձեալ՝ որպէս բժիշկք դեղ տան հիւանդաց՝ և ի միւս *օրն* դարձեալ հարցանեն...: - 680. Դարձեալ, յերեկեան *օրն* էր ի խորհուրդ թաղման...: - 680. ...զի մեղքն առնելն է, և պատիժն կրելն. յերեկեան *օրն* վասն մեղաց խնդրեցաք. այսօր վասն պատժոց: - 680. Դարձեալ՝ կրկին է *օր* մարդոյ թէպէտ յերկար ապրեսցի. այսինքն մին *օր* ծննդեանն, և մին *օր* մահուան: - 680. Ի մին *օրն* մտանեմք յաշխարհ, և ի մին *օրն* ելանեմք աշխարհէ: - 680. Երկրորդ՝ զի **գ** *օր* են ամենայն աւուրք մարդոյ. այսինքն *օր* ծննդեանն. *օր* սննդեանն. և *օր* մահուանն: - 681. Չորրորդ՝ ի մարմնաւորս **գ** *օր* լինի հարսանիք...: - 681. ...վասն որոյ **գ** *օր* յիշատակ կատարեմք և գամք ի գերեզմանն: - 681. Եօթներորդ՝ **գ** *օրս* այս նշանակեցաւ յերիս աւուրսն որ նախ քան զլինիլն լուսաւորաց. - 681. Ութերորդ՝ **գ** *օրս* այս օրինակեցաւ ի զենումն իսահակայ...: - 681. Տասներորդ՝ **գ** *օրս* այս նշանակեցաւ որ ասէր մովսէս ցփարաւօն՝ արձակեա՛ զիսրայէլ...: - 682. Նա՛խ՝ ի ժամանակս. զի **գ**, և **է**, և ամիսն, և տարին՝ լինի **դ**. և **գ** *օրն* նախկին, որ է՛ եօթն: - 683. Եւ ո՛չ որպէս շաղակրատեն ոմանք մտացածին բանիւ. թէ երեք *օրն* կամ յեօթն՝ կամ յամիսն՝ և կամ ի տարին ելանեն ի քաւարանէն: - 683-684. Զի՞նչ է զատկի երկուշաբաթի *օրն* մեռելոց առնելն: - 684. Նա՛խ՝ որպէս մեք ի կիրակէ ուրախացաք և վայելեցաք ի շնորհաց յարութեանն քրիստոսի, ի միւս *օրն* և զնոսա մասնաւորեմք: - 684. Եւ ի նոյն *օրն* ի գերեզման եմուտ և էջ ի դժոխս և քարոզեաց: - 684. Վասն որոյ խաչիւ և աւետարանաւ աւետեմք ննջեցելոցն զմեծ *օր* աւետեաց նոցա և կնքեմք զգերեզմանն: - 684. Եւ դարձեալ, զի ի **խ** *օր* պահոցն մինչ ի յարութիւնն ղազարու այլ հանգստեան ո՛չ տօնեմք: - 684. Այլ չար հոգիքն ոչ կարեն գալ առ մեզ մինչ ի դատաստանի *օրն*...: - 686. Ապա ուրեմն մի է *օր* դատաստանին և ո՛չ հանապազ: - 692. Եւ առաւօ՛տ է *օր* դատաստանին. զի միշտ առաւօ՛տ է և ո՛չ երբէք փոխէ զնա երեկոյ: - 692. Արդ տանուտէր աստ կոչէ զաստուած, և այգի է եկեղեցի. և գաւառապետ կոչէ զքրիստոս. և առաւօտ յաբելէ առաջին արդարոյն. և երեկոյ *օր* դատաստանին յորժամ ընտրեալքն

ամենայն ժողովին. - 692. Ուստի յա՛յտ է զի մինչև *յօր* դատաստին ո՛չ առնուն: - 692. Ապա ուրեմն մինչ ի վերջին *օրն* ո՛չ է բաժանումն արդարոց և մեղաւորաց: - 693. Զի ասէ մեծն իգնատիոս մեկնիչն յայսմ բանի, եթէ բարեկամ եկեալ` զպահանջօղ հրեշտակն ասէ *յօր* մահուն. իսկ առաջին բարեկամ է՛ աստուած: - 697. Իսկ գիշեր *զօր* մահուն ասէ: - 697. ...որով իմանան արդարքն թէ այնպիսի փառս պատրաստեալ է նոցա. և յուսով վայելեն մինչև *օր* դատաստանին: - 697. Եւ վասն զի մի *օր* է հատուցումն և ոչ յամենայն *օր* ասացաւ ի վերոյ: - 698. Ահա՛ ժամանակ ընդունելի. ահա՛ *օր* փրկութեան. մի և մի իւիք տայցէք պատճառս. զի մի՛ արատեսցի պաշտօնն: - 698. ...զի մինչև *զօրն* ցայն ասեն զքաւարանն. այլ առ ժամայն ի փառս կամ ի տանջանս: - 700. Չորրորդ, սոքա իւրաքանչիւր հոգւոցն ասեն ընդ բաժանիլն. և ոսկեբերանն ի վերջին *օրն* համընթաց այրեցումն: - 703. Դարձեալ ասեմք թէ` այլ վարդապետք մեկնեն ի դատաստանին *օրն*...: - 704. Եւ յետ մահուն և յարութեան նոցա` թագաւորեսցէ նեռն այլ ևս **Ժ** և **Ե** *օր*: - 709. Պատասխանեն վարդապետք թէ` որպէս մովսէս թանձրամիտ ժողովրդեանն իսրայէլի պատմէր զլինելութիւն արարածոց ի **Զ** *օրս*...: - 717. Եւ ա՛յս է պատճառն. զի աստուած ի սկզբան զբնութիւնն ադամայ անթերի ստեղծ. նոյնպէս ի վերջին *օրն* անթերի պիտի նորոգէ: - 726. Վասն զի երկին որ շարժի` *յօր* դատաստանին դադարի և հաստատի յայն կարգն յոր նա՛խ ստեղծան. արեգակն յարևելս և լուսինն յարևմուտս: - 727. Մինչև *յօր* դատաստանին տեսանեն մեղաւորք փառս արդարոց ընդհանրապէս` այլ ո՛չ մասնաւորաբար...: - 741. Տասներորդ, զի և *յօրն* դատաստանին լինին վկայք բ` երկինք և երկիր, և զօրք երկնից: - 743. Երկոտասաներորդ, հնձան կոչի և վերջին *օր* դատաստանին...: - 749. **Մինչ ի *յօրն* դատաստանի աղօթեն արդարք վասն մեղաւորաց. այլ յետ այնորիկ վասն դատապարտելոցն ո՛չ խնդրեն ինչ. զի ընդ դէմ աստուծոյ գոլ իմանան վասն նոցա զխնդիրն:** - 754. Զի նւազունք են ամենայն փափկութիւնք որ լինին յաշխարհի մինչև *զօրն* դատաստանի, բաղդատեալ առ այն քաղցրութիւն. որպէս կաթիլ մի ջրոյ առ համեմատութիւն ընդ հանուր ծովու: - 762. Ո՞րպիսի լիցի *օրն* այն, մինչ քեզ մարիամ մայր տն ընդ առաջ ելանէ հանդերձ պարուք կուսանաց: - 764. Որ թէ ի բարձանց լինի պատերազմ անձրև *օրէն* փործանաց, ի ներքոյ կացցես հաւատոցն և ապրիս: - 770. Երկրորդ, զի դժոխքն այն պատիժ բնութեանս էր և ո՛չ առանձին գործոց. զի հաստատեաց *օր* մի յորում դատելո՛ց է զամենայն ըստ պօղոսի: - 776. Վասն որոյ կրկին է և պատիժն. զառաջինն ի նախնւոյն հասեալ. և ապա յետոյ *յօր* մի հաստատեալ ըստ առաքելոյ: - 777. Թէ վասն զի՞նչ հարկի ամենայն անդրանիկ **Ե** *օր* աւելի կայ առ ծնողին: - 785

***ՕՐ ԸՍՏ ՕՐԷ +*** Եւ արտաքոյ, զի *օրըստօրէ* յաւելուն լուսափայլ իմաստիւք ըստ մեծին դիոնիսեայ: - 344. Այլ արդ` թէ *օրըստօրէ* յառնէր իւրաքանչիւր ոք, հաւատ յարութեանն խափանէր. զի հաւատն ոչ երևելեացն է: - 717. Սա՛ է մայր մեր եկեղեցի որ հոգևոր որդիս աստուծոյ *օրըստօրէ* ծնանի. որ հասեալ ժառանգութեանն. ի բաց տանելով զաղախինն և զորդի նորա: - 756

**ՕՐԷՆ(Ք) +** Դարձեալ, թէ է՛ հարկ` ո՛չ են իրաւունք դատաստանի և քննութիւն. և ո՛չ *օրէնք* քաղաքական. և ո՛չ արժանապէս հատուցմունք բարեաց և չարեաց. զի հարկն բռնադատեաց գործել զայս. հարկին եղիցին պատիւք և պատիժք. և ո՛չ մարդոյն: - 12. Ուստի յա՛յտ է թէ սերմանեաց ի բնութիւնս զբարին, և *օրէնս* եդ բարւոյ. այլ և խրատ և յորդորումն և պարգևս բարեաց: - 17. Տասներորդ` զի սուտ լինէին ամենայն *օրէնք* բնական` գրական և աւետարանական. զի սոքա ամենքն խրատեն զմեզ խոտորիլ ի չարէ` և առնել զբարի. և այլն ամենայն: - 20. Որոց պատասխանեն վարդապետք եկեղեցւոյ. և ես զնոցայն առեալ ասացից` թէ յաւուրս յետինս` ոչ զկատարած աշխարհի կոչէ, այլ կոչէ աւուրս յետինս` զպակասութիւն *օրինացն* և արդարութեան նորա. քանզի *օրէնք* նոցա պակասեցաւ ի գալստեանն քրիստոսի: - 27. Իսկ ուրախանալն ի չարն մահ է և անզգայութիւն. և ընդդէմ բժշկողացն մրցումն. որպիսիք էին հեթանոսքն ի կուռս իւրեանց. և հրէայքն *յօրէնսն*. և փաղանք հերետիկոսացն յաղանդս իւրեանց: - 33. Չորրորդ` հրէայքն դաւանին զմովսէս` և ուրանան զքրիստոս, զխաչն և *զօրէնս* նորա: - 34. Իսկ թէ մարդկութեանն միայն, անկա՛ր ընդ մարդապաշտ հայհոյութեամբ. և փոխանակ արարչի` արարածո՛յ երկրպագեցեր ընդդէմ աստուածային *օրինացն:* - 68. Ութերորդ` «մի է օրէնսդիր և դատաւոր» ասէ յակոբոս. և ինքն քրիստոս դնելով *զօրէնսն* ասէր, ասացաւ առաջնոցն այս ինչ, բայց ես ասեմ զայս ինչ և զայս: - 71. Եւ հաստատութիւն` սուրբ գրոց վկայութիւնք, և բանք վարդապետաց, և կանոնք *օրինաց:* - 96. Ա՛րդ` եթէ տգէ՛տ է որդին աստուծոյ հօր, և տգէտ որդւով խօսեցաւ ընդ մեզ. տգիտութեան եղիցի և *օրէնքս* նոր քան զհինն: - 96. Եւ վասն *օրինացն* մովսէսի ասէ *օրէնքն*, «յաւիտենական լիցի». որ նշանակէ զբազում ժամանակս: - 115-116. Զի ընդ ժամանակաւ եմուտ և զստւեր *օրինացն* կատարեաց: - 125.

Տասներորդ՝ սկիզբն է *օրհնացն*, և կատարումն ճշմարտութեանն. որպէս հնոյն և նորոյս: - 130. Զի պահպանութիւն *օրհնացն* մարդոյս է՛ զէն պատերազմի: - 151. Իսկ յանցումն *օրհնացն* լինի զէն և գործի դիւացն որով պատերազմին ընդ մարդոյս: - 151. Հինգերորդ՝ զի և քրիստոս որ եղև երկրորդ կտակ և *օրէնք* մեր, կոչի ծնունդ և արարած: - 179. Դարձեալ հին *օրհնացն:* - 186. Երրորդ՝ բազում աստուածախօսութիւնք ի նմա եղեն. յելանելն նոյի ի տապանէն. և առ աբրահամ. և առ մովսէս ի սինա լեառն. և տուչութիւն *օրհնացն* ի կիրակէ եղև: - 193. Հնգետասաներորդ՝ ասի *օրէնքն* օր ըստ սովորութեան...: - 195. Եւ այլք ասեն թէ՝ պատճա՛ռ էր բարւոյ և չարի՝ ո՛չ ըստ ինքեան, այլ *օրհնօքն:* - 223. Զի թէ հնազանդեալ էր *օրհնացն*, լինէր բարւոյ պատճառ. և ո՛չ հնազանդեալ՝ եղև չարի պատճառ: - 223. Իմաստութիւնն ո՞րպէս է: ...Խօսքն արդարութիւն: *Օրէնք* լեզուն: - 250. Ասեմք առ այս եթէ որպէս դու *օրէնս* եդեր փոխանցիլ ի բարձրագունէն ի նւաստագոյն կեանս վասն մեղաց: - 252-253. Որո՞վ զանազնին *օրէնքն* և պատուիրանք և հրամանք: - 277. Եւ *օրէնք*՝ տեառն առ ծառայս: - 277. Դարձեալ՝ *օրէնքն* և հրամանն հա՛րկ է ի վերայ: - 277. Եւ ուրեք զաւարկութիւնն՝ *օրէնս* դնել ասէ: - 277. Իսկ թէ վասն է՞ր *օրէնս* ետ մարդոյն: - 277. Երեսուներորդ, **ծ** բան *օրհնացն:* - 283. Իրաւունք և *օրէնք:* - 283. Երեսունևէ, Զանազանի հին և նոր *օրէնք*. և քահանայութիւն տեառն և հնոյն: - 284. Եւ ո՞րպէս *օրէնք* յաւիտենից. և վասն **բ** նոխազացն: - 284. Վաթսունևը, Երկրորդ *օրէնքն:* - 285. Եւ վասն է՞ր առաջին *օրէնքն* մարմնական էր: - 285. Եօթանասունևե, Տալ *զօրէնս* հեթանոսաց. և օրհնութիւն և անէծք. և բան ընդդէմ հրէիցն որք մարմնաւոր ունին զօրհնութիւնս: - 285. Եւ այլ ևս. նոքա չունէին *օրէնք* գրաւոր, պա՛րտ էր նոցա յերկար կեալ և ի բնական *օրէնս* կրթել զծնունդս և զազգս իւրեանց: - 291. Նա՛խ՝ է՛ աննշանն զորս որոշէ՛ *օրէնքն*. որ ո՛չ ունի կճղակս և որոճ և այլն՝ անսուրբ է: - 295. Երկրորդ՝ զի ի հին *օրէնքն* քահանայքն զենուին. զոր որոշեսցուք ի նոցանէ: - 296. Վեցերորդ՝ նուիրեաց մելքիսեդեկ զպատարագն և ընկալաւ զտասանորդն. որպէս քրիստոս պարգևէ՛ հաւատացելոց զշնորհս, և առնու զտասնեակս զկատարեալ և զբարի գործս. կամ զտասն բանեան *օրէնս* **ժ** զգայարանօք: - 301. Նոյնպէս և տէրն մեր ետ հաւատացելոցն զկենարար մարմինն և արիւնն իւր. յորոց խնդրէ զգործս տասնաւոր. այսինքն զկատարեալս. և զկատարումն **ժ** բանեան *օրհնացն*. ի յորս է՛ մաքրութիւն **ժ** զգայարանացս որպէս ի վերոյ ասացաւ: - 302. Որք հաղորդեցան մարմնոյ նորա, եղեն զաւակք ըստ մարմնոյ՝ ըստ թլփատութեան և այլոց *օրհնաց* նորա: - 303. Ծնաւ և տէր մեր մարդ բնութեամբ, քակելով զբնութեան *օրէնս:* - 305. Եւ տէրն վերջին ի լրումն *օրհնին* ի նոյն քանիսն եղեալ հրամանին. զի ո՛չ ելոյծ *զօրէնսն*, այլ էլից: - 305. Զի է՛ որ մատուցօղն մեծ է քան զպատարագն. որպէս հին *օրհնաց* պատարագն. զի անասունք էին: - 306. Եւ է՛ որ պատարագն մեծ է քան զմատուցօղն. որպէս նոր *օրհնացս*՝ մարմինն քրիստոսի մեծ է քան զքահանայն: - 306. Դարձեալ՝ նո՛ր էր ծնունդ սառայի և ո՛չ ըստ *օրհնաց* կարգի: - 307. Եւ հատումն ի ստենէ հնոյն՝ հաստատութիւն եղև նոր *օրհնացս:* - 308. Հինգերորդ՝ անդրանիկն բաժին աստուծոյ է. որպէս եդ ի *յօրէնսն* զամենայն անդրանիկ մարդոյ և անասնոյ բաժին տալ աստուծոյ: - 309. Դարձեալ՝ վարժէ՛ զնա գօտեաւն՝ պատերազմիլ ընդ մեղս և ընդ մեղսասէր մարդիկ որ կամին զանմեղն քարշել արտաքոյ *օրհնացն* աստուծոյ: - 311. Որպէս հաւատով և սիրով և երկիւղիւ և *օրհնօք* նորա: - 318. Եւ այլք ասեն թէ մովսէս գրեաց ի յանդիմանութիւն որդւոցն յակոբայ. որք առին *զօրէնս* և ո՛չ պահեցին. և զաստուծոյ զամենայն երախտիսն մոռացան: - 320. Այլ սքանչելին յոբ՝ էր նախքան *զօրէնս*՝ և գրեցաւ յետ *օրհնացն:* - 321. Երրորդ՝ ի խորհուրդ **ժ** բանեան *օրհնացն* **ժ** պատարագ մատուցանէր: - 322. Մետասաներորդ, մովսէս զառաջին տախտակն խորտակեաց և ի նորն գրեաց *զօրէնսն:* - 328. Եւ քրիստոս զհրէայսն ցրւեաց, և ի սիրտ հեթանոսաց նոր ժողովրդեանն աւանդեաց *զօրէնսն:* - 328. Նա՛խ ցուցանէ՛ թէ՝ ձեռքդ այդ գրեսցէ *օրէնս* որով սրբին պահօղք, և պղծին ո՛չ պահօղք: - 332. Վասն է՞ր եզական դնէ *զօրէնս* իբր առ մի դէմս ասելով՝ «մի՛ սպանաներ և այլն»: - 340. Նա՛խ՝ զի ամենայն ոք յինքն ձգեսցէ զբանս *օրհնացն*. և մի՛ ծուլասցի թէ հասարակա՛ց է կատարելի: - 340. Երկրորդ՝ զի մի ոք որ կատարէ *զօրէնս*, պատուակա՛ն է աստուծոյ քան զամենայն աշխարհս. վասն այն ընդ միոնն խօսի: - 340. Զի՞նչ է *օրէնք* և իրաւունք: - 340. Իսկ *օրէնքն* և պատուիրանքն այնպէս զանազանին: - 340. Նա՛խ՝ զի *օրէնքն* կանոն և սահմա՛ն է առնելեաց և ոչ առնելեաց: - 340. Երկրորդ՝ *օրէնքն* է հարկի. և պատուէրն կամաց: - 340. Եւ **ժ** բան է՛ *օրհնացն*. և **խզ** իրաւանցն. բովանդակն **ծզ**. խորհուրդ ազատութեան մերոյ հաւատով Երրորդութեանն: - 340. Երկրորդ՝ տուչութեան *օրհնացն* յիսներեկի աւուրն յամռան: - 340. Եօթներորդ՝ զի նոր իմն չնաշխարհիկ կազմեաց. նոր ժողովրդեանն և նոր *օրհնացն*, իցէ և նո՛ր տաճար հռչակեալ ընդ ծով և ընդ ցամաք. որպէս պսակ և փառք արդարոցն է՛ զոր ակն ո՛չ ետես և ունկն ո՛չ լուսաւ. նոյնպէս և սա՛ ի զգալիսս անհաս ի մտաց

մարդկան: - 342. Տասն բանեան *օրէնքն*: - 342. Այսպէս յետ **Ծ** աւուրց տւաւ *օրէնքն*. և **Ձ** օր պահքն երեքօրեայ սրբութիւն: - 344. Իսկ վկայութիւնն որ է՛ տախտակքն *օրինաց*. զի վկայե՛ն պահողացն բարիս. և ոչ պահողացն պատիժս: - 345. Նա՛խ՝ զոր լւան *զօրէնս* ականջօք, տեսցեն և աչօք զի հաստա՛տ է տեսն քան զլուրն: - 349. Հինգերորդ՝ կրկին *օրէնքն* հոգւոյ և մարմնոյ. վասն այն կրկին էր տախտակն: - 349. Վեցերորդ՝ կրկին տալոց էր *օրէնք* հին և նոր. վասն այն կրկին գրեաց: - 349. Երկրորդ՝ զի կորուսեալք էին հոգւով, ո՛չ պահեաց *զօրէնս* նոցա: - 349. Չորրորդ՝ ի խորհուրդ հին *օրինացն* որ բարձաւ և նոր *օրէնք* տւաւ: - 350. Երրորդ՝ ի խորհուրդ նոր *օրինացս* որ հաստատ մնաց: - 350. Դարձեալ՝ աստուած յառաջնումն ծննդեան յորժամ զյանցաւորս ըստ բնական մեղացն՝ ջրհեղեղաւն ջնջեաց. յերկրորդումն ծննդեան յորժամ զյանցաւորս ի կռապաշտութիւն՝ կարմիր ծովովն ընկղմեաց. յերրորդումն ծննդեան տուժեաց, յորժամ զյանցաւորս գրաւորական *օրինացն* պատերազմօք սատակեաց: - 351. Առաջին, երեքօրեայ սրբութեամբ յիսներեկի աւուրն ելից յեգիպտոսէ. որ ընկալաւ զտասնբանեան *օրէնս* և պատմեաց ժողովրդեանն: - 352. Մին վասն *օրինաց* տախտակին: - 352. Որպէս ասէր յերկրորդ *օրէնքն*: - 353. Մին վասն հաւատոյ *օրինաց*. և մին վասն հոգւոյս իբր ահարօնի. և մին վասն մարմնոյս որպէս ժողովրդեանն: - 353. Ո՞րպէս զանազանի հին *օրէնքն* և նորս: - 353. Այլ և միշտ և անփոփոխ. և անմիջաբար դեմ յանդիման քահանայագործութիւն է անդ ըստ իմանալեացն *օրինի*: - 355. Գիտել պա՛րտ է, զի ամենայն պատարագ հին *օրինացն* նախ ի յերկուս բաժանի: - 357. Վեցերորդ, վասն յանցանաց ի նուէրս սրբութեանցն, և կամ *յօրէնս* աստուծոյ, և կամ յընկերս վնասու...: - 358. ...զգլուխն **Ե** երորդ մասամբն ի յետ դարձուցանել որ է՛ տուգանք **Ե** զգայարանացն որ մոռացաւ և ո՛չ զգաց *զօրէնս* աստուծոյ: - 358. Կամ զի օտար հուր եդին ի բուրվառն որ չէր *օրէն*: - 364. Որպէս նախ քան *զօրէնս*, բնական քննութեամբ ընտրէին մարդիկ. կամ զանճոռնի մեծն, կամ զամենևին փոքրն, կամ զգարշն տեսութեամբ, կամ զվնասակարն, ուտելոյ պիղծ ասէին զսոսա: - 364. Եւ լիցի սուրբ ըստ նշանակութեան *օրինացն*. զի անսուրբն և պիղծն ո՛չ է զենլի: - 365. Եւ նշան սրբոյն և պղծոյն ըստ *օրինացն* ասացաւ ի վերոյ: - 366. Ո՞րպէս ասէ թէ՝ *օրէնք* յաւիտենական եղիցի: - 369. Եւ դարձեալ թէ՝ յիշատակութիւն *օրինացն* յաւիտեան մնաց: - 369. Այլ ուղիղն, զի *օրէնքն* թէպէտ ըստ խորհրդոյն փոխեցաւ, այլ ըստ իրին մնաց յաւիտեան. զի օրինակն էանց, այլ ճշմարտութիւնն մնաց: - 369. Նա՛խ՝ կաղ. որ նշանակէ՛ զկաղալն ի *յօրէնս*: - 370. Եօթներորդ՝ ստուերապէս նշանակէր զազատութիւնն որ եղև մեզ ի ձեռն քրիստոսի. որ ազատեաց *յօրինացն* դժւարութեանց, և ի մեղացն, զթողութիւն շնորհելով: - 372. Երրորդ՝ յիսներեկին տըւչութեան *օրինացն*. որ է՛ հոգւոյ գալուստն: - 372. Եւ եօթնից է տօնեմք յարութեան. նոյնպէս զմի օր *օրինացն* տըւչութեան, տօնեմք **Ը** օր հոգւոյն գալստեան: - 373. Եւ քառասնօրեայ *օրէնք* ետ մովսէս...: - 374. Դարձեալ, զի ցուցանէ թէ արիւնքն խնդրին ի մարդկանէ. որպէս *օրէնք* եդ...: - 380. Իսկ որ ի խորանէն բերին մովսէս և ահարօն զգաւազանն ծաղկեալ. զի ի սիօնէ՛ ելցէ *օրէնք*. որ է՛ յեկեղեցւոյ ամենայն իշխանութիւն: - 382. Եւ խաչօղքն անսուրբք էին մինչ յերեկոյանալ *օրինացն* հնոյն և ծագել նորոյն. մինչև սրբեցան աւազանաւն և խոստովան եղեն զքրիստոս: - 383. Չորրորդ, նախքան *զօրէնս* և *յօրէնն* և զկնի *օրինացն* թէ ոչ արդարանամք. և ո՛չ **Ժէ** դարուն ոք արդարանայ: - 384. Եւ զխոյն աստուծոյ, զի *զօրէնս* նորա յանցեաւ: - 384. Տապանակն էր քրիստոս. և ունէր զտախտակս *օրինացն*: - 385. Չորրորդ՝ նա՛խ *օրէնքն* և ապա ջուրն. զի նախ հոգւով խնամէ՛ և յետոյ մարմնով: - 385. Եօթներորդ՝ զի նախ *զօրէնսն* կատարեմք, և յետոյ զմխիթարութիւնն առնումք: - 385. Իններորդ՝ նոքա գործովք արդարացան զոր նշանակէր *օրէնքն*. և մեք հաւատով՝ զոր նշանակէր վէմն յետոյ: - 385. Վեցերորդ, մովսէս նշանակէր զհին *օրէնքն* որ բարկութեամբ բարի առնէր: - 386. Երկրորդ՝ զի գործունեայք և հաւանօղքն այնպիսեացն պատժեսցին. որպէս ի յերկրորդ *օրէնքն* հրամայէ՛ սպանանել այնպիսիսն. իսկ հաստատունքն ի հաւատս՝ վարձս առցեն ի հաւատոց իւրեանց: - 388-389. Իսկ ուխտաւորին *օրէնք* զայն հրամայեաց աստուած: - 389. Նա՛խ՝ նշանակէ՛ զնահապետսն. **ԺԵ** ազգ որ բնական *օրինօք* արդարացան նախ, և ապա՛ գրաւորն բնականաւն զօրացեալ արդարացոյց զնոսա: - 390. Երկրորդ, հին *օրէնքն* և մարգարէքն. որ նախ քան զմկրտութիւնս խորհրդով և օրինակօք յառաջապա՛հք եղեն նորոյս: - 390. Իսկ **Թ** ցեղն նշանակէ՛ զեկեղեցի նոր *օրինացս* **Թ** աստիճանօք կարգաւորեալ: - 391. Եւ սոքա բաժանեալ մեզ զերկիրն պարգևաց. այսինքն աստ զնոր *օրէնքն*, և անդ զվերինն երուսաղէմ: - 391. Վասն է՞ր գրեաց երկրորդ *օրէնք*: - 393. Նոյնպէս առաջին *օրէնքն* շարժեաց զնոսա ի բուսանիլ. և երկրորդն յաճումն և ի պտուղ: - 393. Երկրորդ՝ զի առաջին *օրէնքն* անկատար մնացին. ետ զերկրորդն զի կատարեսցին: - 393. Հինգերորդ՝ զի կրկին է *օրէնք* հին և նոր. այսինքն օրինակն և ճշմարտութիւն: - 393. Վեցերորդ՝ առաջին *օրէնքն* է կանոնաց. որ կարգաւորէ՛ զհոգի.

իսկ երկրորդն դատաստանաց. որ կարգաւորէ՛ զմարմին: - 393. Այս է մեր երկրորդ *օրէնք:* - 393. Նա՛խ՝ մովսէս նշանակէ՛ զհին *օրէնքն*. որ մինչ ի մկրտութիւնն եկն և վճարեցաւ: - 394. Հինգերորդ՝ արևմուտք հին *օրէնք* է. և արևելք նորս յետոյ: - 395. Նշանակէ *զօրէնս* քրիստոնէից այսպէս: - 395. Եւ նահապետք յառաջ քան *զօրէնս* ի նմա: - 395. Իսկ անապատ՝ գրաւոր *օրէնքն* ի ձեռն մովսէսի: - 395. Իսկ խոստման երկիրն նոր *օրհնօրս* ի ձեռն փրկչին յիսուսի: - 395. Եւ սա՛ բղխէ զկաթն և զմեղր. որ է՛ քաղցրութիւն և թողութիւն մեղաց. նոյնպէս և զԺ բանեան *օրէնս:* - 395. Նա՛խ՝ բանիւ ասաց. զի նահապետք բնական *օրէնք* ընկալան. աբրահամ. նոյ. և այլք: - 395. Իսկ խորտակեալ տախտակն մովսէսին և մնացեալն՝ նո՛ր *օրէնս:* - 395. Վասն է՞ր առաջին մարմնակա՛ն էր *օրէնք* և օրհնութիւն, և վերջինս հոգևոր ամենայն: - 395. Ըստ այնմ նախ զմարմնաւոր *օրէնս* ետ, և ապա զհոգևորն: - 395. Աստ զսէրն աստուծոյ ասէ. զսէր ընկերին ո՞ւր ասէ որ ասաց փրկիչն, «յայս Բ պատուիրանս ամենայն *օրէնք* կախեալ կան»: - 396. Վասն է՞ր հասարակաց արարիչն զազգս հրէից միայն սիրեաց այնպիսի *օրհնօք*՝ նշանօք՝ և այլն...: - 398. Իսկ երկիրն նոր *օրհնացս* ո՛չ բնական իմաստութեամբ հեթանոսաց ոռոգի, այլ շնորհօքն աստուծոյ և հաւատով դալարի: - 398. Հինգերորդ և մեծն ա՛յս է, զի գառն քրիստոս է. և կաթն *օրէնք.* և մայր ժողովուրդն: - 399. Ասէ՝ մի՛ չարչարէք զքրիստոս *օրհնօքն*. որպէս ասէին «մեք *օրէնս* ունիմք և պարտի դա՛ մեռանիլ»: - 399. Անառակ որդի որ անհնազանդ լինէր ծնողացն, *օրէնքն* քարկոծել տայր: - 400. Եւ հայր աստուած որ ո՛չ կատարի կամք նորա ի մեզ. յայնժամ ըստ բազում գթութեան իւրոյ առաքեաց զմիածին որդին որ փոխանակ մեր կախեցաւ զփայտէն և ազատեաց զմեզ յանէծիցն *օրհնաց*...: - 400. Մովսէս *օրէնս* ետ՝ զի գիր տացեն մեկնելոյ զայր և զկին: - 400. Իսկ խորհուրդն, ի *յօրէնքն* նոցա է զի փոփոխական էր *օրէնքն* նոցա. և որ փոխիւր, այլ ո՛չ դառնայր *յօրէնս* նոցա: - 401. Վասն է՞ր է որ մին կին թէ բազում այր առնէ՝ պոռնիկ է. և թէ այրն բազում կանայս առնէր, չէր պոռնիկ որպէս ի հինն *օրէնս:* - 401. Պոռնիկն ըստ այսմ որ շնացօղ է թէ կին և թէ այր՝ քարկոծէ՛ր *օրէնքն:* - 401. Երրորդ՝ նոր *օրէնքս* անուամբ հնոյն նորոգեալ կոչեցաք իսրայէլ: - 402. Վասն է՞ր հրամայեաց գրել *զօրէնս* ի յանցս յորդանանու: - 402. Վասն հեթանոսաց գրէ *զօրէնս* և ո՛չ հրէից զի առեալ էին: - 402. Երկրորդ՝ զի մեծասցի *օրէնքն* յաչս հրէից: - 402. Ութերորդ՝ ի խորխորատէ՛ չարեաց ելցեն *օրհնօք*. զի գեբաղն՝ հին ծոր թարգմանի: - 402. Իսկ ի միասին կարգէ՛, զի կամ երկիցեն յանիծիցն, և կամ ցանկասցին օրհնութեանն և պահեսցեն *զօրէնսն* աստուծոյ: - 403. Մեք ո՛չ կատարեմք *զօրէնս* մովսէսի, զի՞նչ լինիմք: - 403. Թէպէտ ո՛չ կատարեմք *զօրէնսն* ո՛չ եմք ընդ անիծիւք նորա վասն երից: - 403. Նա՛խ՝ զի զօրհնակն ո՛չ ունիմք. այլ զճշմարտութիւն *օրհնացն* ունիմք: - 403. Նա՛խ՝ զամենայն *օրէնսն* կատարելով: - 403. Այլ այս անէծքս յայտնապէս ի վերայ հրէիցն է. որք ո՛չ կատարեն *զօրէնս*, և ո՛չ ունին զմկրտութիւնն քրիստոսի: - 403. Ասա՛ թէ՝ քահանայիցն հրամայեաց ի բաց կալ յամուսնութենէ յորժամ մտանէին ի տաճարն և ի խորանն. և յորժամ լսէին *զօրէնս* աստուծոյ զօրեայ սրբեցան: - 404. Դարձեալ՝ *օրէնքս* յայտնի էր զոր ուսոյց. և աւետարանն ծածկեալ, զոր հոգին սուրբ յայտնէ որ քննէ զխորս աստուծոյ: - 405. Հինգերորդ՝ ցուցանէ թէ մարմնաւոր *օրհնացն* վախճան հոգևոր և օրհնութիւնն է որ եղև քրիստոսիւ: - 409. Երրորդ՝ *օրէնքն* որ ի ձեռն մովսէսի՝ էր խափանիչ մեղաց և մահու: - 409. Եօթներորդ՝ ոմանք մարմին մովսէսի *զօրէնսն* ասեն...: - 410. Երկրորդ՝ և մի՛ փոքր կասցի *օրէնքն*, տեսանելով զլոյս երեսացն նւաղեալ: - 411. Ութերորդ՝ զի զկարծր սիրտ նոցա թլփատեսցէ *օրհնօքն* ի վէմն գրեալ: - 415. Եւ հին *օրէնքն* արգելաւ ի մկրտութիւնն և փոխեաց քրիստոս: - 417. Հինգերորդ՝ գրեաց յեսու *զօրէնս* ի քարեայ արձանս հեթանոսաց: - 417. Եւ տէր մեր զնորս հեթանոսաց անջինջ գրեալ *օրէնս* ի սրտի: - 417. Եւ տէրն կորոյս զիսրայէլ ազգօք. և փոխանակեաց իւր ժողովուրդ զհեթանոսս *օրհնօք:* - 418. Եւ խոստումն օրհնութեանց զաւակին՝ և *օրհնաց* կատարումն՝ փրկիչն եղև: - 419. Եւ բաշխեաց երկոտասան առաքելօքն աստ զնոր *օրէնս*, և անդ զվերին ժառանգութիւնն հաւատացելոց իւրոց: - 419. Երկրորդ՝ նշանակէր զքաղաքն երուսաղէմ. զի միայն ա՛նդ եղև մարգարէութիւն և *օրէնքն*. և սեղան աստուծոյ ի սիօն: - 421. Եւ յետոյ յամենայն աշխարհ եկեղեցի աստուծոյ և *օրէնք* և սեղան աստուծոյ կանգնեցան, և երուսաղէմ ցամաքեցաւ: - 421. Խօսեցաւ *օրհնօք* նախ և նշանեաց զեկեղեցի սուրբ հարսն երկնաւորին: - 422. Նա՛խ՝ երեքժանի մսահանաւ հանել զմիսն որ չէր *օրէն:* - 425. Կրկին կործանիլն դագոնայ, զի նախ՝ *օրհնօքն* մովսէսի անկաւ, և քրիստոսիւ կործանեցաւ: - 425. Գերիլն նշանակէ՛ *զօրէնքն* և զաւետարանն ի հեթանոսս առաքեալ: - 426. ...այսինքն բնական և բանական և գրաւոր *օրհնօք* ո՛չ գտեալ. այլ ի ձեռն աւետարանին: - 426. Այլ և մարգարէութեանց բաժանումն ի նոր *օրէնքն* ասացաւ: - 430. Կամ զի *օրէնքն* գրեալ էր՝ կուրի և կաղի մի՛ դնել գայթակղութիւն, ասէին նախատելով թէ՝ որպէս ո՛չ կարես կոխել զդոսա, նոյնպէս ո՛չ կարես առնուլ զամուրն յեբուսայ: - 431. Երկրորդ՝ վասն տկարութեան *օրհնացն*. զի ի հինն ո՛չ

կարէր բառնալ զմեղս առանց մարմնական փոխարինաց և յիշատակութեանց: - 433. Այլ աստ ասէ սուրբն եփրեմ եթէ՝ խրատն դաւթի եղև հատուցումն մեղացն. այլ և պարտք բարեաց առ աստուած ի ցոյց *օրինի* ամենայն ապաշխարողաց: - 434. Վեցերորդ, խոտեցաւ սաւուղ և ընտրեցաւ դաւիթ. խոտեցաւ հին *օրէնքն*, և ընտրեցաւ նորս: - 435. Դարձոյց ի յորդանանու զբերզելի որ տասամբն կերակրեաց զդաւիթ. ի տիպ հին *օրինացն* **ժ** բանեան զոր կատարեց քրիստոս: - 438. Երեսունն**է** զօրավարք դաւթի. և **լէ** թիւ հնոյն *օրինաց*. և այլ նորոց կտակի. և կամ **իբ** գլխաւո՛ր են գրոց հնոց. և **ժ** բան *օրինաց*. և չորից աւետարանաց. և մինն առաքելական: - 438. Իսկ այժմ ուխտէ՛ սպանանել. զի ըստ *օրինացն* զգործ արդարութեանն գործեսցէ: - 439. Եւ այս գիտելի՛ է, զի դատաստան հին *օրինացն* հայի յարդարութիւնն աստուծոյ. և օրն դատաստանի: - 439. Եւ շնորհք նոր *օրինացս* հայի յողորմութիւնն աստուծոյ և ի փառս վերինն երուսաղէմի որպէս ասացաւ ի վերոյ: - 439. Եւ **ծ** հարճք, որք զուք *օրէնսն* կատարեն: - 440. Եւ տես, զի վրէժխնդիրն *օրինացն* մովսէսի՝ նախ ի՛նքն լուծանէր *զօրէնս*. զի ագռաւն պիղծ էր *օրինացն:* - 443. Եւ վասն այն գնաց ի սաբեփթա յայլազգիս. զի և զնոցա նեղութիւնն տեսցէ. որք չէին անցեալ *զօրինօքն* մովսէսի: - 443-444. Նա՛խ՝ զի վրէժխնդիր եղև *օրինացն* աստուծոյ. որպէս փենէհէզ սպան զզամբրի և զքասբի. և սամուէլ զագագ: - 444. Յետ որոյ քեղկի քահանայ որ էր հայր երեմիայի՝ եգիտ զերկրորդ *օրէնքն* և մատոյց առ ովսիա. և գնաց առ ողդիկին մարգարէ հարցանել...: - 447. ...իսկ երրորդն նէեմի և եզր դպիր՝ կանգնեցին զպարիսպն և զդրունսն. նշանակեն զառաքեալսն զհայրապետսն և զվարդապետսն. որք *օրինօք* պարսպեն զեկեղեցի, և հանապազ ուսուցանեն զդպրութիւն: - 449. Դարձեալ՝ նշանակէ՛ զերիս *օրէնս*. զԲանականն. զԳրեալն. և զԱւետարանն: - 449. Երկրորդ *օրէնք*. Յեսու. Դատաւորք. և Հռութ: - 450. Որ է՛ *օրէնք*. Մարգարէք. Սրբագիրք: - 451. *Օրէնք* է մովսիսի **ե** գիրքն որ ասացաւ: - 451. Յորում աւուր *օրէնքն* տւաւ, և հոգին սուրբ էջ: - 455. Ա՛յս է Ցանկ Նորոց *Օրինացս:* - 455. *Օրէնք* դայեկեցին: - 456. Եօթներորդ՝ ողորմութիւն է ի նոր *օրէնս*...: - 458. Զի ո՛չ էր *օրէն* զկանայս յազգահամարն թուել: - 460. Այլ և *օրէն* էր նոցա, որ իւրաքանչիւր ոք յազգէ իւրմէ առնոյր իւր կին և ո՛չ յօտարէ: - 460. Այլ ո՛չ էր արդար թէ յանցանէր *զօրինօքն* աստուծոյ: - 460. Այլ և քահանայքն ո՛չ յանցանէին *զօրինօքն* և յօտար ազգէ տային նմա կին: - 460. Իսկ յակոբ որ էր յազգէն սողոմոնի՝ առեալ զկին եղբօրն ըստ *օրինացն* զի յարուսցէ զաւակ եղբօրն. և ծնաւ զյովսէփ: - 460. Եւ այսպէս յովսէփ բնութեամբ որդի էր յակոբայ և ի ցեղէն սողոմոնի. և *օրինօք* որդի էր ելեայ որ ի նաթանայ: - 460. Զի թէպէտ փակեալ էր *օրէնքն* խառնիլ երկուց ցեղիցն ընդ միմեանս, սակայն ղևտացւոցն ո՛չ գոյր ժառանգութիւն և բաժին, խառնեին երբեմն ընդ թագաւորական ազգն յուդայ: - 461. Իններորդ՝ զի մի՛ երևեսցի տէրն հակառակ *օրինացն* որ գովէր զպսակն: - 461. Իսկ ա՛յլ վարդապետք ասեն, թէ ետ զբնական *օրէնս* որպէս նոյի և յառաջ քան զնա: - 467. Եւ թէ յայնմ ժամանակի փրկեալ լինէաք, կարծէաք թէ *յօրինաց* անտի եղև փրկութիւն: - 467. Այլ յորժամ նկուն եղեն *օրէնք* ամենայն, և ո՛չ կարեցին փրկել. յետոյ եկն և երևեցաւ նոյն ինքն օրէնսդիրն և փրկեաց զմեզ: - 467. Զի մի՛ *յօրինաց*, այլ ի շնորհացն քրիստոսի իմասցուք զարդարութիւն և զփրկութիւն մեր: - 467. Ասեմք եթէ յետ յղացման բանին յարգանդի կուսին *օրինօք* և ոչ *օրինօք* բնութեան, ժուժկալեալ ամսոց ըննից և աւուրց հնգից, ըստ հասարակաց ասեմ և անդրանկաց. ըստ հնգից յաւելեալ թւոց նախաստեղծին նախարարչութեան աւուրց: - 469. Բազում ինչ անդ բնութիւն կորոյս *զօրէնս* իւր. այսինքն ի կողմանէ մօրն, ի կողմանէ զաւակին, և ի կողմանէ կերպին: - 469. Երկրորդ՝ փրկեաց յանիծից *օրինացն*...: - 473. Չորրորդ՝ որպէս արու բռնացա՛ւ տէր ի քակել *զօրէնս* բնութեան. և խզեաց զկապ կուսանաց և զմայրական. այսինքն զի որ մա՛յր է՝ կոյս ո՛չ է. և որ կոյս է՝ մայր ո՛չ է: - 480. **Եւ այն զի փաթութած է՝ ըստ հրէական *օրինին* է. զի կոնդակ և գալարելո՛վ էր նոցա գիրն. իբր թէ ծածո՛ւկ է ի նոցանէ խորհուրդ մարգարէիցն և թաքուն**: - 481. **Նոյնպէս և քրիստոսի մինչ զտղայական հասակն նկարեն, փաթութեալ հանեն զթուղթն ի ձեռն. իբր ի հրէից ծնեալ զամենայն ինչ ըստ *օրինացն* առնել**: - 481. Իսկ զձեռագիր հրէիցն, և զայն ևս պատառեաց քրիստոս կատարելով զամենայն *օրէնս* աստուծոյ: - 482. Անմարթ էր թողուլ զժողովուրդն ի դրան տաճարին և մերձիլ յանկողինս. և ըստ *օրինացն* **գ**օրեայ սրբութիւն ստանալ...: - 484. Այլ և ո՛չ *օրէնս* դնէր որպէս մկրտութիւնն ի մեզ: - 485. Նա՛խ՝ զի որ բանն մարդ եղև՝ ո՛չ գարշի յեդեալ *օրինացն* իւրոց զի վասն մարդկան եդ: - 485. Երրորդ՝ զի զկարգեալ *օրէնսն* յինքենէ՝ պա՛րտ էր անձամբ կատարել. զի հաւատասցի թէ ի նմանէ՛ են կարգեալ: - 485. Հինգերորդ՝ զի մի՛ կարծիցի հակառակ ընդ դէմ *օրինացն* աստուծոյ...: - 485. Եօթներորդ՝ զի յինքն կրելով զթլփատութիւնն և զայլ օրինականս, ի ծանրութենէ թլփատութեան և *օրինացն* ազատեսցէ զմեզ: - 485. Այլ ճեղքելով որպէս *օրէնն* էր անդրանկացն ճեղքել և ո՛չ հատանել: - 486. Իսկ տէրն մեր էր անդրանիկ ի հօրէ և անդրանիկ ի մօրէ. և

անդրանիկ շնորհաց և արդարութեան. և անդրանիկ յարութեան մեռելոց. վասն որոյ անդրանկապէս ընկալաւ *զօրէնս* թլփատութեան: - 486. Եւ որպէս զմարմնաւոր թլփատութիւնն աւանդեաց աբրահամու, նոյնպէս զհոգևորն որ է՛ թլփատութիւն սրտի՝ հրամայեաց ի ձեռն մովսէսի. որպէս յերկրորդ *օրէնքն* «թլփատեցէք զխստութիւն սրտից ձերոց» ասէ: - 486. Երկրորդ՝ թլփատեցին զնա իւրքն յաւուրն **ը** երրորդի՝ *օրինաց* սրովն: - 486. Վեցերորդ՝ զի կատարեսցէ և լցցէ *զօրէնսն:* - 486. Զի է՛ որ մատուցօղն մեծ է քան զպատարագն. որպէս հին *օրինաց* պատարագն. զի անասունք էին: - 491. Եւ է՛ որ պատարագն մեծ է քան զմատուցօղն. որպէս նոր *օրինացս* մարմինն քրիստոսի մեծ է քան զքահանայն: - 491. Աջն զարդարութիւն առ ամենայն ոք և *յօրէնս* աստուծոյ: - 493. Այլ և կատարումն չորից կարգաւորաց *օրինաց:* - 494. Չորրորդ՝ անէծք առաջին մարդոյն՝ եղև տանջանք և դատապարտութիւն մարդոյն. և քրիստոս գնեաց զմեզ յանիծից *օրինաց* եղեալ վասն մեր անէծք. ապա ուրեմն քրիստոս աւերեաց զդժոխս: - 506. Ասեմք թէ՝ ի վերնատունն զհինն կատարեաց մինչ զմարմինն բաշխեաց և նոր *օրէնս* եդ. և մեք հնոյն ո՛չ եմք պարտական: - 510. ...և տէր մեր յետ յերից *օրինաց*՝ այսինքն բնական բանական և գրաւական՝ երևեալ ի գիշեր կենցաղոյս և իջեալ ի դժոխս աւերելով զնա դարձոյց զերկոսին ժողովուրդս իւր...: - 514. Եօթնմ՝ ի մէջ գիշերի յարեաւ, զի *զօրէնս* ստուերական ի լոյս ճշմարտութեան փոխեսցէ: - 514. Երկրորդ՝ և յայսմ աւուր տուաւ նոցա *օրէնք* ի ձեռն մովսէսի: - 524. Երկրորդ՝ և յայսմ աւուր տւաւ մեզ նոր *օրէնս* և քարոզութիւն սուրբ աւետարանին: - 524. Վասն է՞ր յորում աւուր տւան *օրէնքն* ի նմին աւուր և առաքելոց տուաւ հոգին սուրբ: - 524. Նախ՝ զի ցուցանէ թէ որ ետ *զօրէնսն* նոյն առաքեաց և զհոգին և ի նոյն տիպն որոտ և փայլատակումն հողմ և հուր երևեալ որպէս անդ ի լերինն: - 524. Երրորդ՝ զի անդ ո՛չ կարէր արդարանալ զի հիւանդ էր սիրտն, ետ նոր *օրէնս* ի սիրտս մեր որ կարօ՛ղ է արդարացուցնել զժողովուրդս և զհեթանոսս: - 524. Առաջին վասն *օրինաց* և նոր օրհնութեան: - 525. Եւ վասն է՞ր ի հին *օրէնս* յիւրեանց ազգէն առնուին և ի նորս ոչ: - 526. Յետ այսորիկ հարցանելի՛ է ի նոր *օրինաց* և յեկեղեցւոյ կարգաւորապէս ըստ մարդեղութեան բանին յարմարեալ. իբր պատճառելիք առ պատճառ նորին հետևեալ և շարադասեալ: - 528. Քանի՞ են *օրէնք:* - 528. *Օրէնք* սեռական **գ** է. բնական. գրաւորական. աւետարանակ: - 528. Է՛ և **է** երրորդ *օրէնք*՝ մարգարէականն: - 528. Զոր տէրն *օրէնք* կոչեաց զմարգարէական բանն դաւթի...: - 528. Եկեղեցի սուրբ նոր ժողովուրդ կոչեցաւ աստուծոյ. զի հաւատով արդարացաք և եղաք ժողովուրդք և ո՛չ ըստ հնոյն *օրինօք:* - 528. Սակայն մի և նոյն բանն բազմանայ ի բազումս. որպէս ի հրեշտակս և ի մարդիկ. ի հին և ի նոր *օրէնս*. այլ ի միութենէն ո՛չ բաժանի: - 529. Ոտք՝ կրօնաւորք և ապաշխարօղք. որք կրեն զծանրութիւնս *օրինացն:* - 534. Իսկ մորուս կոչին մարգարէք և առաքեալք և հայրապետք մերձ բերանոյն առ մեզ խօսելով զպատգամս *օրինացն* աստուծոյ: - 534. Եւ զի քահանայք իշխանք են ասէ *օրէնքն* «զիշխանս ժողովրդեան քո մի՛ հայհոյեսցես»: - 538. Ստուգաբանութեամբ կոչի կանոնն քանոն. այսինքն ուղղութիւն և կարգ և *օրէնք:* - 538. Այլ դատաւոր միտն կացուցեալ երկու վկայ զանբիծ հաւատս և *զօրէնս* որ են հաւատք և գործք. զի առ ո՞ր և իցէ քրիստոս նա՛ է ճշմարիտ: - 551. Զա՛յս ասեմ, զի որ ինչ անօրէնութիւն է ազգիս հայոց, նո՛յն է *օրէնք* այլազգ քրիստոնէից. և որ մեզ երկբայութիւն է՝ նոյն դաւանութիւն է նոցա: - 552. Այլ արդ լուծումն պահոցս այսոցիկ *օրէնք* է նոցա. նաև ի ձուկն և ի ձէթ և յայլ սոյնպիսիս: - 552. Ո՞չ ապաքէն մովսէս ի հինն որոշեաց զսուրբս և անսուրբս. մանաւանդ թէ յաւուրս նոյի գոյր ընտրութիւնս. այսպէս ցուցաւ և մեզ պահելի իբր զբնական *օրէնս*. այլ սոցա ոչինչ է պիղծ ի կենդանեաց: - 552. Եւ այլ բազում և զանազան ազգապղծութիւն ընդ հոգևորս և ընդ մարմնաւորս. երկու եղբարց և **բ** քերց. և ընդ քերց հոգևոր մօր. և անխտիր ի բազմանկողինս և այլս բազումս որ զազիր է խօսելոյ *օրէնքէ* նոցա: - 552. Ապա ուրեմն յա՛յտ է յայսցանէ՝ թէ առ միոնն իցէ ճշմարիտ հաւատ և *օրէնք*՝ նա՛ է ճշմարիտ և ո՛չ այլքն. թէպէտ բաժանեալ լիցի ի նոցանէ: - 552. Երրորդ՝ առ քահանայս զգուշութիւն *օրինօք* ունել. թէպէտ և ոմանք կաղան առ այս: - 554. Իսկ անօրէնութիւն՝ հոգւոյն է՛. զի *օրէնքն* հոգևո՛ր են: - 555. Երկրորդ՝ յանցանք է կոխել *զօրէնս* և անցանել: - 555. Իսկ մեղք է *յօրինաց* կատարումն ո՛չ հասանիլ: - 555. Դարձեալ՝ որ ինչ նախ քան *զօրէնս* գործեին՝ մեղք կոչիւր. որպէս ի դարս նոյի. և այլս: - 555. Իսկ յետ *օրինացն*՝ անօրէնութիւն. որպէս որք յանապատի անդ անօրինեցաւ ժողովուրդն: - 555. Երրորդ, արբեալն ի խորհրդոց՝ արհամարհէ՛ *զօրէնս* և զամօթ և զխրատ մարդկան: - 557. Որովք միշտ երանութեամբ զաստուած տեսցես. հայելով *յօրէնս* նորա ի տուէ և ի գիշերի: - 558. Խրոխտալ պարտ էր առ չարսն և ո՛չ հնազանդիլ. այժմ անհնազանդիմք *օրինացն* աստուծոյ և ամբարիաւաճիմք առ ընկերս: - 564. Իսկ կամաւոր մեղքն գրա՛ծ է ի հին *օրէնքն* **իբ** գլուխն տես: - 564. Եւ *օրէնս* եդ նոցա թէ որ զաստուած անարգէ՝ քարկոծեսցի: - 566. Դարձեալ՝ մեղքն է խօսք և

գործք և ցանկութիւն որ լինի ընդ դէմ *օրինացն* աստուծոյ: - 569. Որպէս **ժ** բան է *օրինացն*՝ և **ժ** բան է հայր մեր որ յերկինս: - 572. Երեք. այսինքն զի բոլոր սրտիւ սիրէ և միշտ սիրէ և առանց փոխարինաց սիրէ. որպէս ասացաւ յերկրորդ *օրէնքն:* - 576. ...զնոյն և ամենայն հեթանոսք առնեն. իսկ թէ ի հեթանոսս այսպիսի պարկեշտութիւն պարտ էր առնել, քանի՞ ևս առաւել յեկեղեցիս պարտ է լինիլ. որ է ճշմարիտ կարգաւորութիւն և սրբութեան *օրէնք:* - 589. Եւ նմա՛ պատշաճ է կարդալ զմարգարէքն և զհին *օրէնքն* յեկեղեցին: - 606. Այլ ո՛չ է պարտ բաժանել զպսակն զայն որ *օրինօք* լինի պսակեալ...: - 610. Գիտելի է, զի նախ առաջին բաժանի ազգն ի բնականն՝ և *յօրինացն*՝ և ի հոգևորն: - 611. Ա՛րդ՝ բնականն է մարմնոյն. և *օրինացն* խնամութեամբ. և հոգևորն որդեգրութեամբ. - 611. ...վասն զի ունիմք զմարմին և հոգի և *օրէնք:* - 611. Այս բնական ազգակցութիւն և աստիճանք *օրինացն:* - 611. Իսկ *օրինացն* է՛ խնամութեամբ: - 611. Իսկ *օրինաց* ազգն որ են խնամիքն, և բնականն որ են մարմնականքն, ո՛չ լինին խնամիք մինչ ի **դ** ծնունդն: - 612. Վասն է՞ր ի հին *օրէնս* եդաւ յիւր ազգէն առնուլ հարսն, և ի նորս յօտար ազգէ: - 612. Ի հին *օրէնս* եդաւ յազգէն իւրմէ առնուլ կին...: - 612. Այսպէս և աստուածային *օրինօք* մի այր ընդ միոյ կնոջ զուգաւորի և ընկերակցի: - 612. Իսկ պոռնկութիւնն ի բնական *օրէնս* և ի գրաւորն և ի նորս խոտեալ է: - 613. Եւ երկրորդ, ընդ դէմ *օրինացն* աստուծոյ կորուսանի բեղնաւորիլն վասն յաճախ սերմանցն: - 613. Վասն այն խոտեալ է և պիղծ յամենայն *օրէնս:* - 612. Գիտելի՛ է, զի ի հին *օրէնսն* մովսէսի **է** ժամ էր աղօթից...: - 621. Եւ այն որ **բ** ձայնիցն մի է մեսեդին. զի դարն ադամայ և ենովքայ միապէս բնական *օրինօքն* վարեին: - 629. Նոյնպէս նոյ և աբրահամ մի ունէին *օրէնք:* - 629. Զի առաջին կանոն երանելեացն, որք դառնան ի չարէ և զճանապարհս *օրինացն* ընթանան...: - 629. Մեղաց պատարագին խունկ և իւղ չէր հրամայեալ *օրէնքն*. զի տրտում և ժահահո՛տ է: - 630. Երկրորդ՝ *յօրէնսն* ջրոյ: - 640. Տասն աղին՝ **ժ** զգայութիւնքն հոգւոյ և մարմնոյ. և **ժ** մասունք արարածոց ընդ բան *օրինացն:* - 641. Եւ յերեքշաբաթին ըստ կարգի՝ մարգարէիցն և յովհաննու. որ միջնո՛րդ է *օրինաց* և շնորհաց: - 642. Ի խորհուրդ *օրինացն*. յորժամ էջ տէր ի սինա, փող և որոտ, հուր և ծուխ և այլն: - 644. Եւ մովսէսիւ խօսեցաւ *զօրէնս:* - 644. ...կամ մովսէս որ պատմեաց *զօրէնսն* աստուծոյ...: - 644. Եւ ծածկոյթն՝ զքօղ *օրինացն:* - 646. ...որ է կրկին տախտակն մովսէսի. յանձնառական և հրաժարական *օրինօքն* միաւորեալ: - 646. ...և *օրէնս* եդ որ հանգչէր մարդ ի մարմնական գործոց յաւուրս և ի շաբաթս, յամիսս և ի տարիս...: - 647. Չորրորդ՝ լրումն *օրինաց* քրիստոս եղև մարմնովն...: - 647. Եւ այս որովայնամոլ ազգին անօրէն *օրէնք* կարգեցաւ: - 651. Իններորդ, ընկալաք կրկին *օրէնս* հին և նոր. վասն որոյ **բ** աւուրս սրբութեամբ պահեմք: - 654. Վեցերորդ՝ ճանապարհ կոչի *օրինացն* և պատուիրանաց. - 666. ...այսինքն է որ ի վեր քան զհրամայեալ *օրէնսն* կատարեցին զգործս. որպէս առաքեալքն, մարգարէքն, մարտիրոսքն, կուսանքն, և այլքն: - 687. ...որք ունին զհին *օրէնս* և ո՛չ զնորս. այլ ի ներքոյ մնացեալ սկզբնական մեղաց՝ նոքա ի տանջանս ընթանան: - 678. Իսկ արդարքն և մեղաւորքն միջակք՝ որք առին *զօրէնսն* և ըստ *օրինացն* գործեցին զբարիս. կամ սխալեցին...: - 687. Երկրորդ, ասեն խնդրէ արդարութիւնն աստուծոյ՝ զի վասն մեղաց պատիժ տացի. որպէս *յօրէնս* մարդկային պատժին յանցաւորք...: - 701. Եւ բնական քննութեամբ նախ այսպէս եթէ՝ տեսանեմք ի քաղաքական *օրէնս* զի գոյ դատաստան. այսինքն բարեացն պատիւ և չարացն պատիժ...: - 715. Նախ դիմակայութեամբ եթէ՝ ո՛չ է ըստ *օրինի* բնութեան անապական մնալ նմա, այլ սքանչելիք աստուածային: - 733. Երկրորդ, աթոռակիցքն քրիստոսի. որպէս առաքեալքն և մարգարէք և կատարեալքն դատեն զմեղաւորս իբր տեղեակք *օրինացն* աստուծոյ: - 738. Որք արտաքոյ *օրինաց* մեղանչեցին որպէս կռապաշտք՝ և հրէայքն որք յետ խաչելութեանն քրիստոսի. զի յետ խաչին պահպանութիւն *օրինացն* ի կռապաշտութիւն է համարեալ նոցա: - 739. Որք առին *զօրէնս* և ո՛չ պահեցին. որպէս չար քրիստոնեայք ի նորս և չար հրէայքն ի հինն...: - 739. Որք ի վեր քան *զօրէնս* գործեցին. որպէս առաքեալք, մարգարէք, մարտիրոսք, կուսանք, և այլք: - 739. Յաւատացեալ արդարք. որք ըստ *օրինաց* հնոյն կամ նորոյս գործեցին զարդարութիւն. կամ որք սխալեցին և ապաշխարեցին զմեղս զղջմամբ խոստովանութեամբ պահօք աղօթիւք ողորմութեամբ և այլովք: - 739. *Յօրէնքն* հրամայեցաւ **բ** և **գ** վկայք սպաննելոյն և ամենայն բանի: - 742. Իններորդ, զի բնական *օրինացն* **գ** են վկայք. բանն և գիրն և աւետարանն. որ տուաւ նահապետացն և մարգարէիցն և առաքելոցն: - 742-743. Երկրորդ, պատուիրանն աստուծոյ և *օրէնքն* է վկայ պահողացն և անարգողացն զնա: - 743. Իսկ կշռորդն է՛ *օրէնքն* աստուածային, և գործք մեր նմին հաւասարեալ և միտեալ հաւատով: - 745. Չորրորդ, կշիռն նշանակէ՛ զգործս մարդկան. ըստ կշռոյ *օրինացն* հաւասարել և հատուցանել. եթէ ըստ բնականին կամ ըստ գրոյն և աւետարանին. որում շատ տուաւ առաւել պահանջել: - 747. Եւ թէ ունիցին ըստ *օրինացն* հաւասարեալ ի գործս կամ ի հաւատս, և

եթէ միտեալ և կամ նուազեալ, ըստ նոցին *օրինացն* հաստուցանել. և կամ արտաքոյ *օրինացն* կորնչիլ ի յայսմ կշռոյ է հատուցումն: - 747. և Ոմանք ըստ քաղաքական *օրինացն* **ը** ասեն գոլ պատիժ: - 751. Եւ քանզի մովսէս որ ջրային կամ ի ջրոյ հանեալ թարգմանի. թէպէտ երբեմն *զօրէնս* և երբեմն զտէրն նշանակէ. այլ աստ ոչ *զօրէնս*, այլ զտէրն գուշակէ՛. որ ի ջուրց մարդկայինս բնութեան ընկալեալ եղև: - 756. Զաւազանն պղնձի ի հայելեաց կանանց կազմեաց. այսինքն զբանն աստուածային՝ ի սրբոցն հաստատեաց *օրինօք:* - 756. Խնծոր նոր և հին, գիրքն են աստուածայինք. որք հինք են *յօրէնս* և ի մարգարէս. և նորք յաւետարանն և յառաքելական մատեանս: - 756. Վեցերորդ, այլ և բարեպաշտ թագաւորք՝ և իշխանք՝ և իշխեցեալք՝ ունին զայս կարգ. թէ *օրինօք* կենցաղավարին ըստ հրամանացն աստուծոյ: - 757. Իններորդ, և որք նախ քան *զօրէնս*՝ զերեսնաւորն. և որք ընդ *օրինօքն*՝ զկաւորն. և որք ընդ շնորհօքս, զհարիւրաւորն տացեն պտուղ: - 758. Եօթներորդն է առատութիւն առանց կարօտութեան. յերկրորդ *օրէնքն* «էից ամենայնի զառատութիւն վայելեսցեն»: - 767. Նա՛խ խոստացաւ հրեշտակօք. աւետեաց մարգարէիւք. դաստիարակեաց *օրինօք*. և յետոյ երևեցաւ ի լրումն նոցին: - 776. Իններորդ, հաւատով հնազանդի ոք *օրինացն* աստուծոյ. այլ դևն հակառակ կայ *օրինացն* և աստուծոյ. թէպէտ գիտէ զայն լինիլ ինքեան չար, այլ գիտութեամբ մեղանչէ: - 784

**ՕՐԷՆՍԴԻՐ +** Այլ յորժամ նկուն եղեն օրէնք ամենայն, և ո՛չ կարեցին փրկել. յետոյ եկն և երևեցաւ նոյն ինքն *օրէնսդիրն* և փրկեաց զմեզ: - 467

**ՕՐԻՆԱԴՐԵՄ +** Չորրորդ եղանակաւ ծնունդ ասի և մկրտութիւնն. զի *օրինադրեաց* մեզ վերստին ծնունդ...: - 471. Մին կին է միոյ առն *օրինադրեալ* և ո՛չ աւելի, յաղագս բազում պատճառի: - 612. Նա՛խ՝ զի մին կին ետ աստուած մին մարդոյն ադամայ՝ ի յօգնութիւն. նոյնպէս և ամենեցուն *օրինադրեաց:* - 612. **Այլ մովսէս *օրինադրեաց* ի թիւքն առնել կրկին փողս արծաթի. և կոչեաց զնոսա փողս ազդեցութեան. որպէս դեռևս գոն ի դրունս թագաւորաց կրկին փողք**: - 618

**ՕՐԻՆԱԴՐՈՒԹԻՒՆ +** Եւ յայսոսիկ միաբանութիւնս որ ըստ կանոնի՝ յաւէտ միաբանութիւն զայս է իմանալ՝ որ ըստ բոլորին *օրինադրութեանց* սահմանաց կամ ըստ գլխաւորագունիցն լինիցի. և ո՛չ մասամբ միով միաբանեալք և բազմօք զանազանեալք. մանաւանդ թէ հակառակեալք և ընդդիմացեալք: - 552

**ՕՐԻՆԱԿ +** Եւ ի բացայայտութիւն այսմ բանի՝ ծանիր ըստ *օրինակի:* - 20. Վասն ճանաչման իւրոյ աստուած կազմեաց կրկին կերպիւ *օրինակս*. այսինքն իմանալի և զգալի...: - 24. Նմանապէս և մարդկան տեսանել զաստուած առանց *օրինակի* և միջնորդի՝ անհնա՛ր է ի կեանս յայս: - 25. Հինգերորդ՝ *օրինակ* ծննդեան և բղխման. և զի **զ** եղանակաւ է ծնունդ երկրի: - 30. Չորեքտասաներորդ՝ Հոգին միայն ի հօրէ՛ է բղխումն՝ **ժ** հարցմամբ, և **զ** *օրինակաւ*, և **ը** վկայութեամբ: - 30. Ըստ այսմ *օրինակի* և նոր հերձւածօղք քաղկեդոնիկք նեռին կարապետք. հետևօղք նեստորի անիծելոյ՝ և լևոնի պղծոյ: - 34. Այլ մեր պատասխանին առ այս՝ է՛ այս ինչ, թէ միշտ ծնունդ է ի հօրէ ըստ բնութեանն որդի. այլ անձամբ կատարեալ. որպէս լոյս ի հրոյն միշտ ծնանի և ոչ է անկատար՝ *յօրինակ* որդւոյ: - 37. Եւ միշտ բղխէ՛ զջերմութիւնն *յօրինակ* բղխման հոգւոյն անսպառապէս: - 37-38. Եւ նոյն ինքն հուրն է՛ *օրինակ* հօր. զի անհնա՛ր է լինել առանց լուսոյ և ջերմութեան. զի էութիւն են հրոյն: - 38. Եօթներորդ՝ զի չարչարանօքն իւրովք յուսադրեաց զմեզ, զի մի՛ յետ տկարութեանս և սակաւ չարչարանաց ի փորձողէն՝ կասեսցուք ի նահատակութեանց. այլ *օրինակ* դիցուք զչարչարիլն նորա մեզ և համբերեսցուք որպէս սաէ: - 43. Ասէին՝ առնէր հայր, և ապա որդին ի նոյն *օրինակէն* առնէր: - 45. Եւ զնոյն բանն աստուած մարմնացեալ. և շրջեալ ի վերայ երկրի. զի յայնմ *օրինակին* արար և որդի պիտոյ էր լինիլ և չորս աշխարհք: - 45-46. Ասեն դարձեալ, *օրինակ* տուք զի լիցի ի նոյն բնութենէն մինն ծնունդ՝ և միւսն ո՛չ ծնունդ. և ապա՛ հաւատամք աստուած զհոգին: - 53. Ապա՛ տամք զհուրն *օրինակ*. զի ունի զլոյսն ծնունդ՝ և զջերմութիւնն բղխումն: - 53. Իսկ այլ բազում *օրինակ* երրորդութեանն ասացաւ ի վերոյ յերեք համարն: - 53. Զոր և այժմ *օրինա՛կ* է առ մեզ սարկաւագն. զոր հոգի կոչէին վասն հոգևորապէս խօսելոյն: - 59. Ութերորդին ասեմք՝ եթէ *օրինակաւ* խօսից իմանալ զհոգին սուրբ՝ ունի ինչ ուղղութիւն և ունի ինչ թիւրութիւն: - 62. Ապա ուրեմն *օրինակս* զանձն հոգւոյն բառնայ: - 62. Երկրորդ՝ *յօրինակաց:* - 62. Իսկ վասն անբաժան էութեանն ծանի՛ր և զայդ *օրինակաւ:* - 74. Երեսներորդ՝ զի վարդապետք սուրբք *օրինակ* տան մարդեղութեանն քրիստոսի, որպէս լոյս ընդ օդ՝ և հուր ընդ երկաթ միաւորեալ: - 100. Զոր ցուցցուք *օրինակաւ* զգալի տեսութեամբ: - 104. Եւ միտքն ի բազում *օրինակաց* ի ճշմարտութիւն հաստատեալ: - 104. Երկոտասաներորդ՝ զի ընդ բազումս բազմանայ, և ի միութեան իւրում կայ և մնայ ըստ միոյն *օրինակի:* - 110. Իսկ աստ այլապէս

բաղդատի արեգակն սրբոյ Երրորդութեանն ըստ այսմ *օրինակի:* - 124. Զի առաջինքն խորհրդով և *օրինակաւ*` և վերջինքս իրօք և ճշմարտութեամբ լուսաւորեալք ի նմանէ: - 126. Իսկ ուղիղ շարժի` յորժամ ի ձեռն զգայութեանց յարացուցիւ և *օրինակաւ* հպիմք ի նախատիպն աստուած: - 142. Իսկ այս *օրինակ*, և նա՛ ճշմարտութիւն: - 163. Եւ զի *օրինակն* ունի նմանութիւն և ունի աննմանութիւն. վասն որոյ կոչի *օրինակ:* - 163. Այսօրիկ նմանութիւնք *օրինակիս:* - 164. Այլ տեսցուք զայս և *յօրինակս* ճշմարտութեան...: - 167. Այլ թէպէտ աննիւթ է աստուած` ո՛չ է անկարգ զնիւթականքս յառաջ ածել ըստ այսմ *օրինակի*. զի նիւթն որ է՛ գոյացութիւն մարմնական` ունի որակութիւնս իմն մարմնական. որպէս քանակ. որակ. և այլքն: - 175. Այլ մի է պետրոսն ըստ անձին անհատ գոլոյն. և մի է բնութիւն պետրոսին ըստ միաւորութեան բանին. իսկ սոքա *օրինակ*` և նա՛ ճշմարտութիւն: - 176. Եւ պատասխանէ՛ դաւիթ և եսայի` «ի ձեռն նորա են ամենայն տիեզերք». որ ունի զշրջանակ երկրի ըստ *օրինակի* պատկերին երկաթեայ: - 180. Հինգերորդ` պատկեր և *օրինա՛կ* է քրիստոսի` արեգականն արդարութեան: - 186. Իններորդ` զի *օրինակ* փառաց մերո՛ց է: - 186. Զի տեսեալ մարդիկ զնոր և հին նորա` ասացին` մե՛զ ես *օրինակ* ծննդեան և մահուան. և կոչեցաւ ամիս: - 190. Իսկ վերադիրն լինի ի պակաս ընթացից լուսնոյն ըստ այսմ *օրինակի:* - 191. Տասներորդ` այլև *օրինակ* և յարացոյց նմանատիպ հասարակաց յարութեան և նորոգման տիեզերաց և մարդկային բնութեանս որ յապագայն: - 196-197. Եւ սոքա երեք եղանակքս *օրինակ* են այսմ կենցաղոյս. և ձմեռն հանդերձելոյն որպէս ասացաւ: - 198. Եւ *օրինակ* տայ զկերակուրն որ ի ստամոքսն եփի...: - 208. *Յօրինակ* մարդկան` որ մարզին և կրթին, և ապա՛ պիտոյանան աստուծոյ և մարդկան: - 208. Երրորդ` պէտք են իմաստութեանց. զի առակ *օրինակի* առնումք զնոսա ի դէպ ժամու: - 212. Եւ առաջի կացցէ խնձորն մեզ *օրինակ:* - 213. Երրորդ` ստեղծան նոքա` զի ի նոցա՛ ջանից ընթերցմանց և բարեաց գործոց *օրինակ* առցուք. որպէս են մրջմունք և սարդք, և այլք այսպիսիք: - 217. Եօթներորդ` *օրինակ*` զի քրիստոս զգլուխ վիշապին խորտակեաց: - 218-219. Ութերորդ` *օրինակ*` զի գլուխ օձին է չար խորհուրդն որ մտանէ ի մեզ. պա՛րտ է սպանանել զնա: - 219. Ոմանք աննիւթ և իմանալի, այլաբանութիւն և *օրինակ* ասացին. և ոչ էութեամբ ենթակայացեալ: - 221. Երրորդ` եկեղեցի սուրբ *օրինա՛կ* է դրախտին: - 225. Եւ թէ ոք պնդեսցէ *զօրինակ* և զօրպիսութիւն անմեղութեան ծննդեանն: - 226. Վասն որոյ գլուխն է՛ ի վերոյ. և խռչափողն որ ունի զտուր և զառն` օդո՛յդ է նման. և ի ներքոյ այլ մարմինք և հիւթ արեան և ջրոյ` երկրիս է *օրինակ:* - 232-233. Որպէս յարարածս աստուած ճանաչի, այսպէս և ի մարմնոյս զհոգին *օրինակաւ* իմանալ մորթի: - 250. Որպէս *օրինակաւ* մասունք հոգւոյ ասացան, նոյնպէս է և մասունք մարմնոյն իւրաքանչիւրոցն գործի: - 250. Դարձեալ խորհուրդ մարդոյն ճանաչի յերից. այսինքն կամ ի կերպէ՛ և *յօրինակէ* խօսիցն և ձայնին: - 250. Եւ *օրինակ* այսմ, որպէս ի ծագել արևուն` նախ նշոյլքն երևին և ապա յետոյ արեգակն: - 255. Այս *օրինակ* առաջնոյն: - 255. Այս *օրինակ* երկրորդին: - 255. Այս *օրինակ* երրորդին: - 255. Այլ արդ` *օրինակաւ* տեսցուք զմիութիւն հոգւոյն: - 259. Այսպէս և զգայականն և տնկականն մասունք են բանականին` նախ եղեալ ի մարմինն. և յորժամ բանականն հեղի ի մարմինն, յայնժամ և սոքա հեղին ընդ նմա. զի զօրութիւնք և մասունք են նորա ըստ *օրինակի* նախասացեալ երրորդ թուոյն: - 259-260. Եւ *օրինակ* այսմ դարձեալ տե՛ս զնշոյլս արեգականն. որ նախ երևի` և ապա արեգակն: - 260. Քսաննք, մանանայն *օրինա՛կ* է ճշմարիտ մարմնոյն քրիստոսի: - 283. Յիսուննէ, Հին քահանայքն` նորոյս աստիճանի *օրինակ:* - 284. Չորրորդ` զի զանարատսն և զպարարտսն մատուցանէր *յօրինակ* անարատ գառինն քրիստոսի. և ճարպաւորն` լուսոյ աստուածութեանն: - 286. Ուր եկեալ աբրահամ, և նա՛ ել ընդ առաջ նորա ջերմ բաղարջ հացով և գինեաւ *օրինակ* տէրունեան խորհրդոյն: - 300. Տասներորդ` զի մելքիսեդեկ ո՛չ միայն պատարագաւն, այլ և անուամբ և տեղեաւ ևս *օրինակ* էր քրիստոսի: - 301. *Օրինակաւ* համեմատութիւն մելքիսեդեկի առ քրիստոս: - 301. Երկրորդ` զի տեսցեն զբարի *օրինակն*, և յոյժ օգտիլն` առաւել ևս տանջեսցին: - 302. Չորրորդ` սառա *օրինակ* և ծնունդ իւր. մարիամ ճշմարտութիւն և ծնեալն իւր. և եկեղեցի համանմանութիւն և զաւակք իւր: - 307. Զի և մեզ *օրինակ* տացէ այսպէս արիութեամբ յաղթել սատանայի: - 324. Ո՞րպէս էր յոբ *օրինակ* հնոյն ադամայ և նորոյն: - 327. Եւ այլն ամենայն բանք և գործք յոբայ ի տիպ *օրինակի* էր նորն ադամայ չարչարանաց թաղման և յարութեան որպէս յա՛յտ է ի գիրս պատմութեան նորա: - 327. Երրորդ, *օրինակաւ* կօշկին` զկինն հրամայէր մերկանալ յինքենէ: - 331. Երկրորդ` *յօրինակ* ժողովրդեանն իսրայէլի. զի սրբութեամբ էջ յեգիպտոս և պղծեցաւ ի գործոց նոցա. մինչև սրբեցաւ յամպն և ի ծովն. և ճաշակեաց զմանանայն: - 333. Երրորդ` *յօրինակ* հեթանոսաց որք զազրացեալ էին մեղօք մինչև ջրով աւազանին սրբեցան և ճաշակեցին զմանանայն կենաց ի յերկնից իջեալ: - 333. Չորրորդ` *յօրինակ* նոցա որք ի սրբութեանց ի մեղս դառնան և լինին մարմին և արիւն...: -

333. Ա՛րդ՝ մանանայն *օրինա՛կ* է անճառ անուանն աստուծոյ: - 338. Վեցերորդ՝ զի յերկնից իջեալ հացին է *օրինակ* որ է կերակուր իմանալի հրեշտակաց: - 338. Մանանայն ո՞րպէս է *օրինակ* մարմնոյն քրիստոսի: - 339. Երրորդ՝ զի անապակա՛ն էր մանանայն *օրինակ* անապական մարմնոյն քրիստոսի: - 339. Երկրորդ՝ ի *յօրինակ* միւս անգամ գալստեանն փողով և հրով իջանելն ի դատաստան: - 341. Ահա՛ յայտնապէս այլ է ձև արարողութեան սոցա ի *յօրինակէն:* - 341. **Տասներորդ՝ *օրինա՛կ* էր խորանի եկեղեցւոյ. զի նա՛ ստւե՛ր էր և սա՛ ճշմարտութիւն. վասն որոյ գեղեցկազարդ կազմեցաւ**: - 342. Եւ որպէս ներքին տապանակն *օրինակ* ցուցաւ իմանալեացն: - 346. Դարձեալ՝ զայս *օրինակ* ետես մարգարէն զաքարիա...: - 346. Յինգերորդ՝ *յօրինակ* զգեստի նորս քահանայութեան: - 347. Եօթներորդ՝ *յօրինակ* բանին մարդեղութեան գրեցաւ բանն ի տախտակի, և նա՛ կոչեցաւ վէմ կարծրացեալ աստուածութեամբն փոխանակ հողացելոյն ադամայ: - 349. Չորրորդ՝ *յօրինակ* դրախտին ադամայ՝ որ ծրի տուաւ և ո՛չ պահեաց. վասն այն որդւոց նորա գործով և աշխատութեամբ պարգևէ: - 350. ...զի ի մովսէս *օրինակաւ*՝ և ի քրիստոս ճշմարտութեամբ կործանեցաւ մահ. և ի յարութեանն առ հասարակ մեր: - 351. Իններորդ՝ ի *յօրինակ* արդարոցն լուսոյն. որ ո՛չ կարօտին արտաքին լուսոյ, սոյնպէս և մովսէս ո՛չ կարօտէր. զի ո՛չ բնական էր լոյսն. զի աչք բնական տեսութիւն ունի, այլ ո՛չ թէ լոյս: - 352. Մետասաներորդ՝ *յօրինակ* տեառն որ պայծառացաւ ի թաբօր: - 352. Նա՛խ՝ զի հինն ստուեր և *օրինա՛կ* էր. իսկ նորս էութիւն և ճշմարտութիւն: - 353. Վեցերորդ, նոցա ձայնիւ *օրինակաւ*. և մեզ բանիւ ճշմարտութեամբ: - 354. Տասներորդ, նոքա *յօրինա՛կն* էին և ի ստուերն...: - 354-355. Յինն *օրինա՛կ* էր, և նորս ճշմարտութիւն. հանդերձեալն զի՞նչ փոխի: - 355. Նա՛խ՝ հինն *օրինակ* էր և նորս ճշմարտութիւն. և հանդերձեալն առաւել ճշմարտութիւն որպէս սուրբ սրբոց: - 355. Երկրորդ՝ ի *յօրինակ* նորոյս պատարագի ընկալաւ. զի անդ ստուերն է. և աստ ճշմարտութիւն: - 355. Ա՛րդ՝ հինն նորոյս *օրինակ* էր՝ ի բովանդակն ա՛ղ խառնիւր: - 356. Իսկ ի նորս ունիմք զճշմարտութիւն՝ ունիմք և *զօրինակն:* - 356. Ա՛րդ՝ ի ճշմարտութիւնն ո՛չ է *օրինակ*. վասն որոյ ո՛չ խառնի աղ: - 356. Իսկ *յօրինակն* խառնեմք աղ. որպէս յագապս. յօգէհանգիստս և ի տօնական պատարագս: - 356. Այլ որք յամառելով *յօրինակն* ա՛ղ խառնեն ի խորհուրդն, պա՛րտ է նոցա խառնել և ձէթ և մուրկ և խունկ և միս գառին. կամ զանգեալ ի կասկարայս, կամ օծեալ ի տապակի, զի *զօրինակն* կատարեսցեն. և հեռասցին ի ճշմարտութենէն: - 357. Գառն *օրինա՛կ* էր քրիստոսի. զի կոչեցաւ գառն աստուծոյ. ա՛յլ զգալի գառն ո՛չ եղև: - 357. Ո՛չ միայն զի յանունն աստուծոյ, այլ զի *օրինա՛կ* էին նորոյս պատարագի. և խորհրդովն քրիստոսի սրբեցան: - 361. Ասեմք եթէ՝ ամենայն զենմունք և պատարագ ի խորհուրդ և *յօրինա՛կ* էր քրիստոսի: - 361. Այլ և ունիմք զմարմնաւոր պատարագս *զօրինակին*. զենմունք վասն կենդանեաց և մեռելոց: - 362. Ա՛րդ՝ մեք ունիմք *զօրինակ* կրկին պատարագաց. զնախնեացն և զճշմարտութիւնն քրիստոսի: - 362. Եւ զգեստ քահանայութեանն ո՛չ այրեցաւ *յօրինակ* այժմոյս որ հոգւով դատապարտին և մարմինն մնայ: - 364. Դարձեալ՝ որպէս ծառա՛յ են կենդանիք և սպասաւոր մարդկան. նոյնպէս և *յօրինակ* ընտրութեան մարդկան ընտրեցան զուրբս և զանսուրբս նշանակելով այսպէս: - 364. Ա՛յսպէս փոխեցաւ ստուերն ի լոյս, և *օրինակն* ի ճշմարտութիւն: - 369. Այլ ուղիղն, զի օրէնքն թէպէտ ըստ խորհրդոյն փոխեցաւ, այլ ըստ իրին մնաց յաւիտեան. զի *օրինակն* էանց, այլ ճշմարտութիւնն մնաց: - 369. Երկու նոխազն համատեսակ *օրինակ* տեառն մերոյ՝ յերկուց միաւորեալ մի անձն. և միաւոր բնութեամբ աստուած և մարդ: - 369. Երրորդ՝ *յօրինակ* հոգւոյ արատոյ ի նորս որպէս ասացաք: - 370. Երկրորդ՝ ի *յօրինակ* մեծի և անարատ պատարագինն: - 370. Իսկ այս *օրինակն* է և տուրք աղքատացն: - 371. Այլ խորհուրդն է, Նա՛խ՝ զի *օրինակ* բազում է, և ճշմարտութիւնն մի: - 374. Զայն ցուցանէ որ նուազելոց էր հինն և *օրինակն* ի գալ նորոյն և ճշմարտութեանն քրիստոսի: - 374. Յին քահանայքն ո՞րպէս էին *օրինակ* աստիճանի նորոյս: - 379. Նա՛խ՝ **գ** որդիքն ղևեայ գեթսոն, կահաթ, և մերարի, *յօրինակ* նորոյս **դ** դասուց: - 379. Այլ որ զուղիղն ասեն ա՛յս է, կորխ՝ եցոյց *զօրինակ* զղջման. զի լուաւ խրատուն մովսէսի և մնաց ընտրութեանն աստուծոյ ի դուռն խորանին: - 382. Նա՛խ՝ բուրվառն *օրինա՛կ* էր ահարօնի, և գաւազանն՝ մովսէսի: - 382. Ապաւառն ո՛չ գոյ ի ճշմարտութիւնն որպէս *յօրինակն:* - 383. Ութերորդ՝ նախ *օրինակն* է, և ապա՛ ճշմարտութիւնն: - 385. Երկրորդ, ըստ փիլոնի, օձն ցանկութեան է *օրինակ*, որ զցանկացօղ ժողովուրդն սատակէր. ի յախտս իւրեանց նմանեցոյց զպատիժն: - 386. Երկրորդ, հին օրէնքն և մարգարէքն. որ նախ քան զմկրտութիւնս խորհրդով և *օրինակօք* յառաջապա՛հք եղեն նորոյս: - 390. Զայն ցուցանէ, զի մեռանիլն քահանային՝ ազատութիւն էր նոցա, *յօրինակ* քրիստոսի. յորժամ մեռաւ վասն աշխարհի, ազատեցան մահապարտքն: - 392. Յինգերորդ՝ զի կրկին է օրէնք հին և նոր. այսինքն *օրինակն* և ճշմարտութիւն: - 393. Չորրորդ՝ մարմնով *զօրինակն* ետես, և ապա՛ հոգւով զճշմարիտ երկիրն պարգևաց: - 395. Չորրորդ՝ նախ *օրինակն*

է. և ապա ճշմարտութիւնն: - 395. Այլ և զհասարակքս խնամեաց առաւել քան զնոսա. զի ի մէջ նոցա *օրինակօր* էր, և ի մէջ մեր ճշմարտութեամբ: - 398. Երկրորդ՝ զի ասէ «իբրև զիս». իբրև *օրինա՛կ* է. որպէս մովսէս աստուած կոչեցաւ, և տէր մեր էմմանուէլ. և զնա՛ հայր կնքեաց աստուած. և որպէս մովսէս իշխէր տարերաց, և տէր ի ծովուն գնայր, և ի վերայ օդոյն: - 399. Նա՛խ՝ զի *զօրինակն* ո՛չ ունիմք. այլ զճշմարտութիւն օրինացն ունիմք: - 403. Հինգերորդ՝ մովսէս *օրինա՛կ* էր, և ճշմարտութիւնն քրիստոս. առ որ խափանեցաւ մահ, և թագաւորեաց կեանք: - 409. Դարձոյց զգետն *յօրինակ* բնութեանս: - 414. Եօթներորդ՝ ի *յօրինակ* բնութեանս դառնալոյ անդրէն ի տեղիքն մեր ուստի ելաք որք են հաւատացեալք: - 414. Էառ զքարինսն *յօրինակ* աշակերտաց կրթութեանն որ լինի ապա՛ պիտանի: - 415. Երրորդ՝ *յօրինակ* փրկչին յիսուսի որ եղև առ խաչին: - 416. Ութերորդ՝ *յօրինակ* փրկչին յիսուսի, որ զբռնութիւն թշնամւոյն խորտակեաց և զխաբէութիւնն եթող. զի փործեցին ընտրեալքն և խոտեցին վատթարքն: - 417. Նոյնպէս և յեսու անուանակիր և *օրինակ* ճշմարիտն յիսուսի: - 417. Արին Սամփսոն բազում բաղդատութեամբ խորհուրդ և *օրինա՛կ* է Տեառն մերոյ ամենազօր փրկողին: - 421. Վեցերորդ՝ ի յոյս և *յօրինակ* ամենայն մեղաւորաց. որք զղջան և գտանեն զթողութիւն մեղաց: - 432. Նա՛խ՝ զի մեզ *օրինակ* լիցի չտալ պատասխանի որք նախատեն զմեզ...: - 433. Որ *օրինակաւ* ակնարկէ՛ ի տէր մեր ի մարդացեալ բանն. որոյ գործք ձեռացն արդարութիւն և իրաւունք են: - 435. Եւ բազում իրօք *օրինակն* համեմատի առ ճշմարտութիւնն: - 435. Եւ այսպէս աստուածահայր կոչի դաւիթ *օրինակ* յովսեփու: - 439. Վեցերորդ՝ *օրինակն* սողոմոն՝ և ճշմարտութիւնն քրիստոս՝ կարդաց հայր զաստուած: - 440. *Յօրինակ* ամենայն մարդոյ. զի պա՛րտ է ստուգել զամենայն բան. և ո՛չ դիւրապատիր լինիլ և թողուլ զհրամանն աստուծոյ: - 443. Ցուպն եղիսէի *օրինակ* էր խաչին. վասն է՞ր ոչ յարոյց զմեռեալն: - 445. ՚Ի տիպ խորհրդոյ *օրինակի* մերոյս տաճարի գերեալ ի մեղաց և աւերեալ տաճար սրբութեանս եօթնիւք զգայութեամբք: - 448. *Օրինակք* նկարագրեցին: - 456. Ասեմք եթէ՝ ապացոյցն ո՛չ ամենայն իրօք է նման. ապա թէ ոչ՝ լինէր նոյնն. վասն որոյ նոյնքանաբար տեսանի աննմանութիւն *օրինակին* առ ճշմարտութիւնն: - 478. Հինգերորդ՝ քրիստոս լինելոց էր քահանայ և թագաւոր յաւիտենական. և էգն ո՛չ կարէր օծանիլ քահանայ և թագաւոր. ո՛չ *յօրինակն* և ո՛չ ի ճշմարտութիւնս: - 480. Եւ քրիստոս ո՛չ միայն *օրինակաւն*, այլ և հոգևորաւն թլփատեցաւ: - 486. Եօթներորդ՝ զի *օրինակ* լիցի մեզ գալ ի մկրտութիւն: - 486. Երրորդ՝ *օրինակն*. զի ամենայն անսուրբ ջրով լուացեալ սրբիւր. և ողողեալ զհանդերձս այնպէս մտանէր ի բանակն. և յաւազանն խոստովանութեան ջրովն: - 488. Ութերորդ՝ մանանայն յանապատի էր *օրինակ* անապական մարմնոյ փրկչին...: - 499. Դարձեալ ասեմք թէ յանապատին հրամայեցաւ զպել ի սրբութիւն մանանային որ *օրինա՛կ* էր ճշմարիտ մանանային մարմնոյն սրբութեան: - 502. Իններորդ՝ յա՛յտ է *յօրինակէն*. զի եգիպտոս հալոց երկաթի կոչի. նշանակէ՛ զդժոխքն որ տանջէր զհոգիսն: - 507. Որպէս *յօրինակէն* տեսանի. որ թէպէտ առ հասարակ ելին յեգիպտոսէ յանապատն, այլ ոմանք մտին յերկիրն պարգևաց: - 508. Այլ որք ուղղաձևութեան են աշակերտք՝ ի մէջ գիշերի ասեն զժամ յարութեանն քրիստոսի ի գերեզմանէն. որոց հետևիմք և մեք և հաստատեմք բազում վկայութեամբ և *օրինակաւ:* - 512. Վեցերորդ՝ ի մէջ գիշերի հրեշտակն եհար զեգիպտոս. և մովսէս եհան զորդիսն իսրայէլի. որ էր *օրինակ* աւերման դժոխոցն և ազատութեան հոգւոց: - 512. Նոյնպէս ըստ *օրինակին* արար տէր մեր զատիկն յերեկոյի մեծի **ե** շաբաթին. և ի մէջ գիշերին յորում ըմբռնեցաւ՝ եհար զանդրանիկսն դիւաց: - 513. Ութերորդ՝ արին սամփսոն որ *օրինա՛կ* էր ամենազօր տեառն մերոյ, էջ ի գազա ի տիպ աշխարհի...: - 513. ...գեթէօն ....որ էր *օրինակ* փրկչին. զի նա՛ է եզն պարարակ պատարագեալ. և ի մէջ գիշերի զբագինսն դժոխոց կործանեալ և յարուցեալ և ապրեալ ի մահու: - 513. Երկրորդ՝ զի տացէ *օրինակ* համբերութեան մերոյ, զի սպասեսցուք վարձուն ի հանդերձեալն. և ո՛չ իսկոյն վաղափոյթ լինիլ առնուլ այժմու կենօք...: - 520. Երրորդ՝ վասն զի *օրինա՛կ* է **է** աւուրցն ի յորս երկիր հիմնեցաւ. նաև **է** դարու կենցաղոյս: - 524. Եւ **է** շաբաթն **ծ** օր է. որ է՛ ազատարար թիւ և *օրինակ* հանդերձելոյն: - 524. Նա՛խ յաղագս շնորհին և ճշմարտութեան. և մարգարէք վասն ստուերին և *օրինակին*. և վարդապետք ըստ չափոյ պիտոյից նոցին: - 535. Իսկ գործ առաքելութեանն է ըստ բազում *օրինակի:* - 535. Հինգերորդ՝ այսմաւուրօք ո՛չ տօնել ըստ յունաց. այլ այլո՛վ *օրինակաւ* տօնել: - 554. Երկրորդ դարձեալ՝ զի **դ** են տարերք. և **դ** ազդումն միաւորութեանց հոգւոյն յիւրաքանչիւր տարերս ըստ այսմ *օրինակի:* - 560. Սրբութիւն սրտին զորկրամոլութիւնն. զի սրբութիւն սրտին ո՛չ ծառայէ որովայնին ըստ *օրինակի* անբան անասնոց: - 583. Այլ և զհինն իմաստութիւն ընդ նորոյս խառնեալ միաւորեաց քրիստոս. այսինքն *զօրինակն* ընդ ճշմարտութիւնս: - 596. Չորրորդ՝ ի *յօրինակն* մի հաց և մի գառն խորովեալ լինէր. որ ընդ մասին գինւոյ դնէին յերեսաց սեղանն: - 597. Վասն

զի մարմինն ի չորից տարերց է. և ի **Դ** ծնունդս փոխին **Դ** արիւնք տարրականք ըստ այսմ *օրինակի:* - 612. Երրորդ՝ զի մովսէս ի կանգնել զխորանն *օրինակի*՝ արեամբ նոխազաց և ջրով և իւղովն էօծ և սրբեաց: - 615. Տասներորդ՝ սրբեմք և օծանեմք զեկեղեցիս *յօրինակ* մեր...: - 615. Այս ի հին *օրինակացն:* - 616. Երրորդ՝ ի հին տաճարն գառն էր պատարագ. որ էր *օրինակ* գառինն աստուծոյ: - 617. Իսկ յեկեղեցի ճշմարիտ գառն պատարագի. վասն որոյ *զօրինակն* արգելումք: - 617. Չորրորդ՝ *յօրինակ* քրիստոսի որ խարազանեալ եհան ի տաճարէն զոչխարս և զարջառս. նոյնպէս և մեք արտաքսեմք: - 617. Երկրորդ՝ եկեղեցի՝ դրախտին է *օրինակ*. որ զմեռեալսն մեղօք արտաքսեաց: - 617. Երրորդ՝ զի մարմինք սրբոց ի գալիթս պահին և ո՛չ յեկեղեցի. *յօրինակ* հոգւոց նոցա որք են ի պահեստ հոգւոյն ի տեղւոջ լուսոյ և հանգստեան: - 617. *Յօրինակ* յեսուայ, որ տապանակաւն և քահանայիւք և ժողովրդովք զվեց օր շրջեցաւ լռութեամբ. - 627. Այլ զի և մեք նոցին բաղձասցուք և նոցա մասնակից լիցուք և զնոսա բարեխօս կալցուք և զնոսա՛ *օրինակ* դիցուք...: - 628. Դարձեալ՝ նախ *զօրինակն*, և ապա՛ զճշմարտութիւնն ուսանիմք աստ, և ապա՛ անդ անընդմիջաբար ի տեառնէ...: - 643. Այս *օրինակն:* - 653. Դարձեալ՝ մատաղն ստուեր և *օրինա՛կ* է ճշմարիտ պատարագին քրիստոսի որ գառն աստուծոյ և եզն պարարակ կոչեցաւ...: - 657. Երրորդ, զի *օրինակն* նմանեցի ճշմարտութեանն. որ պարարա՛կ էր աստուածութեամբն և կատարեալ մարմնով: - 657. Քսանգ, *Օրինակ* սերմանց. և զարդ հարսինն: - 660. Պատասխանեմք առ այս որպէս ասէ սուրբն կիւրեղ ի գիրս պարապմանց եթէ առակ *օրինակ* են սոքա արդարոց և մեղաւորաց որ այսպէս լինելոց է ի կատարածի: - 695. Նա՛խ՝ զի առաջին փող էին մարգարէքն կոչելով *յօրինակն:* - 713. Նա՛խ՝ զի շնորհն աստուածային պատկերին որ համանգամայն կամեցաւ զբոլոր բնութիւնս ըստ հրեշտակացն *օրինակի* մուծանել ի կեանս...: - 716. Եւ վասն **գ** պատճառի զայս *օրինակ* առնու: - 720. Երրորդ՝ զի առաւել յարմարի *օրինակս* ճշմարտութեանն: - 720. *Յօրինակ* լուսեղէն ամպոյն վառն, և փոքր վարշամակն ցոլմունք լուսոյն: - 732. Չորրորդ յա՛յտ է *յօրինակաց*. զի գաւազանն ահարօնի որ ծաղկեցաւ՝ *օրինա՛կ* էր խաչին...: - 733. Ա՛րդ՝ սոքա անապականք են յայնմ հետէ և առ յապայ որ *օրինակք* են. ապա ուրեմն և ճշմարտութիւնն անապական է որ է խաչն աստուածընկալ: - 733. Զի վարդապետութեանն իւրեանց և *օրինակացն* հետևօղս լեալ ցուցանեն. և արքայութեանն արժանաւորս վկայեն: - 740. Որք որպէս գիրք յայնժամ բացեալք եղիցին. քանզի վարդապետութիւնք նոցա և *օրինակք*՝ ամենեցունց յայտնեսցին...: - 742. Եւ դարձեալ ցուցցուք *օրինակաւ:* - 744. Եւ այս յա՛յտ է բազում *օրինակաւ:* - 744. Եւ տե՛ս *յօրինակաց*. զի չնչին գողութիւնն, զաքար իւր զարմիւքն քարկոծեաց. և կրկուտ քաղելն զայրին: - 745. Եւ թէպէտ գերազանցեալ են այսոքիկ փառք քան որք այժմ ունին յերկրի. այլ սակայն *օրինակաւ* սակաւ ինչ բացայայտութիւն առցուք: - 761. *Օրինակ*. Աստուած մատանի. և միտք մոմ. և հաւատն տիպ ի մատանոյն. այս է սուրբ Երրորդութիւնն: - 769. Եւ ոչ *օրինակս* կարէ յայտնել զոր ինչ էն: - 770. Յիրաւի ապա ըստ այսմ *օրինակի*՝ որք ի մշտնջենաւորէն փոխանցին առ երազ սնոտեաց, ոչ ունիցին ինչ ի մտի...: - 775. Եւ ո՛չ այս միայն, այլ և մեղքն ադամայ նուազ ևս քան զծննդոց նորա ըստ այսմ *օրինակի:* - 777. Քանակաւ. *Օրինակաւ.* Որքանութեամբ. Պարագայիւ. և Բաղդատութեամբ: - 777. ...իսկ *Օրինակաւ*, զի նմա ո՛չ գոյր *օրինակ* յանցաւորաց. իսկ նոքա տեսին զնա պատժեալ: - 777. Իսկ եթէ ոք զփոփոխումն ի մեզ ասիցէ ըստ *օրինակի* արեգական. որ զչորեսին եղանակս կազմէ՛ և ինքն անյեղ մնայ: - 778. Զի նկատմամբ առ անփոփոխն՝ միշտ անփոփոխ գոն նախ *օրինակաւ*. այլ առ ժամանակն՝ փոփոխական: - 779. Շնորհք որ ի հինն զինչ և իցէ փոփոխական գոլով՝ *օրինակ* նորոյս էր. որպէս քահանայութեան և այլն: - 783. Իսկ որքանութիւն ըստեանց կենդանեաց, բերէ՛ *զօրինակ* որքանութեան կարելոյ ծնանիլ յանոցիկ տեսակացեալ: - 786. Ոչ ինչ ընդհատ բերելով ի մեզ *զօրինակ* մեծի սաստկասարսուռն ատենի: - 788

***ՕՐԻՆԱԿ ՏԱԼ*** - Երրորդ, քաղցր է և փափագելի. զի զամենայն ինչ որ բարի է ի ստեղծուածս՝ *օրինակ տամբ* ստեղծողին: - 338. Եւ ոմանք ոչ ինչ համարին զյանցանս մտաց. և ո՛չ դնեն ի կարգս մեղաց. *օրինակ տալով* իբր զդատարկ սեղան ոչ ինչ կերակրել. և իբր զպտուղ ծառոց տեսութեամբ միայն վայելել: - 555. Դարձեալ գիտելի է, զի պօղոս ի կորնթացոցն զհատ սերման՝ *օրինակ տայ* յարութեան մարդկան...: - 720. Երկրորդ՝ զի և վարդապետն իւր *ետ օրինակ* զհատն ցորենոյ: - 720

**ՕՐԻՆԱԿԱՆ +** Ասեմք եթէ՝ *օրինականն* որպէս զմարդո՛յ բարութիւն կարծէր ունել քրիստոսի՝ այլ ո՛չ գերագոյն. զի և մարդիկք բարի անուանին...: - 47. Վասն այն տէրն ընկրկեաց *զօրինականն* թէ միայն ծայրագոյն բարի է՛ աստուած. և ի մարդկանէ ո՛չ ոք ունի զայս: - 47. Երրորդ՝ *օրինական*. զի որպէս մին գլխոյ բազում անդամ կարէ՛ լինիլ. այլ ո՛չ անդրադարձեալ: - 401. Եօթներորդ՝ զի յինքն կրելով զթլփատութիւնն և զայլ *օրինականս*, ի ծանրութենէ թլփատութեան և օրինացն ազատեսցէ զմեզ: - 485

**ՕՐԻՆԱԿԵՄ +** Այս ո՛չ որպէս չարափառքն ասեն՝ թէ որպէս նկարիչ իմաստուն ձևացնէ՛ պատկեր, և ապա ոչ ուսեալն՝ զնոյն *օրինակէ*: - 45. Զայս և տէրն աղիւ *օրինակեաց*. յորժամ անհամի՝ ո՛չ ինչ է պիտանի հրամայէ: - 166. Երկոտասաներորդ, լուսաւորեցաւ՝ զի քօղ արկցէ երեսացն. որ *օրինակէ*՛ զհին կտակարանս...: - 352. Ութերորդ՝ **զ** օրս այս *օրինակեցաւ* ի զենումն իսահակայ...: - 681. Այգի և հնձան երբեմն զչարս *օրինակէ*՛ և երբեմն զբարիս...: - 748. Որ պորփիւր *օրինակէ*՛ զմատանին աստուծոյ. թէ մի է և ի վերայ բազմաց բերի և ի բազումս և ո՛չ ի բազմաց է: - 769

**ՕՐԻՆԱՒՈՐ +** Զի՞նչ է որ առ փորձիչ *օրինաւորն* ասաց՝ «չիք ոք բարի՝ բայց մի աստուած»: - 47. Մարդն մատթէոս՝ *զօրինաւոր* ծնունդն բացայայտեալ: - 133. Դարձեալ մարդո՛յն է ունել *օրինաւոր* ամուսնութիւն առ զուգակիցս իւր: - 274. Այս է թէ՝ եթէ ո՛չ ունիցին ժոյժ ընդ դէմ ցանկութեան, զգեցցին *զօրինաւորն*: - 331. Երկրորդ՝ *օրինաւոր* ամուսնութիւնն պատուական է վասն որդեծնութեան. այլ ո՛չ է նա՛ առաքինութիւն. որպէս կուսութիւն՝ պահք՝ և աղօթք: - 356. Ութերորդ՝ զի մի՛ հրէայքն համարելով զքրիստոս ո՛չ ունելով *օրինաւոր* ծնունդ՝ երևեսցին յիրաւի ի հալածելն զնա: - 461. ...վասն որոյ ո՛չ է պարտ բաժանել *զօրինաւոր* պսակն որքան կենդանի իցեն: - 611. Նոյնպէս և *օրինաւոր* ազգն խնամութեան, պահի մինչ ի **դ** ծնունդն: - 612. Նա՛խ՝ զի գոհութիւնն պարգև՛ է *օրինաւոր* ի բարեա՛ց մասնէ...: - 626. Մանաւանդ թէ՝ հոգին սուրբ գրօղ դպիր. և ուղղութիւնն գրիչ գործիք. և որք զմելանն առատ տամք և զմագաղաթն, զսուրբ գործս անկեղծաւոր և զբանս աղօթից *օրինաւոր*, ա՛յնքան առաւել գրիմք ի գիրն կենաց: - 741

**ՕՐԻՈՐԴ +** Այլ և աստ ապաշաւելն ոչ ինչ օգտեալ. որպէս և անդ ո՛չ լսողաց բերանով հաշեալք. որ և ո՛չ գոյր անդրէն դառնալ. և ո՛չ կարի յօժարացն շահավաճառ եղեալ. ո՛չ գիտ և ո՛չ ողորմ. հանգոյն յիմարացն *օրիորդաց*: - 789

**ՕՐՀԱՍ +** Երրորդ՝ զի *զօրհասն* իւր ո՛չ գիտէր. ապա և ո՛չ զայլոցն կարէր գիտել. զի ասաց՝ «կամիս զիս կորուսանել». որ ո՛չ կորեաւ ի սաւուղայ: - 428

**ՕՐՀԱՍԱԿԱՆ +** Վասն որոյ տէրն գողոյ նմանեցուցանէ զմահն *օրհասական*: - 730

**ՕՐՀՆԱԲԱՆԵՄ +** Որ էր յերկինս երկնից բանն աստուած, ի պայծառ և լուսաւոր դասուց հրեշտակաց *օրհնաբանեալ*...: - 621. Իսկ տէր երկնիցն, ընդ հրեշտակս *օրհնաբանել* զսուրբ Երրորդութիւնն...: - 628

**ՕՐՀՆԱԲԱՆՈՒԹԻՒՆ +** Եւ այսպէս վերընծայեն աստուծոյ *զօրհնաբանութիւնսն*. վերջինքն տալով ի միջինսն. և միջինքն յառաջինսն. և յառաջինքն մատուցանեն աստուծոյ: - 624

**ՕՐՀՆԵԱԼ +** Եւ ասեն՝ *օրհնեալ* փառք տեառն ի տեղւոջ իւրում: - 144. Կայնան ստացուած ընտրեալ *օրհնեալ* աստուած: - 299. Եւ անդ *օրհնեալ* զաբրահամ, և տասանորդ էառ յաւարէ՛ անտի: - 300. Յորոց փրկեսցէ զմեզ և զամենայն հաւատացեալս անւան իւրոյ ի յաւիտենական և յանել տանջանաց հրոյն. և մասնաւոր աջակողմեան դասուն և ժառանգ արքայութեանն երկնից կացուսցէ յիսուս քրիստոս տէր մեր. որ է *օրհնեալ* յաւիտեանս Ամէն: - 317. Նա՛խ՝ պարտ է զի լիցի *օրհնեալ* աղիւ. որ է՛ նշանակ իմաստութեան և սրբութեան: - 366. Եւ այժմ, *օրհնեալք* եղերուք ի շնորհաց սուրբ հոգւոյն ասեմք: - 380. Վեցերորդ՝ ո՛չ միայն հաց է հաղորդութիւնն. այլ հոգւովն սրբով *օրհնեալ* և միաւորեալ ի բանն աստուած, որով անմահ կենդանութիւն տայ ճաշակողացն: - 397. Փակեաց թէ ամենևին ո՛չ բաժանի *օրհնեալ* պսակն մինչ ի մահ: - 401. Իսկ *օրհնեալն* յայտնեալ և յարեալ յաստուած որ է՛ կեանք և երանութիւն: - 403. Որ է՛ *Օրհնեալ* յաւիտեանս Ամէն: - 412. Որ է՛ *օրհնեալ* յաւիտեանս ամէն: - 419. Հինգերորդ՝ *օրհնեալ* ի տեառնէ մանուկն սամփսոն, և հոգւով զօրութեամբ շրջէր: - 422. Եւ աստանօր Կատարումն հին Կտակարանաց. և Եօթներորդ Հատորի Հարցմանցս. ի Փառս Քրիստոսի Աստուծոյ մերոյ *Օրհնելոյն* Յաւիտեանս Ամէն: - 453. Վեցերորդ՝ զի ցուցցէ զհինքն որդի աբրահամու. առ որ հրաման թլփատութեանն եղև և խոստումն *օրհնեալ* զաւակին. և այսպէս խոստմանն աստուծոյ կատարումն քրիստոս զինքն ցուցանէր: - 485. Եւ վասն միաւորութեան. և թացեալ պատառացն. և թէ ո՛չ տան ժողովրդեանն *յօրհնեալ* մարմնոյն քրիստոսի: - 526. Զոր յառաջին ամին յորժամ նստաւ կաթողիկոս տէր սիմէոնի, ի ձեռն տէր եղիայի մեծահանդէս ժողովմամբ պայծառացոյց զեկեղեցի կանոնական հաստատութեամբ ի փառս քրիստոսի աստուծոյ մերոյ *օրհնելոյն* յաւիտեանս ամէն: - 545. Եւ ի գալն յերկիրս հայոց, եւոււն նմա օգնական զհւղն օծման զօր քրիստոս *օրհնեալ* էր. և զգեղարդն. և այլոց ազգաց չկա՛յ այս պարծանքս. զի մեր մեռոնս հանապազ և միշտ զնոյն շնորհ ունի: - 549. Եւ այսպէս պարտ է կամ *զօրհնեալն* դարձեալ օրհնել որ է սուտ. կամ ամենայն հացն ո՛չ է

*օրհնեալ* այլ մինն: - 597. ...այլ ո՛չ *յօրհնեալ* հացէն և ի գինւոյն. այլ էառ ի սեղանոյն հաց և եթաց ի ջուր ինչ կամ ի սոսկ գինի՝ և ետ: - 599. Զի թէ *յօրհնեալ* հացէն այլոցն ամենեցուն ցամա՛ք էր տուեալ և նորա թաց, պատճառ լինէր մատնութեանն յուդայի. և յիրաւի: - 599. Եւ այս է ճշմարիտն. քանզի *յօրհնեալ* հացէն որ բաշխեաց և ետ առաքելոցն, այլ ո՛չ մնաց: - 599. Նոյնպէս և *զօրհնեալ* բաժակն առին առաքեալքն և բաժանեցին և յայնմանէ ո՛չ մնաց: - 599. ...զի յայտնապէս զարիւնն ո՛չ տայք, և ծածկապէս զմարմինն. զի *յօրհնեալ* մարմնոյն ո՛չ տայք. այլ սոսկ հաց որ ի բեմն: - 599. Եւ թէ ասեն՝ ամենայն նշխարքն *օրհնեալ* է ի բեմն: - 599. Թէ *օրհնեալ* է՝ ընդէ՞ր օրհնէք և թէ ոչ էր *օրհնեալ*՝ ընդէ՞ր տայք ժողովրդեանն իբր *օրհնեալ* մարմին և մոլորեցնէք զնոսա: - 600. Եւ եղիցի թէ այս *օրհնեալ* է. զարիւնն ընդէ՞ր ոչ տայք: - 600. ...զի սոսկ հաց տաս և ո՛չ *զօրհնեալն:* - 600. Եւ *զօրհնեալ* բաժակն առաջի եդ զի կամաւ արբցեն: - 600. Եւ ի լեառն ծիթենեաց հանեալ զնոսա և *օրհնեալ*՝ արար զնոսա Կաթողիկոսունս և Պատրիարգունս, զամենայն շնորհելով նոցա լիով: - 607. Դարձեալ՝ առաջին ողորմեայն է՛ առ հոգին սուրբ. վասն այն ասեմք *օրհնեալ* հոգիդ սուրբ աստուած ճշմարիտ զառաջինն: - 633. Երկրորդն առ հայր. վասն որոյ աղերսեմք՝ *օրհնեալ* հայր սուրբ աստուած ճշմարիտ ի միջինն: - 633. Երրորդն առ որդի. վասն որոյ ասեմք՝ *օրհնեալ* որդիդ սուրբ աստուած ճշմարիտ: - 633. Յաղագս որոյ Նախ *օրհնեալ* աղ տամք կենդանւոյն: - 657. *Օրհնեալ* հողն և այլն: - 660. Վտանգ ինչ է՞ արդարոյ՝ թէ ի *յօրհնեալ* գերեզմանս ո՛չ թաղի: - 678. Զի՞նչ է որ ասէ «*օրհնեալք*» կամ «անիծեալք». և ո՛չ թէ՝ ես օրհնեմ, կամ անիծանեմ: - 740. Երկրորդ՝ աստուածային օրհնութիւնն որ ասէ *«օրհնեալք»:* - 740. Որ միշտ *օրհնեալ* ես և գովեալ յաւիտեան: - 771

**ՕՐՀՆԵՄ +** Այսպէս և յակոբ *յօրհնելն* զյուդա՝ նմանեցոյց զնա առիւծու: - 27-28. Երկրորդ՝ ասեն թէ՝ ի լինիլ աստեղաց՝ հրեշտակք *օրհնեցին* զաստուած ըստ յոբայ: - 147. Նոր *օրհնել* քահանայից և եկեղեցոյ. Նաբադ և աբիուդ այրեցան: - 284. Ռուբէն *օրհնի*, զի ապաշխարեաց: - 285. Նոյ *օրհնեաց* զսեմ, և սեմայ որդի ո՛չ գոյր նման իւր որ *օրհնէր* զնա: - 300. Բայց սեմ չէ՛ր կենդանի որ *օրհնէր* զնա՛. և թարայ չէր *օրհնօղ:* - 300. Մելքիսեդեկ զնորա դէմն առեալ՝ զնորա գործն էլից. *օրհնեաց* զաբրահամ՝ և սեմ կոչեցաւ: - 300. Իսկ մարգարէ, զի *օրհնեաց* զաբրահամ: - 300. ...նոքա ի կամս աստուծոյ անմահապէս *օրհնեցան:* - 319. Երրորդ՝ ի յառնելն զարարածս լերամբք և բլրօք. զի լերինք և բլուրք, հիմունք և բրգունք են աշխարհի. վասն որոյ *օրհնեցան* անշարժապէս...: - 319. Չորրորդ՝ *օրհնեաց* զնախաստեղծքն ի լերինն ադինայ...: - 319. Հինգերորդ՝ ի լերինն մասեայ յորժամ ել նոյ ի տապանէն՝ *օրհնեաց* աստուած զնա՛ և զորդիսն նորա ասէ գիրն. և հայր և սերմ արար մարդկան ազգի: - 319-320. Վեցերորդ՝ *օրհնեաց* զաբրահամ ի լերինն ամուր հացւոց ի պատարագիլն իսահակայ...: - 320. Ութերորդ՝ ի լեառն թաբօր յայտնեաց զփառս աստուածութեան իւրոյ և *օրհնեաց:* - 320. Իններորդ՝ ի ծիթենեաց լեառն զգիշերս ագանելով և աղօթելով *օրհնեաց:* - 320. Վասն որոյ ի ծննդեան աւուրն ժողովին և *օրհնեն* զաստուած և մարմնով ուրախանան. որպէս յոբայ ուստերքն և դստերքն միաբանեալ գային և ուրախ լինէին գիրն: - 321. Այլ և *զօրհնելն* եկեղեցւոյ՝ ը օրն նաւակատիս կատարեմք: - 373. Եւ դարձեալ՝ ոչ ինչ շնորհ ունէր բան նորա. զի այնքան *օրհնեաց* զժողովուրդն, ընդէ՞ր ոչ դարձաւ մահն և սատակումն: - 388. Եւ թէ ասէ հրէայն, աստուած *օրհնեաց* զաբրահամ մարմնով: - 403. Եւ թէ ասեն՝ ամուսնութիւնն *օրհնեցաւ:* - 404. Եւ թէ ասեն, ամուսնութիւնն ի դրախտն *օրհնեցաւ:* - 404. Ասա՛ թէ՝ կուսութիւնն յերկինս *օրհնեցաւ*. զի հրեշտակք կուսութեամբ աճեցին: - 404. Զի՞նչ է *օրհնելն* զաստուած: - 406. Երեք նշանակաւ է *օրհնելն* զաստուած: - 406. Վասն այն յաստուծոյ *օրհնեմք* զնոսա և գոհանամք: - 406. Երկրորդ՝ զներքինս *օրհնեմք*, և աստուծոյ բարութեանցն կցորդեմք. ողորմութեան, պարգևաց, կամ այլ ինչ շնորհաց. և այսու եղանակաւ *օրհնեմք* զքահանայս. զժողովուրդս. զմեռեալս և զկենդանիս: - 406. Եւ այսու եղանակաւ *օրհնեմք* զհրեշտակս, զսուրբս, զխաչ, և զայլն: - 406. Վասն է՞ր կոչի աւագ օրհնութիւն. զի յակոբ ևս *օրհնեաց* զորդիսն. նոյնպէս և իսահակ. և այլն: - 407. Եւ օրհնութիւն, զի *յօրհնել* բերանոյ նորա՝ յառաջ եկն առ որ բերան ի բերան խօսեցաւ աստուած դէմ յանդիման և ո՛չ առակօք: - 407. Վասն է՞ր մերձ ի վախճանն հարք և առաջնորդք *օրհնեն* զմնացորդս. որպէս մովսէս և յակոբ և այլ նահապետք: - 408. Կտակ գրեն և *օրհնեն:* - 408. Չորրորդ՝ մարմնաւոր մահն վախճան է մարմնոյ կենաց և սկիզբն հոգևորին. վասն այն *օրհնէ:* - 408-409. Վեցերորդ՝ ի խորհուրդ քրիստոսի, որ *օրհնեաց* զաշակերտսն և վերացաւ: - 409. Զռուբէն անէծ յակոբ. մովսէս վասն է՞ր *օրհնէ:* - 409. Եւ տե՛ս, զի և զղևի՛ *օրհնեաց.* վասն զի ապաշխարեաց ի յարենէ սիկիմացւոց ի յարիւն եղբարցն որթապաշտից: - 409. Իսկ շմաւոն ո՛չ էր ապաշխարեալ, վասն որոյ ո՛չ *օրհնեաց:* - 409. Որ *օրհնեաց* զզինուորեալ ռուբէնեանսն և արձակեաց ի

տեղիս իւրեանց...: - 419. Եւ եղիսէ նովին հոգւովն *օրհնեաց* և եբարձ զանէծսն: - 445. Այսինքն երդումն աբրահամու և դաւթի՝ մարդ լինիլ բանին ի վերայ երկրի ի պտղոյ յորովայնէ նորա. և նստել յաթոռ հօր նորա. և ի նմանէ *օրհնիլ* ամենայն ազգաց: - 457. Իսկ *զօրհնելն* ասաց եղիսաբեթ. «օրհնեա՛լ ես դու ի կանայս»: - 464. Չորրորդ՝ *օրհնեաց* զնոսա զինիլ ընդ դէմ թշնամեացն և աճիլ երկնային բարեաւն: - 520. Եւ մի նշխար *օրհնեմք* և լինի մարմին քրիստոսի: - 526. Երեսունևը, Վասն է՞ր *օրհնեմք* զեկեղեցիս: - 526. Յիսունևդ, Սեղան *օրհնելն*. և աղուհաց կտրել: - 527. Նախ այն է՝ որ զորդի ընդ հօր և սուրբ հոգւոյն փառաւորեմք և *օրհնեմք* գ անձինք ի միում բնութեան. և ո՛չ որպէս հինքն հրէական օրհնութիւնս. որք ո՛չ *օրհնէին* զորդի և զհոգի: - 528. Երկրորդ՝ ի վերնատանն դասք առաքելոցն ի վերայ նոր հաղորդութեանն մարմնոյ և արեանն՝ նոր *օրհնեցին* զքրիստոս և ելին ի լեառն ձիթենեաց որպէս ասէ աւետարանն: - 528. Եւ հանապազ ի տաճարին գովէին և *օրհնէին* զաստուած նոր օրհնութեամբ համբարձելոյն ի յերկինս տեառն և աստուծոյ...: - 528-529. Չորրորդ՝ այժմ մանկունք հաւատոյ ի յեկեղեցիս նոր օրհնութիւն տալով գ սրբեան ձայնիւ աստուածաբանե՛ն զխաչեալն քրիստոս. և *օրհնեն* ի վերայ արքայութեան աթոռոյ խաչին: - 529. ...ամենայն ազգ և ամենայն լեզուք, գայցեն ի կատարածի յերկրպագութիւն քրիստոսի. և անեզր յաւիտենիւ փառաւորեալ *օրհնեն* զնա: - 529. Եւ թէ ոք ասիցէ, ապա թէ զամենայն ոք առ հասարակ կապէ կամ արձակէ, այսինքն *օրհնէ* կամ անիծանէ, ո՞չ կատարի: - 539. Նոյնպէս և արձակելն այսինքն *օրհնելն* ո՛չ կատարի. թէ այնպէս անկարգաբար իցէ: - 539. Որպէս թէ զվերնագոյնն կամ զանարժանս կամ վասն ախտի ինչ *օրհնել* կամ ձեռնադրել. այլ զոր հոգին յայտնեսցէ զարժանիսն՝ նմա՛ կատարի: - 539. Եւ թէ ոք ասիցէ, աստուած վերնագոյն է և հանապազ *օրհնեմք* զնա, և այլ զսուրբս նորա: - 539. Ասեմք առ այս, թէ *օրհնելն* կրկին է. այսինքն առ վերինս և առ ներքինս: - 539. Եւ այսպէս հանապազ *օրհնել* պարտ է զաստուած...: - 539-540. Իսկ առ ներքինս *օրհնելն* իշխանութիւն և շնորհաց տալն թարգմանի...: - 540. Նոյնպէս և զամենայն *օրհնելիս* իմա՛. արժանաւորքն *օրհնել* պարտին. և զարժանաւորս. և արժանապէս: - 540. Եւ արտաքոյ սոցա անկատար է *օրհնելն* կամ արձակելն: - 540. Եւ բաց յայսցանէ և արտաքոյ սոցա, ո՛չ *օրհնին* և ո՛չ անիծանին. ո՛չ կապին և ո՛չ արձակին: - 540. Եւ դարձեալ՝ որպէս բանն աստուած անէծ զադամ, նոյն բանն դարձեալ *օրհնեաց* մարմնովն. թէպէտ մի է գործ Երրորդութեանն: - 542. Եւ սուրբն ղուկիոս սքանչելագործ և մարգարէաշնորհ, գրեաց առ մարկիանոս, թէ սուգ զգեցուցեր առաքելոց և մարգարէից. զի քակտեցեր զնոցա շինուածն. և արգելաւ հոգին սուրբ *յօրհնելոյ* զպատարագն և զաւազան մկրտութեան: - 543. Երկրորդ՝ զի մեծ ի համբարձումն ձեռն եդ ի վերայ նոցա և *օրհնեաց* զնոսա և արար զնոսա առ հասարակ եպիսկոպոսունս: - 546. Այս ըստ հակառակասիրութեան նոցա ասի. այլ ըստ ուղղութեան՝ քահանայն ունի իշխանութիւն զեօթն խորհուրդ եկեղեցւոյ կատարել. և եպիսկոպոսն առաւել ունի. զի միայն տայ զկարգն, եկեղեցի *օրհնէ* և սեղան: - 594. Եւ յակոբ ի *յօրհնելն* զյուդա ի դէմս քրիստոսի ասէ՝ «կապեսցէ զորթոյ զյաւանակն. և լուասցէ գինեաւ զպատմուճանն իւր». և ջուր ո՛չ յիշէ: - 595. Երրորդ՝ դիտաւորութիւն *օրհնողին:* - 597. Զի՞նչ է որ յեկեղեցիս մեր մի նշխար *օրհնեմք*. և ա՛յլ ազգ բազում: - 597. Նա՛խ՝ զի քրիստոս մի հաց էառ ի ձեռն ի սեղանոյն և *օրհնեաց*. նոյնպէս և զմի գինի: - 597. Եւ թէ ոք ասիցէ, կարողութիւն ունի քահանայն բազում հացս *օրհնել:* - 597. Ասեմք թէ՝ կարողութիւնն է ի դիտաւորութիւն. և դիտաւորութիւնն է ի կոպարն որ է մին հացն. որ ասաց «այս է մարմին իմ». ապա ուրեմն ո՛չ կարէ զբազում հացս *օրհնել:* - 597. Եւ թէ ասեն՝ կարէ՛ մին քահանայն ի մին ժամս բազում տղայս մկրտել. ապա և կարէ՛ բազում հացս *օրհնել:* - 597. Եւ դարձեալ ասեմք թէ՝ ամենայն հացն *օրհնեցաւ* այսօր. վաղիւն զիա՞րդ *օրհնեն:* - 597. Եւ այսպէս պարտ է կամ զօրհնեալն դարձեալ *օրհնել* որ է սուտ. կամ ամենայն հացն ո՛չ է օրհնեալ այլ մինն: - 597. Երրորդ՝ բաժան ի միմեանց *օրհնեմք* զհացն և զբաժակն. և յետոյ միաւորեմք ի ճաշակելն...: - 598. Ասեմք թէ՝ ամենայն նշխարքն որ ի բեմն և ի խորհրդանոցն *օրհնեցաւ* այսօր, զնոյնն ի վաղիւն առնոյք և *օրհնէք:* - 599. Թէ օրհնեալ է՝ ընդէ՞ր *օրհնէք* և թէ ոչ էր օրհնեալ՝ ընդէ՞ր տայք ժողովրդեանն իբր օրհնեալ մարմին և մոլորեցնէք զնոսա: - 600. Նա՛խ՝ եթէ ո՛չ զմարմինն տան ժողովրդեանն. այլ սոսկ հաց և գինի. զի մարմին քրիստոսի այն մինն է որ *օրհնեցաւ* որպէս ցուցաւ ի վերոյ: - 600. Դարձեալ՝ թէ դու հաւատաս զարիւնն ի մարմինն կապեալ, մի՛ հաներ զտեսակ արեանն ի բեմն. այլ նշխար միայն *օրհնեա* և լիցի մարմին և արիւն քրիստոսի: - 600. ...և պատարագ և խաչ *օրհնեմք*. եթէ կենդանեաց և եթէ մեռելոց: - 605. ...զի մի՛ համարձակեսցին քահանայք և գձէք *օրհնելն* վերստին մուծցեն յեկեղեցիս մեր: - 605. Այլ ի մեծի ե շաբաթին *օրհնեմք* իւղ, զի մի՛ մեռոնն սուրբ ի հասարակաց ոտս մերձեսցի: - 605. Որոյ գործ է զխորհուրդ մարմնոյ և արեանն ի վերայ սեղանոյն *օրհնել:* - 606. *Օրհնեաց* զնոսա և ցուցան

կաթողիկոսք և հայրապետք: - 607. Դպիրք եղեն առաքեալքն սպասաւորելով ժողովրդեանն հրամանաւ. և Սարկաւագունք՝ օծանելով զհիւանդս. հրաման տալով նոցա իւղ *օրհնել* յիւրմէ: - 607. Եւ գո՛րծ է նոցա ձեռնադրեալ զմետրապօլիտսն. և *օրհնել* զծէք կնքոյ: - 607. ...և *օրհնել* ծէք կնքոյ վասն յաւելուածոյն. արկանելով յառաքելական ծիքոյն. զոր *օրհնէ* եկեղեցի յաւելուածով: - 607. Եւ ուր չիցէ եպիսկոպոս՝ եկեղեցի *օրհնեն* և խաչի կնիք տան: - 608. Վասն որոյ նախ քահանայն *օրհնէ* հոգևորապէս, և ապա մարմնաւորապէս զուգակցին: - 610. Վասն է՞ր *օրհնեմք* զեկեղեցի: - 615. Վասն որոյ նոյն աստուածային բանիւն *օրհնեմք* և սրբեմք յառաջին անծիցն: - 615. ...վասն որոյ *օրհնեմք* և սրբեմք: - 615. Չորրորդ՝ զի սողոմոն յորժամ շինեաց զտաճարն՝ յաղօթս եկաց և նոյնպէս *օրհնեաց* և օծ. որպէս մովսէս...: - 615. Հինգերորդ, *օրհնեմք* զեկեղեցիս, զի օրհնութիւն վերնատանն ուր տէրն պատարագեաց, և հոգին սուրբ էջ յառաքեալսն...: - 615. Վեցերորդ *օրհնեմք*, զի բաժանեսցի յայլ աշխարհական տանց որք ո՛չ ունին զօծումն սրբութեան: - 615. Վասն է՞ր ի սկիզբն ժամուն ասեմք «*Օրհնեա* այս անուն» և ո՛չ թէ հրամայեա՛ կամ աղօթեա՛: - 624. *Օրհնելն* զաստուած երիւք դիմօ՛ք է: - 624. Ա՛յս է միտքն որ ասեմք «*օրհնեա՛»: -* 624. Նմանապէս և յեկեղեցի՝ ոմանք սաղմոսե՛ն. և սարկաւագն ի տիպ հրեշտակին տայ *զօրհնեայն* ի քահանայն որ է՛ տիպ քրիստոսի. - 625. *Օրհնեա՛* այս անուն: - 626. Այլ և է անգամ յաւուր *օրհնէին* զաստուած: - 626. ...և *օրհնեմք* զօրհնիչն մեր որ ասէ՝ «եկայք օրհնեալք հօր իմոյ»: - 627. Իսկ սաղմոսն՝ մանկացելոցն մկրտութեամբ հրամայէ որդիացելոցն *օրհնել* զհայրն երկնաւոր. որում փառք յաւիտեանս ամէն: - 629. Եւ անցեալ ընդ խորս չարեաց՝ *օրհնեն* զտէր և փառաւորեն: - 629. Իսկ և եօթներորդն խոստովան լինիլ բարութեան և արդարութեան տն. և մերձիլ խնդրուածովք. և *օրհնել* զաստուած նոր օրհնութեամբ յետ աստեացս: - 630. Իսկ ութերորդն ի նեղութեան դարուն *օրհնել* հոգւով. և գովել ի վերինն երուսաղէմ: - 630. *Օրհնեա՛* անձն իմ զտէր. տէր աստուած իմ մեծ եղեր յոյժ: - 630. Եւ ի նոյն ժողովն ի փառք ի բարձունս, *օրհնեալ* տէր ուսո՛ իմձ զարդարութիւնս քո. գ անգամ: - 632. Եւ գործատունն կրկին ասի. զի ամենայն արարածք կրկին են. այսինքն իմանալի և զգալի որք *օրհնեն* զարարիչն: - 637. ...զ'ի քէն հայցեմքն զարևագալին շարականերն, *զօրհնեմք* զքեզն, զայսօր անճառն, զարարչակներն, զաստուած անեղն...: - 637. Դարձեալ՝ ի յեբրայեցի լեզուն «ալ», ասէ թէ՝ գայ յայտնեսցի. «էլ», աստուած. «ուիայ», *օրհնեցէք* և գովեցէք զկենդանին աստուած: - 644. Իսկ սաղմոս տունն է երգ մարդկան. այսինքն է զի հրեշտակք և մարդիկ միաբանեալ *օրհնեմք* զաստուած փրկիչն մեր որ խօսի ընդ մեզ: - 644. Զի՞նչ է որ յետ կերակրոյն դարձեալ կրկին *օրհնեմք:* - 655. Եւ զայս ուսաք ի քրիստոսէ. որ ի վերնատունն յետ ընթրեացն *օրհնեցին* և ելին ի լեառն ձիթենեաց: - 655. Նոյնպէս և մեք յետ սեղանոյն *օրհնեմք* զաստուած: - 655. ...վասն որոյ կրկին *օրհնեմք:* - 655. ...պա՛րտիմք կրկնակի *օրհնել* զարարիչն: - 655. Եւ ոմանք երեքկին *օրհնեն*. ի սկիզբն. ի մէջն, և յետ կերակրոյն: - 655. Երրորդ, զի կրկին *օրհնեմք*, առաջին օրհնութիւնն խնդրելն է, և վերջինն գոհանալն: - 655. Զի՞նչ է յորժամ գինի ըմպեմք, *օրհնեմք* և շնորհակալեմք միմեանց. և յայլ կերակուրս և ըմպելիս ո՛չ առնեմք նոյնպէս: - 655. Որ ի հարսանիսն զջուրն ի գինի փոխեաց և *օրհնեաց:* - 655. Այլ և ի վերնատունն զբաժակն *օրհնեաց:* - 655. Վասն այն նախքան զըմպելն *օրհնեմք*. և յետ ըմպելոյն դարձեալ շնորհակալեմք...: - 656. Զի՞նչ է *օրհնած* աղն մատաղի: - 657. Իսկ վասն հիմնարկութեան սուրբ տաճարի և ժամահար *օրհնելոյ*. սկիհ և մաղզմայ. և զգիրք. և զկնունք առնելոյ. և խաչօրհնելոյ. և զքառասնորդաց գ ժամուց զքարոզքն և զաղօթսն, յոհան մանդակունին է արարեալ...: - 659. Իններորդ, Վասն է օրէիցն. և մեռելոցն. և գերեզման *օրհնելն*. և տուն *օրհնել:* - 660. Երկրորդ կոչի կարգ, զի զիւրաքանչիւր ոք յիւրում կարգին *յօրհնեմք* և կատարեմք...: - 671. Իսկ ի դիմաց նորա *օրհնել* զուղարկաւորսն...: - 673. Եւ յորժամ դնեն ի գերեզման, քահանայն նախ *օրհնէ՛* երիցս ափով զհողն և արկանէ ի գերեզմանն ասելով...: - 676. Եւ յետ դնելոյ մարմնոյն՝ նոյնպէս *օրհնէ* զհողն ասելով...: - 676. Իսկ թէ վասն է՞ր *օրհնեն* զհողն՝ այս է: - 676. ...այլ նախ *օրհնել* և սրբել անուամբ սուրբ Երրորդութեանն: - 676. Եւ յայս միտս նախ *օրհնեմք* զջուրն և ապա մկրտեմք զերեխայն: - 676. Ո՛չինչ բնաւ. քանզի յորմէ հետէ քրիստոս ի գերեզման եդաւ ամենայն հողք *օրհնեցան*...: - 678. Զգերեզմանս յորո՞ւմ աւուր պարտ է *օրհնել:* - 684. Զի՞նչ է տուն *օրհնելն* ի զատկի և յայտնութեանն: - 684. Այն է որ յետ յարութեանն քրիստոս եմուտ ի վերնատունն և *օրհնեաց* զաշակերտսն: - 684. ...վասն որոյ զնոյն խաչն և զաւետարանն տարեալ ի տուն՝ *օրհնեմք* զբնակութիւնս մեր: - 684. Ա՛րդ՝ եթէ մեռեալք ո՛չ խոստովանին և ո՛չ *օրհնեն*. ապա և ո՛չ ապաշխարեն և ո՛չ քաւեն ըստ ինքեան զմեղս: - 699. Զպայծառութիւնն՝ ի թաբօր լեառն. և Զանչարչարութիւնն ի *յօրհնելն* զմարմինն իւր և տալ աշակերտացն ի վերնատունն՝ անչարչարելի էր մարմինն քրիստոսի ներգործութեամբ և ո՛չ

զօրութեամբ: - 723. Արդ նա՛ որ զամենայն գերեզման կնքեալ պահէ, զեկեղեցիս *օրհնէ՛* և հաստատէ՛ և ամենեցուն զօրաւիգն է ի փորձութիւնս, կարօ՛ղ է անապական լինիլ. զի աստուածային է նշան: - 733. Զի՞նչ է որ ասէ «օրհնեալք» կամ «անիծեալք». և ո՛չ թէ՝ ես *օրհնեմ*, կամ անիծանեմ: - 740. Յոգին սուրբ բերանով սիրելեաց և թշնամեաց յառաջագոյն *օրհնեաց* զարժանաւորս ասելով «օրհնեալ էք դուք ի տեառնէ»: - 740

**ՕՐՀՆԵՐԳՈՒԹԻՒՆ +** Յետոյ ալէլուն որ է՛ հրեշտակացն *օրհներգութիւն:* - 627

**ՕՐՀՆԻՉ +** ...և օրհնեմք *զօրհնիչն* մեր որ ասէ՝ «եկայք օրհնեալք հօր իմոյ»: - 627

**ՕՐՀՆՈՒԹԻՒՆ +** Եւ թէ ոք ասիցէ, բազում բանք մեր բացորոշակի լինին ի հանդերձեալն. որպէս թագաւորն յորժամ ասէ շինեսցի քաղաք, և շինի. և ասեմք թէ այսանուն մարդ մեռանելոց է, և մեռանի. և աղօթեմք և լինի. և այլն նմանապէս անէծք կամ *օրհնութիւնք:* - 9. Եւ թէ է ի պատճառն ներգործական՝ որ ունի արգելումն, է՛ որպէս անէծք, կամ *օրհնութիւնք*, կամ աղօթք. և մանկանն յերկար ապրիլ. կամ լինիլ երաժիշտ: - 10. Տասներորդ՝ նեռն քարոզութեամբ պատրէ՝ և ուրականն սքանչելեաց. և այլն. և սոքա քաղցրաբանութեամբ և *օրհնութեամբ* պատրեն զմիտս անմեղաց...: - 35. Եւ ո՛չ ասի անիծեալ վասն անիծից մարմնոյն. այլ ամենևին *օրհնութիւն* մարմնովն: - 78. Եւ զի *օրհնութիւնն* ի յանէծք փոխեաց, ինքն անիծաւ և զրկեցաւ *յօրհնութենէ* ամենայն կենդանեաց: - 219. Ա՛րդ՝ պսակ *օրհնութեան* դնի յեկեղեցին, և մանկարարութիւն ո՛չ: - 225. Նոյնպէս և ի դրախտն եղև պսակ *օրհնութեան*, և մանկարարութիւն ո՛չ: - 225. Եւ *օրհնութիւն* քահանայից և ժողովրդեանն: - 284. Եօթանասունսն, Տալ զօրէնս հեթանոսաց. և *օրհնութիւն* և անէծք. և բան ընդդէմ հրէիցն որք մարմնաւոր ունին *զօրհնութիւնս:* - 285. Եօթանասունսն, *Օրհնութեանն* աստուծոյ: - 285. Եւ վասն աւագ *օրհնութեանն* վերջին: - 285. Վասն եերորդին՝ զի զանդրանկութեան *օրհնութիւնն* ընկալաւ որպէս յակոբ զեսաւայն: - 286. Վասն որոյ *օրհնութեամբ* ցրուեաց զնոսա ի վերայ երկրի, զի աճեսցին և բազմասցին և լցցեն զերկիր ծննդօք և շինութեամբ և բարեգործութեամբ ի փառս ամենասուրբ Երրորդութեանն ամէն: - 298. Իսկ դ կանայքն որք խառնեցան *յօրհնութեան* ազգն իսրայէլի...: - 300. Աբրահամ որդի էր ի տանէն սեմայ՝ արժանի *օրհնութեան:* - 300. Տասներորդ՝ և որպէս իսահակ նախասիրէր զանդրանիկն որդի, բայց յետոյ ետ *զօրհնութիւնն* նորին՝ որդւոյն կրտսերոյ: - 305. Եւ կապ ամուսնութեան որպէս պսակն *օրհնութեան:* - 317. Տասներորդ՝ ի փորձութեան լեառն զպատճառն ամենայն անիծից կործանեաց. և զառաջին անէծս *յօրհնութիւն* փոխեաց: - 320. Եւ այսպէս *օրհնութիւն* սոցա ընդ տեղւոյն իւրեանց կայ և մնայ մշտնջենաւոր յիշատակութեամբ: - 320. Իսկ լեառն հողեղէն բնութեանս մերում, կամաւ հօր վկայելով ի վերայ նորա՝ և հաճութեամբ սուրբ հոգւոյն աղաւնակերպ իջմամբ, և անքակտելի միացեալ բանիւն եղև լեառն մածեալ մշտնջենաւոր և անեզր յաւիտենիւ բարձրացեալ *օրհնութեամբ* և առաւելեալ: - 320. Ա՛յս է առաւել *օրհնութիւն* քան զիրեշտակաց և մարդկան: - 320. և Դարձեալ որպէս իշովն բաղամու զօգուտն խօսեցաւ, և ըզլեզու սուտ մարգարէին շարժեաց յանիծիցն *յօրհնութիւնս:* - 325. Նա՛խ՝ մորենին է՛ նշանակ ժողովրդեանն իսրայէլի յեգիպտոս, որ վառեալ տանջիւր և ո՛չ սպառիւր. այլ առաւելոյր *օրհնութեամբն* աստուծոյ: - 331. Երրորդ՝ զի բազում *օրհնութիւնս* փոխանակէին ի զանազան համսն: - 339. Իսկ հւղն զանգեալ՝ *օրհնութիւնն* է որ միանայ ի խորհուրդն և կատարէ՛ մարմին և արիւն քրիստոսի: - 357. Դարձեալ՝ իւղով զանգեալ բաղարջն և նոյն չափ իւղովն որ չափ մասն գինւոյն. այն է՝ զի ընդ *օրհնութեան* բանին աստուծոյ՝ և հոգին սուրբ իջանէ ի հացն և ի բաժակն և կատարէ՛ մարմին և արիւն քրիստոսի: - 361. Զի՞նչ է *օրհնութիւն* հին քահանայիցն: - 379. Որպէս ետ առաքելոցն, Նոյնպէս և նոցա ի գիր նզովից զկապելն. և *յօրհնութիւն* ժողովրդեանն զարձակելն: - 379. Եւ ա՛յս էր *օրհնութիւնն* «օրհնեսցէ զքեզ տէր» հայր: - 379. Դարձեալ, *օրհնութիւնն* իսրայէլի ի հինն: - 379. Երրորդ՝ ջուր սրսկման զոպային, է՛ տարածումն աջոյն՝ և *օրհնութիւնն* ժողովոյն ի շնորհաց սուրբ հոգւոյն: - 384. Ապա յա՛յտ է զի անօրինին ո՛չ անէծքն ունի զօրութիւն. և ո՛չ *օրհնութիւնն* շնորհք: - 388. Վասն է՞ր առաջին մարմնակա՛ն էր օրէնք և *օրհնութիւն*, և վերջինս հոգևոր ամենայն: - 395. Ի խրատ՝ զի սնուցօղն մի լիցի չարչարօղ. և բանն *օրհնութեան* մի՛ անիծեսցէ զոք: - 399. Երրորդ՝ զի ինքն *օրհնութիւն* էր, և անէծքն մերձեալ ի նա *յօրհնութիւն* փոխեցաւ. որպէս խաւարն ի լոյս փոխի. և մեղքն յարդարութիւն. և մահ ի կեանս: - 400. Ուստի յա՛յտ է զի փոխեաց զփայտն անիծից և զգերեզմանն, և արար աղբիւր *օրհնութեան* փայտի և գերեզմանի: - 400. Զի որպէս քահանային օծումն ի հոգւոյն ո՛չ բաժանի յաւիտեան, և պսակի *օրհնութիւնն* որ ի մարմինն է՝ ո՛չ բաժանի մինչ ի մահ ի մարմնոյն: - 401. Տասներորդ՝ ի գարեզին. որ է՛ լեառն թլփատութեան. զի ելեալ ի լեառն հաւատոց՝ զաւելորդ մեղացն ի բաց ընկեսցեն, և *զօրհնութիւնն*

աստուծոյ առցեն: - 402. Զի՞նչ է *օրհնութիւն* և անէծք: - 403. Եւ *օրհնութեամբ* հաղորդիլ կենացն աստուծոյ և երանութեան: - 403. Իսկ թէ ուստի՞ են *օրհնութիւնք* և անէծք: - 403. Եւ ի սոցանէ ողորմութեան և արդարութեան գործ. որ է՛ *օրհնութիւն* և անէծք ի մի պատուիրանն աստուծոյ տրամակայեալ: - 403. Եւ այս պատուիրանս՝ տայ պահողացն *օրհնութիւնս*. և ոչ պահողացն անէծս: - 403. Իսկ ի միասին կարգէ՛, զի կամ երկիցեն յանիծիցն, և կամ ցանկասցին *օրհնութեանն* և պահեսցեն զօրէնսն աստուծոյ: - 403. Վասն է՞ր նախ զանէծս և ապա *զօրհնութիւնն* դնէ: - 403. Չորրորդ՝ ադամայ նախ *զօրհնութիւն* և ապա անէծք ետ. իսկ այժմ դարձուցեալ ի *յօրհնութիւնն* աւարտէ՛: - 403. Երկրորդ՝ որպէս *զօրհնութիւն* նորա մարմնական ո՛չ ունիմք. նոյնպէս և ո՛չ զանէծսն: - 403. Երկրորդ՝ զփայտէն կախիլով եբարձ զանէծսն և ետ մեզ *օրհնութիւն:* - 403. Ո՞րպէս զանազանի *օրհնութիւնն:* - 403. *Օրհնութիւնն* աստուծոյ բաժանի յերկուս. որ է՛ երկնաւորաց և երկրաւորաց. որ է՛ հոգևոր և մարմնաւոր. անցաւոր և անանց: - 403. Ա՛րդ՝ զերկու *օրհնութիւնս* **բ** կտակօք բաշխեաց մարդկան. զմարմնոյ աճումն և ընչից՝ ետ իէլի. և զհոգւոյ աճումն կուսութեամբ և աղքատութեամբ՝ ետ քրիստոնէից: - 403. Այսպէս և *օրհնութիւն* մարդկան որ գերագոյն է քան զմեզ, շնորհակալութիւն է և գոհութիւն. որպէս սրբոց կամ թագաւորաց և այլն: - 406. Վասն է՞ր կոչի աւագ *օրհնութիւն*. զի յակոբ ևս օրհնեաց զորդիսն. նոյնպէս և իսահակ. և այլն: - 407. Եւ *օրհնութիւն*, զի յօրհնել բերանոյ նորա՝ յառաջ եկն առ որ բերան ի բերան խօսեցաւ աստուած դէմ յանդիման և ո՛չ առակօք: - 407. Երկրորդ՝ զի միայն մովսէս կոչեցաւ աստուած. և ո՛չ անուամբ միայն, այլ և գործով իշխէր ի վերայ տարերաց ի վեր և ի խոնարհ. վասն այն աւագ *օրհնութիւն* կոչի: - 407. Երրորդ՝ վասն կատարածի և վերջին *օրհնութեանն* պատմէ. արդարոց զպատիւ, և մեղաւորաց զտանջանս: - 407. Նա՛խ՝ զի կտակովն զմարմնաւորքն կարգաւորեն, և *օրհնութեամբն* զհոգևորսն: - 408. Երկրորդ՝ զի վերջին խրատն և *օրհնութիւնն* մնացակա՛ն է: - 408. Յինգերորդ՝ ցուցանէ թէ մարմնաւոր օրհնացն վախճան հոգևոր և *օրհնութիւնն* է որ եղև քրիստոսիւ: - 409. ...զայս նշանակէ կտակ և *օրհնութիւնն* ի վախճանի: - 409. Նա՛խ՝ զի ո՛չ ամենևին անէծ. այլ և մասն մի *օրհնութիւն* էր: - 409. Նա՛խ՝ վասն ցեղին ռուբէնի ասի. փոխելով զանէծքն ի *յօրհնութիւն:* - 409. Նա՛խ՝ վասն *օրհնութեանն* յակոբայ. տալով զանդրանկութիւնն եփրեմի: - 414. Եւ խոստումն *օրհնութեանց* զաւակին՝ և օրհնաց կատարումն՝ փրկիչն եղև: - 419. Այլ և *օրհնութիւն* բաշխեաց յաւարէն ամենայն ծանօթից. և տէրն առեալ աւար բաշխեաց պարգևս որդւոց մարդկան: - 437. Այլ և գոհացաւ ի վերջոյ ի վերայ ամենայն յաղթութեանցն. և տէր մեր ի վերայ ամենայն ներգործութեանցն. որ և ամենայն *օրհնութիւնքն* ի տէրն ակնարկէ. որ եղև գլուխ հեթանոսաց. յաղթեաց մահու և բարձրացաւ ի գերեզմանէ: - 438. Եօթնև**ժ**, **գռ** առակս և **եռ** *օրհնութիւնս* ասի սողոմոնի բովանդակն: - 441. Եւ ոմանք **գռ** գիրք ասեն որպէս առակն և ժողովօղն. և **եռ** *օրհնութիւնս* որպէս երգ երգոցն. որպէս դաւթի **ծծ** սաղմոսն: - 441. Եւ փոխանակ հայհոյութեան զպատարագ *օրհնութեան* մատուցանեն աստուծոյ: - 443. Առաջին վասն օրհնաց և նոր *օրհնութեան:* - 525. Քառասունև**դ**, Մասնաւոր Աղօթք. և *Օրհնութիւնք*. և Խաղաղութիւն. Քարոզ. և Մաղթանք և Գոհութիւն: - 527. Եւ *օրհնութիւն* գինւոյն: - 527. Յիսունևվեց, Թէ ուստի՞ է *օրհնութիւն* կարգաց եկեղեցւոյ: - 527. Զի՞նչ է նոր *օրհնութիւնն* որ ասէ դաւիթ «օրհնեցէք զտէր *յօրհնութիւն* նոր»: - 528. Վասն որոյ նոր *օրհնութիւն* նորածին աստուծոյ և տեառն մատուցանեմք նոր ժողովուրդքս աստուծոյ: - 528. Նախ այն է՝ որ զորդի ընդ հօր և սուրբ հոգւոյն փառաւորեմք և օրհնեմք **գ** անձինք ի միում բնութեան. և ո՛չ որպէս հինքն հրէական *օրհնութիւնս*. որք ո՛չ օրհնէին զորդի և զհոգի: - 528. Եւ հանապազ ի տաճարին գովէին և օրհնէին զաստուած նոր *օրհնութեամբ*...: - 528-529. Չորրորդ՝ այժմ մանկունք հաւատոյ ի յեկեղեցիս նոր *օրհնութիւն* տալով **գ** սրբեան ձայնիւ աստուածաբանե՛ն զխաչեալն քրիստոս. և օրհնեն ի վերայ արքայութեան աթոռոյ խաչին: - 529. Ա՛յս է նոր *օրհնութիւնն* ասացեալ: - 529. Նոյնպէս և շինեալն *օրհնութեամբ*. զի լուանամք նախ ջրով և ապա՛ գինւով: - 533. Նոյնպէս և առ սուրբս *օրհնութիւնն:* - 540. Նոյնպէս և որք անբիծ են հաւատովք և սուրբ գործովք. և կամ որք զղջացեալ յետս դառնան ի մեղաց և ի հերձուածողաց. նոցա՛ է արձակումն և *օրհնութիւնն:* - 540. Եւ զճիռն *օրհնութեան*: - 545. Այսպէս սրբեաց զեկեղեցի յամենայն աղանդոյ սուրբն յոհան. որոյ յիշատակն *օրհնութեամբ* եղիցի ամէն: - 545. Ոմանք ասեն թէ ի ջուր եթաց և լուաց *յօրհնութենէն*. և այս ո՛չ է ընդունելի կարծիս: - 599. Պսակն է խորհուրդ մեծ. որով *օրհնութիւնն* աստուծոյ կատարեալ լինի...: - 609. Իսկ կատարի պսակն *օրհնութեամբ* քահանային. և մարմնական զուգաւորութեամբն: - 609. Իսկ ի կատարումն պսակին՝ նախ է՛ *օրհնութիւն* քահանային, և ապա՛ մարմնական զուգաւորութիւնն: - 610. Այս է *օրհնութիւն* պսակին: - 610. Նոյնպէս որ օտար անկողնով պղծէ զշաղկապ պսակին, որոշի *յօրհնութենէն*

և պղծի անկողինն սուրբ: - 610. Ա՛րդ՝ նահապետքն առնուին բազում կանայս վասն որդէծնութեան և լրման մարմնաւոր *օրհնութեանն:* - 613. Իսկ ի նորս փոխեցաւ ի հոգևոր *օրհնութիւն* և ծնունդ. և զմարմնաւորն ի սկզբան չափաւորն կապեաց. որպէս ադամ և եւա: - 613. Հինգերորդ, օրհնեմք զեկեղեցիս, զի *օրհնութիւն* վերնատանն ուր տէրն պատարագեաց, և հոգին սուրբ էջ յառաքեալսն...: - 615. ...նոյն *օրհնութիւնն* իջցէ ի սուրբ եկեղեցիս: - 615. Զայս ունի խորհուրդ *օրհնութիւն* եկեղեցւոյն: - 615. Զի յառաւօտն մին խնկարկի ի տէր եթէ շրթունքն. և այն ևս **գ** անգամ պար առեալ. և մի *յօրհնութիւնն* ևս **գ** անգամ. և մի ի փառք ի բարձունսն ևս **գ** անգամ: - 618. Երկրորդ ժամն է՛ *օրհնութիւն* երից մանկանցն ի դէմս որդւոյ. որ նա՛ էջ ի մէջ հնոցի աշխարհիս. և փրկեաց զմեզ: - 621. Զի՞նչ է յորժամ երկուքն սաղմոսե՛ն, և *զօրհնութիւնն* այլո՛ց տան: - 624. Արդ սաղմոս երգօղքն տան ի սարկաւագն. և սարկաւագն ի քահանայն. և նա՛ մատուցանէ աստուծոյ *զօրհնութիւնն*. որպէս առաջին դասք քերօբէիցն: - 624. ...և նա վերընծայէ առ աստուած *զօրհնութիւնն*, և զխաղաղութիւնն բերէ մեզ պարգև: - 625. Իսկ **ը** երրորդն *օրհնութիւն* կոչի: - 627. Երկրորդ՝ նշանակէ զձայն փողոյն, և ապա՛ *զօրհնութիւն* յարուցելոցն: - 627. Իսկ յառնելն մեր ի *յօրհնութիւն*, նշանակէ նախ ի մեռելութենէ մեղաց և ի ծառայութենէ յառնելն: - 627. Իսկ ի կիրակէի խնկարկելն և **ժ** *օրհնութիւնն*՝ նշանակէ զտասն քաղաքացն իշխանութիւն ունել. և **ժ** քանքարացն: - 628. Իսկ ի պահս ո՛չ խունկ և ո՛չ *օրհնութիւն*. զի ընդ ապաշխարութեամբ եմք, ո՛չ իշխեմք գոհանալ և ո՛չ ունիմք անուշահոտ վարս: - 628. Իսկ և եօթներորդն խոստովան լինիլ բարութեան և արդարութեան տն. և մերձիլ խնդրուածովք. և օրհնել զաստուած նոր *օրհնութեամբ* յետ աստեացս: - 630. Դարձեալ և ըստ մերոց վարդապետաց, առաջին կանոնին **ը** երրորդ գուբդայն *օրհնութիւն* ի հանդերձելումն ակնարկէ...: - 630. Եօթներորդն *օրհնութիւն* հրեշտակաց և փրկութիւն: - 630. Նոյնպէս և որ անիծից փոխէ՝ զալէլուն որ *օրհնութիւն* է ո՛չ խառնեմք: - 630. Իսկ փառքն, և ալէլուն, և *օրհնութիւն* և փառքն, և ամէնն, և ընդ հոգւոյդ քումն, և խաղաղութիւնն, այս ամէն Առաքելադի՛ր է: - 631. Այլ գիտելի՛ է, թէ սաղմոսն շարականաց որ **բժ**ան տուն է՝ զփառքն և զայժմն ի միասին երգեմք. որպէս *զօրհնութիւնն*, հարցն, ողորմեայն, տէր յերկնիցն: - 636. Զաւազ *օրհնութիւնքն* զեօթն ձայնիցն, ստեփաննոս սիւնեցին: - 637. Եւ զոր նախ իմացն, զ՚ի յանսահման ծովէն, և զթարգմանչաց *օրհնութիւնն*, և զսուրբ սարգսի *օրհնութիւնն*, վարդան վարդապետն: - 638. Նա՛խ՝ զի մարդն հոգի է և մարմին, ձայնիւ և ձեռօք երգէր. զերկու մատունս ի մի լծակցեալ *յօրհնութիւնն* աստուծոյ: - 641. Զի՞նչ է *օրհնութիւն* սեղանոյն: - 654. ...այսպէս *օրհնութիւնն* աստուծոյ առատութիւն է ամենայն կերակրոց: - 654. ...որք խճողե՛ն զորովայնս իւրեանց առանց *օրհնութեան:* - 654. Իսկ քրիստոնէիցս *օրհնութեամբ* է և շնորհօք: - 654. Երրորդ, զի կրկին օրհնեմք, առաջին *օրհնութիւնն* խնդրելն է, և վերջինն գոհանալն: - 655. Վասն որոյ ըմպելի եղև քրիստոնէիցս և *օրհնութեան* բաժակ: - 655. Եւ յորժամ ըմպեմք, զնոյն *օրհնութիւնն* քրիստոսի յիշատակեմք: - 655-656. Այլ և զարարիչ *օրհնութեան* գինւոյն զտէր մեր յիսուս քրիստոս: - 656. Այլ մեք զբաժակ *օրհնութեան* ճաշակեմք զչափաւորն. և ո՛չ զանչափն որ է մեղաց՝ և արբեցութիւն: - 656. Եւ լուսաւորիչն կարգեաց *զօրհնութիւն* աղին: - 657. Իսկ *օրհնութիւն* աղին, զի որոշեսցի ի զոհից կռոց, և ի հասարակ զենմանց...: - 657. Երկրորդ, որպէս կենդանւոյն աղ, նոյնպէս ի կեանս մեր հանապազ պա՛րտ է ի լեզու ունել *զօրհնութիւն* և զփառս աստուծոյ: - 658. *Զօրհնութիւն* կարգաւորութեանցս այսուցիկ ո՞վ է արարեալ...: - 658. Նոյնպէս և ի միոյ ձայնէն ոմանք *զօրհնութիւնս* և այլք զանէծսն լսեն: - 739. Վճիռ որ վասն բարեացն է՝ պարունակէ՛ յինքն է մասունս *օրհնութեան:* - 740. Երկրորդ՝ աստուածային *օրհնութիւնն* որ ասէ «օրհնեալք»: - 740. Որում Գոհացողական *Օրհնութիւն*. և Բարեբանօղ Փառատրութիւն. Յամենայն գոյեղէն բնութեանց. ի վեհագունից մինչ ի հուսկ յետինս: - 771. Որոյ յիշատակն *օրհնութեամբ* եղիցի ամէն: - 772. Այլ և վարժապետին իմոյ և մեծ հռետորի հայոց, Յոհաննու Որոտնեցւոյ, եղիցի ի սմա յիշատակ մաղթանաց մասին *օրհնութեան*. և վիճակ ժառանգութեան սրբոցն ի լոյս: - 773

**ՕՑՏԵՄ +** Իսկ ապականութիւն այլայլութեամբն ի ներքս մտանէ, և զորոշեալն ի միմեանց՝ դարձեալ *օցտէ*՛ և այլայլէ՛. մինչ զմարմինն ի բուն տարերս լուծանէ, և զհոգին յաներևոյթ տեղիս: - 498

# Ֆ

**ՖԱՐՏ (տ. ՓԱՐՏ, ԿՈՃԱՏ) +** Յորժամ թիւն առաջին լինի որ է *Ֆարտ*...: - 641

**ՖՌԱՆԳ, ՖՌԱՆԿ +** Կանգունն գիրկն է մարդոյ. և այլք **Ը** թիզ ասեն. զոր այժմ *Ֆռանկք* վարին: - 293. Եւ յայս ասեն հերձուածօղ ազգն *Ֆռանգաց*, թէպէտ խոստովանի՛ն աստ, յիշատակի՛ մեղքն ի դատաստանին: - 433. Վեցերորդ վկայ նոյն ինքեանք ազգն *Ֆռանկաց*. որ յամենայն շաբաթ օր վիճիլ ասեն. և միս ո՛չ ուտեն ի խորհուրդ նաւակատեաց մեծի շաբաթուս: - 509. Եւ *Ֆռանկն* երկու օր լուծանէ: - 527. Եւ **գճ** ամ աւելի՝ բազում ազգ *Ֆռանկաց* ո՛չ հնազանդեցան չար ժողովոյն քաղկեդոնի: - 547. Զոր և ազգն *Ֆռանկաց* այլայլելով ասեն, ես կու մկրտեմ զքեզ յանուն Յօր և Որդւոյ և Յոգւոյն սրբոյ: - 588. Դարձեալ գիտելի է, զի աստ ասեն հերձուածօղ ազգն *Ֆռանկաց* թէ՝ թէպէտ մկրտութիւնն գործ քահանայի է, բայց ի հարկաւոր ժամանակն թէ քահանայ ո՛չ լինի ամենայն ոք որ գիտէ զձև մկրտութեան՝ կարէ մկրտել: - 588. Եւ թէ ոք ասիցէ, զդրոշմն ո՛չ ունիք. զի եպիսկոպոսն տայ որպէս ազգն *Ֆռանկաց:* - 594. ...այսպէս և օգոստինոս վարդապետն *Ֆռանկաց* ի խորհրդոց գիրս ձա համարն ասէ, թէ յառաջագոյն բաշխեաց զխորհուրդ մարմնոյ և արեանն և տուեալ յուդայի: - 599. Այժմ հարցանեմ զձեզ անօրէն ազգք *Ֆռանկաց*...: - 599. ...որպէս ազգն *Ֆռանկաց* ունին զայսպիսի խոստովանութիւնս միշտ քահանայքն և ժողովուրդքն. և այսպիսիս անկատար առնու զթողութիւն...: - 603. Վասն է՞ր ազգն *Ֆռանկաց* զերկու օր պահոցն լուծանէ: - 651. Եւ որ ոք ո՛չ պահէ որպէս ազգն *Ֆռանկաց*, ընդ անիծիւք է յառաքելական և հայրապետական կանոնաց: - 652. Իսկ ազգն *Ֆռանկաց* ասեն զչարաց հոգիսն ի դժոխս իջեալ. և զբարեացն յերկինս ելեալ...: - 686. Այլ միայն վարդապետք *Ֆռանկաց* տարածայնեալ ամենեցունց համաբաւեն զբերքաթուրն: - 698

## Թ վ ա կ ա ն ի   գ ո ր ծ ա ծ ո ւ թ յ ո ւ ն

Հաշվի առնելով նյութի ծավալուն լինելու փաստը՝ թվականի գործածությունը թվարկում լինելու դեպքում բերվում է միայն քանակական նշումով.

**Ա** - 29

**ԱՌԱՋԻՆ - Տես՝ Ա հատոր**

**Բ** - 301

**ԲԺԱՆ** - Ասեմք թէ ***բժան*** կենդանակերպքն ունին զբնութիւն չորից տարերաց: - 189. Եւ այս ***բժան*** կենդանակերպից վեցն է ի մէջ երկնից ի հիւսիսոյ կողմս առ մեզ, և ի մին կիսագունդն: - 189. Եւ այսպէս զերկինս պատեալ ունին ***բժան*** կենդանակերպքս: - 189. Եւ նախ ի չորս դէմս բաժանին ամենայն հողմունք. և իւրաքանչիւրքն դարձեալ յերիս բաժանին. որ լինի բովանդակն ***բժան***: - 205. Ջուր ***բժան*** կերպիւ ասի: - 209. Երկոտասան անդամքն՝ կենդանակերպիցն և ***բժան*** մասին երկրին: - 232. Ո՞ր է ***բժան*** անդամք մարդոյն: - 241. Եւ բաժանին ***բժան*** անդամքն ըստ երկոտասան կենդանակերպիցն. և ***բժան*** մասին երկրի: - 241. Դարձեալ ***բժան*** դրունք է ի մարդն որ են այսոքիկ. երկու աչք. **բ** ականջք. **բ** պինչք, բերանն. և պորտն. **բ** ստինք. ջրհեղն. և արտաքնոցն: - 241. Եւ **զ** ևս **բ** ոտիցն՝ լինին ***բժան*** անդամք: - 241. Եւ դարձեալ թիւ ոսկերացն **մխը**. և ***բժան*** անդամքն...: - 244. Եւ այլք ունելով և զկերակրականին զօրութիւնս՝ յապաղեն մինչ ***բժան*** ամիսս: - 262. Այլ և պարզապէս ըստ չորից տարերց տնկականին՝ **գ** զօրութիւնք և **ե** զգայութիւնք՝ լինի ***բժան***: - 263. Վասն որոյ ոմանք ***յբժան*** ամիսս ծնանին որպէս ձի: - 263. Զայս ***բժան*** պարգևս էհան ի մէնջ նա: - 279. Երեսունևն**դ**, ***բժան*** ակունքն. և խունկքն: - 283. Քառասունև**ը**, Արատ քահանայիցն ***բժան***: - 284. Քառասունև**թ**, Արատ պատարագացն ***բժան***: - 284. Յիսունև**ը**, ***բժան*** լրտեսքն. որ բերին ողկոյզ՝ նուռն՝ և թուզ: - 284. Իսկ որ զդպրութիւն գիտէ և գրով վարի՝ ***բժան*** ազգ է ...: - 299. Եւ ***բժան*** կենդանակերպքն ***բժան*** առաքեալք: - 303. Երեքտասաներորդ, նա՛ երկոտասան իշխանօք ***բժան*** ցեղիցն առաջնորդեաց: - 329. Եւ տէրն ***բժան*** առաքելօք զազգս քրիստոնէիցն յերկինս հրաւիրեաց: - 329. ...և **բ** Ակունք ուսոյն՝ կրկին կիսագունդք երկնից. ունելով **զզ** կենդանակերպս. և Վակաս լանջացն ***բժան*** ակամբք նոյն կենդանակերպք ի լանջս երկնից Միթրն՝ պսակ քահանայապետութեան. և Թիթեղն՝ մտաց թեթևութեան: - 348. Զի՞նչ նշանակէր ***բժան*** ակունքն: - 348. Որպէս ***բժան*** կենդանակերպք երկնից, և ամիսք տարւոյն. այլ և ***բժան*** առաքեալքն ի լանջսն յիսուսի: - 348. Եւ ա՛յս են ***բժան*** ակունք և անւանքն գրեալ: - 348. Եւ ա՛յսպէս մեկնեն զանուանս ***բժան*** ականցն սուրբն Եպիփան և մեծն Անդրէաս ի գիրս տեսլեանն Յոհաննու: - 349. Եւ յօշելն զանդամս ***բժան*** մասն ընդ ցեղիցն. և զոտս և զփորն լուանալն. և ողջակիզել ի վերայ պղնձի սեղանոյն: - 358. Եւ այլ ***բժան*** հաց ի վերայ առաջաւոր սեղանոյն **զ զ** հաց զոր սրբութեան հաց կոչէին շաբաթէ ի շաբաթ եդեալ: - 359. Սոքա ***բժան*** ազգ նուէրք գլխաւոր պատարագք կարգեալ ի մեծէն մովսիսէ՛: - 359. Այլ և նւէրք ***բժան*** իշխանացն սայլս և եզինս: - 359. Եւ ***բժան*** արատ պատարագին: - 371. Երկրորդ՝ որպէս աստեղաց գլխաւորքն թւեցան. ***բժան*** ազգն՝ ***բժան*** կենդանակերպքն. և այլք նմանապէս: - 377. Ո՞րպէս բանակէին ***բժան*** ցեղքն: - 378. Ի **դ** կողմն խորանին բանակեցան ***բժան*** ցեղքն. և ի մէջ նոցա խորանն էր Ղևտական ցեղօքն: - 378. Եփրեմ. Մանասէ. և Բենիամին. ***բժան*** բիւր և **ըռբճ** զօրք նոցա: - 378. Նոյնպէս և Ղևտացիքն շուրջ զխորանաւն բանակէին ի մէջ ***բժան*** ցեղիցն. և խորանն ի միջի նոցա այսպէս: - 378. Եւ դարձեալ, երկոտասան արքեպիսկոպոսք. և կաթողիկոսն ի մէջն. նոյնպէս և արքեպիսկոպոսն ***բժան*** ունի գաւազան: - 382. Երկրորդ, քարոզութիւնն ***բժան*** ազգաց: - 386. Եղիազար՝ աստուծոյ զօրութիւն լսի որ է՛ քրիստոս և քահանայ և փրկիչ մեր. և իշխանք՝ ***բժան*** առաքեալքն աթոռակիցք քրիստոսի: - 391. Եւ բաժանեաց ***բժան*** ցեղիցն ի խորհուրդ փրկչին յիսուսի: - 414. Նմանապէս և ***բժան*** քարինքն հանեալ ի ցամաք և կանգնեալ սեղան՝ հաւատացեալքն են. որք ի ձեռն ***բժան*** առաքելոցն հաւատացին և ելին ի մեղաց. և եղեն սրբութեան սեղան աստուծոյ ***բժան*** անդամօք և ***բժան*** առաքելովք: - 415. Եւ ***բժան*** քարինքն դարձեալ ի գետն եդեալ, նշանակէ՛ զմեղս ի խորս անդնդոց ընկղմեալ: - 415. Իններորդ՝ հանեալ ի գետոյն ***բժան*** վէմս շինեաց սեղան. և նոյն թուով խորասուզեալ ընկղմեաց: - 418. Վեշտասաներորդ՝ ***բժան*** գործակալք սողոմոնի: - 441. Քսաներորդ, ***բժան*** եզինք բարձեալ զծովն: - 441. Եւ տն մերոյ ի հեթանոսաց փառք և մեծութիւն. որ նստի յանզուգական աթոռ դատողութեան ***բժան*** թագաւորօք դատել զամենայն: - 442. Զի ***բժան*** օրն թէպէտ պակաս է ի թիւս տարւոյն, սակայն սկիզբն է

տարւոյն: - 484. ...և նորոգեցին զթուլութիւն և զերկպառակութիւն ինչ եկեղեցւոյ. և հաստատեցին գիրս կանոնականս ***բժան*** գլխոց: - 544-545. «Նստջիք աւէ և դուք ***յբժան*** աթոռ՝ դատել ***զբժան*** ազգն իէլի»: - 546. Եւ ***բժան*** կենդանակերպ յերկինս: - 546. Եւ ***բժան*** ժամք աւուր: - 546. Վասն որոյ և տէրն ***բժան*** թիւ ընտրեաց առաքելոցն, և ետ ***բժան*** աթոռ դատողական: - 546. Եւ որպէս ի դասս հրեշտակաց մինն գնդապետ ***բժան*** գնդին: - 547. Յինգերորդ, ի սմա՛ երկոտասան քարինք հիմնարկեալք. և ***բժան*** լուսանցոյց ի խորհուրդ մարգարէիցն և առաքելոցն. - 614. Եւ ի մեզ ***բժան*** անդամք մարմնոյ. և ***բժան*** դրունք զգայութեանց. որպէս **բ** աչք. ականջք. պինչք. բերան. և այլն: - 614. Վասն է՞ր հինքն ***բժան*** օր նաւակատիս կատարէին որ է՛ նորոգումն խորանի տաճարին: - 616. Երկրորդ ասեմք, և մեք ***բժան*** օր տօնեմք եկեղեցւոյ ի բոլոր ամն. որ են այս: - 616. Դարձեալ ասեմք եթէ՝ տօնօղքս և տօնելին ***բժան*** է: - 616. Զի ***բժան*** առաքելոցն տօնեմք: - 616. Եւ ***բժան*** անդամքս տօնեմք: - 616. Դարձեալ՝ ունիմք ***բժան*** անդամք. ըստ իւրաքանչիւրոցն մի մի ժամս աղօթեմք: - 624. Այլ և զերկոտասան գունդս հրեշտակաց յերկինս և ***զբժան*** առաքեալսն բարեխօս մատուցանեմք առ աստուած: - 624. Դարձեալ՝ ***բժանն*** կրկին վեց է...: - 624. ...վասն որոյ ***բժան*** ժամու աղօթիւք զթողութիւն խնդրեմք սոցա: - 624. Այլ գիտելի՛ է, թէ սաղմոսն շարականաց որ ***բժան*** տուն է՝ զփառքն և զայժմն ի միասին երգեմք. որպէս զօրհնութիւնն, հարցն, ողորմեայն, տէր յերկնիցն: - 636. Այլ և **յկե** զօդուածովքս և ***բժան*** անդամօք մարմնոյս մեղանչեմք: - 683. Եւ տարի՛ է քրիստոս. և ամ տն ընդունելի. և ***բժան*** ամիսք առաքեալքն: - 683. Եւ որպէս ***բժան*** բիւր հրեշտակացն, և եօթանասնից եօթն թողուլն, և ամլոյն եօթն ծնանիլն ո՛չ է վճիռ, նոյնպէս և **իդ** երիցանցն: - 711. Նա՛խ՝ որպէս ***բժան*** գունդ հրեշտակացն և չորք կենդանիքն զբոլոր երկնային զօրսն նշանակեն, նոյնպէս և **իդ** երիցունքն զբոլոր դասս սրբոցն: - 711. Վեցերորդ, զի ***բժան*** ցեղապետք էին հնոյն. և ***բժան*** առաքեալ նորոյս. զերկոցունց ազգաց նահապետսն դնելով զբոլոր թիւ ամենայն ազգին, նշանակէ՛: - 712. Վեցերորդ՝ զի գործ աստուծոյ է ի նւաստ և ի փոքր ինչ իր զմեծամեծսն ներգործել. որպէս կաւովն զկուրին աչքն եբաց, և ի վիմէն ջուր բղխեցոյց ***բժան***. և այլ բազումս: - 733-734. Նմանապէս և ***բժան*** աթոռք առաքելոցն սրբոց ի յօդոյդ լուսեղէն: - 736. Սոքա են ***բժան*** պտուղք փայտին կենաց: - 767. Եւ երկոտասան պտուղ ըստ ***բժան*** գնդիցն ասացեալ ի տնէ: - 767. Դարձեալ ***բժան*** պտուղք են ***բժան*** առաքեալքն. որք յամս և յամիսս տնօրէնութեանն պտղաբերեցան: - 768. Իսկ զի և արուի թէպէտ ո՛չ նոյն պիտոյիւք. սակայն ո՛չ ընդ վայր կազմեցաւ. ի լրումն ***բժան*** դրանց անդամոց. ի ներքս մուծանելոյ և արտաքս հոսելոյ զպակաս և զաւելորդս ինչ. անվնաս կելով կենդանւոյն: - 786

**ԲԻՒՐ +** Ասեմք առ այս, եթէ այսու վկայե՛ս և դու մեզ՝ թէ ո՛չ է հարկ. զի ի բոլոր քաղաքն այնքան *բիւր* մարդիկ՝ ծեր և տղայ՝ ե՛րբ և ո՛ւր ի մի շարժումն աստեղաց ծնան, որք ի միասին կործանեցան. կամ բազմութիւն զօրացն. կամ որք ի նաւին կային. զի սոքա ամենեքեան յայլևայլ ժամանակս և այլևայլ շարժումն աստեղաց էին ծնեալք. ապա ուրեմն ո՛չ է հարկ բախտի և ճակատագրի: - 13. Ութերորդ՝ մինն պատկելով առնէ զտասն՝ և զհարիւր՝ և զհազար՝ և *զբիւրն*. և զանթիւն: - 109. Եւ ի միոյ աստուծոյ եղեն **Ժ** դասք հրեշտակաց ընդ մարդկան. և հարիւր գունդքն ըստ ոչխարաց առակին. և **Ռ** կենդանեաց տեսակքն որ յերկրի. և *բիւր* անկենդան բուսոց. և անթիւ գոյեղէնք: - 109. Իններորդ՝ մինն յայտնի է ի տասն և ի հարիւրն և ի հազարն և ի *բիւրն* ընդ աղօտ և ծածուկ: - 109. Զի՞նչ է **ռք** հազարաց և *բիւրք* *բիւրուցն* զոր ետես դանիէլ: - 141. Որ է՛ **Ժ, Ճ, Ռ**, *բիւր:* - 141. Քանզի **Ժ** տասն՝ հարիւր է. և **Ժ** հարիւրն՝ հազա՛ր է. և **Ժ** հազարն՝ *բիւր* է: - 141. Եւ դարձեալ, **Ճ** տասն՝ հազա՛ր է. և **Ճ** հարիւրն՝ **Ժ** հազար է. որ է՛ *բիւր* մի. և **Ճ** հազարն՝ **Ժ** *բիւր* է. և **Ռ** հազարն՝ **Ճ** *բիւր* է. և **Ռ** *բիւրն* **ԺՃՌ** է: - 141. Եւ ա՛յսպէս բազմապատկելով զհազարն և *զբիւրն* յանբաւս ելանէ: - 141. Վասն որոյ ասէ ռք հազարաց և *բիւրք* *բիւրուց*, ո՛չ զորքանն նշանակէ, այլ զանբաւն: - 141. Երկրորդ՝ զի առաջին և սկիզբն է թուոց. որպէս միակն թիւ բազմանայ և խառնի յայլս, այսինքն՝ **ի Ժ. ի Ճ. ի Ռ**. և ի *բիւրն*. և ի միութենէն իւրմէ ո՛չ որոշի: - 178. Եւ ժողովեալ մէկ օրն **իդ** ժամ՝ լինի **դ** *բիւր* և **սբճ** ռոպէ: - 191. Չորրորդ՝ գլխաւոր թիւքն **դ** են. այսինքն **Ժ**. և **Ճ**. և **Ռ**. և *բիւր:* - 291. Եւ զի *բիւրն* պարունակէ՛ զհազարն. և նա՛ զհարիւրն. և նա՛ զտասն: - 291. Արդ *բիւրն* պատշաճի յաւիտենին աստուծոյ, որ պարունակէ՛ զմշտնջենաւորն որ են հրեշտակք: - 291. Եւ տէր մեր գեղեցիկ տեսլեամբ քան զամենայն որդիս մարդկան. զի «եղբօր որդին իմ ասէ՝ կարմիր է և սպիտակ ընտրեալ ի *բիւրուց*». այսինքն զի աստուած է մարդացեալ: - 313. Խաշինքն *բիւր* մի և **դռ**: - 326. Բազում ողորմ առ բազմապարտ դարձեալսն ի մեղաց. որպէս պարտապանն *բիւր* քանքարոյ: - 351. Բովանդակ անցեալքն ի հանդէս՝ **զճռ** էին. որ է՛ **կ** *բիւր*. և **գռ** և **ռծ**: - 378. Յուդա. Իսաքար. և Զաբողոն. **ժը** *բիւր* և **ցն** զօրք նոցա: - 378. Ռուբէն. Շմաւոն. և Գադ. **ժե** *բիւր* և **ռնծ** զօրք

նոցա: - 378. Եփրեմ. Մանասէ. և Բենիամին. **բժան** *բիւր* և **ըռբճ** զօրք նոցա: - 378. Դան. Ասեր. և Նեփթաղիմ. **ժե** *բիւր* և **ռռ** զօրք նոցա: - 378. Եւ մարգարէն դաւիթ ի ձախ կողմն **ռք**, և ի յաջն *բիւրք* ասէ անկանիլ: - 404. ...ընդէ՞ր ոչ մկրտեաց զոք ի հաւատացելոցն. մինչև գնաց ի կեսարիա ձեռնադրեցաւ. և ապա եկեալ զհազարս հազարաց և *գբիւրս* մկրտեաց ի գետն: - 589. Նախ՝ զի կարէ՛ միանգամայն ծնանիլ բոլոր ազգ մի. եթէ **ռ**, եթէ *բիւր*. ըստ այնմ «ո՞ր ետես և լուաւ եթէ երկնեաց սիօն և ծնաւ ազգ մի ողջոյն»...: - 590. Եւ որպէս **բժան** *բիւր* հրեշտակացն, և եօթանասնից եօթն թողուլն, և ամլոյն եօթն ծնանիլն ո՛չ է վճիռ, նոյնպէս և իդ երիցանցն: - 711. Երրորդ, բազմութիւնք երկնաւոր զօրացն ընդ նմա իջեեն. զի «զօրութիւնք երկնից շարժեսցին» հազարք հազարաց և *բիւրք բիւրուց* ըստ դանիէլի: - 737

**ԲՃ** - Երկրորդ՝ զի առանձնակի կեանս ստացաւ *բճ* ամ: - 290. Եւ էր արտեմոնս այս զկնի առաքելոցն *բճ* ամաւ սուտ ինչ պակաս: - 482. Յոհան անտիոքայ՝ թղթով միաբանեալ. *բճ* հարք ընդ դէմ նեստորի որ **բ** բնութիւն ասէր և **բ** որդի. կրկին կամք և կրկին ներգործութիւն քրիստոսի. և զաստուածածինն մարդածին: - 542

**ԲՃԽԸ** - Ասեն բժիշկք թէ, *բճխը* ոսկր է մարդոյն. ջլօք պնտեալ և կապեալ ի մի մարմին. և է՛ այսպէս: - 243. Եւ ութն ոսկր կուրծքն. որ լինի *բճխը* ոսկր: - 243. Որ լինի բովանդակ կեանքն յոքայ *բճխը* ամ: - 327

**ԲՃԾԲ** - Բաց յայսցանէ *բճծբ* գլուխ ոսկի տուփ խնկով: - 359

**ԲՃՔՆ** - Եւ *բճքն* որ յեփեսոս ժողովեցան ընդ դէմ նեստորի չարափառի և մարդադաւանի: - 547

**ԲՉ** - Ի յադամայ մինչ ի ծնունդն քրիստոսի՝ է՛ ըստ եպիփանու *բչ* ամ: - 451

**ԲՌ** - Եւ տէրն նշանակեաց **իռ**. **ժ** զգայարանացս **բ** *բռ:* - 404

**Գ** - 333

**ԳԺ** - Իսկ ամիսն որ է՛ *գժ*, տասն զգայութեամբ մեր մտօք և բանիւ և գործով մեղանչեմք: - 683

**ԳՃ** - Երկայն՝ *գճ* կանգուն. և լայն՝ **ծ**. և բարձր՝ **լ**: - 293. Կամ զի աքիմելէք *գճ* քահանայիւք սպանաւ ի սաւուղայ. և աբիաթար փախեաւ առ դաւիթ և ընդ նմա՛ էր զամենայն աւուրս թագաւորութեան նորա. և յանուանէ զնա՛ յիշէ: - 427. Ասեն թէ՝ **ռ** կին էր սողոմոնի. **է ճ** տիկնայք, և *գ ճ* հարճք. և նոցա **ռ** պահապան. իսկ ի փորձելն խաբեաց զհազար կանայսն. և ի յարանցն մին ո՛չ խաբեցաւ. այս առասպե՛լ է: - 440. Եւ *գճ* ամ աւելի՝ բազում ազգ Ֆռանկաց ո՛չ հնազանդեցան չար ժողովոյն քաղկեդոնի: - 547

**ԳՃԽԸ** - Եւ ջիլքն բաժանին *գճխը* թուով: - 244

**ԳՃԿԵ** - Թէոդորոս անտիոքայ. *գճկե* եպիսկոպոսունք: - 544

**ԳՌ** - Ուղտք *գռ:* - 321. Բովանդակ անցեալքն ի հանդէս՝ **զճռ** էին. որ է՛ **կ** բիւր. և *գռ* և **ոճ**: - 378. Եօթնժ, *գռ* առակս և **եռ** օրհնութիւնս ասի սողոմոնի բովանդակն: - 441. Եւ ոմանք *գռ* գիրք ասեն որպէս առակն և ժողովօղն. և **եռ** օրհնութիւնս որպէս երգ երգոցն. որպէս դաւիթ **ճճ** սաղմոսն: - 441

**ԳՌ ԵՒ ՋՃ** - Նաև վերակացուք նոցա *գռ և զճ:* - 440

**ԳՌՂՋԹ** - Որ լինի բովանդակն մինչև յելսն եգիպտոսի, *գռղճք* ամ ըստ եօթանասնիցն: - 337

**Դ** - 224

**Դ ԵՒ ԿԷՍ** - Ա՛րդ՝ շաբաթի գիշերն և տիւն **իդ** ժամ. և **զ** ժամ ի կիրակէէն մինչ ի մէջ գիշերն. որ լինի **լ** ժամ. իսկ հոգին *դ* ժամ և *կէս* նախ իջեալ ի դժոխս որ լինի **լգ** ժամ և կէս: - 516

**ԴԷ** - Տասն ամն մանկութեան է. և **ի**՝ պատանեակ զինուորութեան. և **իը**՝ երիտասարդութեան որ է՛ *դէ:* - 343

**ԴԺ** - Եւ **խ** ամն է՛ *դժ*. այսինքն մինչ ի կատարումն չորեքնիւթեայ կենցաղոյս: - 682

**ԴՁ** - ...զմարգարէից *դձ* հարցն, և զյովհաննու *դձ* հարցն... - 637. Եւ զղևոնդեանց մանկունքն *դձ*, սարկաւագ վարդապետն որ ի հաղբատ: - 638

**ԴՃ** - Նաև յեգիպտոս *դճ* ամ խոստացաւ ծառայութեան. և զերեսուն ամն յաւել վասն մեղաց ժողովրդեանն: - 292. Երկրորդ՝ զի ծանօթք էին *դճ* ամաւ և ատեցին: - 335. Երրորդ՝ ի լսելոյ. որպէս զաւետիսն աբրահամու լուաւ յետ *դճ* ամի լինիլ: - 336. Զի յորմէ հետէ խոստացաւ աստուած զերկիրն՝ աբրահամու, յետ *դճ* ամի ժառանգեցին զնա՛: - 351

**ԴՃԼ** - Բոլորն ամենայն *դճլ* ա՛մ է յաւետեացն աբրահամու մինչև յելսն յեգիպտոսէ՛. այլ զերկու **ճե** ամն հարքն յերկրին քանանու բնակեցան. և **զք ճիե** ամն որդիքն յեգիպտոս կացին. - 337

**ԴՃՁ** - Ժողովին ի մովսիսէ՛ և յելիցն յեգիպտոսէ մինչև ցշինուած տաճարին ամք *դճձ:* - 452

**ԴՌ** - Խաշինքն բիւր մի և *դռ:* - 326. Եւ ըստ հրէից և շամրտացւոց՝ *դռ* ամ: - 451

**ԴՌՊԹ** - Յադամայ մինչև յելսն յեգիպտոսէ են ամք *դռպք:* - 337

**Ե** - 143

**Ե ԲԻՒՐ** - Եւ ***ե բիւր*** հաւատացեալքն և այլքն: - 303. Կիւրոս յառաջին ամի թագաւորութեանն իւրոյ՝ արձակեաց ***ե բիւր*** զգերիսն յէմ, սաղմանասար իշխանաւն. զի շինեսցեն զտաճարն: - 448

**ԵԵՐՈՐԴ** - Առաջին պատճառ, զի երկինքն է պարզ մարմին. զի ո՛չ է ի չորից տարերց. այլ ***եերորդ*** էութիւն է: - 182. Եւ զայս գիտել պարտ է. զի մեծն Ներսէս զիաստատութիւնն՝ արփի ասէ և եթեր կոչէ. զոր արտաքինքն ***եերորդ*** տարր ասացին որ ո՛չ երևի մեզ: - 184. Այսպէս և հոմանուն է եթերն. այսինքն ***եերորդ*** էութիւնն, և տարրական հուրն: - 184. Ոմանք ասեն թէ ***եերորդ*** էութիւն են արտաքոյ չորից տարերաց ըստ արիստոտէլի: - 188. Այլ ***եերորդ*** էութիւնն է պարզ և հաւասար. առաւել և նուազ ո՛չ ընդունի: - 188. Ի ***եերորդումն*** արարչին աստուծոյ ատելիք: - 210. Եւ ***եերորդ***՝ ո՛չ ևս թզենեաւ՝ այսինքն դառն վարուք ստուերանալ. զի տերև թզենւոյն դա՛ռն է և փշոտ ըստ մեղացն առակի: - 281. Վասն ***եերորդին*** զի զանդրանկութեան օրհնութիւնն ընկալաւ որպէս յակոբ զեսաւայն: - 286. Եւ էր յազգէն եսաւայ ի կնոջէն բասեմաթայ՝ դստեր իսմայէլի. և ***եերորդ*** ծնունդ էր յաբրահամէ: - 320. Եւ սեփովրա դուստր էր ռագուէլի, և քոյր յոթորայ. յազգէ աբրահամու ***ե երորդ*** այսպէս: - 330. Չորրորդ՝ և բովանդակն **ե** կանգուն, ցուցանէ թէ ո՛չ են նոքա ի չորից տարերց. այլ ***եերորդ*** էութիւն են. որպէս ասեն ոմանք. անմարմին անփոփոխ և անմահ. որ ո՛չ է տարրականացս: - 344. Իսկ **ե** կանգուն և կէսն. զի գալուստն քրիստոսի և փրկական խաչն և եկեղեցի՝ է՛ ի ***եերորդ*** դարն և կէսն երևեալ ի մուտ **զռ** ամին: - 345. զգլուխն ***ե երորդ*** մասամբն ի յետ դարձուցանել որ է՛ տուգանք **ե** զգայարանացն որ մոռացաւ և ո՛չ զգաց զօրէնս աստուծոյ: - 358. Եւ ***ե երորդն*** յորոյ վերայ խնկաղացն և նուիրանոցն և ճաշակն: - 364. Որ և այժմ յոյնք և ասորիք պենտակոստ կոչեն որ թարգմանի ***ե երորդ*** և ո՛չ **է** երորդ: - 524. Ի թագաւորութեանն յուստիանոսի եղև դարձեալ ***ե երորդ*** ժողով ի կոստանդնուպօլիս: - 543. Եւ առաջին ծնօղն ուստի յառաջ եկին **դ** ծնունդքն. և ***ե երորդն*** որ լինի խնամութիւն. լինի այս **զ** ազգ: - 611. Եւ աստ վճարեցաւ արիւնն և ազգն. յետ նոցա ի ***ե երորդ*** ծնունդն խնամութիւն լինի: - 612. Եւ ***ե երորդն*** առ մովսէս մեծ եղև զօրութիւնն: - 629

**ԵԺԱՆ** - Երկրորդ՝ զվեց կենդանակերպսն կոխեաց, որ էր ***եժան*** աւուր ճանապարհ ի կուսէն ի խոյն ընթացեալ: - 490

**ԵՃ** - Եւ յետ ***եճ*** և **իե** ամաց ջրհեղեղին էր սկիզբն շինուածոյ ամբարտակին ի աշխարհին բաբելօնի ի դաշտին քաղանէ: - 297. Լուծք եզանց ***եճ:*** - 321. Էշք մատակ արօտականք ***եճ:*** - 321. Ապա թէ ոչ՝ ի միում աւուրն ***եճ*** և **կռ** կամէր կոտորել այսու համարով. և ոչ ինչ մնայր ի ժողովրդեանն: - 435. Բարոյականն՝ նոյի, որ ի բարուց վարդապետեալ բնակէր ի յանապատ և պահէր զկուսութիւն ***եճ*** ամ: - 528

**ԵՃՌ** - Ուստի յա՛յտ է, զի ցեղն իէլի **ըճռ** էին. և ցեղն յուդայ ***եճռ***. և ցեղն քահանայից և բենիամենի ո՛չ անկաւ ի թիւ: - 434

**ԵՌ** - Եօթնևժ, **զռ** առակս և ***եռ*** օրհնութիւնս ասի սողոմոնի բովանդակն: - 441. Եւ ոմանք **զռ** գիրք ասեն որպէս առակն և ժողովօղն. և ***եռ*** օրհնութիւնս որպէս երգ երգոցն. որպէս դաւիթ **ճծ** սաղմոսն: - 441

**ԵՌՔՃ** - Զի եօթանունքն ***եռքճ*** պակաս **բ** թիւ գրեն. և այլք **եռշ** ամ. որ է՛ **ե** դար և կէս: - 345

**ԵՌՇ** - Զի եօթանունքն **եռքճ** պակաս **բ** թիւ գրեն. և այլք ***եռշ*** ամ. որ է՛ **ե** դար և կէս: - 345

**ԵՐԵՍՆԵՐՈՐԴ** - 16

**ԵՐԵՍՈՒՆ** - Եւ է՛ առաջին և վերջին մոլորակացն երևակն. զոր պարսիկք զօհալ կոչեն. ցուրտ է և չոր. **բ** ամ և կէս յամէ ի կենդանակերպն. և ***յերեսուն*** ամն վճարէ՛ զամենայն: - 189. Եւ արա՛ ***զերեսուն*** մասն մի ժամ, և զերկոտասան ժամն մի օր. և կոչի այս՝ իննևժերեկի ամ. որ աւելու ի լուսինն մի օր: - 191. Եւ արա՛ ***զերեսուն*** մասն ժամ մի. և զերկոտասան ժամն օր մի: - 191-192. ***Երեսուն*** Մեք ո՞րպէս պատկեր և նման եմք: - 228. Եւ անտի մինչև ***զերեսուն*** ամն՝ զարիականն: - 267. ***Երեսուն*** օր սուգն: - 285. Նաև յեգիպտպոս **դճ** ամ խոստացաւ ծառայութեան. և ***զերեսուն*** ամն յաւել վասն մեղաց ժողովրդեանն: - 292. Իսկ ***երեսունն***, մինչ ի մեծն թէոդոս. որ եբարձ զամենայն մեհեանս կռոցն և բարձրացաւ սուրբ խաչն ի գլուխս գմբեթարդ սուրբ եկեղեցեաց: - 294. ***Երեսուն*** օրն աւուրք է լուսնին որ փոխէ զտխրութիւն և ի լոյս գայ: - 411. Արդ սուգն օր ընդ տարւոյ ***երեսուն*** օր էր: - 411. Երրորդ՝ զի ***երեսունն*** **գ ժ** է. զի **ժ** զգայարանքն մարմնոյ և հոգոյ և մտաց՝ քակտի. վասն որոյ **լ** օր սգան: - 411. Եօթնևժ, ***երեսունքն*** թուով յետ է աւուրցն զարդարեցան: - 422. Եւ դարձեալ՝ յետ աւելի քան ***զերեսուն*** ամ ի զերորդ ամին եզեկիայ արքայի յուդայ՝ ել սաղմանասար արքայ ասորեստանեայց ի վերայ սամարիայ. - 447. Զի մինչ ***յերեսուն*** ամն շարժի աճիլ. և յայնմ հետէ ի նուազիլ: - 479-480. Եօթներորդ՝

ասէ աւետարանն թէ՝ «յիսուս էր ամաց իբրև *երեսնից*. երկեալ ի մկրտութիւն»: - 484. ...իսկ մարմինն *յերեսուն* ժամուն ի գերեզմանէն յարեաւ. զի երեսնամեայ մկրտեցաւ մարմնով և ել ի ջրոյն: - 516

**ԵՐԵՍՈՒՆԵՒԱ** - 2

**ԵՐԵՍՈՒՆԵՒԲ** - 10

**ԵՐԵՍՈՒՆԵՒԳ** - 8

**ԵՐԵՍՈՒՆԵՒԴ** - 8

**ԵՐԵՍՈՒՆԵՒԵ** - 8

**ԵՐԵՍՈՒՆԵՒԶ** - 5

**ԵՐԵՍՈՒՆԵՒԷ** - 7

**ԵՐԵՍՈՒՆԵՒԸ** - 6

**ԵՐԵՍՈՒՆԵՒԹ** - 6

**ԵՐԵՍՈՒՆԵՒՄԻ** - 7

**ԵՐԵՔ կմ ԵՐԻՍ +** Զի ի վերայ մշտնջենաւորացն բացորոշակի *յերեք* ժամանակս...: - 9. Այլ պատճառս այս է *երեքկին:* - 9. Յեղելոց իրաց կարե՛մք ցուցանել թէ է՛ և գո՛յ աստուած՝ *երեք* եղանակաւ: - 25. Երրորդ՝ հրէայքն ո՛չ խոստովանին *երեք* անձինք և մի բնութիւն: - 34. Ա՛րդ կատարեալ է աստուածութիւնն *երիս* անձինս և մի աստուածութիւն. լոյ՛ս և լո՛յս և լո՛յս. և մի՛ լոյս. որպէս մի աստուած...: - 51. Տե՛ս՝ զի միովն բառնի երկուքն. և ասեմք թէ *երեքն:* - 51. Պատասխանեմք թէ ցո՛յց մեզ սոյնպէս աստուած *երեք* անձինք ի մի բնութիւն. և ես ցուցանեմ զմինն ծնունդ և զմիւսն ո՛չ ծնունդ: - 53. Իսկ այլ բազում օրինակ երրորդութեանն ասացաւ ի վերոյ *յերեք* համարն: - 53. Իսկ արիոսի՝ զի նա միայն զհա՛յր ասէր աստուած. զայս ասեմք թէ, ո՛չ են մեզ *երեք* աստուածք՝ այլ մի աստուած և *երեք* անձինք. և երկուքն ի մի և ի նոյն էութենէն յառաջ եկեալ. կամօք մի և զօրութեամբ մի: - 54. Այսպէս և աստուածութիւն մի տեսանեմք և անձինք *երեք:* - 54. Դարձեալ հարցանեն թէ՝ զիա՞րդ ասէք *երեք* և մի բնութիւն. զի գ միոյ բնութեանն ո՛չ հաղորդի. այլ մինն հաղորդի միոյ բնութեանն, և երկուքն երկուքին. և *երեքն երեքին*. զի որքան է թիւն, այնքան բնութեան քըւակից լինի: - 54. Եւ այլ անուն՝ այլոյ բնութեան ո՛չ քըւակցի. որպէս ո՛չ մի երկուին և կամ՝ երկուքն *երեքին:* - 54. Ապա ուրեմն զի դուք գ ասէք՝ հայր և որդի և հոգի, ըստ քըւոյն և *երեք* բնութեան հաղորդին և ո՛չ միոյն: - 54. Տասներորդ՝ թէ բանն աստուծոյ և հոգին արարա՛ծ են և այլ բնութիւն, յայնժամ ո՛չ լինի մի աստուած. այլ բազում և զանազան աստուած. զի յոլովութիւնն յոլովութիւն է աստուծոյ. որպէս թէ *երեք* բնութիւնն *երեք* աստուած, և երկու բնութիւնն երկու աստուած: - 56. Առ եօթներորդն ասեմք, եթէ՝ մատն աստուծոյ երբեմն նշանակէ զերրորդութիւն անձանցն. ըստ այնմ, «ո՛ կշռէ *երիւք* մատամբ զծանրութիւն երկրի»: - 62. Դարձեալ՝ հոգին ելանէ իբրև զշաղկապ և միաւորիչ. մի իբրև զմէջ որ շաղկապէ՛ զերկու եզերն. և միւս իբրև *երեք*՝ և եզր: - 64. Նաև ի կանոն *երից* սուրբ ժողովոցն՝ ընդ բանիւ արգելեալք կան նոքա՝ որ ա՛յլ կերպիւ քարոզեն և այլ կերպիւ ուսուցանեն քան զոր նոքա ուսուցանեն: - 64. Որպէս մի էութիւն է խնծորն. և ունի *երեք* յատկութիւնս որակաց. զհամն, և զհոտն, և զգոյնն ընդ ծևոյն: - 74. Յաղագս *երից* պատճառաց ուրանան զմիաւորութիւնն ի մարդեղութիւն բանին: - 76. Զոր յայսմանէ երևի *երեք* եղանակ միաւորութեանն զանազանապէս: - 77. Զոր նախ յեկեղեցական քահանայապետութեան *երեք* գլուխն ասէ, «Ամենակատար և անշփոթ մարդանալովն՝ ըստ մեզ մարդասիրապէս ի բնութիւնս մեր տեսակացեալ. և առ բաժանականս մեր անայլայլաբար ըստ բնութեան միոյ յառաջ եկեալ»: - 83. Եւ որպէս ասէ փիլիսոփայն՝ *երեք* են յասացելոցդ իսկապէս եղանակք բաժանման. այսինքն Որպէս սեռ ի տեսակս. Որպէս բոլոր ի մասունս. Որպէս համանուն ծայն: - 89. Բե՛ր յարմարեսցուք այժմ *զերիս* եղանակս սոցա՝ միաւորութեան փրկչին ուղղակի իմն տեսութեամբ. որ ո՛չ ախորժելի է այլոց: - 89. Ի *յերից* սոցա զո՞րն ասէք մի քրիստոս. զաստուածային անձն ըստ ինքեա՞ն, եթէ զաստուածային բնութիւնն: - 89. Իսկ թէ զաստուածայինն բնութիւն, ահա՛ զերրորդութիւնն ասէք մարմնացեալ. զի բնութիւնն հաւասար է *երից* անձանցն: - 89. Ինն դասք են հրեշտակաց. և *յերիս* երեակս որոշեալ. և այլք եօթն ասեն: - 102. Դարձեալ՝ ա՛յն է հասարակն՝ որ մի՛ է *երիցն*. և երկուքն ո՛չ աւելի. և մինն ո՛չ ունի պակաս: - 104. Իսկ յատուկ այլ է *երիցն*. և երկուքն աւելի՛. և նըւազ քան զմինն: - 104. Այսպէս և կոչումն *երից* անձանցն. հա՛յր. որդի՛. հոգի՛: - 105. Զորօրինակ *երեք* լոյս լապտերաց միաւորեալ՝ և որոշմամբ յատկացեալ: - 106. Չորրորդ՝ զի *երեքն* զնոյն բնութիւն ունին *զերիցն*. նոյնպէս Երրորդութիւնն սուրբ նո՛յն է բնութեամբ: - 107. Իսկ Երրորդութիւն կոչեմք՝ բաժանելով *յերեք* քըւոյն: - 107. Զի ո՛չ է որպէս պետրոս՝ և պօղոս՝ և յօհաննէս՝ *երեք* մարդ և մի բնութիւն. այլ մի է

անհատութեամբ. ունելով *երիս* յատկութիւնս դիմաց: - 107. Երկրորդ՝ Երրորդութիւնն ցուցանէ զհամագոյութիւն *երիցն*. զի ո՛չ է առաջին և վերջին ի նոսա. այլ՝ զո՛յգ և համանգամայն: - 107-108. Իսկ *երեք* թիւն՝ մի զկնի միոյ: - 108. Երրորդ՝ Երրորդութիւնն ցուցանէ *երիցն* զմի հաւասարակ բնութիւն. որպէս ասեմք մարդ և մարդկութիւն. ծի և ձիութիւն. ընդդէմ արիոսի որ ասէ՝ *երեք* թիւն ունի *երեք* բնութիւն, ասեմք *երից* անձանցն մի բնութիւն: - 108. Երկրորդ՝ *յերեք* թիւն մինն պակաս ունի քան զերկուքն. և երկուքն աւելի քան զմինն: - 108. Երրորդ՝ զի մին թիւն անկատա՛ր է քան զերկուքն. և երկուքն քան *զերեքն:* - 108. Չորրորդ՝ *երեք* թիւն փոփոխմամբ է. յորժամ ասեմք մի և **բ** և **գ**, փոխեցաւ ի միոյն և եղև երկու. և փոխեցաւ յերկուցն և եղև **գ**: - 108. Այլ բաժանի էն նախ ի *յերիս:* - 111. Վասն *երից:* - 111. Վասն *երից:* - 111. Ո՛րդ՝ *երեքն* ո՛չ յարմարին աստուծոյ. զի ո՛չ հնանայ և ո՛չ ծերանայ. և ամք նորա ո՛չ պակասին ըստ մարգարէին, «դու նոյն ինքն ես և ամք քո ո՛չ պակասին»: - 114. Եւ այս վասն *երեք* պատճառի: - 115. Յաւիտեանս Յաւիտենից. որ է՛ սկզբնական և յարաձգական. զի նա պարունակէ *զերեք* յաւիտեանն. որ ո՛չ սկիզբն ունի և ո՛չ կատարած: - 116. Նախ *յերիս:* - 116. Երիւք: - 117. Եւ այս վասն *երեք* պատճառի: - 120. Այսքան յաղագս *երից* անձանցն: - 125. Ասեմք եթէ՝ ինն դասք *յերիս* երրեակս որոշեալ թըւոց. որոց Առաջինն է Աթոռք. Քերոբէք. և Սերոբէք: - 134. Իսկ *յերիս* երրեակս թըւեալ՝ բազմազա՛ն է իմանալի: - 134. Իններորդ՝ *յերիս* որոշեալ դասս. որպէս սերոբէք՝ քերոբէք՝ և աթոռք: - 134. Ասեմք թէ վասն *երեք* պատճառի: - 137. Երրորդ պատճառ. զի զօրութիւնք միջին են դասակարգեալ բոլորից. ի նոցունց դասուց և *երիցն:* - 137. Այլ ի վերայ այսմ հարցաքննելի՛ է *երիս* իրս: - 140. Զի գիտեմք զդոսա ինն գոլ դասս ըստ սրբոյն դիոնիսեայ. և *երիս* երրեակս որոշեալ ի դէմս Երրորդութեանն: - 141. Իսկ որ ի յայլս՝ որոշի *յերիս*. այսինքն ի վերնագոյնն, որպէս յաստուած՝ ի հրեշտակս և ի սուրբս: - 143. Վասն զի ի դնն *երիս* իրս նկատելի է. այսինքն բնութիւնն՝ գործն՝ և մեղքն: - 146. ...ի դասէն ի չորիցն *երեք* բաժինն ի վայր անկաւ. և մինն անդ մնաց և յիշխանութեանց դասն խառնեցաւ: - 148. Զի **գ** գլխոյն կրկին է եղջիւր. որ է հպարտութիւն՝ նախանձ՝ և բարկութիւն. զի սոքօք յաջ և յահեակ պատերազմի. և առ ընտիրս և առ խոտանս գտանին բազում ուրեք *երեքին* ախտքս այսոքիկ: 151-152. Իսկ բանսարկուն սատիէլ՝ զմի *յերից* մասանցն զչորրորդն քարշեաց ընդ ինքեան և կործանեաց յերկիր...: - 152. Ասեն ոմանք թէ փորձութիւնն *երեք* է. այսինքն ի մարդկանէ՛, ի սատանայէ՛, և յաստուծոյ: - 160. Ասելի է թէ՝ կոյսն և ապականեալն են հակակայք ըստ ունակութեան և պակասութեան. որպէս երեսք և կուրութիւն. որոց ի լինիլն համահետևին *երեքին* սոքա. այսինքն ժամանակն, և մասն, և նոյն: - 165. Նա՛խ՝ նշանակէ զաստուածութիւնն *երեք* անձինք ի միում բնութեան: - 178. Երկրորդ՝ *յերից* գծից բաղկանայ. որպէս մարդ ի հոգւոյ և ի մարմնոյ և ի մտաց: - 178. Եւ բոլորակ ձևն պա՛րզ է քան զամենայն ձև. զի եռանկիւնին *յերից* գծից բաղկանայ, և քառանկիւնին ի քառից. նոյնպէս և այլքն: - 182. Ո՛րդ՝ բաժանի երկինքն *յերիս*. այսինքն ի բնականն. յատկականն և ի նմանականն: - 183. Իսկ սուրբն եփրեմ ասէ, մետասան թիւ գտանի ի մէջ *երից* աւուրցն՝ ստեղծման լուսնին: - 191. Եւ սոքա *երեք* եղանակքս օրինակ են այսմ կենցաղոյս. և ձմեռն հանդերձելոյն որպէս ասացաւ: - 198. Եւ նախ ի չորս դէմս բաժանին ամենայն հողմունք. և իւրաքանչիւրքն դարձեալ *յերիս* բաժանին. որ լինի բովանդակն **բժ**ան: - 205. *Երեք* յարևելից, և *երեք* յարևմտից: - 205. *Երեք* ի հարաւոյ, և **գ** ի հիւսիսոյ: - 205. Արևելայինքն որք կոչին Եւրոսք, բաժանին *յերիս:* - 205. Նախ՝ զի թէպէտ զջուր կամ զհող միայն յիշէ աստուած. այլ *երեքն* ընդ միոյն առին հրաման. որպէս այն որ ասէ, «՚Ի սկզբանէ արար աստուած զերկինս և զերկիր»: - 214. Վասն *երեք* պատճառի: - 217. Նախ՝ որպէս ասացաւ ի վերոյ՝ *երեք* տեսութիւն սրբոցն է **գ** իրին. այսինքն զգայութեան. երևակայութեան. և իմացման: - 221. Երկրորդ՝ զի ունի *զերեք* յատկութիւնս երկնից. որ է՛ բարձրութիւն. լուսաւորութիւն. և անմահութիւն: - 221. *Յերիս*՝ զտարերս. և *յերիս* զայլնոսիկ որք են ի ներքոյ տարերց: - 227. Նմանապէս և յայլ *երիս* յառաջնումն աւուր արար զլոյսն ժամանակեայ. զարեգակն և զլուսին և զաստեղս ի վերնագոյն տարրէ՛ հրոյն: - 227. *Երեքն* ի սոցանէ գռեհիկք են. որ է շօշափելիք. ճաշակելիք. հոտոտելիք. զի խառնելովն ի զգալի իրն ճանաչեն: - 235. Դարձեալ ոմանք ասեն զմին ձեռքն *երեք* անդամ. այս է՝ մինչ ի խաղալիկն մին. և մինչ յարմունկն **բ**. և մինչ ի կուռն *երեք:* - 241. Այլ *երեքն* ի սոցանէ մեծամեծք են: - 244. Դարձեալ զօրութիւնք հոգւոյն բաժանին երրակի ըստ *երից* ներգործութեանցն. որ է՛ կենդանանալն. զգալն. և բանաւորիլն: - 249. Դարձեալ խորհուրդ մարդոյն ճանաչի *յերից*. այսինքն կամ ի կերպէ՛ և յօրինակէ խօսիցն և ձայնին: - 250. Այլ և ի սկիզբն գրոցս ցուցաւ *յերեք* համարն: - 252. Եւ այս ո՛չ ժամանակաւ յետոյ ըստ *երից* պատճառաց: - 254. Եւ այս վասն *երեք* պատճառի: - 256. Այսպէս և սոքա գոն ի մարդն, այլ մի է հոգի մարդոյ և ո՛չ *երեք:* - 259. Այսպէս մի է էութիւն հոգւոյն ըստ ինքեան, և *յերիս*

բաժանի ըստ ներգործութեան: - 259. Եւ որպէս ասէ արիստոտէլ *զերեք* թիւն՝ որ մի ունի զէութիւն իւր. այլ երկուքն և մինն մասունք են նորա: - 259. Իսկ տնկականն ունի *երիս* զօրութիւնս. այսինքն զկերակրականն որ է՛ սննդականն. զաճողականն և զծննդականն: - 262. Վասն որոյ ըստ թուոյ զօրութեան իւրոյ որ է՛ սնանիլն աճիլն և ծնանելն, *յերեք* ամիսս ծնանի զպտուղս. որպէս ցորեան և այլքն: - 262. Նա՛և այսու թըւով տունկք *երից* ամաց տան զպտուղս: - 262. Այսպէս և կենդանիք ոմանք *երից* ամաց յղանան և ծնանին: - 262. Վասն որոյ բոյսք առ հասարակ *յերեք* ամիսս ծնանին, և ի չորրորդումն կատարին յաւելեալ ի վերայ զկազմողական զօրութիւնն: - 262. Նմանապէս ծառք և տունկք՝ որ յետ *երից* ամաց կամ չորից ցուցանեն զպտուղս՝ յայսմ թըւոյ ո՛չ ելանեն արտաքս: - 263. Եւ աւելի և պակասն է ի նոյն թիւն չորից և *երից*. եթէ աւուրց և եթէ ժամուց մինչև ի ճանճ և ի մժեխ: - 263. Դարձեալ մարմինն է ի **գ** տարերց. և ունի *երիս* տեսակս ոգւոց: - 263. Դարձել **դ** տարր, և տնկականն և զգայականն, և *երեք* մասունք հոգւոյն բան ցասումն և ցանկութիւն, որ լինի **թ**: - 264. Դարձեալ **թ** թիւն է երիցս երրեակ. և *երեք* թիւն է կատարեալ. ունելով առաջին միջին և վերջին. ի նմանութիւն **թ** դասուց հրեշտակաց: - 264. Իսկ մարդոյն խորհուրդն ըստ չորից տարերց և *երից* զօրութեանց տնկականին եօթեամբ կատարի. թիւ շնորհալի և մշտակույս ըստ աթենայ. զի ոչ ծնեալ լինի և ո՛չ զայլս ծնանի: - 264. Եւ տե՛ս, զի **բ բ** են յաւելեալ թիւ ի չորեքտասան, *յերեք* հասակս փոփոխելով: - 265. Յեղանակս գարնան, և յառաւօտուն մինչև *յերեք* ժամս, և հիւթոյ արեան, և մանկութեան հասակն ի տղայութենէ ծննդեան և աճման՝ ունին զնմանութիւն օդոյ ջերմ և գէջ գոլով: - 266. Երկրորդ՝ վասն ժամանակին. զի մարդն յինն ամիսն կատարէ զանդամս, և արջն *երեք:* - 267. Եւ իմաստութիւնս այս *երիւր* տարրորշի յայլ *երիցն:* - 269. Գիտելի՛ է, զի *յերից* է պատկերին գեղեցկութիւն որով նմանի ի նախատիպն: - 271. Դարձեալ՝ ըստ *երից* բնական զօրութեանց հոգւոյն պատկեր եմք աստուծոյ. այլ սրբութեամբ արդարութեամբ և առաքինութեամբ նման եմք աստուծոյ: - 273. Իսկ նման, զի մի է *երիցն* էութիւն և բնութիւն. այնու նմա՛ն եմք աստուծոյ: - 273. Գիտելի է, զի որպիսութիւն կենաց մարդոյս տրամատի *յերիս*. ըստ *երից* փոփոխմանց մարդոյն. այսինքն նախ քան զմեղքն. և յետ մեղացն. և յետ մահուն: - 278. Նաև ըստ *երից* դրութեանց տեղեացն. որ է՛ դրախտն. և աշխարհս այս. և հանդերձեալն: - 278. Ա՛րդ՝ անկման աստիճան առաջին էր հեշտութիւնն. որ ունի յինքեան *զերեք* կարգն: - 280. Տասներկու՝ Բաղդատութիւն *երից* ծնողաց և ծննդոց. այսինքն սառայի, և մարիամու սրբոյն, և եկեղեցւոյ: - 283. Եւ զի *յերիս* տեղիս պատերազմին դևք: - 285. *Երեք* շնորհօք հաւասարք են մելքիսեդեկ և աբրահամ. այսինքն քահանայութեամբ, թագաւորութեամբ, և մարգարէութեամբ: - 300. Իսկ զի հրամայէ՛ *երից* աւուրց ճանապարհ տանել, զի մի՛ ապշեալ ինչ կարծեսցի: - 304. Ուստի յա՛յտ է *յերից* արանցն երևելոյն առ կաղնեաւն մամբրէի: - 305. Եօթնժ, որպէս իսահակ արձակեցաւ յետ *երից* աւուրց, զի ի կամս հօրն յօրէ յայնմանէ էր մեռեալ՝ ուստի սկիզբն եղև ճանապարհին: - 306. Գիտելի է, զի ամենայն պատարագ *յերեք* դէմս որոշի. այսինքն մատուցօղն, և ընդունօղն և պատարագն: - 306. Հինգերորդ՝ աւետեօք *երից* արանցն ծնաւ սառա. և աւետեօք հրեշտակին մարիամ. և աւետեօք մարգարէին եկեղեցի: - 307. Յաղագս *երից* որդւոց է լալ մօրն հռաքէլի: - 312. Եւ այսպէս մխիթարեցաւ յայս *երից* վշտացս տրտմութեանց: - 313. *Երիւր:* - 339. Հինգերորդ, որ ասաց *զերեք* ձևն, երկայն և լայն և բարձր. և ո՛չ զխորն որ է՛ թանձրութիւն: - 344. Նշանակէ՛ ըստ փիլոնի, զի անմարմինքն մինչև *յերեքն* հասանին. որպէս երկրաչափքն գրեն նիշ՝ գիծ՝ երևոյթ. ա՛յս է իմանալեացն չափ: - 344. *Երեք* իրք: - 346. Իսկ ասելն «ածէ՛ զանիրաւութիւն հարց յորդիս *յերեք* և ի **դ** ազգս» որ է՛ է ազգ: - 351. Ջսոյն և ամովս ասէ. «վասն *երից* տնօրէնութեանց, և չորիցն ո՛չ դարձայց ի նոցանէ»: - 351. Երբ *զերեք* հասակի մեղսն ներէ աստուած՝ և թէ ի չորրորդն ո՛չ զղջանայ, յայնժամ պատուհասէ՛: - 351. Այլ գլխաւորն *երեք* է: - 352. Ջայս ասէ մեծն ներսէս *երեք* քառասունք մովսէսի ըստ թուոյ ամաց նորին: - 353. և Ալոջ, և Որոջ. ունելով զկէս ամն աւելի քան *զերեք* ամն ի ծննդենէն մինչև ի խաչն: - 361. Որ նշանակէ ի մեզ *զերեք* մասանց թիւրիլն. այսինքն բանից, ցասման, և ցանկութեան հինգ զգայարանօք: - 367. Վասն *երից:* - 370. Եւ յաղագս *երից* պատճառաց **ը** օր տօնեմք գալստեան սուրբ հոգւոյն: - 373. Այլ ես ասեմ, եթէ ամենայն տուրք բաժանի *յերեք:* - 375. Եւ նոյն այս որ շահ և գլուխ խնդրի, բաժանի *յերեք:* - 375. *Երեք* ազգ ծածկոց սրբութեանց: - 379. Եւ *երեք* դաս է տրտունջն. այսինքն Կարօտանաց. և Փորձանաց. և Չարաչար: - 381. *Երեք* ջուր սրբութեանն զի՞նչ է ի նորս: - 384. Հինգերորդ՝ թէ *յերեք* հասակս մեր ոչ արդարանամք. և ո՛չ յէ հասակին արդարանամք յորում լուծեալ ծանրանայ մարմինն: - 384. Եւ *երեք* է ներելի մեղք: - 385. Դարձեալ գիտելի է, զի *յերիս* նշանաւոր տեղիս եղև պատերազմ նոցա: - 393. Երկրորդ՝ ընդ *երից* գոյացութեանց մեր. աստ ընդ մարմնոյս. և ի մահն ընդ հոգւոյս. և ի յարութեանն

ընդ մտաց տեսութեանն հակառակին: - 394. Նոյնպէս *յերեք* տեղուջ ոգորի. յերկրի՝ զի հանցէ յերկնից. և յօդդ՝ զի արգելցէ. և ի յարութեանն՝ զի ընկեսցէ ի հուրն: - 394. Դարձեալ՝ *զերեք* տեսակ սիրոյն ցուցանէ. մարմնով և հոգւով և մտօք սիրել զաստուած: - 396. Եւ անէծքս այս ո՛չ հասին ի նա վասն *երից:* - 400. *Երե՛ք* է խտրութիւն: - 402. Թէպէտ ո՛չ կատարեմք զօրէնսն՝ ո՛չ եմք ընդ անիծիւք նորա վասն *երից:* - 403. Երրորդ՝ *երեք* է իմաստ գրոց. անհաս և դժուարահաս և դիւրահաս: - 406. *Երեք* նշանակաւ է օրհնելն զաստուած: - 406. Եւ *յերից* է յայտնի գոլն աստուծոյ: - 406. Ընդ իսահակայ *երեք:* - 412. Եօթնև**ժ**, Սատակումն մահուն. որ *յերից* զմինն խնդրեաց պատուհաս: - 413. Քսանև**թ**, Դարձ գերւոյն *երեք* անգամ: - 413. Երկրորդ՝ զի չարչարակից եղև մովսէսի. պահելով *զերեք* քառասունս ընդ նմա: - 414. Ի սորա *երեք* ամին իլիոն առաւ: - 420. ...*երիս* զօրութեամբ ի վերայ խաչին. որ է՛ ձայնիւն և մարմնովն և հոգւովն որ էջ ի դժոխս. կամ **գ** գոյացութեամբ. այսինքն աստուածութեանն և հոգւոյն և մարմնոյն: - 427. Վասն *երից:* - 427. Եօթն դաս պարուց էին. որոց *երեքն* բերանով երգէին. այսինքն նուագն և սրինգն և փողքն: - 431. Վասն է՞ր *յերից* պատուհասից զմինն խնդրեաց: - 434. Նա՛խ՝ զի **գ** ամ սովն, և **գ** ամիս սուրն՝ սաստիկ էր քան *զերեք* աւուր մահն: - 434. Եւ այն զի յառաւօտէն մինչ *յերեք* ժամն՝ **հռ** սատակեցաւ ըստ արդարութեան վճռին: - 435. Նա՛խ՝ նշանակէ՛ զսեղան խաչին քրիստոսի. որ *յերեք* ժամուն մինչև ի **զ** ժամն խաչեցաւ, և հաշտեցաւ աստուած: - 435. Դարձեալ, ժամանակն ունի մասունս *երիս*. և մշտնջենաւորն. և դարձեալ յաւիտենական է բանն. և ժամանակեայ մարմինն. և մշտնջենաւոր հոգին. և անքակտելի միութիւնն ցուցանէ մեզ զչորս թուոյն. և ամենայնիւ կատարեալ գոյացութեամբ: - 437-438. Եօթանասուներորդ, *յերիս* առաջս զօրօք յաղթեաց թշնամեաց. և տէրն մարմնով և հոգւով և աստուածութեամբն յաղթեաց: - 438. Իսկ պատճառելն թէ «նիստ *յերիրով* և ի բեթէլ»՝ փորձէ՛ զաշակերտն: - 445. Յեսու անէծ *զերիրով* և զշինօղս նորա. և անէծքն այն առնէր անզաւակ և վաղամահ: - 445. ...և *երեք* ամ պաշարեալ էառ զնա. և գերի վարեաց զթագաւորն ովսէէ որդի ելայ. և զ**ժ** ցեղն բովանդակ տարաւ յասորեստան: - 447. Դարձեալ՝ *յերիս* ժամանակս ազատեցան ի բաբիլօնէ՛. այսինքն կիւրոսիւ սաղմանասարաւ. դարեհիւ զօրաբաբէլ. արտաշէսիւ եզր դպիր և նէեմի: - 448. Դարձեալ՝ նշանակեն *զերիս* կոչմունս. մարգարէիւք և առաքելօք. և զվերջինն ի կատարածի հրեշտակօք: - 449. Դարձեալ՝ նշանակեն *զերիս* ազատութիւնս ի կռոց: - 449. Դարձեալ՝ նշանակէ՛ *զերիս* օրէնս. զԲանականն. զԳրեալն. և զԱւետարանն: - 449. *Երեք* գիրք Մակաբայեցւոց: Սաղմոսն: Սողոմոնի **ղ** գիրք: - 450. Որոց առաջին Յակոբայ: Երկու պետրոսի: *Երեք* յոհաննու: - 450. Դարձեալ գիտելի՛ է, զի հին կտակարանքն ամենայն՝ *յերիս* բաժանին: - 451. Եւ սաղմոն էառ զռահաբ իւր կին զոր *յերիրովէ՛:* - 452. *Երեք* տիւ և *երեք* գիշեր: - 455. Երկրորդ՝ *յերիցն* անձանց: - 457. Իսկ այլ վարդապետք ասեն թէ՝ արդարութիւնն աստուծոյ *երեք* կերպիւ առեալ լինի: - 458. Իսկ ի մօր կողմանէ՝ մարիամ էր ի քահանայից ցեղէն, զի մատթան քահանայն բնակէր ի բեթլէհէմ, և ունէր *երիս* դստերս: - 460. Եւ ունի *երիս* ներգործութիւնս: - 462. Ա՛րդ՝ սրբուհի կոյսն ի ողջոյն հրեշտակապետին *երիս* իրս արար: - 465. Եւ երեքեան ծնունդ քրիստոս՝ ըստ *երից* գոյացութեանցն որ ի քրիստոս. այսինքն աստուածութիւնն՝ մարմինն՝ և հոգին: - 471. Եւ ոմանք ըստ չորրորդ եղանակի ասեն. *երեքն* յառաջագոյն եղեալ, և չորրորդ ծնունդն փրկչին: - 471. Այլ *երիւք* տարբերութեամբք: - 472. Դարձեալ գիտելի է, զի օծեալն նշանակէ *երիս* դէմս. այսինքն զօծեալն և զօծումն և զօծօղն: - 475. Միաւորութիւնն սեռաբար տրամատի *յերիս*. ի յանշաղկապն և ի շաղկապեալն և ի շաղադրեալն: - 475. Ա՛րդ՝ անշաղկապ միաւորութիւնն բաժանի *յերիս* տեսակս: - 475. Իսկ միաւորութիւնն որ է շաղկապաւ, և սա՛ բաժանի *յերիս:* - 476. Իսկ շաղադրեալն միաւորութիւն՝ և սա՛ բաժանի *յերիս*. այսինքն ըստ դրութեան. ըստ ժողովման. ըստ կոչման: - 476. Տասներորդ՝ զի և ազգն հռօմայեցւոց մինչև ցայսօր յայտնապէս ի վեցն յունվարի *զերից* տօնից յիշատակս կատարեն: - 484. Այլ և գիտելի է, զի ամենայն պատարագ *յերեք* դէմս որոշի. որ է՛ մատուցօղն, և ընդունօղն, և պատարագն: - 491. Յանցումն ադամայ *երիս* վնաս էարկ ի բնութիւնս: - 491. Այս զանազանութիւն ի մէջ *երից* մահուանն. ադամայ, և քրիստոսի, և մեր մարդկայինս ազգի: - 496. Իսկ եկամուտ կիրքն բաժանի *յերիս* տեսակս: - 496. Երկոտասաներորդ՝ յա՛յտ է *յերից* իրաց թէ ապականացու ասելն՝ ակնարկէ՛ ի յապագայն իբր թէ ապականելի՛ է. որպէս ասեմք մահկանացու և չարչարելի. և ահա չարչարեցաւ և մեռաւ: - 499. Ա՛րդ՝ նոքա որք զայս ասեն՝ *երիւք* հակառակին սուրբ գրոց: - 505. Վասն զի բոլոր մարդն *երիւք* է կայացեալ. որ է հոգի և մարմին, և ի մէջ երկուցն շունչն է խառնեալ: - 510. ...և տէր մեր յետ *յերից* օրինաց՝ այսինքն բնական բանական և գրաւական՝ երևեալ ի գիշեր կենցաղոյս և իջեալ ի դժոխս աւերելով զնա դարձոյց զերկոսին ժողովուրդս իւր...: - 514. Եւ դարձեալ լոյս եղև *յերեք* ժամն մինչև յերկոյն ըստ մարգարէիցն

«մտցէ արեգակն ի մէջ օրէի. և ընդ երեկս եղիցի լոյս. և դարձեալ ո՛չ տիւ իցէ և ո՛չ գիշեր. և եղիցի օր մի»: - 516. Զօրս զայս պատուեն իէլացիքն վասն *երից* պատճառաց: - 523. Նաև մեք յաղագս *երից* պատճառաց պատուեմք զօրս զայս: - 524. Վասն *երից* պատճառաց: - 524. Նախ զայս ասեմք թէ՝ համաբուն և համապատիւ է Երրորդութիւնն սուրբ. զի միոյն փառքն *երիցն* է և *երիցն* միոյն: - 525. Վասն *երից:* - 531. Վասն այսորիկ հիմն հաւատոյն և գլուխ՝ է *երեք* ամենայն հաւատացելոց: - 532. Յարսն կոչի վասն *երից:* - 534. Իսկ և որդի կոչի վասն *երից:* - 534. Երկրորդ՝ ի պատկեր *երից* անձնաւորութեանցն սոքա են յեկեղեցի: - 535. Եւ տե՛ս, զի սիմէի որքան յամեաց ի քաղաքն ըստ հրամանի սողոմոնի ո՛չ մեռաւ *զերիս* ամս: - 540. և հաստատեցին զկանոնսն *երից* սուրբ ժողովոյն որ ի նիկիայ՝ ի կոստանդնուպօլիս՝ և յեփեսոս: - 544. Եւ գլուխ կոչի վասն *երից:* - 546. Առ երրորդն ասեմք թէ՝ երիցս հարցումն սիրոյն և արածելն զոչխարսն՝ վասն *երից* ուրացութեանցն էր բժշկութիւն. զի ո՛ր մասն որ խոցի՝ նորին է բժշկական դեղն դնելի՝ և ո՛չ առողջից: - 547. Եւ *երից* սուրբ ժողովոցն: - 547. Դարձեալ ասեմք թէ՝ *երեք* առաքեալս ունին հայք: - 549. Այլ ա՛րդ՝ ճշմարտութիւն է առաքելական կանոնքն և հայրապետականն և *երից* սուրբ ժողովոցն: - 550. Իսկ անօրէնութիւն է մեզ լուծումն պահոց աւանդեալ յառաքելոց անտի *զերեք* յիսուսն և զչորեքշաբաթի և զուրբաթ. և զայլ շաբաթապահս ի նիկիական ժողովոյն սրբութեամբ պահել: - 552. Երրորդ՝ յերկոտասանից առաքելոցն *երիցն* ի հայս քարոզութիւնն և վախճան: - 555. Եօթներորդ՝ եդեմաբուղխ *երից* գետոց հոսումն: - 555. Երկրորդ յա՛յտ է ի բաժանմանէ. զի *յերիս* բաժանի տեսակ մեղաց. այսինքն ի մտաւորն, ի բանաւորն, և ի մարմնաւորն: - 556. Վասն զի *յերից* գոյացեալ է մարդն. ի մտաց ի հոգւոյ և ի մարմնոյ: - 556. Դարձեալ ասեմք զեօթնեքինն ըստ *երից* մասանց հոգւոյն այսպէս: - 559. Եւ *երեքն* խառն ի հոգւոյն և ի մարմնոյն. որ է բարկութիւն, ծուլութիւն, և ագահութիւն: - 559. Եւ այս լինի երրակի ըստ *երից* մասանց հոգւոյն: - 561. Իսկ եւագրիոս առաջին դնէ զորկորստութիւն վասն *երից:* - 561. Այն է որ գիտէ ճշմարիտն և առնէ զսուտն. և այս *յերեք* դէմս որոշի: - 564. Ամենայն մեղք հասարակաբար է՛ ընդ դէմ աստուծոյ *երիցն* և միոյ: - 566. Այլ յատկապէս ըստ *երից* դիմացն, որ տկարութեամբ մեղանչէ՝ է՛ ընդ դէմ հօր. և տգիտութեամբն ընդ դէմ որդւոյ. և չարութեամբն ընդ դէմ հոգւոյն սրբոյ... - 566. Զի *երեք* են ի թողութիւնն. այսինքն թողօղ. և այն որում թողու. և պատրաստութիւն նորին: - 567. Մեղք անունն մի է, և բոլորապէս *յերիս* տեսակս որոշի. այսինքն ի սկզբնականն, և ի մահացուն, և ի ներելին: - 567. Իսկ ներելին թէպէտ որոշի *յերիս* տեսակս ըստ մեծութեան և նուաղութեան. այլ մանրամասնաբար յանթիւս ելանէ. որպէս ծիծաղիլ. վայրաբանել. և այլն: - 568. Դարձեալ՝ ըստ ենթակային բաժանի մեղքն *յերիս*. այսինքն ի մեղք սրտին. ի մեղք բերանոյն. և ի մեղք մարմնոյն: - 568. Դարձեալ զանազանին սոքա. զի մեղք խորհրդոյն կայանայ *յերիս*. ի տեսանելն, ի հաւանիլն, և ի կամիլն: - 568. Դարձեալ ըստ կատարման բաժանի մեղքն *յերիս*. այսինքն ի գործ մեղացն, և յունակութիւնն, ի պատիժն: - 568. Նա՛խ՝ աստուածային ասին՝ զի *երեքին* սոքա յաստուած վերաբերին: - 571. Եւ այս *երեք* վերջին աստիճանքս վերաբերին առ աստուածութիւնն: - 573. *Երեք* են. այսինքն անկատար և կատարեալ և գերակատար, այսպէս: - 576. *Երեք.* այսինքն զի բոլոր սրտիւ սիրէ և միշտ սիրէ և առանց փոխարինաց սիրէ. որպէս ասացաւ յերկրորդ օրէնքն: - 576. *Յերից*. Նա՛խ՝ ի բնական իրաւանց. ըստ այնմ «զոր ինչ կամիք թէ արասցեն ձեզ մարդիկ, այնպէս արարէք և դուք նոցա»: - 577. Գիտելի է, որպէս պատկեր աստուածութեանն կայանայ ի մի էութիւն և *յերիս* անձինս: - 577. Այսպէս և պատկեր վերստին ստեղծմանն ի մեզ կայանայ ի միութիւն շնորհին և *յերիս* ունակութիւնս: - 577. Եւ *երեքիւք* թիւրի արդարութիւնն: - 579. Այլ մասունք ողջախոհութեան են *երեք*. այսինքն ժուժկալութիւն. անոխակալութիւն. և համեստութիւն: - 581. Աղքատութիւն հոգւոյ է՛ հրաժարիլն յաշխարհէ. այսինքն ի սիրոյ մարմնական հեշտութեանց և ի փարթամութեանց և ի պատուոյ. քանզի *զերիսս* զայս պարունակէ սէր աշխարհիս: - 583. Ա՛րդ՝ առաջինն ինքն առ ինքն խաղաղութիւն. և վերջինն ինքեան ընդ այլս խաղաղութիւն. և միջին *երեքն*, այլոյ ընդ ա՛յլ է խաղաղութիւն: - 586. Դարձեալ՝ է և այլ պատճառ. զի կարգին ընդ դէմ *երից* մեղացն և ընդ դէմ չորեքկին պատժոցն: - 587. Նաև կատարեալ խոստովանութիւնն ունի *զերիս* մասունս ապաշխարութեան: - 603. Արդ մարմնոյ ազգն բաժանի *յերեք* դէմս. ի վեր, ի վայր, և ի կողմն: - 611. Եւ *երեքն* հոգեկան. զի հոգին եռամասնեա՛յ է: - 611. ...վասն որոյ երբ *յերեք* ազգն ժամանէ վճարին **գ** մասունքն: - 612. Երրորդ, զի ասէ «եղիցին երկուքն ի մարմին մի». և ո՛չ *երեքն*, կամ բազումք: - 612. Նա՛խ՝ նշանակէ՛ *զերեք* ժամն. մէջ գիշերին, առաւօտին, և արևագալն: - 618. Իսկ ի նորս *երեք* անգամ է. այսինքն յառաւօտուն, և ի ճաշոյն, և յերեկոյն. և իւրաքանչիւրքն **գ գ**: - 618. Եւ *յերեքին* յաւետարանսն մերձ կացեալ խնկօք բուրելեօք: - 618. Մարմնովն *երեք* ազգ: - 620. Զայս **դ** ժամու աղօթս

ի գիշերի կատարէին. և *զերեք* ժամուն ի տիւն: - 621. Երկրորդ ժամն է՛ օրհնութիւն *երից* մանկանցն ի դէմս որդւոյ. որ նա՛ էջ ի մէջ հնոցի աշխարհիս. և փրկեաց զմեզ: - 621. Իսկ ոմանք ևս կատարեալք ամենայնիւ` *յերեք* ժամանակս աղօթեն առանձնակի. մի ի մէջ գիշերի յառաջ քան զհասարակաց ժամն. և մի յայգն. և մի ի ցերեկն: - 623. Նա՛խ` զի *յերի՛ց* եմք գոյացեալ ի մարմնոյ, ի հոգւոյ, և ի մտաց, որպէս ասեն ոմանք. վասն որոյ **գ** առանձնական աղօթս մատուցանեմք: - 623. Օրհնելն զաստուած *երիւք* դիմօ՛ք է: - 624. Երրորդ, որպէս յերկինս *յերիս* երրեակս որոշին դասքն. այսինքն առաջին` աթոռոցն. միջին` տէրութեանցն. և վերջին` հրեշտակացն: - 624. Այլ և զեօթն օր շրջեցան տապանակաւն, և կործանեցաւ պարիսպն *երիքովի:* - 626. *Երեք* ի գիշերն. և **բ** ի ճաշոյն. և **գ** յերեկոյն: - 627. ...և յեօթներորդ օրն ի եօթն նուագին բարձրաձայն փողովք հնչեցին քահանայքն. և ժողովուրդն բարձրաձայն աղաղակեաց. յորմէ կործանեցաւ եօթնապատեան պարիսպն *երիքովի:* - 627. Ապա՛ զկնի *երից* մանկանցն աղօթից որով քաւիմք ի մեղաց. ի փառս տալն ի բարձունս` անուշահոտ բուրմամբ նուիրեմք: - 628. Եւ յաւուր կիրակէի *երեք* անգամ ասեմք «ո՛չ դադարեցից քրիստոս օրհնել զքեզ»: - 632. Թէպէտ բազում ուրէք զսոյն բանս ի դաւանութիւն *երից* անձանց և միոյ բնութեանն խոստովանիմք: - 633. Այլ զոր ինչ հասարա՛կ է *երից* անձնացն, աստուած, և հզօր, և անմահ և այլն ամենայն, կարելի՛ է ասել միոյ անձինն և միոյ դիմաց. աստուած հզօր և այլն: - 633. Վասն որոյ զոր սերովբէքն *երից* դիմացն երգէին, աստ աւետարանիչն ի դէմս բանին ասաց: - 633. Իսկ որք ի վերայ Երրորդութեանն ասեն` *երեք* վնաս կայ ի բանս նոցա: - 633. Զի սուրբ աստուածն անդ հաստատեցաւ. որպէս և փառք ի բարձունսն. սկսեալ ի հրեշտակացն ի ծնունդ քրիստոսի. և *յերեք* սուրբ ժողովսն եղև կատարեալ: - 635. Վասն զի հարցն *երից* մանկանցն է երգ: - 637. Այլ և *զերիս* նահապետսն միջնորդ դնէ. այսինքն զաբրահամ զիսահակ և զյակոբ: - 637. Եւ նախապատուութիւնս այս յա՛յտ է *յերից:* - 642. Եւ այս վասն *երեք* պատճառի: - 643. Այլ և **թ** տէր ողորմեայն ի պատարագն. և **թ** երեքսրբեանն, ի խորհուրդ **թ** դասուց վերնական *յերիս* երրեակս որոշեալ: - 645. *Երեք* չուանքն` **գ** գոյացութիւնն: - 645. *Երեք* չուանն` եռակի պատիւն նորա: - 645. *Երեք* չուանն յեռեալ ի միմեանս մակդարձապէս, է՛ չորեքնիւթեայ բնութիւնս մեր ի տարերց խառնեալ. կամ շնչոյ մարմնոյ և հոգոյ խառնումն: - 645. Այսինքն *երեքն* ի մին շաբաթն. որ է՛ Պահոց, Մարտիրոսաց, և Կիրակէն այլածն կարգ. Առաջաւորցն. Աղուհացիցն. և Յինանցն կարգ: - 649. Դարձեալ` **գ** տաղաւարն` որպէս ասաց պետրոս, գուշակէ՛ *զերեք* յիսուսն: - 653. Զի *յերից* եմք գոյացեալ մարդ. հոգի և մարմին և միտք: - 655. Եւ դարձեալ ճաշքն ցուցանեն *յերիս* հասակս զբարեգործսն. և ընթրիսն զվերջին հասակին յորում ննջեմք ի գերեզմանի: - 656. Ութերորդ` Վասն *երեք* աւուրն **ժ** միտք: - 660. ...իսկ թէ յայլ *երիցն* է, նայիլ պարտ է առ ինքն թէ ո՞ր յանցանք առաւել զօրացեալ է յինքն, զայն պակասեցուցանել... - 665. Եւ թէպէտ մարդ ո՛չ գիտէ զօր մահուն իւրոյ, այլ *երիս* իրս տեսեալ է աստուած ի զգուշութիւն մեզ և կարապետ մահուն: - 665. Յերկար ոգէվարք լինի *յերից* պատճառաց: - 668. Եւ նշանակէ նախ *զերեք* հանգստեանն. մինն մարմնոյ. և միւսն հոգւոյ. և միւսն հոգւոյ և մարմնոյ: - 675. Երկրորդ, զի *երի՛ց* եմք գոյացեալ. ի մարմնոյ, ի հոգւոյ, և ի մտաց... - 675. ...որպէս ասեն ոմանք. վասն սոցա *երեք* հանգստեան տամք և աւետարան ընթեռնումք: - 675. Երրորդ, զի *երիւք* մեղանչէ մարդ. այսինքն մտօք և բանիւ և գործով մարմնոյ...: - 675. ...վասն որոյ *երեք* անգամ թողութիւն խնդրեմք: - 675. Եւ *երեք* աւուր յիշատակ ննջեցելոց ունի բազում խորհուրդ: - 681. Նաև *երիւք* լինի թողութիւն մեղաց. այսինքն զղջմամբ խոստովանութեամբ և ապաշխարութեամբ. որ լինի մտօք բանիւ և գործով: - 681. Եօթներորդ` **գ** օրս այս նշանակեցաւ *յերիս* աւուրսն որ նախ քան զլինիլն լուսաւորաց...:. - 681. ...զի հայրն աբրահամ առեալ հուր և սուր, և յետ *երից* աւուրց տեսին զտեղին ի հեռաստանէ որպէս ասէ պատմութիւնն: - 681. Իսկ ամսագլուխն և տարեբոլորն նոյնպէս *յերեք* դէմս է: - 683. Եւ ո՛չ որպէս շաղակրատեն ոմանք մտացածին բանիւ. թէ *երեք* օրն` կամ յեօթն` կամ յամիսն` և կամ ի տարին ելանեն ի քաւարանէն: - 683-684. Վարդապետք սուրբք` զպահեստ հոգւոց *յերիս* փոփոխմունս գիտեն. այսինքն նախ քան զքրիստոս. և յետ քրիստոսի. և յետ դատելոյն: - 686. Եւ դնէ *երեք* պատճառ: - 691. ...զոր վասն յոյժ ժտելոյն` յարուցեալ միտքն տացէ զխոստովանութիւն հաւատոյ սուրբ Երրորդութեանն. զոր *յերիս* նկանակս յառակեաց: - 697. Իսկ այլք *զերեք* տեսակ մեղացն. այսինքն սկզբնականն որ է խոռ. և ներելին եղէգն. և մահացուն փայտ: - 702. Իսկ զհազար ամն, ոմանք ասեն *զերեք* ամն և զկէս ի մկրտութենէն մինչ ի համբարձումն: - 706. Որ և յետ այնորիկ սպանցին ի նեռնէն յէմ. և անկեալ լիցին մարմինք նոցա ի հրապարակս *զերիս* տիւս և *զերիս* գիշերս: - 709. Եւ աստ գիտելի է, զի ամենակալ թագաւորութիւնն քրիստոսի *երեք* եղանակաւ ասի: - 710. Պատասխանեն վարդապետք եթէ *երից* ոմանց. այսինքն կուսանաց. և

մարտիրոսաց. և վարդապետաց: - 712. Եւ այս նախ վասն գերազանց գործոյ *երից* մասանց հոգւոյն: - 712. Վասն որոյ *երից* սոցա պատշաճի թագն ոսկեղէն: - 712. ըստ որում աշխարհ *յերից* մասանց է առկայացեալ... - 715. Եւ նոքա դարձեալ *յերիս* բաժանեցան: - 720. Եւ բաւականութիւն է զարդուցն պատճառի *յերից* մասանց հոգւոյն և ի չորս տարերաց մարմնոյն: - 721-722. Եւ այս գիտելի է, զի յարութիւնն *երիս* իրս ուղղեսցէ ի բնութիւնն: - 725. Եւ *երիւք* պատրաստի մարդ ի գողոյ: - 730. Այլ ի գալուստն քրիստոսի *երե՛ք* են ասացեալ հուր մի զհետ միոյ: - 731. Վասն աթոռոց *երիս* իր գիտեմք: - 736. Ա՛րդ՝ ի վերայ *երից* սոցա բազմեալ է տէր մեր յիսուս քրիստոս ո՛չ միայն յերկրի, այլ և յերկինս. - 736. Դարձեալ որպէս ի վեր անդր ի հրեշտակացն՝ բանն *յերիս* որոշեցաւ. այսինքն է՛ բան մտաց և բան լեզուի և բան գործոյ: - 739. *Երեք* իմանի: - 740. որպէս ասացաւ ի սկիզբն գրոցս *երեք* համարն: - 741. Նա՛խ՝ զի *յերի՛ց* է մարդն. հոգի մարմին և շունչ գոյացեալ. ի քակտումն սոցա **գ** վկա՛յ է պիտոյ: - 742. Երկրորդ, զի երկու և *երեքն* լինին հինգ. զորմէ ասաց քրիստոս, «ուր **բ** և **գ** ժողովին յանուն իմ, անդ եմ ես ի մէջ նոցա»: - 742. Երրորդ, յատեան դատաստանի **դ** խնդրին վկայք. զի մինն կարէ՛ ոք խաբել և սուտ վկայել. այլ զերկու և *զերեքն* ո՛չ: - 742. Չորրորդ, զի *երեք* են դատելիքն. մին դատաւորն, և **բ** դատախազքն. պիտո՛յ է այսինքն **գ** վկայք: - 742. Այլ և արդարութիւնն աստուծոյ, պահապան հրեշտակքն, և խիղճ մտացն իւր, են *երեք* վկայք: - 743. Եւ այսպէս *երեքին* սոքա կոչին չարացն հնձան: - 748. *Երեք* կարգս այսորիկ գուշակեին *երեքումբք* արամբքն զորս եզեկիէլ մարգարէացաւ. փրկելոցն Նոյիւ Յոբաւ և Դանիէլիւ: - 755. Այսորիկ են *երեք* բազուկքն անգուցեալք իբրև ուռս որթոյ. ուստի ճշմարտութիւնն ասէ յաւետարանին, «ես եմ որթն ճշմարիտ, և դուք ուռ»: - 755. Վասն *երից:* - 760. Եւ գեղեցկութիւն մարմնոյն բաղկանայ *յերից*. այսինքն ի մաքրութիւնն, ի չափաւորութիւնն, ի ծև անդամոցն: - 766. *Երեք* գլխօք վարէ՛ զընթացս մարդկութեանն: - 770. Եւ այսպէս յարմարին սոքա *երից* որպիսութեանց մերոց: - 774. Զի յայսմ կենցաղոյս զուգաւորին յիշելն երբեմն և մոռանալ զներքոյս և զարտաքոյս. ըստ որում փոխանցապէս ունիմք *զերից* ժամանակաց գիտութիւն: - 774. Ապա բնաւորապէս ընդ դէմ գոյ *երից* որպիսութեանց սա՛ մեզ չորրորդ գոլով. ոչ ունել ինչ ի մտի. մոռանալով միշտ. ո՛չ գիտել և ո՛չ յիշել ինչ զանտի կենաց: - 775. Զլինիլ արտասուաց՝ ուսուցանեն գիրք կազմութեան և որ ի բժշկաց, *յերիս* բաժանմանէ բնաւորեալ կերակրոց: - 786. Եւ զայս ո՛չ շաբաթու և աւուրց սպառեալ. այլ ամսոց *երից* սորին յերկարեալ. և գործելոց վրէժ ո՛չ կշիռ հատուցեալ: - 789

**ԵՐԵՔ ՀԱԶԱՐ** - Երրորդ՝ համարձակութիւն քարոզութեան առանց երկիւղի խօսիլ զբանն առաջի ազգաց և ազանց և թագաւորաց. որպէս պետրոս ի միում ժամու *զերեք հազարսն* հաւատացոյց: - 524

**ԵՐԵՔՏԱՍԱՆ** - Սակայն և նա՛ է ի թիւս յայս. այսինքն զի երիցս պատկելով *երեքտասանն* լինի **լթ**. և ի քառասներորդումն պտղաբերի: - 263. Եւ այն զի երկոտասան էին գաւազանք ցեղիցն իշխանաց. և ահարոնին *երեքտասան:* - 382. Եւ յետ յեսուայ դատաւորք դատեցին առաջնորդութեամբ զիէլ **նժ** ըստ եօթանասնիցն թուով *երեքտասան* դատաւորք մինչև ի հեղի քահանայ: - 420. Որ եղև *յերեքտասան* ամի թագաւորութեանն ովսէի բարեպաշտ արքայի յուդայ: - 447. Արդ *յերեքտասան* ամէ՛ ովսիա մինչև ցմետասան ամն սեդեկիայ որ վերջին գերեցաւ՝ լինի **խ** ամ. և նաբուգոդոնոսորայն **ի** ամ. և որդւոց և թոռանց նորին **ժ** ամ. որ կատարի **հ** ամ մինչև յառաջին ամն կիւրոսի որ արձակեաց զգերիսն: - 447

**ԵՐԵՔՏԱՍԱՆԵՐՈՐԴ** - 39

**ԵՐԿՈՏԱՍԱՆ** - Նմանապէս և հասարակն թէպէտ բազում է, այլ *երկոտասան* գլխով նշանակի. նախ Բնութիւն. որ նոյն է էութիւն. ապա Բարութիւն. Կամք. Անմահութիւն. Իմաստութիւն. Լուսաւորութիւն. Գեղեցկութիւն. Անփոփոխութիւն. Ցնծութիւն. Փառք. Իշխանութիւն. և Արարչութիւն: - 105. Սոքա *երկոտասանք* և այլ անթիւք ի կարգ սոցա: - 105. Յայս միտս *երկոտասան* են աստիճանք հաւատոյն: - 105. Այլ և *երկոտասան* գունդս հրեշտակաց եցոյց տէրն յաւետարանին ըստ թըւոյ *երկոտասան* առաքելոցն և *երկոտասան* կենդանատեսակացն: - 141. Երեսուննք) *երկոտասան* հողմոց, և շարժոյ: - 155. Նա՛խ՝ զի տանի *զերկոտասան* կենդանակերպսն և վճարէ: - 190. Եւ արա՛ զերեսուն մասն մի ժամ, և *զերկոտասան* ժամն մի օր. և կոչի այս՝ իննևժերեկի ամ. որ աւելու ի լուսինն մի օր: - 191. Եւ արա՛ զերեսուն մասն ժամ մի. և *զերկոտասան* ժամն օր մի: - 191-192. Երկրորդն է՛ որդի. զորմէ ասի, «ո՞չ *երկոտասան* ժամք են աւուր». օր կոչէ զինքն. և ժամք զառաքեալքն: - 195. Տասներորդ՝ *երկուժն* անդամքն. և **է** անդամքն. և երիկամն ճարպո՛վ է: - 227. Երեսուննգ՝ *երկոտասան* պարգևն զոր կորոյս ադամ: - 228. *Երկոտասան* անդամքն՝ կենդանակերպիցն և **բժ**ան մասին երկրին: - 232. Եւ բաժանին **բժ**ան անդամքն ըստ *երկոտասան*

կենդանակերպիցն. և **բժ**ան մասին երկրի: - 241. Եւ այսպէս միջին հասակս կատարեալ, ծգի մինչև ի **խզ** ամն. որ է **դ ժզ**. և վեցն կատարեալ թիւ է. և աստ տիրէ ալիք և սկիզբն լինի ծերութեան մինչև ի **hբ** ամն. յորում **է** ծայրք կենաց ըստ դաւթի, և թիւ *երկոտասան* վեցից խորհրդաւոր: - 265. *Երկոտասան* պարգև՛ք էին ի դրախտին զոր կորոյս ադամ: - 278. Երեքտասաներորդ, նա՛ *երկոտասան* իշխանօք **բժ**ան ցեղիցն առաջնորդեաց: - 329. *Զերկոտասան* ազգն իսրայէլի, որոց անուանքն էր գրեալ: - 348. Անգամ անդամ յօշելն. *զերկոտասան* անդամոց սրբելն և հատանել ի մեղաց: - 360. *Երկոտասան* ասէ ի ղևտացիսն: - 370. Զի՞նչ ցուցանէ *երկոտասան* լրտեսքն: - 380. *Երկոտասան* լրտեսաց տասունքն չա՛ր համբաւէին. և երկուքն զբարութիւն երկրին: - 380. Եւ այն զի *երկոտասան* էին գաւազանք ցեղիցն իշխանաց. և ահարոնին երեքտասան: - 382. Զի *երկոտասան* վիճակացն առաքեալք. և նախ քրիստոս ի մէջ նոցա: - 382. Եւ դարձեալ, *երկոտասան* արքեպիսկոպոսք. և կաթողիկոսն ի մէջն. նոյնպէս և արքեպիսկոպոսն **բժ**ան ունի գաւազան: - 382. Եւ տէր մեր զհաւատացեալս իւր հանեալ ի մեղաց շինեաց սեղան և եկեղեցի սուրբ. և զմեղս *երկոտասան* անդամոցն ընկղմեալ կորոյս: - 418. Եւ բաշխեաց *երկոտասան* առաքելօքն աստ զնոր օրէնս, և անդ զվերին ժառանգութիւնն հաւատացելոց իւրոց: - 419. Ապա ուրեմն յա՛յտ է սոքօք *երկոտասան* գլխով թէ վիուկն ո՛չ գիտէր զառաջիկայն: - 428. Եսայի: *Երկոտասան* մարգարէք: - 450. Այլ *զերկոտասանքն* մին գիրք, և զերեմիայն մին գիրք համարեալ, լինի **լզ** գիրք հին կտակքն բովանդակ: - 450. Ութերորդ՝ *Երկոտասան* Մարգարէք: - 451. Սողոմոն ամաց *երկոտասան* ծնաւ զռոբովամ: - 452. Սա՛ *յերկոտասան* ամին թագաւորէ՛ ամս **խ**. կեցեալ ամս **ծբ**: - 452. *Յերկոտասան* ամին սեդեկիայ՝ նաբուգոդոնոսոր քաղդէացի էառ զէմ և զտաճարն հրձիգ առնէ: - 453. Եւ աւուրք պաշտամանն էր *երկոտասան*. **ե** օր քաւութեանն վասն որթոյն յանապատին. և **է** օր տաղաւարահարացն ի յիշատակ խորանաւ բնակելոյն յանապատին ամս **խ**. և այլ սքանչելեացն զոր գործեցաւ անդ: - 483. Յաղագս որոյ յետ *երկոտասան* աւուրց կատարեմք զծնունդն: - 483. Ո՞ր քան ևս քահանայապետին որ *զերկոտասան* օր պարտ էր խնկօք պաշտել ի մէջ տաճարին ի ժամ աղօթիցն. թէպէտ ի սուրբն սրբոց միանգամ ի տարւոջն: - 483-484. *Երկոտասաներորդ*՝ դարձեալ սաւուղ կամէր պաշարել զդաւիթ. և եկն զօրօքն իւր և ննջեաց ի դաշտի. - 514. Վեցերորդ՝ զի երա՛գ է փայլակն. ըստ տն՝ «ելանէ յարևելից և երևի մինչ ի մուտս արևու ի քթթել ական. զոր արեգակն *յերկոտասան* ժամս ընթանայ յարևմուտս»: - 522. Ապա յա՛յտ է թէ համահաւասա՛րք են *երկոտասանքն* իշխանութեամբ: - 546. Որ և զդատողական աթոռս՝ *երկոտասանիցն* հաւասար շնորհեաց: - 546. Եւ թէ ոք ասիցէ՝ զի՞նչ է խորհուրդ *երկոտասանիցն:* - 546. Ասեմք թէ՝ տէրն *երկոտասան* գունդս ասաց հրեշտակաց իւրաքանչիւր դասուց: - 546. *Երկոտասան* ամիսք տարւոյ: - 546. *Երկոտասան* անդամք մարմնոյ և դրունք: - 546. *Երկոտասան* ազգ իէլի: - 546. Եւ *երկոտասան* մարգարէքն: - 546. Եւ թէ ոք ասիցէ, յորժամ համակարգ են իշխանութեամբ ամենայն *երկոտասանքն*, ապա ո՞րպէս է գլուխ առաքելոցն պետրոս: - 546. Ո՛չ թէ յայնժամ ետ, այլ յայնժամ խոստացաւ և յետո՛յ ետ. որպէս խոստացաւ նստուցանել *յերկոտասան* աթոռ և յետոյ ետ. նոյնպէս և զայն: - 547. Եւ կենսաբուղխ սուրբ աւետարանն զթադէոս առաքեալն մեր *յերկոտասանիցն* ասէ: - 549. Եւ ա՛յս է պատճառն որ ոմանք յեօթանասնիցն ասեն. զի եօթանասուն աշակերտացն գլուխ և վարդապետ էր. որպէս պետրոս *երկոտասանիցն*. և առաջինքն ամենայն ուրեք յետնոցն անուամբ կոչէին. այս է ստոյգ պատճառն: - 549. Երրորդ՝ *յերկոտասանից* առաքելոցն երիցն ի հայս քարոզութիւնն և վախճան: - 555. Իսկ աստիճանք հաւատոյն որք են յէութենէ հաւատոյն, եթէ նկատեսցի առ այն որք արարին զհաւաքումն հաւատոյ, են *երկոտասան* աստիճանք ըստ թուոյ *երկոտասան* առաքելոցն: - 572. Հինգերորդ, ի սմա՛ *երկոտասան* քարինք հիմնարկեալք. և **բժ**ան լուսանցոյց ի խորհուրդ մարգարէիցն և առաքելոցն. - 614. Ասեմք նախ եթէ՝ ո՛չ *երկոտասան.* այլ մի օր կատարէին: - 616. Եւ հին և նոր եկեղեցւոյ որ է *երկոտասան:* - 616. Երրորդ՝ ի բանակիլն խաչաձև բանակեցան *երկոտասան* ցեղքն, և խորանն ի միջի. որ նշանակէ՛ զխորանն եկեղեցւոյ՝ խորհրդով խաչին քարոզեալ ընդ **դ** կողմ աշխարհի: - 616. Եւ ա՛յլ խորհուրդ. **գ** առանձնական աղօթքն, և **թ** հասարակն, որ լինի ամենայնն *երկոտասան* անգամ աղօթք: - 623. Այլ և *զերկոտասան* գունդս հրեշտակաց յերկինս և զ**բժ**ան առաքեալսն բարեխօս մատուցանեմք առ աստուած: - 624. Այլ յետ *երկոտասան* ամաց ի թաղումն կուսին ասացաւ: - 634. Քառասունն**դ**, Կենաց ծառն և *երկոտասան* պտուղ նորա: - 661. Զի՞նչ է ծառն կենաց և պտուղն *երկոտասան* զոր ասէ տեսիլն: - 765. Եւ *յերկոտասան* ամիսս, զի յետ մեղանացն վերստին պտղաբերի ապաշխարութեամբ: - 765. և *Երկոտասան* պտուղ, զի ո՛չ խափանէ զնոսա ձմեռն մեղաց: - 765. Իսկ *երկոտասան* պտուղ ընտրելոցն ի հանդերձեալն այս ինչ է: - 766. Եւ *երկոտասան* պտուղ ըստ **բժ**ան գնդիցն ասացեալ ի տնէ: - 767. Եւ *երկոտասան* պտուղ *յերկոտասան* ամիսս, զի ո՛չ երբէք նուազի

անմահական պտուղն փայտին կենաց: - 768. Իսկ *երկոտասան* պտուղն իցէ *երկոտասան* աստիճանք հաւատոյն. որ ի սրտի և ի լեզուս առանց խափանման հանապազ դաւանի և արտաբերի: - 768

**ԵՐԿՈՏԱՍԱՆԵՐՈՐԴ** - 54

**ԵՐԿՈՒ** - Երրորդ, զի թէ է՛ ամենայն ի հարկէ, ո՛չ լինի անձնիշխան կամաց գործք. որ հաւասար է *յերկոսինն*. այսինքն յառնել և յո՛չ առնել: - 8. Ասելով թէ պատճառ ամենայնի՝ բարեաց և չարեաց մերոց ո՛չ մեք եմք, այլ է՛ առաջին պատճառն աստուած. որք փախչելով յառաջ ասացեալ բախտէ՛ և ճակատագրէ՛ աստեղացն, փոխանակ նոցա յառաջին պատճառն վերագրեն զիարկն. որպէս զի մի՛ ասիցեն *երկու* սկիզբն ըստ մանիքոսի: - 13. Վեշտասաներորդ՝ զի թէ չարն է յաստուծոյ որպէս բարին, և *երկուցն* սկիզբն է աստուած, և արդ՝ եթէ միևնոյն է սկիզբն *երկուցն*, անկարելի է ներհակացն ի միասին ունիլ մի սկիզբն. զի լինէր սկիզբն այն ո՛չ պարզ. այլ երկատեսակ. և ո՛չ միեղէն՝ այլ բաժանեալ և այլայլեալ. նաև լինէր ինքն ինքեան հակառակ, և յառաջ եկելոցն ի նմանէ: - 14. Եւ եթէ *երկուցն* **բ** է սկիզբն, և այսպէս ի յաստուած երևի *երկու* սկիզբն, կամ *երկու* անսկիզբն ըստ մանիքոսի: - 14. Ջորօրինակ՝ թէ բազում մարդիկ անցանեն զճանապարհայն, և մեծ կացեալն տեսանէ նախ ըզմինն՝ և ապա *զերկուսն* և որ զկնի: - 15. Ա՛րդ՝ թէպէտ չարն ո՛չ է յաստուծոյ, այսու ո՛չ լինին *երկու* աստուածք. կամ **բ** սկիզբն. զի չարն ո՛չընչութիւն է. և ո՛չընչին սկիզբն ո՛չ է աստուած. զի աստուած սկիզբն էութեցէ: - 16. Եւ երբեմն *երկորինն* յաստուծոյ. այսինքն սկիզբն և կատարումն: - 17. Յինգերորդ՝ զի խափանեալ լինէր անձնիշխանութիւնն մեր. որ ունի զինքն առ *երկոսեան* կողմն: - 20. Երրորդ՝ թէ լինէին *երկու* սկիզբն հակառակ միմեանց, մի զմիոյ ստեղծուածս ապականէին. և ո՛չ լինէին արարածք ինչ: - 20-21. Չորրորդ՝ դարձեալ թէ լինէին *երկու* սկիզբն և հակառակ, մարտնչէին ընդ միմեանս՝ և ընդ սկսեալս իւրեանց. և ոչ ինչ մնայր ի խաղաղութեան: - 21. Եթէ ոչ հաղորդին, մինն է ի նոցանէ էակ. և այնպէս ո՛չ *երկու* սկիզբն: - 21. Մետասաներորդ՝ Թէ ո՞րպէս ասէ աստուածաբանն բնութիւնք *երկուք:* - 30. Չորեքտասաներորդ՝ Զի՞նչ մի բնութիւն. և զի՞նչ *երկուս*. և զի՞նչ *երկուցն* եղեալ մի բնութիւն: - 30. Վասն այն ո՛չ կարեն իմանալ՝ զի ասէ տէրն, «կոյր կուրի առաջնորդէ՛, *երկորին* ի խորխորատ անկանին. այսպէս որ առնէ զգայարանս առաջնորդ իմացման՝ անկանի ի մոլորութիւն»: - 31. Եւ որպէս ասեն վարդապետք՝ քան զամենայն մեղս ծանրագոյն գոլ զպաշտօն կռոցն վասն *երկուց:* - 33. ’Ի յայս տարակուսանքս՝ որ է ստութիւն *յերկուց* կողմանց, բառնի էութիւն հօր. և լինի արարած որդի: - 36. Զի լուծումն է բանից *յերկրուց* դիմաց և հաստատող էութեանն հօր: - 37. Թէ ոչ՝ Զի թէ մեծ էիր դու քեզ որպէս ոք առ ոք, բաժանեցար ընդ *երկու*. և զիա՞րդ մի իցես: - 37. *Երկուց* կողմանցն ևս պարտ է փախչիլ: - 37. Դարձեալ քննեցուք ըստ մեզ. զի ո՛չ են հակառակ առաքելոյն բանն և աւետարանին, թէ հայր մեծ է քան զորդի. զի *երկորին* նոյն ինքն աստուածութեանն իմանին. ըստ այնմ որ զմեր նուաստ և տկար բնութիւնս միացոյց ընդ իւրում աստուածութեանն, և անտեսանելին տեսանիւր՝ և ծառայի կերպիւ շրջէր վասն տնօրէնութեան՝ ասի փոքր յայս միաւորութեանս քան զհայր. իսկ ըստ այնմ որ է՛ անճառ և նախքան զյաւիտեանս ծնունդ ի հօրէ՛, հաւասա՛ր է հօր և ոչ փոքր: - 40. Բայց է և այլ իմն տեսութիւն խորին և գեղեցիկ. զի նա՛ վասն սրբութեան չարչարեցաւ. և որ ոք ևս չարչարեսցի վասն սրբութեան՝ մի և նոյն է դիտաւորութիւն *երկուցն*. յայնժամ օգնեսցէ նմա. այսինքն միաւորեսցի ընդ նա՛ սրբութեամբն, և եղիցի աստուած ամենայն յամենայնի. այսինքն կատարեսցէ զնա աստուածս առնելովն. և եղիցին աստուածք ամենայնքն: - 43. Զի *երկուս* այս հարկաւոր է, բժշկելոցն հաւատ, և բժշկին զօրութիւն: - 44. Իսկ այլ ամենայն անուանքն՝ ներգործութեանցն են առ մեզ արարեալ՝ և հովանւոյն. բայց բաժանին ամէն անւանք *յերկուս:* - 49. Տե՛ս՝ զի միովն բառնի *երկուքն*. և ասեմք թէ երեքն: - 51. Եւ ո՛չ այս կարէ լինիլ ի *յերկուցն* հատումն. այսինքն զի լիցի յաստուծոյ և արարածէն՝ և լինիլ մի էութիւն. որպէս ո՛չ է էութիւն եղջերուաքաղն որ յեղջերէ՛ և ի քաղէ ստեղծանի. ապա ուրեմն ո՛չ լինի էութիւն յարարչէն և յարարածէն: - 52. Զի թէ անծին, ասեն *երկու* անսկզբունք են և հակառակ միմեանց: - 52. Եւ թէ *յերկուցն* ո՛չ է կարօղ հայր ծնանիլ և կարօտանայ որդւոյ օգնութեանն. և լիցի անկատար որդի: - 52. Իսկ արիոսի՝ զի նա միայն զհա՛յր ասէր աստուած. զայս ասեմք թէ, ո՛չ են մեզ երեք աստուածք՝ այլ մի աստուած և երեք անձինք. և *երկուքն* ի մի և ի նոյն էութենէն յառաջ եկեալ. կամօք մի և զօրութեամբ մի: - 54. Եւ այսքան է միաւորթիւնն, զի որքան մին ինքն առ ինքն ունի զբնութիւնն և զզօրութիւնն և զկամքն, նոյնքան և ունի առ *երկուսն*. թէ զհայր իմանաս՝ թէ զորդի՝ թէ զհոգին: - 54. Դարձեալ հարցանեն թէ՝ զիա՞րդ ասէք երեք և մի բնութիւն. զի **գ** միոյ բնութեանն ո՛չ հաղորդի. այլ մինն հաղորդի միոյ բնութեանն, և *երկուքն* *երկուքին*. և երեքն երեքին. զի որքան է թիւն, այնքան բնութեան թըւակից լինի: - 54. Եւ այլ անուն՝ այլոյ բնութեան ո՛չ թըւակցի. որպէս ո՛չ մի *երկուին*

և կամ՝ *երկուքն* երեքին: - 54. Նաև բնական քննութեամբ. զի յորժամ ասես՝ մի և մի՝ եղև *երկու*. և այժմ ունի *զերկուին* բնութիւն: - 55. Տասներորդ՝ թէ բանն աստուծոյ և հոգին արարա՛ծ են և այլ բնութիւն, յայնժամ ո՛չ լինի մի աստուած. այլ բազում և զանազան աստուած. զի յոլովութիւնն յոլովութիւն է աստուծոյ. որպէս թէ երեք բնութիւնն երեք աստուած, և *երկու* բնութիւնն *երկու* աստուած: - 56. **գ**) Դարձեալ՝ հոգին ելանէ իբրև զշաղկապ և միաւորիչ. մի իբրև զմէջ որ շաղկապէ՛ *զերկու* եզերն. և միւս իբրև երեք՝ և եզր: - 64. Չորրորդ վկայ և մեծն դիոնէսիոս. որ յաստուածային անուանսն ասէ՝ «՚ի յաննիւթ և յանորոշելի բարւոյն ծագեաց *երկու* լուսափայլութիւն»: - 64. Կոյսն մարիամ զմիածի՞նն որդի ծնաւ ըստ ինքեան, և թէ զանդրանիկն որդի առանձին, և թէ *զերկուսն:* - 68. Զի թէ *զերկուսն*, ահա՛ *երկու* որդւոյ մայր ասացիք: - 68. Զի թէ աստուած մարդացեալ, ապա զիա՞րդ ուրանայք և բաժանէք *յերկուս* բնութիւնս զաստուածն և մարդն: - 68. Իսկ թէ և *զերկու* բնութիւնն ասես տէր, ընդդէմ խօսիս առաքելոյն որ մի ասաց զտէր մեր յիսուս քրիստոս՝ որպէս և զհայր: - 69. Իսկ թէ *զերկուսն*, ահա՛ որ *երկու* բնութիւն ասացեր գոլ հօր: - 69. Յարցանեմ զբաժանօղսդ *յերկուս*, զո՞ր բնութիւն կերակրիս որով կենդանանաստ: - 69. Իսկ թէ *զերկու* բնութիւնն ասիցես, ահա՛ *երկու* գոլ ասես հօր աթոռակից. մի զաստուածն, և մի զմարդն: - 70. Եւ թէ միայն բանին որ ի յերկնից իջեալ, ահա՛ որ *երկու* կամք ընդ դէմ միմեանց խոստովանիս. ծնողին և բանին: - 70. Եւ ահա՛ չորեքտասան հարցմունքս այս՝ է ընդ դէմ երկաբնակ աղանդոցն. որք զմի քրիստոսն *յերկուս* բաժանեն բնութիւնս: - 70. Եւ այն զի ո՛չ ինչ ունի միննն նըւազ քան *զերկուքն*, և ո՛չ *երկուքն* առաւել քան զմին, բաց յառանձնութեանցն: - 74. Ա՛րդ՝ որպէս կարծեն ինքեանք զէն մեծ ունիլ առ *երկոսին* կողմանս, կամ հարկիւ անկանիլ ի նեստորին բնութիւն և բնութիւն, և կամ ըստ եւտիքեայ շփոթել զբնութիւնսն: - 75. Յորոյ փախչելով մեր և *յերկուց* ծայրիցն, զառ ի մէջն ունելով ուղղապէս ընթացք, ասեմք եթէ քրիստոս ըստ անշփոթ միաւորութեանն՝ աստուածային բնութեամբն մարդ է, և մարդկային բնութեամբն աստուած է: - 75. Ուստի ո՛չ ասի քրիստոս սոսկ մարդն, կամ մերկ աստուածն. այլ որպէս ցուցաւ *յերկուց* միաւորութիւնն: - 75. Յորոց *երկուց* աստուածաբանիցս իմանի մեզ սոյնպէս: - 79. Ո՞րպէս ասէ աստուածաբանն եթէ՝ «բնութիւնք *երկու»:* - 79. Ասեմք թէ՝ և այս ընդ դէմ *երկուց* հերձուածողա՛ց է: - 79. Իսկ ուղղութեանցն աշակերտք՝ ընդ դէմ *երկուցն* յաջ և յահեակ պատերազմին: - 81. Եւ կամ զի՞նչ *երկու* բնութիւնն: - 81. Եւ կամ զի՞նչ *յերկուցն* եղեալ մի բնութիւն: - 81. Իսկ թէ զի՞նչ իմանի մի բնութիւն ասելն. և զի՞նչ *երկու*. և կամ *յերկուցն* մի բնութիւն: - 81. Իսկ որք *յերկուցն* մի եղեալ բնութիւն ասեն, որպէս յաստուծոյն և ի մարդոյն եղեալ մի բնութիւն ո՛չ աստուծոյ և ո՛չ մարդոյ: - 81. Եւ ոմանք որպէս քաղկեդոնիկքն՝ մի անձն համբաւեն, և *յերկու* բնութիւնս բաժանեն զմի քրիստոսն. և **բ** կամք. և **բ** գործք. որպէս անիծեալն լևոն. և փլաբիանոս, և ընկերք նոցա: - 82. Իսկ երրորդ դասքն, որք *յերկուց* ասեն եղալ մի բնութիւն, ո՛չ աստուծոյ և ոչ մարդոյ: - 82. Ո՛չ *երկուս* բնութիւնս զմին որդին ասելի. «զմինն երկրպագելի և զմինն աներկրպագելի. այլ մի է բնութիւն աստուծոյ բանին մարմնացելոյ»: - 83. Զի մի յատկացին **բ** անձինք ի քրիստոս. զի թէ **բ** բնութիւն բաժանեմք ի հարկէ *երկու* անձն բաժանի: - 84. Ընդէ՞ր մարդն *երկու* բնութիւն է և մի անձն: - 84. ՚Ի *յերկուց* զո՞րն ուրանաս և մի ասես բնութիւն: - 84. Սկիզբն *յերկուց* բնութեանց. և մէջ՝ որ է՛ միաւորութիւնն մի բնութիւն. և եզր և կատարումն՝ մի անձն: - 84. Նմանապէս և աստուածաբանն ասէ ի ճառն երկրորդ առ կլօդիանոս՝ «ո՞ւր են այնոքիկ ուրացօղք որք յայտնապէս բաժանեն զքիստոսն *յերկու* կամս և **յբ** գործս»: - 85. Իսկ մի գոլ ներգործութիւնք և կիրք. որպէս քնարն՝ և որ շարժէ զքնարն՝ մի ներգործութիւն կատարեն և ո՛չ *երկուս:* - 86. Եւ որպէս որ շարժէ զգրիչն՝ և գրիչն՝ մի ներգործութիւն կատարեն և ո՛չ *երկուս:* - 86. Եւ որպէս ձայնն և բանն՝ մի ներգործութիւն կատարեն և ո՛չ *երկուս:* - 86. Եւ որպէս հոգին և մարմինն մի ներգործութիւն կատարեն և ո՛չ *երկուս:* - 86. Որք միաւորէք անձամբ. և *յերկուս* բնութիւնս բաժանէք: - 86. Ըստ անձին մի է, և ըստ բնութեանն *երկու:* - 86. Զի թէ իր, ապա հա՛րկ է ասել քեզ զքրիստոս կամ մի իր և **բ**. կամ մասամբ ինչ մի և մասամբ ինչ *երկու*. կամ բոլոր մի և բոլոր **բ**: - 86. Արդ՝ տեսցուք թէ ըստ որո՞յ եղանակի բաժանէք զմի անձն *յերկուս* բնութիւնս: - 87. Իսկ զմիաւորութիւն *երկուց* բնութեանցն ուրանան երկաբնակքն: - 88. Երկրորդ՝ զի ո՛չ մասամբ ինչ ըստ ոմանց ապօղինարի և այլոց. այլ *յերկուց* կատարեալ բնութեանց է միաւորութիւն փրկչին: - 88. Ահա տե՛ս յայտնապէս. զի որք բաժանեն զմի քրիստոսն *յերկուս* բնութիւնս, ո՛չ պահեն զմիաւորութիւնն անբաժանելի: - 88. Զի զոչ առեալն ասեն մի ի քրիստոս՝ և ո՛չ զառեալն. այսինքն զանձն՝ որ ո՛չ է առեալ՝ մի ասեն. իսկ զառեալ բնութիւնն որոշեալ պահեն և *յերկուս* քակտեն: - 88. Իսկ եթէ աստուածային բնութիւնն և զմարդկայինն առանց անձին ասէք քրիստոս, ահա՛ շփոթեցիք *զերկու* բնութիւնսն առանց անձին միանալոյ ըստ եւտիքեայ: - 90. Եթէ *երկուքն*, հարկ է ասել ձեզ՝ փառք

հօր՝ և որդւոյ *երկու* բնութեանցն՝ և հոգւոյն սրբոյ: - 90. Մինն է ընդ դէմ *երկուին* և բազմին. և նոյնն է ընդ դէմ այլին: - 91. Նոյնպէս և այս ընդ դէմ նոցա է՝ որք մի ասեն անձն, և *յերկուս* բնութիւնս բաժանեն: - 91. Ապա ուրեմն համանգամայն ի միասին լինին *երկու* հակակայք. այսինքն ուղղական և հոլովական. զի ասելն աստուած ուղղական է. և աստուծոյ՝ սեռական հոլով: - 92. Եւ դարձեալ՝ քրիստոսն անուն զմիաւորութիւնն նշանակէ *երկուց* բնութեանց. ըստ որում աստուածութիւնն էօծ զմարդկութիւնն. որպէս ասէ աստուածաբանն և սուրբն կիւրեղ: - 95. Իսկ թէ ա՛յլ է բանին և այլ է մարմնոյն, ապա բաժանե՛ս զմարդկութիւնն ի յանձնէն. և ասես **բ** անձն. և *երկու* բնութիւն. ըստ նեստորի առաջնորդին քոյ. և պօղոսի սամոստացւոյ. որ մինչև ցայժմ ծածուկ է իր նեստորեան, և այժմ յայտնեցեր զքեզ: - 98. Դարձեալ՝ ա՛յն է հասարակն՝ որ մի՛ է երիցն. և *երկուքն* ո՛չ աւելի. և մինն ո՛չ ունի պակաս: - 104. Իսկ յատուկ այլ է երիցն. և *երկուքն* աւելի՛. և նըւազ քան զմինն: - 104. Երկրորդ՝ մինն սկիզբն է, և *երկուքն* ի միոյն: - 107. Երկրորդ՝ յերեք թիւն մինն պակաս ունի քան *զերկուքն*. և *երկուքն* աւելի քան զմինն: - 108. Իսկ ի սուրբ Երրորդութիւնն՝ մինն պակաս չունի քան *զերկուքն*. և ո՛չ *երկուքն* աւելի քան զմինն. զի հայր ունի զամենայն լիութիւն որդւոյ և հոգւոյ: - 108. Երրորդ՝ զի մին թիւն անկատա՛ր է քան *զերկուքն*. և *երկուքն* քան զերեքն: - 108. Չորրորդ՝ երեք թիւն փոփոխմամբ է. յորժամ ասեմք մի և **բ** և **գ**, փոխեցաւ ի միոյն և եղև *երկու*. և փոխեցաւ *յերկուցն* և եղև **գ**: - 108. Հինգերորդ՝ զի **գ** թիւն բաժանին ի միմեանց. զի յորժամ բաժանես զմի թիւն՝ ո՛չ է *երկուքն* ընդ նմա: - 108. Երկրորդ՝ յաւիտեանն պարունակէ զմիշտն. և միշտն զժամանակն. և ժամանակն *յերկուցն* պարունակի: - 116. Ծանիր և զայս ուշիմ մտօք, զի ամենայն աստուածաբանութիւն նախ *յերկուս* բաժանի. այսինքն դրութեամբ և բացբարձմամբ: - 123. Իսկ հասարակութիւն *երկու* լուսոյն: - 125. Եւ արդ՝ զի հասարակ են էութեամբ՝ և յատուկ առանձնաւորութեամբ, յաղագս որոյ զանազանելի է զյատկութիւնս ըստ *երկուց* լուսոյն: - 125. Նախ՝ զի պետութիւնք պատշաճին առ հայր. և հրեշտակապետքն առ որդի իբր *յերկուց* միացեալ. և հրեշտակքն ի դէմս հոգւոյն իբր նախ եկաւորեալք յամենայն ուրեք, և ապա յորդի և ի հայր բնակեալ: - 136. Եւ որ ըստ ինքեանէ *յերկուս* բաժանի: - 142. Եւ որոշի դէմք սիրելութեանն *յերկուս*. ի յինքն և ի յայլս: - 143. Իսկ մարդս զի *յերկուց* է գոյացեալ՝ ունի զգութ բնական՝ և զսէրն աստուածական: - 144. Ո՛չ են յաւերժահասունք որպէս ոմանք կարծեն թէ *յերկուց* տարերց այսինքն ի հրոյ և յօդոյ են բանական կենդանիք և ունին ծնունդ և մահ. սուտ է այսպիսի կարծիքս և ընդունայն և հակառակ սուրբ գրոց. զի բանական կենդանի և մահկանացու՝ մարդս միա՛յն է որոյ յարութիւն և դատաստան գոյ: - 150. Իսկ հասարակութիւն է Նախ՝ զի *երկուց* սկզբանցն մի և նո՛յն է պատճառ ներգործական. որ է՛ արուեստաւորն: - 163. Եւ այսպէս կարծեն *յերկուց դիմաց* ըմբռնել զմեզ: - 173. Աննիւթ է աստուած և պարզ էութիւն ըստ *երկու* եղանակի: - 175. Զորօրինակ՝ **դ** մարդ *երկու* *երկու* ձեռօք զմիմեանս ըմբռնեն: - 181. Իսկ արիստոտէլ ի վերայ *երկուց* բևեռացն ասէ շարժիլ երկնի որպէս անիւ սայլին ի վերայ սռնոյ: - 182. Եւ զի ո՛չ շիջանին հրամանաւ արարչին. ի միջի գոլով *երկուց* ներհակացն օդեղէնն երկին. որպէս ստորին տարերքս հուր և ջուր միջնորդ օդիւն կապակցեալ: - 188. Զի յարևելից կիտէ՛ ի նոյն կէտ շրջեալ՝ լինի օր մի. որ է **իդ** ժամ. *երկու* ժամ միոյ կենդանակերպի: - 190. Դարձեալ՝ ոչ ինչ պատուական քան զժամանակ. զի զինչ և իցէ յաշխարհի՝ *երկու* մասունքն կարե՛ն համանգամայն գոլ ի միասին բաց ի ժամանակէ և ի հասակէ՛. զի ժամանակին **բ** մասն անհնա՛ր է համանգամայն գոլ ի միասին. զի և **բ** պահք ո՛չ կարեն համանգամայն գոլ: - 199. *Երկու* գոլորշիք վերանան յերկրէ. մինն չոր և ծխատեսակ. և միւսն խոնաւ ի գէճ բնութեանց վերացեալ: - 204. Իսկ Զիւնն ծնանի ի ջերմացեալ ամպս ի մէջ *երկուց* ներհակ հողմոց: - 205. Նա՛խ՝ զի *երկու* իր է. այսինքն հող և ջուր. որ ընտանի՛ է նմա: - 210. Այս *երկուքս* բնական պատճառ: - 213. Եւ են որ *զերկունքն* ևս ունեն. որպէս խաղողն: - 213. Վասն որոյ յետոյ մարդն ստեղծաւ *յերկուցն* խառնեալ յիմանալւոյն և ի զգալոյն ի մի էութիւն: - 231. Այսպէս մարմին մարդոյ որ քան է երկայնութեամբ ի գագաթէ՛ գլխոյն մինչև ի ներբանս ոտիցն, նոյն քան է լայնութիւն ի մէջ *երկուց* երկայն մատիցն ձեռաց: - 232. Երկրորդ՝ ցուցանէ *յերկուց* մասանց գոլ զբոլոր մարդն. և հոգոյն է զգալն և տեսանել և այլն: - 234. Եւ այն զի մերձ է բերանոյն. և զի հոտն և համն ազգակից են միմեանց. ի ջրոյ գոլով *երկուցն*. վասն այն զգայարանք նոցա առ միմեանս են մերձեցեալ: - 235. Իսկ *երկուքն* իշխանականք. որ է՛ տեսանելիքն և լսելիքն. ի հեռաստանէ՛ զգան: - 235. *Երկու* լուսերակն որ ասացաք՝ ի յղեղէն գայ ի յաչքն դատարակ և անարիւն: - 239. Այս *երկու* երակս թէ տաք է և չոր, մարդն ի մօտն աղէկ տեսնու՝ և ի հեռուն վատ. որպէս տղայն: - 239. Դարձեալ **բժ**ան դրունք է ի մարդն որ են այսոքիկ. *երկու* աչք. **բ** ականջք. **բ** պինչք, բերանն. և պորտն. **բ** ստինք. ջրհեղն. և արտաքնոցն: - 241. Ծնկանն *երկու* ոսկր: - 243. Եւ կին մարդոյն **ը** երակ

աւելի՛ է. **դ** երակ ծննդական մասին. և **դ** երակ *երկու* ստեանցն: - 244. Վասն այսորիկ կատարեալ իմաստութիւնն *յերկուս* բաժանի. ի տեսականն և ի գործնականն. այս ըստ դաւթի: - 248. Եւ *երկուցն* կատարումն է՛ ի յաստուած. քանզի նա՛ է ճշմարտութիւնն. և նա՛ է բարին: - 248. Իսկ ըստ այլոց, զօրութիւնք հոգւոյն բաժանին *յերկուս*. որ է իմացումն և կամքն: - 248. Իսկ վարդապետք ուղղաձնութեան՝ յանդիմանեալ *զերկոսին* կողմանց ստախօսութիւն, ո՛չ զհոգի յառաջ քան զմարմին ասեն ստեղծեալ, և ո՛չ զմարմին քան զհոգի: - 254. Եւ թէ որպէս, ասելի է թէ, ի սերմնական զօրութիւնն տեսանի *երկու* իր: - 254. Եւ որպէս ասէ արիստոտէլ զերեք թիւն՝ որ մի ունի զէութիւն իւր. այլ *երկուքն* և մինն մասունք են նորա: - 259. Զի յորժամ ասես մին՝ այս առաջին մասն է երրորդին. և *երկուքն* *երկու* մասն: - 259. Եւ ա՛յս է ըստ մարգարէութեանն որ ասէ, «եղիցին երկոքեան ի մարմին մի». այսինքն *յերկու* սերմանց ծնողացն լինի մին մարմին զաւակի: - 261. Կամ ընդ **դ** տարերց ունի զխառնումն *երկուց* նիւթոց, այսինքն արուական և իգական: - 262. Իսկ իմաստունն ըստ *երկուց* եղանակաց իմանալի է: - 269. Նա՛խ՝ զի հաստատեսցէ *զերկու* կարծիս թերութեան մարդկան: - 289. Երկրորդ՝ զմին յառաջ քան զջրհեղեղն, և զմիւսն յետոյ. զի ցուցցէ թէ *յերկոսին* ժամանակս ընտրեալքն հաճոյ եղեն աստուծոյ: - 289. *Երկու* ցեղ և կէսն մնացին յայնկոյս, թէ զի՞նչ նշանակէր: - 285. Իններորդ՝ որպէս իսահակ նահապետ եղև *երկուց* հմն ազգաց: - 305. Երեքտասաներորդ՝ որպէս զհետ իսահակայ չոքան *երկուք* ի ծառայիցն և կացին ի բացուստ: - 306. Ութերորդ՝ յովսէփ *զերկու* երազատեսքն զմինն կեցոյց և զմինն մեռոյց: - 313. Եւ տէր մեր *յերկուց* աւազակացն զմինն ի փառս էած, և զմինն ի դատապարտութիւն: - 313. Արդ՝ առաջինն և վերջինն վայելչակա՛ն է յոբայ և աստուծոյ. իսկ միջին *երկուքն* բարեկամացն յոբայ, և չար բանսարկուին յարմարի: - 323. Իսկ ի հոգւոյ մարդոյն **բ** իր հեռացուցանեն զդևսն. այսինքն խոնարհութեամբ և ճշմարտութեամբ. վասն զի *զերկուքս* զայս ո՛չ ունի սատանայ. և ամենևին փախչի և ատէ՛ զխոնարհութիւն և զճշմարտութիւն: - 324. Բոլորն ամենայն **դճլ** ա՛մ է յաւետեացն աբրահամու մինչև յելսն յեգիպտոսէ՛. այլ *զերկու* **ճե** ամն հարքն յերկրին քանանու բնակեցան. և **զբ ճիե** ամն որդիքն յեգիպտոս կացին. - 337. Եւ *յերկուս* մասունս բաժանեալ ծովուն... - 338. Եւ անապական վարուք ոսկէզարդեալ ունի յինքեան *զերկուս* կտակս: - 345. Եւ ի նմանէ լուսաւորեալք՝ պայծառացուցանեն վարդապետութեամբքն իւրեանց *զերկու* ժողովուրդս որք ի հրէից և որք ի հեթանոսաց օծեցան մկրտութեամբն: - 347. *Երկու* ձիթենիք՝ երկոքին բանքն սրտի և բերանոյ: - 347. Դարձեալ գիտելի է, որք զքրիստոս բաժանեն *յերկուս* բնութիւնս. և *յերկուս* գործս սոյնպէս. զմինն աստուած՝ և զմիւսն մարդ. հզօր և տկար. և գործ մարդոյ և գործ աստուծոյ. որպէս աղանդն քաղկեդոնի: - 350. Գիտել պա՛րտ է, զի ամենայն պատարագ հին օրինացն նախ ի *յերկուս* բաժանի: - 357. Զի՞նչ նշանակէ կրկին ողջակէզն ի նորս. որպէս զուարակն և *երկու* խոյն կատարման: - 362. *Երկու* հաւն՝ կրկին զօրութիւնք ի մեզ. տեսնական և գործնական: - 368. *Երկու* նոխազն համատեսակ օրինակ տեառն մերոյ՝ *յերկուց* միաւորեալ մի անձն. և միաւոր բնութեամբ աստուած և մարդ: - 369. *Երկու* զուարակ, որ քրիստոս զենաւ վասն ադամայ և եւայի պարտուցն: - 373. Զի վարդավառին ա՛յն է, յորժամ կրկին **խ** պահեաց մովսէս ի լեառն և լուսաւորեցան երեսքն. վասն այն զկնի *երկու* յիսնակացն տօնեմք: - 373-374. Երկոտասան լրտեսաց տասունքն չա՛ր համբաւէին. և *երկուքն* զբարութիւն երկրին: - 380. Երկրորդ՝ *երկուքն* ևս ահարոնի. զի բուրվառն ոսկի զմաքուր քահանայութիւնն ցուցանէ. և գաւազանն զիշխանութիւնն: - 382. Վասն *երկու* պատճառի: - 388. Զի՞նչ է որ *զերկու* թագաւորսն զսեհոն և զովք յայնկոյս յորդանանու կորոյս, և զայլսն ի քանանացիսն: - 393. ...և ապա ըստեամբք կերակրէ զնա մայր իւր բանիւն աստուծոյ. զոր ասեն յաշխարհի, եթէ զմին դուռն փակէ աստուած, նա *զերկուքն* բանայ. զի յորժամ զմին դուռն պորտին փակեցաւ, **բ** ստինքն բացան: - 397. Զայն ցուցանէ որ պատճառաւ իրիք կամ պոռնկութեամբ կամ այլ ինչ յորժամ բաժանին, առանց ամուսնութեան մնասցեն թէ *երկուքն* են բաժանմանն պատճառ, մինչև հաշտեսցին: - 401. Օրինութիւնն աստուծոյ բաժանի *յերկուս*. որ է՛ երկնաւորաց և երկրաւորաց. որ է՛ հոգևոր և մարմնաւոր. անցաւոր և անանց: - 403. Ա՛րդ՝ *զերկու* օրհնութիւնս **բ** կտակօք բաշխեաց մարդկան. զմարմնոյ աճումն և ընչից՝ ետ իէլի. և զհոգւոյ աճումն կուսութեամբ և աղքատութեամբ՝ ետ քրիստոնէից: - 403. Ընդ որդւոցն *երկու:* - 412. Երկրորդն Աւովդ. *յերկուց* ձեռաց յաջողակ եմինացի յեփրեմայ ամս **ձ**. և այլազգիքն ամս **ի**: - 420. Երրորդ՝ *յերկուս* ճեղքելոց էր թագաւորութիւնն իէլի և յուդայի: - 427. Եւ թէ նա՛ յարուցանէր, ընդէ՞ր *երկու* եհան. զի նա՛ միայն զսամուէլ խնդրէր: - 428. Իսկ մեղքն դաւթի յիշատակեցաւ վասն *երկու* պատճառի: - 433. Դաւիթ դարձոյց *զերկու* կանայս և զամենայն աւարն. և որդի նորա զ**բ** դասս հաւատացելոց և զամենայն հոգիսն ազատեաց: - 437. Դաւիթ յետ *յերկուց*

ամաց ետես զաբիսողոմ. և տէրն զմեղաւորս յետ ապաշխարութեան հոգւոյ և մարմնոյ. այլ և յետ աստեացս և մահու տեսանէ ի դատաստանին: - 438. *Երկու* յաւանակն սիբայի. էշն և յաւանակն յիսուսի: - 438. Իսկ մկրտութիւնն բառնայ *զերկոսին*. այսինքն զմեղս և զմահ: - 445. Արդ ի բաժանիլ թագաւորացն հրէաստանի *յերկուս*, յուդայի և իսրայէլի: - 446. *Երկու* մնացորդացն: *Երկու* եզրաս: Նէեմի: Եսթեր: Յուդիդ: Տուբիդ և տուբիա. որ լինի **ի** երորդ: - 450. Որոց առաջին Յակոբայ: *Երկու* պետրոսի: Երեք յոհաննու: - 450. *Երկու* կորնթացւոց: - 450. *Երկու* թեսաղոնիկեցւոց: - 450. *Երկու* տիմօթէի: - 450. Եւ *երկու* կանոնք առաքելոցն: - 450. Եօթ՝ *երկու* մնացորդացն: - 451. Զի ի *երկու* տառք են Ալֆա փետացն եբրայեցւոց: - 451. Յետ սողոմոնի *յերկուս* բաժանեցաւ թագաւորութիւնն իսրայէլի: - 452. Զնա էառ կին յովիդա քահանայ. և խառնեցան *երկու* ցեղք թագաւորաց և քահանայից: - 452. Զի ի ցեղէն նաթանայ որդւոյ դաւթի այրն ոմն անուն ղևի՝ ծնաւ *երկուս* որդիս. զմելքի և զպանթեր: - 460. Զի թէպէտ փակեալ էր օրէնքն խառնիլ *երկուց* ցեղիցն ընդ միմեանս, սակայն ղևտացւոցն ո՛չ գոյր ժառանգութիւն և բաժին, խառնեին երբեմն ընդ թագաւորական ազգն յուդայ: - 461. Եւ սոյնպէս և քրիստոս եղև *երկուց* զարմիցն մի քահանայ և թագաւոր ճշմարիտ և մշտնջենաւոր քահանայ և թագաւոր յաւիտեան: - 461. *Երկու* երևի ի սուրբ գիրս երկխօսութիւն: - 465. Այլ *յերկուցն* ևս զերծաւ աստուածածին կոյսն: - 469. Զի են որ միաւորեալքն էութիւնք են և շաղկապն պատահումն. որպէս *երկուք* ոմանք անջատեալք ի միմեանց՝ պատահմամբ սիրոյ շաղկապին: - 476. Առաջին միաւորութիւն ստոյգ և ճշմարիտ՝ հոմանիւթ մասնաւորաբար որոշեցելոց. որոց ոչ ինչ տարանիւթ ընդ մէջ երևի. որպէս *երկուց* ջահից լուցելոց միաւորութիւն լուսոյն: - 476. Եւ *երկուց* ջուրց: - 476. Եւ *երկուց* հողոց և օդոց նոյնպէս: - 476. Երրորդ առ այսոքիւք՝ միաւորութիւն անուանեմք և զխառնուածս *երկուց* նայից ըստ զանազան որակութեանց. յորում ո՛չ ոք ի խառնեցելոցն զիւր ծայրագոյն որակութիւնն սեռաբար կարող է պահել. այլ շփոթեալ անկանի ի ծայրագոյն որակութենէն. որպէս զջուրց և զգինեացն խառնուած, և զմեղերաց: - 476. Եւ որպէս կարգեաց տն եղբայրն յակոբոս զընթերցուածն. և ի նմին աւուր *զերկու* տօնս: - 482. Եւ ի փետրվարի *երկուքն* տեառնընդառաջ կատարեն: - 483. Յերկրորդ ամին աստուածածինն տըպացաւ ի սեանն, և քառասնօրեայ մանուկն յիսուս ի գիրկն. և խաչ ծիրանի *յերկոսին* ձեռինն: - 485. Եւ *յերկոսին* ձեռացն և ոտիցն: - 492. Այլ և խաչաձև թռչին օդապարիկ թռչունք. որ է տեսական միտք. զթև տարածեալ *յերկոսին* կողմանս: - 494. Եւ ունի մահն կրկին յատկութիւն որ ընդ դէմ է *երկուց* ծայրիցն. այսինքն զի է՛ վախճան կենաց՝ և է՛ սկիզբն կենաց: - 497. Յաղագս որոյ զմահն կրեաց քրիստոս. զի այսպէս բարձցէ *յերկուց* կողմանց զմեղս և զապականութիւն: - 497. Եւ չարչարանքն քրիստոսի *երկու* իրս ներգործեաց. նախ զպարտիս մեղաց վճարեաց. երկրորդ զդրունս երկնից եբաց: - 503. Որ և *զերկոսինս* զայսոսիկ խորտակեաց տէր իջմամբն առ նոսա: - 504. Իմաստունք զտեղին *յերկուս* բաժանեն. ի վերին և ի ներքին. զի սոքա են հակակայք և առինչք միմեանց. իսկ միջին տեղի ո՛չ է. - 505. Ասեմք թէ՝ ո՛չ կարեն վասն *երկու* պատճառի: - 508. Վասն զի բոլոր մարդն երիւք է կայացեալ. որ է հոգի և մարմին, և ի մէջ *երկուցն* շունչն է խառնեալ: - 510. Կամ որպէս ասեն ոմանք թէ *երկու* յաւազոյ և մի ի սերմանէ՛ գոյանան մարմինք ձկանցն: - 510. Նա՛խ՝ զի մատթէոս զերեկոյի շաբաթուն և զլուսանալ միաշաբաթին յիշէ. այսինքն զսկիզբն և զվախճան գիշերին. զի *յերկուց* մէջն որ է՛ հասարակն և մէջ գիշերին՝ նշանակեսցէ զժամ յարութեանն: - 512. Երեքտասաներորդ՝ ամաղեկացիք գերեցին զկողմն հրէաստանի և զայլազգիս. և դաւիթ զհետ մտեալ յետ **գ** աւուր և հարեալ ի գիշերի և ի վաղիւն մինչ յերեկոյ. և դարձուցեալ *զերկոսին* կանայս իւր. և ո՛չ մնաց գերի և ո՛չ մի. և յաւարէ աստի բաշխեաց ամենայն սիրելեաց իւրոց: - 514. ...և տէր մեր յետ յերից օրինաց՝ այսինքն բնական բանական և գրաւական՝ երևեալ ի գիշեր կենցաղոյս և իջեալ ի դժոխս աւերելով զնա դարձոյց *զերկոսին* ժողովուրդս իւր...: - 514. Եւ զերկրորդն ղուկաս պատմէ՛ վաղ քաջ ընդ առաւօտն. և տեսին արք *երկու* լուսազգեացք. և զվէմն թաւալեալ: - 515. Եւ զչորրորդն յօհաննէս պատմէ միա՛յն զմագդաղենացին. և տեսեալ *երկու* հրեշտակս ի սնարս և յոտս նստեալ: - 515. Եւ ոմանք ասեն թէ՝ *երկու* են մագդաղենացիքն. մինն գնաց և ի ճանապարհին ետես զտէրն. և միւսն եկաց և ի պարտիզին ետես: - 515. Երրորդ՝ ամբարձեալ ձեռօք վերանայր յերկինս վասն *երկուց*. նախ՝ զի զինքնն ընծայեսցէ հօրն. երկրորդ՝ զի զթշնամիսն հարկանիցէ զօրաւոր ձեռամբ բարձրացեալ: - 520. Քառասունն**է**, *Երկուս* դասս պաշտմանց: - 527. Եւ Ֆռանկն *երկու* օր լուծանէ: - 527. Նոյնպէս մի է տէր մեր յիսուս քրիստոս և ո՛չ *երկու* ըստ բաժանողաց ոմանց: - 532. Եւ զի քրիստոս է հիմն *երկուցն*. և **դ** անկիւն առաքեալք և մարգարէք. և հին և նոր կտակարանք ասացեալ նոցա: - 533. Հինգերորդ՝ առաջին առաքեալքն իբր կատարումն բանից. երկրորդ մարգարէք նախաձայնք նոցին.

երրորդ վարդապետք մեկնիչք և թարգմանք *երկուցն* քարոզութեանց: - 535. Եւ այսպէս բացայայտի, զի *երկու* իրս խնդրին առ ի ճշմարիտ մարգարէ գոլ: - 536. Ասեմք, եթէ որք ի հաւատս ունին թիւրութիւն. որպէս հերձուածօղք և վնասիչք եկեղեցւոյ. և որք ի զազիր վարս պղծեալ են գործովք և վնասեն զինքեանս. և անզեղջք են առ *երկոսին*. յետ մի անգամ և *երկիցս* խրատելոյ, որոշեցին յեկեղեցւոյ և պատժեցին: - 540. ...և նոքա զամենայն ինչ ծածկապէս տեղեկացան. զի ժողովեալքն ի քաղկեդոն ակն առին թագաւորին և կնոջ իւրոյ. և զարհուրեցան ի սպառնալեացն. և զնեստորի կարծիսն հաստատեցին. *զերկու* բնութիւնսն. և զբ կամսն. և զբ ներգործութիւնսն: - 543. ...թէ *զերկու* քորս բ եղբարցն տալ. կամ զսանին քոյրն միւս եղբօրն. որպէս քո սուտ պետրոսին կանոն է, և ո՛չ ճշմարիտ պետրոսին. և զայլն լռեմ իբրև զամօթալի: - 548. Ասեմք առ այս՝ թէ լուսաւորիչն գնաց ի հռօմ ո՛չ վասն ձեռնադրութեան, այլ վասն սիրոյ և միաբանութեան *երկուց* ազգաց և ուղղափառ թագաւորացն տրդատայ և կոստանդիանոսի: - 548. Այլ դատաւոր միտն կացուցեալ *երկու* վկայ զանբիծ հաւատս և զօրէնս որ են հաւատք և գործք. զի առ ո՞ր և իցէ քրիստոս նա՛ է ճշմարիտ: - 551. Որպէս զինչ ասեմ համառօտ թէ՝ թերութիւն է մեր բաժանել զբանն ի մարմնոյն *յերկու* բնութիւնս և *յերկու* դէմս. ի կրկին կամս և ի գործս: - 552. Եւ այլ բազում և զանազան ազգապղծութիւն ընդ հօգևորս և ընդ մարմնաւորս. *երկու* եղբարց և բ քերց. և ընդ քերց հոգևոր մօր. և անխտիր ի բազմանկողինս և այլս բազումս որ զազիր է խօսելոյ օրէնքէ նոցա: - 552. Վասն այն այլ վարդապետք կոչեն զայս ախտ՝ ծուլութիւն. զի ծուլութիւնն *յերկու* իրաց երևի. մին որ յետս դառնայ ի հոգևոր բարւոյն և ծանրանայ ի գործելն. այսինքն պահել՝ աղօթել և այլն. և ըստ այսմ կոչի տրտմութիւն: - 559. Եւ ոմանք ասեն թէ յեօթանց անտի հինգն մարմնականք են և *երկուքն* հոգեկանք: - 559. Եւ ոմանք *զեկուսն* միա՛յն ասեն մարմնական. որ է՛ որկորստութիւն և բղջախոհութիւն. և այլքն ամենայն հոգեկան: - 559. Այլ ես ասեմ թէ յեօթանց անտի *երկուքն* պարզ հոգեկան են. այսինքն հպարտութիւն և նախանձ: - 559. Իսկ *երկուքն* պարզ մարմնական. այսինքն որկորստութիւնն և բղջախոհութիւնն: - 559. Ա՛րդ՝ ի թողուլն *երկու* են. այսինքն ողորմութիւն և արդարութիւն. ընդ դէմ առաջնոյն է՛ յուսահատութիւնն. և ընդ դէմ երկրորդին յանդըգնութիւնն: - 567. Եւ սա բաժանի *յերկուս*. այս է յիմացումն և ի կամքն: - 572. Ասաց *զերկոսինս* զայս յակոբոս զեբեթեայ: - 573. *Երկուքն* ի կողմանէ խոստովանահօրն, և *երկուքն* ի խոստովանողին: - 603. ...զի *երկուց* կամաց հաւանումն հաստատէ՛ զպսակն: - 609. Իսկ հաւանումն *երկուց* կամացն՝ հաստատութիւն է պսակին: - 610. և ապա ասաց «եղիցին *երկուքն* ի մարմին մի»: - 610. Յաւատն է՞ զի ո՛չ ոք ի *յերկուցն* պղծեսցի օտար անկողնով. որպէս այն որ թողու զհաւատն և ուրանայ բանիւ... - 610. Երրորդ, զի ասէ «եղիցին *երկուքն* ի մարմին մի». և ո՛չ երեքն, կամ բազումք: - 612. Երկրորդ, յորժամ արմըտիքն ժողովեին յաշնանն, յայնժամ տօնէին *զերկու* տօնն: - 616. Եւ նշանակէ՛ր կրկին փողն *զերկու* զանկակս, կամ զզանկակն և զժամահարն. կամ զփայտէն և զերկաթին: - 618. Զի՞նչ է յորժամ *երկուքն* սաղմոսե՛ն, և զօրհնութիւնն այլո՛ց տան: - 624. *Երկու* ղամպարքն, բ լուսաւոր հրեշտակքն. այլ և զլոյս աւետարանին: - 628. Զի՞նչ է որ *երկու* դասք պաշտեն յեկեղեցիս: - 636. *Երկու* դասք էին երգիչք ի տաճարին զոր կարգեաց դաւիթ ընդ տիւ և ընդ գիշեր հանապազորդ պաշտօն իդ ժամուց...: - 636. Իսկ երբեմն համաձայնին *երկու* դասքն. որպէս ի փառք ի բարձունս և յայլ երգսն: - 636. Եւ ա՛յս է պատճառն, զի մի տան շարականի դ տուն սաղմոսի պիտոյ է *յերկու* դասս. և մին շարականն ժբ տամբ աւարտի: - 636. Եւ թէոփիլեանք ոմանք կոչեցեալք, արարին *զերկու* ստեղունս ասացեալ. և այսպէս աւարտեցաւ ժ ձայնքն: - 640. Նա՛խ՝ զի մարդն հոգի է և մարմին, ձայնիւ և ձեռօք երգէր. *զերկու* մատունս ի մի լծակցեալ յօրհնութիւնն աստուծոյ: - 641. Իսկ մի տախտակն *յերկուս* բաժանեալ և հնգիւք փակեալ. - 646. Իսկ հայրապետքն բաժանեցին *զերկու* քառասունսն ի շաբաթապահս: - 649-650. Եւ նոյնպէս նինուէացիքն գ օր պահեցին. և *երկուքն* չորեքշաբաթ և ուրբաթ: - 650. Վասն է՞ր ազգն Ֆռանկաց *զերկու* օր պահոցն լուծանէ: - 651. ...և պապ նոցա հրամայեաց *զերկու* օրն ուտել: - 651. Եւ թէ կիրակէն ո՛չ է պահք որպէս *զերկու* աւուրքն լուծանեն, նոյնպէս և զկիրակէն լոյծ: - 652. Եօթներորդ, ի դէմս հոգւոյ և մարմնոյ մերոյ սրբութեամբ պահեմք *երկու* ի շաբաթուն: - 653. ...զի *երկուքն* բաժանեն զմի հացն...: - 655. Մահն բաժանի *յերկուս*. այսինքն յիմանալի և ի զգալի. որպէս և կեանքն է իմանալի և զգալի: - 668. Եւ այս վասն *երկու* պատճառի: - 679. իսկ հրեշտակք զմինն ունին. զի յոչ է է՛ եղեն. և *զերկուքն* չունին. - 681. ...իսկ դևք *զերկուքն* ունին. զի յոչ էից եղէն. և փոխեցան ի բարւոյն ի չար. այլ զմինն չունին. - 681. Դարձեալ՝ մի ասի կայանք *երկուցն* վասն միոյ ակնկալութեան. զի արդարքն ակնունին պսակաց, և մեղաւորքն տանջանաց: - 689. Այլ յորժամ հոգին միաւորեսցի ընդ մարմնի և *յերկուցն* լինիցի անձն, յայնժամ կարէ՛ ունել ներգործութեամբ զփառս

կամ զտանջանս: - 694. Եւ զի ա՛յլ է այս՝ և այլ այն՝ յա՛յտ է *յերկուց*: - 697. Զի «ժամանակ» որ է՛ ամ մի. «և զժամանակս» որ է՛ *երկուս* ամս. «և կէս ժամանակի» այսինքն կէս ամ: - 709. Երկրորդ, զի չո՛րք են սկզբունք աշխարհի. երկինք որ է՛ *երկուր*. հուր և օդ. և երկիր որ է՛ **բ** իր. հող և ջուր: - 714. ...զի կամ իմանալիք են որպէս հրեշտակք. կամ զգալիք որպէս տարրեղէնք. և կամ *յերկուց* գոյացեալ որպէս մարդ. այսինքն ի հոգւոյ և մարմնոյ... - 715. Վասն *երկու* պատճառի: - 731. Ուր ինքն տէրն խաչեցաւ և յարեաւ. և սոքա ամենեքեան ծոր յովսափաթու կոչին, որ *յերկու* ծորի մէջն է յէէմ: - 737. Դաւիթ ասէ «մի՛ անգամ խօսեցաւ աստուած, և *երկուր* զայս լուաք»: - 739. *Երկո՛ւ* են դպրութիւնք: - 741. Երկրորդ, զի *երկու* և երեքն լինին հինգ. զորմէ ասաց քրիստոս, «ուր **բ** և **գ** ժողովին յանուն իմ, անդ եմ ես ի մէջ նոցա»: - 742. Երրորդ, յատեան դատաստանի **դ** խնդրին վկայք. զի մինն կարէ՛ ոք խաբել և սուտ վկայել. այլ *զերկու* և զերեքն ո՛չ: - 742. Հինգերորդ, զի ճշմարիտն և սուտն ի մէջ *երկուցն* երևին. այսինքն դատաւորին և ոտխացն: - 742. Դիտելի՛ է, զի ի ճանապարհի աստի կենաց *երկու* են ոտխք. այսինքն դատախազք: - 743. ...զի երբեմն ծածկէ՛ ողորմութիւնն զարդարութիւն. և երբեմն արդարութիւնն զողորմութիւն. և երբեմն հաւասար *երկուքն* յայտնի և կամ ծածուկ... - 746. Երրորդ, հայի առ նոյն ինքն արդարապէս հատուցումն մանրամասն քննութեամբ բարեացն և չարացն. որք առաւել կամ նուազ ունին. կամ հասարակ *յերկուցն* կրից: - 746. Երկրորդ՝ անտանելի ցուրտ. յոր եթէ հրեղէն լեառն անկանէր՝ սառն դառնայր. վասն այս *երկուցս* ասի՝ լալ աչաց և կրճել ատամանց... - 752. *Երկու* ենթակայ ունիմք հաւատոյ. մօտ և հեռի: - 769. Եւ *երկու* կատարումն. մի զմկրտութիւնն. և մի զյարութիւնն որում սպասեալ ակն ունիմք: - 769. Զի առաջինն է անկատար. և միջին *երկուքն* կատարեալ. և վերջինն գերակատար: - 785. Արդ որպէս յամենայն ժամանակս սոքօք գան ի հաւատս ուղղութեան և է՛ վարձատրելի. այսպէս և ի վերջին ժամանակս որք յետ նեռինն՝ ո՛չ միայն ի հարկէ սքանչելեաց, այլ և ի լրոյ քարոզչաց *երկուցն* վկայից իջելոց սրբոց: - 785. Ընդ այսմ և որ ի ծէնջ արկեալ եղև. թէ վասն է՞ր է զի *երկու* բացասութիւն լինի մի ստորասութիւն. իսկ **բ** ստորասութիւն ո՛չ կազմէ մի բացասութիւն: - 787. Փեռեկելով *զերկոսին* կիսագունդս ներքոյ և վերոյ և ի միջի հաստատ կացելոյ երկրի: - 788

**ԵՐԿՈՒ ՀԱԶԱՐ +** Իսկ յետ մահուանն մովսէսի վերացաւ ամպն. և հրամայեցաւ ժողովրդեանն հեռու կալ կանգունս *երկուց հազարաց* վասն փառաց տապանակին և վասն զօրութեան նորա: - 415

**ԵՐԿՈՒ ՀԱՐԻՒՐ +** Դարձեալ՝ ենովքայ չուտելն ի պտղոյ զամենայն ժամանակս իւր *զերկու հարիւր* ամ: - 652

**ԵՐԿՈՔԵԱՆ, ԵՐԿՈՔԻՆ +** Իսկ որք բառնան զաստուածութիւնն ի միոյն՝ և ո՛չ *երկոցունց* տան զաստուածութիւնն, իմա՛, ըստ առաքելոյն զօրութիւն և իմաստութիւն է հօր որդի. և բան՝ ըստ աւետարանին յօհաննու: - 51. Խաղաղութիւն է և որդի ըստ պօղոսի, «նա՛ է խաղաղութիւն մեր որ արար *զերկոսեանն* մի. և արար խաղաղութիւն արեամբ խաչին իւր»: - 56. Զի եթէ զոյգ և հաւասար, ո՛չ գոյ առ նոսա կատարեալ բղխօղ. զի *երկոքինն* ի մի բղխողի տեղի են: - 63. Եւ բարձեալ զխտրոցս բաժանման ասէ՝ *երկոքեանն* մի՛ են. առնլովն աստուծոյ և մարդանալովն. և մարդոյն աստուածանալովն. ահա զքնութեանցն միաւորութիւնն եցոյց: - 80. *Երկոքին* բնութիւնքն պաշտելի՞ են թէ մի: - 90. Երրորդ ասի անեղ այն՝ որ ի յումե՛ք է, և ի յումեք ո՛չէ. որպէս հրեշտակք յաւիտենի եղեալ, և ի ժամանակի անեղ. սա կարօտ և անկարօտ *երկոցունց*. այսինքն սկզբան և կատարման: - 113. Ապա և *երկոքին* անեղութիւնքս միայն աստուծոյ են գիտելիք: - 118. Իսկ մեք *երկոցունցն* անգիտանամք: - 118. Այսու հաւասարին, զի *երկոքինն* առ ճշմարիտն ունին զդիտումն: - 121. Ըստ որում, «արար *զերկոսեանն* մի»: - 126. Արդ՝ ցամաքային կենդանիքն *զերկոսին* զսոսա՛ ունին. վասն որոյ ծայն արծակեն: - 216. Զի թէ կորագլուխ էր մարդն, և *երկոքին* ձեռքն ի յերկիր հաստատեալ, ո՛չ կարէր գործել: - 233. Իսկ յանասունսն ամենևին ըստ *երկոցունցն* կորնչին ընդ մարմնոյն: - 249. Եւ սոքա *երկոքեանս* խոտելի են եկեղեցւոյ: - 252. Եւ ա՛յս է ըստ մարգարէութեանն որ ասէ, «եղիցին *երկոքեան* ի մարմին մի». այսինքն յերկու սերմանց ծնողացն լինի մին մարմին զաւակի: - 261. Դարձեալ՝ հանճարն է ի յարհեստն. իմաստութիւնն ի բանն. և գիտութիւնն առ *երկոքինն*. այսինքն ի յարհեստն և ի բանն: - 270. Չորրորդ՝ ամօթն. «բացան ասէ աչք *երկոցունցն*, և տեսին զի մերկ էին». և վասն այն արարին ի թզենւոյն ծածկոյթ: - 280. Եւ այս *երկոքեանս* սո՛ւտ են. և ո՛չ են ընդունելի մեզ: - 290. Սոքա *երկոքինս* պիտո՛յ են ամենայն մարդոյ ի մարտ թշնամւոյն: - 323. Եւ յարտաքին սրահն **ḥ** սիւնք արծաթապատք. և յամէն սիւն **բ** խարիսխք և խոյակք *յերկոքին* ծայրքն: - 343. Երկու ծիթենիք՝ *երկոքին* բանքն սրտի և բերանոյ: - 347. Խոյրն, վարշամակն. և Միթրն և թիթեղն ոսկի, պատկերք սրբոցն

նկարեալ. և *երկորին* Բազպանն, փոխանակ անդրավարտեաց: - 348. Եւ *երկորին* սոքա առ մեզ եկեալ, յորժամ չարաց բարի առնէ, ողորմութիւն է: - 408. Կամ *երկորեանն* քահանայապետք էին: - 427. Քանի**բ**, *երկորին* դուստրն խօսեցաւ դաւթի, և կրտսերն տւաւ. և փեսային քրիստոսի կրկին խօսեցաւ եկեղեցի և նո՛րս տուաւ: - 436. Եւ *երկորին* սոքա բարի են յաստուծոյ իջեալ: - 457. Եւ երբեմն *երկորեանն* ծածուկ. որպէս ի նեղութիւնս իւրաքանչիւր արդարոց և անմեղաց. և ի հիւանդութիւնս տղայոց: - 459. Իսկ երբեմն *երկորեանն* յայտնի. որպէս ի հատուցումն արդարոց. և ի պատիժ անարգելոցն. - 459. Սակայն ըստ ներգործութեան մեծագոյն է սրբութիւն մկրտութեանն. զի տպաւորէ զկնիքն. այլ և բանայ զդուռն արքայութեան. այլ և պատրաստէ՛ զմարդն առ ի խորհուրդս ամենայն. զոր ո՛չ ներգործեն ա՛յլ *երկորին* եզական շնորհքն: - 462. Եւ են որ էութիւնք են և էութեամբ շաղկապին. որպէս *երկորին* նիւթք սոսընձով կամ երկաթով: - 476. Քանզի ո՛չ կարէին ի միում աւուր *յերկուսեան* ուխտսն կատարել զտօնսն հեռի գոլով ի միմեանց. երուսաղէմացիքն այսր աղագաւ փոխեցին. և փոքր փոքր աճմամբ ընկալան և ա՛յլ եկեղեցիք զնոյն: - 482. Ապա թէ ոչ՝ սուտ լինի վկայութիւն աւետարանին թէ «էին *երկորին* արդարք առաջի աստուծոյ»: - 484. Արդ՝ *երկորին* ծայրքն՝ այսինքն մեղքն և ապականութիւնն են պարզաբար և ամենևիմբ չար անւամբ և իրօք. - 496. Ա՛րդ՝ ի կենդանեաց *երկորինն* պահանջին. իսկ հոգւոցն բաւակա՛ն է միայն ներքին իմացումն զի չունին մարմին: - 508. Իսկ նաւակատեաց կերակուր այն է՝ որ միջակ է սոցա *երկոցունց*. այսինքն ի կենդանւոյ և ի տնկոյ. որպէս ձուկն, ձու, և կաթն: - 510. Նախ՝ զի *երկորեանն* տաճար են աստուծոյ. այսինքն շինեալն և մարդն. «դուք տաճար աստուծոյ կենդանւոյ էք ասէ առաքեալն»: - 533. Իսկ թէ *երկորին* ևս իցեն անարժանք, շնորհն ոչինչ է օգուտ. այլ դատապարտութիւն լինի *երկոցունցն:* - 540. Չորրորդ՝ և *յերկուսեան* ճրագալոյցս ո՛չ առնել պատարագ: - 553. Որպէս ահա՛ *յերկուսեան* ճրագալոյցսն այսինքն ի ծննդեանն և ի յարութեանն միաբանին հայք և յոյնք և ասորիք. իսկ լատինք ո՛չ: - 554. Եւ *երկորին* սոքա անօրէնութիւնք են: - 555. Պատասխանեմ և ասեմ եթէ ո՛չ են միմեանց հակառակ. այլ *երկորեանն* ճշմարիտք են որպէս ցուցանեմք յետոյ: - 556. Իսկ թէ կառավարն թիւրի, կառքն ո՛չ կարէ ուղղել. այլ *երկորինն* գահավիժին: - 557. Այլ համաձայնին. զի *երկորեանն* հաւատն և յոյսն՝ են յոչ երևելիսն: - 574. Այլ ունակութիւնք երանութեանցս պատրաստե՛ն առ կատարելութիւն *երկոցունց:* - 586. Հաղորդութիւնն է խորհուրդ՝ յորում պարունակի քրիստոս ի ներքոյ ձևի հացի և գինւոյ. և *յերկորին* մասունքն է բոլոր քրիստոս: - 594. Ըստ այնմ թէ՝ «թողցէ այր զհայր իւր և զմայր իւր և երթիցէ զհետ կնոջ իւրոյ, և եղիցին *երկորեան* ի մարմին մի»: - 609. Նոյնպէս աստուծոյ բանն է որ առնէ *զերկուսեանն* մի՝ զայրն և զկինն: - 610. Ութերորդն նոյնպէս *զերկոցունց* կողմանց յայտնէ զփրկելոց և զկորուսելոց. - 630. *Երկորեանն* են ընտրելի. և ա՛յս է խորհուրդն: - 642. *Երկորին* ճրագալոյցքն. որ լինի **ը**: - 649. Եւ յորժամ յետոյ սուրբ հարքն զմիջին *երկորին* շաբաթս բարեկենդանացուցին, - 650. Եւ զայս ի քրիստոսէ ուսաք. զի այսպէս խաչանման բեկանէր զհացն *երկորին* ձեռօքն: - 655. Այլ *երկորինն* ունին ի հոգիս իւրեանց մերձ տեսեալ՝ զոր ի յարութեանն առնելո՛ց են կատարեալ անձամբ՝ հոգւով և մարմնով: - 670. Դարձեալ՝ կրկին է կեանք. այսինքն ժամանակեայս և հանդերձեալն. և *յերկորինս* սխալեցաք մեք:. - 680. Իսկ թէ ո՞ւր իցեն սոքա *երկորեանս*, տեսիլն յօհաննու յայտնապէս ցուցանէ. սրբոց խորանս ասէ զվերինն սիօն և զհրեշտակացն դասս: - 688. Ապա ուրեմն *երկորինն* ո՛չ կրեն այժմ զտանջանս, այլ ի հանդերձեալն: - 690. ...զի նա քաւեալ է և սա ոչ. մինչև մարմինն ևս տանջեսցի և քաւեսցի. որ է՛ անպատշաճ *երկորինն:* - 699. Վեցերորդ, զի **բժ**ան ցեղապետք էին հնոյն. և **բժ**ան առաքեալ նորոյս. *զերկոցունց* ազգաց նահապետսն դնելով զբոլոր թիւ ամենայն ազգին, նշանակէ՛: - 712. Ասեմք եթէ՝ սխա՛լ են և *երկորին* դասքն: - 725. ...և *երկորեան* սոքա կարի յոյժ վայելեն դատաւորի. այսինքն իմաստութիւն և անմեղութիւն. վասն որոյ քրիստոս լինի դատաւոր: - 735. Իսկ *երկորին* թաթք կշռոցն՝ հոգի և մարմին: - 745. Եւ պա՛րտ է գիտել զի ի միոյ սեռէ բարութեանցն աստուծոյ՝ յառաջե՛ն առ մեզ ողորմութիւն և արդարութիւն. կրկին տեսակ կամ գործք կամ զօրութիւն. որպէս ի մեզ *երկորին* ձեռք մարմնոյ. և որպէս իմացումն և կամք հոգւոյ: - 745. Իսկ միտելն՝ զչափ թաթաղուն զեղուն *երկոցունց* կողմանց. այսինքն բարեաց և չարեաց: - 745. Չորրորդն *երկոցունցն* ծայրագոյն միաւորութիւն: - 755. Եւ դարձեալ՝ զորօրինակ, լոյսն և ջերմութիւն են էութիւն նորին զուգասփիւռ. այլ երբեմն մինն ծածուկ, և երբեմն *երկորին* յայտնիք, և ընդ դէմ սորա: - 779. Եւ երբեմն *երկորեանն* ի ծածուկ. որպէս ի նեղութիւն իւրաքանչիւր արդարոց և անմեղաց: - 779. Երբեմն *երկորեանն* յայտնի. որպէս ի հատուցումն իւրաքանչիւր արդարոց և մեղուցելոց: - 779

**ԵՐԿՐՈՐԴ** - 1192

**ԵՐՐԵԱԿ +** Եւ դարձեալ ասէ՝ «միակն յերկեակն շարժեցեալ՝ մինչև *յերրեակն* եկաց»: - 65. Հինգերորդ՝ որպէս միա՛կ է հայր. զի սկիզբն է ամենայն թւոց. և երկեակ որդի. և *երրեակ* հոգի ըստ աստուածաբանին: - 105. «Միակն շարժեցելոյ՝ յերկեակն և *յերրեակն* եկաց»: - 105. Առաջինն որ է տըպաւորական աստուածաբանութիւն՝ է՛ ի դէմս սուրբ Երրորդութեանն և մի աստուածութեանն. թէ ո՞րպէս է մի. ո՞րպէս *երրեակ*. և ծնօղ. և ծնունդ. և բղխումն. և վասն մարդեղութեանն քրիստոսի: - 122. Որպէս ի դասս հրեշտակաց՝ առաջին *երրեակ* դասքն առաւել են փառօք քան զմիջինսն և զվերջինսն: - 131. Ասեմք եթէ՝ ինն դասք յերիս *երրեակս* որոշեալ թըւոց. որոց Առաջինն է Աթոռք. Քերոբէք. և Սերոբէք: - 134. Իսկ յերիս *երրեակս* թւեալ՝ բազմազա՛ն է իմանալի: - 134. Զի գիտեմք զդոսա ինն գոլ դասս ըստ սրբոյն դիոնիսեայ. և երիս *երրեակս* որոշեալ ի դէմս Երրորդութեանն: - 141. Եւ ո՛չ թիւ պատահական կամ բան տարալուծական. այլ մի *երրեակ*. և *երրեակ* մի. ըստ որում սկիզբն է թուոց՝ և ո՛չ թիւ. և բաժանեալ յա՛յլ էակաց: - 171. Դարձեալ **թ** թիւն է երիցս *երրեակ*. և երեք թիւն է կատարեալ. ունելով առաջին միջին և վերջին. ի նմանութիւն **թ** դասուց հրեշտակաց: - 264. Զի բոյսք մանունք և չորքոտանիք մանունք կարեն ի նոյն ամի զնմանն ծնանիլ ըստ վերոյ ասացեալ *երրեակ* թուոյ ամսոյ, կամ կրկին վեցեկի: - 264. Իսկ տունկք որք են մեծաբոյսք՝ և չորքոտանիք մեծամեծք՝ յերրորդ ամին ծնանին զնմանն. որ է թիւ կրկին ամսոյ ընդ *երրեակ* վեցից: - 264. Երրորդ, որպէս յերկինս յերիս *երրեակս* որոշին դասքն. այսինքն առաջին՝ աթոռոցն. միջին՝ տէրութեանցն. և վերջին՝ հրեշտակացն: - 624. Այլ և **թ** տէր ողորմեայն ի պատարագն. և **թ** երեքսրբեանն, ի խորհուրդ **թ** դասուց վերնական յերիս *երրեակս* որոշեալ: - 645

**ԵՐՐՈՐԴ** - 949

**ԵՐՐՈՐԴԱԿԱՆ +** Ա՛րդ՝ ո՛չէ ի յաստուած անձնաւոր էութիւն. որպէս *Երրորդական* անձինքն. և ո՛չ բաժանեալ ի նմանէ. որպէս հրեշտակաց դասքն. և ո՛չ որպէս սոսկ մտածութիւն ի տեսութիւնն աստուծոյ: - 112. Երրորդ, *Երրորդական* լուսովն հաւատոյ հետևիմք ի կեանս: - 380

**ԵՕԹԱՆԱՍՆԵԿԻ, ԵՕԹԱՆԱՍՆԵԿԻՆ +** Ըստ այնմ թէ՝ «ըստ *եօթանասնեկին* եօթն գայցէ և թողցի. և ո՛չ եկի կոչել զարդարս, այլ զմեղաւորս» և այլն: - 778

**ԵՕԹԱՆԱՍՆԵՐՈՐԴ +** *Եօթանասուներորդ*, յերիս առաջս զօրօք յաղթեաց թշնամեաց. և տէրն մարմնով և հոգւով և աստուածութեամբն յաղթեաց: - 438

**ԵՕԹԱՆԱՍՈՒՆ +** *Եօթանասուն*, Վասն սիրոյ աստուծոյ լո՛ւր իսրայէլ: - 285. Եւ որք **լը** ասեն զփորձանսն՝ սոյնպէս թուեն. յետ հարւածոցն եկաց յոբ **բ** եօթանասուն. այսինքն **ճխ** ամ: - 327. Որ լինի բովանդակն մինչև յելսն եգիպտոսի, **գռոծթ** ամ ըստ *եօթանասնիցն:* - 337. Զի *եօթանսունսն* **եռբճ** պակաս **բ** թիւ գրեն. և այլք **եռշ** ամ. որ է՛ **ե** դար և կէս: - 345. Որ և ցուցանէր յետ *եօթանասուն* ամի զդարձ գերւոյն, և զնորոգիլն հրէական կարգին: - 346-347. Ըստ *եօթանասնից* **վչլ** ամաց պատմութիւն է: - 411. Եւ յետ յեսուայ դատաւորք դատեցին առաջնորդութեամբ զիէլ **նժ** ըստ *եօթանասնիցն* թուով երեքտասան դատաւորք մինչև ի հեղի քահանայ: - 420. Զոր *եօթանասունսն* ի ասեն. իսկ սամուէլ և սաւուղ ամս **խ**: - 420. Զի ի ռոբովամէ՛ որ զերինջսն գործեաց՝ վեց *եօթանասուն* ամ է մինչև զգերութիւնն սակաւ ինչ պակաս. վասն որոյ *եօթանասուն* ամ շաբաթեցոյց զնոսա ի գերութեան: - 448. Չորրորդ՝ գերիլն ի բաբիլօն՝ զգերութիւն բնութեանս նշանակէ. և *եօթանասուն* ամն զեօթն դար կենցաղոյս. և ապա դարձումն ի հայրենի բնակութիւնն մեր ի ձեռն փրկչին մերոյ և աստուծոյ: - 448. Եւ յետ *եօթանասուն* ամի շինուածոյ տաճարին՝ ապա արձակեալ նէեմի շինէ զպարիսպն էմի ի **լբ** ամին արտաշէսի. որպէս ասէ գիրքն եզրի: - 448. Ըստ *եօթանասնիցն* **րճղը** ամ: - 451. Եւ ձգեցաւ գերութիւնն ամս *եօթանասուն:* - 453. Եւ միանգամայն յադամայ ի ծնունդն քրիստոսի ամք **րճղը**. ըստ *եօթանասնիցն* որպէս ասացաւ ի վերոյ: - 453. Եւ ա՛յս է պատճառն որ ոմանք *յեօթանասնիցն* ասեն. զի *եօթանասուն* աշակերտացն գլուխ և վարդապետ էր. որպէս պետրոս երկոտասանիցն. և առաջինքն ամենայն ուրեք յետնոցն անուամբ կոչեին. այս է ստոյգ պատճառն: - 549. ...և զվարդավառի **բ** պատկերն, և զփոխման **բ** պատկերն, զհրեշտակապետացն, և *զեօթանասնիցն*, զղևոնդեանցն... - 637. Եւ որպէս **բժ**ան բիւր հրեշտակացն, և *եօթանասնից* եօթն թողուլն, և ամլոյն եօթն ծնանիլն ո՛չ է վճիռ, նոյնպէս և **իդ** երիցանցն: - 711

**ԵՕԹԱՆԱՍՈՒՆԲ** - 1

**ԵՕԹԱՆԱՍՈՒՆԳ** - 1

**ԵՕԹԱՆԱՍՈՒՆԵՐԿՈՒ** - 1
**ԵՕԹԱՆԱՍՈՒՆԵՒԴ** - 1
**ԵՕԹԱՆԱՍՈՒՆԵՒԵ** - 1
**ԵՕԹԱՆԱՍՈՒՆԵՒԶ** - 1
**ԵՕԹԱՆԱՍՈՒՆԵՒԷ** - 1
**ԵՕԹԱՆԱՍՈՒՆԵՒԸ** - 1
**ԵՕԹԱՆԱՍՈՒՆԵՒԹ** - 1
**ԵՕԹԱՆԱՍՈՒՆԵՒՄԻ** - 1

**ԵՕԹՆ +** *եօթն* են անհատողութիւնք անձին որպէս ասէ պորփիւր, «անհատ է ի յատկութեանց բաղկացեալ. որոյ հաւաքումն ո՛չ այլ ումեք ասացի». և են այսոքիկ: - 87. **զ**) Ինն դասք են հրեշտակաց. և յերիս երեակս որոշեալ. և այլք *եօթն* ասեն: - 102. *եօթն* գլուխն է է չար զօրութիւն նորին. որպէս հոգւոյ մարդոյ է բարի զօրութիւնք են և է առաքինութիւնք. որպէս տէրն ասէ՝ «է այս չար հոգի բնակի ի մարդն զոր գտանէ թափուր ի բարեաց գործոց»: - 151. *եօթն* խոյրն զդիւական ներգործութիւնսն նշանակէ. որովք յաղթէ՛ զմարդ և պսակի: - 152. Իսկ շաբաթն որ է՛ **է** օր՝ կոչեցաւ *յեօթն* մնլորակաց: - 190. Զի հինքն *զեօթն* մոլորակսն՝ է տուն աստուածոց կոչէին: - 190. Զոր սուրբ հայրապետք փոխեցին զանուանս նոցա և եդին բոլոր շաբաթուն *եօթն* աւուրցն: - 190. *եօթն* արու. Նաւասարդի. Յոռի. Սահմի. և այլն: - 200. Երեսունն**է**՝ *եօթն* շնորհքն, և *եօթն* յանցանք, և *եօթն* պատիժն ադամայ: - 228. *եօթն* ծակ գլխոյն *եօթն* մոլորակացն: - 232. Ասեմք թէ *եօթն:* - 239. *եօթն*՝ կուշտն: - 241. Ապա թէ *յեօթանց* ասացելոցս միոն վնասի, իսկոյն մեռանի մարդն: - 241. Իսկ մարդոյն խորհուրդն ըստ չորից տարերց և երից զօրութեանց տնկականին *եօթեամբ* կատարի. թիւ շնորհալի և մշտակոյս ըստ աթենայ. զի ոչ ծնեալ լինի և ո՛չ զայլս ծնանի: - 264. Վասն որոյ *յեօթն* ամիսս ատամն բուսանի տղայոց. և *յեօթն* ամն դարձեալ փոխի: - 264. Եւ **է** ամեայ ուսումն ստանայ. վասն որոյ մինչև *յեօթն* ամն երեխայ կոչի. զի **գ** մասունք են հոգւոյն. բան. ցասումն. և ցանկութիւն. ըստ պղատոնի: - 264. Եւ այսպէս ի ներքուստ ի վեր կրկնեալ *եօթնից* որ է չորեքտասան, կատարի ցանկական մասամբն և կարէ՛ զնմանն ծնանիլ և կոչի մանուկ: - 264-265. Վասն որոյ յայսմանէ և յառաջ հաստատի մարդ ի հանճարս բանակրութեան և ի տեսութիւն իմացման մինչև ի **խթ** ամն որ է *եօթնիցս եօթն:* - 265. Եւ ի **հը**-էն մինչև ի մահ, և կամ ի **ճժբ** ամն, լինի զառամացեալ. որ է *եօթնիցս* վեշտասան: - 265. Զայս կարգ պահէ՛ և ի զարգացման հասակին. զի մինչև *ցեօթն* ամն ատամն բուսանելով և փոփոխելով՝ նշանակէ՛ զկերակրականն: - 267. Եւ զի՞նչ է *եօթն* յանցանքն: - 279. *եօթն* ազգ բարեգործութեան տեսակ երևի աստ ի հաբէլ. վասն որոյ և **է** պարգևաց արժանացաւ: - 286. Իսկ կայեն զի ո՛չ այսպիսի կամօք մատոյց՝ անարգեցաւ *եօթնիցս* ընդդիմակօքն: - 287. Դարձեալ է յանցանօք մեղաւ կայեն. վասն որոյ և *եօթնիցս* պատժեցաւ: - 287. Եւ **գ** *եօթն* է որ արձակեաց զաղաւնին որ լինի **իա**. և **ե** օր աւելեացն որ լինի տարի մի: - 294. Եւ *եօթն* նշանաւոր աստեղք՝ **հ** աշակերտքն: - 303. *եօթն* ազգ սոյնպէս: - 330. Եւ կատարեցաւ խորանն *յեօթն* ամիսս. և յերկրորդ ամին յառաջին ամսեանն կանգնեցաւ: - 344. Եւ *եօթն* ճրագ շուրջ զնովաւ, եօթնեքին դասք ընտրելոց նորա: - 347. *եօթն* բերանն՝ է բանք խօսեցեալ կուսին յաւետարանին: - 347. Եւ ո՛չ միայն այս, այլ *զեօթն* օր անխմոր բաղարջ ուտէին ամենայն ժողովուրդն. և Աբրահամ և ղովտ բաղա՛րջ յօրինեցին զխորհուրդ փրկական մարմնոյ տեառն որ ի վերնատունն բաղարջով աւանդեաց: - 356. Եւ ի սմանէ առցեն ասէ զհաս իրաւանցն. և զմնացեալն եփեսցեն ի սուրբ տեղւոջ և կերիցեն քահանայքն *զեօթն* օր: - 359. *եօթն* նշանակէ զ**է** դար շրջանացն: - 363. Այլ և պահեն *զեօթն* օր սուրբ զգեստիւն: - 363. Այլ զքրիստոս ո՛չ պատարագեն. և ո՛չ այլ ինչ ի խորհրդոց *եօթանց* կատարեն: - 370. Չորրորդ՝ զի ցուցցէ նոցա՝ *յեօթանց* զմինն աղքատաց և կարօտելոց բաշխել: - 372. Եւ *եօթնից* է տօնեմք յարութեան. նոյնպէս զմի օր օրինացն տըլչութեան, տօնեմք **ը** օր հոգւոյն գալստեան: - 373. Երկրորդ՝ մեղք *եօթնից* զգայարանացն պակասի. և արդարութիւն որ մինն է հաստատի առ զղջացեալս: - 374. Երրորդ՝ *եօթն* հասակ մեր փոփոխի. և ութն հաստատի: - 374. Զի՞նչ էր *եօթն* բանակ չուելն: - 380. Երկրորդ, մկրտութիւնն է **գ** օրն. զի ունի հրաժարիլն և զդաւանելն և զմաքրիլն. և ապա՛ *եօթն* խորհուրդ եկեղեցւոյ: - 384. Երկրորդ՝ զի *եօթնիցս* եղև արժանի տեսլեան Երրորդութեանն. կրկին անգամ զհայր ի գիշերի. և կրկին զորդին ի տիւն. և հոգի աստուծոյ ի վերայ նորա երկիցս անգամ. և մի անգամ զհրեշտակն ետես: - 387. Վասն որոյ պա՛րտ է ընդ հրամանաւն կալ նոցա՝ յորմէ և առ որ զկապակցութիւն ունիմք *եօթանցն* ասացեալ: - 389. Զի՞նչ է որ ասէ, «ընդ մի ճանապարհ գայցեն, և ընդ *եօթն* փախիցեն»: - 404. Եւ *եօթեամբ* դարոյս հարսանեաց յութերորդին միաւորեսցին: - 422. Եւ տէր մեր *յեօթն* տեղւոջ է ծաղանօք երիցս

կապեալ: - 423. Զի՞նչ է որ յետ *եօթն* ամսոյ դարձաւ տապանակն: - 426. Իսկ դարձումն ի յետ, *յեօթն* դարուց կենցաղոյս դարձեալ ուստի ելին ժողովին ամենայն սրբութիւնք: - 426. *Եօթն* դաս պարուց էին. որոց երեքն բերանով երգէին. այսինքն նուագն և սրինգն և փողքն: - 431. Թագաւորեաց նախ **է** ամ ի վերայ յուդայ, և ապա ամենայն իէլի. և տէր մեր *յեօթն* դարոյս թագաւորէ՛ հաւատացելոց, և ի վախճանի ամենայնի. յորում «ամենայն լեզու խոստովանեսցի տէր զյիսուս» ասէ առաքեալն: - 437. Չորրորդ՝ գերիլն ի բաբիլօն՝ զգերութիւն բնութեանս նշանակէ. և եօթանասուն ամն *զեօթն* դար կենցաղոյս. և ապա դարձումն ի հայրենի բնակութիւնն մեր ի ձեռն փրկչին մերոյ և աստուծոյ: - 448. Ի տիպ խորհրդոյ օրինակի մերոյս տաճարի գերեալ ի մեղաց և աւերեալ տաճար սրբութեանս *եօթնիւք* զգայութեամբք: - 448. Եւ յորժամ զղջանամք ի մեղաց՝ նախ խոստովանութեամբ շինեմք զտաճար սրբութեան մերոյ. և ապաշխարութեամբն որ է՛ փոխարէնքն՝ կանգնեմք զպարիսպն *եօթնիւք* զգայութեամբք: - 448. Եւ *եօթնից* ժամանակաց փոփոխմամբ՝ է հասակաւ *յեօթն* դար կենցաղոյս՝ լինիմք տաճար և քաղաք քրիստոսի աստուծոյ մերոյ: - 448. *Եօք*՝ երկու մնացորդացն: - 451. Սա՛ ի **դ** ամի թագաւորութեան իւրում կազմէ՛ զհանդերձանս տաճարին. և *զեօթն* ամ կատարեաց: - 452. *Եօթն* բան խօսեցեալ ի վերայ խաչին: - 454. *Եօթն* տեղիս յոյժ անարգեցաւ: - 454. Այլ և *յեօթն* տեղ մասնէ՛ բղխեաց արիւնն քրիստոսի: - 492. *Յեօթն* տեղ յոյժ անարգեցաւ: - 492. Եւ այլ ևս գտցես յաստուածաբանին ճառն յառաջքն գրոցս ի *եօթն* գլուխն՝ ի **ժգ** համարն: - 518. Քսանևը, Թէ *եօթն* են խորհուրդք եկեղեցւոյ: - 526. Եւ ոմանք ասեն թէ *յեօթանց* անտի հինգն մարմնականք են և երկուքն հոգեկանք: - 559. Այլ ես ասեմ թէ *յեօթանց* անտի երկուքն պարզ հոգեկան են. այսինքն հպարտութիւն և նախանձ: - 559. Դարձեալ զանազանին ըստ թուոյ. զի մահացուն *յեօթն* բաժանի. որք են գլխաւորագոյնք: - 568. Յորոց *եօթն* վերաբերին առ աստուածութիւնն. և *եօթն* ի մարդեղութիւնն քրիստոսի: - 572. Եւ զի դժուարին է հոգւոյ մարդոյ կարգաւորել զինքն և սրբել ի մեղաց. վասն այսորիկ օգնութիւն տայ աստուած հոգւոյ մարդոյ *զեօթն* պարգևս հոգւոյն սրբոյ: - 582. Իսկ գործ ողորմութեան են չորեքտասան. այսինքն *եօթն* մարմնաւոր և *եօթն* հոգևոր: - 584. Դարձեալ՝ **է** են խորհուրդք որ պատրաստեն զմեզ ընդունիլ *զեօթն* առաքինութիւնս: - 587. Չորրորդ, զի թէ ի ձեռն փիլիպպոսի առաքելոյ որ էր մի *յեօթանց* անտի սարկաւագացն ո՛չ եղև իջեալ հոգին ի վերայ ներքինւոյն մինչև յափշտակեցաւ յազովտոս: - 589. Այս ըստ հակառակասիրութեան նոցա ասի. այլ ըստ ուղղութեան՝ քահանայն ունի իշխանութիւն *զեօթն* խորհուրդ եկեղեցւոյ կատարել. և եպիսկոպոսն առաւել ունի. զի միայն տայ զկարգն, եկեղեցի օրհնէ և սեղան: - 594. Եւ հօր եղբայր, և քոյր. և մօրաքոյր, և եղբայր. և ծնունդք նոցա մինչև *յեօթն* ազգն: - 611. Հինքն ի խորհուրդ *եօթնից* կենցաղոյ դարոյս՝ *զեօթն* առաւել պատուէին: - 626. Վասն որոյ *եօթնից* էր շաբաթումն նոցա աւուրց ամսոց: - 626. *Եօթն* *եօթն* գառանցն զենումն: - 626. Եւ **է** սրսկումն արեան. վասն *եօթնից* զգայարանացս սրբութեան: - 626. Այլ և *զեօթն* օր շրջեցան տապանակաւն, և կործանեցաւ պարիսպն երիքովի: - 626. Իսկ ի նորս առ մեզ, Սակաւ ինչ հոգացեալ *զեօթնիցս*, այլ ութերորդին փոյթ տարեալ դարուց աւանդապահք եկեղեցոյ, կարգեցին ութն կանոնս **ըը** գուբղայիւ: - 627. ՚Ի յայս միտս և *զեօթն* օր շաբաթուն փոխեցին առաքեալքն ի կիրակէ. որ **ը** երորդ է ըստ կարգի: - 627. ...և յեօթներորդ օրն ի *եօթն* նուագին բարձրաձայն փողովք հնչեցին քահանայքն. և ժողովուրդն բարձրաձայն աղաղակեաց. յորմէ կործանեցաւ եօթնապատեան պարիսպն երիքովի: - 627. Նոյն սարասիւք այժմ ի ձեռն փրկչին մերոյ յիսուսի՝ տապանակաւ խաչին և աղօթիւք սուրբ եկեղեցւոյս՝ բարձրացեալ պարիսպն չարութեան *եօթնից* զգայութեանց մեղաց որոշօղ ի մէջ մեր և աստուծոյ, կործանեսցի ի սպառ: - 627. Զաւագ օրհնութիւնքն *զեօթն* ձայնիցն, ստեփաննոս սիւնեցին: - 637. *Եօթն* աղին՝ է զգայարանս. և *եօթն* փոփոխմունք *եօթնից* դարուցն. և զօրութիւնք հոգւոյ: - 641. Հինգերորդ յարութեանն *եօթնիցս* է: - 649. ...որպէս խրատէ՛ սողոմոն. «տո՛ւք բաժինս *յեօթանց*՝ այլև յութիցս»: - 658. ...զոր արարեալ էր սուրբն գրիգոր աստուածաբանն *յեօթն* ամի հայրապետութեան իւրոյ: - 658. Իսկ զկանոն ջրօրհնէից՝ սրբոյն բարսղի է արարեալ *յեօթն* ամի հայրապետութեան իւրոյ յեէմ. զի անդ հանդիպեցաւ: - 658. ...ըստ դանիէլի որ ասէ՝ «*եօթն* ժամանակք փոխեսցին ի վերայ քո»: - 663. Նախ ի բեթլէհէմ. և ապա՛ ի քեբրօն. և յետ *եօթն* ամաց ի վերայ ամենայն իէլի օծաւ: - 673. Եւ այսպէս ծածկեսցեն հողով *զեօթն* օր զաստիճանքն... - 674. ...և *զեօթն* խորհուրդ եկեղեցւոյ կատարեաց: - 674. Եւ ի խորհուրդ *եօթանց* դարուց կենցաղոյս՝ *զեօթն* օր նաւակատիս կատարեմք թաղման քահանայից: - 674. ...և վասն *եօթնից* աստիճանաց, և *եօթն* աստեղան խորանացն, եօթօրէք կատարեմք: - 683. Նա՛խ՝ ի ժամանակս. զի **գ**, և **է**, և ամիսն, և տարին՝ լինի **դ**. և **գ** օրն նախկին, որ է՛ *եօթն:* - 683. Եւ ժամանակն **գ** է և *եօթամբ* չափի շաբաթի աւուրբ. և *եօթն* դար կենցաղոյս: - 683. Եւ ո՛չ որպէս շաղակրատեն ոմանք մտացածին բանիւ. թէ

երեք օրն՝ կամ *յեօթն*՝ կամ յամիսն՝ և կամ ի տարին ելանեն ի քաւարանէն: - 683-684. Եւ ի **խե** գլուխն ի վերայ այնմ բանի «ո՛չ ոք կարէ մտանել ի տաճարն մինչև կատարեսցին *եօթն* հարուածք *յեօթն* հրեշտակացն», ասէ մեկնիչն. ոչ արդարոցն հանգչելոյն աղաչանք, և ո՛չ մեղաւորացն ի տանջանս հառաչանք...: - 703. Եւ որպէս **բժ**ան բիւր հրեշտակացն, և եօթանասնից *եօթն* թողուլն, և ամլոյն *եօթն* ծնանիլն ո՛չ է վճիռ, նոյնպէս և իդ երիցանցն: - 711. Դարձեալ որպէս հատն մերկ սերմանի և մերկ ո՛չ բուսանի. այլ զարդարեալ խոտով և տերևով *եօթն* թուով: - 721. Վասն զի մարդն յայսմ աշխարհի *եօթն* պակասութիւն ունի. **գ** հոգւոյ և **դ** մարմնոյ... - 722. ...այս է պակասութիւնս ի յարութեանն բառնի և *եօթն* զարդ ընդունի: - 722. Բայց *եօթն* զարդքն զոր ունին սուրբքն որք են հարսունք քրիստոսի՝ ո՛չ ունին անսուրբքն որք են հարսունք սատանայի: - 723. ...և Երկրորդ՝ զի մարդկան ազգի կրկին է հատուցումն. այսինքն յայժմու կեանս և ի հանդերձեալն. իսկ դիւացն եօթնեկի է հատուցումն վասն եօթնեկի յանցանաց նոցա. և *եօթն* գլխաւորագոյն մեղացն: - 750. Կամ թէ ոստք փայտիս այսորիկ ասին *եօթանըս* այսոքիկ. այսինքն՝ քրիստոսի ծնունդն, մկրտութիւնն, չարչարանքն, ի դժոխս իջումն, յարութիւն, յերկինս համբարձումն, և հոգւոյն սրբոյ պարգևումն: - 755. *Եօթն* զարդ հարսին որպէս ցուցաւ. և օժիտք յաւիտենից կենացն. պսակք և արկանելիք, ասացան մեզ փոքրիշատէ յառաջագոյն ի բանից սրբոց: - 761. ...և Դարձեալ որպէս ասեն վարդապետք, *եօթն* յատկապէս փառս ունին մարմինք, և *եօթն* հոգիք: - 761. Եւ թէ «յաւուրն *եօթն* անգամ անկանի արդարն»: - 766. Եւ գլխաւորի՛ սա՛ կրկին *եօթեամբբ* կարգաւոր հարցմամբք: - 773. Ըստ այնմ թէ՝ «ըստ եօթանասնեկին *եօթն* գայցէ և թողցի. և ո՛չ եկի կոչել զարդարս, այլ զմեղաւորս» և այլն: - 778

**ԵՕԹՆԵՐՈՐԴ** - 290

**ԵՕԹՆԵԻԺ** - 17

**ԵՕԹՆԵԻԺԵՐՈՐԴ** - 12

**ԵՕԹՆԵՔԻՆ, ԵՕԹՆԵՔԵԱՆ** - Եւ եօթն ճրագ շուրջ զնովաւ, *եօթներն* դասք ընտրելոց նորա: - 347. Դարձեալ ասեմք *զեօթներինն* ըստ երից մասանց հոգւոյն այսպէս: - 559. Իսկ *եօթներին* աստիճանք առ մարդեղութիւնն քրիստոսի են այս: - 573

**Զ** - 113

**ԶԵՐՈՐԴ** - Ա՛յս *զ երրորդն:* - 87. Ի յա՛յս միտս յորժամ խաչ նկարեմք, զծագ մատին աջոյ մերձ ի բոյթն առնեմք որ է՛ ի համարն *զերորդ*. զկէս զին նշանակելով: - 345. Եւ դարձեալ՝ յետ աւելի քան զերեսուն ամ ի *զերորդ* ամին եզեկիայ արքայի յուդայ՝ ել սաղմանասար արքայ ասորեստանեայց ի վերայ սամարիայ. - 447. Իսկ մեր վարդապետք ասեն որպէս մեծն ներսէս, թէ ի *զերորդ* աւուր արարաւ առաջին ադամն ի պատկեր տիրական: - 467. Չորրորդ՝ զի որ յամսեանն *զերորդի* հրեշտակապետն եկն առ կոյսն, ի յղութենէն եղիսաբեթի ասաց գոլ **զ** ամիս, և ո՛չ յաւետեացն: - 483. Ըստ այնմ թէ՝ «եղիսաբեթ ազգական քո, և նա յղի է ի ծերութեանն. և այս *զերորդ* ամիս է նորա»: - 483. Արար *զերորդ* ժողով՝ ագաթոն պապն հռոմայ. ի թագաւորութեան հօրն յուստիանու ի կոստանդնուպօլիս: - 543. Վասն է՞ր **ե** կարգ է մինչ ի սարկաւագն. և նա՛ *զերորդ:* - 608. Իսկ *զերորդ*՝ սարկաւագն ի վերայ ամենեցուն առ հասարակ հրամայէ՛. - 608

**ԶԶ** - Իններորդ՝ ի վեց օրն ստեղծեալ աշխարհ. նշանակէ՛ *զ զ* դարս. որով մնայ աշխարհ: - 193. ... և **բ** Ակունք ուսոյն՝ կրկին կիսագունդք երկնից. ունելով *զզ* կենդանակերպս. և Վակաս լանջացն **բժ**ան ակամբք նոյն կենդանակերպք ի լանջս երկնից Միթրն՝ պսակ քահանայապետութեան. և Թիթեղն՝ մտաց թեթևութեան: - 348. Եօթներորդ, *զ զ* դնելն զիացն առաջաւոր ըստ շաբաթուց: - 653

**Է** - Եօթն գլուխն է *է* չար զօրութիւն նորին. որպէս հոգւոյ մարդոյ է բարի զօրութիւնք են և *է* առաքինութիւնք. որպէս տէրն ասէ՝ «*է* այս չար հոգի բնակի ի մարդն զոր գտանէ թափուր ի բարեաց գործոց»: - 151. Եւ այն որ **ժ** է եղջիւրք և *է* գլուխ: - 151. Զի՞նչ է *է* խոյրն ի գլուխ վիշապին: - 152. Նոյնպէս և առ մեզ՝ որք մրցին և ջանան ընդ դէմ բանսարկուին և մեռուցանեն *զէ* գլուխ նորա՝ նոքա զնոյն պսակն ժուժկալութեամբ և առաքինութեամբ ընդունին ի գլուխս իւրեանց յիւրաքանչիւրոցն զորս կոխեն և յաղթահարեն. որպէս ասէ ի տեսիլն, «որ ոք յաղթէ՞ ընկալցի զպսակն կենաց ի գլուխս իւր»: - 152. Գիտելի է, զի *է* դրամբ փակեալ է ծածուկ իմացումն գրոց: - 177. Եւ *է* երկինք՝ *է* գօտիքն են *է* մոլորակացն. որ է Զոհա՛լն. Երևա՛կն. Հրա՛տն. Արեգա՛կն. Լուսնթա՛գն. Փայլածո՛ւն և Լուսինն: - 183. Եւ *է* մոլորականքն ընդ սոսա գնալով խոնարհին և բարձրանան: - 189. Իսկ շաբաթն որ է՛ *է* օր՝ կոչեցաւ յեօթն մոլորակաց: - 190. Եւ դարձեալ՝ յորժամ վերադիրն լինի **լ**. և *է* երեակն *է* ի միասին ի միում ամի. ասի այն կատարումն լուսնի.

այսինքն մասանց թուոյն, և ո՛չ իրին: - 192. Նոյնպէս և կեանք մեր. այլայլի ի մանկութենէ ի ծերութիւն. յառողջութենէ ի հիւանդութիւն. և այլն՝ ըստ դանիէլի՝ «***Է*** ժամանակ փոփոխեսցին ի վերայ քո»: - 199. Երկրորդ՝ ձայնական գործիքն. որ են ***Է***. որպէս Շրթունք. Ատամունք. Լեզու. Մակալեզու. Բերան. Խռչափող. Թոք: - 216. Տասներորդ՝ Երկո**ժ**ն անդամքն. և ***Է*** անդամքն. և երիկամն ճարպո՛վ է: - 227. Նոյնպէս և գլուխն ***Է*** տապադա՛յ է: - 239. Նմանապէս և բոլոր ամենայն անդամքն է ***Է*** տապադայ: - 239. Եւ որպէս ***Է*** են գլխաւոր անդամք՝ և ***Է*** մոլորակք յերկինս: - 241. Նոյնպէս և երկրի է՛ ***Է*** մասն տիեզերաց. զոր ***Է*** կլեմ կոչեն: - 241. Իսկ լեարդն է սկիզբն արեան երակացն. որ ելանէ ի լերդէն ***Է*** երակ լի արեամբ: - 244. Եւ այլք ևս յաւելեալ. զի են ի չորից տարերց՝ ***Է*** և **ը** ամիսս կատարին: - 262. Եւ երիցս կրկնեալ ***Է***-*հց* մինչև ի **իա**, լինի կատարեալ արիական մասն ցասմնականին. և կոչի պատանեակ մինչև ի **իը** ամն: - 265. Եւ չորիցս կրկնեալ ***Է***-*հց* մինչև ի **իը** ամն, լինի երիտասարդ. և կատարի բանական մասն: - 265. Եւ ի յիսներորդէն մինչև ի **իէ** որ է՛ մետասան ***Է***, լինի հասակ ծերութեան: - 265. Ո՞ր է ***Է*** շնորհքն ադամայ զոր ետ աստուած: - 279. Յիսունն**դ**, Վասն ***Է*** պատուհասին. և տասանորդաց: - 284. Եւ չուէին ***Է*** բանակք. և տապանակն առաջի: - 284. Մին ճանապարհ գալ՝ և ***Է*** փախչիլ: - 285. Եօթն ազգ բարեգործութեան տեսակ երևի աստ ի հաբէլ. վասն որոյ և ***Է*** պարգևաց արժանացաւ: - 286. Դարձեալ ***Է*** յանցանօք մեղաւ կայեն. վասն որոյ և եօթնիցս պատժեցաւ: - 287. Դարձեալ որպէս ասէ առակն՝ «***Է*** չարիք են ի սիրտ թշնամւոյն» որ է սատանայի և մարդոյ: - 287. Եւ սատանային յայտնի են ***Է*** չար խորհուրդքն որ կոչին գլխաւոր մեղք: - 287. Իսկ մարդոյս ***Է*** չարիքն կրկին է: - 287. Վասն այն արդարադատն աստուած ***Է*** պատիժս եդ. ի վերայ կայենի. վասն զի ***Է*** չարութեամբ յանցեաւ: - 287. Իսկ ***Է*** պատիժքն, Նախ անէծքն: - 287. Զի վասն առաջնոյն ասեն վարդապետք, եթէ ադամ ո՛չ եկաց ի դրախտին **ռ** ամ, կամ աւելի և կամ պակաս, այլ մի օր. մանաւանդ ***Է*** ժամ: - 290. Ասեն աստեղագէտք եթէ՝ ***Է*** դարուց կեցաղոյս վերակացուք են ***Է*** աստեղքն որք կոչին մոլորակք: - 291. Եւ որպէս ***Է*** է գործիք ձայնին, որ է՛ թոքն. խռչափողն. մակալեզուն. բերանն. լեզուն. ատամունքն. և շրթունքն. և սոքա միաբանին ի խօսքն: - 296. Այս է՝ ***Է*** զօրութեամբ հոգւոյն և **ե** զգայարանօք մարմնոյ մեռանիմք և յառնեմք **գ** կատարելութեամբ: - 315. Եւ ունէր ***Է*** որդիս և **գ** դստերս նման բարեպաշտութեան ինքեան: - 321. Նա՛խ՝ զի **ժ** էին թուով. ***Է*** ուստերք և **գ** դստերք. ըստ թըւոյ նոցա մատուցանէր: - 322. ...**զ**՝ այլայլէ՛ զբանն. ***Է***՝ այլ և զգործն... - 322. Պատասխանեմք եթէ՝ ***Է*** էին: - 322. Եւ այսպէս ***Է*** էին հարուածքն. այսինքն **ա**՝ եզինքն. **բ**՝ էշքն. **գ**՝ ուղտքն. **դ**՝ անասնոց մահն. **ե**՝ սպասաւորաց նոցին. **զ**՝ զաւակաց մահն. ***Է***՝ մարմնոյն հարուածքն: - 322. Նոյնպէս ***Է*** ուստերք և **գ** դստերք: - 326. Ոմանք ***Է*** ամ ասեն. ըստ որում ի վեցից վշտաց փրկեսցէ, և յեօթներորդին ո՛չ փորձեսցի չար: - 326. ՚Ի խորհուրդ ***Է*** դարու վշտաց կենցաղոյս. և յութներորդին ազատութիւն բնութեանս: - 326. Որք ***Է*** ամ ասեն զփորձանսն՝ սոյնպէս թուեն. զի յետ փորձանացն ասէ գիրն **ճի** ամ. և յառաջ քան զփորձն **ի** ամ. և **ը** ամ փորձանացն և դարձին: - 326-327. ...**զդ**՝ անդամալոյծ միակողմանց բժշկութիւն. ***էդ***՝ բորոտից սրբութիւն. **ըդ**՝ բոլոր մարմնոյն հիւանդաց և ջերմացելոց առողջութիւն. **թդ**՝ զդևսն հանէր. **ժդ**՝ զմեռեալսն յարուցանէր: - 328. Երկրորդ եղանակ՝ ***Է*** գօտիք. և **ը**՝ անմոլարքն. **թ**՝ լուսնոյդ ի վայր. և **ժ** բանն աստուծոյ որ վարէ՛ զարարածս: - 343. Չորրորդ՝ ***Է*** մոլորակաց գօտիք. և **ը** հաստատութիւնն. և ջրեղէն և լուսեղէն երկինքն: - 343. Եւ ի **ժեն** նիսանի անցին ընդ ծովն որ է՛ **ե** ամիս. և ***Է*** ամիս ի գործ խորանին: - 344. Դարձեալ՝ զայս օրինակ ետես մարգարէն զաքարիա և պատասխանեաց հրեշտակին՝ «տեսանեմ աշտանակ ոսկի ձոյլ. և գունդ մի ի վերայ նորա. և ***Է*** ճրագարան, և ***Է*** բերան ճրագացն»: - 346. Եւ ***Է*** ճրագարան և ***Է*** բերան ճրագացն, ***Է*** արքն մեծապատիւք զօրավիգք թագաւորին. այսինքն յեսու, զաքարիա, խոդէստուբիա, յեդոյիա, յեշոյիա, և եզր դպիր: - 346. Եւ ***Է*** ճրագն՝ ***Է*** արփեան շնորհք հոգւոյն սրբոյ: - 347. Այլ և ***Է*** խորհուրդ եկեղեցւոյ, և ***Է*** զօրութիւնք հոգւոյս. չորսն ստացական, և **գ**ն աստուածային առաքինութիւնք: - 347. Եւ ***Է*** է աստիճան քահանայութեան: - 347. Դարձեալ՝ ***Է*** ճրագն և ***Է*** բերան ճրագացն որ լինի չորեքտասան, նշանակէ՛ զչորեքտասան աստիճան հաւատոյն. ***Է*** ի յանմարմին բնութիւն աստուծոյ, և ***Է*** ի տնօրէնութիւն բանին: - 347. Եւ ճրագն՝ ***Է*** զգայարանքն: - 347. Եւ ***Է*** բերանքն՝ ***Է*** բանքն խօսեցեալք ի վերայ խաչին: - 347. Իսկ ասելն «ածէ՛ զանիրաւութիւն հարց յորդիս յերեք և ի **դ** ազգս» որ է՛ ***Է*** ազգ: - 351. Այլ և յիսներեկին ***Է*** է գառինս. և ի նոր մտիցն կրկին հաց ևս: - 359. Եւ ցանեալ ***Է*** անգամ ի վարագոյրն. որ է՛ քաւութիւն ***Է*** զգայարանցս ի ***Է*** զօրութեանց հոգւոյն. ***Է*** խորհրդով եկեղեցւոյ. առ ***Է*** դար կենցաղոյս: - 360. Ահարօն և որդիքն ***Է*** օր մնացին ի խորանն. վասն է՞ր մեք **խ**: - 363. Եօթն՝ նշանակէ *զ**Է*** դար շրջանացն: - 363. Եւ այսպէս ըստ բարուց մարդկան ընտրէր նոյ ի սրբոցն ***Է***. և յանսրբոցն **բ**. որպէս ասացաւ ի վերոյ **ժզ** գլուխն ի **զ** համարն: - 364. Նա՛խ՝ թէ յետ ***Է*** աւուրն յաւելոյր՝ այրէին: - 367. Նշանակէ՛ թէ՝ եթէ ի ***Է*** հասակս մեղքն առաւելու, գեհեանն այրէ: - 367. Իսկ թէ ի տունն ի

ժողովուրդս նորա. կամ յեկեղեցիս մեղանչեմք. յետ *է* ժամանակի փոխելոյ՝ որ է՛ *է* հասակ մեր. և *է* դար կենցաղոյս... - 368. ՚Ի եօթներորդն ամիսն որ է՛ թշրին՝ **ժ** օր քաւութեան տօնէին. զի *է* շաբաթ շաբաթուցն ի նա՛ է. և **է**երորդ ամիսն. այլ և **ժ**երորդ օրն շաբաթ էր: - 371. Իսկ *է* գառն անարատ, *է* զգայարանքն սուրբ: - 373. Նա՛խ՝ զի **ը** էին նւէրք պատարագացն. *է* գառն. և մի խոյ: - 373. Երկրորդ՝ *է* էին աւուրք բաղարջակերացն: - 373. Եւ եօթնից *է* տօնեմք յարութեան. նոյնպէս զմի օր օրինացն տըւչութեան, տօնեմք **ը** օր հոգւոյն գալստեան: - 373. Չորրորդ՝ *է* դար կենցաղոյս պակասի. և մինն հաստատի: - 374. Դարձեալ *զէ* ժամանակն ասէ. կամ *զէ* հասակս. կամ *է* զգայարանօք մարմնոյս. կամ *է* զօրութեամբ հոգւոյս: - 376. Դարձեալ, տասն են մասունք զգալի արարածոց. այսինքն՝ *է* մոլորական գունդք. և **ը**՝ անմոլարքն. և իններորդ ի լուսոյդ ի վայր. և մարդս **ժ** երորդ ի վերայ նոցա. որ է՛ բանական և բաժին աստուծոյ: - 376. Ոմանք ասեն *է* ըստ **հ** ամացն: - 378. Զի յեկեղեցի *է* դասք են քահանայութեան: - 380. Դարձեալ, *է* դաս թուէ առաքեալն զհրեշտակսն յեփեսացւոց թղթին: - 380. Նա՛խ՝ **գ** օրն հաւատն է յերրորդութիւնն սուրբ. և ապա՛ սրբութիւն գործոց է *է* զգայութեամբ: - 384. Չորրորդ, նախքան զօրէնս և յօրէնն և զկնի օրինացն թէ ոչ արդարանամք. և ո՛չ *յէ* դարուն ոք արդարանայ: - 384. Հինգերորդ՝ թէ յերեք հասակս մեր ոչ արդարանամք. և ո՛չ *յէ* հասակին արդարանամք յորում լուծեալ ծանրանայ մարմինն: - 384. Բաղաամ վասն է՞ր *է* բան մարգարէացաւ: - 387. Նա՛խ՝ զի *է* էր պատարագն. վասն զի մատոյց *է* զուարակ. և *է* խոյ. վասն որոյ ընկալաւ պարգևս *է* բանից մարգարէութեան: - 387. Եւ *է* ոմանց ուխտից զանցումն անմեղադրելի է: - 389. Այլ ոմանք *է* օր ասեն յամել ի *է* գօտիս. վասն որոյ *է* օրէք առնեն: - 391. Իսկ *է* ի յայն խորհուրդն, զի որ ի պիղծ մերձենայր՝ *է* օր արտաքոյ բանակին կալով յ**ե**րրորդ և յ**է**երորդ օրն սրբէր, և ապա՛ մտանէր. վասն որոյ **գ** օրէք և *է* օրէք կատարեմք: - 391. Այլ **ե** թագաւորք մադիանացիքն էին, և **բ** այսրքիկ. որ են *է* դևք *է* գլխաւոր մեղաց. որք ի կեանս պատերազմին, և յետ մահու ընդ հոգւոցն բազումք: - 393. Որպէս այն որ ասէ՝ «զանդրանիկն *է* օր թողցես առ մայրն»: - 399. Երկրորդ՝ թէ կրտսե՛ր է եղբայրն. որպէս առակն *է* եղբարց, որ առաջինն էառ և մեռաւ. և ապա երկրորդն, և որ ի կարգին: - 402. Մի ճանապարհ գալն է. և *է* զբազումս ասէ ի փախչիլն: - 404. Իսկ ի միտս, մահու չափ մեղաց *է* իշխանք և գունդք դիւաց: - 404. Եւ յորժամ *է* զօրութեամբք հոգւոյ յաղթիցեն նոցա, փախիցեն *յէ* զգայարանաց մարդոյն եօթնեկի մահացու մեղօք. զայս կատարելո՛ցն է իմանալ. և ո՛չ մեզ տկարացս: - 404. Ընդ ահարօնի առանձինն *է:* - 412. Եւ յետ *է* ամսոյն դարձաւ: - 412. Չորեքտասաներորդ, Դարձ տապանակին *է* դաս պարուք: - 412. Եւ *է* անգամ աղօթեաց: - 413. Քսանևէ, Յուպն եղիսէի խաչն էր. ծկիլն *է* անգամ: - 413. Եւ վասն *է* պատճառի պատժէ աստուած զմարդն և զինչսն: - 415. Սա՛ սպան զսիսարա և զաբէն ի ծորն կիսոնի. և այլազգիքն ամս *է:* - 420. Վեշտասաներորդ՝ *է* աւուր յերեկոյի հարսանեացն յայտնեցաւ առակն՝ հարսին: - 422. Եօթնև**ժ**, երեսունքն թուով յետ *է* աւուրցն զարդարեցան: - 422. Քսանև**դ**, սամփսոն երիցս *է* կապօք փորձեցաւ ի կնոջէն: - 423. Եւ տէր մեր յեօթն տեղւոջ *է* ձաղանօք երիցս կապեալ: - 423. Իններորդ՝ յետ *է* աւուր կորոյս զնաաս խռովարար, որ բրէր զաջոյ ակն իէլի. և տէր մեր զխռովարար բանսարկուն, որ բրէ՛ զակն իմացականին մարդոյ...: - 427. Տասներորդ՝ յետ որոյ հնազանդեցան նմա՛ ամենայն իէլ. և տեառն մերոյ զկնի խաչին հաստատեցան ի հաւատս. մանաւանդ յետ *է* դար կենցաղոյս ամենայն լեզու խոստովան լիցի զտէր յիսուս քրիստոս ի փառս աստուծոյ հօր ամէն: - 427. Եւ ի մեզ *է* են ձայնական գործիք որով սաղմոսե՛մք: - 431. Եւ *է* զօրութիւնք հոգւոյ. և *է* առաքինութիւնք. **դ** մարմնականք և **գ** աստուածայինք: - 431. Յայս միտս ի բերել ընծային ի սեղանն՝ *է* դասք քահանայից կան ի սպասու. և երգեն եղանակաւ. և քշոց և բուրվառ և զանգակ հնչէ: - 431. Թագաւորեաց նախ *է* ամ ի վերայ յուդայ, և ապա ամենայն իէլի. և տէր մեր յեօթն դարոյս թագաւորէ՛ հաւատացելոց, և ի վախճանի ամենայնի. յորում «ամենայն լեզու խոստովանեսցի տէր զյիսուս» ասէ առաքեալն: - 437. Վասն է՞ր *է* անգամ աղօթեաց: - 444. Դարձեալ, զի *է* անգամ էր սաստկութիւն սովոյն, *է* անգամ աղօթիւք եբաց: - 444. Զի **յգ** ամ և կէսն՝ *է* անգամ սով լինի: - 444. Խաչանման տարածեցաւ ի վերայ մանկանն և կծկեցաւ. այսինքն փոքրկացաւ ի չափ մանկանն. և ապա յայտնապէս *է* անգամ յօրանչելով և կծկելով կենդանացոյց զնա: - 446. Երրորդ՝ որպէս զստնդիայի մանուկն *է* ամ խրատէ՛ դայեակն. այսպէս ժողովուրդն որ ել յերկրէն իւրեանց, երկիրն բաբիլացւոց **հ** ամ ի գիրկս իւր դայեկեաց զնոսա և սնոյց. զի յետ դարձին յերկիրն իւրեանց՝ զբարիս գործեսցեն: - 448. Եւ եօթնից ժամանակաց փոփոխմամբ՝ *է* հասակաւ յեօթն դար կենցաղոյս՝ լինիմք տաճար և քաղաք քրիստոսի աստուծոյ մերոյ: - 448. Իսկ **է** երորդքն դանիէլի որ ասէ՝ «**է** երորդ *է*՝ և եօթներորդ **կբ** համառօտեսցի ժողովրդեանն: - 449. Գործք: Եւ *է* թուղթ կաթողիկէք: - 450. Գոդողիա մայրն ամս *է:* - 452. Եւ վասն *է* բանից նորին: - 454. Այլ և ծանիր. զի *է* բան յիշէ սուրբ գիրք զոր խօսեցաւ աստուածածին կոյսն: - 465. Ա՛րդ՝ աստի

մինչ ի նիսանի **ժէ**, և յապրիլի **է**՝ կատարի **է** ամիս. յորում առաքեցաւ գաբրիէլ առ կոյսն մարիամ յաւուր չորեքշաբաթու: - 483. Եւ աւուրք պաշտամանն էր երկոտասան. **Ե** օր քաւութեանն վասն որթոյն յանապատին. և **է** օր տաղաւարահարացն ի յիշատակ խորանաւ բնակելոյն յանապատին ամս **խ**. և այլ սքանչելեացն զոր գործեցաւ անդ: - 483. Իսկ այժմ վասն խաչին նախ գիտելի է, զի չարչարանքն քրիստոսի ընդ դէմ է և բարձօղ **է** մոլորութեանց մեղաց: - 489. Զի՞նչ է **է** բանն որ խօսեցաւ ի խաչին: - 492. Արդ զապարանքն պիղատոսի իբր զմի տեղի առեալ. թէպէտ կրկնեալ եղև. և խաչելութեանն տեղի լինի **գ**. և գերեզմանն յորում հանգեաւ **է**: - 493. Վասն զի ոմանք՝ որպէս մեծն ներսէս ի մեկնութիւն սաղմոսին որ ասէ «**է** անգամ յաւուր օրհնեցից զքեզ», ասէ թէ՝ յերեկոյի շաբաթուն է յարութիւնն քրիստոսի յորում լուսանայր կիրակէն. ըստ մատթէոսի «յերեկոյի շաբաթուն յորում լուսանայր միաշաբաթին»: - 512. Երկրորդ՝ մագդաղենացին մարիամ յորմէ **է** դևքն ելին: - 516-517. Եւ **խ** օր յօդս զի **լգ** օր զօդս սրբեսցէ ի ճենճերից կռոց. և **է** օրն ի խորհուրդ **Է** աստեղեան խորանացն ի կայանս հոգւոցն: - 520-521. Վարդապետք ասեն թէ վասն **է** պատճառի: - 521. Երրորդ՝ վասն զի օրինա՛կ է **է** աւուրցն ի յորս երկիր հիմնեցաւ. նաև **է** դարու կենցաղոյս: - 524. Այլ և հանդերձելոյն զի **է** շաբաթէ ի յարութենէն քրիստոսի. զորմէ ասէ պօղոս «զատիկ մեր զենաւ քրիստոս»: - 524. Եւ **է** շաբաթն **ծ** օր է. որ է՛ ազատարար թիւ և օրինակ հանդերձելոյն: - 524. Երեքտասաներորդ, Եւագր **ը** ասէ զխորհուրդս մեղաց, և այլք **է**: - 525. Երեսունևն**դ**, Կարգ քահանայութեան **է** է: - 526. Երեսունև**գ**, Ո՞րն է **է** ազգն զոր պորտ կոչեմք: - 526. Եւ վասն չորեք շաբաթի **է**: - 527. Երրորդ ժողովն է դվնայ, ի չորրորդ ամի թագաւորութեանն կոստանդեայ հռոմոց. հրամանաւ մեծի կաթողիկոսին հայոց ներսէսի շինողի. և այլ **է** և **ժ** եպիսկոպոսաց՝ և վարդապետաց բազմաց և իշխանաց. - 544. Սոքա **է** սիւնք և **է** խարիսխք են եկեղեցւոյ գլուխ կարգեալք ընդ բոլոր տիեզերս որպէս ասացաւ: - 549. Վասն է՞ր Եւագրիոս ընդ խորհուրդ ասէ մեղաց, և այլ վարդապետք **է** ասեն զմահու չափ մեղսն: - 559. Նախ ասեմք թէ՝ համաձա՛յն են միմեանց. զի և սա Եւագրիոս **է** ասէ. զի տրտմութիւն և ձանձրութիւն մի երևին. զի տրտմութիւն ի պակասութենէ բարւոյն լինի, իսկ ձանձրութիւն յաւելուածոյ բարւոյն: - 559. Դարձեալ ասեմք թէ՝ այլ վարդապետք **է** ասեն զմեղս, զի **դ** տարերք են մարմնոյն, և **գ** զօրութիւնք հոգւոյն. այսինքն բան, ցասումն, և ցանկութիւն: - 559. Վասն որոյ **է** են մեղք գլխաւորք: - 559. Այս ըստ նոցա որ **է** ասեն զմահու չափ մեղքն: - 559. Զի **ժ** պատուիրանքն և **է** մահու չափ մեղքն են ըստ գոյացութեան մեղք. որպէս մի՛ շնարն և մի՛ գողանարն և մի սպանաներն և մի՛ սուտ վկայերն: - 565. Իսկ մահացուն մեղք է գլխաւորօրէն **է**. կամ **ը** որպէս ասացաւ: - 567. Նա՛խ ըստ միութեան. զի մի է մեղքն սկզբնական և ո՛չ բաժանի. որպէս մահացուն **է**. և ներելին **գ**: - 567. Եւ այսպիսի ասացեալ տկարութեան մեղաց առողջութիւն է բժշկարան **է** զօրութիւնք որ կոչին առաքինութիւնք. որ են այսոքիկ: - 571. Առ աստիճանս այս պարունակի **է** խորհուրդ եկեղեցւոյ. որ է՛ Մկրտութիւնն. Դրոշմն. Պատարագն. Ապաշխարութիւնն. Կարգ քահանայութեանն. Պսակն. և Օծումն: - 573. Երկրորդ զօրացուցանէ. որպէս յա՛յտ է ի մակաբայեցւոցն զկնոջէն որ ունէր **է** որդիս՝ ածեալ ի սպանումն ի միումն աւուր տեսեալ. և տանէր այնմ՝ յուսովն որ առ աստուած. նոյնպէս և ամենայն դասք մարտիրոսացն յուսով զօրացան: - 574. Վասն է՞ր են **է** պարգև քրիստոս այսոքիկ: - 583. Նա՛խ՝ զի սոքօք արտաքսեսցին **է** մոլորութիւնքն որպէս ասացաւ: - 583. Ա՛րդ՝ **թ** երանութիւնք փրկչին զոր քարոզեաց ի լերինն, **ը** են ըստ էութեանն. այլ **է** են ըստ աստիճանաց... - 583. Ա՛րդ՝ **է** երանութեամբս այս՝ արտաքսին **է** գլխաւոր մոլութիւնքն: - 583. ...և **է**՝ թաղել զմեռեալս: - 585. **է**՝ համբերել արարեալ անիրաւութեանցն ընդ դէմ իւրեան: - 585. Վասն այսորիկ ասեն վարդապետք թէ **ը** են երանութիւնքն ըստ էութեանն. այլ **է** միայն ըստ զանազանութեան աստիճանացն: - 586. Ո՞րք են **է** խորհուրդք եկեղեցւոյ: - 587. Վասն է՞ր **է** են խորհուրդք եկեղեցւոյ: - 587. Դարձեալ՝ **է** են խորհուրդք որ պատրաստեն զմեզ ընդունիլ զեօթն առաքինութիւնս: - 587. Իսկ պսակն է՛ ի խորհուրդ ողջախոհութեան. զի ողջախոհ ամուսնութեամբ զսպեսցէ առ ինքն զբղջախոհ ցանկութիւնն. և արգելցի ի շնութենէ և ի պոռնկութենէ. վասն որոյ **է** են խորհուրդք եկեղեցւոյ: - 587. Այս թէ վասն է՞ր **է** են: - 588. Եւ են **է** կարգ ըստ **է** պարգևաց հոգւոյն սրբոյ: - 606. Ո՞րն է **է** ազգն զոր **է** պորտ կոչեմք: - 611. Առաջին մեք, և հայրն, և պապն մեր. հօր պապն, և պապու հայրն, և պապուն պապն, և ապպապն. որ է՛ **է**. նմանապէս և ի մօր կողմն: - 611. Առաջին մեք, և որդին, և թոռն. և թոռին որդին. և թոռին թոռն. և նորա որդին. և թոռնիայն. որ է՛ **է**: - 611. Այս է մին եղանակ **է** պորտից պարզապէս: - 611. Զի հայրն և որդին և թոռն որ է՛ **գ**. և թոռին թոռն որ է՛ **դ**. որ լինի **է**, և եզր արենակցութեան: - 611. Եւ սոքա լինին **է** ազգ ըստ մեծին ներսէսի: - 611. Եօթներորդ, ի սմա՛ **է** խորհուրդ եկեղեցւոյ ներգործի. և ի մեզ կատարի և կրի: - 614. Նա՛խ՝ զի զմի օր նոցա տօնեմք. և **է** յաւելեալ վասն **է** զգայարանաց. և վասն եօթնեկի մեղաց քաւութեան: - 616. Երկրորդ, զի **է** է խորհուրդ եկեղեցյ. և **Է** արփեան է շնորհք հոգւոյն. և

մի կատարմունքն ի մեզ, որ լինի **ը**: - 616. Երրորդ, վասն ***է*** կենցաղոյս՝ և ըստ հանդերձելումն **ը** օր տօնեմք: - 616. Գիտելի՛ է, զի ի հին օրէնսն մովսէսի ***է*** ժամ էր աղօթից... - 621. ...որպէս ասէ դաւիթ՝ «***է*** անգամ յաւուր օրհնեցից զքեզ»: - 621. Այլ և խաղաղականն որ է ի կարդալն՝ է՛ ***է*** փոխ. ի պահպանութիւն է զգայարանցս. և ի մաքրութիւն անցեալ գործելեացն: - 622. Եւ ամաց ***է*** օր բաղարջակերք, և տօն տաղաւարահարացն: - 626. Եւ ***է*** սրսկումն արեան. վասն եօթնից զգայարանացս սրբութեան: - 626. Այլ և ***է*** անգամ յաւուր օրհնէին զաստուած: - 626. Նոյնպէս ***է*** էր կանոնք սաղմոսին. և ***է*** ***է*** գուբղայք կանոնացն: - 626. Այն է՝ յորժամ դաւիթ զտապանակ ուխտին հանէր յեէմ, ***է*** դաս պարուց որք են քահանայից դասք. և սրինկ. և փողք. և քնար. և այլն: - 645. ...և ի ***է*** օրն սկսաւ զիմանալի աշխարհն որ սրբոցն է հանգիստ: - 647. Յինգերորդ յարութեանն եօթնիցս ***է:*** - 649. ...այլ ***է*** ամ ապաշխարեսցէ...: - 652. Երրորդ, եօթնօրեայ ժողովիլ կենդանեացն առ դուռն տապանին անսուաղ մինչև տեղեաց անձրևն. և ***է*** ***է*** կենդանիք սուրբք: - 653. Չորրորդ, ***է*** աւուր բաղարջակերքն ի յելսն եգիպտոսի: - 653. Ութերորդ, ***է*** ***է*** ածել զգառինսն պատարագ ի տօնսն: - 653. Այլև ***է*** օր տաղաւարահարացն նշանակէ՛ զսրբութիւն պահոց շաբաթոյս... - 653. Երկրորդ՝ Վասն ***է*** փոփոխման մարդոյն: - 660. Իններորդ, Վասն ***է*** օրէիցն. և մեռելոցն. և գերեզման օրհնելն. և տուն օրհնել: - 660. Որ ամենեքեան լինին ***է*** փոփոխմունք կենցաղական... - 663. Կոչի կարգ, Նախ զի քրիստոնէից մին կարգ՝ ննջեցելոց կատարումն է ի վերայ ***է*** խորհրդոցս. ութերորդ խորհուրդ և կարգ. վասն ութերորդին կենաց: - 671. Եւ որպէս ի հիմնարկութեան եկեղեցւոյ խաչիւ և աւետարանաւ բրել ***է*** աստիճանաւ...: - 674. ...զի ***է*** աստիճանաց եղև սպասաւոր...: - 674. Նա՛խ՝ որպէս ասացաւ ի քահանայաթաղն վասն ***է*** շնորհաց հոգւոյն, և ***է*** խորհրդոց եկեղեցւոյ, և ***է*** առաքինութեանց, և ***է*** գլխաւորագոյն մեղաց, և ***է*** զգայարանօք մեղանչեմք, և ***է*** փոփոխմամբ հասակի...: - 683. Նա՛խ՝ ի ժամանակս. զի **գ**, և ***է,*** և ամիսն, և տարին՝ լինի **դ**. և **գ** օրն նախկին, որ է՛ եօթն: - 683. Իսկ երրորդն ի դէմս Երրորդութեանն և ***է*** շնորհաց հոգւոյն զոր ընկալաք յաւազանին: - 683. ...զի նա՛ է գազանն որ ել ի ծովէն և ունէր գլուխս ***է***. այսինքն զամենայն իշխանս: - 707. Եւ զարդարեալ լինի ***է*** զարդուք. այսինքն **գ** հոգւոյն և **դ** մարմնոյն որպէս ասեն վարդապետք: - 721. Ի յայս միտս մարմնաւոր հարսն ***է*** զգեստուք զարդարի. **դ** զարդ գլխոյն և **դ** բոլոր մարմնոյն: - 721. Եւ սեղանն սուրբ ***է*** զգեստուք զարդարեալ ծածկի: - 721. Եւ բաւականութիւն ***է*** զարդուցն պատճառի յերից մասանց հոգւոյն և ի չորս տարերաց մարմնոյն: - 721-722. Վճիռ որ վասն բարեացն է՝ պարունակէ՛ յինքն ***է*** մասունս օրհնութեան: - 740. Նա՛խ՝ աղօթիցն ժամ. ո՛չ միայն յերեկոյս և ի վաղորդեան՝ ի հասարակն կամ ***է*** անգամ աւուր ըստ մարգարէին: - 779. Այլ և ոմանք ասեն և ***է*** գոլ սեանց ընդ շինեալ տունն ի սողոմոնէ. կանգնեալ սիւնս ***է*** մարմնապէս. թէպէտ ա՛յլ է իմացումն հոգէպէս: - 788

**ԷԵԿԻ +** Յինգերորդ՝ ***էեկի*** շնորհօք բազմապատկեալ ի հոգւոյն. ոչ առաւելու արգելեալ. և ոչ նուազէ բաշխեալ: - 444

**ԷԵՐՈՐԴ** - Զի սոքա են դարագլուխք **զ** դարուց. և ***էերորդն*** հանգիստ: - 193. Եւ սոքա ամենեքեան վասն ***էերորդին*** են որ է՛ սէրն. զոր ունէր կատարելապէս առ աստուած: - 286. Վասն ***էերորդին***, ա՛յն քան սիրեցաւ յաստուծոյ, մինչ զի յետ մահուանն վրէժ խնդիր եղև արեան նորա. ըստ այնմ՝ «գոչումն արեան եղբօր քոյ բողոքէ՛ առիս»: - 287. Եւ ***էերորդ*** ասէ զթիւ ամսոյն նոյի որ է՛ թշրին: - 294. 'Ի եօթներորդն ամիսն որ է՛ թշրին՝ **ժ** օր քաւութեան տօնէին. զի է շաբաթ շաբաթուցն ի նա՛ է. և ***էերորդ*** ամիսն. այլ և **ժ**երորդ օրն շաբաթ էր: - 371. Երրորդ՝ ամիսն ***էերորդ:*** - 372. Չորրորդ՝ ամն ***էերորդ:*** - 372. Իսկ է ի յայն խորհուրդն, զի որ ի պիղծ մերձենայր՝ **է** օր արտաքոյ բանակին կալով յերրորդ և ***յէերորդ*** օրն սրբէր, և ապա՛ մտանէր. վասն որոյ **գ** օրէք և **է** օրէք կատարեմք: - 391. Եւ ***է երորդն*** փախուստն է այլ ընդ այլ՝ արտաքոյ **զ** շարժմանց: - 404. Եւ ***է երորդն*** սատակիլն և կորուստ. զի կեանքս **զ** շարժմամբ է, և մահն ***է երորդ*** արտաքոյ սորա: - 404. Իսկ ***է երորդքն*** դանիէլի որ ասէ՝ «***է երորդ*** է՝ և եօթներորդ **կբ** համառօտեսցի ժողովրդեանն: - 449. Ա՛րդ՝ ***է երորդ*** **կբ**՝ այսինքն ***է երորդ*** **կթ**: - 449. Որ և այժմ յոյնք և ասորիք պենտակոստ կոչեն որ թարգմանի **ե** երորդ և ո՛չ ***է երորդ:*** - 524. Է՛ և ***է երորդ*** օրէնք՝ մարգարէականն: - 528. Իսկ ***է երորդ*** ժողովն եղև ի թագաւորութեանն միւս կոստանդեայ. որոյ մայրն եռինէ: - 544. Եւ որպէս այսորիկ ժողովք ընդ դէմ հասարակ հերձուածողաց, նոյնպէս և առանձին ժողովք եղև ազգիս հայոց ***է երորդ:*** - 544. Առաջին ժողովն եղև ի տանս թորգոմայ յարևելից կողմանս. զկնի ***է երորդ*** ամի վախճանելոյ մեծին սահակայ: - 544. Զի **բ** են հայր և մայր մեր. և **բ** ծնունդ որդին և դուստրն. և **բ** եղբայրն և քոյրն. և մեք ի մէջն ***է երորդ:*** - 611

**ԷԾ** - Ասեն թէ՝ **ռ** կին էր սողոմոնի. ***է ծ*** տիկնայք, և **գ ծ** հարճք. և նոցա **ռ** պահապան. իսկ ի փորձելն խաբեաց զիազար կանայսն. և ի յարանցն մին ո՛չ խաբեցաւ. այս առասպե՛լ է: - 440

**ԷՌ** - Եւ էր մեծութիւն նորա մարմնական, Խաչինք ***էռ*** ոչխարաց: - 321. Միահամուռ հին և նոր կտակարանքն՝ **դ ա՞**. ***էռ***. **չի** տուն է: - 451

**Ը** - Զորոց պատճառս մլորութեանն ***ը*** են ասացեալ հետեւօղք ուղղափառութեան: - 31. ***ը)*** Դարձեալ՝ հարցանեմ, զբղխեա՞լն ի հօրէ բղխէ որդի, թէ զոչ բղխեալն: - 63. ***ը)*** Եւ ո՛չ ասի մեղաւոր վասն առնլոյ զմեղաւոր մարմինս. այլ միշտ անմեղ մարմնով իւրով: - 78. ***ը)*** Վասն էի. և ոչ էի. և նախագոյի. և էր. և է. և եղիցի: - 101. ***ը)*** Անուանք հրեշտակացն: - 102. Եւ զայլսն ասացաք ի ***ը*** գլուխն: - 141. Ժամանակն թէ ո՞րպէս բաժանի ի մշտնջենաւորն և յաւիտեանցն՝ ասացաւ ի վերոյ ի ***ը*** գլուխն՝ **ժբ** համարն: - 198. Եւ ձախ կողքն ***ը***. որ լինին սոքա **խ**: - 243. Դարձեալ, ***ը*** ոսկր է ի թիկանցն մինչ ի խաղալիքն այսպէս: - 243. Խաղալիկն **ա** ոսկր. եւն ***ը:*** - 243. Դարձեալ, ***ը*** ոսկր մինչ ի թաթ ոտիցն այսպէս: - 243. Եւ կին մարդոյն ***ը*** երակ աւելի՛ է. **դ** երակ ծննդական մասին. և **դ** երակ երկու ստեանցն: - 244. Եւ զանազանութիւն ներքին և արտաքին զգայութեանցն ասացաւ ի վերոյ յաղագս հրեշտակաց ի ***ը*** գլուխն, ի **ժզ** համարն: - 249. Եւ այլք ևս յաւելեալ. զի են ի չորից տարերց՝ **է** և ***ը*** ամիսս կատարին: - 262. Թշնամութիւն ***ը*** եղանակաւ առեալ լինի: - 277. Եւ այսպէս ***ը*** դիմօ՛ք է թշնամութիւն մեր ընդ միմեանս. և ամենայնին պատճառ սատանայ եղև, որ բնութեանս է թշնամի: - 278. Կանգունն գիրկն է մարդոյ. և այլք ***ը*** թիզ ասեն. զոր այժմ Ֆռանկք վարին: - 293. ...***ը***՝ զիմաստունն յիմարս առնէ...: - 322. Որք **է** ամ ասեն զփործանսն՝ սոյնպէս թուեն. զի յետ փործանացն ասէ գիրն **ճհ** ամ. և յառաջ քան զփործն **հ** ամ. և ***ը*** ամ փործանացն և դարձին: - 326-327. ...**զդ**՝ անդամալոյծ միակողմանց բժշկութիւն. **էդ**՝ բորոտից սրբութիւն. ***ըդ***՝ բոլոր մարմնոյն հիւանդաց և ջերմացելոց առողջութիւն. **թդ**՝ զդևսն հանէր. **ժդ**՝ զմեռեալսն յարուցանէր: - 328. Երկրորդ եղանակ՝ **է** գօտիք. և ***ը***`անմոլարքն. **թ**՝ լուսնոյդ ի վայր. և **ժ** բանն աստուծոյ որ վարէ՛ զարարածս: - 343. Չորրորդ՝ **է** մոլորակաց գօտիք. և ***ը*** հաստատութիւնն. և ջրեղէն և լուսեղէն երկինքն: - 343. Այլ և բոլոր ամենայն տօնք հնոյն՝ ***ը*** տօն էր. զոր այժմ մեք ունիմք փոխեալ ի նորս: - 372. Եւ յաղագս երից պատճառաց ***ը*** օր տօնեմք գալստեան սուրբ հոգւոյն: - 373. Նա՛խ՝ զի ***ը*** էին նւէրք պատարագացն. **է** գառն. և մի խոյ: - 373. Եւ եօթնից է տօնեմք յարութեան. նոյնպէս զմի օր օրինացն տըւչութեան, տօնեմք ***ը*** օր հոգւոյն գալստեան: - 373. Երրորդ՝ զի հաւասարք են **գ** տօնքս. որպէս ծննդեան և յարութեան՝ նոյնպէս և հոգւոյն գալստեան ***ը*** օր տօնեմք: - 373. Եւ թէ ոք ասիցէ, ընդէ՞ր ծննդեան և յարութեան ***ը*** օրէք առնեմք և հոգւոյ գալստեան ո՛չ: - 373. Եօթներորդ՝ տօն տաղաւարահարացն որ նշանակէ՛ առ մեզ զտօնելն եկեղեցւոյ, ի բոլոր ամն ***ը*** օր կատարի: - 373. Այլ և զօրհնելն եկեղեցւոյ՝ ***ը*** օրն նաւակատիս կատարեմք: - 373. Դարձեալ, տասն են մասունք զգալի արարածոց. այսինքն՝ **է** մոլորական գունդք. և ***ը***`անմոլարքն. և իններորդ ի լուսոյդ ի վայր. և մարդս **ժ** երրորդ ի վերայ նոցա. որ է՛ բանական և բաժին աստուծոյ: - 376. Ընդ աբրահամու ***ը:*** - 412. Եւ այսպէս կարգեցան առաջնորդք. զի յետ յեսուայ տիրեցին այլազգիքն ամս ***ը:*** - 420. Երկոտասաներորդն Աբդոն որդի ելեքայ փարաթոնացի ամս ***ը:*** - 420. Յովրամ ամս ***ը:*** - 452. Որպէս ասէ «իբրև լցան աւուրք ***ը***՝ եկին թլփատել զնա՛»: - 485. Դարձեալ՝ ի չարչարանքն քրիստոսի ծանիր ***ը*** քաղցրութիւնս: - 489. Իսկ թէ ***ը*** օր տօնեմք, ասացեալ է ի վերոյ ի **իա** գլուխն, **ծա** համարն: - 525. Երեքտասաներորդ, Եւագր ***ը*** ասէ զխորհուրդս մեղաց, և այլք է: - 525. Եւ ***ը*** օր նաւակատեաց: - 526. Իսկ սուրբն եւագրիոս ***ը*** ասէ զխորհուրդս հզօրս. այս է: - 560. Նա՛խ՝ ըստ չորից տարերց այլ և այլ որակութեանց լինին ***ը*** խորհուրդ մեղաց: - 560. Այսպէս լինի ***ը:*** - 560. Փառասիրութիւն և հպարտութիւն են հոգւոյ և մտաց. որ լինի ***ը:*** - 560. Այսպէս յառաջ գան ի վեց շարժմանց ***ը*** խորհուրդք: - 560. Եւ յա՛յտ է թէ վասն է՞ր են ***ը*** խորհուրդք: - 561. Իսկ մահացուն մեղք **է** գլխաւորօրէն է. կամ ***ը*** որպէս ասացաւ: - 567. Ա՛րդ՝ **թ** երանութիւնք փրկչին զոր քարոզեաց ի լերինն, ***ը*** են ըստ էութեանն. այլ **է** են ըստ աստիճանաց... - 583. Վասն այսորիկ ասեն վարդապետք թէ ***ը*** են երանութիւնքն ըստ էութեանն. այլ է միայն ըստ զանազանութեան աստիճանացն: - 586. Եւ ի նոյն ճառն ուր թուէ ***ը*** քաղցրութիւնս չարչարանցն քրիստոսի, զչորրորդն ասէ՝ ելումն արեան և ջրոյն ի լուացումն մեր: - 594-595. Եւ մեք ***ը*** օր: - 616. Երկրորդ, զի **է** է խորհուրդ եկեղեցոյ. և **է** արփեան է շնորհք հոգւոյն. և մի կատարմունքն ի մեզ, որ լինի ***ը:*** - 616. Երրորդ, վասն է կենցաղոյս՝ և ըստ հանդերձելումն ***ը*** օր տօնեմք: - 616. Դարձեալ, ***ը*** օր եկեղեցւոյ տօնեմք. և մի գլխոյն եկեղեցւոյ. և անդամոց նորա: - 616. կարգեաց ***ը*** օր նաւակատիս խաչի և եկեղեցոյ ի միասին տօնել: - 617. Իսկ ի նորս առ մեզ, Սակաւ ինչ հոգացեալ զեօթնիցս, այլ ութերորդին փոյթ տարեալ դարուց աւանդապահք եկեղեցոյ, կարգեցին ութն կանոնս ***ը ը*** գուբղայիւ: - 627. Նոյնպէս և ***ը*** ձայն եղանակաց. և **ը** օրեայ զտօնս գլխաւորս. որպէս ծննդեանն ութն օր. և յարութեանն՝ և հոգւոյն գալստեանն՝ և խաչի՝ և եկեղեցւոյ՝ և այլն: - 627. Այլ և ***ը*** խորհրդով պատերազմն սատանայի. որպէս գրէ սուրբն եւագրիոս: - 627. Այլ և զինն կարգ

աղօթից *ը* անգամ կատարեմք այժմ այսպէս: - 627. Եւ որ սաղմոսն *ը* տուն է՝ կամ ա՛յլ նուազ, զփառքն և զայժմն վերջին տան շարականին տամք: - 636. Վասն է՞ր *ը* են ձայնք: - 639. Իսկ և **դ** կողմունք նոցա որ լինի *ը:* - 639. Եւ ոմանք ասեն *ը* ձայն վասն ութ ձայնաւոր գրոց. և **ժ** ձայն ըստ **ժ** առոգանութեանցն: - 640. Ասեմք թէ՝ ծննդեան պահքն *ը* օր է. զշաբաթն և զկիրակէ պահեաց... - 649. Երկոքին ճրագալոյցքն. որ լինի *ը:* - 649. և Ոմանք ըստ քաղաքական օրինացն *ը* ասեն գոլ պատիժ: - 751

**ԸԵՐՈՐԴ** - Նմանապէս և հոմանուն է հաստատութիւնն ի ներքոյ ջրոյ. այսինքն *ըերրորդ* կամարն. և օդս առ մեզ որ ունի զջուրս ամպով հաստատեալ: - 184. Երկրորդ՝ թլփատեցին զնա իւրքն յաւուրն *ը երրորդի*՝ օրինաց սրովն: - 486. Իսկ *ը երրորդ* երանութիւնն դառնայ յառաջին գլուխն կրկին կերպիւ: - 586. ՚Ի յայս միտս և զեօթն օր շաբաթուն փոխեցին առաքեալքն ի կիրակէ. որ *ը երրորդ* է ըստ կարգի: - 627. Իսկ *ը երրորդն* օրհնութիւն կոչի: - 627. Երրորդ՝ ի խորհուրդ *ը երրորդին* ի կատարածի, յազատեալք յաստեացս՝ գոհանամք զաստուծոյ - 627. Երեկոյեանն, *ը երրորդին:* - 629. Դարձեալ և ըստ մերոց վարդապետաց, առաջին կանոնին *ը երրորդ* գուբղայն օրհնութիւն՝ ի հանդերձելումն ակնարկէ... - 630. Այլ մեր վարդապետք յերկինս և ի ներքոյ երկնից ասեն. որպէս և կալիստրատոս վկայն առ *ը երրորդ* կամարաւն ուր են լուսաւորք և եթերային լոյսն: - 686. Զնոսա ասել գոլ առ *ը երրորդ* կամարն երկնից. ամբարձեալ յիշխանութենէ սատանայի որք ի յօդս և ի տարերս միայն իշխեն: - 688

**ԸՃՌ** - Ուստի յա՛յտ է, զի ցեղն իէլի *ըճռ* էին. և ցեղն յուդայ **եճռ**. և ցեղն քահանայից և բենիամենի ո՛չ անկաւ ի թիւ: - 434

**ԸՌԲՃ** - Եփրեմ. Մանասէ. և Բենիամին. **բժ**ան բիւր և *ըռբճ* զօրք նոցա: - 378

**Թ** - *թ)* Եւ ո՛չ ասի տգէտ և տկար վասն մարմնոյն. այլ ամենագէտ և ամենազօր մարմնովն: - 78. *թ)* Վասն յարացուցի. մի է. և բազում: - 101. *թ)* Զի՞նչ հասարակ և յատուկ նոցա: - 102. Եւ յայծեղջիւրն ի ջրհոսն և ի ձուկն՝ առնէ զձմեռն. որ առաւելու գիշերն քան զտիւ **զ** ժամ. զի լինի գիշերն **ժե** ժամ. և տիւն ինն ժամ. որպէս յամառն տիւն է **ժե** ժամ. և գիշերն *թ* ժամ: - 190. Նոյնպէս և ի մերն ի հին հայոյն, Արեգի ի *թ* է՛ առաջին օր արարչութեանն: - 191. Յոռի. զի հորե՛ն երկրագործք և մշակք զցորեան և զգինի, յըշտեմարանս ժողովեալ. զի *թ* հոռի՝ մո՛ւտ է աշնան: - 200. Աջ կողքն *թ* ոսկր: - 243. Այլ և զգայականին յաւելեալ շնչականն և շարժականն և ցասմնականն ընդ ցանկականին՝ լինի *թ*. վասն որոյ ոմանք յինն ամիսս ծնանին կամ ի **ժ**: - 263. Դարձեալ տընկականն ունի **գ** զօրութիւն, և **ա** զնիւթն, և **ե** զգայութիւնս, որ լինի *թ*. վասն որոյ **թ** ամսեայ ծնանի: - 263. Դարձել **դ** տարր, և տնկականն և զգայականն, և երեք մասունք հոգւոյն բան ցասումն և ցանկութիւն, որ լինի *թ:* - 264. Դարձեալ *թ* խառնուա՛ծ է չորից տարերց ըստ կրկին քառից որակաց առաւել և նուազ, և իններորդն հաւասար է որ է ի մարդն. վասն որոյ ինն ամսեայ ծնանի: - 264. Դարձեալ *թ* թիւն է երիցս երրեակ. և երեք թիւն է կատարեալ. ունելով առաջին միջին և վերջին. ի նմանութիւն *թ* դասուց հրեշտակաց: - 264. Դարձեալ *թ* թիւն պակա՛ս է ի **ժ**երորդէն. և մեք պակասեցաք յինն դասուց հրեշտակաց, որ նախ հաւասար էաք ի դրախտին. և կարօտացաք մարմնաւոր ծննդեան, նմանելով անասնոց. ըստ այնմ՝ «մարդ ի պատուի էր և ո՛չ իմացաւ. հաւասարեաց անասնոց»: - 264. Դարձեալ **ժ**երորդ՝ աստեղագէտք ասեն թէ յղացումն ամենայն մարդոյ Զօհալին է. և յիւրաքանչիւր մոլորակս ամիս մի թուեալ՝ լինի ծնունդն ի մուշթարին *թ* ամիս: - 264. Իսկ աշունն, և մինչ ի *թ* ժամս աւուրն, և սեաւ մաղձն, և ալևորն, ըստ նմանութեան երկրի ցուրտ և չոր գոլով՝ ծոյլ և պղերգ գոլով ամենայն ուսմանց և գործոց: - 266. Երկրորդ՝ որպէս մանուկն տևէ՛ յարգանդի *թ* ամիս՝ և **ե** օր անդրանկանն՝ և ապա՛ ծնանի: - 290. Երրորդ՝ *թ* դաս հրեշտակաց է յերկինս. և **ժ**երորդն մարդն կատարումն թուոյ նոցա. վասն այն ի կեանս այս ո՛չ հասանեն ի **ռ** թիւն կատարեալ. զի աստ ո՛չ լինի կատարումն դասուցն այլ ի հանդերձեալն: - 291. ...*թ*՝ զհանդարտն խռովէ՛...: - 322. ...**զդ**՝ անդամալոյծ միակողմանց բժշկութիւն. **էդ**՝ բորոտից սրբութիւն. **ըդ**՝ բոլոր մարմնոյն հիւանդաց և ջերմացելոց առողջութիւն. *թդ*՝ զդևսն հանէր. **ժդ**՝ զմեռեալսն յարուցանէր: - 328. Երկրորդ եղանակ՝ **է** գօտիք. և **ը**՝ անմոլարքն. *թ*՝ լուսնոյդ ի վայր. և **ժ** բանն աստուծոյ որ վարէ՛ զարարածս: - 343. Յինգերորդ, *թ* դասք հրեշտակաց. և մի դաս մարդկան ընտրելոց լինի **ժ**: - 343. Այլ թէ հարցանեն զորքանութիւն սիւնիցն. **ծ** սիւն ի մէջ խորանին. և *թ* սիւն վարագուրացն. և մի թափանց ի մէջն յարևելից յարևմուտս. որ լինի **կ**. և **ձ** սփռիչ. և **խ** նիգք. և ամենայնն ոսկեպատ. որ բովանդակն լինի **ճձ** ի ներքս: - 343. Երրորդ՝ զի տացի մասն քահանայիցն աստուծոյ *թ* մասն: - 366. Եւ **ժ** թիւ կատարեալ նուէր և սուրբ է աստուծոյ. յաղագս որոյ թագաւորք երկրի զընծայս ի մարդկանէ՛ հնազանդելոց *թ թ* խնդրեն... - 376. ...զի **ժ** երորդն աստուծոյ է բաժին. և *թ* մարդկան. զի անկատարք

են: - 376. Այլ ա՛յս է ուղիղն. զի բովանդակն ամենայն *բ* դասք են հրեշտակաց. այլ անկեալքն ի նոցանէ՝ են ի չափ միոյ դասու. և մարդիկ զնոցա տեղին լնուն: - 376. Այլ ոմանք՝ ճաւոր զերկին, և վաթսնաւոր զդրախտն, և երեսնաւոր զերկիրս ասեն նշանակեալ **բ** ցեղիցն յայնկոյս յորդանանու, և *բ* ցեղիցն յերկիրն քանանացւոց: - 391. Իսկ *բ* ցեղն նշանակէ՛ զեկեղեցի նոր օրինացս *բ* աստիճանօք կարգաւորեալ: - 391. Եւ *բ* միւս որմունք ըստ դասուցն իմանալեացն փառաբանիչք: - 391. Եւ յետ **բ** ամի՝ դարձեալ եւ յերուսաղէմ, և *բ* ամ պաշարեաց զքաղաքն ի սով սաստիկ: - 447. Եւ ի մարտի **իե** էն մինչ ի դեկտեմբերի **իեն** համարեն *բ* ամիս և **ե** օր, և ա՛նդ ասեն զծնունդն: - 483. Եւ թշրինի **ժե**՝ սկիզբն տօնի տաղաւարահարաց, որ է՛ հոկտեմբերի **բ**. և անտի մինչև ի **իբն** թշրինի՝ և ի հոկտեմբերի *բ* կատարումն տօնին: - 483. Եւ անտի մինչև ի տբէթի **իա**՝ և յունվարի **զ**՝ կատարի *բ* ամիս և **ե** օր: - 483. Երրորդ՝ զի **զ** ժամ ընդ արեգականն ընթացաւ և խաւարեցոյց զնա մինչ ի *բ* ժամն: - 490. Այլ և բովանդակ ամենայն բևեռք *բ* էր ի վերայ խաչին: - 495. Իսկ զտէրունական տօնս երեկօրեայ յինն ժամ **է** աւուրն սկսանեմք. որ է՛ *բ* ժամաւ յառաջ քան զհասարակաց տօնս: - 508-509. Երրորդ վկայ զի ասէ սուրբն եւագրիոս. «պահքն քո ի մեծի շաբաթուն մինչև *գբ* ժամն լիցի»: - 509. Եւ նզովեցին զաղանդն մարկիանու և զարտեմոնի, և զտումարն լևոնի. և միաբանեցան ի մի հաւատս սուրբ առաքելոցն. և ի կանոնս սուրբ ժողովոյն ինչ պետք էին յաւելին գլուխս *բ* ի զգուշութիւն եկեղեցւոյ: - 544. Կարգ սիրոյն ասացաւ ի վերոյ յաստուածաբանութիւնն դիոնիսեայ ի *բ* գլուխն, ի **ժզ** համարն: - 576. Ա՛րդ՝ *բ* երանութիւնք փրկչին զոր քարոզեաց ի լերինն, **ը** են ըստ էութեանն. այլ **է** են ըստ աստիճանաց. - 583. Այս են *բ* դասք եկեղեցւոյ: - 608. Ապա թէ և զապաշխարօղքն ի թիւ կալցես, Կաթողիկոսն լինի **ժ**երորդ. որպէս աստուած **ժ**երորդ է ի վերայ *բ* դասուց հրեշտակաց: - 608. որ լինի *բ* անգամ աղօթք ըստ *բ* դասուց հրեշտակաց: - 621. Այլ և *բ* են աստիճանք եկեղեցւոյ և զայս ևս մարգարէն ուսուցանէ... - 621. Իսկ եկեսցէն ունի սաղմոսս *բ* փոխ բոլոր. պահապան *բ* ժամուց հանապազորդ գիշերոյն: - 622. Եւ ա՛յլ խորհուրդ. **զ** առանձնական աղօթքն, և *բ* հասարակն, որ լինի ամենայնն երկոտասան անգամ աղօթք: - 623. Եւ *բ* տունքն՝ ինն դասուց զուարթնոց: - 628. Եւ **զ** կրկնելով լինի *բ*. ըստ *բ* դասուց հրեշտակաց: - 632. Եւ ըստ *բ* դասուց եկեղեցւոյ որ աստուածաբանեն միշտ, զխաչեալն պաշտելով: - 632. Երկրորդ, ի կոյսն բնակեցաւ բանն *բ* ամիս. և ի խաչն յաւիտեանս յաւիտենից: - 642. Այլ և *բ* տէր ողորմեայն ի պատարագն. և *բ* երեքսրբեանն, ի խորհուրդ *բ* դասուց վերնական յերիս երրեակս որոշեալ: - 645. Եւ է՛ այժմ **ժէ** շաբաթապահք. և թիւ վաթսնիցն *բ* շաբաթ. - 650. Այլ և վասն կապելոյն սատանայի գրեալ է ի *բ* գլուխն ի **իզ** համարն ի վերոյ: - 706. Եւ վասն հրեղէն վիշապին և տըտան նմին ասացաւ ի վերոյ *բ* գլուխն **իե** համարն: - 706. ...այլ ա՛յս է՝ զի իւրաքանչիւր մարմինք սրբոց պայծառացին **է**պատիկ քան զարեգակն. որպէս տն մերոյ ի թաբօր լերինն. և *բ* դասուց հրեշտակաց լոյսն յերկիր ծաւալին. զի զօրութիւնք երկնից շարժեսցին: - 728. Իսկ այլք ոմանք յատկապէս *բ* ասեն զտանջանք դժոխոցն: - 752. Վասն զի զընկերակցութիւն *բ* դասուց հրեշտակաց ապախտ արարին, արդարապէս *բ* տանջանս կրել արժանանան: - 752. Այլ ի նոցանէ՛ անկաւ, որպէս ցուցաւ ի վերոյ *բ* գլուխն, **իբ** համարն: - 760

**Թճ** - Վասն է՞ր նահապետքն ի **ռ** ամն ո՛չ հասին. այլ ***թճ***, աւելի և կամ պակաս ապրեցան: - 290. Նոյնպէս և անդրանիկ ծնունդքն աշխարհի էին նահապետքն որ նախ քան զջուրն, տևէին ի կեանս այս ***թճ*** կամ աւելի ամ, և ապա ծնանէին ի հանդերձեալ կեանսն մահուամբ ելիւք: - 290. Ա՛րդ՝ եթէ նահապետքն ամենայն որ ***թճ*** ամ կամ աւելի և պակաս ապրէին՝ ո՛չ ալևորէին, ապա և ո՛չ տէր մեր յիսուս քրիստոս: - 480

**ԹճԽԲ** - Եւ անտի յառաջին ամն աբրահամու, ***թճխբ*** ամ: - 337. Եւ ի ջրհեղէն յաբրահամ, ամք ***թճխբ:*** - 453

**Ժ** - Երեքտասաներորդ՝ Ո՛չ կարեմ յանձնէ. և պատասխանիք նոցա ***ժ*** գլխով: - 29. Զի քրիստոս Քահանա՛յ է ըստ կարգին մելքիսեդեկի ***ժ*** կերպիւ: - 50. ***ժ)*** Դարձեալ հարցանեմ, հայր և որդի զնո՞յն բղխեն զհոգին, թէ զայլ: - 63. ***ժ)*** Եւ ո՛չ ասի ապականացու վասն առնլոյ յապականացւացս մարմին. այլ միշտ անապական մարմնովն: - 78. ***ժ)*** Վասն անեղութեան. և եղելութեան: - 101. ***ժ)*** Քահանայապետութիւն նոցա և մարդկան: - 102. Եւ ի միոյ աստուծոյ եղեն ***ժ*** դասք հրեշտակաց ընդ մարդկան. և հարիւր գունդքն ըստ ոչխարաց առակին. և **ռ** կենդանեաց տեսակքն որ յերկրի. և բիւր անկենդան բուսոց. և անթիւ գոյեղէնք: - 109. Իսկ թէ ոմանք զո՛լ ասեն ***ժ*** դասք և զմինն անկեալ, ո՛չ պարզապէս, այլ կրկին է իմացումն: - 134. Որ է՛ ***ժ*, ճ, ռ**, բիւր: - 141. Քանզի ***ժ*** տասն՝ հարիւր է. և ***ժ*** հարիւրն՝ հազա՛ր է. և ***ժ*** հազարն՝ բիւր է: - 141. Այլ այս ո՛չ է հասարակ թէ ***ժ*** դաս էր հրեշտակաց և մինն անկաւ: -

150. Զի՞նչ է է գլուխն և ժ եղջիւրն: - 151. Իսկ ժ եղջիւրն է ժ պատուիրանին յանցումն, որով պատերազմի ընդ մարդկան: - 151. Եւ ժ կատարեալ թիւ է. նշանակէ՛ զկատարեալ զօրութիւնս թշնամւոյն որով կռուի ընդ մեզ. զոր նշանակեն եղջիւրքն: - 151. Եւ այն որ ժ է եղջիւրք և է գլուխ: - 151. Յորժամ պատահումն ոչ գոյ յաստուած որպէս ասացեր, զժ ստորոգութիւնս որպէս ուղղեսցուք առ նա: - 171. Երկրորդ՝ զի առաջին և սկիզբն է թուոց. որպէս միակն թիւ բազմանայ և խառնի յայլս, այսինքն՝ ի ժ. ի ճ. ի ռ. և ի բիւրն. և ի միութենէն իւրմէ ո՛չ որոշի: - 178. Եւ է՛ Բնական երկինք ժ: - 183. Չորրորդ Արեգակն. զոր շամս կոչեն ջե՛րմ է և լուսաւոր. լ օր և ժ ժամ և կէս յամէ՛ ի կենդանակերպն. և ի բոլոր տարին վճարէ՛: - 189. Վեցերորդ Փայլածուն. զոր ոտարիտ կոչեն. միշտ շրջի ընդ արեգականն. և սակաւ հեռանայ ի նմանէ. զընթացս իւր կատարէ՛ յը աւուրս. ժ օր պակաս քան զլուսաբերն. և այլք թէ գ ամիս: - 189. Զի արեգակն յամենայն աւուր զընթացս իւր կատարէ՛ իդ ժամ, և ժ մասն և կէս: - 190. Եւ ժ մասունքն ժողովեալ ի յամիսն՝ լինի ժ ժամ: - 190. Ապա ուրեմն ժ մասն է ո րոպէ. և մէկ ժամն ռպ րոպէ: - 191. Որ լինի ժ ժամն ժըռ րոպէ: - 191. Բայց ասեն ոմանք թէ՝ յաւուրս մանաւէի՝ Նումաս պումիլոս բ ամիս յաւել ի տարին հռօմոց. զի յառաջ քան զնա՝ ժ էր. և յաւել ի նոսա զյունվար և զփետրվար: - 201. Արդ՝ ժ թիւն կատարեալ է. և չորսն տարրական է. այսինքն զի կատարեալ հոգին բանական ի նո՛յն ժամն խառնեալ միաւորի ընդ մարմնոյն տարրական, և կերպացեալ լինի մի մարդ մի դէմ և մի բնութիւն մարդոյ ի հոգւոյ և ի մարմնոյ. որպէս քառասունն ի տասանց և ի չորից է գոյացեալ: - 262. Եւ կամ որպէս մարդ կատարեալ բերելով ինքեան զդ և զժ հնն խորհուրդ: - 263. Այլ և զգայականին յաւելեալ շնչականն և շարժականն և ցասմնականն ընդ ցանկականին՝ լինի թ. վասն որոյ ոմանք յհնն ամիսս ծնանին կամ ի ժ: - 263. Զի ժ ի չորից ծնանի. և չորսն տարրական է. վասն որոյ ի նմա կարէ մարդ ծնանիլ զնմանն իւր: - 265. Բայց սուրբն գրիգոր նիւսացին ժ ատիճան դնէ անկման մարդոյն ի դրախտէն ի գիրս կուսութեան: - 280. Եւ զգեստ լինի վասն ժ պատճառի: - 281. Տասնեէ՝ Բաղդատութիւն մահու և յարութեան ժ գլխով: - 283. Քսանեզ, Վասն ժ հարուածոցն. և թէ վասն է՞ր այն քան տանջեցան: - 283. Երեսուներորդ, ժ բան օրինացն: - 283. Եւ ժ էր բովանդակ ամենայն սեղանքն: - 284. Եւ որպէս փարաւօն վասն հեղցուցեալ մանկանցն՝ ջրասոյզ կորեաւ. և յառաջ քան զայս՝ ժ հարուածովք պատժեցան: - 288. Չորրորդ՝ գլխաւոր թիւքն դ են. այսինքն ժ. և ճ. և ռ. և բիւր: - 291. Եւ յետ նորա ժ թիւն կենդանեա՛ցն է, որ ի չորից են բաղկացեալ. որպէս ժ ի դ թուոց: - 291. Բոլոր տարի մի. զի այսպէս ասէ գիրն թէ՝ ճծ օր բարձրացաւ ջուրն. և յետոյ ճծ օր ցածուցաւ. որ լինի ժ ամիս: - 294. Եւ բարձրացուցին զժ ամսոյ ճանապարհ ընդ ելն և ընդ էջն. որչափ բարձրացաւ ջուրն ճծ օր, և ճծ օր դարձեալ իջաւ: - 296-297. Վեցերորդ՝ նուիրեաց մելքիսեդեկ զպատարագն և ընկալաւ զտասանորդն. որպէս քրիստոս պարգևէ՛ հաւատացելոց զշնորհս, և առնու զտասանեակս զկատարեալ և զբարի գործս. կամ զտասն բանեան օրէնս ժ զգայարանօք: - 301. Նոյնպէս և տէրն մեր եւ հաւատացելոցն զկենարար մարմինն և արիւնն իւր. յորոց խնդրէ ըզգործս տասանաւոր. այսինքն զկատարեալս. և զկատարումն ժ բանեան օրինացն. ի յորս է՛ մաքրութիւն ժ զգայարանացս որպէս ի վերոյ ասացաւ: - 302. Եւ գիտելի է, զի ժ փորձանացն աբրահամու որք էին ծոյլարան նորա՝ մի է և այս: - 304. Եւ յամենայն աւուր ըստ թուոյ նոցա ժ զոհ մատուցանէր, և զուարակ մի վասն սրբութեան մտաց: - 321. Վասն է՞ր յոբ յետ խրախութեանն ժ պատարագաւ սրբէր զորդիսն. և մի զուարակ վասն մտաց մեղացն մատուցանէր: - 322. Նա՛խ՝ զի ժ էին թուով. է ուստերք և գ դստերք. ըստ թըւոյ նոցա մատուցանէր: - 322. Երկրորդ՝ ի սրբութիւն ժ զգայութեանց նոցա: - 322. Երրորդ՝ ի խորհուրդ ժ բանեան օրինացն ժ պատարագ մատուցանէր: - 322. Չորրորդ՝ ի խրախութիւն զհնոյ՝ ժ մեղք գործին. այսինքն Նա՛խ՝ բազմակերութիւն. - 322. ժ պատուիրանացն աստուծոյ հեղգութիւն գործէ: - 322. Վասն այն յոբ ժ պատարագաւ սրբէ՛ր զժ մասնաւոր մեղսն որ գտանին յարբեցութեան. և մին զուարակն ի սրբութիւն վասն ակամայ և խորհրդոյ մեղացն: - 322. Երրորդ, մովսէս ժ հարուածովք տանջէր զեգիպտացիսն: - 328. Իսկ քրիստոս խնամարկեալ իւրոցն ժ սքանչելեօք ի մարմինս նոցա բժշկէր զիէլլացիսն: - 328. ...զդ՝ անդամալոյծ միակողմանց բժշկութիւն. եդ՝ բորոտից սրբութիւն. ըդ՝ բոլոր մարմնոյն հիւանդաց և ջերմացելոց առողջութիւն. թդ՝ զդևսն հանէր. ժդ՝ զմեռեալսն յարուցանէր: - 328. Վասն է՞ր ժ հարուածովք էհար: - 335. Վասն որոյ ժ հարուածովք տանջեցան: - 335. Այսպէս հինգ եղանակաւ չարաչար ատեցին զհիւրսն. վասն այն կրկին կրեցին զհատուցումն վրիժուց ժ հարուածովք: - 335. Տասներորդ՝ գ ափկիցն. երրորդութեանն հաւատով սրբել զժ զգայարանս հոգւոյ և մարմնոյ: - 339. Իսկ առ մեզ ժ մասունք և գ կիցն, զի ժ սուրբ և նըւէ՛ր է աստուծոյ: - 340. Եւ ժ բան է՛ օրինացն. և խգ իրաւանցն. բովանդակն ծգ. խորհուրդ ազատութեան մերոյ հաւատով Երրորդութեանն: - 340. Երրորդ՝ ժողովումն արմտեաց ի

յաշնան. որ ի թշրինի ***ժ*** կարգեցաւ: - 340. Զի՞նչ նշանակէր ***ժ*** փեղկ և ծն խորանին: - 342. Եւ ***ժ*** զգայարանք մեր. հինգ հոգւոյ և հինգ մարմնոյ: - 342. Եւ ***ժ*** մասունք արարածոց: - 342. Երկրորդ եղանակ՝ **է** գօտիք. և **ը**՝ անմոլարքն. **թ**՝ լուսնոյդ ի վայր. և ***ժ*** բանն աստուծոյ որ վարէ՛ զարարածս: - 343. Հինգերորդ, **թ** դասք հրեշտակաց. և մի դաս մարդկան ընտրելոց լինի ***ժ:*** - 343. Երկայն **իը** կանգուն. և բարձր ***ժ***. և լայն **ի**. բոլորն հաւասարակ: - 343. Զարծաթն է առ ի համարոց գլխոցն կէս երկդրամի որ է՛ ***ժ*** դանկ: - 344. Բաց ի քաւութենէն որ ի սուրբն սրբոց՝ ի ներս և ի դուրս ***ժ*** էր բովանդակն: - 364. ՚Ի եօթներորդն ամիսն որ է՛ թշրին՝ ***ժ*** օր քաւութեան տօնէին. զի է շաբաթ շաբաթուցն ի նա՛ է. և **է**երորդ ամիսն. այլ և **ժ**երորդ օրն շաբաթ էր: - 371. Որպէս և այլ ուր ***զժ*** էն մինն աստուծոյ բաժին: - 371. Նոյնպէս և առաւօտու երգն, և մեսեդի ճաշոյն, և տասանորդ նաշիոյն ***ժ*** զգայարանաց մարմնոյն ճընշելն: - 375. Եւ ***ժ*** թիւ կատարեալ նուէր և սուրբ է աստուծոյ. յաղագս որոյ թագաւորք երկրի զընծայս ի մարդկանէ՛ հնազանդելոց **թ թ** խնդրեն... - 376. Նա՛խ՝ զայս նշանակէ թէ ի ***ժ*** դասուց հրեշտակաց մինն անկաւ, և մարդիկ զտեղի և զթիւ անկելոցն լնուն: - 376. Պատանեակ ի ամեան. որ ***զժ*** պատեաց: - 378. Երիտասարդն **գ** ***ժ*** է հասակն. իբր թէ հասա՛ք ի չափ լրման և աճման: - 378. Եւ տէրն նշանակեաց **իռ.** ***ժ*** զգայարանացս **բ բռ**: - 404. Երրորդ՝ զի երեսունն **գ** ***ժ*** է. զի ***ժ*** զգայարանքն մարմնոյ և հոգոյ և մտաց՝ քակտի. վասն որոյ **լ** օր սըգան: - 411. Տասներորդ, Բաղդատութիւն սաւուղայ և տեառն ***ժ*** գլխով: - 412. Քսանք, Դշխոյն հարաւոյ. և առաւել քան զսողոմոն. ***ժ*** ***ժ*** գլխով: - 413. Մետասաներորդն Եւոն զաբողոնացի ամս ***ժ:*** - 420. Քառասուն ամ թագաւորեաց դաւիթ, որ է չորիցս ***ժ***. և սկիզբն և կատարումն ամենայնի է՛ տէր մեր: - 437. Երեսուննէ զօրավարք դաւթի. և **լէ** թիւ հնոյն օրինաց. և այլ նորոց կտակի. և կամ **իբ** գլխաւո՛ր են գրոց հնոց. և ***ժ*** բան օրինաց. և չորից աւետարանաց. և մինն առաքելական: - 438. Այլ և ***ժ*** աշտանակն. ***ժ*** կուսանք լապտերօք: - 441. Այլ և «դշխոյն հարաւոյ դատապարտէ՛ զիրէայսն» վասն ***ժ*** պատճառի: - 442. «Եւ առաւել քան զսողոմոնէ աստ» վասն ***ժ*** պատճառի: - 442. ...և երեք ամ պաշարեալ էառ զնա. և գերի վարեաց զթագաւորն ովսէէ որդի եւայ. և ***զժ*** ցեղն բովանդակ տարաւ յասորեստան: - 447. Եւ յետ գերութեանն իսրայէլի անցեալ ամք **ճլե**, եւ արքայն բաբիլացւոց նաբուգոդոնոսոր ի վերայ եէմի. ի ***ժ*** ամի թագաւորութեանն յովակիմայ. և էառ հարկ ի նմանէ. և զմեծ մասն սրբութեանց տաճարին աւերեաց: - 447. Արդ յերեքտասան ամէ՛ ովսիա մինչև ցմետասան ամն սեդեկիայ որ վերջին գերեցաւ՝ լինի **խ** ամ. և նաբուգոդոնոսորայն **ի** ամ. և որդւոց և թոռանց նորին ***ժ*** ամ. որ կատարի **հ** ամ մինչև յառաջին ամն կիւրոսի որ արձակեաց զգերիսն: - 447. Իսամարիայ ***ժ*** ազգին տիրէ՛ րոբովամ որդին նաբատայ. որք կոչեցան թագաւորք իսրայէլի չարք և ո՛չ բարիք: - 452. Եօթներորդ, Զի աստուածածին է կոյսն ***ժ*** եղանակաւ: - 454. Իններորդ, Բանն մարմին եղև ***ժ*** պատճառաւ: - 454. Երկոտասաներորդ, Միածին որդին ***ժ*** թուով: - 454. Վեշտասաներորդ, Որպէս հոգի և մարմին միաւորեալ ***ժ*** եղանակաւ: - 454. Եօթն**ժ**, Զանազանի ի նոցանէ ***ժ*** եղանակաւ: - 454. Քսաներորդ, Թէ արու ծնաւ քրիստոս ***ժ*** կերպիւ: - 454. Քսան**ղ**, Վասն թլփատութեան տն ***ժ*** պատճառաւ: - 454. Քսան**ե**, Վասն մկրտութեանն քրիստոսի ***ժ*** պատճառաւ: - 454. Երեսուն**բ**, Վասն գալստեան սուրբ Հոգւոյն յետ խաչին, ***ժ*** պատճառաւ: - 455. Իջումն հոգւոյն փայլատակումն է՝ ***ժ*** թուով: - 455. Ողջոյնս այս՝ է հանդերձ բերողիւն և առաքողիւն և կուսիւն ցուցանէ ***զժ*** գերազանցութիւն պատուոյ կուսին: - 463-464. Եւ թշրինի ***ժ*** միշտ առաջին օր քաւութեան. յորում մտանէր քահանայապետն ի սուրբն սրբոց: - 483. Եւ լինի սեպտեմբերի **իէ**, և թշրինի ***ժ:*** - 483. Հինգերորդ՝ ապականութիւն մեր մարմնոցս է՛ ի սերմանէ հօր ի ծեռն կնոջ խառնեալ. իսկ մարմին բանին ո՛չ է ի սերմանէ հօր և մօր. այլ ի կուսական արգանդէ և յանապական արենէ բեղնաւորեալ որպէս ցուցաւ ի վերոյ ի սոյն գլուխ ի ***ժ*** համարն. ապա ուրեմն անապակա՛ն է մարմին բանին աստուծոյ: - 499. Եւ **ե** անգամ ի նոյն օրն յորում յարեաւ ի գերեզմանէն. որ լինի ***ժ*** անգամ: - 511. Եւ յիսունն ***ժ*** ***ժ*** կատարեն **ե** գլխաւոր համարք: - 524. Երրորդ ժողովն է դվնայ, ի չորրորդ ամի թագաւորութեանն կոստանդեայ հռոմոց. հրամանաւ մեծի կաթողիկոսին հայոց ներսէսի շինողի. և այլ է և ***ժ*** եպիսկոպոսաց՝ և վարդապետաց բազմաց և իշխանաց. - 544. Այլ ես հաւանիմ որք ասեն ***ժ*** գոլ զմեծութիւն մեղաց. և այն համեմատի ընդ ***ժ*** ստորոգութիւնն: - 565. Զի ***ժ*** պատուիրանքն և **է** մահու չափ մեղքն են ըստ գոյացութեան մեղք. որպէս մի՛ շնարն և մի՛ գողանարն և մի սպանաներն և մի՛ սուտ վկայերն: - 565. Որպէս ***ժ*** բան է օրինացն՝ և ***ժ*** բան է հայր մեր որ յերկինս: - 572. Նոյնպէս ***ժ*** բան է հաւատամքն որ է՛ այսպէս: - 572. Նա՛խ՝ զի ի հինն զտօն քաւութեան և զտաղաւարահարացն ի միասին տօնէին ի թշրինի ***ժ:*** - 616. Իսկ ի կիրակէի խնկարկելն և ***ժ*** օրհնութիւնն՝ նշանակէ զտասն քաղաքացն իշխանութիւն ունել. և ***ժ*** քանքարացն: - 628. Որ լինի ***ժ*** ըստ ***ժ*** մասանց արարածոց: - 639. Եւ կատարեալ է ***ժ*** թիւն: - 639. Եւ

ոմանք ասեն **ը** ձայն վասն ութ ձայնաւոր գրոց. և ***ժ*** ձայն ըստ ***ժ*** առոգանութեանցն: - 640. Եւ ***ժ***, զի յաւելումք յինն դասս հրեշտակաց: - 640. Եւ տասն մնասն, և ***ժ*** քաղաքաց իշխել: - 640. Եւ թէոփիլեանք ոմանք կոչեցեալք, արարին զերկու ստեղունս ասացեալ. և այսպէս աւարտեցաւ ***ժ*** ձայնքն: - 640. Տասն աղին՝ ***ժ*** զգայութիւնքն հոգւոյ և մարմնոյ. և ***ժ*** մասունք արարածոց ընդ բան օրինացն: - 641. Այժմ ի մերս եկեղեցի ***ժ*** են: - 649. Այժմ ի յեկեղեցիս մեր ***ժ*** երևին մեզ: - 649. Դարձեալ, ***ժ*** շաբաթ պահոց այն է՝ որ մեծն Ներսէս կանոնեաց յամենայն ամսամուտս պահել շաբաթ մի: - 650. Զոր այժմ պահեմք ***ժ*** շաբաթ **ժ** ամսեան: - 650. ...և ***ժ*** գան արբցէ. և տրօք տնանկաց ապա՛ հաղորդեսցի: - 652. Որ ***ժ*** թիւ էր ի սրբոյն գրիգորէ յետ ճժա ամի անցանելոյ... - 659. Հինգերորդ, Քահանայաթաղ. և օծման նոցա. և ողջունին. ***ժ ժ*** թուով: - 660. Եօթներորդ՝ Վասն երկրորդ աւուրն. այգալացքն ի ***ժ*** միտս: - 660. Ութերորդ՝ Վասն երեք աւուրն ***ժ*** միտք: - 660. Հնգետասաներորդ, Վկայութիւնք քաւարանին, և լուծումն նոցա ***ժ*** թուով: - 660. Քսանբ, և յառակս ***ժ*** կուսանացն ասէ՝ «**ե** յիմար և **ե** իմաստուն. այսինքն արդարք և մեղաւորք **եե** զգայութեամբ նիրհեցին ամենեքեան և ի քուն մտին»: - 693. Եւ եղջիւրս ***ժ.*** այսինքն զայնոսիկ որք մարտնչին ընդ **ժ** բանեան օրինացն: - 707. Ասեն ոմանք թէ ***ժ*** ցեղքն իէլի որ փակեցան ի մէջ լերանցն կասբից...: - 708. Այլ ըստ զանազանութեան չափոյն, ոմանք ***ժ*** են ասացեալ թուով ըստ հարուածոցն եգիպտոսի: - 751

**ԺԱ** - ***ժա****)* Եւ ո՛չ ասի մահկանացու վասն մարմնոյն. այլ միշտ անմահ և կենդանարար մարմնովն: - 78. ***ժա****)* Անժամանա՛կ է աստուած. և յաւիտեան. և հին աւուրց: - 101. ***ժա****)* Զի՞նչ է շնորհքն. և զի՞նչ շնորհք քահանայութեան: - 102. Զի արեգական տարին է՛ **յկե** օր. և լուսնին տարին **յծդ** օր. ***ժա*** օր պակաս քան զարեգակն: - 191. Զոր յամենայն ամի ***ժա*** թիւ ի վերայ լուսնոյն դնեմք, զի հաւասարեսցի արեգականն, և կոչեմք վերադիր: - 191. Եւ **ե** օր ևս աւել աւուրքն, որ լինի ***ժա*** օր: - 191. Յաղագս ***ժա****ին* ասի՝ «ջրով իմաստութեան փրկութեան արբուսցէ զնա՛»: - 209. ***ժա***՝ սրունքն: - 241. ՚Ի ***ժա*** ամին աքազու գերեցաւ իսրայէլ ի սաղմանասարայ: - 453. Մատթանի որ և սեդեկիա ամս ***ժա:*** - 453. Ծանի՛ր, զի վասն չարչարանաց ասացեալ է ի վերոյ ի ***ժա*** պրակն աստուածաբանին գրիգորի ընդ դէմ արիոսի: - 489. Երրորդ ժողովն զկնի **խբ** ամի եղև յեփեսոս ի թագաւորութեանն թէոդոսի փոքու ի ***ժա*** ամի նորին: - 542. Նա՛խ՝ է՛ վկայութիւն անդուստ իսկ թշնամեացն. քանզի ասէ ալպերտն ի յառաջին գիրքն ***ժա*** համարին, թէ հոգի ասեմ սրբութեան. արիւն փրկութեան. և ջուր լուացման: - 594

**ԺԲ** - ***ժբ****)* Եւ ո՛չ ասի պարագրելի վասն մարմնոյն. այլ անպարագրելի մարմնովն: - 78. ***ժբ****)* Վասն յաւիտենից: - 101. ***ժբ****)* Զանազանի հրեշտակն. և հոգի մարդոյ. և իմացումն հրեշտակաց: - 102. Յատկութիւն արեգականն ասացեալ է յառաջիկայսդ ի գլխով ի ***ժբ*** գլուխն **իա** համարն: - 124. Քառասունն**գ**) Վասն նշանակութեան ջուրց ***ժբ*** թուով: - 155. Երկրորդ՝ Լուսնթագն. զոր մուշթարի կոչեն. ջե՛րմ է և գէճ. մին ամ յամէ՛ ի կենդանակերպն. և ի ***ժբ*** ամն պատէ՛ զամենայն: - 189. ՚Ի խոյն և ի ցուլն և յեկաւորն առնէ զգարուն. որ է հաւասարակ տիւն և գիշերն ***ժբ*** ժամ: - 190. ՚Ի կշիռն ի կարիճն և յաղեղնաւորն առնէ աշուն. նոյնպէս հաւասարակ տիւ և գիշեր ***ժբ*** ժամ: - 190. Եւ ի ***ժբ****ն*՝ հաւասարակա՛ծ է. որ է՛ գարնանամուտն: - 191. Ժամանակն թէ ո՞րպէս բաժանի ի մշտնջենաւորն և յաւիտեանցն՝ ասացաւ ի վերոյ ի **ը** գլուխն՝ ***ժբ*** համարն: - 198. «Արի՛ ասէ հիւսիս, և ե՛կ հարաւ». որ է՛ գարնան ամիս. զի ի ***ժբ****ն* մտանէ: - 201. Յաղագս ***ժբ****ին* ասի՝ «որպէս փափագէ՛ եղջերու յաղբերս ջուրց»: - 209. ***ժբ***՝ թաթք ոտիցն: - 241. Եւ բաց յայսցանէ՝ ի յուղեղէն **բ բ** երակ գայ յիւրաքանչիւր զգայարանս. **բ** յաչքն. **բ** յականջն. **բ** ի քիթն. **ա** ի բերանն. մին ի լեզուն. **բ** ի ձեռքն. **բ** ի յոտքն. որ լինի ***ժբ:*** - 244. Իսկ ի ներսն, **ա**՝ հացին երեսաց և գառին. **բ**՝ խնկոցն. **գ**՝ շօթին և զիացին. **դ**՝ մին ա՛յլ **զ** հացին. զի ***ժբ*** հաց էր. և **բ** սեղան: - 364. Եւ **դ** գիրք թագաւորութեանց որ լինի ***ժբ:*** - 450. Ամովս ամս ***ժբ:*** - 453. Եղիակիմ որ և յովակիմ ամս ***ժբ***. ի սորա **ժ** ամին նաբուգոդոնոսոր զիրէաստան հնազանդեաց. և հարկ առեալ յեղիակիմայ գնաց: - 453. Զորօրինակ՝ մեռեալ մարդ ո՛չ ասի պարզաբար մարդ, նոյնպէս և այս. որպէս ցուցաւ ի թագաւորութեանցն **իզ** գլուխն. ***ժբ*** համարն: - 536. Եւ վասն աւազանին ծննդեանն ասացեալ է առ սառայ ի **ժթ** գլուխն, ի ***ժբ*** համարն: - 591. Որով յա՛յտ է՝ զի ի կէս աւուրն որ է ***ժբ*** ժամն՝ աղօթելի՛ է մեզ յամենայն օր. և զկէսն այլ՝ մարմնական հոգոց պարապիլ. գործոյ աշխատութեան՝ ննջելոյ՝ կամ այլ ինչ իրաց: - 623. Եւ ա՛յս է պատճառն, զի մի տան շարականի **դ** տուն սաղմոսի պիտոյ է յերկու դասս. և մին շարականն ***ժբ*** տամբ աւարտի: - 636. Որպէս համեմատեցաւ ի վերոյ ի **ժթ** գլուխն, ***ժբ*** համարն: - 756

**ԺԳ** - ***ժգ****)* Վասն կենաց. և զանազանութեան աստուծոյ. և հրեշտակաց և մարդկան. և կենդանեաց: - 101. ***ժգ****)* Թիւք հրեշտակացն: - 102. Տե՛ս՝ զի հոգին բղխումն է հօր անձամբ. և առումն յորդւոյ

իմաստութեամբ. որպէս ցուցաւ ի վեց գլուխն ի ***ժգ*** համարն: - 105. Մարգաց. որ է՛ ժամանակ աճելոյ զմարդ. որ ի դաշտս և ի հովիտս իցեն. յայգեստանս և ի բուրաստանս. յորժամ արեգակն առ շամբն և յետ շանն իցէ. զի ի ***ժգ***ն մո՛ւտ է ամռան: - 201. Եւ վասն առաջին օձին ի ***ժգ*** գլուխ համարոյն տես թէ պիտի: - 387. Եւ այլ ևս գտցես յաստուածաբանին ճառն յառաջքն գրոցս ի եօթն գլուխն՝ ի ***ժգ*** համարն: - 518. Առաջին՝ ի բնական. որպէս երէոց, անասնոց, թռչնոց, և մրջմանց. որպէս ցուցաւ ի վերոյ ի ***ժգ*** գլուխն, **ծա** համարն: - 536. Եւ ղազար թարգման եբեր ի հայս՝ ի ***ժգ*** ամի թարգմանութեան սրբոյն սահակայ առն աստուծոյ որ էր նախանձախնդիր կարգաց եկեղեցոյ: - 659. Յերկրորդ ամէ՛ սրբոյն սահակայ մինչև ի ***ժգ*** ամն նորին՝ կատարեցան ի փառս քրիստոսի աստուծոյ մերոյ: - 659

**ԺԴ** - ***ժդ****)* Վասն տեսութեան աստուծոյ. և հրեշտակաց. և մարդկան: - 101. ***ժդ****)* Շարժումն նոցա: - 102. Եւ ի ***ժդ***ն՝ կազմութիւն մարդոյն է: - 191. Եւ յուդայի վերջին. որ լինի ***ժդ:*** - 450. Եւ գիտելի է, զի ի տաճարն ***ժդ*** ամաց էր: - 461. Որ կատարի տեառնընդառաջն փետրվարի ***ժդ:*** - 483. ...զի զքառասնօրեայ գալուստն ի տաճարն՝ ըստ ծննդեանն տօնեսցեն և ո՛չ ըստ յայտնութեանն. որ է՛ յունվարի վեցն. զոր մեք տօնեմք **խ** օր թուեալ մինչև ի ***ժդ***ն փետրվարի: - 485. ...և կանգնեաց զխաչն փրկական ի սուրբ գողգոթայ ի սեպտեմբերի ***ժդ****ն...:* - 617. ...և բերէր ի խորանն հանգուցանէր. որպէս ցուցաւ յառաջագոյն յերկրորդ թագաւորութեանց ***ժդ*** համարն: - 645. ...որ ***ժդ*** թիւ էր ի սրբոյն գրիգորէ: - 659

**ԺԵ** - ***ժե****)* Զի՞նչ զանազանի և հաւասարի տեսութեանն աստուծոյ. և հրեշտակաց. և մարդկան: - 101. ***ժե****)* Զգայարանք մարդոյս: - 102. Քսանն**ք**) Նշանակութիւնք աւուր՝ ***ժե*** գլխով: - 154. Իսկ թէ վասն է՞ր մարդս ալփաբէտից կարօտացաւ, գրեա՛լ է ի հրեշտակաց ***ժե*** համարն: - 177. Եւ յայծեղջիւրն ի ջրհոսն և ի ձուկն՝ առնէ զձմեռն. որ առաւելու գիշերն քան զտիւ **զ** ժամ. զի լինի գիշերն ***ժե*** ժամ. և տիւն ինն ժամ. որպէս յամառն տիւն է ***ժե*** ժամ. և գիշերն **թ** ժամ: - 190. Ոլոմպիաթն չորրորդ ամ է. զոր հայք նահանջ ասեն. և Ընդիքտիոնն ***ժե*** ամ է. որով հոռոմք վարին: - 191. Եւ որպէս լրումն զատկի ունի աւուրս **ժզ**. և այլքն ***ժե***. և այս ի տումարս մեր է. և իրն որ է՛ լուսինն մի և նոյն: - 192. Օր ասի ***ժե*** կերպիւ: - 195. Քաղելով գործելն այն է, որ ***ժե*** կանգուն հաւասար բարձրացոյց, զի մեծահասակ կենդանիքն հանգիցեն: - 293. Եւ ***ժե*** նրբեցոյց ի մի կանգուն, զի ջուրն վիժեսցի: - 293. Մետասաներորդ՝ յովսէփ ***ժե*** ամաց վաճառեցաւ **լ** դահեկանի որպէս ասէ ի կտակն: - 313. Եւ այլն ասացաւ ի գօտէմարտիլն յակոբայ ի ***ժե*** համարն ա՛նդ տեսցես: - 332. Իսկ յաւուր **ե** շաբաթոջ երեկունն զգառն զենին և ելին յայգ ուրբաթի. նիսանի ***ժե***. որ էր առաջին ամիս նոցա. և ի կիրակէ անցին ընդ ծովն որ էր նիսանի **ժէ**: - 337. Եւ ***ժե*** կանգուն բարձր. զի մի՛ երևեսցի խորանն: - 343. Եւ ի ***ժե***ն նիսանի անցին ընդ ծովն որ է՛ **ե** ամիս. և **է** ամիս ի գործ խորանին: - 344. Երկրորդ՝ զի զգին ծերոյն պակաս հրամայեաց. զի **ե** ամեայ տղայոյ երկդրամեան էր. և ի ամենին ի երկդրամեան. և անտի մինչև ի **կ** ամն **ծ** երկդրամեան. և ի **կ** էն յառաջ ***ժե*** երկդրամեան: - 377. Ռուբէն. Շմաւոն. և Գադ. ***ժե*** բիւր և **ռնծ** զօրք նոցա: - 378. Դան. Ասեր. և Նեփթաղիմ. ***ժե*** բիւր և **ռռ** զօրք նոցա: - 378. Մովսէսի և ահարօնի ***ժե:*** - 412. Քսանն**գ**, Վասն տօնի ծննդեանն ի վեցն յունվարի ***ժե*** պատճառաւ: - 454. Եւ թշրինի ***ժե***՝սկիզբն տօնի տաղաւարահարաց, որ է՛ հոկտեմբերի **բ**. և անտի մինչև ի **իբ**ն թշրինի՝ և ի հոկտեմբերի **թ** կատարումն տօնին: - 483. Եւ բոլորն ***ժե*** ժամու յառաջ ի միւս աւուրն՝ սկսեալ նախատօնակ առնեմք. և զայս յամենայն ուրեք: - 509. Որ այսպիսի էր պատկեր աւուրն. յաւուր **ե** շաբաթոջ երեկոյին ի չորեքտասան լուսնին զգառն զենին և ելին յայգ ուրբաթի ***ժե*** ամսեանն. և ի կիրակէ անցին ընդ ծովն որ էր նիսանի **ժէ**: - 513. ...որպէս ասացաւ յառաջագոյն ի թագաւորութեանց **իէ** գլուխն. ***ժե*** համարն տես: - 603. Երեքտասաներորդ, Վկայութիւնք հակառակ ախթարմայիցն. և պատասխանիք նոցա ***ժե*** թուով: - 660. Չորեքտասաներորդ, թէ ո՛չ է քաւարան հրոյ, ***ժե*** թուով: - 660. Եւ յետ մահուն և յարութեան նոցա՝ թագաւորեսցէ նեռն այլ ևս ***ժ և ե*** օր: - 709

**ԺԵՐՈՐԴ** - Երկրորդ՝ զի ***ժերորդ*** է մարդս կարգեալ ի թիւ նոցա ըստ հարիւրերորդ մոլորեալ ոչխարին, և կորուսեալ ***ժերորդ*** դրամին: - 134. Դարձեալ, զի ***ժերորդն*** աստուածպետութիւնն. և կատարումն ի վերայ ամենեցուն: - 134. Չասարակ կարծիք է թէ՝ ***ժերորդ*** դաս հրեշտակացն անկաւ, և մարդս զանկելոց տեղին լնու: - 150. Դարձեալ **թ** թիւն պակա՛ս է ի ***ժերորդէն***. և մեք պակասեցաք յինն դասուց հրեշտակաց, որ նախ հաւասար էաք ի դրախտին. և կարօտացաք մարմնաւոր ծննդեան, նմանելով անասնոց. ըստ այնմ՝ «մարդ ի պատուի էր և ո՛չ իմացաւ. հաւասարեաց անասնոց»: - 264. Դարձեալ ***ժերորդ***՝ աստեղագէտք ասեն թէ յղացումն ամենայն մարդոյ Զօհալին է. և յիւրաքանչիւր մոլորակս ամիս մի թուեալ՝ լինի ծնունդն ի մուշթարին **թ** ամիս: - 264. Իսկ ***ժերորդ***՝ յորում ամուսնութիւնն մխիթարութիւն տուաւ մեռելոյն. ըստ այնմ, «աճեցէք և բազմացարուք և լցէք զերկիր»:

- 280. Երրորդ՝ **թ** դաս հրեշտակաց է յերկինս. և ***ժերորդն*** մարդն կատարումն թուոյ նոցա. վասն այն ի կեանս այս ո՛չ հասանեն ի **ռ** թիւն կատարեալ. զի աստ ո՛չ լինի կատարումն դասուցն այլ ի հանդերձեալն: - 291. ’Ի եօթներորդն ամիսն որ է՛ թշրին՝ **ժ** օր քաւութեան տօնէին. զի **է** շաբաթ շաբաթուցն ի նա՛ է. և **է**երորդ ամիսն. այլ և ***ժերորդ*** օրն շաբաթ էր: - 371. ...զի ***ժ երորդն*** աստուծոյ է բաժին. և **թ** մարդկան. զի անկատարք են: - 376. Դարձեալ, տասն են մասունք զգալի արարածոց. այսինքն՝ է մոլորական գունդք. և **ը**՝ անմոլարքն. և իններորդ ի լուսոյդ ի վայր. և մարդս ***ժ երորդ*** ի վերայ նոցա. որ է՛ բանական և բաժին աստուծոյ: - 376. Եւ դարձեալ հրեշտակք և մարդիկք մշտնջենաւորք՝ պակաս ունին առ աստուածպետութիւնն յաւիտենական. և նա՛ է կատարումն ***ժերորդ***. անսկիզբն և անվախճան գոլով: - 391. Եւ յղութիւնն եղիսաբեթի յաւուր շաբաթու ի լուսանալ ***ժերորդ*** ամսոյն որ է թշրինի **իգ**: - 483. Ապա թէ և զապաշխարօղքն ի թիւ կալցես, Կաթողիկոսն լինի ***ժերորդ***. որպէս աստուած ***ժերորդ*** է ի վերայ **թ** դասուց հրեշտակաց: - 608

**ԺԶ** - ***ժզ)*** Զանազանութիւն տեսութեան մտաց. և զգայութեանց: - 101. ***ժզ)*** Սէրն և գութն: - 102. Երրորդ՝ Յրա՛տն. զոր մարեխ անուանեն. ջերմ է և չոր. **խ** օր յամէ՛ ի կենդանակերպն. և ի ***ժզ*** ամիսն պատէ՛ զամենայն: - 189. Եւ որպէս լրումն զատկի ունի աւուրս ***ժզ***. և այլքն **ժե**. և այս ի տումարս մեր է. և իրն որ է՛ լուսինն մի և նոյն: - 192. Զի տղայութիւնն օդո՛յ է. և միջին հասակն հրոյ և հողոյ. և վերջինն ջրոյ. վասն այն սպիտակի. որպէս ցուցանի յառաջիկայդ ***ժզ*** գլուխն՝ **իգ** համարն: - 213. Եւ զանազանութիւն ներքին և արտաքին զգայութեանցն ասացաւ ի վերոյ յաղագս հրեշտակաց ի **ը** գլուխն, ի ***ժզ*** համարն: - 249. Եւ այսպէս միջին հասակս կատարեալ, ձգի մինչև ի **խզ** ամն. որ է **դ** ***ժզ***. և վեցն կատարեալ թիւ է. և աստ տիրէ ալիք և սկիզբն լինի ծերութեան մինչև ի **իբ** ամն. յորում է ծայրք կենաց ըստ դաւթի, և թիւ երկոտասան վեցից խորհրդաւոր: - 265. Եւ այսպէս ըստ բարուց մարդկան ընտրէր նոյ ի սրբոցն է. և յանսրբոցն **բ**. որպէս ասացաւ ի վերոյ ***ժզ*** գլուխն ի **զ** համարն: - 364. Իսկ այլք ի **դ** բաժանեն ըստ չորից տարերաց և **դ** պահու գիշերոյն. որպէս ասացաւ ի վերն ***ժզ*** գլուխն **իգ** համարն: - 378. Յովաթամ ամս ***ժզ:*** - 453. Աքազ ամս ***ժզ:*** - 453. Այլ իմաստութիւն և հանճար զանազանեալ է ի վերոյ ի ***ժզ*** գլուխն, **իէ** համարն տես անդ: - 537. Կարգ սիրոյն ասացաւ ի վերոյ յաստուածաբանութիւնն դիոնիսեայ ի **թ** գլուխն, ի ***ժզ*** համարն: - 576. Եւ կատարեալն տեսութիւն խնդրեցաւ ի վերոյ ի ***ժզ*** գլուխն **իբ** համարն: - 785

**ԺԷ** - ***ժէ)*** Վասն թէ բան ունի աստուած: - 101. ***ժէ)*** Յատուկ անուանք հրեշտակաց: - 102. Զի ըստ հոռոմ համարին այսպէս է. մա՛րտի ***ժէ***՝ Առաջին օր արարչութեան է, յորում եղև լոյսն: - 191. Ոմանք ասեն, ***ժէ*** գլխաւոր ջլօքն որ կապին սոքա՝ լինին **յկե** զօդուածք: - 243-244. Եւ ***ժէ*** գլխաւոր ջիլքն, և մին բուն ջիլն. որ լինի բովանդակն **յկզ** ջիլք: - 244. Իսկ յաւուր **ե** շաբաթոջ երեկունն զգառն զենին և ելին յայգ ուրբաթի. նիսանի **ժե**. որ էր առաջին ամիս նոցա. և ի կիրակէ անցին ընդ ծովն որ էր նիսանի ***ժէ:*** - 337. Ռոբովամ թագաւորէ՛ յէմ ամս ***ժէ:*** - 452. Ա՛րդ՝ աստի մինչ ի նիսանի ***ժէ***, և յապրիլի է՝ կատարի **է** ամիս. յորում առաքեցաւ գաբրիէլ առ կոյսն մարիամ յաւուր չորեքշաբաթու: - 483. Որ այսպիսի էր պատկեր աւուրն. յաւուր **ե** շաբաթոջ երեկոյին ի չորեքտասան լուսնին զգառն զենին և ելին յայգ ուրբաթի **ժե** ամսեանն. և ի կիրակէ անցին ընդ ծովն որ էր նիսանի ***ժէ:*** - 513. Եւ թէ հաւատն առաւել է քան զգիտութիւն, ցուցաւ ի վերոյ յաստուածաբանութիւնն դիոնիսեայ ի ***ժէ*** համարն տես: - 573. Եւ է՛ այժմ ***ժէ*** շաբաթապահք. և թիւ վաթսնիցն **թ** շաբաթ. - 650. Տես ***ժէ*** գլուխն: - 696. Դարձեալ ասեմք առաջին կեանք մասնաւոր, զոր նախ քան զյանցանելն ունէր. անկարօտութիւն. լուսաւորութիւն. անծերանելի հասակ. անմահ կեանք. և այլն որ ասացաւ ի վերոյ ***ժէ*** գլուխն **լզ** համարն: - 758

**ԺԸ** - ***ժը)*** Քանի՞ է եղանակ աստուածաբանութեան: - 102. ***ժը)*** Փառաբանութիւնք հրեշտակացն: - 102. Եւ ողնաշարն լիսեռնաձև ***ժը*** ոսկր: - 243. Այլ և յաւելեալ ի վերայ զշարժականն և զշնչականն և զցասմնականն և զցանկականն, ընդ նմին և զկազմողական նիւթն և զտնկականն, որ լինի ***ժը***. վասն որոյ ոմանք ի տարին և կէսն ծնանին որպէս ուղտ: - 263. Արիւն ուտելն՝ և հեղձուցանելն՝ և գազանաբեկն՝ մի էր մեղք՝ որպէս ասացաւ ի վերոյ ***ժը*** գլուխն ի **զ** համարն: - 371. Յուդա. Իսաքար. և Զաբողոն. ***ժը*** բիւր և **ցն** զօրք նոցա: - 378. Եւ դատաւորաց առաջինն Գոդոնիէլ որդի կենեզայ եղբայր քաղեբայ յազգէ յուդայ ամս **խ**. և այլազգիքն ամս ***ժը:*** - 420. Ութերորդն Յայիր գաղայադացի ամս **իբ**. և այլազգիքն ամս ***ժը:*** - 420. Այլ մեզ այսպէս իմանալի է. զի թշրինի մէկն նուիրեալ օր սուրբ տն կոչեսցի ասացաւ. որ է՛ սեպտեմբերի ***ժը:*** - 483. Ասեմք, զի ո՛չ ունին շունչ օդոյ այլ շունչ ջրոյ. և հանեալ ի ջրոյն պականի շունչն. որպէս ասացաւ ի վերոյ ի ***ժը*** գլուխն ի **զ** համարն: - 511. Իսկ վասն ագապս առնելոյ որ է՛ ոգէհանգիստ.

և վասն քահանայաթաղին որ է՛ *ժը* աւետարան. - 658. Եւ թէ վասն է՞ր ոչ գիտեմք զկատարած աշխարհի և զկենաց մեր, գրեալ է ի վեր անդ առ նախապետսն ի *ժը* գլուխն ի **դ** համարն: - 718

**ԺԸՌ** - Որ լինի **ժ** ժամն *ժըռ* ռոպէ: - 191

**ԺԹ** - *ժթ)* Ջանազանին բացբարձականքն. և ուրացականքն: - 102. *ժթ)* Վասն խօսից հրեշտակաց: - 102. Իսկ իննևժերեակն է, զի ընթանայ լուսինն ի տարին **յճդ** օր՝ և *ժթ* մասն. որ լինի ի *ժթ* ամին՝ **յկա** մասն: - 191. Եւ որպէս իննևժերեակն լուսնի, և **իը** երեակն արեգական ի միասին ժողովեալ՝ առնէ զհինգ հարիւրեակ շրջանն ի **շլբ** ամին. զի *ժթ* **իը** երեակ է. և **իը** *ժթ* երեակ: - 192. Յնգետասաներորդ՝ Վասն զօրութեան հոգւոյն *ժթ* թուով: - 227. Եւ վասն աւազանին ծննդեանն ասացեալ է առ սառայ ի *ժթ* գլուխն, ի **ժբ** համարն: - 591. Որպէս համեմատեցաւ ի վերոյ ի *ժթ* գլուխն, **ժբ** համարն: - 756

**ԺՃՌ** - Եւ դարձեալ, **ճ** տասն՝ հազա՛ր է. և **ճ** հարիւրն՝ **ժ** հազար է. որ է՛ բիւր մի. և **ճ** հազարն՝ **ժ** բիւր է. և **ռ** հազարն՝ **ճ** բիւր է. և **ռ** բիւրն՝ *ժճռ* է: - 141

**ԺՌ** - Եւ զդանիէլ՝ և զգ մանկունքն՝ և *ժռ* այր ի մեծամեծացն գերի տարաւ ի բաբիլօն: - 447

**Ի** - *ի)* Արեգա՛կն կոչի աստուած ի յատկութեամբ: - 102. Յատկութիւն արեգականն ասացեալ է յառաջիկայսդ *ի* գլխով ի **ժբ** գլուխն իա համարն: - 124. Նոյնպէս զլուսոյ և զհրոյ յատկութիւնս բաղդատել դիւրին է իմանալի լուսոյն ճշմարտի. որպէս գրեալ ի *ի* գլուխն՝ **լե** համարն տե՛ս անդ: - 127. Տասն բնական երկինքն. և **ե** յատկական. և **ե** ըստ նմանութեան. որ լինին *ի* երկինք: - 184. Ապա կազմէ՛ զձև զգայականին մինչև ի *ի* օրն. ըստ մարգարէին որ ասէ, «ես ո՛րդն եմ և ո՛չ եմ մարդ»: - 261. Եւ թէ վասն է՞ր ասիցէ ոք՝ ոմն յետ **գ** աւուր՝ և ոմն ի *ի* և ոմն ի **խ**: - 261. Իսկ որք ի **խ** աւուրս ծնանին և կամ ի *ի*, որպէս հաւ. ունին նոքա զխորհուրդ չորից տասանց և չորից հնգից, ըստ **ե** զգայութեանց ներքոյ և **ե** զգայութեանց արտաքոյ որպէս ասացաք: - 263. Եւ մտանէ ի կարգ զինուորաց. վասն որոյ մովսէս ի *ի* ամենիցն ի վեր թուէր զզինուորսն: - 265. Եւ բաղդատութեան իսահակայ և տեառն *ի* թուով: - 283. Տասնևզ՝ Բաղդատութիւն յովսէփայ և տեառն *ի* գլխով: - 283. Տասնևը՝ Առիւծու ընդ տեառն բաղդատութիւն *ի* գլխով: - 283. Սակայն զառձեռն պատրաստ դիցուք *ի* իմն եղանակաւ պատմաբանութեամբ: - 304. Երկայն **իը** կանգուն. և բարձր **ժ**. և լայն *ի*. բոլորն հասարակ: - 343. Տասն ամն մանկութեան է. և *ի*՝ պատանեակ զինուորութեան. և **իը**՝ երիտասարդութեան որ է՛ **դէ**: - 343. Երկրորդ՝ զի զգին ծերոյն պակաս հրամայեաց. զի **ե** ամեայ տղայոյ երկդրամեան էր. և *ի* ամենին ի երկդրամեան. և անտի մինչև ի **կ** ամն **ծ** երկդրամեան. և ի **կ** էն յառաջ **ժե** երկդրամեան: - 377. Առաջին մինչ ի *ի* ամն տղայ: - 378. Եւ դարձեալ վասն օձին տե՛ս ի հարուածն եգիպտոսի ի *ի* գլուխ համարոյն: - 387. Եւ վասն կախարդաց գրեալ է ի վերոյ ի *ի* գլուխն **իէ** համարն: - 389. Զոր ա՛յլ մարգարէ ո՛չ արար. որպէս գրեալ է ի *ի* համարն ի վերոյ: - 399. Վասն զի զկայնան որդի արփաքսաթայ և հայր սաղայի **ճ** և *ի* ամ ի թիւ առնու: - 411. Երկրորդն Աւովդ. յերկուց ձեռաց յաջողակ եմինացի յեփրեմայ ամս **ձ**. և այլազգիքն ամս *ի:* - 420. Սա՛ դատեաց զիսրայէլ ամս *ի:* - 420. Զոր եօթանասունքն *ի* ասեն. իսկ սամուէլ և սաւուղ ամս **խ**: - 420. Առաջին ռոբովամ որդին նաբատայ. և այլք ընդ նմա թագաւորք *ի:* - 446. Արդ յերեքտասան ամէ՛ ովսիա մինչև ցմետասան ամն սեդեկիայ որ վերջին գերեցաւ՝ լինի **խ** ամ. և նաբուգոդոնոսորայն *ի* ամ. և որդւոց և թոռանց նորին **ժ** ամ. որ կատարի **հ** ամ մինչև յառաջին ամն կիւրոսի որ արձակեաց զգերիսն: - 447. Զի *ի* երկու տառք են Ալֆա փետացն եբրայեցւոց: - 451. Յետ *ի* ամի գերութեանն մեռաւ նաբուգոդոնոսոր: - 453. Յորո՞ւմ ժամու յարեաւ ի մէջ գիշերի *ի* վկայութեամբ: - 455. Է՛ և այլ եղանակ ծննդեան տն բաղդատութեամբ առ մովսէս ասացեալ ի վերոյ ի *ի* գլուխն, ի **իգ** համարն: - 472. Առաջին ժողովն եղև ի նիկիայ սրբոց հարց. զկնի **յժը**՝ կամ **յլ** ամի ծննդեանն քրիստոսի. և ի *ի* ամի թագաւորութեանն կոստանդիանոսի: - 542. Եւ գրեցին գիրս կանոնաց գլուխս *ի*, ընդ դէմ եկամուտ թուլութեանցն: - 544. Եւ ի չորրորդ գիրքն ի *ի* համարն ասէ, ետ զմարմինն ի կերակուր. զարիւնն ըմպել. զհոգին ի գին. զջուրն կողին ի լւացումն: - 594

**ԻԱ** - *իա)* Վասն զարմացմանն աստուծոյ. և նախանձուն: - 102. Յատկութիւն արեգականն ասացեալ է յառաջիկայսդ ի գլխով ի **ժբ** գլուխն *իա* համարն: - 124. Եւ ի *իա* աւուրցն ի վեր՝ երևեալ շնչոյն ձևակերպէ՛ զկերպ մարդոյ մինչ ի **խ** օր արու մանկան. և իսկոյն հեղի ի նա՛ հոգին բանական ի շնորհացն աստուծոյ ծագեալ ի նա: - 261. Եւ երիցս կրկնեալ **է**-ից մինչև ի *իա*, լինի կատարեալ արիական մասն ցասմնականին. և կոչի պատանեակ մինչև ի **իը** ամն: - 265. Եւ **գ** եօթն է որ արձակեաց զաղաւնին որ լինի *իա*. և **ե** օր աւելեացն որ լինի տարի մի: - 294. Եւ անտի մինչև ի տբէթի *իա* և յունվարի **զ**՝ կատարի **թ** ամիս և **ե** օր: - 483. Եւ ըստ եկեղեցոյ ցուցաւ խտրութիւնն ի վերոյ ի *իա* գլուխն

**խե** համարն: - 511. Իսկ թէ **ը** օր տօնեմք, ասացեալ է ի վերոյ ի ***իա*** գլուխն, **ծա** համարն: - 525. Իսկ զի անխմոր բաղարջով է խորհուրդն՝ ասացաւ ի վերոյ ***իա*** գլուխն **լը** համարն: - 597. Յայս միտս ի վերայ սեղանոյն խունկ վառեմք. որպէս ասացաւ ի վերոյ ***իա*** գլուխն, **խզ** համարն: - 615. Եւ մեսեդի ճաշոյն և երեկոյեան, չորրորդ մասն դորակի գինւոյն. որպէս ասացաւ ի վերոյ ի ***իա*** գլուխն **ծբ** համարն: - 629. Եօթներորդ հոգոյն գալստեան. որպէս ասացաւ պատճառն ի վերոյ ի ***իա*** գլուխն, **ծա** համարն: - 649. ...որպէս ցուցաւ ի ***իա*** գլուխն, **խե** համարն: - 657. սրբոյն կիւրղի է արարեալ ի դուռն սրբոյն սիօնի. ի ***իա*** ամի հայրապետութեան իւրոյ: - 658

**ԻԲ** - ***իբ)*** Սէր և Սիրելի և Բարի է Աստուած: - 102. Եւ ի ***իբն*** մարտի՝ կազմութիւն մարդոյն է: - 191. Ոմանք ***իբ*** ասեն ըստ նշանագրացն եբրայեցւոց. և այլք **իդ** ըստ ժամուց աւուրցն: - 226. Եւ կաւագործութիւնն խստացաւ ի մովսիսի ***իբ*** ամէն ի վեր. որ լինի **ծթ** ամ խիստ ծառայութիւն նոցա: - 337. Ութերորդն Յայիր գաղայադացի ամս ***իբ***. և այլազգիքն ամս **ժը**: - 420. Երեսունն է զօրավարք դաւթի. և **լէ** թիւ հնոյն օրինաց. և այլ նորոց կտակի. և կամ ***իբ*** գլխաւո՛ր են գրոց հնոց. և **ժ** բան օրինաց. և չորից աւետարանաց. և մինն առաքելական: - 438. Թագաւորք յուդայ նստան յէմ. Ռոբովամ. Աբիա. Ասափ. և այլ թագաւորք ***իբ:*** - 446. Որ լինի բովանդակն ***իբ:*** - 451. Եւ ***իբ*** գլխաւոր արարածք: - 451. Նոյնպէս և ***իբ*** գիրք գումարեալ աստուածակերտ գրոց: - 451. Եւ թշրինի **ժե**՝ սկիզբն տօնի տաղաւարահարաց, որ է՛ հոկտեմբերի **բ**. և անտի մինչև ի ***իբն*** թշրինի՝ և ի հոկտեմբերի **թ** կատարումն տօնին: - 483. Եւ այս ցուցաւ **ե** գլխով ի վերոյ ի ***իբ*** գլուխն: - 502. Եւ վասն ուխտի և սահմանի ասացաւ ի վերոյ ի ***իբ*** գլուխն, **կե** համարն: - 538. Ժողովեալ բազում եպիսկոպոսաց յամենայն կողմանց. և իշխանաց և մեծամեծաց հայոց. կարգեցին սահմանս կանոնականս ***իբ*** գլխով. և պայծառացուցին զեկեղեցի սուրբ: - 545. Իսկ կամաւոր մեղքն գրա՛ծ է ի հին օրէնքն ***իբ*** գլուխն տես: - 564. Եւ վասն ներելեացն թողութեան ասացաւ ի թուոց ***իբ*** գլուխն, **կա** համարն: - 603. ...որպէս ասացաւ ի վերոյ **լգ** գլուխն ի ***իբ*** համարն: - 696. Այլ ի նոցանէ՛ անկաւ, որպէս ցուցաւ ի վերոյ **թ** գլուխն, ***իբ*** համարն: - 760. Եւ կատարեալն տեսութիւն խնդրեցաւ ի վերոյ ի **ժզ** գլուխն ***իբ*** համարն: - 785

**ԻԳ** - ***իգ)*** Լայն. երկայն. խոր. և բարձր ասի աստուած: - 102. Զի տղայութիւնն օդո՛յ է. և միջին հասակն հրոյ և հողոյ. և վերջինն ջրոյ. վասն այն սպիտակի. որպէս ցուցանի յառաջիկայդ **ժզ** գլուխն՝ ***իգ*** համարն: - 213. Իսկ այլք ի **դ** բաժանեն ըստ չորից տարերաց և **դ** պահու գիշերոյն. որպէս ասացաւ ի վերն **ժզ** գլուխն ***իգ*** համարն: - 378. Է՛ և այլ եղանակ ծննդեան տն բաղդատութեամբ առ մովսէս ասացեալ ի վերոյ **ի ի** գլուխն, ի ***իգ*** համարն: - 472. Եւ յղութիւնն եղիսաբեթի յաւուր շաբաթու ի լուսանալ **ժ**երորդ ամսոյն որ է թշրինի ***իգ:*** - 483. Զոր օրինակ՝ անցեալ լինի մին ժամն յաւուր՝ կիրակէ կոչի. թէպէտ ***իգ*** ժամն պակա՛ս է: - 484. Իսկ առ ներքինս օրհնելն՝ իշխանութիւն և շնորհաց տալն թարգմանի. որ քահանայն կամ եպիսկոպոսն տայ. որպէս ցուցաւ ի վերոյ ի ***իգ*** գլուխն, **հե** համարն: - 540

**ԻԴ** - ***իդ)*** Ալֆա. և օմեգա: - 102. Զի յարնելից կիտէ՛ ի նոյն կէտ շրջեալ՝ լինի օր մի. որ է ***իդ*** ժամ. երկու ժամ միոյ կենդանակերպի: - 190. Զի արեգակն յամենայն աւուր զընթացս իւր կատարէ՛ ***իդ*** ժամ, և **ժ** մասն և կէս: - 190. Իսկ կէս մասն ի մեկ ամիսն՝ լինի կէս ժամ. և ի մեկ տարին **զ** ժամ. և ի **դ** տարին ժողովեալ՝ լինի օր մի ***իդ*** ժամ. և ա՛յն առնէ զնահանճն. և շարժէ՛ զտօնս և զեղանակս: - 190. Զի օրն ընդ տիւ և ընդ գիշեր է՛ ***իդ*** ժամ: - 191. Եւ ժողովեալ մէկ օրն ***իդ*** ժամ՝ լինի **դ** բիւր և **սրճ** րոպէ: - 191. Նա՛խ՝ զորքանութիւն աւուրցն ցուցանէ, թէ տիւ և գիշեր ***իդ*** ժամն լինի օր մի բնական: - 193. Օր բնական այն է՝ որ լինի ի կիտէ ի կէտ ***իդ*** ժամ: - 194. Երկոտասաներորդն օր է բնական ***իդ*** ժամուց. զորմէ ասի, «եղև երեկոյ և եղև վաղորդայն օր մի»: - 195. Ոմանք **իբ** ասեն ըստ նշանագրացն եբրայեցւոց. և այլք ***իդ*** ըստ ժամուց աւուրցն: - 226. Որովք լինին ***իդ*** արարածք: - 227. Նոյնպէս և քրիստոս իմաստութեամբն իւրով կերպարէ՛ զնոսա և զգեցուցանէ որպէս ***իդ*** երիցանցն, որ տուաւ նոցա արկանելիս սպիտակս. այս է շնորհին մաքրութեան զոր ընկալան ի քրիստոսէ: - 315. Եօթներորդ Թովլայ յիսաքարու սամարացի ամս ***իդ:*** - 420. Մ՛որդ՝ շաբաթի գիշերն և տիւն ***իդ*** ժամ. և **զ** ժամ ի կիրակէէն մինչ ի մէջ գիշերն. որ լինի **լ** ժամ. իսկ հոգին **դ** ժամ և կէս նախ իջեալ ի դժոխս որ լինի **լգ** ժամ և կէս: - 516. Չորրորդ, առ նոյն թագաւորաւն զկնի ***իդ*** ամի եղև արժանաւոր ժողովն եփեսոսի ընդ դէմ եւտիգի. որ առ աչօք ասէր զէտն մարդանալն: - 542. Գրէ կարգս կանոնականս ***իդ*** գլխօք. և հաստատէ՛ զեկեղեցի պայծառ կարգօք և ուղղութեամբ: - 545. Զի տիւ և գիշերն է՛ ***իդ*** ժամ. լինի ապա ընդ **բ** ժամն մի անգամ աղօթք: - 623. Երկու դասք էին երգիչք ի տաճարին զոր կարգեաց դաւիթ ընդ տիւ և ընդ գիշեր հանապազորդ պաշտօն ***իդ*** ժամուց. - 636. Ութևժ, ***իդ*** երիցունքն. և սպիտակ զգեստն.

պսակն և քնարն: - 660. Ուր ետես ***զիդ*** երիցունսն շուրջ զաթոռովն աստուծոյ. և զբազմութիւն հոգւոց սրբոց յամենայն ազգաց ժողովեալ անդ: - 688. Զի՞նչ է ***իդ*** երիցունքն զոր ասէ տեսիլն: - 711. Իսկ ***իդ*** թիւն ո՛չ եթէ սահման և կէտ է. այլ սովորութիւն է գրոց փոքր թուով զբազումսն ցուցանել: - 711. Եւ որպէս **բժ**ան բիւր հրեշտակացն, և եօթանասնից եօթն թողուլն, և ամլոյն եօթն ծնանիլն ո՛չ է վճիռ, նոյնպէս և ***իդ*** երիցանցն: - 711. Նա՛խ՝ որպէս **բժ**ան գունդ հրեշտակացն և չորք կենդանիքն զբոլոր երկնային զօրսն նշանակեն, նոյնպէս և ***իդ*** երիցունքն զբոլոր դասս սրբոցն: - 711. Երկրորդ, որպէս չորք կենդանիքն զվեհագոյնս և զնախամեծարս երկնայնոցն ցուցանեն. նոյնպէս և ***իդ*** երիցունքն զնախամեծարս ընտրելոցն մարդկան, - 711. Երրորդ, որպէս ***իդն*** բազում է քան զչորսն. նոյնպէս կարծի վեհագոյնքն ի մարդկանէ բազում գոլ քան զվեհագոյնս երկնայնոցն: - 711. Չինգերորդ, ըստ համարոյ ***իդ*** տառիցն որովք իմաստնացան և ի գիտութիւն ճշմարտութեան հասին: - 711-712. որպէս ցուցաւ յերգս երգոց ի ***իդ*** համարն: - 714. Շուրջ զաթոռովն ասէ ***իդ*** երիցանցն գոլ: - 760

**ԻԵ** - ***իե)*** Ոտք է մարմինն: - 102. Եւ յետ **եճ** և ***իե*** ամաց ջրհեղեղին էր սկիզբն շինուածոյ ամբարտակին ի աշխարհին բաբելոնի ի դաշտին քաղանէ: - 297. Նա՛խ՝ նշանակէ՛ զնահապետսն. ***իե*** ազգ որ բնական օրինօք արդարացան նախ, և ապա՛ գրաւորն բնականաւն զօրացեալ արդարացոյց զնոսա: - 390. Եւ այլք վասն արտեմոնի. զի նա՛ փոխեաց զծնունդն ի դեկտեմբերի ***իե:*** - 482. Զոր ի ժողովն քաղկեդոնի հաստատեցին զսոյն տօն ի ***իեն*** դեկտեմբերի. պատճառելով թէ՝ ի հռօմ դարձի արեգական տօն կատարէին. և փոխեաց զայն պետրոս տօնել արեգականն արդարութեան: - 482. Եւ անտի մինչ ի մարտի ***իեն*** համարեն **զ** ամիս, և անդ ասեն զաւետիսն: - 483. Եւ ի մարտի ***իե*** էն մինչ ի դեկտեմբերի ***իեն*** համարեն **թ** ամիս և **ե** օր, և ա՛նդ ասեն զծնունդն: - 483. Ութերորդ՝ զի թէ հաւատան աւետարանին և ոչ ստեն **լ** ամաց գալ քրիստոսի ի մկրտութիւն, ի հարկէ՛ պա՛րտին կատարել և զմկրտութիւնն ի նոյն ի տօնի ծննդեանն իւրեանց ի դեկտեմբերի ***իե*** որ իցեն ամենևիմբ սուտ: - 484. Եւ ասացեալ են գոյացականք մկրտութեանն ի վերոյ ի մկրտութիւն տն ի ***իե*** համարն գտցես: - 590. Եւ վասն հրեղէն վիշապին և տըտան նմին ասացաւ ի վերոյ **թ** գլուխն ***իե*** համարն: - 706

**ԻԵՌ** - Երկրորդ՝ զի խ քաղաք առին ի բենիամենէ՛ յուդայի ցեղքն վասն շնութեան կնոջն պատահելոյ. և կոտորեցին զնոսա առ հասարակ ***իեռ*** արս. և մնաց վեց հարիւր այր զոր յետոյ ըստացան ժառանգութիւն իւրեանց. որպէս յա՛յտ է ի դատաւորաց վերջքն: - 312

**ԻԵՐՈՐԴ +** Այսպէս և շնչականն գոյացեալ ի ***իերորդ*** աւուր՝ կիսակատար գոլով բանականին զնոյն ունի խորհուրդ: - 262. Եւ ***իերորդ՝*** որպէս խոստացաւ թէ՝ «զաւակք քո զքաղաքս հակառակորդաց քոց ժառանգեսցեն». որպէս և եղև նոցա մարմնաւորապէս ժառանգել զերկիր ամոնացւոց, մովաբացւոց, և քանանացւոց: - 306. Երկու մնացորդացն: Երկու եզրաս: Նէեմի: Եսթեր: Յուդիդ: Տուբիդ և տուբիա. որ լինի ***ի երորդ***: - 450

**ԻԶ** - Եւ ի մեծի ուրբաթի խաչին, լուսինն ընթացաւ և ծգեցաւ յարևն, և յետս դարձաւ. որպէս ցուցանի յառաջիկայդ առ խաչելութեամբն ի **լ** գլուխն ի ***իզ*** համարն: - 416. Զորօրինակ՝ մեռեալ մարդ ո՛չ ասի պարզաբար մարդ, նոյնպէս և այս. որպէս ցուցաւ ի թագաւորութեանցն ***իզ*** գլուխն. **ժբ** համարն: - 536. Ասեն եթէ՝ սեփաննոս ոմն երաժիշտ զամենայն ձայնս գոյից բաժանեաց ***իզ***...: - 640. Եւ ստեփաննոսս այս՝ արար գործիք ***իզ*** որիշ որիշ. և նոքօք երգէր: - 640. Իսկ թիմգիանոս արար մի գործի և ***իզ*** աղի: - 640. ...որ լինի ***իզ*** շաբաթ պահք ի տարին: - 650. Գտցես և վասն մահու առ խաչելութեանն քրիստոսի ի **լ** գլուխն ի ***իզ*** համարն: - 668. Այլ և վասն կապելոյն սատանայի գրեալ է ի **թ** գլուխն ի ***իզ*** համարն ի վերոյ: - 706

**ԻԷ** - Եւ վասն կախարդաց գրեալ է ի վերոյ ի **ի** գլուխն ***իէ*** համարն: - 389. Եւ առաջնորդեալ երկրին աւետեաց ամս ***իէ:*** - 414. Յովսափաթ ամս ***իէ:*** - 452. Առնեն ի սեպտեմբերի ***իէ*** զպապանձումն զաքարիային. և ի նմին աւուր զյղութիւնն եղիսաբեթի: - 483. Եւ լինի սեպտեմբերի ***իէ***, և թշրինի **ժ**: - 483. Այլ իմաստութիւն և հանճար զանազանեալ է ի վերոյ ի **ժզ** գլուխն, ***իէ*** համարն տես անդ: - 537. Եւ ասացեալ է վասն հանճարոյ և գիտութեան ի վերոյ. ի **ե** հատորն ի ***իէ*** համարն: - 580. ...որպէս ասացաւ յառաջագոյն ի թագաւորութեանց ***իէ*** գլուխն. **ժե** համարն տես: - 603

**ԻԸ** - Եւ որպէս իննևժերեակն լուսնի, և ***իը*** երեակն արեգական ի միասին ժողովեալ՝ առնէ զհինգ հարիւրեակ շրջանն ի **շլբ** ամին. զի **ժթ** ***իը*** երեակ է. և ***իը*** **ժթ** երեակ: - 192. Եւ երիցս կրկնեալ **է**-ից մինչև ի **իա**, լինի կատարեալ արիական մասն ցասմնականին. և կոչի պատանեակ մինչև ի ***իը*** ամն: - 265. Եւ չորիցս կրկնեալ **է**-ից մինչև ի ***իը*** ամն, լինի երիտասարդ. և կատարի բանական մասն: - 265. Երկայն

***hը*** կանգուն. և բարձր **ժ**. և լայն **ի**. բոլորն հասարակ: - 343. Տասն ամն մանկութեան է. և **ի**՝ պատանեակ զինուորութեան. և ***hը***՝երիտասարդութեան որ է՛ **դէ**: - 343. Եւ չորեքտասան թուղթք պօղոսի. որ լինի ***hը**:* - 450. Իսկ վասն տեղեաց դժոխոցն ասացեալ է ի վեր անդր **լ** գլուխն, ***hը*** համարն: - 754

**ԻԹ** - Եօթներորդ Լուսինն. զոր կամր կոչեն. հո՛վ է և գէճ. **բ** օր և կէս յամէ՛ ի կենդանակերպն. և ի ***hբ*** օր և կէս պատէ՛ զամենայն: - 189. Ասեմք եթէ՝ լուսինն ընթանայ ի կենդանակերպսն ***hբ*** օր և կէս՝ և ծնանի: - 191. Ամենայն նիւթ ոսկւոյն ***hբ*** տաղանդ. և արծաթոյն **ճ** տաղանդ. և պղնձոյն **h** տաղանդ: - 343. Զթագաւորսն քանանացւոց կոտորեաց թուով ***hբ**:* - 414. Եւ թէ զի՞նչ է խորհուրդն, գտցես ի չորրորդ թագաւորութեանց վերջքն ***hբ*** գլուխն **լ** համարն: - 421. Ամեսիա ամս ***hբ**:* - 452. Եզեկիայ ամս ***hբ**:* - 453

**ԻՆՆ +** Արդ՝ թէ *hնն* ամսով յառաջ թագաւորեալ էր թագաւորն չար, ապա ուրեմն ի ժամանակս Օգոստոս կայսեր ծնաւ քրիստոս. զոր և վկայէ՛ աւետարանն սուրբ: - 29. **զ**) *Ինն* դասք են հրեշտակաց. և յերիս երեակս որոշեալ. և այլք եօթն ասեն: - 102. Ասեմք եթէ՝ *hնն* դասք յերիս երրեակս որոշեալ թըւոց. որոց Առաջինն է Աթոռք. Քերոբէք. և Սերոբէք: - 134. Երկրորդ՝ թէ միոնն ի տասն դասուցն անկաւ և մնաց *hնն:* - 134. Նախ՝ ըստ սրբոյն դիոնէսիոսի որ *hնն* ասէ գոլ զդասս կարգապետութեան նոցա: - 134. Վասն է՛ր դիոնէսիոս *hնն* դասս հրեշտակաց ասէ. և իրինոս և սուրբն եպիփան **է** երկինք և **է** դասք ասեն: - 134. Համաձայնին միմեանց սուրբ վարդապետք. զի դիոնէսիոս *hնն* դասս ասէ հրեշտակաց. այլ առաջին դասքն անընդմիջաբա՛ր են յաստուածային իմացումն, համապատիւք և համափառք: - 134. Զի գիտեմք զդոսա *hնն* գոլ դասս ըստ սրբոյն դիոնիսեայ. և երիս երրեակս որոշեալ ի դէմս Երրորդութեանն: - 141. Զի՞նչ է փառաբանութիւն *hնն* դասուց հրեշտակաց: - 144. Եւ յայծեղջիւրն ի ջրհոսն և ի ձուկն՝ առնէ զձմեռն. որ առաւելու գիշերն քան զտիւ **զ** ժամ. զի լինի գիշերն **ժե** ժամ. և տիւն *hնն* ժամ. որպէս յամառն տիւն է **ժե** ժամ. և գիշերն **թ** ժամ: - 190. Քսանևբ՝ Վասն է՞ր մարդն *hնն* ամիս, և այլ կենդանիք աւելի և պակաս կան յարգանդի: - 228. *Ինն* անդամունքն: - 241. Իսկ թէ վասն է՞ր ասիցէ ոք՝ յղացեալ մնան յարգանդի՝ մարդն *hնն* ամիս, և այլ կենդանիք աւելի և կամ պակաս: - 262. Իսկ թէ վասն է՞ր ասիցէ ոք՝ յղացեալ մնան յարգանդի՝ մարդն *hնն* ամիս, և այլ կենդանիք աւելի և կամ պակաս: - 262. Եւ կամ որպէս մարդ կատարեալ բերելով ինքեան զ**դ** և զ**ժ** *hնն* խորհուրդ: - 263. Այլ և զգայականին յաւելեալ շնչականն և շարժականն և ցասմնականն ընդ ցանկականին՝ լինի **թ**. վասն որոյ ոմանք *յhնն* ամիսս ծնանին կամ ի **ժ**: - 263. Ուսեալք և զայս, բե՛ր տեսցուք և զմարդոյն թէ վասն է՞ր *յhնն* ամիսս ծնանի: - 263. Արդ՝ որպէս ասացաք՝ մարմինն է ի **դ** տարերաց. և ունի **ե** զգայութիւն. վասն որոյ *յhնն* ամիսս հաստատի անդամօք և ապա ծնանի: - 263. Դարձեալ ունի զ**ե** զգայութիւնս, և զշարժականն՝ և զշնչականն՝ և զսրտմտականն՝ և զցանկականն, որ լինի *hնն:* - 263. Դարձեալ **թ** թիւն պակա՛ս է ի **ժ**երորդէն. և մեք պակասեցաք *յhնն* դասուց հրեշտակաց, որ նախ հաւասար էաք ի դրախտին. և կարօտացաք մարմնաւոր ծննդեան, նմանելով անասնոց. ըստ այնմ՝ «մարդ ի պատուի էր և ո՛չ իմացաւ. հաւասարեաց անասնոց»: - 264. Իսկ ձմեռն, և *յhնն* ժամէն մինչև յերեկոյ և բոլոր գիշերն, և սպիտակաթոյր հիւր պղղամին, և ծեր մարդ, ըստ նմանութեան ջրոյ ցուրտ և գէջ գոլով. վասն որոյ սպիտակի և ցրտանայ և պակասի զօրութեամբ: - 266. Երկրորդ՝ վասն ժամանակին. զի մարդն *յhնն* ամիսն կատարէ զանդամս, և արջն երեք: - 267. Իններորդ՝ մանուկն յարգանդի ո՛չ հացիւ կեայ. այլ հրամանաւն աստուծոյ կերակրի ընդ պորտն *զhնն* ամիս. որպէս տնկականք, և որպէս նոյ ի տապանն. մինչ ելանէ յարգանդէ... - 397. *Ինն* եսթերայն: - 451. Եւ *յhնն* ամիս ի տաղաւար արգանդի տարեալ զաստուած բանն: - 463. Ասեմք եթէ յետ յղացման բանին յարգանդի կուսին օրինօք և ոչ օրինօք բնութեան, ժուժկալեալ ամսոց *ըննից* և աւուրց հնգից, ըստ հասարակաց ասեմ և անդրանկաց. ըստ հնգից յաւելեալ թւոց նախաստեղծին նախարարչութեան աւուրց: - 469. Չորրորդ՝ զի *յhնն* ժամէն մինչև յերեկոյ ի տեղի իւր դարձաւ: - 490. Իսկ զտէրունական տօնս երեկօրեայ *յhնն* ժամ է աւուրն սկսանեմք. որ է՛ **թ** ժամաւ յառաջ քան զհասարակաց տօնս: - 508-509. Նմանապէս և աստ յայսմ աւուր շաբաթու որ ի կիրակէ յարութեան տօնեմք, այժմ *յhնն* ժամուն ի վեր նախատօնակ առնեմք յարութեանն քրիստոսի. և այս վասն բազում պատճառի: - 509. Չորրորդ վկայ լոյսն զգալի. որ *յhնն* ժամուն ծագէ՛ ի գերեզմանէն ակներև ամենայն մարդկան: - 509. Եւ որպէս *յhնն* ժամու ուրբաթուն լոյս ծագեաց հոգւոցն ի դժոխս, նոյնպէս և *յhնն* ժամու շաբաթուն լոյս ծագէ զճառագայթս իւր արեգակն արդարութեան քրիստոս. մինչ յառաւօտուն բոլորապէս տեսանի ինքն յարուցեալ ի մեռելոց: - 509. Զի *յhնն* ժամու ուրբաթուն արձակեաց զհոգին և էջ ի դժոխս. և ապա՛ ընդ երեկոյս ի մուտն արևու մարմինն եմուտ ի գերեզման: - 516. Երկրորդ այսպէս, զի յուրբաթի գիշերն ըմբռնեցին մինչև ցվեց ժամն որ խաւար եղև մինչև *ցhնն*

ժամն: - 516. Քսանէ, Վասն *ինն* երանութեանցն. Աղքատութեան. Սգոյ. և Տրտմութեան. և այլոցն կարգաւ: - 526. Երրորդ՝ զի առաքեալք *իննաք* տեսք եղեն քրիստոսի. և մարգարէք միջոցաւ ի բացեայ. և վարդապետք յետոյ նոցա: - 535. Այս է՝ նախ զերրորդ ժամուն. և ապա՛ զվեց ժամուն. և ապա՛ *զինն* ժամուն. որ աւա՛րտ էր նոցա աղօթիցն: - 621. Այլ և *զինն* կարգ աղօթից **ը** անգամ կատարեմք այժմ այսպէս: - 627. Եւ **թ** տունքն՝ *ինն* դասուց զուարթնոց: - 628. Տա՛սն է. *ինն* ի դէմս քրիստոսի. և միոնն ի հոգին սուրբ ի հոգէգալուստն: - 634. Եւ **ժ**, զի յաւելումբ *յինն* դասս հրեշտակաց: - 640. Երկրորդ, զի մեծ ճգնաւորն բենետիքտոս որ է՛ յազգէ նոցա՝ ասէ, «պահելի է զչորեքշաբաթի օրն մինչև *զինն* ժամն»: - 652. Վասն որոյ յետ համբարձմանն պահելի է զդշաբաթ և զուրբաթ. և կամ *զինն* օր մինչ ի հոգւոյ գալուստն: - 654. Ո՛չ թէ որիշ դաս անկաւ այլ իմն թուով՝ արտաքոյ քան *զինն* դասս: - 760

**ԻՆՆԵԱԿ +** Չորրորդ՝ յետ ելիցն ի մարմնոյ. վասն որոյ ասէ՝ «ո՛չ հնձեսցեն *զիննեակն* այլ կերակրեսցին». զի արդիւնք և հունձք ի կատարածին է. այլ հանգիստն ի հոգին է: - 372

**ԻՆՆԵՐՈՐԴ** - 212

**ԻՆՆԵԽԺ +** *Իննևժ* թափանձիկ մարմին է: - 207. *Իննևժ* ուղիղ է ձև մարդոյ. և ուղիղ է տէր աստուած մեր: - 272. *Իննևժ*, «զի խահակաւ ասէ բազմացին զաւակք քո իբրև զաստեղս երկնից»: - 306. *Իննևժ*, յովսէփ ստացաւ ոսկի և զարծաթ և զերկիրն եգիպտացւոց՝ փարաւոնի. այսինքն զզէնս սատանայի. զի փարթամութիւնն մեծ զէն է սատանայի որովք գործէ՛ զամենայն պղծութիւնս. որպէս երկիրն սոդոմայ պարարտութեամբ գործէր զմեղս: - 314. *Իննևժ*, ո՛չ յառնէ առիծն ի տեղւոջէն մինչև հնազանդէ՛ զքշնամիս իւր: - 316. *Իննևժ*, մովսէս տարածմամբ ձեռացն զամաղէկ պարտէր: - 329. *Իննևժ*, Ցրտացաւ դաւիթ: - 413. *Իննևժ*, ապրեցոյց զգաբաւոնացիսն որք երկեան և ապաւինեցան ի նա: - 418. *Իննևժ*, էջ ի գազայ ի տուն պոռնկի: - 423. *Իննևժ*, սրովն գողիաթու սպան զնա. և տէր մեր սրով մահուան սպան զիշխանն մահու: - 436. *Իննևժ*, կրկին քերովբէքն խաչատարած: - 441. *Իննևժ*, Թէ ո՛չ լինէր ծեր՝ **ե** կերպիւ: - 454. *Իննևժ* պատշա՛ճ էր ի մէջ գիշերի յառնել. զի ի նոյն ժամն սկսանի արեգակն բարձրանալ, և յառաւօտն ծագէ՛ առ մեզ: - 515. *Իննևժ*, Զանազանութիւն մեղաց: - 526. *Իննևժ* զամենայն ինչ սիրելւոյն՝ իւրն համարի. և զիւրն սիրելւոյն: - 576. *Իննևժ*, Վասն փողոյն գոչման: - 660. *Իննևժ*, դարձեալ ի մատթէոսն ասէ՝ «արքայութիւնն նման է առն որ սերմանիցէ սերմն բարի յագարակ իւր» և այլն: - 693

**ԻՆՆԵԽՏԱՍՆԵԱԿ, ԻՆՆԵԽՏԱՍՆԵՐԵԱԿ** + Իսկ *իննևժերեակն* է, զի ընթանայ լուսինն ի տարին **յծդ** օր՝ և **ժթ** մասն. որ լինի ի **ժթ** ամին՝ **յկա** մասն: - 191. Եւ արա՛ զերեսուն մասն մի ժամ, և զերկոտասան ժամն մի օր. և կոչի այս՝ *իննևժերեկի* ամ. որ աւելու ի լուսինն մի օր: - 191. Եւ որպէս *իննևժերեակն* լուսնի, և **իը** երեակն արեգական ի միասին ժողովեալ՝ առնէ զհինգ հարիւրեակ շրջանն ի **շլբ** ամին. զի **ժթ իը** երեակ է. և **իը ժթ** երեակ: - 192

**ԻՆՆԵԽՏԱՍՆԵՐՈՐԴ +** *Իննևժերորդ*՝ զի թէ չարն է յաստուծոյ, այլ արդ է՝ ըստ ինքեան չար, և է ըստ պատահման: - 15. *Իննևտասներորդ*՝ Բարեխօսելն որդւոյ և հոգւոյ: - 29. *Իննևտասներորդ*՝ Զի՞նչ է հաւասարն աստուծոյ, և բարձրացոյցն, և շնորհեացն անուն: - 30. *Իննևժերորդ*՝ ասէ պետրոս ի գործքն, «ա՛նանիա՝ ընդէ՞ր էլից սատանայ զսիրտ քո ստել քեզ հոգւոյն սրբոյ»: - 59. *Իննևժերորդ*՝ զի թէ առանձնապէս մարդ է, ապա հետևի բաժանեալ բնութիւն և **բ** կամք և կրկին ներգործութիւն. յայնժամ ո՛չ լինի բանն մարդ եղեալ. այլ մարդն բնակութեամբ ի փառս բանին բարձրացեալ: - 68. *Իննևժերորդ*՝ տէր փառաց միայն աստուած է. ըստ այնմ՝ «տէր զօրութեանց նա ինքն է թագաւոր փառաց»: - 72. *Իննևժերորդ*՝ թէպէտ մարդիկ ոմանք կոչին տէր վասն ունելոյ իշխանութիւն ինչ, այլ տէր միայն աստուած է. ըստ այնմ՝ «տէր զօրութեանց. նա՛ ինքն է թագաւոր փառաց»: - 74. *Իննևժերորդ*՝ ասէ ի մատթէոսն՝ «երկինք և երկիր անցանեն՝ և բանք իմ մի՛ անցցեն»: - 98. *Իննևժերորդ*՝ զոմանս ըստ ինքեան՝ և զայլս միջնորդով լուսաւորէ: - 127. *Իննևժերորդ)* Վասն յատկութեան երկնից. և զի հոմանուն է արփին՝ և եթերն՝ և այլն: - 154. *Իննևժերորդ*՝ զոմանս խաւարէ՛ և զայլս լուսաւորէ՛: - 186. *Իննևժերորդ*՝ Յարցման հոգւոյն և բացադարձութիւն իմացմանն: - 228

**ԻՆՆՍՈՒՆ ԵՒ ԻՆՆ** - Երկոտասաներորդ, եթող զոչխարսն ի տուարածսն. և տէրն *զիննսուն և զինն* յանապատին: - 436

**ԻՆՆՍՈՒՆԻՆՆ** - Ութերորդ՝ զի ասացաւ աբրահամու թլփատիլ ի ծերութեան ժամուն *իննսունինն* ամաց զոլով: - 304

**ԻՌ** - Եւ տէրն նշանակեաց *իռ*. **ժ** զգայարանացս **ք քռ**: - 404

**Լ** - Չորրորդ Արեգակն. զոր շամս կոչեն ջե՛րմ է և լուսաւոր. ***լ*** օր և **ժ** ժամ և կէս յամէ՛ ի կենդանակերպն. և ի բոլոր տարին վճարէ՛: - 189. Եւ արեգակն ի կենդանակերպն կատարէ՛ ***լ*** օր: - 191. Եւ մէկ ժամն է՛ ***լ*** մասն. և մէկ մասն է՛ **կ** րոպէ: - 191. Եւ դարձեալ՝ յորժամ վերադիրն լինի ***լ***. և **է** երեակն է ի միասին ի միում ամի. ասի այն կատարումն լուսնի. այսինքն մասանց թուոյն, և ո՛չ իրին: - 192. Եւ զի պատկե՛ր է աստուծոյ՝ ***լ*** թուով: - 228. Երեսունն**ա**՝ Յատկութիւնք մարդոյն ***լ*** թուով: - 228. Եւ կրկնեալ ի հնգետասանէն մինչև ի ***լ***, կատարի երիտասարդական հասակն. որ է **գ** տասամբ կատարեալ. ունելով զցանկականն և զցասմնականն և զբանականն լիով առ ինքեան: - 265. Քսան**գ**, Բաղդատութիւն մովսէսի և տեառն ***լ*** գլխով. և ազգահամարն աբրահամու: - 283. Ա՛րդ՝ առաջին դարն որ էր երևակին՝ ընդ երկա՛ր ապրէին մարդիկքն. զի ունի երևակն յերկար ընթանալ զճանապարհն իւր. որ ի ***լ*** ամն վճարէ զկենդանակերպսն: - 291. Իսկ ի վերջին դարս որ է՛ լուսնին՝ սակաւակեացք են մարդիկք. զի նա՛ ի ***լ*** օրն վճարէ զբոլոր ընթացս իւր: - 291. Երկայն՝ **գճ** կանգուն. և լայն՝ **ծ**. և բարձր՝ ***լ***: - 293. Եւ ***լ*** կանգուն բարձրութիւնն, զի բարձր հասա՛կ է մարդոյն. և պապ լինի երեսնամենի: - 293. Զոր ոմանք ***լ*** ստադիոն ասեն զբարձրութիւնն և զլայնութիւնն շուրջանակի **խդռ** քայլք. այսինքն **խդ** մղոն ձգեալ ասի: - 297. Մետասաներորդ՝ յովսէփ **ժե** ամաց վաճառեցաւ ***լ*** դահեկանի որպէս ասէ ի կտակն: - 313. Եւ տէրն մեր կրկին թուով ամաց. զի աստուած և մարդ էր վաճառեցաւ ***լ*** արծաթոյ: - 313. Արանց **ծ** և կանանց ***լ*** երկդրամեան: - 359. Զի զահարոն և զմովսէս ***լ*** օր լացին: - 391. Վասն է՞ր ***լ*** օր սըգացին: - 411. Երրորդ՝ զի երեսունն **գ ժ** է. զի **ժ** զգայարանքն մարմնոյ և հոգոյ և մտաց՝ քակտի. վասն որոյ ***լ*** օր սըգան: - 411. Չորրորդ՝ Բաղդատութիւն յեսուայ և տեառն ***լ*** գլխով: - 412. Քսաներորդ, Բաղդատութիւն սողոմոնի և տեառն ***լ*** գլխով: - 413. Եւ ի մեծի ուրբաթի խաչին, լուսինն ընթացաւ և ձգեցաւ յարևն, և յետս դարձաւ. որպէս ցուցանի յառաջիկայդ առ խաչելութեամբն ի ***լ*** գլուխն ի **իզ** համարն: - 416. Սորա որդիք ***լ*** և դստերք ***լ***: - 420. Սորա՛ էին **խ** որդիք, և ***լ*** թոռունք: - 420. Եւ թէ զի՞նչ է խորհուրդն, գտցես ի չորրորդ թագաւորութեանց վերջքն **իթ** գլուխն ***լ*** համարն: - 421. Սիրաք. և Յոբն. որ լինի ***լ***: - 450. Եւ թադէոսի. որ լինի ***լ***: - 450. Եղիուդ ***լ***: - 453. Զոր այլք ասեն թէ յետ ***լ*** ամաց: - 482. Ութերորդ՝ զի թէ հաւատան աւետարանին և ոչ ստեն ***լ*** ամաց գալ քրիստոսի ի մկրտութիւն, ի հարկէ՛ պա՛րտին կատարել և զմկրտութիւնն ի նոյն ի տօնի ծննդեանն իւրեանց ի դեկտեմբերի **իե** որ իցեն ամենևիմբ սուտ: - 484. Այլ որ ուղղապէս հանդիպիմք՝ ասեմք թէ ***լ*** ժամ մարմինն եկաց ի գերեզմանի. և հոգին **լգ** ժամ և կէս յամեաց ի դժոխս: - 515. Ա՛րդ՝ շաբաթի գիշերն և տիւն **իդ** ժամ. և **զ** ժամ ի կիրակէէն մինչ ի մէջ գիշերն. որ լինի ***լ*** ժամ. իսկ հոգին **դ** ժամ և կէս նախ իջեալ ի դժոխս որ լինի **լգ** ժամ և կէս: - 516. Եւ ***լ*** ժամեայ յարեաւ և ել ի գերեզմանէն: - 516. ...զի անխառնակ և անշփոթ երևեսցի մադանալն բանին յազգէն յուդայ. որպէս ասացաւ ի վերոյ ի ***լ*** գլուխն, **դ** համարն: - 612. ...և ***լ*** դրամ տուգանս տացեն յեկեղեցին: - 652. ...**ծ** դրամ յեկեղեցին տացէ. և ***լ*** դրամ յաղքատս. և ապա՛ հաղորդեսցի: - 652. Իսկ վասն ողորմութեան ասացաւ ի վերոյ ***լ*** գլուխն յառաջին համարն: - 654. Երկոտասաներորդ, Թէ հատուցումն ըստ գործոց՝ է՛ ի կատարածի, ***լ*** վկայութեամբ: - 660. Գտցես և վասն մահու առ խաչելութեանն քրիստոսի ի ***լ*** գլուխն ի **իզ** համարն: - 668. Եօթներորդ, զի **գ** են հանգիստ և վարձք սրբոցն. որպէս ասէ տրն. **ճ**, **կ**, և ***լ***...: - 675. ...որպէս ասացաւ ի վերոյ յութերորդ հատոր գրոցս ***լ*** համարն: - 746. Իսկ վասն տեղեաց դժոխոցն ասացեալ է ի վեր անդր ***լ*** գլուխն, **իը** համարն: - 754. Զոր ընկալեալ զսերմն հրամանաց աստուծոյ, և բուսուցեալ ի մեզ՝ տամք պտուղ ***լ***, **կ**, և **ճ**: - 757. Եւ երկնաւորն այն գաւառ՝ ***լ*** ամօք արագընթաց աստեղն ճանապարհ շնորհէ: - 763

**ԼԱ** - Եւ վասն այսմ ի սուր անկան ծոյլ քահանայքն ոփնի և փենէհէզ. և ***լա*** ի դասուց անկան և տապանակն գերի առաւ: - 425. Յովսիա ամս ***լա***: - 453. Սադովկ ***լա***: - 453. ...և ապա լինի եկեղեցի և ժողովուրդ քրիստոսի. որպէս ասացաւ ի վերոյ ***լա*** գլուխն, **գ** համարն: - 614

**ԼԲ** - Յինգերորդ՝ զի հոգևոր բնութիւնն միանգամ միայն է շրջելի. վասն զի բոլորովին շրջէ զինքն՝ զոր ո՛չ առնէ մարդն. զի մարմինն միշտ մարտնչի ընդ հոգին. որպէս յառաջիկայդ ասի ***լբ*** գլուխն: - 151. Եւ ատամունքն ***լբ*** ոսկր. որ լինի բովանդակն **լզ** ոսկր: - 243. Եւ թաթք ձեռացն ***լբ*** ոսկր. որ լինի բովանդակ ձեռքն ի թիկանցն **խ** ոսկր: - 243. Եւ առ եզեկիա՝ արեգակն յետս դարձաւ. տիւն եղև ժամս ***լբ***: - 416. Եւ յետ եօթնասուն ամի շինուածոյ տաճարին՝ ապա արձակեալ նէեմի շինէ զպարիսպն էմի ի ***լբ*** ամին արտաշէսի. որպէս ասէ գիրքն եզրի: - 448. Եւ հերովդէս այլազգի տիրէր. յորոյ ***լբ*** ամին ծնաւ տէր մեր յիսուս քրիստոս: - 449

**ԼԳ** - Զի՞նչ է հրեղէն վիշապն. որպէս ասէ տեսիլն ***լգ*** գլուխն: - 151. Դաւիթ ***լգ*** ամ թագաւորեաց. և

տէր մեր մարմնով ի վերայ երկրի: - 437. Նա՛խ՝ զի հանգիցէ ի վաստակոցն զոր *լգ* ամ վաստակեցաւ ի վերայ երկրի: - 519. Չորրորդ՝ *լգ* ամ յերկրի եկաց, զի ուսուցէ զկենդանիս: - 520. Եւ *լգ* ժամ ի դժոխս, զի փրկեսցէ զհոգիսն: - 520. Եւ **խ** օր յօդս զի *լգ* օր զօդս սրբեսցէ ի ճենճերից կռոց. և **է** օրն ի խորհուրդ **է** աստեղեան խորանացն ի կայանս հոգւոցն: - 520-521. ...որպէս ասացաւ ի վերոյ *լգ* գլուխն ի **իբ** համարն: - 696

**ԼԳ ԵՒ ԿԷՍ** - Այլ որ ուղղապէս հանդիպիմք՝ ասեմք թէ **լ** ժամ մարմինն եկաց ի գերեզմանի. և հոգին *լգ* ժամ և *կէս* յամեաց ի դժոխս: - 515. Ա՛րդ՝ շաբաթի գիշերն և տիւն **իդ** ժամ. և **զ** ժամ ի կիրակէէն մինչ ի մէջ գիշերն. որ լինի **լ** ժամ. իսկ հոգին **դ** ժամ և կէս նախ իջեալ ի դժոխս որ լինի *լգ* ժամ և *կէս:* - 516. Եւ ա՛յն է խորհուրդն, զի որ քան ամ մարմնով մարմնաւորացն քարոզեաց. նոյնքան ժամս հոգւով հոգւոցն քարոզեաց. այսինքն *լգ* ամ և *կէս* ի յերկրի. *լգ* ժամ և *կէս* ի դժոխս...: - 516

**ԼԴ** - Իսկ բանսարկուն սատիէլ՝ զմի յերից մասանցն զչորրորդն քարշեաց ընդ ինքեան և կործանեաց յերկիր. որպէս ասէ տեսիլն՝ «*լդ*՝ առիւծն անկաւ յերկիր և հրեշտակք նորա ընդ նմա»: - 152. Սըրունքն **բ** ոսկր. և Թաթք ոտիցն *լդ* ոսկր: - 243. Աքին՝ *լդ:* - 453. Դարձեալ մեր վարդապետք ասեն, որպէս ի տեսլեան մեկնիչն *լդ* գլուխն ասէ այսպէս: - 703

**ԼԵ** - Նոյնպէս զլուսոյ և զհրոյ յատկութիւնս բաղդատել դիւրին է իմանալի լուսոյն ճշմարտի. որպէս գրեալ ի **ի** գլուխն՝ *լե* համարն տե՛ս անդ: - 127. Վասն որոյ ի միասին տօնեմք խաչի և եկեղեցւոյ. որպէս ասացաւ ի *լե* գլուխն, **լը** համարն: - 373. Եօթներորդ՝ Բաղդատութիւն սամփսոնի և տեառն *լե* գլխով: - 412. Սաղմոն ամաց *լե*՝ծնաւ զբոյոս: - 452. Իսկ վասն շինուածոց ասացեալ է յառաջիկայդ ի *լե* գլուխն, ի **լէ** համարն: - 532. Ապա թէ ոչ՝ *լե* օր է: - 651. Եւ որպէս ասացաւ ի վերոյ *լե* գլուխն, **խդ** համարն: - 655. որպէս ցուցաւ ի վերոյ *լե* գլուխն ի կարգ աղօթիցն ի **խա** համարն: - 676. Իսկ թէ յեկեղեցիս ո՛չ թաղեմք՝ ասացաւ ի վերոյ *լե* գլուխն **լթ** համարն: - 678

**ԼԶ** - Չորրորդ՝ հրեշտակն անփոփոխ է. իսկ հոգին փոփոխական. որպէս ասացաք ի *լզ* գլուխն: - 141. Եւ ատամունքն **լբ** ոսկր. որ լինի բովանդակն *լզ* ոսկր: - 243. Բովանդակն ամենայն *լզ* թագաւորք: - 414. Եւ հաւատարիմ է այս. զի առ յեսու սքանչելիքն լինէր ի կամարն երկնից. և մի տիւն՝ ժամս *լզ:* - 416. Այլ զերկոտասանքն մին գիրք, և զերեմիայն մին գիրք համարեալ, լինի *լզ* գիրք հին կտակքն բովանդակ: - 450. Իբր լինի *լզ* հին կտակարանք և *լզ* նորս. բովանդակն **հբ**: - 451. Եւ վասն հիւանդութեան ասացի յառաջիկայդ ի *լզ* գլուխն ի **բ** համարն գիտ: - 531. Դարձեալ ասեմք առաջին կեանք մասնաւոր, զոր նախ քան զյանցանելն ունէր. անկարօտութիւն. լուսաւորութիւն. անծերանելի հասակ. անմահ կեանք. և այլն որ ասացաւ ի վերոյ **ծէ** գլուխն *լզ* համարն: - 758

**ԼԶ ԲԻՒՐ** - Եւ *լզ բիւրս* սպանին յուղղափառաց դասուց. որպէս յա՛յտ է ի պատմութիւնս սրբոյն միխայէլի: - 547

**ԼԷ** - Երեսուննէ զօրավարք դաւթի. և *լէ* թիւ հնոյն օրինաց. և այլ նորոց կտակի. և կամ **իբ** գլխաւո՛ր են գրոց հնոց. և **ժ** բան օրինաց. և չորից աւետարանաց. և միոն առաքելական: - 438. Իսկ վասն շինուածոց ասացեալ է յառաջիկայդ ի **լե** գլուխն, ի *լէ* համարն: - 532

**ԼԸ** - Եւ ոմանք *լը* ասեն ըստ անդամալուծին զոր բժշկեաց քրիստոս: - 326. Եւ որք *լը* ասեն զփործանսն՝ սոյնպէս թուեն. յետ հարուածոցն եկաց յոր **բ** եօթանասունն. այսինքն **ճխ** ամ: - 327. Վասն որոյ ի միասին տօնեմք խաչի և եկեղեցւոյ. որպէս ասացաւ ի **լե** գլուխն, *լը* համարն: - 373. Մատթան *լը:* - 453. Եւ այլ բազում ինչ ունիմք հաւասարութիւն. որպէս ցուցանի յառաջիկայդ ի *լը* համարն: - 533. Իսկ զի անխմոր բաղարջով է խորհուրդն՝ ասացաւ ի վերոյ **իա** գլուխն *լը* համարն: - 597

**ԼԸԵՐՈՐԴ** - Իսկ յովակիմ արդարն էր ի թագաւորական ցեղէն յուդայի *լը երորդ* ի թոռանց նաթանայ որդւոյն դաւթի փառաւոր և մեծատուն յոյժ: - 460-461

**ԼԹ** - Սակայն և նա՛ է ի թիւս յայս. այսինքն զի երիցս պատկելով երեքտասանն՝ լինի *լթ*. և ի քառասներորդումն պտղաբերի: - 263. Ազովր *լթ:* - 453. Իսկ թէ յեկեղեցիս ո՛չ թաղեմք՝ ասացաւ ի վերոյ **լե** գլուխն *լթ* համարն: - 678

**ԼՌ** - Նա՛խ՝ թուել հրամայեաց, որպէս այն որ թոյլ ետ իէլի մարտնչիլ ընդ բենիամենի, և անկան *լռ* ի դասուց նոցա: - 434

**ԽՍ** - Երրորդ՝ Յրա՛տն. զոր մարեխ անուանեն. ջերմ է և չոր. *խ* օր յամէ՛ ի կենդանակերպն. և ի **ժզ** ամիսն պատէ՛ զամենայն: - 189. Եւ ծախ կողքն **ը**. որ լինին սոքա *խ:* - 243. Եւ թաթք ձեռացն **լբ** ոսկր. որ լինի բովանդակ ձեռքն ի թիկանցն *խ* ոսկր: - 243. Եւ դարձեալ՝ յիւրաքանչիւր կազմուած մարդոյ՝ յառա՛ջ

է մարմինն քան զհոգին *խ* աւուրբ կամ **ծ**: - 253. Եւ թէ ոք ասիցէ, զի՞նչ է այս որ յետ *խ*, կամ **ծ** աւուր ստեղծանի բանական հոգին: - 254. Եւ ի **խա** աւուրցն ի վեր՝ երևեալ շնչոյն ձևակերպէ՛ զկերպ մարդոյ մինչ ի *խ* օր արու մանկան. և իսկոյն հեղի ի նա՛ հոգին բանական ի շնորհացն աստուծոյ ծագեալ ի նա: - 261. Եւ թէ վասն է՞ր ասիցէ ոք՝ ոմն յետ **զ** աւուր՝ և ոմն ի **ի** և ոմն ի *խ:* - 261. Եւ թէ զարմաւենւոյ ասեն ի *խ* ամս պտղաբերիլ: - 263. Իսկ որք ի *խ* աւուրս ծնանին և կամ ի **ի**, որպէս հաւ. ունին նոքա զխորհուրդ չորից տասանց և չորից հնգից, ըստ **ե** զգայութեանց ներքոյ և **ե** զգայութեանց արտաքոյ որպէս ասացաք: - 263. Եւ *խ* իջևանս փոխելոյ հոգւոցն: - 285. Եւ յետ *խ* աւուր արձակեաց զագռաւն: - 294. Եւ *զխ* ամ շինեցին յամառն և ձմեռն ըստ բարեխառնութեան տեղւոյն. մինչև հասին յործկուտ օդն թանձրացեալ ի գոլորշեաց և ջերմացեալ յարևուն: - 297. Երկրորդ՝ զի *խ* քաղաք առին ի բենիամենէ՛ յուդայի ցեղքն վասն շնութեան կնոջն պատահելոյ. և կոտորեցին զնոսա առ հասարակ **իեռ** արս. և մնաց վեց հարիւր այր զոր յետոյ ըստացան ժառանգութիւն իւրեանց. որպէս յա՛յտ է ի դատաւորաց վերջքն: - 312. Եօթներորդ՝ մովսէս *խ* օր անսըւաղ պահեաց ի լերինն: - 328. Եւ տէր մեր պահեաց *խ* օր ի փորձութեան լեառն: - 328. Ութերորդ, մովսէս *խ* օր ի մէջ ամպոյն կալով էառ զպատուիրանսն: - 328. Եւ տէրն յետ յարութեանն *զխ* օր ի վերայ օդոյդ: - 328. Եւ *խ* ամ ի մադիամ եկաց. և ի հանել զժողովուրդն՝ *խ* ամ յանապատին եկաց: - 330. Այլ թէ հարցանեն զորքանութիւն սիւնիցն. **ծ** սիւն ի մէջ խորանին. և **թ** սիւն վարագուրացն. և մի թափանց ի մէջն յարնելից յարևմուտս. որ լինի **կ**. և **ձ** սփռիչ. և *խ* նիգք. և ամենայնն ոսկեպատ. որ բովանդակն լինի **ճձ** ի ներքս: - 343. Երրորդ, դարձեալ *խ* պահեաց և էառ զկրկին տախտակն գրեալ մատամբն աստուծոյ իբրև զառաջինն, և եդ ի տապանակ վկայութեանն: - 352. Եւ մին յորժամ զլրտեսքն առաքեցին ի կագիսա. և *խ* օր յամեցին և մովսէս *զխ* պահեաց: - 353. Ահարօն և որդիքն է օր մնացին ի խորանն. վասն է՞ր մեք *խ:* - 363. Իսկ մեք *խ* զմովսէսին պահեմք որ ի լեառն սինա, և յեսու արտաքոյ միգին: - 363. Դարձեալ՝ որպէս քրիստոս յետ մկրտութեանն՝ ի լեառն պահեաց *խ* օր: - 363. Եւ որպէս երեխայն նախ քան զմկրտիլն *խ* օր ուսանի զխորհուրդն: - 363. Երրորդ՝ զի աւետարանիչքն յայտնապէս ասեն թէ՝ ընդ մկրտիլ տեառն՝ նոյն ժամայն հոգին հանէ՛ զնա յանապատ. և պահեաց *զխ* տիւ և *զխ* գիշեր: - 373. Զի վարդավառին ա՛յն է, յորժամ կրկին *խ* պահեաց մովսէս ի լեառն և լուսաւորեցան երեսքն. վասն այն զկնի երկու յիսնակացն տօնեմք: - 373-374. Իսկ *զխ* իջևանքն ոմանք խորհուրդ առնուն յետ ելիցն ի մարմնոյ հոգւոյն՝ *խ* աւուրբ հասեալ յօթևանս: - 391. Եւ վկայ ածեն զհամբարձումն քրիստոսի յետ *խ* աւուր: - 391. Այլ և փիլիպպոս *խ* օր արտաքոյ եկաց դրախտին: - 391. Ի յայս միտս *խ* կատարեն ննջեցելոց: - 391. Զի ասեն եթէ՝ *խ* օր էր պայմանն ադամայ. յետ *խ* աւուր ուտէր ասեն՝ ի փայտէն գիտութեան և սրբութեամբ որդիս ծնանէր. և ապա՛ ուտէր ի կենաց փայտէն և վերափոխեր. և այլ բազում բանս տողե՛ն: - 391. Զի *խ* վասն այն կատարեմք, որ առաջինքն զննջեցեալքն *խ* օր լային անմխիթար. որպէս զնահապետն յակոբ լացին *խ* օր: - 391. Մեծ, զի *խ* ամ շրջեցան: - 393. Երկրորդ՝ զի *խ* ամ յանապատին հաց ո՛չ եմ նոցա. այլ մանանայ և զայլսն. զի բանիւն աստուծոյ կերակրեցան հոգւով. և ո՛չ մարմնական հացիւ: - 397. ...վասն որոյ յայսմանէ ասեն ոմանք թէ՝ **գ** ամ կամ *խ* օր յամեաց ադամ ի դրախտին. որպէս ժողովուրդն ի յանապատին. կամ որպէս մովսէս ի լեառն: - 397. Ութերորդ՝ մովսէս ի լեառն եկաց *խ* տիւ և *խ* գիշեր անսուաղ. և կերակրիւր բանիւն աստուծոյ. նոյնպէս և եղիա. նաև տէր մեր ի փորձութեան լերինն: - 397. Զի **նժ** ամք դատաւորացն, և *խ* ամ հեղեայն մինչ ի սաւուղ. որ լինի **նծ** ամ: - 420. Եւ դատաւորաց առաջինն Գոդոնիէլ որդի կենեզայ եղբայր քաղեբայ յազգէ յուդայ ամս *խ*. և այլազգիքն ամս **ժը**: - 420. Չորրորդն Բարակ. որդի ամենեմայ ի կեդեսայ նեփթաղէմի ամս *խ:* - 420. Հինգերորդն Գեդէոն. որդի յովասու ի մանասէ է՛ եփրաթացի ամս *խ:* - 420. Սորա՛ էին *խ* որդիք, և **լ** թոռունք: - 420. Եւ այլազգիքն ամս *խ:* - 420. Եւ յետ սորա հեղի քահանայ յազգէ ի թամարայ դատեաց զիէլ ամս *խ:* - 420. Զոր եօթանասունքն ի ասեն. իսկ սամուէլ և սաւուղ ամս *խ:* - 420. Չորրորդ՝ զի ցուցանէ եթէ՝ *խ* ամ թագաւորեաց, և զայն մինն միա՛յն մեղանչեաց: - 432. Վեշտասաներորդ, դարձեալ *խ* օր արձանացաւ գողիաթ և զտէրն *խ* օր փորձեաց սատանայ: - 436. Արդ յերեքտասան ամէ՛ ովսիա մինչև ցմետասան ամն սեդեկիայ որ վերջին գերեցաւ՝ լինի *խ* ամ. և նաբուգոդոնոսորայն **ի** ամ. և որդւոց և թոռանց նորին **ժ** ամ. որ կատարի **հ** ամ մինչև յառաջին ամն կիւրոսի որ արձակեաց զգերիսն: - 447. Սա երեսնամեայ թագաւորեաց ամս *խ*. կեցեալ ամս **հ**: - 452. Սա՛ յերկոտասան ամին թագաւորէ՛ ամս *խ*. կեցեալ ամս **ծբ**: - 452. Յովաս ամս *խ:* - 452. Եւ վասն է՞ր յետ *խ* աւուր համբարձաւ. և նստելոյն ընդ աջմէ: - 455. Եւ աւուրք պաշտամանն էր երկոտասան. **ե** օր քաւութեանն վասն որթոյն յանապատին. և **է** օր տաղաւարահարացն ի յիշատակ խորանաւ բնակելոյն

յանապատին ամս ***խ***. և այլ սքանչելեացն զոր գործեցաւ անդ: - 483. ...զի զքառասնօրեայ գալուստն ի տաճարն՝ ըստ ծննդեանն տօնեսցեն և ո՛չ ըստ յայտնութեանն. որ է՛ յունվարի վեցն. զոր մեք տօնեմք ***խ*** օր թուեալ մինչև ի **ժդ**ն փետրվարի: - 485. Ոմանք ***խ*** ժամս ասեն. և այլք աւելի և պակաս: - 515. Վասն է՞ր յորժամ յարեաւ իսկոյն ո՛չ համբարձաւ այլ յետ ***խ*** աւուր: - 520. Որպէս ասէ գործքն «’ի բազում արուեստս յաւուրս ***խ*** երևեալ նոցա»: - 520. Երրորդ՝ վասն մխիթարութեան աշակերտացն. զի ***խ*** օր մխիթարեսցէ զնոսա փոխանակ ***խ*** ժամուն որ տրտմեցան ի մահն քրիստոսի. որպէս ասացաւ թէ յարութիւնն ի մէջ գիշերի, այլ երևեցաւ ընդ արշալոյսն առաքելոցն...: - 520. Եւ ***խ*** օր յօդս զի **լգ** օր զօդս սրբեսցէ ի ճենճերից կռոց. և **է** օրն ի խորհուրդ **է** աստեղեան խորանացն ի կայանս հոգւոցն: - 520-521. Եւ այլք ասեն թէ՝ ***խ*** օր յերկրաւոր դրախտին եկաց ինքն և յարուցեալքն ընդ նմա. և մխիթարեաց զեղիա և զենովք: - 521. Յինգերորդ՝ յետ ***խ*** աւուր համբարձաւ, զի ցուցցէ թէ որք զ**ժ** բանեան օրէնսն չորիւք աւետարանաւն լնուն, կարեն յերկինս ելանել: - 521. Վեցերորդ, զի եկեղեցի որ է մարմինն քրիստոսի՝ յետ չարչարանաց նեռինն որ հանդերձեալ է կրել, զկնի ***խ*** աւուր յերկինս համբառնալոց հաւատացեալ լինի: - 521. Ժողովեալ ***խ*** եպիսկոպոսաց և բազում վարդապետաց և ժողովրդոց. կողմակալք և մարզպանք, մեծամեծօքն հայոց, և սպարապետն վարդան ազգայնօքն իւր: - 544. Եւ թէ ոք ասիցէ, ***խ*** օր է պահոց. զի ***խ*** օր պահեաց քրիստոս. և կիրակէն ո՛չ է ի համարս: - 651. Ասեմք թէ՝ քրիստոս ***խ*** օր պահեաց, և ***խ*** օր է մինչ ի ղազարու տօնն: - 651. Եւ այլ ևս, յորժամ զշաբաթ և զկիրակէ արտաքոյ թուեմք որ պատարագ մատչի, **ե** օր առաջաւորն ըստ աղուհացիցն համարեալ՝ լինի ***խ*** օր: - 651. ...և ապա՛ ի ներքս մտեալ՝ ***խ*** օր աւարտեաց ընդ աստուած խօսելով: - 651. Նոյնպէս և առաջին շաբաթն պահոց՝ մեզ մուտէ ***խ*** աւուրցն...: - 651. ...կրկին ***խ*** գան արբցեն..:. - 652. Իսկ վասն քառասնից պահոց, Նախ մովսէս պահեաց կրկին ***խ*** ի լերինն. և յեսու ընդ նմա: - 652. Ձի ո՛չ եկեր և ո՛չ էարբ զքառասուն տիւ և *զ**խ*** գիշեր: - 652. և նոքա կացին յանապատ ամս ***խ*** և այլն: - 682. Եւ ***խ*** ամն է՛ **դժ**. այսինքն մինչ ի կատարումն չորեքնիւթեայ կենցաղոյս: - 682. Եւ դարձեալ, զի ի ***խ*** օր պահոցն մինչ ի յարութիւնն ղազարու այլ հանգստեան ո՛չ տօնեմք: - 684. Յորում թէ վասն է՞ր իննամսեայ ծնանին, կամ յաւուր ***խ*** շնչաբերին, և որպիսութիւնք նոցա: - 785

**ԽԱ** - Ասափ ամս ***խա***: - 452. որպէս ցուցաւ ի վերոյ **լե** գլուխն ի կարգ աղօթիցն ի ***խա*** համարն: - 676

**ԽԲ** - Որ լինի բովանդակ ոսկր ոտիցն ***խբ***: - 243. Եւ ***խբ*** այլ ի շրջակայ երկիրն որ լինի **խը**: - 392. Եւ խափա՛ն եղև ի շրջակայ ազգացն ***խբ*** ամ: - 448. Երրորդ ժողովն զկնի ***խբ*** ամի եղև յեփեսոս ի թագաւորութեանն թէոդոսի փոքու ի **ժա** ամի նորին: - 542. Եւ ի ***խբ*** գլուխն ի վերայ այնմ բանի թէ՝ «տանջեսցին նոքա հրով և ծծմբով»...: - 703. Որ է՛ ամիսս ***խբ***, և ամք՝ **գ** ամ և կէս: - 709

**ԽԳ** - Եւ **ժ** բան է՛ օրինացն. և ***խգ*** իրաւանցն. բովանդակն **ծգ**. խորհուրդ ազատութեան մերոյ հաւատով Երրորդութեանն: - 340. Յայս միտս ի վերայ սեղանոյն խունկ վառեմք. որպէս ասացաւ ի վերոյ **իա** գլուխն, ***խգ*** համարն: - 615

**ԽԴ** - Զոր ոմանք **լ** ստադիոն ասեն զբարձրութիւնն և զլայնութիւնն շուրջանակի **խդռ** քայլք. այսինքն ***խդ*** մղոն ձգեալ ասի: - 297. Նայասօն ամաց ***խդ***՝ծնաւ զսաղմոն: - 452. Եւ որպէս ասացաւ ի վերոյ **լե** գլուխն, ***խդ*** համարն: - 655

**ԽԴՌ** - Զոր ոմանք **լ** ստադիոն ասեն զբարձրութիւնն և զլայնութիւնն շուրջանակի ***խդռ*** քայլք. այսինքն **խդ** մղոն ձգեալ ասի: - 297

**ԽԵ** - Եւ զայլ քննութիւն զենմանն գտցես յառաջիկայդ ի ***խե*** համարն: - 296. Արամ ամաց ***խե***՝ ծնանի զամինադաբ: - 452. Ամինադաբ ամաց ***խե***՝ծնանի զնայասօն. և էր ասէ ամինադաբ սպարապետ զօրուն յուդայի ի հանել մովսէսի զորդիսն իէլի յեգիպտոսէ: - 452. Աբիուդ ***խե***: - 453. Եւ ըստ եկեղեցոյ ցուցաւ խտրութիւնն ի վերոյ ի **իա** գլուխն ***խե*** համարն: - 511. ...որպէս ցուցաւ ի **իա** գլուխն, ***խե*** համարն: - 657. Եւ ի ***խե*** գլուխն ի վերայ այնմ բանի «ո՛չ ոք կարէ մտանել ի տաճարն մինչև կատարեսցին եօթն հարուածք յեօթն հրեշտակացն», ասէ մեկնիչն. ոչ արդարոցն հանգչելոյն աղաչանք, և ո՛չ մեղաւորացն ի տանջանս հառաչանք... - 703. Եւ յետ այնորիկ ոչ առ ժամայն գայցէ տէր ի դատաստան. այլ տացի խաղաղութիւն աւուրս ***խե***. առ ի հանգիստ սրբոցն և ի յապաշխարութիւն թիւրելոցն: - 709. Իսկ թէ ո՞րքան է միջոցն ի մէջ ***խե*** աւուրցն՝ ո՛չ ոք գիտէ: - 709

**ԽԶ** - Եւ այսպէս միջին հասակս կատարեալ, ձգի մինչև ի ***խզ*** ամն. որ է **դ ժզ**. և վեցն կատարեալ թիւ է. և աստ տիրէ ալիք և սկիզբն լինի ծերութեան մինչև ի **հբ** ամն. յորում է ծայրք կենաց ըստ դաւթի, և թիւ երկոտասան վեցից խորհրդաւոր: - 265. ...ի Տեառնէ՝ ***խզ***: - 412

**ԽԸ** - Եւ ***խը*** քաղաք ապաստանից տալ քահանայիցն: - 359. Եւ **խբ** այլ ի շրջակայ երկիրն որ լինի ***խը:*** - 392. Դարձեալ՝ ***խը*** քաղաք՝ մեծ պաքնէ քառասնիցն: - 392. Յուդա ամաց ***խը***՝ ծնանի զփարէս ի թամարայ: - 452. Եւ ի քրիստոսի համբարձմանն ***խը*** ամաց էր: - 461. Դարձեալ, ***խը*** քաղաքն ապաստանի, նշանակէ՛ զմեզ պահքն ***խը*** օր: - 653

**ԽԹ** - Վասն որոյ յայսմանէ և յառաջ հաստատի մարդ ի հանճարս բանակրութեան և ի տեսութիւն իմացման մինչև ի ***խթ*** ամն որ է եօթնիցս եօթն: - 265

**Ծ** - Երկայն՝ **գճ** կանգուն. և լայն՝ ***ծ***. և բարձր՝ **լ**: - 293. Եւ ***ծ*** կանգունն, զի մանուկն յարգանդի **խ**օրեայ հոգևորի և **ծ**օրեայ շարժի: - 293. Եւ ***ծ*** ամն՝ որ առ որդւով նորին կոստանդեաւ յերկնից լուսափայլեալ ի լեռնէն ծիթենեաց մինչև ի սուրբ գողգոդա: - 294. Եւ **բ** երեսին մէջն ***ծ*** կանգնոյ լայնութիւն: - 297. Եւ ***ծ*** կանգուն լայն յարևելից և յարևմտից կողմն: - 343. Եւ զայս յայտնապէս ասէ ի ղևտացւոց ***ծ*** համարն թէ՝ «սուրբն սրբոց է՛ յարևելից կողմանն»: - 343. Այլ թէ հարցանեն զորքանութիւն սիւնիցն. ***ծ*** սիւն ի մէջ խորանին. և **թ** սիւն վարագուրացն. և մի թափանց ի մէջն յարևելից յարևմուտս. որ լինի **կ**. և **ձ** սփռիչ. և **խ** նիգք. և ամենայնն ոսկեպատ. որ բովանդակն լինի **ճձ** ի ներքս: - 343. Այսպէս յետ ***ծ*** աւուրց տւաւ օրէնքն. և **ձ** օր պահքն երեքօրեայ սրբութիւն: - 344. Արանց ***ծ*** և կանանց **լ** երկդրամեան: - 359. Երկրորդ՝ զի զգին ծերոյն պակաս հրամայեաց. զի **ե** ամեայ տղայոյ երկդրամեան էր. և ի ամենին ի երկդրամեան. և անտի մինչև ի **կ** ամն ***ծ*** երկդրամեան. և ի **կ** էն յառաջ **ժե** երկդրամեան: - 377. Միջին մինչ ի ***ծ*** ամն կատարեալ հասակ: - 378. Զի ***ծ*** ամն յոբելեան է և ազատութեան. որ ազատի մարդ յախտից և յախտաւոր սիրոյ աշխարհի՝ և առ աստուած դառնայ: - 378. Որ մինչ ի ***ծ*** ամն կատարէր զգործն իւր, և անդանօր դադարէ՛ր: - 379. Որ լինի ***ծ***, պակաս մի. սոյնպէս թւեալ: - 450. Եւ **է** շաբաթն ***ծ*** օր է. որ է՛ ազատարար թիւ և օրինակ հանդերձելոյն: - 524. Եւ ***ծ***՝ մարտիրոսացն. զի ազատութիւն է: - 621. ...***ծ*** դրամ յեկեղեցին տացէ. և **լ** դրամ յաղքատս. և ապա՛ հաղորդեսցի: - 652. Երկրորդ, զի ***ծ*** օր պահեցաք վասն հոգւոյն... - 654. ...և ***ծ*** օր ուտեմք վասն մարմնոյն: - 654

**ԾԱ** - Իսկ թէ **ը** օր տօնեմք, ասացեալ է ի վերոյ ի **իա** գլուխն, ***ծա*** համարն: - 525. Առաջին՝ ի բնական. որպէս երէոց, անասնոց, թռչնոց, և մրջմանց. որպէս ցուցաւ ի վերոյ ի **ժգ** գլուխն, ***ծա*** համարն: - 536. Եօթներորդ հոգոյն գալստեան. որպէս ասացաւ պատճառն ի վերոյ ի **իա** գլուխն, ***ծա*** համարն: - 649

**ԾԲ** - Սա՛ յերկոտասան ամին թագաւորէ՛ ամս **խ**. կեցեալ ամս ***ծբ:*** - 452. Ազարիա որ և ոզիա ամս ***ծբ:*** - 452. Եւ մեսեղի ճաշոյն և երեկոյեան, չորրորդ մասն դորակի գինւոյն. որպէս ասացաւ ի վերոյ ի **իա** գլուխն ***ծբ*** համարն: - 629

**ԾԳ** - Եւ **ժ** բան է՛ օրինացն. և **խգ** իրաւանցն. բովանդակն ***ծգ***. խորհուրդ ազատութեան մերոյ հաւատով Երրորդութեանն: - 340

**ԾԵ** - Մանասէ ամս ***ծե:*** - 453

**ԾԶ** - Իսկ ըստ ազգաբանութեանն Մատթէի, ծնանի յեքոնիա զսաղաթիէլ ամաց ***ծզ:*** - 453. Զօրաբաբէլ ***ծզ:*** - 453

**ԾԷ** - ասէ նոյն տեսիլն ***ծէ*** գլուխն, «տուաւ հարսինն զգենուլ բեհեզս սպիտակս սուրբս և լուսափայլս». և բեհեզն է՛ արդարութիւն սրբոցն: - 712

**ԾԸ** - Եզրօն ամաց ***ծը***՝ ծնանի զարամ: - 452. Դաւիթ ամաց ***ծը***՝ ծնաւ զսողոմոն: - 452

**ԾԹ** - Եւ կաւագործութիւնն խստացաւ ի մովսիսի **իբ** ամէն ի վեր. որ լինի ***ծթ*** ամ խիստ ծառայութիւն նոցա: - 337. Փարէս ամաց ***ծթ***՝ ծնանի զեզրօն: - 452

**Կ** - Եւ մէկ ժամն է՛ **լ** մասն. և մէկ մասն է՛ ***կ*** րոպէ: - 191. Այլ թէ հարցանեն զորքանութիւն սիւնիցն. **ծ** սիւն ի մէջ խորանին. և **թ** սիւն վարագուրացն. և մի թափանց ի մէջն յարևելից յարևմուտս. որ լինի ***կ***. և **ձ** սփռիչ. և **խ** նիգք. և ամենայնն ոսկեպատ. որ բովանդակն լինի **ճձ** ի ներքս: - 343. Երկրորդ՝ զի զգին ծերոյն պակաս հրամայեաց. զի **ե** ամեայ տղայոյ երկդրամեան էր. և ի ամենին ի երկդրամեան. և անտի մինչև ի ***կ*** ամն **ծ** երկդրամեան. և ի ***կէն*** յառաջ **ժե** երկդրամեան: - 377. Բովանդակ անցեալքն ի հանդէս՝ զ**ճռ** էին. որ է՛ ***կ*** բիւր. և **գռ** և **ոծ**: - 378. Եւ մինչ ի ***կ*** ա՛մն գործեն զքահանայութիւնն որպէս սուրբ հա՛րցն է կանոնեալ: - 379. Եւ ***կ*** թագուհիք, և **ձ** հարճք: - 413. Իսկ այն որ ասէ ***կ*** էին թաքուհիք և ութսուն հարճք. և անթիւ հարսնածուք: - 440. Եղիակիմ ***կ:*** - 453. Եւ յորժամ փոխեցաւ առ քրիստոս՝ ***կ*** ամաց էր: - 461. Նշանակէ՛ զպատկերն ոսկի ***կ*** կանգուն երկայն և **զ** լայն: - 637. Զի ***կ*** օր ուրբաթ և չորեքշաբաթի և **գ** քառասունք պա՛հք է ի բոլոր տարին: - 649. Եօթներորդ, զի **գ** են հանգիստ և վարձք սրբոցն. որպէս ասէ

տրն. **ճ**, ***կ***, և **լ**...: - 675. Իսկ վաքսունն զբաբելոնի պատկերն ***կ*** կանգուն երկայն, և **զ** լայն. յորում ընդարձակեցաւ կռամոլութիւն: - 708. Զոր ընկալեալ զսերմն հրամանաց աստուծոյ, և բուսուցեալ ի մեզ՝ տամք պտուղ **լ**, ***կ***, և **ճ**: - 757

**ԿԱ** - Եւ վասն ներելեացն թողութեան ասացաւ ի թուոց **իբ** գլուխն, ***կա*** համարն: - 603

**ԿԲ** - Իսկ **է** երրորդքն դանիէլի որ ասէ՝ «**է** երրորդ է՝ և եօթներորդ ***կբ*** համառօտեսցի ժողովրդեանն: - 449. Արդ՝ է երրորդ ***կբ***՝ այսինքն **է** երրորդ **կթ**: - 449. Եղիազար ***կբ***: - 453

**ԿԵ** - Արդ սկսեալ առ դարեհիւ ի ***կե*** ոլոմպիադին՝ դադարեցին ի **ճձգ** ոլոմպիադին առ հիւրկանոսիւ քահանայապետիւ, որ գերեցաւ ի պարթևաց: - 449. Եւ վասն ուխտի և սահմանի ասացաւ ի վերոյ ի **իբ** գլուխն, ***կե*** համարն: - 538. Երկրորդ՝ յետ ***կե*** ամի եղև կոստանդնուպօլսի ժողովն ի չորրորդ ամի թագաւորութեանն թէոդոսի մեծի: - 542

**ԿԶ** - Որ քարոզեսցեն զաւուրս **ռ** երկերիւր ***կ և զ***: - 785

**ԿԹ** - Արդ՝ **է** երրորդ **կբ**՝ այսինքն **է** երրորդ ***կթ***: - 449

**ԿՌ** - Ապա թէ ոչ՝ ի միում աւուրն **եճ** և ***կռ*** կամէր կոտորել այսու համարով. և ոչ ինչ մնայր ի ժողովրդենէն: - 435

**Ղ** - Նոյնպէս և ***հ*** տանուտեարքն միաբանեցան ի չարն: - 296. Եւ ա՛յս է սահմանն ազգաց որպէս ասէ մարգարէն, «յորժամ բաժանեաց բարձրեալն զազգս ամենայն, կացոյց սահմանս հեթանոսաց». այսինքն զլեզուս զանազան. «ըստ թուոյ հրեշտակացն աստուծոյ». այսինքն ըստ թուոյ ***հ*** ազգապետացն: - 297. Եւ եօթն նշանաւոր աստեղք՝ ***հ*** աշակերտքն: - 303. Որք **է** ամ ասեն զփործանսն՝ սոյնպէս թուեն. զի յետ փործանացն ասէ գիրն **ճհ** ամ. և յառաջ քան զփործն ***հ*** ամ. և **ը** ամ փործանացն և դարձին: - 326-327. Յայտ է զի յառաջ քան զհարւածն ***հ*** ամաց էր. և **լը** ամ եկաց ի հիւանդութեանն. և այսպէս կրկին աճեցին կեանքն որպէս և ամենայն ինչքն: - 327. Երկոտասաներորդ, մովսէս ***հ*** ծերս ընտրեաց և ետ ի հոգւոյն: - 328. Եւ տէրն ***հ*** աշակերտաց իւրոց: - 328. Եւ յարտաքին սրահն ***հ*** սիւնք արծաթապատք. և յամէն սիւն **բ** խարիսխք և խոյակք յերկրքին ծայրքն: - 343. Ամենայն նիւթ ոսկւոյն **իթ** տաղանդ. և արծաթոյն **ճ** տաղանդ. և պղնձոյն ***հ*** տաղանդ: - 343. Ոմանք ասեն է ըստ ***հ*** ամացն: - 378. Եւ եղև գերութիւնն բաբիլացւոց ***հ*** ամ ի վերայ յուդայ և ո՛չ ի վերայ իէլի որպէս ասէր երեմիա: - 447. Այլ որ ուղիղն է՝ զվճիռ գերոյն ***հ*** ամ եդ երեմիա: - 447. Արդ յերեքտասան ամէ՛ ովսիա մինչև ցմետասան ամն սեդեկիայ որ վերջին գերեցաւ՝ լինի **խ** ամ. և նաբուգոդոնոսորայն **ի** ամ. և որդւոց և թոռանց նորին **ժ** ամ. որ կատարի ***հ*** ամ մինչև յառաջին ամն կիւրոսի որ արձակեաց զգերիսն: - 447. Դարձեալ՝ ի վերջին գերութենէն սեդեկիայ մինչ ի դարեհի **բ** ամն կատարի ***հ*** ամ. որ արձակեաց զզօրաբաբէլ: - 447. Եւ այսպէս թուին ***հ*** ամք գերւոյն: - 448. Վասն է՞ր ***հ*** ամ եդ զվճիռ գերւոյն բաբիլօնի ի ձեռն երեմիայի: - 448. Նա՛խ՝ զի ***հ*** ա՛մ է վճիռ կենաց մարդոյս ըստ դաւթի: - 448. Երկրորդ՝ զի ***հ*** ամն իբրև զմի օր համարեցաւ նոցա. զի հանգիցեն ի չար գործոց, և երկիրն ի չար գործելոյ: - 448. Երրորդ՝ որպէս զստնդիայի մանուկն է ամ խրատէ՛ դայեակն. այսպէս ժողովուրդն որ եւ յերկրէն իւրեանց, երկիրն բաբիլացւոց ***հ*** ամ ի գիրկս իւր դայեկեաց զնոսա և սնոյց. զի յետ դարձին յերկիրն իւրեանց՝ զբարիս գործեսցեն: - 448. Սա երեսնամեայ թագաւորեաց ամս խ. կեցեալ ամս ***հ***: - 452. և աստի մինչ ի զատիկն ***հ*** օր է...: - 650. Զի յառաջն զսոսա լուծանէին որք յառաջաւորացն ի վեր պահէին ***հ*** օր: - 651

**ՂԱԶԱՐ +** Նոյնպէս և զկիրսն և զզօրութիւնսն անբաժանաբա՛ր ասեմք ի քրիստոս. որպէս Կիրք է քաղցնուլն. և Ներգործութիւն *զհազարսն* կերակրել: - 85. Ութերորդ՝ մինն պատկելով առնէ զտասն՝ և զհարիւր՝ և *զհազար*՝ և զբիւրն. և զանթիւն: - 109. Իններորդ՝ մինն յայտնի է ի տասն և ի հարիւրն և ի *հազարն* և ի բիւրն ընդ աղօտ և ծածուկ: - 109. Զի՞նչ է **ռք** *հազարաց* և բիւրք բիւրուցն զոր ետես դանիէլ: - 141. Քանզի **ժ** տասն՝ հարիւր է. և **ժ** հարիւրն՝ *հազա՛ր* է. և **ժ** *հազարն* բիւր է: - 141. Եւ դարձեալ, **ճ** տասն՝ *հազա՛ր* է. և **ճ** հարիւրն՝ **ժ** *հազար* է. որ է՛ բիւր մի. և **ճ** *հազարն* **ժ** բիւր է. և **ռ** *հազարն* **ճ** բիւր է. և **ռ** բիւրն՝ **ժճռ** է: - 141. Եւ ա՛յսպէս բազմապատկելով *զհազարն* և զբիւրն՝ յանբաւս ելանէ: - 141. Վասն որոյ ասէ **ռք** *հազարաց* և բիւրք բիւրուց, ո՛չ զորքանն նշանակէ, այլ զանբաւն: - 141. Այլ ադամ յերեկո՛յն ել ի դրախտէն. և ո՛չ կատարեաց զօրն բոլոր. վասն այն նախնիքն ո՛չ կատարեն *զհազար* ամն բոլոր: - 290. Եւ զի բիւրն պարունակէ՛ *զհազարն*. և նա՛ զհարիւրն. և նա՛ զտասն: - 291. Վասն այն նահապետքն զհարիւրն պատկե՛ն որ է՛ ժամանակեան. և ի *հազարն* ո՛չ հասանին որ մշտնջենաւորն է: - 291. Վեցն զկատարելութիւն մարմնոյն ցուցանէ, և հարիւրն, զհոգւոյն. և *հազարն*, զպատիւ կենաց յաւիտենից: - 315. Քսաներորդ, Ո՛չ հրամայեցաւ դաւթի շինել զտաճարն. ի *Յազարս*

գտի այր մի. և ի կանանց ո՛չ մի: - 413. Եւ ծնօտիւ իշոյն եհար *զհազարն:* - 420. Քսաննե, նա՛ ծնօտիւք իշոյ *զհազարսն* խորտակեալ: - 423. Զի՞նչ է ի *հազարս* գտի այր մի. ի կանանց և ո՛չ մի: - 440. Ասեն թէ՝ **ռ** կին էր սողոմոնի. է **ճ** տիկնայք, և **գ ճ** հարճք. և նոցա **ռ** պահապան. իսկ ի փորձելն խաբեաց *զհազար* կանայսն. և ի յարանցն մին ո՛չ խաբեցաւ. այս առասպե՛լ է: - 440. ...ընդէ՞ր ոչ մկրտեաց զոք ի հաւատացելոցն. մինչև գնաց ի կեսարիա ձեռնադրեցաւ. և ապա եկեալ *զհազարս հազարաց* և զբիւրս մկրտեաց ի գետն: - 589. Իսկ *զհազար* ամն, ոմանք ասեն զերեք ամն և զկէս ի մկրտութենէն մինչ ի համբարձումն: - 706. *Յազար* ամն է թիւ կատարեալ. զի ունի զտասն հարիւրեակն: - 710. Երրորդ, բազմութիւնք երկնաւոր զօրացն ընդ նմա իջցեն. զի «զօրութիւնք երկնից շարժեսցին» *հազարք հազարաց* և բիւրք բիւրուց ըստ դանիէլի: - 737. Կամ լինէիր ուժեղ որպէս սամփսոն. որ *զհազար* այր ծնօտիւ իշոյն եսպան: - 761

**ՀԱԶԱՐ ԵՒ ՉՈՐՍ ՀԱՐԻՒՐ** - Ա՛րդ՝ բազում աւուրք անցին յետ մէսիային ծերոյ, այսինքն աւելի՛ քան *զհազար և չորս հարիւր* ամ. ապա և ո՛չ էր նա մէսիայն: - 27

**ՀԱՐԻՒՐ +** Ութերորդ՝ մինն պատկելով առնէ զտասն՝ և *զհարիւր*՝ և զհազար՝ և զբիւրն. և զանթիւն: - 109. Եւ ի միոյ աստուծոյ եղեն **ժ** դասք հրեշտակաց ընդ մարդկան. և *հարիւր* գունդքն ըստ ոչխարաց առակին. և **ռ** կենդանեաց տեսակքն որ յերկրի. և բիւր անկենդան բուսոց. և անթիւ գոյեղէնք: - 109. Իններորդ՝ մինն յայտնի է ի տասն և ի *հարիւրն* և ի հազարն և ի բիւրն ընդ աղօտ և ծածուկ: - 109. Քանզի **ժ** տասն՝ *հարիւր* է. և **ժ** *հարիւրն*՝ հազա՛ր է. և **ժ** հազարն՝ բիւր է: - 141. Եւ դարձեալ, **ճ** տասն՝ հազա՛ր է. և **ճ** *հարիւրն* **ժ** հազար է. որ է՛ բիւր մի. և **ճ** հազարն՝ **ժ** բիւր է. և **ռ** հազարն՝ **ճ** բիւր է. և **ռ** բիւրն՝ **ժճռ** է: Եւ զի բիւրն պարունակէ՛ զհազարն. և նա՛ *զհարիւրն*. և նա՛ զտասն: - 291. Եւ *հարիւրն* ժամանակեայն է՛ մարդն, որ ունի հոգի: - 291. Վասն այն նահապետքն *զհարիւրն* պատկե՛ն որ է՛ ժամանակեան. և ի հազարն ո՛չ հասանին որ մշտնջենաւորն է: - 291. Վեցն զկատարելութիւն մարմնոյն ցուցանէ, և *հարիւրն*, զհոգւոյն. և հազարն, զպատիւ կենաց յաւիտենից: - 315. *Յարիւր* խարիսխք արծաթիք. և իւրաքանչիւրքն ի մի մի տաղանդէ՛ կշռոյ: - 343. Իններորդ՝ վասն պտղոյն յամրութեան. զի ասեն թէ ո՛չ կարէ պտղաբերել մինչ ի *հարիւր* ամն: - 766. Եւ այս աղէտ անզերծ տարակուսից շրջապատեալ զմեզ շրջագայութեամբ տօմարի հայկազեան սեռից, *հարիւրից* կրկնակի՛ քառից և վեցեա՛կ վեցից: - 789

**ՀԱՐԻՒՐԵԱԿ +** Տասներորդ՝ որպէս միակն է ի ներքոյ տասնեկին և *հարիւրեկին* և հազարեկին և բիւրեկին, այսպէս և ի վերոյ նոցա՛ է: - 110. Եւ որպէս իննևժերեակն լուսնի, և **իը** երեակն արեգական ի միասին ժողովեալ՝ առնէ զհինգ *հարիւրեակ* շրջանն ի **շլբ** ամին. զի **ժթ իը** երեակ է. և **իը ժթ** երեակ: - 192

**ՀԲ** - Ուսաք յիմաստնոց թէ՝ ի բաժանիլ լեզուաց ***հբ*** տանուտերանց, և ի գնալն յիւրաքանչիւր տեղիս ի հեռու կամ ի մօտաւոր աշխարհս. զօրն զայն տարեմուտս կարգեցին. և ուսուցին որդւոց իւրեանց պատւեալ զօրն զայն տրօք ընչից: - 200. Եւ այսպէս միջին հասակս կատարեալ, ձգի մինչև ի **խզ** ամն. որ է **դ ժզ**. և վեցն կատարեալ թիւ է. և աստ տիրէ ալիք և սկիզբն լինի ծերութեան մինչև ի ***հբ*** ամն. յորում է ծայրք կենաց ըստ դաւթի, և թիւ երկոտասան վեցից խորհրդաւոր: - 265. Եօթներորդ՝ Վասն աշտարակին. և բաժանման լեզւացն ***հբ:*** - 283. Եւ որպէս անդ հոգին ի նմանութիւն հողմոյ եկեալ զմինն ***հբ*** բաժանեաց: - 298. Իբր լինի **լզ** հին կտակարանք և **լզ** նորս. բովանդակն ***հբ:*** - 451

**ՀԵ** - Վեցերորդ՝ ***հե*** մտին, և **զճռք** ելին: - 315. Չորրորդ՝ թէ և ի մասնէ՛ կոչեմք երբեմն ի հոգւոյ կամ ի մարմնոյ. որպէս թէ՝ «հոգիք ***հե*** մտին յեգիպտոս». թէ՝ «տեսցէ՛ ամենայն մարմին զփրկութիւն». այսու զբոլոր մարդն նշանակեմք: - 477. Իսկ առ ներքինս օրհնելն՝ իշխանութիւն և շնորհաց տալն թարգմանի. որ քահանայն կամ եպիսկոպոսն տայ. որպէս ցուցաւ ի վերոյ ի **իգ** գլուխն, ***հե*** համարն: - 540

**ՀԷ** - Եւ ի յիսներորդէն մինչև ի ***հէ*** որ է՛ մետասան է, լինի հասակ ծերութեան: - 265

**ՀԸ** - Եւ ի ***հը****-էն* մինչև ի մահ, և կամ ի **ճժբ** ամն, լինի զառամացեալ. որ է եօթնիցս վեշտասան: - 265. Թագաւորէ՛ նեռն զաւուրս **ռ** երկերիւր ***հկը,*** ըստ դանիէլի: - 709

**ՀԻՆԳ +** Իսկ ճանաչի աստուած ըստ *հինգ* եղանակս: - 24. *Յինգ*. այսինքն Քանակն որ է չափն. Որակն. որ է գոյնն. ձևն. տեղին. զատութիւնն: - 174. Եւ ի *հինգն* աւելեաց՝ է՛ գարնանամուտ նոցա: - 191. Եւ որպէս իննևժերեակն լուսնի, և **իը** երեակն արեգական ի միասին ժողովեալ՝ առնէ *զհինգ* հարիւրեակ շրջանն ի **շլբ** ամին. զի **ժթ իը** երեակ է. և **իը ժթ** երեակ: - 192. Հինգերորդ՝ զի ա՛նդ են *հինգ* զգայութիւնքն: - 234. ՚Ի *հինգ* զգայութիւնսն ո՞րն է պատւական: - 235. *Յինգն*՝ կողքն: - 241. Իսկ որք ի **խ** աւուրս ծնանին և կամ **ի ի**, որպէս հաւ. ունին նոքա զխորհուրդ չորից տասանց և չորից *հնգից*, ըստ **ե** զգայութեանց

ներքոյ և **Ե** զգայութեանց արտաքոյ որպէս ասացաք: - 263. Եւ ա՛յս է *հինգ* տանջանքն: - 335. Այսպէս *հինգ* եղանակաւ չարաչար ատեցին զհիւրսն. վասն այն կրկին կրեցին զհատուցումն վրիժուց **Ժ** հարուածովք: - 335. Իսկ միւս *հինգքն*, «մի՛ սպանաներ. մի՛ շնար. մի՛ գողանար. մի՛ սուտ վկայեր. մի՛ ցանկար»: - 340. Եւ **Ժ** զգայարանք մեր. *հինգ* հոգւոյ և *հինգ* մարմնոյ: - 342. Ի *հինգ* տեղւոջ ի հինն հուր էջ յերկնից ի վերայ սեղանոյն և հոտոտեցաւ ի հոտ անուշից: - 363. Որ նշանակէ ի մեզ զերեք մասանց թիւրիլն. այսինքն բանից, ցասման, և ցանկութեան *հինգ* զգայարանօք: - 367. *Հինգ* տօն էր ի բոլոր ամն: - 372. Եւ *զհինգ* բաժնէն մի մասն տուգանք, զի **Ե** զգայութեամբ մեղաւ: - 384. Եւ տե՛ս զշնորհս խոստովանութեան. վասն այն որ զղջացաւ և յայտնեաց, ի *հնգէն* զմին տայ տուգանք: - 384. Եւ *հինգ* մասն տուգանքն՝ և խոյն՝ ա՛յն է, որ **Ե** զգայարանօքս ապաշխարեմք: - 384. Եւ այսպէս բաժանեսցեն զաւարն. ի ճէն զմինն տայցեն քահանայապետին. և յիսնէն զմինն քահանայից և աղքատաց. և *հնգէն* զմինն թագաւորաց բաժին. և կէսն աւար բերողացն է զինւորացն. և կէսն այլ հեծելիցն. որպէս բաժանեաց մովսէս: - 390. Ընդ յակոբայ *հինգ:* - 412. Կատարեցաւ Վեցերորդ Հատոր Հարցմանցս *Հինգ* Գրոցն Մովսէսի. ի Փառս Յիսուս Քրիստոսի Աստուծոյ մերոյ: - 412. Եւ տէր մեր փրկէ զյուսացեալս իւր, որք պաշարին *հնգիւք* զգայութեամբք յիշխանացն դիւաց: - 419. Յաղթեաց դաւիթ *հնգից* իսկայիցն. և տէրն մեր իշխանացն զգայութեանց: - 438. Հին կտակարանք՝ *հինգ* գիրք մովսէսի ա՛յս են: - 450. *Հինգ*՝ երգ երգոցն: - 451. Ասեմք եթէ յետ յղացման բանին յարգանդի կուսին օրինօք և ոչ օրինօք բնութեան, ժուժկալեալ ամսոց ըննից և աւուրց *հնգից*, ըստ հասարակաց ասեմ և անդրանկաց. ըստ *հնգից* յաւելեալ թւոց նախաստեղծին նախարարչութեան աւուրց: - 469. Ի *հինգ:* - 536. Եւ ոմանք ասեն թէ յեօթանց անտի *հինգն* մարմնականք են և երկուքն հոգեկանք: - 559. Եւ գիտելի է, զի որ ի ճակատն և ի սիրտն և ի թիկնամէջն օծանէ, այն դրո՛շմ է. և որ *զհինգ* զգայութիւնսն օծանէ՝ այն ի խորհուրդ օծմանն է ծածկապէս: - 593. Վասն այն մինչ յայս ամուսնանալ կարեն. և ի *հինգն* ելեալ վերագոյն դասուց՝ ո՛չ ամուսնանան: - 609. Նոյնպէս և հինգերորդն, բարի՛ է աստուած և ողորմած տեսողացն զաստուած *հնգիւք* զօրութեամբ հոգւոյ. - 629. Ամենայն եղանակք բարբառոց ի *հինգ* տրամատին: - 639. Իսկ մի տախտակն յերկուս բաժանեալ և *հնգիւք* փակեալ...: - 646. Դարձեալ, նշանակէ զժողովուրդն աստուծոյ. յորոց ունկն ըթերցեալ լինին միշտ բանք աստուածայինք. *հնգիւք* զգայութեամբք հոգւոյ և մարմնոյ առ միմեանս յեռեալք: - 646. Երկրորդ, զի երկու և երեքն լինին *հինգ*. զորմէ ասաց քրիստոս, «ուր **բ** և **գ** ժողովին յանուն իմ, անդ եմ ես ի մէջ նոցա»: - 742. Եւ այլք թէ՝ պատրուակ գոն ի խինծս արգանդի բնաւորեալ. յիւրաքանչիւր աւուրս *հնգից*՝ մին մին քակտին երկամբք. և ապա՛ արծակի ծնունդն: - 785

**ՀԻՆԳԵՐՈՐԴ** - 446

**ՀԻՆԳԵԻԺԵՐՈՐԴ** - *Հինգևժերորդ*՝ որք աստ երկիր պագանեն քրիստոսի, կենաց հացիւն կերակրին որպէս եղբարքն յովսեփայ: - 314

**ՀՆԳԵՏԱՍԱՆ +** Գիտելի է, զի *հնգետասան* եղանակաւ են ասացեալ: - 156. Սոքա հնգեքին կոչին երկինք. զի զյատկութիւնս երկնից ունին. և սոքօք լինին *հնգետասան* երկինք: - 183. Եւ կրկնեալ ի *հնգետասանէն* մինչև ի **լ**, կատարի երիտասարդական հասակն. որ է **գ** տասամբ կատարեալ. ունելով զցանկականն և զցասմնականն և զբանականն լիով առ ինքեան: - 265. Եւ յետ *հնգետասան* ամի յաւուրս աքազու՝ ել թագ ղաթփաղսար արքայ ասորեստանի ի վերայ իէլի... - 446-447

**ՀՆԳԵՏԱՍԱՆԵՐՈՐԴ** - 36

**ՀՌ** - Եւ այն զի յառաւօտէն մինչ յերեք ժամն՝ ***հռ*** սատակեցաւ ըստ արդարութեան վճռին: - 435

**ՀՌՍ** - Տե՛ս, զի յորժամ կոտորեաց ***զհռսն***՝ ասացաւ հրեշտակին արգելուլ զսուրն: - 435

**Ձ** - Եւ դարձեալ՝ յիւրաքանչիւր կազմուած մարդոյ՝ յառա՛ջ է մարմինն քան զհոգին **խ** աւուրբ կամ ***ձ****:* - 253. Եւ թէ ոք ասիցէ, զի՞նչ է այս որ յետ **խ**, կամ ***ձ*** աւուր ստեղծանի բանական հոգին: - 254. Եւ էգն հոգևորի յետ ***ձ*** աւուրն՝ որպէս ասացաք զպատճառն վասն տեղւոյն ցրտութեան որ է՛ ձախ կողմն արգանդին. որ ցուրտ գոլով վասն փայծաղանն՝ յապաղէ՛ զկազմուած նիւթոյն ի կրկնապատիկ ժամանակս ***ձ*** աւուրց: - 261. Այլ թէ հարցանեն զորքանութիւն սիւնիցն. **ծ** սիւն ի մէջ խորանին. և **թ** սիւն վարագուրացն. և մի թափանց ի մէջն յարևելից յարևմուտս. որ լինի **կ**. և ***ձ*** սփռիչ. և **խ** նիգք. և ամենայնն ոսկեպատ. որ բովանդակն լինի **ճձ** ի ներքս: - 343. Այսպէս յետ **ծ** աւուրց տւաւ օրէնքն. և ***ձ*** օր պահքն երեքօրեայ սրբութիւն: - 344. Ուբևժ, Բաղդատութիւն դաւթի և տեառն ***ձ*** գլխով: - 413. Եւ **կ** թագուհիք, և ***ձ*** հարճք: - 413. Երկրորդն Աւովդ. յերկուց ծեռաց յաջողակ եմինացի յեփրեմայ ամս ***ձ***. և այլազգիքն ամս ի: - 420. Եւ ***ձ*** հարճք, որք զուգ օրէնսն կատարեն: - 440

**ՉԱ** - ...այսպէս և օգոստինոս վարդապետն Յռանկաց ի խորհրդոց գիրս ***ծա*** համարն ասէ, թէ յառաջագոյն բաշխեաց զխորհուրդ մարմնոյ և արեանն և տուեալ յուղայի: - 599

**ՉԳ** - Եւ տարածայնութիւն թուոցդ յայնմանէ լինի, որ ***ծգ*** ամաւ յառաջեաց բանն աստուած ի մարդանալն քան զնշանակութիւնս մարգարէիցն: - 449. Եւ մարդեղութիւն փրկչին ***ծգ*** ամաւ յառաջ է քան զբան մարգարէիցն: - 451

**ՉԹ** - Յակոբ ամաց ***ծթ***՝ ծնանի զյուդա: - 452

**Ղ** - Եւ թանձրութիւն պարսպին ***ղ.*** կանգուն: - 297

**Ճ** - Որ է՛ **ժ**, ***ճ***, **ռ**, բիւր: - 141. Եւ դարձեալ, ***ճ*** տասն՝ հազա՛ր է. և ***ճ*** հարիւրն՝ **ժ** հազար է. որ է՛ բիւր մի. և ***ճ*** հազարն՝ **ժ** բիւր է. և **ռ** հազարն՝ ***ճ*** բիւր է. և **ռ** բիւրն՝ **ժճռ** է: - 141. Երկրորդ՝ զի առաջին և սկիզբն է թուոց. որպէս միակն թիւ բազմանայ և խառնի յայլս, այսինքն՝ ի **ժ**. ի ***ճ***. ի **ռ**. և ի բիւրն. և ի միութենէն իւրմէ ո՛չ որոշի: - 178. Չորրորդ՝ գլխաւոր թիւքն **դ** են. այսինքն **ժ**. և ***ճ***. և **ռ**. և բիւր: - 291. Երանելին յոբ՝ էր ի ժամանակս մովսէսի. ***ճ*** ամաւ յառաջ՝ աւելի և կամ պակաս: - 320. Եւ արտաքին սրահին պատւարն ի մէջ ունելով զխորանն յամենայն կողմանց ***ճ*** կանգուն երկայն ի հիւսիսոյ և ի հարաւոյ կողմն: - 343. Ամենայն նիւթ ոսկւոյն **իթ** տաղանդ. և արծաթոյն ***ճ*** տաղանդ. և պղնձոյն **հ** տաղանդ: - 343. Եւ այսպէս բաժանեսցեն զաւարն. ի ***ճէն*** զմինն տայցեն քահանայապետին. և յիսնէն զմինն քահանայից և աղքատաց. և հնգէն զմինն թագաւորաց բաժին. և կէսն աւար բերողացն է զինուորացն. և կէսն այլ հեծելիցն. որպէս բաժանեաց մովսէս: - 390. Վասն զի զկայնան որդի արփաքսաթայ և հայր սաղայի ***ճ*** և ի ամ ի թիւ առնու: - 411. Եւ ***ճ*** տէրողորմեայն, ըստ թուոյ ***ճ*** ոչխարացն միոյն մոլորելոյ: - 621. Եօթներորդ, զի **գ** են հանգիստ և վարձք սրբոցն. որպէս ասէ տրն. ***ճ***, **կ**, և **լ**... - 675. Զոր ընկալեալ զսերմն հրամանաց աստուծոյ, և բուսուցեալ ի մեզ՝ տամք պտուղ **լ**, **կ**, և ***ճ:*** - 757

**ՃԱ** - Ովբէթ ամաց ***ճա***՝ ծնաւ զյեսսէ: - 452

**ՃԱՒՈՐ +** Այլ ոմանք՝ ***ճաւոր*** զերկին, և վաթսնաւոր զդրախտն, և երեսնաւոր զերկիրս ասեն նշանակեալ **բ** ցեղիցն յայնկոյս յորդանանու, և **թ** ցեղիցն յերկիրն քանանացւոց: - 391. Եւ որպէս ի մի արքայութիւնն օթևանք և փառք բազում են ըստ գործոցն. այսինքն երեսնաւոր. վաթսնաւոր. և ***ճաւոր:*** - 504-505

**ՃԵ** - Բոլորն ամենայն **դճլ** ա՛մ է յաւետեացն աբրահամու մինչև յելսն յեգիպտոսէ՛. այլ զերկու ***ճե*** ամն հարքն յերկրին քանանու բնակեցան. և զբ **ճիե** ամն որդիքն յեգիպտոս կացին. - 337

**ՃԸ** - Բոյոս ամաց ***ճը***՝ ծնանի զովբէթ. առեալ բոյոսս իւր կին զհռութ մովաբացի: - 452

**ՃԺ** - Եւ ամենայն աւուրք կենաց նորա ***ճժ*** ամ: - 414. Երանելին մովսէս խորհեսցի՝ որ էր գրիչ սրբոյն սահակայ պարթևի, յետ ***ճժ*** ամի սրբոյն գրիգորի՝ եղև սկիզբն թարգմանութեան ի հայոց լեզու: - 658

**ՃԺԱ** - Որ **ժ** թիւ էր ի սրբոյն գրիգորէ յետ ***ճժա*** ամի անցանելոյ... - 659. Եւ նոյն զքահանայաքաղէքն, որ ունի է աւետարան. և զաշխարհական թաղումն, ի յայրարատ գաւառի ի վաղարշապատ քաղաքի ի վկայարանս սրբոյն հռիփսիմի. յետ ***ճժա*** ամի սրբոյն գրիգորի. զի մինչև ցայն հնովն վարեին: - 659

**ՃԺԲ** - Եւ ի **իը**-էն մինչև ի մահ, և կամ ի ***ճժբ*** ամն, լինի զառամացեալ. որ է եօթնիցս վեշտասան: - 265

**ՃԻ** - Եւ երբեմն կարծէ՛ ի կենաց որպէս առ նոյիւ. զի ***ճի*** ամ խոստացաւ նոցա, և զի ամն կարճեաց վասն չարեաց նոցա: - 292

**ՃԻԵ** - Բոլորն ամենայն **դճլ** ա՛մ է յաւետեացն աբրահամու մինչև յելսն յեգիպտոսէ՛. այլ զերկու **ճե** ամն հարքն յերկրին քանանու բնակեցան. և զբ ***ճիե*** ամն որդիքն յեգիպտոս կացին. - 337. Եւ տաղանդն ***ճիե*** լիտր է: - 343

**ՃԻԸ** - Եւ յայս կողմս ունի **դ** երակ առանց արեան լի ջերմութեամբ. և բաժանի ամենայն երակ՝ յերեսունք երակս. որ լինի ամէնն ***ճիը*** երակ: - 244

**ՃԻԹ** - Յին կտակարանքն ամենայն՝ են տունք՝ **ա՟. ք.** ***ճիթ:*** - 451

**ՃԻ ՅԱՁԱՐ** - Որ ի ջուր ընպելն ընտրեաց զզօրսն. և թաքուցեալ սափորօք զվառեալ լապտերսն, և էհար **յ** արամբք ***ըզճի հազարսն:*** - 420

**ՃԼ** - Յեսսէ ամաց ***ճլ***՝ ծնաւ զդաւիթ: - 452

**ՃԼԵ** - Եւ յետ զերութեանն իսրայէլի անցեալ ամք ***ճլե***, եկ արքայն բաբիլացւոց նաբուգոդոնոսոր ի վերայ եէմի. ի **ժ** ամի թագաւորութեանն յովակիմայ. և էառ հարկ ի նմանէ. և զմեծ մասն սրբութեանց տաճարին աւերեաց: - 447

**ՃԽ** - Եւ որք **լը** ասեն զփործանսն՝ սոյնպէս թուեն. յետ հարւածոցն եկաց յոբ **բ** եօթանասուն. այսինքն ***ճխ*** ամ: - 327

**ճԽԴ** - **ի** յայսցանէ ***զճխդ*** ամն ի ծառայութեան էին. և զայլն ի յազատութեան: - 337

**ճԾ** - Բոլոր տարի մի. զի այսպէս ասէ գիրն թէ՝ ***ճծ*** օր բարձրացաւ ջուրն. և յետոյ ***ճծ*** օր ցածուցաւ. որ լինի **ժ** ամիս: - 294. Եւ բարձրացուցին զ**ժ** ամսոյ ճանապարհ ընդ ելն և ընդ էջն. որչափ բարձրացաւ ջուրն ***ճծ*** օր, և ***ճծ*** օր դարձեալ իջաւ: - 296-297. Եւ ոմանք **զռ** գիրք ասեն որպէս առակն և ժողովօղն. և **եռ** օրհնութիւնս որպէս երգ երգոցն. որպէս դաւթի ***ճծ*** սաղմոսն: - 441. Եւ ի գերութենէն իէլի մինչ ի գերութիւնն յուդայ ***ճծ*** ամ: - 446. Տիմոթէոս աղէքսանդրու. Մելիտոս անտիոքայ. ***ճծ*** հարք ընդ դէմ մակեդոնի հայհոյչի հոգւոյն սրբոյ: - 542. Այլ որ ***ճծ*** ամաւ յառաջ եկին ի հայք՝ ասորիք արք քաջաբանք, և կամեցան սերմանել զաղանդն նեստորի. որք նզովեալ որոշեցան. բայց ոմանք ընկալեալ էին և թարգմանեալ ի նոցանէ գիրս սուտս, Զգօրտոսակ. Զկիրակոսակ. Զպղի տեսիլն: - 545

**ճԾՌ** - Եւ քարահատք և բեռնակիրքն ***ճծռ***՝ յայլազգեացն եկամուտք էին: - 440

**ճԾՔ** - Եւ յաւուրս մեծին թէոդոսի ***ճծք*** որ ի կոստանդինուպօլիս ընդ դէմ հոգէմարտին մակեդոնի: - 547

**ճԿՌ** - Ընդ մովսէսի ***ճկռ***: - 412

**ճՅ** - Որք է ամ ասեն զփորձանսն՝ սոյնպէս թուեն. զի յետ փորձանացն ասէ գիրն ***ճհ*** ամ. և յառաջ քան զփորձն **հ** ամ. և **ը** ամ փորձանացն և դարձին: - 326-327

**ճՅԴ** - Չորրորդ՝ մեծ և արժանաւոր ժողովն եղև ի մանազկերտ. ի ***ճհդ*** թուականին. հրամանաւ և արդեամբք գիտնաւոր և մեծ իմաստասիրին սրբոյն յոհաննու կաթողիկոսին հայոց օձնեցւոյ: - 545

**ճՁ** - Այլ թէ հարցանեն զորքանութիւն սիւնիցն. **ծ** սիւն ի մէջ խորանին. և **թ** սիւն վարագուրացն. և մի թափանց ի մէջն յարևելից յարևմուտս. որ լինի **կ**. և **ձ** սփռիչ. և **խ** նիգք. և ամենայնն ոսկեպատ. որ բովանդակն լինի ***ճձ*** ի ներքս: - 343. Վասն որոյ կարգեցին առաքեալքն և հարքն՝ ***ճձ*** օր պահք. և նոյնչափ ուտիք: - 649

**ճՁԶ** - Արդ սկսեալ առ դարեհիւ ի **կե** ոլոմպիադին՝ դադարեցին ի ***ճձզ*** ոլոմպիադին առ հիւրկանոսիւ քահանայապետիւ, որ գերեցաւ ի պարթևաց: - 449.

**ՄԵԿԻՆ կմ ՄԷԿԻՆ +** Ութերորդ՝ թէ արարա՛ծ է բանն աստուծոյ և հոգին, ապա կրկին է և ո՛չ *մէկին*. զի բանն արարած՝ և արարչի բան. և հոգին արարած՝ և արարչի հոգի: - 56. Իններորդ՝ թէ արարիչ է աստուած՝ և բան իւր և հոգին արարած, ապա և ինքն ո՛չ է պարզ և *մէկին*՝ այլ բաղադրեալ և ՚ի բազմաց գոյացեալ: - 56. Երրորդ՝ անդ *մէկին* է ջերմութիւն՝ և աստ կրկին. զի հասեալ ՚ի գոգ երկրի, մակադարձութեամբ ժողովին առ նա և լինի շող: - 211

**ՄԵՏԱՍԱՆ +** Մանաւանդ թէ իւրաքանչիւր տարերք **բ** ծայրք որակութեանց ունին. զմինն գոյացական և զմիւսն պատահական. ըստ այսմ պա՛րտ է ասել քեզ *մետասան* բնութիւն քրիստոսի: - 176. Իսկ սուրբն եփրեմ ասէ, *մետասան* թիւ գտանի ի մէջ երից աւուրցն՝ ստեղծման լուսնին: - 191. Եւ ի յիսներորդէն մինչև ի **հէ** որ է՛ *մետասան* է, լինի հասակ ծերութեան: - 265. Արդ յերեքտասան ամէ՛ ովսիա մինչև *զմետասան* ամն սեդեկիայ որ վերջին գերեցաւ՝ լինի **խ** ամ. և նաբուգոդոնոսորայն **ի** ամ. և որդւոց և թոռանց նորին **ժ** ամ. որ կատարի **հ** ամ մինչև յառաջին ամն կիւրոսի որ արձակեաց զգերիսն: - 447

**ՄԵՏԱՍԱՆԵՐՈՐԴ** - 55

**ՄԼԸ** - Եւ բաժանին ամենայն երակք ի լերդէն ***մլը*** երակք: - 244

**ՄԽԸ** - Եւ դարձեալ թիւ ոսկերացն ***մխը***. և **բժ**ան անդամքն, և **ե** զգայարանքն յօդեալ առ միմեանս, լինին **յկե** զօդուածք: - 244. Եւ միանգամայն ***մխը*** ամ: - 327. Եւ այլք ոմանք ***մխը*** ամ յետ փորձանացն ասեն: - 327

**ՄԾ** - Եւ զպղինձն ի բուրվառացն կորխեանց ***մծ*** իցն. յորմէ արար զնուարտանն ծածկոյթ պղնձի սեղանոյն. նշան յանդգնութեան նոցա: - 344. Տնեցին զամս ***մծ***. մինչ յովսէէ որդի ելայ. որ գերի վարեցաւ յասորեստան. և բարձաւ թագաւորութիւնն իսրայէլի: - 446

**ՄՂԱ** - Աստուծոյ՝ ***մղա***: - 412

**Յ** - Եւ ***յ*** կանգուն երկայն, զի ի կրնկէն ի գագաթն լար չափեալ՝ **դ** պատ առնու զգլխովն: - 293. Եւ փոխանակ ***յ*** կանգնոյն՝ ***յ*** ամքն ի քրիստոսէ մինչև ի մեծն կոստանդիանոս. ուր յայտնեցաւ խաչն փրկչական: - 294. Որ ի ջուր ըմպելն ընտրեաց զզօրսն. և թաքուցեալ սափորօք զվառեալ լապտերսն, և էհար ***յ*** արամբք ըզ**ճի** հազարսն: - 420. Երեքտասաներորդն ի դանա որդի մանովէի Սամփսոն. որ կալաւ ***յ*** աղուէսս, և կապեաց ի նոսա ջահս. և այրեաց զանդաստանս այլազգեացն: - 420. Եւ ***յ*** արքն ընդ նմա ցամաք մնացին յարենէ մադիանացւոցն որ կոտորեցան: - 421

**ՅԺԸ** - Առաջին ժողովն եղև ի նիկիայ սրբոց հարց. զկնի ***յժը***՝ կամ **յլ** ամի ծննդեանն քրիստոսի. և **ի**

ի ամի թագաւորութեանն կոստանդիանոսի: - 542. Ընդ դէմ արիոսի կատաղելոյ *յժը* հարք սուրբք: - 542. Որ ի նիկիայ յաւուրս մեծին կոստանդիանոսի ընդ դէմ արիոսի ժողովեցան հարքն սուրբ՝ *յժը:* - 547

**ՅԻՍՆԵՐՈՐԴ +** *Յիսուներորդ)* Թէ բնական զգեստ և զէն ունին կենդանիք, և մարդս ոչ. և ճանճք և այլքն: - 155. Եւ ի *յիսներորդէն* մինչև ի հէ որ է՝ մետասան է, լինի հասակ ծերութեան: - 265. Յիսներորդ՝ յոբելեանն *յիսներորդում*. որ է՝ ամ թողութեան և ազատութեան: - 372. Որպէս ասէ ի *յիսներորդ* սաղմոսին, «հոգւով պետութեամբ քով հաստատեա՛ զիս»: - 434. Անբիծքն վասն մեղաց պատարա՛գ է. նոյնպէս և *յիսներորդ* ողորմեայն վասն մեղաց է ալէլու ո՛չ ասի: - 630. Եւ բաց յայյսմանէ **բ** ակն յանդիմանութեան զոր անդամանդեայ կոչէին, և էր ի պճղնաւոր զգեստին ի վերայ ուսոց քահանայապետին յորժամ մտանէր ի սուրբն սրբոց երիցս ի տարւոջն, ի տօնի զատկին և *յիսներորդացն* և ի քաւութեանն: - 349. *Յիսուներորդ*, կոչեաց զանունն աւար դաւթի. և այս ազատութիւն քրիստոսի: - 437. *Յիսուներորդ*, Բուրվառ. և գրակալ. և նախատօնակն: - 527

**ՅԻՍՈՒՆ +** *Յիսուն*, Վասն զանազան շաբաթուց. որ նշանակէ՛ զիանգիստն մեր: - 284. **Եւ այսպէս բաժանեսցեն զաւարն. ի ճէն զմինն տայցեն քահանայապետին. և *յիսնէն* զմինն քահանայից և աղքատաց. և հնգէն զմինն թագաւորաց բաժին. և կէսն աւար բերողացն է զինւորացն. և կէսն այլ հեծելիցն. որպէս բաժանեաց մովսէս: - 390.** Եւ *յիսունն* **ժժ** կատարեն **ե** գլխաւոր համարք: - 524. Իսկ անօրէնութիւն է մեզ լուծումն պահոց աւանդեալ յառաքելոց անտի զերեք *յիսունս* և զչորեքշաբաթի և զուրբաթ. և զայլ շաբաթապահս ի նիկիական ժողովոյն սրբութեամբ պահել: - 552. Եւ **գ** ամիս աղուհացք է և *յիսունք:* - 650. Դարձեալ՝ **գ** տաղաւարն՝ որպէս ասաց պետրոս, գուշակէ՛ զերեք *յիսունս:* - 653

**ՅԻՍՈՒՆԲ** - 2

**ՅԻՍՈՒՆԳ** - 3

**ՅԻՍՈՒՆԴ** - 1

**ՅԻՍՈՒՆԵՒԲ** - 1

**ՅԻՍՈՒՆԵՒԳ** - 1

**ՅԻՍՈՒՆԵՒԴ** - 2

**ՅԻՍՈՒՆԵՒԵ** - 2

**ՅԻՍՈՒՆԵՒՉ** - 2

**ՅԻՍՈՒՆԵՒԷ** - 2

**ՅԻՍՈՒՆԵՒԸ** - 2

**ՅԻՍՈՒՆԵՒԹ** - 2

**ՅԻՍՈՒՆԵՒՄԻ** - 3

**ՅԻՍՈՒՆԵՒՅԻՆԳ** - 1

**ՅԻՍՈՒՆԵՒՎԵՑ** - 1

**ՅԼ** - Առաջին ժողովն եղև ի նիկիայ սրբոց հարց. զկնի **յժը**՝ կամ *յլ* ամի ծննդեանն քրիստոսի. և **ի ի** ամի թագաւորութեանն կոստանդիանոսի: - 542

**ՅԼԸ** - Վեցերորդ Փայլածուն. զոր օտարիտ կոչեն. միշտ շրջի ընդ արեգականն. և սակաւ հեռանայ ի նմանէ. զընթացս իւր կատարէ՛ *յլը* աւուրս. **ժ** օր պակաս քան զլուսաբերն. և այլք թէ **գ** ամիս: - 189

**ՅԽԸ** - Յինգերորդ Լուսաբերն. որ է՛ արուսեակն. զոր կոչեն զօհրա. ջե՛րմ է և խոնաւ. *յխը* օրն կատարէ՛, զընթացսն. և այլք ասեն թէ ի **գ** ամիսն: - 189

**ՅԾԴ** - Զի արեգական տարին է՛ **յկե** օր. և լուսնին տարին *յծդ* օր. **ժա** օր պակաս քան զարեգակն: - 191. Իսկ հիննևժերեակն է, զի ընթանայ լուսինն ի տարին *յծդ* օր՝ և **ժթ** մասն. որ լինի ի **ժթ** ամին՝ **յկա** մասն: - 191

**ՅԿ** - Եւ մի մասն ժողովեալ՝ ի **ցպխ** ամն՝ լինի *յկ* մասն: - 191

**ՅԿԱ** - Իսկ հիննևժերեակն է, զի ընթանայ լուսինն ի տարին **յծդ** օր՝ և **ժթ** մասն. որ լինի ի **ժթ** ամին՝ *յկա* մասն: - 191

**ՅԿԵ** - Զի տարին է՛ *յկե* օր: - 190. Եւ ամիսն *յկե* ժամ: - 190. Եւ օրն ի տիւն միայն՝ *յկե* մասն: - 190. Զի արեգական տարին է՛ *յկե* օր. և լուսնին տարին **յծդ** օր. **ժա** օր պակաս քան զարեգակն: - 191. Ո՞րպէս է *յկե* զօղուածք: - 243. Ոմանք ասեն, **ժէ** գլխաւոր ջլօքն որ կապին սրտա՝ լինին *յկե* զօղուածք: - 243-244. Եւ դարձեալ թիւ ոսկերացն **մխը**. և **բժան** անդամքն, և **ե** զգայարանքն յօդեալ առ միմեանս, լինին *յկե* զօղուածք: - 244. Այլ և *յկե* զօղուածովքս և **բժան** անդամօք մարմնոյս մեղանչեմք: - 683

**ՅԿՁ** - Որ լինի այր մարդոյն՝ ***յկզ*** երակ բովանդակն: - 244. Եւ **ժէ** գլխաւոր ջիլքն, և մին բուն ջիլն. որ լինի բովանդակն ***յկզ*** ջիլք: - 244.

**Ն** - Ասեն թէ **ռ** ազգ է. **ո** ի ցամաքի թռչնովք. և ***ն*** ի ջուրս: - 216. Տնեալ ամս ***ն***. մինչ ի սեդեկիա որ գերեցաւ ի բաբիլօն. և հրծիգ եղև տաճարն և եէմ: - 446

**Նժ** - Եւ յետ յեսուայ դատաւորք դատեցին առաջնորդութեամբ զիէլ ***նժ*** ըստ եօթանասնիցն թուով երեքտասան դատաւորք մինչև ի հեղի քահանայ: - 420. Զի ***նժ*** ամք դատաւորացն, և **խ** ամ հեղեայն մինչ ի սաւուղ. որ լինի **նծ** ամ: - 420

**ՆԼ** - 'Ի ***ն և լ*** ամն կամ աւել ապա՛ աւարտեցաւ: - 635

**ՆԽԲ** - Տնեաց տաճարն զամս ***նխբ:*** - 453

**ՆԾ** - Զի **նժ** ամք դատաւորացն, և **խ** ամ հեղեայն մինչ ի սաւուղ. որ լինի ***նծ*** ամ: - 420

**ՆՁ** - Եւ յելիցն ի սողոմոն՝ ***նձ:*** - 453

**ՆՁԳ** - Որք են ամք ***նձգ:*** - 449. Եւ առաջնորդեն օծեալ քահանայքն յետ դարձին ***նձգ*** ամ. մինչև բարձան օծեալքն հրէից և ծնաւ ճշմարիտ օծեալն քրիստոս: - 449. Իսկ այլ ոմանք թուեն զեօթներորդն դանիէլի ի դարեհի որդւոյ արշուրեայ առաջին ամէն. յորում զտեսիլն ետես մարգարէն. մինչև ի ծնունդն քրիստոսի ամք ***նձգ:*** - 449

**Շ +** Եւ ի մին հոլովն՝ ***շ*** ասպարէզ ընթանայ: - 191. Եւ նոյ՝ վասն կուսութեան սրբութեանն *զշ* ամն, և վասն արդար գոլոյն, որում վկայէ՛ մովսէս, «Նո՛յ էր այր արդար կատարեալ յազգի անդ իւրում». վասն որոյ ապրեցաւ ինքն և տունն իւր. և երկրորդ սկիզբն եղև մարդկութեանն և աշխարհի շինութեան: - 288

**ՇԵ** - Եւ անտի ի յելսն յեգիպտոսէ՛ ***շե*** ամ: - 337. Աստուած՝ ***շե*** անգամ: - 412. Եւ յաբրահամէ յելքն, ամք ***շե:*** - 453

**ՇԺԲ** - Եւ յառաջին շինուածէ՛ տաճարին ցերկրորդն՝ ***շժբ:*** - 453

**ՇԺԸ** - Եւ առնին ի նորոգմանէ տաճարին մինչև ի ծնունդն քրիստոսի ամք ***շժը:*** - 453

**ՇԼԲ** - Եւ որպէս իննևժերեակն լուսնի, և **իը** երեակն արեգական ի միասին ժողովեալ՝ առնէ զհինգ հարիւրեակ շրջանն ի ***շլբ*** ամին. զի **ժթ իը** երեակ է. և **իը ժթ** երեակ: - 192

**ՇԾԳ** - Եւ ի ծննդենէն քրիստոսի ի թուականն մեծ՝ ***շծգ*** ամ: - 451

**ՇՂԱ** - Եւ նոր կտակարանքն ամենայն՝ են տունք՝ **ա՞. փ.** ***շղա:*** - 451.

**Ո +** Ապա ուրեմն **ժ** մասն է ***ո*** րոպէ. և մէկ ժամն **ռպ** րոպէ: - 191. Ասեն թէ **ռ** ազգ է. ***ո*** ի ցամաքի թռչնովք. և **ն** ի ջուրս: - 216

**ՈԼՁ** - Եւ էր սիրելի փլաբիանոսի. և լևոնի. և թէոդորիտոսի զորս նզովեցին յեփեսոս. և վասն նոցա վրէժխնդրութեանն արարին ժողով ***ոլզ*** եպիսկոպոսաց. և ընկալան զթուղթն լևոնի. և զնզովեալն յեփեսոս զփլաբիանոս ընկալան. - 542-543

**ՈԾ** - Բովանդակ անցեալքն ի հանդէս՝ **զճռ** էին. որ է՛ **կ** բիւր. և **գռ** և ***ոծ:*** - 378

**Ո.Կ.Զ.** - Իսկ համար անուանն. ի յելլադացւոցն ի մերս թարգմանեալ այս է, ***ո. կ. զ:*** - 707

**ՈՒԹ +** Երեքտասաներորդ՝ Որք զհոգին՝ ի հօրէ՛ և յորդւոյ ասեն *ութն* գլխով: - 30. Եւ աղճատանք լիցի քեզ ծնունդն ըստ մարկիոնի *ութ* աստուծոյն և *ութ* յաւիտենին: - 52. *Ութ* են եղանակք բաժանման ըստ փիլիսոփային. այսինքն Որպէս սեռ ի տեսակս. Տեսակ յանհատս: - 87. Քառասունննի) Յատկութիւնք ջուրց *ութն* թուով. և զի բազում են ջուրք. և դառն է ծով և աղի: - 155. *Ութն*՝ երանքն: - 241. Եւ *ութն* ոսկր կուրծքն. որ լինի **բճխը** ոսկր: - 243. Եւ յաւելեալ զկազմողականն՝ *յութն* ամիսս ծնանի և ո՛չ ապրի զի անկատա՛ր է: - 263. Եւ *ութն* ամիսն երևակին է ո՛չ ապրի: - 264. Երրորդ՝ եօթն հասակ մեր փոփոխի. և *ութն* հաստատի: - 374. Երրորդ՝ *ութն* գունդ են դևեայ **գ** որդւոցն, և մովսէս իններորդ: - 379. Եւ **ծ** հարճք, որք *զութ* օրէնսն կատարեն: - 440. Եւ Մարգարէք *ութ:* - 451. *Ութ*՝ եզրին: - 451. *Ութ* են ասացեալ վարդապետք: - 488. Քառասունևը, *Ութ* ձայնից զիտոն: - 527. Իսկ մեք *ութն* օր: - 616. Իսկ ի նորս առ մեզ, Սակաւ ինչ հոգացեալ զեօթնիցս, այլ ութերորդին փոյթ տարեալ դարուց աւանդապահք եկեղեցոյ, կարգեցին *ութն* կանոնս **ըը** գուբդայիւ: - 627. Նոյնպէս և **ը** ձայն եղանակաց. և **ը** օրեայ զտօնս գլխաւորս. որպէս ծննդեանն *ութն* օր. և յարութեանն՝ և հոգւոյն գալստեանն՝ և խաչի՝ և եկեղեցւոյ՝ և այլն: - 627. Այլ և *ութն* ձայնք **դ** են ըստ չորից տարերց. այս է՝ առաջին, երկրորդ, երրորդ, չորրորդ: - 639. Եւ ոմանք ասեն **ը** ձայն վասն *ութ* ձայնաւոր գրոց. և **ժ** ձայն ըստ **ժ** առոգանութեանցն: - 640. Եւ դարձեալ՝ *ութ* ձայն՝ ի խորհուրդ *ութն* դարուց: - 640. ...որպէս խրատէ՛ սողոմոն. «տո՛ւր բաժինս յեօթանց՝ այլև *յութիցս»:* - 658. Զի որք ընկալան զշնորհսն, պա՛րտին նոքա ընչիւք իւրեանց զեկեղեցւոյն լոյսն վառել զաւուրս *ութն:* - 684

**ՈՒԹԵՐՈՐԴ** - 238

**ՈՒԹԵԺ** - 17

**ՈՒԹԵԺԵՐՈՐԴ** - 12

**ՈՒԹՆ ՅԻՍՈՒՆ** - Դարձեալ՝ զարդարութիւն գործէր զի հաշտեսցի աստուած. վասն որոյ ինքնին սպան զամենայն. այս *գութն յիսունին*, փոխանակ մարգարէիցն աստուծոյ զոր եսպան եզաբէլ: - 444

**ՈՒԹՍՈՒՆ +** Իսկ այն որ ասէ կ էին թաքուիք և *ութսուն* հարճք. և անթիւ հարսնածուք: - 440

**ՈՒԹՍՈՒՆՔ** - 1

**ՈՒԹՍՈՒՆԵՐՈՐԴ** - 1

**ՈՒԹՍՈՒՆԵԻՄԻ** - 1

**ՉԻ +** Միահամուռ հին և նոր կտակարանքն՝ **ղ ա՞. էռ.** *չի* տուն է: - 451

**ՉՈՐԵՔԿԻՆ +** Դարձեալ՝ և առ տընօրէնութիւն Բանին տեսանին սոքա *չորեքկին:* - 129. Երրորդ՝ զի *չորեքկին* կենդանիքն թագաւորականքն են: - 132. Իսկ յանդիմանութեան անկումն դիւաց եղև գալստեամբն քրիստոսի ի ձեռն խաչին. և այս *չորեքկին:* - 153. Եւ դարձեալ այս երկրորդ անկումն դիւաց *չորեքկին:* - 153. Եւ *զչորեքկին* որպիսութիւնս զայսոսիկ երևեցոյց ի մարմինն ի՛ւր նախ քան զխաչն: - 282. Եւ այսու *չորեքկին* կապովս ըմռնեմք զաստուած անորոշապէս, ըստ այսմ, «ո՛ մեկնեսցէ զմեզ ի սիրոյն քրիստոսի. նեղութիւն թէ անձկութիւն» և այլն: - 317. Թլփատի և այժմ եկեղեցի իւր *չորեքկին* սրով: - 454. Դարձեալ՝ թլփատի քրիստոս և այժմ յեկեղեցի իւր *չորեքկին:* - 486. Դարձեալ՝ է և այլ պատճառ. զի կարգին ընդ դէմ երից մեղացն և ընդ դէմ *չորեքկին* պատժոցն: - 587. Զի՞նչ է *չորեքկին* բառս որ ասեմք, պակասեալ. այլեւեալ. լցեալ. և անցեալ զաւուրբք: - 666. Ապա ուրեմն ընդ դէմ այսմ *չորեքկին* յարութեանս *չորեքկին* է և մահ. այսինքն Նախ մեղաց և անհաւատութեան մահն: - 710. Ուստի երևի **զ** ժամս ի յարութենէն մինչ ի վճիռ հատուցման և կորստեան չարաց *չորեքկին*. այսինքն գործոց չարաց և պատժոց նոցին. պատճառաց դիւաց և հետևելոց մարդկան: - 748

**ՉՈՐԵՔ ՀԱՐԻՒՐ ԵՒ ՅԻՍՈՒՆ** - Եւ այսմ վկայէ՛ պօղոս ի գործքն եթէ՝ յետոյ յեսուայ իշխեցին դատաւորք մինչ ի սաւուղ ամս *չորեք հարիւր և յիսուն*՝ այսպէս: - 420

**ՉՈՐԵՔՏԱՍԱՆ +** Է՛ և անկարութիւն առ մեզ՝ ոչ էին գոյ լինիլ. և չորսին *չորեքտասան:* - 44. Եւ ահա՛ *չորեքտասան* հարցմունքս այս՝ է ընդ դէմ երկաբնակ աղանդոցն. որք զմի քրիստոսն յերկուս բաժանեն բնութիւնս: - 70. Կարգաւո՛ր է և աստ հարցանել թէ վասն է՞ր անասունք յերրորդ ամին կարեն զնմանն ծնանիլ, և մարդն ի *չորեքտասանն:* - 264. Եւ այսպէս ի ներքուստ ի վեր կրկնեալ եօթնից որ է *չորեքտասան*, կատարի ցանկական մասամբն և կարէ՛ զնմանն ծնանիլ և կոչի մանուկ: - 264-265. Ա՛րդ՝ մանկութիւնն կատարի ի *չորեքտասան* ամն. և է՛ կատարեալ ծնօղն և ծնունդն: - 265. Եւ տե՛ս, զի **բ բ** են յաւելեալ թիւ ի *չորեքտասան*, յերեք հասակս փոփոխելով: - 265. Ապա ուրեմն յա՛յտ է թէ վասն է՞ր մարդն ի *չորեքտասան* ամն կարէ ծնանիլ: - 266. Եւ անտի ի *չորեքտասանն* զծննդականն ցուցանէ. որ է՛ կերակրականին դարձեալ: - 267. Դարձեալ՝ **է** ճրագն և **է** բերան ճրագացն որ լինի *չորեքտասան*, նշանակէ՛ *զչորեքտասան* աստիճան հաւատոյն. է ի յանմարմին բնութիւն աստուծոյ, և է ի տնօրէնութիւն բանին: - 347. Եւ *չորեքտասան* թուղթք պօղոսի. որ լինի **իը**: - 450. Նա՛խ՝ զի *չորեքտասա՛ն* էր լուսինն եկն ի ներքին կիսագնդէն ի վերին գունդն և ծգեցաւ առ արեգակն: - 490. Որ այսպիսի էր պատկեր աւուրն. յաւուր **ե** շաբաթոջ երեկոյին ի *չորեքտասան* լուսնին զգառն զենին և ելին յայգ ուրբաթի **ժե** ամսեանն. և ի կիրակէ անցին ընդ ծովն որ էր նիսանի **ժէ**: - 513. Իսկ թէ նկատիցեմք առ այն որք են իբր արմատս հաւատալեաց, յայնժամ են *չորեքտասան* աստիճանք: - 572. Իսկ գործ ողորմութեան են *չորեքտասան*. այսինքն եօթն մարմնաւոր և եօթն հոգևոր: - 584. Եւ են ամենայն հարցմունքդ *դժան* գլխով. որպէս յա՛յտ է ի կարգիդ: - 773

**ՉՈՐԵՔՏԱՍԱՆԵՐՈՐԴ** - 39

**ՉՈՐՐՈՐԴ** - 667

**ՉՈՐՐՈՐԴՈՒԹԻՒՆ +** Իսկ եթէ զանձն ասացիք բղխեալ, ահա **բ** անձն ասացիք հոգւոյն. մինն ի հօրէ բղխեալ, և մինն ի յորդւոյ. և այսպէս լինի երրորդութիւնն *չորրորդութիւն:* - 62. Քսաներորդ՝ այսպէս Երրորդութիւնն լինի *չորրորդութիւն*. և թիւ և աւելլած եղեալ ի բնութիւնն և ի դէմքն. եթէ ա՛յլ է առանձնապէս մարդ և ա՛յլ աստուած: - 68. Իսկ թէ ի վերայ անձինն, ահա զերրորդութիւնն *չորրորդութիւն* արարիք որպէս ասացաւ: - 68. Երրորդ՝ զի *չորրորդութիւն* մուծանեն յերրորդութիւնն սուրբ... - 633

**ՉՈՐՔ** - Նախ առհասարակ հանդիպիմք ընդդիմութեանցն, եթէ որք զայս ասեն՝ մեղանչեն *չորիւք* եղանակօք: - 8. Դարձեալ ասեն, թէ ամենայն ստորնային մարմինք՝ կառավարին վերնային մարմնովք. որպէս յա՛յտ է ի *չորս* եղանակս տարւոյն. այլև ծնունդ և աճումն՝ և բոյսք և պտուղք՝ ի շարժմանէ նոցա պատճառին. և շարժումն նոցա է՛ հարկաւոր. ապա ուրեմն ամենայն ինչ լինի ի հարկէ: - 10. Նախ թէ՝ երկնային մարմինքն ո՛չ են ի *չորից* տարրաց. այլ են հինգերորդ տարր կամ էութիւն ըստ արիստոտէլի. և որք են ի պարզ տարրէ միայն ո՛չ հակակային միմեանց: - 12. Դարձեալ, *չորեքկին* են հատուցմունք. բարի՛ փոխանակ բարւոյ, և չար փոխանակ չարի. որ է՛ գործ արդարութեան: - 18. *Չո՛րք* են հակակայք: - 21. Եւ զայլ ամենայն բնախօսութիւն յաղագս բարւոյ և չարի՝ գտցես ի Դիոնէսիոսի ի *չորս* գլուխն յաստուածային անուանսն. և ի ստորոգութիւնսն ի հակակայից ճառն. և ի սահմանս դաւթի ի վերջն որ է «ամենայն չար տանջելի»: - 24. Նոյնպէս և յերկինս տեսանելի՛ է *չորս* ինչ: - 26. Դարձեալ ի վերայ սաղմոսին որ ասէ, «զարթիր փառք իմ». ասէ մեկնիչն և աւանդութիւն հրէիցն թէ՝ խօսի աստ ի վերայ *չորից* թագաւորացն որք հալածեցին զիսրայէլ: - 28. Է՛ և անկարութիւն առ մեզ՝ ոչ էին գոյ լինիլ. և *չորսին* չորեքտասան: - 44. Եւ զնոյն բանն աստուած մարմնացեալ. և շրջեալ ի վերայ երկրի. զի յայնմ օրինակին արար և որդի պիտոյ էր լինիլ և *չորս* աշխարհք: - 45-46. *Չորիւք* եղանակօք է տեսանել: - 77. Հին աւուրց որ է ծերն՝ *չորս* յատկութիւն ունի: - 114. *Չորք:* - 115. Եւ զայլ յատկութիւնս հոգւոյ և հրեշտակի՝ ցուցանելո՛ց եմք յառաջիկայսդ *չորիւք:* - 117. Ա՛րդ՝ աստուածայինն միտ *չորիւք* յատկութեամբ տեսանի այսպէս. համանգամայն. ներկայապէս կատարեալ. և անփոփոխ: - 118. Ամենահայեացն զբոլոր տեսութիւնն ասէ որ ընդդէմ է մասնաւոր տեսութեանս մերոյ *չորեքկին:* - 119. *Չորս*. այսինքն է՝ Նախ՝ տպաւորական: - 122. Եւ իւրաքանչիւր սոցա երկատի, որ լինին *չորս* ըստ աստուածաբանին գրիգորի այսպէս: - 123. Չորրորդ՝ արեգակն *չորիւք* եղանակօք կատարէ զտարին: - 125. Եւ տէր մեր *չորիւք* կատարեաց զտարի տնօրէնութեան իւրոյ: - 126. Նոյնպէս *չորիւք* առաքինութեամբք զարդարեցին: - 126. Հինգերորդ՝ նշանակէ *զչորեսին* աւետարանիչքն. մարդն զՄատթէոս՝ զմարդեղութիւն բանին ցուցեալ առիւծն զՄարկոս՝ արիաբա՛ր աւետարանեալ. «և էր ընդ գազանսն» ասէ. եզն զՂուկաս՝ յերկարաձիգ պատմութեամբ. և եզն պարարակ կոչեցեալ. արծւին ըզՅօհաննէս՝ ի վերուստ զբանն աւետարանեալ: - 132-133. *Չորիւք* հաւասարին: - 140. Այլ *չորիւք* զանազանին: - 140. *Չորիւք:* - 140. Կատարեալ և գերակատար թիւք դոքա են առ մեզ. որ ի **դ** գլխաւորին ըստ *չորից* տարերց: - 141. Իսկ յօհաննու տեսիլն և մեդոթ ասէ թէ՝ «կամեցաւ զերրորդ մասն աստեղաց ընդ իւր քարշել». այսինքն ի դասէն ի *չորիցն* երեք բաժինն ի վայր անկաւ. և մինն անդ մնաց և յիշխանութեանց դասն խառնեցաւ: - 148. Երեսունն**բ**) Վասն սերմանց որ ի *չորս* եղանակս: - 154. Ամենայն կենդանիք ի *չորս* տարերաց են: - 155. Ասեմք առ այս. Նախ՝ եթէ նոր եկելոցն ի հաւատս՝ սակաւ դնէին կանոնս. որպէս առաքեալն պատուիրէ «՚ի բաց կալ ի *չորիցս* յայսցանէ. ի զոհելոյ, ի պոռնկութենէ յարենէ, և ի հեղձուցելոյ»: - 166. Եւ ո՛չ միայն այս. այլ և դ բնութիւն է *չորից* տարերաց մարմնոյն. ջերմ և ցուրտ. չոր և գէճ: - 176. Վասն է՞ր *չորս* են տարերք: - 180. *Չորս* են տարերք. հող և ջուր. օդ և հուր: - 180. Առաջին պատճառ, զի երկինքն է պարզ մարմին. զի ո՛չ է ի *չորից* տարերց. այլ եերորդ էութիւն է: - 182. Ոմանք ասեն թէ **ե**երորդ էութիւն են արտաքոյ *չորից* տարերաց ըստ արիստոտէլի: - 188. Ասեմք թէ **բժ**ան կենդանակերպքն ունին զբնութիւն *չորից* տարերաց: - 189. Ի *չորեսին* եղանակս տարոյն՝ Գարունն այսու ճոխանայ: - 196. Եւ զանազան գոյնքն է՛ *չորից* տարերցն որք են յօդդ: - 203. Եւ նախ ի *չորս* դէմս բաժանին ամենայն հողմունք. և իւրաքանչիւրքն դարձեալ յերիս բաժանին. որ լինի բովանդակն **բժ**ան: - 205. Ամենայն պտուղք ի *չորս* բաժանին: - 213. Զի ի *չորս* տարրէ՛ է գոյացեալ. և ունի զաճումն հողոյն. վասն այն նախ աճէ ենթակայ մարմինն: - 213. Ասեմք թէ՝ ամենայն մարմնական կենդանիք ի *չորից* տարերաց են եղեալ. և յայտ է ի բազում պատճառաց: - 214. Ապա ուրեմն յերկրէ կամ ի ջրոյ գոյացեալքն ի *չորս* տարերաց եղեն: - 214. Տասներորդ՝ զի **դ** ոտքն է նման *չորից* տարերաց: - 215. Ապա ուրեմն յա՛յտ է զի ամենայն կենդանիք ի *չորից* տարերց են: - 215. Եւ *չո՛րս* են ազգ ձկանց: - 215. Նշանակեն սոքա *զչորս* դասս մարդկան: - 215. Տե՛ս՝ ի *չորից* բաժանմանցդ մինն է ընտրելի, և **գն** խոտելիք են: - 215. Զի ի կոչումն անուան՝ *չորրս* այսոքիկ երևին միանգամայն. բանն և խօսքն և ձայնն և տեսութիւնն. այսոքիւք զմարդն կատարեալ երևեցոյց աստուած: - 219. յԱռաջին աւուրն՝ է արարածք եղեն. հրեղէն երկինքն. և *չորս* տարերք. և լոյս. և հրեշտակք ընդ լուսոյն: - 226. Իններորդ՝ *Չորս* է հողմ և ջուր և մարդս: - 227. Եւ *չորս* առանձնութիւն հոգւոյ մեր և աստուծոյ: - 228. Իսկ երկրորդն թէ յորմէ՞ սեռէ է օտարն և աննմանն՝ գիտելի է, զի դէմն և կերպն ի *չորից* սեռից գոյանայ. ի գոյէ՝ ի քանակէ՝ յորակէ և ի տեղւոյ: - 236. *Չորս* հողմ է ի **դ** կողմ երկրի: - 240. Զոր այսպէս ասելոց եմք

յառաջիկայդ վասն *չորից* եղանակաց տարւոյն և աւուրն բնութեան: - 240. Իսկ **դ** ջուրն որ է ի մարդն՝ ըստ *չորս* տարերացդ է: - 240. *Չորսն*՝ լանջքն: - 241. *Չորիւք* պարզութեամբ վերանայ իմացումն մեր: - 251. Վասն *չորից:* - 251. Ասեմք առ այս, եթէ քառասունն ունի *զչորս* և զտասն թիւն. զի **դ** տասն է: - 261-262. Արդ՝ **ժ** թիւն կատարեալ է. և *չորսն* տարրական է. այսինքն զի կատարեալ հոգին բանական ի նո՛յն ժամն խառնեալ միաւորի ընդ մարմնոյն տարրական, և կերպացեալ լինի մի մարդ մի դէմ և մի բնութիւն մարդոյ ի հոգւոյ և ի մարմնոյ. որպէս քառասունն ի տասանց և ի *չորից* է գոյացեալ: - 262. Զի քանն **դ ե** է. և կենդանին է ի *չորից* տարերց. ունելով զ**ե** զգայութիւնս: - 262. Զի վեցն որ է՛ կատարեալ թիւ, և նիւթն այն է՛ ի *չորից* տարերց, և ունի առ ինքն զկազմողական և զտնկական զօրութիւնն որ է **զ**: - 262. Զի ամենայն նիւթ սերմնականի է՛ ի *չորից* տարերց. և ունի զկազմողականն զօրութիւն. որով լինի տնկականն: - 262. Եւ այլք ևս յաւելեալ. զի են ի *չորից* տարերց՝ **է** և **ը** ամիսս կատարին: - 262. Ասեմք թէպէտ նիւթն ի *չորից* տարերց է, այլ տնկականն զօրացեալ քան զնիւթն՝ ըստ իւրոյ մասանցն ծնանի. զի ծնանիլն տնկականին է. այլ և ունի զտարերացն թիւ. զի յամիսս *չորս* կատարի այն՝ որ յառաջ ծնաւ: - 262-263. Նմանապէս ծառք և տունկք՝ որ յետ երից ամաց կամ *չորից* ցուցանեն զպտուղս՝ յայսմ թւոյ ո՛չ ելանեն արտաքս: - 263. Արդ՝ զգայականն է ի *չորից* տարերց. և ունի զտնկականն: - 263. Իսկ որք ի **խ** աւուրս ծնանին և կամ **ի ի**, որպէս հաւ. ունին նոքա զխորհուրդ *չորից* տասանց և *չորից* հնգից, ըստ **ե** զգայութեանց ներքոյ և **ե** զգայութեանց արտաքոյ որպէս ասացաք: - 263. Այլ և պարզապէս ըստ *չորից* տարերց տնկականին՝ **գ** զօրութիւնք և **ե** զգայութիւնք՝ լինի **բժ**ան: - 263. Եւ աւելի և պակասն է ի նոյն թիւն *չորից* և երից. եթէ աւուրց և եթէ ժամուց մինչև ի ճանճ և ի մժեխ: - 263. Դարձեալ **թ** խառնուա՛ծ է *չորից* տարերց ըստ կրկին քառից որակաց առաւել և նուազ, և իններորդն հաւասար է որ է ի մարդն. վասն որոյ ինն ամսեայ ծնանի: - 264. Իսկ մարդոյն խորհուրդն ըստ *չորից* տարերց և երից զօրութեանց տնկականին եօթեամբ կատարի. թիւ շնորհալի և մշտակոյս ըստ աթենայ. զի ոչ ծնեալ լինի և ո՛չ զայլս ծնանի: - 264. Եւ *չորիցս* կրկնեալ **է**-ից մինչև ի **իը** ամն, լինի երիտասարդ. և կատարի բանական մասն: - 265. Եւ դարձեալ՝ հասակ մարդոյ *չորիցս* ունի զփոփոխումն. այսինքն, ’Ի մանկութիւն. Յերիտասարդութիւն. Յալևորութիւն. և Ծերութիւն: - 265. Զի **ժ** ի *չորից* ծնանի. և *չորսն* տարրական է. վասն որոյ ի նմա կարէ մարդ ծնանիլ զնմանն իւր: - 265. Եւ դարձեալ ըստ *չորից* տարերց և եղանակաց և ժամուց աւուր և հիւթոց համեմատաբար փոփոխին և հասակ մարդկան: - 266. Իսկ բնական երազն բաժանի ի *չորս* ըստ սրբոյն նիւսացւոյ ի գիրս կազմութեան: - 268. Ըստ *չորից* իմանի յոյսն ենովսայ: - 288. Եւ յետ նորա **ժ** թիւն կենդանեա՛ցն է, որ ի *չորից* են բաղկացեալ. որպէս **ժ** ի **դ** թուոց: - 291. Ութև**ժ**, *չո՛րս* են որք հզօրք են և պերճ շրջին ասէ սողոմոն. այսինքն աքաղաղ, և նոխազ, և թագաւոր հրապարակախօս, և առիւծ՝ որ ո՛չ դարձուցանէ թիկունս յանասնոց: - 316. Յոգեկանն բաժանի ի *չորս:* - 317. Իսկ երանելին յոբ *չորիցս* այսոցիկ ընդդիմամարտէ՛ր և պատասխանի առնէր: - 324. Տասներորդ, մովսէս զեռայարկ խորանն կանգնէր ի *չորից* նիւթոց: - 328. Եւ քրիստոս զյարկն դաւթի որ է՛ եկեղեցի՝ *չորիցս* առաքինութեամբ եռաբնակ օթևան աստուծոյ կազմեաց: - 328. Եւ յա՛յտ է ի *չորից:* - 335. *Չորս* պատճառս ասէ իմաստունն ի սիրեցէքն: - 339. Երկրորդ՝ զորպիսութիւն և զձև աշխարհիս ցուցանէր ի խորանն եռայարկեան ի *չորից* նիւթոց փոխանակ **դ** տարերաց յանապական և յապականացու բնակչաց: - 342. Չորրորդ՝ և բովանդակն **ե** կանգուն, ցուցանէ թէ ո՛չ են նոքա ի *չորից* տարերց. այլ **ե**երորդ էութիւն են. որպէս ասեն ոմանք. անմարմին անփոփոխ և անմահ. որ ո՛չ է տարրականացս: - 344. *Չորս* կանգուն և կէս, ելեալ ի տարրական կենցաղոյս: - 346. Այլ և **է** խորհուրդ եկեղեցւոյ, և **է** զօրութիւնք հոգւոյս. *չորսն* ստացական, և **գ**ն աստուածային առաքինութիւնք: - 347. Խառնեալ և աղացեալ ի խորուրդ *չորից* առաքինութեանց մերոց: - 349. Զսոյն և ամովս ասէ. «վասն երից տնօրէնութեանց, և *չորիցն* ո՛չ դարձայց ի նոցանէ»: - 351. Եւ սմին համաձայնի վանական վարդապետն մեր ասելով, *չորս* տարր է մարդոյ և **դ** ծնունդ: - 353. Նոյնպէս և ոտքն ըստ *չորից* տարերց ընթացից: - 367. Նոյնպէս և արիւն դաշտանւոյն պղծէ՛ *զչորս* դէմս. որպէս հոսումն արուին և բղխումն իգին: - 369. Դարձեալ՝ չորրորդ մասն դորակին նշանակ *չորից* առաքինութեանց: - 374-375. Իսկ այլք ի **դ** բաժանեն ըստ *չորից* տարերաց և **դ** պահու գիշերոյն. որպէս ասացաւ ի վերն **ժզ** գլուխն **իգ** համարն: - 378. Որպէս ասէ առակն «*չորիւք* շարժի երկիր. յորժամ մանուկ թագաւորէ՛». և այլն: - 381. Իսկ ծաղկեալ գաւազանն *չորս* ինչ յաւելու. Դալարի. Շառաւիղ. Ծաղիկ. և Պտուղն ընկուզ: - 382. *Չորս:* - 407. Եւ *չորսն* ձեռօք. որ է տաւիղն, քնարն, թմբուկն, և ծնծղայք: - 431. Դաւիթ *չորս* ամ բնակեցաւ ի գէթ մինչ մեռաւ սաւուղ. և տէր մեր յեգիպտոս՝ մինչ մեռաւ հերովդէս: - 437. Քառասուն ամ թագաւորեաց դաւիթ, որ է *չորիցս* **ժ**. և սկիզբն և կատարումն ամենայնի է՛ տէր մեր: - 437.

Դարձեալ, ժամանակն ունի մասունս երիս. և մշտնջենաւորն. և դարձեալ յաւիտենական է բանն. և ժամանակեայ մարմինն. և մշտնջենաւոր հոգին. և անքակտելի միութիւնն ցուցանէ մեզ *գչորս* թուոյն. և ամենայնիւ կատարեալ գոյացութեամբ: - 437-438. Երեսուննէ զօրավարք դաւթի. և **լէ** թիւ հնոյն օրինաց. և այլ նորոց կտակի. և կամ **իբ** գլխաւո՛ր են գրոց հնոց. և **ժ** բան օրինաց. և *չորից* աւետարանաց. և մինն առաքելական: - 438. Աւետարանն *չորս* գլուխ: - 450. *Չորս*՝ ժողովօղն: - 451. *Ջչորրս* զայս՝ Զոքոզիա և Զգոդողիա մայրն, և Զյովաս և Զամեսիա ո՛չ գրէ յազգահամարսն աւետարանիչն վասն լինելոյ դուստր և թոռունք եզաբելի: - 452. Յաւատարիմ բառս՝ որ ի սուրբ գիրս՝ ըստ *չորից* եղանակաց իմասցի: - 457. Որ ցուցանեն *գչորեսին* առաքինութիւնս նորա: - 465. Իսկ անդրանիկ ըստ որում երէց և առաջին՝ ասի ըստ *չորից:* - 472. Ա՛րդ՝ խոնարհութիւնն քրիստոսի ցուցանի *չորիւք* որպէս ասէ աւետարանն «եկն յիսուս ի յորդանան առ յովհաննէս մկրտիլ ի նմանէ»: - 486. Այլ և օգտութիւն մկրտութեան մերոյ ցուցանի ի մկրտութիւնն քրիստոսի *չորիւք:* - 487. *Չորս:* - 490. Եւ *չորիւքս* այս առաւելու ամօթն. իսկ Յինգերորդ՝ զի ի մէջ չարագործ աւազակա՛ցն էր համարեալ: - 490. Չորրորդ դարձեալ՝ **դ** թև խաչին նշանակէ *գչորս* բարերարութիւնս քրիստոսի. զի վերին մասն ցուցանէ զբացումն արքայութեանն երկնից. ներքինն զաւերումն դժոխոց. աջն զբաշխումն շնորհաց. ահեակն զթողութիւն մեղաց: - 493. Յինգերորդ՝ նշանակէ՛ *գչորս* առաքինութիւնս ի յորս պարտի տարածիլ ներքին մարդս մեր. այսինքն վերին մասն նշանակէ զւէրն. ներքինն զխոնարհութիւնն. աջն զհնազանդութիւնն. ահեակն զհամբերութիւնն: - 493. Ութերորդ՝ նշանակէ՛ *գչորս* տարբերութիւն փրկելոցս նովաւ. այսինքն երկնաւորք և երկրաւորք, կենդանիք և մեռեալք: - 493. Իններորդ՝ նշանակէ՛ *գչորեսին* խորհուրդս մեր: - 493. Տասներորդ՝ նշանակէ *գչորեսին* առաքինութիւնս մեր այսպէս: - 493. Այլ և մաքրութիւն մեղաց ըստ *չորից* նիւթոց մարմնոյս: - 493. Այլ և պահապան *չորից* զգոյութեանց ըստ *չորից* տարերաց: - 493. Եւ ակն խառնուած *չորից* թևոցն, խառնեալ զգայութեանց և մտաց: - 493. Այլ և երկիւղի զգայութեան *չորս* հասակի մարդոյն. ի մանկութեան, յերիտասարդութեան, յալիս և ի ծերութեան: - 493. Այլ և կատարումն *չորից* կարգաւորաց օրինաց: - 494. Զի՞նչ նշանակէ *չորս* մասն փայտից Խաչին: - 494. Այլ այժմ ասասցուք թէ ամենայն կիրք բաժանին ի *չորս* դէմս. կամաւոր և ակամայ. անգոսնելի և անանգոսնելի: - 502. Յինգերորդ՝ յետ **խ** աւուր համբարձաւ, զի ցուցցէ թէ որք զ**ժ** բանեան օրէնսն *չորիւք* աւետարանաւն լնուն, կարեն յերկինս ելանել: - 521. Եւ այս լինի ըստ *չորից* եղանակաց: - 536. *Չորս*. այսինքն սահմանական. բաժանական. ապացուցական. և վերլուծական: - 537. Նոյնպէս և աթոռակալքն որ ի *չորս* աթոռս, ա՛յլ զայլոյ վիճակեալ ո՛չ կարէ կապել և ո՛չ արձակել. նոյնպէս և ի նոյն աթոռն, վերջինն զառաջ նոյն ո՛չ կարէ փոխել կանոնս և զկարգ: - 541. Եւ յա՛յտ է ի *չորից:* - 546. Եւ այլ *չորիցն* հնազանդիմք որպէս աթոռակից քրիստոսի: - 547. Զի **դ** գլխաւորագոյն աթոռք կարգեցան ընդ բոլոր տիեզերս վասն *չորից* աւետարանչացն: - 549. Ո՞չ ապաքէն առաքեալքն եդին *գչորսս* զայս. խորշիլ յարենէ և ի զոհից ի հեղձուցելոյ և ի պոռնկութենէ: - 552. Եւ յա՛յտ է ի *չորից:* - 557. Նա՛խ՝ ըստ *չորից* տարերց այլ և այլ որակութեանց լինին **ը** խորհուրդ մեղաց: - 560. Ա՛րդ՝ մեղք սկզբնականին *չորիւք* զանազանի յայլոցն. այսինքն ի մահացուէն և ի ներելոյն. ըստ միութեան. ըստ հասարակութեան. ըստ հաւասարութեան. ըստ որակի տարբերութեան: - 567. Եւ *չորք* զօրութիւնքն այս է: - 571. *Չորիւք* իմանի: - 573. Եւ վասն *չորից* պատճառաց լաւագոյն է սիրել քան զսիրիլ: - 576. Վասն է՞ր զանազան անուամբ կոչին *չորեքին* առաքինութիւնքս այս: - 581. Ասեն վարդապետք թէ՝ զմի անգամ խոստովանեալն բարի հաւատով և կատարեալ զղջմամբ՝ ո՛չ է պարտ կրկնել. եթէ ոչ վասն *չորից* պատճառաց: - 603. ...որք ունին զաթոռ *չորից* աւետարանչացն. որ փոխանակ չորեքկերպեան կենդանեացն եդան աւետարանիչքն: - 607. Եւ գո՛րծ է նոցա ձեռնադրել զարք եպիսկոպոսունս. որք են ընդ իւր վիճակաւն ի *չորս* բաժինս տիեզերաց: - 607. Երրորդն ասեն եթէ՝ **բ** ազգն գեթսոնի և **բ** գունդն մերարեայ՝ *գչորս* փոքրիկ աստիճանս ունէին ի խորանն. զպահպանութիւնն մինչ ի ջահընկալն որ զաշտանակն բառնային. և որդիքն կահաթու էին բարձրագոյնք: - 609. Չորրորդ ասեն եթէ՝ **դ** աստիճանք ըստ *չորից* տարերացդ կարգաւորին: - 609. Զի **դ** ազգակցութիւն մարմնական. զի մարմինն է ի *չորից* տարերց: - 611. Զի **դ** ծնունդ ի մէջն է ըստ *չորից* տարերց կատարման: - 611. Զի կնքահայրն և սանամայրն ծնունդ մի. և նոցա զաւակն **բ**. և նոցա թոռն **գ**. և *չորսն* որ է՛ թոռին թոռն՝ լինին խնամիք: - 611. Վասն զի մարմինն ի *չորից* տարերց է. և ի **դ** ծնունդս փոխին **դ** արիւնք տարրականք ըստ այսմ օրինակի: - 612. Զի հասակ ամենայն մարդոյ ի *չորս* փոփոխի: - 622. Այլ և ութն ձայնք **դ** են ըստ *չորից* տարերց. այս է՝ առաջին, երկրորդ, երրորդ, չորրորդ: - 639. Եւ զի *չորք* են ձայնք բնականք ըստ *չորից* տարերց, ցուցցի հոգեպէս: - 640. Այս է խորհուրդ *չորս* ձայնից: - 640. *Չորք* աղին *չորեքին* նիւթն, և **դ**

առաքինութիւնք: - 641. Հինգերորդ, ըստ անուանն. զչորեքշաբաթն պահեմք, զի ի *չորիցս* չարաց պահպանեալ լիցուք...: - 653. Դարձեալ՝ *չորիւք* յատկութեամբ մատաղին պա՛րտ է զանձինս մեր պատարագել: - 658. Իսկ զկամքն տալ աստուծոյ հաճո՛յ է քան զպատարագ՝ վասն *չորից:* - 658. Մեծութիւն մարդոյ պատճառի՛ ի *չորից:* - 664. Նոյնպէս և աղքատութիւնն բնականապէս բաժանի ի *չորս:* - 664. Եւ լինի այս ևս վասն *չորից* պատճառաց: - 664. Եւ լինի հիւանդութիւն ի *չորից* իմն պատճառաց: - 665. Զի *չորք* իրք դժուարին է. որ առանց կամաց մեր լինին: - 668. Իսկ զի *չորիցն* բարձեալ տանին, նշանակէ որ **բ** հրեշտակք պահապանք ամբառնան զհոգին...: - 671. Իսկ տանիլն ի **դ** անկիւնս եկեղեցւոյն, վկայե՛ն նմա թէ՝ *չորեքին* աւետարանչացն խրատու շուրջ եկն զեկեղեցեաւն...: - 673. ...այնմ խորհրդով որ ընդ *չորս* կողմն տիեզերաց աւետարանեցաւ: - 673. Եւ խաչն բարձրացեալ զի նշան խաչին քրիստոսի յայնժամ ընդ երկնիւք ծագեսցէ և *զչորս* կողմ աշխարհի լցուսցէ: - 676. Երեսուներորդ, յա՛յտ է յորպիսութեանցն *չորից* որ ասացաւ յառաջագոյն եթէ ատ հոգի մարդոյն է ի մէջ բարեաց և չարեաց. իսկ յետ մահու ի մէջ բարեաց միայն. իսկ ի յարութեանն ի մէջ բարեաց և փառաց: - 694. Իսկ որք հաստատե՛ն զքաւարան հրոյ՝ *չորիւք* մեղանչեն ինքեանց: - 698. Դարձեալ ասեմք, թէ սուրբն ոսկեբերան ըստ *չորից* հակառակի՛ և ստէ՛ զնոսա: - 702. *Չորիւք* եղանակօք քարշէ ընդ ինքեան զմարդիկ...: - 708. Եւ զինեսցի *չորիւք* եղջերօք: - 708. Նա՛խ՝ որպէս **բժ**ան գունդ հրեշտակացն և *չորք* կենդանիքն զբոլոր երկնային զօրսն նշանակեն, նոյնպէս և **իդ** երիցունքն զբոլոր դասս սրբոցն: - 711. Երկրորդ, որպէս *չորք* կենդանիքն զվեհագոյնս և զնախամեծարս երկնայնոցն ցուցանեն. նոյնպէս և իդ երիցունքն զնախամեծարս ընտրելոցն մարդկան...: - 711. Երրորդ, որպէս իդն բազում է քան *զչորսն*. նոյնպէս կարծի վեհագոյնքն ի մարդկանէ բազում գոլ քան զվեհագոյնս երկնայնոցն: - 711. *Չորիւք* իմանի յետին փողն: - 713. ...վասն զի *չորիցս* գոչէր փողն ազդարար ի չուել բանակին իէլի: - 713. Երկրորդ, զի *չո՛րք* են սկզբունք աշխարհի. երկինք որ է՛ երկուք. հուր և օդ. և երկիր որ է՛ **բ** իր. հող և ջուր: - 714. Այսպէս **դ** տարերք *զչորեքին* գործս մեր ընդ էութեանս ունին յաւանդի և յառաջ բերեն: - 714. Նա՛խ՝ զի ո՛չ է ի *չորից* տարերց ժողովեալ որ քակտելով մահանայ: - 715. Երկրորդ, մարդս մա՛սն է աշխարհի. զի մարմինն է ի *չորից* տարերց... - 717. ...որպէս ասէ «մերձեցաւ ոսկր առ ոսկր, և յօդ և ջիլք և մորթ, և ապա եկն շունչ ի *չորից* հողմոց»: - 717. Գիտելի՛ է, զի ոմանք հերձուածօղք մոլորեցան վասն յարութեան մեռելոց և ասացին թէ մարմինն ո՛չ բաղկանայ ի *չորից* տարերց. այլ լինի պարզ: - 720. Եւ բաւականութիւն է զարդուցն պատճառի յերից մասանց հոգւոյն և ի *չորս* տարերաց մարմնոյն: - 721-722. Եւ այս գիտելի է, զի տէր մեր քրիստոս նախ քան զյարութիւնն *զչորեսինս* զայս եցոյց ի մարմին իւր: - 722. Ասեն վարդապետք՝ եթէ են ինչ որ էութեամբ և պատահմամբ անցանեն. որպէս կենդանիք և տունկք և որ ինչ ի *չորից* տարերաց են գոյացեալք: - 727. Զի որպէս փայլակն ելանէ յարևելից ի վերայ լուսեղէն ամպոյ, և քառաձև լուսովն լնու *զչորս* կողմ աշխարհի և հաստատի ի գողգոթայ յորում խաչեցաւ տէրն: - 732. Նա՛խ՝ զի ամենայն որ ի *չորից* տարերց է՝ կրէ՛ զապականութիւն. արդ խաչն փա՛յտ է և ի *չորից* տարերց. ապա ուրեմն ապականի և նա՛: - 732. *Չո՛րս* են դատաւորք: - 738. Եւ դատաստան հատուցման ամենեցուն է, այլ դատաստան քննութեանն ո՛չ. զի ի *չորս* բաժանին ամենայն դատեցեալք: - 738. Փոփոխումն գրոյն պատճառի ի *չորից:* - 742. Զի դատաւորք երկրի վասն *չորից* թիւրեն զդատաստանս: - 744. Երեքթելեան լարքն, հոգին եռամասնեայ և մարմինն ի *չորս* տարերաց: - 744-745. Եւ արդարութիւնն առ այս է ըստ *չորից* իմն եղանակաց: - 745. Դարձեալ կշիռք արդարութեան առանձնապէս իմանի տէր մեր ըստ *չորից:* - 745. Եւ նմանապէս ըստ *չորից* իմն է արդարութիւնն: - 746. Իսկ ուրախութիւնն աստուծոյ *չորիւք* իմանի: - 748. Վասն *չորից:* - 750. Վասն *չորից* անհանգիստ տանջին մեղաւորքն յաւիտեան. որպէս տեսանի ի մարմնաւոր տանջանացս: - 750. Եւ *չորք* է յատկութիւն որդանցն. զի երևելեօքս աներևոյթն իմանի: - 753. Գիտելի է, զի հոմանուն է արքայութեան կոչումն. և *չորիւք* եղանակօք ասի: - 754. Ի ծովուց ջուրց ի *չորից* նաւաց հազիւ միոնն կորնչի. և ի ծովու այսմ աշխարհի ի *չորից* նաւաց հազիւ միոնն ի նաւահանգիստ փրկութեան հասանէ: - 764. Իսկ եթէ ոք զփոփոխումն ի մեզ ասիցէ ըստ օրինակի արեգական. որ *զչորեսին* եղանակս կազմէ՛ և ինքն անյեղ մնայ: - 778. Եւ յայտնանէ երևի *չորս* ինչ հարկաւոր զղջման. այսինքն է որպիսութիւնն, ժամանակն, յորմէ, վասն որոյ: - 780. Իսկ հաւատ ուղղակի և վարձատրելի՝ է՛ մարդկայինս ազգի ի ճանապարհի աստի կենաց. և *չորիւք* բացակատարի: - 784

**Ռ** - Եւ ի միոյ աստուծոյ եղեն **Ժ** դասք հրեշտակաց ընդ մարդկան. և հարիւր գունդքն ըստ ոչխարաց առակին. և ***Ռ*** կենդանեաց տեսակքն որ յերկրի. և բիւր անկենդան բուսոց. և անթիւ գոյեղէնք: - 109. Որ է՛ **Ժ**,

**ճ**, ***ռ***, բիւր: - 141. Եւ դարձեալ, **ճ** տասն` հազա՛ր է. և **ճ** հարիւրն` **ժ** հազար է. որ է՛ բիւր մի. և **ճ** հազարն` **ժ** բիւր է. և ***ռ*** հազարն` **ճ** բիւր է. և ***ռ*** բիւրն` **ժճռ** է: - 141. Երկրորդ` զի առաջին և սկիզբն է թուոց. որպէս միակն թիւ բազմանայ և խառնի յայլս, այսինքն` ի **ժ**. ի **ճ**. ի ***ռ***. և ի բիւրն. և ի միութենէն իւրմէ ո՛չ որոշի: - 178. Ըստ այնմ` «***ռ*** ամ յաչս տեառն որպէս օր երեկի որ էանց, և որպէս պահ մի գիշերոյ»: - 193. Չորրորդն է ինքն դարն. զորմէ ասի. «***ռ*** ամ յաչս տեառն որպէս օր երեկի զի էանց»: - 195. Ասեն թէ ***ռ*** ազգ է. **ո** ի ցամաքի թռչնովք. և **Ն** ի ջուրս: - 216. Եւ վասն ողորմութեան և գթութեան ի ***ռ*** ազգս: - 284. Վասն է՞ր նահապետքն ի ***ռ*** ամն ո՛չ հասին. այլ **թճ**, աւելի և կամ պակաս ապրեցան: - 290. Ոմանք ասեն թէ` ***ռ*** ամ եկաց ադամ ի դրախտին: - 290. Եւ այլք ասեն ընդդէմ այսմ, եթէ յետ ***ռ*** ամին ի դրախտէն փոխիլոց էին յարքայութիւնն թէ պահէին զպատուիրանն. և յորժամ ելին ի դրախտէն` ի նոյն թիւն ո՛չ հասին: - 290. Զի վասն առաջնոյն ասեն վարդապետք, եթէ ադամ ո՛չ եկաց ի դրախտին ***ռ*** ամ, կամ աւելի և կամ պակաս, այլ մի օր. մանաւանդ **է** ժամ: - 290. Նախ` եթէ ***ռ*** ամն մեր` յաչս տեառն որպէս օր մի է: - 290. Երրորդ` **թ** դաս հրեշտակաց է յերկինս. և **ժ**երորդն մարդն կատարումն թուոյ նոցա. վասն այն ի կեանս այս ո՛չ հասանեն ի ***ռ*** թիւն կատարեալ. զի աստ ո՛չ լինի կատարումն դասուցն այլ ի հանդերձեալն: - 291. Չորրորդ` գլխաւոր թիւքն **դ** են. այսինքն **ժ**. և **ճ**. և ***ռ***. և բիւր: - 291. Լուծք եզանցն ***ռ***: - 326. Եւ էշք արօտականք ***ռ***: - 326. Զի՞նչ է «առնել զողորմութիւն ի ***ռ*** ազգս»: - 351. Երկրորդ, «'ի ***ռ*** ազգս», վասն առաքինի հարց` բարի առնէ զաւակաց բարեաց: - 351. Եւ թեթևացնէ՛ զպարտս մեղաց. որպէս արար ողորմութիւն միածին բանն աստուած յիշելոյ զառաջին արդարսն. ըստ այնմ, «յիշեաց յաւիտենից զուխտ իւր. և զբանն զոր պատուիրեաց մինչ ի ***ռ*** ամ»: - 351. Ոմանք ասեն թէ` ***ռ*** ամն յաւիտեան կոչի: - 369. Ասեն թէ` ***ռ*** կին էր սողոմոնի. է **ճ** տիկնայք, և **գ ճ** հարճք. և նոցա ***ռ*** պահապան. իսկ ի փորձելն խաբեաց զհազար կանայսն. և ի յարանցն մին ո՛չ խաբեցաւ. այս առասպե՛լ է: - 440. Երրորդ, ըստ քանակին այսպէս. զի ոմն մի գործեաց զպոռնկութիւն, և ոմն ***ռ***: - 565. Նախ` զի կարէ՛ միանգամայն ծնանիլ բոլոր ազգ մի. եթէ ***ռ***, եթէ բիւր. ըստ այնմ «ո՞ր ետես և լուաւ եթէ երկնեաց սիօն և ծնաւ ազգ մի ողջոյն»...: - 590. Վեցտասաներորդ, ***ռ*** ամ կապելոյն սատանայի: - 660. Ասեմք եթէ` այսմ պատասխանի ասացաւ յառաջագոյն. զի ո՛չ ուղղակի իմանան վասն առակին. զի երեկոյ կատարա՛ծն է աշխարհիս. զի «***ռ*** ամ յաչս տն որպէս օր երեկո՛յ է»: - 696. Զի՞նչ է կապիլն սատանայի ***ռ*** ամ: - 705. Այլ ***ռ*** ամ է յառաջին գալստենէն քրիստոսի մինչև յերկրորդն...: - 706. Թագաւորէ՛ նեռն զաւուրս ***ռ*** երկերիւր **հևը**, ըստ դանիէլի: - 709. ...եթէ սուրբք որ աստ չարչարեցան, յառնեն յառաջագոյն և փափկանան մարմնով ***ռ*** ամ. և ապա հասարակ յարութիւնն ամենայն մարդկան: - 710. Այլ և ***ռ*** ամն է յառաջին գալստենէն քրիստոսի մինչ յերկրորդն. զի զբազում և զառաւելն նշանակէ: - 710. Ցուցանեն այսոքիկ զկատարեալ և զառաւել հանգիստ սրբոցն այժմ յուսով և յետ մահու հոգւով թագաւորեալ ընդ քրիստոսի. և ապա յետ յարութեանն հոգւով և մարմնով ո՛չ ***ռ*** ամօք. այլ անվախճան կենօք... - 710. Նա՛խ նշանակէ զփոքր ժամանակն մինչ ի գալուստն միւս անգամ. զի «***ռ*** ամ յաչս տն որպէս օր երեկի»: - 730. Կամ երկայնակեաց որպէս զմաթուսաղայ. որ մերձ ի ***ռ*** ամն ժամանեաց: - 761. Որ քարոզեսցեն զաւուրս ***ռ*** երկերիւր **կ** և **զ**: - 785

**ՌԶԳ** - Տեառն` ***ռծգ***: - 412

**ՌճԵ** - Տէր` ***ռճե***: - 412

**ՌՄ ԵՒ Կ** - Եւ քարոզեսցեն զաւուրս ***ռմ և կ.*** այսինքն **գ** ամ և կէս. որպէս ասէ տեսիլն: - 709

**ՌՆԾ** - Ռուբէն. Շմաւոն. և Գադ. **ժե** բիւր և ***ռնծ*** զօրք նոցա: - 378

**ՌՌ** - Դան. Ասեր. և Նեփթաղիմ. **ժե** բիւր և ***ռռ*** զօրք նոցա: - 378

**ՌՊ** - Ապա ուրեմն **ժ** մասն է **ո** րոպէ. և մէկ ժամն ***ռպ*** րոպէ: - 191

**ՌՔ** - Զի՞նչ է ***ռք*** հազարաց և բիւրք բիւրուցն զոր ետես դանիէլ: - 141. Վասն որոյ ասէ ***ռք*** հազարաց և բիւրք բիւրուց, ո՛չ զորքանն նշանակէ, այլ զանբաւն: - 141. Եւ մարգարէն դաւիթ ի ձախ կողմն ***ռք***, և ի յաջն բիւրք ասէ անկանիլ: - 404

**ՍԲճ** - Եւ ժողովեալ մէկ օրն **իդ** ժամ` լինի **դ** բիւր և ***սբճ*** րոպէ: - 191

**ՎԱԹՍՆԵՐՈՐԴ +** *Վաթսուներորդ)* Թիւ գլխաւոր արարածոց: - 155. *Վաթսուներորդ*, մարտեաւ ընդ ադրիազարու և սպան զնա և քակեաց զկառս նորա, և զթագն եդ ի գլուխ իւր...: - 438

**ՎԱԹՍՈՒՆ +** *Վաթսուն*, Մոխիր երինջոցն. և սրբութեան ջուրն: - 285. *Վաթսունն* **զ** տասն է. նշան նոցա` որք զ**ժ** բանեան օրէնսն կատարեն ի **զ** դար կենցաղոյս. այսինքն ի տղայութենէ մինչ ի մահ. նոքա թագուհիք և ժառա՛նգ են արքայութեանն: - 440. Իսահակ լեալ ամաց *վաթսնից*` ծնաւ զեսաւ և զյակոբ: - 452. Յակովբ *վաթսուն*: - 453. Այլ և վեց փոխ է սաղմոսն այն և *վաթսուն* տուն: - 637. Եւ է՛ այժմ **ժէ** շաբաթապահք. և թիւ *վաթսնիցն* **թ** շաբաթ...: - 650. Իսկ *վաթսունն* զբաբելօնի պատկերն **կ** կանգուն երկայն, և **զ** լայն. յորում ընդարձակեցաւ կռամոլութիւն: - 708

**ՎԱԹՍՈՒՆԲ** - 1

**ՎԱԹՍՈՒՆԳ** - 1

**ՎԱԹՍՈՒՆԵԻԴ** - 1

**ՎԱԹՍՈՒՆԵԻԵ** - 1

**ՎԱԹՍՈՒՆԵԻԶ** - 1

**ՎԱԹՍՈՒՆԵԻԷ** - 1

**ՎԱԹՍՈՒՆԵԻԸ** - 1

**ՎԱԹՍՈՒՆԵԻԹ** - 1

**ՎԱԹՍՈՒՆԵԻՄԻ** - 1

**ՎԵՇՏԱՍԱՆ +** Եւ ի **հը**-էն մինչև ի մահ, և կամ ի **ճժբ** ամն, լինի զառամացեալ. որ է եօթնիցս <u>*վեշտասան:*</u> - 265

**ՎԵՇՏԱՍԱՆԵՐՈՐԴ** - 24

**ՎԵՑ +** Այլ առաւել վատթար և՛ս է վասն <u>*վեցից:*</u> - 33. Դարձեալ՝ ծնունդք որ յերկրի՝ <u>*վեց*</u> եղանակաւ ասին: - 53. Տե՛ս՝ զի հոգին բղխումն է հօր անձամբ. և առումն յորդւոյ իմաստութեամբ. որպէս ցուցաւ ի <u>*վեց*</u> գլուխն ի **ժգ** համարն: - 105. Դարձեալ՝ գիտելի է, զի յաւիտեանն և միշտ և ժամանակն՝ <u>*վեցիւք*</u> զանազանին: - 116. Երրորդ՝ զի վեցեակ թիւն ի մէջ ամենայն թուոց առաջին կատարեալ է. և **զ** թիւն է ի բոլորակ ձևն. զի որ քան է ի միջին կիտէն ի բոլոր ծիրն, <u>*վեց*</u> այնչափ է իւր բոլորակ ծիրն: - 182-183. Եւ այս **բժ**ան կենդանակերպից <u>*վեցն*</u> է ի մէջ երկնից ի հիւսիսոյ կողմս առ մեզ, և ի մին կիսագունդն: - 189. Եւ <u>*վեցն*</u> ի կողմն հարաւոյ ի միւս կիսագունդն: - 189. Արդ յամենայն ամիս կէս օրն՝ ի բոլոր տարին լինի <u>*վեց*</u> օր պակաս լուսնոյն: - 191. Վասն է՞ր զերկնայինսն կատարեալ ստեղծ աստուած, և զերկրաւորքս ըստ կարգի յաւուրս <u>*վեց:*</u> - 192. Ութերորդ՝ նշանակէ <u>*վեց*</u> թիւն որ է՛ կատարեալ՝ թէ բոլոր կատարելութիւն աշխարհիս ի յաստուծոյ է ստեղծեալ. երկինք և երկիր՝ և ամենայն ինչ: - 192-193. Իններորդ՝ ի <u>*վեց*</u> օրն ստեղծեալ աշխարհ. նշանակէ՛ **զզ** դարս. որով մնայ աշխարհ: - 193. Քանզի եբրայեցիք և մակեդոնացիք՝ Զաւելեաց աւուրքն դնեն գլուխ տարւոյ. և ասեն օր առաջին. և **բ**. և **գ**. և **դ**. և **ե**. և <u>*վեցն*</u> մուտ Նիսան ամսոյ. որ թարգմանի կազմութիւն: - 200. <u>*Վեց*</u> են նշանակութիւնք երկրի: - 210. Իսկ մայրք անպտուղք՝ են պիտանացու ի <u>*վեց*</u> իրս: - 212. <u>*Վեցն*</u> որովայնն: - 241. Զի <u>*վեցն*</u> որ է՛ կատարեալ թիւ, և նիւթն այն է՛ ի չորից տարերց, և ունի առ ինքն զկազմողական և զտնկական զօրութիւնն որ է **զ**: - 262. Իսկ տունկք որք են մեծաբոյսք՝ և չորքոտանիք մեծամեծք՝ **յ**երրորդ ամին ծնանին զնմանն. որ է թիւ կրկին ամսոյ ընդ երրեակ <u>*վեցից:*</u> - 264. Եւ այսպէս միջին հասակս կատարեալ, ձգի մինչև ի **խզ** ամն. որ է **դ ժզ**. և <u>*վեցն*</u> կատարեալ թիւ է. և աստ տիրէ ալիք և սկիզբն լինի ծերութեան մինչև ի **հբ** ամն. յորում է ծայրք կենաց ըստ դաւթի, և թիւ երկոտասան <u>*վեցից*</u> խորհրդաւոր: - 265. Ութերորդ՝ զի էառ իսահակ զհարսն և ուրախացաւ ի տան մօրն իւրում սառայի. որ <u>*զվեց*</u> ամ փրկեալ գոյր և ո՛չ ոք մտեալ: - 305. Եւ տէրն զհարսնացեալ եկեղեցի եմոյծ վերըստին ի դրախտն որ <u>*զվեց*</u> դարիւ արգելեալ էր և փակեալ: - 305. <u>*Վեցն*</u> զկատարելութիւն մարմնոյն ցուցանէ, և հարիւրն, զհոգւոյն. և հազարն, զպատիւ կենաց յաւիտենից: - 315. <u>*Վեց*</u> են թշնամիք քրիստոսի: - 316. Ոմանք **է** ամ ասեն. ըստ որում ի <u>*վեցից*</u> վշտաց փրկեսցէ, և յեօթներորդին ո՛չ փորձեսցի չար: - 326. Մին՝ քահանայապետք և քահանայք. և <u>*վեց*</u> պաշտօնեայք: - 380. Զի աթոռք՝ քերովբէք՝ սերովբէք՝ հաւասարապատիւք են՝ մի համարի դասս. և <u>*վեցն*</u> զկնի նոցա: - 380. <u>*Վեց*</u> քաղաքաց հրամայեաց որոշել ապաստանի և տալ քահանայից. **գ** յերկիրն քանանու և **գ** յայնկոյս յորդանանու: - 392. Զի ի ռոբովամէ՛ որ զերինջսն գործեաց՝ <u>*վեց*</u> եօթանասուն ամ է մինչև զգերութիւնն սակաւ ինչ պակաս. վասն որոյ եօթանասուն ամ շաբաթեցոյց զնոսա ի գերութեան: - 448. ...նշանակէ զքրիստոս որ եղև երկրորդ ադամ. և ի <u>*վեց*</u> դարուն կանգնեաց զկործանեալ բնութիւնս...: - 449. <u>*Վեց*</u>՝ դանիէլն: - 451. Ի <u>*վեցից*</u> իրաց փրկեաց: - 454. Քսանգ, Վասն տօնի ծննդեանն ի <u>*վեցն*</u> յունվարի **ժե** պատճառաւ: - 454. <u>*Վեց*</u> իրս յայտնէ մեզ աստանօր պատգամ հրեշտակապետին: - 464. Ի <u>*վեց*</u> իրաց գլխաւորօրէն փրկութիւն ներգործեաց. ըստ յոբայ <u>*վեցիցս*</u> փրկեցաք նովաւ: - 473. Ապա ուրեմն ի <u>*վեցից*</u> գլխաւոր վշտաց փրկեաց զմեզ: - 474. Եւ յիսուս անունն՝ են <u>*վեց*</u> գիր. որ կարեն լինիլ սկիզբն այսպիսի ասութեանց. այսինքն Յարազուարճութիւն տրտմեցելոց: - 474. Յառաջագոյն ամենայն ազգք քրիստոնէից սկսեալ յառաքելոցն այսպէս տօնէին. ի <u>*վեցն*</u> յունվարի զծնունդն, և ի նմին աւուր զմկրտութիւնն ըստ աւետարանին վկայութեան: - 482. Ա՛րդ՝ կարգեցին բազմազան վկայութիւնս զոր հաստատապէս տօնեմք զծնունդն քրիստոսի ի <u>*վեցն*</u> յունվարի: - 483. Եւ այս ամենայն ազգաց յա՛յտ է, որ ի յունվարի <u>*վեցն*</u> տօնեն մկրտութեան. ապա ուրեմն նոյն օրն է և ծննդեանն: -

484. Տասներորդ՝ զի և ազգն հռօմայեցւոց մինչև ցայսօր յայտնապէս ի <u>*վեցն*</u> յունվարի զերից տօնից յիշատակս կատարեն: - 484. Երեքտասաներորդ՝ ականատես տնօրէնութեանն եղբայր տն յակոբոս որ կարգեաց զընթերցուածն, յունվարի <u>*վեցն*</u> աւանդեաց զտօնն ծննդեանն. և ի նոյն օրն դարձեալ զմկրտութեանն: - 484. ...զի զքառասնօրեայ գալուստն ի տաճարն՝ ըստ ծննդեանն տօնեսցեն և ո՛չ ըստ յայտնութեանն. որ է՛ յունվարի <u>*վեցն*</u>. զոր մեք տօնեմք **խ** օր թուեալ մինչև ի **ժդ**ն փետրվարի: - 485. <u>*Վեց:*</u> - 490. Երկրորդ՝ <u>*զվեց*</u> կենդանակերպսն կոխեաց, որ էր **եժ**ան աւուր ճանապարհ ի կուսէն ի խոյն ընթացեալ: - 490. Երկրորդ այսպէս, զի յուրբաթի գիշերն ըմբռնեցին մինչև <u>*զվեց*</u> ժամն որ խաւար եղև մինչև ցինն ժամն: - 516. <u>*Վեց:*</u> - 516. Վասն <u>*վեցից*</u> պատճառաց: - 520. Առաքելութիւնն <u>*վեցիւք*</u> կատարի: - 535. <u>*Վեց*</u>. և են այսոքիկ: - 535. Չորրորդ՝ <u>*վեց*</u> են շարժութիւնք մարմնոյ. այսինքն վեր և վայր. յաջ և յահեակ. յառաջ և յետ: - 560. Այսպէս յառաջ գան ի <u>*վեց*</u> շարժմանց **ը** խորհուրդք: - 560. Զառաջին <u>*վեցն*</u> ունիմք յաւետարանէն. և զեօթներորդն ի տուրիթայ: - 585. Ասեմք թէ <u>*վեց:*</u> - 618. Այս է՝ նախ **զ**երրորդ ժամուն. և ապա՛ <u>*զվեց*</u> ժամուն. և ապա՛ զինն ժամուն. որ աւա՛րտ էր նոցա աղօթիցն: - 621. Եւ <u>*վեց*</u> կիսափոխն՝ յաւելեալ ժամուցն մինչ ի հանգստեանն: - 622. Դարձեալ՝ **բժ**անն կրկին <u>*վեց*</u> է...: - 624. Յօրինակ յեսուայ, որ տապանակաւն և քահանայիւք և ժողովրդովք <u>*զվեց*</u> օր շրջեցաւ լռութեամբ...: - 627. ՚Ի յայս միտս <u>*զվեց*</u> գուբղայն ի թիւ ասեմք. և զեօթներորդն ծայնիւ փողոյ: - 627. Եւ ճաշոյն մեսեդի **զ** թուով, ի խորհուրդ <u>*վեց*</u> դարուս: - 629. Եւ դարձեալ՝ ի հինումն <u>*վեց*</u> դնէին զհաց երեսացն. և յաւուր շաբաթի կրկին **զ**: - 629. Նմանապէս և ամենայն շարական **զ** տուն է, և հարցն **զ**. զի <u>*վեցն*</u> կրկին **զ** է: - 637. Այլ և <u>*վեց*</u> փոխ է սաղմոսն այն և վաքսուն տուն: - 637. ...պահեմք զչորեքշաբաթն. և <u>*վեցիւք*</u> շարժմամբ ի մեղս ընթանամբ, պահեմք զուրբաթն: - 653. Եւ <u>*վեցն*</u> ի կատարումն վեցեակ դարին նոր ապստամբն ելցէ և կորուսցէ զբազումս: - 708. Եւ ունի բեհեզն <u>*վեց*</u> յատկութիւնս որ նշանակէ զվայելչութիւն հոգւոց սրբոցն ելեալք ի մարմնոյ: - 712. ...որպէս <u>*վեց*</u> մեռեալքն որք յարեան նախքան զքրիստոս. և յարութիւնս այս անկատար է. զի դարձեալ մեռան: - 716. Եւ գիտելի է, զի ուրախութիւն ընտրելոցն հանդիպեսցի իբրև ի <u>*վեց*</u> կողմանէ: - 762. Այսպէս ի <u>*վեցից*</u> կողմանէ եղիցի ուրախութիւն սրբոցն. որ եղև հաւաքեալ ի վարդապետաց սրբոց: - 765. Եւ այս աղէտ անզերծ տարակուսից շրջապատեալ զմեզ շրջագայութեամբ տօմարի հայկազեան սեռից, հարիւրից կրկնակի՛ քառից և վեցեա՛կ <u>*վեցից:*</u> - 789

**ՎԵՑԵԱԿ +** Երրորդ՝ զի <u>*վեցեակ*</u> թիւն ի մէջ ամենայն թուոց առաջին կատարեալ է. և **զ** թիւն է ի բոլորակ ձևն. զի որ քան է ի միջին կիտէն ի բոլոր ծիրն, վեց այնչափ է իւր բոլորակ ծիրն: - 182-183. Եւ վեցն՝ ի կատարումն <u>*վեցեակ*</u> դարին նոր ապստամբն ելցէ և կորուսցէ զբազումս: - 708. Եւ այս աղէտ անզերծ տարակուսից շրջապատեալ զմեզ շրջագայութեամբ տօմարի հայկազեան սեռից, հարիւրից կրկնակի՛ քառից և <u>*վեցեա՛կ*</u> վեցից: - 789

**ՎԵՑԵԿԻ կամ ՎԵՑԵԿԻՆ -** Երրորդ՝ զի բոլորակ ունի ձևս. որ է կատարեալ <u>*վեցեկի*</u> չափովք: - 184. Զի բոյսք մանունք և չորքոտանիք մանունք կարեն ի նոյն ամի զնմանն ծնանիլ ըստ վերոյ ասացեալ երրեակ թուոյ ամսոյ, կամ կրկին <u>*վեցեկի:*</u> - 264. Եւ այսպէս է ըստ ոմանց <u>*վեցեկի*</u> շարժմունք հասակի մարդոյս որպէս ասացաւ. այսինքն Երեխայ: - 265. <u>*Վեցեկի*</u> պարգևք են հոգին սուրբ: - 455. Գլխաւորագոյն <u>*վեցեկի*</u> պարգևօք լցոյց զնոսա: - 524. ...և մեք հանապազ <u>*վեցեկի*</u> շարժմամբ հոգւով և մարմնով մեղանչեմք...: - 624

**ՎԵՑԵՐՈՐԴ** - 347

**ՎԵՑԵՔԵԱՆ կմ ՎԵՑԵՔԻՆ +** Ա՛րդ՝ ցուցցուք՝ զի <u>*զվեցեքինն*</u> սոցա բաժանեն երկաքնակքն: - 87. Այլ ոտք զհաւատացեալ անդամս իւր ասէ. զի սոքա՛ <u>*վեցեքին*</u> թշնամիքս կոխան լինին հաւատացելոց ի կատարածի: - 317. Երրորդ՝ <u>*վեցեքեանն*</u> ունին լոյս, և առնուն զիւղն ի միջոյն. և ամէն մոլորակք ունին լոյս. և այլ առնուն յարևու: - 346. Զի էգն, և չէ զոտքն, և անկատարն, և անհաւատն, և արիւնահեղն, և կարգաւոր, սոքա <u>*վեցեքեան*</u> ո՛չ կարեն զենուլ զի պիղծ է զենն նոցա: - 365. Եւ այսպէս <u>*վեցեքին*</u> սոքօք ընտրեսցի սուրբ զենումն: - 365. Իսկ փառասիրութիւն և հպարտութիւն ո՛չ են այսց կարգաց. այլ յորժամ <u>*զվեցեքին*</u> սոքա յաղթէ, ապա՛ փառասիրի և հպարտանայ: - 561

**ՎԵՑՀԱՐԻՒՐ +** Երկրորդ՝ զի խ քաղաք առին ի բենիամենէ՛ յուղայի ցեղքն վասն շնութեան կնոջն պատահելոյ. և կոտորեցին զնոսա առ հասարակ իեռ արս. և մնաց <u>*վեց հարիւր*</u> այր զոր յետոյ ըստացան ժառանգութիւն իւրեանց. որպէս յա՛յտ է ի դատաւորաց վերջքն: - 312. <u>*Վեց հարիւրն*</u> զամս նոյի. որ էր **ո** ամաց և ջրհեղեղով ջնջեցան ապստամբքն: - 707-708

**ՎԵՑՏԱՍԱՆԵՐՈՐԴ** - <u>*Վեցտասաներորդ*</u>՝ զի ամենայն լուսաւորք ի նմանէ՛ առնուն զլոյսն: - 186.

*Վեցտասանէրորդ*՝ Մասանց հոգւոյն: - 228. *Վեցտասանէրորդ*՝ Ձաւակն բերսաբէի մեռաւ: - 413. *Վեցտասանէրորդ*, **ռ** ամ կապելոյն սատանայի: - 660. *Վեցտասանէրորդ*, ասէ ի յոհաննու աւետարանն, «երթամ և պատրաստե՛մ ձեզ տեղի. դարձեալ գամ և առնում զձեզ առ իս»...: - 692

**ՎՉԼ** - Ըստ եօթանասնից ***վչլ*** ամաց պատմութիւն է: - 411

**ՎՊԹ** - Իսկ ըստ եսեբեայ, ***վպթ*** ա՛մ է. զկայնան ճի ամ ի ներս առեալ, որ է՛ որդի արփաքսաթայ՝ և հայր սաղայի. զոր յիշէ աւետարանն, և ո՛չ յիշէ մովսէս: - 337

**ՎՊԾ** - Իսկ ըստ եսեբեայ ***վպծ*** ամք. թիւ մի պակաս: - 411

**ՏԱՍՆ +** Այսքան առ երկրորդն՝ *տա՛սն* գլխով եղեալ հակաճառութեանց զպատասխանիսն. և **բժ**ան գլխով առհասարակ տարահաճելիս: - 13. Տասներորդ՝ Վկայութիւնք վասն համագոյ Երրորդութեանն *տասն* գլխով: - 30. Ութերորդ՝ մինն պատկելով առնէ *զտասն*՝ և զհարիւր՝ և զհազար՝ և զբիւրն. և զանթիւն: - 109. Իններորդ՝ մինն յայտնի է ի *տասն* և ի հարիւրն և ի հազարն և ի բիւրն ընդ աղօտ և ծածուկ: - 109. Երկրորդ՝ թէ մինն ի *տասն* դասուցն անկաւ և մնաց ինն: - 134. Վասն *տասն* պատճառի: - 139. Քանզի **ժ** *տասն*՝ հարիւր է. և **ժ** հարիւրն՝ հազա՛ր է. և **ժ** հազարն՝ բիւր է: - 141. Եւ դարձեալ, **ճ** *տասն*՝ հազա՛ր է. և **ճ** հարիւրն՝ **ժ** հազար է. որ է՛ բիւր մի. և **ճ** հազարն՝ **ժ** բիւր է. և **ռ** հազարն՝ **ճ** բիւր է. և **ռ** բիւրն՝ **ժճռ** է: - 141. Ութերորդ) *Տասն* ստորոգութիւնքն այսպէս ուղղին: - 154. Երեսուներորդ) Յատկութիւնք առաւօտու և հասարակ աւուր. երեկոյի և գիշերոյ. *տասն տասն* գլխով: - 154. *Տասն* բնական երկինքն. և **ե** յատկական. և **ե** ըստ նմանութեան. որ լինին ի երկինք: - 184. Իսկ հայոցս է՛ ի վերայ հայկին ըստ *տասն* ծննդոցն: - 200. Այլ և քաղի ժամք և մասունքն. զի քաղոցի *տասն* ձմեռնամո՛ւտ է: - 200. Երեսունն**ը**՝ *Տասն* աստիճան անկմանն ի դրախտէն: - 228. *Տասն*՝ բարձքն: - 241. Ասեմք առ այս, եթէ քառասունն ունի զչորս և *զտասն* թիւն. զի **դ** *տասն* է: - 261-262. Արդ՝ **ժ** թիւն կատարեալ է. և չորսն տարրական է. այսինքն զի կատարեալ հոգին բանական ի նո՛յն ժամն խառնեալ միաւորի ընդ մարմնոյն տարրական, և կերպացեալ լինի մի մարդ մի դէմ և մի բնութիւն մարդոյ ի հոգւոյ և ի մարմնոյ. որպէս քառասունն ի *տասանց* և ի չորից է գոյացեալ: - 262. Իսկ որք ի **խ** աւուրս ծնանին և կամ **ի ի**, որպէս հաւ. ունին նոքա զխորհուրդ չորից *տասանց* և չորից հնգից, ըստ **ե** զգայութեանց ներքոյ և **ե** զգայութեանց արտաքոյ որպէս ասացաք: - 263. Եւ կրկնեալ ի հնգետասանէն մինչև ի **լ**, կատարի երիտասարդական հասակն. որ է **գ** *տասամբ* կատարեալ. ունելով զցանկականն և զցասմնականն և զբանականն լիով առ ինքեան: - 265. Եւ զի բիւրն պարունակէ՛ զհազարն. և նա՛ զհարիւրն. և նա՛ *զտասն:* - 291. Վեցերորդ՝ նուիրեաց մելքիսեդեկ զպատարագն և ընկալաւ զտասանորդն. որպէս քրիստոս պարգևէ՛ հաւատացելոց զշնորհս, և առնու զտասանեակս զկատարեալ և զբարի գործս. կամ *զտասն* բանեան օրէնս **ժ** զգայարանօք: - 301. *Տասն* ամն մանկութեան է. և **ի**՝ պատանեակ զինուորութեան. և **իը**՝ երիտասարդութեան որ է՛ դէ: - 343. Դարձեալ, *տասն* են մասունք զգալի արարածոց. այսինքն՝ **է** մոլորական գունդք. և **ը**՝ անմոլարքն. և իններորդ ի լուսոյդ ի վայր. և մարդս **ժ** երորդ ի վերայ նոցա. որ է՛ բանական և բաժին աստուծոյ: - 376. Դարձեալ ցուցանէ՝ ի լրման ժամանակի *տասանց* միոյ կորուսեալ դրամին ի խնդիր ելեալ: - 376. *Տասն* հարւածք էր եգիպտոսի, վասն է՞ր միայն զանդրանկաց փոխարէնն խնդրէ: - 380. Երկոտասան լրտեսաց *տասունքն* չա՛ր համբաւէին. և երկուքն զբարութիւն երկրին: - 380. *Տասն* զօրութիւնք հոգւոյ և մարմնոյ զանգիտօղք և երկրասէրք: - 380. Իսկ այլ *տասունքն* իմաստասիրաց բանքն. որպէս պղատոնին. արիստոտէլին. պիթագորին և այլք. որք միայն զաստեա՛ցս պատմեն մեզ: - 380. Դարձոյց ի յորդանանու զբերզելի որ *տասամբքն* կերակրեաց զդաւիթ. ի տիպ հին օրինացն **ժ** բանեան զոր կատարեց քրիստոս: - 438. Վաթսունն՝ **զ** *տասն* է. նշան նոցա՝ որք զ**ժ** բանեան օրէնսն կատարեն ի **զ** դար կենցաղոյս. այսինքն ի տղայութենէ մինչ ի մահ. նոքա թագուհիք և ժառա՛նգ են արքայութեանն: - 440. Իսկ ի կիրակէի խնկարկելն և **ժ** օրհնութիւնն՝ նշանակէ *զտասն* քաղաքացն իշխանութիւն ունել. և **ժ** քանքարացն: - 628. *Տա՛սն* է. ինն ի դէմս քրիստոսի. և մինն ի հոգին սուրբ ի հոգէգալուստն: - 634. Եւ *տասն* մնասն, և **ժ** քաղաքաց իշխել: - 640. ...այլ արար գործի տասն աղի. զի *տասն* մատամբն որպէս խօսս նուագեսցէ աստուծոյ: - 641. *Տասն* աղին՝ **ժ** զգայութիւնքն հոգւոյ և մարմնոյ. և **ժ** մասունք արարածոց ընդ բան օրինացն: - 641. Իսկ ամիսն որ է՛ **գժ**, *տասն* զգայութեամբ մեր մտօք և բանիւ և գործով մեղանչեմք: - 683. Եւ ամիսն **գ** *տասամբ* բաղկանայ. զոր ի հաւատ սուրբ Երրորդութեանն և **ժ** բանեան օրինացն յանցաւոր գտաք: - 683. Յարազ ամն է թիւ կատարեալ. զի ունի *զտասն* հարիւրեակն: - 710

**ՏԱՍՆԱՒՈՐ** - Նոյնպէս և տէրն մեր ետ հաւատացելոցն զկենարար մարմինն և արիւնն իւր. յորոց խնդրէ ըզգործս *տասնաւոր*. այսինքն զկատարեալս. և զկատարումն **ժ** բանեան օրինացն. ի յորս է՛ մաքրութիւն **ժ** զգայարանացս որպէս ի վերոյ ասացաւ: - 302

**ՏԱՍՆԲ** - 1

**ՏԱՍՆԳ** - 1

**ՏԱՍՆԵԱԿ +** Տասներորդ՝ որպէս միակն է ի ներքոյ *տասնեկին* և հարիւրեկին և հազարեկին և բիւրեկին, այսպէս և ի վերոյ նոցա՛ է: - 110. Վեցերորդ՝ նուիրեաց մելքիսեդեկ զպատարագն և ընկալաւ զտասանորդն. որպէս քրիստոս պարգևէ՛ հաւատացելոց զշնորհս, և առնու *զտասնեակս* զկատարեալ և զբարի գործս. կամ զտասն բանեան օրէնս **ժ** զգայարանօք: - 301. Յինգերորդ՝ զի ունի զվերոյ ասացեալն խորհուրդ *տասնեակ* թւով. վասն որոյ յիրաւի անդրանիկն պատուեալ լինէր թէ ի հոգևորն և թէ ի մարմնաւորն: - 310. Դարձեալ՝ հարիւրեակ **զ**. և *տասնեակ* **զ**. և միակ **զ**: - 707

**ՏԱՍՆԵՐԵՔ** - *Տասներեք*՝ Ո՞րքան է յղացումն և ծնունդ: - 283

**ՏԱՍՆԵՐԿՈՒ** - *Տասներկու*՝ Բաղդատութիւն երից ծնողաց և ծննդոց. այսինքն սառայի, և մարիամու սրբոյն, և եկեղեցւոյ: - 283

**ՏԱՍՆԵՐՈՐԴ** - 198

**ՏԱՍՆԵՒԱ** - 1

**ՏԱՍՆԵՒԴ** - 1

**ՏԱՍՆԵՒԵ** - 1

**ՏԱՍՆԵՒՁ** - 1

**ՏԱՍՆԵՒԷ** - 1

**ՏԱՍՆԵՒԸ** - 1

**ՏԱՍՆԵՒԻՆՆ** - 1

**ՏԱՍՆԵՒՄԻ** - 2

**ՏԱՍՆԵՒՉՈՐՍ** - 1

**ՐԹՃՅՁ** - Եւ ըստ անանիա շիրակացւոյ, յաղամայ ի թուականն հայոց՝ են ամք՝ ***րթճզ:*** - 451

**ՐՃՂԸ** - Ըստ եօթանասնիցն՝ ***րճղը*** ամ: - 451. Եւ միանգամայն յաղամայ ի ծնունդն քրիստոսի ամք ***րճղը***. ըստ եօթանասնիցն որպէս ասացաւ ի վերոյ: - 453

**ՐՄԿԳ** - Եւ ըստ այլոց՝ ***րմկգ*** ամ: - 451

**Ց** - Եւ ըստ ասորոց և յունաց՝ ***ց*** ամ: - 451

**ՑՆ** - Յուդա. Իսաքար. և Զաբողոն. **ժը** բիւր և ***ցն*** զօրք նոցա: - 378

**ՑՊԽ** - Եւ մի մասն ժողովեալ՝ ի ***ցպխ*** ամն՝ լինի **յկ** մասն: - 191

**Փ** - Եւ նոր կտակարանքն ամենայն՝ են տունք՝ **ա՞**. ***փ***. **շղա**: - 451

**Ք** - Յին կտակարանքն ամենայն՝ են տունք՝ **ա՞**. ***ք***. **ճիթ**: - 451

**ՔԱՌԱՍՈՒՆ +** Նոյնչափ միւս ոտքն. որ լինի **զ** *քառասուն:* - 243. Ասեմք առ այս, եթէ *քառասունն* ունի զչորս և զտասն թիւն. զի **դ** տասն է: - 261-262. Արդ՝ **ժ** թիւն կատարեալ է. և չորսն տարրական է. այսինքն զի կատարեալ հոգին բանական ի նոյն ժամն խառնեալ միաւորի ընդ մարմնոյն տարրական, և կերպացեալ լինի մի մարդ մի դէմ և մի բնութիւն մարդոյ ի հոգւոյ և ի մարմնոյ. որպէս *քառասունն* ի տասանց և ի չորից է գոյացեալ: - 262. Եւ քանի՞ անգամ ել ի լեառն. և **զ** *քառասուն* պահեաց. և **դ** ծնունդն մովսէսի: - 284. *Քառասուն*, Զի՞նչ նշանակէր կատարումն պատարագացն: - 284. Եւ **դ** է *քառասունքն* մովսէսի բաց ի յեւսայն արտաքոյ միգին: - 352. Զայս ասէ մեծն ներսէս երեք *քառասունք* մովսէսի ըստ թւոյ ամաց նորին: - 353. Զնոյնս պահեմք և մեք **զ** *քառասունք:* - 353. Կամ զքրիստոսի *քառասունքն* պահեմք և զմովսիսին և զեղիային: - 353. Դարձեալ՝ **խը** քաղաք՝ մեծ պաքնէ *քառասնիցն:* - 392. Եւ *զքառասունսն* պահեաց. և պայծառացաւ ի թաբօր. և այլն: - 399. Երկրորդ՝ զի չարչարակից եղև մովսէսի. պահելով զերեք *քառասունս* ընդ նմա: - 414. *Քառասուն* ամ թագաւորեաց դաւիթ, որ է չորիցս **ժ**. և սկիզբն և կատարումն ամենայնի է՛ տէր մեր: - 437. Եւ դարձեալ՝ ի *քառասունս* իւր ո՛չ եկեր ծուկն. և մեք զքրիստոսի *քառասունսն* պահեմք և ո՛չ զիրէիցն: - 510. Զի **կ** օր ուրբաթ և չորեքշաբաթի և **զ** *քառասունք* պա՛հք է ի բոլոր տարին: - 649. Իսկ հայրապետքն բաժանեցին զերկու *քառասունսն* ի շաբաթապահս: - 649-650. Եւ աւագ շաբաթ չարչարանացն քրիստոսի՝ է՛ ընդ *քառասունս* կարգեալ... - 651. Եւ և՛ եղիայի և մովսէսի *քառասնիցն*, սկիզբն է առաջին շաբաթն. և կատարումն տօնն դազարու: - 651. Իսկ տն մերոյ *քառասնիցն* սկիզբն է երկրորդ շաբաթն, և կատարումն չարչարանք մեծի ուրբաթուն: - 651. Իսկ վասն *քառասնից* պահոց, Նախ մովսէս պահեաց կրկին **խ** ի լերինն. և յեսու ընդ նմա: - 652. Զի ո՛չ եկեր և ո՛չ էարբ *զքառասուն* տիւ և **ըզխ** գիշեր: - 652. Եւ մին զեղիային. որ է՛ ծննդեանն *քառասունքն:* - 653. Որպէս ասաց

հրեշտակն եղիայի, «արի՛ կե՛ր և ա՛րբ. զի ի բազմօրեայ ճանապարհ ես ընթանալոյ». որ է՛ *քառասունն* պահոցն: - 657

**ՔԱՌԱՍՈՒՆԲ** - 3
**ՔԱՌԱՍՈՒՆԳ** - 3
**ՔԱՌԱՍՈՒՆԵՐՈՐԴ** - 6
**ՔԱՌԱՍՈՒՆԵՒԱ** - 1
**ՔԱՌԱՍՈՒՆԵՒԲ** - 1
**ՔԱՌԱՍՈՒՆԵՒԳ** - 1
**ՔԱՌԱՍՈՒՆԵՒԴ** - 4
**ՔԱՌԱՍՈՒՆԵՒԵ** - 4
**ՔԱՌԱՍՈՒՆԵՒԶ** - 4
**ՔԱՌԱՍՈՒՆԵՒԷ** - 3
**ՔԱՌԱՍՈՒՆԵՒԸ** - 3
**ՔԱՌԱՍՈՒՆԵՒԹ** - 2
**ՔԱՌԱՍՈՒՆԵՒԻՆՆ** - 1
**ՔԱՌԱՍՈՒՆԵՒՄԻ** - 3
**ՔԱՌԱՍՈՒՆԵՒՎԵՑ** - 1
**ՔՍԱՆԲԵՐՈՐԴ** - 1
**ՔՍԱՆԳ** - 13
**ՔՍԱՆԵՐՈՐԴ** - 29
**ՔՍԱՆԵՐՈՐԴ ԵՐՐՈՐԴ** - 1
**ՔՍԱՆԵՐՈՐԴ ՉՈՐՐՈՐԴ** - 1
**ՔՍԱՆԵՒԱ** - 3
**ՔՍԱՆԵՒԲ** - 3
**ՔՍԱՆԵՒԳ** - 2
**ՔՍԱՆԵՒԴ** - 15
**ՔՍԱՆԵՒԵ** - 15
**ՔՍԱՆԵՒԵԵՐՈՐԴ** - 1
**ՔՍԱՆԵՒԶ** - 14
**ՔՍԱՆԵՒԷ** - 14
**ՔՍԵԱՆԵՒԷԵՐՐՈՐԴ** - 1
**ՔՍԱՆԵՒԸ** - 15
**ՔՍԱՆԵՒԸԵՐՈՐԴ** - 1
**ՔՍԱՆԵՒԹ** - 14
**ՔՍԱՆԵՒԻՆՆԵՐՈՐԴ** - 1
**ՔՍԱՆԵՒՄԷԿ** - 1
**ՔՍԱՆԵՒՄԻ** - 12
**ՔՍԱՆԵՒՄԻԵՐՈՐԴ** - 1
**ՔՍԱՆԵՒՎԵՑ** - 1
**ՔՍԱՆԵՒՎԵՑԵՐՈՐԴ** - 1
**ՔՍԱՆԷ** - 1
**ՔՍԱՆԹ** - 1

| | |
|---|---|
| Համաբարբառի բառերի ընդհանուր քանակը՝ | 278370 |
| Բառարանային բառերի ընդհանուր քանակը՝ | 9046 |
| Մեկ անգամ գործածված բառերի քանակը՝ | 3619 |

# ՀԱՏՈՒԿ ԱՆՈՒՆՆԵՐԻ ՑԱՆԿ

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| ԱԲԳԱՐ | 2 | ԱԲԴԻԱ | 1 | ԱԲԴՈՆ | 1 | ԱԲԵՍԵԱ | 2 |
| ԱԲԷԼ | 11 | ԱԲԷՆ | 1 | ԱԲԻԱ | 2 | ԱԲԻԱԹԱՐ | 4 |
| ԱԲԻԼԻԴՈՍ | 1 | ԱԲԻՄԵԼԻՔ | 4 | ԱԲԻՈՒԴ | 3 | ԱԲԻՍԱԿ | 2 |
| ԱԲԻՍՈՂՈՄ | 8 | ԱԲԻՐՈՆ | 4 | ԱԲՐԱՀԱՄ | 92 | ԱԳԱԳ | 1 |
| ԱԳԱԹԱՆԳԵՂ | 1 | ԱԳԱԹՈՆ | 1 | ԱԴԱՄ | 243 | ԱԴԴԱ | 1 |
| ԱԴԴԷ | 2 | ԱԴՈՆԻԱ | 1 | ԱԴԻԱՆՈՍ | 2 | ԱԴԻՆԱՅ | 1 |
| ԱԴՈՆԻԷԼ | 1 | ԱԴՐԻԱԶԱՐ | 1 | ԱԴՕՆԻԱ | 1 | ԱԶԱՐԻԱ | 2 |
| ԱԶԵՐԱ | 1 | ԱԶՈՎՐ | 1 | ԱԹԱՆԱՍ | 4 | ԱԹԵՆԱՍ | 2 |
| ԱԹԵՆՔ | 1 | ԱԼՊԵՐԱ | 1 | ԱԼՊԵՐՏ | 1 | ԱԼՓԵԱՆ | 1 |
| ԱԿԻՏՈՓԷԼ | 2 | ԱՀԱՐՈՆ | 30 | ԱՂԷՔՍԱՆԴՐ | 2 | ԱՂԷՔՍԱՆԴՐԻԱ | 11 |
| ԱՂԷՔՍԱՆԴՐ ՄԱԿԵԴՈՆԱՑԻ | 1 | ԱՂԷՔՍԱՆԴՐՈՍ | 2 | ԱՄԱՂԷԿ | 5 | ԱՄԲԱԿՈՒՄ | 2 |
| ԱՄԵՆԵՄ | 1 | ԱՄԵՍԻԱ | 2 | ԱՄԻՆԱԴԱԲ | 4 | ԱՄՈՆ | 1 |
| ԱՄՈՎՍ | 2 | ԱՄՈՒՐ | 3 | ԱՄՐԱՄ | 1 | ԱՅՐԱՐԱՏ | 2 |
| ԱՆԱԹԱՅ | 1 | ԱՆԱՅԷԼ | 1 | ԱՆԱՆԻԱ | 4 | ԱՆԱՆԻԱ ՇԻՐԱԿԱՑԻ | 2 |
| ԱՆԱՆԻԱՍ | 1 | ԱՆԱՍՏԱՍ | 1 | ԱՆԱՏՕԼ | 1 | ԱՆԳԷ | 1 |
| ԱՆԴՐԷ ՄԵԿՆԻՉ | 1 | ԱՆԴՐԷԱՍ | 5 | ԱՆԹԷՎԻՈՍ | 1 | ԱՆՆԱ | 6 |
| ԱՆՏԻՈՔ | 13 | ԱՆՏՕՆ | 9 | ԱՊ | 1 | ԱՊԵԼԻՕԴ | 1 |
| ԱՊԷԼԻՈՍ | 1 | ԱՊՕՂԻՆԱՐ | 1 | ԱՍԱՅԷԼ | 1 | ԱՍԱՓ | 1 |
| ԱՍԵՐ | 2 | ԱՍԻԱ | 1 | ԱՍՈՐԵՍՏԱՆ | 6 | ԱՏՈՄ | 1 |
| ԱՏՈՒՐ | 1 | ԱՐԱ | 1 | ԱՐԱԲԻԱ | 3 | ԱՐԱՄ | 2 |
| ԱՐԱՐԱՏ | 2 | ԱՐԳԷՍՏԷՍ | 1 | ԱՐԵԳԻ | 2 | ԱՐԷՍ | 2 |
| ԱՐԻՈՍ | 18 | ԱՐԻՍՊԱԳԱՑԻ | 1 | ԱՐԻՍՏԱԿԷՍ | 1 | ԱՐԻՍՏՈՏԷԼ | 16 |
| ԱՐՇԱԿՈՒՆԻ | 1 | ԱՐՇՈՒՐ | 1 | ԱՐՋԵՒԱՆ | 1 | ԱՐՏԱՇԷՍ | 2 |
| ԱՐՏԵՄՈՆ | 3 | ԱՐՓԱՔՍԱԹ | 3 | ԱՐՔԵՂԱՅՈՍ | 1 | ԱՒՈՎԴ | 1 |
| ԱՓՐԻԿԷ | 1 | ԱՓՐՈԴԻՏԷ | 2 | ԱՔԱԶ | 3 | ԱՔԱՐ | 8 |
| ԱՔԻԼԵՒՍ | 1 | ԱՔԻՄԵԼԷՔ | 3 | ԱՔԻՆ | 1 | ԱՔԻՏՈՎԲ | 1 |
| ԲԱԲԻԼՕՆ | 13 | ԲԱՀԱՂ | 4 | ԲԱՂԱԱՄ | 4 | ԲԱՂԱՄ | 1 |
| ԲԱՂԴԱՏ | 1 | ԲԱՆԷԱՍ | 1 | ԲԱՌԱՔ | 1 | ԲԱՌՆԱԲԱՍ | 1 |
| ԲԱՍԵՄԱԹ | 1 | ԲԱՍԻԼԻՈՍ | 1 | ԲԱՐԱԿ | 1 | ԲԱՐԱՔԻԷԼ | 1 |
| ԲԱՐԴՈՒՂԻՄԷՈՍ | 3 | ԲԱՐՈՒՔ | 2 | ԲԱՐՍԵՂ | 2 | ԲԱՐՍԵՂ ԿԵՍԱՐԱՑԻ | 1 |
| ԲԱՔՈՒ | 1 | ԲԵԴՀԱ | 1 | ԲԵԷՂԶԵԲԻՒՂ | 1 | ԲԵԹԱՆԻԱ | 1 |
| ԲԵԹՂԷՀԷՄ | 17 | ԲԵԹՍԱՅԻԴ | 1 | ԲԵԼԲԷՔՈՎՐ | 1 | ԲԵԼԻԱՐ | 3 |
| ԲԵՀՄՈՎԹ | 2 | ԲԵՆԵՏԻՔՏՈՍ | 2 | ԲԵՆԻԱՄԵՆ | 9 | ԲԵՍԷԼԻԷԼ | 3 |
| ԲԵՐԵՍԻԱԹԱՍ | 1 | ԲԵՐՋԵԼԻ | 1 | ԲԵՐՍԱԲԷ | 4 | ԲԷԼ | 1 |
| ԲՈՅՈՍ | 5 | ԲՈՍՈՐ | 1 | ԳԱԲԱՒՈՆ | 1 | ԳԱԲՐԻԷԼ | 10 |
| ԳԱԴ | 2 | ԳԱԶԱ | 2 | ԳԱԹՍՈՆ | 1 | ԳԱԼԻԼԵԱ | 3 |
| ԳԱՂԱՅԱԴ (ԳԱՂԱՅԱԹ) | 2 | ԳԱՂԳԱՂԱՅ | 1 | ԳԱՅԻ | 1 | ԳԱՆՁԱԿԵՑԻ | 1 |
| ԳԱՏՈՒՐ | 1 | ԳԱՐԵՋԻՆ | 1 | ԳԵԲԱՂՆ | 2 | ԳԵԴԷՈՆ | 8 |
| ԳԵԷԶԻ | 2 | ԳԵԹ | 1 | ԳԵԹՍՈՆ | 5 | ԳԵՍԵՄ | 1 |
| ԳԵՏԱԴԱՐՁ | 1 | ԳԵՐՍԱՄ | 1 | ԳԷՈՐԳԷՈՍ | 7 | ԳԷՈՐԳԻԷ | 1 |
| ԳՈԴՈՂԻԱ | 3 | ԳՈԴՈՆԻԷԼ | 1 | ԳՈՂԳՈԹԱՅ | 6 | ԳՈՂԻԱԹ | 8 |
| ԳՈՄՈՐ | 1 | ԳՐԻԳՈՐ | 15 | ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՒՈՐԻՉ | 1 | ԳՐԻԳՈՐ ՄԱԳԻՍՏՐՈՍ | 2 |
| ԳՐԻԳՈՐ ՍԿԵՒՌԱՑԻ | 2 | ԳՐԻԳՈՐ ՍՔԱՆՉԵԼԱԳՈՐԾ | 1 | ԳՐԻԳՈՐ ՎԿԱՅԱՍԷՐ | 1 | ԳՐԻԳՈՐԻՈՍ | 2 |
| ԳՕՐՏՈՍԱԿ | 1 | ԴԱԳՈ | 4 | ԴԱԴ | 1 | ԴԱԴԱՆ | 13 |
| ԴԱԼԻԼԱ (ԹԱԼԻԼԱ) | 2 | ԴԱԿՈՒԷԼ | 1 | ԴԱՂՄԱՏԵՐ | 1 | ԴԱՄԱՍԿԱՑԻ | 5 |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| ԴԱՄԱՍԿԱՑԻ ՅՕՀԱՆ | 2 | ԴԱՄԱՍՈՍ | 1 | ԴԱՆ | 6 | ԴԱՆԻԷԼ | 30 |
| ԴԱՐԵՀ | 7 | ԴԱՒԻԹ | 183 | ԴԵԲՈՎՐԱ | 1 | ԴԵՁԵԿ ԱԼԻՓԱԹԱ | 1 |
| ԴԵՄԵՏՐ1 | | ԴԵՒԴԱՍ | 1 | ԴԷՄԱՍ | 1 | ԴԷՈՍԿՈՐՈՍ | 1 |
| ԴԻԴԻՄՈՍ | 1 | ԴԻԹԱՄ | 1 | ԴԻՄՈՓԻԼՈՍ | 1 | ԴԻՆԱ | 1 |
| ԴԻՈԹՈՐՈՍ | 1 | ԴԻՈՆԻՍ | 1 | ԴԻՈՆԷՍԻՈՍ | 24 | ԴԻՈՍ | 2 |
| ԴՈՄՆԱՍ | 2 | ԴՈՎԵԿ | 2 | ԴՎԻՆ | 2 | ԵԳԻՊՏՈՍ | 63 |
| ԵԴՈՄ | 2 | ԵԶԱԲԷԼ | 2 | ԵԶԵԿԻԱ, ԵԶԵԿԻԷԼ | 23 | ԵԶՆԱԿ | 1 |
| ԵԶՆԱԿ ԿՈՂԲԱՑԻ | 1 | ԵԶՆԿԱՑԻ ՊԼՈՒԶ ՎԱՐԴԱՊԵՏ | 1 | ԵԶՐ | 12 | ԵԶՐ ԴՊԻՐ | 4 |
| ԵԶՐԱՍ | 2 | ԵԶՐՕՆ | 2 | ԵԼ | 2 | ԵԼԵՔ | 1 |
| ԵԼԻ | 5 | ԵԼԻԱ | 1 | ԵԼԻՄԱՍ | 1 | ԵԼԻՓԱԶ | 10 |
| ԵԼՈՆ | 1 | ԵՂԻԱ | 42 | ԵՂԻԱԲ | 1 | ԵՂԻԱԲ ՈՒՐԻԵԱՆՑ | 1 |
| ԵՂԻԱԶԱՐ | 10 | ԵՂԻԱԿԻՄ | 4 | ԵՂԻԱՍ | 1 | ԵՂԻՍԱԲԵԹ | 9 |
| ԵՂԻՍԷ | 12 | ԵՂԻՍԷՈՍ | 4 | ԵՂԻՈՒԴ | 1 | ԵՄՐԱՆ | 1 |
| ԵՆԱԿԻՄ | 1 | ԵՆՈՎՍ | 7 | ԵՆՈՎՔ | 19 | ԵՊԻՓԱՆ | 3 |
| ԵՍԱՒ | 19 | ԵՍԲՈՆ | 1 | ԵՍԵԲՈՆ | 1 | ԵՍԹԵՐ | 3 |
| ԵՍՈՒ | 1 | ԵՐԵՄԻԱ | 20 | ԵՐԵՒԱԿ | 6 | ԵՐԻՔՈՎ | 4 |
| ԵՐՄԷՍ (տ. ՀԵՐՄԷՍ) | 2 | ԵՐՈՒՍԱՂԷՄ | 57 | ԵՒԱ | 29 | ԵՒԱԳՐԻՈՍ | 8 |
| ԵՒՍԵԲԵՈՍ | 2 | ԵՒՍՏԱԹԷՈՍ | 1 | ԵՒՏԻՔԷՍ | 16 | ԵՒՐՈՊԱ (ԵՒՐՈՊԻԱ) | 1 |
| ԵՒՐՈՍ (ԵՒՐՈ) | 3 | ԵՓԵՄ | 12 | ԵՓԵՆՈՍ | 1 | ԵՓԵՍՈՍ | 16 |
| ԵՓՐԱՏ | 1 | ԵՓՐԵՄ | 13 | ԶԵԲԵԹ | 4 | ԶԱԲՈՂՈՆ | 2 |
| ԶԱՄԲՐԻ | 2 | ԶԱՐԱ | 1 | ԶԱՐԵՀ | 1 | ԶԱՔԱՐԻԱ | 14 |
| ԶԵԲԷԷ | 1 | ԶԷԲ | 1 | ԶՈՅԱԼ կմ ԶՕՅԱԼ | 5 | ԶՈՆՈՐԻՈՍ | 1 |
| ԶՕՅՐԱ | 3 | ԶՕՐԱԲԱԲԷԼ | 9 | ԷՄՄԱՆՈՒԷԼ | 8 | ԷՆԻԱ | 1 |
| ԹԱԲՕՐ | 16 | ԹԱԴԷՈՍ | 13 | ԹԱՄԱՐ | 5 | ԹԱՄՈՒԶ | 1 |
| ԹԱՏՈՒՐ | 1 | ԹԱՐԱ | 3 | ԹԷՈԴՈՍ | 1 | ԹԷՈԴՈՍ ՄԵԾ | 3 |
| ԹԷՈԴՈՍ ՓՈՔՐ | 1 | ԹԷՈԴՈՐԻՏՈՍ | 3 | ԹԷՈԴՈՐՈՍ | 3 | ԹԷՈԴՈՒՊՕԼԻՍ | 1 |
| ԹԷՈՓԻԼՈՍ | 5 | ԹԻԼԳՈՒՐԱՆ | 1 | ԹԻՄԳԻԱՆՈՍ | 1 | ԹՈՄԱՍ | 1 |
| ԹՈՎԼԱՅ | 1 | ԹՈՎՄԱՍ | 3 | ԹՈՎՆԱՍ | 1 | ԹՈՐԳՈՄ | 1 |
| ԹՈՐՔՈՄԷՏՈՍ | 1 | ԻԳՆԱՏԻՈՍ | 3 | ԻԹԱՄԱՐ | 2 | ԻԼԻՈՆ | 1 |
| ԻԼԻՈՍ | 1 | ԻՍԱՀԱԿ | 50 | ԻՍԱՔԱՐ | 1 | ԻՍԻԴՈՐՈՍ | 2 |
| ԻՍՄԱՅԷԼ | 3 | ԻՍՐԱՅԷԼ (տեղանուն) | 80 | ԻՍՐԱՅԷԼ (անձ) | 2 | ԻՐԻՆՈՍ | 6 |
| ԻՕՄԱՅ | 1 | ԼԱԲԱՆ | 1 | ԼԱՄՍՈՒՐ | 1 | ԼԵՒԻԱԹԱՆ | 1 |
| ԼԵՒՈՆ | 6 | ԼԻԱ | 1 | ԼԻԲԻԱ | 1 | ԼԻԹԱՆԻԱՅ | 1 |
| ԼԻՒԱ | 1 | ԼԻՓՍ | 1 | ԼՈՒՍԱԲԵՐ (Արուսյակ) | 3 | ԼՈՒՍԱՒՈՐԻՉ | 14 |
| ԼՈՒՍԻՆԱ | 1 | ԽՈԴԷՍՏՈՒԲԻԱ | 1 | ԽՈՍՐՈՎ | 1 | ԽՈՐԵՆԱՑԻ | 1 |
| ԽՈՐԻ կամ ԽՈՒՐԻ կամ ԽՈՐ (ԵՓՐԵՄ) | 1 | ԿԱԳԻՍԱ | 1 | ԿԱԶԲԻԱԿԱՆ ԾՈՎ | 1 | ԿԱԼԻՍՏՐԱՏՈՍ | 1 |
| ԿԱՅԱԹ | 6 | ԿԱՅԵՆ | 15 | ԿԱՅԻԱՓԱ | 2 | ԿԱՅՆԱՆ | 2 |
| ԿԱՆԱՔԱՐԻՍ | 1 | ԿԱՍԲԻՑ | 1 | ԿԱՍԲԻՑ ԾՈՎ | 1 | ԿԱՐԿԵՀԱՆ | 1 |
| ԿԱՐՄԻՐ ԾՈՎ | 3 | ԿԱՐԻՆ | 1 | ԿԵԴԵՍ | 1 | ԿԵՆԵԶ | 1 |
| ԿԵՍԱՐԱՑԻ | 2 | ԿԵՍԱՐԻԱ | 8 | ԿԵՐԻՆԹՈՍ | 1 | ԿԷԼԷՍՏԻԱՆՈՍ | 1 |
| ԿԻԿԻԱՍ | 1 | ԿԻՊՐՈՍ | 1 | ԿԻՍՈՆ | 1 | ԿԻՐԱԿՈՍԱԿ | 1 |
| ԿԻՒՐԵՂ | 8 | ԿԻՒՐՂՈՍ | 1 | ԿԻՒՐՈՍ | 4 | ԿԼԱՅԻՍ | 1 |
| ԿԼԱՅԵՑԻ | 1 | ԿԼՕԴԻԱՆՈՍ | 1 | ԿՂԵՄ, ԿՂԷՄ | 3 | ԿՂԷՈՊԵԱՆՑ | 2 |
| ԿՈՍՏԱՆԴԻՆ | 3 | ԿՈՍՏԱՆԴԻԱՆՈՍ | 6 | ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՕԼԻՍ | 13 | ԿՈՍՏԱՍ | 1 |
| ԿՈՐԴԻԱՑ ԼԵՌՆ | 1 | ԿՈՐԻՒՆ (անձնանուն) | 1 | ԿՈՐԽ | 6 | ԿՈՒՄԻՏԱՍ | 1 |
| ԿՈՒՌՆԷԼԻՈՍ | 1 | ԿՌՕՆՈՍ | 2 | ԿՐԻՏԷՍ | 1 | ՀԱՂԲԱՏ | 1 |
| ՀԵՂԻ | 5 | ՀԵՂԻՆԷ | 1 | ՀԵՐԱԿԼ | 2 | ՀԵՐՈՎԴԷՍ | 8 |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| ՀԻՒՐԿԱՆՈՍ | 2 | ՀՈՄԵՐՈՆ (ՀՈՄԵՐՈՍ) | 1 | ՀՈՌԻ | 3 | ՀՈՌՈՄ | 4 |
| ՀՌԱՍԻՄ | 1 | ՀՌԱՔԷԼ | 4 | ՀՌԵՄՓԱ | 1 | ՀՌՈՄ | 25 |
| ՀՌՈՒԹ | 4 | ՀՐԱՏ | 3 | ՀՐԷԱՍՏԱՆ | 6 | ՀՐՈՏԻՑ | 2 |
| ՂԱԶԱՐ | 19 | ՂԱԹՓԱՂԱՍԱՐ | 1 | ՂԱՄԵՔ | 1 | ՂԵՒԻ | 16 |
| ՂԵՒՈՆԴԻՈՍ | 4 | ՂԷԲԷՈՍ | 1 | ՂՈՎՏ | 13 | ՂՈՒԲՆԱ | 1 |
| ՂՈՒՆԿԻԱՆՈՍ | 1 | ՄԱԳԴԱՂԵՆԱՑԻ | 7 | ՄԱԴԱՆ | 1 | ՄԱԴԻԱՆ | 1 |
| ՄԱԴԻԱՄ | 3 | ՄԱԹՈՒՍԱՂԱ | 2 | ՄԱԿԱՐ | 2 | ՄԱԿԱՐԻՈՍ | 1 |
| ՄԱԿԵԴՈՆ | 8 | ՄԱՂԱՂԵԴԱ | 1 | ՄԱՂԱԴԻԷԼ | 1 | ՄԱՂԱՔԻԱ | 8 |
| ՄԱՂՔՈՍ | 1 | ՄԱՄԲՐԷ | 1 | ՄԱՄԵՍՏԻԱ | 1 | ՄԱՆԱԶԿԵՐՏ | 1 |
| ՄԱՆԱՅԷՆ | 1 | ՄԱՆԱՍԷ | 6 | ՄԱՆԷ | 2 | ՄԱՆԷՈՆ | 1 |
| ՄԱՆԻՔԷՈՍ | 3 | ՄԱՆՈՎԷԻ | 2 | ՄԱՇՏՈՑ | 1 | ՄԱՌԻ | 1 |
| ՄԱՍԻՍ | 4 | ՄԱՏԱԹԻԱ | 2 | ՄԱՏԹԱՆ | | ՄԱՐԻԱՄ | 59 |
| ՄԱՐԿԵՂՈՍ | 2 | ՄԱՐԿԻԱՆՈՍ | 7 | ՄԱՐԿԻՈՆ | 1 | ՄԱՐԿՈՍ | 6 |
| ՄԱՔՍԻՄԻԱՆՈՍ | 1 | ՄԱՔՍԻՄՈՍ | 1 | ՄԵԹՈԴԻՈՍ | 1 | ՄԵԼԻՏՈՍ | 1 |
| ՄԵԼՔԱ | 1 | ՄԵԼՔԻՍԵԴԵԿ | 33 | ՄԵԼՔՕՂ | 1 | ՄԵԾՆ ՆԵՐՍԷՍ ՇՆՈՐՀԱԼԻ | 1 |
| ՄԵԾՆ ՍԱՀԱԿ | Առ1 | ՄԵԾՆ ՎԱՐԴԱՆ | 1 | ՄԵՏՐՈՓԱՆՈՍ | 1 | ՄԵՐԱՐԻ | 6 |
| ՄԻԹՐ | 3 | ՄԻԽԱՅԷԼ | 1 | ՄԻՍԱՅԷԼ | 1 | ՄԻՔԱՅԷԼ | 8 |
| ՄԻՔԻԱ | 2 | ՄՈՂՈՔ | 1 | ՄՈՎՍԷՍ | 26 | ՄՈՎՍԷՍ ԽՈՐԵՆԱՑԻ | 1 |
| ՄՈՎՍԷՍ ՔԵՐԹՕՂ | 1 | (Մեծն) ՄՈՎՍԷՍ | 3 | ՄՈՎՍ | 1 | ՄՈՐՈՍ | 2 |
| ՄՈՒՇԹԱՐԻ | 4 | ՄՈՒՐԹՔԷ | 1 | ՅԱԲԵԹ | 2 | ՅԱԶՈՎՏՈՍ | 1 |
| ՅԱԿՈԲ | 51 | ՅԱԿՈԲ ԿԼԱՅԵՑԻ | 1 | ՅԱԿՈԲՈՍ | 10 | ՅԱԿՈՎԲ | 1 |
| ՅԱՄՐԷՍ | 1 | ՅԱՆԴԵՐԱ | 1 | ՅԱՆԷՍ | 1 | ՅԱՐԵԴ | 2 |
| ՅԵԲՈՒՍ | 1 | ՅԵԴՆԱ | 1 | ՅԵԴՈՅԻԱ | 1 | ՅԵԶԱԲԷԼ | 1 |
| ՅԵԿՏԱՆ | 2 | ՅԵՇՈՅԻԱ | 1 | ՅԵՍՈՒ | 48 | ՅԵՍՍԷ | 9 |
| ՅԵՍՔԱ | 1 | ՅԵՓԹԱՅԷ | 1 | ՅԵՔՈՆԻԱ | 3 | ՅԻՍԱՔԱՐՈՒ | 1 |
| ՅԻՍՈՒՍ | 66 | ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍ | 40 | ՅՈԲ | 76 | ՅՈԲԱԲ | 1 |
| ՅՈԲՆԱՂ | 1 | ՅՈԹՈՐ | 1 | ՅՈՍՏՈՍ | 2 | ՅՈՎԱԲ | 4 |
| ՅՈՎԱԹԱՄ | 1 | ՅՈՎԱԿԻՄ | 11 | ՅՈՎԱՆ | 1 | ՅՈՎԱՍ | 4 |
| ՅՈՎԱՔԱԶ | 2 | ՅՈՎԷԼ | 3 | ՅՈՎԻԴԱ | 2 | ՅՈՎՀԱՆՆԷՍ ՄԿՐՏԻՉ | 2 |
| ՅՈՎՆԱԹԱՆ | 2 | ՅՈՎՆԱՆ | 1 | ՅՈՎՍԱԲԵԹ | 1 | ՅՈՎՍԱՓԱԹ | 6 |
| ՅՈՎՍԷ | 1 | ՅՈՎՍԷՓ | 67 | ՅՈՎՍԷՓ ԱՐԵՄԱԹԱՑԻ | 1 | ՅՈՎՍԷՓ ՓԱԼԱՆԱՑԻ | 1 |
| ՅՈՎՍԻԱ | 2 | ՅՈՎՐԱՄ | 3 | ՅՈՐԴԱՆԱՆ | 40 | ՅՈՒԴԱՅ | 61 |
| ՅՈՒԴԱՅ ՅԱԿՈԲԵԱՆ | 1 | ՅՈՒԴԱՍ | 1 | ՅՈՒԴԻԴ | 2 | ՅՈՒԼԻԱՆՈՍ | 1 |
| ՅՈՒՍՏԻԱՆՈՍ | 4 | ՅՈՒՍՏԻԱՆՈՍ ԿԱՅՍՐ | 2 | ՅՈՔԱԲԵԹ | 1 | ՅՕՀԱՆՆ, ՅՈՀԱՆՆ | 31 |
| ՅՈՀԱՆ ԱՒԵՏԱՐԱՆԻՉ | 1 | ՅՕՀԱՆ ԴԱՄԱՍԿԱՑԻ | 1 | ՅՈՀԱՆ ՄԱՆԴԱԿՈՒՆԻ | 2 | ՅՈՀԱՆ ՈՍԿԵԲԵՐԱՆ | 5 |
| ՅՈՀԱՆՆ ՈՐՈՏՆԵՑԻ | 1 | ՅՈՀԱՆ ՕՁՆԵՑԻ | 3 | ՅՈՀԱՆՆԷՍ ՊԼՈՒԶ | 1 | ՅՕՀԱՆՆԷՍ, ՅՕՎՀԱՆՆԷՍ, ՅՈՀԱՆՆԷՍ | 67 |
| ՅՈՎԱՆ | 1 | ՅՕՆԱՆ | 1 | ՆԱԱՍ | 1 | ՆԱԲՈՒԳՈԴՈՆՈՍՈՐ | 10 |
| ՆԱԲՈՒԶԱՐԴԱՆ | 1 | ՆԱԶԱՐԵԹ | 1 | ՆԱԹԱՆ | 12 | ՆԱՅԱՍՕՆ, ՆԱՅԱՍՈՆ | 4 |
| ՆԱՒԱԹ | 1 | ՆԱՒԷ | 1 | ՆԱՒՈՒՄ | 1 | ՆԵԲՐՕԹ | 1 |
| ՆԵՂՈՍ | 1 | ՆԵՌՆ | 41 | ՆԵՍԻՄՈՍ | 1 | ՆԵՍՏՈՐ | 33 |
| ՆԵՐՍԷՍ | 8 | (Մեծն) Ներսէս | 11 | ՆԵՐՍԷՍ ԼԱՄԲՐՕՆԱՑԻ | 1 | ՆԵՐՍԷՍ ԿԼԱՅԵՑԻ | 1 |
| ՆԵՐՍԷՍ ՄԵԾ | 1 | ՆԵՐՍԷՍ ՇԻՆՈՂ | 1 | ՆԵՓԹԱՂԻՄ | 4 | ՆԵՔԱՒՈՎ | Ձ1 |
| ՆԵՔՏԱՌԻՈՍ | 2 | ՆԷԵՄԻ | 7 | ՆՍԱ | 2 | ՆԻԿԻԱՅ | 7 |
| ՆԻԿՈԴԻՄՈՍ | 1 | ՆԻԿՈՄԻԴԱՑԻ | 1 | ՆԻԿՈՄԻԿՈՍ | 1 | ՆԻԿՕԼԱՅՈՍ ՀԵՐԵՍԻՈՍ | 1 |
| ՆԻՆՈՒԷ | 1 | ՆԻՍԱՆ | 9 | ՆԻՒՍԱՑԻ | 8 | ՆԻՒՍԱՑԻ ԳՐԻԳՈՐ | 4 |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| ՆՈՄԻՆՈՍ | 1 | ՆՈՅ | 44 | ՆՈՒԵՆԱ | 1 | ՆՈՒՄԱՍ ՊՈՒՄԻԼՈՍ | 1 |
| ՆՈՒՆԻ ԿՈՅՍ | 1 | ՆՕՏՈՍ | 5 | ՇԱՀԱՊՕՆ | 1 | ՇԱՄԻՐԱՄ | 1 |
| ՇԱՄՍ | 1 | ՇՄԱՒՈՆ | 4 | ՈՋԻԱ | 4 | ՈԼՈՄՊԻԱԴ | 4 |
| ՈՂԴԻԿԻՆ | 1 | ՈՉՔՈՐ | 1 | ՈՎՐԷԲՆ | 1 | ՈՍԿԵԲԵՐԱՆ կմ ՈՍԿԷԲԵՐԱՆ | 13 |
| ՈՎԲԷԹ | 3 | ՈՎԳ | 1 | ՈՎՍԻԱ | 14 | ՈՒՌՀԱՅ | 1 |
| ՈՒՌՆԱՅ | 2 | ՈՒՐԻԱ | 3 | ՈՒՐԻԱՍ | 1 | ՈՒՐԻԷԼ | 1 |
| ՈՐՄԻ | 1 | ՈՓՆԻ | 2 | ՈՔՈՋԻԱ | 3 | ՈՔՈՂԻԱ | 1 |
| ՊԱԼՀ | 1 | ՊԱՂԷՍՏԻՆ | 1 | ՊԱՆԹԵՐ | 4 | ՊԱՊԻԱՆՈՍ | 1 |
| ՊԱՐՏԱՒ | 1 | ՊԵՏՐՈՍ | 79 | ՊԵՐԻՏՈՍ | 1 | ՊԻԹԱԳՈՐ | 1 |
| ՊԻՂԱՏՈՍ | 7 | ՊՂԱՏՈՆ | 9 | ՊՂԻ | 1 | ՊՈԼՈՔՈՆՈՍ | 1 |
| ՊՈՂՔԷՐ | 1 | ՊՈՐՓԻՒՐ (ՊՈՐՓԻՒՐՈՍ) | 4 | ՊՐՈՊԱՏԻԿԷ | 1 | ՊՕՂ | 1 |
| ՊՕՂԻՏԻԱՆՈՍ | 1 | ՊՕՂՈՍ (առաքյալ) | 106 | ՊՕՂՈՍ ԻՇԽԱՆ | 1 | ՊՕՂՔԵՐ | 1 |
| ՌԱԲՈՒԻԱ | 1 | ՌԱԳՈՒ | Ա1 | ՌԱԳՈՒԷԼ | 3 | ՌԱՀԱԲ | 6 |
| ՌԱՓՍԱԿԱՅ | 3 | ՌԱՔԷԼ | 1 | ՌԱՔՈՍ | 1 | ՌԱՖԱՅԷԼ | 2 |
| ՌԵԲԵԿԱ | 1 | ՌԵՔԱԲ | 1 | ՌՈԲՈՎԱՄ, ՐՈԲՈՎԱՄ | 8 | ՌՈՄԵԼԱՅ | 1 |
| ՌՈՄԵԼՈՍ | 1 | ՌՈՒԲԷՆ | 7 | ՍԱԲԱ | 3 | ՍԱԲԷԼ | 2 |
| ՍԱԲԱՒՈՎԹ | 2 | ՍԱԲԵԿ | 3 | ՍԱԲԵՓԹԱ | 1 | ՍԱԲԷԷ | 1 |
| ՍԱԴԱՅԷԼ | 1 | ՍԱԴՈՎԿ | 1 | ՍԱՀԱԿ | 8 | ՍԱՂԱ | 4 |
| ՍԱՂԱԹԻԷԼ | 1 | ՍԱՂԻՄ | 6 | ՍԱՂՄԱՆԱ | | ՍԱՂՄԱՆԱՍԱՐ | 5 |
| ՍԱՂՄՈՆ | 4 | ՍԱՄԱՐԻԱ | 3 | ՍԱՄԵԱՅ | 1 | ՍԱՄԷԳԱՐ | 1 |
| ՍԱՄՈՍՏԱՑԻ ՊՕՂՈՍ | 2 | ՍԱՄՈՒԷԼ | 31 | ՍԱՄՓՍՈՆ | 24 | ՍԱՌԱ | 21 |
| ՍԱՏԻԷԼ | 1 | ՍԱՏՆԱՏՈՒՐ | 1 | ՍԱՐԳԻՍ | 1 | ՍԱՒՈՒՂ | 69 |
| ՍԱՓԻՐԱՅ | 2 | ՍԵԲԻՈՍ | 1 | ՍԵԴԵԿ | 10 | ՍԵԼԼԱ | 1 |
| ՍԵԼԻՆ | 1 | ՍԵԼՈՎ | 1 | ՍԵՀՈՆ | 1 | ՍԵՂԲԵՍՏՐՈՍ | 1 |
| ՍԵՄ | 10 | ՍԵՐՈՒՔ | 1 | ՍԵՓՈՎՐԱ | 3 | ՍԷԹ | 5 |
| ՍԻԲԱՅ | 1 | ՍԻԴՈՆ | 1 | ՍԻՄԱ | 1 | ՍԻՄԷԻ | 12 |
| ՍԻՄԷՕՆ | 4 | ՍԻՄՈՆ | 4 | ՍԻՄՈՆ ԿԱԽԱՐԴ | 1 | ՍԻՄՈՆԵԱՆ | 1 |
| ՍԻՆԱ ԼԵԱՌՆ կմ ԼԵԱՌՆ ՍԻՆԱ | 7 | ՍԻՆԻԳՐԷՍ | 1 | (ՏԷՐ) ՍԻՈՆ | 1 | ՍԻՈՎՆ | 1 |
| ՍԻՍԱՐԱ | 2 | ՍԻՐԱՔ | 6 | ՍԻՒԱՆ | 1 | ՍԻՒՆԵԱՑ ՆԱՀԱՆԳ | 1 |
| ՍԻՕՆ | 11 | ՍԿԻՒԹ (տեղանուն) | 1 | ՍԿԻՒՌԱՑԻ ԳՐԻԳՈՐ | 1 | ՍՈԴՈՄ | 9 |
| ՍՈԴՈՎՄ | 1. | ՍՈԿՐԱՏ | 1 | ՍՈՂՈՄԷ | 2 | ՍՈՂՈՄՈՆ | 73 |
| ՍՈՂՈՎՄԷ | 1 | ՍՈՄՆԱՍ | 1 | ՍՈՄՈՐՈՆ | 1 | ՍՈՎԻՒԷ | 3 |
| ՍՈՎՓԱՐ | 1 | ՍՈՒԿԵՍՈՍ | 1 | ՍՈՒՐԱ | 1 | ՍՈՒՐԲ ԱԹԱՆԱՍ | 5 |
| ՍՈՒՐԲ ԱՐԻՍՏԱԿԷՍ | 1 | ՍՈՒՐԲ ԲԱՍԻԼԻՈՍ | 1 | ՍՈՒՐԲ ԲԱՐՍԵՂ | 7 | ՍՈՒՐԲ ԳՐԻԳՈՐ | 16 |
| ՍՈՒՐԲ ԳՐԻԳՈՐ ԱՍՏՈՒԱԾԱԲԱՆ | 2 | ՍՈՒՐԲ ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՒՈՐԻՉ | 2 | ՍՈՒՐԲ ԳՐԻԳՈՐ ՆԻՒՍԱՑԻ | 9 | ՍՈՒՐԲ ԳՐԻԳՈՐԻՍ | 1 |
| ՍՈՒՐԲ ԳՈՂԳՈԴԱ | 1 | ՍՈՒՐԲ ԴԷՈՍԿՈՐՈՍ ԱՂԷՔՍԱՆԴՐԱՑԻ | 1 | ՍՈՒՐԲ ԴԻՈԴՈՐՈՍ | 1 | ՍՈՒՐԲ ԴԻՈՆԷՍԻՈՍ | 28 |
| ՍՈՒՐԲ ԵՊԻՓԱՆ | 5 | ՍՈՒՐԲ ԵՒԱԳՐԻՈՍ | 12 | ՍՈՒՐԲ ԵՓՐԵՄ | 6. | ՍՈՒՐԲ ԵՓՐԵՄ ԽՈՐ ԱՍՈՐԻ | 1 |
| ՍՈՒՐԲ ԹԱԴԷՈՍ | 1 | ՍՈՒՐԲ ԻՍԱՀԱԿ | 1 | ՍՈՒՐԲ ԻՐԻՆՈՍ | 2 | ՍՈՒՐԲ ԼՈՒՍԱՒՈՐԻՉ | 2 |
| ՍՈՒՐԲ ԼՈՒՍԱՒՈՐԻՉ ԳՐԻԳՈՐ | 2 | ՍՈՒՐԲ ԿԱՐԱՊԵՏ | 2 | ՍՈՒՐԲ ԿԻՊՐԻԱՆՈՍ | 1 | ՍՈՒՐԲ ԿԻՊՐԻԱՆՈՍ ԿԱՐԳԵԴՈՆԱՑԻ | 1 |
| ՍՈՒՐԲ ԿԻՒՐԵՂ | 30 | ՍՈՒՐԲ ՄԱՐԻԱՄ կմ ՄԱՐԻԱՄ ՍՈՒՐԲ | 1 | ՍՈՒՐԲ ԿՈՅՍ ՄԱՐԻԱՄ | 1 | ՍՈՒՐԲ ԿՈՅՍ ՄԱՐԻԱՄ ԱՍՏՈՒԱԾԱԾԻՆ | 1 |
| ՍՈՒՐԲ ՀՌԻՓՍԻՄԷ | 1 | ՍՈՒՐԲ ՂՈՒԿԻՈՍ | 1 | ՍՈՒՐԲ ՄԱԿԱՐ | 1 | ՍՈՒՐԲ ՄԵԹՈԴԷՈՍ | 1 |
| ՍՈՒՐԲ ՄԻԽԱՅԷԼ | 1 | ՍՈՒՐԲ ՅԱԿՈԲ | 3 | ՍՈՒՐԲ ՅԱԿՈԲ ՄԾԲՆԱՅ ՀԱՅՐԱՊԵՏ | 1 | ՍՈՒՐԲ ՅԱՐՈՒԹԻՒՆ | 1 |
| ՍՈՒՐԲ ՅՈՀԱՆ | 1 | ՍՈՒՐԲ ՅՈՀԱՆ ՈՍԿԵԲԵՐԱՆ | 1 | ՍՈՒՐԲ ՅՈՀԱՆ ՕՁՆԵՑԻ | 2 | ՍՈՒՐԲ ՅՈՍՏՈՍ | 1 |
| ՍՈՒՐԲ ՅՌԵԹԷՈՍ | 2 | ՍՈՒՐԲ ՆԵՐՍԷՍ | 3 | ՍՈՒՐԲ ՆԻՒՍԱՑԻ | 2 | ՍՈՒՐԲ ՊԱՐՍԱՄ | 1 |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| ՍՈՒՐԲ ՍԱՀԱԿ | 5 | ՍՈՒՐԲ ՍԱՀԱԿ ՊԱՐԹԵՒ | 2 | ՍՈՒՐԲ ՍԱՐԳԻՍ | 2 | ՍՈՒՐԲ ՍԻՄԷՈՆ | 1 |
| ՍՈՒՐԲ ՍՏԵՓԱՆՆՈՍ | 5 | ՍՈՒՐԲ ՍՏԵՓԱՆՆՈՍ ՍԻՒՆԵԱՑ | 1 | ՍՈՒՔԱ | 1 | ՍՈՓԵԿՂԻԴԷՍ | 1 |
| ՍՈՓՈՆԻԱ | 1 | ՍՊԱՆԻԱ | 1 | ՍՏԵՓԱՆՆՈՍ | 4 | ՍՏԵՓԱՆՆՈՍ ՍԻՒՆԵՑԻ | 2 |
| ՎԱՀԱՆ | 1 | ՎԱՂԱՐՇԱՊԱՏ | 1 | ՎԱՉԱԳԱՆ ԱՐՔԱՅ | 1 | ՎԱՐԱԳ | 1 |
| ՎԱՐԴԱՆ (սպարապետն) | 1 | ՎԱՐԴԱՆ (մեկնիչն, վարդապետն) | 4 | ԱԼՊԵՐԱ ՎԱՐԴԱՊԵՏ | 1 | ԻՍԻԴՈՐՈՍ ՎԱՐԴԱՊԵՏ | 1 |
| ԹՈՒՄԱ ՎԱՐԴԱՊԵՏ | 1 | ՕԳՈՍՏԻՆՈՍ ՎԱՐԴԱՊԵՏ | 1 | ՎԵՐԱՊԱՆԹԵՐ | 1 | ՎՇՏԱՍՊԵԱՅ | 1 |
| ՎՈՌԷԱՍ, ՎՈՌԷՍՔ, ՎՈՌԷՔ | 4 | ՏԱԲԻԹ | 1 | ՏԱՐԱՏՈՍ | 1 | ՏԱՐՕՆ | 1 |
| ՏԲԷԹ | 1 | ՏԵԱՌՆԸՆԴԱՌԱՋ | 5 | ՏԵԱՌՆ ԵՂԲԱՅՐ | 2 | ՏԷՐ ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍ | 3 |
| ՏԷՐ ՄԵՐ ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍ | 17 | ՏԷՐ ՔՐԻՍՏՈՍ | 1 | ՏԷՐ ՄԵՐ ՔՐԻՍՏՈՍ | 1 | ՏԷՐ ԵՂԻԱ | 2 |
| ՏԷՐ ՅԱԿՈԲ ԿԼԱՅԵՑԻ | 1 | ՏԷՐ ՍԻՄԷՈՆ | 1 | ՏԷՐ ՍԻՈՆ | 1 | ՏԻԲԵՐ | 1 |
| ՏԻԲԵՐԻԱՅ ԾՈՎ | 1 | ՏԻՄՈԹԷՈՍ | 5 | ՏԻՏՈՍ | 2 | ՏՈՐՈՍ | 1 |
| ՏՈՒԲԻԱ | 2 | ՏՈՒԲԻԴ, ՏԻԲՈՒԹ | 5 | ՐԱԽԱԲ | 1 | ՓԱԿԷԷ | 1 |
| ՓԱՂԵԿ | 1 | ՓԱՅԼԱԾՈՒ | 2 | ՓԱՆՈՒԷԼ | 1 | ՓԱՐԱՆ | 1 |
| ՓԱՐԷՍ | 3 | ՓԱՐԻՍ | 1 | ՓԵԳՈՎՐԱՅ | 1 | ՓԵՆԵՀԷՍ, ՓԵՆԵՀԷՋ | 6 |
| ՓԵՍԻՈՍ | 1 | ՓԻԼԻՄՈՆ | 1 | ՓԻԼԻՊՊՈՍ | 5 | ՓԻԼՈՆ (Ալեքսանդրացի) | 5 |
| ՓԻԼՈՆ ԻՄԱՍՏՈՒՆ | 1. | ՓԻՍՈՆ ԳԵՏ | 1 | ՓԼԱԲԻԱՆՈՍ | 5 | ՓՈԹԱՄՈՍ | 1 |
| ՓՈԿԵՂԷԴԷՍ | 1 | ՓՈՏԻՆԱ | 1 | ՓՈՏԻՆՈՍ | 2 | ՓՈՒԱ | 1 |
| ՔԱՂԱՔ ԲԵԹԱՆԻՈՅ | 1 | ՔԱՂԱՔ ԵՐՈՒՍԱՂԷՄ | 2 | ՔԱՂԱՔ ՆԱԽԻՋԵՒԱՆ | 1 | ՔԱՂԵԲ | 2 |
| ՔԱՂԿԵԴՈՆ | 21 | ՔԱՂՈՑ | 2 | ՔԱՄ | 2 | ՔԱՆԱՆ | 5 |
| ՔԱՍԲԻ | 1 | ՔԵԲՐՕՆ | 1 | ՔԵՂԿԻ | 1 | ՔԵՏՈՒՐ | 2 |
| ՔԻՆՈՍՓԷՆԷՍ | 1 | ՔԻՐԱՄ | 1 | ՔՈԴՈՂ ԳՈՄՈՐ | 1 | ՔՈՐԱՋ | 1 |
| ՔՈՒՍԻ | 1 | ՔՍԱՆԹԻՍ | 1 | ՔՐԻՍՏՈՍ | 1168 | ՔՐԻՍՏՈՍ ՅԻՍՈՒՍ | 5 |
| ՕԳՈՍՏԻՆՈՍ | 3 | ՕԳՈՍՏՈՍ | 2 | ՕԳՈՍՏՈՍ ԿԱՅՍՐ | 2 | ՕՋՆԵՑԻ | 2 |
| ՕՍԻԴ | 3 | | | | | | |

## Ա

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| ԱԲԳԱՐ | 2 | ԱԲԴԻՈՒ | 1 | ԱԲԴՈՆ | 1 | ԱԲԵՂԱՅ | 6 |
| ԱԲԵՂԱՅՈՒԹԻՒՆ | 1 | ԱԲԵՍԵԱ | 2 | ԱԲԷԼ | 12 | ԱԲԷՆ | 1 |
| ԱԲԻԱ | 2 | ԱԲԻԱԹԱՐ | 4 | ԱԲԻԼԻԴՈՍ | 1 | ԱԲԻՄԵԼԻՔ | 4 |
| ԱԲԻՈՒԴ | 3 | ԱԲԻՍՈՂՈՄ | 8 | ԱԲԻՐՈՆ | 4 | ԱԲՐԱՀԱՄ | 92 |
| ԱԳԱԳ | 1 | ԱԳԱԹԱՆԳԵՂ | 1 | ԱԳԱԹՈՆ | 1 | ԱԳԱՀ | 6 |
| ԱԳԱՀԵՄ | 1 | ԱԳԱՀՈՒԹԻՒՆ | 23 | ԱԳԱՆԻՄ | 3 | ԱԳԱՊ | 3 |
| ԱԳԱՏՆ | 1 | ԱԳԱՐԱԿ | 2 | ԱԳՈՅՑ | 2 | ԱԳՈՒԳԱՅՔ | 1 |
| ԱԳՌԱՒ | 14 | ԱԴԱՄ | 247 | ԱԴԱՄԱՅԻՆ | 1 | ԱԴԱՄԱՍՏԵՂԾ | 1 |
| ԱԴԴԱ | 1 | ԱԴԴԷ | 2 | ԱԴԻԱՆՈՍ | 1 | ԱԴԻՆԱՅ | 1 |
| ԱԴՈՆԻԷԼ | 1 | ԱԴՐԻԱԶԱՐՈՒ | 1 | ԱԴՕՆԻԱ | 1 | ԱԶԱԶՈՒՆ | 1 |
| ԱԶԱՊ | 1 | ԱԶԱՏ (գոյական) | 10 | ԱԶԱՏ (ած., մակբ.) | 12 | ԱԶԱՏԱՊԷՍ | 1 |
| ԱԶԱՏԱՐԱՐ | 1 | ԱԶԱՏԵՄ | 81 | ԱԶԱՏԷՐՆ | 1 | ԱԶԱՏՈՒԹԻՒՆ | 24 |
| ԱԶԱՏՈՒՄՆ | 1 | ԱԶԱՐԻԱ | 2 | ԱԶԳ | 286 | ԱԶԳ (տեսակ) | 16 |
| ԱԶԳԱԲԱՆՈՒԹԻՒՆ | 4 | ԱԶԳԱԹԻՒ | 1 | ԱԶԳԱԿԱՆ | 5 | ԱԶԳԱԿԱՆՈՒԹԻՒՆ | 1 |
| ԱԶԳԱԿԻՑ | 7 | ԱԶԳԱԿՑԵՄ | 1 | ԱԶԳԱԿՑՈՒԹԻՒՆ | 4 | ԱԶԳԱՀԱՄԱՐ | 3 |
| ԱԶԳԱՅԻՆ | 3 | ԱԶԳԱՊԵՏ | 1 | ԱԶԳԱՊՂԾՈՒԹԻՒՆ | 1 | ԱԶԳԱՋԻՆՋ | 1 |
| ԱԶԳԱՏՈՀՄ | 1 | ԱԶԳԻ ԱԶԳԻ | 2 | ԱԶԴԱՐԱՐ | 1 | ԱԶԴԵՄ | 9 |
| ԱԶԴԵՑՈՒԹԻՒՆ | 1 | ԱԶԴՈՂԱԿԱՆ | 2 | ԱԶԴՈՒ | 4 | ԱԶԴՈՒՄՆ | 9 |
| ԱԶԵՐԱ | 1 | ԱԶՆ | 2 | ԱԶՆԻՒ | 4 | ԱԶՆՈՒԱԿԱՆ | 1 |
| ԱԶՆՈՒԱԿԱՆՈՒԹԻՒՆ | 1 | ԱԶՈՎՐ | 1 | ԱԹԱՆԱՍ | 4 | ԱԹԵՆԱՍ | 1 |
| ԱԹԵՆՔ | 1 | ԱԹՈՌ | 64 | ԱԹՈՌ (Ք) | 19 | ԱԹՈՌԱԿԱԼ | 1 |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| ԱԹՈՌԱԿԻՑ | 8 | ԱԹՈՌԱԿՑՈՒԹԻՒՆ | 1 | ԱԼ | 3 | ԱԼԵՒՈՐ | 2 |
| ԱԼԵՒՈՐԻՄ | 1 | ԱԼԵՒՈՐՈՒԹԻՒՆ | 5 | ԱԼԷԼՈՒ | 16 | ԱԼԷԼՈՒԻԱ | 1 |
| ԱԼԷԿՈԾԻՄ | 2 | ԱԼԻՒՐ | 6 | ԱԼԻ(Ք) | 4 | ԱԼԻՔ | 1 |
| ԱԼՈՋ | 2 | ԱԼՊԵՐԱ | 1 | ԱԼՊԵՐՏ | 1 | ԱԼՓԱԲԵՏՔ | 2 |
| ԱԼՓԵԱՆ | 1 | ԱԼՖԱ | 2 | ԱԽԱԼԾԻԼ | 1 | ԱԽԱՑԱՅ | 1 |
| ԱԽԹԱՐՄԱՅ | 1 | ԱԽՄԱՐ | 1 | ԱԽՈՅԵԱՆ | 1 | ԱԽՈՌ | 1 |
| ԱԽՈՐԺ | 1 | ԱԽՈՐԺԱԿ | 12 | ԱԽՈՐԺԵԼԻ | 4 | ԱԽՈՐԺԵՄ | 5 |
| ԱԽՏ | 50 | ԱԽՏԱԺԷՏ | 2 | ԱԽՏԱԿԱՆ | 2 | ԱԽՏԱԿԻՑ | 2 |
| ԱԽՏԱՆԱՄ | 2 | ԱԽՏԱՍԻՐՈՒԹԻՒՆ | 1 | ԱԽՏԱՑՈՒՑԱՆԵՄ | 1 | ԱԽՏԱՒՈՐ | 5 |
| ԱԾԱՆՑԻՄ | 1 | ԱԾԵՄ | 58 | ԱԾԻԼԵԼ | 1 | ԱԿԱԴԻՄԵԱՆՔՆ | 1 |
| ԱԿԱՄԱՅ | 52 | ԱԿԱՆ | 5 | ԱԿԱՆԱՏԵՍ | 3 | ԱԿԱՆՋ | 26 |
| ԱԿԱՆՋԱՏ | 2 | ԱԿԱՏ | 1 | ԱԿԻՏՈՓԷԼ | 2 | ԱԿՆ (աչք) | 31 |
| ԱԿՆ (քար) | 32 | ԱԿՆ ԱՌՆՈՒԼ | 2 | ԱԿՆ ԸՆԴ ԱԿԱՆ | 1 | ՅԱԿԱՆ ԹՕԹԱՓԵԼ | 3 |
| ԱԿՆ ՈՒՆԻՄ ԿԱՄ ԱԿՆՈՒՆԻՄ | 20 | ԱԿՆԱԿԱՊԻՃՔ | 1 | ԱԿՆԱՌՈՒԹԻՒՆ | 2 | ԱԿՆԱՐԿԵՄ | 6 |
| ԱԿՆԱՐԿՈՒԹԻՒՆ | 1 | ԱԿՆԵՐԵՒ | 3 | ԱԿՆ ԿԱԼՈՒՄ | 1 | ԱԿՆԿԱԼՈՒԹԻՒՆ | 7 |
| ԱՀ | 11 | ԱՀԱ | 67 | ԱՀԱԲԵԿԵՄ | 1 | ԱՀԱԳԻՆ | 22 |
| ԱՀԱԳՆԱՏԵՍԻԼ | 1 | ԱՀԱՐԿՈՒԹԻՒՆ | 1 | ԱՀԱՐՈՆ | 30 | ԱՀԱՒՈՐ | 4 |
| ԱՀԵԱԿ | 18 | ԱՀԵՂ | 2 | ԱՀԿԻ | 2 | ԱՂ | 30 |
| ԱՂԱԳԱՒ | 1 | ԱՂԱԽԻՆ | 2 | ԱՂԱՂԱԿ | 8 | ԱՂԱՂԱԿԵՄ | 12 |
| ԱՂԱՄ | 4 | ԱՂԱՆԴ | 18 | ԱՂԱՆԴԱՒՈՐ | 1 | ԱՂԱՆՁՆԵՄ | 1 |
| ԱՂԱՉԱԿԱՆ | 1 | ԱՂԱՉԱՆՔ | 6 | ԱՂԱՉԵՄ | 14 | ԱՂԱՒՆԱԿԵՐՊ | 8 |
| ԱՂԱՒՆԻ | 7 | ԱՂԲ | 1 | ԱՂԲԵՐԱԿՆ | 1 | ԱՂԲԻՒՍՔ, ԱՂԲԻՍ | 8 |
| ԱՂԲԻՒՐ | 38 | ԱՂԲԻՒՐԱՆԱՄ | 3 | ԱՂԳԱՆԱՑԻ(Ք) | 1 | ԱՂԵԳՈՅՆ | 2 |
| ԱՂԵՂՆ | 2 | ԱՂԵՂՆԱՒՈՐ | 2 | ԱՂԵՐՍ | 4 | ԱՂԵՐՍԵՄ ԱՐԿԱՆԵԼ | 1 |
| ԱՂԵՐՍԵՄ | 13 | ԱՂԷԿ | 3 | ԱՂԷՈՂՈՐՄ | 1 | ԱՂԷՏ | 4 |
| ԱՂԷՔՍԱՆԴՐ | 2 | ԱՂԷՔՍԱՆԴՐԱՑԻ | 1 | ԱՂԷՔՍԱՆԴՐԻԱ (քաղաք) | 10 | ԱՂԷՔՍԱՆԴՐԻԱ | 1 |
| ԱՂԷՔՍԱՆԴՐ ՄԱԿԵԴՈՆԱՑԻ | 1 | ԱՂԷՔՍԱՆԴՐՈՍ | 2 | ԱՂԻ (ԱՂԻՔ) | 7 | ԱՂԻ | 20 |
| ԱՂԻՈՂՈՐՄ | 1 | ԱՂԻՒՍ | 6 | ԱՂԻՒՍԱՉԵՒ | 1 | ԱՂԻՒՍԱՆՄԱՆ | 1 |
| ԱՂԽ | 1 | ԱՂԽԵՄ | 1 | ԱՂՃԱՏԱՆՔ | 3 | ԱՂՈՐԻՔ | 1 |
| ԱՂՈՒԱՆ | 9 | ԱՂՈՒԵՍԱԲԱՐՈՅ | 1 | ԱՂՈՒԷՍ | 4 | ԱՂՈՒՀԱՑ | 18 |
| ԱՂՈՒՈՐՈՒԹԻՒՆ | 1 | ԱՂՁԱՄՈՒՂՁ | 1 | ԱՂՁԻԿ | 2 | ԱՂՏ | 11 |
| ԱՂՏԱՂՏՈՒԿ | 1 | ԱՂՏԵՂԱՑՈՒՑԱՆԵՄ | 1 | ԱՂՏԵՂԵՄ | 1 | ԱՂՏԵՂԻ | 3 |
| ԱՂՏԵՂՈՒԹԻՒՆ | 8 | ԱՂՑՔ | 1 | ԱՂՔԱՏ | 30 | ԱՂՔԱՏԱՆԱՄ | 3 |
| ԱՂՔԱՏԱՍԷՐ | 1 | ԱՂՔԱՏՈՒԹԻՒՆ | 18 | ԱՂՔԱՏՍԻՐՈՒԹԻՒՆ | 1 | ԱՂՕԹԱԿԱՆ | 1 |
| ԱՂՕԹԵԼԻ | 1 | ԱՂՕԹԵՄ | 62 | ԱՂՕԹՔ | 145 | ԱՂՕՏ | 5 |
| ԱՂՕՐՀՆԷՔ | 1 | ԱՃԱՌ | 2 | ԱՃԵԼՈՒԹԻՒՆ | 1 | ԱՃԵՄ | 52 |
| ԱՃԵՑՈՒՑԱՆԵՄ | 8 | ԱՃՈՂԱԿԱՆ | 2 | ԱՃՈՒՄՆ | 27 | ԱՄ | 379 |
| ԱՄԱՁՈՆՔ | 1 | ԱՄԱՂԵԿԱՑԻ | 1 | ԱՄԱՂԷԿ | 5 | ԱՄԱՅԻ | 1 |
| ԱՄԱՅՈՒԹԻՒՆ | 1 | ԱՄԱՆ | 6 | ԱՄԱՆԱԿ | 2 | ԱՄԱՉԵՄ | 10 |
| ԱՄԱՌՆ | 20 | ԱՄԱՌՆԱՅԻՆ | 1 | ԱՄԱՐԱՅԻՆ | 1 | ԱՄԲԱԿՈՒՄ | 2 |
| ԱՄԲԱՌՆԱՄ | 9 | ԱՄԲԱՐԵՄ | 4 | ԱՄԲԱՐԻՇՏ | 16 | ԱՄԲԱՐՀԱՒԱՃ | 1 |
| ԱՄԲԱՐՀԱՒԱՃԵՄ | 1 | ԱՄԲԱՐՀԱՒԱՃՈՒԹԻՒՆ | 1 | ԱՄԲԱՐՇՏԵՄ | 1 | ԱՄԲԱՐՇՏՈՒԹԻՒՆ | 5 |
| ԱՄԲԱՐՏԱԿ | 1 | ԱՄԲԱՐՏԱՆՈՒԹԻՒՆ | 1 | ԱՄԲԱՐՏԱՒԱՆ | 2 | ԱՄԲԱՐՏԱՒԱՆՈՒԹԻՒՆ | 12 |
| ԱՄԲՈԽԻՄ | 1 | ԱՄԲՈԽՈՒՄՆ | 4 | ԱՄԲՈՂՋ | 11 | ԱՄԲՈՂՋԱԿԱՆ | 1 |
| ԱՄԲՈՂՋՈՒԹԻՒՆ | 2 | ԱՄԵՆԱԳԷՏ | 4 | ԱՄԵՆԱԳՈՒԹ | 1 | ԱՄԵՆԱԶԱՆ | 1 |
| ԱՄԵՆԱԶՈՅԳ | 1 | ԱՄԵՆԱԶՕՐ | 9 | ԱՄԵՆԱԼԻՐ | 1 | ԱՄԵՆԱԿԱԼ | 7 |
| ԱՄԵՆԱԿԱՏԱՐ | 2 | ԱՄԵՆԱԿԱՐ | 2 | ԱՄԵՆԱԿԱՐՈՂ | 6 | ԱՄԵՆԱԿԵՐ | 1 |
| ԱՄԵՆԱՀԱՅԵԱՑ | 4 | ԱՄԵՆԱՀԱՍ | 1 | ԱՄԵՆԱՀՆԱՐ | 1 | ԱՄԵՆԱՀՐԱՇ | 1 |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| ԱՄԵՆԱՋԵՒ | 1 | ԱՄԵՆԱՄԱՔՈՒՐ | 1 | ԱՄԵՆԱՅԱՂԹ | 1 | ԱՄԵՆԱՅՆ | 1179 |
| ԱՄԵՆԱՅՆ ԻՆՉ | 46 | ԱՄԵՆԱՅՆ ՈՒՍՏԷՔ | 2 | ԱՄԵՆԱՅՆ ՈՒՐԵՔ (ԱՄԵՆԱՅՆ ՈՒՐէՔ) | 25 | ԱՄԵՆԱՅՆ ՈՔ | 26 |
| ԱՄԵՆԱՍՈՒՐԲ | 4 | ԱՄԵՆԱՏԵՍ | 1 | ԱՄԵՆԱՐԱՐ | 1 | ԱՄԵՆԵՄ | 1 |
| ԱՄԵՆԵԻՒՆ | 69 | ԱՄԵՆԵՔԵԱՆ | 128 | ԱՄԷՆՈՂՈՐՄ | 1 | ԱՄԵՆՈՒՐԷՔ | 1 |
| ԱՄԵՆՔՆ | 2 | ԱՄԵՍԻԱ | 2 | ԱՄէՆ (ԱՄԵՆ - դերանուն) | 14 | ԱՄէՆ | 42 |
| ԱՄէՆԱՌԱՏ | 1 | ԱՄէՆԵՐԱՆԵԱՆ | 1 | ԱՄէՆԻՄԱՍՏ | 2 | ԱՄԻՆԱԴԱԲ | 4 |
| ԱՄԻՍ | 99 | ԱՄՍԵԱՆ | 3 | ԱՄԼՈՐԴԻ | 1 | ԱՄԼՈՒԹԻՒՆ | 2 |
| ԱՄՈԼ | 2 | ԱՄՈՂՆԱՑԻ | 1 | ԱՄՈՂ | 1 | ԱՄՈՎՍ | 2 |
| ԱՄՈՒԼ | 5 | ԱՄՈՒՍՆԱՆԱՄ | 14 | ԱՄՈՒՍՆՈՒԹԻՒՆ | 23 | ԱՄՈՒՐ (գոյական) | 6 |
| ԱՄՈՒՐ (ածական) | 6 | ԱՄՈՒՐ (տեղանուն) | 6 | ԱՄՈՒՐՀԱՑԻ | 1 | ԱՄՈՔԵՄ | 2 |
| ԱՄՊ | 101 | ԱՄՊԱԽԱՂԱՑ | 1 | ԱՄՍԱԳԼՈՒԽ | 4 | ԱՄՍԱՄՈՒՏ | 7 |
| ԱՄՍՕՐԵԱՅ | 2 | ԱՄՐԱՄ | 1 | ԱՄՐԱՆԱՄ | 8 | ԱՄՐՈՑ | 7 |
| ԱՄՐՈՒԹԻՒՆ | 2 | ԱՄՓՈՓԵՄ | 4 | ԱՄՕԹ | 32 | ԱՄՕԹԱԼԻ | 1 |
| ԱՄՕԹԽԱԾ | 1 | ԱՄՕԹԽԱԾՈՒԹԻՒՆ | 1 | ԱՅԲ | 11 | ԱՅԳ | 5 |
| ԱՅԳԱԼԱՑ | 1 | ԱՅԳԷԳՈՐԾ | 1 | ԱՅԳԵՍՏԱՆ | 1 | ԱՅԳԻ | 5 |
| ԱՅԴ | 16 | ԱՅԴՊԷՍ | 2 | ԱՅԴՊԻՍԻ | 1 | ԱՅԺՄ | 215 |
| ԱՅԺՄՈՒ, ԱՅԺՄՈՒՍ | 11 | ԱՅԻԱ | 1 | ԱՅԼ (դերանուն) | 984 | ԱՅԼ, ԱՅԼԵՒ (շաղկապ) | 1438 |
| ԱՅԼ ԱՅԼ | 1 | ԱՅԼ ԵՒ կամ ԱՅԼԵՒ | 407 | ԱՅԼ ԵՒ ԱՅԼ | 35 | ԱՅԼ ԵՒՍ | 25 |
| ԱՅԼ ԸՆԴ ԱՅԼ | 3 | ԱՅԼ ԹԷ | 18 | ԱՅԼ ԻՄՆ, ԱՅԼ ՈՄՆ | 14 | ԱՅԼ ԻՆՉ | 37 |
| ԱՅԼ ՈՔ | 6 | ԵՒ ԱՅԼՆ | 210 | ԱՅԼԱԲԱՆՈՒԹԻՒՆ | 1 | ԱՅԼԱԲԱՐ | 1 |
| ԱՅԼԱԳԻԾ | 1 | ԱՅԼԱԳՈՒՆԵՄ | 1 | ԱՅԼԱԶԳ | 5 | ԱՅԼԱԶԳԱԲԱՐ | 1 |
| ԱՅԼԱԶԳԻ | 38 | ԱՅԼԱԿԱՏԱՐ | 1 | ԱՅԼԱԿԵՐՊ | 1 | ԱՅԼԱԿԵՐՊԻՄ | 4 |
| ԱՅԼԱԿԵՐՊՈՒԹԻՒՆ | 1 | ԱՅԼԱՋԵՒ | 1 | ԱՅԼԱՄԱԶ | 1 | ԱՅԼԱՅԼԱԿ | 2 |
| ԱՅԼԱՅԼԱԿԱՆ | 2 | ԱՅԼԱՅԼԵՄ | 20 | ԱՅԼԱՅԼՈՏ | 1 | ԱՅԼԱՅԼՈՒԹԻՒՆ | 5 |
| ԱՅԼԱՅԼՈՒՄՆ | 4 | ԱՅԼԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ | 1 | ԱՅԼԱՊԷՍ | 4 | ԱՅԼԱՍԵՌ | 3 |
| ԱՅԼԱՎԻՃԱԿ | 1 | ԱՅԼԱՏԵՍԱԿ | 2 | ԱՅԼԵՒԱՅԼՈՒԹԻՒՆ | 1 | ԱՅԼՈՒԹԻՒՆ | 2 |
| ԱՅԼՈՒՍՏԵՔ | 1 | ԱՅԼՈՒՐ | 6 | ԱՅԼՈՒՐԵՔ | 4 | ԱՅԾ | 9 |
| ԱՅԾԵԱՄՆ | 2 | ԱՅԾԵՂՋԻՒՐ | 3 | ԱՅՆ | 659 | ԱՅՆ ՁԻ | 7 |
| ԱՅՆ ԻՆՉ | 1 | ԱՅՆՈՒ ՁԻ | 1 | ԱՅՆՈՒՀԵՏԵՒ | 3 | ԱՅՆՉԱՓ | 16 |
| ԱՅՆՊԷՍ | 75 | ԱՅՆՊԻՍԻ | 37 | ԱՅՆՔԱՆ | 37 | ԱՅՈ՛ | 5 |
| ԱՅՊԱՆԵՄ | 1 | ԱՅՍ | 1598 | ԱՅՍԱՀԱՐ | 1 | ԱՅՍԱՀԱՐԻՄ | 1 |
| ԱՅՍԱՀԱՐՈՒԹԻՒՆ | 1 | ԱՅՍԱՆՈՒՆ | 1 | ԱՅՍԻՆՉ | 2 | ԱՅՍԻՆՔՆ | 604 |
| ԱՅՍԻՆՔՆ ԹԷ | 8 | ԱՅՍՄԱՒՈՒՐ(Ք) | 3 | ԱՅՍՉԱՓ | 6 | ԱՅՍՊԷՍ | 663 |
| ԱՅՍՊԻՍԻ | 71 | ԱՅՍՐ ԵՒ ԱՆԴՐ | 1 | ԱՅՍՔԱՆ | 153 | ԱՅՍՕՐ | 26 |
| ԱՅՍ ՕՐԻՆԱԿ | 1 | ԱՅՏ, ԱՅՏՔ | 1 | ԱՅՏԻ | 1 | ԱՅՐ | 104 |
| ԱՅՐ ՄԱՐԴ | 2 | ԱՅՐ (քարայր) | 4 | ԱՅՐԱԿԱՆ | 1 | ԱՅՐԱՆԱՄ | 2 |
| ԱՅՐԱՐԱՏ | 2 | ԱՅՐԵԼԻ | 3 | ԱՅՐԵՄ | 52 | ԱՅՐԵՑԱԾ | 4 |
| ԱՅՐԵՑՈՒՄՆ | 6 | ԱՅՐԻ | 12 | ԱՅՐԻՉ | 1 | ԱՅՐՈՒԹԻՒՆ | 1 |
| ԱՅՐՈՒՄՆ | 2 | ԱՅՐՈՒՔ | 1 | ԱՅՑ | 1 | ԱՅՑ ԱՌՆԵԼ | 1 |
| Յայց ելանել | 1 | ԱՅՑԵԼՈՒ | 1 | ԱՅՑԵԼՈՒԹԻՒՆ | 1 | ԱՆԱԳ | 1 |
| ԱՆԱԳԱՆ | 4 | ԱՆԱԳԱՆՈՍ | 1 | ԱՆԱԶԱՏ | 1 | ԱՆԱԹԱՅ | 1 |
| ԱՆԱԽՏ | 7 | ԱՆԱԽՏԱԲԱՐ | 1 | ԱՆԱԽՏՈՒԹԻՒՆ | 1 | ԱՆԱՀ | 1 |
| ԱՆԱՂՏ | 2 | ԱՆԱՄՕԹ | 3 | ԱՆԱՄՕԹԱԲԱՐ | 1 | ԱՆԱՅԷԼ | 1 |
| ԱՆԱՅԼԱՅԼԱԲԱՐ | 1 | ԱՆԱՆԳՈՍՆԵԼԻ | 7 | ԱՆԱՆԻԱ | 4 | ԱՆԱՆԻԱ ՇԻՐԱԿԱՑԻ | 2 |
| ԱՆԱՆԻԱՍ | 1 | ԱՆԱՆՉՆ | 3 | ԱՆԱՆՈՒՆ | 4 | ԱՆԱՆՁԱՏՈՒԹԻՒՆ | 1 |
| ԱՆԱՆՑ | 5 | ԱՆԱՆՑԱՆԵԼԻ | 1 | ԱՆԱՇԽԱՏ | 3 | ԱՆԱՉԱՌ | 4 |
| ԱՆԱՊԱԿ | 2 | ԱՆԱՊԱԿԱՆ | 177 | ԱՆԱՊԱԿԱՆՈՒԹԻՒՆ | 18 | ԱՆԱՊԱՏ | 41 |
| ԱՆԱՌԱԿ | 10 | ԱՆԱՌԱՒՕՏ | 1 | ԱՆԱՍԵԼԻ | 1 | ԱՆԱՍՆԱԿԱՆ | 7 |
| ԱՆԱՍՆԱՊԷՍ | 1 | ԱՆԱՍՆԵՂԷՆ | 1 | ԱՆԱՍՈՒՆ | 102 | ԱՆԱՍՏԱՍ | 1 |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| ԱՆԱՍՏՈՒԱԾ | 1 | ԱՆԱՍՏՈՒԱԾՈՒԹԻՒՆ | 1 | ԱՆԱՏOL | 1 | ԱՆԱՐԱՏ | 22 |
| ԱՆԱՐԱՏՈՒԹԻՒՆ | 1 | ԱՆԱՐԳ | 16 | ԱՆԱՐԳԱԲԱՐ | 1 | ԱՆԱՐԳԱՆՔ | 10 |
| ԱՆԱՐԳԱՊԷՍ | 1 | ԱՆԱՐԳԵՄ | 27 | ԱՆԱՐԳՈՒԹԻՒՆ | 2 | ԱՆԱՐԺԱՆ | 38 |
| ԱՆԱՐԺԱՆՈՒԹԻՒՆ | 2 | ԱՆԱՐԻՒՆ | 9 | ԱՆԱՒԵԼՈՐԴ | 1 | ԱՆԲԱԺ | 4 |
| ԱՆԲԱԺԱՆ | 9 | ԱՆԲԱԺԱՆԱԲԱՐ | 3 | ԱՆԲԱԺԱՆԱԿԱՆ | 1 | ԱՆԲԱԺԱՆԱՊԷՍ | 2 |
| ԱՆԲԱԺԱՆԵԼԻ | 35 | ԱՆԲԱԺԱՆՈՒԹԻՒՆ | 1 | ԱՆԲԱԽԵԼԻ | 1 | ԱՆԲԱՆ | 48 |
| ԱՆԲԱՆԱԿԱՆ | 1 | ԱՆԲԱՆԱՊԷՍ | 2 | ԱՆԲԱՆՈՒԹԻՒՆ | 2 | ԱՆԲԱՐԻՇՏ | 3 |
| ԱՆԲԱՒ | 10 | ԱՆԲԱՒԱԶՕՐ | 2 | ԱՆԲԱՒՈՒԹԻՒՆ | 1 | ԱՆԲԵՐՐԻ | 1 |
| ԱՆԲԺՇԿԵԼԻ | 1 | ԱՆԲԻԾ | 8 | ԱՆԲԻԾՔ | 3 | ԱՆԲՈՎԱՆԴԱԿԱՊԷՍ | 1 |
| ԱՆԲՈՎԱՆԴԱԿԵԼԻ | 2 | ԱՆԲՈՒԺ | 1 | ԱՆԳԱՄ | 49 | ԱՆԳԱՅՏԱՆԱՄ | 1 |
| ԱՆԳԱՆԱԿ | 1 | ԱՆԳԷ | 1 | ԱՆԳԷՏ | 4 | ԱՆԳԻՏԱԲԱՐ | 1 |
| ԱՆԳԻՏԱՆԱՄ | 9 | ԱՆԳԻՏԵԼԻ | 17 | ԱՆԳԻՏՈՒԹԻՒՆ | 38 | ԱՆԳԻՐ | 3 |
| ԱՆԳԾԵԼԻ | 1 | ԱՆԳՈՅ | 7 | ԱՆԳՈՅԱՆԱԼ | 2 | ԱՆԳՈՅՈՒԹԻՒՆ | 5 |
| ԱՆԳՈՍՆԵԼԻ | 7 | ԱՆԳՈՍՆԵՄ | 1 | ԱՆԳՈՐԾ | 8 | ԱՆԳՈՐԾՈՒԹԻՒՆ | 2 |
| ԱՆԳՈՒԹ | 4 | ԱՆԳՈՒՇՆԵԱՑ | 1 | ԱՆԳՈՒՑԱՆԵՄ | 1 | ԱՆԳՕՏԻ | 2 |
| ԱՆԴ | 254 | ԱՆԴԱԴԱՐ | 7 | ԱՆԴԱՄ | 122 | ԱՆԴԱՄԱԼՈՅԾ | 4 |
| ԱՆԴԱՄԱՀԱՏ | 1 | ԱՆԴԱՄԱՆԴ (ԱԴԱՄԱՆԴ) | 1 | ԱՆԴԱՄԱՆԴԵԱՅ (ԱԴԱՄԱՆԴԵԱՅ) | 1 | ԱՆԴԱՆՕՐ | 8 |
| ԱՆԴԱՌՆԱԼԻ | 1 | ԱՆԴԱՍՏԱՆ | 2 | ԱՆԴԱՏԱՊԱՐՏ | 1 | ԱՆԴԱՐՁ | 1 |
| ԱՆԴԷՆ | 2 | ԱՆԴԷՊ | 1 | ԱՆԴՈՐՐ | 1 | ԱՆԴՈՐՐՈՒԹԻՒՆ | 2 |
| ԱՆԴՈՒՆԴՔ | 15 | ԱՆԴՈՒՌՆ | 1 | ԱՆԴՈՒՍՏ | 1 | ԱՆԴՍՏԻՆ | 1 |
| ԱՆԴՐ | 7 | ԱՆԴՐԱԴԱՐՁԵՄ | 19 | ԱՆԴՐԱԴԱՐՁՈՒԹԻՒՆ | 2 | ԱՆԴՐԱՆԻԿ | 111 |
| ԱՆԴՐԱՆԿԱԾԻՆ | 1 | ԱՆԴՐԱՆԿԱՊԷՍ | 1 | ԱՆԴՐԱՆԿՈՒԹԻՒՆ | 11 | ԱՆԴՐԱՎԱՐՏԻՔ | 2 |
| ԱՆԴՐԴՈՒԵԼԻ | 1 | ԱՆԴՐԷ ՄԵԿՆԻՉ | 1 | ԱՆԴՐԷԱՍ | 2 | ԱՆԴՐԷՆ | 8 |
| ԱՆԵԶՐ | 4 | ԱՆԵԶՐԱԿԱՆ | 1 | ԱՆԵԼ ՆՇԱՆՍ | 1 | ԱՆԵՂ | 80 |
| ԱՆԵՂԱԿԱՆ | 4 | ԱՆԵՂԱԿԻՑ | 2 | ԱՆԵՂՈՒԹԻՒՆ | 4 | ԱՆԵՐԲ | 4 |
| ԱՆԵՐԵԿ | 2 | ԱՆԵՐԵԿՈՅ | 1 | ԱՆԵՐԵՒՈՅԹ | 21 | ԱՆԵՐԿԲԱՅ | 1 |
| ԱՆԵՐԿՉՈՏ | 1 | ԱՆԵՐԿՐՊԱԳԵԼԻ | 1 | ԱՆԶԱՆԱԶԱՆԱՊԷՍ | 1 | ԱՆԶԱՐԴ | 1 |
| ԱՆԶԱՒԱԿ | 1 | ԱՆԶԳԱՄ | 3 | ԱՆԶԳԱՄՈՒԹԻՒՆ | 1 | ԱՆԶԳԱՅ | 9 |
| ԱՆԶԳԱՅԱԲԱՐ | 2 | ԱՆԶԳԱՅՈՒԹԻՒՆ | 1 | ԱՆԶԳՈՅՇ, ԱՆԶԳՈՒՇԱԲԱՐ | 2 | ԱՆԶԳՈՒՇԱԳՈՅՆ | 1 |
| ԱՆԶԵՂՋ | 15 | ԱՆԶԵՐԾ | 1 | ԱՆԶԵՐԾԱՆԵԼԻ | 1 | ԱՆԶՂՋԱԿԱՆ | 1 |
| ԱՆԶՂՋԱՆԱԼԻ | 1 | ԱՆԶՂՋԱՊԷՍ | 2 | ԱՆԶՂՋՈՒԹԻՒՆ | 3 | ԱՆԶՆՆԵԼԻ | 1 |
| ԱՆԶՈՅԳ | 2 | ԱՆԶՈՒԳԱԿԱՆ | 2 | ԱՆԶՐԱՒ | 2 | ԱՆԶՐԱՒԱՊԷՍ | 1 |
| ԱՆԶՕՐ | 3 | ԱՆԷ | 4 | ԱՆԷԾՔ | 64 | ԱՆԸՄԲՌՆԵԼԻ | 2 |
| ԱՆԸՆԴԴԻՄԱՀԱՐՈՒԹԻՒՆ | 1 | ԱՆԸՆԴՀԱՏ | 1 | ԱՆԸՆԴՄԻՋԱԲԱՐ | 16 | ԱՆԸՆԴՈՒՆԵԼԻ | 1 |
| ԱՆԸՆՏԵԼ | 5 | ԱՆԸՆՏԻՐ | 1 | ԱՆԸՍՏԳԻՒՏ | 1 | ԱՆԹԱՂ | 1 |
| ԱՆԹԱՌԱՄ | 6 | ԱՆԹԱՌԱՄԵԼԻ | 1 | ԱՆԹԱՓ | 2 | ԱՆԹԱՔՉԵԼԻ | 1 |
| ԱՆԹԵՐԻ | 4 | ԱՆԹԷՎԻՈՍ | 1 | ԱՆԹԻՒ | 10 | ԱՆԹԼՓԱՏ | 1 |
| ԱՆԹԼՓԱՏՈՒԹԻՒՆ | 1 | ԱՆԹՈՂԼԻ | 14 | ԱՆԹՈՅԼ | 1 | ԱՆԹՈՒԵԼԻ | 1 |
| ԱՆԺԱՄ | 1 | ԱՆԺԱՄԱՆԱԿ | 12 | ԱՆԺԱՄԱՆԱԿԱԲԱՐ | 1 | ԱՆԺՈՒԺԿԱԼ | 1 |
| ԱՆԺՈՒԺԿԱԼՈՒԹԻՒՆ | 1 | ԱՆԻԲԱՑ ԴՆԵԼԻ | 6 | ԱՆԻԾԱՆԵՄ | 45 | ԱՆԻՄԱՆԱԼԻ | 6 |
| ԱՆԻՄԱՍՏ | 1 | ԱՆԻՄԱՍՏՈՒԹԻՒՆ | 1 | ԱՆԻՄԱՑՈՒԹԻՒՆ | 1 | ԱՆԻՐ | 2 |
| ԱՆԻՐԱՒ | 18 | ԱՆԻՐԱՒԵՄ | 2 | ԱՆԻՐԱՒՈՒԹԻՒՆ | 12 | ԱՆԻՒ | 4 |
| ԱՆԼՈՒԾ | 1 | ԱՆԼՈՒԾԱՆԵԼԻ | 1 | ԱՆԼՈՒՐ | 3 | ԱՆԽԱԽՏ | 1 |
| ԱՆԽԱԽՏԵԼԻ | 1 | ԱՆԽԱՅԵՄ | 3 | ԱՆԽԱՆՁ | 1 | ԱՆԽԱՌՆ | 6 |
| ԱՆԽԱՌՆԱԿ | 2 | ԱՆԽԱՌՆԱՊԷՍ | 2 | ԱՆԽԱՓԱՆ | 4 | ԱՆԽԵԼԱՄՈՒՏ | 2 |
| ԱՆԽԻՂՃ | 2 | ԱՆԽՄՈՐ | 6 | ԱՆԽՈՆԱՐՀԵԼԻ | 1 | ԱՆԽՈՏՈՐ | 1 |
| ԱՆԽՈՒԼ | 1 | ԱՆԽՏԻՐ | 6 | ԱՆԽՕՍՈՒՆ | 1 | ԱՆԾԱԽ | 1 |
| ԱՆԾԱԾՈՒԿ | 1 | ԱՆԾԵՐԱՆԵԼԻ | 6 | ԱՆԾԻՆ | 12 | ԱՆԾՆԵԼՈՒԹԻՒՆ | 12 |
| ԱՆԾՆՆԴԱԿԱՆ | 1 | ԱՆԾՈՐԵԼԻ | 5 | ԱՆԿ | 1 | ԱՆԿԱՅՈՒՆ | 3 |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| ԱՆԿԱՆԻՄ | 144 | ԱՆԿԱՊ | 1 | ԱՆԿԱՍԿԱԾ | 2 | ԱՆԿԱՏԱՐ | 78 |
| ԱՆԿԱՏԱՐՈՒԹԻՒՆ | 4 | ԱՆԿԱՐ | 36 | ԱՆԿԱՐԳ | 14 | ԱՆԿԱՐԳԱԲԱՐ | 3 |
| ԱՆԿԱՐԳԱՆԱԼ | 2 | ԱՆԿԱՐԳՈՒԹԻՒՆ | 5 | ԱՆԿԱՐԵԼԻ | 6 | ԱՆԿԱՐԾ | 1 |
| ԱՆԿԱՐՈՒԹԻՒՆ | 7 | ԱՆԿԱՐՕՏ | 17 | ԱՆԿԱՐՕՏԱԲԱՐ | 1 | ԱՆԿԱՐՕՏՈՒԹԻՒՆ | 2 |
| ԱՆԿԵՂԾ | 2 | ԱՆԿԵՂԾԱՒՈՐ | 1 | ԱՆԿԵՆԴԱՆ | 15 | ԱՆԿԱՆԵԼ | 1 |
| ԱՆԿԵՐՊ | 4 | ԱՆԿԻՐԹ | 1 | ԱՆԿԻՒՆ | 8 | ԱՆԿՈԽ | 1 |
| ԱՆԿՈՂԻՆ | 8 | ԱՆԿՈՂՈՊՈՒՏ | 38 | ԱՆԿՐԱԿԱՆ | 3 | ԱՆԿՐԵԼԻ | 1 |
| ԱՆԿՐԹՈՒԹԻՒՆ | 1 | ԱՆԿՐՕՆ | 1 | ԱՆՀԱՂՈՐԴ | 2 | ԱՆՀԱՂՈՐԴԱԲԱՐ | 1 |
| ԱՆՀԱՂՈՐԴԵԼԻ | 1 | ԱՆՀԱՃՈՅ | 1 | ԱՆՀԱՄԱՆԻՒԹ | 1 | ԱՆՀԱՄԱՐ | 1 |
| ԱՆՀԱՄԵՄԱՏ | 1 | ԱՆՀԱՄԵՄԱՏԵԼԻ | 1 | ԱՆՀԱՄԻՄ | 2 | ԱՆՀԱՄՈՒԹԻՒՆ | 2 |
| ԱՆՀԱՅՐ | 5 | ԱՆՀԱՆԳԻՍՏ | 6 | ԱՆՀԱՇՏ | 3 | ԱՆՀԱՇՏԵԼԻ | 2 |
| ԱՆՀԱՍ | 18 | ԱՆՀԱՍԱՆԵԼԻ | 3 | ԱՆՀԱՍԱՊԷՍ | 1 | ԱՆՀԱՍՈՒԹԻՒՆ | 3 |
| ԱՆՀԱՍՏԱՏ | 4 | ԱՆՀԱՏ | 47 | ԱՆՀԱՏԱՊԷՍ | 1 | ԱՆՀԱՏՈՂՈՒԹԻՒՆ | 1 |
| ԱՆՀԱՏՈՒԹԻՒՆ | 2 | ԱՆՀԱՐԹ | 1 | ԱՆՀԱՒԱՆ | 2 | ԱՆՀԱՒԱՍԱՐ | 7 |
| ԱՆՀԱՒԱՏ | 26 | ԱՆՀԱՒԱՏԱՆԱՄ | 1 | ԱՆՀԱՒԱՏՈՒԹԻՒՆ | 8 | ԱՆՀԵԹԵԹ | 1 |
| ԱՆՀԵՏԱԶՕՏԵԼԻ | 1 | ԱՆՀՆԱԶԱՆԴ | 19 | ԱՆՀՆԱԶԱՆԴԻՄ | 1 | ԱՆՀՆԱԶԱՆԴՈՒԹԻՒՆ | 3 |
| ԱՆՀՆԱՐ | 14 | ԱՆՀՆԱՐԻՆ | 11 | ԱՆՀՈԳ | 3 | ԱՆՀՈԳԻ | 1 |
| ԱՆՀՈԳՈՒԹԻՒՆ | 3 | ԱՆՀՈՒՆ | 13 | ԱՆՀՊԵԼԻ | 2 | ԱՆՀՐԱԺԵՇՏ | 1 |
| ԱՆՁԱՅՆ | 4 | ԱՆՁԱՆՁԻՐ | 1 | ԱՆՁԵՌԱԳՈՐԾ | 2 | ԱՆՁԵՌՆԱՐԿԵԼԻ | 1 |
| ԱՆՁԵՒ | 1 | ԱՆՁԿՈՒԹԻՒՆ | 1 | ԱՆՁՆ | 263 | ՅԱՆՁՆ ԱՌՆԵԼ, ԱՌՆՈՒԼ | 2 |
| ԱՆՁՆԱԿԱՆ | 6 | ԱՆՁՆԱԿԱՆԱՊԷՍ | 1 | ԱՆՁՆԱՒՈՐ | 9 | ԱՆՁՆԱՒՈՐԻՄ | 1 |
| ԱՆՁՆԱՒՈՐՈՒԹԻՒՆ | 6 | ԱՆՁՆԵԱՅ | 1 | ԱՆՁՆԻՇԽԱՆ | 38 | ԱՆՁՆԻՇԽԱՆԱԿԱՆ | 2 |
| ԱՆՁՆԻՇԽԱՆՈՒԹԻՒՆ | 6 | ԱՆՁՈՒԿ | 5 | ԱՆՁՐԵՒ | 38 | ԱՆՁՐԵՒԱԲԵՐ | 1 |
| ԱՆՁՐԵՒԱՀՈՍ | 1 | ԱՆՁՐԵՒԵՄ | 2 | ԱՆՃԱՌ | 15 | ԱՆՃԱՌԱՊԷՍ | 1 |
| ԱՆՃԱՌԵԼԻ | 15 | ԱՆՃԱՐ | 2 | ԱՆՃՈՂՈՊՐԵԼԻ | 1 | ԱՆՃՈՌՆԻ | 1 |
| ԱՆՄԱՀ | 94 | ԱՆՄԱՀԱԿԱՆ | 3 | ԱՆՄԱՀԱՆԱՄ | 1 | ԱՆՄԱՀԱՊԷՍ | 2 |
| ԱՆՄԱՀԱՑՈՒՑԱՆԵՄ | 2 | ԱՆՄԱՀՈՒԹԻՒՆ | 32 | ԱՆՄԱՅՐ | 7 | ԱՆՄԱՇԵԼԻ | 1 |
| ԱՆՄԱՏՈՅՑ | 4 | ԱՆՄԱՐԹ | 1 | ԱՆՄԱՐՄԻՆ | 80 | ԱՆՄԱՐՄՆԱԲԱՐ | 1 |
| ԱՆՄԱՐՄՆԱՆԱՄ | 1 | ԱՆՄԱՐՄՆԱՊԷՍ | 1 | ԱՆՄԱՐՄՆՈՒԹԻՒՆ | 3 | ԱՆՄԱՔՈՒՐ | 2 |
| ԱՆՄԵԿՆԵԼԻ | 5 | ԱՆՄԵՂ | 36 | ԱՆՄԵՂԱԴՐԵԼԻ | 2 | ԱՆՄԵՂՈՒԹԻՒՆ | 27 |
| ԱՆՄԵՂՐ | 1 | ԱՆՄԵՐՁ | 1 | ԱՆՄԻՋԱԲԱՐ | 1 | ԱՆՄԻՋՈՑ | 1 |
| ԱՆՄԻՏ | 5 | ԱՆՄԽԻԹԱՐ | 2 | ԱՆՄԿՐՏԵԱԼ | 2 | ԱՆՄՆԱՑԱԿԱՆ | 1 |
| ԱՆՄՈԼԱՐ | 5 | ԱՆՄՈՌԱՆԱԼԻ | 2 | ԱՆՄՈՌԱՑ | 2 | ԱՆՄՈՌԱՑՈՒԹԻՒՆ | 2 |
| ԱՆՄՈՐՈՒՔ | 1 | ԱՆՄՌՈՒՆՉ | 1 | ԱՆՄՏԱՆԱՄ | 1 | ԱՆՄՏՈՒԹԻՒՆ | 4 |
| ԱՆՅԱԳ | 2 | ԱՆՅԱՂԹ, ԱՆՅԱՂԹԵԼԻ | 2 | ԱՆՅԱՅՏ | 10 | ԱՆՅԱՅՏՈՒԹԻՒՆ | 1 |
| ԱՆՅԱՐՄԱՐ | 6 | ԱՆՅԵՂ | 1 | ԱՆՅԻՇԱՉԱՐ | 1 | ԱՆՅՈՅՍ | 2 |
| ԱՆՅՈՒՍԱՆԱՄ | 1 | ԱՆՆԱ | 6 | ԱՆՆԵՆԳ | 2 | ԱՆՆԵՐՀԱԿ | 2 |
| ԱՆՆԻՒԹ | 13 | ԱՆՆԻՒԹԱԲԱՐ | 1 | ԱՆՆԻՒԹԱԿԱՆ | 1 | ԱՆՆԻՒԹԱՊԷՍ | 1 |
| ԱՆՆԻՒԹՈՒԹԻՒՆ | 1 | ԱՆՆՄԱՆ | 31 | ԱՆՆՄԱՆԱՄԱՍՆ | 2 | ԱՆՆՄԱՆԱՄԱՍՆԱԲԱՐ | 1 |
| ԱՆՆՄԱՆՈՒԹԻՒՆ | 6 | ԱՆՆՇԱՆ | 2 | ԱՆՇԱՂԿԱՊ | 2 | ԱՆՇԱՐԱԴԻՐ | 1 |
| ԱՆՇԱՐԱԴՐԵԼԻ | 1 | ԱՆՇԱՐԺ | 28 | ԱՆՇԱՐԺԱՊԷՍ | 3 | ԱՆՇԱՐԺՈՒԹԻՒՆ | 2 |
| ԱՆՇԵՂ | 1 | ԱՆՇԷՋ | 2 | ԱՆՇԻՋԱՆԵԼԻ | 1 | ԱՆՇՆՉԱՆԱՄ | 1 |
| ԱՆՇՈՒՆՉ | 17 | ԱՆՇՓՈԹ | 19 | ԱՆՇՓՈԹԱԲԱՐ | 1 | ԱՆՇՓՈԹԵԼԻ | 1 |
| ԱՆՇՕՇԱՓԵԼԻ | 1 | ԱՆՈԽԱԿԱԼՈՒԹԻՒՆ | 2 | ԱՆՈՂՈՐՄ | 7 | ԱՆՈՂՈՐՄՈՒԹԻՒՆ | 1 |
| ԱՆՈՅՇ | 25 | ԱՆՈՏՆ | 1 | ԱՆՈՐԱԿ | 6 | ԱՆՈՐԴԻ | 1 |
| ԱՆՈՐԻՇ | 3 | ԱՆՈՐՈՇ | 1 | ԱՆՈՐՈՇԱԿԻ | 1 | ԱՆՈՐՈՇԱՊԷՍ | 1 |
| ԱՆՈՐՈՇԵԼԻ | 3 | ԱՆՈՐՈՇՈՒԹԻՒՆ | 1 | ԱՆՈՒԱՆԱԿԻՐ | 1 | ԱՆՈՒԱՆԱԿԻՑ | 1 |
| ԱՆՈՒԱՆԱԿՈՉՈՒԹԻՒՆ | 1 | ԱՆՈՒԱՆԵԼԻ | 1 | ԱՆՈՒԱՆԵՄ | 38 | ԱՆՈՒՂՂԱՅ | 1 |
| ԱՆՈՒՆ | 213 | ՅԱՆՈՒՆ | 16 | ԱՆՈՒՇԱՀՈՏ | 15 | ԱՆՈՒՇՈՒԹԻՒՆ | 3 |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| ԱՆՈՒՍՈՒՄՆԱՊԷՍ | 1 | ԱՆՈՒՏԵԼԻ | 2 | ԱՆՈՒՐ | 3 | ԱՆՉԱՐՉԱՐԱՊԷՍ | 1 |
| ԱՆՉԱՐՉԱՐԵԼԻ | 7 | ԱՆՉԱՐՉԱՐՈՒԹԻՒՆ | 6 | ԱՆՉԱՓ | 20 | ԱՆՉԱՓԱԿՑՈՒԹԻՒՆ | 1 |
| ԱՆՉԱՓՈՒԹԻՒՆ | 5 | ԱՆՊԱԿԱՍ | 4 | ԱՆՊԱՏԱՍԽԱՆԻ | 1 | ԱՆՊԱՏԵՀ | 3 |
| ԱՆՊԱՏԻՐ | 1 | ԱՆՊԱՏԻՒ | 6 | ԱՆՊԱՏԿԱՌ | 1 | ԱՆՊԱՏՃԱՌ | 13 |
| ԱՆՊԱՏՇԱՃ | 14 | ԱՆՊԱՏՇԱՃՈՒԹԻՒՆ | 2 | ԱՆՊԱՏՈՒԷՄ | 2 | ԱՆՊԱՏՈՒՄ | 3 |
| ԱՆՊԱՏՍՊԱՐԱՆ | 1 | ԱՆՊԱՏՐԱՍՏ | 1 | ԱՆՊԱՏՐԱՍՏՈՒԹԻՒՆ | 1 | ԱՆՊԱՐԱԳՐԵԼԻ | 5 |
| ԱՆՊԱՐԱՊ | 1 | ԱՆՊԱՐԻՍՊ | 1 | ԱՆՊԱՐՈՒՆԱԿԵԼԻ | 2 | ԱՆՊԱՐՏ | 4 |
| ԱՆՊԱՐՏԱԿԱՆ | 1 | ԱՆՊԻՏԱՆ | 12 | ԱՆՊՏՈՒՂ | 9 | ԱՆՋԱՏԵՄ | 3 |
| ԱՆՋԱՏՈՂ | 1 | ԱՆՋԻՆՋ | 5 | ԱՆՋՆՋԵԼԻ | 3 | ԱՆՋՐԴԻ | 4 |
| ԱՆՋՐԵԼԻ | 1 | ԱՆՋՐՊԵՏ | 2 | ԱՆՋՐՊԵՏԵՄ | 1 | ԱՆՍԱՀՄԱՆ | 11 |
| ԱՆՍԱՀՄԱՆԵԼԻ | 2 | ԱՆՍԵՐՄՆ | 6 | ԱՆՍԽԱԼ | 3 | ԱՆՍԽԱԼԱՊԷՍ | 1 |
| ԱՆՍԿԶԲՆԱԲԱՐ | 1 | ԱՆՍԿԶԲՆԱԿԱՆ | 1 | ԱՆՍԿԶԲՆԱՊԷՍ | 1 | ԱՆՍԿԶԲՆՈՒԹԻՒՆ | 2 |
| ԱՆՍԿԻԶԲՆ | 51 | ԱՆՍՆՈՒՆԴ | 1 | ԱՆՍՈՒԱՂ | 6 | ԱՆՍՈՒՏ | 3 |
| ԱՆՍՈՒՐԲ | 28 | ԱՆՍՊԱՌԱՊԷՍ | 2 | ԱՆՍՏԵՂԾ | 1 | ԱՆՍՏՈՅԳ | 1 |
| ԱՆՍՏՈՒԵՐ | 1 | ԱՆՎԱԽՃԱՆ | 55 | ԱՆՎԱԽՃԱՆԱՊԷՍ | 1 | ԱՆՎԱԽՈՒԹԻՒՆ | 1 |
| ԱՆՎԱՅԵԼՈՒՉ | 1 | ԱՆՎԱՐԺ | 1 | ԱՆՎԱՐՁ | 1 | ԱՆՎԱՐՁԱՏՐԵԼԻ | 1 |
| ԱՆՎՃԱՐ | 2 | ԱՆՎՆԱՍ | 4 | ԱՆՏԱՆԵԼԻ | 1 | ԱՆՏԱՌ | 2 |
| ԱՆՏԱՐԱԿՈՅՍ | 2 | ԱՆՏԵՂԻ | 6 | ԱՆՏԵՍ | 6 | ԱՆՏԵՍԱԿ | 4 |
| ԱՆՏԵՍԱՆԵԼԻ | 3 | ԱՆՏԵՍՈՒԹԻՒՆ | 2 | ԱՆՏԻ | 50 | ԱՆՏԻՈՔ | 13 |
| ԱՆՏՐԱՄԱԴՐԵԼԻ | 1 | ԱՆՏՐՏՈՒՄ | 2 | ԱՆՏՕՆ | 7 | ԱՆՑԱԿԱՆ | 1 |
| ԱՆՑԱՆԵԼԻ | 1 | ԱՆՑԱՆԵՄ | 140 | ԱՆՑԱՒՈՐ | 13 | ԱՆՑՈՒՄՆ | 3 |
| ԱՆՑՈՒՑԱՆԵՄ | 2 | ԱՆՓԱԿ | 2 | ԱՆՓՈԽ | 1 | ԱՆՓՈԽԱԲՈՒՆ | 1 |
| ԱՆՓՈԽԱՆՈՐԴ | 3 | ԱՆՓՈԽԱՆՑԵԼԻ | 1 | ԱՆՓՈՅԹ | 1 | ԱՆՓՈՅԹ ԱՌՆԵԼ | 2 |
| ԱՆՓՈՒՏ | 10 | ԱՆՓՈՓՈԽ | 76 | ԱՆՓՈՓՈԽԵԼԻ | 12 | ԱՆՓՈՓՈԽՈՒԹԻՒՆ | 4 |
| ԱՆՓՏԵԼԻ | 1 | ԱՆՔԱԿ | 7 | ԱՆՔԱԿՏԵԼԻ | 9 | ԱՆՔԱՆԱԿ | 1 |
| ԱՆՔՆՆԵԼԻ | 3 | ԱՆՔՆՆԻՆ | 1 | ԱՆՔՈՅԹ | 1 | ԱՆՔՈՒՆ | 3 |
| ԱՆՕԳՈՒՏ | 2 | ԱՆՕԹ | 21 | ԱՆՕՍՐ | 6 | ԱՆՕՍՐԱԳՈՅՆ | 1 |
| ԱՆՕՍՐԱՆԱՄ | 1 | ԱՆՕՍՐԱՑՈՒՑԱՆԵՄ | 1 | ԱՆՕՍՐՈՒԹԻՒՆ | 1 | ԱՆՕՐԷՆ | 10 |
| ԱՆՕՐԷՆՈՒԹԻՒՆ | 19 | ԱՆՕՐԻՆԵՄ | 1 | ԱՇԱԿԵՐՏ | 58 | ԱՇԱԿԵՐՏԵՄ | 2 |
| ԱՇԽԱՏ ԱՌՆԵԼ | 1 | ԱՇԽԱՏԱՆՔ | 3 | ԱՇԽԱՏԱՍԷՐ | 2 | ԱՇԽԱՏԻՄ | 10 |
| ԱՇԽԱՏՈՒԹԻՒՆ | 14 | ԱՇԽԱՐ | 1 | ԱՇԽԱՐՀ | 267 | ԱՇԽԱՐՀ ՀԱՅՈՑ | 2 |
| ԱՇԽԱՐՀԱԿԱԶՄՈՒԹԻՒՆ | 1 | ԱՇԽԱՐՀԱԿԱՆ | 17 | ԱՇԽԱՐՀԱԿԵՑՈՅՑ | 1 | ԱՇԽԱՐՀԱՄԱՏՈՒՌՆ | 2 |
| ԱՇԽԱՐՀԱՅԻՆ | 2 | ԱՇԽԱՐՀԱՍԷՐ | 2 | ԱՇԽԱՐՀԱՐԱՐ | 1 | ԱՇԽՈՅԺ | 1 |
| ԱՇՈՒՆ | 13 | ԱՇՏԱՆԱԿ | 19 | ԱՇՏԱՐԱԿ | 7 | ԱՉՔ | 145 |
| ԱՌ ԱՉՕՔ | 12 | ԱՊ | 1 | ԱՊԱ | 244 | ԵՒ ԱՊԱ | 319 |
| ԱՊԱ ԵՒ | 51 | ԱՊԱԳԱՅ | 21 | ԱՊԱ ԹԷ | 36 | ԱՊԱ ԹԷ ՈՉ | 33 |
| ԱՊԱԺՈՅԺ | 1 | ԱՊԱԽՏ ԱՌՆԵԼ | 1 | ԱՊԱԿԱՆԱԳՈՐԾ | 1 | ԱՊԱԿԱՆԱԿԻՐ | 1 |
| ԱՊԱԿԱՆԱՑՈՒ | 64 | ԱՊԱԿԱՆԵԼԻ | 2 | ԱՊԱԿԱՆԵՄ | 80 | ԱՊԱԿԱՆԻՉ | 2 |
| ԱՊԱԿԱՆՈՒԹԻՒՆ | 133 | ԱՊԱԿԻ | 3 | ԱՊԱՀԱՐԶԱՆ | 2 | ԱՊԱՇԱՒ | 1 |
| ԱՊԱՇԱՒԵՄ | 2 | ԱՊԱՇԽԱՐԱՆ | 6 | ԱՊԱՇԽԱՐԵԼԻ | 1 | ԱՊԱՇԽԱՐԵՄ | 37 |
| ԱՊԱՇԽԱՐՈՒԹԻՒՆ | 97 | ԱՊԱՇՆՈՐՀ | 4 | ԱՊԱ ՈՒՐԵՄՆ | 268 | ԱՊԱՌՆԻ | 12 |
| ԱՊԱՍՏԱՆ | 9 | ԱՊԱՍՏԱՆԻՄ | 6 | ԱՊԱՍՏԱՆՈՒԹԻՒՆ | 2 | ԱՊԱՐԱՆՔ | 3 |
| ԱՊԱՐՔՏԻԱՍ | 2 | ԱՊԱՐՕՇ | 1 | ԱՊԱՑՈՅՑ | 2 | ԱՊԱՑՈՒՑԱԿԱՆ | 2 |
| ԱՊԱՒԱՌ | 8 | ԱՊԱՒԷՆ | 3 | ԱՊԱՒԻՆԵՄ | 6 | ԱՊԱՒԻՆՈՒԹԻՒՆ | 1 |
| ԱՊԱՔԷՆ | 6 | ԱՊԵԼԻՕԴ | 1 | ԱՊԵՐԱԽՏ | 6 | ԱՊԷԼԻՈՍ | 1 |
| ԱՊԻԿԻ | 2 | ԱՊՇԻՄ | 2 | ԱՊՈՂՈՆ | 1 | ԱՊՈՒՇ | 6 |
| ԱՊՊԱՊ | 1 | ԱՊՍՏԱՄԲ | 11 | ԱՊՍՏԱՄԲԵՄ | 4 | ԱՊՍՏԱՄԲՈՒԹԻՒՆ | 2 |
| ԱՊՏԱԿ ԱԾԵԼ | 1 | ԱՊՏԱԿԵՄ | 3 | ԱՊՐԵՄ | 34 | ԱՊՐԵՑՈՒՑԱՆԵՄ | 7 |
| ԱՊՐԵՑՈՒՑԻՉ | 1 | ԱՊՐԻԼ | 2 | ԱՊՕԴԻՆԱՐ | 1 | ԱՋ | 80 |
| ԱՋ ԵՒ ԱՀԵԱԿ | 10 | ԱՋԱԿՈՂՄ | 1 | ԱՋԱԿՈՂՄԵԱՆ | 7 | ԱՋԱԿՈՂՄՆ | 5 |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| ԱՋԵԱՅ | 1 | ԱՋՈՒԱԾՈՅ | 1 | ԱՌ | 948 | ԱՌԱԳԱՍՏ | 7 |
| ԱՌԱԹՈՒՐ | 1 | ԱՌԱԿ | 35 | ԱՌԱԿԱԽՕՍ | 2 | ԱՌԱԿԱՆՔ | 1 |
| ԱՌԱԿԱՒՈՐ | 1 | ԱՌԱԿԵՄ | 4 | ԱՌԱՆՁԻՆ | 31 | ԱՌԱՆՁՆԱԿԱՆ | 18 |
| ԱՌԱՆՁՆԱԿԻ | 17 | ԱՌԱՆՁՆԱՆԱՄ | 3 | ԱՌԱՆՁՆԱՊԷՍ | 10 | ԱՌԱՆՁՆԱՒՈՐ | 1 |
| ԱՌԱՆՁՆԱՒՈՐՈՒԹԻՒՆ | 5 | ԱՌԱՆՁՆՈՒԹԻՒՆ | 12 | ԱՌԱՆՑ | 211 | ԱՌԱՋ | 8 |
| ԱՌԱՋԱԳԱՅԵՄ (ՅԱՌԱՋԱԳԱՅԵՄ) | 3 | ԱՌԱՋԱԴՐԵՄ | 2 | ԱՌԱՋԱԿԱՅ | 1 | ԱՌԱՋԱՊԱՀ | 2 |
| ԱՌԱՋԱՍԱՑԵԱԼ | 1 | ԱՌԱՋԱՒՈՐ | 7 | ԱՌԱՋԱՒՈՐ ՊԱՀՔ | 4 | ԱՌԱՋԻ | 44 |
| ԱՌԱՋԻԿԱՅ | 29 | ԱՌԱՋԻՆ | 606 | ԱՌԱՋՆՈՐԴ | 19 | ԱՌԱՋՆՈՐԴԱԿԱՆ | 1 |
| ԱՌԱՋՆՈՐԴԵՄ | 14 | ԱՌԱՋՆՈՐԴՈՒԹԻՒՆ | 1 | ԱՌԱՍԱՆ | 1 | ԱՌԱՍՊԵԼ | 3 |
| ԱՌԱՍՊԵԼԱԽՕՍԵԼ | 1 | ԱՌԱՏ | 4 | ԱՌԱՏԱԲԱՆ | 1 | ԱՌԱՏԱԲԱՇԽՈՒԹԻՒՆ | 1 |
| ԱՌԱՏԱԳՈՅՆ | 1 | ԱՌԱՏԱՊԷՍ | 3 | ԱՌԱՏՈՒԹԻՒՆ | 5 | ԱՌԱՐԿԵՄ | 9 |
| ԱՌԱՐԿՈՒԹԻՒՆ | 12 | ԱՌԱՒԵԼ | 208 | ԱՌԱՒԵԼ ԵՒՍ, ԵՒՍ ԱՌԱՒԵԼ | 7 | ԱՌԱՒԵԼ ՔԱՆ | 19 |
| ԱՌԱՒԵԼԱՆԱՄ | 5 | ԱՌԱՒԵԼԱՊԷՍ | 1 | ԱՌԱՒԵԼՈՒԹԻՒՆ | 8 | ԱՌԱՒԵԼՈՒՄ | 42 |
| ԱՌԱՒՕՏ | 82 | ԱՌԱՒՕՏԵԱՆ | 3 | ԱՌԱՒՕՏԵՄ | 1 | ԱՌԱՔԵԱԼ | 279 |
| ԱՌԱՔԵԼԱԴԻՐ | 2 | ԱՌԱՔԵԼԱԿԱՆ | 14 | ԱՌԱՔԵԼՈՒԹԻՒՆ | 9 | ԱՌԱՔԵՄ | 44 |
| ԱՌԱՔԻՆԱՍԻՐՈՒԹԻՒՆ | 1 | ԱՌԱՔԻՆԻ | 2 | ԱՌԱՔԻՆՈՒԹԻՒՆ | 134 | ԱՌԱՔԻՉ | 1 |
| ԱՌԱՔՈՂ | 5 | ԱՌԱՔՈՒՄՆ | 4 | ԱՌԸՆԹԵՐ | 2 | ԱՌԺԱՄԱՅՆ | 10 |
| ԱՌԻԹ | 4 | ԱՌԻՆՉ (ԱՌԻՆՉՔ) | 15 | ԱՌԻՒԾ | 36 | ԱՌԻՒԾԱԲԱՐ | 1 |
| ԱՌԿԱՅԱՆԱՄ | 1 | ԱՌՀԱՍԱՐԱԿ | 69 | ԱՌՀԱՒԱՏՉԵԱՅ | 6 | ԱՌՋԵՌՆ | 1 |
| ԱՌՆԱԿԱՆ | 1 | ԱՌՆԵՄ | 494 | ԱՌՆՈՂԱԿԱՆ | 1 | ԱՌՆՈՒՄ | 342 |
| ԱՌՆՉԱԿԱՆ | 2 | ԱՌՆՉԱՊԷՍ | 1 | ԱՌՈԳԱՆՈՒԹԻՒՆ | 1 | ԱՌՈՂՋ | 7 |
| ԱՌՈՂՋԱՆԱՄ | 6 | ԱՌՈՂՋԱՐԱՐ | 1 | ԱՌՈՂՋԱՑՈՒՑԱՆԵՄ | 1 | ԱՌՈՂՋՈՒԹԻՒՆ | 21 |
| ԱՌՈՅԳ | 1 | ԱՌՈՒ | 3 | ԱՌՈՒՄՆ | 4 | ԱՌՕՂ | 4 |
| ԱՌՕՐԵԱՅ | 1 | ԱՍԱՅԷԼ | 2 | ԱՍԱՓ | 4 | ԱՍԴՈՂՈՒԹԻՒՆ | 1 |
| ԱՍԵՂՆ | 1 | ԱՍԵՄ | 2872 | ԱՍԵԼԻ | 5 | ԱՍԵՐ | 2 |
| ԱՍԻԱ | 1 | ԱՍՈՂ | 2 | ԱՍՈՐԵՍՏԱՆ | 6 | ԱՍՈՐԻ | 5 |
| ԱՍՈՒԹԻՒՆ | 1 | ԱՍՈՒՄՆ | 1 | ԱՍՊԱՐԷԶ | 1 | ԱՍՊԱՏԱԿ | 1 |
| ԱՍՊԱՏԱԿԵՄ | 1 | ԱՍՊՆՋԱԿԱՆ | 1 | ԱՍՏ | 231 | ԱՍՏ ԵՒ ԱՆԴ | 1 |
| ԱՍՏԱՆՕՐ | 10 | ԱՍՏԵՂԱԳԷՏ | 1 | ԱՍՏԵՂԱՓԱՅԼ | 1 | ԱՍՏԷՆ | 7 |
| ԱՍՏԻ | 42 | ԱՍՏԻՃԱՆ | 56 | ԱՍՏԻՃԱՆԱՁԵՒ | 1 | ԱՍՏԻՃԱՆԱՒՈՐ | 1 |
| ԱՍՏԻՃԱՆԻՄ | 1 | ԱՍՏՂ | 81 | ԱՍՏՂԱԲԱՇԽՈՒԹԻՒՆ | 1 | ԱՍՏՂԱԳԷՏ | 3 |
| ԱՍՏՂԱԼԻՑ | 1 | ԱՍՏՈՒԱԾ | 2719 | ԱՍՏՈՒԱԾ ՀԱՅՐ | 7 | ԱՍՏՈՒԱԾԱԲԱՆ | 41 |
| ԱՍՏՈՒԱԾԱԲԱՆԱԿԱՆ | 1 | ԱՍՏՈՒԱԾԱԲԱՆԵՄ | 3 | ԱՍՏՈՒԱԾԱԲԱՆՈՒԹԻՒՆ | 31 | ԱՍՏՈՒԱԾԱԲԱՐ | 3 |
| ԱՍՏՈՒԱԾԱԳԻԾ | 2 | ԱՍՏՈՒԱԾԱԳՈՒՄԱՐ | 1 | ԱՍՏՈՒԱԾԱԶԳԵԱՑ | 2 | ԱՍՏՈՒԱԾԱԽՕՍ | 1 |
| ԱՍՏՈՒԱԾԱԽՕՍՈՒԹԻՒՆ | 5 | ԱՍՏՈՒԱԾԱԾԻՆ | 48 | ՍՏՈՒԱԾԱԾՆՈՂՈՒԹԻՒՆ | 3 | ԱՍՏՈՒԱԾԱԿԱՆ | 1 |
| ԱՍՏՈՒԱԾԱԿԵՐՊ | 1 | ԱՍՏՈՒԱԾԱԿԵՐՏ | 1 | ԱՍՏՈՒԱԾԱԿԻՐ | 1 | ԱՍՏՈՒԱԾԱՀԱՅՐ | 8 |
| ԱՍՏՈՒԱԾԱՄԱՅՐ | 2 | ԱՍՏՈՒԱԾԱՄԱՐՏ | 1 | ԱՍՏՈՒԱԾԱ-ՅԱՅՏՆՈՒԹԻՒՆ | 1 | ԱՍՏՈՒԱԾԱՅԻՆ | 167 |
| ԱՍՏՈՒԱԾԱՅՆԱԳՈՅՆ | 1 | ԱՍՏՈՒԱԾԱՆԱՄ | 18 | ԱՍՏՈՒԱԾԱՇՈՒՆՉ | 7 | ԱՍՏՈՒԱԾԱՊԱՇՏ | 4 |
| ԱՍՏՈՒԱԾՊԱՇՏՈՒԹԻՒՆ | 13 | ԱՍՏՈՒԱԾԱՊԱՐԳԵՒ | 1 | ԱՍՏՈՒԱԾԱՍԷՐ | 1 | ԱՍՏՈՒԱԾԱՍՊԱՆ | 3 |
| ԱՍՏՈՒԱԾԱՏԵՍ | 2 | ԱՍՏՈՒԱԾԱՏԵՍԱԿ | 5 | ԱՍՏՈՒԱԾԱՏՈՒՆԿ | 3 | ԱՍՏՈՒԱԾԱ-ՑՈՒՑԱՆԵՄ | 1 |
| ԱՍՏՈՒԱԾԳԻՏՈՒԹԻՒՆ | 1 | ԱՍՏՈՒԱԾԵԱՆ | 1 | ԱՍՏՈՒԱԾԵՂԷՆ | 3 | ԱՍՏՈՒԱԾԸՆԿԱԼ | 4 |
| ԱՍՏՈՒԱԾՈՒԹԻՒՆ | 166 | ԱՍՏՈՒԱԾՈՒՍՈՅՑ | 1 | ԱՍՏՈՒԱԾՈՒՐԱՑ | 1 | ԱՍՏՈՒԱԾՊԵՏԱԿԱՆ | 1 |
| ԱՍՏՈՒԱԾՊԵՏՈՒԹԻՒՆ | 4 | ԱՍՐ | 3 | ԱՏԱՄՆ | 18 | ԱՏԵԱՆ | 4 |
| ԱՏԵԼԻ | 5 | ԱՏԵԼՈՒԹԻՒՆ | 16 | ԱՏԵՄ | 25 | ԱՏԵՆԱԴՊԻՐ | 1 |
| ԱՏՈՄ | 1 | ԱՏՈՒՐ | 1 | ԱՏՈՔ | 2 | ԱՐԱ | 1 |
| ԱՐԱԲ | 1 | ԱՐԱԲԱՑԻ | 2 | ԱՐԱԲԻԱ | 3 | ԱՐԱԳ | 4 |
| ԱՐԱԳԱՀԱՍ | 1 | ԱՐԱԳԸՆԹԱՑ | 1 | ԱՐԱԳԻԼ | 2 | ԱՐԱԳՈՒԹԻՒՆ | 2 |
| ՅԱՐԱԼԷԶ | 1 | ԱՐԱԾԵՄ | 1 | ԱՐԱԿԱՆ | 5 | ԱՐԱՀԵՏ | 1 |
| ԱՐԱՄ | 2 | ԱՐԱՊ | 1 | ԱՐԱՏ | 13 | ԱՐԱՏԵՄ | 1 |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| ԱՐԱՏՍԻՐՈՒԹԻՒՆ | 1 | ԱՐԱՐ | 2 | ԱՐԱՐԱԾ | 186 | ԱՐԱՐԱՏ | 2 |
| ԱՐԱՐԻՉ | 109 | ԱՐԱՐՈՂ | 1 | ԱՐԱՐՈՂԱԿԱՆ | 2 | ԱՐԱՐՈՂՈՒԹԻՒՆ | 4 |
| ԱՐԱՐՈՒԱԾ | 1 | ԱՐԱՐՉԱԳՈՐԾ | 2 | ԱՐԱՐՉԱԳՈՐԾՈՒԹԻՒՆ | 1 | ԱՐԱՐՉԱԴԻՐ | 5 |
| ԱՐԱՐՉԱԿԱՆ | 8 | ԱՐԱՐՉԱԿԻՑ | 2 | ԱՐԱՐՉՈՒԹԻՒՆ | 37 | ԱՐԱՑ | 1 |
| ԱՐԲԱՆԵԱԿ | 3 | ԱՐԲԱՆԵԿԵՄ | 1 | ԱՐԲԵՆԱՄ | 15 | ԱՐԲԵՑՈՒԹԻՒՆ | 5 |
| ԱՐԲԵՑՕՂ | 1 | ԱՐԲՆՈՒ | 1 | ԱՐԲՈՒՄՆ | 1 | ԱՐԲՈՒՑԱՆԵՄ | 2 |
| ԱՐԲՈՒՑՈՒՄՆ | 1 | ԱՐԳԱՆԴ | 59 | ԱՐԳԱՒԱՆԴ | 1 | ԱՐԳԵԼ | 12 |
| ԱՐԳԵԼ ԼԻՆԵԼ | 2 | ԱՐԳԵԼԱՆԻՄ | 1 | ԱՐԳԵԼԱՐԱՆ | 1 | ԱՐԳԵԼՈՒՄ | 48 |
| ԱՐԳԵԼՈՒՄՆ | 5 | ԱՐԳԷՍՏԷՍ | 1 | ԱՐԴ կմ ԱՐԴ ԵՒՍ | 436 | ԵՒ ԱՐԴ | 10 |
| ԱՐԴԱՐ | 181 | ԱՐԴԱՐԱԴԱՏ | 1 | ԱՐԴԱՐԱՄԻՏ | 1 | ԱՐԴԱՐԱՆԱՄ | 28 |
| ԱՐԴԱՐԱՊԷՍ | 19 | ԱՐԴԱՐԱՑՈՒՑԱՆԵՄ | 10 | ԱՐԴԱՐԵՒ | 1 | ԱՐԴԱՐՈՒԹԻՒՆ | 204 |
| ԱՐԴԵԱՆ | 11 | ԱՐԴԵՕՔ | 1 | ԱՐԴԷՆ ԻՍԿ | 1 | ԱՐԴԻՒՆՔ | 27 |
| ԱՐԴԻՒՆԱՆԱՄ | 1 | ԱՐԴԻՒՆԱՐԱՐ | 4 | ԱՐԴԻՒՆԱՒՈՐ | 1 | ԱՐԴՆ | 1 |
| ԱՐԵԳ | 1 | ԱՐԵԳԱԿՆ | 168 | ԱՐԵԳԱԿՆԱՓԱՅԼ | 1 | ԱՐԵԳԻ | 2 |
| ԱՐԵՆԱԶԳԱՑ | 1 | ԱՐԵՆԱԿՑՈՒԹԻՒՆ | 1 | ԱՐԵՒ | 30 | ԱՐԵՒԱԳԱԼ | 6 |
| ԱՐԵՒԱԿԷԶ | 1 | ԱՐԵՒԱՊԷՍ | 1 | ԱՐԵՒԵԼԱՅԻՆ | 1 | ԱՐԵՒԵԼԵԱՅ | 1 |
| ԱՐԵՒԵԼԵԱՆ | 2 | ԱՐԵՒԵԼՔ | 60 | ԱՐԵՒՄՈՒՏՔ | 42 | ԱՐԵՒՄՏԱԿԱՆ | 1 |
| ԱՐԵՒՄՏԵԱՆ | 3 | ԱՐԷՍ | 2 | ԱՐԹՆՈՒԹԻՒՆ | 2 | ԱՐԹՈՒՆ | 2 |
| ԱՐԹՈՒՆ ԿԱԼ կամ ԼԻՆԵԼ | 3 | ԱՐԺԱՆ | 11 | ԱՐԺԱՆԱՆԱՄ | 10 | ԱՐԺԱՆԱՊԷՍ | 8 |
| ԱՐԺԱՆԱՒՈՐ | 27 | ԱՐԺԱՆԱՒՈՐԱԳՈՅՆ | 1 | ԱՐԺԱՆԱՒՈՐԱՊԷՍ | 1 | ԱՐԺԱՆԱՒՈՐԵՄ | 5 |
| ԱՐԺԱՆԱՒՈՐԻՄ | 5 | ԱՐԺԱՆԱՒՈՐՈՒԹԻՒՆ | 4 | ԱՐԺԱՆԻ | 27 | ԱՐԺԱՆԻ ԱՌՆԵԼ | 1 |
| ԱՐԺԱՆԻ ԼԻՆԵԼ | 4 | ԱՐԻ | 16 | ԱՐԻԱԲԱՐ | 1 | ԱՐԻԱԳՈՅՆ | 1 |
| ԱՐԻԱԿԱՆ | 4 | ԱՐԻԱՆԱՄ | 1 | ԱՐԻԱՆՈՍ | 4 | ԱՐԻՈՍ | 18 |
| ԱՐԻՈՍԵԱՆ | 2 | ԱՐԻՈՒԹԻՒՆ | 21 | ԱՐԻՍՊԱԳԱՑԻ | 1 | ԱՐԻՍՏԱԿԷՍ | 1 |
| ԱՐԻՍՏՈՏԷԼ | 16 | ԱՐԻՒՆ | 302 | ԱՐԻՒՆԱԹԱԹԱԽ | 1 | ԱՐԻՒՆԱԾՈՒԾ | 1 |
| ԱՐԻՒՆԱԿԻՑ | 1 | ԱՐԻՒՆԱՀԵՂ | 3 | ԱՐԻՒՆԱՊԱՐՏ | 1 | ԱՐԻՒՆԱՏԵՍԻԼ | 1 |
| ԱՐԻՒՆԱՒՈՐ | 1 | ԱՐԾԱԹ | 38 | ԱՐԾԱԹԱՊԱՏ | 2 | ԱՐԾԱԹԻ | 1 |
| ԱՐԾԱԹՍԻՐՈՒԹԻՒՆ | 5 | ԱՐԾԱՐԾԵՄ | 3 | ԱՐԾՈՒԻ | 13 | ԱՐԿԱԾ | 3 |
| ԱՐԿԱՆԵԼԻ | 8 | ԱՐԿԱՆԵՄ | 54 | ԱՐՀԱՄԱՐՀԵԼԻ | 1 | ԱՐՀԱՄԱՐՀԵՄ | 15 |
| ԱՐՀԱՒԻՐՔ | 1 | ԱՐՀԵՍՏ | 9 | ԱՐՀԵՍՏԱԿԱՆ | 2 | ԱՐՀԵՍՏԱՒՈՐ | 2 |
| ԱՐՁԱԿ | 2 | ԱՐՁԱԿԱՊԷՍ | 2 | ԱՐՁԱԿԱՔԱՅԼՆ | 1 | ԱՐՁԱԿԵՄ | 85 |
| ԱՐՁԱԿՈՒԹԻՒՆ | 1 | ԱՐՁԱԿՈՒՄՆ | 7 | ԱՐՁԱՆ | 4 | ԱՐՁԱՆԱԳՐԵՄ | 1 |
| ԱՐՁԱՆԱՆԱՄ | 2 | ԱՐՄԱՏ | 38 | ԱՐՄԱՒ | 1 | ԱՐՄԱՒԵՆԻ | 13 |
| ԱՐՄՈՒԿՆ | 3 | ԱՐՄՏԻՔ | 4 | ԱՐՆԱՒԻՄԷ | 1 | ԱՐՇԱԼՈՅՍ | 5 |
| ԱՐՇԱԿՈՒՆԻ | 1 | ԱՐՇԱՒԵՄ | 1 | ԱՐՇՈՒՐԵԱՅ | 1 | ԱՐՈՒ | 38 |
| ԱՐՈՒԱԽԵՂԴ | 1 | ԱՐՈՒԱԿԱՆ | 2 | ԱՐՈՒԵՍՏ | 29 | ԱՐՈՒԵՍՏԱԿԱՆ | 9 |
| ԱՐՈՒԵՍՏԱՒՈՐ | 11 | ԱՐՈՒՍԵԱԿ | 7 | ԱՐՋ | 3 | ԱՐՋԱՌ | 8 |
| ԱՐՋԵՒԱՆ | 1 | ԱՐՏԱԲԵՐԵՄ | 8 | ԱՐՏԱԳՆԱՑՈՒՄՆ | 1 | ԱՐՏԱԳՈՒՆԵԼ | 2 |
| ԱՐՏԱԴՐԵՄ | 3 | ԱՐՏԱԾՈՐՈՒՄՆ | 1 | ԱՐՏԱՀՈՍՈՒՄՆ | 1 | ԱՐՏԱՉԱՅՆՈՒԹԻՒՆ | 1 |
| ԱՐՏԱՅԱՅՏԵՄ | 1 | ԱՐՏԱՅԱՅՏՈՒՄՆ | 1 | ԱՐՏԱՇԷՍ | 2 | ԱՐՏԱՇՆՉԵՄ | 1 |
| ԱՐՏԱՇՆՉՈՒՄՆ | 1 | ԱՐՏԱՍՈՒԱԼԻ | 2 | ԱՐՏԱՍՈՒԵՄ | 8 | ԱՐՏԱՍՈՒՔ | 43 |
| ԱՐՏԱՔԱՐՇԵԼ | 1 | ԱՐՏԱՔԻՆ | 64 | ԱՐՏԱՔՆՈՑ | 1 | ԱՐՏԱՔՈՅ | 87 |
| ԱՐՏԱՔՈՒՍ | 20 | ԱՐՏԱՔՍ | 36 | ԱՐՏԱՔՍԵԼԻ | 1 | ԱՐՏԱՔՍԵՄ | 28 |
| ԱՐՏԵՄՈՆ | 3 | ԱՐՏԵՒԱՆ | 3 | ԱՐՏՈՐԵԱՅ | 1 | ԱՐՏՕՍՐ | 4 |
| ԱՐՏՕՐԷՆ | 1 | ԱՐՓԱՔՍԱԹԱՅ | 3 | ԱՐՓԵԱՆ | 2 | ԱՐՓԻ | 9 |
| ԱՐՓԻԱԾԻՆ | 1 | ԱՐՓԻԱՒՈՐ | 1 | ԱՐՔ | 8 | ԱՐՔԱՅ | 17 |
| ԱՐՔԱՅԱԶՆ | 1 | ԱՐՔԱՅՈՒԹԻՒՆ | 101 | ԱՐՔԵՂԱՅՈՍ | 1 | ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ | 6 |
| ԱՐՔՈՒՆԱԿԱՆ | 5 | ԱՐՔՈՒՆԻ | 2 | ԱՐՕՏ | 1 | ԱՐՕՏԱԿԱՆ | 2 |
| ԱՒԱԳ | 18 | ԱՒԱԶ | 7 | ԱՒԱԶԱԿ | 21 | ԱՒԱԶԱՆ | 64 |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| ԱՒԱՂ | 1 | ԱՒԱՂԱԿԱՆ | 1 | ԱՒԱՆԻԿ | 1 | ԱՒԱՆԴ | 6 |
| ԱՒԱՆԴԱՊԱՀ | 3 | ԱՒԱՆԴԵՄ | 26 | ԱՒԱՆԴՈՒԹԻՒՆ | 11 | ԱՒԱՏ | 1 |
| ԱՒԱՐ | 26 | ԱՒԱՐ ՀԱՐԿԱՆԵԼ | 1 | ԱՒԱՐՏ | 8 | ԱՒԱՐՏԵՄ | 11 |
| ԱՒԱՐՏՈՒՄՆ | 5 | ԱՒԵԼ | 2 | ԱՒԵԼԻ | 60 | ԱՒԵԼՈՐԴ | 35 |
| ԱՒԵԼՈՐԴՈՒԹԻՒՆ | 1 | ԱՒԵԼՈՒԱԾ | 2 | ԱՒԵԼՈՒՄ | 1 | ԱՒԵՏԻՔ | 39 |
| ԱՒԵՏԱԲԵՐ | 1 | ԱՒԵՏԱՐԱՆ | 148 | ԱՒԵՏԱՐԱՆԱԿԱՆ | 3 | ԱՒԵՏԱՐԱՆԵՄ | 10 |
| ԱՒԵՏԱՐԱՆԻՉ | 24 | ԱՒԵՏԱՒՈՐ | 4 | ԱՒԵՏԵՄ | 17 | ԱՒԵՏԵԱՑ ԵՐԿԻՐ | 1 |
| ԱՒԵՐ | 2 | ԱՒԵՐԱԿ | 2 | ԱՒԵՐԵՄ | 34 | ԱՒԵՐՈՒԱԾ, ԱՒԵՐՈՒՄՆ | 4 |
| ԱՒԷՏԱԿԻՑ | 1 | ԱՒՈՎԴ | 1 | ԱՒՐ (ՕՐ) | 318 | ԱՓ | 3 |
| ԱՓԻԲԵՐԱՆ | 2 | ԱՓԿԻՑ | 1 | ԱՓՇԻՄ | 2 | ԱՓՐԻԿԷ | 1 |
| ԱՓՐՈԴԻՏԷ | 2 | ԱՔԱԶ | 3 | ԱՔԱՂԱՂ | 4 | ԱՔԱՅԵՑԻ | 1 |
| ԱՔԱՐ | 8 | ԱՔԻԼԵՒՍ | 1 | ԱՔԻՄԵԼԷՔ | 3 | ԱՔԻՆ | 1 |
| ԱՔԻՍ | 1 | ԱՔԻՏՈՎԲԱՅ | 1 | ԱՔՍՈՐԵՄ | 3 | ԱՔՍՈՐՈՒՄՆ | 1 |

## Բ

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| ԲԱԲԻԼԱՑԻ | 4 | ԲԱԲԻԼՕՆ | 13 | ԲԱԳԻՆ | 2 | ԲԱԶԱՅ, ԲԱԶԷ | 3 |
| ԲԱԶԿԱՏԱՐԱԾ | 1 | ԲԱԶԿՈՒՐԱՐ | 2 | ԲԱԶՄԱԲԱՆ | 1 | ԲԱԶՄԱԲԱՇԽ | 1 |
| ԲԱԶՄԱԲԱՇԽՈՒԹԻՒՆ | 1 | ԲԱԶՄԱԲԵՂՈՒՆ | 1 | ԲԱԶՄԱԳՈՒԹ | 1 | ԲԱԶՄԱԴԷՄ | 1 |
| ԲԱԶՄԱԴԻՄԻ | 2 | ԲԱԶՄԱԵՂԱՆԱԿ | 5 | ԲԱԶՄԱԶԱՆ | 11 | ԲԱԶՄԱԶԱՆԱՊԷՍ | 1 |
| ԲԱԶՄԱԺԱՄԱՆԱԿԵԱՅ | 2 | ԲԱԶՄԱԽԱՉ | 1 | ԲԱԶՄԱԾԻՆ | 1 | ԲԱԶՄԱԿԱՆ | 1 |
| ԲԱԶՄԱԿԵՐՈՒԹԻՒՆ | 1 | ԲԱԶՄԱԿԵՑՈՒԹԻՒՆ | 1 | ԲԱԶՄԱԿՈՒԼ | 1 | ԲԱԶՄԱՀԱՒԱՔ | 1 |
| ԲԱԶՄԱՁԵՒ | 1 | ԲԱԶՄԱՄԱՅՐ | 3 | ԲԱԶՄԱՄԱՐՄԻՆ | 1 | ԲԱԶՄԱՆԱՄ | 47 |
| ԲԱԶՄԱՆԿՈՂԻՆ | 1 | ԲԱԶՄԱՆՇԱՆԱԿ | 1 | ԲԱԶՄԱՇԱՐԱՒ | 1 | ԲԱԶՄԱՉԱՐՉԱՐ | 1 |
| ԲԱԶՄԱՉԵԱՅ | 1 | ԲԱԶՄԱՊԱՏԻԿ | 5 | ԲԱԶՄԱՊԱՏԿԵՄ | 8 | ԲԱԶՄԱՊԱՐՏ | 1 |
| ԲԱԶՄԱՋԱՆ | 1 | ԲԱԶՄԱՍՏՈՒԱԾ | 9 | ԲԱԶՄԱՍՏՈՒԱԾՈՒԹԻՒՆ | 1 | ԲԱԶՄԱՎԱՍՏԱԿ | 1 |
| ԲԱԶՄԱՏԵՍԱԿ | 2 | ԲԱԶՄԱՑՈՒՑԱՆԵՄ | 3 | ԲԱԶՄԱՒՈՐ | 1 | ԲԱԶՄԱՒՈՐԱԿԱՆ | 1 |
| ԲԱԶՄԱՔՐԻՍՏՈՍ | 1 | ԲԱԶՄԵՐԱՆԳ | 1 | ԲԱԶՄԻՄ | 11 | ԲԱԶՄԻՄԱՍՏ | 1 |
| ԲԱԶՄՈՑ | 1 | ԲԱԶՄՈՒԹԻՒՆ | 29 | ԲԱԶՄՕՐԵԱՅ | 1 | ԲԱԶՄՕՐԻՆԱԿ | 4 |
| ԲԱԶՈՒԿ | 16 | ԲԱԶՈՒՄ | 438 | ԲԱԶՈՒՄՔ | 22 | ԲԱԶՈՒՄ ԻՆՉ | 17 |
| ԲԱԶՈՒՄ ԱՆԳԱՄ | 14 | ԲԱԶՈՒՄ ՈՒՐԵՔ | 8 | ԲԱԶՊԱՆ | 2 | ԲԱԺԱԿ | 17 |
| ԲԱԺԱՆ | 3 | ԲԱԺԱՆԱԿԱՆ | 9 | ԲԱԺԱՆԱՍԷՐ | 1 | ԲԱԺԱՆԱՐԱՐ | 3 |
| ԲԱԺԱՆԵԼԻ | 1 | ԲԱԺԱՆԵՄ | 300 | ԲԱԺԱՆԻՉ | 1 | ԲԱԺԱՆՈՐԴ | 1 |
| ԲԱԺԱՆՈՒՄՆ | 61 | ԲԱԺԻՆ | 27 | ԲԱԼԱՍԱՄԻՆ | 1 | ԲԱԽԵՄ | 4 |
| ԲԱԽՈՒՄՆ | 1 | ԲԱԽՏ | 10 | ԲԱԿ | 1 | ԲԱՀԱՂՈՒ | 4 |
| ԲԱՂԱԱՄ | 4 | ԲԱՂԱԴՐԵՄ | 13 | ԲԱՂԱՁԱՅՆ | 4 | ԲԱՂԱՄ | 1 |
| ԲԱՂԱՐԿՈՑԵՄ | 1 | ԲԱՂԱՐՋ | 10 | ԲԱՂԱՐՋԱԿԵՐՔ | 7 | ԲԱՂԴԱՏ | 1 |
| ԲԱՂԴԱՏԱԿԱՆ | 1 | ԲԱՂԴԱՏԵՄ | 12 | ԲԱՂԴԱՏՈՒԹԻՒՆ | 31 | ԲԱՂԿԱՆԱՄ | 14 |
| ԲԱՂԿԱՑԱԿԱՆ | 5 | ԲԱՂԿԱՑՈՒՑԱՆԵՄ | 4 | ԲԱՂՁԱՄ | 3 | ԲԱՂՁԱՆՔ | 4 |
| ԲԱՃԿՈՆ | 1 | ԲԱՄԲԱԿ | 1 | ԲԱՄԲԱՍԱՆՔ | 4 | ԲԱՄԲԱՍԵՄ | 7 |
| ԲԱՅ | 1 | ԲԱՅՑ | 80 | ԲԱՅՑ ԹԷ | 6 | ԲԱՅՑ ՄԻԱՅՆ | 20 |
| ԲԱՆ | 934 | ԲԱՆՆ ԱՍՏՈՒԱԾ | 94 | ԲԱՆ ԻՆՉ | 2 | ԲԱՆԱԿ | 10 |
| ԲԱՆԱԿԱՆ | 157 | ԲԱՆԱԿԱՆԱԲԱՐ | 1 | ԲԱՆԱԿԱՆՈՒԹԻՒՆ | 11 | ԲԱՆԱԿԵՏՂ | 1 |
| ԲԱՆԱԿԻՄ | 7 | ԲԱՆԱԿՐՈՒԹԻՒՆ | 1 | ԲԱՆԱՄ | 58 | ԲԱՆԱՍԷՐ | 4 |
| ԲԱՆԱՒՈՐ | 19 | ԲԱՆԱՒՈՐԻԼ | 4 | ԲԱՆԱՒՈՐՈՒԹԻՒՆ | 2 | ԲԱՆԵՂԷՆ | 3 |
| ԲԱՆԷԱՍ | 1 | ԲԱՆՋԱՐ | 3 | ԲԱՆՍԱՐԿՈՒ | 25 | ԲԱՆՏ | 20 |
| ԲԱՆՏԱՐԿԵԱԼ | 1 | ԲԱՆՏԱՐԳԵԼ ԼԻՆԵԼ | 1 | ԲԱՆՏԵՄ | 1 | ԲԱՇ | 1 |
| ԲԱՇԽԵՄ | 38 | ԲԱՇԽՈՒՄՆ | 3 | ԲԱՌ | 11 | ԲԱՌԱՉԵՄ | 1 |
| ԲԱՌԱՔԱ | 1 | ԲԱՌՆԱԲԱՍ | 1 | ԲԱՌՆԱՄ | 170 | ԲԱՍԵՄԱԹԱՅ | 1 |
| ԲԱՍԻԼԻՈՍ | 1 | ԲԱՍԻՐ | 1 | ԲԱՐԱԿ | 12 | ԲԱՐԱԿ | 1 |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| ԲԱՐԱՌՆԱԲԱՐ | 1 | ԲԱՐԱՔԻԷԼ | 1 | ԲԱՐԲԱՆՋԵՄ | 3 | ԲԱՐԲԱՌ | 12 |
| ԲԱՐԲԱՌԵՄ | 2 | ԲԱՐԲԱՌԻՄ | 1 | ԲԱՐԴՈՒՂԻՄԷՈՍ | 3 | ԲԱՐԵԱՏԵԱՑ | 1 |
| ԲԱՐԵԲԱԽՏՈՒԹԻՒՆ | 3 | ԲԱՐԵԲԱՆԵՄ | 1 | ԲԱՐԵԲԱՆԻՉ, ԲԱՐԵԲԱՆՈՂ | 1 | ԲԱՐԵԲԱՆՈՒԹԻՒՆ | 1 |
| ԲԱՐԵԲԱՍՏՈՒԹԻՒՆ | 2 | ԲԱՐԵԲԱՐՈՅ | 3 | ԲԱՐԵԲՈՅՍ | 1 | ԲԱՐԵԳՈՅՆ | 2 |
| ԲԱՐԵԳՈՐԾ | 3 | ԲԱՐԵԳՈՐԾԵՄ | 1 | ԲԱՐԵԳՈՐԾՈՒԹԻՒՆ | 9 | ԲԱՐԵԳՈՒՆԻՆ | 1 |
| ԲԱՐԵԽԱՌՆ | 5 | ԲԱՐԵԽԱՌՆԵՄ | 9 | ԲԱՐԵԽԱՌՆՈՒԹԻՒՆ | 2 | ԲԱՐԵԽՆԱՄ | 1 |
| ԲԱՐԵԽՕՍ | 13 | ԲԱՐԵԽՕՍ ԼԻՆԵԼ | 1 | ԲԱՐԵԽՕՍ ՈՒՆԵԼ | 2 | ԲԱՐԵԽՕՍԵՄ | 15 |
| ԲԱՐԵԽՕՍՈՒԹԻՒՆ | 3 | ԲԱՐԵԿԱՄ | 33 | ԲԱՐԵԿԱՄՈՒԹԻՒՆ | 2 | ԲԱՐԵԿԱՐԳԵՄ | 1 |
| ԲԱՐԵԿԱՐԳՈՒԹԻՒՆ | 1 | ԲԱՐԵԿԵՆԴԱՆ | 12 | ԲԱՐԵԿԵՆԴԱՆԱ-ՑՈՒՑԱՆԵՄ | 1 | ԲԱՐԵԿԵՑԻԿ | 1 |
| ԲԱՐԵՄԻՏ | 1 | ԲԱՐԵՊԱՇՏ | 6 | ԲԱՐԵՊԱՇՏՈՒԹԻՒՆ | 5 | ԲԱՐԵՊԷՍ | 3 |
| ԲԱՐԵՍԷՐ | 4 | ԲԱՐԵՍՈՒՆ | 1 | ԲԱՐԵՐԱՐ | 6 | ԲԱՐԵՐԱՐԵՄ | 7 |
| ԲԱՐԵՐԱՐՈՒԹԻՒՆ | 2 | ԲԱՐԵՐՋԱՆԿՈՒԹԻՒՆ | 1 | ԲԱՐԻ | 658 | ԲԱՐԿԱՆԱՄ | 14 |
| ԲԱՐԿԱՑՈՂ | 7 | ԲԱՐԿԱՑՈՒՑԱՆԵՄ | 2 | ԲԱՐԿՈՒԹԻՒՆ | 58 | ԲԱՐՁ | 2 |
| ԲԱՐՁՈՒՄՆ | 3 | ԲԱՐՁՐ | 69 | ԲԱՐՁՐԱԲԵՐՁ | 2 | ԲԱՐՁՐԱԳՈՅՆ | 26 |
| ԲԱՐՁՐԱԹՌԻՉ | 1 | ԲԱՐՁՐԱՁԱՅՆ | 3 | ԲԱՐՁՐԱՄԵԾԱՐ | 1 | ԲԱՐՁՐԱՄՏՈՒԹԻՒՆ | 1 |
| ԲԱՐՁՐԱՆԱՄ | 29 | ԲԱՐՁՐԱՑԵԱԼ | 17 | ԲԱՐՁՐԱՑՈՒՑԱՆԵՄ | 20 | ԲԱՐՁՐԵԱԼ | 9 |
| ԲԱՐՁՐՈՒԹԻՒՆ | 28 | ԲԱՐՈՅԱԿԱՆ | 20 | ԲԱՐՈՅԱԿԱՆԱՊԷՍ | 1 | ԲԱՐՈՅՔ | 1 |
| ԲԱՐՈՒ | 2 | ԲԱՐՈՒԹԻՒՆ | 57 | ԲԱՐՈՒՔ | 2 | ԲԱՐՍԵՂ | 2 |
| ԲԱՐՍԵՂ ԿԵՍԱՐԱՑԻ | 1 | ԲԱՐՒՈՔ | 6 | ԲԱՐՔ | 8 | ԲԱՑ | 15 |
| ԲԱՑ (ԲԱՑ Ի) | 18 | ԲԱՑԱԴԱՐՁՈՒԹԻՒՆ | 2 | ԲԱՑԱԽՕՍՈՒԹԻՒՆ | 1 | ԲԱՑԱԿԱՅ | 1 |
| ԲԱՑԱԿԱՏԱՐԵՄ | 1 | ԲԱՑԱԿԱՑԵԱԼ | 1 | ԲԱՑԱՅԱՅՏԵՄ | 15 | ԲԱՑԱՅԱՅՏՈՒԹԻՒՆ | 5 |
| ԲԱՑԱՍԱԿԱՆ | 1 | ԲԱՑԱՍԵՄ | 1 | ԲԱՑԱՍՈՒԹԻՒՆ | 14 | ԲԱՑԱՏ | 3 |
| ԲԱՑԱՏՐԵՄ | 3 | ԲԱՑԱՐՁԱԿ | 4 | ԲԱՑԱՐՁԱԿԱՊԷՍ | 1 | ԲԱՑԱՓԱՅԼԵՄ | 1 |
| ԲԱՑԱՔԱՅԼՈՒԹԻՒՆ | 1 | ԲԱՑԲԱՐՁԱԿԱՆ | 10 | ԲԱՑԲԱՐՁՈՂ | 1 | ԲԱՑԲԱՐՁՈՒԹԻՒՆ | 1 |
| ԲԱՑԲԱՐՁՈՒՄՆ | 3 | ԲԱՑԵՐԵՍ | 1 | ԲԱՑԵՐԵՒԱԿԱՆ | 1 | ԲԱՑՈՐՈՇ | 2 |
| ԲԱՑՈՐՈՇԱԿԻ | 4 | ԲԱՑՈՐՈՇԱՊԷՍ | 1 | ԲԱՑՈՐՈՇԵՄ | 3 | ԲԱՑՈՒՄՆ | 5 |
| ԲԱՑՈՒՆՉՆ | 1 | ԲԱՑՈՒՍՏ կմ Ի ԲԱՑՈՒՍՏ | 1 | ԲԱՒ | 2 | ԲԱՒԱԿԱՆ | 20 |
| ԲԱՒԱԿԱՆԱԲԱՐ | 1 | ԲԱՒԱԿԱՆՈՒԹԻՒՆ | 3 | ԲԱՒԵՄ | 1 | ԲԱՔՈՒ | 1 |
| ԲԵԴՀԱ | 1 | ԲԵԷՂԶԵԲԻՒՂ | 1 | ԲԵԹԱՆԻԱ | 1 | ԲԵԹԷԼ | 1 |
| ԲԵԹԼԷՀԷՄ | 17 | ԲԵԹՍԱՅԻԴ | 1 | ԲԵԼԲԷՔՈՎՐ | 1 | ԲԵԼԻԱՐ | 3 |
| ԲԵԿԱՆԵՄ | 12 | ԲԵԿՈՒՄՆ | 1 | ԲԵՀԵԶ | 6 | ԲԵՀՄՈՎԹ | 2 |
| ԲԵՂՆԱՒՈՐԵՄ | 5 | ԲԵՄ | 15 | ԲԵՆԵՏԻՔՏՈՍ | 2 | ԲԵՆԻԱՄԵՆ | 9 |
| ԲԵՌՆ | 4 | ԲԵՌՆԱԿԻՐ | 1 | ԲԵՍԷԼԻԷԼ | 3 | ԲԵՐ | 2 |
| ԲԵՐԱՆ | 73 | ԲԵՐԱՆԱԲԱՑ | 1 | ԲԵՐԴԱՑԻՔ | 1 | ԲԵՐԵՄ | 90 |
| ԲԵՐԵՍԻԱԹԱՍ | 1 | ԲԵՐՋԵԼԻ | 1 | ԲԵՐԿՐԱՆՔ | 1 | ԲԵՐԿՐԻՄ | 5 |
| ԲԵՐԿՐՈՒՄՆ | 1 | ԲԵՐՍԱԲԷ | 4 | ԲԵՐՐԻ | 1 | ԲԵՐՔ | 1 |
| ԲԵՐՔԱԹՈՒՐ | 4 | ԲԵՒԵՌ | 14 | ԲԵՒԵՌԵՄ | 11 | ԲԵՒԵՌՈՒՄՆ | 1 |
| ԲԷԼ | 1 | ԲԷՃ | 2 | ԲԹԱՄԻՏ | 3 | ԲԺԻՇԿ | 15 |
| ԲԺՇԿԱԿԱՆ | 7 | ԲԺՇԿԱՐԱՆ | 1 | ԲԺՇԿԵՄ | 26 | ԲԺՇԿՈՒԹԻՒՆ | 16 |
| ԲԺՈՏ | 1 | ԲԺՈՏԻԼ | 1 | ԲԻԲ | 5 | ԲԻԾ | 1 |
| ԲԻՒԶԱՆԴԻԱՅ | 1 | ԲԻՒՐԱՊԱՏԻԿ | 2 | ԲԻՒՐԱՒՈՐ | 2 | ԲԻՒՐԵԱԿ | 1 |
| ԲԻՒՐԵՂ | 2 | ԲԼԻԹ | 1 | ԲԼՈՒՐ | 10 | ԲՂԽԵՄ | 93 |
| ԲՂԽԵՑՈՒՑԱՆԵՄ | 3 | ԲՂԽՈՒՄՆ | 44 | ԲՂՋԱԽՈՀ | 7 | ԲՂՋԱԽՈՀՈՒԹԻՒՆ | 9 |
| ԲՆԱԲԱՆ | 2 | ԲՆԱԲԱՆԱԲԱՐ | 1 | ԲՆԱԳԻՐ | 1 | ԲՆԱԽՕՍ | 2 |
| ԲՆԱԽՕՍՈՒԹԻՒՆ | 1 | ԲՆԱԾԻՆ | 1 | ԲՆԱԿԱՆ | 170 | ԲՆԱԿԱՆԱԲԱՐ | 2 |
| ԲՆԱԿԱՆԱԿԱՆ | 1 | ԲՆԱԿԱՆԱՊԷՍ | 15 | ԲՆԱԿԱՐԱՆ | 16 | ԲՆԱԿԵՄ | 58 |
| ԲՆԱԿԵՏՂ | 1 | ԲՆԱԿԵՑՈՒՑԱՆԵՄ | 1 | ԲՆԱԿԻՉ | 4 | ԲՆԱԿՈՒԹԻՒՆ | 25 |
| ԲՆԱԿՑԱՊԷՍ | 1 | ԲՆԱՒ | 13 | ԲՆԱՒԻՆ | 1 | ԲՆԱՒՈՐԱԿԱՆ | 1 |
| ԲՆԱՒՈՐԱՊԷՍ | 4 | ԲՆԱՒՈՐԻՄ | 12 | ԲՆՈՒԹԵՆԱԿԱՆ | 2 | ԲՆՈՒԹԵՆԱԿԻՑ | 4 |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| ԲՆՈՒԹԻՒՆ | 853 | ԲՈՋ | 1 | ԲՈԼՈՐ | 333 | ԲՈԼՈՐԱԲԱՐ | 1 |
| ԲՈԼՈՐԱԿ | 32 | ԲՈԼՈՐԱԿԱՁԵՒ | 1 | ԲՈԼՈՐԱԿՈՒԹԻՒՆ | 1 | ԲՈԼՈՐԱՁԵՒ | 4 |
| ԲՈԼՈՐԱՊԱՏ | 1 | ԲՈԼՈՐԱՊԷՍ | 14 | ԲՈԼՈՐԱՊՏՈՒՂ | 1 | ԲՈԼՈՐԵՄ | 5 |
| ԲՈԼՈՐՈՎԻՄԲ, ԲՈԼՈՐՈՎԻՆ | 21 | ԲՈԼՈՐՈՒԹԻՒՆ | 2 | ԲՈԿ | 1 | ԲՈԿԵՂ | 1 |
| ԲՈՂԲՈՋ | 2 | ԲՈՅԹՆ | 1 | ԲՈՅՈՍ | 5 | ԲՈՅՍ | 58 |
| ԲՈՍՈՐ | 1 | ԲՈՎԱՆԴԱԿ | 38 | ԲՈՎԱՆԴԱԿԱՊԷՍ | 1 | ԲՈՎԱՆԴԱԿԵՄ | 10 |
| ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ | 3 | ԲՈՐ | 11 | ԲՈՐԲՈՍ | 1 | ԲՈՐԲՈՍԻՄ | 1 |
| ԲՈՐԲՈՔ | 1 | ԲՈՐԲՈՔԵՄ | 15 | ԲՈՐԲՈՔՈՒՄՆ | 3 | ԲՈՐՈՏ | 7 |
| ԲՈՐՈՏԱՆԱՄ, ԲՈՐՈՏԻՄ | 7 | ԲՈՐՈՏՈՒԹԻՒՆ | 2 | ԲՈՑ | 3 | ԲՈՑԵՂԷՆ | 1 |
| ԲՈՒԹ | 1 | ԲՈՒԺԵՄ | 1 | ԲՈՒԼՂԱՐ | 1 | ԲՈՒՆ | 19 |
| Ի ԲՆԷ | 2 | ԲՈՒՆԵՄ | 2 | ԲՈՒՌՆ | 9 | ԲՈՒՍԱՆԱՑԻ | 1 |
| ԲՈՒՍԱՆԻՄ | 36 | ԲՈՒՍՈՒՑԱՆԵՄ | 5 | ԲՈՒՐԱՍՏԱՆ | 2 | ԲՈՒՐԱՍՏԱՆԱՑԻ | 1 |
| ԲՈՒՐԲԱՌ | 1 | ԲՈՒՐԳԱԹՈՒՐ | 2 | ԲՈՒՐԳՆ | 3 | ԲՈՒՐԵԼԻ | 1 |
| ԲՈՒՐԵՄ | 5 | ԲՈՒՐՈՒՄՆ | 5 | ԲՈՒՐՎԱՌ | 24 | ԲՌՆԱԲԱՐ | 2 |
| ԲՌՆԱԴԱՏԵՄ | 13 | ԲՌՆԱԴԱՏՈՒԹԻՒՆ | 1 | ԲՌՆԱԿԱԼ | 1 | ԲՌՆԱՄԻՏ | 1 |
| ԲՌՆԱՆԱՄ | 2 | ԲՌՆԱՒՈՐ | 3 | ԲՌՆԵՄ | 2 | ԲՌՆՈՒԹԻՒՆ | 21 |
| ԲՐԵՄ | 5 | ԲՐՈՒՏ | 2 | ԲՕԹ | 2 | | |

## Գ

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| ԳԱԲԱՒՈՆ | 1 | ԳԱԲԱՒՈՆԱՑԻ | 2 | ԳԱԲՐԻԷԼ | 10 | ԳԱԲՐԻԷԼԵԱՆ | 1 |
| ԳԱԳԱԹՆ | 4 | ԳԱԴ | 2 | ԳԱԶԱ | 2 | ԳԱԶԱՆ | 64 |
| ԳԱԶԱՆԱԲԱՐ | 1 | ԳԱԶԱՆԱԲԱՐՈՅ | 3 | ԳԱԶԱՆԱԲԱՐՔ | 1 | ԳԱԶԱՆԱԲԵԿ | 4 |
| ԳԱԶԱՆԱԴԷՄ | 1 | ԳԱԶԱՆԱՆԱՄ | 1 | ԳԱԶԱՆԱՍԻՐՏ | 1 | ԳԱԹՍՈՆ | 1 |
| ԳԱԼԱՐԵՄ | 13 | ԳԱԼԻԼԵԱ | 3 | ԳԱԼՈՒՍՏ | 93 | ԳԱՀ | 1 |
| ԳԱՀԱԿԻՑ | 1 | ԳԱՀԱՎԻԺԵՄ | 1 | ԳԱՀՈՅՔ | 1 | ԳԱՂԱՅԱԴ (ԳԱՂԱՅԱԹ) | 2 |
| ԳԱՂԱՅԱԴԱՑԻ | 1 | ԳԱՂԱՏԱՑԻ | 4 | ԳԱՂԱՓԱՐ | 4 | ԳԱՂԱՓԱՐԵՄ | 1 |
| ԳԱՂԳԱՂԱՅ | 1 | ԳԱՂՏՆԱԲԱՐ | 1 | ԳԱՂՏՆԱՊԷՍ | 1 | ԳԱՂՏՆԻ | 3 |
| ԳԱՄ | 216 | ԳԱՄԻՐ | 2 | ԳԱՅԹԱԿՂԵՄ | 2 | ԳԱՅԹԱԿՂՈՒԹԻՒՆ | 5 |
| ԳԱՅԻ | 2 | ԳԱՅԻՍՈՆ | 2 | ԳԱՅԼ | 3 | ԳԱՅԼԱԽԱԶ | 5 |
| ԳԱՅԼԵՆԻ | 2 | ԳԱՆ | 1 | ԳԱՆ ՀԱՐԿԱՆԵԼ | 2 | ԳԱՆ ԸՄՊԵԼ | 3 |
| ԳԱՆԳԱՏԻՄ | 1 | ԳԱՆՁ | 11 | ԳԱՆՁԱԿԵՑԻ | 1 | ԳԱՆՁԱՆԱԿ | 2 |
| ԳԱՆՁԱՐԱՆ | 4 | ԳԱՆՁԵՄ | 3 | ԳԱՌՆ | 47 | ԳԱՌՆ ԱՍՏՈՒԾՈՅ | 5 |
| ԳԱՌՆԵՆԻ | 2 | ԳԱՍՏՈՒՐ | 1 | ԳԱՐԳԱՆԱՑԻ | 1 | ԳԱՐԳԱՑԻ | 1 |
| ԳԱՐԷԴԻՒԹ | 1 | ԳԱՐԵՋԻՆ | 1 | ԳԱՐԵՂԷՆ | 3 | ԳԱՐԻ | 2 |
| ԳԱՐՆԱՆԱՄՈՒՏ | 3 | ԳԱՐՆԱՆԱՇԱՐԺ | 1 | ԳԱՐՇ | 6 | ԳԱՐՇԱՆԱՄ | 1 |
| ԳԱՐՇԱՊԱՐ | 3 | ԳԱՐՇԵԼԻ | 7 | ԳԱՐՇԵՑՈՒՑԱՆԵՄ | 1 | ԳԱՐՇԻՄ | 5 |
| ԳԱՐՇՈՒԹԻՒՆ | 4 | ԳԱՐՈՒՆ | 18 | ԳԱՒԱԶԱՆ | 43 | ԳԱՒԱՌ | 18 |
| ԳԱՒԱՌԱՊԵՏ | 1 | ԳԱՒԻԹ | 3 | ԳԳՈՒԵՄ | 1 | ԳԵԲԱՂՆ | 2 |
| ԳԵԴԷՈՆ | 9 | ԳԵԷԶԻ | 2 | ԳԵԹԱՅ | 1 | ԳԵԹՍՈՆ | 5 |
| ԳԵՀԵԱՆ | 1 | ԳԵՀԵՆ | 4 | ԳԵՂ | 1 | ԳԵՂԱԶԱՆ | 1 |
| ԳԵՂԱՐԴՆ | 6 | ԳԵՂԵՑԻԿ | 20 | ԳԵՂԵՑԿԱԲԱՐ | 1 | ԳԵՂԵՑԿԱԳՈՅՆ | 2 |
| ԳԵՂԵՑԿԱԶԱՐԴ | 1 | ԳԵՂԵՑԿԱԶԱՐ-ԴԱՐՈՒԹԻՒՆ | 1 | ԳԵՂԵՑԿԱԽՕՍՈՒԹԻՒՆ | 1 | ԳԵՂԵՑԿԱՅԱՐՄԱՐ | 1 |
| ԳԵՂԵՑԿԱՆԱՄ | 5 | ԳԵՂԵՑԿԱՑՈՒՑԱՆԵՄ | 1 | ԳԵՂԵՑԿՈՒԹԻՒՆ | 21 | ԳԵՂՄՆ | 7 |
| ԳԵՂՋՈՒԿ | 1 | ԳԵՄՈՆԱՑԻ | 1 | ԳԵՍԵՄ | 1 | ԳԵՏ | 33 |
| ԳԵՏԱԴԱՐՁ | 1 | ԳԵՏԱՅԱՐՈՅՑՔ | 1 | ԳԵՏԻՆ | 3 | ԳԵՐԱԲՆԱՊԷՍ | 1 |
| ԳԵՐԱԳՈՅՆ | 28 | ԳԵՐԱԳՈՒՆԱԿ | 1 | ԳԵՐԱԴՐԱԿԱՆ | 1 | ԳԵՐԱԶԱՆՑ | 25 |
| ԳԵՐԱԶԱՆՑԱՊԷՍ | 1 | ԳԵՐԱԶԱՆՑԵՄ | 11 | ԳԵՐԱԶԱՆՑՈՒԹԻՒՆ | 8 | ԳԵՐԱԶԱՐԴ | 1 |
| ԳԵՐԱԶՕՐ | 1 | ԳԵՐԱԿԱՏԱՐ | 9 | ԳԵՐԱՄԲԱՌՆԱՄ | 1 | ԳԵՐԱՄԲԱՐՁ | 2 |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| ԳԵՐԱՇԽԱՐՀԻԿ | 1 | ԳԵՐԱՊԱՏՈՒՈՒԹԻՒՆ | 1 | ԳԵՐԳԵՍԱՑԻ | 1 | ԳԵՐԵԶՄԱՆ | 135 |
| ԳԵՐԵԶՄԱՆԱԿԻՑ | 1 | ԳԵՐԵԶՄԱՆԱՏՈՒՆ | 2 | ԳԵՐԵԶՄԱՆՕՐՀՆԷՔ | 2 | ԳԵՐԵՄ | 18 |
| ԳԵՐԻ | 13 | ԳԵՐԻ ԱՌՆՈՒԼ, ՎԱՐԵԼ, ՏԱՆԵԼ | 8 | ԳԵՐԻՉ | 2 | ԳԵՐ Ի ՎԵՐՈՅ | 3 |
| ԳԵՐԾՈՒՄ, ԳԵՐԾԵՄ | 3 | ԳԵՐԾՈՒՄՆ | 1 | ԳԵՐՈՒԹԻՒՆ | 27 | Ի ԳԵՐՈՒԹԻՒՆ ՎԱՐԵԼ | 2 |
| ԳԵՐՍԱՄ | 1 | ԳԶԱԹ | 1 | ԳԶԵՄ | 2 | ԳԷԹ | 1 |
| ԳԷՇ | 3 | ԳԷՈՐԳԷՈՍ | 7 | ԳԷՈՐԳԻԷ | 1 | ԳԷՋ | 45 |
| ԳԷՏ | 2 | ԳԷՐ | 1 | ԳԹԱԾ | 2 | ԳԹԱՄ | 2 |
| ԳԹԵՄ | 1 | ԳԹՈՒԹԻՒՆ | 18 | ԳԻԹՎՈՐՆ | 1 | ԳԻԺ | 1 |
| ԳԻԾ | 14 | ԳԻՃԱՍԷՐ | 1 | ԳԻՆ | 11 | ԳԻՆԱՐԲՈՒ | 1 |
| ԳԻՆԻ | 89 | ԳԻՆԾ | 1 | ԳԻՇԱՏԵՄ | 2 | ԳԻՇԵՐ | 215 |
| ԳԻՇԵՐԱՅԻՆ | 1 | ԳԻՋԱԿՆՈՒԹԻՒՆ | 1 | ԳԻՋՈՒԹԻՒՆ | 15 | ԳԻՍԱՒՈՐ | 1 |
| ԳԻՏԱԿ | 2 | ԳԻՏԱՆԱՄ | 25 | ԳԻՏԵԼԻ | 136 | ԳԻՏԵՄ | 203 |
| ԳԻՏՆԱԿԱՆ | 2 | ԳԻՏՆԱՒՈՐ | 1 | ԳԻՏՈՂ | 4 | ԳԻՏՈՒԹԻՒՆ | 174 |
| ԳԻՏՈՒՆ | 2 | ԳԻՐ | 246 | ԳԻՐ ՍՈՒՐԲ (ՍՈՒՐԲ ԳԻՐ) | 28 | ԳԻՐԱՆԱՄ | 1 |
| ԳԻՐԿ | 8 | ԳԻՐՈՒԹԻՒՆ | 1 | ԳԻՒՂ (ԳԵՕՂ) | 2 | ԳԻՒՂ (ԳԵՕՂ) ԱՐԿՈՒՌԻ | 1 |
| ԳԻՒՏ | 4 | ԳԼԽԱԿՈՐ | 1 | ԳԼԽԱՒՈՐ | 29 | ԳԼԽԱՒՈՐԱԳՈՅՆ | 10 |
| ԳԼԽԱՒՈՐԵՄ | 1 | ԳԼԽԱՒՈՐՈՒԹԻՒՆ | 1 | ԳԼԽԱՒՈՐՕՐԷՆ | 2 | ԳԼԽԻԲԱՑ | 1 |
| ԳԼԽՈՎԻՆ, Ի ԳԼԽՈՎԻՆ | 1 | ԳԼՈՐԵՄ | 8 | ԳԼՈՐՈՒԹԻՒՆ, ԳԼՈՐՈՒՄՆ | 3 | ԳԼՈՒԽ | 394 |
| ԳԾԵՄ | 1 | ԳՂԵՐԻԿՈՍ | 2 | ԳՂԹՈՐ | 1 | ԳՄԲԵԹ կմ ԳՄԲԷԹ | 1 |
| ԳՄԲԵԹԱՅԱՐԴ | 1 | ԳՄԲԵԹԱՐԴ | 1 | ԳՆԱՄ | 83 | ԳՆԱՑ(Ք) | 6 |
| ԳՆԴԱԿ | 4 | ԳՆԴԱՋԵՒ | 2 | ԳՆԴԱՆԱՄ | 2 | ԳՆԴԱՊԵՏ | 1 |
| ԳՆԴԱՊԷՍ | 1 | ԳՆԵՄ | 10 | ԳՆՉՈՒՏ | 1 | ԳՈԳ | 5 |
| ԳՈԳԱՆԱՄ | 1 | ԳՈԳ ԵՎ ՄԱԳՈԳ (ԳՕԳ ԵՎ ՄԱԳՕԳ) | 5 | ԳՈԴՈՂԻԱ | 3 | ԳՈԴՈՆԻԷԼ | 1 |
| ԳՈԼ | 59 | ԳՈԼՈՇԻ կամ ԳՈԼՈՐՇԻ | 19 | ԳՈՀԱՆԱՄ | 21 | ԳՈՀԱՑՈՂԱԿԱՆ | 2 |
| ԳՈՀԱՑՈՒՄՆ | 1 | ԳՈՀՈՒԹԻՒՆ | 26 | ԳՈՂ | 14 | ԳՈՂԱՆԱՄ | 13 |
| ԳՈՂԳՈԹԱՅ | 6 | ԳՈՂԻԱԹ | 8 | ԳՈՂՈՒԹԻՒՆ | 3 | ԳՈՂՈՒՆԻ | 1 |
| ԳՈՂՕՆ(Ք) | 5 | ԳՈՃԱՋՄ | 1 | ԳՈՄ (բայ) | 399 | ԳՈՄ (գոյական) | 2 |
| ԳՈՄՈՐ | 1 | ԳՈՅ | 50 | ԳՈՅԱԿԱՆ | 1 | ԳՈՅԱԿԻՑ | 3 |
| ԳՈՅԱՆԱՄ | 69 | ԳՈՅԱՑԱԲԱՐ | 1 | ԳՈՅԱՑԱԿԱՆ | 23 | ԳՈՅԱՑՈՒԹԻՒՆ | 131 |
| ԳՈՅԱՑՈՒՑԱՆԵՄ | 7 | ԳՈՅԵՂԷՆ | 3 | ԳՈՅԺ | 3 | ԳՈՅՆ | 55 |
| ԳՈՅՈՒԹԻՒՆ | 31 | ԳՈՉԵՄ | 14 | ԳՈՉՈՒՄՆ | 9 | ԳՈՌՈՋ | 1 |
| ԳՈՎ | 3 | ԳՈՎԵԼԻ | 4 | ԳՈՎԵՄ | 13 | ԳՈՎԵՍՏ | 3 |
| ԳՈՎՈՒԹԻՒՆ | 7 | ԳՈՐԾ | 613 | ԳՈՐԾՔ | 5 | Ի ԳՈՐԾ ԱԾԵԼ | 5 |
| ԳՈՐԾԱԿԱԼ | 1 | ԳՈՐԾԱԿԱՆՈՒԹԻՒՆ | 1 | ԳՈՐԾԱԿԻՑ | 12 | ԳՈՐԾԱԿՑՈՒԹԻՒՆ | 1 |
| ԳՈՐԾԱՌՆՈՒԹԻՒՆ | 2 | ԳՈՐԾԱՏՈՒՆ | 1 | ԳՈՐԾԱՐԱՆ | 1 | ԳՈՐԾԵԼԻ | 3 |
| ԳՈՐԾԵՄ | 167 | ԳՈՐԾԵԼ ՏԱԼ | 1 | ԳՈՐԾԻ | 45 | ԳՈՐԾԻԱԿԱՆ | 3 |
| ԳՈՐԾՆԱԿԱՆ | 10 | ԳՈՐԾՈՒԹԻՒՆ | 1 | ԳՈՐԾՈՒՆԵԱՅ | 4 | ԳՈՐՇ | 1 |
| ԳՈՐՏ | 3 | ԳՈՒԲ | 7 | ԳՈՒԲՂԱՅ | 8 | ԳՈՒԹ | 24 |
| ԳՈՒԺԿԱՆ | 1 | ԳՈՒՃ | 1 | ԳՈՒՄԱՐԵՄ | 1 | ԳՈՒՆԴ | 9 |
| ԳՈՒՆԴ(Ք) | 13 | ԳՈՒՆՏ (տ. ԳՈՒՆԴ և ԳՆԴԱԿ) | 1 | ԳՈՒՇԱԿ | 1 | ԳՈՒՇԱԿԵՄ | 5 |
| ԳՈՒՑԷ | 2 | ԳՌԵՀԻԿ | 2 | ԳՌՈՒՋ | 1 | Գ ՍՐԲԵԱՆ (ԵՐԵՔՍՐԲԵԱՆ) | 1 |
| ԳՏԱԿ | 6 | ԳՏԱՆԵՄ | 118 | ԳՐԱԿԱԼ | 7 | ԳՐԱԿԱՆ | 1 |
| ԳՐԱԿԱՐԴԱՑ | 1 | ԳՐԱՊԱՆ | 1 | ԳՐԱՍՏ | 1 | ԳՐԱՒ | 1 |
| ԳՐԱՒԱԿԱՆ | 3 | ԳՐԱՒԵՄ | 3 | ԳՐԱՒՈՐ | 9 | ԳՐԱՒՈՐԱԿԱՆ | 3 |
| ԳՐԳՌԵՄ | 1 | ԳՐԵՄ | 141 | ԳՐԻԳՈՐ | 15 | ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՒՈՐԻՉ | 1 |
| ԳՐԻԳՈՐ ՄԱԳԻՍՏՐՈՍ | 2 | ԳՐԻԳՈՐ ՍԿԵՒՌԱՑԻ | 2 | ԳՐԻԳՈՐ ՍՔԱՆՉԵԼԱԳՈՐԾ | 1 | ԳՐԻԳՈՐ ՎԿԱՅԱՍԷՐ | 1 |
| ԳՐԻԳՈՐԻՈՍ | 2 | ԳՐԻՉ | 8 | ԳՐԻՒ | 1 | ԳՐՈՂ | 2 |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| ԳՐՈՒԹԻՒՆ | 1 | ԳՐՊԱՆ | 1 | ԳՕԴԻ | 1 | ԳՕՍԱՆԱՄ | 2 |
| ԳՕՏԵՒՈՐԵՄ | 1 | ԳՕՏԷԼՈՅԾ | 1 | ԳՕՏԵՄԱՐՏԻԼ | 4 | ԳՕՏԻ | 14 |
| Գ ՕՐԵԱՅ (ԵՌՕՐԵԱՅ) | 7 | ԳՕՐՏՈՍԱԿ | 1 | | | | |

## Դ.

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| ԴԱ | 27 | ԴԱԳԱՂ | 1 | ԴԱԳՈ | 4 | ԴԱԴԱՅ | 1 |
| ԴԱԴԱՆ | 13 | ԴԱԴԱՐ | 2 | ԴԱԴԱՐԻՄ | 53 | ԴԱԴԱՐՈՒՄՆ | 1 |
| ԴԱԼԱՐ | 5 | ԴԱԼԱՐԻՄ | 10 | ԴԱԼԱՐԻ (գոյական) | 2 | ԴԱԼԻԼԱ (ԹԱԼԻԼԱ) | 2 |
| ԴԱԿՈՒԷԼ | 1 | ԴԱՀԵԿԱՆ | 2 | ԴԱՀԻՃ | 4 | ԴԱՀՃԱՊԵՏ | 1 |
| ԴԱՂՄԱՏ | 3 | ԴԱՂՄԱՏԵՐԷՆ | 1 | ԴԱՄԱՍԿԱՑԻ | 5 | ԴԱՄԱՍԿԱՑԻ ՅՕՀԱՆ | 2 |
| ԴԱՄԱՍՈՍ | 1 | ԴԱՄԱՏՐԱՆ | 1 | ԴԱՄԲԱՐԱՆ | 1 | ԴԱՅԵԱԿ | 4 |
| ԴԱՅԵԿԵՄ | 1 | ԴԱՆ | 2 | ԴԱՆԱ | 4 | ԴԱՆԿ | 3 |
| ԴԱՆԴԱՂԻՄ | 1 | ԴԱՆԴԱՂԿՈՏ | 1 | ԴԱՆԴԱՉԵՄ | 1 | ԴԱՆԻԷԼ | 31 |
| ԴԱՇՆ | 2 | ԴԱՇՏ | 15 | ԴԱՇՏԱՁԵՒ | 1 | ԴԱՇՏԱՆ | 6 |
| ԴԱՇՏԱՆԱՄ | 1 | ԴԱՌՆ | 34 | ԴԱՌՆԱԼԻ | 1 | ԴԱՌՆԱԿԵՐՊ | 1 |
| ԴԱՌՆԱՄ | 111 | ԴԱՌՆԱՆԱՄ | 4 | ԴԱՌՆԱՇՈՒՆՉ | 1 | ԴԱՌՆԱՊԷՍ | 1 |
| ԴԱՌՆԱՑՈՂ | 4 | ԴԱՌՆՈՒԹԻՒՆ | 23 | ԴԱՍ | 182 | ԴԱՍԱԿԻՑ | 1 |
| ԴԱՍԱԿԱՐԳԵՄ | 1 | ԴԱՍԱԿԱՐԳՈՒԹԻՒՆ | 2 | ԴԱՍԱՊԵՏ | 1 | ԴԱՍԵՄ | 2 |
| ԴԱՍՏ | 1 | ԴԱՍՏԻԱՐԱԿ | 2 | ԴԱՍՏԻԱՐԱԿԵՄ | 1 | ԴԱՏ | 1 |
| ԴԱՏԱԽԱԶ | 4 | ԴԱՏԱԿՇՌԵԼ | 1 | ԴԱՏԱՊԱՐՏԵԼԻ | 2 | ԴԱՏԱՊԱՐՏԵՄ | 43 |
| ԴԱՏԱՊԱՐՏՈՒԹԻՒՆ | 19 | ԴԱՏԱՊԱՐՏՈՒՄՆ | 1 | ԴԱՏԱՍՏԱՆ | 156 | ԴԱՏԱՐԿ | 5 |
| ԴԱՏԱՐԿԱԲԱՆԵՄ | 1 | ԴԱՏԱՐԿԱԲԱՆՈՒԹԻՒՆ | 2 | ԴԱՏԱՐԿԱՆԱՄ | 3 | ԴԱՏԱՐԿՈՒԹԻՒՆ | 1 |
| ԴԱՏԱՒՈՐ | 60 | ԴԱՏԱՒՈՐՈՒԹԻՒՆ | 1 | ԴԱՏԵԼԻ | 1 | ԴԱՏԵՄ, ԴԱՏԻՄ | 48 |
| ԴԱՏՈՂԱԿԱՆ | 2 | ԴԱՏՈՂՈՒԹԻՒՆ | 2 | ԴԱՐ | 53 | ԴԱՐԱԳԼՈՒԽ | 1 |
| ԴԱՐԱՆ | 1 | ԴԱՐԱՆԱԿԱԼ | 5 | ԴԱՐԱՆԱԿԱԼՈՒԹԻՒՆ | 1 | ԴԱՐԲՆԱԿԱՆ | 1 |
| ԴԱՐԵՀ | 7 | ԴԱՐԻՃԱԿ | 2 | ԴԱՐՁ | 9 | ԴԱՐՁԵԱԼ | 1019 |
| ԴԱՐՁՈՂԱՊԷՍ | 1 | ԴԱՐՁՈՒՄՆ | 9 | ԴԱՐՁՈՒՑԱՆԵՄ | 42 | ԴԱՐՄԱՆԵՄ | 1 |
| ԴԱՐՄԱՆԻՉ | 1 | ԴԱՒ | 1 | ԴԱՒԱՃԱՆԵՄ | 1 | ԴԱՒԱՃԱՆՈՂ | 1 |
| ԴԱՒԱՆԱԿԻՑ | 1 | ԴԱՒԱՆԻՄ | 16 | ԴԱՒԱՆՈՒԹԻՒՆ | 32 | ԴԱՒԱՆՈՒՄՆ | 1 |
| ԴԱՒԵՄ | 1 | ԴԱՒԻԹ | 184 | ԴԴՈՒՄ | 1 | ԴԵԲՈՎՐԱ | 1 |
| ԴԵԳԵՐԻՄ | 1 | ԴԵԳԵՐՈՒՄՆ | 1 | ԴԵԶԵԿ ԱԼԻՓԱԹԱ | 1 | ԴԵԿՏԵՄԲԵՐ | 4 |
| ԴԵՂ | 31 | ԴԵՂԻՆ | 14 | ԴԵՂՁԱՆ | 1 | ԴԵՂՆԱԳՈՅՆ | 2 |
| ԴԵՂՆԻՄ | 4 | ԴԵՂՆՈՒԹԻՒՆ | 2 | ԴԵՂՆՈՒՑ | 1 | ԴԵՄԵՏՐԵԱՅ | 1 |
| ԴԵՌ | 5 | ԴԵՌԱԾԻՆ | 1 | ԴԵՌ ԵՒՍ (ԴԵՌԵՒՍ) | 19 | ԴԵՐԱՆՈՒՆ | 1 |
| ԴԵՐԱՔՐԻՍՏՈՍ | 1 | ԴԵՐԵՒ | 1 | ԴԵՒ | 140 | ԴԵՒԱԿՈՉ | 1 |
| ԴԵՒԴԱՍ | 1 | ԴԷԶ | 1 | ԴԷԶՕՐՀՆԷՔ | 1 | ԴԷՄ(Ք) | 95 |
| ԴԷՄ (կերպ, տեսակ) | 6 | Ի ԴԷՄՍ (Ի ԴԻՄԱՑ, ԴԻՄԱՑ) | 81 | ԴԷՄ ՅԱՆԴԻՄԱՆ | 19 | ԴԷՄԱՍ | 1 |
| ԴԷՇ | 2 | ԴԷՈՍԿՈՐՈՍ | 1 | ԴԷՊ | 6 | ԴԷՏ | 2 |
| ԴԷՏՈՒՂԱՑԻ | 1 | ԴԺԳՈՀԱՆՔ | 1 | ԴԺԿԱՄԱԿ | 6 | ԴԺԿԱՄԱԿ ԼԻՆԻՄ | 1 |
| ԴԺՆԴԱԿ | 1 | ԴԺՆԴԱԿՈՒԹԻՒՆ | 1 | ԴԺՆԻԿ | 3 | ԴԺՈԽԱՅԻՆ | 3 |
| ԴԺՈԽՔ | 215 | ԴԺՈՒԱՐ | 7 | ԴԺՈՒԱՐԱԹՈՂՈՒԹԻՒՆ | 1 | ԴԺՈՒԱՐԱՀԱՅԵԱՑ | 1 |
| ԴԺՈՒԱՐԱՀԱՍ | 1 | ԴԺՈՒԱՐԱՁԵՌՆ | 1 | ԴԺՈՒԱՐԱՅԱՂԹՈՒԹԻՒՆ | 1 | ԴԺՈՒԱՐԱՇԱՐԺ | 1 |
| ԴԺՈՒԱՐԱՏԵՍ | 1 | ԴԺՈՒԱՐԱՒ | 2 | ԴԺՈՒԱՐԻՄ | 2 | ԴԺՈՒԱՐԻՆ | 9 |
| ԴԺՈՒԱՐՈՒԹԻՒՆ | 3 | ԴԻ | 3 | ԴԻԱԹԱՒԱԼ | 1 | ԴԻԱԹԵԿ (տես՝ ԴԻԱԹԻԿ) | 1 |
| ԴԻԱԿՆ | 2 | ԴԻԴԻՄՈՍ | 1 | ԴԻԵՑԻԿ | 1 | ԴԻԵՑՈՒՑԱՆԵՄ | 1 |
| ԴԻԶԵՄ | 1 | ԴԻԹԱՄ | 1 | ԴԻՀՆ | 1 | ԴԻՄԱԿ | 1 |
| ԴԻՄԱԿԱՅՈՒԹԻՒՆ | 1 | ԴԻՄԱՄԱՐՏ | 2 | ԴԻՄԱՒՈՐ | 1 | ԴԻՄԵՄ | 8 |
| ԴԻՄՈՓԻԼՈՍ | 1 | ԴԻՆԱ | 1 | ԴԻՈԹՈՐՈՍ | 1 | ԴԻՈՆԻՍ | 1 |
| ԴԻՈՆԷՍԻՈՍ | 14 | ԴԻՈՍ | 2 | ԴԻՊԱՀ | 1 | ԴԻՊԻՄ | 7 |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| ԴԻՊՈՂ | 2 | ԴԻՊՈՒԱԾ | 3 | ԴԻՊՈՒՄՆ | 1 | ԴԻՏԱՒՈՐՈՒԹԻՒՆ | 14 |
| ԴԻՏԵԼԻ | 1 | ԴԻՏԵՄ | 5 | ԴԻՏՈՒՄՆ | 2 | ԴԻՐ | 10 |
| ԴԻՒԱԿԱՆ | 15 | ԴԻՒԱՀԱՐ | 2 | ԴԻՒԱՀՈՏ | 1 | ԴԻՒԱՊԱՇՏՈՒԹԻՒՆ | 1 |
| ԴԻՒԹ | 3 | ԴԻՒՐԱԳՈՅՆ | 1 | ԴԻՒՐԱԼՈՒՐ | 1 | ԴԻՒՐԱՀԱՍ | 2 |
| ԴԻՒՐԱՇԱՐԺ | 1 | ԴԻՒՐԱՊԱՏԻՐ | 1 | ԴԻՒՐԱՊԷՍ | 2 | ԴԻՒՐԱՍԱՀ | 1 |
| ԴԻՒՐԱՍԱՀՈՒԹԻՒՆ | 5 | ԴԻՒՐԱՍԵՐՏԵԼ | 1 | ԴԻՒՐԱՒ | 16 | ԴԻՒՐԱՓՈԽ | 1 |
| ԴԻՒՐԵՄ | 1 | ԴԻՒՐԻՆ | 3 | ԴԻՔ | 6 | ԴՂՐԴԵՄ | 1 |
| ԴՆԵՄ | 291 | ԴՆԵԼԻ | 4 | ԴՆԵԼ Ի ՄՏԻ | 1 | ԴՇԽՈՅ | 5 |
| ԴՈՂԱՄ | 3 | ԴՈՂԴՈՋԱՄ | 1 | ԴՈՄՆԱՍ | 2 | ԴՈՐԱԿ | 9 |
| ԴՈՎԵԿ | 1 | ԴՈՒ | 285 | ԴՈՒԼ | 1 | ԴՈՒՌՆ | 82 |
| Ի ԴՈՒՐՍ (ԴՈՒՐՔ) | 11 | ԱՌ ԴՈՒՐՍ | 1 | ԴՈՒՍՏՐ | 43 | ԴՊԻՐ | 11 |
| ԴՊՐՈՒԹԻՒՆ | 15 | ԴՌՆԱՊԱՆ | 4 | ԴՌՆԱՊԱՆՈՒԹԻՒՆ | 1 | ԴՎԻՆ | 2 |
| ԴՐԱԽՏ | 157 | ԴՐԱՄ | 8 | ԴՐՈՇՄ | 22 | ԴՐՈՇՄԵՄ | 15 |
| ԴՐՈՒԱՏԻՔ | 1 | ԴՐՈՒԹԻՒՆ | 13 | ԴՐՕՇԱԾ | 1 | ԴՐՕՇԱԿ | 1 |
| ԴՐՕՇԵՄ | 1 | ԴՕՇ | 1 | | | | |

## Ե

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| ԵԲԵԹԵԱՅ | 4 | ԵԲԵՐ | 5 | ԵԲՈՒՍԱՑԻ | 1 | ԵԲՐԱՅԱԿԱՆ | 1 |
| ԵԲՐԱՅԵՑԵՐԷՆ | 1 | ԵԲՐԱՅԵՑԻ (ազգ) | 18 | ԵԲՐԱՅԵՑԻ (Նոր կտակարանյան գիրք) | 5 | ԵԳԻՊՏԱՑԻ | 18 |
| ԵԳԻՊՏՈՍ | 63 | ԵԴԵՄ | 1 | ԵԴԵՄԱԲՈՒՂԽ | 1 | ԵԴՈՄ | 2 |
| ԵԶ | 2 | ԵԶԱԲԷԼ | 2 | ԵԶԱԿԱՆ | 5 | ԵԶԵԿԻԱ, ԵԶԵԿԻԷԼ | 23 |
| ԵԶԵՐԵՄ | 2 | ԵԶՆ | 30 | ԵԶՆԱԿ | 1 | ԵԶՆԱԿ ԿՈՂԲԱՑԻ | 1 |
| ԵԶՆԿԱՑԻ ՊԼՈՒԶ ՎԱՐԴԱՊԵՏ | 1 | ԵԶՐ | 23 | ԵԶՐ (հատուկ անուն) | 12 | ԵԶՐ ԴՊԻՐ | 4 |
| ԵԶՐԱԿԱՑՈՒԹԻՒՆ | 2 | ԵԶՐԱՍ | 2 | ԵԶՐՕՆ | 1 | ԵԹԵՐ | 7 |
| ԵԹԵՐԱՅԻՆ | 2 | ԵԹԷ | 578 | ԵԹԷ ՈՉ | 21 | ԵԼ | 54 |
| ԵԼՔ | 2 | ԵԼ (հատուկ անուն) | 2 | ԵԼԱՆԵՄ | 251 | ԵԼԵՔ | 1 |
| ԵԼԻ | 5 | ԵԼԻԱ | 1 | ԵԼԻՄԱՍ | 1 | ԵԼԻՓԱԶ | 1 |
| ԵԼԼԱԴԱՑԻ | 1 | ԵԼՈՂՈՒԹԻՒՆ | 1 | ԵԼՈՆ | 1 | ԵԼՈՒՄՆ | 8 |
| ԵԼՈՒՍՏ | 2 | ԵԿ | 11 | ԵԿԱՄՏԱԿԱՆ | 1 | ԵԿԱՄՈՒՏ | 16 |
| ԵԿԱՒՈՐ | 2 | ԵԿԱՒՈՐԻՄ | 2 | ԵԿԱՒՈՐՈՒԹԻՒՆ | 1 | ԵԿԵՂԵՑԱԿԱՆ | 5 |
| ԵԿԵՂԵՑԻ | 385 | ԵՂԱԿԱՆ | 33 | ԵՂԱՆԱԿ (տարվա) | 29 | ԵՂԱՆԱԿ (կերպ, տեսակ) | 90 |
| ԵՂԱՆԱԿ (երաժշտություն) | 4 | ԵՂԱՆԱԿԵՄ | 1 | ԵՂԱՆԻՄ | 669 | ԵՂԲԱՅՐ | 85 |
| ԵՂԲԱՅՐԱԿԱՆ | 6 | ԵՂԲԱՅՐԱՍՊԱՆ | 2 | ԵՂԳՈՆԱՑԻ | 1 | ԵՂԵԱՄՆ | 3 |
| ԵՂԵԼՈՒԹԻՒՆ | 3 | ԵՂԵՄՆԱՊԱՏ | 1 | ԵՂԷՆԻ | 1 | ԵՂԷԳՆ | 13 |
| ԵՂԻ | 1 | ԵՂԻԱ | 39 | ՏԷՐ ԵՂԻԱ | 2 | ԵՂԻԱԲ | 1 |
| ԵՂԻԱԲ ՈՒՐԻԵԱՆՑ | 1 | ԵՂԻԱԶԱՐ | 10 | ԵՂԻԱԿԻՄ | 4 | ԵՂԻԱՍ | 1 |
| ԵՂԻՍԱԲԵԹ | 9 | ԵՂԻՍԷ | 12 | ԵՂԻՍԷՈՍ | 4 | ԵՂԻՈՒԴ | 1 |
| ԵՂԾԱՆԵՄ | 8 | ԵՂԿԵԼԻ | 1 | ԵՂՈՒՆԳՆ | 7 | ԵՂՋԵՐԱԿԵՐՊ | 1 |
| ԵՂՋԵՐԵԱՅ | 1 | ԵՂՋԵՐՈՒ | 3 | ԵՂՋԵՐՈՒԱՔԱՂ | 3 | ԵՂՋԻՒՐ | 16 |
| ԵՂՋԻՒՐԱՒՈՐԵԼ | 1 | ԵՄԱՆԱՑԻ | 1 | ԵՄԻՆԱՑԻ | 1 | ԵՄԻՓՈՐՈՆ | 7 |
| ԵՄՐԱՆ | 1 | ԵՆ | 4 | ԵՆԱԿԻՄԱՅ | 1 | ԵՆԹԱԴԱՏԵԼ | 1 |
| ԵՆԹԱԴՐՈՒԹԻՒՆ | 2 | ԵՆԹԱԿԱՅ | 30 | ԵՆԹԱԿԱՅԱԲԱՐ | 1 | ԵՆԹԱԿԱՅԱՆԱՄ | 2 |
| ԵՆԹԱԿԱՅՈՒԹԻՒՆ | 1 | ԵՆՈՎՍ | 7 | ԵՆՈՎՔ | 19 | Ե ՇԱԲԱԹ (ՀԻՆԳՇԱԲԱԹ կմ ՀԻՆԳՇԱԲԱԹԻ) | 14 |
| ԵՊԵՐԵՄ | 2 | ԵՊԻՍԿՈՊՈՍ | 53 | ԵՊԻՍԿՈՊՈՍԱՊԵՏ | 2 | ԵՊԻՍԿՈՊՈՍՈՒԹԻՒՆ | 1 |
| ԵՊԻՓԱՆ | 3 | ԵՌԱԲԱՐ | 1 | ԵՌԱԲՆԱԿ | 1 | ԵՌԱԿԱԲԱՐ | 1 |
| ԵՌԱԿԻ | 27 | ԵՌԱՄ | 2 | ԵՌԱՄԱՍՆԵԱՅ | 7 | ԵՌԱՅԱՐԿ | 3 |
| ԵՌԱՅԱՐԿԵԱՆ | 3 | ԵՌԱՆԴ | 1 | ԵՌԱՆԴԱՊԷՍ | 1 | ԵՌԱՆԴԵԱՆ | 1 |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| ԵՌԱՆԴՈՒԹԻՒՆ | 1 | ԵՌԱՆԿԻՒՆԻ | 2 | ԵՌԱՑՈՒՄՆ | 1 | ԵՌԱՑՈՒՑԱՆԵՄ | 1 |
| ԵՍ | 1831 | ԵՍԱՅԻ | 73 | ԵՍԱՒ | 19 | ԵՍԱՒԱՑԻ | 1 |
| ԵՍԲՈՆ | 1 | ԵՍԵԲՈՆ | 1 | ԵՍԹԱՆԱՆՈՒՆԴՐԻՆ | 1 | ԵՍԹԵՐ | 3 |
| ԵՍՈՒԱՅ | 1 | ԵՐԱԳ | 6 | ԵՐԱԳԱՀԱՍ | 1 | ԵՐԱԳԱՇԱՐԺ | 1 |
| ԵՐԱԳԸՆԹԱՑ | 2 | ԵՐԱԳՈՒԹԻՒՆ | 1 | ԵՐԱԶ | 17 | ԵՐԱԶԱՀԱՆ | 1 |
| ԵՐԱԶԱՏԵՍ | 1 | ԵՐԱԺԻՇՏ | 4 | ԵՐԱԽԱՅՈՒԹԻՒՆ | 1 | ԵՐԱԽԱՅՐԻ(Ք) | 3 |
| ԵՐԱԽՏԱՒՈՐ | 1 | ԵՐԱԽՏԻՔ | 49 | ԵՐԱՄԱԿ | 1 | ԵՐԱՆԱԿԱՆ | 1 |
| ԵՐԱՆԳ | 2 | ԵՐԱՆԵԼԻ | 21 | ԵՐԱՆԵՄ | 7 | ԵՐԱՆԻ | 2 |
| ԵՐԱՆՈՒԹԻՒՆ | 40 | ԵՐԱՆՈՒՀԻ | 1 | ԵՐԱՆՔ | 4 | ԵՐԱՇԽԱՒՈՐ | 1 |
| ԵՐԱՇՏ | 1 | ԵՐԱՇՏՈՒԹԻՒՆ | 1 | ԵՐԱՍՏԱՆ | 2 | ԵՐԲ | 15 |
| ԵՐԲԵՄՆ | 134 | ԵՐԲԵՄՆ ԵՐԲԵՄՆ | 1 | ԵՐԲԷՔ | 12 | Ո՛Չ ԵՐԲԷՔ, ՄԻ՛ ԵՐԲԷՔ | 7 |
| ԵՐԲՈՒԾ | 2 | ԵՐԳ | 41 | ԵՐԳ ԵՐԳՈՑ (ԵՐԳ) (Աստվածաշնչյան գիրք) | 6 | ԵՐԳԵՄ | 38 |
| ԵՐԳԵՑԷՔ(Ն) (Շարականի տեսակ) | 1 | ԵՐԳԵՑՈՂ | 2 | ԵՐԳԻՉ | 1 | ԵՐԳՈՂ | 2 |
| ԵՐԴՄՆԵՑՈՒՑԱՆԵՄ | 2 | ԵՐԴՄՆԵՑՈՒՑԻՉ | 3 | ԵՐԴՆՈՒՄ | 6 | ԵՐԴՈՒՄՆ | 5 |
| ԵՐԵԱԿ | 5 | ԵՐԵԽԱՅ (տ. ԵՐԱԽԱՅ) | 10 | ԵՐԵԿ | 4 | ԵՐԵԿԵԱՆ | 3 |
| ԵՐԵԿՈՅ | 96 | ԵՐԵԿՈՅԱՆԱՅ | 2 | ԵՐԵԿՈՐԵԱՅ | 5 | ԵՐԵԿՈՒՆ | 2 |
| ԵՐԵՄԻԱ | 20 | ԵՐԵՍ(Ք) | 97 | ՅԵՐԵՍՍ ԱՆԿԱՆԻԼ | 1 | ԵՐԵՍՆԱՄԵԱՅ, ԵՐԵՍՆԱՄԵՆԻ | 17 |
| ԵՐԵՍՆԱՒՈՐ | 15 | ԵՐԵՐԻՄ | 2 | ԵՐԵՐՈՒՄՆ | 1 | ԵՐԵՒԱԿ | 6 |
| ԵՐԵՒԱԿԱՅՈՒԹԻՒՆ | 20 | ԵՐԵՒԵԼԻ | 23 | ԵՐԵՒԵՑՈՒՑԱՆԵՄ | 17 | ԵՐԵՒԵՑՈՒՑԻՉ | 1 |
| ԵՐԵՒԻՄ | 287 | ԵՐԵՒՈՅԹ | 3 | ԵՐԵՒՈՒԹԱՊԵՍ | 1 | ԵՐԵՒՈՒՄՆ | 30 |
| ԵՐԵՔԵԱՆ | 13 | ԵՐԵՔԹԵԼԵԱՆ | 1 | ԵՐԵՔԺԱՆԻ | 1 | ԵՐԵՔԿԻՆ | 10 |
| ԵՐԵՔԿԴԻ | 1 | ԵՐԵՔԿՆԵՄ | 1 | ԵՐԵՔՄԱՍՆԵԱՆ | 1 | ԵՐԵՔՇԱԲԱԹԻ | 3 |
| ԵՐԵՔՍՐԲԵԱՆ | 14 | ԵՐԵՔՕՐԵԱՅ | 8 | ԵՐԷ | 1 | ԵՐԷԿ | 6 |
| ԵՐԷՑ (տեքստում նաև՝ էրէց, երեց) | 13 | ԵՐԻՑՈՒՆՔ | 16 | ԵՐԹ | 1 | ԵՐԹԱՄ | 42 |
| ԵՐԹԵՒԵԿ | 1 | ԵՐԻ | 3 | ԵՐԻԿԱՄՈՒՆՔ | 16 | ԵՐԻԿՈՒՆ | 2 |
| ԵՐԻՆՋ | 8 | ԵՐԻՎԱՐ | 1 | ԵՐԻՏԱՍԱՐԴ | 13 | ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ | 1 |
| ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹԻՒՆ | 13 | ԵՐԻՑԱԳՈՅՆ | 3 | ԵՐԻՑՍ (ԵՐԻՑՍ ԱՆԳԱՄ) | 32 | ԵՐԻՒՐՈՒՄՆ | 1 |
| ԵՐԻՔՈՎ | 4 | ԵՐԿ | 1 | ԵՐԿԱԲՆԱԿ | 26 | ԵՐԿԱԲՈՒՆ | 1 |
| ԵՐԿԱԹ | 37 | ԵՐԿԱԹԵԱՅ | 1 | ԵՐԿԱԾԻՆ | 1 | ԵՐԿԱԿԻ | 4 |
| ԵՐԿԱՅՆ | 26 | ԵՐԿԱՅՆԱԿԵԱՑ | 1 | ԵՐԿԱՅՆԱՄԱԶ | 1 | ԵՐԿԱՅՆԱՄԻՏ | 3 |
| ԵՐԿԱՅՆԱՆԱՄ | 1 | ԵՐԿԱՅՆՄՏՈՒԹԻՒՆ | 1 | ԵՐԿԱՅՆՈՒԹԻՒՆ | 10 | ԵՐԿԱՆ | 5 |
| ԵՐԿԱՆՈՒՆ | 1 | ԵՐԿԱՍԷՐ | 1 | ԵՐԿԱՏԵՄ | 3 | ԵՐԿԱՏԵՍԱԿ | 2 |
| ԵՐԿԱՏՈՒԹԻՒՆ | 1 | ԵՐԿԱՐ | 3 | ԵՐԿԱՐԱԿԵԱՑ | 3 | ԵՐԿԱՐԱՉԳԵԼ | 1 |
| ԵՐԿԱՒՈՐ | 1 | ԵՐԿԲԱՅ | 2 | ԵՐԿԲԱՅԻՄ | 1 | ԵՐԿԲԱՅՈՒԹԻՒՆ | 5 |
| ԵՐԿԲԵՐԱՆԻ | 1 | ԵՐԿԴՌՆԻ | 1 | ԵՐԿԴՐԱՄ | 1 | ԵՐԿԴՐԱՄԵԱՆ | 7 |
| ԵՐԿԵԱԿ | 5 | ԵՐԿԵՐԻՒՐ | 2 | ԵՐԿԵՒԱՆ | 1 | ԵՐԿԻՆ(Ք) | 485 |
| ԵՐԿԻՐ | 471 | ԵՐԿԻՐ ՊԱԳԱՆԵՄ | 15 | ԵՐԿԻՑՍ, ԵՐԿԻՑՍ ԱՆԳԱՄ | 3 | ԵՐԿԻՒՂ | 49 |
| ԵՐԿԻՒՂԱԶԳԱԾ(Ք) | 1 | ԵՐԿԻՒՂԱԼԻՑ | 1 | ԵՐԿԻՒՂԱԾ | 2 | ԵՐԿԻՒՂԱԿԱՆ | 1 |
| ԵՐԿԻՒՂԵՄ | 3 | ԵՐԿԽՕՍՈՒԹԻՒՆ | 1 | ԵՐԿՃՂԻ | 3 | ԵՐԿՄԻՏ | 2 |
| ԵՐԿՄՏԵՄ | 1 | ԵՐԿՆ, ԵՐԿՈՒՆՔ | 8 | ԵՐԿՆԱԳՈՅՆ | 1 | ԵՐԿՆԱԶԱՐԴ | 1 |
| ԵՐԿՆԱՀԱՆԳԷՏ | 1 | ԵՐԿՆԱՅԻՆ | 60 | ԵՐԿՆԱՏԵՂԱԾ (տեքստում՝ ԵՐԿՆԱՏԵՂԵԱՑ) | 1 | ԵՐԿՆԱՒՈՐ | 43 |
| ԵՐԿՆԸՆԹԱՑ | 1 | ԵՐԿՆՈՒՂԷՇ | 1 | ԵՐԿՆՉԻՄ | 34 | ԵՐԿՈՒՈՐԵԱԿ | 1 |
| ԵՐԿՈՒՈՐԻ | 1 | ԵՐԿՈՒՈՒԹԻՒՆ | 1 | ԵՐԿՉՈՏ (տեքստում նաև՝ ԵՐԿՆՉՈՏ) | 4 | ԵՐԿՉՈՏՈՒԹԻՒՆ | 1 |
| ԵՐԿՊԱՌԱԿՈՒԹԻՒՆ | 1 | ԵՐԿՍԱՅՐԻ | 1 | ԵՐԿՐԱԳՈՐԾ | 4 | ԵՐԿՐԱՅԻՆ | 8 |
| ԵՐԿՐԱՉԱՓ | 1 | ԵՐԿՐԱՍԷՐ | 1 | ԵՐԿՐԱՒՈՐ | 42 | ԵՐԿՐԱՔԱՐՇ | 1 |
| ԵՐԿՐԵՂԷՆ | 2 | ԵՐԿՐՈՐԴԱԲԱՐ | 3 | ԵՐԿՐՈՐԴԵՄ | 8 | ԵՐԿՐՊԱԳԵԼԻ | 7 |
| ԵՐԿՐՊԱԳԵՄ | 14 | ԵՐԿՐՊԱԳՈՒ | 1 | ԵՐԿՐՊԱԳՈՒԹԻՒՆ | 4 | ԵՐՄԷՍ (տ. ՀԵՐՄԷՍ) | 2 |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| ԵՐՈՒՍԱՂԷՄ | 57 | ԵՐՈՒՍԱՂԷՄԱՑԻ | 1 | ԵՐՋԱՆԻԿ | 3 | ԵՐՋԱՆԿՈՒԹԻՒՆ | 2 |
| ԵՐՐ | 2 | ԵՐՐԱԿԻ | 3 | ԵՐՐՈՐԴՈՒԹԻՒՆ | 85 | ԵՐՐՈՐԴՈՒԹԻՒՆ ՍՈՒՐԲ, ՍՈՒՐԲ ԵՐՐՈՐԴՈՒԹԻՒՆ | 24 |
| ԵՐՓՆ (ԵՐՓՆ ԵՐՓՆ) | 1 | ԵՐՔՈՅՆՈՍ (տ. ՈՐՔԻՆՈՍ) | 1 | ԵՒԱ | 29 | ԵՒԱԳՐԵԱՅ | 8 |
| ԵՒՍ | 101 | ԵՒ ԵՒՍ | 6 | ԵՒՍ ՔԱՆ | 1 | ԵՒՍԵԲԵՈՍ | 2 |
| ԵՒՍՏԱԹԷՈՍ | 1 | ԵՒՏԻՔԷՍ | 16 | ԵՒՐՈՊԱ (ԵՒՐՈՊԻԱ) | 1 | ԵՒՐՈՍ (ԵՒՐՈ) | 3 |
| ԵՒՐՈ ՆՈՏՈՍ | 1 | ԵՓԵՄ | 12 | ԵՓԵՆՈՍ | 1 | ԵՓԵՍԱՑԻ | 1 |
| ԵՓԵՍՈՍ | 16 | ԵՓԻՉ | 1 | ԵՓՈՒՏ | 3 | ԵՓՐԱԹԱՑԻ | 1 |
| ԵՓՐԱՏ ԳԵՏ | 1 | ԵՓՐԵՄ | 13 | ԵՕԹՆԱԳԻՍԵԱՆ | 1 | ԵՕԹՆԵՄԵԱՆ | 1 |
| ԵՕԹՆԱՄՍԵԱՅ | 1 | ԵՕԹՆԱՊԱՏԵԱՆ | 1 | ԵՕԹՆԱՋԱՀԵԱՆ | 1 | ԵՕԹՆԱՐՓԵԱՆ | 2 |
| ԵՕԹՆԵԱԿ (տեքստում՝ ԵՕԹՆԵԿԻ) | 4 | ԵՕԹՆՊԱՏԻԿ | 5 | ԵՕԹՆՕՐԵԱՅ | 4 | | |

# Զ

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| ԶԱԲԻՍԱԿ | 2 | ԶԱԲՈՂՈՆ | 2 | ԶԱԲՈՂՈՆԱՑԻ | 1 | ԶԱԴՈՆԻԱՅ | 1 |
| ԶԱԶԻՐ | 9 | ԶԱԶՐԱԼԻ (տեքստում նաև՝ ԶԱԶՐԵԼԻ) | 4 | ԶԱԶՐԱՆԱՄ | 2 | ԶԱԶՐՈՒԹԻՒՆ | 1 |
| ԶԱՄԲՐԻ | 2 | ԶԱՅՐԱՆԱՄ | 5 | ԶԱՅՐԱՑՈՒՄՆ | 1 | ԶԱՅՐԱՑՈՒՑԱՆԵՄ | 1 |
| ԶԱՆԱԶԱՆ | 116 | ԶԱՆԱԶԱՆԱՊԷՍ | 15 | ԶԱՆԱԶԱՆԵԼԻ | 2 | ԶԱՆԱԶԱՆԵՄ | 98 |
| ԶԱՆԱԶԱՆԵԱԼ | 6 | ԶԱՆԱԶԱՆՈՒԹԻՒՆ | 54 | ԶԱՆԱՊ | 1 | ԶԱՆԳԱԿ (տեքստում նաև՝ ԶԱՆԿԱԿ) | 4 |
| ԶԱՆԳԱՆԵՄ, ԶԱՆԳԵՄ | 10 | ԶԱՆԳՈՒԱԾ | 3 | ԶԱՆԳՈՒՄՆ | 1 | ԶԱՆԽԼԱԲԱՐ | 1 |
| ԶԱՆՑ (ԱՌՆԵՄ) | 2 | ԶԱՆՑՈՒՄՆ | 1 | ԶԱՆՑՈՒՑԱՆԵՄ | 1 | ԶԱՌԱՄԱՆԱՄ | 2 |
| ԶԱՌ Ի ՎԱՅՐ | 3 | ԶԱՌ Ի ՎԵՐ | 2 | ԶԱՏ | 2 | ԶԱՏԵՄ | 4 |
| ԶԱՏԻԿ | 33 | ԶԱՏՈՒԹԻՒՆ | 1 | ԶԱՏՈՒՑԱՆԵՄ | 3 | ԶԱՏՈՒՑԵԱԼ | 1 |
| ԶԱՐԱ | 1 | ԶԱՐԳԱՆԱՄ | 2 | ԶԱՐԳԱՑՈՒՄՆ | 2 | ԶԱՐԳԱՑՈՒՑԱՆԵՄ | 1 |
| ԶԱՐԴ | 22 | ԶԱՐԴԱՐԵՄ | 42 | ԶԱՐԴԱՐԻՉ | 1 | ԶԱՐԴԱՐՈՒՆ | 2 |
| ԶԱՐԴՈՒՆ | 1 | ԶԱՐԵՀ | 1 | ԶԱՐԹՆՈՒՄ | 9 | ԶԱՐԹՈՒՑԱՆԵՄ | 6 |
| ԶԱՐԿԱԾ (ԶԱՐԿ) | 1 | ԶԱՐԿՈՒԱԾ | 1 | ԶԱՐՀՈՒՐԱԿԱՆ | 1 | ԶԱՐՀՈՒՐԵԼԻ | 2 |
| ԶԱՐՀՈՒՐԵՑՈՒՑԱՆԵՄ | 1 | ԶԱՐՀՈՒՐԻՄ | 9 | ԶԱՐՄ | 2 | ԶԱՐՄԱՆԱԳՈՐԾՈՒԹԻՒՆ | 1 |
| ԶԱՐՄԱՆԱԼԻ | 7 | ԶԱՐՄԱՆԱՄ | 7 | ԶԱՐՄԱՆՔ | 2 | ԶԱՐՄԱՑՈՒՄՆ | 4 |
| ԶԱՐՄԵԱՆ | 1 | ԶԱՐՄԻՈՆ | 1 | ԶԱՐՏՈՒՂԻ | 1 | ԶԱՒԱԿ | 61 |
| ԶԱՔԱՅԱԲ | 2 | ԶԱՔԱՐ | 1 | ԶԱՔԱՐԻԱ | 14 | ԶԲԱՂԻՄ | 2 |
| ԶԲՕՍԱՆՔ | 4 | ԶԳԱԼԱՊԷՍ | 5 | ԶԳԱԼԻ | 72 | ԶԳԱՄ | 26 |
| ԶԳԱՅԱԿԱՆ | 72 | ԶԳԱՅԱԿԱՆՈՒԹԻՒՆ | 1 | ԶԳԱՅԱԿԻՑ | 1 | ԶԳԱՅԱՊԷՍ | 1 |
| ԶԳԱՅԱՐԱՆ | 76 | ԶԳԱՅՈՒԹԻՒՆ | 109 | ԶԳԱՅՈՒՆ | 2 | ԶԳԱՍՏ | 1 |
| ԶԳԱՍՏԱՆԱՄ | 2 | ԶԳԱՍՏՈՒԹԻՒՆ | 4 | ԶԳԱՑՈՒՄՆ | 2 | ԶԳԵՆՈՒՄ | 23 |
| ԶԳԵՍՏ | 70 | ԶԳԵՍՏԱՒՈՐԵՄ | 1 | ԶԳԵՑՈՒՑԱՆԵՄ | 20 | ԶԳՈՅՇ | 1 |
| ԶԳՈՒՇԱՆԱՄ | 15 | ԶԳՈՒՇԱՑՈՒՑԱՆԵՄ | 5 | ԶԳՈՒՇԱՒՈՐ | 1 | ԶԳՈՒՇՈՒԹԻՒՆ | 12 |
| ԶԳՕՆ | 2 | ԶԵԲԷԷ | 1 | ԶԵՂԽԱԲԱՐ | 1 | ԶԵԽԻՄ | 1 |
| ԶԵՂԾՈՒՄՆ | 1 | ԶԵՂՈՒՆ | 1 | ԶԵՆ | 1 | ԶԵՆԼԻ | 4 |
| ԶԵՆՈՒՄ | 44 | ԶԵՆՈՒՄՆ | 33 | ԶԵՌՈՒՆ | 4 | ԶԵՏԵՂԻՄ | 1 |
| ԶԵՐԾԱՆԻՄ | 39 | ԶԵՐԾՈՒՄՆ | 1 | ԶԵՐԾՈՒՑԱՆԵՄ | 1 | ԶԵՒՍԻԼՈՍ | 1 |
| ԶԵՓԻՒՌ | 3 | ԶԷԲՆ | 1 | ԶԷՆ | 27 | ԶԻ | 4975 |
| ԵՒ ԶԻ | 187 | ԶԻ ԵՒ | 62 | ԶԻԱ՞ՐԴ | 56 | ԶԻԱ՛ՐԴ | 4 |
| ԶԻԿ | 1 | ԶԻ ՄԻ՛, ԶԻ ՄԻ՛ ԵՐԲԷՔ | 174 | ԶԻՆԱՒՈՐ | 2 | ԶԻՆԻՄ | 5 |
| ԶԻՆՈՒՈՐ | 15 | ԶԻՆՈՒՈՐԱԿԱՆ | 1 | ԶԻՆՈՒՈՐԻՄ | 1 | ԶԻՆՈՒՈՐՈՒԹԻՒՆ | 1 |
| ԶԻ՞ՆՉ | 513 | ԶԻ՛ՆՉ ԵՒ, ԶԻ՛ՆՉ ԵՒ ԻՑԷ | 9 | ԶԻՆՉ ԷՆ | 3 | ԶԻ՞ՆՉՊԷՍ | 1 |
| ԶԻՋԱՆԻՄ | 2 | ԶԻՋՈՒՄՆ | 3 | ԶԻՍՏ | 1 | ԶԿԾԵՑՈՒՑԱՆԵՄ | 1 |
| ԶԿՆԻ | 37 | ԶՂՋԱԼԻ | 1 | ԶՂՋԱԿԱՆ | 1 | ԶՂՋԱՆԱՄ | 46 |
| ԶՂՋՈՒՄՆ | 44 | ԶՄԱՅԼԻՄ | 7 | ԶՄԱՅԼՈՒՄՆ | 6 | ԶՄՈՒՌՍ | 3 |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| ԶՄՌԵՄ | 1 | ԶՄՌՆԵՆԻ | 1 | ԶՄՐՈՒԽՏ | 2 | ԶՆԱԱՍ | 1 |
| ԶՈՀ | 16 | ԶՈՀԱԼ կմ ԶՕՀԱԼ | 5 | ԶՈՀԵՄ | 8 | ԶՈՅԳ | 19 |
| ԶՈՆՈՐԻՈՍ | 1 | ԶՈՊԱՅ | 3 | ԶՈՎԱՆԱՄ | 3 | ԶՈՎԱՑՈՒՑԱՆԵՄ | 3 |
| ԶՈՐԱԿԱՑՆ | 1 | ԶՈՐ ՕՐԻՆԱԿ, ԶՈՐՕՐԻՆԱԿ | 96 | ԶՈՒԱՐԱԿ | 18 | ԶՈՒԱՐԹ | 4 |
| ԶՈՒԱՐԹԱՆԱՄ | 1 | ԶՈՒԱՐԹԱՐԱՐ | 2 | ԶՈՒԱՐԹՆՈՑ | 3 | ԶՈՒԱՐԹՈՒԹԻՒՆ | 4 |
| ԶՈՒԱՐՃԱԼԻ | 2 | ԶՈՒԱՐՃԱՆԱՄ | 3 | ԶՈՒԱՐՃԱՑՈՒՑԱՆԵՄ | 1 | ԶՈՒԱՐՃՈՒԹԻՒՆ | 2 |
| ԶՈՒԳԱԲԱԺԱՆԵԼ | 1 | ԶՈՒԳԱԳՐԵԼ | 2 | ԶՈՒԳԱԿԻՑ | 3 | ԶՈՒԳԱԿՇԻՌ | 2 |
| ԶՈՒԳԱԿՑԻՄ | 2 | ԶՈՒԳԱՉԱՓԵՄ | 1 | ԶՈՒԳԱՊԷՍ | 2 | ԶՈՒԳԱՍՓԻՒՌ | 1 |
| ԶՈՒԳԱՒՈՐԵՄ | 2 | ԶՈՒԳԱՒՈՐՈՒԹԻՒՆ | 3 | ԶՈՒԳԵՄ | 2 | ԶՈՒՏ | 6 |
| ԶՈՒՐ | 2 | ԶՈՒՐԱ | 1 | ԶՍՊԵՄ | 5 | ԶՐԱԽՕՍՈՒԹԻՒՆ | 2 |
| ԶՐԱՒ | 1 | ԶՐԿԱՆՔ | 1 | ԶՐԿԵՄ | 41 | ԶՐԿՈՒՄՆ | 6 |
| ԶՐՈՅՑ | 1 | ԶՐՊԱՐՏԵՄ | 2 | ԶՐՊԱՐՏՈՒԹԻՒՆ | 1 | ԶՕԴՈՒԱԾ | 6 |
| ԶՕՀՐԱ | 3 | ԶՕՐ | 39 | ԶՕՐ (զօրութիւն) | 1 | ԶՕՐԱԲԱԲԷԼ | 10 |
| ԶՕՐԱՆԱՄ | 27 | ԶՕՐԱՎԱՐ | 7 | ԶՕՐԱՎԻԳ(Ն) | 2 | ԶՕՐԱՑՈՒՑԱՆԵՄ | 11 |
| ԶՕՐԱՒՈՐ | 13 | ԶՕՐԵԱՅ (վեցօրյա) | 1 | ԶՕՐԵՂ | 4 | ԶՕՐԵՂԱԳՈՅՆ | 1 |
| ԶՕՐԷՆ | 3 | ԶՕՐՈՒԹԻՒՆ | 382 | | | | |

## Է

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| Է | 111 | ՈՐ ԷՆ | 12 | ԷԱԿ | 29 | ԷԱԿԱՆ | 2 |
| ԷԱԿԱՆԱՊԷՍ | 1 | ԷԱԿԱՆՈՒԹԻՒՆ | 1 | ԷԱԿԻՑ | 1 | Է ԱՄԵԱՅ (7-ամեայ) | 1 |
| Է ԱՄՍԵԱՅ (7-ամսեայ) | 1 | ԷԱՆԱՄ | 16 | ԷԱՊԷՍ | 6 | ԷԱՋԱՀԵԱՆ (ԵՕԹՆԱՋԱՀԵԱՆ) | 1 |
| ԷԱՐՓԵԱՆ (ԵՕԹՆԱՐՓԵԱՆ) | 3 | ԷԱՑՈՒՑԻՉ | 1 | ԷԳ | 22 | ԷԼ | 1 |
| ԷՄՄԱՆՈՒԷԼ | 8 | ԷՆԻԱ | 1 | ԷՇ | 20 | ԷՇ ԲԱՂԱՄՈՒ | 1 |
| ԷՈՒԹԻՒՆ | 278 | ԷՊԱՏԻԿ (յոթնապատիկ) | 2 | ԷՐԷ (տ. ԵՐԷ) | 1 | ԷՕՐԵԱՅ (7-օրյա) | 2 |

## Ը

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| ԸՂՁԱԿԱՆ | 5 | ԸՂՁԱՄ, ԸՂՁԱՆԱՄ | 2 | ԸՄԲԻՇ | 2 | ԸՄԲՇԱՄԱՐՏ | 1 |
| ԸՄԲՌՆԵԼԻՔ | 2 | ԸՄԲՌՆԵՄ | 48 | ԸՄՊԵԼԻ | 15 | ԸՄՊԵՄ | 24 |
| ԸՄՊՈՒՄՆ | 1 | ԸՆԴ | 890 | ԸՆԴ ՈՐՈՒՄ | 4 | ԸՆԴԱԲՈՅՍ | 1 |
| ԸՆԴ ԱՌԱՋ | 10 | ԸՆԴԱՐՁԱԿ | 7 | ԸՆԴԱՐՁԱԿԱԳՈՅՆ | 1 | ԸՆԴԱՐՁԱԿԱՊԷՍ | 1 |
| ԸՆԴԱՐՁԱԿԵՄ | 7 | ԸՆԴԱՐՁԱԿՈՒԹԻՒՆ | 2 | ԸՆԴԱՐՄԱՆԱՄ | 1 | ԸՆԴԴԷՄ | 229 |
| ԸՆԴԴԻՄԱԲԱԺԱՆԵԼ | 4 | ԸՆԴԴԻՄԱԿ | 12 | ԸՆԴԴԻՄԱՀԱՐ | 1 | ԸՆԴԴԻՄԱՀԱՐՈՒԹԻՒՆ | 1 |
| ԸՆԴԴԻՄԱՄԱՐՏԻՄ | 1 | ԸՆԴԴԻՄԱՅԱՐԱ-ԿԱՅՈՒԹԻՒՆ | 1 | ԸՆԴԴԻՄԱՆԱՄ | 5 | ԸՆԴԴԻՄԱՏԵՍԱԿ | 1 |
| ԸՆԴԴԻՄԱՏԻՊ | 1 | ԸՆԴԴԻՄՈՒԹԻՒՆ | 2 | ԸՆԴԵԼՆՈՒՄ | 1 | ԸՆԴԷ՞Ր | 79 |
| ԸՆԴԻՔՏԻՈՆ | 1 | ԸՆԴՀԱՆՈՒՐ | 18 | ԸՆԴՀԱՆՐԱԿԱՆ (տեքստում նաև՝ ԸՆԹՀԱՆՐԱԿԱՆ) | 6 | ԸՆԴՀԱՆՐԱՊԷՍ | 1 |
| ԸՆԴՀԱՏ | 1 | ԸՆԴՈՒՆԱԿ | 9 | ԸՆԴՈՒՆԱԿԱՆ | 1 | ԸՆԴՈՒՆԱԿՈՒԹԻՒՆ | 1 |
| ԸՆԴՈՒՆԱՅՆ | 8 | ԸՆԴՈՒՆԱՐԱՆ | 3 | ԸՆԴՈՒՆԵԼԻ | 25 | ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹԻՒՆ | 3 |
| ԸՆԴՈՒՆԻՄ (ԸՆԿԱԼՈՒՄ) | 187 | ԸՆԴՎԶԻՄ | 1 | ԸՆԴՕՐԻՆԱԿԵՄ | 1 | ԸՆԹԱՆԱՄ | 58 |
| ԸՆԹԱՑ(Ք) | 23 | ԸՆԹԵՌՆԼԻ | 2 | ԸՆԹԵՌՆՈՒՄ | 25 | ԸՆԹԵՐՑԱՍԷՐ | 1 |
| ԸՆԹԵՐՑՈՂ | 5 | ԸՆԹԵՐՑՈՂՈՒԹԻՒՆ | 1 | ԸՆԹԵՐՑՈՒԱԾ | 9 | ԸՆԹԵՐՑՈՒՄՆ | 5 |
| ԸՆԹՐԻՔ | 12 | ԸՆԾԱՅ | 8 | ԸՆԾԱՅԱԲԵՐ | 1 | ԸՆԾԱՅԵՄ | 15 |
| ԸՆԿԵՆՈՒՄ | 20 | ԸՆԿԵՐ | 44 | ԸՆԿԵՐԱԿԻՑ | 2 | ԸՆԿԵՐԱԿՑՈՒԹԻՒՆ | 2 |
| ԸՆԿԵՐԱՆԱՄ (տ. ԸՆԿԵՐԱԿՑԻԼ) | 2 | ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ | 2 | ԸՆԿԵՐՍԻՐՈՒԹԻՒՆ | 1 | ԸՆԿՂՄԵՄ | 23 |
| ԸՆԿՈՅԶ | 1 | ԸՆԿՐԿԵՄ | 4 | ԸՆՁԵՌԵՄ | 1 | ԸՆՁԻՒՂԵՄ | 1 |
| ԸՆՏԱԿԵՐ | 3 | ԸՆՏԱՆԱՆԱՄ | 1 | ԸՆՏԱՆԻ | 11 | ԸՆՏԵԼ | 1 |
| ԸՆՏԵԼԱՑՆԵՄ | 1 | ԸՆՏԻՐ | 12 | ԸՆՏՐԵԱԼ | 54 | ԸՆՏՐԵԼԻ | 7 |
| ԸՆՏՐԵՄ | 53 | ԸՆՏՐՈՂՈՒԹԻՒՆ | 8 | ԸՆՏՐՈՒԹԻՒՆ | 24 | ԸՇՏՌՏՈՒՐՄՈՒՂ | 1 |
| ԸՌԸՆԳՈՒՆՔ (տեքստում՝ ըռընկունքն) | 1 | ԸՍՏ | 941 | ԸՍՏ ԱՅԴՄ | 2 | ԸՍՏ ԱՅՆՄ | 263 |
| ԸՍՏ ԱՅՍՄ | 41 | ԸՍՏ ՈՐՈՒՄ | 82 | Ը ՕՐԵԱՅ (ՈՒԹՆ ՕՐԵԱՅ) | 3 | | |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| ԹԱԲՕՐ | 16 | ԹԱԳ | 11 | ԹԱԳԱԿԻՑ | 1 | ԹԱԳԱՒՈՐ | 156 |
| ԹԱԳԱՒՈՐԱԾԻՆ | 1 | ԹԱԳԱՒՈՐԱԿԱՆ | 15 | ԹԱԳԱՒՈՐԵՄ | 49 | ԹԱԳԱՒՈՐԵՑՈՒՑԱՆԵՄ | 1 |
| ԹԱԳԱՒՈՐՈՒԹԻՒՆ | 44 | ԹԱԳԱՒՈՐՈՒԹԻՒՆ (Սուրբ Գրքի մաս) | 13 | ԹԱԳԵՄ | 1 | ԹԱԳՈՒՀԻ | 6 |
| ԹԱԴԷՈՍ | 13 | ԹԱԹ | 6 | ԹԱԹԱՂՈՒՆ | 1 | ԹԱԹԱՐ | 1 |
| ԹԱԹԱՒԵՄ | 3 | ԹԱԼՄՈՒՏ | 1 | ԹԱԽԱՆՁԵՄ | 2 | ԹԱԽԾԻՄ | 1 |
| ԹԱԽԾՈՒԹԻՒՆ (տեքստում՝ թաղծութիւն) | 1 | ԹԱՂԱՄԱՍԱՒՈՐ | 1 | ԹԱՂԱՆԹ | 2 | ԹԱՂԵՄ | 35 |
| ԹԱՂԻԱՆԱՄ | 1 | ԹԱՂՈՒՄՆ | 23 | ԹԱՄԱՐ | 5 | ԹԱՄՈՒԶ | 1 |
| Թ ԱՄՍԵԱՅ | 1 | ԹԱՆԱՄ | 1 | ԹԱՆՁՐ | 24 | ԹԱՆՁՐԱԳՈՅՆ | 1 |
| ԹԱՆՁՐԱՄԻՏ | 2 | ԹԱՆՁՐԱՆԱՄ | 13 | ԹԱՆՁՐԱՑՈՒՑԱՆԵՄ | 1 | ԹԱՆՁՐՈՒԹԻՒՆ | 16 |
| ԹԱՏՈՒՐ | 1 | ԹԱՐԱ | 3 | ԹԱՐԱԽ | 2 | ԹԱՐԳՄԱՆ (տեքստում նաև՝ թարքման) | 8 |
| ԹԱՐԳՄԱՆԵՄ կմ ԹԱՐՔՄԱՆԵՄ | 30 | ԹԱՐԳՄԱՆԻՉ | 6 | ԹԱՐԳՄԱՆՈՒԹԻՒՆ | 3 | ԹԱՐԹԵԼ | 1 |
| ԹԱՐՇԱՄԻՄ | 1 | ԹԱՐՍՍԵԱՑ | 1 | ԹԱՐՑ | 2 | ԹԱՑ | 1 |
| ԹԱՑԱՆԱՄ | 12 | ԹԱՒ | 1 | ԹԱՒԱԶԱՐԹ | 1 | ԹԱՒԱԼ | 1 |
| ԹԱՒԱԼԵՑՈՒՑԱՆԵՄ | 3 | ԹԱՒԱԼԻՄ | 1 | ԹԱՓ (ԱՆՑԱՆԵՄ) | 1 | ԹԱՓԱՆ | 1 |
| ԹԱՓԱՆՑ | 3 | ԹԱՓԱՆՑԱԲԱՐ | 1 | ԹԱՓԱՆՑԱՆՑ | 2 | ԹԱՓԱՆՑԵԼ | 3 |
| ԹԱՓԱՆՑԻԿ (տեքստում նաև՝ թափանձիկ) | 5 | ԹԱՓԱՆՑՈՒԹԻՒՆ | 1 | ԹԱՓԱՆՑՈՒՄՆ | 1 | ԹԱՓԵՄ | 13 |
| ԹԱՓՈՒՄՆ | 3 | ԹԱՓՈՒՐ | 2 | ԹԱՓՕՐ | 1 | ԹԱՔՆՈՒԹԻՒՆ | 2 |
| ԹԱՔՈՒՆ | 3 | ԹԱՔՈՒՑԱՆԵՄ | 4 | ԹԱՔՉԻՄ (տեքստում նաև՝ թագչիլ) | 6 | ԹԵԲԱՅԵՑԻ | 1 |
| ԹԵԹԵՒ | 11 | ԹԵԹԵՒԱՄԻՏ | 3 | ԹԵԹԵՒԱՆԱՄ | 8 | ԹԵԹԵՒՈՒԹԻՒՆ | 8 |
| ԹԵՍԱՂՈՆԻԿԵՑԻ (Սուրբ Գրքի մաս) | 5 | ԹԵՐԱԿԱՏԱՐ | 3 | ԹԵՐԱՀԱՒԱՏ (տեքստում նաև՝ թերեհաւատ) | 2 | ԹԵՐԱՀԱՒԱՏՈՒԹԻՒՆ | 1 |
| ԹԵՐԱՆԱՄ | 1 | ԹԵՐԱՍԱՌՈՅՑ | 1 | ԹԵՐԱՓ կմ ԹԵՐԱՓԻՄ | 5 | ԹԵՐԵՒՍ | 9 |
| ԹԵՐԻ | 10 | ԹԵՐՈՒԹԻՒՆ | 8 | ԹԵՒ | 24 | ԹԵՒԱՀԵՐՁ | 1 |
| ԹԵՒԱՍՔՕՂԵՄ | 1 | ԹԵՒԱՒՈՐ | 1 | ԹԵՒԵԱՆՔ | 1 | ԹԵՓ | 11 |
| ԹԵՔԵՄ | 1 | ԹԶԵՆԻ | 4 | ԹԶՈՒԿ | 1 | ԹԷ | 1723 |
| ԹԷԵՒ կմ ԹԷ ԵՒ | 39 | ԹԷՈԴՈՍ | 1 | ԹԷՈԴՈՍ ՄԵԾ | 1 | ԹԷՈԴՈՍ ՓՈՔՐ | 2 |
| ԹԷՈԴՈՐԻՏՈՍ | 3 | ԹԷՈԴՈՐՈՍ | 3 | ԹԷՈԴՈՒՊՕԼԻՍ | 1 | ԹԷՈՎՊԱՑԻ | 1 |
| ԹԷՈՓԻԼՈՍ | 5 | ԹԷՊԷՏ | 209 | ԹԹՈՒ | 3 | ԹԹՈՒԱԳՈՅՆ | 1 |
| ԹԻԶ | 2 | ԹԻԹԵՂՆ | 3 | ԹԻԼԳՈՒՐԱՆ | 1 | ԹԻԿՆԱՄԷՋ | 1 |
| ԹԻԿՈՒՆՔ | 18 | ԹԻՄԳԻԱՆՈՍ | 1 | ԹԻՒ | 223 | ԹԻՒՔ (Սուրբ Գրքի մաս) | 2 |
| ԹԻՒՐ | 12 | ԹԻՒՐԱԿԷ | 1 | ԹԻՒՐԱՄԻՏ | 1 | ԹԻՒՐԱՊԷՍ | 1 |
| ԹԻՒՐԵՄ | 20 | ԹԻՒՐՈՒԹԻՒՆ | 5 | ԹԼՓԱՏԵՄ | 21 | ԹԼՓԱՏՈՒԹԻՒՆ | 19 |
| ԹԼՓԱՏՈՒՄՆ | 1 | ԹԽԱԿՆ | 2 | ԹԽԵՄ | 1 | ԹՂԹԱՏԱՐ | 1 |
| ԹՄԲՈՒԿ | 2 | ԹՄՐԻՄ | 6 | ԹՇՆԱՄԱՆՔ | 1 | ԹՇՆԱՄԻ | 101 |
| ԹՇՆԱՄՈՒԹԻՒՆ | 9 | ԹՇՈՒԱՌԱԿԱՆ | 1 | ԹՇՈՒԱՌԱՊԷՍ | 1 | ԹՇՈՒԱՌԵԼԻ | 1 |
| ԹՇՈՒԱՌՈՒԹԻՒՆ | 10 | ԹՇՐԻՆ | 10 | ԹՈՂԵԼԻ | 2 | ԹՈՂՈՒԹԻՒՆ | 74 |
| ԹՈՂՈՒՄ | 113 | ԹՈՂ ԹԷ | 2 | ԹՈՄԱՍ | 1 | ԹՈՅԼ | 10 |
| ԹՈՅԼ ՏԱԼ | 38 | ԹՈՅԼՏՈՒՈՒԹԻՒՆ | 1 | ԹՈՅՆ | 16 | ԹՈՆԻՐ | 1 |
| ԹՈՇԱԿ | 1 | ԹՈՌՆ | 29 | ԹՈՌՆԻԱՅ | 1 | ԹՈՎԼԱՅ | 1 |
| ԹՈՎՄԱՍ | 3 | ԹՈՎՆԱՍ | 1 | ԹՈՐԳՈՄ | 1 | ԹՈՐԳՈՄԵԱՆ | 1 |
| ԹՈՐԵՄ | 1 | ԹՈՐՔՈՄԷՏՈՍ ԳԵՏ | 1 | ԹՈՒԱԿԱՆ | 3 | ԹՈՒԱԿԻՑ | 2 |
| ԹՈՒԱԿՑԵՄ | 3 | ԹՈՒԵԼՈՒԹԻՒՆ | 1 | ԹՈՒԵՄ (համարել, հաշուել) | 36 | ԹՈՒԵՄ (կարծել, թվալ) | 21 |
| ԹՈՒԶ | 5 | ԹՈՒԼԱՆԱՄ | 6 | ԹՈՒԼԱՍԻՐՏ | 1 | ԹՈՒԼԱՑՈՒՑԱՆԵՄ | 1 |
| ԹՈՒԼՈՒԹԻՒՆ | 4 | ԹՈՒԽ | 1 | ԹՈՒՂԹ | 9 | ԹՈՒՂԹ (Սուրբ Գրքի մաս) | 15 |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| ԹՈՒՄԱ | 2 | ԹՈՒՆԱԼԻՑ | 1 | ԹՈՒՆԱՐԿՈՒ | 1 | ԹՈՒՈՒՄՆ | 1 |
| ԹՈՒՓ | 3 | ԹՈՒՔ | 3 | ԹՈՔ | 13 | ԹՌԻՉ | 4 |
| ԹՌԻՉՔ | 1 | ԹՌՈՒՑԱՆԵՄ | 1 | ԹՌՉԻՄ | 9 | ԹՌՉՈՒՆ | 32 |
| ԹՐԱՍԿԻԱ | 1 | ԹՐԱՍԿԻԱՍ | 1 | ԹՐԾԵՄ | 4 | ԹՔԱՆԵՄ | 1 |
| ԹՕԹԱՓԵՄ | 7 | ԹՕԹԱՓՈՒՄՆ | 1 | ԹՕՇՈՒՄՆ | 1 | | |

## Ժ

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| ԺԱՀԱՀՈՏ | 4 | ԺԱՀԱՀՈՏՈՒԹԻՒՆ | 1 | ԺԱՄ | 254 | ԺԱՄԱՀԱՐ | 8 |
| ԺԱՄԱՄՈՒՏ | 1 | ԺԱՄԱՆԱԿ | 334 | ԺԱՄԱՆԱԿԱՒՈՐ | 6 | ԺԱՄԱՆԱԿԵԱՅ | 49 |
| ԺԱՄԱՆԱԿԵԱՆ | 1 | ԺԱՄԱՆԵՄ | 26 | ԺԱՄԱՏԵՂ | 2 | ԺԱՄԱՏՈՒՆ | 1 |
| Ժ ԱՄՍԵԱՆ | 1 | ԺԱՅԹՔԵՄ | 1 | ԺԱՆԳ, ԺԱՆԿ | 8 | ԺԱՆԻՔ | 1 |
| ԺԱՊԵՏ (ՏԱՍՆԱՊԵՏ) | 1 | ԺԱՌԱՆԳ | 8 | ԺԱՌԱՆԳԱԿԻՑ | 2 | ԺԱՌԱՆԳԵՄ | 15 |
| ԺԱՌԱՆԳՈՐԴ | 1 | ԺԱՌԱՆԳՈՒԹԻՒՆ | 20 | ԺԲԱՆԵԱՅ (ՏԱՍՆԱԲԱՆԵԱՅ) | 5 | ԺԺԱՆ | 1 |
| ԺԻՏ | 1 | ԺԻՐ | 1 | ԺԼԱՏՈՒԹԻՒՆ | 1 | ԺԽՏԵՄ | 1 |
| ԺՈՂՈՎ | 69 | ԺՈՂՈՎԱՐԱՆ | 3 | ԺՈՂՈՎԵՄ | 140 | ԺՈՂՈՎՈՒՄՆ | 9 |
| ԺՈՂՈՎՈՒՐԴ | 185 | ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ | 1 | ԺՈՂՈՎՐԴԱՆՈՑ | 1 | ԺՈՂՈՎՕՂ (Սուրբ Գրքի մաս) | 9 |
| ԺՈՅԺ (ՈՒՆԵՄ) | 1 | ԺՈՒԺԿԱԼ | 1 | ԺՈՒԺԿԱԼ ԼԻՆԵԼ | 1 | ԺՈՒԺԿԱԼԵՄ | 4 |
| ԺՈՒԺԿԱԼՈՒԹԻՒՆ | 8 | ԺՊՐՀԻՄ | 1 | ԺՏԻՄ | 3 | | |

## Ի

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| Ի ԲԱՑ | 39 | ԻԲՐ | 119 | ԻԲՐԵՒ | 55 | ԻԲՐ ԹԷ | 40 |
| ԻԲՐՈՒ ԹԷ (տ. ԻԲՐ ԹԷ) | 1 | ԻԳԱԿԱՆ | 8 | ԻԳԱՄՈԼ | 1 | ԻԳԱՑՈՒՑԱՆԵՄ | 1 |
| ԻԳՈՒԹԻՒՆ | 2 | ԻԹԱՄԱՐԱՅ | 2 | ԻԺ | 4 | ԻԼԻՈՆ | 1 |
| ԻԼԻՈՍ | 1 | ԻՂՁ | 2 | ԻՄԱՆԱԼԻ | 114 | ԻՄԱՆԱՄ | 201 |
| ԻՄԱՍՏ | 25 | ԻՄԱՍՏԱԿ | 2 | ԻՄԱՍՏԱՍԷՐ | 20 | ԻՄԱՍՏԱՍԻՐՈՒԹԻՒՆ | 3 |
| ԻՄԱՍՏՆԱՆԱՄ | 2 | ԻՄԱՍՏՈՒԹԻՒՆ | 173 | ԻՄԱՍՏՈՒՆ | 45 | ԻՄԱՑ (ԻՄԱՑՔ) | 1 |
| ԻՄԱՑԱԿԱՆ | 34 | ԻՄԱՑՈՒԱԾ | 4 | ԻՄԱՑՈՒԹԻՒՆ | 4 | ԻՄԱՑՈՒՄՆ | 116 |
| ԻՄՆ | 49 | ԻՆՉ | 186 | ԻՆՉ (հարցական դերանուն) | 15 | ԻՆՉ, ԻՆՉՔ | 42 |
| ԻՆՔՆ | 567 | ԻՆՔՆ ԱՌ ԻՆՔՆ | 6 | ԻՆՔՆ ԸՍՏ ԻՆՔԵԱՆ | 3 | ԸՍՏ ԻՆՔԵԱՆ, ԸՍՏ ԻՆՔԵԱՆՑ | 78 |
| ԻՆՔՆԱԳԻՒՏ | 2 | ԻՆՔՆԱԳԼՈՒԽ | 4 | ԻՆՔՆԱՁԳԵՍՏ | 1 | ԻՆՔՆԱԾԻՆ | 1 |
| ԻՆՔՆԱԿԱԼ | 5 | ԻՆՔՆԱԿԱՏԱՐ | 3 | ԻՆՔՆԱԿԵԱՆՔ | 1 | ԻՆՔՆԱՀԱՃՈՒԹԻՒՆ | 1 |
| ԻՆՔՆԱՅՕԺԱՐ | 1 | ԻՆՔՆԱՆԱԽԱՆՁ | 1 | ԻՆՔՆԱՇԱՐԺ | 3 | ԻՆՔՆԱՉԱՐ | 2 |
| ԻՆՔՆԱՉԱՓ | 1 | ԻՆՔՆԱՏԵՍ | 2 | ԻՆՔՆԻՄԱՍՏ | 1 | ԻՆՔՆԻՆ | 5 |
| ԻՆՔՆԻՇԽԱՆ | 4 | ԻՆՔՆՈՒԹԻՒՆ | 5 | ԻՇԽԱՆ | 79 | ԻՇԽԱՆԱԿԱՆ | 5 |
| ԻՇԽԱՆԱԿԻՑ | 2 | ԻՇԽԱՆԱՆԱՄ | 1 | ԻՇԽԱՆՈՒԹԻՒՆ | 97 | ԻՇԽԵՄ | 39 |
| ԻՇԽԵՑԵԱԼ | 7 | ԻՇԽԵՑՈՂ | 2 | ԻՇԽՈՂ | 1 | ԻՋԱՆԵՄ | 140 |
| ԻՋԵՒԱՆ | 4 | ԻՋՈՒՄՆ | 19 | ԻՋՈՒՑԱՆԵՄ | 10 | ԻՍԱՀԱԿ | 50 |
| ԻՍԱՄԱՐԻԱՅ | 1 | ԻՍԱՔԱՐ | 2 | ԻՍԻԴՈՐՈՍ | 2 | ԻՍԿ | 1549 |
| ԻՍԿԱԳՈՅՆ | 1 | ԻՍԿԱԿԱՆ | 2 | ԻՍԿԱՊԷՍ | 22 | ԻՍԿ ԱՐԴ | 2 |
| ԻՍԿ ԵԹԷ | 19 | ԻՍԿ ԹԷ (տ. ԻՍԿ ԵԹԷ) | 132 | ԻՍԿՈՅՆ | 12 | ԻՍԿՈՒԹԻՒՆ | 7 |
| ԻՍՄԱՅԷԼ | 3 | ԻՍՄԱՅԷԼԱՑԻ | 2 | ԻՍՊԱՌ (Ի ՍՊԱՌ) | 4 | ԻՍՐԱՅԷԼ | 80 |
| ԻՍՐԱՅԷԼ (անձ) | 2 | ԻՍՐԱՅԷԼԱՑԻ | 5 | ԻՐ | 198 | ԱՄԵՆԱՅՆ ԻՐՕՔ | 3 |
| ԻՐԱՆ | 1 | ԻՐԱՒԱԽՈՀ | 1 | ԻՐԱՒԱՊԷՍ | 2 | ԻՐԱՒԱՑԻ | 1 |
| ԻՐԱՒԻ | 1 | ԻՐԱՒՈՒՆՔ | 27 | ԻՐԵԱՐ | 16 | ԻՐԻՆՈՍ | 6 |
| ԻՐՈՂԱՊԷՍ | 1 | ԻՐՈՂՈՒԹԻՒՆ | 3 | Ի՞Ւ | 7 | ԻՒՂ | 59 |
| ԻՒՂԱԲԵՐ | 6 | ԻՒՂԱԼԻՑ | 1 | ԻՒՐ (ԻՒՐԵԱՆ) | 790 | ԻՒՐԱԿԱՆ | 3 |
| ԻՒՐԱՅԻՆ | 2 | ԻՒՐԱՔԱՆՉԻՒՐ | 116 | ԻՒՐԱՔԱՆՉԻՒՐ ՈՔ | 24 | ԻՒՐՈՎԻ | 3 |
| ԻՕՄԱՅ | 1 | | | | | | |

# Լ

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| ԼԱԲԱՆՈՒ | 1 | ԼԱԼԱԿԱՆ | 1 | ԼԱՄ | 23 | Լ ԱՄԵԱՅ (ԵՐԵՍՆԱՄԵԱՅ) | 7 |
| ԼԱՄԻՄԱՆԱՑԻ | 1 | ԼԱՄՍՈՒՐ | 1 | ԼԱՅՆ | 17 | ԼԱՅՆԱՄԻՋՈՑ | 1 |
| ԼԱՅՆԱՆԱՄ | 4 | ԼԱՅՆԱՏԱՐԱԾ | 1 | ԼԱՅՆՈՒԹԻՒՆ | 10 | ԼԱՆՋՔ | 10 |
| ԼԱՊՏԵՐ | 4 | ԼԱՏԻՆ | 4 | ԼԱՏԻՆԱՑԻ | 2 | ԼԱՐ | 7 |
| ԼԱՐԵՄ | 1 | ԼԱՒ | 16 | ԼԱՒԱԳՈՅՆ | 7 | ԼԱՒՈՒԹԻՒՆ | 2 |
| ԼԵԱՌՆ | 95 | ԼԵԱՌՆԱՆԱԼ (տ. ԼԵՌՆԱՆԱԼ) | 1 | ԼԵԱՐԴ | 30 | ԼԵԶՈՒ | 104 |
| ԼԵԶՈՒԱԳԱՐԻՄ | 1 | ԼԵԶՈՒԱՏ | 2 | ԼԵՂԻ | 17 | ԼԵՐԴ (տ. ԼԵԱՐԴ) | 1 |
| ԼԵՐԴԱԲԱՑԻԿ | 1 | ԼԵՐԴԱԲՈՅԹ | 3 | ԼԵՐԿ | 2 | ԼԵՒԻԱԹԱՆ | 1 |
| ԼԵՒՈՆ | 5 | ԼԷԳԷՈՆ | 1 | ԼԻ | 15 | ԼԻԱ | 1 |
| ԼԻԱԿԱՏԱՐ | 2 | ԼԻԱՆԱՄ | 1 | ԼԻԱՊԷՍ | 3 | ԼԻԲԻԱ | 1 |
| ԼԻԳՐՈՆ (տ. ԼԻՆԳԻՐՈՆ) | 1 | ԼԻՋԵՄ | 1 | ԼԻԹԱՆԻԱՅ | 1 | ԼԻՃ | 1 |
| ԼԻՄՊՈՍ | 3 | ԼԻՆԵԼՈՑ | 44 | ԼԻՆԵԼՈՒԹԻՒՆ | 28 | ԼԻՆԻՄ | 1165 |
| ԼԻՈՎ | 3 | ԼԻՍԵՌՆԱՋԵՒ | 2 | ԼԻՈՒԹԻՒՆ | 6 | ԼԻՏՐ | 6 |
| ԼԻՐ | 4 | ԼԻՐՔ | 5 | ԼԻՒԱ | 1 | ԼԻՓՍ | 1 |
| ԼԼԿԱՆՔ | 1 | ԼԼԿԵՄ | 2 | ԼԾԱԿ | 3 | ԼԾԱԿԻՑ | 1 |
| ԼԾԱԿՑԵՄ, ԼԾԱԿՑԻՄ | 3 | ԼՆՈՒՄ | 70 | ԼՈԿ | 1 | ԼՈՂԱԿ, ԼՈՂԱԿԱՆ | 4 |
| ԼՈՄԱՅ (տ. ԼՈՒՄԱՅ) | 2 | ԼՈՅԾ | 2 | ԼՈՅՍ | 428 | ԼՈՐԱՄԱՐԳ | 3 |
| ԼՈՒ | 1 | ԼՈՒԱՆԱՄ | 30 | ԼՈՒԱՑՈՒՄՆ | 10 | ԼՈՒԾ | 8 |
| ԼՈՒԾՔ ԵՋԱՆՑ | 3 | ԼՈՒԾԱՆԵՄ | 75 | ԼՈՒԾԻՉ | 1 | ԼՈՒԾՈՒՄՆ | 20 |
| ԼՈՒՌ (ԼԻՆԵԼ) | 1 | ԼՈՒՍԱԲԵՐ | 3 | ԼՈՒՍԱԶԳԵԱՑ | 1 | ԼՈՒՍԱՃԱՃԱՆՉ | 1 |
| ԼՈՒՍԱՃԵՄ | 1 | ԼՈՒՍԱՆԱՅ | 3 | ԼՈՒՍԱՆՑՈՅՑ | 1 | ԼՈՒՍԱՆՑՔ | 3 |
| ԼՈՒՍԱՏՈՒ | 4 | ԼՈՒՍԱՑՈՒ | 1 | ԼՈՒՍԱՒՈՐ | 84 | ԼՈՒՍԱՒՈՐԵԼԻ | 1 |
| ԼՈՒՍԱՒՈՐԵՄ | 79 | ԼՈՒՍԱՒՈՐԻՉ | 16 | ԼՈՒՍԱՒՈՐՈՒԹԻՒՆ | 12 | ԼՈՒՍԱՓԱՅԼ | 4 |
| ԼՈՒՍԱՓԱՅԼԵՄ | 6 | ԼՈՒՍԱՓԱՅԼՈՒԹԻՒՆ | 1 | ԼՈՒՍԵՂԷՆ | 19 | ԼՈՒՍԵՐԱԿՔ | 2 |
| ԼՈՒՍԸՆԿԱԼ | 2 | ԼՈՒՍԻՆ | 69 | ԼՈՒՍԻՆԱ | 1 | ԼՈՒՍՆԱՋԵՒ | 1 |
| ԼՈՒՍՆԹԱԳ | 2 | ԼՈՒՐ | 18 | ԼՈՒՑԱՆԵՄ | 2 | ԼՈՒՑԿԻ | 1 |
| ԼՊՐԾԵՄ | 1 | ԼՌԵՄ | 13 | ԼՌԵՑՈՒՑԱՆԵՄ | 1 | ԼՌՈՒԹԻՒՆ | 4 |
| ԼՍԵԼԻ | 31 | ԼՍԵԼԻ ԼԻՆԵԼ | 1 | ԼՍԵՄ | 125 | ԼՍԵՑՈՒՑԱՆԵՄ | 1 |
| ԼՍՆԱՆԱՄ | 1 | ԼՍՈՂ կմ ԼՍՕՂ (տ. ԼՍԵՄ) | 5 | ԼՍՈՂՈՒԹԻՒՆ | 1 | ԼՐԲՈՒԹԻՒՆ | 1 |
| ԼՐՈՒԹԻՒՆ | 1 | ԼՐՈՒՄՆ | 24 | ԼՐՏԵՍ | 7 | ԼՑՈՂԱԿԱՆ | 1 |
| ԼՑՈՒՑԱՆԵՄ | 3 | ԼՔԱՆԻՄ | 2 | ԼՕԴԻԿ | 1 | ԼՕՇ | 1 |

# Խ

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| ԽԱԲԵՄ | 28 | ԽԱԲԷՈՒԹԻՒՆ | 11 | ԽԱԺ | 1 | ԽԱԺԱԿՆ | 1 |
| ԽԱԽՏԵՄ | 1 | ԽԱԾԱՆԵՄ | 6 | ԽԱԿ | 1 | ԽԱՂԱԼԻԿ | 2 |
| ԽԱՂԱԼԻՔ | 3 | ԽԱՂԱՂԱԿԱՆ | 3 | ԽԱՂԱՂԱՐԱՐ | 2 | ԽԱՂԱՂԱՑՈՒՑԱՆԵՄ | 1 |
| ԽԱՂԱՂՈՒԹԻՒՆ | 83 | ԽԱՂԱՄ | 4 | ԽԱՂԱՒԱՐՏ | 4 | ԽԱՂՈՂ | 7 |
| Խ ԱՄԵԱՅ (40-ամյա) | 1 | ԽԱՄՐԻՄ | 1 | ԽԱՅԹ | 1 | ԽԱՅԹԵՄ | 2 |
| ԽԱՅԹՈՑ | 7 | ԽԱՅՏԱԽԱՐԻՒ | 1 | ԽԱՅՏԱՄ | 1 | ԽԱՅՏԱՌԱԿԵՄ | 5 |
| ԽԱՅՏԱՌԱԿՈՒԹԻՒՆ | 1 | ԽԱՆԳԱՐԵՄ | 1 | ԽԱՆԳԱՐՈՒՄՆ | 1 | ԽԱՆՁԱՐՈՒՐ | 1 |
| ԽԱՇՆ | 2 | ԽԱՉ | 264 | Ի ԽԱՉ ՀԱՆԵԼ | 2 | Ի ԽԱՉ ԵԼԱՆԵԼ | 1 |
| ԽԱՉԱԳԼՈՒԽ | 1 | ԽԱՉԱԿՆՔԵՄ | 3 | ԽԱՉԱՋԵՒ | 12 | ԽԱՉԱՆԻՇ | 4 |
| ԽԱՉԱՆՄԱՆ | 6 | ԽԱՉԱՏԱՐԱԾ | 1 | ԽԱՉԱՓԱՅՏ | 4 | ԽԱՉԳԻՒՏ | 1 |
| ԽԱՉԵԼՈՒԹԻՒՆ | 13 | ԽԱՉԵՄ | 58 | ԽԱՉԵՑԱՐ (Շարականի տեսակ) | 6 | ԽԱՉՀԱՄԲՈՅՐ | 1 |
| ԽԱՉՕՐՀՆԵԼ | 1 | ԽԱՌՆ | 8 | ԽԱՌՆԱԿ | 2 | ԽԱՌՆԱԿԵՄ | 8 |
| ԽԱՌՆԱԿԵՐ | 1 | ԽԱՌՆԱԿՈՒՄՆ | 2 | ԽԱՌՆԱՐԱՆ | 6 | ԽԱՌՆԱՓՆԴՈՐ | 1 |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| ԽԱՌՆԵԼԻ(Ք) | 1 | ԽԱՌՆԵՄ | 139 | ԽԱՌՆԻՃԱՂԱՆՃ | 1 | ԽԱՌՆՈՒԱԾ | 26 |
| ԽԱՌՆՈՒՄՆ | 17 | ԽԱՐԱՋԱՆ | 2 | ԽԱՐԵՄ | 1 | ԽԱՐԻՍԽ | 5 |
| ԽԱՐՍԽԵՄ | 2 | ԽԱՐՏԵԱՇ | 10 | ԽԱՐՏԵՄ | 1 | ԽԱՐՏՈՑ | 1 |
| ԽԱՒԱՐ | 96 | ԽԱՒԱՐԱՀԱԼԱԾ | 1 | ԽԱՒԱՐԱՅԻՆ | 3 | ԽԱՒԱՐԱՍԷՐ | 1 |
| ԽԱՒԱՐԵՑՈՒՑԱՆԵՄ | 4 | ԽԱՒԱՐԻՄ | 31 | ԽԱՒԱՐԻՆ | 3 | ԽԱՒԱՐՈՒՄՆ | 6 |
| ԽԱՒԱՐՉՈՒՏ | 1 | ԽԱՓԱՆ | 6 | ԽԱՓԱՆԵԼԻ | 1 | ԽԱՓԱՆԵՄ | 21 |
| ԽԱՓԱՆԻՉ | 2 | ԽԱՓԱՆՈՒՄՆ | 4 | ԽԱՓԱՐԱԶԱՅՆ | 1 | ԽԵԹԿԵՄ | 2 |
| ԽԵԼԱՄՈՒՏ | 1 | ԽԵԼԱՊԱՏԱԿ | 6 | ԽԵԼՔ | 7 | ԽԵՂ | 1 |
| ԽԵՂԴ | 1 | ԽԵՂԴԵՄ | 4 | ԽԵՃԵՊ | 1 | ԽԵՆԷՇՈՒԹԻՒՆ (տ. ԽԵՆԵՇՈՒԹԻՒՆ) | 2 |
| ԽԵՌ | 1 | ԽԵՌԱԲԱՐՈՅ | 1 | ԽԵՑԳԵՏԻՆ | 4 | ԽԵՑԵՂԷՆ | 2 |
| ԽԵՑԵՄՈՐԹ | 1 | ԽԵՑԻ | 5 | ԽԵՒԱՑԻ | 1 | ԽԶԵՄ | 2 |
| ԽԶՈՒՄՆ | 1 | ԽԷԹ | 1 | ԽԷԺ | 1 | ԽԹԵՄ | 1 |
| ԽԹՈՒՄՆ | 1 | ԽԻՂՃ | 3 | ԽԻՂՃ ՄՏԱՑ | 14 | ԽԻՆԾ (տ. ԽԻՆՁ) | 1 |
| ԽԻՍՏ | 12 | ԽԼԵՄ | 4 | ԽԼԻՉ | 1 | ԽԼՈՒՐԴՆ | 1 |
| ԽԽԱՅԹԵԱԼ | 1 | ԽԽՆՋԵՄ | 1 | ԽՂՃԱՄ | 1 | ԽՂՃՄՏԱՆՔ | 4 |
| ԽՂՃՄՏՈՒԹԻՒՆ | 1 | ԽՃՌՂԵՄ | 1 | ԽՄԵՄ | 1 | ԽՄՈՐ | 9 |
| ԽՄՈՐՈՒՆ | 3 | ԽՆԱՄ | 30 | ԽՆԱՄԱԾՈՒ | 3 | ԽՆԱՄԱԿԱԼՈՒԹԻՒՆ | 2 |
| ԽՆԱՄԱԿԱՆ | 1 | ԽՆԱՄԱՐԿԵՄ | 1 | ԽՆԱՄԱՐԿՈՒ | 1 | ԽՆԱՄԱՐԿՈՒԹԻՒՆ | 2 |
| ԽՆԱՄԵՄ | 24 | ԽՆԱՄԻ | 5 | ԽՆԱՄՈՒԹԻՒՆ | 12 | ԽՆԱՅԵՄ | 11 |
| ԽՆԴԱՄ | 5 | ԽՆԴԻՐ | 27 | ԽՆԴՈՒԹԻՒՆ | 20 | ԽՆԴՐԵԼԻ | 2 |
| ԽՆԴՐԵԼԻՆ | 1 | ԽՆԴՐԵՄ | 130 | ԽՆԴՐՈՒԱԾ(Ք) | 2 | ԽՆԴՐՈՒԹԻՒՆ | 1 |
| ԽՆՁՈՐ կամ ԽՆԾՈՐ | 8 | ԽՆԿԱՂԱՑ | 2 | ԽՆԿԱՐԿԵՄ | 9 | ԽՆԿԱՐԿՈՒՄՆ | 1 |
| ԽՆԿԵՂԷԳ | 1 | ԽՆԿԵՄ | 3 | ԽՆՈՒՄ | 3 | ԽՇՏԻ | 1 |
| ԽՈԴԷՍՏՈՒԲԻԱ | 1 | ԽՈՋ | 5 | ԽՈՋԵՆԻ | 1 | ԽՈԿԱՄ | 4 |
| ԽՈԿՈՒՄՆ | 13 | ԽՈՀԱԳՈՐԾ | 1 | ԽՈՀԱԿԱՆ | 2 | ԽՈՀԱԿԱՆՈՒԹԻՒՆ | 1 |
| ԽՈՀԵՄ | 13 | ԽՈՀԵՄՈՒԹԻՒՆ | 28 | ԽՈՂՈՎԱԿ | 1 | ԽՈՅ | 29 |
| ԽՈՅԱԿ | 2 | ԽՈՅՍ ՏԱԼ | 3 | ԽՈՅՐ | 4 | ԽՈՆԱՐՀ | 22 |
| ԽՈՆԱՐՀԱԳՈՅՆ | 1 | ԽՈՆԱՐՀԱԿԱՆ | 1 | ԽՈՆԱՐՀԵՑՈՒՑԱՆԵՄ | 4 | ԽՈՆԱՐՀԻՄ | 31 |
| ԽՈՆԱՐՀՈՒԹԻՒՆ | 25 | ԽՈՆԱՐՀՈՒՄՆ | 3 | ԽՈՆԱՒ | 8 | ԽՈՆԱՒՈՒԹԻՒՆ | 5 |
| ԽՈՇՈՐ | 1 | ԽՈՇՈՐՈՒԹԻՒՆ | 2 | ԽՈՉԸՆԴԱԿՆ | 1 | ԽՈՌՈՉ | 1 |
| ԽՈՍՏԱՆԱՄ | 41 | ԽՈՍՏՈՎԱՆ ԼԻՆԻՄ | 7 | ԽՈՍՏՈՎԱՆԱԴՐԱՄ | 1 | ԽՈՍՏՈՎԱՆԱՀԱՅՐ | 5 |
| ԽՈՍՏՈՎԱՆԵԼԻ | 2 | ԽՈՍՏՈՎԱՆԵՄ, ԽՈՍՏՈՎԱՆԻՄ | 134 | ԽՈՍՏՈՎԱՆՈՂ (ԽՈՍՏՈՎԱՆՕՂ) | 9 | ԽՈՍՏՈՎԱՆՈՒԹԻՒՆ | 77 |
| ԽՈՍՏՈՒՄՆ | 25 | ԽՈՍՐՈՎ | 1 | ԽՈՏ | 26 | ԽՈՏԱՃԱՐԱԿ | 1 |
| ԽՈՏԱՆ | 10 | ԽՈՏԵԼԻ | 9 | ԽՈՏԵՄ | 26 | ԽՈՏՈՐ | 1 |
| ԽՈՏՈՐԵՄ | 9 | ԽՈՏՈՐՆԱԿ | 4 | ԽՈՏՈՐՈՒՄՆ | 4 | ԽՈՏՈՒՄՆ | 1 |
| ԽՈՐ | 19 | ԽՈՐԱԳԷՏ | 1 | ԽՈՐԱԳԻՏՈՒԹԻՒՆ | 2 | ԽՈՐԱԳՈՅՆ | 1 |
| ԽՈՐԱՋՄ | 1 | ԽՈՐԱՄԱՆԿ | 8 | ԽՈՐԱՄԱՆԿՈՒԹԻՒՆ | 1 | ԽՈՐԱՆ | 68 |
| ԽՈՐԱՍՈՒՋԵՄ | 2 | ԽՈՐԵՆԱՑԻ | 1 | ԽՈՐԹ | 2 | ԽՈՐԻ կամ ԽՈՒՐԻ կամ ԽՈՐ | 1 |
| ԽՈՐԻՆ | 2 | ԽՈՐԻՍԽ | 2 | ԽՈՐԽ | 3 | ԽՈՐԽՈՐԱՏ | 3 |
| ԽՈՐՀԻՄ | 36 | ԽՈՐՀՈՒՐԴ | 376 | ԽՈՐՀՐԴԱԲԱՐ | 1 | ԽՈՐՀՐԴԱԾԵՄ | 1 |
| ԽՈՐՀՐԴԱԾՈՒ | 1 | ԽՈՐՀՐԴԱԿԱՆ | 13 | ԽՈՐՀՐԴԱԿԻՑ | 1 | ԽՈՐՀՐԴԱՆՈՑ | 2 |
| ԽՈՐՀՐԴԱՊԷՍ | 2 | ԽՈՐՀՐԴԱՒՈՐ | 7 | ԽՈՐՇԱԿ | 1 | ԽՈՐՇԻՄ | 3 |
| ԽՈՐՈՎԵՄ | 10 | ԽՈՐՈՒԹԻՒՆ | 10 | ԽՈՐՏԱԿԵՄ | 23 | ԽՈՑ | 2 |
| ԽՈՑԵՄ | 8 | ԽՈՑՈՏԵՄ | 1 | ԽՈՑՈՏԻՉ | 1 | ԽՈՑՈՒԱԾ | 10 |
| ԽՈՑՈՒՄՆ | 2 | ԽՈՒԶԵՄ | 2 | ԽՈՒԼ | 2 | ԽՈՒՃԱՊԻՄ | 2 |
| ԽՈՒՆԱԽՈՅ | 1 | ԽՈՒՆԿ | 46 | ԽՈՒՍԱՓԵՄ | 3 | ԽՈՓ | 1 |
| ԽՌԻՒ | 3 | ԽՌՈՎԱՐԱՐ | 3 | ԽՌՈՎԵՄ | 2 | ԽՌՈՎՈՒԹԻՒՆ | 10 |
| ԽՌՉԱՓՈՂ | 5 | ԽՍՏԱԳՈՅՆ | 4 | ԽՍՏԱԿՐՕՆ | 1 | ԽՍՏԱՄԲԵՐ | 1 |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| ԽՍՏԱՆԱՄ | 8 | ԽՍՏԱՍԻՐՏ | 1 | ԽՍՏԱՍՐՏՈՒԹԻՒՆ | 4 | ԽՍՏԱՑՈՒՑԱՆԵՄ | 3 |
| ԽՍՏՈՒԹԻՒՆ | 8 | ԽՏԱՆԱՄ, ԽՏԻՄ | 2 | ԽՏՐԵՄ | 4 | ԽՏՐՈՑ | 2 |
| ԽՏՐՈՒԹԻՒՆ | 7 | ԽՏՐՈՒՄՆ | 1 | ԽՐԱԽՈՒԹԻՒՆ | 5 | ԽՐԱՏ | 45 |
| ԽՐԱՏԱԿԱՆ | 1 | ԽՐԱՏԵՄ | 20 | ԽՐԱՑ | 1 | ԽՐԹՆՈՒԹԻՒՆ | 1 |
| ԽՐՈԽՏ | 1 | ԽՐՈԽՏԱՄ | 1 | ԽՐՈԽՏՈՒՄՆ | 1 | ԽՓԵՄ | 5 |
| ԽՕՍԱԿԻՑ | 2 | ԽՕՍԱԿՑԻՄ | 2 | ԽՕՍԱԿՑՈՒԹԻՒՆ | 2 | ԽՕՍԻՄ | 162 |
| ԽՕՍՈՂ | 1 | ԽՕՍՈՒՄՆ | 1 | ԽՕՍՈՒՆ | 1 | ԽՕՍՔ | 40 |
| ԽՕՐԵԱՅ (40-օրյա) | 2 | | | | | | |

## Ծ

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| ԾԱԳ | 3 | ԾԱԳԵՄ, ԾԱԳԻՄ | 43 | ԾԱԳՈՒՄՆ | 14 | ԾԱԼ | 2 |
| ԾԱԼԵՄ | 10 | ԾԱԼՈՒՄՆ | 1 | ԾԱԽ | 2 | ԾԱԽԵՄ | 9 |
| ԾԱԾԿԱԲԱՐ | 1 | ԾԱԾԿԱԳԷՏ | 2 | ԾԱԾԿԱՊԷՍ | 5 | ԾԱԾԿԵՄ | 76 |
| ԾԱԾԿՈՅԹ | 16 | ԾԱԾԿՈՑ | 1 | ԾԱԾԿՈՒԹԻՒՆ | 4 | ԾԱԾՈՒԿ | 63 |
| ԾԱԿ | 1 | ԾԱՂԻԿ | 40 | ԾԱՂԿԱՁԱՐԴ | 2 | ԾԱՂԿԵՄ | 23 |
| ԾԱՂՐ | 4 | ԾԱՂՐ ԱՌՆԵԼ | 1 | ԾԱՂՐ ԼԻՆԵԼ | 1 | ԾԱՂՐԱԿԱՆ | 1 |
| ԾԱՄԵԼԻ(Ք) | 1 | ԾԱՅՐ | 20 | ԾԱՅՐԱԳՈՅՆ | 13 | ԾԱՅՐԱՆԱԼ | 1 |
| ԾԱՅՐՈՒԹԻՒՆ | 1 | ԾԱՆԱԿԵՄ | 1 | ԾԱՆԱԿՈՒՄՆ | 1 | ԾԱՆՈՒՑԱՆԵՄ | 10 |
| ԾԱՆՐ | 16 | ԾԱՆՐԱԲԵՌՆՈՒԹԻՒՆ | 1 | ԾԱՆՐԱԳՈՅՆ | 1 | ԾԱՆՐԱՆԱՄ | 14 |
| ԾԱՆՐԱՇԱՐԺ | 1 | ԾԱՆՐԱՑՈՒՑԱՆԵՄ | 2 | ԾԱՆՐՈՒԹԻՒՆ | 25 | ԾԱՆՕԹ | 8 |
| ԾԱՆՕԹԱՆԱՄ | 2 | ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆ | 6 | ԾԱՌ | 74 | ԾԱՌԱՅ | 68 |
| ԾԱՌԱՅԱԲԱՐ | 4 | ԾԱՌԱՅԱԿԱՆ | 8 | ԾԱՌԱՅԱԿԻՑ | 1 | ԾԱՌԱՅԵՄ | 6 |
| ԾԱՌԱՅՈՒԹԻՒՆ | 15 | ԾԱՍԿԵՄ | 3 | ԾԱՍԿԻՉ | 1 | ԾԱՐԱՒ | 24 |
| ԾԱՐԱՒԻ | 1 | ԾԱՐԱՒԻՄ, ԾԱՐԱՒԵՄ | 9 | ԾԱՐԱՒՈՒՄՆ | 1 | ԾԱՒԱԼԵՄ | 4 |
| ԾԱՒԱԼՈՒՄՆ | 2 | ԾԵԾ | 1 | ԾԵԾԵՄ | 3 | ԾԵՂ | 1 |
| ԾԵՐ | 49 | ԾԵՐԱՆԱՄ | 6 | ԾԵՐՈՒԹԻՒՆ | 33 | ԾԵՓԵՄ | 1 |
| ԾԵՔԱԿԱՆ | 1 | ԾԻԱԾԱՆ | 4 | ԾԻԾԱՂԱԿԱՆ | 1 | ԾԻԾԱՂԵԼԻ | 1 |
| ԾԻԾԱՂԻՄ | 3 | ԾԻԾԱՂԿՈՏ | 2 | ԾԻԾԱՌՆ | 1 | ԾԻՆ | 3 |
| ԾԻՐ | 4 | ԾԻՐԱՆ | 1 | ԾԻՐԱՆԱԳՈՅՆ | 2 | ԾԻՐԱՆԻ | 8 |
| ԾԽԱՏԵՍԱԿ | 4 | ԾԽԵՄ | 1 | ԾԽՈՒՄՆ | 1 | ԾԾԵՄ | 2 |
| ԾԾՈՒՄԲ | 2 | ԾԾՈՒՄՆ | 1 | ԾԿԻԼՆ | 1 | ԾՂԻ, ԾՂԻՔ | 1 |
| ԾՂՕՏ | 1 | ԾՆԱՆԻՄ | 388 | ԾՆԵԼՈՒԹԻՒՆ | 7 | ԾՆԾՂԱՅ | 1 |
| ԾՆՆԴԱԳՈՐԾՈՒԹԻՒՆ | 1 | ԾՆՆԴԱԿԱՆ | 11 | ԾՆՈՒՆԴ | 320 | ԾՆՈՒՆԴՔ կամ ԳԻՐՔ ԾՆՆԴՈՑ | 6 |
| ԾՆՕՂ կամ ԾՆՈՂ | 87 | ԾՆՕՏ | 15 | ԾՈՄ | 1 | ԾՈՅԼ | 9 |
| ԾՈՎ | 99 | ԾՈՎԱԳՈՅՆ | 1 | ԾՈՎԱԿՈՂՄՆ | 1 | ԾՈՎԱՅԻՆ (տ. ԾՈՎԱԿԱՆ) | 1 |
| ԾՈՎԵՄ | 1 | ԾՈՐԱՆ | 1 | ԾՈՐԵԼԻ | 1 | ԾՈՐԻՄ | 2 |
| ԾՈՐԾՈՐ | 1 | ԾՈՐՈՒՄՆ | 11 | ԾՈՑ | 13 | ԾՈՒԼԱՆԱՄ | 3 |
| ԾՈՒԼՈՒԹԻՒՆ | 19 | ԾՈՒԽ | 15 | ԾՈՒՆԿՆ | 4 | ԾՈՒՆՐ | 6 |
| ԾՈՒՌ | 1 | ԾՌԱՏՕՆ | 1 | ԾՌԵՄ | 2 | ԾՓԱՆՔ | 1 |
| ԾՕՐԵԱՅ (50-օրյա) | 1 | | | | | | |

## Կ

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| ԿԱԳ | 3 | ԿԱԳԻՄ | 1 | ԿԱԳԻՍԱ | 1 | ԿԱԶԲԻԱԿԱՆ ԾՈՎ | 1 |
| ԿԱԶԴՈՒՐԵՄ | 1 | ԿԱԶՄ | 1 | ԿԱԶՄԵՄ | 56 | ԿԱԶՄՈՂԱԿԱՆ | 9 |
| ԿԱԶՄՈՒԱԾ | 9 | ԿԱԶՄՈՒԹԻՒՆ | 20 | ԿԱԹ | 2 | ԿԱԹԱԼԻԿ | 1 |
| ԿԱԹԵՑՈՒՑԱՆԵՄ | 1 | ԿԱԹԻԼ | 4 | ԿԱԹՆ | 16 | ԿԱԹՆԱՍՈՒՆ | 1 |
| ԿԱԹՈՂԻԿԷ | 7 | ԿԱԹՈՂԻԿԷ (Ս.Գրքի մաս) | 10 | ԿԱԹՈՂԻԿՈՍ | 26 | ԿԱԼ (լինել) | 3 |
| ԿԱԼ (ցորենի) | 8 | ԿԱԼԻՍՏՐԱՏՈՍ | 2 | ԿԱԼՈՒՄ | 9 | ԿԱԼՈՒՄՆ | 3 |
| ԿԱԽ (Ի ԿԱԽ) | 1 | ԿԱԽԱՂԱՆ | 1 | ԿԱԽԱՐԴ | 14 | ԿԱԽԱՐԴԱԿԱՆ | 1 |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| ԿԱԽԱՐԴՈՒԹԻՒՆ | 4 | ԿԱԽԵՄ | 21 | ԿԱԿԱՆԱԲԱՐՁ | 1 | ԿԱԿՂԱՆԱՄ | 1 |
| ԿԱԿՂՈՒԹԻՒՆ | 1 | ԿԱԿՈՒՂ | 8 | ԿԱՀ | 1 | ԿԱՀԱԹ | 6 |
| ԿԱՂ | 13 | ԿԱՂԱՄ | 4 | ԿԱՂԱՊԱՐ | 1 | ԿԱՂԱՊԱՐԵՄ | 1 |
| ԿԱՂԱՑՈՒՑԱՆԵՄ | 2 | ԿԱՂՆԻ | 1 | ԿԱՂՊԱՐ | 1 | ԿԱՂՔԱՑԻՔ | 1 |
| ԿԵՆԱՄ | 3 | ԿԱՄ, ԵՒ ԿԱՄ,<br>ԿԱՄ ԹԷ, ԵՒ ԿԱՄ ԹԷ | 878 | ԿԱՄ (բայ) | 145 | ԿԱՄԱԿԻՑ | 1 |
| ԿԱՄԱԿՈՐ | 3 | ԿԱՄԱՅ | 4 | ԿԱՄԱՐ | 15 | ԿԱՄԱՐԱՋԳՈՒԹԻՒՆ | 1 |
| ԿԱՄԱՐԱՋԵՒ | 1 | ԿԱՄԱՐԱՈՒՆՔՆ | 1 | ԿԱՄԱՐԱՐ | 2 | ԿԱՄԱՒՈՐ | 31 |
| ԿԱՄԱՒՈՐԱՊԷՍ | 2 | ԿԱՄԱՒՈՐԻՄ | 2 | ԿԱՄԱՒՈՐՈՒԹԻՒՆ | 1 | ԿԱՄԵՑՈՂ | 3 |
| ԿԱՄԻՄ | 148 | ԿԱՄՈՂ (տ. ԿԱՄԵՑՈՂ) | 6 | ԿԱՄՈՎԻՆ | 1 | ԿԱՄՈՒԹԻՒՆ | 1 |
| ԿԱՄՐ | 1 | ԿԱՄՔ | 382 | ՈՉ ԿԱՄԱՑ | 1 | ԿԱՅ(Ք) | 4 |
| ԿԱՅԱՆ | 30 | ԿԱՅԱՆԱՄ | 22 | ԿԱՅԱՐԱՆ | 1 | ԿԱՅԱՑՈՒԹԻՒՆ | 1 |
| ԿԱՅԵՆ | 15 | ԿԱՅԻԱՓԱ | 2 | ԿԱՅԼԱԿ | 1 | ԿԱՅԾ | 7 |
| ԿԱՅԾԱԿՆ | 6 | ԿԱՅԾԱԿՆԱԾԻՆ | 1 | ԿԱՅԾԵԼ | 2 | ԿԱՅՆԱՆ | 3 |
| ԿԱՅՈՒՄՆ | 3 | ԿԱՅՍՐ | 1 | ԿԱՆԱՄԲԻ | 1 | ԿԱՆԱՆՑԱԿԱՆ | 1 |
| ԿԱՆԱՉ | 6 | ԿԱՆԱՉԻՄ | 1 | ԿԱՆԱՉԱԳԵՂ | 1 | ԿԱՆԱՉԱԳՈՅՆ | 1 |
| ԿԱՆԱՉՈՒԹԻՒՆ | 1 | ԿԱՆԱՔԱՐԻՍ | 1 | ԿԱՆԳՆԵՄ | 45 | ԿԱՆԳՆՈՒՄՆ | 2 |
| ԿԱՆԳՈՒՆ | 25 | ԿԱՆԹԵՂ | 1 | ԿԱՆԽԱԳԷՏ | 3 | ԿԱՆԽԱԳԻՏՈՒԹԻՒՆ | 1 |
| ԿԱՆԽԱՃԱՌԵՄ | 2 | ԿԱՆԽԵՄ | 1 | ԿԱՆՈՆ | 78 | ԿԱՆՈՆԱԳԼՈՒԽ | 2 |
| ԿԱՆՈՆԱԿԱՆ | 11 | ԿԱՆՈՆԵՄ | 7 | ԿԱՆՈՒԽ | 4 | ԿԱՇԱՌ | 1 |
| ԿԱՇԱՌԵՄ | 1 | ԿԱՇԻ | 3 | ԿԱՇԿԱՆԴԵՄ | 2 | ԿԱՊ | 38 |
| ԿԱՊԱԿՑԵՄ | 3 | ԿԱՊԱԿՑՈՒԹԻՒՆ | 2 | ԿԱՊԱՆՔ | 9 | ԿԱՊԱՐ | 1 |
| ԿԱՊԱՐՃԱԿԻՐ | 1 | ԿԱՊԵԱԼ | 43 | ԿԱՊԵՄ | 65 | ԿԱՊԻՃ | 1 |
| ԿԱՊՈՅՏ | 8 | ԿԱՊՈՒՏԱԿ | 1 | ԿԱՊՈՒՏԻՄ | 2 | ԿԱՌԱՉԻՄ | 1 |
| ԿԱՌԱՎԱՐ | 7 | ԿԱՌԱՎԱՐԵՄ | 14 | ԿԱՌԱՎԱՐՈՒԹԻՒՆ | 1 | ԿԱՌԱՓԵՄ | 1 |
| ԿԱՌԱՓՆ | 1 | ԿԱՌՆ | 1 | ԿԱՌՈՅՑ | 1 | ԿԱՌՈՒՑԱՆԵՄ | 1 |
| ԿԱՌՔ | 12 | ԿԱՍԲԻՑ | 1 | ԿԱՍԲԻՑ ԾՈՎ | 1 | ԿԱՍԵՑՈՒՑԱՆԵՄ | 1 |
| ԿԱՍԿԱԾ | 2 | ԿԱՍԿԱԾԱՆՔ | 2 | ԿԱՍԿԱՐԱՅ | 3 | ԿԱՏԱՂԻՄ | 2 |
| ԿԱՏԱՐ | 1 | ԿԱՏԱՐԱԾ | 112 | ԿԱՏԱՐԵԱԼ | 260 | ԿԱՏԱՐԵԼԱԳՈՅՆ | 3 |
| ԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾԵՄ | 4 | ԿԱՏԱՐԵԼԱՊԷՍ | 5 | ԿԱՏԱՐԵԼԻ | 1 | ԿԱՏԱՐԵԼՈՒԹԻՒՆ | 21 |
| ԿԱՏԱՐԵՄ | 225 | ԿԱՏԱՐԻՉ | 1 | ԿԱՏԱՐՈՂ | 1 | ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ | 1 |
| ԿԱՏԱՐՈՒՄՆ | 155 | ԿԱՏՈՒ | 1 | ԿԱՐ | 4 | ԿԱՐԱԿՆ | 2 |
| ԿԱՐԱՊԵՏ | 7 | ԿԱՐԱՊԵՏԵՄ | 2 | ԿԱՐԱՊԵՏՈՒԹԻՒՆ | 1 | ԿԱՐԳ | 205 |
| ԸՍՏ ԿԱՐԳԻ | 55 | ԿԱՐԳԱԴՐՈՒԹԻՒՆ | 1 | ԿԱՐԳԱՊԵՏՈՒԹԻՒՆ | 1 | ԿԱՐԳԱՒՈՐ | 19 |
| ԿԱՐԳԱՒՈՐԱՊԷՍ | 3 | ԿԱՐԳԱՒՈՐԵՄ | 17 | ԿԱՐԳԱՒՈՐԻՉ | 1 | ԿԱՐԳԱՒՈՐՈՒԹԻՒՆ | 4 |
| ԿԱՐԳԵՄ | 72 | ԿԱՐԴԱԼԻ | 1 | ԿԱՐԴԱՄ | 13 | ԿԱՐԴԱՑՈՂ | 1 |
| ԿԱՐԴԱՑՈՒՄՆ | 1 | ԿԱՐԵԼԻ | 26 | ԿԱՐԵԿԻՑ (ԼԻՆԵԼ) | 2 | ԿԱՐԵՄ | 397 |
| ԿԱՐԷՎԷՐ | 1 | ԿԱՐԵՒՈՐ | 1 | ԿԱՐԻ | 10 | ԿԱՐԻՃ | 4 |
| ԿԱՐԻՔ | 4 | ԿԱՐԾԵՄ | 57 | ԿԱՐԾԵՑԵԱԼ | 2 | ԿԱՐԾԻՔ | 58 |
| ԿԱՐԾՈՏ | 1 | ԿԱՐԾՐ | 4 | ԿԱՐԾՐԱՆԱՄ | 6 | ԿԱՐԾՐՈՒԹԻՒՆ | 1 |
| ԿԱՐԾՐ | 2 | ԿԱՐԿԱՌԵՄ | 1 | ԿԱՐԿԵՀԱՆ | 1 | ԿԱՐԿԵՄ | 1 |
| ԿԱՐԿՈՒՏ | 15 | ԿԱՐԿՏԱԲԵՐ | 1 | ԿԱՐՃ | 10 | Ի ԿԱՐՃՈՅ | 11 |
| ԿԱՐՃԱՄԱՍՆ | 1 | ԿԱՐՃԱՌՕՏ | 2 | ԿԱՐՃԱՌՕՏՈՒԹԻՒՆ | 1 | ԿԱՐՃԵՄ | 9 |
| ԿԱՐՃՄՏՈՒԹԻՒՆ | 1 | ԿԱՐՃՈԳԻ | 1 | ԿԱՐՃՈՒՆՉ | 2 | ԿԱՐՄԻՐ | 21 |
| ԿԱՐՄԻՐ ԾՈՎ | 3 | ԿԱՐՄՐԱԳՈՅՆ | 2 | ԿԱՐՄՐԱՆԱՄ | 1 | ԿԱՐՄՐԻՄ | 4 |
| ԿԱՐՆՈՅ | 1 | ԿԱՐՕՂ | 27 | ԿԱՐՈՂԱԲԱՐ | 1 | ԿԱՐՈՂԱՆԱՄ | 4 |
| ԿԱՐՈՂՈՒԹԻՒՆ | 35 | ԿԱՐՈՒԹԻՒՆ | 2 | ԿԱՐՕՏ | 34 | ԿԱՐՕՏԱՆԱՄ | 22 |
| ԿԱՐՕՏԵԱԼ | 3 | ԿԱՐՕՏՈՒԹԻՒՆ | 11 | ԿԱՑՈՒՑԱՆԵՄ | 16 | ԿԱՒ | 9 |
| ԿԱՒԱԳՈՐԾ | 1 | ԿԱՒԱԳՈՐԾՈՒԹԻՒՆ | 2 | ԿԱՒԵՂԷՆ | 1 | ԿԱՓԱՐԻՉ | 2 |
| ԿԱՔԱՒ | 2 | ԿԱՔԱՒԵՄ | 1 | ԿԵԱՄ | 25 | ԿԵԱՆՔ | 407 |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| ԿԵԴԵՍ | 1 | ԿԵՂ | 5 | ԿԵՂԵՒ | 7 | ԿԵՂԾԱՒՈՐ | 3 |
| ԿԵՂԾԱՒՈՐԻՄ | 1 | ԿԵՂԾԱՒՈՐՈՒԹԻՒՆ | 1 | ԿԵՂԾԻՔ | 1 | ԿԵՆԱԳՈՐԾԵՄ | 3 |
| ԿԵՆԱՐԱՐ | 9 | ԿԵՆԴԱՆԱԲՈՒՂԽ | 1 | ԿԵՆԴԱՆԱԳԻՐ | 2 | ԿԵՆԴԱՆԱԿԱՆ | 10 |
| ԿԵՆԴԱՆԱԿԵՐՊ | 30 | ԿԵՆԴԱՆԱՆԱՄ | 13 | ԿԵՆԴԱՆԱՏԵՍԱԿ | 1 | ԿԵՆԴԱՆԱՐԱՐ | 13 |
| ԿԵՆԴԱՆԱՑՈՒՑԱՆԵՄ | 4 | ԿԵՆԴԱՆԱՑՈՒՑԻՉ | 1 | ԿԵՆԴԱՆԻ (անասուն) | 242 | ԿԵՆԴԱՆԻ (ողջ, կենարար) | 73 |
| ԿԵՆԴԱՆՈՒԹԻՒՆ | 47 | ԿԵՆԴՈՒՐԱԾԻՆ | 1 | ԿԵՆԵԶ | 1 | ԿԵՆԵՂՈՒՏ | 1 |
| ԿԵՆՍԱԲՈՒՂԽ | 1 | ԿԵՆՍԱՏՈՒ | 3 | ԿԵՆՍՈՒՆԱԿ | 1 | ԿԵՆՑԱՂ | 50 |
| ԿԵՆՑԱՂԱԿԱՆ | 1 | ԿԵՆՑԱՂԱՎԱՐԻՄ | 2 | ԿԵՆՑԱՂԱՎԱՐՈՒԹԻՒՆ | 1 | ԿԵՌ | 2 |
| ԿԵՍԱՐԱՑԻ | 2 | ԿԵՍԱՐԻԱ | 8 | ԿԵՐԱԿՈՒՐ | 113 | ԿԵՐԱԿՐԱԿԱՆ | 6 |
| ԿԵՐԱԿՐԵԼԻ | 14 | ԿԵՐԱԿՐԻՄ | 48 | ԿԵՐԱԿՐԻՉ | 2 | ԿԵՐԻՆԹՈՍ | 1 |
| ԿԵՐՈՂ (ԿԵՐՕՂ) | 7 | ԿԵՐՊ | 79 | ԿԵՐՊԱԳՐԵՄ | 1 | ԿԵՐՊԱՆԱՄ | 5 |
| ԿԵՐՊԱՍ | 1 | ԿԵՐՊԱՍԱԾԻՆ | 1 | ԿԵՐՊԱՐԱՆ | 38 | ԿԵՐՊԱՐԱՆԻՄ | 11 |
| ԿԵՑՈՒՑԱՆԵՄ | 9 | ԿԶԱԿ | 1 | ԿԷԼԷՍՏԻԱՆՈՍ | 1 | ԿԷՍ | 64 |
| ԿԷՍ ՕՐ | 2 | ԿԷՏ | 37 | ԿԹԵՄ | 2 | ԿԻԲԻԿՈՆ | 2 |
| ԿԻՁԱՆԵՄ | 1 | ԿԻՁԵՄ | 3 | ԿԻՁՈՒՄՆ | 4 | ԿԻԹ | 1 |
| ԿԻԼԻԿԵՑԻՔ | 1 | ԿԻԿԻԱՍ | 1 | ԿԻՆ | 216 | ԿԻՆ ԱՌՆՈՒԼ | 19 |
| ԿԻՆԱՄՈՆ | 1 | ԿԻՊԱՐԻ | 2 | ԿԻՊՐՈՍ | 1 | ԿԻՍԱԳՈՒՆԴ | 11 |
| ԿԻՍԱԷՇ | 1 | ԿԻՍԱԿԱՏԱՐ | 4 | ԿԻՍԱՁԱՅՆ | 1 | ԿԻՍԱՄԱՍՆԵԱՅ | 3 |
| ԿԻՍԱՅՐԵԱՑ | 1 | ԿԻՍԱՍԱՐԿԱՒԱԳ | 3 | ԿԻՍԱՍԵՒ | 1 | ԿԻՍԱՏԵԼ | 1 |
| ԿԻՍԱՓՈԽՆ | 1 | ԿԻՍԵԱՆ | 1 | ԿԻՍՈՆ | 1 | ԿԻՐ | 7 |
| ԿԻՐԱԿԷ | 67 | ԿԻՐԱԿՄՈՒՏ | 6 | ԿԻՐԱԿՈՍԱԿ | 1 | ԿԻՐԹ | 1 |
| ԿԻՐՔ | 59 | ԿԻՑ | 2 | ԿԻՒՐԵՂ | 7 | ԿԻՒՐԵՆԱՑԻՔ | 1 |
| ԿԻՒՐՊՈՍ | 1 | ԿԻՒՐՈՍ | 4 | ԿԼԱՅԻՍ | 1 | ԿԼԱՅԵՑԻ | 1 |
| ԿԼԱՆԵՄ | 5 | ԿԼԱՓՆ | 3 | ԿԼԵՄ | 1 | ԿԼՕԴԻԱՆՈՍ | 1 |
| ԿԾԿԵՄ | 6 | ԿՂԵՄ, ԿՂԷՄ | 3 | ԿՂՁԻ | 2 | ԿՂԷՈՊԵԱՆՑ | 2 |
| ԿՃՂԱԿ | 3 | ԿՆԱՏ | 3 | ԿՆԴՐՈՒԿ | 3 | ԿՆԻՔ | 26 |
| ԿՆԿՈՒՂ (տ. ԿՆԳՈՒՂ) | 2 | ԿՆՃԻՌՆ | 1 | ԿՆՈՒՆՔ | 2 | ԿՆՁԻԹ (տ. ԿՆՃԻԹ) | 1 |
| ԿՆՏՈՒԹԻՒՆ | 1 | ԿՆՔԱՀԱՅՐ | 6 | ԿՆՔԱՄԱՅՐ | 2 | ԿՆՔԵՄ | 27 |
| ԿՇԵՌ (տ. ԿՇԻՌ) | 1 | ԿՇԻՌ | 32 | ԿՇՌԱՊԷՍ | 2 | ԿՇՌԵՄ | 7 |
| ԿՇՌՈՂԱԿԱՆ | 1 | ԿՇՌՈՐԴ | 1 | ԿՇՏԱՄԲԵՄ | 1 | ԿՇՏԱՄԲՈՒԹԻՒՆ | 1 |
| ԿՇՏՈՒՄՆ | 1 | ԿՈԹ | 1 | ԿՈԹՈՂ | 1 | ԿՈԽԱՆ | 1 |
| ԿՈԽԱՆ ԱՌՆԵԼ, ԼԻՆԵԼ | 3 | ԿՈԽԱՆ ՏԱԼ | 2 | ԿՈԽԵՄ, ԿՈԽԱՆԵՄ | 20 | ԿՈԾ | 2 |
| ԿՈԾԻՄ | 1 | ԿՈԿ | 1 | ԿՈԿՈՆ | 1 | ԿՈԿՈՐԴԵԼՈՍ | 2 |
| ԿՈՂ | 34 | ԿՈՂԱԲՈՅՍ | 1 | ԿՈՂԱԾԻՆ | 1 | ԿՈՂԱՀՈՍ | 1 |
| ԿՈՂԵՂ | 1 | ԿՈՂԵՐՔ (տ. ԿՈՂՐ) | 1 | ԿՈՂՄԱԿԱԼ (Ք) | 1 | ԿՈՂՄԱՆԻՄ | 1 |
| ԿՈՂՄԱՒՈՐ | 1 | ԿՈՂՄՆ | 130 | ԿՈՂՄՆԱՒՈՐ | 5 | ԿՈՂՈՊՏԵՄ | 5 |
| ԿՈՂՈՊՏՈՒՄՆ | 1 | ԿՈՂՈՍԱՑԻ (Ս.Գրքի մաս) | 7 | ԿՈՅՍ | 219 | ԿՈՅՐ | 18 |
| ԿՈՆԴԱԿ | 1 | ԿՈՆՔ | 1 | ԿՈՆՔԵՌ | 1 | ԿՈՆՔԻԼՈՍ | 1 |
| ԿՈՇԿՈՃԵՄ | 1 | ԿՈՇՏԱՒՈՐ | 1 | ԿՈՉԵՄ | 545 | ԿՈՉԵՑԵԱԼ | 12 |
| ԿՈՉՆԱԿ | 1 | ԿՈՉՆԱԿԱՆ | 1 | ԿՈՉՈՒՄՆ | 33 | ԿՈՊԱՐ | 2 |
| ԿՈՊԻՏ | 1 | ԿՈՍՏԱՆԴԻՆ | 3 | ԿՈՍՏԱՆԴԻԱՆՈՍ | 3 | ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՕԼԻՍ | 13 |
| ԿՈՍՏԱՍ | 1 | ԿՈՏՈՐԵՄ | 20 | ԿՈՏՈՐՈՒՄՆ | 1 | ԿՈՐ | 2 |
| ԿՈՐԱԳԼՈՒԽ | 2 | ԿՈՐԱԿՆԵԼ | 1 | ԿՈՐԱՆԱՄ | 3 | ԿՈՐԴՒԱՑ ԼԵԱՌՆ | 1 |
| ԿՈՐԵԱԿ | 1 | ԿՈՐԶԵՄ | 6 | ԿՈՐԻԶ | 1 | ԿՈՐԻՒՆ | 1 |
| ԿՈՐԻՒՆ (անձնանուն) | 1 | ԿՈՐԽ | 6 | ԿՈՐԽԱՑԻՔ | 5 | ԿՈՐԾԱՆԵՄ | 38 |
| ԿՈՐԾԱՆՈՒՄՆ | 8 | ԿՈՐՆԹԱՑԻ (Ս. Գրքի մաս) | 16 | ԿՈՐՆՉԻՄ | 47 | ԿՈՐՈՎԱԼԻՑ | 1 |
| ԿՈՐՈՒՍԱՆԵՄ | 74 | ԿՈՐՈՒՍԻՉ | 3 | ԿՈՐՈՒՍՏ | 25 | ԿՈՐՍՏԱԿԱՆ | 3 |
| ԿՈՒ (բայական մասնիկ) | 7 | ԿՈՒԶ | 1 | ԿՈՒԺ | 3 | ԿՈՒՄԻՏԱՍ | 1 |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| ԿՈՒՇՏ | 4 | ԿՈՒՊՐ | 3 | ԿՈՒՌ | 1 | ԿՈՒՌՆ | 1 |
| ԿՈՒՌՆԵԼԻՈՍ | 1 | ԿՈՒՌՔ | 29 | ԿՈՒՍԱԲԵՐ | 1 | ԿՈՒՍԱԾԻՆ | 3 |
| ԿՈՒՍԱԿԱՆ | 14 | ԿՈՒՍԱՆ | 21 | ԿՈՒՍՈՒԹԻՒՆ | 55 | ԿՈՒՏԵՄ | 2 |
| ԿՈՒՐ | 1 | ԿՈՒՐԱՆԱՄ | 5 | ԿՈՒՐԱՑՈՒՑԱՆԵՄ | 2 | ԿՈՒՐԾՔ | 5 |
| ԿՈՒՐՈՒԹԻՒՆ | 7 | ԿՈՓԵՄ | 2 | ԿՌԱՄՈԼ | 1 | ԿՌԱՄՈԼՈՒԹԻՒՆ | 2 |
| ԿՌԱՇՈՒՐԹՆ | 1 | ԿՌԱՊԱՇՏ | 6 | ԿՌԱՊԱՇՏՈՒԹԻՒՆ | 9 | ԿՌԱՊԱՐԻՇՏ (տ. ԿՌԱՊԱՇՏ) | 1 |
| ԿՌԻՉՔ | 1 | ԿՌԻՒ | 1 | ԿՌՕՆՈՍ | 2 | ԿՌՈՒԻՄ | 5 |
| ԿՍԿԻԾ | 8 | ԿՍԿԾԵՑՈՒՑԱՆԵՄ | 1 | ԿՍԿԾԻՄ | 3 | ԿՍԿԾՈՏ | 1 |
| ԿՏԱԿ | 19 | ԿՏԱԿԱՐԱՆ | 12 | ԿՏԱՒ | 11 | ԿՏՈՒՑ | 1 |
| ԿՏՐԵՄ | 9 | ԿՐԱԿ | 1 | ԿՐԱԿԱՆ | 4 | ԿՐԱԿԵԱՂ | 1 |
| ԿՐԵՄ | 136 | ԿՐԷԱՏԱՑԻ | 2 | ԿՐԹԵՄ | 10 | ԿՐԹՈՒԹԻՒՆ | 7 |
| ԿՐԻԱՅ (տ. ԿՐԱՅ) | 1 | ԿՐԻՏԷՍ | 1 | ԿՐԿԻՆ | 318 | ԿՐԿԻՆ ԱՆԳԱՄ | 15 |
| ԿՐԿՆԱԿԻ | 10 | ԿՐԿՆԱՊԱՏԻԿ | 3 | ԿՐԿՆԱՊԱՏԿԵՄ | 1 | ԿՐԿՆԵՄ | 32 |
| ԿՐԿՆՈՑ | 2 | ԿՐԿՈՒՏ | 1 | ԿՐՃԱՏ | 1 | ԿՐՃԵՄ | 7 |
| ԿՐՃՏԵՄ | 1 | ԿՐՈՒԿՆ | 2 | ԿՐՏՍԵՐ | 27 | ԿՐՕՆ(Ք) | 8 |
| ԿՐՕՆԱՒՈՐ | 17 | ԿՐՕՆԱՒՈՐՈՒԹԻՒՆ | 4 | ԿՑԵՄ | 2 | ԿՑԿՑԵՄ | 2 |
| ԿՑՈՂԱԿԱՆ | 1 | ԿՑՈՐԴ | 9 | ԿՑՈՐԴԵՄ | 5 | ԿՑՈՐԴՈՒԹԻՒՆ | 1 |
| ԿՕՇԻԿ | 9 | | | | | | |

## Հ

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| Հ (հո կամ հոյ) | 1 | ՀԱԶԱՐԱՄԵԱՅ | 4 | ՀԱԶԱՐԱՊԵՏ | 2 | ՀԱԶԱՐԱՒՈՐ | 1 |
| ՀԱԶԱՐԵԱԿ | 1 | ՀԱԶԱՐ ԵՒ ՉՈՐՍ ՀԱՐԻՒՐ | 1 | ՀԱԶԻՄԱԹ | 1 | ՀԱԶԻՒ | 5 |
| ՀԱԼԱԼ | 2 | ՀԱԼԱԾԱԿԱՆ (ԼԻՆԵԼ) | 1 | ՀԱԼԱԾԱՆՔ | 1 | ՀԱԼԱԾԵՄ | 22 |
| ՀԱԼԱԾԻՉ | 2 | ՀԱԼԱԾՈՒ | 1 | ՀԱԼԱԾՈՒՄՆ | 1 | ՀԱԼԵՄ | 27 |
| ՀԱԼՈՂԱԿԱՆ | 3 | ՀԱԼՈՑ | 2 | ՀԱԿԱԴԱՐՁԻՄ | 8 | ՀԱԿԱԴՐՈՒԹԻՒՆ | 1 |
| ՀԱԿԱԿԱՅ | 15 | ՀԱԿԱԿԱՅԻՄ | 2 | ՀԱԿԱԿԱՅՈՒԹԻՒՆ | 1 | ՀԱԿԱՃԱՌՈՒԹԻՒՆ | 1 |
| ՀԱԿԱՌԱԿ | 84 | ՀԱԿԱՌԱԿԱՍԻՐՈՒԹԻՒՆ | 2 | ՀԱԿԱՌԱԿԱՏԻՊ | 1 | ՀԱԿԱՌԱԿԻՄ | 30 |
| ՀԱԿԱՌԱԿՈՐԴ | 3 | ՀԱԿԱՌԱԿՈՒԹԻՒՆ | 8 | ՀԱԿԱՍԱԿԱՆ | 1 | ՀԱԿԱՍՈՒԹԻՒՆ | 2 |
| ՀԱԿԵՄ | 6 | ՀԱՂԲԱՏ | 1 | ՀԱՂՈՐԴ | 7 | ՀԱՂՈՐԴԱԴՐԱՄ | 1 |
| ՀԱՂՈՐԴԱԿԱՆ | 1 | ՀԱՂՈՐԴԱԿԻՑ | 1 | ՀԱՂՈՐԴԻՄ | 60 | ՀԱՂՈՐԴՈՒԹԻՒՆ | 27 |
| ՀԱՃԵԼԻ | 2 | ՀԱՃԻՄ | 7 | ՀԱՃՈՅ | 19 | ՀԱՃՈՅ ԹՈՒԻ | 2 |
| ՀԱՃՈՅԱԿԱՆ | 2 | ՀԱՃՈՅԱՆԱՄ | 1 | ՀԱՃՈՅՈՒԹԻՒՆ | 1 | ՀԱՃՈՒԹԻՒՆ | 5 |
| ՀԱՄ | 30 | ՀԱՄԱԲՆԱԿ | 1 | ՀԱՄԱԲՈՒՆ | 3 | ՀԱՄԱԳՈՅ | 5 |
| ՀԱՄԱԳՈՅՈՒԹԻՒՆ | 1 | ՀԱՄԱԳՈՒՄԱՐ | 1 | ՀԱՄԱԶԳԻ | 1 | ՀԱՄԱԶՈՒԳԵԱԼ | 2 |
| ՀԱՄԱԶՈՒԳՈՒԹԻՒՆ | 1 | ՀԱՄԱԶՕՐՈՒԹԻՒՆ | 1 | ՀԱՄԱԺԱՌԱՆԳ | 1 | ՀԱՄԱԽՈՀ | 3 |
| ՀԱՄԱԿ | 1 | ՀԱՄԱԿԱՄ | 2 | ՀԱՄԱԿԱՄՈՒԹԻՒՆ | 1 | ՀԱՄԱԿԱՐԳ | 14 |
| ՀԱՄԱԿԱՐԳԱՊԷՍ | 1 | ՀԱՄԱՀԱՅՐ | 1 | ՀԱՄԱՀԱՍԱԿ | 3 | ՀԱՄԱՀԱՒԱՍԱՐՈՒԹԻՒՆ | 1 |
| ՀԱՄԱՀԱՒԱՍԱՐ | 4 | ՀԱՄԱՀԵՏԵՒԻՄ | 1 | ՀԱՄԱՀՈՂ | 1 | ՀԱՄԱՁԱՅՆ | 13 |
| ՀԱՄԱՁԱՅՆԵԼԻ | 1 | ՀԱՄԱՁԱՅՆԻՄ | 14 | ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹԻՒՆ | 3 | ՀԱՄԱՁԵՒԱՆԱՄ | 1 |
| ՀԱՄԱՄԱՅՐ | 1 | ՀԱՄԱՅՆ | 4 | ՀԱՄԱՆԳԱՄԱՅՆ | 58 | ՀԱՄԱՆԻՒԹ | 2 |
| ՀԱՄԱՆՄԱՆ | 5 | ՀԱՄԱՆՄԱՆՈՒԹԻՒՆ | 4 | ՀԱՄԱՇԽԱՐՀԱԿԱՆ | 1 | ՀԱՄԱՇՈՒՆՉ | 1 |
| ՀԱՄԱՊԱՅԾԱՌ | 1 | ՀԱՄԱՊԱՏԻՒ | 3 | ՀԱՄԱՌՕՏ | 6 | ՀԱՄԱՌՕՏԵՄ | 1 |
| ՀԱՄԱՍԵՌ | 2 | ՀԱՄԱՏԱՐԱԾ | 1 | ՀԱՄԱՏԵՍԱԿ | 2 | ՀԱՄԱՏԻՊ | 1 |
| ՀԱՄԱՐ | 95 | ՀԱՄԱՐԻՄ | 37 | ՀԱՄԱՐԻՄ (թվարկել, հաշվել) | 11 | ՀԱՄԱՐՁԱԿ | 5 |
| ՀԱՄԱՐՁԱԿԻՄ | 6 | ՀԱՄԱՐՁԱԿՈՒԹԻՒՆ | 4 | ՀԱՄԱՑԵՂ | 1 | ՀԱՄԱՓԱՌ | 1 |
| ՀԱՄԲԱՌՆԱՄ | 29 | ՀԱՄԲԱՐՁՈՒՄՆ | 27 | ՀԱՄԲԱՒ | 1 | ՀԱՄԲԱՒԵՄ | 17 |
| ՀԱՄԲԵՐԵՄ | 12 | ՀԱՄԲԵՐՈՒԹԻՒՆ | 25 | ՀԱՄԲԵՐՈՂ | 3 | ՀԱՄԲՈՅՐ | 3 |
| ՀԱՄԲՈՒՐԵԼԻ | 1 | ՀԱՄԲՈՒՐԵՄ | 8 | ՀԱՄԵՂ | 1 | ՀԱՄԵՂԱԿԱՆ | 1 |
| ՀԱՄԵՄԱՏԱԲԱՐ | 2 | ՀԱՄԵՄԱՏԱՊԷՍ | 1 | ՀԱՄԵՄԱՏԵՄ | 16 | ՀԱՄԵՄԱՏՈՒԹԻՒՆ | 8 |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| ՀԱՄԵՄԵՄ | 4 | ՀԱՄԵՍՏ | 3 | ՀԱՄԵՍՏՈՒԹԻՒՆ | 7 | ՀԱՄԸՆԹԱՑ | 5 |
| ՀԱՄԻՇԽԱՆ | 1 | ՀԱՄՐ | 3 | ՀԱՅ | 72 | ՀԱՅՈՑ ԼԵԶՈՒ | 1 |
| ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՔ | 3 | ՀԱՅԵԼԻ | 12 | ՀԱՅԵՑԱՐԱՏ | 1 | ՀԱՅԵՑՈՂՈՒԹԻՒՆ | 1 |
| ՀԱՅԵՑՈՒՄՆ | 2 | ՀԱՅԹԱՅԹԵՄ | 1 | ՀԱՅԻՄ | 41 | ՀԱՅԿ | 2 |
| ՀԱՅԿԱԶՆԵԱՆ | 1 | ՀԱՅԿԱԶԵԱՆ ՏՕՄԱՐ | 2 | ՀԱՅՀՈՅԵՄ | 6 | ՀԱՅՀՈՅԻՉ | 5 |
| ՀԱՅՀՈՅՈՒԹԻՒՆ | 10 | ՀԱՅՐ | 731 | ՀԱՅՐ ԱՍՏՈՒԱԾ | 24 | ՀԱՅՐ ԵՒ ՈՐԴԻ ԵՒ ՀՈԳԻ ՍՈՒՐԲ | 13 |
| ՀԱՅՐԱԶԵՂԾ | 2 | ՀԱՅՐԱԿԱՆ | 6 | ՀԱՅՐԱՆԱԼ | 1 | ՀԱՅՐԱՇԱՐԺ | 1 |
| ՀԱՅՐԱՊԵՏ | 27 | ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ | 2 | ՀԱՅՐԱՊԵՏՈՒԹԻՒՆ | 3 | ՀԱՅՐԵՆԻ | 9 |
| ՀԱՅՐՈՒԹԻՒՆ | 4 | ՀԱՅՑԵՄ | 3 | ՀԱՅՑՈՒԱԾ(Ք) | 1 | ՀԱՆԱՊԱԶ | 36 |
| ՀԱՆԱՊԱԶՈՐԴ | 16 | ՀԱՆԱՊԱԶՈՐԴԵԱՆ | 1 | ՀԱՆԳԱՄԱՆՔ | 1 | ՀԱՆԳԻՍՏ | 98 |
| ՀԱՆԳՈՅՆ | 5 | ՀԱՆԳՈՒՑԱՆԵՄ | 4 | ՀԱՆԳՈՒՑԵԱԼ | 11 | ՀԱՆԳՉԻՄ | 45 |
| ՀԱՆԳՍՏԱՐԱՆ | 1 | ՀԱՆԳՐՈՒԱՆ | 2 | ՀԱՆԴԱՐՏ | 4 | ՀԱՆԴԱՐՏԵՄ | 1 |
| ՀԱՆԴԵՐՁ | 47 | ՀԱՆԴԵՐՁ (կապ) | 20 | ՀԱՆԴԵՐՁԵԱԼ | 138 | ՀԱՆԴԷՊ | 2 |
| ՀԱՆԴԷՍ | 14 | ՀԱՆԴԻՊԻՄ | 38 | ՀԱՆԴԻՊՈՂ | 1 | ՀԱՆԴԻՊՈՒՄՆ | 1 |
| ՀԱՆԵՄ | 115 | ՀԱՆՃԱՐ | 43 | ՀԱՆՃԱՐԵՂ | 1 | ՀԱՆՃԱՐԵՂՈՒԹԻՒՆ | 2 |
| ՀԱՆՈՒՄՆ | 2 | ՀԱՆՈՒՐ | 4 | ՀԱՇԵՄ | 1 | ՀԱՇԻՒ | 1 |
| ՀԱՇՏԵՄ | 1 | ՀԱՇՏԱՐԱՐ | 1 | ՀԱՇՏԵՑՈՒՑԱՆԵՄ | 6 | ՀԱՇՏԻՄ | 6 |
| ՀԱՇՏՈՒԹԻՒՆ | 8 | ՀԱՊԱՇԻ | 1 | ՀԱՌԱՉԱՆՔ | 2 | ՀԱՌԱՉՈՒՄՆ | 2 |
| ՀԱՍ | 4 | ՀԱՍԱԿ | 90 | ՀԱՍԱԿԱՆ | 1 | ՀԱՍԱՆԵԼԻ | 1 |
| ՀԱՍԱՆԵՄ | 85 | ՀԱՍԱՐԱԿ | 167 | ՀԱՍԱՐԱԿԱԲԱՐ | 3 | ՀԱՍԱՐԱԿԱԾ | 3 |
| ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ | 2 | ՀԱՍԱՐԱԿԱՊԷՍ | 1 | ՀԱՍԱՐԱԿԱՑ | 27 | ՀԱՍԱՐԱԿԵՄ | 2 |
| ՀԱՍԱՐԱԿՈՒԹԻՒՆ | 20 | ՀԱՍԿ | 4 | ՀԱՍԿԱՆԱՄ | 2 | ՀԱՍՈՂՈՒԹԻՒՆ | 1 |
| ՀԱՍՈՅԹ | 1 | ՀԱՍՈՒ | 2 | ՀԱՍՈՒՄՆ | 4 | ՀԱՍՈՒՆ | 2 |
| ՀԱՍՈՒՑԱՆԵՄ | 7 | ՀԱՍՏ | 3 | ՀԱՍՏԱԿՈՂ | 1 | ՀԱՍՏԱՀԻՄՆ | 1 |
| ՀԱՍՏԱՏ | 22 | ՀԱՍՏԱՏԱԳՈՅՆ | 1 | ՀԱՍՏԱՏԱՊԷՍ | 3 | ՀԱՍՏԱՏԵՄ | 106 |
| ՀԱՍՏԱՏՈՒԹԻՒՆ | 31 | ՀԱՍՏԱՏՈՒՆ | 10 | ՀԱՍՏԵԼԻ | 1 | ՀԱՍՏԵՄ | 1 |
| ՀԱՍՏԻՉ | 1 | ՀԱՏ | 17 | ՀԱՏԱՆԵԼԻ | 1 | ՀԱՏԱՆԵՄ | 52 |
| ՀԱՏԵԱԼՆ | 3 | ՀԱՏՈՐ | 13 | ՀԱՏՈՒ | 1 | ՀԱՏՈՒՄՆ | 13 |
| ՀԱՏՈՒՑԱՆԵՄ | 42 | ՀԱՏՈՒՑՈՒՄՆ | 96 | ՀԱՐԱԶԱՏ | 9 | ՀԱՐԱՇԱՐԺ (տ. ՀԱՅՐԱՇԱՐԺ) | 1 |
| ՀԱՐԱՒ | 39 | ՀԱՐԱՒԱԿՈՂՄՆ | 1 | ՀԱՐԱՒԱՅԻՆ | 5 | ՀԱՐԹ | 1 |
| ՀԱՐԹԵՄ | 1 | ՀԱՐԻՒՐԱՄԵԱՆ | 1 | ՀԱՐԻՒՐԱՊԱՏԻԿ | 1 | ՀԱՐԻՒՐԱՒՈՐ | 10 |
| ՀԱՐԻՒՐԵԱԿ | 2 | ՀԱՐԻՒՐԵՐՈՐԴ | 1 | ՀԱՐԻՒՐՈՐԴ | 1 | ՀԱՐԿ | 60 |
| ՀԱՐԿ ԱՌՆԵԼ | 5 | Ի ՀԱՐԿԷ, ՀԱՐԿԻՒ | 72 | ՀԱՐԿԱՆԵՄ | 50 | ՀԱՐԿԱՆՈՒՄՆ | 2 |
| ՀԱՐԿԱՆՈՂ | 1 | ՀԱՐԿԱՏՈՒ | 1 | ՀԱՐԿԱՒՈՐ | 49 | ՀԱՐԿԱՒՈՐԵՄ | 1 |
| ՀԱՐԿԵՄ | 2 | ՀԱՐՃ | 5 | ՀԱՐՃՈՐԴԻ | 1 | ՀԱՐՈՒԱԾ | 29 |
| ՀԱՐՈՒԱԾԵՄ | 1 | ՀԱՐՍԱՆԻՔ | 14 | ՀԱՐՍՆ | 40 | ՀԱՐՍՆԱԾՈՒ | 2 |
| ՀԱՐՍՆԱՆԱՄ | 2 | ՀԱՐՍՆԱՑՈՒՑԱՆԵՄ | 1 | ՀԱՐՍՆՈՒԹԻՒՆ | 1 | ՀԱՐՍՏԱՀԱՐԵՄ | 5 |
| ՀԱՐՍՏԱՆԱՄ | 1 | ՀԱՐՑԱՆԵԼԻ | 4 | ՀԱՐՑԱՆԵՄ | 75 | ՀԱՐՑԱՓՈՐՁԵՄ | 1 |
| ՀԱՐՑԱՓՈՐՁՈՒԹԻՒՆ | 1 | ՀԱՐՑԱՔՆՆԵԼԻ | 1 | ՀԱՐՑՆ | 12 | ՀԱՐՑՈՒԱԾ | 1 |
| ՀԱՐՑՈՒԿ | 1 | ՀԱՐՑՈՒՄՆ | 66 | ՀԱՑ | 119 | ՀԱՑԵՐԷՑ | 1 |
| ՀԱՑԻ | 2 | ՀԱՑՏՈՒ | 1 | ՀԱՒ | 23 | ՀԱՒԱԽՕՍ | 4 |
| ՀԱՒԱՆ | 1 | ՀԱՒԱՆԱԿԱՆ | 3 | ՀԱՒԱՆԵԼԻ | 3 | ՀԱՒԱՆԻ | 1 |
| ՀԱՒԱՆԻՄ | 32 | ՀԱՒԱՆՈՒԹԻՒՆ | 8 | ՀԱՒԱՆՈՒՄՆ | 2 | ՀԱՒԱՍԱՐ | 106 |
| ՀԱՒԱՍԱՐԱԿՇԻՌ | 1 | ՀԱՒԱՍԱՐԱՉԱՓ | 1 | ՀԱՒԱՍԱՐԱՊԱՏԻՒ | 1 | ՀԱՒԱՍԱՐԱՊԷՍ | 6 |
| ՀԱՒԱՍԱՐԵՄ | 42 | ՀԱՒԱՍԱՐԵՑՈՒՑԱՆԵՄ | 1 | ՀԱՒԱՍԱՐՈՒԹԻՒՆ | 19 | ՀԱՒԱՍՏԵՄ | 2 |
| ՀԱՒԱՍՏԻ | 1 | ՀԱՒԱՏ, ՀԱՒԱՏՔ | 365 | ՀԱՒԱՏԱԼԻ | 7 | ՀԱՒԱՏԱՄ | 69 |
| ՀԱՒԱՏԱՄՔ | 3 | ՀԱՒԱՏԱՐԻՄ | 15 | ՀԱՒԱՏԱՐՄՈՒԹԻՒՆ | 1 | ՀԱՒԱՏԱՑԵԱԼ | 101 |
| ՀԱՒԱՏԱՑՈՒՑԱՆԵՄ | 1 | ՀԱՒԱՏԱՒՈՐ | 1 | ՀԱՒԱՔԵՄ | 9 | ՀԱՒԱՔԻՉ | 1 |
| ՀԱՒԱՔՈՒՄՆ | 1 | ՀԱՒԿՈՒԻՉՔ | 2 | ՀԵԳ | 2 | ՀԵԶ | 14 |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| ՀԵԶՈՒԹԻՒՆ | 8 | ՀԵԹԱՆՈՍ | 85 | ՀԵԹԱՆՈՍԱԿԱՆ | 1 | ՀԵԼԼԵՆ | 1 |
| ՀԵԼԼԵՆԱՑԻ | 1 | ՀԵԾԵԱԼ | 6 | ՀԵԾԵԾԱՆՔ | 1 | ՀԵԾԵՄ | 1 |
| ՀԵԾՈՒԹԻՒՆ | 3 | ՀԵՂԳ | 2 | ՀԵՂԳՈՒԹԻՒՆ | 3 | ՀԵՂԵՂ | 5 |
| ՀԵՂԵՂԱՏ | 2 | ՀԵՂԻ | 6 | ՀԵՂԻՆԷ | 1 | ՀԵՂՁԱԿԱՆ | 1 |
| ՀԵՂՁՈՒՄ | 5 | ՀԵՂՁՈՒՑԱՆԵՄ | 1 | ՀԵՂՁՈՒՑԵԱԼ | 7 | ՀԵՂՈՒԿ | 4 |
| ՀԵՂՈՒՄ | 41 | ՀԵՂՈՒՄՆ | 8 | ՀԵՇՏ | 8 | ՀԵՇՏԱԼԻ | 8 |
| ՀԵՇՏԱԽՏՈՒԹԻՒՆ | 2 | ՀԵՇՏԱՆԱՄ | 28 | ՀԵՇՏԱՍԷՐ | 1 | ՀԵՇՏՈՒԹԻՒՆ | 38 |
| ՀԵՌ | 2 | ՀԵՌԱԳՈՅՆ | 2 | ՀԵՌԱՆԱՄ | 35 | ՀԵՌԱՍՏԱՆ | 6 |
| ՀԵՌԱՑՈՒՄՆ | 3 | ՀԵՌԱՑՈՒՑԱՆԵՄ | 1 | ՀԵՌԱՒՈՐ | 14 | ՀԵՌԱՒՈՐՈՒԹԻՒՆ | 2 |
| ՀԵՌԻ | 20 | ՀԵՌՈՒ | 10 | ՀԵՌՈՒՍՏ | 7 | ՀԵՏ(Ք) | 29 |
| ՀԵՏԱԳԱՅ | 2 | ՀԵՏԱՁՕՏԵՄ | 1 | ՀԵՏԵՒԱԲԱՐ | 1 | ՀԵՏԵՒԱՆՔ | 2 |
| ՀԵՏԵՒԵԼԻ | 1 | ՀԵՏԵՒԻՄ | 87 | ՀԵՏԵՒԵՑՈՒՑԱՆԵՄ | 1 | ՀԵՏԵՒՈՂ, ՀԵՏԵՒՕՂ | 13 |
| ՀԵՏԷ | 3 | ՅԱՅՆՄ ՀԵՏԷ | 2 | ՅԱՅՍՄ ՀԵՏԷ | 1 | ՎԱՂՈՒՑ ՀԵՏԷ | 1 |
| ՀԵՏԻՈՏ | 1 | ՀԵՐ | 15 | ՀԵՐԱԿԼ | 2 | ՀԵՐԱՏՈՒԿ | 1 |
| ՀԵՐԵՏԻԿՈՍ | 2 | ՀԵՐՁԵՄ | 5 | ՀԵՐՁԱՍԻՐՈՒԹԻՒՆ | 1 | ՀԵՐՁՈՒԱԾ | 15 |
| ՀԵՐՁՈՒԱԾՈՂ | 39 | ՀԵՐՈՎԴԷՍ | 8 | ՀԵՐՔ | 3 | ՀԵՐՔԵՄ | 3 |
| ՀԵՐՔԻՉ | 1 | ՀԵՐՔՈՒՄՆ | 1 | ՀԶՕՐ | 39 | ՀԶՕՐԱԳՈՅՆ | 1 |
| ՀԶՕՐԱՆԱՄ | 1 | ՀԻԱՆԱՄ | 2 | ՀԻԱՑԱԿԱՆ | 1 | ՀԻՄՆ | 39 |
| ՀԻՄՆԱՐԿԵՄ | 1 | ՀԻՄՆԱՐԿՈՒԹԻՒՆ | 2 | ՀԻՄՆԵՄ | 1 | ՀԻՆ | 147 |
| ՀԻՆ ԱՒՈՒՐՑ | 12 | ՀԻՆ ԿՏԱԿԱՐԱՆ | 6 | ՀԻՆԳՇԱԲԱԹԻ, ՀԻՆԳՇԱԲԱԹ | 3 | ՀԻՆԳՊԱՏ (ՀՆԳԱՊԱՏԻԿ) | 1 |
| ՀԻՆԳՕՐԵԱՅ | 1 | ՀԻՐԻԿ | 1 | ՀԻՒԱՆԴ | 24 | ՀԻՒԱՆԴԱՆԱՄ | 6 |
| ՀԻՒԱՆԴՈՒԹԻՒՆ | 47 | ՀԻՒԹ | 30 | ՀԻՒՍԵՄ | 1 | ՀԻՒՍԻՍ | 28 |
| ՀԻՒՍԻՍԱՅԻՆ | 5 | ՀԻՒՍՆ | 1 | ՀԻՒՍՆԱԿԱՆ | 1 | ՀԻՒՍՆԵՄ | 2 |
| ՀԻՒՐ | 4 | ՀԻՒՐԿԱՆՈՍ | 2 | ՀՄԱԿԵՐ | 1 | ՀՄԱՅ | 2 |
| ՀՄԱՅԵՄ | 1 | ՀՄԱՅՈՒԹԻՒՆ | 1 | ՀՄՈՒՏ | 2 | ՀՄՏԱՆԱՄ | 1 |
| ՀՄՏՈՒԹԻՒՆ | 2 | ՀՆԱԶԱՆԴ | 16 | ՀՆԱԶԱՆԴ ԱՌՆԵԼ և ԼԻՆԵԼ | 3 | ՀՆԱԶԱՆԴԱՊԷՍ | 1 |
| ՀՆԱԶԱՆԴԵՑՈՒՑԱՆԵՄ | 2 | ՀՆԱԶԱՆԴԻՄ | 45 | ՀՆԱԶԱՆԴՈՒԹԻՒՆ | 20 | ՀՆԱՆԱՄ | 4 |
| ՀՆԱՐ(Ք) | 29 | ՀՆԱՐԱԳԷՏ | 1 | ՀՆԱՐԱՒՈՐ | 7 | ՀՆԱՐԻՄ | 3 |
| ՀՆԱՐՕՂ | 1 | ՀՆԳԵԿԻՆ | 1 | ՀՆԴԻԿ | 9 | ՀՆԴԿԱԿԱՆ, ՀՆԴԿԱՅԻՆ | 1 |
| ՀՆԴԿԱՑԻ | 1 | ՀՆՁԱՆ | 25 | ՀՆՁԵՄ | 4 | ՀՆՈՑ | 3 |
| ՀՆՈՒԹԻՒՆ | 1 | ՀՆՉԵՄ | 17 | ՀՆՉԵՑՈՒՑԱՆԵՄ | 2 | ՀՆՉՈՒՄՆ | 8 |
| ՀՈԳ | 5 | ՀՈԳ ՏԱՆԵԼ | 2 | ՀՈԳԱԲԱՐՁՈՒԹԻՒՆ | 2 | ՀՈԳԱՄ | 4 |
| ՀՈԳԵԼԻՑ | 1 | ՀՈԳԵԽԱՌՆԵԼ | 1 | ՀՈԳԵԿԱՆ (ՀՈԳԷԿԱՆ) | 14 | ՀՈԳԷՄԱՐՏ | 4 |
| ՀՈԳԵՆՈՒԱԳ | 1 | ՀՈԳԵՊԷՍ կմ ՀՈԳԷՊԷՍ | 11 | ՀՈԳԵՎԱՐ (ՀՈԳԷՎԱՐ) | 1 | ՀՈԳԵՒՈՐ | 126 |
| ՀՈԳԵՒՈՐԱԿԱՆ | 1 | ՀՈԳԵՒՈՐԱՊԷՍ | 6 | ՀՈԳԵՒՈՐԻՄ | 3 | ՀՈԳԷԳԱԼՈՒՍՏ | 1 |
| ՀՈԳԻ | 1650 | ՀՈԳԻ ԱՍՏՈՒԱԾ | 3 | ՀՈԳԻԱՑՈՒՑԱՆԵՄ | 1 | ՀՈԼԱԹԵՒ | 1 |
| ՀՈԼԱԹԵՒԵԱՆ | 1 | ՀՈԼԱՆԵՄ | 1 | ՀՈԼԱՆԻ | 3 | ՀՈԼՈՆԵԼ | 1 |
| ՀՈԼՈՎ | 3 | ՀՈԼՈՎԱԿԱՆ | 2 | ՀՈԼՈՎԵՄ | 3 | ՀՈԼՈՎՈՒՄՆ | 1 |
| ՀՈԿՏԵՄԲԵՐ | 2 | ՀՈՂ | 133 | ՀՈՂԱԹԱՓ | 1 | ՀՈՂԱԾԻՆ | 1 |
| ՀՈՂԱԿԵՐ | 1 | ՀՈՂԱՆԱՄ | 3 | ՀՈՂԱՑՈՒՑԱՆԵՄ | 1 | ՀՈՂԵՂԷՆ | 6 |
| ՀՈՂՄ | 53 | ՀՈՂՄԱՅՈՒՆ | 1 | ՀՈՂՄԱՅԻՆ | 1 | ՀՈՄԱՆԻ | 1 |
| ՀՈՄԱՆԻՒԹ | 1 | ՀՈՄԱՆՈՒՆ | 34 | ՀՈՄԱՆՈՒՆԱԲԱՐ | 2 | ՀՈՄԱՆՈՒՆՈՒԹԻՒՆ | 1 |
| ՀՈՄԱՑԵՂ | 1 | ՀՈՄԵՐՈՆ (ՀՈՄԵՐՈՍ) | 1 | ՀՈՆ | 2 | ՀՈՌԻ | 3 |
| ՀՈՌՈՄ | 4 | ՀՈՍԱԿԱՆ | 2 | ՀՈՍԱՆՈՒՏ | 1 | ՀՈՍԱՆՔ | 2 |
| ՀՈՍԵՄ | 21 | ՀՈՍՈՒՄՆ | 6 | ՀՈՎ | 18 | ՀՈՎԱՆԱՄ | 2 |
| ՀՈՎԱՆԱՒՈՐ | 2 | ՀՈՎԱՆԻ | 13 | ՀՈՎԱՆԻ ԼԻՆԵԼ, ՀՈՎԱՆԻ ՈՒՆԵԼ | 2 | ՀՈՎԱՑՈՒՑԱՆԵՄ | 1 |
| ՀՈՎԻՏ | 3 | ՀՈՎԻՒ | 11 | ՀՈՎՈՒԱԿԱՆ | 2 | ՀՈՎՈՒԵՄ | 3 |
| ՀՈՎՈՒԹԻՒՆ | 2 | ՀՈՎՈՒՈՒԹԻՒՆ | 2 | ՀՈՏ | 50 | ՀՈՏԱԾ | 3 |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| ՀՈՏԵՄ | 6 | ՀՈՏՈՏԵԼԻՔ | 10 | ՀՈՏՈՏԻՄ | 3 | ՀՈՐԵՄ | 1 |
| ՀՈՒՄ | 1 | ՀՈՒՆԱՒՈՐ (չափավոր) | 2 | ՀՈՒՆԱՒՈՐԵԱԼ | 1 | ՀՈՒՆՁՔ | 7 |
| ՀՈՒՊ | 6 | ՀՈՒՍԿ ՅԵՏԻՆ, ՀՈՒՍԿ ՅԵՏՈՅ | 3 | ՀՈՒՐ | 351 | ՀՊԱՐՏ | 6 |
| ՀՊԱՐՏԱՆԱՄ | 14 | ՀՊԱՐՏՈՒԹԻՒՆ | 55 | ՀՊԵՑՈՒՑԱՆԵՄ | 1 | ՀՊԻՄ | 8 |
| ՀՊՈՒՄՆ | 2 | ՀՌԱՍԻՄ | 1 | ՀՌԱՔԷԼ | 5 | ՀՌԵՄՓԱՅ | 1 |
| ՀՌԵՏՈՐ | 1 | ՀՌԻՓՍԻՄԵԱՆՑ | 2 | ՀՌՈՄ | 25 | ՀՌՈՒԹ | 5 |
| ՀՌՉԱԿԵԼԻ | 1 | ՀՌՉԱԿԵՄ | 2 | ՀՌՕՄԱՅԵՑԻ | 8 | ՀՌՕՄԱՅԵՑԻ (Ս.Գրքի մաս) | 6 |
| ՀՍԿԱՅ (տ. ՍԿԱՅ) | 5 | ՀՍԿԱՅԱՆԴԱՄ | 1 | ՀՍԿԵՄ (տ. ՍԿԵՄ) | 2 | ՀՍԿՈՂ | 1 |
| ՀՐԱԲԵՐՁ | 1 | ՀՐԱԳՈՅՆ | 1 | ՀՐԱԺԱՐԱԿԱՆ | 2 | ՀՐԱԺԱՐԵԼԻ | 2 |
| ՀՐԱԺԱՐԵՄ | 15 | ՀՐԱԺԱՐԵՑՈՒՑԱՆԵՄ | 1 | ՀՐԱԽԱՌՆ | 3 | ՀՐԱՀԱԼԵԼԻ | 1 |
| ՀՐԱՀԱԼՈՑ | 2 | ՀՐԱՀԱՆԳ | 2 | ՀՐԱՁԵՒ | 1 | ՀՐԱՄԱՅԱԿԱՆ | 3 |
| ՀՐԱՄԱՅԵՄ | 96 | ՀՐԱՄԱՆ | 77 | ՀՐԱՄԱՆ ՏԱԼ | 11 | ՀՐԱՄԱՆ ԱՌՆՈՒԼ | 1 |
| ՀՐԱՄԱՆԱՏՈՒ | 2 | ՀՐԱՅԻՆ | 1 | ՀՐԱՅՐԵՑՈՒԹԻՒՆ | 1 | ՀՐԱՆԱՄ | 2 |
| ՀՐԱՄԱՆԱՏԱՐ | 1 | ՀՐԱՇԱԳՈՐԾ | 2 | ՀՐԱՇԱԳՈՐԾԵՄ | 2 | ՀՐԱՇԱԼԻ | 3 |
| ՀՐԱՇԱԿԵՐՏԵՄ | 1 | ՀՐԱՇԱՓԱՌԱՊԷՍ | 1 | ՀՐԱՇՈՒՆՉ | 1 | ՀՐԱՇՔ | 11 |
| ՀՐԱՊԱՐԱԿ | 2 | ՀՐԱՊԱՐԱԿԱԽՕՍ | 1 | ՀՐԱՊՈՒՐԵՄ | 1 | ՀՐԱՏ | 3 |
| ՀՐԱՏԵՍԱԿ | 2 | ՀՐԱՒԷՐ | 1 | ՀՐԱՒԻՐԱԿ | 2 | ՀՐԱՒԻՐԵՄ | 10 |
| ՀՐԴԵՀԵՄ | 1 | ՀՐԵՂԷՆ | 49 | ՀՐԵՇՏԱԿ | 460 | ՀՐԵՇՏԱԿԱԲՆԱԿ | 1 |
| ՀՐԵՇՏԱԿԱԿԱՆ | 4 | ՀՐԵՇՏԱԿԱՅԻՆ | 2 | ՀՐԵՇՏԱԿԱՆԱՄ | 3 | ՀՐԵՇՏԱԿԱՊԵՏ | 27 |
| ՀՐԷԱԲԱՐ | 1 | ՀՐԷԱԿԱՆ | 4 | ՀՐԷԱՅ | 91 | ՀՐԷԱՍՏԱՆ | 6 |
| ՀՐՁԻԳ | 1 | ՀՐՁԻԳ ԱՌՆԵԼ | 2 | ՀՐՃՈՒԱՆՔ | 1 | ՀՐՃՈՒԻՄ | 1 |
| ՀՐՈՏԻՑ | 2 | ՀՕՏ | 11 | | | | |

## Ձ

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| ՁԱԳ | 1 | ՁԱԽ | 29 | ՁԱԽԱԿՈՂՄԵԱՆ | 6 | ՁԱԽԱԿՈՂՄՆ | 2 |
| ՁԱԽՈՂԱԿ | 1 | ՁԱԽՈՂԱԿԻ | 2 | ՁԱՂԱՆՔ | 1 | ՁԱՂԵՄ | 2 |
| ՁԱՂԿ | 1 | ՁԱՅՆ | 172 | ՁԱՅՆԱԿԱՆ | 8 | ՁԱՅՆԱՒՈՐ | 13 |
| ՁԱՆՁՐԱՆԱՄ | 1 | ՁԱՆՁՐԱՑՈՒՑԱՆԵՄ | 1 | ՁԱՆՁՐՈՒԹԻՒՆ | 12 | ՁԳԵՄ | 19 |
| ՁԳՏԻՄ կմ ՁԿՏԻՄ | 8 | ՁԳՏՈՒՄՆ կմ ՁԿՏՈՒՄՆ | 1 | ՁԵՂՈՒՆ | 1 | ՁԵՌԱԳԻՐ | 5 |
| ՁԵՌԱԳՈՐԾ | 7 | ՁԵՌԱԿԵՐՏ | 2 | ՁԵՌՆ | 314 | ՁԵՌՆԱԴՐԵՄ | 25 |
| ՁԵՌՆԱԴՐՈՒԹԻՒՆ | 3 | ՁԵՌՆԱՄՈՒԽ ԼԻՆԵԼ | 2 | ՁԵՌՆԱՐԿ | 1 | ՁԵՌՆԱՐԿՈՒՄՆ | 1 |
| ՁԵՌՆԲԵԿ | 1 | ՁԵՌՆՀԱՍ | 1 | ՁԵՌՆՏՈՒ | 2 | ՁԵՒ | 92 |
| ՁԵՒԱԳՐԵԼ | 1 | ՁԵՒԱԿԱՆ | 1 | ՁԵՒԱԿԵՐՊԵՄ | 1 | ՁԵՒԱՆԱՄ | 20 |
| ՁԵՒԱՑՈՒՑԱՆԵՄ | 2 | ՁԷԹ | 16 | ՁԻ | 19 | ՁԻԱԿԱՊԻԿ | 1 |
| ՁԻԹԵՆԻ | 24 | ՁԻՈՒԹԻՒՆ | 1 | ՁԻՒՆ | 15 | ՁԻՒՆԱԲԵՐ | 1 |
| ՁԻՒՆԱԹԱՂ | 1 | ՁԻՒՆԱՄԵՌ | 1 | ՁԿՆԱԿՈՒԼ | 1 | ՁՄԵՌՆ | 23 |
| ՁՄԵՌՆԱՄՈՒՏ | 1 | ՁՄԵՐԱՅԻՆ | 2 | ՁՄԵՐՈՒԿ | 1 | ՁՈՂ | 2 |
| ՁՈՅԼԱՐԱՆ | 1 | ՁՈՐ | 12 | ՁՈՐՁ | 2 | ՁՈՒ | 13 |
| ՁՈՒԼԵՄ | 1 | ՁՈՒԿՆ | 53 | ՁՐԻ | 6 | | |

## Ղ

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| ՂԱԶԱՐ | 19 | ՂԱԹՓԱՂԱՍԱՐ | 1 | ՂԱՄՊԱՐ (տ. ՂԱՄԲԱՐ) | 3 | ՂԱՄԵՔ | 4 |
| ՂԱՓԻՐԱՑԻ | 1 | ՂԵԿ | 1 | ՂԵՂ (ուղեղ) | 1 | ՂԵՆՋԱԿ կմ ՂԵՆՋԵԱԿ | 1 |
| ՂԵՒԻ | 16 | ՂԵՒՈՆԱՑԻ | 1 | ՂԵՒՈՆԴԻ | 4 | ՂԵՒՏԱԿԱՆ | 1 |
| ՂԵՒՏԱԿԱՆ (Ս.Գրքի մաս) | 1 | ՂԵՒՏԱՑԻ | 5 | ՂԵՒՏԱՑԻ (Ս.Գրքի մաս) | 6 | ՂԷԲԷՈՍ | 1 |
| ՂՈՎՏ | 13 | ՂՈՐԴ (տ. ՈՒՂՂՈՐԴ) | 1 | ՂՈՒԲՆԱ | 1 | ՂՈՒԿԱՍ (Ս.Գրքի չորս ավե-տարաններից մեկը) | 17 |
| ՂՈՒՆԿԻԱՆՈՍ | 1 | ՂՊՏԻ | 1 | | | | |

## Ճ

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| ՃԱԳԱՐ | 1 | ՃԱԿԱՏ | 11 | ՃԱԿԱՏԱԳԻՐ | 7 | ՃԱՂԱՏ | 2 |
| ՃԱՃԱՆՉ | 1 | ՃԱՄԵԱՆ (ՀԱՐԻՒՐԱՄԵԱՆ) | 1 | ՃԱՆԱՉԵԼԻ | 1 | ՃԱՆԱՉԵՄ | 106 |
| ՃԱՆԱՉՈՒՄՆ | 35 | ՃԱՆԱՊԱՐՀ | 73 | ՃԱՆԱՊԱՐՀՈՐԴ | 5 | ՃԱՆԱՊԱՐՀՈՐԴԵՄ | 1 |
| ՃԱՆԱՊԱՐՀՈՐԴԻՄ | 1 | ՃԱՆԱՊԱՐՀՈՐԴՈՒԹԻՒՆ | 1 | ՃԱՆՃ | 8 | ՃԱՇ | 14 |
| ՃԱՇԱԿ | 4 | ՃԱՇԱԿԵԼԻՔ | 10 | ՃԱՇԱԿԵՄ | 31 | ՃԱՇԱԿՈՒՄՆ | 8 |
| ՃԱՊԱՏԻԿ (ՀԱՐԻՒՐԱՊԱՏԻԿ) | 1 | ՃԱՊԵՏ (ՀԱՐԻՒՐԱՊԵՏ) | 1 | ՃԱՌ | 18 | ՃԱՌԱԳԱՅԹ | 13 |
| ՃԱՌԱԳԱՅԹԵՄ | 3 | ՃԱՌԵԼԻ | 4 | ՃԱՌԵՄ | 3 | ՃԱՐ | 1 |
| ՃԱՐՊ | 13 | ՃԱՐՊԱՒՈՐ | 1 | ՃԱՐՏԱՍԱՆՈՒԹԻՒՆ | 1 | ՃԱՐՏԱՐ | 1 |
| ՃԱՐՏԱՐԱԽՕՍՈՒԹԻՒՆ | 1 | ՃԱՐՏԱՐԱՊԵՏ | 3 | ՃԱՐՏԱՐՈՒԹԻՒՆ | 2 | ՃԱՒՈՐ (ՀԱՐԻՒՐԱՒՈՐ) | 2 |
| ՃԳՆԱԶԳԵԱՑ | 1 | ՃԳՆԱՒՈՐ | 4 | ՃԳՆԻՄ | 3 | ՃԳՆՈՒԹԻՒՆ | 7 |
| ՃԵՂՔԵՄ, ՃԵՂՔՈՒՄ | 3 | ՃԵՆՃԵՐ | 2 | ՃԵՆՃԵՐԵՄ | 2 | ՃԵՊԵՄ | 1 |
| ՃԻԳՆ | 1 | ՃԻՉ | 2 | ՃԻՌ | 1 | ՃԻՐԱՆ | 2 |
| ՃԻՒԱՂ | 1 | ՃԻՒՂ | 7 | ՃՃԻ | 1 | ՃՃՈՒԵՄ | 1 |
| ՃՃՈՒՈՂԱԿԱՆ | 1 | ՃՄԼԵՄ | 9 | ՃՆՃՂՈՒԿ | 1 | ՃՆՇԵՄ | 5 |
| ՃՇԳՐՏՈՒԹԻՒՆ | 1 | ՃՇՄԱՐԻՏ | 205 | ՃՇՄԱՐՏԱԽՕՍ | 1 | ՃՇՄԱՐՏԱՊԷՍ | 8 |
| ՃՇՄԱՐՏԱՍԷՐ | 1 | ՃՇՄԱՐՏԱՍԻՐՈՒԹԻՒՆ | 1 | ՃՇՄԱՐՏԵՄ | 3 | ՃՇՄԱՐՏՈՒԹԻՒՆ | 136 |
| ՃՈԽ | 1 | ՃՈԽԱՆԱՄ | 1 | ՃՈԽՈՒԹԻՒՆ | 1 | ՃՈՂՈՊՐԵՄ | 1 |
| ՃՉԵՄ | 1 | ՃՐԱԳ | 19 | ՃՐԱԳԱԼՈՅՑ | 7 | ՃՐԱԳԱՐԱՆ | 1 |
| ՃՐԱԳՈՒ | 1 | | | | | | |

## Մ

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| ՄԱԳԱՂԱԹ | 7 | ՄԱԳԴԱՂԵՆԱՑԻ | 7 | ՄԱԳԻԼ | 1 | ՄԱԳՈԳ | 5 |
| ՄԱԴԱՆ | 1 | ՄԱԴԻԱՆ | 1 | ՄԱԴԻԱՄ | 3 | ՄԱԴԻԱՆԱՑԻՔ | 4 |
| ՄԱԶ | 30 | ՄԱԶԱԾԱԾՈՒԿ | 1 | ՄԱԶԵՂ | 1 | ՄԱԶԵՂԷՆ | 1 |
| ՄԱԶՈՐՈՏՔ | 1 | ՄԱԹՈՒՍԱՂԱ | 3 | ՄԱԼԵՄ | 1 | ՄԱԽԱՂ | 1 |
| ՄԱԽԱՄ | 1 | ՄԱԽԱՆՔ | 3 | ՄԱԿ | 1 | ՄԱԿԱԲԱՅԵՑԻՔ | 4 |
| ՄԱԿԱԳՈՅԵՂ | 1 | ՄԱԿԱԴԱՐՁՈՒԹԻՒՆ | 1 | ՄԱԿԱԼԵԶՈՒ | 2 | ՄԱԿԱՆ | 1 |
| ՄԱԿԱՐ | 2 | ՄԱԿԱՐԻՈՍ | 1 | ՄԱԾ | 1 | ՄԱԾՆՈՒՄ | 8 |
| ՄԱԾՈՒՄՆ | 2 | ՄԱԾՈՒՑԱՆԵՄ | 1 | ՄԱԿԲԱՅ | 1 | ՄԱԿԲԵԿՈՒԹԻՒՆ | 1 |
| ՄԱԿԴԱՐՁԱՊԷՍ | 1 | ՄԱԿԵԴՈՆ | 9 | ՄԱԿԵԴՈՆԱՑԻՔ | 4 | ՄԱԿԵԴՈՆԵԱՆ | 1 |
| ՄԱԿԵՐԵՒՈՅԹ | 1 | ՄԱԿԵՐԵՒՈՒԹԻՒՆ | 1 | ՄԱԿՍՏԱՑԱԿԱՆ | 2 | ՄԱՀ | 470 |
| ՄԱՀԱԲԵՐ | 3 | ՄԱՀԱԴԵՂ | 1 | ՄԱՀԱՆԱՄ | 10 | ՄԱՀԱՊԱՐՏ | 7 |
| ՄԱՀԱՑՈՒ | 16 | ՄԱՀԱՑՈՒՑԱՆԵՄ | 1 | ՄԱՀԻՃՔ | 1 | ՄԱՀԿԱՆԱՑՈՒ | 29 |
| ՄԱՀՈՒ ՄԵՌԱՆԻԼ | 4 | ՄԱՀՈՒ ՉԱՓ | 29 | ՄԱՂԱՂԵԴԱ | 1 | ՄԱՂԱՂԻԷԼ | 1 |
| ՄԱՂԱՍ | 2 | ՄԱՂԱՔԻԱ | 8 | ՄԱՂԵՄ | 1 | ՄԱՂՁՄԱՅ | 2 |
| ՄԱՂԹԱՆՔ | 9 | ՄԱՂԹԵՄ | 4 | ՄԱՂԻԱՑԻ | 1 | ՄԱՂՉ (տեքստում նաև՝ ՄԱՂՑ) | 22 |
| ՄԱՂՔՈՍ | 1 | ՄԱՃ | 1 | ՄԱՃՆԱՒՆ | 1 | ՄԱՄԲՐԷ | 1 |
| ՄԱՄԵՍՏԻԱՅ | 1 | ՄԱՄՈՆԱՅ | 1 | ՄԱՄՈՒԼ | 1 | ՄԱՅԻՄՈՆ | 1 |
| ՄԱՅՐ | 144 | ՄԱՅՐԱԿԱՆ | 4 | ՄԱՅՐԱՔԱՂԱՔ | 1 | ՄԱՅՐԱՔԱՂԱՔԱՑԻ | 1 |
| ՄԱՅՐԻ | 1 | ՄԱՅՐՈՒԹԻՒՆ | 4 | ՄԱՅՐՕՐՀՆԷՔ | 1 | ՄԱՆ | 1 |
| ՄԱՆԱԶԿԵՐՏ | 1 | ՄԱՆԱՆԱՅ | 35 | ՄԱՆԱՅԷՆ | 1 | ՄԱՆԱԱԷ | 7 |
| ՄԱՆԱՒԱՆԴ, ՄԱՆԱՒԱՆԴ ԹԷ, ՄԱՆԱՒԱՆԴ ԶԻ | 27 | ՄԱՆԵՄ | 1 | ՄԱՆԷ | 2 | ՄԱՆԷՈՆ | 1 |
| ՄԱՆԻՔԵՑԻՔ | 2 | ՄԱՆԻՔԷՈՍ | 3 | ՄԱՆԿԱԲԱՐՁ | 1 | ՄԱՆԿԱԿՈՏՈՐ | 1 |
| ՄԱՆԿԱՆԱՄ | 1 | ՄԱՆԿԱՐԱՐՈՒԹԻՒՆ | 2 | ՄԱՆԿՈՒԹԻՒՆ | 23 | ՄԱՆԿՏԻ | 1 |
| ՄԱՆՈՎԷԻ | 2 | ՄԱՆՈՒԿ | 87 | ՄԱՆՈՒՇԱԿ | 2 | ՄԱՆՐ | 6 |
| ՄԱՆՐԱԿԾՈՒ | 1 | ՄԱՆՐԱԿՈՐԻԶ | 1 | ՄԱՆՐԱՄԱՍՆ | 2 | ՄԱՆՐԱՄԱՍՆԱԲԱՐ | 1 |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| ՄԱՆՐԱՔԱՅԼ | 1 | ՄԱՆՐԱՔՆԻՆ | 1 | ՄԱՆՐԵՄ | 1 | ՄԱՇԵՄ | 5 |
| ՄԱՇԿ | 3 | ՄԱՇԿԱԹԵՒ | 1 | ՄԱՇԿԵԱԿ | 2 | ՄԱՇԿԵՂԷՆ | 13 |
| ՄԱՇՏՈՑ | 1 | ՄԱՌԱԽՈՒՂ (տեքստում նաև՝ ՄԱՌԱԽՈՒԼ) | 3 | ՄԱՌԵԽ (տեքստում նաև՝ ՄԱՐԵԽ) | 3 | ՄԱՌԻ | 1 |
| ՄԱՍԻՍ | 4 | ՄԱՍՆ | 252 | ՄԱՍԱՄԲ | 39 | ՄԱՍՈՒՆՔ | 88 |
| ՄԱՍՆ ԻՆՉ | 5 | ՄԱՍՆԱԲԱՐ | 1 | ՄԱՍՆԱԿԱՆ | 6 | ՄԱՍՆԱԿԻՑ | 4 |
| ՄԱՍՆԱԿՑՈՒԹԻՒՆ | 1 | ՄԱՍՆԱՊԷՍ | 2 | ՄԱՍՆԱՒՈՐ | 49 | ՄԱՍՆԱՒՈՐԱԲԱՐ | 3 |
| ՄԱՍՆԱՒՈՐԱՊԷՍ | 7 | ՄԱՍՆԻԿ | 7 | ՄԱՍՏՈՒԹԻՒՆ | 4 | ՄԱՏԱԹԻԱ | 1 |
| ՄԱՏԱԿ | 1 | ՄԱՏԱՂ | 9 | ՄԱՏԱՂԵՄ | 1 | ՄԱՏԱՆԻ | 13 |
| ՄԱՏԵԱՆ | 3 | ՄԱՏԹԱՆ | 8 | ՄԱՏԹԷՈՍ (Ս. Գրքի չորս ավետարաններից մեկը) | 29 | ՄԱՏՆ | 25 |
| ՄԱՏՆԱՀԱՐ | 1 | ՄԱՏՆԵՄ | 18 | ՄԱՏՆԻՉ | 4 | ՄԱՏՆՈՒԹԻՒՆ | 2 |
| ՄԱՏՈՒՌՆ | 1 | ՄԱՏՈՒՑԱՆԵՄ | 73 | ՄԱՏՈՒՑՈՂ | 10 | ՄԱՏՈՒՑՈՒՄՆ | 2 |
| ՄԱՏՉԻՄ | 9 | ՄԱՏՌՈՒԱԿ | 2 | ՄԱՐ(Ք) | 2 | ՄԱՐԱԽ | 5 |
| ՄԱՐԱՑԻ | 1 | ՄԱՐԳԱՐԷ | 246 | ՄԱՐԳԱՐԷԱԿԱՆ | 2 | ՄԱՐԳԱՐԷԱՆԱՄ | 7 |
| ՄԱՐԳԱՐԷԱՇՆՈՐՀ | 1 | ՄԱՐԳԱՐԷՈՒԹԻՒՆ | 27 | ՄԱՐԳԱՐԻՏ | 3 | ՄԱՐԳԱՑ | 2 |
| ՄԱՐԴ | 1450 | ԿԻՆ ՄԱՐԴ | 4 | ՄԱՐԴԱԴԱՒԱՆ | 3 | ՄԱՐԴԱԶԳԵԱՑ | 1 |
| ՄԱՐԴԱԾԻՆ | 5 | ՄԱՐԴԱԿԵՐ | 1 | ՄԱՐԴԱԿԵՐՊ | 1 | ՄԱՐԴԱՀԱՃՈՅ | 1 |
| ՄԱՐԴԱՀԱՃՈՒԹԻՒՆ | 2 | ՄԱՐԴԱՄԱՀ | 1 | ՄԱՐԴԱՆԱՄ | 57 | ՄԱՐԴԱՉԱՓ | 1 |
| ՄԱՐԴԱՊԱՇՏ | 2 | ՄԱՐԴԱՊԱՇՏՈՒԹԻՒՆ | 1 | ՄԱՐԴԱՍԷՐ | 7 | ՄԱՐԴԱՍԻՐԱՊԷՍ | 1 |
| ՄԱՐԴԱՍԻՐՈՒԹԻՒՆ | 6 | ՄԱՐԴԱՍՊԱՆ | 3 | ՄԱՐԴԱՍՊԱՆՈՒԹԻՒՆ | 1 | ՄԱՐԴԵՂՈՒԹԻՒՆ | 48 |
| ՄԱՐԴԿԱՅԻՆ | 77 | ՄԱՐԴԿՈՒԹԻՒՆ | 91 | ՄԱՐԴԿՕՐԷՆ | 1 | ՄԱՐԵՄԱՅ | 1 |
| ՄԱՐԵՐԻ | 2 | ՄԱՐԶԵՄ | 1 | ՄԱՐԶՊԱՆ | 1 | ՄԱՐԹԵՄ | 4 |
| ՄԱՐԹԵԼԻ | 2 | ՄԱՐԻԱՄ | 60 | ՄԱՐԻԱՆՈՍ (Ք) | 1 | ՄԱՐԿԵՂՈՍ | 2 |
| ՄԱՐԿԻԱՆՈՍ | 7 | ՄԱՐԿԻՈՆ | 1 | ՄԱՐԿՈՍ | 7 | ՄԱՐՄԱՌՈՏ | 1 |
| ՄԱՐՄԻՆ | 1541 | ՄԱՐՄՆԱԶԳԵԱՑ | 1 | ՄԱՐՄՆԱԿԱՆ | 96 | ՄԱՐՄՆԱԿԵՐ | 2 |
| ՄԱՐՄՆԱՆԱՄ | 52 | ՄԱՐՄՆԱՊԷՍ | 10 | ՄԱՐՄՆԱՍԷՐ | 3 | ՄԱՐՄՆԱՒՈՐ | 85 |
| ՄԱՐՄՆԱՒՈՐԱՊԷՍ | 2 | ՄԱՐՄՆԱՒՈՐԻԼ | 1 | ՄԱՐՄՆԱՓՈԽՈՒԹԻՒՆ | 2 | ՄԱՐՄՆԵՂԷՆ | 2 |
| ՄԱՐՏ | 10 | ՄԱՐՏԱԿԱՆ | 1 | ՄԱՐՏԻԿ | 2 | ՄԱՐՏԻՐՈՍ | 25 |
| ՄԱՐՏԻՐՈՍՈՒԹԻՒՆ | 2 | ՄԱՐՏՆՉԻՄ | 19 | ՄԱՔԱՌԻՄ | 1 | ՄԱՔՈՒՐ | 12 |
| ՄԱՔՍԱՒՈՐ | 2 | ՄԱՔՍԻՄԻԱՆՈՍ | 1 | ՄԱՔՍԻՄՈՍ | 1 | ՄԱՔՐԱԳՈՅՆ | 1 |
| ՄԱՔՐԱԿԱՆ | 3 | ՄԱՔՐԱՄԻՏ | 1 | ՄԱՔՐԵԼԻՔ | 1 | ՄԱՔՐԵՄ | 36 |
| ՄԱՔՐԻՉ | 1 | ՄԱՔՐՈՒԹԻՒՆ | 29 | ՄԵԹՈԴԻՈՍ | 1 | ՄԵԼԱՆ | 3 |
| ՄԵԼԻՏՈՍ | 1 | ՄԵԼՔԱ | 1 | ՄԵԼՔԻ | 10 | ՄԵԼՔԻՍԵԴԵԿ | 33 |
| ՄԵԼՔՕՂ | 1 | ՄԵԾ | 199 | ՄԵԾՆ ԱԹԱՆԱՍ | 1 | ՄԵԾՆ ԱՆԴՐԷԱՍ | 3 |
| ՄԵԾՆ ԱՆՏՈՆ | 2 | ՄԵԾՆ ԴԻՈՆԷՍԻՈՍ | 10 | ՄԵԾՆ ԹԷՈԴՈՍ | 2 | ՄԵԾՆ ԻԳՆԱՏԻՈՍ | 3 |
| ՄԵԾՆ ԿԻՒՐԵՂ | 1 | ՄԵԾՆ ԿՈՍՏԱՆԴԻԱՆՈՍ | 3 | ՄԵԾՆ ՄԵՍՐՈՊ | 1 | ՄԵԾՆ ՄՈՎՍԷՍ | 3 |
| ՄԵԾՆ ՆԵՐՍԷՍ | 12 | ՄԵԾՆ ՆԵՐՍԷՍ ՇՆՈՐՀԱԼԻ | 1 | ՄԵԾՆ ՍԱՀԱԿ | 1 | ՄԵԾՆ ՍԿԻՒԹ | 1 |
| ՄԵԾՆ ՎԱՐԴԱՆ | 1 | ՄԵԾԱԲՈՅՍ | 1 | ՄԵԾԱԳՈՅՆ | 22 | ՄԵԾԱԳՈՐԾՈՒԹԻՒՆ | 2 |
| ՄԵԾԱԽՈՐՀՈՒՐԴ | 1 | ՄԵԾԱՀԱՆԴԷՍ | 1 | ՄԵԾԱՀԱՍԱԿ | 1 | ՄԵԾԱՀՈԳԻ | 1 |
| ՄԵԾԱՀՐԱՇ | 2 | ՄԵԾԱՄԱՐՄԻՆ | 1 | ՄԵԾԱՄԵԾ | 33 | ՄԵԾԱՄԵԾՍ ԲԱՐԲԱՌԵԼ | 1 |
| ՄԵԾԱՆԱՄ | 6 | ՄԵԾԱՆՁՆՈՒԹԻՒՆ | 1 | ՄԵԾԱՊԱՏԻՒ | 1 | ՄԵԾԱՍԻՐՏ | 2 |
| ՄԵԾԱՏՈՒՆ | 19 | ՄԵԾԱՐԱՆՔ | 1 | ՄԵԾԱՐԳՈՅ | 1 | ՄԵԾԱՐԵՄ | 7 |
| ՄԵԾԱՑՈՒՑԱՆԵՄ | 4 | ՄԵԾՈՒԹԻՒՆ | 51 | ՄԵԿԻՆ | 3 | ՄԵԿՆԵՄ | 26 |
| ՄԵԿՆԻՉ | 16 | ՄԵԿՆՈՒԹԻՒՆ | 22 | ՄԵԿՈՒՍԻ | 1 | ՄԵՀԵԱՆ | 2 |
| ՄԵՀԵԿԻ | 2 | ՄԵՂԱԴՐԵԼԻ | 1 | ՄԵՂԱՅ | 6 | ՄԵՂԱՆՉԱԿԱՆ | 8 |
| ՄԵՂԱՆՉԵՄ | 127 | ՄԵՂԱՆՉՈՒՄՆ | 6 | ՄԵՂԱՊԱՐՏ | 1 | ՄԵՂԱՒՈՐ | 148 |
| ՄԵՂԿԱՆԱՄ | 2 | ՄԵՂԿԵՄ, ՄԵՂԿԻՄ | 2 | ՄԵՂՈՅՇ | 2 | ՄԵՂՈՒ | 6 |
| ՄԵՂՈՒՇԱԳՈՅՆ | 1 | ՄԵՂՍԱՍԷՐ | 5 | ՄԵՂՍԱՔԱՒԻՉ | 1 | ՄԵՂՐ | 8 |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| ՄԵՂՔ | 879 | ՄԵՌԱՆԻՄ | 151 | ՄԵՌԵԱԼ | 169 | ՄԵՌԵԼՈՏԻ | 3 |
| ՄԵՌԵԼՈՒԹԻՒՆ | 9 | ՄԵՌՈՆ | 12 | ՄԵՌՈՒՑԱՆԵՄ | 6 | ՄԵՍԵԴԻ | 8 |
| ՄԵՍԻԱ (տեքստում նաև՝ ՄԷՍԻԱ) | 12 | ՄԵՏԱՂՔ | 1 | ՄԵՏԱՍԱՆՕՐԵԱՅ | 2 | ՄԵՏՐԱՊՕԼԻՏ | 4 |
| ՄԵՏՐՈՓԱՆՈՍ | 1 | ՄԵՐԱՅԻՆ | 1 | ՄԵՐԱՐԻ | 6 | ՄԵՐԹ | 4 |
| ՄԵՐԺԵՄ | 22 | ՄԵՐԺՈՒՄՆ | 1 | ՄԵՐԿ | 22 | ՄԵՐԿԱՆԱՄ | 18 |
| ՄԵՐԿԱՊԱՐԱՆՈՑ | 3 | ՄԵՐԿԱՑՈՒՄՆ | 1 | ՄԵՐԿԱՑՈՒՑԱՆԵՄ | 2 | ՄԵՐԿԵՄ | 1 |
| ՄԵՐԿՈՒԹԻՒՆ | 4 | ՄԵՐՁ | 85 | ՄԵՐՁԱԿԱՅ | 6 | ՄԵՐՁԱՒՈՐ | 13 |
| ՄԵՐՁԱՒՈՐԵՄ | 2 | ՄԵՐՁԱՒՈՐԻՉ | 1 | ՄԵՐՁԵՆԱՄ | 53 | ՄԵՐՁԻՄ | 26 |
| ՄԶՆԱՉԵՒ (տեքստում՝ ՄԶՂՆԱՉԵՒ) | 1 | ՄԷԳ | 7 | ՄԷԶ | 1 | ՄԷԿ (տեքստում նաև՝ ՄԵԿ) | 9 |
| ՄԷՃԼԻՍ | 1 | ՄԷՆ | 2 | ՄԷՋ, ՄԷՋՔ | 291 | ԸՆԴ ՄԷՋ | 8 |
| ՄԷՏ | 1 | ՄԹԱԳՈՅՆ | 2 | ՄԹԵՐ | 1 | ՄԹՈՒԹԻՒՆ | 1 |
| ՄԺԵԽ, ՄԺՂՈՒԿ | 4 | ՄԻ (արգելական) | 66 | ՄԻ (թվական) | 955 | ՄԻ ՄԻ | 7 |
| ՄԻԱԲԱՆ | 3 | ՄԻԱԲԱՆԵՄ | 17 | ՄԻԱԲԱՆՈՒԹԻՒՆ | 18 | ՄԻԱԲՈՒՆ | 1 |
| ՄԻԱԺԱՄ | 1 | ՄԻԱԾԻՆ | 31 | ՄԻԱԿ | 36 | ՄԻԱԿԱՄՈՒԹԻՒՆ | 3 |
| ՄԻԱԿԱՐԳ | 1 | ՄԻԱԿԵՐՊՈՒԹԻՒՆ –1 | | ՄԻԱԿՈՂՄԱՆԻ | 1 | ՄԻԱԿՈՂՄՆ | 1 |
| ՄԻԱՀԱՂՈՅՆ | 3 | ՄԻԱՀԱՄՈՒՌ | 3 | ՄԻԱՁԵՒ | 1 | ՄԻԱՄԱՅՐ | 1 |
| ՄԻԱՄԻՏ | 2 | ՄԻԱՄՏՈՒԹԻՒՆ | 1 | ՄԻԱՅՆ | 331 | ՄԻԱՅՆ ԹԷ | 1 |
| ՄԻ ՄԻԱՅՆ | 3 | ՄԻԱՅՆԱԲԱՐ | 4 | ՄԻԱՅՆԱԿԵԱՑ | 3 | ՄԻԱՅՆԱՆԱՄ | 1 |
| ՄԻԱՅՆԱՒՈՐ | 1 | ՄԻԱՆԱՄ | 44 | ՄԻԱՆԳԱՄ | 21 | ՄԻԱՆԳԱՄԱՅՆ | 14 |
| ՄԻԱՇԱԲԱԹԻ | 5 | ՄԻԱՁՔ | 1 | ՄԻԱՊԱՏԻՒ | 2 | ՄԻԱՊԷՍ | 15 |
| ՄԻԱՍԻՆ | 55 | ՄԻԱՍՆԱԿԱՆ | 3 | ՄԻԱՏԱՐՐ | 1 | ՄԻԱՏԵՍԱԿ | 6 |
| ՄԻԱՐԱՐ | 2 | ՄԻԱՑՈՒՄՆ | 3 | ՄԻԱՑՈՒՑԱՆԱՄ | 1 | ՄԻԱՒՈՐ | 2 |
| ՄԻԱՒՈՐԱԿԱՆ | 4 | ՄԻԱՒՈՐԻՄ | 188 | ՄԻԱՒՈՐԻՉ | 3 | ՄԻԱՒՈՐՈՒԹԻՒՆ | 124 |
| ՄԻԵՂԷՆ | 14 | ՄԻԶԵՄ | 3 | ՄԻԹԷ | 1 | ՄԻԹՐ | 3 |
| ՄԻ ԻՆՉ (տ. ԻՆՉ) | 1 | ՄԻԽԱՅԷԼ | 1 | ՄԻՄԵԱՆՑ | 156 | ՄԻՆ | 314 |
| ՄԻՆՉ | 191 | ՄԻՆՉ ԶԻ | 15 | ՄԻՆՉԴԵՌ | 3 | ՄԻՆՉԵՒ | 142 |
| ՄԻՆՉ ՉԵՒ | 1 | ՄԻՇՏ | 200 | ՄԻՈՐՁԻ | 1 | ՄԻՈՒԹԻՒՆ | 79 |
| ՄԻՋԱԿ | 24 | ՄԻՋԱԿՕՐԷՆ | 2 | ՄԻՋԱՍԱՀՄԱՆ | 2 | ՄԻՋԵՐԿՐԱՅ | 1 |
| ՄԻՋԻՆ | 98 | ՄԻՋՆԱՏՈՒՆ | 1 | ՄԻՋՆՈՐԴ | 26 | ՄԻՋՆՈՐԴԵՄ | 3 |
| ՄԻՋՆՈՐԴՈՒԹԻՒՆ | 18 | ՄԻՋՆՈՑ | 1 | ՄԻՋՈՑ | 12 | ՄԻՋՕՐԵԱՅ | 1 |
| ՄԻՍ | 42 | ՄԻՍԱՅԷԼ | 1 | ՄԻՏ(Ք) | 433 | ՄԻՏ ԴՆԵԼ | 2 |
| Ի ՄԻՏ ԱՌՆՈՒԼ | 2 | ԶՄՏԱՒ ԱԾԵԼ, Ի ՄԻՏ ԱԾԵԼ | 11 | Ի ՄԻՏ ՊԱՀԵԼ | 3 | ՄԻՏԵՄ | 14 |
| ՄԻՏՈՒՄՆ | 2 | ՄԻՐԳ | 2 | ՄԻՒՍ | 58 | ԵՒ ՄԻՒՍ | 65 |
| ՄԻՒՍ ԱՆԳԱՄ, ՄԻՒՍԱՆԳԱՄ | 10 | ՄԻՔԱՅԷԼ | 8 | ՄԻՔԻԱ | 2 | ՄԽԻԹԱՐԱԿԱՆ | 1 |
| ՄԽԻԹԱՐԵՄ | 12 | ՄԽԻԹԱՐԻՉ | 1 | ՄԽԻԹԱՐՈՒԹԻՒՆ | 4 | ՄԿՐՏԵԼԻ | 3 |
| ՄԿՐՏԵՄ | 111 | ՄԿՐՏԻՉ | 3 | ՄԿՐՏՈՒԹԻՒՆ | 147 | ՄՂԵՄ | 3 |
| ՄՂՈՆ | 1 | ՄՂՏԱՏԵՍԱԿ | 1 | ՄՆԱՄ | 212 | ՄՆԱՍ | 2 |
| ՄՆԱՑԱԿԱՆ | 5 | ՄՆԱՑԵԱԼ (տ. ՄՆԱՄ) | 26 | ՄՆԱՑՈՐԴ | 3 | ՄՆԱՑՈՐԴԱՑ ԳԻՐՔ (Ս. Գրքի մաս) | 6 |
| ՄՆԱՑՈՒԱԾ | 1 | ՄՇԱԿ | 14 | ՄՇԱԿՈՒԹԻՒՆ | 1 | ՄՇՏԱԿԱՅ | 3 |
| ՄՇԱԿՈՒԹԻՒՆ | 2 | ՄՇՏԱԿԱՆԱՉ | 1 | ՄՇՏԱԿՈՅՍ | 1 | ՄՇՏԱՇԱՐԺ | 5 |
| ՄՇՏԱՊԷՍ | 1 | ՄՇՏԱՍԱՂԱՐԹ | 3 | ՄՇՏԱՓԱՅԼ | 1 | ՄՇՏՆՋԵՆԱՒՈՐ | 57 |
| ՄՇՏՆՋԵՆԱՒՈՐԱԿԱՆ | 1 | ՄՇՏՆՋԵՆԱՒՈՐԱԿԻՑ | 1 | ՄՈԳ | 5 | ՄՈԼԱՐ | 1 |
| ՄՈԼԵԿԱՆ | 1 | ՄՈԼԻ | 4 | ՄՈԼԻՄ | 2 | ՄՈԼՈՐԱԿ | 17 |
| ՄՈԼՈՐԱԿԱՆ | 6 | ՄՈԼՈՐԵԱԼ | 14 | ՄՈԼՈՐԵՑՈՒՑԻՉ | 2 | ՄՈԼՈՐԻՄ | 15 |
| ՄՈԼՈՐՈՒԹԻՒՆ | 21 | ՄՈԼՈՐՈՒՄՆ | 2 | ՄՈԼՈՒԹԻՒՆ | 1 | ՄՈԽԻՐ | 5 |
| ՄՈԽՐԱԿՈՅՏ | 1 | ՄՈԾԱԿ | 1 | ՄՈՂԷԶ | 1 | ՄՈՂՈՔ | 1 |
| ՄՈՄ | 19 | ՄՈՄԵՂԷՆ | 4 | ՄՈՇԱՎԱՅՐԻ | 1 | ՄՈՌԱՆԱՄ | 29 |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| ՄՈՌԱՑԿՈՏ | 1 | ՄՈՌԱՑՈՒԹԻՒՆ | 2 | ՄՈՌԱՑՈՒՄՆ | 5 | ՄՈՎԱԲԱՑԻ | 2 |
| ՄՈՎՍԷՍ | 265 | ՄՈՎՍԷՍ ԽՈՐԵՆԱՑԻ | 1 | ՄՈՎՍԷՍ ՔԵՐԹՕՂ | 1 | ՄՈՎՍ | 1 |
| ՄՈՎՍԻՍԵԱՆ | 2 | ՄՈՏԱՄՆԱՑԻՔ | 1 | ՄՈՐԵՆԻ | 7 | ՄՈՐԹ | 26 |
| ՄՈՐԹԵՄ | 1 | ՄՈՐԹԻ | 1 | ՄՈՐՄՈՔԵՄ | 2 | ՄՈՐՈՍ | 2 |
| ՄՈՒ | 1 | ՄՈՒԹՆ | 2 | ՄՈՒԽ | 2 | ՄՈՒԾԱՆԵՄ | 14 |
| ՄՈՒԿՆ | 4 | ՄՈՒՃԱԿ | 1 | ՄՈՒՆ | 3 | ՄՈՒՆԴ | 2 |
| ՄՈՒՇԹԱՐԻ | 4 | ՄՈՒՍԱՍ | 1 | ՄՈՒՏ(Ք) | 21 | ՄՈՒՏ ԵՒ ԵԼ | 1 |
| ՄՈՒՐԹՔԷ | 1 | ՄՈՒՐԿ | 5 | ՄՈՒՐՃ | 1 | ՄՍԱԼԻՐ | 1 |
| ՄՍԱԿԵՐ | 3 | ՄՍԱԿՈՅՏ | 1 | ՄՍԱՀԱՆ | 1 | ՄՍԵՂԻ | 1 |
| ՄՍՈՒՐ | 1 | ՄՏԱԲԵՐԵՄ | 1 | ՄՏԱԴԻՒՐՈՒԹԻՒՆ | 1 | ՄՏԱԴՐՈՒԹԻՒՆ | 1 |
| ՄՏԱԽՈՀ (ԼԻՆԵԼ) | 1 | ՄՏԱԾԵՄ | 1 | ՄՏԱԾՈՒԹԻՒՆ | 6 | ՄՏԱԾՈՒՄՆ | 5 |
| ՄՏԱԿՈՒՐՈՒԹԻՒՆ | 1 | ՄՏԱՀԱՃՈՒԹԻՒՆ | 1 | ՄՏԱՆԵՄ | 142 | ՄՏԱՑԱԾԻՆ | 5 |
| ՄՏԱՑԻ | 1 | ՄՏԱՒՈՐ | 3 | ՄՏԱՒՈՐԱԲԱՐ | 1 | ՄՏԱՒՈՐՈՒԹԻՒՆ | 1 |
| ՄՏԵՄ | 2 | ՄՐՈՒՐ | 4 | ՄՐՋԻՒՆ | 4 | ՄՐՐԱԽԱՌՆ | 1 |
| ՄՐՐԻԿ | 4 | ՄՐՑԻՄ | 3 | ՄՐՑՈՒՄՆ | 1 | ՄՕՏ | 10 |
| ՄՕՏԱՒՈՐ | 1 | ՄՕՐԱՔՈՅՐ | 1 | ՄՈՐՈՒՔ | 6 | | |


## Յ


| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| ՅԱԲԵԹ | 2 | ՅԱԳԵՆԱՄ | 1 | ՅԱԳԵՑՈՒՄՆ | 2 | ՅԱԳԻՄ | 4 |
| ՅԱՋՈՎՏՈՍ | 1 | ՅԱԾԻՄ | 1 | ՅԱԿԻՆԹ | 1 | ՅԱԿՈԲ | 52 |
| ՅԱԿՈԲ ԿԼԱՅԵՑԻ | 1 | ՅԱԿՈԲՈՍ | 10 | ՅԱԿՈՎԲ | 1 | ՅԱՂԱԳՍ | 68 |
| ՅԱՂԱԳՍ ՈՐՈՅ | 29 | ՅԱՂԵՄ | 2 | ՅԱՂԹԱՀԱՐԵՄ | 7 | ՅԱՂԹԱՆԱԿ | 4 |
| ՅԱՂԹԱՆԴԱՄ | 1 | ՅԱՂԹԵՄ | 67 | ՅԱՂԹՈՒԹԻՒՆ | 13 | ՅԱՃԱԽ | 1 |
| ՅԱՃԱԽԵՄ | 3 | ՅԱՄԱՌԵՄ | 2 | ՅԱՄԱՌՈՒԹԻՒՆ | 1 | ՅԱՄԵՄ | 11 |
| ՅԱՄՐ | 4 | ՅԱՄՐԱԽՕՍ | 1 | ՅԱՄՐԵՂ | 1 | ՅԱՄՐԷՍ | 1 |
| ՅԱՅԵԼԻ | 1 | ՅԱՅԻՐ | 1 | ՅԱՅԼՈՒՐԵՔ | 1 | ՅԱՅՆԺԱՄ | 80 |
| ՅԱՅՆԿՈՅՍ | 8 | ՅԱՅՆՄ ՀԵՏԷ (տ. ՀԵՏԷ) | 3 | ՅԱՅՏ | 217 | ՅԱՅՏ ԱՌՆԵԼ | 3 |
| ՅԱՅՏ ԼԻՆԵԼ | 3 | ՅԱՅՏ Է ԹԷ | 30 | ՅԱՅՏ ՈՒՐԵՄՆ Է | 5 | ՅԱՅՏՆԱԳՈՅՆ | 1 |
| ՅԱՅՏՆԱՊԷՍ | 45 | ՅԱՅՏՆԵՄ | 100 | ՅԱՅՏՆԻ | 96 | ՅԱՅՏՆԻՉ | 5 |
| ՅԱՅՏՆՈՒԹԻՒՆ | 21 | ՅԱՆԳԻՄ | 1 | ՅԱՆԴԳՆԻՄ | 2 | ՅԱՆԴԳՆՈՒԹԻՒՆ | 6 |
| ՅԱՆԴԵՐԱ | 1 | ՅԱՆԴԻ | 1 | ՅԱՆԴԻՄԱՆ ԱՌՆԵԼ | 1 | ՅԱՆԴԻՄԱՆԵՄ | 19 |
| ՅԱՆԴԻՄԱՆՈՒԹԻՒՆ | 11 | ՅԱՆԴՈՒԳՆ | 6 | ՅԱՆԷՍ | 1 | ՅԱՆԿ | 1 |
| ՅԱՆԿԱՐԾ | 2 | ՅԱՆԿԱՐԾԱԿԻ | 14 | ՅԱՆԿԱՐԾԱՀԱՍ | 1 | ՅԱՆԿԱՐԾԱՄԱՀ | 1 |
| ՅԱՆԿԱՐԾՕՐԷՆ | 2 | ՅԱՆԿԵՄ | 1 | ՅԱՆՉՆ ԱՌՆՈՒԼ | 1 | ՅԱՆՉՆԱՌԱԿԱՆ | 3 |
| ՅԱՆՉՆԵՄ | 3 | ՅԱՆՑ | 2 | ՅԱՆՑԱՆԵՄ | 16 | ՅԱՆՑԱՆՔ | 49 |
| ՅԱՆՑԱՒՈՐ | 23 | ՅԱՆՑԵՄ | 5 | ՅԱՆՑՈՒԱԾ | 1 | ՅԱՆՑՈՒՄՆ | 9 |
| ՅԱՆՕԹ ԱՌՆՈՒԼ | 1 | ՅԱՉԱՂԵՄ | 1 | ՅԱՊԱՂԵՄ | 16 | ՅԱՊԱՅ | 4 |
| ՅԱՋՈՂԱԿ | 3 | ՅԱՋՈՂԵՄ | 3 | ՅԱՋՈՂՈՒԱԾ | 1 | ՅԱՋՈՂՈՒԹԻՒՆ | 3 |
| ՅԱՌԱՋ | 61 | ՅԱՌԱՋ ՔԱՆ | 105 | ՅԱՌԱՋԱԳԱՅԻՄ | 4 | ՅԱՌԱՋԱԳԷՏ | 1 |
| ՅԱՌԱՋԱԳՈՅՆ | 26 | ՅԱՌԱՋԱԳՈՒՇԱԿ | 1 | ՅԱՌԱՋ ԱԾԵԼ (տ. ՅԱՌԱՋ) | 11 | ՅԱՌԱՋԱԾՈՒ | 3 |
| ՅԱՌԱՋԱՆԱՄ | 4 | ՅԱՌԱՋԱՍԱՑ | 1 | ՅԱՌԱՋԱՐԿՈՒԹԻՒՆ | 1 | ՅԱՌԱՋ ԲԵՐԵՄ | 12 |
| ՅԱՌԱՋ ԳԱԼ (տ. ՅԱՌԱՋ) | 43 | ՅԱՌԱՋ ԴՆԵՄ | 7 | ՅԱՌԱՋԵՄ, ՅԱՌԱՋԻՄ | 17 | ՅԱՌԱՋԸՆՏՐՈՒԹԻՒՆ | 1 |
| ՅԱՌԱՋԻԿԱՅ (տ. ԱՌԱՋԱԿԱՅ) | 23 | ՅԱՌԱՋՈՒՍՏ | 2 | ՅԱՌԵՄ | 1 | ՅԱՌՆԵՄ | 102 |
| ՅԱՍՊԻՍ | 1 | ՅԱՏԱԿ | 4 | ՅԱՏԿԱԳՈՅՆ | 1 | ՅԱՏԿԱԿԱՆ | 9 |
| ՅԱՏԿԱՆԱՄ | 11 | ՅԱՏԿԱՊԷՍ | 7 | ՅԱՏԿՈՒԹԻՒՆ | 77 | ՅԱՏՈՒԿ | 82 |
| ՅԱՐԱԴՐՈՒԹԻՒՆ | 1 | ՅԱՐԱՋՈՒԱՐՃ | 2 | ՅԱՐԱՋՈՒԱՃՈՒԹԻՒՆ | 1 | ՅԱՐԱԺԱՄ | 8 |
| ՅԱՐԱԿԱՅ | 1 | ՅԱՐԱԿԱՅՈՒԹԻՒՆ | 1 | ՅԱՐԱԿԻՑ | 1 | ՅԱՐԱԿՑԵՄ, ՅԱՐԱԿՑԻՄ | 1 |
| ՅԱՐԱԿՑՈՒԹԻՒՆ | 1 | ՅԱՐԱՉԳԱԿԱՆ | 4 | ՅԱՐԱՄՆԱՅ | 2 | ՅԱՐԱՄՆԱՅՈՒԹԻՒՆ | 3 |
| ՅԱՐԱՆՈՒՆԱԲԱՐ | 1 | ՅԱՐԱՑՈՅՑ | 35 | ՅԱՐԳԵՄ | 2 | ՅԱՐԴ | 4 |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| ՅԱՐԵԴ | 2 | ՅԱՐԵՄ, ՅԱՐԻՄ | 59 | ՅԱՐԿ | 35 | ՅԱՐՁԱԿԵՄ | 1 |
| ՅԱՐՁԱԿՈՒՄՆ | 1 | ՅԱՐՄԱՐ | 7 | ՅԱՐՄԱՐԵՄ, ՅԱՐՄԱՐԻՄ | 31 | ՅԱՐՄԱՐՈՒԹԻՒՆ | 3 |
| ՅԱՐՈՒԹԻՒՆ | 363 | ՅԱՐՈՒՄՆ | 1 | ՅԱՐՈՒՑԱՆԵՄ | 61 | ՅԱՒԱՆԱԿ | 5 |
| ՅԱՒԵԼՈՒԱԾ | 10 | ՅԱՒԵԼՈՒՄ | 63 | ՅԱՒԵԼՈՒՄՆ | 1 | ՅԱՒԵՐԺԱՀԱՐՍՈՒՆՔ | 3 |
| ՅԱՒԷՏ | 3 | ՅԱՒԻՏԵԱՆ | 221 | ՅԱՒԻՏԵՆԱԿԱՆ | 82 | ՅԱՒԻՏԵՆԱԿԱՆԱՊԷՍ | 1 |
| ՅԱՒԻՏԵՆԱԿՈՒԹԻՒՆ | 1 | ՅԱՓՇՏԱԿԵՄ | 11 | ՅԱՓՇՏԱԿՈՂ (տեքստում նաև՝ ՅԱՓՇՏԱԿՕՂ) | 2 | ՅԱՓՇՏԱԿՈՒԹԻՒՆ | 4 |
| ՅԵԲՈՒՍԱՅ | 1 | ՅԵԴՆԱ | 2 | ՅԵԴՈՅԻԱ | 1 | ՅԵԶԱԲԷԼ | 1 |
| ՅԵԼԼԱԴԱՑԻ | 1 | ՅԵԿՏԱՆ | 2 | ՅԵՂԱԿԱՐԾ | 1 | ՅԵՂՈՒՄ | 4 |
| ՅԵՂՈՒՄՆ | 2 | ՅԵՆՈՒՄ | 1 | ՅԵՇՈՅԻԱ | 1 | ՅԵՌՈՒՄ | 2 |
| ՅԵՍՈՒ | 48 | ՅԵՍՍԵԱՅ | 9 | ՅԵՍՔԱ | 1 | ՅԵՏ | 371 |
| ՅԵՏԱՄՆԱՑ | 1 | ՅԵՏԱՄՏԱԿԱՆ | 1 | ՅԵՏԻՆ | 17 | ՅԵՏՈՅ | 185 |
| ՅԵՏՈՒՍՏ | 1 | ՅԵՏՈՒՍՏ ԿՈՂՄԱՆԷ | 1 | ՅԵՏՍ | 18 | ՅԵՐԿԱՐ | 19 |
| ՅԵՐԿԱՐԱՁԻԳ | 1 | ՅԵՐԿԱՐԵՄ, ՅԵՐԿԱՐԻՄ | 14 | ՅԵՐԿԱՐՈՒԹԻՒՆ | 2 | ՅԵՐԿՈՒԱՆԱՄ | 1 |
| ՅԵՑՈՒՑԱՆԵՄ | 1 | ՅԵՓԹԱՅԻ | 1 | ՅԵՔՈՆԻԱ | 3 | ՅԻՄԱՐ | 15 |
| ՅԻՄԱՐԻՄ | 4 | ՅԻՄԱՐՈՒԹԻՒՆ | 8 | ՅԻՆՈՒՆՔ | 7 | ՅԻՇԱՏԱԿ | 28 |
| ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ | 3 | ՅԻՇԱՏԱԿԵՄ | 10 | ՅԻՇԱՏԱԿՈՒԹԻՒՆ | 9 | ՅԻՇԵՄ | 30 |
| ՅԻՇԵՑՈՒՑԱՆԵՄ | 3 | ՅԻՇՈՂԱԿԱՆՆ | 5 | ՅԻՇՈՂՈՒԹԻՒՆ | 6 | ՅԻՇՈՒՄՆ | 3 |
| ՅԻԶԱԶԵԼ | 1 | ՅԻՍԱՔԱՐՈՒ | 1 | ՅԻՍՆԱԿ | 1 | ՅԻՍՆԱՊԵՏ | 1 |
| ՅԻՍՆԵԱԿ | 2 | ՅԻՍՆԵՐԵԱԿ | 7 | ՅԻՍՈՒՍ | 66 | ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍ | 40 |
| ՅԻՐԱՒԻ | 32 | ՅՂԱՆԱՄ | 27 | ՅՂԱՑՈՒՄՆ | 15 | ՅՂԻ | 1 |
| ՅՂՈՒԹԻՒՆ | 13 | ՅՈԲ | 77 | ՅՈԲԱԲ | 1 | ՅՈԲԵԼԵԱՆ | 2 |
| ՅՈԲՆԱՂ | 1 | ՅՈԳԷՀԱՆԳԻՍՏ | 1 | ՅՈԳՆԱԳՈՅՆ | 1 | ՅՈԹՈՐ | 1 |
| ՅՈԼՈՎ | 4 | ՅՈԼՈՎԱԳՈՅՆ | 1 | ՅՈԼՈՎՈՒԹԻՒՆ | 2 | ՅՈՅԺ | 33 |
| ՅՈՅՆ | 29 | ՅՈՅՍ | 128 | ՅՈՍՏՈՍ | 2 | ՅՈՎԱԲ | 4 |
| ՅՈՎԱԹԱՄ | 1 | ՅՈՎԱԿԻՄ | 11 | ՅՈՎԱՆ | 1 | ՅՈՎԱՍ | 4 |
| ՅՈՎԱՔԱԶ | 2 | ՅՈՎԷԼ | 4 | ՅՈՎԻԴԱ | 2 | ՅՈՎՀԱՆՆԷՍ ՄԿՐՏԻՉ | 2 |
| ՅՈՎՆԱԹԱՆ | 2 | ՅՈՎՆԱՆ | 1 | ՅՈՎՍԱԲԵԹ | 1 | ՅՈՎՍԱՓԱԹ | 6 |
| ՅՈՎՍԷ | 1 | ՅՈՎՍԷՓ | 67 | ՅՈՎՍԷՓ ԱՐԵՄԱԹԱՑԻ | 1 | ՅՈՎՍԷՓ ՓԱԼԱՆԱՑԻ | 1 |
| ՅՈՎՍԻԱ | 2 | ՅՈՎՐԱՄ | 3 | ՅՈՐԴ | 1 | ՅՈՐԴԱՀՈՍ | 1 |
| ՅՈՐԴԱՆԱՆ | 40 | ՅՈՐԴՈՐԵՄ | 8 | ՅՈՐԴՈՐՈՒՄՆ | 3 | ՅՈՐԺԱՄ | 449 |
| ՅՈՐՄԷ ՀԵՏԷ | 3 | ՅՈՐՄԻ | 1 | ՅՈՐՋՈՐՋԵՄ | 1 | ՅՈՒԴԱՅ | 61 |
| ՅՈՒԴԱՅ ՅԱԿՈԲԵԱՆ | 1 | ՅՈՒԴԱՍ | 1 | ՅՈՒԴԻԴ | 2 | ՅՈՒԶԵՄ | 1 |
| ՅՈՒԼԻԱՆՈՍ | 1 | ՅՈՒՂԱՐԿԱՒՈՐ | 1 | ՅՈՒՂԱՐԿԱՒՈՐԵՄ | 1 | ՅՈՒՂԱՐԿԵՄ | 1 |
| ՅՈՒՆԱՐԷՆ | 2 | ՅՈՒՆՎԱՐ | 15 | ՅՈՒՇ ԱՌՆԵԼ (տ. ՈՒՇ) | 1 | ՅՈՒՇԿԱՊԱՐԻԿ | 1 |
| ՅՈՒՍԱԴՐԵՄ | 3 | ՅՈՒՍԱՀԱՏԻՄ | 5 | ՅՈՒՍԱՀԱՏՈՒԹԻՒՆ | 10 | ՅՈՒՍԱՄ | 17 |
| ՅՈՒՍԱՑՈՒՑԱՆԵՄ | 1 | ՅՈՒՍՏԻԱՆՈՍ | 4 | ՅՈՒՍՏԻԱՆՈՍ ԿԱՅՍՐ | 2 | ՅՈՔԱԲԵԹ | 1 |
| ՅՍՏԱԿ | 7 | ՅՍՏԱԿԱՊԷՍ | 1 | ՅՍՏԱԿԵՄ | 1 | ՅՕԴԵՄ | 8 |
| ՅՕԴՈՒԱԾ | 1 | ՅՕԺԱՐ | 2 | ՅՕԺԱՐԱԿԱՆ | 1 | ՅՕԺԱՐԱՑ | 1 |
| ՅՕԺԱՐԻՄ | 7 | ՅՕԺԱՐՈՒԹԻՒՆ | 9 | ՅՕՀԱՆՆ, ՅՈՀԱՆՆ | 31 | ՅՈՀԱՆ ԱՒԵՏԱՐԱՆԻՉ | 1 |
| ՅՕՀԱՆ ԴԱՄԱՍԿԱՑԻ | 1 | ՅՈՀԱՆ ՄԱՆԴԱԿՈՒՆԻ | 2 | ՅՈՀԱՆ ՈՍԿԵԲԵՐԱՆ | 5 | ՅՈՀԱՆՆ ՈՐՈՏՆԵՑԻ | 1 |
| ՅՈՀԱՆ ՕՁՆԵՑԻ | 3 | ՅՈՀԱՆՆԷՍ ՊԼՈՒԶ | 1 | ՅՕՀԱՆՆԷՍ, ՅՕՎՀԱՆՆԷՍ, ՅՈՀԱՆՆԷՍ | 67 | ՅՈՎԱՆ | 1 |
| ՅՕՆՔ | 1 | ՅՕՆԱՆ | 1 | ՅՕՇԵՄ | 4 | ՅՕՐԱՆՉԵՄ | 2 |
| ՅՕՐԻՆԵՄ | 4 | | | | | | |

# Ն

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| ՆԱ | 2251 | ՆԱ ԻՆՔՆ | 4 | ՆԱԵՎ | 82 | ՆԱԲԱԴ, ՆԱԲԱԹ, ՆԱԲԱՏ | 5 |
| ՆԱԲՈՒԳՈԴՈՆՈՍՈՐ | 10 | ՆԱԲՈՒԶԱՐԴԱՆ | 1 | ՆԱԶԱՐԵԹ | 1 | ՆԱԶԵԼԻ | 4 |
| ՆԱԶԵՐԵԹԱՑԻ | 1 | ՆԱԹԱՆ | 12 | ՆԱԽ | 1339 | ՆԱԽ ՔԱՆ (տ. ՅԱՌԱՋ ՔԱՆ) | 84 |
| ՆԱԽԱԳԱՂԱՓԱՐ | 16 | ՆԱԽԱԳԷՏ | 1 | ՆԱԽԱԳԻԾ | 1 | ՆԱԽԱԳԻՏՈՒԹԻՒՆ | 1 |
| ՆԱԽԱԳՈՅ | 3 | ՆԱԽԱԳՈՅԱՆԱԼ | 1 | ՆԱԽԱԳՈՅՆ | 1 | ՆԱԽԱԳՈՐԾԵԼ | 1 |
| ՆԱԽԱԳՈՒՇԱԿ | 1 | ՆԱԽԱԴԱՍԵՄ | 3 | ՆԱԽԱԴՐԵՄ | 1 | ՆԱԽԱԴՐՈՒԹԻՒՆ | 1 |
| ՆԱԽԱԽՆԱՄԱԲԱՐ | 1 | ՆԱԽԱԽՆԱՄԱԿԱՆ | 1 | ՆԱԽԱԽՆԱՄԱՊԷՍ | 1 | ՆԱԽԱԽՆԱՄԵՄ | 6 |
| ՆԱԽԱԽՆԱՄՈՒԹԻՒՆ | 46 | ՆԱԽԱԾԱՆՕԹ | 3 | ՆԱԽԱԾԻՆ | 1 | ՆԱԽԱԿԱՏԱՐ | 1 |
| ՆԱԽԱՀԱՅՐ | 21 | ՆԱԽԱՁԱՅՆ | 1 | ՆԱԽԱՄԱՅՐ | 2 | ՆԱԽԱՄԵԾԱՐ | 2 |
| ՆԱԽԱՆԿԱՐ | 3 | ՆԱԽԱՆՁ | 49 | ՆԱԽԱՆՁԱԽՆԴԻՐ | 4 | ՆԱԽԱՆՁԵԼԻ | 2 |
| ՆԱԽԱՆՁԻՄ | 9 | ՆԱԽԱՆՁՈՏ | 7 | ՆԱԽԱՇԱՒԻՂ | 1 | ՆԱԽԱՊԱՏԻՒ | 4 |
| ՆԱԽԱՊԱՏՄԵՄ | 1 | ՆԱԽԱՊԱՏՈՒԵՄ | 1 | ՆԱԽԱՊԱՏՈՒՈՒԹԻՒՆ | 1 | ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՈՒԹԻՒՆ | 3 |
| ՆԱԽԱՊԵՏՈՒԹԻՒՆ | 1 | ՆԱԽԱՍԱՀՄԱՆ | 1 | ՆԱԽԱՍԱՀՄԱՆԵՄ | 2 | ՆԱԽԱՍԱՀՄԱՆՈՒԹԻՒՆ | 4 |
| ՆԱԽԱՍԱՀՄԱՆՈՒՄՆ | 2 | ՆԱԽԱՍԱՑԵԱԼ | 2 | ՆԱԽԱՍԵՌ | 1 | ՆԱԽԱՍԻՐԵԼ | 1 |
| ՆԱԽԱՍՏԵՂԾ | 13 | ՆԱԽԱՍՏԵՂԾՈՒԱԾ | 1 | ՆԱԽԱՍՐԲԵԱԼ | 1 | ՆԱԽԱՏ | 1 |
| ՆԱԽԱՏԱՆՔ | 2 | ՆԱԽԱՏԵՄ | 10 | ՆԱԽԱՏԵՍ | 7 | ՆԱԽԱՏԵՍԻԼ | 1 |
| ՆԱԽԱՏԵՍՈՒԹԻՒՆ | 16 | ՆԱԽԱՏԻՆՔ | 10 | ՆԱԽԱՏԻՉ | 4 | ՆԱԽԱՏԻՊ | 8 |
| ՆԱԽԱՏՕՆԱԿ | 9 | ՆԱԽԱՐԱՐՉՈՒԹԻՒՆ | 1 | ՆԱԽԴԻՐ | 1 | ՆԱԽԵՐԳԱՆ | 2 |
| ՆԱԽԸՆԹԱՑ | 6 | ՆԱԽԸՆԾԱՅ | 1 | ՆԱԽԸՆՏՐԵԼ | 1 | ՆԱԽԸՆՏՐՈՒԹԻՒՆ | 1 |
| ՆԱԽԻՐ | 1 | ՆԱԽԿԻՆ | 23 | ՆԱԽԿՆԱԲԱՐ | 1 | ՆԱԽՆԻ | 24 |
| Ի ՆԱԽՆՈՒՄՆ | 1 | ՆԱԽՕՐԻՆԱԿ | 1 | ՆԱՀԱՆՋ (տեքստում նաև՝ ՆԱՀԱՆՃ) | 2 | ՆԱՀԱՆՋԵՄ | 1 |
| ՆԱՀԱՊԵՏ | 28 | ՆԱՀԱՏԱԿ | 3 | ՆԱՀԱՏԱԿԱԴԻՐ | 1 | ՆԱՀԱՏԱԿԻՄ | 10 |
| ՆԱՀԱՏԱԿՈՒԹԻՒՆ | 6 | ՆԱՅ | 1 | ՆԱՅԱՍՕՆ, ՆԱՅԱՍՈՆ | 4 | ՆԱՅԻՄ | 27 |
| ՆԱՅՆ | 1 | ՆԱՆԻՐ | 1 | ՆԱՇԻՀ | 26 | ՆԱՊԱՍՏԱԿ | 3 |
| ՆԱՐԴՈՍ | 1 | ՆԱՐՕՏ | 1 | ՆԱՒ | 14 | ՆԱՒԱԲԵԿԻՄ | 1 |
| ՆԱՒԱԲԵԿՈՒԹԻՒՆ | 3 | ՆԱՒԱԹ | 1 | ՆԱՒԱԿԱՏԻՔ | 22 | ՆԱՒԱՀԱՆԳԻՍՏ | 2 |
| ՆԱՒԱՍԱՐԴ | 3 | ՆԱՒԱՍԱՐԴԱՑԻ | 1 | ՆԱՒԱՍԱՐԴՈՒԼ | 1 | ՆԱՒԱՎԱՐ | 3 |
| ՆԱՒԵՄ | 2 | ՆԱՒԹ | 2 | ՆԱՒԻ | 1 | ՆԱՒՈՐԴ | 1 |
| ՆԱՒՈՒՄ | 1 | ՆԱՓՈՐՏ | 3 | ՆԵԱՐԴ (տեքստում նաև՝ ՆԻԱՐԴ) | 3 | ՆԵԲՐՕԹ | 1 |
| ՆԵԽԵՄ | 5 | ՆԵԽՈՒԹԻՒՆ | 1 | ՆԵՂ | 5 | ՆԵՂԱԳՈՅՆ | 2 |
| ՆԵՂԱԿՆ | 1 | ՆԵՂԱՍԻՐՏ | 1 | ՆԵՂԵՄ | 9 | ՆԵՂՈՍ ԳԵՏ | 1 |
| ՆԵՂՈՒԹԻՒՆ | 30 | ՆԵՆԳ | 1 | ՆԵՆԳԱԺՈՏ (տեքստում նաև՝ ՆԵՆԳԺՈՏ) | 1 | ՆԵՆԳԱՒՈՐ | 6 |
| ՆԵՆԳԵՄ | 1 | ՆԵՆԳՈՒԹԻՒՆ | 4 | ՆԵՆԹԱԿԱՅՈՋ | 1 | ՆԵՌՆ | 41 |
| ՆԵՍԻՄՈՍ | 1 | ՆԵՍՏՈՐ(Ք) | 33 | ՆԵՍՏՈՐԱԿԱՆ | 7 | ՆԵՍՏՈՐԵԱՆ | 2 |
| ՆԵՏ | 3 | ՆԵՏՈՂ | 2 | ՆԵՐԲԱՆ(Ք) | 2 | ՆԵՐԲՈՂԵԱՆ | 3 |
| ՆԵՐԳԵՒԻՄ | 1 | ՆԵՐԳՈՅ | 3 | ՆԵՐԳՈՅԱԿԱՆ | 1 | ՆԵՐԳՈՐԾԱԲԱՐ | 1 |
| ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ | 38 | ՆԵՐԳՈՐԾԱՊԷՍ | 2 | ՆԵՐԳՈՐԾԵՄ | 61 | ՆԵՐԳՈՐԾՈՒԹԻՒՆ | 186 |
| ՆԵՐԵԼԱՊԷՍ | 2 | ՆԵՐԵԼԻ | 42 | ՆԵՐԵՄ | 19 | ՆԵՐԸՆԴՈՒՆԱԿ | 9 |
| ՆԵՐԸՆԴՈՒՆԱԿՈՒԹԻՒՆ | 2 | ՆԵՐԸՆԴՈՒՆԻՄ | 2 | ՆԵՐԿԱՅ | 47 | ՆԵՐԿԱՅԱԲԱՐ | 3 |
| ՆԵՐԿԱՅԱԿԱՆ | 4 | ՆԵՐԿԱՅԱՊԷՍ | 3 | ՆԵՐԿԵՄ | 6 | ՆԵՐՀԱԿ | 23 |
| ՆԵՐՀԱԿԱԲԱՐ | 1 | ՆԵՐՀԱԿԱՆ | 4 | ՆԵՐՀԱԿԱՆԱՅ | 7 | ՆԵՐՀԱԿԱՊԷՍ | 1 |
| ՆԵՐՄԱՐԴՈՒԹԻՒՆ | 1 | ՆԵՐՇՆՉԱԿԱՆ | 1 | ՆԵՐՈՂՈՒԹԻՒՆ | 3 | ՆԵՐՈՒՄՆ | 4 |
| Ի ՆԵՐՍ (տ. Ի ՆԵՐՔՍ) | 10 | ՆԵՐՍԷՍ | 9 | ՆԵՐՍԷՍ ԼԱՄԲՐՕՆԱՑԻ | 1 | ՆԵՐՍԷՍ ԿԼԱՅԵՑԻ | 1 |
| ՆԵՐՍԷՍ ՄԵԾ | 1 | ՆԵՐՍԷՍ ՇԻՆՈՂ | 1 | ՆԵՐՏՐԱՄԱԴՐԵԱԼ | 14 | ՆԵՐՔԻՆ | 129 |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| ՆԵՐՔԻՆԻ | 2 | ՆԵՐՔՆԱԳՈՅՆ | 2 | ՆԵՐՔՆԱՏՈՒՆ | 2 | ՆԵՐՔՈՅ | 99 |
| ՆԵՐՔՈՒՍՏ, Ի ՆԵՐՔՈՒՍՏ | 25 | ՆԵՐՔՍ (Ի ՆԵՐՔՍ) | 29 | ՆԵՓԹԱՂԻՄ | 4 | ՆԵՔԱՒՈՎ | 1 |
| ՆԵՔՏԱՌԻՈՍ | 2 | ՆԶՈՎ(Ք) | 11 | ՆԶՈՎԵՄ | 22 | ՆԵԵՄԻ | 7 |
| ՆԸՍԱ | 2 | ՆԺԱՐ | 2 | ՆԻԳ | 5 | ՆԻՋԱԿ | 2 |
| ՆԻԿԻԱԿԱՆ | 7 | ՆԻԿԻԱՅ | 8 | ՆԻԿՈԴԻՄՈՍ | 1 | ՆԻԿՈՄԻԴԱՑԻ | 1 |
| ՆԻԿՈՄԻԿՈՍ | 1 | ՆԻԿՕԼԱՅՈՍ ՀԵՐԵՍԻՈՏ | 1 | ՆԻՆՈՒԷ | 1 | ՆԻՆՈՒԷԱՑԻ | 3 |
| ՆԻՆՋ | 1 | ՆԻՇ | 1 | ՆԻՍԱՆ | 9 | ՆԻՐՀԵՄ | 1 |
| ՆԻՒԹ | 155 | ՆԻՒԹԱԿԱՆ | 16 | ՆԻՒԹԱՊԷՍ | 1 | ՆԻՒԹԱՒՈՐ | 1 |
| ՆԻՒԹԵՂԷՆ | 4 | ՆԻՒԹԵՄ | 3 | ՆԻՒԹՕՐԷՆ | 1 | ՆԻՒՍԱՑԻ | 8 |
| ՆԻՒՍԱՑԻ ԳՐԻԳՈՐ | 4 | ՆԿԱՆԱԿ | 7 | ՆԿԱՏԵԼԻ | 1 | ՆԿԱՏԵՄ | 7 |
| ՆԿԱՏՈՒՄՆ | 3 | ՆԿԱՐ | 3 | ՆԿԱՐԱԳԻՐ | 2 | ՆԿԱՐԱԳՐԵՄ | 2 |
| ՆԿԱՐԵՄ | 27 | ՆԿԱՐԻՉ | 2 | ՆԿՈՒՆ | 3 | ՆԿՐՏԻՄ | 1 |
| ՆՄԱՆ | 252 | ՆՄԱՆԱԲԱՐ | 1 | ՆՄԱՆԱԳՈՅՆ | 1 | ՆՄԱՆԱԳՈՐԾ | 1 |
| ՆՄԱՆԱԿԱՆ | 2 | ՆՄԱՆԱԿԻՑ | 1 | ՆՄԱՆԱՄԱՍՆ | 1 | ՆՄԱՆԱՄԱՍՆԱԲԱՐ | 1 |
| ՆՄԱՆԱՄԱՍՆԵԱԼ | 1 | ՆՄԱՆԱՊԷՍ | 126 | ՆՄԱՆԱՏԻՊ | 1 | ՆՄԱՆԵՄ, ՆՄԱՆԻՄ | 31 |
| ՆՄԱՆԵՑՈՒՑԱՆԵՄ | 10 | ՆՄԱՆՈՒԹԻՒՆ | 68 | ՆՆՋԵՄ | 27 | ՆՆՋԵՑԵԱԼ | 35 |
| ՆՆՋՈՒՄՆ | 2 | ՆՇԱՆ | 125 | ՆՇԱՆԱԳԷՏ | 1 | ՆՇԱՆԱԳԻՐ | 1 |
| ՆՇԱՆԱԴՐՈՒԹԻՒՆ | 1 | ՆՇԱՆԱԿ | 45 | ՆՇԱՆԱԿԱՆ | 2 | ՆՇԱՆԱԿԱՒ | 3 |
| ՆՇԱՆԱԿԵՄ | 405 | ՆՇԱՆԱԿՈՒԹԻՒՆ | 21 | ՆՇԱՆԱՑԻ | 1 | ՆՇԱՆԱՒՈՐ | 5 |
| ՆՇԱՆԱՔԱՐ | 1 | ՆՇԱՆԵՄ | 4 | ՆՇԽԱՐ | 26 | ՆՇՈՅԼ | 8 |
| ՆՈԽԱԶ | 16 | ՆՈԽԱԶՈՏՆ | 1 | ՆՈՃ | 2 | ՆՈՄԻՆՈՍ | 1 |
| ՆՈՅ | 44 | ՆՈՅԵԱՆ ՏԱՊԱՆ | 2 | ՆՈՅՆ | 561 | ՆՈՅՆ ԻՆՔՆ | 42 |
| ՄԻ ԵՒ ՆՈՅՆ | 58 | Ի ՄԻ ԵՒ Ի ՆՈՅՆ | 6 | ՆՈՅՆ ԻՍԿ | 3 | ՆՈՅՆՈՒԹԻՒՆ | 13 |
| ՆՈՅՆՉԱՓ | 4 | ՆՈՅՆՊԷՍ | 630 | ՆՈՅՆՊԻՍԻ | 5 | ՆՈՅՆՔԱՆ | 16 |
| ՆՈՅՆՔԱՆԱԲԱՐ | 2 | ՆՈՐ | 248 | ՆՈՐ ՏԱՐԻ | 1 | ՆՈՐԱԳԻՒՏ | 1 |
| ՆՈՐԱԾԻՆ | 2 | ՆՈՐԱԾՆԻԼ | 4 | ՆՈՐԱՀԱՍ | 2 | ՆՈՐԱՀՐԱՇ | 1 |
| ՆՈՐԱՆԱՄ | 2 | ՆՈՐԸՆԾԱՅ | 1 | ՆՈՐՈԳԵՄ | 33 | ՆՈՐՈԳՈՒՄՆ | 8 |
| ՆՈՒ | 1 | ՆՈՒԱԳ | 2 | ՆՈՒԱԳԵՄ | 2 | ՆՈՒԱԶ | 66 |
| ՆՈՒԱԶԱԳՈՅՆ | 1 | ՆՈՒԱԶԻՄ, ՆՈՒԱԶԵՄ | 60 | ՆՈՒԱԶՈՒԹԻՒՆ | 10 | ՆՈՒԱԶՈՒՆ (տ. ՆՈՒԱԶ) | 3 |
| ՆՈՒԱՂԻՄ, ՆՈՒԱՂԵՄ | 2 | ՆՈՒԱՂՈՒԹԻՒՆ | 1 | ՆՈՒԱՃԵՄ | 3 | ՆՈՒԱՃՈՒՄՆ | 1 |
| ՆՈՒԱՍՏ | 6 | ՆՈՒԱՍՏԱԳՈՅՆ | 5 | ՆՈՒԱՍՏԱԿԱՆ | 1 | ՆՈՒԱՍՏԱՆԱՄ | 1 |
| ՆՈՒԱՍՏԱՑՈՒՑԱՆԵՄ | 2 | ՆՈՒԱՍՏՈՒԹԻՒՆ | 2 | ՆՈՒԱՐՏԱՆ | 1 | ՆՈՒԷՆԱ | 1 |
| ՆՈՒԷՐ | 32 | ՆՈՒԻՐԱՆ | 1 | ՆՈՒԻՐԱՆՈՑ | 1 | ՆՈՒԻՐԵԼԻ | 3 |
| ՆՈՒԻՐԵՄ | 35 | ՆՈՒԻՐՈՒՄՆ | 1 | ՆՈՒՄԱՍ ՊՈՄԻԼՈՍ | 1 | ՆՈՒՆԻ ԿՈՅՍ | 1 |
| ՆՈՒՌՆ | 5 | ՆՈՒՍԱՍ | 1 | ՆՈՒՐԲ | 3 | ՆՊԱՍՏՈՒԹԻՒՆ | 2 |
| ՆՍԵՄ | 2 | ՆՍԵՄԱՆԱՄ | 2 | ՆՍԵՄՈՒԹԻՒՆ | 2 | ՆՍՏԵՄ, ՆՍՏԻՄ | 80 |
| ՆՍՏՈՒՑԱՆԵՄ | 4 | ՆՐԲԱԳՈՅՆ | 1 | ՆՐԲԱՀԱՅԵԱՑ | 3 | ՆՐԲԵՄ | 1 |
| ՆՐԲՈՒԹԻՒՆ | 6 | ՆՕՍՐ | 5 | ՆՕՍՐԱՆԱԼ | 1 | ՆՕՏՈՍ | 5 |

## Շ

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| ՇԱ | 1 | ՇԱԲԱԹ | 111 | ՇԱԲԱԹԱՆԱՄ | 1 | ՇԱԲԱԹԱՊԱՀ | 6 |
| ՇԱԲԱԹԱՑՈՒՑԱՆԵՄ | 1 | ՇԱԲԱԹԵԱՆ | 1 | ՇԱՀ | 14 | ՇԱՀԱՊՕՆ | 1 |
| ՇԱՀԱՎԱՃԱՌ | 1 | ՇԱՀԻՄ | 7 | ՇԱՂԱԴՐԵԱԼ | 2 | ՇԱՂԱԽ | 1 |
| ՇԱՂԱԽԵՄ | 3 | ՇԱՂԱԽՈՒՄՆ | 1 | ՇԱՂԱԿՐԱՏԵՄ | 3 | ՇԱՂԱՇԱՐՈՒՄՆ | 1 |
| ՇԱՂԱՊԱՏԵՄ | 1 | ՇԱՂԻՂ | 1 | ՇԱՂԿԱՊ | 19 | ՇԱՂԿԱՊԵՄ | 5 |
| ՇԱՂԿԱՊՈՒԹԻՒՆ | 1 | ՇԱՂՓԱՂՓ | 1 | ՇԱՄԱՆԴԱՂ | 2 | ՇԱՄԲ | 1 |
| ՇԱՄԻՐԱՄ | 1 | ՇԱՄՍ | 1 | ՇԱՄՐՏԱՑԻ | 1 | ՇԱՆԱԴԷՄՔ | 1 |
| ՇԱՆԱՃԱՆՃ | 2 | ՇԱՆԹ | 3 | ՇԱՉՈՒՄՆ | 1 | ՇԱՊԻԿ | 1 |
| ՇԱՌԱԳՈՒՆԻՄ | 2 | ՇԱՌԱՒԻՂ | 4 | ՇԱՌԱՒԻՂԵՄ | 2 | ՇԱՏ | 5 |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| ՇԱՏԱԽՕՍ | 2 | ՇԱՏԱԿՈՒԼ | 2 | ՇԱՏԱՆԱՄ | 2 | ՇԱՐԱԲԱՆՈՒԹԻՒՆ | 1 |
| ՇԱՐԱԳՐԵՄ | 1 | ՇԱՐԱԴԱՍԵՄ | 4 | ՇԱՐԱԴՐԵՄ | 5 | ՇԱՐԱԽԱՌՆԵԼ | 1 |
| ՇԱՐԱԿԱՆ | 22 | ՇԱՐԱԿՑԵԼ | 2 | ՇԱՐԱՄԱՆԵՄ | 1 | ՇԱՐԱՊՆԴԵԼ | 1 |
| ՇԱՐԱՒ | 1 | ՇԱՐԱՒԱՅՈՏ | 1 | ՇԱՐԺ | 2 | ՇԱՐԺԱԿԱՆ | 5 |
| ՇԱՐԺԵՄ | 112 | ՇԱՐԺՈՒԹԻՒՆ | 15 | ՇԱՐԺՈՒՄՆ | 86 | ՇԱՐԺՈՒՆ | 2 |
| ՇԱՐՈՑ | 1 | ՇԱՐՈՒՆԱԿ | 1 | ՇԱՐՈՒՆԱԿԵՄ | 2 | ՇԱՒԻՂ | 9 |
| ՇԱՓԻՂԱՅ, ՇԱՓԻՒՂԱՅ | 3 | ՇԱՔԱՐ | 1 | ՇԵՂԻՄ | 3 | ՇԵՂՋ | 1 |
| ՇԵՂՋԱԿՈՒՏԵՄ | 1 | ՇԷԿ | 5 | ՇԷՆ | 1 | ՇԻԼ | 1 |
| ՇԻԹ, ՇԻՏ | 6 | ՇԻԿԱԳՈՅՆ | 1 | ՇԻԿՈՒԹԻՒՆ | 1 | ՇԻՆԱԿԱՆ | 2 |
| ՇԻՆԵՄ | 93 | ՇԻՆՈՒԱԾ | 33 | ՇԻՆՈՒԹԻՒՆ | 7 | ՇԻՃ | 1 |
| ՇԻՋԱՆԻՄ | 10 | ՇԻՋՈՒՑԱՆԵՄ | 7 | ՇԻՐԻՄ | 1 | ՇԻՒՂ | 1 |
| ՇԼՆԻ | 1 | ՇՂԹԱՅ | 3 | ՇՄԱՒՈՆ | 5 | ՇՆԱԲԱՐՈՅ | 1 |
| ՇՆԱՄ | 5 | ՇՆԱՑՕՂ | 4 | ՇՆՈՐՀ | 326 | ՇՆՈՐՀԱԲԱՇԽ | 1 |
| ՇՆՈՐՀԱԼԻ | 3 | ՇՆՈՐՀԱԿԱԼԻՄ | 3 | ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹԻՒՆ | 6 | ՇՆՈՐՀԱԿԱՆ | 12 |
| ՇՆՈՐՀԵՄ | 27 | ՇՆՈՐՀԸՆԿԱԼ | 1 | ՇՆՈՒԹԻՒՆ | 11 | ՇՆՉԱԲԵՐԻՄ | 2 |
| ՇՆՉԱԿԱՆ | 6 | ՇՆՉԱՒՈՐ | 14 | ՇՆՉԱՒՈՐԵՄ | 1 | ՇՆՉԵՄ | 5 |
| ՇՆՉԵՐԱԿ | 6 | ՇՆՉՈՒՄՆ | 2 | ՇՈԳՈԼԻ | 1 | ՇՈՂ | 8 |
| ՇՈՂԱԿԱԹ | 2 | ՇՈՂԱՄ | 1 | ՇՈՂՈՔՈՐԹ | 1 | ՇՈՂՈՔՈՐԹԵՄ | 1 |
| ՇՈՐԹԵՄ | 1 | ՇՈՒՆ | 17 | ՇՈՒՆՉ | 61 | ՇՈՒՏԱՓՈՅԹ | 1 |
| ՇՈՒՏՈՎ | 1 | ՇՈՒՐԹՆ | 14 | ՇՈՒՐՋ | 21 | ՇՈՒՐՋԱՆԱԿԻ | 6 |
| ՇՈՒՔ | 2 | ՇՌԱՅԼԻՄ | 1 | ՇՏԵՄԱՐԱՆ | 5 | ՇՐԱՅԻԱ | 1 |
| ՇՐՋԱԳԱՅԻՄ | 1 | ՇՐՋԱԳԱՅՈՒԹԻՒՆ | 4 | ՇՐՋԱԿԱՅ | 4 | ՇՐՋԱՆ | 3 |
| ՇՐՋԱՆԱԿ | 1 | ՇՐՋԱՊԱՏԵՄ | 5 | ՇՐՋԱՊԱՐԵԱԼ | 1 | ՇՐՋԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆ | 1 |
| ՇՐՋԵՄ, ՇՐՋԻՄ | 42 | ՇՐՏՆՈՒՄ | 1 | ՇՓՈԹԵՄ | 20 | ՇՓՈԹՈՒՄՆ | 9 |
| ՇՕԹ | 3 | ՇՕՇԱՓԱԿԱՆ | 2 | ՇՕՇԱՓԵԼԻ | 8 | ՇՕՇԱՓԵԼԻՔ | 8 |
| ՇՕՇԱՓԵՄ | 6 | ՇՕՇԱՓՈՒՄՆ | 4 | | | | |

## Ո

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| Ո՞ կմ Ո՛ | 10 | Ո՞ ՈՔ | 2 | ՈԳԵՀԱՆԳԻՍՏ (տեքստում՝ ՈԳԷՀԱՆԳԻՍՏ) | 2 | ՈԳԵՇԱՀ (տեքստում՝ ՈԳԷՇԱՀ) | 1 |
| ՈԳԵՍԷՐ | 1 | ՈԳԵՎԱՐ (տեքստում՝ ՈԳԷՎԱՐ) | 3 | ՈԳԻ | 24 | ՅՈԳԻՈՑ ՀԱՆԵԼ | 1 |
| ՈԳՈՐԻՄ | 1 | ՈՁԻԱ | 4 | ՈՁՆԻ | 2 | ՈԼՈՄՊԻԱԴ | 4 |
| ՈԼՈՐՏՔ | 2 | ՈԽ | 3 | ՈՂԲ | 3 | ՈՂԲԱՄ | 1 |
| ՈՂԴԻԿԻՆ | 1 | ՈՂԿՈՅՋ | 7 | ՈՂՆ | 1 | ՈՂՆԱՇԱՐ | 1 |
| ՈՂՈԳՈՄԵԱՆ | 5 | ՈՂՈՂԵՄ | 5 | ՈՂՈՐԿ | 1 | ՈՂՈՐՄ | 3 |
| ՈՂՈՐՄԱԾ | 11 | ՈՂՈՐՄԱԾՈՒԹԻՒՆ | 2 | ՈՂՈՐՄԵԱՅ (շարականի տեսակ) | 12 | ՈՂՈՐՄԵԼԻ | 3 |
| ՈՂՈՐՄԻՄ | 18 | ՈՂՈՐՄՈՒԹԻՒՆ | 143 | ՈՂՈՔԱԿԱՆ | 1 | ՈՂՋ | 1 |
| ՈՂՋ ԼԻՆԻՄ | 3 | ՈՂՋԱԽՈՀ | 18 | ՈՂՋԱԽՈՀՈՒԹԻՒՆ | 16 | ՈՂՋԱԿԷԶ | 23 |
| ՈՂՋԱԿԻԶԵՄ | 4 | ՈՂՋԱՆԱՄ | 3 | ՈՂՋԱՑՈՒՑԱՆԵՄ | 3 | ՈՂՋՈՅՆ | 16 |
| ՈՂՋՈՅՆ ՏԱԼ | 4 | ՈՂՋՈՅՆԱՌԱՔՆ | 1 | ՈՂՋՈՅՆԸՆԿԱԼ | 1 | ՈՂՋՈՒԹԻՒՆ | 9 |
| ՈՂՋՈՒՆԱԲԵՐ | 1 | ՈՂՋՈՒՆԵՄ | 7 | ՈՄՆ | 445 | ՈՆՑ | 2 |
| Ո՛Չ | 3518 | ՈՉ ԱՅԼ ԻՆՉ | 20 | Ո՞Չ ԱՊԱՔԷՆ | 5 | ՈՉ ԲՆԱՒ | 4 |
| ՈՉ ԳՈՅ | 42 | ՈՉԳՈՅՈՒԹԻՒՆ | 2 | ՈՉ ԵՐԲԷՔ | 15 | ՈՉ ԵՒՍ | 14 |
| ՈՉԷ | 52 | ՈՉԷՈՒԹԻՒՆ | 1 | ՈՉ ԹԷ | 36 | ՈՉԻՆՉ | 36 |
| ՈՉ ԻՆՉ | 92 | ՈՉԽԱՐ | 29 | ՈՉԽԱՐԱՆՈՑ | 1 | ՈՉ ՄԻ | 11 |
| ՈՉ ՄԻԱՅՆ | 49 | ՈՉՆՉԱՆԱՄ | 1 | ՈՉՆՉՈՒԹԻՒՆ | 2 | ՈՉ ՈՔ | 86 |
| ՈՉՔՈՐ | 1 | ՈՌՈԳԵՄ | 12 | ՈՌՈԳՈՒՄՆ | 1 | ՈՍԿԵԱԿ | 1 |
| ՈՍԿԵԲԵՐԱՆ կմ ՈՍԿԷԲԵՐԱՆ | 13 | ՈՍԿԵԳՈՅՆ (տեքստում՝ ՈՍԿԷԳՈՅՆ) | 1 | ՈՍԿԵԶԱՐԴԵՄ | 1 | ՈՍԿԵՂԷՆ | 4 |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| ՈՍԿԵՊԱՏ | 2 | ՈՍԿԵՏԵՍԱԿ | 1 | ՈՍԿԻ | 47 | ՈՍԿՐ | 55 |
| ՈՍՈԽ | 9 | ՈՍՏ | 7 | ՈՍՏԱՅՆԱՆԿՈՒԹԻՒՆ | 1 | ՈՍՏԱՔԱՆՑ | 1 |
| Ո՞Վ | 38 | ՈՎԲԷԹ | 3 | ՈՎԳ | 1 | ՈՎԿԻԱՆՈՍ | 1 |
| ՈՎՍԱՆՆԱՅ | 4 | ՈՎՍԻԱ | 13 | ՈՎՐԷԲՆ | 1 | ՈՏՆ | 114 |
| ՅՈՏՆ ԿԱԼ | 4 | ՈՏՆԱԲԵԿ | 1 | ՈՏՆԱԼՈՒԱՅ | 2 | ՈՏՆԱԿԱՊԵՄ | 1 |
| ՈՏՆԱՁԱՅՆՈՒԹԻՒՆ | 1 | ՈՏՆՀԱՐ (ԼԻՆԵԼ) | 1 | ՈՐ | 4490 | ՈՐ ԵՒ | 78 |
| ՈՐ ԵՒ ԻՑԷ | 4 | ՈՐ ԻՆՉ | 59 | ՈՐ ՈՔ | 11 | ՈՐԱԿ | 66 |
| ՈՐԱԿԱՆԱՄ | 2 | ՈՐԱԿՈՒԹԻՒՆ | 26 | ՈՐԴԷԳԻՐ | 3 | ՈՐԴԵԳՐԵԼ | 2 |
| ՈՐԴԵԳՐՈՒԹԻՒՆ | 10 | ՈՐԴԵԾՆՈՒԹԻՒՆ կմ ՈՐԴԷԾՆՈՒԹԻՒՆ | 6 | ՈՐԴԻ | 780 | ՈՐԴԻ ԱՍՏՈՒԱԾ | 2 |
| ՈՐԴԻԱԿԱՆ | 2 | ՈՐԴԻԱՆԱՄ | 3 | ՈՐԴԻՈՒԹԻՒՆ | 11 | ՈՐԴՆ | 17 |
| ՈՐԴՆԱԼԻՑ | 1 | ՈՐԹ | 15 | ՈՐԹԱԳՈՐԾՈՒԹԻՒՆ | 1 | ՈՐԹԱՊԱՇՏ | 1 |
| ՈՐԹԻ (տ. ՕՐԹԻ) | 2 | ՈՐԻՃ | 13 | ՈՐԻՃ ՈՐԻՃ | 2 | ՈՐԿՈՐ | 1 |
| ՈՐԿՈՐՍՏԵԼ | 1 | ՈՐԿՈՐՍՏՈՒԹԻՒՆ | 14 | ՈՐԿՐԱՄՈԼՈՒԹԻՒՆ | 8 | ՈՐՄ | 9 |
| ՈՐՈԳԱՅԹ | 1 | ՈՐՈԳԻՆԷՍ | 3 | ՈՐՈՂՄԱԾ | 1 | ՈՐՈՃ | 1 |
| ՈՐՈՃԵՄ | 1 | ՈՐՈՄՆ | 5 | ՈՐՈՆԵՄ | 2 | ՈՐՈՇԱԿԻ | 1 |
| ՈՐՈՇԵԼԻ | 1 | ՈՐՈՇԵՄ | 94 | ՈՐՈՇԻՉ | 1 | ՈՐՈՇՈՒՄՆ | 26 |
| ՈՐՈՋ | 2 | ՈՐՈՎԱՅՆ | 22 | ՈՐՈՎԱՅՆԱՄՈԼ | 3 | ՈՐՈՎԱՅՆԱՄՈԼՈՒԹԻՒՆ | 2 |
| ՈՐՈՎՀԵՏԵՒ | 8 | ՈՐՈՏ | 15 | ՈՐՈՏԱՄ | 3 | ՈՐՈՏՈՒՄՆ | 8 |
| Ո՛ՐՉԱՓ | 10 | Ո՞ՐՉԱՓ ԵՒՍ | 2 | ՈՐՉԱՓՈՒԹԻՒՆ | 1 | ՈՐՊԷՍ | 2670 |
| ՈՐՊԷՍ ԶԻ | 2 | ՈՐՊԷՍ ԹԷ | 23 | ՈՐՊԻՍԻ (Ո՞ՐՊԻՍԻ) | 16 | ՈՐՊԻՍՈՒԹԻՒՆ | 49 |
| ՈՐՋ | 1 | ՈՐՍ | 1 | ՈՐՍԱՄ | 1 | ՈՐՍՈՐԴ | 1 |
| ՈՐՔԱՆ | 116 | ՈՐՔԱՆԱԲԱՐ | 3 | ՈՐՔԱՆՈՒԹԻՒՆ | 13 | ՈՒԹՕՐԵԱՅ | 3 |
| ՈՒԺ (տ. ՈՅԺ) | 9 | ՈՒԺԳԻՆ | 1 | ՈՒԺԳՆՈՒԹԻՒՆ | 2 | ՈՒԺԵՂ | 8 |
| ՈՒԺՈՎԱՆԱՄ | 1 | ՈՒԻԱՅ | 1 | ՈՒԼ | 1 | ՈՒԼՆ | 1 |
| ՈՒԽՏ | 33 | ՈՒԽՏԱԶԱՆՑ | 2 | ՈՒԽՏԱԿԱՆ | 1 | ՈՒԽՏԱՒՈՐ | 9 |
| ՈՒԽՏԵՄ | 9 | ՈՒՂԱՐԿԵԼ | 1 | ՈՒՂԳԱՐԱՑԻ | 1 | ՈՒՂԳԻՐԱՑԻ | 1 |
| ՈՒՂԵԿԻՑ | 2 | ՈՒՂԵՂ | 12 | ՈՒՂԻՂ | 58 | ՈՒՂԽ | 1 |
| ՈՒՂՂԱԿԱՆ | 5 | ՈՒՂՂԱԿԻ | 23 | ՈՒՂՂԱԿԻՑ | 1 | ՈՒՂՂԱԿՇԻՌ | 1 |
| ՈՒՂՂԱՁԵՒ | 2 | ՈՒՂՂԱՁԵՒՈՒԹԻՒՆ | 3 | ՈՒՂՂԱՊԷՍ | 7 | ՈՒՂՂԱՓԱՌ | 34 |
| ՈՒՂՂԱՓԱՌՈՒԹԻՒՆ | 6 | ՈՒՂՂԵՄ | 46 | ՈՒՂՂԵՑԻՆ, ՈՒՂՂԻՑԻՆ (Շարականի տեսակ) | 2 | ՈՒՂՂՈՐԴ | 1 |
| ՈՒՂՂՈՒԹԻՒՆ | 41 | ՈՒՂՏ | 11 | ՈՒՆԱԿԱՆ | 3 | ՈՒՆԱԿԱՆԱՄ | 4 |
| ՈՒՆԱԿՈՒԹԻՒՆ | 53 | ՈՒՆԱՅՆ | 4 | ՈՒՆԱՅՆԱԽՈՀ | 2 | ՈՒՆԱՅՆԱՆԱՄ | 2 |
| ՈՒՆԱՅՆԱՊԷՍ | 1 | ՈՒՆԱՅՆՈՒԹԻՒՆ | 5 | ՈՒՆԴ | 1 | ՈՒՆԻՄ | 960 |
| ՈՒՆԿԻ | 1 | ՈՒՆԿՆ | 12 | ՈՒՆՉ | 3 | ՈՒՇ | 1 |
| ՈՒՇԻՄ | 6 | ՈՒՌ | 3 | ՈՒՌԻ | 1 | ՈՒՌԿԱՆ | 1 |
| ՈՒՌՃԱԼՐԱՑԵԱԼ | 1 | ՈՒՌՀԱՅ | 1 | ՈՒՌՆ | 4 | ՈՒՌՆԱՅ | 2 |
| ՈՒՌՆՈՒՄ կմ ՈՒՌՉԻՄ | 4 | ՈՒՍ | 16 | ՈՒՍԱՆԻՄ | 67 | ՈՒՍԱՆՈՑ | 2 |
| ՈՒՍՈՂ | 1 | ՈՒՍՈՂՈՒԹԻՒՆ (տ. ՈՒՍՈՒՄՆ) | 2 | ՈՒՍՈՒՄՆ | 27 | ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ | 1 |
| ՈՒՍՈՒՄՆԱԿԻՑ | 1 | ՈՒՍՈՒՑԱՆԵՄ | 55 | ՈՒՍՈՒՑԻՉ | 9 | ՈՒՍՈՒՑՈՒՄՆ | 2 |
| ՈՒՍՏ | 2 | ՈՒՍՏԵՔ | 1 | ԱՄԵՆԱՅՆ ՈՒՍՏԵՔ | 1 | ՈՒՍՏԻ | 143 |
| ՈՒՍՏԻ ԵՒ | 5 | ՈՒՍՏԻԱՆԷ | 1 | ՈՒՍՏԻԱՆՈՍ | 1 | ՈՒՍՏՐ | 6 |
| ՈՒՏԵԼԻ | 14 | ՈՒՏԵՄ | 152 | ՈՒՏԵԼ ՏԱԼ | 1 | ՈՒՏԻՔ | 13 |
| Ո՞ՒՐ | 131 | ՈՒՐԵՒ | 2 | ՈՒՐ ՈՒՐԵՔ | 4 | ՈՒՐ ԵՒ ԻՑԷ | 1 |
| ՈՒՐԱԽ | 4 | ՈՒՐԱԽ ԼԻՆԻՄ կմ ԵՄ | 10 | ՈՒՐԱԽԱՆԱՄ | 26 | ՈՒՐԱԽԱՐԱՐ | 5 |
| ՈՒՐԱԽՈՒԹԻՒՆ | 60 | ՈՒՐԱՆԱՄ | 40 | ՈՒՐԱՑԵԱԼ, ՈՒՐԱՑՈՂ | 10 | ՈՒՐԱՍՏ | 1 |
| ՈՒՐԱՐ | 1 | ՈՒՐԱՑԱԿԱՆ | 8 | ՈՒՐԱՑՈՒԹԻՒՆ | 6 | ՈՒՐԱՑՈՒՄՆ | 4 |
| ՈՒՐԲԱԹ | 52 | ՈՒՐԲԱԹԱԶԵՆ | 1 | ՈՒՐԵՄՆ | 47 | ՈՒՐԵՔ և ՈՉ ՈՒՐԵՔ | 33 |
| ՈՒՐԻԱ | 3 | ՈՒՐԻԱՍ | 1 | ՈՒՐԻԷԼ | 1 | ՈՒՐԻՇ | 3 |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| ՈՒՐՈՅՆ | 1 | ՈՒՐՈՒԱԿԱՆ | 6 | ՈՓՆԻ | 2 | ՈՒՐՈՒԿ | 1 |
| ՈՔ | 219 | ՈՔ ԵՒ ԻՑԷ | 2 | ՈՔՈՋԻԱ | 3 | ՈՔՈՂԻԱ | 1 |

## Չ

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| ՉԱՄԻՉ | 1 | ՉԱՐ | 552 | ՉԱՐԱԲԱՐՈՅ | 5 | ՉԱՐԱԳՈՅՆ | 3 |
| ՉԱՐԱԳՈՐԾ | 5 | ՉԱՐԱԹՈՅՆ | 1 | ՉԱՐԱԽԱՅՏ | 1 | ՉԱՐԱԽԱՌՆ | 1 |
| ՉԱՐԱԽԻՆԴ | 2 | ՉԱՐԱԽՈՐՀՈՒՐԴ | 1 | ՉԱՐԱԽՕՍԵՄ | 5 | ՉԱՐԱԿԱՄ | 3 |
| ՉԱՐԱԿԱՐԾԻՔ | 1 | ՉԱՐԱՆԱՄ | 7 | ՉԱՐԱՉԱՐ | 6 | ՉԱՐԱՍԷՐ | 1 |
| ՉԱՐԱՑՈՒՑԱՆԵՄ | 3 | ՉԱՐԱՓԱՌ | 7 | ՉԱՐԱՓԱՌՈՒԹԻՒՆ | 1 | ՉԱՐԻՔ | 86 |
| ՉԱՐՈՒԹԻՒՆ | 46 | ՉԱՐՉԱՐԱԿԻՑ | 6 | ՉԱՐՉԱՐԱԿՑԻՄ | 1 | ՉԱՐՉԱՐԱՆՔ | 90 |
| ՉԱՐՉԱՐԵԼԻ | 8 | ՉԱՐՉԱՐԵՄ | 59 | ՉԱՐՉԱՐԻՉ | 2 | ՉԱՓ | 72 |
| ՉԱՓԱՒՈՐ | 23 | ՉԱՓԱՒՈՐԵՄ | 7 | ՉԱՓԱՒՈՐՈՒԹԻՒՆ | 4 | ՉԱՓԵՄ | 24 |
| ՉԱՓՈՒՄՆ | 1 | ՉԵՒ, ՉԵՒ ԵՒՍ | 3 | ՉԷ | 32 | ՉԷՋՈՔ (տեքստում՝ ՉԵՋՈՔ) | 1 |
| ՉԷՋՈՏՔ | 2 | ՉԻՔ | 2 | ՉԿԱՄ | 1 | ՉԿԱՅ | 1 |
| ՉՂՋԻԿԱՆ | 1 | ՉՆԱՇԽԱՐՀԻԿ | 1 | ՉՆՉԻՆ | 3 | ՉՈՐ | 41 |
| ՉՈՐԱՆԱՄ | 13 | ՉՈՐԱՑՈՒՑԱՆԵՄ | 1 | ՉՈՐԱՑՈՒՑԻՉ | 1 | ՉՈՐԵՔԱՆԿԻՒՆԻ | 1 |
| ՉՈՐԵՔԾԱԳԵԱՆ | 2 | ՉՈՐԵՔԿԵՐՊԵԱՆ | 6 | ՉՈՐԵՔԿՈՒՍԻ | 3 | ՉՈՐԵՔՆԻՒԹԵԱՅ | 7 |
| ՉՈՐԵՔՇԱԲԱԹԻ | 37 | ՉՈՐԵՔՕՐԵԱՅ | 1 | ՉՈՐՈՒԹԻՒՆ | 11 | ՉՈՐՔՈՏԱՆԻ | 4 |
| ՉՈՒԱՆ | 3 | ՉՈՒԱՆԵԱՅ կմ ՉՈՒԱՆԵՂԷՆ | 1 | ՉՈՒԵՄ | 4 | ՉՈՔԱՅ (տ. ԵՐԹԱՄ, ՉՈԳԱՄ) | 1 |
| ՉՔԱՒՈՐՈՒԹԻՒՆ | 2 | ՉՔՆԱՂ | 1 | | | | |

## Պ

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| ՊԱԼԱՏ | 1 | ՊԱԼԱՐ | 1 | ՊԱԼՀ | 1 | ՊԱԼՂԱՄ | 8 |
| ՊԱԽՐԷ | 1 | ՊԱԿԱՍ | 73 | ՊԱԿԱՍԱԿԱՆ | 3 | ՊԱԿԱՍԱՄԻՏ | 2 |
| ՊԱԿԱՍԵՄ կմ ՊԱԿԱՍԻՄ | 62 | ՊԱԿԱՍԵՑՈՒՑԱՆԵՄ | 2 | ՊԱԿԱՍՈՒԹԻՒՆ | 90 | ՊԱԿԱՍՈՒՄՆ | 3 |
| ՊԱԿՆՈՒՄ (ՊԱԿՉԻՄ) | 2 | ՊԱՀ | 5 | ՊԱՀԱՆՋԵՄ | 12 | ՊԱՀԱՆՋՈՂ | 1 |
| ՊԱՀԱՆՋՈՒՄՆ | 1 | ՊԱՀԱՊԱՆ | 31 | ՊԱՀԱՐԱՆ | 1 | ՊԱՀԵԼԻ | 5 |
| ՊԱՀԵՄ | 160 | ՊԱՀԵՍՏ | 4 | ՊԱՀՈՂ | 12 | ՊԱՀՊԱՆԱՊԵՏ | 1 |
| ՊԱՀՊԱՆԵՄ | 3 | ՊԱՀՊԱՆՈՂ | 3 | ՊԱՀՊԱՆՈՒԹԻՒՆ | 16 | ՊԱՀՔ | 114 |
| ՊԱՂ | 1 | ՊԱՂԱՏԻՏ | 1 | ՊԱՂԷՍՏԻՆ | 1 | ՊԱՂԻՄ | 1 |
| ՊԱՂՊԱՋ | 1 | ՊԱՂՏԱՍԱՐ | 1 | ՊԱՄՓԻՒԼԱՑԻ | 1 | ՊԱՅԾԱՌ | 26 |
| ՊԱՅԾԱՌԱԳՈՅՆ | 1 | ՊԱՅԾԱՌԱԽՕՍՈՒԹԻՒՆ | 1 | ՊԱՅԾԱՌԱԿԵՐՊՈՒԹԻՒՆ | 1 | ՊԱՅԾԱՌԱՄԻՏ | 1 |
| ՊԱՅԾԱՌԱՆԱՄ | 23 | ՊԱՅԾԱՌԱՊԷՍ | 1 | ՊԱՅԾԱՌԱՑՈՒՑԱՆԵՄ | 5 | ՊԱՅԾԱՌՈՒԹԻՒՆ | 14 |
| ՊԱՅՄԱՆ | 1 | ՊԱՆ | 4 | ՊԱՆԴԽՏԱՆԱՄ, ՊԱՆԴԽՏԻՄ | 3 | ՊԱՆԴՈՒԽՏ | 1 |
| ՊԱՆԹԵՐ | 4 | ՊԱՆԻՐ | 1 | ՊԱՆՓԻՒԼԱՑԻ | 1 | ՊԱՇԱՐԵՄ | 9 |
| ՊԱՇՏԵԼԻ | 2 | ՊԱՇՏԵՄ | 23 | ՊԱՇՏՈՒՄՆ | 4 | ՊԱՇՏՊԱՆԵՄ | 1 |
| ՊԱՇՏՕՆ | 35 | ՊԱՇՏՕՆԵԱՅ | 16 | ՊԱՊ | 11 | ՊԱՊ ՀՌՕՄԱՅ | 1 |
| ՊԱՊԱԿՈՒՄՆ | 1 | ՊԱՊԱՆՁԻՄ | 1 | ՊԱՊԱՆՁՈՒՄՆ | 1 | ՊԱՊԻԱՆՈՍ | 1 |
| ՊԱՍՔԱ | 2 | ՊԱՍՔԻՄ | 1 | ՊԱՏ | 1 | ՊԱՏ ԱՌՆՈՒԼ | 1 |
| ՊԱՏԱՀԱԿԱՆ | 26 | ՊԱՏԱՀԱՐ | 1 | ՊԱՏԱՀԻՄ | 15 | ՊԱՏԱՀՈՒՄՆ | 114 |
| ՊԱՏԱՆ | 5 | ՊԱՏԱՆԵԱԿ | 6 | ՊԱՏԱՆԻ | 1 | ՊԱՏԱՌ | 12 |
| ՊԱՏԱՌԵՄ | 48 | ՊԱՏԱՌՈՒՄՆ | 1 | ՊԱՏԱՍԽԱՆԵՄ | 82 | ՊԱՏԱՍԽԱՆԻ | 31 |
| ՊԱՏԱՍԽԱՆԻ ԱՌՆԵԼ | 1 | ՊԱՏԱՍԽԱՆԻ ՏԱԼ, ՏԱԼ ՊԱՏԱՍԽԱՆԻ | 8 | ՊԱՏԱՏԵՄ | 1 | ՊԱՏԱՐԱԳ | 212 |
| ՊԱՏԱՐԱԳԵԼԻ | 1 | ՊԱՏԱՐԱԳԵՄ | 49 | ՊԱՏԱՐԱԳԻՉ | 1 | ՊԱՏԳԱՄ | 8 |
| ՊԱՏԳԱՄԱԲԵՐ | 4 | ՊԱՏԳԱՄԱՒՈՐ | 1 | ՊԱՏԵԱՆ | 3 | ՊԱՏԵՀ | 1 |
| ՊԱՏԵՄ | 28 | ՊԱՏԵՆԱԹԵՒ | 1 | ՊԱՏԵՐԱԶՄ | 38 | ՊԱՏԵՐԱԶՄԱԿԻՑ | 2 |
| ՊԱՏԵՐԱԶՄԻՄ | 19 | ՊԱՏԵՐԱԶՄՈՂ | 2 | ՊԱՏԺԱԿԱՆ | 1 | ՊԱՏԺԱԿԻՑ | 1 |
| ՊԱՏԺԱՊԱՐՏ | 3 | ՊԱՏԺԱՒՈՐ | 1 | ՊԱՏԺԵԼԻ | 1 | ՊԱՏԺԵՄ | 61 |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| ՊԱՏԻԺ | 176 | ՊԱՏԻՒ | 65 | ՊԱՏԿԱՆԵՄ | 2 | ՊԱՏԿԱՌԱՆՔ | 3 |
| ՊԱՏԿԱՌԵԼԻ | 1 | ՊԱՏԿԱՌԵՄ | 1 | ՊԱՏԿԵԼ | 4 | ՊԱՏԿԵՐ | 176 |
| ՊԱՏԿԵՐԱԳՈՐԾ | 1 | ՊԱՏԿԵՐԱԿԻՑ | 2 | ՊԱՏԿԵՐԱՊԷՍ | 1 | ՊԱՏԿԵՐԱՑՈՅՑ | 1 |
| ՊԱՏԿԵՐԱՑՈՒ-ՑՈՒԹԻՒՆ | 1 | ՊԱՏԿԵՐԵՄ | 1 | ՊԱՏԿՈՒԹԻՒՆ | 1 | ՊԱՏՃԱՌ(Ք) | 445 |
| ՊԱՏՃԱՌԱԲԱՆԱԿԱՆ | 4 | ՊԱՏՃԱՌԱԿԱՆ | 1 | ՊԱՏՃԱՌԱՒՈՐ | 2 | ՊԱՏՃԱՌԵԼԻ | 8 |
| ՊԱՏՃԱՌԵՄ, ՊԱՏՃԱՌԻՄ | 50 | ՊԱՏՄԱԲԱՆՈՒԹԻՒՆ | 1 | ՊԱՏՄԱԳԻՐ | 2 | ՊԱՏՄԵՄ | 47 |
| ՊԱՏՄՈՂ | 4 | ՊԱՏՄՈՂԱԲԱՐ | 1 | ՊԱՏՄՈՒԹԻՒՆ | 16 | ՊԱՏՄՈՒՃԱՆ | 7 |
| ՊԱՏՇԱՃ | 18 | ՊԱՏՇԱՃԱՊԷՍ | 1 | ՊԱՏՇԱՃԱՒՈՐ | 4 | ՊԱՏՇԱՃԱՒՈՐԵԼ | 1 |
| ՊԱՏՇԱՃԵՄ | 24 | ՊԱՏՇԱՃՈՒԹԻՒՆ | 1 | ՊԱՏՈՒԱԿԱՆ | 53 | ՊԱՏՈՒԱԿԱՆՈՒԹԻՒՆ | 4 |
| ՊԱՏՈՒԱՆԴԱՆ | 3 | ՊԱՏՈՒԱՐ | 1 | ՊԱՏՈՒԱՒՈՐ | 4 | ՊԱՏՈՒԵՄ | 36 |
| ՊԱՏՈՒԷՐ | 5 | ՊԱՏՈՒԻՐԱՆ | 38 | ՊԱՏՈՒԻՐԵՄ | 9 | ՊԱՏՈՒՀԱՆ | 3 |
| ՊԱՏՈՒՀԱՍ | 19 | ՊԱՏՈՒՀԱՍԵՄ | 9 | ՊԱՏՍՊԱՐԱՆ | 2 | ՊԱՏՐԱՆՔ | 9 |
| ՊԱՏՐԱՍՏ | 8 | ՊԱՏՐԱՍՏ ԼԻՆԵԼ | 3 | ՊԱՏՐԱՍՏԵՄ | 40 | ՊԱՏՐԱՍՏՈՒԹԻՒՆ | 2 |
| ՊԱՏՐԵՄ | 20 | ՊԱՏՐԻԱՐԳ | 11 | ՊԱՏՐԻԱՐԳԱՐԱՆ | 1 | ՊԱՏՐՈՒԱԿ | 3 |
| ՊԱՏՐՈՒԱԿԵՄ | 3 | ՊԱՐ | 3 | ՊԱՐ ԱՌՆՈՒԼ | 1 | ՊԱՐԱԳԱՅ | 4 |
| ՊԱՐԱԳՐԵԼԻ | 3 | ՊԱՐԱԳՐԵՄ | 9 | ՊԱՐԱՆՈՑ | 5 | ՊԱՐԱՊ | 1 |
| ՊԱՐԱՊՈՎ | 2 | ՊԱՐԱՊԵՄ | 3 | ՊԱՐԱՊՈՒՄՆ | 7 | ՊԱՐԱՐԱԿ | 7 |
| ՊԱՐԱՐԵՄ | 1 | ՊԱՐԱՐՈՒՆ | 1 | ՊԱՐԱՐՏ | 7 | ՊԱՐԱՐՏԱՆԱՄ | 2 |
| ՊԱՐԱՐՏՈՒԹԻՒՆ | 4 | ՊԱՐԳԵՒ | 89 | ՊԱՐԳԵՒԱԿԱՆ | 1 | ՊԱՐԳԵՒԱՏՈՒ | 1 |
| ՊԱՐԳԵՒԵՄ | 33 | ՊԱՐԳԵՒՈՒՄՆ | 1 | ՊԱՐԶ | 81 | ՊԱՐԶԱԲԱՐ | 8 |
| ՊԱՐԶԱԳՈՅՆ | 1 | ՊԱՐԶԱԹԵՒ | 1 | ՊԱՐԶԱՄԻՏ | 3 | ՊԱՐԶԱՄՏՈՒԹԻՒՆ | 2 |
| ՊԱՐԶԱՊԷՍ | 8 | ՊԱՐԶԵՄ | 8 | ՊԱՐԶՄՏՈՒԹԻՒՆ | 1 | ՊԱՐԶՈՒԹԻՒՆ | 6 |
| ՊԱՐԹԵՒ | 1 | ՊԱՐԻՍՊ | 19 | ՊԱՐԾԱՆՔ | 4 | ՊԱՐԾԻՄ | 3 |
| ՊԱՐԿԵՇՏ | 4 | ՊԱՐԿԵՇՏՈՒԹԻՒՆ | 5 | ՊԱՐՈՆԱՑԻ | 1 | ՊԱՐՈՒԿ | 1 |
| ՊԱՐՈՒՆԱԿ | 1 | ՊԱՐՈՒՆԱԿԱԶԵՒ | 1 | ՊԱՐՈՒՆԱԿԵՄ | 35 | ՊԱՐՈՒՆԱԿԻՉ | 2 |
| ՊԱՐՈՒՆԱԿՈՒԹԻՒՆ | 3 | ՊԱՐՈՒՏԱԿ | 2 | ՊԱՐՈՒՐԵՄ | 1 | ՊԱՐՍ | 2 |
| ՊԱՐՍԱՒ | 3 | ՊԱՐՍԱՒԵԼԻ | 3 | ՊԱՐՍԱՒԵՄ | 3 | ՊԱՐՍԱՔԱՐ | 1 |
| ՊԱՐՍԻԿ | 8 | ՊԱՐՍՊԵՄ | 6 | ՊԱՐՏ | 28 | ՊԱՐՏ Է | 235 |
| ՊԱՐՏԱԿԱՆ | 9 | ՊԱՐՏԱՊԱՆ | 4 | ՊԱՐՏԱՒ | 1 | ՊԱՐՏԱՒՈՐ | 2 |
| ՊԱՐՏԱՒՈՐԵՄ | 3 | ՊԱՐՏԱՒՈՐՈՒԹԻՒՆ | 1 | ՊԱՐՏԵՄ | 2 | ՊԱՐՏԷԶ | 2 |
| ՊԱՐՏԻՄ | 26 | ՊԱՐՓԱԿԵՄ | 2 | ՊԵԾԵՆԵԿ | 1 | ՊԵՄՈՆԱՑԻ | 1 |
| ՊԵՆՏԱԿՈՍՏԷ | 5 | ՊԵՏ | 8 | ՊԵՏԱԿԱՆ | 1 | ՊԵՏՈՒԹԻՒՆ | 7 |
| ՊԵՏՐՈՍ | 79 | ՊԵՐԻՏՈՍ | 1 | ՊԵՐՃ | 2 | ՊԵՐՃԱԿԱՆ | 2 |
| ՊԷՍՊԷՍ | 6 | ՊԷՏ(Ք) | 27 | ՊԻԹԱԳՈՐ | 1 | ՊԻՀՌՈՆԱՑԻ | 1 |
| ՊԻՂԱՏՈՍ | 7 | ՊԻՂԾ | 38 | ՊԻՆԴ (տեքստում նաև՝ ՊԻՆՏ) | 5 | ՊԻՆԴ ՈՒՆԵԼ | 1 |
| ՊԻՆՋ (ՊԻՆՉ) | 2 | ՊԻՍԱԿ | 2 | ՊԻՏԱԿ | 1 | ՊԻՏԱԿԱՊԷՍ | 1 |
| ՊԻՏԱՆԱՑՈՒ | 1 | ՊԻՏԱՆԻ | 15 | ՊԻՏԱՆՈՒԹԻՒՆ | 1 | ՊԻՏԻ | 2 |
| ՊԻՏՈՅ | 38 | ՊԻՏՈՅԱՆԱՄ | 4 | ՊԼՂԱՄ | 1 | ՊԼՕՐ | 2 |
| ՊԼՕՐԵԱՅ | 1 | ՊՂԱՏՈՆ | 9 | ՊՂԵՐԳ | 1 | ՊՂԵՐԳՈՒԹԻՒՆ | 1 |
| ՊՂԻ | 1 | ՊՂԻՆՁ | 29 | ՊՂԾԵՄ | 29 | ՊՂԾՈՒԹԻՒՆ | 3 |
| ՊՂՏՈՐԵՄ | 1 | ՊՂՏՈՐՈՒՄՆ | 1 | ՊՃՂՆԱՒՈՐ | 4 | ՊՃՆՈՂ | 1 |
| ՊՆԴԱԳՈՅՆ | 1 | ՊՆԴԱԿԱԶՄ | 1 | ՊՆԴԵՄ (տեքստում նաև՝ ՊՆՏԵՄ) | 17 | ՊՆԴՈՒԹԻՒՆ | 3 |
| ՊՇՆՈՒՄ | 1 | ՊՈԼՈՔՈՆՈՍ | 1 | ՊՈՂՔԷՐ | 1 | ՊՈՂՈՒԱՏ | 1 |
| ՊՈՅՏՆ | 1 | ՊՈՌՆԻԿ | 20 | ՊՈՌՆԿԱՏՈՒՆ | 2 | ՊՈՌՆԿԻՄ | 6 |
| ՊՈՌՆԿՈՐԴԻ | 1 | ՊՈՌՆԿՈՒԹԻՒՆ | 37 | ՊՈՐՏ | 7 | ՊՈՐՓԻՒՐ (ՊՈՐՓԻՒՐՈՍ) | 4 |
| ՊՈՒՏՈՒԿ | 4 | ՊՌՕՍԽՈՒՄԷ | 2 | ՊՍԱԿ | 110 | ՊՍԱԿԵՄ | 22 |
| ՊՏՂԱԲԵՐ | 3 | ՊՏՂԱԲԵՐԻՄ | 19 | ՊՏՂԱԲԵՐՈՒԹԻՒՆ | 4 | ՊՏՂԱԾՆՈՒԹԻՒՆ | 1 |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| ՊՏՂԱԿՆ | 1 | ՊՏՂԱԿՈՐՈՅՍ | 1 | ՊՏՂԱՏՈՒ | 1 | ՊՏՂԱՒԷՏԵՄ | 1 |
| ՊՏՂԱՒԷՏՈՒԹԻՒՆ | 1 | ՊՏՈՒՂ | 143 | ՊՐԱԿ | 2 | ՊՐՈՊԱՏԻԿԷ | 1 |
| ՊՕՂ | 1 | ՊՕՂԻՏԻԱՆՈՍ | 1 | ՊՕՂՈՍ (առաքյալ) | 106 | ՊՕՂՈՍ ԻՇԽԱՆ | 1 |
| ՊՕՂՔԵՐ | 1 | | | | | | |

## Ջ

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| ՋԱԽԵՄ, ՋԱՂԽԵՄ | 1 | ՋԱԽՋԱԽԵՄ | 11 | ՋԱՀ | 7 | ՋԱՀԱՎԱՌ | 1 |
| ՋԱՀԱՒՈՐԵՄ | 1 | ՋԱՀԸՆԿԱԼ | 4 | ՋԱՀԸՆԿԱԼՈՒԹԻՒՆ | 1 | ՋԱՅԼԱՄՆ | 1 |
| ՋԱՆ | 4 | ՋԱՆԱՄ | 8 | ՋԱՏԱԳՈՎ | 2 | ՋԱՐԴԵՄ | 1 |
| ՋԵՌՈՒՑԱՆԵՄ | 2 | ՋԵՌՈՒՑԻՉ | 1 | ՋԵՐՄ | 79 | ՋԵՐՄԱՅԻՆ | 1 |
| ՋԵՐՄԱՆԱՄ | 9 | ՋԵՐՄԱՑՈՒՑԱՆԵՄ | 2 | ՋԵՐՄԵՌԱՆԴ, ՋԵՐՄԵՌԱՆԴՆ | 2 | ՋԵՐՄՈՒԹԻՒՆ | 78 |
| ՋԵՐՄՈՒԿ | 1 | ՋԻԼ | 28 | ՁԼԱՊԻՆԴ (տեքստում՝ ՁԼԱՊԻՆՏ) | 1 | ՋՀՈՒՏ | 1 |
| ՋՂՋԻԿԱՆ (տ. ՉՂՋԻԿԱՆ) | 1 | ՋՆՋԵԼԻ | 2 | ՋՆՋԵՄ | 25 | ՋՆՋՈՒՄՆ | 2 |
| ՋՈՐԻ | 2 | ՋՈՐՈՋ | 1 | ՋՈՒԱՐԻ | 1 | ՋՈՒԽՏ | 1 |
| ՋՈՒՐ | 374 | ՋՐԱԾԻՆ | 1 | ՋՐԱՅԻՆ | 11 | ՋՐԱՍՈՅՋ | 1 |
| ՋՐԱՏԵՍԱԿ | 2 | ՋՐԱՐԲ | 1 | ՋՐԱՐԲԻ | 2 | ՋՐԳՈՂԻՄ | 1 |
| ՋՐԵՂԷՆ | 8 | ՋՐՀԵՂ | 2 | ՋՐՀԵՂԵՂ | 13 | ՋՐՀՈՍ | 3 |
| ՋՐՀՈՐ | 4 | ՋՐՕՐՀՆԷՔ | 1 | | | | |

## Ռ

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| ՌԱԲՈՒԻԱ | 1 | ՌԱԳԱՒ | 1 | ՌԱԳՈՒԷԼ | 3 | ՌԱՀԱԲ | 6 |
| ՌԱՄԻԿ | 2 | ՌԱՄՏԵՍԱՑ | 1 | ՌԱՊԵՏ (ՀԱԶԱՐԱՊԵՏ) | 1 | ՌԱՓՍԱԿԱՅ | 3 |
| ՌԱՔԷԼ | 1 | ՌԱՔՈՍ | 1 | ՌԱՖԱՅԷԼ | 2 | ՌԵԲԵԿԱ | 1 |
| ՌԵՔԱԲ | 1 | ՌԻԿՈՅ(Ք) | 1 | ՌԻՇՏ | 1 | ՌՈԲՈՎԱՄ, ՐՈԲՈՎԱՄ | 7 |
| ՌՈՃԻԿ | 1 | ՌՈՄԵԼԱՅ | 1 | ՌՈՄԵԼՈՍ | 1 | ՌՈՒԲԷՆ | 7 |
| ՌՈՒԲԷՆԵԱՆՍ | 1 | ՌՈՒՆԳՆ | 5 | ՌՈՒՍ | 1 | | |

## Ս

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| ՍԱ | 540 | ՍԱԲԱ | 3 | ՍԱԲԱՒՈՎԹ | 2 | ՍԱԲԵԿ | 3 |
| ՍԱԲԵՓԹԱ | 1 | ՍԱԲԷԻ | 1 | ՍԱԲԷԼ | 2 | ՍԱԳ | 2 |
| ՍԱԳԱՇԷՆ | 2 | ՍԱԴԱՅԷԼ | 1 | ՍԱԴՈՎԿ | 2 | ՍԱԴՈՒԿԵՑԻՔ | 5 |
| ՍԱԿ | 1 | ՍԱԿԱՅՆ | 81 | ՍԱԿԱՒ | 50 | ՍԱԿԱՒ ԻՆՉ, ՍԱԿԱՒ ՄԻ, ՍԱԿԱՒՈՒՔ | 26 |
| ՍԱԿԱՒ ՍԱԿԱՒ | 2 | ՍԱԿԱՒԱՄԻՏ | 1 | ՍԱԿԱՒԱԲԱՆ | 1 | ՍԱԿԱՒԱԿԵԱՑ | 4 |
| ՍԱԿԱՒԻԿ, ՍԱԿԱՒԻԿ ՄԻ | 4 | ՍԱԿՍ | 3 | ՍԱՀԱԿ | 8 | ՍԱՀՄԱՆ | 72 |
| ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹԻՒՆ | 3 | ՍԱՀՄԱՆԱԿԱՆ | 1 | ՍԱՀՄԱՆԵԼԻ | 2 | ՍԱՀՄԱՆԵՄ | 27 |
| ՍԱՀՄԱՆԻՉ | 1 | ՍԱՀՄԱՆՕՐԷՆ | 2 | ՍԱՀՄԻ | 2 | ՍԱՂԱ | 4 |
| ՍԱՂԱԹԻԷԼ | 1 | ՍԱՂԱՐԹ | 1 | ՍԱՂԱՒԱՐՏ | 1 | ՍԱՂԻՄ | 6 |
| ՍԱՂՄԱՆԱ | 2 | ՍԱՂՄԱՆԱՍԱՐ | 5 | ՍԱՂՄՆ | 4 | ՍԱՂՄՈՆ | 4 |
| ՍԱՂՄՈՍ | 61 | ՍԱՂՄՈՍԱՍԱՑ | 1 | ՍԱՂՄՈՍԱՐԱՆ | 1 | ՍԱՂՄՈՍԱՔԱՂ | 2 |
| ՍԱՂՄՈՍԵՄ | 4 | ՍԱՄԱՐԱՑԻ | 4 | ՍԱՄԱՐԻԱ | 3 | ՍԱՄԱՐՈՒՀԻ | 1 |
| ՍԱՄԵԱՅ | 1 | ՍԱՄԷԳԱՐ | 1 | ՍԱՄՈՍՏԱՑԻ ՊՕՂՈՍ | 2 | ՍԱՄՈՒԷԼ | 31 |
| ՍԱՄՓՍՈՆ | 24 | ՍԱՅԼ | 7 | ՍԱՆ | 1 | ՍԱՆԱՄԱՅՐ | 1 |
| ՍԱՆԴԱՐԱՄԵՏ | 1 | ՍԱՆԴԱՐԱՄԵՏԱԿԱՆ | 1 | ՍԱՆԴՈՒՂՔ | 5 | ՍԱՆՉ | 1 |
| ՍԱՆՁԱՀԱՐԵՄ | 1 | ՍԱՆՁԵՄ | 2 | ՍԱՊԱՏ | 1 | ՍԱՊԱՏՈՂՆ | 1 |
| ՍԱՊԷՍ | 1 | ՍԱՊՈՆ | 1 | ՍԱՌԱ | 21 | ՍԱՌԱՅԱԾԻՆ | 1 |
| ՍԱՌՆ | 4 | ՍԱՌՆԱՄԱՆԻՔ | 4 | ՍԱՌՆԱՍԱՌՈՅՑ | 1 | ՍԱՌՆԱՏԵՍԱԿ | 1 |
| ՍԱՌՆՈՒՄ | 6 | ՍԱՌՈՒՑԱՆԵՄ | 1 | ՍԱՌՈՒՑՈՒՄՆ | 1 | ՍԱՍԱՆՈՒՄՆ | 1 |
| ՍԱՍՏ | 6 | ՍԱՍՏԵՄ | 5 | ՍԱՍՏԻԿ | 10 | ՍԱՍՏԿԱԳԻՆ | 1 |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| ՍԱՍՏԿԱՆԱՄ | 1 | ՍԱՍՏԿԱՍԱՐՍՈՒՌՆ | 1 | ՍԱՍՏԿՈՒԹԻՒՆ | 1 | ՍԱՏԱԿԵՄ | 39 |
| ՍԱՏԱԿՈՒՄՆ | 11 | ՍԱՏԱՆԱՅ | 178 | ՍԱՏԱՆԱՅԱԳԻՒՏ | 1 | ՍԱՏԱՐ | 1 |
| ՍԱՏԵՐ | 2 | ՍԱՏԻԷԼ | 1 | ՍԱՏՆԱՏՈՒՐ | 1 | ՍԱՐԱՍ | 2 |
| ՍԱՐԳԻՍ | 1 | ՍԱՐԴ | 2 | ՍԱՐԴԻՈՆ | 1 | ՍԱՐԿԱՒԱԳ | 43 |
| ՍԱՐԿԱՒԱԳՈՒԹԻՒՆ | 2 | ՍԱՐՄԱՏ | 1 | ՍԱՐՍԱՓԵԼԻ | 1 | ՍԱՐՍԵՄ | 7 |
| ՍԱՐՍՌԵԼԻ | 1 | ՍԱՐՏՆՈՒՄ | 1 | ՍԱՒԱՌՆԻՄ | 1 | ՍԱՒՈՒՂ | 69 |
| ՍԱՓԻՐԱՅ | 2 | ՍԱՓՈՐ | 12 | ՍԳԱՄ | 9 | ՍԵԱՒ | 18 |
| ՍԵԲԻՈՍ | 1 | ՍԵԴԵԿ | 10 | ՍԵԹԱԼԻ | 1 | ՍԵԼԼԱ | 1 |
| ՍԵԼԻՆ | 1 | ՍԵԼՈՎ | 1 | ՍԵՀՈՆ | 1 | ՍԵՂԱՆ | 100 |
| ՍԵՂԲԵՍՏՐՈՍ | 1 | ՍԵՂՄԱՆԱՄ | 1 | ՍԵՂՄԵՄ | 1 | ՍԵՄ | 11 |
| ՍԵՆԵԱԿ | 1 | ՍԵՊՀԱԿԱՆ | 5 | ՍԵՊՀԱԿԱՆԵՄ | 1 | ՍԵՊՏԵՄԲԵՐ | 5 |
| ՍԵՌ | 55 | ՍԵՌԱԲԱՐ | 2 | ՍԵՌԱԿԱՆ | 3 | ՍԵՌԱԿԱՆԱԳՈՅՆ | 1 |
| ՍԵՌՆ | 4 | ՍԵՐԵՄ | 3 | ՍԵՐՄԱՆԵՄ | 30 | ՍԵՐՄՆ կմ ՍԵՐՄ | 71 |
| ՍԵՐՄՆԱԿԱԹ | 3 | ՍԵՐՄՆԱԿԱՆ | 8 | ՍԵՐՄՆՕՐՀՆԷՔ | 1 | ՍԵՐՈՎԲԷ (տեքստում՝ ՍԵՐՕԲԷ) | 26 |
| ՍԵՐՈՒՄՆ | 2 | ՍԵՐՈՒՔ | 1 | ՍԵՐՏ | 3 | ՍԵՐՏԵՄ | 2 |
| ՍԵՐՏՈՒԹԻՒՆ | 4 | ՍԵՒ | 9 | ՍԵՒԱՄՈՐԹ | 1 | ՍԵՒԱՆԱՄ | 3 |
| ՍԵՒԱՏԵՍԱԿ | 1 | ՍԵՒԵՌԵՄ | 1 | ՍԵՒՈՒԹԻՒՆ | 8 | ՍԵՓՈՎՐԱ | 3 |
| ՍԷՋ | 1 | ՍԷԹ | 5 | ՍԷՆ | 1 | ՍԷՐ | 262 |
| ՍԻԲԱՅ | 1 | ՍԻԳԱՃԵՄ | 1 | ՍԻԴՈՆ | 1 | ՍԻԿԻՄԱՑԻ | 1 |
| ՍԻԿՂ | 2 | ՍԻՂՂՈԲԱՅ | 1 | ՍԻՄԱ | 1 | ՍԻՄԷԻ | 12 |
| ՍԻՄԷՕՆ | 4 | ՍԻՄՈՆ | 4 | ՍԻՄՈՆ ԿԱԽԱՐԴ | 1 | ՍԻՄՈՆԵԱՆ | 1 |
| ՍԻՄՔՈՒՖՏ | 1 | ՍԻՆԱ | 5 | ՍԻՆԱ ԼԵԱՌՆ կմ ԼԵԱՌՆ ՍԻՆԱ | 7 | ՍԻՆԻԳՐԷՍ | 1 |
| ՍԻՈՆ | 1 | ՍԻՈՎՆ | 1 | ՍԻՍԱՐԱ | 2 | ՍԻՐԱԼԻ | 1 |
| ՍԻՐԱԼԻՐ | 1 | ՍԻՐԱԿԱՆ | 1 | ՍԻՐԱՔ | 6 | ՍԻՐԵԼԻ | 56 |
| ՍԻՐԵԼՈՒԹԻՒՆ | 6 | ՍԻՐԵՄ | 99 | ՍԻՐԵՑԷՔՆ | 5 | ՍԻՐՈՂ | 8 |
| ՍԻՐՏ | 165 | ՍԻՒԱՆ | 1 | ՍԻՒՆ | 28 | ՍԻՒՆԱԿԵԱՑ | 1 |
| ՍԻՒՆԵԱՑ ՆԱՀԱՆԳ | 1 | ՍԻՒՆՀՈԴՈՍ | 1 | ՍԻՕՆ | 11 | ՍԼԱՆԱՄ | 1 |
| ՍԼԱՑՈՒՄՆ | 1 | ՍԽԱԼ | 1 | ՍԽԱԼԱԿԱՆ | 1 | ՍԽԱԼԱՆՔ | 3 |
| ՍԽԱԼԵՄ | 9 | ՍԽԱԼՈՒՄՆ | 3 | ՍԿԱՅ | 1 | ՍԿԱՒԱՌԱԿ | 1 |
| ՍԿԵՒԵԱՅ | 2 | ՍԿԶԲՆԱԲԱՐ | 2 | ՍԿԶԲՆԱԿԱՆ | 52 | ՍԿԶԲՆԱՉԱՐ | 4 |
| ՍԿԶԲՆԱՊԵՏԱԳՈՅՆ | 2 | ՍԿԶԲՆԱՊԷՍ | 1 | ՍԿԶԲՆԱՏԻՊ | 1 | ՍԿԶԲՆԱՒՈՐ | 7 |
| ՍԿԶԲՆԱՒՈՐԵՄ | 4 | ՍԿԶԲՆԱՒՈՐՈՒԹԻՒՆ | 1 | ՍԿԻԶԲՆ | 345 | Ի ՍԿԶԲԱՆԷ | 23 |
| ՍԿԻՀ | 4 | ՍԿԻՒԹԱՑԻ | 2 | ՍԿԻՒՌԱՑԻ ԳՐԻԳՈՐ | 1 | ՍԿՍԱՆԻՄ | 66 |
| ՍԿՍՈՒԱԾ | 1 | ՍԿՍՈՒՄՆ | 1 | ՍՂԱՆԱՄ | 1 | ՍՂՈՒԹԻՒՆ | 1 |
| ՍՄԲԱԿ | 2 | ՍՆԱՆԻՄ | 9 | ՍՆԱՐ(Ք) | 5 | ՍՆԱՓԱՌ | 1 |
| ՍՆԴԻԿ | 2 | ՍՆՆԴԱԿԱՆ | 2 | ՍՆՆԴԱԿԻՑ | 1 | ՍՆՈՏԻ | 4 |
| ՍՆՈՒՆԴ | 11 | ՍՆՈՒՑԱՆԵՄ | 11 | ՍՆՈՒՑԱՆՈՂ, ՍՆՈՒՑԻՉ, ՍՆՈՒՑՈՂ (ՍՆՈՒՑԱՆՕՂ, ՍՆՈՒՑՕՂ) | 6 | ՍՆՈՒՑՈՂԱԿԱՆ | 1 |
| ՍՆՔՆՈՏ | 1 | ՍՈԴՈՄ | 9 | ՍՈԴՈՄԱՅԵՑԻ | 4 | ՍՈԴՈՎՄ | 1 |
| ՍՈԿՐԱՏ | 1 | ՍՈՂԱՄ | 4 | ՍՈՂՈՄԻ | 3 | ՍՈՂՈՄՈՆ | 72 |
| ՍՈՂՈՍԿԻՄ | 1 | ՍՈՂՈՎՄԷ | 1 | ՍՈՂՈՒՆ | 13 | ՍՈՄՆԱՍ | 1 |
| ՍՈՄՆԱՑԻ | 1 | ՍՈՄՈՐՈՆ | 1 | ՍՈՅՆ | 26 | ՍՈՅՆՊԷՍ | 30 |
| ՍՈՅՆՊԻՍԻ | 15 | ՍՈՆԹԵՑԻ | 1 | ՍՈՍԻՆՁ (տեքստում՝ ՍՈՍԻՆԾ) | 1 | ՍՈՍԿ | 32 |
| ՍՈՍԿԱԼԻ | 2 | ՍՈՎ | 14 | ՍՈՎԱՄԱՀ | 1 | ՍՈՎԻՄ | 1 |
| ՍՈՎԻՒԷ | 2 | ՍՈՎՈՐ | 8 | ՍՈՎՈՐԱԲԱՐ | 1 | ՍՈՎՈՐԱՊԷՍ | 1 |
| ՍՈՎՈՐԵՑՈՒՑԱՆԵՄ | 1 | ՍՈՎՈՐԻՄ | 7 | ՍՈՎՈՐՈՒԹԻՒՆ | 24 | ՍՈՎՓԱՐ | 1 |
| ՍՈՒԳ | 39 | ՍՈՒԳ ԱՌՆՈՒԼ | 1 | ՍՈՒԶԵՄ | 2 | ՍՈՒԿԵՍՈՍ | 1 |
| ՍՈՒՂ | 5 | ՍՈՒՂ ԻՆՉ | 2 | ՍՈՒՍԵՐ | 3 | ՍՈՒՍԵՐԱՄԵՐԿ | 1 |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| ՍՈՒՏ | 107 | ՍՈՒՏ ԱՌՆԵԼ | 2 | ՍՈՒՏԱԿ | 1 | ՍՈՒՏԱԿԱՄՊԱՍՈՒԹԻՒՆ | 1 |
| ՍՈՒՏԱՄԵՌՈՒԿ | 1 | ՍՈՒՏԱՆՈՒՆ | 1 | ՍՈՒՐ | 55 | ՍՈ՛ՒՐ (ածական) | 3 |
| ՍՈՒՐԱ | 1 | ՍՈՒՐԲ | 630 | ՍՈՒՐԲՆ ՍՐԲՈՑ | 12 | ՍՈՒՐԲ ԱԹԱՆԱՍ | 5 |
| ՍՈՒՐԲ ԱՍՏՈՒԱԾ | 21 | ՍՈՒՐԲ ԱՍՏՈՒԱԾԱԾԻՆ | 2 | ՍՈՒՐԲ ԱՐԻՍՏԱԿԷՍ | 1 | ՍՈՒՐԲ ԲԱՍԻԼԻՈՍ | 1 |
| ՍՈՒՐԲ ԲԱՐՍԵՂ | 7 | ՍՈՒՐԲ ԳԻՐ | 45 | ՍՈՒՐԲ ԳՐԻԳՈՐ | 16 | ՍՈՒՐԲ ԳՐԻԳՈՐ ԱՍՏՈՒԱԾԱԲԱՆ | 2 |
| ՍՈՒՐԲ ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՒՈՐԻՉ | 2 | ՍՈՒՐԲ ԳՐԻԳՈՐ ՆԻՒՍԱՑԻ | 9 | ՍՈՒՐԲ ԳՐԻԳՈՐԻՍ | 1 | ՍՈՒՐԲ ԳՈՂԳՈԴԱ | 1 |
| ՍՈՒՐԲ ԴԵՈՍԿՈՐՈՍ ԱՂԵՔՍԱՆԴՐԱՑԻ | 1 | ՍՈՒՐԲ ԴԻՈԴՈՐՈՍ | 1 | ՍՈՒՐԲ ԴԻՈՆԷՍԻՈՍ | 28 | ՍՈՒՐԲ ԵԿԵՂԵՑԻ կամ ԵԿԵՂԵՑԻ ՍՈՒՐԲ | 40 |
| ՍՈՒՐԲ ԵՊԻՓԱՆ | 6 | ՍՈՒՐԲ ԵՐՐՈՐԴՈՒԹԻՒՆ կամ ԵՐՐՈՐԴՈՒԹԻՒՆ ՍՈՒՐԲ | 48 | ՍՈՒՐԲ ԵՒԱԳՐԻՈՍ | 12 | ՍՈՒՐԲ ԵՓՐԵՄ | 6 |
| ՍՈՒՐԲ ԵՓՐԵՄ ԽՈՐ ԱՍՈՐԻ | 1 | ՍՈՒՐԲ ԹԱԴԷՈՍ | 1 | ՍՈՒՐԲ ԻՍԱՀԱԿ | 1 | ՍՈՒՐԲ ԻՐԻՆՈՍ | 2 |
| ՍՈՒՐԲ ԼՈՒՍԱՒՈՐԻՉ | 2 | ՍՈՒՐԲ ԼՈՒՍԱՒՈՐԻՉ ԳՐԻԳՈՐ | 2 | ՍՈՒՐԲ ԽԱՉ կամ ԽԱՉՆ ՍՈՒՐԲ | 18 | ՍՈՒՐԲ ԿԱՐԱՊԵՏ | 2 |
| ՍՈՒՐԲ ԿԻՊՐԻԱՆՈՍ | 1 | ՍՈՒՐԲ ԿԻՊՐԻԱՆՈՍ ԿԱՐԳԵՂՈՆԱՑԻ | 1 | ՍՈՒՐԲ ԿԻՒՐԵՂ | 30 | ՍՈՒՐԲ ԿՈՅՍ կամ ԿՈՅՍ ՍՈՒՐԲ | 15 |
| ՍՈՒՐԲ ՄԱՐԻԱՄ կմ ՄԱՐԻԱՄ ՍՈՒՐԲ | 1 | ՍՈՒՐԲ ԿՈՅՍ ՄԱՐԻԱՄ | 1 | ՍՈՒՐԲ ԿՈՅՍ ՄԱՐԻԱՄ ԱՍՏՈՒԱԾԱԾԻՆ | 1 | ՍՈՒՐԲ ՀԱՅՐ(Ք) կամ ՀԱՅՐ(Ք) ՍՈՒՐԲ | 26 |
| ՍՈՒՐԲ ՀՈԳԻ | 24 | ՍՈՒՐԲ ՀՌԻՓՍԻՄԷ | 1 | ՍՈՒՐԲ ՂՈՒԿԻՈՍ | 1 | ՍՈՒՐԲ ՄԱԿԱՐ | 1 |
| ՍՈՒՐԲ ՄԵԹՈԴԷՈՍ | 1 | ՍՈՒՐԲ ՄԻԽԱՅԵԼ | 1 | ՍՈՒՐԲ ՅԱԿՈԲ | 3 | ՍՈՒՐԲ ՅԱԿՈԲ ՄԾԲՆԱՅ ՀԱՅՐԱՊԵՏ | 1 |
| ՍՈՒՐԲ ՅԱՐՈՒԹԻՒՆ | 1 | ՍՈՒՐԲ ՅՈՀԱՆ | 1 | ՍՈՒՐԲ ՅՈՀԱՆ ՈՍԿԵԲԵՐԱՆ | 1 | ՍՈՒՐԲ ՅՈՀԱՆ ՕՁՆԵՑԻ | 2 |
| ՍՈՒՐԲ ՅՈՍՏՈՍ | 1 | ՍՈՒՐԲ ՅՈՒԹԷՈՍ | 2 | ՍՈՒՐԲ ՆԵՐՍԷՍ | 3 | ՍՈՒՐԲ ՆԻՒՍԱՑԻ | 3 |
| ՍՈՒՐԲ ՊԱՐՍԱՄ | 1 | ՍՈՒՐԲ ՍԱՀԱԿ | 5 | ՍՈՒՐԲ ՍԱՀԱԿ ՊԱՐԹԵՒ | 2 | ՍՈՒՐԲ ՍԱՐԳԻՍ | 2 |
| ՍՈՒՐԲ ՍԻՄԷՈՆ | 1 | ՍՈՒՐԲ ՍՏԵՓԱՆՆՈՍ | 5 | ՍՈՒՐԲ ՍՏԵՓԱՆՆՈՍ ՍԻՒՆԵԱՑ | 1 | ՍՈՒՔԱ | 1 |
| ՍՈՓԷԿՂԻԴԷՍ | 1 | ՍՈՓՈՆԻԱ | 1 | ՍՊԱՆԱՆԵՄ | 73 | ՍՊԱՆԴ | 1 |
| ՍՊԱՆԴԻԱՑԻ | 1 | ՍՊԱՆԻԱ | 1 | ՍՊԱՆԻԱՑԻ | 1 | ՍՊԱՆՈՂ (տեքստում՝ ՍՊԱՆՕՂ) | 11 |
| ՍՊԱՆՈՒԹԻՒՆ | 2 | ՍՊԱՆՈՒՄՆ | 7 | ՍՊԱՌԱԶԻՆԻՄ | 1 | ՍՊԱՌԵՄ | 3 |
| ՍՊԱՌՆԱԼԻՔ | 10 | ՍՊԱՌՆԱԿԱՆ | 3 | ՍՊԱՌՆԱՄ | 2 | ՍՊԱՍ | 5 |
| ՍՊԱՍԱՒՈՐ | 23 | ՍՊԱՍԱՒՈՐԱԿԱՆ | 1 | ՍՊԱՍԱՒՈՐԵՄ | 18 | ՍՊԱՍԱՒՈՐՈՒԹԻՆ | 10 |
| ՍՊԱՍԵՄ | 7 | ՍՊԱՐԱՊԵՏ | 3 | ՍՊԵՂԱՆԻ | 2 | ՍՊԻ | 5 |
| ՍՊԻՏԱԿ | 62 | ՍՊԻՏԱԿԱԳՈՅՆ | 1 | ՍՊԻՏԱԿԱԹՈՅՐ | 1 | ՍՊԻՏԱԿԻՄ | 10 |
| ՍՊԻՏԱԿՈՒԹԻՒՆ | 1 | ՍՌՆԻ | 1 | ՍՏԱԲԱՆ | 1 | ՍՏԱԴԻՈՆ | 1 |
| ՍՏԱԽՕՍՈՒԹԻՒՆ | 2 | ՍՏԱՀԱԿՈՒԹԻՒՆ | 1 | ՍՏԱՄՈՔՍ | 10 | ՍՏԱՆԱՄ | 36 |
| ՍՏԱՇԽՆ | 1 | ՍՏԱՑԱԿԱՆ | 6 | ՍՏԱՑՈՒԱԾ | 6 | ՍՏԱՑՈՒՄՆ | 3 |
| ՍՏԳՏԱՆՔ | 1 | ՍՏԵՂԾԱՆԵՄ | 147 | ՍՏԵՂԾԻՉ | 3 | ՍՏԵՂԾՈՒԱԾ | 30 |
| ՍՏԵՂԾՈՒՄՆ | 45 | ՍՏԵՂՆ | 11 | ՍՏԵՄ | 12 | ՍՏԵՓԱՆՆՈՍ | 4 |
| ՍՏԵՓԱՆՆՈՍ ՍԻՒՆԵՑԻ | 2 | ՍՏԷՊ | 2 | ՍՏԻՆ(Ք) | 11 | ՍՏԻՊԵՄ | 1 |
| ՍՏԻՔՍԵՄ | 1 | ՍՏՆԴԵԱՅ | 1 | ՍՏՈՅԳ | 12 | ՍՏՈՐԱԴԱՍԵՄ | 2 |
| ՍՏՈՐԱՍԱԿԱՆ | 1 | ՍՏՈՐԱՍԵՄ | 1 | ՍՏՈՐԱՍՈՒԶԵՄ | 1 | ՍՏՈՐԱՍՈՒԹԻՒՆ | 13 |
| ՍՏՈՐԵՒ | 4 | ՍՏՈՐԻՆ | 6 | ՍՏՈՐԻՆՔ | 4 | ՍՏՈՐՆԱԳՈՅՆ | 1 |
| ՍՏՈՐՆԱՅԻՆ | 4 | ՍՏՈՐՈԳՈՒԹԻՒՆ | 6 | ՍՏՈՐՈՏ | 4 | ՍՏՈՒԱՐ | 4 |
| ՍՏՈՒԳԱԲԱՆԵՄ | 5 | ՍՏՈՒԳԱԲԱՆՈՒԹԻՒՆ | 2 | ՍՏՈՒԳԱԳՈՅՆ | 1 | ՍՏՈՒԳԱՊԷՍ | 7 |
| ՍՏՈՒԳԵՄ | 6 | ՍՏՈՒԳԻՒ | 1 | ՍՏՈՒԳՈՒԹԻՒՆ | 10 | ՍՏՈՒԵՐ | 24 |
| ՍՏՈՒԵՐԱԳՐԵՄ | 1 | ՍՏՈՒԵՐԱԳՐՈՒԹԻՒՆ | 1 | ՍՏՈՒԵՐԱԿԱՆ | 1 | ՍՏՈՒԵՐԱԿԵՐՊ | 1 |
| ՍՏՈՒԵՐԱԿԵՐՊՈՒԹԻՒՆ | 1 | ՍՏՈՒԵՐԱՆԱՄ | 2 | ՍՏՈՒԵՐԱՊԷՍ | 1 | ՍՏՈՒԹԻՒՆ | 9 |
| ՍՏՐՋԱՆՔ | 1 | ՍՐԱԳՈՅՆ | 1 | ՍՐԱԽՈՂԽՈՂ | 1 | ՍՐԱՀ | 9 |
| ՍՐԱՄԻՏ | 1 | ՍՐԲԱԲԱՆ | 1 | ՍՐԲԱԲԱՆԵՄ | 1 | ՍՐԲԱԳԻՐ | 2 |
| ՍՐԲԱԳՐԵԼ | 1 | ՍՐԲԱԶԱՆ | 4 | ՍՐԲԱՊԷՍ | 1 | ՍՐԲԱՍԷՐ | 1 |
| ՍՐԲԱՐԱՐ | 2 | ՍՐԲԵԼԻ | 1 | ՍՐԲԵՄ | 151 | ՍՐԲԻՉ | 2 |
| ՍՐԲՈՒԹԻՒՆ | 166 | ՍՐԲՈՒԹԻՒՆ ՍՐԲՈՑ | 9 | ՍՐԲՈՒՀԻ | 6 | ՍՐԸՆԹԱՑ | 3 |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| ՍՐԻՆԳ | 2 | ՍՐՈՎԲԷԱԿԱՆ | 1 | ՍՐՈՒԱԿ | 1 | ՍՐՈՒՆՔ | 3 |
| ՍՐՍԿԵՄ | 2 | ՍՐՍԿՈՒՄՆ | 2 | ՍՐՏԱԿՐԱՆՔ | 1 | ՍՐՏԱՄՏՕՂ | 1 |
| ՍՐՏԱՅԻՆ | 1 | ՍՐՏՄՏԱԿԱՆ | 1 | ՍՐՏՄՏԻՄ | 5 | ՍՐՏՄՏՈՒԹԻՒՆ | 10 |
| ՍՐՏՈՏ | 1 | ՍՓԱԾԱՆԵԼԻ | 1 | ՍՓԱԾԱՆԵՄ | 1 | ՍՓՈՓԵՄ | 2 |
| ՍՓՌԵՄ | 16 | ՍՓՌԻՉ | 1 | ՍՔԱՆՉԵԼԱԳՈՐԾ | 1 | ՍՔԱՆՉԵԼԱԳՈՐԾԵՄ | 1 |
| ՍՔԱՆՉԵԼԱՊԷՍ | 1 | ՍՔԱՆՉԵԼԻ | 48 | ՍՔԵՄ | 5 | | |

# Վ

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| ՎԱԽ | 1 | ՎԱԽՃԱՆ (ՎԱՂՃԱՆ) | 87 | ՎԱԽՃԱՆԱԿԱՆ | 1 | ՎԱԽՃԱՆԱՒՈՐ | 2 |
| ՎԱԽՃԱՆԻՄ | 10 | ՎԱԽՃԱՆԵԱԼ | 8 | ՎԱԿԱՍ | 4 | ՎԱՀԱՆ | 2 |
| ՎԱՀԱՆԱԿ | 1 | ՎԱՂ | 5 | ՎԱՂԱԽՕՍ | 1 | ՎԱՂԱՄԱՀ | 1 |
| ՎԱՂԱՐՇԱՊԱՏ | 1 | ՎԱՂԱՓՈՅԹ | 1 | ՎԱՂԻՒ | 8 | ՎԱՂՈՐԴԵԱՆ | 1 |
| ՎԱՂՎԱՂԱԿԻ | 9 | ՎԱՂՎԱՂԵՄ | 1 | ՎԱՂՎԱՂՈՒԿ | 1 | ՎԱՃԱՌ | 2 |
| ՎԱՃԱՌԱԿԱՆ | 2 | ՎԱՃԱՌԱՆՈՑ | 1 | ՎԱՃԱՌԵՄ | 12 | ՎԱ՛Յ | 3 |
| ՎԱՅԵԼ | 3 | ՎԱՅԵԼԵՄ | 30 | ՎԱՅԵԼՈՒՄՆ | 4 | ՎԱՅԵԼՈՒՉ | 3 |
| ՎԱՅԵԼՉԱԿԱՆ | 8 | ՎԱՅԵԼՉԱՊԷՍ | 2 | ՎԱՅԵԼՉՈՒԹԻՒՆ | 9 | ՎԱՅՐ | 55 |
| ԸՆԴ ՎԱՅՐ | 2 | ՎԱՅՐԱԲԱՆԵԼ | 1 | ՎԱՅՐԱԲԵՐ | 1 | ՎԱՅՐԱԿՈՐ | 1 |
| ՎԱՅՐԱՊԱՐ | 6 | ՎԱՅՐ ԲԵՐԵԼ | 2 | ՎԱՅՐ ԲԵՐՈՒՄՆ | 1 | ՎԱՅՐԵՆԱՆԱԼ | 1 |
| ՎԱՅՐԵՆԻ | 2 | ՎԱՅՐԻ | 4 | ՎԱՅՐԿԵԱՆ, ՎԱՅՐԿԵՆԻ | 7 | ՎԱՆԱԿԱՆ | 5 |
| ՎԱՆՈՐԱՅ(Ք) | 2 | ՎԱՆԿ | 3 | ՎԱՆՔ | 2 | ՎԱՉԱԳԱՆ ԱՐՔԱՅ | 1 |
| ՎԱՌ | 1 | ՎԱՌ (շարականի տեսակ) | 1 | ՎԱՌ (ձայնի տեսակ) | 1 | ՎԱՌ (եկեղեցական տերմին) | 4 |
| ՎԱՌԵՄ | 34 | ՎԱՌԵՄ (զինեմ) | 1 | ՎԱՌԵՄ (զարդարեմ) | 2 | ՎԱՍՆ | 1202 |
| ՎԱՍՆ Է՞Ր | 347 | ՎԱՍՆ ԱՅՆ | 198 | ՎԱՍՆ ՈՐՈՅ | 387 | ՎԱՍՆ ԱՅԴՈՐԻԿ, ԱՅՆՈՐԻԿ, ԱՅՍՈՐԻԿ | 23 |
| ՎԱՍՆ ՁԻ | 72 | ՎԱՍՏԱԿ | 18 | ՎԱՍՏԱԿԱՍԷՐ | 1 | ՎԱՍՏԱԿԵՄ | 13 |
| ՎԱՏ | 14 | ՎԱՏԱԲԱԽՏՈՒԹԻՒՆ | 3 | ՎԱՏԱԽԱՌՆՈՒԹԻՒՆ | 1 | ՎԱՏԱՀԱՄԱԲԱՒ | 1 |
| ՎԱՏԱՍԻՐՏ | 1 | ՎԱՏԵՄ | 1 | ՎԱՏԹԱՐ | 11 | ՎԱՏՈՒԺ | 2 |
| ՎԱՐԱԳ | 1 | ՎԱՐԱԳՈՅՐ | 15 | ՎԱՐԱՁ | 1 | ՎԱՐԱՆԵՄ | 1 |
| ՎԱՐԴ | 1 | ՎԱՐԴԱՆ (սպարապետն) | 1 | ՎԱՐԴԱՆ (մեկնիչն, վարդապետն) | 4 | ՎԱՐԴԱՆԱՆՔ | 1 |
| ՎԱՐԴԱՊԵՏ | 170 | ԱԼՊԵՐԱ ՎԱՐԴԱՊԵՏՆ | 1 | ԻՍԻԴՈՐՈՍ ՎԱՐԴԱՊԵՏՆ | 1 | ԹՈՒՄԱ ՎԱՐԴԱՊԵՏՆ | 1 |
| ՕԳՈՍՏԻՆՈՍ ՎԱՐԴԱՊԵՏՆ | 1 | ՎԱՐԴԱՊԵՏԱԿԱՆ | 2 | ՎԱՐԴԱՊԵՏԵՄ | 2 | ՎԱՐԴԱՊԵՏՈՒԹԻՒՆ | 11 |
| ՎԱՐԴԱՎԱՌ | 6 | ՎԱՐԴԵՆԻ | 2 | ՎԱՐԴԷՋՈՒՐ | 1 | ՎԱՐԵՄ, ՎԱՐԻՄ | 22 |
| ՎԱՐԺԱՊԵՏ | 1 | ՎԱՐԺԱՐԱՆ | 2 | ՎԱՐԺԵՄ | 4 | ՎԱՐԺՈՒՄՆ | 2 |
| ՎԱՐԿ | 1 | ՎԱՐԿԱՆԻՄ | 1 | ՎԱՐՉ | 49 | ՎԱՐՉԱՏՐԵԼԻ | 6 |
| ՎԱՐՉԱՏՐԵՄ | 4 | ՎԱՐՉԱՒՈՐ | 2 | ՎԱՐՉԱՒՈՐԵԼԻ | 1 | ՎԱՐՉԱՒՈՐԻՄ | 1 |
| ՎԱՐՉԿԱԿԱՆ | 3 | ՎԱՐՉԿԱՆ | 4 | ՎԱՐՇԱՄԱԿ | 9 | ՎԱՐՍ(Ք) | 4 |
| ՎԱՐՍԵՄ | 1 | ՎԱՐՔ | 24 | ՎԱՒԱՇՈՏ կմ ՎԱՎԱՇՈՏ | 2 | ՎԱՎԱՇՈՏՈՒԹԻՒՆ | 1 |
| ՎԵՀ | 1 | ՎԵՀԱԳՈՅՆ | 9 | ՎԵՍԴԻԱՑԻ | 1 | ՎԵՐ, Ի ՎԵՐ | 70 |
| Ի ՎԵՐ ՔԱՆ, Ի ՎԵՐ Է ՔԱՆ | 26 | Ի ՎԵՐ ԵՒ Ի ՎԱՅՐ | 1 | ՎԵՐԱԲԵՐԵՄ | 18 | ՎԵՐԱԳՈՅՆ | 5 |
| ՎԵՐԱԳՐԵՄ | 3 | ՎԵՐԱԴԻՐ | 6 | ՎԵՐԱԾԵՄ | 2 | ՎԵՐԱԾՆԵՄ | 1 |
| ՎԵՐԱԿԱՑՈՒ | 9 | ՎԵՐԱԿՈՉԵՄ | 1 | ՎԵՐԱՁԱՅՆԵՄ | 1 | ՎԵՐԱՄԲԱՐՁ կմ ՎԵՐՀԱՄԲԱՐՁ | 2 |
| ՎԵՐԱՄԲԱՐՁՈՒՄՆ | 1 | ՎԵՐԱՅ, Ի ՎԵՐԱՅ | 311 | ՎԵՐԱՆԱՄ | 31 | ՎԵՐԱՊԱՆԹԵՐ | 2 |
| ՎԵՐԱՌԵՄ | 1 | ՎԵՐԱՌՈՒԹԻՒՆ | 1 | ՎԵՐԱՏԵՍՈՒՉ | 1 | ՎԵՐԱՑՈՒՄՆ | 2 |
| ՎԵՐԱՑՈՒՑԱՆԵՄ | 8 | ՎԵՐԱՓՈԽԵՄ | 11 | ՎԵՐԱՓՉՈՒՄՆ | 1 | ՎԵՐԵՐԵՒՈՅԹ | 1 |
| ՎԵՐԵՐԵՒՈՒԹԻՒՆ | 1 | ՎԵՐԵՒ | 1 | ՎԵՐԸՆԹԱՑ | 6 | ՎԵՐԸՆԾԱՅԵԼ | 4 |
| ՎԵՐԸՆՁԻՒՂԵԼ | 1 | ՎԵՐԻՆ | 122 | ՎԵՐԻՆ ԵՐՈՒՍԱՂԷՄ | 12 | ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ | 1 |
| ՎԵՐՀԱՅԵՑՈՒՄՆ | 1 | ՎԵՐՆԱԳԻՐ | 1 | ՎԵՐՆԱԳՈՅՆ | 13 | ՎԵՐՆԱԿԱՆ | 1 |
| ՎԵՐՆԱՅԻՆ | 3 | ՎԵՐՆԱՏՈՒՆ | 29 | ՎԵՐՈՅ | 13 | Ի ՎԵՐՈՅ | 147 |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| Ի ՎԵՐՈՅ ՔԱՆ | 4 | ՎԵՐՈՅ ԳՐԵԱԼ | 3 | ՎԵՐՈՒՍՏ | 4 | Ի ՎԵՐՈՒՍՏ | 8 |
| ՎԵՐՋ | 13 | ՎԵՐՋԱՆԱՄ | 1 | ՎԵՐՋԸՆԹԱՑ | 2 | ՎԵՐՋԻՆ | 208 |
| ՎԵՐՋՆԱԳՈՅՆ | 1 | ՎԵՐՋՈՅ | 8 | ՎԵՐՍՏԻՆ | 44 | ՎԵՐ ՔԱՐՇԵՄ | 4 |
| ՎԵՑԱԿՈՂՄ | 2 | ՎԵՑԱՄԱՍՆ | 1 | ՎԵՑՕՐԵԱՅ | 2 | ՎԷՄ | 48 |
| ՎԷՏ | 1 | ՎԷՐ(Ք) | 8 | ՎԻՁ | 4 | ՎԻԹԽԱՐԻ | 1 |
| ՎԻԺԵՄ | 2 | ՎԻԺՈՒՄՆ | 1 | ՎԻՀ | 2 | ՎԻՃԱԿ | 19 |
| ՎԻՃԱԿԱՒՈՐ | 1 | ՎԻՃԱԿԵՄ | 4 | ՎԻՃԻՄ | 3 | ՎԻՄԱԾԻՆ | 2 |
| ՎԻՇԱՊ | 26 | ՎԻՇՏ | 14 | ՎԻՐԱՊ | 2 | ՎԻՐԱՒՈՐԵՄ | 2 |
| ՎԻՐՔ | 3 | ՎԿԱՅ | 53 | ՎԿԱՅԱՐԱՆ | 1 | ՎԿԱՅ ԲԵՐԵԼ | 3 |
| ՎԿԱՅԵՄ | 74 | ՎԿԱՅՈՒԹԻՒՆ | 69 | ՎՀԱՏԵՄ | 1 | ՎՀՈՒԿ | 13 |
| ՎՃԱՐ | 1 | ՎՃԱՐԵՄ, ՎՃԱՐԻՄ | 32 | ՎՃԱՐՈՒՄՆ | 4 | ՎՃԻՌ | 17 |
| ՎՃԻՌ ՀԱՏԱՆԵԼ | 3 | ՎՃԻՏ | 1 | ՎՆԱՍ | 14 | ՎՆԱՍԱԿԱՐ | 9 |
| ՎՆԱՍԵՄ | 21 | ՎՆԱՍԻՉ | 4 | ՎՇՏԱԳԻՆ | 1 | ՎՇՏԱԼԻՑ | 1 |
| ՎՇՏԱՆԱՄ | 1 | ՎՇՏԱՍՊԵԱՅ | 1 | ՎՈՒՇ | 1 | ՎՍԵՄԱՄԻՏ | 1 |
| ՎՍՏԱՀԵՄ | 1 | ՎՏԱԿ | 3 | ՎՏԱՆԳ | 6 | ՎՏԱՆԳԵՄ | 3 |
| ՎՏԱՐԱԿԱՆ | 3 | ՎՏԱՐԱՆԴԵՄ | 1 | ՎՏԱՐԵՄ | 4 | ՎՏԱՒԱԿ | 1 |
| ՎՐԱՆ | 5 | ՎՐԱՑԻ | 6 | ՎՐԴՈՎՈՒՄՆ | 2 | ՎՐԷԺ | 6 |
| ՎՐԷԺԽՆԴԻՐ | 2 | ՎՐԷԺԽՆԴԻՐ ԵՂԱՆԻՄ | 2 | ՎՐԷԺ ԽՆԴՐԵԼ | 5 | ՎՐԷԺԽՆԴՐՈՒԹԻՒՆ | 5 |
| ՎՐԻՊԵՄ, ՎՐԻՊԻՄ | 2 | ՎՐԻՊՈՒԹԻՒՆ | 1 | ՎՈՌԷԱՍ, ՎՈՌԷՍՔ, ՎԱՒՌԷՔ | 4 | | |

# Տ

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| ՏԱԲԻԹԱՅՆ | 1 | ՏԱԳՆԱՊԻՄ | 1 | ՏԱԺԱՆԵԼԻ | 1 | ՏԱԽՏԱԿ | 31 |
| ՏԱԿ | 1 | ՏԱԿԱՒԻՆ, ՏԱԿԱՒԻՆ ԵՒՍ | 4 | ՏԱՂ | 1 | ՏԱՂԱՆԴ | 7 |
| ՏԱՂԱՒԱՐ | 4 | ՏԱՂԱՒԱՐԱՀԱՐՔ | 10 | ՏԱՂՏԿԱՆԱՄ | 3 | ՏԱՂՏԿՈՒԹԻՒՆ | 1 |
| ՏԱՃԱՐ | 117 | ՏԱՃԻԿ | 2 | ՏԱՄ | 481 | ՏԱՅԳԵՐԵՑԻ | 1 |
| ՏԱՆԻՄ | 62 | ՏԱՆՈՒՏԷՐ | 11 | ՏԱՆՋԱՆԱՐԱՆ | 5 | ՏԱՆՋԱՆՔ | 142 |
| ՏԱՆՋԵՄ | 70 | ՏԱՆՋԵԼԻ | 1 | ՏԱՆՋԻՉ | 1 | ՏԱՆՋՈՂԱԿԱՆ | 1 |
| ՏԱՇԵՄ | 1 | ՏԱՇՏ | 1 | ՏԱՊ | 3 | ՏԱՊԱԿ | 3 |
| ՏԱՊԱՆ | 34 | ՏԱՊԱՆԱԿ | 40 | ՏԱՊԱՆԱՔԱՐ | 1 | ՏԱՊԱՐ | 1 |
| ՏԱՊՈՒԹԻՒՆ | 1 | ՏԱՌ | 6 | ՏԱՌԱՊԱՆՔ | 4 | ՏԱՌԱՊԵԱԼ | 2 |
| ՏԱՌԱՊԻՄ | 1 | ՏԱՌԱՏԻՊ | 1 | ՏԱՍԱՆՈՐԴ | 8 | ՏԱՍՆԲԱՆԵԱՆ | 2 |
| ՏԱՏԱՆԻՄ | 3 | ՏԱՏԱՆՈՒՄՆ | 1 | ՏԱՏՐԱԿ | 8 | ՏԱՐԱԳՐԱԿԱՆ(Ք) | 1 |
| ՏԱՐԱԳՐԵՄ | 1 | ՏԱՐԱԳՐՈՒԹԻՒՆ | 1 | ՏԱՐԱԴԷՊ | 1 | ՏԱՐԱԺԱՄ | 2 |
| ՏԱՐԱԼՈՒԾԱԿԱՆ | 1 | ՏԱՐԱԾ(Ք) | 1 | ՏԱՐԱԾԵՄ | 20 | ՏԱՐԱԾՈՒՄՆ | 11 |
| ՏԱՐԱԿՈՅՍ | 5 | ՏԱՐԱԿՈՒՍԱՆՔ | 9 | ՏԱՐԱԿՈՒՍԵԼԻ | 1 | ՏԱՐԱԿՈՒՍԻՄ | 6 |
| ՏԱՐԱԿՈՒՍՈՒԹԻՒՆ | 1 | ՏԱՐԱՀԱՃԵԼԻ | 1 | ՏԱՐԱՁԱՅՆ | 1 | ՏԱՐԱՁԱՅՆԵՄ, ՏԱՐԱՁԱՅՆԻՄ | 1 |
| ՏԱՐԱՁԱՅՆՈՒԹԻՒՆ | 5 | ՏԱՐԱՆԻՒԹ | 1 | ՏԱՐԱՇԽԱՐՀ | 2 | ՏԱՐԱՁԱՓՈՒԹԻՒՆ | 1 |
| ՏԱՐԱՏՈՍ | 1 | ՏԱՐԱՑՈՅՑ | 2 | ՏԱՐԲԵՐ | 1 | ՏԱՐԲԵՐԵՄ | 2 |
| ՏԱՐԲԵՐՈՒԹԻՒՆ | 15 | ՏԱՐԵԳԼՈՒԽ | 1 | ՏԱՐԵԿԱՆ | 1 | ՏԱՐԵՄՈՒՏ | 3 |
| ՏԱՐԵՒՈՐ | 2 | ՏԱՐԷԲՈԼՈՐ (ՏԱՐԵԲՈԼՈՐ) | 2 | ՏԱՐԻ | 69 | ՏԱՐԻ ԵՒ ԿԷՍ | 1 |
| ՏԱՐՈՐՈՇ | 1 | ՏԱՐՈՐՈՇԵՄ | 7 | ՏԱՐՈՐՈՇՈՒՄՆ | 2 | ՏԱՐՍԱՑԻ | 1 |
| ՏԱՐՏԱՄ | 1 | ՏԱՐՏԱՐՈՍ | 1 | ՏԱՐՐ | 181 | ՏԱՐՐԱԿԱՆ | 30 |
| ՏԱՐՐԵՂԷՆ | 7 | ՏԱՐՓՈՒՄՆ | 1 | ՏԱՐՕՆ | 1 | ՏԱՒԻՂ | 4 |
| ՏԱՓԱԿ | 2 | ՏԱՔ | 10 | ՏԲԷԹ | 1 | ՏԳԵՂ | 2 |
| ՏԳԵՂԱՆԱՄ | 2 | ՏԳԵՂՈՒԹԻՒՆ | 4 | ՏԳԷՏ | 26 | ՏԳԻՏԱԲԱՐ | 2 |
| ՏԳԻՏԱՆԱՄ | 1 | ՏԳԻՏՈՒԹԻՒՆ | 31 | ՏԵԱՌՆԱԿԱՆ | 1 | ՏԵԱՌՆ ԵՂԲԱՅՐ | 2 |
| ՏԵԱՌՆԸՆԴԱՌԱՋ | 5 | ՏԵՂ | 5 | ՏԵՂԱԿԱԼ | 1 | ՏԵՂԱԿԱՆ | 5 |
| ՏԵՂԱՏԱՐԱՓ | 1 | ՏԵՂԵԱԿ | 3 | ՏԵՂԵԱՄ | 2 | ՏԵՂԵԿԱՆԱՄ | 2 |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| ՏԵՂԻ | 261 | ՏԵՂԻ ՏԱԼ | 2 | ՏԵՆՏ | 1 | ՏԵՆՉԱՄ | 1 |
| ՏԵՆՉՈՒՄՆ | 2 | ՏԵՌԱՏԵՍ | 3 | ՏԵՍ (տեսութիւն, տեսումն) | 14 | ՏԵՍ (կերպարան, ձև) | 1 |
| ՏԵՍԱԿ | 138 | ՏԵՍԱԿԱԲԱՐ | 2 | ՏԵՍԱԿԱՆ | 13 | ՏԵՍԱԿԱՆԱՄ | 4 |
| ՏԵՍԱԿԱՒՈՐԵԼ | 3 | ՏԵՍԱՆԵԼԻ(Ք) | 21 | ՏԵՍԱՆԵՄ | 554 | ՏԵՍԱՆՈՂ կմ ՏԵՍՕՂ | 10 |
| ՏԵՍԻԼ (յայտնութիւն) | 51 | ՏԵՍԻԼ (կերպարանք) | 11 | ՏԵՍԻԼ (տեսողութիւն) | 3 | ՏԵՍԻԼ (տեսարան) | 1 |
| ՏԵՍՆԱԿԱՆ | 2 | ՏԵՍՈՂԱԿԱՆ | 3 | ՏԵՍՈՂՈՒԹԻՒՆ | 5 | ՏԵՍՈՒԹԻՒՆ | 224 |
| ՏԵՍՈՒՄՆ | 1 | ՏԵՍՉՈՒԹԻՒՆ | 8 | ՏԵՐԵՒ | 32 | ՏԵՒԵՄ | 10 |
| ՏԵՒՈՒՄՆ | 2 | ՏԷԳ | 1 | ՏԷՐ | 601 | ՏԷՐ ՏԷՐ | 2 |
| ՏԷՐ ՏԷՐԱՆՑ | 1 | ՏԷՐ ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍ | 3 | ՏԷՐ ՄԵՐ ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍ | 17 | ՏԷՐ ՔՐԻՍՏՈՍ | 1 |
| ՏԷՐ ՄԵՐ ՔՐԻՍՏՈՍ | 1 | ՏԷՐ ԵՂԻԱ | 2 | ՏԷՐ ՅԱԿՈԲ ԿԼԱՅԵՑԻ | 1 | ՏԷՐ ՍԻՄԷՈՆ | 1 |
| ՏԷՐ ՍԻՈՆ | 1 | ՏԷՐ ՈՂՈՐՄԵԱՅ | 4 | ՏԷՐՈՒԹԻՒՆ | 21 | ՏԷՐՈՒՆԱԿԱՆ | 17 |
| ՏԷՐՈՒՆԵԱՆ | 2 | ՏԷՐՈՒՆԻ | 5 | ՏԸՒՉԱԿԱՆ | 1 | ՏԻ(Ք) | 3 |
| ՏԻԲԵՐ | 1 | ՏԻԲԵՐԻԱՅ ԾՈՎ | 1 | ՏԻԵԶԵՐԱԿԱՆ | 1 | ՏԻԵԶԵՐՔ | 21 |
| ՏԻԶ | 1 | ՏԻԿԻԱՑԻ | 1 | ՏԻԿԻՆ | 2 | ՏԻՂՄ | 3 |
| ՏԻՄՈԹԷՈՍ | 5 | ՏԻՊ | 41 | ՏԻՏԱՆ | 1 | ՏԻՏՈՍ | 2 |
| ՏԻՐԱԲԱՐ | 2 | ՏԻՐԱԿԱՆ | 3 | ՏԻՐԱՄԱՅՐ | 6 | ՏԻՐԱՆԵՆԳ | 1 |
| ՏԻՐԱՊԵՏԵՄ | 1 | ՏԻՐԱՊԷՍ | 3 | ՏԻՐԵՄ | 20 | ՏԻՒ | 64 |
| ՏԻՒՐԱՑԻ | 1 | ՏԽԵՂԾ | 2 | ՏԽՄԱՐ | 1 | ՏԽՈՒՐ | 1 |
| ՏԽՐԱԼԻ | 1 | ՏԽՐԻՄ | 4 | ՏԽՐՈՒԹԻՒՆ | 2 | ՏԿԱՐ | 43 |
| ՏԿԱՐԱՆԱՄ | 19 | ՏԿԱՐՈՒԹԻՒՆ | 36 | ՏՀԱՍ | 1 | ՏՂԱՅ | 56 |
| ՏՂԱՅԱԿԱՆ | 2 | ՏՂԱՅՈՒԹԻՒՆ | 11 | ՏՄՈՐԻՍ | 1 | ՏՆԱՆԿ | 3 |
| ՏՆԱՆԿԱՆԱՄ | 1 | ՏՆԿԱԳՈՐԾ | 1 | ՏՆԿԱԿԱՆ | 74 | ՏՆԿԱԿԻՑ | 1 |
| ՏՆԿԵՂԷՆ | 1 | ՏՆԿԵՄ | 20 | ՏՆՏԵՍ | 3 | ՏՆՏԵՍԱԿԱՆ | 3 |
| ՏՆՏԵՍՈՒԹԻՒՆ | 3 | ՏՆՕՐԷՆՈՒԹԻՒՆ | 42 | ՏՆՕՐԻՆԱԿԱՆ | 1 | ՏՆՕՐԻՆԵՄ | 3 |
| ՏՆՕՐՀՆԷՔ | 1 | ՏՈԿՈՍ | 1 | ՏՈՀՄ | 2 | ՏՈՂԵՄ | 2 |
| ՏՈՄԱՐ կմ ՏՈՒՄԱՐ | 5 | ՏՈՄԱՐԱԳԷՏ(Ք) | 1 | ՏՈՉՈՐԵՄ | 1 | ՏՈՊԱԶ | 1 |
| ՏՈՐՈՍ | 1 | ՏՈՒԱՅՏԵՄ | 1 | ՏՈՒԱՐԱԾ | 1 | ՏՈՒԲԻԱ | 2 |
| ՏՈՒԲԻԴ, ՏՈՒԲԻԹ | 5 | ՏՈՒԳԱՆ(Ք) | 7 | ՏՈՒԺԵՄ | 2 | ՏՈՒՆ | 103 |
| ՏՈՒՆԿ | 66 | ՏՈՒՆՋԵԱՆ | 11 | ՏՈՒՉՈՒԹԻՒՆ կմ ՏԸՒՉՈՒԹԻՒՆ | 5 | ՏՈՒՏՆ | 11 |
| ՏՈՒՐ(Ք) | 15 | ՏՈՒՐԱՑԻ | 1 | ՏՈՒՐԵՒԱՌ (տեքստում՝ ՏՈՒՐ ԵՒ ԱՌ) | 2 | ՏՈՒՓ | 2 |
| ՏՊԱԶԻՈՆ | 1 | ՏՊԱՆԱՄ | 3 | ՏՊԱՒՈՐԱԿԱՆ | 4 | ՏՊԱՒՈՐԵՄ | 10 |
| ՏՊԱՒՈՐՈՒԹԻՒՆ | 3 | ՏՌՓԻՄ | 1 | ՏՐԱՄԱԲԱՆԵՄ | 1 | ՏՐԱՄԱԴՐՈՒԹԻՒՆ | 1 |
| ՏՐԱՄԱԽՈՀՈՒԹԻՒՆ | 12 | ՏՐԱՄԱԿԱՅԻՄ | 1 | ՏՐԱՄԱՏԵՄ | 5 | ՏՐԱՍԷՐ | 1 |
| ՏՐԴԱՏ | 2 | ՏՐԵԱԼ | 1 | ՏՐԷ | 1 | ՏՐԻՏՈՒՐ | 1 |
| ՏՐՈՀԵՄ | 1 | ՏՐՈՒՊ | 1 | ՏՐՏՄԱԿԱՆ | 1 | ՏՐՏՄԱԿԵԱՑ | 1 |
| ՏՐՏՄԵՑՈՒՑԱՆԵՄ | 1 | ՏՐՏՄԻՄ | 27 | ՏՐՏՄՈՒԹԻՒՆ | 62 | ՏՐՏՆՋԱԿԱՆ | 2 |
| ՏՐՏՆՋԵՄ | 3 | ՏՐՏՈՒՄ | 3 | ՏՐՏՈՒՆՋ | 5 | ՏՔՆԻՄ | 1 |
| ՏՔՆՈՒԹԻՒՆ | 1 | ՏՕԹ | 3 | ՏՕՆ | 118 | ՏՕՆԱԽՄԲՈՒԹԻՒՆ | 3 |
| ՏՕՆԱԿԱՆ | 2 | ՏՕՆԱՀՄԱՅՔ | 1 | ՏՕՆԵԼԻ | 2 | ՏՕՆԵՄ | 66 |

## Ր

| | | | |
|---|---|---|---|
| ՐԱԲՈՒՆԻ | 1 | ՐՈՊԷ | 10 |
| ՐԱԽԱԲ | 1 | | |

## Ց

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| ՑԱԾՆՈՒՄ | 1 | ՑԱՄԱՔ | 12 | ՑԱՄԱՔԱՅԻՆ | 4 | ՑԱՄԱՔԵՑՈՒՑԻՉ | 1 |
| ՑԱՄԱՔԻՄ | 6 | ՑԱՄԱՔՈՒԹԻՒՆ | 1 | ՑԱՅԳ | 1 | ՑԱՆԵՄ | 6 |
| ՑԱՆԿ | 3 | ՑԱՆԿԱԼԻ | 4 | ՑԱՆԿԱԿԱՆ | 10 | ՑԱՆԿԱՄ | 36 |
| ՑԱՆԿԱՍԷՐ | 4 | ՑԱՆԿՈՒԹԻՒՆ | 95 | ՑԱՍՄՆԱԿԱՆ | 7 | ՑԱՍՆՈՒՄ | 1 |
| ՑԱՍՈՒՄՆ | 35 | ՑԱՒ(Ք) | 37 | ՑԱՒԱԳԻՆ | 1 | ՑԱՒԱԼԻՑ | 2 |
| ՑԱՒԱԾ | 1 | ՑԱՒԱԾԻՆ | 1 | ՑԱՒԱԿԻՑ | 2 | ՑԱՒԱԿՑՈՒԹԻՒՆ | 1 |
| ՑԱՒԻՄ | 10 | ՑԱՒՈՏ | 1 | ՑԵՂ | 55 | ՑԵՂԱՊԵՏ | 1 |
| ՑԵՏ (տ. ՉԵՏ) | 1 | ՑԵՏԵՄ | 1 | ՑԵՐԵԿ | 4 | ՑԻՆ | 1 |
| ՑԻՑ | 2 | ՑՆԾԱՄ | 2 | ՑՆԾՂԱՅ | 1 | ՑՆԾՈՒԹԻՒՆ | 8 |
| ՑՆՈՐ(Ք) | 2 | ՑՆՈՐՈՒԹԻՒՆ(Ք) | 1 | ՑՆՑՈՒՂ | 2 | ՑՈԼԱՆԱՄ | 1 |
| ՑՈԼՈՒՄՆ | 1 | ՑՈՅՑ(Ք) | 21 | ՑՈՊ | 1 | ՑՈՐԵԱՆ | 23 |
| ՑՈՒԼ | 3 | ՑՈՒՊ | 5 | ՑՈՒՐՏ | 55 | ՑՈՒՑԱԿ | 2 |
| ՑՈՒՑԱՆԵՄ | 465 | ՑՈՒՑՈՒՄՆ | 6 | ՑՈՓ | 1 | ՑՐԵՄ | 1 |
| ՑՐՈՒԵՄ | 16 | ՑՐՈՒՄՆ | 1 | ՑՐՏԱՅԻՆ | 1 | ՑՐՏԱՆԱՄ | 8 |
| ՑՐՏԱՑՈՒՑԱՆԵՄ | 3 | ՑՐՏՈՒԹԻՒՆ | 12 | ՑՔԻ | 1 | ՑՕՂ | 16 |
| ՑՕՂԱՒՈՐ | 1 | ՑՕՂԵՄ | 3 | ՑՕՂՈՒՆ | 1 | | |

## Ւ

| | |
|---|---|
| ՒԻՒԹ (տ. ՅԻՒԹ) | 1 |

## Փ

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| ՓԱԹՈՒԹԵԼ | 2 | ՓԱԽՈՒՍՏ | 5 | ՓԱԽՈՒՑԱՆԵՄ | 5 | ՓԱԽՉԻՄ կմ ՓԱԽՆՈՒՄ | 41 |
| ՓԱԽՍՏԵԱՅ | 1 | ՓԱԿ | 1 | ՓԱԿԵՂՆ | 2 | ՓԱԿԵՄ | 25 |
| ՓԱԿԷ | 1 | ՓԱԿՈՒՄՆ | 1 | ՓԱՂԱՆԳ | 1 | ՓԱՂԱՆՈՒՆ | 1 |
| ՓԱՂԱՆՈՒՆԱԲԱՐ | 1 | ՓԱՂԱՌՈՒԹԻՒՆ | 1 | ՓԱՂԵԿԱՅՆ | 1 | ՓԱՅԼԱԾՈՒ | 2 |
| ՓԱՅԼԱԿԱՆ | 2 | ՓԱՅԼԱԿՆ | 11 | ՓԱՅԼԱՏԱԿԵՄ | 3 | ՓԱՅԼԱՏԱԿՈՒՄՆ | 6 |
| ՓԱՅԼԵՄ | 14 | ՓԱՅԼՈՒՄՆ | 1 | ՓԱՅԼՈՒՆ | 3 | ՓԱՅԾԱՂՆ (տեքստում նաև՝ ՓԱՅԾԵՂՆ) | 9 |
| ՓԱՅՏ | 93 | ՓԱՅՏԵՂԷՆ | 1 | ՓԱՅՏԷ | 1 | ՓԱՆԱՔԻ | 1 |
| ՓԱՆՈՒԷԼ | 1 | ՓԱՌ | 1 | ՓԱՌԱԲԱՆԻՉ | 3 | ՓԱՌԱԲԱՆՈՒԹԻՒՆ | 6 |
| ՓԱՌԱԿԻՑ | 2 | ՓԱՌԱՄՈԼ | 1 | ՓԱՌԱՍԷՐ | 4 | ՓԱՌԱՍԻՐԵՄ | 1 |
| ՓԱՌԱՍԻՐՈՒԹԻՒՆ | 8 | ՓԱՌԱՏՐՈՒԹԻՒՆ | 1 | ՓԱՌԱՒՈՐ | 9 | ՓԱՌԱՒՈՐԵԱԼ | 9 |
| ՓԱՌԱՒՈՐԵՄ | 25 | ՓԱՌԱՒՈՐԻՉ | 1 | ՓԱՌԱՒՈՐՈՒԹԻՒՆ | 5 | ՓԱՌՔ | 287 |
| ՓԱՌՕՔ | 26 | ՓԱՐԱԹՈՆԱՑԻ | 1 | ՓԱՐԱԽ | 2 | ՓԱՐԱՆՈՒ | 1 |
| ՓԱՐԱՏԵՄ | 3 | ՓԱՐԱՒՕՆ | 26 | ՓԱՐԷՍ | 3 | ՓԱՐԹԱՄ | 3 |
| ՓԱՐԹԱՄԱՆԱՄ | 2 | ՓԱՐԹԱՄՈՒԹԻՒՆ | 5 | ՓԱՐԻՍ | 1 | ՓԱՐԻՍԵՑԻ | 4 |
| ՓԱՓԱԳ | 2 | ՓԱՓԱԳԱՆՔ | 2 | ՓԱՓԱԳԵԼԻ | 2 | ՓԱՓԱԳԵՄ, ՓԱՓԱՔԵՄ | 5 |
| ՓԱՓԿԱՆԱՄ | 2 | ՓԱՓԿԱՍԷՐ | 1 | ՓԱՓԿՈՒԹԻՒՆ | 7 | ՓԱՓՈՒԿ (կակուղ, նուրբ) | 2 |
| ՓԱՓՈՒԿ (փափկախոս, մեղմ) | 2 | ՓԵԳՈՎՐԱՅ | 1 | ՓԵՂԿ | 1 | ՓԵՆԵՅԷՍ, ՓԵՆԷՅԷԶ | 6 |
| ՓԵՌԵԿԵՄ | 5 | ՓԵՍԱՅ | 33 | ՓԵՍԱՒԷՐ | 1 | ՓԵՍԻՈՍ | 1 |
| ՓԵՏ | 1 | ՓԵՏԱ | 1 | ՓԵՏՐՎԱՐ | 4 | ՓԵՐԵԶԱՑԻ | 1 |
| ՓԻԼԻՄՈՆ | 1 | ՓԻԼԻՊՊԵՑԻ (Պողոս առաքյալի թղթերից) | 6 | ՓԻԼԻՊՊՈՍ | 5 | ՓԻԼԻՍՈՓԱՅ | 17 |
| ՓԻԼՈՆ (Ալեքսանդրացի) | 6 | ՓԻԼՈՆ (եկեղեցական զգեստ) | 2 | ՓԻԼՈՆ ԻՄԱՍՏՈՒՆ | 1 | ՓԻՂ | 1 |
| ՓԻՍՈՆ ԳԵՏ | 1 | ՓԻՒՆԻԿ | 1 | ՓԻՒՆԻԿԵՑԻ | 2 | ՓԼԱԲԻԱՆՈՍ | 5 |
| ՓԼՈՒՑԱՆԵՄ | 1 | ՓԽՐԵՄ | 1 | ՓՂՇՏԱՑԻ | 1 | ՓՇԱԲԵՐ | 1 |
| ՓՇԵՂԷՆ | 2 | ՓՇՈՏ | 1 | ՓՇՐԱՆՔ | 1 | ՓՇՐԵՄ | 3 |
| ՓՈԹԱՄՈՍ | 1 | ՓՈԹՈՒԱԾ | 1 | ՓՈԽ | 6 | ՓՈԽ (սաղմոսի մաս) | 8 |
| ՓՈԽԱԴՐԵՄ | 2 | ՓՈԽԱԿԵՐՊԵՄ | 2 | ՓՈԽԱԿՑԻՄ | 1 | ՓՈԽԱՆ | 1 |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| ՓՈԽԱՆԱԿ | 56 | ՓՈԽԱՆԱԿԵՄ | 4 | ՓՈԽԱՆՈՐԴ | 4 | ՓՈԽԱՆՈՐԴԵՄ | 2 |
| ՓՈԽԱՆՈՐԴՈՒԹԻՒՆ | 1 | ՓՈԽԱՆՑԱՊԷՍ | 2 | ՓՈԽԱՆՑԵՄ | 3 | ՓՈԽԱՏՐԱՊԷՍ | 2 |
| ՓՈԽԱՐԷՆ(Ք) | 19 | ՓՈԽԱՐԿԱՊԷՍ | 1 | ՓՈԽԱՐԿԵՄ | 9 | ՓՈԽԱՐԿՈՒԹԻՒՆ | 1 |
| ՓՈԽԵՄ | 216 | ՓՈԽՈՒՄՆ | 19 | ՓՈԿԵՂԷԴԷՍ | 1 | ՓՈՂ(Ք) (կոկորդ) | 1 |
| ՓՈՂ (փչողական գործիք) | 55 | ՓՈՂԵՄ | 1 | ՓՈՂՈՑ | 6 | ՓՈՅԹ | 6 |
| ՓՈՇԵՏԵՍԱԿ | 4 | ՓՈՇԻ | 12 | ՓՈՇԻԱՑԵԱԼ | 3 | ՓՈՇԻՄԱՆԻՄ | 2 |
| ՓՈՇՏԱՆԿ (ՓՕՇՏԱՆԿ) | 1 | ՓՈՍ | 1 | ՓՈՏԻՆԱ | 1 | ՓՈՏԻՆՈՍ | 2 |
| ՓՈՐ | 6 | ՓՈՐԵՄ | 2 | ՓՈՐՁ | 14 | ՋՓՈՐՁ ԱՌՆՈՒԼ | 4 |
| ՓՈՐՁԱՆԱՒՈՐ | 1 | ՓՈՐՁԱՆՔ | 20 | ՓՈՐՁԵՄ | 35 | ՓՈՐՁԻՉ, ՓՈՐՁՈՂ | 11 |
| ՓՈՐՁՈՒԹԻՒՆ | 44 | ՓՈՐՈՏԻ(Ք) | 4 | ՓՈՐՈՒԱԾ | 6 | ՓՈՐՈՒՄՆ | 1 |
| ՓՈՒԱ | 1 | ՓՈՒԹ | 1 | ՓՈՒԹԱՄ | 12 | ՓՈՒԹԱՆՑԻԿ | 1 |
| ՓՈՒԹԱՆՑՈՒԹԻՒՆ | 1 | ՓՈՒԹԱՊԷՍ | 2 | ՓՈՒԹՈՎ | 14 | ՓՈՒՆՋ | 1 |
| ՓՈՒՇ | 5 | ՓՈՒՉ | 1 | ՓՈՓՈԽԱԿԱՆ | 47 | ՓՈՓՈԽԵԼԻ(Ք) | 8 |
| ՓՈՓՈԽԵՄ | 60 | ՓՈՓՈԽՈՒՄՆ | 62 | ՓՈՔՐ | 65 | ՓՈՔՐ ԻՆՉ | 3 |
| ՓՈՔՐԱԳՈՅՆ | 4 | ՓՈՔՐԱԽԵԼՔ | 1 | ՓՈՔՐԻԿ | 11 | ՓՈՔՐԻՇԱՏԷ | 4 |
| ՓՈՔՐԿԱՆԱՄ | 2 | ՓՈՔՐԿՈՒԹԻՒՆ | 2 | ՓՈՔՐՈՒԹԻՒՆ | 1 | ՓՉԵՄ | 22 |
| ՓՉՈՒՄՆ | 5 | ՓՍԱԼՏ | 1 | ՓՍԽԱԾ | 3 | ՓՏԵՄ | 6 |
| ՓՐԿԱԳՈՐԾՈՒԹԻՒՆ | 1 | ՓՐԿԱԿԱՆ | 17 | ՓՐԿԱՆՔ | 2 | ՓՐԿԵՄ | 95 |
| ՓՐԿԻՉ | 77 | ՓՐԿՈՒԹԻՒՆ | 99 | ՓՐԿՉԱԿԱՆ | 7 | ՓՐՓՐԱՏԵՍԱԿ | 1 |
| ՓՐՓՐԻՄ | 1 | ՓՔԱՆԱՄ | 1 | ՓՔԱՑՈՒՄՆ | 1 | | |

## Ք

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| ՔԱԾԱՒԱՐԻ | 1 | ՔԱԿԱՆՕԹ | 1 | ՔԱԿԵՄ | 22 | ՔԱԿՏԵՄ | 16 |
| ՔԱԿՏԻՉ | 2 | ՔԱԿՏՈՒՄՆ | 4 | ՔԱՀԱՆԱՅ | 297 | ՔԱՀԱՆԱՅԱԳՈՐԾԵՄ | 2 |
| ՔԱՀԱՆԱՅԱԳՈՐԾՈՒԹԻՒՆ | 3 | ՔԱՀԱՆԱՅԱԹԱՂ | 4 | ՔԱՀԱՆԱՅԱԿԱՆ | 7 | ՔԱՀԱՆԱՅԱՊԵՏ | 46 |
| ՔԱՀԱՆԱՅԱՊԵՏԵՄ | 4 | ՔԱՀԱՆԱՅԱՊԵՏՈՒԹԻՒՆ | 19 | ՔԱՀԱՆԱՅԹԱՂԷՔ | 1 | ՔԱՀԱՆԱՅՈՒԹԻՒՆ | 55 |
| ՔԱՀԱՆԱՅՕՐՀՆԷՔ | 2 | ՔԱՂ | 1 | ՔԱՂԱՔ | 56 | ՔԱՂԱՔ ԲԵԹԱՆԻՈՅ | 1 |
| ՔԱՂԱՔ ԵՐՈՒՍԱՂԷՄ | 2 | ՔԱՂԱՔ ՆԱԽԻՋԵՒԱՆ | 1 | ՔԱՂԱՔԱԿԱՆ | 6 | ՔԱՂԱՔԱՑԻ | 1 |
| ՔԱՂԲԱՆ | 1 | ՔԱՂԴԷԱՑԻ | 6 | ՔԱՂԵԲ | 2 | ՔԱՂԵՄ | 11 |
| ՔԱՂԻՐԴ, ՔԱՂԻՐԹ (տեքստում նաև՝ ՔԱՂԵՐԹ) | 3 | ՔԱՂԿԵԴՈՆ | 21 | ՔԱՂԿԵԴՈՆԻԿ | 9 | ՔԱՂՈՑ | 2 |
| ՔԱՂՑ | 16 | ՔԱՂՑԿԵՂ | 1 | ՔԱՂՑՆՈՒՄ | 10 | ՔԱՂՑՐ | 35 |
| ՔԱՂՑՐԱԲԱՆՈՒԹԻՒՆ | 1 | ՔԱՂՑՐԱԳՈՅՆ | 1 | ՔԱՂՑՐԱՁԱՅՆ | 1 | ՔԱՂՑՐԱՆԱՄ | 1 |
| ՔԱՂՑՐԱՊԷՍ | 1 | ՔԱՂՑՐԱՏԵՍ | 1 | ՔԱՂՑՐԱՑՈՒՑԱՆԵՄ | 4 | ՔԱՂՑՐՈՐԱԿ | 2 |
| ՔԱՂՑՐՈՒԹԻՒՆ | 26 | ՔԱՄ | 2 | ՔԱՄԱՀԵՄ | 1 | ՔԱՄԵՄ | 1 |
| ՔԱՅԼ | 1 | ՔԱՆ | 306 | ՔԱՆ ԵԹԷ, ՔԱՆ ԹԷ | 10 | ՔԱՆԱԿ | 41 |
| ՔԱՆԱԿԱՆԱՄ | 1 | ՔԱՆԱԿԵՄ | 2 | ՔԱՆԱԿՈՒԹԻՒՆ | 4 | ՔԱՆԱՆ | 6 |
| ՔԱՆԱՆԱՑԻ | 16 | ՔԱՆԱՆՈՒՀԻ | 1 | ՔԱՆՁԻ | 60 | ՔԱՆԻ | 72 |
| ՔԱՆԻ՞ ԵՒՍ | 4 | ՔԱՆԻ՞Ս, ՔԱՆԻ՞ՑՍ | 7 | ՔԱՆԻՈՒԹԻՒՆ | 1 | ՔԱՆՈՆ | 1 |
| ՔԱՆՔԱՐ | 6 | ՔԱՋ (ուժեղ, կորովի) | 1 | ՔԱՋ (կարի, յոյժ) | 5 | ՔԱՋ (դյուցազուն, հսկա) | 1 |
| ՔԱՋՔ (դև, այս) | 2 | ՔԱՋԱԲԱՆ | 1 | ՔԱՋԱԼԵՐԻՄ | 2 | ՔԱՋԱՆԱՄ | 1 |
| ՔԱՋԱՄԻՐՏ | 2 | ՔԱՌ | 3 | ՔԱՌԱԴԷՄ | 1 | ՔԱՌԱԹԵՒ | 5 |
| ՔԱՌԱԿԱԲԱՐ | 1 | ՔԱՌԱԿԵՐՊԵԱՆ | 1 | ՔԱՌԱԿԻ | 4 | ՔԱՌԱԿՈՒՍԻ | 5 |
| ՔԱՌԱՉԵՒ | 1 | ՔԱՌԱՆԿԻՒՆԻ | 3 | ՔԱՌԱՍՆՈՐԴ(Ք) | 5 | ՔԱՌԱՍՆՕՐԵԱՅ | 15 |
| ՔԱՍԲԻ | 1 | ՔԱՐ | 51 | ՔԱՐԱՀԱՏ | 1 | ՔԱՐԱՆԱՄ | 2 |
| ՔԱՐԲ | 1 | ՔԱՐԵԱՅ, ՔԱՐԵՂԷՆ | 9 | ՔԱՐԹՈՇ | 1 | ՔԱՐԿՈԾ | 1 |
| ՔԱՐԿՈԾԵՄ | 9 | ՔԱՐԿՈԾՈՒՄՆ | 2 | ՔԱՐՇԵՄ | 37 | ՔԱՐՇՈՂԱԿԱՆ | 3 |
| ՔԱՐՈԶ | 12 | ՔԱՐՈԶԵՄ | 39 | ՔԱՐՈԶԻՉ | 3 | ՔԱՐՈԶՈՒԹԻՒՆ | 22 |
| ՔԱՐՈՒՏ | 1 | ՔԱՐՏԷՍ | 6 | ՔԱՐՑ | 2 | ՔԱՑԱԽ | 4 |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| ՔԱՅԱԽՈՒՏ | 1 | ՔԱ՛Ւ ԼԻՑԻ կմ ՔԱ՛Ւ (ԵՒ) ՄԻ՛ ԼԻՑԻ | 2 | ՔԱՒԱՐԱՆ | 40 | ՔԱՒԵՄ | 32 |
| ՔԱՒՈՒԹԻՒՆ | 35 | ՔԱՔԱՐ | 1 | ՔԵԲՐՈՆ | 1 | ՔԵՂԿԻ | 1 |
| ՔԵՌՈՐԴԻ | 1 | ՔԵՏԱՑԻ | 1 | ՔԵՏՈՒՐԱՅ | 2 | ՔԵՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ | 1 |
| ՔԵՐԵՄ | 1 | ՔԵՐԹԵՄ | 2 | ՔԵՐԹՈՂ | 2 | ՔԵՐՈՎԲ, ՔԵՐՈՎԲԷ (տեքստում նաև՝ ՔԵՐՈԲԷ) | 29 |
| ՔԵՐՔԵՇԵԼ | 1 | ՔԷ | 2 | ՔԷՆ | 2 | ՔԹԹԵԼ ԱԿԱՆ | 4 |
| ՔԻԹ | 3 | ՔԻՄՔ | 1 | ՔԻՆՈՍՓԷՆԷՍ | 1 | ՔԻՍ | 1 |
| ՔԻՍՏ | 1 | ՔԻՐԱՄ | 2 | ՔԻՐՏՆ | 10 | ՔՆԱՍԻՐՈՒԹԻՒՆ | 1 |
| ՔՆԱՏԵՂ | 1 | ՔՆԱՐ | 12 | ՔՆԱՓ | 2 | ՔՆՆԵՄ | 32 |
| ՔՆՆԻՉ | 1 | ՔՆՆՈՒԹԻՒՆ | 44 | ՔՆՈՒ | 1 | ՔՇՈՑ | 5 |
| ՔՈԴՈՂ ԳՈՄՈՐ | 1 | ՔՈՅՐ | 18 | ՔՈՍ | 2 | ՔՈՐԱԶ | 1 |
| ՔՈՐԵՄ | 1 | ՔՈՒԵՐՔ (տ. ՔՈՅՐ) | 1 | ՔՈՒԷԱՆԱՄ | 1 | ՔՈՒՆ | 8 |
| ՔՈՒՆ(Ք) | 1 | ՔՈՒՍԻ | 1 | ՔՈՒՐՄ | 2 | ՔՍԱԿ | 1 |
| ՔՍԱՆԹԻՍ | 1 | ՔՐԷԱԿԱՆ | 3 | ՔՐԻՍՏՈՆԵԱՅ | 66 | ՔՐԻՍՏՈՆԷԱԿԱՆ | 2 |
| ՔՐԻՍՏՈՆԷՈՒԹԻՒՆ | 5 | ՔՐԻՍՏՈՍ | 1168 | ՔՐԻՍՏՈՍ ՅԻՍՈՒՍ | 5 | ՔՐԻՍՏՈՍԱԾԻՆ | 1 |
| ՔՐԻՍՏՈՍԱՄԱՐՏ | 1 | ՔՕՂ | 8 | ՔՕՂԵՄ (ՍՔՕՂԵՄ) | 1 | | |


## Օ


| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| Օ | 1 | ՕԳՆԱԿԱՆ | 13 | ՕԳՆԱԿԱՆՈՒԹԻՒՆ | 5 | ՕԳՆԵՄ | 10 |
| ՕԳՆՈՒԹԻՒՆ | 14 | ՕԳՈՍՏԻՆՈՍ | 3 | ՕԳՈՍՏՈՍ | 2 | ՕԳՈՍՏՈՍ ԿԱՅՍՐ | 2 |
| ՕԳՈՒՏ | 25 | ՕԳՏԱԿԱՐ | 3 | ՕԳՏԵՄ | 12 | ՕԳՏԵՑՈՒՑԱՆԵՄ | 1 |
| ՕԳՏՈՒԹԻՒՆ | 8 | ՕԴ | 185 | ՕԴ (կոշիկ) | 3 | ՕԴԱՅԻՆ | 3 |
| ՕԴԱՆՄԱՆ | 1 | ՕԴԱՊԱՐԻԿ | 1 | ՕԴԱՏԵՍԱԿ | 1 | ՕԴԵՂԷՆ | 6 |
| ՕԴԻ | 4 | ՕԹԱՐԱՆ | 1 | ՕԹԵՎԱՆ | 13 | ՕԹԷՕՍՆ | 1 |
| ՕԹԻՄ | 1 | ՕԺԱՆԴԱԿ | 1 | ՕԺԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ | 3 | ՕԺԻՏ | 1 |
| ՕԼՕՄՊԱՅԻՆ | 1 | ՕԼՕՄՊԻՈՍ | 1 | ՕԾԱՆԵՄ | 92 | ՕԾՈՒԹԻՒՆ | 2 |
| ՕԾՈՒՄՆ | 58 | ՕԾՕՂ | 2 | ՕՁ | 72 | ՕՁՆ ԱՐՔԱՅԵԿ | 1 |
| ՕՁԱՀԱՐ | 1 | ՕՁԱՁԵՒ | 2 | ՕՁԻՔ | 1 | ՕՁՆԵՑԻ | 2 |
| ՕՂ | 1 | ՕՃԻՐ (տ. ՈՃԻՐ) | 1 | ՕՄԵԳԱ | 5 | ՕՆ | 1 |
| ՕՇԱՐԱԿ | 1 | ՕՍԻԴ | 5 | ՕՏԱՐ | 47 | ՕՏԱՐԱԶԱՅՆ | 1 |
| ՕՏԱՐԱՆԱՄ | 2 | ՕՏԱՐԱՑՈՒՑԱՆԵՄ | 1 | ՕՏԱՐԻՏ (տ. ՓԱՅԼԱԾՈՒ) | 2 | ՕՏԱՐՈՒԹԻՒՆ | 4 |
| ՕՐ (տես նաև՝ ԱՒՐ) | 365 | ՕՐ ԸՍՏ ՕՐԷ | 3 | ՕՐԷՆ(Ք) | 353 | ՕՐԷՆՍԴԻՐ | 1 |
| ՕՐԻՆԱԴՐԵՄ | 4 | ՕՐԻՆԱԴՐՈՒԹԻՒՆ | 1 | ՕՐԻՆԱԿ | 219 | ՕՐԻՆԱԿ ՏԱԼ | 4 |
| ՕՐԻՆԱԿԱՆ | 4 | ՕՐԻՆԱԿԵՄ | 6 | ՕՐԻՆԱՒՈՐ | 10 | ՕՐԻՈՐԴ | 1 |
| ՕՐՀԱՍ | 1 | ՕՐՀԱՍԱԿԱՆ | 1 | ՕՐՀՆԱԲԱՆԵՄ | 2 | ՕՐՀՆԱԲԱՆՈՒԹԻՒՆ | 1 |
| ՕՐՀՆԵԱԼ | 41 | ՕՐՀՆԵՄ | 150 | ՕՐՀՆԵՐԳՈՒԹԻՒՆ | 1 | ՕՐՀՆԻՉ | 1 |
| ՕՐՀՆՈՒԹԻՒՆ | 139 | ՕՑՏԵՄ | 1 | | | | |


## Ֆ


| | |
|---|---|
| ՖԱՐՏ (տ. ՓԱՐՏ, ԿՈՃԱՏ) | 1 |
| ՖՌԱՆԳ, ՖՌԱՆԿ | 15 |

# ԹՎԱԿԱՆ ԱՆՈՒՆ

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| Ա | 29 | Բ | 301 | ԲԺԱՆ | 90 | ԲԻՒՐ | 34 |
| ԲՃ | 3 | ԲՃԽԸ | 3 | ԲՃԾԲ | 1 | ԲՃՔՆ | 1 |
| ԲՉ | 1 | ԲՌ | 1 | Գ | 333 | ԳԺ | 1 |
| ԳՃ | 4 | ԳՃԽԸ | 1 | ԳՃԿԵ | 1 | ԳՌ | 4 |
| ԳՌ ԵՒ ՁՃ | 1 | ԳՌՈՉԹ | 1 | Դ | 224 | Դ ԵՒ ԿԷՍ | 1 |
| ԴԷ | 1 | ԴԺ | 1 | ԴՁ | 3 | ԴՃ | 4 |
| ԴՃԼ | 1 | ԴՃՁ | 1 | ԴՌ | 2 | ԴՌՊԹ | 1 |
| Ե | 143 | Ե ԲԻՒՐ | 2 | ԵԵՐՈՐԴ | 19 | ԵԺԱՆ | 1 |
| ԵՃ | 5 | ԵՃՌ | 1 | ԵՌ | 2 | ԵՌԲՃ | 1 |
| ԵՌՇ | 1 | ԵՐԵՍՆԵՐՈՐԴ | 16 | ԵՐԵՍՈՒՆ | 16 | ԵՐԵՍՈՒՆԵՒԱ | 2 |
| ԵՐԵՍՈՒՆԵՒԲ | 10 | ԵՐԵՍՈՒՆԵՒԳ | 8 | ԵՐԵՍՈՒՆԵՒԴ | 8 | ԵՐԵՍՈՒՆԵՒԵ | 8 |
| ԵՐԵՍՈՒՆԵՒՁ | 5 | ԵՐԵՍՈՒՆԵՒԷ | 7 | ԵՐԵՍՈՒՆԵՒԸ | 6 | ԵՐԵՍՈՒՆԵՒԹ | 6 |
| ԵՐԵՍՈՒՆԵՒՄԻ | 7 | ԵՐԵՔ կմ ԵՐԻՍ | 352 | ԵՐԵՔ ՀԱԶԱՐ | 1 | ԵՐԵՔՏԱՍԱՆ | 5 |
| ԵՐԵՔՏԱՍԱՆԵՐՈՐԴ | 39 | ԵՐԿՈՏԱՍԱՆ | 72 | ԵՐԿՈՏԱՍԱՆԵՐՈՐԴ | 54 | ԵՐԿՈՒ | 310 |
| ԵՐԿՈՒ ՀԱԶԱՐ | 1 | ԵՐԿՈՒ ՀԱՐԻՒՐ | 1 | ԵՐԿՈՔԵԱՆ, ԵՐԿՈՔԻՆ | 68 | ԵՐԿՐՈՐԴ | 1192 |
| ԵՐՐԵԱԿ | 15 | ԵՐՐՈՐԴ | 949 | ԵՐՐՈՐԴԱԿԱՆ | 2 | ԵՕԹԱՆԱՍՆԵԿԻ, ԵՕԹԱՆԱՍՆԵԿԻՆ | 1 |
| ԵՕԹԱՆԱՍՆԵՐՈՐԴ | 1 | ԵՕԹԱՆԱՍՈՒՆ | 18 | ԵՕԹԱՆԱՍՈՒՆԲ | 1 | ԵՕԹԱՆԱՍՈՒՆԳ | 1 |
| ԵՕԹԱՆԱՍՈՒՆԵՐԿՈՒ | 1 | ԵՕԹԱՆԱՍՈՒՆԵՒԴ | 1 | ԵՕԹԱՆԱՍՈՒՆԵՒԵ | 1 | ԵՕԹԱՆԱՍՈՒՆԵՒՁ | 1 |
| ԵՕԹԱՆԱՍՈՒՆԵՒԷ | 1 | ԵՕԹԱՆԱՍՈՒՆԵՒԸ | 1 | ԵՕԹԱՆԱՍՈՒՆԵՒԹ | 1 | ԵՕԹԱՆԱՍՈՒՆԵՒՄԻ | 1 |
| ԵՕԹՆ | 127 | ԵՕԹՆԵՐՈՐԴ | 290 | ԵՕԹՆԵՒԺ | 17 | ԵՕԹՆԵՒԺԵՐՈՐԴ | 12 |
| ԵՕԹՆԵՔԻՆ, ԵՕԹՆԵՔԵԱՆ | 3 | Զ | 113 | ԶԵՐՈՐԴ | 9 | ԶԶ | 3 |
| Է | 259 | ԷԵԿԻ | 1 | ԷԵՐՈՐԴ | 21 | ԷՃ | 1 |
| ԷՌ | 2 | Ը | 67 | ԸԵՐՈՐԴ | 10 | ԸՃՌ | 1 |
| ԸՌԲՃ | 1 | Թ | 67 | ԹՃ | 3 | ԹՃԽԲ | 2 |
| Ժ | 152 | ԺԱ | 13 | ԺԲ | 23 | ԺԳ | 9 |
| ԺԴ | 10 | ԺԵ | 28 | ԺԵՐՈՐԴ | 15 | ԺԶ | 14 |
| ԺԷ | 13 | ԺԸ | 12 | ԺԸՌ | 1 | ԺԹ | 9 |
| ԺՃՌ | 1 | ԺՌ | 1 | Ի | 32 | ԻԱ | 14 |
| ԻԲ | 19 | ԻԳ | 7 | ԻԴ | 29 | ԻԵ | 11 |
| ԻԵՌ | 1 | ԻԵՐՈՐԴ | 3 | ԻԶ | 8 | ԻԷ | 8 |
| ԻԸ | 9 | ԻԹ | 7 | ԻՆՆ | 44 | ԻՆՆԵԱԿ | 1 |
| ԻՆՆԵՐՈՐԴ | 212 | ԻՆՆԵՒԺ | 17 | ԻՆՆԵՒՏԱՍՆԵԱԿ, ԻՆՆԵՒՏԱՍՆԵՐԵԱԿ | 3 | ԻՆՆԵՒՏԱՍՆԵՐՈՐԴ | 12 |
| ԻՆՆՍՈՒՆ ԵՒ ԻՆՆ | 1 | ԻՆՆՍՈՒՆԻՆՆ | 1 | ԻՌ | 1 | Լ | 45 |
| ԼԱ | 4 | ԼԲ | 6 | ԼԳ | 7 | ԼԳ ԵՒ ԿԷՍ | 4 |
| ԼԴ | 4 | ԼԵ | 9 | ԼԶ | 9 | ԼԶ ԲԻՒՐ | 1 |
| ԼԷ | 2 | ԼԸ | 6 | ԼԸԵՐՈՐԴ | 1 | ԼԹ | 3 |
| ԼՌ | 1 | Խ | 87 | ԽԱ | 2 | ԽԲ | 6 |
| ԽԳ | 2 | ԽԴ | 3 | ԽԴՌ | 1 | ԽԵ | 9 |
| ԽԶ | 2 | ԽԸ | 7 | ԽԹ | 1 | Ծ | 19 |
| ԾԱ | 3 | ԾԲ | 3 | ԾԳ | 1 | ԾԵ | 1 |
| ԾԶ | 2 | ԾԷ | 1 | ԾԸ | 2 | ԾԹ | 2 |
| Կ | 15 | ԿԱ | 1 | ԿԲ | 3 | ԿԵ | 3 |
| ԿԶ | 1 | ԿԹ | 1 | ԿՌ | 1 | Հ | 22 |
| ՀԱԶԱՐ | 28 | ՀԱԶԱՐ ԵՒ ՉՈՐՍ ՀԱՐԻՒՐ | 1 | ՀԱՐԻՒՐ | 13 | ՀԱՐԻՒՐԵԱԿ | 2 |
| ՀԲ | 5 | ՀԵ | 3 | ՀԷ | 1 | ՀԸ | 2 |
| ՀԻՆԳ | 38 | ՀԻՆԳԵՐՈՐԴ | 446 | ՀԻՆԳԵՒԺԵՐՈՐԴ | 1 | ՀՆԳԵՏԱՍԱՆ | 4 |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| ՀՆԳԵՏԱՍԱՆԵՐՈՐԴ | 36 | ՀՌ | 1 | ՀՌՍ | 1 | Ձ | 10 |
| ՁԱ | 1 | ՁԳ | 2 | ՁԹ | 1 | Ղ | 1 |
| Ճ | 16 | ՃԱ | 1 | ՃԱՒՈՐ | 2 | ՃԵ | 1 |
| ՃԸ | 1 | ՃԺ | 2 | ՃԺԱ | 2 | ՃԺԲ | 1 |
| ՃԻ | 1 | ՃԻԵ | 2 | ՃԻԸ | 1 | ՃԻԹ | 1 |
| ՃԻ ՀԱԶԱՐ | 1 | ՃԼ | 1 | ՃԼԵ | 1 | ՃԽ | 1 |
| ՃԽԴ | 1 | ՃԾ | 8 | ՃԾՌ | 1 | ՃԾՔ | 1 |
| ՃԿՌ | 1 | ՃՀ | 1 | ՃՀԴ | 1 | ՃՁ | 2 |
| ՃՁԶ | 1 | ՄԵԿԻՆ կմ ՄԵԿԻՆ | 3 | ՄԵՏԱՍԱՆ | 4 | ՄԵՏԱՍԱՆԵՐՈՐԴ | 55 |
| ՄԼԸ | 1 | ՄԽԸ | 3 | ՄԾ | 2 | ՄՂԱ | 1 |
| Յ | 6 | ՅԺԸ | 3 | ՅԻՍՆԵՐՈՐԴ | 8 | ՅԻՍՈՒՆ | 6 |
| ՅԻՍՈՒՆԲ | 2 | ՅԻՍՈՒՆԳ | 3 | ՅԻՍՈՒՆԴ | 1 | ՅԻՍՈՒՆԵՒԲ | 1 |
| ՅԻՍՈՒՆԵՒԳ | 1 | ՅԻՍՈՒՆԵՒԴ | 2 | ՅԻՍՈՒՆԵՒԵ | 2 | ՅԻՍՈՒՆԵՒԶ | 2 |
| ՅԻՍՈՒՆԵՒԷ | 2 | ՅԻՍՈՒՆԵՒԸ | 2 | ՅԻՍՈՒՆԵՒԹ | 2 | ՅԻՍՈՒՆԵՒՄԻ | 3 |
| ՅԻՍՈՒՆԵՒՀԻՆԳ | 1 | ՅԻՍՈՒՆԵՒՎԵՑ | 1 | ՅԼ | 1 | ՅԼԸ | 1 |
| ՅԽԸ | 1 | ՅԾԴ | 2 | ՅԿ | 1 | ՅԿԱ | 1 |
| ՅԿԵ | 8 | ՅԿԶ | 2 | Ն | 2 | ՆԺ | 2 |
| ՆԼ | 1 | ՆԽԲ | 1 | ՆԾ | 1 | ՆՁ | 1 |
| ՆՁԳ | 3 | Շ | 2 | ՇԵ | 3 | ՇԺԲ | 1 |
| ՇԺԸ | 1 | ՇԼԲ | 1 | ՇԾԳ | 1 | ՇՂԱ | 1 |
| Ո | 2 | ՈԼԶ | 1 | ՈԾ | 1 | Ո.Կ.Զ. | 1 |
| ՈՒԹ | 25 | ՈՒԹԵՐՈՐԴ | 238 | ՈՒԹԵՒԺ | 17 | ՈՒԹԵՒԺԵՐՈՐԴ | 12 |
| ՈՒԹՃ ՅԻՍՈՒՆ | 1 | ՈՒԹՍՈՒՆ | 1 | ՈՒԹՍՈՒՆԲ | 1 | ՈՒԹՍՈՒՆԵՐՈՐԴ | 1 |
| ՈՒԹՍՈՒՆԵՒՄԻ | 1 | ՉԻ | 1 | ՉՈՐԵՔԿԻՆ | 13 | ՉՈՐԵՔ ՀԱՐԻՒՐ ԵՒ ՅԻՍՈՒՆ | 1 |
| ՉՈՐԵՔՏԱՍԱՆ | 16 | ՉՈՐԵՔՏԱՍԱՆԵՐՈՐԴ | 39 | ՉՈՐՐՈՐԴ | 667 | ՉՈՐՐՈՐԴՈՒԹԻՒՆ | 4 |
| ՉՈՐՔ | 216 | Ռ | 37 | ՌՁԳ | 1 | ՌՃԵ | 1 |
| ՌՄ ԵՒ Կ | 1 | ՌՆԾ | 1 | ՌՈ | 1 | ՌՊ | 1 |
| ՌՔ | 3 | ՍԲՃ | 1 | ՎԱԹՍՆԵՐՈՐԴ | 2 | ՎԱԹՍՈՒՆ | 7 |
| ՎԱԹՍՈՒՆԲ | 1 | ՎԱԹՍՈՒՆԳ | 1 | ՎԱԹՍՈՒՆԵՒԴ | 1 | ՎԱԹՍՈՒՆԵՒԵ | 1 |
| ՎԱԹՍՈՒՆԵՒԶ | 1 | ՎԱԹՍՈՒՆԵՒԷ | 1 | ՎԱԹՍՈՒՆԵՒԸ | 1 | ՎԱԹՍՈՒՆԵՒԹ | 1 |
| ՎԱԹՍՈՒՆԵՒՄԻ | 1 | ՎԵՇՏԱՍԱՆ | 1 | ՎԵՇՏԱՍԱՆԵՐՈՐԴ | 24 | ՎԵՑ | 70 |
| ՎԵՑԵԱԿ | 3 | ՎԵՑԵԿԻ կամ ՎԵՑԵԿԻՆ | 6 | ՎԵՑԵՐՈՐԴ | 347 | ՎԵՑԵՔԵԱՆ կմ ՎԵՑԵՔԻՆ | 6 |
| ՎԵՑՀԱՐԻՒՐ | 2 | ՎԵՑՏԱՍԱՆԵՐՈՐԴ | 5 | ՎՉԼ | 1 | ՎՊԹ | 1 |
| ՎՊԾ | 1 | ՏԱՍՆ | 40 | ՏԱՍՆԱՒՈՐ | 1 | ՏԱՍՆԲ | 1 |
| ՏԱՍՆԳ | 1 | ՏԱՍՆԵԱԿ | 4 | ՏԱՍՆԵՐԵՔ | 1 | ՏԱՍՆԵՐԿՈՒ | 1 |
| ՏԱՍՆԵՐՈՐԴ | 198 | ՏԱՍՆԵՒԱ | 1 | ՏԱՍՆԵՒԴ | 1 | ՏԱՍՆԵՒԵ | 1 |
| ՏԱՍՆԵՒԶ | 1 | ՏԱՍՆԵՒԷ | 1 | ՏԱՍՆԵՒԸ | 1 | ՏԱՍՆԵՒԻՆՆ | 1 |
| ՏԱՍՆԵՒՄԻ | 2 | ՏԱՍՆԵՒՉՈՐՍ | 1 | ՐԹՃՀԶ | 1 | ՐՃՂԸ | 2 |
| ՐՄԿԳ | 1 | Ց | 1 | ՑՆ | 1 | ՑՊԽ | 1 |
| Փ | 1 | Ք | 1 | ՔԱՌԱՍՈՒՆ | 24 | ՔԱՌԱՍՈՒՆԲ | 3 |
| ՔԱՌԱՍՈՒՆԳ | 3 | ՔԱՌԱՍՈՒՆԵՐՈՐԴ | 6 | ՔԱՌԱՍՈՒՆԵՒԱ | 1 | ՔԱՌԱՍՈՒՆԵՒԲ | 1 |
| ՔԱՌԱՍՈՒՆԵՒԳ | 1 | ՔԱՌԱՍՈՒՆԵՒԴ | 4 | ՔԱՌԱՍՈՒՆԵՒԵ | 4 | ՔԱՌԱՍՈՒՆԵՒԶ | 4 |
| ՔԱՌԱՍՈՒՆԵՒԷ | 3 | ՔԱՌԱՍՈՒՆԵՒԸ | 3 | ՔԱՌԱՍՈՒՆԵՒԹ | 2 | ՔԱՌԱՍՈՒՆԵՒԻՆՆ | 1 |
| ՔԱՌԱՍՈՒՆԵՒՄԻ | 3 | ՔԱՌԱՍՈՒՆԵՒՎԵՑ | 1 | ՔՍԱՆԲԵՐՈՐԴ | 1 | ՔՍԱՆԳ | 13 |
| ՔՍԱՆԵՐՈՐԴ | 29 | ՔՍԱՆԵՐՈՐԴ ԵՐՐՈՐԴ | 1 | ՔՍԱՆԵՐՈՐԴ ՉՈՐՐՈՐԴ | 1 | ՔՍԱՆԵՒԱ | 3 |
| ՔՍԱՆԵՒԲ | 3 | ՔՍԱՆԵՒԳ | 2 | ՔՍԱՆԵՒԴ | 15 | ՔՍԱՆԵՒԵ | 15 |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| ՔՍԱՆԵՒԵԵՐՈՐԴ | 1 | ՔՍԱՆԵՒՁ | 14 | ՔՍԱՆԵՒԷ | 14 | ՔՍԵԱՆԵՒԷԵՐՐՈՐԴ | 1 |
| ՔՍԱՆԵՒԸ | 15 | ՔՍԱՆԵՒԸԵՐՈՐԴ | 1 | ՔՍԱՆԵՒԹ | 14 | ՔՍԱՆԵՒԻՆՆԵՐՈՐԴ | 1 |
| ՔՍԱՆԵՒՄԷԿ | 1 | ՔՍԱՆԵՒՄԻ | 12 | ՔՍԱՆԵՒՄԻԵՐՈՐԴ | 1 | ՔՍԱՆԵՒՎԵՑ | 1 |
| ՔՍԱՆԵՒՎԵՑԵՐՈՐԴ | 1 | ՔՍԱՆԷ | 1 | ՔՍԱՆԹ | 1 | | |

## ՎԵՐՋԱԲԱՆ

Գրիգոր Տաթևացու «Գիրք հարցմանց»-ի Համաբարբառի հրատարակությամբ մեր ոսկեղինիկ գրաբարի բառանյութը համալրվեց ևս մի քանի հարյուր բառով, այսինքն, չնայած գրաբարյան բնագրերի, գրեթե բոլոր հեղինակների երկերի ուսումնասիրության ուղղությամբ կատարված հսկայական աշխատանքին և հրատարակումներին, հայագիտությունն այնուամենայնիվ, դեռ անելիքներ ունի այս ոլորտում:

Հիշատակարանում ընթերցողը կկարդա Ս. Գրիգոր Տաթևացու հետևյալ տողերն իր գրքի վերաբերյալ. **«Եվ ես բազմաթիվ պտուղներ հավաքող մշակի նման, իբրև անուշահոտ բազմերանգ ծաղիկների մի փունջ, կամ իբրև փոքրիկ թռչնի՝ մեղվի, մեղրահաց, կամ իբրև տառապալից կյանքով [ապրող] այրու մանրադրամ, Ձերդ մեծության՝ իմաստասեր և ճշմարտասեր Հայաստանյայց եկեղեցու և ընթերցասեր մտքերի ճոխ գանձարանը տուրք ընծայեցի»:** Հայոց եկեղեցու սրբերի շարքին դասվելը այն վեհաշուք գնահատականն է, որին արժանացավ Գրիգոր Տաթևացին իր ծառայությունների համար, և կատարելով նրա կամքը, որով նա հորդորում էր «Գիրք հարցմանց»-ի ընդօրինակողներին արտագրել նաև գրքի հիշատակարանը, բերում ենք այն՝ համարելով, որ Համաբարբառը ևս ընդօրինակման մի ձև է:

Նյութի խիստ ծավալուն լինելու պատճառով կարող են լինել չնկատված վրիպակներ, որի համար հայցում ենք ընթերցողի ներողամտությունը և խնդրում մեկ անգամ ևս աղոթք բարձրացնել առ Աստված՝ մեր անցյալի մեծերի համար:

## ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆ

### ԳՐԻԳՈՐ ՏԱԹԵՒԱՑՈՒ «ԳԻՐՔ ՀԱՐՑՄԱՆՑ»-Ի

Արդ, ես՝ վերջին ծնունդս եկեղեցու և նվաստ ուսումնականս, Գրիգոր պիտակ անվամբ, հետամտողը խնդրի, ստեղծեցի «Գիրք հարցմանց»-ը եկեղեցու վարդապետների լուսավոր գրքերից, Ատոմի՝ ուղղադավան ուսումնասերի խնդրանքով, որը վաղուց ի վեր բազմիցս թախանձում էր: Եվ իմ տկարության ու ժամանակի վրդովված լինելու պատճառով հապաղում էի կատարել խնդրանքը: Ապա ի սեր նրա, և քանի որ համառորեն խնդրում էր, ապաստանելով նրա մոտ, որ զորացրեց տկարիս, ձեռնարկեցի և ավարտեցի [գիրքն այս] մեծ ջանքերով, տեղից-տեղ փախչելով, շատ ճիգեր ներդնելով:

Եվ վերոնշյալ պատվիրատուն չհասավ գրքի ավարտին, այլ [այն ժամանակ, երբ գրված էր] գրքի կեսը, կիսվեց և նրա երկրային կյանքը, որտեղ նա հասել էր իմաստության գանձին ու գիտության աղբյուրին, որի հիշատակը օրհնությամբ լինի, Ամեն:

Արդ, գիրքն այս ավատվեց Հայկազյան տոմարի 846 թվականին (1397թ.), Սյունյաց նահանգի երկնամատույց մեծահարգ Ուխտի, Սուրբ առաքյալների առաքելական աթոռի և շրջակա մյուս հրեշտակաբնակ սուրբ մենաստանների հովանավորությամբ, որոնց խնամածությամբ ամրանալով՝ փրկվում ենք բոլոր փորձություններից, Ամեն:

Իսկ հարցումների այս գրքում ամեն օտար բան չէ, որ խուզել ենք, ոչ էլ հարմարեցրել ենք գեղջուկ աշխարհական խոսքին, այլ հոգ ենք տարել միայն եկեղեցուն և վարդապետներին պիտանիի՝ հավատի խնդրի համար. [հոգ ենք տարել նաև] ուղիղ և ճշգրիտ, անթերի իմացման համար, շարադրելով ոչ թե այն, որ բոլորը գիտեն, այլ բազմապիսի բաներ, որ շատերին է պիտանի ու ցանկալի:

Արդ, սրա մեջ բաներ կան, որոնք քաղված են սուրբ վարդապետների լուսավոր թղթերից՝ [դիմելով] կամ գրքերին, կամ՝ [բանավոր] իմացությանը: Եվ բաներ էլ կան, որոնք [շարադրվել են]

Աստծո Հոգու շնորհների ներգործությամբ, որոնք իմաստուններից թաքցնում և ժամանակ առ ժամանակ մանուկներին է հայտնում ըստ յուր կամքի: Եվ թե սա, թե նա, դու ընկալիր բոլորովին առանց երկբայելու քո մտքում, իբրև միևնույն Կենաց կենդանարար աղբյուրից զորացած և պտղավորված ի փառս և ի գովեստ նորին Տնկագործի և Առաջնորդի:

Եվ ես բազմաթիվ պտուղներ հավաքող մշակի նման, իբրև անուշահոտ բազմերանգ ծաղիկների մի փունջ, կամ իբրև փոքրիկ թռչնի՝ մեղվի, մեղրահաց, կամ իբրև տառապալից կյանքով [ապրող] այրու մանրադրամ, Ձերդ մեծության՝ իմաստասեր և ճշմարտասեր Հայաստանյայց եկեղեցու և ընթերցասեր մտքերի ծոխ գանձարանը տուրք ընծայեցի, որի համար աղաչում եմ բարեմիտ ընթերցողներից հավանություն տալ եղբայրական սիրով, պակասը լրացնել, իսկ ավելորդը մի կողմ թողնել և պիտանիի համար փառք տալ նրան, որ փառավորն է իր պարգևների մեջ, իսկ անպիտանի համար ներել մեզ՝ փոքրընկալ անոթ և ծանրամիտ լինելու համար:

Ապա արտասվալից դեմքով երեսնիվայր ընկած հողի և փոշու մեջ և ձեր սուրբ ոտքերի առաջ, ի խորոց սրտի աղերսում եմ ձեր գութը՝ իմ հարազատ հոգևոր հայրեր ու եղբայրներ, մի կաթիլ փոքրիկ արտասուքով ցողեք իմ տառապալից հոգու գերեզմանը և թրջեք մեռելային մեղքերով պղծված իմ թարալից ոսկորները, որ միգուցե ձեր գթառատ մաղթանքների շնորհիվ կարողանամ ողորմություն գտնել Ամենաողորմ մեր Փրկչից:

Այլև իմ վարժապետի և Հայոց մեծ հռետորի՝ Հովհան Որոտնեցու, հիշատակի մաղթանքները լինեն օրհնությամբ և լույսի վիճակն [ընկնի նրան] սրբերի ժառանգությունից, քանզի նա ծնեց մեզ Բանի նմանությամբ՝ բազմաջան չարչարանքով, կրթելով դպրության և կենդանի հույսի համար:

Եվ ձեզ էլ՝ հիշողներիդ և մեզ ուսումնասիրողներիդ առհասարակ թող ողորմի բարերար և բազմաողորմ մարդասերն Աստված և Տերը մեր Հիսուս Քրիստոս, Ամեն:

Այլև երջանիկ օրինակողներիդ, ովքեր, որ ընդօրինակեն «Գիրք հարցմանց»-ն այս, մաղթում եմ, այս փոքրիկ հիշատակարանն էլ գրել, որպեսզի դուք էլ գրվեք Կենաց գրքում, Ամեն:

**Աշխարհաբարի վերածեց**
**Սուսաննա Գրիգորյանը**

Սուսաննա Մակարի Գրիգորյան

# ԳՐԻԳՈՐ ՏԱԹԵՒԱՑԻ
# «ԳԻՐՔ ՀԱՐՑՄԱՆՑ»

# ՀԱՄԱԲԱՐԲԱՌ

Համակարգչային ձևավորող և մակետավորող՝ Է. Մելքումյան

Պատվեր՝ 740: Չափսը՝ 60X84 $^{1}/_{8}$: 137.5 տպագրական մամուլ:

Տպաքանակը՝ 200:

**Տպագրված է «Տիգրան Մեծ» հրատարակչություն ՓԲԸ-ում**